ԴԻՎԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆ

АРХИВ
ИСТОРИИ АРМЕНИИ

НОВАЯ СЕРИЯ

КНИГА ПЕРВАЯ

ГУКАС КАРНЕЦИ

ТОМ I

1780-1785

Подготовка текста, вступительная статья,
комментарий и словарь

ВАРТАНА ГРИГОРЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

9(47.925)
Ղ-95

ԴԻՎԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ՇԱՐՔ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

2038

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

ՀԱՏՈՐ Ա

1780-1785

Աշխատասիրությամբ՝

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

ԳՄԴ 63.3(2Հ)
Ղ 951

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

«Դիվան հայոց պատմության» մատենաշարի խմբագրական մարմին

Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ (նախագահ), Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(նախագահի տեղակալ), Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ծ. Վ. ՍՄԲԱՏՅԱՆ (քարտուղար)
Հ. Գ. ՓԱՓԱԶՅԱՆ

Պատասխանատու խմբագիրներ՝ պատմ. գիտ. թեկնածուներ՝ Օ. ԵԳԱՆՅԱՆ,
Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտ. դոկտոր
Հ. ՓԱՓԱԶՅԱՆԸ և պատմական գիտ. թեկնածու Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Ղուկաս Կարնեցի
Ղ 951 *[Բնագրեր]/Աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի.—Հ.1 — .—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984.—(Դիվան հայոց պատմության (նոր շարք)/Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի ին-տ., Գիրք Ա).*
Հ. 1 (1780—1785)/Պատ. խմբ.՝ Օ. Եգանյան, Վ. Մարտիրոսյան. 1984. 596 էջ։

Հայ եկեղեցական ու քաղաքական գործիչ Ղուկաս Կարնեցու գրագրությունները արժեքավոր սկզբնաղբյուր են Հայաստանի ու հարևան երկրների XVIII դ. վերջին երկու տասնամյակների քաղաքական, ինչպես և սոցիալ-տնտեսական կյանքի թերի ուսումնասիրված կամ չլուսաբանված շատ հարցերի պարզաբանման համար։ Հատորի մեջ ընդգրկված են նրա 1780—1785 թթ. գրած առավել հետաքրքրություն ու պատմական արժեք ներկայացնող 1178 նամակներ, կոնդակներ և նամակների համառոտագրություններ։ Գիրքն ունի ներածական բաժին, ծանոթագրություններ և օտար բառերի բառարան։

Նախատեսված է պատմաբանների համար։

Ղ $\frac{0505040000}{703(02)-84}$ 92—80

ԳՄԴ 63.3(2Հ)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող դիվանական վավերագրերի ուսումնասիրությունը զգալի չափով նպաստել է հայ ժողովրդի պատմության լուսաբանման գործին։ Որպես պատմական սկզբնաղբյուր դրանք վաղուց արդեն ըստ արժանվույն գնահատվել են մասնագետների կողմից։ Վավերագրերը գիտական շրջանառության մեջ դնելու ասպարեզում որոշակի դեր է խաղացել «Դիվան հայոց պատմության» մատենաշարը։ 1893—1917 թթ. բանասեր Գյուտ Աղանյանցն իրականացրել է այդ մատենաշարի 13 գրքերի հրատարակությունը, որոնց մեջ զետեղված փաստաթղթերն օգտակար են եղել XVIII դ. երկրորդ կեսի և XIX դ. հայոց պատմության մի շարք խնդիրների հետազոտման համար։

Կարևոր նշանակություն տալով դիվանական վավերագրերի հրապարակմանը, Մատենադարանի գիտական խորհուրդը որոշել է նոր շարքով շարունակել այդ մատենաշարի հրատարակությունը։ Նոր շարքի առաջին գրքերը նվիրվելու են XVIII դ. վերջին տասնամյակների նշանավոր եկեղեցական ու քաղաքական գործիչ Ղուկաս Կարնեցու նամակագրությանը։ Հաջորդաբար հրատարակվելու են Եփրեմ Ձորագյուղցու, Հովհաննես Կարբեցու և Ներսես Աշտարակեցու գրությունները։ Առանձին գրքերով լույս կտեսնեն կազմակերպությունների արխիվում պահվող կարևորագույն նյութերը։ Ծրագրվում է առավել արժեքավոր փաստաթղթերը, որոնք կարևոր են նաև հարևան ժողովուրդների պատմության կամ նրանց հետ հայերի ունեցած կապերի ուսումնասիրման համար, առանձին ժողովածուներով լույս ընծայել ռուսերեն թարգմանությամբ։

Սույն հատորով սկսվող «Դիվան հայոց պատմության» նոր շարքը նպատակ է բերելու հայագիտության և կովկասագիտության հետագա զարգացմանը։

Նվիրում եմ
կյանքից վաղաժամ հեռացած
մայրիկիս և եղբորս՝
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ ՖՐՈՒՆԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ
հիշատակին

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մաշտոցի անվան Մատենադարանի հարուստ ֆոնդերում գրչագիր մատյաններից բացի պահվում են տասնյակ հազարավոր դիվանական փաստաթղթեր, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայաստանի ու հարևան երկրների հատկապես ուշ միջնադարի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունը բազմակողմանի ու խոր ուսումնասիրելու համար։ Այդ վավերագրերը հայ կաթողիկոսների գրած նամակներ ու կոնդակներ են, տարբեր մարդկանցից ու հաստատություններից նրանց ստացած դիմումներ, նամակներ ու ընկուցագրեր, թագավորական հրովարտակներ, արտոնագրեր, կալվածագրեր, էջմիածնի վանքի եկամուտների ու ծախսերի, տրված ու ստացված նվերների գրանցման մատյաններ, հոգևոր առաջնորդների ու նվիրակների հաշվետվություններ, հաշվեմատյաններ, պայմանագրեր, տեղեկանքներ, ճորտագրեր, կտակներ և այլն։ Դրանց մի մասը (ավելի քան 42000 միավոր) գտնվում է Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում, մնացածները ցրված են նույն բաժնի անհատական արխիվային ֆոնդերում (Ներսես Աշտարակեցու, Կարապետ Բագրատունու, Մսեր Մսերյանցի, Մկրտիչ Խրիմյանի, Գարեգին Հովսեփյանի, Ալեքսանդր Երիցյանի և այլն), ինչպես և Լազարյանների արխիվում։ Բազմաթիվ մատյաններ (նամակների ու կոնդակների սևագրություններ, դրանց համառոտագրություններ, մուտքի ու ելքի մատյաններ և այլն) պահվում են Մատենադարանի ձեռագրատանը։

Արխիվային բաժնի հնագույն վավերագրերը գալիս են XV դարի կեսերից, բայց մեծագույն մասը գրված է XVII—XVIII դարերում։ Կան նաև ավելի ուշ շարադրված բազմաթիվ ուշագրավ նյութեր։ Եթե մինչև XVIII դարի կեսերը գործած հայ կաթողիկոսների՝ Մովսես Տաթևացու (1629—1632), Փիլիպպոս Աղբակեցու (1633—1655), Հակոբ Ջուղայեցու (1655—1680), Եղիազար Այնթապցու (1682—1691), Նահապետ Եդեսացու (1691—1705), Ալեքսանդր Ջուղայեցու (1706—1714), Աբրահամ Կրետացու (1734—1737), Ղազար Ջահկեցու (1737—1751) և Հակոբ Շամախեցու (1759—1763) նամակներն ու կոնդակները ներկայացված են սահմանափակ քանակով, իսկ որոշ կաթողիկոսներինը՝ եզակի օրինակներով, ապա հետագա ժամանակներում գործած կաթողիկոսներից պահպանվել են ոչ միայն մի շարք գրությունների բնագրերը, այլև մեծ թվով սևագրություններն ու հատուկ մատյաններում արձանագրված նրանց համառոտ բովանդակությունները, որոնք ամբողջական պատկերացում

են տալիս նրանց վարած գրագրությունների վերաբերյալ։ Շատ նամակներ են պահպանվել Հովսեփ Արղության (1801), Դավիթ Էնեգեթցու (1801—1807), Դանիել Սուրմառեցու (1807—1808), Եփրեմ Ձորագեղցու (1809—1830), Հովհաննես Կարբեցու (1831—1842), Ներսես Աշտարակեցու (1843—1857) և ուրիշներից, այդ թվում նաև արդեն մեր դարում գործած կաթողիկոսներից։

Պետականությունից վաղուց զրկված հայոց երկրում եկեղեցու հայրապետը՝ ամենայն հայոց կաթողիկոսը, օժտված էր նաև աշխարհիկ իշխանության որոշ իրավասություններով։ Օտար տիրակալների աչքում նա հայության ներկայացուցիչն էր և որպես այդպիսին հանդես էր գալիս բոլոր կարգի հանդիպումների և բանակցությունների ժամանակ։ Բնական է, որ ազգային պետական իշխանության չգոյության, հետևապես և պետական դիվանական վավերագրերի բացակայության պայմաններում ինչ-որ տեղ պետական իշխանությունը մասնակիորեն, երբեմն էլ քաղաքական որոշ պայմաններում՝ մեծ մասամբ հայրենի երկրի համար բախտորոշ նշանակություն ունեցող իրադարձություններում, ազգային իշխանությունը ներկայացնող հոգևոր ղեկավարության պաշտոնական գրագրությունները ստանում են շատ յուրահատուկ և բացառիկ պատմական արժեք։ Նրանք թույլ են տալիս հստակ գաղափար կազմելու այլ պետությունների և իշխանությունների, քույր եկեղեցիների, առանձին պետական գործիչների, արտասահմանում, ինչպես և օտար լծի տակ գտնվող հայրենի երկրի գավառներում եղած հայ բնակչության կամ հայկական համայնքների, նրանց հոգևոր և աշխարհիկ ղեկավարների և, ընդհանրապես, աչքի ընկնող անձանց հետ էջմիածնի ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ։ Այդ փաստաթղթերն առատ նյութ են պարունակում նաև Հայաստանի ու հարևան երկրների պատմության, գրական ու մշակութային շարժման, օտար տիրապետության դեմ հայերի մղած ազատագրական պայքարի, հայկական համայնքներում եղած հոգևոր և արհեստավորական կազմակերպությունների, վանքերի ու եկեղեցիների, եկեղեցական թեմերի ու կալվածքների, ինչպես Հայաստանում, այնպես էլ շրջակա վայրերում տեղի ունեցած բնական պատահարների, համաճարակների և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Ուշագրավ են ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների, հատկապես Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման վերաբերյալ փաստաթղթերը։ Դիվանական նյութերը հետաքրքրական տեղեկություններ են պարունակում արևմտահայության ծանր վիճակի, թուրքերի կողմից սանձազերծված բռնությունների, հարկահանության ու կոտորածների վերաբերյալ։ Ուսումնասիրողները շատ տեղեկություններ կարող են գտնել նաև XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին տեղի ունեցած քաղաքական և մշակութային կարևոր իրադարձությունների, հայ մշակույթի ու գիտության ականավոր գործիչների վերաբերյալ։

Վերը հիշված դիվանական նյութերի մեջ աչքի են ընկնում XVIII դարի վերջին երկու տասնամյակների հայ եկեղեցական ու քաղաքական հայտնի գործիչ Ղուկաս կաթողիկոս Կարնեցու գրագրությունների սևագիր մատյանները, ինչպես և բազմաթիվ կոնդակներն ու նամակները, որոնք գրվել են նրա գահակալության տարիներին՝ 1780—1799 թվականներին և մեզ են հասել համարյա առանց էական կորուստների։ Այդ մատյաններում գրանցված նամակների բնագրերի ու դրանցից կատարված համառոտագրությունների թիվը մոտավոր հաշվումներով անցնում է 6000-ից։

Ղուկաս Կարնեցին նամակագրության մեջ էր բազմաթիվ մարդկանց հետ։ Նա թղթակցում էր Թուրքիայում, Վրաստանում, Իրանում, Ռուսաստանում, Ռումինիայում, Բուլղարիայում, Սիրիայում, Իրաքում, Հնդկաստանում, Չինաստանում ու այլ երկրներում բնակվող հայ գործիչների, ինչպես նաև բարձրաստիճան անձանց՝ թագավորների, փաշաների ու խաների հետ։ Նա շատ նամակներ էր ստանում էջմիածնի նվիրակներից, զանազան վայրերում բնակվող հայ համայնքների հոգևոր առաջնորդներից ու եկեղեցական գործիչներից։ Առանձնապես աշխույժ էին գրավոր կապերը Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ II-ի, վրացական թագավորության այլ մեծամեծների և հայոց կաթողիկոսի միջև։ Ղուկաս Կարնեցին նամակագրություն ուներ նաև ռուսական պետության ղեկավարների ու զինվորական գործիչների հետ, որոնք այն տարիներին եռանդուն կերպով նախապատրաստում էին Արևելյան Հայաստանը իրանական բռնակալ լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործը։

Տարբեր մարդկանց հասցեագրված և զանազան բովանդակություն ունեցող այդ նամակներն ունեն մի ընդհանուր նմանություն։ Նրանցից շատերի մեջ հեղինակը ընդարձակ կերպով կամ մի երկու խոսքով տվել է Հայաստանում և հարևան երկրներում տեղի ունեցած ու հավաստի աղբյուրների միջոցով իրեն հայտնի դարձած դեպքերի նկարագրությունը։ Նամակների սկզբում, որպես կանոն, վերապատմվում է տվյալ հասցեատիրոջից կամ այլ վայրերում գտնվող անձանցից ստացված նամակների հիմնական բովանդակությունը։ Այդ տիպի նամակներն արժեքավոր տեղեկություններ են պարունակում այսևայլ վայրերի քաղաքական անցուդարձի, բնակչության ապրուստի պայմանների, բնական պատահարների, համաճարակների ու այլ հարցերի վերաբերյալ։ Համարյա ամեն օր գրված այդ նամակներում բաց չի թողնված երկրի կյանքում տեղի ունեցած ոչ մի կարևոր իրադարձություն, ուստի մեկը մյուսի շարունակությունը լինելով, ամբողջությամբ վերցրած, այդ նամակները փաստորեն յուրօրինակ ժամանակագրություն են՝ կազմված դեպքերի անմիջական տպավորության ներքո, շարադրված ականատեսի և երբեմն այդ իրադարձությունների մեջ գործուն դեր խաղացած անձնավորության կողմից։ Հետևապես դրանք արժեքավոր սկզբնաղբյուրներ են և օգտակար կլինեն Հայաստանի ու հարևան երկրների XVIII դարի վերջին տասնամյակների պատմությունն ուսումնասիրելու համար։

Ղուկաս Կարնեցու նամակների հետազոտության և հրապարակման գործում մեծ դեր է խաղացել վաստակաշատ գիտնական Գյուտ Աղանյանցը (1856—1920)։ Տարիների համառ պրպտումով նա հավաքել է Ղուկասի բազմաթիվ գրությունները, որոնք թույլ են տվել նրան «Դիւան հայոց պատմութեան» արժեքավոր մատենաշարի հատորներից մեկն ամբողջովին նվիրել Ղուկաս Կարնեցուն։ Մինչ այդ նա լույս էր ընծայել մատենաշարի երկու հատոր, որոնցից մեկում (գիրք Ա—Բ) XVIII դարի վերջերին և XIX դարի առաջին կեսին վերաբերող նյութեր են, մյուսում (գիրք Գ)՝ Սիմեոն Երևանցու հիշատակարանը[1]։ Ղուկաս Կարնեցու հատորը լույս տեսավ 1899 թ., այն պարունակում է 170 նամակ և 450 նամակի վերնագիր կամ համառոտագրություն։ Հետագայում Գ. Աղանյանցը ձեռք էր բերել Ղուկասի բազմաթիվ այլ նամակներ և մտադրություն ուներ հրատարակել առանձին գրքերով, բայց այդ նրան չհաջողվեց։

Շարունակելով Գ. Աղանյանցի ընդհատված մատենաշարը, մենք ծրագրել ենք լույս ընծայել Ղուկաս Կարնեցու 1780—1799 թթ. ընթացքում գրած հետաքրքրական, պատմական արժեք ներկայացնող նամակներն ու կոնդակները։ Առանձին հատորով հրատարակելու ենք Ղուկասի նամակների մի հատընտիր՝ ռուսերեն թարգմանությամբ։ Հատորներն ունենալու են ներածություն, գիտական ծանոթագրություններ և օտար բառերի բառարաններ։

---

[1] «Դիւան հայոց պատմութեան» մատենաշարով Թիֆլիսում լույս են տեսել հետևյալ հատորները.

Գիրք Ա—Բ, 1780—1834, 1893։

Գիրք Գ, «Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը», 1894։

Գիրք Դ, «Ղուկաս կաթուղիկոս (1780—1800)», 1899։

Գիրք Ե, «Դանիէլ կաթուղիկոս (1800—1808)», 1902։

Գիրք Զ, «Դաւիթ կաթուղիկոս, մասն առաջին (1801—2)», 1904։

Գիրք Է, «Դաւիթ կաթուղիկոս, մասն երկրորդ (1803—4)», 1908։

Գիրք Ը, «Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, մասն երկրորդ (1767—1776)», 1908։

Գիրք Թ, «Յովսէփ կաթուղիկոս Արղութեան, մասն առաջին (1770—1800)», 1911։

Գիրք Ժ, «Մանր մատենագիրք (ԺԵ—ԺԹ դար)», 1912։

Գիրք ԺԱ, «Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, մասն III—վերջին (1777—79)», 1913։

Գիրք ԺԲ, «Մանուէլ Կիւմիւշխանեցի, մասն I», 1917։

Գիրք ԺԳ, «Հարստահարութիւններ Տաճկահայաստանում (վավերագրեր, 1801—1888)», 1915։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

Ա) ԺԱՄԱՆԱԿԸ

Ղուկաս Կարնեցին քաղաքական կյանքի ասպարեզ մտավ հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկում, երբ պետականությունից վաղուց զրկված հայոց երկիրը տրոհված էր մահմեդական երկու հետամնաց պետությունների՝ Թուրքիայի ու Իրանի միջև և ժողովուրդը տվայտում էր գնալով առավել ծանր ու անտանելի դարձող օտար, բռնակալ լծի տակ:

Արևելյան Հայաստանը գտնվում էր Իրանի գերիշխանության ներքո, որտեղ Նադիր շահի սպանությունից հետո (1747) կատարյալ անիշխանություն էր: Կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով այնտեղ աշխուժացել էին կենտրոնախույս ձգտումները, ավելի խորացել ներքին պառակտումները, և ֆեոդալական հակամարտ խմբավորումները կատաղի պայքար էին ծավալել իշխանության համար: Ի հետևանք այդ ամենի, մի շարք իշխանություններ, հատկապես սահմանամերձ վայրերում, ինքնուրույնություն էին ձեռք բերել: Դրանց թվում էին նաև Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում կազմավորված Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Խոյի, Մակվի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի և մի քանի այլ խանություններ, որոնք ժամանակ առ ժամանակ արյունահեղ պայքարի մեջ էին մտնում միմյանց դեմ իրենց տարածքային ամբողջականության պահպանման կամ ազդեցության ոլորտների ընդարձակելու համար:

Քաղաքական հեղհեղուկ պայմանների և հաճախակի դարձած ներքին կռիվների հետևանքով քայքայում էր ապրում Արևելյան Հայաստանի տնտեսությունը: Հատկապես դժվարին էր առևտրական քարավանների անցուդարձի և ռոռոգման համակարգի անխափան աշխատանքի ապահովումը: Արտակարգ պայմանները հնարավորություն էին տալիս իշխողներին նորանոր հարկեր դնելու բնակչության վրա:

Ծանր կացություն էր ստեղծվել Արարատյան երկրում: Երևանի խանը, մտահոգված իր իշխանության ամրապնդմամբ, ձգտում էր վերջնականապես ոչնչացնել հայերի դիմադրողական ուժը և առաջին հերթին՝ հայ իշխանական տների շառավիղներին: Չկարողանալով պաշտպանվել Իրանի հյուսիսում մերթ ընդ մերթ հզորացող բռնակալներից, խանը հարկադրված եղավ համապատասխան դրամական վարձատրությամբ օգնություն հայցել վրաց թագավոր Հերակլ II-ից: Հարկային այդ կախվածությունը, սակայն, տևական բնույթ չուներ, ուստի վրաց թագավորը ժամանակ առ ժամանակ արշավում էր դեպի Երևան՝ ավերելով ու ամայացնելով Արարատյան դաշտի բնակավայրերը: Այդ հարձակումները պարբերաբար հետևում էին միմյանց և Ղուկաս Կարնեցու նախորդը՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը միշտ չէ, որ կարողանում էր հաշտեցնել երկու կողմերին:

Անհանգիստ վիճակ էր ստեղծվել նաև Նախիջևանում: Ադիլ շահի կառավարման օրոք ծայրահեղ կեղեքված ժողովուրդը հրաժարվել էր ճանաչել պարսից իշխանությունը՝ հանձին Նադիրի նշանակած Մուհամմադկուլի խանի: Ապստամբները, կենտրոնացած հայկական Աստապատ գյուղում, զորեղ դիմադրություն են ցույց տալիս խանին, որը ստիպված փախչում է երկրից: Նրան փոխարինում է Հեյդարկուլին, որը ժողովրդի հարստահարման գործում գերազանցեց իր նախորդին՝ հատկապես դաժան հալածանքներ ծավալելով հայ մեծատունների դեմ: Ավելի վատացավ ժողովրդի դրությունը, երբ Ադիլից իշխանությունն անցավ նրա եղբորորդի Իբրահիմ Միրզային: Մտադրություն ունենալով նվաճել ողջ Իրանը և դրա համար դրամի մեծ կարիք ունենալով, նա սաստկացրեց հարկապահանջությունը[2]: Նախիջևան ուղարկված նոր կառավարիչը, ազգությամբ վրացի Բեհնամը, թեթևացնում է ժողովրդի վիճակը, պակասեցնում հարկերը և հայերից զորք հավաքելով հալածում իր թշնամիներին: Շուտով շահկերտցի Ղազարի հրամանատարությամբ այդ զորքը պաշարում է Օրդուբադը, բայց վերադառնում է իր պաշտոնում կրկին հաստատված Հեյդարը, ցրում պաշարողներին և հեռացնում Բեհնամ խանին: Հայերի դիմադրության հիմնական կենտրոնը Շահկերտ ավանն էր, որը կարողացավ դիմադրել Թավրիզից օգնական զորք ստացած Հեյդարի հարձակմանը[3]:

Ահա այսպիսի խառնակ վիճակի մեջ էր գտնվում Արևելյան Հայաստանի կենտրոնական մասը Ղուկաս Կարնեցու ընտրության նախօրեին: Անվերջանալի պատերազմները, հաճախակի միմյանց փոխարինող իշխողների կամայականությունները և անհագուրդ հարկապահանջությունը բնակչությանը դրել էին ծանր վիճակի մեջ: Դիմադրողական ուժերը ցրված էին, թույլ և անկազմակերպ:

Նադիրի սպանությունից հետո Իրանում ստեղծված անիշխանությունը բացասական հետևանքներ ունեցավ Արցախի հայ մելիքությունների համար: Ղարաբաղի հարթավայրերում բնակություն հաստատած քոչվոր ցեղերը, որոնք օգտվում էին լեռնային արոտավայրերից, ձգտում էին ավելի ամուր հաստատվել այդ վայրերում: Ջիվանշիր ցեղի պարագլուխ Փանահը Խորասանից բերել է տալիս Նադիրի կողմից այնտեղ գաղթեցված իր ցեղակիցներին, իրեն ենթարկում հարթավայրի բոլոր քոչվոր ցեղերին և հարձակումներ ձեռնարկում շրջակա բնակավայրերի վրա: Նրա հիմնական նպատակն էր ամրանալ Լեռնային Ղարաբաղում: Բայց ամեն անգամ այդ վայրերում ամրություններ կառուցելու նրա փորձերը հանդիպում էին մելիքների ուժեղ դիմադրությանը: Օգտվելով մելիքներից մեկի՝ Վարանդայի տիրոջ Շահնազարի կացությունից (վերջինս սպանել էր եղբորը և իր ձեռքը վերցրել իշխանությունը, իսկ մյուս մելիքները ձգտում էին պատժել նրան), Փանահը կարողանում է տեղ ստանալ նրա տիրույթներում ու XVIII դարի 50-ական թվականներին վերակառուցում և ամրացնում Ավան Յուզբաշու հիմնադրած Շոշի բերդը[4]:

Եվ այսպես, պարսից պետության մեջ տիրող անիշխանության, մելիքների միջև եղած հակամարտությունների հետևանքով Արցախում ստեղծվում

[2] Լեո, Հայոց պատմություն, Երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 230:

[3] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 843:

[4] «Армяно-русские отношения в первой трети XVIII века», Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, стр. XLI—XLII.

է մահմեդական խանություն, որը զգալի դեր է սկսում խաղալ Անդրկովկասի կյանքում։ Փանահ խանը կարողանում է իրենից կախյալ վիճակի մեջ դնել Վարանդայի և Խաչենի մելիքներին, փորձեր է անում հպատակեցնելու նաև մյուսներին։ Սկսվում է պայքարի մի երկարատև շրջան, որի ընթացքում մելիքները հաճախ դաշնակցում էին Շամախու և Ղուբայի խաների ու վրաց թագավորի հետ։ Չնայած այդ ամենին, Ղարաբաղի մելիքները դեռևս քաղաքական կշիռ և հեղինակություն ունեին երկրում, ի վիճակի էին պահանջի դեպքում զինվորական որոշ ուժ դուրս բերել և հարևանների ոտնձգություններից պաշտպանել իրենց տիրույթները։ Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հայ ազատագրական շարժման գործիչները հույսեր էին կապում հայ պետականության այս վերջին մնացորդների հետ՝ քաղաքական և զինվորական որոշակի դեր վերապահելով նրանց Հայաստանի ազատագրման գործում։

Արտակարգ ծանր և դժվարին դրության մեջ էր նաև թուրքական լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանը։ XVIII դ. կեսերին Օսմանյան կայսրությունն ապրում էր քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամ։ Կյանքի բոլոր ասպարեզներում զգացվում էր թուրքերի հետամնացությունը. անկումային վիճակում էր գյուղատնտեսությունը, զարգացման միջնադարյան մակարդակին էին մնացել արհեստներն ու արդյունագործությունը, անվերջանալի պատերազմների հետևանքով խափանվել էր բնականոն առևտուրը։ Կենտրոնական իշխանության թուլացման և երկրի ծայրահեղ մասնատվածության հետ միաժամանակ ուժեղանում էին կենտրոնախույս ձգտումները։ Ծայրամասերում մի շարք փաշաներ փաստորեն դարձել էին կիսանկախ տիրակալներ և նրանցից ոմանք ժառանգական էին դարձրել իրենց պաշտոնը։ Հայ բնակչության կյանքը գնալով վատթարանում էր։ Թուրքական փաշաների և քուրդ բեյերի անսանձ բռնությունների, կրոնական հալածանքների և դաժան հարկապահանջության հետևանքով ստեղծված ծանր դրությունն ավելի էր բարդանում շնորհիվ այն բազմաթիվ կռիվների, որ մերթ ընդ մերթ ծագում էին տեղական իշխողների միջև։ Վերջիններս չէին կամենում ճանաչել կենտրոնական իշխանությունը, ուստի սկսվում էին ընդհարումներ կառավարական զորքերի և տեղական ուժերի միջև։ Այդ կռիվների հետևանքով ավերվում էին բնակավայրերը, բնակիչները ոչնչանում էին, գերի տարվում կամ էլ բռնում արտագաղթի ուղին։

Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում քաղաքական կացությունն ավելի բարդացավ 80—90-ական թվականներին։ Հատկապես ծանր էր Արարատյան երկրի վիճակը։ Այն խիստ ավերված էր, աղքատացած, բնակչությունից ամայացած։ Քիչ թե շատ տանելի վիճակում էին միայն Երևանն ու Էջմիածինը։ Ահա թե ինչպես են նկարագրել այդ վիճակը Էջմիածնի միաբանները 1780 թ. կեսերին Կ. Պոլսի հայությանն ուղղած իրենց շրջաբերական նամակում.

«...յանցելումն ամի զորքան աւերութիւնս և վնասս կրեաց երկիրս մեր, լուեալ էք, զորս դեռևս կրէ։ Զի նոյն խռովութիւնն տակաւին գոյ, երկիրս ըստ մեծի մասին անմարդաբնակ է և աւերիչք բազմացեալք, զմնացորդն ևս աւերեն։ Յորոց միջի սուրբ Աթոռս միայն է մնացեալ առանց գլխաւոր վնասուց՝ շնորհօքն Աստուծոյ» (վավ. № 69)։

Ահա այս պայմաններում 1780 թ. օգոստոսի 2-ին կաթողիկոս է ընտրվում Ղուկաս Կարնեցին։

Բ) ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Նախքան հրապարակվող կոնդակների ու նամակների հեղինակի կյանքին ու գործունեությանն անցնելը, համառոտակի ծանոթանանք նրա մասին գրված աշխատություններին։ Հարկ է նշել, որ զանազան գործերով ու հոգսերով մշտապես ծայր աստիճան ծանրաբեռնված կաթողիկոսը ժամանակ և հնարավորություն չի ունեցել թղթին հանձնելու տպավորություններ և հիշողություններ իր կյանքի վերաբերյալ, ուստի կենսագրական տեղեկությունները նրա մասին շատ քիչ են։ Այդ կարգի նյութերի սակավության հանգամանքը նրա գրագրություններին անծանոթ մի քանի հեղինակների թյուրիմացությունների առիթ է տվել, որոնք, ինչպես կտեսնենք, ժամանակին սրբագրվել են հիմնավորապես։

Ղուկաս Կարնեցու գահակալության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների և նրա շինարարական գործունեության պատմությունը շարադրելու փորձ է կատարել ժամանակակից մի հեղինակ, որի անունը ցարդ պարզված չէ։ Նրա աշխատության վերնագիրն է՝ «Պատմութիւն ինչ գլխաւոր բանից հարկաւորաց ի ժամանակս Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին եղելոց, շինարարութեանց եւ մեծագործութեանց նորին ի գաւազանագիրքս եւ ի շարս կաթուղիկոսացն գրեալ եւ նախագիծ օրինակ»[5]։ Անանուն հեղինակն իր աշխատության մեծ մասը նվիրել է Հերակլ II թագավորի 1779 թ. դեպի Երևան կատարած արշավանքի նկարագրմանը, իսկ մնացած մասը Ղուկասի ընտրությանը և շինարարական գործունեությանը։ Չնայած վերնագրին, Ղուկասի գործունեությունը մեկնաբանված է չափազանց համառոտ և միակողմանի։ Այդուհանդերձ, աշխատությունն արժեքավոր սկզբնաղբյուր է վերոհիշյալ հարցերն ուսումնասիրելու համար։ Հեղինակն ականատես է դեպքերին և նրա տեղեկությունները արժանահավատ են ու վստահելի։ Նա Ղուկաս Կարնեցուն տվել է բարձր գնահատական. «Սա էր այր գերահանճար և նրբանկատ, խոնարհամիտ և հեզաբարոյ. բարեկարգութեանց և սրբութեանց կրօնից սիրող, հզօր, վրէժխնդիր և կարգաւորիչ. առ յանցաւորս իւր յոյժ անյիշաչար և համբերող, և քաղցրաբանութեամբ և սիրով և հոգևոր խրատիւք ուղղիչ, և առ կարօտեալս և չքաւորս ողորմած և գթածագունեղ, և հարկաւոր պակասութեանց նոցին լցուցիչ և սրտադիւրիչ, և ստորադրեցելոց իւրոց ըստ իւրաքանչիւր չափու և աստիճանի շահօղ և մխիթարիչ թէ ի բանս, թէ ի գործս և թէ յարդիւնս, և ըստ ամենայնի միաբանասէր»[6]։

Մեկ այլ սկզբնաղբյուրի մեջ, որն ըստ հրատարակիչ Գյուտ Աղանյանցի կոլեկտիվ ստեղծագործության արդյունք է[7], ժամանակագրության կարգով տրված է Ղուկասի օրոք տեղի ունեցած դեպքերի հակիրճ նկարագրությունը։ Հատուկ ուշադրություն է դարձված նրա ընտրության հանգամանքներին։ Աշխատության արժեքն ավելի է բարձրացրել հրատարակիչը՝ ծանոթագրություններում ընդարձակ մեջբերումներ կատարելով Ղուկաս Կարնեցու նամակներից։ Այս գործի հեղինակները ևս լավ կարծիքի են եղել Ղուկասի մասին և գրել են, որ նա մեծ վաստակի տեր էր, բազմաթիվ շինարարական աշխա-

[5] Այդ «Գաւազանագիրքը» Էջմիածնի ձեռագրերի մեջ հայտնաբերել է մեծավաստակ գիտնական Գարեգին Հովսեփյանը և հրատարակել «Արարատ» ամսագրում (1901, էջ 183—190, 326—330)։ Այնուհետև այն վերահրատարակվել է Անթիլիասում (տե՛ս Գարեգին Ա. կաթողիկոս, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ Ն, Անթիլիաս—Լիբանան, 1961, էջ 48—63)։ Բնագիրը տե՛ս Մատենադարան, ձեռ. № 6298։

[6] Գարեգին Ա. կաթողիկոս, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ..., էջ 48։

[7] «Դիւան հայոց պատմութեան», Ա.—Բ, Թիֆլիս, 1893, էջ Ը։

տանքներ էր իրականացրել էջմիածնում, դիմագրել էր այլազգի բռնավորների հարստահարություններին, «խոհական տնտեսութեամբ» կառավարել էր վանքը, հարստացրել այն և այլն[8]:

Ղուկաս Կարնեցու մասին խիստ համառոտ կերպով գրված է Հովհաննես Շահխաթունյանցի աշխատության մեջ: Հեղինակը Ղուկասին համարելով «այր խոհական»[9], հանգամանորեն գրել է նրա իրականացրած շինարարական աշխատանքների մասին և հրապարակել նրա շինարարական արձանագրությունները[10]:

Մինչ վերոհիշյալ աշխատությունների և Ղուկասի գրագրությունների հրապարակվելը մի քանի հեղինակներ Ղուկաս Կարնեցու մասին հանդես էին եկել միանգամայն սխալ տեսակետներով։ Առաջինը Գեորգ Խուբովն է, բավական հայտնի մի հեղինակ, որի կարևոր մի աշխատությունը համառոտ, երբեմն էլ ոչ այնքան ստույգ, բայց և այնպես ուշագրավ տեղեկություններ է պարունակում Երևանի բնակչության վիճակի, Երևանի խանի և ռուսական հրամանատարության կապերի մասին[11]: Իր աշխատություններից մեկում, որը ձեռագիր վիճակում պահվում է Մատենադարանում[12], Գ. Խուբովը բացասական ձևով է ներկայացնում Ղուկաս Կարնեցուն: Գ. Աղանյանցը ժամանակին ծանոթ լինելով այս գործին, «Դիւան հայոց պատմութեան» Դ հատորի ներածականի «Ղուկասը գրասեր էր և ուսումնասեր» բաժնում գրում է. «Խուբյանցի առարկությունները ծագում են նորանից, որ սա ազգական լինելով Սիմեոն կաթուղիկոսին, դեպի նոր կաթուղիկոսը տածում էր ավելի պակաս հարգանք քան յուր ազգականը և ցանկանում էր նորի հարգը նվազեցնելով նախորդին առավել մեծացնել»[13]:

Մենք դեռ առիթ կունենանք խոսելու Ղուկաս Կարնեցու գործունեության նաև այդ կողմի մասին, նշենք միայն, որ Գ. Աղանյանցը վերոհիշյալ հանգամանքին տալիս է միանգամայն ընդունելի բացատրություն:

Վարդան Օձնեցին իր «Պատմութիւն նոր քաղաքական և եկեղեցական Հայաստան աշխարհի, մեծի և փոքու» աշխատության մեջ ուշագրավ տեղեկություններ է տվել Ղուկաս Կարնեցու գործունեության վերաբերյալ: Կարևոր են նրա նյութերն այն մասին, թե ինչպես Ղուկաս Կարնեցին կարողացավ փրկել էջմիածինը Աղա Մուհամադ շահի հրոսակների ավերմունքից: Վարդան Օձնեցին ուշադրություն է դարձրել նաև Ղուկասի շինարարական աշխատանքներին և գտնում է, որ նա «անխոնջ աշխատողն էր վասն հաստատութեան և պայծառութեան էջմիածնի»[14]:

1872 թ. Երուսաղեմում լույս ընծայվեց հայ եկեղեցու պատմությանը նվիրված մի աշխատություն, որի հեղինակ Մ. Մուրադյանը Ղուկասի մասին գրելիս թույլ է տվել արտառոց սխալներ: Նա գրում է, որ երբ Ղուկասը Թեքիրդաղցի Սարգիս վարդապետի հետամտությամբ ուզում էր հայաստանյայց

[8] Նույն տեղում, էջ 45:

[9] «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ միաբանի սրբոյ էջմիածնի, հատոր առաջին, էջմիածին, 1842, էջ 231:

[10] Նույն տեղում, էջ 34—36, 89—90, 101—106:

[11] *Егор Хубов*, Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779 г.) до 1809 г., СПб., 1811.

[12] Մատենադարան, ձեռ. № 2766: Գ. Խուբովի այս աշխատության վրա մեր ուշադրությունը հրավիրել է Մատենադարանի գիտ. աշխատակից Յ. Վարդանյանը:

[13] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ՄԴ:

[14] Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 135:

եկեղեցին միացնել հռովմեականի հետ: Երբ այդ բանը հայտնի է դառնում, նա միաբանների կողմից խոշտանգվում է և աքսորվում: Հետո երբ Հերակլ թագավորի օգնությամբ ազատվում է, փախչում Թիֆլիս, այնտեղից էլ Եվրոպա և մահանում այնտեղ[15]:

Մ. Մուրադյանի դեմ համարյա միաժամանակ հանդես եկան բանասեր Գալուստ Շիրմազանյանը և Գաբրիել Պատկանյանը: «Երջանկահիշատակ Ղուկաս կաթուղիկոսի վերա» իր հոդվածում Գ. Շիրմազանյանը խիստ քննադատության է ենթարկում Մ. Մուրադյանին և ցույց տալիս, որ «Ղուկաս կաթողիկոսն էր ջերմեռանդ առ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, և վերջին՝ անցյալ դարու մէջ եղած եթե չէր նա մեր երևելի կաթուղիկոսներեն մինը, գոնէ և չէր վերջինը...»[16]: Հակիրճ կերպով ծանրանալով Ղուկաս Կարնեցու գործունեության վրա, նշելով հայրենի երկրին մատուցած նրա բազմաթիվ ծառայությունները, Գ. Շիրմազանյանը եզրակացնում է՝ «Ղուկաս կաթուղիկոսն յուր քսան ամյա գահակալության շրջանն, առանց բացակայության Աթոռեն՝ աշալրջութեամբ, խորագիտութեամբ կկատարե, և որպես Պարսից՝ նույնպես Տաճկաստանի զորավարների և Վրաց արքայի հետ յուր գրավոր հարաբերությունները կը շարունակե առանց վհատունաց և լքման յուր պաշտոնի մեջն, ինչպես կերևին նրա և այլոց թղթակցությունները»[17]:

Նույն՝ 1875 թ. «Արարատի» մեջ հրատարակված հոդվածում Գ. Պատկանյանը գրում է, որ Մ. Մսերյանցը զրպարտում է Ղուկաս Կարնեցուն: «Ինձ քաջ հայտնի էր,—գրում է նա,—որ այն ժամանակի Եվրոպա փախչողն Ղուկաս Կաթուղիկոսն չէր, այլ Բասենցի Հարություն վարդապետն էր, և պատճառն ոչ կրոնական համոզմունքն էր, այլ բարկությունն, որ Սիմեոնեն հետո Ղուկասին տվին աթոռն և ոչ Բասենցվույն»[18]:

Ամենայն հավանականությամբ անտեղյակ էր այս բանավեճին Մսեր Մսերյանցը, որը էջմիածնի կաթողիկոսների պատմությանը նվիրած իր գրքում Ղուկասի մասին հայտնում է անճիշտ տեղեկություններ և բամբասանքների վրա հենված կարծիքներ՝ «Զոր գրեցաքս ցայս վայր՝ պատմեաց մեզ Բ. Ասպետ Թադէոս վ. Բէկնազարեան ըստ լսելոյ իւրոյ յեղբօրորդւոյ Սահակայ եպիսկոպոսի ի Դաւթէ Ստեփանեան, որ վախճանեցաւ յաւուրս մեր»[19]: Մ. Մսերյանցը Ղուկաս Կարնեցու գործունեությունը փոքր-ինչ գովերգելով հանդերձ գրում է, որ նա իբր մտածում էր միայն փող կուտակելու մասին, աներախտապարտ էր, լավ չօգտագործեց հավաքված հարստությունը, քանդել տվեց թղթի գործարանը, երիտասարդ վարդապետներին վերակացուներ կարգեց կալվածների վրա և այլն և այլն[20]:

Ղուկաս Կարնեցու գործունեության իրական պատկերը պարզելու, նրա վերաբերյալ եղած սխալ տեղեկությունները բացահայտելու և ճշմարտությունը վեր հանելու համար շատ բանով պարտական ենք բանասեր Գյուտ Աղանյանցին, որը տարիներ շարունակ զբաղվել է դիվանական վավերագրերի որոնման ու հրատարակության շնորհակալ գործով: Նրա ջանքերի շնորհիվ,

[15] «Պատմութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», արարեալ ի Մ. վարդապետէ Մուրատեանց յուխտէ սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1872, էջ 522:

[16] «Արարատ», 1875, էջ 61:

[17] Նույն տեղում, էջ 94:

[18] **Ծերունի Գաբրիել Պատկանյան**, Դարձյալ երջանկահիշատակ Ղուկաս Կաթուղիկոսի վերա, «Արարատ», 1875, մայիս, էջ 174:

[19] **Մսեր Մսերյանց**, Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Ը, ամք Տեառն 1763—1831, Մոսկվա, 1876, էջ 9:

[20] Նույն տեղում, էջ 9—12:

ինչպես տեսանք, միմյանց ետևից լույս ընծայվեցին «Դիւան հայոց պատմութեան» մեծարժեք հատորները, որոնց մեջ տեղ գտան նաև Ղուկաս Կարնեցուն վերաբերող շատ փաստաթղթեր։ Դրանք հիմք հանդիսացան Գ. Աղանյանցի համար գրելու այդ երախտավոր գործչի կենսագրությունը։ «Դիւանի» չորրորդ հատորում (Թիֆլիս, 1899), որն ամբողջովին նվիրված է Ղուկասին, Գ. Աղանյանցը հրապարակել է հանգամանալի մի ներածական՝ նվիրված Ղուկաս Կարնեցուն։ Ղուկասի գործունեությունն այնտեղ քննարկված է Արևելյան Հայաստանի պատմության ընդհանուր ֆոնի վրա, բարեխիղճ կերպով օգտագործված են բազմաթիվ սկզբնաղբյուրներ։ Ցավոք, մի քանի տարիների ընթացքում Ղուկասի գրած նամակները բացակայել են Գ. Աղանյանցի հավաքածուի մեջ և այդ պատճառով նա հնարավորություն չի ունեցել ավելի հանգամանորեն լուսաբանելու մի շարք կարևոր հարցեր։

Գ. Աղանյանցը բարձր է գնահատել Ղուկաս Կարնեցուն, համոզիչ կերպով ժխտել նրա քննադատների (Գ. Խուբով, Մ. Մսերյանց, Մ. Մուրադյան) տեսակետները։ Ղուկասին նա համարում է բազմաչարչար վեհապետ, «որ տասնևինն ու կես երկար տարիներ աշալրջությամբ և խորագիտությամբ կառավարեց յուր հոտը... մի այնպիսի ժամանակ, երբ Հայաստան աշխարհին տիրում էին բազմաթիվ մեծ ու մանր իշխողներ, որոնց հետ գլուխ տանելու համար հիրավի մեծ հանճար էր հարկավոր»[21]։ Ավելի պարզ պատկերացում տալու համար Ղուկասի նկատմամբ Գ. Աղանյանցի կարծիքի մասին, բավական է միայն այստեղ բերել նրա ներածականի մի քանի գլուխների անվանումները. «Ղուկասը հանճարեղ էր և խոհական» (գլ. Է), «Նա հայոց եկեղեցու հավատարիմ ավանդապահ էր և պաշտպան էջմիածնի շահերի» (գլ. Ը), «Ղուկասը շինարար էր» (գլ. Թ), «Ղուկասը գրասեր էր և ուսումնասեր» (գլ. Ժ)։ Նա ընդգծում է այն հանգամանքը, որ Ղուկասը հայ ժողովրդի ազատագրությունը օտար լծից կապում էր միայն Ռուսաստանի հետ, ուստի օգնություն և հովանավորություն ստանալու խնդրանքով նա դիմեց ռուսական Պավել I կայսրին։ Իր հատորի սկզբում նա հրապարակել է Ղուկասի դիմանկարը, որն արտատպված է այս գրքի մեջ։

Ներկա դարի սկզբներին Կ. Պոլսում հայկական տպագրության 400-ամյակի առթիվ Վ. Գ. Զարդարյանը ձեռնամուխ եղավ հայ նշանավոր գործիչների կենսագրությունների լույս ընծայմանը։ Իր մատենաշարի II պրակում նա զետեղում է նաև Ղուկաս Կարնեցու կենսագրությունը[22]։ Վ. Գ. Զարդարյանը ևս գտնում է, որ Ղուկաս Կարնեցին «Հանճարեղ, խոհական, գործունյա, հաշտարար և Հայ եկեղեցիին ու Ազգին անձնվեր մի հովիվ եղած է...»[23]։ Այդ հոդվածի մեջ Ղուկասի նկարի հետ միասին տպագրված են նաև նրա կոնդակներից մեկի լուսանկարը, էջմիածնի տպարանում նրա օրոք լույս տեսած մի քանի գրքերի պատկերներն ու տապանաքարի արձանագրությունը, որն արտատպված է «Դիւանի» Դ հատորից։

---

[21] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ԻԵ։ Ներածության մեջ Գ. Աղանյանցը գրել է, որ իրենից առաջ ոմանք արդեն փորձել են պաշտպանել «երջանկահիշատակ Հայրապետիս բարի անունը հարձակմունքների դեմ»։ Նա նշում է այդ անձանց և նրանց գործերը՝ Աբել արքեպիսկոպոս, Հայոց պատմություն (անտիպ), Հուսիկ վարդապետ, Եկեղեցական պատմություն (էջ ԻԵ)։

[22] Ղուկաս կաթողիկոս Կարնեցի, Յիշատակարան հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները և այլն, և այլն. 1512—1912, Հայկական տպագրութեան 400 ամեայ յոբելեանի առթիվ գեղարվեստական շքեղ տպագրութեամբ կազմեց Վ. Գ. Զարդարեան, պրակ Բ, Կ. Պոլիս, 1909, էջ 17—21։

[23] Նույն տեղում, էջ 19։

Ղուկաս Կարնեցուն ու նրա ժամանակին «Ազգապատումում» ընդարձակ տեղ է հատկացրել Մաղաքիա Օրմանյանը։ Օգտագործելով գլխավորապես «Դիւան հայոց պատմութեան» մեջ տպագրված նյութերը և օժանդակ այլ աղբյուրներ, նա մանրամասն կանգ է առել հատկապես եկեղեցական խնդիրների վրա՝ աչքաթող չանելով նաև քաղաքական իրադարձությունները։ Նա բարձր է գնահատել Ղուկաս Կարնեցու գործունեությունը։ Ավելորդ չէ նշել նրա գրքի առանձին բաժինների վերնագրերը, որոնք նվիրված են Ղուկասի գործունեությանը՝ «Ղուկաս շինարար» (§ 2205), «Մայր տաճարի նորոգող» (§ 2206), «Ապաշնորհ մը չէր» (§ 2213), «Արծաթասեր մը չէր» (§ 2214) և այլն։

Մ. Օրմանյանին անմատչելի են եղել մի շարք դիվանական վավերագրեր և այս պատճառով խոսելով Պավել I ռուսական կայսրին Ղուկաս Կարնեցու ուղարկած նամակի մասին, նա հանգել է այն եզրակացության, որ «Ղուկաս ալ յուր վերջին օրերուն մեջ տակավ իր ուղղությունը կը բարեփոխեր և ինքն ալ իր աչքը դեպ հյուսիս կը դարձներ»[24]։ Ինչպես հայտնի է դարձել Ղուկասի չհրապարակված նամակների և ռուսական դիվանատներում պահվող փաստաթղթերի ուսումնասիրությունից[25], Ղուկասը քաջ հասկանում էր, որ Հայաստանի փրկությունը կարելի էր իրականացնել միայն Ռուսաստանի օգնությամբ, ուստի դրան նպաստելու համար, կաթողիկոս ընտրվելուց հետո, ռուսական պետության ղեկավարներին և զինվորական հրամանատարներին գրել է բազմաթիվ նամակներ, ընդունել նրանց պատվիրակներին էջմիածնում, ուղարկել իր ներկայացուցչին Պետերբուրգ։ Այդ հարցերին ավելի հանգամանորեն կանդրադառնանք այս ներածության հետագա էջերում։ Նշենք միայն, որ Ղուկաս Կարնեցին սկզբից էլ իր հայացքը հառել էր դեպի հյուսիս և շատ բան է արել ռուսական արշավանքին նպաստելու համար։

Ռուսական պետության ղեկավար անձանց և բարձրաստիճան զինվորականների հետ Ղուկաս Կարնեցու ունեցած կապերի հարցին հանգամանորեն անդրադարձել է Լեոն։ Իր «Հայոց պատմության» մեջ նա հրապարակել է ռուսական արշավանքի նախապատրաստմանը վերաբերող ուշագրավ նյութեր և ընդգծել Ղուկասի միանգամայն դրական վերաբերմունքն ու իրագործած միջոցառումները։ Նա գրում է, որ «Ղուկաս կաթողիկոսը, նույնպես հակառակ լինելով ապստամբությանը, միացած էր այն գործիչների հետ, որոնք աշխատում էին ռուսական արշավանք բերել Անդրկովկաս՝ նրա միջոցով Հայաստանն ազատելու համար»[26]։ Մանրամասն խոսելով Աղա Մուհամադ շահի 1795 թ. արշավանքի մասին, Լեոն նշում է Ղուկասի բացառիկ կարևոր դերը էջմիածնի վանքի և նրա պարիսպների ետևում պատսպարված շրջակա հայկական գյուղերի բնակչության կյանքի փրկության գործում[27]։ Տարբեր առիթներով նա շեշտում է Ղուկասի «խելացի զգուշությունը»[28], «շրջանկատ հեռատեսությունը»[29]։ Խոսելով էջմիածնի վանքի նորոգման մասին, Լեոն գրում է, որ Ղուկասը «շատ հմուտ էր շինարարական արվեստին և անձամբ ցուցումներ էր տալիս վարպետներին ամենադժվար հանգամանքներում»[30]։

---

[24] Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 3220—3221։

[25] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, стр. 54—56.

[26] Լեո, նշված աշխ., էջ 381։

[27] Նույն տեղում, էջ 387։

[28] Նույն տեղում, էջ 349։

[29] Նույն տեղում, էջ 401։

[30] Նույն տեղում, էջ 585։

2038
ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍ. ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА Ин-т востоковед. АН Арм. ССР

լուսահոգւոյն կամի մահացուցանել պէսպէս վատահամբաւութեամբք. ապա և զմեզ յաջողակի սպանանել։ Թէպէտ և նմա այնպէս յաջողի, որպէս Եսաւայ, այլ զաստուածաշարժ հանճարեղութիւնն Ռեբեկայ և Իսահակայ առնուլ մեզ ապացոյց ի դէպ է, զօգել զմեզ ի խոյս ինչ միջոցի ի միջասահման ընթացս (որպէս և նոքա զՅակոբ ի Միջագետս), որ է արքունական պողոտայ և անմեղադրելի յամենայն ումեքէ, մինչև տացէ և մեզ Աստուած զժամանակ ժառանգել զամենայն ժառանգութիւնս Հօր մերոյ և նմա թողուլ և գիմել ի սէիր։ Եւ թէ զի՞նչ ընդդիմութիւնքն մեզ և զինչ վատահամբաւելն զլուսահոգին, զբազումն թողեալ, զկարճառօտն ասացից։

Տակաւին զանուն մեր չյիշեցուցանէ ի Պոլիս և զմահսարն մեր ըմկնքեցուցանէ և վատահամբաւէ լուսահոգին ազահ, արծաթասէր և կեղեքիչ ազգի և սաստ շռայլաբար ցրուօղ։ Վասն որոյ զկանոնս դնել կամի ի վերայ մեր, և զանխոնարհելի իշխանութիւնն սրբոյ Աթոռոյս ի ներքոյ հրամանին իւրոյ արկանել։ Եւ դեռ չէ եկեալ, և թէ եկեսցէ, ունիմք և մեք յայնժամ զասելիս, զորոց զլիապէսն գրեցից քեզ յետոյ։ Իշխանքն ամենքեան չեն կամակից, բաց ի սակաւուց պատառաքաղաց, վասն այն այսքան յետաձգի։ Այլ զի ստամբակ է, կամի պէսպէս հնարիւք ի կամս իւր ընկճել զամենայն և կայ այժմ այսպէս, և կամի հաստատել, ապա թէ՝ զփարմանսն և զմահսարսն հոգալ և յղել։ Եւ առ այսոսիկ եթէ զկըծեալ սրտիւ սակս լուսահոգւոյն անուանաբեկութեան կամիցիս ինչ գրել ի Պոլիս ումեք, մի այնպէս, զի վերստին առիթ լիցի բծախնդրին, այլ իմաստութեամբ զերախտամոռն յամօթ առնել բարւոք է, քան թէ կծու բառիւ կատաղի առնել։ Այլև որ գրեալ էիր, թէ զոր ինչ թուղթս և գրեսցես, հարկաւոր է սաւատն առ մեզ լինել, և կամ մի կողմն բաց յղեա առ մեզ, նոյնպէս և որ գրես, թէ թիւն Փրկչին դնել ռաղամով, որ ռուսքն
56բ տեսցեն, // վասն ռուսա՞ց թղթոցն միայն գրես, թէ հայոցն ևս գրեսցես մեզ։

315. Թուղթ ևս սրբազան Վեհն ի վերայ Մօզտօքու կամէնդատ պօլկովնիկ Ալէքսանդր Ֆէտօրովիչ. Իվանովն գրեաց, ծանուցանելով նմա նախ՝ զլուսահոգի սրբազան Վեհի մահն և զիւր յաջորդելն զԱթոռս սուրբ և երկրորդ՝ գրելով, թէ որովհետև ըստ հարկի պաշտամանունս մերոյ առ ամենայն բարեկամս և սիրելիս մեր և սրբոյ Աթոռոյս զթուղթս գրեմք, վասն որոյ և զայս օրհնութեանս թուղթ ևս քեզ գրեցաք, նախ ի ծանօթութիւն մեզ քոյ, որ մինչև ցարդ ունեցեալ ես առ սուրբ Աթոռս զսէր, և որոյ սակս և հոգելոյս հայրապետն մեր երբեմն զթուղթ է գրեալ քեզ, և երկրորդ՝ ի խնդրել ի քէն, զի որպէս զհրաման ունիս ի կայսերուհւոյն առանց վկայական գրոյ ի սուրբ Աթոռս նստօղ կաթուղիկոսին՝ չթողուլ զոք ի կարգաւորաց ազգին մերոյ մտանել յերկիրդ Ռուսաց, նոյնոյ հրամանին կատարօղ լիցիս միշտ, և թարց մերս կարմրակնիք վկայական գրոյ մի զոք ի կարգաւորաց ազգիս մերոյ թողուցուս մտանել ի երկիրդ ձեր յայդր։ Յետ այսց և զյորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս ինքեան և ի խնամս առ մերայինսն և առ Յովսէփ պետն, որք անդ, հանդերձ օրհնութեամբք։ Եւ ապա վասն սոյն թղթոյս տանօղ Գրիգորին ևս գրեաց՝ շուտով ուղևորել անտի։

Զօրինակն սորա ի նոր տետր 54 երեսն գտցես[80]։

316. Թուղթ ևս ի Մօզտօք առ մեր գործակալ պարոն Գէորկին ի Մանկասարն. յիշեցուցանելով սոցա զյառաջ քան զայս ի նոյեմբերի

(1) զլուսահոգի սրբազան Վեհի պահարանաւ թուղթսն հանդերձ իւր գրեալ թղթովքն յղելն ի Թիֆլիզ առ տէր Աբրահամն, հասուցանել սոցա, ընդ որս և առ սոսա ևս զթուղթ գրելն, իբր սոքա զպահարանն բացեալ, զիւրեանցն հանցեն և զմիւսն յղեսցեն առ Յովսէփ վարդապետն (որպէս յիշեալ գոյ ի սոյն յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ նոյեմբերի Ա (1)։ Այլ զի անցեալ էին այն թուղթքն ի Մօզտօքու և գնացեալ դէպ ի Հաշտարխան, և ի ձեռս սոցա չէին հասեալ, որպէս և սոքա պարոն Գրիգորին ասացեալ էին (զոր ի վերդ ի թուղթն Յովսէփ պետին ևս գրեցաւ)։ Ուստի գրէ առ սոսա սրբազան Վեհն, թէ իմացաք, որ այն գրերն անցեալ և գնացեալ են։ Իսկ թէ դուք տեսեա՞լ էք, ասէ, զայն պահարանսն և զթուղթսն ձեր ի նոցանէ և հանե՞ալ էք, թէ ոչ, զայն չիմացաք։ Վասն որոյ գրեմ, ասէ, ձեզ, զի գրեսջիք, ասէ, զորպէսն այս բանիս մեզ, թէ դուք զայն թուղթսն տեսի՞ք, թէ ոչ, զի միամտիցուք։ Ազդեաց սոցա և զթուղթ գրելն իւր այժմ առ կամէնդատն քաղաքին սոցա հանդերձ հարկաւոր զխտմամբն և պատուիրեաց սոցա ևս, թէ զգուշաբար մուղայէթ լիջիք, զի առանց մերս գրոյ մի մտցէ յայդ երկիրդ կարգաւոր ոք ի մերս ազգէ։ Ապա հարկ է զգիրն իւրեանց անպակաս առնել սատի։ Իսկ ի վերջոյ զողջոյն և զօրհնութիւն գրեաց տեղւոյ համայն քահանայիցն, իշխանացն և ժողովրդոցն ամենից։

Օրինակն սորա է նոր տետր ի 55 համարսն[81]։

317. Թուղթ ևս ի Թիֆլիզ առ տէր Պետրոսն գրեաց (որ ի վերն ի
66ա թուղթն // Յովսէփ վարդապետին յիշեցաւ), թէ ի ներկայումս գիր ընկալաք ի Յովսէփ վարդապետէն, որ զքեզ խնդրեալ է երթալ անդ ի պիտանաւորութիւն Նոր Նախիջևանու ժողովրդեանն, ըստ որում և դու կամս ունիս, ասէ, որ և յայդր առ արքայն ևս է գրեալ, ասէ վասն քոյ առ ի յղել որպէս լուաք։ Վասն որոյ պատուիրեմ, ասէ, քեզ, զի թէ կամս ունիս երթալոյ, երբ և զոր ինչ ցուցցէ քեզ անդ Յովսէփ պետն զպաշտօնս, զայնս մերովս հրամանաւ գիտցեալ կացցես, ասէ, ի պաշտօնսն յայնոսիկ, զհայեցողութիւնս մտացդ աչաց ի հոգևոր գլուխ քո ի սուրբ Աթոռս և առ մեզ ունելով անթարթ, ասէ, ըստ իմաստնոյն խրատու։ Եւ ընդ հաբաղատութեանն շաւիղ ընթանալով՝ ուշ յայն իսկ ունիցիս եդեալ, ասէ, զի մի վրիպիցիս ի նպատակէն հանդէպ կացելոյ ոչ յաջ և ոչ յահեակ։ Ահա և զյատուկ գիր վկայութեան գրեալ վասն քոյ, ասէ, առ սահմանակալս երկրին Ռուսաց (զոր ինքեանք պաշփօրթ կոչէն, ասէ). յղեցաք ընդ սոյնոյ ունիլ քեզ ի ձեռին, զի չլինիցի, ասէ, արգելիչ ոք քեզ ի մտանելդ յայն իշխանութիւն։ Զորս և յղեցաք, ասէ, առ Կարապետ վարդապետն մեր, որ յայդր, զի թէ երթալոյ լիցիս, տացէ քեզ և երթիցես, ասէ։ Եւ թէ այտի, թէ ի Մօզտօքու և թէ ի Նոր Նախիջևանու գրեսցես մեզ, ասէ, զքոյդ որպէսն։

Զգաղափարն թղթոյս ի նոր տետր 54 երեսն գտցես[82]։

318. Թուղթ վկայական ևս (որ ըստ ռուսաց պաշբօրթ կոչի, որպէս ի վերոյդ ի թուղթսն Յովսէփ պետին և տէր Պետրոսին գրեցաւ)[83] գրեաց վասն նորա ի վերայ սահմանակալ կամէնդատացն Ռուսաց, այսպէս թէ ծանուցումն լիցի սահմանակալ պարոն կամէնդատացդ ազգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսերութեանն, զի զսոյն գրաբեր տէր Պետրոս Պետրոսեան քահանայս, որ է ի մերս ազգէ և օրինօք մերս եկեղեցւոյ, այսու վկայական գրով մերով առանց ընդդիմադարձութեան ի ներս ըն-

կալեալ՝ ուղևորեսցիք ձերով բաշրօրթիւն առ Ռուսաց երկրի Հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն և լերուք ողջ:

Զսոյն թղթոյս գաղափարն գտցես ի նոր տետր 168 երեսն:

319. Թուղթ օրհնութեան ի Նոր Նախիջևան առ Դանիէլն, որ ձեռամբ Գրիգորին յղեալ:

320ա. Թուղթ ևս առ Մկրտիչն, որ յղեալ էր ձեռամբ Գրիգորին և էր գկէս: Արդ, վերոյ գրեալ Նոր Նախիջևանու գումբեռնաթի և կամէնդատի և մերազնեայ իշխանաց գրեանքն յղեցան ի ձեռն Յովսէփ վարդապետին: Իսկ Մօզտօքունն գրեցան ի ձեռս իւրաքանչիւր տեարցն, և տէր Պետրոսի թուղթն ևս հանդերձ բաշրօրթիւն յղեցան ի ձեռն Կարապետ վարդապետին ի Թիֆլիզ (որպէս ի ներքոյ ի թղթոջ նորին ևս յիշելոց եմք): Որք ամենեքեան գրեալք յամս. [փետրվար] Դ (4) յանձնեցեալք եղեն պարոն Գրիգորին՝ ի տանիլ, որ և ի նոյն աւուրն ել:

Բայց քանզի Թիֆլիզու առաջնորդ քանաքեռցի Յովաննէս վարդապետն ոչ բարւոք վարիւր ընդ ժողովրդեանն, վասն որոյ ոմանք անուր
66բ բազմիցս զանշնորհակալութիւնս // գրէին զնմանէ առ սրբազան Վեհն: Իսկ սրբազան Վեհն ևս նկատելով ի նա խռովասիրութիւն, կամեցաւ ի ներկայումս բերել զնա անտի: Ուստի զմի փոքրիկ կոնդակ գրեաց ի Թիֆլիզ ի վերայ տէրունի վիճակացն սրբոյ Աթոռոյս, որով զընձացի Կարապետ վարդապետն՝ միաբանն սրբոյ Աթոռոյս, որ այժմ անդ էր, վէքիլ կարգեաց ի տեղի առաջնորդին, որպէս զի Յովաննէս վարդապետն զառաջնորդական գործն նմա յանձնեալ, եկեսցէ ի սուրբ Աթոռս: Վասն որոյ զերկուս թուղթս ևս առ Յովաննէս և Կարապետ վարդապետսն, և զքանի մի թուղթս ևս առ այլս ոմանս գրեաց անդ, ևս սակս սոյնոյ բանիս, որք ևս հանդերձ վերոյ գրեալ Ռուսաց երկրի թղթովքն ընդ դէֆթադ պարոն Գրիգորին ուղարկեցան: Զորոց զիտմունսն ծանուցանեմք աստ:

320բ. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Թիֆլիզու քաղաքին տէրունի ժողովրդոցն սրբոյ Աթոռոյս, նաև համայնիցն, որք են ի յայլ տէրունի գիւղորայս և յառաջնորդական վիճակսն սորին, ծանուցանելով նոցա զխնդրելն իւր զառաջնորդն իւրեանց՝ զՅովաննէս վարդապետն առ ի գալ ի սուրբ Աթոռս և զԿարապետ վարդապետն կարգել ի տեղի իւր փոխանորդ և վէքիլ, և զառաջնորդական գործն իւր յանձնել նմա, զի կառավարեսցէ ժամանակ ինչ և գրելով զառ Կարապետ վարդապետն ևս զպատուէր գրելն, լինել վէքիլ և առաջնորդական գործոյն հոգ տանել մինչև ցգալն Յովաննէս պետին ի սուրբ Աթոռս և ցառնելն ինքեան յայնժամ, զոր ինչ և պատշաճն իցէ: Ապա և պատուէր գրեաց՝ հնազանդ և հպատակ լինել Կարապետ վարդապետին և զամենայն առաջնորդական և վանքական հասսն և զիրաւունսն ի նա հասուցանել և զայլն, որպէս սովորութիւն և հարկ է գրել:

Զօրինակն սորա ի նոր տետր 162 երեսն գտցես:

Հովհաննես վարդապետի փոխարեն Կարապետ վարդապետին ժամանակավոր առաջնորդ և գործակալ նշանակելու հարցը շոշափված է նաև վերոհիշյալ անձանց, ինչպես նաև տեր Ղազարին, մելիք Ավետիքին, մելիք Մկրտում Թաղոյանցին, միրիշբյար իվանենին և պրն. Նազարբեկյանցին հղված նամակներում (էջ 66բ—68ա):

68ա 321. Թուղթ ևս տաճկերէն՝ սիրոյ առ Հերակլ արքայն գրեաց, ի պատասխանի խաթրահարցական թղթոյն նորին, զոր այժմ ի գալն դէֆթադ պարոն Գրիգորին ընդ նմա գրեալ էր, առ որ սէր և օրհնութիւն և յորդորումն:

322. Թուղթ ևս առ Ղազախու... աղայն, ի պատասխանի շնորհաւորական թղթոյ նորա, զոր այժմ գրեալ էր նա և ընդ Գրիգորին յղեալ, որ էր ի պատասխանի ի յանցեալ թուոյ ի... առ սա գրեալ թղթոյն, որ ընդ Դանիէլ վարդապետին յղեցաւ:

Այս վերոյ գրեալ Թիֆլիզու թուղթքս ևս ընդ Հաշտարխանու գրեանցըն յղեցան ձեռամբ պարոն Գրիգորին, որպէս և ի վերոյ ևս ասացաք յամսոյս Դ (4):

1781 թ. փետրվար—Թուղթ մի ի Բայազիտ առ իշխանսն և առ այլս

Սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ Եսայի վարդապետն այժմ ի Բայազիտ վախճանեալ էր, վասն որոյ Բայազիտու իշխանացն և քահանայիցն և ի նոյնոյ վանից միաբանիցն ոմանք զքանի մի կնքով թուղթ էին գրեալ ի ներկայումս առ սրբազան Վեհն և զառաջնորդ խնդրեալ: Եւ յանցեալ տարւոջն մինչ ի գալ Վրաց արքային բազում զօրօք և ի վրդովիլ երկրիս, միաբանքն նոյնոյ վանիցն փախուցեալ էին ի Խոյ և ի Բայազիտ, այժմ ոչ դառնային ի վանքն, թողլով ամայի վասն չափազանց հարկապահանջութեանն Մակուայ սուլթանին Ահմատ կոչեցելոյ և որդւոցն և կնոջն, որք բաց ի սովորական մաղթուէն, որ էր իբրու Ծ (50) թուման, ուրոյն ուրոյն ևս անյագաբար զիրս պահանջէին: Եւ յայսպէս առնելն նոցա զխնամս ևս ոչ տանէին խղճալի վանիցն՝ թողլով կղեքիլ յայլոց ևս և մանաւանդ ի յաճախ երթևեկաց: Նմին իրի գրեալ էին սոքա ի թուղթն իւրեանց առ սրբազան Վեհն զխնդիր՝ առ ի խօսիլ սակս
68բ այն վանիցն ընդ ագահասիրտ Ահմատ սուլթանին և հարկել նմա, որպէս զի թէ ինքն և թէ իւրայինքն ըստ առաջնոյն մի՛ միշտ // զսուրբ վանքն կողոպտել ջանասցեն՝ ուրոյն ուրոյն զիրս պահանջելով, այլ միայն զմաղթուն իւրեանց առցեն, այն ևս թեթևաբար և պակասով, ապա թէ ոչ, այլ այն վանից միաբանն յետս ոչ դառնան, ասեն, ի վանքն և առաջնորդ ևս ոչ կարէ նստել անդ, և զայլ ըստ սմին բանս:

323. Իսկ սրբազան Վեհն զմի թուղթ գրեաց առ նոսա[84], այսինքն առ նոյնոյ վանից միաբան Պետրոս և Յովաննէս վարդապետսն, և տէր Վահանն, և Մարգար աղայն, և պարոն Ստեփաննոսն, և պարոն Յակոբն, և պարոն Սուքիասն, և պարոն Թումանն (որոց իսկ կնիքքն էին ի վերայ թղթոյն), ի պատասխանի թղթոյն իւրեանց: Յորում՝ նախ մխիթարութիւն վասն մահուան առաջնորդին իւրեանց՝ Եսայի ծերունի վարդապետին և վասն ամայի մնալոյն սրբոյ վանիցն Թադէոսի Առաքելոյ: Եւ զի գրեալ էին սոքա, թէ վասն ամայութեան սրբոյ վանիցն Ահմատ սուլթանի որդին գրեալ է մեզ, թէ միաբանքն գան և զվանքի դուռն բանան, զի այսուհետև զայլ որիշ պահանջմունս ոչ եմ առնելոց ի դոցանէ և զԾ (50) թուման մաղթուն ևս, զոր միշտ առեալ եմք, յայնմանէ ևս զԺ (10) պակասեցուցից և զԽ (40) առից:

Մեք գրեցաք նմա զպատասխանի, թէ զայդ ևս ոչ կարեն տալ, այլ զԼ (30) հազիւ տան: Եւ խնդրեալ էին ի սրբազան Վեհէն զհոգս իմն առնել վասն աւեր մնալոյն այն սուրբ վանիցն և խօսիլ ընդ սուլթանին և զպայման իմն դնել ընդ նմա, որ այնու կանոնաւ վարիցի և շինութիւն

Տանն այնմիկ սրբոյ ացել զկայ։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ որպէս ձերն, նոյնպէս և մերս սիրտք ցաւին վասն սրբոյ Տանն այնմիկ, բայց այժմ վասն այդր այսպէս տեսաք պատշաճ, որպէս զի յղեսջիք առ մեզ զթուղթն զայն, զոր գրեալ է առ ձեզ սուլթանի որդին, կամ թէ զօրինակն առեալ առ մեզ յղեսջիք։ Եւ դուք ես գրեսջիք, ասէ, զթուղթ մի ի վերայ սուլթանին և յղեսջիք ի ձեռս մեր, որոյ դիտաւորութիւնն, ասէ, այսպէս լիցի, թէ յորքան ժամանակաց հետէ շինեցեալ է տունն այն, դեռ այսպիսի նեղութիւն չէ կրեալ, զոր այժմ ի ձէնջ կրէ, և ոչ երբէք եղեալ ի նմանէ այսքան պահանջմունք, որքան դուք առնէք։ Քան զձեզ յառաջ ով ոք եղեալ է, պահեալ է զպատիւն այդ օջաղիդ և ջանացեալ է, որ պայծառ մնայ, որ խիրեան ևս պարծանք լինի, թէ յիմ հողումս այսպէս օջաղ կայ. և խիրեան ևս մէկ չափաւոր մաղթուն է եղեալ և աւելորդ պահանջմունք չէ եղեալ։ Այժմ դու զմաղթուն չափազանց աւելացուցեալ ես, և բաց յայնմանէ դու և որդիքդ ես աւելի պէսպէս շիլթախ առնէք։ Վասն որոյ թէ առաջնորդ և թէ միաբանք ամէն զզուում են և փախչում, որպէս որ ահա եղև և այնքան տարէն օջախն ամայացաւ, և առաջնորդն ևս փախուցեալ, աստ դառն ցաւօք մեռաւ։ Այս քո անուանդ ինˆչ լայաղ էր և քեզ զիˆնչ օգուտ էր։ Թեմերն ամէն աւերուած, դուք ինչ կամէնում էք, առնում
69ա էք, մուլ||ղայէթ էլ չէք կենում, որ Քեօչարի քիւրտն և այլ գնացող եկող զլլբաշներն չնեղացնեն, որ նոքա ևս բռնութեամբ ինչ ուզում են անում են։ Այժմ այն տանն այլ որից կերպ շինութեան ճար չկայ, այն տունն հոգևոր տիրինն է, եթէ դու նմա խաթրիջամ կառնես, և մի այնպէս պայման կու դնես, որ քո բնական մաղթուն ինչ է, զայն առնուս, և դու կամ տղայքըդ աւելի պահանջմունք չառնէք, և տիրաբար մուղայէթ կենայք տանն, որ այլ չնեղացնեն և խալիֆայն զայն լսելով, մի սեապլուխ առաջնորդ կարգէ այն տանն, ապա թէ շինութիւն կարէ ստանալ այն տունն։ Ապա թէ այսպէս չլինիցի, ոչ սեապլուխ կարէ երթալ յայն օջաղն, և ոչ շինութիւն կլինի անդ, մանաւանդ թէ որքան այսպէս անկանօն պահանջմունք կան, մեք մի փարայ չեմք տալ այն տան անուամբ, զի մեք տամք, որ տունն շէն մնա, և ոչ թէ այս և այն աւելորդաբար կեղեքեն և ուտեն։ Եւ այլ այսպիսի բանք, զինչ որ պատշաճ տեսանիցէ, ասէ, գրեալ յղեցէք առ մեզ, որ մեք ևս տամք, ասէ, նմա և ապա խօսիմք, որ ինչ և պէտքն է, ասէ, և մի կանօն դնեմք. իցէ թէ գիր ևս առնումք, ասէ, և ապա զով ոք և կամիցիք և վանիցն պատշաճ լիցի, առաջնորդ կարգեսցուք, որ սուրբ Տունն այն շինեսցի վերստին։

Իսկ ապա և զայսպիսի թուղթ խնդրելոյ պատճառն գրէ, թէ մինչ մեք թարց այսպիսի գրոյ մեղադրիցեմք զնա, նա ուրաստ կլինի, թէ այդ, ամենայն սուտ են ասացեալ քեզ և մեզ երես կու ձգէ, ասէ, թէ սեապլուխ յղեա անդ։ Եւ մինչ մեք, ասէ, չյղեսցուք, կասէ թէ դու չես կամենում, որ այն տունն շինուի։ Վասն այն ասեմ լինիլ, ասէ, այսպիսի թուղթ, որ մեք ասեմք, թէ թէպէտ վանքի տէրն մեք եմք, բայց հաց տուողն նոքա են, եթէ մէկ կանօն չլինի, ոչ նոքա հաց կուտան և ոչ սեապլուխ գիր գլուխ կու երթայ անդ։ Ուրեմն շուտով հոգասջիք, ասէ, զայսպիսի գիրն և յղեսջիք, ասէ, առ մեզ, որ հոգս ինչ արասցուք։ Եւ զինչ որ առ նա գրելոյ լինիք, ասէ, նոյն մտօքն մի հայերէն գիր ևս, ասէ, մեզ գրեսջիք, այնպէս որ ցոյց տալոյ լինի, ասէ, որ մեք ևս ցոյց տամք, ասէ, և ասեմք, թէ ահա մեզ ևս այսպէս են գրեալ։

Զօրինակն սորա ի նոր տետրի 63 երեսն տես։

Գրեալ յղեցան թուղթքս ի Բայազիտ ընդ անտի եկեալ փայեկին յամսոյս է (7)։

1781 թ. փետրվար—Երկրորդ անգամ թուղթ ի Գեանջայ

324. Գեանջայու քահանայքն և իշխանքն ահա զթուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն, ի պատասխանի սորին ի դեկ. ... առ նոսա գրեալ թղթոյն (զոր գրեաց նոցա՝ ընտրել ի միջոյ իւրեանց զոմն առ ի լինիլ գանձապետ սրբոյ Աթոռոյս, որ և յիշեալ գոյ աստ ի յանցեալ թուոյ ի
69բ դեկտ...)։ Ծանուցանելով || զընտրելն իւրեանց զաստապատցի տէր Միքայէլն ի գանձապետութիւն սրբոյ Աթոռոյս և խնդրեալ էին կոնդակաւ կարգել զնա ի Գեանջայ գանձապետ սրբոյ Աթոռոյս։ Վասն այնորիկ և սրբազան Վեհն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա, զմի կոնդակ գրեաց ի Գեանջայ առ Քիլիսաքեանդու սուրբ Յովաննէս եկեղեցւոյ Պօղոս վարդապետն, և տէր Պետրոսն, և տէր Անտոնն, և տէր Յարութիւնն, և տէր Ախթանէսն, և առ մէլիք Գասպարն, և Վարդան քեօխվայն, և պարոն Աբրահամն, և մահտեսի Սիմէոնն, և պարոն Յովաննէսջանն, և պարոն Աւագն, և պարոն Բաղտասարն, և պարոն Պետրոս և Պօղոսն Յօհանջանեան, և առհասարակ առ բոլոր ժողովուրդսն, զհաւանութիւնս տալով խնդրոյն նոցա և կարգելով զաստապատցի տէր Միքայէլն անդ գանձապետ սրբոյ Աթոռոյս և պատուիրելով ևս ձեռնտու լինիլ նմա և գործոյն և ի սէր ունիլ զնա, որպէս զի թէ գանձապետական գործոյն և թէ անդ պահեալ բանիցն սրբոյ Աթոռոյս մուղայէթ և հոգացող լիցի։ Ապա և զյորդորմունս գրեաց՝ առ ի առատութեամբ և անխնայօրէն արկանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս զդրամիկս և ի սիրոյ սորին անպակաս մնալ։ Իսկ յետոյ և ի դէմս տէր Միքայէլին ևս զպատուէր գրեաց յատկապէս՝ արի կալ ի գործն իւր գանձապետութեան և յորդորմամբ ժողովել զարդիւնսն և ըստ ժամանակին մոմի տալ և յղել ի սուրբ Աթոռս զմոմն առ ի պիտանաւորութիւն սմին։

325. Կոնդակ ևս անդրանիկ օրհնութեան ի վերայ Նորշէն կոչեցեալ գեղջ համայն ժողովրդեանն գրեաց, և յանուանէ ևս ի վերայ տէր Թովմասին, տէր Անդրէասին, տէր Պետրոսին, տէր Զաքարիային և իշխանացն՝ Անտօն քեօխվային, մահտեսի Ալթունին, պարոն Գրիգորին, պարոն Յարութիւնին, պարոն Յակոբջանին, առ ի շահել զնոսա, յորդորելով զնոսա՝ ի սէր սրբոյ Աթոռոյս ըստ խնդրոյ նոր գանձապետին սրբոյ Աթոռոյս՝ տէր Միքայէլին, զի նա տեսանելով զիղձս նոցա, գրեալ էր առ սրբազան Վեհն՝ գրել նոցա զթուղթ։

326. Թուղթ ևս առ տէր Միքայէլն գրեաց, ծանուցանելով նմա, թէ բազմակնիք թուղթն տեղւոյդ հասարակութեան էհաս առ մեզ, և որովհետև խնդրեալ էին, ասէ, ժողովուրդքն տեղւոյդ ի մէնջ առ ի կացուցանել զքեզ յայդր գանձապետ սրբոյ Աթոռոյս, վասն որոյ և մեք զկոնդակ գրեալ յայդր, ասէ, հաստատեցաք զքեզ ի գործդ գանձապետութեան և զկոնդակ մի ևս, ասէ, ի վերայ Նորշինու ժողովրդոցն գրեցաք, զորս և ի միասին յղեցաք, ասէ, ի ձեռս քո ընդ թղթոյս, որ զերկու կոնդակսն ևս, ասէ, ընթեռնուլ տուեալ յիւրաքանչիւր եկեղեցիսն, հաստատեսցիս ի գործդ և հարազատաբար ծառայեսցես սրբոյ Աթոռոյս և յամենայն բանս և ի գործս զղայրէթս սորին քարշեսցես, ասէ, զթուղթդ ևս անպակաս առնելով ի մէնջ։ Տեսից, ասէ, թէ որպէ՞ս ես թարց աղմկի

և կռուանիւթ բանից զգործ արդիւնաւոր առնելոյ։ Եւ ի վերջոյ հանդիպակայ թղթոյն գրեաց զհին զանձանակադրամն մոմի տալ և շուտ յղել աստ, որ սպիտակացուցմանն հասցի։

Գրեցան և յղեցան թուղթքս ի ձեռն վերոյ յիշեալ տէր Միքայէլին աստապատեցւոյ, որ ի Գեանջա, յամսոյս ԺԶ (16)։

70ա
1781 թ. փետրվար—*Թուղթք գրեցեալք ի Ղարս*

327. Դարձեալ ի նոյնում աւուրն սրբազան Վեհն զբեռնակիրս ուղարկել հրամայեաց ի Ղարս, առ ի ևս բերել անտի զցորեան ի հարկաւոր պէտս սրբոյ Աթոռոյս։ Ուստի, ըստ պահանջման հարկին, զմի թուղթ գրեաց առ ցորենոյ ժողովարար Յովաննէս վարդապետն և առ պարոն Գէորգն, ի պատասխանի նոցին թղթոցն այժմոյս գրեցելոց, յորում նախ՝ զշնորհակալութիւն սակս գնելոյն նոցա զՃԾ (150) սոմար ցորեան վասն սրբոյ Աթոռոյս ըստ հրամանին իւրոյ (զոր յիշեալ եմք աստ ի վերն յայսմ թուոջս և ի յունվարի ԻԷ (27) առ սոսա գրեալ թըղթոջն)։ Երկրորդ՝ Մաղզբերդու Մահմատ բէկին Ծ (50) սոմար ցորեան գոյր ի Ղօշավանք, վասն այնր գրեաց, թէ եթէ զինն ըստ կարգին չիցի, գնեսջիք վասն սրբոյ Աթոռոյս, ըստ որում մերձ ևս է մեզ։ Երրորդ՝ պատուիրեաց, զի բեռնակիրսն փութապէս ցորեան բարձեալ յետս դարձուսցեն ի սուրբ Աթոռս։

328. Թուղթ ևս ի Ղարս՝ առ Թուրք Հասան կոչեցեալ աղայն, որ ի սրբազան Վեհէն զփոքր ինչ գիւլապ էր խնդրեալ, զոր և յղեաց այժմ սրբազան վեհն և այսու թղթով սիրոյ ծանոյց պյղելն։

Եղին ընդ մեր աղայոցն և բեռնակրացն յամսոյս ԺԶ (16)։

1781 թ. փետրվար—*Այլևս թուղթք ի Թիֆլիզ առ Հերակլն և առ այլս*

Ընդ աւուրս ընդ այսոսիկ վասն զի գոյր թշնամութիւն ի մէջ Վրաց և Ճառըցի լէկզեացն և Վիրքն ևս քան զայս յառաջ ի նոցունց զկապուտ ինչ էին առեալ, քանի մի հարիւր անձինք ի նոցանէ եկեալ և գիմեալ էին ի կալուածս Վրաց առ ի ասպատակել զգիւղորայս, որք և գնացեալ
70բ
էին ի // գիւղ զմի և զոչխարս և զայլ զնայուն իրս գիւղացւոցն աւարհարեալ, որ ազդ եղեալ ի Թիֆլիզ քաղաք, Լեոն կոչեցեալ քաջ արքայորդին սակաւս արամբք զհետ մտեալ էր նոցա և հասեալ իսկ առ նոսա։ Եւ ի խմբիլ պատերազմին ճակատ առ ճակատ, Լեոն Միրզայն յառաջ խաղացեալ, և զոմն ի թշնամեաց ձերբակալեալ, ընկեցեալ էին զնա հրացանիւ և սպանեալ, որմէ եղելութենէ մեծագոյն սուգ էր եղեալ ազգին Վրաց և մանաւանդ արքային Հերակլայ և համայն իւրայնոցն[85]։ Իսկ իշխողն երկրիս մերոյ զՄահմետ անուն որդին իւր քանեօք ոմամբք սեւազգեաց արարեալ ընծայիւք յղեաց առ նոսա, նախ ի մխիթարութիւն նոցա, և երկրորդ՝ մանաւանդապէս այնր սակս, զի զաստի վարեալ ժողովուրդսն յետս դարձուսցէ։ Զհետ որոց և սրբազան Վեհն ևս յորդորմամբ իշխողին երկրիս մերոյ, զԳալուստ վարդապետն առաքեաց համդերձ ընծայիւք և թղթովք առ Հերակլ արքայն և առ կինն նորա և առ մեծ որդին նորին[86], նաև առ առաջնորդ Յովաննէս վարդապետն և առ այլս ոմանս ևս։ Իսկ թուղթքն են այսոքիկ, որք ի ստորև բացատրին։

329. Թուղթ մխիթարական գեղեցիկ ոճիւ և շարադրութեամբ առ Հերակլէս արքայն գրեաց, ծանուցանելով և ի վերջոյ նորին պյղելն իւր զԳալուստ պետն առ նա՝ առ ի սփոփել զնա։ Որոյ զօրինակն ի նոր տետր... երեսն տես[87]։

330. Թուղթ ևս ըստ նոյն մտաց առ կինն Հերակլայ և մայրն Լեոն Միրզային՝ Դարէջան թագուհին Վրաց գրեաց, զորոյ գաղափարն ևս ի... եր[եսն] գտցես[88]։

331. Թուղթ ևս նոյնպէս առ Գեօրգին Միրզայ արքայորդին գրեաց, զորոյ օրինակն ևս ի նոր տետրն շարադրանաց ի... երեսն գտցես[89]։

332. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ երբեմն Սաղիմայ նուիրակ և այժմ Սանահնոյ վանիցն դէտ ձեռացեալ Աբրահամ պետն գրեաց, զի սա յառաջագոյն գրեալ էր սրբազան Վեհիս մերոյ, թէ զիս Սանահնոյ վանիցն առաջնորդ առնել կամին ոմանք, և խոստացեալ էր գալ ի սուրբ Աթոռս։ Զորոյ պատասխանին գրեաց սրբազան Վեհն, թէ եթէ յօժար ես լինել Սանահնոյ առաջնորդ, և յԱթոռս գալ ևս ըղձաս, ի գալդ զՍանահնոյ կոնդակն բեր ընդ քեզ և մեք գիտեցեալ և զկոնդակ գրեալ ըստ բերեալ թղթոցդ և զամենայն թեման և զվիճակսն Սանահնոյ յատկացուցեալ, զքեզ առաջնորդ կարգեսցուք և յղեսցուք։ Իսկ թէ ի սուրբ Աթոռոջս մնալ կամիցիս, շահեսցուք (Զոր և գրեալ եմք յանցեալ թուոյ ի հոկ. Ե (5))։

Իսկ սա գրեաց, թէ զհարկաւոր բան ինչ ունելով, իմ աստ գալս յամեցաւ, բայց այժմ չև ևս եկեալ ի սուրբ Աթոռս և չև ևս առեալ զպատիւ առաջնորդական՝ զինքն առաջնորդ ձեւացուցանելով Սանահնոյ, յայլ և յայլ տեղիս զթուղթս գրէր և զվէքիլս կարգէր և զառաջնորդական ար-
71ա
դիւնս // պահանջէր, որ և զախլքալաքցի տէր Աբրահամ քահանայ ոմն ևս ի Բամբակաձոր էր վէքիլ կարգեալ։ Առ որս գրեաց սմա սրբազան Վեհն, թէ այդպէս առնելովդ հաստատես ի վերայ քոց զարտուղի աբարսն, զորս առ կենդանութեամբ հոգելոյս հայրապետին մերոյ զքէն լսէաք։ Գրեմ քեզ, ասէ, պարտիս զգուշանալ յայդպիսի անկարգ արարմանց և թիւր ընթացից և առ որ և զթուղթս ես գրեալ, ասէ, յետս ժողովել և զձեռնամխիլ յառաջնորդական գործ ինչ ինքնագլուխ, այլ որպէս և գրեալ եմք, ասէ, յառաջ քեզ, այնպէս առնել։ Իսկ եթէ ոչ զգուշանայցես, ասէ, յետոյ ըստ արարմանցդ զհատուցումն ես ընկալցիս։ Ի յաբարիցդ, ասէ, զմի գլխաւորն ասեմ, որ զախլքալաքցի տէր Աբրահամն Սանահնու և քեզ վէքիլ ես հռչակեալ և զթուղթ տուեալ, որ է յայտնի ապստամբութեան նշանակ։ Չի՞ կայ քոյ և ընդ Բամբակաձորու, ասէ, որոյ սակս գրեմ քեզ, ասէ, պարտիս զգործակալութիւն նորա խափանել և զտուեալ թուղթդ յետս առնուլ ի նմանէ, և որպէս գրեալ եմք քեզ յառաջ, ըստ այնց գրեցելոց մերոց առնել։ Եւ զայլ պատուէրս մեր Գալուստ վարդապետն ասելոց է քեզ, ասէ, համդերձ օրհնութեամբք մերովք։

333. Թուղթ ևս առ Թիֆլիզու առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի յունվարի ԻԴ (24) գրեալ թղթոյն (որոյ զհետ և զի հոկ. Ե (5) առ Բաշաչուխի Սօղոմոն արքայն և առ Մաքսիմէ կաթուղիկոսն գրեալ թուղթսն, զորս յիշեալ եմք յանցեալ թուոյ հոկտ. Ե (5) ի սոյն յիշատակարանոջ), յետս էր յղեալ, քանզի որդին նորա՝ այսինքն արքային, մեռեալ էր, վասն որոյ և գրէր սա, առ նա զմխիթարութեան թուղթ գրել։ Եւ քանզի զԱբրահամ պետէն զգանգա-

տական բանս էր գրեալ սա առ սրբազան Վեհն վասն անկարգ շարժմանցն նորին, որոյ աղագաւ ևս սրբազան Վեհն. ևս զմեղադրական թուղթ գրեաց նմա այժմ (զոր ի վերդ անա մերձ գրեցաք): Վասն որոյ գրէ սմա, թէ զնորին յանդգնական արարսն ծանեաք, առ որ և զմեղադրական թուղթ գրեցաք, ասէ, այլ ոչ ձեռնամխել յառաջնորդական գործ ինչ թարց մերոյս հրամանի և պատուիրեցաք, ասէ, խափանել զգործակալութիւնն տէր Աբրահամին ախլքալակցւոյ և այլն: Ապա յիշեցուցանէ և զքան զայս յառաջ ի փետր. Դ (4) գիր գրելն առ սա՝ առ ի գալ ի սուրբ Աթոռս և կրկին հարկէ յայսմ թղթոջ ևս առ ի գալ:

Նաև սա զմի թուղթ էր գրեալ սա աստ առ սրբազան Վեհն, յորում իբրու գանկատ է եղեալ զԻսրայէլէն և թէրևս տէր Ղազարէն ևս, որ աստ չէր հասեալ, այլ ըստ կարծեաց անկեալ էր անդ ի ձեռսն ոմանց, ու-
71բ տի զբան ինչ էին առեալ յերեսն // ի կողմանէ այն թղթոյն: Եւ սա կարծելով, թէ այն թուղթն աստ է հասեալ և մեք ի գալն աստ տէր Ղազարին ցուցեալ եմք, գրեալ էր աստ զտրտունջ ինչ, առ որ և սրբազան Վեհն գրեաց, թէ այդ գործ անմտի է, որ ջանայ զայլս ի խռովութիւն գրգռել, զայդ զմէնջ կարծես, մեք զքոյդ առ մեզ գրեալ թուղթն առանց իմիք գլխաւոր պատճառի և հարկի ընդէ՞ր ցուցանեմք այլոց և մանաւանդ զայդպիսի գիր ի քէն չեմք, ասէ, ընկալեալ: Քննեա և տես, ասէ, թերևս ի ձեռս ներհակաց է անկեալ յայդր: Եւ թէ այժմ անձեռնհաս եղաք առ Ափխազաց արքայն զմխիթարութեան թուղթ գրել, յետ քանի աւուրց եմք գրելոց: Այլ այժմ մինչ լուաք, ասէ, զբօթալի համբաւ Լևոն Միրզայ արքայորդւոյն, յոյժ կսկծեցաք և ըստ պատշաճին ահա յղեցաք, ասէ, զԳալուստ վարդապետն մեր ընծայիւք և մխիթարական թղթովք առ Հերակլ արքայն, և առ թագուհին նորա, և առ Գէօրկին Միրզայ՝ մեծ որդին արքային: Իսկ ի վերջոյ հարկիւ գրեաց, թէ եթէ ըստ յառաջագոյն գրեցելոյն մերոյ եկեալ ես այտի առ ի գալ ի սուրբ Աթոռս, բարւոք է, ապա թէ ոչ, ի դառնալն այտի Գալուստ վարդապետին ի միասին եկեսջիր, ասէ, ընդ նմա: Այլև սա ընդ թղթոյն իւրոյ զմի մասնաչափ թուղթ ևս էր գրեալ, թէ Յովսէփ պետն Հաշտարխանու զտէր Պետրոսն խնդրեալ է երթալ անդ, սա ևս կամի, խնդրեմ հրաման տալ սմա առ ի գնալ: Առ որ սրբազան Վեհն գրեաց, թէ մեք յառաջ եմք գրեալ նմա ի փետրվարի Դ (4), զի երթիցէ (զոր և յիշեալ եմք ի վեր անդր ի փետր. Դ (4) ի թղթոջ Յովսէփ պետին և Կարապետ վարդապետին): Եւ յայնժամ առ տէր Պետրոսն ևս զթուղթ է գրեալ սրբազան Վեհն, որպէս ասացաք:

334. Թուղթ ևս առ Կարապետ վարդապետն, թէ քանիցս քեզ բանիւ և թղթով պատուիրեալ եմք զթուղթդ ի մէնջ անպակաս առնել, ապա ընդէ՞ր զորպիսութիւնսն քոյ և գործոյդ ոչ գրես մեզ: Մինչև ցայժմ զմոմի որպէսն չիմացաք, ասէ, թէ որպէ՞ս արարիք: Մեք առ քեզ զթուղթս գրեմք, ասէ, կամելով զի և դու առ մեզ զթուղթս գրեսցես, իսկ դու զպատասխանիս գրեցելոց մերոց ևս ոչ գրես: Հարկիւ գրեմ քեզ, ասէ, գրել զորպէսսդ և ոչ զանց առնել: Ապա և վասն յղելոյն զԳալուստ վարդապետն ծանուցումն, որպէս և ի վերդ ի թուղթն Յովաննէս պետին գրեցաւ: Այլև՝ յիշեցուցանէ զյառաջ քան զայս գրեալն Յովաննէս պետին, որ զսա ի տեղի իւր վէքիլ կարգեսցէ և ինքն եկեալ եկեսցէ, և իւրեան ևս գիր գրելն և զվէքիլութեան կոնդակ յղելն: Գրելով ևս, թէ եթէ մինչև ցայժմ Յովաննէս պետն չիցէ եկեալ, հարկեցաք նմայ, որ այժմ

72ա եկեսցէ ընդ Գալուստ վարդապետին ի վերադառնալն նորին և այլ մի մնասցէ յայդր: Յայսմ թղթոջ և ողջոյն գրեցաւ տէր Ղազարին:

Յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Գալուստ վարդապետին յամսոյս Իե (25):

1781 թ. փետրվար—Այլ ևս թուղթք ի Ղարս գրեցեալք

335. Վերստին և ևս բեռնակիրք ուղարկեցան ի Ղարս՝ առ ի բերել անտի զցորեան: Ընդ որս սրբազան Վեհն պատշաճարար զթուղթ գրեաց առ Յովաննէս վարդապետն և առ պարոն Գէորգն, ի պատասխանի ի փետր. ԻԲ (22) գրեալ թղթոյն նոցա, որոց շնորհակալութիւն վասն աշխատանացն նոցա, և վասն Մահմատ բէկի ցորենոյն, որոյ սակս սրբազան Վեհն քան զայս յառաջ գրեալ էր առնուլ, այժմ գրէին սոքա, թէ Զ (6) ղուռուշ և կիսով տայ սոմարն և ի սոմարն Գ (3) չափ պակաս գոյ, ուստի գրեաց՝ այլ չառնուլ: Ապա գրէ, թէ զՃԾ (150) սոմարն, որ առեալ էք, յորմէ և զմասն մի յղեալ էք, վասն մնացելոյն ահա զուղտսն վերադարձուցաք, ասէ, առ ի զայն ևս բերել, զորս շուտով բարձեալ դարձուցջիք, ասէ: Բայց կասկածանս կրեմք, ասէ, վասն ապագային, թէ ցորեանն թանկանայցէ և սուրբ Աթոռս զպակասութիւնս կրեսցէ, վասն որոյ կամիմք, ասէ, զի Ծ (50) սոմար ցորեան ևս առջիք նորապէս: Այլ նկատեսջիք, ասէ, եթէ յետոյ թանկանալոց է, առջիք, իսկ թէ դիւրաձեռն լիցի, ասէ, յետոյ ևս առնուլն գրեսջիք մեզ:

Իսկ և Յովաննէս պետն գրեալ էր, թէ զքաղաքիս պտղին ժողվելոց եմ և յանձնելոց Ղօշավանից վէքիլ Պօղոս պետին վասն սրբոյ Աթոռոյդ, զի ի տեղի տալոց դրամոյն լիցի և թէ ահա զՊօղոս պետն ահա եղեալ եմք առ ի ժողովել: Զի՞նչ հրամայես: Առ որ պատասխանի զայս գրեաց սրբազան Վեհն, թէ պարոն Գէորգն զայդմանէ գիր ինչ չէր յիշեալ ի թուղթն իւր առ մեզ: Վասն այդր ընդ նմա ի միասին խորհրդակցեալ, որ ինչ արժանն է և սրբոյ Աթոռոյս օգուտն, ընդ տղայոցն շուտ մեզ գրեսջիք, և զոր ինչ յայնժամ գրեսցուք ձեզ, այնպէս առնիցէք:

336. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան և միրոյ ևս առ պարոն Կարապետն գրեաց, քանզի յղեալ էր նա ընծայ սրբազան Վեհին զԺԶ (16) լիտր նօխուտ և մեծաւ ըղձիւ զօրհնութեան թուղթ էր խնդրեալ, վասն որոյ և սրբազան Վեհն գրեաց:

337. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Նախիջևան կոչեցեալ գիւղն առ տէր Մովսէսն գրեաց, քանզի յառաջ քան զքանի մի աւուրս սա և ընդ ինքեան Աւետիք ոմն և Մելքոն ոմն եկեալ ի սուրբ Աթոռս, ինքն խոստացեալ էր տալ զԳ (3) սոմարն Ղարսայ ցորեան, և Աւետիքն ևս ուխտեալ էր տալ Դ (4) սոմար ցորեան և Ա (1) սոմար գարի, և միւսն ևս խոստացեալ էր Բ (2) սոմար ցորեան և Ա (1) կով մատաղացու: Եւ
72բ յիշեալ Աւետիքն առեալ ևս էր ի սրբոյ // Աթոռոյս զԴ (4) սոմարն տեղւոյս ցորեան փոխ, զի ի գնալն իւրեանց ի գիւղն անդ տացեն: Ուստի այժմ գրէ տէր Մովսէս երիցուն, թէ ահա զբեռնակիրս յղեցաք յայդր, թէ դու և թէ նոքա զտալոց և զխոստացեալսն ձեր բարձեալ ի վերայ բեռնակրացն, փութով ընդ տղայոցն մերոց յղեսջիք:

338. Թուղթ օրհնութեան ևս ի Ղլլշախշախ՝ առ Բաբօյի որդի Սարգիսն գրեաց, որ յորդորմամբ Յովաննէս վարդապետին զմի կով մատաղացու է տուեալ սրբոյ Աթոռոյս և զԲ (2) սոմար ցորեան:

Ցղեցան թուղթքս յամսոյս Դ (4)։

1781 թ. մարտ—Ի Բասրայ, ի Բաղդատ, ի Բուշեռ, և ի մեծն Պոլիս և յայլ
տեղիս ևս թուղթք

Յորմէ հետէ սրբազան Վեհս մեր աստուածակացոյց եղև հայրապետ,
մինչև ցարդ ոչ երաց զաչս յառ այլս տեղիս թղթագրութեանց, զի և ի կող-
մունսն Հնդկաց ևս զթուղթս գրիցէր, ըստ որում ճանապարհ ևս ոչ գոյր
բաց և անվտանգ դէպ յայն կողմունսն։ Այլ այժմ թէպէտ ի Հնդիկս ոչ
դեռևս, բայց յաղագս կարի յոյժ հարկաւորեացն ի Բասրա և յայլ վերոյ
գրեալ տեղիսն թէ հասարակապէս զորպիսայայտ կոնդակ, և թէ առ ո-
մանս յատկապէս զանդրանիկ օրհնութեան գրեանս գրեաց, նախ՝ առ ի
շահել զնոսա ևս և երկրորդ՝ սակս հաշուոց ինչ, որք գոյին սրբոյ Աթո-
ռոյս ընդ ոմանց ի նոցունց, և երրորդ՝ առ ի միամտութիւն գործակալա-
ցըն սրբոյ Աթոռոյս և ի հաստատութիւն նոցին ի գործս իւրաքանչիւրոց։
Զորս վասն զի ընդ այլ կողմանս ոչ գոյին ճանապարհք, որպէս ի վերոյ
յիշեցաք, ի վերայ մեծին Պոլսոյ ուղարկեաց։ Ուստի ի սոփսմանէ հար-
կին զհետ այնց և առ նուիրակն սրբոյ Աթոռոյս, որ ի Պոլիս, Մինաս
վարդապետն և առ ոմանս սակաւս ևս զթուղթս գրեաց վասն յղելոյ վե-
րոյ յիշեալ գրեանցն ի տեղիս իւրեանց և սակս հաշուոց ինչ և վասն այլ-
ևայլ իրաց։ Որոց զհետ և առ սրբոյն Սաղիմայ պատրիարք Յովակիմ
վարդապետն ևս, և առ Պրուսայու նոր առաջնորդ Յովաննէս վարդապետն
և առ այլս ևս զթուղթս գրեաց։ Ընդ որս և ի Թօխաթ, և ի Կարին, և ի
Ղարս ևս զքանի մի թուղթս գրեաց, որք բոլորապէս են այսօրիկ գրե-
լոցքս ի ստորև։

339. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Բասրայու և Բաղդատու
և Բուշեռու և շրջակայիցն նոցա[90]։ Յորում նախապէս ծանոյց զառ Տէր
փոխումն տէր Սիմէոնի երջանկայարդ կաթուղիկոսին լուսահոգւոյ և
զիւր յաջորդելն զաթոռ Աթոռս, որպէս և ի բազում տեղիս գրեցեալ է
(զորս և մեք ի վերոյսն յիշեալ եմք ի սոյն յիշատակարանոջս)։ Իսկ ապա
և գրեաց զպատճառն յետացուցանելոյն իւրոյ յայն կողմունսն զթուղթս
գրելն, որ էր ճանապարհաց փակ և երկիւղալի գոլն (որպէս և ի վեր անդր
ի Ջուղայու և ի Գիլանու և յայլ տեղեաց կոնդակսն և ի թուղթսն ևս գրե-
73ա ալ)։ Ըստ որում // և հարկն պահանջէր։ Որոց զկնի և գրեաց պատուի-
րամբ սակս նուիրակին իւրեանց Գրիգոր վարդապետին, սիրով ընդու-
նիլ, որոյ ադագաւ գրելով ևս, թէ ահա վերահաստատեցաք զդա ի գործն
իւր նուիրակութեան, մինչև ցաւարտիլն գործոյն։ Քան զոր յառաջ և
յետոյ ևս զայլ խնդիրս գրեաց (որք ի քան զայս յառաջ առ այլ և այլ
տեղիս գրեալ կոնդակսն ևս գրեալք են ըստ պատշաճաւորութեան իւ-
րաքանչիւրոց տեղեացն)։

340. Թուղթ ի Բասրա առ Էմնիազեան մահտեսի Յարութիւն աղայն
գրեաց, ի պատասխանի ի ՌՄԻԹ (1780) և ի փետր. Ժ (10) առ հոգելոյս
սրբազան Վեհն գրեալ թղթոյն նորա, որ յետ վախճանի նորին էհաս առ
նորոգ սրբազան Վեհս մեր ի հոկտեմբերի մուտն յայնմ ամի (էջ 73 ա—
74 ա)։

341. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Բասրա առ Բեթխէհէմեան պարոն
Յովաննէսն գրեաց, ի պատասխանի նորա ի ՌՄԻԹ (1780) թուոջ և
փետր. Ժ (10) գրեալ թղթոյն առ լուսահոգին, որ զկնի փոխման նորա

առ Տէր էհաս ի ձեռս սրբազան Վեհիս մերոյ ի նոյն թուոյ հոկտեմբերի
մուտն (էջ 74 ա—75 բ)։

342. Թուղթ ևս ի Բաղդատ առ Խոյգարենց պարոն Մարգար աղայն
գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի ոմանց թղթոց նորին առ հոգե-
լոյս հայրապետն գրեցելոց (էջ 75 բ—76 ա)։

343. Կոնդակ ևս սրբազան Վեհն ի վերայ Բասրայու գրեաց սակս
վէքիլութեան և մութավէլութեան սրբոյ Աթոռոյս՝ Բեթխէհէմեան պարոն
Յովաննիսին, արտահանեալ ի հին տեառցն շարագրանաց, որք վասն
վէքիլութեան ոմանց գրեալք են։ Յորում պատուէրք, յորոց մի ևս այս,
թէ ունի զա հրաման ի մէնջ, զի մինչ ոչ իցէ յայտր նուիրակ սրբոյ Աթո-
ռոյս, յայտր եղեալ արդեանցն ևս վերահասու լեալ ժողովեսցէ, այսինքն
զկտակս, զհոգեբաժինս և զայլս այսպիսի և ըստ ժամանակին հասուս-
ցէ ի սուրբ աթոռս։

Զսեղին հաւաքման մասանց կոնդակիս գցես ի նոր տետր 171
երեսն[91]։

344. Թուղթ ևս ի Բուշեռ առ սրբոյ Աթոռոյս վէքիլ և գործակալ պա-
րոն Աւէտն Տէր-Մարգարեան գրեաց, ի պատասխանի նորին ի ՌՄԻԸ
(1779) ի նոյե. ԺԹ (19) և ի դեկտ. ԺԱ (11) գրեալ թղթոցն առ լուսա-
[հոգին]։ Բայց սմա ևս նախապէս զեկոյց զմահուանէ հոգելոյս սրբա-
զան Վեհին և զիւր յաջորդմանէ։ Եւ ապա ծանոյց զվերոյ յիշեալ թղթոց
սորին առ ինքն ժամանիլն, գրելով զպատասխանիս նոցին, թէ քան
զայսոսիկ յառաջ Գ (3) գիր ևս են հասեալ աստ առ լուսահոգին, գրե-
ցեալք ի ՌՄԻԸ (1778) թուոջ Փրկչին և ի հոկտ. Ե (5), և ի ՌՄԻԹ (1779)
թուոջն և ի փետր. ԻԲ (22), և ի ղամար Զ (6)։ Որոց զպատասխանին
76բ գրեալ է, ասէ, լուսահոգին ի ՌՄԻԹ (1780) // թուոջ մերում և ի յուն-
վարի Է (7), և ի վերայ Ջուղայու յղեալ է առ քեզ։ Եւ ընդ նմին զմի
թուղթ ևս առ նուիրակ Գրիգոր վարդապետն է գրեալ, ասէ, և զթուղթ
մի ևս, ասէ, առ Մատրասու Շահամիր աղայն է գրեալ և զմի արձակման
գիր[92] ևս, ասէ, վասն Բարղամեան Մովսիսին է գրեալ՝ ըստ խնդրոյ
Շահամիրին։ Զորս ի հարկէ յղեալ ես, ասէ, յիւրաքանչիւր տեղիսն։
Իսկ և յաղագս լուսահոգւոյ վասն սորա վէքիլութեան գրեալ կոն-
դակին և այլոց թղթոցն (որք յիշեալ են ի յառաջին յիշատակարանոջն
ի ՌՄԻ (1771) թուոջն և ի...)։ Գրեալ էր սա, թէ ինձ էհաս։ Առ այն գրե-
աց, թէ միամտեցաք։ Այլև գրեալ էր սա, թէ այսքան ինչ դրամոյ բա-
ռաթ գրեցի և փօլիցայ արարի ի վերայ նուիրակին, որ ի Հնդիկս տայ և
ես աստ առնում (Բ, Ե), և գրեալ ևս էր, թէ եթէ յայս կողմս եկօղ լի-
նի, փող առնուս և փօլիցայ առնես ի վերայ իմ։ Իսկ սրբազան Վեհն գրե-
աց, թէ այժմ գիր առաք ի մեր նուիրակէն ի վերայ Հալապու, որ գրէ, թէ
առ ձեռն պատրաստ եղեալ արդինքս թէ Մատրասունն, և թէ Բանկա-
լունն փօլիցայ արարի ի Բասրայ, որ մահտեսի Յարութիւն աղայն առ-
նու և ի վերայ Պոլսոյ ի սուրբ Աթոռդ հասուսցէ։ Ուստի մեք, ասէ,
վասն այսր տարակուսեցաք և չիմացաք, թէ քոյդ գրեալ փօլիցայն ևս
տուե՞ալ է, թէ զամէն արդիւնսն ի Բասրա է հասուցեալ։ Բայց թէ տուե-
ալ ևս լինի, ասէ, զքոյդ արարեալ փօլիցայն և մօտդ պատրաստ դրամ
ևս գտանիցի, ոչ կարեմք այժմ այս կողմամբս փօլիցայ ուղարկել ի վե-
րայ քոյ։ Զի գիտես, ասէ, որ բոլոր Տունն Պարսից և այս կողմունքս
խառնակեցեալ են և չէ հնար, ասէ, որ զլոկ գիր գոնէ յղիցեմք։ Վասն ո-

րոյ միայն զայս գրեմ, ասէ, քեզ, զի թէ ի նուիրակէն փոլիցայ լինի
հասած առ քեզ, և կամ այլ արդիւնք մօտդ գտանի, երբ որ նուիրակն
ի Հնդկաց եկանէ, ասէ, յայս կողմս, դու ընդ նմա գրով խօսեցիս և
զհնար իմն գտջիք, ասէ, որ ի սուրբ Աթոռս հասուցանէք, և զորպէսն
մեզ գրեցես, ասէ։ Եւ զի նուիրակ Գրիգոր վարդապետն Բ (2) գիր էր
գրեալ յառաջագոյն առ լուսահոգին ի Սուրաթու և ի Բոմբայու՝ ի ՌՄԻԷ
(1778) ի սեպտեմբերի ԻԹ (29) և ի ՌՄԻԸ (1779) ի յապրիլի Ե (5),
յորս գրէր, թէ զդրամ հասուցի ի Բոմբայու ի Բուշեռ առ Աւէտն, ձե-
ռամբ Եփրիմնոսին Ա (1), և սա ի թուղթսն իւր ոչ ինչ էր յիշեալ յայնմ
կողմանէ, վասն որոյ գրէ առ այս սրբազան Վեհն սմա, թէ թուի թէ
քեզ չիցէ հասեալ։ Ուստի և գրեցաք, ասէ, նուիրակին՝ իմանալ զորպէսն
և մեզ գրել։ Դու ես գրեա, ասէ, զստոյն որպէսն։
Զօրինակն սորին է ի նոր տետր 212 երեսն։

345. Թուղթ ես ի Բուշեռ առ Յարութիւնի որդի պարոն Աբրահամն
գրեաց, ծանուցանելով և նմա նախ զմահ հոգելոյս սրբազան Վեհին և
զիւր հայրապետանալն։ Իսկ ապա զի սա ի ՌՄԻԸ (1779) թուոջ Փրկչին
և ի նոյ. Լ (30) զգիր էր գրեալ առ լուսահոգին և ծանուցեալ էր զձա-
խորդական անցս ինչ տեղւոյն, որ էհաս յետ մահուան լուսահոգւոյն
77ա // առ նորոգ սրբազան Վեհս մեր, վասն որոյ գրէ սմա զթղթոյ սորին յիւր
ձեռն հասանելն և սակս վրդովմանց այն կողմանցն զափափանս և զօրհ-
նութիւնս գրէ։
Սոյնոյ թղթոյս օրինակն ևս է ի նոր տետր 213 երեսն։

346. Ա (1) Թուղթ ևս սրբազան Վեհն առ Հնդկաց երկրի նուիրակ
Գրիգոր վարդապետն գրեաց, յորում ևս նախապէս պատմեաց զոր-
պիսութիւնս բարեգոյն վախճանման հոգելոյս հայրապետին և իւր յա-
ջորդելոյն զսուրբ Աթոռս՝ համդերձ որպիսութեամբք երկրիս։ Ընդ որս և
զառերես հաշտութիւն լինելն ի մէջ Վրաց և մեր իշխողին, որք թշնա-
մացեալ էին ընդ իրեարս և զտաճկաւին չտալն Վրաց արքային զատի
վարեալ ժողովուրդսն։ Ապա, ասէ, թէ վասն այսց խառնակաթեանցս
չկարացաք մինչև ցարդ յղել զթուղթս յայդ կողմունս, զի շրջակայք
երկրիս վրդովեցեալք են, ասէ, և ոչ գոյ ճանապարհ։ Իսկ այժմ այլ
ոչ յետացուցաք, ասէ, զթուղթս, այլ ի վերայ մեծին Պօլսոյ յղեցաք,
ասէ, ի Բասրա՝ ընդ քանի մի գրեանց ի Բասրա, ի Բաղդատ և ի Բուշեռ
գրեցելոց։ Եւ գրեցաք, ասէ, մահտեսի Յարութիւն աղային և Բեթխէհէմե-
ան Յովաննիսին՝ հասուցանել առ քեզ։ Եւ գրէ, թէ այժմ ի կողմունդ
Հնդկաց չյղեցաք, ասէ, զթուղթս, այլ զքանի մի գրեանս, ասէ, փութա-
ցուցեալ շուտով յղեցաք վասն քոյդ փոլիցայիցն, զորս հասուցեալ ես,
ասէ, ի Բասրա. և անտի գրեալ են, ասէ, մահտեսի Յարութիւնն և Բեթ-
խէհէմեան Յովաննէսն ի Պօլիս պարոն Խաչիկին՝ տալ նուիրակ Մինաս
պետին։ Իսկ յետ քանեաց աւուրց յղելոց եմք, ասէ, և զգրեանս Հնդկաց
երկրին ի Բասրա, զի անտի հասուցեն, ասէ, յիւրաքանչիւր տեղիսն։
Եւ արդ, ծանուցանէ զհասանելն թղթոյ սորին առ ինքն, զոր գրե-
ալ էր սա ի Կալկաթու ի ՌՄԻԸ (1779) թուոջն և ի դեկտ. ԻԲ (22) առ
լուսահոգին, որ յետ վախճանի նորա ժամանեաց առ սրբազան Վեհս մեր
ի նոյեմբերին ի վերայ Հալապու։ Եւ գրէ, թէ որքան մտեալ ես դու ի
յերկիրդ Հնդկաց, Գ (3) թուղթ են հասեալ ի քէն աստ։ Առաջինն, ասէ,
ի ՌՄԻԷ (1778) թուոջ մերում, ի սեպտ. ԻԹ (29) ի Սուրաթու։ Երկրորդն՝
ի ՌՄԻԸ (1779) և յապր. Ե (5) ի Բոմպայի գրեցեալ։ Որք առ լուսահո-

գին էին, ասէ, հասեալ, որ չէ կարացեալ, ասէ, գրել քեզ լիագոյն պա-
տասխանիս, վասն որոյ զմի թուղթ է գրեալ քեզ, ասէ, վասն անցից
երկրիս ի ՌՄԻԹ (1780) թուոջն և ի յունվարի Է (7) ի վերայ Սպահանու
և Բուշեռու։ Յորում զթղթոյդ հասանելն, ասէ, միայն է ծանուցեալ և խոս-
տացեալ է, ասէ, զլիագոյն պատասխանիս բանիցդ և զխնդրեալ թուղթ-
սըդ յետոյ յղել։ Որ ահա այլ ոչ կարաց, ասէ, գրել, որ և փոխեցաւ, ասէ,
առ Քրիստոս։ Եւ զի զլուսահոգւոյն առ սա գրեալ թղթոյ օրինակն կրկին
գրեաց և յղեաց առ սա, կարծելով թէ այն թուղթն չիցէ հասեալ սմա,
ուստի զեկուցանէ և զայլն։ Իսկ երրորդ գիրդ, ասէ, վերոյ յիշեցեալն է,
որ ի ձեռս մեր ժամանեաց։ Այլ որ խոստացեալ է քեզ, ասէ, հոգելոյս
հայրապետն մեր զպատասխանիս բանիցդ գրել և զխնդրեալ թուղթսդ
77բ յղել, ահա // և մեք խոստանամք, ասէ, յետոյ յղել։ Բայց զպատասխա-
նիս հարկաւոր բանիցդ այժմ գրեմք, ասէ, զորս և գրէ իսկ։
Քանզի նախ խնդրեալ էր սա վասն էմնիաղեան Խաչիկ աղայի տուե-
ցելոցն (որք յիշեցան ի վերդ ի Յարութին աղայի թղթոջն)՝ զմիա-
մըտական գիր գրել։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ լուսահոգին քանիցս
գրեալ է յառաջ, մեք ևս յետ աւուրց ինչ գրելոց եմք։
Երկրորդ՝ սակս Շահնազար խանի դրամոյն (զորմէ յիշեցաւ ի վերդ
ի թուղթն Բուշեռու Աւէտին ևս), գրեալ էր սա, թէ հասուցի ի Բուշեռ
պարոն Աւէտին՝ ձեռամբ Եփրեմիանոսին։ Բայց զի Աւէտն ի թուղթսն
իւր ոչ ինչ էր յիշեալ յայնմ կողմանէ, գրեաց սմա սրբազան Վեհն, թէ
նա վասն այնր զբան ինչ չէ գրեալ։ Վերահասու լեր որպիսութեանն։
Ազդէ սմա և զայս գրեալն Աւէտին, որ գրեալ էր, թէ այսքան դրա-
մոյ բարաթ գրեցի ի վերայ նուիրակին Հնդկաց և այլն։ Ընդ որում և առ
այս զինչ՞ գրելն իւր նմա (որք յիշեալ եղեն ի թուղթն Աւէտին, որ ի
վերդ)։ Այլև գրէր սա, թէ Սէթ աղայի որդի Աւէտն դրամ է յղելոց առ ի
սուրբ Աթոռդ Ա (1), որոյ աղագաւ գրէ սրբազան Վեհն, թէ դեռ չէ հա-
սեալ աստ, որպէս և լուսահոգին, ասէ, գրեալ է քեզ (որ այս ևս յի-
շեցեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) ...)։
Երրորդ՝ վասն Փիլիպպոս վարդապետի ի Սուրաթումն թողեալ ԻԸ
(28) թօփ կտաւոյն և մեռոնին գրեալ էր սա, թէ յղեալ են անտի զայ-
նըս ի Բասրա։ Իսկ սրբազան Վեհն գրեաց զայնց որպէսն (որպէս և յի-
շատակեցաւ ի վերդ ի թուղթն Բեթխէհէմեան Յովաննիսին)։
Չորրորդ՝ վասն կայից շօռօթեցի հանգուցեալ Ղազարին (որ ի վերդ
ի Յարութիւնի թուղթն ևս յիշեցաւ) գրեալ էր սա, թէ կտակագիր ունի
մահտեսի Յարութիւն աղային մօտ։ Իսկ սրբազան Վեհն ծանոյց սմա
զՅարութիւնի աղայի գրելն զայս առ ինքն և զօրինակն կտակագրին
յղելն և զմիտս կտակագրին։ Նաև զայս գրեցեալս ես ի Յարութիւնի ա-
ղայէն, թէ ինկլիզքն արկեալ են զայս բանս ի Բոմբայու դատաստանն,
զի անդ քննիցեն զստուգութիւն կտակին և ապա ինձ յանձնեսցեն զհո-
գացութիւնն։ Մինչ այսպէս լիցի, ես զսրբոյ Աթոռոյդ բաժինն հասուցա-
նելոց եմ Պօլսովն (որպէս ի վերդ ի նորա թղթոջն յիշեցաւ), բոլորովիմբ
ծանոյց սմա։
Իսկ և վասն ոմանց անձանց արդիւնատուաց զթուղթս էր խնդրե-
ալ սա։ Առ որ գրեաց, թէ յետ քանեաց աւուրց եմք յղելոց։ Արդ, այս
վերոյ գրեալ բանքս սորա (որոց զպատասխանիս գրեաց սրբազան
Վեհն) էին ի թուղթսն զորս ի Սուրաթու և ի Բոմբայու էր գրեալ։ Բայց
ի ներքոյ գրելիքս էին ի թուղթն ի Կալկաթու գրեցեալ, որոց զպատաս-
խանիս գրեաց սրբազան Վեհն։ Զի նախապէս գրեալ էր սա զերթալն ի

Մատրաս և զորպէ՞ս վճռահատեր բանից լուսահոգի Գրիգորի աղային
(որ յիշեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) թուոջն և
ի ...):
Առ որս գրեաց սրբազան Վեհն, թէ յետ աւուրց գրելոց եմք ի Մատ-
րաս զոր ինչ հարկն է յայսմ կողմանէ:
Երկրորդ՝ գրեաց սմա սրբազան Վեհն, թէ զառեալսն սրբոյ Աթո-
ռոյս ի կողմանէ հանգուցեալ Գրիգոր աղային և զքոյդ ի Մատրասու
78ա ժողովեալ արդիւնսն, // որ յղեալ է պարոն Յովսէփին Մարութեան ի
Բասրա առ մահտեսի Յարութիւնն և առ մեր վէքիլ պարոն Յովաննէսն,
նոյնպէս և զու, որ զԿալկաթաու արդիւնսն, ասէ, հասուցեալ ես ի Բաս-
րա առ նոսա և զայն ես, որ ի Բոմբայու է, ասէ, հասեալ առ նոսա
(«Ա», «Է», «Դ»), նոքա ես գրեալ են, ասէ, ի մեծն Պօլիս առ Պօղոսե-
ան պարոն Խաչիկն՝ հասուցանել առ սուրբ Աթոռս: Զորս և նա ըստ
կիսոյն առեալ է, ասէ, Մինաս վարդապետին, և մեք գրեցաք, ասէ,
զմնացեալսն ես տալ, զոր և մահտեսի Յարութիւն աղային և պարոն
Յովաննիսին ես գրեալ ծանուցաք և յորժամ մեզ հասցին, ասէ, բոլորա-
պէս, զմիամտութիւնս եմք գրելոց նոցա:
Երրորդ՝ սակս ճոթեղինաց ինչ, որոց աղագաւ գրեալ էր սա, թէ
լուսահոգի Գրիգոր աղայն Փիլիպպոս վարդապետի Փէկուայ նուիրակու-
թեան արդեամբքն առեալ է և յղեալ ի Բասրա առ մահտեսի Յարութիւն
աղայն՝ հասուցանել ի սուրբ Աթոռդ: Գրեաց սրբազան Վեհն, թէ այժ-
մոյս ոչինչ է գրեալ աստ մահտեսի Յարութիւն աղայն այնմ կողմանէ,
զի թէ հասեալ լինէր անդ, ասէ, ի հարկէ գրէր: Դու վերահասու լեր,
ասէ, թե ո՞ւր է մնացեալ և մեզ գրեա: Իցէ թէ հասեալ իցէ, ասէ, ի
Բասրա և ընդ քեզ բերցես: Եւ զի զգինս նոյն ճոթեղինացն ես գրեալ էր,
թէ ԱՃԿԴ (164) հուն է առեալ Գրիգոր աղային ի Փէկուայ արդեանցն
(«Ա») և զմնացեալն մեզ հասուցին գործակալքն նորին՝ Սէթն և Սահ-
րատն: Գրէ սրբազան Վեհն, թէ զայն ես իմացաք:
Չորրորդ՝ զի վասն հանգուցեալ Ղուկաս վարդապետի ընչից մեր
բաժնին գիր էր առեալ ի նորին վէքիլացն և յղեալ ի Բասրա առ մահ-
տեսի Յարութիւն աղայն, զի զմեր բաժինն առնուցու ի Հաղարմալեան
Ստեփանէն և զնոյն թղթոյ օրինակն ես յղեալ էր առ սրբազան Վեհն:
Գրէ, թե տեսաք և վերահասու եղաք: Բայց ի մահտեսի Յարութիւն աղա-
յէն դեռ յայդմ կողմանէ գիր ոչ եմք առեալ, ասէ: Իսկ մեք գրեցաք, ա-
սէ, նմա այժմ զքո գրեալդ և հարկեցաք հետևիլ և առնուլ զբաժինն
սրբոյ Աթոռոյս և հասուցանել աստ՝ առ մեզ:
Այլև, գրեալ էր սա Մկրտիչ վարդապետին վասն լուսահոգի սրբա-
զան Վեհի մեղադրանաց թղթոյն (զոր գրեալ էր յառաջագոյն առ Շահա-
միր աղայն, զորմէ յիշեցեալ է ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ
(1771) թուոյ ...), թէ ետ ինձ և ես առի, թէպէտ այլ թէ չկամիցիք
յետս յղեցից: Բայց սրբազան Վեհն գրեաց սմա, թէ լուսահոգին քանիցս
անգամ յետ այնորիկ գրեաց զթուղթս օրհնութեան առ Շահամիր աղայն:
Եւ մանաւանդ նա վասն Բարղամեան Մովսէսին զարձակման գիր էր
խնդրեալ, ասէ, լուսահոգին զայն ես գրեալ յղեաց, ասէ, յանցեալ ամին:
Որպէս ահա տեսանելոց ես, ասէ, ի յօրինակն գրոյ լուսահոգւոյն, զոր
այժմ առ քեզ յղեցաք, ասէ (քանզի յանցեալ ամին ի... զորպիսածա-
նոյց թուղթ գրեաց առ սա լուսահոգի սրբազան Վեհն, որ յիշեալ է ըստ
նոյն թուոյն ի յառաջին յիշատակարանոջն, որոյ զօրինակն այժմ սրբ-

բազան Վեհս մեր նորոգ գրեաց դարձեալ և յղեաց առ սա, զի թէ առա-
ջինն հասեալ չիցէ, այս հասցի):
Ուրեմն շատ լաւ ես արարեալ, ասէ, զայն մեղադրական թուղթն առ-
78բ նուլդ, զոր և բերցես ընդ քեզ, ասէ: //Նաև զի հոգելոյս հայրապետն
զմի նոր Տօնացոյց էր յղեալ ընծայ Շահամիր աղային, վասն որոյ և
նա այնր աղագաւ զգրամ էր առեալ Գրիգոր ռեսին, զո՞ր ծանուցեալ էր
նա այժմ ի թուղթսն իւր: Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն սմա, թէ
յետ աւուրց գրելոց եմք առ նա զշնորհակալութիւնս: Ապա խոստանայ
և յետոյ ի Հնդիկս զթուղթս գրել, և ընդ այնց քեզ ես, ասէ, զթուղթ եմ
գրելոց:
Վերջապէս հարազատ պաշտօնէին սորա՝ տէր Բարսեղին ես զողջոյն
գրեաց:
Զօրինակն սորին ի նոր տետր 217 երեսն գտցես:

347. Թուղթ ես ի Պօլիս առ ջուղայեցի պարոն Խաչիկն Պօղոսեան
գրեաց, թէ յանցեալ թուոջն ի յունիսի ԻԲ (22), որ թուղթ էիր գրեալ
առ հոգելոյս հայրապետն մեր և ծանուցեալ էիր զյանձնելդ մեր նուի-
րակ Մինաս վարդապետին զմահտեսի Յարութիւն աղայի եղբայր յան-
գուցեալ Մովսիսի յիշատակ ոսկեայ և ականակուռ խաչն և Ջնթլումի
որդւոց յիշատակ Բ (2) արծաթեայ տապանակներն: Նոյնպէս և զառնլի-
քըդ ի պարոն Գէորգէն և Աստուածապահէն, հաւալայ առնելդ Մինաս
պետին, որ առնուցու ի նոցանէ (Ժ, Ջ) և քո այսքան դրամոյ թամասուկ
տալդ դմա, որ յետ քանի աւուրց տայցես (Դ, Դ): Եւ սակս այդ յիշեցե-
լոցդ զապզ առնուլդ ի դմանէ և յղելդ ի Բասրա առ մահտեսի Յարու-
թիւն աղայն, որ ի յարդեանցն սրբոյ Աթոռոյս տացէ քեզ: Զնոյնս և
ինքն՝ Մինաս վարդապետն ես գրեալ էր լուսահոգւոյն: Բայց այն թուղթ-
քըն յետ վախճանի լուսահոգւոյն հասին աստ առ մեզ և մեք գրեցաք առ
ձեզ զպատասխանիսն ի դեկտեմբերի Ե (5), որ յիշեցեալ գոյ աստ ըստ
սոյն ամսաթուոյս, յանցեալ թուոջն և դեռևս ոչ ընկալաք զպատասխա-
նիս նոցին: Իսկ և զայս գրեցաք յայնժամ Մինաս վարդապետին, զի որ-
քան մնացեալ է մեզ ի Բասրա արդիւնք, զոր գրեալ էր մեզ, առնուցու
յայդր ի քէն և գիր տացէ քեզ, որ դու ի Բասրա ի մահտեսի Յարութիւն
աղայէն առնուցուս, որպէս և քեզ ես գրեցաք յայնժամ:
Իսկ այժմ գրեցաք զպատասխանիս թղթոց մահտեսի Յարութիւն ա-
ղային և պարոն Յովաննիսին, զորս դու յղեալ էիր աստ յառաջագոյն, և
ծանուցաք զհասուցանելդ մեզ վերոյ յիշեալսն և զգրելն մեր Մինաս
վարդապետին, որ զմնացեալ դրամն ես առնուցու ի քէն և զզապզ
տացէ քեզ, որ զու ես անդ առնուցուս: Ուրեմն և դու, եթէ մինչև ցարդ
զմնացեալ դրամն ես առեալ ես Մինաս պետին, բարի է, և թէ ոչ, տա-
ցես և մեզ գրեսցես: Բայց Խաչիկ աղայի շնորհակալութեան թուղթն
վասն խաչին և Բ (2) տապանակաց տուողաց շնորհակալութեան թուղթն
այժմ ոչ յղեցաք, յետո ընդ Հնդկաց երկրի թղթոցն յղելոց եմք: Զի այժմ
ի կողմանէ այդ փոլիցայիցդ և յիշատակացդ միամտութեան աղագաւ
զԲասրայու թուղթսն փոքր մի յառաջ յղեցաք, զի հասուցես առ մահտե-
սի Յարութիւնն և պարոն Յովաննէսն և զորքան ես թուղթս գրեալ էաք ի
Բասրա, ի Բաղդատ և ի Բուշեռ, զայնս ես ընդ դոսա յղեցաք ի ձեռս նո-
ցին, զի յիւրաքանչիւր տեղիսն հասուսցեն: Ապա ի մօտակայ աւուրս
79ա զՀնդկաց գրեանս ես յղելոց եմք ի ձեռս //քո, զի հասուսցես ի Բասրա
առ մահտեսի Յարութիւն աղայն և պարոն Յովաննէսն:

14—815

Բայց վասն Տէր-Յովաննիսեան Ստեփանի տալեացն քեզ գրեցաք յառաջ ի դեկ. Ե (5), որ մեք գրեալ էաք նմա գրո գրեալսն, և նա մեզ այսպէս էր գրեալ, թէ ես գրեալ եմ ի Պօլիս առ մեր տղայն, զի զայն դրամն տացէ խաչիկին։ Այժմ թէ կամի խաչիկն, որ սրբոյ Աթոռոյդ հասուցից, թող ինձ գրեսցէ, և ես տաց։ Զոր և մեք քեզ գրեցաք ի դեկտ. Ե (5) և դեռ ի քէն պատասխանի չառաք։ Իսկ քանի աւուրք յառաջ գիր առաք ի Ստեփանէն, որ գրէ, թէ խաչիկն ինձ գրեալ էր, որ յիւր հէսապիցն ԱՌ (1000) ղուռուշ տամ իմ եղբայր Յարութիւնին և զմնացեալն ի սուրբ Աթոռդ հասուցանեմ։ Ես ևս ԱՌ-ն (1000) ետու Յարութիւնին, մնացեալ է ԴՃԻԸ-ն (428), զոր ի սուրբ Աթոռդ եմ հասուցանելոց, զապզ ուղարկիր, որ յղեմ ի Պօլիս առ խաչիկն։ Մեք ևս ըստ նորին գրեցելոյն Ա (1) զապզանման գիր գրեյաք ի վերայ քոյ ի մարտի Ա (1) և յղեցաք առ նա և նա զդրամն մեզ է հասուցանելոց ի վերայ Բայաղիտու։ Վասն որոյ այժմ ևս ծանուցի քեզ, զի յայտր ընդ մեր Մինաս վարդապետին ի մէջ վերոյ գրեալ փօլիցայից հէսապիցն հաշուեսցիք։ Այլև որ գրեալ էիր, թէ ի Հնդկաց նաւ է եկեալ, և գրէ մահտեսի Յարութիւն աղայն, թէ ի սուրբ Աթոռն գնալոյ գիր կայ, յղելոց եմք, ահա այն թուղթն մեզ էհաս, որ էր ի մեր նուիրակէն, բայց ի մահտեսի Յարութիւնէն և ի պարոն Յովաննիսէն գիր չառաք ընդ այս թղթոյս, իցէ թէ առ քեզ թուղթ իցեն յղեալ և դու առ մեզ յղեսցես։

Դարձեալ ծանիր, զի յետ զայսքան բանս գրելոյ, մինչ քանի աւուրք անցին, էհաս առ մեզ թուղթ ի Մինաս վարդապետէն, յորում էր և քոյդ թուղթն, որ առ Տէր-Յովաննիսեան Ստեփանն, գրեցեալ ի յունվարի ԺԴ (14)։ Որ զվերոյ գրեալ բանն Ստեփանին, զոր գրեալ է առ մեզ, առեալ և փչացոյց։ Զի որպէս յայս ուղարկած թղթոջդ յայտնեալ էիր, դու գրեալ ես նմա Կ (60) ղուռուշ տալ Յարութիւնին և զմնացեալն ամենայն մեզ տալ։ Այլ նա մեզ այնպէս էր գրեալ, զոր ի վերոյ գրեցաք։ Ուստի մինչ զայս գիտացաք, ապա արգելաք ԴՃԻԸ (428) ղուռուշի զապզն սատ, զի դեռևս առ մեզ էր։ Այլ զքո գիրն յղեցաք առ նա և գրեցաք, զի թէ ըստ քոյ գրեցելոյդ բացի Կ (60) ղուռուշէն ինչ որ քո սամիցն ձեռ է եկեալ, տացէ մեզ, ապա և մեք զապզ ուղարկեմք իւրեան, որ յղէ առ քեզ. ապա թէ ոչ կամիցի տալ, մեզ գրեսցէ շուտով, որ քեզ ծանուցանեմք։ Նոյնպէս և վասն այն դրամոյն ևս, զոր նոր էիր գրեալ նմա տալ մեզ Գ (3), մեք ևս գրեցաք, զի թէ տացէ մեզ, զապզ ուղարկեմք իւրեան, որ առ քեզ յղէ, և թէ ոչ, մեզ գրէ, որ քեզ ծանուցանեմք։

Գաղափարն թղթոյս է ի նոր տետր 174 երեսն։

79բ 348. Թուղթ ևս ի մեծն Պօլիս առ նուիրակ Մինաս և Պետրոս վարդապետսն գրեաց սրբազան Վեհս մեր, ի պատասխանի ի ՌՄԻԹ (1780) թուոջն և ի դեկտ. ԻԲ (22) գրեալ թղթոյն վասն տեղւոյ տարաձայնութեանցն և այլոց իրակութեանց, որ էր այսպէս։ Թէ ի դեկտ. ԻԲ (22) գրեալ թուղթն ձեր էհաս առ մեզ ի յունվարի ԻԲ (22) և հասու եղաք ամենայն գրելոցդ։ Թուղթ մի ևս քան զայն թուղթն յառաջ էհաս աստ թարգթուականի և ամսաթուոյ, յորում միայն մեծ ժողովոյ լինիլն և զինչ անցանելն գոյր։ Եւ թէպէտ այսօրիկ այսպէս կանխաւ հասին, բայց մեք զպատասխանիսն յետացուցաք մինչև ցարդ, սպասելով գալստեան Կարապետ վարդապետին, զորմէ գրեալ էիք, թէ ահա եկն։ Որպէս զի նորին և բերեալ թուղթն ևս տեսանէաք և իմանայաք զինչ գրեալն անդ, ապա

մեք զոր ինչ պատշաճն էր գրէաք։ Զի այնպէս կարծեցաք, թէ շուտով գայ, այլ նա մինչև ցարդ դեռ ոչ երևեցաւ և ի Կարին ևս չէհաս, զի թէ հասեալ լինէր, գրէին մեզ անտի։ Իսկ ապա մինչ տեսաք, թէ նշան ոչ երևի նորին գալոյն, սկսաք գրել զթուղթս զայս, որոյ հարկաւորութիւնն այս միայն է, զի իմասջիք զհասանիլն առ մեզ վերոյ գրեալ Բ (2) թըղթոցն ձերոց։ Լուարուք ուրեմն զպատասխանիս գրեցելոց ձերոց։

Արդ, ի կողմանէ քաղաքիդ առ մեզ գրեալ թղթոցն, զոր ինչ և գրեալ էիք, իմացաք։ Յորոց կողմանէ այժմ զոչ ինչ գրեմ, մինչև հասցին առ մեզ այն թուղթքն և յայնժամ, զոր ինչ և պատշաճն է, գրելոց եմք։

Իսկ վասն Գալուստ վարդապետին ձեզ յառաջ ի դեկտ. Ե (5) բանս գրեցաք, որոյ զպատասխանին չառաք դեռևս։ Իսկ այժմոյս գրեալն ձեր ահա իբրու թէ պատասխան է մեր գրեցելոյն։ Բայց որ զթուղթս խնդրէք առ ոմանս վասն հաստատութեան նորին ի գործն, զայնս ի գալն աստ դոցին մահսարին, գրելոց եմք։ Իսկ զայն սիահին, զոր դու՝ Մինաս վարդապետդ գրեալ էիր, որ էր մեր Մկրտիչ վարդապետի խընդրեալ իրաց հաշիւն, սակս որոց ի լուսահոգւոյն չես առեալ զզապզ և ի մէնջ խնդրես առնուլ, ահա ըստ խնդրոյդ գրեցաք վասն գնոց և ծախուց նոցին զԱ (1) զապզ և յղեցաք առ քեզ ընդ թղթոյս։

Իսկ որ ի ձեռն կարնեցի Գօրօյենց տղայոցն զդրամն էիր հասուցեալ ի Կարին առ մեր վէքիլ պարոն Հայրապետն Ա (1) և զզապզ խնդրեալ, ահա մեք զնորին զապզն յառաջագոյն յղեալ եմք առ քեզ ի յունվարի ԻԷ (27)։ Եւ որ հարցեալ էիր, թէ կամիցի՞մք զի այլ ևս հասուցես մեզ ձեռամբ Հայրապետին զդրամս։ Ասեմք առ այդ, թէ կամիմք և յառաջ ևս գրեալ եմք քեզ ի դեկտ. Ե (5), զի նորա ձեռամբն մեզ դրամ հասուցես։ Այժմ ևս գրեմ ահա, զի այսպէս արասցես։ Ահա և Հայրապետին գրեալ եմք յառաջ, զի փօլիցայ արասցէ ի վերայ քոյ և այժմ ևս գրեցաք։ Ուրեմն երբ և գրեսցես, տուր։ Եւ դու ևս երբ և պատշաճ տեսցես, դրամ հասո առ նա, նորին գրելոյն մի մնասցես, զի
80ա պակասաւորեալ է սուրբ Աթոռս։

Այլև՝ մինչ զայսքան բանս գրեյաք, Բ (2) թուղթք հասին առ մեզ ի ձէնջ. մին՝ ի նոյեմբերի ԻԴ (24) գրեցեալ, որ էր հին, և զարձեալ նոյն բանքն, որ վասն ժողովոյն դոցա և խորհրդեանն, իսկ միւսն՝ ի յունվարի ԼԱ (31) գրեցեալ, հանդերձ թղթովք ոմանց հարազատից, զորս ընթերցեալ իմացաք։ Ընդ որս և ի Կարնոյ ընկալաք թուղթս և իմացաք, որ Կարապետ վարդապետն անդ է եկեալ։ Յերկուս ամիսս ի ճանապարհի է եղեալ, որպէս գրեն. ամիս մի ևս հայի թէ ի Կարնոյ աստ հասանի։ Դիցուք թէ, զոր ինչ կամեցան, գրեցին, զեկողն ընդէ՞ր մէնզիլով ոչ յղեցին, որ շուտով գայր, և տեսանէաք զգրեալն դոցա և մեք ևս զոր ինչ պատասխանելոց էաք, պատասխանէաք և բանն ի մի կողմն հատեալ լինէր շուտով և սրբոյ Աթոռոյս բանքն այսպէս յամենայն տեղիս չմնայրին ի վերայ երեսաց։ Ութն ամիս ահա կայ այսպէս. մինչև ցգալն նորին և ի մէնջ պատասխանի յայտր հասանիլն՝ տարի լրանայ։ Այլ արդ. ի յունվարի ԼԱ (31) գրեցեալ թղթովն ձերով իմացաք, որ առ ձեզ են հասեալ երկոքին թուղթքն մեր, զորս ի դեկտ. Ե (5) և ի ԺԵ (15) գրեալ և յղեալ եմք առ ձեզ։ Բայց որ գրէք, թէ զպատասխանի նոցին գրեալ յղեցաք յառաջ, քան զայս, այն դեռևս մեզ չէ հասեալ։ Սակայն ի փետրուարի Ի (20) գրէ մեզ Հայրապետն, թէ ԺԵ (15) օր յառաջ զգիր մի

ընկալեալ ի Պօլսոյ նուիրակէն, յղեցի ի Կարս առ Գէորգն՝ հասուցանել ի սուրբ Աթոռս։ Իսկ մինչև ցարդ դեռ ոչ էհաս մեզ այն գիրն։ Վասն որոյ գրեցաք ի Կարս առ պարոն Գէորգն, զի թէ առ ինքն իցէ հասեալ գիրն այն, յղեսցէ առ մեզ, ապա թէ ոչ, ծանուսցէ։ Եւ զի գիրն այն ի ճանապարհի է դեռևս, և Կարապետ վարդապետն ևս չէ եկեալ, վասն որոյ զվերոյ յիշեալ թղթոյն ձերոյ ի յունվարի ԼԱ (31) գրեցելոյ զպատասխանին չգրեցաք այժմ, մնալով նոցին ևս գալստեանն, զի յայնժամ ի միասին գրեսցուք ձեզ զպատասխանիս ամենիցն, որ ինչ և հարկն իցէ։ Նոյնպէս և զպատասխանիս թղթոց սիրելեացն մերոց ևս գրեսցուք և յղեսցուք ընդ նոսա և յղեսցուք առ ձեզ։

Իսկ այժմ զհասանելն առ մեզ վերոյ գրեալ չորից թղթոցն ձերոց ծանուցանել ձեզ պարտ վարկուցեալ, զայս թուղթս գրեալ յղեցաք, զի գիտացեալ միամտիցիք։ Իսկ զԳալուստ վարդապետի գիրն, որ յղեալ էիք առ ինքն, իմացաք, բայց թէ զինչ՞ առաջադրեցիք նմա, դեռ չիմացաք, զի գրեալ էք, թէ զամենայն ինչ յառաջին թղթոջն գրեալ եմք, իսկ թուղթն այն ահա մեզ չէ հասեալ, որպէս գրեցաք։ Որ ըստ գրեցելոյ Հայրապետին, ահա ամիս մի է, որ ի Կարնոյ ելեալ է թուղթն այն դէպ յայս կոյս, այլ դեռ ոչ էհաս մեզ։

Իսկ զՄասեհեան պարոն Եսայուն յայս կոյս գալն, որ գրեալ էիք, իմացաք, և ի նմանէ ևս գիր առաք ի Կարնոյ, որ խոստանայ մեզ աստ ևս գալ։ Իսկ զՓիլիպպոս վարդապետի գիրն ևս, որ յղեալ էիք, տեսաք, բայց յայսչափ ժամանակս դեռ ի նմանէ գիր ոչ եմք առեալ։ Նոյնպէս և ոչ ի Մեսրոպ վարդապետէն, որոց զորպիսութեանցն գրեսջիք հանդերձ
80բ որպիսութեամբք Գալուստ վարդապետին և || Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետին։

Այլև յետ զայսքան բանս գրելոյ, էհաս առ մեզ ի Կարսայ թուղթն ձեր, զոր ի վերոյ յիշեցաք, թէ Հայրապետն յղեալ է ի Կարս։ Որ էր պատասխանի թղթոյն մերոյ ի դեկտ. Ե (5) գրեցելոյ։ Յորում զոր ինչ գրեալ էիք, ծանեաք։ Բայց տակաւին զնորին ևս պատասխանին թողաք յետոյ գրել ընդ այլոցն՝ ի գալ Կարապետ վարդապետին, քանզի և ի նմանէ գիր առաք, որ եկեալ է ի Կարս և մարդ էր խնդրեալ ի մէնջ, զի եկեսցէ։ Եւ մեք ընդ այս թղթոցս զթուանկչիս յղեցաք ի Կարս՝ բերել զնա ի սուրբ Աթոռս։ Բայց միայն զայսքան ինչ գրեմ, զի վասն Գալուստ վարդապետին բարի է, զոր ինչ խորհեալ էք և արարեալ, մնասցէ այնպէս, մինչև գրեսցուք զձեր խնդրեալ թուղթսն վասն գործոյն։

Նաև քան զայս յառաջ գիր էր գրեալ մեզ ի Զմիւռնոյ Ապրոյեան պարոն Աստուածատուր աղայն, այժմ ևս էր գրեալ կրկին զթուղթ և քաղաքացիքն ևս շնորհաւորական մահսար էին յղեալ, նոյնպէս և ոմանք ի բարեկամաց զթուղթս էին գրեալ։ Բայց ի Փիլիպպոս վարդապետէն այժմ ևս չընկալաք զթուղթ, զի ի վիճակսն է լեալ։ Իսկ մեք այժմ չեղաք ձեռնհաս ամենիցն գրել զպատասխանիս, այլ միայն առ Աստուածատուր աղայն գրեցաք զթուղթ, զոր և ահա առ ձեզ յղեցաք։ Ուրեմն հասուսջիք ի ձեռս նորա և մեզ ծանուսջիք։

Այլև որովհետև մինչև ցարդ դեռևս զգիր ոչ էաք գրեալ առ սուրբ Երուսաղեմի պատրիարք Յովակիմ վարդապետն, վասն որոյ այժմ զթուղթ մի գրեալ առ նա, յղեցաք ի ձեռս ձեր, զոր առ նա հասուսջիք։ Նոյնպէս և զթուղթ մի առ Պարուսայու առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեցաք, թուղթ մի ևս առ պօլիսցի տիրացու Յովաննէսն, որ է ի Բուրսա, զորս ևս առ նոսա հասուսջիք։ Թուղթ մի ևս առ ղափանցի մահտեսի

Թումանն գրեցաք, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր դուք առ մեզ էիք յղեալ և շնորհակալ եղաք վասն մահրամայիցն, զորս տուեալ է քեզ յանուն մեր։ Զայդ ևս նմա տաջիք։ Իսկ այժմ ի տեղւոյդ ի յոմանց բարեկամաց մերոց զթուղթս ընկալաք [ու]րախարարս, որոց զպատասխանիսն յետոյ եմ գրելոց ի գալն Կարապետ վարդապետին։

Զհեղինակն թղթոյս տես ի նոր տետր 221 երեսն։

349. Փուսուլայ ևս գրեաց սրբազան Վեհն առ Մինաս վարդապետն վասն Բասրայու փօլիցայիցն, զորս առնոյր անդ (էջ 80բ—82բ)։

82բ 350. Փուսուլայ ևս գրեաց սրբազան Վեհն առ Մինաս և Պետրոս վարդապետսն, քանզի ոմանք ի միաբանից սրբոյ Աթոռոյս զրաբանօրէն զարտնչական բանս ինչ էին գրեալ ի Պօլիս առ նորին դէտն, նոյնպիսեաց յարասպաս վասն փոքրաւորաց լուսահոգի Վեհին (որք տակաւին ի ներսն էին) և սակս այն, որք իբր թէ ոչ չահէին, որովք բանիւք բազումք ի Պօլիս վրդովեալք էին։ Զոր եղելութիւն թէ սոքա և թէ ոմանք հարազատք գրեալ էին աստ։ Ուստի և սրբազան Վեհն յայսմիկ փուսուլայոջ գրեաց զբանս հաւաստից և պատշաճաւորս ի ջրումն նենգալի և խարդախիչ բանիցն գրեցելոց այնց, զորս ի վերոյ յիշեցաք։ Որոյ գաղափարն գոյ ի վերայ թղթոյ։

351. Թուղթ ևս ի Պօլիս առ ղափանցի մահտեսի Թումանն գրեաց, ի պատասխանի սիրանիշ և շնորհաւորական թղթոյ նորին յառաջ քան զայս գրեցելոյ։ Յորում օրհնութիւն և շնորհակալութիւն, ապա և սակաւ մի ծանուցումն ցաւոց և վշտացն, զորս կրէր ի մերձաւորաց և մանաւանդ ի բացակայից ոմանց, որոց նենգութեամբն յամենայր մահսարն համահաճական, որ սակս հայրապետութեան սրբազան Վեհիս, հանդերձ մահսարատարաւն [մնայր] ի Պօլիս, և ոչ դառնայր։ Յաղագս որոյ և արտաքին գործք սրբոյ Աթոռոյս մնացեալ էին անկեալ ի վերայ երեսաց և խափան, ուստի և ոչ սակաւ ստորանկումն անուան, պատուոյ և փառաց գիպիր սրբոյ Աթոռոյս։ Իսկ և զի տուեալ էր սա ի Պօլիս տեղւոյ նուիրակ Մինաս պետին զքանի մի մուճասամ մահրամայս՝ յանուն սրբազան Վեհիս, այնց սակս ևս շնորհակալութիւնս և զմիամտութիւնս գրեաց սրբազան Վեհն, թէ մեզ է հասեալ։ Ապա գրեաց ողջոյն ընտանեացն սորին՝ պարոն Թումանին, պարոն Բատալին և Գիւլբասարին։

Զօրինակն այսր թղթոյ գտցես ի նոր տետր 75 երեսն[93]։

352. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս ի Պրուսա՝ առ պօլիսցի տիրացու Յովաննէսն և պրուսացի տիրացու Սիմէօնն գրեաց[94], ի պատասխանի թղթոյն նոցա ի սեպտեմբերի ելն գրեցելոյ և յառաջ քան զայս ի դեկտ. ամսեանն աստ հասելոյ։ Արդ, զի գրեալ էին սոքա նախապէս զմխիթարութիւնս ի կողմանէ հոգելոյս սրբազան Վեհին և զշնորհակալութիւնս նորոգ հայրապետութեան իւրոյ, գրեաց շնորհակալութիւնս և զօրհնութիւնս։ Իսկ ապա սակս յետացուցանելոյն իւրոյ մինչև ցարդ զպատասխանիս թղթոյ սոցին (որ էր վասն խռչընդակն գնացից Պօլսոյ դիտին և նախանձառիթ շարժմանցն նորա և ոմանց, որովք և սրբազան
83ա Վեհիս մերոյ համահաճական մահսարն արգելեալ յամեցաւ ի Պօլիս երկար միջոցաւ մինչև ցայժմ)։ Գրէ թէ էր այնր աղագաւ, || զի գոլով մեր ի վրդովեալ երկրոջս այսմիկ թարց մխիթարութեան յամենայն կողմանէ,

սպասէաք ընդունիլ զմխիթարութիւնս յայդ կուսէ ի չերախտընկալ որդւոց
սրբոյ Աթոռոյս, որպէս զի չգրիցեմք ինչ, ասէ, ձեզ ի տրտմականաց աստի,
զի և ձեզ տրտմութիւն լիցի։ Իսկ փոխանակ մխիթարութեան, զվէրս ըն-
դունիմք, ասէ, ոչ յօտարաց, այլ յընտանեաց և ի բնիկ սիրելեաց, ասէ,
մանաւանդ յայնցանէ, որք կաթամբ մօրս ձերոյ, ասէ, սնեալք, աճեցե-
ալք և փառաւորեալք են։ Յորոց փոխանակ երախտագիտութեան, զվնա-
սըս, զանպատւութիւնս և զատորանկումն անուան, պատուոյ և փառաց,
ասէ, ընկալաւ և ընդունիլ։ Իսկ ընդ այսպիսեաց զմխիթարութիւն ինչ գոնէ
ոչ տեսաք, ասէ, դեռևս։ Զի ութն ամիս է, ասէ, ահա ոչ մահսարատայն
մեր վերադառնայ ի Պօլսոյ և ոչ սրտադիւրիչ գիր խմն ընդունիմք, ասէ։
Ուստի ամենայն բանք և գործք մեր անկեալ կան ի վերայ երեսաց
յամենայն տեղիս, ասէ, և սուրբ Աթոռս անխնամ եղեալ, ասէ, ի չի-
բայնոց և հարեալ անյաջողութեամբ և պակասութեամբք։ Սակս այսց
այսքան յետացուցի, ասէ, զթուղթս։ Այժմ մինչ տեսի, թէ յոյժ երկարե-
ցաւ միջոցն, և զուրախականս ինչ չունեցաք գրել ձեզ, ապա զտրտմա-
կանքս զայսոսիկ գրեցաք, ասէ, զի և դուք ցաւիցիք, ասէ, վասն սըր-
բոյ Աթոռոյս և մխիթարիցէք զմեզ։

Իսկ և յաղագս համատանցի Յովաննէս վարդապետին, որ նորա-
պէս առաջնորդ էր կարգեցեալ Պրուսայու, առաջնորդութեան կոնդակ
էին խնդրեալ սոքա։ Այլ սրբազան Վեհն այժմ ոչ գրեաց։ Վասն որոյ,
ասէ, թէ սակս սոյն ասացեալ պատճառացս զյատուկ կոնդակ ոչ գրե-
ցաք ի քաղաքդ, որպէս խնդրեալ էիք։ Մանաւանդ զի յառաջ գրեալ եմք,
ասէ, զհասարակ կոնդակ օրհնութեան ի վերայ ամենից արտաքին վի-
ճակացդ, ծանուցանելով զորպիսութիւնս վախճանման լուսահոգւոյն և
մերս յաջորդելոյ, հանդերձ ամենայն պարագայիւք։ Եւ ընդ մեր մահ-
սարատար Պետրոս վարդապետին յղեալ եմք, ասէ, ի ձեռն դոյն ար-
տաքին վիճակացդ նուիրակ Գալուստ վարդապետին՝ ընթեռնուլ առ
յայտ և յայլ տեղիս։ Իսկ յորժամ զմխիթարութիւն ինչ ցաւոց մերոց
գտցուք, յայնժամ յատուկ օրհնութեան թղթով ևս շահելոց եմք, ասէ,
զժողովուրդսն քաղաքիդ։

Ծանոյց զկնի և զաւ առաջնորդն սոցա՝ Յովաննէս վարդապետն
զշնորհաւորական թուղթ գրելն (զոր յետ թղթոյս յիշելոց եմք)։ Նաև
վասն Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետին խնդրեալ էին սո-
քա ի սրբազան Վեհէն՝ ունիլ ի խնամս և զվերահասատատութեան կոն-
դակ յղել սակս մնացեալ գործոյն, առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ
զայն մեք յառաջագոյն եմք յղեալ առ նա և հասեալ իսկ և զպատասխա-
նին ընկալեալ եմք, ասէ։

Իսկ և վասն իւր սպասաւոր Յակոբ սարկաւագի եղբայր Մարգարին,
որ ի Պրուսա էր, զյանձնարարութիւն գրեաց յատկապէս տիրացու Յո-
վաննիսին, զի խնամատար լիցի նմա։ Ապա և եղբօրն նոյն Յովաննի-
սին՝ այսինքն պարոն Մկրտչին զողջոյն գրեաց։

Գաղափարն սորա է ի նոր տետր 73 երեսն։

353. Թուղթ ևս առ Պրուսայու նորոգ առաջնորդ, համատանցի Յո-
վաննէս վարդապետն գրեաց[95]՝ ասելով, թէ զաւ Տէր փոխիլն լուսահո-
83բ ւոյն և զմերս յաջորդելն, ի հարկէ, մինչև ցարդ իմացեալ ես պարա-
գայիւք։ Զորս և գրեալ ի կոնդակի յառաջագոյն ընդ մեր մահսարարեր
Պետրոս վարդապետին յղեցաք, ասէ, ի Պօլիս, հասուցանել առ արտա-
քին վիճակացդ նուիրակ Գալուստ վարդապետին, զի ընթեռնուլ տացէ

յամենայն տեղիս օրհնեցելոյ վիճակիդ։ Իցէ, թէ յայտ յղեալ իցէ, ասէ,
և ընթերցեալ, իմացեալ իցէք։ Բայց զի չկարացաք, ասէ, գիտել յայն-
ժամ, թէ ո՞ւր իցես, վասն այն ոչ գրեցաք զթուղթ առ քեզ։ Իսկ յառաջ
քան զայս գիր առաք, ասէ, այտի ի տիրացու Յովաննիսէն, որ գրեալ
էր, ասէ, զքոյդ որպիսութեանց և զյայտ լինիլդ։ Ուստի պատշաճ վար-
կաք, ասէ, այսու թղթով զորպիսութեանց քոց և վիճակիդ և ժողովրդոցդ
հարցանել։ Ապա ի կողմանէ հոգևոյս սրբազան Վեհին զմխիթարութիւն
գրեաց, և իւր նոր առաջնորդութեանն, ևս շնորհաւորութիւն։ Եւ յորդորե-
աց մնալ անշարժ ի սէր սրբոյ Աթոռոյս և ինքեան, որպէս և առ լուսա-
հոգւոյն, ազդելով ևս համառօտակի զորպէսն ներկայիս և զխոչ արարն
պատրիարքին Պօլսոյ ընդ իւրապիսեաց, և զմահսարատարի և մահ-
սարի ի Պօլիս արգելանիլն յերկար միջոցս մինչև ցայժմ և այլն, և այսց
աղագաւ զսրբոյ Աթոռոյս պակասաւորիլն յամենայն կողմանէ, և բանից
և գործոց սորին խափան գոլն։ Եւ կրկին ևս հարկէ ի ցաւակցիլ ինքեան
և ջանացօղ լինիլ օգտից սրբոյ Աթոռոյս և ինքեան։ Վերջապէս ողջոյն և
օրհնութիւն տայ Պրուսայու քաղաքի քահանայիցն, իշխանացն և ժո-
ղովրդոցն ամենից։

Զօրինակն թղթոյս այսորիկ գտանիցես ի նոր տետր ի 71 երեսն։

354. Թուղթ ևս սրբազան Վեհն առ սրբոյ Երուսաղեմի պատրիարք
Յովակիմ վարդապետն գրեաց (որ է նախկին թուղթն ի հայրապետու-
թեանն իւրում առ սա)։ Յորում նախապէս գրեաց զաւ Տէր փոխիլն հո-
գևոյս սրբազան Վեհին և զիւր հայրապետանալն հանդերձ պատճառօքն
և պարագայիւքն երկարապէս։ Երկրորդապէս՝ ծանոյց կարծ ի կարծոյ
զանմխիթար և զվշտալի գոլն իւր և զսրբոյ Աթոռոյս պակասաւոր լինիլն
ըստ ամենայնի, յաղագս ներկայական որպիսութեանցն, որք ի խոչըն-
դակն ընթացից Պօլսոյ պատրիարքին և համանմանեաց նորին, պատա-
հէին սրբոյ Աթոռոյս և սրբազան Վեհիս (որք ի վերայ գրեալ երկոսին
թուղթոց յիշեցան), և զվասն այսց յետացուցանելն իւր յայսչափ ժա-
մանակս զորպիսածանոյց թուղթս գրել առ սա (որպէս և երկար գրե-
ցաւ ի վերդ ի թուղթն տիրացու Յովաննիսին և Սիմէոնին)։ Եւ ապա
տիպէ ի վշտակցիլ ինքեան և ցաւելով սակս սրբոյ Աթոռոյս, զօրին
օգուտն կամիլ և ջանալ, և ի սիրոյ անպակաս գոլ, և սիրանիշ գրով
մխիթարել զինքն։ Իսկ ի վերջոյ, ողջոյն համայն միաբանիցն սրբոյ Ա-
թոռոյն Յակոբեանց Առաքելոցն՝ եպիսկոպոսաց, վարդապետաց և այլոց
ամենիցն։

Զհեղինակն այսր թղթոյս գտցես ի նոր տետրն շարադրանաց ի
177 երեսն։

84ա 355. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն
գրեաց՝ զեկուցանելով ի նմա նախապէս զթղթոյ սորին առ ինքն հասա-
նիլն, զոր գրեալ էր ի յունվարի ԻԸ (28) և ծանուցեալ էր զաւ ինքն
գրեալ թղթոյ սրբազան Վեհին և Գաղատիոյ նուիրակ Յովաննէս պետի
թղթոյն և զապգագրին առ ինքն ժամանելն (որք յիշեալ են ի վերոյ ի
յանցելումն թուոջ և ի դեկտեմբերի ամսոյ Ե (5)։ Այլև գրեալ էր սա
զորպիսութեանցն տեղւոյ նուիրակ Յակոբ պետին, որ թէ զքաղաքի և թէ
հրջակայից ոմանց տեղեաց (որք թողեցեալք էին ի յառաջին նուիրակ
Սահակ պետէն թարց նուիրակութեան), զկիսատ հին նուիրակութիւնն
Սահակ պետէն թարց նուիրակութեան...

*չէր գնացեալ, այլ ի յԱմասիա։ Առ որս գրեաց սրբազան Վեհն, թէ ի-
մացաք և մեծ խոհեմութիւն համարեցաք։*

*Իսկ և գրեալ էր սա առ սրբազան Վեհն փոխիցայս առնել ի վերայ
նուիրակաց, զի առ սա զդրամ հասուցեն և սա յղեսցէ առ սուրբ Ա-
թոռս։ Բայց սրբազան Վեհն գրեաց, թէ չէտ սակաւ աւուրց ի վերայ
Զմիւռնոյ նուիրակ Փիլիպպոս վարդապետին և տեղւոյդ նուիրակ Յակոբ
վարդապետին փոխիցայ ետք առնելոց, զի առ քեզ զդրամս հասուսցեն
և քեզ ևս գրելոց եմք և զփոխիցայագիրսն ևս առ քեզ եմք յղելոց՝ ուղար-
կել առ նոսա։ Եւ ապա յետ գրելոյն յիշեցելոցս բանից ի թղթոջն, որ
առ սա, թուղթ մի ևս էհաս ի սմանէ առ սրբազան Վեհն, յորում ընդ
այլ իրաց և վասն փոխիցայ առնելոյ կրկին զխնդիր էր գրեալ։ Այլ սրբ-
բազան Վեհն գրեաց, թէ որպէս ի վերոյ գրեցաք, այնպէս եմք առնելոց
յետ աւուրց։*

*356. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ Հայրապետն գրեաց, ի պատաս-
խանի յառաջ քան զայս հասեալ Բ (2) թղթոցն նորա, զորս ընդ ի Պօլ-
սոյ նուիրակ Մինաս պետէն և ի Զմիւռնոյ եկեալ թղթոց յղեալ էր առ
սրբազան Վեհս մեր։ Որում նախ սակս այնց ժամանելոյն աստ զմխի-
թարութիւն գրեաց սմա։ Իսկ զկնի առ սա և առ Գօրօյեան մահտեսի խա-
չատուրն զշնորհակալութիւնս գրեաց այն սակս, զի աստի ի Պօլիս գրե-
ալ թուղթսն շուտով յղէին անդ։ Նոյնպէս և զանտի առ սրբազան Վեհն
գրեցեալսն հասուցանէին աստ առ սրբազան Վեհն։ Եւ զի զվերոյ գրեալ
Պօլսոյ թղթոց պահարանն, յորում էին և պահարանք թղթոցն Բաղդա-
տու և Բասրայու և միւս տեղեացն, յղեաց ի ձեռս սորա՝ հասուցանել
ի Պօլիս։ Ուստի զպատուէր գրեաց շուտով յղել։*

*Այլ վասն Տիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետին
(զոր յիշեցաւ ի վերն ի թղթոջ Պօլսոյ նուիրակ Մինաս և մահսարատար
Պետրոս վարդապետացն), որ ի Պօլսոյ բազմակնիք թղթովք գայր ի
սուրբ Աթոռս յաղագս պատճառաց ոմանց, և այժմ հասեալ էր ի Ղարս,
գրեաց սմա սրբազան Վեհն, թէ աստ եկեալ է ի Կարս, մարդ յղեսցէ
բերել անտի։ Զոր ինչ հարկն պահանջէ, խօսելոց եմք և գրելոց եմք ի
Պօլիս և քեզ ևս ազդելոց եմք։*

*Այլև Կարնոյ խալիլ փաշայն զթուղթ էր գրեալ այժմ առ սրբազան
Վեհն և զբրինձ էր խնդրեալ, և սա ևս ստիպեալ էր գրել առ սրբազան
84բ Վեհն կատարել զգրեալն իւր, // այսինքն՝ յղել զբրինձ։ Իսկ սրբազան
Վեհն, ի պատասխանի թղթոյ խալիլ փաշային Ա (1) թուղթ գրեաց առ
նա, հարցանելով զխաթրն և գրելով վասն խնդրեալ բրնձին, թէ յայսմ
ամի դու ևս գիտես, զի սակս դիպուածոցն երկրիս՝ պակասաւոր եմք ի
կողմանէ ամենայն իրաց, մանաւանդ բրնձի։ Ուստի այժմ չունելով ի
պատրաստի, ասացաք հոգս առնել, զի յետ աւուրց զհարիւր լտրաչափ
բրինձ յղեսցուք առ քեզ։ Եւ պարոն Հայրապետին ևս գրեաց զպատաս-
խանին խալիլ փաշայի թղթոյն գրելն, և զոր ինչ ի կողմանէ բրնձին
նմա գրեալ էր, այնպէս և սմա գրեաց, թէ յետ աւուրց ինչ յղելոց եմք։*

*357. Թուղթ ևս ի Կարին առ զմիւռնացի Մասեհեան պարոն Եսային
գրեաց՝ ծանուցանելով զթղթոյ սորին առ ինքն ժամանելն, զոր գրեալ
էր սա ի Կարնոյ։ Եւ զի քան զայս յառաջ ի սմանէ քանիցս թուղթք էին
հասեալ առ սրբազան Վեհս մեր, այնց աղագաւ զմխիթարութիւնս գրեաց։
Իսկ և ի Կարնոյ մերայինքն գրեալ էին սմանէ առ սրբազան Վեհն, թէ
գալոց է յայդր և զասութիւնս ինչ ունի բերանով ասել քեզ։ Վասն որոյ*

*. գրեաց սմա՝ յորժամ եկեսցես, զայնս ասելոց ես մեզ և իմանալոց եմք։
Իսկ ապա ի Զմիւռնոյ Ա (1) պահարանաւ թուղթք էին հասեալ առ սա ի
Կարին՝ գրեալք առ սրբազան Վեհն, զոր և սա յղեալ էր աստ, որ յետ գրե-
լոյ վերոյ յիշեալ բանիցն, թղթոյս ժամանեաց աստ։ Վասն որոյ զմխի-
թարութիւն գրեաց, թէ ի Զմիւռնայու եկեալ պահարանաւ թուղթսն,
զորս յղեալ էիր, ընկալաք, յորում գոյին, ասէ, մի բազմաձեռագիր
մահսար համահաճական և թուղթ մի կրկին ի յԱստուածատուր աղայէն
և քանի թուղթք ևս ի յոմանց սիրելեաց։ Իսկ մեք այժմ չկարացաք, ասէ,
այլոցն զգիր գրել, այլ միայն Աստուածատուր աղային զմի թուղթ գրե-
ցաք և ամենիցն զողջոյն գրեցաք, ասէ, ի նմա։ Վերջապէս պատուիրէ
սմա, թէ ի գալդ ի սուրբ Աթոռս, զառ քեզ եղեալ ժամացոյցն ընդ քեզ
բերցես։*

*358. Թուղթն սիրոյ, զոր սրբազան Վեհն ի Զմիւռին առ Ապրօղլի
Աստուածատուր աղայն (որ և ի վերին բուղթդ յիշեալ եղև) և առ Առա-
քել աղայն և առ որդիսն սոցա՝ Մատթէոս, Մարգար, Յակոբ և Պետրոս
աղազատայսն գրեաց, էր ի պատասխանի սիրալի թղթոյն սոցա շնոր-
հաւորականի, զոր ի դեկտ. 11 գրեալ էին առ սրբազան Վեհս մեր և ծա-
նուցեալ էին զսորին զանդրանիկ օրհնութեան թղթոց և կոնդակի անդ
հասանիլն առ ինքեանս, զիւրեանց ընթեռնուլն և զանունն ի պատարա-
գոջն յիշելն։ Առ որս գրեաց սրբազան Վեհն զյոլով շնորհակալութիւնս և
զօրհնութիւնս։*

*Իսկ և գրեալ էին սոքա զփափանս և զկուսադրութիւնս յաղագս
Պօլսոյ զիտի և ոմանց թիւրակի և նախանձաւոր շարժմանցն առ սրբա-
զան Վեհս մեր (զորս ի վերոյսդ ի յոմանս թուղթս յիշեալ եմք)։ Առ որ
ևս գրեաց սրբազան Վեհն, թէ մեք ի ճշմարտութիւնն ապաւինեալ
զսրբոյ Աթոռոյս և զազգիս մերոյ օգուտն խորհիմք։ Ճշմարտութիւնն
85ա միշտ յաղթող է և այլն։ // Եւ թէ զոր ինչ սրբոյ Աթոռոյս բարի և աս-
տուածային կամացն հաճոյ, այնպէս է լինելոց և այլն։ Վասն որոյ և
դուք մի վրդովեալ տրտմիցիք, ասէ։ Այլև յետ գրելոյ բանիցս Ա (1) պա-
հարանաւ թուղթք հասին ի Զմիւռնոյ առ սրբազան Վեհս մեր, ի մարտի
ԺԱ (11), որք էին մի բազմաձեռագիր համահաճութեան մահսար յա-
ղագս նորոգ հայրապետութեան սրբազան Վեհիս մերոյ ի հասարակու-
թենէ իշխանացն Զմիւռնոյ, և կրկին թուղթ մի սիրոյ ի սոցանէ և քանի
մի թուղթք ևս յայլոց բարեկամաց գրեցեալ։ Որոց առ ինքն ժամանելոյն
աղագաւ զմխիթարութիւնս գրեաց սոցա, թէ ընկալաք սիրով և ուրախու-
թեամբ և շնորհակալեցաք զձէնջ։ Բայց անձեռնհաս եղաք, ասէ, գրել
զպատասխանիս ամենիցն, վասն որոյ ձեզ միայն գրեցաք զայս, զի մի-
ամիտ լիջիք։ Խոստացաւ և միւսոցն յետոյ գրել զթուղթս օրհնութեան՝
հասարակապէս և յատկապէս։ Ի սմա և ողջոյն և զօրհնութիւն գրեաց
տեղւոյ համայն քահանայիցն, իշխանացն և ժողովրդոցն։ Վերջապէս
Զմիւռնոյ նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետին ևս ողջոյն,
որ ի յարտաքին թեմսն գոլով, ընդ քաղաքացւոցն յայսմ նուագի զթուղթ
չէր գրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն ևս այժմ զյատուկ թուղթ ոչ
գրեաց նմա, զի ոչ գոյր ևս հարկաւոր ինչ գրելի։*

*359. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ևս սրբազան Վեհն
ի Ղարս գրեաց՝ ի վերայ մերազնեայ ժողովրդեանն քաղաքին, յաղագս
ԺԴ (14) ամսոյ զանձանակադրամին սոցա, զոր ձեռամբ սրբոյ Աթոռոյս*

գանձապետ մահտեսի Եղիային հասուցեալ էր սմա (Ա, Ա), յորում վերահաստատեալ զԵղիայն ի գործն գանձապետութեան սրբոյ Աթոռոյս։

360. Թուղթ ևս ի Ղարս առ սրբոյ Աթոռոյս գանձապետ մահտեսի Եղիայն գրեաց, որ այժմ զվերոյ յիշեալ գանձակադրամն յղեալ էր և զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն և զկոնդակ խնդրեալ ի վերայ ժողովրդեանն Ղարսայ։ Առ որ զշնորհակալութիւնս գրեաց վասն հարազատութեան և ծանոյց վասն խնդրեալ կոնդակին, թէ ահա գրեալ յղեցաք, ընթեռնուլ տուր յեկեղեցւոջն և հաստատեաց ի գործդ գանձապետութեան։

361. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի թղթոյ նորին, յամսոյս Ը (8) գրեցելոյ, յորում գրեալ էր սա զյղելն իւր և Յովաննէս պետին ի դրամոց առեցեալ ցորենոյն ի պէտս սրբոյ Աթոռոյս զ 48 սօմարն տեղւոյն բեռնակրօքն մերովք։ Եւ ծանուցեալ էր զհասանելն Տիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետին ի Ղարս, որ ի պօլսեցւոցն ի սուրբ Աթոռս զմահսարս բերէր վասն իրաց ինչ (զոր և յիշեցաք ի վերդ ի թուղթս ոմանս)։ Իսկ սրբազան Վեհն ի կողմանէ ցորենոյ աստ հասանելոյն զմխիթարութիւն գրեաց և զպատուէր, զի զԾ (50) սօմարն տեղւոյ ցորեան ևս առցեն, որ բոլոր դրամով առեալ ցորեանն ի ձեռն սոցա ի պէտս սրբոյ Աթոռոյս լիցի՝ ԲՃ (200) սօմարն տեղւոյն։ Իսկ և զի ընդ թղթոյս զթֆանքչիս յղեաց սրբազան Վեհն ի Ղարս՝ ի բերել զԿարապետ վարդապետն աստ, ծանոյց սմա։ Բայց քան-
85բ զի Պօլսոյ Զաքարիա պատրիարքն գրեալ էր ընդ //Կարապետ վարդապետին առ սոյն պարոն Գէորգս՝ առ ի գալ ընդ նմա ի սուրբ Աթոռս իբր առ ի վերահասու լինիլ լինելոցացն, որք ի դրդմանէ Պօլսոյ դիտին ի Պօլսոյ հասարակ ժողովրդենէն ի մահսարս նոցա գրեցեալք էին առ ի գալ և կատարիլ աստ (որք յիշելոց են զկնի ի ներքոյ ի յելսն մարտի)։ Վասն որոյ և սրբազան Վեհն յայսմիկ թղթոջ հարկեաց զսա առ ի գալ։ Որ և այնր աղագաւ ըստ հարկին պահանջման զԱ (1) թուղթ գրեաց առ Իբրահիմ էֆէնտու աղայսն, զի զսոյն պարոն Գէորգս մուրախաս արասցեն առ ի գալ։ Եւ զառ նոսա գրելն զթուղթ սմա ծանոյց և ստիպեաց ի գալ։ Եւ պատուիրեաց ևս, զի ի գալն իւր, զոմն կարգեսցէ անդ ի տեղի իւր, զի անդ պատահեալ բանիցն սրբոյ Աթոռոյս ընդ Յովաննէս պետին մուղայէթ լիցին։ Իսկ սակս ի վերոյ գրեցեալ Կարնոյ և Պօլսոյ գրեանցն, յորս էին և պահարանք թղթոցն Բաղդատու և Բասրայու և այլ տեղեաց, զորս և այժմ առ սա յղեաց՝ հասուցանել ի Կարին, պատուիրեաց շուտով յղել։ Այլ և յոյժ ստիպմամբ զբրինձ էր խնդրեալ սակս աֆանդիզատէիցն զնովն և յոյժ շատ։ Այլ սրբազան Վեհն առանց գնոյ զՃ (100) լիտր բրինձ յղել խոստացաւ նոցա, գրելով սմա, թէ մեք ևս պակասաւոր եմք ի բրձնոյ, վասն այն զշատն չկարեմք տալ, որ գնով լիցի, այլ զայսչափս միայն յղեսցուք, զի և յերկիրս մեր ևս չգտանի բրինձ։

362. Թուղթ ևս առ Յովաննէս վարդապետն, ըստ մտաց ոմանց բանից առ պարոն Գէորգն գրեցելոց, զորս ի վերդ գրեալ թղթոջ նորին գրեցաք։ Որք և պատշաճաբար առ սա գրեցան։ Բայց և պատուէր սմա, զի յետ գալոյ պարոն Գէորգին աստ մինչև ցվերադառնալն, լաւապէս մուղայէթ լիցի սա անդ հոգալեացն սրբոյ Աթոռոյս։

363. Թուղթ ևս ի Ղարս առ Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ ի Ղարսայ գրեալ էր և զգալն իւր ծանուցեալ և զմարդ խնդրեալ աստի, զի գնացեալ բերցեն զինքն ի

սուրբ Աթոռս իբրու յուխտ, որոյ ի գալն պատահեցաւ աստ զտանիլ Թովմասն և զայլ թուանքչիս յղեցաք առ ի բերել զքեզ։ Եւ ի պարոն Գէորգն ևս գրեցաք առ ի գալ ընդ քեզ։ Ապաքէն ընդ նմա ի միասին ժամու միով առաջ եկեսջիք։

Գրեցան և յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ մեր Թովմասին և այլ թուանքչոցն, որք ընդ նմա, յամսոյս ԺԵ (15)։

1781 թ. մարտ—Թուղթք ի Վան առ Ստեփանն Տէր-Յովաննիսեան և Բայազիտ առ տէր Վահանն

Որ ի կարգի վերոյ գրեցեալ թղթոցդ ի թուղթսն Բասրայու Բեթխէհէմեան պարոն Յովհաննիսին և Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետին և Պօղոսեան պարոն Խաչիկին յիշեցաւ ներկայապէս գիր գրեալ գոլ առ ջուղայեցի հանգուցեալ Տէր-Յովաննիսեան Ստեփանն, ահա այս հետ-
86ա ևապէս // գրեալս է, որ երկու աւուրբք յետ քան զյղեցումն վերոյ յիշեալ թղթոցդ գրեցաւ առ Ստեփանն։ Որոյ զհետ և գիր մի ի Բայազիտ առ տէր Վահանն գրեցաւ, որոյ զիտաւորութիւնն ևս ծանուցելոց է։

Տիրացու Ստեփանին և տեր Վահանին հասցեագրված նամակները (գրված մարտի 17-ին) բացառապես վերաբերում են դրամական խնդիրների (էջ 86ա—86բ)։

Բայց և ի սոյնում աւուրս այլևս յղեցան բեռնակիրք ի Ղարս, զի ևս բերցեն զցորեան ի պէտս սրբոյ Աթոռոյս. և սրբազան Վեհն ըստ խոստմանն (որ գրեցաւ ի վեր անդր ի մարտի ԺԴ (14) ի թուղթն պարոն Գէորգին) զՃ (100) լիտր բրինձ յղեաց ընծայ Իբրահիմ էֆէնդու որդւոցն՝ Միւստաֆային և Նօման աղային։ Առ որս և սիրոյ Ա (1) թուղթ գրեաց՝ ծանուցանելով զյղելն իւր առ նոսա զբրինձ՝ հանդերձ պակասութեամբք սրբոյ Աթոռոյս ի ներկայումս և այլ պատշաճաւոր բանիւք։

364. Թուղթ ևս սրբազան Վեհն առ սրբոյ Աթոռոյ ժողովարար Յովաննէս վարդապետն գրեաց, ծանուցանելով նմա նախ զյղելն իւր զուղտսն անդ՝ ի բերել զցորեան, և երկրորդ՝ զուղարկելն զբրինձ յաղագս էֆէնդիզատէիցն։ Ապա յիշեաց և զգրելն յամսոյս ԺԵ (15) առ պարոն Գէորգն ի գալ։ Եւ գրեաց, թէ եթէ մինչև ցհասանիլն քեզ թղթոյս, չիցէ եկեալ, ընդ նմա մատուսջիր զբրինձն էֆէնդու աղայոցն։ Ի սմա ներկայապէս ի Ղարս եղեալ Ապտուլլա փաշայի վէքիլխարճ պարոն Սամուէլին զողջոյն գրեաց։

365. Փուսալայ ևս գրեաց սմա սրբազան Վեհն առանձնօրէն, քանզի միջոցաւ ինչ յառաջ քան զայս վերոյ յիշեալ Սամուէլն եկն ի սուրբ Աթոռս։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ ահա զմեր դաղբաշի ումեմն Թաւատի՝ Գեօրկին բէկ անուն կոչեցելոյ, որ էր նազիր Վրաց Հերակլ արքայի որդի Լևոն Միրզային, և ի Հերակլէն յղեցեալ այժմ երթայր առ խանն Երևանու յաղագս իրաց ինչ[96]։ Եւ ի տեսանելն նոյն Սամուէլին զԳեօրկին բէկն խօսեցեալ էր ընդ նմա և Ա (1) փոքրիկ գիր ևս էր գրեալ արքային, որ երթայր անդ[97]։ Իսկ յետոյ ի գնալ Գեօրկին բէկին ի Թիֆլիզ և ի գալն դարձեալ աստ առ ի գնալ առ խանն մեր, զայն գիրն Սամուէլի յղեալ էր արքայն առ սրբազան Վեհս մեր և ինքն ևս ի վերայ սրբազան Վեհին մի հայերէն կարճ գիր էր գրեալ, որպէս զի զնորին կամսն իմասցի և յորդորեսցէ ի գնալ անդ։ Ուստի սրբազան Վեհն

գրեաց սմա, թէ զայս բանս խոստովանօրէն խօսեաց ընդ սիրելւոյն մե-
րոյ՝ խոջայ Սամուէլին և զկամսն իմացիր: Զի թէ գնալ կամիցի, ապա
87ա իՙնչ կերպիւ որ կամի, թող քեզ ասասցէ և դու գրեա մեզ, զի // ծանուս-
ցուք նմա, և այնպէս արասցէ: Իսկ եթէ ոչ կամիցի գնալ, թող մի թուղթ
գրեսցէ մեզ այլ ևս իւր գրչովն և նոյն իւր մօհրովն, և ցուցցէ զարգե-
լառիթ պատճառն, ինչ որ ինքն գիտէ: Եւ զայն ևս ծանուցանէ, որ մեք
զարքայի հրամայելն ասացաք ինքեան, բայց ինքն չկարաց գնալ: Այս-
պէս մի թուղթ գրեալ տացէ քեզ և դու առ մեզ յղեա, զի յղեսցուք առ
արքայն և մեք ևս գրեսցուք, զի իմասցի որպէսն: Եւ թէ ինքն չկարասցէ
գրել, թող քեզ գրել տացէ և ինքն ի ներքոյ ձեռն դիցէ իւր գրովն, և
նոյնպէս թուրքերէն բառիւք զիւր անունն և զնշանսն գրեսցէ, որպէս որ
ի փոքր թուղթն գրեալ է և այլ նոյն կնքովն կնքեսցէ և տացէ քեզ և
դու առ մեզ յղեա: Ընդ այսմ յղեաց նաև զՍամուէլի առ արքայն և ար-
քայի առ ինքն գրեալ թուղթսն առ սա, զի տեսցէ և դարձուսցէ:

Օրինակն սորա գոյ ի կառր թղթի:

366. Փուստլայ գրեաց սրբազան Վեհն առ սա խոստովանաբար
վասն վերոյ գրեալ փուստլայի բանին, որպէս զի նախ ընդ պարոն Գէ-
որգին խորհրդակցեսցի առանձնակի, զի այլես ոք մի իմասցի, և ապա
զոր ինչ պատշաճ տեսցէ նա և խօսեսցի այնր աղագաւ, այնպէս արաս-
ցէ: Ծանոյց ապա երկարապէս և զորպիսութիւնս նոյն Սամուէլի թղթա-
գրութեանն ի Թիֆլիզ առ արքայն Վրաց Հերակլ՝ ձեռամբ Գեօրգի բէ-
կին և զայլն, որ ի վերոյ գրեալդ փուստլայում երկար ցուցաւ: Եւ պա-
տուիրեաց, զի ի խօսիլն ընդ Սամուէլին սակս այս բանիս, ոչ հարկես-
ցէ ի գնալ, զի մի յիրաւեկ լինիլն կանուխ փաշային կամ յըմբռնելն
ի գնալն ասասցէ, թէ այսոք հարկեաց ինձ: Եւ ոչ յորդորեսցէ ի մնալ,
զի մի գրեսցէ նա արքային, թէ ինձ այսպէս յորդորօղ եղև, վասն այն
չեկի: Այլ յերկուց կողմանցն զգուշացեալ, միայն զկամսն իմասցի և
գրեսցուսցէ աստ առ ինքն, զի ծանուսցէ արքային և զերծցի: Գրէ ևս, թէ գի-
տեմ, զի ի խօսիլդ ընդ նմա, քեզ ասելոց է, թէ տեսից զգրեալն հոգևոր
տիրին, թէ քեզ իՙնչ է գրեալ վասն այս բանիս: Եւ մինչ այսպէս ասաս-
ցէ, դու զմիւս փուստլայն ցոյց տուր և զիՙնչ կամիլն շուտ գրեա մեզ:

Սորա օրինակն ևս գոյ ի վերայ կառր թղթոյ:

367. Թուղթ ևս առ պարոն Գէորգն գրեաց, յիշելով զքան զայս յա-
ռաջ յամսոյս ԺԵ (15) գրեալսն և ծանուցանելով զայժմ ուղասն յղելն
անդ վասն ցորենոյ և ընդ նոսա զխոստացեալ Ճ (100) լիտր բրինձ ա-
ռաքելն վասն աֆանդիզատէիցն: Որոյ սակս և ասէ, թէ եթէ մինչև ցժա-
մանելն թղթոյս և բրնձոյն չես ելեալ ի ճանապարհ ընդ Կարապետ
վարդապետին՝ առ ի գալ ի սուրբ Աթոռս, դու իսկ ընդ մեր Յովաննէս
վարդապետին զբրինձն մատուսջիր էֆէնտիզատէիցն, ծանուցանելով նո-
ցա զներկայական պակասութիւնն սրբոյ Աթոռոյս:

Գրեալ յղեցան սոյն թուղթքս զհետ ուղտապանացն մերոց և թու-
մնքչոցն ևս ամսոյս ԺԷ (17):

1781 թ. մարտ—Թուղթք ի Բայազիտ առ տէր Վահանն և առ այլս

368. Որովհետև սրբազան Վեհն յա.Մսոյս ԺԷ (17) գրեաց և հար-
կեաց տէր Վահանին վասն զատաքչի Թօմօյի տալոցու դրամոյն մեր
ընձացի Կարապետ վարդապետին, զի տացէ: Եւ թէ չտայցէ նա, զոր-

պէսն գրեսցէ, վասն որոյ և նա հետևեալ էր առ ի առնուլ և դրամն չէր
ի ձեռս եկեալ ի նմանէ: Նաև՝ բայազտցի ոմն Մուրատ ի Կարին ի մեռ
վէքիլ Հայրապետէն յարգեանց սրբոյ Աթոռոյս ԲՃ (200) ղուռուշ էր ա-
ռեալ, զի ի Բայազիտ տացէ տէր Վահանին՝ հասուցանել ի սուրբ Ա-
թոռս: Բայց նա ևս էր այլևայլ արարեալ և չէր հասուցել փութով ըստ
պայմանադրեալ ժամանակին իւրեանց զդրամն տէր Վահանին: Որոց
աղագաւ գրեալ էր այժմ տէր Վահանն սրբազան Վեհին, թէ մինչև զյա-
ռաջ մարդ ոչ յղեսցես և զթուղթ ոչ գրեսցես առ ոմանս՝ առ ի հարկիւ
պահանջել ի սոցունց զդրամսն, ոչ ելանէ: Վասն որոյ և սրբազան Վեհն
զԱ (1) թուղթ գրեաց առ սոյն տէր Վահանն և առ պարոն Յակոբն և խո-
ջայ Սահակն և ընդ թուանքչի Յօհաննին յղեաց ի Բայազիտ առ նոսա, զի
սիրով կամ խստութեամբ և փաշային ահացուցանելով՝ առցեն զատա-
լացուսն նոցա և յանձնեսցեն Յօհաննին, զի բերցէ:

Գրեալ ելին ընդ Յօհաննին յամսոյս ԻԹ (29):

1781 թ. մարտ—Ի մեծն Պօլիս, ի Կարին և ի Ղարս գրեալ թուղթք

Արդ, Տիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետն (որ յի-
շեալ եղև ի վերոյդ՝ ի մարտի ԺԵ (15) ի թուղթն Պօլսոյ նուիրակ Մի-
քայէլի եպիսկոպոսի, նաև ի Պօլսոյ պետին և յայլոց թուղթս ևս), եկն էհաս ի սուրբ Աթոռս, բերեալ
ընդ ինքեան զերիս թուղթս ի Պօլսոյ: Որոց մին առաւել բազմակնիք
մահուար ի դիմաց Ալթիճումիաթին, գրեցուցեալ ի խորամանկելոյ դի-
տին Պօլսոյ և կնքեցեալ ի խուսափեցուցմանէ խառորնակ կամաց նորին,
ոչ թէ յիշխանաց և յերևելեացն մերազնէից, որք անդ, այլ յաննշանից և
ի ցած արանց ի վերայ համայն միաբանից սրբոյ Աթոռոյս: Եւ մին ևս
ի քանի մի յիշխանաց կնքեցեալ և յայլ ցած արանց ևս, յորում կանոնք
ոմանք արտագրեալք ի Պօլսեցի Աղէքսանդր և ի Շամախեցի Յակոբ
կաթուղիկոսացն յառաջագոյն անդ գրեալ կանոնացն: Իսկ միւսն ի
պատրիարքէն յինքենէ առ եպիսկոպոսունսն սրբոյ Աթոռոյս՝ ճշմարիտ
և ուղղաձև բանիւք լցեալ: Զորոց զխառնորութիւնսն աստ երկարապէս
գրելն աւելորդ է, որովհետև նոյն Գ (3) թուղթքն գոն ի սուրբ Աթոռոջս,
88ա այլ միայն զխնդիրս // գրոցացն ծանուցուք աստ, որք զչորեսին խրն-
դիրս էին գրեալ՝ առ ի կատարել զայնս, և որպէս զկանոնս յարամնա-
ցականս ձեռագրով և կնքով հաստատել: Որոց նախկինն այս էր, թէ
թարց գիտութեան և հաւանութեան ազգին զկաթուղիկոս մի դիցեն միա-
բանքն Աթոռոյս: Եւ երկրորդն այս, զի զկնի վախճանման Հայրապետին
զպաշտօնս նորա հանցեն ի ներսէն ի կարգս միաբանից: Երրորդն,
զի Զ (6) երկրորդք լիցին կաթուղիկոսին, այսինքն՝ նախիրք լիցին, որք
իբրու ամենայն ելից և մտից սրբոյ Աթոռոյս վերահասու լիցին և թարց
նոցին խորհրդեանն կաթուղիկոսն ոչ ինչ արասցէ: Իսկ չորրորդն, թէ
նուիրակ ոմն սրբոյ Աթոռոյս ի վիճակի իւրում մինչ անհամեստ շար-
ժիցի և զկռուասիրութիւն արասցէ և այլն, պատրիարքն Պօլսոյ արքու-
նական հրամանաւ զնա դարձուսցէ ի սուրբ Աթոռս ի վիճակէն: Որոց
նախկինն ընդունելի է, և երկրորդն ևս հին սովորութիւն է ի սուրբ Ա-
թոռոջս: Իսկ միւսքն ախտալից և անհաճելիք ամենևին, առարկուք
անուան և պատուոյ կաթուղիկոսին և վնասարերք սրբոյ Աթոռոյս: Եւ
արդ, ընթերցեալ եղեն թուղթքս հանդիսիւ միաբանիցս, որոց զպատաս-
խանի ինչ ոչ գրեաց սրբազան Վեհս մեր, այլ միաբանքն զմի թուղթ

զրեցին սիրով ի պատասխանի նոցին, որ ահա լրապէս գրի ի ներքոյ։

369. Ի լուսակառոյց և ի քրիստոսակերտ սրբոյ և ի մեծէ Աթոռոյ Էջմիածնի, որոյ սպասաւոր և պաշտօնեայ քահանայակարգ միաբան եղբարք, այսինքն՝ արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսունք, վարդապետք և աբեղայք[97]։ Յորոց անխարդախ և ճշմարիտ սիրով, միարար և սուրբ ողջունիւն քրիստոսական և նոյնոյ իսկ ամենառատ օրհնութեամբն, նաև հոգեպարար շնորհօք և զօրութեամբ սրբոյ և աստուածաիջի տեղւոյս, ծանուցումն լիցի սիրելւոյ և յարգոյապատւոյ եղբօրդ մերոյ և շնորհածին զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ արժանապատիւ պատրիարքիդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ և այլ շնորհազարդ վարդապետաց և սրբանուէր քահանայից և առհասարակ օրհնեալ և մեծահաւատ իշխանապետացդ և իշխանացդ ամենից զօրացելոց ի Քրիստոս, նաև ընաւից աստուածասէր ժողովրդականացդ խմբից Ալթիջումիաթ կոչեցելոց հարազատ, օգտաջան և սրտացաւ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի բազմակնիք թուղթն Ալթիջումիաթ կոչեցելոցդ անուամբ, յորում էին կնիքք քահանայից և այլ եկեղեցականաց և համայնից հին և նոր գործակալաց եկեղեցւոյ և միւս թուղթն, որ ընդ նմա՝ օրհնեալ իշխանացդ կնքովքդ, յորում էին կանոնք ինչ արտահանեցեալք ի կանոնաց հոգելոյս հայրապետացն մերոց երջանկաց՝ Աղէքսանդրի Բիւզանդացւոյ և
88բ Յակոբայ Շամախեցւոյ, // ընդ որս և յատուկ թուղթ մի ի վերայ համարակութեանս մերոյ՝ ի յարգելի եղբօրէդ մերմէ՝ պատրիարք աստուածաբան վարդապետէդ, ի միասին հասին առ մեզ ի ձեռն սիրելւոյ եղբօրն մերոյ և առաջնորդին Տիգրանակերտոյ՝ Կարապետ խոհեմառատ վարդապետին ի մարտի ամսոյ ԻԲ (22)։

Յորս զոր ինչ գրեալ էիք, իմացաք, որք զամենայն գրեալսն մեր առ ձեզ բազմակնիք մահսարով և միաբանութեամբ ի ձեռն Պետրոս վարդապետին երևեցուցեալ էիք զոլ սուտ, չհաւատալով և ոչ միայն ի նոցանէ, և զօրինաւոր խնդիրս մեր չկատարելով։ Իսկ դուք ի բազմակնիք թղթոջն, որ Ալթիջումիաթիդ անուամբ գրեալ էիք զչորեսին խնդիրս, հարկելով զմեզ առ ի կատարել զայնս, և իբրև զյաւիտենական կանոնս ձեռագրով և կնքով մերով հաստատել։

Առ որս գիտասջիք սիրելիք մեր և սրտացաւ որդիք սրբոյ Աթոռոյս զի առաջին խնդիրն ձեր, որ է վասն ընտրութեան և օծութեան հայրապետի, ի բնէ անտի ի նախնի հայրապետացն մերոց երանելեաց կանոնեցեալ իսկ է, որպէս զի համահաւանութեամբ բոլոր օրհնեալ ազգիս մերոյ լիցի։ Մանաւանդ գիտութեամբ և վերահասութեամբ երկուց արքայանիստ մայրաքաղաքաց, այսինքն՝ Շօշու և մեծիդ Պօլսոյ բոլոր քահանայից, իշխանաց և ժողովրդոց, և զոցին վերադիտողաց։ Բայց զի թէև գիտութեամբ բոլոր ազգիս մերոյ եւս իցէաք ընտրելոց, ոչ այլ ոք էր պատշաճ ընտրութեան, եթէ ոչ կամ հայրապետս մեր, զոր ընտրեալ եմք, և կամ յարգելիդ մեր պատրիարգ վարդապետդ։ Զի դուք եւս գիտեք ահա, որ այժմու ժամանակիս սոքա էին արժանի գերազանց շնորհին կաթուղիկոսութեան։ Այլ որովհետև սա աստ գտանեցաւ ներկայապէս, ապա մինչ ժամանակի անբարի դիպուածքն և անյաջողութիւնքն եւս զմեզ կարի յոյժ ստիպեցին, որք հանդերձեալ էին տապալել զհաստատութիւն Տանս սրբոյ, որպէս և յառաջ գրեցաք ձեզ ճշմարտութեամբ (թէպէտ անհաւատալի եղեն ինձ)։ Վասն որոյ ոչ եղև մեզ ժամ և

միջոց, զի հարցանէաք ցձեզ, որոյ սակս ոչ կարացաք յայնժամ յետացուցանել և ոչ մի յերկուցն, այսինքն՝ զընտրութիւնն և ոչ զօծումն, այլ միակամ հաւանութեամբ ընտրեցաք զսա վաղվաղակի և օծաք առ ի շիջուցանել զբորբոքեալ բոցսն ներկայական, վստահանալով ի սէր սիրելեացդ, և գիտելով զի և ձեզ լինի հաճելի, ըստ որում և շատքդ ի ձէնջ ճանաչէիք զսա և գիտէիք իսկ զարժանաւորութիւնն շնորհին հայրապետականի։ Այլ դուք որովհետև այդքան վրդովեցեալ զներհակն էք իմացեալ գրեցելոցն մերոց, և զխնդիրս մեր յետաձգեալ և յայսքան միջոցս զսուրբ Աթոռ լուսատու ծնօղս ձեր և զմանկունս սորին ի տրտմութեան թողեալ, և նորապէս զկանօն խնդրեալ, վասն որոյ մեք եւս աւելորդ համարեցաք երկարապէս գրել ինչ առ ձեզ այժմ ի պատասխանի գրեցելոցն ձերոց, այլ համառօտ զայս միայն ծանուցանեմք օրհնեցելոցդ ի Տեառնէ։ Քանզի գիտէք և դուք, զի կանոնագիրքն սրբոյ Աթոռոյս հայրապետք լինին, և ոչ միաբանք, կամ այլ ստորադրեալք։ Ուստի
89ա յորժամ քաղցրացուցանիցէք դուք զսիրտս ձեր // ի վերայ սրբոյ Աթոռոյս և սրբազան Վեհիս մերոյ, յայնժամ և սա ոչ եթէ զձեր գրեալդ միայն հաստատելոց է վերստին, այլ ընդ նոսին և զայլ բազում աթոռաշահ և ազգաօգուտ բանս է արկանելոց ընդ կանոնիւք, և նզովիւք փակելոց, և կոնդակաւ հաստատելոց՝ ըստ կանոնադրութեանց նախնի հայրապետացն սրբազանից, մանաւանդ Աղէքսանդրու և Յակոբայ։ Եւ մեք՝ համայն եպիսկոպոսունքս եւս ըստ օրինի և յօժարակամ սիրով կնքելոց եմք զլուսանցս նոյն կանոնականին։ Զոր և երկու եմք գրեցուցանելոց, զի մինն աստ ի սուրբ Աթոռոջս մնասցէ վասն զգուշութեան ապագայից և զմինն առաքելոց եմք յայդր՝ ի միամտութիւն և յանհոգութիւն ձեզ։

Իսկ որ գրեալ էիք հանել ի ներքէն զսպասաւորսն հոգելոյս հայրապետին մերոյ։ Լուարուք առ այդ եւս։ Այդ ոչ է մեծագոյն բան և դժուարութիւն ինչ և կամ ի շարս կանոնաց համարելի։ Քանզի ի բնէ անտի սովորութիւնն՝ այս է սրբոյ Աթոռոյս, զի յորժամ հայրապետն վախճանիցի, իսկոյն Գ (3) կամ Դ (4) նախապատիւ անձինք ի յեպիսկոպոսացն գնացեալ կնքեն զդրունս վեհարանին և սպասաւորացն զանկողինսն միայն տուեալ, յինքեանս վասն ի գիշերի ննջելոյ հանեն ի ներքէն և բնակեցուցանեն ընդ հասարակսն։ Իսկ զնախկինն ի սպասաւորացն պահեն ընդ ինքեանս, ըստ որում և հարկն պահանջէ, յաղագս հարկաւոր իրաց։ Իսկ ապա մինչ նորոգ հայրապետն յաջորդէ զԱթոռս սուրբ, զնոյին հաշիւն տեսեալ, խառնեն ի կարգս միաբանիցն, որպէս և յարգելիդ մեր պատրիարք վարդապետդ գիտէ լաւապէս։ Իսկ զսպասաւորսն հոգելոյս հայրապետին մերոյ, թէպէտ մինչև ցարդ թողաք ի ներսն՝ ի պատճառս ոմանց ինչ հարկաւոր գործոց, որք վճարէին նոքօք, սակայն ինքեանք ի վաղուց հետէ աղաչէին ելանել ի կարգս հասարակութեան, զոլով զզուեցեալք ի բազմամեայ աշխատանացն և ի պէսպէս տաժանմանցն, զորս կրէին։

Ուստի ի գալ մահսարին աստ, կատարեցաք զհայցուածս նոցա այժմ (որովհետև դուք եւս հակեալ էիք) և հանաք ի ներքէն ի կարգս միաբանից, վերահասութեամբ Դ (4) գլխաւոր եպիսկոպոսաց ի մէնջ զգոյս նոցա տեսին ըստ սովորութեան մերոյ և ետուն ինքեանց։ Իսկ միւս կանոնադրելի բանքն ոչ էին գործ հասարակ միաբանիցս սրբոյ Աթոռոյս, այլ ի սմա նստող հայրապետին, որպէս և գրեցաք։ Ուրեմն

զայս գրեմք սիրելեացդ մերոց և մեծաւ սիրով խնդրեմք, զի մի առ այնս կրկին վրդովիցիք, զի ոչ էր այժմ ժամանակ այդպիսի կանոնադրութեան։ Վասն զի յառաջագոյն գրեաց առ ձեզ հայրապետս մեր զկարմրակնիք կոնդակ օրհնութեան, զոր մինչև ցարդ ոչ էիք ընթերցեալ տակաւին և զանունն ևս ոչ յիշէք։ Մանաւանդ և ի գրեալս ձեր յայսոսիկ զորս յղեալ էք այժմ, կաթուղիկոս անուան ոչ տեսանելով զսա արժանի գրէք միայն թէ ընտրեալդ ձեր։ Եւ զի այսպէս անընդունակ է առ ձեզ այժմ սորին կարմրակնիք թուղթն, որպէս ասացաք, վասն որոյ անյարմար է այժմ հայրապետին մերոյ կարմրակնիք կոնդակաւ զայդ կա-
89բ նոնսդ գրել, զի իցէ, թէ այն ևս լինիցէր անընդունակ։ // Ուստի թողաք զայնս այժմ, որպէս գրեցաք, և միայն զայս թուղթս մեր առ միամտութիւն ձեզ գրեցաք զի գիտասջիք, թէև զայնս հաստատելոց է սրբազան Վեհս մեր հանդերձ մեօք, այլ յայնժամ մինչ դուք զհարկաւորսն սորին, այսինքն զփարմանսն և զմահսարսն հոգացեալ յղիցէք աստ և սա միամտիցի, ապա թէ կանոնեսցէ զայդոսիկ՝ հանդերձ այլևս հարկաւոր կանոնօք, որպէս և ի վերոյ ասացաք։

Ուրեմն աղաչեմ սիրովն Աստուծոյ միամտիլ այսու գրեցելով, թողուլ ի բաց զամենայն վրդովմունս և մի ևս վրդովիլ կամ զներհակ ինչ խորհիլ։ Այլ սիրոյ և խաղաղութեան զհետ երթալով և զբանսարկուն յամօթ առնելով, վերստին քաղցրացուսջիք զսիրտս ձեր ի վերայ մեր և հաստատիջիք ի սէր միաւորիչ։ Եւ որպէս վայել է սրբոյ ծնողիս ձերոյ շինութեանն և պայծառութեանն և բարձրութեան անուանն, այնպէս ջանասջիք առնել և զխաղաղասէր և զհեզաբարոյ սրբազան Վեհս մեր և զմեզ ի տրտմաւիթ լրոյ և ի վիրաւորիչ ձայնից ազատս պահել՝ խնայելով յանուն անարատ հարսինս Քրիստոսի, մօրս լուսոյ և ծնողիս զձեզ ի յորդէգրութիւն Հօրն երկնաւորի, և յայսքանամեայ աշխատութիւնս ձեր և մեր։ Զի բաւական եղև յայսչափ ժամանակս այսպէս ի վերայ երեսաց մնալն սրբոյ Աթոռոյս և գործոցն սորա և հատանիլն խալպարդեանց սորին, և պակասաւորիլն յամենայնի ի յայս աւեր երկրոջս և անկանիլն այսքան ի պատուոյ ի չարաչար ժամանակիս։ Իսկ եթէ ընդ այսոսիկ ոչ հաճեցեալ ձեր, կամիցիք զներհակն առնել, այնուհետև մեք անպարտ լիցուք և դուք որպէս և օգուտ գիտէք հոգւոց ձերոց և սրբոյ Աթոռոյս և ազգիս, զայն արասջիք։ Ահա ակնադէտ լեալք, յուսով մեծաւ սպասեմք պատասխանւոյ թղթոյս և սիրոյ, և քաղցրութեան, և միացուցիչ խաղաղութեան ակն ունելով, աղօթեմք վասն կենաց և բարեյաջողութեան ձերոյ։ Ողջ լերուք ի Տէր։

370. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Պոլիս առ նուիրակ Մինաս վարդապետն և մահսարատար Պետրոս վարդապետն գրեաց։

Նամակում ասվում է, որ Պոլսից ժամանած Կարապետ վարդապետի բերած գրությունները, որոնցով պոլսեցիները հայտնում էին Ղուկասին որպես կաթողիկոս չընդունելու մասին և պահանջում էին վերընտրություն, ինչպես նաև կաթողիկոսի իրավունքների սահմանափակում, ընթերցվել են Էջմիածնի վանքի միաբանների ժողովում։ Վերջիններս չեն ընդունել այդ առաջարկությունները և կրկին պնդում են, որ կաթողիկոսը լինելու է իրենց ընտրյալ Ղուկասը։ Միաժամանակ հայտնվում է, որ ընտրությունների վերաբերյալ պոլսեցիներին ոչ ճիշտ տեղեկություններ ուղարկած Սահակ վարդապետը զղջացել է իր արածի համար։ Նամակում հաշտության և համաձայնության դաշինք կոչ է արվում։ Հայտնվում է նաև, որ Գալուստ վարդապետը ուղարկված է Թիֆլիս Հերակլ Բագրատիոնին ցավակցություն հայտնելու նրա որդու՝ Լևան Միրզայի մահվան կապակցությամբ (էջ 89բ—91ա)։

91ա 371. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Կարին առ պարոն Հայրապետն գրեաց, ծանուցանելով նմա զհասանիլն Կարապետ վարդապետին ի սուրբ Աթոռս՝ հանդերձ ի Պոլսոյ բերեալ թղթովքն և զմիաբանից գրելն զպատասխանին։

Հանձնարարվում է շտապ կարգով Կ. Պոլիս ուղարկել վերը հիշված նամակները և դրամական փոխանցում կատարել Մինաս վարդապետին։

372. Կոնդակ առաջնորդական սրբազան Վեհն ի վերայ Ղարսայ քաղաքի և շրջակայ գիւղօրէից համայն մերազնեայ ժողովրդեանն գրեաց վասն Յովաննէս վարդապետին՝ միաբանին սրբոյ Աթոռոյս (որ անդ վասն սրբոյ Աթոռոյս իմատափայ պցորեան և զգարի և զայլ ուտելիս ժողովէր, որ և ի վերոյսն ի յոլով տեղիս յիշեցեալ գոյ), կարգելով զնա առաջնորդ նոյնոյ երկրին և հոգաբարձու Ղօշավանք կոչեցեալ վանիցն սրբոյ Յովաննիսի, որ անդ, ըստ խնդրոյ Ղարսայ քահանայից և ժողովրդեանն։ Որք նարդենիս զրաղմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն և զՅովաննէս վարդապետն ինքեանց առաջնորդ կարգել խնդրեալ համակամութեամբ։

373. Թուղթ ևս առ նոյն ինքն Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի մարտի ԻԲ (22) գրեալ թղթոյն։ Յորում նախ ի կողմանէ ԾԱ (51) սոմար ցորենոյն, զոր այժմ ուղտուքն մերովք յղեալ էին սոքա, միամտութիւն։ Երկրորդ՝ զի փուսուլայի բանս էր գրեալ
91բ սա առ սրբազան Վեհն։ Գրեաց, թէ այնր զպատասխանի յետ Զատկին եմք գրելոց։ Իսկ յետ այսոցիկ զայս, թէ զքեզ առաջնորդ էին խնդրեալ ինքեանց տեղւոյդ քահանայքն և ժողովուրդքն բազմակնիք մահսարաւ ի մէնջ։ Վասն որոյ զառաջնորդական կոնդակ գրեցաք, ասէ, վասն քոյ և յղեցաք առ քեզ, զոր ընթեռնուլ տուեալ հաստատեսցիս, ասէ, ի գործդ և սուրբ վանիցդ ևս լաւապէս հոգածու լիցիս։

374. Թուղթ ևս առ պարոն Գէորգն գրեաց, թէ թուղթդ ի մարտի ԻԲ (22) գրեալ, հանդերձ մահսարաւն տեղւոյդ քահանայից և ժողովրդոցն էհաս առ մեզ ընդ ուղտապանին մերոյ և ընդ ուղտուցն ցորենով բարձելոց։ Արդ, ըստ մահսարին ձերոյ, ահա զառաջնորդական կոնդակ գրեալ յղեցաք վասն Յովաննէս պետին և կարգեցաք զնա ձեզ առաջնորդ։

Նաև, զի սա ի նախնեաց իւրոց հետէ Երևանու երկրացի էր, վասն որոյ գրեալ էր այժմ սրբազան Վեհին և խնդրեալ էր, զի զինքն և զտուն իւր յատուկ թղթով տէրունի արասցէ սրբոյ Աթոռոյս, զի այլոյ ծուխ հիցի։ Նման իրի և սրբազան Վեհն զմի Ա (1) թուղթ գրեաց ի վերայ սորա և իւր որդի փոքրիկ Բաղտասարին, թէ դուք ի նախնեաց ձերոց այս երկրացի գոլով՝ էք տէրունի ժողովուրդ սրբոյ Աթոռոյս և իբր յատուկ ծուխ սմա, վասն որոյ ոչ ոք ունի զիրաւունս իւրացուցանել զձեզ, այլ դուք յատկապէս տէրունի էք սրբոյ Աթոռոյս՝ հանդերձ օրհնեալ տամբ ձերով։ Ուստի և ի հաստատութիւն բանիս, զայս գիրս յղեցի առ ձեզ, զի մնասցէ առ ձեզ ի միամտութիւն և յանհոգութիւն ձեզ։ Զոր և յղեալ ընդ թղթոյս առ սա՝ գրէ յայսմիկ թղթոչ, թէ ահա վասն հաստատութեան տէրունի գոլոյդ սրբոյ Աթոռոյս, զյատուկ թուղթ գրեցաք առ քեզ, որ մնասցէ ի տան քում։ Այլև, զի վերոյ յիշեալ թուղթսն Պոլսոյ և Կարնոյ պահարանեալ յղեցաք ի ձեռն սորա՝ առ ի յղել ի Կարին առ Հայ-

բապետն, զի և նա անտի յղեսցէ ի Պօլիս, ուստի գրէ սմա շուտ հասուցանել ի Կարին:

Ուղարկեցան թուղթքս ընդ թուֆանքչոցն մերոց յամսոյս Լ (30):

1781 թ. ապրիլ—Ի Ղարս և ի Կարին գրեցեալ թուղթք

Յայսմիկ ամսոյս, որ է ապրիլի Ը (8), սրբազան Վեհն այլևս դարձեալ յղեաց զուղտս ի Ղարս՝ ի բերել զցորեանն սրբոյ Աթոռոյս, որ անդ, վասն որոյ զՃ (100) լիտր բրինձ, զոր ի վերն ի մարտի ԺԵ (15) ի թղթոջ պարոն Հայրապետին խոստացաւ յղել խալիլ փաշային, այժմ յղեաց ի Ղարս, անտի հասանիլ ի Կարին. Եւ առ ոմանս տաճիկս և հայս ևս զթուղթս գրեաց, որպէս ահա ի ներքոյ ցուցանին կարգաւ:

375. Թուղթ սիրոյ ի Կարին առ խալիլ փաշայն գրեաց, ծանուցանելով նմա պյղելն բրնձին ի Ղարս, որ անտի ևս հասցի առ ինքն:

376. Թուղթ ևս առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ծանուցանելով և նմա ևս// զբրինձ յղելն ըստ խոստմանն՝ յանուն խալիլ փաշային
92ա ի Ղարս, առ պարոն Գէորգն, որ նա հասուսցէ առ սա, կալնլով ի վարձու զբեռնակիրս, զի և սա ընդ մահտեսի Յովաննիսին, որ անդ, մատուսցէ փաշային և զքիրայն բրնձատար բեռնակարցն ինքն տացէ: Նաև ի դիմաց իւրոց զողջոյն տացէ յիշեալ մահտեսի Յովաննիսին: Եւ թէ յառաջ քան զայս քանիցս գրեալ է քեզ մեր Մկրտիչ վարդապետն՝ առնուլ զԺ (10) թելանի շաքեար և զԳ (3) զանթար երկաթ և յղել ի պէտս սրբոյ Աթոռոյս: Եթէ առեալ ես, բարւոք է, և թէ ոչ, շուտով առեալ յղեսցես:

377. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Ղարս առ Իբրահիմ էֆէնտու որդիսն գրեաց վասն Ղարսայ և Ղօշավանից նորոգ առաջնորդ Յովաննէս վարդապետին, զի մուղայէթ լիցին նմա և ակնածու: Սմին նման և զյանձնարարական թուղթ մի ևս առ Մաղզբերդու Ալիբէկն գրեաց: Ըստ այսմ և զմի թուղթ ևս առ Մահմատ բէկն գրեաց: Զորս և յղեաց առ պարոն Գէորգն և Յովաննէս պետն՝ տալ նոցա:

378. Թուղթ ևս առ պարոն Գէորգն գրեաց, զեկուցանելով նմա զյղելն վերստին զուղտսն առ ի բերել անտի զմնացեալ ցորեանն սրբոյ Աթոռոյս: Ծանոյց ապա և զյղելն ընդ ուղտուցն զբրինձ յանուն խալիլ փաշային և զգիր գրելն առ նա և զառաքելն առ ինքն, և պատուիրեաց, զի թէ քիրաճի պատահիցի, փոյթ յղեսցէ զբրինձն հանդերձ թղթովքն, իսկ թէ չպատահիցի, զթուղթսն Հայրապետին և խալիլ փաշային գոնեայ յղեսցէ շուտով, զի իմացեալ զբրնձոյ հասանիլն ի Ղարս, միամտեսցին: Եւ ապա մինչ քիրաճի պատահիցի, զբրինձն ևս յղեսցէ: Ազդէ սմա և զայս, թէ քիրայն բրնձատարաց Հայրապետն է տալոց: Ծանուցանէ և զգրելն զթուղթս առ տաճիկսն ի Ղարս, զորս ի վերոյ յիշեցաք, և զի ձեռս իւրեանց յղելն: Իսկ և հարկեաց, թէ զՅովաննէս պետի իմտատիա ժողովեալ ցորենոյ և գարւոյ, և թէ զդրամով առեցեալ ցորենոյ զորքանութիւնն գրեսցեն: Ի սմա և Յովաննէս պետին ողջոյն գրեաց, զի անձեռնհասն եղև նմա յատկապէս զգիր գրել:

Գրեցեալ և յղեցեալ եղեն թուղթքս ընդ տղայոցն և ուղտուցն մերոց յամսոյս Ը (8):

1781 թ. ապրիլ—Թուղթ միակ ի Թիֆլիզ

379. Զկնի վերոյ ցուցեալ թղթոցդ յղեցման, ժամանեցին աստ թուղթք ի Թիֆլիզու՝ ի Կարապետ և ի Յովաննէս և ի Գալուստ վարդապետացն մերոց, որք անդ, և յայլոց ոմանց ևս: Որք և ի նորապէս ժողովեալ մոմէն Կարապետ վարդապետին զՃ (100) լիտր մոմ էին յղեալ աստ ի պէտս սրբոյ Աթոռոյս: Իսկ սրբազան Վեհն զմի թուղթ գրեաց այժմ առ նոսա, ի պատասխանի թղթոյն նոցա: Յորում նախ գրեաց ի կողմանէ մոմին, թէ կշռեցաք աստէն, Բ (2) լիտր պակաս էկն: Բայց շնորհակալ եմ և այլն: Եւ ապա զի վէճ ինչ էր անցեալ անդ սակս Սահակաշէն եկեղեցւոյն, որ տէրունի էր սրբոյ Աթոռոյս: Բայց Յովսէփ
92բ բժիշկն, որ էր իբրու տէր նորա, կամէր տալ Հախպատու, ի գրգռելոյ Իսրայէլ կաթուղիկոսին (և այլոց ևս թէպէտ), որ այժմ ի Հախպատ նստեալ իբրու վերատեսուչ կոչիւր նմա: Ուստի գրեալ էին սոքա առ սրբազան Վեհն՝ գրել զթուղթս առ Հերակլ արքայն և առ որդին առ ի խափանումն նոյն վիճոյն: Այլ սրբազան Վեհն այժմիկ զթուղթս չգրեաց առ արքայն և առ որդին, վասն որոյ գրէ, թէ դուք ի միասին խօսեսջիք յաղագս այդր բանի ընդ արքայն և ընդ այլս, զմեզ իբրու այդմ անտեղեակ զոլ կարծեցուցանելով նոցա, զի մեր փութով ի լոյս անկանիլն լաւ չէ, որոյ աղագաւ իսկ յայդր զգիր չգրեցաք և ոչ ումեք այժմ: Իսկ մինչ վերջապէս բանն ի վատ կողմն եզերեսցի, ի հարկէ, յայնժամ գրելոց եմք զթուղթս արքային և այլոց ոմանց:

Գրեալ յղեցաւ ընդ Ստեփանի ումեմն թիֆլիզեցւոյ, որ զմոմն բերեալ էր, յամսոյս Ժ (10):

1781 թ. ապրիլ—Ի Բայազիտ առ տէր Վահանն

380. Թուանքչի Յօհանն, զոր սրբազան Վեհն ի մարտի ԻԹ (29) առաքեաց թղթով առ տէր Վահանն ի Բայազիտ և առ խօջայ Սահակն և առ պարոն Յակոբն, զի զղատաքչի Թումօյի և զՄուրատի տալացուցանեալ դրամսն սրբոյ Աթոռոյս պահանջեալ առնուցուն (որ և ի վեր անդր յիշեցաւ), այժմ դարձաւ անտի, բերեալ զթուղթ ի նոցունց: Յորում գրեալ էին, թէ յոյժ հետևեցաք, բայց նաղտ դրամ ոչ եկն ի դուրս: Այլ ի Մուրատէն զմահսար առաք և ի Թոմօէն՝ զղատաքս քեասարայի: Այսր աղագաւ սրբազան Վեհն վերստին առ տէր Վահանն զմի թուղթ գրեաց, շնորհակալեւով զխօջայ Սահակէն և զպարոն Յակոբէն և պատուիրելով նմա, զի Մուրատէն առեալ մահուտսն յղել ի սուրբ Աթոռս և զի Թոմօէն առեալ զղատաքսն վաճառել և զգինսն յղել:

Եւ ապա զայս գրեաց, թէ զմեր Մկրտիչ վարդապետի խնդրեալ ճոթեղէնսն, զորս առեալ էիր և յղեալ և զգինսն գրեալ, զայնս ևս ընկալաք և զգինսն իմացաք, և զի քէն մեզ հասեալ դրամսն և զվէճսն ի Մկրտիչ վարդապետէն ստուգեալ, ծանեաք, որ մեք պարտիմք քեզ ԲՃՀԸ (278) ղուռուշ և ԼԲ (32) փարայ: Զորս հարկ է ի կողմանէ մեր յառ քեզ հասանել փօլիցայից դրամոցն վեր առնելոց ես և մեզ գրելոց: Եւ դու այսուհետև նոր ի նորոյ պարտիս, ասէ, ծառայել սրբոյ Աթոռոյս և տուր և առութեան զաւթարիդ մուղայէթ լինիլ: Յամսոյս ԺԶ (16):

Քան զայս յառաջագոյն Հերակլ արքայն Վրաց գիր էր գրեալ առ սրբազան Վեհս մեր, իսկ ապա ի Թէլաւու ևս սրբոյ Աթոռոյս գանձապետն մի տարւոյ գանձանակի արդիւնք Գ (3) լիտր մոմ էր յղեալ առ և զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն։ Վասն որոյ սրբազան Վեհն հարկեցեալ գրեաց զպատասխանիս յիշեալ թղթոցն, հանդերձ շնորհակալութեան կոնդակաւ ի վերայ Թէլաւու ժողովրդեանն մերայնոյ վասն մոմին։ Զորս ահա հետևապէս գրեսցուք։

93ա *381. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Հերակլ արքայն, ի պատասխանի սիրանիշ թղթոյն նորա, զոր գրեալ էր նա յառաջագոյն ընդ Թէմուրազ Դիւան բէկուն և Գէորկին բէկին, յորում օրհնութիւն և շնորհակալութիւն։ Իսկ սա առանձնօրէն ի ձեռն Գեօրկին բէկին զմի փուսուլայ ևս էր գրեալ առ սրբազան Վեհն և հարկեալ, զի զՂարսայ փաշայի վէքիլխարճ Սամուէլն յորդորեսցէ ի գնալ ի Թիֆլիզ, որովհետև այն Սամուէլն յառաջ զգիր էր գրեալ առ արքայն, թէ ունիմ զմիտս գալոյ յայդր։ Ուստի և սրբազանն գրեաց ի Ղարս Յովաննէս պետին՝ առ ի իմանալ զմիտս նորին, թէ անդ գնալոյ կամ ունի՞, թէ ոչ, և ըստ դիտմանն զգիր առնուլ ի նմանէ իւր կնքովն և գրովն, և յղել առ ինքն սրբազան Վեհն, զի և նա ազդումն տացէ արքային (որ երկարապէս գրեցաւ ի վերն ի մարտի ի փուսուլայոջ Յովաննէս պետին)։ Իսկ Յովաննէս վարդապետն հարցեալ ցայն Սամուէլն յաղագս այն բանին, առեալ էր զայս պատասխանի, թէ ես չեմ ասացեալ, թէ տամբ գնամ, այլ ասացեալ եմ, թէ քանի մի անտուն տղայովք գնամ առ արքայն, ես որպէ՞ս ի Սէվազու զառն իմ հասուցից անդ և այլն։ Որ և զայսոսիկ գրեցուցեալ և կնքեալ նոամբ Յովաննէս պետին յղեալ էր առ սրբազան Վեհն։ Զոր սրբազան Վեհն այժմ յղեաց առ արքայն և գրեաց, թէ թէպէտ վասն այսպիսեաց իրաց բան ինչ գրելն յերկիրն օսմանցւոց մեզ մեծ վտանգ է, այլ վասն սիրոյ քոյդ խաթեր զայս ինչ գրեցաք անդ և անտի այսպէս պատասխանի և այս թուղթն եկ ի Սամուէլէն, զոր ահա յղեցաք առ քեզ առ ի տեսանել։ Ըստ այսց և այլ պատշաճաւոր բանք սիրոյ։*

Սոյն թղթոյս օրինակն ի վերայ կտոր թղթոյ է։

382. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ Թէլաւու քաղաքի մերային ժողովրդեանն գրեաց՝ յաղագս միոյ ամի գանձանակական արդեանցն նոցա Գ (3) լիտր մոմին, զոր այժմ յղեալ էր ի սուրբ Աթոռոյս տեղւոյ գանձապետն սրբոյ Աթոռոյս պարոն Յակոբն։ Յորում և վերահաստատութիւն գանձապետութեան Յակոբին։

383. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ևս առ վերոյ յիշեալ Յակոբն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն, զոր յարդիս ընդ Գ (3) լիտր մոմին յղեալ էր առ սրբազան Վեհն ընդ եղբօրն իւրոյ՝ Ստեփանին։ Եւ զի զվերոյ գրեալ կոնդակն յղեաց ի ձեռս սորա, գրէ սմա ընթեռնուլ տալ յունկս ժողովրդեանն՝ ի միամտութիւն նոցա և ինքն հաստատիլ ի գործն և որպէս յառաջ, նոյնպէս և այսուհետև հարազատօրէն ծառայել սրբոյ Աթոռոյս։

Գրեալ յղեցան թուղթքս ի յԵրևան առ Ստեփանն՝ հասուցանել ի տեղիսն։ Յամսոյս ԺԸ (18)։

Դարձեալ վերստին այլևս թուղթք ժամանեցին առ սրբազան Վեհս մեր ի մեծէն Պօլսոյ ի ջուղայեցի պարոն Խաչիկէն վասն իրաց ինչ, և ի նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն մերոց սակս Աւետի ժամագրքին տպեցման և Հալապու նուիրակութեանն և վասն դրամոյ ինչ ի Հուլպայ և յաղագս այլևս մանր բանից, որք տեսանին ի ներքոյ ի պատասխանոջն։ Յորոց հասանիլն ի Կարին և ի Ղարս
93բ *պարոն Հայրապետն և // պարոն Գէորգն ևս ընդ այնց զթուղթս էին գրեալ և յղել։ Ուստի սրբազան Վեհն հարկաւորեալ գրեաց զթուղթս, ի պատասխանիս ամենից յիշեցելոցդ ի վերոյ։ Ընդ որս ի Զմիւռին առ Փիլիպպոս վարդապետն և ի Թօխաթ առ Յակոբ պետն և առ մահտեսի Աղամջանն ևս զթուղթս գրեաց վասն հարկաւորութեանց։ Որք գրին ի ներքոյ։*

384. Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Պօլիս առ Մինաս և Պետրոս վարդապետսն[98]։

Հանձնարարվում է Կ. Պոլսի պատրիարքի հետ համաձայնեցնել Հալեպ նվիրակ ուղարկելու հարցը, տրվում են տնտեսական բնույթի մի շարք հանձնարարություններ (էջ 93բ—94ա)։

94ա *385. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Պօլիս առ ջուղայեցի պարոն Խաչիկն[99] գրեաց, ի պատասխանի և փետր. ԻԴ (24) գրեալ թղթոյն նորա, թէ թուղթդ էհաս առ մեզ ի յապրիլի ԺԶ (16) և ընթերցեալ ծանեաք զսէրդ և զհարազատութիւնդ, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, և շնորհակալեցաք զքէն և այլն։ Այլև սակս հաշուացն մերոց, որք են ի Բասրա, զոր ինչ գրել էիր, գիտացաք և շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ և զամենայնի օգտակարսն սրբոյ Աթոռոյս՝ զմահտեսի Յարութին աղայն և զԲեթխէհէմեան պարոն Յովաննէսն։ Արդ, թէ զհասուցեալսդ Մինաս վարդապետին և թէ զհասուցանելիսդ և թէ զնոր գրեալսն քեզ ի Բասրայու, զորս ծանուցեալ էիր մեզ, զամէնն իմացաք։ Յորոց կողմանէ մինչ գրեալ էր մեզ Մինաս վարդապետն յառաջագոյն, և զթուղթս խնդրեալ առ մահտեսի Յարութիւն աղայն և առ Բեթխէհէմեան Յովաննէսն և առ այլս, ըստ քոյդ խնդրոյ, մեք ևս գրեցաք զնոյնս յառաջ քան զայս ի մարտի ԺԵ (15), միայն ի Բասրայ և ի Բաղդատ, գրելով զթուղթս ընդ նոսին և ի Բուշեռ, զի ի Հնդկաց երկիրն չեղաք յայնժամ ձեռնհաս ի գըրել զթուղթս։ Եւ վասն ոսկեայ ականակուռ խաչին և Բ (2) արծաթեայ տապակացն գրեցաք յայնժամ զշնորհակալութիւնս և զմիամտութիւնս առ մահտեսի Յարութիւն աղայն և առ Բեթխէհէմեան պարոն Յովաննէսն, որք ի հարկէ առ քեզ են հասեալ մինչև ցարդ և յղեալ ես առ նոսա։*

Իսկ որ խոստանաս, թէ գրեանք են գալոց ի Հնդկաց կարաւանաւ և յղելոց եմ յայդր, յուսամ թէ մինչև ցարդ յղեալ իցես յայսկոյս և մեզ հասցին։ Բայց մեք այժմ ևս չկարացաք գրել զթուղթս ի կողմունսն Հնդկաց, ըստ որում ի հեռուստ և ի մօտուստ հանդիպեալ վշտօք և յոլով զբաղմամբք պաշարեալ եմք։ Իսկ երբ և գրեալ հասուսցուք, յղելոց եմք առ քեզ՝ յղել ի Բասրա։

Այլև ի կողմանէ Տէր-Յովաննիսեան Ստեփաննոսի տալեացն, որ զթուղթ էիր գրեալ առ նա ի յունվարի ԺԴ (14) և առ մեզ յղեալ, մեք

ես յղեցաք առ նա, և զոր ինչ մեզ պատշաճ էր գրել, գրեցաք նմա, և
խնդրեցաք զդրամն, թէ զառաջին ՌՄԲՃ (1200) ղուռուշի ապրանքի
գինն, որ այժմ եղեալ է ՌՆԻԸ (1428) ղուռուշ (զի ըստ քոյդ գրեցե-
լոյ զԿ (60) ղուռուշն տացէ Յարութիւնն և զմնացեալն մեզ հասուսցէ), և
թէ զնոր խնդրելիդ ի նմանէ ՎՌ (3000) ղուռուշն։ Զոր և գրեալ ծանու-
ցաք քեզ ի մարտի ԺԵ (15)։ Իսկ մինչև ցարդ, դեռ ոչ եմք ընկալեալ ի
նմանէ զպատասխանի ինչ և դրամ ևս չէ հասեալ մեզ ի նմանէ դեռևս։
Տեսցուք, թէ զինչ՞ գրէ պատասխանի, քեզ ծանուցանելոց եմք։ Եւ զայլ
որպիսութիւնս ի թղթոյ Մինաս վարդապետին իմանալոց ես։
Գաղափարն սոյնոյ թղթոյս ի չարագրանաց տետր 80 երեսն է
գրեցեալ։

94բ 386. Թուղթ ես սրբազան Վեհն ի Զմիւռին առ Փիլիպպոս վարդա-
պետն գրեաց, պատուիրելով նմա, զի փոլիցայիւ զդրամ հասուցէ ի
Թոխաթ մահտեսի Աղամջանին յարդեանց սրբոյ Աթոռոյս։ Եւ գրելով
նմա զայլևս մանր բանս։

387. Թուղթ ես ի Թոխաթ առ մահտեսի Աղամջանն գրեաց, քանզի
գրեալ էր սա սրբազան Վեհին զդրամ փոլիցայ առնել ի վերայ ումանց
նուիրակաց՝ հասուցանել սմա, վասն որոյ և սրբազան Վեհն զԱ (1)
ղապզ գրեաց ի վերայ Թոխաթու նուիրակ Յակոբ պետին, զի զդրամ
հասուցէ սոյն մահտեսի Աղամջանիս (Բ) և հանդերձ բարեւագրին, որ
առ նա, յղեաց ի ձեռս սորա։ Վասն որոյ գրէ սմա, թէ ահա այսպէս ա-
րարաք. պարտիս զղապզագիրն առ քեզ պահել և զիւր բարեւագիրն առ
ինքն յղել և զդրամն պահանջել, և ապա յետ տալոյ նորա զդրամն, զղ-
ղապզն յղել առ նա։ Եւ դու, պաշ, զնոյն դրամն ձեռամբ Կարնոյ մեր վէ-
քիլ Հայրապետին առ մեզ հասուցանել ջանասջիր։
Ապա ծանոյց և զայժմ առ Փիլիպպոս վարդապետն ևս գրելն, զի սմա
զդրամ հասուցէ և պատուիրեաց, թէ երբ և դրամ հասանիցի քեզ ի նմա-
նէ, զորքանութիւնն գրեսցես մեզ, զի և մեք ըստ այնմ զղապզ գրեալ
յղեսցուք քեզ՝ հասուցանել առ նա ի միամտութիւն նորին։
388. Իսկ բարեւաթուղթն Թոխաթու նու[իրակ] Յակոբ վարդապետին
էր այսպէս, թէ ահա զդրամ փոլիցայ արարաք ի վերայ քոյ (Բ) և զղ-
ղապզն ի վերայ քոյ գրեալ յղեցաք ի ձեռն մահտեսի Աղամջանին՝ յղել
առ քեզ։ Վասն որոյ ի հասանելն թղթոյս առ քեզ, պարտիս ի նուիրակու-
կան արդեանցդ զայնքան դրամ հասուցանել նմա, զի և նա հասուսցէ ի
սուրբ Աթոռս, և զղապզդ առնուլ ի նմանէ ի պիտոյանալ քեզ ի հաշուա-
տրութեանդ։

389. Թուղթ ես ի Կարին առ խօջայ Յովաննէսն գրեաց, վասն զի
Թիֆլիզեցի Եսային Իւզբաշոնց սրբոյ Աթոռոյս զտալացու դրամս ունէր
ի վերայ իւր, որ և զվէճեղէն իրս տարեալ ի Կարին տուեալ էր ումեմն
Գաբրիէլի՝ առ ի ծախել և զգինսն հասուցանել մեր վէքիլին, որ անդ։
Ապա ի պահանջել վէքիլին մերոյ զդրամն ի յիշեալ Գաբրիէլէն, սոյն
խօջայ Յովաննէսս երաշխաւոր էր եղեալ նմա՝ ասելով ցմեր վէքիլն, թէ
միամիտ լեր և մի պահանջեր զդրամն, մինչ զվէճսն վաճառեսցէ և ապա
տացէ, և թէ նա չտայցէ, ես հատուցից զպարտս սրբոյ Աթոռոյն։ Իսկ
յետոյ այն վաճառելի իրքն խալպ և պիտակ էին եղեալ և սակաւագին,
ուստի սրբոյ Աթոռոյս հասանելի դրամն ոչ գոյանա՞յր։ Վասն որոյ ս[illegible]-

բազան Վեհն գրէ յայսմիկ թղթոջ առ սոյն խօջայ Յովաննէսս, զայն
դրամն, որոյ սակս երաշխաւոր էր լեալ, հասուցանել սրբոյ Աթոռոյս։

390. Թուղթ ես առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ի պատաս-
խանի նորին յամսոյս Ա (1) և Է (7) գրեալ թղթոցն, որք ընդ Պօլսոյ
թղթոցն հասին աստ։ Որում պատուիրէ զվերոյ յիշեալ Պօլսոյ և Թո-
խաթու թուղթսն յղել առ տեղիսն։ Իսկ և աղդէ զառ խօջայ Յովաննէսն
ես զգիր գրելն, որ անդ է, վասն սրբոյ Աթոռոյս հասանելի դրամոյն
և հարկէ պահանջել և առնուլ զդրամն, ասելով, թէ զկնի տալոյն ես
զշնորհակալութեան գիր եմք գրելոց առ նա։ Այլև՝ ի կողմանէ Բաղդոնց
Խաչատուրին և Աւետ[ի]սին, որք զյոլով դրամս էին տալացու սրբոյ
95ա Աթոռոյս ի վաղնջուց հետէ, գրեալ // էր սա, թէ Գ (3) ձիոյ քամմայ կա-
մին տալ։ Առ որ գրեաց, թէ պարտին այնպիսի բան տալ, որ այժմ սըր-
բոյ Տանս պակասաւորութեանն պիտոյասցի. այնք տեղւոյս խարճ չեն։
Իսկ մեք, խնայելով ի դոսա ժամանակ ինչ, ես համբերեմք այժմ ոչ
պահանջելով, մինչև մի յաջողութեան դուռն բացցի դոցա, ապա տացեն։

391. Թուղթ ես ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի
նորին յամսոյս ԺԵ (15) գրեալ թղթոյն, ընդ որում և զդաւթարն հաշուի
իւրոյ, որ ընդ սրբոյ Աթոռոյս, յղեալ էր։ Զոր տեսեալ սրբազան Վեհին
և տեղեկացեալ, գրեաց, թէ ի դաւթարոջդ ամենայն գրեցելոցն վերա-
հասու եղեալ հաւանեցաք, որ մերոյս դաւթարին համեմատ էր, որ ի յան-
ցեալ ՌՄԻԹ (1780) թուոյն և ի հոկտեմբերի մէկէն սկսեալ մինչ ցսոյն
ՌՄԼ (1781) թիւս մեր և ապրիլի ԺԵ (15) ի մէջ քոյ և սրբոյ Աթոռոյս
տուր և առութեան հաշիւն ընդ Մկրտիչ վարդապետին մերոյ տեսեալ հա-
տաք, և մեք մնացաք քեզ տալոց Ց ղուռուշ։ Վասն որոյ զայս թուղթ իբրև
զղապզ և … գրեցաք քեզ։
Արդ, պատուիրեմ զնոր դաւթար մի սահմանել և զի մէնչ առ քեզ և
ի քէն առ մեզ հասեալսն գրել կարգաւ։ Մեք ևս ահա նորապէս հասա-
ի քէն առ մեզ հասեալսն գրել կարգաւ։
տեցաք առ ի գրել։ Իսկ և զառ Յովաննէս պետն թուղթ գրելն ես հան-
դերձ զիտամամբն աղդէ սմա (զոր ի ներքոյ յիշեալ եմք)։
Ծանուցանէ և զշնորհակալութեան կոնդակ գրելն ի վերայ Ղարսի
Յովհաննէս Ղօշա-
երկրին վասն տալոյն նոցա զիմատախայս սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ Յո-
հովհաննէս Ղօշա-
վաննէս վարդապետին (որ ևս ի ներքոյ է գրելոց)։ Այլև սակս Ղօշա-
վանից Պօղոս պետի տուեալ վէջեղինաց հաշուատետրութեանն գրեալ էր
սա, թէ տեսանելոց և ծանուցանելոց եմ։ Գրէ սրբազան Վեհն, թէ ըստ
գրեցմանդ արասցես։
Այլև՝ Ղարսայ նախիջևանցիքն զ500 փայտ էին տալացու սրբոյ
Աթոռոյս սանատով, զորոց գինսն ձեռամբ սորա էին առեալ առ հոգե-
լոյս հայրապետին։ Որոյ աղագաւ այժմ սրբազան Վեհն զՍօղոմոն վար-
դապետն յղեաց յայն գեօղն վասն փայտիցն։ Վասն որոյ գրէ սմա՝ ի
գալն նորա պարտիս հարկ գրել նոյն գիւղացւոցն, զի թէ ի փայտիցն
խարճեալ են, զպակասորդսն լցուսցեն և պատրաստեսցեն, որ ի յիջանել
ջրոյն Արփաչայի, բերցուք։ Ահա զսանատն ետուք Սօղոմօն պետին և
երեր, յորում դու ևս, ասէ, ձեռագրեալ ես և կնքեալ և սանատն 500 փայ-
տից է և անուամբք նախչուանցի Թորոսի որդի Մակարին և տիկօրցի
Դանիէլի որդի Գրիգորին է գրեցեալ։ Եւ ի վերջոյ պատուիրէ զԺ (10)
հատ սայլի մառան առնուլ ի պէտս սրբոյ Աթոռոյս և քիրայիւ յղել ի
Ղօշավանք, զի անտի բերցի աստ։

392. Կոնդակ շնորհակալութեան ի վերայ Ղարսայ երկրի մերազնեայ ժողովրդեանն գրեցաւ՝ սակս խմատարիական արդեանցն, զորս ձեռամբ Յովաննէս վարդապետին (որ յարգիս է ինքեանց առաջնորդ) հասուցեալ էին սրբոյ Աթոռոյս, որք են այս ինչք՝ ԲՃՀԵ (275) տեղւոյ սոմարն գարի, ԱՃԾ (150) սոմար ցորեան, Բ (2) ձի, Ա (1) ջորի, և Ա (1)
95բ խարախ ձիոյ, ԱՃԳ (103) տաւար, ՂԸ (98) ոչխար։ Զհետ // այսց և դրամ ես (Ա, Է, Դ)։ Զորս յանուանէ և թուով և չափով յիշեալ միամտեցոյց, թէ հասեալ է ի սուրբ Աթոռս, և գրեաց զօրհնութիւնս յոյժ յոյժ։

393. Թուղթ ես առ Ղարսայ նոր առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի ի յամսոյս ԺԵ (15) գրեալ թղթոյ նորին։ Ընդ որում և գիր գաւթարն խմատարիական ժողովեալ իրաց յղեալ էր։ Առ որ գրէ նախ սրբազան Վեհն, թէ զգաւթարդ տեսեալ հաւանեցաք։ Զամենայն ժողովեալ արդիւնսն քո առ մեզ և ի սուրբ Աթոռս է հասեալ, որք են այսինչք (զորս մի առ մի ի վերին կոնդակոջդ յիշեցաք)։ Ուստի զայս թուղթս, ասէ, ի միամտութիւն քեզ գրեցաք։ Արդ, որչափ զապղ և զապղանման գիր է յղեալ առ քեզ, ասէ, մեր Մկրտիչ վարդապետն վասն վերայ գրեալ հասուցելոցդ, զայնս առ ինքն յղեսցես և զայս միայն ընդ քեզ պահեսցես։ Այլև, թէպէտ պատշաճ էր, ասէ, ընդ առաջնորդական կոնդակիդ զիր ինչ յղել քեզ իբրու շնորհ ի սրբոյ Աթոռոյս, բայց ձեռնհաս չեղաք, յետոյ լինելոց է, ասէ։ Գրէ և զյղելն իւր զկոնդակ շնորհակալական ի վերայ Ղարսայ՝ վասն իւր ժողովեալ արդեանցն։

394. Թուղթ ես ի Նախիջևան կոչեցեալ գիւղն ի վերայ Թորոսի որդի Մակարին և Դանէլի որդի Գրիգորին գրեաց։ Զի ի ՌՄԻԸ (1779) թուականին և ի մարտի Բ (2) եկեալ սոքա ի սուրբ Աթոռս առ կենդանութեամբ Հոգելոյս հայրապետին, զ600 ղօլաթայ խնդրեցին և առին ի պէտս իւրեանց, և գիւղացւոցն իւրեանց, զի զ500 չամի գերան տացեն, որք սանատ ետուն վկայութեամբ Ղարսայ պարոն Գէորգին և կնքովն նորա, և զԴՃ (400) ղօլաթայն առեալ, պայմանեցին զփայտսն գետով բերել ի հանդէպն Շահրիարու և ապա առնուլ զԲՃ (200) ղօլաթայն ես։ Բայց զի երկիրս մեր վրդովեցաւ, մնաց այսպէս։ Վասն որոյ այժմ սրբազան Վեհն զՍօղոմոն պետն յղեաց առ նոսա և գրեաց, թէ ահա այսպէս սանատ էք տուեալ գիտութեամբ և կնքով պարոն Գէորգին և զդրամոյ մեծ մասն առեալ գիտութեամբ նորա և այլն։ Ուստի զՍօղոմոն պետն յղեցաք յայդր ի վերահասու լինիլ փայտիցն մերոց, որոյ ի գալն պարտիք զփայտսն պատրաստել և թէ ի նոցուն խարճել իցէք, զթերին լցուցանել, զի ի մեղմանալ ջրոյն Արփաչայի, բերջիք ընդ ջրովն դէմ յանդիման Շահրիարու, զի զԲՃ (200) ղօլաթայն ես տացուք։ Բոլոր գիւղականացն ես ողջոյն։

Յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Սօղոմոն վարդապետին յամսոյս ԻԶ (26)։

1781 թ. ապրիլ—Ի Բամբկաձոր, ի Ղազախ, ի Շուլաւէր և ի Լօռի

395. Վասն զի այժմիկ ի կողմանէ ուտելեաց և այլոց պիտոյից գործեաց յոյժ պակասաւորեալ էր սուրբ Աթոռս, ուստի սրբազան Վեհն զԹիֆլիզեցի տէր Դաւիթ նորընծայ վարդապետն ժողովարար կարգեալ իւղի և պանրի, և մացունի, և երկաթեայ և փայտեայ գործեաց ի վերայ Ղազախու, Բամբկաձորու, Շուլաւէրու և Լօռու, զմի ժողովարարու-

96ա թեան // կոնդակ գրեաց ի վերայ նոյն երկրաց և յղեաց ընդ Դաւիթ պետին։ Յորում նախ ծանոյց զպակասաւորութիւնս սրբոյ Աթոռոյս, և ապա յորդորեաց տալ առատօրէն զվերոյ յիշեալ իրսն։ Եւ Դաւիթ պետին աղագաւ ես յանձնարարութիւն։

396. Թուղթ ես ըստ մտաց կոնդակին՝ առ Վանական վարդապետն։ Եղբօրն ես ողջոյն։

397. Թուղթ ես նոյնպէս՝ առ Մխիթար քեալանթարն։ Այս Բ (2)-ս ի Շուլաւէր։

398. Թուղթ ես նոյնպէս՝ առ Հաղարծնու վանից առաջնորդ Մանուէլ վարդապետն։

399. Թուղթ ես նոյնպէս ի Բամբկաձոր՝ առ ի հանգուցեալ սրբազան Վեհէն անդ ժողովարար կացուցեալ Աւետիս վարդապետն։ Եւ զի սա ունէր զժողովեալ ցորեանս և զգարիս անդ ի գիւղորայս ուրեք ուրեք։ Գրէ զայնս յանձնել Դաւիթ պետին ի բերել։

400. Թուղթ ես ըստ վերնոյդ՝ առ Բամբկաձորու մէլիք Շաքարօն։

Գրեցան և առաքեցան վերոյ գրեալքս ընդ Դաւիթ պետին յամսոյս Ե (5)։

1781 թ. մայիս—Ի Բայազիտ, ի Թօփրախղալա և յԱլաշկերտ գրեա՛լ թուղթք

401. Եւ յետ երկուց աւուրց սրբազան Վեհն զերիս ժողովարարս ես էհան ի սրբոյ Աթոռոյս. զՅակոբ վարդապետն Շամախեցւոյ յղեաց ի Բայազիտ և ի Դիատին, զգեանջեցի տէր Յակոբ պետն յղեաց ի յԱլաշկերտ և...*, և զնոր Վիրապու միաբան Յարութիւն պետն՝ ի Թօփրախղալա և ...**, տալով նոցա իւրաքանչիւրոցն ի վերայ նախագրեալ վիճակացն իւրեանց զմի մի կոնդակ և գրելով ի նոսա զպակասութեանց սրբոյ Աթոռոյս ի կողմանէ ուտելեաց՝ հանդերձ երկրիս աւերութեամբն և երթևեկաց յաճախութեամբն։ Եւ ապա պատուիրելով զխմատարիայս առնել սրբոյ Աթոռոյս՝ իւղի և պանրի, և տաւարի, և զժողովարարսն ի սէր ընկալեալ, փութով վերադարձուցանել դէպ ի յԱթոռս լիաձեռն արդեամբ։

402. Թուղթ ես ի Բայազիտ առ տէր Վահանն, առ Մարգար աղայն և առ միւս իշխանսն գրեաց՝ ազդելով նոցա զյղելն զվերոյ յիշեալ ժողովարարսն անդ և ի յայն կողմունսն վասն պակասութեանցն սրբոյ Աթոռոյս, և գրելով վասն նոցա զյանձնարարութիւնս։

403. Թուղթ յանձնարարական ես առ Ուչքիլիսէի առաջնորդ Մկրտիչ վարդապետն գրեաց, զի զիւր վիճակի ժողովարարն արդիւնաշատս արասցէ և զմիւս երկուսն ես մարդ եդեալ ընդ նոսա յղեսցէ յիւրաքանչիւր վիճակսն։ Ելին յամսոյս Զ (6)։

1781 թ. մայիս—Ի Թօխաթ և ի Կարին գրեալ թուղթք

Մինչ օր մի ես էանց, հասին առ սրբազան Վեհն թուղթք ի Թօխաթու ի մահտեսի Աղամջանէն, որ խնդրեալ էր ի սրբազանէն զերիս օրհ-

* Բնագրում բաց է թողնված մեկ բառ։
** Բնագրում բաց է թողնված մեկ բառ։

նութեան թուղթս ի վերայ ոմանց սակս արոց և խոստմանց։ Եւ ի Կարնոյ ի մեր վէքիլ Հայրապետէն եւս գոյր նորեկ թուղթ, որոյ զպատասխանիս գրեաց այժմ սրբազան Վեհն՝ հանդերձ մահտեսի Աղամջանի խնդրեալ օրհնութեան թղթովքն, որք ահա զկնի ծանուցանին։

96բ 404. Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն՝ ծանուցանելով զապրիլի ԻԶ (26) գրեալսն սմա և զթուղթս գրելն յայնժամ առ տեղւոյն նուիրակ Յակոբ պետն և առ Զմիւռնոյ առաջնորդ Փիլիպպոս պետն, վասն հաստուցանելոյ զդրամ առ սա (որք ի վերն յապրիլի ԻԶ (26), յիշեալ եղեն)։ Իսկ ապա զի սա ի վերայ երից մարդկանց գիր էր խնդրեալ, վասն որոյ սրբազան Վեհն գրեալ յղեաց (զորս ի ներքոյ յիշելոց եմք)։ Ուստի ազդէ սմա, թէ ահա զխնդրեալ օրհնութեան թուղթսդ յղեցաք և այլն։ Իսկ և առ Թօխաթու պարոն Գրիգորն զողջոյն գրեաց՝ խոստանալով յետոյ, զգիր գրել առ նա, որ խոստացեալ էր յանուն սրբոյ Աթոռոյս զյիշատակի իմն շինեցուցանել վասն հոգւոյ իւր օրթախ հանգուցեալ մահտեսի Ստեփանին՝ ի Հալապ վախճանեցելոյ։ Որում պատուիրէ կամ նուիրակ Յակոբ պետին յանձնել, կամ մեր վէքիլ մահտեսի Աղամջանին։

405. Թուղթ եւս ի Կարին առ մեր վէքիլ Հայրապետն գրեաց. նախ շնորհակալելով զնմանէ յաղագս հաստուցանելոյն զյառաջ քան զայս ի Պոլիս և ի Թօխաթ գրեալ թուղթսն մեր։ Եւ ապա պատուիրելով սակս վերոյ գրեալ թղթոցս Թօխաթու առ ի հաստուցանել անդ։ Իսկ և գրէ, թէ մինչ ուխտաւորք գալոց լիցին, միամտեցուսցիք և յղեսջիք դէպ ի սուրբ Աթոռս, զի երկիւղս և ճանապարհքն փոքր մի խաղաղացեալ են։ Այլև Մասեհեան պարոն Եսայուն, որ այժմոյս ի Կարին էր, զողջոյն գրեաց՝ ասելով, թէ զթուղթն սիրոյ ընդէ՞ր պակասեցուցանէ։ Նաև բանիւ Զմիւռնոյ նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետին ի Հոլանդիա քաղաքոյ կամ յԱմստէրդամ՝ դեսպանեցի պարոն Մնացականն և ի Զմիւռին եղեալ Մօսկով կոչեցեալ պարոն Յովաննէսի եղբայր Առաքել աղայն յաղագս սրբոյ Աթոռոյս Էջմիածնի զմի ջուխտ մեծ զանգակ էին շինեցուցեալ և յղեալ էին անտի ի Զմիւռին առ Փիլիպպոս պետն, զոր և նա յղեալ էր ի մեծն Պոլիս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետն և առ Մասեհեան պարոն Նիկողայոսն, զի նոքա Տրապիզոն յղեսցեն։ Որոց աղագաւ և Փիլիպպոս վարդապետն և այլք գրեալ էին սրբազան Վեհին՝ գրել ի Տրապզոն, զի անդ տիրութիւն անօղ լիցի և յղեսցեն անտի ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ և սրբազան Վեհն ի Տրապզոն չունելով ծանօթ ոք հոգածու, սոյն պարոն Հայրապետիս գրեաց՝ գրել անդ պատշաճաւոր ոմանց՝ առ ի հոգ տանիլ զանգակացն ի դուրս գալն ի ծովէն և յղել ի Կարին, որպէս և իցէ հնարիւք և կերպիւ (զի երկուց զանգակացն կշիռն էր ԲՃԿ (260) հօխայ)։ Զորս և ինքն յղեսցէ ի սուրբ Աթոռս։

Գրեցան և առաքեցան թուղթքս ի վերոյ ցուցեալ ընդ փայեկին այժմոյս ի Կարնոյ եկելոյ յայսոյս է (7)։

97ա 1781 թ. մայիս—Ի Պոլիս, ի Զմիւռին և ի Բայազիտ թուղթք

Իսկ ապա Ագուլեաց սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից առաջնորդ Թօմաս վարդապետն ի միաբանից իւրոց զոմն Ստեփաննոս վարդապետ յղեալ էր աստ՝ առ ի գնալ ի Պոլիս, և զաղաչանաց թուղթ գրեալ առ սրբ-

բազան Վեհն, որպէս զի զկոնդակ տացէ նմա ժողովարարութեան վասն վանիցն։ Եւ մանաւանդ զթուղթ գրեսցէ ի Պոլիս և ի շրջակայսն առ Ագուլեաց Տան ժողովուրդսն, որք անդ, զի զիւրեանց վանից ժողովարար Ոսկան վարդապետին (որ այժմ անդ վախճանեալ էր), զամեն կայսն և ժողովեալ արդիւնսն յանուն վանիցն, յանձնեսցեն նոյն Ստեփաննոս վարդապետին՝ առ ի բերել ի վանսն։ Ուստի և սրբազան Վեհն զմի ընդհանրականապէս կոնդակ գրեաց ըստ խնդրոյ առաջնորդին և զմի թուղթ եւս յանձնարարութեան վասն Ստեփաննոս վարդապետին առ ագուլեցի ժողովուրդսն գրեաց, որք ի մեծն Պոլիս և ի շրջակայսն (զորս և ետ նոյն Ստեփաննոս վարդապետին)։

Իսկ և զի Պօլսոյ Արևելցի տիրացու պարոն Գէորգն ընդ ուրումն ագուլեցի Մկրտում տղայի սակս ինքեան զյանձնարարական գիր էր գրեալ առ սրբազանն, ըստ որում եկեալ էր նա յուխտ ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ սրբազան Վեհն ի դառնալն նորա, այժմ զպատասխանի գրեաց ի մեծն Պօլիս առ պարոն Գէորգն, ընդ որում և օրհնութեան թուղթ մի եւս առ ոմն՝ յաղագս յիշատակւոյ, և զապրանման (փօլիցայ) գիր մի եւս ի Զմիւռին առ նոյն տեղւոյն նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետն սակս դրամոյ ինչ։ Եւ թուղթ մի եւս ի Բայազիտ առ տէր Վահանն՝ սակս հարկաւոր իրողութեանց առ ի հոգ տանիլ։

Որոց համայնից զիտմունքն ի ստորև համառօտապէս բացայայտին, որպէս տեսցես։

406. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ընդհանրական ժողովարարութեան վասն վանիցն սրբոյն Թօմայի Առաքելոյ, որ ի յԱգուլիս, ըստ խնդրոյ նորին առաջնորդ Թովմաս վարդապետին. և ետ ի նմանէ առաքեցեալ Ստեփան վարդապետին՝ ի յօգնութիւն պակասութեանցն սրբոյ վանիցն այնմիկ։

407. Թուղթ եւս սրբազան Վեհն առ ի Գողթնեաց տանէն ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայսն զետեղեալ վաճառականսն գրեաց, ծանուցանելով զվշտակրութիւնսն սուրբ վանիցն նոցա և զպակասութիւնսն։ Նաև զանյաջողութիւնսն իսկ, որ յառաջագոյն նոյն վանից առաջնորդ Թօմաս վարդապետն յղեալ էր առ սոսա զՄատթէոս վարդապետ ոմն սակս ժողովարարութեան, և մնացեալ էր նա անդ։ Եւ յետ այնորիկ ուղարկեալ էր ի տեղի նորին զՈսկան վարդապետ ոմն (որք յիշեալք գոն ի յառաջին յիշատակարանոջն), որ եւս էր վախճանեալ. և նոցին ժողովեալ իրքն չէին հասեալ ի վանսն ըստ բոլորին։ Եւ գրեաց զյղելն այժմ Թօմաս վարդապետին զսոյն թղթոյս տանօղ Ստեփան վարդապետն ի սուրբ Աթոռս առ ի գնալ առ ինքեանս. և զգրելն եւս առ ինքն զաղերսական թուղթ վասն կոնդակի ժողովարարութեան և յանձնարարական թըղթոյ, և զիւր գրելն զայս։ Որ և վասն Պօլսոյ անցիցն և իւր ֆէրմանի և
97բ մահ//սարի մինչև ցայժմ յետանալոյն գրէ, թէ իսկ մեք թէպէտ կամք տակաւին անհանգիստ կենօք, դիպեալ մեծի վատաբախտութեան և անյաջողութեան, որպէս և գիտէք, որք և սակս այսոցիկ չտամք դեռևս ումեք զթուղթս այսպիսիս, և ոչ գոնեայ զհարկաւոր գրելիս մեր գրեմք ի հեռաւորս, սակայն մինչ տեսի մինչև ցարդ և եւս տեսանեմ զանյաջողութիւնսն սրբոյ վանիցն ձերոց, որք մի զկնի միոյ պատահին նմա, վասն որոյ գթացեալ ի խղճութիւն տանն այնմիկ ի սէր և ի պատիւ սրբոյ Առաքելոյն Թօմայի, և վասն ձերոյ խաթեր ետուք դմա զկոնդակ և զայս օրհնութեան թուղթս մեր, եւ յատկապէս առ ձեզ գրեցաք։ Որով և զայս

պատուիրեմ, ասէ, ահա ձեզ, զի ի գալն յայդր և առ ձեզ սոյն Ստեփաննոս վարդապետիս, սիրով ընդունիցիք, և թէ պժգովեալսն Ոսկան վարդապետին, թէ զայլ մնացեալ արդիւնս ձեր՝ թէ դանձանակ, թէ խաստմունք, թէ կտակ, և թէ այլ տուրք, որպէս և ունիք զբարի սովորութիւն, զամենայն յանձնեսջիք Ստեփաննոս վարդապետիդ, զի բերցէ ի սուրբ վանքն ձեր ի յօգնութիւն նմին։

Զօրինակն թղթոյս գացես ի նոր տետր 184 երեսն։

1781 թ. մայիս—Ի Կարին և ի Ղարս թուղթք և զապզ մի ևս ի Պօլիս ի վերայ Մինաս պետին

Ըստ ստիպման հարկին այժմիկ այլևս սրբազան Վեհն հրամայեաց զբեռնակիրս ուղարկել ի Ղարս սակս մնացորդ հատեղինացն սրբոյ Աթոռոյս, զի զայն ևս բերեալ վերջացուսցեն։ Զորս և պատրաստեալ յղեցին զործակալքն սրբոյ Աթոռոյս։ Իսկ զի քանեօք աւուրբք յառաջ թուղթք
98ա էին ժամանեալ ի Կարնոյ նուիրակ Ներսէս պետէն // և ի վէքիլ պարոն Հայրապետէն և յայլոց ևս առ սրբազան Վեհս մեր, վասն որոյ և սա գրեաց առ նոսա զթուղթս։ Եւ ի Ղարս ևս առ պարոն Գէորգն գրեաց զմի թուղթ, զորս տես ի ներքոյ։

408. Թուղթ ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն, թէ ի մայիսի Ա (1) գրեալ թուղթդ՝ Մինաս պետի թղթովն էհաս մեզ։ Նախապէս գրեալ էիր ի նմա, թէ յապրիլի 25 զդրամ փօլիցայ արարի արապկերցի Ազամջանինն (Զ, Դ), զի ի Բայազիտու տէր Վահանին հասուցէ ձեզ։ Զոր գիտացեալ, գրեցաք նմա առնուլ և մեզ հասուցանել։

Երկրորդ՝ զի Մինաս պետն խոստացեալ էր զդրամ փօլիցայ առնել ի վերայ սորա, զոր սա առեալ հասուցէ սրբոյ Աթոռոյս։ Ուստի սա գրեալ էր սրբազան Վեհին և զզապզագիր էր խնդրեալ ի վերայ Մինաս պետին, զի նա ի Պօլիս զդրամ տացէ Գօրօյեանց մարդոյն և ինքն ի Կարին առնուցու ի Գօրօյենց մահտեսի խաչատուրէն։ Վասն որոյ և սրբազան Վեհն ի Պօլիս առ Մինաս վարդապետն զմի զապզագիր գրեաց, թէ որ ի նուիրակական արդեանցդ զդրամ էիր տուեալ ի Կարին բնակեալ մահտեսի խաչատուրի յայդր եղեալ մարդոյն՝ Յարութիւնին (Ե) առ ի հասուցանել ի Կարին մեր վէքիլ Հայրապետին։ Այժմ մահտեսի խաչատուրէն ձեռամբ Հայրապետին էհաս մեզ այն դրամն։ Այսու միամիտ լեր։ Զոր և յղեաց սմա, վասն որոյ գրէ, թէ ահա զխնդրեալ զապզագիրդ գրեալ եդաք ի թուղթս քո և յղեցաք առ քեզ, զի յայդր զդրամն առնուցուս ի Գօրօյեան մահտեսի խաչատուրէն և զայդ զապզդ տացես նմա յղել ի Պօլիս իւր մարդոյն՝ տալ Մինաս վարդապետին։ Եւ դու, ասէ, ի Մայանուլդ զդրամն կամ տէր Վահանին, կամ Գէորգին մեզ հաս։ Մանաւանդ զի առ պարոն Գէորգն զդրամ չունիմք, ասէ, որ զհարկաւոր խնդրեալսն մեր առնուցու, նախապէս առ նա զդրամ հասո և մեզ գրեա։

Երրորդ՝ առ սրբազան Վեհն մեր յայլմէ տեղւոջէ Գ (3) կտոր թուղթուն և Ա (1) եբենոս գիւթ էին առաքեցեալ, որոց հասեալ առ սա, յղեալ էր զայնս այժմ առ սրբազան Վեհն ընդ Յարութիւն տղային։ Ընդ որ և ըստ խնդրոյ մեր Մկրտիչ պետին զմի թօփ ֆռանկի կուշտ-նախշի գունով շալ էր առեալ և յղեալ, և զգինն ևս գրեալ էր, թէ 43 ղուրուշ է։ Ուստի զմիամտութիւն գրէ սմա սրբազան Վեհն, թէ ամբողջ հասին առ մեզ և աշալի գինն գրեցաք ի քոյդ դէւթէրոշն։

Չորրորդ՝ յումեմնէ ասա զալոց ուխտաւորէ Բաղդասար կոչեցելոյ, և նորին ընկեր մահտեսի Յովաննիսէն զխ (40) ղուրուշ դրամ էր առեալ սա ըստ նոցին աղաչանաց և զթամկիրայ տուեալ նոցա, որք աստ առնուցուն, զորս հատուցեալ սրբազան Վեհին։ Գրէ սմա, թէ ահա զդրամն եատուք և զթէսկիրայդ պատառեցաք և զխ (40) ղուրուշն գրեցաք ի քոյդ աուից դէւթէրօշն։

Հինգերորդ՝ ըստ հայցուածոյ տեղւոյս ժամ օրհնօղ Սահակ պետին գրեաց առ սա սրբազան Վեհն, թէ Սահակ վարդապետն յայդր ի տունս տէր Մանուէլին Ա (1) լէհի երկար սնտուկով գրեանք և զայլ քարեղէնս ունի եղեալ ամանաթ։ Յորոց կողմանէ այժմ ինքն Սահակ վարդապետն, զոր ինչ և գրեալ է քեզ, այնպէս արասցես և գնացեալ ի տունն զսնտուկն կնիքն տեսցես և հանեալ ի տանէ նորա, ըստ գրեցելոյ Սահակ պետին արասցես։ Եւ քանզի այժմիկ ի Պօլսոյ գիտութեամբ նուիրակին Բ (2)
98բ վտանգաւոր անձինք էին յղեալ առ սա՝ առ ի ուղևորել // յայսկոյս ի սուրբ Աթոռս (զորս մեծաւ երկիւղակրութեամբ յղեալ էր աստ), կարի ահացեալ էր ընդ այն և գրեալ էր առ սրբազան Վեհն, թէ այսպիսի իրօք իմ տունս քակելոց է, կամ զիս հրաժարեալ ի գործոյս և այլն։

409. Նմին իրի և սրբազան Վեհն զմի փուսուլայ գրեաց սմա, թէ ընդ այդպիսի բանս մեք ևս ոչ հաճիմք, զի յիրաւի վնասաբեր լինի, թէ իմացին այլասեռք։ Բայց զի՞նչ օգուտ, որ արարեալ են։ Ահա միամիտ լեր, զի յետ քանի աւուրց հարկիւ գրելոց եմք Մինաս պետին, զի զգուշացեալ, այսուհետև զայլ ևս այդպիսի վտանգաւորին բանս ինչ մի արասցէ։ Որ և հրամայեաց ի թղթոջն յղել զայս փուսուլայս առ Մինաս վարդապետն, մինչև ինքն յետ քանեաց աւուրց յատկապէս պատուէր գրեսցէ նմա վասն այնր զգուշութեան, որպէս խոստացաւ։

410. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Կարնոյ նուիրակ Ներսէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա ի մայիսի մուտն գրեալ թղթոյն։ Եւ արդ, զի գրեալ էր նախ, թէ զամենայն որպէսն մեր միշտ գրեալ եմ Մկրտիչ վարդապետին յայդր, գիտեմ զի ընթեռնու առաջի քոյ, վասն այն քեզ ոչ տամ գլխացաւութիւն։

Առ այն գրեաց սրբազան Վեհն, թէպէտ Մկրտիչ պետն զգրեալդ ընթեռնու առ մեզ, բայց թէ երբեմն մեզ ևս գրես, լաւ է։ Այլև երկիցս զդրամ էր հասուցեալ սա Մկրտիչ վարդապետին աստ ի նուիրակական արդեանցն սակաւ առ սակաւ ձեռամբ Յարութիւն և Վարդան տղայոցն (Բ, Զ), որոց աղագաւ այժմ զզապզ էր խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Վասն որոյ և սա զմի զապզագիր գրեաց առ սա, թէ որ յառաջագոյն զսակաւ ինչ դրամ էիր տուեալ Վարդան տղային (Թ, Ը), որ աստ Մկրտիչ վարդապետն առնուցու, առեալ էր և եցոյց մեզ զհաշիւն, որ ընդ քեզ։ Իսկ այժմ փոքր մի դրամ ևս յայդր տուեալ էիր Յարութիւն տղային, զի զկնի ԼԱ (31) աւուրց տացէ մեզ աստ ձեռամբ Մկրտիչ վարդապետին (Ա, Զ, Բ), զոր և մեզ է հանուցանելոց։ Վասն որոյ զայս զապզագիրս գրեցաք քեզ առ ի ընդ քեզ պահել ի միամտութիւն քեզ, որ և ի հաշուատրութեանդ պիտոյասցի քեզ։

Այլ արդ, սակս վտանգաւոր անձանցն երկուց աստ յղեցմանն ի Պօլսոյ (զոր ի վերոյ գրեալ թուղթն պարոն Հայրապետին յիշեցաք), սա ևս էր զարտուղջ գրեալ։ Իսկ սրբազան Վեհն առ այն, զոր ինչ գրեաց Հայրապետին, ըստ այնմ և սմա գրեաց։

411. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց։ Յորում նախ ազդեաց նմա զուղտն յղելն սակս մնացեալ համեղինին առ ի բերել։ Որ և գրէ, թէ եթէ յուղտուցն դատարկ մնասցեն, զմեխս ձիոյ և զքանի մի արապայից մառանս բարձեցուցեալ յղեսցես։ Որոց աղագաւ յառաջ եւս գրեալ քեզ, ասէ, առնուլ։ Ծանոյց ապա և զգրելն առ պարոն Հայրապետն առ ի հասուցանել սմա զդրամ ի պէտս հոգալեացն, որ վասն սրբոյ Աթոռոյս։

Նաև վասն զանգակացն (որ յիշեցաւ ի վերն յամսոյս է (7) Պօլսոյ նուիրակ Մինաս պետն գրեալ էր, թէ յղելոց եմք ասափ ծովու դէպ ի յԱխալցխայ, որ ի նորին վիճակին ի Բաթում կոչեցեալ նաւահանգստին Սեաւ ծովուն ի դուրս ելցէ և այլն։ Վասն որոյ սրբազան Վեհն գրեաց սմա գրել յօժ հարկիւ յայնկոյս առ ծանօթս և բարեկամն իւր, զի տիրաբար մուղայէթ լիցին ի դուրս գալն և հանցեն և սայլիւ յղեսցեն ի Ղարս, զի անտի եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ ասէ, զոր ինչ խարճ գնասցէ, գրեա, զի տեսցուք։

Յղեցան թուղթքս ընդ տղայոցն մեր յամսոյս ԻԱ (21)։

99ա Եւ արդ, ի ներկայումս ի Թիֆլիզու մեր նորոգ վէքիլ Կարապետ վարդապետէն և ի տէր Ղազարէն և յայլոց թուղթք հասին առ սրբազան Վեհն, և սրբազան Վեհն հարկաւորեցաւ գրել զքանի մի թուղթս յայնկոյս։ Վասն զի խնդրեալ էր Կարապետ վարդապետն գրել զթուղթ առ Ախխազաց Սօղոմօն արքայն։ Ուստի և սրբազան Վեհն գրեաց, ըստ որում զառաջին թուղթն ի յանցեալ ամի նոյեմբերի ԺԱ (11) գրեցեալ չէին յղեալ առ նա վասն պատճառի իրիք (որ յայժմիկ նորոգ գրեցեալ թուղթն, որ ի ներքոյ ծանուցանի)։

412. Նաև Թիֆլիզու Սահակաշէն եկեղեցւոյ (տէր)՝ բժիշկ Յովաննէսն կամեցեալ էր զնոյն եկեղեցին, զոր իւր նախնիքն շինեալ են և սրբոյ Աթոռոյս տէրունի արարեալ, առնել թեմ Հախպատու՝ վասն ումեմն ինչ։ Որ և կամիլն իւրում այսպէս վախճանեալ էր։ Իսկ նորին որդիքն բարեխոհութեամբ կրկին հաստատնապէս տէրունի էին արարեալ սրբոյ Աթոռոյս զայն եկեղեցին։ Վասն որոյ գրեալ էին Կարապետ վարդապետն և տէր Ղազարն և առ նոյն յիշեալ բժիշկ Յովաննէսի որդիսն զմխիթարութեան և զօրհնութեան թուղթ խնդրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն ըստ խնդրոյ նոցին զմի թուղթ գրեաց առ նոսա։ Իսկ և զմի թուղթ ևս առ նոյն Յովաննիսի փեսայ Գաբրիէլն գրեաց՝ կարգելով զնա երեցփոխան՝ նոյնոյ Սահակաշէն եկեղեցւոյն։ Ընդ որս և առ ոմանս նորապէս ճորտացեալս սրբոյ Աթոռոյս, ըստ աղաչանաց և բաղձանաց իւրեանց, զմի հաստատութեան թուղթս գրեաց, հանդերձ պատասխանեօք թղթոց Կարապետ վարդապետին և տէր Ղազարին և այլ ևս թղթովք։ Որոց դիտմունքն ահա ի ներքոյ կարգաւ յիշատակին, որպէս և տեսանես։

413. Թուղթ անդրանիկ օրհնութեան և մխիթարութեան սրբազան Վեհն առ Սօլոմօն արքայն Ախխազաց գրեաց, արտահանեալ ի նոյն թղթոյն, որ ի վերն ի սոյն յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ նոյեմբերի ԺԱ (11) յիշեցաւ, գրելով դարձեալ զնոյն միտսն, որ անդ, և մխիթարութիւն ևս խառնելով յայն՝ վասն մահուան որդւոյն։ Զի առաջին գրեալն մինչ հասեալ էր ի Թիֆլիզ, համբաւն մահուան որդւոյ նորին եկեալ էր անդ։ Ուստի զայն թուղթն յետս յղեցին առ մերքն և նոր թուղթ խնդրեցին խառն ընդ մխիթարութեան։ Զոր և յետ միջոցաց յղեաց այժմ սրբազան Վեհն։

Զորոյ նոր միջարկեալ բանից գաղափարն գտցես ի նոր տետրն շարագրանաց ի 76 երեսն[10]։

414. Թուղթ օրհնութեան և մխիթարական ևս ի Թիֆլիզ առ վերոյ յիշեալ բժիշկ Յովաննիսի որդիսն՝ պարոն Գրիգորն և պարոն Ստեփանն և նոցին մայրն գրեաց՝ սփոփելով զնոսա վասն մահուան բժիշկ Յովաննիսին և շնորհակալելով զնոցունց վասն վերահաստատելոյն նոցա զսուրբ Աստուածածին եկեղեցին Սահակաշէն կոչեցեալն մնալ ի ժառանգութեան սրբոյ Աթոռոյս և լինել տէրունի թեմ սմա, որպէս և շինօղն նոյն
99բ եկեղեցւոյն Արիգինենց Սահակ պապն սոցա կամաւ || և սիրով սրբոյ Աթոռոյս էր ընծայեալ ի բնէ, առ ի զոլ սմա ժառանգ և վիճակ յաւիտեան։ Որոց և պատուիրեաց մնալ յարապէս ի նոյն հարազատութեանն, զոր այժմ յատկապէս մեծաւ սիրով ցուցեալ էին առ սուրբ Աթոռս։

Օրինակն ի վերայ կտոր թղթոյ է։

415. Թուղթ օրհնութեան ևս առ Քիտխէ անուն ումն վրացի գրեաց, որ օտար ազգի գոլով, ամ յամէ սրբոյ Աթոռոյս զմի լիտր մոմ նուէր տայր, որ և յայսմ ամի տուեալ էր՝ հասուցանելով անդ ի Թիֆլիզ մեր Կարապետ վարդապետին։

Զորոյ օրինակն գտցես ի նոր տետրն շարադրանաց, ի 77 երեսն։

416. Կոնդակ ճորտութեան ևս ի վերայ կարնեցի տիրացու պարոն Յովաննիսին և Եղիազարին գրեաց, որք զուխտադրական ձեռագիր էին գրեալ առ սրբազան Վեհն և ինքնայօժար կամօք ճորտ լինել էին կամեցեալ սրբոյ Աթոռոյս և զճորտութեան գիր էին խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Վասն որոյ և սրբազան Վեհն զձեռագիրն նոցին ընկալեալ առ ի պահել իբրև զղապալայ ի սուրբ Աթոռս, զայս թուղթս գրեաց ի վերայ նոցա՝ ի նշան և ի հաստատութիւն ճորտութեան նոցա սրբոյ Աթոռոյս։

417. Ճորտութեան թուղթ ևս ի վերայ ղօնտաղսազ Յարութիւնին և Հնգեսին որդւոցն նորա՝ Դաւթին, և Յովաննիսին, և Սիմէօնին, և Աւետիքին, և... գրեաց, որք այս երկրացի գոլով, բնականապէս ճորտք էին սրբոյ Աթոռոյս։ Եւ զի այժմ առ ի յեւս առաւել հաստատութիւն ճորտութեան իւրեանց սրբոյ Աթոռոյս, զկոնդակ էին խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Սրբազան Վեհն զայս թուղթս գրեաց առ նոսա, մնալ ի ձեռին իւրեանց իբրև զնշան և կնիք ի սրբոյ Աթոռոյս։

418. Թուղթ ևս առ մեր Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին յապրիլի ԺԷ (17) գրեալ թղթոյն, զոր ընդ Յովաննէս և Գալուստ և Աբրահամ վարդապետացն յղեալ էր։ Յորում գրեաց, թէ զամենայն տեղւոյդ և սակս գժտութեանն ի կողմանէ Սահակաշէն կոչեցեալ եկեղեցւոյն մերոյ և զբոլոր անցսն նորա ի թղթոյդ և ի Գալուստ պետէն իմացաք և զձեր ջատագովութիւնն ընդդէմ ներհակաց գիտեցեալ, շնորհակալեցաք զձէնջ։ Եւ զի դեռևս չէր լուեալ սրբազան Վեհն, թէ բժիշկ Յովաննէսն վախճանեալ է (որ կամէր զՍահակաշէն եկեղեցին առնել թեմ Հախպատու) և նորին կինն և որդիքն զխորհուրդն նորա անբարի խափանեալ են, գրեաց զկոնդակ մի ի վերայ նոյն եկեղեցւոյ ժողովրդեանն և
100ա զխրատական թուղթ մի ևս ի վերայ յիշեալ Յովաննիսին և ||նորին կողակցին գրեաց առ ի յղել ի խափանումն չար խորհրդեանն նոցա։ Վասն որոյ գրեաց սմա, թէ ահա զայսպիսի գրեանս գրեցաք և այլն։ Բայց զի որոյ գրեաց սմա, թէ ահա զայսպիսի գրեանս գրեցաք և այլն։

տակաւին չգնացեալ թղթոցն, եկն համբաւ մահուան բժիշկ Յովաննիսին և զայն թուղթն այլևս ոչ յղեաց, այլ միայն զմխիթարութեան և զշնորհակալութեան գիր մի առ նոյն Յովաննիսի որդին գրեաց, ծանոյց սմա, թէ թէպէտ յառաջ այնպէս գրեցաք. բայց այլ ոչ յղեցաք թուղթն: Միայն առ Յովաննիսի որդին զմխիթարութիւնս գրեցաք շնորհակալութեամբ հանդերձ, զոր տացես ինքեանց:

Ծանոյց և զառ Յովաննիսի փեսայ Գաբրիէլն զշնորհակալութեան թուղթ գրելն և զնա երիցփոխ կարգելն Սահակաշինու եկեղեցւոյն: Ապա զայս գրէ, թէ մինչ Յովաննիսի և Գաբրիէլի որդիքն կամ թոռունքն քահանայութեան արժանաւորք լինիցին, ըստ ժամանակին հրամայելոց եմք քահանայանալ ի վերայ Սահակաշինու եկեղեցւոյն մերոյ տէրունւոյ: Իսկ և պատուիրեաց, թէ զՍահակաշինու եկեղեցւոյ աւագէրէց տէր Խաչատուրի եկեղեցական հաշիւն առնուցուս: Նաև զայս, թէ զԹաշչուխի Թագաւորի մխիթարութեան թուղթն խնդրեալ էիր և թէպէտ վասն նորա գրեալ էիր, թէ զպատրիսն չար անտի արտահալածեալ է և զեկեղեցին կրկին Հայոց տուեալ, բայց մեք լսեմք, թէ ոչ չար պատրիսանտի ի բաց է վարեալ և ոչ եկեղեցին մերայնոցն է տուեալ, և մերայինքն ի խղճութեան կան: Վասն որոյ գրեմ քեզ, թէպէտ մեք զԹագաւորի մխիթարական գիրն գրեցաք, այլ նմա զշնորհակալութիւնս եմք գրեալ: Դու յայղ իմացիս զորպէսն: Եթէ զպատրիսն վարեալ է և զեկեղեցին մերազնեիցն է տուեալ, զայս մխիթարականս և զայդ օրհնութեան թուղթդ առ անդ եղեալ ժողովուրդսն մեր գրեալ, զոր յառաջ եմք յղեալ և Յովաննէս պետն ի գալն աստ, քեզ է տուեալ, յղեսցես առ նոսա: Իսկ թէ սոցին ներհակն է և մեր լուեալն է հաւաստի, մի յղեսցես, այլ պահեսցես և մեզ գրեսցես զստուգութիւն իրին, զի հնար իմն գտցուք:

Նաև զայս պատուիրեմ, ասէ, պարտիս զորքան ճարտ, զուբեանն տուն ունիմք յայդր, զայնս ի դաւթար քարշել և զդաւթարն առ մեզ յղել: Այլև պարտիս, ասէ, զքոյդ տուր և առից դաւթարն պարզապէս և հատակ առնել և զիւրաքանչիւր գեալուրդ ի դաւթարոջդ յատկացուցանել և մանաւանդ զիւրաքանչիւր տարւոյ գլխաւոր գեալուրսդ: Եւս տանել, յատկապէս թէ զիմրուկն, թէ զիւքանաց քիրահն և թէ այլ ինչ ուրոյն ուրոյն գրել:

Եւ թէ յայդր սանդուխտաղ Յարութիւն զոյ, ընական այս երկրացի և ունի զհնգեսին որդիս, առ որ ահա զնոր ճորտութեան թուղթ գրեցաք և յղեցաք առ քեզ ընդ տէր Ղազարին՝ տաջիք իւրեան և զանուանս իւր և որդւոցն գրեսջիք ի դաւթարոջ ճորտիցն սրբոյ Աթոռոյս: Եւ թէ ահա ըստ խնդրոյդ Բ (2) վեղար յղեցաք քեզ, իսկ ապա և զայս, թէ զտիրացու պարոն Յովաննիսի և զՕղիազարի ուխտադրական գիրն ընկալաք և պահեմք աստ, և զճորտութեան թուղթն յղեցաք քեզ՝ տալ իւրեանց:

100բ 419. Թուղթ ևս սրբազան Վեհն առ տէր Ղազարն գրեաց, ի պատասխանի թղթոյն նորա ի մարտի ԻԵ (25) գրեցելոյ ի վաղուց, ընդ որում և յղեալ էր զմի փոքրիկ զութի չայ ընծայ: Առ որ նախապէս շնորհակալութիւն: Եւ թէ Յովաննէս և Գալուստ և Աբրահամ վարդապետքն եկին հասին աստ, և Գալուստ վարդապետն պատմեաց մեզ զհարազատութիւնդ և զջատագովութիւնդ առ սուրբ Աթոռս, ուստի շնորհակալ եմք զքեն:

Եւ հարկ և պատուէր՝ հլու և հպատակ կալ ըստ ամենայնի կարապետ վարդապետին և աթոռաօգուտ բանից և գործոց իրազեկ առնել

Իսկ և զի գլխէթ ինչ ունէր զամանէ Յովաննէս պետն, առաջնորդն Թիֆլիզու, որ այժմ դարձաւ ի սուրբ Աթոռս, երկուցեալ էր սա, թէ գուցէ նա զամբաստանութիւնս ինչ արասցէ զինքենէ: Վասն որոյ գրեալ էր աղաչանօք առ սրբազան Վեհն՝ չլսել զանկատանաց նորին: Առ որ գրեաց, թէ մինչ դու հարազատօրէն և արդարապէս ծառայեսցես սրբոյ Աթոռոյս, ոչ ոք կարէ զքեն ամբաստանել: Եւ այլ մանր բանք:

Գրեալ առաքեցան վերոյ յիշեալ թուղթքս ընդ Ստեփաննոս սարկաւագին Թիֆլիզեցւոյ յամսոյս ԻԴ (24):

1781 թ. հունիս—Ի մեծն Պօլիս, ի տեղիսն ոմանս ի շրջակայիցն Պօլսոյ, ի Կիմիշխանա, ի Կարին և ի Ղարս թուղթք

Արդ, այժմիկ դարձեալ կրկին թուղթ եկն ի Պօլսոյ ի մեր նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն, գրեցեալ ի մայիսի Բ (2), յորում կիտոջ տակաւին չէր հասեալ առ նոսա թուղթն սրբազան Վեհին, որ ի մարտի եւն ընդ միաբանից մահսարին գրեցաւ (որք ի վերն ցուցեալ են): Ընդ որում և գոյին թուղթք պատասխանախնդիրք ի վերոյ գրեալ տեղեացն ի յոմանց: Որոց զպատասխանիս գրէր սրբազան Վեհն: Այլ սակայն քանի աւուրբք զկնի քան զգրելն Մինաս և Պետրոս վարդապետացն զթուղթն իւրեանց՝ ի մայիսի Թ (9), ժամանեալ էր անդ ի Պօլիս վերոյ յիշեալ մահսարն միաբանիցս սրբոյ Աթոռոյս: Զոր ընթերցեալ համայն բարեմիտ ժողովուրդքն մեր, որք անդ՝ ի Պօլիս, մեծք և փոքերք կրկին հաճեալ և հաւանեալ էին ընդ կաթուղիկոսի առաւածակոչ սրբազան Վեհիս մերոյ, որոյ և զանունն յիշատակեալ էին
101բ ի սրբոյ յեկեղեցիսն. // ոչ ևս ընդունելով և մանաւանդ քամահելով զըկեղծապատեալ խորամանկութիւն և զնախանձաոիթ դարանակալութիւն հովիւ ասացելոյն ինքեանց ի ներկայս: Վասն որոյ Մինաս և Պետրոս վարդապետքն ի մայիսի Թ (9) թուղթ էին գրեալ առ եպիսկոպոսունսն սրբոյ Աթոռոյս իբրու պատասխանի համայն կարգաւորաց և ծանուցեալ էին զաւետալիր համբաւ նորոգ եղելութեանն, որ հասեալ աստ ի յունիսի, ընթերցեալ եղև հանդիսիւ: Ուստի սրբազան Վեհն ի թուղթն իւր, որ նորապէս գրէր առ Մինաս և Պետրոս վարդապետսն, զնոցին նոր գրոյ աստ հասանիլն ևս ծանոյց:

Իսկ որ ինչ թուղթք այժմ գրեցան զսակաւուց օրինակսն և զբաղմաց զիտմունսն համառօտապէս տես ի ներքոյ:

Բերված է Մինաս և Պետրոս վարդապետներին առաքվելիք նամակների բովանդակությունը, որտեղ խոսվում է նաև այն մասին, որ էջմիածին են հասել նախորդ նամակներում «վտանգավոր» համարված անձինք՝ Գրիգորը և Հակոբը: Տեղեկություն կա նաև այն մասին, որ էջմիածնի վանքի զանգակներն ուղարկվում են ոչ թե Բաթումի, այլ Տրապիզոնի ու Կարինի վրայով (էջ 101բ—103ա):

103ա 420. Փուսուլայ ևս գրեաց առ Մինաս վարդապետն վասն յղելոյն Յանորա իբրու համարձակապէս, զ՚ի վերին թուղթդ յիշեալ Գրիգոր և Յակոբ վտանգաւոր տղայսն ի Կարին առ վէքիլն մեր պարոն Հայրապետն՝ որ և թէպէտ յղեալ էր, բայց յոյժ երկիւղաւ ի յղել ի սուրբ Աթոռս: Որ և թէպէտ յղեալ էր սրբազան Վեհին հրաժարեկրութեամբ և ահիւ, որոյ սակս և գրեալ էր սրբազան Վեհին հրաժարեցուցանել զինքն ի գործոյն սրբոյ Աթոռոյս, պատճառելով, թէ այսպիսի բանիւք իմ տունս քակիլոց է, զի այս Օսմանցւոց երկիր է և այլն: Առ որ գրեաց սրբազան Վեհն ի մայիսի ԻԱ (21) զփուսուլայ մի և յուսա-

գրեաց, թէ մեք զգուշացուցաք զՄինաս վարդապետն այլեւ զայդպիսի բան չառնել, զաւ ի ծառայութենէդ սրբոյ Աթոռոյս մի կասիր և պատուիրեաց զայն փուսուլայն փաթով յղել առ Մինաս պետն՝ ի զգուշութիւն նմա, մինչև ինքն ևս գրեսցէ: Վասն որոյ այսու փուսուլայիւ զգաստացուցանէ զնա այլեւ յայնպիսի իրս չխառնիլ և զփորձանաւոր ոք այլեւ չյղել առ վէքիլն մեր Հայրապետն և ծանուցանէ զվերոյ յիշեալս:

Իսկ և գրեալ էր սա առ եպիսկոպոսունսն, թէ դեռևս չեղև լօնջայն այլ այնպէս յիշեցաւ անունն սրբազան Վեհին յեկեղեցիսն և այլն: Եւ որ գրեաց սրբազան Վեհն և էհարց զպատճառն, թէ զի՞նչ էր, որ նախքան զլինիլ լօնջայի յիշեցաւ անուն մեր ի յումմէ՞, յայդմանէ չիմացայ ինչ պարզաբար:

Եւ ի վերջոյ, գրեաց սմա Աստուածապահին և պարոն Գէորգին զողջոյն մատուցանել և միամիտ առնել վասն գրեալ թղթոց նոցին առ ինքն, թէ ամբողջ հասեալ են: Եւ վասն չգրելոյն իւրոյ զպատասխանիսն՝ ասել, որովհետև միւսոցն ոչ գրէ զթուղթ, վասն որոյ այն և ոչ ձեզ գրէ, զի մի լիցի այլոցն խաթրամնայութիւն: Բայց մինչ բանն պարզեսցի և առ այլս զթուղթս գրէ, յայնժամ և զձեր գրեանց պատասխանիսն գրեսցէ:

Զօրինակն այսր փուսուլայիս գտցես ի նոր տետր 234 երեսն:

421. Թուղթ օրհնութեան ևս ի մեծն Պօլիս առ Սառա կին ոմն և իւր Թագուհի և Հռիփսիմէ անուամբք դստերսն գրեաց, ըստ խնդրոյ Մինաս պետին և ի պատասխանի աղերսանաց թղթոյ յիշեալ Սառային, զոր գրեալ էր նա առ սրբազան Վեհն և ծանուցեալ էր զախտս զոլն դստերաց իւրոց և ի բժշկութիւն նոցա զօրհնութեան գիր էր խնդրեալ: Որ և տուեալ էր անդ ի Պօլիս նուիրակին Ա (1) քաթան շապիկ, Ա (1) մահարամայ, Ա (1) պղնձեայ շամատան, Ճ (100) դրամ խունկ և Ժ (10) փարայ մոմագին՝ առ ի հասուցանել աստ:

Օրինակն սորա է ի նոր տետր 186 երեսն:

422. Թուղթ ևս սրբազան Վեհն առ մեծին Պօլսոյ արտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, որ ընդ երկար միջոցս խափանումն եղեալ գործոյն ի չարակամութենէ Պօլսոյ Զաքարիայ պատրիարքին, այժմ զգեօղորայսն Իկնիմիտու նուիրակ էր: Որում զմխիթարու-
103բ թիւն //վասն անյաջողութեանցն և յուսադրութիւն՝ արի լինիլ ի գործն և համբերել ևս ժամանակ ինչ, մինչև գրեսցէ զգրեանսն, զորս խնդրեալ էր սա ի վերայ ոմանց: Եւ պատուէր առ ի յինքն գրաւել զսիրտս ժողովրդեանցն վիճակի իւրոյ և ի սէր սրբոյ Աթոռոյս կապակցել:

Իսկ և զի յետ գրելոյ թղթոյս ժամանեաց աստ աւետալիր թուղթն Մինաս պետին (զոր վերոյ յիշեցաք), վասն որոյ ի վերջոյ թղթոյս ծանուցանէ, թէ այժմ գիր էհաս մեզ ի մեր Մինաս վարդապետէն, որ գրեալ էր զհասանիլն բազմակնիք թղթոյ միաբանից մերոց ի մեծն Պօլիս և յիշելն նոցա անդ զանուն մեր: Բայց զի բաց ի նմանէ և այլ սակաւուց ոմանց ի հասարակութենէն չընկալաք զգիր, վասն որոյ ևս չգրեցաք ինչ ումեք և ոչ զքո խնդրեալ թուղթսն, որպէս և վերն գրեցաք, երբ միւս անգամ ևս գիր առցուք անտի, ապա գրելոց եմք, զոր ինչ և հարկն է:

Զգաղափարն թղթոյս այսօրիկ գտցես ի շարադրանաց նոր տետր 231 երեսն:

423. Կոնդակ ևս սրբազան Վեհն[ի]վերայ Կիմիշխանայու ժողովրդեանն գրեաց, իբրու ի պատասխանի թղթոյ նոցա, զոր գրեալ էին առ հոգևոյս տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսն յաւուրս կենդանութեան նորա, որում վասն մահառիթ հիւանդութեանն չկարաց գրել զպատասխանին և մխիթարել զնոսա, զի ծանուցեալ էին նոքա զվշտակրութիւնս իւրեանց ի չար ախթարմայից տեղւոյն, և մնաց մինչև ցարդ: Իսկ այժմ կարնեցի Յակոբ վարդապետն Սիմոնեան, որ արքունի հրովարտակաւ ի Պօլսոյ պատրիարքէն յղեցեալ էր անդ վասն դարձուցանելոյն զանդ եղեալ ախթարմայսն ի յուղղութիւն սրբոյ հաւատոյս մերոյ, որ և համակամութեամբ և օգնութեամբ տեղւոյ ուղղափառացն մերազնէից, զիջուցեալ էր զամբարտաւանութիւն անիծեալ ախթարմայիցն, յորոց և զքանիս ածեալ էին ի յուղղութիւն, զայս քաջական արարողութիւնս գրեալ էր առ սրբազան Վեհն, վասն որոյ և սա այսու կոնդակաւ զշնորհակալութիւնս, զմխիթարութիւնս և զօրհնութիւնս գրեաց առ նոսա հանդերձ վշտակցութեամբ և յորդորմամբք, գրելով և զայս բան սրբոյն Պօղոսի, թէ ո՞ հիւանդանայ և ես ոչ հիւանդանամ, ո՞ գայթակղի, և ես ոչ տապանամ: Եւ պատուիրեաց արի և պինդ կալ ի յառաջադրութիւնս իւրեանց, մինչև իսպառ ի բաց բառնալ ի միջի իւրեանց զխմորն ախթարմայութեան:

Իսկ և զի յօրէ լսելոյ իւրեանց զհայրապետանալ սրբազան Վեհի մերոյ մինչև ցայժմ յիշէին սոքա զանուն սորա ի յեկեղեցին իւրեանց, չհայելով ի սատանայայորդոր արգելմունս Պօլսոյ պատրիարքին, որ յոմանս տեղիս սակս չար նախանձուն ոչ թողոյր յիշել, առ այն ևս յատկապէս զշնորհակալութիւնս գրեաց: Նաև հրաւիրեաց երբեմն գալ ոմանց ի սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն՝ առ ի տեսանել աչօք զսուրբ Աթոռ ծնօղս իւրեանց և շահիլ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ:

Օրինակն սորա է ի շարադրանաց նոր տետր 187 երեսն:

104ա 424. Թուղթ ևս առ Կիմիշխանայու նոր առաջնորդ Յակոբ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն յառաջիկ եկն գրեցելոյ, ըստ վերոյ գրեալ կոնդակի ոճոյն: Իսկ զի յառաջագոյն սա զթուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն և զպատասխանին չէր ընկալեալ մինչև ցայժմ, այնր սակս զրանս էր գրեալ առ սրբազան Վեհն: Եւ որ գրեաց, թէ յանձեռնհասութեան չեմք գրեալ: Այլև յառաջագոյն առ կենդանութեամբ հոգելոյս սրբազան Սիմէօն կաթուղիկոսին, որ ի սուրբ Աթոռս էր եկեալ սա, ի գնալն աստի միով կնքեալ արկեղբ զիրս ինչ թողեալ աստէն յաւանդ, որոյ սակս այժմ հարցեալ էր, թէ զի՞նչ եղև: Իսկ սրբազան Վեհն գրեաց, թէ արկղն քո կայ աստէն ամբողջ, միամիտ լեր:

Պատուիրեաց և վասն վերոյ գրեալ կոնդակին ընթեռնուլ ի լուր համայն ժողովրդոցն ի յեկեղեցին և ի սէր սրբոյ Աթոռոյս կապակցել զնոսա: Ազդեաց ապա և զնորապէս գիր ընդունիլն ի Պօլսոյ և իմանալն յայնմանէ զանուանայիշութիւնն իւր ի մեծն Պօլիս և այլն:

Զգաղափարն թղթոյս այսօրիկ գտցես ի նոր տետրն շարադր[ութեանց] ի 190 երեսն:

425. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան սրբազան Վեհն ի վերայ Օքրօպակերտու մերային ժողովրդեանն գրեաց վասն ԼԴ (34) հոխայ մոմին, որ ի նոցունց յղեցմամբ յԱխալցխայի տէր Եղիային էհաս ի սուրբ Աթոռս: Ընդ որս և առ տէր Եղիայն ևս զԱ (1) թուղթ գրեաց և ծանոյց զյիշեալ մոմի հասանիլն աստի ի սուրբ Աթոռս և զշնորհակալութեան կոնդակ գրելն իւր ի վերայ Օքրօպակերտու: Եւ զի զկոնդակն ի

ձեռս սորա յղեալ՝ յղել ի յՕքրոպակերտ, պատուիրէ սմա շուտով հա-
սուցանել անդ ի միամտութիւն ժողովրդեանն տեղւոյն։ Նաև գրեալ էր
սա, թէ մեր աթոռակալն Ժ (10) լիտր մոմ և հին քաթան ունի յղելոյ և
ոմանք խօսին և այլն։ Որոյ սակս գրեաց սրբազան Վեհն, թէ չիմացաք
թէ այդ ո՞ր տեղւոյ աթոռակալն է և անունն ի՞նչ։ Վասն որոյ թէ հարկա-
ւոր է, գրեա մեզ պարզաբար զնորին անունն և ուր լինիլն, և թէ զի՞նչ
գրել արժան է մեզ վասն այն բանին, զոր գրեալ էիր թէ ոմանք ընդդի-
մանան, զի և մեք գրեսցուք։

Օրինակն թղթոյս այսորիկ գտանի ի նոր տետրն շարագրութեանց
ի 191 երեսն։

426. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ Հայրապետն գրեաց, ի պատաս-
խանի ի մայիսի 12, 13, 16, և 30 գրեալ թղթոցն չորից նորա։ Յորում
գրեաց նմա, թէ վասն ակնցի Յովաննիսի տալեացն (զորմէ յիշեցեալ է
ի վերն ի յապրիլի ԻԶ (26) և նորին աւացելոցն, զոր ինչ գրեալ էիր,
իմացաք, ինքն ևս էր գրեալ առ մեզ զգիր։ Ինչ և իցէ, ժամանակ ինչ
թոյլ տացես մինչև Եսային ի Թիֆլիզու եկեսցէ, տեսցուք որպէ՞ս է
լինելոց, յետոյ գրելոց եմ։ Իսկ և գրեալ էր սա յաղագս Կարնոյ մարա-
պետի սառաֆ Սարգսին, թէ Իսպիր անուն տաճկի միոյ եկն յայդր, շա-
հեա։ Առ որ գրեաց, թէ նոքա չեն եկեալ աստ և լուաք, թէ ի խոյ են
104ա գնացեալ։ Եթէ գայցեն աստ ի դառնալն անտի, շա//հեսցուք և առ մարա-
պետն տեղւոյդ ևս վասն քոյ զյանձնարարութեան թուղթ գրեսցուք։ Եւ զի
գրեալ էին սա և Գորոյեան մահտեսի խաչատուրն առ Մինաս վարդա-
պետն ի Պօլիս, զի զմեծամեծ զանկական, որ առ ինքն (զորս ի վերոյ
ալն քանիցս յիշեալ եմք) յանուն մահտեսի խաչատուրին յղեսցէ ի Տրապ-
զոն ընդ նորին բեռանցն, զի և անտի յղեսցեն ի սուրբ Աթոռս։ Զոր և
ծանուցեալ էր սա այժմ, վասն որոյ զշնորհակալութիւնս գրեաց Հասան-
ղալու վանից Սահակ պետի ուրումն աղագաւ գրեալ էր սա, թէ կամի
գալ ի սուրբ Աթոռդ, թուղթ գրեա սմա ի գալ։ Առ որ գրեաց, թէ մեք
թուղթ չգրեցաք առ նա, բայց թէ ինքն կամի, թող եկեսցէ։ Եւ թէ յար-
գեանցն սրբոյ Աթոռոյս, որ առ քեզ, զրամ էիր հասուցեալ տէր Վահա-
նին (Զ, Դ) և ինքն տէր Վահանն ևս զրամ էր փոլիցայ արարեալ ի վե-
րայ քոյ (Ե), զոր ևս էիր տուեալ զու առ ի նորա մեզ հասուցանելոյ
որոց սակս գրեալ և ծանուցեալ էիր մեզ առ ի առնուլ և տէր Վահանն
ևս էր գրեալ մեզ և յանձն առեալ առ ի առնուլ և յղել։ Երբ և հասուցա-
նիցէ, գրելոց եմք ի քոյդ դաւթարոջն և քեզ ծանուցանելոց եմք քեզ ի
միամտութիւն։

Այլև խոստացեալ էր սա ի վերայ Ղարսայ ձեռամբ պարոն Գէոր-
գին ընդ ուխտաւորացն, որք գալոց էին, առ մեզ փոլիցայ հասուցանել։
Եւ տէր Վահանին ևս գրեալ էր, որ անդ ի Բայազիտ, եթէ զզրամ գոյէ,
ի վերայ սորա փոլիցայ արասցէ և զզրամն առեալ յղեսցէ ի սուրբ Աթոռս։
Որոց աղագաւ գրեաց սրբազան Վեհն, թէ բարւոք համարեցաք և գրե-
ցաք տէր Վահանին և Գէորգին ըստ գրեցելոց քոց առնել։

Նաև Հաճի Յովաննէսն Պօլսեցի վասն իւրեանց Գէորգ տղային, որ աստ
առ Յովաննէս վարդապետն էր, զԻԵ (25) ղուռուշ էր հասուցեալ առ սա,
որոյ սակս գրեալ էր սա աստ տալ նոյն Գէորգ տղային։ Զոր և սրբա-
զան Վեհն հասոյց և գրեաց սմա, թէ ահա զԻԵ (25) ղուռուշն ըստ գրեցե-
լոյդ հասուցաք ձեռամբ Յովաննէս պետին Գէորգ տղային և գրեցաք դաւ-
թարոջդ։ Նոյնպէս և յառաջագոյն, որ վասն ուրումն ուխտաւորի գրեալ

էիր մեզ, աւէ, զԽ (40) ղուռուշ տալ նմա, ըստ որում դու յայդր առեալ
էիր ի նմանէ, ետուք և գրեցաք զայն ևս ի դաւթարոջդ։ Որպէս և յառաջ
գրեալ եմք, աւէ, քեզ։

Այլև գրեալ էր սա, թէ եթէ Պօլսոյ ոսկին յայդր աւելօք անցանի,
յղեցից, իսկ սրբազան Վեհն գրեաց, թէ ոչ, մի՛ յղեր։ Գրեաց ապա և զի
Մինաս պետէն նորեկ աւետաւոր թղթոյ միտսն, այսինքն զյիշատակելն
պօլսեցւոց զանուն իւր անդ յեկեղեցիսն։ Նաև զմիաբանից սրբոյ Աթո-
ռոյս զինքն սախպմամբ ի կաթուղիկոսարանի բազմեցուցանելն։ Եւ ի
վերջոյ վասն Մինաս պետի թղթոյ պատասխանւոյն և այլ թղթոցն, որք
ընդ նմա և ի Կիմիշխանայ գրեալ թղթոցն, որք յղեցան առ սա, առաքել
ի տեղիս իւրեանց, զպատուէր գրեաց՝ փութով յղել։

Ընդ սմին առ Գորոյեան մահտեսի խաչատուրն և Սերոբն և զԱ (1)
թուղթ գրեաց, շնորհակալելով զնոցունց, վասն զի զհարկաւոր թղթան
105ա սրբազանին և // Հայրապետն, յղէին ի Պօլիս։ Եւ մանաւանդ վասն զան-
գակաց բանին, զոր ի վերոյ գրեալ թղթոջդ պարոն Հայրապետին գրե-
ցաք։ Իսկ ապա յորդորումն ի սէր։

427. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի
պատասխանի նորին ի մայիսի 25 գրեալ թղթոյն, զոր ընդ մեր ուղ-
տապանին հանդերձ ըստ մեր գրեցելոյն առեալ ձիթովն և այլ իրօքն
յղեալ էր։ Որոց զնոց աղագաւ գրեաց, թէ մի առ մի ընդ քոյդ յղեալ
դաւթարին գրեցաք ի մեր յանուն քո արարեալ նորոգ դաւթարոջն
տրոց։ Եւ զու ևս զայնոսիկ արկ ի քոյդ յայդր նոր սկսեալ դաւթարն։
Այլև գրէ, թէ ըստ քոյդ գրեցման ահա 53 ղուռուշ նաղտ դրամ ետուք
Ղունկիանոս վարդապետին և զպապղ առեալ յղեցաք առ քեզ և
զայն գրեցաք ի քոյդ տուից զէվթէրոջն։ Նաև Օքրոպակերտու արդինք
մոմն որովհետև սա էր ի Ղարսայ յղեալ աստ, վասն որոյ զթուղթն,
զորս սակս այն մոմին գրեաց (զորս ահա ի վերդ գրեցաք), յղեաց ի
ձեռս սորա։ Ուստի և գրէ, թէ մոմն ԼԴ (34) հօխայ, հանդերձ թղթովք
տէր Եղիային, ամբողջ հասին աստ, որոց սակս զգրեանս յղեցաք քեզ,
աւէ, ի վերայ օքրոպակերտացւոցն և տէր Եղիային, յղեա առ նոսա։

Եւ սակս զանգակացն Մինաս վարդապետն, որ յառաջագոյն գրեալ
էր, թէ յղելոց եմք ի Տրապզոն հասանիլ յայդր, յետոյ ևս գրեաց, թէ
առաքելոց եմք ի Բաթում, որ է նավահանգիստ Ախալցխայու։ Վասն
որոյ և սրբազան Վեհն գրեաց սմա յառաջ գրել անդ ի Ախալցխա ծանօ-
թից իւրոց, առ ի մուղայէթ լինիլ և յղել յայսկոյս, իսկ ապա գրեալ էր
Մինաս պետն ի Պօլսոյ, թէ այլևս չյղեցաք ի Բաթում, այլ պատ-
շաճ տեսաք ի Տրապզոն ուղարկել, զի անտի ի սուրբ Աթոռդ հասանիլն
զանգակացն դիւրին է։ Ուստի սրբազան Վեհն այժմ գրեաց սմա, թէ այլ
մի հետեւիր յայդ կողմդ, զի բանն փոխեցեալ է, որ զանգակքն Տրապ-
զոնով պարտին գալ։ Եւ վասն նոր համբաւոյն անուանայիշութեան իւ-
րոյ ի մեծն Պօլիս, որպէս և ի թուղթն պարոն Հայրապետին, նոյնպէս և
սմա գրեաց։ Նաև զայս, թէ պարոն Հայրապետն գրեալ էր, թէ յայս
քանի աւուրս առ Գէորգն փոլիցայ եմք առնելոց և զդրամ հասու-
ցանելոց։ Ծանուսցես մեզ։ Եւ ի վերջոյ, վասն վերոյ գրեալ թղթոցս
պատուէր՝ առ ի փութանակի յղել ի Կարին։

428. Ընդ սմին զմի Ա (1) թուղթ ևս առ Ղարսայ առաջնորդ Յովան-
նէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն ի մայիսի ԻԹ
(29) գրեցելոյ և յղեցելոյ ընդ մեր ուղտուցն և ջորոցն։ Յորում նախ

դրէ, թէ ի հին հաշուէն մնացեալ ԺԵ (15) սոմար ցորեանն և ի գիւղօրէից ժողովեալ ԼԲ (32) սոմար և կէս գարին ընդ բեռնակրօքն մերովք հասին առ մեզ։ Շնորհակալ եմք զքէն։ Երկրորդ՝ զի զպակասաւորութիւնըս վանիցն էր գրեալ սա։ Ջյուսադրութիւնս գրեաց։ Երրորդ՝ զնոր համբաւն Պօլսոյ ծանոյց, որ ի վերին գրեանսդ յիշեալ եղեւ։ Չորրորդ՝ վասն

105բ սալմաստեցի քահանայի ումեմն գրեալ էր սա // առ սրբազան վեհն՝ զողորմութիւն առնել նմա։ Այլ զի երէցն այն ի գալն ընդ վերոյ յիշեալ թղթոց բերօղ փայեկին պատահեալ էր տաճկաց և գանեցեալ և վիրաւորեցեալ ևս, որոյ աղագաւ և դեռ չէր տեսեալ զսրբազան վեհն։ Վասն որոյ գրէ սմա, թէ թէպէտ աստ է քահանայն, բայց դեռևս չեմք տեսեալ զնա, զի չէ եկեալ առ մեզ։

Գրեալ ուղարկեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ ի Կարնոյ եկեալ Մօսէս անուն փայեկին (որ ի գալ ի յԱշնակու՝ տաճկացն գանեցեալ էր) յամսոյս Ժ (10)։

1781 թ. հունիս—*Թուղթ մի ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն*

429. Փառակեցի Իսահակ վարդապետն, որոյ բարքն սակաւ մի անյարմար էր բարուց, խնդրեաց քանիցս ի սրբազան վեհէն արձակել զինքն՝ գնալ Հասանղալայու վանսն և կամ յայլ տեղիս, ասելով, թէ զբանս ունիմ յայն կողմունսն։ Եւ զթուղթ ևս խնդրեաց ի սրբազան վեհէն՝ առ ի չկարծել ապստամբ ի բազմաց ըստ գոլոյն ոչ անհաւպ ի յաղմըկասիրութիւնս։ Վասն որոյ և սրբազան վեհն հրամայեաց նմա գնալ ըստ կամաց ինքեան ուր և կամիցի, և ողորմելով նմա զԱ (1) թուղթ գրեաց ի Կարին առ վէքիլն մեր՝ պարոն Հայրապետն, թէ ահա Սահակ վարդապետս սիրելին մեր, հրամանաւ մերով եկն յայդ կողմունսդ վասն հոգալեաց իւրոց, որոյ ի պատահիլն յայդր՝ սիրով ընդունիցիս և մաղալէթ լեալ ուղևորեսցես։

Յղեցաւ թուղթս ընդ նմա յամսոյս ԺԻ (12), կամ քանի աւուրբք յետ և յառաջ։

1781 թ. հունիս—*Ի յԱմասիա, ի Թօխաթ, ի Կարին և ի Մուշ առ սրբոյ Կարապետի վանից նորոդ առաջնորդ Աստուածատուր վարդապետն և ի Ղարս և թէրևս յայլ տեղիս ևս թուղթք*

Ամասիացի ուխտաւորք եկին այժմ ի սուրբ Աթոռս՝ աւելի քան զերեսուն։ Որք ունէին զթուղթս ի յոմանց առ սրբազան վեհն և ի քանեաց ևս աջահամբոյր անուամբ կամ ի լուսադին զդրամս էին բերեալ՝ առ ի տանիլ վասն տուողացն զօրհնութեան գրեանս։ Ուստի և սրբազան վեհն զԳ թէ՛ ի պատասխանի նոցին բերեալ թղթոցն, և թէ՛ սակս դրամոցն, զԳ նորոյ թուղթս գրեաց ի վերոյ գրեալ տեղիսն։ Որք մի առ մի ահա ի ներքոյ նշանակին։

430. Թուղթ առ պարոն Մարտիրոսն ի յԱմասիա, ի պատասխանի (3) նորին թղթոյն այժմ հասելոյ առ սրբազան վեհն։ Որ և յղեալ էր զԳ առաջնորդին յանուն երից վանորէիցն։ Զորս և սրբազան վեհին տուեալ ոսկի յանուն երից վանորէիցն։ Զորս և սրբազան վեհին տուեալ առաջնորդացն նոցա և զօրհնութեան գրեանս առեալ ի նոցունց յղեաց ընդ թղթոյս առ սա, վասն որոյ և յայսմիկ յիշեաց, իսկ և յանուն սրբոյ Աթոռոյս ևս էր զդրամ յղեալ սա (Դ), որոյ աղագաւ ևս զշնորհակալու-

թիւնս և զօրհնութիւնս գրեաց։ Այլև սակս լուսամտից քրիստոսաէջ սրբոյ տաճարիս սա առ կենդանութեամբ հոգելոյս Սիմէօն սրբազան կաթուղիկոսին զգոյնզգոյն ապակիս էր յղեալ՝ առ ի նորոգել զլուսամուտսն, իսկ նա վասն հիւանդութեանն և վասն դիպուածոյն երկրիս չկարաց շինեցու//ցանել։ Զոր լուեալ նմա, գրեալ էր այժմ առ սրբազան վեհն, թէ ընդէ՞ր չէ շինեցուցեալ։ Առ որ գրեաց, թէ լուսահոգին կամէր, բայց վասն տկարութեանն և վրդովմանց երկրիս մերոյ՝ անձեռնհաս լեալ, շշինեցոյց։ Մեք ևս այժմ ի յոլով ցաւս կամք, յետ միջոցի նորոգեցուք զլուսամուտսն և զքեզ միամտեցուսցուք։

Այնուհետև անվանապես հիշատակված են տասներեք ամասիացի նվիրատուներ, որոնց ուղարկվել է շնորհակալության նամակ։

431. Թուղթ միամտական ևս ի վերայ ամասիացի մահտեսի Մարտիրոսին գրեալ, ըստ խնդրոյ նորա, եւ ցնա, վասն զի զոմցի Մկրտիչ վարդապետ ումն ի քաղաքըջն սոցա վախճանեալ էր և զքանի մի գրեանս և զայլ հնոտի քարեղէնսն իւր կտակեալ էր սրբոյ Աթոռոյս, զորս սա, ի գնալն անդ մեր հանդերձ տեղւոյ գլխաւոր իշխանօքն պահպանեալ, յանձնեալ էր նմա։ Վասն որոյ նուիրակ Յակոբ վարդապետին ամբողջ յանձնեալ էր նմա։ Վասն որոյ քարեղէնսն և սրբազան վեհն ի սոյն թղթոջս գրեաց, թէ զգրեանսն և զհին քարեղէնսն յայդր վախճանեալ Մկրտիչ վարդապետին, զորս պահպանեալ էիր և այժմ տուեալ ես Յակոբ վարդապետին մերոյ հասուցանել աստ (և ի նմանէ իբրև զղապղ զգիր էիր առեալ, գրեցուցանելով ի նմա զանուանս յանձնեալ ընչիցն և կնքեցուցանելով նմա իւր կնքովն), առ մեզ հասեալ վարկաք։ Վասն որոյ և զայս թուղթս գրեցաք առ քեզ ի միամտութիւն և յանհոգութիւն, զոր առ քեզ պահեսցես։

432. Թուղթ ևս սրբազան վեհն ի յԱմասիա առ նուիրակ Յակոբ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն, զոր ահա ընդ ամասիացի ուխտաւորացն յղեալ էր, որ գրեցեալն էր ի յապրիլի ԺԵ (15)։ Իսկ արդ, գրեալ էր նա նախապէս զյանձնարարութիւնս վասն ուխտաւորացն, առ որ գրէ, թէ ահա ըստ պատշաճին շահեցաք։ Երկրորդ՝ գրեալ էր, թէ Կարնոյ մեր վէքիլ // Հայրապետն յաւուրս հոգելոյս սրբազա-

106բ ւլ էր, թէ Կարնոյ մեր վէքիլ // Հայրապետն յաւուրս հոգելոյս սրբազան ումեմն ՄՂԷ (297) և կէս դրամ եմ նին գրեալ էր ինձ, թէ ի Կեսարիա ումեմն ՄՂԷ (297) և կէս դրամ եմ տալոց, տաս անդ և ես հասուցից զայն յԱթոռն և անտի զղապղ բերից քեզ և այլն։ Առ որ գրեաց, թէ չեմք տեղեակ դմա, վասն որոյ գրեմք Հայրապետին՝ ծանուցանել մեզ զորպէսն։ Եթէ զայն դրամն ի սուրբ Աթոռս է հասուցեալ, զղապղ մի գրեսցուք առ քեզ ի կողմանէ այնր։

Երրորդ՝ խնդրեալ էր զգիր մի առ Տատուր օղլի մահտեսի Յովաննէսն վասն յանուն սրբոյ Աթոռոյս կտակ խոստանալոյն՝ զՃ (100) ղուռուշ, զոր թէրևս մինչև ցարդ չէր առեալ դեռ։ Վասն որոյ սրբազանն զԱ (1) թուղթ շնորհակալութեան գրեաց առ յիշեալ Տատուր օղլին և յղեաց ի ձեռս սորա՝ տալ նմա. և թէ տակաւին չիցէ առեալ, առնուցու

Չորրորդ՝ յիշեաց զյառաջ քան զայս փօլիցայ առնելն ի վերայ սորա ի սոյն թուոյս յապրիլի ԻԶ (26), որպէս և յիշեցեալ գոյ աստ ի վերն ըստ ասացեալ ամսաթուոյն։

Հինգերորդ՝ զի թուղթն սորա դիւրահեղծ մրով էր գրեցեալ, որոյ աղագաւ և պատահիլով ջրոյ, ամենևին եղծեալ էին մրագիծքն, զորս նշմարաւ ընթերցաք։ Վասն որոյ գրէ, թէ այլևս մի դիւրահեղծ մրով գծեսցես զթուղթս։

433. Թուղթ ևս առ Մշու սուրբ Կարապետի վանիցն նորոգ առաջնորդ կարգեցեալ Աստուածատուր վարդապետն, ի պատասխանի նորին թղթոյն, որով ցուցեալ էր զնշան խնդրելոյ զեպիսկոպոսութեան, ընդ որում յղեալ էր ձեռամբ ամասիացի Աստուածատուրին զԺ (1) աջահամբոյր: Առ որ զշնորհակալութիւն գրեաց սրբազան Վեհն ասելով, թէ այժմ անձեռնհաս եմք երկարապէս գրել զպատասխանի թղթոյդ: Բայց զայս համառօտ գրեցաք ի միամտութիւն քեզ, զի ծանիցես զյղեցելոցդ առ մեզ հասանելն:

Գրեցան թուղթքս յամսոյս ԺԴ (14) և թիւքն թղթոց և ըստ այնմ եղան ԺԴ (14) յունիսի, բայց սակայն ոչ յղեցան, զի ամասիացի ուխտաւորքն ոչ գնացին դեռ, այլ մնացին աստ, քանզի Պօլսոյ և այլ տեղեաց ուխտաւորքն նոր եկին, որոց ազգաւ սրբազան Վեհն կամեցաւ զպատարագ մատուցանել հանդիսիւ ըստ խնդրոյ նոցա: Վասն այն և ամասիացիքն ևս մնացին առ ի տեսութիւն պատարագմատուցութեան սրբազան Վեհին և ապա ընդ նորեկ ուխտաւորացն ի միասին գնալ:

434. Իսկ նորեկ ուխտաւորքն, որք ահա ի վերդ յիշեցան, որոց թիւ սակաւ էր պակաս, քան զՃ (100), էին ի մեծէն Պօլսոյ, ի յԱնդրիանուպօլսոյ, ի յՈւրուշճուղու, նաև ի Թօխաթու և յայլ տեղեաց ևս: Ընդ որս գոյին թուղթք յոմանց առ սրբազան Վեհն և աջահամբոյրք և լուսագին և յանուն սրբոյ Գեղարդեանն և այլ պատճառաւ յղեալ դրամք: Նաև էին թուղթք ի վիճակացն Զմիւռնոյ, ի նախածանօթից ոմանց առ սրբազան Վեհն, այլև ի Կարնոյ և ի Ղարսայ ևս էին գրեալ զթուղթս առ սրբազան Վեհն: Ուստի այժմիկ սրբազան Վեհն զյոլով գրեանս գրեալ ընդ ուխտաւորացն յղեաց: Յորոց զոմանս ի պատասխանի թղթոցն յայլ և այլ տեղեաց, զորս ի վերոյ յիշեցաք, և զոմանս վասն յղեցեալ դրամոցն,
107ա որք || և եկաւհասաւի թուղթք կոչին: Զորս ահա մի առ մի ասասցուք ի ներքոյ:

Այնուհետև բերված են կաթողիկոսի օրհնության և շնորհակալության նամակները՝ հասցեագրված ուխտավորների միջոցով նվերներ ուղարկած ներքոհիշյալ անձանց՝ քյարասատճի Վարդանին (Կ. Պոլիս), մահտեսիներ՝ Հովհաննեսին, Գասպարին և Կարապետին (Ադրիանուպոլիս), վերջիններիս հանձնարարվում է օգնություն ցույց տալ նրանց քաղաքը եկող նվիրակ Գալուստ վարդապետին, մահտեսիներ՝ Ստեփաննոսին, Խաչատուրին, Հարությունին, Երեմիային, Գրիգորին (Ադրիանուպոլիս): Նույնպիսի հանձնարարություն է տրվում սրանց և բարևներ ուղարկվում իզմիրցի պարոն Հակոբ Շահումյանին (էջ 107ա—107բ):

107բ 435. Թուղթ ևս առ Պօլսոյ արտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, ի պատասխանի թղթոյ նորա, զոր յապրիլի ԻԴ (24) ի յԱտաբազարու գրեալ էր ընդ Արեկեցի մահտեսի Յովաննիսին: Իսկ արդ, գրեալ էր նա զելանելն ի գիւղորայսն Ատաբազարու ի գործ նուիրակութեան: Առ այն գրէ սրբազան Վեհն, թէ յառաջ քան զայս գիր եհաս մեզ ի Պօլսոյ ի մեր Մինաս վարդապետէն, որ ծանուցեալ էր մեզ զդոյն: Բայց և յանձնարարութեան թուղթս խնդրէին ի վերայ այն կողմանց առաջնորդացն և իշխանացն՝ Մինաս պետն և սա՝ վասն իւր: Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն, թէ ֆէրմանին մերոյ սպասելով այժմ ևս չգրեցաք վասն քոյդ բանից զթուղթսն, զորս դու և նա խնդրէք, զի թէպէտ զանուն մեր յիշեալ են, ասէ, ի Պօլիս, բայց զֆէրմանն մեր և ի հասարակութենէն Պօլսոյ զգիր ոչ ընկալաք դեռևս: Ուրեմն համբերեա, ասէ, ի սակաւ մի միջոցս ևս, մինչ զհարկաւորսն մեր ընկալցուք և ապա

գրեսցուք զձեր խնդրեալ թուղթսն: Զի այժմ անպատեհ է, ասէ, գրելն զայնս:

Սորա օրինակն ևս յիւր բարեաթղթոյն է:

436. Թուղթ ևս ի յՈւռուճուղ առ գանձապետսն սրբոյ Աթոռոյս պարոն Անուշն և տիրացու Աւէտն գրեաց, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր ընդ իւրեանց բարեկամ Յովակիմին յղեալ էին, որ գրեցեալն է ի մարտի ԺԹ (19): Առ որս նախ գրեաց զօրհնութիւն և զշնորհակալութիւն վասն յատուկ հարազատութեանց նոցին առ սուրբ Աթոռս: Երկրորդ՝ ի յեղիսաբէթ անուն պառաւէ միոյ զդրամս էին ընկալեալ յանուն սրբոյ Աթոռոյս (Ը, Բ) կտակ և քառասնից, զորս և ընդ յիշեալ պարոն Յովակիմին յղեալ էին առ սրբազան Վեհն և զթուղթ խնդրեալ: Վասն որոյ և սրբազան Վեհն զօրհնութեան գիր գրեալ ի վերայ այն պառաւուն յղեաց այժմ առ սոսա՝ տալ նմա: Ուստի աղդեաց սոցա, թէ ահա յղեցի զօրհնութեան թուղթ, տուք ի կինն յայն, զի միամտեսցի: Երրորդ՝ գրեալ էին, թէ ի վերայ քաղաքիս զօրհնութեան թուղթ գրեա սակս գանձանակադրամի (Ե), զոր ժողովեալ ի պատրաստի ունիմք, առ ի յանձնել նուիրակ Մեսրոպ վարդապետին ի գալն նորա աստ: Ուստի և սրբազան Վեհն զշնորհակա-
108ա լական թուղթ մի || գրեալ ի վերայ Ուռուճուղու ժողովրդեանն, գրեաց զթուղթ մի ևս առ նուիրակ Մեսրոպ վարդապետն և յերկուսն ի միում պահարանոջ եդեալ և զմի կողմն պահարանին բաց թողեալ, յղեաց ի ձեռս սոցա և գրեաց, զի թէ Մեսրոպ վարդապետն անդ իցէ գնացեալ, ի միասին բացցեն և զկոնդակն ընթեռնուլ տացեն, իսկ թէ անդ չիցէ Մեսրոպ պետն, ինքեանք բացեալ զպահարանն, կոնդակն ընթեռնուլ տացեն և զՄեսրոպ պետի գիրն առ նա յղեսցեն և զգանձակադրամն ևս յանձնեսցեն նմա՝ հասուցանել ի սուրբ Աթոռս: Իսկ ապա վասն Մեսրոպ պետին յանձնարարութիւն: Եւ վասն գանձապետական գործոյն իւրեանց պատուէր, զի մուղայէթ լիցին:

Օրինակն սորա ի յետկոյս բարեագրին այս է:

437. Թուղթ ևս առ Ուռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն գրեաց, յիշեցուցանելով նմա զի յանցեալ թուոջ սեպտ. ԺԷ (17) զկոնդակ գրելն ի վերայ վիճակին սորա և առ ինքն ևս յատկապէս զթուղթ գրելն և յղելն ընդ մահսարատար Պետրոս պետին ի Պօլիս՝ առ ի յղել անդ ի վիճակին սորա առ ինքն, զորս և յղեալ իսկ էին: Բայց զի ի սմանէ դեռ զպատասխանի չէր ընկալեալ, գրէ թէ որպէ՞ս է, որ յայսչափ միջոցս զգիր ոչ գրես աստ: Ապա ասէ, թէ ի ներկայումս գիր առաք ի յՈւռուճուղու գանձապետ պարոն Անուշէն և Աւէտէն, որք գրեալ էին վասն քո, թէ եկեալ է յիսմայիլ և մինչև զքառասուն աւուրս գալոց է աստ և գանձակադրամ գոյ, զոր տալոց եմք նմա: Որոյ սակս և զօրհնութեան թուղթ էին խնդրեալ, ասէ, ի վերայ քաղաքին: Վասն որոյ և մեք, ասէ, գրեալ զկոնդակ շնորհակալութեան, յղեցաք ընդ այս թղթոյս առ գանձապետսն, զի թէ անդ լինիցիս, ի միասին ընթեռնուլ տացիք յեկեղեցւոջն, ապա թէ ոչ, իւրեանք ընթեռնուլ տացեն և զքոյդ գիրն առ քեզ հասուսցեն: Ուրեմն ի հասանիլն թղթոյս առ քեզ, զորպէսն քոյ և գործոյդ գրեա, ասէ, և այլն: Գրէ ի վերջոյ համառօտ և զձախողակի որպիսութիւնն իւր, որ ի նենգութենէ Պօլսոյ դիտին և ապա զանուանայիշութիւնն իւր յեկեղեցիսն Պօլսոյ և թէ զֆարմանսն հոգալոց են:

Գաղափարն ի վերայ կտոր թղթոյ է:

109բ 438. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ի

պատասխանի թղթոյն, զոր ընդ ուխտաւորացն գրեալ էր և ծանուցեալ էր, թէ զԺԱ (11) թեւանի շաքեար և զԹ (9) թեւանի երկաթ առի և սայլիւ յղեցի ի Ղարս առ պարոն Գէորգն՝ հասուցանել յայդր առ ձեզ: Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ զեռևս մեզ չէ հասեալ, մինչ հասանիցի, գրելոց եմք քեզ: Այլև գրեալ էր սա, թէ յԱթոռոյդ կողմանէ առ իս հասեալ դրամոցն փոլիցայ արարի ի Ղարս՝ ի վերայ ումեմն Յովաննիսի, զի հասուսցէ պարոն Գէորգին (Բ), առ ի յղել ի սուրբ Աթոռդ: Վասն որոյ գրեաց, թէ հասեալ է առ Գէորգն և նա գրեալ էր մեզ, երբ և ընկալնուցումք, գրելոց եմք քեզ ի միամտութիւն: Իսկ և ամասիացի Սատաթեան մահտեսի Աստուածատուրն, որ եկեալ էր յուխտ ի սուրբ Աթոռս, զԾ (50) զուռուշ էր առեալ փոխ և ամասիացի մահտեսի Մարտիրոսն զԲԾԾ (250) զուռուշ էառ փոխ, որք երկոքեանն ևս զսանատս իտուն, զի ի Կարին մեզ հասուսցեն: Ուստի սրբազան Վեհն զնոցին սանատն ընդ թղթոյս յղեաց առ սա, զի զտալացուսն նոցա առնուցու և զսանատան յետս տացէ իւրեանց:

439. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն այժմոյս գրեցելոյ: Յորում նա ևս գրեալ էր, թէ պարոն Հայրապետն շաքեար և երկաթ է յղեալ, բայց տակաւին չէ հասեալ: Առ որ գրեաց, թէ մինչ հասցէ յայդր, յղեսցես առ մեզ: Իսկ վասն ի վերին թղթոջդ յիշեալ Յովաննիսին, որ զՀայրապետի նոր արարեալ փոլիցայն պարտ էր հասուցանել առ ինքն, գրեալ էր սա, թէ բարուք մարդ է, բայց և ինձ ի ներկայս պակասաւոր է, խնդրեմ յերկո: ամիս համբերել, բայց և ինձ հասեալ համարելով, գրել պարոն Հայրապետին, թէ առ նա է հասեալ և ես զկնի Բ (2) ամսոց առեալ ձեզ հասուցից: Վասն որոյ սրբազան Վեհն ըստ սորին կամացն գրեաց այժմ վէքիլ Հայրապետին, որպէս ի նորին թղթոջն, որ ի վերդ, յայտնի է: Եւ գրեաց սմա, թէ վասն խաթեր քոյ թոյլատրեցաք միչեւ ինչ, ապա հասուցանել մեզ զփոլիցայն: Եւ գրեցաք պարոն Հայրապետին, թէ հասեալ է առ Գէորգն, որ հասուցանելոց է մեզ:

Գրեցան և առաքեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ ուխտաւորացն, յամսոյս ԻԱ (21):

110ա

1781 թ. հուլիս—Ի Թիֆլիզ առ Հերակլ արքայն

440. Հերակլ արքայն Վրաց այժմ մի խաթրահարցական և սիրանիշ թուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն ընդ իւր թագուհւոյ էշիկաղասի Ճարթան բէկին քեռորդւոյն: Եւ զի զօրս յղել կամէր ի կողմն Խօյայ ի յօգնութիւն Շուշւոյ Իբրահիմ խանին (որ համակամ ընդ իւր տայր պատերազմ ընդ Խօյայ և յայնկոյս եղեալ այլևս իշխողաց), որք պարտ էին անցանել ի գլխոյն Ղրխպուլախու: Վասն նոցա զքանի բեռն գինի էր խնդրեալ ի սրբազան Վեհէն: Իսկ սրբազան Վեհն ևս կամեցեալ յղել զխնդրեալն նոցա, զմի թուղթ գրեաց այժմ առ նա և խոստացաւ կատարել զխնդրեալն նորին:

Գրեցաւ տաճկերէն թուղթս և յղեցաւ ընդ եկելոյն անտի յամսոյս ԺԲ (12):

1781 թ. հուլիս—Ի Ղարս առ փաշայն

441. Ղարսայ Ապտուլլա փաշայն ի լսելն զվերոյ գրեալ զօրաժողովութեան զհամբաւն, սուրհանդակաւ զթուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն, թէ յայդ կողմունսդ հեծելաշարժութիւն զոյ, գրեա մեզ զատոյգն, զի գիտասցուք: Ուստի և սրբազան Վեհն ի պատասխանի գրոյ նորին զմի թուղթ գրեաց առ նա՝ ծանուցանելով նմա զներկայական լուրս, զորս լսէաք ի կողմանէ հեծելաշարժութեանցն Թիֆլիզու և Շուշու և Խօյու, որ ի վերին գրոջն փոքր մի նշանակեցաւ:

Գրեալ ուղարկեցաւ յամսոյս ԺԵ (15):

1781 թ. հուլիս—Ի Յամիթ, ի Թօխաթ, ի Կարին, ի յԱխալցխայ և ի Ղարս և մի միակ թուղթ ևս ի Կիմիշխանայ

Եւ ընդ վերոյ յիշեալ սուրհանդակին ի միում աւուր եւ և Յամթայ դէտ Կարապետ վարդապետն ի սրբոյ Աթոռոյս դէպ ի վիճակն իւր, որ ի Պօլսոյ դիտէն էր յղեցեալ աստ բազմակնիք թղթովք առ միաբանս սրբոյ Աթոռոյս, որպէս յիշեցեալ է ի վեր անդր:

Արդ, շնորհեաց նմա սրբազան Վեհն զկոնդակ առաջնորդական ի վերայ Տիգրանակերտու և այլ համայն թեմից և վիճակացն սրբոյ Աստուածածնի վանիցն Բարձրահայեաց կոչեցելոյ: Ընդ որս գրեաց և զքանիս թուղթս ի Տիգրանակերտ: Նաև փայեկ մի էր եկեալ ի Կիմիշխանայու՝ բերեալ զթուղթս և անտի և ի Կարնոյ և ի Ղարսայ: Որոց ևս զպատասխանիս գրեալ սրբազան Վեհն, յղեաց ընդ փայեկին: Այլև Ախալցխայու մերազնեայ ուղղափառ ժողովուրդքն, զոր ինչ նուէրս էին հասուցեալ զանձապետին մերոյ՝ պարոն Բալուն, այժմ զայնս ընդ Սիմօնին յղեալ էր և զթուղթ ևս էր գրեալ առ սրբազան Վեհն: Ուստի սրբազան Վեհն անդ ևս զհասարակ և զյատուկ գրեանս գրեաց:

Իսկ համայն թուղթքն գրեցեալք են այսոքիկ, որք երկարօրէն ծանուցանին աստ հետևապէս:

442. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Տիգրանակերտու, նոփ րոգելով զառաջնորդութիւնն սասունցի Կարապետ վարդապետին ի վերայ
110բ յիշեալ սրբոյ Աստուածածնի վանիցն // և նորին համայն թեմիցն վիճակաց, կր րայ: Յորում և պատուէր գրեաց առ քահանայսն և իշխանսն երկրին, թէ զամայութիւնս վանորէից երկրիդ ձերոյ առ ի չգոյէ բնակչաց, լսելով մեր մորմքիմք: Ուստի պատուիրեցաք Կարապետ վարդապետիդ, զի այրի քահանայից վիճակիդ այգորիկ տացէ զվեղար և դիցէ ի վանորայսն, զի շինացուսցեն: Արդեամբ պարտիք, ասէ, և դուք լսել հրամանացս մերոց և օժանդակել Կարապետ վարդապետիդ և զայրի քահանայսն ի վանորայսն յղել, զի կրօնաւորեալ աղօթեսցեն վասն ձեր: Վերջապէս վասն Առաքելոց վանիցն ևս զյատուկ պատուէր գրէ, զի վասն նորա զշինութեան հնար իմն գտցեն և ինքեան ևս գրեսցեն, զի զոր ինչ վայել է յայնժամ առնել ինքեան, արասցէ:

Նորապէս միջարկեալ բանքն առաջնորդականի կոնդակիս տեսցես ի նոր տետր 81 երեսն[101]:

443. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն վասն Առաքելոց վանիցն ի վերայ Կարապետ վարդապետին՝ ըստ խնդրոյ նորին և ետ ցնա այժմ, բայց թիւն ի սեպտեմբերի ԺԲ (12) գրեցաւ, իբրու թէ յետոյ գրեցեալ իմասցի, մինչ Կարապետ վարդապետն ի վիճակն իցէ լեալ: Յորում գրէ, թէ մինչ աստ էիր դու, պատուիրեցաք քեզ վասն Առաքելոց սուրբ վանիցն, զի ընդ քաղաքիդ և վիճակիդ քահանայիցն և իշխանացն խորհեալ գտջիք զհնար իմն վասն նորին շինութեանն, որպէս կացեալ և խորհեալ գտջիք զհնար իմն վասն նորին շինութեանն, որպէս

և ի կոնդակոջդ ևս գրեցաք: Այժմ կրկին գրեմ, զի քահանայից և իշխանաց
զմէնջ ողջոյն տուեալ, կրկին ասասցես զպատուէրս մեր, զի վասն այն
սուրբ Տանն զհոգս իմն արասցեն: Եւ գիտեմք, ասէ, զի պատճառ նո-
րին աւերմանն է այն իսկ, զի չունի վիճակ և թեմ: Վասն որոյ պատուի-
րեմ, զի իշխանքն ի միասին խորհեալ ի մերձակայ վիճակացն զպատ-
շաճաւոր իմն վիճակ գտցեն վասն սուրբ վանիցն այնմիկ համակամ
խորհրդով, զի անդ նստօղքն վայելեսցեն և սուրբ վանքն շէն պահեսցեն:
Եւ յետ այսպէս առնելոյն ձերոյ, ապա զսեպգլուխ մի ևս գտեալ յղես-
ջիք անդ և մեզ գրեսջիք, զի առաջնորդ կարգեսցուք զնա սուրբ վանիցն
այնմիկ և իւր վիճակին, և զկոնդակ յղեսցուք, զի հաստատեալ լաւա-
պէս, առցէ շինութիւն նորին զկայ: Ուրեմն պարտիս, ասէ, այսպէս առ-
նել:

Օրինակն է ի նոր տետր 83 երեսն:

444. Թուղթ ևս առ Յամթայ նուիրակ Գրիգոր վարդապետն գրեցաւ
ի պատասխանի նորին թղթոյն, զոր սակաւ միջոցաւ յառաջ գրեալ էր:
Յորում գրելով, թէ զխոհեմ շարժմունսդ և զարիութիւնդ ի գործդ, լսեալ
ուրախացաք: Եւ պատուիրէ մնալ ի զգաստութեան և ի պարկեշտութեան:
Իսկ թղթոյդ պատասխանւոյ յամեցուցման պատճառն այս էր, ասէ, զի
դու գրեալ էիր, թէ ասափ յայլր եկօղ ուխտաւորացն, որք գալոց են,
զդրամս եմ յղելոց: Մեք ևս յուսացաք առ ի ընկալնուլ և յայնժամ գրել:
Բայց մինչև ցայժմ ո՛չ ուխտաւորք եկին և խոստացեալդ վճարեցաւ: Այլ
արդ, որքան դրամ ունիցիս, ասէ, ջանասցես փոլիցայիւ հասուցանել ի
Կարին՝ առ մեր վէքիլ պարոն Հայրապետն և զորքանութիւնն մեզ գրե-
ցես, որ զզապղ յղեսցուք առ քեզ: Եւ թէ ահա Կարապետ վարդապետն
111ա դարձաւ ի վիճակդ իւր, որ // է սրբոյ Աթոռոյս հարազատ և մեր սիրելի:
Վասն որոյ ընդ դմա խորհելով միշտ զորին օժանդակութեամբն զգոր-
ծոյդ լիարդին և բարեպէս յանկ հանելն ջանասցես:

Միաժամանակ կաթողիկոսը օրհնության նամակներ է գրում Ամիրդոմ Էջմիածնի
գանձապետներ Մովսես և Հակոբ մահտեսիններին:

445. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս սրբազան Վեհն ի Կիմիշ-
խանայ առ սառաֆ խօջայ Յակոբն գրեաց, ի պատասխանի սիրանիշ
թղթոյ նորին ի յունիսի ԺԷ (17) գրեցելոյ: Յորում զեկուցանէ սմա զթղ-
թոյ սորին առ ինքն ժամանելն ի յուլիսի Բ (2) և ծանուցանէ այսմ
զգրելն իւր քան զայս յառաջ զկոնդակ մխիթարութեան և յորդորա-
նաց ի վերայ Կիմիշխանայու՝ վասն վիճոյն նոսա ընդ ախթարմայիցն
և առ սա յայնժամ գիր չգրելն վասն կարծելոյն, թէ անդ չիցէ սա: Եւ
այժմ մինչ ընկալայ զգիրդ, ասէ, յոյժ շնորհակալեցայ զհարազատու-
թենէ քումմէ և օրհնեցի զսիրելիդ: Վասն որոյ և զայս թուղթ գրեցի առ
քեզ և այլն:

Որոյ օրինակն է ի յետկոյս թղթոյն նորա:

446. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Կարնոյ նուիրակ Ներսէս պետն
գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն, զոր այժմ գրեալ էր, ծանուցանե-
լով զաւարտելն զգործն: Առ որ գրեաց սրբազան Վեհն ընդ վէքիլ Հայրա-
պետին գալ, որպէս և նմա գրեաց: Այլև զօրհնութեան գիր մի էր խնդ-
րել սա ի Կարին ի վերայ Աջամ մահտեսի Անդրէասի որդի մահտեսի
Յարութիւնին, որ ըստ կտակի մօրն զի (20) ղուռուշ էր տուեալ սմա

վասն սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ և սրբազան Վեհն զօրհնութեան Ա (1)
թուղթ գրեալ ի վերայ նորա, յղեաց առ սա և պատուիրեաց հասուցա-
նել առ նա ի միամտութիւն նմին:

447. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ Հայրապետն գրեաց, ի պատաս-
խանի ի յունիսի ԻԵ (25) գրեալ թղթոյ նորին:

Այս նամակում, որով կաթողիկոսը տնտեսական բնույթի մի շարք հանձնարարու-
թյուններ է տալիս վեքիլ Հայրապետին, խոսվում է նաև այն մասին, որ վերջինս
էջմիածնի զանգակները բերելու համար մարդ և դրամ (40 ղուռուշ) է ուղարկել Տրա-
պիզոն, ինչպես և հանձնել է Իսաղ փաշայի համար ուղարկված նվերները (էջ 111ա—
112ա):

112ա 448. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ վերոյ գրեալ պարոն Հայ-
րապետն, զորոյ օրինակն (որպէս ի վերին թղթոջդ խոստացաք), գրեմք
ահա: Յորմէ ծանիր, պարոն Հայրապետ, զի վասն առնլեացն սրբոյ Ա-
թոռոյս (Ա, Ը) յառաջ քան զայս դու և խօջայ Յովաննէսն յատուկ յատուկ
զթուղթս էիք գրեալ մեզ, որոց զպատասխանին մինչև ցայժմ յամեցուցաք
զալստեան պարոն Եսայուն սպասելով: Ապա ինքն պարոն Եսային ի
Թիֆլիզու եկն ի սուրբ Աթոռս և ի ներկայութեան Եսայի վարդապետին
(որ տեղեակ իսկ էր), զնա խօսեցուցաք և զամենայն եղելութիւնսն ի-
մացաք ի նմանէ, որ նա ևս զիրաւունս ունէր: Զի ասաց մեզ, թէ ես ի
Բայազիտ ի ներկայութեան իշխանաց և վաճառականացն Բայազիտու
իմ ապրանքն վաճառեցի մահտեսի Գաբրիէլին և սանատ առի ի նմանէ
յանուն սրբոյ Աթոռոյդ, և մինչ գնացի ի Կարին, մկաւ մահտեսի Գաբ-
րիէլն ընդ իս զդաւի բանալ, թէ թանկ ես տուեալ ապրանքդ: Եւ անդ ե-
ղեալ իշխանքն և վաճառականքն ի նորին կողմն անցեալ, ստիպեցին
զմեզ և որպէս թէ քեարասի տեսեալ ի յառաջին սանատի մայլաղէն
ԵՃ (500) ղուռուշ ի վայր ձգեցին: Եւ ինքն՝ խօջայ Յովաննէսն ի մէջ
իշխանաց կամաւ և յօժարութեամբ մնացելոյն իւր անուամբն սանատ
եառ, զի հասուսցէ զդրամն սրբոյ Աթոռոյդ: Եւ ես յայնժամ զերծայ ի
տուր և առութեանցս:

Արդ, ըստ խօսակցութեանց սորին ոչ համարիմ իրաւունս առ ի
պահանջել և առնուլ ի սմանէ զդրամն, և խօջայ Յովաննէսն ևս կամե-
ցեալ է զբարիս առնել սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ յանձն է առեալ և սա-
նատ տուեալ, և ըստ գրեցելոյն իւրոյ՝ կերած և խմած չունի:

Եւ վասն մահտեսի Գաբրիէլին գրէք, թէ զատ եղև սմա, որ ամե-
նևին դատարկ և պարտատէր է: Սոքօք երևի թէ վերջապէս վնասն մեզ
և սրբոյ Աթոռոյս է գիպելոց: Արդ, ի վնասուց զփոքրն ընտրելով, զայս
գրեմ քեզ և խօջայ Յովաննէսին և մահտեսի Խաչատուրին ողջոյն և օրհ-
նութիւն տամ և հարկադրեմ իսկ ի հասանել թղթոյս առ ձեզ, պարտիս
ընդ նոսա ի միասին ի սէր սրբոյ Աթոռոյս զայն 140 հօխայ Գիւճանի
խուրտայն, զոր առեալ ի պահեստի ունիք, վաճառել տեղդ և զորքա-
նութիւն գնոյն մեզ գրել, զի գիտասցուք, եթէ լման մեր առնլին զուրս
112բ կուգայ, եթէ որքա՞ն կու պակասի: Յետոյ // տեսցուք, թէ զպակասն ո՞վ է
վճարելոց սրբոյ Աթոռոյս: Ահա կրկին գրեմ և զձեզ իբրու վէքիլ հա-
ցուցանեմ ի մերս կողմանէ: Պարտիք թարց զանցառութեան զայդ խուր-
տայդ վաճառել արդարապէս և զո[ր]քանութիւն գնոյն գրել մեզ հալպաթ,
որք ընկալջիք զվարձս ի յԱթոռոյս:

449. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ Ախլցխայու
միաբնադաւան ժողովրդեանն գրեաց[102], որք տուեալ էին այժմ սրբոյ Ա-

թոռոյս ի ձեռն սորին գանձապետ Բալուն զԵ (5) թիլանի մոմ, Ա (1) թիլանի և կէս մեղր, Բ (2) թիլանի ձիթապտուղ և Ա (1) հակն հնոտի շոր՝ վասն թղթաշինութեան[103]։ Զորս և նա այժմիկ յղեալ էր ընդ տէր Դաւիթ քահանային իւրեանց և պարոն Սիմոնին։ Որոց աղագաւ զշնորհակալութիւն գրէ առ նոսա։ Եւ զպարոն Բալին վերահաստատէ ի գանձապետական և երիցփոխական գործն իւր, և յատկապէս պատուիրէ վասն հնոտի շորոյ տալ յօժարութեամբ, որ առ ինքեանս չէ ինչ, այլ մեզ վասն թղթաշինութեան յոյժ ձեռնտու է։

Նախագաղափարն սորա է ի նոր տետր 84 երեսն։

450. Թուղթ ևս առ երիցփոխան պարոն Բալին, ի պատասխանի թղթոյն, շնորհակալութիւն վասն յղեալ իրացն (որք ի վերին թղթոջդ յիշեցան) և վերահաստատութիւն երիցփոխութեանն և սրբոյ Աթոռոյս գործակալութեանն։

Օրինակն է ի նոր տետր 193 երեսն։

451. Թուղթ ևս ի յԱխալցխայ առ նոյն պարոն Բալին և Նիկողայոսն և Աւթանտիլն գրեաց, զի զտէր Սահակ քահանայն իւրեանց, որ առ հոգելոյս տէր Սիմէօն հայրապետաւն նորա կոնդակաւն գնացեալ էր ի ժողով՝ վասն նորակերտ եկեղեցւոյն իւրեանց, ի դառնալն նորա յղեսցեն ի սուրբ Աթոռս առ ի տալ զհաշիւն։ Իսկ և ողջոյն գրեաց նոյն եկեղեցւոյ քահանայիցն և պատուիրեաց, զի զտէր Դաւիթ քահանայն, որ ի վերոյ ցուցեալ հասարակ թղթոջն յիշեցաւ, ընկալցին սիրով ի յընկերակցութիւն ինքեանց, որպէս և է իսկ ընկեր և ի մէջ վիճակի։ Որում զոր ինչ բաժին հասանիցի, ասէ, ի քահանայական արդեանց, առանց վիճմանց տացեն և այլն։

Օրինակն է ի նոր տետր 194 երեսն։

452. Թուղթ ևս ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն գրեաց, ի պատասխանի նորին գրեալ անթիւ թղթոյն։ Եւ արդ, գրեալ էր սա զսրբազան վեհի ի յապրիլի ԻԶ (26) առ Յակոբ պետն գրեալ ղապղի ի ձեռն իւր հասանիլն։ Գրեաց առ այն, թէ միամտեցաք։ Այլև ի Կարին ի վերայ երկուց մարդկանց զդրամս էր փոլիցայ արարեալ սա (Բ), զորս պարոն Հայրապետն առեալ մեզ հասուցէ և սա անդ ի Թօխաթ ի Յակոբ պետէն առնուցու։ Զոր և ծանուցեալ էր սրբազան վեհին։ Բայց զի յայնմ կողմանէ պարոն Հայրապետն գրեալ էր, թէ մինն տայ և միւսն ոչ (որպէս և ի վերդ ի թղթոջ Հայրապետին ցուցաւ)։ Գրէ սրբազան վեհն, թէ Հայրապետն մեզ այսպէս էր գրեալ փոլիցայիդ կողմանէ։ Ի հարկէ քեզ

113ա *ևս գրեալ է։ Այլ դու, ասէ, // զՅակոբ վարդապետի փոլիցայն ջանասցես առնուլ։*

Ծանուցանէ և զՅամթայ դէտ Կարապետ վարդապետի դառնալն ի սրբոյ Աթոռոյս առաջնորդական կոնդակաւ ի վիճակն։ Իսկ ի վախճանի թղթոյն պատուիրէ, թէ մահտեսի Պետրոսի յիշատակաշինութեանն մոմեղէնն մանր ղայէթ լիցիս առ ի բարւոքապէս բերել ի գլուխ։ Ընդ որս և զայլ մանր բանս։

453. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ծանուցանելով զդիմելն ատտի Յամթայ առաջնորդ Կարապետ վարդապետին ի վիճակն իւր։ Որոյ սակս և զյանձնարարութիւնս գրեաց՝ առ ի սիրով շահել զնա։ Իսկ ապա թուղթ մի էհաս ի սմանէ ի յունիսի Լ (30) գրեալ, յորում սա ևս ծանուցեալ էր, թէ զխալիւ փաշայի ընծայսն յղեցի առ

պարոն Հայրապետն (որ յիշեցաւ ի վերն ի թուղթն Հայրապետին)։ Առ որ զշնորհակալութիւնս գրեաց սրբազան վեհն։ Նաև, զոր գրեալ էր վէքիլ Հայրապետն, թէ տեղս մահտեսի Սահակին փոլիցայ եառ (Ե), զոր պարոն Գէորգն ի Ղարսայ յայդր հասուցէ (որ և յիշեցաւ ի վերոյ գրեալ թղթոջ նորա), զեկուցանէ սմա ասելով, թէ ի հարկէ քեզ ևս գրեալ է, ուրեմն թէ զայն և թէ զյառաջ քան զայս եղեալ փոլիցայսն մեզ հասուցանել ջանասցես։

Այլև թուղթ մի ևս էհաս ի սմանէ առ սրբազան վեհն ի յուլիսի Զ (6) գրեալ։ Յորում ծանուցեալ էր զՊօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետի աքսորիլն ի պատրիարքութենէն հրամանաւ թագաւորին, ըստ կամացն վեհագունեղ իշխողին ամենայնի, որ ի ձեռին ունի զսիրտս ամենայն թագաւորաց։ Առ որ գրեաց սրբազան վեհն սմա, թէ Աստուած զվերջն բարեաւ եղերեսցէ։ Իսկ և զի այժմիկ զաղայս յղեաց անդ զհետ եղեալ Կարապետ պետին, վասն որոյ գրէ սմա, թէ ի դառնալն նոցա զդրամ յղեսցես (Ա, Ե), եթէ պատրաստի գտանի։

Գրեալ և առաքեալ եղեն վերոյ գրեալ թուղթքս յամսոյս ԺԲ (12) և թէ իւրաքանչիւրքն ընդ որո՞ց յղեցան, տե՛ս վերնագիրն կարգի թղթոցդ։

1781 թ. հուլիս—*Եկաւհասաւի թուղթք ընդ յամթեցի ուխտաւորաց գրեալք*

Իսկ յետ միոյ աւուր քանի մի յամթեցի ուխտաւորք եկին ի սուրբ Աթոռս, որք կատարեալ զուխտս իւրեանց, զայս ներքոյ գրելիք գրեանքըս ևս առին։

Թվարկված են մի քանի նվիրատուներ, որոնց ուղարկվել են շնորհակալության նամակներ։

Գրեալ յղեցան թուղթքս ընդ յիշեցեալ ուխտաւորացն յամսոյս ԺԴ (14)։

113բ

1781 թ. հուլիս—*Թուղթք ի Թիֆլիզ*

Յայսմ միջոցի Թիֆլիզու տէրունի ժողովուրդքն սրբոյ Աթոռոյս հաւանութ բազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան վեհն և միաբան հաւանութեամբ խնդրեալ էին զընծայի Կարապետ վարդապետն (որ վէքիլ էր անդ ի տեղի առաջնորդի, որ և ի վերոյսն ի բազում տեղիս յիշատակեալ գոյ), կարգել ինքեանց առաջնորդ։ Ուստի և սրբազան վեհն, ըստ խնդրոյ նոցա, զառաջնորդական կոնդակ գրեալ ի վերայ տէրունի եկեղեցեացն սրբոյ Աթոռոյս, կացոյց զԿարապետ վարդապետն առաջնորդ նոցա։

Նաև Գ (3) ոմանք յայլոց ճորտութենէ ազատեցեալք, հանդերձ տամբքն իւրեանց, զդաշնագիրս էին յղեալ և զճորտական թուղթս էին խնդրեալ ի սրբազան վեհէն՝ առ ի լինիլ ծառայս սրբոյ Աթոռոյս յորդւոց յորդիս։ Առ որս գրեաց սրբազան վեհն զթուղթս ճորտութեան։

Եւ քանզի ինքն՝ Կարապետ վարդապետն և տէր Ղազար վէքիլն մեր, ևս էին գրեալ զթուղթս, վասն որոյ նոցին թղթոցն ևս զպատասխանիս գրեաց։ Ընդ որս և շնորհաւորական թուղթ մի ևս առ ինկլիզ Յակոբն, որ արհեստիւն բժիշկ էր և տօխտոր կոչիւր, յաղագս դառնալոյն ի ճըշմարիտ դաւանութիւնս Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։

Եւ գրեցելոց թղթոց զիտմունքն են այսոքիկ, որք ի ներքոյ համառօտապէս գրին։

454. Ա (1) կոնդակ առաջնորդութեան հաստատակ ի վերայ Թիֆլիզու վասն Կարապետ վարդապետին, որպէս ի վերդ ցուցաւ։

455. Թուղթ ճորտութեան առ սամղէրէթցի Աթօյի որդի Բէրօն և որդիսն նորա՝ Յարութիւնն, և Գալուստն, և Գրիգորն, ըստ դաշնագրին նոցա, զոր գիտութեամբ և կնքովք գործակալացն սրբոյ Աթոռոյս, որք անդ, գրեալ էին և յղեալ առ սրբազան Վեհն, և զճորտութեան թուղթ խնդրեալ աղաչանօք։

456. Թուղթ ճորտութեան ևս առ թէլէթցի Սաֆարենց Պապի որդի Իւանէն, որ ևս ըստ վերոյ գրեցելոյդ էր արարեալ, զդաշնագիր յղելով աստ։

457. Թուղթ ճորտութեան ևս առ շուլէնեցի Քօթօյեան Մամաջանի թոռն և Աւետիքի որդի Գէլօն, որ ևս ըստ վերոյ յիշելոցդ զպայմանագիր էր յղեալ առ սրբազան Վեհն։

458. Թուղթ օրհնութեան և շնորհաւորութեան և շնորհակալութեան գրեաց սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ տօքտօր Յակոբն, որ էր բժիշկ առ ինկլիզ, նոր գնացեալ անդ (որ և յառաջագոյն աստ ևս էր հանդիպեալ), որ և այժմ դարձեալ էր ի դաւանութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ և ի քահանայից ազգիս մերոյ առեալ էր զքրքութիւն[104], որով և ի մահամերձ հիւանդութենէ, որ դիպեալ էր անձինն, առողջացեալ էր և հռչակէր զհրաշալի և զուղիղ զօրն սրբոյ եկեղեցւոյս մերոյ դաւանութեան, և այժմ ևս զսիրոյ գիր էր գրեալ առ սրբազան Վեհն, ուստի և նա զայս թուղթ գրեաց։ Իսկ գրեալ էր ևս սա, թէ փափագ ունիմ գալ և յայդր բնակիլ, եթէ կամիցիս, եկից։ Այլ սրբազան Վեհն զահաւասիկ գալն և ի սուրբ
114ա Աթոռոջս // բնակիլն նորա արգելեաց այժմ վասն զօրեղ պատճառաց։ Եւ գրեաց, թէ յետ ժամանակի մինչ պիտոյասցիս, յարքայէն խնդրելոց և բերելոց եմք զքեզ ժամանակ ինչ և այլն։

Զգաղափարն թղթոյս տես ի նոր տետր ... երեսն։

459. Թուղթ ևս առ նորոգ առաջնորդ կարգեցեալ Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի յունիսի Բ (2) և Գ (3) գրեալ թղթոցն։ Ծանուցանելով նմա, թէ ի կողմանէ առ Ափխազաց Սօղոմոն արքայն գրեալ թղթոյն մերոյ, որ գրեալ էիր, թէ գիր յղեցաք ի Գօրի առ գործակալ տէր Սահակն, որ մեզ անտի ստոյգ զորպիսութիւնն գրեսցէ, զի ըստ այնմ զթուղթն կամ յղեսցուք, կամ ոչ, այժմ յապաղեցաք։ Վերջապէս որպէ՞ս և առնիցէք, գրեսջիք մեզ։ Եւ թէ վասն տօքտօր Յակոբին գրեալսն ձեր իմացաք, ինքն ևս էր զթուղթ գրեալ մեզ և զիղձն իւր ծանուցեալ՝ հանդերձ դարձմամբն ի սուրբ հաւատս մեր։ Բայց որ ահա զշնորհաւորութեան թուղթ գրեցաք, զոր տացիք ինքեան։ Բայց իւր վասն զգուշաւոր պատճառաց զգալն իւր աստ չկամեցաք՝ ի կամս իւր թողլով, զի մի դժուարեսցի արքայն։

Եւ ևս, թէ վասն Սահակի ումեմն քաղաքացւոյ գրեալ էիք, թէ եթէ ի Մատրաս մեր նուիրակն դրամ ունիցի, Մ (200) թումանի փոխեցայց։ Այլ գիր տացուք. նմա։ Իմացարուք առ այդ, զի անդ մեզ դրամ ոչ գոյ։ Այլ ևս թէ զքաղաքացւոցդ հաւանական մահսարն ընկալաք, որով զքեզ առաջնորդ էին խնդրեալ։ Վասն որոյ զկոնդակ գրեալ ահա յաղագս քո առաջնորդ կարգեցաք զքեզ և այլն։ Նաև թէ նունուսեցի մահտեսի

Սարգսեան մահտեսի Յակոբջանն և պարոն Կարապետն, ընդ որս և Եռայէն և այլք, եկին ի սուրբ Աթոռս և քանի մի օր աստ շահեցեալ, ելին գնալ ի սուրբ Կարապետ՝ յուխտ։ Եւ թէպէտ վասն Յակոբջանին գրեալ էիր արգելել ըստ աղաչանաց խրայնոցն, բայց մեք չխափանեցաք զիղձս նորա, այլ զխրատ տուեալ թուլատրեցաք ի գնալ, որք մինչ դարձցեն. Եւ վասն Ջկրաշինու եկեղեցւոյն պատուէր տալոց եմք առ ի շինել։ Եւ վասն պարոն Եսայու տէրունի ծախս սրբոյ Աթոռոյս առնելոյն էիր գրեալ, առ այդ ևս լուր, զի Եսային յորժամ գայցէ առ մեզ, վասն այդր ընդ նմա խօսելոց եմք և ըստ վայելմանն զկոնդակ շնորհելոց նմա, եթէ ըղձասցի։

Եւ թէ զսրբոյ Աթոռոյս ճորտից և վախուստ տանց և դուքանաց դաւթարն, զոր յղեալ էիք, ընկալաք և զայն Քօշօրա Ճուհլակի նստելոյ դուքանն, զոր մոռացմամբ չէիք գրեալ, զայն ևս գրեցաք ի դաւթարոջն։ Եւս թէ նորապէս Գ (3) ճորտից աղագաւ զԳ (3) կոնդակ էիք խնդրեալ, յղեցաք ընդ թղթոյս։ Իսկ զճորտից ձեռագիրսն, զորս յղեալ էիք, ընկալաք և պահեցաք թէպէտ, բայց զի առանց ձեռագիր և կնիք դնելոյ էին, կամեցաք յետս յղել, բայց այլ ոչ յղեցաք։ Բայց ի զգուշութիւն գրեմ ձեզ. այսուհետև մինչ զձեռագիր առնուցուք ի նոր ճորտացելոց, ձեռագիրն թէ հայերէն իցէ և թէ վրացերէն, ի նմա դրոշմել տացիք և դուք՝ գործակալքդ մեր և այլք ևս կնքեսջիք և ապա յղեսջիք առ մեզ, // որ հաստա-
114բ տուն լինիցի։ Եւ վերջապէս, թէ ի Սահակաշինու բժիշկ Յովաննիսի ընտանեացն առեցեալ գրեանսն ամբողջ պահարանեալ յղեսջիք առ մեզ կնքով։

460. Փուսուլայ ևս գրեաց առ Կարապետ վարդապետն, ի պատասխանի նորա փուսուլային, թէ նախ վասն Կարմիր վանից առաջնորդ Յակոբ պետին էիր զբանս գրեալ, լուր առ այն, զի նորապէս զԿարմիր վանից առաջնորդութիւնն ֆէրմանաւ տուեալ են Յակոբ պետին և զՇասանղալայու վանիցն՝ Աւետիք պետին։ Բայց մեք գրելոց եմք զբանս խրատականս առ Յակոբ պետն և զնա զգուշացուցանելոց եմք առ ի բաց կալ ի թիւր արարմանցն։

Երկրորդ՝ վասն Հալուարարաբնակ սեաւգլխին և արտուղի շարժմանցն նորա էիր գրեալ. և վասն մէլիք Աւետիքին ևս՝ ի թղթոջ Ղունկիանոս վարդապետին մերոյ և մեզ ևս։ Ուստի կամէաք զթուղթ գրել այժմ առ Աւէտիքն՝ ի զգուշութիւն։ Բայց մինչ լուաք զմեռանիլն մէլիք Մրկըրտումին, զթուղթն մեր յամեցուցաք։ Քանզի կարծեցաք, որ զմէլիքութիւնն, ի հարկէ, նմա են տալոց և մեք ևս առ նա զշնորհաւորութեան գիր եմք գրելոց։ Եւ վասն Ենօքին ևս զբանս եմք գրելոց, որպէս և ինքն Ենօքն ծանուցանելոց է քեզ։ Յայնժամ և վասն այդց զպատուէրս եմք գրելոց առ Աւետիքն։ Այլ դու այժմ սիրով կաց ընդ նմա։ Նաև թէ խնդրեալ էիր, թէ աստ քան զմի ամ աւելի չպահես զիս։ Առ այդ առ լուր, զի մեք զքեզ Բ (2) մտօք յղեցաք յայդր. նախ յորժամ ի կողմանէ մերմէ բան ինչ հարկաւորեսցի, գրեսցուք քեզ հոգ տանիլ, որ ոչ եղեւ։ Երկրորդ, զի դու շահիցիս և յայդր մնացեալ ժամանակ ինչ միմեանց մեզ զմիտսդ բացցես։ Ապա տեղեկասցիք և եթէ հաւանիցիք միմեանց, դու քանիցս գրեցեր մեզ հանել զՅովաննէս պետն այսր և մեք զքեզ վէքիլ կարգեալ յայդր, բերաք զնա աստ։ Իսկ արդ, դու մինչև ցարդ զոհաճութենէդ ոչ ինչ ազդեալ մեզ, այժմ մինչ ժողովուրդքն տեղւոյդ

մահսար են գրեալ վասն քոյ և մեք զառաջնորդական կոնդակդ գրեալ յղեմք։

Գրես թէ երկար չթողուս զիս աստ և այլն։ Ա՜յ օրհնեալ, Ա (1) տարի ևս զոհեա համբերեա և զգործդ ի գլուխ տար, ապա ելանել խնդրեա։ Ընդէ՞ր է քո այդպէս յողդողդամիտ լինիլն։ Արդ, ժամանակ ինչ համբերաբար կառավարեա զգործդ, մինչև տեսցուք թէ Աստուած զինչ՞ առաջադրեսցէ։ Ապա զայս, թէ վասն առնլեացդ Բայազտու իմա, զի ԽԲ (42) զատաք եղեն տալոյ մեզ, ԻԲ (22) հատն հասուցին, իսկ Ի (20) հատն հասուցանելոց են, որք ամէն են Ձ (80) զուռուշի, Լ (30) զուռուշն ետուք աստ գրագրաց և փոքրաւորաց՝ յանուն քոյ վասն կոնդակիդ և նոր մանսուպիդ։ Մնայ Ծ (50)-ն, զոր ի վեր առ դու յայդր յարդեանցս սրբոյ Աթոռոյս։

461. Թուղթ ևս սրբազան Վեհն առ սրբոյ Աթոռոյս գործակալ տէր Ղազարն գրեաց, ի պատասխանի նորին ի յունիսի Բ (2) և Ժ (10) գրեալ թղթոցն, ըստ ոմանց հասարակ գիտմանց վերոյ գրեալ թղթոյդ, որ
115ա առ Կարապետ վարդապետն։ Եւ զի // զգանգատանս ինչ էր գրեալ սա զնախորդ առաջնորդէն իւրեանց Յովհաննէս պետէն, գրէ նմա Վեհն, թէ ահա զերծայք ի միմեանց, մանաւանդ սա զքէն բան ինչ ոչ ասէ, դու է՞ր այդքան հետևիս և այլն։

Գրեցան վերոյ յիշեալ թուղթքս ի սոյնոյ ամսեանս ԻԱ (21) և ընդ ի ստորև գրելի թղթոցն յղեցան ի միասին, որպէս և ի ներքոյ նոցին ևս նշանակեալ ցուցանի։

Իսկ մինչ զվերոյ գրեալ գրեանսդ պատրաստել կամէր յղել սրբազան Վեհն, եկին ժամանեցին ի սուրբ Աթոռս Բ (2) կարգաւորք վրաց առաքեալք ի էփթվիմէ վարդապետէն՝ առաջնորդէն անապատին վրաց, որ մօտ ի Կախէթ յանուն սրբոյն Յովհաննու Մկրտչին կառուցեալ է։ Որ զի յանցեալ ամին ընդ Հերակլ արքային գալով աստ ծանօթացեալ էր սրբազան Վեհիս մերոյ յեպիսկոպոսութեանն սորա, վասն որոյ յղեալ էր զվերոյ յիշեալ վարդապետսն, որոց մեծի անունն Յովհաննէս, ի տես սրբազան Վեհիս մերոյ, հանդերձ ընծայիւք։ Մանաւանդ զի սրբազան Վեհս մեր ի նոր հայրապետանալն մինչ առ նա զգիր գրեաց, զնո- ևս զպատասխանին չէր գրեալ, վասն որոյ այժմ զշնորհաւորական թուղթ ևս էր գրեալ սրբազան Վեհս մեր։ Որոց սակս և Գեորգին Միրզայ արքայորդին ևս էր զսիրոյ գիր մի գրեալ և ընդ ումեմն Աւթանտիլ ծառայի իւրոյ յղեալ ընդ յիշեալ կարգաւորացն առ սրբազան Վեհս մեր։ Ուստի և սա զեկօղսն խիլայեալ, զպատասխանիս բերեալ թղթոցն նոցա գրեաց հանդերձ ընծայիւք առ էփթվիմէ վարդապետն և մխիթարութեան թղթով առ Մաքսիմէ կաթուղիկոսն Ափխազաց, որ նարդենիս գնացեալ էր ի յայն անապատն կամ աքսորմամբ, կամ կամաւ իւրով և ի ճգնութիւնս էր անդ։

Իսկ թուղթքն գրեցեալք են այսք, որք ահա գրին։

462. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ առաջնորդն սրբոյ Կարապետի անուամբ կառուցեալ անապատին Վրաց, էփթվիմէ վարդապետն, ի պատասխանի նորին սիրոյ թղթոյն և ի շնորհակալութիւն վասն ընծայիցն, զորս ընդ իւր միաբան Յովհաննէս վարդապետին յղեալ էր, յորում և յորդորմունք ի սէր[105]։

Զօրինակն ի նոր տետր ... երեսն գիտ։

463. Թուղթ սիրոյ և մխիթարութեան ևս առ Մաքսիմէ կաթուղիկոսն Ափխազաց գրեաց, որ տարագրեալ այժմ ի վիճակէն իւրմէ և յԱթոռոյնն գնացեալ ի յիշեալ անապատն։

Զայն թղթոյս գաղափարն ևս ի 195 երեսն տես։

464. Թուղթ սիրոյ և շնորհակալութեան ևս առ Գեորկին Միրզայ արքայորդին գրեաց տաճկերէն, ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ գրեալ էր։

Գրեցան սոյն թուղթքս ևս ի յուլիսի ամսեանս ԻԱ (21) և առաքեցան ընդ վերոյ յիշեալ վրաց բէրիցն և Գեորկին Միրզայ արքայորդւոյն ծառայ Աւթանտիլին, որ էր ի մերս ազգէ, յամսոյս ԻԲ (22)։

115բ

1781 թ. հուլիս—Թուղթ ի Ղազախ և յայն կողմունսն

Բայց ընդ վերոյ գրեալ թղթոցդ յղեցան ևս թուղթք ի Ղազախ և յայն կողմունսն առ ոմանս, ըստ խնդրոյ սրբոյ Աթոռոյս ժողովարար Դաւիթ պետին, որք ի ներքոյ մի առ մի նշանին։

465. Թուղթ շնորհակալութեան սրբազան Վեհն ի վերայ մէլիք Քեազումին գրեաց վասն մարդասիրութեանցն, զորս ցուցեալ էր նա ժողովարար Դաւիթ պետին և վասն հարազատութեանցն, զորս բանիւ երեւեցուցանէր առ սուրբ Աթոռս և առ սրբազան Վեհն, յորում և յանձնարարութիւն վասն յիշեալ Դաւիթ պետին և գործոյն։

466. Թուղթ ևս առ Մէլիք բէկն գրեաց, ըստ նոյն մտաց, որ ի վերին թղթովդ։

467. Թուղթ ևս առ Հասանաջրի մէլիք պարոն Մխիթարն, ըստ վերնոցդ։

468. Թուղթ ևս առ Մատանի վերակացու պարոն Բէժանն, ևս նոյնպէս։

Յղեցան ընդ փայեկին, որ ի Դաւիթ պետէն էր առաքեցեալ, յամսոյս ԻԱ (21)։

1781 թ. հուլիս—Ի մեծն Պօլիս ի վերայ Մինաս պետին

469. Զկնի երկուց աւուրց վերոյ գրեալ թղթոցդ յղելոյ, ետ սրբազան Վեհն ումեմն այրւոյ ապաշխարողի Թիֆլիզեցւոյ, որ ի շուկայս մեր բնակէր և այժմ գնայր ի սրբազան Սաղիմ, Ա (1) փօլիցայագիր ի վերայ Պօլսոյ նուիրակին սրբոյ Աթոռոյս՝ Մինաս պետին, զի առնուցու ի նմանէ զդրամ (Թ), զոր ինքն հասոյց սատ սրբոյ Աթոռոյս։ Բայց ի սոյն փօլիցայագրոջս պատուիրեաց, թէ եթէ ապաշխարողն ինքնին եկեսցէ առ քեզ սոյն թղթովս, զդրամն տացես, բայց թէ ոչ, կամ ինքն մեռանիցի, կամ ի կենդանութեանն իւր այլք բերիցեն առ քեզ զգիրս զայս, մի տացես, այլ բաթիլ լիցի թուղթս։

Շնորհեցաւ նմա թուղթս յամսոյս ԻԳ (23)։

1781 թ. հուլիս—Թուղթք ի Թիֆլիզ և ի Սանահին

Միջոցաւ միով յառաջ Աբրահամ վարդապետն՝ երբեմն սրբոյն Սաղիմայ միաբան և յայս կողմունս նուիրակ (առ որ քանիցս ևս թուղթ է գրեցեալ, որպէս յիշեալ է ի վերոյսն հետի), թղթով Հերակլ արքային և մահսարաւ Սանահինու սուրբ Աստուածածնի վանից թեմի ժողովրդեանն եկեալ էր աստ՝ առ ի առաջնորդ կացուցանիլ ի սրբազան Վեհէն նոյնոյ վանիցն և նորին վիճակին, նաև ձեռնադրիլ եպիսկոպոս և վերադառնալ առաջնորդական կոնդակաւ: Իսկ սրբազան Վեհն զի դեռևս չէր ընկալեալ զհամահաճական. մահսարն իւր և զայլ հարկաւորսն ի մեծէն Պօլսոյ և ոչ զոք ձեռնադրէր եպիսկոպոս, պահեաց զնա աստ, որպէս զի յետ ընդունելոյն զյիշատակեալ պիտանիսն իւր, արասցէ զնա եպիսկոպոս և այնպէս յղեսցէ: Բայց ի բազմանալ աւուրցն և ի յետաձգիլ // գալստեան հարկաւոր թղթոց սրբազան Վեհին, միայն առաջնորդութեամբ և առաջնորդական կոնդակաւ վերադարձոյց զնա, որ երթեալ շինութիւն արասցէ վանիցն և ապա ի ձեռնհաս ամանակի եկեալ՝ ձեռնադրեսցի եպիսկոպոս: Ընդ որում և գրեաց զթուղթս առ Հերակլ արքայն, ի պատասխանի թղթոյ նորին և առ այլս ոմանս պատշաճապէս, որք ահա ի ներքոյ տեսանին:

116ա (margin note beside the line beginning "ձգիլ // գալստեան")

470. Կոնդակ առաջնորդական շնորհեաց սրբազան Վեհն Աբրահամ վարդապետին ի վերայ բոլոր թեմից և վիճակացն սեփականաց Սանահնոյ սրբոյ Աստուածածնի անուամբ կառուցեալ վանիցն, այսինքն Ղայղուլու և բոլոր Տաշիրու, Բամբկձորու, Լոռու և Սոմխէթու և բոլոր գիւղորէից նոցին ի պատասխանի նոյն թեմից ժողովրդեան համահաճական մահսարին, զոր գրեալ էին յաղագս Աբրահամ պետին: Եւ զի խնդրեալ էին եպիսկոպոս ևս ձեռնադրել զԱբրահամ պետն, գրէ, թէ մեք ևս այնու մտօք զդա մինչև ցարդ աստ պահեցաք, բայց այժմոյս չեղև մեզ ձեռնհասութիւն, վասն որոյ դարձուցաք զդա առ ի շինութիւն առնել վանիցն և զհոգալիսն հոգալ, մինչ պատշաճաւոր ժամանակ լիցի և ապա յայնժամ գալ և ձեռնադրիլ:

Օրինակն կոնդակիս ըստ մեծի մասին ի հին տետրէն յայլ և այլ տեղեաց է, իսկ նոր մուծեալն ի մէջն, այսինքն սկիզբն և վերջն է ի նոր տետր շարադրանաց, որ է ի 88 երեսն:

471. Թուղթ ևս առ Հերակլ արքայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ Աբրահամ պետին գրեալ էր՝ առաջնորդ առնել զնա Սանահնու և օրհնել ևս եպիսկոպոս: Առ որ գրեաց, թէ գիտակ է արքայդ մերս որպիսութեան, որ մինչև ցայժմ դեռևս չընկալաք նախանձու չարասիրաց զհրովարտակն և զմահսարն ի Պօլսոյ, զի թէպէտ հասարակութիւնն կապակցեալ են ընդ մեզ ի սէր, ասէ, և զանուն մեր յիշատակեն, այլ պատրիարգն Պօլսոյ ընդ մեզ խոչընդակն ընթանալով, զհոգալիս թղթոցն մերոց յօրէ յոր ձգէ: Վասն որոյ և հանեալ զնա ի պատրիարքութենէն, վարեալ են յայլուր և կացուցեալ են զայլ ոք պատրիարք Պօլսոյ: Եւ զի թուղթքն մեր, ասէ, այսպէս յետանային, վասն որոյ պահեցաք, ասէ, զԱբրահամ վարդապետդ աստ, զի յետ ընկալնլոյ մեր զհարկաւորսն մեր, ձեռնադրեսցուք և վերադարձուսցուք յայդր: Բայց զի յոյժ երկարեցաւ, ասէ, միջոցն, ահա առաջնորդութեամբ միայն դարձուցաք յայդր՝ խնայելով ի վնասն սուրբ առ ի շինութիւն առնել վանիցն և զապրուստ հոգալ վասն ձմռան և վառել անդ ղլոյս: Մինչ մեզ ժամանակ լիցի ձեռնադրութեան, ապա և ինքն եկեալ ձեռնադրեսցի և վերադարձցի ի վանքն իւր: Ահա այսու մտօք դարձուցաք, ասէ, զդա: Վասն որոյ և զայս գիր, ասէ, գրեցաք առ քեզ, զի գիտեցեալ զխնամս ունիցիս, ասէ, ի վերայ վանիցն այնմիկ և ի վերայ դորա, զի շինութիւնն նորին առցէ զկայ:

Զնախագաղափարն թղթոյս գտցես ի շարադրանաց նոր տետր 198 երեսն:

116բ 472. Թուղթ ևս առ սանահնեցի Արղութեանց պարոն Բէժանն գրեաց, ի պատասխանի նորին գրոյն, զոր ընդ Աբրահամ պետին գրեալ էր վասն վերոյ գրեալ բանից նոյնոյ առաջնորդին իւրեանց, այլև նոյն վասն դիտմամբ վերին թղթոյդ, որ առ արքայն: Զի նա ևս էր գրեալ վասն նորա:

Օրինակ սորա է ի նոր տետր 199 երեսն[106]:

473. Թուղթ ևս ի Թիֆլիզ առ առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց ըստ նոյն ոճոյ:

Գրեալ յղեցան գրեանքս ընդ Աբրահամ վարդապետին յամսոյս ԻԶ (26):

1781 թ. օգոստոս—ի մեծն Պօլիս, ի Ուռումէլի, ի Պրուսա, ի Տիգրանակերտ, ի Կարին և ի Ղարս գրեցեալ թուղթք

Ապա և ևս դարձեալ թուղթք ժամանեցին ի մեծէն Պօլսոյ ի մեր նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն առ սրբազան Վեհն, որք զեկուցեալ էին զաքսորելն տեղւոյն պատրիարք Զաքարիա պետին, ի Պրուսայ և Պրուսայու առաջնորդ Յովաննէս վարդապետին պատրիարգանալն ի Պօլիս, հանդերձ բազում բանիւք և որպիսութեամբք: Եւ խնդրեալ էին ի վերայ ոմանց գրել զթուղթս ըստ պահանջելոյ ներկայական հարկաւորութեանն: Եւ ընդ այնց գիր մի սիրայայտ ևս ի վերդ յիշեալ նոր պատրիարգէն էհաս, զոր ի Պրուսայու առաջնորդութեանն էր գրեալ: Իսկ թուղթ մի ևս ի յՈւռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետէն եկն, որ և ընդ այլ բանագրութեանցն խնդրեալ էր զերկուս կոնդակս ի վերայ Ղաւշանու և Ակքրմանու՝ յաղագս վերահաստատելոյն իւր ի նոսում զխափանեցեալ զանձանակսն յանուն սրբոյ Գեղարդեանն: Վասն որոյ և սրբազան Վեհն զվերոյ ցուցեալ թղթագրացդ պատասխանիսն, հանդերձ նոցին խնդրեալ օրհնութեան թղթովքն գրեաց այժմիկ: Եւ զի յառաջ քան զայս ի յունիսի Ժ (10) գրեցեալ թուղթքն սրբազան Վեհին ի Պօլիս առ Մինաս պետն և Պետրոս պետն և առ Պօլսոյ վիճակաց նուիրակ Գալուստ պետն՝ հանդերձ այլև թղթով յայնկոյս քան զԿարին ի գողոց յափշտակեցեալք էին և կորուսեալք (որպէս ազդեալ էին ի Կարնոյ սրբազան Վեհին): Ուստի կրկին օրինակեաց զայնս, գրելով ի ներքոյսն զքանի մի տող բանս: Եւ քանզի Կարնոյ մեր վէքիլ Հայրապետն և Ղարսայ պարոն Գէորգն ևս գրեալ էին զգրեանս, առ նա ևս գրեաց այժմիկ զթուղթս, զորս և հանդերձ համայն վերոյ յիշեալ թղթովքն յղեաց: Զորոց զմիտսն նշանակեմք ի ներքոյ:

474. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ մեծին Պօլսոյ նոր պատրիարգ՝ համատանցի Յովաննէս վարդապետն, ի պատասխանի սիրոյ և

հարազատութեան թղթոյն նորա, զոր ի Պրուսայու գրեալ էր՝ տակաւին առաջնորդ գոլով անդ։ Շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս և առ ինքն սիրոյն և հարազատութեանցն, և շնորհաւորութիւն նորոգ պատրիարգութեանն։ Եւ վասն անյաջողութեանց և յամենայնի պակասութեանց սրբոյ Աթոռոյս, որ էր վասն աւերութեանց երկրիս, մանաւանդ սակս յերկար ժամանակ յամենալոյ ֆարմանացն։ Որոց աղագաւ և
117ա խնդիր, զի թէ դեռևս չիցէ հոգացեալ, // հոգասցէ և յղեսցէ ընդ Պետրոս վարդապետին աստ։ Իսկ և յանձնարարութիւն վասն Մինաս և Պետրոս և Գալուստ վարդապետացն մերոց։ Նաև զի Գաղաթիոյ նուիրակն մեր՝ Յովաննէս պետն Պօլսեցի անհամեմատութեամբն, թարց հրամանի սրբազան Վեհին գնացեալ էր ի Պօլիս և պժղովեալն վաստէր անդ։ Գրեաց սմա ընդ մերայնոցն և ընդ մահտեսի Յարութիւն ամիրային՝ կոչել զնա առ ինքեանս և հարկել ի դառնալ ի սուրբ Աթոռս։ Եւ թէ չեկեսցէ, զհաշիւն առնուլ և յանձնել Մինաս վարդապետին՝ առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։

Զնախագաղափարն թղթոյս տեսցես ի նոր տետրն ի 389 երեսն։

475. Թուղթ ցուածանոյց ևս առ մեծին Պօլսոյ աւագ քահանայսն և իշխանապետսն և իշխանսն գրեաց՝ յիշեցուցանելով նոցա զյամենայնի աղքատութիւնն, պակասութիւնսն սրբոյ Աթոռոյս, որ վասն աւերութեանց երկրիս և յետանալոյ գալստեան ֆէրմանացն դիպեցան սմա։ Եւ ղիւր կենամաշութիւնսն ևս, որ ի նոցին պատճառացն, և խնդրեաց վերջապէս, զի կամ զարքունական հրովարտակսն հոգացեալ ուղարկեսցեն առ ընդ մահսարատար Պետրոս պետին, եթէ մինչև ցհասանելն թղթոյս առ ինքեանս չիցեն արարեալ, կամ թէ եթէ զայլ իմն դիտմունս ունին, ծանուսցեն պարզապէս։

Օրինակն սորա է ի նոր տետր 301 երեսն։

476. Թուղթ ևս յատկապէս առ մահտեսի Յարութիւն ամիրայն գրեաց, ըստ մտաց վերին թղթոյդ։ Եւ զի ունելով սորա զյոլով դրամս ի վերայ Պօլսոյ մաքսապետին, այժմ հանեցեալ էր նա ի մաքսապետութենէն և դրամն կորնչիւր, յաղագս որոյ յոյժ տրտմեալ էր սա։ Առ այն գրեաց զմխիթարութիւնս։ Իսկ և վասն Մինաս և Պետրոս և Գալուստ վարդապետացն մերոց սմա ևս զյանձնարարութիւնս գրեաց։ Այլև յաղագս Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետին, զոր ինչ գրեաց նորոգ պատրիարգին (որ ահա ի վերդ ի թղթոջ նորին երևի), առ սա ևս աստ գրեաց։ Իսկ ի վերջոյ յաղագս հասարակ թղթոյն, որ առ համայն ժողո- քահանայսն և իշխանսն, պատուէր, զի ընդ մերայնոցն ի մի վայր ժողովեսցեն զնոսա զամենայսն և միաբանութեամբ ընթերցցին և զհոգալիսն հոգասցեն։

Գաղափարն սորա է ի նոր տետր 297 երեսն։

477. Թուղթ ևս առ Արևելցի մահտեսի Կարապետն և պարոն Գէորգն և Աստուածապահն գրեաց, ըստ հասարակ դիտմանց վերոյ գրելոց թղթոց։ Յորում և ողջոյն և օրհնութիւն ոմանց ընտանեացն նոցա մերձաւորաց։

478. Թուղթ օրհնութեան սրբազան Վեհն ի մեծն Պօլիս առ պարոն Մկրտիչն գրեաց և առ նորին որդի Յարութիւնն՝ վասն տալոյն զԱ (1) բեռն խունկ սրբոյ Աթոռոյս։ Ձեռամբ Մինաս վարդապետին։

479. Թուղթ ի Պօլիս առ Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետն գրեաց (զորմէ յիշեցաք ի վերդ ի թղթոջ պատրիարգին) կամ վերադառնալ հարազատօրէն ի սուրբ Աթոռս, կամ զնուիրակութեան հաշիւն անպակաս տալ նուիրակին մերոյ, որ անդ, Մինաս վարդապե-
117բ տին, // վերահասութեամբ պատրիարքին և մահտեսի Յարութիւն ամիրային, առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։

480. Թուղթ ևս սրբազանն ի Պօլիս առ Բերթումեան Պետրոս վարդապետն գրեաց՝ առ ի դառնալ ի սուրբ Աթոռս և համբուրել զգերեզման հոգելոյս տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին և զերծանել ի մեղադրութեանց նորին։ Քանզի սա, միաբան գոլով սրբոյ Աթոռոյս, քանի ամօք յառաջ առ լուսահոգւովն զձեռագիր առեալ նմա վասն դառնալոյ աստ, գնաց ի Պօլիս վասն հոգալեաց ինչ իւրոց և յետ միջոցի ընդդէմ կամաց լուսահոգւոյն ի Թօխաթ առաջնորդ կոչեցաւ ի պատրիարքէն, ուստի և զմեղադրութիւնս ընկալեալ ի յերանելւոյն, վարեցաւ անտի։ (Այս անցք ի յառաջին յիշատակարանոջն, յիւրում տեղւոջ երկարապէս գրեցեալ գոյ)։

481. Թուղթ ևս առ Պօլսոյ նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետսն գրեաց, ի պատասխանի նոցին ի յունիսի Ը (8) և յուլիսի Բ (2) և Ը (8) գրեալ թղթոցն, որովք ծանուցեալ էին զպատրիարքափոխութիւնն Պօլսոյ և զայլ որպիսութիւնս յոլովս։ Որոց գրեաց, թէ յառաջ քան զայս մինչ դուք վասն յիշման անուան մերոյ յայդր զթուղթ էիք գրեալ առ միաբանս մեր, մեք յայնժամ զթուղթս գրեցաք ձեզ ընդ այլևս թղթոց և յղեցաք առ ձեզ, իսկ թուղթքն անկեալ էին ի ճանապարհին յայնկոյս Կարնոյ ի ձեռս գողոց և կորուսեալ, զորս վասն հարկաւորութեանցն ընդ առաջնոյ օրինակին գրեցուցեալ յղեցաք ահա, որք են, ասէ, թուղթ մի առ ձեզ, թուղթ մի առ Գալուստ պետն և թուղթ մի առ Սառայ կին ոմն, ըստ ձերդ խնդրոյ։ Եւ զի զպատրիարքափոխութեանն պատճառ պարագայքս չէին գրեալ, հարկ է երկարապէս ծանուցանել։ Բայց արդ, առ նոր պատրիարքն զթուղթ գրեաց ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ գրեալ էր (զոր ի վերոյ գրեցաք) և յղեաց առ սոսա։ Վասն որոյ գրէ սոցա տալ ցպատրիարքն, տալով զինքենէ ողջոյն նմա։

Իսկ ապա ի կողմանէ ֆէրմանացն գրէ, թէ այժմ ոչինչ գրէք կատարեալ վասն այնց, թէ հոգացեա՞լ լինին, թէ ոչ։ Եթէ մինչև ցհասանելն թղթոյս առ ձեզ տակաւին չիցէք գրեալ ինչ մեզ զայցմանէ, գրեսջիք։ Քանզի մինչև ցայժմ որ ինչ եղև, բաւական էր այսքան տրորելն մեր և բիւրապատիկ վնասիլն սրբոյ Աթոռոյս (ընդ որս ցուածանուցութիւն երկարօրէն)։ Որոյ զկնի թէ ահա զայսքան ցաւոց մերոց և զվնասուց սրբոյ Աթոռոյս գրեցաք պատրիարք եղբօրն մերոյ և մահտեսի Յարութիւն ամիրային, և պարոն Կարապետին, և պարոն Գէորգին, և Աստուածապահին, և խնդիր ևս գրեցաք, զի թէ դեռևս չիցեն հոգացեալ զֆարմանսն, հոգասցեն և յղեսցեն։ Արդ, եթէ դեռ այնպէս կայ բանն մեր ի վերայ երեսաց, դուք ևս խօսեցարուք ընդ պատրիարքին և ընդ
118ա իշխանացն և հոգալ տուք, որովք դարձցի // առ մեզ Պետրոս վարդապետ։ Իսկ թէ այլևս չհոգասցեն, ասէ, զվերջին դիտումն դոցա յինքեանց իմացեալ գրեսջիք մեզ և մեք բաւ ասասցուք այսքանոյ ցաւակրութեանս մերոյ և վնասուց սրբոյ Տանս խղճալւոյ։

Վասն Գալուստ վարդապետին ևս, որ զյանձնարարութիւնս գրեաց
պատրիարքին և մահտեսի Յարութիւն ամիրային և այլոց։ Ծանոյց սո-
ցա և ասէ՝ դուք ևս խօսեսջիք վասն նորա և օժանդակեսջիք առ ի բար-
ւոք յառաջացուցանել զգործն։ Եւ սակս Գաղատիոյ նուիրակին զգրեալսն
պատրիարքին և Յարութիւն ամիրային ևս ազդեաց սոցա և պատուիրե-
աց, թէ դուք ևս ըստ գրեցելոց մերոց արասջիք և մեզ գրեսջիք։ Այլև
զի ձեռամբ սոցա յՈւռումէլու նուիրակ Մեսրոպ պետէն գիր էհաս առ
ինքն։ Գրէ առ սոսա, թէ զնորա որպէսն ևս ծանեաք և զպատասխանի
թղթոյն ահա գրեալ յղեցաք, ուղարկեսջիք առ նա։ Գրէ և պարոն Խաչի-
կին զողջոյն և օրհնութիւն տալ, թէ անդ իցէ, զի նա գրեալ էր, թէ ի
Հաշտարխան եմ գնալոց։ Ուստի և սրբազան Վեհն առ նա զգիր չգրեաց։
Ջեկուցանէ և զառ Պետրոս վարդապետն զմիամտեցուցիչ թուղթ գրելն
վասն գալոյ ի սրբոյ Աթոռս և պատուիրէ, զի ինքեանք ևս միամիտ
արասցեն, զի եկեսցէ առ ի շահիլ ըստ ամենայնի։ Վերջապէս յիմացու-
տայ և զգրելն առ ասագ քահանայսն և իշխանսն հասարակապէս զմի
թուղթ՝ հանդերձ դիտմամբքն։ Եւ հարկ է, զի ժողովեալ զնոսա զամենայն
ի մի վայր, զթուղթն ընթերցուսցեն և ինքեանք ևս բերանով խօսեսցին,
զոր ինչ պատշաճն է, և տեսցեն թէ հոգալոց՞ են զհարկաւորսն, թէ ոչ, և
ծանուսցեն։ Մանաւանդ ի նոցունց իսկ խնդրեալ զպատասխանին թղթոյ
յղեսցեն։
Օրինակն սորա ի նոր տետր 91 երեսն։

482. Փութալով ևս գրեաց առ Մինաս և Պետրոս վարդապետսն
յորում և շատ բանք առ Մինաս պետն միայն (յորոց զոմանս յիշեմք
աստ վասն հարկաւորութեանցն)։ Քանզի սա առ ձէքիլ պարոն Հայրա-
պետն ի Կարին ձեռամբ ոմանց զգիրս էր հասուցեալ առ ի հասուցա-
նել աստ (Զ) և զգապդ էր խնդրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն գրե-
ալ յղեաց այժմ առ պարոն Հայրապետն՝ առ ի հասուցանել սմա (որպէս
և ի ներքոյսն ի թղթոջ պարոն Հայրապետին երկարապէս յիշելոց եմք)։
Վասն որոյ միամիտ առնէ զսա, թէ ահա զխնդրեալ զգապդ յղեցաք ի
ձեռն պարոն Հայրապետին՝ յղել առ քեզ, երբ և հասցի, ծանուսցես մեզ։
Այլև Ուռումէլու նուիրակ Մեսրոպ պետն գրեալ էր սրբազան Վեհին,
թէ զգիրս ունիմ ի պատրաստի և յղելոց եմ առ Մինաս պետն (Գ)։
Վասն որոյ գրէ սմա, թէ Մեսրոպ պետն մեզ այսպէս էր գրեալ, զոր
ինչ հասուցէ քեզ յարդեանցն, մեզ գրեսցես։ Իսկ և գրեալ էր սա, թէ
եթէ կամիս ընդ Պետրոս պետին զգիրս յղեցից. առ որ գրեաց, թէ յե-
ղեսցես զգիրս, որք հին Մարու ոսկի լինիցին (Ե)կամ (Զ) կամ այլ
ւելի կամ պակաս։ Եւ ընդ դմա, ասէ, զլաւ և զընտիր փարայ ևս յղե-
118բ ցես (Զ) || ուրոյն ի վերնոյն, զի աղքատաց և պաշտօնէից տալոյ պի-
տոյանայ։
Հաշտարխանու Յովսէփ պետին[107] մեք ևս, ասէ, գրեալ եմք ըստ
քեզ՝ զգուշութիւն վասն Սաղիմայ նուիրակին՝ մեղմութեամբ վարել ընդ
նմա։ Բասրայու գրեանցն դեռևս չեղաք, ասէ, ձեռնհաս գրել զպատաս-
խանիս, յետոյ գրելոց եմք և առ քեզ յղելոց։ Բայց այն մէկ բեռն չի-
նոյն համար գրեսցես, ասէ, մահտեսի Յարութիւն աղային յղել ի սուրբ
Աթոռս, բայց ընդ յոյժ հաւատարմի։ Իսկ և գրեաց, թէ յառաջ գրեցաք մեր
քեզ և պարոն Խաչիկին վասն Ատենի ժամագրքին տպեցմանն, թէ մեր
թղթոց պատասխանեացն նայիմք և յայնժամ գրելոց եմք ձեզ և այլն։
Այժմ մեք զպատրաստութիւն գրոյն տեսեալ եմք և տպելոյ ժամանակ է։

ի յայտնի թուղթ ձեր բնաւ ոչ յիշէք ինչ զայնմանէ։ Այլ մեք ահա գրեմք
ձեզ, զի թէ դոյլ ևս յայտ է պարոն Խաչիկն, խօսեսջիք ընդ նմա և թէ
այլևս ի նոյն միտսն է, գրեսջիք մեզ հաստատնապէս, զի սկիզբն արաս-
ցուք տպելոյ և զթուղթն ևս յայդրուստ հոգացեալ ի ձեռն գիտողաց, յղե-
ցէք աստ։
Ծանոյց ապա և զՍահակ պետին Փառակեցւոյ վատաբարոյի ի սրբոյ
Աթոռոյս ելանելն պատճառանօք իւր հոգալի բանից ի Կարին և յայն
կողմունսն և այժմ գոլն ի վանսն Հասանղալայու։
Եւ զքանի բանս մնացեալ, զորս աստ ոչ գրեցի, ի բուն օրինակն
տեսցես հանդերձ լիագունիւն գրեցելոցս աստէն։ Իսկ օրինակն սորա է
ի նոր տետրն շարադրանաց ի 94 համարն։

483. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Իզնիմիդու առաջնորդ Պետրոս
վարդապետն գրեաց։ Յորում շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս
հարազատութեանցն և սիրոյն, որ առ ինքն, մանաւանդ սակս զարտա-
քին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն շահելոյն և ձեռնտու լի-
նելոյն նմա ի գործն։ Որոյ սակս և կրկին յանձնարարութիւն և յորդո-
րումն՝ ի յառաւելութիւն սիրոյ և հարազատութեան։
Զօրինակն սոյնոյ թղթոյս գտցես ի նոր տետրն շարադրանաց ի 236
երեսն։

484. Իսկ ի նոր օրինակեցեալ թղթոջ Գալուստ պետին (զորոյ միտսն
յիշեալ եմք ի վերն ի յունիսի Ժ (10), զի յայնժամ յառաջ գրեցաւ
և յղեցաւ, բայց կորուսեալ էր ի ճանապարհին, որպէս ի սկիզբն կարգի
թղթոցս յիշեալ եմք)։ Վասն որոյ զայս ևս յաւել այժմ, թէ զայս թուղթս
յառաջ գրեալ յղեցաք ի յունիսի Ժ (10), որոյ տանօղ թաթարն յայնկոյս
քան զԿարին ի գողոց թալանեցեալ, թուղթքն ևս կորուսեալ էին։
Վասն որոյ մինչ իմացաք. կրկին գրեցաք ի նոյն օրինակէն և յղեցաք
ահա։ Իսկ արդ, նոր գրելի ի սմա այս է, զի գրեալ էին մեզ ի Պոլսոյ
զպատրիարքափոխութիւնն տեղւոյն։ Ուստի և մեք գրեցաք այժմ զթուղթս
ի Պոլիս առ նոր պատրիարքն և առ մահտեսի Յարութիւն ամիրայն և
119ա առ ոմանս՝ գրելով որ ինչ ի դէպն էր։ Առ որս և վասն քոյ|| և գործոյդ
գրեցաք զյանձնարարութիւնս (զոր և Մինաս և Պետրոս վարդապետքն
գրեալ էին մեզ գրել)։ Նոյնպէս և տեղւոյդ Պետրոս վարդապետին գրե-
ցաք զշնորհակալութիւնս վասն քեզ ցուցեալ մարդասիրութեանցն և
զկրկին յանձնարարութիւնս ևս վասն քոյ։ Բայց ջանաց սրտաշահ զժո-
ղովուրդն առնել։ Եւ եթէ ունիք վասն քոյ և գործոյդ հարկաւոր լիցի մեզ
գրել զթուղթս յանձնարարութեան, ծանո մեզ, զի գրեսցուք։ Եւ յետ նու-
իրակելոյդ յայդր՝ զայլ վիճակդ ևս կարգաւ նուիրակեա այսուհետև։
Նախագաղափարն այսքան բանիցս տես ի շարադրանաց նոր տե-
տեր 235 երեսն։

485. Թուղթ ևս առ Ուռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն գրե-
աց, ի պատասխանի թղթոյն նորա յապրիլի ԺԹ (19) յԻսմայլու գրեցելոյ։
Յորում ծանուցեալ էր նա զյանցեալ տարւոյ սեպտեմբերի ԺԷ (17) գրե-
ալ թղթոց և որպիսածանոյց կոնդակի առ ինքն հասանիլն և իւր յայն
կողմունսն ընթեռնուլ տալն։ Ընդ որս և գրեալ էր զշնորհաւորութիւնս։
Առ որս և սրբազան Վեհն զշնորհակալութիւն գրեաց։ Իսկ և գրեալ էր
սա, թէ զդրամս ունիմ ի պատրաստի (Գ) և յղելոց եմ ի Պոլիս, որոյ ա-
ղագաւ գրէ սրբազան Վեհն շնորհակալութեամբ, թէ զայդ ի Պոլիս Մի-

նաս վարդապետին ես էիր գրեալ և նա ծանուցեալ էր մեզ, երբ և յղեա-
ցես առ նա, գրեա մեզ, զի գիտասցուք։

Այլև՝ ի Ղուշան և ի յԱղքրման զսրբոյ Գեղարդեան անուամբ գանձանակսն, որք քանի ամօք խափանեցեալք էին, այժմ սա վերա-հաստատեալ էր և զկոնդակս էր խնդրեալ ի վերայ նոյն տեղեացն յիշեցելոց, առ ի անխափան մնալ նոյն գանձանակացն։ Ուստի և սրբա-զան Վեհն Բ (2) կոնդակս պատուիրականս գրեաց ի վերայ իւրաքան-չիւր տեղեացն, որպէս զի հաստատուն անխափան կացցեն ի միջի իւր-եանց գանձանակքն, որք յանուն սրբոյ Գեղարդեանն։ Ի յորս և հաստա-տեաց զտիրացու Յարութիւնն՝ Ղուշանու գանձապետ և զպարոն Սարգիսն՝ Աղքրմանու գանձապետ։ Եւ զայս կոնդակսս ես ընդ թղթոյս յղեաց ի ձեռս սորա, վասն որոյ և ծանուցանէ յայսմիկ սմա, թէ զխնդրեալ կոն-դակսդ յղեցաք ահա առ քեզ և այլն։

Նաև՝ վասն տեղապահ հանգուցեալ Մկրտիչ վարդապետի ընտա-նեացն և իւր նախորդ սպասաւոր Դանիէլ պետին զյանձնարարութիւնս էր գրեալ։ Իսկ սրբազան Վեհն գրեաց, թէ կան նոքա ի խնամս մեր ա-պահով և այլն։ Միամիտ լեր։

119բ Այլև՝ յաղագս խմայիլցաց ԲՌ (2000) || ղուռուշ տալեացն, զոր նոքա փոխ առեալ վասն եկեղեցաշինութեան՝ տալոց էին սրբոյ Աթո-ռոյս ի վաղուց հետէ և չտային (որ և յիշեալ գոյ ի յառաջին յիշատա-կարանոցն ի ...), գրեալ էր այժմ սա, թէ հետևիմ և պահանջեմ առ ի առնուլ։ Առ որ գրեաց, թէ եթէ մինչև ցարդ կարացեր զբան ինչ հոգալ, բարի է և թէ ոչ, կրկին հետևեա և որպէս և լինիցի, մեզ գրեա։ Իսկ ի վերջոյ ի յիշումն ածէ զգրելն զթուղթ առ սա ի յունիսի ԻԱ (21) և ընդ ուխտաւորացն յղելն առ Ուռուսջուղու գանձապետսն մեր՝ պարոն Անուշն և Աւէտն՝ հասուցանել առ սա։ Ընդ որս և զշնորհակալութեան թուղթ գրելն ի վերայ Ուռուսջուղու վասն գանձանակադրամի (Ե)։ Ծանու-ցանէ սմա և զյղելն զայն ի ձեռս սորա և գանձապետացն։ Զի գրեալ էին, ասէ, նոքա վասն քոյ, թէ գալոց է աստ և ի գալն հասուցանելոց եմք իւրեանց զդրամն։ Զոր և մեք, ասէ, յայնժամ գրեցաք քեզ, զի առ-նուցուս և մեզ ծանուսցես։ Եւ այժմ ես կրկին ի յիշումն ածեմ քեզ, զի ծանուսցես մեզ, ասէ, զառնուլդ։

Գաղափարն սորա է ի յետկոյս բարևագրին սորա։

486. Թուղթ ես սրբազան Վեհն. առ Տիգրանակերտու առաջնորդ կա-րապետ վարդապետն գրեաց (որ միջոցաւ ինչ յառաջ եկեալ էր ի սուրբ Աթոռս յայսմ ամի և ի յուլիսի ԺԲ (12) եւ աստի դէպ ի վիճակն իւր) ծանուցանելով նմա, թէ յետ գնալոյն քոյ աստի ստուգիւ իմացաք, որ Պօլ-սոյ պատրիարքափոխութիւնն հաւաստի է։ Բայց մեր ֆէրմանքն թէ հա-նեցեալ են, ասէ, և թէ ոչ, չիմացաք։ Վասն որոյ այժմ ահա զգրեանս գրեցաք, ասէ, առ նոր պատրիարքն և առ ումն, զի տակաւին չիցեն հո-գացեալ, հոգասցեն և յղեսցեն։ Այլև արդ, ի ներկայումս ի Հզուայ երկ-րէն յԵղիտխանա գիւղէն Բանտուանու մի պառաւ էր եկեալ ի սուրբ Ա-թոռս յուխտ, որ և լալով ասէր, թէ ի մեր գեղջն մեռոնն հատեալ է և զնորածին մանկունսն մեռոնի ամանի ողողանօքն մկրտեն և զփոքր ինչ սրբալոյս մեռոն խնդրէր տանիլ ընդ ինքեան ի գիւղն իւրեանց։ Ուս-տի սրբազան Վեհն, թէպէտ և պառաւուն ինքեան ոչ ետ, գրեաց սոյն Կարապետ վարդապետիս, զի թէ մինչև ցհասանիլն իւր ի Ցամիթ, պա-հեսցի նուիրակին մերոյ ի Ճանապարհին, հարկեսցէն նմա յղել զփոքր

ինչ սրբալոյս մեռոն ի վերոյ յիշեալ գիւղն։ Իսկ թէ ոչ պատահեսցի նուի-րակին, մինչ հասցէ ինքն ի Տիգրանակերտ՝ ի քաղաքի եկեղեցեացն զսակաւիկ ինչ մեռոն առեալ փոքրիկ շիշայիւ յղեսցէ և կատարումն ի-րակութեանն ծանուցանէ սրբազան Վեհին։

487. Թուղթ ես ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց այսպէս, թէ ի յուլիսի Ը (8), ի ԺԹ (19) գրեալ Գ (3) թուղթքդ հասին առ մեզ և զգրեալսդ իմացաք, որոց զպատասխանիսն լուր։

Պատասխան նամակում կաթողիկոսը գրում է շամախեցի մահտեսի Հարությունի, բայազետցի մահտեսիներ՝ Մկրտչի և Բունիաթի և մասուլցի Ապտիլղատիի միջոցով տեր Վահանին ուղարկված 1680 ղուռուշի ստացման մասին, որը վերջինս մուծելու է էջմիածնի գանձարանը։ Կաթողիկոսը հայտնում է նաև, որ դեռևս չի ստացվել Կ. Պոլ-սից ուղարկված երկու կապոց նամակը և որ նամակ է գրել Կարինի խալիր փաշային՝ ի պատասխան նրա գրության, որով փաշան շնորհակալություն էր հայտնել էջմիածնից ուղարկված բրնձի համար։ Տնտեսական բնույթի մի շարք հանձնարարություններից բացի, կաթողիկոսը խորհուրդ է տալիս վեքիլ Հայրապետին էջմիածին գալու ժամանակ իրեն փոխարինող թողնել եղբորը կամ հարազատներից որևէ մեկին (էջ 120ա—120բ)։

120բ 488. Ղապղ ես սրբազան Վեհն ի վերայ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետին գրեաց այսպէս, թէ որ ի նուիրակական արդեանցն սրբոյ Աթոռոյս փոլիցայաներով զապղիւք վէքիլին մերոյ՝ պարոն Հայրապե-տին, որ ի Կարին, տուեալ էիր զդրամս՝ ակնցի մահտեսի պարոն Յովաննի-սին (Բ), և Գօրօյեան մահտեսի խաչատուրին ես (Բ) առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս և առ մեզ, ձեռամբ յիշեալ պարոն Հայրապետին անպա-կաս էհաս ի սուրբ Աթոռս և մեզ։ Վասն որոյ զայս թուղթս իբրև զղապղ գրեալ և կնքեալ առաքեցաք առ պարոն Հայրապետն՝ յղել առ քեզ ի միամտութիւն և զիւր տուեալ զապղն յետս խնդրեալ առնուլ ի քէն։ Արդ, ուրեմն պահեա զայս առ քեզ, զի ի հաշուատրութեանդ պիտոյա-ցուցես քեզ։

489. Թուղթ ես ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորապէս գրեալ թղթոյն նորա, զոր այժմ ընդ մեր թֆանկչոցն յղեալ էր հանդերձ ի Կարնոյ առ ինքն հասեալ դրամովք սրբոյ Աթոռոյս։ Ընդ որս և զերկաթ և զնալնամեխս ես էր յղեալ, որոց աղագաւ սրբազան Վեհն յառաջ գրեալ էր առնուլ և յղել։ Վասն որոյ այժմիկ սրբազան Վեհն գրեաց զմիամտութիւնս, թէ յղեալքդ հասին առ մեզ և այլն։ Ապա և վասն սոյն թղթոցս տանող փայեկին պատուէր՝ փոյթ յղել դէպ ի Կարին։ Ընդ սոցա և այլ բանք ոմանք՝ նորահան գրով գրեալք։

Գրեալ յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Ղազար փայեկին ի Կար-նոյ եկելոյ, որ այժմ դառնայր յամսոյս [օգոստոսի] Դ (4)։

121ա

1781 թ. նոյեմբեր—ի Կարին գրեցեալ թուղթք

490. Թուղթ ես առ մահտեսի Տայի Յովաննէսն գրեաց, ի պատաս-խանի նորին թղթոյն, զոր այժմ գրեալ էր ընդ իւր բարեկամ խոջայ Փիլիպպոսին։ Առ որ գրէ, թէ զգիրդ սիրոյ ընկալաք։ Եւ զի նոր էր վերա-դարձեալ սա ի սրբոյն Սաղիմայ և բաղձայր ի սուրբ Աթոռս ես գալ յուխտ, գրէ թէ ընդ խաղաղութեամբ վերադառնալդ ի յօթևանս քոյ, ու-րախացաք. գալուստդ բարի և մահտեսութիւնդ շնորհաւոր եղիցի։ Եւ արժանացուցէ Տէր ի սուրբ Աթոռ մայրս քո ես դիմել, որպէս և բաղ-

ձացեալ ինկ ես։ Եւ ես՝ զորդին իր զհաճի... պսակազարդել կամէր սա, ուստի սրբազան Վեհն շնորհատրութիւն գրէ հարսանեաց նորին և զող-ջոյն ես տայ։ Գրէ զկնի և յաղագս նուիրակին զշնորհակալութիւն, և զվե-րանորոգելն իւր զվէքիլութիւնն պարոն Հայրապետին և կոնդակաւ և խիլայիւք վերադարձուցանելն։ Որոյ աղագաւ և յանձնարարութիւն իսկ առնէ։

Օրինակն սորա ի յետ կոյս բարեագրոյն սոյն Յովաննիսիս է։

Համարյա նույն բովանդակությամբ նամակներ են ուղարկվել նաև «միւս մահտեսի Յովաննէսին», մահտեսի Կարապետին, Մուրտիկյանց խոջա Սիմեոնին և մահտեսի Կի-րակոսին։ Ակնցի խոջա Հովհաննեսին հանձնարարություն է տրվել Թիֆլիզեցի պրն. Ե-սայուց 1000 ղուռուշ պարտքը ստանալու վերաբերյալ (էջ 121ա—121բ)։

122ա *491. Թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Պետրոսն գրեաց՝ ըստ ոճի և դիտմանց հասարակ բանից վերոյ գրեալ թղթոցդ, որք և սմա պատշաճեցան գրիլ։*

Կաթողիկոսը հանձնարարում է վերին Հայրապետի հետ ուղարկած իր կոնդակն ըն-թերցել եկեղեցում և ապա գանձանակի արդյունքը հանձնել վերին Հայրապետին և այդ մասին իրազեկ պահել իրեն։

492. Թուղթ ես առ Գօրօյեան մահտեսի խաչատուրն և Սերօբն գրե-աց, ի պատասխանի նոցին ի սեպտեմբերի Ի (20) գրեալ թղթոյն։ Արդ, զի յղեալ էին սոքա ի օգոստոսի Դ (4) գրեցեալ թուղթսն մեր ի սեպ-տեմբերի Ա (1) դէպ ի Պօլիս, առ այնս զշնորհակալութիւնս արար սրբա-զան Վեհն։ Եւ վասն յԱմստրդամու յղեալ զանգակացն յանուն սրբոյ Ա-թոռոյս, որ հասեալ էր ի Կարին առ սոսա, գրեալ էին սոքա, թէ յղելոց եմք, մինչ սայլ պատահիցի և մաքսապետն ևս զառաւելս չպահան-ջիցէ։ Առ որս գրեաց սրբազան Վեհն, թէ եթէ դեռևս չէք յղեալ յայս-կոյս զզանգակսն և մաքսապետն աւելորք պահանջէ, մի տայցէք, այլ մնասցեն յայդր զանգակքն և դուք ծանուսջիք մեզ զորպէսն։

Ապա գրեաց և զհասարակ բանսն, որ վասն նուիրակին և վէքիլ պարոն Հայրապետին՝ ըստ ոճի վերագրեալ թուղթոցն։ Եւ զի ի կողմանէ սուրբ Կարապետի Յարութիւն պետին սոքա ևս էին զյանձնպրարութիւն գրեալ։ Սոցա ևս զմիամտութիւնս գրեաց, թէ ի սէր ընկալաք, որպէս ի վերինսդ յոմանց թուղթս։

Օրինակ թղթոյս ի յետկոյս բարեագրոյն սոցա է, բայց սոյն թուղթս կանուխ գրեցաւ և անագան յղեցաւ, զի յիշեալ զանգակքն այժմիկ հասեալ առտ և ի կաթուղիկէոյն կախեցեալք էին, որք և հարկանեին իսկ։

493. Կոնդակ ես ի վերայ Կարնոյ ժողովրդեանն գրեաց սրբազան Վեհն՝ յաղագս գործակալութեան վէքիլ պարոն Հայրապետին, այսու զօրութեամբ, թէ ամենիցդ յայտնի է, զի ի քաղաքէդ ձերմէ ոչ պակասին երբէք բանք և գործք և զանազան հոգալիք սրբոյ Աթոռոյս։ Սակս որոյ հոգելոյս հայրապետն մեր գրեալ է յառաջագոյն ի ՌՄԻԶ (1777) թուոջն մերում յայդր, զի պատշաճաւոր ոք գտցեն, որ լիցի սրբոյ Աթոռոյս վէ-
122բ *քիլ // և գործակալ։ Եւ իշխանք քաղաքիդ գտեալ էին յայնժամ զգա-փանցի պարոն Հայրապետն և ընտրեալ գրեալ էին հոգելոյս հայրապե-տին մերոյ։ Եւ նորա կարգեալ զդա յայնժամ վէքիլ սրբոյ Աթոռոյս, ե-տես հաւատարմութիւնն դորա ի քանի ամսն, յորս կենդանի էր տակա-ւին։ Իսկ ապա ի մեր աւուրս ևս մեք տեսաք և փորձեցաք, որ յոյժ հա-*

րազատութեամբ ծառայեաց մինչև ցայժմ սրբոյ Աթոռոյս։ Իսկ այժմ ի գալն իւր ի սուրբ Աթոռս և առ մեզ, եա զհաշիւն վէքիլութեանն, զոր մինչև ցարդ արարեալ էր, կարի ստուգութեամբ։ Այլ զլուեցեալ զոլով ի ծանրութեանց այդմ գործոյ, խնդրեաց ի մէնջ հրաժարեցուցանել զին-քըն և կացուցանել զայլ ոք վէքիլ սրբոյ Աթոռոյս։ Իսկ վասն յոյժ հաւա-տարմութեանն ոչ հրաժարեցուցաք, այլ կարգեցաք զդա վերստին վէքիլ և գործակալ սրբոյ Աթոռոյս։ Զոր և ահա այսու օրհնութեան կոնդա-կաւս մերով և խիլայիւք և փառաւորութեամբ վերադարձուցաք յայդր։ Վասն որոյ և ձեզ պատուիրեմ, զի և ձեր գիտեցեալ զվերստին հաստա-տելն մեր զդա ի գործն վէքիլութեան սրբոյ Աթոռոյս, դուք ևս ձեռնտու լիցիք զմա ըստ կարեաց ձերոց՝ ի յօգուտ մօրս լուսոյ։ Նաև ունի դա ի մէնջ զայս հրաման ևս, զի յորում ժամանակի ոչ գտանիցի յայդր նուի-րակ ի սրբոյ Աթոռոյս, դա յամենայնի մուղայէթ լիցի այսոցիկ արդե-անց սորա, այսինքն կտակի, հոգեբաժնի, խոստմանց և այլոց այսպի-սեաց։ Որոց հետևիլ և հոգալ տալ և առնուլ և մեզ գրել, զի և մեք զթուղ-թըս օրհնութեան գրեսցուք առ տուօղն։

Գաղափարն այսորիկ կոնդակիս տեսցես ի Նոր տետրն շարադրա-նաց ի 398 երեսն։

494. Խալասի թուղթ ես ետ սրբազան Վեհն վէքիլ պարոն Հայրա-պետին, զոր ևս որպէս և վերինդ կոնդակ, համառօտեալ ըստ բառիցն և լրութեամբ մտացն տես ի ստորև։

123ա *495. Թուղթ խաթրահարցական ես առ Կարնոյ մաքսապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն յանձնարարականի, զոր գրեալ էր ընդ իւր սառաֆ խոջայ Սարգսին։ Առ որ գրէ, թէ զխոջայ Սարգիսն ընկալաք ի սէր և խիլայեալ վերադարձուցաք և յղեցաք քեզ ընդ նմա զմուրա-պայ և զայլ ինչս։ Գրէ և վասն վէքիլ Հայրապետին և մերայնոցն զյանձ-նարարութիւն ի մուղայէթ լինիլ։*

496. Թուղթ սիրոյ և շնորհակալութեան ես առ Ակնոյ առաջնորդ Մի-քայէլ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն այժմ յղեցելոյ ընդ ակնցի խոջայ Փիլիպպոսին, ընդ որում և առաքեալ էր զաջահամ-բոյր ինչ ևս (30 զ.)։ Որում ընդ շնորհակալութեանն և գրեաց զյորդո-րումն կալ միշտ ի սէր և ի հարազատութեան սրբոյ Աթոռոյս։ Ապա և ծանոյց ևս զի Պօլսոյ ֆէրմանաց իւրոց Սուրաթից գալն։ Եւ ի վերջոյ քահանայից և իշխանաց և ժողովրդոցն քաղաքին՝ ողջոյն։

Միաժամանակ կաթողիկոսը ստացագրեր ու շնորհակալագրեր է ուղարկում Թոխաթի նվիրակ Հակոբ և Ամիդի նվիրակ Գրիգոր վարդապետներին՝ հավաստելով նվիրաբերված գումարների ստացումը։

123բ *497. Թուղթ ես ի Ուռումէլու երկիրն ի յիսմայիլ քաղաքն առ բստա-ցի հանգուցեալ մահտեսի Սիմէօնի քեռւոյ որդիսն՝ Յարութիւնն և Անանի-այն գրեաց, ի պատասխանի նոցին ի յօգոստոսի Ժ (10) գրեալ թղթոյն։*

Կաթողիկոսը հայտնում է, որ մահտեսի Սիմեոնը էջմիածին է եկել որպես միաբա-նության անդամ, հետևապես և նրա մահից հետո մնացած գույքը պատկանում է վան-քին։ Նա առաջարկում է Սիմեոնի գույքի շուրջ եղած վիճաբանությունը լուծել Պոլսի պատրիարքի և մեծամեծների միջոցով։ Նամակին կցված է նաև էջմիածնի մի շարք միաբանների սույնը հաստատող գրությունը (էջ 123բ—124ա)։

142ա 498. Թուղթ ևս սրբազան Վեհն առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն գրեաց իբրու ևս, ի պատասխանի նորին ի սեպտեմբերի ԻԳ (23) գրեալ թղթոյն, զոր հանդերձ սիւրէթօք բէրաթին և ֆէրմանին յղեալ էր։

Կաթողիկոսը հանձնարարում է Մինաս վարդապետին Կ. Պոլիս կանչել հանգուցեալ մահտեսի Սիմեոնի քեռու որդիներին, որոնք պահանջներ են ներկայացրել իրենց ազգականի գույքի նկատմամբ, և պոլսահայ մեծամեծների ու պատրիարքի միջոցով համոզել նրանց հրաժարվելու այդ գույքից, որովհետև Սիմեոնը էջմիածին է եկել ոչ թե իբրև ուխտավոր, այլ միաբան և մահից հետո նրա գույքի տնօրինման իրավունքը պատկանում է վանքին։ Մեկ այլ գրությամբ Ղուկաս Կարնեցին խորհուրդ է տալիս Մինաս վարդապետին անհրաժեշտության դեպքում վեճը կարճելու համար վերոհիշյալ անձանց վճարել 1000 ղուռուշ, իսկ նրանց չհամաձայնվելու դեպքում իրազեկ պահել իրեն (էշ 125ա)։

125ա 499. Կոնդակ եւ սրբազան Վեհն նորոգ նուիրակ կարգեցելոյն ի վերայ Բայազիտու և շրջակայ նահանգացն և վիճակացն նորին՝ Կարապետ վարդապետին Արապկերցւոյ, որպէս և ի սկիզբն կարգիս թղթոցս յիշատակեալ եղև։

500. Թուղթ ևս առ Մարգար աղայն գրեաց, յորում օրհնութիւն ինքեան և յանձնարարութիւն յաղագս նուիրակին և յորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս։

Նույն բնույթի նամակներ են ուղարկված նաև արաբկիրից Սահակ աղային, խոջա Հակոբին, պարոն Ստեփաննոս էլոյանին և ազուեցի պարոն Թումանին, Պետրոսին և մարապետ Ավետիսին։

125բ 501. Թուղթ խաթրահարցական և բարեկամական առ Իսաղ փաշայն գրեաց՝ զյանձնարարութիւնս առնելով վասն նուիրակին և խնդրելով տալ նմա զբույրուլթու, որ ի կալուածս նորին համարձակ շրջեսցի և զնուիրակութիւն արասցէ։ Որում և ընծայ առաքեաց՝ զկտորեղէնս և զբրինձ, և զքացախ, մոմս և զայլ իրս։

Նամակներ և նվերներ են ուղարկված նաև Յունուզ բեկի որդիներին և Ռզվան աղային, օրհնության նամակ՝ նվիրատու ոմն Մելոյի։

502. Թուղթ ևս առ տէր Վահանն գրեաց, ի պատասխանի նորին ի հոկտեմբերի 27 գրեալ թղթոյն, յորում զայս, թէ ի կողմանէ Սահակ աղայի տալեացն, որ զՌ (1000) ղուռուշի ոսկի էիր յղեալ կնքով, էհաս առ մեզ ձեռամբ Իւշքիլիսէի առաջնորդ Մկրտիչ վարդապետին։ Գիտես, որ ասա ոսկին անձեռնտու է, վասն որոյ այլևս նոյն իւր ամբողջ կնքովն յղեցաք ընդ պարոն Հայրապետին առ ձեզ, ճերմակ արարեալ յղեսցես։ Վասն շինման եկեղեցւոյդ ձերոյ ուրախացաք, զոր և շնորհակալ եմք։ Եւ թէպէտ գրեալ էիր, ասէ, թէ ես եկից և ապա ընդ իս եկեսցէ նուիրակն և փաշայի ընծայն, սակայն չի լսեմք, թէ Սաղիմայ նուիրակն գայ, վասն որոյ զմերն փոյթ յղեցաք՝ հանդերձ ընծայիւք և գրովք առ փաշայն և առ այլս և օրհնութեան թղթովք առ իշխանսն։ Ուստի զփաշայինն և զմիւս տաճկացն թուղթս և զընծայս ընդ նուիրակին մատուցես առ ինքեանս և ի փաշայէն զբույրուլթու առնուցուս վասն նուիրակին։

Իսկ վասն անիծեալ ախթարմայիցն երկրիդ թէպէտ այժմ ի թղթոյ փաշային զբան ինչ ոչ գրեցաք, բայց ընդ Ուշքիլիսէի առաջնորդ Մկրտիչ սրբազան պետին (զոր այժմիկ ձեռնադրեցաք եպիսկոպոս), ի դառնալն սորին երկարապէս գրելոց եմք։

ելին թուղթքս ընդ վէքիլ պարոն Հայրապետին և Բայազիտու նուիրակ Կարապետ վարդապետին Արապկերցւոյ և այլոց յամսոյս Դ (4)։

503. Թուղթ ևս առ Ղարսայ փաշայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր նա այժմ ի թագաւորէն իւրեանց հարկեցեալ գրեալ էր առ սրբազանն և զորպիսութիւն կողմանցս ազդել խնդրեալ։ Առ որ գրեաց նախ զխաղաղութիւնս այս երկրացս և իշխողաց սոցին ընդ միմեամբք անկանիլն։ Եւ երկրորդ՝ որպէս լսէաք, թէ քանի մի նաւ են երևեցեալ ի Բաքուայ կողմն Ռուսաց զօրօք և թօփովք, որք անտի անցեալ և գնացեալ են ի Մազանդարանու կողմն։ Ջհաւաստի բան ինչ ոչ ումեք յայտնելով, նոյնպէս և սմա գրեաց, զի և նոքա այսմ կարօտ էին գիտակ գոլ։ Որ և յղեցաւ ընդ ի Ղարսայ առաքեցեալ սուրհանդակին ի սոյնոյ ամսոյս Դ (4)։

1781 թ. նոյեմբեր—Թուղթք ի Թիֆլիզ քաղաքն

Գեանջեցի Սիմէօն վարդապետ ոմն խնամատարութեամբ Գեօրկին Միրզայ արքայորդւոյն, կամելով շինացուցանել զի վաղուց աւերեալ վանըն սրբոյ հայրապետին մերոյ՝ Յոհաննու Օձնեցւոյ, այժմ թղթովք Գեօրկին Միրզային և քաղաքի առաջնորդ Կարապետ վարդապետին եկեալ էր առ սրբազան Վեհն՝ առ ի առնուլ զկոնդակ։ Բայց այժմ ոչ կոնդակ տրեցաւ նմա (որոյ աւիթն ի ներքոյ յայտնի), այլ պատասխանիք գրեցան թղթոցն բերեցելոց և ընդ ինքեան վերադարձուցան, որպէս և ինքն կամեցաւ։ Ընդ որս Բ (2) ևս այլ թուղթք գրեցան, որք ահա ի ներքոյ նշանագրին։ Իսկ և ի գիւղականաց նոյն վանիցն ևս էր բերեալ գիր, որում պատասխան ոչ գրեցաւ այժմ յատկապէս։

504. Թուղթ գրեցոյց Վեհն տաճկերէն առ Գեօրկին Միրզայ՝ որդին Հերակլեայ արքային, ի պատասխանի նորա թղթոյն ընդ Սիմէօն վար-
126ա դապետին գրեցելոյ։ Արդ՝ զի-// գրեալ էր սա վասն Սիմէօն վարդապետին, առ սրբազան Վեհն, թէ վասն խաթեր տին, ի սէր շահել և ընկալնուլ, գրէ սրբազան Վեհն, թէ վասն խաթեր քոյ ընկալաք զնա սիրով, և թէ զայլ որպիսութիւնս ի քաղաքիդ առաջնորդ Կարապետ վարդապետէն և ի մեր վէքիլ տէր Ղազարէն իմանալոց ես։

505. Թուղթ ևս երկարօրէն առ առաջնորդ Կարապետ վարդապետն և վէքիլ տէր Ղազարն գրեաց վասն Սիմէօն վարդապետին, ի պատասխանի թղթոյ Կարապետ վարդապետին, որ ևս էր գրեալ առ սրբազան Վեհն, որկարգել զՍիմէօն պետն առաջնորդ սրբոյն Յոհաննու Օձնեցւոյ վանիցն, որպէս և Գօրկինն ևս էր գրեալ, կոնդակ տալ նմա և կացուցանել առաջնորդ նոյն վանիցն և շրջակայից նորին՝ նմին վիճակ կարծեցելոց։ Եւ այլ էր այն վանքն ընդ մէջ թեմիցն Հախպատու և Սանահնոյ։ Եւ զի ի վաղուց էր աւերեցեալ, զաւթեալ էին զթեման նորա Հախպատ և Սանահին, զորս և ի կոնդակս նոցին արձանացուցեալ էին բազումք ի հայրապետաց և ի թագաւորաց։ Իսկ այժմ մինչ ասացեալ Սիմէօն վարդապետն և գիւղական անձինք ոմանք կամէին շինել զայն, կոնդակ տալն ի վերայ շրջակայ գիւղորէիցն նորա, վտանգաւոր իմն երևիւր, քանզի աղմուկ շփոթի էր լինելոց Հախպատու և Սանահնու թեմիցն և ժողովրդոցն, վասն որոյ գրեաց սոցա այժմիկ՝ ծանուցանել զայս արքայորդւոյն և ժողովել զհնագոյն արս կողմանցն և հարցանել, զի թէ

թուղթ կամ հաւաստի վկայութիւն ինչ եկցէ թէ ի մօտակայ ժամանակի չէն իցէ լեալ վանքն այն, և ունիցի՞ զթեմ, որում այժմ տիրեսցէ և հախպատացուց և սահմանեցուց աղմուկ չլինիցի, ծանուսցեն, զի յայնժամ զկոնդակ տացէ վասն շինութեան նորին։ Իսկ թէ ոչ երևեսցի վկայութիւն ինչ, զայն ևս ծանուսցեն։

Նաղագաղափարն թղթոյս է նոր տետրն շարադրանաց ի 251 երեսն։

506. Փուտոլայ ևս գրեաց առ Կարապետն վարդապետն և տէր Ղազարն, թէ յորժամ հասցի առ ձեզ թուղթդ մեր, նախապէս ընդ Սիմէօն վարդապետիդ առեալ տարջիք առ արքայորդին և զամենայն գրեալսն ի դմա ծանուսջիք նմա, որպէս զի յառաջ ինքն գիտասցէ և ապա թէ հրամայեսցէ սինհոդոս լինիլ, որպէս և գրեցաք, դուք ևս հետևեսջիք և առնել տաջիք և մեզ գրեսջիք զորպէսն զինչ և լինիցի։ Եւ մինչ հաստատուն վկայութիւն գտցի վասն այն վանիցն, յայնժամ և Սիմէօն վարդապետդ գալոց է ի հարկէ, զի կարգեսցի առաջնորդ։ Իսկ եթէ չկամիցի արքայորդին հետևիլ և սինհոդոս առնել, դուք ,որքան հնար է, ի խնդիր լինիջիք թղթոց հնագունից, և զբաղմամեայ անձինս ևս հարցջիք և եթէ զբան ինչ հաստատուն իմանայցէք, մեզ գրեսջիք։ Իսկ եթէ ոչ գտցի հաստատուն իմն վկայութիւն, զայն ևս ծանուսջիք։

Սորա օրինակն ևս է ի նոր տետրն շարադրանաց, ի 254 երեսն։

126բ 507. Թուղթ ևս առ Դինիբէկեանց խատինի որդի պարոն Յովսէփին գրեաց, ի պատասխանի նորին ի հոկտեմբերի Թ (9) և ի Գեանջայու գրեալ թղթոյն։ Եւ արդ, զմանէ այսպէս է գիտելի, զի սա յառաջ քան զԳ (3) ամս գնացեալ էր ի Հնդիկս և այժմ վերադարձեալ անտի համանգերձ թղթովք ի նուիրակէն մերմէ առ սրբազանն և ընծայիւք յոմանց առ Հերակլ արքայն, նաև առ սրբազանն ևս, եկեալ էր հասեալ ի Բաքու, յորոյ իշխողէն ըմբռնեցեալ էր և արձակեցեալ ապա։ Իսկ այժմ գրեալ էր սրբազան Վեհին, թէ զթուղթս ունիմ ի նուիրակէն և զընծայս ևս ունիմ անտի և այլն։ Բայց ոչ կարեմ գալ յայդր, մինչ ոչ նախ գնացեալ տեսից զարքայն։ Ապա յետ տեսանելոյս զնա, գալոց եմ և զոր ընդ իս, ինքնին բերելոց եմ։ Առ որ գրեաց սրբազանն, թէ եթէ մինչև ցարդ զհոգալի բանսդ տեսէ՞ր յայդր, շուտով ղրկեալսդ առեալ հասուսցես մեզ։ Իսկ եթէ քո յայդր մնալն յամիցի, զայդոսիկ քոյին կնիքով կնքեալ յանձնեսցես յառաջնորդին տեղւոյդ՝ Կարապետ վարդապետին և գործակալին մերոյ տէր Ղազարին, որք ամբողջ հասուսցին առ մեզ։

Գաղափարն թղթոյս այսօրիկ ի վերայ կտոր թղթոյ իրիք է։

508. Թուղթ ևս յատկապէս առ առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց, յորում նախ յիշեաց, թէ թուղթդ էհաս ընդ Սիմէօն վարդապետին, որում երկար պատասխանի գրեցաք ի վերայ քո և տէր Ղազարին, ահա զորս տեսանելոց էք։ Բայց մեք, ասէ, յառաջ գրեցաք քեզ զեափրեճի և զձիոյ չուլ առնուլ և յղել, զորս շուտ յղեսցես։ Այլև յառաջ քան զբաղում աւուրս գրեաց սմա վասն Սահակաշինու տէր Խաչատուր քահանային, թէ զնա եթէ կամիս, աւագ քահանայ արա, եթէ ոչ, դու գիտես, քեզ է ապաստան։ Իսկ այժմ Բամբկաձորու մէլիք Շաքարոն եկեալ աստ յոյժ աղաչեաց զսրբազան Վեհն, սակս տէր Խաչատուրին, որպէս զի ըստ միւս աւագ քահանայիցն Թիֆլիզու, առնիցէ զնա կոնդակաւ աւագ քահանայ։ Ուստի ահա գրեաց սմա, թէ թէպէտ յառաջ վասն

տէր Խաչատուրին զայն ինչ գրեցաք քեզ, սակայն այժմիկ պարոն Շաքարոն յոյժ աղաչեաց, զի մերովս յատուկ կոնդակաւ առնիցեմք զնա աւագ քահանայ։ Վասն որոյ գրեմ քեզ, պարտիս կոչել զնա և յղել ի սուրբ Աթոռս, և թէ չկամիցի գալ, դու գրեսցես և զկոնդակ խնդրեսցես վասն նորա, զոր գրեալ յղեսցուք ի ձեռս քո և զորքան և զրամ գրեսցուք առնուլ, առցես և զկոնդակն տացես ինքեան։

Եւ ապա զոր ինչ գրեաց առ Դինիբէկեանց խատինի որդի Յովսէփն, վասն ի Հնդու բերեալ թղթոցն (որ ահա ի վերդ ի թուղթն նորա յայտնի 127ա է). սմա ևս ծանոյց, թէ զայս ինչ գրեցաք նմա և զ//թուղթն յղեցաք առ ձեզ, դու և տէր Ղազարն տաջիք նմա, եթէ գալոց լինի, գայցէ, ապա թէ ոչ, զգրեանսն և զաւանդսն մեր, որ առ նա, առեալ շուտով ընդ հաւատարմի յղեսջիք։

Գրեցան և յղեցան թուղթքս ընդ Սիմէօն վարդապետին, յամսոյս Թ (9)։

1781 թ. նոյեմբեր—Թուղթ ի Բայազիտ և յՈւչքիլիսէ

Ուչքիլիսէի սրբոյն Յովհաննու Մկրտչի վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետն ի ներկայումս եկեալ ընդ Դունկիանոս նոտար և ընդ Ղազար վարդապետացն, ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի սրբազան Վեհն ի հոկտեմ[բերի] ելն։ Եւ յարդեանս վերադարձաւ, ընդ որում սրբազան Վեհն զկոնդակ և զքանի ի գրեանս գրեաց, որք հետևեալս ահա նշանագրին։

509. Կոնդակ առաջնորդութեան ետ սրբազան Վեհն վերոյ յիշեալ Մկրտիչ վարդապետին ի վերայ նոյն Ուչքիլիսէ կոչեցեալ սուրբ վանից բոլոր թեմիցն, ըստ նմանութեան և ըստ կարգի առաջնորդական կոնդակացն, որք տրին բազում առաջնորդաց, ծանուցանելով ի նմա զեպիսկոպոս ձեռնադրելն նորին և գրելով զպատուէրս հոգևորս։

510. Թուղթ ևս առ Բայազիտու Իսաղ փաշայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ Մկրտիչ վարդապետին գրեալ էր առ սրբազան Վեհն, խնդրելով ձեռնադրել զնա եպիսկոպոս։ Առ որ գրէ այժմ, թէ ահա ըստ օրինի մերոյ ձեռնադրեցաք զՄկրտիչ սրբազան Վեհն, թէ ահա ըստ օրինի մերոյ ձեռնադրեցաք զՄկրտիչ եպիսկոպոս և վերադարձուցաք ահա զնալ ի վանսն իւր, որում, պետն եպիսկոպոս և վերադարձուցաք ահա գնալ ի վանսն իւր, որում, աստ, խնամածու լինիլ խնդրեմ զի զվանքն բարեպէս կառավարեսցէ և այլն որպէս պատշաճն էր։

511. Թուղթ ևս առ նոյն Իսաղ փաշայն գրեաց յատկապէս յաղագս ի յՈւչքիլիսէի թեմսն եղեալ անիծեալ ախթարմայիցն, որք օր աւուր յաւելանային և լրբանային՝ զանհնազանդութիւնս ցուցանելով առաջնորդին իւրեանց և զուղղափառ դաւանութիւն Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ ուրացեալք, հետևէին պատրշաց, գնալով զհետ հեշտասիրութեան և թուլամորթութեան։ Որոց աղագաւ գրեաց սրբազան Վեհն, թէ ահա ի մէնչ հեստեալ առաջնորդին ոչ հպատակ լինին և զարդիւնս ինչ ոչ տան սուրբ վանիցն եւ այսպիսութեամբ վանքն այն օր ըստ օրէ չքաւորի. վերջապէս ի հարկէ զմիաբանսն անտի հանելոց և բերելոց եմ աստէն և զՏունն այն ամայացուցանելոց։ Բայց այսպիսի բան ոչ պատշաճ տեսանեմ յաւուրս քոյ լինիլ։ Ապաքէն խնդրեմ զգոյշն թամպէհն առնել և հարկել,

զի զիւրեանց հաւատն հայրենի հաստատ պահեսցեն և առաջնորդին
127բ հնազանդ լիցին և զմեր կարգ և օրէնսն պաշտեսցեն և զամենայն //հասս վանիցն իւրեանց տացեն, որովք վանքն այն չէն մնասցէ։ Գիտես, ասէ, որ մեծախնամ թագաւորն զհրովարտակ է յղեալ ձեռամբ Պօլսոյ պատրիարքին մերոյ յոմանս տեղիս վասն այնց տեղեաց չար ախթարմայիցն, առ ի սպառնալեօք և կամ պատժօք և տուգանօք ուղղել զնոսա։ Եթէ դու ես յայդր եղելոցն չհետևեսցիս, ի մեծէ թագաւորէն վրէժխնդրութիւն լիցի զոյա, որ քեզ պակասութիւն է։ Վասն որոյ խնդրեմ, զի դու հոգասցես և այլն։ Որ յոյժ երկար գրեցաւ և այլես լաւ ոճիւ, բայց գրիչս զմիտն բանին միայն առի աստ։

512. Թուղթ ևս առ Թօփրախղալայու Աւտուլլա բէկն գրեաց, վասն Ուչքիլիսէի վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետին զյանձնարարութիւնս առնելով։

513. Թուղթ ևս առ տէր Վահանն գրեաց ի պատասխանի նորա այժմ գրեալ թղթոյն, որում նախ զայս գրէ, թէ ահա զԱ (1) բեռն գինի յղեցաք վասն իշխանացն տեղւոյդ, զոր կամէաք ընդ քեզ յղել ի գալդ։ Երկրորդ՝ զի զմեծ եկեղեցին դեռ ես չէին զերծեալ ի նորոգմանէ և նորագնաց նուիրակին մերոյ ոչ լինիւր պատշաճաւոր տեղի, և սոքա տարակուսեալ էին։ Գրէ սրբազան վեհն, թէ կամ ի միւս եկեղեցին յղեսջիք, կամ ի շրջակայսն մերձ։ Երրորդ՝ ասէ զՍահակ աղայի ամանաթն, որ պարտիք ճերմակ չինել, շնորհակալ եղաք։ Չորրորդ՝ զՄկրտիչ վարդապետն օրհնեալ եպիսկոպոս՝ յղեցաք յետս, յորմէ զամենայն որպէսն մեր իմանալոց ես։ Հինգերորդ՝ ասէ, վասն չար ախթարմայիցն զրանս գրեցաք առ փաշայն, որպէս յառաջ Մկրտիչ վարդապետն և դու կամեցեալ էիք։ Վեցերորդ՝ զԲ (2) ամանով փլաւ յղեցաք ի ձեռս քո, զմին տացես Ռզվան աղային, վասն նորին խնդրոյն և զմիւսն՝ մատուցես Սալման բէկին, որոյ սակս դու էիր խնդրեալ։ Եօթներորդ՝ Սահակ աղային ողջոյն գրեաց և յատուկ շնորհակալութիւն վասն յղելոյն նորա զԱ (1) տիկ պանիր, որում նաև վասն Մկրտիչ պետին զյանձնարարութիւն գրեաց։ Ութերորդ՝ զի տէր Վահանս վասն ուրումն Յակոբջան անուն մարդոյ աղերսանաց գիր էր գրեալ առ սրբազանն, տալ նմա զժողովարարութեան կոնդակ, վասն որոյ գրէ սմա մեղադրակերպ, թէ դու չե՞ս գիտակ, որ ըստ որում մեր ֆէրմանքն դեռ չեկին, ոչ ումեք տամք զկոնդակ, ընդէ՞ր զայդպիսի խնդիրս առնես։ Եւ ի վերջոյ, թէ զԳՌ (3000) ղիան տուեալ սոյն Յակոբջան անուն մարդոյս վերադարձուցաք։

Գրեցան և առաքեցան ընդ Մկրտիչ վարդապետին թուղթքս, ի սոյնոյ ամսոյս ԺԴ (14)։

514. Բայց և ի ներկայումս եկեալ էր առ սրբազան վեհն մեր Լմու սրբոյ անապատի հայր Յակոբ վարդապետն, ըստ որոյ խնդրոյ որպէս և կարգ է նորոգ նստող կաթուղիկոսաց ի սուրբ Աթոռս՝ զկոնդակ տալ
128ա վասն անապատացն։ Սրբազան վեհն ևս զմի // կոնդակ ընդհանրական ժողովարարութեան շնորհեաց այժմ յատկապէս վասն Լմու անապատին, նորին առաջնորդ Յակոբ ծերունի վարդապետին, զոր և նա ետ ի ձեռս իւր միաբան Աւետիք վարդապետին և յղեաց առ ի շրջացուցանել։ Գրեցաւ այս կոնդակս ևս յամսոյս ԺԴ (14), բայց սակայն եղ ի ԺԵ (15) կամ ի ԺԶ (16)։

1781 թ. դեկտեմբեր—Ի Բայազիտ թուղթք

515. Ընդ ումեմն վաճառականի Թիֆլիզեցւոյ Շմաւոն անուն, որ ի Դաւրիժու կողմանէն զբեռինս տանէր վասն Հերակլ արքային, Բայազիտու Իսաղ փաշայն զԴարբաս անուն ոմն տաճիկ էր եղեալ՝ առ ի հասուցանել աստ և զթուղթ էր գրեալ առ սրբազան վեհն բարեկամական[109]։ Եւ Ռզվան աղայն ևս էր գիր գրեալ։ Վասն որոյ և սրբազան վեհն զԲ (2) զթուղթս բարեկամութեան գրեաց առ նոսա, ի պատասխանի թղթոց նոցին յամսոյս Գ (3)։ Եւ զի Ռզվանն խնդրեալ էր զորպիսութիւն գրել, ծանոյց թէ, ահա Հերակլն զաստի վարեալ ժողովուրդն, ըստ մասին վերադարձոյց յայս երկիր[110]։

1781 թ. դեկտեմբեր—Թուղթք ի Ղարս

516. Էրէց ոմն ի Ղարս քաղաքի Գէորգ անուն, զկռուասիրութիւն և զայլ անկարգութիւնս առնելով, նոյնոյ քաղաքի առաջնորդ Յովհաննէս վարդապետն զփիլոնն առեալ էր նորա և ի կարգէն իբրու լուծեալ։ Իսկ ապա ի յանդգնիլն չերիցուն յիշեցելոյ ի բաջաղմունս ընդդէմ սրբոյ Աթոռոյս և առաջնորդին (որ և ի գրելն ժողովրդեանն զմահսար զանկատանաց զնմանէ առ սրբազան վեհն, լիրբն այն ոմամբք արբանեկօք խրովք անկեալ առ տաճիկս, զմահսարն յափշտակեցուցեալ էր և այրեցուցեալ)։ Նոյն առաջնորդ Յովհաննէս վարդապետն այրեցեալ սրտիւ զարարմունս նորա գրեալ էր սրբազան վեհին և մեծ թախանձանօք խնդրեալ առ ի բանադրել զնա։ Ուստի և սրբազան վեհն ըստ պահանջման հարկին և ըստ արժանւոյն զբանադրանաց Ա (1) սեաւ թուղթ գրեաց ի վերայ չերիցուն այնմիկ, ըստ անկարգութեանց նորա, որոյ նախագաղափարն է ի տետր շարադրանաց Ղունկիանոս վարդապետին։

517. Թուղթ ևս առ Ղարսայ իշխանսն գրեաց այսպէս, թէ առաջնորդն ձեր Յովհաննէս վարդապետն ի բաղում իրս պիտանի էր մեզ, բայց ըստ թախանձանաց ձերոց և ըստ խնդրոյ արարաք զնա ձեզ առաջնորդ՝ ակն ունելով, թէ սիրիցէք և պատուիցէք զնա ըստ արժանւոյն, իսկ դուք այնքան բարձի թողի էք արարեալ, մինչ զի աչացու չերիցակոտր մի զնա և զմեզ հայհոյէ և անարգէ և զսուրբ Աթոռս զգլբաշարան կոչէ և դուք
128բ ոչ ինչ խօսիք։ Ի բաղում տեղեաց առ մեզ մահսարք գան, որոց // չատքն ընդ քաղաքէդ ձեր անցանի։ Իսկ այտի, որ յոյժ մերձ էք սրբոյ Աթոռոյս, առ մեզ առաքելի մահսարն ձեր բանսարկութեամբ անզգամի միոյ այրեցեալ լինի, որ մեծ նախատինք է ձեզ և դուք թոյլ տաք։ Զոր կերպ բան չեմ լուեալ, որ օրինազանց չէրէց մի զբոլորդ ի ձեռն հոմանեացն, իբրու ի ներքոյ ոտից իւրոց արկեալ է և զիւր կամսն կատարեալ և զԱթոռս և զմեզ և առաջնորդն հայհոյեալ։ Արդ, ահա զչիքն այն բանադրեցաք և զթուղթն անիծից յղեցաք առ առաջնորդն, որ բերեալ ի մէջ եկեղեցւոյդ ընթեռնուլ տացէ և զպիղծն այն որոշեսցէ ի յօրհնեցելոցդ. և զորպէսն մեզ գրեսցէ, և դուք այսպէս իմացեալ ի բաց կացջիք ի նըմանէ։

Սորին օրինակն ևս է ի տետր Ղունկիանոս վարդապետին։

518. Թուղթ ևս առ Ղարսայ առաջնորդ Յովհաննէս վարդապետն գրեաց, թէ լուաք զչարութիւնս այն լրբ Գէորգ չերիցուն։ Եւ զարմանամ, թէ մինչ յանդգնեցաւ նա զայն լրբութիւնս առնել, ընդէ՞ր ոչ կամ դու

յանդիմանեցեր և պատժեցեր, և կամ թէ մեզ գրեցեր առ ի փոյթ տալ զբաժին նորա, քան թէ թոյլ մնացեր, մինչ բանն անդ էհաս։ Ահա զէրէցն, աւէ, արարաք ընդ բանիւ և գրանադրանաց թուղթն յղեցաք ի ձեռն քո, զոր տարցես, աւէ, ի քաղաքն և ընթեռնուլ տացես յեկեղեցւոջն ի լուր ամենեցուն՝ հանդերձ ծանուցմամբ և մերկացուցեալ ի շնորհացն, որոշեսցես ի սուրբ հօտէն։ Իսկ զթուղթ մի ևս առ քաղաքի իշխանսն գրեցաք, աւէ, սակս թոյլ մնալոյ նոցա առ անկարգութիւն չերիցուն. տուր զնոքեանս առ ի ընթեռնուլ։ Զքեզ վասն խաթէր զոցա արարաք յայդր առաջնորդ։ Այլ մինչ դուք այնքան անօգնական լինիք քեզ, մինչ զի չէրէց մի զայնքան բարբանջմունս փսխէ առ մեզ և առ քեզ, և չխօսին ինչ, զի՞նչ օգուտ առ բերէ քո յայդր կալդ, այլևս եկ ի սուրբ Աթոռս, մեզ պիտանի ես։ Ինքեանք ծանիցեն զիւրեանց օգուտն։ Ապաքէն յետ կատարելոյդ զպատուէր մեր, ծանո մեզ զորպէսն.

Այլև վասն ցորենառութեան տեղս խօսեցաք, աւէ, ընդ ղօշավանցի Ստեփանին. նա ասաց, թէ ի վանքն ցորեան և գարի կայ Ակիբէկին։ Արդ, թէ լաւ գնով լիցի, զտեղւոյդ Ճ (100) սոմարն գարի և Ճ (100) սոմարն ցորեան առնուցուս և զգինն հատեալ մեզ գրեսցես, և ապա երթիցես ի Ղարս, զի մեք շուտ բերցուք և գրեսցուք պարոն Գէորգին տալ զգինն, որպէս և այժմ ևս գրեցաք նմա յայսմ կողմանէ։ Բայց թէ ի տաճկէն առնուլն, աւէ, ի գլուխ չգայցէ, ի շրջակայ գիւղօրէիցդ առնուցուս և պատրաստեսցես, զի և Ստեփանն խոստացաւ, աւէ, թէ ի գիւղօրայսն ևս գտանիլ կարեմք։

Նախագաղափարն սորա ի վերայ հատուած թղթոյ է։

129ա 519. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, յորում նախ մխիթարութիւն վասն մահուան զոքանչին և ապա ի կողմանէ բանադրանաց չերիցուն և առման ցորենոյն ի Ղօշավանիցն վասն սրբոյ Աթոռոյս. ծանուցումն և հարկ, զի ինքն ևս հոգածու լիցի այնց։

Յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Ստեփանին, յամսոյս Զ (6)։

1781 թ. դեկտեմբեր—Կոնդակ ժողովարարութեան վասն Տաթևու վանիցն

520. Ըստ խնդրոյ Տաթևու սրբոյ Ստաթէի վանից առաջնորդ Յովակիմ վարդապետին, որ զտէր Գէորգն յղեալ էր և խնդրեալ ի ձեռն նորա զկոնդակ առաքել, սրբազան Վեհն զկոնդակ ընդհանրական ժողովարարութեան շնորհեաց վասն այն սուրբ վանիցն, ծանուցանելով զվշտակրութիւնսն առաջնորդին վասն խառնակութեան երկրացս, որոց իշխօղքն անդադար զզօրս առաքեն ի վերայ իրերաց և կամ ինքեանք իսկ յառնեն ի յաւարել զերկիրս միմեանց, յորոց ոչ սակաւ լինին վնասք վանօրէից։ Եւ ի վերայ այսց զայն ևս, որ տանիքն եկեղեցւոյն յոյժ խախտեցեալ էր և յառաջնորդն կամէր նորոգել և ոչ կարէր վասն աղքատութեանն։ Ուստի և կարի յորդորէ զժողովուրդն ի տուրս ողորմութեան։ Նաև պատուիրէ ի դէմս գանձապետացն, զի զգանձանակադրամս նոյն սուրբ վանիցն յանձնեսցեն սոյն կոնդակ շրջեցուցանողին, որ կամ առաջնորդըն իցէ, կամ նորին միաբան ոմն։

Յղեցաւ ընդ տէր Գէորգ վարդապետին յամսոյս Ժ (10)։

1781 թ. դեկտեմբեր—Ի Թիֆլիզ առ առաջնորդն և առ ոմանս թուղթք

Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն երկիցս զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն, այժմ ընդ տէր Ղազարին առ ոմանս զօրհնութեան գրեանս էին խնդրեալ։ Վասն որոյ սրբազան Վեհն թէ զպատասխանիս նոցին, և թէ զխնդրեալսն հանդերձ այլ գրովք առ այլս գրեալ առաքեաց, որք ահա ի ներքոյ շարակարգին համառօտ։

521. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան սրբազան Վեհն առ Շինտիս գիւղի մովրով պարոն Զաքարիայն գրեաց, որ ի ներկայումս ի ջանալն հախպաթցւոց զնոյն գիւղն թեմ ինքեանց, այլ զօլով այնր բնականապէս վիճակ սրբոյ Աթոռոյս, սա ևս ջատագովութիւնս էր արարեալ և օգնեալ մերայնոցն, որք կրկին հաստատեալ էին զայն գիւղն վիճակ սրբոյ Աթոռոյս։

522. Կոնդակ ևս ի վերայ նոր ճորտացելոյն սրբոյ Աթոռոյս Պօղոսին Սաղաթիէլեան, գրեաց յատուկ օրինակաւ, որ է ի նոր տետրն շարադրանաց, ի 312 երեսն, որոյ ի պիտոյանալն անց տեսցես։

129բ 523. Թուղթ ևս առ պօլսեցի տպագիր Պօղոսն[111] գրեաց (որ գնացեալ անդ վասն Վրաց տպագրատուն հաստատէր և զգիրս կերտէր), ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր և վասն ձուլման գրոցն զանթիմոնատ խառն կապար խնդրեալ ըստ հրամանի արքային Հերակլոյ։ Իսկ սրբազան Վեհն նախ զշնորհակալութիւն գրեաց գործարանին և վասն խնդրեցելոյն գրեաց, թէ մեր ունեցեալն ևս առ ներկայ գործածութիւնս մեր ընդ չէ բաւական, թէպէտ այլ կամեցաք ժԵ (15) հօխայչափ յղել։ Բայց և մտածեցաք, թէ գուցէ այսքանս չբաւականասցի քոյին ամենայն կիրառութեանց։ Վասն որոյ գրեմ քեզ, զի թէ այսքանս քոյ նորակերտ գրոց փորձառութեանն բաւական վարկանիցիս, շուտով ազդեսցես, զի յղեսցուք։ Այլև ասացեալ էր սա անդ առաջնորդ Կարապետ վարդապետին և նա գրեալ էր սրբազան Վեհին, թէ զղապղ գրեա ի Պօլիս մերայնոցն, զի ՉՁ (600) ղուռուշ տացեն յԱստաաչի խանն կեսարացի Թախտաբուռուն օղլի խոջայ Սարգսին և յղեա առ մեզ, զի զայնքան զդրամն ի Պօղոսէն առնուցումք և զղապղն տացուք նմա յղել ի Պօլիս։

Վասն որոյ սրբազան Վեհն Ա (1) ղապղ գրեաց ի վերայ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետին ըստ վերագրելոյդ կերպի պահանջմանն, զի ՉՁ (600) ղուռուշ տացէ յիշեալ խոջայ Սարգսին, գրելով թէ Պօղոսն մեզ է հասուցեալ։ Արդ ուրեմն և առ սա գրէ, թէ առաջնորդ Կարապետ վարդապետն ծանուցեալ էր մեզ ի կողմանէ փօլիցային, զոր յայդր յանձնելոց ես նմա՝ առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ զղապղըն գրեալ յղեցաք ի ձեռս նորա տալ քեզ և զդրամն առնուլ ի քէն։

524. Թուղթ ևս առ Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա ի նոյեմբ. Բ (2) և ի ԻԲ (22) գրեալ թղթոցն փուսուլայիցն։ Արդ, վասն խնդրեալ թղթոցն, զորս ահա գրեալ յղեաց (որպէս ի վերդ նշանագրեցան) ազդէ թէ ահա յղեցաք, տուր ի տեարսն։ Բայց յաղագս տպագիր Պօղոսի խնդրեալ փօլիցայագրին գրէ, թէ նախապէս զդրամն առնուցուս, ապա զղապղն տացես նմա և զանունդ զդրամն ծանուցես մեզ։ Եւ թէ 40 եափնճիքն և 40 ձիոյ չուլքն հասին, որոց գինքն հանդերձ քիրայովն լեալ էր ԺԴ (14) թուման, ԴՌ և Ա (4001) ապասի, զորս գրեցաք ի քոյդ առ մեզ հասուցեալ տրոցդ դաւթա-

բոջն։ Նոյնպէս և յառաջ յղեալ շթի բեռն էհաս, որոյ գինն ես հանդերձ այլ ծախուքն ի (20) թուման և Զ (6) շահի էիր գրեալ, զայն ես ընկալաք և գրեցաք ի դաւթարոջդ։ Իսկ և վասն յայգր նուիրակ առաքմանն գրեալ, աւէ, թէ ոչ է ժամանակ և թէ ե՞րբ է ժամանակն ոչ ծանուցանես. հալպաթ գրեսցես։ Նոյնպէս և վասն փոքր աղջկան ազատութեանն միջա գրես, աւէ, թէ ջանամք ընդ միրզայ Միսայէլին ազատել և ինքն Միսա-
130ա *յէլն // գրեալ էր, թէ ազատեցաք և չիմացաք, թէ ո՞րպէս եղև։ Ահա հարկեմ զաշխատանս ձեր ի գլուխ հանէք։ Դարձեալ, աւէ, զհարազատութենէ Ենօքին գրեալ էիր շնորհակալեցայ զնմանէ, զորոյ խնդրեալ գիրն ի վերայ մէլիքին յետոյ գրելոց եմք։ Այլև յառաջ զայս ի նոյնմբեր ընդ Սիմոն վարդապետին առ քեզ զթուղթ գրեալ այլովք հարկաւոր գրեամբք յղեցաք ի ձեռս ձեր, զպատասխանին թէ չես գրեալ, գրեսցես։ Եւս վասն Սահակաշինու տէր խաչատուրին այս ինչ, աւէ, գրեցաք քեզ, թէ պարոն Շաքարօն աղաչէ զմեզ, զի մերով կոնդակաւ հաստատեսցուք զնա աւագէրէց ի նոյն եկեղեցւոջն և հարկեցաք զնորա որպէսն գրել մեզ, զի զկոնդակ առաքեսցուք։ Այժմ ես հարկեմ շուտով ծանուցանել մեզ զնմանէ։*

524բ. *Թուղթ ես առ Բամբկաձորու մելիք Շաքարօն գրեաց. թէ ըստ խոստման մերոյ քեզ յառաջ գրեցաք առաջնորդին, գրել մեզ զտէր խաչատուրի որպէսն, զի յղեսցուք վասն նորա զկոնդակ աւագերիցութեան և այժմ ես հարկեցաք, զի շուտ գրեսցէ։ Իսկ ի վերջոյ, թէ թղթոյս բերողն առ քեզ յայգր բողոք ունի աղգելոյ, իրաւամբ վերահասու լիցիս, վարձք է ձեզ։*

525. *Թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս վէքիլ տէր Ղազարն գրեաց, ի պատասխանի նորին նոր գրեալ թղթոյն, ասելով թէ ի կողմանէ կարնեցի Կարապետ աղային, զոր ինչ գրեալ էիր, իմացաք և շնորհակալեցաք։ Կրկին պատուիրեմ մուղայէթ լինիլ Կարապետին, զի յայգր մնալ յօժարիցի միշտ։ Եւ թէ ահա զթուղթ մի յանուն դորա եկեալ յայլուստ յղեցաք քեզ, տուր ցնա և զպատասխանին վերադարձո, զի յղեսցուք առ տէարսն։ Սոյն յիշեալ Կարապետս այն է, որ հանդերձ որդխութեամբն յիշեալ գոյ ի վերն, ի հոկտեմբ[երի] ԻԳ (23) ես ի թուղթս Թիֆլիզու։*

Ուղարկեցան գրեանքս ընդ հովուի միոյ (որ ի թուղթն Շաքարօն յիշեցաւ), յամսոյս ԺԸ (18), բայց ոմանց ի թղթոցս թիւքն ԺԷ (17) գրեալ եղեն և միւսոյն, որ առ Շաքարօն՝ ԺԸ (18)։

1781 թ. դեկտեմբեր—Թուղթ ի Բայազիտ

526. *Սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ Եսայի վարդապետն մինչ վախճանեցաւ, յորմէ հետէ մինչև ցայժմ է աւելի քան զտարի մի, նոյն սուրբ վանքն մնացեալ էր թարց այցելուի։ Այժմ Բայազիտու իշխանքն զքանի մի կնքով թուղթ են գրեալ առ սրբազան Վեհն՝ վասն նոյնոյ վանից միաբան Պետրոս վարդապետին կարգել զնա առաջնորդ այն սուրբ վանիցն։ Զոր գիր յանձնեալ Բայազիտու աւագ քահանայ տէր Վահանին, հանդերձ Պետրոս վարդապետին և քանի մի միաբանիւք սուրբ վանիցն յիշեցելոյ, յղեալ էին ի սուրբ Աթոռս առ սրբազան Վեհն՝ ի կատարումն խնդրոյն իւրեանց։ Բայց սրբազան Վեհն, նկատեալ զանպատշաճութիւն Պետրոս վարդապետին (զոր և միաբանքն իսկ*

ասէին), ոչ արար զնա առաջնորդ, այլ միայն վէքիլ կացոյց զնա այն
130բ *սուրբ Տանն և նորին // թեմիցն, փոխանակ առաջնորդի, մինչև ի հասուցանել Տեառն յետ միջոցի զվայելուչ առաջնորդ ոք արժանաւոր այն սուրբ վանիցն։ Վասն որոյ վէքիլական Ա(1) կոնդակ գրեաց վասն Պետրոս վարդապետին առ միաբանսն և ժողովուրդսն վիճակաց սրբոյ վանից Առաքելոյն Թադէոսի, որոյ օրինակն գտանի ի շարադրանաց տետեր 259 երեսն։*

527. *Թուղթ ես առ Իսաղ փաշայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ Պետրոս վարդապետին վասն նորա զյանձնարարութեան էր գրեալ, որում գրէ թէ ի սէր ընկալաք և խիլայիւ վերադարձուցաք, դու ես խնամես ի շէն պահել զվանքն։*

528. *Թուղթ ես առ ոմն Եղիա՝ ի Բայազիտ գրեաց վասն Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետի սպասաւոր տէր Մկրտիչ գոյիցն, որ եկեալ Եղիասառ վախճանեցաւ, զորմէ կարծիս ունէին բազումք, թէ առ սոյն Եղիաս այս դրամ է թողեալ։ Վասն որոյ գրեաց սմա, թէ տէր Մկրտիչն ի Պօլսոյ եկեալ է յայգր և զթամպալիթն և զդրամն առ քեզ թողեալ գնացեալ է ի խոյ և անտի դարձեալ յայգր ի գալն աստ, զթամպալիթն միայն է բերեալ, այլ զդրամն առ ձեզ է թողեալ։ Արդ, այժմ հանգեաւ, աւէ, նա փառաւորապէս թաղեալ զնա զհոգին հոգացաք, զնորին զրամն յղեսցես։*
Ցղեցան թուղթքս ընդ Պետրոս վարդապետին և տէր Վահանին յամսոյս ԻԱ (21)։

1781 թ. դեկտեմբեր—*ի սուրբն Սաղիմ և ի Կարին*

Վարժ ի գողութիւնս Սահակ անուամբ տղայ ոմն ատի վարեցեալ զոլով, հասեալ էր մինչ ի Սաղիմ և անդ մտեալ ի վանսն սրբոց Յակոբեանց, առ պատրիարքն զգողութիւնս էր արարեալ ի քանեաց տեղից, և գողունեօքն եկեալ մինչև ցգիւղս մեր։ Այլա պատրիարքն Յովակիմ վարդապետն իրազեկ եղեալ, զթուղթ էր գրեալ ի Կարին առ իշխանսն և առ իւրեանց գործակալսն՝ հետևել և գտանել զգողն այն և զգողունիսն պահանջեալ առնուլ և յետս յղել։ Իսկ նոքա ես իմացեալ զգողոյն այնորիկ յայս գեղջս լինելն, զթուղթս էին գրեալ առ սրբազան Վեհն՝ գտանել զգողն զայն և դատելով՝ զգողունիսն յետս առնուլ և վերադարձուցանել։ Վասն որոյ և սրբազան Վեհն ըստ խնդրոյ նոցա արար և վասն գողունեացն զթուղթ գրեաց առ սրբոյ Երուսաղէմի պատրիարքն և առ ոմանս, ընդ որս և զԿարնոյ իշխանաց և այլոց թղթոց զպատասխանիսն գրեաց, որք ի ներքոյ յանուանէ յիշատակին։

529. *Թուղթ առ սուրբ Երուսաղէմի պատրիարք Յովակիմ վարդապետն գրեաց վասն գողունեաց վերոյ յիշեալ Սահակին, զոր անդ ի նոցունց գողացեալ էր և սրբազան Վեհն աստ յետս էառ, զորոց և զդաւթար քանի մի եպիսկոպոսաց կնքեցուցեալ, յղեաց ընդ այսմ և գրեաց յայսմիկ, թէ զայն իրսն առ ո՞ և կամիս հասուցուք։*
Զգաղափարն թղթոյս գտցես ի շարադրանաց տետեր 261 երեսն[112]*։*

131ա *530. Թուղթ ես առ ոմանս իշխանս Կարնոյ և առ սրբոյ Երուսաղէմի վէքիլ պարոն Մխիթարն գրեաց, վասն բանից նոյն յիշեալ գող Սահակ տղային, նոյնպէս որպէս և պատրիարքին սրբոյ Երուսաղէմի գրեցաւ։ Ի*

պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին, ընդ որում առ պատրիարքն յղեալ գաւթարին, նմա գաւթար մի ես առ նոսա յղեաց, զի և նոքա ծանիցեն զառ ձեռն եկեալ գողունեաց զորքանն։

Սոյն թղթոյս օրինակն է ի Վարդանայ տետր 264 երեսն։

531. Թուղթ ես առ սրբոյ Երուսաղէմի և Կարնոյ նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն։ Եւ զի նա ես էր գրեալ աղաչանօք վասն վերոյ յիշեալ գողոյ գողացելոցն հոգ տանիլ, սմա ես ծանոյց զորպէս ըմբռնելն զգողն և այլն։ Եւ առէ զերկարապէս ի գրոյ Կարնոյ իշխանացն իմանալ։ Այլև ի սրբոյն Սաղիմայ Գաբրիէլ վարդապետն, նախածանօթ սրբազան Վեհին, յղեալ էր ընդ սոյն Պետրոս վարդապետիս զ60 ղուռուշ սահաթագին ընծայ վասն սրբազան Վեհին, զոր և սա յանձնեալ էր ի Կարին վէքիլին մերոյ պարոն Հայրապետին։ Վասն որոյ զմիամտութիւն գրէ, թէ էհաս մեզ, զշնորհակալութեան գիր գրեցաք առ նմա։ Այլև ինքն ես սա զփոքր ինչ օճառ էր ընծայ յղեալ սրբազան Վեհիս, որոյ սակս ես առ սա զշնորհակալութիւնս գրեաց։

532. Թուղթ ես առ սրբոյ Սաղիմայ միաբան յիշեալ Գաբրիէլ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին սիրոյ և շնորհաւորականի թղթոյն, զոր գրեալ էր նա այժմ, որ և յղեալ էր զդրամ ինչ ի գին ժամացուցի իբրու ընծայ սրբազան Վեհին, որպէս ի վերին թղթոցդ յիշատակեցաւ։ Ուստի զշնորհակալութիւն գրեաց։ Ծանոյց ես զգողի անցսն, որ ի վերոյդ յիշատակեալ եղև։ Իսկ ի վերջոյ ողջոյն և օրհնութիւն գրէ սորին հարազատի Յովհաննէս վարդապետին։

Օրինակն սորա յետկոյս բարեգրին նորին է։

533. Թուղթ ես առ ատտի ի Հասանղալայու վանքն գնացեալ Սահակ պետն գրեաց, ի պատասխանի նորին ի հոկտեմբեր ժէ (17) և ի նոյեմբեր ժե (15) գրեալ թղթոցն, որ վասն ատտի եկանելոյն սարքացեալ զըղձալիր բանս գրէր (էջ 131ա—131բ)։

534. Թուղթ ես ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց այսպէս, թէ ի նոյեմբերի 25 և ի 29 գրեալ Բ (2) թուղթքդ հասին առ մեզ։ Նախ գրեալ էիր, թէ զառաջին և զերկրորդ գրեալ գրեանսն մեր սուրբ Կարապետի վանից մարդովն ի Պօլիս եմ յղեալ. ընդ որ միամտեցաք։

Երկրորդ՝ ի կողմանէ բստացի հանգուցեալ մահտեսի Սիմէօնին զվկայութեան բազմակնիք գիր շինելդ և ի Պօլիս յղելդ էիր ծանուցեալ, առ այն ես շնորհակալեցաք։

Երրորդ՝ ի Բայազիտ տէր Վահանին զդրամ էիր երես արարեալ առնուլ և մեզ հասուցանել (Ա, Բ)։ Նաև՝ ի Կարնոյ Բ (2) չխնով ամանաթ էիր յղեալ առ տէր Վահանն (Գ, Գ), և ես զդրամ էիր փօլիցայ արարեալ ձեռամբ արապկիրցի Աղամջանին, որ տացէ տէր Վահանին, զորս պարտի տէր Վահանն առ մեզ հասուցանել։ Առ այդ լուր, զի տէր Վահանն նախ քան զգալն կարաւանին ի Բայազիտ, եկեալ էր ի սուրբ Աթոռն, որ և ի քոյդ կողմանէ մեզ դրամ հասոյց (Գ, Ե) և խոստացաւ զմնացեալն ի դառնալն ի Բայազիտ, անտի յղել, մինչև լրասցի թիւն (Ե), որ և ահա գնաց, իբրև հասուցանիցէ՝ գրելոց եմք քեզ։ Չորրորդ՝ Ջամքեարթանեան Գրիգորի ի Թօխաթ գնալն և զտալցու դրամն այլոյ երես առնելն էիր գրեալ, ջանասցես առնուլ։ Հինգերորդ՝ վասն Սաղիմայ Գաբրիէլ վար-

դապետին վասն մեր զԱ (1) սահաթագին յղելն իւրեան նուիրակաւն և քո առնլոյն էիր գրեալ, ահա առ նա զշնորհակալութեան գիր գրեցաք և զ60 ղուռուշն գրեցաք ի գաւթարոջդ։ Վեցերորդ՝ վասն Կարապետ տղային Եփրիկեան, որ ի Թիֆլիզ, կրկին յանձնարարութիւն գրեցաք անդ։ Եօթներորդ՝ զնազարի թուղթն գրեալ յղեցաք, տացես ինքեան։ Ութերորդ՝ իշխանացն տեղւոյդ ի մէնջ ասասցես, զի զպատշաճաւոր ոմն վէքիլ կարգեսցեն, մինչ զառաջնորդ յղեսցուք յետ աւուրց։ Իններորդ՝ գրեալ էիր թէ թօխաթցի պարոն Մինասն տալիքն թասլիմ արաւ մահտեսի խաչատուրին (Բ, Դ, Ջ) և միամտեցաք։ Բայց դու ասասցես նմա, զի զհին և զնոր հաշիւն, որ ի մէջ մեր և իւրն, պարզապէս գրեալ մեզ ծանուցէ, զոր գիտեցեալ մեր, զոր ինչ գրեսցուք նմա, այնպէս արասցէ։ Տասներորդ՝ մինչ աստ էիր, քո եղբայր Ֆռանկիւլն յայտր ի թօխաթցի Կարմրուկ օղլի մահտեսի Սարգսէն Ճ (100) ղուռուշ դրամ էր առնուլ և սանստ առեալ, զոր մեք աստ տացուք, զոր ահա եռուք և զսանատըն առեալ՝ ի թղթոջս յղեցաք առ քեզ և զդրամն ի քոյդ առից գաւթարոջն՝ գրեցաք։ Մետասաներորդ՝ Տաթեւ վանից ժողովարարն աստ ի մէնջ 70 ղուռուշ էառ և սանստ ետ, զոր ես ահա յղեցաք քեզ, զդրամն առցես և զսանատն տացես։ Ապա զի վերոյդ յիշեալ գողի պատմութիւնն երկարապէս գրեաց։ Եւ զի փայակն աստ քանի օր յամեցաւ, վասն որոյ գրէ զվարձն աւելեօք տալ։

Յղեցան գրեանքս ընդ փայեկին անուամբ Մինաս ի սոյն ամսոյս ԻԴ (24)։

132ա

1781 թ. դեկտեմբեր—*Առ Յովաննէս ոմն թիֆլիզեցի*

535. Ի վերադառնալ Երեւանու երկրիս իշխողի որդւոյն Ղուլամալի խան կոչեցելոյ, որ յղեցեալ էր ի հօրէն ի Թիֆլիզ առ Հերակլ արքայն վասն հաշտութեան, և ի խնդրել և բերել զաստի վարեալ ժողովուրդսն, զոր երկու ամաւ յառաջ վարեալ էր նա։ Զորս և հայցեալ վերադարձոյց ես ըստ մեծի մասին յիշեալ Ղուլամալի խանն, ընդ նմա եկն և Իւանէ Մուխրանբէկն առ խանն մեր ի հաւաստութիւն հաշտութեանն, որոյ ձեռամբն և յորդորմամբն իսկ էր եղեալ դարձումն վարեցելոցն ի հայրենիսս իւրեանց։ Արդ, գոյր ընդ սմա Յովաննէս անուամ ոմն ի մերս ազգէ[113], որ անդ երկար միջնորդ Ղուլամալի խանին զհաւատարմութիւնս էր արարեալ և վասն դարձման ժողովրդոցն և նա աշխատեալ, որ և այժմ ի ձեռն վերոյ յիշեալ մեծամեծացն և թէ ինքն իսկ իւրովին յոյժ աղաչեաց զսրբազան Վեհն շնորհել ինքեան զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան վասն աշխատութեանցն, գրելով և զանուանս ընտանեացն իւրոց։ Վասն որոյ և սրբազան Վեհն ի թախանձանաց նորին Ա (1) զթուղթ գրեաց առ նոյն Յովաննէսն, թէ որ զայսքան աշխատանս էիր կրեալ և զհաւատարմութիւնս արարեալ Ղուլամալի խանին և օգնութիւնս արարեալ, վասն որոյ արժանապէս զայս օրհնութեանս գիր գրեցաք ի վերայ քոյ և այլն։ Եւ ի յօրհնութիւնսն յիշեաց և զանուն ամուսնոյն Եղիսաբէթին և հանգուցեալ հօրն՝ Մէհրապին և մօրն՝ Մարիամին և պապուն՝ Արշէնին։ Գրեալ առաքեցաւ առ նա, մինչ ի յԵրեւան էր ընդ Մուխրանբէկին, յամսոյս Ի (20)[114]։ Որ թէպէտ ի վերոյ քան զվերին գրեալ երկուս կարգս թղթոցդ պարտ էր յիշատակել, սակայն մոռացմամբ յետաձգեալ աստէն նշանակեցաւ։

132բ *Ամենակարողին և մշտագթածին Տեառն Աստուծոյ ամենաբաւական ողորմութեամբն և բարեյաջողիչ շնորհին, ես՝ նուաստչուառ անձն, Անանիա անուանեալ պանդոյրս, յետնեալս ծառայից սրբազան Վեհի բազմախնամ տեառն մերոյ, ահա իբրու վճարեցի սխալագիծ գրչութեամբս զնորանց տարւոյս ես զգրեցեալ թղթոց զյիշատակագրութիւնս ըստ իմս ապիմաստ և ապիկար կարեաց և ջանից։ Ապաքէն յաջողողին Տեառն Աստուծոյ փառք և պատիւ, գոհաբանութեամբ հանդերձ, յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։*

1782

133ա ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՌՄԼԱ (1782) ԱՄԻ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԵՐՈՑ ՎԵՐՈՑ ԳՐԵՑԵԼՈՑ ԵՐՐՈՐԴԻ ՏԱՐՒՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԻՆ ԵՒ ՀՈԳԵԼՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԱԹՈՌՈՅՍ ԷՋՄԻԱԾՆԻ։ ՈՐՈՅ ԲԱՐՁՐ ԵՒ ՕԳՏԱԻՈՐ ՀՐԱՄԱՆԱՒՆ, ԵՍ՝ ԴԱՏԱՐԿՍ Ի ԲԱՐԵԱՑ ԵՒ ԹԱՓՈՒՐՍ ՅԻՄԱՍՏԻՑ, ԱՆԱՆԻԱ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԱՆԱՐԺԱՆ ԿՈՉՄԱՆՍ ՍԱՐԿԱՒԱԳ, Ա[ՀԱ]ՒԱՍԻԿ ԴԱՐՁԵԱԼ ՄԽԵՑԻ ՁԱՊԱՇՆՈՐՀ ՄԱՏՈՒՆՍ ԻՄ Ի ԳՐՉՈՒԹԻՒՆ ՍՈՅՆՈՑ ԱՄԻ ԵՒՍ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ԱՊԱՒԻՆԵԱԼ Ի ՁՕՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՁՕՐ ՁԵՌԻՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ, ՈՐՈՎ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԲԱՐԻՔ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԻՆ Ի ՓԱՌՍ ՆՈՅՆՈՑ ՄԻՈՅՆ ԵՒ ՄԻԱՅՆՈՅ ՄԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐՈՒՄ ԲԵՐԱՆԱՒՈՐ ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ ՎԵՐԱՆՈՒՐԵՍՑԻ ԱՌ ԱՐԴԵԱՆՍ ԵՒ ԱՌ ՅԱՊԱՅՆ ԵՒ ՅԱՆՁՐԱՒ ՅԱՒԻՏԵԱՆՍ։ ԱՄԷՆ։

1782 թ., հունվար—*Թուղթ ի Թիֆլիզ առ արքայորդի Գեորգին Միրզայն*

536. Ի մտանելս մեր ի շնորհաւորս այս տարի, նախաքար դէպ եղև սրբազան Վեհիս մերոյ ի Թիֆլիզ առ Հերակլ արքայի որդի Գեորգինն զԱ (1) թուղթ գրել, զի Շաքարօ անուն ծառայն նորա եկեալ և պատահեալ ի սուրբ Աթոռս, յորդորեաց զսրբազան Վեհն զխաթրահարցական գիր մի գրել ընդ ինքեան առ նա։ Եւ սրբազան Վեհն, քանզի ունէր զյատուկ սէր և զբարեկամութիւն ընդ նմա, որպէս և նա ընդ սմա, յայսմ նուագի ունկնդիր լեալ նոյն Շաքարօ անուամբ ծառային նորա, գրեաց զտաճկերէն խաթրահարցական թուղթ մի առ նա, ըստ որում և ի յերկարատև միջոցի չէր գրեալ նմա զգիր, և ի ոչ գոլ թղթոյն դատարկ, առաքեաց զքանի մի կտոր սպիտակ մոմ՝ ի նշան սիրոյ։ Իսկ առ այլ ոք ի Թիֆլիզ նարդեանս բնաւ զգիր ինչ ոչ գրեաց, բայց միայն արքայորդւոյն։ Որ և հանդերձ մոմիւքն յղեցաւ ընդ յիշեալ Շաքարօյին յամսոյս Բ (2)[115]։

133բ 1782 թ., հունվար—*Թուղթք ի յարտաքին վիճակսն մեծին Պօլսոյ և ի Պօլիս, նաև ի յՈւռումէլի՝ առ նուիրակն մեր,. և ի Կարին*

Պօլսոյ արտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն անդ ի վիճակսն իւր ի յոմանս տեղիս զգանձանակունսս հաստատեալ վասն սրբոյ Աթոռոյս և ի յԱտաբազարու եկեղեցեացն ևս զգանձանակադրամս

ընկալեալ՝ յանուն սրբոյ Աթոռոյս, ի վերայ նոյն տեղեացն շնորհակալութեան և օրհնութեան և կոնդակական թուղթս էր խնդրեալ։ Զորս և սրբազան Վեհն գրեցուցեալ առաքեաց, հանդերձ միով թղթով առ ինքն, ընդ որս և առ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն և առ Ռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն ևս զգրեանս գրեաց, որք ահաւասիկ ներքնաշարեալք նշանակին։

537. Թուղթ օրհնութեան ի Ցըրըզլու վասն հաստատելոյ նոյնոյ տեղւոյ ժողովրդոցն ի մէջ ինքեանց զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս՝ յորդորմամբ նուիրակ Գալուստ վարդապետին։ Յորում թղթոջ և պատուէր նորոգ կարգեցեալ գանձապետ տիրուհի Նանային՝ առ ի արիաբար կատարել զգործն։

538. Թուղթ ևս ի Թամլուխ, յաղագս նոյն տեղւոյ ժողովրդեանն ևս հաստատելոյ զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս յինքեանս, յորում և պատուէր Սարոյ Մարտիրոսին գանձապետ կարգեցելոյ՝ առ ի ժիր լինել ի գործն։

539. Թուղթ ևս ի վերայ Ղնճլարու ժողովրդեանն վասն նոցա նորահաստատ գանձանակին, յորում ևս պատուէր՝ վասն արիութեան մահտեսի Մատթէոսին ի գանձապետութիւնն։

540. Թուղթ ևս ի վերայ Ղուրտբէլանկու ժողովրդեանն գրեաց վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ մահտեսի Սերոբին պատուէր՝ արի կալ ի գանձապետութեանն։

541. Թուղթ ևս ի վերայ Օրթագեղի ժողովրդեանն վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ Վարդիկին պատուէր՝ ժիր կալ ի գործն։

542. Թուղթ ևս ի վերայ Սապանջայու ժողովրդեանն վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ տէր Ստեփանին պատուէր՝ վասն արիութեան ի գործն։

543. Թուղթ ևս ի վերայ Պաղչաջուկու ժողովրդեանն վասն նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ մահտեսի Խաչերին պատուէր՝ արի կալ ի գործն։

544. Թուղթ ևս ի վերայ Ովաճուղու ժողովրդեանն, վասն նոցա նորհաստատեալ գանձանակին, որոյ գանձապետ մահտեսի Յարութիւնն մահտեսի տէր Մկրտչեան նոյնպէս պատուէր։

545. Թուղթ ևս ի վերայ Ասլանբէկու ժողովրդեանն վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ Վարդանին պատուէր՝ ժիր կալ ի գործն։

546. Թուղթ ևս ի վերայ Եալախտարայու ժողովրդեանն, որք ևս զնորոգ գանձանակ էին հաստատեալ, որոյ գանձապետ մահտեսի Պետրոսին ևս պատուէր՝ արիապէս կատարել զգործն գանձապետութեան։

13 ա 547. Թուղթ շնորհակալութեան և օրհնութեան սրբազան Վեհին ի յԱտապազար ի վերայ տէր Շահինի կոչեցեալ եկեղեցւոյն գրեաց, վասն գանձանակադրամոյն նոցա, որ ձեռամբ գանձապետ մահտեսի Մարտիրոսին և եղբօրն մահտեսի Ոսկանին (Ա, Թ, Դ) հասեալ էր սրբոյ Աթոռոյս նուիրակ Գալուստ վարդապետին։

548. Թուղթ ևս նոյնպէս ի վերայ Դիմիճի կոչեցեալ եկեղեցւոյ ժողովրդեանն, վասն նոցին գանձանակադրամոյն (101 ղուռուշ 20 փարայ), ձեռամբ գանձապետ Արևելցի Ղազարին հասելոյ առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Գալուստ վարդապետն։

549. Թուղթ ևս նոյնպէս առ տէր Սարգսի կոչեցեալ եկեղեցւոյ ժողովրդեանսն վասն գանձանակադրամոյն նոցա (Ա, Ա, Դ) Ժ (10) փարային, որ ձեռամբ գանձապետ Գեանճ Կարապետին հասեալ էր նուիրակ Գալուստ պետին։

550. Թուղթ ևս ի վերայ տէր Պօղոսի անուամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովրդեանսն վասն նոցին գանձանակադրամոյն (Դ, Ե), ձեռամբ գանձապետ Արևելցի Եղիային հասելոյ առ նուիրակն։

551. Թուղթ ևս առ տէր Միքայէլի կոչմամբ յատկացեալ՝ եկեղեցւոյ ժողովուրդսն վասն նոցա գանձանակադրամին (Ե, Դ), ձեռամբ գանձապետ Եսայուն հասելոյ առ նուիրակն։

552. Թուղթ ևս առ տէր Յակոբի կոչմամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովուրդսն վասն նոցա գանձանակադրամին (Դ, Թ) 30 փարայ, ձեռամբ գանձապետ մահտեսի Յակոբին հասելոյ առ նուիրակն։

553. Թուղթ ևս առ տէր Յովհաննէսի անուամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովուրդսն, վասն նոցին գանձանակադրամին (Ա, Ա, Ա) ձեռամբ գանձապետ մահտեսի Ստեփանին հասելոյ առ նուիրակն։

554. Թուղթ ևս ի վերայ տէր Ազարիայի կոչմամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովրդեանն վասն գանձանակադրամին նոցա (Գ, Է) Ի (20) փարայ, ձեռամբ գանձապետ տիրացու Ստեփանին հասելոյ առ նուիրակն։

555. Թուղթ ևս առ Սախարի Քնարի եկեղեցւոյ ժողովուրդսն վասն նոցին գանձանակադրամոյն, ձեռամբ ծեր Յարութիւնին հասելոյ առ նուիրակ Գալուստ վարդապետն (Դ)։

556. Թուղթ ևս առ ինքն նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, թէ յառաջ քան զայս ի հոկտե[մբերի] ԻԸ (28) գրեցաք քեզ զթուղթ։ Իսկ այժմ գիր առաք ի Պօլսոյ նուիրակ Մինաս պետէն, որ զՊետրոս պետն ուղևորեալ է յայսկոյս՝ հանդերձ մահսարօքն և ֆէրմանօքն։ Եւ դու որ զմի թուղթ էիր գրեալ ի վերայ երկուցն, զի գրեսցեն մեզ և վասն քոյդ հաստատեալ գանձանակաց ոմանց և առեցելոց գանձանակական արդեանց զթուղթս խնդրեսցեն ի մէնջ (զոր դու վասն կողմնակի գոլոյդ չէիր կարացեալ մեզ գրել)։ Մինաս վարդապետն յղեալ էր առ մեզ զայն թուղթն քո և զնոյն խնդիրսն արարեալ։ Արդ, ահա զխնդրեալսդ յղեցաք, որք են ԺԹ (19) գանձանակաց թուղթք, Ժ (10) ի դոցանէ են վասն հաստատեալ գանձանակաց և Թ (9) հատն՝ վասն գանձանակական արդեանց առեցելոց ի քէն, զորս հասուցես յիւրաքանչիւր տեղիսն և այլն։ Իսկ երկիրս մեր և սուրբ Աթոռս և մեք կամք փոքր մի ի հանդարտութեան, և վարեցեալքն ի Վրացտուն դարձան ըստ մեծի մասին։ Այժմ չգոյր ինչ գրելի, ի լինելն գրելոց եմք ։

557. Թուղթ ևս առ Ուռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն գրեալ, թէ ի վաղուց է որ ոչ ընդունիմք ի քէն զգիր։ Մեք ի յօգոստոս Դ(4)
134բ գրեցաք // քեզ զթուղթ։ Իսկ այժմ գիր ընկալաք ի մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետէն, որ գրեալ էր վասն փօլիցային քոյ, թէ զմեծ մասն առեալ եմ (Ա, Է) և զմնացեալն ևս առնլոց եմ (Ե), եթէ կամիս ղապղ յղեա ինձ՝ յղել առ Մեսրոպ վարդապետն ի միամտութիւն նմա։ Եւ մեք վասն այնքան ինչ դրամոյ (Բ) զԱ (1) ղապղ գրեալ անա՝ յղեցաք առ, զի զայնչափ դրամն մեզ հասեալ գիտասցես։ Եւր ուրեմն միամիտ և զգիրդ պակաս մի առներ։ Եւ զայն Ուռումէլուոյ գանձանակագրամն առնուլդ մեզ ծանո։

Օրինակն սորա ի վերայ կտոր թղթոյ է։

558. Թուղթ ևս առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն գրեալ, ի պատասխանի նորին թղթոցն հնգից ի նոյեմբ. ԺԱ (11) գրեցելոց, որ և ծանուցեալ էր, թէ զՊետրոս վարդապետն հանդերձ ֆարմանօք և մահսերօք ուղևորեցաք ի հոկտեմբերի ԻԳ (23) դէպ ի սուրբ Աթոռս, որոյ զօրինակն գտցես ի շարադրանաց նոր տետր 265 երեսն, մինչ հարկաւորիցի զտանել[116]։

559. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեալ, ի պատասխանի ի դեկտ. ԺԴ (14) գրեալ թղթոյ նորին, առ որ գրէ, թէ թուղթդ էհաս ընդ Մինաս պետի թղթոցն, ձեռամբ փայեկին։ Արդ, քան զայս յառաջ գրեալ Բ (2) թղթոցդ պատասխանին ընդ միւս փայեկին յղեցաք ի դեկտ. ԻԴ (24), յորում ծանուցաք վասն ի Բայազիտ յղեալ ամանաթիցդ, թէ դեռ անդ է, երբ և հասցի մեզ, միամտեցուցանելոց եմք զքեզ։ Եւ թէ զՄինաս վարդապետի փօլիցայ առնելն էիր ծանուցեալ (Ե) և ղապղ խնդրեալ, ահա գրեալ յղեցաք։ Եւ թէ վասն ակնցի Հաճի Յովաննիսին, որ ի բանտի է, զմխիթարութեան գիր էիր խնդրեալ գրել և ի կողմանէ փօլիցային ևս յիշել. այժմ չգրեցաք, զի թէ առ նա գրէաք, պարտ էաք բանտակցացն ևս գրել։ Մինչ զերծցին, առ ամենեսեանն զմխիթարութիւն եմք գրելոց։ Բայց դու ըստ խոստման Հաճի Յովաննիսին զդրամն առնուլ ջանասցես և մեզ գրեսցես։

Վասն ախթարմայից լրբենի համարձակութեանն և մերայնոց թիլատրութեանն էիր գրեալ, տրտմեցաք յոյժ, Աստուած հոգասցէ։ Նաև սակս մերայնոց ոմանց անկարգութեանն էիր ազդեալ և զխրատական կոնդակ խնդրեալ։ Լուր, զի մինչ հասանիցի առ մեզ ֆարմանաբեր Պետրոս վարդապետն մեր, այնպիսեացն վրէժխնդիր եմք լինելոց։ Սակայն դու ըստ յառաջ գրեցելոյ մերոյ, ողջոյն տացես ի մէնջ իշխանացն և ասասցես, զի զամն վէքիլ կարգեսցեն, մինչ մեք զտեղւոյդ պատշաճ ոք առաջնորդ կարգեալ յղեսցուք՝ առ ի սանձահարել զանկարգսն։ Եւ թէ ահա զՄինաս պետի թղթոց պատասխանին, հանդերձ այլ թղթովք գրեալ, յղեցաք փայեկաւդ, յղեա առ նա։ Իսկ թէպէտ գրեցաք, ասէ, ի վերոյ, թէ զՄինաս պետի ղապղն յղեցաք, բայց այն ղապղն ոչ յղեցաք։ Այլ այսպէս գրեցաք, ասէ, Մինաս պետին, թէ մեր վէքիլ Հայրապետի թղթովն, որ փօլիցայ էիր տուեալ յայտր ակնցի Հաճի Յովաննիսի օրթախ մահտեսի Ստեփանին և Գօրօյենց Զրաղ Ստեփանին (Ե) և զղապղ խնդրեալ, իմացաք, բայց արդ զղապղն չյղեցաք, զի սպասեմք գալստեան Պետրոս
135ա պետին, զի յորժամ նա առ մեզ հասցի, յայնժամ թէ վասն այսր և թէ այլ հասուցելոցդ բոլորապէս զղապղ մի գրեալ յղեսցուք ձեռամբ Հայ-

րապետին առ քեզ՝ ի միամտութիւն։ Դու ևս, ասէ, սոյն ոճովս գրեսցես Մինաս վարդապետին։

Յղեցան թուղթքս ընդ ի Կարնոյ նորեկ փայեկին յամսոյս Դ (4)։

1782 թ., հունվար—Առ Արզուինու ժողովուրդսն

560. Ի ներկայումս արզուինցի քանի մի ուխտաւորք էին եկեալ հանդերձ տէր Մարտիրոս քահանային իւրեանց։ Ընդ որս զԱ (1) թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Արզուինու ժողովուրդսն, ի պատասխանի իւրեանց թղթոյն, որք զԺԸ (18) զուռուշ գանձանակագրամ էին յղեալ ձեռամբ տէր Մարտիրոսին։ Որոյ աղագաւ շնորհակալութիւն, և վասն երկուց քահանայիցն իւրեանց պատուէր՝ սիրով և եղբայրաբար վարիլ ընդ միմեանս խաղաղութեամբ, և պատուէր դարձեալ՝ յախթարմայից հեռի կալ, ընդ որս և չառնել խնամութիւն։ Եւ զպարոն Աստուածատուրն կարգեաց վէքիլ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս, զոր աթոռակալ ասեն անդ։

Զգաղափարն թղթոյս գտցես ի նոր տետրն շարադրանաց ի 269 երեսն, որ և գրեալ առաքեցաւ ընդ նոյն յիշեալ տէր Մարտիրոսին յամսոյս Ժ (10)։

135բ
1782 թ. հունվար—Թուղթ ի Ղարս առ պարոն Գէորգն

561. Յայս աւուրս ի Պօլսոյ և ի Կարնոյ թուղթք էին հասեալ ի Ղարս առ պարոն Գէորգն՝ գրեալ ի վերայ սրբազան Վեհին։ Ընդ որս և նա ևս զգիր գրեալ առ սրբազան Վեհն, հանդերձ այնոքիկ յղեալ էր։ Վասն որոյ և սրբազան Վեհն զմի թուղթ գրեաց նմա յաժմ, ի պատասխանի նորին թղթոյն, որ էր յամսոյս Զ (6) գրեցեալ, ծանուցանելով նմա, թէ գիրդ ընդ ի Կարնոյ եկեալ գրեանցն էհաս մեզ և իմացաք զմեռ ֆէրմանաբեր Պետրոս պետի գալն ի Կարին։ Որոյ սակս և պատուիրեաց, թէ ի հասանելն յայդր շուտ ուղևորեսցես դէպ աստ։ Այլև ազդեալ էր սա, թէ ափանդի զատայքն զԾ (50) սոմար ցորեան և գարի ընծայեցին Աթոռոյդ։ Ընդ որ զշնորհակալութիւնս գրեաց զնոցունց։ Իսկ և հայցեալ էր ըստ խնդրոյ նոցա ի պէտս Սուլէյման փաշային զԲ (2) հատ գոյնզգոյն ղատաք Ասպահանու, և զգոյնսն չէր գրեալ։ Ընդ որ ապա թէ յՆերսագրէ սրբազան Վեհն, թէ զգոյնսն է՞ր ոչ էիր ծանուցեալ. ապա թէ յՆերսագրէ սրբազան Վեհն, թէ զգոյնսն է՞ր ոչ էիր ծանուցեալ. ապա թէ Գ (3) լաւն որոշեցաք, որոց մինն լաւ, նու Ի (20) հատ բերել ետուք և Գ (3) լաւն որոշեցաք, որոց մինն լաւ, գունով խինայի՝ Զ (6) ղուռուշի և Բ (2) հատն իւրաքանչիւրքն Դ (4) ղուռուշ և կիսի։ Զի Բ (2) լաւն յղեսջիք, և մինն, որն և տհաճելի իցէ, մնասցէ։ Զորս ահա Առաքելի ձեռամբն յղեցաք ի Ղօշավանք առ Ստեփանն՝ քեզ հասուցանել։ Նաև խնդրեալ էր սա ի Կարին առ մահտեսի Սահակն և առ որդի նորա մահտեսի տիրացու Կարապետն զօրհնութեան թուղթ գրել։ Եւ առ այս գրեաց սրբազան Վեհն, թէ նա մեզ ևս է սիրելի, առ որ քանիցս գիր եմք գրեալ, ասէ, և ի գալ Պետրոս պետին ևս եմք գրելոց զթուղթ նմա, յորում ծանուսցուք վասն քոյ, ասէ, թէ պարոն Գէորգն խնդրեալ էր ի մէնջ ի վերայ քոյ զօրհնութեան գիր գրել։

Յղեցաւ ընդ շաթիր Առաքելին յամսոյս ԺԸ (18)։

1782 թ., հունվար—Ի Բայազիտ առ նուիրակն մեր և առ տէր Վահանն

562. Ապա ի Բայազիտու տէր Վահանէն միմէ ամանաթ ինչ և գիր եկն առ սրբազան Վեհն։ Վասն որոյ սա ի պատասխանի գրեցելոցն նորա զԱ (1) թուղթ գրեաց նմա, թէ յունվարի Տ գրեալդ էհաս, զեկուցեալ էիր զհնազանդութենէ իշխանացն քաղաքիդ, զորս օրհնեցաք, ասէ։ Եւ թէ ի կողմանէ հին հաշուիդ, զոր գրես ի գալն աստ պարոն Հայրապետին, վերջացուցաք։ Իսկ ի կողմանէ մեր յատուկ և անձնական հին հաշուին, որ յատկապէս է ՃԽԲ (142) դուռուշ և կէս հասուցեալ ես մեզ և զերծեալ, լեր միամիտ և զայս թուղթս իբրև զխալասագիր և զապդ ընդ քեզ պահեա, զի հին հաշիւքն վերջացան։ Բայց ի կողմանէ նոր հաշուիդ ևս այսպէս ծանիր, զի մինչ աստ էիր, ձեռամբ քով մեզ հասուցեր զայս ինչ դրամս (Գ, Ե)։ Եւ նարդենիս ևս Առաքելին և Շիշման Դաւթին յղեալ էիր ամանաթ (Բ, Ա, Ե), զորս ահա գրեցաք ի գլուխ նոր գաւթարիդ և զառ քեզ եղեալն ևս հասո մեզ։ Այլև յաղագս Ա (1) զութի յղեալ տանծիդ շնորհակալ եմք զքէն։

136ա 563. Թուղթ ևս առ Բայազտոյ նուիրակ Կարապետ վարդապետն գրեաց, հարկելով նախ՝ զո՞ր լինիլն և զքանի՞ս գիւղս նուիրակելն ծանուցանել հանդերձ այլ ուրախութեամբք։ Այլև սա անդ վասն հոգեբաժին և զայլ կերպ արդեանց տալոյ սրբոյ Աթոռոյս (զոր իբրև չէր սովորութիւն նոցա տալ մեզ) զվէճ առնէր, որ և գրեալ էր սրբազան Վեհի սպասաւոր Նահապետին, թէ այս ո՞րպէս երկիր է, որ յամենայն տեղիս յանուն սրբոյ Աթոռոյդ զհոգեբաժին և զայլ կերպ արդիւնս տան, և աստ ո՛չ։ Յաղագս այսր գրէ հարկիւ սրբազան Վեհն սմա՝ զգուշանալ յայնպիսւոյ վիճոյ և ո՛չ պահանջել զայնպիսի արդիւնս, զորս չունին սովորութիւն առ ի տալ։

Գրեցան և ուղարկեցան յիշեալ երկու թուղթքս յամսոյս ԺԹ (19)։

1782 թ. հունվար—Ի յերկիրն Ռուսաց՝ ի Պետրպօլէ, ի Մոսկով, ի Հաշտարխան, ի Նոր Նախիջևան, ի Ղզլար և ի Մօզտօք թուղթք

Ռուսաց երկրի բոլոր ժողովրդոցն մերազնէից առաջնորդ և նուիրակն սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ վարդապետն ի յոլով միջոցս քանիցս զթուղթս գրելով առ սրբազան Վեհն, խնդրեալ էր գրել անդ զթուղթս առ բազումս, այսինքն՝ առ մեծամեծս Ռուսաց եպիսկոպոսունս և իշխանս, և առ իւրաքանչիւր քաղաքի երևելի անձինս Հայոց։ Եւ զի անտի յամանց ևս թուղթք էին եկեալ առ սրբազան Վեհն, վասն որոյ և սա, ի թախանձանաց Յովսէփ վարդապետին, գրեաց զյոլով թուղթս անդ առ բազումս, ոմանց՝ յաղագս պահանջման հարկին, և ոմանց՝ սակս ծանօթանալոյ ինքեան նոցա, և մանաւանդ շահելոյ զնոսա և յանձն առնելոյ զՅովսէփ վարդապետն։ Իսկ և գրեաց զհասարակական կոնդակս քանիս առ հարկի պատճառացն, զորս յայնցանէ իմացեալ լինի, զոմանս՝ ի վերայ մի մի քաղաքի և զ[ոմանս]՝ ի վերայ բազում քաղաքաց։ Եւ ամենեքեան գրեցեալքն՝ թէ կոնդակք և թէ թուղթք, են այսոքիկ, որք ահաւասիկ հետևապէս շարակարգեալ ցուցանին[117]։

136բ 564. Թուղթ ևս սրբազան Վեհն առ երկրորդն արքայութեանն Ռուսաց՝ Գրիգոր քնէազ Ալէքսանդրիչ Պոտէմկինն[118] գրեաց. շնորհակալութիւն վասն արարեալ բարերարութեանցն առ ազգս մեր, մանաւանդ առ

զրմցիսն և առ սուրբ Աթոռս, և վասն ընդունելութեանցն, զորս ցուցեալ էր Յովսէփ պետին, ընդ որում և ծանուցումն զուրախութեանց վախճանման հոգելոյս Հայրապետին մերոյ և յաջորդելոյ իւրոյ։ Եւ խնդիր՝ և ևս ունիլ զողորմածութիւն առ մեզ և առ մերայինսն և առ Յովսէփ վարդապետն։ Եւ այլ համառօտ գիտմունք ևս։

Օրինակն սորա է ի շարագրանաց տետր 335 երեսն[119]։

565. Թուղթ ևս առ վէզիրն կայսերն Ռուսաց՝ առաջին նախարար գրաֆ Նիկիտա Իվանիչ Պանինն[120], ըստ բոլոր մասաց վերոյ յիշեալ թղթոյդ, որոյ օրինակն ևս է ի նոր տետրն շարագրանաց, ի 333 երեսն։

566. Թուղթ ևս առ զօրապետն ամենայն Ռուսաց՝ ընդհանրական սպարապետ, մեծ նախարար և գաւառապետ գրաֆ Պետր Ալէքսանդրովիչ Ռումանցովն[121], և ևս ըստ վերնոցդ. բայց և յատուկ շնորհակալութեամբ յիշումն զբարերարութեանց սորին, որ զբազումս ի մերայնոցն ազատեալ էր ի սպանմանէ ի մեծ պատերազմին և զՅովսէփ վարդապետն երկիցս ընկալեալ էր ի սէր։

Այսր թղթոյ օրինակն ևս գտանելի է ի տետրն շարագրանաց, ի 331 երեսն[122]։

567. Թուղթ ևս ի Պետրպօլէ առ ազնիւ Յովհաննէս աղայն, յիշելով զառաջին գրեալ թուղթն, որ ի 1780 թուոջ Փրկչին և ի նոյեմբերի Ա (1), և զսէր և զհարազատութիւնս հայցելով հանդերձ յանձնարարութեամբ Յովսէփ վարդապետին և Պօղոսեան պարոն Խաչիկին, որ այժմ գնացեալ էր յայն կողմն։

Գաղափարն սորին է ի նոր տետրն շարագրանաց, ի 325 երեսն։

568. Թուղթ ևս ի Պետրպօլէ, առ ջուղայեցի Մանիչարեանց Աստուածատուրի որդի պարոն Մարգարն և պարոն Փիլիպպոսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց ի ՌՉՁ (1780) թուոջ Փրկչին գրեցելոյ և ի հոկտեմբերի Ա (1) առ հոգելոյս հայրապետն մեր, որք և ընծայեալ էին սրբոյ Աթոռոյս Ա (1) ականակուռ արծիւ և Բ (2) կնիք պողովատեայ, մինն՝ սրբոյ Աթոռոյս և միւսն՝ հայրապետաց սորին, ի յիշատակ ինքեանց։ Առ որս գրեցաւ ահա յայսմիկ շնորհակալութիւն և օրհնութիւն որպէս վայել էր։

Որոյ օրինակն է ի շարագրանաց տետր 313 երեսն։

569. Թուղթ ևս ի Պետրպօլէ առ տէր Յովհաննէսն գրեաց, թէ յառաջագոյն յայդ երկիր զկոնդակ գրեցաք՝ ծանուցանելով զմահ հոգելոյս Հայրապետին մերոյ և զյաջորդելն մեր հանդերձ այլ ևս ուրախութեամբք, որ հասեալ է առ ձեզ ևս։ Իսկ յետոյ քանիցս ընկալաք զթուղթս ի
137ա Յովսէփ պետէն, որ գրեալ էր մեզ զորպէսն // գալոյն իւրոյ յայդր և օծանելոյն զսուրբ եկեղեցին տեղւոյդ և դառնալոյն ի Նորն Նախիջևան։ Եւ թէ զորքան մարդասիրութիւնս էր տեսեալ ի յամենեցդ, գոհութեամբ ծանուցեալ էր մեզ, հանդերձ քոյդ ցուցեալ սիրովն, ընդ որս շնորհակալացաք և զայս գրեցաք քեզ, զի զանկեղծ սէր ունելով առ սուրբ Աթոռս, ի հարազատութեանց մի վերջասցիս։ Եւ Յովսէփ պետին ցուցցես զկատարեալ սէր, որպէս և ցուցեալ ես, մանաւանդ այժմ, մինչ կրկին եկեալ է յայդ կոյս՝ ի յօծանել զՄոսկովու եկեղեցին, և յայդր ևս իցէ, թէ եկեսցէ։

570. Թուղթ ևս առ նոյն տէր Յովաննէսի որդի երեսփոխան պարոն Պետրոսն գրեաց, ըստ մտաց և ըստ նմանութեան հօր թղթոյն, որ անա ի վերդ յիշեցաւ։

571. Թուղթ ևս առ աղայ Գրիգորն Կամպանեան, ըստ մտաց յիշեալ թղթոցդ, բայց փոքր մի հարստօրէն և ճոխ շարադրութեամբ[123]։

572. Թուղթ առ աստապատցի պարոն Մովսէսն Սարաֆեան[124], ըստ այսմ ոճի, թէ որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն, զհարազատութիւն ձեր գրէր առ լուսահոգի հայրապետն մեր, և նա օրհնէր զձեզ, իսկ այժմ ևս առ մեզ գրէ զսէրն և հարազատութիւնն ձեր, զոր առ սուրբ Աթոռս (և առ մեզ) ունիք և ինքեան ևս ցուցանէք։ Վասն որոյ զայս օրհնութեանս թուղթ գրեցաք և այլն, և ապա յորդորումն՝ կալ ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս, որպէս առ հոգելոյս հայրապետին և զառաջնորդն իւրեանց՝ Յովսէփ եպիսկոպոսն սիրել և շահել և այլն։

573. Թուղթ ևս առ պարոն Մակարն Խուտաբաշեան շամախեցի, ըստ նոյն ոճի։ Եւ զի տուեալ էր զԲ (2) չինի մեծ փարչ գինւոյ Յովսէփ պետին յանուն սրբազանին, առ այն ևս զյատուկ շնորհակալութիւն գրեաց և զօրհնութիւն։

574. Թուղթ ևս առ պարոն Յովաննէսն Խօջամալեան Ջուղայու երեանցի, ևս ըստ նոյն մտաց։ Եւ զի տուեալ էր սա զոսկեայ բռնօթամանն մի յանուն հոգելոյս հայրապետին, այնր սակս ևս յատուկ շնորհակալութիւն և օրհնութիւն գրեաց։

575. Թուղթ ևս առ պարոն Յովակիմն Լալովեան, ըստ վերնոցդ համառօտ ոճի, ի Մոսկով։

576. Թուղթ առ Մոսկովու ենարալ անշէֆ քնէազ Վասիլ Միխայելիչ Դօրգօլուկն[125]։

577. Թուղթ առ Պլատոն եպիսկոպոսն՝ վերատեսուչն տեղւոյն և գահակալն սինօթին իւրեանց[126]։

137բ 1782 թ., հունվար—Ի Թիֆլիզ առ առաջնորդ Կարապետ վարդապետն

578. Վրացի Մուխրամ բէկն, որ յայս աւուրս յԵրեան էր, վասն ուրումն Յօսէփ տղայի խնդրեաց ի սրբազան Վեհէն գրել զգիր Թիֆլիզ առ մերայինսն, յաղագս բանիս, որ ի ներքոյ ցուցանի։ Վասն որոյ սրբազան Վեհն թուղթ գրեաց առ Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն, թէ յայտր ի շուկայն՝ ի Ղայսարիումն Ա (1) դուքան կայ սրբոյ Աթոռոյս վախում, զոր առաջնորդ Յովաննէս վարդապետն է նորոգեալ։ Յայն դուքանումն յոյժ յառաջ Շիշման Բէջան ումն է նստեալ, և այժմ նորին որդի՝ սոյն գրաբեր Յովսէփ տղայս խրխճայիւ Մուխրամ բէկին խնդրեաց անդ նստիլ, և որպէս այլքն, նոյնպէս և ինքն զքիրայն տալ։ Արդ, եթէ այլ իմն պատճառ չգոյ, հարկիւ գրեմ, այն դուքանն տուր այս տղային։ Յղեցաւ թուղթս ընդ նմա յամսոյս [ԺԲ (12)]։

1782 թ. հունվար—Առ Հերակլ արքայն Վրաց

579. Հերակլ արքայն, ի գալն աստ վերոյ յիշեալ Մուխրամ բէկին, զսիրոյ գիր էր գրեալ ընդ նմա առ սրբազան Վեհն։ Վասն այնորիկ և այժմ ի դառնալն նոյն Մուխրամ բէկին այլ ևս ընդ նմա, զԱ (1) թուղթ գրեաց առ Հերակլ արքայն, ի պատասխանի նորին թղթոյն, և շնորհակալ լեալ յաղագս վերադարձուցանելոյ նորին զատտի վարեալ ժողովուրդն ի հայրենիս իւրեանց։

Առաքեցեալ եղև թուղթս ընդ Մուխրամին յամսոյս ԺԲ (12)։

Միաժամանակ նամակ է գրվել Թռատվի վիճակի առաջնորդ և սինոդի գահակալ Սամուել եպիսկոպոսին (Մոսկվա), կոնդակ է ուղարկվել Մոսկվայի հայերին, օրհնության ու շնորհակալության նամակներ են ուղարկվել Եղիազար Նազարեթյանին ու նրա որդիներ՝ Մինասին և Հովակիմին։ Վերջինիս շնորհակալություն է հայտնվում Հ. Արղության Պետերբուրգ գնալու և այնտեղից վերադառնալու ծախսը հոգալու համար։ Նամակը կիսատ է, № 4481 ձեռագրի հաջորդ էջերն աղատ են մինչև 144ա էջը։

580. 1782 թ. 30 հունվարի—Ղուկաս կաթողիկոսի նամակը իշխան Գ. Ա. Պոտյոմկինին՝ բարեկամական հարաբերությունները միմյանց միջև ավելի ամրապնդելու առաջարկությամբ։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև տիեզերականի լուսաձաւալի մեծի և սրբոյ Աթոռոյս էջմիածնի։

Յորմէ ժամանեսցի թուղթ անանցանելի օրհնութեամբն հօր Աստուծոյ, խաղաղացուցիչ ողջունիւն միածնի որդւոյ և անսպառ սիրովն հոգւոյն սրբոյ, հանդերձ հոգեկեցոյց շնորհօք և զօրութեամբք և արդահաւ օգնականութեամբ կենսատու խաչին Քրիստոսի, և նորին կողամուխ գեղարդեանն սրբոյ, և յոգնահրաշ սրբոյ տեղւոյս նորին իջման, և հրաշագործ աջոյ հօրն մերոյ՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և շնորհատու մասանց և դամբարանաց սրբուհեաց կուսանացն՝ Հռիփսիմեանց և Գայիանեանց, և այլ ամենայն յոգնահաւաք սրբութեանց և սուրբ նշխարացն, որք աստ։ Ի վերայ օրհնեցելոյդ ի Տեառնէ Աստուծոյ և զօրացելոյդ միշտ նովիմբ, ճշմարիտ սիրելւոյդ, ստոյգ բարեկամիդ և խնամողիդ սրբոյ Աթոռոյս մերոյ և մեզ, և յատուկ երախտաւորիդ համայն մեծազնեայ ժողովրդոց, որք գոն ի յօրհնեալ երկրոջդ Ռուսաց, և աստուածազօր և ինքնակալ մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ հաւատարիմ և նախապատիւ խորհրդականիդ, աստուածասէր և բարեպաշտօն, բարձրապատիւ և պերճափառ առաջին նախարար և գերապայծառ իշխան՝ քնէազ Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտէմկինիդ։ Եւ աստուածապահ տան քում, և նովիմբ զօրացեալ որդւոցդ և դստերացն, և համայն ընտանեացդ և սիրելեացդ բնաւից խնդալ ի Տէր։ Ամէն։

Շնորհք ընդ քեզ և երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ ամենակալէ և Տեառնէ մերմէ՝ Յիսուսէ Քրիստոսէ և ի սրբոյ հոգւոյն կենդանարարէ՝ իջեալ հանգիցէ ի վերայ քոյ, եկեսցէ և բնակեսցի առ ձեզ, իբրև Կյորձանս գետոց և որպէս զվտակս աղբերաց՝ յորդահոս բղխմամբ և առատապէս ծաւալմամբ։ Ամէն։

Եւ ընդ շնորհաբեղուն օրհնութեանս աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի գերարգոյ մեծութեան ձերում։ Զի զորպիսութեանց և զանցից կողմանցս այսոցիկ, մանաւանդ Տանս Արարատեան, ի հարկէ լուեալ է բարեպաշտութիւն ձեր, թէ որպիսի՞ աղէտից դիպեցաւ յանցեալ ամսն, և որպիսի՞ աւերութիւնք և անյաջողութիւնք սոյնոյ երկրի հասին, ըստ որում և սուրբ Աթոռս միածնաէջ ոչ սակաւ ձախորդութեանց առ դիպեցաւ։

Եւ ի յայն միջոցսն երանելի հայրապետն մեր՝ տէր Սիմէօն սրբա-

զան կաթուղիկոսն փոխեցաւ առ Քրիստոս։ Վասն որոյ միաբանք սրբոյ Աթոռոյս և ազգ մեր կոչեցին զմերս նուաստութիւն ի սոյն պատիւ և յաստիճանն, թէպէտ և անբաւական էաք սմին։

Եւ յայնմ օրէ մինչև ցարդ, թէպէտ բազմիցս ջանացաք գրել առ բարեպաշտութիւն ձեր զթուղթ նախընծայ օրհնութեան հանդերձ մերովս որպիսութեամբք, մանաւանդ և շնորհակալութեամբք իսկ, մինչ տեղեակ եմք լաւապէս ամենից առ ի քէն բարերարութեանց և մեծագոյն երախտեացն, որ առ սուրբ Աթոռս մեր և առ գահակալն սորին, և առ ազգն մեր խղճալի, և առ հոգևոր այցելուն զոցա՝ Յովսէփ արքեպիսկոպոսն, բայց ոչ եղաք ձեռնհաս։ Զի յաղագս վրդովմանցն մեծագունից (որք և արդ գոն մասամբ), ոչ կարէաք գտանել զպայահով կեանս, մանաւանդ և ի ճանապարհացն ես կասկած էաք յոյժ։

Իսկ այժմ հարկեցեալ, մանաւանդ և պատկառեցեալ իսկ, ի բազմազան բարերարութեանց և երախտեաց քոյոյ մեծութեան, մատուցանեմք զշնորհակալութիւնս մեր քումդ բարեպաշտութեան՝ հանդերձ աստուածային օրհնութեամբ ի ձեռն այսր սիրածիր թղթոյ։ Քանզի արդարև ունիմք զշնորհակալութիւնս յոլովս զբարեպաշտութենէ ձերմէ, զի առ կենդանութեամբ հոգելոյս հայրապետին մերոյ լսէաք և իմանայաք զամենայն բարերարութիւնսն և զերախտիսն ձեր, որ առ սուրբ Աթոռս և առ ազգս մեր, մանաւանդ առ վշտակիր ժողովուրդսն երկրին Ղրիմու դիմեալս ի ներքոյ բարւոյ հովանաւորութեան աստուածասէր և ողորմաշատ մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ, յորմէ գտեալ են զմեծագոյն ողորմութիւնս և զբարի այցելութիւնս ձերով միջնորդութեամբ, ընդունելով և ըստ բաղձանաց իւրեանց զբարուոքագոյն տեղի բնակութեան ինքեանց զպատշաճաբար անուանեալն Նոր Նախիջևան, յանդերձ յոյժ մեծագոյն բարութեամբք և յաւիտենական ողորմութեամբք, որք շնորհեցեալ են նոցա ի յառատագոյն խնամոց և յողորմութեանց աստուածապսակեալ և խնամաշատ մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ հրովարտակաւ ողորմութեան, որով և զօրինակն իսկ տեսալ եմք։

Յորում և հրամայեցեալ իսկ էր ունիլ նոցա ի միջի իւրեանց զյատուկ մագիստրաթ և վարիլ ըստ մերոց սովորութեանց, և ընդ հոգևորին լինիլ ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս միածնաիջի և սորին հայրապետաց, որպէս և նախկին հրամանն և ողորմածութիւն իսկ է առատախնամ կայսերուհւոյն Եկատարինեայ, զոր շնորհեալ է յաւուրս հոգելոյս հայրապետին մերոյ՝ ըստ նորին խնդրանացն։ Զորս զամենայն մեծաւ գոհաբանութեամբ գրեալ էին առ հոգելոյս հայրապետն մեր նոյն նորա նախիջևանցիքն, մանաւանդ՝ հոգևոր այցելուն նոցա և ամենայն իսկ մերազնէիցն, որք յայդկոյս, Յովսէփ արքեպիսկոպոսն։ Որ և զգերազանցութիւն խնամոց ինքնակալուհւոյն և օգոստինէի մօրն ողորմութեան մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ, նոյնպէս և զձերդ բարեպաշտութեան սէրն և զխնամսն, որ առ միածնաէջ Աթոռս սուրբ և առ գահակալն սորին և առ ինքն, ծանուցեալ էր, հանդերձ մեծագոյն ընդունելութեամբքն, զորս ցուցեալ էաք նմա։

Առ որս ամենայն ցնծացեալ յոյժ և մեծապէս շնորհակալեալ հոգելոյս հայրապետին մերոյ, օրհնէր միշտ զձեզ և զաստուածապահ տէրութիւն մեծին ինքնակալուհւոյ կայսերուհւոյն Եկատարինեայ, և աստուածապարգև, թագազարմ և կայսերազուն որդւոյն իւրոյ՝ Պաւլ Պետրովիչին. և բարեպաշտուհի մեծ դշխոյին իւրոյ՝ Մարիա Ֆէդրովնային,

և աստուածապարգև որդւոց նոցին՝ Ալեքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին։

Եւ մեր զոլով ականատես այսմ ամենայնի, այժմ ի յաջորդելս մերում կրկին ես լուաք զնոյնս։ Զի քանիցս անգամ ընկալեալ եմք զթուղթս ի սիրելի որդւոյն մերմէ՝ Յովսէփ արքեպիսկոպոսէն, որ գրէ վերստին զնոյն շնորհակալութիւնսն զգերազանց խնամոց մօրն ողորմութեան մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ և ձերոյ բարեպաշտութեան։

Վասն որոյ և մեք, համայն միաբանիւք աստուածաէջ սրբոյ Աթոռոյս, օրհնեցաք և օրհնեմք զաստուածապահ տէրութիւն և զիշխանութիւն առատախնամ մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ և ծիրանածին և կայսերազուն որդւոյն իւրոյ՝ Պաւլ Պետրովիչին, և բարեպաշտուհի մեծ դշխոյին իւրոյ՝ Մարիա Ֆէդրովնային, և աստուածապարգև որդւոց նոցին՝ Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին։

Արդ, հայցեմ ի յաստուածասիրութենէ ձերմէ, զի զդոյն մեծագոյն խնամս և զգթութիւնս աննուազելի ունիցիք առ միածնաէջ Աթոռս սուրբ, և առ մերս նուաստութիւն, և առ ազգն մեր խղճալի, և առ Յովսէփ արքեպիսկոպոս որդին մեր։ Եւ զբանս շնորհակալութեան, հանդերձ աստուածային ամենառատ օրհնութեամբ, ի խոնարհ դիմաց նուաստութեան մերոյ մատուցես առ գերազանց մեծութիւն առատախնամ մեծի կայսերուհւոյն Եկատարինեայ, ի դէպ ժամանակի, վասն ամենից երախտեաց և ողորմութեանց իւրոց, զոր արարեալ է և առնէ առ սուրբ Աթոռս մեր, և առ գահակալն սորին, և առ ազգն մեր, և առ Յովսէփ արքեպիսկոպոսն, զի չհամարձակեցաք մեք տալ զձանձրութիւնս պատուական գլխոյ նորին։ Յորմէ և հայցել աղաչեմ, զի ամէնաողորմածաբար ունիցի զնոյնս և յաւուրս մերոյ նուաստութեան, որպէս և առ կենդանութեամբ հոգելոյս հայրապետին մերոյ՝ առ ի կացուցանել զմեզ միշտ պարտաւորականս օրհնելոյ զաստուածապահ տէրութիւն իւր, որպէս եմք իսկ։

Եւ թէ վասն հարկաւորութեանց ինչ մերոց զբանս աղերսանաց մատուցեն մեծութեան ձերում որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն և հաւատարիմն տէրութեան ձերոյ՝ ազգիւ Յովհաննէսն Եղիազարեան, աղաչեմ լսել քաղցրութեամբ և կատարել։ Որովք ամենեքեամբք առաւել ես եմք լինելոց օրհնօղք ձերոյ բարեպաշտութեան և շնորհակալք միշտ զձէնջ, որպէս և արդ եմք։ Եւ պատմեն ի սուրբ Աթոռոջս համայն բարերարութիւնք ձեր, և ես պատմելոց եմ։ Եւ ի վերայ այսր ամենայնի զանմխիթարութիւնս մեր մխիթարել աղաչեմ ի ձեռն սիրանիշ թղթոյ։

Ողջ լեր ի Տէր, զօրացեալ ի նոյն միշտ։ Ամէն։

Գրեցաւ ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

Յամի փրկութեան մերոյ 1782, ի Յունվարի 30։

Զայսքանս գրեցի իմով ձեռամբ ի հաւաստութիւն բանիս.

Ղուկաս կաթուղիկոս Ամենայն Հայոց,

վասն ձեր զբարիս հայցօղ միշտ ի սրտէ։

ՍՍՀՄ Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ, ֆոնդ 52, ցուցակ 1/194, գործ 8, էջ 3։

144ա Յիշատակարան, յորում յիշեսցին միտք համայն թղթոց գրեցելոց ի սրբոյ Աթոռոյս։

ի հայրապետութեան տեառն Ղուկաս աստուածընտիր և վեհափառ կաթուղիկոսին ամենայն Հայոց և սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Որոյ հայրապետութեան յերրորդում ամի և յամսեանն վերոյ գրեցելոյ ի (20)-երրորդում աւուր, հրամանաւ նորին սկսեալ եղև այս յիշատակագրութիւն գրիլ ի ձեռն իմոյս՝ ապիկար Գրիգորի անուամբ ևեթ սարկաւագի նորնոյ Վեհիս պաշտօնէի։

145ա Արդէն աՀա ձեռնարկեալ սկսանիմ գրել հակիրճ և համառօտ զմիտս բնաւս թղթոց գրեցելոց՝ աստի առաքելոց ի յամենայն տեղիս և առ ամենայն ոք, այս է՝ առ քաղաքս և առ ամենայն ժողովուրդս սրբոյ Աթոռոյս, առ պատրիարգունս և առ նուիրակունս, առ առաջնորդս քաղաքաց և առ զանձապետս սորին, և առ այլ գործունեայս և հաւատարիմ որդիս սորա, նաև առ այլազգի քրիստոնեայս մեծամեծս ոմանս օգտաչանս՝ բարեպաշտ անձինս և սիրելիս մեր։ Այլև երբեմն դէպ եղելոյ մեզ գրել զթուղթս վասն իրիք հարկաւորութեան առ ոմանս ի տաճկաց, այնց ևս միտք ի սմա յիշեսցին։ Եւ զի յիշատակարան է այս, որովհետև յիշեցեալքն յայսմիկ առ յապայն պիտոյասցին, յորում հետախոյզ լեալ, որոց հարկաւորի իմանալ, որոնեսցեն ի յայս, թէ այդեօք այսինչ թուղթ ե՞րբ գրեցաւ առ այս ոմն, յի՞նչ միտս և կամ վա՞սն էր։ Ուրեմն հարկ է մեզ նշանագրել ոչ երկարապէս, այլ կարճ ի կարճոյ՝ հանդերձ գրեցմամբ զպատճառս և զթիւ ամաց և ամսոց առ ի դիւրագիւտ լինել յուզողաց։

1782 թ. մայիս—Թուղթ գրեցեալք ի Թիֆլիզ առ նորին առաջնորդ և նուիրակ Կարապետ վարդապետն և առ այլս ոմանս

[Ն]ախապէս դէպ եղե[ւ] սրբազան Վեհիս մերոյ գրել զթուղթս ի Թիֆլիզ, քանզի յելանելոյ անտի նախնւոյ նուիրակ Մարտիրոս վարդապետին, որովհետև մինչև ցարդ յոլով միջոց էանց և ոչ եղև ձեռնտու ժամանակ ինչ, զի յղիցիւր նուիրակ ըստ նախնեացն և բնիկ սովորութեան սրբոյ Աթոռոյս։ Եւ պատճառն է, զի ի գալոյ արքային Վրաց յերկիրս մեր խռովութիւնք և վրդովմունք դիպեալ առ մեզ, ածին զմեզ ի բազմադիմի ցաւս և ի զանազան պատադմունս, յորս ոչ գոյր հնար հոգալ մեր զհոգալիս և զպակասութիւնս սրբոյ Տանս։ Եւ տակաւին գոլով մեր ի նոյն և արգելանի, և ոչ երբեք բացեալ ակն հայիլ զմեօք, մինչ սրբազան հոգելոյս հայրապետն մեր դեռևս կենդանի էր, որոյ հիւծեալ ի յայնս նեղեալ ցաւս և ի կսկիծս անտանելիս, երբ տեսանէր զազգն իւր ի պէսպէս նեղութիւնս և ի վիշտս, զոմանս՝ ի քաղց և ի ծարաւ, զոմանս՝ մերկք և գնչքաւորք, և զայլս՝ վարեալ ի գերի, և զայլ այսպիսի անձնամաշ գործուածս ազգին իւրոյ, որոյ տակաւին չտեսեալ իսկ զծագումն խաղաղութեան, ժամանեաց նմա օրհասն և փոխեցաւ յանանց կեանսն, թողեալ զսուգ և զտրտմութիւն ի մեր վերայ և ի բոլոր ազգին։ Յորս այնքան սփռեաց խռովութիւնն, մինչ զի երթ և ելք խափանեցան և վերջացան ամենայն մուտք արդեանց սրբոյ Աթոռոյս։

Իսկ յերիս ամս տեսեալ այսպէս, այժմ հազիւ խաղաղութիւնն երևեցաւ։ Վասն որոյ և նորոգ սրբազան Վեհս մեր սկսաւ հոգալ զհոգալիս և առաքել զնուիրակունս յայլ և այլ տեղիս։ Իսկ որովհետև այս Թիֆլիզու նուիրակութեան մի ժամանակն ևս անցեալ էր ի պատճառս արգելանացն նախասացելոց, այնր աղագաւ զառաջնորդ տեղւոյն՝ զԿարապետ

վարդապետն նուիրակ կարգեաց ըստ խնդրոյ նորին և յաղագս պահանջման հարկին։ Վասն որոյ գրեաց զկոնդակն նուիրակական զթուղթ մի առ ինքն՝ առ ի արիանալ յերկոսին գործսն նուիրակական և առաջնորդական, և գրեալ զյանձնարարութիւնս ի կողմանէ նորին առ արքային և առ այլս ոմանս, զոր տեսցես ի ներքոյ գրեալսդ կարգաւ ի շրջիլ թղթոյս։

145բ 581. [Կ]ոնդակ մի նուիրակական ի վերայ քաղաքին և շրջակայ թեմից և վիճակաց նորին գրեաց սրբազան Վեհն և առաքեաց առ Կարապետ վարդապետ առաջնորդն տեղւոյն, հանդերձ սրբալոյս մեռոնաւ, զի ընդ առաջնորդական գործոյն իւրոյ, հոգասցէ և զգործ նուիրակութեանն։ Յորում և զայս ինչ աւելի գրեալ ի հասարակ կարգէ կոնդակին, թէ որովհետև նախորդ նուիրակ Մարտիրոս վարդապետն յամեաց յայդր յետ աւարտման գործոյն մի ամ ևս աւելի՝ ի պատճառս այլ հարկաւորութեանց, և յետ յելանելոյ նորա անտի մինչև ցայժմ Գ (3) ամ ևս անցին, որ է մին նուիրակութեան ժամանակ, յորում ոչ առաքեցաւ ոմն առ ձեզ ի մէնջ։ Իսկ այս նոր նուիրակութիւնս՝ իբր թէ առ այն երկրորդ է։ Ուրեմն պարտիք այնպէս տալ զպտուղս ձեր ի ժամուս յայս, և մանաւանդ զմիմիանս յորդորելով իսկ, զի զանցելոյն պարտսն ևս թօթափեսջիք ի ձէնջ, պարտաւճար լեալ։

582. Թուղթ ևս առ աստուածազօր արքայն[127], ի պատասխանի թղթոյ նորա, զոր գրեալ էր ընդ ուրումն Եսայի անուն վրացւոյ, ի ձեռն նորա, զոր գրեալ էր ընդ ... խ (48) թումանի՝ ի վերայ թիֆլիզեցի պարոյ և յղեալ զբարաթ իմն խԸ (48) թումանի՝ ի վերայ թիֆլիզեցի պարոն Ստեփանին, զի սրբազանն ի նմանէ առնուցու և բաշխեսցէ զԸ (8) թումանն Մօղնու սրբոյն Գէորգայ վանիցն՝ վասն նորոգութեան խաչկալին, զոր աւերեալ էին այլազգի զօրք արքային, և զխ (40) թումանն կաթողիկէ եկեղեցւոյն, որ նա ևս կողոպտեցեալ և մերկացեալ է։ Արկուռու սրբոյ եկեղեցւոյն, որ նա ևս կողոպտեցեալ և մերկացեալ էր ի զգեստի և յանօթից։ Սորին աղագաւ գրէ սրբազանն նմա զայս, եթէ ... արդ կամաց շարժեալ արքայ արասցուք, սակայն ինչ, որպէս գրեալ ես, ի բարի կամաց շարժեալ արքայ արասցուք, սակայն ...

583. Թուղթ ևս առ Գէորգին արքայորդին գրեաց սրբազանն, վասն զի յառաջ քան զայս գրէ անտի Կարապետ վարդապետն, թէ Լօռու բերդի բնակեալ ժողովուրդսն եւ արքայորդին սրբոյ Աթոռոյս: Ուստի գրէ առ նա սրբազանն, թէ Լօռու բերդաբնակքն բնական սրբոյ Աթոռոյս վիճակք են, վասն զի նոքա ամենեքեան են ապարանցիք, բիւրականցիք և ջաւախէթցիք, որք ուր և լիցեն, սրբոյ Աթոռոյս են և ոչ այլոց: Ուստի խնդրեմ ի քէն, զի զԿարապետ վարդապետն կոչեալ առ քեզ, զմի հաստատուն գիր տացես, որ երթեալ միամտութեամբ հովուեսցէ զնոսա, որպէս գրեալ եմք ինքեան ևս:

Թուղթս այս տաճկերէն գրեցաւ: Այլև զյանձնարարութիւն ևս գրեաց ի կողմանէ նուիրակին ի սոյն գրեցեալ թղթոջ: Յղեաց և զմի բեռն գինի և զքանի մի կտոր սպիտակ մոմ՝ իբր ընծայ և օրհնութիւն:

146ա 584. Թուղթ ևս առ Մուխրամ Իւանի բէկն գրեաց սրբազանն, վասն զի ի գալն Վրաց յերկիրս, որոյ կողմանէ զհամառօտ յիշումն ինչ արարաք ի սկզբան գրեցմանս, զոր և այժմ ոչ երկարապէս պատշաճի գրել, բայց զայս ևեթ, զի ի դառնալն նոցա անդրէն յետս, բաղում գերիս առեալ աստի, տարան ընդ ինքեանս: Յորս էր Աշտարակու գիւղն ևս, որոյ յարձակիլն յետ միջոցաց ինչ խնամովն Աստուծոյ գալ անտի յայսկոյս, ի նոցանէ զփոքրիկ դուստր մի յափշտակեալ էր թաւատ ումն, և մկրտեցուցեալ վերստին ի դաւանութիւնս իւրեանց, իբր թէ ի վրացիական հաւատս իւրեանց դարձուցեալ: Զոր լուեալ սրբազան Վեհիս, բաղում անգամ գրեաց առ Կարապետ վարդապետ առաջնորդն տեղւոյն, զի հետևեալ ջանասցէ անդ՝ իցէ թէ կարիցէ ազատել ի նոցունց զաղջիկն այն: Զոր ոչ եղև հնար: Եւ ընդ այն ժամանակս առաքեցաւ Մուխրամ բէկն առ խանն յաստուածալոյր արքայէն, որոյ ի գնալն առ խանն, եկն և ի տես սրբազանիս: Յայնժամ սրբազանն խնդրեաց ի նմանէ, զի ի վերադառնալն ի Թիֆլիզ, զեկուսցէ արքային և նորին հրամանաւն հանցէ զդուստրն ի տանէ Վրաց և յղեսցէ աստ: Իսկ դառնալն նորա աստի ի քաղաքն առ արքայն, անկարելի էր տեսեալ զբանն: Ուստի յառաջ քան զայս գրեալ էր առ սրբազանն, թէ դժուարաւ լինի առնուլս, զոր խոստացայ յայդր: Ապա ուրեմն զթուղթ մի գրեա ի վերայ իմ այսր իրի աղագաւ, զոր ընկալեալ իմ, ցուցից արքային և խօսեցայց նովաւ, թերևս իցէ թէ ազատեսցի որբուկն այն:

Վասն որոյ գրէ առ նա սրբազանն այժմ, թէ յայնժամ յոր աստ առ մեզ էիր, զխնդիր ինչ արարաք ի քէն ի կողմանէ դստերն փոքր աշտարակցւոյ, որ է ի ձեռն ուրումն վրացւոյ: Զոր ազդ արարեալ արքային քո, առցես զնա ի ձեռաց նոցա և յանձնեսցես առաջնորդ Կարապետ վարդապետին: Որոյ մինչև ցայժմ զի՞նչ լինիլն չիմացաք: Իսկ ահա այժմ ես գրեմ սիրելւոյդ իմոյ, զի հոգ տարեալ ջանասցես կատարել զխնդիրս մեր, որոյ վարձս յԱստուծոյ առնուցուս:

Զայս ևս տաճկերէն գրեցաւ:

585. Թուղթ ևս առ մէլիք Աւետիքն, որում գրէ սրբազան Վեհն, թէ թէպէտ երկար միջոց եղև, յորում ոչ կարացաք գրել սիրելւոյդ զթուղթ սիրոյ և օրհնութեան, հարցանել զողջութենէ և զորպիսութենէ քումմէ, սակս անձեռնհաս լինելոյս մեր, սակայն Կարապետ վարդապետն յամենայն թուղթս իւր, զոր գրէ մեզ, ծանուցանէ զողջութիւն ձեր և զբարեկեցութիւն, և պատմէ մանաւանդ զյստակ հարազատութենէ և զմարդա-

սիրութենէ, զորս ունիս առ սուրբ Աթոռ մայրս քո և առ մեզ և ցուցանես առ ինքն միշտ: Եւ մանաւանդ գրէ մեզ զընդդիմանալդ և զկորագլուխ առնելդ զչար հերձուածօղսն՝ առ ի դառնալ նոցա ի թիւր ընթացմանէ: Յաղագս որոյ գրէ օրհնութիւն և շնորհակալութիւն՝ յորդորմամբ հանդերձ, առ ի ևս առաւել արիանալ ի նոյն նախանձախնդիր լինելութիւն: Ծանուցանէ և զթուղթ գրելն շնորհակալութեան առ արքայն՝ յաղագս այսր իրի (որ հրամանագիր էր տուեալ մերաղնէիցն, որ յիշեցաւ ի թղթոջ արքային): Գրէ և զնուիրակ կարգելն զառաջնորդն իւրեանց՝ զԿարապետ վարդապետն, որոյ կողմանէ զյանձնարարութիւն ևս: Յայսմիկ թղթի և գրէ և զողջոյն եղբօր նորա՝ պարոն Իւանէ Միրիշքեար բէկին:

Զոր տեսցես ի նոյն տետր 510 երեսն[129]:

586. Թուղթ ևս առ Նազարբէկեան պարոն Յովսէփն գրեաց սրբազան Վեհն, յորում յաղագս ախթարմայից բանիցն շնորհակալութիւն և օրհնութիւն, նաև յորդորումն ի նոյն և վասն նուիրակին զյանձնարարութիւն, ըստ մտաց վերոյ գրեալ թղթոյդ:

Տե՛ս ի նոյն տետր 512 երեսն[130]:

587. Թուղթ առ ոմն կին Լալիթարս անուն, որ ի Թիֆլիզ. քանզի էր անդ բնականաբար սրբոյ Աթոռոյս վիճակ եկեղեցի մի, զոր Քարափի եկեղեցի կոչեն, բայց կայր խախտեալ: Զկինս այս նորոգեցեալ էր 146բ զայն իւրով արդեամբ և վերստին ընծայեալ // սրբոյ Աթոռոյս՝ յիշատակ ինքեան: Եւ ի հաստատութիւն յիշատակարութեանն զմի ձեռագիր ևս էր գրեցուցեալ և կնքեցուցեալ առաջնորդ Կարապետ վարդապետին և մերոյ վիճակի եղեալ աւագ քահանայիցն, և յղեալ զայն ի սուրբ Աթոռս՝ առ մեզ: Վասն որոյ գրէ սրբազան Վեհն օրհնութիւն և շնորհակալութիւն, նաև յորդորումն առ ի մշտապէս կալ ի նոյն բարեգործութեան:

Տե՛ս ի նոյն տետր 759 երեսն[131]:

588. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս գործունեայ տէր Ղազար քահանայն, ի պատասխանի թղթոց նորին՝ գրեցելոց ի յապրիլի ի (20) և ի մայիսի Ա (1): Յորս գրէ զընդդիմութիւնս իւրեանց չար աղանդացն կորբէսելոց: Եւ վասն Լալիթարէ՝ նորոգեցուցողի եկեղեցւոյն, խնդրէ զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան գրել առ նա: Զեկուցանէ և զոչ բաւական լինիլն սպիտակ մոմին, որ յղեցաւ ընդ մոմաժողով Գրիգոր վարդապետին՝ աստի: Առ այս գրէ սրբազանն, թէ գրեցեալ թուղթքդ հասին առ մեզ, և զի նոսին գրեալսդ իմացաք նաև զբազմազիմի հարազատութիւնսդ, որ առ մեզ, և ընդդէմ կալդ հետևեցելոցն ի յուղղափառ դաւանութենէս մերմէ եկեղեցւոյ: Եւ թէ ըստ խնդրոյ ձերոյ ահա զթուղթ Լալիթարսին գրեալ յղեցաք ի ձեռս քո, որ նմա տացես: Իմացաք և զպակասութիւն լինիլն սպիտակ մոմին: Առ այդ լեր միամիտ, անգամ մի ևս եթէ հարկաւորիցի յղել, ըստ բաւականին եմք յղելոց: Իսկ դու ջանա զմոմաժո[ղո]վն հանդերձ ժողովեցելովքն առ մեզ հասուցես ժամ մի յառաջ, վասն զի կարի պակասաւոր եմք յայսմ ամի: Եւ թէ զԿարապետ վարդապետն նուիրակ կարգեցաք, առ որ յղեցաք զնուիրակական կոնդակն, հանդերձ սրբալոյս մեռոնաւ, ընդ որս՝ զգաւազան մի և զփիլոն՝ խիլայ:

Այլև օրհնեալ արքային ես գրեցաք զթուղթ սիրոյ և օրհնութեան՝
հանդերձ ընծայիւք (զոր ի թուղթն նորա տեսցես)։ Գրէ և զյորդորումն
առ ի ես առաւել արիանալ ի գործն։

589. Թուղթ ես առ Թիֆլիզու առաջնորդ և նորոգ կարգեալ նուիրակ
Կարապետ վարդապետն, ի պատասխանի չորից թղթոց նորին՝ գրե-
ցելոցն ի մարտի ԻԲ (22), յապրիլի Ե (5) և ԺԱ (11) և ի մայիսի Ա (1)։
Յորս գրեալ էր զայս ինչ. նախ՝ վասն վախուսլ տան միոյ, զոր խնդրէր
ոմն յինքենէ տալ զայլ իմն տուն լաւագոյն փոխ նորա, և առնուլ զայն։
Երկրորդ՝ գրէ զյղելն առ մեզ զորմնադիր Աբրահամն և զընկեր նորին
Ստեփանն, և զխարճի ինչ տալն նոցա։ Երրորդ՝ խնդրէ զկոնդակ իմն
գործակալութեան վասն տէր Սահակ քահանային։ Չորրորդ՝ իմացուցա-
նէ զկորագլուխ լինելն ախթարմայից։ Ե (5)-երորդ՝ ծանուցանէ զհաւա-
տարմութիւնն և յամենայն իրս պիտանաւոր լինիլն մեր ճորտ Ենօքի, ի
ձեռն որոյ և զընծայիկ իմն յղելն սրբազանին։ Զ (6)-երորդ՝ զեկուցա-
նէ, թէ Բարսեղ վարդապետի քեռորդի և մեր նոր ճորտ Բէժանն կամի
լինիլ ծուխ տէր Սահակին և խնդրէ յինէն զտուն մի ի վախուսլ տանց
սրբոյ Աթոռոյդ՝ բնակիլ ի նմա քիրայով։ Է (7)-երորդ՝ ասէ, թէ Աբրա-
համ վարդապետն տակաւին այնպէս նստեալ կայ։ Ը (8)-երորդ՝ գրէ,
թէ զԼօռու բերդաբնակսն շնորհեաց արքայորդին սրբոյ Աթոռոյդ։ Թ
(9)-երորդ՝ ասէ, թէ զամենայն զգրեալսն իմ անտես առնես, զի ոչ եր-
բէք ընկալնում զպատասխանիս։

Որում գրէ սրբազան Վեհն զպատասխանիս։ Վասն առաջնոյն ասէ՝
անկարգութիւն իմն է, ոչ հաճիմ։ Վասն երկրորդին գրէ զմիամտութիւն,
և զխարճին, ասէ, արկ ի դաւթարդ ի միամտութիւն քեզ։ Վասն երրոր-
դին անէ՝ անպատշաճ է ստափ յղելն, թէպէտ և մեք գիտեմք աներկբա-
զդա ի բնէ հարազատ։ Վասն չորրորդին ասէ՝ կարի բերկրեցաք, որոյ
սակս զթուղթ շնորհակալութեան գրեցաք առ արքայն։ Վասն Ե (5)-երոր-
դին պատուիրէ՝ զի զնա ի ներքոյ ձեռաց պահեսցէ և շնորհակալ լինի
ի կողմանէ ընծայիցն։ Վասն Զ (6)-երորդին ասէ՝ բարւոք է, մեք ես հա-
ճեցաք լինիլ։ Վասն Է (7)-երորդին զայս ծանուցանէ՝ յառաջ քան զայս
մեղադրանս գրեցաք նմա, զի բաց ի յայլ թիւր արարմանցն, զորս լա-
147ա ւապէս գիտէք դուք և ես առաւել տեղեակք էք ըստ ամենայնի // խոստ-
ընթացիցն, հրամայեալ էր տալ զառնակին ումն՝ ումեմն օրինազանցի
առն, ժամանակ ինչ։ Իսկ գրեմ սիրելւոյդ, եթէ զրան ինչ մեղապատշաճ
լուիցես ի նոցունց, ազդ արասցես մեզ։ Վասն Ը (8)-երորդին իմացու-
տայ, թէ թուղթ գրեցաք առ արքայորդին, զի կոչեալ զքեզ, զմի հաստա-
տուն գիր տացէ, որ միամտեալ այնու, հովւեսցես զնոսա բարւոքապէս։
Իսկ դու ես ջանա գրեցուցանել նոցա զմահսար մի, թէ մեք տէրունի
վիճակք և սեփական ժողովուրդք եմք սրբոյ Աթոռոյդ, այսուհետև զմա
եմք ծառայելոց և ոչ այլ ումեք։ Վասն Թ (9)-երորդին գրէ, թէ որոյ թըղ-
թոյդ զպատասխանին զանց առեալ չգրեցաք, ահա զամենայն կարգա
գրեցաք։ Բայց թուի, թէ դու զմեր գրեցեալսն զանց առնես, ասացից
ահա զանց առեալսդ։

Գիր գրեցաք քեզ ի կողմանէ տէր Խաչատուր քահանային, որոյ և
զկոնդակ աւագ իրիցութեան յղեցաք։ Իսկ դու զի՞նչ գրեցեր, նաև գրե-
ցաք քեզ սակս Բէժանի դուքեանին, զի տացես որդւոյ նորա, ի սմանէ
զինչ ծանուցեր։ Եւ այլ այսպիսիք։ Յիշէ յայսմ թղթի և զթուղթ գրելն
շնորհակալութեան առ աստուածազօր արքայն յաղագս ախթարմայից

բանիցն և վասն իւր զյանձնարարութիւն գրելն և զընծայս յղելն, նաև
զԽԸ (48) թուման շնորհելն արքային եկեղեցեաց, որոյ սակս և զրան
ինչ գրելն առ արքայն (զորս տեսցես ի թուղթն արքային ի վերոյ)։ Եւ
թէ ի կողմանէ յայցր մնացեալ էլիկին և զնոսա արքային ի խնամս իւր
ունելոյն, ոչ ինչ գրեցար նմա, որոց զորպէսն ի քէն խնդրեմք իմանալ.
անպակաս արասցես զթուղթսդ ի նոցունց։ Եւ թէ զթուղթ գրեցաք առ
Մուխրամ բէկն վասն ազատութեան փոքր աղջկանն, դու ես ջան եդեալ
հեռևեսցիս, իցէ թէ ազատեսցի։

Դարձեալ Բամբկուձորու պարոն Գաբրիէլի աներ՝ տէր Զաքարիա
քահանայն, որ ի Հաղբատու թեմի եկեղեցւոջն քահանայութիւն առնէր,
անտի այժմ զնա դուրս են արարեալ։ Նորին աղագաւ պարոն Գաբրիէլն
յորժամ եկն աստ, աղաչեաց զմեզ գրել քեզ, զի տիրութիւն արասցես
նմա։ Վասն որոյ գրեմ քեզ, զի բերեալ անտի զայն քահանայն, ի կողմն
քո պահեսցես և ի մեր թեմի եկեղեցւոջն տեղի տացես։

Ծանուցանէ և զթուղթ գրելն առ մէլիք Աւետիքն և առ Նազարբէ-
կեան պարոն Յովսէփն, առ որս և զյանձնարարութիւն ես։ Եւ վասն մո-
մաժողով Գրիգոր պետին՝ գրէ փութով դարձուցանել ի սուրբ Աթոռս։ Եւ
թէ ահա ըստ խնդրոյդ նուիրակ կարգեցաք զքեզ և զնուիրակական կոն-
դակն հանդերձ սրբալոյս միռոնաւ առաքեցաք առ քեզ, ընդ որս զգա-
ւազան մի և զփիլոն՝ ի փառաւորութիւն քեզ, ի ձեռն երևանցի պարոն
Յովաննէսին, որոյ ի գալն պարտիս ի սէր ունիլ զդա և վասն հոգալեացն
խրոց ձեռնհաս և օժանդակ լիցիս յայցր։ Յիշէ և զԼ (30) ղուռուշ բաժա-
նելն ի վերայ գրագրաց, սպասաւորաց և առհասարակ գործակալաց՝
կողմանէ առաջնորդութեանն նորին։ Հարկէ՝ և այժմ ես զրան ինչ նոցա
հաստուցանել, ըստ կարգի և սովորութեան նուիրակաց։

Եւ վերջապէս, զթուղթդ անպակաս արասցես ի մէնջ, ծանուցանելով
զորպիսութիւնդ։ Որում Ա (1) փօլիցայ ես գրէ սրբազան Վեհն, թէ ի
տալ առ քեզ թիֆլիզցի պարոն Ստեփանին, պարտիս զՈ (600) ղուռուշ
դրամն, զոր ապառիր Պօղոսն պարտ է հաստուցանել մեզ, առնուլ ի
նմանէ և տալ այդ պարոն Ստեփանիդ, յորմէ մեք աստ առեալ եմք.

Ժ (10) թուղթքս այսորիկ գրեցեալք ի վերոյ, յղեցան ձեռամբ պա-
րոն Յովհաննէսին (որ վերջընթեր թղթոջն յիշեցաւ) ի Թիֆլիզ ի ձեռն Կա-
րապետ վարդապետին Ի (20) [մայիսի]։

147բ 1782 թ. մայիս—Կոնդակ ժողովարարութեան ի կողմն Ղազախու և Շուլաւեր թուղթք ես

590. [Յ]ետ այսորիկ, ըստ նախնաւանդ սովորութեան սրբոյ Աթոռոյս,
առաքեաց սրբազան Վեհն զՄարտիրոս վարդապետն ի Ղազախ, ի Բամ-
բակաձոր, ի Բօռչալու, և ի Լօռի, նաև՝ ի Բօլնիս և ի Շուլաւեր բնակեալ
համայն Շամշատինու ժողովուրդսն, այլև ի Հասանաջուր եղեալ ժողո-
վուրդսն՝ առ ի ժողովել ի նոցունց զուտելիս և զայլ հարկաւոր պի-
տոյս, այս է՝ զիւղս, զպանիրս, զմատաղացուս, զերկաթս և զերկաթեղէն
և զայլ փայտեայ գործիս, որք մշտապիտոյք են սրբոյ Տանս։ Վասն ո-
րոյ գրեաց և ի վերայ այնց տեղեացն զԱ (1) կոնդակ ժողովարարութեան
և ծանուցանէ ի նմա զպակասութիւն և զզղութիւն երկրիս ի կողմանէ խա-
շանց, արջառոց և այլ արօտականաց։ Եւ ապա յորդորէ ի նոյն, զի ա-
ռատութեամբ և լիալիր տացեն զտուրս իւրեանց՝ առ ի լցուցումն պակա-

ութեանց սրբոյ Տանս, և զժողովարար Մարտիրոս վարդապետն ի սէր ընկալեալ, վերադարձուցեն ի սուրբ Աթոռս։

148ա 591. Թուղթ ես առ Վանական վարդապետն, որում զնոյն միտ կոնդակին ծանուցանէ և զյանցեալ ամի խոստացեալ տուրսն (որոնց սակս սանատ էին տուեալ) ես խնդրէ, և վասն ժողովարարին՝ զյանձնարարութիւն, և եղբօրն՝ մէլիք Սարգսին՝ ողջոյն և օրհնութիւն ես։

592. Թուղթ ես առ Մխիթար քեալանթարն՝ ի նոյն միտ։ Զի որպէս գրեցաւ ի թուղթն Վանական պետին, այնպէս գրեցաւ և ի սմա։ Յորում ես յիշէ զյանցեալ ամի խոստացեալսն։ Քանզի ի գնալն առ սոսա անցեալ ամի ժողովարար Դաւիթ վարդապետին՝ ժողովել յորոց զկամաւոր տուրս, ընկալեալ էին զնա սիրով և զտուրս իւրեանց առատապէս խոստացեալ, բայց չէին իսկ տուեալ, այլ զսանատ իմն արարեալ էին և տուեալ զայն ի ձեռս ժողովարար Դաւիթ պետին, թէ այսինչ այսինչ հարկ լիցի մեզ տալ։ Իսկ այժմ որովհետև ի յեայլայն եմք մնայցէ, այլ յաշնանն, յորժամ իջանիցեմք յեայլայէն, յղեսցուք ի սուրբ Աթոռն։ Որք թէպէտ այսպէս էին պայմանեալ սանատով, զոր եբեր առ մեզ Դաւիթ պետն, սակայն աշունն էանց և երկարեաց, մինչև այս ներկայ ամի ժողովարար յղելոյ ժամանակն, տակաւին չէին յղեալ զայնս Շուլաւերու ժողովուրդքն։ Ուստի ընդ յայսմ ամի ժողովարար Մարտիրոս պետին գրէ առ նոսա սրբազան Վեհն, թէ յանցեալ ամի խոստացեալն ես պարտիք տալ՝ ըստ տուեցելոյ սանատին ձերոյ։ Եւ յայսմ ամի ես առատապէս տալ և յանձնել առաքեցելոյդ մերոյ և մանաւանդ ձերովդ բեռնակրօք յղել ի սուրբ Աթոռ մայրս ձեր։

Գրէ յայսմ թղթի զողջոյն և զօրհնութիւն որդւոյ նորա պարոն Գիւլնազարին։

Գ (3) թուղթքս այսոքիկ գրեցան և յղեցան ի վերայ Աշտարակու դէպ ի Ղազախ՝ ի ձեռն այնց կողմանց ժողովարար Մարտիրոս պետին ի ԻԴ (24) [մայիսի]։

1782 թ. մայիս—*Թուղթ առ Հերակլ արքայն Վրաց*

593. [Ա]պա հարկ եղև գրել զթուղթ առ Հերակլ արքայն Վրաց, վասն զի Հաղարծնու վանից առաջնորդ եպիսկոպոսն և նորին միաբան Աւետիս վարդապետն եկեալ ընդ այս աւուրս ի սուրբ Աթոռս, բողոք բարձին առ սրբազան Վեհն ի ձեռաց Հախպատեցւոցն, զի զթեմս իւրեանց խլեալ էին իսպառ։ Եւ զի որովհետև յառաջ քան զայս յամայութեան կային այս երկոքին վանքն ես՝ Հախպատ և Հաղարծին, քանզի անգամ լեալ էր վէճս այս ի մէջ միաբանիցն սոցա վասն թեմի վանացս, բայց վերջապէս գիտութեամբ արքային և կոնդակաւ հոգելոյս հայրապետին վճիռ իմն էր հատեալ, որպէս թէ որքան յանշինութեան կան այսոքիկ, կէսն թեմից Հախպատու միաբանքն վայելեսցեն և կէսն Հաղարծնու միաբանքն։ Իսկ յորժամ շինեսցին, իւրաքանչիւր ոք զիւր վիճակն կալցի։ Եւ կային մինչև ցայս վայր խաղաղութեամբ, իսկ նորդենիս որովհետև ի Հաղպատու վանսն սակաւ ինչ շինութիւն էին ձգեալ, զայն կալեալ պատճառ, զմասն զայն, զոր Հաղարծին ունէր, զնա ես էին յափշտակեալ։ Ուստի Մանուէլ և Աւետիս ծերունիքն եկեալ աստ առ սրբազան Վեհն, առ որ և բողոքէին լալով, թէ զթեմս և զվիճակս մեր խլեցին

և եմք մնացեալ քաղցեալ և անճար յաւանքէ։ Խնդրեմք ի քէն առնել ի մէջ մեր զիրաւունս։ Վասն որոյ սրբազանն զԱ (1) թուղթ ես առ Հերակլ արքայն գրեաց, թէ խնդրեմ ի քէն, զի ի փառս Աստուծոյ և ի սէր մեր, զթացեալ ի ծերունի աղքատսդ, արասցես զոցա զայցելութիւն՝ առ ի գտանել զհնար իմն կեցութեան դոցին, որք աղօթօղք են մշտապէս վասն քո և քոյայնոցդ (տե՛ս ի նոր տետր 761 երես)։

[Եւ վասն այն ոչ գրեցաւ հախպատեցւոցն թուղթ, զի սակաւ ինչ պաղութիւն գոյր]*։

Թուղթս այս գրեալ առ արքայն, յղեցաւ առ նա ի ձեռն Մանուէլ և Աւետիս վարդապետացն ի ԻԵ (25) [մայիսի][132]։

148բ

1782 թ. մայիս—*Թուղթք ի Բայազիտ*

[Դ]արձեալ թուղթ գրեցաւ առ Իսախ փաշայն Բայազիտու, վասն զի ընծայ էր յղեալ սրբազան Վեհին զմի լաւ ձի[133], ուստի մինչ սրբազանն կամէր գրել առ նա զթուղթ սիրոյ և շնորհակալութեան, ի Գէորգին արքայորդւոյն ես ընծայ եկն, յորս գոյր Բ (2) եղինս՝ արու և էգ։ Բայց որովհետև փաշայն ես խնդիր էր յայսմ միջոցի վասն եղջերուի միոյ (զոր յառաջ քան զայս ի սրբազանէն ես էր խնդրեալ քանիցս ի ձեռն տէր Վահանին և բազմաց), ուստի այժմ պատշաճ ետես սրբազանն յղել զերկոսինսն ես՝ զեղջերուն և զեղն ի ձեռն տէր Վահանին, զի ընծայեսցէ փաշային, զորս և յղեաց իսկ։

594. Վասն որոյ զԱ (1) թուղթ ես առ Իսախ փաշայն գրեաց սրբազան Վեհն, յորում շնորհակալութիւն վասն ձիոյն յղելոյ և զյանձնարարութիւն վասն տեղւոյ նուիրակ Կարապետ վարդապետին։ Եւ զի որովհետև զնուիրակութիւն քաղաքին ավարտեալ էր և ելանէր ի շրջակայ նահանգսն անդ նուիրակել, սորին վասն ես խնդրէ ի փաշայէն՝ գրել զբույրուլթու ի վերայ այնց կողմանց բէկիցն, զի մուղայէթ լիցին։ Ծանուցանէ յայսմիկ թղթի և զերկոսին եղանց ընծայ յղելն ընդ թղթոյն։

595. Թուղթ ես առ Աւզուլլա բէկն Թօփրախղալայու վասն նուիրակին յանձնարարութիւն, սոյնպէս թուղթ ես առ Սէյիդ բէկն Դիադինու, բայց սմա վարդեչուր ես յղեցաւ, որովհետև նուիրակն նախապէս անդ էր երթալոց։

596. Թուղթ ես առ նուիրակն տեղւոյ Կարապետ վարդապետն գրեաց սրբազան Վեհն, թէ իմացաք զաւարտելն քաղաքիդ և զգնալդ ի շրջակայ նահանգսն դորին։ Վասն որոյ զյանձնարարութիւնս գրեցաք վասն քո առ փաշայն և առ Ապտուլլա և Սէյիդ բէկսն և խնդրեցաք ի փաշայէն, զի ի վերայ այն միւս շրջակայ բէկիցն ես վասն քո զյանձնարարութիւն գրեսցէ։ Եւ թէ զմի աման գիւլապ վասն Սէյիդ բէկին յղեցաք։ Եթէ միւսոցն ես պիտոյասցի, գրեսցես, զի յղեսցուք։ Իսկ զընծայսն նոցա, որպէս օրէն է ի բնէ, այնպէս առնիցէք։ Եւ ապա յատուկ պատուէր, զի ջանասցէ սիրով վարիլ ընդ ժողովրդեանն։ Այլև՝ գրեալ ես մեր նահապետին, թէ ի նուիրակական արդեանցս Ռ (1000) զօլաթայ հասուցի տէր Վահանին, զոր լուեալ մեր, շնորհակալեցաք զքէն։ Եւ գրեմ, զի զոր ինչ պատրաստի դրամ գտանեցի, նմա յանձնեսցիս, որ ի հարկէ ծանու-

* Բնագրում այս նախադասությունը ջնջված է։

Ղուկաս Կարնեցու ժամանակաշրջանի հայ-ռուսական քաղաքական կապերի պատմության հետազոտմամբ լրջորեն զբաղվել է պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը: Գլխավորապես դիվանական վավերագրերից քաղված նյութերի հիման վրա նա ցույց է տվել Ղուկաս Կարնեցու ռուսական գիրքորոշումը և խաղացած դերը Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման գործը նախապատրաստելու շրջանում: Երևանի ու Մոսկվայի արխիվներում նա հայտնաբերել է բազմաթիվ ուշագրավ փաստաթղթեր, այդ թվում և Ղուկասի նամակներն ու կոնդակները, որոնց հիման վրա եկել է այն հետևության, որ Սիմեոն Երևանցու պես, Հայաստանի ազատագրման հույսերը Ղուկասը կապում էր Ռուսաստանի հետ և անում էր ամեն բան ռուսական ղեկավար գործիչների հետ իր կապերն ամրապնդելու համար: Ա. Հովհաննիսյանը գտնում է, որ ի տարբերություն ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի և Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսի, Ղուկասը «ոչ պակաս ջերմորեն ողջունելով ռուսների գալուստը, այնուամենայնիվ կողմնակից չէր անմիջական գործողությունների և ընտրել էր ավելի զգուշավոր, սպասողական տակտիկա»: «Ղուկասը,—գրում է նա,—գերադասում էր խուսափել վճռական գործողություններից, համբերատարությամբ սպասելով ռուսական զորքերի գալստյանը»[31]:

Ղուկաս կաթողիկոսի կյանքի ու գործունեության հետազոտությամբ հանգամանորեն զբաղվել է բանասեր Հովսեփ Գրիգորյանը, որը «Ճեմարանցի» ծածկանվամբ հրապարակ է եկել «Էջմիածին» հանդեսում: Դա հանրամատչելի ոճով գրված հետաքրքրական հոդված է Ղուկաս Կարնեցու մասին, որի մեջ հեղինակը բարեխղճորեն կանգ է առել նրա գործունեության բոլոր կողմերի վրա: Նա բարձր գնահատական է տվել Ղուկասին և նշել, որ «պատմությունը Ղուկաս Կարնեցուն իրավամբ դասում է Մայր Աթոռի գահակալ բազմավաստակ հայրապետների շարքը»[32]:

Ղուկաս Կարնեցու գործունեությամբ, նրա տպագիր և անտիպ նամակների հետազոտությամբ զբաղվել է նաև տողերիս հեղինակը, որը գլխավորապես այդ նամակների հիման վրա փորձ է կատարել շարադրելու Երևանի խանության XVIII դարի վերջին երկու տասնամյակների պատմությունը[33]: Ղուկաս Կարնեցու գրագրությունների արժեքը ձգտել ենք ներկայացնել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության բաժանմունքին կից տեքստաբանական հանձնաժողովի և Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Կ. Ս. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի նախաձեռնությամբ 1969 թ. նոյեմբերին Թբիլիսիում գումարված տեքստաբանության և հին ձեռագրերի ուսումնասիրման հարցերին նվիրված նստաշրջանում տրված՝ «Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու դիվանը որպես Անդրկովկասի XVIII դարի վերջին տասնամյակների պատմության սկզբնաղբյուր» զեկուցմամբ: Այն հրապարակվել է վրացական ակադեմիայի «Մացնե» գիտական պարբերականում[34]:

Համառոտ կերպով այսպիսին է Ղուկաս Կարնեցու գործունեության ուսումնասիրման վիճակն առ այսօր:

---

[31] *А. Р. Иоаннисян*, նշված աշխ., էջ 193—194:

[32] Ճեմարանցի, Ղուկաս կաթողիկոս Կարնեցի, «Էջմիածին», 1950, հոկտեմբեր, էջ 41—47, 1951, հունվար—մարտ, էջ 29—34:

[33] Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780—1800), Երևան, 1958:

[34] *В. Р. Григорян*, Архив армянского католикоса Гукаса Карнеци как первоисточник по истории Закавказья последних десятилетий XVIII века, „მაცნე", № 4, 1972, стр. 172—176.

Գ) ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկասը ծնվել է Կարին գավառի Կեղի կամ Քղի գյուղում: Ծննդյան թվականը ենթադրվում է 1722-ը[35], քանի որ, ըստ անանուն մատենագրի, նա մահացել է 77 տարեկան հասակում[36] (1799 թ.): Կրթությունը ստացել է Էջմիածնի հոգևոր դպրոցում[37], որտեղ այն տարիներին ուսուցիչ էր Սիմեոն

Ղուկաս Կարնեցի

Երևանցի ապագա կաթողիկոսը[38]: Ընդունակ և ջանասեր աշակերտ է եղել Ղուկասը, սիրվել ու գնահատվել է իր ուսուցչի կողմից: Այդ է պատճառը, որ նրան համարել են Սիմեոնի «շնորհածին և անդրանիկ որդին»[39]:

1751 թ. Ղուկասը Էջմիածնի վանքում ձեռնադրվում է քահանա, հետո նվիրակի պաշտոնով մեկնում Ռումելի[40]: Նորաթուխ քահանայի համար դա

---

[35] Մ. Օրմանյան, նշված աշխ., էջ 3139:

[36] «Դիւան հայոց պատմութեան», Ա—Բ, էջ 45:

[37] Մ. Օրմանյան, նշված աշխ., էջ 3139:

[38] «Դիւան հայոց պատմութեան», Գ, էջ ԿՁ:

[39] «Սիմէօն կաթուղիկոս», «Արարատ», Էջմիածին, 1875, օգոստոս, էջ 340:

[40] Գարեգին Ա. կաթողիկոս, Նիւթեր և ուսումնասիրութիւններ..., էջ 48:

շատ պատասխանատու և դժվարին հանձնարարություն էր։ Ռումելիի թեմն ամենամեծերից էր, նրա մեջ մտնում էին բազմաթիվ, միմյանցից մեծ հեռավորության վրա գտնվող և տարբեր երկրների կազմի մեջ եղած հայ գաղութներ։ Ըստ Սիմեոն Երևանցու կազմած «Ջամբռ» ժողովածուի, Ռումելիի թեմն այն ժամանակ ընդգրկում էր Ռումինիայի, Մոլդավիայի, Բուլղարիայի և Ղրիմի[41] հայաշատ բնակավայրերը։ Պետք է կարծել, որ Ղուկասը հաջողությամբ է կատարել այդ հանձնարարությունները, որովհետև վերադառնալուց հետո՝ 1763 թ. հունիսի 17-ին, Սիմեոն Երևանցու կողմից, որն արդեն կաթողիկոս էր (1763—1780), ձեռնադրվել է եպիսկոպոս[42]։ Դրանից շատ չանցած՝ 1764 թ. մարտի 11-ին Ղուկասն ուղարկվում է Զմյուռնիա, որպես առաջնորդ ու նվիրակ[43]։

Սիմեոն Երևանցու հիշատակարանում եղած ակնարկներից երևում է, որ Ղուկասը բարեխղճորեն է կատարել առաջնորդի ու նվիրակի պարտականությունները։ Կաթողիկոսը նրան տվել է բազմաթիվ հանձնարարություններ։ Վերջինիս նամակները վկայում են, որ Ղուկասին պատվիրված էր վանքի տպարանի համար գտնել մասնագետ-տպագրիչ, ինչպես և տպագրական անհրաժեշտ գործիքներ[44], միջոցներ հավաքել էջմիածնի շուրջը պարիսպներ կառուցելու համար[45], գնել հեռադիտակներ, ժամացույցի նորոգման գործիքներ[46] և այլն։ Հետաքրքրական է, որ երբ լրացել է Ղուկաս Կարնեցու նվիրակության ժամկետը և նա պետք է վերադառնար էջմիածին, զմյուռնացիները նամակ են գրել կաթողիկոսին և խնդրել Ղուկասին թողնել իրենց մոտ։ Սիմեոն Երևանցին համաձայնվել է։ Երբ ավարտվում է երկրորդ ժամկետը, Ղուկասը գրավոր խնդրում է կաթողիկոսից ետ կանչել իրեն։ Խառը ժամանակներ էին, փակվել էին ճանապարհները, ուստի «Եւ վասն յաճախելոյ խռովութեանցն մինչ ոչ կարաց սրբ. վեհն զայլ ոք յղել անդ, ապա երրորդ անգամ կարգեաց զնա նուիրակ և Առաջնորդ»[47]։

Երբ ավարտվում է և այս ժամկետը, Ղուկասն աղերսական նամակ է գրում կաթողիկոսին և խնդրում իր փոխարեն ուրիշ առաջնորդ ուղարկել։ Սիմեոն Երևանցին Զմյուռնիայի նվիրակ ու առաջնորդ է նշանակում Եսայի վարդապետին։ Սակայն մինչև վերջինս կմեկներ իր պաշտոնավայրը, «յայսմ միջոցի,—կարդում ենք Սիմեոնի հիշատակարանում,—բազմակնիք մահուար եկն առ սրբ. վեհն ի Զմիւռնոյ իշխանացն, որք բազմաւ թախանձանօք գրեալ էին սրբ. վեհին, զՂուկաս վարդապետն վերստին նուիրակ և առաջնորդ առնել ինքեանց։ Այսպէս գրելով թէ՝ որպէս զՋաքարիա վարդապետն Պօլսեցւոցն բաշխեցեր, զՂուկաս վարդապետն ևս մեզ բաշխեա։ Բայց սրբ. վեհն ոչ լուաւ նոցա»[48]։

Կաթողիկոսն այլ մտադրություն ուներ Ղուկասի նկատմամբ։ Ի դեմս իր նախկին աշակերտի նա տեսնում էր ազդեցիկ, գործիմաց, շրջահայաց և կազմակերպչական ակնառու տվյալներով օժտված մի հոգևորականի, որին կարելի էր այն ծանր ու դժվարին պայմաններում վստահել հայոց եկեղեցու ղեկավարությունը։ Ուստի ետ բերելով նրան էջմիածին, քաղաքական բուռն

[41] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 45։

[42] «Դիւան հայոց պատմութեան», ԺԱ, էջ 455։

[43] Գարեգին Ա. կաթողիկոս, նշված աշխ., էջ 49։

[44] «Դիւան հայոց պատմութեան», Գ, էջ 552—553։

[45] Նույն տեղում, էջ 238։

[46] Նույն տեղում, էջ 664։

[47] «Դիւան հայոց պատմութեան», Ը, էջ 426։

[48] Նույն տեղում։

իրադարձությունների մեջ ուժասպառ եղած Սիմեոն Երևանցին ծրագրել էր Ղուկաս Կարնեցուն որպես խորհրդական պահել իր կողքին և ի վերջո նրան թողնել ամենայն հայոց կաթողիկոսի աթոռը։

Եվ այսպես, 1775 թ. հունիսի 23-ին նա դուրս է գալիս Զմյուռնիայից և ուղևորվում դեպի էջմիածին։ Հաջորդ տարվա սկզբներին, շուրջ տասներկու տարի բացակայելուց հետո, Ղուկասը վերադառնում է էջմիածին[49]։

Արդեն առիթ ենք ունեցել նշելու այն ծանր դրության մասին, որ ստեղծվել էր այդ տարիներին Արարատյան երկրում վրաց թագավոր Հերակլ II-ի և Երևանի խանի միջև սկսված ընդհարումների պատճառով։ Լարվածությունը շարունակվում էր և իր գագաթնակետին հասավ, երբ 1779 թ. Հերակլի զորքը ներխուժեց Արարատյան դաշտ։ Թալանելով ու ավերելով ճանապարհին հանդիպած գյուղերը, զորքը շրջապատում է Երևանի բերդը։ Արարատյան դաշտի գյուղերի բնակիչների մի մասին հավաքել էին բերդը, իսկ մյուսներին, գլխավորապես հայերին, տեղափոխել Բայազետի կողմերը։

Սիմեոն Երևանցին, Երևանի խանի խնդրանքով, մի քանի անգամ փորձ էր կատարել ետ պահելու Հերակլին Երևանի վրա արշավելու մտադրությունից, բայց ապարդյուն։ Հիմա արդեն, երբ արշավողները մոտեցել էին, կաթողիկոսը եպիսկոպոսների հետ մեկնում է վրաց թագավորին ընդառաջ։ Նշելով այս մասին, «Գավազանագրքի» հեղինակը կաթողիկոսին ուղեկցող հոգևորականներից առանձնացնում է Ղուկաս եպիսկոպոսին. «Եւ իբրև ինքն արքայն մերձ եղև, Սրբազանն գլխաւոր եպիսկոպոսօք, այսինքն է ցաւակից և խորհրդակից սրբազան հարբն մերով Տեառն Ղուկասու և այլովք, հանդերձ ուտելի ընծայիւք գնացաք ընդ առաջ»[50]։

Այս իրադարձությունների ժամանակ Ղուկաս Կարնեցին մշտապես եղել է Սիմեոն Երևանցու կողքին։ Երբ Հերակլ թագավորը բանակ էր դրել Փարաքար գյուղում «Սրբազանն հանդերձ իւր չարչարակից և վշտակից Ղուկաս սրբազանիւ հարբն մերով և այլ իւրային հայրապետական բանակաւն» գնում է այնտեղ, հանդիպումներ ունենում վրաց արքայի հետ՝ «վասն զիջիձայս առնելոյ և ի խաղաղութիւն համոզելոյ զարքայն և զխանն մեր ընդ միմեանս»[51]։

Հերակլը արշավել էր Երևանի վրա պատժելու համար հարկային պարտավորություններից խուսափող խանին։ Չկարողանալով գրավել Երևանի բերդը, նա Արարատյան երկրի ութ գյուղերի բնակիչներին իր զորքերի հետ տանում է Վրաստան։ Բայց նախքան գնալը, Երևանի խանին մի նամակ է գրում, որի մեջ հայտնում է իր կողմից երկիրն ավերելու, մարդկանց գերեվարելու և այն մասին. «թէ այսպէս և այնպէս է առնելոց, եթէ ոչ անսայցես»[52]։ Այդ նամակն իբրև «վերջին վճիռ» Երևանի խանին, ըստ թագավորի հրամանի, պետք է հասցվեր «գլխաւոր և պատուամեծար» հայ հոգևորականների ձեռքով։

Երևան գնալն այս ժամանակ չափազանց վտանգավոր էր, ճանապարհները լեցուն էին ավար ու կողոպուտ փնտրող զորքերով, իսկ խանն իր մարդ-

[49] Մ. Օրմանյանը ենթադրում է, որ Ղուկասը էջմիածին է հասել 1775 թ. վերջերին (տե՛ս «Ազգապատում», Բ, էջ 3140), բայց դա ճիշտ չէ։ Իր նամակներից մեկում Ղուկասը գրել է, որ Զմյուռնայից «ելի խիկ ասա՝ ի ՌՄԽԵ թուոջ մերում» («Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ 47)։ ՌՄԽԵ-ի (1796-ի) մեջ «Խ»-ն բացահայտ սխալ է, կամ սխալ ընթերցում, այլապես կստացվի 1796 թ., պետք է լինի ՌՄԻԵ (1776)։

[50] Գարեգին Ա. կաթողիկոս, նշված աշխ., էջ 51—52։

[51] Նույն տեղում, էջ 52։

[52] Նույն տեղում։

կանցով փակվել էր բերդում՝ «դառնացեալ, ցասուցեալ և յոյժ մրտմտեալ»։ Նամակը «բօթատու և կսկծեցուցիչ, և ամենեքեան ի բարկութիւն դրդեցեալ» բնույթ ուներ։ «Վասն որոյ,—պատմում է ժամանակակից հեղինակը,—կարի դժուարին էր յայնմ դասն սոսկալի և մահաբեր ժամուն ումեք երթալ և տանել զայն թուղթն առ խանն»։ Սիմեոն Երևանցին այդ բանը հանձնարարում է տեղապահ Մկրտիչ վարդապետ Շոռոթեցուն, բայց վերջինս վախից հիվանդանում է և հրաժարվում։ Կաթողիկոսը ուղարկում է Ղուկաս Կարնեցուն, որը «յօժարակամ սիրով յանձն էառ ի գնալ, դերկիւղ մահուան ի բաց դնելով»։ Մեկ հրացանակրի ուղեկցությամբ Ղուկասը մեկնում է Երևան, հանդիպում Հյուսեյն-Ալի խանի հետ, տալիս նամակը և նրա պատասխանը բերում Հերակլին[53]։

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կյանքի վերջին ամիսներն անցան ընդհանուր ավերածության ու ամայության պայմաններում։ Հերակլի տեղահանած և Վրաստան տեղափոխած բնակիչների մի մասը ոչնչացավ՝ «կէսք ժանտ-մահիւ, կէսք օդով խստութեան, կէսք սովու և կէսք այլ իմն ցաւօք ըստ մեծի մասին հանգեան ի Քրիստոս»[54]։ Հետագայում Ղուկաս կաթողիկոսը շատ ճիգ ու ջանք թափեց կենդանի մնացածներին իրենց տները վերադարձնելու համար։ Հայտնի է, որ Հուսեյն-Ալի խանը Հերակլի արշավանքի վրեժը ձգտում էր հանել հայերից, նա ձերբակալել էր Երևանի հայ մեծատուններից ոմանց, թալանել նրանց ունեցվածքը և մի մասին սպանել։ Այժմ նա հարմար առիթի էր սպասում իր բարկությունը էջմիածնի վրա թափելու համար։

1780 թ. հուլիսի 26-ին մահանում է Սիմեոն Երևանցին։ Մահից երկու օր առաջ նա կանչել էր բոլոր եպիսկոպոսներին և հայտնել, որ ինքը Ղուկասին պահել էր իր մոտ, որ «յաջորդաբար նա լիցի Հայրապետ և կառավարեսցէ զսուրբ Աթոռս յայսմ վտանգաժին և վրդովեալ ժամանակիս»[55]։

Սիմեոն Երևանցու թաղումից յոթ օր անց՝ օգոստոսի 2-ի կիրակի օրը Ղուկաս Կարնեցին օծվեց կաթողիկոս»[56]։ էջմիածնի միաբանները, հաշվի առնելով ստեղծված պայմանները, ստիպված էին արտակարգ հապճեպությամբ, առանց դրսի հայերի գիտության ու համաձայնության կատարել նոր կաթողիկոսի ընտրությունը՝ մի բան, որ կարող էր հայության մեջ դժգոհություն և պառակտում առաջ բերել։ Այդ շտապողականությունը վանքի գրագիր Անանիա սարկավագը պատճառաբանում է այսպես.

«Վասն աւերութեան երկրիս, ըստ մեծի մասին և խառնակութեանցն (միաբանները—Վ. Գ.) ոչ կարացին թողուլ թարց հոգաբարձուի զսուրբ Աթոռս յերկար ժամանակս։ Քանզի այս երկրական ժանտքն և գայլաբարոյքն կատաղիք կամէին զպէսպէս վնասս հասուցանել սրբոյ Աթոռոյս ամենայն կերպիւ, թող թէ արտաքին թշնամիքն երկրիս»[57]։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում, էջ 56։

55 Նույն տեղում։

56 «Յիշատակարան, Սիմէօն կաթողիկոս», «Արարատ», էջմիածին, 1875, էջ 340։

57 Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 1ա։ Մ. Մսերյանցը գրում է, որ այդ ժամանակ Գալուստ եպ. Ներսիսյանը վանքը պաշտպանելու պատրվակով բորչալվեցի 300 հեծյալ թաթարներ էր բերել էջմիածին։ Միաբանները կասկածում էին, որ նա դա արել էր բռնությամբ կաթողիկոս ընտրվելու համար։ Այդ բանը կանխելու նպատակով Մկրտիչ և Սահակ եպիսկոպոսները Երևանից բերում են 200 գեղարքունեցի հայ երիտասարդներ և գաղտագողի մտցնում վանք (Մ. Մսերյանց, նշված աշխ., էջ 6—7)։ Մ. Մսերյանցի հաղորդումը տեղ է գտել նաև Գ. Աղանյանցի և Մ. Օրմանյանի գրքերում («Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ԼԴ—ԼԵ, «Ազգապատում», Բ, էջ 3137)։ Ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ այս տեղե-

Սովորաբար, կաթողիկոսի ընտրության հարցում Կ. Պոլսի հայերին էր վերապահված վերջին խոսքը։ Երբ լինում էր ընտրությունը և այդ մասին կազմվում համապատասխան համախոսական (մահսարագիր), այն տանում էին շրջակա վայրերը և հայկական գաղութները, որտեղ ի նշան համաձայնության կնքում էին մահսարագիրը։ Ամենավերջում մահսարատար արքեպիսկոպոսը մեկնում էր Կ. Պոլիս և այնտեղի հայերը տալիս էին իրենց համաձայնությունը կամ հակառակ պարագային, եթե կար ավելի հարմար թեկնածու, նրան էին ընտրում, հետո ստանում էին կաթողիկոսի հաստատման սուլթանական հրովարտակը (ֆերմանը) և ուղարկում էջմիածին։ Դրանից հետո միայն տեղի էր ունենում կաթողիկոսի օծումը[58]։ Այժմ խախտվել էր այդ կարգը և կոստանդնուպոլսեցիները դրվել էին կատարված փաստի առջև։

Ղուկաս Կարնեցուն նվիրված աշխատությունների հեղինակները, առանձնապես Գ. Աղանյանցն ու Մ. Օրմանյանը, հանգամանորեն գրել են նրա ընտրության հանգամանքների, կոստանդնուպոլսեցիների ու առաջին հերթին կաթողիկոսական գահի հավակնորդ Զաքարիա պատրիարքի բանած դիրքի և այդ կապակցությամբ ծավալված պայքարի մասին։ Այս ժողովածուի մեջ հրապարակվող որոշ նյութերի առնչությամբ մենք ևս անդրադառնալու ենք այդ հարցերին, ուստի այստեղ կսահմանափակվենք տալով միայն ընդհանուր տեղեկություններ։

Երբ մահսարատար Սեթ Պետրոս եպիսկոպոս Խուլարածյանն ընտրության վերաբերյալ կազմված արձանագրությունը, որի տակ ստորագրել ու կնքել էին ընտրողներն ու հարևան բնակավայրերի ներկայացուցիչները, հասցնում է Կ. Պոլիս, այնտեղ արդեն ամեն ինչ գիտեին և չափազանց վրդովված էին։ Զաքարիա պատրիարքը կարգադրում է չընդունել Ղուկասին որպես կաթողիկոս, նրա անունը չհիշատակել եկեղեցիներում, չհանել սուլթանական ֆերմանը։ Բացի այդ, նա վերահրատարակել է տալիս հին տոնացույցը և մերժում Սիմեոն Երևանցու կազմած ու օգտագործման հանձնարարված տոնացույցը[59]։

կությունը հնարովի է։ Անհնարին էր այդ ժամանակ 300 թաթարների (և այն էլ բորչալվեցի, որոնք նախորդ թվականին Հերակլի զորքերի կազմում ակտիվորեն մասնակցել էին Արարատյան դաշտի գյուղերի ավերմանը և Երևանի պաշարմանը) մուտքը էջմիածին։ Մի կողմ թողնելով այն հարցը, թե ինչպե՞ս, ի՞նչ ձևով ու միջոցներով կարող էր այդ եպիսկոպոսը 300 ձիավորներ բերել էջմիածին, նկատենք, որ վրաց թագավորի և Երևանի խանի հարաբերությունները դեռևս շատ լարված վիճակում էին, սահմանները հսկողության տակ էին (իսկ Բորչալուն գտնվում էր Վրաստանի սահմաններում) և այդ պատճառով էջմիածնի միաբանները նույնիսկ չկարողացան վրացահայերին իրազեկ պահել կաթողիկոսի ընտրության հանգամանքներին։ Իսկ երբ Ղուկասը կամենում է մի եպիսկոպոս ուղարկել Վրաստան՝ այնտեղի հայության ու վրաց մեծամեծներին գրավոր տեղեկացնելու իր ընտրվելու մասին, հանդիպում է մեծ դժվարությունների։ Նախկին ճանապարհները փակ էին, իսկ Կարսի վրայով ծածուկ ուղարկելը՝ վտանգներով հղի, որովհետև պարսիկները այդ մասին կիմանային իրենց լրտեսներից և «...զայլ և այլս կարծեսցեն» (վավ. № 51)։ Այդ պատճառով հրաժարվում է դրանից։ Այս պայմաններում ինչպե՞ս կարող էին Բորչալուից 300 ձիավոր թաթարներ գալ էջմիածին։ Եթե ճիշտ է, ապա վանքում անպայման ծախսեր արած կլինեին և դրանց մասին գրանցումներ կանեին մատյաններում։ Մինչդեռ ոչ մի գրանցում չկա։ Որևէ ակնարկ չկա նաև այն բոլոր նամակներում, որոնք այդ ժամանակ ուղարկվել են էջմիածնից։ Միայն հիշատակվում է, որ այդ օրերին իր ջոկատով էջմիածին էր եկել Երևանի խանի մարդկանցից մեկը։ 1780 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի պատրիարք Զաքարիային հայտնելով այդ մասին, Ղուկաս Կարնեցին գրում է, որ պարսիկները վերցրել էին արտաքին դարպասների բանալիները և հսկողություն սահմանել միաբանների վրա։ Վրաստանից օգնություն բերելու վերաբերյալ կասկածը կաթողիկոսը համարում է «զրաբանութիւն», այսինքն զրպարտություն (վավ. № 72)։

58 «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ԼԴ—ԼԴ։

59 Նույն տեղում, էջ ԼԷ։

Ղուկաս Կարնեցին քաջ գիտակցում էր իր շուտափույթ ընտրության հետ կապված հնարավոր բոլոր կարգի բարդությունները, ուստի հրաժարվում էր մտնել այդ պատասխանատու լծի տակ։ Կաթողիկոսական գահի թափուր մնալը, թեկուզ և կարճ ժամանակով, չափազանց վտանգավոր էր, ուստի միաբանների թախանձագին խնդրանքներից հետո Ղուկասը տեղի է տալիս։ Բայց երբ նրան տեղեկություններ հասան Կ. Պոլսի հայերի վերաբերմունքի մասին, պառակտումն ավելի չխորացնելու համար, նա այլևս կաթողիկոսական աթոռին չնստեց, կարգադրեց աղոթքների ժամանակ հիշատակել ոչ թե իր, այլ հանգուցյալ կաթողիկոսի անունը, հրաժարվեց եպիսկոպոս ձեռնադրելուց, նամակները չէր կնքում կարմիր կնիքով և նույնիսկ ցանկանում էր վեհարանից տեղափոխվել միաբանների մոտ[60]։ Այնուհետև նա գրավոր հայտնեց Զաքարիային, թե ինքը պատրաստ է զիջելու կաթողիկոսական գահը։ «Երբ և եկեսցէ,—գրել է Ղուկասը,—յանձնեցից ինքեան զՏունս սուրբ, զոր իւրով ամբողջ կուսութեամբ պահել եմ շնորհօքն Աստուծոյ մինչև ցայս կէտ եւ պահեմ»[61]։

Մանրամասն կանգնելով այդ հարցերի վրա, Մ. Օրմանյանը գրել է. «Ղուկասի կողմե առնված այդ քայլերը՝ հեզահոգի առաքինության և խաղաղասեր խոնարհամտության արդյունք էին, որոնք ստուգիվ գովությամբ պետք է հիշատակվին»[62]։

Այդ վիճակը շարունակվեց մինչև 1781 թ. կեսերը և այդ ընթացքում Ղուկասի համակրողների ու կողմնակիցների թիվը գնալով ավելացավ։ Այս ժամանակ անակնկալ մի միջադեպ կարգավորեց խնդիրը։ Կ. Պոլսում կաթոլիկություն ընդունած հայերին հալածելու պատճառով, գերմանական դեսպանի միջամտությամբ, թուրքական իշխանությունները Զաքարիա պատրիարքին 1781 թ. մայիսին աքսորեցին Բուրսա։ Նրա փոխարեն պատրիարք դարձավ Բուրսայի առաջնորդ Հովհաննես Համադանցին, որը Կ. Պոլսի հայ մեծամեծների հետ դիմեց սուլթանին՝ ստանալու Ղուկաս Կարնեցու հաստատման հրովարտակը[63]։ Այն ստացվեց 1781 թ. օգոստոսին[64]։ Այսպիսով, Ղուկասի ընտրությունն օրինականացվեց և նա ճանաչվեց ամենայն հայոց կաթողիկոս։

Ղուկաս կաթողիկոսի նամակներն ու կոնդակները պարունակող ներկա մատենաշարի յուրաքանչյուր հատորի ներածական բաժնում, ինչպես նշել ենք, բնութագրվելու են տվյալ հատորի մեջ հրատարակվող նյութերը, որոնք, ըստ ամենայնի, ժամանակագրական կարգով ներկայացնելու են նրա գործունեության տարբեր կողմերը։ Այս գրքում հրապարակվող նյութերի մասին ևս առանձին խոսք կլինի ներածության համապատասխան հատվածում, ուստի այստեղ ընդհանուր ձևով պատկերացում կտանք Ղուկասի շուրջ 20-ամյա գործունեության վերաբերյալ։

Ինչպես տեսանք, նա ընտրվեց քաղաքական շատ խառը պայմաններում, երբ դեռ չէին վերացվել 1779 թ. Հերակլ թագավորի արշավանքի հետևանքները և նույնիսկ հաշտություն չէր կնքվել կողմերի միջև։ Հետևելով Սիմեոն Երևանցու օրինակին, Ղուկաս Կարնեցին իր գործունեության ողջ ընթացքում անընդհատ հաշտարարի դեր էր խաղում շրջակա իշխողների միջև, որոնք

[60] Նույն տեղում, էջ ԼԸ։

[61] Նույն տեղում, էջ Խ—ԽԱ։

[62] Մ. Օրմանյան, նշված աշխ., էջ 3144։

[63] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ԽԱ։

[64] Այդ հրովարտակի պատճենն այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային բաժնում (տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 491ա—491է, 492ա—492ե)։

պարբերաբար ընդհարվում էին միմյանց հետ՝ մեծամեծ վնասներ հասցնելով բնակչությանը։ Նա հաշտության բանակցությունների միջնորդ հանդիսացավ նախ և առաջ Երևանի խանի և վրաց թագավորի միջև, որոնք, ինչպես հետո կտեսնենք, բավականին ձգձգվեցին։

Այդ թվականներին Ռուսաստանը պատրաստվում էր արշավելու դեպի Անդրկովկաս։ Եկատերինա II կայսրուհին ձգտում էր իրականացնել Պետրոս Մեծի ցանկությունը՝ ռուսական տիրապետությունը հաստատել նաև Անդրկովկասի և Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերի վրա։ Որոշված էր Անդրկովկասում ստեղծել Ռուսաստանից կախման մեջ գտնվող պետություններ։ Ընդ որում առաջնահերթ խնդիրներից էր Արևելյան Հայաստանում հայկական պետության ստեղծելը և Վրաստանի վրա ռուսական գերիշխանություն տարածելը։ Ռուսական գերիշխանության հաստատումը Արևելյան Հայաստանի վրա առաջադիմական կարևոր իրադարձություն կլիներ նրա բնակիչների կյանքում։ Ճիշտ է, այն սոցիալական և ազգային ազատագրում չէր բերելու և չէր էլ կարող բերել հայ ժողովրդին, բայց և միանգամայն դրական նշանակություն էր ունենալու նրա համար։ Պարսից իշխանությանը հաջորդելու էր քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անհամեմատ առավել բարձր զարգացում ունեցող երկրի տիրապետություն, որը ոչ միայն կփրկեր նրան կորստից, այլև հնարավորություն կստեղծեր զարգանալու և առաջադիմելու։ Ռուսական իշխանությունների ծրագրերը համընկնում էին օտար լծից հայերի ազատագրման բուռն ձգտումներին և այդ պատճառով նրանք ուրախությամբ ու մեծ հույսերով էին սպասում ռուսական արշավանքին։

Այդ արշավանքի նախապատրաստությունները գլխավորում էին ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորովը, այնուհետև՝ գեներալ Պ. Ս. Պոտյոմկինը։ Վերջինս 1782 թ. նոյեմբերի 4-ին ժամանում է Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցը և այնտեղից նամակագրական կապ հաստատում Հերակլ II-ի, Ղարաբաղի մելիքների, ադրբեջանական խաների և Ղուկաս կաթողիկոսի հետ։ Շուտով նա էջմիածին է ուղարկում իր ներկայացուցիչ Յակով Ռայնեգսին, որին Ղուկասն ընդունում է մեծ ջերմությամբ[65]։ Արդեն խոսք եղավ Ղուկասի ռուսական կողմնորոշման վերաբերյալ։ Այդ հարցին ավելի հանգամանորեն կանդրադառնանք հրապարակված նամակների մասին խոսելիս, նշենք միայն, որ օտար բարբարոս տիրապետությունից ազատագրվելու հույսերը Ղուկասը ևս կապում էր ռուսական արշավանքի հետ։ Ազատություն նա սպասում էր ռուսական տերությունից, բայց չափազանց զգուշանալով պարսիկներից, խուսափում էր վճռական քայլերից, երբեմն էլ որոշակի խոստումներից։ Այնուհանդերձ 1784 թ. ամռանը, երբ հարկ եղավ Երևանի հայերից մեկին՝ Ստեփան Տեր-Սահակյանին ուղարկել Պետերբուրգ՝ ռուսական կառավարության հետ բանակցելու համար, Ղուկասը դրամական օգնություն ցույց տվեց նրան և հանձնարարական նամակ գրեց Հերակլ թագավորին՝ խնդրելով հայության ներկայացուցչին ուղարկել Ռուսաստան։ Հերակլը կատարեց Ղուկասի ցանկությունը և ճանապարհեց նրան գեներալ Պ. Պոտյոմկինի մոտ, վերջինս էլ Ստեփանին ուղարկեց իշխան Գ. Պոտյոմկինի գրասենյակը։ Ս. Տեր-Սահակյանի միջոցով Ղուկասը նամակ էր ուղարկել Պ. Պոտյոմկինին և վերջինս ընթերցելուց հետո հայտնում է, որ կաթողիկոսը բավարար չափով նախանձախնդիր է իր ազգի ազատագրության համար[66]։

Երկրի ազատագրման հույսերը կապելով ռուսական արշավանքի հետ, Ղուկաս Կարնեցին քաջ գիտակցում էր, որ հայության բախտն առայժմ տնօ-

[65] А. Р. Иоаннисян, նշված աշխ., էջ 55։

[66] Նույն տեղում, էջ 119—120։

քինում են օտար իշխողները, ուստի ձգտում էր բնականոն հարաբերություններ պահպանել նրանց հետ։ Նա նամակագրական կապ ուներ Կարսի, Բայազետի և Խոյի իշխողների հետ, նվերներ էր ուղարկում, հայերին վերաբերող խնդիրներով դիմում նրանց և նրանք հաշվի էին առնում կաթողիկոսին։ Ավելի աշխույժ էին նրա կապերը վրաց թագավորի և նրա ընտանիքի անդամների հետ։ Հերակլ II-ը, նրա որդիներ Լևանը և Գեորգին, թագուհի Դարեջանը և ուրիշներ նամակագրություն ունեին կաթողիկոսի հետ, նվերներ էին փոխանակում և հարկ եղած դեպքում դիմում նրա օգնությանը։

Երևանի տիրակալները հաճախ կարևոր հարցերում խորհրդի էին նստում Ղուկասի հետ։ Օրինակ, երբ 1783 թ. նոյեմբերի 9-ին ծանր հիվանդությունից հետո մեռել էր Հուսեյն-Ալի խանը և անհրաժեշտություն կար նոր խանի իշխանության անցնելը համաձայնեցնել վրաց թագավորի հետ, Երևանում խորհրդակցություն է գումարվում, որին մասնակցելու համար հրավիրվում է նաև կաթողիկոսը[67]։ Վերջինս հաշվենկատ կերպով օգտագործում էր խաների մոտ ունեցած իր հեղինակությունը։ 1793 թ. գրած նրա մի նամակում տեղեկություն կա այն մասին, թե ինչպես խանի օգնությամբ նա կարողանում է ազատել աթոռապատկան առուն Մոլլադուրսուն գյուղի բնակիչների ոտնձգություններից։ Խանն ինքն է գալիս կաթողիկոսի մոտ, որն այն ժամանակ գտնվում էր Երևանի առաջնորդանիստ եկեղեցում, և Ղուկասը պատմում է նրան «զյանդուգն ագահութիւն Մօլլադուրսունցւոց, և զանիրաւաբար զրկանսըն. և զխղճալի գիւղականաց մերոց նեղիլն և վնասիլն և զրաղքն, միանգամայն և զիւր գրան մարդկանց խարդախագործութիւնսն»[68]։ Խանի կարգադրությամբ առուն կրկին վերադարձվում է վանքին, իսկ հիշյալ գյուղի և շրջակա այլ բնակավայրերի համար նոր առուներ են փորվում[69]։

1797 թ. վեճ է սկսվում Օշական գյուղի մոտ գտնվող Գետառ կոչված անդաստանի համար։ Ղըլթամիր գյուղում (այժմ՝ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղ) հաստատված մուղանլուեցիները ձգտում են տիրանալ այդ անդաստանին։ Մուլքիբեկի որդի Հաճի Հասանը, տեսնելով այնտեղ եղած ավերակները, գնում է շեխիսլամի մոտ և սուտ վկաներով հաստատում, թե այդ ավերակը գյուղ էր Մահմադապատ անունով և իր նախնիների ժառանգությունն է։ Հետո այդ հողամասը նա վաճառում է Վելիբեկի որդի Մահմադ Հասանբեկին։ Շեխիսլամը կալվածագիր է տալիս, բայց կաթողիկոսը կարողանում է խափանել այդ ապօրինի գործարքը։ Նույն թվականին, չալթուկի հնձի ժամանակ, մուղանլուեցիները հայտարարում են, որ Գետառը Մահմադապատ գյուղինն է և նրա տասանորդն իրենք պետք է ստանան։ Կաթողիկոսը դիմում է շեխիսլամին, որը Գետառը տիրելու փաստաթուղթ է տալիս Ղուկասի ներկայացուցիչներ՝ Հակոբ և Հովհաննես վարդապետներին, որոնք մեկնում են Օշական։ Նույն օրը երեկոյան մուղանլուեցիները հարձակվում են վարդապետների վրա և մահացու վիրավորում Հակոբին։ Ղուկասը վերոհիշյալ դեպքերի մասին հայտնում է Մահմեդ խանին, որը կարգադրում է Գետառը թողնել վանքին, հավաքված տասանորդը վերադարձնել և տալ սպանվածի արյան գինը[70]։

Կաթողիկոսի նկատմամբ ակնածալի վերաբերմունքը չէր խանգարում Երևանի տիրակալներին էջմիածնի վանքին ներկայացնելու ապօրինի պահանջներ, հափշտակելու նրա ունեցվածքը, միաբանների մասնակից դարձ-

67 Վ. Գրիգորյան, նշված աշխ., էջ 81—82։

68 «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ 619։

69 Նույն տեղում, էջ 620—621։

70 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2402—2405։

նելու իրենց կատարած ծախսերին և, ընդհանրապես, բռնություն գործադրելու վանքի ու նրա սպասավորների նկատմամբ։

Էջմիածնից ուղարկված նամակներից իմանում ենք, որ 1785 թ. Ումմա խանի արշավանքի ժամանակ Երևանի Մահմեդ խանը վրաց թագավորից տեղեկություն ստանալով լեզգիների հարձակման մասին, նամակ է գրում կաթողիկոսին և խորհուրդ տալիս ապահովության համար տեղափոխվել Երևանի բերդը։ Ղուկաս Կարնեցին, հավաքելով վանքի արժեքավոր իրերը, գնում է Երևան։ Այնտեղ եղած ժամանակ, ինչպես երևում է նրա գրագրություններից, նա ակտիվորեն մասնակցում է երկրի ապահովության ուղղությամբ կատարվող գործերին։

1786 թ. գարնանը Ախալցխայի կողմերում ձմեռած լեզգիները շարժվում են դեպի Երևան։ Ղուկասը էջմիածնի վանքը թողնելով մի քանի վարդապետների ու զինվորների հսկողության տակ, ինքը կրկին գնում է Երևան։ Հետախուզության նպատակով նա մի խումբ հրացանակիրների ուղարկում է լեզգիներին ընդառաջ։ Նրանք գնում են Շիրակավան և վերադառնալուց հետո պատմում, որ լեզգիները մի քանի գյուղերից գերիներ վերցնելով, գնում են Փամբակաձորի ճանապարհով։ Ղուկասը նորից հրացանակիրներ է ուղարկում Արայի լեռը՝ լեզգիների շարժմանը հետևելու համար։ Երբ Ղուկասը նրանցից տեղեկանում է լեռնականների առաջխաղացման մասին, մարդիկ է ուղարկում էջմիածնի վանքի և Վաղարշապատ գյուղի անասունները Երևան բերելու։ Նա քսան զինվոր է ուղարկում վանքը պաշտպանելու համար[71]։

Լեզգիները մտադիր չէին Երևանի վրա հարձակվելու։ Նրանք Եղվարդում հրդեհում են մի քանի տուն և գնում միանում են իրենց հրոսակներին։ Մի քանի օր անց լուր է գալիս, որ նրանք Սևանի կողմերով, Ղարաբաղի Իբրահիմ խանի մարդկանց առաջնորդությամբ, գնացել են Շուշի։ Դրանից հետո Արարատյան երկրում նորից ծայր են առնում ներքին կռիվներ, որոնք մեծ վնասներ են հասցնում բնակչությանը։ 1787 թ. դրությունը մի քիչ խաղաղվում է, բայց խլրտումները չեն դադարում։ Օգոստոսի 25-ին Ղուկասի գրած մի նամակում կարդում ենք. «Իսկ մեր երկիրս այժմ ողորմութեամբն Աստուծոյ կայ ի միջակ խաղաղութեան, թէև բնակիչքն անգլուխք ոչ դադարին ի չարեաց և ոչ սակաւ նեղեն զմեզ»[72]։

Ղուկաս Կարնեցին նուրբ քաղաքագետ էր, ուշադիր հետևում էր շրջակա երկրներում և ամենից առաջ Իրանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին՝ քաջ գիտակցելով, որ Հայաստանի համար ամենամեծ վտանգը սպասվում է այնտեղից։ Իր կարողության սահմաններում նա աշխատում էր կանխել հնարավոր դեպքերը։ Թե որքան լավատեղյակ էր Ղուկասն այդ ժամանակ տեղի ունեցող քաղաքական անցքերին, երևում են նրա նամակներից, որոնց մեջ դրանց մասին տրվում են երբեմն մանրամասն տեղեկություններ։ Այդ նամակների մեջ իր ուշագրավ բովանդակությամբ հատկապես աչքի է ընկնում 1790 թ. սեպտեմբերին գրած նամակը՝ հասցեագրված Կ. Պոլսում նվիրակ Մինաս վարդապետին։ Ի տարբերություն մյուսների, այս նամակն ունի հատուկ վերնագիր՝ «Պատմութիւն գալստեան խոյեցւոց և Նախչուանցւոցն յերկիրս Երևանու, և վնասուցն զոր անցուցին ընդ նա և ընդ սուրբ Աթոռս» և բացառապես նվիրված է 1790 թ. Խոյի, Նախիջևանի և Երևանի խանությունների միջև տեղի ունեցած զինված ընդհարումների նկարագրությանը։ Սա փաստորեն ոչ թե նամակ է, այլ պատմական մի փոքրիկ և ամբողջական երկասիրություն, որը զարմանալի պարզությամբ, սեղմ և համա-

71 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 953—954։

72 Նույն տեղում, էջ 1135։

ոտ ոճով վեր է հանում ֆեոդալական կիսանկախ այդ իշխանությունների միջև տեղի ունեցած բազմաթիվ արյունալի ընդհարումներից մեկի պատմությունը։ Այն ցույց է տալիս, թե ինչպես արշավող զորքերը փոխադարձաբար ավերում են իրենց հակառակորդների գյուղերը, թալանում ու հրկիզում տները, ոչնչացնում ամեն ինչ և ինչ թշվառ ու ողբերգական վիճակի մեջ էր գտնվում Արևելյան Հայաստանի բնակչությունը մի առավել ահավոր ավերմունքից՝ Իրանի նոր միապետ Աղա Մուհամմադ խանի արշավանքից մի քանի տարի առաջ։ «Պատմության» մեջ գրանցված տեղեկությունները պերճախոս վկայություն են այն ծայրաստիճան հուսահատ կացության, որի մեջ տվայտում էր իրանական բարբարոս տիրապետության տակ գտնվող աշխատավոր ժողովուրդը Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրության հետ միավորման նախօրյակին։ Ուշագրավ է հատկապես «Պատմության» այն մասը, ուր խոսվում է էջմիածնում ստեղծված տագնապալի վիճակի, արշավող զորքերի հրամանատարների ու Երևանի խանի՝ կաթողիկոսին արված իրազամերժ առաջարկությունների, արշավանքի կապակցությամբ վրաց թագավորի կողմից Երևանի խանին զինված օգնություն ցույց տալու մասին։ Ղուկաս Կարնեցու այդ երկասիրությունը վերոհիշյալ դեպքերի մասին առայժմ հայտնի միակ և, հարկ է նշել, չափազանց վստահելի սկզբնաղբյուրն է[73]։

Աղա Մուհամմադ շահի 1795 և 1797 թթ. արշավանքների ժամանակ Ղուկաս Կարնեցին կատարեց լրջախոհ դիվանագետին վայել քայլեր, որոնց շնորհիվ փրկվեցին էջմիածինն ավերումից ու կողոպուտից, իսկ նրա պաշտպանների ներսում հավաքված շրջակա հայկական գյուղերի բնակիչները՝ կոտորածից ու գերեվարումից։ Տեղեկանալով Անդրկովկասի վրա հարձակվելու Աղա Մուհամմադ շահի մտադրության մասին, Ղուկասը ձեռք է առնում նախազգուշական միջոցներ։ Նա եկեղեցական թանկարժեք սպասքը հավաքում և ուղարկում է Կարս ու Թիֆլիս։ Իսկ երբ իմանում է, որ Հերակլ թագավորը պատրաստություններ է տեսնում թշնամուն դիմագրելու համար, նրան օգնելու նպատակով կարգադրում է վանքի միջոցներից 100 թուման ուղարկել[74]։ Որոշ ժամանակ անց, Հերակլի դեպի Ղազախ շարժվելու լուրն առնելուց հետո, նրան է ուղարկում 1000 ալթմուշլուխ (թուրքական ոսկե դրամ)[75]։ Այս ուշագրավ փաստերը վկայում են այն մեծ հույսերի մասին, որ կապում էր Ղուկասը վրաց թագավորի հետ Աղա Մուհամմադ շահի արշավանքի նախօրեին։

Երբ լուր է հասնում շահի Արդեբիլ գալու մասին, կաթողիկոսը Հովհաննես վարդապետին ուղարկում է նրա մոտ և գրավոր խնդրում արշավանքի ժամանակ էջմիածնի վանքն ազատել ավերմունքներից ու թալանից։ Նույն բովանդակությամբ նամակներ է ուղարկում նաև Միրզա Շեֆիին, Թավրիզի սարդարին, Հուսեյն և Ջաֆարղուլի խաներին[76]։

73 Պահպանվել և լավ վիճակում մեզ են հասել այդ «Պատմության» թե՛ բնագիրը (Մատենադարան, արխիվային բաժին, կթղկ. դիվան, թղթ. 6, վավ. 189) և թե՛ սևագիր օրինակը (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 1461—1462), որոնց միջև տարբերություններ չկան, չհաշված այն, որ ընդունված սովորության համաձայն սևագրի վրա նշված չէ ամսաթիվը, դա արվում էր նամակը մաքրագրելու և առաքման ժամանակ։ Ղուկասի այդ նամակը փոքր-ինչ չափով օգտագործված է Հ. Շահխաթունյանցին վերագրված պատմական երկի I մասում («Դիւան», Ա—Բ, էջ 18—23), ինչպես նաև մեր «Երևանի խանությունը XVIII դարի վերջում» աշխատության մեջ (էջ 143—145)։ Ամբողջությամբ հրատարակվել է մեր կողմից 1962 թ. (տե՛ս Վ. Գրիգորյան, Ղուկաս Կարնեցու մի անտիպ երկասիրությունը, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 429—435)։

74 Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 339բ։

75 Նույն տեղում, էջ 340ա։

76 Նույն տեղում, էջ 342բ։

Հովհաննես վարդապետը պետք է գնար Բայազետի ու Խոյի վրայով, ուստի կաթողիկոսը նամակ է գրում Բայազետի Իսաղ փաշային և խնդրում, որ նա էլ էջմիածնի անվտանգությունն ապահովելու մասին նամակ գրի շահին և Հովհաննեսի հետ մարդ ուղարկի նրա մոտ։ Միաժամանակ Ղուկասը խոյեցիներ Իսաչան ու Մարգար աղաներին հանձնարարում է տեղանքին ծանոթ ուղեկից գնել Հովհաննեսի հետ, այլև նամակներ ուղարկել Հուսեյն ու Ջաֆարղուլի խաներին՝ խնդրելով պաշտպանել էջմիածինը[77]։

Հովհաննես վարդապետի բանագնացությունը հաջողությամբ է պսակվում։ Նա հանդիպումներ է ունենում Աղա Մուհամմադ շահի, Թավրիզի սարդարի և Ջաֆարղուլի խանի հետ։ Պայմանավորվածություն է ձեռք բերվում այն մասին, որ էջմիածինը զերծ է մնալու հարձակման վտանգներից։ Դրա փոխարեն կաթողիկոսը պարսիկներին վճարելու էր համապատասխան փրկագին։ Այդուհանդերձ, Ղուկասը հավատ չէր ընծայում արյունարբու շահին և շարունակում էր իր նախապատրաստությունները։ Հունիս ամսին նա վանքի անասուններն ուղարկում է Ղոշավանք[78]։

Հայտնի է, որ Աղա Մուհամմադ շահի 1795 թ. արշավանքի ժամանակ Վրաստանը համարյա մենակ էր մնացել ահեղ թշնամու դիմաց և Հերակլ թագավորը դաշնակիցներ էր որոնում։ Նրան օգնություն է շտապում Իմերեթիայի Սողոմոն թագավորը 3000-անոց զորքով։ Հերակլը բանակցությունների մեջ է մտնում Երևանի Մահմադ խանի հետ՝ իրենց հարաբերությունները լավացնելու համար։ Քաջ գիտակցելով դրա կարևորությունը թե՛ Վրաստանի և թե՛ Երևանյան երկրի համար, Ղուկասը ձգտում է գլուխ բերել այդ համաձայնությունը։ 1795 թ. հուլիսի 9-ին գրված մի նամակից երևում է, որ այդ ժամանակ Հերակլ II-ը նամակով հայտնել էր, որ ինքը Երևանի խանի նկատմամբ միանգամայն բարեկամաբար է տրամադրված և ցանկանում է նրա հետ լավ հարաբերություններ ունենալ[79]։ Ղուկասն այս նամակն ուղարկում է խանին, որն իր պատասխան նամակում գրում է, թե ինքը պատրաստ է ծառայել թագավորին և որ այդ նեղ ժամանակներում նրա օգնության կարիքն ունի[80]։

Երևանի խանի պատասխան նամակը Ղուկասն ուղարկում է Հերակլ թագավորին ու միաժամանակ իր կողմից գրավոր խնդրում նրան հաշտվել խանի հետ[81]։ Շատ չանցած խանն իր ներկայացուցչին ուղարկում է Հերակլի մոտ. «...Սոքա,—գրում է Ղուկասը,—զՄուստաֆայ բէկն յղեցին ի սպասարքային»[82]։ Խանն առաջարկում է կաթողիկոսին, որ նա էլ մարդ ուղարկի թագավորի մոտ։ Ղուկասը որոշում է Հերակլի մոտ լիազորել վրացահայոց առաջնորդ Մարտիրոս վարդապետին, որն այն ժամանակ գտնվում էր Թիֆլիսում։ Վերջինս պետք է հանդիպեր Մուստաֆա բեկին և միասին գնային թագավորի մոտ։ Ղուկասը Մարտիրոս վարդապետին գրավոր հանձնարարում է Հերակլին հայտնել հետևյալը. «...ի մերս կողմանէ խօսեսցիս, թէ հոգևոր տէրի խնդիրն այս է, որ Երևանու վերայ շատ երախտիս ունիս և Մահմատ խանն զքեզ հայր գիտէ իւրն և յօժարէ ծառայել, միայն թէ յայսմ ժամանակի, յորում թշնամիք յարուցեալք են և երկիրս ամայացեալ կայ, օգնութիւն

77 Նույն տեղում, էջ 342բ—343ա։

78 Նույն տեղում, էջ 343բ։

79 Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 350բ։

80 Նույն տեղում։

81 Նույն տեղում, էջ 350բ—351ա։

82 Նույն տեղում, էջ 350բ։

տանէ և կրկին աղատէ զերկիրս, յայնժամ առաւել ես ի քէն տէրութիւն և ի նմանէ յօժարամիտ ծառայութիւն»[83]:

Ղուկաս Կարնեցին մի նամակ էլ գրում է Հերակլ II-ին, որով խնդրում է օգնություն ցույց տալ խանին և «...այցելութիւն արասցես երկրիս, որպէս և քանիցս արարեալ ես»[84]:

Ղուկաս Կարնեցու ջանքերը զուր են անցնում: Հերակլը ի վիճակի չէր օգնություն ցույց տալու Երևանի խանին և վերջինս միայն իր ուժերով է մնում Աղա Մուհամադ շահի զորավարներ Ալիղուլի և Ջաֆարղուլի խաների 20000-անոց զորքի դեմ[85], որը հուլիսի վերջերին մտնում է Երևանին և բանակ դնում Զարբախում[86]: Այդ ժամանակ, 1795 թ. հուլիսի 27-ին, Ղուկասը մի վարդապետ է ուղարկում Ալիղուլի խանի մոտ և հատուկ պահապաններ խնդրում էջմիածնի վանքի ու Վաղարշապատ գյուղի ունեցվածքը պաշտպանելու համար: Հաջորդ օրը նա ինքն է գնում խանի բանակը և բանակցություններ սկսում փրկագնի վերաբերյալ[87]: Ալիղուլի խանն այս մասին տեղեկացնում է Աղա Մուհամադ խանին, որը նրան իր կողմից լիազոր է կարգում նվերներն ընդունելու գործում:

Ալիղուլի խանը կաթողիկոսից պահանջում է 10000 թուման, բայց վերջինս կարողանում է պակասեցնել գումարը՝ հասցնելով 4000 թումանի[88]: Այդքան փող իր մոտ կանխիկ չունենալով, Ղուկասը պարտք է վերցնում Ջաֆարղուլի խանից 400, Մարաղայի Ահմեդ խանից՝ 200 թուման[89]:

Երևանի պաշարումը տևեց մեկ ամսից ավելի՝ 35 օր և այդ ընթացքում Արարատյան երկիրը ենթարկվեց ավերածության: Մահմեդ խանը վախենում է, որ շահը կարող է իր բոլոր ուժերը կենտրոնացնել Երևանի վրա, գրավել և ավերել քաղաքը, ուստի որոշում է հնազանդվել շահին: Եվ այսպես, Երևանի խանությունը դուրս բերվեց վրաց թագավորության կախվածությունից և կրկին դարձավ իրանական պետության մարզերից մեկը:

Ինչպես հայտնի է, դրանից հետո պարսիկներն իրենց ուժերը կենտրոնացրին վրաց մայրաքաղաքի վրա: Վճռական ճակատամարտում վրաց զորքը պարտվեց և 1795 թ. սեպտեմբերի 11-ին Աղա Մուհամադ շահի հրոսակները ներխուժեցին Թիֆլիս: Յոթ օր քաղաքը թալանելուց, ավերելուց, հրկիզելուց և բնակչությանը կոտորելուց հետո շահի զորքերը, հարուստ ավարով և հազարավոր գերիներով շարժվում են դեպի Գանձակ, իսկ հետո՝ Մուղանի դաշտ և բանակ դնում այնտեղ:

Հոկտեմբեր ամսին շահը Երևան է ուղարկում Սուլեյման սարդարին և Մահմեդ խանին կանչում իր մոտ՝ Մուղանի դաշտ: Սուլեյմանն իր հետ բերել էր նաև հրամանագիր կաթողիկոսի անունով և վերջինս այն ստանալու համար ստիպված է լինում թանկարժեք նվերներ տալ, որից և «...անտանելի վնասակրութիւն եղև և ի գորգոյ և յայլոց դատարկեցաք»—գրում է նա[90]: Բայց և այնպես արյունռուշտ այդ բռնակալի կողմից հաստատվում են կաթողիկոսի իրավունքները և էջմիածինը ապահովվում է հնարավոր հարստահարություններից ու թալանից:

83 Նույն տեղում, էջ 351ա:

84 Նույն տեղում:

85 Նույն տեղում, ձեռ. № 4331, էջ 142:

86 Նույն տեղում, ձեռ. № 4481, էջ 351բ:

87 Նույն տեղում, էջ 352ա:

88 Նույն տեղում, ձեռ. № 4331, էջ 143—144:

89 Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 351բ:

90 Նույն տեղում, էջ 355բ:

Ամեն կարգի ծախսերն անխուսափելի էին և Ղուկաս Կարնեցին ոչ մի բանի առջև կանգ չէր առնում նոր բարդություններ չառաջացնելու և երկիրը խաղաղ պահելու համար: Մուղան մեկնող Երևանի խանին նա տալիս է 200 թուման, ինչպես և 7 ջորի[91]: Իսկ երբ վերջինս շահի կողմից հաստատվելուց հետո վերադառնում է՝ պարտավորված լինելով նրան ուղարկել 100 ուղտ, կաթողիկոսը հարկադրաբար նրան տալիս է 14 ուղտ, բայց դրա համար ստիպված է լինում 1795 թ. դեկտեմբերի կեսերին ոմն Մահմեդ Վելի բեկի հետ նամակ ուղարկել Կարին և գործակալ Հայրապետից խնդրել 10875 ղուրուշ՝ ուղտեր ձեռք բերելու համար[92]:

1796 թ. ռուսական արշավանքը Հայաստանի ազատագրման նոր հույսեր տվեց Ղուկաս կաթողիկոսին: Ռուսական զորքերը հասան մինչև Գանձակ, գրավեցին այն, բայց Եկատերինա II-ի մահից հետո (1796 թ. նոյեմբերի 6-ին) նոր կայսր Պավել I-ը, կամենալով իր ուշադրությունը նվիրել եվրոպական գործերին, չէր ցանկանում շարունակել արշավանքը: Ռուսական զորքերի հեռանալը մեծ ցավ պատճառեց նաև Ղուկաս Կարնեցուն, որն այդ օրերին հետևյալն է գրել Շ. Շահամիրյանին. «...Առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհւոյն, խափանեցաւ գործն օգտակարագոյն աշխարհի, ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն՝ զամէնայն, ընդ ձեռամբ արքեայն թողլով հնոց տիրողացն աւերչաց»[93]:

Փրկություն հուսալով ռուսներից, Ղուկաս Կարնեցին, այնուամենայնիվ, չէր մոռացել Աղա Մուհամադ շահի հարձակման վտանգը և նախազգուշական միջոցներ էր ձեռք առել: Ռուսների Գանձակում եղած ժամանակ նա, շահի վեզիր Հաջի Իբրահիմ խանի խորհրդով, Դավիթ և Հովհաննես վարդապետներին թանկարժեք նվերներով ուղարկել էր շահի մոտ, հայտնել նրան իր հպատակությունը և հրովարտակ խնդրել նրանից: Շահը վարդապետներին «...հաճութեամբ ընկալեալ խիլայիւք և հրովարտակաւ միամտութեան դարձուցանէ անդրէն»[94]:

Լեոն գրում է, որ Ղուկասն այդ ժամանակ «շուտ չհրապուրվեց խոստումներով և ցույց տվեց շրջանկատ հեռատեսություն: Նա չմոռացավ, որ Պարսկաստանը ուժեղ է, որ քրիստոնեությունը դարձյալ կարող է անպաշտպան մնալ»[95]:

Շահի մոտ ունեցած իր հեղինակությունը կաթողիկոսն օգտագործում էր Երևանի խանի ոտնձգություններից պաշտպանվելու համար: 1797 թ. սկզբներին, երբ Երևանի խանը կամենում էր շահի մոտ ուղարկել իր պաշտոնյաներից մեկին, ընծաների համար որոշ բաներ էլ պահանջում է Ղուկասից «զծանրագոյն պահանջմունս արար ի մէնջ յընծայ շահին»[96]: Բայց վերջինս մերժում է, պատճառաբանելով, թե իր կողմից ևս մարդ է գնալու շահի մոտ և նվերներ է տանելու: Այսուհանդերձ, նա վախենում էր՝ «Ուստի և ի սաստիկ կասկածի էաք, թէ ո՞ գիտէ զառնալն զի՞նչ ցաւս է բերելոց մեզ»[97]:

Երևանի խանի ներկայացուցիչը վատ ընդունելություն է գտնում շահի մոտ: Նրա վերադառնալուց հետո Շիրազի խան Հաջի Իբրահիմը, ինչպես նաև

91 Նույն տեղում, ձեռ. № 4331, էջ 153—154:

92 Նույն տեղում, ձեռ. № 4881, էջ 357բ—358ա:

93 «Դիւան հայոց պատմութեան», Ա—Բ, էջ 30—31:

94 Նույն տեղում, էջ 31:

95 Լեո, նշված աշխ., էջ 401:

96 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2289:

97 Նույն տեղում:

Թավրիզում սարդար նշանակված Ջաֆարղուլի խանը Ղուկասին նամակ են գրում՝ հուսադրությամբ, թե շահը բարեկամաբար է տրամադրված կաթողիկոսի նկատմամբ։ Նրանք հայտնում են, որ նա կարող է մարդ ուղարկել շահի մոտ[98]։

Մինչ այդ կարվեր, Երևանի խանը նոր պարտավորություններ է դնում բնակչության վրա։ Կաթողիկոսը պատմում է. «Ապա Երևանու լիրբքն Գճ (300) թումանի չափ դրամ պահանջեցին յողորմելի գիւղացւոց մերոց՝ թող զմաղթայն, և թող զայլևայլ պահանջմունս, որոյ աղագաւ գնացաք յԵրևան, և ի խօսիլ ընդ խանին՝ նա բաշխեաց, իսկ նազիրն զՃ (100) թումանն միայն եթող և զայլն պահանջեց և որչափ ինչ գլխացաւութիւն կրեցաք, օգուտ չեղև»[99]։ Ղուկաս Կարնեցին ընծաներ է պատրաստում և Դավիթ ու Հովհաննես վարդապետների միջոցով ուղարկում շահին, միաժամանակ նամակ է գրում նրան՝ հուսով «...զի քաղցրացուցէ զսիրտ բռնաւորին, որ զխնդիրսն մեր անտես չարարեալ, սաստեսցէ երևանցւոց՝ ձեռն քարշել ի մէնջ»[100]։

Երևանի խանն այն ժամանակ չափազանց վախենում էր շահի նոր հարձակումից և կապ հաստատելով ռուսական հրամանատարության հետ, օգնություն է հայցում ռուսներից[101]։ Բայց օգնություն ստանալն անհնարին էր, որովհետև ռուսներն արդեն հեռանում էին Անդրկովկասից։ Շահի պահանջով Երևանի և Նախիջևանի խաները գնում են նրա մոտ։ Նա մեղադրում է նրանց դավաճանության մեջ և բանտարկում (նախապես կուրացնելով Նախիջևանի Քյալբալի խանին)[102]։ Խանի գույքը, որի մի մասը էջմիածնում էր պահված, բռնագրավվում է։ Այդ պատճառով Ղուկաս Կարնեցին, որ մեկնել էր Երևան Ալիղուլի խանին դիմավորելու, հարկադրված է լինում վերադառնալ[103]։ Խանը կաթողիկոսից որպես «նվեր» պահանջում է մեծ դրամագլուխ։ Ղուկասը գնում է Երևան, 38 օր մնում այնտեղ, աշխատելով գոնե մի քիչ պակասեցնել գումարը, բայց չի կարողանում և ստիպված մի մասը վճարում է, մյուսի դիմաց «սանատ» (պարտամուրհակ) տալով ետ գալիս[104]։

98 Նույն տեղում։

99 Նույն տեղում։ Մ. Մսերյանցի գրքում գրված է, որ այս ժամանակ պարսից շահի եղբայրը (Ալիղուլի խանը) հրաման է արձակում Արարատյան երկրից իր համար հայ օրիորդներ հավաքելու։ Իմանալով այս մասին, Ղուկաս Կարնեցին կարգադրում է ութ տարեկանից վեր բոլոր աղջիկներին ամուսնացնել և երբ խանի ծառայողները կամենում են իրագործել նրա հրամանը, Երևանի խանության մեջ խանին տանելու օրիորդ այլևս չէր մնացել (Մ. Մսերյանց, նշված աշխ., էջ 9)։

Եթե կաթողիկոսի կարգադրությունը գրավոր լիներ, ապա նրա նամակներում որևէ հետք մնացած կլիներ, բայց դրա բացակայությունը դեռևս հիմք չէ ժխտելու այդ իրողությունը, որովհետև ժամանակակից հեղինակ՝ Հարություն Արարատյանն այդ մասին թողել է վստահելի և ուշագրավ տեղեկություն։ Նա պատմում է, որ Արարատյան երկրում սովորություն էր ամուսնության ժամանակ փեսայի և նրա ազգականների կողմից հարսնացուի հորը նվերի ձևով որոշակի գումար տալը։ Աստիճանաբար այդ գումարը մեծացել էր և դժվարացրել ամուսնության գործը (դա վերաբերում էր թե՛ հայերին և թե՛ պարսիկներին)։ Փեսացուները ստիպված բողոքում են Երևանի խանին և վերջինս, այդ բանին վերջ տալու համար, լուր է տարածում, թե ինքն իր կարգադրություն է արել իր հարեմի համար Արարատյան երկրից աղջիկներ հավաքել։ Լուրը տարածվում է և ահաբեկված ծնողները շտապում են ամուսնացնել իրենց դուստրերին։ Ըստ Հ. Արարատյանի (նա գրում է՝ «որքան ինձ հայտնի է») միայն Վաղարշապատ գյուղում մեկ օրվա ընթացքում ամուսնացրել էին 200 զույգի („Жизнь Артемия Араратского", М., 1981, стр. 80).

100 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2289։

101 Е. Хубов, նշված աշխ., էջ 9—10։

102 Նույն տեղում, էջ 10—11։

103 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2394։

104 Նույն տեղում։

Երկրի վիճակը շատ ծանր էր «Իսկ կացութիւն երկրիս,—գրել է Ղուկասը 1797 թ. մայիսի 5-ին,—յանցեալն և նարգենիս ի զանազան հարկապահանջութեանց և ի պէսպէս ծանր գործառնութեանց՝ ի սաստիկ աղութենէ հացի և ամենայն պիտոյից, ի յետին դառնութիւն, չքաւորութեան ժամանեալ՝ յոգիս են ապաստան և կասկածանօք ապառնի վտանգից թախծիմք առ հասարակ»[105]։

Մի այլ տեղ ապրիլի 25-ին նա գրել է. «Եւ ահա հազարաւոր գերեւեարք պատեալ են զմեօք և շփարեցուցանեն զմեզ միշտ, յառաջ մինչ փորձանաւորքըն սակաւք էին և ի քանից միայն կոնդակ տայաք, ազգն մեր բողոք բառնայր, այժմ հազարաւորք և բիւրաւորք են, զի՞նչ արասցուք և ազգն զո՞րն հոգասցէ, մինչ ինքեանք ևս յամենայն տեղիս նեղեալք են»[106]։

Աղա Մուհամադ շահը 1797 թ. գարնանը նոր արշավանք է սկսում դեպի Անդրկովկաս, գրավում է Շուշին և հաստատվելով այնտեղ, անարգել սկսում է թալանել ու ավերել Ղարաբաղը։ Հենց Շուշիում էլ 1797 թ. մայիսի կեսերին նա սպանվում է պալատական դավադրության ժամանակ։

Երբ Ղուկաս Կարնեցին Հերակլ II-ից տեղեկանում է շահի սպանության մասին, նամակ է գրում վրաց թագավորին և ուրախություն հայտնում, որ վերջապես իրենք ազատվեցին այդ հրեշի բռնությունից[107]։

Այս ժամանակ է, որ Ղուկաս Կարնեցին հնարավորություն է ունենում շնորհավորելու Պավել I-ի կայսր դառնալը և նրանից հրովարտակ խնդրում[108]։

Իր նամակի մեջ, որ թվագրված է 20 հուլիսի 1797, Ղուկասը սկզբում նկարագրում է հայերի ծանր վիճակը, որոնք ընկել են խիստ և անօրեն թշնամիների ձեռքը՝ թշնամիներ, «յորոց խռովութիւնք, քան թէ խաղաղութիւն և չարիք, քան թէ բարիք յառաջանան միշտ»։ Հայերից շատերը սրի են քաշված, ոմանք գերի են տարվել, իսկ մնացածները դառն աղքատության մեջ են։ «Տիրօղք,—գրում է նա,—խաբեբայք, իշխանք գողակիցք գողոց և հարկահանք ճռաքաղարարք»։ Քանի որ իրենց տիրողներն իրենց թշնամիներն են, ուստի հայերը արժանի չեն համարում նրանց համար աղոթել և հայկական պետականության անկումից հետո եկեղեցին «յաւուրն երիցս և չորիցս անգամ» ժամերգություն է կատարում ի պատիվ քրիստոնյա թագավորների և իշխողների։ Բայց հայերն առավել ևս պարտական են աղոթել ռուսական թագավորության համար, որը մոտ լինելով նրանց վշտակոծ երկրի սահմաններին, միշտ ողորմած և խնամածու է եղել իրենց նկատմամբ։ Պետրոսի ժամանակներից սկսած մինչև Եկատերինա II-ը հայերը ռուսների կողմից «գտեալ են զառատաղեղ շնորհս մարդասիրութեան և զպաշտպանութիւն կենաց իւրեանց»։ Եվ այժմ կաթողիկոսը շնորհավորում է Պավել I-ի գահակալությունը և խնդրում հրովարտակ տալ «...զի որպէս յայլ տէրութիւնս եղելոց ազգին Հայոց հոգևորական հոգաբարձութիւնն ընդ մեզ է, նոյնպէս և յաստուածապահ երկրիդ Ռուստաց գտանեցելոց ամենայն մերազնէից ըստ հոգևորին կառավարութեան իշխանութիւնն ընդ մեզ լիցի»[109]։

105 Նույն տեղում, ձեռ. № 2922, էջ 33ա։

106 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2385։

107 Նույն տեղում, ձեռ. № 2922, էջ 33բ։

108 Տե՛ս «Թուղթ առ Պաւլ Պետրովիչ կայսրն Ռուսաց, ի շնորհաւորութիւն կայսերութեանն և ի խնդիր, զի որպէս մայրն իւր Կատարինէ կայսերուհին հրովարտակ էր շնորհեալ Սիմէօն կաթուղիկոսին, նոյնպէս և ինքն շնորհեսցէ մեզ այժմ» (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2291—2293)։

109 Այս կոնդակի հետ մեկտեղ կաթողիկոսը նամակ է ուղարկում Պետերբուրգ՝ Հ. Լազարյանին, որպեսզի նա Հ. Արղության հետ գնա կայսրի մոտ. «...ի մատուցանելն զԹուղթսն մեր, զոր ինչ խօսելին իցէ, օժանդակելով նմա ի միասին խօսեսջիք, և զամենայն կրեալ ցաւսն

Իր արտահայտությունների մեջ միշտ զգույշ և չափավոր Ղուկաս Կարնեցու վերոհիշյալ տողերը լավագույն վկայությունն են այն մեծ հույսերի, որ ունեին հայերը ռուսների նկատմամբ։ Կյանքի փորձը համոզել էր նրանց, որ բոլոր քրիստոնյա թագավորների և իշխանների մեջ իրենք առավել ևս պարտական են ռուսական թագավորին, որովհետև միայն նա կարող էր «ողորմած և խնամածու» լինել իրենց նկատմամբ։

Ղուկաս Կարնեցու գահակալության վերջին տարիներին ևս քաղաքական կացությունը մնում էր խիստ անհանգիստ ու լարված։ Երևանցիները կարողանում են քաղաքից քշել Ալիղուլի խանին։ Բայց ի վիճակի չեն լինում պատշաճ դիմադրություն ցույց տալ Մակվի սուլթանի որդի Հասան խանին, որը Նախիջևանից բերված զորքի և քրդերի օգնությամբ գրավում է բերդը։ Բոլորը ստիպված «...կամաւ և ակամաւ հնազանդեցան,—գրում է Ղուկասը,—մեք ևս գնացաք ի տեսութիւն»[110]։

Այս ժամանակ կռիվների և արշավանքների պատճառած չարիքներին միանում են նաև հիվանդությունները, որոնք մեծ զոհեր են խլում բնակչությունից։ 1797 թ. հոկտեմբերի 20-ին Ղուկասը Բաղեշի բնակիչներին գրել է. «Բայց ի ծանրութեան էր օդային երկրիս. մանաւանդ զի յայժմ աշնան երկրաւցիքս ըստ մեծի մասին հիւանդացան. և սուրբ Աթոռոյս Միաբանքն ի մեծաց մինչև ցփոքունս ոչ ոք մնաց առանց հիւանդութեան»[111]։

Մանուել Կյումուշխանեցու «Յաղագս մահտարաժամի որ է յերկիրն Թիֆլիզոյ և յէջմիածին և ի գիւղս Վաղարշապատ» երկասիրության մեջ[112] ուշագրավ տեղեկություններ կան ժանտախտի պատճառած չարիքների մասին։ Այդ հիվանդությունը երևում է էջմիածնում 1797 թ. գարնանը, մահանում են Ներսես, Ղուկիանոս, Գրիգոր եպիսկոպոսները, Գրիգոր վարդապետը և շատ ուրիշներ։ Սկզբում կարծում են, թե դա այլ հիվանդություն է և այն ժամանակվա հնարավորության սահմաններում ախտականխիչ միջոցներ ձեռք չեն առնվում։ Շատ չանցած հիվանդությունը տարածվում է նաև Վաղարշապատ գյուղում և հետո ողջ Երևանի խանության մեջ։ Դրանից հետո միայն էջմիածնի վանականները, անկասկած ոչ առանց Ղուկասի կարգադրության, փորձեր են անում կանխելու նրա առավել տարածումը։ Այս նպատակով Դավիթ Էնեգեթցի եպիսկոպոսը հիվանդներին Վաղարշապատ գյուղից ուղարկում է մի առանձին վայր։ Այնտեղ հավաքվում է քառասուն ընտանիք, սահմանվում է կարանտին՝ արգելվում է գյուղացիներին մտնել վանք, իսկ վանականներին՝ գյուղ։ Պատմվում է, որ մի երիտասարդ սարկավագ խնդրում է թույլ տալ իրեն գնալու գյուղ՝ իր հարազատներին տեսնելու։ Նրան թույլ են տալիս, բայց պայմանով, որ մինչև հիվանդության անցնելը չվերադառնա վանք։ Սարկավագը գնում է և մեռնում իր ընտանիքի հետ[113]։

Ժանտախտը սաստկանում է և այդ պատճառով արտագաղթի վտանգ է ստեղծվում։ Ղուկասը 1798 թ. նոյեմբերին Գեորգի արքայազնին գրել է. «Իսկ

մեր պատմեսջիք և խնդրեսջիք յողորմածութենէ նորին կայսերական մեծութեանն՝ շնորհել մեզ հրովարտակ ողորմութեան, որպէս և հոգելոյս երանելի մեծ կայսրուհին շնորհեալ է տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին» (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2295)։ Նույն բովանդակությամբ նամակներ է ուղարկում նաև Պետերբուրգում բնակվող Մարգար Մանուչարյանին (նույն տեղում, էջ 2295—2296), ինչպես և Պլատոն և Գաբրիել արքեպիսկոպոսներին (տե՛ս ձեռ. № 2922, էջ 34ա—34բ)։

110 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2396։

111 «Դիւան հայոց պատմութեան», հ. Դ, էջ 659։

112 Մատենադարան, Արխիվային բաժին, Ալ. Երիցյանի անձնական արխիվ, թղթ. 156, վավ. 142։

113 Նույն տեղում, էջ 2ա։

յետոյ ի յերկիրս մերում և ի մերձակայ գիւղս մեր իսկ երևեցաւ ժանտախտն, որ զքանի տունս գրեթէ վերջացոյց։ Եւ թէպէտ այլովք սրբութեամբք և մասամբք թափօր առնել տուաք, սակայն ի մայիսէ մինչև ցյունիսի մէջն թախանձելով զմեզ անհանգիստ արարին և ակն եդին առհասարակ տարագիր լինիլ»[114]։

Միակ հույսը էջմիածնում պահվող գեղարդն էր, որին, ինչպես հայտնի է, վերագրված էր համաճարակներից մարդկանց բուժելու հատկություն։ Մանուել Կյումուշխանեցին գրում է, որ երբ կաթողիկոսի կարգադրությամբ գեղարդը տեղափոխվում է Վաղարշապատ գյուղի եկեղեցին, այնտեղ են հավաքվում գյուղի բնակիչները՝ թե հայերը և թե մահմեդականները։ Գեղարդը մնում է այնտեղ մինչև հաջորդ օրվա վերջը և լիովին բուժում մարդկանց[115]։ Պարզ է, որ իրականության մեջ այլ բան է եղել. նման պայմաններում մարդկանց կուտակումները կարող էին միայն հիվանդության նոր բռնկումներ առաջացնել։

Իրանի նոր գահակալ Ֆաթհ-Ալի շահի կարգադրությամբ Երևանի Մահմեդ խանն ազատվում է բանտից և վերադառնում Երևան։ Նա թշնամաբար էր տրամադրված Վրաստանի նկատմամբ, ուստի բռնություններ է գործադրում վրացիների հետ բարեկամական կապեր ունեցող կաթողիկոսի վրա։ Վերջինս չի կարողանում ցավակցություն հայտնել Հերակլ թագավորի մահվան կապակցությամբ, որովհետև ավելորդ կասկածներ կարող էին առաջանալ խանի մոտ։ Նա ցավակցություն է հայտնում և շնորհավորում Գեորգիի թագադրվելը, երբ ինքը՝ խանը մարդ է ուղարկում Վրաստան։

1798 թ. ապրիլի 21-ին Ղուկասը Գեորգի XII-ին գրել է. «...ի յառաջընթաց ամսեանն, որ էր տարեգլուխն այլազգեաց, ի գնալն մեր յԵրևան, դժնդակ և կատաղի դղեկապահն (Երևանի խանը—Վ. Գ.) զի՞նչ անցոյց ընդ գործակալն մեր Դաւիթ վարդապետն, բարբաջելով թէ՝ խաբէութեամբ վարիք ընդ պետն մեր և խորհուրդն ձեր ընդ Վրաց է, և այլն։ Արդ, եթէ յայսքան զգուշանալս մեր, տակաւին՝այսչափ ղօղանջեն, ապա եթէ անզգուշաբար համարձակ գրութիւնք և մարդկան երթևեկութիւնք լինիցէին ընդ մէջ մեր և ձեր յայսպիսի վտանգաւոր ժամանակս, զի՞նչ չարիս անհնարինս ածէին ի վերայ մեր և սրբոյ Տանս»[116]։

Մահմեդ խանը ստիպում է Ղուկասին նվերներ ուղարկել Ֆաթհ-Ալի շահին։ Վերջինս, որ ժամանել էր Խոյ, նվիրատար Հովհաննես վարդապետին ետ է ուղարկում հրովարտակով[117]։

Ինչպես նշվեց, Ղուկաս Կարնեցին 1797 թ. նամակ էր գրել Պավել I կայսրին և հրովարտակ խնդրել։ Վերջինս 1798 թ. փետրվարի 26-ին բավարարում է նրա խնդրանքը։ Կայսերական հրովարտակում, որի բնագիրը պահպանված է[118], ասվում է, որ իր նախորդների՝ Պետրոս I-ի, Եկատերինա I-ի և Եկատերինա II-ի նման Պավել I-ը ևս հայոց կաթողիկոսին, հայ մելիքներին, յուզբաշիներին, կառավարիչներին, այլև «ողջ հայ ազնիվ ժողովրդին» և առանձնապես Ռուսական կայսրության սահմաններում բնակվող հայերին, վերցնում է իր կայսերական ողորմածության և պաշտպանության ներքո և

114 Մատենադարան, ձեռ № 4501, էջ 2334։

115 Մատենադարան, Արխիվային բաժին, Ալ. Երիցյանի անձն. արխիվ, թղթ. 156, վավ. 142, էջ 2ա։

116 Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 40ա—40բ։

117 Նույն տեղում, ձեռ. № 4501, էջ 2414։

118 Մատենադարան, Արխիվային բաժին, Ռուսական ցարերի և Նապոլեոն I-ի հրովարտակները, № 2։ Պատճենը տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 8, վավ. 9։ Հրատարակվածը տե՛ս «Полное собрание законов Российской империи с 1649 года». т. XXV (1798—1799). СПб., 1830, стр. 108—109. Հայերեն թարգմանությունը՝ Մ. Սսերյանց, նշված աշխ., էջ 163—165։

թույլ է տալիս, կաթողիկոսի հոգևոր և եկեղեցական իշխանությունը Ռուսաստանում հաստատված հայ ազգաբնակչության նկատմամբ[119]։

Կանցլեր իշխան Բեզբորոդկոն 1798 թ. դեկտեմբերի 2-ին Ղուկաս Կարնեցուն գրած իր նամակով հայտնում է, որ հրովարտակի հետ միասին կայսրը թանկարժեք նվերներ է շնորհել կաթողիկոսին, և որ հրովարտակ տալու գործում ինքն էլ որոշ դրական գործ է արել[120]։

Այդ նվերների մասին տեղեկություններ կան նաև Ղուկասի գրություններում՝ «յաւելեալ էիք նաև, ի նշան յատկական սիրոյ և անբաւ քաղցրութեանդ, պարգևել զպարգևս չքնաղագոյնս՝ զպանակէ մի ոսկէկազմ, ընդելուզեալ անգամանդ և զմրուխտ ակամբք պատուականօք, և ի մէջին տեղւոջ կազեալ նաշմ՝ զարմանալի քանդակածով սքանչելի պատկերի Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի և զերկուս կտորս ոսկէհուռ դիպակաց»[121]։

Պավել I-ի հրովարտակի պատճեններն ուղարկվում են ռազմական նահանգապետներ՝ կոմս Գուդովիչին (Եգորևսկ), կոմս Կախովսկուն (Նովոռոսիյսկ), Բեկլեշևին (Կամենեց-Պոդոլսկ) ու Արշենևսկուն (Աստրախան), և հատուկ հրամանագրով կարգադրում կենսագործել այն[122]։

Նույն օրը հրամանագիր է ուղարկվում նաև Կ. Պոլսում ռուսական արտակարգ և լիազոր դեսպան Տամարային, որով կարգադրվում է հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Ղուկաս կաթողիկոսի կողմից Թուրքաց մայրաքաղաքն ուղարկված հայ հոգևորականներին[123]։

Ղուկաս Կարնեցին, ստանալով կայսերական հրովարտակը[124], 1799 թ. հոկտեմբերի 15-ին նամակ է ուղարկում Պավել I-ին, որով շնորհակալություն է հայտնում հրովարտակի ու նվերների համար և խնդրում «...զի զտիրական քաղցր խնամոցդ առատութիւն, զոր գեռօրէն զեղուք ի վերայ մեր և ազգի մերոյ, աննուազ առնիցէք ամենաբաւ ողորմածութեամբդ»[125]։

Ղուկաս Կարնեցին երախտագիտություն է հայտնում կայսրին, որը ոչ միայն ռուսահայերին, այլև մյուս հայերին էլ օգնության խոստումներ էր տվել՝ «...նորապէս յայտ կողմանց դիմելոցն ևս խոստացեալ էք զխոստումն տիրաբար այցելութեան»[126]։

Պավել I-ի կողմից հայերին վերոհիշյալ հրովարտակի շնորհումը ցույց է տալիս, որ նա էլ, իր նախորդների նման, ձգտում էր ապահովել ռուսական պետության իրենց արհեստներով ու առևտրով նպաստող ռուսահայերի անվտանգությունը, այլև իր հովանավորությունը տարածել նաև Անդրկովկասում ապրող հայերի վրա, որոնք այդ շրջաններում միշտ օժանդակել և աջակցել են ռուսական պետության ծրագրերի իրականացմանը։

Ղուկաս կաթողիկոսի շուրջ քսանամյա գահակալության ընթացքում Արարատյան երկրում ու շրջապատում քիչ թե շատ խաղաղություն չհաստատվեց և քաղաքական կացությունը գնալով վատթարացավ։ Ստեղծվել էր տագնապալի վիճակ հայ բնակչության համար։ Արտաքին վտանգներին և օտար

119 Մատենադարան, Արխիվային բաժին, Ռուսական ցարերի և Նապոլեոն Ա-ի հրովարտակները, № 2։

120 Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 8, վավ. 9։

121 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2364։

122 Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 8, վավ. 8բ։

123 Նույն տեղում, վավ. 15։

124 Կաթողիկոսը ստանում է միայն նրա պատճենը, իսկ իսկականը մնում է Հ. Արղությանի մոտ, որը «...ոչ հաւատալով աննշան անձանց, խոստանայ ի ձեռն նշանաւոր և հաւատարիմ մարդոյ առաքել», գրել է Ղուկաս Կարնեցին (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 445բ)։

125 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2363—2364։

126 Նույն տեղում։

հրոսակների արշավանքների արհավիրքներին գումարվել էին ներքին անվերջանալի երկպառակտումները, դրանց անխուսափելի հետևանք՝ ընդհարումներն ու բռնությունները, կողոպուտն ու դաժան հարկապահանջությունը։ Այդ դժնդակ պայմաններում Ղուկասը չկորցրեց հոգու արիությունը, խելացի ու ճկուն քաղաքականությամբ ձգտեց ապահովել հայ եկեղեցու իրավունքները, աշխատեց հնարավորին չափով նպաստել հայ բնակչությանը կոտորածներից ու գերեվարումից ազատելու գործին։ Նա համոզված էր, որ ստեղծված ծանր վիճակից դուրս գալու միակ հնարավորությունը հյուսիսի քրիստոնյա հզոր պետության՝ Ռուսաստանի օգնությանն ապավինելու մեջ էր։ Նա դիմում գրեց ռուսական ատրճանավորներին և ռուս թագավորին, ամեն կերպ հասկացնել տվեց իր դրական վերաբերմունքը։ Բայց հայ ժողովրդի ազատագրության իղձերն այդ տարիներին անկատար մնացին։ Քաղաքական զանազան հանգամանքներ արգելակեցին ռուսական իշխանություններին մինչև վերջ իրագործելու իրենց մտադրությունները, ուստի և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու առաջադիմական այդ պատմական իրադարձությունը իրականացավ միայն հաջորդ դարում։

Ղուկաս Կարնեցին թևակոխել էր իր կյանքի 77-րդ տարին։ Նրա առողջությունն արդեն քայքայվել էր, ուժերը սպառվել էին և մոտենում էր անխուսափելին։

Նա մահացավ 1799 թ. դեկտեմբերի 28-ին և աճյունը հողին հանձնվեց հաջորդ օրը։ Կաթողիկոսի թաղումը կատարվեց ս. Գայանե եկեղեցու գավթում իր ուսուցչի ու նախորդի՝ Սիմեոն Երևանցու շիրիմի կողքին։ Գերեզմանի վրա դրված մարմարե տապանաքարի վրա, որը շատ լավ պահպանվել է, արձանագրված է հետևյալը.

«Յարկ դամբարանիս է Վեհին մեծի,	Որ եւ եա ծաղկել կարի սխրալի,
Տեառն Ղուկասու կաթուղիկոսի։	Ըզմէջ տաճարին Միածնաիջի։
Բռնիկ գաւառաւ էր սա Կարնեցի,	Նաև նորոգել եա շուրջանակի,
Հանդարտաքենցաղ եւ ջանիւք բարի։	Շինեալ եւ զայլ շէնս, որք են իսկ յայտնի։
Թէպէտ դիպեցաւ դառն ամանակի,	Ապա ընկալեալ ըզվախճան բարի.
Պատեցեալ վշտօք ըստ փողոյն բանի։	Դիմեաց առ Քրիստոս յոյսն ամենայնի։
Այլ յօրէ կոչմանն եղ իսկ ի մըտի,	Յորմէ ընկալցի ըզվարձըս բարի,
Շըքեղազարդել զգահըն հրաշալի։	Եւ յարքայութեան նորին հրճուեսցի։

Ամփոփեցաւ յամի Տեառն ՌՄՂԹ ի դեկտեմբերի ԻԸ։
Ի տօնի որդւոյն որոտման»։

Դ) ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Չնայած Ղուկաս Կարնեցու գործունեությունն ընթացավ քաղաքական անբարենպաստ պայմաններում, բայց և այնպես նա կարողացավ իրականացնել մի շարք շինարարական ու վերանորոգչական աշխատանքներ։ Այդ մասին, ինչպես հետո ավելի մանրամասն կտեսնենք, շատ տվյալներ կան նաև նրա նամակներում։ Այստեղ ընդհանուր ձևով միայն կնշենք այդ բնույթի նրա կատարած գործերը։

Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը (1715—1725) իր գահակալության սկզբի հինգ տարիների ընթացքում լրջորեն զբաղվել էր էջմիածնի տաճարի նորոգման գործով։ Նրա նախաձեռնությամբ վերանորոգվել էին ավագ խորանը, տաճարի սյուները, սալապատվել հատակը և տանիքը, սվաղվել և նկարազարդվել պատերը[127]։ Բայց անցել էին տասնամյակներ, տանիքի քա-

127 «Գաւազանագիրք», էջ 59։

րերն ու սալերը քայքայվել էին, անձրևաջրերը լցվում էին ներս։ Սիմեոն Երևանցին նորոգել տվեց տանիքը, երկու սյուները, նկարիչ Հովնաթան Հովնաթանյանի միջոցով սկսեց եկեղեցու ներսի նկարազարդումը, բայց մահն ընդհատեց այդ ամենը[128]։

Ղուկաս Կարնեցին շարունակեց իր ուսուցչի գործը։ Նա Վանից հրավիրեց «քաջարհեստ ճարտարապետ» Գասպարին, որը դեռևս Սիմեոնի օրոք՝ 1777 թ. նորոգել էր տաճարի և երկու խորանների տանիքը[129], և նրա միջոցով կատարեց վերանորոգչական մի շարք աշխատանքներ։

Կ. Պոլսում բնակվող մահտեսի Հարություն ամիրայի նյութական աջակցությամբ Ղուկասը նորոգում է էջմիածնի տաճարի ներքնամասի պատերը[130]։ Մինչ այդ նա նորոգել էր լուսամուտները և գցել տվել հարյուրավոր ապակիներ՝ «վասն սոյն լուսամտից ԵՃԼԶ (536) շիշէ գնաց, թէ ալվան և թէ սպիտակ»[131]։

1785 թ. նորոգում է տաճարի շրջապատի սալահատակը Սուրաթում բնակվող Օհանջան աղայի միջոցներով[132]։ Ղուկասը հիմնովին վերանորոգել տվեց տաճարի աջակողմյան դասի երկու սյուները «հանդերձ իւրեանց քառակուսի վերակամարօքն, մեծամեծ և անփլուելի ընտիր ընտիր քարամբք կարմրագունիւք լուսապէս կոփակոկ տաշեցելովք ձիթաշաղախ և պնդակազմ լոկոնիւք («մեծամեծ»)[133] ամրապահ և հաստահեղույս երկաթեայ կապիչս բազումս գետեղելով ի մէջ սեանցն առ ի ըմբռնել զքարինս ընդ միմեանս...»[134]։

Նույն թվականին ջուղայեցի Խաչիկ Էմինղյանի միջոցներով նա կառուցել է տալիս երկհարկանի կամարակապ պահեստներ՝ «...Տինեցան կամարակապ դուռն և արևելակողմն ներքնահարկքս՝ որք են վեց խուցք և մի համբարանոց բրնձոյ հանդերձ կցորդ շինուածովքն»[135]։ Այնուհետև տաշած քարերից ու թրծած աղյուսից շինում են ամառային սեղանատուն և մի սրահ՝ վերնահարկով (Բաղդադում բնակվող Մարգար աղայի միջոցներով)[136]։ 1790 թ. նա ընդարձակում է ձմեռային սեղանատունը, որի շինարարական արձանագրության մեջ ասված է, թե կառուցվել է կեսարացի մահտեսի Հովհաննես ամիրայի ծախքով[137]։ Այս սեղանատան վրա 1791 թ. Ղուկասը շինել է տալիս մի պահեստ (Թոխաթցի մահտեսի Նիկողայոսի միջոցներով)[138]։ Վերը հիշված բոլոր կառույցների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ, որոնք հրատարակվել են Հ. Շահխաթունյանցի գրքում։

Ղուկաս Կարնեցու նախաձեռնությամբ վերանորոգվել է Սանահնի վանքը[139], կատարվել են շինարարական բնույթի այլ աշխատանքներ։

Նրա կատարած վերանորոգչական գործերի մեջ ամենակարևորներից է էջմիածնի տաճարի նկարազարդումը, որը, ինչպես նշեցինք, սկսել էր դեռևս Սիմեոն Երևանցու ժամանակ նկարիչ Հովնաթան Հովնաթանյանը։ Ղուկասը «...ամենայն գովութեանց արժանի և յոյժ անուանի Տօռօթեցի գեղեցկանկար

[128] Նույն տեղում։

[129] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. 2, էջմիածին, 1842, էջ 34։

[130] Նույն տեղում, էջ 35։

[131] Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 11։

[132] Հովհ. Շահխաթունյանց, նշված աշխ., էջ 36։

[133] Բացատրությունը Գ. Հովսեփյանինն է։

[134] «Գաւազանագիրք», էջ 59։

[135] Հովհ. Շահխաթունյանց, նշված աշխ., էջ 101։

[136] Նույն տեղում, էջ 102—103։

[137] Նույն տեղում, էջ 103։

[138] Նույն տեղում։

[139] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ԾԳ։

և քաջավարժ Յովնաթանեան Յովնաթան շնորհալի պատկերահան և ծաղկարար վարպետն, որ ի Թիֆլիզ բնակէր, ի մեծազօր արքայէն Վրաց խնդրեալ՝ բերել ետ ի սուրբ Աթոռս աշակերտօքն հանդերձ»[140]։ Ղուկասը նվիրակների միջոցով հեռավոր վայրերից բերել է տալիս անհրաժեշտ ներկեր։ Հ. Հովնաթանյանը ավարտի է հասցնում սկսած աշխատանքը։ Ըստ «Գավազանագրքի» ականատես հեղինակի, Ղուկասը նախապես ծանոթանում էր զարդանախշերի օրինակներին և նրա հավանությունը ստանալուց հետո միայն Հովնաթանը դրանք նկարում էր պատերին։ «Յովնաթան շնորհալին... նախապէս զըռասմ կոչեցեալ օրինակն և նկարագիրն ցուցանէր Տեառն մերոյ մեծի սիրավառ սրբազանին, և ըստ հաճութեան և հաւանութեան նորին տաչեալ ոսկեճաճանչ փայլմամբ և գեղազէշ յօրինմամբ, գեղեցիկ և հիանալի տեսլեամբ ծաղկազարդէր»[141]։

Նկարազարդման ու վերանորոգման մյուս աշխատանքներն ավարտվելու կապակցությամբ տաճարի ներսում փորագրվում է հետևյալ արձանագրությունը.

«Ի թուին ՌՄԼԵ (1786), շնորհին Աստուծոյ տէր Ղուկաս կաթուղիկոսս վերստին նորոգել ետու զխախտեալ զերկուս սիւնս սրբոյ տաճարիս, ապա և զբոլոր մէջս սորին, որ անշքացեալ էր, նորապէս բռեալ ծաղկեցուցի, հանդերձ խորհրդաւոր պատկերօք, խմուս գոյիւք ստացելովք ի յօրհնեալ ժողովրդոց մերոց ի յիշատակ ինձ և իմոցն, ի վայելս ազգիս Հայոց և միաբանից սրբոյ Աթոռոյս։ Արդ, խնդրեմ ի վայելողացդ յիշել զիս յարժանահայց աղօթս ձեր առ Աստուած, յորմէ և դուք յիշեալ լիջիք, ամէն»[142]։

Ինչպես տեսանք, Գ. Աղանյանցը քննադատել է Գ. Խուբովին և Մ. Մսերյանցին, որոնք Ղուկասին ներկայացրել են որպես անուսումնասեր մեկը[143]։ Այդ տեսակետը միանգամայն զուրկ է փաստական հիմքից և հակասում է պատմական իրողությանը։ Ղուկասը ուսման, գրի և գրականության նշանակությունը քաջ գիտակցող անձ էր։ Այն ծանր պայմաններում նա կարողացավ պահել էջմիածնի դպրոցը, մի որոշ ժամանակ՝ տպարանն ու թղթի գործարանը։ էջմիածնում հրատարակված գրքերը նա աշխատում էր տարածել ոչ միայն շրջակա վայրերում, այլև հեռավոր գաղութներում։ Նա ձգտում էր տպարանում լույս ընծայել հայ պատմիչների գործերը։ Ծանոթ էր ձեռագիր հավաքածուի հետ և հասկանում էր քննական բնագիր և պահպանված գործերի մեջ առավել լիակատարն ու անթերին հրատարակելու անհրաժեշտությունը։ Ղուկասը զբաղվել է նաև թարգմանչական գործով, նա աշխարհաբարի է վերածել Մատթեոսի ավետարանը (ձեռ. № 8234)։

էջմիածնի վանական դպրոցի համար Սիմեոն Երևանցին տաճարի հյուսիսային կողմում հատուկ շենք էր կառուցել։ Այդ դպրոցում (այն ժամանակ կոչում էին «դպրատուն»[144], «վարժատուն»[145]) դասավանդում էին «ուսումն եկեղեցական ընթերցուածոց և երաժշտութեանց, և ինչ ինչ արտաքին դասասացութեանց՝ քերականութեան, ճարտասանութեան և տրամաբանութեան։ Լինէր յայնժամ և ուսումն բարձրագոյն վարդապետական գիտութեանց՝ այն է, դրական Աստուածաբանութեան, և մեկնութեան սուրբ գրոց»[146]։

[140] «Գաւազանագիրք», էջ 61։

[141] Նույն տեղում։

[142] Արձանագրությունը հիանալի պահպանվել է։ Ժամանակին հրատարակել է Հ. Շահխաթունյանցը (տե՛ս Ստորագրութիւն..., էջ 37), իսկ վերջերս՝ Մանյա Ղազարյանը (տե՛ս նրա «Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում», Երևան, 1974, էջ 180)։

[143] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ԾԴ—ԾԵ։

[144] Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 90։

[145] Նույն տեղում, էջ 99։

[146] Հովհ. Շահխաթունյանց, նշված աշխ., էջ 120։

Ղուկաս Կարնեցին նորոգում է դպրոցի շենքը[147], որտեղ կանոնավոր կերպով անց էին կացվում պարապմունքները։ Սիմեոն Երևանցու ընտրության ժամանակ՝ 1763 թ. դպրոցում սովորում էին 16 տղաներ[148], հետագայում նրանց թիվը փոքր-ինչ ավելացավ[149]։ Ղուկասի ընտրությունից որոշ ժամանակ անց դպրոցում կային 24 երեխաներ (1780 թ. հոկտեմբերին)[150]։ Հաջորդ թվականին դպրոցի սաների թիվը Ղուկասը հասցնում է 32-ի[151]։ 1782 թ. նրանց թիվը փոքր-ինչ պակասում է՝ 26[152], 1783 թ.՝ 28[153], 1785 թ.՝ 29 հոգի[154]։ Դասատուներից հիշատակվում են վարժապետ Ստեփաննոս վարդապետը (1780, 1781 թթ.)[155], Նիկողայոսը (1782 թ., 1783 և 1786 թթ.)[156], Մարգարը (1784 թ.)[157] և Կարապետը (1783 թ.)[158]։

Վանքի ելից մատյաններում ուշագրավ հիշատակություններ են պահպանվել աշակերտների վրա կատարված ծախսերի վերաբերյալ։ Այսպես. 1780 թ. հոկտեմբեր ամսին «դպրատան 24 տղայոցն գնաց 24 գթակ, ԺԷ (17) աբայ, ԺԵ (15) թուշի շալ, 22 ալաճայ, 20 կտաւ աստառցու, 21 թօփ շապիկացու և 19 թօփ կապոտ կտաւ ոտաց շորացու»[159]։

Մեկ տարի անց աշակերտներից յուրաքանչյուրին կրկին տրվել են հագուստ և սպիտակեղեն՝ «Վարժատան ԼԱ (31) տղայոցն եառւք 31 գթակ, Ե (5) աբայ, ԺԲ (12) շալ կարած, 31 արխալուղ, ԿԲ (62) շապիկ, ԿԲ (62) ոտաց շոր։ Ի դեկտեմբերի ելն եառւք Զ (6) տղայի շոր ևս յառաջագոյն տուեալ էաք յայրիլի Է (7), այժմ ևս եառւք Ե (5) աբայ, և Դ (4) շալ ևս, ի մարտի տասն և երկուսն եառւք, որ լրացաւ բոլորեցունց շորն»[160]։

Մեկ այլ մատյանում գրանցվել են դպրանոցի տղաներին տրված գրքերի անունները։ Նմուշի համար բերենք այդ ուշագրավ գրանցումներից մեկը. «Ի ՌՄԼԱ (1782) թուին ի վարժատուն տրեցեալ գրեանքն գրին ի ժամանակս Նիկողայոս վարդապետին Ա (1) սաղմոսաշունչ կիսատ, Բ (2) շարականք, Ա (1) ժամագիրք, Ա (1) տօնացոյց։ Ի ՌՄԼԲ (1783) թուոջս, Ա (1) ժամագիրք նոր, Ա (1) կտակարան թարց աւետարանի, Ա (1) կիսատ սաղմոսաշունչ, Ա (1) կիսատ սաղմոսաշունչ, Ա (1) շարական, սոքա ի ժամանակս Կարապետ վարդապետին տրեցան»[161]։

Էջմիածնի դպրոցը գոյություն է ունեցել Ղուկասի գահակալության ողջ ընթացքում։ Նրա մահից հետո էլ դպրոցը գործել է և 1801 թ. կազմված Էջմիածնի միաբանների մի ցուցակում «Վարժատան տղայքն» խորագրի տակ անվանապես հիշվում են 17 աշակերտներ[162]։

147 Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 135։

148 Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 2։

149 1764 թ. սովորողների թիվն էր 20 հոգի. 1765 թ.՝ 15, 1767 թ.՝ 19, 1768 թ.՝ 25, 1769 թ.՝ 28, 1770 թ.՝ 30, 1771 թ.՝ 25, 1772 թ.՝ 30, 1773 թ.՝ 23, 1774 թ.՝ 19 (տե՛ս Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 9, 21, 25, 33, 37, 41, 46, 50, 53, 58)։

150 Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 90։

151 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 276։

152 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, էջ 104։

153 Նույն տեղում, էջ 108։

154 Նույն տեղում, էջ 117։

155 Նույն տեղում, թղթ. 7, վավ. 3, էջ 7, թղթ. 4, վավ. 1, էջ 276։

156 Նույն տեղում, թղթ. 7, վավ. 3, էջ 32։

157 Նույն տեղում։

158 Նույն տեղում։

159 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, էջ 90։

160 Նույն տեղում, էջ 99։

161 Նույն տեղում, թղթ. 7, վավ. 3, էջ 32։

Ղուկաս Կարնեցին հետևում էր նաև տպարանի գործունեությանը և անում ամեն ինչ նրա անխափան աշխատանքն ապահովելու և տպագրված գրքերը տարածելու համար։ Հնդկահայ Գրիգոր Խոջաջանյանի ծախքով 1771 թ. Սիմեոն Երևանցու հիմնադրած այդ տպարանում, որը կրում էր Գրիգոր Լուսավորչի անունը, մինչև Ղուկասի ընտրվելը հրատարակվել էր չորս անուն գիրք, իսկ հինգերորդի՝ Սիմեոն Երևանցու «Գիրք որ կոչի պարտավճար»-ի տպագրությունը սկսվել էր 1779 թ. և կիսատ մնացել։ Ղուկասի օրոք տպագրիչ վարպետներն ավարտում են այդ գրքի հրատարակությունը և ձեռնամուխ լինում հաջորդ գրքին՝ «Գիրք ժամանակագրութեանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց եւ կարգաւորութեան սաղմոսացն Դաւթի մարգարէին» կամ ինչպես գրված է երկրորդ անվանաթերթի վրա «Ժամագիրք ատենի յորում պարունակին երեք գիրք»։ Այս գիրքը լույս տեսավ 1785 թ., իսկ երկու տարի անց հրատարակվեց «Գիրք պատմութեանց Յովսեպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս» ստվար հատորը։ Այդ նույն՝ 1787 թ. Էջմիածնի տպարանը հրատարակեց նաև «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարանը», որի վերջում զետեղված էին նաև Ներսես Շնորհալու «Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ ի Քրիստոսը» և «Հաւատով խոստովանիմը»։

Չնայած աննպաստ պայմաններին, այդ տպարանում հնարավոր է լինում լույս ընծայել ևս երեք գիրք՝ «Խորհրդատետրը» (1788 թ., 428 էջ), «Տարակնոց երաժշտական երգեցմունք հոգեւորականքը» (1789 թ., 895 էջ) և Սիմեոն Երևանցու «Տաղարան փոքրիկը» (1793 թ., 45 էջ), որից հետո տպարանը այլևս ոչինչ չի տպագրել։ Հետագայում այն, Արարատյան դաշտում ծայր առած ներքին կռիվների ժամանակ, թղթի գործարանի հետ միասին ավերվում է։ Նշելով այդ մասին, Հ. Շահխաթունյանցը գրում է, որ դրանից հետո տպարանի ձուլված տառերը հայտնվել էին հեռավոր քաղաքներում. «մինչ գի և գձուլեալ տառսն տպարանին ի հեռաւոր քաղաքաց գնեալ ի գերչացն հայազգի անձինք՝ վերադարձուցանէին յԱթոռ սայսր զկնի այնր պատերազմաց»[163]։

Տպագրված գրքերն իրացվում էին տեղում կամ էլ նվիրակների ու առաջնորդների միջոցով ուղարկվում հեռավոր վայրեր։ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում գտնվող վավերագրերից մի քանիսում հիշատակություններ կան գրքերի վաճառքի ու նվիրաբերման մասին։ Այսպես, վաճառելու համար գրքեր են առաքվել Ուռումելի նվիրակ Մինաս վարդապետին, Տիգրանակերտի նվիրակ Գրիգոր վարդապետին (1784 թ.՝ 80 գիրք), Կ. Պոլսի արտաքին վիճակի նվիրակ Գրիգոր վարդապետին (1785 թ.՝ 122 գիրք), Կարնո նվիրակ Դանիել վարդապետին (30 գիրք)[164]։ 1783 թ. հուլիսի 26-ին Կ. Պոլսի նվիրակ Սահակ վարդապետին «Պարտավճար» գրքից տրվել է 60 օրինակ՝ 50-ը որպես նվեր բաժանելու, իսկ մնացածը վաճառելու համար՝ «10 հատ աւելի եդաք, որ անդ ծախեսցէ և զդրամն սուրբ Աթոռն հասուսցէ»[165]։

Գրքերը բավականին թանկ էին և մատչելի միայն ունևորներին։ Նրանց գինը հասնում էր մինչև 3 ղուռուշի (1 ղուռուշը հավասար էր 40 փարայի)՝ այն ժամանակվա համար զգալի մի գումար։ 1769 թ. տվյալներով մշակների

162 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, № 27ե։

163 Հովհ. Շահխաթունյանց, նշված աշխ., էջ 100։

164 Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 7, վավ. 3, էջ 11։

165 Նույն տեղում։

օրավարձը 2 շահի էր (այսինքն 6,2 փարա), իսկ բռնակիրներինը՝ 8 փարա[166]։ Հետևապես, մեկ «Տոնացույց» գնելու համար, որն արժեր 3 դուռուշ[167], հասարակ մշակը պետք է աշխատեր ավելի քան 20 օր, իսկ բռնակիրը՝ 15 օր։

Ինչպես հայտնի է, Սիմեոն Երևանցին նույն Գրիգոր Խոջաջանյանի ծախքով 1774 թ. էջմիածնում կառուցել տվեց թղթի գործարան։ Մ. Մսերյանցը գրում է, որ Ղուկասն իբր քանդել է տվել այն՝ «ձեռն էարկ քանդել զբազմածախ գործարանն թղթոյ... և ի կոփածոյ քարանց նորին շինել զլիճ ընդարձակ ի լուացումն զոմշոց յամարանի»[168]։

Մ. Մսերյանցն այս հարցում ևս սխալվում է՝ Ղուկաս Կարնեցուն ներկայացնելով այդ ծանր մեղադրանքը։ Թղթի գործարանը կառուցված էր էջմիածնի պարիսպներից դուրս և ավերվել է ոչ թե կաթողիկոսի, որը մշտապես թղթի կարիք ուներ և մեծ դժվարությամբ բերել էր տալիս դրսից, այլ օտար ասպատակողների կողմից։

«...ի պատճառս յարուցման պատերազմաց,—գրում է Հ. Շահխաթունյանցը,—ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայ միմեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարգական Աթոռով, խանգարեցան մեծ մասամբ և գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան, զի զոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ և պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցան և ցիր եղեն ի հեռաւոր տեղիս»[169]։

Ընտրվելուց անմիջապես հետո Ղուկաս Կարնեցին խնամքով հետևել է թղթի գործարանի աշխատանքներին։ Վարպետները կանոնավոր կերպով վարձատրվել են և գործը առաջ է տարվել։ Նամակներից երևում է, որ նա տարբեր տեղերից հնոտիներ էր բերել տալիս թղթի գործարանի համար։ Էջմիածնի վանքի ելից մատյաններից մեկում հատուկ տեղ էր հատկացված գործարանի վրա կատարված ծախսերը գրանցելու համար։ «Աստուծով մտաք ի ՌՄԼ (1781) թիւն մեր և սկսաք գրել թղթատան խարճն և մասրաֆն,—կարդում ենք այնտեղ,—թղթաշէն Նիկողայոսի բոլոր տարւոյ վարձն եսու Ա (1) թուման ՁՌ (6000) դիան, ձեռամբ աթոռակալ Աւետիք վարդապետին»[170]։ Նույնչափ գումար (յուրաքանչյուրին 1 թուման 6000 դիան) տրվել է նաև թղթի գործարանում աշխատող մյուս անձանց՝ Հովակիմին և Սաղաթելին՝ դարձյալ Ավետիք վարդապետի ձեռքով[171]։ Կարելի է կարծել, որ վերջինիս վրա է դրված եղել գործարանին հսկելու պարտականությունը։

Իսկ թե ե՞րբ է ավերվել գործարանը, մեզ հայտնի չէ։ Ըստ երևույթին դա եղել է վերը կատարված գրանցումներից ոչ այնքան ուշ, որովհետև արդեն 1784 թ. գարնանը հարց է առաջացել նորոգելու այն։ Դրա նախաձեռնողը Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետն էր, որի վրա էր դրված էջմիածնի համար թուղթ ձեռք բերելու և առաքելու դժվարին պարտականությունը։ 1784 թ. ապրիլի 27-ին նա կաթողիկոսին գրել է, որ ինքը նպատակ ունի դրամ հավաքել թղթի գործարանը վերականգնելու համար։ Ղուկասը նրան պատասխանում է.

«Իսկ վասն թղթատանն, որ ցաւելով գրես, մի՞թէ մեք ոչ ցաւիմք, այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ՝ խղճալի Նիկողայոսն ևս վախճանեցաւ և նոյն արհեստին այլ գիտօղ ոչ գոյ...»[172]։

---

166 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 3։

167 Նույն տեղում, թղթ. 7, վավ. 3, էջ 32։

168 Մ. Մսերյանց, նշված աշխ., էջ 12։

169 Հովհ. Շահխաթունյանց, նշված աշխ., էջ 100։

170 Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 7, վավ. 3, էջ 12բ։

171 Նույն տեղում։

172 Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 796։

Շինարարական և այլ բնույթի աշխատանքներ կատարելու միջոցները, օտար բռնակալներին պարբերաբար տրվող մեծամեծ գումարները, վանական բազմանդամ միաբանության և հյուրերի ապրուստի ծախքերը վանքը հանում էր նվիրակների և թեմական առաջնորդների առաքած գումարներից, եկեղեցական հարկ ու տուրքից, վանքապատկան կալվածների ու արտադրական օբյեկտների շահագործումից ստացվող եկամուտներից։ Զգալի գումարներ ու թանկարժեք նվերներ էին բերում էջմիածին ժամանած ուխտավորները։

Էջմիածնի վանքը խոշոր կալվածատեր էր և նրա բարդ ու բազմաճյուղ տնտեսությունը գլխավորում էր կաթողիկոսը, տվյալ պարագային Ղուկաս Կարնեցին, որն այդ գործին ներգրավել էր միաբանության անդամների մեծ մասին։ Վանական ունեցվածքների վրա աշխատող գյուղացիները ենթարկվում էին անլուր կեղեքման ու շահագործման։ Վանքի ելից ու մտից մատյաններից երևում է, որ վանքի կալվածքներում աշխատող մշակները որպես օրավարձ չնչին գումար էին ստանում, որով դժվարությամբ կարող էին հոգալ իրենց առօրյա ամենանվազագույն ծախքերը։ Ղուկաս Կարնեցին ամեն գնով ապահովում էր եկեղեցական չորս տասնյակի հասնող տուրքերի գանձումը, որոնց մի մասը պարտադիր հարկի բնույթ էր ստացել[173]։ Եկեղեցական տուրքերը երեք տեսակ էին՝ հայրապետական (կաթողիկոսական), առաջնորդական, քահանայական։ Հայրապետականը լինում էր մինչև ութ տեսակի, որոնցից երկուսը՝ «սրբազրամը» և «պտղին», դարձել էին պարտադիր և խոշոր գումարներ էին բերում եկեղեցուն։ Փոքր չէր նաև մեռոնի դիմաց հավաքվող դրամական տուրքը[174]։ Բնակիչները պարտավոր էին եկեղեցուն վճարել մկրտության և թաղման, հարսանիքի ու բազմաթիվ այլ ծեսերի ու արարողությունների համար։ Բացի այդ, ժողովրդի մշտական շահագործողների կողքին հանդես էին գալիս նաև բազմաթիվ հոգևոր ու աշխարհիկ անձինք, որոնք այս կամ այն առիթով, մեծ մասամբ ուխտավորական նպատակներով, ուղևորություններ էին կատարում զանազան վայրեր, գլխավորապես Երուսաղեմ, և օգտվելով կաթողիկոսի տված ժողովարարական կոնդակներից, բնակչությունից միջոցներ էին հավաքում իրենց ճանապարհորդությունն իրագործելու համար։ Այդ ուխտավորները ոչ միայն Հայաստանից էին, այլև Վրաստանից։ Ժողովուրդը հաճախ հրաժարվում էր «նվիրատվություն» անելուց և բողոք հայտնում կաթողիկոսին, այնպես որ վերջինս ստիպված հաշվի էր նստում դրա հետ և ինքն էլ իր հերթին մերժում այս կամ այն անձին ժողովարարական կոնդակ տալու խնդրանքները։

Գյուղացիները հաճախ հրաժարվում էին վճարել եկեղեցական հարկերը. օրինակ՝ Թովմա Առաքելո վանքի մոտ գտնվող Դաշտ գյուղի բնակիչները չէին կամենում վանքին հարկեր տալ։ Ղուկասը վախենալով, որ դա վարակիչ կարող է լինել մյուսների համար, 1785 թ. հունվարին նամակ է գրում նրանց և աշխատում համոզել, որ վճարեն հարկերը։ «Նախ՝ զի այդպէս անարժին և անողորմ լինելով,—գրում է նա,—աննման գտանիք բոլոր ազգիս մերոյ. և երկրորդ՝ զի այդու յամառութեամբդ յԱստուծոյ աչացն ելանէք և այլոց ևս վատթար օրինակ լինիք։ Զոր ամենևին ոչ կամիմ և ոչ վայել է բարեպաշտու-

---

173 Այս հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Б. М. Арутюнян**, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940; Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանության մեջ 17—18-րդ դարերում և էջմիածինը որպես խոշոր կալվածատեր (Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ, հ. 13, Երևան, 1940)։

174 Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 135—136։

թեան ձերում»[175]։ Հակառակ դեպքում Ղուկասը սպառնում է նրանց հետ այլ կերպ վարվել. «Իսկ եթէ ոչ կամիցիք լսել հայրական պատուիրի մերում, և դարձեալ յամառիցիք զրկել զսուրբ վանսն ձեր և զխղճալի բազմաչխատ առաջնորդն նորին ի հասից և իրաւանց, ամէն ասեմ ձեզ, կթելոց էք յայնժամ զպտուղ անխղճութեան և անհնազանդութեան ձերոյ և նշաւակ էք լինելոց բազմաց»[176]։

Ղուկաս Կարնեցու գործունեության ընդհանուր պատկերը թերի կմնա, եթե չհիշենք այն տևական և համառ պայքարը, որ նա մղեց կաթոլիկ քարոզիչների ու նրանց հետևորդների դեմ։ Այդ հարցում նա կարողանում էր հենվել նաև տեղական իշխողների վրա և նրանց ձեռքով դատաստան տեսնել աղթարմաների՝ կաթոլիկություն ընդունած անձանց նկատմամբ։

Ղուկասը հայ եկեղեցու միասնականության պաշտպան էր և շատ բան արեց էջմիածնի հեղինակությունն ու ազդեցությունն ամրապնդելու ուղղությամբ։ Հետևելով Սիմեոն Երևանցուն, նա հալածանքի ենթարկեց ինքնակոչ և դավաճան Իսրայել կաթողիկոսին, ինչպես և Գանձասարի Սարգիս կաթողիկոսին, որն իր եղբոր՝ Հովհաննես կաթողիկոսի եղերական մահվանից հետո, Գանձակի Ջավադ խանի հրամանով, առանց էջմիածնի կաթողիկոսի համաձայնության, օծվել էր կաթողիկոս։ Իր գահակալության ընթացքում նա արգելեց Սսի, Աղթամարի և Գանձասարի կաթողիկոսներին օծվել առանց էջմիածնի կաթողիկոսի համաձայնության[177]։

Ղուկասի կատարած այլ գործերին մենք դեռ առիթ կունենանք ավելի հանգամանորեն անդրադառնալու. նրա նամակների բովանդակությունը քննարկելիս, նշենք միայն, որ դրանք ավելի շատ կլինեին, եթե նա ապրեր ու գործեր քիչ թե շատ խաղաղ ու ապահով պայմաններում։ Արժե այս կապակցությամբ մեջ բերել Գ. Աղանյանցի իրավացի խոսքերը.

«Իսկ թե նա ինչու չկարողացավ ավելի գործ տեսնել, դորա մասին հարկավոր չէ պատճառներ որոնել, յուր ամբողջ կյանքը, յուր գրագրությունը շարունակ ողբի հոռ են բուրում, Հայաստան աշխարհը շարունակ երերյալ և տատանյալ և ինքը մենակ մեջտեղ անոք և անօգնական ու շուրջը ավեր ու ամայություն...»[178]։

Ե) ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնի բերումով Ղուկաս Կարնեցին շատ ժամանակ էր հատկացնում նամակագրությանը։ Համարյա ամեն օր նա զբաղված էր լինում տարբեր վայրերում գտնվող նվիրակներին ու առաջնորդներին, աշխարհիկ ու հոգևոր անձանց նամակներ ու կոնդակներ գրելու գործով։ Կաթողիկոսարանի գործավարությունն այն ժամանակ պատշաճ բարձրության վրա էր։ Հատուկ մատյանների մեջ գրվում էին նամակների սևագիր օրինակները, մեկ այլ տեղ արձանագրվում էր նրանց բովանդակությունը։ Եթե նամակները կարևոր չէին (շնորհակալության կամ մխիթարության նամակներ, ստացագրեր, զանազան երկտողներ կամ հետգրություններ), նրանց մասին խիստ համառոտ ծանո-

175 Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 757։

176 Նույն տեղում։

177 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Դ, էջ Ծ—ԾԱ։

178 Նույն տեղում, էջ ԽԹ—Ծ։

թագրություն էր մտցվում հատուկ տետրի մեջ։ Հետո այդ մատյանները կազմվում էին, էջակալվում և պահվում դիվանում։ Դժբախտաբար, նույն բծախնդրությունը չէր ցուցաբերվում ստացված նամակների պահպանության գործում, ուստի նրանց մի մասը չի դիմացել ժամանակի փորձությանը և տեղեկություններ նրանց վերաբերյալ կարելի է գլխավորապես ստանալ վերոհիշյալ սևագրություններից և համառոտագրություններից։ Նամակների վրա եղած նշումներից, լրացումներից ու ջնջումներից երևում է, որ մինչև մաքրագրվելը, դրանք հիմնավորապես խմբագրվել են կաթողիկոսի կողմից։

Գործավարության այդ ձևը էջմիածնում կիրառության մեջ է դրվել Սիմեոն Երևանցու օրոք, որը դրան մեծ կարևորություն էր տալիս։ Մինչ այդ նամակների սևագրությունները չէին պահվում։ Սիմեոնի գրագիրներից Հովհաննես դպիրը ուշագրավ տեղեկություններ է թողել այն մասին, թե ե՞րբ և ինչո՞ւ սկսեցին պահել սևագրությունները։ Նա պատմում է, որ դա սկսվեց 1763 թ. սեպտեմբեր ամսին՝ «Իսկ յորժամ հասաք մեք յամիսն սեպտեմբերի, ապա հարկ եղև մեզ այնուհետև՝ (որպէս ասացաք) գրով յապայ պահել զորքանութիւնս և զորպիսութիւնս գրեցելոց թղթոց»[179]։

Բանն այն է, որ այդ թվականի մայիսի 19-ին էջմիածնից դեպի Կ. Պոլիս էին մեկնել չորս նվիրակներ և մահտարատար Գրիգոր վարդապետը, տանելով իրենց հետ նվիրակական գրություններ և կաթողիկոսի ընտրության կապակցությամբ կազմված համախոսականներ։ Այնպես է պատահում, որ Կարինից այն կողմ Կ. Պոլսի նվիրակի սպասավորը քարավանից ետ է մնում։ Անտառից դուրս եկած ավազակները հարձակվում են և հափշտակում նրա բեռնված ձին։ Քարավանի մարդիկ՝ «քաջք արանց կարավանին» հետապնդում են նրանց և մտնում անտառ, բայց չեն կարողանում բռնել։ Ավազակները պատառոտում են նամակները, իսկ մեռոնը «ի տեղի ձեթոյ վաճառեն»։ Կ. Պոլսի նվիրակ Հարությունը հայտնվում է ծանր դրության մեջ։ Նա Թոխաթից նամակ է գրում կաթողիկոսին, որն այն ժամանակ գտնվում էր Ուչքիլիսա վանքում և նկարագրում նամակների կորուստը։ Հետո Կարինի նվիրակը գտնում է կորած նամակների մի մասը։ Որոշվում է լրացնել կորուստը և նամակներն ուղարկել Թոխաթ՝ Կ. Պոլսի ձախորդ նվիրակին։ Ահա այդ ժամանակ էլ խիստ անհրաժեշտ է լինում օգտվել սևագրություններից, որոնք, սակայն, լրիվ չէին և դժվար էր միայն նրանց հիման վրա վերականգնել նամակները[180]։ Վերոհիշյալ հանգամանքը դրդում է կաթողիկոսին նամակների սևագրությունները պահպանելու որոշում կայացնել։

Այդ գործը սկզբում հանձնարարված էր Սիմեոնի աշակերտներից Հովհաննես Գեղամացի դպրին (հետագայում՝ Իսահակ վարդապետ)։ 1770 թ. նրան փոխարինում է Հովհաննես վարդապետը, իսկ վերջինիս մահից հետո (1776 թ.) մինչև Սիմեոն Երևանցու մահը (1780 թ.) քարտուղարության պարտականությունը կրկին դրվում է Իսահակ վարդապետի վրա, որը միաժամանակ ղեկավարում էր տպարանի աշխատանքը։

Դիվանատան դպիրները մեծ բարեխղճությամբ արձանագրել են Սիմեոնի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները՝ հանգամանորեն բացատրելով այլևայլ վայրեր և տարբեր անձանց նամակներ ուղարկելու դրդապատճառները և տվել այդ նամակների բովանդակությունը։ Փաստորեն նրանք ստեղծել են յուրօրինակ և շատ արժեքավոր ժամանակագրություն։

Ղուկասի օրոք նամակագրության գործն ավելի բարդացավ։ Լինում էին

179 «Դիւան հայոց պատմութեան», Գ, էջ 6։

180 Նույն տեղում, էջ 6—7։

ամիսներ, երբ էջմիածնից ուղարկվող նամակների թիվն անցնում էր 140-ից։ Օրինակ՝ 1780 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 26-ը ուղարկվել է 141 նամակ, 1782 թ. հունիս ամսին՝ 142 նամակ։ Բնականաբար, այս չէր կարող անել նաև այլ գործերով ծանրաբեռնված կաթողիկոսը, ուստի նա պահում էր քարտուղարներ, որոնցից մեկը կաթողիկոսի հանձնարարությամբ կամ թելադրությամբ գրում էր որևէ մեկին ուղղված նամակ կամ պատասխան-նամակ։ Վերջին դեպքում նշվում էր նաև ստացված նամակի համառոտ բովանդակությունը, ստացման ու առաքման ժամանակը։ Նամակների այս մասը ևս շատ հետաքրքրական է, որովհետև նրանցից տեղեկություններ ենք ստանում շրջակա երկրներում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ։ Կարևոր նամակներն ու կոնդակները ծաղկազարդվում էին։ Մահմեդական իշխողներին առաքվող նամակները չէին ծաղկազարդվում։ Նամակի համառոտ կամ ընդարձակ բովանդակությունն արտագրվում էր առանձին մատյանի մեջ՝ ճիշտ այնպես, ինչպես անում էին Սիմեոն Երևանցու ժամանակ։ Երբ հարկավոր էր իմանալ, թե ու՞մ, ի՞նչ բովանդակությամբ և ե՞րբ են նամակ ուղարկել, բաց էին անում այդ մատյանը։ Այս մասին Գրիգոր սարկավագը 1782 թ. մայիսին գրել է. «Եւ զի յիշատակարան է այս, որովհետև յիշեցեալքն յայսմիկ տո յապայն պիտոյացին, յորում յետախոյզ լեալ, որոց հարկաւորի իմանալ, որոնեսցեն ի յայս, թէ արդեօք այսինչ թուղթ ե՞րբ գրեցաւ առ այս ոմն, յի՞նչ միտս և կամ վա՞սն էր։ Ուրեմն հարկ է մեզ նշանագրել՝ ոչ երկարապէս, այլ կարճ ի կարճոյ, հանդերձ գրեցմամբ զպատճառս, և զթիւս ամաց և ամսոց առ ի դիւրագիւտ լինիլ յուզողաց»[181]։

Ինչպես տեսնում ենք, դրանք սոսկ բովանդակություններ չէին. դպիրները գրում էին նաև նամակների ստեղծման պատճառների մասին։ Վերջին հանգամանքն ավելի արժեքավոր է դարձնում նամակը, լրացնում այն, թույլ տալիս գաղափար կազմելու այլևայլ իրողությունների մասին, որոնց առթիվ կամ որոնց ժամանակ գրվել էր տվյալ նամակը։ Դժբախտաբար, նամակների բովանդակությունների գրառման այս ավանդույթը հետագայում մոռացվել է և դպիրները չոր ու ցամաք ձևով բնութագրել են կամ պարզապես թվարկել ուղարկվող գրությունները։

Կաթողիկոսի գրությունները տարբեր բովանդակություն ունեին և ըստ այդմ էլ կոչվում էին։ Օրինակ՝ թուղթ ժողովարարական, կոնդակ գանձանակի, թուղթ շնորհավորական, թուղթ խաթրահարցական, կոնդակ նվիրակական, թուղթ օրհնության կամ օրհնության և շնորհակալության, կոնդակ մեռոնի, թուղթ մխիթարական, կոնդակ օրհնության և ծանուցական, կոնդակ բանադրական, կոնդակ առհասարակ։ Նամակների հետ միասին ուղարկվում էին նաև բազմաթիվ ղապզագրեր կամ ղավզագրեր (ստացագրեր), փուսուլաներ (երկտողեր), փոլիցագրեր (հանձնարարագրեր) և թամասուկներ (մուրհակներ)։

Հասարակ մարդկանց ուղարկված գրությունները, որոնք սովորաբար լինում էին օրհնագրեր, ղապզագրեր, շնորհավորական կամ մխիթարական նամակներ, կազմվում էին այն ժամանակ ընդունված տրաֆարետով և շատ բան չեն տալիս ուսումնասիրության համար, իսկ նվիրակներին, առաջնորդներին կամ իշխանավորներին ուղղված նամակներն ավելի ընդարձակ են և նրանց մեջ հաճախ շոշափվում են երկրի քաղաքական ու տնտեսական կացության վերաբերյալ հարցեր։

Սևագրությունների պահելը, ինչպես նկատեցինք, գործնական նպատակներով էր արվում և կորուստի դեպքում դյուրին էր վերականգնելը։ Այսպես,

[181] Մատենադարան, Ձեռ. № 4481, էջ 145ա։

Ղուկաս Կարնեցին Կ. Պոլսի նվիրակ Մինաս վարդապետին և մահսարատար Պետրոսին գրում է, թե ինքը նամակներ է ուղարկել, բայց նամակատարը ճանապարհին թալանվել է և որովհետև «...գոյին ի թուղթսն յոյժս բանք հարկաւորք. վասն որոյ, հարկաւոր գիտացաք վերստին գրեցուցանել զայնս ըստ առաջնոյ օրինակին՝ և յղել առ ձեզ»[182]։ 1786 թ. հուլիսին Ղալաթիայի բնակիչներին ուղարկված նամակները ճանապարհին կորել են։ Երկու տարի անց՝ 1788 թ. հոկտեմբերին սևագրությունների մատյանից արտագրվում և նորից ուղարկվում են նույն նամակները[183]։ Նույն ձևով են վարվում նաև 1798 թ. դեկտեմբերի վերջին, երբ երկու ու կես ամիս առաջ Հ. Արղությանին ուղարկված նամակները Շուլավերի մոտ լեզգիները խլել էին նամակատար Տաքարոյից։

Սևագրություններն օգտագործում էին նաև նոր նամակներ գրելու ժամանակ։ Երբ մի շարք անձանց նույն դեպքի կամ միևնույն հարցի մասին նամակներ էին գրում, հաճախ մի նամակում մանրամասն նկարագրություն էին անում և հաջորդ նամակներում, բաց թողնելով այդ մասը, հղում էին նախորդի վրա՝ որոշակիորեն նշելով այդ մասին։ Մաքրագրող քարտուղարը պարտավոր էր այդ մասը մտցնել նամակների մեջ։ Բայց սա ընդհանուր կանոն չէր, որովհետև երբեմն նույն դեպքի մասին հիշատակություններ կան մի քանի նամակներում՝ տարբեր եղանակներով, և ուշադիր ընթերցելիս հնարավոր է պարզել այդ դեպքի նոր մանրամասներ։

Երբեմն նոր նամակներ գրելու համար օգտագործում էին անգամ Սիմեոն Երևանցու նամակների սևագրությունները[184]։

Նամակագրական գործը կանոնավոր վիճակում պահելը կապված է եղել բազում դժվարությունների հետ։ Նամակներն ուղարկվում էին նվիրակների, առևտրականների, ուխտավորների, տարբեր առիթներով ճանապարհորդող անձանց և հատուկ ծառայողների՝ փայեկների (սուրհանդակների) միջոցով։ Մեկ նամակ ուղարկելու համար երբեմն հարկադրված էին լինում գրել մի քանիսը՝ այն տեղից տեղ ուղարկելու հանձնարարությամբ։ Երբեմն նույն նամակի օրինակները հեռավոր վայրեր էին ուղարկում տարբեր ճանապարհներով։ Նամակները ճանապարհին կորչում, ոչնչանում էին, երբեմն ընկնում էին գողերի ձեռքը։ Քաղաքական խառը իրադարձությունների, պատերազմների ու արշավանքների ժամանակ նամակագրությունը դադարում էր, բայց հենց որ հնարավորություն էր ստեղծվում, ուղարկում էին կուտակված նամակները։ Բնական պատահարներն էլ, հատկապես ձմռանը, պատճառ էին դառնում նամակների ուշացման։

Ի՞նչ ճանապարհներով էին նամակներն ուղարկվում։ Հրապարակված նյութերը հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում ստանալ և այդ մասին։ Էջմիածնում քաջատեղյակ էին շրջակա վայրերում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին և ելնելով դրանից որոշում էին, թե ո՞ր ճանապարհով է հուսալի նամակ ուղարկելը։ Այսպես, 1781 թ. մարտին անհրաժեշտ էր նամակներ ուղարկել Հնդկաստան և այլ վայրեր, բայց քանի որ ճանապարհները փակված էին և վտանգավոր, չեն ուղարկվում, բայց մի քանի անհետաձգելի նամակներ, որ պետք է հասցվեին Բաղդադ, Բասրա և Բուշեռ, այնուամենայնիվ, ուղարկվում են, բայց ոչ թե Բայազետի, այլ Կ. Պոլսի վրայով։ Թոխաթ ուղարկվող նամակներն առաքում էին Կարին և տեղի հայերին,

[182] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ 95։
[183] Մատենադարան, Ձեռ. № 4501, էջ 971։
[184] Նույն տեղում, ձեռ. № 3738, էջ 250բ, ձեռ. № 4501, էջ 1140։

իսկ ավելի որոշակի՝ էջմիածնի գործակալին կամ առաջնորդին, հանձնարարում հոգ տանել տեղ հասցնելու։ 1781 թ. Գիլան և Նոր Ջուղա հասցեագրված նամակներն ուղարկվում են Բաքվի միջոցով։ Կարինի հետ նամակագրությունը սովորաբար կատարվում էր Կարսի վրայով, Կ. Պոլսի հետ՝ Կարսի և Կարինի վրայով։ Ռուսաստանի հայերի, ինչպես և պաշտոնական անձանց հետ նամակատարության հիմնական ճանապարհն անցնում էր Թիֆլիսի, Մոզդոկի և Նոր Նախիջևանի վրայով։

Նամակների մեջ կամ վերջում եղած փոքրիկ ծանոթագրություններից կարելի է պարզել, թե ե՞րբ, ո՞ւմ միջոցով և որքա՞ն ժամանակում էին դրանք տեղ հասնում։ Օրինակ՝ 1784 թ. ապրիլի 28-ին Բաղդադից ուղարկված նամակը էջմիածին էր հասել հունիսի 28-ին, այսինքն երկու ամսում։ Կ. Պոլսից 1784 թ. օգոստոսի 12-ին առաքված նամակը էջմիածին էին բերել 38 օրում՝ սեպտեմբերի 20-ին։ Նոր Նախիջևանից Հ. Արղությանի 1783 թ. նոյեմբերի 15-ին և 18-ին գրած նամակները տեղ էին հասել շուրջ մեկ և կես ամիս անց։ Բնականաբար, շատ ավելի երկար էր տևում նամակների «ճանապարհորդությունը» հեռավոր վայրերից։ Հովսեփ Դինիբեկյանը Հնդկաստանից Անդրկովկաս էր հասել ավելի քան մեկ տարում՝ բերելով իր հետ Ղուկաս Կարնեցուն ուղարկված նամակները և ծանրոցը։

Նամակները մեծ մասամբ գրվում էին հայերեն, բայց անհրաժեշտության դեպքում՝ նաև թուրքերեն ու պարսկերեն։ Ռուս իշխանավորներին ուղարկվող նամակները Ռուսաստանում թարգմանում էին ռուսերեն։ Պահպանվել են այդպիսի նամակներից մի քանիսի թարգմանությունները։ 1784 թ. հունվարի 16-ին Հ. Արղությանին հասցեագրած նամակում Ղուկասը նշում է, որ «պայծառափայլ քնեազ»-ին ուղղած նամակն ուղարկում է բաց վիճակում՝ «տեսանել և իմանալ և թարգմանել տալ, և դարձեալ փակել և յղել առ նա»։ Այնուհետև հիշատակվում է թարգմանչի անունը, որին Ղուկասը հատուկ նամակ է գրել՝ խնդրելով լավ թարգմանել իր նամակները. «ընդ նոսին և առ թարգման պարոն Ստեփանն ևս գթուղթ գրեցաք յորդորանօք վասն լաւ թարգմանութեան թղթոց մերոց առ ամանս ի ռուսաց գրեցելոց այժմ և յետոյ գրելոց» (վավ. № 802)։

Թուրք փաշաներին գրում էին թուրքերեն, պարսիկներին՝ պարսկերեն և այդ մասին անպայման նշում նամակի կամ նրա համառոտագրության մեջ։ Հերակլ թագավորին գրում էին և՛ պարսկերեն, և՛ հայերեն, իսկ նրանից կամ նրա զավակներից ստացված նամակները սովորաբար պարսկերեն էին, երբեմն՝ հայերեն։

էջմիածին ուղարկված նամակները երբեմն մնում էին այլ վայրերում ու տեղ չէին հասնում։ Այդ մասին լուր ստանալով, կաթողիկոսը միջոցներ էր ձեռք առնում ապահովելու նամակներն էջմիածին բերելու գործը։

Գրագիր քարտուղարներից բացի կային նաև կոնդակ ծաղկողներ՝ մանրանկարիչներ, որոնք որոշակի վարձատրությամբ պատրաստում էին կոնդակների զարդերը և հանձնում վեհարան, որտեղ պահանջի դեպքում քարտուղարները արտագրությամբ լրացնում էին կոնդակները։ Ոչ կարևոր նամակները գրվում էին առանձին թղթի վրա, վերևում գրվում էր հասցեն, երբեմն՝ կնքվում։

Ղուկաս Կարնեցին, ինչպես նշեցինք վերը, շատ ժամանակ էր տրամադրում նամակագրության գործին։ Մահվանից մի քանի ամիս առաջ՝ 1799 թ. սեպտեմբերի 17-ին նա գրել է. «...բայց ի բացմանէ զարնանն մինչև ցայժմ

չեղև մեզ հանգիստ ի մի կողմանէ զրադմունք գրելոց, և ի միւս կողմանէ ևս վրդովմունք»[185]։

Նա լավ հասկանում էր պատմական իրադարձությունների նկարագրությունը թղթին հանձնելու և դրանք սերունդներին հասցնելու անհրաժեշտությունը։ Աղա Մուհամադ շահի արշավանքի ժամանակ նա մանրամասն նկարագրել է երկրում ստեղծված կացությունը և այդ շարադրանքն ուղարկել Կ. Պոլիս՝ հրատարակելու։ Բայց Զաքարիա պատրիարքը խորհուրդ է տալիս չհրատարակել։ Վարդան Օձնեցին այդ մասին գրել է. «...ապա մի բստ միոջէ պատմաբանօրէն գրեալ կաթուղիկոսն զայսոսիկ ամենայն ծանուցանէ Զաքարիայ պատրիարքին հայոց ի Կոստանդնուպօլիս պատուիրեալ նմա, զի հրատարակեսցէ զայնոսիկ ի լսելիս հասարակութեան. բայց ոչ հաւանեալ պատրիարքին զհրատարակելն, գրէ կաթուղիկոսին, թէ չէ բարի զգիրդ հրատարակել, մի գուցէ, ասէ, լուիցէ տուգանողն ձեր, վերստին յարձակի ի վերայ ձեր և լինի յետինն չար»[186]։

Ղուկաս կաթողիկոսն ընդունում է այս խորհուրդը։ Ցավոք, նրա այդ գրառումները, որոնք, դատելով այս տողերից, շատ արժեքավոր են եղել, ցարդ չեն հայտնաբերված։

Զ) ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱՄԱԿԱՆՈՒՑ

Առաջին աշխատությունը, որի մեջ օգտագործված են Ղուկաս Կարնեցու նամակները, Հ. Շահխաթունյանցին վերագրված պատմական երկն է, որի առաջին՝ «Վախճան Սիմէօն կաթուղիկոսի եւ յաջորդութիւն Տեառն Ղուկասու» խորագրով մասը շարադրելու համար հեղինակն օգտվել և քաղվածքներ է կատարել Ղուկասի գրություններից։ 1893 թ. Գյուտ Աղանյանցը, իրականացնելով այդ երկի հրատարակությունը, ձգտել է լրացնել հեղինակին և տողատակի ծանոթագրությունների մեջ ընդարձակ մեջբերումներ կատարել Ղուկասի նամակներից[187]։ Արդեն այդ ժամանակ Գ. Աղանյանցն իր տրամադրության տակ բավականին թվով նամակներ ուներ Ղուկասից և ցանկանում էր հրատարակել։ Ինչպես տեսանք, 1899 թ. լույս ընծայվեց «Դիւան հայոց պատմութեան» ժողովածուի Դ հատորը, որը բացառապես նվիրված էր Ղուկասի փաստաթղթերին։

Գ. Աղանյանցը Ղուկասի կոնդակները հրատարակելիս ձեռքի տակ է ունեցել կոնդակների սևագիր և մաքրագիր օրինակներ։ Սևագրություններն ամփոփված են եղել մի մատյանի և վեց տետրի մեջ, որոնք այժմ մի ընդհանուր կազմի տակ պահվում են Մատենադարանում (№ 3738)։

Գ. Աղանյանցի հրատարակած նամակները Ղուկասի գրագրությունների մի փոքրիկ մասն է. շատ տարիների նամակներ այնտեղ բացակայում են, կամ էլ ներկայացված են միայն մի քանի հատով։ Այդ բանը հայտնի էր Գ. Աղանյանցին, որը գրել է.

«...Ներկա հրատարակության մեջ միանգամից պակասում է 1784—90 թվերի կոնդակները, որ չհաջողեց մեզ ձեռք բերել և շատ տարիներինն էլ ամբողջը չէ, որովհետև, ինչպես վերևի ցուցակից էլ երևում է, այդ բոլոր տետրերը մեկմեկու շարունակությունը չեն կազմում...»[188]։

[185] Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 62ա։

[186] Նույն տեղում, ձեռ. № 4331, էջ 145։

[187] «Դիւան հայոց պատմութեան», Ա—Բ, էջ 1—42։

[188] «Դիւան հայոց պատմութեան», Դ, էջ ժէ։

Գ. Աղանյանցը հնարավորություն չունենալով այդ մատյաններում եղած բոլոր կոնդակները տպագրել, նրանց մեծ մասը դուրս է թողել։ Այդ մասին նա տալիս է հետևյալ բացատրությունը.

«Թեպետ և ըստ մեր խորին համոզման անցյալում գրված ամեն մի տող և բառ ունի յուր նշանակությունը մեր եկեղեցու անցյալ դարու վիճակը քաջ ճանաչելու, նույն իսկ ժամանակակից սովորություններն ու ներքին կյանքն ըմբռնելու համար, սակայն և այնպես վերի նույն իսկ կիսատ տետրերն այնքան ընդարձակ նյութ էին տալիս մեզ, որ մենք ծախքերից խուսափելու համար ստիպված եղանք կեսից ավելին բաց թողնել, ընտրությամբ իհարկե, հապավելով այն ամեն կոնդակները, որոնք կրկնություն էին, կամ լոկ շնորհավորություններ, մանրակրկիտ դրամական հաշիվներ, պարզ առաջնորդական կոնդակներ և այլն, բայց որպեսզի անհետ չկորչին և դոքա, գրքիս մեջ յուրյանց տեղերում զետեղեցինք այդ բոլորի վերնագիրները ամբողջությամբ»[189]։

Համեմատությունը ցույց ավեց, որ Գ. Աղանյանցն իսկապես բարեխիղճ և ուշադիր ընտրություն է կատարել, տպագրված են առավել ուշագրավ, իրենցից առանձին հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթեր (170 հատ) և նամակների վերնագրեր կամ համառոտագրություններ (450 հատ)։ Հետագայում նա ձեռք է բերում Ղուկասի շատ այլ նամակներ և ցանկանում է առանձին հատորներով տպագրել[190], բայց այդ նրան չի հաջողվում։ Այնուամենայնիվ, նա «Դիւանի» Թ հատորում՝ Հ. Արղության նամակների հետ, տպագրում է Ղուկասի 25 նամակները[191]։ Գ. Աղանյանցը հետագայում իր մոտ հավաքված նամակներից երկուսը (Ղուկաս Կարնեցու 1785 փետրվարի 15-ի նամակները Ավստրիայի կայսր Հովսեփ II-ին և Ռուսաստանում Ավստրիայի դեսպանին) հանձնում է Մոլդավիայի և Բուկովինայի հայ գաղութների պատմությունն ուսումնասիրող Լևոն Բաբայանին։ Վերջինս դրանք ամբողջությամբ զետեղել է իր մենագրության մեջ[192]։

Ղուկաս Կարնեցու նամակներից մեկը, որն ուղարկված էր Հերակլ թագավորին և որով նա նկարիչ Հ. Հովնաթանյանին հրավիրում էր Էջմիածին, հրատարակել է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ Արշակ Չոպանյանի «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» գրքի մասին գրած իր գրախոսականում[193]։ Կաթողիկոսի նամակը Թումանյանի տրամադրության տակ էր դրել Գ. Աղանյանցը։ Վերջին ժամանակներս այդ նամակը երկու անգամ վերահրատարակել է արվեստագետ Մ. Ղազարյանը[194]։

Ղուկաս Կարնեցու գրագրությունների սևագիր մատյանները գրավել են նաև բազմավաստակ պատմաբան Լեոյի ուշադրությունը, որն իր «Հայոց պատմության» երրորդ հատորում հրատարակել է Ղուկասի 1784 թ. 16 հունվարի թվակիր նամակը՝ հասցեագրված իշխան Գ. Պոտյոմկինին[195], ինչպես և ընդարձակ քաղվածք Հ. Լազարյանին ուղղված գրությունից[196]։ Նա մեջբերումներ է կատարել նաև Գ. Աղանյանցի հրատարակած նյութերից[197]։

Ղուկաս Կարնեցու նամակներից հրատարակվել են նաև Ս. Վ. Տեր-Ավետիսյանի «Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար» ուսումնասիրության մեջ[198]։ Հեղինակը լույս է ընծայել Ղուկասի 14 նամակ և տեղեկություն հաղորդել նրա արխիվի մասին։

Ղուկաս Կարնեցու նամակները ուսումնասիրել է ակադ. Աբգար Հովհաննիսյանը՝ լայնորեն օգտվելով նրանցից «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թվականներին» մենագրությունը պատրաստելիս։ Նա բազմաթիվ մեջբերումներ է կատարել այդ նամականուց և իր գրքի հավելվածում զետեղել դրանցից չորսի ռուսերեն թարգմանությունը[199]։ 1783 և 1784 թթ. գրված այդ նամակները, ուղղված իշխան Գ. Պոտյոմկինին և գեներալ Պ. Պոտյոմկինին, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ուսումնասիրման համար։

Ղուկաս Կարնեցու 1790 թ. գրած նամակներից մեկը, որը վերնագրված է՝ «Պատմութիւն գալստեան խօջեցւոց և նախչուանցւոցն յերկիրս Երևանու և վնասուցն, զոր անցուցին ընդ սա և ընդ սուրբ Աթոռս», ներածությամբ և ծանոթագրություններով հրատարակել ենք 1962 թ.[200]։ Մի քանի ընդարձակ քաղվածքներ Ղուկաս Կարնեցու 1781 թ. նոյեմբերի 9-ին Հ. Դինիբեկյանին ու Կարապետ վարդապետին ուղղված նամակների համառոտագրություններից և 1785 թ. մայիսի 22-ին Շ. Շահամիրյանին հասցեագրված նամակից լույս ենք ընծայել 1979 թ.[201]։

Ղուկասի նամակներում կան բազմաթիվ տեղեկություններ Աղա Մուհամեդ շահի արշավանքների մասին։ Այդ նյութերի մի մասը քաղվածքների կամ ամբողջական նամակների ձևով հրատարակել է Ռուզան Տիտանյանը «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին (1795—1797 թթ.)» ժողովածուում։

Ինչպես տեսնում ենք, Ղուկաս Կարնեցու նամակների միայն փոքր մասն է հրատարակված, մնացածները դեռևս ձեռագիր վիճակում են։

է) ԱՆՏԻՊ ՆՅՈՒԹԵՐ

Ղուկաս Կարնեցու նամակների սևագրությունների, ինչպես նաև նրանցից կատարված համառոտագրությունների մատյանները պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի ֆոնդում՝ 2803, 2922, 3738, 4424, 4449, 4481—4484, 4501, 4538, 4567 և 6298 համարների տակ։ Մի շարք նամակների մաքրագիր օրինակները (բնագրերը), ինչպես և բազմաթիվ համառոտագրությունները գտնվում են Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանում։

---

189 Նույն տեղում, էջ ԺԷ։

190 1902 թ. սկսած «Դիւանի» հատորների (Ե, Զ, Թ, ԺԴ) վերջում զետեղված ազդերով Գ. Աղանյանցը տեղեկացնում էր ընթերցողներին, որ տպագրության պատրաստ են «և սպասում են բարերարների նպաստին» նաև Ղուկասի նամակների II, III և IV մասերը։ Վերջին հայտարարությունը տրված է 1915 թ.։ Պետք է կարծել, որ Գ. Աղանյանցը կկարողանար իրականացնել իր ծրագրերը, եթե չսկսվեր համաշխարհային պատերազմը։

191 «Դիւան հայոց պատմութեան», Թ, էջ 69—78, 82—96, 108—116, 121—127, 131—148, 159—164, 218—232, 248—251, 255—270։

192 Լևոն Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 116—127։

193 «Հորիզոն», 1911, 30-ը ապրիլի, № 30, էջ 2։

194 Մանյա Ղազարյան, Նոր էջեր նկարչի կյանքից, «Սովետական արվեստ», 1968, № 5, էջ 58, նույնի՝ «Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում», էջ 178—179։

195 Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, էջ 352—353։

196 Նույն տեղում, էջ 349—350։

197 Նույն տեղում, էջ 374—381։

198 «Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ», հ. 13, Երևան, 1940, էջ 47—81։

199 А. Р. Иоаннисян, նշված աշխ., էջ 219, 231—232, 234—236, 253—255։

200 Վ. Ռ. Գրիգորյան, Ղուկաս Կարնեցու մի անտիպ երկասիրությունը, «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 429—435։

201 Վ. Ռ. Գրիգորյան, Նոր տեղեկություններ Հովսեփ Դինիբեկյանի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1979, № 1, էջ 103—112։

№ 2803 ձեռագրի մեջ, մի ընդհանուր կազմի տակ, հավաքված է 1782 թ. հունիսի 1-ից մինչև 1785 թ. օգոստոս գրված 351 նամակի սևագրություն (էջ 1—818)։ Մատյանի նյութը թուղթ է, կաշեկազմ, գրությունը միասյուն, նոտրգիր, չափսը՝ 23,5×16,5 սմ։

4501 համարի տակ, մի թղթապանակի մեջ, հավաքված են յուրաքանչյուրը 100 էջից բաղկացած տասը մատյաններ, որոնք պարունակում են 706 նամակ (1785—1800 թթ.)։ Վերջերս այդ մատյանը կազմվել է կաշվով։ Այստեղ էլ նյութը թուղթ է, գրությունը՝ միասյուն, նոտրգիր, բայց էջերի չափսն ավելի մեծ է՝ 33,5×23 սմ։ Սկսվում է 951 էջից և ավարտվում 2482-ով։ Մեջտեղից բացակայում են 1594-ից 1799 և 1898-ից 2287 էջերը՝ երեք մատյան։ Գրիչը նույնն է, որ գրել է նախորդ ձեռագրի նամակները։ Այս նամակները նախորդի շարունակությունն են, բայց սրանց արանքում եղել է նաև մի ուրիշ մատյան (էջ 818-ից մինչև 915-ը), որը մեզ չի հասել։

№ 4501 ձեռագրի մատյաններից մեկը (էջ 1695—1798), որ պարունակում է 76 նամակ (1791—1793 թթ.), պահվում է առանձին (տե՛ս ձեռագիր № 4483)։ № 4501-ի շարունակությունն է մեկ այլ մատյան, որը պահվում է 2922 համարի տակ և վերնագրված է՝ «Օրինակք կոնդակաց և գրութեանց Դանիել կաթողիկոսի, միաբանեայց Էջմիածնի, Եփրեմ կաթողիկոսի և Ներսէս արքեպիսկոպոսի Հայոց»։ Այստեղ զետեղված են վերը նշված անձանց նամակները, բայց ձեռագրի հակառակ կողմից, շրջված ձևով, կարված է նաև մեկ այլ մատյան՝ Ղուկաս Կարնեցու և նրա մահից հետո Էջմիածնի միաբանների գրած նամակները։

Այդ մատյանը նախկին էջակալմամբ սկսվում է 2472-ից և ավարտվում 2573-ով։ Պարունակում է Ղուկասի 37 և միաբանների 9 նամակի սևագրություն, որոնցից առաջինը գրվել է 1797 թ. մայիսին, վերջինը՝ 1801 թ. հունվարին։

Նամակների թվագրության մեջ մեծ խառնաշփոթություն է նկատվում։ Այսպես, Ա մատյանում զետեղված են 1785 թ. մայիսից մինչև 1787 թ. մայիսը գրված նամակների սևագրությունները, իսկ Բ մատյանում՝ 1785 թ. փետրվարից մինչև 1787 թ. ապրիլը։ Մի՞թե մատյանները զուգահեռ են օգտագործվել։ Դա բացառված չէ։ Բացի այդ, կոնդակների սևագրությունների վերջում գրված է ոչ թե նամակի շարադրման, այլ մաքրագրման ու առաքման ժամանակը, մի բան, որ արվում էր սևագիր շարադրվելուց անմիջապես հետո կամ շատ ուշ՝ կախված նամակը ուղարկելու ժամանակից։

№ 4501, 4483 և 2922 ձեռագրերի մեջ պահվում են Ղուկաս Կարնեցու 1785 թ. մայիսից մինչև նրա մահը (1799 թ. դեկտեմբեր) գրված 815 նամակի սևագրություն և նրա մահից հետո Էջմիածնի միաբանների գրած 15 նամակ։ Այստեղ չկան 1794—1796 թթ. նամակները, որոնք, հավանորեն, եղել են բացակայող մատյաններում։

№ 4482 ձեռագիրը բաղկացած է ինը մատյանից, որոնք կազմված են միասին։ Հին էջակալման համարներն են 1—1074. սրանց մեջ բացակայում են 40—185, 256—341, 640—831 էջերը։ Գրված են նույն ձեռագրով, ինչ № 2803 և № 4501 ձեռագրերը։ Նյութը թուղթ է, գրությունը՝ միասյուն, նոտրգիր, չափսը՝ 29×20 սմ։ Պարունակում է 1791 թ. մայիսից մինչև 1799 թ. գրված 518 նամակի սևագրություն։

№ 4449 ձեռագիրը լաթակազմ նեղ տետր է, չափսը՝ 21,5×10 սմ, նյութը՝ թուղթ, գրությունը՝ միասյուն։ Հնում էջակալված չի եղել։ Ընդամենը 42 թերթ է (84 էջ)։ Պարունակում է 72 նամակի սևագրություն (1790 թ. հունիսից

մինչև 1794 թ.)։ Այս մատյանը օգտագործվել է ավելի պակաս կարևորություն ունեցող նամակների համար։

№ 3738 ձեռագրում զետեղված են Ղուկասի 1780—1783, 1791—1799 թթ. գրած 500-ից ավելի նամակների սևագրությունները։ Գլխավորապես այս ձեռագրից է օգտվել Գ. Աղանյանցը «Դիւանի» Դ հատորը հրատարակության պատրաստելիս։

№ 4481 ձեռագիրը պարունակում է մի ընդհանուր կազմի մեջ կարված 28 մատյան, ուր գրի են առնված Ղուկաս Կարնեցու նամակների ու կոնդակների բովանդակությունները։

Վանքի գրասենյակում ընդունված կարգի համաձայն դպիրները սկզբում գրել են առանձին նամակի կամ միևնույն վայրն ուղարկվող մի շարք գրությունների շարադրման շարժառիթների մասին և ապա բերել դրանց բովանդակությունները։ Վերջիններս երբեմն բավական ընդարձակ են, բայց կան նաև շատ հակիրճ կազմվածներ կամ էլ պարզ թվարկություններ։ Սիմեոն Երևանցու ժամանակ նամակների բովանդակություններին նախորդող բաժինները ավելի հանգամանորեն էին գրում և այդ պատճառով նրանք նմանվում էին հիշատակարանի։ Ղուկասի օրոք այդ մասերն աստիճանաբար ավելի հակիրճ են դառնում։

Այդ 28 մատյանները էջակալված չեն եղել, ներկայումս 533 թերթ են (1066 էջ)։ Նրանց մի մասը 32×22 սմ մեծության է, մնացածները՝ 30×20։ Գրված են նոտրգրով, միասյուն, պահպանված են լավ։ Մատյանները ընդգրկում են 1780 թ. օգոստոսից մինչև 1801 թ. նոյեմբերի 26-ը գրված նամակների բովանդակությունները։ Ս. Վ. Տեր-Ավետիսյանը գրել է. «Այս 4481 կապոցը մի լիակատար ցուցակ է Ղուկաս կաթողիկոսի ժամանակ գրած թղթերի բովանդակության»[202]։ Բայց դա այդպես չէ, որովհետև այնտեղ բացակայում են 1782 թ. հուլիսից մինչև 1786 թ. դեկտեմբեր ամիսը գրված նամակների բովանդակությունները։

Բովանդակությունները կազմել են տարբեր դպիրներ՝ 1780 թ. օգոստոսից մինչև 1782 թ. մայիսը Անանիա սարկավագը (ձեռագրի նմանությունը հիմք է տալիս ասելու, որ նա է գրի առել նաև № 2803 և № 4501 ձեռագրերի նամակները), 1782 թ. մայիսին նրան փոխարինել է Գրիգոր սարկավագը (հաջորդ թվականների մասին տեղեկություններ չկան), 1785 թ.՝ Զաքարիա սարկավագը։ Զաքարիան այդ գործով զբաղվել է մինչև իր մահը, որը տեղի է ունեցել, 1794 թ. սեպտեմբերին։ Այնուհետև շարունակել է Գալուստ սարկավագը։ Վերջինիս մահվանից հետո (1795 թ. դեկտեմբերի 11) այդ գործը մինչև 1798 թ. վերջը կատարել է Հակոբ սարկավագը։ 1801 թ. գրված նամակների բովանդակությունները հանել է Ստեփաննոս սարկավագը։ № 4481 ձեռագրում կան 3000—3500 նամակների համառոտագրություններ, որոնք շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ժամանակի քաղաքական անցուդարձի մասին և լրացնում արդեն հիշատակված ձեռագրերից պակասող նամակների բացը։

№ 4461 ձեռագրում հավաքված են Ղուկաս Կարնեցու 339 նամակների ցուցակներ։ Սրանք կազմված են չափազանց համառոտ, չունեն տարեթվեր։

Ղուկաս կաթողիկոսի կոնդակներից ու գրություններից, ինչպես նշեցինք, կան նաև Մատենադարանի արխիվային բաժնում[203]։ Նրանց որոշ մասը բնա-

[202] «Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ», հ. 13, էջ 46։

[203] Մատենադարան, Արխիվային բաժին, Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 28, թղթ. 6, վավ. 64, 149, 189, 164, թղթ. 243, վավ. 48, 51, 53—54, 57—66, 68—70, 72—73, 75, 77—80, 83—88, 241—242, 244, 275 և այլն։

գրեր են, իսկ մեծ մասը հետագայում հանված պատճեններ. օրինակ, Կաթողիկոսական դիվանի № 6 թղթապանակի 40-րդ վավերագիրը Ղուկասի 1793 թ. հունիսից մինչև 1796 թ. ապրիլի 8-ը գրած 179 կոնդակի պատճեններ են, որոնք արված են XIX դարի վերջում կամ XX դարի սկզբին։

Շատ արժեքավոր է Կաթողիկոսական դիվանում պահվող մի փոքրիկ մատյան (թղթ. 5, վավ. 32), որի մեջ գրանցված են 1784 թ. մարտից մինչև դեկտեմբեր գրված շուրջ 370 նամակների ու կոնդակների համառոտագրությունները։ Դա 28 թերթից (56 էջից) բաղկացած մի նեղ մատյան է և գրվել է, ամենայն հավանականությամբ, Անանիա սարկավագի կողմից։

Վերոհիշյալ եղանակով է լրացվել նաև 4567 համարի տակ ձեռագրատանը պահվող մատյանը, որի մեջ կան 1780, 1790—1799 թթ. նամակների համառոտագրություններ և ցուցակներ։ Նույն բնույթն ունի նաև № 4424 մատյանը։ Ղուկասի նամակների բազմաթիվ սևագրություններ, համառոտագրություններ և պատճեններ կան նաև №№ 4484, 4538 և 6298 ձեռագրերում։

Ղուկաս Կարնեցու 1780 թ. նոյեմբերին գրած մի քանի կոնդակների սևագրություններ պահվում էին Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական արխիվում[204]։ Այդ նամակները հանված են սևագրությունների մի մատյանից և կրում են նախկին էջակալման համարները (էջ 118, 146, 147)։ Մատենադարանի դիրեկցիայի խնդրանքով պետական արխիվի ղեկավարությունը այդ պատառիկները հանձնեց Մատենադարանին և այժմ դրանք պահվում են ձեռագրատան պատառիկների ֆոնդում։ Չորս նամակներ պահվում էին Հայկական ՍՍՀ ԳԱ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում։ Նրանցից մեկը գրված է 1799 թ. մայիսի 17-ին, մյուսները՝ 1793 թ. նոյեմբերին և դեկտեմբերին։ Սևագրությունների մատյանից պոկված այդ թերթերը կրում են նախկին էջակալման համարները։ Նույն թանգարանում էին պահվում նաև Ղուկաս Կարնեցու նամակներից Ղ. Աղանյանցի կատարած բազմաթիվ պատճենահանումները։ Վերջերս այդ նյութերը հանձնվել են ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվին։

---

[204] ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվ, Ամենայն հայոց կաթողիկոսի արխիվ, ֆոնդ 57, գործ 2։

II. ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ 1780—1785 ԹԹ. ՆԱՄԱԿԱՆԻՆ

Ա) ՆՅՈՒԹԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկա հատորում հրապարակվող նյութերն ընդգրկում են շուրջ հինգ և կես տարվա ընթացքում (1780 թ. օգոստոս—1785 թ. դեկտեմբեր) գրված 1178 նամակներ, կոնդակներ ու նամակների համառոտագրություններ։ Դրանց մի մասն օրհնության և շնորհակալական նամակներ են, իսկ զգալի բաժինը՝ այլևայլ անձանց ուղղված պաշտոնական գրություններ, որոնց, ինչպես և մասամբ նախորդների մեջ, ուշագրավ շատ տեղեկություններ կարելի է գտնել ժամանակի քաղաքական ու տնտեսական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ։

Ընտրությունից անմիջապես հետո գրված նամակներն առաքվել են միաբանների նամակների հետ միասին և, բնականաբար, անհրաժեշտություն է զգացվել անընդհատ բացատրել Ղուկասի շուտափույթ ընտրության պատճառները։ Այնուհետև ընտրության թեման աստիճանաբար մղվել է ետին պլան և նամակագրությունը ստացել է ավելի գործնական բնույթ։

Տարբեր անձանց ուղղված նամակներում եղած ընդարձակ կամ համառոտ ու կցկտուր ակնարկներից կարելի է ամբողջական պատկերացում կազմել Հերակլ թագավորի վերջին արշավանքից հետո Արարատյան երկրում ստեղծված քաղաքական բարդ կացության վերաբերյալ։ Նրանցից տեղեկանում ենք, որ չնայած դադարել էին կռիվները և Հերակլի զորքերը ետ էին քաշվել, բայց հաշտություն չէր կնքվել և դրությունը մնում էր չափազանց լարված։ Հերակլի կողմից Վրաստան տեղափոխված բնակիչները դեռևս չէին վերադարձվել, իսկ մնացածները, որոնք կռիվների պատճառով հարկադրված էին եղել հեռանալ այլ վայրեր, եկել էին, բայց դեռ չէին հասցրել վերականգնել իրենց ավերված տները։ Երթևեկության ուղիները համարյա փակված էին, անհնար էր գնալ դեպի Թիֆլիս, Գանձակ, Թավրիզ ու Շուշի տանող ճանապարհներով։ Խափանվել էր առևտուրը։

Հերակլ II-ի և Երևանի խանի թշնամական հարաբերությունների պատճառով կտրվել էր Էջմիածնի կապը Վրաստանի հետ։ Նույնիսկ հնարավոր չեղավ տեղ հասցնել վրացահայերին ուղղված Ղուկասի օրհնության նամակները։ Վերջինս մտադիր էր իր ընտրության հանգամանքների մասին վրացահայերին ու վրաց պետության մեծամեծներին տեղեկացնելու համար մի եպիսկոպոս ուղարկել Վրաստան, բայց «ի սոցունց երկնչելով չկարացաք, զի դեռ խռովութիւն է ի միջի»։ Նա մտածում էր Կարսի վրայով «ծածկաբար յղել», բայց դա էլ անվտանգ չէր, որովհետև պարսիկներն այդ մասին կտեղեկանային իրենց լրտեսներից և «զայլ և այլս կարծեսցեն» (վավ. № 51)։

Երևանի Հուսեյն-Ալի խանը ձգտում էր հաշտվել Հերակլ թագավորի հետ, վերականգնել նախկին հարաբերությունները և ետ վերադարձնել Վրաստան քշված գյուղացիներին։ Հրապարակված նամակներում ուշագրավ նյութեր կան այդ մասին և կարելի է նրանց հիման վրա հետևել բանակցությունների ընթացքին։ Միջնորդի դերը ստանձնել էր Ախալցխայի Սուլեյման փաշան։

Թուրքերը քաջատեղյակ էին կացությանը և կարծում էին, թե հնարավոր նոր բարդությունների դեպքում Հերակլը կկարողանա նվաճել արդեն հիմնավորապես թուլացած Երևանի խանի տիրույթները, որոնց վրա վաղուց աչք ունեին իրենք՝ թուրքերը։ Այդ կանխելու համար Սուլեյմանին կարգադրված էր հաշտեցնել կողմերին։ Անկախ դրանից, Ղուկասը ևս ձգտում էր նպաստել հաշտության կնքման գործին և երբ 1780 թ. հոկտեմբերի սկզբներին Սուլեյման փաշան իր ուղտերով Երևանի խանին տախտակներ էր նվեր ուղարկել և ուղտերի վերակացուի ձեռքով «զսիրոյ թուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն», վերջինս պատասխան նամակով խնդրում է «փութով ի գլուխ բերել» հաշտությունը (վավ. № 194)։

Երբ Սուլեյման փաշայի մարդիկ գալիս են Երևան, խանը պատրաստվում է նվերներ ուղարկել Հերակլ թագավորին և հաշտություն առաջարկել։ Կաթողիկոսը կամենում է օգտագործել առիթը և մի եպիսկոպոս ուղարկել Վրաստան, բայց չի կարողանում, ստիպված Դանիել վարդապետին է ուղարկում որպես սուրհանդակ։ Դրա համար նախապես նա խանից ստանում է հատուկ անցաթուղթ՝ «թուղթ առաք ի վերայ ղարաուլացն առ ի թողուլ զմեր մարդն գալ յայդկոյս» (վավ. № 51)։

Ռուս պատմաբան Պ. Գ. Բուտկովը գրում է, որ Հերակլի և Երևանի խանի միջև հաշտությունը կնքվել է 1780 թ. մայիսի կեսերին[205], բայց Ղուկասի նամակները հիմք են տալիս ասելու, որ այդ բանը տեղի է ունեցել ավելի ուշ՝ 1781 թ. նոյեմբերին։ Նրանցից մեկում կարդում ենք, որ մինչև 1780 թ. հոկտեմբերը հաշտության բանակցություններն արդյունք չեն ունեցել և Արարատյան երկրի վիճակն ավելի է վատացել. «Մինչև ցեւսն ամսոյն հոկտեմբերի մնաց խռովութիւնն երկրիս, որքան և աւարին երթեւեկս վասն հաշտութեան, չեղև հնարս և մնացեալքն երկրիս ևս խսպառ աւերեցան, քանզի ոչ եղև ըստ բաւականին վար և վաստակ՝ սակս անկայուն բնակութեանցն, յորոց ոչ պակասէին ասպատակօղք» (վավ. № 326)։

Նույն նամակում նշվում է նաև, որ Շուշու Իբրահիմ խանն արշավել է Թավրիզի ու Խոյի վրա, մեծ ավերածություններ արել այնտեղ ու գերիներ վերցրել։ Այնուհետև հարձակվել է Գիլանի վրա ու փախցրել նրա իշխողին։

Արարատյան երկրում դրությունն առավել ծանրանում է նաև այն պատճառով, որ մի քանի քոչվոր ցեղեր, օգտվելով Հուսեյն-Ալի խանի թուլությունից, ապստամբություն են բարձրացնում։ Նրանք դուրս են գալիս խանության սահմաններից և միանալով այլ խմբերի հետ, անընդհատ հարձակումներով ավերում ու թալանում են երկիրը։ Այս պայմաններում անհնարին է դառնում վարուցանքը, սպառվում են պարենի պաշարները և սկսվում է սով։ Ղուկաս Կարնեցու «Գավազանագրքում» ասվում է. «...զի անվաստակ մնալոյ երկրիս մերոյ սովն ևս տիրեալ էր. և յայնմ միջոցի Աստուծով միայն սուրբ Աթոռս էր ի շինութեան»[206]։

Վրաստանի հետ հաշտություն կնքելու և տարված գյուղացիներին ետ բերելու համար Հուսեյն-Ալի խանի խնդրանքով Ղուկաս Կարնեցին 1780 թ. նոյեմբերի 14-ին Գալուստ վարդապետի հետ նամակ է ուղարկում վրաց թագավորին և խնդրում վերադարձնել Վրաստան տեղափոխված գյուղացիներին։ «Ահա երկրիս որպիսութիւնն յայտնի է քեզ,—գրում է Ղուկասը,—որոյ շինութիւնն ըստ մեծի մասին սպառեալ է և անմարդաբնակ է եղեալ։ Արդ, խնդրեմ ի մեծութենէդ, զի զխղճալի ժողովուրդսն երկրիս, զորս վարեալ ես աստի, արձակեսցես ի գալ» (վավ. № 241)։

Այս բանակցությունները չնայած հաշտությամբ չեն պսակվում, բայց համեմատաբար թուլացնում են թշնամական հարաբերությունները Հերակլի ու խանի միջև։ Նոյեմբեր ամսին բացվում են ճանապարհները և օգտվելով դրանից, Ղուկասը Ռուսաստան է ուղարկում Սիմեոն Երևանցու նամակները, որ հասցեագրված էին Հ. Արղությանին։

Շատ չանցած Հուսեյն-Ալի խանը հաշտություն կնքելու համար մի նոր պատվիրակություն է ուղարկում Հերակլի մոտ, բայց վերջինս չէր կամենում այդ ժամանակ հաշտվել՝ իրեն հավատարիմ մնալու մասին խանից ավելի համոզիչ հավաստիացումներ ստանալու համար։ Սակայն շատ չանցած, ինչպես տեղեկանում ենք նամակներից, վրաց թագավորն ինքն է սկսում հաշտություն կնքելու ուղղությամբ որոշ քայլեր անել։ Ղարաբաղի Իբրահիմ խալիլ խանը հարձակվել էր Խոյի վրա և Հերակլը, որպես Իբրահիմի դաշնակից, պատրաստվում էր զորք ուղարկել այնտեղ։ Խոյ գնալու համար այդ զորքն անցնելու էր Արարատյան երկրով։ Հարկ էր, ուրեմն, շուտափույթ կերպով հաշտության գալ Հուսեյն-Ալիի հետ՝ ապահով մնալու համար հնարավոր վտանգներից և պահանջի դեպքում օգնություն ստանալու երևանցիներից։ 1781 թ. հուլիսի 11-ին Ղուկաս Կարնեցու գրած մի նամակից երևում է, որ Իբրահիմ խանին օգնության ուղարկված վրացական զորքն անցնելու էր Ղրխբուլաղի կողմերով («անցանիլ ի գլխոյն Ղրխպուլախու») և Հերակլը խնդրել էր կաթողիկոսից զորքի համար մի քանի բեռ գինի ուղարկել այնտեղ (վավ. № 440)։

1781 թ. նոյեմբերին Երևանի խանը Վրաստան է ուղարկում չորրորդ պատվիրակությունը՝ իր որդի Ղուլամ-Ալիի գլխավորությամբ։ Այս անգամ կողմերը հաշտություն են կնքում, վերադարձվում է Վրաստան տարված գյուղացիների մեծ մասը։ Ղուլամ-Ալիի հետ Երևան է ժամանում Հերակլի ներկայացուցիչ Իվանե Մուխրան բեկը։ Վերջինիս մոտ ծառայում էր Հովհաննես անունով մեկը, որը նպաստել էր հաշտության կնքմանը, ուստի կաթողիկոսը նրան տալիս է օրհնության գիր (վավ. № 535)։

Ղուկաս Կարնեցին անձնական մասնակցություն է ունեցել մի շարք կարևոր իրադարձությունների, որոնց մասին հիշատակություններ է թողել նամակներում։ Այսպես, երբ 1783 թ. նոյեմբերի 10-ին ծանր հիվանդությունից հետո մահանում է Հուսեյն-Ալի խանը, խանության մեծամեծները Երևանում հավաքվում են խորհրդի, հրավիրում են նաև Ղուկասին։ «Եւ եկաց մեծ որդի մեռելոյն՝ Ղուլամ-Ալին ի տեղի հօրն իւրոյ,—գրում է կաթողիկոսը Իսահակ վարդապետին 1783 թ. դեկտեմբերի 20-ին,—որոյ աղագաւ միաբանութեամբ զբազմակնիք մահսար գրեցաք առ արքայն Վրաց, զի նա ևս հաճեսցի» (վավ. № 783)։ Այս կապակցությամբ կաթողիկոսը մոտ մեկ և կես ամիս մնում է Երևանում։ Ի վերջո ստացվում է Հերակլի դրական պատասխանը, որից հետո նա վերադառնում է Էջմիածին (Ն. տ.)։

Ղուկասի նամակներից երևում է, որ Ղուլամ-Ալիի իշխանությունը երկար չի շարունակվել՝ 1784 թ. հունիսի 7-ին նա զոհ է դարձել դավադրության։ Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ խանի սպանության կազմակերպմանը մասնակցել են նաև դրսի ուժերը։ Բանն այն է, որ թուրքերը ձգտում էին իրենց ազդեցության տակ գցել Երևանի խանին. սուլթանի կարգադրությամբ սահմանամերձ շրջանների փաշաները (Ախալցախայի, Բայազետի, Կարինի և Կարսի), օգտվելով Հուսեյն-Ալիի մահվան առիթից, ցավակցություն հայտ-

[205] *П. Г. Бутков,* Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, ч. II, СПб., 1869, стр. 75.

[206] **Գարեգին Ա. կաթողիկոս,** *Նիւթեր և ուսումնասիրութիւններ..., էջ 56։*

նելու համար մարդիկ էին ուղարկել Ղուլամ-Ալիի մոտ և համոզում էին նրան Երևանի բերդը հանձնել Թուրքայ սուլթանին ու մյուս խաների հետ միասին հարձակվել Վրաստանի վրա։ Փոխարենը նրա համար խոստանում էին սուլթանից ստանալ առանձնահատուկ շնորհներ և դրամ։ Ռուսական հրամանատարությունն այս մասին տեղեկանում է Հերակլ II-ից։ Գեներալ Պ. Պոտյոմկինը կարգադրում է գնդապետ Ս. Բուռնաշովին վճռական միջոցներ ձեռք առնել Երևանի խանի նկատմամբ[207]։

Ղուլամ-Ալին թշնամիներ ուներ Երևանում՝ հանձինս իր կողմից պաշտոնազրկված մի շարք անձանց, որոնցից մեկն էլ սպանում է նրան։ Ամենայն հավանականությամբ դավադրությանը մասնակցել են նաև Հերակլի մարդիկ։ Նույն ամսին Ղուկասը գրել է այս դեպքերի մասին, բայց նրա տեղեկությունները փոքր-ինչ տարբերվում են ռուսական գործակալ Գ. Կարախանյանի տված բացատրությունից։ Ըստ վերջինիս, խանին ատրճանակով սպանել է Բունյաթ-Ալի անունով մի պարսիկ պաշտոնյա։ Խանի հետ սպանվել էին նաև նրա ծառաներից երկուսը։ Իսկ Ղուկասը գրում է, որ «առաջին հին խանի մեծ որդին, զոր նոր խան էին կացուցեալ ի տեղին նորին, յանկարծակի սրախողող արարին՝ հանդերձ միով եղբարբն» (վավ. № 945)։

Ղուկասի նամակներից տեղեկանում ենք, որ խանի սպանությունից հետո Երևանի մեծամեծները դարձյալ հավաքվում են և նամակ գրում Հերակլին՝ խնդրելով խան հաստատել Հուսեյն-Ալիի մյուս որդուն՝ Մահմեդին։ Հերակլը համաձայնվում է և հաստատման թուղթն ավանդական նվերներով իր որդի Գեորգիի հետ ուղարկում Երևան (վավ. № 946)։

Ղուկասի նամակները համարյա միակ սկզբնաղբյուրն են այդ ժամանակ Երևանի խանության մեջ ստեղծված քաղաքական խառնակ կացության։ Սկսվել էին ներքին խլրտումներ. հանգուցյալ խանի ազգականները դժգոհ էին նոր խանից և ապստամբվել էին նրա դեմ։ Անցնելով մի քանի քոչվոր ցեղերի գլուխ, նրանք հարձակվել էին խանության գյուղերի վրա։ Ղուկասը պատմում է. «Ահա, որպէս գրեցաք, երկիրս խղճալի ի տատանման կայ, ամենայն գործք խափանեցեալ են, զի ոչ ոք կարէ յանդ եհանել։ Եւ մեք զամենայն առ մեօք եղեալսն զինուորեցուցեալ զգոյշ կամք» (վավ. № 946)։

Այրմալու քոչվոր ցեղը, որն ապստամբածների թվում էր, հեռանում է խանության սահմաններից, ինչ-որ տեղ թողնում կանանց ու երեխաներին, և վերադառնալով սկսում ասպատակել երկիրը։ Էջմիածնի շրջակա գյուղերի բնակիչները տեղափոխվում են վանքի պարիսպներից ներս։ Ապստամբածներից մի խումբ, բաղկացած ավելի քան 300 ձիավորներից, հափշտակում է Էջմիածնի վանքին ու Վաղարշապատ գյուղին պատկանող անասունները՝ «թէ նախիրք, և թէ գութանի տաւարք, թէ մերն, թէ գիւղինն և թէ առ մեզ բնակեալ հայոց և տաճկացն» (վավ. № 947)։ Կաթողիկոսի ուղարկած մարդիկ չեն կարողանում ետ բերել անասունները, ընկնում են ապստամբածների ձեռքը և վերադառնում թալանված ու վիրավոր։ Այնուամենայնիվ, կողոպտիչները վախենում էին կաթողիկոսից, ուստի հատուկ սուրհանդակի միջոցով լուր են ուղարկում նրան, թե իրենք ցանկացել են տանել միայն ռահաթի, այսինքն գյուղացիների անասունները և պատրաստ են վերադարձնել օջախի (վանքի) անասունները (Ն. տ.)։

Ղուկասի նամակից իմանում ենք, որ այդ օրերին Եղվարդում էր գտնվում վրաց թագաժառանգ Գեորգին՝ «որ ռազմ և խալաթ էր բերեալ ի

[207] Центральный государственный архив древних актов, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, стр. 173.

յորհնեալ արքայէն վասն խանութեան նորանիստ Մահմադ խանին Երևանու»։ Ղուկասը խնդրում է նրան միջամտել։ Վերջինիս սպառնալի նամակը, որ նա ուղարկում է ապստամբներին ոմն Հովսեփի և երկու պարսիկների հետ, ազդեցություն է գործում։ Շատ չանցած վանքի անասունները վերադարձվում են (Ն. տ.)։

Երկրում ստեղծված խառը վիճակը շարունակվում է բավական երկար։ 1784 թ. հոկտեմբերի 14-ին Ղուկաս Կարնեցին Իսահակ վարդապետին գրել է.

«Քանզի յաւուրց սպանման իշխողին երկրիս մինչև ցարդ կարօտ մնամք խաղաղութեան, որ ոչ երևի բնաւ, զի գրեթէ յամենայն բնակիչսն սորին խռովութիւն է կայացեալ, որ ոչ վերջանայ» (վավ. № 1071)։

Ապստամբների մի մասն այդ ժամանակ անցել էր Արաքսը և սպառնական վիճակում էր։ Ղուկասը փորձում է սրանց և բերդականներին հաշտեցնել, բայց չի հաջողվում։ Ապստամբների մյուս մասը շարունակում էր հափշտակությունները ու ավերմունքը։ Գյուղացիները չէին կարողանում բերքըն ամբողջովին հավաքել և ընկել էին ողբալի վիճակի մեջ. «Որք և յայժմ ամի զեկեալ արդիւնս ոչ կարելով բոլորապէս ի վեր առնուլ, կան յամենայնի ի պակասաւորութեան և ի յղորմելութեան. և նկատելով առ եղանակ զխարդութեան երկրիս, իբր ի վերայ փշոց կան նստեալ» (Ն. տ.)։

Դրությունը գնալով լրջանում էր և Հերակլը, ստանալով երևանցիների օգնության խնդրանքը, որոշում է միջամտել։ Նա նամակ է ուղարկում Մահմեդ խանի կողմնակիցներին և հայտնում, որ ապստամբներին, եթե նրանք չհնազանդվեն, հեռացնեն խանության սահմաններից։ Նա խոստանում է օգնական զորք ուղարկել։ Ղուկասը, խիստ անհանգստացած Հերակլի սպառնալիքից, կրկին ստանձնում է հաշտարարի դերը։ Նա համոզում է Ավդալ աղայի որդի Շամտին աղային հաշտվելու երևանցիների հետ (վավ. № 1087)։

Հերակլի ուղարկած զորքը (ընդամենը 200 հոգի) մինչ այդ հասել էր Երևան։ Երբ քրդերի հետ հաշտություն է կնքվում, Երևանի խանի զորքը, քրդերի և Հերակլի ուղարկած մարդկանց հետ՝ «հանդերձ Բ (2) մեծամեծ հրացանօք», շարժվում է մյուս ապստամբների վրա, որոնց մի մասը փախել էր Կաղզվանի կողմերը։ Խանության սահմաններում մնացել էր Ռամազան անունով մի ցեղապետ, որն իր մարդկանցով ամրացել էր Փարչենիսում։ Վերջինս պարտություն է կրում և իր որդուն ուղարկում Երևանի բերդ՝ ի նշան հպատակության։ Արաքսի մյուս կողմն անցածները Կարսի փաշայի միջնորդությամբ հաշտվում են Երևանի խանի հետ և արշավանքի ելած զորքը վերադառնում է Երևան (Ն. տ.)։

Հաջորդ թվականի ամենակարևոր իրադարձությունը, որի մասին տեղեկություններ կան Ղուկասի նամակներում, Ավարայի Ումմա կամ Օմար խանի արշավանքն էր, որը կազմակերպվել էր Թուրքիայի դրդումով և նպատակ էր հետապնդում ավերելով Վրաստանը, ստիպել Հերակլ թագավորին հրաժարվելու Ռուսաստանի հովանավորությունից։ Արշավանքն անմիջապես ուղղված չէր Երևանի վրա, բայց և այնպես այն մեծամեծ վնասներ հասցրեց Արևելյան Հայաստանի մի շարք բնակավայրերի, գյուղացիները մի քանի անգամ հարկադրված եղան հեռանալ իրենց տներից ու պատսպարվել ամրացված վայրերում և անմատչելի քարանձավներում։

Բեթղեհեմյան Հովհաննեսին (Բասրա) ուղղած մի նամակում Ղուկասը հակիրճ, բայց պատկերավոր նկարագրել է լեզգիների արշավանքի պատճառով Արարատյան երկրում ստեղծված վիճակը։ Այդ նամակից երևում է, որ երբ լեզգիները մոտենում էին Հայաստանի սահմաններին, Հերակլը և Երևանի

Մահմեդ խանը նամակ են գրում կաթողիկոսին ու անվտանգության համար առաջարկում գնալ Երևան։ Լեզգիների արշավանքի վտանգը ստիպել էր խանին Երևան տեղափոխել շրջակա վայրերի բնակչությանը։

Կաթողիկոսը հարկադրված վանքի հարստության մի մասն ուղարկում է Երևան, իսկ հետո միաբանների ու Վաղարշապատ գյուղի բնակիչների հետ միասին տեղափոխվում այնտեղ։ Էջմիածնում մնում են միայն «զսակաւոր միաբանս և զքանի հարիւր զինուորս ի պահպանութիւն» (վավ. № 1065)։ Լեռնականների հրոսակները, որոնք ներխուժել էին Վրաստան 1785 թ. սեպտեմբերի 17-ին, մոտենում էին Արարատյան երկրի սահմաններին։ Մեծանում էր երկյուղը և մարդիկ չէին համարձակվում դուրս գալ իրենց թաքստոցներից։ Ավելի քան երեք ամիս բնակչությունը թաքնված էր և նրա ունեցվածքը մնացել էր բախտի քմահաճույքին։ «Ի յերիս ամիսս մնացաք արտաքոյ սրբոյ Աթոռոյս, մեծաւ նեղութեամբ և տառապակրութեամբ և անհուն ծախուք, տատանեալ անձամբ և մտօք» (ն. տ.)։

Երբ, ի վերջո, միաբանները վերադառնում են Էջմիածին, հարձակման վտանգը դեռ չէր անցել։ Զմեռելու համար լեռնականները ցրվել էին Ախալցխայի և Ախալքալակի գյուղերում. «բայց որչափ նոքա անդ կան, մեք ի կասկածանս եմք և իբրև ի վերայ փշոյ նստեալ, ոչ գիտելով, թէ ի գարնանն զի՞նչ է լինելոյ» (ն. տ.)։ Ինչպես հայտնի է, Ումմայի հրոսակները հաջորդ թվականի գարնանը Փամբակաձորի, Ապարանի և Սևանի վրայով անցան Ղարաբաղ՝ նորանոր չարիքներ պատճառելով երկրին։ Ինչպես այդ իրադարձությունների, այնպես էլ արշավանքի մասին, ընդհանրապես, մանրամասն տեղեկություններ կան Ղուկաս Կարնեցու 1786 թ. գրած նամակներում։

Բ) ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Արդեն նշեցինք, որ այդ տարիներին ռուսները պատրաստվում էին արշավելու Իրանի վրա և նախապատրաստական լայն աշխատանքներ էին ծավալել։ Նրանք կապ էին հաստատել նաև Ղուկաս կաթողիկոսի հետ, որը մինչ այդ գրագրության մեջ էր ռուսական հրամանատարության հետ՝ Էջմիածնի շահերին առնչվող մի շարք հարցերի կապակցությամբ։

Ինչպես Սիմեոն Երևանցու, այնպես էլ Ղուկաս Կարնեցու համար շատ կարևոր է եղել ռուսահայոց հոգևոր առաջնորդի հարցը։ Սիմեոնի ժամանակ այդ խնդիրը լուծում էր գտել։ Եկատերինա II կայսրուհու 1768 թ. հունիսի 30-ի հրովարտակով ռուսահայերը հոգևոր հարցերում ենթարկվում էին հայոց կաթողիկոսին։ Հոգևոր առաջնորդ կարող էր նշանակել միայն կաթողիկոսը և առանց նրա հրամանի ոչ մի հայ եպիսկոպոս կամ վարդապետ իրավունք չուներ մտնելու Ռուսաստանի սահմանները։ Այդ հարցը կարգավորելու նպատակով Ղուկասը Ռուսաստան ուղարկվող հոգևորականների համար վկայականի ձև է մշակում և ուղարկում Կ. Պոլիս ու Երուսաղեմ։ Մի օրինակ էլ հղում է Հովսեփ Արղությանին, որը ռուսահայ մի շարք ազդեցիկ անձանց հետ նախապես խորհրդակցելուց հետո դիմել էր ռուսական պետական իշխանություններին և ստացել հատուկ հրամանագիր։ Դրա համաձայն տեղական իշխանությունները, առանց հայոց կաթողիկոսի տված գրավոր վկայականի, իրավունք չունեին Ռուսաստան թողնել այլևայլ նպատակներով այդ երկիրը եկող հայ հոգևորականներին։

1782 թ. մարտի 30-ին Հ. Արղությանին հղած նամակում Ղուկասը զետեղել է այդ վկայականի օրինակը («օրինակ բաշրորթի», այսինքն վկայականի, կամ հրամայականի), որն ամբողջությամբ հրատարակում ենք այս գրքի մեջ (վավ. № 625)։

Ընտրվելուց մի առ ժամանակ անց՝ 1781 թ. հունվարին, երբ բացվում են ճանապարհները, Ղուկասը Ռուսաստան է ուղարկում դեռևս Սիմեոնի օրոք (1780 թ. հուլիսին) գրված, ինչպես և իր նամակները։ Երևում է, որ կապը լրիվին խզված էր և Հ. Արղությանը, որը Մոսկվայից եկել էր Նոր Նախիջևան, գաղափար չուներ Էջմիածնում տեղի ունեցած անց ու դարձի մասին։ Նա ստիպված հատուկ սուրհանդակ էր ուղարկել։ Վերջինս, որը Գրիգոր անունով մի հայ էր, Հ. Արղությանի խնդրած նամակներից բացի մեռոն էր տանելու նորնախիջևանցիների համար։ Օգտվելով առիթից, Ղուկասը նամակ է գրում Նոր Նախիջևանի նահանգապետ, գեներալ-պորուչիկ Վ. Ա. Չերտկովին։ Ծանուցելով նրան իր գահակալության մասին, շնորհակալություն է հայտնում հօգուտ նորնախիջևանցիների կատարած ու կատարելիք գործերի համար և խնդրում բարի աչքով նայել հայերին։ Նույն բովանդակությամբ նամակ է գրում նաև Նոր Նախիջևանի պարետ Ս. Գ. Գուրևովին (վավ. № 309)։ Մոզդոկի պարետ, գնդապետ Ա. Ֆ. Իվանովին ուղղած նամակում նա խնդրում է «թարց մերս կարմրակնիք վկայական գրոց մի զօք ի կարգաւորաց ազգիս մերոյ թողուցուս մտանել ի երկիրդ ձեր յայդր» (վավ. № 315)։

1782 թ. սկզբներին, դարձյալ Հ. Արղությանի խնդրանքով, Ղուկասը նամակներ է ուղարկում Ռուսական կայսրության մի շարք ազդեցիկ գործիչների։ Առաջին նամակը հասցեագրված էր իշխան Գ. Ա. Պոտյոմկինին, որին Ղուկասն անվանում է «երկրորդն արքայութեանն Ռուսաց» (վավ. № 564)։ Այդ նամակով նա շնորհակալություն է հայտնում Ղրիմից գաղթած հայերի նկատմամբ դրական վերաբերմունքի, նրանց շնորհած արտոնությունների համար և խնդրում «ունիլ զողորմածութիւն առ մեզ և առ մերայինսն և առ Յովսէփ վարդապետն» (ն. տ.)։ Նամակներ են ուղարկվել նաև կոմս Ն. Ի. Պանինին, կոմս Պ. Ա. Ռումյանցևին, բայց դրանց տեքստերը չեն պահպանվել, իսկ Գ. Պոտյոմկինին ուղարկված նամակը, ռուսերեն թարգմանության հետ միասին, մեզ հաջողվեց գտնել ՍՍՀՄ ռազմապատմական արխիվում։

Հ. Արղությանի խորհրդով Ղուկասը նամակներ է գրում նաև ռուսահայ նշանավոր գործիչներին՝ Հ. Լազարյանին, Մարգար և Փիլիպոս Մանուչարյաններին, Գրիգոր Կանպանյանին, Մովսես Սարաֆյանին, Մակար Խուդաբաշյանին և ուրիշների։

Մեծ կարևորություն տալով հայոց կաթողիկոսի դերին Անդրկովկասում իրենց պլանների իրականացման գործում, ռուսները նրա հետ նամակագրական կապ էին պահպանում, կարելի է ասել, ամենաբարձր մակարդակով։ ՍՍՀՄ ռազմապատմական արխիվում պահպանված Ղուկասի 17 հունվարի 1783 թվակիր նամակից, հասցեագրված իշխան Գ. Պոտյոմկինին, տեղեկանում ենք, որ 1782 թ. օգոստոսի 20-ին Յակով Ռայնեգսի միջոցով կաթողիկոսը ստացել էր Գ. Պոտյոմկինի նամակը, ինչպես և նվերը՝ թանկարժեք խաչը։ Այդ նամակը, որքան կարողացանք պարզել, չի պահպանված։ Չի մնացել նաև Ղուկաս Կարնեցու նամակի սևագրությունը։ Կարելի է ենթադրել, որ սևագրությունն արված է եղել առանձին թղթի վրա։ Ղուկասի պատասխան նամակից երևում է, որ՝ Գ. Պոտյոմկինը շատ սիրալիր նամակ էր գրել կաթողիկոսին և իր համակրանքը հայտնել հայ ժողովրդին ու նրա հոգևոր առաջնորդին։

Գ. Պոտյոմկինին հասցեագրած իր պատասխան նամակի մասին Ղուկասը 1783 թ. ապրիլին հետևյալն է գրել Հ. Արղությանին. «Իսկ ի թուղթն ընէայ մեծ իշխանին ղայս ինչ գրեցաք՝ յայնժամ թէ վասն օգտից և հարկաւորութեանց մերոց, զոր ինչ ծանուցեն ձեզ Յովսէփ արքեպիսկոպոսն և ապայ Յովաննէսն և տօքտօր Եակոբն, խնդրեմ լսել և հոգ տանիլ» (վավ. № 749)։

Ղուկասը մեծ սպասելիքներ ուներ ռուսներից և ամենևին չէր ուզում, որ Արղությանը վերադառնար էջմիածին. «քանզի յայսպիսի վրդովման ժամանակի գալդ վնաս մեծ է Աթոռոյս և մնալդ շահ, զի՞ ո՞ գիտէ, թէ զինչ պատահիցի աստ, և դու յայդր գոլով մերձ առ դոսա, եթէ զրանս ինչ գրիցեմք, հոգասցես» (ն. տ.)։

Ուշագրավ է Ղուկասի 1784 թ. հունվարի 16-ի նամակը Վրաստանում ռուսական զորքերի հրամանատար, գնդապետ Ս. Դ. Բուռնաշևին, որով շնորհավորում էր նրա գալուստը Թիֆլիս և հույս հայտնում, «զի որքան մինչև ցայժմ եմք տեսեալ զսէր ի յօրհնեալ տէրութենէդ ձերմէ, յայսմհետէ առաւել ևս քան զայնս տեսանիցեմք» (վավ. № 792)։

Ղուկաս Կարնեցին գրագրություն է ունեցել նաև ռուսական գործակալ Յակով Ռայնեգսի հետ, որն այն ժամանակ գտնվում էր Վրաստանում։ Վերջինս մի շարք նամակներ է ուղարկել Ղուկասին։ Դրանց պատասխաններից երևում է, որ Ռայնեգսը մասնակցել է Հաղբատում նոր վանահայր կարգելու գործին (վավ. № 727)։ Պարզվում է, որ Ղուկասի խնդրանքով նա միջնորդել է Հերակլ արքայի առջև՝ հեռացնելու Իսրայելին Գանձասարի կաթողիկոսական գահից (վավ. № 458)։ 1781 թ. հուլիսին 3. Ռայնեգսը գրավոր խընդրում է Ղուկասից թույլ տալ բնակվելու էջմիածնում։ Այդ կապակցությամբ քարտուղարը տվել է հետևյալ ծանոթությունը. «տօքտօր Յակոբն, որ էր բժիշկ ռմն ինկլիզ», դարձել էր լուսավորչական (մի ծանր հիվանդությունից փրկվելու առթիվ—Վ. Գ.) և այժմ էլ գրել է, թե «փափագ ունիմ գալ և յայդր բնակիլ, եթէ կամիցիս»։ Ղուկասը կտրականապես արգելում է՝ հաշվի առնելով այն դժվարին կացությունը, որի մեջ կհայտնվեր էջմիածնի վանքը, եթե ռուսական ծառայության մեջ եղած այդ եվրոպացին հաստատվեր էջմիածնում (վավ. № 458)։

Ռուսական արշավանքի նախապատրաստական աշխատանքները գլխավորող գեներալ-պորուչիկ Պ. Ս. Պոտյոմկինի հետ Ղուկասի գրագրությունը կրել է բավական կանոնավոր բնույթ։ Ինչպես նշել ենք, Ղուկասը միշտ զուսպ ու չափավոր էր իր արտահայտությունների մեջ։ Երբ գեներալը նրան առաջարկում է ազատագրական պայքարի քարոզ անել՝ «թէ քարոզչիք յականջս ամենայն հայկազանց և այլն», Ղուկասը հայտնում է, թե ինքը «ամենայօժար սրտիւ կամիմք լինիլ այցելութիւն ազգին մերոյ», սակայն ազգը ցրված է օտար իշխանությունների ներքո և ինքը չի կարող այդպիսի խորհրդով նրանց վնաս հասցնել։ Իսկ շրջակայքում գտնվողները ողորմելի դրության մեջ են և աղքատ։ Նրանց էլ ոչինչ չի կարող ասել, քանի որ «երկնչիմք յիշխողէն երկրիս»։ Այդուհանդերձ, նա հայտնում է, որ «ի գալն ձեր ըստ կարեաց իւրեանց ծառայելոց են»։ Ինչ վերաբերում է Արցախի մելիքներին, ապա նրանք «և այլքն ազատք կերպիւ ինչ ի նեղութեանց և կիրթք ի պատերազմունս, յօժարութեամբ կամին և սպասեն գալստեան ձերում, որպէս և մեք»։ Նրանք մթերքների պատրաստություն են տեսել և խնդրում են օգնության հասնել «խղճալի ազգիս և երկրիս մերոյ» (վավ. № 766)։

Ղուկասի զգուշավորությունը քննարկման առարկա էր դարձել հայ ազատագրական շարժման գործիչների մոտ և հաճախ այդ կապակցությամբ նրանք

հայտնում էին իրենց դժգոհությունը։ Այսպես, 1783 թ. ապրիլի 12-ին Հ. Լազարյանը կաթողիկոսին գրել է, թե նրա նամակը, ուղղված իշխան Գ. Պոտյոմկինին, հասել է իրեն և ինքն այն թարգմանաբար հանձնել է ըստ պատկանելույն, սակայն նրան զարմացրել է Ղուկասի նամակի բովանդակությունը, որովհետև նա իրեն ոչինչ չէր գրել ռուսներին հաղորդելու համար, նույնիսկ Գ. Պոտյոմկինին ուղղած համառոտ նամակի մեջ լռության էր մատնել Հայաստանի համար կարևոր քաղաքական խնդիրները (վավ. № 776)։

1783 թ. սեպտեմբերի 5-ին Հ. Լազարյանին հասցեագրված նամակից իմանում ենք, որ վերջինս նրան դարձյալ դիտողություն էր արել Գ. Պոտյոմկինին չափազանց զգուշավոր նամակ գրելու կապակցությամբ։ Ղուկասը պատասխանում է, որ նման պայմաններում գտնվող անձինք պարտավոր են «շրջահայեաց և զգոյշ լինիլ», չէ՞ որ «կամք ևս ի վտանգաւոր վայրոջ ի մէջ անօրինաց»։ Եթե իշխան Գ. Պոտյոմկինը ամեն կողմից «վստահ և աներկիւղ գոլով զոչինչ էր գրեալ բացայէտ և կամ երկարօրէն, մեք ըստ ամենայնի երկիւղալի որպէ՞ս կարեմք երկարապէս և բաց գրել առ նա զամենայն ինչ»։ Այնուհետև նա գրում է, որ «նեղիչքն» (այսինքն՝ պարսիկները) հանճարեղ են չարիքներ գործելու մեջ և եթե տեղեկանան «հետևմանց մերոց... սկսանին գիշատել զմեզ, յորոց բերանոյն իսկ կամք»։ Ահա այդ է պատճառը, որ ինքը չի կարող «վասն սաստիկ երկիւղի վտանգից (հակառակորդացն) (այս բառը ջնջված է բնագրում—Վ. Գ.) վշտացուցչաց մերոց, սակայն սրտի մտօք բաղձամք ըստ քեզ տեսանել ակամբ զկատարումն գործառնութեան այդոցիկ օգտախոհ բարեկամացդ մերոց բարձրագունից» (վավ. № 776)։

Նույն օրը Ղուկասը Հ. Արղությանին ուղղած ընդարձակ նամակում, որով հայտնում է Ավետիք սարկավագի միջոցով դրամի, նվերների ու նամակների ստացումը, նշում է նաև ռուսների հետ պայմանագիր կնքելու մասին, որի անհրաժեշտության վերաբերյալ գրել էր Հ. Արղությանը։ Ղուկասը տեղեկացնում է, որ իշխան Գ. Պոտյոմկինից և գեներալ Պ. Պոտյոմկինից ստացել է նամակներ, որոնց մեջ, սակայն, ոչինչ չի ասվում պայմանագրի մասին («նոքա զրան ինչ որ գրեն առ մեզ»)։ Հետևապես, առանց նրանց խնդրանքի և առանց ազգի գիտության «որպէ՞ս կարեմք զդաշնագիրս գրել առ նոսա»։ Հ. Արղությանը գրել էր նրան, թե հարցրու ազգին։ «Որո՞ց հարցանեմ,—պատասխանում է Ղուկասը,—ոչ ապաքէն բազումքն և գլխաւորքն են ընդ իշխանութեամբ այլազգ թագաւորաց։ Իսկ ի յերկրոջս մերում եղեալ ողորմելիքն ապրուստի կարօտին... Ապա փոյթ չէ ցայսպիսի խղճալիսն հարցանել»։ Հետո կրկին ցուցաբերում է իր վերաբերմունքն այդ կարևոր հարցի նկատմամբ՝ «Զի յօժարութեամբ բաղձամք գալստեանն զոցին՝ առ ի յայց առնել երկրիս և խղճալի ազգիս մերում։ Եւ զայլն թողում խոհեմութեամբդ իմանալ» (վավ. № 777)։

Ղուկաս Կարնեցու այս անվճռականությունն ու «վախկոտությունը» բարկացնում էր նաև Հ. Արղությանին և նա ընդհանուր գործին չվնասելու համար կաթողիկոսի նամակները թարգմանելիս, հոգ է տանում, որ նրանք դառնան ռուսական ձեռնարկումներին միանգամայն հավանություն տվող և ռուսներին օգնելու ջերմ ցանկությամբ տոգորված գրություններ։ Օրինակ, երբ Ղուկասը շատ անորոշ մի պատասխան է ուղարկում Պ. Պոտյոմկինի 1783 թ. փետրվարի 15-ի նամակին, որով վերջինս, շոշափելով ընդհանուր քաղաքական կացության հարցերը, հույս էր հայտնել, թե կաթողիկոսը հարկավոր դեպքերում կկատարի իր խնդրանքները, Հ. Արղությանը այնպես է թարգմանել տալիս Ղուկասի պատասխան նամակը, որ նրա երկիմաստ, անորոշ մըտ-

քերի փոխարեն գրվում է, թե «ողջ հայ ժողովուրդը ցանկանում է հաղթական զորքերի գալուստը և ուրախությամբ հույս ունի ազատագրվելու»[208]:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ղուկասի 16 հունվարի 1784 թվակիր նամակը իշխան Գ. Պոտյոմկինին, որի մեջ նա պարզ ձևով շարադրում է իր տեսակետները: Այստեղ Ղուկասն ավելի պերճախոս է ու որոշակի: Նա գրում է, որ ռուսաց կայսրուհին իշխանի «ջերմեռանդ գթաշարժական միջնորդությամբ» կամենում է «այց և ազատութիւն երկրիս և տառապեալ ազգիս մերում, թէ որքա՞ն է ջերմեռանդ բաղձանք մեր և յօժարութիւն առ այդ, ոչ լինի երկարել» (վավ. № 791): Նա համոզված է, որ միայն ռուսական կայսրուհուց կարելի է ստանալ ազատություն և հայոց երկիրը կգտնի կատարյալ խաղաղություն: Շնորհակալություն հղելով կայսրուհուն, նա խնդրում է նրան հաղորդել «զյոլովագոյն տենչմունս և զյօժարութիւն մեր առ առաջադրեալ խրախութեանն իւր, որ ի փրկութիւն մեզ և մերազնէից» (ն. տ.):

Ինչպես տեսնում ենք, ամեն ինչ ասված է, սպասում ենք օգնության, աղոթում ենք, օրհնում ենք և այլն, և այլն, բայց բացակայում է որոշակի խոստում, ինչ որ կուզենային լինել կաթողիկոսի նամակներում Հ. Արղությանն ու Հ. Լազարյանը: Ղուկասը խիստ իրապաշտ էր և շատ ժլատ՝ ավելորդ խոսքերի ու խոստումների խնդրում: Արարատյան դաշտում, մահմեդական դաժան տիրապետության ներքո գտնվող և ամեն պահ այդ տիրապետության քմահաճույքներին ենթակա ու այդ տեսակետից համարյա անպաշտպան կաթողիկոսը, որը մի կերպ կարողանում էր ապահովել Էջմիածնի գոյությունը, չէր ցանկանում վաղաժամ կասկածներ հարուցել վանքի նկատմամբ, լարված վիճակ ստեղծել և հաստատ վտանգի ենթարկել իր համայնքը: Այստեղից էլ ահա նրա զգուշությունն ու չափավորությունը: Նամակները վերջնականապես խմբագրելիս նա աշխատում էր խուսափել սուր արտահայտություններից: Այսպես, 1784 թ. հունվարի 16-ին գեներալ Պ. Պոտյոմկինին գրած նամակի մեջ նշում է. «Քանզի և մեք մշտաբաղձ տենչմամբ ցանկամք տեսանել զփրկութիւն մեր, գոլով ամենայնիւ ձանձրացեալ և նուազեալ ի թշուառութեանց՝ ըմեօք եղելոց անօրինաց»: Բայց, այնուամենայնիվ, զգուշությունը չի դավաճանել նրան և սևագրության մեջ ջնջել է պարսիկներին վերաբերող «անօրինաց» բառը (վավ. № 801): Իսկ մեկ այլ տեղ նախադասությունը խմբագրել է հետևյալ ձևով.

գրված է	դարձված է
«Զի զի՞նչ է մեզ առաւել ըղձալի, քան զտեսանելն զփրկութիւն մեր եկեալ հասեալ և զերկիրս մեր ի յաւերչաց ազատեցեալ, և զվանորայս և զեկեղեցիս մեր վերստին նորոգեալ և պայծառազարդեալ»:	«Զի զի՞նչ է մեզ առաւել ըղձալի, քան զտեսանելն զփրկութիւն մեր եկեալ հասեալ և զերկիրս, զվանորայս, և զեկեղեցիս մեր վերստին նորոգեալ և պայծառազարդեալ» (ն. տ.):

Ղուկաս Կարնեցին իրոք որ անհամբեր սպասում էր ռուսական արշավանքին և իր նամակների մեջ իրազեկ անձանց զգուշավոր կերպով հարցում էր անում այդ մասին: 1784 թ. հուլիսի 10-ին Հ. Արղությանին ուղղած նամակում գրում է, թե քանի որ Հովսեփը զորապետի (գեներալ Պ. Պոտյոմկինի) հետ մտադրություն ունի Թիֆլիս գալու (ենթադրում է, թե նա արդեն այնտեղ է), ապա թող նա տեղեկանա արքայից և իրեն հայտնի արշավանքի

[208] А. Р. Иоаннисян, նշված աշխ., էջ 67:

մասին՝ «թէ բանն ո՞ւր եղերեւոց իցէ և կամ ոտնաձայն անձրևի՞ է, թէ ոչ...»: «Անձրևը» ազատարար արշավանքն էր: Միաժամանակ նա խնդրում է «զօրապետին» տեղյակ պահել երկրում ստեղծված ծանր կացության մասին (վավ. № 948):

Ինչպես տեսնում ենք, այլևայլ անձանց հասցեագրված Ղուկասի նամակներում կարմիր թելի նման անցնում է այն գաղափարը, որ տվյալ պայմաններում հայերը, որոնք ձգտում են ազատագրվել օտար լծից, բայց հնարավորություն չունեն այդ բանն իրականացնել սեփական ուժերով, պետք է շատ զգույշ լինեն՝ վաղաժամ վտանգի չենթարկելով իրենց: Միակ պետությունը, որը կարող էր օգնության ձեռք մեկնել հայերին, Ռուսաստանն է: Այդ բանը նա քաջ գիտակցում էր, ուստի ողջունում է ռուսական հրամանատարության նախապատրաստությունները և հասկացնում ռուսներին, թե պահանջի դեպքում հայերը կանեն ամեն բան նրանց գործը դյուրացնելու համար:

Գ) ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղուկաս Կարնեցու նամակները հետաքրքրական շատ տեղեկություններ են պարունակում այն սերտ կապերի մասին, որ ուներ կաթողիկոսը վրաց պետության և հարևան մահմեդական իշխանությունների մեծամեծների հետ: Հատկապես կայուն էին նրա հարաբերությունները վրաց թագավորի և վրացական արքայական տան անդամների հետ: Ղուկասը մշտապես թղթակցում էր վրաց պետության ղեկավարների հետ, հարկ եղած դեպքում դիմում նրանց օգնությանը և կատարում նրանց խնդրանքները: Այդ կապերը կրել են բարեկամական, մտերմիկ բնույթ:

Էջմիածնի և վրաց պետության հարաբերություններն ընդգրկում էին շատ ոլորտներ. ի դեմս վրաց թագավորի հայոց կաթողիկոսը տեսնում էր մշտապես հայերի նկատմամբ բարյացակամորեն տրամադրված պետական գործչի, որը քաղաքական բարդ պայմաններում ճշտորեն կողմնորոշվել էր դեպի Ռուսաստան, դաշինք էր կնքել նրա թագավորի հետ և ընդունել ռուսական հովանավորություն: Ռուսների հետ կապեր հաստատելու համար չէր կարելի հաշվի չառնել այս վերջին հանգամանքը: Բացի այդ, վրացական բնակավայրերում մեծ թիվ էին կազմում հայերը, որոնց հետ բնականոն կապեր պահպանելը կախված էր նաև վրաց թագավորի հետ ունեցած հարաբերություններից: Հանձին հայոց կաթողիկոսի վրաց թագավորը մահմեդական շրջապատի մեջ ուներ քաղաքական հարցերում միանգամայն վստահելի դաշնակից, որի հայրենակիցներն իր երկրում զգալի կշիռ ունեին թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական ասպարեզում: Կաթողիկոսի դերն անփոխարինելի էր Երևանի խաների և այլ մեծամեծների հետ վրացիների ունեցած փոխառնչությունների ժամանակ: Բացի այդ, կաթողիկոսը հնարավորություն ուներ օգնելու վրացիներին շատ կարևոր հարցերում, ուստի վրաց պետության ղեկավարների համար էլ ցանկալի ու ձեռնտու էր բարեկամական հարաբերությունները դրացի քրիստոնյա ժողովրդի հոգևոր ղեկավարի հետ:

Կաթողիկոս ընտրվելուց հետո՝ 1780 թ. օգոստոսին, Ղուկասը Դանիել վարդապետին ուղարկում է Հերակլ թագավորի մոտ: Վարդապետը տանում էր իր հետ մի քանի նամակ և պահանջի դեպքում բանավոր կերպով Հերակ-

5—815

լին մանրամասն տեղեկացնելու էր ընտրության ժամանակ ստեղծված իրավիճակի մասին։ Իր նամակում Ղուկասը հույս էր հայտնում, որ թագավորը «զայս առ սուրբ Աթոռս և առ ինքն զսէր և զխնամս ունիցի առաւել քան, զոր առ նախկին հայրապետսն վասն խառնակութեանց երկրիս և ժամանակիս» (վավ. № 42)։ Նույն օրով նա նամակներ էր գրել թագաժառանգներ՝ Գեորգին (ապագա Գեորգի XII թագավորին) և Լևանին, Անտոն կաթողիկոսին, Էֆթիմե վարդապետին, Դավիթ սարդարին, նրա եղբայր Նիկոլին և Ջագաբեկին (վավ. № 43—48)։

1781 թ. փետրվարին Ղուկասը նամակների մի կապոց է ուղարկում Վրաստան։ Առիթն այս անգամ Լևան արքայորդու ողբերգական մահն էր (տե՛ս ծանոթություն № 85)։

Ինչպես արդեն նշել ենք, վրաց զորքի արշավանքների ժամանակ մեծ վնասներ էին հասել Արարատյան դաշտի բնակավայրերին, այդ թվում վանքերին ու եկեղեցիներին։ Ղուկասի գրություններից տեղեկանում ենք, որ Հերակլը ինչ-որ չափով վերացնելու համար արշավանքի հետևանքները, 1782 թ. մայիսին փող է ուղարկում տուժած վանքերին (վավ. № 582)։

Նամակներից տեղեկանում ենք նաև, որ Հերակլն ու Գեորգին հաճախ դիմում էին Ղուկասին՝ հեռավոր վայրեր մեկնող կամ էլ փորձանքի հանդիպած անձանց ժողովարարական թղթեր տալու խնդրանքով։ Կաթողիկոսը բավարարում էր նրանց խնդրանքը, բայց երբեմն ստիպված էր լինում մերժել։ Այսպես, 1782 թ. մայիսին Գեորգի արքայորդուն նա հայտնում է, որ նրա խնդրանքով ինքը գերատերերին ու անհաջողության մեջ ընկած մարդկանց տվել է ժողովարարական թղթեր, բայց անհրաժեշտ է դրանց թիվը սահմանափակել, որովհետև «ի յաճախութենէն լիցի զզուումն ժողովրդեանն և թուղթն մեր ամենևին ընդունայն լինելոց է» (վավ. № 599)։

Ղուկաս Կարնեցու խնդրանքով Հերակլ թագավորը հաճախ միջամտում էր հայ եկեղեցական վեճերին։ Այսպես, նա չընդունեց Իսրայելին որպես Աղվանից կաթողիկոս։ Այդ կապակցությամբ Ղուկասը շնորհակալություն է հայտնում նրան, միաժամանակ շնորհավորում վրաց տպարանի գործարկման առթիվ, որի նորոգումը կատարել էր Կ. Պոլսից հրավիրված հայ տպագրիչ Պողոս Արապյանը։ Այդ տպարանի համար, Հերակլի խնդրանքով, Ղուկասը 300 թումանի արժողությամբ թուղթ է բերել տալիս Կ. Պոլսից։ Հերակլը երախտապարտ էր զգում իրեն, ուստի որպես նվեր ուղարկում է տպագրական մեկ հաստոց (վավ. № 788)։

Նվերների փոխանակումը սովորական էր նրանց միջև։ Այդ մասին շատ տեղեկություններ են պահպանվել հատկապես Էջմիածնի ստացած նվերների գրանցման մատյաններում։ Հրապարակված նամակներից, ի միջի այլոց, իմանում ենք, որ մի անգամ Գեորգի արքայորդին իր սուրհանդակ Շաքարոյի միջոցով որպես նվեր կաթողիկոսին ուղարկել էր երկու եղնիկ (արու և էգ՝ եղջերու և եղն), մի ձի, երկու վայրի հավ և երկու բեռ գինի։ Այդ նույն ժամանակ Բայազետի փաշան ձի էր ընծա ուղարկել կաթողիկոսին և խնդրել էր նրանից մի եղնիկ։ Կաթողիկոսը տեր Վահանի միջոցով Վրաստանից ստացված եղնիկներն ուղարկում է փաշային (վավ. № 594)։

Վրաց պետության ղեկավարները, ինչպես նշեցինք, միջամտում էին նաև եկեղեցական խնդիրներին։ Հայտնի է, որ Ղուկաս Կարնեցու խնդրանքով Հերակլը հալածում էր վրացահայերի մեջ կաթոլիկություն տարածողներին՝ աղթարմա հերձվածողներին։ 1782 թ. մայիսին Ղուկասը Կարապետ վարդապետի խնդրանքով Գեորգիին նամակ է գրում այն մասին, որ Լոռու բերդի բնակիչները պատկանում են Էջմիածնի վիճակին, որովհետև նրանք ապարանցի

բյուրականցի և ջավախեթցիներ են։ Նա խնդրում է Կարապետ վարդապետին հաստատման գրությամբ ուղարկել այնտեղ որպես հոգևոր հովիվ։ Նա Գեորգիին նվեր է ուղարկում գինի և սպիտակ մոմ։ Նույն ամսին կաթողիկոսը Հերակլին է դիմում Հաղարծնի վանքի կապակցությամբ։ Հաղպատի վանականները զավթել էին Հաղարծնի թեմը և վերջինիս առաջնորդը եկել էր Էջմիածին բողոքի։ Քանի որ այդ երկու վանքերն էլ գտնվում էին ծանր վիճակում՝ «յանշինութեան կան այսօրիկ», թեմի կեսը «գիտութեամբ արքային և կոնդակաւ հոգելոյս հայրապետին» տրված էր Հաղպատին, մյուս կեսը՝ Հաղարծնին։ Սրանք խաղաղ վիճակում էին, բայց որովհետև Հաղպատում շինարարություն է սկսվում՝ «սակաւ ինչ շինութիւն էին ձգեալ», այդ պատճառով հաղպատցիները զավթել էին Հաղարծնի բաժինը։ Ղուկասը նամակ է գրում Հերակլին և խնդրում «առ ի գտանել զհնար իմն կեցութեան դոցին» (վավ. № 593)։

Ուշագրավ են նաև Ղուկասի գրությունները հասցեագրված շրջակա մահմեդական տիրակալներին։ Կաթողիկոսը ձգտում էր բարի դրացիական հարաբերություններ ունենալ նրանց հետ։ Հաճախակի նամակներ էր գրում, նվերներ ուղարկում, կատարում նրանց խնդրանքները։

Առաջին նամակներից մեկը, որ գրել է Ղուկասն իր ընտրությունից անմիջապես հետո, ուղղված էր Կարինի Իբրահիմ փաշային։ Օգտվելով Սիմեոն Երևանցու մահից, Կարինի մաքսապետը «ի թէլատրութենէ փաշային», ձերբակալել էր Կարինում գտնվող Էջմիածնի ներկայացուցիչներին՝ վեքիլ Հայրապետին ու նվիրակ Ներսես վարդապետին և բռնագրավել նրանց մոտ եղած ապրանքը։ Ղուկասը Կարինի փաշային գրում է, որ այդ հավաքված ինչքը ոչ թե խալիֆայինն է (այսինքն կաթողիկոսինը), այլ Էջմիածնի վանքինը, հետևապես նրանք իրավունք չունեին բռնագրավելու այն և ձերբակալելու վանքի մարդկանց (վավ. № 31)։ Նույն բովանդակությամբ նամակներ է գրում նաև Կարնո Ցայատ-օղլի խալիլ փաշային, մաքսապետին և քաղաքի ազդեցիկ հայերին (վավ. № 32—34)։

1780 թ. սեպտեմբերին և հոկտեմբերին Ղուկասը «բարեկամական սիրոյ թուղթ» է գրում Բայազետի Իսաք փաշային, նվերներ ուղարկում նրան՝ կտորեղեն, մոմ, վարդաջուր, բրինձ, քացախ (վավ. № 66, 216)։ Իսաք փաշան ևս իր կողմից ցանկանում էր ամրապնդել կապերը կաթողիկոսի հետ։ Նրա իշխանության սահմաններում անարգել գործում էին Էջմիածնի համար մթերքներ և մատաղացու անասուններ ժողովող վարդապետները։ Փաշան երբեմն ձգտում էր միջամտել եկեղեցական գործերին։ Այսպես, նա խնդրել էր Ուչքիլիսայի ս. Հովհաննես վանքի առաջնորդ Մկրտիչ վարդապետին ձեռնադրել եպիսկոպոս։ Ղուկասը կատարում է նրա խնդրանքը (վավ. № 510)։ Փոխարենը փաշայից խնդրում է միջոցներ ձեռք առնել Ուչքիլիսայի թեմում եղած ախթարմաների դեմ, որոնք օրեցօր ավելանում էին՝ «զանհնազանդութիւնս ցուցանելով առաջնորդին իւրեանց և զուղղափառ դաւանութիւն Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ ուրացեալք, հետևէին պապրչաց, գնալով զհետ հեշտասիրութեան և թուլամորթութեան»։ Նա գրում է, որ թուրքաց սուլթանը ախթարմաներին հալածելու վերաբերյալ հրովարտակ է ուղարկել Կ. Պոլսի պատրիարքի միջոցով «առ ի սպառնալեօք և կամ պատժօք և տուգանօք ուղղել զնոսա» (վավ. № 511)։

Թուրքական տիրապետության տակ եղած այլ վայրերից ևս Ղուկասը ստանում էր խնդրանքներ առաջնորդ նշանակելու վերաբերյալ։ Օրինակ՝ 1780 թ. սեպտեմբերին այդպիսի մի հարցով Մաղասբերդից նրան էին դիմել Ալի բեկն ու Մահմադ բեկը։ Նրանք մի ձի էին նվեր ուղարկել և հայտնել,

որ Ղոշավանքն առանց առաջնորդի անտեր մնալով, օր ըստ օրե ավերվում է։ Ղուկասը խոստանում է «յետ քանեաց աւուրց զառաջնորդ յղել» (վավ. № 143)։ Նույն հարցով նրան դիմել էր Աղբակի բեկը (վավ. № 148)։

Ղուկասը նամակագրություն ուներ նաև Կարսի Արդուլլա փաշայի հետ (վավ. № 242)։ Վերջինս իր գանձապահ Իբրահիմ աղայի հետ Ղուկասին նվեր էր ուղարկել՝ մեկ ձի և «սիրոյ թղթի» մեջ գրել, որ իրեն տեղեկություններ տրվեն Անդրկովկասի քաղաքական կացության վերաբերյալ։ Կաթողիկոսը շատ ընդհանուր ձևով, հակիրճ, համարյա ոչինչ չասող տեղեկություններ է հաղորդում նրան Ղարաբաղի խանի կողմից Թավրիզի գրավման, ապա այնտեղից հեռանալու, վրաց թագավորի և Երևանի խանի միջև հաշտության կնքման մասին և այլն (վավ. № 296)։

1781 թ. ապրիլին Կարնեցու գրած նամակների բովանդակությունից իմանում ենք, որ նա ուղտեր էր ուղարկել Կարս՝ վանքի համար ձեռք բերված ցորենը տեղափոխելու համար։ Նույն ժամանակ նա նամակ էր գրել Խալիլ փաշային, որով հայտնում էր խոստացված 100 լիտր բրինձը Կարսի վրայով Կարին ուղարկելու մասին (վավ. № 375)։

Մահմեդական իշխողների հետ իր կապերը Ղուկաս Կարնեցին օգտագործում էր հայ բնակչության և եկեղեցու շահերը պաշտպանելու համար։ Երբեմն նա նամակներ էր գրում տեղական իշխանավորներին՝ խնդրելով, որ նրանք «մուղայէթ լիցին» էջմիածնի նշանակած առաջնորդներին։ Երբ թուրքական փաշաների կողմից էջմիածնի շահերին հակասող առաջարկություններ էին լինում, Ղուկասը քաջություն էր ունենում հակառակվելու նրանց։ Շրջակա երկրների իշխողների հետ ունեցած հարաբերությունները Ղուկասը կարողացավ խելացի կերպով օգտագործել 90-ական թվականներին, երբ Անդրկովկասի վրա կախվել էր Աղա Մուհամադ շահի հարձակման ահավոր վտանգը։

Հրապարակված նամակներում հետաքրքրական տեղեկություններ կան հարևան երկրներում տեղի ունեցած թե՛ քաղաքական անցուդարձի, և թե՛ բնական պատահարների ու զանազան այլ դեպքերի մասին։ Կաթողիկոսի ուշադրությունը, բնականաբար, կենտրոնացված էր հայաբնակ վայրերի վրա, որտեղից նա պարբերաբար զանազան լուրեր էր ստանում, և որոնք այս կամ այն ձևով արտացոլում էին գտնում նրա նամակներում։ Բայց քանի որ այդ բնույթի տեղեկությունները մեզ են գալիս երկրորդ ձեռքից և հեղինակը հատուկ նպատակ չի հետապնդել մասնավոր ուշադրություն դարձնելու նրանց վրա, ապա ուշագրավ շատ հարցեր նամակների կամ նրանց բովանդակության մեջ շոշափված են հպանցիկ կերպով։

Համառոտակի կանգ առնենք այդ կարգի նյութերի վրա։ 1780 թ. դեկտեմբերին Ղուկասը Կ. Պոլսի հայ մեծամեծներին ուղղած նամակում գրել է նաև Իրանում տեղի ունեցած դեպքերի, մասնավորապես Ղարաբաղի Իբրահիմ խանի արշավանքի մասին, որի ժամանակ մեծ վնասներ էին կրել Թավրիզը, Խոյն ու Գիլանը։ Նա ցավով նշում է Նոր Ջուղայի թալանի, ս. Ամենափրկիչ վանքին հասած վնասների մասին (վավ. № 263)։ 1782 թ. սկզբներին Հյուսիսային Իրանի հայ բնակչությանն ուղղած օրհնության կոնդակի մեջ հիշատակություն կա 1771 թ. Թավրիզի կողմերում տեղի ունեցած երկրաշարժի մասին, որի ժամանակ մեծ ավերածություններ և մարդկային զոհեր էին եղել. «Այլև՝ ի յահագին գետնաշարժութենէն յայնմանէ յոլով անձինք ի քաղաքէն գետնասոյզ էին եղեալ» (վավ. № 291)։ Պարզվում է, որ այդ ժամանակ փլվել էր Թավրիզի հայկական եկեղեցին (Ն. տ.)։ 1783 թ. հունվարի 20-ին Թավրիզի հայությանն ուղղած կոնդակով Ղուկասը հորդո-

րում է օժանդակել տեր Հովսեփ քահանային «ի նորոգութեան եկեղեցւոյն իւրեանց, որ շարժէն փլեալ էր և այժմ նորոգէին» (վավ. № 710)։ Մինչ այդ՝ 1782 թ. սեպտեմբերի 20-ին, նույն հարցի կապակցությամբ նա նամակ էր ուղարկել նաև Թավրիզի քահանաներին և իշխաններին (վավ. № 692)։ Մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ 1771 թ. Գիլանում ծագած մեծ հրդեհի ժամանակ հրո ճարակ էր դարձել նաև հայկական եկեղեցին, որի վերաշինությանն օգնելու համար Ղուկասը կարգադրում է տեղում թողնել նվիրակի հավաքած գումարները (վավ. № 313)։ Կաթողիկոսը ձգտում էր օժանդակել Գորիի հայերին, որոնք կամենում էին իրենց՝ փայտաշեն խարխլված եկեղեցու փոխարեն կառուցել նոր եկեղեցի (վավ. № 764)։

Ուշագրավ են տեղեկությունները Կ. Պոլսում տարածված ժանտախտի մասին, որին զոհեր են տվել նաև տեղի հայերը (վավ. № 812—813)։ Հետո Կ. Պոլսի հայերը ենթարկվել են այլ փորձության՝ քաղաքում հրդեհ է ընկել՝ մեծ վնասներ հասցնելով նաև նրանց (վավ. № 1066)։

Այդ տարիներին հաճախակի էին ուժեղ երկրաշարժերը։ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերից մեծապես վնասվել էին Մուշն ու նրա շրջակայքը։ Զորեղ ցնցումներ զգացվել էին նաև Բայազետի կողմերում։ Երկրաշարժի հետևանքով խարխլվել էր Մշո ս. Կարապետ վանքը, որի նորոգմանն իր մասնակցությունն էր ուզում ունենալ նաև Ղուկաս կաթողիկոսը։ Բնական է վերջինիս ձգտումը՝ միջոցներ ձեռք առնել վերաշինելու ավերված կամ ամայացած վանքերը, և նրա նամակներն արտացոլում են այդ ուղղությամբ նրա կատարած քայլերը։ 1782 թ. օգոստոսի 2-ի նրա մի նամակը, ուղղված Թիֆլիս մելիք Ավետիքին, վերաբերում է Հավլաբարի ս. Աստվածածնի անունը կրող Տիրանավոր անապատին, որն «ի բազում ամաց հետէ անմարդաբնակ եղեալ, այժմոյս շինեցեալ է նորապէս» (վավ. № 687)։ Մեկ այլ նամակով շնորհակալություն է հայտնվում Լալիթարս անունով մի կնոջ, որն իր միջոցներով Թիֆլիսում նորոգել էր Քարափի եկեղեցին (վավ. № 587)։

1783 թ. Ղուկասը ժողովարարական կոնդակ է հղել Ռուսաստանի, ինչպես և Շիրվանի, Շամախու, Նուխիի ու այդ կողմի հայերին՝ օգնություն ցույց տալու Գորիի ս. Ստեփաննոս եկեղեցուն, որտեղ եղած բոլոր իրերն այրվել էին հրդեհի ժամանակ (վավ. № 741)։

Կանոնավոր նամակագրություն ունենալով Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Հնդկաստանի ու այլ վայրերի հայերի հետ, Ղուկասը լավատեղյակ էր այնտեղ կատարվող իրադարձություններին, անհրաժեշտության դեպքում միջամտում էր նրանց գործերին և այդ ամենի մասին հիշատակություններ թողնում իր նամակներում։ Այսպես, գաղթից հետո Ղրիմում մնացած հայերի հոգևոր առաջնորդի պարտականությունը նա դրել էր Հ. Արղությանի վրա (վավ. № 779)։ Մեկ այլ նամակով նա հորդորում է Նոր Նախիջևանի հայերին խնամք տանել տնանկների, աղքատների ու հաշմանդամների նկատմամբ, որոնց թիվն այն ժամանակ նորաստեղծ այդ գաղութում բավականին մեծ է եղել (վավ. № 750)։ Ղուկասը միջոցներ է ձեռք առնում գերությունից ազատելու մի հայ աղջկա, որին հափշտակել էին Աշտարակից (վավ. № 584)։ 1783 թ. մարտի 10-ի նամակով նա շնորհակալություն է հայտնում Թիֆլիսի հայերին, որոնք լեզգիներից փրկագնել էին մի խումբ հայերի և ընծայել էջմիածնին որպես «ճորտ և ծառայ» (վավ. № 731)։ Հ. Արղությանին հասցեագրած մի նամակից (1783 թ. ապրիլ) տեղեկանում ենք, որ Մոզդոկում ստեղծվել էր հայկական դատարան (վավ. № 749)։ Այդ նույն թվականին գրված մի քանի նամակներից երևում է, որ Հ. Արղությանը Նոր

Նախիջևանի դատավորների և իշխանների հետ միասին խնդրել էր կաթողիկոսից ժողովարարական կոնդակ տալ Հարություն քահանային, որպեսզի նա իրենց քաղաքի Ավագ եկեղեցու համար նյութական միջոցներ հավաքեր հնդկահայերից: Կաթողիկոսը բավարարում է նրանց խնդրանքը:

Ղուկասի նամակներից կարելի է գաղափար կազմել այն վայրերի մասին, որտեղ ապրել են հայերը կամ էլ գոյություն են ունեցել կազմակերպված գաղութներ: Նվիրական կոնդակների սկզբում, սովորաբար, թվարկվում են տվյալ երկրամասի բոլոր հայաբնակ վայրերը: Բերենք մի օրինակ. 1784 թ. մայիսին Ռումելիի հայերի մոտ նվիրակության ուղարկվող Ստեփաննոս վարդապետին տրված կոնդակի սկզբում գրված է հետևյալը. «Բոլոր երկիրդ Ռումէլու և յօրհնեալ քաղաքըդ ի Քիլի, ի յԻսմայիլ, ի Մուսայիպղլայ, ի Սախճայ, ի Սիլիսրայ, ի Ռուսճուղ, ի Թոնովայ, ի Շումլայ, ի Փրավատի, ի Վառնայ, ի Քեօստանջայ, ի Բասարճըղ, ի Բապադաղ, ի Այիտոսս, ի Ռազղապ, ի Հիլպայ, ի Թաթարբազարճըղ և ի համայն շրջակայ թէմս գոցին ի ղասապայս և ի գիւղօրայս» (վավ. № 861):

Ուշագրավ են Ղուկաս Կարնեցու նամակներն ուղղված Ավստրիայի կայսրին և Ռուսաստանում Ավստրիայի դեսպանին: Նամակները, որոնք արդեն հրատարակված են[209], գրվել են Բուկովինայի հայերի համար առաջնորդ նշանակելու կապակցությամբ: Ավստրիայի տիրապետության տակ ընկնելուց առաջ (1774 թ.) Բուկովինայի հայերի մոտ, որոնք վաղուց եպիսկոպոս չունեին, պարբերաբար նվիրակներ էին ուղարկվում: Վերջիններս ժամանակավորապես իրականացնում էին նաև հոգևոր առաջնորդի պարտականությունները: Երբ չէր հաջողվում նվիրակ ուղարկել, այդ գործը կատարում էր ռուսահայոց հոգևոր առաջնորդը: Երբ ճիզվիթների կողմից Բուկովինայի հայերին կաթոլիկացնելու լուրջ վտանգ առաջացավ, վերջիններս դիմեցին կաթողիկոսին՝ հոգևոր առաջնորդ ուղարկելու խնդրանքով: Ղուկաս Կարնեցին հանձնարարում է Հ. Արղությանին բանակցությունների մեջ մտնել Ավստրիայի դեսպանի հետ: Վերջինս խորհուրդ է տալիս ուղղակի դիմել կայսրին: 1785 թ. փետրվարի 15-ին Ղուկասն ընդարձակ մի նամակ է գրում Հովսեփ II կայսրին և խնդրում թույլ տալ «մտանել ի կալուածս իւր ի Սիչօվ և յՊուլաճ՝ մերային եպիսկոպոսաց և կարգաւորաց՝ ի վերատեսչութիւն մերազուն ժողովրդեանն»: Միաժամանակ նամակ է ուղարկում ավստրիական դեսպանին՝ խնդրելով տեղ հասցնել նամակը և միջնորդել գործի հաջողության համար (վավ. № 1032, 1033):

Հովսեփ II-ին կատարված այս դիմումը դրական ելք ունեցավ: 1786 թ. նա հրաման արձակեց, ըստ որի Բուկովինայի լուսավորչական հայերը ենթարկվելու էին էջմիածնի կաթողիկոսին և Կ. Պոլսի հայոց պատրիարքին[210]:

Չնայած քաղաքական միանգամայն անբարենպաստ պայմաններին, քննարկվող ժամանակաշրջանում ուխտավորների հոսանքը դեպի էջմիածին համարյա չի դադարել: Ուխտավորները գալիս էին ինչպես մերձակա վայրերից, այնպես էլ հեռավոր երկրներից: Հիշատակություններ կան հետևյալ վայրերից եկած ուխտավորների մասին՝ Ամասիայից, Ամիդից, Արդվինից, Բալուից, Կեսարիայից, Թոխաթից, Կ. Պոլսից, Ռուշչուկից, Նոր Նախիջևանից, ինչպես և Թրակիայից, Ղրիմից ու Մոլդավիայից: Ուխտավորներն իրենց հետ թանկարժեք ընծաներ էին բերում վանքին, դրամական պատկառելի նվիրատվություններ անում: էջմիածին եկած ուխտավորների միջոցով նվերներ

[209] Լեոն Բաբայան, նշված աշխ., էջ 116—127:
[210] Նույն տեղում, էջ 127:

ուղարկած անձանց տրվում էին օրհնության և շնորհակալության նամակներ, որոնց թիվը երբեմն բավականին մեծ էր լինում: Նվերները տարբեր բնույթի էին՝ արծաթե խաչեր, արծաթե ոսկեզօծ գոտիներ, ոսկե և արծաթե սկիհներ, արծաթե բուրվառներ, արծաթե ոսկեզօծ գավազաններ, արծաթե ջահեր և կանթեղներ, արծաթե սնդուկներ, ինչպես և խունկ, շուրջառ և այլն:

էջմիածնին նյութական օգնություն ցույց տալու համար այլևայլ վայրերում ստեղծվում էին գանձանակներ: Կաթողիկոսը հաստատում էր գանձապետներին, նվիրակների միջոցով կանոնավոր կերպով ստանում հավաքված գումարները և ուղարկում համապատասխան ստացագրեր: Գանձանակները մեծ մասամբ ստեղծվում էին համքարությունների կից և, բնականաբար, նամակներում հիշվում են նաև այդ համքարությունները: Այսպես, հիշատակված են Զմյուռնիայում, Կ. Պոլսում և շրջակա հայաբնակ վայրերում, Բալուում գոյություն ունեցած սափրիչների, ռանչպարների, կտավագործների, հացագործների, շղարշագործների, կոշկակարների համքարությունները:

Նվիրակները մեծ գումարներ էին հասցնում էջմիածին: Այդ մասին բազմաթիվ հիշատակություններ կան հրատարակված նյութերում: Ստացվող գումարների շնորհիվ էջմիածնում հնարավորություն է ստեղծվում ծավալել շինարարական աշխատանքներ: Ղուկաս Կարնեցին իր նամակներում ու կոնդակներում անընդհատ շոշափել է այդ հարցերը, նվիրակներին ու նվիրատու անձանց մշտապես իրազեկ պահել վանքի ֆինանսական գործերի, ստացված գումարների, ծախսերի և կատարվող շինարարության մասին:

Դ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋՈՒԹՅԱՆ, ԱԽԹԱՐՄԱՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՃՈՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ

էջմիածնի վանքը խոշոր կալվածատեր էր, ուներ բազմաթիվ տներ, այգիներ, արտեր, ջրանցքներ, ջրաղացներ և այլն, որոնցից տարեկան զգալի եկամուտներ էր ստանում: Վանքի ելքի ու մուտքի մատյանները հսկայական նյութ են տալիս վանական տնտեսության վիճակն ըստ ամենայնի ուսումնասիրելու համար: Ղուկաս Կարնեցու նամակներում խոսվում է նաև այդ հարցերի մասին և վերոհիշյալ նյութերի հետ դրանց բաղդատական ուսումնասիրությունն ավելի ամբողջական կդարձնի մեր պատկերացումը էջմիածնի վանքի սոցիալ-տնտեսական կյանքի մասին:

Արդեն տեսանք, որ նամակներում, տարբեր առիթներով, շարունակ շոշափվում է Հայաստանի բնակավայրերից, ինչպես և հեռավոր վայրերից եկեղեցական հարկերը և պարտադիր դարձած նվերները ժողովելու խնդիրը: Ղուկասն իր նամակներում հոգևորականներին հանձնարարում էր այդ ամենը ժամանակին հավաքել և ուղարկել էջմիածին: 1782 թ. հունիսին Իմերեթիայում ավագ քահանա և գործակալ նշանակված Սահակ քահանային նա կարգադրում է. «Եւ ես՝ սրբոյ Աթոռոյս արդեանցն ես վերահասու լինիլ, այսինքն՝ գանձանակի, հոգեբաժնի, աթոռահասի, պտղւոյ, կտակի, խոստմանց և այլ ամենայն առաջնորդական և վանքական հասից և իրաւանց: Զորս հաւատարմաբար առնուլ և հասուցանել ի սուրբ Աթոռս» (վավ. № 640):

Ամեն տարի վանքի ներկայացուցիչները մեկնում էին Կարս, Կարին, Ուչքիլիսա, Ալաշկերտ, Բայազետ, Ղազախ և այլ վայրեր վանքի համար ցորեն, գարի, յուղ, պանիր, մատաղացու անասուն, մոմ և այլն հավաքելու: «Իմտատիա» (նպաստ, օգնություն) ժողովելու գործը չափազանց կարևոր է եղել հատկապես Ղուկասի գահակալության սկզբնական շրջանում: Կով-

ների հետևանքով սպառվել էին ուտեստի պաշարները։ Դեռևս Սիմեոն Երևանցու կենդանության օրոք «խմատախա» հավաքողներ էին ուղարկվել Կարսի և Բայազետի կողմերը, որոնք ցորեն, գարի և այլ մթերքներ էին հասցրել վանք՝ «Որք եթէ ոչ էին օգնեալ, ոչ կարէաք մեք աստ պշինութիւն պահել և մնալ ի մերում կայի» (վավ. № 263)։ Մեկ այլ առիթով հիշատակարան կազմող դպիրը նշել է, որ չնայած այս ժամանակ Կարսից ու Բայազետից «խմտատխայ ևս ժողովել բերաք, այլ այն ևս չբաւականացաւ, զի բացի մշտական երթևեկողաց բազմաց, ասէ, մշտական հացակերքն սրբոյ Աթոռոյս լինին իբրև հինգ հարիւրք, սակաւ ինչ պակաս, որոյ զոյ, ասէ, ըստ բաւականին ուտելոյ հաց մինչև ի նորն» (վավ. № 303)։

Իսկ էլ ի՞նչ էին ժողովում։ Այդ մասին տեղեկություններ կան 1781 թ. ապրիլին Կարսի հայերին ուղղված շնորհակալական կոնդակում։ Կարսի կողմերում հավաքված «խմատական» արդյունքը բաղկացած էր հետևյալից՝ 275 սոմար գարի, 150 սոմար ցորեն, 2 ձի, 1 ջորի, 1 ձիու խարախ (քուռակ), 103 տավար, 98 ոչխար, նաև դրամ (վավ. № 392)։ Պատահում էր, որ մատաղացուի փոխարեն դրամ՝ մատաղագին էին հավաքում։

Ամեն տարի մարդիկ էին ուղարկվում նաև մոմ հավաքելու։ Այս կապակցությամբ հետաքրքրական է 1783 թ. մարտի 3-ին Թիֆլիսի ավագ քահանաներին ուղղված նամակը, որով նրանց հանձնարարվում էր. քանի որ «յայժմ ամի վասն մոմաժողովութեան վարդապետ ոչ յղեցաւ», ապա նրանք պետք է իրենք հավաքեն մոմը և հանձնեն էջմիածնի գործակալներին՝ տեղ հասցնելու համար։ Դա եղել է մոմի հումք, որովհետև սպիտակեցման գործը կատարվել է էջմիածնում (վավ. № 728)։

«Խմատախա» հավաքողներից զատ կային նաև այլ ժողովարարներ, որոնք վանքի համար հավաքում էին ամեն անհրաժեշտ բան։ 1781 թ. ապրիլին Ղուկաս կաթողիկոսը Թիֆլիսեցի նորընծա Դավիթ վարդապետին «ժողովարար կարգեալ իւղի, և պանրի, և մացոնի, և երկաթեայ, և փայտեայ գործեաց» ուղարկում է Ղազախ, Բամբակաձոր, Շուլավեր և Լոռի (վավ. № 394)։

«Խմատախա» հավաքող հոգևորականներին ժողովարարական կոնդակներից բացի տրվում էին տեղի հոգևոր և աշխարհիկ պետերին ուղղված նամակներ, որոնցով հանձնարարվում էր օգնություն ցույց տալ նրանց։ Երևում է, որ հավատացյալները դժվարացել են վճարել տուրքերը և կաթողիկոսը հաճախ պահանջում էր, որ նրանք «զպտղին և զայլ հոգեկան տուրս առատութեամբ տացեն»։ Բայց լինում էին և հրաժարման դեպքեր։ Այս առումով հետաքրքրական է 1782 թ. մայիսին կաթողիկոսի ժողովարարական նամակը, որով Մարտիրոս վարդապետը լիազորվում էր Ղազախում, Բամբակաձորում, Բորչալուում, Լոռիում, Բոլնիսում և Շուլավերում բնակվող համայն «Շամշադինու» ժողովրդից հավաքելու «զիւղս, զպանիրս, զմատաղացուս, զերկաթս և զերկաթեղէն և զայլ փայտեայ գործիս, որք մշտապիտոյք են սրբոյ Տանս»։ Նա հիշեցնում է «զպակասութիւն և զսղութիւն երկրիս ի կողմանէ խաշանց արջառոց և այլ արօտականաց» (վավ. № 590)։ Քալանթար Մխիթարին գրած նամակից տեղեկանում ենք, որ 1781 թ. ժողովարարական նպատակներով այդ կողմերը գնացած Դավիթ վարդապետը հաջողություն չի ունեցել՝ «ընկալեալ էին զնա սիրով և զտուրս իւրեանց առատապէս խոստացեալ, բայց չէին իսկ տուեալ» (վավ. № 592)։ 1782 թ. ամռանը Կարինի առաջնորդ Ղազար վարդապետին գրած պատասխան նամակից պարզվում է, որ քահանաներն ու ժողովուրդը հրաժարվում են տալ պտղին՝ «գրեալ էր տրտունջ ժողովրդենէն և զքահանայիցն, թէ զպտղի ոչ տան և ասեն, թէ չէ օրէնք և չէ

եղեալ մինչև ցարդ, և այլ այսպիսի բանս ասեն մեզ, որով ոչ սակաւ տաղտականամք» (վավ. № 675)։

Մեկ այլ նամակի ջնջված մասից (27 հոկտ. 1784 թ.) երևում է, որ Մուշի բնակիչները չէին ուզում մատաղացու տալ (վավ. № 1072)։ Իսկ Թովմա Առաքելո վանքի վիճակի Դաշտ գյուղի բնակիչները, ընդհանրապես, հրաժարվում էին եկեղեցական հարկերը վճարելուց (վավ. № 1010)։

1782 թ. ամռանը պարոն Հայրապետին (ք. Կարին) գրած նամակի մեջ խոսվում է այն ժամանակ ևս տարածված ցավալի իրողության՝ պարտքի դիմաց պարտապանի երեխաները խլելու մասին։ Պարտատերերը թուրքեր էին և ցանկանում էին խլել այրիացած մի կնոջ զավակները (վավ. № 621)։

Ինչպես Սիմեոն Երևանցին, այնպես էլ Ղուկաս Կարնեցին իր գահակալության ողջ ընթացքում անհաշտ պայքար մղեց ախթարմաների դեմ։ Նամակներում շոշափվում է նաև այս հարցը և նրանց օգնությամբ կարելի է պարզել, թե այդ ժամանակ ո՞ր շրջաններում էին կաթոլիկ քարոզիչներն աշխուժացրել իրենց գործունեությունը։ Տեղեկություններ կան Ախալցխայի, Կ. Պոլսի, Գյումուշխանեի, Ուչքիլիսայի և Արդվինի ախթարմաների մասին։ Նրանց դեմ պայքարելիս Ղուկասը դիմում էր նաև տեղի թուրք փաշաների և վրաց թագավորի օգնությանը։

Ղուկասը շատ վճռական էր այդ պայքարում։ 1781 թ. եպիսկոպոս ձեռնադրվելու համար էջմիածին է գալիս Ուչքիլիսայի վանքի առաջնորդ Մկրտիչ վարդապետը և «մեծաւ աղէտիւ և մորմոքանօք», զեկուցում կաթողիկոսին իր թեմի մի շարք գյուղերում «զբազմանալն օր ըստ օրէ չար և մոլորաշաւիղ ախթարմայից»։ Նա խնդրում է նամակ գրել Բայազետի Իսախ փաշային և խնդրել «բռնանալ ի վերայ նոցա, առնել տուգանս և սաստել ահիւ և գանիւ՝ զոմանս աքսորելով, զոմանս ի բանդ արկանելով, և զայլ պէսպէս նեղութիւնս տալով՝ մինչև դարձցին ի հայրենի և ճշմարիտ հաւատն իւրեանց»։ Եվ քանի որ սուլթանն արդեն հրաման էր արձակել հայ ախթարմաներին հալածելու և դարձի չեկողների գույքը հօգուտ արքունի բռնագրավելու մասին, ուստի և Ղուկասն այդ կապակցությամբ համապատասխան դիմում է կատարում Իսախ փաշային։ Միևնույն ժամանակ նա Մկրտիչ վարդապետին հրաման է տալիս դարձի բերել նրանց, իսկ հակառակ պարագային դիմել իրեն՝ փաշայի միջոցով բռնություն գործադրելու նրանց նկատմամբ։ Մկրտիչ վարդապետին «մեծաւ աշխատեցմամբ», «զբաղում դրամ» ծախսելով հաջողվում է ախթարմաներին «դարձի բերել» և նրանցից բռնավոր «զհաստատուն մուչալկեայ» վերցնել այն մասին, որ նրանք այլևս չեն վերադառնա «ի չար ախթարմայական աղանդն իւրեանց առաջին» (վավ. № 653)։

Շատ բնորոշ է այն ժամանակների համար ախթարմաներին միանգամայն մեկուսացնելու քաղաքականությունը, որի ջատագովը նախ և առաջ կաթողիկոսն էր։ Հայ եկեղեցու միասնությունը քայքայող, հասարակության ընդհանրությունը խախտող, հետևապես և նրա ուժերը ջլատող ու թուլացնող այդ շարժման դեմ Ղուկասը կոչ էր անում պայքար մղել վճռական ձևով և տևականորեն։ Նույնիսկ այս հարցի կապակցությամբ մշակում է հատուկ կանոններ, որոնք զետեղված են Կյումիշխանայի հայերին 1784 թ. օգոստոսի 26-ին ուղղած կոնդակի մեջ։ Այնտեղ ասվում է, որ պետք է հեռու մնալ նրանցից, աղջիկ չտալ ի կնութիւն և ոչ էլ աղջիկ բերել նրանցից, չհաղորդակցվել նրանց ոչ կնքահայրությամբ և ոչ էլ այլ կերպ. «Եւ որ ոք հաղորդի ընդ նոսա և զբարեկամութիւնս առնէ և ընկերակցի, նա ևս նման նոցա պականի, զի որ շօշափէ զձիւթ, պղծեսցի» (վավ. № 1029)։

Նյութեր կան նաև ախթարմությունից հրաժարվողների վերաբերյալ։ Այդ տեսակետից ուշագրավ է 1782 թ. հունիսին Ղուկասի նամակը գորիեցի պարոն Ստեփաննոս Մանուչարյանին, որը «ի յախթարմայութենէ դարձեալ էր ի դաւանութիւնս մեր»։ Հետաքրքրական է, որ այս մարդը մնացել էր վրաց թագավորի մոտ և ձգտում էր «զթուլամորթսն, որք մէնչ հեստեալ էին, վերստին դարձուցանել ի յուղղութիւն» (վավ. № 628)։

Ղուկաս Կարնեցին որպես հայ եկեղեցու պետ և հոգևոր հովիվ պայքար էր մղում հասարակության բարոյական դեմքը խաթարող երևույթների դեմ։ Նամակներից երևում է, որ նա խստորեն արգելում էր չհաս ամուսնությունները, պատժում էր այդպիսի պսակ կատարող հոգևորականներին։ Նա դատապարտում էր հարբեցողությունը։ Կաթողիկոսի խստությունները երբեմն հասնում էին չափազանցությունների։ Օրինակ, երբ լուր է ստացվում այն մասին, որ Կեսարիայում ու շրջակա հայկական գյուղերում կանայք շրջում են «հոլանի և բացերես», Ղուկասը դա համարելով «անկարգութիւն և անպարկեշտութիւն», 1782 թ. հունիսին կարգադրություն է ուղարկում Կեսարիայի առաջնորդ Մատթեոս վարդապետին՝ խրատներով ու քարոզներով վերջ տալ դրան (վավ. № 620)։

Ինչպես գիտենք, Ղուկասը շատ զգուշավոր էր և ձգտում էր ապահովել վանքը բոլոր հնարավոր անախորժություններից։ 1781 թ. մայիսին կարնեցի պարոն Հայրապետին ուղղած նամակով նա արգելում է Կ. Պոլսից նվիրակի գիտությամբ երկու «վտանգավոր անձանց» էջմիածին ուղարկելը. «ընդ այդպիսի բանս մեք ես ոչ հաճիմք, զի յիրաւի վնասաբեր լինի, թե իմացին այլասեռքն» (վավ. № 408)։

Դժվար է ասել, թե ովքե՞ր են այդ «վտանգավոր անձինք»։ Պետք է ենթադրել, որ դրանք եղել են հակապետական կամ հակաթուրքական խմբավորման մեջ։ Չենք կարծում, որ դրանք սովորական հանցագործներ լինեին, այլապես նվիրակը նրանց չէր ուղարկի էջմիածին։

Վերը նշված նամակը գրելուց շատ չանցած՝ 1781 թ. հունիսին կրկին հիշատակվում են այդ «վտանգավոր անձինք», բայց այս անգամ հականեհանվանն՝ Գրիգոր և Հակոբ։ Ղուկասը զգուշացնում է նվիրակ Մինաս վարդապետին այդպիսի գործերի չխառնվել։

Չնայած դիվանական վավերագրերում շատ նյութեր կան էջմիածնի ճորտերի վերաբերյալ, բայց այդ հարցը մինչև այժմ չի դարձել հատուկ քննարկման առարկա։ Ղուկասի նամակներում էջմիածնի ճորտերի մասին հաճախ է խոսվել, հետևապես և հրապարակված նյութերն ինչ-որ չափով կդյուրացնեն այդ ուշագրավ խնդրի ուսումնասիրման գործը։

XVIII դ. վերջերին էջմիածինը մեծ թվով ճորտեր ուներ Վրաստանում։ Դա պայմանավորված է վրացական երկրի այն ժամանակվա սոցիալ-տնտեսական պայմաններով։ Աթոռապատկան ճորտերը, ինչպես շատ ճիշտ կերպով նկատել է Բ. Հարությունյանը, հողին կցված ճորտեր չէին այդ բառի մեր ժամանակներում ընդունված իմաստով, այլ հատուկ ծառաներ էին, որոնք որոշակի քանակությամբ հարկ էին տալիս էջմիածնին։ Վանքն իրավունք ուներ վաճառել նրանց, նվիրել կամ էլ ազատ արձակել[211]։ էջմիածնի ճորտերն ազատվում էին հարկերից, գտնվում էին կաթողիկոսի հովանավորության տակ, որը հարկ եղած դեպքում նրանց իրավունքները պաշտպանելու համար դիմումներ էր կատարում վրաց պետության ղեկավարներին։

[211] Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., стр. 93—94.

Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ում վանքապատկան ճորտերն անվանվում են սուրբ Աթոռի հարկատու ծառաներ՝ «Ճորտք այս ինքն հարկատու ծառայք սրբոյ Աթոռոյս»[212]։ Ղուկասի նամակներում ևս նրանք նույն ձևով են հիշվում՝ «յատուկ ծառայ»-ներ։ Բ. Հարությունյանը ոչ առանց հիմքի ենթադրում է, որ այդ ճորտերը նախկին գերիներ էին, որոնց փրկագնում էին էջմիածնի վանքը կամ մասնավոր անձինք։ Վերջիններս նրանց նվիրաբերում էին վանքին[213]։ Այս ենթադրությունը հաստատող փաստեր կան նաև Ղուկասի գրություններում։ Այսպես, Ղուկասի 10 մարտի 1783 թվակիր մի կոնդակում խոսվում է հենց այդ եղանակով ձեռք բերված ճորտերի մասին։ Բերում ենք այդ նամակի վերնագիրը. «Թուղթ շնորհակալութեան ի Թիֆլիզ առ բոլոր մերային ժողովուրդսն, որք զԲարսեղ անուն ումն հանդերձ որդւովքն ազատեալ էին ի ձեռաց լեզկեացն և ընծայեալ էին միաբանութեամբ՝ ճորտ սրբոյ Աթոռոյս» (վավ. № 731)։

Ճորտերի մեջ կային հմուտ արհեստավորներ և հաջողակ վաճառականներ, որոնք էջմիածնին մեծարժեք նվերներ էին տալիս։ Այդ է պատճառը, որ նրանցից ոմանց Ղուկաս կաթողիկոսն իր նամակներում մեծարում է «պարոն» տիտղոսով։ Պետք է կարծել, որ էջմիածնի ճորտ լինելը ձեռնտու էր նրանց համար, որովհետև, ըստ վրաց թագավորի հրամանագրի, նրանք ազատված էին քաղաքային իշխանություններին հարկեր տալու պարտականությունից, վճարում էին միայն էջմիածնին «Եւ զի չէր անդ [ի Թիֆլիզ] սովորութիւն,—կարդում ենք Սիմեոն Երևանցու նամակներում,—քաղաքացւոցն կամ այլոց՝ առնուլ հարկ կամ զմաքս ի մեր ճորտիցն, այլ սուրբ Աթոռըս առնոյր»[214]։ Իսկ Ղուկասը գրել է. «Այլոց ճորտից կանոնն մեք ոչ գիտեմք, մեր ճորտից կանոնն այն է եղեալ, որ բնաւ ոչ ինչ տացեն, որպէս և դուք ամենեքեան գիտէք և թագաւորական թուղթք ևս գոն» (վավ. № 262)։ Եվ կաթողիկոսը միշտ էլ պաշտպան էր կանգնում նրանց, երբ ոտնահարվում էին նրանց իրավունքները։ 1780 թ. հոկտեմբերին մաքսապետ Ստեփանին ուղղած նամակով Ղուկասը պատվիրում է ս. Աթոռի ճորտերին չնեղացնել, մաքս չվերցնել, որովհետև մաքսը նրանք տալիս էին ոչ թե քաղաքային իշխանություններին, այլ էջմիածնին՝ «զի ճորտ են սմա» (վավ. № 179)։

Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ վանքի ճորտերի թիվը համալրվում էր նույնիսկ ի թիվս կամավորների։ Այդ մասին տեղեկություններ կարելի է քաղել Ղուկաս Կարնեցու 1781 թ. մայիսին գրած մի կոնդակից՝ «Կոնդակ ճորտութեան ես ի վերայ կարնեցի տիրացու պարոն Յովհաննիսին և Եղիազարին գրեաց, որք զուխտագրական ձեռագիր էին գրեալ յառ սրբազան Վեհն և ինքնայօժար կամօք ճորտ լինիլ էին կամեցեալ սրբոյ Աթոռոյս և զճորտութեան գիր էին խնդրեալ ի սրբազան Վեհէն» (վավ. № 416)։

Ճորտ էին համարվում նաև էջմիածնապատկան գյուղերից Վրաստան տեղափոխվածները։ Նույն ժամանակ (1781 թ. մայիսին) մեկ այլ «ճորտության թղթի» մեջ նշվում է, որ ղոնտաղսազ Հարությունն ու նրա հինգ որդիները «այս երկրացի գոլով, բնականապէս ճորտք էին սրբոյ Աթոռոյս» (վավ. № 417)։ Թուրքիայից վրացական ազդեցության տակ եղած վայրերը տեղափոխված հայ գյուղացիները երբեմն ճորտացվում էին տեղական ֆեոդալների կողմից։ Սրանց հետագայում գնում էին և նվիրում էջմիածնին։ Ոմանք

[212] Ս. Երևանցի, Ջամբռ, էջ 209։

[213] Б. М. Арутюнян, նշված աշխ., էջ 94։

[214] «Դիւան Հայոց պատմութեան», ԺԱ, էջ 273։

էլ մի կերպ ազատվում էին ուրիշների ճորտությունից և գերադասում լինել Էջմիածնի ճորտերը։ Այդ տեսակետից բնորոշ է 1781 թ. հուլիսին կատարված հետևյալ գրանցումը. «Գ(3) ոմանք յայլոց ճորտութենէ ազատեցեալք, հանդերձ տամբքն իւրեանց, զգաշնագիրս էին յղեալ և զճորտական թուղթս էին խնդրեալ սրբազան Վեհէն՝ առ ի լինիլ ծառայս սրբոյ Աթոռոյս յորդւոց յորդիս» (ձեռ. № 4481, էջ 113բ)։ Այդ նույն ժամանակ նման «ճորտության թուղթ» էին տվել նաև սամղերեթցի Աթոյի որդի Բերոյին ու նրա երեք որդիներին, թելեթցի Սաֆարենց Պապի որդի Իվանեին, չուինեթցի Քաթոյան Մամաչանի թոռանը և Ալեսիքի որդի Գելոյին (վավ. № 455—457)։ Ընդունելով նրանց ճորտությունը և ստանալով ճորտության գիրը, պահում էին վերջինս էջմիածնում որպես փաստաթուղթ։ Օրինակ՝ երբ կարնեցի տիրացու պարոն Հովհաննեսն ու Եղիազարը «զուխտագրական ձեռագիր էին գրեալ առ սրբազան Վեհն և ինքնայօժար կամօք ճորտ լինել էին կամեցեալ», կաթողիկոսը նրանց ձեռագիրը ստանում և պահում է «իբրև զգապալայ ի սրբոյ Աթոռոջն» (վավ. № 416)։

Հետաքրքրական է, որ ճորտերի գնման ժամանակ հաշվի էին առնում նաև նրանց կարծիքը։ Այսպես, Գոռիի բնակիչ Հարությունը տեր Սահակի միջոցով երկու ճորտ էր վաճառել էջմիածնին։ Հետո նա ցանկություն էր հայտնել օրհնության գիր ստանալ կաթողիկոսից, քանի որ նա ցուցաբերել էր «զմեծահաւատութիւն և զբարեպաշտութիւն» և, որ ամենակարևորն է, էժան գնով էր վաճառել ճորտերին։ Նա օրհնության թուղթ է ուզում նաև ճորտերի համար, քանի որ նրանք «կամաւ և յօժարութեամբ էին եղեալ ճորտ» (վավ. № 641)։ Բերված են այդ ճորտերին տրված օրհնության նամակները, որոնցից մեկում հիշատակվում են ճորտերի պարտականությունները. «Ուրեմն այսուհետև միամտութեամբ ծառայեա սրբոյ Աթոռոյս և չունի որ այսուհետև իշխայ ընդ քեզ կամ զաւի առնել և կամ զայլ ինչ պահանջել ի քէն։ Եւ քոյդ կողմանէ զոր ինչ մաքս և հարկ լինեցի, ով որ սրբոյ Աթոռոյս գործակալ իցէ յայդր, նմա հասուցես անթերի և անպակաս, քանզի յատուկ ծառայ ես այսուհետև սրբոյ Աթոռոյս» (վավ. № 643)։

Ճորտերը հիմնականում արհեստավորներ և առևտրականներ էին, բայց նրանց մեջ եղել են նաև հոգևորականներ։ Այս հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել Բ. Հարությունյանը[215]։ Ղուկասի նամակներում ևս հիշատակվում են հոգևորականի կոչում ունեցող ճորտեր։ Դրանցից էր Թիֆլիսի Ջրկբաշեն եկեղեցու քահանա տեր Սիմոնը (վավ. № 176)։ Իսկ մեկ այլ ճորտ պարոն Հովհաննեսը նույն եկեղեցու երեցփոխանն էր (վավ. № 257)։

Էջմիածնում պահվել են հաշվառման հատուկ մատյաններ, որոնց մեջ գրանցված են եղել նաև վանքապատկան ճորտերը։ 1781 թ. մայիսին Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդ Կարապետ վարդապետին Ղուկասը կարգադրել է՝ «պարտիս զորքան ճորտ, զուքեան և տուն ունիմք յայդր, զայնս ի դաւթար քարշել և զդաւթարն առ մեզ յղել» (վավ. № 418)։ Նույն նամակով ղոնտախսազ Հարությունի ու նրա հինգ որդիների ճորտացման կապակցությամբ Ղուկասը հանձնարարում է «զանուանս իւր և որդւոցն գրեսջիք ի դաւթարոջ ճորտիցն սրբոյ Աթոռոյս»։

Էջմիածնապատկան ճորտերի վերաբերյալ շատ տեղեկություններ կան նաև Ղուկասի հետագա տարիներին գրած նամակներում։ Դրանց հրապարակումը նպաստավոր կարող է լինել ուշագրավ այդ խնդրի բազմակողմանի ուսումնասիրման գործին։

[215] Б. М. Арутюнян, նշված աշխ., էջ 93։

ե) ՆՅՈՒԹԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղուկաս Կարնեցու գրագրությունների մեջ ուշագրավ նյութեր կան 1780—1785 թթ. ընթացքում էջմիածնում իրականացված շինարարական աշխատանքների և, ընդհանրապես, տնտեսական կյանքի այլևայլ բնագավառների վերաբերյալ։ Հարկ է նշել, որ այն ժամանակ անհնարին կլիներ իրականացնել որևէ տնտեսական բնույթի ձեռնարկ, ամենից առաջ շինարարություն կամ վերանորոգում, առանց դրսի օգնության, հետևապես շատ կարևոր է եղել շրջակա վայրերի հետ անխափան կապի հարցը։ Չնայած պայմանները միանգամայն աննպաստ էին, բայց և այնպես դրսի հետ կապը չէր խզվում և էջմիածինը պարբերաբար զգալի քանակությամբ ապրանքներ էր ներմուծում։

Իր պետքերի համար, ինչպես վերը տեսանք, վանքը հացահատիկ էր ստանում գլխավորապես Կարսի կողմերից։ Ղուկասը նամակներով կարգադրում էր այդ գործը, հոգ էր տանում «իմտատիայի» ձևով ցորեն և գարի հավաքելու, ինչպես և կանխիկ փողով գնելու և ապահով կերպով էջմիածին փոխադրելու մասին։

Էջմիածնի կարիքների համար Կարսից ու Կարինից բերում էին նաև երկաթեղեն։ Շինարարության կարիքների համար անհրաժեշտ գերաններ ստանում էին Կարսի շրջակայքից։ Պարզվում է, որ այն ժամանակ գերանները տեղափոխում էին Արաքս գետով։ Կարսի Նախիջևան գյուղի մոտ գերանները գետն էին լցնում և հասցնում մինչև էջմիածնի կողմերը՝ Ղարխին կամ Շահրիար։ Մի նամակում ասվում է, որ դեռևս Սիմեոնի օրոք՝ 1779 թ. մարտի 2-ին Նախիջևան գյուղից Թորոսի որդի Մակարը և Դանիելի որդի Գրիգորը եկել էին էջմիածին և կաթողիկոսից խնդրել 600 «զօլաթայ»՝ 500 չամի գերան բերելու համար։ Ստանալով 400 «զօլաթան», նրանք «պայմանեցին զփայտսն գէտով բերել ի հանդիպն Շահրիարու և ապա առնուլ զԲՋ(200) զօլաթայն ես»։ Երկրում սկսված խառնակությունների պատճառով գերանները չէին բերվել, ուստի Ղուկասը Սողոմոն վարդապետին ուղարկում է այնտեղ գործը կարգավորելու համար (վավ. № 394)։

1782 թ. հունիսին գրված մի նամակից երևում է, որ այդ ձևով գերաններ տեղափոխելու հանձնարարություն տալիս է նաև Ղուկասը։ «Քանզի եկեալ ի մերձակայ աւուրս ի Կարսայ փայտավաճառ տաճիկ ոմն առ սրբազանն և պայմանեաց առաջի սրբազանին՝ գնալ հատանել ի վարձու զՇ(500) փայտ ի պէտս սրբոյ Աթոռոյս և զհատեալ փայտսն ածել ի ջուրն և բերել մինչև ցՂարխին գիւղն և անդ յանձնել մեր մարդոյն, որ անտի բերցեն ի սուրբ Աթոռս» (վավ. № 639)։

Էջմիածնի վանքը գործվածքեղեն ստանում էր տարբեր վայրերից՝ թե՛ եվրոպական, և թե՛ ասիական երկրներից, անգամ Հնդկաստանից։ Նվիրակները պարբերաբար զանազան տեսակի մեծ քանակությամբ կտորեղեն էին ուղարկում էջմիածին և կաթողիկոսը հնարավորություն ուներ վանքի պետքերը հոգալուց զատ, այս կամ այն առիթով նվերի կարգով կտորեղեն ուղարկել շրջակա վայրերի տիրակալներին, անգամ վրաց թագավորական տան անդամներին։

Մոմ ներմուծում էին գլխավորապես Վրաստանից՝ Թիֆլիսից, Թելավից, Ախալցխայից։ Տեղում էլ էին մոմ արտադրում և վերամշակում ստացվածը։ Ախալցխայից բերում էին նաև մեղր, ձիթապտուղ և թղթի գործարանի համար հին շոր։ Բայազետից, հացահատիկից բացի, բերում էին նաև տանձ։

Տեղեկություններ կան այն մասին, որ հեռավոր Երուսաղեմից էջմիածին են ուղարկել օճառ (վավ. № 531)։

Հատկապես աշխույժ էին կապերը Կ. Պոլսի հետ, որտեղից ստանում էին Եվրոպայում արտադրված ժամացույցներ, ներկեր, խունկ, բռնոթի, ծխախոտ։ Թիֆլիսից բերում էին գինի և թեյ, Ռուսաստանից՝ գործվածքեղեն, զարդեր, թեյ, շաքար, Կարսից՝ «զմեխս ձիոյ», շաքար, երբեմն նաև՝ նոխուտ։

Ապրանքների արտահանման մասին խոսք լինել չի կարող։ Թալանված և տնտեսապես քայքայված երկիրը, որն անընդհատ ենթարկվում էր օտար ավարառուների և ներքին պառակտող ուժերի հարվածներին, արտահանելու բան չուներ։ Երբեմն-երբեմն, խիստ անհրաժեշտության դեպքում, կաթողիկոսը վանքի պահեստներից տարբեր անձանց նվերներ էր ուղարկում, որոնց մասին ելքի մատյաններից բացի հիշատակություններ կան նաև նամակների մեջ։ Օրինակ՝ Կարսի ու Կարինի փաշաներին բրինձ է ուղարկվել։ Ամռան և աշնան ամիսներին էջմիածնից նույն վայրերի մահմեդական իշխողներին և ազդեցիկ հայերին ուղարկում էին խաղող, սեխ, պորինջան, չիր, վարդաջուր, գինի, օղի, քացախ և մոմ։ Վրաստան էին ուղարկում արտասահմանից ստացված գործվածքեղեն և ժամացույց, պահանջի դեպքում՝ գինի, բանջարանոցային բույսերի սերմեր։ Կաթողիկոսը պարբերաբար շրջակա իշխանությունների տիրակալներին նվիրում էր ժամացույցներ, որոնք նրա գործակալները գնում էին գլխավորապես Կ. Պոլսի և Զմյուռնիայի շուկաներում։ Էջմիածնից ուղարկված մթերքների շարքում հիշատակվում է նաև մուրաբա, որից մի անգամ բաժին է հանվել Կարնո մաքսապետին (վավ. № 495)։

Արդեն գիտենք, որ շինարարական աշխատանքներն իրագործվում էին դրսից ստացված օգնության շնորհիվ։ Գտնվում էին առատաձեռն նվիրատուներ, որոնք ստանձնում էին շինարարական կամ վերանորոգչական աշխատանքների ծախսերը։ Դրան նախորդում էր նամակների աշխույժ փոխանակություն։ Իսկ հետո, երբ տրվում էր դրամը, հասցվում այն էջմիածին և սկսվում էին աշխատանքները, Ղուկասը պարբերաբար տեղեկություններ էր ուղարկում նվիրատուներին դրանց ընթացքի, իհարկե, նաև ավարտման վերաբերյալ։ Հրատարակված նյութերը գաղափար են տալիս այդ բնույթի աշխատանքների և նրանց համար նյութական բազա ստեղծելու մասին, որը շատ ժամանակ և եռանդ էր խլում կաթողիկոսից։

Հետաքրքրական է, թե ինչպես էր կատարվում դրամական փոխադրումների գործը։ Ամեն տարի էջմիածնի վանքը զգալի գումարներ էր ստանում տարբեր երկրներ սփռված իր նվիրակներից։ Այդ փոխադրումները կապված էին բազմաթիվ դժվարությունների հետ, ուստի և մշակվել էր այն ժամանակ շատ տարածում գտած դրամի փոխանցման հուսալի մի ձև։ Տարբեր նպատակներով (մեծ մասամբ առևտրական) հեռավոր վայրեր մեկնող անձինք, ճանապարհի վտանգներից խուսափելու համար, գերադասում էին իրենց դրամը հանձնել կաթողիկոսին և նրանից համապատասխան թեմեսուկ (ստացական) վերցնելով, տեղում նվիրակներից ստանալ իրենց դրամը։ Օրինակ՝ հայտնի տպագրիչ Պողոս Արապյանը, որը Հերակլի հրավերով եկել էր Թիֆլիս, վերադարձին իր վաստակած 1500 ղուռուշը հանձնում է Ղուկասին՝ Կ. Պոլսում ստանալու պայմանով (վավ. № 824)։ Կ. Պոլսում ապրող ջուղայեցի Խաչիկ Պողոսյանին 1784 թ. նոյեմբերի 18-ին Ղուկասը գրել է հետևյալը. «Եւ զոր գրես, թէ եթէ ի Հնդիկս դրամ ունիցիմք, գրիցեմք քեզ, որ յայդր (այսինքն Կ. Պոլսում—Վ. Գ.) տաս և անդ առնուս» (վավ. № 1083)։

Տեղի էր ունենում նաև հակառակ գործողությունը. պարտք էին վերցնում էջմիածնում՝ այլ վայրերում վճարելու պայմանով, որտեղ, ամենայն հավանականությամբ, այդ դրամն օգտագործվում էր գնումներ կատարելու նպատակով։ Պետք է կարծել, որ այդ գործարքների մեջ, անշուշտ, առկա է եղել դրամը վաշխով (տոկոսով) տալու հանգամանքը, բայց հրատարակված նամակների մեջ այդ մասին հիշատակությունների չենք հանդիպել։

Նամակներից տեղեկություններ կարելի է քաղել նաև տարբեր դրամների (թուման, Թիֆլիսի թուման, ղուռուշ, դիան և այլն) կուրսի, նրանց գնողունակության վերաբերյալ։ Երևում է, որ ծախսելու համար ավելի հարմար է եղել արծաթե դրամը, այդ պատճառով էլ Ղուկաս Կարնեցին աշխատել է ոսկին մանրել արծաթե դրամների (վավ. № 502)։

Ուսումնասիրողներին, անշուշտ, կհետաքրքրեն այլ վայրերից մեծաքանակ ապրանքներ տեղ հասցնելու վերաբերյալ նամակներում եղած տեղեկությունները։ Այդ տեսակետից հատկապես ուշագրավ են նյութերն այն մասին, թե ինչպես էջմիածին հասցվեցին մայր եկեղեցու զանգերը, որոնք գնված էին հեռավոր Ամստերդամում և նավով ուղարկվել էին Զմյուռնիա, այնտեղից, դարձյալ ծովով՝ Տրապիզոն, իսկ հետո սայլերով, Կարինի վրայով՝ էջմիածին (վավ. № 405, 411, 426, 427)։

Նամակներում տարբեր առիթներով խոսվում է շինարարությանը խոչընդոտող հանգամանքների, նախ որակյալ վարպետների և, ընդհանրապես, աշխատող ձեռքի պակասի մասին։ Ահա թե այդ մասին ինչ է գրել Ղուկասը 1784 թ. ամռանը Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին. «Բայց թէ զորքա՞ն նեղութիւնս կրեմք, կարես իմանալ, զի թէ ի հասարակ մարդկանց սովեալ է երկիրս, ապա որքա՞ն ի պիտանեաց և ի վարպետաց, որք բնաւ չգոն։ Մանաւանդ խառնակութիւնն և աղմուկն ևս անպակաս» (վավ. № 1033)։

Հայտնի է, որ Սիմեոն Երևանցու ժամանակ շնորհալի նկարիչ Հովնաթան Հովնաթանյանը ձեռնամուխ էր եղել էջմիածնի մայր տաճարի նկարազարդման աշխատանքներին։ Սիմեոնի մահը և քաղաքական խառը վիճակը ընդհատում են այդ գործը։ Երբ հարմար պայմաններ են ստեղծվում, Ղուկասը Թիֆլիսից հրավիրում է Հովնաթանյանին ու նրա աշակերտներին՝ ավարտելու նկարազարդումը։ Իր հետ թղթակցողներից ոմանց Ղուկասը մշտապես գրել է այդ աշխատանքների մասին և նրա նամակների շնորհիվ կարելի է պատկերացում կազմել մայր տաճարի նկարազարդման ընթացքի վերաբերյալ։ Ղուկասը մեծ ջանք է թափել ներկեր ձեռք բերելու համար։ Սկզբում յուղաներկ են բերում Զմյուռնիայից (վավ. № 950), որը չի բավականացնում։ Հովնաթանյանին բարձրորակ ներկերով ապահովելու համար Ղուկասը ոչինչ չէր խնայում, նա ծախսում է այն ժամանակվա համար պատկառելի մի գումար՝ 5000 ղուռուշ։ 1784 թ. ամռանը Իսահակ վարդապետին Ղուկասը գրել է, որ մինչև ձմեռը «բոլոր» իսպառ վերջանայ, «բայց ծաղիկն կարծես թէ թերի մնասցէ», որովհետև «բաց ի զկամարսն և զմիւս տեղիսն ծաղկելոյն, յորս յառաջ ևս գոյր ծաղիկ, զայլ պատշաճաւոր տեղիս ևս ծաղկեցուցանեմք և կամիմք բազմապատիկ առնել, քան զառաջին» (վավ. № 1033)։

Հետաքրքրական է Հովնաթանի աշխատանքներին տված նրա գնահատականը. «վարդապետ Յովնաթանն ևս օրհնեալ լիցի, որ մոռացուցանէ զնախկին ծաղիկսն և յոյժ լաւ ծաղկէ կամաւ և ջանիւ՝ ասելով, թէ ծերացեալ եմ և այսպիսի հոգեշահ տեղւոյ պատահեալ ինձ ևս յիշատակ է պետք» (Ն. տ.)։

Ղուկասի նամակներում առկա են որոշ տեղեկություններ նաև էջմիածնից դուրս կատարվող շինարարական աշխատանքների վերաբերյալ։ Մի շարք

նամակներում մանրամասն խոսվում է դրամական հաշիվների, ստացված և
ստանալիք գումարների, կատարված ծախսերի մասին։ Նրանցից տեղեկու-
թյուններ կարելի է ստանալ որոշ ապրանքների գների մասին։ Այդ նյութերի
ուշադիր զննումը և բաղդատական ուսումնասիրությունն այլ աղբյուրների
հետ, թույլ կտա ավելի պարզորոշ պատկերացում ստանալու այն ժամանակ-
վա սոցիալ-տնտեսական կյանքի մութ մնացած մի շարք կողմերի վերա-
բերյալ։

* * *

«Դիվան հայոց պատմության» նոր շարքի անդրանիկ հատորում հրա-
պարակված են Ղուկաս Կարնեցու 1780—1785 թթ. գրած 1178 կոնդակներ,
նամակներ և նամակների համառոտագրություններ, որոնք քաղված են Մաշ-
տոցի անվան Մատենադարանի № № 4481, 2803, 4501 ձեռագրերից և ար-
խիվային բաժնի կաթողիկոսական դիվանում գտնվող մի շարք գործերից։
Նամակներից մեկը, ուղղված իշխան Գ. Ա. Պոտյոմկինին, բերված է ՍՍՀՄ
Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվից։ Վավերագրերի մե-
ծագույն մասը, ինչպես նշված է տողատակի ծանոթագրության մեջ (№ № 1—
609, 614—657, 660—675), վերցված է № 4481 ձեռագրից, մնացած փաս-
տաթղթերի վերջում նշված է աղբյուրը։

Բոլոր նյութերը հրատարակվում են առաջին անգամ, բացառությամբ
1785 թ. փետրվարի 15-ին Ավստրիո-Հունգարիայի կայսրին ու Ռուսաստա-
նում նրա դեսպանին ուղղված նամակներից, որոնք լույս են ընծայվել դեռևս
1911 թ.[216], ինչպես և իշխան Գ. Ա. Պոտյոմկինին ուղղված նամակից (16
մարտի 1785 թ.), որը համարյա ամբողջությամբ հրատարակել է Լեոն[217]։

Նամակները պահպանված են բնագրերով ու սևագրությամբ։ Սևագիր
օրինակը կազմելու ժամանակ, ինչպես նշել ենք, գրագիրները սկզբում վեր-
նագրի ձևով տվել են ավյալ նամակի բովանդակությունը, որը ոչ այլ ինչ է,
եթե ոչ նամակի բավականին հանգամանորեն կազմված համառոտագրությու-
նը։ Որոշ դեպքերում, եթե նամակներն այնքան էլ կարևոր չեն և այդ համա-
ռոտագրությունները լիովին պատկերացում են տալիս նրանց բովանդա-
կության մասին, ինչպես Գ. Աղանյանցը, մենք ևս գերադասել ենք բաց թող-
նել բուն նամակը, տպագրելով միայն համառոտագրությունը։

Նամակներն ու կոնդակները սովորաբար սկսվում են հասցեատերերին
ուղղված բարեմաղթություններով, երբեմն այնտեղ բնութագրվում է հաս-
ցեատերը, թվարկվում են տիտղոսները, հիշվում են ազգականները և այլն։
Եթե այդ բաժինները շաբլոնով կազմված զուտ քաղաքավարական զեղում-
ներ են և որևէ արժեք չեն ներկայացնում, գերադասել ենք կրճատել։ Բաց
ենք թողել որոշ նամակներում առկա գլխավորապես ֆինանսական հաշիվնե-
րին և դրամական փոխանցումներին վերաբերող մանրամասնությունները,
ինչպես և տարբեր անձանց, բայց միաժամանակ ուղարկված նույնատիպ
օրհնության ու շնորհակալության նամակները, փոխարինելով դրանք հակիրճ
ծանոթագրություններով։ Բաց ենք թողել նաև երկրորդական անձանց ուղղված
և որևէ արժեք չներկայացնող մի շարք նամակներ։

216 Լ. Բաբայան, նշված աշխ., էջ 116—127։
217 Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, էջ 352—354։



Ղուկաս Կարնեցու նամակներից մեկի սևագրությունը
(ձեռ. № 4501)



№4501 ձեռագրի էջերից մեկը

Բնագրերով պահպանված նամակներն ու կոնդակները չունեն վերնագրեր, ուստի դրանց կցել ենք մեր կազմածները, որոնք, բնականաբար, թե՛ լեզվով և թե՛ ուղղագրությամբ տարբերվում են մյուսներից։

Նյութերը հրատարակության պատրաստելիս նշանակել կամ փոխել ենք կետադրությունը, բացել հապավումները։ Թիվ կամ թվական արտահայտող տառերի կողքին, փակագծերի մեջ, տվել ենք նաև դրանց արաբական թվանշանները։

Նամակների սևագրությունների և համառոտագրությունների գրանցման մատյանները կազմվել և օգտագործվել են զուգահեռաբար։ Մեր հրատարակածների մեջ կան այնպիսի համառոտագրություններ, որոնց լրիվ տեքստերը տպված են Գ. Աղանյանցի մոտ և, ընդհակառակը, կան նամակներ, որոնց համառոտագրություններն են միայն զետեղված նրա գրքում։ Մենք նպատակահարմար ենք գտել լույս ընծայել ցարդ անտիպ մնացած մի շարք այդպիսի նյութեր, եթե, իհարկե, դրանք զուրկ չեն որոշակի հետաքրքրությունից։ Հարկ է նշել, որ այդ տիպի համառոտագրությունները տեղեկություններ են պարունակում ոչ միայն նամակների բովանդակության, այլև նրանց շարադրման դրդապատճառների մասին և նրանցից լրացուցիչ տվյալներ կարելի է ստանալ նամակներում շոշափված հարցերի վերաբերյալ։ Դա է պատճառը, որ տեղ ենք տվել նաև այդպիսի նյութերի՝ ծանոթագրություն տալով դրանց համար հիմք հանդիսացած ու արդեն հրատարակված նամակների մասին։

Բոլոր նյութերը դասավորված ու համարակալված են ժամանակագրական կարգով։ Հրապարակված փաստաթղթերը քաղված են տարբեր բնույթի մատյաններից՝ համառոտագրությունների (№ 4481), սևագրությունների (№ 2803, 4501), բովանդակության հակիրճ ցուցակից (Կթղկ. դիվան, թղթ. 32, վավ. 5)։ Կան նաև մի քանի մաքրագիր օրինակներ։ Հասկանալի է, որ իրենց շարադրման ձևով ու բովանդակությամբ նրանք նկատելիորեն տարբերվում են միմյանցից։

Բովանդակությունն արձանագրող քարտուղարները սկզբում նշել են նամակների ուղարկման վայրը (օրինակ՝ «Ի Վան գնացեալ թուղթք» կամ «Ի Թիֆլիզ առ ոմանս գրեալ թուղթք»), հետո՝ նամակների բովանդակությունը, վերջում՝ ժամանակը։ Հրատարակելով բովանդակությունները, ամենասկզբում դրել ենք տարեթիվն ու ամիսը (երբեմն ամսաթիվը, երբ հնարավոր է եղել). դա վերաբերում է տվյալ վայրն ուղարկված մի շարք նամակների։ Ամբողջական նամակներից յուրաքանչյուրի վերջում նշված է ժամանակը։ Միօրինակություն պահպանելու համար այդ նամակների վերնագրի սկզբում ևս դրել ենք ժամանակը։

Առանձին դեպքերում, երբ նամակների համառոտագրությունը կազմված է չափազանց հակիրճ և լիակատար պատկերացում չի տալիս տվյալ վավերագրի մասին, իսկ վերջինս էլ արժանի չէ ամբողջապես հրատարակվելու, գերադասել ենք բովանդակությունը լրացնել ծանոթագրությամբ։ Ամբողջական նամակների և համառոտագրությունների էջերը նշել ենք տեքստի մոտ, մնացած դեպքերում՝ վերջում։ Համառոտագրությունները կազմելիս դպիրները երբեմն փակագծերում կամ չակերտների մեջ նշումներ են կատարել դրամական զանազան հաշիվների վերաբերյալ (օրինակ՝ Դ, Ծ կամ Ա, Ջ, Բ և այլն), որոնք որոշ դեպքերում այնքան էլ չեն կապվում շարադրանքի հետ, բայց միանգամայն հասկանալի են եղել թե՛ շարադրող և թե՛ մաքրագրող դպիրների համար։ Մենք նույնությամբ հրատարակել ենք դրանք, բայց տեքստը չծանրաբեռնելու նպատակով նրանց կողքին չենք նշել համարժեք արաբական թվանշանները։

Ծանոթագրությունների սկզբում դրել ենք նրանց հերթական համարը, իսկ վերջում՝ ծանոթագրված վավերագրի համարը, բայց այն դեպքերում, երբ ծանոթագրված է ոչ թե նամակը, այլ քարտուղարի խոսքը, նշել ենք միայն փաստաթղթերի համապատասխան էջը։

Օտար բառերի բառարանում ձգտել ենք ընդգրկել բնագրերում, ինչպես և ծանոթագրությունների մեջ հանդիպող օտար բառերի մեծագույն մասը։ Այդ բառարանը կազմելիս մեծ օգնություն են ցույց տվել մեր գործընկերներ՝ պատմական գիտությունների դոկտոր Հակոբ Փափազյանը և պատմական գիտությունների թեկնածու Օննիկ Եգանյանը, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

ՆԱՄԱԿՆԵՐ, ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1780–1785)

1780

[ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՄԻ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԵՐՈՅ ՌՄԻԹ (1780), ՈՐ Է ԻԲՐՈՒ ԱՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԵՐՋԱՆԿԱՋԱՐԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ]*

1ա *[Ի] ժամանակին մեր ի թուականութիւնս Հայոց ՌՄԻԹ (1780) և ի յուլիսի ԻԶ (26), որ էր օր Պայծառակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, հանգեաւ ի Քրիստոս քաղցր և բարի մահուամբ յոգներախտ հայրապետն մեր և գլուխն հասարակաց՝ տէր Սիմէոն սրբազան կաթուղիկոսն, զորոյ հոգին Տէր լուսաւորեսցէ՝ դասակցելով սրբոց իւրոց։ Ապա խորհրդակցեալ և սինհոդոս արարեալ միաբանից սրբոյ Աթոռոյս, հանդերձ ներկայացեալ այս երկրացի իշխանօք, ընտրեցին և հրաւիրեցին զտէր Ղուկաս արհիապանծ եպիսկոպոսն առ ի լինել կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս և ազգիս Հայոց։ Եւ թէպէտ կարգ և սովորութիւն էր միաբանից սրբոյ Աթոռոյս ի վախճանիլ կաթուղիկոսին զմահուարական թուղթս գրել ի մեծն Պոլիս և յայլ տեղիս՝ առ ժողովուրդսն և իշխանսն մեր և նոցին ընտրութեամբ և հաւանութեամբ առնել զոք կաթուղիկոս, սակայն վասն աւերութեան երկրիս ըստ մեծի մասին և խառնակութեանցն, ոչ կարացին թողուլ թափուր հոգաբարձուի զսուրբ Աթոռս յերկար ժամանակս, քանզի այս երկրական ժանտքն և գայլաբարոյքն կատաղիք, կամէին զպէսպէս վնասս հասուցանել սրբոյ Աթոռոյս ամենայն կերպիւ՝ թող թէ արտաքին թշնամիքն երկրիս։ Վասն որոյ ըստ հոգեպարգև խորհրդոյն իւրեանց և համակամութեանն ի յերկրորդում կիւրակէի Վարդավառին օծին զնա կաթուղիկոս Տանս Հայոց և սրբոյ Աթոռոյս։ Եւ ապա սկսան զմահսարս առնել և ձեռամբ ոմանց վարդապետաց յղել աստ և անդ, զորոց զմիտսն, զպատճառսն և զժամանակսն՝ հանդերձ համայն պարագայիւքն արձանացուցանելոց եմք ի յիշատակարանիս յաջողմամբն Աստուծոյ։*

Բայց զայս նախ ասասցուք, զի զայս յիշատակագրութիւնս ի ժամանակս հանգուցելոյ հայրապետին, բազմերախտ և յատկախնամ տեառն մերոյ, բազմաշխատ վարդապետն իմ՝ տէր Իսահակ գերիմաստ եպիսկոպոսն կատարէր ընդ այլոց տաժանելի գործոց և թղթագրութեանց։ Իսկ ի բազմիլ նորոգ հայրապետիս մերոյ յԱթոռ կաթուղիկոսութեան, զայս իրակութիւնս զիս հարկեաց առնել՝ առ ի լինել օգնութիւն ինչ ինքեան։ Վասն որոյ և ես՝ ամենատկարս, յուսացեալ յամենազօր զօրութիւնն Աս-

* Հիշատակարանի վերնագիրը վերականգնված է ըստ 1781 թ. սկզբին նույն դպրի՝ Անանիա սարկավագի կազմած վերնագրի։ Վավերագրերի մեծագույն մասը վերցված է № 4481 ձեռագրից (№ № 1—609, 614—657, 660—675), մնացածների վերջում նշված է աղբյուրը։

տուծոյ, սկսայ ձեռնամխիլ յայս գործ՝ ի սէր սրբազան Վեհիս մերոյ, նորոյ զմեզ յատկապէս խնամողի։ Եւ յաջողողին Աստուծոյ փառք յաւիտեանս։ Ամէն՝։

1բ Սկիզբն յիշատակագրութեան թղթոց

Արդ, մինչ սրբազան հայրապետս մեր օծաւ կաթուղիկոս, միաբանքն սրբոյ Աթոռոյս զբազմակնիք թուղթս գրեցին ի Թարվէզ, ի Խոյ և ի շրջակայս իւր, ի Նախիջևան և ի վիճակս իւր, ի Բայազիտ և ի Վան և շրջակայս իւրեանց, ի Ղարս և ի Թիֆլիզ և ի վիճակս իւրեանց։ Ընդ որս և սրբազան Վեհն ևս զանդրանիկ օրհնութեան թուղթս գրեաց առ յայն տեղիսն և առ ոմանս, զորոց զորպէսն ամենայն պարագայիւքն Աստուծով գրեմք աստ ի ներքոյ։

1780 թ. օգոստոս—*Ի Նախիջևան յղեցեալ թուղթք*

1. Նախ և յառաջ միաբանքն սրբոյ Աթոռոյս զբազմակնիք թուղթ գրեցին ի Նախիջևան և ի շրջակայս իւր՝ առ բոլոր մերազնեայ ժողովուրդսն՝ ծանուցանելով զմահ հանգուցեալ Սիմէօն կաթուղիկոսին և զկացուցումն սրբազան Վեհին մերոյ նորոգ կաթուղիկոս և զպատճառն փութապէս առնելոյն համայն պարագայիւքն և խնդիր ի նոցանէ, զի կամակցեալ ինքեանց զհամահաճութեան և զընդունելութեան թուղթս գրեսցեն։ Ընդ որս և սրբազան Վեհն զանդրանիկ օրհնութեան թուղթ գրեաց առ նոսա՝ նոյնպէս ազդելով զմահ հանգուցելոյն և զնստիլն իւր յԱթոռ հայրապետութեան։ Եւ պատուէր, զի որպէս ընդ ժամանակս հանգուցելոյն, նոյնպէս և այժմ հարազատ և օգտաւէտ լիցին առ սուրբ Աթոռս՝ ցաւակցելով ինքեան։

2. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ Տաթեւու առաջնորդ Յովակիմ վարդապետն գրեաց սրբազան Վեհն ըստ մտաց այնր թղթոյ, զոր առ հասարակութիւնն։

3. Թուղթ ևս օրհնութեան առ Երինջակու սրբոյ Կարապետի վանից առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց՝ ըստ նոյն մտաց։

4. Թուղթ ևս օրհնութեան առ սրբոյն Թովմայի Առաքելոյ վանից առաջնորդ Թովմա վարդապետն գրեաց սրբազան Վեհն՝ ըստ նոյն մտաց։

5. Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան սրբոյ Նախավկայի վանից առաջնորդ Գրիգոր վարդապետն գրեաց սրբազան Վեհն՝ ըստ այնց թղթոց։

6. Թուղթ ևս օրհնութենն առ Ագուլեաց վանից առաջնորդ Գրիգոր վարդապետն գրեաց սրբազան Վեհն նոյնպէս։

7. Թուղթ ևս օրհնութեան առ Աստապատու վանից առաջնորդ Միքայէլ վարդապետն գրեցաւ ի սրբազան Վեհէն՝ նման այնց թղթոց, և զգաղափար մի համահաճութեան թղթոյ ընդ այսց տանօղ Ահարօն վարդապետին յղեցաք, զի թէ չունիցին, յայնմանէ օրինակեսցեն։

2ա

1780 թ. օգոստոս—*Ի Խոյ և ի Թարվէզ*

8. Թուղթ ի միաբանիցն սրբոյ Աթոռոյս բազում կնքով առ Խոյու

Թարվիզու, Որմու, Մարաղու և շրջակայից նոցին ժողովուրդսն՝ ըստ գրեցելոյն յերկիրն Նախիջևանու։

9. Թուղթ անդրանիկ օրհնութեան ի սրբազան Վեհէն առ նոսա՝ ըստ մտաց այնր թղթոյ, զոր առ հասարակութիւն երկրին Նախիջևանու գրեաց։ Ընդ այսց և զմահհօարական թուղթն նոցա շինեալ աստ յղեցաք առ նոսա, զոր տեսեալ կնքեսցեն, գիտելով, թէ անդ ոչ գտանի գրօղ։

1780 թ. օգոստոս—*Ի Բայազիտ և ի վիճակս իւր*

Որպէս ի վերոյ յիշեալ երկիրսն, նոյնպէս և ի Բայազիտ և ի վիճակս նորա զթուղթ բազմակնիք յղեցին միաբանքն սրբոյ Աթոռոյս՝ նման վերոյ յիշելոցն գրեալ։

10. Սրբազան Վեհն ևս զանդրանիկ օրհնութեան թուղթ գրեաց առ հասարակութիւն երկրին Բայազիտու՝ ըստ մտաց վերոյ գրելոցն։

11. Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան առ սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ Եսայի վարդապետն՝ ըստ մտաց վերոյ գրեցելոցն գրեաց։

12. Թուղթ ևս օրհնութեան սոյնպէս սրբազան Վեհն առ Իւչքիլիսէի վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետն գրեաց։

13. Թուղթ ևս օրհնութեան սրբազան Վեհն առ իմաստախա ժողովօղ Նիկողայոս վարդապետն մեր գրեաց, յորում պատուէր, զի զգործն իւր աւարտել ջանասցէ և հարազատապէս դիմեսցէ ի սուրբ Աթոռս։

14. Թուղթ ևս օրհնութեան առ տէր Վահան աւագ քահանայն Բայազիտու և առ Մարգար աղայն և առ մահտեսի էլօն և առ Սահակ աղայն և առ պարոն Թումանն և առ պարոն Յակոբն՝ ըստ մտաց հասարականն թղթոյն։

15. Թուղթ ևս առ Զմիւռնոյ գործաւորտ նուիրակ Եսայի վարդապետն մեր գրեաց սրբազան Վեհն, որ յառաջ քան զԲ(2) ամիս եկեալ ի Բայազիտ և ցաւոյ իրիք պատահեալ, մնացեալ էր անդ, իսկ զբեռինսն ընդ իւր աբեղային յղեալ էր ի սուրբ Աթոռս։ Այլ այժմ առողջացեալ ի ցաւոյն, գրեալ էր զմարդ և զբեռնակիրս ուղարկել առ ինքն, զի եկեալ եկեսցէ։ Վասն որոյ և սրբազան Վեհն յետ զայս անձս ծանուցանելոյ ի թղթոջն, գրեաց ելանել և գալ՝ զթուանկչիս և զբեռնակիրս ևս յղելով։

1780 թ. օգոստոս—*Ի Վան գնացեալ թուղթք*

16. Թուղթ ևս բազմակնիք ի միաբանիցն սրբոյ Աթոռոյս յղեցաւ ի Վան՝ ըստ մտաց այնց թղթոց, զորս առ այլ տեղիս յղեցին։

2բ

17. Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան սրբազան Վեհն գրեաց առ հասարակութիւն Վանայ երկրին, որպէս և ի միւս երկիրսն։

18. Թուղթ ևս օրհնութեան առ անապատաց առաջնորդսն՝ ըստ նոյն մտաց, որպէս և առ վերոյ յիշեալ առաջնորդսն։

19. Թուղթ առ Ախիջան աղայն, անդրանիկ օրհնութեամբ, ըստ մտաց գրելոցն առ այլս։

20. *Թուղթ ևս օրհնութեան առ տիրացու Ստեփաննէ՝ ըստ միւսոց թղթոցն և աւելի սմա այս, զի ի նոյն հարազատութեան մնացէ, զոր առ հանգուցեալն ունէր։*

21. *Թուղթ ևս առ Բաղտասար վարդապետն, միաբանն սրբոյ Աթոռոյս, սրբազան Վեհն գրեաց, զի և նա նովին հաւատարմութեամբ ջանասցէ զօգուտն սրբոյ Աթոռոյս, որպէս յաւուրս լուսահոգւոյն, յիշելով և զայն յատուկ սէրն, զոր առ միմեանս յառաջ։*

Զայսքան թուղթս ի ձեռն սորա խսկ յղեցաք, զի Մկրտիչ վարդապետն մեր գրեաց ի Բայազիտ զթուղթ առ տէր Վահանն՝ շուտով ձիաւոր փայեկաւ հասուցանել առ սա, զի և սա զթուղթսն տացէ իւրաքանչիւր տեարցն և զմահսարն հոգացեալ յղեսցէ։ Թուղթ մի ևս նմա գրեաց Մկրտիչ վարդապետն, զի այսպէս արարեալ փութով նոյն փայեկաւն զմահսարն առ տէր Վահանն հասուսցէ ժամ մի յառաջ։ Զօրինակ մի մահսարի ևս առ սա յղեաց Մկրտիչ վարդապետն, զի ըստ այնմ օրինակի զմահսարն գրեցուցեալ յղեսցէ։

Վերոյ գրեալ թուղթքս ի սկզբէն մինչև ցաստ ընդ Ահարօն վարդապետին յղեցան յամսոյս է (7), բաց ի թղթոցն Բայազիտու, որք ընդ Յօհան վարդապետին յղեցան ևս յամս[ոյս] է (7)։

1780 թ. օգոստոս—*Ի Ղարս գրեալ թուղթք*

22. *Թուղթ բազմակնիք ի միաբանիցն սրբոյ Աթոռոյս ի Ղարս՝ ըստ գրեցելոցն յայլ տեղիս։*

23. *Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան ի սրբազան Վեհէն՝ ըստ մասց յայլ տեղիս գրեցելոցն։*

24. *Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան առ խմատախս ժողովօղ Յովհաննէս վարդապետն[2] մեր, յորում և պատուէր, զի արիաբար զգործն իւր աւարտել ջանասցէ՝ առ ի փութով դիմել ի սուրբ Աթոռս։*

25. *Թուղթ ևս օրհնութեան սրբազան Վեհն գրեաց առ պարոն Գէորգըն[3]՝ ըստ մասց վերոյ գրեալ թղթոցն և յորդորումն, զի յառաջին հազըն ըստ մասց վերոյ գրեալ թղթոցն և յորդորումն, զի յառաջին հաւատարմութեան մնասցէ, զոր ունէր յաւուրս հանգուցելոյն։ Նաև վասն Ղօշավանիցն պատուէր, զի խնամատար լիցին և զայս գրելով, թէ հանգուցեալն կամէր զառաջնորդ յղել ըստ ձերդ խնդրոյ, բայց ի ցաւոյն խստութենէ չկարաց, իսկ մեք աչք բացեալ ի հարկաւորութեանց Աստուծով յղեսցուք։ Եւ թէ ի Կարին գնալոց թուղթսն փութով յղեա։*

26. *Թուղթ ևս օրհնութեան առ գանձապետ մահտեսի Եղիայն գրեաց սրբազան Վեհն՝ գրելով ի նմա զպատուէրսն, զորս և առ պարոն Գէորգն և ի գործն իւր արիապէս կալ։*

27. *Թուղթ ևս օրհնութեան առ Ղօշավանից վէքիլ Պօղոս վարդապետըն՝ ըստ միւս թղթոցն, // որք առ այլս և սմա ևս պատուէր, զի վանքին լաւապէս մուղայէթ լիցի մինչև զառաջնորդ յղեսցուք. զայս յաւելուածս ևս գրելով, թէ իշխանացն Ղարսայ գրեալ եմք, զի հանդերձ ժողովրդեամբն խնամատար լիցին վանիցդ և քեզ։*

Զսոցա մահսարական համակամութեան թուղթն ևս աստ՝ շինեալ յղեցաք առ սոսա, զոր տեսեալ կնքեսցեն ի հաճիլն իւրեանց։

28. *Թուղթ ի գործակալացն սրբոյ Աթոռոյս քանի մի կնքով առ Կարնոյ իշխանսն և քահանայսն՝ ըստ վերոյ գրեցելոցն, որք առ այլ տեղիս։ Սակայն և զայս գրեցին, թէ թէպէտ զմահսար եմք յղելոց յայլր և ի մեծն Պօլիս և ի միւս քաղաքսն երկրիդ առ մերազնեայսն ընդ մահսարաքերի, այլ որովհետև յամենայր քանի մի օր եկօղն, վասն որոյ զայս շուտով գրեցաք ձեզ առ ի զիսկն գիտել բանի և ոչ տարակուսիլ։*

1780 թ. օգոստոս—*Ի մեծն Պօլիս գրեալ թուղթք*

29. *Թուղթ առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն գրեցին գործակալքն սրբոյ Աթոռոյս՝ ծանուցանելով զմահ հանգուցելոյն և զկացուցանելն սրբազան Վեհիս մերոյ նորոգ հայրապետ հանդերձ պատճառաւն[4]։ Ապա ըստ ի Կարնոյ թուղթն գրելոյն[5], գրեցին թէ թէպէտ զմահսար էաք յղելոց ընդ այլ թղթոց՝ ձեռամբ մահսարաքերի[6], բայց վասն յամեցմանն և լսելոյ ձեր զզանազան լուրս, զայս Բ (2) թուղթս շուտով առ քեզ և առ պատրիարքն յղեցաք. զի զճշմարիտն գիտելով, իրակութեան մի տարակուսիցիք։ Յետոյ հարկ, զի ծանուսցէ իշխանացն զեղելութիւնսն։ Եւ ի վերջոյ զողջոյն Յարութիւն ամիրային և համայն իշխանացն։*

Սորա մուսավատայն է ի նոր տետր է (7) երեսն։ Ընդ սմա և զմի փուսուլայ արարին առ սա, թէ պատրիարգի թուղթն ևս ըստ քոյդ թղթոյ մասցն եմք գրեալ, զոր տարեալ տացես նմա ձեռամբ քով և զի թուղթ քո գրեալ զողջոյնն մեր մատուցես իշխանացն և մեծաւ խոհեմութեամբ ուշ դիցես առ ի իմանալ, թէ զի՞նչ ասեն պատրիարքն և իշխանքն և ժողովուրդքն և մեզ գրել։ Եւ վերջապէս, զմեր թղթոց պատասխանսն ձեռամբն այն մարդոյն, որ զմեր թուղթսն քեզ է հասուցեալ, յօժ փութով յետս դարձուսցես։

30. *Թուղթ ևս առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն[7] գրեցին գործակալք սրբոյ Աթոռոյս ըստ մասց թղթոյ Մինաս վարդապետին երկարապէս։ Իսկ զկնի զշահեցողական բանս, թէ այս հրաւիրումնս երկուցդ պարտէր լինիլ, բայց վասն չունելոյ մեր զմիջոցս հանգիստ և բանիլոյ դրանց պէսպէս վնասուց մինչ անտէր մնայր Տունս, զայս առ մեզ կոանեցեալս արարաք վաղվաղակի ըստ կտակի հոգելոյս հայրապետին, որ զներկայականն տեսեալ վասն ապառնւոյն հոգայր՝ զՏունս չթողուլ թարց մեծաւորի։ Սա ևս եղբայր քո է, ընդ որում պարտիս սիրակից և ցաւակից լինիլ զայս եղելութիւնս ի Տեառնէ զօլ վարկանելով, որ և է իսկ։ Ըստ սմին և բանք շատ։*

3բ *Օրինակն սորա է ի նոր տետր Թ (9) երեսն[8]։*

Եւ մինչ զՊօլսոյ Բ (2) թուղթն և զԿարնոյ Ա (1) թուղթն յատուկ յատուկ պահարանեցաք և զերկուս պահարանսն ևս ի միում պահարանում ծրարեցաք, յայնժամ առ պարոն Հայրապետ վէքիլն մեր զմի փուսուլայ գրեցաք, թէ ահա Կարնոյ իշխանացն և քահանայիցն գործակալքըն սրբոյ Աթոռոյս զթուղթ գրեցին, յորում և քո անունդ գրեալ է, զոր ընթերցեալ իմանալոց ես։ Ընդ նմա մի պահարանաւ թուղթ ևս գոյ, որ ի Պօլիս է գնալոց։ Եթէ դու անդ մարդ ունիս, ի ձեռն նորա յղեա, զի շուտով հասուսցէ ի տեարն և զպատասխանն առեալ վերադարձուսցեն։ Իսկ թէ ոչ, յայտր Գօրօյենց Սերոբ կայ (որ նորոգ սրբազան Վեհիս մերոյ նախածանօթ էր), տուր նմա և հարկեա, զի օր մի յառաջ յղեսցէ ի Պօ-

լիս առ իւր հաւատարիմն և գրեսցէ նմա զայս թուղթս փութով հասուցանել իւրն ձեռամբն սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետին (զի ոչ ոք իմասցի), և ժամ մի յառաջ զպատասխանն առեալ ի նմանէ, յետս դարձուցանել։

Նլին թուղթքս ընդ Դանիէլ վարդապետին ի Ղարս գնացողի յամսոյս ԺԱ (12)։

1780 թ. օգոստոս—*Ի Կարին վասն ըմբռնման վէքիլ Հէրպետին և Ներսէս վարդապետին*

Յայժմ միջոցի վէճ և կռիւ ինչ էր եղեալ ի Կարին ի մէջ մեր և ախթարմայից վասն հոգեբաժնի և մերազնեայքն արղ արարեալ տաճկաց, ի նոցանէ զուգանս էին առնուլ առեալ։ Յետոյ ի լսել տուգանեցելոցն գնացեալ են առ դատաւորն և աըմահ հոգելոյս հայրապետին մերոյ, գնացեալ են առ դատաւորն և ասացեալ նոցա, թէ էջմիածնի խալիֆայն մեռեալ է և նորա ինչք զոն աստ սացեալ նոցա, թէ էջմիածնի խալիֆայն մեռեալ է և նորա ինչք զոն աստ առ վէքիլ Հայրապետն՝ միրի պարտին լինիլ։ Վասն որոյ և մաքսապետն տեղւոյն ի թեւատրութենէ փաշային գնա և զտեղւոյ նուիրակ Ներսէս վարդապետն ի կալանս էր եղեալ, թէ զխալիֆայի ինչսն, որ առ ձեզ է, միրի պարտին լինիլ, բերէք տուք[9]։ Ոստի և նոքա շուտով զթուղթ էին գրեալ առ նորոգ սրբազան Վեհս, զսա դեռ վարդապետ գիտելով, և առ Մկրտիչ վարդապետն մեր, թէ վասն մեր զրան հոգացէք։ Այսր սակս և սրբազան Վեհս մեր զթուղթս գրեաց ի Կարին, որոց օրպէսն գրին ի ներքոյ։

31. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Կարնոյ Իբրահիմ փաշայն, թէ մինչ զկնի վախճանման խալիֆային կամէաք զթուղթ գրել քեզ և զխաբ-րըդ հարցանել. լուաք, թէ զմեր մարդիկքն յայդր ըմբռնեալ է մաքսապետն տեղւոյդ, թէ խալիֆայն վախճանեալ է, նորա առ ձեզ ինչ զոն, պարտիք միրի առնել։ Արդ, այս Տունս թագաւորինն է և զոր ինչ արդիւնք գան յայդ երկրէդ յայս օջախս, թագաւորի ողորմութեամբն և ֆէրմանաւն է, ոչ թէ վասն խալիֆային, այլ վասն բազմութեանս, որք աստ են՝ մինչև խալիֆայն մեռաւ, մինն ևս ի տեղի նորին յաջորդեաց, որպէս մինչև ցայժմ բազմիցս եղեալ է յայս ՌՇ (1500) ամս, որ այս օջախս հաստատեալ է։ Նթէ այդպէս բան իցէր լինելոց ի թագաւորէն մինչև ցայժմ ի վաղուց հետէ հատեալ լինիւր մեր ապրուստն։ Այլ թագաւորքն երկրիս միշտ զխնամս ունելով յայս օջախիս վերայ ի վախճանիլ միոյ խալի-

4ա ֆային, շուտով ի տեղի նորին յաջորդողին զֆէրման տան, կամելով զշէն մնալն այս օջախիս, զի վասն նորա աղօթեսցուք։

Վասն որոյ խնդրեմք, զի այդ շեղած բանդ ի քո ժամանակդ լինի յայդր, և փութով զերծուսցես զմեր մարդիկն ի կալանաւորութենէ։ Զի և մեք շնորհակալեալ ղքէն, աղօթեսցուք վասն կենաց քոց և ըստ մերս կարեաց զուլլուղ արասցուք քեզ։ Առ սոյն միտս և բանք բազումք։

32. Թուղթ առ Ցայատօղլի Խալիր փաշայն. ամենայն գրեալքն ի թղթոց փաշային և անդ գրեալ։ Իսկ ապա թէ դու այս օջախիս հին և մերձակայ բարեկամ ես, վասն որոյ պարտիս և ընդ մեզ սէր և բարեկամութիւն առնել, որպէս և ընդ վախճանեալ խալիֆային։ Եւ յետոյ խնդիր, զի զբանտարգելսն զերծուցանել ջանասցէ։

33. Թուղթ ևս առ Կարնոյ մաքսապետն, թէ վախճանեալ խալիֆայն կամէր ընդ քեզ զսէր և զբարեկամութիւն առնել, բայց ի ցաւոյն չկարաց զայս բանալ։ Իսկ մեք ևս, մինչ յետ նորա նստաք ի տեղի նորա. զնոյն միտսն ունէաք, բայց լուաք թէ զմէր մարդիկն յայդր ըմբռնեալ էք այսու պատճառաւ, թէ նախանցեալ խալիֆային ինչք զոն առ ձեզ. միրի պարտիմք առնել։ Խնդրեմք յայդ շեղած բանէդ ձեռն վեր առնուլ։

Ընդ սոցա և զգերեալսն և ի թուղթսն վերոյ գրեալ փաշայիցն։

34. Թուղթ առ Կարնոյ իշխանսն գրեաց սրբազան Վեհն՝ յիշումն տալով վասն առաջին թղթոյն ի գործակալացն գրեցելոյ[10]։ (էջ 4ա—4բ)։

4բ 35. Թուղթ ևս սրբազան Վեհն առ մեր վէքիլ Հայրապետն գրեաց, թէ քան զայս յառաջ գործակալքն մեր թուղթ գրեցին առ տեղւոյդ քահանայսն և իշխանսն, յորում զոյր և քոյդ անունն։ Իսկ մեք թուղթ չգրեցաք յայդր և ոչ ումեք, զի ընդ մահսարաբերին գրեսցուք։ Բայց այժմ մինչ զբօթալի համբաւն ձեր լուաք, ահա զթուղթ մի առ Իբրահիմ փաշայն գրեցաք, զթուղթ մի առ Խալիր փաշայն, և զթուղթ մի առ մաքսապետն տեղւոյդ, և զթուղթ մի ևս իշխանացդ քաղաքիդ, զի թէ մինչև ցայժմ չիցէք զերծեալ, զմեր թուղթսն տացեն այն երեցն և զընծայակերպ բանս ինչ ևս տացեն նոցա՝ խօսելով զայնս, զորս գրեալ եմք ի թղթոջն նոցա (զոր և դու ընթեռնլոց ես), զի ձեզ ազատութիւն լիցի։ Այլև յայժ նոցա (զոր և դու ընթեռնլոց ես), զի ձեզ ազատութիւն լիցի։ Այլև յայժ հարկեաց վասն գրելոցն ի փոստուլայն, որ յօգոստոսի ԺԱ (11) ընդ Պօլսոյ թղթոցն տալ զկատարումն նոցա։ Իսկ և զյուսադրութիւնս և զմխիթարութիւնս գրեաց իւրեան վասն դիպուածոցն, պատուիրելով ի գործն հարազատ և ժիր մնալ, որպէս և յաւուրս հանգուցելոյն։

36. Թուղթ ևս առ Ներսէս վարդապետն գրեաց սրբազան Վեհն անդրանիկ օրհնութեան. նախ ծանուցանելով զմահ հանգուցելոյն և զիւր անցսն և ապա զարտաշահ մխիթարութիւնս գրելով վասն հանգուցելոյն և զյուսադրութիւնս վասն վշտացն և պատուէր, զի գործոյն իւրոյ մասին ղայէթ լիցի։ Ընդ սոցա և զգրեալսն ի թուղթն վէքիլ Հայրապետին, որ ի վերդ է։

37. Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան առ մաքսապետի ստռաֆ պարոն Սարգիսն առ ի ըստ իւր չափուն զիրինճայ առնել մաքսապետին վասն այս բանիս, գրելով ի նմա և զօրպէսն թղթագրութեան առ վերոյ յիշեալսն և զթղթոց զմիտսն։

38. Թուղթ ևս ի Ղարս Գէորգ աղային գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի նորա թղթոյն, զոր ընդ Կարնոյ փայեկին գրեալ էր, յիշեցուցանելով յայնմ զառաջին թուղթն, զոր յօգոստոսի ԺԱ (11) գրեաց։ Եւ ծանուցանելով, թէ յայնժամ կամէաք զթուղթ գրել առ Միւտարիս և առ Նուման աֆանդիսն, այլ թողաք յետոյ գրել։ Իսկ այժմ ըստ որում այս դիպուածքս պատահեալ էր մերայնոցն, վասն որոյ զմի թուղթ գրեցաք դոցա, յորում նախ զհանգուցելոյ մահն և զմեր որպէսքն եմք գրեալ։ Երկրորդ՝ վասն մեր Յովհաննէս վարդապետին և ուղտուցն զյանձնարարութիւնս գրեցաք։ Եւ երրորդ՝ յայժ խրիճայ արարաք վասն այս բանիս, զի զթուղթ գրեսցեն ի Կարին առ Իբրահիմ և Խալիր փաշայսն և թէ կամիցին առ մաքսապետն ևս, զի զմերսն ի բաց թողցեն ի կալանաց։

Սորա մուսավատայն է ի նոր տետր 6 երեսն։

5ա 39. Թուղթ ևս առ Միւտարիս և առ Նուման էֆէնտիսն, զի վերոյ գրեալ փաշայից և զի մաքսա//պետին թուղթսն գրեալ բանսն անդ գրեալ

և այլ բանք, զորս ի թուղթդ Գէորգ ադային գրեցաք առ ի ծանուցանել նմա, զոր ընթերցեալ իմասցիս։

Գրեցան թուղթքս և յղեցան ընդ Յովհաննէս փայեկին յամսոյս ԺԳ (13)։

Օգոստոսի 17-ին օրհնության նամակներ են ուղարկվել հետևյալ նվիրատուներին՝ գյուղի Պապիկին, ամասիացիներ Աստվածպատուրին, Հովհաննեսին և Թոխաթցի Հոհանին։

1780 թ. օգոստոս—*Թուղթք ի Թիֆլիզ և ի շրջակայսն նորա*

Ըստ վերոյ գրելոյն մերոյ, որովհետև բնիկ սովորութիւն է, զի ի վախճանիլ կաթուղիկոսաց սրբոյ Աթոռոյս ազդեսցեն թղթովք մերազնէիցըն յամենայն տեղիս, մանաւանդ ի մօտակայս, միաբանքն սրբոյ Աթոռոյս վասն որոյ և փոխիլն առ Տէր հոգելոյս հայրապետին մերոյ՝ տեառն Սիմէոնի բազմերախտ կաթուղիկոսին և ի յաջորդելն զկնի նորա զԱթոռս սուրբ նորոգ սրբազան Վեհիս մերոյ, զթուղթս գրեցին ի մերձակայ տեղիս (ի հեռաւորսն փոքր մի յետոյ թողլով գրել), ոչ միայն զվախճան առաջնոյն ազդելով, այլև զյաջորդելն նորոյս պատմելով։ Որք և ի Թիֆլիզ գրեցին զթուղթ բազմակնիք ըստ սոյն մտաց։ Ընդ որում և նորոգ սրբազան Վեհն մեր զանդրանիկ օրհնութեան թուղթս գրեաց առ Վիրս և առ Հայս։ Զորս թէպէտ յոյժ փութով պարտ էաք գրել, սակայն գիտելով, թէ վասն թշնամութեանն, որ ի մէջ Վրաց արքային և մեր իշխողին, ոչ կարեմք շուտով յղել, վասն որոյ փոքր ինչ յամեցուցաք, մինչև խաղաղութիւն լիցի և ապա յղեսցուք[11]։ Զի աւէին իսկ լինիլ խաղաղութեան։ Քանզի ակնածելով ի սոցունց, ոչ ի ծածուկ կարէաք յղել և ոչ յայտնի։ Եւ կամէր սրբազան Վեհն նախ զեպիսկոպոս յղել ընծայիւք և յետոյ կասկածեալ, թէ սովորութիւն լինի և զսոցունց ևս, թէ գուցէ զչարիցին, վասն որոյ այլ ոչ յղեաց զեպիսկոպոսն։ Այլ զԴանիէլ վարդապետն յղեաց թղթովքն դատարկ յամենայնի իբրև զփայակ, գրելով զյայտնի պատճառն ի փուտալոյս Յովաննէս վարդապետին, որպէս ասելոց եմք ի ներքոյ։ Այլ ի յղելն մեր զթուղթսն, զթիւն օգոստոսի Ը (8) գրեցաք, զի մի խռովիցին, թէ զկնի ամենեցուն առ մեզ թուղթ գրեն։

Իսկ Դանիէլ վարդապետն ի յօգոստոսի ԻԱ (21) ել աստի (որպէս նշանակելոց եմք ի յաւարտն թղթոյս), որում պատուիրեցաւ ասել հասարակին, թէ վասն խանակմանցն այսքան յետացաւ և զեպիսկոպոս կամէր յղել սրբազան Վեհն, վասն դեռևս հաշտութեանն կատարելապէս ոչ լինելոյ, ոչ կարաց յղել։

5բ Եւ թուղթքն գրեցեալ են այսոքիկ

40. Թուղթ բազմակնիք ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ ի Թիֆլիզ և ի համայն շրջակայս նորին եղեալ մերազնեայսն, յորում ըստ գրելոյն յայլ տեղիս նախ պատմեցին զմահուանէ հանգուցեալ տէր Սիմէոնի կաթուղիկոսին։ Եւ երկրորդ՝ զկացուցմանէ սրբազան Վեհիս մերոյ նորոգ կաթուղիկոսի։ Իսկ յետոյ խնդրեցին համակամիլ ընդ ինքեանս և զհամահաճութեան թուղթ գրել, որոյ գաղափարն տեսանելի է ի նոր տետր 8 երեսն[12]։

41. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն սիրով և օրհնութեամբ առ հասարակութիւն մերազնէիցն, որք ընդ իշխանութեամբ արքային Վրաց՝

յորում (որպէս և առ այլ տեղիս գրեալ էր) ծանոյց զորպիսութենէ ննջման հանգուցելոյ հայրապետին և բազմիլոյն իւրմէ յԱթոռ հայրապետութեան սրբոյ Աթոռոյս և ազգիս Հայոց, բերեալ և զայս բան ի սրբոյն Պօղոսէ, թէ զայս ամենայն յաջողէ միևնոյն հոգի և բաժանէ իւրաքանչիւր, որպէս և կամի։ Ընդ որս և զայս, թէ թէպէտ ըստ նախնեաց կարգի և սովորութեան հարկ էր միաբանից սրբոյ Աթոռոյս գրել զբազմակնիք թուղթս ի շրջակայ տեղիս և յայգր, մանաւանդ ի մեծն Պօլիս վասն ընտրութեան հայրապետի, սակայն վասն չարաշատ և աղմկալի գոլոյ ժամանակիս, չկարացին առնել այնպէս, այլ ընդ համայն մերազնէիցն մնացորդաց յերկրիս խորհրդակցեալ, արկին զմեզ ի ներքոյ այսր ծանրութեան։ Յետ այսորիկ զյորդորմունս, թէ այս գործ ոչ այլ ինչ կատարի, եթէ ոչ ձերդ նպաստութեամբ։ Ուրեմն հաստատիչք ի սէր և յօգտակամութիւն սրբոյ Աթոռոյս և մեր։

Ըստ այսմիկ մտաց և բանք շատք։ Զօրինակն սորա ի նոր տետր 110 երեսն գտցես։

42. Թուղթ սիրոյ և անդրանիկ օրհնութեան գրեաց սրբազան Վեհն մեր առ Հերակլ արքայն Վրաց՝ պատմելով նմա նոյնպէս երկարօրէն զմահ հոգելոյս հայրապետին մերոյ նախանցելոյ՝ տեառն Սիմէոնի մեծաւաստակ կաթուղիկոսին և զյաջորդելն իւր զսուրբ Աթոռս փութով վասն ներկայիս վտանգից։ Գրելով ի կարճոյ զպատճառն այսպէս փութով լինելոյ, թէ յետ վախճանի լուսահոգւոյն իբրև տեսին աթոռայինքս, թէ յայս վրդովեալ ժամանակիս անտէր մնալն սրբոյ Աթոռոյս վնաս մեծ է նմա, վասն որոյ այլ չկարացին երկարել զմիջոցն և կամ մեծութեանդ ծանուցանել և մանաւանդ ի մեծն Պօլիս գրել վասն ընտրութեան կաթուղիկոսի։ Այլ միաբանութեամբ ի մի վայր ժողովեալ ընդ մնացորդ քահանայից և իշխանաց և ժողովրդոց երկրիս կատարեցին զայս գործ, որոյ զլիագոյնն ի թղթաբերէդ իմանալոց ես։ Զոր ահա օրհնութեան թղթովք մերով և բազմակնիք թղթով միաբանիցն յղեցաք յայդր և ի սպաս ձեր։ Ապա խնդիր, զի ըստ կամացն Աստուծոյ գիտցեալ զայս առ սուրբ Աթոռս և առ ինքն զսէր և զխնամս ունիցի առնել քան, զոր առ նախկին հայրապետսն վասն խառնակութեանց երկրիս և ժամանակիս։
6ա Իսկ ի վերջոյ, թէ խնդրեմ, զի զթղթաբերդ ժամ մի յառաջ վերադարձուցես մխիթարական և // յուսադրական թղթով մեծութեանդ առ մեզ առ ի յուսադրիլ մեզ և ստանալ զզօրութիւն[13]։

Այլև զայս գրեաց ի լուսանցին, թէ յառաջագոյն թէպէտ կամէաք զեպիսկոպոս յղել ի սպաս մեծութեան ձերոյ և յայդր, բայց յետոյ այսպէս եղև պատշաճ, որ զԴանիէլ վարդապետդ յղեցաք շեշտիւ, որպէս և ինքն պատմելոց է մեծութեան ձերում[14]։

Զօրինակն թղթոյս ի նոր տետր 4 երեսն տես։

43. Թուղթ ևս սիրոյ և օրհնութեան առ Գէորգին Միրզայ արքայորդին[15], ըստ առ հայրն գրեալ թղթոյն, յայտարարութիւն վասն վախճանի լուսահոգւոյն և հայրապետանալոյն իւրոյ Տանս Հայոց և սրբոյ Աթոռոյս փութով՝ հանդերձ պատճառաւն։ Զկնի խնդիր, զի առ ի յԱստուծոյ յաջողեալ համարելով զայս գործակատարութիւնս, խնամածու լիցի սրբոյ Աթոռոյս և երբեմնապէս զսիրանիշ բարեկամական թուղթս գրեսցէ առ ի սրտադիւրութիւն ինքեան։

Եւ զի սա մինչ յաշնանն ընդ հօրն աստ էր, աստցեալ էր նորոգ

սրբազան Վեհիս, թէ գիտեմ, զի զկնի վախճանման Հայրապետին ձերոյ, դու ես յաջորդելոց զԱթոռն սուրբ։ Վասն որոյ այժմ յիշեցոյց ամա, թէ յԱստուծոյ էր աղդեալ քեզ, որ ասացեր մեզ։

44. Թուղթ ես օրհնութեան առ Լեոն Միրզայ արքայորդին[16]. ամենևին ըստ մտաց վերոյ գրեալ եղբօր թղթոյն՝ փոքր ինչ համառօտապէս։

45. Թուղթ ես սիրոյ և ողջունի սրբազան Վեհն առ Անտոն կաթուղիկոսն Վրաց[17] գրեաց՝ նոյնպէս ազդելով զփոխումն բարի մահուամբ հանգուցելոյն և զյաջորդելն իւր զԱթոռս սուրբ ըստ կտակի նորին։ Իսկ յետոյ զբարեկամութիւն և զսէր առնել խնդրեաց, որպէս ընդ հանգուցելոյն և երբեմն զսիրանիշ թուղթ գրել։ Եւ վերջապէս գրեաց, թէ զամենայն որպէսն մերոյս անցից ի թղթաբերէդ իմանալոց ես, զոր օրհնութեան թըղթովք մերովք և բազմակնիք թղթով միարանիցն յղեցաք յայդր, զոր և յանձն առնեմ քեզ։

Հեղինակն սորին ի նոր տետր 7 երեսն է։

46. Թուղթ սիրոյ առ Էփթիմէ վարդապետն՝ խոստովանահայրն արքային, յորում նոյնպէս յիշումն վասն մահուան լուսահոգւոյն և կացուցմանն իւրոյ կաթուղիկոս։ Եւ ապա յորդորանք, թէ զսէրդ և զսիրոյ թուղթդ մի պակասեցուցես՝ ցաւակցելով մեզ և յայդր պատահեալ բանից մերոց և ճառագով լիցիս։

47. Թուղթ օրհնութեան առ Դաւիթ սպարապետն և առ իւր եղբայր Նիկօլն, թէ ի լինիլն ձեր աստ, տեսիք զսրբազան հայրապետն մեր, թէ որպէս ի կենսամաշ հոգածութիւնս կայր, որ և զցաւ մեծ ստացեալ փոխեցաւ ի կենացս աստի յանանց կեանսն առ Քրիստոս։ Ապա վասն վտանգից ժամանակիս զմեզ փութով արարին կաթուղիկոս։ Արդ, խնդրեմ, զի որպէս ընդ առաջին հայրապետսն, նոյնպէս և ընդ մեզ զսէր և զբարեկամութիւն առնիցէք և սիրոյ թղթով մխիթարիցէք և զսրբոյ Աթոռոյս զայրէթն քարշելով, զմեզ սրտադիւր առնիցէք։

6բ 48. Թուղթ առ Զաղարէկն ըստ նոյն մտաց և թէ ըստ որում առաջագահ ես արքային, պարտիս զնա միշտ ի գութ շարժել ի վերայ սրբոյ Աթոռոյս և մեր, և դու ես ճառագով լինիլ։

49. Թուղթ ես սրբազան Վեհն առ Բաբաբէկն գրեաց ըստ վերոյ գրեալ թղթոցն։ Իսկ վասն թղթատար Դանիէլ վարդապետին գրեաց, զի ընդ նմա զքանի մի մարդ դիցէ առ ի հասուցանել ի Բամբակաձորու ի Թիֆլիզ և ի վերադառնալն ևս հասուցանել ի յԱպարան կամ ի Յօհաննավանք։

50. Թուղթ սիրոյ առ Իսրայէլ կաթուղիկոսն գրեաց, որ ի Գեանջայու գնացեալ ի Հախպատ՝ անդ և ի Թիֆլիզ լինէր, յորում զվախճանմանէ հանգուցելոյն պատմեաց և ապա զյաջորդելոյն իւրմէ երկարապէս։ Եւ թէ նախքան զօծումն մերոյ չկարացին միաբանք սրբոյ Աթոռոյս զթուղթս գրել յայդր կամ յայլ տեղիս, պատճառն փութով լինիլն էր իրակութեանս, որպէս յայտնի է ի յայլոց թուղթս պատճառաւն հանդերձ։ Իսկ յետ օծմանն մերոյ ես այսքան յամիլն վասն ճանապարհաց փակ գոլոյն էր, բայց այժմ որովհետև զթուղթս գրէաք յայդր, վասն որոյ և զայս սիրոյ ի մէնջ թուղթս քեզ գրեցաք, զի և դու զորպիսածանոյց թուղթդ սիրոյ ի մէնջ անպակաս առնիցես։

Օրինակն թղթոյս է նոր տետր 9 երեսն։

51. Թուղթ օրհնութեան անդրանկի և սիրոյ առ Թիֆլիզու առաջնորդ Յովհաննէս վարդապետն գրեաց ըստ մտաց վերոյ գրեալ թղթոցն, յորում և զյորդորանս առ ի ցաւակից լինիլ ինքեան և օգնիչ սրբոյ Աթոռոյս հետևիլ միշտ։ Այլև պատուէր, զի զԴանիէլ վարդապետն ժամ մի յառաջ յետս յղել ջանասցէ և զորպիսածանոյց թուղթ գրել մի՛ ձանձրասցի։ Ընդ այսր թղթոյ և զմի հատ փուսուլայ գրեաց առ սա, թէ թէպէտ կամէաք զեպիսկոպոս յղել յայդր և ի սպաս մեծութեան արքային հանդերձ ընծայիւք, սակայն ի սոցունց երկնչելով չկարացաք, զի դեռ խռովութիւն է ի միջի։ Ապա մտադրեցաք ի վերայ Ղարսայ ծածկաբար յղել, այլ կարծեցաք, թէ գուցէ յայդր լրաեսքն սոցին տեսեալ ազդեսցեն սոցա, և սոքա զայլ և այլս կարծիսցեն։ Ուստի և յայս խորհրդոյ ի բաց կացաք։ Յետոյ լուաք յոմանց զհամբաւ հաշտութեան, որք ասէին, թէ յԱխլցխայու մարդ է գալոց և հաշտութիւն է լինելոց, վասն որոյ և ուրախացեալ՝ յամեցուցաք սակաւ մի, զի յայտնապէս յղեսցուք ի լինիլն հաշտութեան։

Իսկ ապա մինչ եկին Դատա Սուլէյմանն և Շամախնի եղբայր Ահմատ աղայն, և սա ես սկսաւ զընծայ պատրաստել, զի յղեսցէ[18]։ Յայնժամ ևս կամեցաք ազդել սմա, բայց գիտէաք անկարծիք, զի ասելոց է, թէ ընդ իմ ընծայատարին յղեցէք, ընդ որում թէ գայր մեր եպիսկոպոսն, պարտ էին նմա յայդր գիտօղ լինիլ և թէ անյաջողութիւն ինչ ևս լինիւր բանից իւրեանց, ի նմանէ կարծիլ։ Վասն որոյ յամենայնէն
7ա Հրաժարեալ, միայն զայս // տեսաք պատշաճ, զի զԴանիէլ վարդապետդ իբրև զփայեակ դատարկ յղեսցուք յայդր թղթովք մերովք, որ զթուղթսն տուեալ իւրաքանչիւր տեարցն և զմահսար առեալ, փութով վերադարձցի։ Այս ես ոչ թարց գիտութեան իշխողին մերոյ, այլ նորա գիտութեամբն, յորմէ և զթուղթ առաք ի վերայ ղարաւուլացն առ ի թողուլ զմեր մարդն գալ յայդկոյս՝ ասելով նմա, թէ ըստ նախնեաց սովորութեան վասն վախճանման հանգուցելոյն և սակս նստելոյ նոր կաթուղիկոսին, պարտիմք մերազնէիցն թղթագրութիւն ազդել փութով և ի նոցունց զմահսար բերել։ Զի մինչև ցարդ վասն խռովութեանցն ոչ կարացաք յղել, այժմ որովհետև հաշտութիւն լինի, կամիմք յղել, զի հարկ է և չէ օգուտ ոչ յղելն։ Վասն որոյ և նա զթաղլայ տուեալ ի վերայ ղարաւուլացն ահա զԴանիէլ վարդապետդ յղեցաք յայդր։ Եթէ ի դէպ լինիցի, արքային և որդւոցն ասասցես։

52. Թուղթ կարճառօտ առ համայն քահանայսն Թիֆլիզու, յորում պատմութիւն անցիցն սրբոյ Աթոռոյս և պատուէր վասն օգտաջանութեան և հարազատութեան առ սուրբ Աթոռս և առ մեզ։

53. Թուղթ առ տէր Ղազար աւագ քահանայն, վէքիլն սրբոյ Աթոռոյս ըստ միւսոցն մտաց[19]։ Եւ յատուկ պատուէր, զի ի գործն իւր արի կալով հարազատապէս ծառայեսցէ սրբոյ Աթոռոյս, որպէս և ի ժամանակս հանգուցելոյն։

Նույն բովանդակությամբ նամակներ են ուղարկվել նաև ներքոհիշյալ անձանց՝ մելիք Ալեաիքին ու նրա եղբայր միրիշքյար Իվանեին, Միրզա Գեորգիին և նրա եղբայր Միրզա Միսայելին, մելիք Մկրտումին, պարոն Մեհրաբին, Աղալոյին, մուշրապներ՝ Դավթին ու Հովհաննեսին, Սուլխան Դիվանին, պարոն Հովսեփ Նազարբեկյանցին, մահտեսի Սարգսին ու Հակոբջանին, Շուլավերի բնակիչներին՝ անվանապես հիշելով Վանական վարդապետին, մելիք Սարգսին և Մխիթար քալանթարին, առանձին նամակներ՝ վերոհիշյալ Վանական վարդապետին, որը Շուլավերի առաջնորդն էր, Մխիթար քա-

լանթարին, Բամբակածորի առաջնորդ Ավետիք վարդապետին, Բամբակածորի մելիք Շաքարոյին, Մանվել վարդապետին, Ղազախի Ղասում և Փանահ աղաներին, Ահմատ աղային և մելիք Քյաղումին։

Ելն թղթոցս եղև յամսոյս ԻԱ (21), սակայն թիւքն ամսոյս Ը (8) գրեցան։

1780 թ. սեպտեմբեր—ի Ղարս գրեալ թուղթք

7բ Քանի մի աւուրք զկնի վերոյ գրեալ թղթոցդ յղելոյ, սրբազան Վեհն զթուղթս գրեաց ի Ղարս և ընդ մրգեղինաց և այլ կերլի իրաց ընծայից յղեաց անդ առ ոմանս, զորոց օրինակն գրեմք աստ ի ներքոյ։

54. Թուղթ առ Իբրահիմ աֆանտու որդի Միւտարրիս Մուստաֆային և ղափուճի բաշի և այժմուս Կարսայ Միւսալիմ Նօման աղային գրեաց, ի պատասխանի թղթոյ նոցին ընդ Դանիէլ վարդապետին յղեցելոյ, որք առ սրբազան Վեհն զմխիթարութիւնս էին գրեալ վասն հանգուցելոյ սրբազանին, և զայս յուսադրութիւնս, թէ որպէս հայրն մեր և մեք ընդ նախանցեալ խալիֆայիցն բարեկամութիւնս եմք արարեալ և մանաւանդ ընդ նոր հանգուցելոյն, ընդ քեզ ևս առնելոց եմք զօգուտն սրբոյ Տանդ կամելով։ Վասն որոյ և սրբազան Վեհն զշնորհակալութիւնս գրեաց և զգրեալսն իւրեանց առնել խնդրեաց։ Որոց և յղեաց զսեխ, զխաղող, զպօրինճան, զքացախ, զգիւլապ և զԵ (5) հատ մոմ։

55. Թուղթ ևս առ Ղարախան օղլի Ահմատ Չէլէպին՝ գրելով զհանգուցելոյ սրբազանին որպէսն և զիւր անցսն և ապա զյորդորմունս, թէ որպէս ընդ նախանցելոյ խալիֆային բարեկամութիւնս ես արարեալ նոյնպէս և ընդ մեզ պարտիս առնել։ Որում և յղեաց զսեխ, զխաղող և զպօրինճան։

56. Թուղթ առ մաքսապետն տեղւոյն գրեաց նոյնպէս զբարեկամութիւն առնել խնդրելով, և թէ ընդ քեզ մեծ սէր եմք առնելոց, այլ այժմ զայս փոքր ինչ բանս յղեցաք, այսինքն՝ զսեխ, զխաղող և զպօրինճան։

57. Թուղթ ևս առ Մաղսբերդու Ալիբէկն, թէ որպէս ընդ ժամանակս հանգուցեալ խալիֆային ընդ նմա բարեկամութիւն ես արարեալ, այնպէս և ի մեր ժամանակս ընդ մեզ պարտիս առնել՝ այս օջախիս զայրէթն քաշելով, ըստ որում հին ծանօթ էք սրբոյ Աթոռոյս։ Սմա ևս զսեխ, զխաղող և զպօրինճան յղեաց։

8ա 58. Թուղթ ևս առ Եաղուբ փաշայի որդի Մահմատ աղային՝ ըստ նոյնի մտաց, որում և ուղարկեաց զսեխ, զխաղող և զպօրինճան։

59. Թուղթ ևս ի վերայ պարոն Գէորգին գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի նոր ընդ Դանիէլ վարդապետին յղեալ թղթոյն, յորում և շնորհակալութիւն վասն մահսարական թղթոյ հոգացմանն։ Եւ զի զյառաջագոյն գրեալ թուղթն մեր իրաճայական առ աֆանտիզատայսն չէր տուեալ նոցա վասն ի գլուխ գալոյ բանին, որ ի Կարին։ Առ այն ևս մեզ շնորհակալութիւն գրեաց և պատուէր, զի զայն թուղթն յետս առ մեզ յղեսցէ։ Այլև զայս, թէ ի Կարնոյ ի զմերայնոցն ստոյգ որպիսութիւն ինչ չիմացաք և մեր փայեակն յամեցաւ, մեզ տարակուսութիւն է լեալ։ Վասն որոյ եթէ զհաւաստի համբաւ ինչ իմասցիս զնոցանէ, մեզ գրեսցես, զի գիտասցուք թէ զկնի կենադրաւիլոյ փաշային, որպէս եղեն մերայինքն և միամտիցուք։

60. Նաև զոր Յովհաննէս վարդապետին գրեաց այժմ, թէ զժողովեալ ցորեանդ և գարիդ, որ աստ և անդ է, գիտութեամբ պարոն Գէորգին բեր ի մերձ տեղիս, որպէս զի բեռնակրաց մերոց դիւրին լիցի ի կրել, և զգործդ աւարտեալ դիմեա ի սուրբ Աթոռս։ Սմա ևս ազդեաց առ ի մուղայէթ լինիլ նմա, զի այսպէս արարեալ շուտով եկեսցէ։ Եւ զի Յովաննէս վարդապետն զարդիւնսն իւր սմա էր հաստուցեալ և սա խարճ էր արարեալ մինչև ցարդ ի պէտս հարկաւորութեանց սրբոյ Աթոռոյս և գրէր սրբազան Վեհին, թէ եթէ կամիս զհաշիւն գրեալ, առ քեզ յղեցից, գրեաց այնպէս առնել։

Իսկ ի վերջոյ զբարխանայ յղելն և զթուղթս գրելն այժմ ընդ Թօմասին առ աֆանտիզատայսն և առ այլս ոմանս ծանօյց սմա և պատուիրեաց մուղայէթ լինիլ և մատուցանել իւրաքանչիւրոցն զթուղթս և զընծայս իւրեանց։ Ընդ սմին և զմի սիահի արարաք և յղեցաք՝ նախ զորքանութիւն բնաւից յղեցելոցն գրելով և ապա զիւրաքանչիւրոց բաժինսն յատկացուցանելով, առ որս զթուղթս գրեաց սրբազան Վեհն։ Ապա ի յաւելորդացն գրեցաք, զի թէ պատշաճ տեսցէ, փոքր ինչ տացէ այն նոր դժնեայ խարաճչուն, որ ի մերայնոցն զխարաճս առնէր մինչ անդ գնային։ Յորոց ի Մուստաֆա փաշայ սարասկեարի գալստենէն ի Ղարս մինչև ցայժմ չառնուին զխարաճ։ Այլ գրեցաք Գէորգին այսպէս առնել ի յամօթ նմին։ Եւ զայլն ևս, ում որ տալ կամիցի, տացէ և իւրեան ևս զբաժին հանցէ։

61. Փուսուլայ ևս գրեաց առ սա սրբազան Վեհն, զի առ սա յանձնեալ ամի աշնանն վասն խառնակութեանցն երկրիս ամանաթ է յղեալ
սրբազան Վեհն ի վարդապետութեանն։ Եւ գիտութեամբ և ձեռամբ սորա մի վաճառական Սարգիս տղայ զոյ աստ, նա ևս է ամանաթ ինչ
յղեալ առ սա։ Իսկ յառաջ քան զայս, սա սրբազան Վեհին ոչինչ ազդ
8բ արարեալ, գրէ այն Սարգիս տղային, թէ զքո ամանաթդ տար յիմ մօտէս։ Վասն որոյ գրեաց || այժմ սրբազան Վեհն, թէ քեզ գրեալ եմ յառաջ, զի թէ այդ և թէ մերն մնասցէ առ քեզ, և զոր ինչ գրեցից, այնպէս արասցես։ Ահա այժմ ևս գրեմ այսպէս առնել և այլ Սարգսին բան չգրել, զի այդ ևս գիտութեամբ և ձեռամբ մեր է։

Եւ զի յանցեալ ամին մինչ աստ էր նա (որ և երկարապէս եկաց աստ) ի խցի սրբազան Վեհին, իրի ինչ հաւանեալ, կամեցեալ էր ինքեան տալ։ Իսկ այժմ ի լսելն զհայրապետանալն, ի ձեռն ուրումն ազդեալ էր զայն ինքեան շնորհել։ Բայց սրբազան Վեհն չիմացեալ զնորին խնդրեալն, գրեաց առ նա, թէ ոչ գիտեմ թէ զինչ իր է ասացեալդ։ Արդ, պարտիս ի հաստատուն սէրն մեր վստահանալ և զինչ լինիլն ազդել ինձ կերպիւ միւ։

62. Թուղթ ևս առ իմաստախ ժողովօղ Յովաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյ նորա, զոր ընդ Դանիէլ վարդապետին գրեալ էր։ Յորում գրեաց զշնորհակալութիւն վասն արիութեանն ի գործն և պատուէր առ ի չգնալ ի կողմանս Գեօլայու և Արտահանու, զի կամէր գնալ նա, այլ զժողովեալսն ի մերձ տեղիս բերել գիտութեամբ պարոն Գէորգին (առ որ ևս գրեաց օգնել սմա) և ինքն դառնալ առ սուրբ Աթոռս

վասն պիտանաւորութեանն։ Այլև զրարխանայ և զթուղթ յղելն ընդ Թովմասին անդ առ աֆանախդարայն և առ ոմանս՝ ծանոյց ամա։ Եւ թէ Թովմասին պատուիրեցար, զի զմեր ուղտսն ի քո ժողովեալ զարւոյդ կամ ցորենոյդ բարձեալ բերցէ ընդ ինքեան։

Ելին թուղթքս ընդ Թոմասին յամսոյս Ա(1)։

63. Վասն աւերութեան երկրիս ըստ մեծի մասին, սրբազան Վեհն ոչ յոյժ փոյթ առնէր զառաջնորդ յղել մնացորդացն։ Այլ սոքա առաջնորդ խնդրեցին, վասն որոյ և սրբազան Վեհն զՄօղնւոյ սրբոյն Գէորգայ վանից առաջնորդ Բարսեղ վարդապետն առաջնորդ արար մնացորդ երկրականացս։ Ըստ որում և վանքն նորա ևս էր անմարդաբնակ եղեալ նարդենիս՝ վասն դիպուածոյն երկրիս, զի ժամանակ ինչ հովուեսցէ զնոսա։ Որում ի վերայ Երևանու երկրիս զառաջնորդական թեթև կոնդակ շնորհեաց։

Եւ զի Զորագիւղի անապատին չգոյր այժմ առաջնորդ, վասն որոյ սրբազան Վեհն ի կոնդակոջն պատուիրեաց յատկապէս Զորագիւղի, Քեարվանսրայի և Բերդի ժողովրդոցն, զի զնա ծանիցեն իւրեանց առաջնորդ մինչև...* ի յանապատն յատուկ զառաջնորդ յղեսցուք սոցա։

Շնորհեցաւ նմա յամսոյս Դ (4)։

1780 թ. սեպտեմբեր—Թուղթք ի յԱխալցխայ ընդ նոյն երկրացի տէր Եղիայ՛ին յղեալք

64. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Ախալցխայու և շրջակայից նորին մերազնեայ ուղղափառ ժողովրդեանն՝ ծանուցանելով նոցա զվախճանումն հոգելոյս սրբազանին և զկարգիլն և օծանիլն իւր կաթուղիկոս, որպէս և յայլ տեղիս գրեցաւ։ Ապա զչորեսին պատուէրս
9ա գրեաց, որոց առաջինն այս էր, թէ պարտիք զայս եղե//լութիւնս յԱստուծոյ համարիլ ըստ այնմ, թէ ոչ ոք կարէ առնուլ յանձնէ և ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի վերուստ։ Եւ երկրորդն, թէ զսուրբ Աթոռ մայրս ձեր միշտ ի մտի ունելով, մեծաւ սիրով և հարազատ որդիաբար սիրեսջիք զսա և երբեմն երթևեկս առնելով աստ, մի՛ հեռասջիք ի սմանէ սրտիւ, զի լուսածին ծնօղ ձեր է և մայր հաւատոյ։ Իսկ երրորդն, թէ ի սուրբ և ի միաբանադաւան հաւատս ձեր հաստատուն և անշեղ մնասջիք՝ հեռի կալով յօտար կրօնից և յամենայն եղբայր անուանելոց, որք զստահակսն գնայցեն և ոչ ըստ ողջամիտ վարդապետութեան Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։ Եւ ի մնալդ ձեր յայսպիսի բարւոք գնացս, մի՛ ունիցիք զերկիւղ ինչ յումեքէ՝ յիշելով զբազմակերպ ջանսն և զորբնութիւնսն, զորս վասն ձեր կրեաց հոգելոյս հայրապետն մեր։ Նաև զհայրական գութն և սէրն, զորս ունէր ի վերայ ձեր, զորս և ի մէնջ ևս տեսանելոց էք, եթէ Աստուած տացէ զբարեյաջող ժամանակ։ Եւ չորրորդն այն էր, թէ ի վերայ այսոցիկ պարտիք ևս ունիլ զփոյթ ամենայն գործոց բարեաց ունիլ զգութ առ ընտանիս հաւատոյ և դաւանակիցս ձեր և զամենայն ներհակսն բարեաց ի ձենջ ի բաց մերժել, որպէս զի և իմ լսելով զբարւոք գնացս ձեր, ուրախ լինիցիմ։

Իսկ ի վերջոյ, թէ զայլ ամենայն որպէսն մեր ի սոյն թղթաբեր տէր Եղիայէդ իմանալոց էք, յորմէ և մեք զձեր բարի համբաւսն և զպնդութիւնսն հաւատոյ իմացեալ ուրախացաք յոյժ։

Զօրինակն սորա ի նոր տետր 119 երեսն տես։

65. Թուղթ ևս օրհնութեան առ Ախալցխայու երիցփոխան Պալին, թէ զմեր և զսրբոյ Աթոռոյս անցսն ի տէր Եղիայէդ իմանալոց ես, նաև ի կոնդակէն մերմէ, զոր գրեցաք յայդր առ հասարակութիւն ձեր։ Ըստ որում հոգելոյս հայրապետն մեր զքեզ վասն հարազատութեանդ և ուղիղ հաւատոյդ գործակալ է կարգեալ յայդր, վասն որոյ և մեք զայս թուղթս գրելով սիրելւոյդ, կրկին երիցփոխան և գործակալ կարգեցաք յայդր սրբոյ Աթոռոյս։ Ուստի և մեծաւ հարկիւ պատուիրեմ քեզ. պարտիս յամենայն կարողութենէ քումմէ անբիծ և սուրբ հաւատոյս մերոյ ջատագով լինիլ և զամենայսն մերայինսն ևս ի յարիութիւն յորդորել և ըստ կարեաց ձերոց մրցիլ ընդդէմ ներհակացն և զորպիսութիւնս ձեր մեզ ծանուցանել և սրբոյ Աթոռոյս հոգևոր ծնողիս ձերոյ բարւոքապէս ծառայել և մանաւանդ քահանայիցն և ժողովրդոցն տեղւոյդ կարգաւորիչ և վերահասու լինիլ յամենայն կողմանց։

Ելին թուղթքս ընդ տէր Եղիային յամսոյս ԺԱ (11)։

1780 թ. սեպտեմբեր—Թուղթք ի Բայազիտ յղեալք

66. Զկնի աւուրց ինչ սրբազան Վեհն զբարեկամական սիրոյ թուղթ գրեաց առ Իսաք փաշայն Բայազիտու։ Յառաջ զորպէսն հայրապետանալոյն իւրոյ ծանուցանելով և ապա խնդրելով, թէ որպէս ընդ հանգուցեալ
9բ հայրապետին մերոյ զսէր և զբարեկամութիւն ևս ունեցեալ, նոյնպէս և ընդ մեզ առնիցես՝ ի վերայ սրբոյ Տանս զխնամս ունե//լով։ Քանզի և մեք ըստ մեր կարեացն զբարեկամութիւնս եմք առնելոց ընդ քեզ այսուհետև։

67. Թուղթ ևս սոյնոյս մտօք առ Յիւնուզ բէկի աղայն գրեաց։

68. Թուղթ ևս Մկրտիչ վարդապետն գրեաց առ տէր Վահանն, զի ասասցէ փաշային, թէ գիտես, որ յանցեալ ամին վասն վրդովմանցն երկրին չկարացին զշալթուկ վեր առնուլ, այս տարի ևս դեռ վեր չեն առեալ։ Վասն որոյ են զթուղթն դատարկ յղեալ այժմ, յետոյ ըստ պատշաճին վընծայ են յղելոց մեծութեանդ։ Զայս թուղթքս յղեցաք ձեռամբ Խլօ փայեկին, յամսոյս ԺԵ (15)։

1780 թ. սեպտեմբեր—Առ ի կողմն Արևմտեան գրեալ թուղթք

Որպէս յառաջագոյնն, զկնի օծման սրբազան Վեհիս մերոյ, ի յերկոսին թուղթսն գործակալաց սրբոյ Աթոռոյս (զորս գրեցին ի մեծն Պոլիս ի յօգոստոսի ԺԱ (11), զմին առ պատրիարքն և զմին առ սրբոյ Աթոռոյս Նուիրակ Մինաս վարդապետն) յիշեցաւ, թէ յաղագս նորաօծ հայրապետիս մերոյ զբազմակնիք թուղթ եմք յղելոց յայդր, ըստ հնագոյն սովորութեան սրբոյ Աթոռոյս, նաև սրբազան Վեհն ի յօրհնութեան թուղթսն իւր, զորս մինչև ցարդ գրեաց առ բազումս, ծանոյց նոցա։ Այժմ զծաղկեայ մահսարական թուղթ գրեալ միաբանքն սրբոյ Աթոռոյս և համդերձ համայն մերազնեայ մնացորդ առաջնորդօք և քահանայիւք և իշխանօք երկրիս կնքեալ պատրաստեցին առ ի յղել։ Ընդ նմին և սրբ-

* Բնագրում բաց է թողնված մեկ բառ։

բաղան Վեհն զանդրանիկ օրհնութեան և որպիսածանոյց Թուղթս յոլովս
գրեաց ի կողմն Արեմտեան, այսինքն ի մեծն Պօլիս, ի Զմիւռին, ի յԱն-
ուամէլի. ի Թօխաթ, ի Յամիթ, ի Գաղատիա և ի Կարին՝ առ առաջնորդսն
և առ նուիրակսն մեր, առ իշխանս և առ գանձապետս սրբոյ Աթոռոյս
և առ այլս ոմանս։ Իսկ և ի վերայ իւրաքանչիւր երկրաց առհասարակ
զմի մի կոնդակ գրեաց, ի յորս և զվերահաստատութիւն նուիրակացն
սրբոյ Աթոռոյս, և Թուղթքն են այսոքիկ։

69. Մահսարական Թուղթ մեծ, ծաղկեալ և բազմակնիք, որ ի միա-
բանից սրբոյ Աթոռոյս և ի յերկրականացս գրեցաւ առ մերազնեայսն,
որք ի մեծն Պօլիս և յայն կողմունսն, վասն ընդունելութեան սրբազան
Վեհիս մերոյ, զայս միտս ունէր, թէ ըստ որում մահն ի յԱստուծոյ է
վճռեալ ի վերայ բնութեանս և ամենայնքս մեռանելոց եմք, վասն որոյ
և սրբազան հովուապետն մեր՝ տէր Սիմէօն մեծավաստակ կաթուղիկոսն
սքանչելի մահուամբ փոխեցաւ յաշխարհէ աստ յանանց կեանսն առ
Քրիստոս, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ և զգլուխս ձեր ողջ պահես-
ցէ և մխիթարեսցէ հոգւովն սրբով։ Արդ, սիրելիք մեր, ամենեցուն
յայտնի է, զի որպէս ոչ կարեն անդամք առանց գլխոյ կեալ, այսպէս
10ա և ոչ տուն Թարգ գլխաւորի և կառավարչի, և թէ մանաւոր տունն այս-
պէս, այն ևս ի խաղաղ ժամանակի, որչա՞փ ևս առաւել այս ընդհան-
րական Աթոռս ի յայսպիսի վրդովեալ ժամանակի, յորում ամենայն որ
պիւրոյ անձին հոգսն ևս ոչ կարէ տանել, թող թէ զայլոց, և կամ այս-
պիսւոյ տան, եթէ չիցէ հարկի կարգեցեալ ի պաշտպանութիւն նմին։
Քանզի թէ յանցելումն ամի զորքան աւերութիւնս և վնասս կրեաց եր-
կիրս մեր, լուեալ էք, զորս գեւևս կրէ։ Զի նոյն խռովութիւնն տակաւին
գոյ, երկիրս ըստ մեծի մասին անմարդաբնակ է և աւերիչք բազմացեալք,
զմնացորդն ևս աւերեն։ Յորոց միջի սուրբ Աթոռս միայն է մնացեալ առանց
գլխաւոր վնասուց՝ շնորհօքն Աստուծոյ։ Զի ի կենդանութեան լուսահոգ-
ւոյն, ոմանք զպատիւն նորա պահէին և ոմանք պատկառէին և երկըն-
չէին ի նմանէ, վասն որոյ ազատ մնայր սուրբ Տունս, իսկ մինչև մերձ
եղև լուսահոգին ի վախճանիլ, իբրև ետես թէ յօրէ յօր բազմանան, քան
թէ պակասին չարիք և վնասք երկրիս, նախահոգաբար ցուցեալ ի վե-
րայ Տանս սրբոյ, զի մի յետ իւր մնասցէ յանտիրութեան և զիպեսցի
մեծաց վնասուց, մեծաց փրկագործ հաղորդութեանն, կտակեալ էր մեզ
ի ձեռն խոստովանահօրն, զի զընիկ և զաշխատաւոր միաբանն սրբոյ
Աթոռոյս՝ զտէր Ղուկաս արհիեպիսկոպոսն արասցուք կաթուղիկոս։ Իսկ
զկնի վախճանման երանելւոյն մինչ ի մի վայր ժողովեցաք բոլոր միա-
բանք սրբոյ Աթոռոյս և մնացորդ քահանայք, մէլիքք, իշխանք և ժողո-
վուրդք երկրիս և զօգտից սրբոյ Տանս խորհեցաք, և իմացաք զկտակ
լուսահոգւոյն, մեք ևս տեսաք, զի այս էր օգուտն Տանս սրբոյ յայս նեղ-
կայիս, որպէս կտակեալ էր լուսահոգին։ Զի թէպէտ ըստ հին սովորու-
թեան պարտ էր մեզ ցուցանել ձեզ զընտրելին յայս աստիճան, բայց
այն չէր օգուտ սուրբ Տանս, այլ վնաս։ Վասն զի զորոց կասկածէր երա-
նելին, զնոցին նշանսն տեսեալ զփորձն առաք, զի չէր հնար առանց
մեծաց վնասուց մնալ Տանս սրբոյ, մինչ երկար միջոցաւ յանտիրու-
թեան մնայցէր։ Ապա թէ ոչ, հարկն պահանջէր, զի զընիկ սովորութիւնն
առնէաք։ Մանաւանդ և այս իսկ հարկ էր, զի զարժանաւոր պատրիարքդ
մեծիդ Պօլսոյ՝ զՋաքարիա աստուածաբան վարդապետդ հրաւիրէաք նա-
խապէս յայս աստիճան, եթէ ոչ էր արգելիչ լեալ ժամանակին ձախոր-

դութիւն։ Զի յայսմիկ կիտոջ զգա և զսա միայն գիտեմք արժանի այսմ
կոչման։ Որպէս և դուք գիտէք։ Բայց մինչ հարկն այսպէս պահանջեաց,
ոչ զդա հրաւիրել կարացաք և ոչ նախապէս ձեզ ազդել, զի բռնութիւն
ժամանակիս ոչ ետ մեզ միջոց։ Վասն որոյ ի յԱստուծոյ գիտացեալ
զայս, մեք բոլոր միաբանքս սրբոյ Աթոռոյս և համայն երկրականքս՝
10բ մեծահանդէս սինհոդոս արարեալ առաջի աստուածաէջ սրբոյ // սեղ-
անոյս և միախորհուրդ լեալք ըստ նախատնօրէնութեանն Աստուծոյ, ընտ-
րեցաք զվերոյ յիշեալ հայրն մեր, սրբափայլ զտէր արքեպիսկոպոսն,
լինիլ մեզ և ազգիս մերոյ և սրբոյ Աթոռոյս հայրապետ։ Որ թէպէտ
բազմիցս հրաժարեալ չառնոյր յանձն, այլ մեք ոչ թողաք զսա ի կամս
իւր։ Զոր և օծաք ի կաթուղիկոսութիւն Տանս Հայոց ի յօգոստոսի ամ-
սոյ Բ(2), զի չկարացաք երկարել զմիջոցն վասն առաջիկայ վտանգիցն։
Ուստի զայս համահաւանութեանս մերոյ Թուղթ գրեալ և կնքեալ, ահա
ձեռամբ սիրելի եղբօր մերոյ՝ Պետրոս վարդապետիդ առաքեցաք առ
աւագագոյն եղբարսդ մեր, զի և դուք իրաւաբար յԱստուծոյ գիտելով
զայս, և առ ոտս հարկանելով զաւերողական խորհուրդ և զընդդիմա-
բանութիւնս, և համաձայնեալ մեզ՝ լինիցիք կամակից մերոցս կամաց
և կնքիցէք զհամահաւանական գիրս մեր, զի լիցուք մի հօտ և մի հովիւ,
որով լինիցիք պատճառք շինութեան և խաղաղութեան։ Եւ մի՛ գուցէ
տեղի տայցէք այլ և այլ խօսից և կարծեաց, որով լինիցիք պատճառք
մեծամեծ վնասուց սրբոյ Աթոռոյս և գայթակղութեան հասարակ ազգիս։
Քանզի արարեցեալս մեր խորհուրդ, զոր և կատարեալս իսկ է Աստու-
ծով՝ բազմաւ խորհրդով և հասարակակամ միաբանութեամբ։
Օրինակն սորին ի նոր տէտէր 10 երեսն տես։

70. Կոնդակ անդրանիկ օրհնութեան գրեաց սրբազան Վեհն ի Կոս-
տանդնուպօլիս, ըստ ի Թիֆլիզ գրեալ կոնդակին (որ յիշեցեալ է ի յօ-
գոստոսի Ը (8), նոյնպէս ծանուցանելով զմահ լուսահոգւոյն և զյաջոր-
դելն իւր զսուրբ Աթոռս հանդերձ երեւելի պատճառօքն։ Բայց յայսմիկ
աւելի վասն սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետին վերահաս-
տատութիւն, զի զթերին գործոյն կատարեսցէ։

71. Թուղթ առ իշխանսն Պօլսոյ գրեաց սրբազան Վեհն, թէ եթէ
զհոգելոյս հայրապետին մերոյ վախճանն և թէ զմերս յաջորդելն զԱթո-
ռըս սուրբ, փոքր ի շատէ գրեալ եմք ի հասարակ կոնդակոջ մերում, զոր
ի վերայ քաղաքիդ ձերոյ գրեալ յղեցաք յայդր ընդ մահսարաքեր Պետ-
րոս վարդապետիդ, յորմէ իմանալոց էք, զոր ինչ գրեալ եմք։ Եւ ապա
զայս գրեաց, թէ կոչիլս մեր յայս պաշտօն էր վասն չորից մեծ պատ-
ճառաց, զորս թէպէտ ի հասարակ կոնդակոջն անորոշապէս ցուցեալ
եմք, այլ աստ որոշակի ծանուսցուք։ Առաջինն էր հաւանութիւն և ընտ-
րութիւն միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս։ Երկրորդն էր կտակ
լուսահոգւոյն։ Երրորդն՝ ձախողակի եղելութիւնք ներկայիս, որք չետուն
մեզ բանալ զաչս։ Իսկ չորրորդն՝ անգրելիք ոմանք տնաքակ վնասք,
զորս գրաբերիդ թողցուք ասել ի ծածուկ։ Յետոյ թէ առ առաջինն, որ
համակամութեամբ ընտրեցին զմեզ միաբանք սրբոյ Աթոռոյս և երկրա-
11ա ցիքս, գրեալ են զգիտումն իւրեանց ի բազմակնիք Թղթոջ իւրեանց, զոր
տեսանելոց էք։ Իսկ առ երկրորդն, որ էր կտակ լուսահոգւոյն, // սոյն
գիտասցիք, զի ի ՌՄԻԵ (1776) Թուոջ մերում, մինչ ի վիճակէն իմմէ
Զմիւռնոյ դարձայ ի սուրբ Աթոռս, զտի զերանելին ի պէսպէս զբաղմունս

և ի ցաւս անձնականս և արտաքինս. ընդ որում և մեք ցաւէաք։ Եւ ի յայսմ ցաւակրութեան խրում մինչ երկիրս մեր ևս սկսանէր լնանիլ խռովութեամբք, զնուաստութիւնս մեր ոչ յղեաց ի գործ ինչ արտաքին, պատճառելով թէ պիտոյ ես ինձ աստէն ի ցաւակցիլ ինձ։ Իսկ մինչ անցեալ ամի փորձութիւնքն ևս անցին զմեօք և լուսահոգին զհիւանդութիւն զտեալ մերձ եղև ի վախճանիլ և նոեա զերկիրս լցեալ ամենակերպ դառնութեամբ, վասն որոյ (որպէս ահա իմանալոց էք ի միաբանից մահսարէն և ի մեր կոնդակէն) կատկեալ էր զմեզ կացուցանել յայս պաշտօն։ Զոր ի լսելն առիպողացն զմեզ, ևս առաւել բռնադատեցին զմեզ և արկին ընդ այսու լծով։

Իսկ առ երրորդն, որք են ձախողակի եղելութիւնք ներկայիս. թէ զի՞նչ էին, որք հարկեցին սոցա փութով տալ այսմ զկատարումն, թողեալ զանգրելիսն, ասացից զոմանս։ Զի մինչդեռ կենդանի էր լուսահոգին, ժանտքն երկրիս ասելով զայս սուտ, թէ խալիֆայն վախճանեալ է, բայց ոչ յայտնեն, զմեծամեծ վնասս հասուն մեզ։ Ջնջանաւոր զեօղ մի մլքատու սրբոյ Աթոռոյս զաւթէցին հանդերձ երկու այգեօք մերովք, որք անդ, և զգիւղակոնոն մերկս և զվիրաւորս փախուցին, և յայլ վնասատուութիւնս ևս ձեռն արկին, զորս իմացեալ լուսահոգւոյն յոյժ կսկծեաց, և գիտելով թէ յետ ինքեան չարագոյն են վնասելոց զսուրբ Տունս, վասն որոյ և պատուիրեաց փութով տէր կացուցանել սմա։ Իսկ մինչ զլսառոյգ վախճանումն իմացան, ապա համարձակեցան և յայս գեօղ և ի մեզ ևս ձեռնամուխ լինիլ։ Եւ սպառնային ևս, թէ մինչ Վրացին կրկին գայցէ, զատարկելոց եմք զայս Տունս, զի մի երևեսցի աստ շինութիւն, որ նմա ուժասու լիցի։ Իսկ միաբանք սրբոյ Աթոռոյս և երկրականքս մինչ լուան զայս ամենայն, աճապարեալ կատարեցին զառաջադրութիւնս իւրեանց՝ զի մի՛ անտէր մնալով սուրբ Տունս, կոխան լիցի աներկչաց։

Ահա վասն այսորիկ ոչ կարացին զմիջոց գտանել և ձեզ ազդել նախապէս։ Որք և աստէն, թէ եթէ նոքա գոլով ի խաղաղ երկրոջ և ի թագաւորանիստ քաղաքի չկարացին նախ ազդել սրբազան Հայրապետին մերոյ և ապա զնորին նուիրակն առնել իւրեանց պատրիարք, այլ զկնի առնելոյն ազդեցին և նա հաճեցեալ ընդ այն զշնորհաւորութիւնս գրեաց, ապա մեք յայսպիսի երկրոջ և յայսպիսի ժամանակի ո՞րպէս գտցուք զմիջոց և ազդեսցուք նոցա։ Որոց թէպէտ շատ ընդդիմացաք, բայց այս ի վերոյ ասացելովքս կասեցուցին զմեզ ի մերոց կամաց։ Եւ երկեաք թէ պատճառ լինիցիմք վնասուց սրբոյ Աթոռոյս։ Ուստի յանձն առաք զծանրութիւն լծոյս տիրականի։

Եւ ի վերջոյ զայս գրեաց, թէ պատրիարքն տեղւոյդ, որովհետև բազմաշխատ որդի է սրբոյ Աթոռոյս և մեզ մեծապատիւ եղբայր, վասն որոյ զդա առաւել արժանի վարկանէի այսմ շնորհի։ Այլ դա հեռի գոլով
11բ և // ժամանակին բուռն լինելով, այսպէս եղև։ Այժմ եթէ հաճոյ թուեսցի պատրիարք եղբօրն իմոյ և ձեզ, ապա օգնեցէք տկարութեանս մերում, և զի կարասցուք և մեք ըստ մերում կարի կառավարել զսուրբ Աթոռս և զհասարակութիւն ազգիս։ Ապա թէ ոչ, գիտէ Աստուած, զի այլ ես իմ առանձին կեանքն է ինձ սիրելի և զով ոք յղել կամիցիք, ես ընդառաջ ելեալ շնորհաւոր լիցի եմ ասելոց։

Զգաղափարն սորա ի նոր տէտր 100 երեսն տես։

72. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Պոլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն[20] գրեաց, ըստ մտաց վերոյ արեալ իշխանաց թղթոյդ երկա-

րապէս և այլ ոճիւ, բայց ի պատմելն զձախողակի եղելութեանցն վնասաբերից սրբոյ Աթոռոյս, և զայս գրեաց, թէ յաւուր վախճանի սրբազան Հայրապետին մերոյ, մինչ ազդեցաք մեծին երկրիս մերոյ, զոմն ի ծառայից իւրոց քանեօք արամբք յղեաց աստ իբրու ի պահպանել զմեզ, որք զպահպանութենէ չարարեալ ինչ փոյթ, զբանալիս արտաքին դրանցն ժողովեցին առ ինքեանս, չասելով զպատճառն և զրաբանելով ևս զմեզ, թէ ձեռն էք արկեալ ի Հիւսիսայինն՝ առ ի բերել ի նմանէ զզօրս ի պահպանութիւն ձեզ։ Իսկ և զի լուսահոգին նեղասրտեալ և վիրաւորեալ էր ի սմանէ (որպէս երկարօրէն ցուցեալ գոյ 'ի յառաջնում յիշատակարանոջ, որ յաւուրս նորին ի սոյն ՌՄԻԹ (1780) թուոջս մեռում և ի մայիսի ԻԲ (22), և ի վերոյս նորին ի շատ ուրեք և յաճախ յոյժ)։ Վասն որոյ այժմ գրեաց սմա, թէ սուղ ինչ պղծութեանն, որ ի մէջ լուսահոգւոյն և քոյ էանց և երթևեկութեան թղթոցն, թէպէտ և ես տեղեակ եմ մասամբ ինչ, այլ թէ զինչ իցեն գրեալք նորա առ քեզ և քոյդ առ նա, տակաւին չտեղեկացայ, զի որքան անկեալ եմք ընդ այսու լծով, դեռևս չեմք տեսեալ կամ ընթերցեալ զթուղթ ինչ և ոչ մեզ հարկաւորացն հետևիլ կարացաք տակաւին։ Սակայն ի յարգելի եղբօրէդ զայս խնդրեմ, զի որովհետև լուսահոգին վախճանեցաւ, դու ևս մոռասցիս զամենայն անցեալսն և զսիրտդ կատարելապէս ուղղեսցես առ սուրբ Աթոռս։

Եւ ի վերջոյ թղթոյն գրեաց, թէ մինչ զայսքան բանս գրեալ և պատրաստեալ էաք զՊետրոս վարդապետդ ի յղել, եհաս աստ առ մեզ թաթարն ի ձէնջ յղեալ բազմակնիք թղթով ձերով, զորոյ պատասխանն ահա միաբանք սրբոյ Աթոռոյս գրեցին։ Ընդ նմին զմի թուղթ ևս մեք գրեցաք և ընդ Պետրոս վարդապետին յղեցաք առ հասարակութիւն գրողացդ նոյնոյ թղթոյն։

Զօրինակն սորա ի նոր տետր 97 երեսն տես։

73. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետն՝ ըստ մտաց թղթոյ պատրիարքին և իշխանաց համարակ թղթոյն։ Եւ ապա թէ մինչ միաբան համակամութեամբ հաճեցին ընդ այս եղելութիւն, ապա զՊետրոս վարդապետդ ըստ օրինի և ըստ պատշաճի առ մեզ դարձուսցիք, դու ևս զդա ի սէր ունելով յամենայնի և օր մի յառաջ առ մեզ
12ա դարձուցանել // ջանալով և զմեզպատշաճ որպիսութիւնս գրելով։

Զօրինակն սորա ի նոր տետր 114 երեսն տես։

74. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ մահտեսի Յարութիւն ամիրայն՝ ըստ գիտաւորութեան վերին թղթոցդ[21]։ Եւ ի նմա աւելի վասն նոյնոյ տեղւոյն նուիրակ Մինաս վարդապետին և արտաքին վճակացն նուիրակ Գալուստ վարդապետին և վասն մահսարատար Պետրոս վարդապետին յանձնարարութիւն։

Սորին զօրինակն գիտ ի նոր տետր 13 երեսն։ Յայսմիկ թղթոջ ողջոյն որդւոյն սորա՝ մահտեսի Յովաննէսին և փեսային իւրոյ խօջայ Մարտիրոսին։

75. Թուղթ ևս առ Արևելցի պարոն տիրացու Գէորգն և Աստուածապահն՝ ըստ նոյն մտաց[22], բայց սոցա ևս զայս յատուկ գրեաց, զի յառաջագոյն երանելի սրբազան Վեհն ի վերայ սոցա բարկացեալ էր և սոքա ևս յերկար ժամանակս ոչ առնէին փոյթ գրել զմեզայական գիր և շահել զսիրտն և առնուլ զօրհնութիւնն։ Ուստի ոչ լինէր թղթոց երթևե-

կութիւն։ Իսկ սոյն սրբազան Վեհն մեր թղթով խրատեալ զսոսա, զմեղայական գիր եբեր ի սոցունց առ լուսահոգին, վասն որոյ և նա գիջեալ ի բարկութենէն, զօրհնութեան թուղթս գրեաց նոցա քանիցս։ Այնր աղագաւ գրեաց այժմ, թէ առնուլ ձեր վերջապէս զօրհնութիւնս լուսահոգւոյն, ի յԱստուծոյ խնամոցն էր։ Նմին իրի էր այնքան ստիպելն իմ զձեզ, թէ ջանացարուք առնուլ զօրհնութիւնն, զի ի ծերութեան է և ի մէջ հիւանդութեան և ցաւոց, զի մի և ձեզ խղճմտանք լիցի վերջապէս։ Ի սմա ևս ողջոյն գրեաց պարոն Պօղոսին, պարոն Եսայեան, պարոն Գասպարին և վարդապետի տղայ պարոն Մկրտչին։

Զսորին օրինակն գիտ ի նոր տետր 14 երեսն։

76. Թուղթ ևս առ Արևելցի մահտեսի Կարապետն գրեաց վերոյ գրելոցդ դիտաւորութեամբ, փոքր մի համառօտապէս։ Յորում և ողջոյն որդւոյն սորա մահտեսի Յակոբին և ընկերին՝ պարոն Մարտիրոսին։

77. Թուղթ ևս ի վերայ Հացագործ Մարտիրոս ամիրային գրեաց դոյնոյ վերոյ գրելոյդ շարադրութեամբն, բայց որ վասն պատրիարքին զբան ինչ գրեաց ի քան զայս վերին թուղթսն, թէ թէպէտ այժմ սատիճանի զդա համարէի արժանի և կամէի, այլ վասն բերմանց ժամանակիս զմեզ արկին ընդ այսու լծով և այլն (զորոյ երկարն ի հասարակ իշխանաց թուղթն տես) ասա ոչ գրեաց։

78. Թուղթ ևս նոյնպէս առ Պետրոս ամիրայի որդի Մկրտիչ ամիրային և իւր որդի Աղէքսանդր Չէլէպին, յորում և վասն վախճանման հօրն և մօրն մխիթարութիւն։ Սոքա ի Վալիտա խանն են։

79. Թուղթ ևս նոյնպէս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն,
12բ առ խոջայ Առաքելն և առ Թա//դէոսն։ Եւ զի զսոցանէ կոտրութեան կարծիք գոյր, վասն որոյ յայս թղթոջս գրեաց, թէ զձեր ողղխութիւնն գրեցէք, զի իմասցուք։

80. Թուղթ ևս առ Ղումղափիու գանձապէտ խօջայ Յակոբն՝ կարճառօտ քան զվերին թուղթսդ և ըստ զոցին մտաց։ Իսկ և պատուէր, զի գանձապետական գործոյն սրբոյ Աթոռոյս հարաղատապէս մուղայէթ լիցի, որպէս և յաւուրս հոգելոյս սրբազանին։

81. Թուղթ ևս ի վերայ Պալաթու գանձապէտ խօջայ Սահակին նոյնպէս։ Սորայ եղբայր Մարգար ամիրային ողջոյն։

82. Թուղթ ևս ի վերայ Ղալաթիու գանձապէտ խօջայ Խաչատուրին՝ վերնոցդ մտօք։

83. Թուղթ ևս ի վերայ Խասգիւղի գանձապէտ խօջայ Յովաննէսին և ողջոյն որդւոյն սորա Եղիային։

84. Թուղթ ևս առ Օրթագիւղի գանձապէտ խօջայ Արսէնն՝ ըստ վերնոցդ մտաց։

85. Թուղթ ևս առ Իւսկիւտարու սուրբ Կարապետին գանձապետ մահտեսի Խոսրովն նոյնպէս։

86. Թուղթ ևս առ Ղարթալու գանձապէտ Յարութիւնն Եաղուբօղլի նոյնպէս։

87. Թուղթ ևս ի վերայ Սամաթիու գանձապէտ մահտեսի Սահակին

և եղբարցն՝ մահտեսի Թօմային և մահտեսի Ցահրատին և որդւոցն՝ Յովաննէսին, Խաչատուրին և Գաբրիէլին։

88. Թուղթ ևս առ մահտեսի Եղիազարն և մահտեսի Վարդերեսն գրեաց սրբազան Վեհն, նախ ծանուցանելով զմահուանէ հոգելոյս հայրապետին մերոյ, երկրորդ՝ զյաջորդելոյն իւրմէ զԱթոռս սուրբ, և յետոյ՝ զյորդորմունս, զի օգտաջան և ջատագով լիցին սրբոյ Աթոռոյս։ Եւ թէ զկիագոյնն անցիցս մերոց ի հասարակ կոնդակէն մերմէ ի բազմակնիք թղթոյ միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս մերոց, նաև ի մահսարաբեր Պետրոս վարդապետէդ իմանալոց էք, զոր և ի սէր ունիցիք։ Սոքա են ի մեծ նոր խանն։

89. Թուղթ ևս առ Սախաօղլի մահտեսի Մարտիրոս ամիրայն և առ իւր եղբայր Գրիգոր ամիրայն նոյնպէս։ Սա է ի Վալիտա խանն։

Միաժամանակ նույն բովանդակությամբ՝ «ըստ նոյն մտաց» նամակներ են ուղարկվել նաև Կ. Պոլսի տարբեր իշխանատներում ապրող ներքոհիշյալ անձանց. քերեստեճի Բարսեղ ամիրային, սառաֆլար քյահիասի Մարգար ամիրային, Պողոս աղայի որդի Հովհաննես ամիրա Մուրադյանցին, հանգուցյալ Ղազար աղայի որդիներ՝ մահտեսի Ստեփանին, Հակոբին և Հովհաննեսին, Խանումօղլի կոչեցյալ Եփրեմ ամիրային, Մկրտիչ ամիրային և նրա փեսաներ Ստեփան և Գրիգոր ամիրաներին, սառաֆ Ստեփան ամիրային և նրա որդի Ռեբեոս Չելեպուն, Ղումղափուի ս. Աստվածածին եկեղեցու մութավելիներ՝ Առաքել և Հովհաննես ամիրաներին, վարժապետ տիրացու Պողոսին, երկու Գևորգ ամիրաներին և մահտեսի Մինաս Ջերեզենցին, կեսարացի քերեզտեճի Վարդանին (Սամաթիա), ակնցի մահտեսի Գևորգ ամիրային, վանեցի խոջա Ասլանին, ջուղայեցի մահտեսի Գալուստին, Արևելցի տիրացու Մնացոյին, սուլանաճի տիրացու Ղազարին, Նուրենց Հարությանին, Կարապետին, Ավետիսին, պրն. Մեյրամղուլուն, պրն. Փանոսին, պրն. Հովհաննեսին, մահտեսի Թումանին, պրն. Հովհաննեսին, պրն. Թադեոսին և մահտեսի Ղատտաշի որդիներին, Երուսաղեմի վեքիլ Սարգսին (էջ 12բ—13ա)։

1780 թ. սեպտեմբեր—Յարտաքին վիճակսն մեծին Պօլսոյ գրեալ թուղթք

90. Կոնդակ հասարակապէս ի վերայ համայն թեմիցն Պօլսոյ գրեաց սրբազան Վեհն, ըստ օրինակի ի Պօլիս գրեալ կոնդակին, զոր ի վերոյ յղեցաք, յորում և վերանորոգութիւն նուիրակութեան Գալուստ վարդապետին։

91. Թուղթ առ Ադրանայու առաջնորդ Պետրոս վարդապետն գրեաց, պատմելով զվախճան հոգելոյս սրբազանին և զյաջորդելոյն իւրմէ զԱթոռս սուրբ։ Եւ ապա զյորդորմունս, թէ որպէս ի ժամանակս հոգելոյս հայրապետին, նոյնպէս և ի մէրս ժամանակի պարտիս սրբոյ Աթոռոյս օգտիցն ջանացօղ լինիլ։ Եւ վասն Գալուստ վարդապետին զյանձնարարութիւն գրեաց։ Եւ թէ զերկարապէսն մերոյս անցից ի հասարակ կոնդակէն մերմէ, զոր ի վերայ քոյդ վիճակի և միւս արտաքին վիճակացն Պօլսոյ գրեալ յղեցաք, իմանալոց ես, նաև ի մահսարաբեր Պետրոս վարդապետէդ, եթէ պատահիցի քեզ։ Իսկ ի վերջոյ ողջոյն և օրհնութիւն նորին վիճակի քահանայիցն, իշխանացն և ժողովրդոցն։

92. Թուղթ ևս նոյնպէս առ Թրակիոյ առաջնորդ Յակոբ վարդապետն։

93. Թուղթ ևս առ Պանտրմայու առաջնորդ Պօղոս վարդապետն ևս նոյնպէս, բայց կարճառօտ։

94. Թուղթ ևս առ Գալուստ վարդապետ նուիրակն սրբոյ Աթոռոյս
ի վիճակսն, նոյնպէս գրելով զմահ լուսահոգի սրբազանին և զմխիթա-
13բ րութիւնս հանդերձ քաջալերութեամբ, նաև զկացուց//մանէն իւրմէ յԱ-
թոռ հայրապետութեան ի սուրբ Աթոռս: Այլև զայս յատկապէս, թէ վասն
անցիցս մերոց զթուղթս օրհնութեան գրեցաք ի մեծն Պօլիս և յայլ տե-
ղիս և հանդերձ մահսարաւ միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս
յղեցաք ընդ Պետրոս վարդապետին: Իցէ թէ պատահեսցի քեզ և իմա-
ցիս լիով զմեր ամենայն որպէսն: Զքոյդ թուղթսն ևս ընդ նմա յղեցաք
հասուցանել առ քեզ: Եւ քոյդ վիճակի առաջնորդացն ևս գրեցաք զթուղ-
թըս վասն մերս անցից, հանդերձ հանձնարարութեամբ վասն քոյ: Իսկ
իշխանաց կամ այլոց ոչ եղաք ձեռնհաս, դու ամենեցունց զմէնչ ողջոյն
տացես: Եւ թէ կարես զհնարն գտանել, զկոնդակդ շուտով ընթեռնուլ
տուր ի քաղաքսն Թեմիդ, զի իմասցին զմեր ամենայն անցսն, և ապա
ընդ քեզ շրջեցո ի մնացեալ տեղիսն ևս: Եւ թէ մինչ զայս ամենայն
գրեալ էաք և յղել կամէաք, ժամանեաց աստ ի Թոխաթու գրեալ թուղթդ
առ Մկրտիչ վարդապետն, յորմէ իմացաք զքոյդ եկանելն անտի դէպ ի
վիճակն քո: Արդ, գրեսցես ուրեմն զորպէսն քո և զգործոյդ և թէ այժմ
ո՞ւր կաս, ձեռնարկեա՞լ ես ի գործդ, թէ ոչ, կամ զլուսահոգւոյ մահն
ե՞րբ լուար՝ նախ քան զձեռնարկե՞լդ ի գործդ, թէ յետոյ: Եւ որ ինչ ի
մերս կողմանէ կամ վասն քոյդ գործոյ անցք և զրոյցք իցեն, մի ըստ
միոջէ մեզ ծանուցես զգիրդ անպակաս առնելով:

1780 թ. սեպտեմբեր—ի Զմիւռին գրեալ թուղթք

95. Կոնդակ գրեաց սրբազան վեհն ի վերայ Զմիւռնոյ[23] և ի վերայ
շրջակայից նորին, ըստ ի վերդ գրեցելոցն առ այլ տեղիս, յորում և վա-
սըն նուիրակութեան և առաջնորդութեան Փիլիպպոս վարդապետին զար-
ձեալ հաստատութիւն:

96. Թուղթ անդրանիկ օրհնութեան գրեաց սրբազան վեհն ըստ մի-
տաց առ այլս գրեալ թղթոցն, առ Աստուածատուր և Առաքել աղայսն-
տաց ծանուցանելով զվախճանումն երանելի սրբազան վեհապետին և զհայ-
րապետանալն իւր ի սուրբ Աթոռս երկարապէս: Ապա զյորդորմունս, և
վասն Փիլիպպոս վարդապետին զյանձնարարութիւնս: Իսկ և ողջոյն
Մարգար, Մատթէոս, Յակոբ և Պետրոս աղաղատէիցն: Եւ զկնի տէր Գա-
լուստին ևս ողջոյն:

Միաժամանակ «ըստ նոյն մտաց» նամակներ են ուղարկվել նաև մահտեսի Կարա-
պետ Չալիկյանին, Ալեքսան Չելեպոնց Ավետիք աղային, բասմաճի խոջա Խաչատուրին,
Երեմիա Վիրապօղլուն, Ղուկաս աղա Մարկոսյանին, Շահվերիլի որդիներ՝ տիրացու
Գեորգին և Հարությունին, քանաքեռցի մահտեսի Խաչիքարին, տեր Ստեփանին, Երա-
սաղեմի գործակալ մահտեսի Կիրակոսին և խոջա Պետրոսին:

97. Կոնդակ գրեաց սրբազան վեհն ի յԱմստէրդամ ի վերայ մե-
14ա ծամեծ թագնէիցն, որք անդ[24]: Յորում ծանուցումն վասն մահուան ի Տէր հան-
գուցեալ սրբազանին և հայրապետանալոյն ինքեան ի սուրբ Աթոռոջս
և ապա՝ զհոգևոր պատուէրս առ ի անշեղ և հաստատուն մնալ ի սուրբ
և յանբիծ հաւատս մեր: Իսկ յետոյ վասն ԵԾԿ (560) ղուռուշ նուիրակա-
կան արդեանցն իւրեանց, զոր հասուցեալ էին Զմիւռնոյ նուիրակ և ա-
ռաջնորդ Եսայի վարդապետին, զշնորհակալութիւնս և զմխիթարութիւնս
գրեաց, թէ ի կենդանութեան հոգելոյս հայրապետին մերոյ ի սուրբ

Աթոռս է հասուցեալ: Եւ թէ վասն նուիրակական և առաջնորդական
գործոց Փիլիպպոս վարդապետին ի Զմիւռին՝ զվերանորոգութիւնս գրե-
ցաք անդ: Որ թէ մինչև ցարդ ձեզ զմեռոն չիցէ յղեալ, այժմ յղելոց է:
Իսկ ի վերջոյ զյորդորմունս առ ի հաստատուն կալ ի սէր սրբոյ Աթո-
ռոյս և զտուրս իւրեանց առատութեամբ տալ:
Զօրինակն սորա ի նոր տետր 20 երեսն տես:

98. Թուղթ ի յԱմստէրդամ առ գեանչեցի պարոն Մնացականն, ըստ
ի վերոյդ գրեալ թղթոցն մտաց: Իսկ ապա զայս, թէ որ վասն ամուս-
նոյն քոյ զԴԾ (400) ղուռուշ ես յղեալ խարճի յառաջագոյն, չև ևս հա-
սեալ ի սուրբ Աթոռս, ամուսինն քո վախճանեալ է: Զորս մահն լուսա-
հոգի սրբազանն յանցեալ ամի յուլիսի ամսոջն գրեալ է քեզ, և զայն
դրամոյ ի Կարին հասանիլն, նաև զայս թէ զոր ինչ և գրեսցէս վասն
այն դրամոյն, այնպէս արասցուք: Արդ և մեք այժմ զայս գրեմք քեզ,
զի այն դրամն ի Կարնոյ ևս ի սուրբ Աթոռս է հասեալ, զոր ինչ կամի-
ցիս, գրեա մեզ, զի այնպէս արասցուք: Եւ վասն կնոջն զմխիթարու-
թիւնս գրեաց: Այլև վասն սորա առեալ Ա (1) ձեռաց խաչին ոսկեայ, զոր
յղեալ էր ի Զմիւռին առ Մօսկով կոչեցեալ պարոն Յովաննէսն՝ առ ի
հասուցանել ի սուրբ Աթոռս, զոր և նա առեալ էր անդ մեր Փիլիպպոս
վարդապետին այնպէս առնել: Զշնորհակալութիւնս և զմխիթարութիւնս
գրեաց, թէ մեզ հասեալ իմացիր առանց երկբայութեան:

99. Թուղթ ևս ի Զմիւռին առ Մօսկօֆ կոչեցեալ պարոն Յովան-
նէսն, յորում նախ զխտաւորութիւնք հասարակք վերոյ գրեալ թղթոցդ,
որոց զկնի այս, թէ ի սոյն թուոջ ապրիլի ԻԷ (27) գրեալ թուղթդ հա-
սեալ է առ հոգելոյս սրբազանն՝ քանի մի օր յառաջ քան զմեռանիլն,
14բ զորոյ // պատասխանն այլ չէ կարացեալ գրել: Իսկ այժմ իմա, զի զայն
ոսկեայ խաչն ձեռաց, զոր գեանչեցի Մնացականն ի յԱմստէրդամու
յղեալ է առ քեզ և դու առեալ ես Փիլիպպոս վարդապետին յայդր՝ հա-
սուցանել ի սուրբ Աթոռս, զոր նա գրեալ է, որոյ կշիռն է ԺԸ (18)
մսխալ և կէս, ահա մեզ հասեալ համարելով, զօրհնութեան թուղթ գրե-
ցաք նմա: Եւ վասն այն ԴԾ (400) ղուռուշին, զոր սակս ամուսնոյն իւրոյ
յղեալ էր, լուսահոգին գրեալ է նմա յառաջ, թէ ի Կարին է հասեալ և
ամուսինն քո վախճանեցաւ, այժմ որպէս և կամեցիս, այնպէս արաս-
ցուք: Որոյ սակս և ես ահա գրեմ սիրելւոյդ, զի այն դրամն ի Կարնոյ
ևս ի սուրբ Աթոռս է հասեալ: Ուստի պարոն Մնացականին գրեցաք, զի
զի՞նչ և կամիցի գրեսցէ մեզ և մեք այնպէս արասցուք: Ուրեմն և դու,
սիրելիդ մեր, այսպէս գիտացեալ ծանր նմա և որպէս կամիցի, այնպէս
արասցուք: Եւ թէ ընդ թղթոյ պարոն Մնացականին ահա զթուղթ մի
օրհնութեան ևս ի վերայ Ամստէրդամու ժողովրդեանս գրեցաք: Զորս ի
միասին տալոց է քեզ Փիլիպպոս վարդապետդ, զորս պարտիս յղել ի
յԱմստէրդամ և մեզ ծանուցանել: Իսկ յետոյ թէ վասն զանազան զբա-
ղանաց մերոց չկարացաք զթուղթ գրել առ պարոն Առաքել եղբայրն
քո և առ պարոն Ալեքսանն, յետոյ ի դէպ ժամանակի գրելոց եմք, դու
զմէնչ ողջոյն մատուցեալ նոցա գրով ծանո այսպէս, զի իմասցին: Այլև
ողջոյն եղբօրն սորա մահտեսի Թովմասին և որդւոյն սորա Եսայուն:

100. Թուղթ ևս ի Զմիւռին առ Փիլիպպոս վարդապետն՝ ըստ օրի-
նակի Պօլսոյ թեմից նուիրակ Գալուստ վարդապետի թղթոյն: Իսկ յետ
զհասարակ բանսն գրելոյ զԱմստէրդամու Մնացականի թղթոյ միասն ծա-

նոյն ամա, թէ զայս ինչ գրեցաք նմա։ Եւ թէ ի յԱմստէրդամ ես զկոնդակ մի գրեցաք վասն սոյն մերոյս անցից և զշնորհակալութիւնս ես վասն առ Եսայի վարդապետն հասուցեալ արդեանցն։ Ահա զերկուսին թուղթսն ես ի ձեռս քո յղեցաք, տուր Մօսկով պարոն Յովաննէսին, զի յղեսցէ յԱմստէրդամ, որպէս և իւրեան գրեալ եմք։ Նաև զայս, թէ ում ումեք յայլք զթուղթս գրեցաք, զամէնն ահա ի ձեռս քո յղեցաք, տուր յիւրաքանչիւրսն, զմէնչ ողջոյն տալով։ Ապա և զայս, թէ զայս թուղթքս ընդ Պետրոս վարդապետին յղեցաք, որ զմահսարն միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրականացս երեր ի մեծն Պօլիս՝ հանդերձ ամենայն թըղթովք մերովք։ Զորս ի յղելն նորա անտի առ քեզ, դու ես զքոյդ և զանդ-յոյդ որպէսն գրեա նմա և զոր ինչ թուղթս առ մեզ գրեսցիք, թէ դու և թէ այլք, զամէնն հասուսցես առ նա, զի ընդ իւր բերցէ։ Իսկ վերջապէս զայս, թէ օրհնեալ իշխանացն տեղւոյդ այնոցիկ, առ որս զթուղթս չեմք գրեալ այժմ վասն անձեռնհասութեանս մերոյ, ի դիմաց մերոց զյատուկ յատուկ ողջոյնս տալով նոցա, շահեա զնոսա, և մեք ի դէպ ժամանակի զթուղթս գրեսցուք նոցա։

1780 թ. սեպտեմբեր—Ի յՌումէլի գրեալ թուղթք

101. Կոնդակ ես սրբազան Վեհն ի վերայ Ռումէլոյ երկրին գրեաց՝ ըստ վերոյ յիշեալ առ այլ տեղիս գրեալ կոնդակացն. յորում և զվերանորոգութիւն նուիրակութեան Մեսրոպ վարդապետին։

15ա 102. Թուղթ ես առ Մեսրոպ վարդապետն գրեաց սրբազան Վեհն՝ ըստ օրինակի առ Պօլսոյ թեմից նուիրակ Գալուստ վարդապետն գրեալ թղթոյն։ Որում և յատկապէս զայս, թէ վասն մերս անցից զթուղթս գրեցաք ի մեծն Պօլիս և յայլ տեղիս և հանդերձ մահսարան միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս յղեցաք ի Պօլիս ընդ Պետրոս վարդապետին և զայս թուղթքս ես ընդ նմա յղեցաք, զի անտի քեզ հասուսցէ։ Եւ յետ այսր, թէ մինչ զայսքանս գրեալ և պատրաստեալ էաք ի յղելն, զմինն հասս առ մեզ Բ (2) թուղթքդ ի Ճաշու, զմինն ի մայիսի ելն և զմինն ի յունիսի ԺԵ (15) գրեալ առ լուսահոգին, յորոց իմացաք զքոյդ որպէսն և զարտմութիւնդ վասն մահուան Մկրտիչ վարդապետին։ Իսկ վասն այն գրեաց զի սա տարակուսեալ էր, թէ ինձ գիր ոչ հասանի, վասն այն գրեաց սրբազան Վեհն, թէ մեք վերահասու եմք, զի քանիցս անգամ գիր է գրեալ քեզ հոգելոյս հայրապետն մեր ի գալն քոյդ թղթոցն և վասն սըրբոյ գեղարդեան գանձանակացն, որ զթուղթ էիր խնդրեալ, զայնս ես է վասն յղեալ երկիցս, որք ի հարկէ առ քեզ են հասեալ մինչև ցարդ։ Եւ վասն զայնս քարոզն, զորս առ հանգուցեալ տեղապահն էր թողեալ սա, գրէր զայնս թէ ըստ վասն ինքեան յատկապէս պահել, ուստի սրբազան Վեհն գրէ, թէ ըստ ժողովեալ հրամանի լուսահոգւոյն, որպէս գրեալ է քեզ յառաջ, զամէնն ժողովեալ են զուրթարով և եդեալ են ի մոմատունն առ ի մնալ անդ վասն քոյ միամիտ լեր։

Եւ վասն Մկրտիչ վարդապետի եղբօր, որդւոյն զմիամտութեանս իմ ի գրեաց, թէ ընդ խնամօքս մեր է։ Այլև նա գրեալ էր, թէ զարդիւնս իմ ի Պօլիս առ Մինաս վարդապետն եմ հասուցանելոց. վասն այն գրեաց սրբազան Վեհն, թէ բարւոք ես մտադրեալ. այդպէս արա և երբ և հասուսցես՝ մեզ գրեա։ Եւ թէ ուր և երթայցես, գրեա զքոյդ և զգործոյդ

որպէսն, հանդերձ այլովք մեզապատշաճ որպիսութեամբք և զարտմութիւնդ ի քէն փարատեա, միր և արի լեր ի գործդ։

1780 թ. սեպտեմբեր—Թուղթք ի Գաղատիա գրեալք

103. Կոնդակ ես սրբազան Վեհն ի վերայ Գաղատիոյ և շրջակայից նորին գրեաց՝ նման ի վերդ գրեալ կոնդակացն առ այլ տեղիս։ Յորում և կրկին հաստատութիւն Յովաննէս վարդապետին ի գործն նուիրակութեան։

104. Թուղթ առ Գաղատիոյ առաջնորդ Ստեփաննոս վարդապետն գրեաց ըստ օրինակի Ադրանայու առաջնորդ Պետրոս վարդապետի թըղթոյն (զոր տես ի վերոյ ի կարգն Պօլսոյ վիճակաց թղթոցն, ըստ որոյ էր և Թրակիոյ առաջնորդ Յակոբ վարդապետի թուղթն)։ Իսկ յայս թըղթոջս և յանձնարարութիւն վասն տեղւոյն նուիրակ Յովաննէս վարդապետին։

105. Թուղթ ես առ Յովաննէս վարդապետն, թէ սակս մերս անցից, թէ վասն սրբազան Վեհի մահուանն և թէ մերս յաջորդելոյն ահա զբազմակնիք թուղթ գրեցին միաբանք սրբոյ Աթոռոյս և երկրացիքս մեր ի մեծն Պօլիս, և մեք զանդրանիկ օրհնութեան թուղթս գրեցաք թէ անդ, և թէ առ այլ տեղիս։ Ընդ որս և զկոնդակ մի ես ի վերայ քոյդ վիճակի գրեալ յղեցաք ընդ Պետրոս վարդապետին՝ առ ի հասուցանել

15բ առ քեզ, յորմէ իմանալոց ես լիով զորպէսն մեր // և սրբոյ Աթոռոյս։ Ապա զյորդորմունս գրեաց առ ի արի կալ ի գործն։ Իսկ և զայս յատուկ գրեաց, թէ ջանա զմնացորդս գործոյդ աւարտել և ի սուրբ Աթոռս դիմել։ Եւ թէ ահա առաջնորդին տեղւոյդ ես զթուղթ գրեցաք, հասուսցես առ ինքն։ Բայց զկոնդակդ յառաջ ի նշանաւոր տեղիս ընթեռնուլ տուր՝ զի ի ձեռն հաստարմաց յղելով, կամ որպէս և դու գտցես զհնարն, զի իմասցին զորպէսն մեր, և ապա ընդ քեզ շրջեցո ի մնացեալ տեղիսն և զմնացորդս գործոյդ կատարեա։

1780 թ. սեպտեմբեր—Ի Թօխաթ և ի վիճակս նորա գրեալ թուղթք

106. Կոնդակ ես ըստ վերոյ գրեալ կոնդակացն յայլ տեղիս յղեցելոց սրբազան Վեհն ի վերայ Թօխաթու և շրջակայից նորին գրեաց, վերանորոգելով յայնմիկ և զնուիրակութիւն Յակոբ վարդապետին։

107. Թուղթ ես առ Կեսարիոյ առաջնորդ Մատթէոս վարդապետն գրեաց՝ ըստ օրինակի Գաղատիոյ առաջնորդ Ստեփաննոս վարդապետի թղթոյն, յորում և յանձնարարութիւն վասն տեղւոյն նուիրակ Յակոբ վարդապետին։

108. Թուղթ ես առ Ակնայ առաջնորդ Միքայէլ վարդապետն գրեաց՝ ըստ վերնոյդ դիտմանց և յոյժ կարճառօտ։

109. Թուղթ ես առ Մարսուանու առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց՝ ըստ նոյն մտաց։

110. Թուղթ ես առ Սեբաստիոյ առաջնորդ Յակոբ վարդապետն գրեաց ես ըստ նոյն մտաց։

111. Թուղթ ևս նոյնպէս առ Արապկերու առաջնորդ Կարապետ վարդապետին գրեաց։

112. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Յակոբ վարդապետն, յորում էր նախ հասարակ միտք Պօլսոյ թեմից նուիրակ Գալուստ վարդապետին։ Այլ յատուկ զայս գրեաց, թէ վասն անցից մերոց զթուղթս օրհնութեան գրեալ հանդերձ մահուարու միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս, յղեցաք ընդ Պետրոս վարդապետին ի մեծն Պօլիս։ Ընդ որում և զքոյդ թուղթսն յղեցաք հասուցանել առ քեզ, որ թէ յերթալն կամ գալն պատահեսցի քեզ, իմանայցես ի նմանէ լիով զմեր որպէսն։ Յետոյ զայս, թէ ահա առ առաջնորդսն քոյոյ վիճակիդ զթուղթս գրեցաք վասն այսց բանից, հանդերձ հանձնարարութեամբ վասն քոյ, իսկ այլոց չեղաք ձեռնհաս, և ի Թօխաթ մահտեսի Աղամջանին միայն կարացաք գրել։ Իսկ ապա զայս, թէ ըստ գրելոյ քեզ հոգելոյս հայրապետին մերոյ, թէ մինչև ոչ ելանիցէ Պետրոս պետն ի Թօխաթու, մի երթիցես անդ, ապա մինչ ելանիցէ, երթիցես։ Ահա Պետրոս պետն ի Թօխաթու ելեալ է, ապա պատեհ է քեզ երթալ անդ, եթէ գնալոյդ ժամանակն է, գնա դու ինքնին և զկոնդակդ ընթեռնուլ տուր առ ի իմանալ ամենեցուն զանցսն մեր և զմէնչ ողջունեա զամենեսեան։ Բայց թէ դու ոչ գնացես անդ այժմ, զկոնդակդ փութով յղեա անդ առ մահտեսի Աղամջանն, զի այնպէս արասցէ և վերստին առ քեզ յղեսցէ, զի ընդ քեզ շրջեցուցես յամենայն տեղիս ի վիճակդ և ընթեռնուլ տացես։ Եւ ի վերջոյ, թէ զամենայն որպիսութիւնս գործոյդ և ուր շրջագայիլդ գրեա մեզ։

16ա 113. Թուղթ ևս առ մահտեսի Աղամջանն գրեաց սրբազան Վեհն՝ ծանուցանելով ի նմա նախ զհասարակ միտս վերոյ գրեալ թղթոյդ։ Իսկ զկնի զայս յատուկ, թէ զկոնդակն, զոր յղեալ եմք առ ձեր նուիրակ Յակոբ վարդապետն, առ ի յընթեռնուլ տալ յամենայն տեղիս այդմ վիճակի, զոր յայդր ևս է ընթեռնուլ տալոց յայնմանէ զլիովինն որպիսութեանց մերոց և սրբոյ Աթոռոյս իմանալոց էք։ Զի այժմ ոչ կարացաք զերկար բանս գրել քեզ և կամ յայդր առ ումանս զթուղթ գրել։ Յետոյ զգուշա թղթով շահելոց եմք, ուստի դու զմէնչ համայն քահանայից, իշխանաց և ժողովրդոցն տեղւոյդ ողջոյն տուեալ այսպէս ծանուսցես, զի թողութիւն արասցեն։ Յետ այսորիկ ևս վասն մահուարատար Պետրոս վարդապետին գրեաց, թէ ի գալն յայդր շուտով ուղևորեա և զերբ ուղևորելդ մեզ գրեա։ Եւ քանզի ես առ լուսահոգի սրբազանն յառաջագոյն զԲս (2) թուղթս էր գրեալ, մին առանց թուոյ և մին ի յուլիսի Իէ (27), որով զԳալուստ վարդապետի ճանապարհելն էր ազդեալ դէպ ի վիճակն նորա, այսինքն ի թեմսն մեծին Պօլսոյ և զԲ (2) օրհնութեան գիր էր խնդրեալ վասն կտակի։ Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն, թէ զոր ինչ գրեալ էիր վասն Գալուստ վարդապետին, իմացեալ միամտեցաք և զխնդրեալ թուղթդ չկարացաք գրել՝ չունելով զժամանակ, յետոյ ի գիպող ժամանակի գրելոց եմք։

Կից գրությամբ հայտնվում է կտակակատարներին հանձնվելիք նամակների ուղարկման մասին։ Բերվում են կտակակատարներ մահտեսի Գրիգորին և խոջա Հակոբին հանձնվելիք այդ նամակների համառոտագրությունները։

114. Կոնդակ ևս սրբազան Վեհն նման ի վերոյդ յիշեալ կոնդակացն, որք յայլ տեղիս գրեցան, ի վերայ Տիգրանակերտու և ի վերայ բոլոր վիճակացն նորին գրեաց, յորում և վերահասութիւն նուիրակութեան Գրիգոր վարդապետին Պօլսեցւոյ։

16բ 115. Թուղթ առ Յամթայ առաջնորդ Կարապետ վարդապետն, ըստ Թօխաթու վիճակաց առաջնորդաց թղթոցն, յորում և յանձնարարութիւն վասն Գրիգոր վարդապետին։

116. Թուղթ ևս ի վերայ գանձապետին սրբոյ Աթոռոյս՝ մահտեսի Յակոբին, ըստ մտաց Պօլսոյ գանձապետացն թղթոց, որ ի վերդ ի կարգիս Պօլսոյ թղթոցն։

117. Թուղթ ևս ըստ նոյն կերպի ի վերայ գանձապետ մահտեսի Մովսէսին գրեաց։

118. Թուղթ ևս ի վերայ Բալուայ առաջնորդ Գէորգ վարդապետին գրեաց, ըստ թղթոյ Կարապետ վարդապետին, որ ի վերդ մերձ յիշեցաւ։

119. Թուղթ ևս ի վերայ Խարբերդու առաջնորդ Աբրահամ վարդապետին՝ ըստ նոյն մտաց։

120. Թուղթ ևս ի վերայ Սահակ վարդապետին, որ է Խարբերդու Դատմայ սրբոյ Աստուածածնի վանից առաջնորդ։

121. Թուղթ ևս ի վերայ Սասնոյ առաջնորդ Յարութիւն վարդապետին, ևս նմանապէս։

122. Թուղթ ևս ըստ նոյն մտաց ի վերայ Չարսանճաղու առաջնորդ Ստեփան վարդապետին։

123. Թուղթ ևս ի վերայ Բալուայ մաշակարաց աւնէֆին գրեաց սրբազան Վեհն՝ շնորհակալութեամբ զնոցանէ վասն գանձանակագրամին իւրեանց ԻԳ (23) ղուռուշին, զոր ընդ նախանցեալ նուիրակին իւրեանց՝ Ղազար վարդապետին էին յղեալ ի սուրբ Աթոռս յաւուրս լուսահոգի սրբազանին, առ որս մոռացմամբ թուղթ չգրեցաւ յայնժամ։ Ուստի ի գնալ նորոգ նուիրակին սրբոյ Աթոռոյս Գրիգոր վարդապետին անդ՝ տրտունջ էին արարեալ, թէ ընդէ՞ր ոչ զօրհնութեան թուղթ գրէ մեզ սրբազան Վեհն։ Ուրեմն ի տեղ ոչ հասուցանեն զմեր արդիւնս ում և տամք (զոր Գրիգոր վարդապետն գրեալ էր աստ)։ Վասն որոյ և սրբազան Վեհն զայս թուղթս գրեաց առ ի շահել զնոսա, գրելով թէ հոգելոյս Հայրապետն մոռացմամբ չէ գրեալ առ ձեզ յառաջ զթուղթ։

124. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Գրիգոր վարդապետն, նախ ըստ հասարակ դիտաւորութեան Գաղատիոյ նուիրակ Յովհաննէս վարդապետի թղթոյն։ Ապա յատկապէս զայս գրեաց, թէ մինչ զայսքանս գրեալ յղել կամէաք, ի Բալուայ գրեալ գիրդ էհաս առ մեզ։ Եւ թէ վասն փոլիցայի, զոր ինչ գրեալ էիր աստ մեր Սահակ վարդապետին, բարւոք էիր գրեալ և այդպէս արասցես, զժողովեալ արդիւնդ հասո ի Կարին առ մեր վէքիլ Հայրապետն, կամ դու փոլիցայ առնելով ի վերայ նորա և կամ նա մինչ փոլիցայ արասցէ ի վերայ քոյ՝ տալով զդրամն։ Ահա մեք ևս գրեցաք Հայրապետին, որ այնպէս արասցէ։ Նաև զթուղթս գրեն

8—815

առ առաջնորդսն վիճակի նորին և առ Յամթայ Բ (2) գանձապետսն և առ սօլկարսն Բալուայ ծանոյց սմա և գրեաց ջանալ առ ի հաստատել զմիս խափանեալ գանձանակսն և զայս թուղթս շատով հասուցանել առ խրաքանչիւր տեարսն։ Եւ ի վերջոյ, թէ եթէ լաւ լինի քեզ, զկոնդակդ յղեա ի Յամիթ և յայլ նշանաւոր տեղիս, զի շատով իմասցեն զանցսն տեղւոյս և զարձեալ բերել տուր այո քեզ և ընդ քեզ շրջեցո, զորպէս առնելդ զու տես խոհեմութեամբդ։

17ա

1780 թ. սեպտեմբեր—Ի Կարին գրեալ թուղթք

125. Կոնդակ ես ի վերայ Կարնոյ և վիճակաց նորին գրեցաւ ի սրբազան Վեհէն, ըստ կերպի ի վերոյսդ յղեալ կոնդակացն, յորում և վերանորոգութիւն նուիրակութեան Ներսէս վարդապետին։

126. Թուղթ ի վերայ Եփրիկզատէ մահտեսի Յակոբին գրեաց սրբազան Վեհն, ծանուցանելով նախապէս զառաքելն Պետրոս վարդապետին հանդերձ մահսարաւն և այլովք օրհնութեան թղթովք ի Պոլիս և ընդ նմա զկոնդակ յղելն ի վերայ Կարնոյ և բոլոր թեմիցն նորին, յորմէ և իմանալ գրեաց զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս։ Իսկ զի ի պատճառս մեր զվերոյ գրեալ բազում թուղթս առ ի յղել, ժամանեաց առ սրբազան Վեհն բազմակնիք թուղթն Կարնոյ իշխանացն, հանդերձ այլոց թղթովք, ընդ որս և սա զյատուկ թուղթ էր գրեալ, որք ծանուցեալ էին զվերծուցանելն իւրեանց ի բանտարգելութենէ զՆերսէս վարդապետն և զմեր վէքիլ Հայրապետն, վասն այն զշնորհակալութիւնս գրեաց։ Այլև զկրկին շնորհակալութիւնս գրեաց, թէ բարւոք էք արարեալ, որ զայդ անցսդ գրեալ էք ի մեծն Պոլիս, ահա մեք ես գրեցաք անդ, թէ և վասն մաքսապետի արարմանցն և թէ ախթարմայից չարութեանցն, և Պետրոս վարդապետից ես պատուիրեալ եմք խօսիլ անդ վասն այդոցիկ, զոր ինչ պատշաճն է, զի զհոգս արասցեն։ Զկնի սոցա զյորդորմունս գրեաց առ ի անպակաս մնալ ի սիրոյ և ի հարազատութենէ, որ առ սուրբ Աթոռս և առ ինքն։ Նաև առ խալիր փաշայն և առ մաքսապետն զընծայ յղելն ծանոյց և զսիրոյ թուղթս գրելն և պատուիրեաց ընդ Պետրոս վարդապետին տանիլ մատուցանել նոցա, խօսելով զոր ինչ պատշաճն է։ Իսկ զի օգոստոսի ԺԷ (17) գրեալ թուղթսն կենազրաւեալ փաշայն և առ այս վերոյ յիշեալքս, զորս չէին տուեալ նոցա, յետս յղել հարկեաց։ Եւ վասն Ներսէս վարդապետին, որ էր տեղւոյն նուիրակն և վասն մահսարատարին զյանձնարարութիւնս գրեաց։

17բ 127. Թուղթ ես նոյնպէս առ մաքսապետի սառաֆ խօջայ Սարգիսին գրեաց ծանուցանելով նմա զընծայ յղելն առ մաքսապետն և պատուիրելով, զի ընդ Պետրոս վարդապետին և իշխանացն տեղւոյն զընծայսն և տարեալ մատուցէ մաքսապետին՝ հանդերձ առ նա գրեալ թղթովն և խօսեսցի զխօսս պատշաճաւորս։

128. Թուղթ ես առ Կարմիր վանից առաջնորդ Յակոբ վարդապետն, ըստ ի վերն յիշեալ այլ տեղեաց առաջնորդաց թղթոցն, յորում և յանձնարարութիւն վասն նուիրակ Ներսէս վարդապետին։

129. Թուղթ առ Ցայատօղլի խալիր փաշայն, գրելով նմա զմանլուսահոգի սրբազանին և զյառաջնորդելն իւր զսուրբ Աթոռս և ապա խնդրելով, թէ որպէս ընդ հանգուցեալ հայրապետին զսէր և զբարեկամութիւն ես արարեալ, այնպէս և այժմ ընդ մեզ առնիցես ի վերայ հաստատական սիրոյ Տանս զխնամս ունելով։ Որում և ընծայ յղեաց զկերպասեայ և զայլ ճոթս, զմոմս քանի հատ։

130. Թուղթ ես առ մաքսապետն Կարնոյ, ըստ նոյն մտաց, որում և զընծայ յղեաց ըստ ընծայից նորին։

131. Թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Ներսէս վարդապետն, ըստ թղթոց առ այլ փոքր տեղեաց նուիրակսն գրեցելոց, իսկ յատկապէս զայս, թէ փայակն տեղւոյդ էհաս առ մեզ և ընկալաք զթուղթդ ընդ իշխանացդ թղթոցն և իմացեալ զարձակիլդ ձեր ի բանտէ, յոյժ ուրախացաք։ Եւ ապա զընծայս յղելն ծանոյց սմա առ խալիր փաշայն և առ մաքսապետն։ Եւ զի սա վասն նուիրակութեան գործոյն տարակուսեալ էր, վասն որոյ գրեաց, թէ ահա ի կոնդակոջն, զոր ի վերայ վիճակիդ գրեցաք, զվերահաստատութիւնս եմք գրեալ գործոյդ, որպէս տեսանելոց ես։ Ուրեմն ջանա արիապէս կատարել զգործդ և ի սուրբ Աթոռս դիմել։ Եւ ի վերջոյ զմխիթարական և զսրտաշահական բանս գրեաց վասն փորձութեանն, զոր կրեաց։

132. Թուղթ ես առ վէքիլ Հայրապետն գրեաց սրբազան Վեհն, թէ յօգոստոսի Իէ (27) գրեալ թուղթդ էհաս առ մեզ ընդ խօ փայեկին և զբոլոր անցսն կալանաւորութեան ձերոյ իմացաք, և զարձակելն ձեր, ապա առ խալիր փաշայն և առ մաքսապետն զթուղթս գրելն աղդեաց սմա, և զընծայս ուղարկելն։ Եւ վասն առաջին Բ (2) թղթոցն, որք առ
18ա փաշայն և առ մաքսապետն գրեցան, զորս բարւոք դիտմամբ չէին իսկ տուեալ նոցա իշխանքն Կարնոյ և սա պատուիրեաց // յետս յղել (զորս և մահտեսի Յակոբին և այլոց ես գրեաց ի վերդ)։ Այլև գրեաց, թէ առ մաքսապետի սառաֆ Սարգիսն զթուղթ գրեալ յղեցաք ի ձեռս քոյ, եթէ զառաջինն զառաջին թուղթն մեր չես տուեալ զմա, զայդ տուր։ Իսկ եթէ զՊօլսոյ թուղթսն, տուեալ ես, զայդ մի տացես, այլ յետս յղեա։ Եւ թէ զՊօլսոյ թուղթսն, որ յղեալ ես, ի՞նչ ժամանակ որ անտի պատասխան գայ այն թղթոցն, կամ ի կողմանէ մերս անցից մի հաւաստէ ձայն լսիցես անտի, ժամ մի յառաջ յատուկ փայեկաւ առ մեզ հասո։ Յետոյ զՊետրոս վարդապետի մահսարաւն և այլովք թղթովք յղելն դէպ ի Պօլիս և ընդ նմա ի վերայ Կարնոյ երկրին զկոնդակ գրելն ծանոյց սմա և պատուիրեաց ժամ մի յառաջ ուղևորել զՊետրոս վարդապետն դէպ ի Պօլիս։ Եւ թէ վասն այն թօխաթցւոյ ԻԵ (25) ղուռուշին (որ էր հոգեբաժին), որ օրհնութեան թուղթ էիր խնդրեալ, ահա գրեցաք և յղեցաք, բայց ԺԸ (18) ղուռուշ և կէս տուօղ Դ (4) անձանցն Ա (1) օրհնութեան գիր գրեցաք և առ քեզ յղեցաք՝ տալ այն դրամ բերող Քերօբին։ Իսկ և զայս, թէ այն ութն հարիւր ղուռուշն, զոր փոխցայ ես արարեալ ի Բայազիտ և տէր Վահանն առեալ է, մասամբ ինչ մեզ է հասեալ և մնացեալն ես հասանելոց է։ Եւ թէ ի Վան բնակեալ ջուղայեցի տիրացու Ստեփաննոսի յղեալ Բճ (200) ղուռուշն ես պարտի մեզ հասանիլ, զայդ ես ըստ ժամանակին հասուցես։

Նաև զայս գրեաց, թէ նարգենիս յամենայն կողմանէ պակասաւոր եմք, ուր ուրեք որ առնլիք կան տեղդ սրբոյ Աթոռոյս, առեալ մեզ հասուցես։ Եւ թէ վասն ձերդ անցից, որ Եճ (500) ղուռուշ խարճեցեալ էր, իմացաք և գրեցաք ի դաւթարոջ։ Ընդ որս և զայս, թէ վասն դաւթարիդ, որ տարակուսիս, այսպէս իմա, զի ահա ի մարտի զէն (7)

յառաջ, զոր ինչ հէսապ է եղեալ ընդ լուսահոգւոյն, համեալ էք և քեզ խալաս է յղեալ։ Իսկ զկնի մարտի զԻ (20) մինչև ցայժմ, զոր ինչ առեալ ես կամ մեզ հասուցեալ և ի գաւթարբ գրեալ, այսուհետև ես նոյն կարգաւն և այն հէսապին կից գրեա մինչև ի մարտի զԸն (8) դարձեալ։ Միայն զլուսահոգւոյ և զմեր ժամանակինն մի առղ բանիւ որոշելով։ Եւ երբ հասցուք ի մարտի վեցն, յայնժամ զհին հաշիվն վերջացուցանելոց եմք և քեզ խալաս յղելոց, և զնոր հաշիւ սկսանելոց։

Ապա զլուսագրութիւնս գրեաց վասն փորձութեանն, զոր կրեաց և զյորդորանս, զի զգործն իւր արիապէս կատարեսցէ։ Այլև զՅամթայ գրեանսն ծրարեալ ի պահարանոջ և ի ձեռն մեր նուիրակ Գրիգոր վարդապետին գրեալ, յղեցաք առ սա՝ հասուցանել նմա, վասն որոյ և պատուիրեաց, թէ ուրեիցէ հասս առ նա։ Եւ թէ որպէս լուսահոգին գրեալ է քեզ և մեք գրեմք ահա. Յամթայ նուիրակի զարդիւնսն փոլիցայ աբարեալ ի վերայ նորա առ և մեզ ծանո, ինքն ես գրեալ էր աստ, թէ խօսեցեալ եմ ընդ Հայրապետին, որ այսպէս արասցէ։ Ուրեմն և դու այդպէս արա, որպէս գրեցաք, կամ թէ նա յայդր փոլիցայ արասցէ առ և մեզ գրեա։ Եւ թէ ընդ ի Պօլսոյ եկեալ թաթարին հասարակութեամբ
18բ գիր էիք գրեալ, զպատասխանին գրեցաք։ Ապա թէ թաթարին, // որ զԾ (50) ղուռուշ էիր տուեալ, իմացաք։ Եւ թէ վասն Պետրոս վարդապետին գրեալ եմք, որ ընդ այդ թաթարիդ խօսիք և ուղարկէք, որպէս և առնէք գրեսցես մեզ։ Եւ ես թէ այդ Պետրոս վարդապետիդ Ճ (100) ղուռուշ խարճի տաս։ Եւ թէ թաթարն ես քանի մի ղուռուշ խարճի կու խնդրէ, տուր։ Զկատարեալ վարձն ի Պօլիս են տալոց։

Վերոյ գրեալ թուղթքս այսօրիկ գրեալք լրացան և ամսաթիւքն խա եղան ամսոյս Ը (8), բայց ընդ ի ներքոյ գրեալ քանի մի թղթոցս յղեցանի։

Եւ մինչ զայսօրիկ գրեալ պատրաստեցաք այսպէս զի յղեսցուք, յայնժամ սուրհանդակ մի եկն ի մեծէն Պօլսոյ, Ապտլվահապ անուն, բերեալ զքանի մի թուղթս։ Քանզի մինչ քան զայս յառաջ Կարնոյ մաքսապետն ի լսելն զմահ հանգուցեալ սրբազան Վեհին մերոյ, զանկոյն նուիրակ Ներսէս վարդապետն և զմեր վէքիլ Հայրապետն ըմբռնեալ էր ի բանտի, թէ խալիֆայն մեռեալ է և նորա ինչք ջոն առ ձեզ, մինչ պարտին լինիլ։ Կարնոյ իշխանքն և Ներսէս վարդապետն գրեալ էին ի մեծն Պօլիս առ պատրիարքն և առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետն և առ իշխանսն տեղւոյն զայն իրակութիւնն և զպատճառն, ուստի և նոքա իմացեալ զայն անցսն, Կարնոյ մաքսապետի հօրն ազդեալ էին, որ ի մեծն Պօլիս է, և զթուղթս առեալ ի նմանէ ի վերայ որդւոյն, թէ յայդ բանէդ զձեռն բարձ։ Արդ, ի լսելն նոցայ երկբայօրէն և զհամբաւն մահուան հոգելոյս սրբազան Վեհին, թէ պատրիարքն և նուիրակ Մինաս վարդապետն և այլ անդ գտանեցեալ եպիսկոպոսք վարդապետք, և թէ ազգ երիցունք, և իշխանապետք, և իշխանք քաղաքին զմի բազմակնիք թուղթ էին գրեալ առ միաբանս սրբոյ Աթոռոյս, թէ Կարնոյ իշխանքն և նուիրակ Ներսէս վարդապետն և վէքիլ Հայրապետն մինչ վասն Կարնոյ մաքսապետի անկարգ արարմանցն զթուղթս էին գրեալ աստ, յայն թղթոյն կարծեցաք, թէ սրբազան Վեհն վախճանեալ իցէ։ Բայց թէ կենդանի է, տէր և գլուխ մեր է, այլ թէ ոչ այլ ըստ հողածին բնութեանս սահմանի ննջեալ է ի Տէր, մի և մի լիցի ձեզ կացուցանել զոք կաթուղիկոս։ Այլ ազդեսջիք մեզ և բոլորիս ըն-

րութեամբ արասցուք զոք Կաթուղիկոս առ ի չլինել տարաձայնութեանց, որպէս երբեմն երբեմն եղեալ է։ Իսկ եթէ թարց գիտութեան մերոյ առնիցէք զոք հայրապետ ամէն ասեմք ձեզ՝ ձեռք բարձջիք յայս երկրացս և ի մէնջ և այլն։

Արդ, ի պատասխանի այն թղթոյն մահսարականի, զմի թուղթ սրբազան Վեհն գրեաց և զմի բազմակնիք թուղթ միաբանքն սրբոյ Աթոռոյս գրեցին առ պատրիարքն և իշխանսն և համայն կնքողսն զայն մահսարական թուղթն, զորոց զդիտաւորութիւնսն ի ստորև գրեցելոցդ իմա[25]։

133. Թուղթ գրեցաւ ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ Պօլսոյ պատրիարքն և նուիրակն և իշխանսն, ի պատասխանի նոցին մահսարին, թէ
19ա բազմակնիք թուղթն ձեր էհաս // առ մեզ ի սեպ. ԺԳ (13) և ընթերցեալ ծանեաք զդիտմունս ձեր։ Առ որս գիտասջիք, զի թէպէտ բարւոք խորհրդով է գրեցեալդ ձեր, բայց զի՞նչ օգուտ, որ յանազան ժամու էք գրեալ, որ յետ 43 աւուրց օծման նորոգ սրբազան Վեհիս մերոյ էհաս աստ։ Եթէ դուք զայդ միտսդ ունէիք, ընդէ՞ր յառաջագոյն ոչ գրեցիք մեզ՝ մինչ դեռ կենդանի էր լուսահոգին։ Քանզի գիտէիք, որ զանազան վշտօք մաշեալ էր նա և ի հիւանդութեանց ոչ զերծանէր և ի ծերութենէն ևս յաղթեցեալ մահու մերձ էր. զոր և ինքն քանիցս գրեաց ձեզ, թէ մերձ ի մահ եմ։ Ապա մինչ դուք զայսօրիկ իմանայիք, պարտ էր ձեզ յայնժամ գրել զայդ բանդ, որովհետև զայդ միտսդ ունէիք, զի և մեք զգուշացե[ա]լ չառնէաք այսպէս և զոր ինչ վնասք դիպէին սրբոյ Աթոռոյս, մեք անպարտ և անմեղադրելի լինէաք։ Այլ ահա զգրեալս ձեր յիրում ժամանակին չէք գրեալ։ Իսկ որ գրեալ էին նոքա թէ ի բնէ անտի է կանոն հասարակութեամբ ընտրելն, առ այն գրեցին, թէ զայդ կանոն և մեք գիտեմք և մեր և սրբոյ Աթոռոյս օգուտն ևս այդ է, այլ հարկ ժամանակին զօրէնս լուծանէ, որպէս յայսմ նուագի եղև։ Եւ ապա զպատճառսն փութապէս լինելոյ այսմ իրակութեան (յորոց մասամբ ինչ ի մեծ մահսարին գրեցաւ, և աւելի քան զայն սրբազան Վեհն ի հասարակ իշխանաց թղթոցն գրեաց) գրեցին աստ։ Մանաւանդ զԻսրայէլ կաթուղիկոսի բանն, զոր չէին գրեալ ի թղթի, այլ թողեալ էին մահսարատարին ասել անդ, ահա գրեցին, թէ երկրիս չարագլուխքն և սրիկայքն մինչ յառաջ քան զվախճան լուսահոգւոյն զայս ձայն տարածեցին, թէ խալիֆայն մեռեալ է և սկսան զպէսպէս վնասս հասուցանել սրբոյ Աթոռոյս։ Ի Թիֆլիզ ևս էր հասեալ այն համբաւն։ Եւ Իսրայէլ կաթուղիկոսն, որ այժմ անդ է, անկեալ ի դրունս Վրաց և մեծին իսկ նոցա զծանրագունեղ կաշառս էր խոստացեալ նոցա, թէ զիս ի սուրբ Էջմիածին կաթուղիկոս նստուցէք։ Որում թէ նոքա և թէ ի մերս ազգէ ոմանք պատառաքաղք հաւանեալ էին։ Բայց մեծն Վրաց պատասխանեալ էր, թէ մնասցուք մինչև լաւապէս իմասցուք զվախճանումն և ապա տեսցուք։ Իսկ մինչ չև ևս էր անցեալ Գ (3) կամ Դ (4) օր անուանակոչութեան սրբազան Վեհիս մերոյ, այս համբաւս առ մեզ էհաս հաւաստապէս, վասն որոյ երկուցեալ մեր, թէ գուցէ յանկարծ եղեալ ընդ զօրաց յղեսցեն զնա աստ և բռնութեամբ նստուցեն կաթուղիկոս ի սուրբ Աթոռս, վաղվաղակի օծաք զսրբազան Վեհս մեր, զի համբաւն անդ հասցի և կասեսցին նոքա ի խորհրդոց իւրեանց։ Որպէս և եղեն իսկ։ Իսկ յետոյ թէ հասարակաց խորհրդով լինիլն բարւոք է, բայց ոչ յայս ժամանակս, զի թէ մեք զընական կանոնն պահէաք և այն այնպէս լինէր,

ոչ ապաքէն զմեղադրութիւնս էաք լսելոց ի ձէնջ, թէ եթէ տեսանէիք
զի այդպէս լինէր, ընդէ՞ր ոչ փութով տէր կացուցանէիք սրբոյ Տանդ։
Ահա մեք զայսոսիկ մտածելով այսպէս արարաք, զոր և յառաջագոյն
ի յօգոստոսի Ե (5) գրեցին գործակալքն սրբոյ Աթոռոյս պատրիարքին
և նուիրակ Մինաս վարդապետին յայդր, զի և նոքա ձեզ ծանուցեն,
զի մի զայլ և այլս կարծելով ձեր ի տարակուսանս անկանիցիք մինչև
10բ զմեծ մահսարն հոգացեալ հանդերձ օրհնութեան // թղթովք սրբազան
Վեհիս մերոյ, յղեսցուք յայդր։ Այլ ահա ոչ են հասեալ յայդր այն
թուղթքն, մինչ զայս գրեալ էք։ Իսկ այժմ ի հարկէ հասեալ են, և
իմացեալ էք զցաւս մեր։ Եւ զայս թուղթս ևս, զոր ընդ մահսարաբերին
յղեցաք առ ձեզ՝ հանդերձ թղթովք սրբազան Վեհին, մինչ հասցի առ
ձեզ, զլիապէսն ի դոցունց և ի մահսարաբերէդ էք իմանալոց։ Որովք
յուսամք թէ և շնորհակալ ևս լինիցիք զմէնջ, մինչ զսուրբ Աթոռս մայր
ձեր ոչ թողաք լինիլ կոխան օտար ոտից։ Եւ ի վերջոյ թէ եթէ այլևս
զնոյն բանսն խորհիցիք, զորս գրեալ էք, և անհաճոյ թուեսցի ձեզ
արարեալս մեր, ապա զոր ինչ վնասս և կրեսցէ սուրբ Աթոռս և որքան
տարաձայնութիւն և խռովութիւն լինիցի, մեք անպարտ եմք։
Զօրինակն սորա ի նոր տետր 121 երեսն տես։

134. Թուղթ ևս սրբազան Վեհն գրեաց ըստ ոճի և դիտաւորութեան
միաբանից թղթոյն մինչև ցկէսն, իսկ յետոյ թէ ի գալ մահսարաբերիդ
և թղթոցդ, զորս յղեցաք, ահա մինչ լիովին իմանայք զպատճառսն
անցիցս մերոց, շնորհակալ ևս էք լինելոց զմէնջ, որ ոչ թողաք զսուրբ
Աթոռս լինիլ կոխան օտար ոտից, զոր ոչ գիտէիք և ոչ ճանաչէիք, զի
ոչ է այնպիսի ոք, որ մտանիցէր ընդ դուռն ոչխարաց և օրհնեալ ազգս
մեր՝ բանաւոր ոչխարքս Քրիստոսի, զձայն նորա ճանաչէին և երթային
զհետ, այլ ընդ այլ էր ելանելոց, զորոյ զձայնն ոչ էին ճանաչելոց ազ-
գըս մեր և ոչ էին երթալոց զհետ նորա։ Ուստի և սուրբ Աթոռ մայր
ձեր՝ հոգևոր փարախս ազգիս մերոյ ոչխարացս բանաւորաց, մնալոց էր
դատարկ ի սոցունց։ Որոյ զկատարեալ ուղէսն ահա միաբանքն գրե-
ցին։ Այլ զմեզ ահա ճանաչէք շնորհին Աստուծոյ, որք զօտից ձեր և
սրբոյ Տանս խորհելով, ըստ հարկեցման բազմաց ոչ թողաք զհոգևոր
զաւիթս ձեր անկանիլ ի ձեռս գողոյն և աւազակին այնմիկ։ Այլ ջանա-
ցաք զբանաւոր ոչխարսն սորին պահել ի գաւիթս սորայ համաժողով, ու
առանց Աստուծոյ վարկուցեալ զայս։ Արդ, թէ և դուք յԱստուծոյ համա-
րիցիք զայս և ի նմանէ կացուցեալ յետնորդ հովիւ և հովուապետ ազ-
գիս մերոյ զմեզ վարկանիցիք, ապա մեզ ևս ծանուցէք, զի լիցուք միա-
միտ ի պաշտօնս մեր։ Ապա թէ ոչ (որպէս և գրեալ եմ ի թուղթս իշ-
խանացդ և պատրիարքիդ և նուիրակիդ և այլոց ևս ոմանց) զով ոք և
կամիք, յղեցէք աստ զնորոգ հովիւ։ Որում և մեք ընդառաջ ելեալ, շնոր-
հաւոր եմք ասելոց։
Զգաղափարն սորա ի նոր տետր 114 երեսն տես։

135. Թուղթ ևս առ իշխանսն Կարնոյ և նուիրակ Ներսէս վարդա-
պետն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի ի սեպ. Ը (8) գրեալ
թղթոյն նոցա ընդ թաթարին, թէ թուղթն ձեր էհաս առ մեզ և իմացաք
զգրեալսդ ձեր և զպօլսեցւոց թուղթն ևս միաբանիւք ընթերցաք[26]։ Զո-
րոյ պատասխանն ահա գրեցին միաբանք սրբոյ Աթոռոյս և մեք ևս ըստ
պատշաճին զմի թուղթ գրեցաք առ նոսա։ Եւ զի զառաջին գրեալ թուղթ-

սըն մեր ևս պատրաստեալ էաք ի յղել, մինչ եկն մէնլիզ, վասն որոյ
ահա զմահսարաբեր Պետրոս վարդապետ համայն թղթովք մերովք
20ա յղեցաք ահա ընդ դմա // երթալ ի Պօլիս։ Եւ ապա զդիտաւորութիւնս
նորապէս գրեալ թղթոցն ի Պօլիս (որ ահա ի վերդ գրեցաւ)։ Համառօ-
տապէս գրեաց սոցա առ ի չիմանալ ըստ այսմ, թէ պօլսեցիքն միայն
զլուսահոգւոյ մահն են լուեալ, որ զայս գրեալ են, իսկ մերս անցից
դեռ չեն տեղեակ։ Բայց գործակալքն սրբոյ Աթոռոյս յառաջ քան զայս
գրեցին նոցա զբոլոր դիպուածսն մեր և զայս եղելութիւնքս։ Այն թուղթ-
քըն դեռ չեն հասեալ առ նոսա, մինչ զայս գիրս գրեալ են, իսկ յետոյ
ի հարկէ հասեալ է և իմացեալ են։ Այժմ ևս, երբ այս թուղթքս հասցին
և իմասցին զամենըն, կարծեմ թէ շնորհակալ ևս են լինելոց զմէնջ, որ
սրբոյ Աթոռոյս օգուտն արարաք և ոչ զվնասն։ Իսկ ի վախճանի թղթոյն
գրեաց վասն Պետրոս վարդապետին կամ ընդ այն թաթարին յղել, կամ
ընդ այլ թաթարի շուտով։ Եւ թէ այդ թաթարիդ մեք աստ վարձ չկտրե-
ցաք, թողաք որ դուք յայդր կտրէք, որպէս և առնիցէք, գրեսջիք մեզ, զի
միամտիցուք։
Սորին օրինակն է ի նոր տետր 25 երեսն։

136. Թուղթ ևս ի Ղարս առ Իբրահիմ աֆանդու որդիսն գրեաց, ի
պատասխան նոցին բարեկամական թղթոյն, զոր ընդ թաթարին յղեալ
էին, յորում ոչինչ գոյր, բայց ի սիրոյ և ի բարեկամութենէ։ Վասն որոյ
և սրբազան Վեհն գրեաց զսէրն իւրեանց հանապազ ունիլ առ սուրբ
Աթոռս և առ ինքն։ Եւ թէ զարպխութիւնս մեր պարոն Գէորգին գրեալ
եմք, նա ասելոց է պատուելութեան ձերում։

137. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն ի պատասխանի նորին
երկուց թղթոցն, զորոց մինն ընդ մեր Թովմասին էր գրեալ յառաջ և
մինն ընդ թաթարին։ Յորում նախ զշնորհակալութիւնս գրեաց վասն մեր
յղեալ մրգեղէն ընծայից հոգածութեանն։ Բայց զի սա վասն գալստեան
թաթարին տարակուսեալ գրեալ էր, թէ զպատճառն գալստեան դորա
ծանո մեզ, զի միամտիցուք, վասն որոյ և սրբազան Վեհն զթաթարի
ի Պօլսոյ զթուղթ բերելն և զմիտս թղթոյն և զիւր և զմիաբանից թուղթս
գրելն ի պատասխանի այն թղթոյն, ծանոյց սմա կարճի կարճոյ։ Եւս
վասն Պետրոս վարդապետին գրեաց շուտով յղել ընդ թաթարին։ Եւ թէ
Մխտարիս և Նուման աֆանդիքն թուղթ էին գրեալ, զպատասխանն ահա
գրեցաք, յորում և զորպէսն մեր ի քէն իմանալ գրեցաք։ Եթէ հարցա-
նիցեն, ծանուցես ըստ պատշաճին։ Իսկ և ըստ սորին խնդրոյ զմի հատ
լաւ բռնօթաման և զմի մուհրամայ ևս յղեաց սմա և աստ գրեաց զյղելն։
Եւ ի վերջոյ, թէ սակս Սարգսի բանին լեր միամիտ, զի այն մի ետնորիշ
բան էր եղև և էանց։
Ահա թէ յառաջ քան զայս գրեալ թուղթք, որոց ամսաթիւքն սեպ-
տեմբերի Ը (8) գրեցան և թէ այսորիկ քանի մի թուղթքս, որոց ամսա-
թիւքն սեպ. ԺԷ (17) եղան, յղեցան ընդ Պետրոս վարդապետին յամ-
սոյս ԺԷ (17)։

20բ
1780 թ. սեպտեմբեր—*Թուղթք ի Բայազիտ և ի Մուշ գրեցեալք։*

Իսկ յետ միոյ աւուր յղելոյ այն թղթոցն, Մշու սուրբ Յովհաննիսի
վանից առաջնորդ Յովաննէս վարդապետն, որ եկեալ էր ի սուրբ Աթոռս
ի կենդանութեան հոգելոյս սրբազանին առ ի ձեռնադրիլ եպիսկոպոս,
այժմ որովհետև նա վախճանեցաւ և նորոգ սրբազան Վեհս մեր ևս ան-

ձեռնհաս էր զձեռնադրութիւնս առնել, վասն որոյ այժմ դարձաւ նա ի վանս իւր, զի չեւ միջոցի եկեալ ձեռնադրեցի եպիսկոպոս։ Ուստի ի վերայ սորա վանից թեմիցն զմի թուղթ գրեաց սրբազան Վեհն և եդ նմա առնիլ ընդ ինքեան, որոյ միտքն ահա գրի ի ներքոյ։

138. Թուղթ ի վերայ Մշու սուրբ Յովաննիսի վանից թեմից ժողովրրդեանն, թէ մինչ եկն աստ Յովաննէս վարդապետդ ի ձեռնադրիլ եպիսկոպոս ի կենդանութեան լուսահոգի սրբազանին, հիւանդ էր նա, որ և չեւ ինչ միջոցի հանդեաւ ի Տէր, թողեալ զգա առանց ձեռնադրութեան։ Ապա զիւր հայրապետանայն ծանոյց համառօտապէս։ Եւ զկնի թէ չեւ օծման մերոյ ես թէպէտ ժամանակ ինչ մնաց աստ առաջնորդդ ձեր Յովաննէս վարդապետդ սպասելով եպիսկոպոսութեան, բայց անձեռնհաս եղաք ի ձեռնադրել զգա մինչև աշնան ժամանակն. ահա մերձեցաւ, վասն որոյ զհրաման առեալ ի մէնջ ահա դարձաւ յայգր, զի զպտղին սրբոյ վանիցն ժողովեսցէ և զձմեռնային կեցութեան ապրուստն հոգասցէ։ Եւ խոստացաք զմա, զի երբ և տացէ մեզ Աստուած ժամանակ բարեյաջող, յորում զձեռնադրութիւնս իցեմք առնելոց, գրեսցուք զմա, զի եկեսցէ ի ձեռնադրիլ։ Վասն որոյ և զայս թուղթս գրեցաք առ ձեզ առ ի գիտել զմեր անցսն և զորպէսն և զպատճառն վերադարձման զորա ի վանքն ձեր։ Որք և միամիտ լիջիք, զի ի ձեռնադրութիւն առնելն մեր ազդելոց եմք զմա գալ և օրհնելոց եմ եպիսկոպոս և առաջնորդական կոնդակաւ և փառաւորութեամբ յղելոց եմ առ ձեզ։ Եւ ի վերջոյ զպատուէր, զի զպտղին և զայլ հոգեկան տուրս առատութեամբ տացեն սրբոյ վանիցն և առ սուրբ Աթոռս զսէր և զհարազատութիւնս ցուցցեն։

Զգաղափարն սորա ի նոր տետր 23 երեսն տես[27]։

139. Թուղթ ես ի Բայազիտ առ տէր Վահանն գրեաց ազդելով նմա զմահսար յղելն պօլսեցւոց մէնզիլով աստ և զիւր և զմիաբանից պատասխանիս գրելն և հանդերձ մահսարաւն միաբանից և երկրացւոց ընդ Պետրոս վարդապետին յղելն։

Ելին թուղթքս ընդ Յովաննէս վարդապետին յամսոյս ԺԸ (18)։

Մինչ չեւ ուղևորելոյ մեր զՊետրոս վարդապետն, Նախիջևանու երկրի. մահսարն եկն և փութով յղել կամեցաք, զայս թուղթքս գրեցաք ընդ նմա, որք ահա ի ներքոյ գրին։

140. Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Ղարս առ պարոն Գէորգն, թէ
21ա Նախիջևանու երկրի // մահսարն ահա էհաս առ մեզ, որ պարտի հասանիլ շուտով Պետրոս վարդապետին, վասն որոյ ահա ի մէջ պահարանի եդեալ առ քեզ յղեցաք. պարտիս մէկ ձիաւոր սայի վարձել և ժամ մի յառաջ հասուցանել ի Կարին առ մեր վէքիլ Հայրապետն, որ հասուսցէ մեր Պետրոս վարդապետին։ Եւ թէ Մաղզբերդու Ալիբէկն և Մահմաւտ բէկն այժմ մեզ գիր էին գրեալ և խնդրեալ էին զառաջնորդ յղել ի Ղօշավանք։ Այլ մեք, որպէս և յառաջ գրեալ եմք քեզ, չեւ քանեաց աւուրց յղելոց եմք։ Բայց դու խնամածու լեր վանիցն յամենայն կողմանէ։ Իսկ ապա թէ զայս բանս, որ յառաջ ես գրեցաք քեզ և զանձապետին մերոյ, ակն ունէաք, թէ դուք կերպիւ մի ազդիցէք մեզ, թէ այս ինչ մարդ յղեաւ։ Այլ այսպէս չարարիք, վասն որոյ գրեմ քեզ, զի դու զմեր միաբանսն ճանաչես, ուստի զով ոք որ ձեզ առաջնորդութեան պատշաճ գիտես, ինձ ծածկաբար ազդումն տուր, զի գիտացից։

141. Թուղթ ես առ մահտեսի խաչատուրն և վէքիլ Հայրապետն ի Կարին, թէ ահա զՆախիջևանու երկրի մահսարն պահարանեալ յղեցաք առ ձեզ, զոր պարտիք հասուցանել Պետրոս վարդապետին, որ թէ դեռ յայդր լինիցի, դուք ձեր ձեռամբն տացիք նմա։ Բայց թէ գնացեալ իցէ դէպ ի մեծն Պօլիս, դու՝ մահտեսի խաչատուրդ զայդ հաւատարիմ մէնզիլով յղեսջիր ի Պօլիս ի ձեռն քո մարդոյն և պատուէր գրեա նմա, զի եթէ Պետրոս վարդապետն անդ լինիցի հասեալ, իւր ձեռօքն նմա տացէ։ Իսկ եթէ թուղթն նախքան զՊետրոս վարդապետի հասանիլն անդ, հասցի ի ձեռս քո մարդոյն, թող այնքան պահէ, մինչ Պետրոս վարդապետն հասցի անդ և ապա տացէ նմա՝ յայլոյ ձեռն չձգելով։

142. Թուղթ ես առ Պետրոս վարդապետն, թէ զկնի գնալոյդ, Նախիջևանու երկրի մահսարն էհաս առ մեզ ձեռամբ Ահարօն վարդապետին, զոր ահա յղեցաք ի Կարին առ Գօրօյեան մահտեսի խաչատուրն և առ մեր վէքիլ Հայրապետն՝ առ ի հասուցանել քեզ ուր և լինիցիս, վասն որոյ և զայս թուղթս ընդ նմա առ քեզ գրեցաք. պարտիս զսորա առ քեզ հասանիլն քո որպիսութեամբքդ գրել մեզ ի միամտութիւն։ Նաև ի յԱգուլեաց վանքէն և ի սուրբ Կարապետէն, որ Բ (2) պահարանով գիր էին յղեալ աստ, զի յղեսցուք ի Պօլիս, ահա ընդ մահսարիս յղեցաք և գրեցաք սմա առ ի հասուցանել ի տեարսն։

143. Ի սոյնում աւուր Մաղզբերդու Ալիբէկն և Մահմադ բէկն զմի ձի էին յղեալ ընծայ սրբազան Վեհին և զսիրոյ թուղթ գրեալ։ Ուստի և սրբազան Վեհն զթուղթ շնորհակալութեան գրեաց առ նոսա։ Եւ զի վասն Ղօշավանիցն զառաջնորդ էին խնդրեալ՝ գրելով, թէ ահա վանքն անտէր մնալով օր ըստ օրէ աւերի, վասն որոյ և սրբազան Վեհն խոստացաւ ի թղթոջն չեւ քանեաց աւուրց զառաջնորդ յղել։

21բ Յղեցան թուղթքս այսօրիկ յամսեանս ԻԲ (22)։

Ապա ի գալ Թիֆլիզու մահսարին, զոր ես վաղվաղակի առ Պետրոս վարդապետն հասուցանել կամեցաք, զքանի մի թուղթս գրեալ ընդ նմին յղեցաք, զորս ի ներքոյ գրեմք։

144. Թուղթ ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց սրբազան Վեհն, թէ քան զայս յառաջ զՆախիջևանու մահսարն յղեցաք առ քեզ հասուցանել ի Կարին, ընդ որում և զթուղթ գրեցաք քեզ։ Իսկ այժմ ես զԹիֆլիզու մահսարն յղեցաք, զոր պարտիս շուտով ձիաւորաւ հասուցանել ի Կարին, զի անտի յղեսցեն ի Պօլիս առ մեր Պետրոս վարդապետն։ Ի սմա և զողջոյն գրեաց մահտեսի Կարապետին։

145. Թուղթ ես ի Կարին ի վերայ մահտեսի խաչատուրին և վէքիլ Հայրապետին ըստ մտաց ի վերդ գրեալ առ սոսա թղթոյն, որ վասն Նախիջևանու մահսարին գրեցաւ, զի զԹիֆլիզու մահսարն յոյժ փութով յղեսցեն ի մեծն Պօլիս՝ հասանիլ Պետրոս վարդապետին։

146. Թուղթ ես առ Պետրոս վարդապետն, թէ ահա զԹիֆլիզու մահսարն ես յղեցաք ի Կարին առ Հայրապետն և առ մահտեսի խաչատուրն, որ ի Պօլիս յիւր մարդոյն ձեռն յուղարկեսցէ առ ի տալ քեզ։ Դու ես պարտիս, զերբ հասանիլն առ քեզ, քո որպիսութեամբքդ գրել մեզ։ Եւ ի վերջոյ զայս պատուէր, թէ զամենայն մահսարսն այսց կողմանցս ընդ քեզ յետս բերել պարտիս։

Ելին թուղթքս յամսոյս ԻԴ (24)։

նարգենիս Սալմաստու և այլ թեմից սրբոյն Բարդուղիմէոսի Առաքելոյ վանից քահանայք, մէլիքք և իշխանք գրագմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն վասն առաջնորդին իւրեանց՝ Ստեփաննոս վարդապետին զճատագովութիւնս առնելով, թէ մեր առաջնորդն բարհէ։ Բայց զնմանէ իզուր գանկատ է հասեալ քեզ, վասն որոյ այն զորհութ կառավարէ զմեզ և զվանքն ի շինութեան և ի պայծառութեան պանութեան թուղթ ոչ գրես նմա և ոչ ունիս զխնամս ի վերայ նորա։ Արդ, խնդրեմք ի տեառնէդ խնամածու լինիլ նմա և զօրհնառաք թուղթդ պակաս չառնել։ Նա ևս դիմելոց է առ սրբութիւնդ։ Ըստ այսմ գիտաւորութեան և Հաղբակու բէկն ևս էր զթուղթ գրեալ և ինքն առաջնորդն ևս Մկրտիչ վարդապետին էր գրեալ։ Իսկ սրբազան Վեհն զերկուս թուղթս գրեաց, զմին ի պատասխանի բազմակնիք թղթոյն առ նորին գրօղսն և զմին առ Հաղբակու բէկն։ Զորս ահա գրեմք աստ։

147. Թուղթ ի վերայ սրբոյն Բարդուղիմէոսի Առաքելոյ վանից վիճակաց քահանայից, մէլիքաց և իշխանացն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի նոցին բազմակնիք թղթոյն, յորում նախ զշնորհակալութիւնս վասն նոցին գրելոյն զմխիթարութիւն վասն հանգուցեալ սրբազանին և զշնորհաւորութիւն իւրոյ նորոգ հայրապետութեանն։ Եւ ապա,
22ա թէ որք վասն առաջնորդին ձերոյ զճատա//գովութիւնս և զհաւանութիւնս էիք գրեալ, ընդ այն կարի հաճեցաք, զի մշտապէս սիրով մնալն ձեր ընդ միմեանս, ուրախութիւն է ինձ։ Իսկ զոր գրէին սոքա, թէ առաջնորդըն մեր գալոց է ի սուրբ Աթոռդ, առ այն գրեաց, թէ յոյժ բարւոք լինի թէ ինքեան, թէ վանիցն, և թէ ձեզ, մինչ եկեսցէ, զի նորոգութիւն լիցի առաջնորդութեանն և փառաւորութեամբ և օրհնութեան կոնդակաւ վերադարձուսցուք զնա յայդր, որպէս և յառաջ։

148. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Հաղբակու բէկն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն (որ ևս սակս առաջնորդին գիրճայ էր գրեալ), ըստ մտաց թղթոյ համառակին։

149. Թուղթ մի ևս Մկրտիչ վարդապետն գրեաց առաջնորդին, ի պատասխանի նորին թղթոյն, որ գրէր ըստ մտաց երկրացւոց թղթոյն, և ապա զնուիրակ Ահարոն վարդապետէն, որ ընդ նմա չկարացեալ միաբանիլ ի սէր վասն ժանտութեանն և երկուցեալ ի վնասատուութենէ թողեալ էր զՀաղբակ առանց մեռոնի և եկեալ ի սուրբ Աթոռս։ Իսկ սա այժմ չքմեղս լինէր, թէ ես շատ հրաւիրեցի զնա գալ աստ, և զբէկի ուշուրն ևս ես խոստացայ տալ, այլ նա չեկն, և վերջապէս զերկիրս եթող անմեռոն։ Եւ այժմ գիտեմ նա է չարախօսեալ զինէն, որ սրբազան Վեհն բարկացեալ է և ինձ թուղթ չէ գրեալ։ Այլ ես այժմ գալոց էի, երկիրս խառնակեցաւ, եթէ խաղաղութիւն լիցի, գալոց եմ։ Իսկ Մկրտիչ վարդապետն գրեաց, թէ սրբազան Վեհն կամէր յայդր զյատուկ մարդ յղել, վասն այն քեզ յառաջ գիր չգրեաց, զի ընդ նմա գրեսցէ։ Այժմ դու զայդ համբաւդ գրեալ էիր, այլ ոչ յղեաց զմարդ, բայց դու որ գալոյ միտս ունիս, շատ լաւ առնես, և օգուտ է քեզ։ Երկրացիքն ևս էին գրեալ Մըկըրտիչ վարդապետին գիր. նոցա միայն զայս գրեաց, թէ ահա գրեցի առաջնորդին, ի նմանէ իմանալոց էք։

Յղեցան թուղթքս յամսոյս ԻԶ (26)։

1780 թ. նոյեմբեր—Երկրորդ թուղթք ի Թիֆլիզ

Յօգոստոսի ամսեան ԻԱ (21), որ թուղթ գրեցան ի Թիֆլիզ ի սրբազան Վեհէն և հանդերձ բազմակնիք թղթով եպիսկոպոսացն սրբոյ Աթոռոյս յղեցան ընդ Դանիէլ վարդապետին, այժմ նոցին պատասխանիքըն եկին ընդ նոյն Դանիէլ վարդապետին և սրբոյ Աթոռոյս վէքիլ տէր Ղազարին, զոր իբրու Հէրակլ արքայն էր յղեալ յատուկ իւր թղթովն ընդ Արղութեանց Բէժանին[28]։ Բայց և եկեալ էր նա առ ի նորոգեցուցանել զաւագ քահանայութիւնն և զգործակալութիւնն սրբոյ Աթոռոյս[29]։ Եւ Բէժանն ևս զի զառաջնորդ խնդրեսցէ վասն Սանահնու վանիցն իւրեանց, որպէս ցուցանելոց եմք և ի ներքոյ։ Ընդ որս և յոմանց ևս զոյր թուղթ՝ առ որս աստի ոչ էր գրեցեալ թուղթ։ Իսկ սրբազան Վեհն յայսմ նուագի բոլոր անտի եկեալ թղթոցն զպատասխանիս գրեաց։ Նաև ոմանց ևս նշանաւոր մարդկանց զթուղթս գրեաց՝ առ ի յարիլ ի սէր սրբոյ Ա-
22բ թոռոյս։ Որք // ամենեքեան առաքեցան ընդ հնձացի Կարապետ վարդապետին[30] հանդերձ ընծայիւք առ արքայն և առ ոմանս, զորոց զգիտմունսն ահաւասիկ ի հետևեալդ ծանուցանեմք։

150. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Թիֆլիզու և շրջակայիցն, ի շնորհակալութիւն վասն ընդունողական ծաղկեալ մահսարին իւրեանց։ Յորում և զչորեսին խնդիրս արար ի յօժանդակութիւն ինքեան։ Որոց առաջինն, թէ խնդրեմ ի ձէնջ զաղօթս առնել վասն իմ, որովք կարացից հոգալ զհասարակութիւն ազգիս և զսուրբ Աթոռս։ Քանզի ամենակերպ խուժանք կռւտին և կատիլոց են ի վերայ մեր օրըստօրէ, և ըստ բանին Պօղոսի, կրելոց եմք յամենուստ զվիշտս ի հեթանոսաց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ի սուտ եղբարց։ Ընդ որս և վասն սրբոյ Աթոռոյս աղօթել հրամայեաց, պատուիրելով ասել զբանն Դաւթի, թէ Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս այս։ Երկրորդն, թէ պարտիք զսէրն աստուածային ճշմարտութեամբ ունիլ առ միմեանս և խաղաղութեան զհետ երթալ և յերկիւղ տեառն կրթել զանձինս ձեր և զամենայն ներհակսն բարեաց ի ձէնջ ի բաց մերժել։ Երրորդն, թէ ի սուրբ և ի միաբնադաւան հաւատս ձեր կեցջիք անշարժ և մի թողուցուք զաք հեստիլ։ Չորրորդն, թէ զսուրբ մայրս ձերոյ հաւատոյ առաւել հարազատութեամբ և ըղձալառ սիրով սիրեսջիք, զի սա է ձեզ ծնօղ լուսածին և յատուկ պարծանք ազգիս Հայոց։

Ապա թէ ահա զայս օրհնութեան և շնորհակալութեան և հոգևոր խրատական թուղթս մեր առաքեցաք ձեռամբ Կարապետ արհիեպիսկոպոսիդ առ ձեզ՝ առ ի ընթեռնուլ յայդր և զմէնջ զողջոյն և օրհնութիւն մատուցանել ձեզ և զձերդ ողջունէ և բարեկեցութենէ ևս ի գալն պատմել մեզ։ Եւ ի վերջոյ գրեաց զմոմ տալ վասն սրբոյ Աթոռոյս ըստ բնականի սովորութեան իւրեանց։ Բայց զի յանցեալ ամին ևս չէին զմոմ տուեալ (զի վասն վրդովեալ գոլոյ ժամանակին մարդ ոչ յղեցաւ), վասն որոյ պատուիրեաց առատութեամբ տալ առ ի վճարել զերկուց ամաց զպարտսն ևս։

Զգաղափարն սորա ի Նոր տետր 128 երեսն գտցես։

151. Թուղթ ևս սիրոյ, օրհնութեան և շնորհակալութեան առ Հերակլ արքայն Վրաց, ի պատասխանի սիրանիշ և յուսադրական և շնորհաւորական թղթոյ նորին, զոր ընդ Դանիէլ վարդապետին և տէր Ղազարին և Բէժանին գրեալ էր, յորում և մխիթարութիւն վասն նորապէս վախ-

ճանման փոքրիկ որդւոյն և Թոռին։ Նաև խնդիր ի սիրոյ և ի խնամոց,
որ առ մեզ և առ սուրբ Աթոռս ոչ վերջանալ և զԹուղթն սիրոյ և մխի-
Թարութեան ոչ պակասեցուցանել։ Եւ Թէ զոր ինչ տէր Ղազարէն գիտել
մեզ գրեալ էիր, գիտացաք և զոր ինչ ի մէնջն է, դարձեալ ի դմանէ
գիտել կարես։ Իսկ և որովհետև այժմոյս գրեցեալ գիրն նորին առաջին
գիրն էր առ նորոգ սրբազան Վեհս մեր, վասն որոյ իբր ամօԹ վարկա-
23ա նելով գրել զխնդիր // ինչ ի նմա, բերանով էր ասացեալ տէր Ղազարին
և Բէժանին՝ ասել սրբազան Վեհին վասն կոնդակ տալոյ ումեմն։ Ուս-
տի գրեաց առ այն, Թէ մեք դեռ նոր եմք յղեալ զմահսարն մեր ի մեծն
Պօլիս և դեռ գիր չունիմք անտի և տակաւին վասն այդպիսեաց բանից
չգրեմք ինչ ուրեք։ Իսկ ի վերջոյ, Թէ ահա զԿարապետ վարդապետդ
յղեցաք ի սպաս քոյ այսու շնորհակալութեան Թղթով՝ մատուցանել քեզ
ի մէնջ ողջոյն և օրհնութիւն՝ քոյդ բարեկեցութեան ես տեղեկենալ և
ի դառնալն պատմել մեզ։ Յորմէ և զամենայն որպէսն մեր և սրբոյ
Աթոռոյս իմանալոց ես։
Զօրինակն սորա ի նոր տետր 27 երեսն տես[31]։

152. Թուղթ ես սիրոյ օրհնութեան և շնորհակալութեան առ Գեօրկին
Միրզայ արքայորդին գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի շնորհա-
ւորական և սիրոյ Թղթոյն նորին ընդ Դանիէլ վարդապետին յղեցելոյ և
որպէս հօրն, նոյնպէս և սմա գրեաց զմխիթարութիւն վասն եղբօրն և
որդւոյն։ Իսկ և սա նախապէս մինչ լուեալ էր զհայրապետանալն սըր-
բազան Վեհիս մերոյ, խիլայեալ էր զտանօղն համբաւոյն, վասն որոյ
և սրբազան Վեհն առ այս զշնորհակալութիւնս գրեաց։ Շնորհակալեցաւ
և վասն զԴանիէլ վարդապետն շահելոյն, զի յատկապէս շահեալ էր։
Ապա զայս խնդիր, Թէ ի սիրոյ և ի խնամոց մի վերջասցիս, զորս առ
սուրբ Աթոռս և առ մեզ ունիս։
Զգաղափարն Թղթոյս ի նոր տետր 124 երեսն գտցես։

153. Թուղթ ես սիրոյ և ողջունի առ Անտօն կաԹողիկոսն Վրաց[32],
յորում նախապէս զսէր և զշնորհակալութիւն գրեաց վասն սիրանիշ Թըղ-
Թոյ նորին և երկրորդապէս համապազ ի սէր և ի բարեկամութեան մնալ
խնդրեաց առ սուրբ Աթոռս և առ ինքն։ Եւ զի գրէր և իբրու ուխտէր ստ
զճշմարիտ սէր ունիլ առ սրբազանն, և զսա ես յայն յորդորէր։ Իսկ
Հախպատու շփոԹին և սա էր ըստ մեծի մասին գրգռիչ (որպէս ցուցեալ
գոյ յառաջին յիշատակարանոջն ի...)։ Վասն որոյ գրեաց, Թէ զայդ
և մեք կամիմք, և խնդրեմք յԱստուծոյ պահել ի յաւերածիթ և ի սիրա-
քակ դիպմանց։ Հայցեմ ուրեմն և քո զսոյնս խորհիլ և խնդրել յԱստու-
ծոյ և ջանալ ոչ միայն զսիրոյն անկոյ ի դալարութեան պահելն և եԹ
սաղարԹապաճոյճ տեսութեամբ, այլև զպտղաբեր առնելն։ Ծանոյց և
զյղելն Կարապետ վարդապետին հանդերձ պատճառաւն և վասն նորին
յանձնարարութիւն։
Օրինակն սորա ի նոր տետր 29 երեսն է։

154. Թուղթ ես առ Լևոն Միրզայ արքայորդին, ի պատասխանի նո-
րին սիրոյ և շնորհաւորութեան Թղթոյն ընդ Դանիէլ վարդապետին գրե-
ցելոյ։ Յորում զսէր, զօրհնութիւն և զշնորհակալութիւն գրեաց, նաև
զմխիԹարութիւնս վասն մահուան եղբօրն և եղբօրորդւոյն, ապա և զյոր-
դորանս՝ սիրով և օգտակամութեամբ կալ առ սուրբ Աթոռս և առ ինքն։
Ազդեաց և զյղելն Կարապետ վարդապետին։

155. Թուղթ ես սիրոյ առ Ամբակում վարդապետն Վրաց, Թէ քան
զայս յառաջ զԹուղթ գրեցաք առ արքայն և առ իւրայինսն և առ հասա-
րակութիւն ժողովրդոցն մերոց, որք յայդր, ծանուցանելով զանցից և
զոփոխութեանց մերոց։ Իսկ զի յայնժամ էաք ի զբաղմունս բազմա-
տեսակ և զսիրոյդ քոյ չունէաք տեղեկութիւն, վասն որոյ ոչ գրեցաք առ
23բ քեզ զԹուղթ սիրոյ։ Այլ մինչ դարձաւ այտի // Դանիէլ վարդապետն և
պատմեաց զսէրդ, զոր առ սուրբ Աթոռս ունիս, վասն այն զայս Թուղթս
գրեցաք առ քեզ առ ի յարծարծումն ընիկ սիրոյդ, որ առ սուրբ Աթոռս։
Ապա խնդիր, Թէ զնոյն սէրն և բարեկամութիւնն, զոր յառաջագոյն ու-
նեցեալ ես առ սուրբ Աթոռս, և ի մեր աւուրս ունիցիս։ Եւս վասն Կա-
րապետ վարդապետին յանձնարարութիւն, իսկ և ողջոյն գրեաց եղբօր-
որդւոյն սորա՝ Գարսէւան էշիկաղասուն, յորդորելով ի սէր սրբոյ Աթոռոյս։
Օրինակն սորա ի նոր տետր 33 երեսն է[33]։

156. Թուղթ ես սիրոյ, օրհնութեան և շնորհակալութեան առ ԴաւիԹ
Սարտարն և նորին եղբայր Նիկօլօսն (որք ես զսիրանիշ և զշնորհաւո-
րական Թուղթ էին գրեալ ընդ Դանիէլ վարդապետին), յորում և զյոր-
դորանս գրեաց ի սէր և յօգտակամութիւն սրբոյ Աթոռոյս։ Նաև զԿա-
րապետ վարդապետի յղելն պատճառաւն հանդերձ ծանոյց սոցա։ Որոյ
սակս և զյանձնարարութիւն գրեաց։

157. Թուղթ ես առ Զաղարէկն, ի պատասխանի նորին Թղթոյն ըստ
վերնոյդ դիտաւորութեանց։

158. Թուղթ ես առ Դեմեարէ էշիկաղասին, ըստ մտաց Թղթոյ Ամ-
բակում վարդապետին Վրաց, զոր ի վերդ գրեցաք։

159. Թուղթ անդրանիկ օրհնութեան և շնորհակալութեան առ Զալ
մովրովն, ի պատասխանի Թղթոյն նորին սիրոյ և շնորհակալութեան,
յորում յորդորանք՝ միշտ մնալ ի սէր սրբոյ Աթոռոյս։

160. Թուղթ ես անդրանիկ օրհնութեան առ Զալ Նազիրն, ի պատաս-
խանի նորին շնորհաւորական Թղթոյն, նման վերնոյդ։

161. Թուղթ առ Իսրայէլ կաԹողիկոսն գրեաց սրբազան Վեհն, ի
պատասխանի նորին շնորհաւորութեան Թղթոյն, որում նախ զշնորհա-
կալութիւնս գրեաց վասն շնորհաւորելոյն զհայրապետութիւնն։ Բայց զի
գրեալ էր նա, Թէ զետեղեալ եմք ի Հաղպատ և զմիտսն չէր յայտնեալ,
այլ գրեալ էր ի Դանիէլ վարդապետէն իմանալ։ Առ այն գրեաց, Թէ
զայդմանէ ոչինչ իմացաք, Թէպէտ և զԴանիէլ վարդապետն ես խօսե-
ցուցաք, այլ և ի նմանէ չիմացաք ինչ, որչափ արժանն էր իմանալ։ Յե-
տոյ Թէ այժմ որովհետև զբաղեալ էաք ի զանազան հոգս, վասն որոյ
չունեցաք ժամ երկարօրէն գրել ինչ քեզ։ Այլ որովհետև զԿարապետ
վարդապետդ յղէաք ի սպաս արքային, վասն որոյ և զայս կարճառօտ
Թուղթս քեզ գրեցաք ի նշան սիրոյ։ Այլ և ծանուցեալ էր սա Թէ միան-
գամայն իմ ջանքն այս է, Թէ քեզ հաճոյ և եԹ գտայց։ Ընդ որ գրեաց
սրբազան Վեհն, Թէ որով չափու և եղանակաւ սէր առնիցես, նովին չա-
փովն Թաթաղուն, զեղուն և շարժուն ընդունելոց ես։
Զօրինակն Թղթոյս ի նոր տետր 30 երեսն գտցես[34]։
24ա
162. Թուղթ ես առ Աբրահամ վարդապետն, ի պատասխանի նորին
Թղթոյն։ Յորում շնորհակալութիւնս գրեաց վասն զմխիԹարութիւն և

զշնորհաւորութիւն գրելոյ նորին։ Բայց սա թէ զառաջին անցսն իւր, որ
առ հոգելոյս սրբազանաւն ընդդէմ և խոշընդակն երևեցաւ նմա և սըր-
բոյ Աթոռոյս և թէ վասն Հախպատու և Իսրայէլ կաթուղիկոսի նոր բա-
նիցն (որ յիշեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն յայս թուղթ ի յու-
լիսի ԻԱ (21) առ Յովսէփ վարդապետն գրեցեալ թղթոջն)։ Ջինքն ար-
դարացուցանելով գրէր սրբազան Վեհին, ընդ որս գրեաց սրբազան
Վեհն, թէ զառաջին անցսն մեք ևս գիտեմք կերպիւ ինչ։ Իսկ վասն նո-
րոցս գիտես, զի վասն Հախպատու և Իսրայէլ կաթուղիկոսի բանիցն այժմ
չունիմք պժամանակ հետևիլ կամ առնել ինչ, զի ի յոլով զբաղմունս
կամք, ի հարկէ, եթէ Տէր կամիցի, և այն ըստ իւրում ժամանակին լի-
նելոց է։ Բայց վասն քոյ այսպէս իմա, զի երկու ինչ կայ քեզ այժմ առ-
նել։ Այսինքն, եթէ սառյգ կամիցիս դու լինիլ առաջնորդ Սանահնու վա-
նիցն, որպէս և սփպեն զքեզ, ապա եկեսցես ի սուրբ Աթոռս, և մեք
տացուք քեզ զառաջնորդութիւն նոյն վանիցն, և կոնդակաւ և փառաւո-
րութեամբ յղեսցուք անդ։ Իսկ եթէ զայս չկամիցիս, այլ եթէ կամք իցեն
քեզ գալոյ ի սուրբ Աթոռս, եկեսցես անյապաղ, զի առ սա դիմօղն չէ
մնացեալ թուրց շահեցման ըստ իւրոյ արժանւոյն։ Կամ թէ ի զալդ
մինչ ժամանակ ինչ աստ մնասցես և տեսցուք, թէ զի՞նչ հոգս եմ առ-
նելոց տեղւոյդ բանիցն, յայնժամ և վասն քոյ ևս տեսցուք թէ զի՞նչ
եմք հոգալոց։ Ահա յայսց ասացելոցս, զորն և կամիս այնպէս արաս-
ցես։ Եւ սիրելիդ մեր Կարապետ վարդապետդ ևս ընդ քեզ խօսելոց է
վասն այդր, զոր առաքեցաք ի քաղաքդ։

163. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ տօխտոր Յակոբն[35] գրեալ
սրբազան Վեհն, ի պատասխանի նորին երից թղթոցն, որոց զետինն
ընդ Դանիէլ վարդապետին էր գրեալ, իսկ զառաջին երկուսն նախքան
զնորա գալն էր գրեալ։ Որում շնորհակալութիւնս գրեաց ընդ գրելն նո-
րին զմխիթարութիւնս և զշնորհաւորութիւնս։ Նաև գրեալ էր սա, թէ փա-
փագ ունիմ գալոյ ի սուրբ Աթոռդ, վասն որոյ գրեաց սրբազան Վեհն,
թէ Տէր յաջողեսցէ զգալուստդ և զիղձդ լցուսցէ։ Իսկ և վասն Հախպա-
տու և Իսրայէլ կաթուղիկոսի բանին սա ևս էր գրեալ սրտացաւօրէն՝ զհոգս
ինչ առնել։ Վասն որոյ սմա ևս գրեաց, թէ այժմ զբաղեալ եմք, յետոյ
ի հարկէ, զհոգս ինչ արասցուք։ Այլև սա վասն Աբրահամ վարդապետին
խնդրեալ էր ի սրբազան Վեհէն զրան ինչ հոգալ վասն նորա, ուստի և
սրբազան Վեհն Աբրահամ վարդապետի առ ինքն զթուղթ գրելն և զիր
առ նա գրեալսն (զոր ի վերդ գրեցաք) ծանոյց սմա։ Եւ ապա զօրհնու-
թիւնս և զյորդորմունս գրեաց ի յօգտակամութենէ և ի ճատագովութենէ
սրբոյ Աթոռոյս և իւրեան ոչ վերջանալ։ Ապա զԿարապետ վարդապետի
առաքումն յիշեաց հանդերձ պատճառաւն և գրեաց, թէ վասն գրելոցս
այսոցիկ դա ևս խօսելոց է ընդ քեզ։

164. Թուղթ ևս օրհնութեան, սիրոյ և շնորհակալութեան առ մէլիք
Աւետիքն և նորին եղբայր միրիշքեարբաշի պարոն Իւանէն, ի պատաս-
խանի մխիթարական և շնորհաւորական թղթոյ նոցին, զոր գրեալ էին
ընդ Դանիէլ վարդապետին առ սրբազան Վեհն, որ զկնի շնորհակալեց-
24բ մանն զսոցունց յոր//զորեաց զսոսա կալ ի հաստարմութիւնս և յօգտա-
ջանութիւնս առ սուրբ Աթոռս և առ ինքն։ Եւ թէ ահա զԿարապետ վար-
դապետդ յղեցաք ի քաղաքդ առ արքայն և առ բոլոր ժողովուրդսդ մեր
հանդերձ օրհնութեան թղթովք մերովք առ ի նուիրել համայնիցդ զող-
ջոյն ի դիմաց մերոց, և ի դառնալն ի սուրբ Աթոռս դձերդ բարեկեցու-
թեանց ևս պատմել մեզ։ Յարմէ և զամենայն որպէսն մեր և սրբոյ Ա-
թոռոյս գիտելոց էք, զոր և ի սէր սիրելութեան ձերոյ յանձնեմ։ Այլև՝ ի
վաղուց հետէ նախնիքն սոցա, և մանաւանդ հայրն սոցա՝ մեծ միրիշ-
կեար աղայն ի կողմանէ սրբոյ Աթոռոյս ի վերայ համայն եկեղեցեա-
ցըն մերոց, որք ի Թիֆլիզ, երիցփոխանք են եղեալք, որոց զկնի սոյն
մէլիք Աւետիքս էր երիցփոխան։ Բայց ի ժամանակս լուսահոգի սրբա-
զանին հրաժարիլ կամեցաւ ի գործոյն, վասն որոյ և հոգելոյս սրբա-
զանն էհան զնա ի գործոյն և զԹաղօեան Մկրտումն արար երիցփոխան,
զի և ինքն իսկ խնդրեաց լինիլ։ Որ և արար զգործն այն մինչև ցայժմ։
Իսկ մինչ եկն աստ այժմ տէր Ղազարն պատմեաց մեզ թէ յինքենէ և թէ
ի դիմաց ժողովրդեանն զանշահութիւնս նորին։ Եւ մեք ևս տեսաք, թէ
յայսքան ամս երիցփոխութեան սորա ոչինչ օգտեցաւ սուրբ Աթոռս ի
սմանէ, վասն որոյ հարկեաց սրբազան Վեհն Կարապետ վարդապետին
և տէր Ղազարին ևս հարկ արար, զի անդ ստիպեսցեն պարոն Աւետիքն
յանձն առնուլ զերիցփոխանութիւնն։ Եւ յայս թուղթս ևս յատկապէս առ
պարոն Աւետիքն գրեաց, թէ ըստ որում նախնիքն քո սրբոյ Աթոռոյս
յատուկ հարազատ են եղեալ, և միշտ ի գործս սորին, և ջանս ցօղք օգ-
տիցն և հոգս ցօղք հոգալեացն, վասն որոյ և մեք զքան իմաստնոյն
մատծեմք չթողուլ զբարեկամսդ հին, զի նորն ոչ լինիցի նման ձեզ։
Այժմ ի զբաղմունս գոլով այսքան միայն ազդեցաք սիրելւոյդ։ Զլիա-
կատարն ի Կարապետ վարդապետէդ և ի տէր Ղազարէդ իմանալոց ես[36]։

165. Թուղթ ևս առ մէլիք Մկրտումն Թաղօեան, ի պատասխանի նո-
րին շնորհաւորական և որպիսածանոյց թղթոյն, զոր յառաջ քան զԴա-
նիէլ վարդապետի գալն գրեալ էր։ Որում նախ զսէր և զշնորհակալու-
թիւնս գրեաց հանդերձ յորդորմամբ ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս։
Իսկ ապա զի ի ճորտացն սրբոյ Աթոռոյս զաւելի հարկս պահանջէին,
զորս այժմ ճորտքն գրեալ էին սրբազան Վեհին, վասն որոյ գրեաց սմա,
թէ դու գիտես, որ ի բնէ մեր ճորտքն ազատ են եղեալ ըստ այլ եկե-
ղեցեաց ճորտացն։ Իսկ յետոյ ի մէլիքութեան պարոն Աւետիքին քա-
ղաքացիքդ յիւրեանց միջէն մի կերպ հարկ են կարգեալ ի վերայ մեր
ճորտացն, իբր թէ որքան խարճ որ թովճի առնեն ի վերայ քաղաքիդ
ամ յամէ, ի մի հարիւր թուման թովճումն Ե (5) հազարորդն տացեն մեր
ճորտքն։ Զոր և նոքա առանց արքային ազդելոյ և ի սուրբ Աթոռս գրե-
լոյ մինչև ցայժմ տուեալ են։ Իսկ այժմ լսեմք, թէ քան զայն ևս առաւել
աւելի առնուք, նաև ի դաւթարս ձեր արկանել ևս կամիք և ըստ հասա-
րակ քաղաքացւոցդ կարգել ի ներքոյ հարկի։ Արդ, այդ չեղած բանքդ,
որք մինչև ցայժմ չեն եղեալ, յաւուրս ձեր ընդէ՞ր լինին։ Յետոյ թէ կա-
25ա մէի զայս բոլոր իշխանաց քաղաքիդ գրել, այլ այժմ քեզ միայն գրեցի,
գիտելով, թէ դու խափանել կարես, վասն որոյ պարտիս զայդ վատ բանդ
խափանել։ Եւ թէ եթէ կարես այնպէս սահմանել, որ բուն առաջին կա-
նոնաւն մեր ճորտքն ազատ լինին, յոյժ բարւոք է։ Ապա թէ ոչ, գոնէ
այնպէս սահմանեսցես, որ ի մի հարիւր թուման թովճումն ԵՌ-դն
(5000) տացեն որպէս ի մէլիքութեան մէլիք Աւետիքին եղեալ է։

Զօրինակն թղթոյս ի նոր տետր 30 երեսն տես[37]։

166. Թուղթ ևս առ Մօլարէ պարոն Գեօրգին, ի պատասխանի թըղ-
թոյ նորին մխիթարութեան և շնորհաւորութեան, յորում շնորհակալու-
թիւն, օրհնութիւն և յորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս և վասն Կարապետ

վարդապետին ևս յանձնարարութիւն։ Յորմէ և գրեաց իմանալ զամենայն որպէսն սրբոյ Աթոռոյս և ինքեան։

167. Թուղթ ևս առ Միրզայ Գեորգինն և իւր եղբայր Միրզայ Միսայէլն, ի պատասխանի նոցին շնորհաւորական և մխիթարական թըղթոյն, ըստ մտաց վերոյ գրեցեալ թղթոյդ։

168. Թուղթ ևս սոյնպէս առ Նազարբէկենց պարոն Յովսէփն. ի պատասխանի նորին թղթոյն, ըստ վերնոցդ մտաց։ Բայց սմա յատուկ զայս, զի սա գրեալ էր, թէ Ափխազաց Սօլոմոն արքային[38] և Մաքսիմէ կաթուղիկոսին[39] զթուղթս գրեցէք, վասն որոյ և սրբազանն կամաւորեցաւ գրել։ Ուստի և գրեաց սմա, թէ ահա գրեցաք։ Այլ զի անձեռնհաս եղեալ սրբազան վեհն ոչ գրեաց այժմ առ նոսա զթուղթս, վասն որոյ և սմա գրեաց, թէ այժմ այլ ոչ գրեցաք, յետոյ եմք գրելոց։

Վերը բերված նամակների բովանդակությամբ՝ «ըստ վերոյ գրելոց թղթոցդ» պատասխան նամակներ են ուղարկվել նաև պրն. Մեհրաբին, Սարգիս աղային, մուշրուպ Դավթին և մուշրուպ Հովսեփին։

169. Թուղթ ևս առ Սուլխան Դիւանն, յորում սէր և օրհնութիւն, բայց զի սա թուղթ չէր գրեալ ըստ այլոցն, ի պատասխանի առաջին թղթոյ սրբազան վեհին, առ այն գրեաց, թէ ընդ թուղթ չգրելդ ոչ վըրդովեցայ, զի գիտեմ, որ յանձեռնհասութենէդ չես գրել, այլ ի սիրոյ և ի հարազատութենէ սրբոյ Աթոռոյս և մեր մի՛ վերջանար։

170. Թուղթ ևս առ Նացուալ պարոն Աղալօն, ի պատասխանի նորին թղթոյն, ըստ վերին թղթոցդ մտաց։ Նաև զոր ինչ մէլիք Մկրտումին գրեաց վասն ճորտացն սրբոյ Աթոռոյս (որպէս ի վերդ ի թուղթս Մկրտումին գրեցեալ է), սմա ևս գրեաց։

171. Թուղթ ևս ի վերայ սրբոյ Աթոռոյս ճորտացն գրեաց սրբազան վեհն, ի պատասխանի նոցա թղթոյն, զոր գրեալ էին վասն աւելի հարկապահանջութեանցն ի յինքեանց, զի սրբազան վեհն գրեսցէ առ իշխանն և զհոգս ինչ արասցէ վասն նոցա։ Վասն որոյ և սրբազան վեհն զբանս գրեաց ի կողմանէ սոցա առ մէլիք Մկրտումն և Նացուալ պարոն Աղալօն (զորս ի վերոյսդ ի թուղթս նոցա ցուցաք)։ Ուստի և սոցա
25բ ազդեաց, թէ այս ինչ գրեցի նոցա վասն ձեր։ // Վասն որոյ և ձեզ գրեմ, զի թէ ըստ գրեցելոց մերոց արասցեն, բարի է, և թէ ոչ, ապա ծանուսջիք տէր Ղազարիդ, զի մեզ գրեսցէ, յայնժամ և մեք զայլ իմն հոգս եմք առնելոց վասն ձեր։ Եւ թէ զերկարապէսն ի Կարապետ վարդապետէդ և ի տէր Ղազարէդ իմանալոց էք։

172. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան առ մահտեսի Յովհաննէսն, ի պատասխանի մխիթարութեան և շնորհակալութեան թղթոյ նորին։ Եւ զի յղեալ էր սա ընդ Դանիէլ վարդապետին... և Ա (1) մարգարտեայ՝ գօտի իբր հոգեբաժին հօրն իւրոյ հանգուցելոյ՝ մահտեսի Յովհաննիսին նաև... ևս որիշ էր յղեալ ընծայ սրբազան վեհին։ Որոյ աղագաւ և սրբազան վեհն յատկապէս զօրհնութիւնս և զշնորհակալութիւնս գրեաց և թէ վասն լուսահոգի հօրն քոյ... արաք զհոգւոցն, զոր և խնդրեալ էր առ ի սրբազան վեհէն հոգին Տէր լուսաւորեսս[ցէ]։ Իսկ և խնդրեալ էր առ ի սրբազան վեհէն, որ ի վերայ գօտւոյն, որ կա գրեցուցանել զյիշատակն մահտեսի Յովհաննիսին ի վերայ գօտւոյն, թէ ահա կայնպէս արար սրբազան վեհն։ Վասն որոյ գրեաց այժմ, թէ ահա շինել տարեցի զխնդիրդ։ Նաև մի ոսկեայ խաչ և զմի արծաթեայ սկիհ շինել

տայր սա առ ի յղել կամ ընդ ինքեան բերել ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ գրեաց սրբազան վեհն, թէ երբ և լրասցին և մեզ հասուսցես, յայնժամ ևս յատկապէս այնց աղագաւ շնորհակալելոց եմք զքէն։ Այլև Ջկրաշէնու եկեղեցին, որ տէրունի է սրբոյ Աթոռոյս, կարի խախտեցեալ էր, սա կամէր քակել զայն և նոր շինել, բայց այսու պայմանաւ, զի թէ անուանքըն առաջին շինողաց այն եկեղեցւոյ և թէ իւր անունն մի յայտնապէս յիշեսցին ի պատարագոջն։ Քանզի մինչ յիշէին յառաջագոյն, հոգելոյս սրբազան վեհն խափանեաց զայն վատթար սովորութիւնն։ Այլ նոքա չէին կամեցեալ, և յառաջնորդէն ևս նոր հրաման էին առեալ թղթով, զի այն եկեղեցւոյ շինողաց անուանքն յատկապէս և ձայնիւ յիշին յեկեղեցւոջն։ Ուստի սա զայն թուղթն առեալ և եդեալ ի մէջ իւր թղթոյն, յղեալ էր առ սրբազան վեհն և գրեալ զայս ամենայն։ Վասն որոյ և սրբազան վեհն գրեաց, թէ այժմ ի մէջ զբաղմանց կամք և դեռ ոչ ունիմք ժամանակ հետևելոյ այսպիսեաց բանից։ Իսկ դու ըստ գրելոյդ երբ և եկեսցես ի սուրբ Աթոռս, յայնժամ զկատարելապէսն բանիդ ի քէն իմանալոց եմք և ըստ պատշաճին զհոգս ինչ առնելոց այդր աղագաւ։

173. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ Սօլոմոնն, թէ քան զայս յառաջ զթուղթս գրեցաք յայդր, թէ հասարակապէս ի վերայ մերազնէիցդ և թէ յատկապէս առ ոմանս և ընդ Դանիէլ վարդապետին յղեցաք յայդր, որ մինչ դարձաւ այտի առ մեզ բազմակնիք և համահաճական թղթով քաղաքիդ, պատմեաց մեզ զքոյդ հարազատութենէ, զոր ունիս առ սուրբ Աթոռս և առ մեզ, վասն որոյ և մեք այժմ զայս օրհնութեանս թուղթ գրեցաք առ քեզ, զի ևս առաւել հաստատեսցիս ի սէր և յօգտակամութիւն սրբոյ Աթոռոյս։ Եւ ի վերջոյ զԿարապետ վարդապետի յղելն ծանոյց հանդերձ պատճառաւն և վասն նորա ևս զյանձնարարութիւնս գրեաց[40]։

174. Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան առ Յովսէփն, ըստ վերոյ գրելոյդ մտաց։

Օրհնության նամակներ են ուղարկվել նաև Բաղդասարին, Սուլխան Բեկթաբեկյանին, Աշխարհբեկին և պրն. Հովնաթանին (էջ 25բ—26ա)։

26ա 175. Կոնդակ վէքիլութեան և գործակալութեան և վերահաստատութեան աւագ քահանայութեանն եւ Թիֆլիզու Վանքի եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Ղազարին ի վերայ եօթանց տէրունի գլխաւոր եկեղեցեաց և այլոց մասնաւոր եկեղեցեաց տէրունեաց սրբոյ Աթոռոյս քահանայիցն և ժողովրդոցն[41]։ Յորում նախ դնելով զբան իմաստնոյն, թէ փորձ արծաթոյ և ոսկւոյ ի բովս և այր փորձի ի բերանոյ գովչաց իւրոց։ Եւ ապա գրելով, թէ հոգելոյս հայրապետն մեր ըստ վկայելոյն ձերոյ բազպա մակնիք թղթով զարժանաւորութենէ զորին պատուոյ և շնորհի, և վասն խնդրոյ ձերոյ, որք խնդրեալ էիք կացուցանել զդա ի Վանքի եկեղեցւոջդ աւագ քահանայ, վկայելով ևս թէ նախնիքն դորա գործակալք են լեալ սրբոյ Աթոռոյս յայդր, և տեսեալ զդորա համեստութիւնն և զնախնի սրբազան հայրապետաց մերոց կոնդակսն, որովք զնախնիսն դորա կարգեալ էին աւագ քահանայս սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյդ և գործակալս սրբոյ Աթոռոյս, վասն որոյ պատուեաց զդա և փառաւորեաց զնախնեաց իւրոց զերկոսին գործսն ևս տալով դմա և զշքեղազարդ կոնդակ շնորհելով։ Որ և մինչև ցարդ ծառայեաց սրբոյ Աթոռոյս։ Իսկ այժմ ևս յետ փոխմանն առ Տէր հոգելոյս սրբազանին մերոյ մինչ եկն աստ

ընդ Դանիէլ վարդապետին բերեալ զմահսարն քաղաքիդ, մեք ևս զգա կրկին փառաւորեցաք և այսու օրհնութեան կոնդակաւս մերով հաստատեցաք յերկոսին գործն իւր՝ առնելով զգա աւագ քահանայ սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյդ մերոյ տէրունոյ, և գործակալ և վէքիլ սրբոյ Աթոռոյս: Եւ յետ այսորիկ գրեաց և զկանոնսն, զորս հոգելոյս հայրապետն ըստ կանոնաց առաջին հայրապետացն վասն վէքիլութեանն սրբոյ Աթոռոյս և աւագ քահանայութեանն գրեալ է ի յիւր կոնդակոջն, զոր շնորհեալ է սմա:

Զորս գտանել կարես ի յառաջին յիշատակարանոջն, որ յաւուրս հոգելոյս հայրապետին Սիմէոնի գրեալ է ի ՌՄԻԷ (1778) և ի մայիսի ԺԱ (11): Մանաւանդ և զօրինակն կոնդակի նորին տես ի տետրն շաբաթաթրանացս, որ է բոլոր համարագրով ի ՉՁ (780), ՉՁԱ (781), ՉՁԲ (782) համարսն: Իսկ վերոգրեալ նորայ բանի օրինակն տես ի նոր տետրն ի համարսն 127, 128:

176. Թուղթ ևս ի վերայ Ջկրաշէնու տէր Սիմէոնին և եղբարցն՝ խաչատուրին և Գրիգորին և Գաբրիէլին վասն տէրունի առնելոյ զնոսա, որք և բնական ճորտք էին սրբոյ Աթոռոյս և այժմ ևս ինքեանք էին խնդրեալ տէրունի ևս առնել զինքեանս՝ գրելով զօրինաւոր առիթս, որք են այսք: Զի տէր Մարկոս պապն սոցա յՕսմանցւոց երկրէն գնացեալ ի Վրացտուն, ի Խէլթուպան գեղջն բնակեալ է նախ, որ է թեմ Հախպատու, և նոյն գիւղի թաւաքն ճորտացուցեալ են զնոսա ինքեանց: Իսկ քառասուն ամաւ յառաջ սրբոյ Աթոռոյս նուիրակ և Թիֆլիզու առաջնորդ
26բ Անանիա վարդապետն գնեալ է զսոսա ի ճորտութիւն // սրբոյ Աթոռոյս և յայնմ օրէ մինչև ցայսօր կան ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս և հպատակութիւնս առնեն սմա: Եւ զթուղթս ունին ի սրբոյ Աթոռոյս ի հաստատութիւն ճորտութեանն իւրեանց սմա: Զի ԺԵ (15) ամաւ յառաջ նոյն ծախօղ թաւաղաց ժառանգքն կամեցեալ են վերստին իւրացուցանել զսոսա, այլ սոցին հայր տէր Դաւիթն եկեալ առ հոգելոյս տէր Սիմէոն հայրապետն, զհաստատութեան կոնդակ է առեալ և տարեալ (որպէս թուղթ ցուցեալ կայ ի յիշատակարանոջն, որ յաւուրս նորին ի ՌՄ (1751) թուացեալ կայ ի յիշատակարանոջն, որ յաւուրս նորին ի ՌՄ (1751) թուականին, ի...): Ուստի այլ չեն կարացեալ իւրացուցանել զսոսա, իսկ այժմ, որպէս ասացաք, յօժարութեամբ կամին տէրունի ևս լինել սրբոյ Աթոռոյս, ըստ որում ոչ են բնիկ այն երկրացի: Վասն որոյ գրեաց, թէ հարկ է ձեզ տէրունի ևս լինել սրբոյ Աթոռոյս: Նաև սրբոյ Աթոռոյս նուիրակ և տեղւոյ առաջնորդ Ռէթէոս վարդապետն զսա ի Ջկրաշէն եկեղեցւոջն միաբան է կարգեալ, զոր ևս յիշելով կրկին հաստատեաց, գրելով թէ ու միաբան է կարգեալ, զոր ևս յիշելով կրկին հաստատեաց, գրելով թէ ու ոք յառաջնորդաց կամ յայլոց ունի իշխանութիւն հանել զձեզ ի ժառանգութենէ սրբոյ Աթոռոյս և կամ առնել թեմ այլոց վանից: Զի ի մանկութենէ ելեալ էք ի վաղուց, և այժմ ի մեր տէրունի վիճակոջդ էք, վասն որոյ տէրունի ժողովուրդք էք սրբոյ Աթոռոյս: Ուստի և մեք այսու օրհնութեան թղթով մերով հաստատեցաք զձեզ ի սրբոյ Աթոռոյս տէրունի և արարաք զձեզ տէրունի ժողովուրդ սրբոյ Ջկրաշէն սուրբ եկեղեցւոջդ, և արարաք զձեզ տէրունի ժողովուրդ սրբոյ Աթոռոյս: Եւ ապա պատուէր՝ անհոգութեամբ ծառայել սրբոյ Աթոռոյս

Զօրինակն թղթոյս ի նոր տետր 32 երեսն գիտ:

177. Կոնդակ ևս սրբազան Վեհն ի վերայ Գօրու գրեաց՝ ծանուցանելով զվախճան հոգելոյս հայրապետին Սիմէոնի և զյաջորդելն իւր զԱթոռս սուրբ: Եւ ապա գրելով զշորհսին պատուէրսն, զորս յառաջ քան զայս ի Թիֆլիզ և յայլ տեղիս գրեալ կոնդակսն գրեալ եմք:

178. Թուղթ ևս անդրանիկ օրհնութեան ի Գօրի առ տէր Սահակն գրեաց, թէ քան զայս յառաջ վասն մերս անցից ի Թիֆլիզ, թէ մեք կոնդակաւ և թէ միաբանքն բազմակնիք թղթով ծանուցաք և անտի թէ միաբանքն բազմակնիք թղթով ծանուցաք: Եւ անտի թէ զմահսար ի հասարակէն և թէ զայլ թուղթս յոմանց ընկալաք: Եւ թէպէտ ի կոնդակոջն զանուն վիճակիդ քոյ ևս էաք գրեալ, բայց յատկապէս ևս յայդր զկոնդակ գրեցաք այժմ, և զայս թուղթս ևս ի վերայ քոյ գրեցաք, զի զայս անցս մեր յԱստուծոյ համարելով, սրբոյ Աթոռոյս և մեզ օգտաշան լիցիս, որպէս ի ժամանակս լուսահոգի հայրապետին: Եւ թէ ի գործդ արի լեր և ժողովրդեանդ մուղայէթ կաց:

179. Թուղթ անդրանիկ օրհնութեան ի վերայ մաքսապետ Ստեփանին, յորում և պատուէր, զի զսրբոյ Աթոռոյս ճորտսն մի նեղացուցէ ի կողմանէ մաքսի. ըստ որում բնականապէս նոքա զմաքսն իւրեանց սրբոյ Աթոռոյս պարտին տալ և ոչ ումեք, որովհետև ճորտ են սմա:

180. Թուղթ ևս առ այս երկրացի մէլիք Մինասն՝ անդրանիկ օրհնութեամբ, ի պատասխանի նորին թղթոյն շնորհաւորականի, բայց
27ա որովհետև առ սա յառաջնում նուագին զթուղթ ոչ գրեաց // սրբազան Վեհն, վասն այն գրէր սա, թէ ընդէ՞ր ոչ արժանացուցեր զմեզ օրհնութեան թղթոյդ, որով մխիթարեաք յայս տառապակրութեանս և ի նեղութեանս, ուրեմն մոռացեալ էք զմեզ և այլն: Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն, թէ ոչ եմք մոռացեալ զքեզ, այլ միշտ ի մտի ունիմք և ցաւիմք վասն նեղակրութեան ձերոյ, սակայն, յայնժամ ի կարի զբաղմանց և յանձեռնհասութենէ չգրեցաք զթուղթ առ քեզ: Եւ ապա զյուսադրութիւնս և զփոփանս գրեաց վասն տարագրութեանն իւրեանց, զի ի կարի թշուառութիւնս էին վարեալքն յայս երկրէս անդ:

181. Թուղթ ևս ի վերայ համայն քահանայիցն Թիֆլիզու, ի պատասխանի մխիթարութեան և շնորհաւորութեան թղթոյ նոցին, յորում շնորհակալութիւն և յորդորմունք: Ապա և ազդումն վասն յղեցման Կարապետ վարդապետին և սակս նորա յանձնարարութիւն: Այլև պատուէր, զի ի մոմ ժողովելն ամենայն ջանիւ օժանդակ լիցին Կարապետ վարդապետին և յորդորեսցեն զժողովուրդսն՝ առ ի զերկուց ամաց պարտսն ևս հատուցանել՝ առատութեամբ տալով զմոմն:

182. Թուղթ ևս առ Ջաղատենց պարոն Ստեփանն՝ անդրանիկ օրհնութեամբ, յորում զայս, թէ քան զայս յառաջ մինչ յայդր զթուղթս գրեցաք յայդր ի չափազանց հոգւոց և զբաղմանց մերոց ոչ կարացաք և քեզ զթուղթ գրել: Իսկ ըստ որում սիրելի մեր ես և ընտանեբար ցաւեցող սրբոյ Աթոռոյս, վասն որոյ այժմ զայս թուղթ սիրոյ գրեալ առ քեզ յղեցաք, զի ևս առաւել հաստատեսցիս ի սէր մեր և սրբոյ Աթոռոյս:

183. Փոսուլայ ևս գրեաց սմա սրբազան Վեհն, թէ մեք ի վերայ տեղւոյդ առաջնորդ Յովհաննէս վարդապետին Բ (2) թումանի փոխցատեղւոյդ առաջնորդ Յովհաննէս վարդապետին Բ (2) թումանի փոխց յագիր գրեցաք, թէ ի կողմանէ պարոն Ստեփանին ի Բայազիտ ի յա-

գուլեցի Թումանէն և Պետրոսէն առեալ եմք և ի պէտս սրբոյ Աթոռոյս
ծախեալ, դու յայդր ի հաշիւ պարոն Ստեփաննին։ Ուստի ի ժամանել
թղթոյս առ քեզ, պարտիս ի յառաջնորդէն առնուլ, և թէ դու գայցես
ընդ քեզ բերել, և թէ դու շուտով չգայցես, ընդ հաւատարմի յղել։ Այլ
թէ այսպէս չկամիցիս, եթէ դրամ գոյ քեզ ի Բայազիտ առ ագուլեցի
Թումանն և Պետրոսն, շուտով զմի բարաթագիր յղեա առ մեզ ի վերայ
նոցա, զի յղեսցուք առ նոսա և ի նոցանէ առցուք։

184. Փոլիցայագիր գրեաց սրբազան Վեհն ի վերայ Թիֆլիզու առաջ-
նորդ Յովաննէս վարդապետին, զի յարգեանց սրբոյ Աթոռոյս զԲ (2)
թուման դրամ տացէ Ջաղատեանց պարոն Ստեփաննին, զորոյ միտսն ի
վերդ ի նոյն Ստեփանի փուսուլայոջն ընթերցիր, զոր անդ գրեալ եմք։

185. Թուղթ են օրհնութեան և շնորհակալութեան առ սոյն Յովան-
նէս վարդապետս, ի պատասխանի նորին մխիթարութեան և շնորհա-
ւորութեան թղթոյն։ Յորում նախ ծանոյց զթուղթս գրելն առ արքայն և
առ այլս յառկապէս, և զշնորհակալութեան կոնդակ մի ևս ի վերայ քա-
ղաքին գրելն հասարակապէս և ընդ Կարապետ վարդապետին յղելն
հանդերձ ընծայիւք վասն արքային և վասն այլոց ոմանց։ Եւ պատուի-
րեաց, զի ի մատուցանելն Կարապետ վարդապետին զընծայսն առ ար-
քայն և առ միւսն, սա ևս ընդ նմա երթիցէ և ի միասին մատուսցեն։
Նաև վասն սրբոյ Աթոռոյս ճորտից աւելի հարկապահանջութեանցն զբա-
27բ նըս գրելն առ // մէլիք Մկրտումն և առ պարոն Աղալօն։ Ծանոյց սմա
և պատուիրեաց, զի սա ևս մուղայէթ լիցի և խափանել տացէ զաւելորդ
պահանջմունսն ի ճորտոյն մերոց։ Գրեաց սմա նաև ի վերայ Գօրոյ
զյատուկ կոնդակ գրելն։ Եւ վասն տէր Ղազարին գրեաց, թէ ըստ որում
լուսահոգի սրբազան Վեհն կարգեալ էր զդա վէքիլ և գործակալ սրբոյ
Աթոռոյս և աւագ քահանայ Վանքի եկեղեցւոյդ, վասն որոյ մեք ևս կար-
գեցաք և պատուիրեցաք յամենայն կողմանէ անսալ քեզ՝ որպէս և լու-
սահոգւոյ պատուէրն է լեալ։ Գրեմ և քեզ զի սիրով և կառավարեսցես
ի ներքոյ ձեռաց քոց և երկոքեանդ ևս միաբան զօգուտն սրբոյ Աթոռոյս
ջանասջիք և զհոգալիս մեր հոգասջիք։ Իսկ և վասն Կարապետ վար-
դապետին զյանձնարարութիւնս գրեաց։ Եւ թէ ահա յատուկ փոլիցա-
յագրով Բ (2) փոլիցայ արարաք ի վերայ քոյ, որ տացես Ջաղատեանց
պարոն Ստեփաննին, զի նորա դրամ գոյր աստ ի Բայազիտ, մեք առաք՝
ուրեմն շուտով տայցես և մեզ գրեսցես ի միամտութիւն։ Եւ ևս թէ որով-
հետև Բ(2) տարի է, զի ի քաղաքէդ մոմ չէ եկել ի սուրբ Աթոռս, և այժմ
պակասութիւն գոյ յոյժ, վասն որոյ գրեցաք ի կոնդակոջն վճարել զեր-
կուց ամաց պարտսն իւրեանց, և ընդ Կարապետ վարդապետիդ յղել։
Դու ևս մուղայէթ լեր, և շուտով հոգալ տուր և յղեա ընդ սմա աստ։

Բայց զի սա գրեալ էր, թէ Ափխազաց Սողոմոն արքային և Մաք-
սիմէ կաթուղիկոսին զօրհնութեան թուղթս գրեա։ Եւ սրբազան Վեհն կա-
մեցաւ գրել, վասն որոյ և գրեաց սմա, թէ ահա գրեալ յղեցի։ Այլ զի
անձեռնհաս եղև գրել այժմ, ուստի դարձեալ գրեաց, թէ թէպէտ այնպէս
գրեցի, բայց չկարացաք հասուցանել և ընդ այս թղթոցս յղել, յետ քա-
նեաց աւուրց յղելոց եմք։ Իսկ և սրբազան Վեհն ի վերայ Գեանջայու
զյատուկ կոնդակ մի գրեաց (զորոյ միտսն ի ներքոյ եմք բացայայտե-
լոց) և յղեաց ի Թիֆլիզ առ սա, վասն որոյ և ի վերջոյ թղթոյն գրեաց
սմա հասուցանել զայն ի Գեանջա առ տեղւոյն գանձապետն։

186. Փուսուլայ ևս գրեաց սմա սրբազան Վեհն, թէ զառանձին
գրեալսդ մեզ և մեր Մկրտիչ վարդապետին իմացայ, առ որս զայս
գրեմ։ Վասն Իսրայէլին այժմ չկամեցաք բանալ ինչ, որովհետև նոր
է բանն մեր։ Եւ մեք ևս չափազանց հոգօք զբաղեալ եմք։ Աստուծով
մինչ յայսցանէ թեթևասցուք, ի հարկէ, հոգս եմք առնելոց ամենայն
ջանիւ։ Այժմ այսպէս արարաք, թող յայս անգամ ևս գիր առցուք ի
տեղւոյդ աւագացն, և հայեսցուք ի կերպն, ապա և զմերն տեսցուք։
Իւրեան ևս գրեցաք զթուղթ, որովհետև ինքն գրեալ էր զմիր առաջին
գրոյ պատասխանին և զգիրն մեր պակաս չառնել խնդրեալ։ Յորում
ղմանս նշանս ցուցաք պատրուակաւ, տեսցուք զի՞նչ առնէ։ Ընդ տէր
Ղազարիդ որչափ կարես, սիրով վարեաց, և ի ձեռիդ պահեա, նշան մի
ցոյց տուր։ Մեք պատուէր շատ եմք տուեալ հանդերձ երդմամբ, վասն
չհասիցն չրացաք ինչ, և ոչ ետուք յիրեսն, որովհետև անցեալ էր, իսկ
վասն ապագային շատ զգուշացուցաք, վասն ընդ նմա միաբանելոյն
շատ հեռի եցոյց զինքն և մեք չյայտնեցաք ինչ, այլ անորոշապէս զա-
մենայն ինչ պատուիրեալ եմք, եթէ յետոյ նշան ինչ ելցէ, տեսանելոց
է։ Ասացեալ եմք իւրեան ի մէջ հանդիսի միաբանից։ Այժմ դու որքան
28ա կարես սէր ցոյց տուր և // ի ձեռին քում պահեա, ժամանակ ինչ ևս
փորձելով, տեսցուք յետոյ որպէս լինի։ Իսկ զԲէժանի արարսն յանցեալ
տարին իմացաք՝ թէ լուսահոգին և թէ մեք։ Այլ և նմա ևս չասացաք
ինչ։ Առաջնորդ խնդրէր, մեք այժմ ի գլխոյ հանաք։ ԶԱբրահամ վար-
դապետն յանուանէ խնդրեաց, իսկ մեք ասացաք զայս իւրեան, զի թէ
ինքն զնա յօժարեցուցանէ լինել իւրեանց առաջնորդ, ապա բերցէ աստ
և մեք առաջնորդ արարեալ դարձուսցուք կամ թէ յետ միջոցաց ինչ ի
յապահովանալն մեր, մեք զմի ոք յղեսցուք աստի առաջնորդ ինքեանց։
Աբրահամին ևս այս մտօքս Ա (1) գիր գրեցաք, զի նա ինքն զիւր ցաւն
գրեալ էր մեզ, և զայս միտքս ևս բացեալ, թէ զիս այսպէս հրաւիրեն.
այլ ես ասացեալ եմ, թէ կամք մեծաւորին է, զոր ինչ կամիս, այնպէս
արարից։ Մեք ևս գրեցաք նմա կամ առաջնորդ լինիլ անդ և կամ յԱ-
թոռս գալ՝ հանդերձ յուսադրութեամբ։ Զայն միտքս տօխտորին ևս գրե-
ցաք, որ իրիճայ էր գրեալ, թէ սորա մի հոգս արա, որ և զԻսրայէլէն
շատ կորէ այրմամբ սրտի և ստիպէ զմեզ հոգս առնել, ինքն ևս խոս-
տանալով օժանդակ լինիլ։ Այլ մեք նոյնպէս գրեցաք, թէ այժմ չի լի-
նիլ։ Այլ, սակայն, դու ի հետևմանց քոց մի թուլասցիս, զինչ և իմանայ-
ցես ստուգիւ, գրեա մեզ, զի գիտասցուք և ըստ ժամանակին տեսցուք
զհոգսն։ Այլև Դանիէլ վարդապետին մեք պատուիրել էաք առ քեզ լի-
նիլ զամենայն ինչ ընդ քեզ խօսիլ և ընդ քեզ հոգալ, այլ նա ջահիլու-
թիւն է արարել, իցէ թէ յայդր իցեն ի գլխոյ հանեալ։ Առ այդ դու մի
զայլ և այլս կարծեր, զի մեք ևս չեղաք զնմանէ շնորհակալ, բայց սա
մի բան ասաց վասն քոյ, իբր թէ դու յառաջ ասած լինիս իւրեան, թէ
փող տամ ընդ քեզ տար, յետոյ ասած լինիս, թէ ես գալոց եմ ընդ իս
բերից։ Իսկ դու զայսմանէ մեզ բան չգրես, միայն թէ ի փուսուլայոջդ և
ի թղթոջ Մկրտիչ վարդապետին տրտունջ և զզուանք ցոյց տաս և գրես,
թէ լինի թէ Աստուծով միմեանց հետ խօսիմք և զցաւս մեր փարատեմք։
Ուստի առ այսոսիկ մեք տարակուսեալ մնացաք և զմիտսդ չիմացաք,
ոչ գիտեմք, թէ ի տեսութիւն կամի՞ս գալ մեզ, որ գրես, թէ միմեանց
հետ խօսիմք, թէ վասն զզուելոյդ։ Վասն որոյ գրեսցես մեզ զայսմանէ,
զի գիտասցուք։

187. Թուղթ սիրոյ օրհնութեան և շնորհակալութեան առ Վանական
վարդապետն և առ մէլիք Սարգիսն, ի պատասխանի մխիթարական և
շնորհաւորական թղթոյ նոցին, զոր գրեալ էին ընդ Դանիէլ վարդապե-
տին, յորում և յորդորմունք ի սիրոյ և ի հարազատութենէ սրբոյ Աթո-
ռոյս և ինքեան անպակաս մնալ և վասն Կարապետ վարդապետին
յանձնարարութիւն։

188. Թուղթ ևս առ Մխիթար բեալանթարն և որդին իւր՝ մէլիք Կիւլ-
նազարն, ի պատասխանի նոյին մխիթարութեան և շնորհաւորութեան
թղթոյն, ըստ վերոյ գրելոյդ մտաց։

189. Թուղթ ևս սոյնպէս առ Բամբկաձորու մէլիք Շաքարօն, ի պա-
տասխանի նորին մխիթարութեան և շնորհաւորութեան թղթոյն։ Իսկ զի
սա և զայս գրեալ էր սրբազան Վեհին, թէ ի Սանահնու աստ քահանայք
գան առ ի ժողովք առնել և ես ոչ թողում զի՞նչ հրամայես և այլն։ Առ
28բ որ գրեցաք // սրբազան Վեհն, թէ յոյժ բարւոք ես արարեալ, որ մինչև
ցարդ յայդր զայդպիսի վայրիվերոյ ժողովարարս չես թողեալ, այսուհե-
տև ևս մի թողուցուս, մինչև ի Սանահին զառաջնորդ յղեսցուք. Որոյ
սակս և այժմ պարոն Բէժանն եկեալ էր, բայց մեք ի ներկայումս յոյժ
զբաղեալ գոլով պէսպէս հոգօք սրբոյ Աթոռոյս, չկարացաք զառաջնորդ
յղել ի Սանահին, յետ սակաւ միջոցի Աստուծով յղելոց եմք։ Իսկ դու ի
հարազատութեանց և ի սիրոյ սրբոյ Աթոռոյս և մեր անպակաս լեր։

Բայց և Գեանջայու գանձապետն սրբոյ Աթոռոյս՝ Ղուլոնց պարոն
Աբրահամն ի Թիֆլիզ պատահեալ էր Դանիէլ վարդապետին և ընդ նմա
թուղթ էր գրեալ սրբազան Վեհին։ Զի բան զսա յառաջ Թիֆլիզեցի Տէր-
կիւլէնց Բաղտ գոյր ի Գեանջա, նա է եղեալ գանձապետ։ Իսկ ի վախ-
ճանիլն նորին, լուսահոգի սրբազանն զսա է եղեալ գանձապետ սրբոյ
Աթոռոյս (որպէս գրեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն, որ յաւուր
նորին ի ՌՄԻ (1771)։ Որ և հին գանձանակողրամովն, թէ և իւր ժողո-
վեցելովն, Ի (20) լիտր մոմ էր առեալ և յղեալ ի սուրբ Աթոռս յան-
ցեալ տարին և գրէր այժմ, թէ մնացեալ արդիւնքն ևս առ իս է, զինչ
և հրամայեսցես, այնպէս արարից։ Բայց զի ի յարուցմանէ Իբրահիմ
խանին ի վերայ Գեանջայու (որ և աւերելով էառ իսկ), սա տարագիր
է եղեալ անտի յամիսս ԺԶ (16) և սրբոյ Աթոռոյս գանձանակն այլք են
շրջեցուցեալ։ Ուստի սա այժմ գրեալ էր սրբազան Վեհին, թէ եթէ կա-
միցիս զի այլես ծառայութիւնս արարից սրբոյ Աթոռոյդ և քեզ, ապա
զմի կոնդակ գրեա ի վերայ Գեանջայու քաղաքին և զիս կրկին գանձա-
պետ արա՝ գրելով և զպատուէր, զի յայս ԺԶ (16) ամսոջս, յորս ես
վտարանդի եմ եղեալ, որ ինչ գանձանակի արդիւնք է եղեալ, առ ինէն
ժողովեցից և ի սուրբ Աթոռդ յղեցից հարազատօրէն։

190. Վասն որոյ և սրբազան Վեհն զկոնդակ գրեաց ի վերայ Գեան-
ջայու և շրջակայիցն նորին՝ յիշեցուցանելով նախապէս զտառապակրու-
թիւնս և զվիշտս նոցա, զորս կրեցին երկու ամաւ յառաջ և վասն այ-
նորիկ զփոփանս և զմխիթարութիւնս։ Եւ երկրորդապէս ծանուցանելով
նոցա և այս երկրիս ըստ մեծի մասին աւերումն և սրբոյ Աթոռոյս նեղ-
սակրութիւնսն և յայնմանէ իսկ ցաւամաշ լինիլն հոգելոյս սրբազան
Վեհին և վախճանիլն, ընդ որս և զյաջորդելն իւր զսուրբ Աթոռս։ Ապա
գրեաց և զքանի մի հոգևորս պատուէրս։

Յետ այսորիկ վասն Աբրահամին գրեաց, թէ որովհետև լուսահոգի

սրբազան հայրապետն մեր զդա յայդր գանձապետ է կարգեալ սրբոյ
Աթոռոյս, վասն որոյ և դա հաւատարմօրէն մուղայէթ էր լեալ սրբոյ Ա-
թոռոյս գանձանակին և նորա արդեամբն Ի (20) լիտր մոմ էր յղեալ
ի սուրբ Աթոռս յանցեալ տարիսն, իսկ այժմ և մեք այսու կոնդակաւ
մերով հաստատեցաք զդա ի գործն գանձապետութեան սրբոյ Աթոռոյս,
29ա որպէս յառաջ։ // Զկնի և պատուէր նմա առ ի արիապէս և անխափան
շրջեցուցանել զգանձանակն և յորդորմամբ ժողովել զարդիւնսն և ըստ
ժամանակին հասուցանել ի սուրբ Աթոռս։ Մանաւանդ ասէ՝ որքան ժա-
մանակս դա վտարանդի է եղեալ այտի, այնքան ժամանակի արդեանցն
ևս լիցի վերահասու և ժողովեսցէ և նոյնպէս հասուսցէ ի սուրբ Աթոռս։
Զի զօրհնութեան թուղթ յղեսցէ նոցա։ Իսկ և ժողովրդոցն պատուէր՝ առ
ի առատութեամբ արկանել զտուրս ի գանձանակն։

Զօրինակն սորա տես ի նոր տետրն ի 126 համարն[42]։

191. Թուղթ ևս ի վերայ Ղուլոնց պարոն Աբրահամին, ի պատա-
սխանի թղթոյն նորին։ Յորում օրհնութիւն և շնորհակալութիւն վասն սի-
րոյն և հարազատութեանն, որ առ սուրբ Աթոռս։ Ապա թէ ահա զօրհնու-
թեան կոնդակ գրեցաք ի վերայ Գեանջայու քաղաքիդ և երկրիդ, զոր և
ահա առ քեզ յղեցաք ընթեռնուլ տալ յամենայն տեղիս։ Եւ զքեզ վերըս-
տին հաստատեցաք ի գործդ գանձապետութեան սրբոյ Աթոռոյս։ Ուստի
պարտիս մուղայէթ լինիլ գործոյդ գանձապետութեան և զարդիւնսն ըստ
ժամանակին հասուցանել ի սուրբ Աթոռս, զի և մեք զօրհնութեան թուղթ
գրեսցուք ի վերայ ժողովրդոց քաղաքիդ ի միամտութիւն։ Եւ թէ դու որ
սակս անցեալ փորձութեանցն ԺԶ (16) ամիս վտարանդի ես եղեալ ի
քաղաքէդ և գանձանակն ի ձեռս այլոց է եղեալ, պարտիս դու այժմ վե-
րահասու լինիլ այն ԺԶ (16) ամսոյ արդեանցն և առ քեզ ժողովել (որ-
պէս ահա և ի կոնդակոջն գրեցաք) և թէ զայդ արդիւնդ, թէ զայն, որ
յառաջմէ առ քեզ է մնացեալ, որպէս որ գրեալ էիր, մօմի տացես և
յղեսցես ի սուրբ Աթոռս, զի այժմ ի կողմանէ մօմի պակասութիւն ու-
նիմք։ Նոյնպէս և յասմհետէ ևս զինչ արդիւնք որ լինիցի, մօմի տացես
և յղեսցես աստ։ Եւ յամենայն կողմանէ զհարազատութիւնս ցուցցես
առ սուրբ Աթոռս և առ մեզ զգիրդ անպակաս առնելով։

Ելին թուղթքս ընդ Կարապետ վարդապետին Հնձացւոյ և ընդ տէր
Ղազարին և ընդ պարոն Բէժանին յամսոյս Ե (5)։

1780 թ. նոյեմբեր—Թուղթք ի Կարին գրեցեալք

192. Թուղթք առ մեր վէքիլ պարոն Հայրապետն, ի պատասխանի
նորին ի սեպտ. ԻԹ (29) գրեալ թղթոյն։ Յորում զշնորհակալութիւնս
գրեաց, թէ վասն ուղևորելոյն զմեր Պետրոս վարդապետն դէպ ի Պօլիս,
և թէ զայլ որպիսութիւնս գրելոյն։ Եւ զի զընծայսն սրբազան Վեհին,
որ յղեալ էր առ Խալիլ փաշայն և առ մաքսապետն և սա ընդ այլոց և
ընդ Պետրոս պետին, մատուցեալ էին նոցա զայնր որպիսութիւնն էր
գրեալ, սա առ այն գրեաց, թէ միամտեցաք։ Այլև զթաթարի Բճ (200)
ղուռուշ վարձ հատանելն էր գրեալ և զճ (100) ղուռուշ խարճի տալն
Պետրոս վարդապետին, առ որս ևս գրեաց, թէ բարւոք էք արարեալ։
Բայց այն մեր առաջին Գ (3) թուղթքն, զոր առ մեծ փաշայն և առ Խա-
29բ լիլ փաշայն և առ մաքսապետն գրեալ էր սրբազան Վեհն, պատուիրեաց
յետս յղել։ // Եւ թէ ի սեպ. Ժ (10) ի Բայազիտ ձեռամբ տէր Վահանին

(Ա, Գ, Թ, Դ) փոլիցայ առնելդ իմացայ, բայց դեռ տէր Վահանն չէ ծանուցեալ մեզ, ի հարկէ, գրելոց է և զդրամն հասուցանելոց մեզ։ Երբ և հասանիցի, զմիամտութեան գիր եմք գրելոց քեզ։ Իսկ և զայս, թէ ի կողմանէ հետեւելոց վիճոյն և չարութեանցն և մերայնոցդ վասն այնց ի Պոլիս զթուղթ գրելոյն էիր ծանուցեալ, իմացաք, բայց մինչ պատասխանին դայցէ գրեալ ծանուցես մեզ. զի գիտասցուք։

Կից գրությամբ Հայրապետին տեղեկացվում է, որ նա դարձյալ մնում է էջմիածնի գործակալը Կարինում։

193. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն, ի պատասխանի նորա ի հոկտ. Գ (3) գրեալ թղթոյն, յորում յառաջ գրեաց, թէ Կարնոյ պարոն Հայրապետի թուղթն, որ յղեալ էիր, էհաս, զորոյ պատասխանն ահա գրեալ յղեցաք առ քեզ՝ առ ի յուղարկել առ նա։ Եւ թէ ի կողմանէ հաշուիցն, որ ի մէջ սրբոյ Աթոռոյս և քոյ գրեալ և ծանուցեալ էիր, և զդաշթարն առաքեալ առ Մկրտիչ վարդապետն, տեսաք և հաւանեցաք, և իմացաք զորքանութիւնս հատուցելոցդ և մնացելոցն ի վերայ քոյ։ Եւ ահա Մկրտիչ վարդապետին խալասի թուղթ գրեցուցաք քեզ ի միամտութիւն։ Նաև փուսուլայի զբանս էր գրեալ սա, որոց սակս ևս զհաւանութիւնս գրեաց ասելով, թէ եթէ Աստուած յաջող ժամանակ տացէ, որպէս և պատշաճն է, այնպէս եմք առնելոց։ Իսկ և վասն Յովաննէս վարդապետին գրեաց, թէ զկնի աւարտման գործոյն շուտով ուղարկեա և եթէ յայտր է, ողջոյն տուր նմա ի մերս դիմաց։

Գրեցան և յղեցան թուղթքս յամսեանս Ը (8)։

194. Յայս յաւուրս Ախըլցխայու Սուլէյման փաշայն մինչև զտախտակս էր յղեալ ընծայ մեր խանին՝ ուղտուք իւրովք, ընդ ուղտուց վէրակացուին զհիրոյ թուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն։ Ուստի ի պատասխանի այն թղթոյն և սրբազան Վեհն զշնորհակալութեան թուղթ գրեաց առ նա, յորում և խնդրեաց զսէրն և զբարեկամութիւնն հաստատունիլ ընդ սրբոյ Աթոռոյս և ընդ ինքեան։ Եւ որովհետև սա զհաշտութիւն
30ա արկանէր ի մէջ Վրաց արքային և մեր խանին, վասն այն և սրբազան Վեհն զիրիճայս գրեաց առ ի փութով ի գլուխ բերել։

Եւ թուղթս յամսոյս Ժ (10)։

195. Ըստ բնական սովորութեան սրբոյ Աթոռոյս, ահա սրբազան Վեհն զկոնդակ գրեաց ի Կողբ վասն աղի, որպէս յամենայն տարի գրեցեալ է։ Բայց զի յանցեալ ամին վասն խռովութեանցն երկրիս աղ չեցեալ է։ Բայց զի յանցեալ ամին վասն խռովութեանցն երկրիս աղ չեառուն, վասն այն ի սոյն թղթոջս զպատուէր գրեաց յորդորմամբ զի զանցեալ ամինն ևս տացեն։

Եւ ընդ Կարապետ վարդապետին յամսոյս ԺԳ (13)։

196. Ի միջոցիս յայսմիկ ջուղայեցի տէր Յովաննիսի որդի տիրացու Ստեփանն զթուղթ էր գրեալ առ Մկրտիչ վարդապետն և զթեթև ընծայ ինչ էր յղեալ սրբազան Վեհին[13]։ Վասն այնորիկ և սրբազան Վեհն զթուղթ գրեաց առ նա շնորհակալելով զնմանէ վասն յղեցեալ ընծային նորա։ Իսկ զի սա ի կողմանէ իւր առ մեր վէքիլ Հայրապետն հասուցեալ փոլիցայադրամիցն զխալասի թուղթ էր խնդրեալ, գրելով թէ 71 ղուռուշ է մնացեալ յիմ տալացու դրամէն, զայն ևս ի Բայազիտ տէր Վահանին եմ հասուցանելոց։ Առ այն գրեաց, թէ այժմ անձեռնհաս եմք գրել, բայց դու զոր ինչ հասուցեալ ես պարոն Հայրապետին, զայնց

որքանութիւնն և զերբ հասուցանելդ ըստ անուոյն և ըստ թուոյն ի բոյդ դաւթարէն առեալ գրեսցես մեզ, որ մեք ի վէքիլ Հայրապետէն ևս զբստոյգն գրեցելոցդ իմացեալ, քեզ խալասի թուղթ գրեսցուք։ Նաև զի ջուղայեցի Պօղոսեան պարոն Խաչիկն, որ յառաջագոյն ի մեծն Պոլիս սորա վէքիլին (Ա, Բ)-ի ապրանք է յանձնեալ առ ի ծախել և զգինն սրբոյ Աթոռոյս հասուցանել, զի ինքն երթեալ ի Բասրայ ի մէնչ առնուցու (որպէս գրեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) թուոջն և ...), այժմ ի յունիսի Ի (20) Բ (2) գիր է գրեալ հանգուցեալ սրբազանին, թէ մինչ ի Բասրա էի, մահտեսի Յարութիւն աղայն ասաց, թէ սրբազանն գրեալ է ապրանքն Ստեփանին է հասեալ, բայց դեռ չէ ծախեցեալ։ Մինչ սրբազանին հասանի և թուղթն գայ, յայնժամ տացիք։ Եւ աղաչել էր, թէ այն ապրանաց ծախուիլն և քեզ որքան հասանիլն գրեսցես, զի գիտացից։ Եւ այս գիրս յետ վախճանի լուսահոգի սրբազանին էհաս առ նորոգ սրբազան Վեհս մեր։ Վասն որոյ գրեաց յայս թղթոջս, թէ նա այսպէս էր գրեալ առ լուսահոգին, զորոյ պատասխանն պարտիմք գրել։ Ուրեմն զայն բանիս ստոյգ ողջխութիւնն գրեսցես, զի գիտասցուք, թէ այն դրամն սրբոյ Աթոռո՞յս կամիս հասուցանել, թէ ո՞րպէս պարտիս առնել։ Եւ ըստ գրեցելոյն զպատասխանի գրեսցուք։

Յղեցաւ թուղթս յամսոյս ԺԷ (17)։

30բ 197. Թուղթ ևս առ մահտեսի Խաչատուրն և Սերոբն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի նոցին թղթոյն ի հոկտ. Ե (5) գրեալ։ Առ որս զշնորհակալութիւնս գրեաց վասն ընծայիցն սոցա, զոր ի թուղթդ Հայրապետին յիշեցաք։ Եւ զի ի Պոլսոյ եկեալ թղթոյ միտսն սոցա ևս գրեաց, թէ իմացաք, որ մեր առաջին թուղթքն, որք ձեր ձեռամբն յղեցան ի Պոլիս, հասեալ են անդ և այլն, զոր ի թուղթդ պարոն Հայրապետին գրեցաք։ Իսկ և պատուիրեաց հարկիւ, զի զոր ինչ լուր լուիցեն ի մեծէն Պոլսոյ, գրեսցեն, և թէ զթուղթ ընդունիցին, շուտով յղեսցեն։

198. Թուղթ ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն գրեաց սրբազան Վեհն՝ նախապէս ծանուցանելով սմա զթուղթ գրելն ի սեպ. ԺԷ (17) ընդ Պետրոս վարդապետին։ Եւ ապա՝ զի Անկիւրոյ նուիրակ Յովաննէս վարդապետն զրամ էր փոլիցայ արարեալ ի վերայ սորա և վասայն լրացեալ էր (զոր ի վերդ ի թուղթն պարոն Հայրապետին գրեցաք երկարապէս)։ Վասն որոյ այժմ սրբազան Վեհն գրեաց սմա հասուցանել զայն դրամն ի Կարին վէքիլ Հայրապետին։ Այլև՝ զի Պոլսոյ նոր եկեալ անանուն թղթոյ միտն սմա ևս ազդեաց։

199. Թուղթ ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորին ի հոկ. ԺԶ (16) գրեալ թղթոյն, զոր ընդ ի Կարնոյ եկեալ թղթոցն յղեալ էր, յորում յառաջ գրեաց, թէ ահա զյղեալ թղթոցդ պատասխանիսն գրեալ յղեցաք առ քեզ, հասուցես ի Կարին։ Եւ զի գրեալ էր սա, թէ եթէ ի Պոլսոյ զբան ինչ իմանայք յայդ թղթոցդ, գրեցէք ինձ ի միամտութիւն։ Ուստի և սմա ևս գրեաց Պոլսոյ թղթոյ դիտումն։

Որպէս ի թուղթն պարոն Հայրապետին գրեցաւ։

200. Թուղթ ևս ի Ղարս առ նոր եկեալ Աստուլլա փաշայն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի թղթոյ նորին, զոր ընդ չուխատարի

գրեալ էր և զգալն իւր ի Ղարս, ազդեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն զշնորհաւորութիւն գրեաց գալստեանն։

Գրեցան և յղեցան թուղթքս յամսոյս Ի (20)։

1780 թ. նոյեմբեր—*Ի Թիֆլիզ գրեալ թուղթք*

Հերակլ արքայն յարդեանս ընդ Գեորգին սուլթանին զընծայ էր յղեալ սրբազան Վեհին և զսիրոյ թուղթ էր գրեալ։ Նաև Դաւիթ սարտարն և եղբայրն իւր՝ Նիկոլայոսն, որք քան զայս յառաջ ընդ Դանիէլ վարդապետին զթուղթ էին գրեալ՝ ի Թիֆլիզու դուրս գոլով ի հեռի տեղի զօրօք, ոչ էին գտեալ զհայեվար գիր գրող, վասն որոյ տաճկերէն էին գրեալ զթուղթն շնորհաւորութեան առ սրբազան Վեհն, իսկ այժմ մինչ դարձեալ էին ի քաղաքն, զհայեվար թուղթ էին գրեալ։ Այլև՝ Սուլխան Դիւանն, որովհետև յառաջ թուղթ չէր գրեալ (որպէս ի յերկրորդ նուագին առ նա գրեալ թղթոջն գրեցաք), վասն այն նա ևս էր այժմ զթուղթ գրեալ։ Որոց զպատասխանիս գրեաց սրբազան Վեհն, զորոց դիտմունսն ահա ցուցանեմք ի ներքոյ։

31ա 1780 թ. նոյեմբեր—*Ի Կարին, ի Թոխաթ և ի Ղարս գրեալ թուղթք*

Ի Պօլսոյ Ա (1) թուղթ էր եկեալ ի Կարին ի վերայ սրբազան Վեհին գրեալ (որոյ գրողն չէր յայտնի)։ Նաև ի Բալուայ ևս էր մի փայակ եկեալ անդ և զթուղթս բերեալ, զորս մեր վէքիլ Հայրապետն ի միասին որիշ փայեկաւ յղեալ էր և զթուղթ մի ևս ինքն էր գրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն զթուղթս գրեաց։

201. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ վէքիլ Հայրապետն, ի պատասխանի նորա թղթոյն ի հոկտ. Զ (6) գրեցելոյ։ Արդ, նախ զԹիֆլիզու մահսարի ի Պօլիս ընդ մանզիլի յղելն էր ծանուցեալ սա, առ որ զշնորհակալութիւնս գրեաց սրբազան Վեհն։ Երկրորդ՝ մեր Մկրտիչ վարդապետն գրեալ էր սմա զինչս առնուլ և յղել, զորս առեալ և յղեալ էր սա ի Բայազիտ առ տէր Վահանն։ Նաև՝ մահտեսի Խաչատուրն և Սերոբն սմա՝ Ա (1) գեառմասուտ և Ա (1) մոմի դակիրմայի չիթ էին տուեալ սմա՝ յղել առ սրբազանն իբրև ընծայ, զորս ևս էր յղեալ ի Բայազիտ։ Այլև ի Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետէն Ա (1) բեռն իրք էին եկեալ ի Կարին և հասեալ առ սա, զոր ևս էր յղեալ ի Բայազիտ։ Ընդ որս ամէն-սըն սրբազան Վեհն զմիամտութիւնս գրեաց, թէ գիտացաք զյղելդ ի Բայազիտ, անտի ևս մեզ են հասանելոց։ Երրորդ՝ զԾառասուն Օղլի Յարութիւն վարդապետի ի պատրիարքէն ի Կարին առաջնորդ գալն էր գրեալ սա, առ որ ևս զայս գրեաց, թէ ըստ դիպուածոյս մերոյ այդպիսի բանք շատ կու պատահին, բայց դուք մի վրդովիցիք։ Ապա և ի Պօլսոյ նոր յղեալ աւանց անուան թղթոյ միտսն ծանոյց սմա, թէ մեր յառաջագոյն յղեալ թղթոց անդ հասանիլն էին ծանուցեալ և գրեալ, թէ ամենեքեան մահսարին սպասեն։ Բանն ի բարին է եղերելոց։ Մանաւանդ հարկ արար սմա, թէ ո՞վ ետ քեզ զայս թուղթս, գրեա։ Եւ թէ զՅարութիւն պետի բանի զինչ ասելն և զինչ առնելն ևս գրեա մեզ։ Նաև Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետն փոլիցայիւ ի Թոխաթ Աղամջանին Գ (3) էր հասուցեալ, զի և նա ի սուրբ Աթոռս հասուցանէ։ Իսկ մահտեսի Աղամջանն, լսելով զվախճան հոգելոյս սրբազանին և յաջոր-

դելն նորոգ սրբազան Վեհիս, գրեալ էր սոյն պարոն Հայրապետիս, թէ այս դրամս ո՞ւմ պարտի հասանիլ։ Զոր և սա գրեալ էր սրբազան Վեհին։ Վասն որոյ և սրբազան Վեհն զթուղթ գրեաց առ Աղամջանն (զոր ի ներքոյ յիշելոց եմք) զայն դրամն հասուցանել սմա։ Եւ սմա ևս ծանոյց, թէ ահա զթուղթ գրեցի առ Աղամջանն և յղեցի առ քեզ, դու ևս յղեա առ նա և զայն դրամն խնդրեա, զի քեզ է հասուցանելոց։ Իսկ ի վերջոյ գրեաց, թէ այժմ անձեռնհաս եղաք զԲալուայ թղթոց պատասխանն գրել, յետ քանի մի աւուրց գրելոց եմք։ Եթէ փայակն յայդր է, մնասցէ մինչև զպատասխանիսն գրեալ առաքեսցուք առ քեզ՝ տալ նմա առ ի տանիլ։ Եւ ևս թէ, եթէ զհամբաւ ինչ լուիցես ի Պօլսոյ, փութով ազդեսցես մեզ։

31բ 202. Թուղթ սիրոյ առ Հերակլ Վրաց արքայն գրեաց սրբազան Վեհն տաճկերէն, ի պատասխանի նորին թղթոյն, յորում զմեծ շնորհակալութիւն վասն յղեալ ընծային և զխնդիր, առ ի զսէրն և զխնամսն մշտապէս և հաստատուն ունիլ առ սուրբ Աթոռս և առ ինքն[44]։

203. Թուղթ ևս սիրոյ և օրհնութեան և շնորհակալութեան առ Դաւիթ Սարդարն, ի պատասխանի նորին կրկին շնորհաւորութեան թղթոյն։ Իսկ զի գրեալ էր սա, թէ նախնիքն մեր ընդ նախանցեալ հայրապետացն սրբոյ Աթոռոյդ և ընդ դմա իսկ զսէր և զբարեկամութիւնս են ունեցեալ, զորս և մեք ևս առ քեզ եմք ունելոց, ուրեմն դու ևս պարտիս ընդ մեզ ունիլ։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ զայդ և մեք լաւապէս գիտեմք։ Վասն որոյ որպէս դու ի մէնջ նոյնպէս և մեք ի սիրելւոյդ խնդրեմք զսէրն լուսահոգի նախնեացն քո՛ և զբարեկամութիւնն հաստատնապէս ունիլ առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Այլև զԿարապետ վարդապետի յառաջ քան զայս յղելն և ընդ նմա զթուղթ գրելն առ սոսա և զընծայիւ յղելն յիշեցոյց։

204. Թուղթ սիրոյ և օրհնութեան առ Սուլխան Դիւանն, ի պատասխանի նորին թղթոյն։ Յորում ընդ գրելն նորին զմխիթարութիւն և զշնորհաւորութիւն, զշնորհակալութիւնս գրեաց։ Եւ զյորդորմունս ի սիրոյ սրբոյ Աթոռոյս ոչ սպառիլ և սորին օգտիցն ջանացօղ լինիլ։ Նաև քան զայս յառաջ զթուղթ գրելն և հանդերձ իւօք ինչ ընդ Կարապետ վարդապետին յղելն ծանոյց։

Գրեցան և ելին թուղթքս ընդ Գեորգին Սուլթանին յամսոյս ԻԶ (26)։

1780 թ. նոյեմբեր—*Թուղթք ի Բալու*

Քան զայս յառաջ Բալուայ Լուսաւորչի եկեղեցւոյ ժողովուրդքն զԲազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն վասն խնդրոյ ինչ։ Ընդ որում և Բալուայ առաջնորդ Գէորգ վարդապետն և սրբոյ Աթոռոյս նուիրակ Գրիգոր վարդապետն զշնորհաւորական թուղթս գրեալ էին. առ սրբազան Վեհն։ Որ և նուիրակն խնդրեալ էր զքանի մի թուղթս գրել առ ոմանս։ Արդ, սրբազան Վեհն թէ զպատասխանիս նախ յիշեալ թղթոցն և թէ զնուիրակի խնդրեալ թուղթսն գրեալ յղեաց, որք ահա ծանուցանին ի ներքոյ սոսա։

205. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Բալուայ Լուսաւորչի եկեղեցւոյ քահանայսն և ժողովուրդսն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա, որք գրէին, թէ եկեղեցիս մեր կարի խախտեցեալ և փլփլեալ էր,

զոր նորոգեցաք մեծաւ ծախուք և խարճարարութեամբ։ Վասն որոյ ան-
կաք ի ներքոյ պարտուց և ի բռնաւորաց եւ ունիմք զկասկած՝ առնուլ
տուգանս՝ ի մէնջ։ Մանաւանդ և ի նեղութիւնս իսկ եմք (և այլն)։ Վասն
որոյ խնդրեմք զմի կոնդակ շնորհել առաջնորդին մերոյ ի վերայ կող-
մանցս, զի ժողովք արարեալ, պարտուց մերոց օգնութիւն արասցէ։
Յորում թղթոջ և զվկայութիւնս էր գրեալ նուիրակն մեր, թէ զոր ինչ
32ա գրեալ են, յիրաւի է։ Իսկ || սրբազան Վեհն գրեաց, թէ յոյժ բարւոք և
օրինաւոր էր խնդիրդ ձեր, բայց մեք որովհետև նոր եմք նստեալ և
զմահսարն մեր եւ չեմք ընկալեալ ի Պօլսոյ, վասն այն այդպիսեաց
բանից դեռ ոչ առնեմք ձեռնարկութիւն։ Ուստի այժմ անձեռնհաս լեալ
յանձնեմք զձեզ և զմեզ ի խնամս յԱստուծոյ։

206. Թուղթ առ Բոլուայ առաջնորդ Գէորգ վարդապետն՝ ի պա-
տասխանի թղթոյ նորին շնորհաւորութեան։ Յորում շնորհակալութիւն
վասն զնուիրակ Գրիգոր վարդապետն ի սէր ընդունելոյն և ի վճակն
իւր զգործն նորին արդիւնաւոր առնելոյն։ Իսկ և սա զ... էր յանձնել
նուիրակին՝ յանուն սրբազան Վեհին։ Այնր աղագաւ եւ զշնորհակալու-
թիւնս գրեաց։ Նաև զի սա զանյաջողութեանց և վշտակրութեանց վիճա-
կին և երկրին էր ծանուցեալ։ Առ որս զփոփանս գրեաց, ասելով թէ և
մեք կամք ի վիշտս և ի նեղութիւնս։ Յիշեցոյց և ի սեպտ. ԺԷ (17) յայն
կողմունան զկոնդակս և զթուղթս գրելն իւր, ընդ որս և առ սա եւ զը-
թուղթ գրելն։ Եւ ի վերջոյ զյորդորմունս՝ ի սէր սրբոյ Աթոռոյս և ին-
քեան հաստատուն լինիլ։

207. Թուղթ անդրանիկ օրհնութեան ի վերայ Բալուայ սուրբ Գրիգոր
եկեղեցւոյ գանձապետին սրբոյ Աթոռոյս՝ գարբին մահտեսի Ղազարին,
յորում յառաջ յիշեցոյց զկոնդակ գրելն յայն երկիրն վասն մահուան
Հոգելոյս սրբազանին և վասն յաջորդելոյն իւրոյ զԱթոռս սուրբ։ Ապա
թէ այժմ գիր առաք ի տեղւոյդ նուիրակ Գրիգոր վարդապետէն, որ գրէ
մեզ զհարազատութենէ քումմէ, որ կատարեալ որդիական սիրով ծա-
ռայես սրբոյ Աթոռոյս, որոյ սակս յոյժ շնորհակալեցաք զքէն։ Վասն
որոյ աՀա, Հաստատելով կրկին զքեզ ի գործդ գանձապետութեան սրբոյ
Աթոռոյս, կարգեցաք եւ զքեզ վէքիլ սրբոյ Աթոռոյս ի սուրբ Գրիգոր
եկեղեցւոջդ, որպէս զի ամենից կտակաց, հոգեբաժնից և խոստմանց, և
այլ սոյնպիսի հոգեկան արդեանց սրբոյ Աթոռոյս մուղայէթ լեալ, ի
պատահեալ ժամուն առնուցուս և ըստ ժամանակին հասուցես նուի-
րակացն մերոց թուով և հաշուիւ և մեզ գրեսցես զորքանութիւնս տուե-
ցելոցդ։ Բայց մինչ զայդպիսի արդիւնսդ առնուցուս, զանուանսն տուո-
ղացն մեզ գրեա, զի գրեսցուք առ նոսա զթուղթս օրհնութեան։ Նոյնպէս
և գործոյդ գանձապետութեան մուղայէթ լիցիս և ժողովեսցես զարդիւն-
սն և հաւատարմութեամբ առ քեզ պահեալ՝ ըստ ժամանակին հասու-
ցես նուիրակացն մերոց, և մեզ գրեսցուք, զի գրեսցուք առ ժողովուրդն
սրբոյ եկեղեցւոյդ զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան։ Իսկ և զայս
պատուիրեաց հարկիւ, թէ զսրբոյ Աթոռոյս արդիւնսն մի ումեք տացես
փոխ, զի երբեմն կորնչին արդիւնք սորին։ Այլ զամենայն ամբողջապէս
առ քեզ պահեալ յանձնեսցես մեր նուիրակացն և մեզ գրեսցես, և ամե-
նայն բանից և գործոց սրբոյ Աթոռոյս, որք յայդր պատահիցին, հա-
բաղատօրէն մուղայէթ լիցիս և հոգասցես։ Եւ ի վերջոյ, թէ աՀա կոնդակ
եւ գրեցաք ի վերայ չորից եկեղեցեաց քաղաքիդ, զի ամենեքեան ծանի-

ցեն զվէքիլութիւնս չորից գանձապետացդ մերոց և զարդիւնսն, զորս ի
վերոյ գրեցաք, տացեն ձեզ։

32բ 208. Թուղթ անդրանիկ օրհնութեան ես առ Բալուայ սրբոյ Աստուա-
ծածնի եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Միքայէլն՝ ի վերահաստատու-
թիւն գանձապետութեանն սրբոյ Աթոռոյս և վէքիլ ես կարգելով զնա
սորին, որ գրեցաւ ըստ օրինակի վերոյ գրեալ թղթոյն։

209. Թուղթ անդրանիկ օրհնութեան ես առ Բալուայ սուրբ Պարթևի
եկեղեցւոյ գանձապետն սրբոյ Աթոռոյս՝ ոսկերիչ Առաքելն, որ ես նոյն-
պէս։

210. Թուղթ ես անդրանիկ օրհնութեամբ առ պարոն Գէորգ՝ գան-
ձապետն սրբոյ Աթոռոյս, որ ի Բալուայ սուրբ Կիրակոսի եկեղեցւոջն,
ըստ կերպի վերին երից թղթոցդ։ Բայց և տուեալ էր սա նուիրակ Գրի-
գոր վարդապետին ըստ կտակի հօրն իւրոյ՝ հանգուցեալ մահտեսի
Նորատունկին զԱ, Ե (1, 5) յանուն սրբոյ Աթոռոյս, վասն այն ես օրհ-
նութիւնս և շնորհակալութիւնս գրեաց։

211. Թուղթ ես ի վերայ Բալուայ չորից եկեղեցեացն գրեաց սրբա-
զան Վեհն, նախապէս յիշեցուցանելով յառաջ քան զայս զկոնդակ գրելն
ի վերայ երկրի սոցա վասն առ Տէր փոխման Հոգելոյս սրբազանին և
իւր փոխանորդելոյն։ Իսկ ապա զայս, թէ յայտնի է ձեզ, որ նուիրակն
սրբոյ Աթոռոյս ի Գ (3) կամ ի Դ (4) տարին հազիւ հանդիպի ի քաղաքդ
ձեր, իսկ յայդր բազումք, որք զխոստմունս խոստանան սրբոյ Աթոռոյս
և կամ ի ննջեցելոց զհոգեբաժինս և զկտակս խոստանան տալ սրբոյ
Աթոռոյս, որովհետև նուիրակն մեր յայդր ոչ գտանի, ոչ ումեք տան
զխոստացեալ արդիւնսն, որք խոստանանն։ Եւ յետ բազմաց միջոցաց
մինչ գայ յայդր նուիրակն մեր, յայնժամ բազումք ի խոստացողացն
կամ յայդր ոչ գտանին, և կամ պատահմանց ինչ դիպեալ, այլ ոչ կա-
րեն տալ զխոստացեալսն, որով և խոստացողացն վնաս և մեղք լինի և
սրբոյ Աթոռոյս ի Գ (3) կամ ի Դ (4) տարին հազիւ հանդիպի ի քաղաքդ
կուց վնասուցս, աՀա զչորից եկեղեցեացդ ձերոց գանձապետսն վերա-
հաստատելով ի գանձապետական գործս իւրեանց, վէքիլ ես կարգեցաք
սրբոյ Աթոռոյս, որպէս զի յորժամ ոք զխոստմունս ինչ արասցէ, ոք
զայնս առնուցուն փութով՝ առ ի չկորնչիլ յետ միջոցի և պահեալ առ
ինքեանս յատկապէս ի գալն յայդր նուիրակին մերոյ, յանձնեսցեն նմա
թուով և հաշուիւ։ Եւ զանուանս տուողացն գրեսցեն մեզ, զի զօրհնութեան
թուղթ գրեսցուք նոցա։ Նոյնպէս և գործոյն իւրեանց գանձապետութեան
մուղայէթ լիցին և զգանձանակի արդիւնսն ես ամբողջապէս պահեսցեն
առ ինքեանս, չտալով ումեք երբէք, բաց ի նուիրակէն մերմէ։ Եւ մինչ
հասուցեն նուիրակին մերոյ, յիւրաքանչիւր ժամանակի մեզ գրեալ ծա-
նուսցեն զորքանութիւնսն, զի ի վերայ իւրաքանչիւր եկեղեցեացդ ժո-
ղովրդոց գրեսցուք զթուղթս օրհնութեան և ամենայն յայդր պատահեալ
բանից և գործոց սրբոյ Աթոռոյս հոգացօղք լիցին։ Ուրեմն և դուք ես
այսպէս գիտացեալ, որ ինչ յատուկ տուրք լինիցին այսպիսի սրբոյ Աթո-
ռոյս՝ թէ կտակ, թէ խոստմունք, թէ քառասնից և թէ հոգեբաժին, զա-
մենըն ձեռամբ գոցին ի սուրբ Աթոռս հասուսջիք։ Եւ մի խնայիցէք ար-
33ա կանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս յիւրաքանչիւր շաբաթս զմէն մի
փողսն։ Եւ ի վերջոյ, առ գանձա//պետսն (որք վէքիլ ես կարգեցան ի
կողմանէ սրբոյ Աթոռոյս) զպատուէրս գրեաց՝ գործոց իւրեանց մուղա-

յէԹ լինիլ և հաստատարմութեամբ ծառայել սրբոյ Աթոռոյս, որպէս և ի վերդ ի Թուղթս խրաքանչիւրոցն ևս գրեցաք:

Զօրինակն սորա ի Նոր տետր 34 երեսն գտցես:

212. Թուղթ ի յԱրղնի Մատէն առ սրբոյ Աթոռոյս գանձապետ տէր Յովաննէսն՝ ազդելով նմա զվախճանմանէ հոգելոյս սրբազանին և զկարգն յաջորդելոյն և վասն նուիրակին յանձնարարութիւն և պատուէր՝ գործոյն մուղայէթ լինիլ և զարդիւնսն հաստուցանել նուիրակացն և մերոց և գրել աստ, զի օրհնութեան Թուղթ յղեսցի առ ժողովուրդսն: Նաև հոգեբաժնից խոստմանց և այլ սոյնպիսի արդեանց ևս մուղայէթ լինիլ և առնուլ և ի գնալն նուիրակին մերոյ յանձնել նմա և զանուանս տուողացն գրել աստ, առ ի օրհնութեան Թուղթ գրել առ նոսա:

213. Թուղթ ևս առ նուիրակ Գրիգոր վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի սեպ. ԺԷ (17) գրեցեալ Թղթոյն: Յորում վասն արիութեանն ի գործն շնորհակալութիւն գրեաց սրբազան Վեհն և յիշեցոյց զի սեպ. ԺԷ (17) առ սա և առ առաջնորդսն վիճակի սորա զԹուղթս գրելն և ի վերայ երկրին ևս զկոնդակ գրելն: Եւ թէ զքանի մի օրհնութեան Թուղթս էիր խնդրեալ, ահա գրեալ առաքեցաք ընդ Թղթոյս և զԹուղթ մի ևս առ Բալուայ առաջնորդ Գէորգ վարդապետն գրեցաք, զի նա Թուղթ էր գրեալ մեզ: Եւ զԹուղթ մի ևս առ Բալուայ սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ ժողովուրդսն գրեցաք ի պատասխանի նոցին բազմակնիք Թղթոյն, բայց զնոցա խնդրեալ կոնդակն ոչ գրեցաք, զի դեռ նոր եմք նստեալ և դեռ յայդպիսի բանս ձեռս ոչ մխեմք, քանզի մահասրեմք նստեալ և դեռ յայդպիսի բանս ձեռս ոչ մխեմք, քանզի մահասրեմ մեր տակաւին չէ դարձեալ ի մեծէն Պօլսոյ: Իսկ և ի վերայ Բալուայ չորից եկեղեցեացն վասն զգանձապետսն վէքիլ ևս առնելոյն զկոնդակ գրելն, ծանոյց սմա: Եւ ի փախճանի Թղթոյն զյորդորմունս գրեաց, թէ ի գործդ արի և ժիր լեր՝ ջանալով, զի պարզերեսութեամբ և լի որայիք դարձցիս ի սուրբ Աթոռս:

214. Թուղթ ևս ի յՈւրհա առ խօջայ Կարապետն՝ պատմելով զմահ հանգուցեալ սրբազանին և զիւր հայրապետանալն և ապա զյորդորանս՝ ի սէր սրբոյ Աթոռոյս հաստատ կալ և վասն նուիրակ Գրի[գորի] զյանձնարարութիւն:

215. Թուղթ ևս Մկրտիչ վարդապետն գրեաց ի Կարին առ մեր վէքիլ Հայրապետն, զայս գրեանս յղել ի Յամիթ:

Յղեցան Թուղթքս ընդ կարաւանի յամսոյս ԻԷ (27):

1780 թ. նոյեմբեր—Ի Բայազիտ առ Իսաղ փաշային և առ այլս ոմանս Թուղթք

Սրբազան Վեհն զկնի միոյ աւուր վերոյ գրեալ Թղթոցդ գնալոյն ի
Բայազիտ առ Իսաղ փաշայն, զընծայ յղեաց ընդ Մարտիրոս վարդա-
պետին և զԹուղթ գրեաց, ընդ նմին և ոմանց տաճկաց ևս զԹուղ-
33բ Թըս յղեաց հան//դերձ ընծայիւք, նաև մերազնեայ իշխանացն ևս որք
անդ զանդրանիկ օրհնութեան Թուղթս գրեաց, յղելով և իւրաքանչիւրոցն
զքանի մի լիտր գինի՝ ի նշան սիրոյ: Իսկ զդիտմունս վերոյ յիշեալ հա-
մայն Թղթոցն գրեմք ի ներքոյ ահա:

216. Թուղթ սիրոյ և բարեկամութեան սրբազան Վեհն առ Իսաղ փաշայն գրեաց, խնդրելով ի նմանէ զսէր, զբարեկամութիւն և զխնամս ունիլ առ սուրբ Աթոռս և առ ինքն: Որում և ընծայ յղեաց՝ զճոթեղէն զմոմս, զգիւլապ, զբրինձ և զքացախ, զորս ի Թղթոջն յիշեաց:

217. Թուղթ ևս նոյնպէս առ վերոյ յիշեալ Մահմատ բէկի եղբայր Սալման բէկն, որում և առաքեաց զմի մոմապատ և գիւլապ:

218. Թուղթ ևս առ Ովվան աղայն ըստ վերոյ գրելոցդ մտաց, որում ևս շնորհեաց զի (20) լիտր բրինձ:

219. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ Մարգար աղայն և առ որդին նորա Վարդանն, յորում գրեալ, թէ յառաջագոյն գրեցաք առ հասարակութիւն ժողովրդեան քաղաքիդ, թէ զառ Տէր փոխմանէ հոգելոյս սրբազանին և թէ վասն անցից մերոց: Իսկ այժմ մինչ տեղւոյդ զօլվաթլու փաշային զընծայ յղէաք և զԹուղթ գրէաք, զայս Թուղթ սիրոյ ևս առ ձեզ գրեցաք առ ի անպակաս մնալ ի սիրոյ և ի յօգտակամութեանց սրբոյ Աթոռոյս և մեր: Եւ թէ ի նշան սիրոյ ահա առաքեցաք սիրելեացդ զքանի մի լիտր գինի ի վայելս ձեր:

220. Թուղթ ևս ի վերայ բեալանթար խօջայ Յակոբին գրեաց, ևս նոյնպէս:

221. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս ի վերայ ներկայ մաքսապետ Սիմէօնին և Զալօյին, որոց զբրինձ ևս շնորհեաց բաց ի գինւոյն:

222. Թուղթ ևս սրբազան Վեհն առ տէր Վահանն գրեաց, թէ Թուղթըդ, զոր գրեալ էիր առ մեր Մկրտիչ վարդապետն, էհաս, զորոց պատասխանն ահա գրեաց նա: Եւ թէ ահա ըստ խնդրոյդ առ իշխանսն տեղւոյդ յատուկ զօրհնութեան Թուղթս գրեցաք և զգինի յղեցաք: Նաև զիւ-
մրուկչոցն տեղւոյդ ևս զԹուղթ գրեցաք և զգինի և զբրինձ յղեցաք
34ա նոցա, իսկ և զայս թէ ահա // ընդ Մարտիրոս վարդապետին
ահա առ փաշայն և առ ոմանս տաճիկս զընծայ յղեցաք յայդր,
պարտիս ի մատուցանելն դու ևս ընդ նմա գնալ և որ ինչ պատ-
շաճն է, զայն խօսիլ: Այլև զայս, թէ որպէս դու ևս գիտես, մեր Կարա-
պետ վարդապետին Ընձացւոյ յայդր մահտեսի Թօմօ ոմն երաշխաւո-
րութեամբ եղբօրն իւրոյ՝ պարոն Միրզօյին սանատով ՃԻ (120) ղուռուշ
դրամ է լեալ տալոյ ի վաղուց, որոյ սանատն ևս քոյդ մօտ է: Բայց մինչ
Կարապետ վարդապետն յայդր է եղեալ, քոյովդ երիճայիւ Ծ (50) ղու-
ռուշն բաշխեալ է նոցա և Հ-ն (70) խնդրեալ, և նոքա ևս խոստացեալ են
տալ քեզ, որ դու հասուցանես Կարապետ վարդապետին: Արդ, Կարա-
պետ վարդապետն կարի դատարկ գոլով ի մէնջ, այժմ Հ (70) ղուռուշ
նաղտ դրամ էառ, որ դու ի դոցունց առեալ մեզ հասուցես: Վասն որոյ
պարտիս զայն սանատն ցուցանել և զՀ (70) ղուռուշն պահանջել ի նո-
ցանէ, եթէ տայցեն, բարւոք է, ապա թէ ոչ, զսանատն յղեա առ մեզ,
զի մեք զ 120 ղուռուշն ևս լրապէս առնուլ տացուք:

223. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս սրբազան Վեհն ի Կարմիր Կոնտն ի վերայ Թադէոսին գրեաց, զի ի յերթալ մարդկանցն և բեռնակրացն սրբոյ Աթոռոյս դէպ ի Բայազիտ և ի դառնալն անտի առ սա իջևանէին, և սա ըստ կարեաց իւրոց մուղայէթ լինէր նոցա, ուստի և սրբազան Վեհն այժմ շնորհակալութիւնս գրեաց սմա և զյորդորմունս՝ առ ի մնալ ի նոյն հարազատութեան, որ առ սուրբ Աթոռս: Որում և յղեաց զգինի և զբրինձ:

Գրեցան Թուղթքս և յղեցան ընդ Մարտիրոս վարդապետին յամսոյս ԻԸ (28):

ի Պոլսոյ նուիրակ Մինաս վարդապետէն և ի Թոխաթու նաև ի Կարնոյ և յայլ տեղեաց թուղթք էին հասեալ ի Ղարս՝ առ պարոն Գէորգն, զի նա յղեսցի ի սուրբ Աթոռս։ Զորս և նա յղեալ էր առ սրբազան Վեհն և զթուղթ ևս գրեալ, զորոյ պատասխանն միայն գրեաց սրբազան Վեհն և ի դառնալն պօլսեցի Սահակ անուամբ ուխտաւորի ուրումն ի սրբոյ Աթոռոյս ընդ նմա յղեաց, որ ահաւասիկ ի ներքոյ գրի։

224. Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Ղարս առ պարոն Գէորգն, ի պատասխանի ի նոյեմբերի Ե (5) գրեալ թղթոյ նորին։ Նախ զի գրեալ էր սա, թէ եթէ ի Պոլսոյ բարի համբաւ ինչ իմասցիս ի թղթոցդ, ազդեսցես մեզ ի միամտութիւն։ Վասն որոյ և սրբազան Վեհն գրեաց, թէ ի մեր Մինաս վարդապետէն ի հոկ. Զ (6) գրեալ թուղթ ընկալաք, որ գրեալ էր թէ մահտեսի Յարութիւնն և այլ մեծ իշխանքն մինչ լուան զհայրապետանալդ, կարի ուրախացան և հաճեցան և մահսարին սպասեն։ Եւ թէ ի թղթոյ Գօրօեան մահտեսի խաչատուրին ևս իմացաք, որ
34բ Պետրոս վարդապետն ի հոկ. ԺԴ (14) // մեռեալ է ի Պոլիս։ Իսկ և գրեալ էր սա, թէ յարդեանց սրբոյ Աթոռոյդ ի վէքիլ Հայրապետէն (Բ, Ա, Ա) է հասեալ ինձ (որոյ սակս և վէքիլ Հայրապետն ևս գրեալ էր, թէ հասուցի)։ Առ այն գրեաց սրբազան Վեհն, թէ պարոն Հայրապետին զմիամտութիւն եմք գրելոց և դու զհաշիւդ ընդ Մկրտիչ վարդապետին տեսցես։ Եւ թէ ահա զյղեալ փայլակդ յետ քանի աւուրց եմք յղելոց, ապա և վասն նախ յիշեալ Սահակին գրեաց հաւատարմաւ յղել ի Կարին առ ի գնալ և անտի ի Պոլիս։

Գրեցաւ և յղեցաւ թուղթս միայնակ յամսոյս Ը (8)։

1780 թ. նոյեմբեր—Թուղթք ի յերկիրն Ռուսաց ընդ թղթոց հանգուցեալ սրբազան Վեհին

Տակաւին մինչ կենդանի էր հոգելոյս սրբազան Վեհն, ի յերկրէն Ռուսաց զթուղթս էր ընկալեալ նա ի տեղւոյն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետէն և յոմանց մերազնէիցն։ Ապա թէ զնոցին թղթոց պատասխանեան և թէ ըստ խնդրանաց Յովսէփ վարդապետին առ ամենայն եպիսկոպոսս և իշխանս Ռուսաց զթուղթս էր գրեալ և պահարանեցուցեալ առ ի յղել։ Բայց զի ճանապարհքն փակք և վտանգաւորեալք էին վասն խառնակութեանց և խռովութեանց երկրիս, ոչ կարէր յղել։ Այլ ի մերձիլ մահուն պատուիրեաց զկնի իւր յղել։ Եւ յետ վախճանին այլք ոչ կարացին յղել վասն նոյն խռովութեանցն և բաց ճանապարհ ոչ գոլոյ, մինչև ցայժմ։ Իսկ այժմ իբրու թէ հաշտութիւն եղև և բացան ճանապարհքն, վասն որոյ նորոգ սրբազան Վեհն մեր յղեաց այժմ զայն պահարանն։ Եւ ինքն ևս ըստ պահանջման հարկին, որպէս է բազում տեղիս գրեալ էր զկոնդակս և զթուղթս ողպխածանոյցս, նոյնպէս և այժմ առ ի սոյն երկրոջ զնտեղեալ մերազնեայս գրեաց զկոնդակ և զթուղթս վասն առ Տէր փոխման լուսահոգի և սրբազան Վեհին և իւր յաջորդելոյն[45]։ Եւ մինչ գրեցուցանէր զթուղթսն, ժամանեցին ի Յովսէփ վարդապետէն Գ (3) թուղթք, գրեցեալք առ լուսահոգին և զբազմակնի թուղթ մի ևս ի Նորնախիջևանեցւոցն, որք էին ժողովուրդքն Ղրիմու (որք ևս յիշեցեալք կան ի յառաջին յիշատակարանոջն ի յուլիսի ԻԱ (21), զոր ևս Յովսէփ վարդապետն էր յղեալ, որք գրեալ էին զորպէս իւրեանց, և Երկիցս ևս գրելն ըստ թուղթս և զպատասխանի չառնու-

և խնդրեալ էին զՅովսէփ վարդապետն կացուցանել ինքեանց առաջնորդ։ Զորս ընթերցեալ նորոգ սրբազան Վեհին, զնոցին պատասխանիսն ևս գրեաց։ Եւ զամենն եդեալ յորիչ պահարանոջ, ընդ պահարանի թղթոց լուսահոգի սրբազան Վեհին, որոց միտքն գրեալք գոն ի վերջնում առաջին յիշատակարանին, որ յաւուրս նորա յայս թուոյս յուլիսի ԻԱ(21) յղեաց այժմ։ Եւ թուղթ նորոգ սրբազան Վեհին են այսոքիկ, որք ի ներքոյ գրին ահա։

225. Մեծ կոնդակ ի վերայ երկրին Ռուսաց՝ Հաշտարխանու, Մօսկովու և այլոցն, յաղագս վախճանման հոգելոյս սրբազան Վեհին և իւր հայրապետանալոյն գրեաց սրբազան Վեհն, որոյ մեծ մասն ի կողմանէ
35ա սկզբանն էր // ի յայն կոնդակէն, որ յառաջագոյն ի յօգոստոսի Ը (8) գրեցաւ ի Թիֆլիզ և յետոյ ևս ի յայլ երկիրս։ Եւ փոքր մասն ի վերջոյ կողմանէն է չորեքեան խնդիրքն երկրորդ կոնդակին Թիֆլիզու, գրեցելոյն ի հոկ. Ե (5), որք յիշեալ գոն ի սոյն յիշատակարանոջս ըստ ասացեալ ամսաթուոցս։ Բայց ի սմա և հինգերորդ խնդիր ևս, թէ ահա զՅովսէփ վարդապետ նուիրակ և առաջնորդ ձեր կրկին հաստատեցաք ի գործս իւր՝ առ ի աւարտել զմնացորդս նուիրակութեանն և յաւարտ հասուցանել զբարի առաջնորդութիւնս իւր, զորս առաջադրեալ ունի և հոգայ։ Ուստի պարտիք, որպէս մինչև ցայժմ ընկալեալ էք զդա սիրով և մեծարանօք, նոյնպէս առաւելագոյն քան զայն ընդունիլ մեծաւ սիրով և լինիլ դմա հպատակ։ Եւ զամենայն տուրս ձեր հոգեկան, զոր ինչ և տայք սրբոյ Աթոռոյս, յանձնել դմա։

Օրինակն սորա է ի նոր տետր 133 և 134 համարսն։

226. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս ի Պետրպօլք առ Յովաննէս աղայն գրեաց նոյնպէս՝ ծանուցանելով զվախճանմանէ հոգելոյս սրբազան Վեհին և զիւրն յաջորդելոյն զսուրբ Աթոռս, համառօտապէս և գրելով զերկարն ի հասարակ կոնդակէն իմանալ։ Ապա թէ որովհետև երկիրս ի խռովութեան կայր և ամենայն ճանապարհքն սորին փակք էին, մանաւանդ դէպ յայդկոյս Թիֆլիզու, Գեանջայու, Խամսայու և Թարվիզու ճանապարհքն, և մեք ի յոլով զբաղմունս էաք, որք յամենայն տեղիս զթուղթս գրեաք և գրեմք ըստ պահանջման հարկին, վասն այն չկարացաք փութով հասուցանել զթուղթս առ սիրելիս մեր։ Իսկ այժմ փոքր ինչ հաշտութեան նշան երևեցաւ ի մէջ Վրաց իշխողին և մեր երկրիս բռնաւորին[47], և ճանապարհքն բացան, վասն որոյ և մեք հազիւ այժմ կարացաք գրել զթուղթս յայդկոյս և յղել։ Բայց Բ (2) ամսով յառաջ քան զվախճանիլն, զթուղթս ընկալեալ լուսահոգւոյն ի Յովսէփ վարդապետէն, ըստ խնդրոյ նորա զգրեանս յոլովս գրեաց յայդկոյս և մինչ ետես զինքն անկարացեալ, շուտով պահարանել ետ, զի ի հանդիպիլն յանկարծ գնացողի, յղեսցէ յայդկոյս, հարկադրելով ևս զի, թէ ինքն վախճանիցի, անյապաղ յղեսցեն զպահարանն դէպ յայդր ի բացուիլ ճանապարհացն։ Եւ մինչ էհաս վախճան լուսահոգւոյն, մնացին թուղթքն։ Իսկ այժմ ի բանիլ ճանապարհացն, յղեցաք ահա զպահարան թղթոց լուսահոգւոյն ընդ մեր թղթոցն։ Ընդ որս և վասն մերս անցից զկոնդակ գրեալ առաքեցաք ի վերայ բոլոր երկրիդ առ Յովսէփ վարդապետն՝ ընթեռնուլ տալ յամենայն տեղիս։ Ուստի և զայս անդրանիկ օրհնութեան մերոյ թուղթ ևս առ քեզ գրեցաք։ Յետ այսորիկ ևս յորդորանք և վասն Յովսէփ վարդապետին յանձնարարութիւն։

Զօրինակն թղթոյս գտցես ի նոր տետր 135 երեսն։

227. Թուղթ ևս նոյնպէս ի Մօսկով առ Եղիազար աղային[48] և առ որ-
դիսն նորին՝ աղայ Մինասն և աղայ Յովակիմն, որոյ զաղափարն ևս է
ի նոր տետր 137 երեսն։

35բ 228. Թուղթ ևս ըստ նոյն մտաց ի Մօսկով առ Ներսէս աղայն, յո-
րում և սակս վախճանեալ Մակար անուամբ որդւոյն սորա մխիթարու-
թիւն։ Իսկ Աստուածատուր, Միքայէլ, Յովսէփ և Յովակիմ որդւոցն ևս
ողջոյն։ Սորին հեղինակն ևս ի նոր տետր 139 երեսն է[49]։

229. Թուղթ ևս ի Պետրպօլք առ Ջուղայեցի Մարգարն և Փիլիպ-
պոսն[50] ըստ վերոյ գրեալ թղթոցն մտաց։ Եւ զի Յովսէփ վարդապետն
յառակապէս շահեալ էին սորա տալով զառօրէական ծախսն որչափ ի
Պետրբուրխ էր, զոր Յովսէփ վարդապետն գրեալ էր առ Հոգելոյս սրբա-
զան Վեհն ի յետին թղթեան իւր, որք հասին առ նորոգ սրբազան Վեհս
մեր, զորս և սա ընթերցեալ իմացաւ։ Վասն որոյ զյատուկ շնորհակա-
լութիւնս գրեաց առ սոսա։ Յայսմ թղթոջ ողջոյն և օրհնութիւն գրեաց
կողակցին սորա՝ Կատարինէին և որդւոցն և դստերացն՝ Յովաննիսին,
Փիլիպպոսին, Պետրոսին, Կատարինէին, Պօղոսին, Անդրէասին, Եղիսա-
բէթին և Աննային։

Զօրինակն թղթոյս տե՛ս ի նոր տետր 141 երեսն։

230. Թուղթ ի վերայ ժողովրդեանն Ղրիմու, որք ի Նոր Նախիջևանի,
գրելով սոցա ևս զլուսահոգի սրբազանի վախճանելոյն և զիր հայրա-
պետանալոյն[51]։ Իսկ ապա զայս, թէ ի կենդանութեան Հոգելոյս սրբա-
զանին մինչ լուաք զցաւս ձեր, զորս կրեալ էիք, և զտարագրելդ ձեր ի
հայրենեաց ձերոց, կարի կսկծեցաք վասն ձեր և լուսահոգին գրեաց առ
ձեզ զթուղթ մխիթարութեան, որ ձեզ չէ հասեալ։ Յետոյ մինչ իմացաւ
լուսահոգին զոչ հասանիլն առ ձեզ այն թղթոցն, և ի յօրհնեալ իշխա-
նացդ ձերոց ևս զթուղթ ընկալաւ, որք խնդրեալ էիք զՅովսէփ վարդա-
պետն ձեզ ևս կարգել առաջնորդ, որպէս և ամենայն մերազնէիցն, որք
են յայդր երկրոջդ։ Զի ընդ դոսին զձեզ ևս հովուեսցէ, ապա գրեաց առ
ձեզ նորապէս զկոնդակ օրհնութեան և զՅովսէփ վարդապետն կարգեաց
ի վերայ ձեր ևս առաջնորդ, որպէս և ամենայն մերազնէից երկրիդ։ Ընդ
նմին և զայլ յոլով թուղթս գրեաց ի յօրհնեալ երկիրդ, զորս և պատ-
րաստեալ ջանայր թէպէտ շուտով յղել, այլ զի երկիրս կայր դեռևս ի
մէջ մեծի վրդովման և ճանապարհքն ամենայն փակեցեալք, ընդ որ
ոչ անցանէր ոք, վասն որոյ չկարաց փութով յղել։ Իսկ մինչ ետես զին-
քըն յոյժ անկարացեալ, ապա պատուիրեաց, զի թէ ինքն չկարիցէ յղել և
վախճանն ժամանեսցի, յետ վախճանի իւրոյ անյապաղ յղեսցեն։ Իսկ
ի կոչիլս մեր յայս պաշտօն թէպէտ և մեք ջանացաք շուտով յղել
զգրեանսն լուսահոգւոյն, այլ ոչ կարացաք, զի դեռևս նոյն խռովու-
թիւնքն և ճանապարհաց արգելմունքն կային։ Իսկ այժմ Աստուծով փոքր
ինչ հաշտութեան նշան երևեցաւ ի մէջ Վրաց արքային և մեր երկրիս
36ա իշխողին և // Թիֆլիզու ճանապարհքն բացան, վասն որոյ և մեք զլուսա-
հոգւոյ գրեանսն այժմ յղեցաք յայդկոյս, յղելով ընդ նոսին և զմեր թուղթն,
զորս վասն Նոր անցիցս մերոց գրեալ էաք ի յայդ կողմունդ։ Բայց չև
ևս յղեալ մեր զյիշեալ թուղթսն, մահսարական բազմակնիք թուղթն ձեր
էհաս առ, զոր հասարակութեամբ գրեալ էիք առ լուսահոգին, ծանու-
ցանելով զբարեպատեհ դիպուածսն ձեր և զխնամսն, զորս գտեալ էք ի
մեծէ կայսերուհւոյն, խնդրելով ևս վերստին զՅովսէփ վարդապետն ձեզ

առաջնորդ կարգել։ Արդ, ահա որպէս գրեցաք Հոգելոյս հայրապետն
մեր, ըստ առաջին խնդրոյն ձերոյ զՅովսէփ վարդապետն կարգեալ է ձեզ
առաջնորդ, որպէս տեսանելոց էք զկոնդակն։ Մեք ևս ահա ըստ նոյն
ոճոյ և դիտման վերահաստատեցաք զդա ի յառաջնորդութիւն ձեզ մինչև
ցլրանալն գործոյն նուիրակութեան և այլ բարի առաջադրութեանց իւ-
րոց։ Ուրեմն պարտիք հնազանդիլ դմա և որդիական սիրով ընդունիլ և
այլն։

Զօրինակն սորա ի նոր տետր 41 երեսն տես։

231. Թուղթ ևս առ իշխանսն ժողովրդեանն Ղրիմու, որք ի Նոր
Նախիջևան, ևս ըստ վերոյ գրեցելոյ թղթոյդ մտաց։

Որոյ օրինակն է ի նոր տետր 43 երեսն[52]։

232. Թուղթ ևս առ Յովսէփ վարդապետն գրեաց սրբազան Վեհն,
որում ծանոյց նախ զմահ լուսահոգի սրբազանին և զմխիթարութիւնս
գրեաց։ Ընդ որս ծանոյց և զիւր յաջորդելն հանդերձ՝ որպիսութեամբքն,
որք ի Պօլիս և յայլ տեղիս գրեցան (զորս տես ի վերոյսն)։ Եւ յետոյ,
թէ զկնի այսմ անցից անցանելոյ գրել սկսաք զթուղթս յամենայն տե-
ղիս։ Իսկ յայդր ոչ կարացաք շուտով գրել։ Նախ զի փակեցեալ էին
ճանապարհքն երկրիս վասն վրդովմանցն։ Երկրորդ, զի ըստ խնդրոյ
քոյ զյոլով գրեանս էր գրեալ լուսահոգին յայդկոյս, զորս մինչ կենդանի
էր, ոչ կարաց յղել՝ վասն ոչ գոլոյ ճանապարհի և սակս այսր մտա-
տանջութեան և տկարութեան կամակար գրեցուցանելով զթուղթսն հագիւ
ի յուլիսի Ի (20) աւարտեաց և պահարանել ետ շուտով մինչ ետես
զինքն յոյժ անկարացեալ, զի ի հանդիպիլն հանկարծ գնացողի յղեսցէ
և պատուիրեաց իսկ, զի թէ վախճան հասցի ինքեան և յղել չկարիցէ,
զկնի մահուանն յղեսցեն անպատճառ։ Ուստի սպասէր բացման ճանա-
պարհայ, զի յղեսցէ։ Իսկ ապա յետ քանի աւուրց մինչ առ Տէր փոխե-
ցաւ և մեք անկաք ի ներքոյ այսր լծոյ, ըստ հարկադրութեանն իւրոյ
թէպէտ և մեք ջանացաք շուտով յղել, այլև մեզ ոչ յաջողեցաւ շուտով
զայս առնել, զի երկիւղալի էին ճանապարհքն։ Որ և ի Թիֆլիզ զթուղթս
գրեալ միաբանից մերոց և մեր առ ի բերել և անտի ևս զմահսար, որ-
պէս սովորութիւն է, և յղել ի մեծն Պօլիս, զայնս ևս չկարէաք յղել, և
36բ մնացին առ մեզ արգելեցեալ թուղթքն մինչև յաւուրս Ի (20)։ Իսկ ապա
մինչ տեսաք, թէ հնար ոչ գոյ, հրաման խնդրեցաք յիշխողէն // մերմէ և
այնպէս յղեցաք զԴանիէլ վարդապետն թղթովքն, որ յետ քանի աւուրց
եբեր զմահսարն։ Այլ զթուղթսն լուսահոգւոյն և մեր, որք յայդր պարտ
էին գալ, չկարացաք յղել ընդ նմա ի Թիֆլիզ, զի երկեաք, թէ գուցէ
սոքա զայլ ինչ կարծեալ, զմէնչ որոնեսցեն ի ճանապարհին և այնքան
թուղթքն անկցին ի ձեռս սոցա և ոչնչասցին, քանզի քանիցս անգամ
արարին սոքա զայսպիսի իրս ի ճանապարհին Բայազիտու։ Ուստի
մնալով մնացին մինչև ցարդ, և խռովութիւնն սոցա եկաց մնաց մինչև
ցհոկտեմբեր։ Իսկ ապա, թէպէտ սակաւ մի երթևեկութիւն գոյ ի մէջ
սոցա, այլ դեռ ոչ գոյ կատարեալ հաշտութիւն և նոյն երկիւղն գոյ ի
ճանապարհսն, վասն որոյ թէպէտ և գրեմք զթուղթս, այլ դեռ ոչ գի-
տեմք, թէ որպէ՞ս եմք յղելոց, մանաւանդ զի զսոյն կասկածանս ոչ
միայն աստի ունիմք, այլև յայլուստ։ Ուստի այժմ, որ է ելն հոկտեմ-
բերի, թէպէտ զգրեանսն մեր ևս գրեալ ունիմք ի պատրաստի, այլ
տեսցուք, թէ ե՞րբ եմք յղելոց, դնելոց եմք զամսաթիւն ի ներքոյ։ Բայց

զի մեք այժմ յայդր զԹուղԹս բազումս ոչ գրեցաք, այս է պատճառն, զի ի Հարկէ, զոր ինչ խնդրեալ ես դու, զայնս գրեալ է լուսահոգին, ուստի մեզ այժմ ոչինչ զայր հարկաւոր գրելի. բայց զնոր անցս մեր միայն ծանուցանել, և այն ես ոչ բազմաց: Մանաւանդ որովհետև յամենայն տեղիս զԹուղԹս պարտիմք գրել, վասն որոյ չունէաք այժմ զժամանակ: ԵԹէ Աստուած զժամանակ տացէ և ի քէն ես գիր ընկալցուք, յայնժամ գրելոց եմք առ որս և դու պատշաճ տեսեալ խնդրիցես: Իսկ այժմ զմի կոնդակ հասարակ ի վերայ ամենայն երկրիդ գրեցաք և զԳ (3) Թուղթս առ Եղիազար, Յովաննէս և Ներսէս ազայսն: Իսկ և այժմ ի հոկ. ԻԴ (24) հասին առ մեզ Գ (3) Թուղթք քո, զորս առ լուսահոգին էիր գրեալ ի սոյն Թուոյս մարտի Զ (6) ի ԺԳ (13) և ի մայիսի Ի (20), և զի զշնորհաւորութիւնս էիր գրեալ զպարոն Մարգարէն և զիւր եղբայր Փիլիպոսէն: Վասն որոյ զԹուղԹ մի ես առ նոսա գրեցաք: Եւ Թէ որովհետև զզիմցոց մահուարն ես յղեալ էիր, վասն որոյ զկոնդակ մի ես առ նոսա գրեալ, բաց ի ձեռս քո յղեցաք, զի տեսցես և հասուսցես առ նոսա: Թուղթ մի ես ի վերայ նոցին իշխանացն գրեցաք, զոր ես ահա յղեցաք առ քեզ՝ առ ի հասուցանել առ նոսա, յետոյ եԹէ դու վասն ումանց ի նոցանէ զյատուկ Թուղթս խնդրեսցես, յղելոց եմք:

Իսկ և զայս, Թէ յառաջ քան զայս մէկ գիր առաք ի մեծէն Պօլսոյ ի Մինաս վարդապետէն, զոր գրէ առ մեր Մկրտիչ վարդապետն, զոր ահա առ քեզ յղեցաք ի տեսանել և առնել զհոգս: Զի գրէ Թէ ի Սաղիմայ Գ (3) սևագլուխք գնացին դէպ ի յերկիրն Ռուսաց, իբր անուամբ նուիրակութեան: Իցէ Թէ այլ ինչ իցէ և հարկ է ծանուցանել քեզ, զի զգուշացիս և չԹողցուս ի ներս: Իսկ պատճառ նորա կարծեացն է Թուղթն քո, զոր գրեալ ես առ յայդր եկօղ և այտի դարձօղ Մովսէս վարդապետն,
37ա զոր ի Պօլիս ցուցեալ է || նա բազմաց և գայԹակղեալ են շատք: Արդ, ի տես զԹուղԹ նորին և այգմ հոգ տար և զորպէսն մեզ ծանո: Իսկ ի վերջոյ Թղթոյն դարձեալ զայս ես գրեաց, Թէ գիտեմ դու ես լաւ ճանաչես և գիտես, որ աստ Բ (2) եղբարք են եղեալ հասանմանութեամբ՝ Մովսէս և Աւետիք անուամբ: Արդ, նոյն Բ (2) երբարքն Ա (1) մեծ եղբայր ես են ունեցեալ՝ մահտեսի Յակոբ անուամբ, որ ի վաղուց գնացեալ ի Հնդիկս, աստ համբաւեցեալ է, Թէ մեռաւ, որոյ սակս զկին նորա, որ աստ առ եղբարսն է լեալ, մեր Թասալուի ՅարուԹիւնն առեալ է (որ և Ա (1) որդի ես է ունեցեալ կինն այն ի նոյն Յակոբէն Սարգիս անուամբ, որ այժմ լսեմք Թէ ի Հաշտարխան կամ ի Ղզլար տնաւորեցեալ է): Իսկ յետ առնլոյ մեր ՅարուԹիւնին զայն կինն, նոյն մահտեսի Յակոբն եկեալ է ի Հնդկաց երկրէն և նախքան զհասանելն աստ, կինն այն մեռեալ է: Ուստի եկեալ աստ նոյն մահտեսի Յակոբն ի յԵրևան քաղաքոջն առեալ է զկին մի, և ապա եկեալ է յայդր ի Հաշտարխան կամ ի Ղզլար: Յետոյ և միւս եղբարքն նորին ես եկեալ են յայդր և զկինն Թողեալ աստ: Իսկ արդ, ահա շատ ամք են յորս այն մահտեսի Յակոբն Թողեալ աստ զկինն, յայդկոյս է եկեալ և բնաւ զայն կինն չէ յիշեալ և չէ համբաւ ինչ և զխարճի յղեալ առ նա, և կամ ուր լինիլն ծանուցեալ նմա: Վասն որոյ կինն այն ի դուրս այլոց մնացեալ կայ ի հուսահատութեան: Եւ այժմ համբաւեն աստ, Թէ մահտեսի Յակոբն այն մեռեալ է, շատք ես ասեն, Թէ յայդր կին է առեալ և զհաւատին ոչ ոք գիտէ: Ուստի յուսահատեալ կնոջն, կամի առն լինիլ մինչ արգելուն զնա, ըստ որում չէ օրէն որիշ հոգեկորուստ իւրս գիտէ

առնել, վասն որոյ ածեալ են զնա յայս գեօղ, որ միշտ աղաղակէ առ մեզ և իրաւունս խնդրէ: Վասն որոյ յայս եւուք նմա համբերել ժամանակ ինչ ևս, մինչ մեք տեղեկասցուք զորպիսուԹեանց առն իւրոյ և զհոգս ինչ արասցուք: Արդ, ահա կինն այն գրեաց զաղէտս իւր, զոր ահա յղեցաք. վասն որոյ պարտիս իմանալ, Թէ այն մահտեսի Յակոբն մեռեալ է, մեզ ծանուցես: Իսկ եԹէ կենդանի է, ինչ կերպիւ և իցէ յղեսցես զնա աստ, որ եկեալ տիրուԹիւն արասցէ կնոջն: Թէ և կին ես իցէ առեալ, որովհետև ապօրէն պսակ է, թակեա և յղեա աստ: Եւ ի յղելդ հաւատարիմ մարդոյ յանձնեա, զի բերեալ ի Թիֆլիզ մեր մարդկանցն յանձնեսցեն և նոքա աստ յղեսցեն, զի ինքն առանց բերողի լինի Թէ չգայցէ: Զի որպէս և լսեմք, այնպէս մէկ հաւատ ունի, ասեն՝ որ ուր և հասանի, մի կին առնու: Իսկ Թէ յայլ ուրեք իցէ գնացեալ, զայն ևս ծանուսցես: Ինչ և իցէ, մինչև ցեկօղ յունիս ամիսն կամ զայն մարդն յղեա աստ, Թէ կայ և յայդր է և կամ մեռած և սաղ լինիլն և այժմ ուր լինիլն մեզ ծանո:

Զնախագաղափարն սոյնոյ Թղթոյս գտանիցես ի շարադրանաց նոր տետր ի 144 երեսն. մինչ պիտոյասցի[53]:

37բ 233. Թուղթ ես ի Մօզտօք առ գործակալսն սրբոյ ԱԹոռոյս՝ պարոն Գէօրկինն և Մանկասարն, ըստ վերոյ գրեալ Թղթոցն մտաց: Իսկ ապա և զայս, Թէ ահա զլուսահոգի սրբազանի Թղթոց պահարանն յղեցաք ի Թիֆլիզ՝ առ մերայինսն, ընդ որում յղեցաք և զմի պահարանով Թուղթ ես, զոր մեք գրեցաք ի յօրհնեալ երկիրդ այդ՝ վասն մերս անցից: Եւ վասն երկուց պահարանացն ես պատուէր գրեցաք շուտով առ ձեզ հասուցանել: Վասն որոյ և ձեզ՝ սիրելեացդ իմոց գրեմ, զի ի հասանիլն առ ձեզ զոյն երկու պահարան Թղթոցդ ամբողջ կնքովն իւրեանց բացցիք զարտաքին պահարանսն, որք ի ձեռս ձեր են գրեցեալք և զԹուղԹսն ձեր հանիջիք: Իսկ զմիջի պահարանսն իւրեանց ամբողջ կնքովն օր մի յառաջ հասուսջիք առ Յովսէփ վարդապետն և մեզ գրեսջիք ի միամտուԹիւն: Յետ այսորիկ զայս, Թէ վասն անձեռնհասուԹեան մերոյ կյատուկ Թուղթ չգրեցաք ժողովրդոց տեղւոյդ, զի զկոնդակ եմք գրեալ հասարակապէս ի վերայ ամենայն երկրիդ, որ ահա ընդ Թղթոցդ է, զոր Յովսէփ վարդապետն յղելոց է յայդր ես, և ի նմանէ զլիապէսն իմանալոց էք: Եւ ի վերջոյ զողջոյն և օրհնուԹիւն գրեաց տեղւոյն քահանայիցն և ժողովրդոցն:

Սորին օրինակն է ի նոր տետր 42 երեսն[54]:

Գրեալ աւարտեցան Թուղթքս յամսոյս Ա (1) և ամսաթիւքն ես այնպէս եղան—Ա (1): Բայց վասն վտանգաւոր գոլոյ ճանապարհացն յարդեանս և հաւատարիմ գնացօղ չլինելոյ, քանի աւուրք յամեցեալ մնացին աստ և ոչ յղեցան: Իսկ ապա յղեցան յամսոյս ԺԴ (14) ընդ մեր Գալուստ վարդապետին, որ վասն պատճառի ինչ (զոր յետ քանի մի Թղթոց գրելոց ծանուցանելոց եմք), յղեցաւ ի սրբազան Վեհէն ի Թիֆլիզ:

Այլ սակայն ընդ այսց Թղթոցս Հաշտարխանու, ի Բաշչուիս ես գրեաց զԹուղԹս սրբազան Վեհս մեր, որք են այսոքիկ հետևապէս գրեալքս:

234. Թուղթ անդրանիկ օրհնուԹեան և սիրոյ առ Սօլօմօն արքային Ափխազաց գրեաց սրբազան Վեհն՝ ծանուցանելով նմա զմահ լուսահոգի սրբազանին և զիւր յաջորդելն զԱԹոռս սուրբ: Եւ խնդրեաց ի

նմանէ զմէր ունիլ ընդ ինքեան և առ սուրբ Աթոռս, որպէս և առ լուսահոգուլն առ նա և զսիրանիշ գիր գրել։ Մանաւանդ ունիլ զխնամս ի վերայ մերազնեայ ժողովրդեանն, որք ընդ իշխանութեամբ իւրով։ Ապա և զայս, թէ որպէս յաւուրս հոգելոյս հայրապետին մերոյ ըստ նորին աղերսանացն մաքրեցեր ի միջոյ դոցա զխմորն ախթարմայութեան, ի բաց վարելով այտի զախթարմայ կարգաւորսն, և զեկեղեցին շնորհելով մերազնէիցն (որպէս և գրեալ էիր լուսահոգւոյն և զօրինակ զատաւճռին ձերոյ ես յղեալ), նոյնպէս և այժմ զնոյն կանոնսն հաստատուն պահել աղաչեմ և // չթողուլ ի մէջ դոցա զախթարմայ երէց
38ա և կամ զփառնկ պատրի, և զեկեղեցին ես թողուլ ի ձեռս դոցա։ Նաև խնդրեաց կրկին՝ զգիրն սիրոյ անպակաս առնել։ Գրելով ես, թէ և մեր ես թղթոց երթեևկութիւն լինելոց է առ քեզ։

Զօրինակն թղթոյս ի նոր տետր 34 երեսն տես։

235. Թուղթ ես առ Մաքսիմէ կաթուղիկոսն Ափխազաց, որ ես ըստ մտաց և ոճոյ թղթոյ արքային, որ աստ ի վերդ գրեցաւ։

Որոյ զգաղափարն գտցես ի նոր տետր 39 երեսն։

236. Կոնդակ ես ի վերայ մերազնեայ ժողովրդեանն գրեաց սրբազան Վեհն, որք ի յերկիրն Ափխազաց, որոց ես նախ ծանոյց զառ Տէր զան Վեհն, որք ի յերկիրն Ափխազաց, որոց ես նախ ծանոյց զառ Տէր փոխիլն հանգուցեալ սրբազան Վեհին և զիւր հայրապետանալն և խնդրեաց զօժանդակութիւնս աղօթից վասն ինքեան և ունիլ զհարազատութիւն առ սուրբ Աթոռս, և հարկեաց զորպիսութիւնս իւրեանց գրել ինքեան։ Իսկ յետոյ զայս, թէ յառաջագոյն որ հոգելոյս սրբազանն զխնդիրս գրեաց վասն ձեր արքային և Մաքսիմէ կաթուղիկոսին, որք զախոլցխացի ախթարմայ սուտ էրէցն այտի վանեցին, և զեկեղեցին ձեզ շնորհեցին ներկայութեամբ մեր Մարտիրոս վարդապետին, և զախթարմայից ոտն այտի կարեցին, ժողովս առնելով վասն այնր և զհաստատուն կանօնս դնելով, զի այնպէս մնասցէ, զոր և գրեցին առ լուսահոգին արքայն և կաթուղիկոսն, և զօրինակ դատաստանի վճռոյն ես յղեցին, զոր ետես լուսահոգին և հաւանեցաւ և զշնորհակալութիւնս գրեցին արքային և կաթուղիկոսին, և վերստին գրեաց վասն ձեր զխնդիր է պահել ի վերայ ձեր զնոյն խնամս։ Այժմ որովհետև միջոց շատ անցեալ և ի ձէնչ եկօղ ոչ լինի աստ, ուստի չգիտեմք թէ այլևս նոյն կանոնն հաստատնապէս կա՞յ ի միջի ձերում, և եկեղեցին ի ձեռս ձե՞ր է, և ախթարմայ խաբեբայ կարգաւորաց ոտն նոյնպէս կտրեցի՞ալ է. ի միջոյ ձերմէ, թէ ոչ։ Զայս ամենայն ծանուսջիք մեզ ի միամտութիւն։

Եւս առ արքայն և առ կաթուղիկոսն զթուղթս գրելն և վասն սոցա զյանձնարարութիւնս գրելն ծանոյց, ընդ որս և զայս, թէ որպէս լուսահոգին գրեալ է ձեզ, աՀա և մեք գրեմք, զի մի մնասջիք այդպէս հեռի ի սրբոյ Աթոռոյս, այլ երբեմն գալով աստ և երթալով՝ վայելեսջիք զշնորհս սորա, և մեզ ընտելասջիք, զի և որդիքն ձեր զայն տեսանելով նոքա ևս մի շատ հեռի մնասցին և օտարասցին ի սմանէ։

Ապա գրեաց և զհոգևոր պատուէրս՝ մնալ ի սուրբ հաւատս մեր հաստատուն, հեռի կալով ի յախթարմայից և այլոց։ Այլև զայս պատուէր գրեաց, թէ որպէս հոգելոյս հայրապետն մեր գրեալ է ձեզ և կանոնեալ, զի որպէս ի բնէ անտի անէրանի էք լեալ սրբոյ Աթոռոյս, նոյնպէս և այժմ լինիցիք և որիշ վանից առաջնորդ ձեզ ձեռնամուխ մի լինի, այլ ի
36բ յատուկ վանքն ձեր սուրբ Աթոռս լիցի և յատուկ // առաջնորդն ձեր ի

սմա նստօղ հայրապետն լիցի, և զամենայն առաջնորդական և վանքական արդիւնսն ձեր մեզ և սրբոյ Աթոռոյս տացիք ի ձեռն մեր նուիրակացն, և որիշ վանքի և առաջնորդի մի տայցէք զարդիւնս առաջնորդական և վանքական։ Նոյնպէս և ես գրեմ ձեզ այսպէս առնել և զսուրբ Աթոռս ճանաչել ձեզ յատուկ վանք և առաջնորդարան։

Գաղափարս սորա է ի նոր տետր 36 երեսն։

Այսց թղթոց ամսաթիւքն ես եդան սոյնոյ ամսեանս Ա (1) և զհետ վերոյ գրեալ Ռուսաց երկրի թղթոցն յետոյ յղեցան որպէս ի վերն ցուցաք և ի ներքոյ ես ցուցանելոց եմք։

Բայց ի Թիֆլիզ ես գրեցան թուղթք, զորոց զմիտսն աՀա ի ստորև նշանակեմք համառօտապէս։

237. Թուղթ առ տէր Աբրահամն, ի պատասխանի նորին ի հոկ. Զ (6) գրեալ թղթոյն, զոր ընդ ի Յովսէփ վարդապետէն մերմէ առ սա հասեալ պահարանաւ թղթոցն՝ յղեալ էր։ Յորում գրեաց, թէ աՀա դէպ ի Հաշտարխան և ի Մօզտօք և յայն կողմունսն գրեալ Ա (1) պահարանաւ գրեանք յղեցաք յայղր առ առաջնորդ Յովաննէս վարդապետն, որ քեզ հանձնեսցէ առ ի յղել։ Վասն որոյ մեծաւ հարկիւ պատուիրեմ քեզ, զի մինչ յանձնեսցի քեզ այն պահարանն, հաւատարմաւ յղեսցես ի Մօզտօք, առ գործակալսն սրբոյ Աթոռոյս՝ պարոն Գեօրգինն և Մանկասարն, որ նոքա բացեալ զպահարանն, զիւրեանց թուղթն առնուցուն և զմնացեալն յղեսցեն ի Հաշտարխան՝ առ ի հասանել Յովսէփ վարդապետին։ Բայց դու պարտիս յայտի շուտով յղել և զերբ և զընդ ում յղելդ մեզ գրել առ ի միամտութիւն։ Եւ մանաւանդ դու գրեսցես պարոն Գեօրկուն և Մանկասարին, զի զառ ինքեանս հասանելն թղթոցն մերոց ամսաթուով գրեսցեն քեզ և դու ծանուսցես մեզ։

238. Թուղթ և ս. առ Յովաննէս վարդապետն, նախապէս յիշեցուցանելով յառաջ քան զայս ի հոկ. զթուղթ գրելն առ սա ընդ Կարապետ վարդապետին և զփօլիցայ առնելն ես ի վերայ սորա առ ի հասուցանել Զաղատեանց Ստեփանին, որ յայնժամ ի Թիֆլիզ էր, բայց զի դեռ չէր տուեալ սա Ստեփանին զայն փօլիցայն և Ստեփանն եկեալ էր ի Թիֆլիզու աստ և գրեալ էր անդ իւրայնոցն առնուլ։ Սրբազան Վեհն գրեաց սմա, թէ աՀա Ստեփանն թուղթ է գրեալ յայղր իւրայնոցն, զի առցեն ի քէն զայն դրամն։ Ի հարկէ մինչև ցայժմ տուեալ ես զփօլիցայն և զմեր փօլիցայագիրն առեալ։ Արդ, զմեր թղթոյ պատասխանն յամեցուցէր, գրեա որպիսութեամբք անդուոյդ։ Եւ թէ աՀա ի Մօզտօք և ի Հաշտարխան և յայն կողմունսն վասն անցիցս մերոց զթուղթս գրեցաք, զորս և պահարանեալ առաքեցաք առ քեզ ընդ թղթոյս, կոչեսցես զտէր Աբրա-
39ա համն և քո ձեռամբդ յանձնեսցես նմա, և հարկեսցես շուտով յղել ի Մօզ//տօք առ սրբոյ Աթոռոյս գործակալ պարոն Գեօրկինն և Մանկասարն, որպէս ի հասցէոջն գրեալ եմք։ Տէր Աբրահամին ես ըստ այսմ առնել գրեցաք։ Ապա և զայս, թէ աՀա առ Ափխազաց արքայն և կաթուղիկոսն ես զսիրոյ թուղթս գրեցաք, ծանուցանելով զանցս մեր, և բաց յղեցաք առ քեզ, զորս յայղր թարգմանեցուցեալ յղեսցես առ նոսա։ Ընդ որս և զմի կոնդակ ես գրեցաք ի վերայ մերազնէիցն, որք ի յերկիրն Ափխազաց, զոր ես պարտիս ընդ այնց ի միասին առաքել և մեզ գրել ի միամտութիւն, զի անտարակոյս լինիցիմք։

239. Թուղթ ես առ Կարապետ վարդապետն, թէ ահա ի գնալոյդ մինչև ցայժմ քան զմի ամիս աւելի միջոց եղև, յորում զգիր ոչ ընկալաք ի քէն, զի որպիսութիւնդ գիտէաք։ Վասն որոյ ի հոգս և ի մտածմունս կամք։ Ուստի գրեա զքոյդ և զտեղւոյդ որպէսն, զորս իմացեալ միամտիցուք։ Եւ սակս ի Ռուսաց երկիրն յղելի թղթոցն սմա ես գրեաց հետևիլ և շուտով յղեցուցանել տէր Աբրահամին։ Իսկ և զայս, թէ ի հոկ. Զ (6) Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն և այլ գլխաւորագոյն բարեկամք ոմանք գիր էին գրեալ առ մեզ ի շնորհաւորութիւն, որք և գրեն, թէ իշխանքն քաղաքիս կարի ուրախացեալ են ընդ յաջորդելդ քո զԱթոռդ սուրբ և մահտարին սպասեն ամենեքեան։ Նաև ի հոկտ. ԺԴ (14) Պետրոս վարդապետն մեր մահտարաւն հասեալ է ի Պօլիս հաւաստեաւ։ Իսկ ի վերջոյ, թէ ահա ի Կարնոյ յանուն քո մի գիր էր եկեալ, զոր ընդ թղթոյս յղեցաք առ քեզ։ Եւ ես թէ զմոմի ժողովման որպէսն գրեա մեզ, զի գիտասցուք եթէ աւարտեա՞լ էք, թէ ոչ։

240. Թուղթ ես առ տէր Ղազարն, թէ յորմէ հետէ գնացիք աստի ընդ Կարապետ վարդապետին, թուղթ ինչ ոչ գրեցիք մեզ ի միամտութիւն, այդ ընդէ՞ր է ոչ ապաքէն պատուիրեցաք աստ ձեզ զմեղապատշաճ որպիսութիւնսն գրել միշտ։ Արդ, կրկին պատուիրեմ ձեզ ահա՝ գրել և ոչ զանց առնել։ Նաև զայս, թէ փօլիցայն, զոր արարաք ի վերայ առաջնորդին, որ պարտ էր հասանիլ Ջաղատենց Ստեփաննին և դեռ չէր հասեալ, ահա այնր աղագաւ Ստեփանն աստի զթուղթ է գրեալ խրատանոցն, զի առցեն, եթէ առեալ է, ընդէ՞ր ոչ ազդէք մեզ, և եթէ չէ առեալ, պաջանացարուք ի տեղին հասուցանել, զի մի աստ զդրամն ի մէնջ պահանջեսցէ յայս պակասաւոր ժամանակիս։ Իսկ և սմա ես գրեաց, թէ ահա զմի պահարանաւ թուղթս յղեցաք ի ձեռն առաջնորդ Յովաննէսի. Դու ես վարդապետին, տալ տէր Աբրահամին, առ ի յղել ի Մօզտոք։ Դու ևս մեզ հետևեաց առ ի շուտով յուղարկել տալ, և զի՞նչ և զընդ ո՞ւմ յղելն մեզ գրեա։ Եւ թէ զմոմի ժողովելն զիրձայք, եթէ չէք զիրձեալ տակաւին, զայնմանէ ես գրեա, զի գիտասցուք։

39բ. Գրեցան թուղթքս այսորիկ վերոյ գրեալ ի սոյն ամսոյս ԺԱ(11), բայց զի չգոյր բաց ճանապարհ (որպէս և ի վերոյ ես յիշեցաք)։ Մնացին և այսորիկ ընդ Ռուսաց երկրի և Բաշաչուխի թղթոցն աստ ի քանի մի աւուրս և ոչ յղեցան։

Իսկ զի ի յերկար միջոցս ջանայր իշխօղն երկրիս մերոյ հաշտիլ ընդ արքային Վրաց Հերակլոյ և զժողովուրդսն երկրիս (զորս ի յանցեալ ամին նա ի գալն իւր ի վերայ Երևանու բերդին և ի չառնուլն զնա՝ յետ վարեալ էր ի յերկիրն իւր) դարձուցանեալ աստ և նա ոչ կամէր, յղեաց միջնորդելոյ Ախըլցխայու Սուլէյման փաշային, ինքն ես զմի մարդ յղեաց հանդերձ ընծայիւ առ ի հաշտիլ։ Եւ իբրև ոչ հաշտեցաւ նա, ապա յղեաց զկինն իւր հանդերձ ընծայիւք, ընդ որում և զմին ի յառաջակայից իւրոց առ նա, որք գնացեալ անդ, իբրև տեսեալ էին, թէ ոչ լինի կատարումն խնդրոյ իւրեանց, գրեալ էին սմա, թէ մեզ այսպէս նշան երևի, թէ մինչ այստի սրբազանն զմի աղաչանաց թուղթ գրեսցէ և զմի վարդապետ յղեսցէ առ արքայն, և զժողովուրդն խնդրեսցէ։ Նորա աղաչանացն լուեալ, զժողովուրդն արձակեսցէ սա։ Վասն որոյ և խանն մեր ընդ հարկիւ խնդրեաց ի սրբազան վեհէն զմի թուղթ գրել առ նա և ընդ միոյ վարդապետի յղել, զի թերևս զժողովուրդն թողցէ ի դառնալ յերկիրս այս իւրեանց։

241. Այնր աղագաւ և սրբազան վեհն զմի տաճկեվար աղերսարկու թուղթ գրեաց, թէ ահա երկրիս որպիսութիւնն յայտնի է քեզ, որոյ շինութիւնն ըստ մեծի մասին սպառեալ է և անմարդաբնակ է եղեալ։ Արդ, խնդրեմ ի մեծութենէդ, զի զխղճալի ժողովուրդսն երկրիս, զորս վարեալ ես աստի, արձակեսցես ի գալ։ Գիտես որ սրբոյ Աթոռոյս շինութիւնն և պայծառութիւնն ես երկրի շինութեամբն լինի, վասն որոյ յոյժ մաղթէմ մեծի արքայիդ, զի զգրեալս անտես չառնես, որ է առաջին խնդիրս իմ, այլ ի փառս Աստուծոյ կատարեսցես՝ համարելով թէ նոր ի նորոյ նորոգեսցես զսուրբ Աթոռս։ Ըստ սոյն մտաց և զայլ յոլով բանս գրեաց և զթուղթն ընդ մեր Գալուստ վարդապետին յղեաց։ Ընդ որում և յղեաց ըզ ի Ռուսաց երկիրն գնալի պահարանեալ թուղթքն, զոր ի վերոյ յիշեցաք, և զի Բաշաչուխ և ի Թիֆլիզ գրեցեալ թուղթքն ևս՝ յամսոյս ԺԴ (14)[55]։

1780 թ. նոյեմբեր—Թուղթք ի Ղարս գրեալ

40ա Զկնի այսորիկ սրբազան վեհն ի Ղարս առ Ապտուլլայ փաշայն և առ Իբրահիմ աֆանդու որդին և առ այլս զընծայ յղեաց և զբարխանայ ընդ մեր Թովմասին, ընդ որում և զսիրոյ թուղթս գրեաց առ նոսա։ Եւ առ պարոն Գէորգն և մահտեսի Կարապետն ես զթուղթս գրեաց, զորոց զմիտսն ահա ցուցանեմք ի ներքոյ։

242. Թուղթ սիրանիշ և բարեկամական սրբազան վեհէն առ Աւտուլլա փաշայն գրեաց՝ ի նմանէ զսէր և զխնամս ունիլ պահանջելով առ սուրբ Աթոռս և առ ինքն, որում և յղեաց զճոթեղէնս, և զբրինձ, զշիր և զքացախ, զէ (7) հատ մոմ և փոքր ինչ գիլապ։

243. Թուղթ ես սիրոյ նոյնպէս առ Միւտասրիֆ Մուստաֆայ և առ Նօման աղայ աֆանդիպատայսն, որոց և յղեաց զճոթեղէնս, զԲ (2) հատ մոմապատ, զբրինձ, զքացախ, և զշիր և զգիլապ։

244. Թուղթ ես զնոյնպէս առ Ղարախան օղլի Ահմատ Չէլէպին, որում ես յղեաց զբրինձ, զփոքր ինչ գիլապ, զքացախ և զշիր։

245. Թուղթ ես Ալիբէկին Մազպերդու, որում ես յղեաց զբրինձ և զայլ ուտելի իրս, որք ի վերդ գրեցան։

246. Թուղթ ես Եաղուպ փաշայի որդի Մահմատ բէկին, որում ես յղեաց ի վերոյ գրեցեալ կերլի իրացդ։

247. Թուղթ ես առ խարաճչին Ղարսայ, որում ես յղեաց ի յիշեալ ուտելի իրացն։

248. Թուղթ ես առ մաքսապետն տեղւոյն։ Սմա ես ի յուտելեացն յիշեցելոց զբաժին։

249. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ մահտեսի Կարապետն, թէ ահա լուեալ ես յայսքան միջոցս, յորում կարգեցեալ կամք ընդ լծով հայրապետութեան սրբոյ Աթոռոյս, զանցս մեր։ Թէև մեք վասն բազում զբաղմանց մերոց· գիր ոչ գրեմք քեզ, դու ընդէ՞ր սիրոյ գրով զմեզ ոչ շահես և սրտադիւր առնես։ Արդ, ահա զայս թուղթ գրեցաք առ քեզ, զի ես առաւել հաստատեսցես ի սէր սրբոյ Աթոռոյս և մեր զսիրոյ

թուղթդ պակաս չասնելով։ Եւ ի վերջոյ, թէ իբր օրհնութիւն զփոքր ինչ գինի յղեցի ի վայելս սիրելւոյդ։

250. Թուղթ ևս առ պարոն Գէորգն, յորում նախապէս զայս, թէ ահա զմեր Թոմասն ընծայիւ և բարխանայիւ յղեցաք յայդր առ քեզ, զփաշայի ընծայն իւրեան մատուցես ընդ մեր Թոմասին և զմիւսոցն ևս առ նոսա հանդերձ թղթովքն, զորս առ իւրաքանչիւրսն գրեալ եմք։ Երկրորդ, թէ Սարգսի և Աստուածատուրի և մեր ամանաթքն, որ առ քեզ են, զնոցուն յղեա ընդ Թոմասին աստ, իսկ մերն մնասցէ տակաւին առ քեզ։ Իսկ ապա և զայս գրեաց, թէ յառաջ քան զքանի աւուրս

40բ ումն վաճառական, որ մեզ ծանօթ է, ի գալն // նորա ի Բայազիտու աստ բեռնով, ոմանք զող քիւրդք են պատահեալ և յափշտակեալ են զինչսն, որոյ սակս մեր խանին արզ արարաք և ի վերայ Շամխին աղային զթալղայ հանաք, որպէս զի նա զգողսն գտցէ։ Այլ նա գրեաց մեզ, թէ գողերն Օսման աղայի մարդիկն են, որ այժմ ի Կաղզվան է։ Վասն որոյ գրեմ սիրելւոյդ՝ աֆանտու աղայոցն ասել և զայն գողսն գտանել տալ և զայն յափշտակեալ զիրսն յետ առնուլ տալ և յանձնել Թոմասին՝ առ ի բերել։ Ահա զՇամխինի թուղթն և այն տարեալ ընչից սիահին՝ ևս եդեալ ի թղթոջս յղեցաք առ քեզ, զորս ցուցցես յայդր։

Գրեալ յղեցան թուղթքս ընդ մեր Թովմասին յամսոյս ԻԱ (21)։

1780 թ. նոյեմբեր—*Ի Բայազիտ գրեալ թուղթք*

Եւ ի միւսում աւուրն սրբազան Վեհն առ Բայազիտու Իսաղ փաշայն զթուղթ գրեաց։ Քանզի ի գնալ Մարտիրոս վարդապետին մերոյ հանդերձ ընծայիւ և բարխանայիւ անդ առ փաշայն և առ այլս, որպէս յիշեցեալ է ի սոյն թուղթս ի հոկտեմբերի ԻԸ (28), զսրբոյ Աթոռոյս ջորիսն, որք ընդ նմբեան յղեալ էր ի ձիաստան մի, որոյ ձեղունն ի վաղուց հետէ խախուտ էր եղեալ և յայնմ գիշերի փլեալ էր առաստաղն ի վերայ ջորոցն և զչորեսինն սատակեցուցեալ[56]։ Զոր ի լսել փաշային փոխանակ սպաննելոցն զԴ (4) հատ ջորի էր տուեալ։

251. Վասն այնր իսկ սրբազան Վեհն զայս թուղթս գրեաց, յորում նախ զշնորհակալութիւնս գրեաց և ապա զխնդիր, զի ի նոյն սէրն և ի բարեկամութիւնն հաստատուն մնասցէ և ի վերայ մերայնէիցն, որք ընդ իշխանութեամբ իւրով, զխնամս և զսէր ունիցի[57]։

252. Թուղթ ևս առ Ինուզ բէկի որդի Մահմատ բէկն[58] գրեաց, ի պատասխանի նորին շնորհակալութեան թղթոյն, խնդրելով ի նմանէ և զսէրն և զբարեկամութիւնն անպակաս առնել ի սրբոյ Աթոռոյս և ի տէր յինքենէ։ Ընդ այսմ և Մկրտիչ վարդապետն զմի թուղթ գրեաց առ տէր Վահանն՝ առ ի հասուցանել զայն Բ (2) թուղթսն վերոյ գրեցեալս առ փաշայն և առ Մահմատ բէկն։

Յղեցան թուղթքս յամսոյս ԻԲ (22)։

1780 թ. նոյեմբեր—*Թուղթք ի Ղարս*

253. Այլև յետ միոյ աւուր վերոյ յիշեալ թղթոցդ յղեցման ի Մաղբ զթուղթ ի բերդու Ալիբէկէն և Մահմատ բէկէն, տաճիկ մի եկն՝ բերեալ զթուղթ ի Հարանիս հրաւիրեալ նոցունց, զոր գրեալ էին առ սրբազան Վեհն, և ի Հարանիս հրաւիրեալ

Իսկ սրբազան Վեհն զթուղթ գրեաց առ նոսա, ի պատասխանի թղթոյն նոցա, յորում զշնորհակալութիւն և զշնորհաւորութիւն գրեաց հարսանեացն։ Ընդ որս և զայս, թէ դուք ևս գիտէք, որ մեք ի բազում ցաւս և ի զբաղմունս եմք, վասն որոյ ոչ կարեմք գալ։ Այլ ահա ի նշան սիրոյ և ի շնորհաւորութիւն հարսանեացն, զոր առնէք, յղեցի զքանի մի ճոթեղէնս։

Յղեցաւ յամսոյս ԻԴ (24)։

41ա

1780 թ. նոյեմբեր—*Ի Թիֆլիզ առ ոմանս գրեալ թուղթք*

Փոլիցայ էր արարեալ սրբազան Վեհս մեր ի վերայ Թիֆլիզու առաջնորդ Յովաննէս վարդապետին՝ առ ի հասուցանել Ջաղատենց Ստեփանին, զի հասուսցէ սրբոյ Աթոռոյս (որ գրեալ գոյ ի սոյն յիշատակարանոջս, յայս թուոյս հոկ. Ե (5)։ Այժմ զայն փոլիցայն Յովաննէս վարդապետն հասուցեալ էր Ստեփանի մարդկանցն, որք ի Թիֆլիզ։ Զի Ստեփանն եկեալ ի յԵրևան, իւրայնոցն գրեալ էր առնուլ։ Որք և առեալ ահա յանձնեալ էին սրբոյ Աթոռոյս միաբան Կարապետ վարդապետին և տէր Ղազարին՝ առ ի յղել ի սուրբ Աթոռս։ Ուստի և նոքա զայն ընդ սրբոյ Աթոռոյս ճորտ Մանուչարին[59] յղեալ էին աստ և իւրաքանչիւրքն զթուղթս գրեալ առ սրբազան Վեհն։ Եւ հանգուցեալ մահտեսի Յովաննիսի որդի մահտեսի Յակոբջանն յառաջագոյն գրեալ էր առ սրբազան Վեհն, թէ զմի ոսկեայ խաչ և զմի արծաթեայ սկիհ շինեցուցանեմ՝ առ ի յղել ի սուրբ Աթոռդ յիշատակ (որ ևս յիշեալ է ի սոյն թուոջս ի հոկ. Ե (5) յառ սա գրեալ թղթոջն)։ Ահա և նա յղեալ էր զայնս ընդ նոյն Մանուչարին և զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն, ընդ որում և յայլոց ոմանց ևս գոյին թուղթք ի վերայ սրբազան Վեհին։ Իսկ սրբազան Վեհն զպատասխանիս այնց թղթոյն բաց ի սակաւուց և առ այլս ոմանս ևս զթուղթս գրեաց այժմուս, զորոց միայն գրեմք ահա ի ներքոյ։

254. Թուղթ առ Կարապետ վարդապետն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի նորին՝ ի հոկտ. ԻԴ (24) գրեալ թղթոյն, յորում նախ զայս գրեաց, թէ ընդ Մանուչարին[60] յղեալն ձեր էհաս առ մեզ, առ այն միամիտ լեր։ Իսկ և գրեալ էր սա վասն Հախպատու Աբրահամ պետին, թէ գալոց է յայդր, վասն որոյ սրբազան Վեհն գրեաց, թէ մեք յառաջ գրեցաք նմա, թէ որպէս զի եթէ վասն Սանահնոյ վանից առաջնորդ լինելոյ գայցէ, ի հարկէ պարտի թղթով կոնդակօքն և մարդկամբք գալ, որ առաջնորդ կարգեալ վերադարձուցուք։ Իսկ եթէ ինքն յատկապէս վասն իւրն գայ առ ի շահիլ ի մէնջ, մեք ևս ըստ ըղձին և ըստ արժանւոյն իւրոյ շահելոց եմք։ Բայց թէ դու և թէ ինքն չէիք ծանուցեալ մեզ զպատճառն գալոյ նորին, եթէ յայդր է դեռևս, ծանուսցես նմա, որ ըստ առաջին գրեցելոց մերոց առնիցէ։ Եւ թէ թուղթն քո, զոր սակս գերւոյ տեառն գրեալ էիր առ մեզ և խնդրեալ իրիճայիւ Գէորգին Միրզային՝ առ ի զկոնդակ տալ նմա, նոյն գերետէրն առեալ եկն առ մեզ։ Իսկ մեզ որովհետև զմահսարն և զֆարմանն մեր դեռ չեմք ընկալեալ և ոչ տամք ումեք զայդպիսի կոնդակ, վասն որոյ և դմա ևս չետուք այժմ, յետոյ տեսցուք։ Իսկ և զայս, թէ ի փուտուլայոց գրեալդ իմացայ, որոյ որպէսն մնաց յապայ, երբ Աստուծով զմոմն ժողովիցէք և ի կատար հասուցանիցէք. և դու զորպիսութիւնդ գրեսցես մեզ, յայնժամ գրեսցուք և զհոգս ինչ տեսցուք։

Յայսմ թղթոջ և Իսրայէլ կաթուղիկոսին ողջոյն գրեաց սրբազան
41բ Վեհն. գրելով և զայս, թէ // զհարազատական թուղթն նորին ընկալաք,
բայց անձեռնհաս եղէ այժմ զպատասխանին գրել. յետոյ գրելոց եմ,
ի դիպող ժամու, մինչ ի հարկաւոր զբաղմանց թեթևասցուք։
Փաստլայ ևս գրեաց սմա յոյժ փոքրիկ, թէ եթէ Աբրահամ վար-
դապետն զգալն իւր աստ յամեցուցէ, դու մի սափրեցես շատով գալ-
եոյ և կամիցի, այնժամ եկեսցէ։

255. Թուղթ ևս առ Թիֆլիզու առաջնորդ Յովաննէս վարդապետն,
թէ ահա երկիցս գիր եմք գրեալ քեզ և զպատասխանի չեմք ընկալեալ,
բայց լուաք, զի փոխիցան առեալ ես և զմեր փոխիցայագիրն առեալ
և շնորհակալեցաք զքէն, այլ ընդ այն զարմացաք, որ դու զթուղթ չէիր
գրեալ մեզ և ի կողմանէ գրեցելոցն մերոց զորպիսութիւն ինչ ոչ էիր
ծանուցեալ։ Արդ, պարտիս զամենայն որպիսութիւնսն քո և տեղւոյդ
գրել և մանաւանդ ի կողմանէ մոմի ժողովմանն և Կարապետ վարդա-
պետին և վասն Գալուստ վարդապետի հոգալի բանին գրել մեզ զորպի-
սութիւն ինչ՝ առ ի միամտութիւն։ Եւ թէ ընդ Գալուստ վարդապետին
մերոյ ի Մոզդոք և ի Բաշաչուխ գնալի թուղթս յղեցաք առ քեզ, զի
հաւատարմաւ յղիցէք և զերբ և զընդ ում յղելն ձեր ծանուսջիք մեզ,
որոց զորպէսն ևս գրեսցես մեզ ի միամտութիւն։

256. Թուղթ օրհնութեան ևս առ հանգուցեալ մահտեսի Յովաննիսի
որդի մահտեսի Յակոբջանն, ի պատասխանի թղթոյ նորին ի նոյեմ.
Ժ (10) գրեցելոյ։ Յորում գրեաց, թէ ահա ընդ թղթոյդ և Ա (1) ոսկեայ
խաչն և արծաթեայ սկիհն ևս էհաս մեզ և ի սուրբ Աթոռս, և մեր ըն-
կալեալ օրհնութեամբ և շնորհակալութեամբ մատուցաք Աստուծոյ և
սրբոյ խցման տեղւոյս նորին, և օրհնեցաք զքեզ և այլն։ Եւ թէ ահա
գրեցուցաք ի վերայ սոյն փչատակացս քոյ ըստ քոյդ գրեցելոյ փա-
սուլային պչփշատակարանսն, լեր առ այն միամիտ։ Եւ թէ վասն ականց
խաչին, որ խոստանաս յետոյ գլաւ ականս ճարել և փոխել տալ, Տէր
յաջողեսցէ քեզ առ ի կատարել զդոյն բարի խորհուրդդ ևս։ Իսկ ի վեր-
ջոյ ևս զայս, թէ վասն Ջկրաշէնու եկեղեցւոյ շինութեան վիճոյն, զոր
ինչ երկարօրէն գրեալ էիր, զամենայն իմացայ, որոյ աղագաւ զայս
գրեմ քեզ ահա, զի յետ փոքր ինչ միջոցի առնելոց եմք վասն այդորիկ
զկատարեալ հոգս ինչ և գրելոց եմք յայտր, զոր և դու իմանալոց ես յայն
ժամ։ Եւ ինչ կերպիւ և իցէ, հոգալոց եմք զայդ, լե՛ր միամիտ։

257. Թուղթ օրհնութեան ևս առ սրբոյ Աթոռոյս ճորտ և Ջկրաշէնու
եկեղեցւոյ երիցփոխան պարոն Յովաննէսն, ի պատասխանի նորին
թղթոյն, որում օրհնութիւն և սէր վասն սիրոյն և հարազատութեանն, որ
առ սուրբ Աթոռս։ Իսկ ապա զայս, թէ վասն Ջկրաշէն կոչեցեալ տէրունի
եկեղեցւոյդ մերոյ սրբոյ շինութեան վիճոյն, որ գրեալ էիր երկարապէս է
և զհոգս առնել խնդրեալ, իմացաք։ Որոյ սակս թէպէտ հարկաւոր
առնել զհոգս ինչ, բայց զի այժմոյս կայաք ի յոլով ցաւս և ի զբաղ-
մունս, անձեռնհաս եղաք առնել զհոգս ինչ, իսկ յետ փոքր ինչ միջոցի
առնելոց եմք։ Միամիտ լեր առ այն և հաստատուն կաց ի սէր և ի յօգ-
տակամութիւն սրբոյ Աթոռոյս և մեր։

258. Թուղթ առ պարոն Աւթանդիլն և պարոն Նիկողայոսն, որք
42ա հանդերձ այլովք ընտանեօք // իւրեանց ընծայեալ էին սրբոյ Աթոռոյս
զճորտ մի Տաքարօ անուամբ՝ որդի Յօհաննիսի ումեմն շամախեցւոյ,

զոր տէր Ղազարն ծանուցեալ էր սրբազան Վեհին[61]։ Ուստի սրբազան
Վեհն գրեաց յայս թուղթս առ սոսա, թէ սրբոյ Աթոռոյս գործակալ տէր
Ղազարն գրեալ էր մեզ, որ լուսահոգի հարքն ձեր՝ Դաւիթն և Մկրտումն
յառաջագոյն զշամախեցի Յովաննիսի որդի Տաքարօն առեալ են, և
յետոյ մինչ նոքա վախճանեալ են, տակաւին եղեալ է նա ի ներքոյ իշ-
խանութեան ձերոյ ըստ սովորութեան երկրիդ։ Իսկ ապա լսելով ձեր,
թէ ի բնէ ճորտք են եղեալ նախնիք սորին սրբոյ Աթոռոյս, ապա մարքն
ձեր, և դուք, և ի Տէր հանգուցեալ եղբայրն ձեր՝ Գրիգորն մեծաւ սիրով
ընծայեալ էք սրբոյ Աթոռոյս զվերոյ յիշեալ Տաքարօն՝ առ ի լինել
սմա ճորտ և յատուկ ծառայ[62]։ Որք և յառաջագոյն թէպէտ ծանուցեալ
էք հոգելոյս հայրապետին մերոյ, բայց նա վասն անձեռնհասութեանն
և երկրիս ճանապարհաց փակ լինելոյն, ոչ է յղեալ առ ձեզ զթուղթ։
Իսկ այժմ ի յընկալնուլս մեր զթուղթ տէր Ղազարին, գրեցաք առ ձեզ
զայս թուղթ օրհնութեան։ Ապա գրեաց և զօրհնութիւնս ըստ պատշաճին
և յետոյ զայս, թէ ահա և առ նոր ճորտն սրբոյ Աթոռոյս ընծայեցեալն
սմա ի ձէնջ, պարոն Տաքարօն գրեցաք զթուղթ օրհնութեան և հաստա-
տութեան, զի հաստատուն կացցէ ի ճորտութեան և ծառայեսցէ սրբոյ
Աթոռոյս։
Զօրինակն թղթոյս ի նոր տետր 44 երեսն տես։

259. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս նոր ճորտացեալ պարոն Տա-
քարօն գրեաց, թէ ի ներկայումս գրեալ էին մեզ գործակալքն մեր
զորպէսն քո և զճորտանալդ սրբոյ Աթոռոյս, որ յետ վախճանի հօրն
քոյ՝ հանգուցեալ շամախեցի Յովաննիսին, ի դոյն քաղաքէդ Թիֆլիզու
Բ (2) եղբարք, որք են Քաֆանակենց Դաւիթն և Մկրտումն, առեալ են
զքեզ վասն իւրեանց, որ և յետ վախճանին նոցա ևս եղեալ ես ի ներքոյ
ձեռաց ընտանեաց նոցին։ Իսկ յետոյ ընտանիք նոցին, այսինքն Բ (2)
եղբարց կանայքն և որդիք նոցա, այսինքն՝ Աւթանդիլն, Նիկողայոսն և
հանգուցեալ Գրիգորն, լսելով թէ ի բնէ ճորտ էք եղեալ սրբոյ Աթոռոյս,
ինքեանք ևս վերստին ընծայեալ են սմա։ Որք և թէպէտ ծանուցեալ
են յանցեալ տարիսն հոգելոյս հայրապետին մերոյ և վասն քոյ զհաս-
տատութեան թուղթ խնդրեալ, բայց լուսահոգին ձեռնհաս չէ եղեալ ի
տալ։ Իսկ այժմ մինչ մեզ ևս գրեալ էին և իմացաք, վասն որոյ զայս
օրհնութեան և հաստատութեան նամակս մեր առ քեզ գրեցաք՝ ի միա-
մտութիւն քեզ, որպէս զի ունիցիս զսա ի ձեռին քում նշան և կնիք հաս-
տատութեան ի սրբոյ Աթոռոյս՝ վասն ճորտութեանդ և յատկապէս ծա-
ռայութեանդ սմա։ Զի մի ոք իշխեսցէ այսուհետև զքան ինչ ունիլ ընդ
քեզ և կամ զիր ինչ պահանջել ի քէն արտաքոյ կանոնաց սրբոյ Աթո-
ռոյս ճորտիցն։
Գաղափարն սորա է ի նոր տետր 45 երեսն։

260. Թուղթ ևս առ տէր Ղազարն, ի պատասխանի նորին ի նոյեմ.
Ժ (10) գրեալ թղթոյն ընդ Մանուչարին, թէ ահա յղեալդ ձեր մեզ էհաս։
Եւ թէ սակս Գէորկին Սուլթանի բանին յոյժ շնորհակալեցաք զմէնջ։
42բ Եւ ևս, թէ միւս թուղթդ ևս էհաս առ մեզ, // որ ի կողմանէ նոր ճորտին
մերոյ՝ Տաքարօյին և շնորհողաց նորին գրեալ էիր և զերկու օրհնու-
թեան կոնդակ խնդրեալ, ահա ըստ գրեցելոյդ զայն երկու կոնդակն գրեալ
առաքեցաք ընդ թղթոյս, տացես իւրեանց ի միամտութիւն նոցին։ Ապա
և վասն Գալուստ վարդապետին ևս զյանձնարարութիւն գրեաց առ ի
սպնչական լինիլ նմա և զորպիսութիւնն նորա ևս գրել։

261. Թուղթ ես առ Դալուստ վարդապետն գրեաց սրբազան Վեհն, թէ յետ գնալոյ քոյ աստի, Հասանայի բէկն եկն այսր, որք զմիմեանս չէիք տեսեալ, և մինչև ցարդ զորպիսութիւն ինչ ոչ ծանուցեր մեզ: Արդ, պարտիս զամենայն որպէսն քո և հոգալեացդ և զինչ աննելոյդ գրել մեզ շուտով՝ ի միամտութիւն: Եւ թէ Հաշտարխանու գրեանքն, զորս ընդ քեզ տարար, յղեցի՞ք արդեօք, թէ ոչ, զայնց որպէսն ես գրեսցես մեզ, զի գիտասցուք:

262. Թուղթ ես սրբազան Վեհն առ մէլիք Մկրտումն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ գրեալ էր: Իսկ զի յառաջագոյն ճորտքն սրբոյ Աթոռոյս, որք ի Թիֆլիզ, զբազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհս մեր, թէ քան զմեր կարն և չափն աւելի հարկս պահանջին ի մէնջ, վասն որոյ և սրբազան Վեհն զնոյն գրեաց սմա վասն ճորտիցն սրբոյ Աթոռոյս (զոր յիշեալ եմք ի սոյն յիշատակարանիս յայսմ թուոյս հոկ. Ե (5) յառ սա գրեալ թղթոյն): Վասն որոյ այժմ սա գրեալ էր առ սրբազան Վեհն, թէ ով որ զայդ քեզ արդ է արարեալ, թշնամութեամբ է արդ արարեալ և այլն: Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ ոչ թէ այլք են ծանուցեալ մեզ զայս, որ ասիցես, թէ թշնամութեամբ են ասացեալ, այլ ճորտքն մեր ինքեանք բազմակնիք թղթով գրեալ էին մեզ՝ զցաւս իւրեանց լալով: Քեզ ի՞նչ թշնամութիւն է այն կամ թէ ի՞նչ ստութիւն գոյ ի գրեալսն նոցա: Զի նոցա գրեալն այն էր, թէ յառաջագոյն ի մէնջ բան չեն առած, յետոյ մէկ սահման եդին, որ ի ԱՃ (100) թումանումն մեք ԵՌ գ[իա]ն (5000) տամք, այժմ զայն չափն անցուցին և քան զայն աւելեօք առնուն: Ահա դու ես գրես, թէ վասն լէզկու հարկին[63] ի նոցանէ ես առած եմ, այլ նոցա սուտն ի՞նչ է: Գրես, թէ զոր ինչ յայլոց ճորտերաց առեալ եմ, ի նոցանէ չարէքն չեմ առեալ, ի՞նչ օգուտ, որ այն ես քան զնոցա կարն աւելի է և սովորութիւն լինի: Այլոց ճորտից կանոնն մեք ոչ գիտեմք, մեր ճորտից կանոնն այն է եղեալ որ բնաւ ոչ ինչ տացեն, որպէս և դուք ամենեքեան գիտէք և թագաւորական թուղթք ես գոն: Յետոյ զայն ԵՌ-գնն (5000) կանոնեալ են դոցա, որ տան, որպէս և ի վերն ասացաք: Իսկ դուք այժմ այնու ես չբաւականացեալ, աւելի քան զնոցին կարն զնոսա նեղէք: Մեք ես գրեցաք քեզ, թէ զայդ բանդ դուք էք արարեալ, պարտիս վասն մերս խաթերն կամ այնպէս բան առնել, որ առաջին կանոնաւն վարին, կամ թէ ոչ, այլ նոյն ԵՌ գ[իա]նն (5000) տացեն ի հարիւր թումանումն, և ոչ աւելի: Իսկ դու զժամանակի նեղութիւնն և զօտար զօրաց տեղդ լինիլն պատճառես և խափանելոյ նշան չերևեցուցանես: Յայդ երկրէդ ի
43ա այդպէս բանն պակաս // չէ, թէ ամէն այդպէս բանի պատճառաւ ի ճորտացն մերոց զայդպիսի պահանջմունս առնիցէք, նոքա այլ որպէ՞ս կարին մեզ ճորտութիւն առնել. պիտի ճորտ անունն բարձուի ուրեմն: Ինչ և իցէ, զոր ինչ որ քեզ գրեալ էաք վասն այս բանիս, դու մի այնպէս պատասխանի չէիր գրեալ, որ մեզ սրտագիրութիւն լինէր, զի ոչ ես կամեցեալ ի հարկէ զայդ բանդ խափանել: Մնաց մեզ ուրեմն, կամ մէկ հոգս առնել վասն դոցա, որ խեղճ չլինիցին և կամ ձեռն վեր առնուլ ի դոցունց: Յետ այսորիկ և զայս գրեաց, թէ սակս այն խնդրոյդ, զոր գրեալ էիր առ մեզ վասն այն Սողոմոն անուամբ մարդոյն, որ է ի մեծն Պոլիս, որում նշանեցեալ է դուստրն քո, զի գրիցեմք անդ և վերահասու լինիցիմք նորա որպիսութեանն, կամ թէ չիցէ տնաւորեցեալ բերել տայցեմք, այսպէս գիտասցես: Զի ահա յայս քանի աւուրբ

թուղթ եմք գրելոց ի մեծն Պոլիս. վասն այդ բանիդ ես հոգս եմք առնելոց, և գրելոց եմք, տեսցուք թէ զի՞նչ գրեն մեզ անտի, մեք ես յայնժամ քեզ ծանուցանելոց եմք: Այսպէս գիտցեալ լեր միամիտ:

Գրեալ յղեցան թուղթքս ընդ Մանուչարին յամսոյս Իէ (27):

1780 դեկտեմբեր—Թուղթք ի մեծն Պոլիս և յայն կողմունսն

Բայց քանզի յայսմ միջոցի ի Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետէն մերմէ երկիցս թուղթք եկին առ սրբազան Վեհս մեր, որոց զառաջինն չև ես հասեալ մահսարատար Պետրոս վարդապետին մերոյ անդ, գրեալ էր և առ բազումս զօրհնութեան թուղթ խնդրեալ: Որոց ըստ մեծի մասին սրբազան Վեհն յառաջագոյն զանդրանիկ օրհնութեան թուղթս էր գրեալ ընդ Պետրոս վարդապետին (որպէս ասացեալ է ի սեպ. ԺԸ (18) և մնացելոցն ես գրել սկսաւ: Իսկ զերկրորդ թուղթն յետ Պետրոս վարդապետի անդ ժամանելոյն էր գրեալ, յորում ծանուցեալ էր զլոյծ ուրախանալն ոմանց իշխանապետաց և իշխանաց ընդ հայրապետութիւն սրբազան Վեհիս մերոյ և ճառագով լինիլն սրբոյ Աթոռոյս, առ որս և զշնորհակալութեան և զյորդորման թուղթս էր խնդրեալ[64]: Եւ վասն յառաջնում նուագին մնացելոցն առանց թղթոյ, զնախընծայ օրհնութեան և զյորդորանաց թուղթս էր խնդրեալ: Վասն որոյ և սրբազան Վեհն, ըստ գրեցելոյ նորին, ի Պօլիս առ բազումս իշխանաց և իշխանապետաց զթուղթ գրեաց: Եւ զի Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, որ առ կենդանութեամբ հոգելոյս սրբազանին մերոյ ես ոչ սակաւ ներհակ վարիւր ընդ նմա և առ սուրբ Աթոռս, այժմ ընդ հայրապետանալ նորոգ սրբազան Վեհիս մերոյ կարի խռովեալ և գժուարացեալ, ես առաւել խոչընդակն ընթանայր ընդ դէմ սրբոյ Աթոռոյս և նմա, որ և ի Կարին գրեալ էր այժմ չյիշել զանունն ի յեկեղեցիսն: Ուստի մեղադրական սիրով զթուղթ մի ևս նմա գրեաց վասն արարմանցն: Ընդ որս և առ նուիրակ Մինաս վարդապետն և առ այլս ես զթուղթս գրեաց, որոց ամենեցուն զպատճէն նշանակեմք ահաւասիկ հետևապէս:

43բ

263. Թուղթ գրեաց սրբազան Վեհն երկարապէս առ իշխանապետսն և իշխանսն մեծին Պօլսոյ վասն խոչընդակն գնալոյ պատրիարքին ընդ Աթոռոյս և ընդ ինքեան (զոր ի վերդ ի խորագրիդ ասացաք և տակաւին չհոգային զփարմանսն ի յետս դարձուցանել զմահսարատար Պետրոս վարդապետն), թէ թէպէտ դեռևս զպատասխանիս գրեցելոց մերոց չընկալաք ոչ ի հասարակութենէ և ոչ ի յատուկ անձանց, այլ գրեալ էին մեզ Մինաս և Պետրոս վարդապետքն մեր զհաճիլդ ձեր ուրախութեամբ ընդ կոչիլս մեր ի յայս շնորհ: Ընդ որս և մեք թէպէտ ուրախացաք և շնորհակալեցաք զձէնջ, բայց ընդ այսր ուրախութեան ընկալաք և զտրտմութիւնս, և վէրս ի վերայ վիրաց: Քանզի գրեալ է պատրիարքն եղբայրդ մեր ի Կարին, թէ կաթուղիկոսն, եթէ ազգի ընտրութեամբ և հաւանութեամբ մեծի Պօլսոյս չլինիցի, չէ ընդունելի. վասն որոյ չունիք հրաման յիշելոյ զանունն, և թէ ոք ընդդիմասցի, ծանուցէք ինձ: Ահա վէրք սրտի և բոլորովին սպանութիւն իսկ:

Արդ, սիրելիք իմ, ոչ գիտեմ թէ զի՞նչ իրաւունս ունելով եղբայրդ մեր զայս արարեալ է, եթէ ձեռովդ խորհրդով կարծեցից, ոչ համեմատի, զի ահա, որպէս ասացաք, Մինաս և Պետրոս վարդապետքն մեր զձէնջ շնորհակալութիւնս գրեն, ասելով, թէ գլխաւոր իշխանքն ժողովեալ ի մի վայր, ընթեռնուլ եւոսն զպատասխանին իւրեանց մահսարին և հա-

ւանեալ ասացին՝ Աստուած շնորհատր արասցէ և այլն։ Ահա երևի այսու, զի արարեալն զօրս, ոչ է ձեռվք խորհրդով և կամօք, այլ միայն ինքն է արարեալ, որպէս գրեն ես ի Կարնոյ մեզ, թէ միայն պատրիարքի կնիքն էր ի վերայ թղթոյն։ Մանաւանդ և այս երևի, զի ծածուկ ես է ի ձէնջ։ Արդ, եթէ մեք զբոլոր արևելեան ազնս հաւանութիւն ունելով (որոց ահա զբազմակնիքսն համահաճութեան յղեալ եմք յայդր) դեռ թարց հաւանութեան ազգի հոչակէ զա զմեզ, ապա ինքն յումէ ունէր հաւանութիւն և կամակցութիւն, որ զայդ արար։ Կամ թէ մանաւանդ սարաքերն մեր ահա կայր յայդր, եթէ ունէր ինչ իրաւամբ ասելի՝ առ ի անընդունակ առնել զմեզ, թող յառաջ յայդր ձեզ ասէր և հաւանեցուցանէր, և եթէ չէր յիշելի անունն մեր, զմահսարն մեր ես անընդունակ առնէր նախ, և ապա զոր ինչ և կամէր, առնէր, և զով որ կամէր, յիշեցուցանէր և յայլ տեղիս ես գրէր։ Ապա մինչ այսց և ոչ մին եղեալ է յայդր, զի՞նչ հարկ զգա ստիպեաց, որ այդպէս երեկ զանուն մեր։

Նկատեցէք զայս իրաւամբ ի փառս Աստուծոյ, և տեսէք զխղճմտութիւն մեր և զատարաբախտութիւն սրբոյ Աթոռոյս այժմու ժամանակիս, որ ոչ միայն յօտարաց և ի թշնամեաց լինիմք ձաղեցեալ և կոխան, այլև յիւրային ընտանեաց և յեղբարց։ Ոչ գիտեմք, թէ զոր ցաւն մեր լացցուք։ Զաո մեօք եղեա՞լս, որք իբրև զցեցս ոսկերաց զմեզ մաշեն, թէ՞ զայդ, զոր յանկարծ վայրէ ընդունիմք։ Զայդ կանոնդ, զոր գրեալ է, ո՞վ ոք ոչ գիտէ, թէ հաւանութեամբ ազգին պարտի լինել կաթուղիկոս, բայց ահա գրեալ եմք յառաջ յայդր, թէ հասարակ և թէ
44ա յատուկ // թղթովք, որ այնքան ցաւք զմեզ պատեցին, մինչ զի մերձ եղև սուրբ Աթոռս կամ ամայանալ իսկ, և կամ զմեծ վնասս կրել, մանաւանդ և անկանիլ ես ի ձեռս օտարաց։ Եւ սակս այսր էր բանադատելն զմեզ միաբանից սրբոյ Աթոռոյս յոյժ յոյժ, որով արկին զմեզ ի ներքոյ այսր լծոյ։ Ապա թէ մեք այսպէս չառնէաք, և ասացեալ վնասքն լինէին, որպէս Տանս սրբոյ, յայնժամ ես այլ կերպիւ լսելոց էաք զմեղադրանս, որպէս այժմ վասն այսր եղելութեան մեղադրելի կամի առնել զմեզ եղբայրդ։ Եւ եթէ մեր և առնէ իսկ, ոչ միայն այժմ, այլև մինչև ցելս շնչոյ մերոյ։ Եւ եթէ ի այսպէս, երանի թէ ոչ էի գտանեցեալ աստ և կամ ոչ էր կոչեցեալ ի վերայ մեր այս անուն։ Ապա թէ ոչ, մեք զի՞նչ մեղս արարաք, որ զսուրբ Աթոռս ոչ արկաք ի ձեռս օտարին և այսքան ցաւոց մինչև ցայժմ դիմակայեցաք՝ առ ի պահել զշինութիւնն իւրում կայի։ Զև ես կոչեցեալ մեր ի կոչեցեալ յայս աստիճան, տեսանէին ամենայն շրջակայք մեր զամենայն ցաւս սրբոյ Աթոռոյս և մեր։ Եւ մինչ իմացան զկոչիլս մեր ի յայս, գրեցին մեզ զշնորհակալութիւնս, թէ ոչ թողեր զսուրբ Աթոռդ անայցելու ի նեղսալի ժամանակիս։ Քանզի ամենից եղև յայտնի, թէ ոչ է հնար առանց զլխաւոր վնասուց զերծանիլ սրբոյ Աթոռոյս ի յայս ժամանակս, թէ ըստ առաջին կանոնին երկարաձգեսցի ընտրութիւնն կաթուղիկոսի։

Այլ եղբայրդ մեր զնախնեաց կանոնն միայն ընթեռնու և զմեզ վատահամբաւէ, իսկ զցաւոցս յիշեցելոց չախորժի բնաւ տեղեկանալ ի գիտել ի թղթոց մերոց, զորս գրեալ եմք յայդր։ Կարծեմ թէ՝ և աչօք իսկ ի թուղթսն մեր հայիլ ես ոչ ախորժի։ Եւ ցաւ, զոր ասեմք և գրեմք, կարծեմ թէ ծաղր երևի ոմանց։ Այլ ի հարկէ յայլոց ես էք իմացեալ, թէ զի՞նչ անցք անցին ընդ երկիրս մեր թէ յանցեալ ամին, և թէ յայսմ ամի։

Գրեալ է ձեզ յառաջ հոգելոյս հայրապետն մեր զամենայն անցս անցելոյ ամին և ահա յայդր է թուղթն, տեսէք թէ զի՞նչ ցաւք և վիշտք

են զխղեցեալք երկրիս և սրբոյ Աթոռոյս։ Զի երկիրս ընդ մեծի մասին ի Վրացտուն վարեցաւ[66], և սուրբ Աթոռս թէ ի զօրաց անտի և թէ յհատոյ ի մերկ և ի քաղցեալ մնացորդաց երկրիս դատարկացաւ ի գոյից, որք և մինչև ցարդ դեռ ես զհարկաւոր պիտոյս իւրեանց ի մէնջ խնդրեն և առնուն։ Մինչև ցելսն ամսոյն հոկտեմբերի մնաց խռովութիւնն երկրիս, որքան և արարին երթևեկս վասն հաշտութեան, չեղև հնար և մնացեալքն երկրիս ես խսպառ աւերեցան, քանզի ոչ եղև ըստ բաւականին վար և վաստակ՝ սակս անկայուն բնակութեանցն, յորոց ոչ պակասէին ասպատակօղք։ Իսկ ի յելն հոկ[տեմբերի], հազիւ թէ անուն եղև հաշտութեան, և դեռ ես ոչ կայացաւ։ Այժմ կամք այսպէս և զմեծ կասկածանս ես կրեմք վասն զարնանն, թէ այլ զի՞նչ եմք կրելոց, զի ոչ միայն այս երկիրս է այսպէս խռովեալ, այլև ամենայն շրջակայք մեր։

Լուեալ էք ի հարկէ, թէ յայսմ ամի զի՞նչ էանց ընդ Թարվէզ և ընդ Խօյ ի Շուշու խանէն, որքա՞ն աւերութիւն և գերութիւն եղև, և դեռ ես գոյ նոյն խռովութիւնն. և ի գարնանն ես կամին բաղխիլ ընդ միմեանս և աւերել։ Նոյնպէս և զերկիրն Գիլանու աւերեցին նոյն Շուշու խանի զօրքն՝ ընդ այլոց ես զօրաց, փախուցանելով յերկրէն զիշխօղն նորին և կրելով անտի զբազմաբեղուն հարստութիւնս այնմ երկրի, մերկացուցանելով և զսակաւաւոր ժողովուրդսն մեր, որք անդ։

44բ Զի՞նչ ապա և վասն Նորոյն // Ջուղայու ասացից, թերևս լուեալ իցէք և զայն։ Զի զկնի մահուան տիրողին մեծի, յայսմ ամի մի ոմն անիծեալ յազգէ մեռանողին, ապստամբեալ յայլոցն, որք ի Շիրազ, նստէր ի Սպահան։ Յանկարծակի ի վերայ յարուցեալ սրբոյ Ամենափրկչի վանիցն, և զառաջնորդն և զմիաբանսն արկեալ ի սաստիկ հարուածս, զամենայն ինչս նոցին առեալ է յաւարի։ Թողում և զաւերութիւն ժողովրդոց մերոց, որք անդ[67]։ Զայս կամիմ ասել սիրելեացդ, թէ մեք, որ զնեղութիւնս և զցաւս երկրիս յիշեմք ի թուղթս մեր, ի հարկէ ծաղր երևի ոմանց, որք առ ոչինչ համարելով զայսոսիկ, զհին կանոնս ընթեռնուն։

Յանցեալ ամին մինչդեռ աստ էր զօրն հիւսիսային, խորհեալ էին բերդականքն յետ գնալոյ նոցին, զսուրբ Աթոռս ըստ Ջուղայու վանիցն դատարկել, առնել (թող զայն, որ նախքան զգալն զօրացն խորհէին դատարկել, որպէս և յառաջ գրեալ եմք) և թէ որպէս զփութ մտաց նոցին իջոյց լուսահոգին հազիւ, զայն թողցուք, իմանալ կարէք ահա ի Պետրոս վարդապետէդ։ Յայսմ ամի ևս խորհեալ էին նոյնպէս ամայի առնել զսուրբ Աթոռս, եթէ եկեսցէ հիւսիսականն, յորում միջոցի և լուսահոգին վախճանեցաւ։ Ուստի ի վերայ ամայութեանն երկիւղի այն ես յաւելեաւ, որ զերեսս հաստատեալ էր օտարն այն և ապստամբ, գալ և իւրացուցանել զսուրբ Աթոռս, որպէս և ի վերոյ ասացաք։ Իսկ մեք ըստ բռնադատութեան միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս յանձն առաք զայս պաշտօն՝ առ ի խափանել զմուտն օտարին և ըստ կարողութեան մերոյ պահել յայլ վնասուց, զոր և պահեցաք շնորհիւ Տեառն։ Եւ զաղէտս վտանգից մերոց գրեալ յղեցաք յայդկոյս՝ առ ի գտանել զմխիթարութիւն. այժմ զներհակն տեսանեմք յուսոյ մերոյ, և ցաւ ի վերայ ցաւոց, մանաւանդ փոխանակ օգնից սրբոյ Աթոռոյս, ահա յառաջանան վնասք։ Վասն զի, որպէս ասացաք, ի գալստենէ զօրացն Վրաց մինչև ցայժմ, որ է տարի մի և Գ (3) ամիս, բացի վնասատուութեանց զօրացն, քաղցեալքն երկրիս ի մէնջ լցին և լնուն զպակասութիւնս իւրեանց։

Ուստի, որ ինչ գոյր մեզ, սպառեցաւ և այլ ոչ ուստեք կարացաք գտա-
նել զօգնութիւնս, բացի Կարնոյ և ի Բայազիտու երկրացն։ Եւ որ-
յղեաց լուսահոգին զժողովօղս իմաստիւքն, որք զցորեան և զայլ ատե-
լիս ետուն մեզ և օգնեցին, որք եթէ ոչ էին օգնեալ, ոչ կարէաք մեք
աստ զշինութիւն պահել և մնալ ի մերում կայի, զի Բ (2) ամք են ահա
յորս շուրջանակի փակեցեալք են ամենայն ճանապարհք երկրիս։ Որ-
քան կենդանի էր լուսահոգին և վտանգքն սաստկագին, ոչ կարաց
զձեռն հասուցանել ի նուիրակութիւնսն, և զօգնութիւնս գտանել ի
նոցանէ։ Իսկ յետ վախճանմանն. մինչ լուեալ են նուիրակունքն, կան
ամենեքեան իբրու թէ խափանեալք ի գործոյ, և մեք զի զեռ այսպէս
անհանգիստ կամք և ի ցաւս պաշարեալ, և շրջակայքս ամենայնքն այ-
պէս վրդովեալ, այսինքն Տունն Վրաց (յորմէ անպակաս են զումար-
մունք զօրաց, և յորոյ պատճառէ լցեալ ամփ կարօտութեամբ), նոյն-
45ա պէս և բոլոր Տունն Ազուանից, և || Թարվէզ, և Խոյ, բաց ի մասնաւո-
րաց։ Վասն որոյ ձեռնհատ եմք եղեալ յամենայն կողմանց, և յամս
երկուս փարայ չէ մտեալ ի սուրբ Աթոռս, յորում իբրու թէ ի յետին
թեւն է հասեալ սուրբ Աթոռս։

Զայսոսիկ գրելով ոչ եթէ խնդրեմ ինչ ի ձէնջ, այլ կամիմ զաղէտս
սրբոյ Աթոռոյս և մեր ծանուցանել ձեզ, որպէս զի գիտելով զայսոսիկ
և սրտացաւօրէն ի սէր և ի գութ սրբոյ ծնողիս ձերոյ շարժելով, թէ և
յիս ոչ խնայիցէք, գոնեայ ի սուրբ Աթոռս խնայեսջիք և օր մի յառաջ
զհարկաւորսն մեր հոգացեալ և ի Պետրոս վարդապետ յանձնեալ
ուղերեսջիք առ մեզ, զի գործք սրբոյ Աթոռոյս մի մնասցեն ի վերայ
երեսաց, որպէս և մինչև ցարդ մնացին, զի որպէս տեսցաք, ի յետին
թեւն է հասեալ սուրբ Աթոռս, և լեալ կարօտ յամենայնի։

Իսկ եթէ ձեզ և մանաւանդ եղբօրդ մերոյ գոյ այլ իմն գիտումն, և
զայն ես ծանուցէք մեզ և ապա զսուրբ Աթոռս մայրս ձեր որպէս և
կամիք, հոգացէք զի ի Կարին գրօղն, թէ ոչ ունիք հրաման զանունն
յիշելոյ, հանդերձ սպառնալեօք, յայդր կամ յայլ տեղիս զի՞րդ կամի
զի յիշեսցի։ Եւ եթէ այս է գիտումն իւր, ահա գրեալ եմ յառաջ ձեզ, և
այլեւ զնոյն ասեմ, զի եթէ ինքն կամի գալ և կամ զայլոք յղել, ես
պատրաստ եմ ելանել ընդ առաջ։ Ապա թէ ոչ, գիտասջիք զի անկրելի
են ցաւքն, զորս հասուցանէ մեզ եղբայրդ մեր, որ բացի գրելոյն ի
Կարին՝ ի չյիշել զանուն մեր, հասանին ես մեզ համբաւք ի գրոյ և ի
լրոյ, իբր թէ կանոնս կամի դնել ի վերայ մեր, զի այնու վարիցուք։
Բայց մեք զայս ինչ ունիմք ասել առ այն ի կարճոյ, զի ի Լուսաւորչէն
մերմէ մինչև ցարդ չէ եղեալ այդպէս երբէք, զի ստորագրեալքն կա-
թուղիկոսին կանոնադիրք լիցին ի վերայ նորա, այլ կաթուղիկոսն է
եղեալ կանոնադիր ամենից։

Այլ թէ կամի եղբայրդ մեր զմեզ առակ նշաւակի կացուցանել ի
մէջ աշխարհի և յետագայից տեղի անիծից, զայդ մեք ոչ կարեմք առ-
նուլ յանձն։ Եթէ ինքն կամ այլ ոք ախորժին այնու կանոնաւ մտանել
ընդ այսու լծով և դուք ևս տեղի տայք և կամիք, մեք ոչ եմք ներհակ
կամաց նորա և ձեր, որպէս և կամիք, արարէք։ Իսկ եթէ խնայել կամիք
ի հաւատոյ մայրս ձեր և յիս, մանաւանդ ի յանխոնարհելի իշխանու-
թիւն հայրապետութեան սրբոյ Աթոռոյս, որ ինչ յաւուրս նախնեաց
ձերոց չէ եղեալ, դուք ևս մի կամիք զի յաւուրս ձեր լիցի։ Խնդրեմ
ուրեմն վերջապէս, զսուրբ Աթոռոյս զօգուտն խորհելով, զբարձրութիւն

պատուոյն և փառացն սորին պահեսջիք ի նոյնութեան, որպէս մինչև
ցարդ լեալ է։ Եւ զպատասխանի թղթոյս հանդերձ Պետրոս վարդապե-
տին մերով և մեր հարկաւորօքն եթէ կամիք, օր մի յառաջ առ մեզ
դարձուցանել խնդրեմ։

Զօրինակն սորա ի նոր տետր 49 համարն գիտ։

264. Թուղթ ես առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն
գրեաց սրբազան Վեհն յաղագս անբարի ընթացիցն ընդդէմ սրբոյ Աթո-
ռոյս և ինքեան, թէ ահա ամիսք Գ (3) մերձ են ի լրանալ, յորմէ հետէ
45բ առաքեցաք յայդր զՊետրոս վարդապետն մեր բազմակնիք թղ||թովք
միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս, և մերովք հասարակ և հա-
տուկ թղթովք։ Ընդ որս գրեցաք և առ քեզ զթուղթ՝ ծանուցանելով զոր-
պիսութիւնս անցից և աղէտից մերոց զմեօք անցելոց և ձախորդութեանց
պէսպիսեանց սրբոյ Աթոռոյս և մեզ դիպելոց, որոց աղագաւ և անկա-
նիլս մեր ընդ այսու լծով, հարկեցեալ ի բռնութեանց ժամանակին և
ի ստիպմանց միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս։ Եւ մինչև ցայժմ
ակնադէտ լեալ ի ճանապարհս, սպասէաք ընդունիլ ի քէն զպատասխա-
նի ինչ սրտադիւրիչ. ըստ որում եղբայր ես մեզ ի բնէ և ունեցեալ եմք
ընդ միմեանս զճշմարիտ սէր եղբայրութեան։ Իսկ այժմ շարժմունք և
գործք եղբօրդ վրիպեցուցին զմեզ յայսպիսւոյ յուսոյ, զոր ասացաք,
քանզի չև ես ընկալեալ մեր ի քէն զպատասխանի ինչ մերոյ աղէտալի
թղթոյ, ընկալաք ի քէն զվէրս ի վերայ վիրաց։ Զի փոխանակ բուժելոյ
քոյ զվէրս սրտիս, զորս աստի ունէի, զբազմապատիկն քան զայնս դու
այտի յաւելեր, արձակելով առ մեզ մի զհետ միոյ քարինս վիրաւորիչս
և նետս մահացուցիչս։ Թէպէտ ես ըստ իմաստնոյն բանի լաւ համարիմ
ինձ զվէրս բնիկ բարեկամիդ իմոյ, քան զկամակոր համբոյրս թշնամւոյ,
բայց յոյժ հեռի է այդ ի խղճէ մտաց ամենայն մարդկանց, թող թէ քե-
ղապիւոյ եղբօր, վիրաւորելով չբաւականանալ, մինչև ցմահ իսկ ջա-
նալ։ Քանզի գրեալ ես այժմ ի Կարին չյիշել զանուն մեր, գրելով սաս-
տիւ, թէ կաթուղիկոսն, որ ընտրութեամբ ազգի չլինի, ոչ է ընդունելի,
և մինչև ի մեծն Պօլիս չհաւանեսցին, ոչ է պարտ զանունն յիշել, և
պարտ է միաբանից հաւանութեամբն լինիլ, և ոչ եթէ Դ (4) մարդոյ
խօսքով կաթուղիկոս դնեն, և յամէն տեղ կոնդակ գրեն։ Այլ ոչ ունիք
հրաման յիշելոյ զանունն, և թէ ոք ընդդիմասցի, յանուանէ ծանուցէք
ինձ և այլն։ Ահա այսու արարմամբք ոչ թէ զմեզ վիրաւորել ևեթ ջանաս,
այլև մահացուցանել։

Յարգելի եղբայր, զի՞նչ ասացից առ այսոսիկ գրեալսդ, արդարու-
թեամբ և խղճմտանօ՞ք դատեալ, թէ ներհակօք նոցին։ Լուր առաքելոյն
Յակոբայ, որ որոշէ զայսպիսիս բանիւն իւրով յասելն իւրում, թէ ով
իցէ իմաստուն և հանճարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարւոք գնացից զգործս
իւր հեզութեամբ իմաստութեանն։ Ապա թէ նախանձ և դառնութիւն և
հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր, մի պարծիք սուտ առնել զճշմար-
տութիւնն։ Եւ թէ յորմէ՞ յառաջանան այսք, ցուցանէ առընթեր։ Ապա
և զայն ցուցանէ, յորմէ գնացքն բարւոք, զոր և ասէ սուրբ, խաղաղար,
հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ և այլն որ զհետ։ Նկատեա ուրեմն,
թէ յորո՞ց այսոցիկ յերկաքանչիւրոցս իցեն արարք քո։ Ասացից սակաւ
մի զսոյնս գաղափարաւ, մինչ դու պատրիարք կոչեցար յայդր, յետոյ
յղելով առ իս զթուղթդ հրաւիրանաց անդ ի վիճակն իմ, ես ոչ զայլ

ինչ ցույր ի դէմս և ի շարժմունս իմ, եթէ ոչ զուրախութիւն, որ և գրեցի առ քեզ զթուղթ շնորհաւորական, յղելով և զընծայս սիրոյ:

Եւ յետ աւարտման գործոյս նովին սիրով եկի յայդր, զի զի՞նչ գոյր
46ա ինձ հարկաւորութիւն յայդր // մտանելոյ, մինչ Աթոռս պարտէր զալ ոչ այլ ինչ, բայց թէ զի եկեալ տեսից զվաղեմեան սիրելիդ իմ և շնորհաւորեցից զարձեալ զպատրիարքութիւնդ, որպէս և եղեն իսկ: Ահա այսք բարեմտութիւնք իմ առ քեզ և գնացք բարւոք: Եւ թէ այսք ինձ վայելէին առնել ըստ աստուածային տառիցն պատուիրանի, քեզ զի՞րդ ոչ այժմ, որ փոխանակ լռելոյ միայն թղթով մխիթարելոյդ զիս զոնէ ջանս եղեալ հետեւիս ի վիրաւորել զմեզ:

Ահա և այսք քոյդ գնացք, որք թէ իցե՞ն արդեօք բարւոք և իրաւացի, յայտնի է և այն, ոչ միայն Աստուծոյ, այլև ամենայն մարդկանց: Թերեւս առիթ արարմանցդ, ունելով իբրու զվահան ամբութեան ի թիկունսդ, թէ ոչ է ընտրեցեալ ի հասարակութենէ ազգի և հաւանութեամբ Պօլսոյս, ուստի ոչ է ընդունելի և այլն: Ո՞ ոք ոչ գիտէ զայդ կանոն, գինաշատ եղբայր. գիտեմք և մեք, և ոչ էաք ցանկացող և ձկտող՝ վաղվազուկ և անչափ բոկիկ (որպէս դու ի բնէ ճանաչես զիս և ես՝ զքեզ) լինել ինքնընծայ և փոխանակ փառաց, զցաւս ստացող հոգւոյ և մարմնոյ: Բայց ահա որպէս գրեալ եմք յառաջ, հարկն զօրէնս եղոյծ, զի մերձ եղե Տունս սուրբ, թող զհասարակ և յատուկ վնասուք աւերիլն, անկանիլ ի ձեռս օտարի, վասն որոյ բռնադատելով արկին զմեզ ի գուրս յայս, և մեք ոչ կարացաք ընդդիմանալ՝ հայելով ի վնասսն մեծագոյն, և զի մի մեղադրիցիմք յետոյ ի ձէնջ: Զի թէ հրաժարէաք և լինիցէր, որ ինչ լինելոցն էր անկարծիք, յայնժամ ես այլ կերպիւ զմեզ մեղադրելոց էիք և զձեզ արդարեցուցանելոց, որպէս այժմ առնէք:

Եթէ զայդ կանոնդ ընթերցար և գիտես, ընդէ՞ր ապա և զբազմութիւն աղէտիցն մերոց ոչ ընթերցար, զի իմանայիր ի թղթոց անտի. թուի թէ սոսկ աչօք ի թուղթն մեր նայիլ ես ծանր գրես, թող թէ ընթեռնուլ և կամ ունկն մատուցանել ի լսել: Եթէ Իսրայէլն զահակալիցէր աստ, կարծեմ թէ յոյժ ուրախանայիր և փառաւորէիր, և պատւին սրբոյ Աթոռոյս մինչ յերկինս բարձրանայր: Այդ չէ քո արարմանցդ արդարացուցանող առիթ, սէր իմ, այլ զոր ծածկես ի միտսդ և յայտնես յարարդ՝ զայն ասա: Քանզի զայդ ամենայն ոք գիտաց, զի ոչ էր մեզ կարելի յայնմ նեղ կայի ըստ հնոյն սովորութեան շարժիլ, վասն զի ամենեքեան իմացան զաղէտս մեր, որոց աղագաւ անզգայ քարինքն ևս զմեզ լային, թող թէ բանական մարդիկք: Սակս որոյ արենականքս բոլոր և որք մերձակայ գոլով մեզ, տեսին և իմացան զաղէտս մեր, ամենեքեան ուրախացեալ գրեցին առ մեզ զշնորհակալութիւնս վասն ազատելոյ սրբոյ Աթոռոյս և մեր մնալոյ, կապակցեցան առ մեզ սիրավառ ըղձիւ, և իբրու ի գիտս համարին զԱթոռս և զմեզ: Ըստ որոց և արեմտականքդ լինին անկարծիք, որովհետև զմեզ ճանաչեն ամենեքեան և զօրախօսութիւնս եղելութեանցս իմացան, եթէ իւրեանց մնասցէ:

Եւ ա՞յն զինչ է, զոր գրեալ ես ի Կարին, եղբայր ճշմարտասէր, թէ միաբանից ընտրութեամբ պարտի լինիլ կաթուղիկոսն, և ոչ չորս մարդոյ խոսեօք: Որքա՞ն յիմարեալ էաք մեք և ախտիւ փառասիրութեան իբրու կուրացեալ, որ Դ (4) մարդոյ ընտրութեան հաւանելով՝ հետևե-
46բ ցաք նոցա և զայլ բազմութիւն միաբանիցն // մեզ թշնամի արարաք: Եւ կամ ի՞նչ հարկ էր ինձ ի վերայ այնպիսւոյ խախուտ հիման զշի-

նուած կառուցանել, եթէ ոչ էի տեսեալ զհիմն հաստատուն, և ամենեքեան առ մեզ սիրահարեցեալ, որք հասարակութեամբ և յատուկ յատուկ զմեզ թախանձէին յանձն առնուլ: Եւ թէ չիցէր այսպէս, զի՞րդ առնուի յանձն, մի՞թէ կարօտ էի ես պատուոյ և փառաց, ապրուստի և ազատ կենաց: Եւ կամ ո՞ եցոյց քեզ զայդ, թէ միաբանից ընտրութեամբ ոչ է կոչիլս մեր ի յայս: Աստ զմեզ բազմութեամբ և միաբանութեամբ կոչելն սոցա ամենեցուն է յայտնի, յայդր ևս ահա վկայք են կոչմանն սոցա բազմակնիք մահարքն իւրեանց:

Իսկ դու թէ ունիս զայդպիսի իմն բազմակնիք վկայութիւն, ցոյց յայդր ի սինհոդոսի, զի տեսցեն և վերահասու լիցին, և եթէ հաճելի գացի, յայնժամ թող ընտրեսցեն զայլ ոմն, մեք պատրաստ եմք ելանել ընդ առաջ: Ապա թէ զայդպիսի իմն վկայութիւն չունիս դու, երևի թէ ի փառքուսից ոմանց իցես գրգռեալ: Եւ չէ զարմանք, զի թէ յերկոտասանից մինն օձտեցաւ, ի յինէն կամ ի հայրիրէն քանիք ոմանք զի ո՞րդ ոչ: Եւ այդու տես, եղբայր, թէ մե՞ք եմք չորից լսօղ՝ թողեալ զրաւմութիւնս, թէ դու: Եւ թուի, թէ չորքդ այդորիկ յայդր իսկ լինիցին, որք ախորժիլ տեսանելով զսէրդ ի լուր այդպիսեաց խօսին ըստ հաճոյից: Ապա թէ ոչ, մեք աստ չգիտեմք ինչ զումեք է: Բայց ո ոք, և ուր և իցեն, գիտես ցանկալիդ իմ, զի ըստ բանին Պօղոսի, այնք հրապոյրք ոչ յայնմանէ են, որ կոչեացն զմեզ ի յայս շնորհ: Յոր և յուսամ իսկ, թէ մօտակայ արասցէ զայնս, որք զքեզդ խռովեցուցանեն և կրեսցեն զդատաստանս ո ոք և իցեն:

Վերջապէս, ի՞նչ մտօք զանուանակիցութիւնն մեր ի Կարին խափանեցիր: Երևի թէ և յայդր չկամիս յիշեցուցանել, վասն այն յիշողացն սպառնալով, խափանել տաս: Եթէ զայդպիսի միտս ունիս, վաղ ուրեմն մեզ ծանո, զի և մեք շնորհակալութեամբ յետս կացցուք և բոլորովիմբ լցցին ախորժակք քո: Զի ըստ որում պէսպէս արշաւանացդ ոչ գոն արգելք, զինչ և ախորժիս առնես. թող այս ես լիցի, որ թերի չմնասցէ, մեր և Աթոռոյս ոտնակոխ լինիլն հոգ չէ: Միայն այսքան նկատեա, թէ ո՞ւր էր փառք և պատիւն սրբոյ Աթոռոյս և դու ո՞ւր հասանէիր, զոր այլ պատրիարքունք չարարին՝ պահելով զպատիւն սրբոյ Աթոռոյս, դու կաթնասուն զաւակդ սորա, իբր երախտահատոյց լինելով մօրդ շնորհատուի, արարեր և հաստատեցեր իբրու ահա, որպէս զի օծեալ կաթուղիկոսն սրբոյ էջմիածնի կախեալ կացցէ զհրամանաց ի Պօլիս նստող եպիսկոպոսին: Որ և կանոնս ես գնել առաջադրես ի վերայ կաթուղիկոսին՝ վարիլ այնու, որպէս հնչի աստ հռչակն ի գրոյ և ի լրոյ: Առ որ ես կարճառօտ առ ժամս զայս գրեմ, հարազատ եղբայր, զի դու ևս ես միաբան սրբոյ Աթոռոյս, որպէս ես, ե՞րբ ես տեսեալ կամ լուեալ, թէ այդպիսի կանոնք ի վերայ կաթուղիկոսի յայլոց դնիցի: Եթէ կաթուղիկոսն այնպիսի ոք է, որ զայլս կառավարէ, զտուն իւր զի՞րդ ոչ: Եւ եթէ գլուխ է ընդհանրական, յումմէ զի՞րդ իշխի: Տես, թէ մինչև ցոր վայր հա-
47ա սուցանես:

Այլ ես զճշմարիտն ասեմ քեզ, ոչ կարեմ ես լինիլ քար // գայթակղութեան, զի մինչև ցաւ իս չեղեալն, յաւուրս իմ և ին և լիցի, զի մի ես եղէց ցանկապատառ, և զանէծս ընկալայց ի յետագայից: Պարտէիր և դու զայսոսիկ և վասն քոյ ես մտածել, և չհեղուլ բնաւ ի յունկնս բազմաց, թէև սախպեցեալ ես լինէիր յախտամոլաց: Մանաւանդ և զբանն տէրունեանն մտածել արժան էր քեզ, թէ զոր ինչ կամիք թէ

տրասցեն ձեզ մարդիկք, այնպէս արարէք և դուք նոցա: Արդ հակառակայն երևի այս, թէ՝ զոր ինչ ոչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկք, մի առնէք և դուք նոցա: Զի գիտէք թէ դու էիր լեալ կաթուղիկոս և ես եպիսկոպոս ումն, յո՞նձն առնուիր արդեօք լինիլ ընդ կանոնօք առաջնորդելոյ քոյ: Չափեա՛ ուրեմն և քեզ այնու չափով, որով չափես ինձ, և ես չկարեմ տանիլ, և տես եթէ դու կարե՞ս տանիլ. եկ դու եղիր կաթուղիկոս և ես եպիսկոպոսն կարգաւ կանոնադիր եղէց ի վերայ քոյ, որպէս դու բաղձաս ինձ կանոնադիր լինիլ այլովք հանդերձ: Եւ եթէ այս է յիրաւի բաղձանքդ և վասն այն առ ոտն արկանես զպատիւն սրբոյ Աթոռոյս և մեր, ահա ես յառաջ եմ դրեալ յայտր քեզ և այլոց, թէ եթէ եղբայրդ մեր գալ ախորժիցի և կամ զայլ ոք յղել, ես ընդառաջ եմ ելանելոյ, զոր ահա այժմ ես ասեմ: Արա ուրեմն որպէս կամիս, և մի իմովս պատճառաւ ոտնակոխ առներ զսուրբ Աթոռս: Իսկ եթէ մինչև ցայս վայր ոչ են կամք քո, ապա ձեռն քարշեա ի յայդ հեռեմանցդ՝ պահելով զպատիւն սրբոյ Աթոռոյս ի նոյն առաջին յիրում կարգին: Եւ սիրանիշ գրովդ զմեզ մխիթարեա, զի սէր հաստատեսցի ի միջի մերում, և զՊետրոս վարդապետն մեր օր մի յառաջ առ մեզ ուղարկեա, հոգալով զամենայն ինչ ըստ կարգի և ըստ օրէնի անպակաս, որպէս և վայել է:

Զգաղափարն սորա ի նոր տետրն 149 երեսն տես: Վասն այսր թղթոյ գրեցաւ Մինաս վարդապետին, զի թէ բանն ի գլուխ իցէ եկեալ այլ զայս թուղթս չտացէ պատրիարքին, բայց թէ ոչ իցէ առեալ բանն զկատարումն, տացէ:

265. Թուղթ սիրոյ և շնորհակալութեան առ մահտեսի Յարութիւն ամիրայն, վասն ուրախանալոյն ընդ հայրապետանալն իւր և ջանադրել լինելն առ այն, և այլ բազմատեսակ հարազատութեանցն, թէ գրեալ էր մեզ հոգևոր որդին մեր և ծայրագոյն նուիրակն ձեր՝ Մինաս վարդապետն զսիրով ուրախանալդ ընդ կոչիլս մեր ի յայս պաշտօն, և զյամենայն կողմանէ ջատագովութիւնդ և զսրտացաւաբար հոգալդ: Եւ թէպէտ դեռ ի քէն զգիր ոչ ընկալաք, այլ այսոքիկ բարի համբաւօքս, որ զքէն, բաւականապէս մխիթարեցայ, վասն որոյ և շնորհակալութեամբ օրհնեցի զքեզ: Արդ, ահա զամենայն ինչ գրեալ եմ ընդ Պետրոս վարդապետին մերոյ և ակնադէտ եմ պատասխանեաց նոցին: Այժմոյս զոչինչ ունէի երկարապէս գրելոյ, միայն զհամբաւդ բարի լսելով, զայս թուղթ շնորհակալութեան և կրկին օրհնութեան գրեցի առ քեզ՝ ի յես առաւել ընդունել քեզ զօրհնութիւն և զշնորհս յԱստուծոյ և ի սրբոյ Աթոռոյս: Յուսամ թէ
47բ մինչև ցհասանելն առ ձեզ սոյն թղթոյս, // զՊետրոս վարդապետն մեր յետս իցէք դարձուցեալ առ մեզ պատասխանեօք թղթոց մերոց և արքունական հրովարտակօքն: Ապա թէ տակաւին յայտր լինիցի, խնդրեմ շուտով հոգ տանիլ բանից գործին, և յետս առ մեզ ուղարկել:

Զի՞նչ այլես գրեցից սիրելիդ իմ, ըստ որում յամենայնի գիտեմ զսէրդ և զհարազատութիւնդ, որ առ սուրբ Աթոռ մայրս քո, և առ մեզ ի բնէ անտի, և թէ դու զօգուտն սորա և մեր չհոգասցես, այլ ո՞վ է հոգալոց, զի ահա դու ես այսօր յայտր վասն ամենից հոգացող, ես առաւել ջանացող օգտից սրբոյ Աթոռոյս և մեզ յատուկ սիրելի: Որ ի հարկէ ոչ ես կամելոց երբէք զվնասն և զանուանաբեկութիւն և զստորանկումն լուսագահիս աստուածաէջի, զոր իբրև զմայր և զծնօղ խնամեալ են լուսահոգի նախնիքն ձեր, պահելով յարգի և ի վերոյ քան. զամենայն զպա-

տիւ սորին և զանխոնարհելի իշխանութիւնն հոգևոր, և առ ձեզ են հաստացեալ, այժմ ևս ձեզ է հարկ և պարտականութիւն զնախնեաց ձերոց զշաւիղն պահել և ընդ նոյնս ընթանալ, և զսրբոյ Աթոռոյ մօրս ձերոյ զպատիւն ի նոյն բարձրութեանն իւրում պահել, զի մի ի ձեր աւուրս՝ զրկեսցի մայրս ձեր ի յիւրոց պատուոց և լինիցիք մեղադրելիք ի յետագայից ձերոց:

Ահա զլուսահոգւոյ յետին բէրաթի և ֆէրմանի սուրաթն յղեցաք յայտր, խնդրեմ մեծաւ հարկիւ և սիրով հոգ տանիլ լաւապէս և նման նոցին անպակասօրէն հոգալ զբէրաթն և զֆէրմանն մեր, յորում և լինիցին Կարնոյ և Կարսայ քաղաքաց և երկրաց անուանքն, որպէս և էին յառաջնումն, և մի ինչ պակասեսցի ի յառաջնոյն: Ի յորս և զայս ևս խնդրեմ նորապէս յաւելուլ տալ և գրեցուցանել, թէ վախճանեալ կաթուղիկոսի ինչքն մի իշխեսցէ ոք միրիմալի առնել, այլ յէջմիածին եղեալ աղքատ միաբանիցն լիցի այն, զի անդ վայելեսցեն և աղօթեսցեն վասն կենաց թագաւորին և զաւակաց նորին: Քանզի ահա լուեալ եմ և գիտեմ զԿարնոյ մաքսապետի արարսն, իցէ թէ յայլ ժամանակս ևս արասցեն, խնդրեմ զայս ևս գրեցուցանել, զի այլ մի լիցի այնպէս: Եւ զայլ որպէսն մեր և զհարկաւոր զիտմունս իմանալոց ես ի թղթոյ Մինաս և Պետրոս վարդապետացն մերոց, որոց և խնդրեմ հոգածու լինիլ և զպատասխանիս ամենից գրեցելոցն մերոց գրել մեզ:

Գաղափարն թղթոյս է ի նոր տետր 147 երեսն:

266. Թուղթ սիրոյ և շնորհակալութեան ևս սրբազան Վեհն առ Արևելցի պարոն Գէորգն և Աստուածապահն գրեաց, ըստ մտաց վերնոյ թղթոյդ համառօտապէս, բաց ի յայնպիսի բանից, որք մահտեսի Յարութիւն ամիրային միայն վայել էին: Իսկ և առ սոսա փութալոյ ևս գրեաց, թէ ի սեպ. Թ (9) գրեալ սրտագիրիդ և ուրախարար թուղթն ձեր ընկալաք, զոր թէպէտ անորոշակի էիք գրեալ, այլ գիտացի, որ դուք յատուկ սիրելիքդ իմ էք գրեալ և շնորհակալեցայ զձէնջ: Բայց պատուիրեմ ձեզ. պարտիք յամենայն զօրութենէ ձերմէ ջանալ զսրբոյ Աթոռոյս զպատիւն ի բարձրութեան պահել, զյատուկ սէրն ձեր, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, ներգործապէս երևեցուցանելով:

48ա 267. Թուղթ ևս նոյնպէս առ Արևելցի մահտեսի Կարապետն գրեաց, բաց ի բէրաթի և ֆէրմանի բանիցն, զորս նոցա միայն գրեաց:

268. Թուղթ ևս առ հանգուցեալ Պետրոս ամիրայի որդի Մկրտիչ ամիրայն, թէ նուիրակն բազաքիդ ձերոյ՝ Մինաս վարդապետն գրեալ էր մեզ զհարազատութիւնդ և զկատարեալ սէրդ, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, որով և զուարթագին սրտիւ ուրախանալդ ի կոչիլս մեր յայս պաշտօն, և զջատագովութիւնդ, որ վասն մեր: Եւ թէպէտ դեռ ի քէն չեմք ընկալեալ զթուղթ ի պատասխանի թղթոյն մերոյ, այլ բարի համբաւքս, որ զքէն, եղեն մեզ ուրախութիւն մեծ: Ուստի շնորհակալութեամբ մեծաւ օրհնեցի զճշմարիտ սիրելիդ մեր:

Արդ, յառաջագոյն ահա գրեալ եմք զամենայն ինչ ընդ Պետրոս վարդապետին, և իմացեալ էք, և սպասեմ գալստեան նորին: Այժմ զի զհամբաւդ բարի լուայ, վասն որոյ զայս թուղթ շնորհակալութեան և կրկին օրհնութեան գրեցի առ քեզ ի ձեռն որոյ և խնդրեմ ի քէն, զի զովին հարազատութեամբ և սիրովդ առաւել ևս ջանասցես ի մխիթարել զմեզ և յամենայնի զջատագովութիւնս ցուցանել: Եւ Պետրոս վարդա-

կեան մեր, եթէ յայտր լինիցի տակաւին, ունիցիս ի սէր հանդերձ նուիրակաւն մերով՝ Մինաս վարդապետին, մանաւանդ ջանասցես և դու զի օր մի յառաջ առ մեզ դարձցի Պետրոս վարդապետն, հանդերձ պատասխանեօք թղթոց մերոց և արքունական հրովարտակօքն։ Եւ զոր ինչ օգուտն է սրբոյ Աթոռոյս, զայնս ջանալ խնդրեմ միշտ և առնել։ Ձեր է սուրբ Աթոռս և նախնեացն ձերոց, որ է ծնօղ լուսատու և պարծանք ազգիս մերոյ, զոր որպէս իբրև զմայր խնամեալ են նախնիքն ձեր, ջանալով միշտ վասն սորին շինութեանն և պայծառութեանն և պահելով ի վերոյ քան զամենայն զպատիւն սորա և զիշխանութիւնն հոգևոր և առ ձեզ են հասուցեալ, այժմ ևս ձեզ է հարկ և պարտականութիւն մեծ՝ ընդ շաւիղս նախնեաց ձերոց ընթանալ, զվնասն սորին երբէք չկամելով և զպատիւն սորա ի նոյն յարգութեան և ի բարձրութեանն իւրում պահելով, զի մի ի ձեր աւուրս զրկեսցի մայրս ձեր ի յիւրոց արժանավայել շքեղութեանց և ի պատուոց և յետագայք ձեր զձեզ մեղադրեսցեն։

Ձօրինակն սորա ի Նոր տետր 48 երեսն տես։ Ի սմա և զողջոյն գրեաց սրբազան Վեհն սոյն Մկրտիչ ամիրայի եղբարցն՝ Յակոբին և Յովհաննէսին։

Նոյն բովանդակությամբ նամակներ են գրվել նաև հետևյալ անձանց՝ Սախաօղլի մահտեսի Մարտիրոս և Գրիգոր ամիրաներին, սառաֆլար բյահիասի Մարգար ամիրային, Ղաչար աղայի որդի մահտեսի Ստեփան աղային, ս. Աստվածածին եկեղեցու հոգաբարձու Առաքել ամիրային և Մուրադյան Հակոբ ամիրային։

39բ 269. Թուղթ առ հանգուցեալ Պետրոս ամիրայի եղբայր՝ մահտեսի Յարութիւն ամիրայն գրեաց սրբազան Վեհն, թէ յառաջ քան զայս յամսեանն սեպտեմբերի յղեցաք յայտր զՊետրոս վարդապետն մեր, որ երեր զմահսարն միաբանից սրբոյ Աթոռոյս և ի մէնջ՝ զկոնդակ ի վերայ հասարակութեան քաղաքիդ և զԲ (2) թուղթս յատկապէս ի վերայ իշխանացդ։ Ի յորս ծանուցեալ եմք զամենայն որպիսութիւնն մեր, այսինքն զփոխիլն առ Քրիստոս հոգելոյս հայրապետին մերոյ և զշրջապատիլն զմեզ վնասուց և ցաւոց մեծաց, որոց աղագաւ և նախահոգ լինիլն լուսահոգւոյն և կտակելն միաբանից սրբոյ Աթոռոյս՝ առ ի կացուցանել զմեզ ի յայս պաշտօն, և թէ զիա՞րդ միաբանք սրբոյ Աթոռոյս և երկրականքս ստիպեցին զմեզ ի յայս, տեսանելով և զայլ նորագոյն և մեծ վնաս, որով օտարանալոց էր ի ձէնջ սուրբ Աթոռս և տիրելոց էր սմա օտար, զոր ոչ ճանաչէիք և ոչ գիտէիք, որոյ սակս և օծանելն սորա զմեզ փութով ի հայրապետութիւն սրբոյ Աթոռոյս և ազգիս Հայոց, որով խափանեցաւ ձգտումն օտարին։

Ձորս զամէնսն ի հարկէ, իմացեալ էք ի հասանիլն յայտր Պետրոս վարդապետին։ Իսկ յայնժամ զի ոչ եղաք ձեռնհաս զյատուկ թուղթ գրել քեզ, վասն որոյ այժմ զայս օրհնութեանս մերոյ թուղթ գրեցաք առ քեզ առ ի յատկապէս վայելել քեզ զնախընծայ օրհնութիւնս մեր։ Իսկ արդ որպէս և գրեալ եմք յառաջ յայտր, թէպէտ մեք չէաք այսմ բաւական, բայց զի բռնութիւն ժամանակին ի նեղ էարկ զմեզ յոյժ, վասն այն և ստիպօղքն զմեզ ի յայս յոյժ բռնադատեցին։ Ուստի ոչ առանց Աստուծոյ կարծեցաք զայս, և երկեաք թէ գուցէ հրաժարիլն մեր ընդդէմ լիցի աստուածային կամացն և պատճառ լինիցիմք այնու վնասուց և աւերմանց Տանս սրբոյ, և զմեղադրութիւնս լսիցեմք ի յօրհնեալ ազգէս մերմէ, վասն որոյ անկաք ի ներքոյ այսր լծոյ։ Ուստի գրեմ սիրելւոյդ, զի որովհետև այսպէս հաճոյ եղև կամացն Աստուծոյ, որպէս և արար, վասն

որոյ և դու յԱստուծոյ համարելով զայս, լիցիս օժանդակ տկարութեանս իմում և զոր ինչ սէր և զհարազատութիւնս ունեցեալ ես առ սուրբ Աթոռս, զնոյնս և ի մեր աւուրս ունիցիս։ Մանաւանդ որպէս նախնիքն ձեր և քան զձեզ յառաջ եղեալքն յայտր հոգացօղ են եղեալ վասն շինութեան և պայծառութեան սրբոյ Աթոռոյս և միշտ ի վերոյ են պահեալ քան զամենայն զպատիւն սորին, նոյնպէս և դուք պարտիք նախնեացն ձերոց հետևիլ։ Որեմն յամենայն բանս և ի գործս, որք ի կողմանէ սրբոյ Աթոռոյս իցեն, զջատագովութիւնս ցուցցես և օգտից սորին և մեր միշտ ջանացօղ լիցիս և առնօղ յատուկ ցաւակցաբար։ Եւ թէ տակաւին յայտր իցէ Պետրոս վարդապետն, ունիցիս ի սէր ըստ ամենայնի։ Եւ նուիրակին մերոյ՝ Մինաս վարդապետին յամենայն կողմանէ օժանդակ և ձեռնտու լիցիս։

Ի Նոր տետր 46 երեսն տես զօրինակն սորա։

270. Թուղթ ևս ըստ սոյն օրինակի առ Հովուեան Պօղոս և Ջօպան ամիրայսն, որք են ի Վէզիր խանն։

40ա ...* վասն որոյ սրբազան Վեհն յայսմ կոնդակօս զմխիթարութիւնս գրէ։ Եւ ոչ գիտելով հաւաստապէս զայս զդիպուածոց վախճանն և զսոցա ներկայական որպիսութիւնն, գրէ ևս, թէ թէպէտ և մեք ևս եմք ի յոլով ցաւս վասն զանազան դիպուածոց երկրիս և սրբոյ Աթոռոյս, սակայն մինչ լուաք զզոյն երկրիդ խռովութիւնսն և աւար հարկանիլն ի թշնամեաց, և զմեծագոյն աւերութիւնն, որ եղեալ է յայտր, յոյժ տրտմեցաք և ցաւեցաք։ Եւ զայլն ըստ պատշաճին և ըստ պատկանաւորութեան տեղւոյն մինչև ցվերջն ըստ ի Ջուղայ գրեալ կոնդակին, որ ի վերդ։

271. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս վէքիլ պարոն Ալէքսանն, որ ի Գիլան, ևս ըստ ոմանց դիտաւորութեանց կոնդակից վերոյ գրեցելոյ։ Իսկ և յատկապէս զայս, թէ այժմ որովհետև ոչ գոյր այլ կողմամբ ճանապարհ, յղեցաք զայս թուղթս ի Բաքու առ մեր գանձապետ պարոն Եղիազարն՝ յղել առ քեզ և ի քէն զպատասխանի առնուլ և առ մեզ յղել, և ինքն ևս գրել մեզ զձեր որպէսն։ Եւ զայս թուղթս ևս յատկապէս առ քեզ գրեցաք ի յարծարծումն սիրոյդ և հարազատութեանդ առ սուրբ Աթոռս։ Նաև վասն Ջուղայու և Շիրազու թղթոցն, զորս պահարանեալ առ սա յղեցաք ընդ թղթոցս, պատուիրեաց յղել ի Սպահան և ի Նոր Ջուղա՝ առ առաջնորդն տեղւոյն Մկրտիչ վարդապետն և կամ առ քահանայսն, գրելով, թէ այս կողմամբս ոչ գոյր ճանապարհ, որ յղեալ էաք, զի ահա դուք ևս լսէք, թէ որքա՞ն խառնակութիւնք գոն ի Թավրիզու կողմունսն։ Վասն այն յայտր յղեցաք ի ձեռս քո, զի դու թերևս յղել կարիցես այտի։ Որ և զյղելդ մեզ ծանուցես, և զորպիսութիւնս նոցին ևս գրեսցես մեզ, զի լուեալ եմք զնոցին փորձանսն ևս, որ զսուրբ Ամենափրկչի վանսն թալանեալ են, և զմեծ նեղութիւնս են հասուցեալ ժողովրդոցն և շատք ի նոցանէ փախուցեալ են անտի։ Իսկ յետոյ այլ չիմացաք թէ զի՞նչ եղեն։ Ո՜հ դառնութեան աւուրցս և ժամանակացս, որոց դիպեցաք. բոլոր Արևելեան տունս քանի տարի է ահա, որ այսպէս երերեալ կայ և ոչ ումեք գոյ հանգստութիւն։ Այժմ թող զհասարակ փորձութիւնսն, այդ մեծ ցաւդ ևս դիպեալ է Ջուղայու վանիցն և ժողովրդոցն, որոց Աստուած այց արասցէ։ Առ որս այժմ գրեալ եմք զթուղթս մխիթարութեան և զմեր որպէսն ևս ծանուցեալ, զոր յղեսցես անդ։

* Սկիզբը բացակայում է։

Եւ զորպիսութեանց օրհնեալ ժողովրդոցն անդոյդ գրելով, զգիրդ սիրոյ
անպակաս արասցես։

272. Թուղթ ես ի յերկիրն Ռուսաց առ սրբոյ Աթոռոյս Նուիրակ և
նոյնոյ երկրի համայն մերաղնէիցն առաջնորդ Յովսէփ վարդապետն
գրեաց սրբազան Վեհն՝ յիշեցուցանելով նմա զյառաջ քան զայս ի նոյեմ-
բերի Ա (1) զթուղթ գրելն առ ինքն և զծանուցանելն ի նմա զվախճան
հոգելոյս սրբազան Վեհին և զիւր յաջորդելն, և հանդերձ լուսահոգւոյ
գրեալ և պահարանեալ յղելի թղթովքն յղելն (զոր և գրեալ եմք ի սոյն
յիշատականոջս և ի սոյն թուոջ ի նոյեմբերի Ա (1)[68]։

50ա 273. Թուղթ ես ի Բաքու առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն
Եղիազարն գրեաց սրբազան Վեհն, որում նախ զեկոյց զառ Տէր ննջումն
հոգելոյս սրբազան Վեհին և զիւր նորապէս փութով հայրապետանալոյն՝
հանդերձ պատճառօքն։ Իսկ ապա զայս, թէ թէպէտ ի վաղուց կամեցաք
գրել յայդ կողմունսդ զթուղթս օրհնամատոյցս և որպիսածանոյցս, այլ
վասն անձեռնհասութեան մերոյ և վասն փակ լինելոյ այդ կողմանցդ
ճանապարհացն, ոչ կարացաք։ Եւ մինչև ցայժմ սպասելով բացման
ճանապարհաց, տեսաք թէ ոչ լինի և յոյժ երկարի, վասն որոյ գրեցաք
այժմ զկոնդակ ի վերայ երկրիդ և առ ի մասնաւորել զքեզ ի շնորհաց
50բ սրբոյ Աթոռոյս և յօրհնութենէս մերմէ զայս թուղթ յղեցաք, // ես առ
քեզ գրեցաք, թէպէտ և չգիտեմք թէ ընդ ո՞ր կողմն կարեմք յղել յայդր։
Ապա և խնդրեաց, թէ զնոյն սէրն և հարազատութիւնն, զոր առ սուրբ
Աթոռս և առ հոգելոյս հայրապետն ունէիր, զնոյնս և այժմ ունիցիս առ
սուրբ Աթոռս և առ մեզ։ Եւ գործոյդ քոյ գանձապետութեան աւէ մու-
ղայէթ լիցիս, որպէս և մինչև ցայժմ եղեալ ես, զոր և արդիւնաւոր ա-
նել ջանասցես և զարդիւնսն ի ձեռնտու ժամանակի հասուսցես ի սուրբ
Աթոռս։ Եւ հարկ է, թէ զգիրդ մի պակասեցուսցես, գրելով միշտ զոր-
պիսութեանց քոց և այդ կողմանցդ, և զորպիսաբար կեցութեանց օրհ-
նեալ ժողովրդոց այդ, երկրացդ, յորպէս յառաջ գրեալ ես միշտ առ լու-
սահոգին, քանզի ի վաղուց հետէ է, որ ի քէն գիր չէ եկեալ աստ և ան-
տեղեակք եմք որպիսութեանց կողմանցդ։ Զի թէպէտ մեք միշտ ի ցաւս
կամք աստ, զորս կրեցաք, և ես կրեմք, այլ զօրհնեալ ժողովրդոցդ զբարե-
կեցութիւնսն գիտել ցանկամք ի յուրախութիւն մեզ, որպէս և վասն ան-
յաջողութեանցն վշտանամք և հայցեմք յԱստուծոյ զայցելութիւն։

Այլև որպէս ի վերդ ի թուղթսն Գիլանու և Յովսէփ վարդապետի
գրեաց, թէ զայս թուղթքս յղեցաք ի Բաքու առ պարոն Եղիազարն՝ հա-
սուցանել առ ձեզ, այժմ յղէ առ սա զայն թուղթսն և գրէ, թէ որպէս
յայդ կողմունսդ ոչ կարացաք յղել զթուղթս մինչև ցարդ, նոյնպէս և ի
Գիլան՝ ես չեմք կարացեալ յղել զթուղթս։ Վասն որոյ ահա զթուղթս
գրեցաք առ նոսա և յղեցաք առ քեզ, զոր պարտիս հասուցանել անդ
առ մեր վէքիլ պարոն Ալէքսանն և զյղեալդ մեզ գրել՝ հանդերձ նոցին
որպիսութեամբքն օր մի յառաջ, և ի պարոն Ալեքսանէն ես զպատաս-
խանիս խնդրել մեր թղթոցն և յղել մեզ։ Եթէ ի վերայ ծովու ոչ կարի-
ցես այժմ յղել, ցամաքով պարտիս հասուցանել անդ զայդ թուղթսդ օր
մի յառաջ և զպատասխանիս խնդրել և առ մեզ յղել։

274. Զթուղթ մի ես առ Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յով-
սէփ վարդապետն գրեալ ահա առ քեզ յղեցաք, որոյ արտաքին պահա-
րանի երեսն գրեցեալ է ի վերայ նորին սպասաւոր Աւետիք սարկաւ-

գին, որ է ի Հաշտարխան, զի այժմ Յովսէփ վարդապետն ոչ է անդ։
Աստի օր մի յառաջ հասուսցես առ նա զայդ թուղթդ և մեզ գրեսցես։
Իսկ և զի ի պատճառս ճանապարհ ոչ գոլոյն և այսց թղթոցս յամելոյն
աստ յոյժ յատուկ փայեկաւ յղեցաք ի Գանձասար առ Յովհաննէս կա-
թուղիկոսն՝ յղել առ Շամախու առաջնորդ Իսահակ վարդապետն,
զի և նա յղեսցէ առ սա (որպէս և ի ներքոյ ի թուղթս նոցին ես յիշե-
լոց է)։ Սմա զայս ծանուցանէ և պատուիրէ, թէ դու ես զպատասխանի
թղթոյս շուտով յղեսցես, թերևս հասցի մեր տղային ի Գանձասար, որ
նա առ մեզ բերցէ։ Եւ թէ զգիրդ հանդերձ յատուկ հարազատութեամբ
մի պակասեցուսցես։

275. Կոնդակ որպիսածանոյց և հոգևոր պատուիրանց ես ի վերայ
Շամախու և Դարբանդու և Բաքուայ և համայն շրջակայ վիճակացն
նոցին գրեաց սրբազան Վեհն ըստ կոնդակին Գիլանու (զոր ի վերդ յի-
շեցաք), բաց ի մխիթարութենէն, զոր առ նոսա գրեաց վասն աւերման
երկրին, զոր անդ յիշեցաք։ Իսկ ի յայն խնդիր, թէ սիրեսջիք զսուրբ
Աթոռ մայրս ձեր, զի սա է ձեզ ծնօղ լուսածին, պատուիրէ և զայս, թէ
51ա // ուր և գոն ի միջի ձերում գանձանակք սրբոյ Աթոռոյս, հաւատարմի
պահեսջիք։ Եւ ի դէմս գանձապետացն ես գրէ, թէ հարազատ գանձա-
պետացդ սրբոյ Աթոռոյս պատուիրեմ արի և ժիր կալ ի գործս ձեր գան-
ձապետութեան, անխափան շրջեցուցանել զգանձանակն, յորդորմամբ
ժողովել զարդիւնսն, ամբողջապէս պահել առ ձեզ և լրապէս հասուցա-
նել ի սուրբ Աթոռս։ Ապա դարձուցեալ զբանս առ ժողովուրդսն, ասէ՝
պատուիրեմ և ձեզ անտրտունջ և անխնայօրէն արկանել ի գանձանա-
կըն զհոգևոր տուրսն ձեր զսակաւուկ դրամիկն, որ թէպէտ փոքր ինչ
է, այլ մեծ է համարեալ առաջի Աստուծոյ, ուրեմն մի խնայեսջիք ար-
կանել զայն ի գանձանակն սրբոյ Աթոռոյս։ Եւ թէ այլ ինչ ես բարի
սովորութիւն և արդիւնաւորութիւն գոյ ի մէջ ձեր առ սուրբ Աթոռս, զայնս
ես հաւատարմի պահեսջիք՝ առ ի առաւելապէս ընդունիլ զշնորհս ի
սրբոյ Աթոռոյս հոգևոր ծնողէս ձերմէ։

276. Թուղթ անդրանիկ օրհնութեան առ Շամախու գանձապետն
սրբոյ Աթոռոյս՝ գանձապետ Գրիգորի որդի պարոն Դաւիթն, որում նախ
յայտարարութիւն վախճանման լուսահոգի սրբազան Վեհին և իւր յա-
ջորդելոյն համառօտապէս, զերկարն և զլիովինն ի հասարակ երկրի
կոնդակէն իմանալ ասելով։ Զոր և ասէ մինչև ցարդ յետացուցաք վասն
ճանապարհ ոչ լինելոյ։ Իսկ այժմ մինչ զայդ գրեցաք, ասէ, զայն օրհ-
նութեան թուղթս մեր ես առ քեզ գրեցաք ի հաստատութիւն սիրոյդ և
հարազատութեանդ, որ առ սուրբ Աթոռս։ Եւ երկրորդ պատուէր, զի որ-
պէս մինչև ցայժմ զսէր և զհարազատութիւնս է ունեցեալ առ սուրբ
Աթոռս, զնոյնս այսուհետև ես առաւելապէս ունիցի առ սա և առ ինքն
և գանձանակին սրբոյ Աթոռոյս լաւապէս մուղայէթ լիցի և զարդիւնսն
ամրապէս առ ինքն պահելով, ում և գրեսցէ ինքն սրբազան Վեհն, նմա
տացէ և թարց թղթոյն և կարմիր կնքոյն սրբազան Վեհին մի ինչ տացէ
ումեք, և զորպիսածանոյց գիրն անպակաս արասցէ։

277. Թուղթ ես ըստ նոյն օրինակի առ Դարբանդու գանձապետն
սրբոյ Աթոռոյս՝ իւզբաշի պարոն Եսային՝ առ ի մուղայէթ լինիլ և նմա
իւր գանձապետական գործոյն։

278. Թուղթ ես առ Շամախու առաջնորդ Իսահակ վարդապետն գրեաց սրբազան Վեհն՝ ազդելով զմահ հոգելոյս սրբազան Վեհին և զիւր հայրապետ լինիլն նորապէս, և յորդորելով ի սէր և ի հաւատարմութիւն սրբոյ Աթոռոյս և ինքեան, և պատուիրելով զհասարակ կոնդակն երկրին ընթեռնուլ տալ ի Շամախի և յայլ տեղիս (որք գրեալ գոն ի կոնդակոջն, որ ի վերդ)։ Եւ վասն Գիլանու և Հաշտարխանու թղթոցն, զորս եդեալ ի մէջ Բաքուայ Եղիազարի թղթոյ պահարանին, զհասցէն գրեցաք առ պարոն Եղիազարն և յղեցաք առ սա (որպէս և ի վերդ ի թուղթն Եղիազարին յիշեալ եմք)։ Պատուիրէ սմա հասուցանել զայն պահարանն առ պարոն Եղիազարն և զպատասխանին խնդրեալ, յղել առ ինքն։

Ահա թէ Շամախու երկրի կոնդակն և թէ վերոյ գրեալ գանձապետաց թուղթքն եդեալ ի պահարանոջ ընդ թղթոյ Շամախու առաջնորդ նոյն Սահակ վարդապետին, ի միասին հասցէն գրեցաւ ի ձեռն նորա, զոր և յղեցաք առ Յովաննէս կաթուղիկոսն ի Գանձասար՝ հասուցանել առ նա (որպէս ի վերն ի թուղթն Եղիազարին գրեալ գոյ և ի ներքոյ ի թղթոջ Յովաննէս կաթուղիկոսին ես յիշելոց եմք)։

51բ 279. Կոնդակ անդրանիկ օրհնութեան որպիսածանոյց և պատուիրական ես սրբազան Վեհն ի վերայ Նուխուոյ քաղաքին և նորին շրջակայ վիճակացն գրեաց, ըստ կոնդակին Գիլանու (զոր ի վերդ գրեալ եմք) համդերձ մխիթարութեամբն, քանզի ի Շուշու Իբրահիմ խանէն սոյն խղճալի երկրին ես ոչ սակաւ աւերութիւնք դիպեցան և բնակչացն ես վշտակրութիւնք և նեղութիւնք։ Յայս տարիս զի բռնացեալ նորա քանիցս գնաց ի վերայ իշխողին նորա՝ Հիւսէյին խան կոչեցելոյն և զերկիրն աւերեաց, և անգամ մի ես փախոյց զնա ի բերդէն, թէպէտ և յետոյ դարձաւ նա և կրկին էառ զբերդն, յորոց եղելութեանց ողորմելի մերազնեայքն ես, որք անդ կային նեղեցան և գատարկեցան յընչից։ Վասն որոյ սրբազան Վեհն պատշաճապէս զմխիթարութիւնս գրեաց այժմ առ նոսա։ Իսկ և ի պատուէրսն վասն սրբոյ Աթոռոյս գանձանակին (որ գոյ ի մէջ սոցա) ես գրեաց հաստատուն պահել ի միջի իւրեանց։ Եւ զսրբոյ Աթոռոյս գանձապետ մահտեսի Մկրտիչն ես յիշելով յանուանէ, պատուիրեաց նմա արի և ժիր լինիլ ի գործն իւր գանձապետութեան և զարդիւնսն լրապէս հասուցանել ի սուրբ Աթոռս։ Ապա և զժողովուրդսն յորդորեաց զպտուղս արկանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս օգտասիրաբար։

280. Թուղթ ես առ Նուխու գանձապետն սրբոյ Աթոռոյս՝ մահտեսի Մկրտիչն, ըստ օրինակի ի վերդ յիշեալ թղթոցն, որք առ Շամախու և Դարբանդու գանձապետսն։ Եւ զի զվերոյ գրեալ Նուխու կոնդակն ես ընդ թղթոյս առ սա յղեաց, վասն որոյ պատուիրէ սմա՝ յայժմ ընթեռնուլ տալ յեկեղեցիս քաղաքին և երկրին զկոնդակն առ ի գիտել ամենեցուն զորպէսն սրբոյ Աթոռոյս և ինքեան։ Այս թուղթքս քո ես ջոկ պահարանեալ ես յղեցան ատափ առ Յովաննէս կաթուղիկոսն՝ հասուցանել ի Նուխի։

281. Կոնդակ ես սրբազան Վեհն ի վերայ Շուշու դղեկի և համայն Արցախու երկրի խամսայ կոչեցեալ Ե (5) նահանգացն՝ Խաչենու, Վարանդու, Դուզախու, Ջարաբերդու և Իկիրմիտօրտու մերազնեայ ժողովրդեանն գրեաց, ըստ կերպի վերոյ գրեալ Նուխու կոնդակին, բաց ի մխիթարութենէն, որ անդ գրեաց և աստ՝ ոչ, որովհետև յարդեանս իշխողին սոցա Իբրահիմ խանին[69] զօրեղ գոլով ի թշնամեացն, ազատ պահէր զերկիրն և երկրականքն ապահովք էին։ Յորում և վասն գանձանակացն սրբոյ Աթոռոյս պատուէր, որք գոն ի մէջ սոցա, հաստատուն ունիլ և արդիւնաւոր առնել, և զայլ պատուէրս հոգևորս ըստ պատկանաւորութեան երկրին։

Այս կոնդակս ընդ Յովաննէս կաթուղիկոսի թղթոյն ի միասին ի միում պահարանոջ յղեցաւ ի ձեռս նորա, որպէս զի նա ընթեռնուլ տացէ յայն կողմունսն։

282. Կոնդակ ես ի վերայ համայն Նախիջևանցի, ղազանչեցի, աստապատեցի և այլ ամենայն ժողովրդոցն, որք ի դղեակն Շուշու գետեղեալ գոն[70], գրեաց սրբազան Վեհն՝ համառօտապէս ծանուցանելով և նոցա զվախճանումն լուսահոգւոյ սրբազան Վեհին և զինքեան հայրապետանալն և տալով զյատուկ օրհնութիւնս և զսէր, և պատուիրելով հաստատուն մնալ ի յատուկ սէրն և ի հարազատութիւնն իւրեանց, զոր
52ա ունեցեալ են առ սուրբ Աթոռս։ Եւ զգանձանակն սրբոյ Աթոռոյս, // զոր յատկապէս ունեցեալ են ի մէջ իւրեանց, հաստատուն պահել և ջանալ արդիւնաւոր առնել և այլն։

283. Թուղթ ես ըստ օրինակի վերոյ գրելոյդ առ ագուլեցի ժողովուրդսն ի Նորաշէն գեղջն զետեղեցեալ, որք ես յատկապէս զգանձանակ ունին յանուն սրբոյ Աթոռոյս։

Այս երկու թուղթքս յղեցան ի ձեռն տէր Յովաննիսին, որպէս և ի ներքոյ ի թղթոջ սորա գրեմք։

284. Թուղթ ես առ տէր Յովաննէսն գրեաց սրբազան Վեհն, նախ ըստ հասարակական դիտմանց վերոյ գրեալ թղթոցդ, ապա և զյատուկ յորդորանս, թէ յորդորեսցես զամենայն յառաջ տուրս գանձանակաց սրբոյ Աթոռոյս և ընդ գանձապետացն մերոց, դու ես ջանասցես արդիւնաւորս առնել զնոսա։ Եւ վասն վերոյ գրեալ Բ (2)-ց թղթոցդ ես (զորս ի ձեռս սորա յղեցաք) գրեաց, թէ ահա յատկապէս ի վերայ ժողովրդոցդ, որք կան ի դղեակդ և ի վերայ ագուլեցւոցն, որք են Նորաշէն գեղջն, զԲ (2)-ս թուղթս գրեցաք, զորս և յղեցաք ի ձեռս քո, ուստի ընթեռնուլ տացես զայդոսիկ ի յեկեղեցիս իւրաքանչիւրոցն։ Նաև որովհետև վասն ճանապարհաց խառնակ լինելոյն գնացող ոչ գոլոյ, զայս թուղթքս ընդ մեր Սահակ տղային յղեցաք, վասն որոյ գրեաց սմա, թէ կդոյն գրաբեր Սահակ տղայդ, որ մեր է, յղեցաք յատկապէս վասն այսր, զի ի վերայ Ղազախու և Գեանջայու բերեալ հասուսցէ յայդր զայս թուղթքս։ Դուք ես, եթէ թուղթ գրիցէք առ մեզ, տացիք դմա, զի բերցէ առ մեզ։

285. Թուղթ ես ի Գանձասար առ Յովաննէս կաթուղիկոսն[71] գրեաց, որում ես նախապէս զեկոյց զվախճանումն հոգելոյս սրբազան Վեհին և զիւր յաջորդելն զսուրբ Աթոռս։ Իսկ ապա զի զՇամախու և այն կողմանց թուղթսն ջոկ պահարանեալ և զՆուխու թուղթսն ես ուրոյն պահարանեալ յղեցաք ընդ սոյն թղթոյս ի ձեռս սորա առ ի հասուցանել յիւրաքանչիւր տեղիսն։ Գրեաց սմա, թէ Շամախու պահարանն յղել առ Շամախու առաջնորդ Սահակ վարդապետն և զՆուխու պահարանն ես յղել ի Նուխի։ Եւ գրել առ նոսա հարկի, զի զպատասխանիս թղթոցն շուտով գրեալ յղեսցեն առ ինքն, զի թէ սոյն թղթոցս տանօղ Սահակ տղայն դեռ անդ լինիցի, նորին ձեռամբն յղեսցէ առ մեզ։ Իսկ եթէ Սահակ վարդապետի և Նուխու պատասխանիքն յամեսցին և տղայն վերա-

դարձցի աստ, ի հասանիլ պատասխանեաց նոցին՝ ընդ այլ հաւատար-
մի շուտով յղեսցէ աստ։ Այլև յորդորեաց զսա ի սիրոյ և ի հարազատու-
թեանց ոչ վերջանալ։

286. Թուղթ ես առ մէլիք Շահնազարն[72] և նորին որդի Ջումշուտն[73]
գրեաց սրբազան Վեհն, ծանուցանելով և սոցա զմահ լուսահոգի սրբա-
զան Վեհին և զիւր նորապէս անկանիլն ընդ լծով հայրապետութեան
սրբոյ Աթոռոյս՝ հանդերձ պատճառօքն համառօտապէս և գրելով՝ զլիա-
գոյնն ի հասարակ երկրի կոնդակէն իմանալ։ Որոյ սակս և գրեաց, թէ
թէպէտ ի վաղուց կամէաք գրել, այլ զի ճանապարհ ոչ գոյր, որպէս
գիտէք, վասն այն մնաց մինչև ցարդ, զի և այժմ թէպէտ գրեմք, այլ
դեռ ոչ գիտեմք, թէ որպէ՞ս իցեմք յղելոց յայդր։ Եւ զկնի օրհնութիւն
տալոյն գրէ, թէ այս է խնդիր իմ ի ձէնջ, զի զատոյգ հարազատութիւն
52բ և զկատարեալ սէր ունիցիք // առ սուրբ Աթոռս և առ մեզ ջանացող ևս
լինելով օգտից սորա և մեր։

Իսկ և լուսահոգի սրբազան Վեհն յաղագս սոյն Շահնազարիս ապօ-
րինաբար զքանի կանայս ունիլոյն և մանաւանդ զդուստրն իւր ևս տա-
լոյն Իբրահիմ խանին ի կնութիւն, սմա զմի մեղադրական թուղթ էր
գրեալ, որոյ ի հասանիլն առ սա, սա ևս մեծաւ զղջմամբ զմեղայական
գիր էր գրեալ առ լուսահոգին և խոստացեալ էր գալ ի սուրբ Աթոռս
(որպէս և գրեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն, որ յաւուրս հոգե-
լոյս հայրապետին ի ՌՄԻ (1771) թուոջ մերում և յամսեանն...)։ Վասն
այն այժմ գրէ առ սա սրբազան Վեհս մեր, թէ մանաւանդ փութա կա-
տարել զուխտն քո ըստ հաճոյից Աստուծոյ, քանզի գիտեմք, ասէ, և
մեք, որ յաւուրս հոգելոյս հայրապետին մերոյ մեծաւ հաւատով և սի-
րով մանաւանդ սաստիկ զղջմամբ իսկ ուխտեցեր գալ ի սուրբ Աթոռս,
որպէս և գրեալ իսկ էիր իւրեան, թէպէտ և բերմունք ժամանակին ար-
գելառիթք եղեն և լուսահոգին կարօտ մնաց գալստեանդ։ Բայց զի յոր-
ժամ և կամիցի մարդս, կարէ առնել բարիս. մինչդեռ զժամանակդ ունիս
ի ձեռինդ, մի յապաղէր գործել զխոստացեալդ բարեգործութիւն, զի
ոչինչ է քեզ դժուարին լինիլ կատարող ուխտիդ, զոր ուխտեալ ես առա-
ջի Աստուծոյ և գալ ի հաւատոյ մայրս քոյ սուրբ Աթոռս՝ առ ի շահել
զհոգիդ և ի գտանել զդեղ փրկութեան, որ և սպասեմ պատասխանւոյ
թղթոյս։

Այլև ի վերջոյ գրեաց, թէ որպէս և գրեցաք, մինչև ցայժմ դեռ ոչ
եղև ճանապարհ և եկօղ, զի զթուղթս յղէաք։ Եւ մեր ամօթ կրելով այլևս
յետացուցանելն, յղեցաք զդոյն գրաբեր Սահակ տղայդ հանդերձ այսու
և այլովք թղթովք, զի ի վերայ Ղազախու և Գեանջայու բերեալ հա-
սուսցէ առ ձեզ։ Դուք ևս եթէ զպատասխանի գրեցէք թղթոյդ մերոյ,
տաջիք զմա, զի առ մեզ հասուսցէ։

287. Թուղթ ես առ հանգուցեալ մէլիք Յովսէփի որդի մէլիք Բէկ-
լարն[74] ևս ըստ հասարակ դիտմանց վերոյ գրեալ թղթոյդ։ Ապա և վասն
մահուան հօրն ևս զմխիթարութիւնս գրեաց և պատուէր՝ արի լինիլ
յամենայն գործս բարութեան՝ լինելով նախանձախնդիր հայրենի օրի-
նաց և աւանդութեանց սրբոց, և ժառանգել զանուն բարեպաշտութեան։
Իսկ և Ստեփան քեօխվային զողջոյն գրեաց յայսմ թղթոջ։

288. Թուղթ ես նոյնպէս առ մէլիք Ադամն[75], որում ես և վասն վախ-

ճանման մէլիք Յովսէփին զմխիթարութիւն գրեաց, ըստ որում սիրով
էին ընդ միմեանս ի կենդանութեան նորա։ Ծանոյց սմա և զգրելն առ
Բէկլարն զթուղթ օրհնութեան և մխիթարութեան։ Եւ գրեաց, թէ զնոյն
սէրն աստուածահաճոյ և միաբանութիւնն, զոր ունէիր ընդ լուսահոգի
մէլիք Յովսէփին, զնոյնս և ընդ նորին որդի պարոն մէլիք Բէկլարին
ունիցիս և ճշմարիտ բարեկամութեամբ և համակամութեամբ կեցջիք
ընդ միմեանս։

Երեքեան թուղթքս այսոքիկ ևս ուրոյն ուրոյն պահարանեալ յանձ-
նեցան Սահակին՝ հասուցանել առ իւրաքանչիւր տեարսն։ Համայն
վերոյ գրեալ թուղթքս գրեցան ի ԻԳ (23) ամսոյս, բայց մնացեալ աստ
քանի մի օր, ապա յղեցան ընդ Սահակին ի [դեկտեմբերի] Լ (30)։

53ա 289. Թուղթ ես սրբազան Վեհն ի Գեանջայ առ քահանայսն և իշ-
խանսն գրեաց, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա շնորհաւո-
րականի, զոր գրեալ էին նոքա այժմ ի պատասխանի անդրանիկ օրհ-
նութեան կոնդակի սրբազան Վեհին, զոր գրեաց ի վերայ Գեանջայու
քաղաքին և երկրին ի սոյն թուոյս ի հոկ. Ե (5) (զոր անդ է տեսանել
ի սոյնում յիշատակարանոջ)։ Առ որս զօրհնութիւն և զշնորհակալութիւն
գրեաց։ Իսկ և զՂուլինց Աբրահամէն, զոր յառաջ լուսահոգի սրբազան
Վեհն գանձապետ էր կարգեալ անդ սրբոյ Աթոռոյս, և ապա նորոգ սըր-
բազան Վեհս մեր ևս նորոգեաց զգանձապետութիւնն ըստ նորին խընդ-
րոյն (որ ևս յիշեալ գոյ աստ ի սոյն թուոջ ի հոկ. Ե (5)։ Այժմ ոք զամ-
բաստանութիւնս էին գրեալ, թէ ոչ հարազատաբար ծառայէ սրբոյ Աթո-
ռոյդ, այլ ի գանձանակէն վասն իւր խարճէ, վասն որոյ ոչ կամիմք
զսորին գանձապետութիւն, հան զսա ի գործոյն։ Եւ թէ մեք ահա ի կող-
մանէ գանձանակադրամին, զոր ինչ գոյր առ նա, առաք՝ որ է Ե (5)։
Եթէ հրամայիցես, յղեսցուք և ի կնքողացս զթուղթս ընդ ում և հա-
ճիցիս, զնա օրհնութեան թղթով գանձապետ կարգեա, զոր ընդունիցիմք։
Առ որ և սրբազան Վեհն գրեաց, թէ որովհետև ոչ կամիք զի Աբրահամն
գանձապետ լիցի սրբոյ Աթոռոյս, թող այլ մի լիցի։ Բայց դուք ի ձէնջ
զով ոք և կամիք ընտրեցէք և մեզ ևս ծանուցէք թղթով, որ զնա գան-
ձապետ կարգեսցուք սրբոյ Աթոռոյս։ Եւ ի վերջոյ, վասն վերոյ յիշեալ
գանձանակադրամին, զոր յԱբրահամէն առեալ էին, գրեաց յղել ի սուրբ
Աթոռս։

Գրեցաւ թուղթս յամսոյս ելն և հասուցաւ ի նոյն օրն ի Ղրխպուլախ
առ նախ յիշեալ թղթոց տանօղ Սահակն՝ առ ի հասուցանել և զայս ի
Գեանջա առ քահանայսն և իշխանսն տեղւոյն։

1780 թ. դեկտեմբեր—Թուղթ ի Կարին

290. Այլ յառաջ քան զյղեցումն վերոյ գրեալ թղթոցդ, թուղթ մի
էհաս ի Պօլսոյ, որպիսածանոյց և անորոշակի, առ սրբազան Վեհս մեր,
որ ի տիրացու Գէորգէն էր։ Որոյ ի ժամանիլն ի Կարին առ մեր վէքիլ
Հայրապետն, նաև նուիրակ Ներսէս վարդապետն ևս ընդ նմա թուղթս
էին գրեալ և յղեալ առ սրբազան Վեհս մեր։ Իսկ սա, անձեռնհաս գո-
լով գրել, յայնժամ զպատասխանիս թղթոց Ներսէս վարդապետին և
վէքիլ Հայրապետին հրամայեաց Մկրտիչ վարդապետին գրել, ուստի և
նա զմի թուղթ գրեաց առ վէքիլ Հայրապետն ի Կարին, թէ ահա էհաս

տա մեզ, բայց սրբազան Վեհն այժմ ոչ յետ բանեաց աւուրց է գրելոց զպատասխանին թղթոյդ: Իսկ սոքա երկրայութեամբ գրեալ էին այն անորոշակի թուղթն ի Գէորգէն ձոլ. գրեաց, թէ որպէս կարծեալ էք այդպէս է: Այլև ի նուիրակական արդեանց Ներսէս վարդապետին համեալ էր սմա (Թ և Բ) ես այլ: Եւ սա փոխեցայ էր արարեալ ի Բայազիտ հասանիլ տէր Վահանին, զորս և նա հասուցէ սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ և սա գրեաց, թէ իմացաք զայն ինչ առնելդ, անտի ես մեզ է հասանելոց: Երբ և հասանիցի, զմիամտութիւն եմք գրելոց քեզ:

Գրեցաւ և ել թուղթս ընդ փայեկին դեկտեմբեր յամսոյ ԻԹ (29)։

1781

56ա ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՄԻ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԵՐՈՅ ՌՄ Ե[Ի] ԵՐԵՍՆԵՐՈՐԴԻ (1781), ՈՐ Է ԻԲՐՈՒ ԱՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԵՐՋԱՆԿԱՀԱՐԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամենազօր զօրութեամբ և գերագոյն ողորմութեամբ և աներևոյթ օգնութեամբ ամենագթածին Աստուծոյ՝ ես յոգնամեղ և ներգեեալ ոգի Անանիա կոչեցեալս, որ ի յանցեալ ամի ութերորդ ամսոյն (յորում Նորոգ սրբազան Վեհս մեր օծաւ հայրապետ) սկսեալ մինչև ի վախճան նոյնոյ ամին, ըստ կարեաց ապիկար անձինս, կատարեցի զգործ յիշատակագրութեան նոյնքան ամանակին, արդէն ես հրամանաւ վերոյ յիշեալ տեառնս մերոյ և պատուական գլխոյն հասարակացս, և հարկեցմամբ տեառն Իսահակայ եպիսկոպոսի՝ բազմաւորն աշխատաւորի ի Թղթագրութիւնս սրբոյ Աթոռոյս և իմս երախտաւորի, ձեռնամխեցի վերստին յայս գործառնութիւն, գոլով թէպէտ թափուր ի գիտութենէ, այլ ապաւինելով յանսպառ աղբիւրն շնորհաց սուրբ Հոգին Աստուծոյ, որ Վրազունս ի թարմատարաց էած ի պիտանաւորութիւն և կոչէ զչգոյն իբրև զգոյ, որ և զիմս նուաստութիւն արասցէ մշակ թարց ամօթոյ, պարգևելով առաջադրեալս այս իրակութեան զբարեպէս յառաջացումն: Եւ նմա ընդ Հօր ամենաստեղծի և ընդ Որդւոյն կենսաբաշխէ օրհնութիւն և գովութիւն, փառաւորութիւն և երկրպագութիւն՝ յարդեանս և յանվերջ յաւիտեանս: Ամէն:

1781 թ. հունվար—Կոնդակ և թուղթք ի Թարվէզ

Շնորհիւ Տեառն մինչ հասաք ի նոր տարիս (զոր շնորհաւորութեամբ բարեաւ և խաղաղութեամբ ի յանգ հանցէ Տէր), նախ պատշաճ եղև սրբազան Վեհի տեառնս մերոյ ի Թարվէզ զթուղթս գրել: Վասն զի նորապէս իսկ մէնչ սրբազան Վեհս մեր օծեալ կարգեցաւ կաթուղիկոս և յերկիրն Սինեաց և յայլ տեղիս զանգրանիկ օրհնութեան թուղթս գրեաց փութով ի յանցեալ ամի օգոստոսի... զկոնդակ մի որպիսածանոյց ես ի վերայ Թարվիզու և Խոյու և այնց կողմանցն գրեաց, զորս և յղեաց ընդ Ահարոն վարդապետին, որպէս և յիշեալ գոյ ի սկզբան սոյնոյ յի-
56բ շատակարանիս ի յօգոստոսի...: Այլ զի այն կողմունքն կարի խառնակք էին և ճանապարհքն վտանգա//որեալք, Ահարոն վարդապետն հազիւ

և դժուարաւ հասեալ ի Խոյ և ի Սալմաստ, այլ չէր կարացեալ անցանել ի Թարվէզ՝ առ երկիւղի ճանապարհին, զի զկոնդակն և անդ տարցէ։ Այլ (որպէս և պատուիրեցեալ էր նմա) զկոնդակն թողեալ էր ի Խոյ առ տեղւոյն աւագ քահանայ տէր Մարգարն, առ ի յղել ի Թարվէզ. և նոքա չէին յղեալ[76]։ Իսկ ժողովուրդքն Թարվիզու, անտեղեակ գոլով այսմ, տրտնջեցեալ էին, թէ զիա՞րդ զկոնդակ ոչ գրէ առ մեզ նորոգ սրբազան Վեհն, այժմ զորո՞յ անուն յիշեմք և այլն։ Զոր լուեալ սրբազան Վեհիս մերոյ յատկապէս զմի կոնդակ գրեաց ի վերայ Թարվիզու և շրջակայ վիճակացն նորա., և ընդ նմա զբանի մի թուղթս ևս առ ոմանս գրեաց, զորոց զգիտմունսն ահա նշանակեմք ի ստորև։

291. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի Թարվէզ, ի Մարաղա, ի Դուխուրղան, ի յՈրմի, ի Սլատուզ, ի Սօմայի, ի յՈւշնի, ի Մուժամպար, ի յՈւղումչի և յայլ ամենայն շրջակայս նորա, տալով նոցա զանդրանիկ օրհնութիւն և ծանուցանելով, զ ի Տէր ննջումն բարի մահուամբ հոգելոյս հայրապետին մերոյ՝ տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին և զյաջորդելն իւր զսուրբ Աթոռն՝ հանդերձ պատճառօքն և պարագայիւքն համառօտակի։ Իսկ ապա զեկոյց և զյանցեալ ամին ի վերայ երկրին նոցա զկոնդակ գրելն խառն ընդ Խոյու, և զկոնդակին ոչ հասանիլն առ նոսա և ի Խոյ մնալն (զոր ահա ի վերդ լիովին գրեցաք)։ Եւ գրեաց, թէ մինչև ցարդ մեք այնպէս գիտէաք, թէ կոնդակն մեր հասեալ է առ ձեզ և յայդ կողմունսդ յամենայն տեղիս և սպասէաք ի ձէնջ ընդունելի զթուղթ։ Իսկ այժմ լուաք, թէ այն կոնդակն մեր ոչ է հասեալ առ ձեզ, վասն որոյ այժմ նորապէս գրեցաք առ ձեզ զայս նախընծայ օրհնութեանս մերոյ թուղթ՝ ի ժառանգել ձեզ զօրհնութիւնս մեր և ի հարցանել զձերդ որպիսութեանց։

Նաև ի ՌՄԻ (1771) թուոջն մերում ի կողմունսն Թարվիզու և մանաւանդ ի Թարվէզ ահագին շարժ էր եղեալ և զլոլով տանց և ապարանից և այլ շինութեանց աւերութիւնս էր արարեալ հանդերձ մեծամեծ մզկթօք տաճկաց, որով և եկեղեցին մերազնէիցն ևս փլեալ էր։ Այլև՝ ի յահագին գետնաշարժութենէն յայնմանէ յոլով անձինք ի քաղաքէն գետնասոյզ էին եղեալ, ընդ որս և քանի մի անձինք ևս ի մերային ժողովրդոցն ընկալեալ էին զվախճան։ Եւ զկնի ի միւս ամին ևս Շուշու Իբրահիմ խանն, որ բռնացեալ կամէր զշրջակայից իւրոց երկրաց իշխօղն ընդ բռամբ ածել օգնականութեամբ պետին Վրաց (որպէս և զԳեանջայունն և զՂարատաղունն արար), ի Թարվէզ ևս զզօրս յղեաց, որոց հասեալ ի Թարվէզ, կամակցութեամբ բերդարնակացն Թարվիզու վարեալ էին անտի զիշխօղն տեղւոյն և ինքեանք արտաքոյ քան զբերդն և յետոյ ի բերդին ևս ընդ երկար նստեալ, զանթուելի չարիս և աւերութիւնս էին գործեալ անդ։ Բայց Թարվիզու խանին, որ Նաճաֆղուլի կոչիւր, գնացեալ և զԽոյու Ահմատ խանն և զՈրմու Իմամղուլի խանն հանդերձ զօրօք նոցին յօգնութիւն առեալ ընդ ինքեան, դարձեալ էր դէպ ի Թարվէզ, կրկին ի յինքն գրաւել զզեակն և զերկիրն Թարվիզու ի ձեռաց զօրաց Իբրահիմ խանին և զնոսա կոտորել և վարել անտի։ Որոց նա-
57ա խապէս իրազեկ լեալ զզօրաժողով լինելոյ վերոյ // յիշելոցն, խոյս
տուեալ ի Թարվիզու, փախուցեալ էին ի Շուշի։ Եւ որչափ ի մտանելն նոցա ի յերկիրն Թարվիզու, բազմապատիկ քան զայնս, ի յելանելն անտի անխնայաբար զամենայն ձեռնահաս կայս և զինչս բնակչաց տեղւոյն յափշտակեալ և կողոպտեալ էին։ Իսկ ապա մինչ Նաճաֆղուլի խանն

ևս ընդ օգնչացն իւրոց գնացեալ էր ի Թարվէզ և զերկիրն ի թշնամեաց զատարկ գտեալ, նոքա ևս էին զերկրականսն կեղեքել սկսեալ։ Յորոց երկրաքակ վրդովմանց և հեծելաշարժութեանց սակաւաւոր ժողովուրդքն մերայինք, որք յայն կողմունսն էին և ի Թարվէզ, զանասելի վիշտս և զտառապանս էին կրեալ յոյժ-յոյժ։ Վասն որոյ սրբազան Վեհն գրէ, թէ յառաջագոյն լուեալ էաք զահագին գետնաշարժն և զաւերութիւնսն, որք եղեն յայդ կողմունսդ, մանաւանդ ի քաղաքդ Թարվէզ և նոյն շարժմամբն փլանիլն եկեղեցւոյդ ձերոյ, այժմ ևս լուաք զխռովութիւնսն այդր երկրացդ և զզառնագոյն պատահմունսն, որք պատահեալ են ձեզ և յոյժ կսկծեցաք և ցաւեցաք, ուստի և հայցեցաք յԱստուծոյ՝ տալ ձեզ զխաղաղութիւն, զկրկին շինութիւն և զմխիթարութիւնս սրտից և այլն ըստ պատշաճի։ Ապա և զհոգևոր պատուէրս, ըստ պատկանմանն, զորս և ի յոլով տեղեաց կոնդակսն գրեաց, որք ի վերոյդ ի յանցեալ թուոջ դեկտ. ԻԳ (23) յիշեալք եղեն ի սոյն յիշատակարանոջս։

292. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս առ Թարվիզու աւագ քահանայ տէր Փիլիպպոսն և առ տեղւոյ համայն քահանայսն գրեաց, ըստ ոճի կոնդակիդ վերոյ ցուցելոյ։ Իսկ և զի զկոնդակն ի ձեռս նոցա յղեցաք, վասն որոյ զպատուէր գրեաց յայսմիկ՝ ընթեռնուլ զնա ծանուցմամբ յեկեղեցւոջն և ապա յղել ի միւս տեղիսն ևս, որք գրեցեալք են նմա, և այսպէս առնելն իւրեանց գրել ինքեան։ Եւ զորպիսութեանց ժողովրդոց տեղւոյն ևս գրեալ ծանուցանել և քան զառաջինն ևս առաւելապէս ունիցին այսուհետև զհարազատութիւն և զսէր առ սուրբ Աթոռս և զժողովուրդսն ևս ի յայնս յորդորեսցեն։

293. Թուղթ ևս առ Թարվիզու գանձապետսն սրբոյ Աթոռոյս՝ պարոն Թադէոսն, պարոն Միրզաջանն և պարոն Կարապետն ևս, ըստ մտաց վերոյ գրեալ թղթոյդ։ Ապա և յատկապէս պատուէր գրեաց, թէ զթուղթն ձեր անպակաս առնելով ի մէնջ, գրեսջիք մեզ զմեզապատշաճ որպիսութիւնս, որպէս և վայել է գործակալաց սրբոյ Աթոռոյս։ Այլև զկոնդակն ի ձեռս քահանայիցն և նոցա յղեաց, վասն որոյ զոր ինչ սակս կոնդակին առ քահանայսն գրեաց (զոր ի վերդ ի թուղթս նոցա ցուցաք), առ նոսա ևս գրեաց և ծանոյց զայս քահանայիցն ևս գրելն։ Նաև գրեաց, թէ ի կողմանցն Ջուղայու, զոր ինչ լսէք, մեզ գրեսջիք, գրելով թէ լուաք զնոցին փորձութիւնսն և կսկծեցաք։ Զեկոյց և զթուղթս գրելն ի Ջուղա և ի վերայ Բաքուայ յղելն ի Գիլան, զի հասուսցեն անտի ի Ջուղա (զոր գրեալ եմք ի յայս յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ դեկտեմբ.)։ Այլ իցէ թէ այն կողմամբն չկարիցեն յղել, ասէ անդ՝ զայն թուղթսն եթէ այդ կողմանցդ ճանապարհքն բաց են և երթևեկք լինին, մեզ գրեսջիք, ասէ զի եթէ թուղթ գրելոյ լիցուք ի Ջուղա, յղեսցուք առ ձեզ, զի և դուք ուղարկեսջիք անդ։ Իսկ ի վերջոյ, պատուիրէ գործոյն իւրեանց գանձապետութեան լաւապէս մուղայէթ լինիլ հաւատարմաբար, և զսէր և զհաւատարմութիւնս ինքեանց անպակաս առնել ի սրբոյ Աթոռոյս։

57բ 294. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս սրբազան Վեհն ի Թարվէզ առ համատանցի պարոն Յովաննէսն գրեաց, ըստ վերոյ գրեալ թղթոյդ դիտմանցն, բայց սմա գրեաց՝ ի Գիլանու ևս զորպիսութիւնս գրել, զոր ինչ գիտիցէ։ Իսկ և զի Գիլանու պարոն Ալէքսանն (առ որ զթուղթ գրեաց սրբազան Վէհն և զՋուղայու և զԳիլանու կոնդակսն ևս ի ձեռս նորա յղեաց, որպէս գրեցաք ի յանցեալ թուոյ դեկ. ԻԳ (23) ի սոյն յիշատա-

կարանոցս) սորա եղբայրն է, գրեաց սմա թէ քանի աւուրք յառաջ քան զայս ի վերայ Ջուղայու և Գիլանու զմխիթարական թուղթս գրեալ յղեցաք ի վերայ Բաքուայ ի Գիլան՝ առ պարոն Ալէքսանն, զի զկարեւոր անդ ընթերցեալ, գրեսցեն մեզ զորպէսն իւրեանց և զՋուղայունն ևս այն կողմամբն յղեսցէ առ նոսա։ Վասն որոյ և քեզ ևս գրեմ, ասէ, զի ծանուսցես մեզ զորպիսութիւնսն Ջուղայու և Գիլանու, թէ այժմ որպէ՞ս կան։ Եւ թէ ճանապարհք գոն և թուղթ գնալոյ և գալոյ հնար լինի, ասէ, մեզ ծանո, զի թէ զթուղթս իցեմք գրելոց, յղեսցուք առ քեզ, որ ուղարկեսցես ի յերկոսին տեղիսն ևս, և իցէ թէ ի նոցունց ևս զթուղթս առնուցուս և առ մեզ յղեսցես։ Զի թէպէտ ի վերայ Բաքուայ, ասէ, յղեցաք, այլ իցէ թէ զՋուղայու թուղթն ի Գիլանու չկարիցեն հասուցանել առ նոսա։ Ուրեմն այսպէս արարեալ, ասէ, զսէրդ և զյատուկ հարազատութիւնդ մի պակասեցուսցես։

295. Թուղթ ևս ի Կարին առ Զամբեւ տիրացու Գրիգորն, ի պատասխանի նորին ի յանցեալ թուոյ դեկտ. Ա (1) գրեալ թղթոյն ընդ մահտեսի Սարգսին, փեսային իւրոյ, որում նախ շնորհակալութիւն վասն հարազատութեանն, և ապա զի վասն խոչընդակն գնալոյ Պօլսոյ գիտէին ընդ սրբազան Վեհիս մերոյ զարտացաւական բանս էր գրեալ սա։ Վասն որոյ և սրբազան Վեհն գրեաց, թէ առ այն մի՛ ինչ վրդովիցիս, զի ճըշմարտութիւնն ամենայնի յաղթօղ է։ Այլև ի կողմանէ (Գ) փօլիցային, զոր Գաղատիոյ նուիրակ Յովաննէս պետն էր արարեալ ի Թօխաթ՝ ի վերայ մահտեսի Աղամջանին և նա փօլիցայ էր արարեալ ի Կարին՝ ի վերայ սորա, հասուցանել սրբոյ Աթոռոյս վէքիլ պարոն Հայրապետին (զոր և յիշեալ եմք յանցեալ թուոյ դեկ. Բ (2) ի թղթոջ մահտեսի Աղամջանին, թէպէտ այլ ի նմանապէս)։ Այժմ սա գրեալ էր, թէ գրեալ եմ ի Բայազիտ, որ տէր Վահանն անդ (Բ) առնուցու և առ սուրբ Աթոռդ հասուցէ։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ յայնմ կողմանէ դեռ տէր Վահանն զիր ինչ ո՛չ է ծանուցեալ մեզ, բայց վասն այդ փօլիցայիդ մեք այնպէս հաստատեալ էաք, ասէ, ի մտի, թէ նախապէս յայդր վէքիլ Հայրապետին հասանիցի և յետոյ ձեռամբ և գիտութեամբ նորին առ մեզ ըստ հասարակական կարգի սովորութեան մերոյ։ Ինչ և իցէ, զոր ինչ արարեալ էիր, ասէ, բարւոք է, բայց պարոն Հայրապետին, ես, եթէ ոչ ես ազդեալ ծանուցես, զի ըստ սովորութեան իւրում արասցէ և գրեսցէ մեզ։ Եւ ի վերջոյ, թէ ահա մահտեսի Սարգիսն և մահտեսի Աստուածատուրն և Գէորգն եկեալ կատարեցին զուխտս իւրեանց և վերադարձան յայդր, յորոց զորպէսն մեր և սրբոյ Աթոռոյս իմանալոց ես։

Գրեալ յղեցան թուղթքս ընդ մահտեսի Սարգսին Թօխաթեցւոյ ի վերայ Բայազիտու յամսոյս ԺԲ (12)։

1781 թ. հունվար—Ի Ղարս, ի Կարին և ի Թոխաթ թուղթք

Ղարսայ Ապտուլլա փաշային այժմ զհետ գանձապետին իւրոյ՝ Իբրահիմ աղային ընծայ էր առաքեալ սրբազան Վեհիս մերոյ՝ զմի կապոյտ ձի, և զսիրոյ թուղթ ևս ընդ նմա գրեալ, որ և ունէր զթուղթս վասն իւր
58ա || յանձնարարութեան ի յԻբրահիմ էֆէնտու որդւոցն և ի պարոն Գէորգէն։ Որոց զպատասխանիս գրեաց սրբազան Վեհն։ Նաև մահտեսի Աստուածատուր և պարոն Գէորգ ուխտաւորքն, մինչ էին ի սրբոյ Աթոռոյս, ընդ նոսա ևս քանի մի թուղթ գրեցաւ, որոց որպէսն գրին ահա

296. Թուղթ առ Ղարսայ Ապտուլլահ փաշայն գրեաց, ի շնորհակալութիւն վասն յղեալ ընծային, զոր ի վերդ յիշեցաք, և ի պատասխանի նորին թղթոյն, և խնդիր՝ ի սէրն և ի բարեկամութիւնն, որ առ սուրբ Աթոռս և առ ինքն, հաստատուն մնալ։ Իսկ և գրեալ էր սա հարկիս սրբազան Վեհին, թէ այդց երկրաց իշխողաց որպէսն գրեա մեզ ի գիտել, վասն որոյ և սրբազան Վեհն զԻբրահիմ խանի Թարվէզ առնուլն և ապա զԹարվիզու խանի զօրաժողով լինելն և զԹարվէզ յետս առնուլն ի զօրաց Իբրահիմ խանին (զոր ի վերոյ ի Թարվիզու կոնդակոցն երկրապէս յիշեցաք) ծանոյց։ Եւ զսոյն մեր երկրիս իշխողի ընդ Վրաց պետին իբր հաշտիլն ևս ազդեաց։ Այլև ի կողմանցն Դարբանդու և Շուշու ևս նոր ձայնք գոյին, որք սուտք էին, զայնս ևս զեկոյց և գրեաց, թէ սուտ և իրաւ գոլն չգիտեմք։ Իսկ ապա գրեաց, թէ այժմ որովհետև ձմեռն է, իւրաքանչիւրքն ի տեղիս իւրեանց դադարեալք գոն, բայց թէ ի գարնանն զի՞նչ են առնելոց, Աստուած գիտէ։

297. Թուղթ ևս առ աֆանտու որդիսն՝ Միստաբիս Մուստաֆային և Նումային աղային գրեաց, ի պատասխանի նոցին թղթոյն, յորում նախ շնորհակալութիւն վասն բարեկամութեան և սիրոյն նոցա, որ առ սուրբ Աթոռս և առ ինքն։ Եւ զի զյանձնարարութիւնս էին գրեալ վասն ընծայաբերին (զոր ի վերոյ յիշեցաք), զմիամտութիւն գրեաց, թէ ահա ըստ վայելմանն շահեցաք։ Իսկ և սոքա ևս էին գրեալ զայց երկրացս որպիսութիւնն ծանուցանել իւրեանց, ուստի յայնմ կողմանէ, զոր ինչ փաշային գրեաց (զոր ի վերդ ի թղթի նորա տեսցես), սոցա ևս զայնս գրեաց, ապա և յորդորանք՝ վասն բարեկամութեան։

298. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն, ի պատասխանի նորա թղթոյն, զոր այժմ ընդ վերոյ յիշեալ ընծայաբեր աճկին գրեալ էր, յորում նախ զմիամտութիւնս գրեաց, թէ ահա զընծայաբերն, որպէս և պատշաճն էր, շահեցաք և թէ զփաշայի և թէ զաֆանտիզատէից թղթոց պատասխանսն գրեալ յղեցաք։

Այս վերոյ գրեալ թուղթքս ընդ յիշեալ աճկին յղեցան ի Ղարս առ տեարսն, իսկ այս ներքոյ գրեալս՝ ընդ թօխաթցի մահտեսի Աստուածատուրին և նորին ընկեր՝ մահտեսի Սարգսին յղեցան ի Թօխաթ։

299. Թուղթ օրհնութեան ի Թօխաթ առ խօջայ Աւետիքն և տիրացու Յօհանն ի մխիթարութիւն վասն մահուան հօրն իւրեանց՝ հանգուցեալ մահտեսի Աղայեկին։ Եւ զի լուսահոգի հայրն սոցա՝ մահտեսի Աղայեկն կտակեալ էր վասն սրբոյ Աթոռոյս զԺԲ (12), զորս և սոքա ի ձեռն մահտեսի Աստուածատուրին այժմ յղեալ էին, վասն որոյ կրկին յատկապէս զօրհնութիւն գրեաց։ Ապա և սրտացաւօրէն զպատուէր գրեաց, թէ արիութեամբ, միաբանութեամբ և սիրով և օժանդակութեամբ միմեանց կենցաղավարեալք, զհօրն ձերոյ նմանութիւնն ի ձեզ բերջիք, ամենայնիւ համեստութեամբ և քաղցրութեամբ ստանալով զանուն բարի և զոր ինչ օգուտն է ձեր և բարին, զայնս խորհեսջիք և արասջիք ի շինութիւն և ի բարեկեցութիւն ձեզ և ի յուրախութիւն մեզ։

Թոխաթ ուղարկված մյուս գրությունները օրհնության նամակներ են՝ ուղղված կտակակատար մահտեսի Հոջանին, նվիրատուներ՝ մահտեսի Հոփիսիմեին, Շահզատին, պրն. Կարապետին և տիրացու Աբրահամին։

58բ

1781 թ. հունվար—Ի յՈւչքիլիսայն թուղթ

300. Մինչ զբեռնակիրս յղէաք ի յՈւչքիլիսէի վանսն առ ի բերել
զգարին, զոր յանցեալ ամին Նիկողայոս վարդապետն էր ժողովեալ
յիմատափս սրբոյ Աթոռոյս և անդ ամբարեալ, սրբազան Վեհն առ Ուչ-
քիլիսայի առաջնորդ Մկրտիչ վարդապետն յորդորանօք զմի թուղթ
գրեաց, թէ ահա զողայսն և զբեռնակիրսն մեր յղեցաք յայդր՝ առ ի
բերել այտի զգարին մեր, որոց դու ևս մուղայէթ լիցիս, շուտով ուղե-
վորել յետս: Եւ թէ տեղեկացեալ գիտացես, թէ յայդ կողմունսդ ցորե-
նոյ սոմարն որքա՞նոյ տան, զգինն տէր Վահանին և մեզ գրեսցես: Այլև
ի կենդանութեան լուսահոգի սրբազան Վեհին գալոց էր սա ի ձեռնա-
դրել եպիսկոպոս, որ և խոստացեալ էր օրհնել զսա, բայց որովհետև
վախճանեցաւ, մնաց: Իսկ այժմ ես զնշանս ցուցանէս սա փութանակի
դիմելոյ աստ: Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ գիտեմ, որ վասն շնոր-
հաւորութեան ի պէսպէս մտածմունս կաս, յայդմ կողմանէ միամիտ
լեր, զի երբ և զձեռնդրութիւնս իցեմք առնելոց, քեզ ևս ազդեալ բերե-
լոց եմք աստ և օրհնութեան արժանացուցանելոց:

Յղեաց սմա զփոքր ինչ գինի և օղի, և յիշեաց ի թղթոջն: Եւ յամ-
սոյս ԺԸ (18):

1781 թ. հունվար—Ի Կարին և ի Ղարս թուղթք և ղապղ մի ևս ի Պոլիս առ Մինաս պետն

Դարձեալ վերստին ի Պոլսոյ նուիրակ Մինաս վարդապետէն, Կար-
նոյ մեր վէքիլ Հայրապետն և Գորօյեան մահտեսի խաչատուրն զթուղթս
էին ընկալեալ ի վերայ սրբազան Վեհին, ընդ որում ինքեանք ևս ուրոյն
ուրոյն զթուղթս գրեալ, յատուկ փայեկաւ յղեալ էին աստ առ սրբազան
Վեհն: Իսկ սրբազան Վեհն (այժմ առ Մինաս պետն զթուղթ ոչ գրեալ)
զմի թուղթ առ պարոն Հայրապետն և մահտեսի խաչատուրն գրեաց, ի
պատասխանի թղթոց նոցին և զմի թուղթ առ Կարնոյ նուիրակ Ներսէս
վարդապետն գրեաց, և զմի թուղթ առ Խալիր փաշայն գրեաց, և զղապղ
մի ևս ի Պոլիս առ Մինաս պետն գրեաց, բայց ընդ այսց զթուղթ մի ևս
ի Ղարս առ սրբոյ Աթոռոյս ժողովարար Յօհաննէս վարդապետն և պա-
րոն Գէորգն գրեաց, զորոց ամենից զպատճէսն նշանակեմք աստ հետե-
ւապէս:

301. Թուղթ ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն և մահտեսի
խաչատուրն գրեաց սրբազան Վեհն՝ նախապէս զթղթոց սոցա առ ինքն
հասանելն հանդերձ Պոլսոյ գրեամբքն իւրեանց յղեալ փայեկաւն ծանու-
ցանելով և վասն գրելոյն սոցա զբանս սրտացաւականս շնորհակալե-
լոյ, մինչև այն թուղթն եկեսցէ, և յայնժամ զոր ինչ և պատշաճն իցէ
զոր ի Պոլսոյ ևս էին ազդեալ սրբազան Վեհին: Վասն որոյ սրբազան
Վեհն գրէ սոցա, թէ որովհետև այն մահսարն, զոր դուք ևս գրէք, ի ճա-
59ա նապարհի է // դեռևս, վասն որոյ մեք այժմ ի Պոլիս ոչինչ ունէաք գրե-
լոյ, մինչև այն թուղթն եկեսցէ, և յայնժամ զոր ինչ և պատշաճն իցէ
գրեսցուք: Մանաւանդ յառաջ գրեալ եմք, ասէ, զամենայն ինչ և նոցին
պատասխանւոյն սպասեմք, բայց վասն այլ ինչ հարկաւորութեանց
զթուղթս ինչ գրել կամէաք, յետ քանեաց աւուրց գրելոց և յղելոց եմք,
միայն այժմ զայս թուղթս գրեալ, զփայեկդ յետս յղեցաք: Նաև ա-
նիծեալ ախթարմայքն Կարնոյ լարդեանս զփորձանս ինչ էին հասուցեալ

սրբոյ Աթոռոյս նուիրակին, որ անդ՝ Ներսէս վարդապետին, վասն որոյ
սրբազան Վեհն մեր գրէ սոցա, թէ զփորձանսն նորա իմացաք, որոյ
սակս գրեմ, զի իշխանացն տեղւոյդ ողջոյն և օրհնութիւն տուեալ զմէնջ՝
աստաջիք ի դիմաց մերոց, զի ի յայդպիսի բանս հոգ տարցեն օգտիցն
սրբոյ Աթոռոյս և զօգտակարութիւնս իւրեանց մի թողցեն ի ձեռաց: Եւ
զի որովհետև Պոլսոյ զէտն խուշընդակն ընթացմամբ առ սուրբ Աթոռս
և առ սրբազան Վեհս մեր, գրեալ էր ի Կարին առ քահանայսն և իշխան-
սըն՝ չյիշել զանուն սրբազան Վեհիս մերոյ, և մահսարն ևս յամենայր
ի գալ, վասն որոյ և իշխանքն Կարնոյ երկբայեալ, զպաղութիւնս երևե-
ցուցնէին առ սուրբ Աթոռս: Ուստի գրէ, թէ մանաւանդ և մի զերկբայու-
թիւնս ինչ բերցեն ի միտ, զի բստ բերմանց աշխարհի թէպէտ և այս-
պիսի անյաջողութիւնք այժմ երևին, այլ ամենայն ինչ Աստուծով յաջո-
ղի և այսպէս ոչ մնայ: Ուրեմն զորդիական հարազատութիւնս իւրեանց
չթողլով ի բաց, նուիրակին մերոյ լիցին, ասէ, ձեռնտուք և այլ ամե-
նայն յայդր պատահեալ բանիցն սրբոյ Աթոռոյս հոգ տարցեն: Իսկ և
առ Ներսէս վարդապետն ևս զմխիթարական թուղթ մի գրեաց՝ առ ի
սփոփել և ի քաջալերել և գործոյն իւրոյ մուղայէթ լինել ժրապէս, և ոչ
յուսահատել և նեղասրտել, յորում և ազդեաց նմա զառ իշխանսն Կարնոյ
վասն իւր զյանձնարարութիւնս գրելն (զոր ահա ի վերոյ գրեցաք) և առ
Խալիր փաշայն ևս զյանձնարարական թուղթ գրելն (զոր ևս ի ներքոյ
եմք յիշելոց): Զոր և եդեալ ի թուղթս սոցա, յղեաց առ սա՝ տալ նուիրակ
Ներսէս պետին:

302. Այլև, զի սոյն պարոն Հայրապետս խնդրեալ էր ի սրբազան
Վեհէն վասն ինքեանց զյանձնարարական թուղթ գրել առ Խալիր փա-
շայն, վասն որոյ և սրբազան Վեհն առ Խալիր փաշայն զթուղթ
գրեաց, անորաշապէս գրելով, թէ մեր մարդկանցն տիրութիւն արասցես
վասն մերս խաթեր, զոր ևս ծանոյց սմա ի միամտել:

303. Եւ զի կողմանէ ցորենոյ զպակասութիւնս ունէաք, և սրբազան
Վեհն այժմ ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց զցորեան առնուլ (որպէս
և յետ քան զթուղթս ի թղթոջ նորա գրելոց եմք): Ուստի փոքր մի ծանու-
ցանելով ևս սմա զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս, գրէ, թէ յայս քան ամս
որովհետև երկիրս ի մէջ փորձանաց էր, ցորեան յոյժ սակաւ գտանի աստ,
վասն որոյ յոյժ պակասեալ է ցորեանն սրբոյ Տանս: Թէպէտ ի Կարսայ
և ի Բայազիտու իմատափայ ևս ժողովել բերաք, այլ այն ևս չբաւակա-
նացաւ, զի բացի մշտական երթևեկողաց բազմաց, ասէ, մշտական հա-
ցակերքն սրբոյ Աթոռոյս լինին իբրև հինգ հարիւրք, սակաւ ինչ պակաս,
59բ որոց ոչ գոյ, ասէ, ըստ բաւականին ուտելոյ հաց մինչև ի նորն: Յաղագս
որոյ գրեցի, ասէ, այժմ ի Կարս Գէորգին զցորեան // առնուլ դրամով,
զի բերեալ ի սուրբ Աթոռս, մի՛ կրեսցուք զպակասութիւն վասն հացի:
Եւ յաղագս այսորիկ գրեցաք ևս, ասէ, նմա, որ մինչև ցԵ (5) փոլիցայ
արարեալ ի վերայ քոյ, առնուցու և տացէ ի գին ցորենւոյն: Վասն որոյ
գրեմ քեզ, ասէ, զի երբ նա փոլիցայ արասցէ, տացես և գրեսցես մեզ:

304. Այլև Պոլսոյ նուիրակ Մինաս պետն ի յարդեանցն նուիրակու-
թեան զԱ (1) էր հասուցեալ ի Պոլիս Գորօյեան մահտեսի խաչատուրի
մարդոյն, զոր մահտեսի խաչատուրն ի Կարին հասուցեալ էր սրբոյ Ա-
թոռոյս վէքիլ՝ պարոն Հայրապետին: Վասն այն և սա գրեալ էր առ սըր-
բազան Վեհն զղապղ մի յղել առ Մինաս վարդապետն: Վասն որոյ և

սրբազան Վեհն զգապղ գրեալ (Ա)-ի յղեաց ի ձեռս սորա՝ յուղարկել ի Պոլիս առ Մինաս վարդապետն։ Իսկ ի զապզոջն գրեաց և զայս Մինաս պետին, թէ ջանասցես առ վէքիլ Հայրապետն մեր զգրամ հասուցանել այսուհետև՝ ի լցուցումն պակասութեանց սրբոյ Աթոռոյս։

305. Վասն որոյ և սմա Ա (1) փուսուլայի գրեաց, թէ առ Մինասպետն զայս ինչ եմք գրեալ։ Ուրեմն փոխիցայս արարեալ ի վերայ նորա, զգրամ պահանջեա ի նմանէ՝ հասուցանել ի սուրբ Աթոռս։ Նաև վասն (Ա, Ա)-ին, զոր փոխիցայ էր արարեալ սա ի Բայազիտ՝ հասանիլ տէր Վահանին առ ի հասուցանել և նորա ի սուրբ Աթոռս (զոր և յիշեցաւ ի յանցեալ թուոյ դեկ. ԻԹ (29) ի թղթոջ Մկրտիչ վարդապետին մերոյ առ սա)։ Այժմ տէր Վահանն գրեալ էր, թէ էհաս ինձ։ Ուստի և սրբազան Վեհն գրէ սմա, թէ զայնս մեզ հասեալ իմա և լեր միամիտ, զի հասեալ է, ասէ, անդ առ տէր Վահանն և նա գրեալ է մեզ։

306. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Ղարս առ խմտատիս ժողովող Յովաննէս վարդապետն և պարոն Գէորգն գրեաց, ծանուցանելով նոցա յղելն զուղտսն սրբոյ Աթոռոյս ի Ղարս, զի այժմ այլևս յղեաց զուղտսն առ ի բերել զգարին, որ անդ։ Բայց, ասէ, պատուիրեցաք Մարտիրոս ուղտապանին մերոյ, որ ի հասանիլն ի Ղօշավանք, անտի շուտով ձեզ իմաց արասցեն, և դուք նախապէս լինիցիք և զուղտսն բերցեն մինչև զՎաղի գիւղն և դուք զգարին յղեսջիք ուղտուքն։ Իսկ և հարկիւ գրեաց, թէ մինչև ցծ և Ծ (150) սոմարն տեղւոյդ զցորեան առջիք և ի մերձակայ տեղիս ժողովեալ, ազդեսջիք մեզ, զի բերցուք։ Եւ որպէս ի վերդ թղթոջս պարոն Հայրապետին ևս գրեցաք, գրեաց յատկապէս առ պարոն Գէորգն, թէ մինչև ցե (5) ի մեր վէքիլ Հայրապետէն փոխիցայի զգրամ խնդրեսցես վասն հոգալեացդ՝ ծանուցանելով նմա և զառ պարոն Հայրապետն գրելն վասն այնր առ ի տալ։

Գրեալ յղեցան Կարնոյ թուղթքն ընդ անտի եկեալ Կարապետ փայլակին և Ղարսայ միակ թուղթն ընդ մեր խուանքճոցն և ուղտապանին յամսոյս Իէ (27)։

1781 թ. հունվար—Թուղթ ի Պոլիս առ Մինաս վարդապետն

307. Գանձասարու Յովաննէս կաթուղիկոսն, իմացեալ զվախճանումն հոգելոյս տեառն Սիմէոնի երջանիկ կաթուղիկոսին և զնորապսակ սրբազան Վեհիս մերոյ հայրապետանալն, այժմ առ սա զմխիթարական
60ա և զշնորհաւորական թուղթ էր գրեալ և ընդ Մարտիրոս // անուամբ առն միոյ ուղարկեալ առ սրբազան Վեհս մեր։ Եւ զի այս յիշեալ Մարտիրոս ընդ ուրումն իւրոյ ընտանւոյ, որ ի Պոլիս Սահակ անուամբ մարդոյ մի զվէճ ինչ ունէր (որոյ սակս և ի Շուշի ոմանց զբազմակնիք թուղթ մի գրեցուցեալ ի վերայ Պոլսոյ դիտին և ագուլեցի իշխանացն ի վկայութիւն իւրոյ զիրաւունս ունելոյն, ունէր ընդ ինքեան տանիլ ի Պոլիս) և գնայր ի Պոլիս առ ի հոգալ զբանն իւր։ Վասն որոյ Յովաննէս կաթուղիկոսն զխնդիր էր գրեալ առ սրբազան Վեհս մեր, գրել Պոլսոյ դիտին՝ հոգ տանիլ սոյն մարդոյս հոգալեացն։ Այլ սրբազան Վեհս մեր ոչ Պոլսոյ պատրիարգ վերակոչեցելոյն, այլ սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետին Ա (1) թուղթ գրեաց, թէ ահա սոյն գրաբեր Մարտիրոս այրս, զոր յայտր պարոն Գէորգն և պարոն Կարապետն ճանաչեն ըստ

ափից իւրոց, վկայական թղթով Յովաննէս կաթուղիկոսին եկն ի սուրբ Աթոռս և ունէր զբազմակնիք թուղթ վասն հոգալեաց իւրոց որ յայտր։ Եւ մեք ևս ահա գրեմք քեզ ի գալն որոյ յայտր և ի պատմելն զհոգալեացն իւրոց և զվիճոյն, դու ևս ընդ վերոյ յիշեալ արևելցի իշխանացն ըստ արդարութեան պահանջմանն և ըստ առ ինքն ունեցեալ թղթոցն իւրոց մուղայէթ լեալ, որ ինչ պատշաճն է, այնպէս արասջիք և տնանկութեանն զորա ողորմեալ, սրտադիր արասջիք զգա։

Գրեալ և յղեալ եղև թուղթս ընդ Մարտիրոսին յամսոյս հէն Լ (30)։

1781 թ. հունվար—Ի յերկիրն Ռուսաց ի Նոր Նախիջևան քաղաք և ի Մօզդոք և ի Թիֆլիզ ևս թուղթք

Ռուսաց երկրի համայն մերային ժողովրդոցն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն ընդ յոլով միջոցս առ հոգելոյս տէր Սիմէոն սրբազան կաթուղիկոսն բազմիցս զթուղթ գրեալ և ի վերայ ոմանց ևս զթուղթս խնդրեալ, բնաւ ոչ ընկալաւ զթուղթ ինչ ի նմանէ (որոյ պատճառն էր նախ՝ Վրաց գալն ի վերայ երկրիս և զմեծամեծ աւերութիւնս գործելն, և այնր աղագաւ ճանապարհաց երկրիս փակիլն, և երկրորդ, մեծահոգ սրբազան Վեհին լուսահոգւոյ երկարատև հիւանդութիւնն կենամաշ, յորմէ իսկ զվախճան եգիտ կենացն)։ Իսկ թէպէտ երջանիկ հայրապետն հանգուցեալ ի տկարութեան իւրում զՅովսէփ վարդապետի խնդրեալ գիրսն ի վերայ Ռուսաց ոմանց և Հայոց գրեաց, որք և թէպէտ ի կենդանութեան նորուն ոչ յղեցան, այլ յետ վախճանմանն, ըստ հարկաւորութեանն նորին, ի նորոց սրբազան Վեհէս յղեցան հանդերձ սորին քանի մի թղթովքն ուրոյն պահարանեցելով (որպէս և յիշեալ է յայսմ յիշատակարանոջ ի յանցեալ թուոյ ի նոյեմբ. Ա (1)։ Այլ դեռևս այնց թղթոցն չհասեալ առ Յովսէփ պետն, նա սակս երկար ամանակաւ զթուղթ չընդունելոյն սորա և ի կողմանէ սրբոյ Աթոռոյս ևս զսուտ և զճշմարիտ համբաւս բօթալիցս լսելոյն, ի տագնապս տարակուսանաց և մտատանջութեանց անկեալ ի գնալն ի Մօսկովու ի Նոր Նախիջևան քաղաք (զոր ի խնամոց կայսերուհւոյն Ռուսաց ի Ղրիմու անդ վարեցեալ խողճալի մերազնեայ ժողովուրդքն նորապէս շինէին ի բնակետեղ իւրեանց)։ Զոմն ի նոցանէ, Գրիգոր անուամբ մարդ ուղարկեալ էր ի սուրբ Աթոռս իբր զսուրհանդակ հանդերձ թղթովք յինքենէ և ի ղրիմեցւոցն (որ անտի փօշտով էր եկեալ մինչև ցՄօզդոք)։

Նախ՝ առ ի գիտել ստուգապէս զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և
60բ հոգելոյս Հայրապետին մերոյ (զորոյ համբաւն մահուան տակաւին չէին լուեալ նոքա)։ Երկրորդ՝ ի տանիլ զՅովսէփ պետի խնդրեալ թուղթսն (որք յառաջագոյն ուղարկեալքն էին)։ Եւ երրորդ՝ վասն նորնախիջեւանցւոցն տանիլ զսրբալոյս մեռոն, նաև պատմել ևս սոտ զնոցին անցական և ներկայական որպէսն լրապէս։

Արդ, սրբազան Վեհս մեր զՅովսէփ պետի խնդրեալ թուղթսն ի հոգելոյս վեհապետէն յառաջագոյն յղեալ գոլով, յանցեալ թուոյ նոյ. Ա (1) և ինքն ևս զանդրանիկ օրհնութեան թուղթս գրեալ գոլով (զոր և ի վերդ յիշեցաք) և զկնի այնորիկ ի դեկ. ԻԳ (23) ևս առ Յովսէփ վարդապետն զթուղթ գրեալ և ի վերայ Բաքուայ յղեալ (զոր ևս յիշեալ եմք ի սոյն յիշատակարանոջս ի դեկտեմբերի ԻԳ (23), այժմ զքանի մի հարկաւոր մեծ և փոքր թուղթս գրեալ անդ առ ղրիմեցիսն և առ ռուսս ոմանս և

մանաւանդ զպատասխանիս Յովսէփ պետի գրեցելոցն և ի Մօզտօք եւ առ տեղւոյ կամէնդատն կ առ սրբոյ Աթոռոյս գործակալ Գեօրկինն և Մանկասարն վասն պահանջման հարկին եւ պարոն Գրիգորին անտի եկելոյ և վերադարձոյց զնա, յղելով ընդ նմա և ըստ հայցուածոյ նոցին զմի փոքր ամանով սրբալոյս մեռոն։

Եւ գրեցեալ թուղթքն են այսոքիկ, որք ի ներքոյ համառօտապէս բացայայտին։

308. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Նոր Նախիջեւանու գումբեռնաթ ենարալ պօռօճիկ և կաւալեր Վասիլ Ալէքսիչ Չէրթկովն, ծանուցանելով զվախճան հոգելոյս հայրապետին մերոյ՝ տեառն Սիմէօնի, և զիւր յաջորդիլն յԱթոռ հայրապետութեան։ Յորում ապա գրեաց զշնորհակալութիւնս, այսպէս՝ թէ գիր առաք ի յայդ երկրոջդ ձերում զետեղեալ համօրէն մերազնէիցն առաջնորդ և նուիրակ Յովսէփ եպիսկոպոսէն, նաև ի ժողովրդոց նորակերտ քաղաքիդ Նոր Նախիջեւանու ի ձեռն դէֆուդաթ պարոն Գրիգորին, որք գրեալ էին, ասէ, զանչափ գոհարանութիւնս զառատագոյն խնամոց մեծի կայսերուհւոյն, զորս արարեալ է դոցա։ Եւ զքէն ես զյոլով շնորհակալութիւնս էին գրեալ, ասէ, որ յօրէ մտանելոյն դոցա ի յերկիրդ յայդ մինչև ցարդ զպէսպէս բարերարութիւնս ցուցեալ ես և ցուցանես։ Ընդ որս և ծանուցեալ էին, ասէ, զսէրդ, զոր առ սուրբ Աթոռս ունիս։ Յիշեցուցանէ և զհոգելոյս սրբազան Վեհի առ սա զթուղթ գրելն, ասելով՝ թէ յաւուրս նորա ես գրէին դոքա զնոյն շնորհակալութիւնսն, որոց սակս և նա յանցելումն ամի զթուղթ գրեաց, ասէ, առ աստուածասիրութիւն ձեր։ Իսկ այժմ ի յընկալնուլս մեր, ասէ, նորապէս զշնորհակալութիւնս զձէնջ, հարկաւորեցաք և մեք շնորհակալի զքէն այսու օրհնութեան թղթով և օրհնել զքեզ (և այլն)։

Իսկ զկնի տալոյն զօրհնութիւնս գրէ՝ թէ այս է խնդիր մեր ի քէն, զի զդոյն խնամոց, զորս մինչև ցայժմ ցուցեալ ես դոցա, ես առաւելապէս ունիցիս առ դոսա, լինելով յամենայնի կացդուրիչ պանդխտութեանն դոցա։ Եւ որ ինչ օգուտն է, ասէ, դոցա և հարկաւոր առ ի շինութիւն նորոյ քաղաքին դոցա և ի բարւոք կառավարութիւն ինքեանց, խնդրեմ այնմ ամենայնի լինիլ ջանացօղ, և օժանդակել դոցա յամենայն այդպիսի իրս, և տիրաբար հոգ տանիլ։ Եւ ես, ասէ, ունելով զսէր և զբարեկամութիւն առ սուրբ Աթոռս՝ մխիթարել զմեզ սիրոյ թղթով և զՅովսէփ արքեպիսկոպոսդ ի սէր և ի խնամս ունելով՝ օժանդակել դմա յամենայն իրս։ Իսկ ի վերջոյ գրեաց զամենայն որպէսն սրբոյ Աթոռոյս և ինքեան ի դէֆուդաթ պարոն Գրիգորէն իմանալ։

Գաղափարն թղթոյս է ի նոր տետրն շարադրանաց, ի 163 երեսն։

61ա 309. Թուղթ օրհնութեան ևս սրբազան Վեհն առ Նոր Նախիջեւանու կամէնդատ Սիմէօն Գրիգորիչ Գուրիովն գրեաց, որ կարգեցեալ էր ի վերայ աղքատաց և տնանկացն Նոր Նախիջեւանու՝ առ ի խնամել զնոսա կայսերական ողորմութեամբն, ըստ ոճի վերոյ գրեալ թղթոյդ՝ ազդելով և սմա զառ Տէր փոխմանէ լուսահոգի սրբազան Վեհին և զիւր նորոգ հայրապետանալոյն, և շնորհակալելով զսմանէ վասն խնամակալութեան աղքատացն և տառապելոցն Նոր Նախիջեւանու քաղաքին և խնդիր, զի ես առաւել խնամածու լիցի նոցա և առ համայն մերազնեայսն ունիցի զսէր և զխնամս, և յորդորումն՝ զսէր և զբարեկամութիւն ունիլ առ սուրբ Աթոռս և առ ինքն և սիրանիշ գրով մխիթարել զինքն։ Նաև վասն Յովսէփ վարդապետին ես յատկապէս յանձնարարութիւն ի վերջոյ[77]։

310. Թուղթ ևս առ Նոր Նախիջեւանու իշխանսն և դատաւորսն մագիստրաթին, այս է դատարանին զքաղաքական, այսինքն՝ առ կապիտան պարոն Յովհաննէսն, սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Մկրտիչն, պարոն Մարտիրոսն, պարոն Յակոբն, պարոն մահտեսի Վարդանն, այլև առ համայն գլխաւոր իշխանսն, այսինքն՝ առ մահտեսի Դանիէլն, պօռօճիկ մահտեսի Կարապետն, մահտեսի Եղիազարն, պարոն Ծառուկն, պարոն Մարգարն, պարոն Գասպարն, պարոն Վարդանն, պարոն Յակոբն, պարոն Յարութիւնն, պարոն Ջօրին, մահտեսի Աստուածատուր աղայն, մահտեսի Մերկեանն և այլ ամենայն իշխանսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց, զոր գրեալ էին ընդ Գրիգորին[78]։ Յորում նախ յիշեցոյց զյառաջ քան զայս յանցեալ թուոյ նոյեմբերի Ա (1) լուսահոգի սրբազան Վեհի մեծ պահարանաւ թուղթսն (զորս ի վերայ սոցա և առ այլս գրեալ էր)։ Յետ վախճանի նորա ըստ կտակի նորին յղելն և զիւր ես զանդրանիկ օրհնութեան քանի մի թուղթս գրելն ի վերայ սոցա և ի վերայ այլոց ես յայն երկրոջն և ուրոյն պահարանաւ ընդ նմա յղելն (որպէս երկարօրէն գրեցեալ գոյ ի սոյն յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ նոյ. Ա (1)։ Իսկ ապա ծանոյց և զժամանիլն առ ինքն ի նոր թուոջս և ի յունվարի ԻԳ (23) թղթոց Յովսէփ վարդապետին և սոցա ձեռամբ դէֆուդաթ պարոն Գրիգորին, զորս առ լուսահոգի հայրապետն էին գրեալ։

Եւ զի ի հասանիլ սոցին թղթոց բերօղ յիշեալ Գրիգորին ի Մօզտօք, ի գալն անտի ի Նոր Նախիջեւանու իմացեալ էր զվերոյ յիշեալ յանցեալ թուոյ նոյեմբերի Ա (1) յղեցեալ թղթոց անցանիլն անտի և գնալն ի Հաշտարխան, զոր և պատմեաց սատ, վասն որոյ զայս ես ազդեաց սոցա։ Ապա գրէ, թէ զթուղթսն ձեր ընթերցեալ իմացաք զամենայն գրեալսն ձեր, մանաւանդ զլիովին որպիսութիւնսն ձեր, ասէ, ի Գրիգորէն լուեալ, թէպէտ վասն անցելոց վշտացն, զորս կրեալ էք, տրտմեցաք, այլ զի զմեծ խնամս էք գտեալ ի կայսերուհւոյն, որով հասեալ էք և հասանելոց ես էք բարութեան և երջանիկ կացութեան։ Վասն որոյ ուրախացաք, ասէ, և փարատեցան ի մէնջ տրտմութիւնքն, զորս ունէաք
61բ մինչև ցարդ վասն ձեր յաղագս զրկելոյն ձերոյ ի հայրենեաց ձերոց և յեկեղեցեացն և սակս պէսպէս // նեղութեանց, ասէ, զորս կրեալ էիք։ Ուստի զփառս մատուցաք Աստուծոյ և շնորհակալեցաք, ասէ, զկայսերուհւոյն մեծէ և այլն։ Ընդ որս և առ նոսա ես զմխիթարութիւնս և զօրհնութիւնս գրեաց։

Իսկ ապա զի գրեալ էին սոքա առ կայսերուհին և առ քնեազ զԳրիգոր Ալէքսանդրիչ Պօտէմկինին և առ իւրեանց գումբեռնաթն զշնորհակալութեան թուղթս գրել։ Ընդ որս գրեաց սրբազան Վեհս մեր, թէ ահա որպէս ասացաք, թէ լուսահոգին և թէ մեք գրեալ եմք, ասէ, զթուղթս յոլովս յայդ երկիրդ և յատուկ ես առ ձեզ, որք ի հարկէ հասին, ասէ, յայդր մինչև ցարդ և վերահասու եղէք, ասէ, գրեցելոցն ի նոսա, բայց որ խնդրեալ էիք, ասէ, գրել զթուղթս օրհնութեան և շնորհակալութեան առ կայսերուհին և առ քնէազն և առ ձեր գումբեռնաթն և այլոց ես Յովսէփ վարդապետն էր խնդրեալ գրել զթուղթս առ այդոսիկ, գիտասջիք, ասէ։ Զի մինչ այժմ ընկալեալ զթուղթս ձեր, զոր ինչ գրեալ էիք, իմացաք, հետախոյզ եղաք, ասէ, գրեցելոց լուսահոգւոյն, որոց օրինակքըն, ասէ, գոն աստ և տեսաք, ասէ, զի զայն ամենայն թուղթսն, զորս այժմ Յովսէփ վարդապետն և դուք խնդրեալ էք, գրեալ է լուսահոգին։ Միայն կայսերուհւոյն չէ գրեալ, թէպէտ, ասէ, բայց և վասն նորա ես

գրեալ է, ասէ, ի թղթոջ մեծի իշխանին Գրիգորի, թէ թէպէտ պատշաճ էր սակս այդքաննեաց խնամոց ինքնակալ կայսերուհւոյն, որ առ մեզ և առ ազգս մեր ևս առաւել առ պանդուխտ ժողովուրդսն մեր, որք ի Նորն Նախիջևան՝ մատուցանել զշնորհակալութիւնս նմա, բայց գիտելով զնորին զբաղմունսն, ոչ ետուք զձանձրութիւն պատուական գլխոյ նորին։

Այլ գիտելով զքեզ առաջին նախարար և պատկեր իսկ մեծութեան նորա և սիրող ազգիս մերոյ և մեզ, քեզ մատուցաք զշնորհակալութիւն։ Ուստի հայցեմ, զի ի դէպ ժամանակի զդոյն մեր շնորհակալութիւնդ մատուցես նորին բարձրութեանն և հայցեսցես ևս առաւել ունիլ ի վերայ մեր և ազգին մերոյ զնոյն խնամսն։ Եւ զայլս ըստ սմին աղերսանս գրեալ է, ասէ, լուսահոգին առ իշխանն մեծ Գրիգոր, զորս իմացեալ էք, ասէ, ի հարկէ մինչև ցարդ։ Եւ որովհետև լուսահոգին այսպէս էր գրեալ, ասէ, վասն որոյ այժմ մեք չտեսաք պատշաճ, ասէ, առ կայսերուհին զնոյն շնորհակալութիւնսն ուրոյն մատուցանել, և ոչ այլոցն ամենից, որոց Յովսէփ պետն խնդրեալ էր գրել։ Զի ահա հասեալ են, ասէ, յայդր գրեալքն լուսահոգւոյն, զորս մինչ մատուցէ Յօսէփ պետն առ իւրաքանչիւրսն, և ծանուցէ զմահ հոգելոյս հայրապետին մերոյ, և զմերս յաջորդելն, յայնժամ զոր ինչ ինքն և դուք պատշաճ տեսջիք, ասէ, գրել ումեք, մեզ գրեսջիք, ասէ, վերստին, և մեք յայնժամ գրեսցուք, ասէ, ըստ պատշաճին ում և կամիցիք. զոր Յովսէփ պետին ևս գրեցաք, ասէ։

Ազդեաց ապա և առ գումբեռնաթն սոցա՝ Վասիլ Ալէքսիչ Զերթկովն զթուղթն գրելն վասն իւրեանց շնորհակալութեան և յանձնարարու-
62ա թեան, // գրելով՝ թէ առ նա թէպէտ լուսահոգին գրեալ էր զթուղթ շնոր-
հակալական և յանձնարարական սակս ձեր, բայց որովհետև յատուկ իշխող և մերձակայ և յոյժ պիտանի է ձեզ, վասն որոյ մեք ևս գրեցաք ծանուցանելով նմա զորպիսութիւնս մեր։ Ընդ որս և ծանոյց առ իւրեանց քաղաքի կամէնդատ Սիմէօն Գրիգորիչ Գուրիովն զթուղթ գրելն ևս ըստ մասաց վերոյ յիշեալ գումբեռնաթի թղթոյն։

Եւ յետոյ գրէ, թէ առ հասարակութիւն օրհնեցելոյ քաղաքիդ ձերոյ ևս ոչ գրեցաք զկոնդակ, զի ոչ ևս գոյր նորապէս ինչ գրելի, զի զերկուս կոնդակս ի վերայ հասարակութեանդ ձերոյ և զԲ (2)-ս թուղթս ի վերայ իշխանացդ լուսահոգին էր գրեալ, ասէ։ Մեք ևս զկոնդակ մի ի վերայ հասարակութեանդ և զթուղթ մի առ իշխանսդ գրեցաք ընդ այն թղթոցն։ Վասն որոյ այժմ չունելով զնոր ինչ գրելի, միայն զայս թուղթ ի վերայ իշխանացդ գրեալ զպարոն Գրիգորդ, ասէ, դարձուցաք յետս։ Յորժամ և այս ևս առ ձեզ հասցի, և վերստին գրիցէք մեզ, ասէ, զորպէսն ձեր և զշինութիւն քաղաքիդ և եկեղեցեացդ, յայնժամ ևս գրելոց եմք, ասէ, հասարակապէս և յատկապէս զթուղթս առ ձեզ։ Իցէ թէ և ի ձէնջ ուխտաւորք եկեսցեն, ասէ, ի սուրբ Աթոռս յայսմհետէ, որովհետև ծանօթ եղև, ասէ, ճանապարհացն պարոն Գրիգորդ, բայց զփոքր ինչ սրբալոյս մեռոն էր խնդրեալ, ասէ, վասն ձեր Յովսէփ պետն, վասն որոյ զմի հոխայչափ յղեցաք, ասէ, առ դա բաշխել ձեզ։ Բայց դուք, ասէ, որք մինչև ցայժմ սիրով կառավարեալ էք զատապակիր ժողովուրդդ, այդ ունիմք զշնորհակալութիւնս զձէնջ։ Այժմ ևս պատուիրեմ, ասէ, ձեզ, զի ըստ դմին օրինակի մնալով միշտ ընդ միմեանս սիրով և միաբանութեամբ և գոլ լսող միմեանց և եղբայրաբար խորհելով զօգուտս իւրեանց և զբարեկեցութիւնս հասարակին, մնասջիք, ասէ, խաղաղութեամբ թարց նախանձու և խռովութեան։ Իսկ Յովսէփ վարդապետն վերահասու էր լեալ եկեղեցական և վանքական անօթիցն սոցա և այլ ամենայն ի-

րացն և սոցա խորհրդովն զպիտանեգոյնսն ի գաւթար էր արկեալ և իւրով կնքովն եդեալ էր յաւանդ առ սոսա, առ ի պիտանաւորութիւն նորակերտ եկեղեցեացն իւրեանց, զորս նորապէս շինէին ի Նորն Նախիջևան։ Իսկ զհնագոյն զգեստսն և զհանդերձեղէնսն տուեալ էր ի պէտս աղքատացն սոցա՝ իւրեանց հաւանութեամբն։ Նոյնպէս և զարդիւնս գանձանակացն սրբոյ Երուսաղեմի և սրբոյ Կարապետին և այլ վանորէիցն, որք եղեալ էին ի մէջ սոցա, ժողովեալ էր և տուեալ ի կառավարութեանս հասարակականս՝ վասն աղքատաց, տնանկաց, սրբոց և ի պէտս եկեղեցաշինութեանցն, բաց ի սրբոյ Աթոռոյս արդեանցն, զոր և գրեալ էր աստ։ Առ որ գրեաց սրբազան Վեհս մեր սրբոյ Աթոռոյս արդիւնսն ևս տալ սոցա ի պէտս եկեղեցաշինութեան (որպէս և ի ներքոյ ի թուղթն Յովսէփ պետին ևս գրելոց եմք)։ Վասն որոյ գրէ առ սոսա, թէ Յովսէփ պետն զայս ինչ հաւանելի բանս առնելն յայդր գրեալ էր մեզ, վասն որոյ հաճոյ թուեցաւ մեզ ևս, ասէ, զսրբոյ Աթոռոյս արդիւնսն ևս, որ լինի, ասէ, իբրև Բճ (200) թուման ըստ իւր գրեցելոյն, տալ ի պէտս եկեղեցաշինութեան
62բ յայդր։ Ուստի ահա գրեցաք, ասէ, դմա և ձեզ// ևս գրեմ, զի զարդիւնսն սրբոյ Աթոռոյս որքան և գտանի ի մէջ ձեր ներկայապէս, արկջիք, ասէ, ի ծախս շինութեան միոյ յատուկ եկեղեցւոյ, որ թէև բոլոր ծախուցն չբաւականասցի, թող մասն լիցի, ասէ, միոյ եկեղեցւոյ ծախուցն, առ ի լինիլ յատուկ իմն յիշատակ սրբոյ Աթոռոյս ի մէջ ձեր։ Զի թէպէտ յաղագս խռովութեանցն երկրիս պակասութիւնք յոլովք գոն սրբոյ Աթոռոյս, ասէ, բայց զի դուք վշտացեալ էք, ասէ, պատշաճ է լուսատու ծնողիս ձերոյ այժմ օգնել ձեզ այդքանեօք միայն գոնէ։ Իսկ յորժամ ստանայցէք, ասէ, դուք զբարւոք շինութիւնս, յայնժամ կարէք և դուք զհաւատոյ մայրս ձեր շահել որպէս և միշտ շահեալ էք, ասէ։ Եւ զամենայն զորպէսն մեր և սրբոյ Աթոռոյս գրեաց՝ ի պարոն Գրիգորէն իմանալ։

Զօրինակն թղթոյս ի նոր տետր... երեսն գտցես։

311. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Նոր Նախիջևան, առ գլխաւոր իշխանն մագիստրաթին նոցա՝ կապիտան պարոն Յովաննէսն գրեաց յատկապէս, յիշեցուցանելով նմա զյառաջ քան զայս զթուղթս գրելն հասարակապէս առ նոսա վասն հանգուցեալ սրբազան Վեհի վախճանմանն և իւր յաջորդելոյն։ Եւ ծանուցանելով նմա զՅովսէփ պետի և զիւրեանց թղթոց առ ինքն ժամանիլն ձեռամբ պարոն Գրիգորին, և զիւր ևս զնոցին պատասխանիսն հասարակապէս առ ինքեանս գրելն։ Եւ գրելով զերկարն գրեցելոց և զորպիսութեանց մերոց և սրբոյ Աթոռոյս ի հասարակ թղթոյն և ի Գրիգորէն իմանալ, ապա ծանոյց և առ գումբեռնաթն սոցա և կամէնդատն քաղաքին սոցա զթուղթս գրելն։ Իսկ ապա գրէ, թէ զայս համառօտ օրհնութեանս թուղթ ևս առ քեզ գրեցաք, նախ՝ ի շնորհակալութիւն վասն յատուկ սիրոյդ և հարազատութեանդ, որ առ սուրբ Աթոռս, և երկրորդ՝ սակս ցաւակցաբար հոգալոյդ, ասէ, զհասարակութիւն պանդուխտ ժողովրդեանդ եղբայրակցաց քոց։ Այլև զօրհնութիւնս և զյորդորմունս գրեաց՝ մնալ միշտ ի նոյն բարեգործութիւնսն և Յովսէփ պետին ևս ձեռնատու լինիլ յամենայնի, առ ի բարեպէս կարգել և սահմանադրել զամենայն ինչ ըստ կարգի և ըստ օրինի ի քաղաքոջն սոցա։

Օրինակն թղթոյս է ի նոր տետր 165՝ երեսն, զոր անդ գտցես։

312. Թուղթ ևս ի Նոր Նախիջևան առ սրբոյ Աթոռոյս գանձապետ՝ դէֆուզաթ և մագիստրաթի դատաւոր պարոն Մկրտիչն գրեաց (որ վաղե-

մածանօթ ևս էր ինքեան)։ Որում բաց ի վերոյ գրեալ Թղթոյդ զիտմանցն
յառակապէս ևս զշնորհակալութիւնս գրեաց առ այս, զի ի բանի ամս զորրոյ
Աթոռոյս արդիւնսն ամբողջ պահեալ էր, որոյ սակս և զոր գրեաց ի վերդ
ի հասարակ թուղթն իշխանաց առնուլ ի պէտս շինութեան միոյ եկեղեց-
ւոյ, սմա ևս ազդեաց՝ ասելով թէ այնպէս արասջիք։ Այլև ընդ Գրիգորին
սա զԴ (4)... էր յղեալ յանուն հոգեւոյս սրբազան Վեհին, զորս և Գրի-
գորն մատոյց սրբազան Վեհիս նորոյ, որոյ աղագաւ և սրբազան Վեհս
մեր զյատուկ օրհնութիւն գրեաց։

Զսոյն Թղթոյս օրինակն ևս ի 167 երեսն տես։

63ա 313. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Յովսէփ վարդապետն գրեաց, ի
պատասխանի ի ՌՄԻԹ (1780) թուոյն ի դեկտ. Ե (5) առ հոգեւոյս հայ-
րապետն գրեալ Թղթոյ նորին՝ յղեցելոյ ընդ դէֆութաթ պարոն Գրիգորին,
հանդերձ Նոր Նախիջևանու իշխանաց Թղթովն[76]։ Յորում նախ ծանուցա-
նէ սմա զկիւրեանց Թղթոց առ ինքն հասանիլն ի նոր թուոյս Յունվարի
ԻԳ (23)։ Իսկ փոքրիկ թուղթ մի ևս յառաջ քան զայս էր ժամանեալ ի
սմանէ առ սրբազան Վեհս մեր, որ գրեցեալ էր ի Պետրբուրգ ի յօգոստոսի
ԻԳ (23), յորում գրեալ էր սա, թէ զամենայն ծանրութիւնսն մեր յղե-
ցաք ի Մոսկով, և մեք ևս ելանելոց եմք աստի։ Զորոյ ևս առ ինքն հա-
սանիլն ծանոյց սմա սրբազան Վեհն։ Եւ յայն թուղթն զայս ևս էր գրե-
ալ սա, թէ զՆրուսաղեմայ Կարապետ պետի որպէսն գրեալ եմ յառաջ՝
Այլ զի այն թուղթն դեռ մինչև ցարդ չէր հասեալ աստ, գրեաց սրբազան
Վեհն յայսմիկ Թղթոջ, թէ չէ հասեալ։ Բայց և յայն Թղթոջն, զոր այժմ ի
Նախիջևանու էր գրեալ, սա գրեալ էր, թէ ընդ Եսայում այսինչ և այնինչ
գրեցի։ Բայց զի Եսային ևս դեռ չէր եկեալ աստ, այլ մնացեալ էր ի
Ղզլար, ըստ ասից Գրիգորին, գրեաց սմա սրբազան Վեհն, թէ տակա-
ւին ոչ եկն աստ Եսային և այլն։

Եւ ապա գրէ, թէ ի վերոյ յիշեալ օգոստոսի ԻԳ (23)-էն մինչև ցդեկտ.
Ե (5), յորում, ասէ, զայս թուղթս գրեալ ես, այս Բ (2) թուղթս միայն
է հասեալ մեզ ի քէն, ասէ, և ոչ այլ ինչ։ Իսկ մեք, ասէ, յետ վախճանի
լուսահոգւոյն մինչ կոչեցեալ եղաք ի յայս աստիճան, զոյին ի նմանէ,
ասէ, յոլով թուղթք գրեցեալք, պահպանեալ և կնքեալ։ Ընդ որս և մեք
ի նոյեմբերի Ա (1) զքանի մի թուղթս գրեցաք, ասէ, յայդ երկիրդ, և
զայնս ևս ուրոյն պահարան արարեալ, ասէ, և գրեալ ի ձեռս գործակա-
լացն Մօզտօքու, որպէս և լուսահոգւոյնն էր, ասէ, և զերկոսեանն ի մի
պահարան եդեալ գրեցաք, ասէ, դարձեալ ի ձեռս Մօզտօքու գործակա-
լացն և յղեցաք, ասէ, ի Թիֆլիզ առ տէր Աբրահամն՝ յղել առ նոսա ի
Մօզտօք։ Ըստ որում դու, ասէ, քանիցս գրեալ ես աստ, թէ ի ձեռն տէր
Աբրահամին յղեսջիք զձեր թուղթն, նա փութով հասուցանէ առ իս։ Եւ
ինքն ևս յայնմ միջոցի զթուղթս յղեաց, ասէ, ի քէն աստ ի մարտէն և ի
մայիսէն գրեցեալք. և գրեաց, թէ զպատասխանիսն զոցա առ իս յղե-
ջիք, զի յղեցից առ Յովսէփ վարդապետն։ Մեք ևս յղեցաք, ասէ, առ նա
(որպէս և գրեալ գոյ ի սոյն յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ նոյեմ-
բերի Ա (1) ի թուղթսն տէր Աբրահամին և այլոց)։ Իսկ զի այն թուղթքն
չէին հասեալ ի ձեռս Մօզտօքու գործակալացն, այլ անտի անցեալ էին
դէպ ի Հաշտարխան, գրէ սրբազան Վեհն, թէ ոչ գիտեմ թէ տէր Աբրա-
համն որպէ՞ս է յղեալ զայն պահարանն, որ չէ հասեալ, ասէ, ի ձեռս
Մօզտօքու գործակալացն, և ոչ են բացեալ և հանեալ զթուղթսն իւրե-
անց, զի ասացեալ են, ասէ, պարոն Գրիգորիդ, թէ թուղթքն այն անցե-

ալ աստի գնացին ի Հաշտարխան, և զնշան չտեսանելոյն իւրեանց, ասէ,
ցուցեալ, թէ հոգևոր տիրին սոսա, թէ ընդէ՞ր զմատն մի գիր ևս ոչ մեզ
գրես։ Եւ Գրիգորդ եկեալ պատմեաց մեզ, ասէ, և իմացաք, ասէ, որ նո-
քա զայն պահարանն չեն տեսեալ. ուստի գրեցաք նոցա, ասէ, այժմ գրել
63բ մեզ // զորպէսն այս բանիս։ Այլ որովհետև սոքա էին ասացեալ, ասէ, նո-
քա, թէ թուղթք անցին և գնացին, գիտեմք, ասէ, զի առ քեզ են հասեալ
մինչև ցարդ։ Բայց մեք, ասէ, զմեծ կասկածանս ունելով, թէ թուղթքն
այնք նենգիցին ի ճանապարհին, զգիր մի ևս համառօտ, ասէ, ի վերայ
Բաքուայ գրեցաք առ քեզ, զի պարոն Եղիազարն հասուցէ, ասէ, ի Հաշ-
տարխան առ Աւետիսն՝ առ ի յղել առ քեզ (զոր յիշեալ եմք ի սոյն յի-
շատակարանոջս յանցեալ թուոյ ի դեկտ. ԻԳ (23)։ Իցէ թէ, ասէ, այն
ևս քեզ հասցի շուտով, որոց զհասանիլն առ քեզ՝ շուտով գրեսցես մեզ,
ասէ, ի միամտութիւն։

Ապա ի պատասխանիս գրեցելոցն սորա, որ գրեալ էր առ կայսե-
րուհին և առ իւրայինսն և առ մեծ իշխանն առ այլս գրել զթուղթս, գրէ
սրբազան Վեհն, թէ ահա զայնս գրեալ է լուսահոգին, բացի կայսերուհ-
ւոյն և յորդւոյն և ի Մոսկովու գումբեռնաթէն։

Իսկ և վասն կայսերուհւոյն ևս, զոր ինչ գրեալ էր լուսահոգին ի
Թղթոջ մեծի իշխանին (որ ի վերդ ի Նախիջևանու իշխանաց հասարակ
Թղթոջն գրեալ է), սմա ևս ծանոյց, թէ այս ինչ է գրեալ։ Ահա այսպէս
գրելով, իբր թէ կայսերուհւոյն ևս է գրեալ, ասէ, մնայ միայն որդին և
Մոսկովու գումբեռնաթն։ Իսկ մեք թէ այս երկուցս գրէաք, ասէ, հարկ
էր, ասէ, և այլոցն գրել, ըստ որում նոր է մերն։ Վասն որոյ և այժմ և
ոչ միոյ ուրուք ի նոցունց գրեցաք ինչ, ասէ, մինչև համայն թուղթքն մեր
քեզ հասցին, ասէ, և յայնժամ թէ վասն նախիջևանցւոցդ և թէ սակս
մեր նոր նստելոյս, և թէ այլ ևս հարկաւորեաց, զոր ինչ և պատշաճ տե-
սեալ գրեսցես մեզ, ասէ, և առ որս և խնդրեսցես, ասէ, զթուղթս, մեք ևս
գրեսցուք յայնժամ։ Զայսմանէ առ իշխանսն ևս գրելն ծանոյց սմա։

Գրեաց ապա և զառ Նախիջևանու գումբեռնաթն և կամէնդատն
զթուղթս գրելն։ Որոց յաղագս և, ասէ, ահա մի կողմն բաց յղեցաք ի
ձեռս քոյ։

Այլև առ Մօզտօքու կամէնդաթն ևս զթուղթ գրեաց այժմ սրբազան
Վեհն ըստ գրեցելոյ սորին. գրելով նմա առանց իւր հրամանի և վկա-
յականի չթողուլ զոք ի կարգաւորաց մերոյ ազգի մտանել յայն երկիրն
(զոր ի ներքոյ գրելոց եմք)։ Ըստ որում կայսերուհւոյ հրամանն այն-
պէս էր, որ թարց վկայականի սրբոյ էջմիածնիս կաթուղիկոսին ի մերս
ազգէ կարգաւոր մի մտցէ ի յերկիրն իւր։ Զոր ևս ա[...]եաց սմա, թէ այս-
պէս գիր գրեցաք Մօզտօքու կամէնդատին։

Իսկ և վասն Թիֆլիզու տէր Պետրոսին գրեալ [...] սա, թէ ես գրեալ
եմ նմա գալ ի Նորս Նախիջևան. ինքն ևս յօժար է, դու ևս գրեա նմա
ի գալ։ Ուստի և սրբազան Վեհն զթուղթ գրեաց առ տէր Պետրոսն առ
ի գնալ (զոր ի ներքոյ եմք գրելոց)։ Եւ զվկայական ևս գրեաց վասն նո-
րա և յղեաց ի վերայ Մօզտօքու կամէնդատիցն (զորոյ օրինակն ևս եմք
64ա ի ներքոյ գրելոց)։ Բայց զի կասկածէր սրբազան Վեհն, թէ կամ տէր
Պետրոսն ինքն չերթիցէ և կամ չթողուցուն, // զթուղթն և զվկայականն
յղեաց ի ձեռն Կարապետ վարդապետին, որ ի Թիֆլիզ, զի թէ նա ոչ իցէ
գնալոց, մի տացէ զթուղթսն նմա։ Ուստի այժմ գրեաց սմա, թէ գրեցաք
տէր Պետրոսին ի գալ յայդր և այլն։

Բայց և գրեալ էր սա զմխիթարութիւն, զշնորհաւորութիւն և զյոր-

դորումն, այլև զկանոնս ոմանս և զպատուէրս գրել ի Նորն Նախիջևան։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ զմխիթարութիւն և զշնորհաւորութիւն յառաջ լուսահոգին Բ (2) կոնդակաւ և մեք միով կոնդակաւ գրեալ և յղեալ եմք, ասէ, իսկ զկանոնս և զպատուէրս այժմ անպատեհ վարկաք, ասէ, գրել, մինչև այն թուղթքն մեր քեզ հասցին, ասէ, և զպատասխանիսն ընկալցուք, և այս ևս քեզ հասցէ, ասէ, ապա թէ՝ զոր ինչ և պատշաճ տեսցես, գրեսցես մեզ, ասէ, յայնժամ և մեք գրեսցուք, ասէ, ըստ պատշաճին։

Այլ որ զանօթսն վանորէից և եկեղեցեացն նախիջևանցւոց, զորս ի Ղրիմու բերեալ էր նոցա, արկեալ էր սա ի գաւթար և տուեալ էր նոցա կնքով յաւանդ և այլն (զոր ի Նախիջևանու իշխանաց հասարակ թղթոյն ևս յիշեալ եմք երկարապէս, որ ի վերդ)։ Առ այն գրէ, թէ իմացաք։ Սակայն որովհետև զԵրուսաղեմայ և այլ վանորէից զանձանակաց արդիւնսն տուեալ էր ի պէտս աղքատացն նախիջևանցւոց և սակս եկեղեցաշինութեան, բաց ի սրբոյ Աթոռոյս արդեանցն, զոր և գրեալ էր, թէ Բճ (200) թուման է։ Գրեաց և զայն ևս տալ ի պէտս շինութեան միոյ եկեղեցւոյ, որ թէև բոլոր ծախուցն չբաւականասցի, ասէ, թող մասն լիցի, ասէ, միոյ եկեղեցւոյ ծախուց, առ ի լինիլ յիշատակ իմն սրբոյ Աթոռոյս, ասէ, ի մէջ դոցա (որ ի վերդ ի թուղթն նախիջևանցւոց ևս գրեցաւ)։

Ընդ որում յիշէ և զայս, որ հոգելոյս հայրապետն ի ՌՄԻ (1771) թուոջն մինչ Գիլանու եկեղեցին ընդ մեծի մասին քաղաքին այրեցեալ էր, գրեաց տեղւոյ նուիրակին տալ զնուիրակական արդիւնսն ի պէտս շինութեան եկեղեցւոյն (որ յիշեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն, որ յաւուրս նորա, ի ՌՄԻ (1771) թուոջն և...)։ Նոյնպէս և մեք տեսանեմք, ասէ, ահա այժմ զդոսա այդքան վշտացեալ և զայդքան շինութիւնս ևս առնելոց են, ասէ, որ է մեզ տէրունի, ասէ, վասն որոյ պատշաճ համարեցաք, ասէ, օգնել դոցա այդու և ունիլ յիշատակ իմն սրբոյ Աթոռոյս ի մէջ դոցա։ Ուրեմն այսպէս արարեալ մեզ գրեսցես, ասէ։

Իմաց առնէ և զմեռոն յղելն ընդ Գրիգորին այժմ առ սա վասն նորնախիջևանցւոցն՝ ըստ խնդրոյ սորին (զոր և ի նախադրութեան թղթոյն, որ ի վերն յիշեալ եմք)։

Նաև խնդրեալ էր սա զմի վարդապետ յղել և յանուանէ ևս յիշեալ։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ լուսահոգին յառաջագոյն վասն դորա գրեալ է քեզ, զայն այնպէս գիտեցեալ զինչ ևս մտածիցես դու, ասէ, առ այն և տեսցես պատշաճ։ Գրեա մեզ կրկին, ասէ, և մեք որպէս պատշաճն իցէ, այնպէս արասցուք, ասէ։

Յետ այսց, ծանուցանէ սմա և այժմ ի Նոր Նախիջևան զառ ով
զթուղթս գրելն, գրելով թէ այժմոյս միայն իշխանացդ թղթոյ պատաս-
խանին գրեցաք, որպէս տեսանելոց ես, ասէ, և զԲ (2) թուղթս ևս,
64բ ասէ, կապիտան // պարոն Յովաննիսին և մեր գանձապետ պարոն
Մկրտչին գրեցաք, ասէ, և այլ ոչ ումեք, զի մի յետացուսցուք, ասէ, զԳրի-
գոր։ Իսկ զայլոցն ամենից անուանսն, թէ զքո գրեալսն և թէ զիւրեանց
գրեալսն, զամենայն գրեցաք, ասէ, ի հասարակ թղթոջն, զոր գրեցաք,
ասէ, ի վերայ իշխանացդ։ Իցէ թէ որքան յայդր ես, ասէ, կրկին գրեալ
առ մեզ զթուղթ, առնուցուս, ասէ, այդրէն զպատասխանին։ Ըստ որում
գրես, ասէ, թէ մինչև ցմայիսն աստ եմ լինելոց, լինի թէ ուխտաւորք
ևս եկեսցեն, ասէ, որպէս գրես և լաւապէս տեղեկացեալ որպիսութեանց
դոցա ուրախասցուք, ասէ, և ինքեանք ևս մխիթարեսցին, ասէ։

Իսկ մեք և սուրբ Աթոռս կամք, ասէ, սակաւ մի ի հանդարտութեան,

թէպէտ հաշտութիւն եղև, ասէ, բայց վարեցեալ ժողովուրդսն դեռ ոչ եկուն, ասէ, յետս։ Եւ զայլ որպէսն ի Գրիգորէն իմանալոց ես, ասէ։

Զօրինակն սորա ի նոր տետր 60 երեսն գացես։

314. Փուսուլայ ևս գրեաց առանձնակի սրբազան Վեհն առ Յովսէփ վարդապետն, թէ վասն արդեանց մերոց, որ գրեցաք ի ծախս եկեղեցաշինութեան տալ, թէպէտ այն է դիտումն մեր՝ այդպիսի յիշատակ մի հոգևոր ի մէջ դոցա ի կողմանէ սրբոյ Աթոռոյս գացի, որպէս և գրեցաք, որովհետև նոր տէրունիք լինին սրբոյ Աթոռոյս։ Բայց գոյ և այս, զի սաղիմացիքն հատեցուցեալ են զՊօլիս պէսպէս վայրաբանութեամբ և իբրու ի խեղդ արկանին, թէ ընդէ՞ր ի ներքոյ հրամանաց իւրեանց արկանեն զնուիրակն Երուսաղեմի թղթով իւրեանց մտանել յայն երկիր։ Որ և զթուղթն այն, զոր գրեալ ես երբեմն առ Մովսէս արեղայն այն, որ աստի եկեալ յայդր դարձաւ ի Սաղիմ այտի, ցուցեալ է ի Պօլիս ոմանց, և սկսեալ են զժայթքմունս արձակել։ Որ և փութով ի Սաղիմ գնացեալ Մովսէսն այն, և անտի զՎարդան վարդապետն ոմն ևս առեալ ընդ իւր՝ եկեալ է ի Պօլիս, հռչակելով թէ նուիրակ երթամք ի Հաշտարխան, զի սաղիմացիք Կարապետին չհաւանեալ՝ զմեզ յղեցին, որ մեք գնամք և զնա յետս յղեմք։

Զայս յառաջագոյն գրեալ էր աստ Մինաս վարդապետն և մեք զգիրն զայն յղեցաք առ քեզ ընդ թղթոց մերոց ի նոյն. Ա (1)։ Իսկ այժմ դու զԿարապետէն գրես, և զՄովսիսէն կամ զՎարդանէն զոչ ինչ գրես։ Թուի թէ ծածուկ իցեն մտեալ ի յերկիրդ ըստ կարծեաց մեր Մինաս վարդապետին, զոր գրէ ի նոյն թղթին, զոր մեք ևս կարծեմք։ Ուրեմն զգոյշ լեր առ ի չբողբոջեցուցանել ինչ նոցա յայդր։

Այս է գրելս սիրելւոյդ, զի նոքա այնպէս նենգեալք՝ նենգեցուցանեն և զպօլսեցիսն, և գոն անդ բծախնդիրք, որք որոնեն զայդպիսին ինչ հարկանել զանուն սրբոյ Աթոռոյս զքարի։ Արդ, թէ լսիցեն, թէ զԵրուսաղէմի և զսուրբ Կարապետի և զայլոց արդիւնսն այսպէս արարեալ զիւրեանցն թողին, մեծ առիթ լինի հակառակութեան, և գլխացաւութիւն մեզ յայսկուսէ։ Ահա այսու պատճառաւ մանաւանդ մեր արդեանցդ աղագաւ ևս
այդպէս գրեցաք։ Ուրեմն և դու այդպէս արա։ Մանաւանդ և յայլ բանս
65ա և յիրակութիւնս մի յոյժ անպատուեր զԵրուսաղէմ և զսուրբ Կարապետ
զամենայն, զոր ինչ առնես //և տնօրինես, բարիք են, այլ մեղմօրէն և
բազմահանճար իմաստութեամբ ջանա զամենայն ինչ յօրինել և կար-
գադրել, զի հակառակասիրաց առիթ չլինիցի։

Իսկ զանօթսն եկեղեցեաց քոյով կնքով տալդ յաւանդ, թէ վասն նորակերտ եկեղեցեացդ է, բարի միտք է, իսկ թէ ունիս և այլ ինչ միտք, ի բամբասանաց զգուշացիր, առ ի չյարաբերդել զբարուրանս ինչ յԱթոռս թշնամեաց սորին, թէ սակս այսպիսեաց իսկ էր հետևումն սոցա։ Որպէս զի և մեք զՊօղոսինն յամենայն ժամ իբրու ի զէն առեալ մեզ ասասցուք, մի՞թէ ագահեաց ինչ զձեր Տիտոս և այլն։ Քանզի ներկայս այլ իմն է, գրեցի քեզ սակաւ մի ի դեկ. ԻԳ (23) ի վերայ Բաքուայ, թէ պատրիարքըն ընդ մեզ խոշընդ ընթանայ։ Եւ թէ զի՞նչ պատճառն առ նախանձու լուսահոգւոյն, իբր թէ ընդէ՞ր վասն նորա կտակեաց յաջորդել զԱթոռն։ Եւ որպէս Եսաւ յետ օրհնելոյն Յակոբայ անդրանիկ օրհնութեամբ յԻսահակայ, ասէր՝ մերձեսցին աւուրք կարեաց հօր իմոյ, զի սպանից զՅակոբ զեղբայր իմ, այսինքն է՝ մեռցի հայր իմ, զի ժամ լիցի ինձ սպանանելոյ զեղբայր իմ, նոյնպէս և նա այժմ զմշտնջենական կենդանի անուն

լուսահոգւոյն կամի մահացուցանել պէսպէս վատահամբաւութեամբք, ապա և զմեզ յաջողակի սպանանել: Թէպէտ և նմա այնպէս յաջողի, որպէս Եսաւայ, այլ զաստուածաշարժ հանճարեղութիւնն Ռեբեկայ և Իսահակայ առնուլ մեզ ապացոյց ի դէպ է, զօգել զմեզ ի խուն ինչ միջոցի ի միջասահման ընթացս (որպէս և նոքա զՅակոբ ի Միջագետս), որ է արքունական պողոտայ և անմեղադրելի յամենայն ումեքէ, մինչև տացէ և մեզ Աստուած զժամանակ ժառանգել զամենայն ժառանգութիւնս Հօր մերոյ և նմա թողուլ և դիմել ի սէիր: Եւ թէ զի՞նչ ընդդիմութիւնքն մեզ և զինչ վատահամբաւելն զլուսահոգին, զբազումն թողեալ, զկարճառօտն ասացից:

Տակաւին զանուն մեր չյիշեցուցանէ ի Պօլիս և զմահսարն մեր ոչ կնքեցուցանէ և վատահամբաւէ լուսահոգին ագահ, արծաթասէր և կեղեքիչ ազգի և սատ շռայլաբար ցրուօղ: Վասն որոյ զկանօնս դնել կամի ի վերայ մեր, և զանխոնարհելի իշխանութիւնն սրբոյ Աթոռոյս ի ներքոյ հրամանին իւրոյ արկանել: Եւ դեռ չէ եկեալ, և թէ եկեսցէ, ունիմք և մեք յայնժամ զասելիս, զորոց զլիապէսն գրեցից քեզ յետոյ: Իշխանքն ամենեքեան չեն կամակից, բաց ի սակաւուց պետառաքաղաց, վասն այն այսքան յետաձգի: Այլ զի ստամբակ է, կամի պէսպէս հնարիւք ի կամս իւր ընկճել զամենայն և կայ այժմ այսպէս, և կամի հաստատել, ապա թէ՝ զփարմանսն և զմահսարսն հոգալ և յղել: Եւ առ այսոսիկ եթէ զկրծեալ սրտի սակս լուսահոգւոյն անուանաբեկութեան կամիցիս ինչ գրել ի Պօլիս ումեք, մի այնպէս, զի վերստին առիթ լիցի բժախնդրին, այլ իմաստութեամբ զերախտամոռն յամօթ առնել բարւոք է, քան թէ կծուբանիւ կատաղի առնել: Այլև որ գրեալ էիր, թէ զոր ինչ թուղթս և գրեսցես, հարկաւոր է սաստն առ մեզ լինել, և կամ մի կողմն բաց յղեա
առ մեզ, նոյնպէս և որ գրես, թէ թուին Փրկչին դնել ռազմով, որ ռուսքն
56բ տեսցեն, // վասն ռուսա՞ց թղթոցն միայն գրես, թէ հայոցն ևս գրեսցես
մեզ:

315. Թուղթ ևս սրբազան Վեհն ի վերայ Մօզդօքու կամէնդատ պօլկովնիկ Ալէքսանդր Ֆէտօրովիչ Իվանովն գրեաց, ծանուցանելով նմա նախ՝ զլուսահոգի սրբազան Վեհի մահն և զիւր յաջորդելն զԱթոռս սուրբ և երկրորդ՝ գրելով, թէ որովհետև ըստ հարկի պաշտամանս մերոյ առ ամենայն բարեկամս և սիրելիս մեր և սրբոյ Աթոռոյս զթուղթս գրեմք, վասն որոյ և զայս օրհնութեանս թուղթ ևս քեզ գրեցաք, նախ ի ծանօթութիւն մեզ քոյ, որ մինչև ցարդ ունեցեալ ես առ սուրբ Աթոռս զսէր, որոյ սակս և հոգելոյս հայրապետն մեր երբեմն զթուղթ է գրեալ քեզ, և երկրորդ՝ ի խնդրել ի քէն, զի որպէս զհրաման ունիս ի կայսերուհւոյն առանց վկայական գրոյ ի սուրբ Աթոռս նստօղ կաթուղիկոսին՝ չթողուլ զոք ի կարգաւորաց ազգին մերոյ մտանել յերկիրդ Ռուսաց, նոյնոյ հրամանին կատարօղ լիցիս միշտ, և թարց մերս կարմրակնիք վկայական գրոյ մի զոք ի կարգաւորաց ազգիս մերոյ թողուցուս մտանել ի երկիրդ ձեր յայդր: Յետ այսց և զյորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս ինքեան և ի խնամս առ մերայինսն և առ Յովսէփ պետն, որք անդ, հանդերձ օրհնութեամբք: Եւ ապա վասն սոյն թղթոյս տանօղ Գրիգորին ևս գրեաց՝ շուտով ուղևորել անտի:

Զօրինակն սորա ի նոր տետր 54 երեսն գտցես[80]:

316. Թուղթ ևս ի Մօզդօք առ մեր գործակալ պարոն Գէօրկին և Մանկասարն. յիշեցուցանելով սոցա զյառաջ քան զայս ի նոյեմբերի

(1) զլուսահոգի սրբազան Վեհի պահարանաւ թուղթսն հանդերձ իւր գրեալ թղթովքն յղելն ի Թիֆլիզ առ տէր Աբրահամն, հասուցանել սոցա, ընդ որս և առ սոսա ևս զթուղթ գրելն, իբր սոքա զպահարանն բացեալ, զիւրեանցն հանցեն և զմիւսն յղեսցեն առ Յովսէփ վարդապետն (որպէս յիշեալ գոյ ի սոյն յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ նոյեմբերի Ա (1): Այլ զի անցեալ էին այն թուղթքն ի Մօզդօքու և գնացեալ դէպ ի Հաշտարխան, և ի ձեռս սոցա չէին հասեալ, որպէս և սոքա պարոն Գրիգորին ասացեալ էին (զոր ի վերդ ի թուղթն Յովսէփ պետին ևս գրեցաւ): Ուստի գրէ առ սոսա սրբազան Վեհն, թէ իմացաք, որ այն գրերն անցեալ և գնացեալ են: Իսկ թէ դուք տեսեա՞լ էք, ասէ, զայն պահարանսն և զթուղթսն ձեր ի նոցանէ և հանե՞ալ էք, թէ ոչ, զայն չիմացաք: Վասն որոյ գրեմ, ասէ, ձեզ, զի գրեսջիք, ասէ, զորպէսն այս բանիս մեզ, թէ դուք զայն թուղթսն տեսի՞ք, թէ ոչ, զի միամտիցուք: Ազդեաց սոցա և զթուղթ գրելն իւր այժմ առ կամէնդատն քաղաքին սոցա հանդերձ հարկաւոր զիտմամբն և պատուիրեաց սոցա ևս, թէ զգուշաբար մուղայէթ լիջիք, զի առանց մերս գրոյ մի մտցէ յայդ երկիրդ կարգաւոր ոք ի մերս ազգէ: Ապա հարկ է զգիրն իւրեանց անպակաս առնել աստի: Իսկ ի վերջոյ զողջոյն և զօրհնութիւն գրեաց տեղւոյ համայն քահանայիցն, իշխանացն և ժողովրդոցն ամենից:

Օրինակն սորա է նոր տետր ի 55 համարսն[81]:

317. Թուղթ ևս ի Թիֆլիզ առ տէր Պետրոսն գրեաց (որ ի վերն ի
66ա Թուղթն // Յովսէփ վարդապետին յիշեցաւ), թէ ի ներկայումս գիր ըն-
կալաք ի Յովսէփ վարդապետէն, որ զքեզ խնդրեալ է երթալ անդ ի պիտանաւորութիւն Նոր Նախիջևանու ժողովրդեանն, ըստ որում և դու կամս ունիս, ասէ, որ և յայդր առ արքայն ևս է գրեալ, ասէ վասն քոյ առ ի յղել որպէս լուաք: Վասն որոյ պատուիրեմ, ասէ, քեզ, զի թէ կամս ունիս երթալոյ, երբ և զոր ինչ ցուցցէ քեզ անդ Յովսէփ պետն զպաշտօնս, զայնս մերովս հրամանաւ գիտցեալ կացցես, ասէ, ի պաշտօնսն յայնոսիկ, զհայեցողութիւնս մտացդ աչաց ի հոգևոր գլուխ քո ի սուրբ Աթոռս և առ մեզ ունելով անթարթ, ասէ, ըստ իմաստնոյն խրատու: Եւ ընդ հարազատութեանն շաւիղ ընթանալով՝ ուշ յայն իսկ ունիցիս եդեալ, ասէ, զի մի վրիպիցիս ի նպատակէն հանդէպ կացելոյ ոչ յաջ և ոչ յահեակ: Ահա և զյատուկ գիր վկայութեան գրեալ վասն քոյ, ասէ, առ սահմանակալս երկրին Ռուսաց (զոր ինքեանք պաշփօրթ կոչէն, ասէ). յղեցաք ընդ սոյնոյ ունիլ քեզ ի ձեռին, զի չլինիցի, ասէ, արգելիչ ոք քեզ ի մտանելդ յայն իշխանութիւն: Զորս և յղեցաք, ասէ, առ Կարապետ վարդապետն մեր, որ յայդր, զի թէ երթալոյ լիցիս, տացէ քեզ և երթիցես, ասէ: Եւ թէ այտի, թէ ի Մօզդօքու և թէ ի Նոր Նախիջևանու գրեսցես մեզ, ասէ, զքոյդ որպէսն:

Զգաղափարն թղթոյս ի նոր տետր 54 երեսն գտցես[82]:

318. Թուղթ վկայական ևս (որ ըստ ռուսաց պաշբօրթ կոչի, որպէս ի վերոյգ ի թուղթսն Յովսէփ պետին և տէր Պետրոսին գրեցաւ)[83] գրեաց վասն նորա ի վերայ սահմանակալ կամէնդատացն Ռուսաց, այսպէս թէ ծանուցումն լիցի սահմանակալ պարոն կամէնդատացդ ազգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսրութեանն, զի զսոյն գրաբեր տէր Պետրոս Պետրոսեան քահանայս, որ է ի մերս ազգէ և օրհնօք մերս եկեղեցւոյ, այսու վկայական գրով մերով առանց ընդդիմադարձութեան ի ներս ըն-

կալեալ՝ ուղևորեսցիք ձերով բաշրօրթիւն առ Ռուսաց երկրի Հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն և լերուք ողջ։

Զսոյն թղթոյս գաղափարն գտցես ի Նոր տետր 168 երեսն։

319. Թուղթ օրհնութեան ի Նոր Նախիջեւան առ Դանիէլն, որ ձեռամբ Գրիգորին յղեալ։

320ա. Թուղթ ևս առ Մկրտիչն, որ յղեալ էր ձեռամբ Գրիգորին ևս էր զկէս։ Արդ, վերոյ գրեալ Նոր Նախիջևանու զումբեռնաթի և կամէնդատի և մերազնեայ իշխանաց գրեանքն յղեցան ի ձեռն Յովսէփ վարդապետին։ Իսկ Մօզդօքունն գրեցան ի ձեռւ խլրաքանչիւր տեարցն, և տէր Պետրոսի թուղթն ևս հանդերձ բաշրօրթիւն յղեցան ի ձեռն Կարապետ վարդապետին ի Թիֆլիզ (որպէս ի ներքոյ ի թղթոջ նորին ևս յիշելոց եմք)։ Որք ամենեքեան գրեալք յամս. [փետրվար] Դ (4) յանձնեցեալք եղեն պարոն Գրիգորին՝ ի տանիլ, որ և ի նոյն աւուրն ել։

Բայց քանզի Թիֆլիզու առաջնորդ քանաքեռցի Յովաննէս վարդապետն ոչ բարւոք վարիւր ընդ ժողովրդեանն, վասն որոյ ոմանք անտի
66բ բազմիցս զանշնորհակալութիւնս // գրէին զնմանէ առ սրբազան Վեհն։ Իսկ սրբազան Վեհն ևս նկատելով ի նա խռովասիրութիւն, կամեցաւ ի ներկայումս բերել զնա անտի։ Ուստի զմի փոքրիկ կոնդակ գրեաց ի Թիֆլիզ ի վերայ տէրունի վիճակացն սրբոյ Աթոռոյս, որով զընծայի Կարապետ վարդապետն՝ միաբանն սրբոյ Աթոռոյս, որ այժմ անդ էր, վէքիլ կարգեաց ի տեղի առաջնորդին, որպէս զի Յովաննէս վարդապետն զառաջնորդական գործն նմա յանձնեալ, եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ զերկուս թուղթս ևս առ Յովաննէս և Կարապետ վարդապետսն, և զքանի մի թուղթս ևս առ այլս ոմանս գրեաց անդ, ևս սակս սոյնոյ բանիս, որք ևս հանդերձ վերոյ գրեալ Ռուսաց երկրի թղթովքն ընդ դէֆթաղ պարոն Գրիգորին ուղարկեցան։ Զորոց զխոմուծսն ծանուցանեմք աստ․

320բ. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Թիֆլիզու քաղաքին տէրունի ժողովրդոցն սրբոյ Աթոռոյս, նաև համայնիցն, որք են ի յայլ տէրունի գիւղօրայս և յառաջնորդական վիճակսն սորին, ծանուցանելով նոցա զխնդրելն իւր զառաջնորդն իւրեանց՝ զՅովաննէս վարդապետն առ ի գալ ի սուրբ Աթոռս և զԿարապետ վարդապետն կարգել ի տեղի իւր փոխանորդ և վէքիլ, և զառաջնորդական գործն իւր յանձնել նմա, զի կառավարեսցէ ժամանակ մինչ և գրելով զառ Կարապետ վարդապետն ևս զպատուէր գրելն, լինիլ վէքիլ և առաջնորդական գործոյն հոգ տանիլ մինչև ցգալն Յովաննէս պետին ի սուրբ Աթոռս և ցառնելն ինքեան յայնժամ, զոր ինչ և պատշաճն իցէ։ Ապա և պատուէր գրեաց՝ հնազանդ և հպատակ լինիլ Կարապետ վարդապետին և զամենայն առաջնորդական և վանքական հասսն և զիրաւունսն ի նա հասուցանել և զայլն, որպէս սովորութիւն և հարկ է գրել։

Զօրինակն սորա ի Նոր տետր 162 երեսն գտցես։

Հովհաննես վարդապետի փոխարեն Կարապետ վարդապետին ժամանակավոր առաջնորդ և գործակալ նշանակելու հարցը շոշափված է նաև վերոհիշյալ անձանց, ինչպես նաև տեր Ղազարին, մելիք Ավետիքին, մելիք Մկրտում Թաղոյանցին, միրիշբյար իվանենին և պրն. Նազարբեկյանցին հղված նամակներում (էջ 66բ—68ա)։

68ա 321. Թուղթ ևս տաճկերէն՝ սիրոյ առ Հերակլ արքայն գրեաց, ի պատասխանի խաթրահարցական թղթոյն նորին, զոր այժմ ի գալն դէֆթաղ պարոն Գրիգորին ընդ նմա գրեալ էր, առ որ սէր և օրհնութիւն և յորդորումն։

322. Թուղթ ևս առ Ղազախու... աղայն, ի պատասխանի շնորհաւորական թղթոյ նորա, զոր այժմ գրեալ էր նա և ընդ Գրիգորին յղեալ, որ էր ի պատասխանի ի յանցեալ թուոյ ի... առ սա գրեալ թղթոյն, որ ընդ Դանիէլ վարդապետին յղեցաւ։

Այս վերոյ գրեալ Թիֆլիզու թուղթքս ևս ընդ Հաշտարխանու գրեանցըն յղեցան ձեռամբ պարոն Գրիգորին, որպէս և ի վերոյ ևս ասացաք յամսոյս Դ (4)։

1781 թ. փետրվար—Թուղթ մի ի Բայազիտ առ իշխանսն և առ այլս

Սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ Եսայի վարդապետն այժմ ի Բայազիտ վախճանեալ էր, վասն որոյ Բայազիտու իշխանացն և քահանայիցն և ի նոյնոյ վանից միաբանիցն ոմանք զքանի մի կնքով թուղթ էին գրեալ ի ներկայումս առ սրբազան Վեհն և զառաջնորդ խնդրեալ։ Եւ յանցեալ տարւոջն մինչ ի գալ Վրաց արքային բազում զօրօք և ի վրդովիլ երկրիս, միաբանքն նոյնոյ վանիցն փախուցեալ էին ի Խոյ և ի Բայազիտ, այժմ ոչ դառնային ի վանքն, թողլով ամայի վասն չափազանց հարկապահանջութեանն Մակուայ սուլթանին Ահմատ կոչեցելոյ և որդւոցն և կնոջն, որք բաց ի սովորական մաղթուէն, որ էր իբրու Ծ (50) թուման, ուրոյն ուրոյն ևս անյագաբար զիրս պահանջէին։ Եւ յայսպէս առնելն նոցա զխնամս ևս ոչ տանէին խղճալի վանիցն՝ թողլով կեղեքիլ յայլոց ևս և մանաւանդ ի յաճախ երթևեկաց։ Նմին իրի գրեալ էին սոքա ի թուղթն իւրեանց առ սրբազան Վեհն զխնդիր՝ առ ի խօսիլ սակս
68բ այն վանիցն ընդ ագահասիրտ Ահմատ սուլթանին և հարկել նմա, որպէս զի թէ ինքն և թէ իւրայինքն ըստ առաջնոյն մի՛ միշտ // զսուրբ վանքն կողոպտել ջանասցեն՝ ուրոյն ուրոյն զիրս պահանջելով, այլ միայն զմաղթուն իւրեանց առցեն, այն ևս թեթևաբար և պակասով, ապա թէ ոչ, այլ այն վանից միաբանն յետս ոչ դառնան, ասեն, ի վանքն և առաջնորդ ևս ոչ կարէ նստել անդ, և զայլ ըստ սմին բանս։

323. Իսկ սրբազան Վեհն զմի թուղթ գրեաց առ նոսա[84], այսինքն առ նոյնոյ վանից միաբան Պետրոս և Յովաննէս վարդապետսն, և տէր Վահանն, և Մարգար աղայն, և պարոն Ստեփաննոսն, և պարոն Յակոբն, և պարոն Սուքիասն, և պարոն Թումանն (որոց իսկ կնիքքն էին ի վերայ թղթոյն), ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Յորում՝ նախ մխիթարութիւն վասն մահուան առաջնորդին իւրեանց՝ Եսայի ծերունի վարդապետին և վասն ամայի մնալոյն սրբոյ վանիցն Թադէոսի Առաքելոյ։ Եւ զի գրեալ էին սոքա, թէ վասն ամայութեան սրբոյ վանիցն Ահմատ սուլթանի որդին գրեալ է մեզ, թէ միաբանքն գան և զվանքի դուռն բանան, զի այսուհետև զայլ որիշ պահանջմունս ոչ եմ առնելոց ի դոցանէ և զԾ (50) թուման մաղթուն ևս, զոր միշտ առեալ եմք, յայնմանէ ևս զԺ (10) պակասեցուցից և զԽ (40) առից։

Մեք գրեցաք նմա զպատասխանի, թէ զայդ ևս ոչ կարեն տալ, այլ զԼ (30) հազիւ տան։ Եւ խնդրեալ էին ի սրբազան Վեհէն զհոգս իմն առնել վասն աւեր մնալոյն այն սուրբ վանիցն և խօսիլ ընդ սուլթանին և զպայման իմն դնել ընդ նմա, որ այնու կանոնաւ վարիցի և շինութիւն

Տանն այնմիկ սրբոյ ացէ զկայ։ Ու որ գրեաց սրբազան Վեհն, թէ որպէս ձերն, նոյնպէս և մերս սիրտք ցաւին վասն սրբոյ Տանն այնմիկ, բայց այժմ վասն այդր այսպէս տեսաք պատշաճ, որպէս զի յղեսջիք առ մեզ զթուղթն ղայն, զոր գրեալ է առ ձեզ սուլթանի որդին, կամ թէ զօրինակն առեալ առ մեզ յղեսջիք։ Եւ դուք ես գրեսջիք, ասէ, զթուղթ մի ի վերայ սուլթանին և յղեսջիք ի ձեռս մեր, որոյ դիտաւորութիւնն, ասէ, այսպէս լիցի, թէ յորքան ժամանակաց հետէ շինեցեալ է տունն այն, դեռ այսպիսի նեղութիւն չէ կրեալ, զոր այժմ ի ձէնջ կրէ, և ոչ երբէք եղեալ է նմանէ այսքան պահանջմունք, որքան դուք առնէք։ Քան զձեզ յառաջ ով ոք եղեալ է, պահեալ է զպատիւն այդ օջաղիդ և ջանացեալ է, որ պայծառ մնայ, որ իւրեան ևս պարծանք լինի, թէ յիմ հողումս այսպէս օջաղ կայ. և իւրեան ևս մէկ չափաւոր մաղթուն է եղեալ և աւելորդ պահանջմունք չէ եղեալ։ Այժմ դու զմաղթուն չափազանց աւելացուցեալ ես, և բաց յայնմանէ դու և որդիքդ ևս աւելի պէսպէս շիլթախ առնէք։ Վասն որոյ թէ առաջնորդ և թէ միաբանք ամէն զզուում են և փախչում, որպէս որ ահա եղև և այնքան տարէն օջախն ամայացաւ, և առաջնորդն ևս փախուցեալ, աստ դառն ցաւօք մեռաւ։ Այս քո անուանդ ի՞նչ լայաղ էր և քեզ ի՞նչ օգուտ էր։ Թեմերն ամէն աւերուած, դուք ինչ կամէնում էք, առնում
69ա էք, մու//ղայէթ էլ չէք կենում, որ Քեօշարի քիւրտն և այլ գնացող եկող զլլբաշներն չնեղացնեն, որ նոքա ևս բռնութեամբ ինչ ուզում են առնում են։ Այժմ այն տանն այլ որիշ կերպ շինութեան ճար չկայ, այն տունն հոգևոր տիրինն է, եթէ դու նմա խաթրիջամ կառնես, և մի այնպէս պայման կու դնես, որ քո բնական մաղթուն ինչ է, ղայն առնուս, և դու կամ տղայքդ աւելի պահանջմունք չառնէք, և տիրաբար մուղայէթ կենայք տանն, որ այլ չնեղացնեն և խալիֆայն ղայն լսելով, մի սեազլուխ առաջնորդ կարգէ այն տանն, ապա թէ շինութիւն կարէ ստանալ այն տունն։ Ապա թէ այսպէս չլինիցի, ոչ սեազլուխ կարէ երթալ յայն օջաղն, և ոչ շինութիւն կլինի անդ, մանաւանդ թէ որքան այսպէս անկանոն պահանջմունք կան, մեք մի փարայ չեմք տալ այն տան անուամբ, զի մեք տամք, որ տունն շէն մնա, և ոչ թէ այս և այն աւելորդաբար կեղեքեն և ուտեն։ Եւ այլ այսպիսի բանք, զինչ որ պատշաճ տեսանիցէ, ասէ, գրեալ յղեցէք առ մեզ, որ մեք ևս տամք, ասէ, նմա և ապա խօսիմք, որ ինչ և պէտքն է, ասէ, և մի կանոն դնեմք. իցէ թէ գիր ևս առնումք, ասէ, և ապա զով որ և կամիցիք և վանիցն պատշաճ լիցի, առաջնորդ կարգեսցուք, որ սուրբ Տունն այն շինեսցի վերստին։

Իսկ ապա և զայսպիսի թուղթ խնդրելոյ պատճառն գրէ, թէ մինչ մեք թարց այսպիսի գրոյ մեղադրիցեմք զնա, նա ուրաստ կլինի, թէ այդ, ամենայն սուտ են ասացեալ քեզ և մեզ երես կու ձգէ, ասէ, թէ չես սեազլուխ յղեա անդ։ Եւ մինչ մեք, ասէ, չյղեսցուք, կասէ թէ դու չես կամենում, որ այն տունն շինուի։ Վասն այն ասեմ լինիլ, ասէ, այսպիսի թուղթ, որ մեք ասեմք, թէ թէպէտ վանքի տէրն մեք եմք, բայց հաց ուտօղն նոքա են, եթէ մէկ կանոն չլինի, ոչ նոքա հաց կուտան և ոչ սեաւ գլուխ կու երթայ անդ։ Ուրեմն շուտով հոգասջիք, ասէ, զայսպիսի գիր իմն և յղեսջիք, ասէ, առ մեզ, որ հոգս ինչ արասցուք։ Եւ զինչ որ առ նա գրելոյ լինիք, ասէ, նոյն մտօքն մի հայերէն գիր ևս, ասէ, մեզ գրեսջիք, այնպէս որ ցոյց տալոյ լինի, ասէ, որ մեք ևս ցոյց տամք, ասէ, և ասեմք, թէ ահա մեզ ևս այսպէս են գրեալ։

Զօրինակն սորա ի նոր տետր 63 երեսն տես։

Գրեալ յղեցան թուղթքս ի Բաղդադիս ընդ անտի եկեալ փայեկին յամսոյս է (7)։

1781 թ. փետրվար—Երկրորդ անգամ թուղթք ի Գեանջայ

324. Գեանջայու քահանայքն և իշխանքն ահա զթուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն, ի պատասխանի սորին ի դեկ. ... առ նոսա գրեալ թղթոյն (զոր գրեաց նոցա՝ ընտրել ի միջոյ իւրեանց զոմն առ ի լինիլ գանձապետ սրբոյ Աթոռոյս, որ և յիշեալ գոյ աստ ի յանցեալ թուոյ ի
69բ դեկտ...)։ Ծանուցանելով // զընտրելն իւրեանց զաստապատցի տէր Միքայէլն ի գանձապետութիւն սրբոյ Աթոռոյս և խնդրեալ էին կոնդակաւ կարգել զնա ի Գեանջայ գանձապետ սրբոյ Աթոռոյս։ Վասն այնորիկ և սրբազան Վեհն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա, զմի կոնդակ գրեաց ի Գեանջայ առ Քիլիսաքեանդու սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ Պօղոս վարդապետն, և տէր Պետրոսն, և տէր Անտոնն, և տէր Յարութիւնն, և տէր Անթանէսն, և առ մէլիք Գասպարն, և Վարդան քեօխվայն, և պարոն Աբրահամն, և մահտեսի Սիմէօնն, և պարոն Յովհաննէսջանն, և պարոն Աւագն, և պարոն Բաղտասարն, և պարոն Պետրոս և Պօղոսն Յօհանջանեան, և առհասարակ առ բոլոր ժողովուրդսն, զհաւանութիւնս տալով խնդրոյն նոցա և կարգելով զաստապատցի տէր Միքայէլն անդ գանձապետ սրբոյ Աթոռոյս և պատուիրելով ևս ձեռնտու լինիլ նմա և գործոյն և ի սէր ունիլ զնա, որպէս զի թէ գանձապետական գործոյն և թէ անդ պահեալ բանիցն սրբոյ Աթոռոյս մուղայէթ և հոգացօղ լիցի։ Ապա և զյորդորմունս գրեաց՝ առ ի առատութեամբ և անխնայօրէն արկանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս զդրամիկս և ի սիրոյ սորին անպակաս մնալ։ Իսկ յետոյ և ի դէմս տէր Միքայէլին ևս զպատուէր գրեաց յատկապէս՝ արի կալ ի գործն իւր գանձապետութեան և յորդորմամբ ժողովել զարդիւնս և ըստ ժամանակին մոմի տալ և յղել ի սուրբ Աթոռս զմոմն առ ի պիտանաւորութիւն ամին։

325. Կոնդակ ևս անդրանիկ օրհնութեան ի վերայ Նորշէն կոչեցեալ գեղջ համայն ժողովրդեանն գրեաց, և յանուանէ ևս ի վերայ տէր Թօմասին, տէր Անդրէասին, տէր Պետրոսին, տէր Զաքարիային և իշխանացն՝ Անտօն քեօխվային, մահտեսի Ալթունին, պարոն Գրիգորին, պարոն Յարութիւնին, պարոն Յակոբջանին, առ ի շահել զնոսա, յորդորելով զնոսա՝ ի սէր սրբոյ Աթոռոյս ըստ խնդրոյ նոր գանձապետին սրբոյ Աթոռոյս՝ տէր Միքայէլին, զի նա տեսանելով զիղձս նոցա, գրեալ էր առ սրբազան Վեհն՝ գրել նոցա զթուղթ։

326. Թուղթ ևս առ տէր Միքայէլն գրեաց, ծանուցանելով նմա, թէ բազմակնիք թուղթն տեղւոյդ հասարակութեան էհաս առ մեզ, և որովհետև խնդրեալ էին, ասէ, ժողովուրդքն տեղւոյդ ի մէնջ առ ի կացուցանել զքեզ յայդր գանձապետ սրբոյ Աթոռոյս, վասն որոյ և մեք զկոնդակ գրեալ յայդր, ասէ, հաստատեցաք զքեզ ի գործդ գանձապետութեան և զկոնդակ մի ևս, ասէ, ի վերայ Նորշինու ժողովրդոցն գրեցաք, զորս և ի միասին յղեցաք, ասէ, ի ձեռս քո ընդ թղթոյս, որ զերկու կոնդակսն ևս, ասէ, ընթեռնուլ տուեալ յիւրաքանչիւր եկեղեցիսն, հատատեսցիս ի գործդ և հարազատաբար ծառայեսցես սրբոյ Աթոռոյս և յամենայն բանս և ի գործս զղայրէթս սորին քարշեսցես, ասէ, զթուղթդ ևս անպակաս առնելով ի մէնջ։ Տեսից, ասէ, թէ որպէ՞ս ես թարց աղմկի

և կռուանիւթ բանից զգործդ արդիւնաւոր առնելոց։ Եւ ի վերջոյ հանդիպակայ թղթոյն գրեաց զհին գանձանակաղրամն մոմի տալ և շուտ յղել աստ, որ սպիտակացուցմանն հասցի։

Գրեցան և յղեցան թուղթքս ի ձեռն վերոյ յիշեալ տէր Միքայէլին աստապատեցւոյ, որ ի Գեանջա, յամսոյս ԺԶ (16)։

70ա 1781 թ. փետրվար—*Թուղթք գրեցեալք ի Ղարս*

327. Դարձեալ ի նոյնում աւուրն սրբազան Վեհն զբեռնակիրս ուղարկել հրամայեաց ի Ղարս, առ ի ևս բերել անտի զցորեան ի հարկաւոր պէտս սրբոյ Աթոռոյս։ Ուստի, ըստ պահանջման հարկին, զմի թուղթ գրեաց առ ցորենոյ ժողովարար Յովաննէս վարդապետն և առ պարոն Գէորգն, ի պատասխանի նոցին թղթոցն այժմոյս գրեցելոց, յորում նախ՝ զշնորհակալութիւն սակս գնելոյն սոցա զՃԾ (150) սոմար ցորեան վասն սրբոյ Աթոռոյս ըստ հրամանին իւրոյ (զոր յիշեալ եմք աստ ի վերն յայսմ թուոջս և ի յունվարի ԻԷ (27) առ սոսա գրեալ թղթոջն)։ Երկրորդ՝ Մաղզբերդու Մահմատ բէկին Ծ (50) սոմար ցորեանգոյր ի Ղօշավանք, վասն այնր գրեաց, թէ եթէ զինն ըստ կարգին չիցի, գնեսջիք վասն սրբոյ Աթոռոյս, ըստ որում մերձ ևս է մեզ։ Երրորդ պատուիրեաց, զի բեռնակիրսն փութապէս ցորեան բարձեալ յետս դարձուսցեն ի սուրբ Աթոռս։

328. Թուղթ ևս ի Ղարս՝ առ Թուրք Հասան կոչեցեալ աղայն, որ ի սրբազան Վեհէն զփոքր ինչ գիւլապ էր խնդրեալ, զոր և յղեաց այժմ սրբազան վեհն և այսու թղթով սիրոյ ծանոյց զյղելն։

Եղին ընդ մեր աղայոցն և բեռնակրացն յամսոյս ԺԶ (16)։

1781 թ. փետրվար—*Այլևս թուղթք ի Թիֆլիզ առ Հերակլն և առ այլս*

Ընդ աւուրս ընդ այսոսիկ վասն զի գոյր թշնամութիւն ի մէջ Վրաց և Ճառըցի լէկզեացն և Վիրքն ևս քան զայս յառաջ ի նոցունց զկապուտ ինչ էին առեալ, քանի մի հարիւր անձինք ի նոցանէ ելեալ և դիմեալ էին ի կալուածս Վրաց առ ի ասպատակել զգիւղորայս, որք և գնացեալ

70բ էին ի // գիւղ զմի և զոչխարս և զայլ գնայուն իրս գիւղացւոցն աւարհարեալ, որ ազդ եղեալ ի Թիֆլիզ քաղաք, Լեւոն կոչեցեալ քաջ արքայորդին սակաւու արամբք զհետ մտեալ էր նոցա և հասեալ իսկ առ նոսա։ Եւ ի խմբել պատերազմին ճակատ առ ճակատ, Լեւոն Միրզայն յառաջ խաղացեալ, և զոմն ի թշնամեաց ձերբակալեալ, ընկեցեալ էին զնա հրացանիւ և սպանեալ, որմէ եղելութենէ մեծագոյն սուգ էր եղեալ ազգին Վրաց և մանաւանդ արքային Հերակլայ և համայն իւրայնոցն[85]։ Իսկ իշխողն երկրիս մերոյ զՄահմետ անուն որդին իւր քանեօք ոմամբք սևազգեաց արարեալ ընծայիւք յղեաց առ նոսա, նախ ի մխիթարութիւն նոցա, և երկրորդ՝ մանաւանդապէս այնր սակս, զի զաստի վարեալ ժողովուրդսն յետս դարձուսցէ։ Զհետ որոց և սրբազան Վեհն ևս յորդորմամբ իշխողին երկրիս մերոյ, զԳալուստ վարդապետն առաքեաց հանդերձ ընծայիւք և թղթովք առ Հերակլ արքայն և առ կինն նորա և առ մեծ որդին նորին[86], նաև առ առաջնորդ Յովաննէս վարդապետն և առ այլս ոմանս ևս։ Իսկ թուղթքն են այսորիկ, որք ի ստորև բացատրին։

329. Թուղթ մխիթարական գեղեցիկ ոճիւ և շարադրութեամբ առ Հերակլէս արքայն գրեաց, ծանուցանելով և ի վերջոյ նորին զյղելն իւր զԳալուստ պետն առ նա՝ առ ի սփոփել զնա։ Որոյ զօրինակն ի նոր տետր... երեսն տես[87]։

330. Թուղթ ևս ըստ նոյն մտաց առ կինն Հերակլայ և մայրն Լեւոն Միրզային՝ Դարէջան թագուհին Վրաց գրեաց, զորոյ զաղափարն ևս ի... եր[եսն] գտցես[88]։

331. Թուղթ ևս նոյնպէս առ Գեօրգին Միրզայ արքայորդին գրեաց, զորոյ օրինակն ևս ի նոր տետրն շարադրանաց ի... երեսն գտցես[89]։

332. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ երբեմն Սաղիմայ նուիրակ և այժմ Սանահնոյ վանիցն դէտ ձեացեալ Աբրահամ պետն գրեաց, զի սա յառաջագոյն գրեալ էր սրբազան Վեհիս մերոյ, թէ զիս Սանահնոյ վանիցն առաջնորդ առնել կամին ոմանք, և խոստացեալ էր գալ ի սուրբ Աթոռս։ Զորոյ պատասխանին գրեաց սրբազան Վեհն, թէ եթէ յօժար ես լինիլ Սանահնոյ առաջնորդ, և յԱթոռս գալ ևս ըղձաս, ի գալդ զՍանահնոյ կոնդակն բեր ընդ քեզ և մեք գիտեցեալ և զկոնդակ գրեալ ըստ բերեալ թղթոցդ և զամենայն թեման և զվիճակն Սանահնոյ յատկացուցեալ, զքեզ առաջնորդ կարգեսցուք և յղեսցուք։ Իսկ թէ ի սուրբ Աթոռոջս մնալ կամիցիս, շահեսցուք (Զոր և գրեալ եմք յանցեալ թուոյ ի հոկ. Ե (5))։

Իսկ սա գրեաց, թէ զհարկաւոր բան ինչ ունելով, խմ աստ գալս յամեցաւ, բայց այժմ չև ևս եկեալ ի սուրբ Աթոռս և չև ևս առեալ զպատիւ առաջնորդական՝ զինքն առաջնորդ ձևացուցնելով Սանահնոյ, յայլ և յայլ տեղիս զթուղթս գրէր և զվէքիլս կարգէր և զառաջնորդական ար-

71ա դիւնս //պահանջէր, որ և զախլթալակցի տէր Աբրահամ քահանայ ոմն ևս ի Բամբկաձոր էր վէքիլ կարգեալ։ Առ որս գրեաց սմա սրբազան Վեհն, թէ այդպէս առնելովդ հաստատես ի վերայ քոյ զարտաքի աբարսն, զորս առ կենդանութեամբ հոգելոյս հայրապետին մերոյ զքէն լսէաք։ Գրեմ քեզ, ասէ, պարտիս զգուշանալ յայդպիսի անկարգ արարմանց և թիւր ընթացից և առ որ և զթուղթս ես գրեալ, ասէ, յետս ժողովել և զձեռնամխել յառաջնորդական գործ ինչ ինքնագլուխ, այլ որպէս և գրեալ եմք, ասէ, յառաջ քեզ, այնպէս առնել։ Իսկ եթէ ոչ զգուշանայցես, ասէ, յետոյ ըստ արարմանցդ զհատուցումն ես ընկալնելոց։ Ի յաբարիցդ, ասէ, զմի գլխաւորն ասեմ, որ զախլքալակցի տէր Աբրահամն Սանահնու և քեզ վէքիլ ես հռչակեալ և զթուղթ տուեալ, որ է յայտնի ապստամբութեան նշանակ։ Զի՞ կայ քոյ և ընդ Բամբակաձորու, ասէ, որոյ սակս գրեմ քեզ, ասէ, պարտիս զգործակալութիւն նորա խափանել և զտուեալ թուղթդ յետս առնուլ ի նմանէ, և որպէս գրեալ եմք քեզ յառաջ, ըստ այնց գրեցելոց մերոց առնել։ Եւ զայլ պատուէրս մեր Գալուստ վարդապետն ասելոց է քեզ, ասէ, հանդերձ ողջխութեամբք մերովք։

333. Թուղթ ևս առ Թիֆլիզու առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի յունվարի ԻԴ (24) գրեալ թղթոյն (որոյ զհետ և զի հոկ. Ե (5) առ Բաշաչուխի Սօղոմոն արքայն և առ Մաքսիմէ կաթուղիկոսն գրեալ թուղթսն, զորս յիշեալ եմք յանցեալ թուոյ հոկտ. Ե (5) ի սոյն յիշատակարանոջ), յետս էր յղեալ, քանզի որդին նորա՝ այսինքն արքային, մեռեալ էր, վասն որոյ և գրէր սա, առ նա զմխիթարութեան թուղթ գրել։ Եւ քանզի զԱբրահամ պետէն զգանգա-

տական բանս էր գրեալ սա առ սրբազան Վեհն վասն անկարգ շարժ-
մանցն նորին, որոյ աղագաւ ևս սրբազան Վեհն. ևս զմեղադրական
թուղթ գրեաց նմա այժմ (զոր ի վերդ անա մերձ գրեցաք)։ Վասն որոյ
գրէ սմա, թէ զնորին յանդգնական արարսն ծանեաք, առ որ և զմեղա-
դրական թուղթ գրեցաք, ասէ, այլ ոչ ձեռնամխել յառաջնորդական գործ
ինչ թարց մերոյս հրամանի և պատուիրեցաք, ասէ, խափանել զգործա-
կալութիւնն տէր Աբրահամին ախլքալակցւոյ և այլն։ Ապա յիշեցուցանէ
և զքան զայս յառաջ ի փետր. Դ (4) գիր գրեալն առ սա՝ առ ի գալ ի սուրբ
Աթոռս և կրկին հարկէ յայսմ թղթոջ ևս առ ի գալ։

Նաև սա զմի թուղթ էր գրեալ սա աստ առ սրբազան Վեհն, յորում
իբրու զանկատ է եղեալ զԻսրայէլէն և թէրևս տէր Ղազարէն ևս, որ աստ
չէր հասեալ, այլ ըստ կարծեաց անկեալ էր անդ ի ձեռսն ումանց, ուս-
71բ տի զրան ինչ էին տուեալ յերեսն // ի կողմանէ այն թղթոյն։ Եւ սա
կարծելով, թէ այն թուղթն աստ է հասեալ և մեք ի գալն աստ տէր
Ղազարին ցուցեալ եմք, գրեալ էր աստ զորտունջ ինչ, առ որ և սրբա-
զան Վեհն գրեաց, թէ այդ գործ անմտի է, որ ջանայ զայլս ի խռովու-
թիւն գրգռել, զայդ զմէնջ կարծես, մեք զբոյդ առ մեզ գրեալ թուղթն
առանց իմիք զխաւոր պատճառի և հարկի ընդէ՞ր ցուցանեմք այլոց և
մանաւանդ զազգխափ գիր ի քէն չեմք, ասէ, ընկալեալ։ Քննեա և տես,
ասէ, թերևս ի ձեռս ներհակաց է անկեալ յայդր։ Եւ թէ այժմ անձեռն-
հաս եղաք առ Ափխազաց արքայն զմխիթարութեան թուղթ գրել, յետ
քանի աւուրց եմք գրելոց։ Այլ այժմ մինչ լուաք, ասէ, զբօթալի համբաւ
Լևոն Միրզայ արքայորդւոյն, յոյժ կսկծեցաք և ըստ պատշաճին անա
յղեցաք, ասէ, զԳալուստ վարդապետն մեր ընծայիւք և մխիթարական
թղթովք առ Հերակլ արքայն, և առ թագուհին նորա, և առ Գեօրկին Միր-
զայ՝ մեծ որդին արքային։ Իսկ ի վերջոյ հարկիւ գրեաց, թէ եթէ ըստ
յառաջազգոյն գրեցելոյն մերոյ եկեալ ես այտի առ ի գալ ի սուրբ Աթոռս,
բարւոք է, ապա թէ ոչ, ի դառնալն այտի Գալուստ վարդապետին ի միա-
սին եկեսջիք, ասէ, ընդ նմա։ Այլև սա ընդ թղթոյն իւրոյ զմի մատնա-
չափ թուղթ ևս էր գրեալ, թէ Յովսէփ պետն Հաշտարխանու զտէր Պետ-
րոսն խնդրեալ է երթալ անդ, սա ևս կամի, խնդրեմ հրաման տալ սմա
առ ի գնալ։ Առ որ սրբազան Վեհն գրեաց, թէ մեք յառաջ եմք գրեալ
նմա ի փետրվարի Դ (4), զի երթիցէ (զոր և յիշեալ եմք ի վեր անդր ի
փետր. Դ (4) ի թղթոջ Յովսէփ պետին և Կարապետ վարդապետին)։ Եւ
յայնժամ առ տէր Պետրոսն ևս զթուղթ է գրեալ սրբազան Վեհն, որպէս
անսացաք։

334. Թուղթ ևս առ Կարապետ վարդապետն, թէ քանիցս քեզ բանիւ
և թղթով պատուիրեալ եմք զթուղթդ ի մէնջ անպակաս առնել, ապա
ընդէ՞ր զորպիսութիւնսն քոյ և գործոյդ ոչ գրես մեզ։ Մինչև ցայժմ զմո-
մի որպէսն չիմացաք, ասէ, թէ որպէ՞ս արարիք։ Մեք առ քեզ զթուղթս
գրեմք, ասէ, կամելով զի և դու առ մեզ զթուղթս գրեսցես, իսկ դու
զպատասխանիս գրեցելոց մերոց ևս ոչ գրես։ Հարկիւ գրեմ քեզ, ասէ,
գրել զորպէսսդ և ոչ զանց առնել։ Ապա և վասն յղելոյն զԳալուստ վար-
դապետն ծանուցումն, որպէս և ի վերդ ի թուղթն Յովաննէս պետին
գրեցաւ։ Այլև՝ յիշեցուցանէ զյառաջ քան զայս գրեալն Յովաննէս պե-
տին, որ զսա ի տեղի իւր վէքիլ կարգեսցէ և ինքն եկեալ եկեսցէ, և իւրե-
ան ևս գիր գրելն և զվէքիլութեան կոնդակ յղելն։ Գրելով ևս, թէ եթէ
մինչև ցայժմ Յովաննէս պետն չիցէ եկեալ, հարկեցաք նմայ, որ այժմ

72ա եկեսցէ ընդ Գա//լուստ վարդապետին ի վերադառնալն նորին և այլ մի
մնասցէ յայդր։ Յայսմ թղթոջ և ողջոյն գրեցաւ տէր Ղազարին։
Յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Գալուստ վարդապետին յամսոյս
Իե (25)։

1781 թ. փետրվար—Այլ ևս թուղթք ի Ղարս գրեցեալք

335. Վերստին և ևս բեռնակիրք ուղարկեցան ի Ղարս՝ առ ի բերել
անտի զցորեան։ Ընդ որս սրբազան Վեհն պատշաճաբար զթուղթ գրե-
աց առ Յովաննէս վարդապետն և առ պարոն Գէորգն, ի պատասխանի
ի փետր. ԻԲ (22) գրեալ թղթոյն նոցա, որոց շնորհակալութիւն վասն
աշխատանացն նոցա, և վասն Մահմատ բէկի ցորենոյն, որոյ սակս
սրբազան Վեհն քան զայս յառաջ գրեալ էր առնուլ, այժմ գրէին սոքա,
թէ Զ (6) ղուռուշ և կիսով տայ սօմարն և ի սօմարն Գ (3) չափ պակաս
գոյ, ուստի գրեաց՝ այլ չառնուլ։ Ապա գրէ, թէ զՃԾ (150) սօմարն, որ
առեալ էք, յորմէ և զմասն մի յղեալ էք, վասն մնացելոյն անա զուղտսն
վերադարձուցաք, ասէ, առ ի զայն ևս բերել, զորս շուտով բարձեալ
դարձուսջիք, ասէ։ Բայց կասկածանս կրեմք, ասէ, վասն ապագային,
թէ ցորեանն թանկանայցէ և սուրբ Աթոռս զպակասութիւնս կրեսցէ,
վասն որոյ կամիմք, ասէ, զի Ծ (50) սօմար ցորեան ևս առջիք նորա-
պէս։ Այլ նկատեսջիք, ասէ, եթէ յետոյ թանկանալոց է, առջիք, իսկ թէ
դիւրաձեռն լիցի, ասէ, յետոյ ևս առնուլն գրեսջիք մեզ։
Իսկ և Յովաննէս պետն գրեալ էր, թէ զքաղաքիս պողին ժողվելոց
եմ և յանձնելոց Ղօշալանից վէքիլ Պօղոս պետին վասն սրբոյ Աթոռոյդ,
զի ի տեղի տալոց դրամոյն լիցի և թէ անա զՊօղոս պետն անա եղեալ
եմք առ ի ժողովել։ Զի՞նչ հրամայես։ Առ որ պատասխանի զայս գրեաց
սրբազան Վեհն, թէ պարոն Գէորգն զայցմանէ գիր ինչ չէր յիշեալ ի
թուղթն իւր առ մեզ։ Վասն այդր ընդ նմա ի միասին խորհրդակցեալ, որ
ինչ արժանն է և սրբոյ Աթոռոյս օգուտն, ընդ տղայոցն շուտ մեզ գրես-
ջիք, և զոր ինչ յայնժամ գրեսցուք ձեզ, այնպէս առնիցէք։

336. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան և միրոյ ևս առ պա-
րոն Կարապետն գրեաց, քանզի յղեալ էր նա ընծայ սրբազան Վեհին
զԺԶ (16) լիտր նօխուտ և մեծաւ ըղձիւ զօրհնութեան թուղթ էր խնդրեալ,
վասն որոյ և սրբազան Վեհն գրեաց։

337. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Նախիջեան կոչեցեալ գիւղն առ
տէր Մովսէսն գրեաց, քանզի յառաջ քան զքանի մի աւուրս սա և ընդ
ինքեան Աւետիք ումն և Մելքոն ումն եկեալ ի սուրբ Աթոռս, ինքն խոս-
տացեալ էր տալ զԳ (3) սօմարն Ղարսայ ցորեան, և Աւետիքն ևս ուխ-
տեալ էր տալ Դ (4) սօմար ցորեան և Ա (1) սօմար գարի, և միւսն ևս
խոստացեալ էր Բ (2) սօմար ցորեան և Ա (1) կով մատաղացու։ Եւ
72բ յիշեալ Աւետիքն առեալ ևս էր ի սրբոյ // Աթոռոյս զԴ (4) սօմարն տեղ-
ւոյս ցորեան փոխ, զի ի գնալն իւրեանց ի գիւղն անդ տացեն։ Ուստի
այժմ գրէ տէր Մովսէս երիցուն, թէ անա զբեռնակիրս յղեցաք յայդր,
թէ դու և թէ նոքա զտալոց և զխոստացեալսն ձեր բարձեալ ի վերայ
բեռնակրացն, փութով ընդ տղայոցն մերոց յղեսջիք։
338. Թուղթ օրհնութեան ևս ի Ղզլչախչախ՝ առ Բաբօյի որդի Սար-
գիսն գրեաց, որ յորդորմամբ Յովաննէս վարդապետին զմի կով մատա-
ղացու է տուեալ սրբոյ Աթոռոյս և զԲ (2) սօմար ցորեան։

Ցղեցան թուղթքս յամսոյս Դ (4)։

1781 թ. մարտ—Ի Բասրայ, ի Բաղդատ, ի Բուշեռ, և ի մեծն Պօլիս և յայլ տեղիս ևս թուղթք

Յորմէ հետէ սրբազան Վեհս մեր աստուածակացոյց եղև հայրապետ, մինչև ցարդ ոչ երաց ղաչս յառ այլս տեղիս թղթագրութեանց, զի և ի կողմունսն Հնդկաց ևս զթուղթս գրիցէր, ըստ որում ճանապարհ ևս ոչ գոյր բաց և անվտանգ դէպ յայն կողմունսն։ Այլ այժմ թէպէտ ի Հնդիկս ո՛չ դեռևս, բայց յաղագս կարի յոյժ հարկաւորեացն ի Բասրա և յայլ վերոյ գրեալ տեղիսն թէ հասարակապէս զորպիսայայտ կոնդակ, և թէ առ ոմանս յատկապէս ղանդրանիկ օրհնութեան գրեանս գրեաց, նախ՝ առ ի շահել զնոսա ևս և երկրորդ՝ սակս հաշուոց ինչ, որք գոյին սրբոյ Աթոռոյս ընդ ոմանց ի նոցունց, և երրորդ՝ առ ի միամտութիւն գործակալացըն սրբոյ Աթոռոյս և ի հաստատութիւն նոցին ի գործս իւրաքանչիւրոց։ Զորս վասն զի ընդ այլ կողմանս ոչ գոյին ճանապարհք, որպէս ի վերոյ յիշեցաք, ի վերայ մեծին Պօլսոյ ուղարկեաց։ Ուստի ի սոհպմանէ հարկին զհետ այնց և առ նուիրակն սրբոյ Աթոռոյս, որ ի Պօլիս, Մինաս վարդապետն և առ ոմանս սակաւս ևս զթուղթս գրեաց վասն յղելոյ վերոյ յիշեալ գրեանցն ի տեղիս իւրեանց և սակս հաշուոց ինչ և վասն այլ այլ իրաց։ Որոց զհետ և առ սրբոյն Սաղիմայ պատրիարք Յովակիմ վարդապետն ևս, և առ Պրուսայու նոր առաջնորդ Յովաննէս վարդապետն և առ այլս ևս զթուղթս գրեաց։ Ընդ որս և ի Թօխաթ, և ի Կարին, և ի Ղարս ևս զքանի մի թուղթս գրեաց, որք բոլորապէս են այսոքիկ գրելոցքս ի ստորև։

339. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Բասրայու և Բաղդատու և Բուշեռու և շրջակայիցն նոցա[90]։ Յորում նախապէս ծանոյց զառ Տէր փոխումն տէր Սիմէօնի երջանկայարդ կաթուղիկոսին լուսահոգւոյ և զիւր յաջորդելն զսուրբ Աթոռս, որպէս և ի բազում տեղիս գրեցեալ է (զորս և մեք ի վերոյսն յիշեալ եմք ի սոյն յիշատակարանոջս)։ Իսկ ապա և գրեաց զպատճառն չհատացուցանելոյն իւրոյ յայն կողմունսն զթուղթս գրելն, որ էր ճանապարհաց փակ և երկիւղալի գոլն (որպէս և ի վեր անդր ի Ջուղայու և ի Գիլանու և յայլ տեղեաց կոնդակսն և ի թուղթսն ևս գրե-
73ա այ)։ Ըստ որում // և հարկն պահանջէր։ Որոց զկնի և գրեաց պատուիրմամբ սակս նուիրակին իւրեանց Գրիգոր վարդապետին, սիրով ընդունիլ, որոյ աղագաւ գրելով ևս, թէ ահա վերահաստատեցաք զդա ի գործն իւր նուիրակութեան, մինչև ցաւարտիլն գործոյն։ Քան զոր յառաջ և յետոյ եմ զայլ խնդիրս գրեաց (որք ի քան զայս յառաջ առ այլ և այլ տեղիս գրեալ կոնդակսն ևս գրեալք են ըստ պատշաճաւորութեան իւրաքանչիւրոց տեղեացն)։

340. Թուղթ ի Բասրա առ Էմնիաղեան մահտեսի Յարութիւն աղայն գրեաց, ի պատասխանի ի ՌՄԻԹ (1780) և ի փետր. Ժ (10) առ հոգելոյս սրբազան Վեհն գրեալ թղթոյն նորա, որ յետ վախճանի նորին էհաս առ նորոգ սրբազան Վեհս մեր ի հոկտեմբերի մուտն յայնմ ամի (էջ 73 ա—74 ա)։

341. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Բասրա առ Բեթխէհէմեան պարոն Յովաննէսն գրեաց, ի պատասխանի նորա ի ՌՄԻԹ (1780) թուոյ և փետր. Ժ (10) գրեալ թղթոյն առ լուսահոգին, որ զկնի փոխման նորա առ Տէր էհաս ի ձեռս սրբազան Վեհիս մերոյ ի նոյն թուոյ հոկտեմբերի մուտն (էջ 74 ա—75 բ)։

342. Թուղթ ևս ի Բաղդատ առ Խոճայարենց պարոն Մարգար աղայն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի ոմանց թղթոց նորին առ հոգելոյս հայրապետն գրեցելոց (էջ 75 բ—76 ա)։

343. Կոնդակ ևս սրբազան Վեհն ի վերայ Բասրայու գրեաց սակս վէքիլութեան և մութավէլութեան սրբոյ Աթոռոյս՝ Բեթխէհէմեան պարոն Յովաննիսին, արտահանեալ ի հին տետրցն շարադրանաց, որք վասն վէքիլութեան ոմանց գրեալք են։ Յորում պատուէրք, յորոց մի ևս այս, թէ ունի դա հրաման ի մէնջ, զի մինչ ոչ իցէ յայտր նուիրակ սրբոյ Աթոռոյս, յայտր եղեալ արդեանցն ևս վերահասու լեալ ժողովեսցէ, այսինքն զկտակս, զհոգեբաժինս և զայլս այսպիսի և ըստ ժամանակին հասուցէ ի սուրբ աթոռս։

Զտեղին հաւաքման մասանց կոնդակիս գացես ի նոր տետր 171 երեսն[91]։

344. Թուղթ ևս ի Բուշեռ առ սրբոյ Աթոռոյս վէքիլ և գործակալ պարոն Աւէտն Տէր-Մարգարեան գրեաց, ի պատասխանի նորին ի ՌՄԻԸ (1779) ի նոյե. ԺԹ (19) և ի դեկտ. ԺԱ (11) գրեալ թղթոցն առ լուսա[հոգին]։ Բայց սմա ևս նախապէս զեկոյց զմահուանէ հոգելոյս սրբազան Վեհին և զիւր յաջորդմանէ։ Եւ ապա ծանոյց զվերոյ յիշեալ թղթոցն առ ինքն ժամանիլն, գրելով զպատասխանիս նոցին, թէ քան զայսոսիկ յառաջ Գ (3) գիր ևս են հասեալ աստ առ լուսահոգին, գրեցեալք ի ՌՄԻԸ (1778) թուոջ Փրկչին և ի հոկտ. Ե (5), և ի ՌՄԻԹ (1779) թուոջն և ի փետր. ԻԲ (22), և ի ղամար Զ (6)։ Որոց զպատասխանին
76բ գրեալ է, ասէ, լուսահոգին ի ՌՄԻԹ (1780) // թուոջ մերում և ի յունվարի Է (7), և ի վերայ Ջուղայու յղեալ է առ քեզ։ Եւ ընդ նմին զմի թուղթ ևս առ նուիրակ Գրիգոր վարդապետն է գրեալ, ասէ, և զթուղթ մի ևս, ասէ, առ Մատրասու Շահամիր աղայն է գրեալ և զմի արձակման գիր[92] ևս, ասէ, վասն Բարղամեան Մովսիսին է գրեալ՝ ըստ խնդրոյ Շահամիրին։ Զորս ի հարկէ յղեալ ևս, ասէ, յիւրաքանչիւր տեղիսն։

Իսկ և յաղագս լուսահոգւոյ վասն նորա վէքիլութեան գրեալ կոնդակին և այլոց թղթոցն (որք յիշեալ են ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) թուոջն և ի...)։ Գրեալ էր սա, թէ ինձ էհաս։ Առ այն գրեաց, թէ միամտեցաք։ Այլև գրեալ էր սա, թէ այսքան ինչ դրամոյ բաց թէ գրեցի և փօլիցայ արարի ի վերայ նուիրակին, որ ի Հնդիկս տայ և եւ աստ առնում (Բ, Ե), և գրեալ ևս էր, թէ եթէ յայս կողմս եհօղ լինի, փող առնուս և փօլիցայ առնես ի վերայ իմ։ Իսկ սրբազան Վեհն գրեաց, թէ այժմ գիր առաք ի մեր նուիրակէն ի վերայ Հալապու, որ գրէ, թէ առ ձեռն պատրաստ եղեալ արդիւնքս թէ Մատրասունն, և թէ Բանկալուոնն փօլիցայ արարի ի Բասրայ, որ մահտեսի Յարութիւն աղայն առնու և ի վերայ Պօլսոյ ի սուրբ Աթոռդ հասուցէ։ Ուստի մեք, ասէ, վասն այսր տարակուսեցաք և չիմացաք, թէ քոյդ գրեալ փօլիցայն ևս տուեա՞լ է, թէ զամէն արդիւնսն ի Բասրա է հասուցեալ։ Բայց թէ տուեալ ևս լինի, ասէ, զքոյդ արարեալ փօլիցայն և մօտդ պատրաստ դրամս գտանիցի, ոչ կարեմք այժմ այս կողմամբս փօլիցայ ուղարկել ի վերայ քոյ։ Զի գիտես, ասէ, որ բոլոր Տանն Պարսից և այս կողմունքս խառնակեցեալ են և չէ հնար, ասէ, որ զլոկ գիր գոնէ յղիցեմք։ Վասն ո-

րոյ միայն զայս գրեմ, ասէ, քեզ, զի թէ ի նուիրակէն փոլիցայ լինի հասած առ քեզ, և կամ այլ արդիւնք մօտդ գտանի, երբ որ նուիրակն ի Հնդկաց ելանէ, ասէ, յայս կողմս, դու ընդ նմա գրով խօսեցիս և զհնար իմն գտջիք, ասէ, որ ի սուրբ Աթոռս հասուցանէք, եւ զորպէսն մեզ գրեսցես, ասէ։ Եւ զի նուիրակ Գրիգոր վարդապետն Բ (2) գիր էր գրեալ յառաջագոյն առ լուսահոգին ի Սուրաթու և ի Բումբայու՝ ի ՌՄԻԷ (1778) ի սեպտեմբերի ԻԹ (29) և ի ՌՄԻԸ (1779) ի յապրիլի Ե (5), յորս գրէր, թէ զդրամ հասուցի ի Բումբայու ի Բուշեռ առ Աւէտն, ձեռամբ Եփրիանոսին Ա (1), և սա ի թուղթսն իւր ոչ ինչ էր յիշեալ յայնմ կողմանէ, վասն որոյ գրէ առ այս սրբազան Վեհն սմա, թէ թուի թէ քեզ չիցէ հասեալ։ Ուստի և գրեցաք, ասէ, նուիրակին՝ իմանալ զորպէսն և մեզ գրել։ Դու ես գրեա, ասէ, զսորին որպէսն։

Զօրինակն սորին է ի նոր տետր 212 երեսն։

345. Թուղթ ես ի Բուշեռ առ Յարութիւնի որդի պարոն Աբրահամն գրեաց, ծանուցանելով և նմա նախ զմահ հոգելոյս սրբազան Վեհին և զիւր հայրապետանալն։ Իսկ ապա զի սա ի ՌՋՀԹ (1779) թուոջ Փրկչին և ի նոյ. Լ (30) զգիր էր գրեալ առ լուսահոգին և ծանուցեալ էր զձախորդական անցս ինչ տեղւոյն, որ էհաս յետ մահուան լուսահոգւոյն
77ա // առ նորոգ սրբազան Վեհս մեր, վասն որոյ գրէ սմա զթղթոյ սորին յիւր ձեռն հասանելն և սակս վրդովմանց այն կողմանցն զփոփանս և զօրհնութիւնս գրէ։

Սոյնոյ թղթոյս օրինակն ես է ի նոր տետր 213 երեսն։

346. Ա (1) Թուղթ ես սրբազան Վեհն առ Հնդկաց երկրի նուիրակ Գրիգոր վարդապետն գրեաց, յորում ես նախապէս պատմեաց զորպիսութիւնս բարեգոյն վախճանման հոգելոյս հայրապետին և իւր յաջորդելոյն զսուրբ Աթոռս՝ հանդերձ որպիսութեամբք երկրիս։ Ընդ որս և զառերես հաշտութիւն լինիլն ի մէջ Վրաց և մեր իշխողին, որք թշնամացեալ էին ընդ իրեարս և զտաճկաւին չտալն Վրաց արքային զասափ վարեալ ժողովուրդն։ Ապա, ասէ, թէ վասն այսց խառնակաթեանցս չկարացաք մինչև ցարդ յղել զթուղթս յայդ կողմունսդ, զի շրջակայք երկրիս վրդովեցեալք են, ասէ, և ոչ գոյ ճանապարհ։ Իսկ այժմ այլ ոչ յետացուցաք, ասէ, զթուղթս, այլ ի վերայ մեծին Պօլսոյ յղեցաք, ասէ, ի Բասրա՝ ընդ քանի մի գրեանց ի Բասրա, ի Բաղդատ և ի Բուշեռ գրեցելոց։ Եւ գրեցաք, ասէ, մահտեսի Յարութիւն աղային և Բեթխէհէմեան Յովաննիսին՝ հասուցանել առ քեզ։ Եւ գրէ, թէ այժմ ի կողմունսդ Հնդկաց չյղեցաք, ասէ, զթուղթս, այլ զքանի մի գրեանս, ասէ, փութացուցեալ շուտով յղեցաք վասն քոյդ փոլիցայիցն, զորս հասուցեալ ես, ասէ, ի Բասրա. և անտի գրեալ են, ասէ, մահտեսի Յարութիւնն և Բեթխէհէմեան Յովաննէսն ի Պօլիս պարոն Խաչիկին՝ տալ նուիրակ Մինասպետին։ Իսկ յետ քանեաց աւուրց յղելոց եմք, ասէ, և զգրեանս Հնդկաց երկրին ի Բասրա, զի անտի հասուցեն, ասէ, յիւրաքանչիւր տեղիսն։

Եւ արդ, ծանուցանէ զհասանիլն թղթոյ սորին առ ինքն, զոր գրեալ էր սա ի Կալկաթու ի ՌՄԻԸ (1779) թուոջն և ի դեկտ. ԻԲ (22) առ լուսահոգին, որ յետ վախճանի նորա ժամանեաց առ սրբազան Վեհս մեր ի նոյեմբերին ի վերայ Հալապու։ Եւ գրէ, թէ որքան մտեալ ես դու ի յերկիրդ Հնդկաց, Գ (3) թուղթ են հասեալ ի քէն աստ։ Առաջինն, ասէ, ի ՌՄԻԷ (1778) թուոջ մերում, ի սեպտ. ԻԹ (29) ի Սուրաթու։ Երկրորդն՝ ի ՌՄԻԸ (1779) և յապր. Ե (5) ի Բումպայի գրեցեալ։ Որք առ լուսահո-

գին էին, ասէ, հասեալ, որ չէ կարացեալ, ասէ, գրել քեզ լիագոյն պատասխանիս, վասն որոյ զմի թուղթ է գրեալ քեզ, ասէ, վասն անցից երկրիս ի ՌՄԻԹ (1780) թուոջն և ի յունվարի Է (7) ի վերայ Սպահանու և Բուշեռու։ Յորում զթղթոյդ հասանիլն, ասէ, միայն է ծանուցեալ և խոստացեալ է, ասէ, զլիագոյն պատասխանիս բանիցդ և զխնդրեալ թուղթսրդ յետոյ յղել։ Որ ահա այլ ոչ կարաց, ասէ, գրել, որ և փոխեցաւ, ասէ, առ Քրիստոս։ Եւ զի զլուսահոգւոյն առ սա գրեալ թղթոյ օրինակն կրկին գրեաց և յղեաց առ սա, կարծելով թէ այն թուղթն չիցէ հասեալ սմա, ուստի զեկուցանէ և զայլն։ Իսկ երրորդ զիրդ, ասէ, վերոյ յիշեցեալն է, որ ի ձեռս մեր ժամանեաց։ Այլ որ խոստացեալ է քեզ, ասէ, հոգելոյս հայրապետն մեր զպատասխանիս բանիցդ գրել և զխնդրեալ թուղթսդ
77բ յղել, ահա // և մեք խոստանամք, ասէ, յետոյ յղել։ Բայց զպատասխանիս հարկաւոր բանիցդ այժմ գրեմք, ասէ, զորս և գրէ իսկ։

Քանզի նախ խնդրեալ էր սա վասն էմնիաղեան Խաչիկ աղայի տանեցելոցն (որք յիշեցան ի վերդ ի Յարութիւն աղայի թղթոջն)՝ զմխամըրտական գիր գրել։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ լուսահոգին քանիցս գրեալ է յառաջ, մեք ես յետ աւուրց ինչ գրելոց եմք։

Երկրորդ՝ սակս Շահնազար խանի դրամոյն (զորմէ յիշեցաւ ի վերդ ի թուղթն Բուշեռու Աւէտին ես), գրեալ էր սա, թէ հասուցի ի Բուշեռ պարոն Աւէտին՝ ձեռամբ Եփրեմիանոսին։ Բայց զի Աւէտն ի թուղթսն իւր ոչ ինչ էր յիշեալ յայնմ կողմանէ, գրեաց սմա սրբազան Վեհն, թէ նա վասն այնր զրան ինչ չէ գրեալ։ Վերահասու լեր որպիսութեանն։

Ազդէ սմա և զայս գրեալն Աւէտին, որ գրեալ էր, թէ այսքան դրամոյ բարաթ գրեցի ի վերայ նուիրակին Հնդկաց և այլն։ Ընդ որում և առ այս զինչ՞ գրելն իւր նմա (որք յիշեալ եղեն ի թուղթն Աւէտին, որ ի վերդ)։ Այլև գրէր սա, թէ Սէթ աղայի որդի Աւէտն դրամ է յղելոց առ ի սուրբ Աթոռդ Ա (1), որոյ աղագաւ գրէ սրբազան Վեհն, թէ դեռ չէ հասեալ աստ, որպէս և լուսահոգին, ասէ, գրեալ է քեզ (որ այս ես յիշեցեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) ...)։

Երրորդ՝ վասն Փիլիպպոս վարդապետի ի Սուրաթումն թողեալ ԻԸ (28) թօփ կտաւուցն և մեռոնին գրեալ էր սա, թէ յղեալ են անտի զայնըս ի Բասրա։ Իսկ սրբազան Վեհն գրեաց զայնց որպէսն (որպէս և յիշատակեցաւ ի վերդ ի թուղթն Բեթխէհէմեան Յովաննիսին)։

Չորրորդ՝ վասն կայից շօռօթեցի հանգուցեալ Ղազարին (որ ի վերդ ի Յարութիւնի թուղթն ես յիշեցաւ) գրեալ էր սա, թէ կտակագիր ունի մահտեսի Յարութիւն աղային մօտ։ Իսկ սրբազան Վեհն ծանոյց սմա զՅարութիւնի աղայի գրելն զայս առ ինքն և զօրինակն կտակագրին յղելն և զմիտս կտակագրին։ Նաև զայս գրեցեալս ես ի Յարութիւնի աղայէն, թէ ինկլիզքն արկեալ են զայս բանս ի Բումբայու դատաստանն, զի անդ քննիսցեն զստուգութիւն կտակին և ապա ինձ յանձնեսցեն զհոգացութիւնն։ Մինչ այսպէս լիցի, ես զորբոյ Աթոռոյդ բաժինն հասուցանելոց եմ Պօլսովն (որպէս ի վերդ ի նորա թղթոջն յիշեցաւ), բոլորովիմբ ծանոյց սմա։

Իսկ և վասն ոմանց անձանց արդիւնատուաց զթուղթս էր խնդրեալ սա։ Առ որ գրեաց, թէ յետ քանեաց աւուրց եմք յղելոց։ Արդ, այս վերոյ գրեալ բանքս սորա (որոց զպատասխանիս գրեաց սրբազան Վեհն) էին ի թուղթսն զորս ի Սուրաթու և ի Բումբայու էր գրեալ։ Բայց ի ներքոյ գրելիքս էին ի թուղթն ի Կալկաթու գրեցեալ, որոց զպատասխանիս գրեաց սրբազան Վեհն։ Զի նախապէս գրեալ էր սա զերթալն ի

Մատրան և զորպէ՞ս վճռահատեալն բանից լուսահոգի Գրիգորի աղային (որ յիշեալ գոյ ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) թուոջն և ի ...)։

Առ որս գրեաց սրբազան Վեհն, թէ յետ աւուրց գրելոց եմք ի Մատրաս զոր ինչ հարկն է յայսմ կողմանէ։

Երկրորդ՝ գրեաց սմա սրբազան Վեհն, թէ զառեալսն սրբոյ Աթոռոյս ի կողմանէ հանգուցեալ Գրիգոր աղային և զքույզ ի Մատրասու
78ա ժողովեալ արդիւնսն, // որ յղեալ է պարոն Յովսէփին Մարութեան ի Բասրա առ մահտեսի Յարութիւնն և առ մեր վէքիլ պարոն Յովաննէսն, նոյնպես և դու, որ զԿալկաթառւ արդիւնսն, ասէ, հասուցեալ ես ի Բասրա առ նոսա և զայն ևս, որ ի Բոմբայու է, ասէ, հասեալ առ նոսա («Ա», «Է», «Դ»), նոքա ևս գրեալ են, ասէ, ի մեծն Պօլիս առ Պօղոսեան պարոն Խաչիկն՝ հասուցանել առ սուրբ Աթոռս։ Զորս և նա ըստ կիսոյն առեալ է, ասէ, Մինաս վարդապետին, և մեք գրեցաք, ասէ, զմնացեալսն ևս տալ, զոր և մահտեսի Յարութիւն աղային և պարոն Յովաննիսին ևս գրեալ ծանուցաք և յորժամ մեզ հասցին, ասէ, բոլորապէս, զմիամտութիւնս եմք գրելոց նոցա։

Երրորդ՝ սակս ճոթեղինաց ինչ, որոց աղագաւ գրեալ էր սա, թէ լուսահոգի Գրիգոր աղայն Փիլիպպոս վարդապետի Փէկուայ նուիրակութեան արդեամբքն առեալ է և յղեալ ի Բասրա առ մահտեսի Յարութիւն աղայն՝ հասուցանել ի սուրբ Աթոռդ։ Գրեաց սրբազան Վեհն, թէ այժմէոյս ոչինչ է գրեալ աստ մահտեսի Յարութիւն աղայն այնմ կողմանէ, զի թէ հասեալ լինէր անդ, ասէ, ի հարկէ գրէր։ Դու վերահասու լեր, ասէ, թե ո՞ւր է մնացեալ և մեզ գրեա։ Իցէ թէ հասեալ իցէ, ասէ, ի Բասրա և ընդ քեզ բերցես։ Եւ զի զգինս նոյն ճոթեղինացն ևս գրեալ էր, թէ ԱՃԿԴ (164) հում է առեալ Գրիգոր աղային ի Փէկուայ արդեանցն («Ա») և զմնացեալն մեզ հասուցին՝ գործակալքն նորին՝ Սէթն և Սահրատն։ Գրէ սրբազան Վեհն, թէ զայն ևս իմացաք։

Չորրորդ՝ զի վասն հանգուցեալ Ղուկաս վարդապետի ընչից մեր բաժնին գիր էր առեալ ի նորին վէքիլացն և յղեալ ի Բասրա առ մահտեսի Յարութիւն աղայն, զի զմեր բաժինն առնուցու ի Հաղարմալեան Ստեփանէն և զնոյն թղթոյ օրինակն ևս յղեալ էր առ սրբազան Վեհն։ Գրէ, թե տեսաք և վերահասու եղաք։ Բայց ի մահտեսի Յարութիւն աղայէն դեռ յայդմ կողմանէ գիր ոչ եմք առեալ, ասէ։ Իսկ մեք գրեցաք, ասէ, նմա այժմ զքո գրեալդ և հարկեցաք հետևիլ և առնուլ զբաժինն սրբոյ Աթոռոյս և հասուցանել աստ՝ առ մեզ։

Այլև, գրեալ էր սա Մկրտիչ վարդապետին վասն լուսահոգի սրբազան Վեհի մեղադրանաց թղթոյն (զոր գրեալ էր յառաջագոյն առ Շահամիր աղայն, զորմէ յիշեցեալ է ի յառաջին յիշատակարանոջն ի ՌՄԻ (1771) թուոյ ...), թէ ետ ինձ և ես առի, թէպէտ այլ թէ չկամիցիք՝ յետս յղեցից։ Բայց սրբազան Վեհն գրեաց սմա, թէ լուսահոգին քանիցս անգամ յետ այնորիկ գրեաց զթուղթս օրհնութեան առ Շահամիր աղայն։ Եւ մանաւանդ նա վասն Բարդամեան Մովսէսին զարձակման գիր էր խնդրեալ, ասէ, լուսահոգին զայն ևս գրեալ յղեաց, ասէ, յանցեալ ամին։ Որպէս ահա տեսանելոց ես, ասէ, ի յօրինակն գրոյ լուսահոգւոյն, զոր այժմ առ քեզ յղեցաք, ասէ (քանզի յանցեալ ամին ի... զորպիսածանոյց թուղթ գրեաց առ սա լուսահոգի սրբազան Վեհն, որ յիշեալ է ըստ նոյն թուոյն ի յառաջին յիշատակարանոջն, որոյ զօրինակն այժմ սրբ-

բազան Վեհս մեր նորոգ գրեաց դարձեալ և յղեաց առ սա, զի թէ առաջինն հասեալ չիցէ, այս հասցի)։

Ուրեմն շատ լաւ ես արարեալ, ասէ, զայն մեղադրական թուղթն առ-
78բ նուլդ, զոր և բերցես ընդ քեզ, ասէ։ //Նաև զի հոգելոյս հայրապետն զմի նոր Տօնացոյց էր յղեալ ընծայ Շահամիր աղային, վասն որոյ և նա այնր աղագաւ զդրամ էր առեալ Գրիգոր դեսին, զոր ծանուցեալ էր նա այժմ ի թուղթսն իւր։ Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն սմա, թէ յետ աւուրց գրելոց եմք առ նա զշնորհակալութիւնս։ Ապա խոստանայ և յետոյ ի Հնդիկս զթուղթս գրել, և ընդ այնց քեզ ևս, ասէ, զթուղթ եմ գրելոց։

Վերջապէս հարազատ պաշտօնէին սորա՝ տէր Բարսեղին ևս զողջոյն գրեաց։

Զօրինակն սորին ի նոր տետր 217 երեսն գտցես։

347. Թուղթ ևս ի Պօլիս առ ջուղայեցի պարոն Խաչիկն Պօղոսեան գրեաց, թէ յանցեալ թուոջն ի յունիսի ԻԲ (22), որ թուղթ էիր գրեալ առ հոգելոյս հայրապետն մեր և ծանուցեալ էիր զյանձնելդ մեր նուիրակ Մինաս վարդապետին զմահտեսի Յարութիւն աղայի եղբայր յանգուցեալ Մովսիսի յիշատակ ոսկեայ և ականակուռ խաչն և Ջնթլումի որդւոց յիշատակ Բ (2) արծաթեայ տապանակներն։ Նոյնպէս և զառնլիքըդ ի պարոն Գէորգէն և Աստուածապահէն, հաւալայ առնելդ Մինաս պետին, որ առնուցու ի նոցանէ (Ժ, Ջ) և քո այսքան դրամոյ թամասուկ տալդ դմա, որ յետ քանի աւուրց տայցես (Դ, Դ)։ Եւ սակս այդ յիշեցեալոցդ զայդ առնուլդ ի դմանէ և յղելդ ի Բասրա առ մահտեսի Յարութիւն աղայն, որ ի յարդեանցն սրբոյ Աթոռոյս տացէ քեզ։ Զնոյնս և ինքն՝ Մինաս վարդապետն ևս գրեալ էր լուսահոգւոյն։ Բայց այն թուղթքըն յետ վախճանի լուսահոգւոյն հասին աստ առ մեզ և մեք գրեցաք առ ձեզ զպատասխանիսն ի դեկտեմբերի Ե (5), որ յիշեցեալ գոյ աստ ըստ սոյն ամսաթուոյս, յանցեալ թուոջն և դեռևս ոչ ընկալաք զպատասխանիս նոցին։ Իսկ և զայս գրեցաք յայնժամ Մինաս վարդապետին, զի որքան մնացեալ է մեզ ի Բասրա արդիւնք, զոր գրեալ էր մեզ, առնուցու յայդր ի քէն և գիր տացէ քեզ, որ դու ի Բասրա ի մահտեսի Յարութիւն աղայէն առնուցուս, որպէս և քեզ ևս գրեցաք յայնժամ։

Իսկ այժմ գրեցաք զպատասխանիս թղթոց մահտեսի Յարութիւն աղային և պարոն Յովաննիսին, զորս դու յղեալ էիր աստ յառաջագոյն, և ծանուցաք զհասուցանելդ մեզ վերոյ յիշեալսն և զգրելն մեր Մինաս վարդապետին, որ զմնացեալ դրամն ևս առնուցու ի քէն և զղապզ տացէ քեզ, որ դու ևս անդ առնուցուս։ Ուրեմն և դու, եթէ մինչև ցարդ զմնացեալ դրամն ևս տուեալ ես Մինաս պետին, բարի է, և թէ ոչ, տացես և մեզ գրեսցես։ Բայց Խաչիկ աղայի շնորհակալութեան թուղթն վասն խաչին և Բ (2) տապանակաց տուողաց շնորհակալութեան թուղթն այժմ ոչ յղեցաք, յետո ընդ Հնդկաց երկրի թղթոցն յղելոց եմք։ Զի այժմ ի կողմանէ այդ փօլիցայիցդ և յիշատակացդ միամտութեան աղագաւ զԲասրայու թուղթսն փոքր մի յառաջ յղեցաք, զի հասուցես առ մահտեսի Յարութիւնն և պարոն Յովաննէսն և զորքան ևս թուղթս գրեալ էաք ի Բասրա, ի Բաղդատ և ի Բուշեռ, զայնս ևս ընդ դոսա յղեցաք ի ձեռս նոցին, զի յիւրաքանչիւր տեղիսն հասուսցեն։ Ապա ի մօտակայ աւուրս
79ա զՀնդկաց գրեանս ևս յղելոց եմք ի ձեռս //քո, զի հասուսցես ի Բասրա առ մահտեսի Յարութիւն աղայն և պարոն Յովաննէսն։

14—815

Բայց վասն Տէր-Յովաննիսեան Ստեփանի տալեացն քեզ գրեցաք յառաջ ի դեկ. Ե (5), որ մեք գրեալ էաք նմա գրո գրեալսն, և նա մեզ այսպէս էր գրեալ, թէ ես գրեալ եմ ի Պօլիս առ մեր աղայն, զի զայն դրամն տացէ խաչիկին։ Այժմ թէ կամի խաչիկն, որ սրբոյ Աթոռոյդ հասուցից, թող ինձ գրեսցէ, և ես տաց։ Զոր և մեք քեզ գրեցաք ի դեկտ. Ե (5) և դեռ ի քէն պատասխանի չառաք։ Իսկ քանի աւուրք յառաջ գիր առաք ի Ստեփանէն, որ գրէ, թէ խաչիկն ինձ գրեալ էր, որ յիւր հէսապիցն ԱՌ (1000) ղուռուշ տամ իմ եղբայր Յարութիւնին և զմնացեալն ի սուրբ Աթոռդ հասուցանեմ։ Ես ես ԱՌ-ն (1000) ետու Յարութիւնին, մնացեալ է ԴԾԻԸ-ն (428), զոր ի սուրբ Աթոռդ եմ հասուցանելոց, զապղ ուղարկիր, որ յղեմ ի Պօլիս առ խաչիկն։ Մեք ես ըստ նորին գրեցելոյն Ա (1) զապղանման գիր գրեցաք ի վերայ քոյ ի մարտի Ա (1) և յղեցաք առ նա և նա զդրամն մեզ է հասուցանելոց ի վերայ Բայազիտու։ Վասն որոյ այժմ ես ծանուցի քեզ, զի յայտր ընդ մեր Մինաս վարդապետին ի մէջ վերոյ գրեալ փօլիցայից հէսապիցն հաշուեսջիք։ Այլև որ գրեալ էիր, թէ ի Հնդկաց նաւ է եկեալ, և գրէ մահտեսի Յարութիւն աղայն, թէ ի սուրբ Աթոռն գնալոյ գիր կայ, յղելոց եմք, ահա այն թուղթն մեզ էհաս, որ էր ի մեր նուիրակէն, բայց ի մահտեսի Յարութինէն և ի պարոն Յովաննիսէն գիր չառաք ընդ այս թղթոյս, իցէ թէ առ քեզ թուղթ իցեն յղեալ և դու առ մեզ յղեսցես։

Դարձեալ ծանիր, զի յետ զայսքան բանս գրելոյ, մինչ քանի աւուրք անցին, էհաս առ մեզ թուղթ ի Մինաս վարդապետէն, յորում էր և քոյդ թուղթն, որ առ Տէր-Յովաննիսեան Ստեփանն, գրեցեալ ի յունվարի ԺԴ (14)։ Որ զվերոյ գրեալ բանն Ստեփանին, զոր գրեալ է առ մեզ, ստեաց և փչացոյց։ Զի որպէս յայս ուղարկած թղթոյդ յայտնեալ էիր, դու գրեալ ես նմա Կ (60) ղուռուշ տալ Յարութիւնին և զմնացեալն ամենայն մեզ տալ։ Այլ նա մեզ այնպէս էր գրեալ, զոր ի վերոյ գրեցաք։ Ուստի մինչ զայս գիտացաք, ապա արգելաք ԴԾԻԸ (428) ղուռուշի զապղն աստ, զի դեռևս առ մեզ էր։ Այլ դքո գիրն յղեցաք առ նա և գրեցաք, զի թէ ըստ քոյ գրեցելոյդ բացի Կ (60) ղուռուշէն ինչ որ քո սամիցն ձեռ է եկեալ, տացէ մեզ, ապա և մեք զապղ ուղարկեմք իւրեան, որ յղէ առ քեզ. ապա թէ ոչ կամիցի տալ, մեզ գրեսցէ շուտով, որ քեզ ծանուցանեմք։ Նոյնպէս և վասն այն դրամոյն ես, զոր նոր էիր գրեալ նմա տալ մեզ Գ (3), մեք ես գրեցաք, զի թէ տացէ մեզ, զապղ ուղարկեմք իւրեան, որ առ քեզ յղէ, և թէ ոչ, մեզ գրէ, որ քեզ ծանուցանեմք։

Գաղափարն թղթոյս է ի նոր տետր 174 երեսն։

79բ 348. Թուղթ ես ի մեծն Պօլիս առ նուիրակ Մինաս և Պետրոս վարդապետսն գրեաց սրբազան Վեհս մեր, ի պատասխանի ի ՌՄԻԹ (1780) թուոջն և ի դեկտ. ԻԲ (22) գրեալ թղթոյն վասն տեղւոյ տարաձայնութեանցն և այլոց իրակութեանց, որ էր այսպէս։ Թէ ի դեկտ. ԻԲ (22) գրեալ թուղթն ձեր էհաս առ մեզ ի յունվարի ԻԲ (22) և հասու եղաք ամենայն գրելոցդ։ Թուղթ մի ես քան զայն թուղթն յառաջ էհաս աստ թարգթուականի և ամսաթուոյ, յորում միայն մեծ ժողովոյ լինիլն և զինչ անցանելն գոյր։ Եւ թէպէտ այսոքիկ այսպէս կանխաւ հասին, բայց մեք զպատասխանիսն յետացուցաք մինչև ցարդ, սպասելով գալստեան կարապետ վարդապետին, զորմէ գրեալ էիք, թէ ահա եկն։ Որպէս զի նորին բերեալ թուղթն ես տեսանէաք և իմանայաք զինչ գրեալն անդ, ապա և մեք զոր ինչ պատշաճն էր գրէաք։ Զի այնպէս կարծեցաք, թէ շուտով գայ, այլ նա մինչև ցարդ դեռ ոչ երևեցաւ և ի Կարին ես չէհաս, զի թէ հասեալ լինէր, գրէին մեզ անտի։ Իսկ ապա մինչ տեսաք, թէ նշան ոչ երևի նորին գալոյն, սկսաք գրել զթուղթս զայս, որոյ հարկաւորութիւնն այս միայն է, զի իմասջիք զհասանիլն առ մեզ վերոյ գրեալ Բ (2) թըղթոցն ձերոց։ Խուարուք ուրեմն զպատասխանիս գրեցելոց ձերոց։

Արդ, ի կողմանէ քաղաքիդ առ մեզ գրեալ թղթոցն, զոր ինչ և գրեալ էիք, իմացաք։ Յորոց կողմանէ այժմ զոչ ինչ գրեմ, մինչև հասցին առ մեզ այն թուղթքն և յայնժամ, զոր ինչ և պատշաճն է, գրելոց եմք։

Իսկ վասն Գալուստ վարդապետին ձեզ յառաջ ի դեկտ. Ե (5) բանս գրեցաք, որոյ զպատասխանին չառաք դեռևս։ Իսկ այժմոյս գրեալն ձեր ահա իբրու թէ պատասխան է մեր գրեցելոյն։ Բայց որ զթուղթս խնդրէք առ ոմանս վասն հաստատութեան նորին ի գործն, զայնս ի գալն աստ դոցին մահսարին, գրելոց եմք։ Իսկ զայն սիահին, զոր դու՝ Մինաս վարդապետդ գրեալ էիր, որ էր մեր Մկրտիչ վարդապետի խընդրեալ իրաց հաշիւն, սակս որոց ի լուսահոգւոյն չես առեալ զզապղ և ի մէնջ խնդրես առնուլ, ահա ըստ խնդրոյդ գրեցաք վասն գնոց և ծախուց նոցին զԱ (1) զապղ և յղեցաք առ քեզ ընդ թողթոյս։

Իսկ որ ի ձեռն կարնեցի Գօրօյենց տղայոցն զդրամն էիր հասուցեալ ի Կարին առ մեր վէքիլ պարոն Հայրապետն Ա (1) և զզապղ խնդրեալ, ահա մեք զնորին զապղն յառաջագոյն յղեալ եմք առ քեզ ի յունվարի ԻԷ (27)։ Եւ որ հարցեալ էիր, թէ կամիցի՞մք զի այլ ես հասուցես մեզ ձեռամբ Հայրապետին զդրամս։ Ասեմք առ այդ, թէ կամիմք և յառաջ ես գրեալ եմք քեզ ի դեկտ. Ե (5), զի նորա ձեռամբն մեզ դրամ հասուցես։ Այժմ ես գրեմ ահա, զի այսպէս արասցես։ Ահա և Հայրապետին գրեալ եմք յառաջ, զի փօլիցայ արասցէ ի վերայ քոյ և այժմ ես գրեցաք։ Ուրեմն երբ և գրեսցես, տուր։ Եւ դու ես երբ և պատշաճ տեսցես, դրամ հասո առ նա, նորին գրելոյն մի մնասցես, զի պակասութեան բերեալ է սուրբ Աթոռս։

80ա Այլև՝ մինչ զայսքան բանս գրեցաք, Բ (2) թուղթք հասին առ մեզ ի ձէնջ. մին՝ ի նոյեմբերի ԻԴ (24) գրեցեալ, որ էր հին, և դարձեալ նոյն բանքն, որ վասն ժողովոյն դոցա և խորհրդեանն, իսկ միւսն՝ ի յունվարի ԼԱ (31) գրեցեալ, հանդերձ թղթովք ոմանց հարազատից, զորս ընթերցեալ իմացաք։ Ընդ որս և ի Կարնոյ ընկալաք թուղթս և իմացաք, որ Կարապետ վարդապետն անդ է եկեալ։ Յերկուս ամիսս ի Ճանապարհի է եղեալ, որպէս գրեն. ամիս մի ես հազիւ թէ ի Կարնոյ աստ հասանի։ Դիցուք թէ, զոր ինչ կամեցան, գրեցին, զեկողն ընդէ՞ր մէնզիլով ոչ յղեցին, որ շուտով գայր, և տեսանէաք զգրեալն դոցա և մեք ես զոր ինչ պատասխանելոց էաք, պատասխանէաք և բանն ի մի կողմն հատեալ լինէր շուտով և սրբոյ Աթոռոյս բանքն այսպէս յամենայն տեղիս չմնային ի վերայ երեսաց։ Ութն ամիս ահա կայ այսպէս. մինչև ցգալն նորին և ի մէնջ պատասխանի յայդր հասանիլն՝ տարի լրանայ։ Այլ արդ, ի յունվարի ԼԱ (31) գրեցեալ թղթովն ձերով իմացաք, որ առ ձեզ են հասեալ երկոքին թուղթքն մեր, զորս ի դեկտ. Ե (5) և ի ԺԵ (15) գրեալ և յղեալ եմք առ ձեզ։ Բայց որ գրէք, թէ զպատասխանի նոցին գրեալ յղեցաք յառաջ, քան զայս, այն դեռևս մեզ չէ հասեալ։ Սակայն ի փետրվարի Ի (20) գրէ մեզ Հայրապետն, թէ ԺԵ (15) օր յառաջ զգիր մի

ընկալեալ ի Պօլսոյ նուիրակէն, յղեցի ի Կարս առ Գէորգն՝ հասուցանել ի սուրբ Աթոռդ։ Իսկ մինչև ցարդ դեռ ոչ էհաս մեզ այն գիրն։ Վասն որոյ գրեցաք ի Կարս առ պարոն Գէորգն, զի թէ առ ինքն իցէ հասեալ գիրն այն, յղեսցէ առ մեզ, ապա թէ ոչ, ծանուսցէ։ Եւ զի գիրն այն ի ճանապարհի է դեռևս, և Կարապետ վարդապետն ևս չէ եկեալ, վասն որոյ զվերոյ յիշեալ թղթոյն ձերոյ ի յունվարի ԼԱ (31) գրեցելոյ զպատասխանին չգրեցաք այժմ, մնալով նոցին ևս գալստեանն, զի յայնժամ ի միասին գրեսցուք ձեզ զպատասխանիս ամենիցն, որ ինչ և հարկն իցէ։ Նոյնպէս և զպատասխանիս թղթոց սիրելեացն մերոց ևս գրեսցուք և յղեսցուք ընդ նոսա և յղեսցուք առ ձեզ։

Իսկ այժմ զհասանելն առ մեզ վերոյ գրեալ չորից թղթոցն ձերոց ծանուցանել ձեզ պարտ վարկուցեալ, զայս թուղթս գրեալ յղեցաք, զի գիտացեալ միամտիցիք։ Իսկ զԳալուստ վարդապետի գիրն, որ յղեալ էիք առ ինքն, իմացաք, բայց թէ զինչ՞ առաջադրեցիք նմա, դեռ չիմացաք, զի գրեալ էք, թէ զամենայն ինչ յառաջին թղթոջն գրեալ եմք, իսկ թուղթն այն ահա մեզ չէ հասեալ, որպէս գրեցաք։ Որ ըստ գրեցելոյ Հայրապետին, ահա ամիս մի է, որ ի Կարնոյ ելեալ է թուղթն այն դէպ յայս կոյս, այլ դեռ ոչ էհաս մեզ։

Իսկ զՄասեհեան պարոն Եսայուն յայս կոյս գալն, որ գրեալ էիք, իմացաք, և ի նմանէ ևս գիր առաք ի Կարնոյ, որ խոստանայ մեզ սատ ևս գալ։ Իսկ զՓիլիպպոս վարդապետի գիրն ևս, որ յղեալ էիք, տեսաք, բայց յայսչափ ժամանակս դեռ ի նմանէ գիր ոչ եմք առեալ։ Նոյնպէս և ոչ ի Մեսրոպ վարդապետէն, որոց զորպիսութեանցն գրեսջիք հանդերձ
80բ որպիսութեամբք Գալուստ վարդապետին և // Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետին։

Այլև յետ զայսքան բանս գրելոյ, էհաս առ մեզ ի Կարսայ թուղթն ձեր, զոր ի վերոյ յիշեցաք, թէ Հայրապետն յղեալ է ի Կարս։ Որ էր պատասխանի թղթոյն մերոյ ի դեկտ. Ե (5) գրեցելոյ։ Յորում զոր ինչ գրեալ էիք, ծանեաք։ Բայց տակաւին զնորին ևս պատասխանին թողաք յետոյ գրել ընդ այլոցն՝ ի գալ Կարապետ վարդապետին, քանզի և ի նմանէ գիր առաք, որ եկեալ է ի Կարս և մարդ էր խնդրեալ ի մէնջ, զի բերեսցէ։ Եւ մեք ընդ այս թղթոցս զթուանկչիս յղեցաք ի Կարս՝ բերել զնա ի սուրբ Աթոռս։ Բայց միայն զայսքան ինչ գրեմ, զի վասն Գալուստ վարդապետին բարի է, զոր ինչ խորհեալ էք և արարեալ, մնասցէ այնպէս, մինչև գրեսցուք զձեր խնդրեալ թուղթսն վասն դորա։

Նաև քան զայս յառաջ գիր էր գրեալ մեզ ի Զմիւռնոյ Ապրօյեան պարոն Աստուածատուր աղայն, այժմ ևս էր գրեալ կրկին զթուղթ և քաղաքացիքն ևս շնորհաւորական մահսար էին յղեալ, նոյնպէս և ոմանք ի բարեկամաց զթուղթս էին գրեալ։ Բայց ի Փիլիպպոս վարդապետէն այժմ ևս չընկալաք զթուղթ, զի ի վիճակսն է լեալ։ Իսկ մեք այժմ չեղաք ձեռնհաս ամենիցն գրել զպատասխանիս, այլ միայն առ Աստուածատուր աղայն գրեցաք զթուղթ, զոր և ահա առ ձեզ յղեցաք։ Ուրեմն հասուսջիք ի ձեռս նորա և մեզ ծանուսջիք։

Այլև որովհետև մինչև ցարդ դեռևս զգիր ոչ էաք գրեալ առ սուրբ Երուսաղեմի պատրիարք Յովակիմ վարդապետն, վասն որոյ այժմ զթուղթ մի գրեալ առ նա, յղեցաք ի ձեռս ձեր, զոր առ նա հասուսջիք։ Նոյնպէս և զթուղթ մի առ Պարուսայու առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեցաք, թուղթ մի ևս առ պօլիսցի տիրացու Յովաննէսն, որ է ի Բուրսա, զդոսա ևս առ նոսա հասուսջիք։ Թուղթ մի ևս առ ղափանցի մահտեսի

Թումանն գրեցաք, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր դուք առ մեզ էիք յղեալ և շնորհակալ եղաք վասն մահրամայիցն, զորս տուեալ է քեզ յանուն մեր։ Զայդ ևս նմա տաջիք։ Իսկ այժմ ի տեղւոյդ ի յոմանց բարեկամաց մերոց զթուղթս ընկալաք [ու]րախարարս, որոց զպատասխանիսն յետոյ եմ գրելոց ի գալն Կարապետ վարդապետին։

Զհեղինակն թղթոյս տես ի նոր տետր 221 երեսն։

349. Փուսուլայ ևս գրեաց սրբազան Վեհն առ Մինաս վարդապետն վասն Բասրայու փօլիցայիցն, զորս առնոյր անդ (էջ 80բ—82բ)։

82բ 350. Փուսուլայ ևս գրեաց սրբազան Վեհն առ Մինաս և Պետրոս վարդապետսն, քանզի ոմանք ի միաբանից սրբոյ Աթոռոյս զրաբանօրէն զտրտնջական բանս ինչ էին գրեալ ի Պօլիս առ նորին դէտն, նոյնպիսեաց յարասպաս վասն փոքրաւորաց լուսահոգի Վեհին (որք տակաւին ի ներսն էին) և սակս այն, որք իբր թէ ոչ շահէին, որովք բանիւք բազումք ի Պօլիս վրդովեալք էին։ Զոր եղելութիւն թէ սոքա և թէ ոմանք հարազատք գրեալ էին աստ։ Ուստի և սրբազան Վեհն յայսմիկ փուսուլայոջ գրեաց զբանս հաւաստից և պատշաճաւորս ի ջրումն նենգալի և խարդախիչ բանիցն գրեցելոց այնց, զորս ի վերոյ յիշեցաք։ Որոյ գաղափարն գոյ ի վերայ թղթոյ։

351. Թուղթ ևս ի Պօլիս առ ղափանցի մահտեսի Թումանն գրեաց, ի պատասխանի սիրանիշ և շնորհաւորական թղթոյ նորին յառաջ քան զայս գրեցելոյ։ Յորում օրհնութիւն և շնորհակալութիւն, ապա և սակաւ մի ծանուցումն ցաւոց և վշտացն, զորս կրէր ի մերձաւորաց և մանաւանդ ի բացակայից ոմանց, որոց նենգութեամբն յամենայր մահսարն համահաճական, որ սակս հայրապետութեան սրբազան Վեհիս, հանդերձ մահսարատարաւն [մնայր] ի Պօլիս, և ոչ դառնայր։ Յաղագս որոյ և արտաքին կործք սրբոյ Աթոռոյս մնացեալ էին անկեալ ի վերայ երեսաց և խափան, ուստի և ոչ սակաւ տորանկումն անուան, պատուոյ և փառաց գիպիր սրբոյ Աթոռոյս։ Իսկ և զի տուեալ էր սա ի Պօլիս տեղւոյ նուիրակ Մինաս պետին զքանի մի մուճասամ մահրամայս՝ յանուն սրբազան Վեհիս, այնց սակս ևս շնորհակալութիւնս և զմիամտութիւնս գրեաց սրբազան Վեհն, թէ մեզ է հասեալ։ Ապա գրեաց ողջոյն ընտանեացն սորին՝ պարոն Թումանին, պարոն Բատալին և Գիւլբասարին։

Զօրինակն այսր թղթոյ գտցես ի նոր տետր 75 երեսն[93]։

352. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս ի Պրուսա՝ առ պօլիսցի տիրացու Յովաննէսն և պրուսացի տիրացու Սիմէօնն գրեաց[94], ի պատասխանի թղթոյն նոցա ի սեպտեմբերի ելն գրեցելոյ և յառաջ քան զայս ի դեկտ. ամսեանն աստ հասելոյ։ Արդ, զի գրեալ էին սոքա նախապէս զմխիթարութիւնս ի կողմանէ հոգելոյս սրբազան Վեհին և զշնորհակալութիւնս նորոգ հայրապետութեան իւրոյ, գրեաց շնորհակալութիւնս և զօրհնութիւնս։ Իսկ ապա սակս յետացուցանելոյն իւրոյ մինչև ցարդ զպատասխանիս թղթոյ սոցին (որ էր վասն խռչընդակն գնացից Պօլսոյ դիտին և նախանձառիթ շարժմանցն նորա և ոմանց, որովք և սրբազան
83ա Վեհիս մերոյ համահաճական մահսարն արգելեալ յամեցաւ ի Պօլիս երկար միջոցաւ մինչև ցայժմ)։ Գրէ թէ էր այնր աղագաւ, // զի գոլով մեր ի վրդովեալ երկրոջս այսմիկ թարց մխիթարութեան յամենայն կողմանէ,

սպասէաք ընդունիլ զմխիթարութիւնս յայդ կուսէ ի չերախտընկալ որդւոց սրբոյ Աթոռոյս, որպէս զի չգրիցեմք ինչ, ասէ, ձեզ ի տրտմականաց աստի, զի և ձեզ տրտմութիւն լիցի։ Իսկ փոխանակ մխիթարութեան, զվէրս ընդունիմք, ասէ, ոչ յօտարաց, այլ յընտանեաց և ի բնիկ սիրելեաց, ասէ, մանաւանդ յայնցանէ, որք կաթամբ մօրս ձերոյ, ասէ, սնեալք, աճեցեալք և փառաւորեալք են։ Յորոց փոխանակ երախտագիտութեան, զվնասս, զանպատուութիւնս և զատրանկումն անուան, պատուոյ և փառաց, ասէ, ընկալաւ և ընդունիլ։ Իսկ ընդ այսպիսեաց զմխիթարութիւն ինչ գոնէ ոչ տեսաք, ասէ, դեռևս։ Զի ութն ամիս է, ասէ, ահա ոչ մահսարատարն մեր վերադառնայ ի Պօլսոյ և ոչ սրտադիւրիչ գիր իմն ընդունիմք, ասէ։ Ուստի ամենայն բանք և գործք մեր անկեալ կան ի վերայ երեսաց յամենայն տեղիս, ասէ, և սուրբ Աթոռս անխնամ եղեալ, ասէ, ի չիբայնոց և հարեալ անյաջողութեամբ և պակասութեամբք։ Սակս այսց այսքան չհատացուցի, ասէ, զթուղթս։ Այժմ մինչ տեսի, թէ յոյժ երկարեցաւ միջոցն, և զուրախականս ինչ չունեցաք գրել ձեզ, ապա զտրտմականքս զայսոսիկ գրեցաք, ասէ, զի և դուք ցաւիցիք, ասէ, վասն սրբոյ Աթոռոյս և մխիթարիցէք զմեզ։

Իսկ և յաղագս համատանցի Յովաննէս վարդապետին, որ նորապէս առաջնորդ էր կարգեցեալ Պրուսայու, առաջնորդութեան կոնդակ էին խնդրեալ սոքա։ Այլ սրբազան Վեհն այժմ ոչ գրեաց։ Վասն որոյ ասէ, թէ սակս սոյն ասացեալ պատճառացս զյատուկ կոնդակ ոչ գրեցաք ի քաղաքդ, որպէս խնդրեալ էիք։ Մանաւանդ զի յառաջ գրեալ եմք, ասէ, զհասարակ կոնդակ օրհնութեան ի վերայ ամենից արտաքին վիճակացդ, ծանուցանելով զորպիսութիւնս վախճանման լուսահոգւոյն և մերս յաջորդելոյ, հանդերձ ամենայն պարագայիւք։ Եւ ընդ մեր մահսարատար Պետրոս վարդապետին յղեալ եմք, ասէ, ի ձեռն զոյն արտաքին վիճակացդ նուիրակ Գալուստ վարդապետին՝ ընթեռնուլ տալ յայդր և յայլ տեղիս։ Իսկ յորժամ զմխիթարութիւն ինչ ցաւոց մերոց գտցուք, յայնժամ յատուկ օրհնութեան թղթով ևս շահելոց եմք, ասէ, զժողովուրդն քաղաքիդ։

Ծանոյց զկնի և զառ առաջնորդն սոցա՝ Յովաննէս վարդապետն զշնորհաւորական թուղթ գրելն (զոր յետ թղթոյս յիշելոց եմք)։ Նաև վասն Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետին խնդրեալ էին սոքա ի սրբազան Վեհէն՝ ունիլ ի խնամս և զվերահաստատութեան կոնդակ յղել սակս մնացեալ գործոյն, առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ զայն մեք յառաջագոյն եմք յղեալ առ նա և հասեալ իսկ և զպատասխանին ընկալեալ եմք, ասէ։

Իսկ և վասն իւր սպասաւոր Յակոբ սարկաւագի եղբայր Մարգարին, որ ի Պրուսա էր, զյանձնարարութիւն գրեաց յատկապէս տիրացու Յովաննիսին, զի խնամատար լիցի նմա։ Ապա և եղբօրն նոյն Յովաննիսին՝ այսինքն պարոն Մկրտչին զողջոյն գրեաց։

Գաղափարն սորա է ի նոր տետր 73 երեսն։

353. Թուղթ ևս առ Պրուսայու նորոգ առաջնորդ, համատանցի Յո-
վաննէս վարդապետն գրեաց[95]՝ ասելով, թէ զառ Տէր փոխիլն լուսահոգ-
83բ ւոյն և զմերս յաջոր//դելն, ի հարկէ, մինչև ցարդ իմացեալ ես պարա-
գայիւք։ Զորս և գրեալ ի կոնդակի յառաջագոյն ընդ մեր մահսարաբեր
Պետրոս վարդապետին յղեցաք, ասէ, ի Պօլիս, հասուցանել առ արտա-
քին վիճակացդ նուիրակ Գալուստ վարդապետին, զի ընթեռնուլ տացէ

յամենայն տեղիս օրհնեցելոյ վիճակիդ։ Իցէ, թէ յայդր յղեալ իցէ, ասէ, և ընթերցեալ, իմացեալ իցէք։ Բայց զի չկարացաք, ասէ, գիտել յայնժամ, թէ ո՞ւր իցես, վասն այն ոչ գրեցաք զթուղթ առ քեզ։ Իսկ յառաջ քան զայս գիր առաք, ասէ, այտի ի տիրացու Յովաննիսէն, որ գրեալ էր, ասէ, զքոյդ որպիսութեանց և զյայդր լինելդ։ Ուստի պատշաճ վարկաք, ասէ, այսու թղթով զորպիսութեանց քոց և վիճակիդ և ժողովրդոցդ հարցանել։ Ապա ի կողմանէ հոգելոյս սրբազան Վեհին զմխիթարութիւն գրեաց, և իւր նոր առաջնորդութեանն, ևս շնորհաւորութիւն։ Եւ յորդորեաց մնալ անշարժ ի սէր սրբոյ Աթոռոյս և ինքեան, որպէս և առ լուսահոգւոյն, ազդելով ևս համառօտակի զորպէսն ներկայիս և զխոշ արարն պատրիարքին Պօլսոյ ընդ իւրապիսեաց, և զմահսարատարի և մահսարի ի Պօլիս արգելանիլն յերկար միջոցս մինչև ցայժմ և այլն, և այսց աղագաւ զսրբոյ Աթոռոյս պակասաւորիլն յամենայն կողմանէ, և բանից և գործոց սորին խափան գոլն։ Եւ կրկին ևս հարկէ ի ցաւակցիլ ինքեան և ջանացօղ լինիլ օգտից սրբոյ Աթոռոյս և ինքեան։ Վերջապէս ողջոյն և օրհնութիւն տայ Պրուսայու քաղաքի քահանայիցն, իշխանացն և ժողովրդոցն ամենից։

Զօրինակն թղթոյս այսորիկ գտանիցես ի նոր տետր ի 71 երեսն։

354. Թուղթ ևս սրբազան Վեհն առ սրբոյ Երուսաղեմի պատրիարք Յովակիմ վարդապետն գրեաց (որ է նախկին թուղթն ի հայրապետութեանն իւրում առ սա)։ Յորում նախապէս գրեաց զառ Տէր փոխիլն հոգելոյս սրբազան Վեհին և զիւր հայրապետանալն հանդերձ պատճառօքն և պարագայիւքն երկարապէս։ Երկրորդապէս՝ ծանոյց կարճ ի կարճոյ զանմխիթար և զվշտալի գոլն իւր և զսրբոյ Աթոռոյս պակասաւոր լինիլն ըստ ամենայնի, յաղագս ներկայական որպիսութեանցն, որք ի խոշընդակն ընթացից Պօլսոյ պատրիարքին և համանմանեաց նորին, պատահէին սրբոյ Աթոռոյս և սրբազան Վեհիս (որք ի վերոյ գրեալ երկոսին թուղթսդ յիշեցան), և զվասն այսց չհատուցանելն իւր յայնչափ ժամանակս զորպիսածանոյց թուղթս գրել առ սա (որպէս և երկար գրեցաւ ի վերդ ի թուղթն տիրացու Յովաննիսին և Սիմէոնին)։ Եւ ապա ստիպէ ի վշտակցիլ ինքեան և ցաւելով սակս սրբոյ Աթոռոյս, զսորին օգուտն կամիլ և ջանալ, և ի սիրոյ անպակաս գոլ, և սիրանիշ գրով մխիթարել զինքն։ Իսկ ի վերջոյ, ողջոյն համայն միաբանիցն սրբոյ Աթոռոյն Յակոբեանց Առաքելոցն՝ եպիսկոպոսաց, վարդապետաց և այլոց ամենեցուն։

Զհեղինակն այսր թղթոյս գտցես ի նոր տետրն շարագրանաց ի 177 երեսն։

84ա 355. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն գրեաց՝ զեկուցանելով ի նմա նախապէս զթղթոյ սորին առ ինքն հասանիլն, զոր գրեալ էր ի յունվարի ԻԸ (28) և ծանուցեալ էր զառ ինքն գրեալ թղթոյ սրբազան Վեհին և Գաղատիոյ նուիրակ Յովաննէս պետին թղթոյն և ղապղագրին առ ինքն ժամանելն (որք յիշեալ են ի վերոյ ի յանցելումն թուոջ և ի դեկտեմբերի ամսոյ Ե (5)։ Այլև գրեալ էր սա զորպիսութեանցն տեղւոյ նուիրակ Յակոբ պետին, որ թէ զքաղաքի և թէ Հրջակայից ումանց տեղեաց (որք թողեցեալք էին ի յառաջին նուիրակ Սահակ պետէն թարց նուիրակութեան), զկիսատ հին նուիրակութիւնն ասարտեալ էր և վասն գոլոյն նուիրակին Սաղիմայ ի Սեբաստիա, անդ

չէր գնացեալ, այլ ի յԱմասիա։ Առ որս գրեաց սրբազան Վեհն, թէ իմացաք և մեծ խոհեմութիւն համարեցաք։

Իսկ և գրեալ էր սա առ սրբազան Վեհն փօլիցայս առնել ի վերայ նուիրակաց, զի առ սա զդրամ հասուսցեն և սա յղեսցէ առ սուրբ Աթոռս։ Բայց սրբազան Վեհն գրեաց, թէ յետ սակաւ աւուրց ի վերայ Զմիւռնոյ նուիրակ Փիլիպպոս վարդապետին և տեղւոյդ նուիրակ Յակոբ վարդապետին փօլիցայ եմք առնելոց, զի առ քեզ զդրամս հասուսցեն և քեզ ևս գրելոց եմք և զփօլիցայագիրսն ևս առ քեզ եմք յղելոց՝ ուղարկել առ նոսա։ Եւ ապա յետ գրելոյն յիշեցելոցս բանից ի թղթոջն, որ առ սա, թուղթ մի ևս էհաս ի սմանէ առ սրբազան Վեհն, յորում ընդ այլ իրաց և վասն փօլիցայ առնելոյ կրկին զխնդիր էր գրեալ։ Այլ սրբազան Վեհն գրեաց, թէ որպէս ի վերոյ գրեցաք, այնպէս եմք առնելոց յետ աւուրց։

356. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ Հայրապետն գրեաց, ի պատասխանի յառաջ քան զայս հասեալ Բ (2) թղթոցն նորա, զորս ընդ ի Պօլսոյ նուիրակ Մինաս պետէն և ի Զմիւռնոյ եկեալ թղթոց յղեալ էր առ սրբազան Վեհս մեր։ Որում նախ սակս այնց ժամանելոյն աստ զմխիթարութիւն գրեաց սմա։ Իսկ զկնի առ սա և առ Գօրօյեան մահտեսի խաչատուրն զշնորհակալութիւնս գրեաց այն սակս, զի աստի ի Պօլիս գրեալ թուղթսն շուտով յղէին անդ։ Նոյնպէս և զանտի առ սրբազան Վեհն գրեցեալսն հասուցանէին աստ առ սրբազան Վեհն։ Եւ զի զվերոյ գրեալ Պօլսոյ թղթոց պահարանն, յորում էին և պահարանք թղթոցն Բաղդատու և Բասրայու և միւս տեղեացն, յղեաց ի ձեռս սորա՝ հասուցանել ի Պօլիս։ Ուստի զպատուէր գրեաց շուտով յղել։

Այլ վասն Տիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետին (զոր յիշեցաւ ի վերն ի թղթոջ Պօլսոյ նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն), որ ի Պօլսոյ բազմակնիք թղթովք գայր ի սուրբ Աթոռս յաղագս պատճառաց ոմանց, և այժմ հասեալ էր ի Ղարս, գրեաց սմա սրբազան Վեհն, թէ ահա եկեալ է ի Կարս, մարդ յղեցաք բերել անտի։ Զոր ինչ հարկն պահանջէ, խօսելոց եմք և գրելոց եմք ի Պօլիս և քեզ ևս ազդելոց եմք։

Այլև Կարնոյ խալիլ փաշայն զթուղթ էր գրեալ այժմ առ սրբազան Վեհն և զբրինձ էր խնդրեալ, և սա ևս ստիպեալ էր գրել առ սրբազան
84բ Վեհն կատարել զգրեալն իւր, // այսինքն՝ յղել զբրինձ։ Իսկ սրբազան Վեհն, ի պատասխանի թղթոյ խալիլ փաշային Ա (1) թուղթ գրեաց առ նա, հարցանելով զխաթրն և գրելով վասն խնդրեալ բրնձին, թէ յայսմ ամի դու ևս գիտես, զի սակս դիպուածոցն երկրիս՝ պակասաւոր եմք ի կողմանէ ամենայն իրաց, մանաւանդ բրնձի։ Ուստի այժմ չունելով ի պատրաստի, ասացաք հոգս առնել, զի յետ աւուրց զհարիւր լտրաչափ բրինձ յղեսցուք առ քեզ։ Եւ պարոն Հայրապետին ևս գրեաց զպատասխանին խալիլ փաշայի թղթոյն գրելն, և զոր ինչ ի կողմանէ բրնձին նմա գրեալ էր, այնպէս և սմա գրեաց, թէ յետ աւուրց ինչ յղելոց եմք։

357. Թուղթ ևս ի Կարին առ զմիւռնացի Մասեհեան պարոն Եսայի գրեաց՝ ծանուցանելով զթղթոյ սորին առ ինքն ժամանելն, զոր գրեալ էր սա ի Կարնոյ։ Եւ զի քան զայս յառաջ ի սմանէ քանիցս թուղթք էին հասեալ առ սրբազան Վեհս մեր, այնց աղագաւ զմխիթարութիւնս գրեաց։ Իսկ և ի Կարնոյ մերայինքն գրեալ էին սմանէ առ սրբազան Վեհն, թէ գալոց է յայդր և զասութիւնս ինչ ունի բերանով ասել քեզ։ Վասն որոյ

գրեաց սմա՝ յորժամ եկեսցես, զայնս ասելոց ես մեզ և իմանալոց եմք։

Իսկ ապա ի Զմիւռնոյ Ա (1) պահարանաւ թուղթք էին հասեալ առ սա ի Կարին՝ գրեալք առ սրբազան Վեհն, զոր և սա յղեալ էր աստ, որ յետ գրելոյ վերոյ յիշեալ բանիցն, թղթոյս ժամանեաց աստ։ Վասն որոյ զմխիթարութիւն գրեաց, թէ ի Զմիւռնայու եկեալ պահարանաւ թուղթսն, զորս յղեալ էիր՝ ընկալաք, յորում գոյին, ասէ, մի բազմաձեռագիր մահսար համահաճական և թուղթ մի կրկին ի յԱստուածատուր աղայէն և քանի թուղթք ևս ի յոմանց սիրելեաց։ Իսկ մեք այժմ չկարացաք, ասէ, այլոցն զգիր գրել, այլ միայն Աստուածատուր աղային զմի թուղթ գրեցաք և ամենիցն զողջոյն գրեցաք, ասէ, ի նմա։ Վերջապէս պատուիրէ սմա, թէ ի գալդ ի սուրբ Աթոռս, զառ քեզ եղեալ ժամացուցն ընդ քեզ բերցես։

358. Թուղթն սիրոյ, զոր սրբազան Վեհն ի Զմիւռին առ Ապրօշէլ Աստուածատուր աղայն (որ և ի վերին թուղթդ յիշեալ եղև) և առ Առաքել աղայն և առ որդիսն սոցա՝ Մատթէոս, Մարգար, Յակոբ և Պետրոս աղազատայն գրեաց, էր ի պատասխանի սիրալի թղթոյն սոցա շնորհաւորականի, զոր ի դեկտ. 11 գրեալ էին առ սրբազան Վեհս մեր և ծանուցեալ էին զսորին զանդրանիկ օրհնութեան թղթոց և կոնդակի անդ հասանիլն առ ինքեանս, զիւրեանց ընթեռնուլն և զանունն ի պատարագոչն յիշելն։ Առ որս գրեաց սրբազան Վեհն զյոլով շնորհակալութիւնս և զօրհնութիւնս։

Իսկ և գրեալ էին սոքա զափոփանս և զյուսադրութիւնս յաղագս Պօլսոյ գիտի և ոմանց թիւրակի և նախանձաւոր շարժմանցն առ սրբազան Վեհս մեր (զորս ի վերոյդ ի յոմանս թուղթս յիշեալ եմք)։ Առ որ ևս գրեաց սրբազան Վեհն, թէ մեք ի ճշմարտութիւնն ապաւինեալ զսրբոյ Աթոռոյս և զազգիս մերոյ օգուտն խորհիմք։ Ճշմարտութիւնն
85ա միշտ յաղթող է և այլն։ // Եւ թէ զոր ինչ սրբոյ Աթոռոյս բարի և աստուածային կամացն հաճոյ, այնպէս է լինելոց և այլն։ Վասն որոյ և դուք մի վրդովեալ տրտմիցիք, ասէ։ Այլև յետ գրելոյ բանիցս Ա (1) պահարանաւ թուղթք հասին ի Զմիւռնոյ առ սրբազան Վեհս մեր, ի մարտի ԺԱ (11), որք էին մի բազմաձեռագիր համահաճութեան մահսար յաղագս նորոգ հայրապետութեան սրբազան Վեհիս մերոյ ի հասարակութենէ իշխանացն Զմիւռնոյ, և կրկին թուղթ մի սիրոյ ի սոցանէ և քանի մի թուղթք ևս յայլոց բարեկամաց գրեցեալ։ Որոց առ ինքն ժամանելոյն աղագաւ զմխիթարութիւնս գրեաց սոցա, թէ ընկալաք սիրով և ուրախութեամբ և շնորհակալեցաք զձէնջ։ Բայց անձեռնհասս եղաք, ասէ, գրել զպատասխանիս ամենիցն, վասն որոյ ձեզ միայն գրեցաք զայս, զի միամիտ լիջիք։ Խոստացաւ և միւսոցն յետոյ գրել զթուղթս օրհնութեան՝ հասարակապէս և յատկապէս։ Ի սմա և ողջոյն և զօրհնութիւն գրեաց տեղւոյ համայն քահանայիցն, իշխանացն և ժողովրդոցն։ Վերջապէս Զմիւռնոյ նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետին և ողջոյն, որ ի յարտաքին թեմսն գոլով, ընդ քաղաքացւոցն յայսմ նուագի զթուղթ չէր գրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն ևս այժմ զյատուկ թուղթ ոչ գրեաց նմա, զի ոչ գոյր ևս հարկաւոր ինչ գրելի։

359. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ևս սրբազան Վեհն ի Ղարս գրեաց՝ ի վերայ մերազնեայ ժողովրդեանն քաղաքին, յաղագս ԺԴ (14) ամսոյ գանձանակադրամին սոցա, զոր ձեռամբ սրբոյ Աթոռոյս

գանձապետ մահտեսի Եղիային հաստցեալ էր առ (Ա, Ա), յորում վերահաստատեալ զեղիայն ի գործն գանձապետութեան սրբոյ Աթոռոյս։

360. Թուղթ ևս ի Ղարս առ սրբոյ Աթոռոյս գանձապետ մահտեսի Եղիայն գրեաց, որ այժմ զվերոյ յիշեալ գանձակադրամն յղեալ էր և զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն և զկոնդակ խնդրեալ ի վերայ ժողովրդեանն Ղարսայ։ Առ որ զշնորհակալութիւնս գրեաց վասն հարազատութեան և ծանոյց վասն խնդրեալ կոնդակին, թէ ահա գրեալ յղեցաք, ընթեռնուլ տուր յեկեղեցւոջն և հաստատեաց ի գործդ գանձապետութեան։

361. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի թղթոյ նորին, յամսոյս Ը (8) գրեցելոյ, յորում գրեալ էր սա զյղելն իւր և Յովաննէս պետին ի դրամով առեցեալ ցորենոյն ի պէտս սրբոյ Աթոռոյս զ 48 սոմարն տեղւոյն բեռնակրօքն մերովք։ Եւ ծանուցեալ էր զհասանիլն Տիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետին ի Ղարս, որ ի պօլսեցւոցն ի սուրբ Աթոռս զմահսարս բերէր վասն իրաց ինչ (զոր և յիշեցաք ի վերդ ի թուղթս ոմանս)։ Իսկ սրբազան Վեհն ի կողմանէ ցորենոյ աստ հասանելոյն զմիամտութիւն գրեաց և զպատուէր, զի զԾ (50) սոմարն տեղւոյ ցորեան ևս առցեն, որ բոլոր դրամով առեալ ցորեանն ի ձեռն սոցա ի պէտս սրբոյ Աթոռոյս լիցի՝ ԲԾ (200) սոմարն տեղւոյն։ Իսկ և զի ընդ թղթոյս զթֆանքչիս յղեաց սրբազան Վեհն ի Ղարս՝ ի բերել զԿարապետ վարդապետն աստ, ծանոյց սմա։ Բայց քան-
85բ զի Պօլսոյ Զաքարիա պատրիարքն գրեալ էր ընդ //Կարապետ վարդապետին առ սոյն պարոն Գէորգս՝ առ ի գալ ընդ նմա ի սուրբ Աթոռս իբր առ ի վերահասու լինիլ լինելոցացն, որք ի դրդմանէ Պօլսոյ դիտին ի Պօլսոյ հասարակ ժողովրդեանէն ի մահսարս նոցա գրեցեալք էին առ ի զոլ և կատարել աստ (որք յիշելոց են զկնի ի ներքոյ ի յեւլսն մարտի)։ Վասն որոյ և սրբազան Վեհն յայտնիկ թղթոյ հարկեաց զսա առ ի գալ։ Որ և այնր աղագաւ ըստ հարկին պահանջման զԱ (1) թուղթ գրեաց առ Իբրահիմ էֆէնտու տղային, զի զսոյն պարոն Գէորգս մուրախսս արասցեն առ ի գալ։ Եւ զառ նոսա գրելն զթուղթ սմա ծանոյց և սոխպեաց ի գալ։ Եւ պատուիրեաց ևս, զի ի գալն իւր, զոմն կարգեսցէ անդ ի տեղի իւր, զի անդ պատահեալ բանիցն սրբոյ Աթոռոյս ընդ Յովաննէս պետին մուղայէթ լիցին։ Իսկ սակս ի վերոյ գրեցեալ Կարնոյ և Պօլսոյ գրեանցն, յորս էին և պահարանք թղթոցն Բաղդատու և Բասրայու և այլ տեղեացն, զորս և այժմ առ սա յղեաց՝ հասուցանել ի Կարին, պատուիրեաց շուտով յղել։ Այլ և յոյժ սաստիկմամբ զբրինձ էր խնդրեալ սակս աֆանդիզատէիցն գնովն և յոյժ շատ։ Այլ սրբազան Վեհն առանց գնոյ զՃ (100) լիտր բրինձ յղել խոստացաւ նոցա, գրելով սմա, թէ մեք ևս պակասաւոր եմք ի բրձնոյ, վասն այն զշատն չկարեմք տալ, որ գնով լիցի, այլ զայսչափս միայն յղեսցուք, զի և յերկիրս մեր ևս չգտանի բրինձ։

362. Թուղթ ևս առ Յովաննէս վարդապետն, ըստ մտաց ոմանց բանից առ պարոն Գէորգն գրեցելոց, զորս ի վերդ գրեալ թղթոջ նորին գրեցաք։ Որք և պատշաճաբար առ սա գրեցան։ Բայց և պատուէր սմա, զի յետ գալոյ պարոն Գէորգին աստ մինչև ցվերադառնալն, լաւապէս մուղայէթ լիցի սա անդ հոգալեացն սրբոյ Աթոռոյս։

363. Թուղթ ևս ի Ղարս առ Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ ի Ղարսայ գրեալ էր և զգալն իւր ծանուցեալ և զմարդ խնդրեալ աստի, զի գնացեալ բերցեն զինքն ի

սուրբ Աթոռս իբրու յուխտ, որոյ ի գալն պատահեցաւ աստ զտանիլ Թովմասն և զայլ թուանքչիս յղեցաք առ ի բերել զքեզ։ Եւ ի պարոն Գէորգն ևս գրեցաք առ ի գալ ընդ քեզ։ Ապաքէն ընդ նմա ի միասին ժամու միով առաջ եկեսջիք։

Գրեցան և յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ մեր Թովմասին և այլ թուանքչոցն, որք ընդ նմա, յամսոյս ԺԵ (15)։

1781 թ. մարտ—Թուղթք ի Վան առ Ստեփանն Տէր-Յովաննիսեան և Բայազիտ առ տէր Վահանն

Որ ի կարգի վերոյ գրեցեալ թղթոցդ ի թուղթն Բասրայու Բեթխէհէմեան պարոն Յովհաննիսին և Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետին և Պօղոսեան պարոն Խաչիկին յիշեցաւ ներկայապէս գիր գրեալ զոլ առ ջուղայեցի հանգուցեալ Տէր-Յովաննիսեան Ստեփանն, ահա այս հետ-
86ա ևապէս // գրեալս է, որ երկու աւուրբք յետ քան զյղեցումն վերոյ յիշեալ թղթոցդ գրեցաւ առ Ստեփանն։ Որոյ զհետ և գիր մի ի Բայազիտ առ տէր Վահանն գրեցաւ, որոյ գիտակութիւնն ևս ծանուցելոց է։

Տիրացու Ստեփանին և տեր Վահանին հասցեագրված նամակները (գրված մարտի 17-ին) բացառապես վերաբերում են դրամական խնդիրների (էջ 86ա—86բ)։

Բայց և ի սոյնում աւուրս այլևս յղեցան բեռնակիրք ի Ղարս, զի ևս բերցեն զցորեան ի պէտս սրբոյ Աթոռոյս. և սրբազան Վեհն ըստ խոստմանն (որ գրեցաւ ի վեր անդր ի մարտի ԺԴ (14) ի թուղթն պարոն Գէորգին) զՃ (100) լիտր բրինձ յղեաց ընծայ Իբրահիմ էֆէնդու որդւոցն՝ Միւստաֆային և Նօման աղային։ Առ որս և սիրոյ Ա (1) թուղթ գրեաց՝ ծանուցանելով զյղելն իւր առ նոսա զբրինձ՝ հանգերձ պակասութեամբք սրբոյ Աթոռոյս ի ներկայումս և այլ պատշաճաւոր բանիւք։

364. Թուղթ ևս սրբազան Վեհն առ սրբոյ Աթոռոյ ժողովարար Յովաննէս վարդապետն գրեաց, ծանուցանելով նմա նախ զյղելն իւր զուղտսն անդ՝ ի բերել զցորեան, և երկրորդ՝ զուղարկելն զբրինձ յաղագս էֆէնդիզատէիցն։ Ապա յիշեաց և զգրելն յամսոյս ԺԵ (15) առ պարոն Գէորգն ի գալ։ Եւ գրեաց, թէ եթէ մինչև ցհասանիլն քեզ թղթոյս, հիցէ եկեալ, ընդ նմա մատուսջիր զբրինձն էֆէնդու տղայոցն։ Ի սմա ներկայապէս ի Ղարս եղեալ Ապտուլլա փաշայի վէքիլխարճ պարոն Սամուէլին զողջոյն գրեաց։

365. Փուսալայ ևս գրեաց սմա սրբազան Վեհն առանձնօրէն, քանզի միջոցաւ ինչ յառաջ քան զայս վերոյ յիշեալ Սամուէլն եկն ի սուրբ Աթոռս։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ ահա զմեր դաղբաշի ումեմն Թաւատի՝ Գեօրկին բէկ անուն կոչեցելոյ, որ էր նազիր Վրաց Հերակլ արքայի որդի Լևոն Միրզային, և ի Հերակլէն յղեցեալ այժմ երթայր առ խանն Երևանու յաղագս իրաց ինչ[96]։ Եւ ի տեսանելն նոյն Սամուէլին զԳեօրկին բէկն խօսեցեալ էր ընդ նմա և Ա (1) փոքրիկ գիր ևս էր գրեալ արքային, որ երթայր անդ[97]։ Իսկ յետոյ ի գնալ Գեօրկին բէկին ի Թիֆլիզ և ի գալն դարձեալ աստ առ ի գնալ առ խանն մեր, զայն գիրն Սամուէլի յղեալ էր արքայն առ սրբազան Վեհս մեր և ինքն ևս ի վերայ սրբազան Վեհին մի հայերէն կարճ գիր էր գրեալ, որպէս զի զնորին կամսն իմասցի և յորդորեսցէ ի գնալ անդ։ Ուստի սրբազան Վեհն

գրեաց սմա, թէ զայս բանս խոստովանօրէն խօսեաց ընդ սիրելւոյն մե-
րո՞յ խոջայ Սամուէլին և զկամսն իմացիր։ Զի թէ գնալ կամիցի, ապա
87ա ի՞նչ կերպիւ որ կամի, թող քեզ ասասցէ և դու գրեա մեզ, զի // ծանուս-
ցուք նմա, և այնպէս արասցէ։ Իսկ եթէ ոչ կամիցի գնալ, թող մի թուղթ
գրեսցէ մեզ այլ ևս իւր գրչովն և նոյն իւր մօհրովն, և ցուցցէ զարգե-
լառիթ պատճառն, ինչ որ ինքն գիտէ։ Եւ զայն ևս ծանուցանէ, որ մեք
զարքայի հրամայելն ասացաք ինքեան, բայց ինքն չկարաց գնալ։ Այս-
պէս մի թուղթ գրեալ տացէ քեզ և դու առ մեզ յղեա, զի յղեսցուք առ
արքայն և մեք ևս գրեսցուք, զի իմասցի որպէսն։ Եւ թէ ինքն չկարասցէ
գրել, թող քեզ գրել տացէ և ինքն ի ներքոյ ձեռն դիցէ իւր գրովն, և
նոյնպէս թուրքերէն բառիւք զիւր անունն և զնշանսն գրեսցէ, որպէս որ
ի փոքր թուղթն գրեալ է և այլ նոյն կնքովն կնքեսցէ և տացէ քեզ և
դու առ մեզ յղեա։ Ընդ այսմ յղեաց նաև զՍամուէլի առ արքայն և ար-
քայի առ ինքն գրեալ թուղթսն առ սա, զի տեսցէ և դարձուսցէ։
Օրինակն սորա գոյ ի կառր թղթի։

366. Փուսուլայ գրեաց սրբազան Վեհն առ սա խոստովանաբար
վասն վերոյ գրեալ փուսուլայի բանին, որպէս զի նախ ընդ պարոն Գէ-
որգին խորհրդակցեսցի առանձնակի, զի այլեա ոք մի իմասցի, և ապա
զոր ինչ պատշաճ տեսցէ նա և խօսեսցի այնր աղագաւ, այնպէս արաս-
ցէ։ Ծանոյց ապա երկարապէս և զորպիսութիւնս նոյն Սամուէլի թղթա-
գրութեանն ի Թիֆլիզ առ արքայն Վրաց Հերակլ՝ ձեռամբ Գեօրկի բէ-
կին և զայլն, որ ի վերոյ գրեալդ փուսուլայում երկար ցուցաւ։ Եւ պա-
տուիրեաց, զի ի խօսելն ընդ Սամուէլին սակս այս բանիս, ոչ հարկես-
ցէ ի գնալ, զի մի յիրաւեկ լինիլն կանուխ փաշային կամ յըմբռնելն
ի գնալն ասասցէ, թէ այսոք հարկեաց ինձ։ Եւ ոչ յորդորեսցէ ի մնալ,
զի մի գրեսցէ նա արքային, թէ ինձ այսպէս յորդորօղ եղև, վասն այն
չեկի։ Այլ յերկուց կողմանցն զգուշացեալ, միայն զկամսն իմասցի և
գրեցուսցէ ատա առ ինքն, զի ծանուսցէ արքային և զերծցի։ Գրէ ևս, թէ գի-
տեմ, զի ի խօսիլդ ընդ նմա, քեզ ասելոց է, թէ տեսից զգրեալն հոգևոր
տիրին, թէ քեզ ի՞նչ է գրեալ վասն այս բանիս։ Եւ մինչ այսպէս ասաս-
ցէ, դու զմիւս փուսուլայն ցոյց տուր և զի՞նչ կամիլն շուտ գրեա մեզ։
Սորա օրինակն ևս գոյ ի վերայ կառր թղթոյ։

367. Թուղթ ևս առ պարոն Գէորգն գրեաց, յիշելով զքան զայս յա-
ռաջ յամսոյս ԺԵ (15) գրեալսն և ծանուցանելով զայժմ ուղտսն յղելն
անդ վասն ցորենոյ և ընդ նոսա զխոստացեալ Ճ (100) լիտր բրինձ ա-
ռաքելն վասն աֆանդիզատէիցն։ Որոյ սակս և ասէ, թէ եթէ մինչև ցժա-
մանիլն թղթոյս և բրնձոյն չես ելեալ ի ճանապարհ ընդ Կարապետ
վարդապետին՝ առ ի գալ ի սուրբ Աթոռս, դու իսկ ընդ մեր Յովհաննէս
վարդապետին զբրինձն մատուցիր էֆէնտիզատէիցն, ծանուցանելով նո-
ցա զներկայական պակասութիւնսն սրբոյ Աթոռոյս։
Գրեալ յղեցան սոյն թուղթքս զհետ ուղտապանացն մերոց և թու-
անքչոցն ևս ամսոյս ԺԷ (17)։

1781 թ. մարտ—Թուղթք ի Բայազիտ առ տէր Վահանն և առ այլս

368. Որովհետև սրբազան Վեհն յամսոյս ԺԷ (17) գրեաց և հա-
կեաց տէր Վահանին վասն զատաքչի Թօմօյի տալոցու դրամոյն մեր
ընձացի Կարապետ վարդապետին, զի տացէ։ Եւ թէ չտայցէ նա, զոր-

պէսն գրեսցէ, վասն որոյ և նա հետևեալ էր առ ի առնուլ և դրամն չէր
ի ձեռս եկեալ ի նմանէ։ Նաև՝ բայազդցի ոմն Մուրատ ի Կարին ի մեր
վէքիլ Հայրապետէն յարգեանց սրբոյ Աթոռոյս ԲՃ (200) ղուռուշ էր ա-
ռեալ, զի ի Բայազիտ տացէ տէր Վահանին՝ հասուցանել ի սուրբ Ա-
թոռս։ Բայց նա ևս էր այլևայլ արարեալ և չէր հասուցել փութով ըստ
պայմանադրեալ ժամանակին իւրեանց զդրամն տէր Վահանին։ Որոց
աղագաւ գրեալ էր այժմ տէր Վահանն սրբազան Վեհին, թէ մինչև զյա-
տուկ մարդ ոչ յղեսցես և զթուղթ ոչ գրեսցես առ սմանս՝ առ ի հարկիւ
պահանջել ի սոցունց զդրամս, ոչ ելանէ։ Վասն որոյ և սրբազան Վեհն
զԱ (1) թուղթ գրեաց առ սոյն տէր Վահանն և առ պարոն Յակոբն և խո-
ջայ Սահակն և ընդ թուանքչի Յօհանին յղեաց ի Բայազիտ առ նոսա, զի
սիրով կամ խստութեամբ և փաշային ահացուցանելով՝ առցեն զտա-
լացուսն նոցա և յանձնեսցեն Յօհանին, զի բերցէ։
Գրեալ ելին ընդ Յօհանին յամսոյս ԻԹ (29)։

1781 թ. մարտ—Ի մեծն Պոլիս, ի Կարին և ի Ղարս գրեալ թուղթք

Արդ, Տիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետն (որ յի-
շեալ եղև ի վերոյդ՝ ի մարտի ԺԵ (15) ի թուղթն Պոլսոյ նուիրակ Մի-
նաս պետին և յայլոց թուղթս ևս), եկն էհաս ի սուրբ Աթոռս, բերեալ
ընդ ինքեան զերիս թուղթս ի Պոլսոյ։ Որոց մին առաւել բազմակնիք
մահսար ի դիմաց Ալթիճումիաթին, գրեցուցեալ ի խորամանկելոյ դի-
տին Պոլսոյ և կնքեցեալ ի խուսափեցուցմանէ խոտորնակ կամաց նորին,
ոչ թէ յիշխանաց և յերևելեացն մերազնէից, որք անդ, այլ յաննշանից և
ի ցած արանց ի վերայ համայն միաբանից սրբոյ Աթոռոյս։ Եւ մին ևս
ի քանի մի յիշխանաց կնքեցեալ և յայլ ցած արանց ևս, յորում կանոնք
ոմանք արտագրեալք ի Պոլսեցի Աղէքսանդր և ի Շամախեցի Յակոբ
կաթուղիկոսացն յառաջագոյն անդ գրեալ կանոնացն։ Իսկ միւսն ի
պատրիարքէն յինքենէ առ եպիսկոպոսունսն սրբոյ Աթոռոյս՝ ճշմարիտ
և ուղղաձև բանիւք լցեալ։ Զորոց զդիտաւորութիւնսն աստ երկարապէս
գրելն աւելորդ է, որովհետև նոյն Գ (3) թուղթքն գոն ի սուրբ Աթոռոջս,
88ա այլ միայն զխնդիրս // գրողացն ծանուսցուք աստ, որք զչորեսին խըն-
դիրս էին գրեալ՝ առ ի կատարել զայնս, և որպէս զկանոնս յարամնա-
ցականս ձեռագրով և կնքով հաստատել։ Որոց նախկինն այս էր, թէ
թարց գիտութեան և հաւանութեան ազգին զկաթուղիկոս մի դիցեն միա-
բանքն Աթոռոյս։ Եւ երկրորդն այս, զի զկնի վախճանման հայրապետին
զպաշտաւորսն նորա հանցեն ի ներսէն ի կարգս միաբանից։ Երրորդն,
զի Զ (6) երկրորդք լիցին կաթուղիկոսին, այսինքն՝ նաւլիրք լիցին, որք
իբրու ամենայն ելից և մտից սրբոյ Աթոռոյս վերահասու լիցին և թարց
նոցին խորհրդեանն կաթուղիկոսն ոչ ինչ արասցէ։ Իսկ չորրորդն, թէ
նուիրակ ոմն սրբոյ Աթոռոյս ի վիճակի իւրում մինչ անհամեստ շար-
ժիցի և զկռուասիրութիւն արասցէ և այլն, պատրիարքն Պոլսոյ արքու-
նական հրամանաւ զնա դարձուսցէ ի սուրբ Աթոռս ի վիճակէն։ Որոց
նախկինն ընդունելի է, և երկրորդն ևս հին սովորութիւն է ի սուրբ Ա-
թոռոջս։ Իսկ միւսքն ախտալիք և անհաճելիք ամենևին, ստորարկուք
անուան և պատուոյ կաթուղիկոսին և վնասաբերք սրբոյ Աթոռոյս։ Եւ
արդ, ընթերցեալ եղեն թուղթքս հանդիսիւ միաբանիցս, որոց զպատաս-
խանի ինչ ոչ գրեաց սրբազան Վեհս մեր, այլ միաբանքն զմի թուղթ

գրեցին սիրով ի պատասխանի նոցին, որ աՀա լրապէս գրի ի ներքոյ։

369. Ի լուսակառոյց և ի քրիստոսակերտ սրբոյ և ի մեծ Աթոռոյ՝ Էջմիածնի, որոյ սպասաւոր և պաշտօնեայ քաՀանայակարգ միաբան եղբարք, այսինքն՝ արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսունք, վարդապետք և աբեղայք[97]։ Յորոց անխարդախ և ճշմարիտ սիրով, միաբար և սուրբ ողջունիւ քրիստոսական և նոյնոյ իսկ ամենառատ օրՀնութեամբն, նաև Հոգեպարար շնորՀօք և զօրութեամբ սրբոյ և աստուածաիջի տեղւոյս, ծանուցումն լիցի սիրելւոյ և յարգոյապատուոյ եղբօրդ մերոյ և շնորՀածին զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ արժանապատիւ պատրիարքիդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ և այլ շնորՀազարդ վարդապետաց և սրբանուէր քաՀանայից և առՀասարակ օրՀնեալ և մեծաՀաւատ իշխանապետացդ և իշխանացդ ամենից զօրացելոց ի Քրիստոս, նաև բնաւից աստուածասէր ժողովրդականացդ խմբից Ալթիջումիաթ կոչեցելոց Հարազատ, օգտաջան և սրտացաւ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի բազմակնիք թուղթն Ալթիջումիաթ կոչեցելոցդ անուամբ, յորում էին կնիքք քաՀանայից և այլ եկեղեցականաց և Համայնից Հին և նոր գործակալաց եկեղեցւոյ և միւս թուղթն, որ ընդ նմա՝ օրՀնեալ իշխանացդ կնքովքդ, յորում էին կանոնք ինչ արտաՀանեցեալք ի կանոնաց Հոգելոյս Հայրապետացն մերոց երջանկաց՝ Աղէքսանդրի Բիւզանդացւոյ և
88ր Յակոբայ Շամախեցւոյ, // ընդ որս և յատուկ թուղթ մի ի վերայ Հասարակութեանս մերոյ՝ ի յարգելի եղբօրէդ մերմէ՝ պատրիարք աստուածաբան վարդապետէդ, ի միասին Հասին առ մեզ ի ձեռն սիրելւոյ եղբօրն մերոյ և առաջնորդին Տիգրանակերտոյ՝ Կարապետ խոՀեմառատ վարդապետին ի մարտի ամսոյ ԻԲ (22)։

Յորս զոր ինչ գրեալ էիք, իմացաք, որք զամենայն գրեալսն մեր առ ձեզ բազմակնիք մաՀսարով և միաբանութեամբ ի ձեռն Պետրոս վարդապետին երևեցուցեալ էիք գոլ սուտ, չՀաւատալով և ոչ միայն ի նոցանէ, և զօրինաւոր խնդիրս մեր չկատարելով։ Իսկ դուք ի բազմակնիք թղթոջն, որ Ալթիջումիաթիդ անուամբ գրեալ էիք զչորեսին խնդիրս, Հարկելով զմեզ առ ի կատարել զայնս, և իբրև զյաւիտենական կանոնս ձեռագրով և կնքով մերով Հաստատել։

Առ որս գիտասջիք սիրելիք մեր և սրտացաւ որդիք սրբոյ Աթոռոյս, զի առաջին խնդիրն ձեր, որ է վասն ընտրութեան և օծութեան Հայրապետի, ի բնէ անտի ի նախնի Հայրապետացն մերոց երանելեաց կանոնեցեալ իսկ է, որպէս զի ՀամաՀաւանութեամբ բոլոր օրՀնեալ ազգիս մերոյ լիցի։ Մանաւանդ գիտութեամբ և վերաՀասութեամբ երկուց արքայանիստ մայրաքաղաքաց, այսինքն՝ Շօշու և մեծիդ Պօլսոյ բոլոր քաՀանայից, իշխանաց և ժողովրդոց, և դոցին վերադիտողաց։ Բայց զի թէև գիտութեամբ բոլոր ազգիս մերոյ ևս իցէաք ընտրելոց, ոչ այլ ոք էր պատշաճ ընտրութեան, եթէ ոչ կամ Հայրապետս մեր, զոր ընտրեալ եմք, և կամ յարգելիդ մեր պատրիարգ վարդապետդ։ Զի դուք ևս գիտէք աՀա, որ այժմու ժամանակիս սոքա էին արժանի գերազանց շնորՀին կաթուղիկոսութեան։ Այլ որովՀետև սա աստ գտանեցաւ ներկայապէս, ապա մինչ ժամանակի անբարի դիպուածքն և անյաջողութիւնքն ևս զմեզ կարի յոյժ ստիպեցին, որք Հանդերձեալ էին տապալել զՀաստատութիւն Տանս սրբոյ, որպէս և յառաջ գրեցաք ձեզ ճշմարտութեամբ (թէպէտ անՀաւատալի եղեն ինձ)։ Վասն որոյ ոչ եղև մեզ ժամ և

միջոց, զի Հարցանէաք զձեզ, որոյ սակս ոչ կարացաք յայնժամ յետացուցանել և ոչ մի յերկուցն, այսինքն՝ զընտրութիւնն և ոչ զօծումն, այլ միակամ Հաւանութեամբ ընտրեցաք զսա վաղվաղակի և օծաք առ ի շիջուցանել զբորբոքեալ բոցսն ներկայական, վստաՀանալով ի սէր սիրելեացդ, և գիտելով զի և ձեզ լինի Հաճելի, ըստ որում և շատքդ ի ձէնջ ճանաչէիք զսա և գիտէիք իսկ զարժանաւորութիւնն շնորՀին Հայրապետականի։ Այլ դուք որովՀետև այդքան վրդովեցեալ զներՀակն էք իմացեալ գրեցելոցն մերոց, և զխնդիրս մեր յետաձգեալ և յայսքան միջոցս զսուրբ Աթոռ լուսատու ծնօղս ձեր և զմանկունս սորին ի տրտմութեան թողեալ, և նորապէս զկանոն խնդրեալ, վասն որոյ մեք ևս աւելորդ Համարեցաք երկարապէս գրել ինչ առ ձեզ այժմ ի պատասխանի գրեցելոցն ձերոց, այլ Համառօտ զայս միայն ծանուցանեմք օրՀնեցելոցդ ի Տեառնէ։ Քանզի գիտէք և դուք, զի կանոնագիրքն սրբոյ Աթոռոյս Հայրապետք լինին, և ոչ միաբանք, կամ այլ ստորադրեալք։ Ուստի
89ա յորժամ քաղցրացուցանիցէք դուք զսիրտս ձեր // ի վերայ սրբոյ Աթոռոյս և սրբազան ՎեՀիս մերոյ, յայնժամ և սա ոչ եթէ զձեր գրեալդ միայն Հաստատելոց է վերստին, այլ ընդ նոսին և զայլ բազում աթոռաշաՀ և ազգօգուտ բանս է արկանելոց ընդ կանոնիւք, և նզովիւք փակելոց, և կոնդակաւ Հաստատելոց՝ ըստ կանոնադրութեանց նախնի Հայրապետացն սրբազանից, մանաւանդ Աղէքսանդրու և Յակոբայ։ Եւ մեք՝ Համայն եպիսկոպոսունքս ևս ըստ օրինի և յօժարակամ սիրով կնքելոց եմք զլուսանցս նոյն կանոնականին։ Զոր և երկու եմք գրեցուցանելոց, զի մինն աստ ի սուրբ Աթոռջս մնասցէ վասն զգուշութեան ապագայից և զմինն առաքելոց եմք յայդր՝ ի միամտութիւն և յանՀոգութիւն ձեզ։

Իսկ որ գրեալ էիք Հանել ի ներքէն զսպասաւորսն Հոգելոյս Հայրապետին մերոյ։ Լուարուք առ այդ ևս։ Այդ ոչ է մեծագոյն բան և դժուարութիւն ինչ և կամ ի շարս կանոնաց Համաթուելի։ Քանզի ի բնէ անտի սովորութիւնն՝ այս է սրբոյ Աթոռոյս, զի յորժամ Հայրապետն վախճանիցի, իսկոյն Գ (3) կամ Դ (4) նախապատիւ անձինք ի յեպիսկոպոսացն գնացեալ կնքեն զգրունս վեՀարանին և սպասաւորացն զանկողինսն միայն տուեալ, յինքեանս վասն ի գիշերի ննջելոյ Հանեն ի ներքէն և բնակեցուցանեն ընդ Հասարակսն։ Իսկ զնախկինն ի սպասաւորացն պաՀեն ընդ ինքեանս, ըստ որում և Հարկն պաՀանջէ, յաղագս Հարկաւոր իրաց։ Իսկ ապա մինչ նորոգ Հայրապետն յաջորդէ զԱթոռս սուրբ, զնորին Հաշիւն տեսեալ, խառնեն ի կարգս միաբանիցն, որպէս և յարգելիդ մեր պատրիարք վարդապետդ գիտէ լաւապէս։ Իսկ զսպասաւորսն Հոգելոյս Հայրապետին մերոյ, թէպէտ մինչև ցարդ թողաք ի ներսն՝ ի պատճառս ոմանց ինչ Հարկաւոր գործոց, որք վճարէին նոքօք, սակայն ինքեանք ի վաղուց Հետէ աղաչէին ելանել ի կարգս Հասարակութեան, գոլով կզուեցեալք ի բազմամեայ աշխատանացն և ի պէսպէս տաժանմանցն, զորս կրէին։

Ուստի ի գալ մաՀսարին աստ, կատարեցաք զՀայցուածս նոցա այժմ (որովՀետև դուք ևս Հակեալ էիք) և Հանաք ի ներքէն ի կարգս միաբանից, վերաՀասութեամբ Դ (4) գլխաւոր եպիսկոպոսաց ի մէնջ զգոյս նոցա տեսին ըստ սովորութեան մերոյ և ետուն ինքեանց։ Իսկ միւս կանոնադրելի բանքն ոչ էին գործ Հասարակ միաբանիցս սրբոյ Աթոռոյս, այլ ի սմա նստօղ Հայրապետին, որպէս և գրեցաք։ Ուրեմն

դայս գրեմք սիրելեացդ մերոց և մեծաւ սիրով խնդրեմք, զի մի առ այնս իրկին վրդովիցիք, զի ոչ էր այժմ ժամանակ այդպիսի կանոնադրութեան։ Վասն զի յառաջագոյն գրեաց առ ձեզ հայրապետս մեր զկարմրակնիք կոնդակ օրհնութեան, զոր մինչև ցարդ ոչ էիք ընթերցեալ տակաւին և զանունն ևս ոչ յիշէք։ Մանաւանդ և ի գրեալսս ձեր յայսոսիկ զորս յղեալ էք այժմ, կաթուղիկոս անուամբ ոչ տեսանելով զսա արժանի գրէք միայն թէ ընտրեալդ ձեր։ Եւ զի այսպէս անընդունակ է առ ձեզ այժմ սորին կարմրակնիք թուղթն, որպէս ասացաք, վասն որոյ անյարմար է այժմ հայրապետին մերոյ կարմրակնիք կոնդակաւ զայդ կա-
89բ նոնսդ գրել, զի իցէ, թէ այն ևս լինիցէր անընդունակ։ // Ուստի թողաք զայնս այժմ, որպէս գրեցաք, և միայն զայս թուղթս մեր առ միամտութիւն ձեզ գրեցաք զի գիտասջիք, թէև զայնս հաստատելոց է սրբազան Վեհս մեր հանդերձ մեօք, այլ յայնժամ մինչ դուք զհարկաւորսն սորին, այսինքն զփարմանսն և զմահսարսն հոգացեալ յղիցէք աստ և սա միամտիցի, ապա թէ կանոնեսցէ զայդոսիկ՝ հանդերձ այլևս հարկաւոր կանոնօք, որպէս և ի վերոյ ասացաք։

Ուրեմն աղաչեմ սիրովն Աստուծոյ միամտիլ այսու գրեցելով, թողուլ ի բաց զամենայն վրդովմունս և մի ևս վրդովիլ կամ զներհակ ինչ խորհիլ։ Այլ սիրոյ և խաղաղութեան զհետ երթալով և զբանսարկուն յամօթ առնելով, վերստին քաղցրացուսջիք զսիրտս ձեր ի վերայ մեր և հաստատիցիք ի սէր միաւորիչ։ Եւ որպէս վայել է սրբոյ ծնողիս ձերոյ շինութեանն և պայծառութեանն և բարձրութեան անուանն, այնպէս ջանասջիք առնել և զխաղաղասէր և զհեզաբարոյ սրբազան Վեհս մեր և զմեզ ի տրտմաիթ լրոյ և ի վիրաւորիչ ձայնից ազատս պահել՝ խնայելով յանուն անարատ հարսինս Քրիստոսի, մօրս լուսոյ և ծնողիս զձեզ ի յորդէգրութիւն Հօրն երկնաւորի, և յայսքանամեայ աշխատութիւնս ձեր և մեր։ Զի բաւական եղև յայսչափ ժամանակս այսպէս ի վերայ երեսաց մնալն սրբոյ Աթոռոյս և գործոցն սորա և հատանիլն խապաարդեանց սորին, և պակասաւորիլն յամենայնի ի յայս աւեր երկրոջս, և անկանիլն այսքան ի պատուոյ ի չարաչար ժամանակիս։ Իսկ եթէ ընդ այսոսիկ ոչ հաճեցեալ ձեր, կամիցիք զներհակն առնել, այնուհետև մեք անպարտ լիցուք և դուք որպէս և օգուտ գիտէք հոգւոց ձերոց և սրբոյ Աթոռոյս և ազգիս, զայն արասջիք։ Ահա ակնադէտ լեալք, յուսով մեծաւ սպասեմք պատասխանւոյ թղթոյս և սիրոյ, և քաղցրութեան, և միացուցիչ խաղաղութեան ակն ունելով, աղօթեմք վասն կենաց և բարեյաջողութեան ձերոյ։ Ողջ լերուք ի Տէր։

370. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Պօլիս առ նուիրակ Մինաս վարդապետն և մահսարատար Պետրոս վարդապետն գրեաց։

Նամակում ասվում է, որ Պոլսից ժամանած Կարապետ վարդապետի բերած գրությունները, որոնցով պոլսեցիները հայտնում էին Ղուկասին որպես կաթողիկոս չընդունելու մասին և պահանջում էին վերընտրություն, ինչպես նաև կաթողիկոսի իրավունքների սահմանափակում, ընթերցվել են Էջմիածնի վանքի միաբանների ժողովում։ Վերջիններս չեն ընդունել այդ առաջարկությունները և կրկին պնդում են, որ կաթողիկոս լինելու է իրենց ընտրյալ Ղուկասը։ Միաժամանակ հայտնվում է, որ ընտրությունների վերաբերյալ պոլսեցիներին ոչ ճիշտ տեղեկություններ ուղարկած Սահակ վարդապետը զղջացել է իր արածի համար։ Նամակում հաշտության և համաձայնության գալու կոչ է արվում։ Հայտնվում է նաև, որ Գալուստ վարդապետը ուղարկված է Թիֆլիս Հերակլ թագավորին ցավակցություն հայտնելու նրա որդու՝ Լևան Միրզայի մահվան կապակցությամբ (էջ 89բ—91ա)։

91ա 371. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Կարին առ պարոն Հայրապետն գրեաց, ծանուցանելով նմա զհասանելն Կարապետ վարդապետին ի սուրբ Աթոռս՝ հանդերձ ի Պօլսոյ բերեալ թղթովքն և զմիաբանից գրելն զպատասխանին։

Հանձնարարվում է շտապ կարգով Կ. Պոլիս ուղարկել վերը հիշված նամակները և դրամական փոխանցում կատարել Մինաս վարդապետին։

372. Կոնդակ առաջնորդական սրբազան Վեհն ի վերայ Ղարսայ քաղաքի և շրջակայ գիւղորէից համայն մերազնեայ ժողովրդեանն գրեաց վասն Յովաննէս վարդապետին՝ միաբանին սրբոյ Աթոռոյս (որ անդ վասն սրբոյ Աթոռոյս իմտատիայ պցորեան և զգարի և զայլ ուտելիս ժողովէր, որ և ի վերոյսն ի յոլով տեղիս յիշեցեալ գոյ), կարգելով զնա առաջնորդ նոյնոյ երկրին և հոգաբարձու Ղօշավանք կոչեցեալ վանիցն սրբոյ Յովաննիսի, որ անդ, ըստ խնդրոյ Ղարսայ քահանայից և ժողովրդեանն։ Որք նարդենիս զբազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն և զՅովաննէս վարդապետն ինքեանց առաջնորդ կարգել խնդրեալ համակամութեամբ։

373. Թուղթ ևս առ նոյն ինքն Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի մարտի ԻԲ (22) գրեալ թղթոյն։ Յորում նախ ի կողմանէ ԾԱ (51) սոմար ցորենոյն, զոր այժմ ուղտուքն մերովք յղեալ էին սոքա, միամտութիւն։ Երկրորդ՝ զի փուռուլայի բանս էր գրեալ
91բ սա առ սրբազան Վեհն։ Գրեաց, թէ այնր զպատասխանի յետ Ջատկին եմք գրելոց։ Իսկ յետ այսոցիկ զայս, թէ զքեզ առաջնորդ էին խնդրեալ ինքեանց տեղւոյդ քահանայքն և ժողովուրդքն բազմակնիք մահսարաւ ի մէնջ։ Վասն որոյ զառաջնորդական կոնդակ գրեցաք, ասէ, վասն քոյ և յղեցաք առ քեզ, զոր ընթեռնուլ տուեալ հաստատեսցիս, ասէ, ի գործդ և սուրբ վանիցդ ևս լաւապէս հոգածու լիցիս։

374. Թուղթ ևս առ պարոն Գէորգն գրեաց, թէ թուղթդ ի մարտի ԻԲ (22) գրեալ, հանդերձ մահսարաւն տեղւոյդ քահանայից և ժողովրդոցն էհաս առ մեզ ընդ ուղտապանին մերոյ և ընդ ուղտուցն ցորենով բարձելոց։ Արդ, ըստ մահսարին ձերոյ, ահա զառաջնորդական կոնդակ գրեալ յղեցաք վասն Յովաննէս պետին և կարգեցաք զնա ձեզ առաջնորդ։

Նաև, զի սա ի նախնեաց իւրոց հետէ Երևանու երկրացի էր, վասն որոյ գրեալ էր այժմ սրբազան Վեհին և խնդրեալ էր, զի զինքն և զտուն իւր յատուկ թղթով տէրունի արասցէ սրբոյ Աթոռոյս, զի այլոյ ծուխ չլիցի։ Նման իրի և սրբազան Վեհն զմի Ա (1) թուղթ գրեաց ի վերայ սորա և իւր որդի փոքրիկ Բաղտասարին, թէ դուք ի նախնեաց ձերոց յայս երկրացի գոլով՝ էք տէրունի ժողովուրդ սրբոյ Աթոռոյս և իբր յատուկ ծուխ սմա, վասն որոյ ոչ ոք ունի զիրաւունս իւրացուցանել զձեզ, այլ դուք յատկապէս տէրունի էք սրբոյ Աթոռոյս՝ հանդերձ օրհնեալ տամբ ձերով։ Ուստի և ի հաստատութիւն բանիս, զայս գիրս յղեցի առ ձեզ, զի մնասցէ առ ձեզ ի միամտութիւն և յանհոգութիւն ձեզ։ Զոր և յղեալ ընդ թղթոյս առ սա՝ գրէ յայսմիկ թղթոջ, թէ ահա վասն հաստատութեան տէրունի գոլոյդ սրբոյ Աթոռոյս, զյատուկ թուղթ գրեցաք առ քեզ, որ մնասցէ ի տան քում։ Այլև, զի վերոյ յիշեալ թուղթսն Պօլսոյ և Կարնոյ պահարանեալ յղեցաք ի ձեռն սորա՝ առ ի յղել ի Կարին առ Հայ-

րապետն, զի և նա անտի յղեսցէ ի Պօլիս, ուստի գրէ սմա շուտ հասուցանել ի Կարին։

Ուղարկեցան թուղթքս ընդ թուֆանքչոցն մերոց յամսոյս Լ (30)։

1781 թ. ապրիլ—Ի Ղարս և ի Կարին գրեցեալ թուղթք

Յայսմիկ աւուրս, որ է ապրիլի Ը (8), սրբազան Վեհն այլևս դարձեալ յղեաց զուղտս ի Ղարս՝ ի բերել զցորեանն սրբոյ Աթոռոյս, որ անդ, վասն որոյ զՃ (100) լիտր բրինձ, զոր ի վերն ի մարտի ԺԵ (15) ի թղթոջ պարոն Հայրապետին խոստացաւ յղել խալիֆ փաշային, այժմ յղեաց ի Ղարս, անտի հասանիլ ի Կարին. Եւ առ ոմանս տաճիկս և հայս ևս զթուղթս գրեաց, որպէս ահա ի ներքոյ ցուցանին կարգաւ։

375. Թուղթ սիրոյ ի Կարին առ խալիֆ փաշայն գրեաց, ծանուցանելով նմա զյղելն բրնձին ի Ղարս, որ անտի ևս հասցի առ ինքն։

376. Թուղթ ևս առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ծանուցանե-
92ա լով և նմա ևս// զբրինձ յղելն ըստ խոստմանն՝ յանուն խալիֆ փաշային ի Ղարս, առ պարոն Գէորգն, որ նա հասուսցէ առ սա, կանխելով ի վարձու զբեռնակիրս, զի և սա ընդ մահտեսի Յովաննիսին, որ անդ, մատուսցէ փաշային և զքիրայն բրնձատար բեռնակարցն ինքն տացէ։ Նաև ի դիմաց իւրոց զողջոյն տացէ յիշեալ մահտեսի Յովաննիսին։ Եւ թէ յառաջ քան զայս քանիցս գրեալ է քեզ մեր Մկրտիչ վարդապետն՝ առնուլ զԺ (10) թեւանի շաքեար և զԳ (3) ղանթար երկաթ և յղել ի պէտս սրբոյ Աթոռոյս։ Եթէ առեալ ես, բարւոք է, և թէ ոչ, շուտով առեալ յղեսցես։

377. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Ղարս առ Իբրահիմ էֆէնտու որդիսն գրեաց վասն Ղարսայ և Ղօշավանից նորոգ առաջնորդ Յովաննէս վարդապետին, զի մուղայէթ լիցին նմա և ակնածու։ Սմին նման և զյանձնարարական թուղթ մի ևս առ Մաղզբերդու Ալիբէկն գրեաց։ Ըստ այսմ և զմի թուղթ ևս առ Մահմատ բէկն գրեաց։ Զորս և յղեաց առ պարոն Գէորգն և Յովաննէս պետն՝ տալ նոցա։

378. Թուղթ ևս առ պարոն Գէորգն գրեաց, զեկուցանելով նմա զյղելն վերստին զուղտսն առ ի բերել անտի զմնացեալ ցորեանն սրբոյ Աթոռոյս։ Ծանոյց ապա և զյղելն ընդ ուղտուցն զբրինձ յանուն խալիֆ փաշային և զգիր գրելն առ նա և զառաքելն առ ինքն, և պատուիրեաց, զի թէ քիրաճի պատահիցի, փոյթ յղեսցէ զբրինձն հանդերձ թղթովքն, իսկ թէ չպատահիցի, զթուղթսն Հայրապետին և խալիֆ փաշային գոնեայ յղեսցէ շուտով, զի իմացեալ զբրնձոյ հասանիլն ի Ղարս, միամտեսցին։ Եւ ապա մինչ քիրաճի պատահիցի, զբրինձն ևս յղեսցէ։ Ազդէ սմա և զայս, թէ քիրայն բրնձատարաց Հայրապետն է տալոց։ Ծանուցանէ և զգրելն զթուղթս առ տաճիկսն ի Ղարս, զորս ի վերոյ յիշեցաք, և զի ձեռս իւրեանց յղելն։ Իսկ և հարկեաց, թէ զՅովաննէս պետի իմաստիւ ժողովեալ ցորենոյ և գարւոյ, և թէ զդրամով առեցեալ ցորենոյ զորքանութիւնսն գրեսցեն։ Ի սմա և Յովաննէս պետին ողջոյն գրեաց, զի անձեռնհասն եղև նմա յատկապէս զգիր գրել։

Գրեցեալ և յղեցեալ եղեն թուղթքս ընդ տղայոցն և ուղտուցն մերոց յամսոյս Ը (8)։

1781 թ. ապրիլ—Թուղթ միակ ի Թիֆլիզ

379. Զկնի վերոյ ցուցեալ թղթոցդ յղեցման, ժամանեցին աստ թուղթք ի Թիֆլիզու՝ ի Կարապետ և ի Յովաննէս և ի Գալուստ վարդապետացն մերոց, որք անդ, և յայլոց ոմանց ևս։ Որք և ի նորապէս ժողովեալ մոմէն Կարապետ վարդապետին զՃ (100) լիտր մոմ էին յղեալ աստ ի պէտս սրբոյ Աթոռոյս։ Իսկ սրբազան Վեհն զմի թուղթ գրեաց այժմ առ նոսա, ի պատասխանի թղթոյն նոցա։ Յորում նախ գրեաց ի կողմանէ մոմին, թէ կշռեցաք աստէն, Բ (2) լիտր պակաս՝ եկն։ Բայց շնորհակալ եմ և այլն։ Եւ ապա զի վէճ ինչ էր անցեալ անդ սակս Սահակաշէն եկեղեցւոյն, որ տէրունի էր սրբոյ Աթոռոյս։ Բայց Յովսէփ բժիշկն, որ էր իբրու տէր նորա, կամէր տալ Հախպատու, ի գրգռելոյ
92բ Իսրայէլ կաթուղիկոսին (և այլոց ևս թէպէտ), որ այժմ ի Հախպատ նստեալ իբրու վերատեսուչ կոչիւր նմա։ Ուստի գրեալ էին սոքա առ սրբազան Վեհն՝ գրել զթուղթս առ Հերակլ արքայն և առ որդին առ ի խափանումն նոյն վիճոյն։ Այլ սրբազան Վեհն այժմիկ զթուղթս չգրեաց առ արքայն և առ որդին, վասն որոյ գրէ, թէ դուք ի միասին խօսեսջիք յաղագս այդր բանի ընդ արքայն և ընդ այլս, զմեզ իբրու այդմ անտեղեակ զոլ կարծեցուցանելով նոցա, զի մեր փութով ի լոյս անկանիլն լաւ չէ, որոյ աղագաւ իսկ յայդր զգիր չգրեցաք և ոչ ումեք այժմ։ Իսկ մինչ վերջապէս բանն ի վատ կողմն եզերեսցի, ի հարկէ, յայնժամ գրելոց եմք զթուղթս արքային և այլոց ոմանց։

Գրեալ յղեցաւ ընդ Ստեփանի ումեմն Թիֆլիզեցւոյ, որ զմոմն բերեալ էր, յամսոյս Ժ (10)։

1781 թ. ապրիլ—Ի Բայազիտ առ տէր Վահանն

380. Թուանքչի Յօհանն, զոր սրբազան Վեհն ի մարտի ԻԹ (29) առաքեաց թղթով առ տէր Վահանն ի Բայազիտ և առ խօջայ Սահակն և առ պարոն Յակոբն, զի զղատաքչի Թումօյի և զՄուրատի տալացու դրամսն սրբոյ Աթոռոյս պահանջեալ առնուցուն (որ և ի վեր անդր յիշեցաւ), այժմ դարձաւ անտի, բերեալ զթուղթ ի նոցունց։ Յորում գրեալ էին, թէ յոյժ հետևեցաք, բայց նաղտ դրամ ոչ եկն ի ձեռս։ Այլ ի Մուրատէն զմահսար առաք և ի Թոմօէն՝ զղատաքս քեասարայի։ Այսր աղագաւ սրբազան Վեհն վերստին առ տէր Վահանն զմի թուղթ գրեաց, շնորհակալելով զխօջայ Սահակէն և զպարոն Յակոբէն և պատուիրելով նմա, զի Մուրատէն առեալ մահուտսն յղել ի սուրբ Աթոռս և զի Թոմօէն առեալ զղատաքսն վաճառել և զգինսն յղել։

Եւ ապա զայս գրեաց, թէ զմեր Մկրտիչ վարդապետի խնդրեալ ճոթեղէնսն, զորս առեալ էիր և յղեալ և զգինսն գրեալ, զայնս ևս ընկալաք և զգինսն իմացաք, և զի քէն մեզ հասեալ դրամսն և զվէճսն ի Մկրտիչ վարդապետէն ստուգեալ, ծանեաք, որ մեք պարտիմք քեզ ԲՃՀԸ (278) ղուռուշ և ԼԲ (32) փարայ։ Զորս հարկ է ի կողմանէ մեր յառ քեզ հասեալ փօլիցայից դրամոցն վեր առնելոց ես և մեզ գրելոց։ Եւ դու այսուհետև նոր ի նորոյ պարտիս, անէ, ծառայել սրբոյ Աթոռոյս և տուր և առութեան զաւթարից մուղայէթ լինիլ։ Յամսոյս ԺԶ (16)։

Քան զայս յառաջագոյն Հերակլ արքայն Վրաց գիր էր գրեալ առ սրբազան Վեհս մեր, խնդրելով ի Թէլաւու ևս սրբոյ Աթոռոյս գանձապետն մի տարւոյ գանձանակի արդիւնք Գ (3) լիտր մոմ էր յղեալ առ և զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն։ Վասն որոյ սրբազան Վեհն հարկեցեալ գրեաց զպատասխանիս յիշեալ թղթոցն, հանդերձ շնորհակալութեան կոնդակաւ ի վերայ Թէլաւու ժողովրդեանն մերայնոյ վասն մոմին։ Զորս ահա հետևապէս գրեսցուք։

93ա 381. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Հերակլ արքայն, ի պատասխանի սիրանիշ թղթոյն նորա, զոր գրեալ էր նա յառաջագոյն ընդ Թէմուրազ Դիւան բէկուն և Գէօրկին բէկին, յորում օրհնութիւն և շնորհակալութիւն։ Իսկ սա առանձնօրէն ի ձեռն Գեօրկին բէկին զմի փուսուլայ ևս էր գրեալ առ սրբազան Վեհն և հարկեալ, զի զՂարսայ փաշային վէքիլխարճ Սամուէլն յորդորեսցէ ի գնալ ի Թիֆլիզ, որովհետև այն Սամուէլն յառաջ զգիր էր գրեալ առ արքայն, թէ ունիմ զմիտս գալոյ յայդր։ Ուստի և սրբազանն գրեաց ի Ղարս Յովաննէս պետին՝ առ ի իմանալ զմիտս նորին, թէ անդ գնալոյ կամ ունի՞, թէ ոչ, և ըստ դիտմանն զգիր առնուլ ի նմանէ իւր կնքովն և գրովն, և յղել առ ինքն սրբազան Վեհն, զի և նա ազդումն տացէ արքային (որ երկարապէս գրեցաւ ի վերն ի մարտի ի փուսուլայոջ Յովաննէս պետին)։ Իսկ Յովաննէս վարդապետն հարցեալ ցայն Սամուէլն յաղագս այն բանին, առեալ էր զայս պատասխանի, թէ ես չեմ ասացեալ, թէ տամբ գնամ, այլ ասացեալ եմ, թէ քանի մի անտուն տղայովք գնամ առ արքայն, ես որպէ՞ս ի Սէվազու զատուն իմ հասուցից անդ և այլն։ Որ և զայսոսիկ գրեցուցեալ և կնքեալ նևամբ Յովաննէս պետին յղեալ էր առ սրբազան Վեհն։ Զոր սրբազան Վեհն այժմ յղեաց առ արքայն և գրեաց, թէ թէպէտ վասն այսպիսեաց իրաց բան ինչ գրելն յերկիրն օսմանցւոց մեզ մեծ վտանգ է, այլ վասն որոյ քոյդ խաթեր զայս ինչ գրեցաք անդ և անտի այսպէս պատասխանի և այս թուղթն եկ ի Սամուէլէն, զոր ահա յղեցաք առ քեզ առ ի տեսանել։ Ըստ այսց և այլ պատշաճաւոր բանք սիրոյ։

Սոյն թղթոյս օրինակն ի վերայ կոտր թղթոյ է։

382. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ Թէլաւու քաղաքի մերային ժողովրդեանն գրեաց՝ յաղագս միոյ ամի գանձանակական արդեանցն նոցա Գ (3) լիտր մոմին, զոր այժմ յղեալ էր ի սուրբ Աթոռոյս տեղւոյ գանձապետն սրբոյ Աթոռոյս պարոն Յակոբն։ Յորում և վերահաստատութիւն գանձապետութեան Յակոբին։

383. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ևս առ վերոյ յիշեալ Յակոբն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն, զոր յարդիս ընդ Գ (3) լիտր մոմին յղեալ էր առ սրբազան Վեհն ընդ եղբօրն իւրոյ՝ Ստեփանին։ Եւ զի զվերոյ գրեալ կոնդակն յղեաց ի ձեռս սորա, գրէ սմա ընթեռնուլ տալ յունկս ժողովրդեանն՝ ի միաժամութիւն նոցա և ինքն հաւատիլ ի գործն և որպէս յառաջ, նոյնպէս և այսուհետև հարազատօրէն ծառայել սրբոյ Աթոռոյս։

Գրեալ յղեցան թուղթքս ի յԵրևան առ Ստեփանն՝ հասուցանել ի տեղիսն։ Յամսոյս ԺԸ (18)։

Դարձեալ վերստին այլևս թուղթք ժամանեցին առ սրբազան Վեհս մեր ի մեծէն Պօլսոյ ի ջուղայեցի պարոն Խաչիկէն վասն իրաց ինչ, և ի նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն մերոց սակս Ատենի ժամագրքին տպեցման և Հալապու նուիրակութեանն և վասն դրամոյ ինչ ի Հուլպայ և յաղագս այլևս մանր բանից, որք տեսանին ի ներքոյ ի պատասխանոջն։ Յորոց հասանիլն ի Կարին և ի Ղարս
93բ պարոն Հայրապետն և || պարոն Գէորգն ևս ընդ այնց զթուղթս էին գրեալ և յղել։ Ուստի սրբազան Վեհն հարկաւորեալ գրեաց զթուղթս, ի պատասխանիս ամենից յիշեցելոցդ ի վերոյ։ Ընդ որս ի Զմիւռին առ Փիլիպպոս վարդապետն և ի Թօխաթ առ Յակոբ պետն և առ մահտեսի Ալիքսանդրն ևս զթուղթս գրեաց վասն հարկաւորութեանց։ Որք գրին ի ներքոյ։

384. Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Պօլիս առ Մինաս և Պետրոս վարդապետսն[98]։

Հանձնարարվում է Կ. Պոլսի պատրիարքի հետ համաձայնեցնել Հալեպ նվիրակ ուղարկելու հարցը, տրվում են տնտեսական բնույթի մի շարք հանձնարարություններ (էջ 93բ—94ա)։

94ա 385. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Պօլիս առ ջուղայեցի պարոն Խաչիկն[99] գրեաց, ի պատասխանի և փեսր. ԻԴ (24) գրեալ թղթոյն նորա, թէ թուղթդ էհաս առ մեզ ի յապրիլի ԺԶ (16) և ընթերցեալ ծանեաք զուէրդ և զհարազատութիւնդ, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, և շնորհակալեցաք զքէն և այլն։ Այլև սակս հաշուցն մերոց, որք են ի Բասրա, զոր ինչ գրել էիր, գիտացաք և շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ և զամենայնի օգտակարսն սրբոյ Աթոռոյս՝ զմահտեսի Յարութիւն աղայն և զԲեթխէհէմեան պարոն Յովաննէսն։ Արդ, թէ զհասուցեալսդ Մինաս վարդապետին և թէ զհասուցանելիսդ և թէ զնոր գրեալսն քեզ ի Բասրայու, զորս ծանուցեալ էիր մեզ, զամէնն իմացաք։ Յորոց կողմանէ մինչ գրեալ էր մեզ Մինաս վարդապետն յառաջագոյն, և զթուղթս խնդրեալ առ Բեթխէհէմեան Յովաննէսն և առ առ մահտեսի Յարութիւն աղայն և առ այլս, ըստ քոյդ խնդրոյ, մեք ևս գրեցաք զնոյնս յառաջ քան զայս ի մարտի ԺԵ (15), միայն ի Բասրայ և ի Բաղդատ, գրելով զթուղթս ընդ Գընոսին և ի Բուշեռ, զի ի Հնդկաց երկիրն չեղաք յայնժամ ձեռնհաս ի գրել զթուղթս Եւ վասն ոսկեայ ականակուռ խաչին և Բ (2) արծաթեայ տապակացն գրեցաք յայնժամ զշնորհակալութիւնս և զմխիթարութիւնս առ Բեթխէհէմեան պարոն Յովաննէսն և առ մահտեսի Յարութիւն աղայն, որք ի հարկէ առ քեզ են հասեալ մինչև ցարդ և յղեալ ես առ նոսա։

Իսկ որ խոստանաս, թէ գրեանք են գալոց ի Հնդկաց կարաւանաւ և յղելոց եմ յայդր, յուսամ թէ մինչև ցարդ յղեալ իցես յայսկոյս և մեզ հասցին։ Բայց մեք այժմ ևս չկարացաք գրել զթուղթս ի կողմունսն Հնդկաց, ըստ որում ի հեռուստ և ի մօտուստ հանդիպեալ վշտօք և յոլով զբաղմամբք պաշարեալ եմք։ Իսկ երբ և գրեալ հասուսցուք, յղելոց եմք առ քեզ՝ յղել ի Բասրա։

Այլև ի կողմանէ Տէր-Յովաննիսեան Ստեփաննոսի տալեացն, որ զթուղթ էիր գրեալ առ նա ի յունվարի ԺԴ (14) և առ մեզ յղեալ, մեք

ես յղեցաք առ նա, և զոր ինչ մեզ պատշաճ էր գրել, գրեցաք նմա, և խնդրեցաք զդրամսն, թէ զառաջին ԱՌՄՃ (1200) ղուռուշի ապրանքի գինն, որ այժմ եղեալ է ԱՌԴՃԻԸ (1428) ղուռուշ (զի ըստ քոյդ գրեցելոյ զԿ (60) ղուռուշն տացէ Յարութիւնն և զմնացեալն մեզ հասուցէ), և թէ զնոր խնդրելիդ ի նմանէ ԳՌ (3000) ղուռուշն։ Զոր և գրեալ ծանուցաք քեզ ի մարտի ԺԵ (15)։ Իսկ մինչև ցարդ, դեռ ոչ եմք ընկալեալ ի նմանէ զպատասխանի ինչ և դրամ ևս չէ հասեալ մեզ ի նմանէ դեռևս։ Տեսցուք, թէ զինչ՞ գրէ պատասխանի, քեզ ծանուցանելոց եմք։ Եւ զայլ որպիսութիւնս ի թղթոյ Մինաս վարդապետին իմանալոց ես։

Գաղափարն սոյնոյ թղթոյս ի շարադրանաց տետր 80 երեսն է գրեցեալ։

94բ *386. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Զմիւռին առ Փիլիպպոս վարդապետն գրեաց, պատուիրելով նմա, զի փոլիցայիւ զդրամ հասուցէ ի Թոխաթ մահտեսի Աղամջանին յարդեանց սրբոյ Աթոռոյս։ Եւ գրելով նմա զայլևս մանր բանս։*

387. Թուղթ ևս ի Թոխաթ առ մահտեսի Աղամջանն գրեաց, քանզի գրեալ էր սա սրբազան Վեհին զդրամ փոլիցայ առնել ի վերայ ումանց նուիրակաց՝ հասուցանել սմա, վասն որոյ և սրբազան Վեհն զԱ (1) ղապզ գրեաց ի վերայ Թոխաթու նուիրակ Յակոբ պետին, զի զդրամ հասուցէ սոյն մահտեսի Աղամջանիս (Բ) և հանդերձ բարեւագրիւն, որ առ նա, յղեաց ի ձեռս սորա։ Վասն որոյ գրէ սմա, թէ ահա այսպէս առարաք. պարտիս զղապզագիրն առ քեզ պահել և զիւր բարեւագիրն առ ինքն յղել և զդրամն պահանջել, և ապա յետ տալոյ նորա զդրամն, զղապզն յղել առ նա։ Եւ դու, պաէ, զնոյն դրամն ձեռամբ Կարնոյ մեր վէքիլ Հայրապետին առ մեզ հասուցանել ջանասցես։

Ապա ծանոյց և զայժմ առ Փիլիպպոս վարդապետն ևս գրելն, զի սմա զդրամ հասուցէ և պատուիրեաց, թէ երբ և դրամ հասանիցի քեզ ի նմանէ, զորքանութիւնն գրեսցես մեզ, զի և մեք ըստ այնմ զղապզ գրեալ յղեսցուք քեզ՝ հասուցանել առ նա ի միամտութիւն նորին։

388. Իսկ բարեւաթուղթն Թոխաթու նու[իրակ] Յակոբ վարդապետին էր այսպէս, թէ ահա զդրամ փոլիցայ արարաք ի վերայ քոյ (Բ) և զղապզն ի վերայ քոյ գրեալ յղեցաք ի ձեռն մահտեսի Աղամջանին՝ յղել առ քեզ։ Վասն որոյ ի հասանիլն թղթոյս առ քեզ, պարտիս ի նուիրակական արդեանցդ զայնքան դրամ հասուցանել նմա, զի և նա հասուցէ ի սուրբ Աթոռս, և զղապզդ առնուլ ի նմանէ ի պիտոյանալ քեզ ի հաշուատրութեանդ։

389. Թուղթ ևս ի Կարին առ խոջայ Յովաննէսն գրեաց, վասն զի Թիֆլիզեցի Եսային Իսլքաշոնց սրբոյ Աթոռոյս զտալացու դրամս ունէր ի վերայ իւր, որ և զվէճեղէն իրս տարեալ ի Կարին տուեալ էր ումեմն Գաբրիէլի՝ առ ի ծախել և զգինսն հասուցանել մեր վէքիլին, որ անդ։ Ապա ի պահանջել վէքիլին մերոյ զդրամն ի յիշեալ Գաբրիէլէն, սոյն խոջայ Յովաննէսս երաշխաւոր էր եղեալ նմա՝ ասելով ցմեր վէքիլն, թէ միամիտ լեր և մի պահանջեր զդրամն, մինչ զվէճսն վաճառեսցէ և ապա տացէ, և թէ նա չտայցէ, ես հատուցից զպարտս սրբոյ Աթոռոյն։ Իսկ յետոյ այն վաճառելի իրքն խալպ և պիտակ էին եղեալ և սակաւագինս, ուստի սրբոյ Աթոռոյս հասանելի դրամն ոչ գոյանա՞յր։ Վասն որոյ սրբազան Վեհն գրէ յայսմիկ թղթոջ առ սոյն խոջայ Յովաննէսս, զայն դրամն, որոյ սակս երաշխաւոր էր լեալ, հասուցանել սրբոյ Աթոռոյս։

390. Թուղթ ևս առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ի պատասխանի նորին յամսոյս Ա (1) և Է (7) գրեալ թղթոցն, որք ընդ Պօլսոյ թղթոցն հասին աստ։ Որում պատուիրէ զվերոյ յիշեալ Պօլսոյ և Թոխաթու թուղթսն յղել առ տեղիսն։ Իսկ և աղդէ զառ խոջայ Յովաննէսն ևս զգիր գրելն, որ անդ է, վասն սրբոյ Աթոռոյս հասանելի դրամոյն և հարկէ պահանջել և առնուլ զդրամն, ասելով, թէ զկնի տալոյն ես զշնորհակալութեան գիր եմք գրելոց առ նա։ Այլև ի կողմանէ Բաղդոնց Խաչատուրին և Աւետ[ի]սին, որք զյոլով դրամս էին տալացու սրբոյ 95ա *Աթոռոյս ի վաղնջուց իսկ, գրեալ // էր սա, թէ Գ (3) ձիոյ քամմայ կամին տալ։ Առ որ գրեաց, թէ պարտին այնպիսի բան տալ, որ այժմ սրբոյ Տանս պիտոյացի. այնք տեղւոյս խարճ չեն։ Իսկ մեք, խնայելով ի դոսա ժամանակ ինչ, ևս համբերեմք այժմ ոչ պահանջելով, մինչև մի յաջողութեան դուռն բացցի դոցա, ապա տացեն։*

391. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորին յամսոյս ԺԵ (15) գրեալ թղթոյն, ընդ որում և զդաւթարն հաշուի իւրոյ, որ ընդ սրբոյ Աթոռոյս, յղեալ էր։ Զոր տեսեալ սրբազան Վեհին և տեղեկացեալ, գրեաց, թէ ի դաւթարոջդ ամենայն գրեցելոցն վերահասու եղեալ հաւանեցաք, որ մերոյս դաւթարին համեմատ էր, որ ի յանցեալ ՌՄԻԹ (1780) թուոյն և ի հոկտեմբերի մէկէն սկսեալ մինչ ցսոյն ՌՄԼ (1781) թիւս մեր և ապրիլի ԺԵ (15) ի մէջ քոյ և սրբոյ Աթոռոյս տուր և առութեան հաշիւն ընդ Մկրտիչ վարդապետին մերոյ տեսեալ հատուր և առութեան ... և մեք մնացաք քեզ տալոց Ց ղուռուշ։ Վասն որոյ զայս թուղթ իբրև զղապզ և ... գրեցաք քեզ։

Արդ, պատուիրեմ զնոր դաւթար մի սահմանել և զի մէնջ առ քեզ և ի քէն առ մեզ հասեալսն գրել կարգաւ։ Մեք ևս ահա նորապէս հաստատեցաք առ ի գրել։ Իսկ և զառ Յովաննէս պետն թուղթ գրելն ևս հանդերձ զիտամամբն աղդէ սմա (զոր ի ներքոյ յիշեալ եմք)։

Ծանուցանէ և զշնորհակալութեան կոնդակ գրելն ի վերայ Ղարսի երկրին վասն տալոյն նոցա զիմատախայր սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ Յովանննէս վարդապետին (որ ես ի ներքոյ է գրելոց)։ Այլև սակս Ղօշավանից Պօղոս պետի տուեալ վէջեղինաց հաշուատեսութեանն գրեալ էր սա, թէ տեսանելոց և ծանուցանելոց եմ։ Գրէ սրբազան Վեհն, թէ ըստ գրեցմանդ արասցես։

Այլև՝ Ղարսայ նախիջևանցիքն զ500 փայտ էին տալացու սրբոյ Աթոռոյս սանատով, զորոց գինսն ձեռամբ սորա էին առեալ առ հոգեւորս այժմ սրբազան Վեհն զՍօղոմոն վարդապետին։ Որոյ աղագաւ այժմ սրբազան Վեհն զՍօղոմոն վարլոյս հայրապետին։ Որոյ աղագաւ այժմ սրբազան Վեհն զՍօղոմոն վարդապետն յղեաց յայն գեօղն վասն փայտիցն։ Վասն որոյ գրէ սմա՝ ի գալն նորա պարտիս հարկ գրել նոյն գիւղացւոցն, զի թէ ի փայտիցն խարճեալ են, զպակասորդսն լցուսցեն և պատրաստեսցեն, որ ի յիջանել Ղարսայ և Արփաչայի, բերցուք։ Ահա զսանատն ետուք Սօղոմոն պետին և ջրոյն Արփաչայի, բերցուք։ Ահա զսանատն ետուք Սօղոմոն պետին և 500 փայտեր, յորում դու ևս, աէ, ձեռագրեալ ես և կնքեալ և սանատն 500 փայտեր, յորում դու ևս, ասէ, ձեռագրեալ ես և կնքեալ և տիկօրցւոց է և անուամբք նախշուանցի Թօրօսի որդի Մակարին և տիկօրցւոց է և անուամբք նախշուանցի Թօրօսի որդի Մակարին և ... Դանիէլի որդի Գրիգորին է գրեցեալ։ Եւ ի վերջոյ պատուիրէ զԺ (10) Դանիէլի որդի Գրիգորին է գրեցեալ։ Եւ ի վերջոյ պատուիրէ զԺ (10) հատ սայլի մառան առնուլ ի պէտս սրբոյ Աթոռոյս և քիրայիւ յղել ի Ղօշավանք, զի անտի բերցի աստ։

392. Կոնդակ շնորհակալութեան ի վերայ Ղարսայ երկրի մերազնե-
այ ժողովրդեանն գրեցաւ՝ սակս իմաստիական արդեանցն, զորս ձե-
ռամբ Յովաննէս վարդապետին (որ յարդիս է ինքեանց առաջնորդ) հա-
սուցեալ էին սրբոյ Աթոռոյս, որք են այս ինչք՝ ԲՃՀԵ (275) տեղւոյ սօ-
մարն գարի, ԱՃԾ (150) սօմար ցորեան, Բ (2) ձի, Ա (1) ջորի, և Ա (1)
95բ խարախ ձիոյ, ԱՃԳ (103) տաւար, ՂԸ (98) ոչխար։ Զհետ // այսց և
դրամ ևս (Ա, Է, Դ)։ Զորս յանուանէ և թուով և չափով յիշեալ միամտե-
ցոյց, թէ հասեալ է ի սուրբ Աթոռս, և գրեաց զօրհնութիւնս յոյժ յոյժ։

393. Թուղթ ևս առ Ղարսայ նոր առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի ի յամսոյս ԺԵ (15) գրեալ թղթոյ նորին։ Ընդ որում և զիր դաւթարն իմաստիական ժողովեալ իրաց յղեալ էր։ Առ որ գրէ նախ սրբազան Վեհն, թէ զդաւթարդ տեսեալ հաւանեցաք։ Զամենայն ժողովեալ արդիւնսն քո առ մեզ և ի սուրբ Աթոռս է հասեալ, որք են այսինչք (զորս մի առ մի ի վերին կոնդակոջդ յիշեցաք)։ Ուստի զայս թուղթս, ասէ, ի միամտութիւն քեզ գրեցաք։ Արդ, որչափ զապղ և զապղանման գիր է յղեալ առ քեզ, ասէ, մեր Մկրտիչ վարդապետն վասն վերայ գրեալ հասուցելոցդ, զայնս առ ինքն յղեսցես և զայս միայն ընդ քեզ պահեսցես։ Այլև, թէպէտ պատշաճ էր, ասէ, ընդ առաջնորդական կոնդակիդ զիր ինչ յղել քեզ իբրու շնորհ ի սրբոյ Աթոռոյս, բայց ձեռնհաս չեղաք, յետոյ լինելոց է, ասէ։ Գրէ և զյղելն իւր զկոնդակ շնորհակալական ի վերայ Ղարսայ՝ վասն իւր ժողովեալ արդեանցն։

394. Թուղթ ևս ի Նախիջևան կոչեցեալ գիւղն ի վերայ Թօրոսի որդի Մակարին և Դանէլի որդի Գրիգորին գրեաց։ Զի ի ՌՄԻԸ (1779) թուա-ջին և ի մարտի Բ (2) եկեալ սոքա ի սուրբ Աթոռս առ կենդանութեամբ խ-հոգեւոյս հայրապետին, զ600 ղօլաթայ խնդրեցին և առին ի պէտս իւրեանց, և գիւղացւոցն իւրեանց, զի զ500 չամի գերան տացեն, որք և սանատ ետուն վկայութեամբ Ղարսայ պարոն Գէորգին և կնքովն նորա, և զԴՃ (400) ղօլաթայն առեալ, պայմանեցին զփայտսն գետով բերել ի հանդէպն Շահրիարու և ապա առնուլ զԲՃ (200) ղօլաթայն ևս։ Բայց զի երկիրս մեր վրդովեցաւ, մնաց այսպէս։ Վասն որոյ այժմ սրբազան Վեհն զՍօղոմօն պետն յղեաց առ նոսա և գրեաց, թէ ահա այսպէս սանատ էք տուեալ գիտութեամբ և կնքով պարոն Գէորգին և զդրամոյ մեծ մասն առեալ գիտութեամբ նորա և այլն։ Ուստի զՍօղոմօն պետն յղեցաք յայդր ի վերահասու լինիլ փայտիցն մերոց, որոյ ի գալն պարտիք զփայտսն պատրաստել և թէ ի նոցուն խարճել իցէք, զթերին լցուցանել, զի ի մեղմանալ ջրոյն Արփաչայի, բերցիք ընդ ջրովն դէմ յանդիման Շահրիարու, զի զԲՃ (200) ղօլաթայն ևս տացուք։ Բոլոր գիւղականացն ևս ողջոյն։

Յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Սօղոմօն վարդապետին յամսոյս ԻԶ (26)։

1781 թ. ապրիլ—*Ի Բամբկաձոր, ի Ղազախ, ի Շուլաւէր և ի Լոռի*

395. Վասն զի այժմիկ ի կողմանէ ուտելեաց և այլոց պիտանի գործեաց յոյժ պակասաւորեալ էր սուրբ Աթոռս, ուստի սրբազան Վեհն զԹիֆլիզեցի տէր Դաւիթ նորընծայ վարդապետն ժողովարար կարգեալ իւղի և պանրի, և մսացուի, և երկաթեայ և փայտեայ գործեաց ի վերայ Ղազախու, Բամբկաձորու, Շուլաւէրու և Լոռու, զմի ժողովարարու-

96ա թեան // կոնդակ գրեաց ի վերայ նոյն երկրաց և յղեաց ընդ Դաւիթ պե-
տին։ Յորում նախ ծանոյց զպակասաւորութիւնս սրբոյ Աթոռոյս, և ապա
յորդորեաց տալ առատօրէն զվերոյ յիշեալ իրսն։ Եւ Դաւիթ պետին ա-
ղագաւ ևս յանձնարարութիւն։

396. Թուղթ ևս ըստ մասց կոնդակին՝ առ Վանական վարդապետն։ Եղբօրն ևս ողջոյն։

397. Թուղթ ևս նոյնպէս՝ առ Մխիթար քեալանթարն։ Այս Բ (2)-սս ի Շուլաւէր։

398. Թուղթ ևս նոյնպէս՝ առ Հաղարծինու վանից առաջնորդ Մանուէլ վարդապետն։

399. Թուղթ ևս նոյնպէս ի Բամբկաձոր՝ առ ի հանգուցեալ սրբազան Վեհէն անդ ժողովարար կացուցեալ Աւետիս վարդապետն։ Եւ զի սա ունէր զժողովեալ ցորեանս և զգարիս անդ ի գիւղորայս ուրեք ուրեք։ Գրէ զայնս յանձնել Դաւիթ պետին ի բերել։

400. Թուղթ ևս ըստ վերնոյդ՝ առ Բամբկաձորու մէլիք Շաքարօն։

Գրեցան և առաքեցան վերոյ գրեալքս ընդ Դաւիթ պետին յամսոյս Ե (5)։

1781 թ. մայիս—*Ի Բայազիտ, ի Թօփրախղալա և յԱլաշկերտ գրեալ թուղթք*

401. Եւ յետ երկուց աւուրց սրբազան Վեհն զերիս ժողովարարս ևս էհան ի սրբոյ Աթոռոյս. զՅակոբ վարդապետն Տամախեցւոյ յղեաց ի Բայազիտ և ի Դիատին, զգեանչեցի տէր Յակոբ պետն յղեաց ի յԱլաշկերտ և...*, և զԽոր Վիրապու միաբան Յարութիւն պետն՝ ի Թօփրախղալա և ...**, տալով նոցա իւրաքանչիւրոցն ի վերայ նախագրեալ վիճակացն իւրեանց զմի մի կոնդակ և գրելով ի նոսա զպակասութեանց սրբոյ Աթոռոյս ի կողմանէ ուտելեաց՝ հանդերձ երկրիս աւերութեամբն և երթևեկաց յաճախութեամբն։ Եւ ապա պատուիրելով զիմաստիայս առնել սրբոյ Աթոռոյս՝ իւղի և պանրի, և տաւարի, և զժողովարարսն ի սէր ընկալեալ, փութով վերադարձուցանել դէպ ի յԱթոռս լիաձեռն արդեամբ։

402. Թուղթ ևս ի Բայազիտ առ տէր Վահանն, առ Մարգար աղայն և առ միւս իշխանսն գրեաց՝ ազդելով նոցա զյղելն զվերոյ յիշեալ ժողովարարսն անդ և ի յայն կողմունսն վասն պակասութեանցն սրբոյ Աթոռոյս, և գրելով վասն նոցա զյանձնարարութիւնս։

403. Թուղթ յանձնարարական ևս առ Ուչքիլիսէի առաջնորդ Մկրտիչ վարդապետն գրեաց, զի զիւր վիճակի ժողովարարն արդիւնաշատս արասցէ և զմիւս երկուսն ևս մարդ եղեալ ընդ նոսա յղեսցէ յիւրաքանչիւր վիճակսն։ Ելին յամսոյս Զ (6)։

1781 թ. մայիս—*Ի Թօխաթ և ի Կարին գրեալ թուղթք*

Մինչ օր մի ևս էանց, հասին առ սրբազան Վեհն թուղթք ի Թօխաթու ի մահտեսի Աղամջանէն, որ խնդրեալ էր ի սրբազանէն զերիս օրհ-

* Բնագրում բաց է թողնված մեկ բառ։
** Բնագրում բաց է թողնված մեկ բառ։

նութեան թուղթս ի վերայ ոմանց սակս արոց և խոստմանց։ Եւ ի Կարնոյ ի մեր վէքիլ Հայրապետէն ևս գոյր նորեկ թուղթ, որոց զպատասխանիս գրեաց այժմ սրբազան Վեհն՝ հանդերձ մահտեսի Աղամջանի խնդրեալ օրհնութեան թղթովքն, որք ահա զկնի ծանուցանին։

96բ 404. Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն՝ ծանուցանելով զապրիլի ԻԶ (26) գրեալսն սմա և զթուղթս գրելն յայնժամ առ տեղւոյն նուիրակ Յակոբ պետն և առ Զմիւռնոյ առաջնորդ Փիլիպպոս պետն, վասն հաստուցանելոյ զդրամ առ սա (որք ի վերն յապրիլի ԻԶ (26), յիշեալ եղեն)։ Իսկ ապա զի սա ի վերայ երից մարդկանց գիր էր խնդրեալ, վասն որոյ սրբազան Վեհն գրեալ յղեաց (զորս ի ներքոյ յիշելոց եմք)։ Ուստի աղդէ սմա, թէ ահա զխնդրեալ օրհնութեան թուղթսդ յղեցաք և այլն։ Իսկ և առ Թօխաթու պարոն Գրիգորն զողջոյն գրեաց՝ խոստանալով յետոյ, զգիր գրել առ նա, որ խոստացեալ էր յանուն սրբոյ Աթոռոյս զյիշատակի իմն շինեցուցանել վասն հոգւոյ իւր օրթախ հանգուցեալ մահտեսի Ստեփանին՝ ի Հալապ վախճանեցելոյ։ Որում պատուիրէ կամ նուիրակ Յակոբ պետին յանձնել, կամ մեր վէքիլ մահտեսի Աղամջանին։

405. Թուղթ ևս ի Կարին առ մեր վէքիլ Հայրապետն գրեաց. նախ շնորհակալելով զնմանէ յաղագս հաստուցանելոյն զյառաջ քան զայս ի Պօլիս և ի Թօխաթ գրեալ թուղթսն մեր։ Եւ ապա պատուիրելով սակս վերոյ գրեալ թղթոցս Թօխաթու առ ի հաստուցանել անդ։ Իսկ և գրէ, թէ մինչ ուխտաւորք գալոց լիցին, միամտեցուսջիք և յղեսջիք զէպ ի սուրբ Աթոռս, զի երկիրս և ճանապարհքն փոքր մի խաղաղացեալ են։ Այլև Մանեհեան պարոն Եսայուն, որ այժմոյս ի Կարին էր, զողջոյն գրեաց, ասելով, թէ զթուղթն սիրոյ ընդէ՞ր պակասեցուցանէ։ Նաև բանիւ Զմիւռնոյ նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետին ի Հոլանդիա քաղաքոյ կամ յԱմստէրդամ՝ գեանչեցի պարոն Մնացականն և ի Զմիւռին եղեալ Մօսկով կոչեցեալ պարոն Յովաննէսի եղբայր Առաքել աղայն յաղագս սրբոյ Աթոռոյս էջմիածնի զմի ջուխտ մեծ զանգակ էին շինեցուցեալ և յղեալ էին անտի ի Զմիւռին առ Փիլիպպոս պետն, զոր և նա յղեալ էր ի մեծն Պօլիս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Մինաս վարդապետն և առ Մանեհեան պարոն Նիկողայոսն, զի նոքա Տրապիզոն յղեսցեն։ Որոց աղագաւ և Փիլիպպոս վարդապետն և այլք գրեալ էին սրբազան Վեհին՝ գրել ի Տրապզոն, զի անդ տիրութիւն անօղ լիցի և յղեսցեն անտի ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ և սրբազան Վեհն ի Տրապզոն չունելով ծանօթ ոք հոգածու, սոյն պարոն Հայրապետիս գրեաց՝ գրել անդ պատշաճաւոր ոմանց՝ առ ի հոգ տանիլ զանգակացն ի դուրս գալն ի ծովէն և յղել ի Կարին, որպէս և իցէ հնարիւք և կերպիւ (զի երկուց զանգակացն կշիռն էր ՄԿ (260) հօխայ)։ Զորս և ինքն յղեսցէ ի սուրբ Աթոռս։

Գրեցան և առաքեցան թուղթքս ի վերոյ ցուցեալ ընդ փայեկին այժմոյս ի Կարնոյ եկելոյ յայսոյս է (7)։

97ա **1781 թ. մայիս—Ի Պօլիս, ի Զմիւռին և ի Բայազիտ թուղթք**

Իսկ ապա Ագուլեաց սրբոյն Թովմայի Առաքելոյ վանից առաջնորդ Թովմաս վարդապետն ի միաբանից իւրոց զոմն Ստեփաննոս վարդապետ յղեալ էր աստ՝ առ ի գնալ ի Պօլիս, և զաղաչանաց թուղթ գրեալ առ սրբազան Վեհն, որպէս զի զկոնդակ տացէ նմա ժողովարարութեան վասն վանիցն։ Եւ մանաւանդ զթուղթ գրեսցէ ի Պօլիս և ի շրջակայսն առ Ագուլեաց Տան ժողովուրդսն, որք անդ, զի զիւրեանց վանից ժողովարար Ոսկան վարդապետին (որ այժմ անդ վախճանեալ էր), զամեն կայսն և ժողովեալ արդիւնս յանուն վանիցն, յանձնեսցեն նոյն Ստեփաննոս վարդապետին՝ առ ի բերել ի վանսն։ Ուստի և սրբազան Վեհն զմի ընդհանրականապէս կոնդակ գրեաց ըստ խնդրոյ առաջնորդին և զմի թուղթ ևս յանձնարարութեան վասն Ստեփաննոս վարդապետին առ Ագուլեցի ժողովուրդսն գրեաց, որք ի մեծն Պօլիս և ի շրջակայսն (զորս և ետ նոյն Ստեփաննոս վարդապետին)։

Իսկ և զի Պօլսոյ Արևելցի տիրացու պարոն Գէորգն ընդ ուրումն Ագուլեցի Մկրտում տղայի սակս ինքեան զյանձնարարական գիր էր գրեալ առ սրբազանն, ըստ որում եկեալ էր նա յուխտ ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ սրբազան Վեհն ի դառնալն նորա, այժմ զպատասխանի գրեաց ի մեծն Պօլիս առ պարոն Գէորգն, ընդ որում և օրհնութեան թուղթ մի ևս առ ոմն՝ յաղագս յիշատակւոյ, և զապզանման (փօլիցայ) գիր մի ևս ի Զմիւռին առ նոյն տեղւոյն նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետն սակս դրամոյ ինչ։ Եւ թուղթ մի ևս ի Բայազիտ առ տէր Վահանն՝ սակս հարկաւոր իրողութեանց առ ի հոգ տանիլ։

Որոց համայնից զիտմունքն ի ստորև համառօտապէս բացայայտին, որպէս տեսցես։

406. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ընդհանրական ժողովարարութեան վասն վանիցն սրբոյն Թովմայի Առաքելոյ, որ ի յԱգուլիս, ըստ խնդրոյ նորին առաջնորդ Թովմաս վարդապետին. և ետ ի նմանէ առաքեցեալ Ստեփան վարդապետին՝ ի յօգնութիւն պակասութեանցն սրբոյ վանիցն այնմիկ։

407. Թուղթ ևս սրբազան Վեհն առ ի Գողթնեաց տանէն ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայսն գտեալ վաճառականսն գրեաց, ծանուցանելով զվշտակրութիւնս սուրբ վանիցն նոցա և զպակասութիւնս։ Նաև զանյաջողութիւնս իսկ, որ յառաջագոյն նոյն վանից առաջնորդ Թովմաս վարդապետն յղեալ էր առ սոսա զՄատթէոս վարդապետ ոմն սակս ժողովարարութեան, և մնացեալ էր նա անդ։ Եւ յետ այնորիկ ուղարկեալ էր ի տեղի նորին զՈսկան վարդապետ ոմն (որք յիշեալք գոն ի յառաջին յիշատակարանոջն), որ ևս էր վախճանեալ. և նոցին ժողովեալ իրքն չէին հասեալ ի վանսն ըստ բոլորին։ Եւ գրեաց զյղելն այժմ Թովմաս վարդապետին զսոյն թղթոյս տանօղ Ստեփան վարդապետն ի սուրբ Աթոռս առ ի գնալ առ ինքեանս. և զգրելն ևս առ ինքն զաղերսական թուղթ վասն կոնդակի ժողովարարութեան և յանձնարարական թըղ-
97բ թոյ, և զիւր գրելն զայս։ Որ և վասն Պօլսոյ անցիցն և իւր ֆէրմանի և մահ//սարի մինչև ցայժմ յետանալոյն գրէ, թէ իսկ մեք թէպէտ կամք տակաւին անհանգիստ կենօք, դիպեալ մեծի վատաբախտութեան և անյաջողութեան, որպէս և գիտէք, որք և սակս այսոցիկ չտամք դեռևս ումեք զթուղթս այսպիսիս, և ոչ գոնեայ զհարկաւոր գրելիս մեր գրեմք ի հեռաւորս, սակայն մինչ տեսի մինչև ցարդ և ևս տեսանեմ զանյաջողութիւնս սրբոյ վանիցն ձերոց, որք մի զկնի միոյ պատահին նմա, վասն որոյ գթացեալ ի խղճութիւն տանն այնմիկ ի սէր և ի պատիւ սրբոյ Առաքելոյն Թովմայի, և վասն ձերոյ խաթեր եառուք դմա զկոնդակ և զայս օրհնութեան թուղթս մեր, ևս յատկապէս առ ձեզ գրեցաք։ Որով և զայս

պատուիրեմ, տէր, ահա ձեզ, զի ի գալն յայդր և առ ձեզ սոյն Ստեփան-
նոս վարդապետիս, սիրով ընդունիցիք, և թէ զծաղրեալսն Ոսկան վար-
դապետին, թէ զայլ մնացեալ արդիւնսն ձեր՝ թէ դանձանակ, թէ խոստ-
մունք, թէ կտակ, և թէ այլ տուրք, որպէս և ունիք զբարի սովորութիւն,
զամենայն յանձնեսջիք Ստեփաննոս վարդապետիդ, զի բերցէ ի սուրբ
վանքն ձեր ի յօգնութիւն նմին։

Զօրինակն թղթոյս գացես ի նոր տետր 184 երեսն։

1781 թ. մայիս—Ի Կարին և ի Ղարս թուղթք և զապղ մի ևս ի Պօլիս ի վերայ Մինաս պետին

Ըստ ստիպման հարկին այժմիկ այլևս սրբազան Վեհն հրամայեաց
զբեռնակիրս ուղարկել ի Ղարս սակս մնացորդ հատեղինացն սրբոյ Ա-
թոռոյս, զի զայն ևս բերեալ վերջացուսցեն։ Զորս և պատրաստեալ յղե-
ցին գործակալքն սրբոյ Աթոռոյս։ Իսկ զի քանիօք աւուրբք յառաջ թուղթք
98ա էին ժամանեալ ի Կարնոյ նուիրակ Ներսէս պետէն // և ի վէքիլ պարոն
Հայրապետէն և յայլոց ևս առ սրբազան Վեհս մեր, վասն որոյ և սա
գրեաց առ նոսա զթուղթս։ Եւ ի Ղարս ևս առ պարոն Գէորգն գրեաց զմի
թուղթ, զորս տես ի ներքոյ։

408. Թուղթ ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն, թէ ի մայիսի
Ա (1) գրեալ թուղթդ՝ Մինաս պետի թղթովն էհաս մեզ։ Նախապէս գրե-
ալ էիր ի նմա, թէ յապրիլի 25 զդրամ փօլիցայ արարի արապկերցի Ա-
ղամջանինն (Զ, Դ), զի ի Բայազիտու տէր Վահանին հասուցէ ձեզ։
Զոր գիտացեալ, գրեցաք նմա տանել և մեզ հասուցանել։

Երկրորդ՝ զի Մինաս պետն խոստացեալ էր զդրամ փօլիցայ առնել
ի վերայ սորա, զոր սա առեալ հասուցէ սրբոյ Աթոռոյս։ Ուստի սա
գրեալ էր սրբազան Վեհին և զղապղագիր էր խնդրեալ ի վերայ Մինաս
պետին, զի նա ի Պօլիս զդրամ տացէ Գօրօյեանց մարդոյն և ինքն ի Կա-
րին առնուցու ի Գօրօյենց մահտեսի խաչատուրէն։ Վասն որոյ և սրբա-
զան Վեհն ի Պօլիս առ Մինաս վարդապետն զմի ղապղագիր գրեաց, թէ
որ ի նուիրակական արդեանցդ զդրամ էիր տուեալ ի Կարին բնակեալ
մահտեսի խաչատուրի յայդր եղեալ մարդոյն՝ Յարութիւնին (Ե) առ ի
հասուցանել ի Կարին մեր վէքիլ Հայրապետին։ Այժմ մահտեսի խաչա-
տուրէն ձեռամբ Հայրապետին էհաս մեզ այն դրամն։ Այսու միամիտ
լեր։ Զոր և յղեաց սմա, վասն որոյ գրէ, թէ ահա զխնդրեալ ղապղագիրդ
գրեալ եդաք ի թուղթս քո և յղեցաք առ քեզ, զի յայդր զդրամն առնու-
ցուս ի Գօրօյեան մահտեսի խաչատուրէն և զայդ ղապղդ տացես նմա
յղել ի Պօլիս իւր մարդոյն՝ տալ Մինաս վարդապետին։ Եւ դու, տէր, ի
յառնուլդ զդրամն կամ տէր Վահանին, կամ Գէորգին մեզ հասո։ Մա-
նաւանդ զի առ պարոն Գէորգն զդրամ չունիմք, տէր, որ զհարկաւոր
խնդրեալսն մեր առնուցու, նախապէս առ նա զդրամ հասո և մեզ գրեա։

Երրորդ՝ առ սրբազան Վեհն մեր յայլմէ տեղւոջէ Գ (3) կտոր թու-
թուն և Ա (1) եբեննոս գիւիթ էին առաքեցեալ, որոց հասեալ առ սա, յղեալ
էր զայնս այժմ առ սրբազան Վեհն ընդ Յարութիւն տղայիւն։ Ընդ որս
և ըստ խնդրոյ մեր Մկրտիչ պետին զմի թօփ ֆռանկի կուշա-նաւիթ
գունով շալ էր առեալ և յղեալ, և զգինն ևս գրեալ էր, թէ 43 ղուռուշ
է։ Ուստի զմիամտութիւն գրէ սմա սրբազան Վեհն, թէ ամբողջ հասին
առ մեզ և զշալի գինն գրեցաք ի քոյդ դէւթէրօջն։

Չորրորդ՝ յումեմնէ ատտ գալոց ուխտաւորէ Բաղտասար կոչեցելոյ,
և նորին ընկեր մահտեսի Յովաննիսէն զխ (40) ղուռուշ դրամ էր առեալ
սա ըստ նոցին աղաչանաց և զթասկիրայ տուեալ նոցա, որք ատտ առնու-
ցուն, զորս հատուցեալ սրբազան Վեհին։ Գրէ սմա, թէ ահա զդրամն ե-
տուք և զթէսկիրայդ պատառեցաք և զխ (40) ղուռուշն գրեցաք ի քոյդ ա-
ռից դէւթէրօջն։

Հինգերորդ՝ ըստ հայցուածոյ տեղւոյս ժամ օրհնող Սահակ պետին
գրեաց առ սա սրբազան Վեհն, թէ Սահակ վարդապետն յայդր ի տանս
տէր Մանուէլին Ա (1) լէհի երկար սնտուկով գրեանք և զայլ քարեղէնս
ունի եղեալ ամանաթ։ Յորոց կողմանէ այժմ ինքն Սահակ վարդապետն,
զոր ինչ և գրեալ է քեզ, այնպէս արասցես և գնացեալ ի տունն զսնտուկն
կնիքն տեսցես և հանեալ ի տանէ նորա, ըստ գրեցելոյ Սահակ պետին
արասցես։ Եւ քանզի այժմիկ ի Պօլսոյ գիտութեամբ նուիրակին Բ (2)
98բ վտանգաւոր անձինք էին յղեալ առ սա՝ առ ի ուղևորել // յայսկոյս ի
սուրբ Աթոռս (զորս մեծաւ երկիւղակրութեամբ յղեալ էր ատտ), կարի
ահացեալ էր ընդ այն և գրեալ էր առ սրբազան Վեհն, թէ այսպիսի ի-
րօք իմ տունս քակիլոց է, կալ զիս հրաժարեալ ի գործոյս և այլն։

409. Նմին իրի և սրբազան Վեհն զմի փուսուլայ գրեաց սմա, թէ
ընդ այդպիսի բանս մեք ևս ոչ հաճիմք, զի յիրաւի վնասաբեր լինի, թէ
իմացին այլասեռք։ Բայց զի՞նչ օգուտ, որ արարեալ են։ Ահա միամիտ
լեր, զի յետ քանի աւուրց հարկիւ գրելոց եմք Մինաս պետին, զի զգու-
շացեալ, այսուհետև զայլ ևս այդպիսի վտանգածին բանս ինչ մի արասցէ։
Որ և հրամայեաց ի թղթոջն յղել զայս փուսուլայս առ Մինաս վարդա-
պետն, մինչև ինքն յետ քանեաց աւուրց յատկապէս պատուէր գրեսցէ
նմա վասն այնր զգուշութեան, որպէս խոստացաւ։

410. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Կարնոյ նուիրակ Ներսէս վար-
դապետն գրեաց, ի պատասխանի նորա ի մայիսի մուտն գրեալ թղթոյն։
Եւ արդ, զի գրեալ էր նախ, թէ զամենայն որպէսն մեր միշտ գրեալ եմ
Մկրտիչ վարդապետին յայդր, գիտեմ զի ընթեռնու առաջի քոյ, վասն
այն քեզ ոչ տամ գլխացաւութիւն։

Առ այն գրեաց սրբազան Վեհն, թէպէտ Մկրտիչ պետն զգրեալդ
ընթեռնու առ մեզ, բայց թէ երբեմն մեզ ևս գրես, լաւ է։ Այլև երկիցս
զդրամ էր հասուցեալ սա Մկրտիչ վարդապետին ատտ ի նուիրակական
արդեանցն սակաւ առ սակաւ ձեռամբ Յարութիւն և Վարդան տղայոցն (Բ,
Զ), որոց աղագաւ այժմ զղապղ էր խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Վասն որոյ
և սա զմի ղապղագիր գրեաց առ սա, թէ որ յառաջագոյն զսակաւ ինչ
դրամ էիր տուեալ Վարդան տղային (Թ, Ը), որ ատտ Մկրտիչ վարդա-
պետն առնուցու, առեալ էր և եցոյց մեզ զհաշիւն, որ ընդ քեզ։ Իսկ
այժմ փոքր մի դրամ ևս յայդր տուեալ էիր Յարութիւն տղային, զի զկնի
ԼԱ (31) աւուրց տացէ մեզ ատտ ձեռամբ Մկրտիչ վարդապետին (Ա, Զ,
Բ), զոր և մեզ է հանուցանելոց։ Վասն որոյ զայս ղապղագիրս գրեցաք
քեզ առ ի ընդ քեզ պահել ի միամտութիւն քեզ, որ և ի հաշուատրու-
թեանդ պիտոյասցի քեզ։

Այլ արդ, սակս վտանգաւոր անձանցն երկուց ատտ յղեցմանն ի Պօլ-
սոյ (զոր ի վերոյ գրեալ թուղթն պարոն Հայրապետին յիշեցաք), սա
ևս էր զարտունջ գրեալ։ Իսկ սրբազան Վեհն առ այն, զոր ինչ գրեաց
Հայրապետին, ըստ այնմ և սմա գրեաց։

411. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց։ Յորում նախ աղգեաց նմա զուզանն յղելն սակս մնացեալ համեղինին առ ի բերել։ Որ և զրէ, թէ եթէ յուղարկեսցեն զատարկ մնասցեն, զմեխս ձիոյ և զքանի մի արապայից մառանս բարձեցուցեալ յղեսցես։ Որոց աղագաւ յառաջ եմք գրեալ քեզ, ասէ, առնուլ։ Ծանոյց ապա և զգրեալն առ պարոն Հայրապետն առ ի հասուցանել սմա զդրամ ի պէտս հողալեացն, որ վասն սրբոյ Աթոռոյս։

Նաև վասն զանգակացն (որ յիշեցաւ ի վերն յամսոյս է (7) Պօլսոյ նուիրակ Մինաս պետն գրեալ էր, թէ յղելոց եմք ասափ ծովու դէպ ի յԱխլցխայ, որ ի նորին վիճակին ի Բաթում կոչեցեալ նաւահանգստին Սեաւ ծովուն ի դուրս ելցէ և այլն։ Վասն որոյ սրբազան Վեհն գրեաց սմա գրել յոյժ հարկիւ յանկոյս առ ծանօթս և բարեկամն իւր, զի տիրաբար մուղայէթ լիցին ի դուրս գալն և հանցեն և սայլիւ յղեսցեն ի Ղարս, զի անտի եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ ասէ, զոր ինչ խարճ գնասցէ, գրեա, զի տեսցուք։

Յղեցան թուղթքս ընդ ողայոցն մեր յամսոյս ԻԱ (21)։

99ա Եւ արդ, ի ներկայումս ի Թիֆլիզու մեր նորոգ վէքիլ Կարապետ վարդապետէն և ի տէր Ղազարէն և յայլոց թուղթք հասին առ սրբազան Վեհն, և սրբազան Վեհն հարկաւորեցաւ գրել զքանի մի թուղթս յայնկոյս։ Վասն զի խնդրեալ էր Կարապետ վարդապետն գրել զթուղթ առ Ափխազաց Սօղոմօն արքայն։ Ուստի և սրբազան Վեհն գրեաց, ըստ որում զառաջին թուղթն ի յանցեալ ամի նոյեմբերի ԺԱ (11) գրեցեալ չէին յղեալ առ նա վասն պատճառի իրիք (որ յայժմիկ նորոգ գրեցեալ թուղթն, որ ի ներքոյ ծանուցանի)։

412. Նաև Թիֆլիզու Սահակաշէն եկեղեցւոյ (տէր)՝ բժիշկ Յովաննէսն կամեցեալ էր զնոյն եկեղեցին, զոր իւր նախնիքն շինեալ են և սրբոյ Աթոռոյս տէրունի արարեալ, առնել թեմ Հախպատու՝ վասն ուխտի ինչ։ Որ և կամիլն իւրում այսպէս վախճանեալ էր։ Իսկ նորին որդիքն բարեխոհութեամբ կրկին հաստատնապէս տէրունի էին արարեալ սրբոյ Աթոռոյս զայն եկեղեցին։ Վասն որոյ գրեալ էին Կարապետ վարդապետն և տէր Ղազարն և առ նոյն յիշեալ բժիշկ Յովաննէսի որդիսն զմխիթարութեան և զօրհնութեան թուղթ խնդրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն ըստ խնդրոյ նոցին զմի թուղթ գրեաց առ նոսա։ Իսկ և զմի թուղթ ևս առ նոյն Յովաննիսի փեսայ Գաբրիէլն գրեաց՝ կարգելով զնա երիցփոխան՝ նոյնոյ Սահակաշէն եկեղեցւոյն։ Ընդ որս և առ ոմանս նորապէս ճորտացեալս սրբոյ Աթոռոյս, ըստ աղաչանաց և բաղձանաց իւրեանց, զմի հաստատութեան թուղթս գրեաց, հանդերձ պատասխանեօք թղթոց Կարապետ վարդապետին և տէր Ղազարին և այլ ևս թղթովք։ Որոց դիտմունքն ահա ի ներքոյ կարգաւ յիշատակին, որպէս և տեսանես։

413. Թուղթ անդրանիկ օրհնութեան և մխիթարութեան սրբազան Վեհն առ Սօլօմօն արքայն Ափխազաց գրեաց, արտահանեալ ի նոյն թղթոյն, որ ի վերն ի սոյն յիշատակարանոջս ի յանցեալ թուոյ նոյեմբերի ԺԱ (11) յիշեցաւ, գրելով դարձեալ զնոյն միտսն, որ անդ, և մխիթարութիւն ևս խառնելով յայն՝ վասն մահուան որդւոյն։ Զի առաջին գրեալն մինչ հասեալ էր ի Թիֆլիզ, համբաւն մահուան որդւոյ նորին եկեալ էր անդ։ Ուստի զայն թուղթն յետս յղեցին աստ մերքն և նոր թուղթ խնդրեցին խառն ընդ մխիթարութեան։ Զոր և յետ միջոցաց յղեաց այժմ սրբազան Վեհն։

Զորոյ նոր միջարկեալ բանից զաղափարն գտցես ի նոր տետրն շարագրանաց ի 76 երեսն[102]։

414. Թուղթ օրհնութեան և մխիթարական ևս ի Թիֆլիզ առ վերոյ յիշեալ բժիշկ Յովաննիսի որդիսն՝ պարոն Գրիգորն և պարոն Ստեփանն և նոցին մայրն գրեաց՝ սփոփելով զնոսա վասն մահուան բժիշկ Յովաննիսին և շնորհակալելով զնոցունց վասն վերահաստատելոյն նոցա զսուրբ Աստուածածին եկեղեցին Սահակաշէն կոչեցեալն մնալ ի ժառանգութեան սրբոյ Աթոռոյս և լինել տէրունի թեմ սմա, որպէս և շինօղն նոյն
99բ եկեղեցւոյն Արիղինենց Սահակ պապն սոցա կամաւ // և սիրով սրբոյ Աթոռոյս էր ընծայեալ ի բնէ, առ ի զոլ սմա ժառանգ և վիճակ յաւիտեան։ Որոց և պատուիրեաց մնալ յարապէս ի նոյն հարազատութեանն, զոր այժմ յատկապէս մեծաւ սիրով ցուցեալ էին առ սուրբ Աթոռս։

Օրինակն ի վերայ կտոր թղթոյ է։

415. Թուղթ օրհնութեան ևս առ Քիտիսէ անուն ումն վրացի գրեաց, որ օտար ազգի գոլով, ամ յամէ սրբոյ Աթոռոյս զմի լիտր մոմ նուէր տայր, որ և յայսմ ամի տուեալ էր՝ հասուցանելով անդ ի Թիֆլիզ մեր Կարապետ վարդապետին։

Զորոյ օրինակն գտցես ի նոր տետրն շարագրանաց, ի 77 երեսն։

416. Կոնդակ ճորտութեան ևս ի վերայ կարնեցի տիրացու պարոն Յովաննիսին և Եղիազարին գրեաց, որք զուխտագրական ձեռագիր էին գրեալ առ սրբազան Վեհն և ինքնայօժար կամօք ճորտ լինել էին կամեցեալ սրբոյ Աթոռոյս և զճորտութեան գիր էին խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Վասն որոյ և սրբազան Վեհն զձեռագիրն նոցին ընկալեալ առ ի պահել իբրև զզապալայ ի սուրբ Աթոռջս, զայս թուղթս գրեաց ի վերայ նոցա՝ ի նշան և ի հաստատութիւն ճորտութեան նոցա սրբոյ Աթոռոյս։

417. Ճորտութեան թուղթ ևս ի վերայ ղօնաղսազ Յարութիւնին և Հնգեսին որդւոցն նորա՝ Դաւթին, և Յովաննիսին, և Սիմէօնին, և Աւետիքին, և... գրեաց, որք այս երկրացի գոլով, բնականապէս ճորտք էին սրբոյ Աթոռոյս։ Եւ զի այժմ առ ի յեւ առաւել հաստատութիւն ճորտութեան իւրեանց սրբոյ Աթոռոյս, զկոնդակ էին խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Սրբազան Վեհն զայս թուղթս գրեաց առ նոսա, մնալ ի ձեռին իւրեանց իբրև զնշան և կնիք ի սրբոյ Աթոռոյս։

418. Թուղթ ևս առ մեր Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին յապրիլի ԺԷ (17) գրեալ թղթոյն, զոր ընդ Յովաննէս և Գալուստ և Աբրահամ վարդապետացն յղեալ էր։ Յորում գրեաց, թէ զամենայն տեղւոյդ և սակս գժտութեանն ի կողմանէ Սահակաշէն կոչեցեալ եկեղեցւոյն մերոյ և զբոլոր անցսն նորա ի թղթոյդ և ի Գալուստ պետէն իմացաք և զձեր ջատագովութիւնն ընդդէմ ներհակաց գիտեցեալ, շնորհակալեցաք զձէնջ։ Եւ զի դեռևս չէր լուեալ սրբազան Վեհն, թէ բժիշկ Յովաննէսն վախճանեալ է (որ կամէր զՍահակաշէն եկեղեցին առնել թեմ Հախպատու) և նորին կինն և որդիքն զխորհուրդն նորա անբարի խափանեալ են, գրեաց զկոնդակ մի ի վերայ նոյն եկեղեցւոյ ժողովրդեանն և
100ա կղերատական թուղթ մի ևս ի վերայ յիշեալ Յովաննիսին և // նորին կողակցին գրեաց առ ի յղել ի խափանումն չար խորհրդեանն նոցա։ Վասն որոյ գրեաց սմա, թէ ահա զայսպիսի գրեանս գրեցաք և այլն։ Բայց զի

տակաւին չգնացեալ թղթոցն, եկն համբաւն մահուան բժիշկ Յովաննիսին և զայն թուղթսն այլևս ոչ յղեաց, այլ միայն զմխիթարութեան և զշնորհակալութեան գիր մի առ նոյն Յովաննիսի որդիսն գրեաց, ծանոյց սմա, թէ թէպէտ յառաջ այնպէս գրեցաք. բայց այլ ոչ յղեցաք թուղթսն: Միայն առ Յովաննիսի որդիսն զմխիթարութիւնս գրեցաք շնորհակալութեամբ հանդերձ, զոր տացես ինքեանց:

Ծանոյց և զառ Յովաննիսի փեսայ Գաբրիէլն զշնորհակալութեան թուղթ գրելն և զնա երիցփոխ կարգելն Սահակաշինու եկեղեցւոյն: Ապա զայս գրէ, թէ մինչ Յովաննիսի և Գաբրիէլի որդիքն կամ թոռունքն քահանայութեան արժանաւորք լինիցին, ըստ ժամանակին հրամայելոց եմք քահանայանալ ի վերայ Սահակաշինու եկեղեցւոյն մերոյ տէրունւոյ: Իսկ և պատուիրեաց, թէ զՍահակաշինու եկեղեցւոյ աւագէրէց տէր խաչատուրի եկեղեցական հաշիւն առնուցուս: Նաև զայս, թէ զԲաշչուխի թագաւորի մխիթարութեան թուղթն խնդրեալ էիր և թէպէտ վասն նորա գրեալ էիր, թէ զպատրիսն չար անտի արտահալածեալ է և զեկեղեցին կրկին Հայոց տուեալ, բայց մեք լսեմք, թէ ոչ չար պատրիսն անտի ի բաց է վարեալ և ոչ եկեղեցին մերայնոցն է տուեալ, և մերայինքն ի խղճութեան կան: Վասն որոյ գրեմ քեզ, թէպէտ մեք զթագաւորի մխիթարական գիրն գրեցաք, այլ նմա զշնորհակալութիւնս եմք գրեալ: Դու յայդր իմացիս զորպէսն: Եթէ զպատրիսն վարեալ է և զեկեղեցին մերազնեիցն է տուեալ, զայս մխիթարականս և զայդ օրհնութեան թուղթդ առ անդ եղեալ ժողովուրդսն մեր գրեալ, զոր յառաջ եմք յղեալ և Յովաննէս պետն ի գալն աստ, քեզ է տուեալ, յղեսցես առ նոսա: Իսկ թէ սոցին ներհակն է և մեր լուեալն է հաւաստի, մի յղեսցես, այլ պահեսցես և մեզ գրեսցես զստուգութիւն իրին, զի հնար իմն գացուք:

Նաև զայս պատուիրեմ, ասէ, պարտիս զորքան ճորտ, զուքեանն տուն ունիմք յայդր, զայնս ի զաւթար քարշել և զզաւթարն առ մեզ յղել: Այլև պարտիս, ասէ, զքոյդ տուր և առից զաւթարն պարզապէս և հստակ առնել և զիւրաքանչիւր գեալուրդ ի զաւթարոջդ յատկացուցանել և մանաւանդ զիւրաքանչիւր տարւոյ գլխաւոր գեալուրսդ: Եւս առաւել, յատկապէս թէ զիմրուկն, թէ զիւքանաց քիրահն և թէ այլ ինչ ուրոյն ուրոյն գրել:

Եւ թէ յայդր սանդուխտաղ Յարութիւն զոյ, բնական այս երկրացի և ունի զհնգեսին որդիս, առ որ ահա զնոր ճորտութեան թուղթ գրեցաք և յղեցաք առ քեզ ընդ տէր Ղազարին՝ տացիք իւրեան և զանուանս իւր և որդւոցն գրեսջիք ի զաւթարոջ ճորտիցն սրբոյ Աթոռոյս: Եւ թէ ահա ըստ խնդրոյդ Բ (2) վեղար յղեցաք քեզ, իսկ ապա և զայս, թէ զտիրացու պարոն Յովաննիսի և զՇղիազարի ուխտադրական գիրն ընկալաք և պահեմք աստ, և զճորտութեան թուղթն յղեցաք քեզ՝ տալ իւրեանց:

100բ 419. Թուղթ ևս սրբազան Վեհն առ տէր Ղազարն գրեաց, ի պատասխանի թղթոյն նորա ի մարտի ԻԵ (25) գրեցելոյ ի վաղուց, ընդ որում և յղեալ էր զմի փոքրիկ զութի չայ ընծայ: Առ որ նախապէս շնորհակալութիւն: Եւ թէ Յովաննէս և Գալուստ և Աբրահամ վարդապետքն եկին հասին աստ, և Գալուստ վարդապետն պատմեաց մեզ զհարազատ շնորհակալութիւնդ և զջատագովութիւնդ առ սուրբ Աթոռս, ուստի շնորհակալ եմք զքէն:

Եւ հարկ և պատուէր՝ հլու և հպատակ կալ ըստ ամենայնի Կարապետ վարդապետին և աթոռաօգուտ բանից և գործոց իրազեկ առնել

Իսկ և զի զխէթ ինչ ունէր զամանէ Յովաննէս պետն, առաջնորդն Թիֆլիզու, որ այժմ դարձաւ ի սուրբ Աթոռս, երկուցեալ էր սա, թէ գուցէ նա զամբաստանութիւնս ինչ արասցէ զինքենէ: Վասն որոյ գրեալ էր աղաչանօք առ սրբազան Վեհն՝ չլսել զանկատանաց նորին: Առ որ գրեաց, թէ մինչ դու հարազատօրէն և արդարապէս ծառայեսցես սրբոյ Աթոռոյս, ոչ ոք կարէ զքէն ամբաստանել: Եւ այլ մանր բանք:

Գրեալ առաքեցան վերոյ յիշեալ թուղթքս ընդ Ստեփաննոս սարկաւագին Թիֆլիզեցւոյ յամսոյս ԻԴ (24):

1781 թ. հունիս—Ի մեծն Պոլիս, ի տեղիսն ոմանս ի շրջակայիցն Պոլսոյ, ի Կիւմիշխանա, ի Կարին և ի Ղարս թուղթք

Արդ, այժմիկ դարձեալ կրկին թուղթ եկն ի Պոլսոյ ի մեր նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն, գրեցեալ ի մայիսի Բ (2), յորում կիտոջ տակաւին չէր հասեալ առ նոսա թուղթն սրբազան Վեհին, որ ի մարտի ելն ընդ միաբանից մահսարին գրեցաւ (որք ի վերն ցուցեալ են): Ընդ որում և գոյին թուղթք պատասխանախնդիրք ի վերոյ գրեալ տեղեացն ի յոմանց: Որոց զպատասխանիս գրէր սրբազան Վեհն: Այլ սակայն քանի աւուրբք զկնի քան զգրելն Մինաս և Պետրոս վարդապետացն զթուղթն իւրեանց՝ ի մայիսի Թ (9), ժամանեալ էր անդ ի Պոլիս վերոյ յիշեալ մահսարն միաբանիցս սրբոյ Աթոռոյս: Զոր ընթերցեալ համայն բարեմիտ ժողովուրդքն մեր, որք անդ՝ ի Պոլիս, մեծք և փոքերք կրկին հաճեալ և հաւանեալ էին ընդ կաթուղիկոսի աստուածակոչ սրբազան Վեհիս մերոյ, որոյ և զանունն յիշատակեալ էին
101բ ի սրբոյ յեկեղեցիսն. // ոչ ևս ընդունելով և մանաւանդ քամահելով զըկեղծապատեալ խորամանկութիւն և զնախանձաւոր դարանակալութիւն հովիւ ասացելոյն ինքեանց ի ներկայս: Վասն որոյ Մինաս և Պետրոս վարդապետքն ի մայիսի Թ (9) թուղթ էին գրեալ առ եպիսկոպոսունսն սրբոյ Աթոռոյս իբրու պատասխանի համայն կարգաւորաց և ծանուցեալ էին զաւետալիր համբաւ նորոգ եղելութեանն, որ հասեալ աստ ի յունիսի, ընթերցեալ եղև հանդիսիւ: Ուստի սրբազան Վեհն ի թուղթն իւր, որ նորապէս գրէր առ Մինաս և Պետրոս վարդապետսն, զնոցին նոր գրոյ աստ հասանելն ևս ծանոյց:

Իսկ որ ինչ թուղթք այժմ գրեցան զսակաւուց օրինակսն և զբազմաց դիտմունսն համառօտապէս տես ի ներքոյ:

Բերված է Մինաս և Պետրոս վարդապետներին առաքվելիք նամակների բովանդակությունը, որտեղ խոսվում է նաև այն մասին, որ էջմիածին են հասել նախորդ նամակները «վտանգավոր» համարված անձինք՝ Գրիգորը և Հակոբը: Տեղեկություն կա նաև այն մասին, որ էջմիածնի վանքի զանգակներն ուղարկվում են ոչ թե Բաթումի, այլ Տրապիզոնի ու Կարինի վրայով (էջ 101բ—103ա):

103ա 420. Փուսուլայ ևս գրեաց առ Մինաս վարդապետն վասն յղելոյն նորա իբրու համարձակապէս, զ'ի վերին թուղթդ յիշեալ Գրիգոր և Յակոբ վտանգաւոր տղայսն ի Կարին առ վէքիլն մեր պարոն Հայրապետն՝ առ ի յղել ի սուրբ Աթոռս: Որ և թէպէտ յղեալ էր, բայց յոյժ երկիւղակրութեամբ և ահիւ, որոյ սակս և գրեալ էր սրբազան Վեհին հրաժարեցուցանել զինքն ի գործոյն սրբոյ Աթոռոյս, պատճառելով, թէ այսպիսի բանիւք իմ տունս քակիլոց է, զի այս Օսմանցւոյ երկիր է և այլն: Առ որ գրեաց սրբազան Վեհն ի մայիսի ԻԱ (21) զփուսուլայ մի և յուսա-

16—815

գրեաց, թէ մեք զգուշացուցաք զՄինաս վարդապետն այլևս զայցպիսի
բան չառնել, զաւ ի ծառայութենէդ սրբոյ Աթոռոյս մի կասիր և պատու-
իրեաց զայն փաստական փաթով յղել առ Մինաս պետն՝ ի զգուշութիւն
նմա, մինչև ինքն ևս գրեսցէ։ Վասն որոյ այսու փաստականի զպատաս-
ցուցանէ զսա այլևս յայնպիսի իրս չխառնիլ և զփորձանաւոր ոք այլևս
չյղել առ վէքիլն մեր Հայրապետն և ծանուցանէ զվերոյ յիշեալս։
Իսկ և գրեալ էր սա առ եպիսկոպոսունսն, թէ դեռևս չեղև լօնջայն,
այլ այնպէս յիշեցաւ անունն սրբազան Վեհին յեկեղեցիսն և այլն։ Եւ
որ գրեաց սրբազան Վեհն և էհարց զպատճառն, թէ զի՞նչ էր, որ նախ-
քան զլինիլ լօնջայի յիշեցաւ անուն մեր ի յումմէ՞, յայտմանէ չիմացայ
ինչ պարզաբար։
Եւ ի վերջոյ, գրեաց սմա Աստուածապահին և պարոն Գէորգին զող-
ջոյն մատուցանել և միամիտ առնել վասն գրեալ թղթոց նոցին առ
ինքն, թէ ամբողջ հասեալ են։ Եւ վասն չգրելոյն իւրոյ զպատասխանիսն՝
առնել, որովհետև միսացն ոչ գրէ զթուղթ, վասն որոյ այն և ոչ ձեզ գրէ, զի
մի լիցի այլոցն խաթրամնայութիւն։ Բայց մինչ բանն պարզեսցի և առ
այլս զթուղթս գրէ, յայնժամ և զձեր գրեանց պատասխանիսն գրեսցէ։
Զօրինակն այսր փաստականիս գտցես ի նոր տետր 234 երեսն։

421. Թուղթ օրհնութեան ևս ի մեծն Պօլիս առ Սառա կին ումն և իւր
Թագուհի և Հռիփսիմէ անուամբք դստերսն գրեաց, ըստ խնդրոյ Մինաս
պետին և ի պատասխանի աղերսանաց թղթոյ յիշեալ Սառային, զոր
գրեալ էր նա առ սրբազան Վեհն և ծանուցեալ էր զախտս զոլն դստե-
րաց իւրոց և ի բժշկութիւն նոցա զօրհնութեան գիր էր խնդրեալ։ Որ և
տուեալ էր անդ ի Պօլիս նուիրակին Ա (1) քաթան շապիկ, Ա (1) մահու-
րամայ, Ա (1) պղնձեայ շամատան, Ճ (100) դրամ խունկ և Ժ (10)
փարայ մոմագին՝ առ ի հաւուցանել աստ։
Օրինակն սորա է ի նոր տետր 186 երեսն։

422. Թուղթ ևս սրբազան Վեհն առ մեծին Պօլսոյ արտաքին վիճա-
կաց նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, որ ընդ երկար միջոցս խա-
փանումն եղեալ գործոյն ի չարակամութենէ Պօլսոյ Զաքարիայ պատրի-
արքին, այժմ զգեօղորայսն Իգնիմիտու նուիրակ էր։ Որում զմխիթարու-
103բ թիւն //վասն անյաջողութեանցն և յուսադրութիւն՝ արի լինիլ ի գործն և
համբերել ևս ժամանակ ինչ, մինչև գրեսցէ զգրեանսն, զորս խնդրեալ
էր սա ի վերայ ումանց։ Եւ պատուէր առ ի յինքն գրաւել զսիրտս ժողո-
վրդեանցն վիճակի իւրոյ և ի սէր սրբոյ Աթոռոյս կապակցել։
Իսկ և զի յետ գրելոյ թղթոյս ժամանեաց աստ աւետալիր թուղթն Մի-
նաս պետին (զոր վերոյ յիշեցաք), վասն որոյ ի վերջոյ թղթոյս ծանու-
ցանէ, թէ այժմ գիր էհաս մեզ ի մեր Մինաս վարդապետէն, որ գրեալ
էր զհասանիլն բազմակնիք թղթոյ միաբանից մերոց ի մեծն Պօլիս և
յիշելն նոցա անդ զանուն մեր։ Բայց զի բաց ի նմանէ և այլ սակաւուց ու-
մանց ի հասարակութենէն չընկալաք զգիր, վասն որոյ ևս չգրեցաք ինչ
ումեք և ոչ զքո խնդրեալ թուղթսն, որպէս և վերն գրեցաք, երբ միւս ան-
գամ ևս գիր առցուք անտի, ապա գրելոց եմք, զոր ինչ և հարկն է։
Զգաղափարն թղթոյս այսորիկ գտցես ի շարագրանաց նոր տետր
231 երեսն։

423. Կոնդակ ևս սրբազան Վեհն[ի]վերայ Կիմիշխանայու ժողովրդե-
անն գրեաց, իբրու ի պատասխանի թղթոյ նոցա, զոր գրեալ էին առ հո-

գելոյս տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսն յաւուրս կենդանութեան
նորա, որում վասն մահառիթ հիւանդութեանն չկարաց գրել զպատաս-
խանին և մխիթարել զնոսա, զի ծանուցեալ էին նոքա զվշտակրութիւնս
իւրեանց ի չար ախթարմայից տեղւոյն, և մնաց մինչև ցարդ։ Իսկ այժմ
կարնեցի Յակոբ վարդապետն Սիմոնեան, որ արքունի հրովարտակաւ ի
Պօլսոյ պատրիարքէն յղեցեալ էր անդ վասն դարձուցանելոյն զանդ ե-
ղեալ ախթարմայսն ի յուղղութիւն սրբոյ հաւատոյս մերոյ, որ և համա-
կամութեամբ և օգնութեամբ տեղւոյ ուղղափառացն մերազնէից, զիջու-
ցեալ էր զամբարտաւանութիւն անիծեալ ախթարմայիցն, յորոց և զքա-
նիս ածեալ էին ի յուղղութիւն, զայս քաջական արարողութիւնս գրեալ
էր առ սրբազան Վեհն, վասն որոյ և սա այսու կոնդակաւ զշնորհակա-
լութիւնս, զմխիթարութիւնս և զօրհնութիւնս գրեաց առ նոսա հանդերձ
վշտակցութեամբ և յորդորմամբք, գրելով և զայս բան սրբոյն Պօղոսի,
թէ ո՞ հիւանդանայ և ես ոչ հիւանդանամ, ո՞ գայթակղի, և ես ոչ տա-
պանամ։ Եւ պատուիրեաց արի և պինդ կալ ի յառաջադրութիւնս իւրե-
անց, մինչև իսպառ ի բաց բառնալ ի միջի իւրեանց զխմորն ախթարմա-
յութեան։
Իսկ և զի յօրէ լսելոյ իւրեանց զհայրապետանալ սրբազան Վեհի
մերոյ մինչև ցայժմ յիշէին սոքա զանուն սորա ի յեկեղեցին իւրեանց,
զհայելով ի սատանայայորդոր արգելմունս Պօլսոյ պատրիարքին, որ յո-
մանս տեղիս սակս չար նախանձուն ոչ թողոյր յիշել, առ այն ևս յատ-
կապէս զշնորհակալութիւնս գրեաց։ Նաև հրաւիրեաց երբեմն գալ ու-
մանց ի սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն՝ առ ի տեսանել աչօք
զսուրբ Աթոռ ծնօղս իւրեանց և շահիլ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։
Օրինակն սորա է ի շարագրանաց նոր տետր 187 երեսն։

104ա
424. Թուղթ ևս առ Կիմիշխանայու նոր առաջնորդ Յակոբ վարդա-
պետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն յապրիլի ևն գրեցելոյ,
ըստ վերոյ գրեալ կոնդակի ոճոյն։ Իսկ զի յառաջագոյն սա զթուղթ էր
գրեալ առ սրբազան Վեհն և զպատասխանին չէր ընկալեալ մինչև ցայ-
ժմ, այնր սակս զրանս էր գրեալ առ սրբազան Վեհն։ Եւ որ գրեաց, թէ
յանձեռնհասութեան չեմք գրեալ։ Այլև յառաջագոյն առ կենդանութեամբ
հոգելոյս սրբազան Սիմէօն կաթուղիկոսին, որ ի սուրբ Աթոռս էր եկեալ
սա, ի գնալն աստի միով կնքեալ արկեղբ զիրս ինչ թողեալ աստէն յա-
ւանդ, որոյ սակս այժմ հարցեալ էր, թէ զի՞նչ եղև։ Իսկ սրբազան
Վեհն գրեաց, թէ արկղն քո կայ աստէն ամբողջ, միամիտ լեր։
Պատուիրեաց և վասն վերոյ գրեալ կոնդակին ընթեռնուլ ի լուր
համայն ժողովրդոցն ի յեկեղեցին և ի սէր սրբոյ Աթոռոյս կապակցել
զնոսա։ Ազդեաց ապա և զնորապէս գիր ընդունիլն ի Պօլսոյ և իմանալն
յայնմանէ զանուանայիշութիւնն իւր ի մեծն Պօլիս և այլն։
Զգաղափարն թղթոյս այսորիկ գտցես ի նոր տետերն շարադր[ութե-
անց] ի 190 երեսն։

425. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան սրբազան Վեհն ի
վերայ Օքրօպակերտու մերային ժողովրդեանն գրեաց վասն ԼԴ (34) հօ-
խայ մոմին, որ ի նոցունց յղեցմամբ յԱխալցխայի տէր Եղիային էհաս
ի սուրբ Աթոռս։ Ընդ որս և առ տէր Եղիայն ևս զԱ (1) թուղթ գրեաց և
ծանոյց զյիշեալ մոմի հասանիլն աստի ի սուրբ Աթոռս և զշնորհակա-
լութեան կոնդակ գրելն իւր ի վերայ Օքրօպակերտու։ Եւ զի զկոնդակն ի

ձեռս սորա յղեալ՝ յղել ի յՕքրօպակերտ, պատուիրէ սմա շուտով հասուցանել անդ ի միաժամութիւն ժողովրդեանն տեղւոյն: Նաև գրեալ էր սա, թէ մեր աթոռակալն Ժ (10) լիտր մոմ և հին քաթան ունի յղելոյ և ոմանք խօսին և այլն: Որոյ սակս գրեաց սրբազան Վեհն, թէ չիմացաք թէ այդ ո՞ր տեղւոյ աթոռակալն է և անունն ի՞նչ: Վասն որոյ թէ հարկաւոր է, գրեա մեզ պարզաբար զնորին անունն և ուր լինիլն, և թէ զի՞նչ գրել արժան է մեզ վասն այն բանին, զոր գրեալ էիր թէ ոմանք ընդդիմանան, զի և մեք գրեսցուք:

Օրինակն թղթոյս այսորիկ գտանի ի նոր տետրն շարագրութեանց ի 191 երեսն:

426. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ Հայրապետն գրեաց, ի պատասխանի ի մայիսի 12, 13, 16, և 30 գրեալ թղթոցն չորից նորա: Յորում գրեաց նմա, թէ վասն ակնցի Յովաննիսի տալեացն (զորմէ յիշեցեալ է ի վերն ի յապրիլի ԻԶ (26) և նորին ասացելոցն, զոր ինչ գրեալ էիր իմացաք, ինքն ևս էր գրեալ առ մեզ զգիր: Ինչ և իցէ, ժամանակ ինչ թոյլ տացես մինչև Եսայիճն ի Թիֆլիզու եկեսցէ, տեսցուք որպէ՞ս է լինելոց, յետոյ գրելոց եմ: Իսկ և գրեալ էր սա յաղագս Կարնոյ մաքսապետի սառաֆ Սարգսին, թէ Իսպիր անուն տաճկի միոյ եկն յայդր, շահեա: Առ որ գրեաց, թէ նոքա չեն եկեալ աստ և լուաք, թէ ի Խոյ են
104ա գնացեալ: Եթէ գայցեն աստ ի դառնալն անտի, շա//հեսցուք և առ մաքսապետն տեղւոյդ ևս վասն քոյ զյանձնարարութեան թուղթ գրեսցուք: Եւ զի գրեալ էին սա և Գօրօյեան մահտեսի Խաչատուրն առ Մինաս վարդապետն ի Պօլիս, զի զմեծամեծ զանկակսն, որ առ ինքն (զորս ի վերոյ սրն քանիցս յիշեալ եմք) յանուն մահտեսի Խաչատուրին յղեսցէ ի Տրապզոն ընդ նորին բեռանցն, զի և անտի յղեսցեն ի սուրբ Աթոռս: Զոր և ծանուցեալ էր սա այժմ, վասն որոյ զշնորհակալութիւնս գրեաց: Հասանղալու վանից Սահակ պետի ուրումն աղագաւ գրեալ էր սա, թէ կամի գալ ի սուրբ Աթոռդ, թուղթ գրեա սմա ի գալ: Առ որ գրեաց, թէ մեք թուղթ չգրեցաք առ նա, բայց թէ ինքն կամի, թող եկեսցէ: Եւ թէ յարգեանցն սրբոյ Աթոռոյս, որ առ քեզ, դրամ էիր հասուցեալ տէր Վահանին (Զ, Դ) և ինքն տէր Վահանն ևս դրամ էր փոխեալ արարեալ ի վերայ քոյ (Ե), զոր ևս էիր տուեալ դու առ ի նորա մեզ հասուցանելոյ, որոց սակս գրեալ և ծանուցեալ էիր մեզ առ ի առնուլ և տէր Վահանն ևս էր գրեալ մեզ և յանձն առեալ առ ի առնուլ և յղել: Երբ և հասուցանիցէ, գրելոց եմք ի քոյդ դաւթարոջն և քեզ ծանուցանելոց եմք քեզ ի միամտութիւն:

Այլև խոստացեալ էր սա ի վերայ Ղարսայ ձեռամբ պարոն Գէորգին ընդ ուխտաւորացն, որք գալոց էին, առ մեզ փոխեալ հասուցանել: Եւ տէր Վահանին ևս գրեալ էր, որ անդ ի Բայազիտ, եթէ զդրամ գտցէ ի վերայ սորա փոխեալ արասցէ և զդրամն առեալ յղեսցէ ի սուրբ Աթոռ: Որոց աղագաւ գրեաց սրբազան Վեհն, թէ բարւոք համարեցաք և գրեցաք տէր Վահանին և Գէորգին ըստ գրեցելոց քոց առնել:

Նաև Հաճի Յովաննէսն Պօլսեցի վասն իւրեանց Գէորգ տղային, որ աստ առ Յովաննէս վարդապետն էր, զԻԵ (25) ղուռուշ էր հասուցեալ առ սա, որոյ սակս գրեալ էր սա աստ տալ նոյն Գէորգ տղային: Զոր և սրբազան Վեհն հասոյց և գրեաց սմա, թէ ահա զԻԵ (25) ղուռուշն ըստ գրեցելոյդ հասուցաք ձեռամբ Յովաննէս պետին Գէորգ տղային և գրեցաք դաւթարոջդ: Նոյնպէս և յառաջագոյն, որ վասն ուրումն ուխտաւորի գրեալ

էիր մեզ, ասէ, զԽ (40) ղուռուշ տալ նմա, ըստ որում դու յայդր առեալ էիր ի նմանէ, ետուք և գրեցաք զայն ևս ի դաւթարոջդ: Որպէս և յառաջ գրեալ եմք, ասէ, քեզ:

Այլև գրեալ էր սա, թէ եթէ Պօլսոյ ոսկին յայդր աւելօք անցանի, յղեսցի, իսկ սրբազան Վեհն գրեաց, թէ ոչ, մի՛ յղեր: Գրեաց ապա և զի Մինաս պետէն նորեկ աւետաւոր թղթոյ միտսն, այսինքն զյիշատակելին պօլսեցւոց զանուն իւր անդ յեկեղեցիսն: Նաև զմիաբանից սրբոյ Աթոռոյս զինքն ստիպմամբ ի կաթուղիկոսարանի բազմեցուցանելն: Եւ ի վերջոյ վասն Մինաս պետի թղթոյ պատասխանւոյն և այլ թղթոցն, որք ընդ նմա և ի Կիմիշխանայ գրեալ թղթոցն, որք յղեցան առ սա, առաքել ի տեղիս իւրեանց, զպատուէր գրեաց՝ փութով յղել:

Ընդ սմին առ Գօրօյեան մահտեսի Խաչատուրն և Սերոբն և զԱ (1) թուղթ գրեաց, շնորհակալելով զնոցունց, վասն զի զհարկաւոր թղթոյն
105ա սրբազանին և // Հայրապետն, յղէին ի Պօլիս: Եւ մանաւանդ վասն զանգակաց բանին, զոր ի վերոյ գրեալ թղթոջդ պարոն Հայրապետին գրեցաք: Իսկ ապա յորդորումն ի սէր:

427. Թուղթ ևս սրբազան Վեհն ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորին ի մայիսի 25 գրեալ թղթոյն, զոր ընդ մեր ուղտապանին հանդերձ ըստ մեր գրեցելոյն առեալ ձիթովն և այլ իրօքն յղեալ էր: Որոց զնոց աղագաւ գրեաց, թէ մի առ մի ընդ քոյդ յղեալ դաւթարին գրեցաք ի մեր յանուն քո արարեալ նորոգ դաւթարոջն տրոց: Եւ դու ևս զայնոսիկ արկ ի քոյդ յայդր նոր սկսեալ դաւթարն: Այլև գրէ, թէ ըստ քոյդ գրեցման ահա 53 ղուռուշ նաղտ դրամ ետուք Ղունկիանոս վարդապետին և զպայդ առեալ յղեցաք առ քեզ և զայն գրեցաք ի քոյդ տոից զէվթէրոջն: Նաև Օքրօպակերտու արդիւնք մոմն որովհետև սա էր ի Ղարսայ յղեալ աստ, վասն որոյ զթուղթսն, զորս սակս այն մոմին գրեաց (զորս ահա ի վերդ գրեցաք), յղեաց ի ձեռս սորա: Ուստի և գրէ, թէ մոմն ԼԴ (34) հօխայ, հանդերձ թղթովք տէր Եղիային, ամբողջ հասին աստ, որոց սակս զգրեանս յղեցաք քեզ, ասէ, ի վերայ օքրօպակերացւոցն և տէր Եղիային, յղեա առ նոսա:

Եւ սակս զանգակացն Մինաս վարդապետն, որ յառաջագոյն գրեալ էր, թէ յղելոց եմք ի Տրապզոն հասանիլ յայդր, յետոյ ևս գրեաց, թէ առաքելոց եմք ի Բաթում, որ է նահանգիս Ախալցխայու: Վասն որոյ և սրբազան Վեհն գրեաց սմա յառաջ գրել անդ ի Ախալցխա ծանօթից իւրոց, առ ի մուղայէթ լինիլ և յղել յայսկոյս, իսկ ապա գրեալ էր Մինաս պետն ի Պօլսոյ, թէ այլևս չյղեցաք ի Բաթում, այլ պատշաճ տեսաք ի Տրապզոն ուղարկել, զի անտի ի սուրբ Աթոռդ հասանիլն զանգակացն դիւրին է: Ուստի սրբազան Վեհն այժմ գրեաց սմա, թէ այլ մի հետեւիր յայդ կողմդ, զի բանն փոխեցեալ է, որ զանգակքն Տրապզոնով պարտին գալ: Եւ վասն նոր համբաւոյն անուանայիշութեան իւրոյ ի մեծն Պօլիս, որպէս և ի թուղթն պարոն Հայրապետին, նոյնպէս և սմա գրեաց: Նաև զայս, թէ պարոն Հայրապետն գրեալ էր, թէ յայս քանի աւուրս առ Գէորգն փոխեալ եմք առնելոց և զդրամ հասուցանելոց: Ծանուցես մեզ: Եւ ի վերջոյ, վասն վերոյ գրեալ թղթոցս պատուէր՝ առ ի փութանակի յղել ի Կարին:

428. Ընդ սմին զմի Ա (1) թուղթ ևս առ Ղարսայ առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն ի մայիսի ԻԹ (29) գրեցելոյ և յղեցելոյ ընդ մեր ուղտուցն և ջորոցն: Յորում նախ

*գրէ, թէ ի հին հաշուէն մնացեալ ԺԵ (15) սոմար ցորեանն և ի գիւղա-
րէից ժողովեալ ԼԲ (32) սոմար և կէս գարին ընդ բեռնակրօքն մերովք
հասին առ մեզ։ Շնորհակալ եմք զքէն։ Երկրորդ՝ զի զպակասաւորութիւ-
նըս վանիցն էր գրեալ սա։ Զյուսադրութիւնս գրեաց։ Երրորդ՝ զնոր համ-
բաւն Պօլսոյ ծանոյց, որ ի վերին գրեանսդ յիշեալ եղեւ։ Չորրորդ՝ վասն*
105բ *սալմաստեցի քահանայի ումեմն գրեալ էր սա // առ սրբազան Վեհն՝
զողորմութիւն առնել նմա։ Այլ զի երէցն այն ի գալն ընդ վերոյ յիշեալ
թղթոց բերող փայեկին պատահեալ էր տաճկաց և գանեցեալ և վիրա-
ւորեցեալ ևս, որոյ աղագաւ և դեռ չէր տեսեալ զսրբազան Վեհն։ Վասն
որոյ գրէ սմա, թէ թէպէտ ասա է քահանայն, բայց դեռևս չեմք տեսեալ
զնա, զի չէ եկեալ առ մեզ։*

*Գրեալ ուղարկեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ ի Կարնոյ եկեալ
Մօսէս անուն փայեկին (որ ի գալ ի յԱշնակու՝ տաճկացն գանեցեալ էր),
յամսոյս Ժ (10)։*

1781 թ. հունիս—*Թուղթ մի ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն*

*429. Փառակեցի Իսահակ վարդապետն, որոյ բարքն սակաւ մի ան-
յարմար էր բարուց, խնդրեաց քանիցս ի սրբազան Վեհէն արձակել
զինքն՝ գնալ Հասանղալայու վանսն և կամ յայլ տեղիս, ասելով, թէ
զբանս ունիմ յայն կողմունսն։ Եւ զթուղթ ևս խնդրեաց ի սրբազան Վե-
հէն՝ առ ի չկարծել ապստամբ ի բազմաց ըստ գոլոյն ոչ անհուպ ի յաղ-
մըկասիրութիւնս։ Վասն որոյ և սրբազան Վեհն հրամայեաց նմա գնալ
ըստ կամաց ինքեան ուր և կամիցի, և ողորմելով նմա զԱ (1) թուղթ
գրեաց ի Կարին առ վէքիլն մեր՝ պարոն Հայրապետն, թէ ահա Սահակ
վարդապետ սիրելին մեր, հրամանաւ մերով եկն յայդ կողմունդ վասն
հոգալեաց իւրոց, որոյ ի պատահիլն յայդ՝ սիրով ընդունիցիս և մու-
ղայէթ լեալ ուղևորեսցես։*

*Յղեցաւ թուղթս ընդ նմա յամսոյս ԺԲ (12), կամ քանի աւուրբք յետ
և յառաջ։*

1781 թ. հունիս—*Ի յԱմասիա, ի Թօխաթ, ի Կարին և ի Մուշ առ սրբոյ Կարապետի վանից նորոգ առաջնորդ Աստուածատուր վարդապետն և ի Ղարս և թէրևս յայլ տեղիս ևս թուղթք*

*Ամասիացի ուխտաւորք եկին այժմ ի սուրբ Աթոռս՝ աւելի քան զե-
րեսուն։ Որք ունէին զթուղթս ի յոմանց առ սրբազան Վեհն և ի քանեայ
ևս աջահամբոյր անուամբ կամ ի լուսադին կդրամս էին բերեալ՝ առ ի
տանիլ վասն տուողացն զօրհնութեան գրեանս։ Ուստի և սրբազան Վեհն
զԷ՛ թէ՛ ի պատասխանի նոցին բերեալ թղթոցն, և թէ՛ սակս դրամոցն, զԷ-
թուղթս գրեաց ի վերոյ գրեալ տեղիսն։ Որք մի առ մի ահա ի ներքոյ
նշանակին։*

*430. Թուղթ առ պարոն Մարտիրոսն ի յԱմասիա, ի պատասխանի
զԳ (3)
նորին թղթոյն այժմ հասելոյ առ սրբազան Վեհն։ Որ և յղեալ էր առաջ-
ումկի յանուն երից վանորէիցն։ Զորս և սրբազան Վեհին տուեալ ընդ
նորդացն նոցա և զօրհնութեան գրեանս առեալ ի նոցունց յղեաց ընդ Ա-
թղթոյս առ սա, վասն որոյ և յայսմիկ յիշեաց, իսկ և յանուն սրբոյ
թոռոյս ևս էր զդրամ յղեալ սա (Դ), որոյ աղագաւ ևս զշնորհակալու-*

*թիւնս և զօրհնութիւնս գրեաց։ Այլև սակս լուսամտից քրիստոսաէջ սրբոյ
տաճարիս սա առ կենդանութեամբ հոգելոյս Սիմէօն սրբազան կաթու-
ղիկոսին զգոյնզգոյն ապակիս էր յղեալ՝ առ ի նորոգել զլուսամուտսն,
իսկ նա վասն հիւանդութեանն և վասն զխպուածոյն երկրիս չկարաց շի-
նեցու//ցանել։ Զոր լուեալ նմա, գրեալ էր այժմ առ սրբազան Վեհն, թէ
ընդէ՞ր չէ շինեցուցեալ։ Առ որ գրեաց, թէ լուսահոգին կամէր, բայց
վասն տկարութեանն և վրդովմանց երկրիս մերոյ՝ անձեռնհաս լեալ,
շինեցոյց։ Մեք ևս այժմ ի յոյլով ցաւս կամք, յետ միջոցի նորոգել-
ցուք զլուսամուտսն և զքեղ միամտեցուսցուք։*

Այնուհետև անվանապես հիշատակված են տասներեք ամասիացի նվիրատուներ,
որոնց ուղարկվել է շնորհակալության նամակ։

*431. Թուղթ միամտական ևս ի վերայ ամասիացի մահտեսի Մար-
տիրոսին գրեալ, ըստ խնդրոյ նորա, եթ ցնա, վասն զի զոմցի Մկրտիչ
վարդապետ ումն ի քաղաքոջն սոցա վախճանեալ էր և զքանի մի գրեան-
սըն և զայլ հնոտի քուրեղէնսն իւր կտակեալ էր սրբոյ Աթոռոյս, զորս սա,
հանդերձ տեղւոյ գլխաւոր իշխանօքն պահպանեալ, ի գնալն անդ մեր
նուիրակ Յակոբ վարդապետին ամբողջ յանձնեալ էր նմա։ Վասն որոյ
և սրբազան Վեհն ի սոյն թղթոջս գրեաց, թէ զգրեանսն և զհին քուրեղէն-
սըն յայդր վախճանեալ Մկրտիչ վարդապետին, զորս պահպանեալ էիր և
այժմ տուեալ ես Յակոբ վարդապետին մերոյ հասուցանել աստ (և ի
նմանէ իբրև զզապզ զգիր էիր առեալ, գրեցուցանելով ի նմա զանուանս
յանձնեալ ընչիցն և կնքեցուցանելով նմա իւր կնքովն), առ մեզ հասեալ
վարկաք։ Վասն որոյ և զայս թուղթս գրեցաք առ քեզ ի միամտութիւն և
յանհոգութիւն, զոր առ քեզ պահեսցես։*

*432. Թուղթ ևս սրբազան Վեհն ի յԱմասիա առ նուիրակ Յակոբ
վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն, զոր ահա ընդ ա-
մասիացի ուխտաւորացն յղեալ էր, որ գրեցեալն էր ի յապրիլի ԺԵ (15)։
Իսկ արդ, գրեալ էր նա նախապէս զյանձնարարութիւնս վասն ուխտա-
ւորացն, առ որ գրէ, թէ ահա ըստ պատշաճին շահեցաք։ Երկրորդ՝ գրե-*
106բ *ալ էր, թէ Կարնոյ մեր վէքիլ // Հայրապետն յաւուրս հոգելոյս սրբազա-
նին գրեալ էր ինձ, թէ ի Կեսարիա ումեմն ՄՂԷ (297) և կէս դրամ եմ
տալոց, տաս անդ և ես հաւուցից զայն յԱթոռն և անտի զզապզ բերից
քեզ և այլն։ Առ որ գրեաց, թէ չեմք տեղեակ զմա, վասն որոյ գրեմք
Հայրապետին՝ ծանուցանել մեզ զորպէսն։ Եթէ զայն դրամն ի սուրբ Ա-
թոռս է հասուցեալ, զզապզ մի գրեսցուք առ քեզ ի կողմանէ այնր։*

*Երրորդ՝ խնդրեալ էր զգիր մի առ Տատուր օղլի մահտեսի Յովան-
նէսն վասն յանուն սրբոյ Աթոռոյս կտակ խոստանալոյն՝ զՃ (100)
ղուռուշ, զոր թէրևս մինչև ցարդ չէր առեալ դեռ։ Վասն որոյ սրբա-
զանն զԱ (1) թուղթ շնորհակալութեան գրեաց առ յիշեալ Տատուր օղլին
և յղեաց ի ձեռս սորա՝ տալ նմա. և թէ տակաւին չիցէ առեալ, առնուցու
Չորրորդ՝ յիշեաց զյառաջ քան զայս փոլիցայ առնելն ի վերայ սորա
ի սոյն թուոյս յապրիլի ԻԶ (26), որպէս և յիշեցեալ զոյ աստ ի վերն ըստ
ասացեալ ամսաթուոյն։*

*Հինգերորդ՝ զի թուղթն սորա դիւրաեղծ մրով էր գրեցեալ, որոյ
աղագաւ և պատահիլով ջրոյ, ամենևին եղծեալ էին մրագիծքն, զորս
նշմարաւ ընթերցաք։ Վասն որոյ գրէ, թէ այլևս մի դիւրաեղծ մրով գծես-
ցես զթուղթդ։*

433. Թուղթ ես առ Մշու սուրբ Կարապետի վանիցն նորոգ առաջնորդ կարգեցեալ Աստուածատուր վարդապետն, ի պատասխանի նորին թղթոյն, որով ցուցեալ էր զնշան խնդրելոյ զեպիսկոպոսութեան, ընդ որում յղեալ էր ձեռամբ ամսիացի Աստուածատուրին զժ (1) աջահամբոյր։ Առ որ զշնորհակալութիւն գրեաց սրբազան Վեհն ասելով, թէ այժմ անձեռնհաս եմք երկարապէս գրել զպատասխանի թղթոյդ։ Բայց զայս համառօտ գրեցաք ի միամտութիւն քեզ, զի ծանիցես զյղեցելոցդ առ մեզ հասանիլն։

Գրեցան թուղթքս յամսոյս ԺԴ (14) և թիւքն թղթոց և ըստ այնմ եղան ԺԴ (14) յունիսի, բայց սակայն ոչ յղեցան, զի ամսիացի ուխտաւորքն ոչ գնացին դեռ, այլ մնացին աստ, քանզի Պօլսոյ և այլ տեղեաց ուխտաւորքն նոր եկին, որոց աղագաւ սրբազան Վեհն կամեցաւ զպատարագ մատուցանել հանդիսիւ ըստ խնդրոյ նոցա։ Վասն այն և ամսիացիքն ևս մնացին առ ի տեսութիւն պատարագմատուցութեան սրբազան Վեհին և ապա ընդ նորեկ ուխտաւորացն ի միասին գնալ։

434. Իսկ նորեկ ուխտաւորքն, որք աստ ի վերդ յիշեցան, որոց թիւն սակաւ էր պակաս, քան զՃ (100), էին ի մեծէն Պօլսոյ, ի յԱնդրիանուպօլսոյ, ի յՌուսչճուղու, նաև ի Թօխաթու և յայլ տեղեաց ևս։ Ընդ որս գոյին թուղթք յոմանց առ սրբազան Վեհն և աջահամբոյրք և լուսագին և յանուն սրբոյ Գեղարդեանն և այլ պատճառաւ յղեալ դրամք։ Նաև էին թուղթք ի վիճակացն Զմիւռնոյ, ի նախածանօթից ոմանց առ սրբազան Վեհն, այլև ի Կարնոյ և ի Ղարսայ ևս էին գրեալ զթուղթս առ սրբազան Վեհն։ Ուստի այժմիկ սրբազան Վեհն զյոլով գրեանս գրեալ ընդ ուխտաւորացն յղեաց։ Յորոց զոմանս ի պատասխանի թղթոցն յայլ և այլ տեղեաց, զորս ի վերոյ յիշեցաք, և զոմանս վասն յղեցեալ դրամոցն,
107ա որք // և եկաւհասաւի թուղթք կոչին։ Զորս աստ մի առ մի ասասցուք ի ներքոյ։

Այնուհետև բերված են կաթողիկոսի օրհնության և շնորհակալության նամակները՝ հասցեագրված ուխտավորների միջոցով նվերներ ուղարկած ներքոհիշյալ անձանց՝ քյարասաաճի Վարդանին (Կ. Պոլիս), մահտեսիներ՝ Հովհաննեսին, Գասպարին և Կարապետին (Ադրիանուպոլիս), վերջիններիս հանձնարարվում է օգնություն ցույց տալ նրանց քաղաքը եկող նվիրակ Գալուստ վարդապետին, մահտեսիներ՝ Ստեփաննոսին, Խաչատուրին, Հարությունին, Երեմիային, Գրիգորին (Ադրիանուպոլիս)։ Նույնպիսի հանձնարարություն է տրվում սրանց և բարևներ ուղարկվում իզմիրցի պարոն Հակոբ Շահումյանին (էջ 107ա—107բ)։

107բ 435. Թուղթ ես առ Պօլսոյ արտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, ի պատասխանի թղթոյ նորա, զոր յապրիլի ԻԴ (24) ի յԱտաբազարու գրեալ էր ընդ Արևելցի մահտեսի Յովաննիսին։ Իսկ արդ, դրեալ էր նա զելանելն ի գիւղորայսն Ատաբազարու ի գործ նուիրակութեան։ Առ այն գրէ սրբազան Վեհն, թէ յառաջ քան զայս գիր լհաս մեզ ի Պօլսոյ ի մեր Մինաս վարդապետէն, որ ծանուցեալ էր մեզ զդոյն։ Բայց և յանձնարարութեան թուղթս խնդրէին ի վերայ այն կողմանց առաջնորդացն և իշխանացն՝ Մինաս պետն և սա՝ վասն իւր։ Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն, թէ ֆէրմանին մերոյ սպասելով այժմ ևս չգրեցաք վասն քոյդ բանից զթուղթսն, զորս դու և նա խնդրէք, զի թէպէտ զանուն մեր յիշեալ են, ասէ, ի Պօլիս, բայց զֆէրմանն մեր և ի հասարակութենէն Պօլսոյ զգիր ոչ ընկալաք դեռևս։ Ուրեմն համբերեա, ասէ, ի սակաւ մի միջոցս ևս, մինչ զհարկաւորսն մեր ընկալցուք և ապա

գրեսցուք զձեր խնդրեալ թուղթսն։ Զի այժմ անպատկան է, ասէ, գրելն զայնս։

Սորա օրինակն ևս յիւր բարևաթղթոջն է։

436. Թուղթ ես ի յՌուսուճուղ առ գանձապետսն սրբոյ Աթոռոյս պարոն Անուշն և տիրացու Աւէտն գրեաց, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր ընդ իւրեանց բարեկամ Յովակիմին յղեալ էին, որ գրեցեալն է ի մարտի ԺԹ (19)։ Առ որս նախ գրեաց զօրհնութիւն և զշնորհակալութիւն վասն յատուկ հարազատութեանց նոցին առ սուրբ Աթոռս։ Երկրորդ՝ ի յնղխաբէթ անուն պառաւու միոյ զդրամս էին ընկալեալ յանուն սրբոյ Աթոռոյս (Ը, Բ) կտակ և քառասնից, զորս և ընդ յիշեալ պարոն Յովակիմին յղեալ էին առ սրբազան Վեհն և զթուղթ խնդրեալ։ Վասն որոյ և սրբազան Վեհն զօրհնութեան գիր գրեալ ի վերայ այն պառաւուն յղեաց այժմ առ սոսա՝ տալ նմա։ Ուստի ազդեաց սոցա, թէ ահա յղեցի զօրհնութեան թուղթ, տուք ի կինն յայն, զի միամտեսցի։ Երրորդ՝ գրեալ էին, թէ ի վերայ քաղաքիս զօրհնութեան թուղթ գրեա սակս գանձանակադրամի (Ե), զոր ժողովեալ ի պատրաստի ունիմք, առ ի յանձնել նուիրակ Մեսրօպ վարդապետին ի գալն նորա աստ։ Ուստի և սրբազան Վեհն զշնորհակա-
108ա լական թուղթ մի // գրեալ ի վերայ Ռուսուճուղու ժողովրդեանն, գրեաց զթուղթ մի ևս առ նուիրակ Մեսրօպ վարդապետն և յերկուսն ի միում պահարանոջ եդեալ և զմի կողմն պահարանին բաց թողեալ, յղեաց ի ձեռս սոցա և գրեաց, զի թէ Մեսրօպ վարդապետն անդ իցէ գնացեալ, ի միասին բացցեն և զկոնդակն ընթեռնուլ տացեն, իսկ թէ անդ չիցէ Մեսրօպ պետն, ինքեանք բացեալ զպահարանն, կոնդակն ընթեռնուլ տացեն և զՄեսրօպ պետի գիրն առ նա յղեսցեն և զգանձանակադրամն ևս յանձնեսցեն նմա՝ հասուցանել ի սուրբ Աթոռս։ Իսկ ապա վասն Մեսրօպ պետին յանձնարարութիւն։ Եւ վասն գանձապետական գործոյն իւրեանց պատուէր, զի մուղայէթ լիցին։

Օրինակն սորա ի յետկոյս բարևագրին այս է։

437. Թուղթ ես առ Ռուսմէկչու նուիրակ Մեսրօպ վարդապետն գրե-
ւց, յիշեցուցանելով նմա զի յանցեալ թուոջ սեպտ. ԺԷ (17) զկոնդակ
ցրելն ի վերայ վիճակին սորա և առ ինքն ևս յատկապէս զթուղթ գրելն
և յղելն ընդ մահսարատար Պետրոս պետին ի Պօլիս՝ առ ի յղել անդ ի
վիճակին սորա առ ինքն, զորս և յղեալ իսկ էին։ Բայց զի ի սմանէ դեռ
զպատասխանի չէր ընկալեալ, գրէ թէ որպէ՞ս է, որ յայսչափ միջոցս
զգիր ոչ գրես աստ։ Ապա ասէ, թէ ի ներկայումս գիր առաք ի յՌուսու-
ճուղու գանձապետ պարոն Անուշէն և Աւէտէն, որք գրեալ էին վասն քոյ,
թէ եկեալ է յԻսմայիլ և մինչև զքառասուն աւուրս գալոց է աստ և գան-
ձանակադրամ գոյ, զոր տալոց եմք նմա։ Որոյ սակս և զօրհնութեան թուղթ
էին խնդրեալ, ասէ, ի վերայ քաղաքին։ Վասն որոյ և մեք, ասէ, գրեալ
զկոնդակ շնորհակալութեան, յղեցաք ընդ այս թղթոյս առ գանձապետսն, ապա
զի թէ անդ լինիցիս, ի միասին ընթեռնուլ տայցիք յեկեղեցւոջն, ապա
թէ ոչ, իւրեանք ընթեռնուլ տացեն և զքոյդ գիրն առ քեզ հասուսցեն։
Ուրեմն ի հասանիլն թղթոյս առ քեզ, զորպէսն քոյ և գործոյդ գրեա, ա-
սէ, և այլն։ Գրէ ի վերջոյ համառօտ և զձախողակի որպիսութիւնն իւր,
որ ի նենգութենէ Պօլսոյ դիտին և ապա զանուանայիշութիւնն իւր յեկե-
ղեցիսն Պօլսոյ և թէ զֆարմանսն հոգալոց են։

Գաղափարն ի վերայ կտոր թղթոյ է։

109բ 438. Թուղթ ես ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ի

պատասխանի թղթոյն, զոր ընդ ուխտաւորացն գրեալ էր և ծանուցեալ էր, թէ ղժԱ (11) թեւանի շաքեար և զԹ (9) թեւանի երկաթ առի և սայլիւ յղեցի ի Ղարս առ պարոն Գէորգն՝ հասուցանել յայդր առ ձեզ։ Առ որ գրեաց սրբազան Վեհն, թէ զեռևս մեզ չէ հասեալ, մինչ հասանիցի, գրելոց եմք քեզ։ Այլև գրեալ էր սա, թէ յԱթոռոյդ կողմանէ առ իս հասեալ դրամոցն փոլիցայ արարի ի Ղարս՝ ի վերայ ումեմն Յովաննիսի, զի հասուսցէ պարոն Գէորգին (Բ), առ ի յղել ի սուրբ Աթոռդ։ Վասն որոյ գրեաց, թէ հասեալ է առ Գէորգն և նա գրեալ էր մեզ, երբ և ընկալնուցումք, գրելոց եմք քեզ ի միամտութիւն։ Իսկ և ամասիացի Սաաթեան մահտեսի Աստուածատուրն, որ եկեալ էր յուխտ ի սուրբ Աթոռս, զԾ (50) ղուռուշ էր առեալ փոխ և ամասիացի մահտեսի Մարտիրոսն զԲՃԾ (250) ղուռուշ էառ փոխ, որք երկոքեանն ևս զսանատս ետուն, զի ի Կարին մեզ հասուսցեն։ Ուստի սրբազան Վեհն զնոցին սանատսն ընդ թղթոյս յղեաց առ սա, զի զտալացուսն նոցա առնուցու և զսանատսն յետս տացէ իւրեանց։

439. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն այժմոյս գրեցելոյ։ Յորում նա ևս գրեալ էր, թէ պարոն Հայրապետն շաքեար և երկաթ է յղեալ, բայց տակաւին չէ հասեալ։ Առ որ գրեաց, թէ մինչ հասցէ յայդր, յղեսցես առ մեզ։ Իսկ վասն ի վերին թղթոջդ յիշեալ Յովաննիսին, որ զՀայրապետի նոր արարեալ փոլիցայն պարտ էր հասուցանել առ ինքն, գրեալ էր սա, թէ բարւոք մարդ է, բայց ի ներկայս պակասաւոր է, խնդրեմ յերկու ամիս համբերել, բայց և ինձ հասեալ համարելով, գրել պարոն Հայրապետին, թէ առ նա է հասեալ և ես զկնի Բ (2) ամսոց առեալ ձեզ հասուցից։ Վասն որոյ սրբազան Վեհն ըստ սորին կամացն գրեաց այժմ վէքիլ Հայրապետին, որպէս ի նորին թղթոջն, որ ի վերդ, յայտնի է։ Եւ գրեաց սմա, թէ վասն խաթեր քոյ թոյլատրեցաք միջոց ինչ, ապա հասուցանել մեզ զփոլիցայն։ Եւ գրեցաք պարոն Հայրապետին, թէ հասեալ է առ Գէորգն, որ հասուցանելոց է մեզ։

Գրեցան և առաքեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ ուխտաւորացն յամսոյս ԻԱ (21)։

110ա

1781 թ. հուլիս—*Ի Թիֆլիզ առ Հերակլ արքայն*

440. Հերակլ արքայն Վրաց այժմ մի խաթրահարցական և սիրանիշ թուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն ընդ իւր թագուհւոյ էշիկաղասի ճարտան բէկին քեռորդւոյն։ Եւ զի զօրս յղել կամէր ի կողմն Խոյայ ի յօգնութիւն Շուշւոյ Իբրահիմ խանին (որ համակամ ընդ իւր տայր պատերազմ ընդ Խոյայ և յայնկոյս եղեալ այլևս իշխողաց), որք պարտ էին անցանել ի գլխոյն Ղրխպուլախու։ Վասն նոցա զքանի բեռն գինի էր խնդրեալ ի սրբազան Վեհէն։ Իսկ սրբազան Վեհն ևս կամեցեալ յղել զմի թուղթ գրեաց այժմ առ նա և խոստացաւ կատարել զխնդրեալն նորին։

Գրեցաւ տաճկերէն թուղթս և յղեցաւ ընդ եկելոյն անտի յամսոյս ԺԲ (12)։

1781 թ. հուլիս—*Ի Ղարս առ փաշայն*

441. Ղարսայ Ապտուլլա փաշայն ի լսելն զվերոյ գրեալ զօրաժողովութեան զհամբաւն, սուրհանդակաւ զթուղթ էր գրեալ առ սրբազան

Վեհն, թէ յայդ կողմունսդ հեծելաշարժութիւն գոյ, գրեա մեզ զստոյգն, զի գիտասցուք։ Ուստի և սրբազան Վեհն ի պատասխանի գրոյ նորին զմի թուղթ գրեաց առ նա՝ ծանուցանելով նմա զներկայական լուրս, զորս լսէաք ի կողմանէ հեծելաշարժութեանցն Թիֆլիզու և Շուշու և Խոյու, որ ի վերին գրոցն փոքր մի նշանակեցաւ։

Գրեալ ուղարկեցաւ յամսոյս ԺԵ (15)։

1781 թ. հուլիս—*Ի Յամիթ, ի Թօխաթ, ի Կարին, ի յԱխալցխայ և ի Ղարս և մի միակ թուղթ ևս ի Կիմիշխանայ*

Եւ ընդ վերոյ յիշեալ սուրհանդակին ի միում աւուր եկ և Յամթայ դէտ Կարապետ վարդապետն ի սրբոյ Աթոռոյս դէպ ի վիճակն իւր, որ ի Պօլսոյ դիտէն էր յղեցեալ աստ բազմակնիք թղթովք առ միաբանս սրբոյ Աթոռոյս, որպէս յիշեցեալ է ի վեր անդր։

Արդ, շնորհեաց նմա սրբազան Վեհն զկոնդակ առաջնորդական ի վերայ Տիգրանակերտու և այլ համայն թեմից և վիճակացն սրբոյ Աստուածածնի վանիցն Բարձրահայեաց կոչեցելոյ։ Ընդ որս գրեաց և զքանիս թուղթս ի Տիգրանակերտ։ Նաև փայեկ մի էր եկեալ ի Կիմիշխանայու՝ բերեալ զթուղթս և անտի և ի Կարնոյ և ի Ղարսայ։ Որոց ևս զպատասխանիս գրեալ սրբազան Վեհն, յղեաց ընդ փայեկին։ Այլև Ախալցխայու մերազնեայ ուղղափառ ժողովուրդքն, զոր ինչ նուէրս էին հասուցեալ զանձապետին մերոյ՝ պարոն Բալուն, այժմ զայնս ընդ Սիմօնին յղեալ էր և զթուղթ ևս էր գրեալ առ սրբազան Վեհն։ Ուստի սրբազան Վեհն անդ ևս զհասարակ և զյատուկ գրեանս գրեաց։

Իսկ համայն թուղթքն գրեցեալք են այսոքիկ, որք երկարօրէն ծանուցանին աստ հետևապէս։

442. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն ի վերայ Տիգրանակերտու, նորոգելով զառաջնորդութիւնն սասունցի Կարապետ վարդապետին ի վերոյ
110բ յիշեալ սրբոյ Աստուածածնի վանիցն // և նորին համայն թեմիցն վերայ։ Յորում և պատուէր գրեաց առ քահանայսն և իշխանսն երկրին, թէ զամայութիւնս վանորէից երկրիդ ձերոյ առ ի չգոյէ բնակչաց, լսելով մեր մորմոքիմք։ Ուստի պատուիրեցաք Կարապետ վարդապետիդ, զի այրի քահանայից վիճակիդ այգորիկ տացէ զվեղար և դիցէ ի վանորայսն, զի շինացուսցեն։ Ուրեմն պարտիք, ասէ, և դուք լսել հրամանաց մերոց և օժանդակել Կարապետ վարդապետիդ և զայրի քահանայսն ի վանորայսն յղել, զի կրօնաւորեալ աղօթեսցեն վասն ձեր։ Վերջապէս վասն Առաքելոց վանիցն ևս զյատուկ պատուէր գրէ, զի վասն նորա զշինութեան հնար իմն գտցեն և ինքեան ևս գրեսցեն, զի զոր ինչ վայել է յայնժամ առնել ինքեան, արասցէ։

Նորապէս միջարկեալ բանքն առաջնորդականի կոնդակիս տեսցես ի Նոր տետր 81 երեսն[101]։

443. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն վասն Առաքելոց վանիցն ի վերայ Կարապետ վարդապետին՝ ըստ խնդրոյ նորին և ետ ցնա այժմ, բայց թուին ի սեպտեմբերի ԺԲ (12) գրեցաւ, իբրու թէ յետոյ գրեցեալ իմացի, մինչ Կարապետ վարդապետն ի վիճակն իցէ լեալ։ Յորում գրէ, թէ մինչ աստ էիր դու, պատուիրեցաք քեզ վասն Առաքելոց սուրբ վանիցն, զի ընդ քաղաքիդ և վիճակիդ քահանայիցն և իշխանացն խոկացեալ և խորհեալ գտջիք զհնար իմն վասն նորին շինութեանն, որպէս

և ի կոնդակուչդ ևս գրեցաք: Այժմ կրկին գրեմ, զի քահանայից և իշխանաց
զմէնչ ողջոյն տուեալ, կրկին ասասցես զպատուէրս մեր, զի վասն այն
սուրբ Տանն զհոգս իմն արասցեն: Եւ գիտեմք, աստ, զի պատճառ նո-
րին աւերմանն է այն իսկ, զի չունի վիճակ և թեմ: Վասն որոյ պատուի-
րեմ, զի իշխանքն ի միասին խորհեալ ի մերձակայ վիճակացն զպատ-
շաճաւոր իմն վիճակ գացեն վասն սուրբ վանիցն այնմիկ համակամ
խորհրդով, զի անդ նստօղքն վայելեսցեն և սուրբ վանքն չէն պահեսցեն:
Եւ յետ այսպէս առնելոյն ձերոյ, ապա զսեպգլուխ մի ևս գտեալ յղես-
ջիք անդ և մեզ գրեսջիք, զի առաջնորդ կարգեսցուք զնա սուրբ վանիցն
այնմիկ և իւր վիճակին, և զկոնդակ յղեսցուք, զի հաստատեալ լաւա-
պէս, առցէ շինութիւն նորին զկայ: Ուրեմն պարտիս, աստ, այսպէս առ-
նել:

Օրինակն է ի նոր տետր 83 երեսն:

444. Թուղթ ևս առ Յամթայ նուիրակ Գրիգոր վարդապետն գրեցաւ
ի պատասխանի նորին թղթոյն, զոր սակաւ միջոցաւ յառաջ գրեալ էր:
Յորում գրելով, թէ զխոհեմ շարժմունսդ և զարիութիւնդ ի գործդ, լեալ
ուրախացաք: Եւ պատուիրէ մնալ ի զգաստութեան և ի պարկեշտութեան:
Իսկ թղթոյդ պատասխանւոյ յամեցուցման պատճառն այս էր, աստ, զի
դու գրեալ էիր, թէ ստոյգ յայլր եկօղ ուխտաւորացն, որք գալոց են,
զդրամս եմ յղելոց: Մեք ևս յուսացաք առ ի ընկալնուլ և յայնժամ գրել:
Բայց մինչև ցայժմ ո՛չ ուխտաւորք եկին և խոստացեալդ վճարեցաւ: Այլ
արդ, որքան դրամ ունիցիս, աստ, ջանասցես փոլիցայիւ հասուցանել ի
Կարին՝ առ մեր վէքիլ պարոն Հայրապետն և զորքանութիւնն մեզ գրես-
ցես, որ զզապզ յղեսցուք առ քեզ: Եւ թէ ահա Կարապետ վարդապետն
111ա դարձաւ ի վիճակդ իւր, որ || է սրբոյ Աթոռոյս հարազատ և մեր սիրելի:
Վասն որոյ ընդ դմա խորհելով միշտ զորին օժանդակութեամբն զգոր-
ծոյդ լիարդին և բարեպէս յանկ հանելն ջանասցես:

Միաժամանակ կաթողիկոսը օրհնության նամակներ է գրում Ամիդում էջմիածնի
գանձապետներ Մովսես և Հակոբ մահտեսիներին:

445. Թուղթ անդրանիկ օրհնութեան ևս սրբազան Վեհն ի Կիմիշ-
խանայ առ սառաֆ խօջայ Յակոբն գրեաց, ի պատասխանի սիրանիշ
թղթոյ նորին ի յունիսի ժէ (17) գրեցելոյ: Յորում զեկուցանէ սմա զթըղ-
թոյ սորին առ ինքն ժամանելն ի յուլիսի Բ (2) և ծանուցանէ ապա
թոյ սորին առ ինքն ժամանելն ի յուլիսի Բ (2) և ծանուցանէ ապա-
զգրեալն իւր քան զայս յառաջ զկոնդակ մխիթարութեան և յորդորա-
նաց ի վերայ Կիմիշխանայու՝ վասն վիճոյն նոսա ընդ ախթարմայիցն
• և առ սա յայնժամ գիր չգրելն վասն կարծելոյն, թէ անդ չիցէ սա: Եւ
այժմ մինչ ընկալայ զգիրդ, աստ, յոյժ շնորհակալեցայ զհարազատու-
թենէ քումմէ և օրհնեցի զսիրելիդ: Վասն որոյ և զայս թուղթ գրեցի առ
քեզ և այլն:

Որոյ օրինակն է ի յետկոյս թղթոյն նորա:

446. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Կարնոյ նուիրակ Ներսէս պետն
գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն, զոր այժմ գրեալ էր, ծանուցանե-
լով զաւարտելն զգործն: Առ որ գրեաց սրբազան Վեհն ընդ վէքիլ Հայրա-
պետին գալ, որպէս և նմա գրեաց: Այլև զօրհնութեան գիր մի էր խընդ-
րել սա ի Կարին ի վերայ Աջամ մահտեսի Անդրէասի որդի մահտեսի
Յարութիւնին, որ ըստ կտակի մօրն ղի (20) ղուռուշ էր տուեալ սմա

վասն սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ և սրբազան Վեհն զօրհնութեան Ա (1)
թուղթ գրեալ ի վերայ նորա, յղեաց առ սա և պատուիրեաց հասուցա-
նել առ նա ի միամտութիւն նմին:

447. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ Հայրապետն գրեաց, ի պատաս-
խանի ի յունիսի Իե (25) գրեալ թղթոյ նորին:

Այս նամակում, որով կաթողիկոսը տնտեսական բնույթի մի շարք հանձնարարու-
թյուններ է տալիս վեքիլ Հայրապետին, խոսվում է նաև այն մասին, որ վերջինս
էջմիածնի զանգակները բերելու համար մարդ և դրամ (40 ղուռուշ) է ուղարկել Տրա-
պիզոն, ինչպես և հանձնել է Իսաղ փաշայի համար ուղարկված նվերները (էջ 111ա—
112ա):

112ա 448. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ վերոյ գրեալ պարոն Հայ-
րապետն, զորոյ օրինակն (որպէս ի վերին թղթոջդ խոստացաք), գրեմք
ահա: Յորմէ ծանիր, պարոն Հայրապետ, զի վասն առնլեացն սրբոյ Ա-
թոռոյս (Ա, Ը) յառաջ քան զայս դու և խօջայ Յովաննէսն յատուկ յատուկ
զթուղթս էիք գրեալ մեզ, որոց զպատասխանին մինչև ցայժմ յամեցուցաք
գալստեան պարոն Եսայուն սպասելով: Ապա ինքն պարոն Եսային ի
Թիֆլիզու եկն ի սուրբ Աթոռս և ի ներկայութեան Եսայի վարդապետին
(որ տեղեակ իսկ էր), զնա խօսեցուցաք և զամենայն եղելութիւնսն ի-
մացաք ի նմանէ, որ նա ևս զիրաւունս ունէր: Զի ասաց մեզ, թէ ես ի
Բայազիտու Բայազիտ ի ներկայութեան իշխանաց և վաճառականացն
իմ ապրանքն վաճառեցի մահտեսի Գաբրիէլին և սնոտ առի ի նմանէ
յանուն սրբոյ Աթոռոյդ, և մինչ գնացի ի Կարին, մկաւ մահտեսի Գաբ-
րիէլն ընդ իս զդաւի բանալ, թէ թանկ ես տուեալ ապրանքդ: Եւ անդ ե-
ղեալ իշխանքն և վաճառականքն ի նորին կողմն անցեալ, տախպեցին
զմեզ և որպէս թէ քեարազի տեսեալ ի յառաջին սնոտի մապլաղէն
Եճ (500) ղուռուշ ի վայր ձգեցին: Եւ ինքն՝ խօջայ Յովաննէսն ի մէջ
իշխանաց կամաւ և յօժարութեամբ մնացելոյն իւր անուամբն սնոտ
ետ, զի հասուսցէ զդրամն սրբոյ Աթոռոյդ: Եւ ես յայնժամ զերծայ ի
տուր և առութեանցս:

Արդ, ըստ խօսակցութեանց սորին ոչ համարիմ իրաւունս առ ի
Արդ, ըստ խօսակցութեանց սորին ոչ համարիմ իրաւունս առ ի
պահանջել և առնուլ ի սմանէ զդրամն, և խօջայ Յովաննէսն ևս կամե-
ցեալ է զբարիս առնել սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ յանձն է առեալ և սա-
նատ տուեալ, և ըստ գրեցելոյն իւրոյ՝ կերած և խմած չունի:
Եւ վասն մահտեսի Գաբրիէլին գրէք, թէ զատր եղև սմա, որ ամե-
նևին դատարկ և պարտատէր է: Սոքօք երևի թէ վերջապէս վնասն մեզ
և սրբոյ Աթոռոյս է գիպելոց: Արդ, ի վնասուց զփոքրն ընտրելով, զայս
գրեմ քեզ և խօջայ Յովաննէսին և մահտեսի խաչատուրին ողջոյն և օրհ-
նութիւն տամ և հարկադրեմ իսկ ի հասանել թղթոյս առ ձեզ, պարտիս
ընդ նոսա ի միասին ի սէր սրբոյ Աթոռոյս զայն 140 հօխայ Գիճանի
խուրտայն, զոր առեալ ի պահեստի ունիք, վաճառել տեղդ և զորքա-
նութիւն գնոյն մեզ գրել, զի գիտասցուք, եթէ լման մեր առնլին գումա-
112բ րութիւն գնոյն մեզ գրել, զի գիտասցուք, եթէ լման մեր առնլին գումա
կուգայ, եթէ որքա՞ն կու պակասի: Յետոյ || տեսցուք, թէ զպակասն ո՞վ է
վճարելոց սրբոյ Աթոռոյս: Ահա կրկին գրեմ և զձեզ իբրու վէքիլ հա-
ցուցանեմ ի մերս կողմանէ: Պարտիք թարց զանցառութեան զայդ խուր-
տայդ վաճառել արդարապէս և զո[ր]քանութիւն գնոյն գրել մեզ հալպաթ,
որք ընկալջիք զվարձս ի յԱթոռոյ:

449. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ի վերայ Ախլցխայու
միաբանադաւան ժողովրդեանն գրեաց[102], որք տուեալ էին այժմ սրբոյ Ա-

Թոռոյս ի ձեռն սորին գանձապետ Բալուն զԵ (5) թիլանի մոմ, Ա (1) թիլանի և կէս մեղր, Բ (2) թիլանի ձիթապտուղ և Ա (1) հակն հնոտի շոր՝ վասն թղթաշինութեան[103]։ Զորս և նա այժմիկ յղեալ էր ընդ տէր Դաւիթ քահանային իւրեանց և պարոն Սիմօնին։ Որոց աղագաւ զշնորհակալութիւն գրէ առ նոսա։ Եւ զպարոն Բալին վերահաստատէ ի գանձապետական և երիցփոխական գործն իւր, և յատկապէս պատուիրէ վասն հնոտի շորոյ տալ յօժարութեամբ, որ առ ինքեանս չէ ինչ, այլ մեզ վասն թղթաշինութեան յոյժ ձեռնտու է։

Նախագաղափարն սորա է ի նոր տետր 84 երեսն։

450. Թուղթ ևս առ երիցփոխան պարոն Բալին, ի պատասխանի թղթոյն, շնորհակալութիւն վասն յղեալ իրացն (որք ի վերին թղթոջդ յիշեցան) և վերահաստատութիւն երիցփոխութեանն և սրբոյ Աթոռոյս գործակալութեանն։

Օրինակն է ի նոր տետր 193 երեսն։

451. Թուղթ ևս ի յԱխալցխայ առ նոյն պարոն Բալին և Նիկողայոսն և Աւթանտիլն գրեաց, զի զտէր Սահակ քահանայն իւրեանց, որ առ հոգելոյս տէր Սիմէօն հայրապետաւն նորա կոնդակաւն գնացեալ էր ի ժողով՝ վասն նորակերտ եկեղեցւոյն իւրեանց, ի դառնալն նորա յղեցին ի սուրբ Աթոռս առ ի տալ զհաշիւն։ Իսկ և ողջոյն գրեաց նոյն եկեղեցւոյ քահանայիցն և պատուիրեաց, զի զտէր Դաւիթ քահանայն, որ ի վերոյ ցուցեալ հասարակ թղթոյն յիշեցաւ, ընկալցին սիրով ի յընկերակցութիւն ինքեանց, որպէս և է իսկ ընկեր և ի մէջ վիճակի։ Որում զոր ինչ բաժին հասանիցի, ասէ, ի քահանայական արդեանց, առանց վիճմանց տացեն և այլն։

Օրինակն է ի նոր տետր 194 երեսն։

452. Թուղթ ևս ի Թօխաթ առ մահտեսի Աղամջանն գրեաց, ի պատասխանի նորին գրեալ անթիւ թղթոյն։ Եւ արդ, գրեալ էր սա զսրբազան Վեհի ի յապրիլի ԻԶ (26) առ Յակոբ պետն գրեալ զապղի ի ձեռն իւր հասանիլն։ Գրեաց առ այն, թէ միամտեցար։ Այլև ի Կարին ի վերայ երկուց մարդկանց զդրամս էր փոլիցայ արարեալ սա (Բ), զորս պարոն Հայրապետն առեալ մեզ հասուցէ և սա անդ ի Թօխաթ ի Յակոբ պետէն առնուցու։ Զոր և ծանուցեալ էր սրբազան Վեհին։ Բայց զի յայնմ կողմանէ պարոն Հայրապետն գրեալ էր, թէ մինն տայ և միւսն ոչ (որպէս և ի վերդ ի թղթոջ Հայրապետին ցուցաւ)։ Գրէ սրբազան Վեհն, թէ Հայրապետն մեզ այսպէս էր գրեալ փոլիցային կողմանէ։ Ի հարկէ քեզ
113ա ևս գրեալ է։ Այլ դու, ասէ, || զՅակոբ վարդապետի փոլիցայն ջանասցես առնուլ։

Ծանուցանէ և զՅամթայ դէտ Կարապետ վարդապետի դառնալն ի սրբոյ Աթոռոյս առաջնորդական կոնդակաւ ի վիճակն։ Իսկ ի վախճանի թղթոյն պատուիրէ, թէ մահտեսի Պետրոսի յիշատակաշինութեանն մուզայէթ լիցիս առ ի բարւոքապէս բերել ի գլուխ։ Ընդ որս և զայլ մանր բանս։

453. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ծանուցանելով զդիմելն աստի Յամթայ առաջնորդ Կարապետ վարդապետին ի վիճակն իւր։ Որոյ սակս և զյանձնարարութիւնս գրեաց՝ առ ի սիրով շահել զնա։ Իսկ ապա թուղթ մի էհաս ի սմանէ ի յունիսի Լ (30) գրեալ, յորում սա ևս ծանուցեալ էր, թէ զխալիլ փաշայի ընծայսն յղեցի առ

պարոն Հայրապետն (որ յիշեցաւ ի վերն ի թուղթն Հայրապետին)։ Առ որ զշնորհակալութիւնս գրեաց սրբազան Վեհն։ Նաև, զոր գրեալ էր վէքիլ Հայրապետն, թէ տեղս մահտեսի Սահակին փոլիցայ ետու (Ե), զոր պարոն Գէորգն ի Ղարսայ յայլր հասուցէ (որ և յիշեցաւ ի վերոյ գրեալ թղթոջ նորա), զեկուցանէ սմա աւելով, թէ ի հարկէ քեզ ևս գրեալ է, ուրեմն թէ զայն և թէ զյառաջ քան զայս եղեալ փոլիցայսն մեզ հասուցանել ջանասցես։

Այլև թուղթ մի ևս էհաս ի սմանէ առ սրբազան Վեհն ի յուլիսի Զ (6) գրեալ։ Յորում ծանուցեալ էր զՊօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետի աքսորիլն ի պատրիարքութենէն հրամանաւն թագաւորին, ըստ կամացն վեհագունեղ իշխողին ամենայնի, որ ի ձեռին ունի զսիրտս ամենայն թագաւորաց։ Առ որ գրեաց սրբազան Վեհն սմա, թէ Աստուած զվերջն բարեաւ եղերեսցէ։ Իսկ և զի այժմիկ զաղայս յղեաց անդ զհետ եղեալ Կարապետ պետին, վասն որոյ գրէ սմա, թէ ի դառնալն նոցա զդրամ յղեսցես (Ա, Ե), եթէ պատրաստի գտանի։

Գրեալ և առաքեալ եղեն վերոյ գրեալ թուղթքս յամսոյս ԺԲ (12) և թէ իւրաքանչիւրքն ընդ որո՞ց յղեցան, տե՛ս վերնագիրն կարգի թղթոցդ։

1781 թ. հուլիս—Եկաւհասաւ թուղթք ընդ յամթեցի ուխտաւորաց գրեալք

Իսկ յետ միոյ աւուր քանի մի յամթեցի ուխտաւորք եկին ի սուրբ Աթոռս, որք կատարեալ զուխտս իւրեանց, զայս ներքոյ գրելիք գրեանքըս ևս առին։

Թվարկված են մի քանի նվիրատուներ, որոնց ուղարկվել են շնորհակալության նամակներ։

Գրեալ յղեցան թուղթքս ընդ յիշեցեալ ուխտաւորացն յամսոյս ԺԴ (14)։

113բ

1781 թ. հուլիս—Թուղթք ի Թիֆլիզ

Յայսմ միջոցի Թիֆլիզու տէրունի ժողովուրդքն սրբոյ Աթոռոյս բազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն և միաբան հաւանութեամբ խնդրեալ էին զընծայցի Կարապետ վարդապետն (որ վէքիլ էր անդ ի տեղի առաջնորդի, որ և ի վերոյսն ի բազում տեղիս յիշատակեալ գոյ), կարգել ինքեանց առաջնորդ։ Ուստի և սրբազան Վեհն, ըստ խնդրոյ նոցա, զառաջնորդական կոնդակ գրեալ ի վերայ տէրունի եկեղեցեացն սրբոյ Աթոռոյս, կացոյց զԿարապետ վարդապետն առաջնորդ նոցա։

Նաև Գ (3) ոմանք յայլոց ճորտութենէ ազատեցեալք, հանդերձ տամբքն իւրեանց, զգաշնագիրս էին յղեալ և զճորտական թուղթս էին խնդրեալ ի սրբազան Վեհէն՝ առ ի լինիլ ծառայս սրբոյ Աթոռոյս յորդւոց յորդիս։ Առ որս գրեաց սրբազան Վեհն զթուղթս ճորտութեան։

Եւ քանզի ինքն՝ Կարապետ վարդապետն և տէր Ղազար վէքիլն մեր, ևս էին գրեալ զթուղթս, վասն որոյ նոյին թղթոցն ևս զպատասխանիս գրեաց։ Ընդ որս և շնորհաւորական թուղթ մի ևս առ ինկլիզ Յակոբն, որ արհեստին բժիշկ էր և տօխտոր կոչիւր, յաղագս դառնալոյն ի ճըշմարիտ դաւանութիւնս Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։

Եւ գրեցելոց թղթոց դիտմունքն են այսոքիկ, որք ի ներքոյ համառօտապէս գրին։

454. Ա (1) կոնդակ առաջնորդութեան հաստատակ ի վերայ Թիֆլի-
զու վասն Կարապետ վարդապետին, որպէս ի վերդ ցուցաւ։

455. Թուղթ ճորտութեան առ սամղէրէթցի Աթօյի որդի Բէրօն և
որդիսն նորա՝ Յարութիւնն, և Գալուստն, և Գրիգորն, ըստ դաշնագրի
նոցա, զոր գիտութեամբ և կնքովք գործակալացն սրբոյ Աթոռոյս, որք
անդ, գրեալ էին և յղեալ առ սրբազան Վեհն, և զճորտութեան թուղթ
խնդրեալ աղաչանօք։

456. Թուղթ ճորտութեան ևս առ թէլէթցի Սաֆարենց Պապի որդի
Իւանէն, որ ևս ըստ վերոյ գրեցելոյդ էր արարեալ, զդաշնագիր յղելով
աստ։

457. Թուղթ ճորտութեան ևս առ շուլնեցի Քօթօյեան Մամաջանի
թոռն և Աւետիքի որդի Գէլօն, որ ևս ըստ վերոյ յիշելոցդ զպայմա-
նագիր էր յղեալ առ սրբազան Վեհն։

458. Թուղթ օրհնութեան և շնորհաւորութեան և շնորհակալութեան
գրեաց սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ տօքտօր Յակոբն, որ էր բժիշկ ոմն
ինկլիզ, նոր գնացեալ անդ (որ և յառաջագոյն աստ ևս էր հանդիպեալ),
որ և այժմ դարձեալ էր ի դաւանութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ և ի քա-
հանայից ազգիս մերոյ առեալ էր զսրբութիւն[104], որով և ի մահամերձ
հիւանդութենէ, որ դիպեալ էր անձինն, առողջացեալ էր և հռչակէր
զհրաշալի և զուղիղ գոլն սրբոյ եկեղեցւոյս մերոյ դաւանութեան, և այժմ
ևս զսիրոյ գիր էր գրեալ առ սրբազան Վեհն, ուստի և նա զայս թուղթ
գրեաց։ Իսկ գրեալ էր ևս սա, թէ փափագ ունիմ գալ և յայդր բնակիլ
եթէ կամիցիս, եկից։ Այլ սրբազան Վեհն զահաւասիկ գալն և ի սուրբ
114ա Աթոռոջս // բնակիլն նորա արգելեաց այժմ վասն զօրեղ պատճառաց։
Եւ գրեաց, թէ յետ ժամանակի մինչ պիտոյասցիս, յարքայէն խնդրելոց
և բերելոց եմք զքեզ ժամանակ ինչ և այլն։

Զգաղափարն թղթոյս տես ի նոր տետր ... երեսն։

459. Թուղթ ևս առ նորոգ առաջնորդ կարգեցեալ Կարապետ
վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին ի յունիսի Բ (2) և Գ (3)
գրեալ թղթոցն։ Ծանուցանելով նմա, թէ ի կողմանէ առ Ափխազաց Սօ-
ղոմօն արքայն գրեալ թղթոյն մերոյ, որ գրեալ էիր, թէ գիր յղեցաք ի
Գօրի առ գործակալ տէր Սահակն, որ մեզ անտի առոյգ զորպիսութիւն
գրեսցէ, զի ըստ այնմ զթուղթն կամ յղեսցուք, կամ ոչ, այդմ յաւանե-
ցաք։ Վերջապէս որպէ՞ս և առնիցէք, գրեսջիք մեզ։ Եւ թէ վասն տօք-
տօր Յակոբին գրեալսն ձեր իմացաք, ինքն ևս էր զթուղթ գրեալ մեզ և
զիղձն իւր ծանուցեալ՝ հանդերձ դարձմամբն ի սուրբ հաւատս մեր։ Եւ
որ ահա զշնորհաւորութեան թուղթ գրեցաք, զոր տաջիք ինքեան։ Բայց
վասն զգուշաւոր պատճառաց զգալն իւր աստ չկամեցաք՝ ի կամս իւր
թողլով, զի մի դժուարեսցի արքային։

Եւ ևս, թէ վասն Սահակի ումեմն քաղաքացւոյ գրեալ էիք, թէ եթէ
ի Մատրաս մեր նուիրակն դրամ ունիցի, Մ (200) թումանի փօլիցայա-
գիր տացուք. նմա։ Իմացարուք առ այդ, զի անդ մեզ դրամ ոչ գոյ։ Այլ
ևս թէ զքաղաքացւոցդ հաւանական մահսարն ընկալաք, որով զքեզ ա-
ռաջնորդ էին խնդրեալ։ Վասն որոյ զկոնդակ գրեալ ահա յաղագս քո
առաջնորդ կարգեցաք զքեզ և այլն։ Նաև թէ նոնուսեցի մահտեսի

Սարգսեան մահտեսի Յակոբջանն և պարոն Կարապետն, ընդ որս և Ե-
սային և այլք, եկին ի սուրբ Աթոռս և քանի մի օր աստ շահեցեալ, ելին
գնալ ի սուրբ Կարապետ՝ յուխտ։ Եւ թէպէտ վասն Յակոբջանին գրեալ
էիր արգելել ըստ աղաչանաց իւրայնոցն, բայց մեք չխափանեցաք զիղձս
նորա, այլ զխրատ տուեալ թուլատրեցաք ի գնալ, որք մինչ դարձցեն.
վասն Ջկրաշինու եկեղեցւոյն պատուէր տալոց եմք առ ի շինել։ Եւ
վասն պարոն Եսայու տէրունի ծուխ սրբոյ Աթոռոյս առնելոյն էիր գրեալ,
առ այդ ևս լուր, զի Եսային յորժամ գայցէ առ մեզ, վասն այդր ընդ
նմա խօսելոց եմք և ըստ վայելմանն զկոնդակ շնորհելոց նմա, եթէ ըղ-
ձասցի։

Եւ թէ զսրբոյ Աթոռոյս ճորտից և վախուպ տանց և դուքանաց դաւ-
թարն, զոր յղեալ էիք, ընկալաք և զայն Քօշօրա Ճուհլակի նստելոյ դու-
քանն, զոր մոռացմամբ չէիք գրեալ, զայն ևս գրեցաք ի դաւթարոջն։ Եւս
թէ նորապէս Գ (3) ճորտից աղագաւ զԳ (3) կոնդակ էիք խնդրեալ, յղեցաք
ընդ թղթոյս։ Իսկ զճորտից ձեռագիրսն, զորս յղեալ էիք, ընկալաք և
պահեցաք թէպէտ, բայց զի առանց ձեռագիր և կնիք դնելոյ էին, կամե-
ցաք յետս յղել, բայց այլ ոչ յղեցաք։ Բայց ի զգուշութիւն գրեմ ձեզ. այ-
սուհետև մինչ զձեռագիր առնուցուք ի նոր ճորտացելոց, ձեռագիրն թէ
հայերէն իցէ և թէ վրացերէն, ի նմա դրոշմել տաջիք և դուք՝ գործա-
114բ կալքդ մեր և այլք ևս կնքեսջիք և ապա յղեսջիք առ մեզ, // որ հաստա-
տուն լինիցի։ Եւ վերջապէս, թէ ի Սահակաշինու բժիշկ Յովաննիսի ըն-
տանեացն առեցեալ գրեանսն ամբողջ պահարանեալ յղեսջիք առ մեզ
կնքով։

460. Փուսուլայ ևս գրեաց առ Կարապետ վարդապետն, ի պատաս-
խանի նորա փուսուլային, թէ նախ վասն Կարմիր վանից առաջնորդ
Յակոբ պետին էիր զրանս գրեալ, լուր առ այն, զի նորապէս զԿարմիր
վանից առաջնորդութիւնն ֆէրմանաւ տուեալ են Յակոբ պետին և զՀա-
սանղալայու վանիցն՝ Աւետիք պետին։ Բայց մեք գրելոց եմք զրանս
խրատականս առ Յակոբ պետն և զնա զգուշացուցանելոց եմք առ ի բաց
կալ ի թիւր արարմանցն։

Երկրորդ՝ վասն Հալուբարարենակ սեազլխին և արտուղի շարժ-
մանցն նորա էիր գրեալ. և վասն մէլիք Աւետիքին ևս՝ ի թղթոջ Ղունկիա-
նոս վարդապետին մերոյ և մեզ ևս։ Ուստի կամէաք զթուղթ գրել այժմ
առ Աւէտիքն՝ ի զգուշութիւն։ Բայց մինչ լուաք զմեռանելն մէլիք Մը-
կըրտումին, զթուղթն մեր յամենցուցաք։ Քանզի կարծեցաք, որ զմէլիքու-
թիւնն, ի հարկէ, նմա են տալոց և մեք ևս առ նա զշնորհաւորութեան
գիր եմք գրելոց։ Եւ վասն Ենօքին ևս զրանս եմք գրելոց, որպէս և ինքն
Ենօքն ծանուցանելոց է քեզ։ Յայնժամ և վասն այդց զպատուէրս եմք
գրելոց առ Աւետիքն։ Այլ դու այժմ սիրով կաց ընդ նմա։ Նաև թէ
խնդրեալ էիր, թէ աստ քան զմի ամ աւելի չպահես զիս։ Առ այդ առ
լուր, զի մեք զքեզ Բ (2) մտօք յղեցաք յայդր. նախ յորժամ ի կողմանէ
մերմէ բան ինչ հարկաւորեսցի, գրեսցուք քեզ հոգ տանիլ, որ ոչ եղև։
Երկրորդ, զի դու շահիցիս և յայդր մնացեալ ժամանակ ինչ միմեանց
տեղեկասջիք և եթէ հաւանիցիք միմեանց, մեզ զմիտսդ բացցես։ Ապա
դու քանիցս գրեցեր մեզ հանել զՅովաննէս պետն այտի և մեք զքեզ
վէքիլ կարգեալ յայդր, բերաք զնա աստ։ Իսկ արդ, դու մինչև ցարդ
զոհաճութենէդ ոչ ինչ ազդեալ մեզ, այժմ մինչ ժողովուրդքն տեղւոյդ

մաՀսար են գրեալ վասն քոյ և մեք զառաջնորդական կոնդակդ գրեալ
յղեմք։

Գրես թէ երկար չթողուս զիս առա և այլն։ Ա՛յ օրՀնեալ, Ա (1)
տարի ես զնեա ՀամբերԵա և զգործդ ի գլուխ տար, ապա եղանել
խնդրեա։ Ընդէ՞ր է քո այդպէս յողդողդամիտ լինիլն։ Արդ, ժամանակ
ինչ Համբերաբար կառավարեա զգործդ, մինչև տեսցուք թէ Աստուած
զի՞նչ առաջադրեսցէ։ Ապա զայս, թէ վասն առնլեացդ Բայազոու խմա,
զի ԽԲ (42) զատաք եղեն տալոյ մեզ, ԻԲ (22) Հատն Հասուցին, իսկ ի
(20) Հատն Հասուցանելոց են, որք ամէն են Ձ (80) ղուռուշի, Լ (30)
ղուռուշն եսուր առա գրագրաց և փոքրաւորաց՝ յանուն քոյ վասն կոն-
դակիդ և նոր մանսուպիդ։ Մնայ Ծ (50)-ն, զոր ի վեր առ զու յայդր
յարդեանցս սրբոյ Աթոռոյս։

461. Թուղթ ես սրբազան ՎեՀն առ սրբոյ Աթոռոյս գործակալ տէր
Ղազարն գրեաց, ի պատասխանի նորին ի յունիսի Բ (2) և Ժ (10) գրե-
ալ թղթոցն, ըստ ոմանց Հասարակ զիտմանց վերոյ գրեալ թղթոյդ, որ
115ա առ Կարապետ վարդապետն։ Եւ զի // զգանգատանս ինչ էր գրեալ սա
զնախորդ առաջնորդէն իւրեանց Յովաննէս պետէն, գրէ նմա ՎեՀն, թէ
աՀա զերծայք ի միմեանց, մանաւանդ սա զքէն բան ինչ ոչ ասէ, զա
է՞ր այդքան Հետևիս և այլն։

Գրեցան վերոյ յիշեալ թուղթքս ի սոյնոյ ամսեանս ԻԱ (21) և ընդ ի
ստորևս գրելի թղթոցն յղեցան ի միասին, որպէս և ի ներքոյ նոցին եւ
նշանակեալ ցուցանի։

Իսկ մինչ զվերոյ գրեալ գրեանսդ պատրաստել կամէր յղել սրբա-
զան ՎեՀն, եկին ժամանեցին ի սուրբ Աթոռս Բ (2) Հկարգաւորք Վրաց,
առաքեալք ի Էփթվիմէ վարդապետէն՝ առաջնորդէն անապատին Վրաց,
որ մօտ ի Կախէթ յանուն սրբոյն Յովաննու Մկրտչին կառուցեալ է։
Որ զի յանցեալ ամին ընդ Հերակլ արքային գալով առա ծանօթացեալ
էր սրբազան ՎեՀիս մերոյ յեպիսկոպոսութեանն սորա, վասն որոյ յղե-
ալ էր զվերոյ յիշեալ վարդապետսն, որոց մեծի անունն Յովաննէս, ի
տես սրբազան ՎեՀիս մերոյ, Հանդերձ ընծայիւք։ Մանաւանդ զի սրբա-
զան ՎեՀս մեր ի նոր Հայրապետանալն մինչ առ նա զգիր գրեաց, զետ-
ես զպատասխանին չէր գրեալ, վասն որոյ այժմ զշնորՀաւորական թուղթ
ես էր գրեալ սրբազան ՎեՀս մեր։ Որոց սակս և Գէորգին Միրզայ արքա-
յորդին ես էր զսիրոյ գիր մի գրեալ և ընդ ումեմն Աւթանտիլ ծառայի իւ-
րոյ յղեալ ընդ յիշեալ կարգաւորացն առ սրբազան ՎեՀս մեր։ Ուստի և
սա զեկօղսն խիլայեալ, զպատասխանիս բերեալ թղթոցն նոցա գրեաց
Հանդերձ ընծայիւք առ Էփթվիմէ վարդապետն և մխիթարութեան թղթով
առ Մաքսիմէ կաթուղիկոսն Ափխազաց, որ նարդենիս գնացեալ էր ի
յայն անապատն կամ աքսորմամբ, կամ կամաւ իւրով և ի ճգնութիւնս
էր անդ։

Իսկ թուղթքն գրեցեալք են այսք, որք աՀա գրին։

462. Թուղթ գրեաց սրբազան ՎեՀն առ առաջնորդն սրբոյ Կարա-
պետի անուամբ կառուցեալ անապատին Վրաց, Էփթվիմէ վարդապետին,
ի պատասխանի նորին սիրոյ թղթոյն և ի շնորՀակալութիւն վասն ընծա-
յիցն, զորս ընդ իւր միաբան Յովաննէս վարդապետին յղեալ էր, յորում
և յորդորմունք ի սէր[105]։

Ձօրինակն ի նոր տետր ... երեսն գիտ։

463. Թուղթ սիրոյ և մխիթարութեան ես առ Մաքսիմէ կաթուղիկոսն
Ափխազաց գրեաց, որ տարագրեալ այժմ ի վիճակէն իւրմէ և յԱթոռոյնն
գնացեալ ի յիշեալ անապատն։

Ձսոյն թղթոյս զաղափարն ես ի 195 երեսն տես։

464. Թուղթ սիրոյ և շնորՀակալութեան ես առ Գէորկին Միրզայ ար-
քայորդին գրեաց տաճկերէն, ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ
գրեալ էր։

Գրեցան սոյն թուղթքս ես ի յուլիսի ամսեանս ԻԱ (21) և առա-
քեցան ընդ վերոյ յիշեալ վրաց բէրիցն և Գէորկին Միրզայ արքայորդւոյն
ծառայ Աւթանտիլին, որ էր ի մերս ազգէ, յամսոյս ԻԲ (22)։

115բ 1781 թ. Յուլիս—Թուղթ ի Ղազախ և յայն կողմունսն

Բայց ընդ վերոյ գրեալ թղթոցդ յղեցան ես թուղթք ի Ղազախ և
յայն կողմունսն առ ոմանս, ըստ խնդրոյ սրբոյ Աթոռոյս ժողովարար
Դաւիթ պետին, որք ի ներքոյ մի առ մի նշանին։

465. Թուղթ շնորՀակալութեան սրբազան ՎեՀն ի վերայ մէլիք Քեա-
465. Թուղթ շնորՀակալութեան սրբազան ՎեՀն ի վերայ մէլիք Քեա-
զումին գրեաց վասն մարդասիրութեանցն, զորս ցուցեալ էր նա ժողո-
վարար Դաւիթ պետին և վասն Հարազատութեանցն, զորս բանիւ երևե-
ցուցանէր առ սուրբ Աթոռս և առ սրբազան ՎեՀն, յորում և յանձնա-
րարութիւն վասն յիշեալ Դաւիթ պետին և գործոյն։

466. Թուղթ ես առ Մէլիք բէկն գրեաց, ըստ նոյն մտաց, որ ի վե-
րին թղթովդ։

467. Թուղթ ես առ Հասանաջրի մէլիք պարոն Մխիթարն, ըստ վեր-
նոցդ։

468. Թուղթ ես առ Մատանի վերակացու պարոն Բէժանն, ես նոյն-
պէս։

Յղեցան ընդ փայեկին, որ ի Դաւիթ պետէն էր առաքեցեալ, յամսոյս
ԻԱ (21)։

1781 թ. Յուլիս—Ի մեծն Պօլիս ի վերայ Մինաս պետին

469. Ձկնի երկուց աւուրց վերոյ գրեալ թղթոցդ յղելոյ, ետ սրբազան
ՎեՀն ումեմն այրւոյ ապաշխարողի Թիֆլիզեցւոյ, որ ի շուկայս մեր
բնակէր և այժմ գնայր ի սրբազան Սաղիմ, Ա (1) փօլիցայագիր ի վե-
րայ Պօլսոյ նուիրակին սրբոյ Աթոռոյս՝ Մինաս պետին, զի առնուցու
ի նմանէ զդրամ (Թ), զոր ինքն Հասոյց առա սրբոյ Աթոռոյս։ Բայց ի
սոյն փօլիցայագրոջս պատուիրեաց, թէ եթէ ապաշխարողն ինքնին ե-
կեսցէ առ քեզ սոյն թղթովս, զդրամն տացես, բայց թէ ոչ, կամ ինքն
մեռանիցի, կամ ի կենդանութեանն իսկ այլք բերիցեն առ քեզ զգիրս
զայս, մի տացես, այլ բաթիլ լիցի թուղթս։

ՇնորՀեցաւ նմա թուղթս յամսոյս ԻԳ (23)։

1781 թ. հուլիս—Թուղթք ի Թիֆլիզ և ի Սանահին

Միջոցաւ միով յառաջ Աբրահամ վարդապետն՝ երբեմն սրբոյն Սաղիմայ միաբան և յայս կողմունս նուիրակ (առ որ քանիցս ես թուղթ է գրեցեալ, որպէս յիշեալ է ի վերոյսն հեռի), թղթով Հերակլ արքային և մահսարաւ Սանահինու սուրբ Աստուածածնի վանից թեմի ժողովրդեանն եկեալ էր աստ՝ առ ի առաջնորդ կացուցանիլ ի սրբազան Վեհէն նոյնոյ վանիցն և նորին վիճակին, նաև ձեռնադրիլ եպիսկոպոս և վերադառնալ առաջնորդական կոնդակաւ։ Իսկ սրբազան Վեհն զի դեռևս չէր ընկալեալ զհամահաճական. մահսարն իւր և զայլ հարկաւորսն ի մեծէն Պօլսոյ և ոչ զոք ձեռնադրէր եպիսկոպոս, պահեաց զնա աստ, որպէս զի յետ ընդունելոյն զյիշատակեալ պիտանիսն իւր, արասցէ զնա եպիսկոպոս և այնպէս յղեսցէ։ Բայց ի բազմանալ աւուրցն և ի յետա-
116ա ձգիլ // գալստեան հարկաւոր թղթոց սրբազան Վեհին, միայն առաջնորդութեամբ և առաջնորդական կոնդակաւ վերադարձոյց զնա, որ երթեալ՝ շինութիւն արասցէ վանիցն և ապա ի ձեռնհաս ամանակի եկեալ՝ ձեռնադրեսցի եպիսկոպոս։ Ընդ որում և գրեաց զթուղթս առ Հերակլ արքայն, ի պատասխանի թղթոյ նորին և առ այլս ոմանս պատշաճապէս, որք ահա ի ներքոյ տեսանին։

470. Կոնդակ առաջնորդական շնորհեաց սրբազան Վեհն Աբրահամ վարդապետին ի վերայ բոլոր թեմից և վիճակացն սեփականաց Սանահնոյ սրբոյ Աստուածածնի անուամբ կառուցեալ վանիցն, այսինքն Ղայղուլու և բոլոր Տաշիրու, Բամբկձորու, Լոռու և Սոմխէթու և բոլոր գիւղօրէից նոցին ի պատասխանի նոյն թեմից ժողովրդեան համահաճական մահսարին, զոր գրեալ էին յաղագս Աբրահամ պետին։ Եւ զի խնդրեալ էին եպիսկոպոս ես ձեռնադրել զԱբրահամ պետն, գրէ, թէ մեք ես այնու մտօք զդա մինչև ցարդ աստ պահեցաք, բայց այժմոյս չեղև մեզ ձեռնհասութիւն, վասն որոյ դարձուցաք զդա առ ի շինութիւն առնել վանիցն և զհոգալիսն հոգալ, մինչ պատշաճաւոր ժամանակ լիցի մեզ և ապա յայնժամ գալ և ձեռնադրիլ։

Օրինակն կոնդակիս ըստ մեծի մասին ի հին տետրէն յայլ և այլ տեղեաց է, իսկ նոր մուծեալն ի մէջն, այսինքն սկիզբն և վերջն է ի Նոր տետր շարադրանաց, որ է ի 88 երեսն։

471. Թուղթ ես առ Հերակլ արքայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ Աբրահամ պետին գրեալ էր՝ առաջնորդ առնել զնա Սանահնու և օրհնել ես եպիսկոպոս։ Առ որ գրեաց, թէ գիտակ է արքայն մերս որպիսութեան, որ մինչև ցայժմ դեռևս չընկալաք նախանձու չարասիրաց զհրովարտակն և զմահսարն ի Պօլսոյ, զի թէպէտ հասարակութիւնն կապակցեալ են ընդ մեզ ի սէր, ասէ, և զանուն մեր յիշատակեն, այլ պատրիարգն Պօլսոյ ընդ մեզ խոչընդակն ընթանալով, զհոգալն թղթոցն մերոց յորէ յոր ձգէ։ Վասն որոյ և հանեալ զնա ի պատրիարգութենէն, վարեալ են յայլուր և կացուցեալ են զայլ ոք պատրիարք Պօլսոյ։ Եւ զի թուղթքն մեր, ասէ, այսպէս յետանային, վասն որոյ պահեցաք, ասէ, զԱբրահամ վարդապետդ աստ, զի յետ ընկալնլոյ մեր զհարկաւորսն մեր, ձեռնադրեսցուք և վերադարձուսցուք յայդր։ Բայց զի յոյժ երկարեցաւ, ասէ, միջոցն, ահա առաջնորդութեամբ միայն դարձուցաք յայդր՝ խնայելով ի վնասն սուրբ առ ի շինութիւն առնել վանիցն և զապրուստ հոգալ վասն ձմռան և վառել անդ զլոյս։ Մինչ մեզ ժամանակ լիցի ձեռնադրութեան, ապա և ինքն եկեալ ձեռնադրեսցի և վերադարձցի ի վանքն իւր։ Ահա այսու մտօք դարձուցաք, ասէ, զդա։ Վասն որոյ և զայս գիր, ասէ, գրեցաք առ քեզ, զի գիտեցեալ զխնամս ունիցիս, ասէ, ի վերայ վանիցն այնմիկ և ի վերայ դորա, զի շինութիւնն նորին առցէ զկայ։

Զնախագաղափարն թղթոյս գտցես ի շարադրանաց նոր տետր 198 երեսն։

116բ 472. Թուղթ ես առ սանահնեցի Արղութեանց պարոն Բէժանն գրեաց, ի պատասխանի նորին գրոյն, զոր ընդ Աբրահամ պետին գրեալ էր վասն վերոյ գրեալ բանից նոյնոյ առաջնորդին իւրեանց, այլև նոյն զիտմամբ վերին թղթոյդ, որ առ արքայն։ Զի նա ես էր գրեալ վասն նորա։

Օրինակ սորա է ի նոր տետր 199 երեսն[106]։

473. Թուղթ ես ի Թիֆլիզ առ առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց ըստ նոյն ոճոյ։

Գրեալ յղեցան գրեանքս ընդ Աբրահամ վարդապետին յամսոյս ԻԶ (26)։

1781 թ. օգոստոս—Ի մեծն Պօլիս, ի Ուռումէլի, ի Պրուսա, ի Տիգրանակերտ, ի Կարին և ի Ղարս գրեցեալ թուղթք

Ապա և ես դարձեալ թուղթք ժամանեցին ի մեծէն Պօլսոյ ի մեր նուիրակ Մինաս և մահսարատար Պետրոս վարդապետացն առ սրբազան Վեհն, որք զեկուցեալ էին զաքսորիլն տեղւոյն պատրիարք Զաքարիա պետին, ի Պրուսայ և Պրուսայու առաջնորդ Յովաննէս վարդապետին պատրիարգանալն ի Պօլիս, հանդերձ բազում բանիւք և որպիսութեամբք։ Եւ խնդրեալ էին ի վերայ ոմանց գրել զթուղթս ըստ պահանջելոյ ներկայական հարկաւորութեանն։ Եւ ընդ այնց գիր մի սիրայայտ ես ի վերդ յիշեալ նոր պատրիարգէն էհաս, զոր ի Պրուսայու առաջնորդութեանն էր գրեալ։ Իսկ թուղթ մի ես ի յՈւռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետէն եկն, որ և ընդ այլ բանագրութեանցն խնդրեալ էր զերկուս կոնդակս ի վերայ Ղաշանու և Աղքրմանու՝ յաղագս վերահաստատելոյն իւր ի նոսում զխափանեցեալ գանձանակսն յանուն սրբոյ Գեղարդեանն։ Վասն որոյ և սրբազան Վեհն զվերոյ ցուցեալ թղթագրացդ պատասխանիսն, հանդերձ նոցին խնդրեալ օրհնութեան թղթովքն գրեաց այժմիկ։ Եւ զի յառաջ քան զայս ի յունիսի Ժ (10) գրեցեալ թուղթքն սրբազան Վեհին ի Պօլիս առ Մինաս պետն և Պետրոս պետն և առ Պօլսոյ վիճակաց նուիրակ Գալուստ պետն՝ հանդերձ այլևս թղթով յայնկոյս քան զԿարին ի գողոց յափշտակեցեալք էին և կորուսեալք (որպէս ազդեալ էին ի Կարնոյ սրբազան Վեհին)։ Ուստի կրկին օրինակեաց զայնս, գրելով ի ներքոյսն զքանի մի տող բանս։ Եւ քանզի Կարնոյ մեր վէքիլ Հայրապետն և Ղարսայ պարոն Գէորգն ես գրեալ էին զգրեանս, առ նա ես գրեաց այժմիկ զթուղթս զորս և հանդերձ համայն վերոյ յիշեալ թղթովքն յղեաց։ Զորոց զմիտսն նշանակեմք ի ներքոյ։

474. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ մեծին Պօլսոյ նոր պատրիարգ՝ համատանցի Յովաննէս վարդապետն, ի պատասխանի սիրոյ և

հարազատութեան թղթոյն նորա, զոր ի Պրուսայու գրեալ էր՝ տակաւին
առաջնորդ գոլով անդ։ Շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս և առ
ինքն սիրոյն և հարազատութեանցն, և շնորհաւորութիւն նորոգ պատ-
րիարգութեանն։ Եւ վասն անյաջողութեանց և յամենայնի պակասութ-
թեանց սրբոյ Աթոռոյս, որ էր վասն աւերութեանց երկրիս, մանաւանդ
սակս յերկար ժամանակ յամենալոյ ֆարմանացն։ Որոց աղագաւ և
117ա խնդիր, զի թէ դեռևս չիցէ հոգացեալ, // հոգասցէ և յղեսցէ ընդ Պետրոս
վարդապետին աստ։ Իսկ և յանձնարարութիւն վասն Մինաս և Պետրոս և
Գալուստ վարդապետացն մերոց։ Նաև զի Գաղաթիոյ նուիրակն մեր
Յովաննէս պետն Պօլսեցի անհամեմատութեամբն, թարց հրամանի սրբա-
զան Վեհին գնացեալ էր ի Պօլիս և զժողովեալն վատնէր անդ։ Գրեաց
սմա ընդ մերայնոցն և ընդ մահտեսի Յարութիւն ամիրային՝ կոչել զնա
առ ինքեանս և հարկել ի դառնալ ի սուրբ Աթոռս։ Եւ թէ չեկեսցէ, զհա-
շիւն առնուլ և յանձնել Մինաս վարդապետին՝ առ ի հասուցանել ի սուրբ
Աթոռս։

Զնախագաղափարն թղթոյս տեսցես ի նոր տետրն ի 389 երեսն։

475. Թուղթ ցաւածանոյց ևս առ մեծին Պօլսոյ աւագ քահանայսն և
իշխանապետսն և իշխանսն գրեաց՝ յիշեցուցանելով նոցա զյամենայնի
աղքատութիւնն, պակասաւորութիւնսն սրբոյ Աթոռոյս, որ վասն աւերու-
թեանց երկրիս և յետանալոյ գալստեան ֆէրմանացն դիպեցան սմա։ Եւ
զկիր կենամաշութիւնսն ևս, որ ի նոցին պատճառացն, և խնդրեաց վեր-
ջապէս, զի կամ զարքունական հրովարտակսն հոգացեալ ուղարկեսցեն
ընդ մահսարատար Պետրոս պետին, եթէ մինչև ցհասանիլն թղթոյս առ
ինքեանս չիցեն արարեալ, կամ թէ եթէ զայլ ինչ դիտմունս ունին, ծա-
նուսցեն պարզապէս։

Օրինակն սորա է ի նոր տետր 301 երեսն։

476. Թուղթ ևս յատկապէս առ մահտեսի Յարութիւն ամիրայն
գրեաց, ըստ մտաց վերին թղթոյդ։ Եւ զի ունելով սորա զյոլով զրամս ի
վերայ Պօլսոյ մաքսապետին, այժմ հանեցեալ էր նա ի մաքսապետու-
թենէն և զրամն կորնչիր, յաղագս որոյ յոյժ արտմեալ էր սա։ Առ այն
գրեաց զմխիթարութիւնս։ Իսկ և վասն Մինաս և Պետրոս և Գալուստ
վարդապետացն մերոց սմա ևս զյանձնարարութիւնս գրեաց։ Այլև յա-
ղագս Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետին, զոր ինչ գրեաց
նորոգ պատրիարգին (որ ահա ի վերդ ի թղթոջ նորին երևի), առ սա ևս
գրեաց։ Իսկ ի վերջոյ յաղագս հասարակ թղթոյն, որ առ համայն աւագ
քահանայսն և իշխանսն, պատուէր, զի ընդ մերայնոցն ի մի վայր ժողո-
վեսցեն զնոսա զամենայսն և միաբանութեամբ ընթերցցին և զհոգալին
հոգասցեն։

Գաղափարն սորա է ի նոր տետր 297 երեսն։

477. Թուղթ ևս առ Արևելցի մահտեսի Կարապետն և պարոն Գէորգն
և Աստուածապահն գրեաց, ըստ հասարակ դիտմանց վերոյ գրելոց թղ-
թոց։ Յորում և ողջոյն և օրհնութիւն ոմանց ընտանեացն նոցա մերձա-
ւորաց։

478. Թուղթ օրհնութեան սրբազան Վեհն ի մեծն Պօլիս առ պարոն
Մկրտիչն գրեաց և առ նորին որդի Յարութիւնն՝ վասն տալոյն զԱ (1)
բեռն խունկ սրբոյ Աթոռոյս։ Ձեռամբ Մինաս վարդապետին։

479. Թուղթ ի Պօլիս առ Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդա-
պետն գրեաց (զորմէ յիշեցաք ի վերդ ի թղթոջ պատրիարգին) կամ
վերադառնալ հարազատօրէն ի սուրբ Աթոռս, կամ զնուիրակութեան
հաշիւն անպակաս տալ նուիրակին մերոյ, որ անդ, Մինաս վարդապե-
117բ տին, // վերահասութեամբ պատրիարքին և մահտեսի Յարութիւն ամի-
րային, առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։

480. Թուղթ ևս սրբազանն ի Պօլիս առ Բերթումեան Պետրոս վար-
դապետն գրեաց՝ առ ի դառնալ ի սուրբ Աթոռս և համբուրել զգերեզման
հոգելոյս տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին և զերծանիլ ի մե-
ղադրութեանց նորին։ Քանզի սա, միաբան գոլով սրբոյ Աթոռոյս, քանի
ամօք յառաջ առ լուսահոգւոյն զձեռագիր տուեալ նմա վասն դառնալոյ
աստ, գնաց ի Պօլիս վասն հոգալեաց ինչ իւրոց և յետ միջոցի ընդդէմ
կամաց լուսահոգւոյն ի Թօխաթ առաջնորդ կոչեցաւ ի պատրիարքէն,
ուստի և զմեղադրութիւնս ընկալեալ ի յերանելւոյն, վարեցաւ անտի։
(Այս անցք ի յառաջին յիշատակարանոջն, յիրում տեղւոջ երկարապէս
գրեցեալ գոյ)։

481. Թուղթ ևս առ Պօլսոյ նուիրակ Մինաս և մահսարատար Պետ-
րոս վարդապետսն գրեաց, ի պատասխանի նոցին ի յունիսի Ը (8) և
յուլիսի Բ (2) և Ը (8) գրեալ թղթոցն, որովք ծանուցեալ էին զպատրի-
արքափոխութիւնն Պօլսոյ և զայլ որպիսութիւնս յոլովս։ Որոց գրեաց,
թէ յառաջ քան զայս մինչ դուք վասն յիշման անուան մերոյ յայդր
զԹուղթ էիք գրեալ առ միաբանս մեր, մեք յայնժամ զԹուղթս գրեցաք
ձեզ ընդ այլևս թղթոց և յղեցաք առ ձեզ, իսկ Թուղթքն անկեալ էին ի
ճանապարհին յայնկոյս Կարնոյ ի ձեռս գողոց և կորուսեալ, զորս վասն
հարկաւորութեանցն ընդ առաջնոյ օրինակին գրեցուցեալ յղեցաք ահա,
որք են, ասէ, Թուղթ մի առ ձեզ, Թուղթ մի առ Գալուստ պետն
և Թուղթ մի առ Սառայ կին ումն, ըստ ձերդ խնդրոյ։ Եւ զի զպատրիարքա-
փոխութեանն պատճառ պարագայիւք չէին գրեալ, հարկ է երկարապէս
ծանուցանել։ Բայց արդ, առ նոր պատրիարքն զԹուղթ գրեաց ի պա-
տասխանի նորին թղթոյն, զոր այժմ գրեալ էր (զոր ի վերոյ գրեցաք) և
յղեաց առ սոսա։ Վասն որոյ գրէ սոցա տալ ցպատրիարքն, տալով զին-
քենէ ողջոյն նմա։

Իսկ ապա ի կողմանէ ֆէրմանացն գրէ, թէ այժմ ոչինչ գրէք կատա-
րեալ վասն այնց, թէ հոգացեալ լինին, թէ ոչ։ Եթէ մինչև ցհասանիլն
թղթոյս առ ձեզ տակաւին չիցէք գրեալ ինչ մեզ զայդմանէ, գրեսջիք։
Քանզի մինչև ցայժմ որ ինչ եղև, բաւական էր այսքան տրորիլն
մեր և բիւրապատիկ վնասիլն սրբոյ Աթոռոյս (ընդ որս ցաւածանուցու-
թիւն երկարօրէն)։ Որոյ զկնի թէ ահա զայսքան ցաւոց մերոց և զվնա-
սուց սրբոյ Աթոռոյս գրեցաք պատրիարք եղբօրն մերոյ և մահտեսի Յա-
րութիւն ամիրային, և պարոն Կարապետին, և պարոն Գէորգին, և Աս-
տուածապահին, և խնդիր ևս գրեցաք, զի թէ դեռևս չիցեն հոգացեալ
զֆարմանսն, հոգասցեն և յղեսցեն։ Արդ, եթէ դեռ այնպէս կայ բանն
մեր ի վերայ երեսաց, դուք ևս խօսեցարուք ընդ պատրիարքին և ընդ
118ա իշխանացն և հոգալ տուք, որովք դարձցի // առ մեզ Պետրոս վարդա-
պետդ։ Իսկ թէ այլևս չհոգասցեն, ասէ, զվերջին դիտումն դոցա յինքեանց
իմացեալ գրեսջիք մեզ և մեք բաւ ասասցուք այսքանոյ ցաւակրութեանս
մերոյ և վնասուց սրբոյ Տանս խղճալւոյ։

Վասն Գալուստ վարդապետին ևս, որ գյանձնարարութիւնս գրեաց պատրիարքին և մահտեսի Յարութիւն ամիրային և այլոց: Ծանոյց սոցա և ասէ՝ դուք ևս խօսեսջիք վասն նորա և օժանդակեսջիք առ ի բարւոք յառաջացուցանել զգործն: Եւ սակս Գաղատիոյ նուիրակին զգրեալսն պատրիարքին և Յարութիւն ամիրային ևս ազդեաց սոցա և պատուիրեաց, թէ դուք ևս ըստ գրեցելոց մերոց արասջիք և մեզ գրեսջիք: Այլև զի ձեռամբ սոցա յՈւռումէլու նուիրակ Մեսրոպ պետէն գիր էհաս առ ինքն: Գրէ առ սոսա, թէ զնորա որպէսն ևս ծանեաք և զպատասխանի թղթոյն ահա գրեալ յղեցաք, ուղարկեսջիք առ նա: Գրէ և պարոն խաչիկին զողջոյն և օրհնութիւն տալ, թէ անդ իցէ, զի նա գրեալ էր, թէ ի Հաշտարխան եմ գնալոց: Ուստի և սրբազան Վեհն առ նա զգիր չգրեաց: Զեկուցանէ և զառ Պետրոս վարդապետն զմիամտեցուցիչ թուղթ գրելն վասն գալոյ ի սրբոյ Աթոռս և պատուիրէ, զի ինքեանք ևս միամիտ արասցեն, զի եկեսցէ առ ի շահիլ ըստ ամենայնի: Վերջապէս յիմացուցանել տայ և զգրելն առ աւագ քահանայսն և իշխանսն հասարակապէս զմի թուղթ՝ հանդերձ զիտամամբքն: Եւ հարկ է, զի ժողովեալ զնոսա զամենայսն ի մի վայր, զթուղթն ընթերցուսցեն և ինքեանք ևս բերանով խօսեսցին, զոր ինչ պատշաճն է, և տեսցեն թէ հոգալոց՞ են զհարկաւորսն, թէ ոչ, և ծանուսցեն: Մանաւանդ ի նոցունց իսկ խնդրեալ զպատասխանին թղթոյ յղեսցեն:

Օրինակն սորա ի նոր տետր 91 երեսն:

482. Փուսուլայ ևս գրեաց առ Մինաս և Պետրոս վարդապետսն յորում և շատ բանք առ Մինաս պետն միայն (յորոց զոմանս յիշեմք աստ վասն հարկաւորութեանցն): Քանզի սա առ վէքիլ պարոն Հայրապետն ի Կարին ձեռամբ ոմանց զգրամս էր հասուցեալ առ ի հասուցանել աստ (Զ) և զգապզ էր խնդրեալ: Վասն որոյ և սրբազան Վեհն գրեալ յղեաց այժմ առ պարոն Հայրապետն՝ առ ի հասուցանել սմա (որպէս և ի ներքոյսն ի թղթոջ պարոն Հայրապետին երկարապէս յիշելոց եմք): Վասն որոյ միամիտ առնէ զսա, թէ ահա զխնդրեալ զգապզ յղեցաք ի ձեռն պարոն Հայրապետին՝ յղել առ քեզ, երբ և հասցի, ծանուսցես մեզ:

Այլև Ուռումէլու նուիրակ Մեսրոպ պետն գրեալ էր սրբազան Վեհին, թէ զգրամս ունիմ ի պատրաստի և յղելոց եմ առ Մինաս պետն (Գ): Վասն որոյ գրէ սմա, թէ Մեսրոպ պետն մեզ այսպէս էր գրեալ, զոր ինչ հասուսցէ քեզ յարդեանցն, մեզ գրեսցես: Իսկ և գրեալ էր սա, թէ յեթէ կամիս ընդ Պետրոս պետին զգրամս յղեցից. առ որ գրեաց, թէ յայդ ղեսցես զգրամս, որք հին Մսրու ոսկի լինիցին (Ե)կամ (Զ) կամ աւելի կամ պակաս: Եւ ընդ դմա, ասէ, զլաւ և զընտիր փարայ ևս յղեսցես (Զ) || ուրոյն ի վերնոյն, զի աղքատաց և պաշտօնէից տալոց
118բ
տոյանայ:

Հաշտարխանու Յովսէփ պետին[107] մեք ևս, ասէ, գրեալ եմք ըստ քեզ՝ զգուշութիւն վասն Սաղիմայ նուիրակին՝ մեղմութեամբ վարիլ ընդ նմա: Բասրայու գրեանցն դեռևս չեղաք, ասէ, ձեռնհաս գրել զպատասխանիս, յետոյ գրելոց եմք և առ քեզ յղելոց: Բայց այն մէկ բեռն լի նոյն համար գրեսցես, ասէ, մահտեսի Յարութիւն աղային յղել ի սուրբ Աթոռս, բայց ընդ յօժ հաւատարմի: Իսկ և գրեաց, թէ յառաջ գրեցաք մեր քեզ և պարոն խաչիկին վասն Ատենի ժամագրքին տպեցմանն, թէ մեր թղթոց պատասխանեացն նայիմք և յայնժամ գրելոց եմք ձեզ և այլն է: Այժմ մեք զպատրաստութիւն գրոյն տեսեալ եմք և տպելոյ ժամանակ է:

ի յայտոսիկ թուղթ ձեր բնաւ ոչ յիշէք ինչ զայնմանէ: Այլ մեք ահա գրեմք ձեզ, զի թէ դոյլ ևս յայդր է պարոն խաչիկն, խօսեսջիք ընդ նմա և թէ այլևս ի նոյն միտսն է, գրեսջիք մեզ հաստատնապէս, զի սկիզբն արասցուք տպելոյ և զթուղթն ևս յայդրուստ հոգացեալ ի ձեռն գիտողաց, յղեցէք աստ:

Ծանոյց ապա և զՍահակ պետին Փառակեցւոյ վատաբարոյի ի սրբոյ Աթոռոյս ելանելն պատճառանօք իւր հոգալի բանից ի Կարին և յայն կողմունսն և այժմ գոլն ի վանսն Հասանղալայու:

Եւ զքանի բանս մնացեալ, զորս աստ ոչ գրեցի, ի բուն օրինակն տեսցես հանդերձ լիագունիւն գրեցելոցս աստէն: Իսկ օրինակն սորա է ի նոր տետրն շարադրանաց ի 94 համարն:

483. Թուղթ ևս սրբազան Վեհն առ Իզնիմիդու առաջնորդ Պետրոս վարդապետն գրեաց: Յորում շնորհակալութիւն վասն առ սուրբ Աթոռս հարազատութեանցն և սիրոյն, որ առ ինքն, մանաւանդ սակս զարտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն շահելոյն և ձեռնտու լինելոյն նմա ի գործն: Որոյ սակս և կրկին յանձնարարութիւն և յորդորումն՝ ի յառաւելութիւն սիրոյ և հարազատութեան:

Զօրինակն սոյնոյ թղթոյս գացես ի նոր տետրն շարադրանաց ի 236 երեսն:

484. Իսկ ի նոր օրինակեցեալ թղթոջ Գալուստ պետին (զորոյ միտսն յիշեալ եմք ի վերն ի յունիսի Ժ (10), զի յայնժամ յառաջ գրեցաւ և յղեցաւ, բայց կորուսեալ էր ի ճանապարհին, որպէս ի սկիզբն կարգի թղթոցս յիշեալ եմք): Վասն որոյ զայս ևս յաւել այժմ, թէ զայս թուղթս յառաջ գրեալ յղեցաք ի յունիսի Ժ (10), որոյ տանօղ թաթարն յայնկոյս քան զԿարին ի գողոց թալանեցեալ, թուղթքն ևս կորուսեալ էին: Վասն որոյ մինչ իմացաք, կրկին գրեցաք ի նոյն օրինակէն և յղեցաք ահա: Իսկ արդ, նոր գրելի ի սմա այս է, զի գրեալ էին մեզ ի Պօլսոյ զպատրիարքափոխութիւնն անդուստ: Ուստի և մեք գրեցաք այժմ զթուղթս ի Պօլիս առ նոր պատրիարքն և առ մահտեսի Յարութիւն ամիրայն և
119ա
առ ոմանս՝ գրելով որ ինչ ի դէպն էր: Առ որս և վասն քոյ|| և գործոյդ գրեցաք զյանձնարարութիւնս (զոր և Մինաս և Պետրոս վարդապետքն գրեալ էին մեզ գրել): Նոյնպէս և անդուստ Պետրոս վարդապետին գրեցաք զշնորհակալութիւնս վասն քեզ ցուցեալ մարդասիրութեանցն և զկրկին յանձնարարութիւնս ևս վասն քոյ: Բայց ջանաց սրտաշահ զժողովուրդսն առնել: Եւ եթէ ումեք վասն քոյ և գործոյդ հարկաւոր լիցի մեզ գրել զթուղթս յանձնարարութեան, ծանո մեզ, զի գրեսցուք: Եւ յետ նուիրակելոյդ յայդր՝ զայլ վիճակդ ևս կարգաւ նուիրակեա այսուհետև:

Նախագաղափարն այսքան բանիցս տես ի շարադրանաց նոր տետր 235 երեսն:

485. Թուղթ ևս առ Ուռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն գրեալ, ի պատասխանի թղթոյն նորա յապրիլի ԺԹ (19) յիմայլու գրեցելոյ: Յորում ծանուցեալ էր նա զյանցեալ տարւոյ սեպտեմբերի ԺԷ (17) գրեալ թղթոց և որպիսածանոյց կոնդակի առ ինքն հասանիլն և իւր յայն կողմունսն ընթեռնուլ տալն: Ընդ որս և գրեալ էր զշնորհաւորութիւնս Առ որս և սրբազան Վեհն զշնորհակալութիւն գրեաց: Իսկ և գրեալ էր սա, թէ զգրամս ունիմ ի պատրաստի (Գ) և յղելոց եմ ի Պօլիս, որոյ աղագաւ գրէ սրբազան Վեհն շնորհակալութեամբ, թէ զայդ ի Պօլիս Մի-

նաս վարդապետին ես էիր գրեալ և նա ծանուցեալ էր մեզ, երբ և յղեցես առ նա, գրեա մեզ, զի գիտասցուք:

Այլև՝ ի Ղալշան և ի յԱղքրման զսրբոյ Գեղարդեան անուամբ գանձանակսն, որք քանի ամօք խափանեցեալք էին, այժմ սա վերահաստատեալ էր և զկոնդակս էր խնդրեալ ի վերայ նոյն տեղեացն յիշեցելոց, առ ի անխափան մնալ նոյն գանձանակացն: Ուստի և սրբազան Վեհն Բ (2) կոնդակս պատուիրականս գրեաց ի վերայ իւրաքանչիւր տեղեացն, որպէս զի հաստատուն անխափան կացցեն ի միջի իւրեանց գանձանակքն, որք յանուն սրբոյ Գեղարդեանն: Ի յորս և հաստատեաց զտիրացու Յարութիւնն՝ Ղալշանու գանձապետ և զպարոն Սարգիսն՝ Աղքրմանու գանձապետ: Եւ զայս կոնդակսս ես ընդ թղթոյս յղեաց ի ձեռս սորա, վասն որոյ և ծանուցանէ յայսմիկ սմա, թէ զխնդրեալ կոնդակսդ յղեցաք ահա առ քեզ և այլն:

Նաև՝ վասն տեղապահ հանգուցեալ Մկրտիչ վարդապետի ընտանեացն և իւր նախորդ սպասաւոր Դանիէլ պետին զյանձնարարութիւն էր գրեալ: Իսկ սրբազան Վեհն գրեաց, թէ կան նոքա ի խնամս մեր ապահով և այլն: Միամիտ լեր:

119բ Այլև՝ յաղագս խմայիլցւոց ԲՌ (2000) || ղուռուշ տալեացն, զոր նոքա փոխ առեալ վասն եկեղեցաշինութեան՝ տալոց էին սրբոյ Աթոռոյս ի վաղուց հետէ և չտային (որ և յիշեալ գոյ ի յառաջին յիշատակարանոցն ի ...), գրեալ էր այժմ սա, թէ հետևիմ և պահանջեմ առ ի առնուլ: Առ որ գրեաց, թէ եթէ մինչև ցարդ կարացեր զբան ինչ հոգալ, իսկ ի բարի է և թէ ոչ, կրկին հետևեա և որպէս և լինիցի, մեզ գրեա: Իսկ ի վերջոյ ի յիշումն ածէ զգրելն զթուղթ առ սա ի յունիսի ԻԱ (21) և ընդ ուխտաւորացն յղելն առ Ուռուսչուղու գանձապետսն մեր՝ պարոն Անուշն և Աւէտն՝ հասուցանել առ սա: Ընդ որս և զշնորհակալութեան թուղթ Մանուէլն ի վերայ Ուռուսչուղու վասն գանձանակադրամի (Ե): Զի գրեալ ցանէ սմա և զյղելն զայն ի ձեռս սորա և գանձապետացն: Զի գրեցանելոյ էին, ասէ, նոքա վասն քոյ, թէ գալոց է աստ և ի գալն հասուցանել առ նմք իւրեան զդրամն: Զոր և մեք, ասէ, յայնժամ գրեցաք քեզ, զի առնուցուս և մեզ ծանուսցես: Եւ այժմ ես կրկին ի յիշումն ածեմ քեզ, զի ծանուսցես մեզ, ասէ, զառնուլդ:

Գաղափարն սորա է ի յետկոյս բարևագրին սորա:

486. Թուղթ ես սրբազան Վեհն առ Տիգրանակերտու առաջնորդ կարապետ վարդապետն գրեաց (որ միջոցաւ ինչ յառաջ եկեալ էր ի սուրբ Աթոռս յայսմ ամի և ի յուլիսի ԺԲ (12) ել աստի դէպ ի վիճակն իւր)) ծանուցանելով նմա, թէ յետ գնալոյն քոյ աստի ստուգիւ իմացաք, որ Թոսոյ պատրիարքափոխութիւնն հաւաստի է: Բայց մեր ֆէրմանքն թէ հասնեցեալ են, ասէ, և թէ ոչ, չիմացաք: Վասն որոյ այժմ ահա զգրեանն գրեցաք, ասէ, առ նոր պատրիարքն և առ ումն, զի տակաւին չիցեն հասեալ. Այլև արդ, ի ներկայումս ի Հզուայ Ագացեալ, հոգասցեն և յղեսցեն: Այլև արդ, ի ներկայումս ի Հզուայ Աքէն յՕզիտխանա գիւղէն Բանտուանու մի պառաւ էր եկեալ ի սուրբ Աթոռս յուխտ, որ և լալով ասէր, թէ ի մեր գեղջն մեռոնն հատեալ է և զփոքր զնորածին մանկունսն մեռոնի ամանի ողողանօքն մկրտեն և զփոքր Բոյինչ սրբալոյս մեռոն խնդրէր տանիլ ընդ ինքեան ի գիւղն իւրեանց՝ սոյն սրբալոյս մեռոն խնդրէր տանիլ ընդ ինքեան ոչ ետ, գրեաց սոյն տի սրբազան Վեհն, թէպէտ և պառաւուն ինքեան ոչ ետ, գրեաց պատի սրբազան Վեհն, զի թէ մինչև յհասանիլն իւր ի Յամիթ, պաԿարապետ վարդապետս, զի թէ մինչև յհասանիլն իւր ի Յամիթ, զփոքր հեսցի նուիրակին մերոյ ի Ճանապարհին, հարկեսցէն նմա յղել զփոքր

ինչ սրբալոյս մեռոն ի վերոյ յիշեալ գիւղն: Իսկ թէ ոչ պատահեսցի նուիրակին, մինչ հասցէ ինքն ի Տիգրանակերտ՝ ի քաղաքի եկեղեցեացն զսակաւիկ ինչ մեռոն առեալ փոքրիկ շիշայիւ յղեսցէ և կատարումն իրակութեանն ծանուցանէ սրբազան Վեհին:

487. Թուղթ ես ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց այսպէս, թէ ի յուլիսի Ը (8), ի ԺԹ (19) գրեալ Գ (3) թուղթքդ հասին առ մեզ և զգրեալսդ իմացաք, որոց զպատասխանիսն լուր:

Պատասխան նամակում կաթողիկոսը գրում է շամախեցի մահտեսի Հարությունի, բայազետցի մահտեսիներ՝ Մկրտչի և Բունիաթի և մասուլցի Ապտիլղատիի միջոցով տեր Վահանին ուղարկված 1680 ղուռուշի ստացման մասին, որը վերջինս մուծելու է: Կաթողիկոսը հայտնում է նաև, որ դեռևս չի ստացվել Կ. Պոլէջմիածնի գանձարանը: Կաթողիկոսը հայտնում է նաև, որ դեռևս չի ստացվել Կ. Պոլսից ուղարկված երկու կապոց նամակը և որ նամակ է գրել Կարինի խալիֆ փաշային՝ ի պատասխան նրա գրության, որով փաշան շնորհակալություն էր հայտնել էջմիածնից ուղարկված բրնձի համար: Տնտեսական բնույթի մի շարք հանձնարարություններից բացի, կաթողիկոսը խորհուրդ է տալիս վեքիլ Հայրապետին էջմիածին գալու ժամանակ իրեն փոխարինող թողնել եղբորը կամ հարազատներից որևէ մեկին (էջ 120ա—120բ):

120բ 488. Ղապզ ես սրբազան Վեհն ի վերայ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետին գրեաց այսպէս, թէ որ ի նուիրակական արդեանցն սրբոյ Աթոռոյս փօլիցայակերպ ղապզիւք վէքիլին մերոյ՝ պարոն Հայրապետին, որ ի Կարին, տուեալ էիր զդրամս՝ ակնցի մահտեսի պարոն Յովաննիսին (Բ), և Գօրօյեան մահտեսի խաչատուրին ես (Բ) առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս և առ մեզ, ձեռամբ յիշեալ պարոն Հայրապետին անպակաս էհաս ի սուրբ Աթոռս և մեզ: Վասն որոյ զայս թուղթս իբրև զղապզ գրեալ և կնքեալ առաքեցաք առ պարոն Հայրապետն՝ յղել առ քեզ ի միամտութիւն և զիւր տուեալ ղապզսն յետս խնդրեալ առնուլ ի քէն: Արդ, ուրեմն պահեա զայս առ քեզ, զի ի հաշուատրութեանդ պիտոյացուսցես քեզ:

489. Թուղթ ես ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, ի պատասխանի նորապէս գրեալ թղթոյն նորա, զոր այժմ ընդ մեր թֆանկչոցն յղեալ էր հանդերձ ի Կարնոյ առ ինքն հասեալ դրամովք սրբոյ Աթոռոյս: Ընդ որս և զերկաթ և զնալնամեխս ես էր յղեալ, որոց աղագաւ սրբազան Վեհն յառաջ գրեալ էր առնուլ և յղել: Վասն որոյ այժմիկ սրբազան Վեհն գրեաց զմիամտութիւնս, թէ յղեալքդ հասին առ մեզ և այլն: Ապա և վասն սոյն թղթոցս տանօղ փայեկին պատուէր՝ փոյթ յղել դէպ ի Կարին: Ընդ սոցա և այլ բանք ոմանք՝ նորահան գրով գրեալք:

Գրեալ յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Ղազար փայեկին ի Կարնոյ եկելոյ, որ այժմ դառնայր յամսոյս [օգոստոսի] Դ (4):

121ա

1781 թ. նոյեմբեր—ի Կարին գրեցեալ թուղթք

490. Թուղթ ես առ մահտեսի Տայի Յովաննէսն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր այժմ գրեալ էր ընդ իւր բարեկամ խոջայ Փիլիպպոսին: Առ որ գրէ, թէ զգիրդ սիրոյ ընկալաք: Եւ զի նոր էր վերադարձեալ սա ի սրբոյն Սաղիմայ և բաղձայր ի սուրբ Աթոռս ես գալ յուխտ, գրէ թէ ընդ խաղաղութեամբ վերադառնալդ ի յօթեանս քոյ, ուրախացաք. գալուստդ բարի և մահտեսութիւնդ շնորհաւոր եղիցի: Եւ արժանացուսցէ Տէր ի սուրբ Աթոռ մայրս քո ես դիմել, որպէս և բաղ-

ձացեալ իսկ ես։ Եւ ես՝ զորդին իւր զհաճի... պսակազարդել կամէր սա, ուստի սրբազան Վեհն շնորհաւորութիւն գրէ հարսանեաց նորին և զողջոյն ես տայ։ Գրէ զկնի և յաղագս նուիրակին զշնորհակալութիւն, և զվեբանորոգելն իւր զվէքիլութիւնն պարոն Հայրապետին և կոնդակաւ և խիլայիւք վերադարձուցանելն։ Որոյ աղագաւ և յանձնարարութիւն իսկ առնէ։

Օրինակն սորա ի յետ կոյս բարեագրոյն սոյն Յովաննիսիս է։

Համարյա նույն բովանդակությամբ նամակներ են ուղարկվել նաև «միւս մահտեսի Յովաննէսին», մահտեսի Կարապետին, Մուրտիկյանց խոջա Սիմեոնին և մահտեսի Կիրակոսին։ Ակնցի խոջա Հովհաննեսին հանձնարարություն է տրվել Թիֆլիզեցի պրն. Եսայուց 1000 զուռուշ պարտքը ստանալու վերաբերյալ (էջ 121ա—121բ)։

122ա 491. Թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Պետրոսն գրեաց՝ ըստ ոճի և զիտմանց հասարակ բանից վերոյ գրեալ թղթոցն, որք և սմա պատշաճեցան գրիլ։

Կաթողիկոսը հանձնարարում է վեքիլ Հայրապետի հետ ուղարկած իր կոնդակն ընթերցել եկեղեցում և ապա գանձանակի արդյունքը հանձնել վեքիլ Հայրապետին և այդ մասին իրազեկ պահել իրեն։

492. Թուղթ ես առ Գօրօյեան մահտեսի խաչատուրն և Սերօբն գրեաց, ի պատասխանի նոցին ի սեպտեմբերի Ի (20) գրեալ թղթոյն։ Արդ զի յղեալ էին սոքա ի օգոստոսի Դ (4) գրեցեալ թուղթսն մեր ի սեպտեմբերի Ա (1) դէպ ի Պօլիս, առ այնս զշնորհակալութիւնս արար սրբազան Վեհն։ Եւ վասն յԱմստրդամու յղեալ զանգակացն յանուն սրբոյ Աթոռոյս, որ հասեալ էր ի Կարին առ սոսա, գրեալ էին սոքա, թէ յղելոց եմք, մինչ սայլ պատահիցի և մաքսապետն ես զառաւելս չպահանջիցէ։ Առ որս գրեաց սրբազան Վեհն, թէ եթէ դեռևս չէք յղեալ յայսկոյս զզանգակսն և մաքսապետն աւելիօք պահանջէ, մի տայցէք, այլ մնասցեն յայդր զանգակքն և զուք ծանուսջիք մեզ զորպէսն։

Ապա գրեաց և զհասարակ բանսն, որ վասն նուիրակին և վէքիլ պարոն Հայրապետին՝ ըստ ոճի վերագրեալ թուղթոցն։ Եւ զի ի կողմանէ սուրբ Կարապետի Յարութիւն պետին սոքա ես էին զյանձնարարութիւն գրեալ։ Սոցա ես զմիամտութիւնս գրեաց, թէ ի սէր ընկալաք, որպէս և ի վերինսդ յոմանց թուղթս։

Օրինակ թղթոյս ի յետկոյս բարեագրոյն սոցա է, բայց սոյն թուղթս կանուխ գրեցաւ և անազան յղեցաւ, զի յիշեալ զանգակքն այժմիկ հասեալ աստ և ի կաթուղիկէոջն կախեցեալք էին, որք և հարկանէին իսկ։

493. Կոնդակ ես ի վերայ Կարնոյ ժողովրդեանն գրեաց սրբազան Վեհն՝ յաղագս գործակալութեան վէքիլ պարոն Հայրապետին, այսու զօրութեամբ, թէ ամենիցդ յայտնի է, զի ի քաղաքէդ ձերմէ ոչ պակասին երբէք բանք և գործք և զանազան հոգալիք սրբոյ Աթոռոյս։ Սակս որոյ հոգելոյս հայրապետն մեր գրեալ է յառաջագոյն ի ՌՄԻԶ (1777) թուոջն մերում յայդր, զի պատշաճաւոր ոք գտցեն, որ լիցի սրբոյ Աթոռոյս վէ-
122բ քիլ // և գործակալ։ Եւ իշխանք քաղաքիդ գտեալ էին յայնժամ զգաւփանցի պարոն Հայրապետն և ընտրեալ գրեալ էին հոգելոյս հայրապետին մերոյ։ Եւ նորա կարգեալ զդա յայնժամ վէքիլ սրբոյ Աթոռոյս, և տակաւին կենդանի էր տակաւ տես հաւատարմութիւնն դորա ի քանի ամսն, յորս կենդանի էր տակաւին։ Իսկ ապա ի մեր աւուրս ես մեք տեսաք և փորձեցաք, որ յոյժ հաւ-

բազատութեամբ ծառայեաց մինչև ցայժմ սրբոյ Աթոռոյս։ Իսկ այժմ ի գալն իւր ի սուրբ Աթոռս և առ մեզ,ետ զհաշիւն վէքիլութեան, զոր մինչև ցարդ արարեալ էր, կարի ստուգութեամբ։ Այլ զգուշացեալ գոլով ի ծանրութեանց այդմ գործոյ, խնդրեաց ի մէնջ հրաժարեցուցանել զինքն և կացուցանել զայլ ոք վէքիլ սրբոյ Աթոռոյս։ Իսկ վասն յոյժ հաւաքրն և կացուցանել զայլ ոք վէքիլ սրբոյ Աթոռոյս։ Իսկ վասն յոյժ հաւատարմութեանն ոչ հրաժարեցուցաք, այլ կարգեցաք զդա վերստին վէքիլ և գործակալ սրբոյ Աթոռոյս։ Զոր և ահա այսու օրհնութեան կոնդակաւս մերով և խիլայիւք և փառաւորութեամբ վերադարձուցաք յայդր։ Վասն որոյ և ձեզ պատուիրեմ, զի և ձեր գիտեցեալ զվերստին հաստատելն մեր զդա ի գործն վէքիլութեան սրբոյ Աթոռոյս, զուք ես ձեռնտու լիցիք դմա ըստ կարեաց ձերոց՝ ի յօգուտ մօրս լուսոյ։ Նաև ունի դա ի մէնջ զայս հրաման ես, զի յորում ժամանակի ոչ գտանիցի յայդր նուիրակ ի սրբոյ Աթոռոյս, դա յամենայնի մուղայէթ լիցի այսոցիկ արդեանց սորա, այսինքն կտակի, հոգեբաժնի, խոստմանց և այլոց այսպիսեաց։ Որոց հետևիլ և հոգալ տալ և առնուլ և մեզ գրել, զի և մեք զթուղթս օրհնութեան գրեսցուք առ տուօղսն։

Թըս օրհնութեան գրեսցուք առ տուօղսն։

Գաղափարն այսորիկ կոնդակիս տեսցես ի Նոր տետրն շարադրանաց ի 398 երեսն։

494. Խալասի թուղթ ես ետ սրբազան Վեհն վէքիլ պարոն Հայրապետին, զոր ես որպէս և վերինդ կոնդակ, համառօտեալ ըստ բառիցն և լրութեամբ մտացն տես ի ստորև։

112ա 495. Թուղթ խաթրահարցական ես առ Կարնոյ մաքսապետն գրեաց, զոր գրեալ էր ընդ ի պատասխանի նորին թղթոյն յանձնարարականի, զոր գրեալ էր ընդ իւր սառաֆ խոջայ Սարգսին։ Առ որ գրէ, թէ զխոջայ Սարգիսն ընկալաք ի սէր և խիլայեալ վերադարձուցաք և յղեցաք քեզ ընդ նմա զմուրապայ և զայլ ինչս։ Գրէ և վասն վէքիլ Հայրապետին և մերայնոցն զյանձնարարութիւն ի մուղայէթ լինիլ։

496. Թուղթ սիրոյ և շնորհակալութեան ես առ Ակնոյ առաջնորդ Միքայէլ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն այժմ յղեցելոյ ընդ ակնցի խոջայ Փիլիպպոսին, ընդ որում և առաքեալ էր զաջահամբոյր ինչ ես (30 գ.)։ Որում ընդ շնորհակալութեանն և գրեաց զյորդորումն կալ միշտ ի սէր և ի հարազատութեան սրբոյ Աթոռոյս։ Ապա և ծանոյց ես զի Պօլսոյ ֆէրմանաց իւրոց Սուրաթից գալն։ Եւ ի վերջոյ քահանայից և իշխանաց և ժողովրդոցն քաղաքին՝ ողջոյն։

Ծանոյց ես զի Պօլսոյ ֆէրմանաց իւրոց Սուրաթից գալն։

Միաժամանակ կաթողիկոսը ստացագրեր ու շնորհակալագրեր է ուղարկում Թոխաթի նվիրակ Հակոբ և Ամիդի նվիրակ Գրիգոր վարդապետներին՝ հավաստելով նվիրաբերված գումարների ստացումը։

123բ 497. Թուղթ ես ի Ուռումէլու երկիրն ի յԻսմայիլ քաղաքն առ բստասցի հանգուցեալ մահտեսի Սիմէօնի քեռւոյ որդիսն՝ Յարութիւնն և Անանիայն գրեաց, ի պատասխանի նոցին ի յօգոստոսի Ժ (10) գրեալ թղթոյն։

Կաթողիկոսը հայտնում է, որ մահտեսի Սիմեոնը էջմիածին է եկել որպես միաբանության անդամ, հետևապես և նրա մահից հետո մնացած գույքը պատկանում է վանքին։ Նա առաջարկում է Սիմեոնի գույքի շուրջ եղած վիճաբանությունը լուծել Պոլսի պատրիարքի և մեծամեծների միջոցով։ Նամակին կցված է նաև էջմիածնի մի շարք միաբանների սույնը հաստատող գրությունը (էջ 123բ—124ա)։

142ա 498. Թուղթ ևս սրբազան Վեհն առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն գրեաց իբրու ևս, ի պատասխանի նորին ի սեպտեմբերի ԻԳ (23) գրեալ թղթոյն, զոր հանդերձ սիւրէթօք բէրաթին և ֆէրմանին յղեալ էր։

Կաթողիկոսը հանձնարարում է Մինաս վարդապետին Կ. Պոլիս կանչել հանգուցյալ մահտեսի Սիմեոնի բեռու որդիներին, որոնք պահանջներ են ներկայացրել իրենց ազգականի գույքի նկատմամբ, և պոլսահայ մեծամեծների ու պատրիարքի միջոցով համոզել նրանց հրաժարվելու այդ գույքից, որովհետև Սիմեոնը էջմիածին է եկել ոչ թե իբրև ուխտավոր, այլ միաբան և մահից հետո նրա գույքի տնօրինման իրավունքը պատկանում է վանքին։ Մեկ այլ գրությամբ Ղուկաս Կարնեցին խորհուրդ է տալիս Մինաս վարդապետին անհրաժեշտության դեպքում վեճը կարճելու համար վերոհիշյալ անձանց վճարել 1000 ղուռուշ, իսկ նրանց չհամաձայնվելու դեպքում իրազեկ պահել իրեն (էջ 125ա)։

125ա 499. Կոնդակ ևս սրբազան Վեհն նորոգ նուիրակ կարգելոյն ի վերայ Բայազիտու և շրջակայ նահանգացն և վիճակացն նորին՝ Կարապետ վարդապետին Արապկերցւոյ, որպէս և ի սկիզբն կարգիս թղթոցս յիշատակեալ եղև։

500. Թուղթ ևս առ Մարգար աղայն գրեաց, յորում օրհնութիւն ինքեան և յանձնարարութիւն յաղագս նուիրակին և յորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս։

Նույն բնույթի նամակներ են ուղարկված նաև արաբկիրցի Սահակ աղային, խոջա Հակոբին, պարոն Ստեփաննոս էլոյանին և ագուլեցի պարոն Թումանին, Պետրոսին և մաքսապետ Ավետիսին։

125բ 501. Թուղթ խաթրահարցական և բարեկամական առ Իսաղ փաշային գրեաց՝ զյանձնարարութիւնս առնելով վասն նուիրակին և խնդրելով տալ նմա զբույրուլթու, որ ի կալուածս նորին համարձակ շրջեսցի և զնուիրակութիւն արասցէ։ Որում և ընծայ առաքեաց՝ զկտորեղէնս և զբրինձ, և զքացախ, մոմս և զայլ իրս։

Նամակներ և ներեր են ուղարկված նաև Յոնուզ բեկի որդիներին և Ռզվան աղային, օրհնության նամակ՝ նվիրատու ոմն Մելոյին։

502. Թուղթ ևս առ տէր Վահանն գրեաց, ի պատասխանի նորին ի հոկտեմբերի 27 գրեալ թղթոյն, յորում գայս, թէ ի կողմանէ Սահակ աղային տալեացն, որ զՌ (1000) ղուռուշի ոսկի էիր յղեալ կնքով, էհաս առ մեզ ձեռամբ Ուչքիլիսէի առաջնորդ Մկրտիչ վարդապետին։ Գիտես, որ սա ոսկին անձեռնտու է, վասն որոյ այլևս նոյն իւր ամբողջ կնքովն յղեցաք ընդ պարոն Հայրապետին առ ձեզ, ճերմակ արարեալ յղեսցես։ Վասն շինման եկեղեցւոյդ ձերոյ ուրախացաք, զոր և շնորհակալ եմք։ Եւ թէպէտ գրեալ էիր, ասէ, թէ ես եկից և ապա ընդ իս եկեսցէ նուիրակն և փաշայի ընծայն, սակայն չի լսեմք, թէ Սաղիմայ նուիրակն գայ, վասն որոյ զմերն փոյթ յղեցաք՝ հանդերձ ընծայիւք և գրովք առ փաշայն և առ այլս և օրհնութեան թղթովք առ իշխանսն։ Ուստի զփաշայինն և զմիւս տաճկացն թուղթս և զընծայս ընդ նուիրակին մատուցես առ ինքեանս և ի փաշայէն զբույրուլթու առնուցուս վասն նուիրակին։

Իսկ վասն անիծեալ ախթարմայիցն երկրիդ թէպէտ այժմ ի թղթոյ փաշային զբան ինչ ոչ գրեցաք, բայց ընդ Ուչքիլիսէի առաջնորդ Մկրտիչ վարդապետին (զոր այժմիկ ձեռնադրեցաք եպիսկոպոս), ի դառնալն սորին երկարապէս գրելոց եմք։

Ելին թուղթքս ընդ վէքիլ պարոն Հայրապետին և Բայազիտու նուիրակ Կարապետ վարդապետին Արապկերցւոյ և այլոց յամսոյս Դ (4)։

503. Թուղթ ևս առ Ղարսայ փաշայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր նա այժմ ի թագաւորէն իւրեանց հարցեալ գրեալ էր առ սրբազանն և զորպիսութիւն կողմանցս ազդել խնդրեալ։ Առ որ գրեաց նախ զխառնակութիւնս այս երկրացս և իշխողաց սոցին ընդ միմեամբք անկանիլն։ Եւ երկրորդ՝ որպէս լսէաք, թէ քանի մի նաւ են երևեցեալ ի Բաքուայ կողմն Ռուսաց զօրօք և թօփովք, որք անտի անցեալ և գնացեալ են ի Մազանդարանու կողմն։ Զհաւաստի բան ինչ ոչ ումեք յայտնելով, նոյնպէս և սմա գրեաց, զի և նոքա այժմ կարօտ էին գիտակ գոլ։ Որ և յղեցաւ ընդ ի Ղարսայ առաքեցեալ սուրհանդակին ի սոյնոյ ամսոյս Դ (4)։

1781 թ. նոյեմբեր—Թուղթք ի Թիֆլիզ քաղաքն

Գեանջեցի Սիմէօն վարդապետ ոմն խնամատարութեամբ Գէօրկին Միրզայ արքայորդւոյն, կամելով շինացուցանել զի վաղուց աւերեալ վանսըն սրբոյ հայրապետին մերոյ՝ Յոհաննու Օձնեցւոյ, այժմ թղթովք Գէօրկին Միրզային և քաղաքի առաջնորդ Կարապետ վարդապետին եկեալ էր առ սրբազան Վեհն՝ առ ի առնուլ զկոնդակ։ Բայց այժմ ոչ կոնդակ տրեցաւ նմա (որոյ առիթն ի ներքոյ յայտնի), այլ պատասխանիք գրեցան թղթոցն բերեցելոց և ընդ ինքեան վերադարձուցան, որպէս և ինքն կամեցաւ։ Ընդ որս Բ (2) ևս այլ թուղթք գրեցան, որք ահա ի ներքոյ նշանագրին։ Իսկ և ի գիւղականաց նոյն վանիցն ևս էր բերեալ գիր, որում պատասխան ոչ գրեցաւ այժմ յատկապէս։

504. Թուղթ գրեցոյց Վեհն տաճկերէն առ Գէօրկին Միրզայ՝ որդին
Հերակլեայ արքային, ի պատասխանի նորա թղթոյն ընդ Սիմէօն վար-
126ա դապետին գրեցելոյ։ Արդ՝ զի-// գրեալ էր սա վասն Սիմէօն վարդապե-
տին, ի սէր շահել և ընկալնուլ, գրէ սրբազան Վեհն, թէ վասն խաթեր
քոյ ընկալայք զնա սիրով, և թէ զայլ որպիսութիւնս ի քաղաքիդ առաջ-
նորդ Կարապետ վարդապետէն և ի մեր վէքիլ տէր Ղազարէն իմանալոց
ես։

505. Թուղթ ևս երկարօրէն առ առաջնորդ Կարապետ վարդապետն և վէքիլ տէր Ղազարն գրեաց վասն Սիմէօն վարդապետին, ի պատասխանի թղթոյ Կարապետ վարդապետին, որ ևս էր գրեալ առ սրբազան Վեհն, կարգել զՍիմէօն պետն առաջնորդ սրբոյն Յոհաննու Օձնեցւոյ վանիցն, որպէս և Գօրկինն ևս էր գրեալ, կոնդակ տալ նմա և կացուցանել առաջնորդ նոյն վանիցն և շրջակայից նորին՝ նմին վիճակ կարծեցելոց։ Այլ էր այն վանքն ընդ մէջ թեմիցն Հախպատու և Սանահնոյ։ Եւ զի ի վաղուց էր աւերեցեալ, զաւթեալ էին զթեմսն նորա Հախպատ և Սանահին, զորս և ի կոնդակս նոցին արձանացուցեալ էին բազումք ի հայրապետաց և ի թագաւորաց։ Իսկ այժմ մինչ ասացեալ Սիմէօն վարդապետն և գիւղական անձինք ոմանք կամէին շինել զայն, կոնդակ տալն ի վերայ շրջակայ գիւղորէիցն նորա, վտանգաւոր իմն երևիւր, քանզի աղմուկ շփոթի էր լինելոց Հախպատու և Սանահնու թեմիցն և ժողովրդոցն, վասն որոյ գրեաց սոցա այժմիկ՝ ծանուցանել զայս արքայորդւոյն և ժողովել զհնագոյն արս կողմանցն և հարցանել, զի թէ

թուղթ կամ հաւատափ վկայութիւն ինչ եկեալ թէ ի մօտակայ ժամանակի չէն իցէ լեալ վանքն այն, և ունիցի՞ զթեմ, որում այժմ տիրեսցէ և հախպատցուց և սահմանեցուց աղմուկ չլինիցի, ծանուսցեն, զի յայնժամ զկոնդակ տացէ վասն շինութեան նորին։ Իսկ թէ ոչ երևեսցի վկայութիւն ինչ, զայն ևս ծանուսցեն։

Նաղագաղափարն թղթոյս է նոր տետրն շարադրանաց ի 251 երեսն։

506. Փուտուղայ ևս գրեաց առ Կարապետն վարդապետն և տէր Ղազարն, թէ յորժամ հասցի առ ձեզ թուղթդ մեր, նախապէս ընդ Սիմէօն վարդապետիդ առեալ տարջիք առ արքայորդին և զամենայն գրեալսն ի դմա ծանուսջիք նմա, որպէս զի յառաջ ինքն գիտասցէ և ապա թէ հրամայեսցէ սիւնհոդոս լինիլ, որպէս և գրեցաք, դուք ևս հետևեսջիք և առնել տաջիք և մեզ գրեսջիք զորպէսսն զինչ և լինիցի։ Եւ մինչ հաստատուն վկայութիւն գտցի վասն այն վանիցն, յայնժամ և Սիմէօն վարդապետդ գալոց է ի հարկէ, զի կարգեսցի առաջնորդ։ Իսկ եթէ չկամիցի արքայորդին հետևիլ և սիւնհոդոս առնել, դուք ,որքան հնար է, ի խնդիր լինիցիք թղթոց հնագունից, և զբազմամեայ անձինս ևս հարցջիք և եթէ զբան ինչ հաստատուն իմանայցէք, մեզ գրեսջիք։ Իսկ եթէ ոչ գտցի հաստատուն իմն վկայութիւն, զայն ևս ծանուսջիք։

Սորա օրինակն ևս է ի նոր տետրն շարադրանաց, ի 254 երեսն։

126բ 507. Թուղթ ևս առ Դինիբէկեանց Խատինի որդի պարոն Յովսէփին գրեաց, ի պատասխանի նորին ի հոկտեմբերի Թ (9) և ի Գեանջայու գրեալ թղթոյն։ Եւ արդ, զմանէ այսպէս է գիտելի, զի սա յառաջ քան զԳ (3) ամս գնացեալ էր ի Հնդիկս և այժմ վերադարձեալ անտի համանգերձ թղթովք ի Նուիրակէն մերմէ առ սրբազանն և ընծայիւք յոմանց առ Հերակլ արքայն, նաև առ սրբազանն ևս, եկեալ էր հասեալ ի Բաքու, յորոյ իշխողէն ըմբռնեցեալ էր և արձակեցեալ ապա։ Իսկ այժմ գրեալ էր սրբազան Վեհին, թէ զթուղթս ունիմ ի Նուիրակէն և զընծայս ևս ունիմ անտի և այլն։ Բայց ոչ կարեմ գալ յայդր, մինչ ոչ նախ գնացեալ տեսից զարքայն։ Ապա յետ տեսանելոյս զնա, գալոց եմ և զոր ինչ ընդ իս, ինքնին բերելոց եմ։ Առ որ գրեաց սրբազանն, թէ եթէ մինչև ցարդ զհոգալի բանսդ տեսէ՞ր յայդր, շուտով ղրկեալսդ առեալ հասուսցես մեզ։ Իսկ եթէ քո յայդր մնալն յամիցի, զայդոսիկ քոյինդ կնքով կնքեալ յանձնեսցես յառաջնորդին տեղւոյդ՝ Կարապետ վարդապետին և գործակալին մերոյ տէր Ղազարին, որք ամբողջ հասուսցին առ մեզ։

Գաղափարն թղթոյս այսորիկ ի վերայ կոտր թղթոյ իրիք է։

508. Թուղթ ևս յատկապէս առ առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց, յորում նախ յիշեաց, թէ թուղթդ էհաս ընդ Սիմէօն վարդապետին, որում երկար պատասխանի գրեցաք ի վերայ քո և տէր Ղազարին, ահա զորս տեսանելոց էք։ Բայց մեք, ասէ, յառաջ գրեցաք քեզ զեափընճի և զձիոյ չուլ առնուլ և յղել, զորս շուտ յղեսցես։ Այլև յառաջ քան զբազում աւուրս գրեաց սմա վասն Սահակաշինու տէր Խաչատուր քահանային, թէ զնա եթէ կամիս, աւագ քահանայ արա, եթէ ոչ, դու գիտես, քեզ է ապաստան։ Իսկ այժմ Բամբկաձորու մէլիք Շաքարօն եկեալ աստ յոյժ աղաչեաց զսրբազան Վեհն, սակս տէր Խաչատուրին, որպէս զի ըստ միւս աւագ քահանայիցն Թիֆլիզու, առնիցէ զնա կոնդակաւ աւագ քահանայ։ Ուստի ահա գրեաց սմա, թէ թէպէտ յառաջ վասն

տէր Խաչատուրին զայն ինչ գրեցաք քեզ, սակայն այժմիկ պարոն Շաքարօն յոյժ աղաչեաց, զի մերովս յատուկ կոնդակաւ առնիցեմք զնա աւագ քահանայ։ Վասն որոյ գրեմ քեզ, պարտիս կոչել զնա և յղել ի սուրբ Աթոռս, և թէ չկամիցի գալ, դու գրեսցես և զկոնդակ խնդրեսցես վասն նորա, զոր գրեալ յղեսցուք ի ձեռս քո և զորքան և զդրամ գրեսցուք առնուլ, առցես և զկոնդակն տացես ինքեան։

Եւ ապա զոր ինչ գրեաց առ Դինիբէկեանց Խատինի որդի Յովսէփն, վասն ի Հնդու բերեալ թղթոցն (որ ահա ի վերդ ի թուղթն նորա յայտնի
127ա է). սմա ևս ծանոյց, թէ զայս ինչ գրեցաք նմա և զ//թուղթն յղեցաք առ ձեզ, դու և տէր Ղազարն տաջիք նմա, եթէ գալոց լինի, գայցէ, ապա թէ ոչ, զգրեանսն և զաւանդն մեր, որ առ նա, առեալ շուտով ընդ հաւատարմի յղեսջիք։

Գրեցան և յղեցան թուղթքս ընդ Սիմէօն վարդապետին, յամսոյս Թ (9)։

1781 թ. նոյեմբեր—Թուղթ ի Բայազիտ և յՈւչքիլիսէ

Ուչքիլիսէի սրբոյն Յովհաննու Մկրտչի վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետն ի ներկայումս եկեալ ընդ Ղունկիանոս նոտար և ընդ Ղազար վարդապետացն, ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի սրբազան Վեհն ի հոկտեմ[բերի] ելն։ Եւ յարդեանս վերադարձաւ, ընդ որում սրբազան Վեհն զկոնդակ և զքանի ի գրեանս գրեաց, որք հետևեալքս ահա նշանագրին։

509. Կոնդակ առաջնորդութեան եւ սրբազան Վեհն վերոյ յիշեալ Մկրտիչ վարդապետին ի վերայ նոյն Ուչքիլիսէ կոչեցեալ սուրբ վանից բոլոր թեմիցն, ըստ նմանութեան և ըստ կարգի առաջնորդական կոնդակացն, որք տրին բաղում առաջնորդաց, ծանուցանելով ի նմա զեպիսկոպոս ձեռնադրելն նորին և գրելով զպատուէրս հոգևորս։

510. Թուղթ ևս առ Բայազիտու Իսաղ փաշային գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ Մկրտիչ վարդապետին գրեալ էր առ սըրբազան Վեհն, խնդրելով ձեռնադրել զնա եպիսկոպոս։ Առ որ գրէ այժմ սրբազան Վեհն, թէ ահա ըստ օրինի մերոյ ձեռնադրեցաք զՄկրտիչ պետն եպիսկոպոս և վերադարձուցաք ահա գնալ ի վանսն իւր, որում, ասէ, խնամածու լինիլ խնդրեմ զի զվանքն բարեպէս կառավարեսցէ և այլն որպէս պատշաճն էր։

511. Թուղթ ևս առ նոյն Իսաղ փաշային գրեաց յատկապէս յաղագս ի յՈւչքիլիսէի թեմսն եղեալ անիծեալ ախթարմայիցն, որք օր աւուր յաւելանային և լրբանային՝ զանհնազանդութիւնս ցուցանելով առաջնորդին իւրեանց և զուղղափառ դաւանութիւն Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ ուրացեալք, հետևէին պատրչաց, գնալով զհետ հեշտասիրութեան և թուլամորթութեան։ Որոց աղագաւ գրեաց սրբազան Վեհն, թէ ահա ի մէնջ հեստեալ առաջնորդին ոչ հպատակ լինին և զարդիւնս ինչ ոչ տան սուրբ վանիցն եւ այսպիսութեամբ վանքն այն օր ըստ օրէ չքաւորի. վերջապէս ի հարկէ զմիաբանսն անտի հանելոց և բերելոց եմ աստէն և զՏունն այն ամայացուցանելոց։ Բայց այսպիսի բան ոչ պատշաճ տեսանեմ յաւուրս քոյ լինիլ։ Ապաքէն խնդրեմ զդոցին թամպէհն առնել և հարկել,

զի զիւրեանց հաւատն հայրենի հաստատ պահեսցեն և առաջնորդին
127բ հնազանդ լիցին և զմեր կարգ և օրէնսն պաշտեսցեն և զամենայն //հասս
վանիցն իւրեանց տացեն, որովք վանքն այն շէն մնասցէ: Գիտես, աւէ,
որ մեծախնամ թագաւորն զհրովարտակ է յղեալ ձեռամբ Պօլսոյ պատրի-
արքին մերոյ յոմանս տեղիս վասն այնց տեղեաց չար ախթարմայիցն, առ
ի սպառնալեօք և կամ պատժօք և տուգանօք ուղղել զնոսա: Եթէ դու ևս
յայդր եղելոցն չհաւանեսցիս, ի մեծէ թագաւորէն վրէժխնդրութիւն լիցի
զոցա, որ քեզ պակասութիւն է: Վասն որոյ խնդրեմ, զի դու հոգասցես
և այլն: Որ յոյժ երկար գրեցաւ և այլես լաւ ոճիւ, բայց գրիչս զմիան
բանին միայն առի աստ:

512. Թուղթ ևս առ Թօփրախղալայու Աւտուլլա բէկն գրեաց, վասն
Ուչքիլիսէի վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետին զյանձնարարու-
թիւնս առնելով:

513. Թուղթ ևս առ տէր Վահանն գրեաց ի պատասխանի նորա այժմ
գրեալ թղթոյն, որում նախ զայս գրէ, թէ ահա զԱ (1) բեռն գինի յղեցաք
վասն իշխանացն տեղւոյդ, զոր կամէաք ընդ քեզ յղել ի գալդ: Երկրորդ՝
զի զմեծ եկեղեցին դեռ ևս չէին զերծեալ ի նորոգմանէ և նորագնաց
նուիրակին մերոյ ոչ լինիւր պատշաճաւոր տեղի, և սոքա տարակուսեալ
էին: Գրէ սրբազան Վեհն, թէ կամ ի միւս եկեղեցին յղեսջիք, կամ ի
շրջակայսն մերձ: Երրորդ՝ աւէ զՍահակ աղայի ամանաթն, որ պարտիք
ճերմակ շինել, շնորհակալ եղաք: Չորրորդ՝ զՄկրտիչ վարդապետն օրհ-
նեալ եպիսկոպոս՝ յղեցաք յետս, յորմէ զամենայն որպէսն մեր ի-
մանալոց ես: Հինգերորդ՝ աւէ, վասն չար ախթարմայիցն զբանս գրե-
ցաք առ փաշայն, որպէս յառաջ Մկրտիչ վարդապետն և դու կամեցեալ
էիք: Վեցերորդ՝ զԲ (2) ամանով զխալապ յղեցաք ի ձեռս քո, զմին տա-
ցես Ռզվան աղային, վասն նորին խնդրոյն և զմիւսն՝ մատուցես
Սալման բէկին, որոյ սակս դու էիր խնդրեալ: Եօթներորդ՝ Սահակ աղա-
յին ողջոյն գրեաց և յատուկ շնորհակալութիւն վասն յղելոյն նորա զԱ (1)
տիկ պանիր, որում նաև վասն Մկրտիչ պետին զյանձնարարու-
թիւն գրեաց: Ութերորդ՝ զի տէր Վահանս վասն ուրումն Յակոբջան ա-
նուն մարդոյ աղերսանաց գիր էր գրեալ առ սրբազանն, տալ նմա զժո-
ղովարարութեան կոնդակ, վասն որոյ գրէ սմա մեղադրակերպ, թէ դու չե՞ս
գիտակ, որ ըստ որում մեր ֆէրմանքն դեռ չեկին, ոչ ումեք տամք զկոն-
դակ, ընդէ՞ր զայդպիսի խնդիրս առնես: Եւ ի վերջոյ, թէ զԳՌ (3000)
դիան տուեալ սոյն Յակոբջան անուն մարդոյս վերադարձուցեք:
Գրեցան և առաքեցան ընդ Մկրտիչ վարդապետին թուղթքս, ի սոյնոյ
ամսոյս ԺԴ (14):

514. Բայց և ի ներկայումս եկեալ էր առ սրբազան Վեհն մեր Լմու
սրբոյ անապատի հայր Յակոբ վարդապետն, ըստ որոյ խնդրոյ որպէս
և կարգ է նորոգ նստօղ կաթուղիկոսաց ի սուրբ Աթոռս՝ զկոնդակ տալ
128ա վասն անապատացն: Սրբազան Վեհն ևս զմի // կոնդակ ընդհանրական
ժողովարարութեան շնորհեաց այժմ յատկապէս վասն Լմու անապա-
տին, նորին առաջնորդ Յակոբ ծերունի վարդապետին, զոր և նա ետ ի
ձեռս իւր միաբան Աւետիք վարդապետին և յղեաց առ ի շրջագուցանել:
Գրեցաւ այս կոնդակս ևս յամսոյս ԺԴ (14), բայց սակայն եդ ի ԺԵ (15)
կամ ի ԺԶ (16):

1781 թ. դեկտեմբեր—Ի Բայազիտ թուղթք

515. Ընդ ումեմն վաճառականի Թիֆլիզեցւոյ Շմաւոն անուն, որ ի
Դաւրիժու կողմանէն գրեալ տանէր վասն Հերակլ արքային, Բայա-
զիտու Իսաղ փաշայն զԴարբաս անուն ոմն տաճիկ էր եդեալ՝ առ ի հա-
սուցանել աստ և զթուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն բարեկամական[109]:
Եւ Ռզվան աղայն ևս էր գիր գրեալ: Վասն որոյ և սրբազան Վեհն զԲ (2)
զթուղթս բարեկամութեան գրեաց առ նոսա, ի պատասխանի թղթոց նոցին
յամսոյս Գ (3): Եւ զի Ռզվանն խնդրեալ էր զորպիսութիւն գրել, ծանոյց
թէ, ահա Հերակլն զատի վարեալ ժողովուրդն, ըստ մասին վերադար-
ձոյց յայս երկիր[110]:

1781 թ. դեկտեմբեր—Թուղթք ի Ղարս

516. Էրէց ոմն ի Ղարս քաղաքի Գէորգ անուն, զկռուասիրութիւն և
զայլ անկարգութիւնս առնելով, նոյնոյ քաղաքի առաջնորդ Յովհաննէս
վարդապետն զփիլոնն առեալ էր նորա և ի կարգէն իբրու լուծեալ: Իսկ
ապա ի յանդգնիլն չերիցուն յիշեցելոյ ի բաջաղմունս ընդդէմ սրբոյ Ա-
թոռոյս և առաջնորդին (որ և ի գրելն ժողովրդեանն զմահսար գանկա-
տանաց զնմանէ առ սրբազան Վեհն, լիրբն այն ոմամբք արբանեկօք
իւրովք անկեալ առ տաճիկս, զմահսարն յափշտակեցուցեալ էր և այ-
րեցուցեալ): Նոյն առաջնորդ Յովհաննէս վարդապետն այրեցեալ սրտիւ
զարարմունս նորա գրեալ էր սրբազան Վեհին և մեծ թախանձանօք խնդ-
րեալ առ ի բանադրել զնա: Ուստի և սրբազան Վեհն ըստ պահանջ-
ման հարկին և ըստ արժանւոյն զբանադրանաց Ա (1) սեաւ թուղթ գրե-
աց ի վերայ չերիցուն այնմիկ, ըստ անկարգութեանց նորա, որոյ
նախագաղափարն է ի տետր շարադրանաց Ղուկիանոս վարդապետին:

517. Թուղթ ևս առ Ղարսայ իշխանսն գրեաց այսպէս, թէ առաջ-
նորդն ձեր Յովհաննէս վարդապետն ի բազում իրս պիտանի էր մեզ,
բայց ըստ թախանձանաց ձերոց և ըստ խնդրոյ արարաք զնա ձեզ առաջ-
նորդ՝ ակն ունելով, թէ սիրիցէք և պատուիցէք զնա ըստ արժանւոյն, իսկ
դուք այնքան բարձի թողի էք արարեալ, մինչ զի աչացու չերիցակոոր մի
զնա և զմեզ հայհոյէ և անարգէ և զսուրբ Աթոռս զպլբաշարան կոչէ և դուք
128բ ոչ ինչ խօսիք: Ի բազում տեղեաց առ մեզ մահսարք գան, որոց // շատքն
ընդ քաղաքէդ ձեր անցանին: Իսկ այտի, որ յոյժ մերձ էք սրբոյ Աթո-
ռոյս, առ մեզ առաքելի մահսարն ձեր բանսարկութեամբ անզգամի միոյ
այրեցեալ լինի, որ մեծ նախատինք է ձեզ և դուք թոյլ տաք: Զոր կերպ
բան չեմ լուեալ, որ օրինազանց չէրէց մի զբոլորդ ի ձեռն հոմանեացն,
իբրու ի ներքոյ ոտից իւրոց արկեալ է և զիւր կամսն կատարեալ և զԱ-
թոռս և զմեզ և առաջնորդն հայհոյեալ: Արդ, ահա զչիքն այն բանա-
դրեցաք և զթուղթն անիծից յղեցաք առ առաջնորդն, որ բերեալ ի մէջ
եկեղեցւոյդ ընթեռնուլ տացէ և զպիղծն այն որոշեսցէ ի յօրհնեցելոցդ.
և զորպէսն մեզ գրեսցէ, և դուք այսպէս իմացեալ ի բաց կացջիք ի նո-
մանէ:
Սորին օրինակն ևս է ի տետր Ղուկիանոս վարդապետին:

518. Թուղթ ևս առ Ղարսայ առաջնորդ Յովհաննէս վարդապետն
գրեաց, թէ լուաք զչարութիւնս այն լիրբ Գէորգ չերիցուն: Եւ զարմանամ,
թէ մինչ յանդգնեցաւ նա զայն լրբութիւնս առնել, ընդէ՞ր ոչ կամ դու

յանդիմանեցեր և պատժեցեր, և կամ թէ մեզ գրեցեր առ ի փոյթ տալ զբաժին նորա, քան թէ թոյլ մնացեր, մինչ բանն անդ էհաս։ Ահա զէրէցն, ասէ, արարաք ընդ բանի և գրանադրանաց թուղթն յղեցաք ի ձեռն քո, զոր տարցես, ասէ, ի քաղաքն և ընթեռնուլ տացես յեկեղեցւոջն ի լուր ամենեցուն՝ հանդերձ ծանուցմամբ և մերկացուցեալ ի շնորհացն, որոշեսցես ի սուրբ հօտէն։ Իսկ զթուղթ մի ևս առ քաղաքի իշխանսն գրեցաք, ասէ, սակս թոյլ մնալոյ նոցա առ անկարգութիւն չերիցուն· տուր զինքեանս առ ի ընթեռնուլ։ Զքեզ վասն խաթէր գոցա արարաք յայդր առաջնորդ։ Այլ մինչ դուք այնքան անօգնական լինիք քեզ, մինչ զի չէրէց մի զայնքան բարբանջմունս փսխէ առ մեզ և առ քեզ, և չխօսիս ինչ, զի՞նչ օգուտ առ բերէ քո յայդր կալդ, այլես եկ ի սուրբ Աթոռս, մեզ պիտանի ես։ Ինքեանք ծանիցեն զիւրեանց օգուտն։ Ապաքէն յետ կատարելոյդ զպատուէր մեր, ծանո մեզ զորպէսն·

Այլև վասն ցորենառութեան տեղս խօսեցաք, ասէ, ընդ ղօշավանցի Ստեփաննին. նա ասաց, թէ ի վանքն ցորեան և գարի կայ Ակիրէկին։ Արդ, թէ լաւ գնով լիցի, զտեղւոյդ Ճ (100) սոմարն գարի և Ճ (100) սոմարն ցորեան առնուցուս և զգինն հատեալ մեզ գրեսցես, և ապա երթիցես ի Ղարս, զի մեք շուտ բերցուք և գրեսցուք պարոն Գէորգին տալ զգինն, որպէս և այժմ ևս գրեցաք նմա յայսմ կողմանէ։ Բայց թէ ի տաճկէն առնուլն, ասէ, ի գլուխ չգայցէ, ի շրջակայ գիւղօրէիցդ առնուցուս և պատրաստեսցես, զի և Ստեփանն խոստացաւ, ասէ, թէ ի գիւղօրայսն ևս գտանիլ կարեմք։

Նախագաղափարն սորա ի վերայ հատուած թղթոյ է։

129ա 519. Թուղթ ևս ի Ղարս առ պարոն Գէորգն գրեաց, յորում նախ մխիթարութիւն վասն մահուան զոքանչին և ապա ի կողմանէ բանադրանաց չերիցուն և առման ցորենոյն ի Ղօշավանիցն վասն սրբոյ Աթոռոյս. ծանուցումն և հարկ, զի ինքն ևս հոգածու լիցի այնց։

Յղեցան վերոյ գրեալ թուղթքս ընդ Ստեփաննին, յամսոյս Զ (6)։

1781 թ. դեկտեմբեր—Կոնդակ ժողովարարութեան վասն Տաթեւու վանիցն

520. Ըստ խնդրոյ Տաթեւու սրբոյ Ստաթէի վանից առաջնորդ Յովակիմ վարդապետին, որ զտէր Գէորգն յղեալ էր և խնդրեալ ի ձեռն նորա զկոնդակ առաքել, սրբազան Վեհն զկոնդակ ընդհանրական ժողովարարութեան շնորհեաց վասն այն սուրբ վանիցն, ծանուցանելով զվշտակրութիւնսն առաջնորդին վասն խառնակութեան երկրացս, որոց իշխօղքն անդադար զզօրս առաքեն ի վերայ իրերաց և կամ ինքեանք իսկ յառնեն ի յաւարել զերկիրս միմեանց, յորոց ոչ սակաւ լինին վնասք վանորէից։ Եւ ի վերայ այսց զայն ևս, որ տանիքն եկեղեցւոյն յոյժ խախտեցեալ էր և յառաջնորդն կամէր նորոգել և ոչ կարէր վասն աղքատութեանն։ Ուստի և կարի յորդորէ զժողովուրդն ի տուրս ողորմութեան։ Նաև պատուիրէ ի դէմս գանձապետացն, զի զգանձանակադրամս նոյն սուրբ վանիցն յանձնեսցեն սոյն կոնդակ շրջեցուցանողին, որ կամ առաջնորդն իցէ, կամ նորին միաբան ոմն։

Յղեցաւ ընդ տէր Գէորգ վարդապետին յամսոյս Ժ (10)։

1781 թ. դեկտեմբեր—Ի Թիֆլիզ առ առաջնորդն և առ ոմանս թուղթք

Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն երկիցս զթուղթ գրեալ առ սրբազան Վեհն, այժմ ընդ տէր Ղազարին առ ոմանս զօրհնութեան գրեանս էին խնդրեալ։ Վասն որոյ սրբազան Վեհն թէ զպատասխանիս նոցին, և թե զխնդրեալսն հանդերձ այլ գրովք առ այլս գրեալ առաքեաց, որք աստ ի ներքոյ շարակարգին համառօտ։

521. Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան սրբազան Վեհն առ Շինտիս գիւղի մովրով պարոն Զաքարիայն գրեաց, որ ի ներկայումս ի ջանալն հախպաթցւոց զնոյն գիւղն թեմ ինքեանց, այլ զոլով այնր ընականպէս վիճակ սրբոյ Աթոռոյս, սա ևս ջատագովութիւնս էր արարեալ և օգնեալ մերայնոցն, որք կրկին հաստատեալ էին զայն գիւղն վիճակ սրբոյ Աթոռոյս։

522. Կոնդակ ևս ի վերայ նոր ճորտացելոյն սրբոյ Աթոռոյս Պօղոսին Սաղաթիէլեան, գրեաց յատուկ օրինակաւ, որ է ի նոր տետրն շարադրանաց, ի 312 երեսն, որոյ ի պիտոյանալն անց տեսցես։

129բ 523. Թուղթ ևս առ պօլսեցի տպագիր Պօղոսն[111] գրեաց (որ գնացեալ անդ վասն Վրաց տպագրատուն հաստատէր և զգիրս կերտէր), ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր և վասն ձուլման գրոցն զանթիմոնախառն կապար խնդրեալ ըստ հրամանի արքային Հերակլոյ։ Իսկ սրբազան Վեհն նախ զշնորհակալութիւն գրեաց գործարանին և վասն խնդրեցելոյն գրեաց, թէ մեր ունեցեալն ևս առ ներկայ գործածութիւնս մեր չէ բաւական, թէպէտ այլ կամեցաք զԺԵ (15) հօխայչափ յղել։ Բայց և մտածեցաք, թէ գուցէ այսքանս չբաւականասցի քոյին ամենայն կիրառութեանց։ Վասն որոյ գրեմ քեզ, զի թէ այսքանս քոյ նորակերտ գրոց փորձառութեանն բաւական վարկանիցիս, շուտով ազդեսցես, զի յղեսցուք։ Այլև ասացեալ էր սա անդ առաջնորդ Կարապետ վարդապետին և նա գրեալ էր սրբազան Վեհին, թէ զղապղ գրեա ի Պօլիս մերայնոցն, զի զՋՃ (600) ղուռուշ տացեն յԱստառչի խանն կեսարացի Թախտաբուռուն օղլի խոջայ Սարգսին և յղեա առ մեզ, զի զայնքան դրամն ի Պօղոսէն առնուցումք և զղապղն տացուք նմա յղել ի Պօլիս։

Վասն որոյ սրբազան Վեհն Ա (1) ղապղ գրեաց ի վերայ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետին ըստ վերագրելոյդ կերպի պահանջմանն, զի զՋՃ (600) ղուռուշ տացէ յիշեալ խոջայ Սարգսին, գրելով թէ Պօղոսն մեզ է հասուցեալ։ Արդ ուրեմն և առ սա գրէ, թէ առաջնորդ Կարապետ վարդապետն ծանուցեալ էր մեզ ի կողմանէ փօլիցային, զոր յայդր յանձնելոց ես նմա՝ առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ զղապղըն գրեալ յղեցաք ի ձեռս նորա տալ քեզ և զդրամն առնուլ ի քէն։

524. Թուղթ ևս առ Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա ի նոյեմբ. Բ (2) և ի ԻԲ (22) գրեալ թղթոցն փուսուլայիցն։ Արդ, վասն խնդրեալ թղթոցն, զորս ահա գրեալ յղեաց (որպէս ի վերդ նշանագրեցան) ազդէ թէ ահա յղեցաք, տուր ի տեարսն։ Բայց յաղագս տպագիր Պօղոսի խնդրեալ փօլիցայագրին գրէ, թէ նախապէս զդրամն առնուցուս, ապա զղապղն տացես նմա և զառնուլդ զդրամն ծանուցես մեզ։ Եւ թէ 40 նափնճիքն և 40 ձիոյ չուլքն հասին, որոց գինքն հանդերձ քիրայովն լեալ էր ԺԴ (14) թուման, ԴՌ և Ա (4001) ապասի, զորս գրեցաք ի քոյդ առ մեզ հասուցեալ տրոցդ դաւթա-

րոջն։ Նոյնպէս և յառաջ յղեալ չթի բեռն էհաս, որոյ գինն ևս հանդերձ այլ ծախուքն Ի (20) թուման և Զ (6) շահի էիր գրեալ, զայն ևս ընկալաք և գրեցաք ի դաւթարոջդ։ Իսկ և վասն յայդր նուիրակ առաքմանն գրեալ, թէ ոչ է ժամանակ և թէ ե՞րբ է ժամանակն ոչ ծանուցանես. հաւ-պաթ գրեցես։ Նոյնպէս և վասն փոքր աղջկան ազատութեանն միջա գրես, ասէ, թէ ջանամք ընդ միրզայ Միսայէլին ազատել և ինքն Միսա-

130ա *յէլն // գրեալ էր, թէ ազատեցաք և չիմացաք, թէ ո՞րպէս եղև։ Ահա հարկեմ պաշխատանս ձեր ի գլուխ հանէք։ Դարձեալ, ասէ, զհարազա-տութենէ Ենօքին գրեալ էիր շնորհակալեցայ զնմանէ, զորոյ խնդրեալ գիրն ի վերայ մէլիքին յետոյ գրելոց եմք։ Այլև յառաջ զայս ի նոյեմբեր ընդ Սիմոն վարդապետին առ քեզ զթուղթ գրեալ այլովք հարկաւոր գրե-ամբք յղեցաք ի ձեռս ձեր, զպատասխանին թէ չես գրեալ, գրեցես։ Եւս վասն Սահակաշինու տէր Խաչատուրին այս ինչ, ասէ, գրեցաք քեզ, թէ պարոն Տաքարոն աղաչէ զմեզ, զի մերով կոնդակաւ հաստատեսցուք զնա աւագէրէց ի նոյն եկեղեցւոջն և հարկեցաք զնորա որպէսն գրել մեզ, զի զկոնդակ առաքեսցուք։ Այժմ ևս հարկեմ շուտով ծանուցանել մեզ զնմանէ։*

524բ. Թուղթ ևս առ Բամբկաձորու մելիք Տաքարոն գրեաց. թէ ըստ խոստման մերոյ քեզ յառաջ գրեցաք առաջնորդին, գրել մեզ զտէր Խաչատուրի որպէսն, զի յղեսցուք վասն նորա զկոնդակ աւագերիցու-թեան և այժմ ևս հարկեցաք, զի շուտ գրեսցէ։ Իսկ ի վերջոյ, թէ թղթոյս բերողն առ քեզ յայդր բողոք ունի ազգելոյ, իրաւամբ վերահասու լիցիս վարձք է ձեզ։

525. Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս վէքիլ տէր Ղազարն գրեաց, ի պատասխանի նորին նոր գրեալ թղթոյն, ասելով թէ ի կողմանէ կարնեցի Կարապետ աղային, զոր ինչ գրեալ էիր, իմացաք և շնորհակալեցաք։ Կրկին պատուիրեմ մուղայէթ լինիլ Կարապետին, զի յայդր մնալ յօժա-րիցի միշտ։ Եւ թէ ահա զթուղթ մի յանուն դորա եկեալ յայլուստ յղեցաք քեզ, տուր ցնա և զպատասխանին վերադարձո, զի յղեսցուք առ տե-արսն։ Սոյն յիշեալ Կարապետս այն է, որ հանդերձ որդխութեամբն յի-շեալ գոյ ի վերն, ի հոկտեմբ[երի] ԻԳ (23) ևս ի թուղթս Թիֆլիզու։

Ուղարկեցան գրեանքս ընդ հովուի միոյ (որ ի թուղթն Տաքարոն յի-շեցաւ), յամսոյս ԺԸ (18), բայց ոմանց ի թղթոցս թիւքն ԺԷ (17) գրեալ եղեն և միւսոյն, որ առ Տաքարոն՝ ԺԸ (18)։

1781 թ. դեկտեմբեր—Թուղթ ի Բայազիտ

526. Սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ Եսայի վար-դապետն մինչ վախճանեցաւ, յորմէ հետէ մինչև ցայժմ է աւելի քան զտարի մի, նոյն սուրբ վանքն մնացեալ էր թարց այցելուի։ Այժմ Բա-յազիտու իշխանքն զքանի մի կնքով թուղթ են գրեալ առ սրբազան Վեհն՝ վասն նոյնոյ վանից միաբան Պետրոս վարդապետին կարգել զնա առաջնորդ այն սուրբ վանիցն։ Զոր գիր յանձնեալ Բայազիտու աւագ քա-հանայ տէր Վահանին, հանդերձ Պետրոս վարդապետին և քանի մի միաբանիւք սուրբ վանիցն յիշեցելոյ, յղեալ էին ի սուրբ Աթոռս առ սրբա-զան Վեհն՝ ի կատարումն խնդրոյն իւրեանց։ Բայց սրբազան Վեհն, նկա-տեալ զանպատշաճութիւն Պետրոս վարդապետին (զոր և միաբանքն իսկ

ասէին), ոչ արար զնա առաջնորդ, այլ միայն վէքիլ կացոյց զնա այն

130բ *սուրբ Տանն և նորին // թեմիցն, փոխանակ առաջնորդի, մինչև ի հաստա-տանել Տեառն յետ միջոցի զվայելուչ առաջնորդ ոք արժանաւոր այն սուրբ վանիցն։ Վասն որոյ վէքիլական Ա(1) կոնդակ գրեաց վասն Պետրոս վարդապետին առ միաբանսն և ժողովուրդսն վիճակաց սրբոյ վանից Ա-ռաքելոյն Թադէոսի, որոյ օրինակն գտանի ի շարադրանաց տետր 259 երեսն։*

527. Թուղթ ևս առ Իսաղ փաշայն գրեաց, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ Պետրոս վարդապետին վասն նորա զյանձնարարու-թիւնս էր գրեալ, որում գրէ թէ ի սէր ընկալաք և խիլայիւ վերադար-ձուցաք, դու ևս խնամեա ի շէն պահել զվանքն։

528. Թուղթ ևս առ ոմն Եղիա՝ ի Բայազիտ գրեաց վասն Պօլսոյ նուի-րակ Մինաս վարդապետի սպասաւոր տէր Մկրտիչ գոյիցն, որ եկեալ թէ առ սոյն Եղի-ասա վախճանեցաւ, զորմէ կարծիս ունէին բազումք, թէ տէր Մկրտիչն ի Պօլսոյ այս դրամ է թողեալ։ Վասն որոյ գրեաց սմա, թէ տէր Մկրտիչն ի Պօլսոյ եկեալ է յայդր և զթամպալիթն և զդրամն առ քեզ թողեալ գնացեալ է ի խոյ և անտի դարձեալ յայդր ի գալն սոտ, զթամպալիթն միայն է բե-րեալ, այլ զդրամն առ ձեզ է թողեալ։ Արդ, այժմ հանգեաւ, ասէ, նա փառաւորապէս թաղեալ զնա զհոգին հոգացաք, զնորին դրամն յղեսցես։

Ցղեցան թուղթքս ընդ Պետրոս վարդապետին և տէր Վահանին յամսոյս ԻԱ (21)։

1781 թ. դեկտեմբեր—*ի սուրբն Սաղիմ և ի Կարին*

Վարժ ի գողութիւնս Սահակ անուամբ տղայ ոմն ասափ վարեցեալ գոլով, հասեալ էր մինչ ի Սաղիմ և անդ մտեալ ի վանսն սրբոց Յակոբեանց, առ պատրիարքն զգողութիւնս էր արարեալ ի քանեաց տե-ղից, և գողօնեօքն եկեալ մինչև ցգիւղս մեր։ Ապա պատրիարք Յովա-կիմ վարդապետն իրազեկ եղեալ, զթուղթ էր գրեալ ի Կարին առ իշ-խանսն և առ իւրեանց գործակալսն՝ հետևիլ և գտանել զգողն այն և զգողօնիսն պահանջեալ առնուլ և յետս յղել։ Իսկ նոքա ևս իմացեալ զգողոյն այնորիկ յայս գեղջս լինիլն, զթուղթս էին գրեալ առ սրբազան Վեհն՝ գտանել զգողն զայն և դատելով՝ զգողօնիսն յետս առնուլ և վե-րադարձուցանել։ Վասն որոյ և սրբազան Վեհն ըստ խնդրոյ նոցա արար և վասն գողօնեացն զթուղթ գրեաց առ սրբոյ Երուսաղէմի պատրիարքն և առ ոմանս, ընդ որս և զԿարնոյ իշխանաց և այլոց թղթոց զպատաս-խանիսն գրեաց, որք ի ներքոյ յանուանէ յիշատակին։

529. Թուղթ առ սուրբ Երուսաղէմի պատրիարք Յովակիմ վարդա-պետն գրեաց վասն գողօնեաց վերոյ յիշեալ Սահակին, զոր անդ ի նո-ցունց գողացեալ էր և սրբազան Վեհն աստ յետս էառ, զորոց և զդա-թարն քանի մի եպիսկոպոսաց կնքեցուցեալ, յղեաց ընդ այսմ և գրեաց յայսմիկ, թէ զայն իրսն առ ո՞ և կամիս հասուսցուք։

Զգաղափարն թղթոյս գտցես ի շարադրանաց տետր 261 երեսն[112]*։*

131ա *530. Թուղթ ևս առ ոմանս իշխանս Կարնոյ և առ սրբոյ Երուսաղէմի վէքիլ պարոն Մխիթարն գրեաց, վասն բանից նոյն յիշեալ գող Սահակ տղային, նոյնպէս որպէս և պատրիարքին սրբոյ Երուսաղէմի գրեցաւ։ Ի*

պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին, ընդ որում առ պատրիարքն յղեալ գաւթարին, նմա գաւթար մի ես առ նոսա յղեաց, զի և նոքա ծանիցեն զառ ձեռն եկեալ գողունեաց զորքանն։

Սոյն թղթոյս օրինակն է ի Վարդանայ տետր 264 երեսն։

531. Թուղթ ես առ սրբոյ Երուսաղէմի և Կարնոյ նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորա թղթոյն։ Եւ զի նա ես էր գրեալ աղաչանօք վասն վերոյ յիշեալ գողոյ գողացելոցն հոգ տանիլ, սմա ես ծանոյց զորպէս ըմբռնելն զգողն և այլն։ Եւ սաէ զերկարապէս ի գրոյ Կարնոյ իշխանացն իմանալ։ Այլև ի սրբոյն Սաղիմայ Գաբրիէլ վարդապետն, նախածանօթ սրբազան Վեհին, յղեալ էր ընդ սոյն Պետրոս վարդապետիս զ60 դուռուշ սահաթագին ընծայ վասն սրբազան Վեհին, զոր և սա յանձնեալ էր ի Կարին վէքիլին մերոյ պարոն Հայրապետին։ Վասն որոյ զմիամտութիւն գրէ, թէ էհաս մեզ, զշնորհակալութեան գիր գրեցաք ահա նմա։ Այլև ինքն ես սա զփոքր ինչ օճառ էր ընծայ յղեալ սրբազան Վեհիս, որոյ սակս ես առ սա զշնորհակալութիւնս գրեաց։

532. Թուղթ ես առ սրբոյ Սաղիմայ միաբան յիշեալ Գաբրիէլ վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին սիրոյ և շնորհաւորականի թղթոյն, զոր գրեալ էր նա այժմ, որ և յղեալ էր զդրամ ինչ ի գին ժամացուցի իբրու ընծայ սրբազան Վեհին, որպէս ի վերին թղթոջդ յիշատակեցաւ։ Ուստի զշնորհակալութիւն գրեաց։ Ծանոյց ես զգողի անցսն, որ ի վերոյդ յիշատակեալ եղև։ Իսկ ի վերջոյ ողջոյն և օրհնութիւն գրէ սորին հարազատի Յովհաննէս վարդապետին։

Օրինակն սորա յետկոյս բարեագրին նորին է։

533. Թուղթ ես առ սստի ի Հասանղալայու վանքն գնացեալ Սահակ պետն գրեաց, ի պատասխանի նորին ի հոկտեմբեր ԺԷ (17) և ի նոյեմբեր ԺԵ (15) գրեալ թղթոցն, որ վասն սստի եկանելոյն սարքացեալ զըղձալիր բանս գրէր (էջ 131ա—131բ)։

534. Թուղթ ես ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց այսպէս, թէ ի նոյեմբերի 25 և ի 29 գրեալ Բ (2) թուղթքդ հասին առ մեզ։ Նախ գրեալ էիր, թէ զառաջին և զերկրորդ գրեալ գրեանսն մեր սուրբ Կարապետի վանից մարդովն ի Պօլիս եմ յղեալ. ընդ որ միամտեցաք։

Երկրորդ՝ ի կողմանէ բստացի հանգուցեալ մահտեսի Սիմէօնին զվկայութեան բազմակնիք գիր շինելդ և ի Պօլիս յղելդ էիր ծանուցեալ, առ այն ես շնորհակալեցաք։

Երրորդ՝ ի Բայազիտ տէր Վահանին զդրամ էիր երես արարեալ առնուլ և մեզ հասուցանել (Ա, Բ)։ Նաև՝ ի Կարնոյ Բ (2) չխնով ամանաթ էիր յղեալ առ տէր Վահանն (Գ, Գ), և ես զդրամ էիր փօլիցայ արարեալ ձեռամբ արապկիրցի Աղամջանին, որ տացէ տէր Վահանին, զորս պարտի տէր Վահանն առ մեզ հասուցանել։ Առ այդ լուր, զի տէր Վահանն նախ քան զգալն կարաւանին ի Բայազիտ, եկեալ էր ի սուրբ Աթոռն, որ և ի քոյդ կողմանէ մեզ դրամ հասոյց (Գ, Ե) և խոստացաւ զմնացեալն ի դառնալն ի Բայազիտ, անտի յղել, մինչև լրասցի թիւն (Ե), որ և ահա գնաց, իբրև հասուցանիցէ՝ գրելոց եմք քեզ։ Չորրորդ՝ Ջամքեարթանեան Գրիգորի ի Թօխաթ գնալն և զտալցու դրամն այլոյ երես առնելն էիր գրեալ, ջանասցես առնուլ։ Հինգերորդ՝ վասն Սաղիմայ Գաբրիէլ վարդապետին վասն մեր զԱ (1) սահաթագին յղելն իւրեան նուիրակաւն և քո առնլոյն էիր գրեալ, ահա առ նա զշնորհակալութեան գիր գրեցաք և զ60 դուռուշն գրեցաք ի գաւթարոջդ։ Վեցերորդ՝ վասն Կարապետ աղային Եփրիկեան, որ ի Թիֆլիզ, կրկին յանձնարարութիւն գրեցաք անդ։ Եօթներորդ՝ ղնազարի թուղթն գրեալ յղեցաք, տացես ինքեան։ Ութերորդ՝ իշխանացն տեղւոյդ ի մէնջ ասասցես, զի զպատշաճաւոր ումն վէքիլ կարգեսցեն, մինչ զառաջնորդ յղեսցուք յետ աւուրց։ Իններորդ՝ գրեալ էիր թէ թօխաթցի պարոն Մինասն տալիքն թալիմ արաւ մահտեսի Խաչատուրին (Բ, Դ, Զ) և միամտեցաք։ Բայց դու ասասցես նմա, զի զհին և զնոր հաշիւն, որ ի մէջ մեր և իւրն, պարզապէս գրեալ մեզ ծանուսցէ, զոր գիտեցեալ մեր, զոր ինչ գրեսցուք նմա, այնպէս արասցէ։ Տասներորդ՝ մինչ աստ էիր, քո եղբայր Ֆռանկիւլն յայտր ի թօխաթցի Կարմրուկ օղլի մահտեսի Սարգսէն ՃԾ (100) դուռուշ դրամ էր առեալ և սանատ առեալ, զոր մեք աստ տացուք, զոր ահա եռուք և զսանատըն առեալ՝ ի թղթոջս յղեցաք առ քեզ և զդրամն ի քոյդ առից դաւթարոջն՝ գրեցաք։ Մետասաներորդ՝ Տաթեւ վանից ժողովարարն աստ ի մէնջ 70 դուռուշ էառ և սանատ ետ, զոր ես ահա յղեցաք քեզ, զդրամն առցես և զսանատն տացես։ Ապա զի վերոյսդ յիշեալ գողի պատմութիւնն երկարապէս գրեաց։ Եւ զի փայտն աստ քանի օր յամեցաւ, վասն որոյ գրէ զվարձն աւելօք տալ։

Յղեցան գրեանքս ընդ փայեկին անուամբ Մինաս ի սոյն ամսոյս ԻԴ (24)։

132ա 1781 թ. դեկտեմբեր—Առ Յովհաննէս ումն թիֆլիզեցի

535. Ի վերադառնալ Երևանու երկրիս իշխողի որդւոյն Ղուլամալի խան կոչեցելոյ, որ յղեցեալ էր ի հօրէն ի Թիֆլիզ առ Հերակլ արքայն վասն հաշտութեան, և ի խնդրել և բերել զաստի վարեալ ժողովուրդսն, զոր երկու ամաւ յառաջ վարեալ էր նա։ Զորս և հայցեալ վերադարձոյց ես ըստ մեծի մասին յիշեալ Ղուլամալի խանն, ընդ նմա եկն և Իւանէ Մուխրանբէկն առ խանն մեր ի հաւատութիւն հաշտութեանն, որոյ ձեռամբն և յորդորմամբն իսկ էր եղեալ դարձումն վարեցելոցն ի հայրենիսս իւրեանց։ Արդ, գոյր ընդ սմա Յովհաննէս անուն ումն ի մերս ազգէ[113], որ անդ երկար միջնորդ Ղուլամալի խանին զհաւատարմութիւնս էր արարեալ և վասն դարձման ժողովրդոցն և նա աշխատեալ, որ և այժմ ի ձեռն վերոյ յիշեալ մեծամեծացն և թէ ինքն իսկ իւրովին յոյժ աղաչեաց զսրբազան Վեհն շնորհել ինքեան զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան վասն աշխատութեանցն, գրելով և զանուանս ընտանեացն իւրոց։ Վասն որոյ և սրբազան Վեհն ի թախանձանաց նորին Ա (1) զթուղթ գրեաց առ նոյն Յովհաննէսն, թէ որ զայսքան աշխատանս էիր կրեալ և զհաւատարմութիւնս արարեալ Ղուլամալի խանին և օգնութիւնս արարեալ, վասն որոյ արժանապէս զայս օրհնութեանս գիր գրեցաք ի վերայ քոյ և այլն։ Եւ ի յօրհնութիւնսն յիշեաց և զանուն ամուսնոյն Եղիսաբէթին և հանգուցեալ հօրն՝ Մէհրապին և մօրն՝ Մարիամին և պապուն՝ Արշէնին։ Գրեալ առաքեցաւ առ նա, մինչ ի յԵրևան էր ընդ Մուխրանբէկին, յամսոյս Ի (20)[114]։ Որ թէպէտ ի վերոյ քան զվերին գրեալ երկուս կարգս թղթոցդ պարտ էր յիշատակել, սակայն մոռացմամբ յետաձգեալ աստէն նշանակեցաւ։

132բ *Ամենակարողին և մշտագթածին Տեառն Աստուծոյ ամենաբաւական ողորմութեամբն և բարեյաջողիչ շնորհիւն, եւ՝ եռաթշուառ անձն, Անանիա անուանեալ պանդոյրս, յետնելս ծառայից սրբազան Վեհի բազմախնամ տեառն մերոյ, ահա իբրու վճարեցի սխալագիծ գրչութեամբ զնորանց տարւոյս եւ զգրեցեալ թղթոց զյիշատակագրութիւնս ըստ իմս ապիմաստ և ապիկար կարեաց և ջանից։ Ապաքէն յաջողողին Տեառն Աստուծոյ փառք և պատիւ, գոհաբանութեամբ հանդերձ, յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։*

1782

133ա ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՌՄԼԱ (1782) ԱՄԻ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԵՐՈՅ ՎԵՐՈՅ ԳՐԵՑԵԼՈՅ ԵՐՐՈՐԴԻ ՏԱՐՒՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԻՆ ԵՒ ՀՈԳԵԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԱԹՈՌՈՅՍ ԷՋՄԻԱԾՆԻ։ ՈՐՈՅ ԲԱՐՁՐ ԵՒ ՕԳՏԱՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՒՆ, ԵՄ՝ ԴԱՏԱՐԿՍ Ի ԲԱՐԵԱՑ ԵՒ ԹԱՓՈՒՐՍ ՅԻՄԱՍՏԻՑ, ԱՆԱՆԻԱ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԱՆԱՐԺԱՆ ԿՈՉՄԱՆՍ ՍԱՐԿԱՒԱԳ, Ա[ՀԱ]ՒԱՍԻԿ ԴԱՐՁԵԱԼ ՄԽԵՑԻ ՉԱՊԱՇՆՈՐՀ ՄԱՏՈՒՆՍ ԻՄ Ի ԳՐՉՈՒԹԻՒՆ ՍՈՅՆՈՅ ԱՄԻ ԵՒՍ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ԱՊԱՒԻՆԵԱԼ Ի ՋՕՐԱՅՈՒՅԻՉ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱԶՕՐ ՁԵՌԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ, ՈՐՈՎ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԲԱՐԻՔ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԻՆ Ի ՓԱՌՍ ՆՈՅՆՈՅ ՄԻՈՅՆ ԵՒ ՄԻԱՅՆՈՅ ՄԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐՈՒՄ ԲԵՐԱՆԱՒՐ ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ ՎԵՐԱՆՈՒԻՐԵՍՑԻ ԱՌ ԱՐԴԵԱՆՍ ԵՒ ԱՌ ՅԱՊԱՅՆ ԵՒ ՅԱՆՁՐԱՒ ՅԱՒԻՏԵԱՆՍ։ ԱՄԷՆ։

1782 թ., հունվար — *Թուղթ ի Թիֆլիզ առ արքայորդի Գեորգին Միրզայն*

536. Ի մտանելս մեր ի շնորհաւորս այս տարի, նախաբար դէպ եղև սրբազան Վեհիս մերոյ ի Թիֆլիզ առ Հերակլ արքայի որդի Գեորգինն զԱ (1) թուղթ գրել, զի Շաքարօ անուն ծառայն նորա եկեալ և պատահեալ ի սուրբ Աթոռս, յորդորեաց զսրբազան Վեհն զխաթրահարցական գիր մի գրել ընդ ինքեան առ նա։ Եւ սրբազան Վեհն, քանզի ունէր զյատուկ սէր և զբարեկամութիւն ընդ նմա, որպէս և նա ընդ սմա, յայսմ նուագի ունկնդիր լեալ նոյն Շաքարօ անուամբ ծառային նորա, գրեաց զտաճկերէն խաթրահարցական թուղթ մի առ նա, ըստ որում և ի յերկարատև միջոցի չէր գրեալ նմա զգիր, և ի ոչ գոլ թղթոյն դատարկ, առաքեաց զքանի մի կտոր սպիտակ մոմ՝ ի նշան սիրոյ։ Իսկ առ այլ ոք ի Թիֆլիզ նարդեանս բնաւ զգիր ինչ ոչ գրեաց, բայց միայն արքայորդւոյն։ Որ և հանդերձ մոմիւքն յղեցաւ ընդ յիշեալ Շաքարօյին յամսոյս Բ (2)[115]։

133բ **1782 թ., հունվար** — *Թուղթք ի յարտաքին վիճակն մեծին Պօլսոյ և ի Պօլիս, նաև ի յՈւռումէլի՝ առ նուիրակն մեր,․ և ի Կարին*

Պօլսոյ արտաքին վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն անդ ի վիճակն իւր ի յոմանս տեղիս զգանձանակունս հաստատեալ վասն սրբոյ Աթոռոյս և ի յԱտաբազարու եկեղեցեացն եւ զգանձանակադրամս

ընկալեալ՝ յանուն սրբոյ Աթոռոյս, ի վերայ նոյն տեղեացն զշնորհակալութեան և զօրհնութեան և զյորդորական թուղթս էր խնդրեալ։ Զորս և սրբազան Վեհն գրեցուցեալ առաքեաց, հանդերձ միով թղթով առ ինքն, ընդ որս և առ Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն և առ Ռուումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն ևս զգրեանս գրեաց, որք ահաւասիկ ներքնաշարեալք նշանակին։

537. Թուղթ օրհնութեան ի Ցըրըզլու վասն հաստատելոյ նոյնոյ տեղւոյ ժողովրդոցն ի մէջ ինքեանց զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս՝ յորդորմամբ նուիրակ Գալուստ վարդապետին։ Յորում թղթոյ և պատուէր նորոգ կարգեցեալ գանձապետ տիրուհի Նանային՝ առ ի արիաբար կատարել զգործն։

538. Թուղթ ևս ի Թամլուխ, յաղագս նոյն տեղւոյ ժողովրդեանն ևս հաստատելոյ զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս յինքեանս, յորում և պատուէր Սարօյ Մարտիրոսին գանձապետ կարգեցելոյ՝ առ ի ժիր լինել ի գործն։

539. Թուղթ ևս ի վերայ Ղնճլարու ժողովրդեանն վասն նոցա նորահաստատ գանձանակին, յորում ևս պատուէր՝ վասն արիութեան մահտեսի Մատթէոսին ի գանձապետութիւնն։

540. Թուղթ ևս ի վերայ Ղուրտբէլանկու ժողովրդեանն գրեաց վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ մահտեսի Սերոբին պատուէր՝ արի կալ ի գանձապետութեանն։

541. Թուղթ ևս ի վերայ Օրթագեղի ժողովրդեանն վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ Վարդիկին պատուէր՝ ժիր կալ ի գործն։

542. Թուղթ ևս ի վերայ Սապանջայու ժողովրդեանն վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ տէր Ստեփանին պատուէր՝ վասն արիութեան ի գործն։

543. Թուղթ ևս ի վերայ Պաղչաջուկու ժողովրդեանն վասն նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ մահտեսի Խաչերին պատուէր՝ արի կալ ի գործն։

544. Թուղթ ևս ի վերայ Ովաճուղու ժողովրդեանն, վասն նոցա նորահաստատեալ գանձանակին, որոյ գանձապետ մահտեսի Յարութիւնին մահտեսի տէր Մկրտչեան նոյնպէս պատուէր։

545. Թուղթ ևս ի վերայ Ասլանբէկու ժողովրդեանն վասն նոցին նորահաստատ գանձանակին, որոյ գանձապետ Վարդանին պատուէր՝ ժիր կալ ի գործն։

546. Թուղթ ևս ի վերայ Եալախտարայու ժողովրդեանն, որք ևս զնորոգ գանձանակ էին հաստատեալ, որոյ գանձապետ մահտեսի Պետրոսին ևս պատուէր՝ արիապէս կատարել զգործն գանձապետութեան։

13ա 547. Թուղթ շնորհակալութեան և օրհնութեան սրբազան Վեհին ի յԱտապազար ի վերայ տէր Շահինի կոչեցեալ եկեղեցւոյն գրեաց, վասն գանձանակադրամոյն նոցա, որ ձեռամբ գանձապետ մահտեսի Մարտիրոսին և եղբօրն մահտեսի Ոսկանին (Ա, Թ, Դ) հասեալ էր սրբոյ Աթոռոյս նուիրակ Գալուստ վարդապետին։

548. Թուղթ ևս նոյնպէս ի վերայ Դիմիճի կոչեցեալ եկեղեցւոյ ժողովրդեանն, վասն նոցին գանձանակադրամոյն (101 դուրուշ 20 փարայ), ձեռամբ գանձապետ Արևելցի Ղազարին հասելոյ առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Գալուստ վարդապետն։

549. Թուղթ ևս նոյնպէս առ տէր Սարգսի կոչեցեալ եկեղեցւոյ ժողովրդեանսն վասն գանձանակադրամոյն նոցա (Ա, Ա, Դ) Ժ (10) փարային, որ ձեռամբ գանձապետ Գեանճ Կարապետին հասեալ էր նուիրակ Գալուստ պետին։

550. Թուղթ ևս ի վերայ տէր Պօղոսի անուամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովրդեանսն վասն նոցին գանձանակադրամոյն (Դ, Ե), ձեռամբ գանձապետ Արևելցի Եղիային հասելոյ առ նուիրակն։

551. Թուղթ ևս առ տէր Միքայէլի կոչմամբ յատկացեալ՝ եկեղեցւոյ ժողովուրդսն վասն նոցա գանձանակադրամին (Ե, Դ), ձեռամբ գանձապետ Եսայուն հասելոյ առ նուիրակն։

552. Թուղթ ևս առ տէր Յակոբի կոչմամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովուրդսն վասն նոցա գանձանակադրամին (Դ, Թ) 30 փարայ, ձեռամբ գանձապետ մահտեսի Յակոբին հասելոյ առ նուիրակն։

553. Թուղթ ևս առ տէր Յովաննիսի անուամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովուրդսն, վասն նոցին գանձանակադրամին (Ա, Ա, Ա) ձեռամբ գանձապետ մահտեսի Ստեփանին հասելոյ առ նուիրակն։

554. Թուղթ ևս ի վերայ տէր Ազարիայի կոչմամբ յատկացեալ եկեղեցւոյ ժողովրդեանն վասն գանձանակադրամին նոցա (Գ, Է) Ի (20) փարայ, ձեռամբ գանձապետ տիրացու Ստեփանին հասելոյ առ նուիրակն։

555. Թուղթ ևս առ Սախարի Քնարի եկեղեցւոյ ժողովուրդսն վասն նոցին գանձանակադրամոյն, ձեռամբ ծեր Յարութիւնին հասելոյ առ նուիրակ Գալուստ վարդապետն (Դ)։

556. Թուղթ ևս առ ինքն նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, թէ յառաջ քան զայս ի հոկտե[մբերի] ԻԸ (28) գրեցաք քեզ զթուղթ։ Իսկ այժմ գիր առաք ի Պօլսոյ նուիրակ Մինաս պետէն, որ զՊետրոս պետն ուղևորեալ է յայսկոյս՝ հանդերձ մահսարօքն և ֆէրմանօքն։ Եւ դու որ զմի թուղթ էիր գրեալ ի վերայ երկուցն, զի գրեսցեն մեզ և վասն քոյդ հաստատեալ գանձանակաց ոմանց և առեցելոց գանձանակական արդեանց զթուղթս խնդրեսցեն ի մէնջ (զոր դու վասն կողմնակի զոլոյդ չէիր կարացեալ մեզ գրել)։ Մինաս վարդապետն յղեալ էր առ մեզ զայն թուղթն քո և զնոյն խնդիրսն արարեալ։ Արդ, ահա զխնդրեալսդ յղեցաք, որք են ԺԹ (19) գանձանակաց թուղթք, Ժ (10) ի դոցանէ են վասն հաստատեալ գանձանակաց և Թ (9) հատն՝ վասն գանձանակական արդեանց առեցելոց ի քէն, զորս հասուցես յիւրաքանչիւր տեղիսն և այլն։ Իսկ երկիրս մեր և սուրբ Աթոռս և մեք կամք փոքր մի ի հանդարտութեան, և վարեցեալքն ի Վրացտուն դարձան ըստ մեծի մասին։ Այժմ հգոյր ինչ գրելի, ի լինիլն գրելոց եմք։

557. Թուղթ ևս առ Ուռումէլու նուիրակ Մեսրոպ վարդապետն գրեաց, թէ ի վաղուց է որ ոչ ընդունիմք ի քէն զգիր։ Մեք ի յօգոստոս Դ(4)
134բ գրեցաք // քեզ զԹուղթ։ Իսկ այժմ գիր ընկալաք ի մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետէն, որ գրեալ էր վասն փօլիցային քոյ, թէ զմեծ մասն առեալ եմ (Ա, Է) և զմնացեալն ևս առնլոց եմ (Ե), եթէ կամիս զապզ յղեա ինձ՝ յղել առ Մեսրոպ վարդապետն ի միամտութիւն նմա։ Եւ մեք վասն այնքան ինչ դրամոյ (Բ) զԱ (1) զապզ գրեալ ահա՝ յղեցաք ահա, զի զայնչափ դրամն մեզ հասեալ գիտասցես։ Լեր ուրեմն միամիտ և զգիրդ պակաս մի առներ։ Եւ զայն Ուռուսճուղու գանձանակագրամն առնուլդ մեզ ծանո։

Օրինակն սորա ի վերայ կտոր թղթոյ է։

558. Թուղթ ևս առ մեծին Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն գրեաց, ի պատասխանի նորին թղթոցն հնգից ի նոյեմբ. ԺԱ (11) գրեցելոց, որ և ծանուցեալ էր, թէ զՊետրոս վարդապետն հանդերձ ֆարմանօք և մահսերօք ուղևորեցաք ի հոկտեմբերի ԻԳ (23) դէպ ի սուրբ Աթոռդ, որոյ զօրինակն գտցես ի շարագրանաց նոր տետր 265 երեսն, մինչ հարկաւորիցի զտանել[116]։

559. Թուղթ ևս ի Կարին առ վէքիլ պարոն Հայրապետն գրեաց, ի պատասխանի ի դեկտ. ԺԴ (14) գրեալ թղթոյ նորին, առ որ գրէ, թէ թուղթդ էհաս ընդ Մինաս պետի թղթոցն, ձեռամբ փայեկին։ Արդ, քանզի յառաջ գրեալ Բ (2) թղթոցդ պատասխանին ընդ միւս փայեկին յղեցաք ի դեկտ. ԻԴ (24), յորում ծանուցաք վասն ի Բայազիտ յղեալ ամանաթիցդ, թէ դեռ անդ է, երբ և հասցի մեզ, միամտեցուցանելոց եմք զքեզ։ Եւ թէ զՄինաս վարդապետի փօլիցայ առնելն էիր ծանուցեալ (Ե) և զապզ խնդրեալ, ահա գրեալ յղեցաք։ Եւ թէ վասն ակնցի Հաճի Յովաննիսին, որ ի բանտի է, զմխիթարութեան գիր էիր խնդրեալ գրել և ի կողմանէ փօլիցային ևս յիշել. այժմ չգրեցաք, զի թէ առ նա գրէաք, պարտ էաք բանտակցացն ևս գրել։ Մինչ զերծցին, առ ամենեսեանն զմխիթարութիւն եմք գրելոց։ Բայց դու ըստ խոստման Հաճի Յովաննիսին զդրամն առնուլ ջանասցես և մեզ գրեսցես։

Վասն ախթարմայից լրբենի համարձակութեանն և մերայնոց թևլատրութեանն էիր գրեալ, տրամեցաք յոյժ, Աստուած հոգասցէ։ Նաև սակս մերայնոց ոմանց անկարգութեանն էիր ազդեալ և զխրատական կոնդակ խնդրեալ։ Լուր, զի մինչ հասանիցի առ մեզ ֆարմանաբեր Պետրոս վարդապետն մեր, այնպիսեացն վրէժխնդիր եմք լինելոց։ Սակայն դու ըստ յառաջ գրեցելոյ մերոյ, ողջոյն տացես ի մէնջ իշխանացն և ասասցես, զի զոմն վէքիլ կարգեսցեն, մինչ մեք զտեղւոյդ պատշաճ ոք առաջնորդ կարգեալ յղեսցուք՝ առ ի սանձահարել զանկարգսն։ Եւ թէ ահա զՄինաս պետի թղթոց պատասխանին, հանդերձ այլ թղթովք գրեալ, յղեցաք փայեկաւդ, յղեա առ նա։ Իսկ թէպէտ գրեցաք, ասէ, ի վերոյ, թէ զՄինաս պետի զապզն յղեցաք, բայց այն զապզն ոչ յղեցաք։ Այլ այսպէս գրեցաք, ասէ, Մինաս պետին, թէ մեր վէքիլ Հայրապետի թղթովն, որ փօլիցայ էիր տուեալ յայգր ակնցի Հաճի Յովաննիսի օրթախ մահտեսի Ստեփանին և Գորոյենց Ջրաղ Ստեփանին (Ե) և զզապզ խնդրեալ, իմացաք, բայց արդ զզապզն չյղեցաք, զի սպասեմք գալստեան Պետրոս
135ա պետին, զի յորժամ նա առ մեզ հասցի, յայնժամ թէ վասն այսր և թէ այլ հասուցելոցդ բոլորապէս զզապզ մի գրեալ յղեսցուք ձեռամբ Հայրապետին առ քեզ՝ ի միամտութիւն։ Դու ևս, ասէ, սոյն ոճով գրեսցես Մինաս վարդապետին։

Յղեցան թուղթքս ընդ ի Կարնոյ նորեկ փայեկին յամսոյս Դ (4)։

1782 թ., հունվար—Առ Արդուինու ժողովուրդն

560. Ի ներկայումս արդուինցի քանի մի ուխտաւորք էին եկեալ հանդերձ տէր Մարտիրոս քահանայիւն իւրեանց։ Ընդ որս զԱ (1) թուղթ գրեաց սրբազան Վեհն առ Արդուինու ժողովուրդն, ի պատասխանի իւրեանց թղթոյն, որք զԺԸ (18) ղուռուշ գանձանակագրամ էին յղեալ ձեռամբ տէր Մարտիրոսին։ Որոյ աղագաւ շնորհակալութիւն, և վասն երկուց քահանայիցն իւրեանց պատուէր՝ սիրով և եղբայրաբար վարել ընդ միմեանս խաղաղութեամբ, և պատուէր դարձեալ՝ յախթարմայից հեռի կալ, ընդ որս և չառնել խնամութիւն։ Եւ զպարոն Աստուածատուրն կարգեաց վէքիլ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս, զոր աթոռակալ ասեն անդ։

Զգաղափարն թղթոյս գտցես ի նոր տետրն շարագրանաց ի 269 երեսն, որ և գրեալ առաքեցաւ ընդ նոյն յիշեալ տէր Մարտիրոսին յամսոյս Ժ (10)։

135բ

1782 թ. հունվար—Թուղթ ի Ղարս առ պարոն Գէորգն

561. Յայս աւուրս ի Պօլսոյ և ի Կարնոյ թուղթք էին հասեալ ի Ղարս առ պարոն Գէորգն՝ գրեալ ի վերայ սրբազան Վեհին։ Ընդ որս և նա ևս զգիր գրեալ առ սրբազան Վեհն, հանդերձ այնոքիւք յղեալ էր։ Վասն որոյ և սրբազան Վեհն զմի թուղթ գրեաց նմա յաժմ, ի պատասխանի նորին թղթոյն, որ էր յամսոյս Զ (6) գրեցեալ, ծանուցանելով նմա, թէ գիրդ ընդ ի Կարնոյ եկեալ գրեանցն էհաս մեզ և իմացաք զմեր ֆէրմանաբեր Պետրոս պետի գալն ի Կարին։ Որոյ սակս և պատուիրեաց, թէ ի հասանելն յայգր շուտ ուղևորեսցես դէպ աստ։ Այլև ազդեալ էր սա, թէ աֆանդի զատայքն զԾ (50) սոմար ցորեան և գարի ընծայեցին Աթոռոյդ։ Ընդ որ զշնորհակալութիւնս գրեաց զնոցունց։ Իսկ և հայցեալ էր ըստ խնդրոյ նոցա ի պէտս Սուլէյման փաշային զԲ (2) հատ գոյնզգոյն ղատաք Ասպահանու, և զգոյնսն չէր գրեալ։ Ընդ որ գրէ սրբազան Վեհն, թէ զգոյնսն է՞ր ոչ էիր ծանուցեալ. ապա թէ յԵրեւանու Ի (20) հատ բերել ետուք և Գ (3) լաւն որոշեցաք, որոց մինն լաւ գունով խինայի՝ Զ (6) ղուռուշի և Բ (2) հատն իւրաքանչիւրքն Դ (4) ղուռուշ և կիսի։ Զի Բ (2) լաւն յղեսցիք, և մինն, որն և տհաճելի իցէ, մնասցէ։ Զորս ահա Առաքելի ձեռամբն յղեցաք ի Ղօշավանք առ Ստեփանն՝ քեզ հասուցանել։ Նաև խնդրեալ էր սա ի Կարին առ մահտեսի Սահակն և առ որդի նորա մահտեսի տիրացու Կարապետն զօրհնութեան թուղթ գրել։ Եւ առ այս գրեաց սրբազան Վեհն, թէ նա մեզ ևս է սիրելի, առ որ քանիցս գիր եմք գրեալ, ասէ, և ի գալ Պետրոս պետին ևս եմք գրելոց զթուղթ նմա, յորում ծանուսցուք վասն քոյ, ասէ, թէ պարոն Գէորգն խնդրեալ էր ի մէնջ ի վերայ քոյ զօրհնութեան գիր գրել։

Յղեցաւ ընդ շաթիր Առաքելին յամսոյս ԺԸ (18)։

1782 թ., հունվար—Ի Բայազիտ առ նուիրակն մեր և առ տէր Վահանն

562. Ապա ի Բայազիտոյ տէր Վահանէն մերմէ ամանաթ ինչ և գիր եկն առ սրբազան Վեհն։ Վասն որոյ սա ի պատասխանի գրեցելոցն նորա զԱ (1) թուղթ գրեաց նմա, թէ յունվարի Տ գրեալդ էհաս, զեկուցեալ էիր զհնազանդութենէ իշխանացն քաղաքիդ, զորս օրհնեցաք, ասէ։ Եւ թէ ի կողմանէ հին հաշուիդ, զոր գրես ի գալն աստ պարոն Հայրապետին, վերջացուցաք։ Իսկ ի կողմանէ մեր յատուկ և անձնական հին հաշուին, որ յատկապէս է ՃԽԲ (142) ղուռուշ և կէս հասուցեալ ես մեզ և զերծեալ, լեր միամիտ և զայս թուղթսն իբրև զխալասագիր և զապղ ընդ քեզ պահեա, զի հին հաշիւքն վերջացան։ Բայց ի կողմանէ նոր հաշուիդ ես այսպէս ծանիր, զի մինչ աստ էիր, ձեռամբ քով մեզ հասուցեր զայս ինչ դրամս (Գ, Ե)։ Եւ նարդենիս ես Առաքելին և Շիշման Դաւթին յղեալ էիր ամանաթ (Բ, Ա, Ե), զորս ահա գրեցաք ի գլուխ նոր դաւթարիդ և զառ քեզ եղեալն ես հասո մեզ։ Այլև յաղագս Ա (1) զութի յղեալ տանծիդ շնորհակալ եմք զքէն։

136ա 563. Թուղթ ևս առ Բայազտոյ նուիրակ Կարապետ վարդապետն գրեաց, հարկելով նախ՝ զո՞ր լինիլն և զքանի՞ս գիւղս նուիրակելն ծանուցանել հանդերձ այլ որպիսութեամբք։ Այլև սա անդ վասն հոգերաժին և զայլ կերպ արդեանց տալոյ սրբոյ Աթոռոյս (զոր իբրև չէր սովորութիւն նոցա տալ մեզ) զվէճ առնէր, որ և գրեալ էր սրբազան Վեհի սպասաւոր Նահապետին, թէ այս որպէ՞ս երկիր է, որ յամենայն տեղիս յանուն սրբոյ Աթոռոյդ զհոգերաժին և զայլ կերպ արդիւնս տան, և աստ ո՛չ։ Յաղագս այսր գրէ հարկիւ սրբազան Վեհն սմա՝ զգուշանալ յայնպիսւոյ վիճոյ և ո՛չ պահանջել զայնպիսի արդիւնս, զորս չունին սովորութիւն առ ի տալ։

Գրեցան և ուղարկեցան յիշեալ երկու թուղթքս յամսոյս ԺԹ (19)։

1782 թ. հունվար—Ի յերկիրն Ռուսաց՝ ի Պետրպօլք, ի Մոսկով, ի Հաշտարխան, ի Նոր Նախիջեւան, ի Ղզլար և ի Մօզտօք թուղթք

Ռուսաց երկրի բոլոր ժողովրդոցն մերազնէից առաջնորդ և նուիրակն սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ վարդապետն ի յոլով միջոցս քանիցս զթուղթս գրելով առ սրբազան Վեհն, խնդրեալ էր գրել անդ զթուղթս առ բազումս, այսինքն՝ առ մեծամեծս Ռուսաց եպիսկոպոսունս և իշխանս, և առ իւրաքանչիւր քաղաքի երևելի անձինս Հայոց։ Եւ զի անտի յոմանց ևս թուղթք էին եկեալ առ սրբազան Վեհն, վասն որոյ և սա, ի թախանձանաց Յովսէփ վարդապետին, գրեաց զյոլով թուղթս անդ առ բազումս, ոմանց՝ յաղագս պահանջման հարկին, և ոմանց՝ սակս ծանօթանալոյ ինքեան նոցա, և մանաւանդ շահելոյ զնոսա և յանձն առնելոյ զՅովսէփ վարդապետն։ Իսկ և գրեաց զհասարակական կոնդակս քանիս առ հարկի պատճառացն, զորս յայնցանէ իմացեալ լինի, զոմանս՝ ի վերայ մի մի քաղաքի և զ[ոմանս]՝ ի վերայ բազում քաղաքաց։ Եւ ամենեքեան գրեցեալքն՝ թէ կոնդակք և թէ թուղթք, են այսոքիկ, որք ահաւասիկ հետևապէս շարակարգեալ ցուցանին[117]։

136բ 564. Թուղթ ևս սրբազան Վեհն առ երկրորդն արքայութեանն Ռուսաց՝ Գրիգոր քնէազ Ալէքսանդրիչ Պոտէմկինն[118] գրեաց. շնորհակալութիւն վասն արարեալ բարերարութեանցն առ ազգս մեր, մանաւանդ առ

դրմցիսն և առ սուրբ Աթոռս, և վասն ընդունելութեանցն, զորս ցուցեալ էր Յովսէփ պետին, ընդ որում և ծանուցումն զորպիսութեանց վախճանման հոգելոյս հայրապետին մերոյ և յաջորդելոյ իւրոյ։ Եւ խնդիր՝ և ևս ունիլ զողորմածութիւն առ մեզ և առ մերայինսն և առ Յովսէփ վարդապետն։ Եւ այլ համառօտ դիտմունք ևս։

Օրինակն սորա է ի շարագրանաց տետեր 335 երեսն[119]։

565. Թուղթ ևս առ վէզիրն կայսերն Ռուսաց՝ առաջին նախարար գրաֆ Նիկիտա Իվանիչ Պանինն[120], ըստ բոլոր մասաց վերոյ յիշեալ թղթոյդ, որոյ օրինակն ևս է ի նոր տետրն շարադրանաց, ի 333 երեսն։

566. Թուղթ ևս առ զօրապետն ամենայն Ռուսաց՝ ընդհանրական սպարապետ, մեծ նախարար և գաւառապետ գրաֆ Պետր Ալէքսանդրովիչ Ռումանցովն[121], և ևս ըստ վերնոյդ, բայց և յատուկ շնորհակալութեամբ յիշումն զբարերարութեանց սորին, որ զբազումս ի մերայնոցն ազատեալ էր ի սպանմանէ ի մեծ պատերազմին և զՅովսէփ վարդապետն երկիցս ընկալեալ էր ի սէր։

Այսր թղթոյ օրինակն ևս գտանելի է ի տետրն շարադրանաց, ի 331 երեսն[122]։

567. Թուղթ ևս ի Պետրպօլք առ ազնիւ Յովհաննէս աղայն, յիշելով զառաջին գրեալ թուղթն, որ ի 1780 թուոջ Փրկչին և ի նոյեմբերի Ա (1), և զսէր և զհարազատութիւնս հայցելով հանդերձ յանձնարարութեամբ Յովսէփ վարդապետին և Պօղոսեան պարոն Խաչիկին, որ այժմ գնացեալ էր յայն կողմն։

Գաղափարն սորին է ի նոր տետրն շարադրանաց, ի 325 երեսն։

568. Թուղթ ևս ի Պետրպօլք, առ ջուղայեցի Մանուչարեանց Աստուածատուրի որդի պարոն Մարգարն և պարոն Փիլիպպոսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց ի ՌՉՁ (1780) թուոջ Փրկչին գրեցելոյ և ի հոկտեմբերի Ա (1) առ հոգելոյս հայրապետն մեր, որք և ընծայեալ էին սրբոյ Աթոռոյս Ա (1) ականակուռ արծիւ և Բ (2) կնիք պողովատեայ, մինն՝ սրբոյ Աթոռոյս և միւսն՝ հայրապետաց սորին, ի յիշատակ ինքեանց։ Առ որս գրեցաւ ահա յայսմիկ շնորհակալութիւն և օրհնութիւն որպէս վայել էր։

Որոյ օրինակն է ի շարադրանաց տետր 313 երեսն։

569. Թուղթ ևս ի Պետրպօլք առ տէր Յովհաննէսն գրեաց, թէ յառաջագոյն յայդ երկիր զկոնդակ գրեցաք՝ ծանուցանելով զմահ հոգելոյս հայրապետին մերոյ և զյաջորդելն մեր հանդերձ այլ ևս որպիսութեամբք, որ հասեալ է առ ձեզ ևս։ Իսկ յետոյ քանիցս ընկալաք զթուղթս ի
137ա Յովսէփ պետէն, որ գրեալ էր մեզ զորպէսն // գալոյն իւրոյ յայդըր և օծանելոյն զսուրբ եկեղեցին տեղւոյդ և դառնալոյն ի Նորն Նախիջևան։ Եւ թէ զորքան մարդասիրութիւնս էր տեսեալ ի յամենեցդ, գոհութեամբ ծանուցեալ էր մեզ, հանդերձ քոյդ ցուցեալ սիրովն, ընդ որս շնորհակալացաք և զայս գրեցաք քեզ, զի զանկեղծ սէր ունելով առ սուրբ Աթոռս, ի հարազատութեանց մի վերջասցիս։ Եւ Յովսէփ պետին ցուցցես զկատարեալ սէր, որպէս և ցուցեալ ես, մանաւանդ այժմ, մինչ կրկին եկեալ է յայդ կոյս՝ ի յօծանել զՄոսկովու եկեղեցին, և յայդր ևս իցէ, թէ եկեսցէ։

570. Թուղթ ևս առ նոյն տէր Յովաննէսի որդի երեփոխան պարոն Պետրոսն գրեաց, ըստ մտաց և ըստ նմանութեան հօր թղթոյն, որ ահա ի վերդ յիշեցաւ։

571. Թուղթ ևս առ աղայ Գրիգորն Կամպանեան, ըստ մտաց յիշեալ թղթոցդ, բայց փոքր մի համառօտէն և ճոխ շարադրութեամբ[123]։

572. Թուղթ առ աստապատցի պարոն Մովսէսն Սարաֆեան[124], ըստ այսմ ոճի, թէ որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն, զհարազատութիւն ձեր գրէր առ լուսահոգի հայրապետն մեր, և նա օրհնէր զձեզ, իսկ այժմ ևս առ մեզ գրէ զսէրն և հարազատութիւնն ձեր, զոր առ սուրբ Աթոռս (և առ մեզ) ունիք և ինքեան ևս ցուցանէք։ Վասն որոյ զայս օրհնութեանս թուղթ գրեցաք և այլն, և ապա յորդորումն՝ կալ ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս, որպէս առ հոգելոյս հայրապետին և զառաջնորդն իւրեանց՝ Յովսէփ եպիսկոպոսն սիրել և շահել և այլն։

573. Թուղթ ևս առ պարոն Մակարն Խուտաբաշեան շամախեցի, ըստ նոյն ոճի։ Եւ զի տուեալ էր զԲ (2) չինի մեծ փարչ գինւոյ Յովսէփ պետին յանուն սրբազանին, առ այն ևս զյատուկ շնորհակալութիւն գրեաց և զօրհնութիւն։

574. Թուղթ ևս առ պարոն Յովաննէսն Խօջամալեան Ջուղայու հ-րեանցի, ևս ըստ նոյն մտաց։ Եւ զի տուեալ էր սա զուկեայ բռնօթաման մի յանուն հոգելոյս հայրապետին, այնր սակս ևս յատուկ շնորհակալութիւն և օրհնութիւն գրեաց։

575. Թուղթ ևս առ պարոն Յովակիմն Լալովեան, ըստ վերնոցդ համառօտ ոճի, ի Մոսկով։

576. Թուղթ առ Մոսկովու ենարալ անշէֆ քնէազ Վասիլ Միխայէլիչ Դօրգօլուկն[125]։

577. Թուղթ առ Պլատոն եպիսկոպոսն՝ վերատեսուչն տեղւոյն և գահակալն սինօթին իւրեանց[126]։

137բ 1782 թ., հունվար—Ի Թիֆլիզ առ առաջնորդ Կարապետ վարդապետն

578. Վրացի Մուխրամ բէկն, որ յայս աւուրս յԹրեան էր, վասն ուրումն Յօսէփ տղայի խնդրեաց ի սրբազան Վեհէն գրել զգիր Թիֆլիզ առ մերայինսն, յաղագս բանիս, որ ի ներքոյ ցուցանի։ Վասն որոյ սրբազան Վեհն թուղթ գրեաց առ Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն, թէ յայտր ի շուկայն՝ ի Ղայսարիումն Ա (1) դուքան կայ սրբոյ Աթոռոյս վախուփ, զոր առաջնորդ Յովաննէս վարդապետն է նորոգեալ։ Յայն դուքանումն յոյժ յառաջ Շիշման Բէջան ումն է նստեալ, և այժմ նորին որդի՝ սոյն գրաբեր Յովսէփ տղայս իրիճայիւ Մուխրամ բէկին խնդրեաց անդ նստիլ, և որպէս այլքն, նոյնպէս և ինքն զքիրայն տալ։ Արդ, եթէ այլ խմն պատճառ չգոյ, հարկիւ գրեմ, այն դուքանն տուր այս տղայիս։ Յղեցաւ թուղթս ընդ նմա յամսոյս [ԺԲ (12)]։

1782 թ. հունվար—Առ Հերակլ արքայն Վրաց

579. Հերակլ արքայն, ի գալն աստ վերոյ յիշեալ Մուխրամ բէկին, զսիրոյ գիր էր գրեալ ընդ նմա առ սրբազան Վեհն։ Վասն այնորիկ և այժմ ի դառնալն նոյն Մուխրամ բէկին այլ ևս ընդ նմա, զԱ (1) թուղթ գրեաց առ Հերակլ արքայն, ի պատասխանի նորին թղթոյն, և շնորհակալ լեալ յաղագս վերադարձուցանելոյ նորին զաստի վարեալ ժողովուրդն ի հայրենիս իւրեանց։

Առաքեցեալ եղև թուղթս ընդ Մուխրամին յամսոյս ԺԲ (12)։

Միաժամանակ նամակ է գրվել Ռուսաստանի վիճակի առաջնորդ և սինոդի գահակալ Սամուել եպիսկոպոսին (Մոսկվա), կոնդակ է ուղարկվել Մոսկվայի հայերին, օրհնության ու շնորհակալության նամակներ են ուղարկվել Եղիազար Նազարեթյանին ու նրա որդիներ՝ Մինասին և Հովակիմին։ Վերջինիս շնորհակալություն է հայտնվում Հ. Արղության Պետերբուրգ գնալու և այնտեղից վերադառնալու ծախսը հոգալու համար։ Նամակը կիսատ է, № 4481 ձեռագրի հաջորդ էջերն պատռված են մինչև 144ա էջը։

580. 1782 թ. 30 հունվարի—Ղուկաս կաթողիկոսի նամակը իշխան Գ. Ա. Պոտյոմկինին՝ բարեկամական հարաբերությունները միմյանց միջև ավելի ամրապնդելու առաջարկությամբ։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյ Քրիստոսի, նաև տիեզերականի լուսաձաւալի մեծի և սրբոյ Աթոռոյս էջմիածնի։

Յորմէ ժամանեսցի թուղթ անանցանելի օրհնութեամբն հօր Աստուծոյ, խաղաղացուցիչ ողջունիւն միածնի որդւոյ և անսպառ սիրովն հոգւոյն սրբոյ, հանդերձ հոգեկեցոյց շնորհօք և զօրութեամբք և արագահաս օգնականութեամբ կենսատու խաչին Քրիստոսի, և նորին կողմուխ գեղարդեանն սրբոյ, և յոգնահրաշ սրբոյ տեղւոյս նորին իջման, և հրաշագործ աջոյ հօրն մերոյ՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և շնորհատու մասանց և դամբարանաց սրբուհեաց կուսանացն՝ Հռիփսիմեանց և Գայիանեանց, և այլ ամենայն յոգնահաւաք սրբութեանց և սուրբ նշխարացն, որք աստ։ Ի վերայ օրհնեցելոյդ ի Տեառնէ Աստուծոյ և զօրացելոյդ միշտ նովիմբ, ճշմարիտ սիրելւոյդ, ստոյգ բարեկամիդ և խնամողիդ սրբոյ Աթոռոյս մերոյ և մեզ, և յատուկ երախտաւորիդ համայն մեղին սրբոյ Աթոռոյս մերոյ և մեզ, և յատուկ երախտաւորիդ համայն մեղին ժողովրդոց, որք գոն ի յօրհնեալ երկրոջդ Ռուսաց, և աստուածազօր և ինքնակալ մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ հաւատարիմ և նախապատիւ խորհրդականիդ, աստուածասէր և բարեպաշտօն, բարձրապատիւ և պերճափառ առաջին նախարար և գերապայծառ իշխան՝ քնէազ Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտէմկինիդ։ Եւ աստուածապահ տան քում, և նովիմբ զօրացեալ որդւոցդ և դստերացն, և համայն ընտանեացդ և սիրելեացդ բնաւից խնդալ ի Տէր։ Ամէն։

Շնորհք ընդ քեզ և երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ ամենակալէ և Տեառնէ մերմէ՝ Յիսուսէ Քրիստոսէ և ի սրբոյ հոգւոյն կենաւարէ՝ իջեալ հանգիցէ ի վերայ քոյ, եկեսցէ և բնակեսցի առ ձեզ, իբրև Ղյորձանս գետոց և որպէս զվտակս աղբերաց՝ յորդահոս բղխմամբ և առատապէս ծաւալմամբ։ Ամէն։

Եւ ընդ շնորհաբեղուն օրհնութեանս աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի գերարգոյ մեծութեան ձերում։ Զի զորպիսութեանց և զանցից կողմանցս այսոցիկ, մանաւանդ Տանս Արարատեան, ի հարկէ լուեալ է բարեպաշտութիւն ձեր, թէ որպիսի՞ աղէտից դիպեցաւ յանցեալ ամսն, և որպիսի՞ աւերութիւնք և անյաջողութիւնք սոյնոյ երկրի հասին, ըստ որում և սուրբ Աթոռս միածնաէջ ոչ սակաւ ձախորդութեանց առ դիպեցաւ։

Եւ ի յայն միջոցսն երանելի հայրապետն մեր՝ տէր Սիմէօն սրբա-

զան կաթուղիկոսն փոխեցաւ առ Քրիստոս։ Վասն որոյ միաբանք սրբոյ Աթոռոյս և ազգ մեր կոչեցին զմերս նուաստութիւն ի սոյն պատիւ և յաստիճանն, թէպէտ և անբաւական էաք սմին։

Եւ յայնմ օրէ մինչև ցարդ, թէպէտ բազմիցս ջանացաք գրել առ բարեպաշտութիւն ձեր զթուղթ նախընծայ օրհնութեան հանդերձ մերովն որպիսութեամբք, մանաւանդ և շնորհակալութեամբք իսկ, մինչ տեղեակ եմք լաւապէս ամենից առ ի քէն բարերարութեանց և մեծագոյն երախտեաց, որ առ սուրբ Աթոռս մեր և առ գահակալն սորին, և առ ազգն մեր խղճալի, և առ հոգևոր այցելուն դոցա՝ Յովսէփ արքեպիսկոպոսն, բայց ոչ եղաք ձեռնհաս։ Զի յաղագս վրդովմանցն մեծագունից (որք և արդ գոն մասամբ), ոչ կարէաք գտանել զապահով կևանս, մանաւանդ և ի ճանապարհացն ես կասկած էաք յոյժ։

Իսկ այժմ հարկեցեալ, մանաւանդ և պատկառեցեալ իսկ, ի բազմազան բարերարութեանց և երախտեաց քոյոյ մեծութեան, մատուցանեմք զշնորհակալութիւնս մեր քումդ բարեպաշտութեան՝ հանդերձ աստուածային օրհնութեամբ ի ձեռն այսր սիրածիր թղթոյ։ Քանզի արդարև ունիմք զշնորհակալութիւնս յոլովս զբարեպաշտութենէ ձերմէ, զի առ կենդանութեամբ հոգելոյս հայրապետին մերոյ լսէաք և իմանայաք զամենայն բարերարութիւնսն և զերախտիսն ձեր, որ առ սուրբ Աթոռս և առ ազգս մեր, մանաւանդ առ վշտակիր ժողովուրդսն երկրին Ղրիմու, դիմեալս ի ներքոյ բարւոյ հովանաւորութեան աստուածասէր և ողորմաշատ մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ, յորմէ գտեալ են զմեծագոյն ողորմութիւնս և զբարի այցելութիւնս ձերով միջնորդութեամբ, ընդունելով և ըստ բաղձանաց իւրեանց զբարւոքագոյն տեղի բնակութեան ինքեանց զպատշաճաբար անուանեալն նոր Նախիջևան, յանդերձ յոյժ մեծագոյն բարութեամբք և յաւիտենական ողորմութեամբք, որք շնորհեցեալ են նոցա ի յառատագոյն խնամոց և յողորմութեանց աստուածապսակեալ և խնամաշատ մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ հրովարտակաւ ողորմութեան, որով և զօրինակն իսկ տեսալ եմք։

Յորում և հրամայեցեալ իսկ էր ունիլ նոցա ի միջի իւրեանց զյատուկ մագիստրատ և վարիլ ըստ մերոց սովորութեանց, և ընդ հոգևորին լինիլ ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս միածնաէջի և սորին հայրապետաց, որպէս և նախկին հրամանն և ողորմածութիւն իսկ է առատախնամ կայսրուհւոյն Եկատարինեայ, զոր շնորհեալ է յաւուրս հոգելոյս հայրապետին մերոյ՝ ըստ նորին խնդրանացն։ Զորս զամենայն մեծագոհաբանութեամբ գրեալ էին առ հոգելոյս հայրապետն մեր նոյն նոր Նախիջևանցիքն, մանաւանդ՝ հոգևոր այցելուն նոցա և ամենայն իսկ մերազնէիցն, որք յայդկոյս, Յովսէփ արքեպիսկոպոսն։ Որ և զգերազանցութիւն խնամոց ինքնակալուհւոյն և օգոստինէի մօրն ողորմութեան մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ, նոյնպէս և զձերդ բարեպաշտութեան սէրն և զխնամսն, որ առ միածնաէջ Աթոռս սուրբ և առ գահակալն սորին և առ ինքն, ծանուցեալ էր, հանդերձ մեծագոյն ընդունելութեամբքն, զորս ցուցեալ էաք նմա։

Առ որս ամենայն ցնծացեալ յոյժ և մեծապէս շնորհակալեալ հոգելոյս հայրապետին մերոյ, օրհնէր միշտ զձեզ և զաստուածապահ տէրութիւն մեծին ինքնակալուհւոյ կայսրուհւոյն Եկատարինեայ, և աստուածապարգև, թագազարմ և կայսերազուն որդւոյն իւրոյ՝ Պաւլ Պետրովիչին. և բարեպաշտուհի մեծ դշխոյին իւրոյ՝ Մարիա Ֆէոդրովնային

և աստուածապարգև որդւոց նոցին՝ Ալեքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին։

Եւ մեր գոլով ականատես այսմ ամենայնի, այժմ ի յաջորդելս մերում կրկին ես լուաք զնոյնս։ Զի քանիցս անգամ ընկալեալ եմք զթուղթս ի սիրելի որդւոյն մերմէ՝ Յովսէփ արքեպիսկոպոսէն, որ գրէ վերստին զնոյն շնորհակալութիւնսն զգերազանց խնամոց մօրն ողորմութեան մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ և ձերոյ բարեպաշտութեան։

Վասն որոյ և մեք, համայն միաբանիւք աստուածաէջ սրբոյ Աթոռոյս, օրհնեցաք և օրհնեմք զաստուածապահ տէրութիւն և զիշխանութիւն առատախնամ մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ և ծիրանածին և կայսերազուն որդւոյն իւրոյ՝ Պաւլ Պետրովիչին, և բարեպաշտուհի մեծ դշխոյին իւրոյ՝ Մարիա Ֆէոդրովնային, և աստուածապարգև որդւոց նոցին՝ Ալեքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին։

Արդ, հայցեմ ի յաստուածասիրութենէ ձերմէ, զի զդոյն մեծագոյն խնամս և զգթութիւնս աննուազելի ունիցիք առ միածնաէջ Աթոռս սուրբ, և առ մերս նուաստութիւն, և առ ազգն մեր խղճալի, և առ Յովսէփ արքեպիսկոպոս որդին մեր։ Եւ զբանս շնորհակալութեան, հանդերձ աստուածային ամենառատ օրհնութեամբ, ի խոնարհ դիմաց նուաստութեան մերոյ մատուցեալս առ գերազանց մեծութիւն առատախնամ մեծի կայսրուհւոյն Եկատարինեայ, ի դէպ ժամանակի, վասն ամենից երախտեաց և ողորմութեանց իւրոց, զոր արարեալ է և առնէ առ սուրբ Աթոռս մեր, և առ գահակալն սորին, և առ ազգն մեր, և առ Յովսէփ արքեպիսկոպոսն, զի չհամարձակեցաք մեք տալ զձանձրութիւնս պատուական գլխոյ նորին։ Յորմէ և հայցել աղաչեմ, զի ամէնաողորմածաբար ունիցի զնոյնս և յաւուրս մերոյ նուաստութեան, որպէս և առ կենդանութեամբ հոգելոյս հայրապետին մերոյ՝ առ ի կացուցանել զմեզ միշտ պարտաւորականս օրհնելոյ զաստուածապահ տէրութիւն իւր, որպէս եմք իսկ։

Եւ թէ վասն հարկաւորութեանց ինչ մերոց զբանս աղերսանաց մատուցեն մեծութեան ձերում որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն և հաւատարիմն տէրութեան ձերոյ՝ ազգիւ Յովհաննէսն Եղիազարեան, աղաչեմ լսել քաղցրութեամբ և կատարել։ Որովք ամենեքեամբք առաւել ևս եմք լինելոց օրհնօղք ձերոյ բարեպաշտութեան և շնորհակալք միշտ զձէնջ, որպէս և արդ եմք։ Եւ պատմեն ի սուրբ Աթոռոջս համայն բարերարութիւնք ձեր, և ես պատմելոց են։ Եւ ի վերայ այսր ամենայնի զանմխիթարութիւնս մեր մխիթարել աղաչեմ ի ձեռն սիրանիշ թղթոյ։

Ողջ լեր ի Տէր, զօրացեալ ի նոյն միշտ։ Ամէն։

Գրեցաւ ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

Յամի փրկութեան մերոյ 1782, ի Յունվարի 30։

Զայսքանս գրեցի իմով ձեռամբ ի հաւաստութիւն բանիս.

Ղուկաս կաթուղիկոս Ամենայն Հայոց,

վասն ձեր զբարիս հայցօղ միշտ ի սրտէ։

ՍՍՀՄ կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ, ֆոնդ 52, ցուցակ 1/194, գործ 8, էջ 3։

144ա Յիշատակարան, յորում յիշեցին միտք համայն թղթոց գրեցելոց ի սրբոյ Աթոռոյս։

Ի հայրապետութեան տեառն Ղուկաս աստուածընտիր և վեհափառ կաթուղիկոսին ամենայն Հայոց և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Որոյ հայրապետութեան յերրորդում ամի և յամսեանն վերոյ գրեցելոյ ի (20)-երրորդում աւուր, հրամանաւ նորին սկսեալ եղև այս յիշատակագրութիւն գրիլ ի ձեռն իմոյ՝ ապիկար Գրիգորի անուամբ ևեթ սարկաւագի նոյնոյ Վեհիս պաշտօնէի։

145ա Արդէն ահա ձեռնարկեալ սկսանիմ գրել հակիրճ և համառօտ զմիաբնաւս թղթոց գրեցելոց՝ աստի առաքելոց ի յամենայն տեղիս և առ ամենայն ոք, այս է՝ առ քաղաքս և առ ամենայն ժողովուրդս սրբոյ Աթոռոյս, առ պատրիարգունս և առ նուիրակունս, առ առաջնորդս քաղաքաց և առ գանձապետս սորին, և առ այլ գործունեայս և հաւատարիմ որդիս սորա, նաև առ այլազգի քրիստոնեայս մեծամեծս ոմանս օգտաչանս՝ բարեպաշտ անձինս և սիրելիս մեր։ Այլև երբեմն դէպ եղելոյ մեզ գրել զթուղթս վասն իրիք հարկաւորութեան առ ոմանս ի տաճկաց, այնց ևս միտք ի սմա յիշեսցին։ Եւ զի յիշատակարան է այս, որովհետև յիշեցեալքն յայսմիկ առ յապայն պիտոյասցին, յորում հետախոյզ լեալ, որոց հարկաւորի իմանալ, որոնեսցեն ի յայս, թէ այդեօք այսինչ թուղթ ե՞րբ գրեցաւ առ այս ոմն, յի՞նչ միտս և կամ վա՞սն էր։ Ուրեմն հարկ է մեզ նշանագրել ոչ երկարապէս, այլ կարճ ի կարճոյ՝ հանդերձ գրեցմամբ զպատճառս և զթիւս ամաց և ամսոց առ ի դիւրագիւտ լինիլ յուզողաց։

1782 թ. մայիս—*Թուղթ գրեցեալք ի Թիֆլիզ առ նորին առաջնորդ և նուիրակ Կարապետ վարդապետն և առ այլս ոմանս*

[Ն]ախապէս դէպ եղե[ւ] սրբազան Վեհիս մերոյ գրել զթուղթս ի Թիֆլիզ, քանզի յելանելոյ անտի նախնւոյ նուիրակ Մարտիրոս վարդապետին, որովհետև մինչև ցարդ յոլով միջոց էանց և ոչ եղև ձեռնտու ժամանակ ինչ, զի յղիցիւր նուիրակ ըստ նախնական և բնիկ սովորութեան սրբոյ Աթոռոյս։ Եւ պատճառն է, զի ի գալոյ արքային Վրաց յերկիրս մեր խռովութիւնք և վրդովմունք դիպեալ առ մեզ, ածին զմեզ ի բազմազիմի ցաւս և ի զանազան պատուհասս, յորս ոչ գոյր հնար հոգալ մեր զհոգալիս և զպակասութիւնս սրբոյ Տանս։ Եւ տակաւին գոլով մեր ի նոյն արգելանի, և ոչ երբեք բացեալ ակն հայիլ զմեօք, մինչ սրբազան հոգելոյս հայրապետն մեր դեռևս կենդանի էր, որոյ հիւծեալ ի յայնս ցաւս և ի կսկիծս անտանելիս, երբ տեսանէր զազգն իւր ի պէսպէս նեղութիւնս և ի վիշտս, զոմանս՝ ի քաղց և ի ծարաւ, զոմանս՝ մերկս և չքաւորս, և զայլս՝ վարեալ ի գերի, և զայլ այսպիսի անձնամաշ դիպուածս ազգին իւրոյ, որոյ տակաւին չտեսեալ իսկ զծագումն խաղաղութեան, ժամանեաց նմա օրհասն և փոխեցաւ յանանց կեանսն, թողեալ զսուգ և զտրտմութիւն ի մեր վերայ և ի բոլոր ազգին։ Յորս այնքան սփռեաց խռովութիւնն, մինչ զի երթ և ելք խափանեցան և վերջացան ամենայն մուտք արդեանց սրբոյ Աթոռոյս։

Իսկ յերիս ամս տեսեալ այսպէս, այժմ հազիւ խաղաղութիւնն երևեցաւ։ Վասն որոյ և նորոգ սրբազան Վեհս մեր սկսաւ հոգալ զհոգալիս և առաքել զնուիրակունս յայլ և այլ տեղիս։ Իսկ որովհետև այս Թիֆլիզու նուիրակութեան մի ժամանակն ևս անցեալ էր ի պատճառս արգելանաց նախասացելոց, այնր աղագաւ զառաջնորդ տեղւոյն՝ զԿարապետ վարդապետն նուիրակ կարգեաց ըստ խնդրոյ նորին և յաղագս պահանջման հարկին։ Վասն որոյ գրեաց զկոնդակն նուիրակական զթուղթ մի առ ինքն՝ առ ի արիանալ յերկոսին գործսն նուիրակական և առաջնորդական, և գրեալ զյանձնարարութիւնս ի կողմանէ նորին առ արքայն և առ այլս ոմանս, զոր տեսցես ի ներքոյ գրեալսդ կարգաւ ի շրջիլ թըղթոյս։

145բ 581. [Կ]ոնդակ մի նուիրակական ի վերայ քաղաքին և շրջակայ թեմից և վիճակաց նորին գրեաց սրբազան Վեհն և առաքեաց առ Կարապետ վարդապետ առաջնորդն տեղւոյն, հանդերձ սրբալոյս մեռոնաւ, զի ընդ առաջնորդական գործոյն իւրոյ, հոգասցէ և զգործ նուիրակութեանն։ Յորում և զայս ինչ աւելի գրեալ ի հասարակ կարգէ կոնդակին, թէ որովհետև նախորդ նուիրակ Մարտիրոս վարդապետն յամեաց յայդր յետ աւարտման գործոյն մի ամ ևս աւելի՝ ի պատճառս այլ հարկաւորութեանց, և յետ յելանելոյ նորա այտի մինչև ցայժմ Գ (3) ամ ևս անցին, որ է մին նուիրակութեան ժամանակ, յորում ոչ առաքեցաւ ոմն առ ձեզ ի մէնջ։ Իսկ այս նոր նուիրակութիւնս՝ իբր թէ առ այն երկրորդ է։ Ուրեմն պարտիք այնպէս տալ զպտուղս ձեր ի ժամուս յայս, և մանաւանդ զմիմեանս յորդորելով իսկ, զի զանցելոյն պարտսն ևս թօթափեսջիք ի ձէնջ, պարտավճար լեալ։

582. Թուղթ ևս առ աստուածազօր արքայն[127], ի պատասխանի թղթոյ նորա, զոր գրեալ էր ընդ ուրումն Եսայի անուն վրացւոյ, ի ձեռն որոյ և յղեալ զբարաթ իմն խԸ (48) թումանի՝ ի վերայ Թիֆլիզեցի պարոն Ստեփանին, զի սրբազանն ի նմանէ առնուցու և բաշխեսցէ զԸ (8) թումանն Մօղնու սրբոյն Գէորգայ վանիցն՝ վասն նորոգութեան խաչկալին, զոր աւերեալ էին այլազգի զօրք արքային, և զԽ (40) թումանն տացէ Արկուռու սրբոյ եկեղեցւոյն, որ նա ևս կողոպտեցեալ և մերկացեալ էր ի զգեստի և յանօթից։ Սորին աղագաւ գրէ սրբազանն նմա զայս ինչ, որպէս գրեալ ես, ի բարի կամաց շարժեալ արքայ արասցուք, սակայն իցէ թէ ոչ իցեն լաւապէս ծանուցեալ քեզ, քանզի ոչ եթէ նոյնք, որոց զողորմութիւն շնորհես միայն, են կողոպտեցեալ։ Այլև սուրբ վանքըն Խոր Վիրապայ և անապատն սրբոյն Յակոբայ, որ ի յԱռկուռի առընթեր նոյն եկեղեցւոյն, իսպառ մերկացեալ են և ամայացեալ ամենևին։ Ուստի խնդրեմ, զի Ը (8) թումանն սուրբ Գէորգայ վանիցն լիցի որպէս հրամայես, իսկ Խ (40) թումանն ի վերայ երից սրբոց եկեղեցեացն բաժանեսցի. այս է՝ Արկուռու երկուց եկեղեցեացն և Խոր Վիրապայ։ Զայս որպէս թէ ազդումն ինչ արարեալ, թողի ի կամս քո, զի որպէս հրամայեսցես, այնպէս եղիցի։

Գրէ և զշնորհակալութիւն ի յայսմիկ թղթոջ վասն առ ոտն արկանելոյ զախթարմայ հերձուածօղսն և վասն տալոյ նորապէս զդատակնիք, զի ևս առաւել ընկճեսցին և դարձցին վերստին ի մերս ուղղափառ դաւանութիւն։

Ծանուցանէ և զնուիրակ կարգելն առաջնորդ Կարապետ վարդապետին։ Որոյ աղագաւ գրէ և զյանձնարարութիւնս ևս՝ առ ի ունիլ զնա յատկապէս ի խնամս իւր։ Յղեաց որոյ և զմի ժամացոյց ընծայ և զԲ (2) բեռն գինի՝ իբր օրհնութիւն և այլն[128]։

Տե՛ս ի նոր տետրսն օրինակաց ի 756 երեսն։

583. Թուղթ ես առ Գէորգին արքայորդին գրեաց սրբազանն, վասն զի յառաջ քան զայս գրէ անտի Կարապետ վարդապետն, թէ Լօռու բերդի բնակեալ ժողովուրդսն եւ արքայորդին սրբոյ Աթոռոյս: Ուստի գրէ առ նա սրբազանն, թէ Լօռու բերդաբնակքն բնական սրբոյ Աթոռոյս վիճակք են, վասն զի նոքա ամենեքեան են ապարանցիք, բիւրականցիք և ջաւախէթցիք, որք ուր և լիցեն, սրբոյ Աթոռոյս են և ոչ այլոց: Ուստի խնդրեմ ի քէն, զի զԿարապետ վարդապետն կոչեալ առ քեզ, զմի հաստատուն գիր տացես, որ երթեալ միամտութեամբ հովուեսցէ զնոսա, որպէս գրեալ եմք ինքեան ես:

Թուղթս այս տաճկերէն գրեցաւ: Այլև զյանձնարարութիւն ես գրեաց ի կողմանէ նուիրակին ի սոյն գրեցեալ թղթոջ: Յղեաց և զմի բեռն գինի և զքանի մի կտոր սպիտակ մոմ՝ իբր ընծայ և օրհնութիւն:

146ա 584. Թուղթ ես առ Մուխրամ Իւանի բէկն գրեաց սրբազանն, վասն զի ի գալն վրաց յերկիրս, որոյ կողմանէ զհամառօտ յիշումն ինչ արարաք ի սկզբան գրեցմանս, զոր և այժմ ոչ երկարապէս պատշաճի գրել, բայց զայս ևեթ, զի ի դառնալն նոցա անդրէն յետս, բազում գերիս առեալ տարի, տարան ընդ ինքեանս: Յորս էր Աշտարակու գիւղն ես, որոյ յարձակիլն յետ միջոցաց ինչ խնամովն Աստուծոյ գալ անտի յայսկոյս, ի նոցանէ զփոքրիկ դուստր մի յափշտակեալ էր թաւատ ոմն, և մկրտեցուցեալ վերստին ի դաւանութիւնս իւրեանց, իբր թէ ի վրացիական հաւատս իւրեանց դարձուցեալ: Զոր լուեալ սրբազան Վեհիս, բազում անգամ գրեաց առ Կարապետ վարդապետ առաջնորդն տեղւոյն, զի հետևեալ ջանասցէ անդ՝ իցէ թէ կարիցէ ազատել ի նոցունց զաղջիկն այն: Զոր ոչ եղև հնար: Եւ ընդ այն ժամանակս առաքեցաւ Մուխրամ բէկն առ խանն յաստուածաշօր արքայէն, որոյ ի գնալն առ խանն, եկն և ի տեսն սրբազանին: Յայնժամ սրբազանն խնդրեաց ի նմանէ, զի ի վերադառնալն ի Թիֆլիզ, զեկուսցէ արքային և նորին հրամանաւն հանցէ զդուստրն ի տանէ վրաց և յղեսցէ աստ: Իսկ դառնալն նորա աստի ի քաղաքն առ արքայն, անկարելի էր տեսեալ զբանն: Ուստի յառաջ քան զայս գրեալ էր առ սրբազանն, թէ դժուարաւ լինի առնուլս, զոր խոստացայ յայդր: Ապա ուրեմն զթուղթ մի գրեա ի վերայ իմ այսր իրի աղագաւ, զոր ընկալեալ իմ, ցուցից արքային և խօսեցայց նովաւ, թերևս իցէ թէ ազատեսցի որբուկն այն:

Վասն որոյ գրէ առ նա սրբազանն այժմ, թէ յայնժամ յոր աստ առ մեզ էիր, զխնդիր ինչ արարաք ի քէն ի կողմանէ դստերն փոքր աշտարակցւոյ, որ է ի ձեռն ուրումն վրացւոյ: Զոր ազդ արարեալ արքայիքո, տացես զնա ի ձեռաց նոցա և յանձնեսցես առաջնորդ Կարապետ վարդապետին: Որոյ մինչև ցայժմ զի՞նչ լինիլն չիմացաք: Իսկ ահա այժմ ես գրեմ սիրելւոյդ իմոյ, զի հոգ տարեալ ջանասցես կատարել զխնդիրս մեր, որոյ վարձս յԱստուծոյ առնուցուս:

Զայս ես տաճկերէն գրեցաւ:

585. Թուղթ ես առ մէլիք Աւետիքն, որում գրէ սրբազան Վեհն, թէ թէպէտ երկար միջոց եղև, յորում ոչ կարացաք գրել սիրելւոյդ զթուղթ սիրոյ և օրհնութեան, հարցանել զողջութենէ և զորպիսութենէ քումմէ, սակս անձեռնհաս լինելոյս մեր, սակայն Կարապետ վարդապետն յամենայն թուղթս իւր, զոր գրէ մեզ, ծանուցանէ զողջութիւն ձեր և զբարեկեցութիւն, և պատմէ մանաւանդ զյատուկ հարազատութենէ և զմարդա-

սիրութենէ, զորս ունիս առ սուրբ Աթոռ մայրս քո և առ մեզ և ցուցանես առ ինքն միշտ: Եւ մանաւանդ գրէ մեզ զընդդիմանալդ և զկորագլուխ առնելդ զչար հերձուածօղսն՝ առ ի դառնալ նոցա ի թիւր ընթացմանէ: Յաղագս որոյ գրէ օրհնութիւն և շնորհակալութիւն՝ յորդորմամբ հանդերձ, առ ի ես առաւել արիանալ ի նոյն նախանձախնդիր լինելութիւն: Ծանուցանէ և զթուղթ գրեալն շնորհակալութեան առ արքայն՝ յաղագս այսր իրի (որ հրամանագիր էր տուեալ մերազնէիցն, որ յիշեցաւ ի թղթոջ արքային): Գրէ և զնուիրակ կարգելն զառաջնորդն իւրեանց՝ զԿարապետ վարդապետն, որոյ կողմանէ զյանձնարարութիւն ես: Յայսմիկ թղթի և գրէ և զողջոյն եղբօր նորա՝ պարոն Իւանէ Միրիշբեար բէկին:

Զոր տեսցես ի նոյն տետր 510 երեսն[129]:

586. Թուղթ ես առ Նազարբէկեան պարոն Յովսէփն գրեաց սրբազան Վեհն, յորում յաղագս ախթարմայից բանիցն շնորհակալութիւն և օրհնութիւն, նաև յորդորումն ի նոյն և վասն նուիրակին զյանձնարարութիւն, ըստ մտաց վերոյ գրեալ թղթոյդ:

Տե՛ս ի նոյն տետր 512 երեսն[130]:

587. Թուղթ առ ոմն կին Լալիթարս անուն, որ ի Թիֆլիզ. քանզի էր
անդ բնականաբար սրբոյ Աթոռոյս վիճակ եկեղեցի մի, զոր Քարափի
եկեղեցի կոչեն, բայց կայր խախտեալ: Զկինս այս նորոգեցեալ էր
146բ զայն իւրով արդեամբ և վերստին ընծայեալ // սրբոյ Աթոռոյս՝ յիշա-
տակ ինքեան: Եւ ի հաստատութիւն յիշատակութեանն զմի ձեռա-
գիր ես էր գրեցուցեալ և կնքեցուցեալ առաջնորդ Կարապետ վարդապե-
տին և մերոյ վիճակի եղեալ ազգ քահանայիցն, և յղեալ զայն ի սուրբ
Աթոռս՝ առ մեզ: Վասն որոյ գրէ սրբազան Վեհն օրհնութիւն և շնորհա-
կալութիւն, նաև յորդորումն առ ի մշտապէս կալ ի նոյն բարեգործու-
թեան:

Տե՛ս ի նոյն տետր 759 երեսն[131]:

588. Թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս գործունեայ տէր Ղազար քահանայն, ի պատասխանի թղթոց նորին՝ գրեցելոց ի յապրիլի ի (20) և ի մայիսի Ա (1): Յորս գրէ զընդդիմութիւնս իւրեանց չար աղանդացն կորրէսեւոյ: Եւ վասն Լալիթարսէ՝ նորոգեցուցողի եկեղեցւոյն, խնդրէ զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան գրել առ նա: Զեկուցանէ և զոչ բաւական լինիլն սպիտակ մոմին, որ յղեցաւ ընդ մոմաժողով Գրիգոր վարդապետին՝ աստի: Առ այս գրէ սրբազանն, թէ գրեցեալ թուղթքդ հասին առ մեզ, և զի նոսին գրեալդ իմացաք նաև զբազմազգիմի հարազատութիւնդ, որ առ մեզ, և ընդդէմ կալդ հետևցելոցն ի յուղղափառ դաւանութենէս մերմէ եկեղեցւոյ: Եւ թէ ըստ խնդրոյ ձերոյ ահա զթուղթ Լալիթարսին գրեալ յղեցաք ի ձեռս քո, որ նմա տացես: Իմացաք և զպակասութիւն լինիլն սպիտակ մոմին: Առ այդ լեր միամիտ, անգամ մի ևս եթէ հարկաւորիցի յղել, ըստ բաւականին եմք յղելոց: Իսկ դու ջանա զմոմաժո[ղո]վն հանդերձ ժողովեցելովքն առ մեզ հասուցես ժամ մի յառաջ, վասն զի կարի պակասաւոր եմք յայսմ ամի: Եւ թէ զԿարապետ վարդապետն նուիրակ կարգեցաք, առ որ յղեցաք զնուիրակական կոնդակն, հանդերձ սրբալոյս մեռոնաւ, ընդ որս՝ զգաւազան մի և զփիլոն՝ խիլայ:

Այլև օրհնեալ արքային ևս գրեցաք զթուղթ սիրոյ և օրհնութեան՝ հանդերձ ընծայիւք (զոր ի թուղթն նորա տեսցես)։ Գրէ և զյորդորումն առ ի ևս առաւել արիանալ ի գործն։

589. Թուղթ ևս առ Թիֆլիզու առաջնորդ և նորոգ կարգեալ նուիրակ Կարապետ վարդապետն, ի պատասխանի չորից թղթոց նորին՝ գրեցելոցն ի մարտի ԻԲ (22), յապրիլի Ե (5) և ԺԱ (11) և ի մայիսի Ա (1)։ Յորս գրեալ էր զայս ինչ. նախ՝ վասն վախուստ տան միոյ, զոր խնդրէր ումն յինքենէ տալ զայլ իմն տուն լաւագոյն փոխ նորա, և առնուլ զայն։ Երկրորդ՝ գրէ զյղելն առ մեզ զորմնադիր Աբրահամն և զընկեր նորին Ստեփաննն, և զվարձի ինչ տալն նոցա։ Երրորդ՝ խնդրէ զկոնդակ իմն գործակալութեան վասն տէր Սահակ քահանային։ Չորրորդ՝ իմացուցանէ զկորագլուխ լինելն ախթարմայից։ Ե (5)-երորդ՝ ծանուցանէ զհաւատարմութիւնն և յամենայն իրս պիտանաւոր լինիլն մեր ճորտ Ենօքի, ի ձեռն որոյ և զընծայիկ իմն յղելն սրբազանին։ Զ (6)-երորդ՝ զեկուցանէ, թէ Բարսեղ վարդապետի քեռորդի և մեր նոր ճորտ Բէժանն կամի լինիլ ծուխ տէր Սահակին և խնդրէ յինէն զտուն մի ի վախուստ տանց սրբոյ Աթոռոյդ՝ բնակիլ ի նմա քիրայով։ Է (7)-երորդ՝ ասէ, թէ Աբրահամ վարդապետն տակաւին այնպէս նստեալ կայ։ Ը (8)-երորդ՝ գրէ, թէ զԼօռու բերդաբնակսն շնորհեաց արքայորդին սրբոյ Աթոռոյդ։ Թ (9)-երորդ՝ ասէ, թէ զամենայն զգրեալսն իմ անտես առնես, զի ոչ երբէք ընկալնում զպատասխանիս։

Որում գրէ սրբազան Վեհն զպատասխանիս։ Վասն առաջնոյն ասէ՝ անկարգութիւն իմն է, ոչ հաճիմ։ Վասն երկրորդին գրէ զմիամտութիւն, և զվարձին, ասէ, արկ ի գաւթարդ ի միամտութիւն քեզ։ Վասն երրորդին ասէ՝ անպատշաճ է աստի յղելն, թէպէտ և մեք գիտեմք աններկբա զդա ի բնէ հարազատ։ Վասն չորրորդին ասէ՝ կարի բերկրեցաք, որոյ սակս զթուղթ շնորհակալութեան գրեցաք առ արքայն։ Վասն Ե (5)-երորդին պատուիրէ՝ զի զնա ի ներքոյ ձեռաց պահեսցէ և շնորհակալ լինիլ ի կողմանէ ընծայիցն։ Վասն Զ (6)-երորդին ասէ՝ բարւոք է, մեք ևս հաճեցաք լինիլ։ Վասն Է (7)-երորդին զայս ծանուցանէ՝ յառաջ քան զայս մեղադրանս գրեցաք նմա, զի բաց ի յայլ թիւր արարմանցն, զորս լաւապէս գիտէք դուք և ևս առաւել տեղեակք էք ըստ ամենայնի // խռովարինթացիցն, հրամայեալ էր տալ զառնակին ումն՝ ումեմն օրինազանցի առն, ժամանակ ինչ։ Իսկ գրեմ սիրելւոյդ, եթէ զբան ինչ մեղապատշաճ լուիցես ի նոցունց, ազդ արասցես մեզ։ Վասն Ը (8)-երորդին իմացս տայ, թէ թուղթ գրեցաք առ արքայորդին, զի կոչեալ զքեզ, զմի հաստատուն գիր տացէ, որ միամտեալ այնու, հովուեսցես զնոսա բարւոքապէս։ Իսկ դու ևս ջանա գրեցուցանել նոցա զմահսար մի, թէ մեք տէրունի վիճակք և սեփական ժողովուրդք եմք սրբոյ Աթոռոյդ, այսուհետև զմա եմք ծառայելոց և ոչ այլ ումեք։ Վասն Թ (9)-երորդին գրէ, թէ որոյ թղթոյդ զպատասխանին զանց առեալ չգրեցաք, ահա զամենայն կարգաւ գրեցաք։ Բայց թուի, թէ դու զմեր գրեցեալսն զանց առնես, ասացից ահա զանց առեալսդ։

Գիր գրեցաք քեզ ի կողմանէ տէր Խաչատուր քահանային, որոյ և զկոնդակ աւագ իրիցութեան յղեցաք։ Իսկ դու զի՞նչ գրեցեր, նաև գրեցաք քեզ սակս Բէժանի ղուբեանին, զի տացես որդւոյ նորա, ի սմանէ զինչ ծանուցեր։ Եւ այլ այսպիսիք։ Յիշէ յայժմ թղթի և զթուղթ գրելն շնորհակալութեան առ աստուածազօր արքայն յաղագս ախթարմայից

բանիցն և վասն իւր զյանձնարարութիւն գրելն և զընծայս յղելն, նաև զԽԸ (48) թուման շնորհելն արքային եկեղեցեաց, որոյ սակս և զբան ինչ գրելն առ արքայն (զորս տեսցես ի թուղթն արքային ի վերոյ)։ Եւ թէ ի կողմանէ յայցր մնացեալ էլիկին և զնոսա արքային ի խնամս իւր ունելոյն, ոչ ինչ գրեցար նմա, որոց զորպէսն ի քէն խնդրեմք իմանալ. անպակաս արասցես զթուղթսդ ի նոցունց։ Եւ թէ զթուղթ գրեցաք առ Մուխրամ բէկն վասն ազատութեան փոքր աղջկանն, դու ևս ջան եդեալ հետևեսցիս, իցէ թէ ազատեսցի։

Դարձեալ Բամբկուձորու պարոն Գաբրիէլի աներ՝ տէր Զաքարիա քահանայն, որ ի Հաղբատու թեմի եկեղեցւոջն քահանայութիւն առնէր, անտի այժմ զնա դուրս են արարեալ։ Նորին աղագաւ պարոն Գաբրիէլն յորժամ եկն աստ, աղաչեաց զմեզ գրել քեզ, զի տիրութիւն արասցես նմա։ Վասն որոյ գրեմ քեզ, զի բերեալ անտի զայն քահանայն, ի կողմն քո պահեսցես և ի մեր թեմի եկեղեցւոջն տեղի տացես։

Ծանուցանէ և զթուղթ գրելն առ մելիք Աւետիքն և առ Նազարբէկեան պարոն Յովսէփն, առ որս և զյանձնարարութիւն ևս։ Եւ վասն մոմաժողով Գրիգոր պետին՝ գրէ փութով դարձուցանել ի սուրբ Աթոռս։ Եւ թէ ահա ըստ խնդրոյդ նուիրակ կարգեցաք զքեզ և զնուիրակական կոնդակն հանդերձ սրբալոյս միւռոնաւ առաքեցաք առ քեզ, ընդ որս զգաւազան մի և զփիլոն՝ ի փառաւորութիւն քեզ, ի ձեռն երևանցի պարոն Յովաննէսին, որոյ ի գալն պարտիս ի սէր ունիլ զդա և վասն հոգալեացն իւրոց ձեռնհաս և օժանդակ լիցիս յայցր։ Յիշէ և զԼ (30) զուռուշ բաժանելն ի վերայ գրագրաց, սպասաւորաց և առհասարակ գործակալաց՝ կողմանէ առաջնորդութեանն նորին։ Հարկէ՝ և այժմ ևս զբան ինչ նոցա հատուցանել, ըստ կարգի և սովորութեան նուիրակաց։

Եւ վերջապէս, զթուղթդ անպակաս արասցես ի մէնջ, ծանուցանելով զողջութիւնդ։ Որում Ա (1) փօլիցայ ևս գրէ սրբազան Վեհն, թէ ի պարտուց թիֆլիզցի պարոն Ստեփաննին, պարտիս զՈ (600) ղուռուշ տալ առ քեզ թիֆլիզցի պարոն Ստեփաննին, պարտիս զՈ (600) ղուռուշ դրամն, զոր ապառիկ Պօղոսն պարտ է հատուցանել մեզ, առնուլ ի նմանէ և տալ այդ պարոն Ստեփաննիդ, յորմէ մեք աստ առեալ եմք.

Ժ (10) թուղթքս այսոքիկ գրեցեալք ի վերոյ, յղեցան ձեռամբ պարոն Յովհաննէսին (որ վերջընթեր թղթոյն յիշեցաւ) ի Թիֆլիզ ի ձեռն Կարապետ վարդապետին Ի (20) [մայիսի]։

147բ 1782 թ. մայիս—Կոնդակ ժողովարարութեան ի կողմն Ղազախու և Շուլաւեր Թուղթք ևս

590. [Յ]ետ այսորիկ, ըստ նախնաւանդ սովորութեան սրբոյ Աթոռոյս, առաքեաց սրբազան Վեհն զՄարտիրոս վարդապետն ի Ղազախ, ի Բամբկաձոր, ի Բօռչալու, և ի Լօռի, նաև՝ ի Բօլնիս և ի Շուլաւեր բնակեալ ժողովրդսն, այլև ի Հասանաջուր եղեալ ժողոհամայն Շամշադինու ժողովուրդսն, այլև ի Հասանաջուր եղեալ ժողովուրդսն՝ առ ի ժողովել ի նոցունց զտասնորդս և զայլ հարկաւոր պիտոյս, այս է՝ զխաղս, զպանիրս, զմատաղացուս, զերկաթս և զերկաթեղէն և զայլ փայտեայ գործիս, որք մշտապիտոյք են սրբոյ Տանս։ Վասն որոյ գրեաց և ի վերայ այնց տեղեացն զԱ (1) կոնդակ ժողովարարութեան և ծանուցանէ ի նմա զպաշտօնութիւն և զողջութիւն երկրիս ի կողմանէ խաշանց, արջառոց և այլ արօտականաց։ Եւ ապա յորդորէ ի նոյն, զի առատութեամբ և լիալիր տացեն զտուրս իւրեանց՝ առ ի լցուցումն պակա-

ութեանց սրբոյ Տանս, և զժողովարար Մարտիրոս վարդապետն ի ներ ընկալեալ, վերադարձուցեն ի սուրբ Աթոռս։

148ա 591. Թուղթ ևս առ Վանական վարդապետն, որում զնոյն միտ կոնդակին ծանուցանէ և զյանցեալ ամի խոստացեալ տուրսն (որոնց սակս սանատ էին առեալ) ևս խնդրէ, և վասն ժողովարարին՝ զյանձնարարութիւն, և եղբօրն՝ մէլիք Սարգսին՝ ողջոյն և օրհնութիւն ևս։

592. Թուղթ ևս առ Մխիթար քեալանթարն՝ ի նոյն միտ։ Զի որպէս գրեցաւ ի թուղթն Վանական պետին, այնպէս գրեցաւ և ի սմա։ Յորում ևս յիշէ զյանցեալ ամի խոստացեալսն։ Քանզի ի գնալն առ սոսա անցեալ ամի ժողովարար Դաւիթ վարդապետին՝ ժողովել յորոց զկամաւոր տուրս, ընկալեալ էին զնա սիրով և զտուրս իւրեանց առատապէս խոստացեալ, բայց չէին իսկ տուեալ, այլ զսանատ խմն արարեալ էին և տուեալ զայն ի ձեռս ժողովարար Դաւիթ պետին, թէ այսինչ այսինչ հարկ լիցի մեզ տալ։ Իսկ այժմ որովհետև ի յեայլայն եմք մնայցէ, այլ յաշնանն, յորժամ իջանիցեմք յեայլայէն, յղեսցուք ի սուրբ Աթոռն։ Որք թէպէտ այսպէս էին պայմանեալ սանատով, զոր եբեր առ մեզ Դաւիթ պետն, սակայն աշունն էանց և երկարեաց, մինչև այս ներկայ ամի ժողովարար յղելոյ ժամանակն, տակաւին չէին յղեալ զայնս Շուլաւերու ժողովուրդքըն։ Ուստի ընդ յայսմ ամի ժողովարար Մարտիրոս պետին գրէ առ նոսա սրբազան Վեհն, թէ յանցեալ ամի խոստացեալն ևս պարտիք տալ՝ ըստ տուեցելոյ սանատին ձերոյ։ Եւ յայսմ ամի ևս առատապէս տալ և յանձնել առաքեցելոյդ մերոյ և մանաւանդ ձերովդ բեռնակրօք յղել ի սուրբ Աթոռ մայրս ձեր։

Գրէ յայսմ թղթի զողջոյն և զօրհնութիւն որդւոյ նորա պարոն Գիւլնազարին։

Գ (3) թուղթքս այսոքիկ գրեցան և յղեցան ի վերայ Աշտարակու դէպ ի Ղազախ՝ ի ձեռն այնց կողմանց ժողովարար Մարտիրոս պետին ի ԻԴ (24) [մայիսի]։

1782 թ. մայիս—*Թուղթ առ Հերակլ արքայն Վրաց*

593. [Ա]պա հարկ եղև գրել զթուղթ առ Հերակլ արքայն Վրաց, վասն զի Հաղարծինու վանից առաջնորդ եպիսկոպոսն և նորին միաբան Աւետիս վարդապետն եկեալ ընդ այս աւուրս ի սուրբ Աթոռս, բողոք բարձին առ սրբազան Վեհն ի ձեռաց Հախպատեցւոցն, զի զթեմս իւրեանց խլեալ էին խպառ։ Եւ զի որովհետև յառաջ քան զայս յամայութեան կային այս երկոքին վանքն ևս՝ Հախպատ և Հաղարծին, քանիցս անգամ եղեալ էր վէճս այս ի մէջ միաբանիցն սոցա վասն թեմի վանացս, բայց վերջապէս գիտութեամբ արքային և կոնդակաւ հոգելոյս հայրապետին վճիռ խմն էր հատեալ, որպէս թէ որքան յանշինութեան կան այսոքիկ, կէսն թեմից Հախպատու միաբանքն վայելեսցեն և կէսն Հաղարծինու միաբանքն։ Իսկ յորժամ շինեսցին, իւրաքանչիւր ոք զիւր վիճակն կալցի։ Եւ կային մինչև ցայս վայր խաղաղութեամբ, իսկ նարդենիս որովհետև ի Հաղպատու վանսն սակաւ ինչ շինութիւն էին ձգեալ, զայն կալեալ պատճառ, զմասն զայն, զոր Հաղարծին ունէր, զնա ևս էին յափշտակեալ։ Ուստի Մանուէլ և Աւետիս ծերունիքն եկեալ աստ առ սրբազան Վեհն, առ որ և բողոքէին լալով, թէ զթեմս և զվիճակս մեր խլեցին

և եմք մնացեալ քաղցեալ և անճար յաւասիքէ։ Խնդրեմք ի քէն առնել ի մէջ մեր զիրաւունս։ Վասն որոյ սրբազանն զԱ (1) թուղթ ևս առ Հերակլ արքայն գրեաց, թէ խնդրեմ ի քէն, զի ի փառս Աստուծոյ և ի ներ մեր, զթացեալ ի ծերունի աղքատսդ, արասցես զոցա պայցելութիւն՝ առ ի գտանել զհնար խմն կեցութեան զոցին, որք աղօթօղք են մշտապէս վասն քո և քոյայնոցդ (տե՛ս ի նոր տետր 761 երես)։

[Եւ վասն այն ոչ գրեցաւ հախպատեցւոցն թուղթ, զի սակաւ ինչ պաղութիւն գոյր]*։

Թուղթս այս գրեալ առ արքայն, յղեցաւ առ նա ի ձեռն Մանուէլ և Աւետիս վարդապետացն ի ԻԵ (25) [մայիսի][132]։

148բ
1782 թ. մայիս—*Թուղթք ի Բայազիտ*

[Դ]արձեալ թուղթ գրեցաւ առ Իսախ փաշայն Բայազիտու, վասն զի ընծայ էր յղեալ սրբազան Վեհին զմի լաւ ձի[133], ուստի մինչ սրբազանն կամէր գրել առ նա զթուղթ սիրոյ և շնորհակալութեան, ի Գեօրգին արքայորդւոյն ևս ընծայ եկն, յորս գոյր Բ (2) եղինս՝ արու և էգ։ Բայց որովհետև փաշայն ևս խնդիր էր յայսմ միջոցի վասն եղջերուի միոյ (զոր յառաջ քան զայս ի սրբազանէն ևս էր խնդրեալ քանիցս ի ձեռն տէր Վահանին և բազմաց), ուստի այժմ պատշաճ եհեւ սրբազանն յղել զերկոսինսն ևս՝ զեղջերուն և զեղն ի ձեռն տէր Վահանին, զի ընծայեսցէ փաշային, զորս և յղեաց իսկ։

594. Վասն որոյ զԱ (1) թուղթ ևս առ Իսախ փաշայն գրեաց սրբազան Վեհն, յորում շնորհակալութիւն վասն ձիոյն յղելոյ և զյանձնարարութիւն վասն տեղւոյ նուիրակ Կարապետ վարդապետին։ Եւ զի որովհետև զնուիրակութիւն քաղաքին աւարտեալ էր և ելանէր ի շրջակայ նահանգսն անդ նուիրակել, սորին վասն ևս խնդրէ ի փաշայէն՝ գրել զբույրուլթու ի վերայ այնց կողմանց բէկիցն, զի մուղայէթ լիցին։ Ծանուցանէ յայսմիկ թղթի և զերկոսին եղանց ընծայ յղելն ընդ թղթոյն։

595. Թուղթ ևս առ Աղուլլա բէկն Բօփրախղալայու վասն նուիրակին յանձնարարութիւն, նոյնպէս թուղթ ևս առ Սէյիդ բէկն Դիատինու, բայց սմա վարդեչուր ևս յղեցաւ, որովհետև նուիրակն նախապէս անդ էր երթալոց։

596. Թուղթ ևս առ նուիրակն տեղւոյ Կարապետ վարդապետն գրեաց սրբազան Վեհն, թէ իմացաք զաւարտելն քաղաքիդ և զգնալդ ի շրջակայ նահանգսն զորին։ Վասն որոյ զյանձնարարութիւնս գրեցաք վասն քո առ փաշայն և առ Ապտուլլա և Սէյիդ բէկսն և խնդրեցաք ի փաշայէն, զի ի վերայ այն միւս շրջակայ բէկիցն ևս վասն քո զյանձնարարութիւն գրեսցէ։ Եւ թէ զմի աման գիւլապ վասն Սէյիդ բէկին յղեցաք։ Եթէ միւսոցն ևս պիտոյասցի, գրեսցես, զի յղեսցուք։ Իսկ զընծայսն նոցա, որպէս օրէն է ի բնէ, այնպէս առնիցես։ Եւ ապա յատուկ պատուէր, զի ջանասցէ սիրով վարիլ ընդ ժողովրդեանն։ Այլև՝ գրեալ ես մեր նահապետին, թէ ի նուիրակական արդեանցս Ռ (1000) զօլաթայ հասուցի տէր Վահանին, զոր լուեալ մեր, շնորհակալեցաք զքէն։ Եւ գրեմ, զի զոր ինչ պատրաստի դրամ գտանեցի, նմա յանձնեսցիս, որ ի հարկէ ծանու-

* Բնագրում այս նախադասությունը ջնջված է։

ցանելոց է մեզ զորքանութիւն ասեցելոյդ և ի մէնչ զգապդ առեալ առ քեզ է յղելոց՝ ի միամտութիւն և յանհոգութիւն քեզ:

597. Ի սոյն աւուրս յառաքեաց սրբազան Վեհն զերիս ժողովարարս ի կողմն Բայազիտու: Վասն որոյ գրեցեալ Ա (1) կոնդակ ևս ի վերայ Բայազիտու և Դիատինու ի ձեռն Դաւիթ վարդապետին և Ա (1) կոնդակ ևս ի վերայ Թօփրախղալայու, Ալաշկերտու, Նահիու և Խամուրու ի ձեռն Մկրտիչ պետին և Ա (1) կոնդակ ևս ի վերայ Մանազկերտու և Բաղնոցու ի ձեռն Ստեփան վարդապետին, զի ժողովեսցեն զիւղս, զպանիրս և զմատաղացուս ի պէտս սրբոյ Աթոռոյս:

598. Թուղթ ևս առ Իւշքիլիսէի առաջնորդ Մկրտիչ պետն, թէ որպէ՞ս եղև բան ախթարմայ չերիցանցն, և ապա յանձնարարութիւն վասն ժողովարարացն, և զեկուցումն, թէ զԳ (3) լիտր գինի յղեցաք վասն ձեր:

Թուղթքս վերոյ գրեցեալ յղեցան ի ձեռն Դաւիթ ժողովարար վարդապետին, որ էլ աստի ընդ երկուց ընկերացն ի ԻԸ (28) մայիսի:

149բ 1782 թ. մայիս—Թուղթք առ Գեօրգին արքայորդին և յայլ տեղիս

599. [Գ]եօրգին արքայորդին, ի շնորհաւորութիւն արքայական նամոսացն սրբազան Վեհին, զթուղթ և ընծայ էր յղեալ (որ էր՝ մի լաւ ձի, մի եղջերու, մի եղն, Բ (2) վայրի հաւս և Բ (2) բեռն գինի) ի ձեռն ուրումն Տաքարօ անուն ծառայի իւրոյ, որպէս յիշեցաւ ի վերոյ ի թուղթն փաշային: Ուստի սրբազան Վեհս մեր, ցուցանելով զշնորհակալութիւն վասն ընծայիցն, զԱ (1) թուղթ ևս առ Գեօրգին արքայորդին գրեաց[134], թէ զթուղթդ սիրանից էհաս առ մեզ՝ հանդերձ ընծայիւքդ յղեցելովք ի ձեռն ծառային քո Տաքարօին: Զոր ընկալեալ մեր շնորհակալութեամբ մեծաւ, օրհնեցաք զքեզ և զքոյսինսդ ամենայն: Եւ մանաւանդ ընդ այն ևս առաւել ուրախացաք, որ զյատուկ փաւսուլայիւ գրեալ էիր զբանս ոմանս առ ի խմանալ մեզ:

Այլև զայս ծանուցանէ յայսմ թղթի, թէ երբեմն գան առ մեզ ոմանք գիրեաւորք և այլ փորձանաւորք՝ յուղարկեալք առ ի ձէնչ, զի տացուք զկոնդակս ժողովարարութեան, ի կողմանէ որոց այսպէս իմա, զի մինչև ցգալ նամոսացն արքայականաց, ոչ տայաք երբէք: Իսկ յորժամ եկին, տուաք քանեաց անձանց ըստ գրեցելոյդ ձերոյ: Ուստի ոչ սակաւք են եկեալք յայսկոյս և յայնկոյս խնդրել զթուղթս շրջաբերականս: Իսկ եթէ ամենայն խնդրողաց տայցեմք, ի յաճախութենէն լիցի զզուումն ժողովրդեանն և թուղթն մեր ամենևին ընդունայն լինելոց է, նաև շրջօ[գ]քն այնու չեն ինչ շահելոց: Բայց եթէ զանհոգութիւն յանձն առեալ մեր անեմք, թէ զօգուտ ինչ տեսանեն թէ ոչ, այլ միայն զթուղթ ինչ գրեալ տացուք ի ձեռս նոցա, պատահի երբեմն յոյժ առաւել փորձանաւորք նոցա ևս լիցի անօգուտ թուղթս մեր: Վասն որոյ զոմանս զանց առնեմք չլինել տրտունջ ժողովրդեանն և քամահումն թղթոց մերոց: Ուրեմն ընդ այս անմեղադիր լեր (տե՛ս ի Նոր տետր 762 երեսն):

600. Ընդ այսր Ա (1) թուղթ ևս սիրոյ առ արքայն գրեցաւ տաճկերէն:

Որք գրեցան և յղեցան երկոքին այս թուղթքս ձեռամբ նոյն Տաքարօին ի Լ (30) [մայիսի]:

601. [Ի] սոյն աւուրս, յորում վերոյ գրեալ թուղթքս գրեցան, գրեցաւ և ի Կարին Ա (1) թուղթ ևս առ Եսայի վարդապետն, որ գնայր ի Զմիւռին նուիրակ: Քանզի ի Բայազիտու Բ (2) թուղթս էր գրեալ՝ ի մայիսի ԺԳ (13) և ԺԹ (19), յորս ծանուցեալ էր ի կողմանէ սրբոյ վանիցն Թադէոսի Առաքելոյն և վասն նորին առաջնորդին զբան ինչ: Որոյ աղագաւ գրէ առ նա սրբազանն, թէ տեսցուք զինչ են առնելոց: Եւ թէ ըստ խոստման և ըստ գրեցելոյդ առ Զմիւռնոյ լուսարար տիրացու Յովհաննէսեան զթուղթ գրեցաք վասն թողեալ մեր անդ առ նա սրբոյ մեռոնին և գրեանցն մերոց, և հարկեցաք նմա զայնս յանձնել քեզ: Զոր ահա առ քեզ յղեցաք ընդ քոյդ թղթոյ՝ հանդերձ գրեանց զաւթարան և խնդրեալ Բ (2) գրեամբքդ՝ Տօնացուցին և Մաշտոցաւն: Իսկ և վասն փոքրիկ աղային (որոյ սակս խնդրեալ էր լինիլ խնամատար), զմիամտութիւն գրէ: Այլև խոստանայ գրել փութով զթուղթն օրհնութեան ի վերայ Մսրատմու ժողովրդեանն և ի Կարին՝ առ ինքն յղել ըստ խնդրոյ նորին:

Իսկ և ի կողմանէ չուղայեցի տէր Յովհաննէսի որդի պարոն Ստեփանին գրեալդ իմացաք (այս այն է, որ յիշեցաւ յամսոյս ԻԸ (28) ի թուղթն տէր Վահանին), որ մեզ ևս պարտի դրամ հասուցանել: Որոյ աղագաւ գրեցաք տէր Վահանին, զի յորժամ առնուցու ի նմանէ ըստ սանատին, զոր առ ինքն ևս թողեալ, ծանուցէ մեզ փութով, որ մեք ևս ըստ գրեցելոյ նորա և քոյդ խնդրոյ զգապդ գրեալ առ քեզ յղեսցուք: Եւ թէ ըստ գրեցելոյդ, զոր ինչ ի Կարին առ պարոն Հայրապետն հասուցես, ի հարկէ դու և նա գրելոց և ծանուցանելոց էք մեզ, զի մեք ևս յայն կողմանէ զգապդ գրեալ, յղեսցուք առ քեզ:

150ա Խնդրէ և զհաւաստի զորպիսութիւն անդ եղեալ ախթարմայիցն գրել և ծանուցանել: Եւ վերջապես ծանուցանէ զՓիլիպպոս վարդապետի թուղթ գրելն առ մերայինսն յապրիլի Ժ (10), յորս գրեալ էր, թէ մինչև ցելն սեպտեմբեր ամսոյ զբոլոր գործ նուիրակութեանս հողիւ թէ աւարտեալ ի կատարումն և ի լրութիւն հասուցից: Եւ վասն այն գրեաց զայս առ նա, զի սակաւ ինչ յամր շարժեսցի, մինչև նա անտի դուրս եկեսցէ: Եւ մի ի պատճառս փոյթընթացութեանն նա ևս շտապեսցի ,և յայնմանէ վնաս ինչ պատահեսցի գործոյն:

602. Թուղթ ևս առ Զմիւռնոյ լուսարար տիրացու Յովհաննէսն գրեաց, ծանուցանելով որում զվերստին դառնալն Եսայի վարդապետին առ ինքեանս՝ հանդերձ նուիրակական և առաջնորդական կոնդակաւ:

Տիրացու Հովհաննեսին կարգադրվում է իր մոտ պահ տրված մեռոնն ու մեկ արկղ գրությունները ու մատյանները կրկին հանձնել Զմյուռնիայի նվիրակ ու առաջնորդ նշանակված Եսայի վարդապետին:

603. Թուղթ ևս առ պարոն Հայրապետն գրեաց սրբազանն, թէ ընկալաք զգրեալսդ ի մայիսի ԺԳ (13) և ծանեաք զամենայն, որ ի նմա:

Տնտեսական բնույթի մի շարք հանձնարարություններից բացի Կարինի բնակիչ պրն. Հայրապետին հանձնարարվում է էջմիածնից Ղարս առաքված նամակների ծրարն ուղարկել Կ. Պոլիս:

604. Ղապզ ևս առ Եսայի վարդապետն, թէ ի գնալդ թէ նաղտ և թէ վէճ հասուցեալ ես սրբոյ Աթոռոյս և մեզ Ռ և Շ (1500) ղուռուշ, ուստի ի հաւաստութիւն սմին և ի միամտու[թիւն] քեզ, զայս գիրս գրեալ առ քեզ յղեցաք (զայս թէպէտ ի վերջոյ գրեցաւ, սակայն ի վերոյ գրեալ թուղթն նորա եղաւ և ի ձեռն իւր յղեցաւ):

150բ *605. [Ի] սոյնում աւուր եկին և ուխտաւոր ոմանք, որք յառաջ քան զայս եկեալ էին ի սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն, որք էին՝ զրիմեցիք, թոխաթցիք և մարսուանցիք, ի ձեռն որոց և յղեալ էին ոմանք զողորմութիւնս ինչ և խնդրեալ զթուղթ օրհնութեան։ Ուստի սրբազան Վեհն ըստ խնդրոյ և բաղձանաց նոցին գրեալ վասն տուեցողն ողորմութեանցն ԺԱ (11) թուղթս օրհնութեան և շնորհակալութեան առ նոսա և յղեաց ի ձեռն նոյն բերողացն, որք ահա նշանագրին ի ներքոյ, որոց Դ (4) զրիմեցւոցն է, և այլ միւսքն՝ թոխաթցւոց և մարսուանցւոց։*

Թվարկված են նվիրատվություններ արած 11 անձանց անունները, որոնց ուղարկվել են օրհնության և շնորհակալության նամակներ։

ԺԵ (15) թուղթքս այսոքիկ վերոյ նշանակեալք գրեցան և յղեցան ի սոյն ամսեան ի Լ (30)։

1782 թ. մայիս—*Թուղթ ի Գանձասար՝ առ նորին Յովհաննէս կաթուղիկոսն*

606. [Յ]ովհաննէս կաթուղիկոսն Աղուանից յանցեալ ամի ամսեանն նոյեմբերի զթուղթ էր գրեալ առ սրբազան Վեհս մեր և ի նմա խնդիր արարեալ ի սրբազանէն վասն արդեանց գանձանակին իւրեանց Հաշտարխանու, որպէս թէ սրբազանն զգիր գրիցէ ի վերայ Յովսէփ վարդապետին մերոյ և ի վերայ գանձապետին իւրեանց՝ պարոն Միխայէլին, որպես զի զգանձանակադրամսն հասուսցեն առ ինքեանս։ Բայց սակայն բերօղքն թղթոյս յանցեալ աշնանն արգելեալ էին ի ձիւնէ և դարձեալ յետս, ուստի նոյն թուղթն այժմ ի ներկայ թուոյս և ի մայիսի Լ (30) էր յղեալ ձեռամբ Մօսէս և Գաբրիէլ տղայոցն իւրոց։ Վասն որոյ սրբազան Վեհս մեր գրեաց զ Ա (1) թուղթ առ Յովաննէս կաթուղիկոսն Աղուանից, ի պատասխանի թղթոյ նորին, զոր յիշեցաք։ Որում գրէ, թէ թուղթ քոյին սիրելութեան ժամանեաց առ մեզ ի ձեռն Մովսէս և Գաբրիէլ տղայոցն, և ծանեաք զգրեցեալսդ ամենայն, և մանաւանդ զորպիսութիւն և բարեկեցութիւն սիրոյդ։ Նաև յորժամ իմացաք զի զլուխ հասանիլն նորոգութեան տաճարաց սրբոյ տաճարիդ, ոչ սակաւ եղև մեզ ուրախութիւն։ Եւ թէ հասին առ մեզ ի ձեռն սոյն թղթաբերացս գրեանքն Շամախու և Բաքուայ, նաև պարոն Եղիազարի յղեալ զաֆրանն։ Իսկ այժմ անձեռնհաս եղաք յայն կողմունսն զթուղթ գրել, յետոյ գրելոց եմք։ Այլև գիր գրելոց եմք ըստ խնդրոյդ ի վերայ Յովսէփ պետին և գանձապետին ձերոյ յաղագս գանձանակադրամին, զի ձեզ հասուսցեն։ Իսկ դու ևս ում կամիս հասանիլ, գրեա նոցա, նմա հասուսցեն, որ ի ձեռն նոցա դիւրաւ հասանիցի քեզ։

Թուղթս այս գրեցաւ և յղեցաւ ի ձեռն նոյն թղթաբեր Մովսէս և Գաբրիէլ տղայոցն ի յելս ամսոյ ԼԱ (31) (513 եր.)։

151ա 1782 թ. հունիս—*Թուղթք ի Կարս ի մուտն յունիսի ամսոյ*

[Որպէս] խոստացաւ սրբազան Վեհն ի մայիսի Լ (30) թուղթն պարոն Հայրապետին, թէ յղելոց եմք զաղայս ի Կարս՝ բերել անտի զբերինս, ահա առաքեաց զքանի տղայս ի Կարս առ պարոն Գէորգն, զի բերցեն զյղեալ բեռինսն ի Հայրապետէն, որ էր առ պարոն Գէորգն, որ նա ևս էր թուղթ գրեալ առ սրբազանն և զեկուցեալ վասն բեռանցն յառաջ քան զայս։ Եւ մանաւանդ յայսմ միջոցի սրբոյ Աթոռոյս գանձապետն Կարսայ քաղաքի՝ մահտեսի Եղիայն զարդիւնս գանձանակին անցեալ թուոյ հասուցեալ էր սուրբ Աթոռս ի ձեռն պարոն Գէորգին։ Վասն որոյ սրբազան Վեհն գրեաց զթուղթս ևս ի վերայ քաղաքին վասն գանձանակին, և ի վերայ պարոն Գէորգին և Եղիային, որպէս ցուցանի։

607. Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան գրեաց սրբազան Վեհն ի վերայ քաղաքին, ծանուցանելով յորում, թէ յանցեալ ՌՄԼ (1781) թուոյ մարտէն մինչև ցսոյն ՌՄԼԱ (1782) թուոյս ապրիլի ԺԵ (15), որ է ԺԳ (13) ամիս և կէս, զարդիւնս գանձանակին սրբոյ Աթոռոյս, զորս ժողովեալ էր հարազատ գանձապետն սորին՝ մահտեսի Եղիայն, այժմ հասուցեալ ողջամբ ընդ 105 դուռուշ՝ ձեռամբ պարոն Գէորգայ մեզ ամբողջապէս, որ էր ՃԵ (105) դուռուշ, ձեռամբ պարոն Գէորգին։ Եւ ապա ի վերջոյ կոնդակին զայս ևս գրեցաւ։ Զի շամբեցի Նազարումն զմի ձեռք տուն վախուալ էր արարեալ սրբոյ Աթոռոյս և ինք վախճանեալ յառաջ քան զայս Գ (3) ամաւ ի Կարսայ քաղաքոջս, որոյ քիրայն ամէ յամ ի ձեռն պարոն Գէորգին հասանէր առ մեզ։ Իսկ այժմ ոբովհետև Ղայյին հակառակօղ ոմանք, գրէ սրբազանն այնր աղագաւ զասատիկ պատուէր ի սոյնում թղթոջ, թէ մի ոք իշխեսցէ ձեռնամուխ լինիլ ի յայն տունն, զի հաստատուն վախմ և ժառանգութիւն է սրբոյ Աթոռոյս, և ով ոք, ինչ կերպիւ և իցէ, զվնասաւոր բանս ինչ խօսեսցի և արասցէ վասն այդ վախուփդ, զայնպիսին չարաչար պատժելոց եմք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Տե՛ս ի նոր տետր 764 երեսն։

608. Թուղթ ևս առ պարոն Գէորգն, ի պատասխանի թղթոյ նորին գրեցելոյ ի մայիսի ԻԵ (25), յորում զեկուցեալ էր զառ ինքն հասանիլն Պօլսոյ մեծ պահարանին և զիւր յղելն դէպ ի Կարին առ պարոն Հայրապետն։ Նաև խնդրեալ յղել զաղայս համդերձ բեռնակրօք առ ինքն, որք և յղեցան իսկ։ Եւ ծանուցան նմա ի ամին թղթի վերոյ յիշեալ բանքդ ամենայն։ Եւ թէ իմացաք զտեղւոյդ որպիսութիւնդ, որոյ վերջն Աստուած բարի արասցէ։ Որում յղեցաւ ևս Բ (2) լիտր գինի և կէս լիտր արաղ վասն իւր, նաև Խ (40) լիտր բրինձ, որոյ ևս Ի (20) լիտրն վասն իւր, Ժ (10) լիտրն՝ մահտեսի Եղիային և Ժ (10) լիտրն՝ մահտեսի Կարապետին։

Թուղթքս այսոքիկ վերոյ գրեալք յղեցան ի ձեռն տղայոց մերոց ի Ղարս յամսոյս յունիսի ի Ա (1)։

1782 թ. հունիս—*Թուղթ ի Շուլաւեր առ Վանական պետն, առ Մխիթար քեալանթարն և առ մէլիք Սարգիսն*

609. [Շ]ուլավերու առաջնորդ Վանական վարդապետն, Մխիթար քեալանթարն և մէլիք Սարգիսն թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն ի ձեռն ուրումն Սահակ անուն առն, ընդ որում և յղեալ էին զայս ինչ՝ ԺԹ (19) բահ, ԻԱ (21) քլունկ և Ժ (10) լիտր երկաթ։

Պատասխան նամակում շնորհակալություն է հայտնվում Վանական վարդապետին, Մխիթար քալանթարին և մելիք Սարգսին։

610. 1782 թ. 1 հունիսի—*Թուղթ օրհնութեան, շնորհակալութեան և յորդորանաց ի Ղարս՝ առ սրբոյ Աթոռոյս գանձապետ մահտեսի Եղիայն վասն նորապէս հասուցեալ գանձանակադրամին, որոյ աղագաւ կոնդակ ևս գրեցաւ ի վերայ քաղաքին*[135]*։*

Ձեռ. № 2803, էջ 1—2

611. 1782 թ. հունիս—*Թուղթ օրհնութեան ի Մարսվան՝ առ սրբոյ Աթոռոյս գանձապետ մահտեսի Թաղէոսն և առ նորին կենակից Մարիամն, որում և շնորհակալութիւն եմ, զի յղեալ էին ընդ որդւոյն իւրեանց Մելքոնին զԲ (2) ղուռուշ դրամս յանուն սրբոյ Աթոռոյս։*

Ձեռ. № 2803, էջ 2—4

612. 1782 թ. հունիս—*Թուղթ ի Պօլիս՝ առ Մասեհեան պարոն Եսային, ի պատասխանի նորին յայսմ թուոյ մարտի ԺԷ (17) գրեալ թղթոյն, որ և յղեալ էր զմի սկհւոյ ծածկոց։ Առ որ՝ օրհնութիւն և շնորհակալութիւն*[136]*։*

Ձեռ. № 2803, էջ 4—6

613. 1782 թ. հունիս—*Թուղթ ի Վան՝ ի վերայ Պարիկենց մահտեսի Սահակին, Ալամին, Վարդանին և Յակոբին. օրհնութիւն և յանձնարարութիւն յաղագս նուիրակ Յակոբ վարդապետին։*

Ձեռ. № 2803, էջ 6—8

151բ 1782 թ. հունիս—*Թուղթք ի Վան առ հարսն անապատաց և առ նուիրակն մեր*

614. *[Հ]արքն սրբոյ անապատացն Լմու և Կտցու՝ Յակոբ և Մարկոս վարդապետքն նարդենիս յատուկ փայեկաւ թուղթ էին գրեալ առ սրբազան Վեհն՝ յղեալ ընդ որում և զժողովարարութեան հին կոնդակն իւրեանց (որ տուեալ էր ի հոգելոյս հայրապետէն վասն երկուցն անապատաց), խնդրելով ըստ նմին օրինակի զայլ իմն կոնդակ նորագոյն։ Վասն որոյ սրբազան Վեհն, ըստ խնդրոյ նոցին և հնոյ սովորութեանն, գրեաց զԱ (1) կոնդակ եւ ընդհանրական ժողովարարութեան յաղագս երկուց սրբոց անապատացն՝ Լիմայ և Կտցու, որ է մինն յանուն սրբոյն Յովհաննու Կարապետին և միւսն՝ յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին։ Եւ զի չունելով որոց զթեմ և զվիճակ, որովհետև զի որովք թերևս լնանեցիւր պակասութիւնք սոցին, ուստի առաջնորդքն սրբոցս Տանց մերտապէս ի սրբոյ Աթոռոյս նստող հայրապետացն զժողովարարութեան թուղթս խնդրեալ առնուին իւրաքանչիւրքն ուրոյն ուրոյն և բաց յայնցանէ, զմի եւ հասարակապէս վասն երկուցն առնուին։ Որպէս զի կարասցեն նոքօք լնուլ զպիտոյս և զհարկաւորութիւնս իւրեանց, որպէս նարդենիս սոքա։ Բայց սակայն յառաջ քան զայս եկեալ ի սուրբ Աթոռս, խընդրեցին ի սրբազան Վեհէն իւրաքանչիւրքն շնորհել զյատուկ յատուկ կոնդակ, զոր և շնորհեաց խսկ։ Իսկ ի ներկայումս զհասարակականն էին խնդրեալ, որ զայն եւ ըստ խնդրոյ նոցին՝ գրեալ յղեաց առ նոսա։ Գրեաց ընդ որում և զԱ (1) թուղթ եւ առ Յակոբ և Մարկոս առաջնորդսն սրբոց անապատացն Լմու և Կտցու, ի պատասխանի թղթոց նոցին, գրեցելոյ ի յունիսի Ա (1)։ Առ որս գրէ սրբազան Վեհն, թէ զթուղթն ձեր յղեալ փայեկաւ առ ընկալաք և զոր ինչ ի նմա գրեալն էր, իմացաք։ Նաև ըստ ձերդ խնդրոյ ահա զկոնդակն եւ գրեալ յղեցաք ի ձեռն դոյն թղթաբերիդ, որ առ մեզ եկն։*

Եւ առ Մարկոս պետն յատկապէս ի սոյնում թղթոջ գրէ և զայս ինչ՝ Քանզի ի Հնդիկս զոյր յատկապէս Կտցու սրբոյ անապատին դրամ ինչ, որ էր Պ (800) եալտուզ, որոյ սակս խնդրեալ էր այժմ նոյն սրբոյ անապատի առաջնորդ Մարկոս վարդապետն զյատուկ կոնդակ իմն, զի յղեսցէ այնու զոմն ի միաբանից իւրոց ի յայն տեղիսն՝ առ ի բերել անտի զայն

դրամն։ Վասն որոյ գրէ առ նա սրբազան Վեհն, թէ յայն հեռաւոր տեղիսն զմարդ յղելն ձեր և զկոնդակ գրելն մեր այնր աղագաւ անպատշաճ համարեցաք։ Այլ զայս տեսաք յարմար և պատշաճ, զի դու հանդերձ գլխաւոր միաբանիւքդ զմի վէքիլլամայ թուղթ գրեցէք ի վերայ մեր և ընդ դոյն սանատին առ մեզ յղիցէք, զի մեք եւ որովհետև ի ներկայումս զնուիրակ եմք յղելոց ի Հնդիկս, նմա հարկեալ պատուիրեսցուք յատկապէս, ընդ որում և զվէքիլլամայ թուղթն ձեր հանդերձ սանատով յղեսցուք, և առ ոմանս իշխանս տեղւոյն ըստ պատշաճին զթուղթ գրեսցուք և հարկեսցուք, զի զդրամն առեալ յանձնեսցեն նուիրակին մերոյ։ Եւ ձեզ եւ զթուղթ գրել և զորքանութիւն դրամոյն և զորպիսութիւն բանին ձեզ եւ ծանուցանել ի միամտութիւն ձեզ։ Որ զուք եւ ի հարկէ ըստ նմին զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան գրելոց էք առ տուօղսն։ Իսկ եթէ բան ինչ ի գլուխ գայցէ ի կողմանէ այդ սանատի Պ (800) եալտուզ ոսկոյն, այսպէս առնելն է դիւրաձեռն և ըստ պատշաճին, և ոչ ձեր զյատուկ մարդ յղելն, որ չեղեալ բան իմն է։

Զայս եւ իմացիր, զի եթէ երկբայութիւն ինչ անցանիցի ընդ միտս ձեր և ասէք, թէ այդպէս բան ինչ ոչ գոյասցի և այլն, առ այդ եւ ծանուցից, զի եթէ եղիցի, բարւոք է, և եթէ ոչ, յայնժամ զձեր վէքիլլամայ թուղթն և սանատն վերստին առ ձեզ եմք յղելոց։ Լե՛ր միամիտ։

Ապա գրէ զշնորհակալութիւն վասն ատլացու դրամոյն, զոր առ նուիրակ Յակոբ պետն էր հասուցեալ։

615. *Թուղթ եւ առ մեր նուիրակ Յակոբ վարդապետն գրեաց սրբազան Վեհն, ի պատասխանի թղթոյ նորին, զոր գրեալ էր ի յունիսի Ա (1) ի ձեռն փայեկին ընդ այս թղթոց. յորմէ մինչև ցայժմ դեռ չէր եկեալ առ մեզ թուղթ ինչ, որպէս յիշեցաւ ի մայիսի ԻԳ (23)։ Իսկ այժմ գրեալ էր ի տեղի հասանիլն առանց վնասու և փորձութեանց և ուրախութեամբ զբուռն հարկանելն գործոյն։ Նաև խնդրեալ էր գրել յաղագս իւր զթուղթ յանձնարարութեան ի վերայ Պարիկեանցն, այլև ծանուցեալ էր զառնուլն զՃՀ (170) ղուռուշն ի Մարկոս վարդապետէն և զայլ որպիսութիւնս իւր։ Որում գրէ սրբազանն, թէ զթուղթդ ընկալաք և զոր ինչ ի նմա գրեալն էր, առ իմացաք։ Նաև ըստ խնդրոյդ ահա առ Պարիկեանսն վասն քո զթուղթ յանձնարարութեան գրեալ, առաքեցաք ի ձեռս քո, զոր տացես նոցին։*

152ա *Եւ թէ իմացաք եւ զՃՀ (170) ղուռուշ դրամ առնուլդ ի Մարկոս վարդապետէն և միամտեցաք, զոր ձեռամբ հաւատարմի հասուսցես մեզ։ Իսկ այժմ յորժամ աւարտեալ զքաղաքն, ելանիցես յարտաքին վիճակսն, խմաց արասցես մեզ, զի միամիտ լիցուք։ Եւ ապա յորդորումն՝ առ ի արիանալ ի գործն իւր։*

616. *Գրեաց և զԱ (1) փուսուլայ եւ և եդ ի սոյն թղթոջս, յորում գրեալ էր զայս ինչ, թէ զի ա՞րդ ի կողմանէ ընծայիցն փաշային ոչ գրեցեր զբան ինչ, զոր մեք եւ իմացեալ, միամիտ լինէաք։ Ուրեմն պատուէր եղիցի, զի զամենայն որպիսութիւնսդ հանդերձ պարագայիւք գրեսցես մեզ։ Եւ մանաւանդ վասն Բաղդասար վարդապետին զլուր իմն լուաք հարևանօրէն, որպէս թէ վախճանեալ իցէ։ Ուստի գրեմ, զի ճշտութիւնն այս ասացելոց, կամ որպէ՞ս և զի՞նչ լինելն և կամ ո՞ւր և զի՞նչ առնելն գրեսցես մեզ հաւաստի։ Եւ զայլ մեզապատշաճ որպիսութիւնսդ տեղւոյդ և քո գրել մեզ մի ձանձրասցիս։*

617. Թուղթ ևս առ Պարիկեանց մահտեսի Սահակ աղայն, Ալամն, Վարդանն և Յակոբն, օրհնութիւն և յանձնարարութիւն յաղագս նուիրակ Յակոբ վարդապետին, զոր ինքն էր խնդրեալ գրել, ծանուցանելով զհաւատարիմ լինելն իւրեան և գործոյն, որպէս յիշեցաւ ի վերդ ի թուղթն նորին։

Ե (5) թուղթքս այսոքիկ վերոյ գրեալք յղեցան դէպ ի Վան ի ձեռն անտի եկեալ նոյն փայեկին ի ԺԲ (12) [յունիսի]։

152բ 1782 թ. հունիս—Թուղթք ի Պոլիս ի յարտաքին վիճակն նորին և յայլ և այլ տեղիս ոմանս

[Վասն] զի ընդ աւուրս այսոսիկ ուխտաւորք եկին ի Պոլսոյ և յայլ շրջակայից՝ ի Կեսարիոյ, ի Թրակիոյ, ի Թօխաթու, ի Կարնոյ և յայլ տեղեաց ի սուրբ Աթոռս։ Ընդ որս գոյին թուղթք յոմանց առ սրբազան Վեհն նաև ի բազմաց ողորմութիւնք և յիշատակիք ինչ, զորս յանուն սրբոյ Աթոռոյս յղեալ էին ի տեղւոջէ իւրեանց՝ խնդրելով աստի զթուղթս օրհնութեան։ Ուստի գրեալ սրբազան Վեհին զթուղթս օրհնութեան առ նոյն առաքօղսն թղթոց և դրամոց, և յղեաց ի ձեռն նոյն բերողացն առ նոսա։ Որք ահա մի առ մի նշանագրին ի ներքոյ։

618. Նախապէս գրեաց Ա (1) թուղթ ևս ի Պոլիս առ Սախայօղլի Մարտիրոս և Գրիգոր ամիրայսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց, զոր գրեալ էին ընդ այս վերոյ յիշեալ ուխտաւորացս։

Պատասխան նամակ է երկու պոլսեցի ամիրաների, որոնք հանձնարարական գրություններ էին տվել ուխտավորներին և հայտնել Զաքարիա պատրիարքի կրկին գահակալելու մասին։

153ա 619. Կոնդակ ևս օրհնութեան և շնորհակալութեան առ Կէյվայու ժողովուրդսն, որք յորդորմամբ նուիրակին մերոյ՝ Գալուստ վարդապետին հաստատեալ էին ի միջի իւրեանց զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս և զերախայրի նոյն նորոգ գանձանակին ևս յղեալ էին այժմ ի սուրբ Աթոռս և առ մեզ ի ձեռն հարազատ և նորոգ գանձապետին մերոյ՝ մահտեսի Սերօբին, որ եկեալ էր յուխտ։ Վասն որոյ սրբազան Վեհն մեր վերստին հաստատեաց զնոյն Սերօբն ի գործ գանձապետութեան և ի ձեռն նորա յղեաց զայս կոնդակ օրհնութեան առ նոյն հասարակ ժողովուրդսն։ Ծանուցանելով որոց զամբողջ հասանիլն առաջին պտղոյն գանձանակին իւրեանց նորոգ հաստատելոյ (որ էր ԽԲ (42) ղուռուշ) ձեռամբ մահտեսի Սերօբին, և զվերահաստատիլն նորին ի նոյն գործ գանձապետութեան։ Նաև պատուէր և յորդորումն ևս ի սմա, թէ որպէս սիրով և յօժարութեամբ ի միջի հաստատեցաք զայս գանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս, նոյնպէս հաստատուն պահելով ի ձեզ, զարդիւնսոր առաքիք միշտ և զարդիւնսն ըստ ժամանակին ի սուրբ Աթոռս և առ մեզ հասուսջիք, զի և մեք այսպէս գրեսցուք առ ձեզ զօրհնութեան և զշնորհակալութեան թուղթս, որպէս ահա այժմ գրեցաք։ Այլև զորդիական սէր և զհարազատութիւնս ձեր ևս մշտապէս ունիցիք առ սուրբ Աթոռս և առ մեզ, կամելով և առնելով զօգուտն սորա հանապազ, որով ընկալջիք զվարձս յԱստուծոյ (519 երեսն)։

620. Թուղթ ևս ի Կեսարիա առ նորին առաջնորդ Մատթեոս վարդապետն, ի պատասխանի թղթոյ նորա գրեցելոյ ի յապրիլի ԺԵ (15) ի ձեռն կեսարացի մահտեսի պարոն Մելքոնին։ Որում գրէ սրբազան Վեհն

նախապէս՝ զշնորհակալութիւն վասն հարազատութեանն և սիրոյն, որ առ սուրբ Աթոռս և ապա՝ յորդորումն կալ մշտապէս ի նոյնն։ Եւ թէ կամէաք թէպէտ ի վերայ հասարակ ժողովրդոց քաղաքիդ զկոնդակ օրհնութեան գրել, սակայն նկատեալ հոգքն և պէսպէս զբաղմունքն ոչ թողին։ Վասն որոյ գրեմ սիրելւոյդ, զի զմէնչ համայն քահանայից, բարեպաշտօն իշխանաց և ռահասարակ օրհնեալ ժողովրդոց քաղաքիդ ողջոյն և օրհնութիւն տացես, որք և լիցին ողջք և ի խնամս Տեառն պահպանեցեալք։

Գրէ և զայլ իմն պատուէր՝ իբր լուաք, եթէ անկարգութիւն և անպարկեշտութիւն իմն գոյ ի մէջ կանանց մերձակայ գիւղորէից քաղաքիդ։ Որպէս թէ հոլանի և բացերես անպատկառապէս շրջին, որ է ընդդէմ պարկեշտ սովորութեան ազգիս մերոյ և ներհակ առաքելական հրամանին, որպէս և գիտես իսկ։ Ուրեմն հարկ և պատուէր լիցի սիրելւոյդ իմոյ, զի զայդ անկարգութիւնդ բոլորովին հանճարեղութեամբ և ջանիւ հոգևոր խրատուց և պէսպէս յորդորանաց և քարոզութեանց ջնջեսցես բառնալ ի դոցանէ, զոր և առնելովդ զվարձս ի Քրիստոսէ առնուցուս և զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնչ հանապազ։ Ամէն։

621. Թուղթ ևս ի Կարին առ պարոն Հայրապետն՝ յաղագս այրւոյ միոյ, որ էր մայր Ղազարապատի սպասաւոր տիրացու Առաքելին, որոյ ի մեռանիլ առն, սակաւ ինչ պարտք էր մնացեալ ի նմանէ տաճկաց տալիք, որոյ աղագաւ տաճիկքն յափշտակել կամէին զորբսն նորա։ Ուստի եկն ի սուրբ Աթոռս՝ առ որդին իւր տիրացու Առաքելն, առ ի գտանել ի նմանէ զօգնութիւն ինչ։ Իսկ նա ևս չունելով ինչ, բայց միայն զԺԵ (15) ղուռուշ, որ զայն ևս ետ մօրն։ Բայց մայրն, առ կանացի ահին, ոչ կարէր բառնալ ընդ իւր և տանել։ Վասն որոյ բերեալ զայն, եթող ի նուէն սրբազանին՝ խնդրելով զթուղթ, զի երթեալ ի Կարին, առցէ ի Հայրապետէն։ Վասն որոյ սրբազանն գրեաց զթուղթ առ Հայրապետն, զի տացէ ի գնալ այրւոյն առ ինքն զԺԵ (15) ղուռուշն, և պատուէր առ Ղազար պետն, զի ի ժողով ևս արասցէ վասն նորա։

153բ Եւ բաց յայսցանէ, որք նշանակեցան, գրեցան և այլ մանր մանր թուղթք օրհնութեան առ այնոսիկ, որք յանուն սուրբ Աթոռոյս զկամաւոր ողորմութիւնս էին յղեալ՝ իբր լուսագին, յիշելիք, հոգեբաժին և այլ պատճառաւ, և խնդրեալ էին զօրհնութեան թուղթս, որք ի վեր անդր յիշեցան։ Զորս ահա նշանագրեսցուք ի ներքոյ։

Նվիրատուներ, որոնց ուղարկվել են շնորհակալության օրհնագրեր։ Նվիրատրված գումարների և իրերի հիշատակմամբ անվանապես թվարկված են 86

ՂԱ (91) թուղթքս այսոքիկ վերոյ նշանագրեալք, յղեցան ի ձեռն այնոցիկ, որք առ իւրաքանչիւրոց թուղթսն ծանուցան ի ԺԴ (14) [յունիսի] (էջ 153ա—154բ)։

154բ 1782 թ. հունիս—Թուղթք ի յերկիրն Ռուսաց և ի Թիֆլիզ

[Ն]արդեննիս թուղթք եկին առ սրբազան Վեհն ի Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետէն մերմէ, զոր յառաջ քան զայս յղեալ էր ի Թիֆլիզ ի ձեռն Մօղնու եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Աբրահամին՝ առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։ Որ և եկեալ այժմիկ նոյն տէր Աբրահամին ի սուրբ Աթոռս՝ ի տես սրբազան Վեհին,

եբեր և զթուղթսն, ընդ որս էր և զբազմակնիք մահսարն համահաճական երկրին այնորիկ, զոր յղեալ էր սպասաւոր նորա՝ տիրացու Աւետիքն ի Հաշտարխանու: Զորս ընկալեալ և ընթերցեալ սրբազան Վեհին, ծանեաւ զամենայն գրեցեալսն ի նոսա: Յորոց և մահ Մոսկովու Եղիազար ազնիւ աղային, որոյ սակս ոչ սակաւ ցաւ և կսկիծ եղև սրբազան Վեհիս մերոյ, քանզի էր բարեհռչակ և անուանի ոմն, նաև օգտակէր և հաւատարիմ սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ հարկաւոր համարեալ սրբազան Վեհին՝ գրել զթուղթս մխիթարական առ ազնուազարմ և բարետոհմ որդիս նորա՝ Յովհաննէս ազնիւ աղայն, որ ի Պետրպորք և Մինաս և Յովակիմ աղայսն, որք ի Մոսկով: Զոր և գրեաց իսկ և յղեաց առ իւրաքանչիւրսն, որպէս նշանակեմք ահա:

622. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Պետրպորք առ ազնիւ Յովհաննէս աղայն յաղագս մահուան հօրն իւրոյ՝ ազնիւ Եղիազար աղային, որ յետ օծման սրբոյ հրաշալի եկեղեցւոյն, զոր շինեցուցեալ էր յանուն ամենասրբոյ խաչին՝ բազում ծախիւք, փոխեալ էր աստի կենացս առ Տէր՝ բարի մահուամբ: Ծանուցանէ և զանցեալ ամի թուղթ գրելն ևս առ ինքեանս և առ հասարակութիւնն Մոսկովու քաղաքին, օրհնութիւն և շնորհակալութիւն, հանդերձ շնորհաւորութեամբ սրբոյ եկեղեցւոյ շինմանն աղագաւ: Եւ ի վերջոյ յորդորէ, զի որպէս առ Աստուած փոխեցեալ հայրն իւր էր օգտաշան և հարազատ սրբոյ Աթոռոյս, ըստ նմին և ինքն եղիցի, ըստ որում է գտեալ հարազատ որդի հօրն իւրոյ ազնուոյ: Գրէ և զողջոյն ազնուազուն որդւոյն իւրոյ՝ աղայ Յարութիւնին: (764 եր.):

623. Թուղթք ևս գրեաց սրբազան Վեհն ի Մոսկով առ ազնուազարմ աղայ Մինաս և աղայ Յովակիմ՝ եղբարսն նոյն ազնիւ Յովհաննէս աղային[137], ևս մխիթարութիւն վասն մահու հօրն իւրեանց նոյն վերոյ յիշեալ ազնիւ Եղիազար աղային, ի նոյն միտ թղթոյ, որ առ մեծ եղբայրն իւրեանց գրեցաւ: (Տե՛ս ի նոր տե[տր] 517 եր.):

624. Թուղթ ևս առ նուիրակ և առաջնորդ Հաշտարխանու Յովսէփ վարդապետն, ի պատասխանի Բ (2)-ց թղթոցն նորա, զորոց Ա (1) գրեալ էր ի յանցեալ ամի հոկտեմբերի Ի (20) ի Մոսկովու և զԱ (1)՝ ի ներկայ ամիս յունվարի ԻԸ (28) ի Պետրպօլքու: Որում գրէ սրբազանն զյառաջագոյն ամենից թղթոց նորին գրեցելոց մինչև յանցեալ օգոստոսի ԺԲ (12) հասանելն առ ինքն, և զպատասխանիս նոցունց լեալն գրելն ի յելն յունվարի, հանդերձ ամենայն թղթովքն խնդրեցելովք, և առ նա յղելն ի ձեռն Թիֆլիզեցի վաճառական Եսայուն, և զպատասխանիս այնց խնդրէ: Ծանուցանէ և ընդ այս Բ (2)-ց թղթոց (զորս ի վերն յիշեցաւ) հասանելն համահաճական և բազմակնիք մահսարին երկրին այնորիկ, զոր սպասաւոր նորա՝ տիրացու Աւետիքն յղեալ էր ի Հաշտարխանու առ վերոյ յիշեալ տէր Աբրահամ քահանայն՝ հասուցանել ի սուրբ Աթոռս, զոր և հասոյց իսկ:

Գրէ և զշնորհակալութիւն յաղագս հարազատաբար ջանացողութեանցն և յամենայնի զբարւոք հոգս առնելոյն, և վասն ոմանց բանից գրեցելոց զպատասխանիս: Վասն զի գրեալ էր, թէ զթուղթն հոգելոյս հայրապետին, որ ի Պետրպօլք առ մեծ իշխանն, առեալ ընդ իս և գնացեալ անդ առ նա, թարգմանեցուցի և ամենայն միտսն ծանուցի լի-
155ա վին և տեառն ինքեան: /// Ընդ որ ուրախացեալ եղև շնորհակալ յոյժ: Բայց սակայն յաղագս միւս թղթոյն ոչ գրէ զբան ինչ և զեկուցանէ

զտալն և զոչ տալն: Վասն որոյ հարկէ սրբազան Վեհն զնորին և զյետին թղթոցն յղելոց ընդ Եսայի վաճառականին՝ առ իւրաքանչիւր տեարսն և մեծ իշխանն հասուցանելն, հանդերձ ամենիւք պատշաճաւոր որպիսութեամբք:

Եւ թէ վասն սաղիմացւոցն, զոր ինչ գրեալ էիր ի Պօլիս՝ հանդերձ ազնուօք հասեալ էր անդ և նոքա բանս էին գրեալ մեզ՝ Բ (2) պատրիարգունքն և ոմանք յիշխանացն իբրու զքէն գանգատ, թէ այսպէս և այնպէս առնէ: Գրեա՝ մի՛ առնել զայնպիսիս և ի Սաղիմ խնայել և այլն: Մեք ևս, զոր ինչ պատշաճն էր, գրեցաք, զայն ցուցանելով պատճառ, թէ Սաղիմայ նուիրակն պարտ էր զվկայական ունիլ աստի, մինչ ոչ է ունեցեալ, վասն այնորիկ եղեալ այնպէս: Եւ մանաւանդ վերահաստատեցաք ևս, գրելով, թէ այսուհետև թարց մերոյս վկայականի մի երթիցէ անդ նուիրակն Սաղիմայ: Յղեցաք և զօրինակն վկայականին առ նոսա, զի տեսցեն: Զոր մի ևս աստ առ քեզ յղեցաք:

Իսկ շնորհաւորական կոնդակն վասն հոգևոր դպրանոցին Հաշտարխանու[138], զոր խնդրեալ էիր, չկարացաք հասուցանել և առաքել ի պատճառս կարի զբաղանաց թղթագրութեանցս առ այլ և այլ տեղիս, բայց յետոյ գրելոց եմք, միամիտ լեր: Եւ մանաւանդ մեծապէս շնորհակալ եղաք զքէն և ուրախացեալ օրհնեցաք զսիրելի որդիդ մեր յաղագս հաստատելոյդ զայդ դպրարան: Այլև զՍաղիմայ Մովսէս պետն ըստ մերոյս գրեցելոյ արասցես: Եւ զնուիրակն սիրով շահեալ, օժանդակ լիցիս իւրեան և գործոյն: Քանզի ի կողմանէ զորա և վասն արգելլոյ ի գործոյն, գրեալ էին մեզ ի Սաղիմայ և ի Պօլսոյ: Առ որս և մեք գրեալ զգիր, միամտեցուցաք, թէ Յովսէփ վարդապետն վերստին հաստատեալ է զնա ի գործն իւր: Իսկ և զայն գիրն, զոր իշխանքն տեղւոյդ գրեալ և պատրաստեալ էին վասն մեր և կամէին յղել ի Պօլիս՝ որպէ՞ս արարին, զնորին զի՞նչ լինելն գրեսցիս մեզ:

Ծանուցանէ և զվերստին կացուցանելն զՋաքարիա վարդապետն պատրիարգ և զաքսորումն Յովհաննէս վարդապետին: Դարձեալ՝ զմահ ի Քրիստոս հանգուցեալ Եղիազար ազնիւ աղային, զոր գրեալ էիր, իմացաք և կարի առաւել վշտացաք ընդ այն: Որոյ աղագաւ զթուղթս մխիթարութեան գրեալ առ Աստուծով զօրացեալ որդիսն նորա՝ ազնիւ Յովհաննէս աղայն, և աղայ Մինաս, և աղայ Յովակիմն, առաքեցաք ի ձեռս քո, որ դու ևս զողջոյն և զօրհնութիւն տալով և մխիթարելով ի մերս զիմաց, հասուսցես առ իւրաքանչիւրսն:

Իսկ և ըստ որում գրեալ էիր, թէ ի Հաշտարխան եմ դառնալոց, յուսամ թէ այժմ եկեալ իցես անդ: Ուրեմն զգալդ և ոչ գալդ գրեալ ծանուցես մեզ: Ընդ տպարան հաստատելդ ևս ուրախացաք: Այլև վասն Եսայու դրամին, զոր գրես թէ հասուցեա՞լ է, թէ ոչ, յառաջ քան զայս գրեցաք քեզ ի միամտութիւն սիրոյդ, ընդ նմին և զԱ (1) ղապզ ևս: Իսկ և վասն ջուղայեցի Պօղոսեան պարոն Խաչիկին, զոր ինչ գրեալ էիր, իմացաք, որոյ սակս քեզ և լուսահոգի Եղիազար և Յովհաննէս աղայիցն զյանձնարարութիւնս գրեցաք յառաջագոյն: Վասն զի մի ևս էին գրեալ ի Պօլսոյ յաղագս դորա՝ գրել յայդր քեզ և իշխանացն զյանձնարարութիւնս, որպէս և գրեցաք իսկ:

Եւ վերջապէս գրէ և ծանուցանէ զմահն Բասրայու Յարութիւն աղային և զորպիսութիւն որդւոյ նորա՝ Ստեփաննոս աղային և պատուէր,

զի բանիցն նոցա հոգ տարցի: Գրեցոց եմք, ասէ, Ստեփաննոս աղային, որպէս գրեալ էիր գրել հօրն նորա՝ Յարութիւն աղային:

(Տե՛ս զօրինակն սորա ի նոր տետր 360 երեսն):

625. Թուղթ ևս եղաւ ի սոյն վերոյ գրեցեալ թղթոջս և յղեցաւ ի ձեռն Յովսէփ վարդապետին, որ էր օրինակ գրոյն վկայականի, կամ հրամայականի, որ և ըստ լեզուի ռուսաց բաշբօրթ ասի: Զոր կաթուղիկոսունք սրբոյ Աթոռոյս յատկապէս տան նուիրակաց սրբոյ Երուսաղեմի առ ի մտանել այնու յերկիրն Ռուսաց: Վասն զի Յովսէփ վարդապետն անդ զնորագոյն բան իմն էր սահմանեալ, խորհրդակցութեամբ ազնուաց մերազնէից անդ եղելոց, իբր նուիրակունք Սաղիմայ կամ այլ վանորէից առաքեցեալս անդ ժողովարար որք, հրամանաւ և վկայականաւ թղթով կաթուղիկոսաց սրբոյ Աթոռոյս գնասցէ առ նոսա, ապա թէ ոչ, մի ընկալցին զայնս: Զոր և արարեալ այսու խորհրդակցութեամբ և հաստատեալ արքունական հրամանաւ, յորմէ և հրովարտակ ևս հանեալ ի վերայ կուսակալաց երկրին այնորիկ (որք կամէնդաթ ասին ըստ նոցին լեզուի), որպէս զի նուիրակունք սրբոյն Երուսաղէմի թարց բաշբօրթի ի սուրբ էջմիածին նստող հայրապետաց մի մացին յերկիրն այն: Իսկ յետ այսորիկ ազգ արարին և սրբազան Վեհին ևս զայս անցք, զի իմասցէ և ըստ նմին կանոնի զօրինակ բաշբօրթին գրեսցէ և յղեսցէ առ ինքեանս և առ Սաղիմ և ի Պօլիս առ պատրիարգն և առ իշխանսն ևս,
155բ զի իմասցին զկերպ և զոճ գրեցելոյն: Զոր գրեալ սրբազան Վեհին յղեաց առ նոսա և զմի ևս առ Յովսէփ վարդապետն, որպէս ի վերոյդ յիշեցաւ, վասն զի եթէ զէպ լինիցի նոցա յղել այսուհետև յայն կողմունսն զնուիրակ, առանց վկայականի թղթոյ Աթոռոյս մի առաքեսցեն, զի մի արգելումն լիցի գործոց նոցա անդ և կամ այլ իմն ազմուկ և վրդովումն ինչ ի պատճառս այնց:

Իսկ օրինակ բաշբօրթի՝ այսինքն վկայականի, կամ հրամայականի գրոյ էր այս.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև լուսակերտի Աթոռոյս մեծի սրբոյ էջմիածնի, որ ի դաշտ Արարատեան:

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, քրիստոսական ողջունիւ և հոգեպարար շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս նորին, ծանուցումն լիցի սահմանակալ ազնուական և պարոն կամէնդաթացդ օրհնեցելոյ ազգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսրութեանն: Զի սոյն գրաբեր (այս անուն) վարդապետս, որ է ի բնակչաց մեր Հայոց ազգիս վանորէիցն սրբոց, որք գոն ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և միաբան սրբոյ Յակոբեանց Առաքելոց հրաշազարդ Աթոռոյն, որ անդ: Առաքեցեալ է ի նորին պատրիարք (այս անուն) աստուածիմաստ վարդապետէն և յարքեպիսկոպոսէն ի նուիրակութեան համայն մերազնեայ ժողովրդոցն, որք գոն ի յօրհնեալ երկրոջդ Ռուսաց, առ ի ժողովել ի նոցունց զնուիրակութիւնս և զայլս տուրս կամաւորս, զորս սովորաբար տան նոքա յանուն սրբոց տնօրինականաց տեղեացն Քրիստոսի՝ առ ի պայծառութիւն յիշեալ վանորէիցն մերոց սրբոց, որք անդ: Վասն որոյ և մեք զսոյն զվկայականս մեր ետուք դմա, զի չլինիցիք դմա արգելիչք: Ուրեմն ի գալն զորա և հանդիպելն ձեզ այսու վկայական թղթով մերով, առանց ընդդիմադարձութեան ի ներքս ընկալեալ՝ ուղարկեսջիք ձերով բաշբօրթիւն ի մէջ ժողովրդոցն մերոց, որք գոն ի յօրհնեալ երկրոջդ ձերում, և

առ նոցին առաջնորդս (այս անուն) արքեպիսկոպոսն: Եւ լերուք ողջ ի Տէր՝ զօրացեալք ի շնորհս նորին յարաժամ: Ամէն:

Եւ ձեզ՝ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի, համայն հայկասէր, լուսաւորչակրօն և միաբանդաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք կայք ի յօրհնեալ երկրոջդ Ռուսաց, մանաւանդ ծայրագոյն նուիրակիդ մերոյ և դոցին արժանավայել առաջնորդ (այս անուն) արքեպիսկոպոսիդ պատուիրեմ, զի զհոգևոր որդիդ մեր (այս անուն) հանճարաշատ վարդապետդ սիրով մեծաւ ընկալջիք և ըստ արժանւոյ սրբոյ կարգին շահեսջիք և մխիթարեսջիք, և ըստ սովորութեանն ձերոյ բարւոյ դուք՝ օրհնեալ ժողովուրդք, զնուիրակութիւնս և զայլ տուրս զւարթս և զառատս ամենայօժար սրտիւ և լիաձեռնութեամբ տաջիք դմա յանուն և ի սէր սրբոց տնօրինականաց տեղեացն Քրիստոսի և ի շինութեան և ի պայծառութեան հիահրաշ Աթոռոյ սրբոց Յակոբեանց Առաքելոցն և այլ վանորէից մերոց սրբոց, որք անդ: Առ ի ընդունիլ ձեզ զշնորհս և զօրհնութիւնս ի նոցունց և վարձատրիլ և յԱստուծոյ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Եւ կատարողքդ հոգևոր հրամանացս մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ: Եւ շնորհք սրբոյ և աստուածախիջի Աթոռոյս ձեզ լիցի յարաժամ: Ամէն:

Գրեցաւ ի թուոջ Փրկչին 1782, ի մարտի 30 ի լուսանկար և յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին»:

Դ (4) Թուղթքս ուրոյն պահարանեալ յղեցաւ ի ձեռն նոյն թղթաբեր տէր Աբրահամին դէպ ի Թիֆլիզ, զոր անտի ևս յղեսցէ Յովսէփ պետին, ԺԶ (16) [յունիսի]:

626. [Բ]երեալ էր սոյն վերոյ գրեալ տէր Աբրահամս ընդ ինքեան ի Թիֆլիզու ևս զթուղթս յամանց և յԻսրայէլ կաթուղիկոսէն, որ յառաջ քան զայս գրեալ էր առ սրբազանն զԱ (1) ևս թուղթ և ծանուցեալ ի նմա զկզձ և զբաղձանս իւր առ ի գալ ի սուրբ Աթոռս յախտ և ի տես սրբազան Վեհին: Բայց զի սրբազան Վեհն գալով յայնժամ ի մէջ կարի առաւել հոգաց և զանազան զբաղանաց, ոչ կամեցաւ գալ, այլ մնալ այնչափ, մինչև պատշաճաւոր ժամանակ մի լիցի, որ սրբազանն ինքն ևս սակաւ ինչ թեթևասցի ի ծանրութենէ զբաղանաց և գրեսցէ յայնժամ առ նա զթուղթ՝ ի գալ, և ապա եկեալ եկեսցէ: Իսկ որովհետև այժմ ևս
156ա յայտնեալ էր ի սոյն թղթոջ զնոյն տենչանսն, վասն որոյ // զԱ (1) թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ Իսրայէլ կաթուղիկոսն, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր ընդ տէր Աբրահամին գրեալ էր: Որում գրէ սրբազանն, թէ որովհետև սիրելի եղբայրդ մեր ունէիր յառաջագոյն զկզձս գալ ի սուրբ Աթոռս և առ մեզ, և այժմ ևս ցանկաս գալ, ուստի գրեմ սիր[ել]ւոյդ, զի երբ և կամիցիս, եկեսցես ի սուրբ Աթոռս և առ մեզ, զի տեսութեամբ միմեանց լցուսցուք զկզձս մեր, թէպէտ այժմ ևս կամք ի մէջ զբաղանաց մեծաց:

Դարձեալ գրեալ էիր, թէ գիտեմ զանչափութիւն սիրոյդ, որ առ իս, բայց բազումք այնք են, որք ջանան յեղաշրջել առ իս ի յատելութիւն և այլն: Առ որ պատասխանեալ, ասէ սրբազանն, թէ ոչ այդպէս, զի ոչ ունիմք մեք այնպիսի բարս, որ ի բանս և ի խօսս մեր և ի սիրելութիւնս ընդ ումեք յեղաշրջեսցի և փոփոխական գտանիցիմք և ոչ այնպէս, զի դիւրալուր լիցուք ամենայն ումեք, թէև բազումք ասասցեն զբազում ինչս: Այլ այս է, որպէս տեսեր զիս ի սկզբանն, մինչ եկիր ի սուրբ

Աթոռոս և չեա այնորիկ ևս կրկին, այժմ ևս այնպէս իմա։ Զոր սակս անձեռնահասութեան մերոյ չկարացաք ծանուցանել յայնժամ սիրոյդ, մինչ զկոնդակ նուիրակութեան յղեցաք առ Կարապետ վարդապետն՝ հանդերձ սրբալոյս մեռոնաւ։ Իսկ այժմ որովհետև զպատասխանիս թղթոյդ գրէաք, ծանուցաք և զայսոսիկ եղբայրութեան քում, զի գիտասցես։ Եւ թէ զգիրդ սիրոյ և որպիսութեան մի պակասեցուսցես։

(Տե՛ս ի նոր տետր 768 երեսն)։

627. Թուղթ ևս առ մէլիք Աւետիքին, ի պատասխանի թղթոյ նորին, զոր գրեալ էր ընդ նոյն Աբրահամին և վասն նորին զյանձնարարութիւն ևս։ Որում գրէ սրբազան Վեհն զթուղթ սիրոյ և օրհնութեան՝ հանդերձ շնորհակալութեամբ յաղագս հարազատական սիրոյն և բարի ջանացողութեանն, որ առ սուրբ Աթոռս, զորս ցուցեալ էր յայսմ թղթի, յիշումն ածելով և զնախնեաց իւրոց արարեալ զայնպիսիս, զոր և ցուցանէ և խոստանայ ունիլ նման նոցին՝ զնոյնս մշտապէս։ Եւ յաղագս տէր Աբրահամին, որ զյանձնարարութիւն էր գրեալ, ասէ, ըստ խնդրոյ ձերոյ և ըստ իւրոյ արժանոյն շահեալ դարձուցաք յետս, յորմէ իմանալոց էք զորպիսութիւնս մեր և սրբոյ Աթոռոյս։

Գրէ և զյանձնարարութիւնս ի կողմանէ ճորտիցն սրբոյ Աթոռոյս՝ առ ի բարուքապէս ակնարկել ունելով ի խնամս, զի մի որ ճնշօղ և նեղացուցանօղ լիցի նոցա նման այլոց։ Քանզի լսեմք քանիցս անգամ, որ արտաքոյ իւրեանց սովորութեանն զպահանջմունս առնէք ի նոցանէ։ Վասն որոյ գրեմ սիրելւոյդ պահել զդոսա ըստ կանոնի իւրեանց՝ ի պատիւ սրբոյ Աթոռոյս և մեր։ Զի մի վշտացեալք միւս անգամ ևս զլսելիս մեր ևս վշտացուսցեն։ Որոց զոր ինչ բարերարութիւնս առնիցես, սրբոյ Աթոռոյս և մեզ լիցին համարեալ յիրաւի և շնորհակալութեամբ օրհնելոց եմք զքեզ։

(Տե՛ս ի նոր տետր 514 եր.)։

628. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ գօրեցի Մանուչարեան պարոն Ստեփաննոսն, որ ի յախթարմայութենէ դարձեալ էր ի դաւանութիւնս մեր[139]։ Առ որ յառաջ քան զայս ևս գրեցաւ զթուղթ օրհնութեան, յորժամ եկն համբաւ դառնալոյ նորա ի չար աղանդոյն ի յամբիծ հաւատս մեր։ Որ և զպատասխանի այնր թղթոյ գրեալ էր այժմ առ սրբազանն, կայր ի Թիֆլիզ առ արքայն և ջանայր զթուլամորթսն, որք ի մէնջ հեստեալ էին, վերստին դարձուցանել ի յուղղափառութիւն։ Վասն որոյ ի պատասխանի նորին թղթոյ, գրէ այժմ առ նա սրբազան Վեհն զթուղթ, յորում յաղագս վառելոյն ի բարի նախանձ և աստ ամենայնի ջանացողութեանն (ի պատճառս այնց, որք կային դեռևս ի թիւր և ի մոլար կորստական ճանապարհին, զօրհնութիւն և զշնորհակալութիւն ևս), զի և զնոսա դարձուցէ ի միաբնադաւան և ճշմարիտ հաւատս մեր։

Գրէ և զպատուէր ևս խրատական ասելով, թէ զդոյն հոգի, զոր զգեցեալ ես և զդոյն բարի նախանձ, որով վառեցեալ ես, և հետևեալ վասն հեստեցելոցն ի մէնջ, զի թէրևս ապրեցուսցես զոմանս ըստ առաքելոյն բանի՝ դարձուցանելով ի յուղիղ դաւանութիւնս մեր, զդոյնս անմեկնելի պահեսցես ի քէն և յայդ ջանս և ի բարի նախանձ կացցես միշտ վառեալ։ Յիշէ և ծանուցանէ առ արքայն ևս զթուղթ գրելն յաղագս այսր իրի, քան զայս յառաջ, զի հրամանն իւր ի կատարումն ածցէ և բարձցէ զաղանդն ախթարմայութեան։

Իսկ և գրեցաք, ասէ, առ Կարապետ վարդապետն մեր և առ մէլիք Աւետիքն և առ այլ ոմանս անձինս, զի մի թուլասցին ի նոյն բարի ջանից, այլ ջանացեալք լաւապէս, առաջացուցանել տացեն զհրաման արքային։ Ուրեմն դու ևս մի վերջասցիս յայդ աշխատեցմանէ հոգևորէ,
156բ այլ ջանասցես հանապազ հոգ տանիլ զմին, զի թերևս լիցիս պատճառ դարձման նոցին՝ արժանաւորելով կրկին վարձուց։ Որ և նոյն ինքն պատճառն ամենայն բարեաց Աստուած յաջողեսցէ քեզ յամենայն յայդպիսի ջանացողութիւնսդ քո առնել և կատարել զհաճոյս իւր։ Եւ թէ զբաղձանսդ, զոր յայտնեալ էիր, իբր գալ ի սուրբ Աթոռս և առ մեզ՝ ի վայելել զհոգևոր շնորհս սորին և զօրհնութիւնս մեր, առ այդ մեք ևս ուրախացաք, քանզի յոյժ բարուք լինի, վասն զի շահելոց ես հոգևորապէս և մարմնաւորապէս։

Նաև ծանուցանէ զտէր Աբրահամի գալն, ի ձեռն որոյ և զթղթոյն իւրոյ հասանիլն և մանաւանդ զպատմելն բերան առ բերան զզուարճաբար և զբերանոյթ դարարումն լուրին։ Այլև գրէ, թէ որ ի վերայ Գօրու զկոնդակ էիր խնդրեալ և վասն մեր հարազատ գործակալ տէր Սահակ արքիաչան քահանային ևս զբանս գրեալ, զայդ յառաջ Կարապետ վարդապետն ևս էր գրեալ մեզ։ Եւ մեք գրեցաք նմա, զի տէր Սահակն, եթէ կարելի է, առաքեսցէ ի սուրբ Աթոռս, զի և մեք տեսցուք զնա և բերան առ բերան, զոր ինչ պատշաճն է, պատուիրեսցուք նմա և նոր ի նորոյ զինքն գործակալ կարգեսցուք սրբոյ Աթոռոյս և զկոնդակն, զոր ինչ մտօք խնդրէք ի վերայ Գօրու, զայն ևս գրեսցուք և ապա տէր Սահակն փառաւորութեամբ ուղևորեսցուք յետս։ Իսկ եթէ անկարելի [իցէ] գալն նորա, զայն ևս տուք մեզ յիմացս, զի աստի առաքեսցուք զկոնդակն որպէս խնդրէք։

(Յետ գրելոյ զթուղթս զայս և աւարտելոյ և յաղագս տէր Սահակին այսպէս յիշելոյ, ահա եկն տէր Սահակն։ Եւ թուղթն որովհետև աւարտեալ էր, որպէս ասացաւ և տէր Աբրահամ քահանայն՝ բերօղն թղթոյն, որոյ պատասխանիս նշանագրեցաք մինչև ցայս տեղի, ևս նլանէր ի գնալ, նորին աղագաւ ոչ փոխարկեցաւ թուղթս այս, եթէ ծանուցանիւր և գալն նորին։ Այլ ի թղթոջ առաջնորդ Կարապետ վարդապետին ծանուցաւ, որպէս տեսանես ահա ի ներքոյ սորա գրեցեալ թղթոյն։

Զօրինակ վերոյ գրեցեալ թղթոյդ տե՛ս ի 515 [երեսն]։

629. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ պարոն Շմաւոն՝ եղբօր որդին նոյն տէր Աբրահամ քահանային։

Նամակում ծանուցվում է տեր Աբրահամի այցելության մասին։

630. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ Թիֆլիզու նուիրակ և առաջնորդ Կարապետ վարդապետն՝ ծանուցանելով զհասանիլն հնգից թղթոց նորին՝ գրեցելոց ի մայիսի Ա (1), Ը (8), ԺԱ (11), ԺԶ (16) և Ի (20), զորոց երկարապէս պատասխանիսն խոստանայ յետոյ գրել։

Իսկ այժմ գրէ, թէ տէր Աբրահամն եկն ի սուրբ Աթոռս և առ մեզ, բերելով ընդ ինքեան զառացեալ հնագոյն կոնդակն (զոր և աստ առ մեզ եթող)։ Նաև զթուղթ աղերսանաց ևս ի յԻսրայէլէ կաթուղիկոսէն, որ խնդրեալ էր գալ ի սուրբ Աթոռս։ Ուստի և մեք գրեցաք, զի երբ և կամիցի, եկեսցէ։ Եւ զտէր Աբրահամն ի սէր և ի ծառայութիւն սրբոյ Աթոռոյս հաստատեալ, դարձուցաք յետս հանդերձ խիլայիւ։ Եւ թէ ըստ խնդրոյդ ի կողմանէ ճորտիցն մերոց պահպանութեան զթուղթ գրեցաք առ մէլիք Աւետիքն, և յաղագս քո և գործոյդ ևս զկրկին յանձնարարու-

թիւն։ Որում զայս ես գրեցաք, զի ի բաց կացցէ ի նորամուտ և յանկարգ սովորութեանց, այլ որպէս օրէնն է՝ զնուիրակութիւնն գլուխ գլուխ ժողովել տացէ։ Եւ պատճառ գրելոյս քեզ է այս, զի գիտասցես և դու ես ըստ այնմ խօսեսցիս և արասցես։ Եւ զորպիսութիւնդ և զինչ առնելդ ի միամտութիւն մեզ գրեսցես։

Դարձեալ՝ տէր Սահակն և միւս տէր Աբրահամն, որ ի Լօռի, եկին ի սուրբ Աթոռս և առ մեզ՝ հանդերձ քոյդ թղթով։ Զորս յետ քանի մի աւուրց ըստ արժանեաց իւրոց շահելոց եմք և այնպէս ուղևորելոց և զպատասխանիս քոյդ թղթոց ընդ սոցին գրելոց։

Այլև՝ ի մայիսի Ի (20) ի թուղթն Կարապետ վարդապետին, որ գրեցաւ զմահսար առնուլ ի Լօռի եղեալ ժողովրդոցն, որք իբր գրեսցեն, թէ մեք սրբոյ Աթոռոյդ եմք վիճակք և սեփական ժողովուրդք և ոչ այլոց, զայն մահսարն ահա գրեցուցեալ էր և առաքեալ ի սուրբ Աթոռս առ սրբազան Վեհն։ Վասն որոյ գրէ սրբազանն զշնորհակալութիւն, և տէր Ղազարին ես ողջոյն։

Ե (5) թուղթքս ընդ Հաշտարխանու թղթոցն, զոր ի վերդ յիշեցաք, գրեցան և յղեցան զէպ ի Թիֆլիզ և ձեռամբ նոյն թղթաբեր տէր Աբրահամին ի ԺԶ (16) [յունիսի]։

157ա 1782 թ. հունիս—Թուղթք ի Մուշ, ի Սօրսրի և ի Բայազիտ

Մշոյ սուրբ Յովհաննէսի վանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն և Սօրսրու սուրբ Գէորգեայ վանից առաջնորդ Յարութիւն վարդապետն եկեալ ի սուրբ Աթոռս հաւանական և բազմակնիք մահսարաւ վիճակի իւրեանց եղեալ ժողովրդոցն, օրհնեցան եպիսկոպոս ի սրբազան Վեհէս մերմէ ի յառաջնորդութիւն նոյն վանիցն սրբոյ և վերադարձան փառաւորութեամբ ի տեղիս իւրեանց։ Որոց դնալն, գրեաց սրբազան Վեհն վասն սրոյն սրոյն զկոնդակս առաջնորդութեան՝ վերահաստատելով զնոսա ի յառաջնորդութիւն նոյն հրաշալի վանիցն սրբոց։ Եւ առ ոմանս ես զթուղթ՝ ծանուցանելով զեպիսկոպոս օրհնիլն նոցա և նորապէս կարգիլն առաջնորդ վիճակին իւրեանց։ Աստացուք և զորպէսն սոցին, թէ երբ եկին և յորժամ գնացին։ Արդ, վերոյ յիշեալ Յովհաննէս վարդապետն ի ժամանակս Հոգելոյս հայրապետին մերոյ եկն ի սուրբ Աթոռս և առ նա առաքմամբ բոլոր թեմի և վիճակ իւրոյ եղեալ ժողովրդոցն և իւրոյ սրբոյ վանից միաբանիցն, և բազմակնիք մահսարաւ նոցին, որպէս զի ձեռնադրեսցի եպիսկոպոս և կարգեսցի առաջնորդ սրբոյ վանիցն այնմիկ, զոր ի վերդ յիշեցաք։ Բայց սակայն յայնմ միջոցի էր Հոգելոյս հայրապետն մեր ի մեծագոյն հիւանդութեանս, որ և հիւծեալ ընդ այն օր յաւուր, փոխեցաւ առ Տէր։ Իսկ զկնի որոյ, յորժամ յաջորդեաց նորագոյն հայրապետս մեր, սա եւ ոչ եգիտ ձեռնտու և պատշաճաւոր ժամանակ, զի ձեռնադրիցէր, քանզի էր ի մէջ մեծամեծ զբաղանաց և հոգոց, և մանաւանդ նոմոսքն արքայական չէին եկեալ դեռևս։ Վասն որոյ դարձոյց զնա յայնժամ ի սուրբ վանս իւր և խոստացաւ, զի յորժամ ձեռնտու ժամանակ լիցի, նոմոսքն ես եկեսցեն, գրեսցէ յայնժամ առ նա, զի եկեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս և առնուցու զկարգ եպիսկոպոսութեան։ Իսկ ապա յորժամ եկին նոմոսքն յարքունուստ, և ժամանակն ես իբր ձեռնտու եղև, գրեաց սրբազան Վեհն ըստ յառաջագոյն խոստման իւրոյ առ նոյն Յովհաննէս վարդապետն՝ գալ ի սուրբ Աթոռս։ Որ և ըստ հրամանի սրբազան Վեհին և ըստ առաջնոյ իւրոյ

ըղձին նլեալ եկն ի սուրբ Աթոռս և առ սրբազան Վեհն և մնաց աստ զաւուրս ինչ, սպասելով կամաց սրբազանին։ Որ և պատշաճաւոր աւուր նայէր առնել։

Ապա եկն ընդ այս աւուրս և Սօրսրու սրբոյն Գէորգեայ վանից առաջնորդ Յարութիւն վարդապետն՝ հանդերձ հաճոյական թղթով և բազմակնիք մահսարաւ ժողովրդոց իւրոց և միաբանից։ Որք և խնդրեալ էին առնել զնա եպիսկոպոս և կարգել նորապէս առաջնորդ ինքեանց։ Զորս ի վերոյդ յիշեցտան ի սոյն աւուրս ախտաւորք ես բազումք, զորս ի վերոյդ յիշեցաք։ Որք բաղձային և խնդրէին տեսնել զշնորհարաշխութիւն ինչ։ Վասն որոյ ըստ հայցուածոց նոցին և ըստ արժանաւորութեան անձանցն և ըստ աւուրն պատշաճաւորութեան, որ էր յաւուր կիւրակէի, որ է մերձ շաբաթ աւուրն տօնի Գիւտի նշխարացն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, բազմահանդէս ժողով արարեալ սրբազան Վեհիս մերոյ ի շնորհաբուղխ և մայր Աթոռս սուրբ էջմիածին, ձեռնադրեաց զերկոսին բարեբարոյ անձինս եպիսկոպոս՝ զտէր Յովհաննէս ծերունափայլ և հանճարատատ վարդապետն՝ ի յառաջնորդութիւն Մշոյ սրբոյն Յովհաննիսի վանիցն և զտէր Յարութիւն խոհեմատատ վարդապետն՝ ի յառաջնորդութիւն Սօրսրու սրբոյն Գէորգայ վանիցն։ Զորս սիրով և խաղաղութեամբ և մեծաւ փառաւորութեամբ առաքեաց ի վիճակս իւրեանց՝ հանդերձ կոնդակօք նորագոյն առաջնորդութեան իւրեանց, որոց օրբեցաւ ուրոյն ուրոյն տանիլ ընդ ինքեանս և այլ թուղթք, որք ցուցանին ահա։

631. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն յաղագս նորընծայ Յովհաննէս եպիսկոպոսին ի վերայ Մշոյ սուրբ Յովհաննիսի հրաշալարդ վանից բոլոր միաբանիցն և համօրէն մերային ժողովրդոց թեմից և վիճակացն նորին՝ ծանուցանելով որոց զեպիսկոպոս օրհնիլն նորին, և նոր կարի նորոյ հրամանաւ և իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս առաջնորդ կարգիլն ի վերայ ինքեանց։ Որոյ աղագաւ և պատուէր, զի ըստ ամենայնի հլու և հպատակ կայցեն նմա, նաև՝ ըստ կանոնի և ըստ հրամանի հարցն սրբոց զառաջնորդական հասս և իրաւունս նմա հասուցանել[140]։

157բ 632. Թուղթ ես գրեաց սրբազան Վեհն առ Մշոյ սուրբ Կարապետի առաջնորդ Աստուածատուր վարդապետն, ի պատասխանի թղթոյ նորին, որ գրեալ էր առ սրբազանն և զխնդիր ինչ արարեալ յաղագս առաջնորդութեան իւրոյ, իբր կամ վերահաստատել զինքն նորապէս ի յառաջնորդութիւն, կամ զայլ ոք առաքել ի տեղի իւր և զինքն ի բաց հանել յառաջնորդութենէ[141]։ Եւ յաղագս Յովհաննէս վարդապետին ես զյանձնարարութիւն։ Որում գրէ սրբազանն, թէ զամենայն գրեալդ իմացաք և զՅովհաննէս վարդապետն ի սէր ընկալեալ ըստ գրեցելոյդ ձեռնադրեցաք եպիսկոպոս և սիրով և խաղաղութեամբ ուղևորեցաք յետս։ Որոյ ի գալն առ ձեզ, իմանալոց էք զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս, քանզի է գիր կենդանի։

Դարձեալ, որ զամենայն անցսն զքեզ առաջնորդ կացուցանելոյն էիր ծանուցեալ պարագայիւք և ի մէնչ զերկուս խնդիրս արարեալ, որպէս թէ կամ զքեզ յատկապէս մերն իմացեալ վերահաստատիցեմք ի սպասաւորութիւն վանիցդ, և կամ զայլ ոք ի միաբանից մերոց ընտրեալ ի յառաջնորդութիւն, իմաց առնիցեմք ձեզ, զոր դուք եկեալ միաբանութեամբ տանիցէք և այլն։ Լուր առ այդ, զի մեք ի սկզբանէ այդ ընտրու-

թեանդ մինչև ցայժմ գանդիկութիւն ինչ ոչ ունիմք, այլ ընտրօղըն զքեզ և կացուցանօղըն յայդ գործ են ազգն մեր, պատրիարգ եղբայրն մեր և օրհնեալ իշխանքն։ Որք պատշաճ տեսեալ զքեզ արքունական ֆարմանաւ և բազմակնիք մահզարաւ կացուցեալ են առաջնորդ։

Նաև փաշայն ես ընդունելով զքեզ, զֆարմանաքերն խիլայեալ է։ Իսկ մեք ես յորժամ զայսոսիկ լուաք, բաց ի հաճութենէ, զոհաճութիւն ինչ ոչ ցուցաք ամենևին՝ ոչ բանիւ և ոչ թղթով։ Այլ մանաւանդ զու ես զթուղթ էիր գրեալ, զնորին պատասխանին սիրով գրեալ, առաքեցաք առ քեզ։ Ապա ընդէ՞ր այժմ ի կասկածանս մտեալ գրես մեզ՝ կամ զքեզ հաստատել ի տեղիդ, և կամ զայլ ոմն կացուցանել փոխանակ քո։ Որպէս գրեցաք, ասէ, ի վերայ զքեզ, մեք ոչ եմք կացուցեալ և ոչ իրազեկ բանից քոց, և ո՛չ զակամայութիւն ինչ ցուցեալ, զի՞րդ պարտիմք այժմ փոխել զքեզ և կամ վերահաստատել ի տեղիդ։ Որ անվայել իմն է խառնիլս մեր յայդ բան, որում անտեղեակ եմք ամենևին։ Այլ ի մերմէ կողմանէ Աստուած շնորհաւոր արասցէ, բարեաւ վայելեսցես։ Իսկ եթէ յիրաւի խոյսառ հրաժարիլ կամիցիս, գրեա առ այնոսիկ և ծանո, որք ընտրեցին զքեզ և կացուցին առաջնորդ։

Այլև գրեալ էր, թէ զամենայն պատրաստութիւնս տեսեալ կամէի գալ ի սուրբ Աթոռդ՝ հրամանաւ փաշային, բայց արգելեցայ յաղագս այս ինչ և այն ինչ պատճառի և այլն։ Վասն որոյ գրէ սրբազանն, թէ սուրբ Աթոռս հասարակաց ծնող և հոգևոր դաստիարակ է, ով ոք առ սա դիմեսցէ, ի հարկէ ըստ արժանւոյն ի սմանէ պատիւ և մեծարանս է տեսանելոց, և շահելոց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

633. Յաղագս առաջնորդութեան սորին և վասն ոչ ընդունելոյն զսա Ա (1) թուղթ ես գրեաց սրբազան Վեհն առ Մշու Մախսուտ փաշայն, քանզի նա ես էր գրեալ սրբազան Վեհին՝ հանել զԱստուածատուր պետն յառաջնորդութենէ և ի տեղի նորա զայլ ոմն առաքել։ Զի ասէր, թէ անվայել է սա առաջնորդութեան և ոչ կարէ կառավարել զՏունն և այլն։ Որում ես սրբազանն զայն պատասխանի գրեաց, որ առ Աստուածատուրն։ Իբր եթէ արժանի է, եթէ ոչ, չունիմք մեք զբան ինչ և ոչ առնեմք ինչ։ Այլ որք կացուցին զդա յայդր, նոքա գիտասցեն։

Դ (4) թուղթքս ի ձեռն Յովհաննէս վարդապետին յղեցան, իսկ ներքոյ գրեալքս՝ ի ձեռն Յարութիւն վարդապետին ի Ի (20) յունիսի։

634. Կոնդակ գրեաց սրբազան Վեհն առաջնորդական՝ յաղագս Յարութիւն նորընծայ եպիսկոպոսին ի վերայ Սօրսրու սրբոյն Գէորգայ հրաշագործ [վանից] միաբանիցն և համայն մերաղնեայ ժողովրդոցն, որք ի թեմս և ի վիճակս նորին, այսինքն՝ ի Սօրսրի, ի Կարսիկ, ի Մօրենիկ, ի Հիւսէյնիկ, ի Վարդատիլ, ի Խէրխիկ, ի Գահլու. ի Պարչանճ, ի Յէրթմնիկ և ի սուրբ Յակոբայ մահլայն քաղաքին Խարբերթու։ Որոց ծանուցանէ և ըստ օրինակի վերոյ գրեալ կոնդակին բազմակնիք մահզարաւ գալն և վերադառնալն սիրով և զայլ հանգամանս եպիսկոպոս օրհնելոյն և առաջնորդ կարգելոյն[142]։

158ա 635. Թուղթ ես գրեաց սրբազան Վեհն առ Սօրսրու սրբոյ Գէորգայ վանից միաբան Սահակ վարդապետն, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր գրեալ էր ընդ վերոյ յիշեալ Յարութիւն վարդապետին, ընդ որում և զի (20) ղուռուշ ես աջահամբոյր յղեալ սրբազանին։ Նաև յառաջագոյն զ... ղուռուշ ես յանձնեալ էր Տիգրանակերտու նուիրակ Գրիգոր

վարդապետին մերոյ՝ հասուցանել սրբազանին։ Զոր այժմ յիշէ ի սոյնում թղթոյ, զոր գրեալ էր առ սրբազանն, յորում և յանձնարարութիւն ես յաղագս առաջնորդին Սօրսրու՝ Յարութիւն վարդապետին և յոյժ աղերսանս, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս և նորապէս կարգեսցէ առաջնորդ ի վերայ նոյն վանիցն և ուղևորեսցէ յետս, որպէս ի վերոյգ երկարօրէն յիշեցաւ։

Արդ, այժմիկ սրբազանն նմա զայս գրէ, թէ զթուղթդ, զոր գրեալ էիր առ մեզ ի ձեռն Յարութիւն պետին, առ ընկալաք և զգրեալդ իմացաք։ Նաև զի (20) ղուռուշ դրամն ես ընկալաք և շնորհակալ եղեալ յօրհնեցաք զսիրելիդ մեր և զընական զաւակդ սրբոյ Աթոռոյս։ Իսկ յաղագս... ղուռուշ դրամոյն, զոր տուեալ էիր Գրիգոր պետին՝ հասուցանել մեզ, զայն ես հասեալ համարեցաք։ Եւ թէ զՅարութիւն վարդապետն ընկալեալ ի սէր հայրական գթով և զխնդիրս ձեր կատարեալ սիրով, ահա առաքելական կարգի և աստիճանի արժանի արարեալ, դարձուցաք յետս սիրով և խաղաղութեամբ, յորմէ իմանալոց էք զամենայն որպէսն մեր և սրբոյ Աթոռոյս։ Այլև զմի կանոնական կոնդակ ես էր խնդրեալ, զոր յաղագս անձեռնհասութեանն չկարաց գրել սրբազանն, ուստի խոստացաւ յետոյ գրել։

636. Թուղթ ես գրեաց սրբազան Վեհն ի Բայազիտ առ տէր Վահանն, ի պատասխանի նորին գրեցելոյ ի յունիսի Բ (2) և ի պատասխանի այնր թղթոյ, զոր յիշեցաք ի մայիսի ամսոյ ԻԸ (28)։

Կաթողիկոսը գրում է, որ ստացել է ուղարկված դրամը և հաշվեմատյանը։ Հանձնարարում է հայտնել Մարգար աղային, թե ինքը վաղուց սպասում է հավաքված գանձանակադրամին։ Միաժամանակ նամակ է ուղարկվում Մարգար աղային՝ գանձանակադրամը հանձնելու կարգադրությամբ։

Ը (8) թուղթքս ի միում աւուր եղին ի սրբոյ Աթոռոյս ընդ վերոյ յիշեալ Յովհաննէս և Յարութիւն նորընծայ եպիսկոպոսացն ի Ի (20) [յունիսի]։

158բ

1782 թ. հունիս—Թուղթք ի Կարին և ի Կարս

637. Որ յառաջ քան զայս ի Կարին առ պարոն Հայրապետն յաղագս ջուղայեցի Ստեփանի բանին թուղթ մի գրեցաւ, յորում և խոստացաւ զամենայն թղթոց պատասխանիսն յետոյ գրել, զոր յիշեցաք ի սոյն ամսոյս ԺԳ (13), ահա գրեաց այժմիկ սրբազան Վեհն մի առ մի զչորեցունց թղթոց նորին զպատասխանիսն, ընդ որում յղեաց առ նա և զերիս սանատս, որոց Ա (1) էր Յովհաննէս վարդապետին՝ առաջնորդին Մշու սուրբ Յովհաննէսի վանից յաղագս Ո (600) ղուռուշի և Ա (1)՝ Յարութիւն վարդապետին՝ առաջնորդին Սօրսրու սուրբ Գէորգայ վանից, յաղագս Ն (400) ղուռուշի, և Ա (1)՝ կեսարացի մահտեսի Մելքոնին, որ եկեալ էր ի սուրբ Աթոռս յուխտ՝ յաղագս Շ (500) ղուռուշի։ Քանզի Գ (3) անձինքս (զորս յանուանէ յիշեցաք) զայս վերոյ յիշեալ դրամս (մինչ աստ էին), սրբոյ Աթոռոյս տալ յօժարեցան։ Բայց վասն ոչ գոլոյ աստ ի պատրաստի ի ձեռս իւրեանց, իւրաքանչիւրքն ուրոյն ուրոյն զսանատս գրեալ ըստ որքանութեան դրամոյն, զոր պարտ էին հասուցանել սրբոյ Աթոռոյս, որպէս ցուցաք ի վերոյ, ետուն սրբազանին և խոստացան ի գնալն իւրեանց ի Կարին՝ հասուցանել անդ պարոն Հայրապետին և զսանատս իւրեանց առնուլ ի նմանէ։ Ուստի և սրբազան Վեհն ընդ թղթոյս այսորիկ յղեաց և զայն Գ (3) սանատսն ես առ ի առնուլ զդրամսն

ի սանատատեարցն և տալ զսանատոն նոցա։ Ընդ թղթոյս այսորիկ զմի փաւսուլայ ևս գրեաց սրբազան Վեհն առ սա, զոր ի ներքոյ նշանակեսցուք, բայց նախապէս զմիտ թղթոյն գրեսցուք։

638. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ պարոն Հայրապետն, ի պատասխանի չորից թղթոցն նորին՝ գրեցելոց ի մայիսի ԺԷ (17), ԻԲ (22), ԻԴ (24), և Լ (30)։

Հավաստում է Կ. Պոլսից ու Կարինից նամակների ու դրամի ստացումը, կարգադրություններ է անում մնացած գումարների վերաբերյալ։ Հայտնում է, որ ինքը մերժել է Մուշի Մարութա փաշային, որը խնդրում էր Աստվածատուր վարդապետի փոխարեն ս. Կարապետի առաջնորդ նշանակել արաբկիրցի Հարություն վարդապետին, հարցում է անում Կարինի ախթարմանների վերաբերյալ։ Մեկ այլ գրությամբ կաթողիկոսը Հայրապետին հանձնարարում է գրավել կարնեցի Կարապետ Եփրիկյանցին օգնություն ցույց տալու գործով։ Վերջինս մահմեդականություն ընդունելուց հետո կրկին քրիստոնյա էր դարձել և, վախենալով Կարինի թուրքերի վրեժխնդրությունից, փախել էր Բիֆլիս (էջ 158բ—159բ)։

159բ 639. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Կարս առ պարոն Գէորգն, ի պատասխանի թղթոյ նորա, զոր գրեալ էր յաղագս փայտավաճառ տաճկի պայմանազանցութեանն։ Քանզի եկեալ ի մերձակայ աւուրս ի Կարսայ փայտավաճառ տաճիկ ոմն առ սրբազանն և պայմանեաց առաջի սրբազանին՝ գնալ հատանել ի վարձու զՇ (500) փայտ ի պէտս սրբոյ Աթոռոյս և զհատեալ փայտոն ածել ի ջուրն և բերել մինչև ցՂարխին գիւղն և անդ յանձնել մեր մարդոյն, որ անտի բերցեն ի սուրբ Աթոռս։ Այսպէս իղրար արարեալ տաճկին այնորիկ սաստ, գնաց հատանել զփայտոն։ Բայց սակայն ի գնալն անդ ի Կարս, անցեալ էր զսաստ եղեալ պայմանօքն, զի գնացեալ էր և հատեալ աւելի քան զՍ (2000) փայտ և աւելի դրամ ևս խնդրէր։ Եւ յաղագս ի ջուրն ածելոյն սաէր՝ տուք ինձ ի ձէնջ զմարդ առ ի օգնել և այլ բանս այսպիսիս։ Զոր ազդեաց պարոն Գէորգն սրբազան Վեհին և խնդրէր առնել բստ ադերսանաց տաճկին։ Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն առ պարոն Գէորգն զԾ (50) զուռուշ ևս տալ նմա, որ Ռ (1000) զուռուշն լրասցի և որպէս պատշաճ տեսցեն, այնպէս արասցեն և այլն։ Եւ թէ ընդ գրեցելոյդ գրեցաք ահա պարոն Հայրապետին՝ տալ անդ զՍ (2000) զուռուշ, յորժամ փօլիցայ արասցեն։

Գ (3) թուղթքս յղեցան ի ձեռն Մկրտիչ տղային առ պարոն Գէորգն, զի զթուղթսն Հայրապետին առ նա յղեսցէ և գնացեալ տղայն առ ինքն առաքեսցէ ի վերայ փայտիցն։ ԻԲ (22) [յունիսի]։

160ա 1782 թ. հունիս—*Թուղթք ի Հաշտարխան, ի յերկիրն Ափխազաց, ի Գորի, ի Թիֆլիզ և ի Լոռի*

640. Սահակ քահանայն գօրեցի եկն ահա ի սուրբ Աթոռս ըստ գրեցելոյ և հրամանի սրբազան Վեհին։ Քանզի կարգեալ էր զսա հոգելոյս հայրապետն մեր՝ տէր Սիմէոն կաթուղիկոսն, աւագ քահանայ և գործակալ ի վերայ մերազնեայ ժողովրդոցն, որք ի յերկրին Իմէրէթու։ Վասն զի որովհետև երկիրն այն հեռաւոր է և ոչ պատահի միշտ անդ նուիրակն սրբոյ Աթոռոյս և կամ առաջնորդն Թիֆլիզու քաղաքին, որք եթէ վերահասու լիցին հասին և իրաւանց նոցին։ Ուստի հրամայեաց սմա հոգելոյս հայրապետն՝ ելանել ի Գօրւոյ, թողլով զտունն իւր անդ, և գնալ ի յերկիրն Իմէրէթու և լինել անդ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս հոգևորապէս կառավարող և հոգացօղ տէրունի ժողովրդոց սորին, և պահել զնոսա ի ճշմարիտ և յուղիղ դաւանութիւնս Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ՝

նաև բերել սմա և անգի զճշմարտադաւան և ուղղահաւատ քահանայս, զի հովուեսցեն զնոսա ըստ օրինին։ Որոյ հնազանդեալ հրամանի հայրապետին, եթող զտունն իւր ի Գօրի առ միւս մեծ տէր Սահակ հօրեղբայրն իւր և գնաց ի յերկիրն Ափխազաց։ Ուստի առաքեաց առ սա սրբազան հայրապետն զկոնդակ ի վերայ ժողովրդոց նոյնոյ երկրին՝ գրելով ի նմա զօգտաւոր պատուէրս, զխրատս և զկանոնս վասն ժողովրդոցն այնորիկ և վասն նոցին հովուօղ քահանայիցն[143]։

Նախ՝ լինել տէր Սահակին ի կողմանէ սրբոյ Աթոռոյս վէքիլ և գործակալ ի վերայ ժողովրդեանն այնորիկ, և նոցին հասին և չհասին և ամենայն եկեղեցական օրինացն և հոգևոր կարգացն և կրօնիցն վերահասու և կարգաւորօղ լինիլ։ Մանաւանդ խրատել զամենայս և ուսուցանել միշտ աստուածային բանիւք և պահել զնոսա ի ճշմարիտ հաւատս՝ ի յուղիղ դաւանութիւնս և ի մաքուր կրօնս Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։ Եւ ևս՝ սրբոյ Աթոռոյս արդեանցն ևս վերահասու լինիլ, այսինքն՝ զանձանակի, հոգեբաժնի, աթոռահասի, պտղւոյ, կտակի, խոստմանց և այլ ամենայն առաջնորդական և վանքական հասից և իրաւանց։ Զորս հաւատարմաբար առնուլ և հասուցանել ի սուրբ Աթոռս։

Երկրորդ՝ եթէ մեծ բան ինչ պատահիցի ի մէջ նոցա, զայն գրել և ծանուցանել սմա, և զոր ինչ վճիռ տացի այնմ բանի, այնպէս առնել։

Երրորդ կանոն վասն քահանայիցն, որ ի մէջ նոցա։ Զի սաէ, թէ որովհետև սակաւաւորք են ժողովուրդքդ մեր և տուրք զոցա ոչ բաւականանան հովուօղ քահանայիցն, վասն որոյ ուստի և եկեալ իցեն ի մէջ զոցա քահանայքն, նոցին ընկեր քահանայքն, որք կան ի տեղիս իւրեանց և զընկ ժողովուրդն իւրեանց հովուեն, ի քահանայական արդեանց հանցեն արդարութեամբ զբաժինս այնց քահանայիցն, որք զան ի մէջ զոցա, և տացեն ի տունս նոցին, որպէս զի և նոքա միամտութեամբ հովուեսցեն զդոսա։ Սոյնպէս և վասն տէր Սահակին գրէ, զի սաէ, որքան մնայցես ի մէջ զոցա, հօրեղբայր քո՝ տէր Սահակ քահանայն զքոյդ ժողովուրդն հովուեսցէ և զարդիւնս քահանայական առեալ ի նոցունց, տացէ ի տուն քո, զի միամտութեամբ կառավարեսցես զսէրունի ժողովուրդդ մեր։

Չորրորդ՝ պատուէր առ ժողովուրդսն, զի սաէ, թէ պարտիք զտէր Սահակ արհաչան քահանայդ մեր վէքիլ և գործակալ գիտել և ամենից օգտաւոր և հոգեշահ խրատուց դորին լսօղ լինիլ և առնօղ, որովք և հոգևոր հրամանացս մերոց զոլ կատարօղ։ Որ և եղիցիք օրհնեալ յԱստուծոյ։ Ամէն։

Հիշատակարանի հեղինակը տեղեկություններ է հաղորդում էջմիածին ժամանած Սահակ քահանայի հորեղբայր, ծերունազարդ տեր Սահակի մասին, որը դեռևս Սիմեոն Երևանցու կողմից նշանակված էր Գորիի քահանա և որին Թիֆլիսի նվիրակի առաջարկությամբ օգնական էր կարգվել նրա եղբորորդին՝ նույնպես Սահակ անունը կրող քահանան։ Վերջինս կաթողիկոսի առաջարկությամբ ժամանելով էջմիածին, հաստատվում է իր պաշտոնում և միաժամանակ նշանակվում «գործակալ և աւագ քահանայ Գօրւոյ և Վրացտանու՝ ի յօգնականութիւն հօրեղբօրն իւրոյ»։ Այդ կապակցությամբ տեր Սահակին հանձնվում են Իմերեթիայի, ինչպես նաև Գորիի ու Վրաստանի հայությանն ուղղված համապատասխան կոնդակներ[144]։ Բերվում են նաև այդ կոնդակների համառոտագրությունները (էջ 160բ—161ա)։

161ա 641. Թուղթ ևս ի Գօրի առ Յարութիւն անուամբ ոմն[145], որ սրբոյ Աթոռոյս ձեռամբ տէր Սահակին[146] զԲ (2) ճորտ էր վաճառեալ ի ճորտից իւրոց՝ զիւրազգին։ Յաղագս այնորիկ զմի օրհնութեան թուղթ էր խնդրեալ ի տէր Սահակէն, զի ի գալն սմա առնուցու ի սրբազան Վեհէն և տարցէ

առ ինքն։ Եւ ի դայն աստ տէր Սահակին պատմեաց զմեծահաւատութիւն և զբարեպաշտութիւն տան այնորիկ՝ սրբազան Վեհին և խնդրեաց գրել զԹուղթ օրհնութեան ի վերայ նորա յաղագս զիւրազին տալոյն զնոսա սրբոյ Աթոռոյս։ Նաև ի վերայ ճորտացն ևս, որք կամաւ և յօժարութեամբ էին եղեալ ճորտ։

642. Այլև ի վերայ միոյ ճորտի ևս խնդրէր գրել, որ զայն ևս էր նոր առեալ յայլմէ յաղագս սրբոյ Աթոռոյս։ Վասն որոյ գրեաց սրբազան Վեհն, ըստ խնդրոյ տէր Սահակին, զԱ (1) Թուղթ օրհնութեան առ տուօղն երկուց ճորտից՝ Յարութիւնն, օրհնութիւն և շնորհակալութիւն, ծանուցանելով զգալն տէր Սահակին ի սուրբ Աթոռս և պատմելն նորին զբարերարութիւնս, խիր և զջերմեռանդ սէրն, որ առ սուրբ Աթոռս, նաև զտալն զերկուս ճորտս սրբոյ Աթոռոյս ի յիշատակ բարի ինքեան։ Եւ զկարգելն զտէր Սահակն գործակալ յայն կողմունսն նամակաւ օրհնութեան և զդարձուցանելն առ ինքեանս փառաւորութեամբ և այլն։ Եւ պատուէր, զի ի յօգտաջանութենէ և ի հաւատարմութենէ սրբոյ Աթոռոյս անվերջանալի մնասցէ։ Ընդ սմին գրեաց և զԳ (3) կոնդակս ճորտութեան առ երիս նոր ճորտացեալս սրբոյ Աթոռոյս, Բ (2)՝ ի վերայ ճորտից սորա, և Ա (1)՝ ի վերայ այլ ճորտի, զոր տե՛ս անդ։

161բ 643. Կոնդակ ճորտութեան ևս գրեաց սրբազան Վեհն առ նոր ճորտ սրբոյ Աթոռոյս՝ Ստեփանն, թէ որովհետև դու քոյով կամաւ և յօժարութեամբ, ձեռամբ սիրելի որդւոյն մերոյ և հարազատ գործակալին սրբոյ Աթոռոյս՝ տէր Սահակ խոհեմամիտ քահանային յայլմէ գնեցեալ, եղեալ ես ճորտ և ծառայ սրբոյ Աթոռոյս, տալով զհաստատուն սիկէլ, զի ի կեանս քոյ հարազատօրէն ծառայիցես սմին, վասն որոյ և մեք զայս օրհնութեան և հաստատական կոնդակս գրեցաք ի վերայ սիրելւոյդ, զոր իբրու նշան և կնիք սրբոյ զահիս ընդ քեզ ունիցիս և լինիցիս սմա մշտնջենական ճորտ և ծառայ, յորդւոց յորդիս և մտերմաբար ծառայեսցես սմա։ Ուրեմն այսուհետև միամտութեամբ ծառայեա սրբոյ Աթոռոյս և չունի ոք այսուհետև իլախայ ընդ քեզ կամ զաւփ առնել և կամ զայլ ինչ պահանջել ի քէն։ Եւ ի քոյդ կողմանէ զոր ինչ մաքս և հարկ լինիցի, ով ոք սրբոյ Աթոռոյս գործակալ իցէ յայդր, նմա հասուսցես անթերի և անպակաս, քանզի յատուկ ծառայ ես այսուհետև սրբոյ Աթոռոյս։ Որ և Տէր կատարեսցէ զուխտ և զխնդիրս քոյ, որ ի բարիս և օրհնութիւն և շնորհք սրբոյ և քրիստոսաիջի Աթոռոյս միշտ ընդ քեզ լինելով, լիցի քեզ հովանի և վարձ և լիապէս հատուցանօղ ըստ տրոցն քոց։ Եւ զտուրս քոյ ընկալցի Տէր սիրով և քաղցրութեամբ և եղիցի ընդ քեզ միշտ և զօրացուսցէ և փրկեսցէ ի յառաջիկայից հոգեկան և մարմնական վտանգից և փորձութեանց, և ամենայն բանից և գործոց քոց զյաջողմունս բարիս տացէ։ Որ և եղիցիս օրհնեալ և զօրացեալ միշտ ի Տէր քոյայնովքդ ամենեքեամբք։ Ամէն։

644. Կոնդակ ճորտութեան ևս գրեաց սրբազան Վեհն առ ճորտ Գէորգն՝ ըստ օրինակի վերոյ գրեցելոյդ։

645. Կոնդակ ճորտութեան ևս գրեաց սրբազան Վեհն առ ճորտ Բինան՝ ևս վերոյ գրելոյդ օրինակաւ։

646. Թուղթ ևս գրեաց սրբազանն ի Հաշտարխան առ նորին նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն՝ յաղագս զանձանակական ար-

գեանց սրբոյ վանիցն Գանձասարու, որ առ պարոն Միխայէլ գանձա-
պետն նոյն վանից, ըստ խնդրոյ Յովհաննէս կաթուղիկոսին Աղուանից,
որ յառաջ քան զայս Թուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն և խնդրեալ
գրել զԹուղթ առ Յովսէփ վարդապետն և առ գանձապետն իւրեանց՝
պարոն Միխայէլն, հասուցանել զարդիւնս գանձանակին ի վանս իւրե-
անց։ Որում գրեաց սրբազան Վեհն յայնժամ զԹուղթ խոստանալով, թէ
ի գրելն մեր զԹուղթ առ Յովսէփ պետն, գրելոց եմք և վասն գանձանա-
կին ձերոյ, որպէս յիշեցաք յամսոյս Ա (1)։ Թէպէտ յառաջ ք[ան] զայս
Ա (1) Թուղթ ևս գրեցաւ առ Յովսէփ վարդապետն, սակայն մոռացեալ
եղև յայնժամ գրելն և յաղագս այսր բանի։ Ուստի գրեաց այժմ, յատ-
կապէս ծանուցանելով զերկուց Թղթոց իւրոց, գրեցելոց յանցեալ ամի
հոկտեմբերի Ի (20) և յայս ամի յունվարի ԻԸ (28) հասանելն և
զպատասխանիս նոցունց գրելն ի յամսոյս ԺԶ (16), և զյանձնելն զայն
աստ Թիֆլիզեցի Մօղնու եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Աբրահամին՝
հասուցանել ինքեան։ Եւ թէ Գանձասարու Յովհաննէս կաթուղիկոսն առ
մեզ յառաջ քան զայս Թուղթ էր գրեալ և խնդրեալ ի մէնջ գրել քեզ և
գանձապետին իւրեանց՝ պարոն Միխայէլին, զի զարդիւնս գանձանակին
իւրեանց հասուցանիցէք առ ինքն։ Որում խոստացաք գրել, բայց մո-
ռացաք գրել ի յառաջ, քան զայս առ քեզ գրեալ Թղթոչն գրել, այժմ
ահա զգիր մի առ նոցին գանձապետ Միխայէլն գրեալ, բաց յղեցաք առ
քեզ ընդ Թղթոյս։ Եւ քեզ ևս գրեմ ահա, զի զայդ Թուղթդ տացես նմա և
հարկեսցես, զի զորքան գանձանակական արդիւնս կամ խոստմունս
ունի ժողովեալ յանուն սրբոյ վանիցն Գանձասարու, զօվ և ցուցցէ Յով-
հաննէս կաթուղիկոսն, հասուսցէ նմա՝ գիտութեամբ և վերահասու-
թեամբ քով։ Քանզի մեք գրեցաք նմա՝ ցուցանել ձեզ յայդր զոմն, ում և
կամիցի, որ դուք ևս նմա հասուցանիցէք զարդիւնսն այդ։
Ծանուցանէ և զնորոգելն նորա զտանիսն եկեղեցւոյ և վասն այնր
զպակասութիւն ունիլն և այլն։
Նաև զեկուցանէ զպատմելն անտի եկեալ վաճառականացն, որք
162ա անցեալ գնային ի // Թարվէզ, յաղագս մտանելոյն իւրոյ ի Հաշտարխան
և ուրախ լինելն վասն այն։ Եւ թէ ակն ունիմք առնուլ ի մօտակայ
աւուրս զպատասխանիս Եսայու բերեալ Թղթոցն ի քէն (361 [եր.])։
647. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Հաշտարխան առ գանձա-
պետ Միխայէլն Գանձասարու, թէ սիրելի եղբայրն մեր՝ Յովհաննէս
կաթուղիկոսն յանցեալ տարիսն նորոգեաց բազմօք ծախիւք զտանիսն
սրբոյ եկեղեցւոյն։ Եւ զի ունի այլևս ծախս ի վերայ հարկաւոր շինու-
թեանց, վասն որոյ խնդրեալ էր ի մէնջ գրել առ սիրելի որդին մեր և
ծայրագոյն նուիրակն և առաջնորդն օրհնեցելոյ երկրիդ՝ Յովսէփ ա-
տուածաբան վարդապետն և առ քեզ, զի զարդիւնս գանձանակին սրբոյ
Աթոռոյն Գանձասարու, որ առ քեզ է և խոստմունքս ևս զինչ և լինիցի
յանուն Գանձասարու, հասուցես առ ինքն։ Եւ մեք գրեցաք նմա, զի
մարդ ցուցցէ ձեզ՝ զօվ և կամիցի, զի և դու, գիտութեամբ մեր Յովսէփ
վարդապետին, հասուցես առ նա զայդ արդիւնսդ, որպէս զի ձեռնտու-
ութիւն լիցի պակասութեան սրբոյ Տանն այնմիկ և դու ևս զվարձս ըն-
կալցիս յԱստուծոյ (524 [եր.])[147]։
648. Կոնդակ ևս գրեաց սրբազան Վեհն առ Լօռու բերդի և իւր մեր-
ձակայից ժողովուրդսն, որք էին՝ ջաւախէթցիք, բիւրականցիք և ապա-
րանցիք, որք աղերսանօք և բազմակնիք Թղթով խնդրէին առնել զին-
քեանս տէրունի սրբոյ Աթոռոյս, զի չկամէին լինիլ Թեմ Սանահնու

(որոյ վիճակ էր Լօռի) և ոչ Հախպատու, այլ սրբոյ Աթոռոյս կամէին
լինիլ տէրունի վիճակ։ Որոյ աղագաւ քանիցս գրան ինչ յիշեցաք ի մա-
յիսի Ի (20) ի թղթոջ Գէորգին արքայորդւոյն, և ի թուղթս Կարապետ
վարդապետին ևս ի մայիսի Ի (20) և յամսոյս ԺԶ (16)։ Իսկ այժմ
որովհետև զբազմակնիք մահսար էին գրեալ առ սրբազան Վեհն, որ-
պէս ասացաք, ձեռամբ ախլքեալակցի տէր Աբրահամ աւագ քահանա-
յին իւրեանց, որ եկն ի սուրբ Աթոռս[148] ընդ վերոյ յիշեալ տէր Սահակ
քահանային և ցուցեալ էին զաղէտս սրտից իւրեանց և զկարի բաղձանս
և զանմոռանալի սէրս, որ առ սուրբ Աթոռ ծնօղս իւրեանց, և խնդրէին
բազմաւ աղերսանօք և աղէին՝ որովհետև մեք ի բնէ անտի սրբոյ Աթոռոյդ
եմք վիճակ և ժառանգութիւն, վասն որոյ ոչ կամիմք երբէք, ոչ կարեմք
և ոչ առնումք յանձն հատանել զմեզ ի լինելոյ վիճակ սրբոյ Աթոռոյդ
և լինիլ վիճակ այլ վանից։ Ուրեմն խնդրեմք, զի մի կամիցիս տալ զմեզ
այլոյ վանից, թէև գրուեցաք, թէև աղքատացաք, սակայն սրբոյ Աթո-
ռոյդ եմք բնական վիճակ, ոչ պարտիս զմեզ ի ձեռաց թողուլ, այլ պա-
հել ի ներքոյ ձեռաց ձերոց, օրհնութեան թղթով զմեզ մխիթարել և ձեր
աթոռային առաջնորդի զմեզ յանձնել, որ ի կողմանէ ձերմէ զմեզ հովու-
իցէ։
Արդ, մինչ ետես սրբազան Վեհն զայսու կերպիւ գրեցեալ թուղթ
նոցին, գրեաց առ նոսա այսու մտօք։ Որովհետև սէր հոգևոր որդիու-
թեան ձգտի առ ծնօղս ձեր լուսատու և առ մեզ, և ոչ կամիք հեռանալ և
անջատիլ ի սմանէ և ի մէնջ սրտիւ, թէպէտ ըստ բերմանց ժամանակի
հեռացեալ էք տեղեաւ, վասն որոյ ահա լսելով բազմաթախանձ աղեր-
սանաց ձերոց, ընկալայ զձեզ անդրէն ի վիճակ սրբոյ Աթոռոյս, որպէս և
էիք ի բնէ տէրունի վիճակ սորին և ժողովուրդք։ Որոյ աղագաւ գրեցաք
ահա այժմ առ սիրելին մեր և հարազատ որդին սրբոյ Աթոռոյս և առաջ-
նորդն օրհնեցելոյ քաղաքին Թիֆլիզու և ամենայն տէրունեացն մերոց, որք
յայդկոյս՝ Կարապետ աստուածիմաստ վարդապետն և արհիեպիսկոպոսն,
զի զձեզ ևս ընդ այլ տէրունի վիճակացն մերոց ի մերս կողմանէ հովուես-
ցէ և լիցի ձեզ հոգևորապէս խրատիչ և ծանուցանօղ ձեզ զօրէնս և զպա-
տուիրանս աստուածային և կառավարօղ ձեզ ըստ աւանդութեանց սրբոյ
եկեղեցւոյ և ըստ կանոնաց հարցն սրբոց։ Ուրեմն և դուք պարտիք սի-
րով մեծաւ ընդունիլ զնա ձեզ հոգևոր հովիւ և առաջնորդ և լինիլ լսօղ
162բ և կատարօղ ամենից հոգևոր || և անմեղածին հրամանաց նորին և ոչ
ոք ի ձէնջ ներհակ և հակառակ եղիցի նմա ի յանդիմանելն և ի յուղղելն
զանհնազանդսն օրինաց Աստուծոյ։ Որում զոր ինչ հնազանդութիւնս և
զորդիական սէր և զհարազատութիւնս ցուցանիցէք, այն ամենայն մեզ
և սրբոյ Աթոռոյս լինի համարեալ և օրհնութեանց մեծաց լինիք ար-
ժանաւորք։ Եւ զամենայն առաջնորդական և վանքական հասս և զիրա-
ւունս ձեր ևս, որ ինչ օրէն է և սովորութիւն ի բնէ անտի, նմին առաջ-
նորդ Կարապետ վարդապետին յանձնեսջիք, քանզի առ նա հասեալն՝
մեզ և սրբոյ Աթոռոյս է հասեալ։ Եւ ով ոք ի կողմանէ սրբոյ Աթոռոյս
և մեր առաջնորդ իցէ ի Թիֆլիզ, յինչ ժամանակի և իցէ, նա պարտի
զձեզ հովուել։ Բայց ի նմանէ արիշ առաջնորդ ոչ ունի ի վերայ ձեր իշ-
խանութիւն, քանզի դուք սրբոյ Աթոռոյս էք տէրունի վիճակ և ժողո-
վուրդք, յատուկ վանքն և առաջնորդարանն ձեր սուրբ Աթոռս է և
առաջնորդն ձեր՝ մեք, որպէս ի վերայ ևս գրեցաք։ Նաև պատմեաց մեզ
սիրելի որդին մեր՝ տէր Աբրահամ խոհեմամիտ քահանայն, որ ունիք
զբաղձանս շինել զեկեղեցի ի մէջ բերդին, որովհետև ոչ գոյ։ Վասն որոյ

և մեք ընդ այդ ուրախացեալ, ահա պատուիրեմ հոգևոր որդւոցդ մերոց,
զի որպէս մտադրեալ էք, ջանասջիք ի գլուխ տանիլ, շինել վասն ձեր
զեկեղեցի, զի լինիցի ձեզ հոգևոր մխիթարութիւն և առանց եկեղեցւոյ մի
մնայցէք։
Այլև՝ ահա զսիրելի որդիդ մեր՝ զտէր Աբրահամ հանճարաշատ քա-
հանայդ կարգեցաք ձեզ աւագ քահանայ և ի միջի ձերում գործակալ
սրբոյ Աթոռոյս և մեր՝ այսու օրհնութեան նամակաւս մերով, զի ձեր
հասին և չհասին և ամենայն եկեղեցական կարգացն և օրինացն վերա-
հասու եղիցի՝ կալով ի ներքոյ ձեռաց առաջնորդին և որդիական հնա-
զանդութեամբ լսել ամենից ասացելոցն ի նմանէ և հրամանաւ նորին
շարժիլ։ Նաև պարտի սրբոյ Աթոռոյ արդեանցն ևս վերահասու լինիլ և
հասուցանել առաջնորդին։ Եւ դուք, սիրելի և հոգևոր որդիքդ մեր, ևս
պարտիք զդա ձեզ աւագ քահանայ ընդունիլ և սրբոյ Աթոռոյս և մեզ
գործակալ և վէքիլ գիտել, և ամենից օգտաւոր ասացելոցն զորին ևս
լսօղ լինիլ և առնօղ։ Եւ կատարօղքդ հոգևոր հրամանացս մերոց եղիջիք
օրհնեալք յԱստուծոյ (770[եր])։
Առաքեցաւ կոնդակս ի Լօռի ի ձեռն ախլքեալակցի տէր Աբրահամին,
զոր կարգեաց սրբազանն գործակալ ընդ Լօռի, ընդ Սահակ քահանային,
յամսոյս ԻԳ (23)[149]։

649. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ նուիրակ և
առաջնորդ Կարապետ վարդապետն և սրբոյ Աթոռոյս գործակալ տէր
Ղազար քահանայն, ի պատասխանի թղթոց նոցա, զոր գրեալ էին ընդ
տէր Սահակ և Աբրահամ քահանայիցն, հանդերձ Լօռու բերդաբնակ
ժողովրդոց բազմակնիք մահսարան, զոր յիշեցաք ի վերոյ։ Որոց գրէ,
թէ զգրեցեալսն ձեր իմացաք և զտէր Սահակ և Աբրահամ քահանայսն ի
սէր ընկալեալ և շահեալ ըստ արժանեաց իւրոց, ուղևորեցաք յետս խի-
լայիք փառաւորութեամբ, տալով իւրաքանչիւրոցն յատուկ յատուկ զկոն-
դակս գործակալութեան։ Որոց ի գալն առ ձեզ իմանալոց էք զամենայն
որպէսն, քանզի են գիր կենդանիք։
Իսկ դու՝ սիրելիդ մեր Կարապետ վարդապետ, ի փուսուլայօդ զոր
ինչ ծանուցեալ էիր, իմացաք և ըստ մտաց Լօռու մահսարին զտէր
Աբրահամի կոնդակն լաւապէս գրեցաք։ Նաև զտէր Սահակի կոնդակսն
ևս, զոր տեսանելոց ես։ Եւ պատուէր յաղագս նուիրակական գործոյն՝
առ ի արիանալ ի նոյն։ Ծանուցանէ և զտրամիլն և զհոգալն իւր յա-
ղագս արքայորդւոյ հարսինն ննջման և խոստանայ զմխիթարական
թուղթս գրել առ արքայն և առ արքայորդին յետ աւուրց ինչ։
Թ (9) թուղթքս վերոյ գրեալք առաքեցան դէպ ի Թիֆլիզ՝ ի տեղիս
իւրեանց՝ ի ձեռն գօրեցի տէր Սահակ քահանային ի ԻԳ [յունիսի]։

163ա 1782 թ. հունիս—Թուղթք ի Կարս

650. Կարնոյ Իբրահիմ փաշայն որովհետև այժմ եկեալ էր ի Կարս,
առ սրբազան Վեհն զխաթրահարցական գիր էր գրեալ ընդ ումեմն թա-
թարի, ծանուցանելով զգալն իւր ի Կարս և զընկալնուլն զընծայսն
շնորհակալութեամբ ի Կարին, զոր յղեալ էր սրբազան Վեհն յառա-
ջագոյն առ նա ի ձեռն Ղազար վարդապետին, որ գնայր յայնժամ աստի
ի Կարին առաջնորդ։ Ուստի խիլայեաց սրբազան Վեհն զթաթարն այն և
Ա (1) թուղթ ևս գրեաց առ Կարսայ նորեկ փաշայն, ի պատասխանի

նորին գրեցեալ թղթոյն, զոր յիշեցաք և ուղևորեաց ի ձեռն անտի եկեալ թաթարին։

651. Թուղթ ևս սիրոյ և բարեկամութեան գրեաց սրբազան Վեհն առ աֆանդիպատէսն։

652. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ պարոն Գէորգն, որում ծանուցանէ զպատասխանիս թղթոց պարոն Հայրապետին գրելն յառաջ քան զայս ի ԻԲ (22) յամսոյս և յղելն առ ինք[ն] հանդերձ Գ (3) սանատօքն առ ի հասուցանել նմա։ Ընդ որում զԱ (1) թուղթ ևս առ ինքն, յորում սակս փայտավաճառ տաճկին զբան ինչ գրելն և այժմ ևս զնոյնն վերայիշէ։ Եւ վասն Սաղիմայ նուիրակ Պետրոս պետի փօլիցայ տալոյն, ասէ, գրեցաք առ պարոն Հայրապետն, զի ում և կամիցիս, տացէ անդ, միամիտ լեր։ Եւ թէ զսանատն Յովհաննէս պետի, զոր խնդրես, յղեցաք ընդ նոյն թղթոց առ պարոն Հայրապետն։

Գ (3) թուղթքս յղեցան ի ձեռն թաթարին, զոր վերդ յիշեցաք դէպ ի Կարս ի ԻԹ (29) [յունիսի]։

1782 թ. հունիս—*Թուղթք ի Բայազիտ*

653. Սրբոյն Յոհաննու Մկրտչի վանից (որ այժմս կոչի Իւչքիլիսէ) առաջնորդ Մկրտիչ վարդապետն, յորժամ եկն յանցեալ ամին ի սուրբ Աթոռս առ ի առնուլ զկարգ եպիսկոպոսութեան, ի ժամանակի այնմիկ զեկոյց սրբազան Վեհին մեծաւ աղէտիւ և մորմոքանօք զբազմանալն օր ըստ օրէ չար և մոլորաշավիղ ախթարմայից ի գիւղս ոմանս իւրոյ։ Որոց աղագաւ զհնար իմն հնարել կամէր մշտապէս, թէպէտ, սակայն ոչ կարէր առնել ինքնագլուխ զբան ինչ։ Քանզի յաճախ էին և ի վաղուց ժամանակաց, որք ոչ հնազանդէին առաջնորդի և ոչ հոգևոր կարգաց և օրինաց եկեղեցւոյս Հայաստանեայց, և ոչ անսային քարոզի խրատուց և պատուիրանաց ուղղադաւան կարգաւորաց, և ոչ երկնչէին ի հոգևոր պատժոց։ Վասն որոյ խնդրեաց ի սրբազան Վեհէն գրել առ իշխօղ երկրին՝ Իսախ փաշայն, բռնանալ ի վերայ նոցա, առնել տուգանս և սաստել ահիւ և գանիւ՝ զոմանս աքսորելով, զոմանս ի բանդ արկանելով, և զայլ պէսպէս նեղութիւնս տալով՝ մինչև դարձցին ի հայրենի և ճշմարիտ հաւատն իւրեանց։

Որ և սրբազան Վեհն ըստ խնդրոյ նորին գրեաց զթուղթ առ փաշայն յայնժամ, զի հարկեսցէ նոցա դառնալ անդրէն ի նախնի հաւատն իւրեանց՝ հնազանդելով առաջնորդին և մնալով ըստ կարգի և օրինաց և ուղղադաւան մերազնէից։ Եւ առաջնորդին ևս պատուիրեաց ջանալ և հետևիլ ըստ կարողութեանն, զի թերևս գոնեայ ի ձեռն մովպետին կարիցէ առնել նոցա զհնար իմն դարձման ի թիւր և ի մոլար ճանապարհէ։ Եւ զի ընդ այն ժամանակս ի խնամոցն Աստուծոյ էր և մեծ թագաւորն օսմանցւոց վրէժխնդիր ամենայն ախթարմայից յաղգէս մերմէ դարձելոց։ Որոց աղագաւ առաքեալ էր ընդ ամենայն կալուածս թագաւորութեան իւրոյ զհրովարտակ ի ձեռն Պօլսոյ պատրիարգին, որում և սաստիկ հրաման ևս տուեալ, զի ուր և գոն ախթարմայք հեստեալք ի մէնջ, ուղղեսցեն զամենայն սպառնալեօք, պատժօք և տուգանօք։ Եւ
163բ եթէ ոչ դառնայցեն ի բնիկ դաւանութիւնս իւրեանց, // այլ մնայցեն ի նոյն, զինչս նորա յարքունիս առցեն և զինքն ի յաքսոր առաքեսցեն և կամ ի յանել արգելանս դիցեն և այլն։

Արդ, որովհետև եկեալ էր այս սաստիկ հրամանս ի մեծազօր արքայէն և սրբազան Վեհն ևս գրեաց աստի՝ խնդրելով լինել վրէժխնդիր չարացն այնոցիկ հեստելոցն ի մէնջ։ Ուստի և նա ըստ կամաց մեծի արքային իւրեանց և ի սէր սրբազան Վեհին, առնէր ի յերկիրս իւր զվրէժխնդրութիւն՝ տալով զպէսպէս նեղութիւնս և առնելով զտուգանս յամենեցունց, որք հեստեալք էին ի մէնջ, մինչև վերասցի անունն ախթարմայութեան յինքեանց և լիցին հնազանդ առաջնորդին իւրեանց և պահիցեն զկարգ և զօրէնս իւրեանց հայկական։

654. Նաև Մկրտիչ վարդապետին ևս տուեալ էր ըստ գրեցելոյ սրբազան Վեհին զհրամանագիր, զի դարձուցէ զամենայն յախթարմայութենէ ի հայրենի հաւատն իւրեանց՝ հետևեցուցանելով ինքեան և եկեղեցւոյ իւրոյ կրօնի, որք ոչ հնազանդեսցին, զեկուսցէ ինքեան, որ բռնութեամբ և հարկիւ տացէ հնազանդիլ և հետևիլ նմա։ Որ և Մկրտիչ վարդապետն ըստ պատուիրելոյ սրբազան Վեհին և ըստ հրամանի փաշային և ըստ իւրոյ ջատագովութեանն և արիութեանն, ջան եդեալ մեծաւ աշխատեցմամբ դարձուցեալ էր զամենայն ախթարմայս վիճակի իւրոյ՝ անդրէն ի մերս ուղիղ դաւանութիւն։ Եւ առեալ էր ի բերանոցն զհաստատուն մուչալկեայ, որպէս զի մի վերադարձցին ի չար ախթարմայական աղանդն իւրեանց առաջին։ Եւ յայն սակս զբազում դրամ ևս էր ծախեալ։ Ուստի ի ներկայումս առ սրբազան Վեհն զգիր էր գրեալ՝ խնդրելով զՍ (2000) ղուռուշ դրամ օգնութիւն, որ զսանատն ևս գրեալ և եդեալ ի նմա, յղեալ էր ձեռամբ Դան[ի]էլ պետին։ Նաև ծանուցեալ էր զամենայն անցսն լիովին՝ զբարերարութիւն փաշային, զնեղսակրութիւն իւր և զջատագովութիւնս տէր Վահանին և Սահակ աղային, և զայլ որպիտութիւնս։

Որում գրէ սրբազան Վեհն զօրհնութիւն և զշնորհակալութիւն, զի իբրև բարի և քաջ հովիւ, ջան եդեալ կացցէ մշտապէս ի յայն հոգևոր մրցմունս և մշտահետ ջանացողութեամբ, երբեմն սիրով և երբեմն սաստիւ ուղղեսցէ օր ըստ օրէ զփիրտ խոտորամիտ հեստելոցն՝ առ ի բաց կալ ի չար աղանդոյն իւրեանց։ Եւ վասն չերիցանցն (զոր ունէր ի կալանս), ասէ, կամ յանել արգելանս պահեա, և կամ աստ առաքեա, զի մի փախուցեալ այտի երթիցեն ի հիւսիսակողմն և այլն։ Եւ թէ զՍ (2000) ղուռուշի սանատն առ մեզ էհաս, վասն որոյ գրեցաք առ տէր Վահանն, զի ի ներկայական դրամոցն մերոց, որ առ նա, զՍ (2000) ղուռուշ տացէ քեզ՝ իբր ի մէնջ օգնութիւն քեզ։

655. Թուղթ ևս սիրոյ և շնորհակալութեան գրեաց սրբազան Վեհն առ Բայազիտու Իսախ փաշայն յաղագս կատարելոյ զխնդիրս յանցեալ ամի գրեցեալ թղթոյն ի կողմանէ չար ախթարմայիցն, զոր յիշեցաք ի վերոյ։ Որում գրէ այժմ, զի զեդեալ վճիռն իւր հաստատուն պահեսցէ և զՄկրտիչ պետն ի խնամս իւր ունիցի։

656. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ Սահակ աղայն՝ յաղագս արարեալ բարերարութեանցն և ճշմարիտ ջատագովութեանն, որ վասն հաւատոյս մերոյ, զոր գրեալ էր Մկրտիչ վարդապետն սրբազան Վեհին[130]։

657. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ տէր Վահան քահանայն, ի պատասխանի թղթոյ նորա գրեցելոյ յամսոյս Իէ (27) ընդ Իւչքիլիսէի վանից միաբան Դանիէլ պետին։

Հանձնարարում է ջուղայեցի պրն. Ստեփանից և պրն. Հայրապետի որդիներից սպարքը ստանալ ոչ թե նոյն ոսկով, որն իրենց մոտ չի անցնում, այլ դրամով, կարգադրություններ է անում նաև էջմիածնին պատկանող մյուս գումարների վերաբերյալ:

Դ (4) թուղթս գրեցան և յղեցան ի ձեռն նոյն թղթաբեր Դանիէլ վարդապետին ի Լ (30) [յունիսի]:

658. 1782 թ. 20 հունիսի—*Թուղթ ի Թիֆլիզ առ Միրզայ Գեորկինն և Միխայէլն, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին առ սրբազանն և խնդրեալ շնորհել Սարգսի ումեմն զկոնդակ շրջաբերական:*

Ձեռ. № 2803, էջ 91—93

99 *659.* [1782 թ.] 30 հունիսի—*Թուղթ ի Թիֆլիզ առ Միրզայ Գեորկինն և Միխայէլն, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին առ սրբազանն վասն տէր Դաւիթ քահանային՝ տալ նմա զկոնդակ ժողովարարութեան:*

Յորմէ բազմաւ սիրով և կարօտիւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ և միածնաիջի սրբոյ տեղւոյս յորդածաւալ շնորհիւն, ծանուցումն լիցի ճշմարիտ սիրելեացդ մերոց և հաւատարիմ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, քրիստոսասէր և նովիմբ զօրացեալ երկուց բարեմիտ և հարազատ եղբարցդ՝ պարոն Միրզայ Գեորգինիդ և Միրզայ Միխայէլիդ:

Զի ի յունիսի Ե (5) գրեալ թուղթն ձեր ես էհաս առ մեզ ձեռամբ տէր Դաւիթ քահանային, զոր ընթերցեալ ծանեաք զգրեալս ձեր, որք յաղագս նորին քահանային խնդրեալ էիք զշրջաբերական կոնդակ շնորհել:

Սիրելիք իմ, յառաջ բան զայս ևս վասն Սարգիս անուամբ առն միոջ էիք գրեալ՝ առ ի կոնդակ տալ նմա, իսկ մեք բաց առացեալ 100 *նմա, գրեցաք սիրելեացդ երկարապէս զպատճառն բացասելոյն և ծանուցաք զցաւս մեր: Ապա տակաւին միջոց ինչ ոչ անցեալ վասն սոյն քահանայիս էք գրեալ զնոյնպիսի խնդիր: Արդ, եթէ սմա ևս չտայաք զմտաւ ածէիք, թէ զբանս մեր բնաւ ոչ ընդունի և զմեզ ոչ սիրէ, ուստի հարկեցեալ ի տոյգ սիրելութենէ ձերմէ, վասն աղնիւ խաթերդ ձերոյ շնորհեցաք դմա զթուղթ ժողովարարութեան՝ խնայելով և ի ծերութիւնն իւր և հայելով ի պատիւ կարգին: Սակայն գրեմ ահա սիրելեացդ, զի լաւապէս իմացեալ զցաւս մեր, ի յառաջին թղթոյն մերմէ յայդպիսի խնդրոց ապահովս առնիցէք զմեզ: Քանզի ահա տոյգ երևեցաւ հաւաստութիւն բանին մերոյ, զոր յայնմիկ թղթոջն գրեցաք, թէ կոնդակախնդիրքն յոյժ բազմացեալք են, մանաւանդ յայդրուստ որիշք ևս պատուելի անձինք գրեն առ մեզ՝ վասն բազմաց զդոյն գունակ խնդիրս, որոց զամենիցն կատարել ոչ լինի: Իսկ թէ զոմանցն արասցուք և զմիւսոցն ոչ, յայնժամ լինիցի մեծագոյն խաթրամնայութիւն:*

Այսց աղագաւ ոչ սակաւ ունելով զմտատանջութիւնս, կրկնեմ արդէն զվերոյ գրեալ բանս, թէ բաց կացջիք յայդ հետեմանց՝ խնայելով ի բազմակերպ վշտակրութիւնս մեր, որք և առնելով ըստ գրեցելոցս, ընկալջիք զօրհնութիւնս յԱստուծոյ և ի մէնջ՝ վայելելով և զհոգեպարար շնորհս սրբոյ Աթոռոյս միշտ և հանապազ: Ամէն:

Ի յունիսի Լ (30):

Ձեռ. № 2803, էջ 99—100

[Ե]ւ արդ, ընդ աւուրս այսոսիկ հարկ եղև սրբազան Վեհիս մերոյ գրել զթուղթս ի Թիֆլիզ առ արքայն, առ թագուհին և առ Գեօրգին արքայորդին: Եւ զի որովհետև յատուկ է ներ տոյգ սիրելեաց և բարեկամաց լինել միմեանց վշտակից և ուրախակից ի ժամանակի տրտմարար դիպուածոց պատահման, վասն որոյ այսր կրից կցորդութեամբ առաւել մխիթարեսցին բարեկամք ի բարեկամաց, կամ այլով իւիք տրօք և պարգևօք, ըստ որում է ցոյց և նշան մեծի սիրոյ և բարեկամութեան: Ուրեմն ճշմարիտ բարեկամք և սրտացաւք միմեանց են այնք, որ ի պատահիլ միոյն տրտմութիւն ինչ՝ ցաւակցի նմա և միւսն և ուրախութեանն դէպ լինիլ՝ հաղորդակցին նմանապէս և մանաւանդ մխիթարող և սփոփօղ լիցին զմիմեանս ի ցաւակցիլն: Արդ, ըստ այսմ օրինակի, ըստ բերմանց աշխարհի իբր տրտմութիւն ինչ էր դիպեալ տանն աստուածազօր արքային Հերակլայ՝ յաղագս վախճանելոյն ամուսնոյ որդւոյն իւրոյ՝ Գեօրգին Միրզային, ուստի որովհետև սիրելիք և բարեկամք են սրբոյ Աթոռոյս և ունին ի բնէ զխնամս և զգութս ի վերայ սրբոյ Աթոռոյս և աթոռայնոցս, նաև ի ներկայումս առաւել ևս առ սրբազան Վեհս մեր, ուստի ի լսել սրբազան Վեհին զտրտմառիթ դիպուածն նոցա և զկարի սգալն, ոչ սակաւ կրեաց զվիշտ և զտրտմութիւն: Որ և գրեաց զթուղթս մխիթարական առ արքայն, առ թագուհին և առ արքայորդին՝ հանդերձ ընծայիւք ի ձեռն Մարտիրոս վարդապետին (որ առաքեցաւ յատկապէս ի մխիթարութիւն նոցա), որք ահա նշանագրին ի ներքոյ:

660. Թուղթ գրեաց սրբազան Վեհն առ քրիստոսազօր Հերակլ արքայն Վրաց՝ մխիթարութիւն յաղագս մահուան կնոջ որդւոյն իւրոյ՝ Գեօրգին Միրզային[151] *և ծանուցանէ յատուկ փուսուլայիւ զընծայս յղելն ի ձեռն Մարտիրոս վարդապետին, և այլ բանս մխիթարականս (տե՛ս ի նոր տետր 773)*[152]*:*

661. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ Դարէջան թագուհին Վրաց՝ կինն Հերակլայ արքային, ևս մխիթարութիւն սակս մեռանելոյ հարսին իւրոյ բարեպաշտուհւոյ: Սմա ևս ծանուցանէ ուրոյն փուսուլայիւ զառ ինքն առաքեալ ընծայսն ձեռամբ վերոյ յիշեալ Մարտիրոս պետին (ի 594 երեսն)[153]*:*

662. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ Գեօրգին արքայորդին՝ ևս ի մխիթարութիւն և ի սփոփութիւն ամուսնոյն իւրոյ, ըստ մտաց թղթոցն արքային և թագուհւոյն, զորին ընծայից փուսուլայն ևս եդեալ ի թղթոջ իւրում, յղեաց ձեռամբ Մարտիրոս պետին (տե՛ս 683 երեսն)[154]*:*

663. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ պատկերահան պարոն Յովնաթանն: Զի որովհետև ունէր ի մտի սրբազան Վեհն յետ սակաւ միջոցաց զներսակողմն սրբոյ աստուածաէջ տաճարիս ծաղկեցուցանել և երանգ երանգ գունով զարդարել նորապէս ի ձեռն նորա, վասն որոյ ծանուցանէ նմա կանխապէս, զի մինչ չև իցէ եկեալ աստ, գրեսցէ անտի յառաջագոյն, թէ որքան և քանի կերպ դեղորայք պիտոյից են ինքեան՝ յորժամ եկեսցէ ձեռնարկել ի ծաղկել, զի մինչև ցգալն իւր, զամենայն պատրաստութիւնս նոցին տեսանիցի նախապէս, որ ի ժամանակի իւրում ամենայն պիտոյքն բոլորապէս և առանց թերութեան ի պատրաստի լինիցին: Վասն որոյ հարկէ գրել զիւրաքանչիւրոց դեղորէից

գոյնսն, յատկութիւնսն և որքանութիւնսն դաւթարաւ և զդաւթարն յղել
առանց զանցառութեան և յապաղելոյ, զի հոգասցի յառաջագոյն, որ-
պէս ասացաք:

664. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ Թիֆլիզու նուիրակ և
առաջնորդ Կարապետ վարդապետն՝ ծանուցանելով քան զայս յառաջ
զերկուս թուղթս գրելն ի պատասխանի թղթոցն իւրոց գրեցելոց, որ
Ա (1) ընդ Մօղնու եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Աբրահամին և Ա (1)՝
ԺԶ (16), և Ա (1)՝ սրբոյ Աթոռոյս գործակալ գօրեցի տէր Սահակ քա-
հանային ի ԻԳ (23) նոյնոյ ամսոյ: Որք, աւաղ, ի հարկէ մինչև ցայժմ
առ քեզ են հասեալ: Ծանուցանէ զթուղթս մխիթարութեան գրելն առ
արքայն, առ թագուհին և առ արքայորդին՝ հանդերձ ընծայիւք ի ձեռն
164բ Մարտիրոս պետին, // և վասն այն պատուէր, զի տարեալ ի միասին՝
մատուցեն առ իւրաքանչիւրսն: Եւ զՄարտիրոս վարդապետն, աւաղ,
փութով յետս դարձուցանիցէք, և զայլ որպիսութիւնսն ի դմանէ իմա-
ցիք և այլն:

Այլև պատուէր յաղագս նուիրակական գործոյն, զի երթեալ նըս-
տիցի ի գլխաւոր եկեղեցւոջ քաղաքին և սկսանի ժողովել նուիրակու-
թիւնն ըստ օրինի, իսկ եթէ ընդդիմակ ոք գտանիցի, ծանուսցէ և այլն:
Եւ վասն մոմաժողով Գրիգոր վարդապետին (զոր յիշեցաք ի մայիսի
Ի (20) ևս ի թղթոջ սորա), աւաղ, ջանասցես օր մի յառաջ հասուցանել
ի սուրբ Աթոռս հանդերձ ժողովեցելովքն ամբողջապէս: Եւ թէ աթոռա-
կալ Գալուստ վարդապետն մեր զՃԺ (110) զուռուշ օսմանցւոյ դրամ հա-
սոյց մեզ աստ, զի դու յայտր տացես Մարտիրոս վարդապետին և մեզ
գրեսցես, որ մեք ևս աստ գրեսցուք ի տրոցդ դաւթարոջն:

Իսկ և ի ներկայումս հարկաւոր պիտոյ է տանս Ճ (100) ջուլ ձիոյ և
Լ (30) թօփ թուշի շալ, որք եթէ գտանիցին, առնուցուս և յղեսցես ընդ
Մարտիրոս պետին, և թէ ոչ, գնեալ Լ (30) ջուլ որպէս և իցէ առեալ
յղեսցես և զմնացեալն յետոյ, յորժամ և գտանիցէք, առեալ յղեսջիք ընդ
այլ եկողաց:

Ե (5) թուղթքս գրեցան և յղեցան ձեռամբ Թիֆլիզու նախկին նուի-
րակ Մարտիրոս վարդապետին ի Ա (1) [յուլիսի]:

665. Դարձեալ գրեցաւ թուղթ ի Թիֆլիզ ևս ի սոյն օր: Քանզի Միր-
զայ Գեորգինն և եղբայր նորա՝ Միրզայ Միսայէլն այժմոյս առ սրբա-
զան Վեհն զԱ (1) աղերսանաց թուղթ էին գրեալ ընդ ումեմն Դաւիթ
անուն քահանայի՝ խնդրելով վասն նորա զկոնդակ շրջաբերական առ ի
ազատիլ ի ծանր պարտուց իւրոց, յոր անկեալ էր ըստ պատահմանց
աշխարհի: Իսկ որովհետև յառաջ քան զայս ևս էին խնդրեալ յաղագս
Սարգիս անուամբ առն միոջ՝ առ ի կոնդակ տալ նմա, զոր սրբազանն
ոչ լուաւ յայնժամ գրելով զպատասխանի թղթոյն նոցա և ծանուցանելով
զպատճառ չտալոյն (որ ծանուցաւ փոքր ի շատէ ի մայիսի Լ (30) ի
թուղթն Գեորգին Միրզայ արքայորդւոյն)[155]: Վասն որոյ խնայելով ի
ծերութիւն երիցուն և հայելով ի ճանապարհական աշխատութիւնս, ի
խղճութիւնս և ի տառապանս սորա, և առ ի կատարել զխնդիրս նոցա,
որք գրեալ էին բազմաւ աղերսանօք՝ ծանուցանելով զողորմելութիւն
սորա:

666. Կոնդակ ժողովարարութեան գրեաց սրբազան Վեհն վասն
տէր Դաւիթ քահանային ի վերայ համայն միաբանեաց ժողովրդոցն, որք

ի քաղաքն Թիֆլիզ, ի Կախէթ, ի Գօրի, ի Բամբկաձոր և ի շրջակայ
գիւղորայս նոցին: Որոց ծանուցանէ նախապէս զ՛ի ներքոյ պարտուց
ծանու անկանիլն երիցուն, և ապա պատուէր և յորդորումն, զի առա-
տութեամբ և լիաձեռն տացեն զկամաւոր ողորմութիւնս իւրեանց՝ վասն
յուսոյ արքայութեանն և առ ի ազատիլ նորա ի ծանր պարտուցն:

667. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ Միրզայ Գեորգինն և առ
Միրզայ Միսայէլն, ի պատասխանի թղթոյն իւրեանց, որ ընդ տէր Դաւ-
թին: Որոց, աւաղ, մի այսուհետև գրիցէք զայսպիսի բանս (որպէս գրե-
ցաւ արքայորդուն ի մայիսի Լ (30):

Բ (2) թուղթքս առաքեցան դէպ ի Թիֆլիզ ձեռամբ թիֆլիզեցի տէր
Դաւիթ քահանային ի Ա (1) [յուլիսի]:

1782 թ. հուլիս—Թուղթ ի Խոյ

668. Աստապատու մէլիք Ստեփանն, որ յառաջ քան զայս գնացեալ
էր ի Բայազիտ ի պատճառս խառնակութեանն, որ ի մէջ Խօյայ և Նա-
խիջևանու, և մանաւանդ վասն երկիւղի Խօյայ խանին, որ մախայր և
կամէր ձեռնարկել և տալ զնեղութիւնս յաղագս արարեցելոյ նորա զբան
ինչ ընդդէմ ինքեան: Իսկ այժմ որովհետև եկեալ էր ի Բայազիտու ի
սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն հանդերձ տամբ իւրով և ունէր
միտս դառնալոյ ատտի վերստին ի յԱստապատ երկիրն իւր, ուստի խընդ-
րեաց ի սրբազան Վեհէն գրել զթուղթ յանձնարարութեան ի վերայ Խօյայ
165ա խանին, զի մի տացէ ինքեան զվնաս ինչ: Վասն որոյ // Ա(1) թուղթ ևս
գրեաց սրբազան Վեհն առ Խօյայ Ահմատ խանն՝ յանձնարարութիւն ի կող-
մանէ մէլիք Ստեփանին, զի մի տացէ նմա զնեղութիւն և կամ հասուցէ
զվնաս ինչ և մի յիշեսցէ զարարմունս նորա, այլ ներեսցէ, և ի խնամս
ունիցի, և արձակեսցէ գնալ ի տեղի իւր միամիտ և կալ անհոգապէս:
Գրեաց և այլ բանս սիրոյ և բարեկամութեան:

Ա (1) թուղթքս յղեցաւ ի ձեռն մէլիք Ստեփանին ի Բ (2) [յուլիսի]:

1782 թ. հուլիս—Թուղթ ի Շուշի

669. Յաւուր յայսմիկ ի Շուշի ևս գրեցաւ թուղթ, քանզի ի մօտակայ
աւուրս վաճառականք ոմանք եկեալ ի Շուշու հանդիպեցան ի սուրբ
Աթոռս և առին զօրհնութիւն ի սրբազան Վեհէն, որոց մի էր և Շուշու
սրբոյ Աթոռոյս գանձապետ ագուլեցի պարոն Աստուածատուրի եղ-
բայրն, որ ի մէջ խօսից ասաց սրբազան Վեհին, թէ մահտեսի ումն առա-
քեալ ի ձէնջ, շրջի յայնկողմունսն՝ ժողովելով զգանձանակական ար-
դիւնս սրբոյ Աթոռոյդ: Զոր ի լսել սրբազան Վեհին, կարի զարմացաւ և
անկաւ ի տարակուսանս, թէ արդեօք ո՞վ և կամ ուստի՞ իցէ, մեք ա-
մենևին ոչ զոք առաքեալ եմք և ոչ զգիր ինչ ի պատճառս այդպիսի իրաց
գրեալ: Բայց որովհետև քանիցս պատահեալ էր այսպիսի բանք յայլում
ժամանակի, իբր ոմանց յօրինել զկնիք անուամբ կաթուղիկոսաց սըր-
բոյ Աթոռոյս և կնքել նովիմբ զթուղթ և առեալ ի ձեռս, որպէս թէ առա-
քեալ ի սրբոյ Աթոռոյս և շրջիլ այնու ի մէջ ժողովրդոց սորա (յորս գոն
գանձանակք և այլ արդիւնք յանուն սորին), յափշտակել զայնս խաբէու-
թեամբ առ ի լցուցումն ագահութեանց իւրեանց: Որք և ընկալեալ էին
զպատիժս հոգևորապէս և մարմնաւորապէս ի յայն ժամանակին: Վասն

որոյ ի յայս կարծիս հաստատեալ սրբազան Վեհին, ասացէ և այս այնպիսի ինչ բան։ Բայց ունէր ի մտի սրբազան Վեհն առաքեալ զվարդապետ ումն յայն կողմունսն՝ գրելով զկոնդակ օրհնութեան և զթուղթս առ գանձապետսն այնց տեղեաց, զի ի պատրաստի եղեալ զարդիւնսն գանձանակաց առեալ՝ ամբողջ ի սուրբ Աթոռս հասուսցէ։ Բայց եղև, զի ընդ մէլիք Ստեփանին (զոր յիշեցաք ի վերին թղթոջդ) եկեալ էր ի սուրբ Աթոռս և բայազացի մահտեսի Էլօյի որդի Ստեփանն, որ նա ևս պարտ էր գնալ ի Շուշի, զի ունէր անդ սանատով զպարտս առնլոյ ի յոմանց։ Որոյ աղագաւ խնդրէր ի սրբազան Վեհէն՝ գրել անդ վասն զյանձնարարութիւն, զի իրաւամբ զիւր առնլին ինքեան հասուսցէն։

Արդ, որպէս ասացաք, թէպէտ սրբազան Վեհն մտադրեալ էր գրել զկոնդակ ի վերայ հասարակութեանն և զօրհնութեան թուղթս ի վերայ գանձապետաց սրբոյ Աթոռոյս՝ ի ձեռն ուրումն յատուկ մարդոյ, բայց անձեռնհաս եղև այժմ զայնս գրելն, ուստի եթող յետոյ գրել։ Իսկ այժմ ըստ խնդրոյ Էլօյի որդի Ստեփանին և յաղագս վերոյ գրեալ խաբեփայի բանիցն Ա (1) թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Շուշի առ տէր Յովհաննէս աւագ քահանայն՝ ծանուցանելով զվերոյ գրեալ բանսն, զոր պատմեաց եղբայր գանձապետին, եւ պատուէր, զի զգուշասցին յայնպիսեաց և մի տացեն նոցա զարդիւնս գանձանակաց, և թէ տուեալ ևս իցեն որպիսի կերպիւ իցէ, հնարս առնիցեն՝ յետս առնլոյ վերստին։ Նաև յայն կողմունսն առ այլ տեղեաց գանձապետսն սրբոյ Աթոռոյս ևս գրեսցեն, որ նոքա ևս զգուշասցին։ Եւ թէ յետ միջոցաց յորժամ զառնիցեմք զպարհովութիւն ի զբաղանաց թղթագրութեանց, յորս կամք ներկայապէս, առաքելոց եմք առ ձեզ և այլ տեղեաց գանձապետսն մեր զվարդապետ ումն, հանդերձ կոնդակաւ և թղթով օրհնութեան՝ առ ի ժողովել զարդիւնս գանձանակաց և հասուցանել ի սուրբ Աթոռս։ Եւ ապա յանձնարարութիւն վասն մահտեսի Էլօյի որդի Ստեփանին, զի ձեռնտու և օգնական լիցի նմա։

Ա (1) թուղթս գրեալ չղեցաւ ի ձեռն բայազացի մահտեսի Էլօյի որդի Ստեփանին ևս ի Բ (2) յուլիսի։

165բ 1782 թ. հուլիս—Թուղթք ի Պօլիս, ի Զմիւռին, ի Թօխաթ, ի Կարին և ի Կարս

Յետ այսորիկ գրեցան թուղթքս առաջիկայ, զոր ցուցուք։ Քանզի գրեալ էին աստի և անտի զթուղթս առ սրբազան Վեհն, որոց զպատասխանիսն դարձոյց որովհետև սրբազան Վեհն առ նոյն գրօղսն, ուստի հարկաւորիմ ծանուցանել զայնց թղթոցն զխտմունս և պատասխանեաց նոցին, որք աստի գրեցան։ Բայց նախապէս զնոցայն ծանուսցուք։

670. Արդ, Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն առ սրբազան Վեհն զԳ (3)-ս թուղթս էր գրեալ ի մարտի ԻԴ (24), յապրիլի Է (7) և ի մայիսի Ե (5), յորս ծանուցեալ էր զհասանիլն առ ինքն չորից թղթոց սրբազան Վեհին, գրեցելոյ ի յունվարի Դ (4), ի փետրվարի ԺԱ (11) և ի յելն, և ի մարտի ԺԷ (17)։ Նաև զժամանիլն Բասրայու, Հալապու, Ատրանայու և յայլ տեղիս հասանելոյ թղթոցն, և զիւր զմանս ի նոցունց առ իւրաքանչիւր տեղիս իւրեանց հասուցանելն և զմանց ներկայապէս առ ինքն լինիլն։ Ընդ որս գրեալ էր և զԶաքարիա վարդապետի պատրիարգանալն վերստին և զիւր զնուիրանութիւնն, արեւելցւոց ժողովելն ի ներկայս և զսուրբ Աստուածածնի եկեղեցւոյ նուիրակութեան կիսատ մնալն և այլն։

Այնուհետև խոսվում է այլևայլ վայրերից նվիրական գումարները ժողովելու, այդ գումարներն առաքելու կամ այլ ձևով տնօրինելու մասին, ինչպես և արվում են տնտեսական բնույթի բազմաթիվ հանձնարարություններ (տե՛ս նաև Մինաս վարդապետին հասցեագրված մյուս գրությունը՝ էջ 166ա—166բ)։ Առանձին գրությամբ կաթողիկոսը հայտնում է, որ ինքը շնորհավորական նամակ չի գրում պատրիարքին, քանի որ վերջինս չի պատասխանել իր նամակներին (էջ 166բ)։

167ա 671. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Զմիւռին առ նորին նուիրակ և առաջնորդ Փիլիպպոս վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոց նորին գրեցելոց ի յունվարի ԻԹ (29) և ի մարտի ԺԱ (11), որոց զմիտսն նախապէս ասացաք[156]։

Տնտեսական բնույթի մի քանի տեղեկություններից զատ, կաթողիկոսը հայտնում է, թե քանի դեռ Փիլիպպոսը սեպտեմբերից շուտ չի կարող ավարտել իր նվիրական գործերը, ինքը կարգադրել է նրան փոխարինելու մեկնած Եսայի վարդապետին, որը դեռ չէր հասել Կարին, ավելի ուշ մեկնել Զմյուռնիա։

672. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Ղրիմ առ մահտեսի Վարդումն, ի պատասխանի քանեաց գրեանց նորին՝ յայլ և այլ աւուրս գրեցելոց վասն զանազան բանից, ի յորս և գրեալ էր զորպիսութիւնս նուիրակին մերոյ և առաջնորդին իւրեանց՝ Փիլիպպոս վարդապետին։ Նաև զբաղում շնորհակալութիւնս ի նմանէ, թէ որպէ՞ս գնացեալ առ ինքեանս, ցուցեալ էր զսէր ամենիցն։ Այլև ծանուցեալ էր զիւր զՃԾ (150) զուռուշ դրամս յանձնելն նմա, որոյ զՃԼ (130) զուռուշն յանուն սրբոյ Աթոռոյս և զԻ (20) զուռուշն վասն Եր[ն]ջակու սուրբ Կարապետի վանիցն՝ իբր ի կենդանութեան իւրում հոգեբաժին ի կողմանէ իւր և կենակցին իւրոյ։ Նաև զիւրեանց կայարան տունն ևս արարեալ էին վախում սրբոյ Աթոռոյս՝ հաստատուն թղթով և պայմանեալ էին ևս, զի որքան են ինքեանք կենդանի և կան ի վախում արարեալ տանն այնմիկ, ի կողմանէ նորին ի տարին զԳ (3) զուռուշ դրամ քիրայ տացեն սրբոյ Աթոռոյս։ Վասն որոյ գրէ սրբազան Վեհն առ նոսա օրհնութիւն և շնորհակալութիւն բազում, զի զհոգեօգուտ տուրս իւրեանց սրբոյ Աթոռոյս հասեալ համարելով, միամտեսցին և բերկրեսցին ի հոգի և ի մարմին։ Եւ զայս թուղթ օրհնութեան պահեսցեն ի յինքեանս, զի յետ մահուան իւրեանց մի ոք պահանջեսցէ ի կողմանէ ինքեանց զհոգեբաժին, ըստ որում ի կենդանութեան իւրեանց ետուն։

Իսկ և ծանուցեալ էր զվերստին գործակալ կարգիլն իւր սրբոյ Աթոռոյս ի յառաջնորդ և նուիրակ Փիլիպպոս վարդապետէն, յայսմ կողմանէ ևս ասէ սրբազան Վեհն, թէ յոյժ բարւոք է եղեալ և մեք հաճեցաք ընդ այդ։ Եւ յաղագս Եսայի պետին գրէ զյանձնարարութիւն։ Նաև մահտեսի Թադէոսին, մահտեսի Պետրոսին և որդւոց նոցին՝ պարոն Զաքարիային, պարոն Պետրոսին և պարոն Բաշարաթին՝ ողջոյն։

167բ 673. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Թօխաթ առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Յակոբ վարդապետն, ի պատասխանի ի յապրիլի ԻԲ (22) գրեալ թղթոյն իւրոյ։

Կաթողիկոսը տեղեկություններ է պահանջում Սեբաստիայում նվիրական արդյունքների ժողովման վերաբերյալ, հայտնում է, որ պրն. Հայրապետի հետ ուղարկել է մեկ ամսվա մեռոն, ստացել է պրն. Վարդանի նամակն ու նվերը՝ մեկ ոսկին, ուղարկել է օգնության նամակ մահտեսի Աբրահամին, որը նվիրակ Հակոբ վարդապետի միջոցով չորս ոսկի է նվիրել վանքին։ Տրվում է նաև այդ նամակի համառոտագրությունը։

674. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն առ մահտեսի Աղամջանն, ի պատասխանի ի յապրիլի ԻԳ (23) և ի մայիսի Գ (3) գրեցեալ թղթոց նորին։

Կաթողիկոսը կարգադրում է պրն. Հայրապետի միջոցով ուղարկված մեռոնը հասցնել Թոխաթի նվիրակին, հայտնում է, թե ինքը տեղյակ է այն մասին, որ Աղամջանը Փիլիպպոս վարդապետից ստացված 600 ղուռուշը հանձնել է պրն. Հայրապետին։ Վերոհիշյալ անձանց այդ մասին ուղարկված են համապատասխան գրություններ։

675. Թուղթ ևս գրեաց սրբազան Վեհն ի Կարին առ նորին առաջնորդ Ղազար վարդապետն, ի պատասխանի թղթոյ նորա, որ գրեալ էր տրտունջ ժողովրդենէն և զքահանայիցն, թէ պատղի ոչ տան և ասեն, թէ չէ օրէնք և չէ եղեալ մինչև ցարդ, և այլ այսպիսի բանս ասեն մեզ, որով ոչ սակաւ տաղտկանամք։ Եւ մանաւանդ կերպիւ կերպիւ ձախորդութիւնք ոչ հեռանան ի մէնջ, այլ տան զմեզ միշտ ի զբաղմունս և յանչափ գլխացաւութիւնս։ Որում գրէ սրբազան Վեհն՝ մնալ խաղաղութեամբ և հանդարտ և ընդ ամենեսեանսն սիրով և քաղցրութեամբ կենցաղավարիլ ի բաց կալով վնասաբեր շարժմանց, մինչև ինքն զհոգացողութիւն իմն արասցէ՝ գրելով զթուղթ առ քահանայսն և իշխանսն տեղւոյն։

676. 1782 թ. հուլիս—Թուղթ ի Բայազիտ ի վերայ Սահակ աղային արապկիրցւոյ, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն ջատագովութեանն առ սուրբ հաւատս մեր և ընդդիմակայութեանն ընդդէմ ախթարմայիցն առաջի մոլլէտին Բայազտոյ, որ այժմ ի խնդրոյ սրբազանին վրէժխնդիր լինէր նոցա և հարկէր դառնալ առ մեզ։

Ձեռ. № 2803, էջ 10—12

677. [1782 թ. հուլիս]—Թուղթ ի Դարբանդ առ Սահակեան մահտեսի Վարդանն, ի պատասխանի յանցեալ թուոյ նոյեմբերի ամսոյն գրեալ թղթոյ նորին, յորում և վասն գանձանակին սրբոյ Աթոռոյս և այլևս բանք։

Ձեռ. № 2803, էջ 12—14

678. [1782 թ. հուլիս]—Թուղթ ևս ի Դարբանդ առ պարոն Պօղոսն, որ զկնի վախճանման գանձապետ իւզբաշի Եսայուն սա շրջեցուցանէր զգանձանակն սրբոյ Աթոռոյս։ Առ որ օրհնութիւն և շնորհակալութիւն և պատուէր՝ զարդիւնսն սրբոյ Աթոռոյս յանձնել այժմ ի մէնջ յայն կողմունսն և անդ յղեցեալ վարդապետին՝ առ ի բերել։

Ձեռ. № 2803, էջ 14—16

679. 1782 թ. հուլիս—Թուղթ ի Ղնըղ առ մահտեսի Վարդումն, ի պատասխանի քանեայ գրեանց նորին յայլ և այլ աւուրս գրեցելոց վասն ղանազան բանից։

Ձեռ. № 2803, էջ 17—19

680. 1782 թ. [հուլիս՞]—Թուղթ շնորհակալութեան ի Նուխի և ի Վարդաշէն առ քահանայսն և իշխանսն, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն նոցա։

Ձեռ. № 2803, էջ 19—22

681. [1782 թ. հուլիս՞]—Թուղթ ի Շուշու գղեակն առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Աստուածատուրն, զի զգանձանակադրամն, զոր

ունի ի պատրաստի առ ինքն, տացէ աստի յղեցեալ վարդապետին մերոյ։

Ձեռ. № 2803, էջ 22—23

682. [1782 թ. հուլիս]—Թուղթ ի բերդն Շուշու առ տէր Յովաննէս աւագ քահանայն՝ ըստ վերոյ գրեալ թղթոյդ ոճոյն։

Ձեռ. № 2803, էջ 24—25

683. 1782 թ. 1 հուլիսի—Թուղթ ի Շուշի առ տէր Յովաննէսն, նախ վասն արդեանց գանձանակին սրբոյ Աթոռոյս չարկանել ի ձեռս խավարեալ [sic: խա-ւարեալ?]

Ձեռ. № 2803, էջ 100—102

գործոց ձերոց, միշտ ի յառաջադիմութեան և ի շինութեան պահելով։

Երկրորդապէս ծանեաք զշինութենէ և զխաղաղութենէ օրհնեցելոյ երկրիդ, թէ որպէս ողորմութեամբն Աստուծոյ և հետևմամբ և քաջաբախտութեամբ քրիստոսապսակ օրհնեալ արքային մեծի օր ըստ օրէ աւերակքն շինեալ և նորոգին թէ՛ վանորայք և անապատք, և թէ՛ գիւղորայք ի վաղնջուց ամայացեալք, որոց շինութեանցն աղագաւ ոչ սակաւ ունիմք ուրախութիւնս, և յայժմ օրհնեմք զպատճառն դոյնոյ բարեկարգութեան՝ զաստուածազօր և զբարեջան օրհնեալ արքայն և զիւրային և զձեզ։

Եւ երրորդապէս հասու եղաք բարեհոգձ տենչման և խնդրոյ քոյին, որ սակս սրբոյ անապատին Միրանաւոր կոչեցելոյ, որ ի լուսահոգին նախնեացն ձերոց ի դաշտին Հալուաբարու կառուցեալ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին և ի բազում ամաց հետէ անմարդաբնակ եղեալ, այժմոյս շինացեալ է նորապէս, խնդրեալ էիր զկոնդակ ժողովարարութեան ի վերայ բոլոր երկրիդ, զի ամ յամէ ի յելանելն ուրումն ի բնակչաց նոյնոյ անապատին ի ժողով, տացեն զկամաւոր ողորմութիւնս վասն ապրուստի միաբանից նորին։ Ուստի և մեք, յաղագս աղնիւ խաթեր քոյին, ահա զկոնդակ մի գրեալ ի վերայ բոլոր երկրիդ օրհնեցելոյ, ընդ սոյն սիրանիշ թղթոյս և միւս հին կոնդակին առաքեցաք առ սիրելութիւն քոյին՝ ձեռամբ թղթաբեր Բաղտասար աղային, որ զկոնդակն տացես ի յանապատն՝ վասն հարկաւորութեան միաբանիցն, որք ի նմա։

Եւ զայս սիրանիշ թուղթս մեր եւ ընթերցեալ միամտեսցիս, վայելելով զշնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր, որ և պատուիրեմ
28 յատ//կեղ սիրելւոյդ, զի զդոյն անխարդախ սէրդ և հարազատութիւնդ զորս ունիս առ սուրբ Աթոռ հոգևոր մայրս քո և առ մեզ, հաստատուն և աճեցուն և արդիւնաւորս արասցես՝ լինելով օրինակ բարի միւսոցն ամենից, զի բազմապատիկ օրհնաբանութեանց և վարձուց բարեաց արժանաւորեսցիս։ Որ և եղիցիս ողջ ի Տէր և շնորհք սրբոյ Աթոռոյս լիցի հանապազ ընդ քեզ և ընդ քոյայինս ամենեսեան։ Ամէն։

Ի ՌՄԼԱ (1782) յօգոստոսի Բ (2)։

Ձեռ. № 2803, էջ 26—28

688. 1782 թ. 31 օգոստոսի—Թուղթ ի յԱդրիանուպօլիս առ մահտեսի Յովաննէսն մահտեսի Ստեփանն, մահտեսի Գասպարն և միւս մահտեսի Յովաննէսն, մահտեսի Վարդազարեան, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին առ սրբազանն և յղեալ զԳրիգոր աղայ ումն ընտանի իւրեանց՝ ի պահել յԱթոռոջս ընդ երկար ժամանակս։

Ձեռ. № 2803, էջ 112—113

689. 1782 թ. օգոստոս—Թուղթ ի Թօխաթ առ Թադէոսեան մահտեսի Գրիգոր աղայն, ի պատասխանի նորին թղթոյն, որ վասն արդեանց ուրումն Գրիգոր աղայի զյանձնարարութիւնս էր գրեալ առ ի ընդունիլ և պահել յԱթոռոջս։ Առ որ գրէ այնպէս առնել։

Ձեռ. № 2803, էջ 28—30

690. 1782 թ. 20 սեպտեմբերի—Թուղթ ի Պօլիս առ Անանեան մահտեսի Կարապետն՝ յաղագս հոգածութեան Գրիգոր պետի եղբօր այրի կնոջ առնլեացն, զորս թողեալ անդ առ պարտապանսն, ինքն որբովքն իւր եկեալ էր և ի գեղջս մեր բնակեալ։

Ձեռ. № 2803, էջ 36—37

691. [1782 թ. սեպտեմբեր]—Նամակ Բիֆիլդարենակ Բաղալի որդի պարոն Հոհանին, նրա որդի Եսայուն, եղբոր որդի Հարությունին, մյուս եղբոր որդիներ՝ Հակոբին և Սիմեոնին, որոնք կամավորապես դարձել էին էջմիածնի ճորտեր։

37 Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան և շնորհաց ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ հարազատ զաւակացդ և ճորտիցդ սրբոյ Աթոռոյս, բարեպաշտիցդ և մեծահաւատիցդ, այսինքն Բաղալի որդի պարոն Յոհանիդ, և որդւոյն քոյ Եսայուն, և եղբօր որդւոյն քոյ Յարութիւնին, և միւս եղբօր որդւոցն քոց Յակոբին և Սիմոնին։ Եւ աստուածապահ տան ձերում և բնակութեան, որդւոց և դստերաց, ընտանեաց և ազգայնոց, սիրելեաց և բարեկամաց և ամենայն ընդ օրհնեալ յարկիւ ձերով եղելոցն խնդալ ի Տէր միշտ։ Ամէն։ Շնորհք, սէր։

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, ծանիջիք սիրելի որդիք մեր և լուսածնունդ զաւակունք և ճորտք սրբոյ Աթոռոյս էջմիածնի, զի դուք, որք այլ երկրացի գոլով, ի վաղուց եկեալ բնակեալ էք ի քաղաքդ Թիֆլիզ և մինչև ցայժմ ազատ մնացեալ, ի ներկայումս որովհետև ձերովդ
38 յօժար կամօք ճորտ և ծառայ էք եղեալ // սրբոյ Աթոռոյս, զի հանապազօրէն ծառայիցէք սմա, որոյ աղագաւ և զթուղթ էիք գրեալ և ի հաստատութիւն պայմանի ձերոյ տեղւոյդ աւագ քահանայից եւս կնքեցուցեալ և յղեալ առ մեզ՝ խնդրելով զկոնդակ օրհնութեան։

Վասն որոյ և մեք զայս օրհնալիր և հաստատական կոնդակս գրեցաք ի վերայ սիրելեացդ, զոր իբրու նշան և կնիք սրբոյ գահիս՝ ընդ ձեզ ունիցիք և լինիցիք սմա մշտնջենական ճորտ և ծառայ յորդւոց յորդիս և մտերմաբար ծառայեսցիք սմա։

Ուրեմն այսուհետև միամտութեամբ ծառայեցէք սրբոյ Աթոռոյս և ի կողմանէ ձերմէ զոր ինչ մարս և հարկ լինիցի, ով ոք սրբոյ Աթոռոյս գործակալ իցէ, նմա հասուցիք անպակաս և անթերի։ Եւ չունի ոք այսուհետև զբան ինչ ընդ ձեզ կամ դատ առնել և կամ զայլ ինչ պահանջել ի ձէնջ, զի դուք յատուկ սրբոյ Աթոռոյս էք ծառայ։ Որ և Տէր կատարեսցէ զուխտ և զխնդիրս ձեր, որ ի բարիս և օրհնութիւն և շնորհք սրբոյ և քրիստոսիջի Աթոռոյս միշտ ընդ ձեզ լինելով, լիցի ձեզ հովանի և վարձ և լիապէս հատուցանօղ ըստ տրոցն ձերոց։ Եւ զտուրս ձեր ընկալցի Տէր սիրով և քաղցրութեամբ և եղիցի ընդ ձեզ միշտ և զօրացուսցէ և փրկեսցէ ի յառաջիկայից հոգեկան և մարմնական վտանգից և ի փորձութեանց, և ամենայն բանից և գործոց ձերոց զյաջողմունս բարիս տացէ։

Որ և եղիջիք օրհնեալ և զօրացեալ միշտ ի Տէր ձերայնովքդ ամենեքումբք։

Ձեռ. № 2803, էջ 37—38

113 692. 1782 թ. 20 սեպտեմբերի—Թուղթ ի Թարվէզ առ քահանայսն և իշխանսն, ի պատասխանի նոցին աւագ քահանա տէր Յովսէփի թղթոյն, որ գրեալ վասն օգնութեան եկեղեցւոյն իւրեանց՝ փլելոյ ի շարժէն։

Յորմէ ժամանեսցի...//

114 Եւ ընդ բազմազեղ օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի յառաջ քան զայս որպիսածանոյց թուղթ մի էհաս առ մեզ յայդրուստ ի տէր Յովսէփ աւագ քահանայէդ, որ յետ գալոյն աստ ի սուրբ Աթոռս և առնլոյն ի մէնջ զկոնդակ ժողովարարութեան, թէ որպէ՞ս է գնացեալ ի

Կարին և ժողովք արարեալ և ապա ի դառնալն յայդր ևս եթէ, որպէ՞ս էք
միաբան սիրով և կուռ ջանիւ ձեռնամխեալ ի նորոգութիւն սուրբ եկեղեց-
ւոյդ ձերոյ, զամենն գրեալ և ծանուցեալ էր մեզ: Եւ որս յոյժ ուրախացաք
ի սիրտ և ի հոգի, և զփառս մատուցաք ամենագթածին Աստուծոյ, որ
զայդ հոգեշահ առաջադրութիւնդ ձեր բարեպէս սկզբնաւորեալ է: Յորմէ
և հայցեցաք մեծապաղատ աղերսանօք առաջի սրբոյ իջման տեղւոյս ի-
րոյ, զի որպէս ետ ձեզ սկսանիլ զայդ գործ, նոյնպէս և յառաջացուցէ և
առ ի բարին տացէ եղերիլ: Որ և իւրով ամենառատ մարդասիրութեամբն
և ողորմութեամբն, որ յաջողիչն է բարեաց և կամեցող իսկ հանապազ,
պարգևեսցէ զբարեյաջողութիւնս գոյնոյ հոգեօգուտ և իւրահաճոյ գործա-
նութեանդ ձերում, և փութանակի հասուցէ ի կատարումն՝ ի փառս ամե-
115 նասուրբ անուան իւրոյ, ի հոգեորապէս մխիթարութիւն օրհնեալ// ժողո-
վրրդոցդ, և ի յատուկ սրտադիւրութիւն և յուրախութիւն մեզ:

Իսկ և զձէնջ զօրհնեցելոցդ ևս ունիմք զյոլով շնորհակալութիւնս, որք
բարեբաղձ տենչանօք ջանայք զհոգևորական իրակութիւնդ զայդ յառաջ
ածել և ի գլուխ բերել: Որոց Տէր լիցի վարձահատոյց, օժանդակ և ձեռ-
նըտու:

Արդ, բարեպատեհ համարելով և զյատկապէս օժանդակելն և զմաս-
նակցելն մեր ի յայդ մեծավարձ գործառնութիւնդ, ահա գրեցաք յայդր
սիրելւոյն մերոյ՝ Տերամբ զօրացեալ Յովաննիսին Համատանցւոյ, զի
յանուն սրբոյ Աթոռոյս առ ինքն եղեալ յարդեանցն, որ է ԺԸ (18) թուման
դրամ, զԺԳ (13) թումանն յանձնեսցէ սիրելեացդ մերոց: Զոր ընկալջիք
իբր զշնորհ և զմասնաւոր օգնականութիւն ինչ յատուկ՝ ի պէտս ծախուց
վերանորոգման եկեղեցւոյդ ձերոյ սրբոյ: Իսկ մնացեալ Ե (5) թումանն,
որ ի Ռէշտ է ի վերայ ուրումն, վասն այնր ևս գրեցաք ի Ռէշտ պարոն
Ալէքսանին, զի զայն ևս նա առեալ, տացէ վասն նորոգութեան նոյն քա-
ղաքի եկեղեցւոյն, որ ի յանցեալ ամսն այրեցաւ ի հրկիզութենէն:

Դարձեալ զայս ևս գիտասջիք, սիրելիք մեր, զի ահաւասիկ ըստ բնա-
կան կարգի և սահմանադրութեանն, զսիրելի և զհոգևոր որդին մեր և
զծնցածին զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զտէր Եփրեմ համեստափայլ վարդա-
պետն նուիրակ արարեալ օրհնեցելոյ երկրիդ ձերոյ և ձեզ, առաքեցաք
առ հոգևոր որդիսդ մեր՝ հանդերձ օրհնութեան կոնդակաւ և սրբալոյս մե-
ռոնաւ, զի զսուրբ մեռոնն բաշխեալ ի ձեզ, զնուիրակութիւնն սրբոյ Աթո-
ռոյս ժողովեսցէ: Ուրեմն, ի գալն զորա առ ձեզ, պարտիք յատկապէս սի-
րել, պատուել և ընդունիլ զդա իբրև զծառայս Քրիստոսի և յամենայն
կողմանց օժանդակ լինիլ դմա և ամենայն հոգալեացն հոգացող, զի և
դա արդիւնաւորութեամբ յառաջացուսցէ զնուիրակական գործն իւր, և
մեք լուեալ շնորհակալ լիցուք զսիրելեացդ մերոց և օրհնեսցուք զձեզ:
Որք և առնելով ըստ գրեցելոցս՝ ընկալջիք միշտ զվարձս յԱստուծոյ:
Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջս և ի սեպտեմբերի Ի (20):

Ձեռ. № 2803, էջ 113—115

116 693. [1782 թ. սեպտեմբեր]—Թուղթ ի Ռէշտ առ Նաւասարդն և Յո-
վաննէսն, վասն գոյից անյիշատակ Աւէտին հանգուցելոյ, Աթոռոյս պարտ
է լինիլ և նոքա առ ինքեանս էին գրաւեալ:

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ...

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, ծանուցումն լիցի սիրելեացդ մե-
րոց և լուսածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի գիտէք լաւա-
պէս, որ ի բնէ անտի կարգ և սովորութիւն է յազգի մերում, զի ուր ուրեք
որ անյիշատակ ոք մեռանիցի, նորին գոյքն իւր հովուօղ վանիցն և առաջ-
նորդին հասուցանեն, որպէս զի որովհետև այնպիսի վախճանեալն չունի
զյիշատակ և զընտանի ի վերայ աշխարհի, իւր հովուօղ Աթոռն կամ վան-
քըն և նորին միաբանն վայելեալ զգոյսն նորա, աղօթեսցեն առ Աստուած
վասն փրկութեան հոգւոյ նորին:

Արդ, սիրելիք մեր, ահա այդ երկիրդ տէրունի վիճակ է սրբոյ Աթո-
ռոյս, և յայդր գտեալ օրհնեալ ժողովուրդքդ ի սրբոյ Աթոռոյս և ի
սորին հայրապետացն հովուիք հոգևորապէս, վասն որոյ յայդ երկրօջդ
ևս մինչ անյիշատակ ոք մեռանիցի, նորա գոյքն պարտին սրբոյ Աթո-
ռոյս հասանիլ՝ ի վայելս ի սմա բնակող միաբանիցն, որք աղօթեսցեն
վասն հոգւոյ նորին:

Ապա որպէ՞ս է, որ յառաջ քան զերկուս ամս յայդր ոմն Աւէտ անու-
ամբ մարդ է վախճանեալ, որ զյետամնաց և զյիշատակ ոչ ունի և նորին
ինչքն առ ձեզ է մնացեալ, և դուք յայսչափ ժամանակս զգիր ինչ ոչ գրէք
ի սուրբ Աթոռս և զբան իմն ոչ ծանուցանէք ի կողմանէ այն ընչիցն: Մի՞-
117 թէ չցաւիք վասն հաւատոյ մօրս // ձերոյ սրբոյ Աթոռոյս և չխնայէք ի
հոգիս ձեր, որ այդպէս զանպատշաճ բանս առնէք:

Ահա սիրով և օրհնութեամբ գրեմ սիրելեացդ մերոց և հարազատ
որդւոցդ սրբոյ Աթոռոյս, և հարկադրեմ իսկ զձեզ՝ պարտիք ի բնական
կանոնէ հաստատութեան ոչ ելանել արտաքոյ և մի՛ լինիլ այլոց չար
օրինակ, այլ զլուսահոգի Աւէտի ինչսն, որ վարիս չունի, յանձնել սիրե-
լւոյն և հարազատ գործակալին մերոյ՝ պարոն Ալէքսանին, զի և նա յղես-
ցէ ի սուրբ Աթոռս, քանզի այս է օգուտ հոգւոց ձերոց և այն հանգուցե-
լոյն, որ ազատիցիք ի պարտականութենէ նորին և ի մեղադրութենէ: Որոյ
աղագաւ մեք ևս շնորհակալ լինելոց եմք զձէնջ:

Բայց եթէ զներհակն գրեցելոցս առնիցէք և չտայք կամիցիք ապօրի-
նաբար, դուք գիտասջիք: Զօգուտն ձեր ընտրեցէք և զպատասխանին թըղ-
թոյս շուտով գրեսջիք:

Ողջ լերուք ի Տէր:

Գրեցաւ ...

Ձեռ. № 2803, էջ 116—117

117 694. [1782 թ. սեպտեմբեր]—Թուղթ ի յԱստապատ առ նորին մէլիք
պարոն Ստեփանն, ի պատասխանի թղթոյն իւրոյ, որ վասն տէր Մկրտչին
զարձակումն էր խնդրեալ ի մեղադրանացն:

Յորմէ ժամ[անեսցի թուղթ]...

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ
և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, զի թուղթ քո էհաս առ
մեզ, զոր ընկալեալ մեծաւ սիրով և ընթերցեալ իմացաք զխաղաղութե-
նէ օրհնեցելոյ երկրիդ և զանվնաս հասանիլն քո և քոյայնոցն ի յօրհնեալ
երկիրդ ձեր և յոյժ ուրախացաք: Տէր պահեսցէ զձեզ հանապազ անփորձ
118 ի յամենայն վնասակար դիպուածոց և զկա//տարեալ անդորրութիւն պար-
գևեսցէ խաղաղի երկրիդ ձերոյ:

Այլև գիտացաք զնոր նուիրակին սրբոյ Աթոռոյս՝ Յոհան խոհեմամիտ
վարդապետի յայդր ժամանիլն և զձեր ըստ վայլման ժամանակին
ուղարկելն դէպ ի Տաթև, և միամտեցաք:

Իսկ ապա զոր գրես զբանս աղերսարկուս յաղագս Նախիջևանու մէլիք պարոն Յովսէփի եղբայր տէր Մկրտչին և խնդրես արձակել զնա: Առ այդ իմա, սիրելիդ իմ, զի մեք զնա ոչ եմք բանադրեալ, այլ լսելով զսուտ զառարկաբանութիւնս նորա զմէնջ, գրեցաք ի կոնդակոջն մերում զմեղադրութիւնս առ նա, որում յետոյ էաք վրէժխնդիր լինելոց: Բայց այժմոյս որովհետև դու, յատուկ սիրելիդ մեր, գիրաճայ էիր գրել վասն նորա հանդերձ մեր նուիրակ Յոհան վարդապետին, ուստի ընկալեալ սիրով զխնդիր ձեր, գրեցաք ահա ի վերայ նոյն տէր Մկրտիչ քահանային զսիրոյ և զօրհնութեան թուղթ մի, որով միամտեսցի և առանց խղճահարութեան կատարեսցէ զպաշտօն քահանայութեանն իւրոյ և այսուհետև ի յայնպիսի անխոհեմ արարմանց զգոյշ կացցէ, չառնել միւս ևս: Այլ մանաւանդ զմտերմութիւնս ցուցցէ առ շնորհատու ծնօղս իւր և առ մեզ և առ մերայինսն, որք հանդիպեցին յայդ կողմունս:

Եւ դու, սիրելիդ մեր, զգոյն ճշմարիտ հարազատութիւնդ և զսէրդ զոր ունիս առ լուսատու ծնօղս քո սուրբ Աթոռս և առ մեզ, մի թողուցուս ի ձեռաց, այլ օր ըստ օրէ աճեցունս արասցես և ի վերադառնալն նուիրակին մերոյ յայդր, ըստ բարեսիրութեան քոյ տասնչական և օժանդակ լիցիս նմին, որովք ընկալցիս միշտ զվարձս:

Ձեռ. № 2803, էջ 117—118

695. 1782 թ. 5 նոյեմբերի—Թուղթ առ գործակալն սրբոյ Աթոռոյս պարոն Ալէքսանն, որ ի Ռէշտ, ի պատասխանի նորին ի սեպտ. Բ (2) գրեալ թղթոյն վասն զանազան բանից:

Ձեռ. № 2803, էջ 39—41

696. 1782 թ. նոյեմբեր—Թուղթ ի յՈւռումճուղ առ գանձապետսն սրբոյ Աթոռոյս՝ պարոն Անուշն և Աւէտն, ի պատասխանի թղթոյն նոցա, յորում միամտութիւն վասն ՇԾ (550) գուռուշ գանձանակադրամին, զոր յանձնեալ էին նուիրակ Մեսրոպ պետին և նա հասուցեալ էր ի սուրբ Աթոռս: Նաև վասն նոր նուիրակին յանձնարարութիւն:

Ձեռ. № 2803, էջ 41—42

697. 1782 թ. նոյեմբեր—Թուղթ ի Նախիջևան առ տէր Մկրտիչն, օրհնութիւն և սէր՝ փոխանակ մեղադրութեանն, զոր վասն իւրք յանցանաց ընկալեալ էր:

Ձեռ. № 2303, էջ 42—43

44 698. 1782 թ. 18 նոյեմբերի—Թուղթ ի Թիֆլիզ առ վրացի Ալթանտիլ բէկն, վասն տալոյն սրբոյ Աթոռոյս զխառատ Աւետիսն այս երկրացի, զոր յառաջ վարեալ էին աստի:

Յորմէ ժամանեսցի...

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս աստուածայնոյ ծանուցումն լիցի ճշմարիտ սիրելւոյդ մերոյ և հաւատարիմ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, զի սիրանիշ թուղթ քոյին էհաս առ մեզ ձեռամբ հարազատ զաւակին քոյ և սիրելի որդւոյն մերոյ՝ Տերամբ զօրացեալ պարոն Խասբէկին: Զոր սիրով առ ընկալեալ ընթերցաք և իմացաք, որ յայդր զբեհարսազի տեսեալ ընդ օրհնեցելոյ քաղաքիդ առաջնորդ Կարապետ վարդապետին զսոյն երկրացի խառատ Աւետիսն տուեալ ես սրբոյ Աթոռոյս, զոր և այժմ յղեալ էիր աստ առ մեզ ընդ որդւոյն քոյ հարազատի: Ուստի յոյժ շնորհակալ եղաք սիրելւոյդ մերմէ և զհարազատ բարեկամէդ սրբոյ Աթոռոյս, որում Տէր լիցի վարձահատոյց ըստ յատուկ սիրոյդ, զոր առ մեզ և առ սուրբ Աթոռս մեր ունիս, որ և օրհնեսցէ զքեզ բազմաւ օրհնութեամբ և զօրացուսցէ, փրկեսցէ ի յամենայն չարէ և պահեսցէ ընդ հովանեաւ խնամոց և ողորմութեանց իւրոց:

45 Բայց և զայս գիտասջիր, // սիրելիդ մեր, զի թէպէտ դու ըստ բարեսիրութեան քոյ տուեալ ես սրբոյ Աթոռոյս զայս Աւետիս անուամբ այրմ՝ առ ի ծառայել սմին, սակայն տանելոց են զսա անդ, ուր և յառաջն էր, և այլոց է ծառայելոց: Քանզի յառաջագոյն անգամ մի ևս է ազատեալ զսա սուրբ Աթոռոս ի յԱղուանից հանդերձ մարբն, այլ յետոյ հանեալ եղև ի ծառայութենէ սորին և այլոց ծառայէր: Այժմ ևս թէպէտ սիրով ընկալաք և շնորհակալ եմք զքէն և զսիրելի որդին մեր՝ պարոն Խասբէկն ևս հոգևոր օրհնութեամբ օրհնեցաք և ըստ արժանւոյն շահեալ առ քեզ վերադարձուցաք, սակայն հոգածութիւն իմն ևս պիտոյ է: Եւ զայլ որպէսն բարետոհմիկ որդւոյն քումմէ իմանալոց ես:

Ողջ լեր ի Տէր և շնորհս նորին զօրացեալ միշտ: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջս և ի հոկտեմբերի ԺԸ (18):

Ձեռ. № 2803, էջ 44—45

699. 1782 թ. 21 նոյեմբերի—Թուղթ ի Բայազիտ առ տէր Վահանն, ի պատասխանի նորին թղթոյն, որ վասն զանազան իրաց գրեալ էր և ընդ ի Պոլսոյ և ի Կարնոյ եկեալ գրեանց յղեալ էր յատուկ փայեկաւ:

Ձեռ. № 2803, էջ 45—46

46 700. [1782 թ. նոյեմբեր]—Թուղթ առաջներորդ առ նուիրակն սրբոյ Աթոռոյս՝ Եփրեմ վարդապետն, որ ի Խոյ, ի պատասխանի թղթոյն նորա:

Յորմէ հայրական օրհնութեամբ, որդիական ողջունիւ և հոգեկան սիրով և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր, հարազատ և շնորհասուն զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Եփրեմ խոհեմառատ վարդապետ: Զի որպիսայյա թուղթ քո, գրեցեալ ի հոկտեմբերի ԺԵ (15), էհաս առ մեզ, զոր սիրով ընկալեալ մեր և ընթերցեալ, ծանեաք զխաղաղութեամբ և զանվնաս ժամանելդ ի յօրհնեալ զքաղաքդ Խոյ և զկոնդակիդ մերոյ ընթեռնանելն և զառ գօլվաթլուխանն գրեալ թուղթն մեր՝ հանդերձ ընծայիւն, մատուցանել տալդ նմա՝ ձեռամբ սիրելւոյն մերոյ և օգտասէր որդւոյն սրբոյ Աթոռոյս, Քրիստոսի
47 զօրացեալ պարոն // Յարութիւնին (որ ի Տեառնէ եղիցի վարձատրեալ), և զխանի թալղայ տալ խոստանալն և զայլ որպէսն: Ընդ որս և սրտադիւր եղեալ, յիրաւի շնորհակալեցաք զսիրելի որդւոյդ մերմէ յաղագս խոհեմաբար շարժմանցդ: Որում Տէր լիցի միշտ օգնական և օժանդակ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի յարաժամ ընդ քեզ՝ ի զօրացուցանել զշնորհածին զաւակդ ի յիւրական հոգևոր պաշտօնդ յայդ: Մանաւանդապէս ունիմք և զբազմագոյն շնորհակալութիւնս զհոգևոր և զհարազատ որդւոցն մերոց, զօգտաջան և զհաւատարիմ զաւակացն սրբոյ Աթոռոյս՝ զօրհնեցելոյ քաղաքիդ Խոյու համեստաբարոյ քահանայիցն և զմեծահաւատ ժողովրդոցն: Որովհետև որպէս պատուէր ետուք քեզ աստէն, զի ի գնալդ յայդր, զքէսիմ անունն բարձցես ի նուիրակական և կամաւոր և հոգևորական տրոցն, զի յայսմհետէ մի ևս ըստ քէսիմի հատցեն զնուիրական արդիւնս իւրեանց, այլ ըստ կարգի և սահմանի միւս ամենայն տեղեաց ժողովրդոցն մերոց, գլուխ գլուխ տացեն նոքա ևս բարեսիրաբար հետևմամբ կամակ-

ցեալ են բեզ և յօժարութեամբ զնոյն հոգեշահ պատուէրն մեր ի գլուխ
տարեալ, որպէս և դու գրեալ և ծանուցեալ էիր մեզ գոհունակութեամբ
մեծաւ։ Ուստի և մեք բերանալիր օրհնութեամբ օրհնեցաք զինքեանս,
զորս Աստուած օրհնեսցէ և վարձատրեսցէ, փրկեսցէ ի բնաւից հոգեկան
և մարմնական վնասուց և պահպանեսցէ ընդ հովանեաւ նախախնամու-
թեան և բարեգթութեան իւրոյ։
Իսկ և տէր Յովաննէս քահանայն Ջարբաղ կոչեցեալ գեղջն (որ է
մերձ ի քաղաքն Որմի և վիճակ նմին) յայս աւուրքս հանդիպեալ ի սուրբ
Աթոռս, իբր ի բերանոյ ժողովրդեանն, խնդրեաց ի մէնջ զմէկ ձեռք զգեստ
ժամարարութեան վասն եկեղեցւոյն իւրեանց։ Եւ մեք խոստացաք կատա-
րել զխնդիրն, բայց անպատշաճ համարեցաք տալ ինքեան զզգեստն։
Վասն որոյ ահա ի ձեռս քո յղեցաք, որք են մի շուրջառ, մի փորուրար,
մի վակաս, մի ջուխտ բազպան, մի սաղաւարտ, մի գօտի։ Զորս եթէ
շուտով գնայցես յայն կողմն, ընդ քեզ տարցիս։ Այլ թէ անագան լինի-
48 ցի գնալդ, զթուղթ // մի գրեալ ի վերայ նոյն Ջարբաղ կոչեցեալ գիւղաց-
ւոցն, հաւատարմաւ ընդ զգեստին առաքեսցես առ նոսա ի մշտակայ
ժառանգութիւն եկեղեցւոյն իւրեանց. Եւ զայլ որպէսն քո և գործոյդ գրես-
ցես միշտ, անպակաս առնելով զթուղթդ որպիսածանոյց ի մէնջ՝ առ ի
միամտութիւն մեզ։

Ձեռ. № 2803, էջ 46—48

701. 1782 թ. հոկտեմբեր—Թուղթ ի Պոլիս առ գերձակ Սարգիսն, որ
վասն որդւոյն իւրոյ Առաքելին (զոր սակս անխելքութեան յղեալ էր մնալ
աստ), տուեալ էր սրբոյ Աթոռոյս զի (20) ղուռուշ։

Ձեռ. № 2803, էջ 49—50

702. 1782 թ. 20 հոկտեմբերի—Թուղթ օրհնութեան առ կանայս, որք
տայցեն զհնգերամին, զկտակ, զբառասնից և կամ զայլ այսպիսի տուրս։

Ձեռ. № 2803, էջ 119—120

703. 1782 թ. 30 հոկտեմբերի—Մահտեսի Վարդանին հասցեագրված կոնդակ, որի
մեջ հայտնվում է, որ էջմիածնի վանքին հասանելիք տուրքերը և նվիրված գումարները հա-
վաքելու նպատակով ուղարկվում է Հակոբ վարդապետը։ Ծանուցվում է, որ հասցեա-
տիրոջ՝ մահտեսի Վարդանից տեղեկացել են էջմիածնի գանձապետ յուզբաշի Եսայու
մահվան և պարոն Պողոսին գանձապետ նշանակելու մասին։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 47.

704. 1782 թ. 12 նոյեմբերի—Ի Պոլիս առ մահտեսի Կարապետ ոմն,
որ յառաջագոյն եկեալ ի սուրբ Աթոռս, և չունելով զդրամ յայնժամ, այժմ
էր տուեալ զգարպասն իւր Ի (20) ղուռուշ, յանձնելով անդ նուիրակ Մի-
նաս պետին, և զի(20) ղուռուշ ևս յայլոյ կողմանէ էր յղեալ, որպէս
յայտնի է ի ներքոյ։

Ձեռ. № 2803, էջ 120—121

705. 1782 թ. նոյեմբեր—Թուղթ ժողովարարութեան վասն ուրումն
Յովհաննէս մարդոյ՝ ի վերայ բնակչացն ի ճանապարհին սրբոյն Սա-
ղիմայ։

Ձեռ. № 2803, էջ 122

123 706. [1782 թ.] 30 նոյեմբերի—Թուղթ ի Զմիւռին առ Մոսկով կոչե-
ցեալ պարոն Յովաննէսն վասն ոմանց իրաց, որ ահա ցուցանի։

Յորմէ ժամանեցի թուղթ...

Եւ ընդ աստուածային առատաղեղ օրհնութեան սիրածիր թղթոյս,
ծանուցումն լիցի ճշմարիտ սիրելւոյդ մերոյ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ
Աթոռոյս էջմիածնի։ Զի յանցելումն ընդ դոյն քաղաքացի պարոն Մխի-
թարին զթուղթ գրեցաք առ քեզ, ի պատասխանի քոյին թղթոյ, յորում
ծանուցաք զամբողջապէս հասանիլն ի սուրբ Աթոռս մեծամեծ զանգակա-
ցըն, զկախիլն իսկ ի զանգակատանն։ Եւ խոստացաք ևս, թէ գրելոց
եմք զթուղթ շնորհակալութեան և օրհնութեան առ սիրելին մեր և եղբայրն
քո՝ պարոն Առաքելն և պարոն Մնացականն, բացայայտելով և զպատ-
ճառն չգրելոյն յայնժամ։
Իսկ ապա մինչ իմացաք զմահ լուսահոգի պարոն Մնացականին (ընդ
որ և կսկծեցաք յոյժ վասն այն, զի ոչ ընկալաւ ի մէնջ զմիամտութիւն ի
կողմանէ զանգակացն), այժմ զօրհնութեան և զշնորհակալութեան թուղ-
124 թըն, զոր խոս//տացաք գրել, ահա գրեցաք ի վերայ պարոն Առաքելին և
պարոն Ալէքսանին՝ առ ի միամտութիւն և ի հոգևոր մխիթարութիւն նոցա։
Նաև կողակիցն հանգուցեալ պարոն Մնացականին՝ Մարիա Աննա մա-
դամայն ևս գրեցաք զթուղթ օրհնութեան՝ հանդերձ մխիթարութեամբ
յաղագս վախճանման լուսահոգի առն իւրոյ։ Եւ զկոնդակ մի ևս ի վերայ
Ամստէրդամու գրեցաք։ Զորս և յղեցաք առ սիրելի եղբայրն մեր, նուի-
րակ և առաջնորդն օրհնեցելոյ վիճակիդ՝ Եսայի աստուածիմաստ վարդա-
պետն առ ի յանձնել քեզ, զի և դու միով աւուրբ յառաջ հասուցես ի
տեղիսն։
Ուրեմն ի յընկալնուլդ զթուղթսն մեր, ջանա շուտով ուղարկել ի
յԱմստէրդամ, որովհետև գիտես զհարկաւորութիւնսն նոցին։ Այլ արդ, և
յաղագս ճանապարհական ծախուց զանգակացն այսպէս գիտասցես հա-
ւաստապէս։ Քանզի ի Պօլսոյ մինչև ի Տրապիզոն պարոն Մասեհն խար-
ճեալ է ԼԸ (38) ղուռուշ, զոր և առեալ է ի քէն։ Եւ բաց ի սմանէ ի Տրա-
պիզոնու մինչև ցԿարին և անտի մինչև ցԿարս խարճեցեալ է ՄՂԱ (291)
ղուռուշ, զոր ի Կարին հոգացեալ են գործակալք մեր և գրեալ առ մեծին
Պօլսոյ նուիրակ Մինաս վարդապետն՝ ըստ հարկադրութեան նորին, և
յետոյ մեզ ևս ծանուցին։ Իսկ ապայ ի Կարսայ մինչև ցսուրբ Աթոռս և
մինչև ցկախիլն ի տեղին իւր խարճեցեալ եղև ԿԵ (65) ղուռուշ մերով
գիտութեամբ։ Որ ահա լինի ի Տրապիզոնու մինչև ցաստ խարճեցեալն
ԳԾԶ (356) ղուռուշ։ Զոր և գրեցաք այժմ սիրելւոյն մերոյ ճշմարտի և
եղբօր քոյ հարազատի՝ Տերամբ զօրացեալ պարոն Առաքելին, զի իմաս-
ցի։
Եւ թէպէտ յառաջ ևս գրեցաք սիրելւոյդ ի կողմանէ սոյն ծախուցս,
սակայն գրողն սխալեալ պակաս թիւ էր գրեալ դրամոյն, զոր մեք յայնժամ
գոլով ի մէջ զբաղանաց, չէաք տեսեալ։ Իսկ այժմ մինչ իմացաք, կրկին
գրեցաք ահա առ սիրելիդ մեր զուղիղն, զի գիտասցես և զայն հոգասցես,
125 մանաւանդ և միամտիցիս ևս, // զի գուցէ թէ յաղագս այնր սխալանաց
դու ևս տարակուսեալ իցես։
Դարձեալ և ևս պատուիրեմք սիրեցելւոյդ մերոյ ի Քրիստոս, զի յԱմ-
ստէրդամ գրեալ թղթոց մերոց զպատասխանիսն մինչ առնուցուս, շուտով
յղեսցես առ մեզ, զի միամիտ լիցուք։ Եւ զանխարդախ սէրդ և զօգտաւոր
հարազատութիւնդ աննուազելի և աճեցուն ունիցիս առ լուսածին մայրս
քո սուրբ Աթոռս և առ մեզ, անպակաս առնելով զգիրդ սիրանիշ և որ-
պիսածանոյս առ ի սրտագիտութիւն մեզ։

Որ և լիցիս ողջ և զօրացեալ ի Տէր և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենեսեան յարաժամ: Ամէն:

Գրե[ցաւ] ի նոյ[եմբերի] ևլն:

Ձեռ. № 2803, էջ 123—125

707. 1782 թ. նոյեմբեր—*Թուղթ ի Գեօլա ի Հօրամ գիւղն առ Աստուածատուրն, Մարգարն, Մկրտիչն և Յարութիւնն, որք ի գալն իւրեանց յուխտ ի սուրբ Աթոռս, խոստացեալ էին գիրս ինչ*[157]*, զորս և յղեալ էին այժմոյս:*

Ձեռ. № 2803, էջ 50—51

708. 1782 թ. դեկտեմբեր—*Թուղթ ի Բայազիտ առ Մարգար աղայն, ի պատասխան նորին թղթոյն, որ վասն ԻԱ (21) թուման գանձանակադրամին սրբոյ Աթոռոյս, որ առ ինքն էր, գրեալ էր առ սրբազանն թէ յետ վեց ամսոյ տացից, որ և ըստ նոյն պայմանին զմանատ մի ևս էր յղեալ ընդ թղթոյն:*

Ձեռ. № 2803, էջ 51—52

1783

54 *709.* 1783 թ. 17 հունվարի—*Թուղթ ի Մոսկով առ Սմպաթեան աղայ Յովաննէսն, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ տօկտօր Եակօբին գրեալ էր:*

Յորմէ ժամանեսցի թուղթ...

55 *Եւ ընդ սիրոյ և տիրապարգև օրհնութեան նամակիս, ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ իսկականի և լուսածին որդւոյդ մօրս հաւատոյ սըրբոյ և մեծի Աթոռոյս էջմիածնի, զի սիրագիծ թուղթ օրհնեցելոյդ, գրեցեալ ի թուոջ կենարարին 1782 և ի սեպտեմբերի 6, ժամանեաց առ մեզ ի ձեռն մտերիմ սիրելւոյն մերոյ՝ իմաստնախոհ տօքտօր Եակօբին: Զոր ընկալեալ սիրով և ընթերցեալ, ծանեաք լիովին զամենայն բարեմօրէն գրեալ բանսդ հարազատութեան, որ խոստանաս, բաղձանօք հանդերձ, ըստ կարեաց քոց յամենայնի զօգտակարութիւնս և զհաւատարմութիւնս առնել չանալ սրբոյ Աթոռոյս՝ Տանս աստուածեան և մեզ, և մերայնոցդ, որք յայդր: Որպէս և արարեալ ևս զմտերմութիւնս առ սիրելի որդին մեր և առաջնորդն օրհնեցելոյ երկրիդ՝ Յովսէփ աստուածիմաստ վարդապետն, ընդ որս մեծապէս շնորհակալեալ մեր զսիրելւոյդ, օրհնեցաք զքեզ բազմաւ օրհնութեամբ, զոր բարեխնամն Աստուած օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ ի համայնից չար դիպուածոց և պահպանեսցէ ընդ հովանեաւ խնամոց և գթութեանց իւրոց, տացէ դյաջողմունս բանից և գործոց քոց, և առաւել ևս ճոխացուսցէ օր ըստ օրէ յառաջադիմութեամբ ի յուրախութիւն մեզ:*

Իսկ որ գրեալ էիր յաղագս գրաքեր խոհեմափայլ տօքտօր Եակօբին արարեալ գոլ յայդկոյս առ բազումս զյոլով ջատագովութիւնս զօրհնեցելոյ ազգէս մերմէ և զմէնջ, մանաւանդ զսրբոյ Աթոռոյս, իմացաք: Որք և ընկալեալ զինքն ի սէր, յարգեցաք և մեծարեցաք ըստ արժանւոյն և դարձեալ սիրով ուղևորեցաք:

56 *Եւ զի այժմ վերադառնայր նա դէպ յայդր, ահա ըստ ներկայապէս անձեռնհասութեան մերոյ, համառօտակի զայս սիրոյ և օրհնութեան թուղթս գրեցաք առ օրհնեցեալդ ի Տեառնէ, ի պատասխանի հարազատական գրոյ քոյին: Որ և պատուիրեմ ահա սիրելւոյդ, զի ի յանխարդախ և որդիական սիրոյդ և ի հաւատարմութեանցդ, որ առ սուրբ Աթոռ լուսածին մայրս քո և առ հոգևոր հայրութիւնս մեր, մի վերջասցես, այլ օրաւուր բազմապատկեսցես ի քեզ զդոյնս՝ առ ի ընդունիլ միշտ հոգևորապէս զվարձս բարիս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ:*

Որ և լիցիս ողջ ի Տէր և յանձնեցեալ ի խնամս նորին յարաժամ։ Ամէն։

Գրեցաւ ի 1783 թուոջ Փրկչին ի յունվարի 17 և ի լուսակառոյց Աթոռոյս սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 55—56

56 710. 1783 թ. 20 հունվարի—Կոնդակ ի Թարվէզ առ բոլոր ժողովուրդսըն վասն հաստատելոյ դարձեալ զԹադէոսն ի գործն գանձապետութեան սրբոյ Աթոռոյս և պատուէր, զի ամենեքեան օժանդակեսցեն տէր Յովսէփ տաւագ քահանային ի նորոգութեան եկեղեցւոյն իւրեանց, որ ի շարժէն փլեալ էր և այժմ նորոգէին։

Յորմէ ժամանակի...

57 Եւ ընդ աստուածային առատաղեղ օրհնութեանս ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ասէ իմաստունն Սողոմոն, թէ զայր հաւատարիմ գործ է գտանել։ Արդ, հոգելոյս հայրապետին մերոյ լսելով և իմանալով զհաւատարմութիւն սիրելւոյն մերոյ և օրհնեցելոյն ի Տեառնէ պարոն Թադէոսին, զոր ունի անկեղծօրէն առ սուրբ Աթոռս, կարգեալ է զնա գանձապետ սրբոյ Աթոռոյս։ Որ և մինչև ցայժմ հարազատօրէն կատարել է զգործն գանձապետութեան։ Իսկ այժմ ի ներկայումս ջերմեռանդ հաւատով և սիրով եկն նա ի սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս և ի տեսութիւն մեր, և ելից զհոգևոր խղճ և զփափագըս սրտի իւրոյ։ Որոյ զհաւատարմութեանն ստուգութիւն մեք ևս նկատեալ պատշաճ և արժանի համարեցաք վերահաստատել զնա ի գործն իւր, յորում փորձեցեալն է։ Վասն որոյ և կարգեալ հաստատեցաք զնա վերստին գանձապետ սրբոյ Աթոռոյս։ Ուստի և գրեցաք զայս օրհնութեան նամակս մեր առ օրհնեալ ժողովուրդդ և ընդ նմա յղեցաք առ ձեզ։ Զի և դուք ամենեքեան գիտասջիք և դա արիացի ի հոգեշահ գործն իւր և լաւապէս մուղայէթ և հոգածու լիցի սրբոյ Աթոռոյս գանձանակին, անխափան շրջեցուցանելով և յորդորմամբ ժողովելով զարդիւնսն և առ ինքն պահելով, և անպակաս ի սուրբ Աթոռս և առ մեզ հասուցանելով ի ձեռն նուիրակացն մերոց։

58 [Նաև մուղայէթ լինել պարտի // դա յայդր գտանեցեալ վախուֆացն սրբոյ Աթոռոյս և տիրել արդեանց նոցին։ Նոյնպէս և հոգեբաժնից, կտակաց, խոստմանց, քառասնից և այլ սոյնպիսի արդեանց սրբոյ Աթոռոյս, դա պարտի տիրել, որքան և իցէ և ի ձեռն նուիրակաց մերոց նոյնպէս ի սուրբ Աթոռս հասուցանել։ Եւ ամենայն յայդր պատահեալ բանից և գործոցն սրբոյ Աթոռոյս ևս հաւատարմօրէն մուղայէթ լինել և հոգալ։ Ուրեմըն և դուք, սիրելի և հոգևոր որդիքդ մեր, ևս այսպէս գիտեցեալ, որ ինչ այսպիսի յատուկ տուրք լինիցին, ձեռամբ դորին ի սուրբ Աթոռս հասուսջիք, զի և մեք առ տուօղսն նոցին գրեսցուք զթուղթս օրհնութեան և շնորհակալութեան։]*

Ապա ուրեմն մի խնայեսջիք արկանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս յիւրաքանչիւր շաբաթս զմէն մի փողսն, որպէս զի արդիւնաւոր լիցի գանձանակն ձեր, որ յանուն սրբոյ Աթոռոյս՝ առ ի յօգնութիւն պակասութեանց սորին, և ի յընկալնուլ ձեզ զվարձս բարիս ի Տեառնէ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ։

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է։

Այլև ի կողմանէ սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ լուաք, թէ ոմանքն նորոգեցեալք և կանգնեցեալք են մինչև ցկամարատեղիսն։ Եւ մնացեալք են կամարքն և առաստաղն։ Եւ ոչ սակաւ ուրախութիւն եղև մեզ։ Բայց և զայս լսեմք, թէ դուք օրհնեալ ժողովուրդքդ հեռի կայք ի հոգածութենէ և աշխատութենէ նորոգութեան եկեղեցւոյն և թողեալ էք զծանրութիւն հոգաբարձութեանն միայն ի վերայ սիրելի որդւոյն մերոյ և հարազատ զաւակին սրբոյ Աթոռոյս՝ տէր Յովսէփ տաւագ քահանային ձերոյ, և ոչ օգնէք նմա, և ոչ ձեռն տայք ի շինութիւն սրբոյ եկեղեցւոյն։

Արդ, սիրելիք մեր, մի՞թէ տէր Յովսէփն վասն ի՞ւր շինէ զեկեղեցին, ո՞չ ապաքէն տուն Տեառն Աստուծոյ է և տեղի աղօթից, բոլոր յայդր գտանեցեալ հաւատացելոց ի Քրիստոս։ Զոր այժմ դուք էք վայելելոց և որդիք և թոռունք ձեր և զկնի ևս յետագայք նոցին։ Վասն որոյ գրեմ և հարկիւ պատուիրեմ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց հասարակապէս, զի ամենեքեանդ ըստ կարողութեան իւրաքանչիւրոցդ հոգ տարջիք և հետև-
59 չիք // նորոգութեան սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ՝ ըստ ամենայնի ձեռնտու օգնական և օժանդակ լինելով տէր Յովսէփ աշխատաւէր քահանայիդ, որպէս զի սուրբ Տունդ հոգւոց ձերոց ի յառաջիկայ գարնանս յաջողմամբն Աստուծոյ նորոգեալ աւարտեսցի ի հոգևոր մխիթարութիւն և ի պարծանս ձեզ և ի յուրախութիւն սրտից մերոց։ Եւ կատարողքդ հոգեշահ և օգտաւոր պատուիրանացս մերոց եղիջիք վարձատրեցեալք ի Տեառնէ, ընդունելով և զհոգեկեցոյց շնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր յարաժամ։ Ամէն։

ի ՌՄԼԲ (1783) թուոջս և ի յունվարի ամսոյ ի (20)։

Ձեռ. № 2803, էջ 56—59

711. 1783 թ. հունվար—Թուղթ առ Խոյայ և Սալմաստու և կողմանցն նուիրակ Եփրեմ վարդապետն, ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ թղթոց Սալմաստու և Հաղբակու իշխանացն գրեալ էր առ սրբազանն՝ խնդրելով վասն առաջնորդին իւրեանց՝ Ստեփան վարդապետին, զկոնդակ վերահաստատութեան։

Ձեռ. № 2803, էջ 59—61

712. [1783 թ. հունվար]—Փուսուլայ առ Եփրեմ վարդապետն։

Քանի որ յոթ տարի Հաղբակի կողմերը նվիրակ չի գնացել, կաթողիկոսը խորհուրդ է տալիս Եփրեմին նվիրակ հրավիրել՝ ապահովելով նրան այդ կողմերի իշխանների կամայականություններից, «ի զինուն շրջեցուցանել» և «գործոյն հոգ տանիլ»։

Ձեռ. № 2803, էջ 62

713. 1783 թ. 21 հունվարի—Թուղթ առ կարնեցիսն, որք կային առանց առաջնորդի, մեղադրախառն սիրով խրատ, զի զօգուտն հոգւոց իւրեանց ընտրեսցեն[158]։

Ձեռ. № 2803, էջ 127—130

714. 1783 թ. 31 հունվարի—Սկիզբն կոնդակին, որ գրեցաւ ի նորոգութիւն առաջնորդութեան Ստեփան վարդապետին ի վերայ Բարդուղ[ի]մէոսի Առաքելոց վանիցն և վիճակացն՝ ըստ խնդրոյ նոցին ժողովրդոցն, որք զՎարդան վարդապետն բազմակնիք թղթով յղեալ էին առ սրբազանն վասն նոյն իրի։

Ձեռ. № 2803, էջ 134—136

715. 1783 թ. 31 հունվարի—Առ Սալմաստու մէլիքսն և քեանդխուդայսն, ըստ վերոյ գրեցելոյ կոնդակին մտաց։

Ձեռ. № 2803, էջ 136—138

716. 1783 թ. [31 հունվարի]—Առ Հաղբակու մէլիքսն և քեանդխուդայսն ըստ օրինակի վերոյ գրեցելոյդ, բայց ի սմա այլ իմն հարկաւոր բան ևս։

Ձեռ. № 2803, էջ 138—139

717. 1783 թ. փետրվար—Թուղթ ի Կարին առ քահանայսն և իշխանսըն, ի պատասխանի բազմակնիք մահսարին նոցա, որք բողոքեալ էին վասն լրբութեանց Անանիա չերիցուն և խնդրեալ միաբանութեամբ պատժել զնա (որոյ բանադրանքն ըստ արժանաւոյն է ի միւս տետրոջն ի 95 երեսն)։

Ձեռ. № 2803, էջ 63—64

65 718. 1783 թ. 14 փետրվարի—Թուղթ մեղադրանաց առ Բայազտոյ նուիրակ Կարապետ վարդապետն, որ ի բազում տեղիս դանօգուտ և գլխաւորութեան բանս առնէր և խստութեամբ վարիւր ընդ ամենայսն։

Յորմէ ի վիրաւորեցելոյ սրտէ մեղադրութեամբ, ծանիր, Կարապետ վարդապետ, զի ի յուղարկելն մեր զքեզ յայդ գործ նախկին և հարկաւոր պատուէրն մեր այն եղև քեզ, զի ի բարկութենէ և ի կռուոյ և յաղմկայոյզ բանից զգոյշ և հեռի կացցես, և սիրով և քաղցրութեամբ վարիլով ընդ ամենայսն, խաղաղութեամբ կատարեսցես զգործդ։ Բայց դու մինչև ցարդ զներհակն կամաց մերոց և զընդդէմն քաղաքավարութեան գործես։ Քանզի ի գնալդ առաի, շուտով ի Ջանկաղօռ գչփոթ իմն էիր հանեալ, և ապա մինչ գնացեր ի Գեօլասոր, անդ ևս ընդ վայր զգիւղականսն բողոքապէս բանադրեալ էիր, որ ի գործ չիմարի, որոց զբողոքն մինչ լուաք, երիցս և չորիցս սիրով գրեցաք առ քեզ, թէ հեռի կաց յայդ աղմկասիրութենէդ։

Բայց դու զպատուէրս մեր ոչ պահեցեր ամենևին, այլ ըստ չիմաութեանդ և կռուամոլ բարուցդ (զոր առտ ի մլքանչութեանդ ցուցանէիր) յամենայն գիւղս զքեզապատշաճ հառ իմն և աղմուկ շփոթի հանեցեր։ Եւ որպէս լսեմք, այժմ ի գնալդ ի յՃոճչալու և ի Նաւիկ գիւղսն, յանդգնաբար զառաջնորդ Մկրտիչ վարդապետն առեալ ես ի բերան, թէ աթոռատեաց է և այլն... Եւ մանաւանդ Նաւիկ գիւղի զախթարմայ չէք էրէցն, որ ջանիւք առաջնորդին և ջիտութեամբ փաշային ընկեցեալ է ի կարգէն վասն մոլար աղանդոյն, դու ինքնագլուխ քո կամաւդ փիլոն տալով նմա, ի դասն ևս կանգնեցուցեալ և հասարակին գայթակղութիւն տուեալ։ Որ թէ ստոյգ է այդ, զի՞նչ համարձակութիւն և անխոհեմութիւն է, զոր դու արարեալ ես և զի՞նչ փոյթ է քեզ խառնիլ ի բանս առաջնորդին։ Դու առաջնո՞րդ ես, թե նուիրա՞կ։ Ուրեմն, եթէ ստոյգ է, դարձեալ զփիլոնն առնուցուս անպատճառ և ի դասէն հանցես զչիբքն այն։ Իսկ եթէ սուտ է, վասն է՞ր զամեհի և զխորթ բարս ցուցանես, որ ամենեցուն ատելի լինիս
66 և ամենեքեան զգուեալ ի քէն, զվատ համ//բաւս հռչակեն զքէն։

Մեք ուղարկեցաք զքեզ յայդ գործդ, որ ի քէն սրտադիր լինիցիմք, այլ դու ուր և գնացեր, զխռովութիւնս յարուցեր և վրդովեցեր զամենեսեան։ Ջորս և մեր լսելով, որչափ և գրեցաք քեզ զխրատս և զպատուէրս, չլսեցեր և միշտ ի կռուոյ և ի յանիծից ոչ դադարիս։ Փուչ լինի պյդպիսի հարազատութիւնն և այդպէս աղմկով առեալ արդիւնքդ յաչսդ մտցէ՝

Ահա համն և հոտն տարեր խապառ և բաւական ցանցաւ գլուխ մեր։ Մնած մեզ այս միայն, որ եթէ այլևս զայդպիսի լրբութիւնս առնիցես, հարկիւ զքեզ յետս դարձուցուք ի սուրբ Աթոռս՝ թողլով զգործդ կիսակատար։ Բայց այժմ ես ներողութեամբ զայս գրեմ՝ բաց զմիտդ և լաւապէս ի միտ առ զգրեալս, և ըստ այսմ խոհեմութեամբ շարժեաց, ապա թէ ոչ, վերոյ գրեալն լինելոց է անկարծիք։ Յետին թուղթս է, զոր ահա գրեցի։

Այլև՝ եթէ ի Թոփրախղալայ չես մտեալ դեռևս, եթէ առաջնորդն հարկադրիցէ, գնասցես, բայց թէ ոչ ստիպիցէ նա, մի մտցես անդ ի ներկայումս։ Այլ որ ինչ տեղիք կան առանց նուիրակելոյ, զայնս նուիրակես։ Եւ մինչ մերձեսցիս ի յաւարտել զամենայն թեմսն բացի Թօփրախղալայն, գրեսցես մեզ և մեք յայնժամ զոր ինչ գրեսցուք քեզ, այնպէս արասցես, ընդ ոչ թարց պատճառի գրեմ զայս։ Եւ որքան յայդ կողմունդ իցես, ընդ առաջնորդին սիրով և խաղաղութեամբ վարիցիս, զի այլ մի լսիցեմ ի ձէնջ տրտունջ զմիմեանց։

Զպատասխանին թղթոյս պարտիս ստուգապէս և շուտով գրել։ Ողջ լեր ի Տէր։

Այլև՝ որ ի վերայ գրեցաք, թէ այն Նաւիկ գիւղի ախթարմայ չէրիցու փիլոնն դարձեալ վեր առնուցուս և ի դասէն հանցես զնա։ Ահա կրկին ևս հարկադրեմք, որ այնպէս արասցես, զի թէ մեղայ ևս իցէ ասացեալ և զզջումն ցուցեալ, սուտ և անընդունակ է նորին մեղայն և զղջումն, զի խաբէութեամբ պարուրեալ է զքեզ։ Ուրեմն պարտիս ըստ գրեցելոյս առնել։

Ի ՌՄԼԲ (1783) թուոջս և ի փետրվարի ԺԴ (14)։

Ձեռ. № 2803, էջ 65—66

719. 1783 թ. փետրվար—Թուղթ բանադրանաց ի Կարին առ չէք Անանիա լիրբ էրէցն, որ զանթիւ հայհոյութիւնս և լրբութիւնս և գխռովութիւնս արարեալ անդ առ քահանայսն և առ ժողովուրդսն, գրեալ էին նոքա զբազմակնիք մահսար առ սրբազանն՝ զանկատելով զնմանէ, և խնդրեալ էին յոյժ աղերսանօք պատժել զնա ըստ արժանւոյն։

Ձեռ. № 2803, էջ 139—141

720. [1783 թ. փետրվար]—Կոնդակ առաջնորդական ի վերայ Ախլցխայու և շրջակայիցն՝ յանուն Ղօշավանից և Ղարսայ առաջնորդ Յովաննէս վարդապետին։

Ձեռ. № 2803, էջ 143—144

721. [1783 թ. փետրվար]—Կոնդակ առաջնորդական վասն Աստուածատուր վարդապետին և նոր եպիսկոպոսին ի վերայ Մշու սրբոյ Կարապետի վանից միաբանիցն և բոլոր թեմի և վիճակի նորին ժողովրդոցն, ի պատասխանի մահսարին նոցա։

Ձեռ. № 2803, էջ 146—148

722. 1783 թ. փետրվար—Թուղթ օրհնութեան և մխիթարութեան ի Թիֆլիզ առ Աստուածատուր աղայի որդիսն՝ Գաբրիէլն և Յակոբն, վասն մահուան մօրն իւրեանց, յորում և յորդորումն վասն Ե (5) թուման խոստմունքին մօրն իւրեանց՝ վասն սրբոյ Աթոռոյս, զի տացեն վէքիլին մերոյ։

Ձեռ. № 2803, էջ 279—280

723. [1783 թ. փետրվար]—Թուղթ ի մեծն Պօլիս առ կեսարացի Բարսեղ ամիրայն ի պատասխանի նորին թղթոյն, զոր ընդ կեսարացի

Յարութիւն վարդապետին գրեալ էր, խնդրելով առ ի ձեռնադրել զնա
եպիսկոպոս։

Ձեռ. № 2803, էջ 69—70

724. 1783 թ. փետրվար—Առ կեսարացի Կիւլպեկեան Յակոբ ամիրայն, ըստ նախագրեալ թղթոյդ։

Ձեռ. № 2803, էջ 71

725. 1783 թ. մարտ—Թուղթ ի սուրբն Սաղիմ առ բստացի մահտեսի
Զաքին, որ գՏՌ (3000) ղուռուշ էր խոստացեալ տալ սրբոյ Աթոռոյս, որոյ
ԵՃ (500)-ն առեալ էր և զԲՌԵՃ-ն (2500) ևս տալոց էր։

Ձեռ. № 2803, էջ 67—69

726. 1783 թ. 2 մարտի—Թուղթ առ սրբոյ Երուսաղեմի պատրիարք
Յովակիմ վարդապետն, ի պատասխանի թղթոյ նորին, զոր ընդ Յարու-
թիւն և Պետրոս վարդապետացն՝ միաբանիցն իւրոց, գրել էր առ ի ձեռ-
նադրել զնոսա եպիսկոպոսունս ի պաշտօնատարութիւն սրբոց Յակո-
բեանց Աթոռոյն։

Ձեռ. № 2803, էջ 72—74

74 727. [1783 թ. մարտ]—Թուղթ ի Թիֆլիզ առ պօլկովնիկ տօխտոր
Եակօբն[159], ի պատասխանի թղթոցն նորա երկուց, զորս այժմ գրեալ էր՝
ծանուցանելով զսէր և զչատագովութիւնս իւր առ սրբազանն և առ սուրբ
Աթոռս՝ առ որ սէր, շնորհակալութիւն և օրհնութիւն։

Յորմէ ժամանեցի...

Եւ ընդ առատաձիր օրհնութեան սիրոյ նամակիս, ծանուցումն լիցի
ազնիւ սիրելւոյդ մերոյ և օգտաշան բարեկամիդ սրբոյ Աթոռոյս էջմիած-
նի, զի քան զայս յառաջ էհաս առ մեզ թուղթն քո, գրեցեալն ի փետրվա-
րի Գ (3) ընդ զոյն քաղաքացի Դաւիթ վարդապետին, որով իմացաք զան-
փորձ և զխաղաղութեամբ հասանիլդ ի քաղաքդ և զորպիսութիւնս ինչ ի
կողմանէ Յովսէփ վարդապետին և այլոց, և միամտեցաք։ Իսկ ապա ըն-
75 կալաք և երկրորդապէս զմիւս թուղթդ որպիսածանոյց, // զոր գրեալ էիր
ի փետրվարի ԻԴ (24), և ընթերցեալ ծանեաք զգերազանց մտերմութիւնդ
և զօգտասիրութիւնդ, զոր ունիս առ աստուածաէջ Աթոռս սուրբ և առ մեզ,
և միշտ ջանս եղեալ հետևիս բարեաց սորին և մեր։

Որպէս և նարգենիս ի աստուածազօր և ի բարեխնամ արքայէն մեծէ
զհրամանագիր ես առեալ և մեծաժողով հանդիսիւ բարձեալ զկաթուղիկոս
անունն ի Հախպատու առաջնորդ Իսրայէլէն հաստատուն ձեռագրով իւ-
րով՝ իբր զի այսուհետև այլ մի կոչեսցի կաթուղիկոս և մի կարմրագե-
ղով կնիք ի գործ ածցէ, այլ կացցէ ըստ օրինի արքեպիսկոպոսաց։

Եւ զոր խոստացեալ էիր զթուղթ գրել և յղել ի յեկեղեցիսն օրհնե-
ցելոյ քաղաքիդ՝ առ ի ընթեռնուլ ի յունկս ամենեցուն, ի յես առաւել՝ հաս-
տատութիւն նոյնոյ հրամանի օրհնեալ արքային, ահա զայն խոստմանդ
կատարումն, հանդերձ այլովք բազմազով ջատագովութեամբքդ, զեկու-
ցեալ էր մեզ սիրելին մեր և առաջնորդն օրհնեցելոյ քաղաքիդ՝ Կարապետ
աստուածիմաստ վարդապետն։ Ընդ որս ամենայն մեծապէս շնորհակա-
լեալ մեր զանկեղծ և զհարազատ սիրելւոյդ մերմէ, օրհնեցաք զքեզ բազ-
մագոյն օրհնութեամբ առաջի սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի՝ հայցե-
լով ի նմանէ վասն քոյ զողորմութիւնս և զբարյաջողութիւնս։ Որ և օրհնե-
ցէ զքեզ և զօրացուսցէ միշտ, փրկեսցէ ի յամենայն վնասուց և պահե-

ցէ ի խնամս իւր և օրըստօրէ ի մեծագոյն փառս և ի ճոխութիւնս աճեցէ և
հաճոյ և սիրելի երևեցուսցէ յաչս բազմախնամ թագաւորին։
Ահա, ըստ գրեցելոյդ զօրհնութեան և զշնորհակալութեան գրեանս,
գրեցաք առ մեծազօր արքայն և արքայորդին և զարքայի թուղթն ի ձեռս
քո յղեցաք՝ մատուցանել առ մեծութիւն նորին։ Բայց այժմ յիշեալ Դաւիթ
վարդապետն, որ ի յատկեղ սիրելւոյն իմմէ՝ օրհնեալ արքայորդւոյն առա-
քեցեալ է ի ձեռնադրիլ եպիսկոպոս (զոր և ըստ ժամանակին ձեռնադրե-
լոց եմք), ահա վասն սորա զխնդիր գրեցաք առ բարեսէր արքայն և առ
արքայորդին, զի զսա ի առաջնորդ արասցեն Հախպատու վանիցն և ծա-
նուսցեն մեզ, զի և մեք զսա ի յառաջնորդութիւն Հախպատու վանիցն
ձեռնադրեսցուք եպիսկոպոս և յղեսցուք, և զԻսրայէլ վերադիտօղն նո-
րին (որոյ մնալն յայդր անպատշաճ է և անկարգ), դարձուսցեն ի տեղին
իւր, կամ յղեսցեն ի սուրբ Աթոռս, որ եթէ զայցէ աստ, քան զեպիսկոպո-
սունս մեր, պատուով է մնալոց և յեկեղեցւոջն դասագլուխ է լինելոց։
Վասն որոյ և քեզ՝ սիրելւոյդ գրեմ, զի դու ևս ջանասցես և յորդորեսցես
զօրհնեալ արքայն և զարքայորդին առ ի կատարել զխնդիր մեր՝ ի պատիւ
աստուածաէջ սրբոյ Աթոռոյս և ի պայծառութիւն անուան իւրեանց, և զի
խպառ վերասցի ի քաղաքէդ գժտութիւնն, որ յայդմ մասին։ Եւ զանխար-
դախ սէրդ և օգտաջանութիւնդ աննուազ ունելով, զսիրանիշ գիրդ պա-
կաս մի արասցես՝ ծանուցանելով զորպիսութեանց իրացդ և զինչ առ-
նելդ։

Ողջ լեր ի Տէր, և զօրացուցիչ շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ
յարաժամ։ Ամէն։

Ձեռ. № 2803, էջ 74—75

76 728. [1783 թ. մարտ]—Թուղթ առ աւագ քահանայսն Թիֆլիզու,
զի զմոմն ինքեանք ժողովեսցեն և յանձնեսցեն անդ գործակալա-
ցըն մերոց՝ յղել ի սուրբ Աթոռս, զի յայսմ ամի վասն մոմաժողովութեան
վարդապետ ոչ յղեցաւ, այլ միայն կոնդակն գրեալ առաքեցաւ։
Յորմէ անխարդախ սիրով, քրիստոսական սուրբ ողջունիւ և հոգևոր
օրհնութեամբ և առատածաւալ շնորհիվ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի՝
ծաներուք, սիրելիք մեր, հարազատ և շնորհընկալ որդիք սրբոյ Աթոռոյս՝
օրհնեցելոյ քաղաքիդ Թիֆլիզու աւագ քահանայք։ Զի ահա, ըստ նախնի
սովորութեան մերոյ, թէպէտ պարտէաք զվարդապետ մի յղել յայդր վասն
մոմաժողովութեան, սակայն այսպէս պատեհ տեսաք, որ յայսմ ամի
զայդ գործ ի պարանոցս ձեր արկցուք։ Վասն որոյ յատկապէս զվարդա-
պետ ոչ ուղարկելով, ահա միայն զօրհնութեան կոնդակն գրեալ առաքե-
ցաք, յորում և ծանուցեալ եմք, թէ յայսմ ամի գործակալքն մեր և աւագ
քահանայքն պարտին կատարել զայդ գործ։ Ուստի գրեմ և պատուիրեմ
սիրելեացդ, զի ի գալ կոնդակին և սիրանիշ թղթոյս մերոյ առ ձեզ, զուն
գործեալ հետևիցիք առ ի վճարել զգործդ զայդ և յորդորօղ լինիցիք օրհ-
նեալ ժողովրդեանն՝ առ ի առատութեամբ տալ զմոմ վասն պայծառա-
ցուցանելոյ զլուսաւորութիւն սրբոյ Աթոռոյս։
զարդութեան հաւատոյ մօրս իւրեանց սրբոյ Աթոռոյս։
Ապա ուրեմն, պարտ է ձեզ սրտագին որդիաբար այնպէս առատու-
թեամբ ժողովել ջանալ, զի լուսատու ծնօղս ձեր մի՛ կրեսցէ զպակասու-
թիւնս ի կողմանէ մոմի։ Եւ մանաւանդ, օր մի յառաջ ջանասջիք փութով
ժողովել և յանձնել սիրելւոյն մերոյ՝ օրհնեցելոյ քաղաքիդ նուիրակ և
առաջնորդ Կարապետ հանճարատատ վարդապետին և հարազատ գործա-
կալին մերոյ՝ տէր Ղազարին՝ առ ի յղել շուտով ի սուրբ Աթոռս (որպէս

և գրեալ եմք նոցա և հարկ արարեալ), զի ամփոփակացուցանելոյ ժամանակն մի անցցէ։

Այսպէս իմացեալ, կատարօղք լիջիք հոգևոր հրամանիս մերում և անպակաս մնալով ի ճշմարիտ հարազատութեանց և ի յաւէտական հաւատարմութեանց առ սուրբ Աթոռ շնորհապարգև մայրս ձեր և առ մեզ, եղիջիք ողջ ի Տէր և յանձնեցեալք ի յողորմութիւնս և ի գթութիւնս նորին հանապազ։ Ամէն։

Ձեռ. № 2803, էջ 76

77 **729. 1783 թ. մարտ**—*Թուղթ ի յԱմստէրդամ առ Սաւալանեան պարոն Առաքելն, յիշելով զթուղթ գրեալն առ նա և առ Մասեհեան պարոն Աւէտանն յառաջ քան զայս, և զօրհնութիւն տալով շնորհակալութեամբ հանդերձ վասն տալոյն զԲՌ (2000) գուլտի յանուն սրբոյ Աթոռոյս եղբօրն իւրոյ՝ պարոն Յովաննէսին, որ ի Զմիւռին, որպէս զի որքան ինքն կենդանի է, ամ յամէ զարդիւնսն այն փողոյն Յովաննէսն հասուսցէ սրբոյ Աթոռոյս, իսկ մինչ վախճանիցի, զԲՌ (2000) գուլտին հասուսցէ։*

Ձեռ. № 2803, էջ 77—79

730. 1783 թ. մարտ—*Ղուկաս Կարնեցու նամակը Հերակլ II թագավորին*[160]*։*

Յորմէ ժամանեսցի թուղթ...

Եւ ընդ աստուածային առատաձիր օրհնութեան սիրանիշ թղթոյս ծանուցումն լիցի քումդ բարեպաշտութեան։ Զի որովհետև ամենից բարեգործութեան հաստուցումն բարի է լինելոց Տեառնէ ի հանդերձեալ կեանսն, ուստի և սրբազան առաքեալն Պօղոս, յորդորելով զհաւատացեալս ի գործս բարութեան, գրէ թէ զբարիս գործել մի ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ։ Արդ և դու, ճշմարիտ սիրելիդ և ցանկալիդ մեր, օրհնեալ և բարեսէր արքայդ, ակնկալութեամբ հանդերձելոյ հատուցմանն բարւոյ, ոչ դանդաղիս և ձանձրանաս ի բարեգործութեանց, այլ միշտ առնես գնոյնս և մանաւանդ զայնպիսիս, որք օգտակարագոյնք և շահաւէտք են հասարակաց, որովք ոչ սակաւ լինի գերահռչակութիւն իմաստնախոհ անուան օրհնեցելոյդ ընդ ոլորտս տիեզերաց։ Եւ մեք ևս, լսելով միշտ զբազում համբաւս բարութեան զմեծութենէ ձերմէ, ուրախանամք ոգով չափ և պարարիմք ըստ իմաստնոյն բանի։ Քանզի բաց ի բարեհամբաւութեանց ձերոց, գրէթէ այլ ոչ գոյ մեզ ներկայապէս լուրք սրտագիւրիչք և բանք ուրախառիթք, այլ յամենուստ կուսէ վշտանամք և մաշիմք։

Իսկ և նարդենիս յաւելեր ի վերայ յոգնազան մեծագործութեանցդ հաստատել ի յօրհնեցելումդ քաղաքըդ տպագրատուն, զոր և բարեջան հետևմամբ և ծանր ծախուք ի կատարումն ածեր՝ առ ի յաճախումն հոգեշահ գրոց, որք ի յօգտութիւն քրիստոսականդ բանաւոր հօտի և եկեղեցւոյ սրբոց։ Զոր և մեք իմացեալ, յոյժ ուրախացաք և մանաւանդ ի նմա նորատիպ տպագրեցեալ զտետրակ մի ևս ընկալաք և թարգմանեցուցաք, և տեսանելով զպարզութիւն բարեձևութիւն գրոցն, կարի հաւանեցաք։ Եւ ի ձեռն այսորիկ օրհնանուէր թղթոյ շնորհաւորեմ զնորահաստատ և զվայելչակերտ տպարանդ, զոր Տէր շնորհաւոր արասցէ և բարեաւ վայելել տացէ օրհնեցելոյ արքայիդ, և արասցէ յիշատակ բարի և մշտնջենական քեզ և քոյացնոցն ամենից։ Եվ վասն գոյնոյ բարեարդիւն յիշատակի վարձատրեսցէ զքեզ ամենաբաւական ողորմութեամբն իւրով։

Իսկ ապա և զայս գրեմ իրաւախոհ և ճշմարտասէր մեծի արքայիդ՝

Զի մինչ Իսրայէլ կաթուղիկոսն ի Գեանջայու եկեալ է յայդր, դեռևս գրան ինչ չեմք գրեալ վասն նորա առ մեծութիւն ձեր։ Բայց ապօրինաբար նստիլն նորա յայդր ի վիճակիդ սրբոյ Աթոռոյս կաթուղիկոս անուամբ (որ մինչ ցայժմ չէր եղեալ), մեծագոյն անկարգութիւն էր և գայթակղութիւն մերազնէիցն, զի ընդ դէմ է կարգաց և կանոնաց, որպէս և բարեպաշտութեան ձերում քաջայայտ իսկ է։ Ուստի ի գալն Մաքսիմէ կաթուղիկոսին ի յերկրէ և ի ժողովրդենէ իւրմէ յայդր, թէպէտ և չէր անկարելի մեծութեան ձերոց պահել զնա յայդր ի միում եկեղեցւոջ, սակայն առ ի ոչ երևել երկու կաթուղիկոս, ոչ կամեցար մնալ ի քաղաքըդ։ Բայց ընդ դէմ սմին այս Իսրայէլ կաթուղիկոս կոչեցեալդ եկեալ յայդր կաթուղիկոս անուամբ և կարմիր կնքով վարիւր՝ արկանելով զգժտութիւն ի մէջ ազգի մերոյ, որոյ սակս թէև պարտ էր մեզ գրել զրան ինչ, սակայն ոչ ցաւեցուցաք զպատուական գլուխդ մինչև ցարդ, այլ Աստուած, որ ի ձեռին ունի զսիրտ թագաւորաց, ըստ իմաստնոյն շարժեալ է զբարենախանձ արքայդ՝ առ ի բառնալ ի միջոյ զանկարգութիւն նորին։ Որ և հետևելով իրաւանց և ճշմարտութեանն ըստ աստուածայինն կամաց, հրաման ես արարեալ մեծաւ սաստիւ, զի վերացուսցէ յինքենէ զկաթուղիկոս անունն և այլ մի կոչեսցի կաթուղիկոս և զկնիքն մի՛ ևս կարմրադեղով ի գործ ածիցէ, այլ կոչեսցի արքեպիսկոպոս և վերատեսուչ Հախպատու։ Զոր լուեալ, կարի յոյժ շնորհակալ եղաք զաստուածասէր արքայէդ մեծէ և օրհնեցաք զձեզ և զտիրահաստատ թագաւորութիւն ձեր բերանալիր օրհնութեամբ։ Որք և մեծապաղատ հայցմամբ խնդրեմք ի Տեառնէ Աստուծոյ, որ բարի առնէ բարեաց և այնոցիկ, ոյք ուղիղք են սրտիւք, ըստ երջանիկ մարգարէին Դաւթի, պարգևեսցէ և քեզ՝ սիրողիդ բարեաց և հետևողիդ ուղղութեան, զբարիս մեծամեծս և զվարձս բազմապատիկս։ Օրհնեսցէ զքեզ ամենիւք արքայազարմ ժառանգօքդ և զօրացուսցէ, փրկեսցէ ի բնաւից զխլուածոց չարաց, և պահպանեսցէ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ։ Եղիցի ձեզ յամենայն ժամ օգնական և օժանդակ, և արասցէ զսուր ձեր հատու ի յուրա-

առ թշնամիսն սրբոյ խաչին, և շնորհեսցէ ձեզ զկեանս երկարս՝

խութիւն և ի մխիթարութիւն մեզ։

Եւ արդ, խնդրեմ ի բարեմիտ արքայէդ մեծէ, զի որովհետև միշտ արդիւնախորհիս զօգուտն մեր և ազգիս մերոյ, կամեսցիս ևս առաւել արդիւնաւորել զգոյն բարեմտութիւն ձեր։ Զի ահա ազնիւ սիրելին իմ՝ օրհնեալ Գևօրկին արքայորդիդ, հաճութեամբ քոյին յղեալ է աստ զհոգևոր որդին մեր՝ Հախպատու բնիկ միաբան Դաւիթ վարդապետն ի ձեռնադրել եպիսկոպոս[161]*։ Որ եթէ քանիօք աւուրբք յառաջ էր եկեալ, յոյժ բարւոք լինէր, զի*

յառաջ քան զայս զքանիս վարդապետս ձեռնադրեցաք եպիսկոպոս և զսա ընդ նոսա ձեռնադրէաք, բայց անագան եկն և մեծ պահքս ևս ի վերայ ժամանեաց։ Եւ յայս աւուրս չէ յոյժ յարմար եպիսկոպոս ձեռնադրել։ Վասն որոյ ի սէր ընկալեալ պահեմք զսա աստէն, զի ըստ ժամանակին ձեռնադրեսցուք վասն ազնիւ խաթեր ձերոյ (որպէս ի Քրիստոս զօրացեալ Գեօրկին Միրզայ արքայորդւոյդ ևս գրեալ ծանուցաք)։ Այլ թերևս մեծութիւն ձեր գիտիցէ, որ մեր կարգ և սովորութիւնն այս է, զի զեպիսկոպոսն ի վերայ վիճակի իրիք ձեռնադրեմք ի հոգևոր փեսայութեան նմա։ Բայց սոյն Դաւիթ վարդապետս ոչ ունի զվիճակ, առ որ և մեք տարակուսիմք, թէ զի՞նչ անուամբ ձեռնադրեսցուք զսա։ Վասն որոյ խնդրեմ ի յօրհնեցելոյ արքայէդ՝ կարգել և հաստատել զսա առաջնորդ Հախպատու սրբոյ վանիցն, հաճութեամբ նորին թեմի ժողովրդեանն (ըստ որում և մեզ ծանուցանել, զի և մեք, թարց բնիկ և հարազատ միաբան է նմա), և մեզ ծանուցանել, զի և մեք, թարց

բնիկ և հարազատ միաբան է նմա), և մեզ ծանուցանել, զի և մեք, թարց

տարակուսանաց, ձեռնադրեցուք զսա եպիսկոպոս ի յառաջնորդութիւն
Հախպատու սուրբ վանիցն։ Իսկ զԻսրայէլ վերադիտօղն Հախպատու, եթէ
կամիցիս, դարձուցես ի տեղի իւր կամ յղեսցես ի սուրբ Աթոռս, զի իւ-
պառ վերասցի ի յօրհնեցելոյ քաղաքէդ գծռութիւնն, որ յայդմ մասին, և
մի՛ մնասցէ յաւուրց բարեպաշտութեան քոյին օրինակ անկարգութեան
ապագայից, և լինիլ քեզ յիշատակ անբարի ընդ դէմ քոյդ ջանացողութե-
անց, որ կամիս միշտ զյիշատակս բարութեան թողուլ յաշխարհի, որպէս
ի վերոյ յիշեցաք։ Եւ մինչ գայցէ նա ի սուրբ Աթոռս, քան զբոլոր արհիե-
պիսկոպոսունս մեր, պատուով է լինելոց և յեկեղեցւոջն զատաղլուխ
կանգնելոց։

Այս է խնդիր իմ ի տէրութենէդ, զոր անտես մի՛ արասցես ի պատ-
ատուածաէջ սրբոյ Աթոռոյս և ի պայծառութեան անուան ձերոյ։ Ողջ
լեր ի Տէր և պահպանեցեալ խաչին սրբով ամենայն քոյայնովքդ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուիս ի մարտի և ի լուսատու Աթոռս սուրբ
Էջմիածին։

Մեծի և օրհնեցելոյ արքայի թղթոյ օրինակն է, զկնի թարգմանելոյն,
զայս վերստին դարձուցիք առ մեզ կնքով։

Կթղկ. դիվան, թղթ. № 244, վավ. 279։
(Սևագրությունը տե՛ս ձեռ. № 2803, էջ 148—152)

153 **731. 1783 թ., 10 մարտի**—Թուղթ շնորհակալութեան ի Թիֆլիզ առ
բոլոր մերային ժողովուրդսն, որք զԹարսեղ անուն ոմն հանդերձ որդւով-
քըն ազատեալ էին ի ձեռաց լեզկեաց և ընծայեալ էին միաբանութեամբ՝
ճորտ սրբոյ Աթոռոյս։

Յորմէ ժամանեսցի թուղթ...

Եւ ընդ աստուածային և շնորհալից օրհնութեան ողջունաբեր նամա-
կիս, ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոց մերոց և լուսածին զա-
ւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի զբարերարաց շնորհակալել և
զերախտիս երախտաւորաց ճանաչել հարկադրեն զմեզ օրէնք բնութեան
և գիրք աստուածայինք։ Արդ, ըստ բնական կանոնի և ըստ սուրբ գրոց,
պիտոյ է մեզ այժմ շնորհակալել զսիրելի և զհոգևոր որդւոցդ մերոց,
զմտերիմ և զօգտակամ զաւակացդ սրբոյ Աթոռոյս, որք բաց ի զանազան
բարերարութեանց և ի հոգևոր արդիւնաւորութեանց ձերոց, զորս միշտ
առնէք, յայսմ միջոցի ևս յատկապէս մեծաւ հարազատութեամբ և հա-
ւատարմութեամբ գնեալ և ազատեալ էք ձերովդ արդարավաստակ արդե-
ամբք զԹարսեղն՝ հանդերձ Յարութիւն և Աւետիք որդւովքն և այլ իւրայ-
նովքն, ի ձեռաց անօրէն լեզկեաց և յօժարակամ սիրով ընծայեալ էք
զնոսա ճորտ և ծառայ սրբոյ Աթոռոյս՝ ի հոգևոր յիշատակ ձեզ մշտնջե-
նական։ Զոր գրեալ և ծանուցեալ էին մեզ յայդրուստ սիրելին մեր ծայ-
րագոյն նուիրակ և առաջնորդն օրհնեցելոյ քաղաքիդ՝ Կարապետ աս-
տուածիմաստ վարդապետն և հարազատ գործակալն մեր՝ տէր Ղազարն,
յղելով առ մեզ զբազմակնիք թուղթն ձեր, որ յայնմ կողմանէ և առնելով
զբազմագոյն շնորհակալութիւնս դձէնջ։ Վասն որոյ և մեր յոյժ մեծապէս
154 շնորհակա//լեալ զհոգևոր որդւոցդ մերոց զմտերիմ և զօգտաջան զաւա-
կացդ սրբոյ Աթոռոյս, օրհնեցաք զձեզ բազմաւ օրհնութեամբ։ Զորս Աս-
տուածն ամենայնի օրհնեսցէ անանցանելի օրհնութեամբն իւրով և զօ-
րացուսցէ միշտ, ազատեսցէ ի յամենից հոգեկան և մարմնական վտան-
գից և դիպուածոց չարաց և պահպանեսցէ ընդ հովանաւորութեամբ խնա-

մոց և գթութեանց իւրոց. եղիցի ձեզ օգնական յամենայն կեանս ձեր ի
տուէ և ի գիշերի՝ ի նստիլ ի տան և ի գնալ ի ճանապարհ ի ծովու և ի
ցամաքի, ի ննջել և ի յառնել, և զամենայն բանս և զգործս, զառս և
զտուրս ձեր բարեպէս յաջողեսցէ։ Մանաւանդ լուսաւորեսցէ զհոգիս
ննջեցելոց ձերոց և հանգուսցէ յարքայութեան երկնից՝ արժանաւորս
առնելով երանաւէտ տեսութեանն իւրոյ։

Արդ, պատուիրեմք սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, զի զզոյն սի-
րոյ սերտութիւն և զջերմեռանդութիւն հաւատոյ անաղօտ և աննուազելի
ունիցիք առ Աստուած և առ լուսատու մայրս ձեր սուրբ Աթոռս, որպէս
զի հանապազօրէն մնասցէ ի վերայ ձեր անուն բարութեան, և արժա-
նաւորեսջիք վարձուց մեծաց ի Տեառնէ յայսմ աշխարհի և ի հանդեր-
ձելումն։ Որք և եղիջիք օրհնեալք ի Տէր և յանձնեցեալք ի խնամս նորին,
և առատաբոր շնորհք սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի լիցի ընդ ձեզ և
ընդ ձերայինս ամենեսեան յարաժամ։ Ամէն։

Ի ՌՄԼԲ (1783) թուիս մերում, ի մարտի Ժ (10)։

Ձեռ. № 2803, էջ 153—154

156 **732. 1783 թ. մարտ**—Թուղթ ի Զմիւռին առ Մոսկով կոչեցեալ պարոն
Յովաննէսն. շնորհակալութիւն վասն հարազատական արարմանցն։

Յորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ, քրիստոսաձիր սուրբ ողջունիւ
և հոգևոր օրհնութեամբ, և սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի առատածա-
ւալ և պահպանողական շնորհին ծանուցումն լիցի հարազատի և ստու-
գազունի սիրելւոյդ մերոյ և վաղեմի բարեկամիդ և հաւատարիմ և օգ-
տաջան որդւոյդ սրբոյ Աթոռոյս, քրիստոսասէր և նովիմբ զօրացեալ չէ-
լեպիա և ճոխապատիւ պարոն Յովաննէսիդ։

Զի յանցեալ թուոջ նոյեմբերի եւն զթուղթ շնորհակալութեան գրե-
ցաք առ եղբայրն քո՝ պարոն Առաքելն վասն զանգակացն, և առ պարոն
Ալէքսանն՝ ծանուցանելով զզանգակաց հասանելն ի սուրբ Աթոռս և զոր-
պէսն խարջից նոցին, և առ սիրելիդ մեր ևս գրեցաք յայնժամ զյատուկ
թուղթ ըստ նոյն մտաց և յղեցաք հանդերձ թղթով միով, որ առ հան-
գուցեալ Մնացականի կինն, որք ի հարկէ մինչև ցարդ հասեալ են։

Իսկ ի ներկայումս թուղթ ժամանեաց առ մեզ ի սիրելւոյն մերմէ և
ծայրագոյն նուիրակէն և առաջնորդէն ձերմէ՝ Եսայի աստուածիմաստ
157 վար//դապետէն, և ընթերցեալ ծանեաք, զի գրեալ էր զմեծահաւատութենէ
և զբարեխնութենէ հարազատի եղբօրն քոյ և մերս ճշմարիտ սիրելւոյ՝
Աստուծով զօրացեալ պարոն Առաքելին, որ զպատրաստութիւն հոգւոյն
այժմէն տեսանելով ի կենդանութեանն զերկու հազար գուլտի կտակ է
արարեալ վասն սրբոյ Աթոռոյս և քեզ է յանձնեալ այսու կերպիւ, զի
որքան կենդանի է ինքն, դու, սիրելիդ մեր, զայն դրամն ի գործ ածցես
և ամ յամէ զնորին արդիւնսն յղեսցես առ սուրբ Աթոռս, և ստի օրհնու-
թեան թուղթ առեալ, ուղարկեսցես առ նա ի միամտութիւն նմին։ Եւ յետ
վախճանին իւրոյ (որում Տէր շնորհեսցէ զերկարութիւն կենաց), ապա
զերկու հազար գուլտին բոլորապէս հասուսցես սրբոյ Աթոռոյս։

Եւ դու, հարազատ սիրելիդ մեր, այս նոր անցեալ տարւոյ զարդիւն-
սըն այն դրամոցն, որ եղեալ էր մեկ հարիւր և հինգ ղուռուշ, հասուցեալ
ես Եսայի զգօնամիտ վարդապետին՝ առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։
Զոր ևս էր գրեալ նա մեզ հանդերձ յատուկ շնորհակալութեամբ։ Ընդ
որս և մեք, մեծապէս շնորհակալիլով, օրհնեցաք զձեզ բերանալիր
օրհնութեամբ, որք ի վարձատրողէն ամենից ճշմարիտ բարեգործաց ի
յառատախնամէն Աստուծոյ եղիջիք միշտ օրհնեալք, զօրացեալք և վար-

ձատրեցեալք աստ և յանանց կեանս՝ հանդերձ ամենայն կենդանեօք և ննջեցելովք ձերովք:

Արդ, առ ի գոհութեան և շնորհակալութեան թուղթ գրեցաք ի վերայ պարոն Առաքելին վասն յիշեալ ԲՌ (2000) ղուրուշն, ծանուցանելով և զբոյդ միոյ ամի զարդիւնսն հասուցանելն, և յղեցաք յայդր ընդ սոյն թղթոյս ի ձեռն Եսայի վարդապետին, որ տացէ քեզ՝ յղել ի յԱմստէրդամ առ պարոն Առաքելն: Ուրեմն պարտիք շուտով ուղարկել, զի միամիտ լիցի:

Իսկ և զայս գրեմ յատկեղ սիրելւոյդ, զի զդոյն հոգեօգուտ և մեծավարձ ուխտ և առաջադրութիւն բարեմիտ եղբօրն քոյ միշտ կատարեսցես և ի յատկական սիրոյ և հաւատարմութենէդ, զորս ունիս առ սուրբ Աթոռ լուսածին մայրս քո և առ մեզ, մի՛ վերջասցիս, որովք ընկալցիս հանապազ զվարձս բարիս յԱստուծոյ զհոգեպարար շնորհս ի սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի և զօրհնութիւնս ի մէնջ: Ամէն:

Գրե[ցաւ]...

Ձեռ. № 2803, էջ 156—157

733. 1783 թ. մարտ—Կոնդակ օրհնութեան ի վերայ Ղումղափուի ժողովրդեանն վասն գանձապետութեան ի Պօլիս պարոն Մարտիրոսին և պարոն Յովաննէսին և մահտեսի Ծատուրին, և վասն արտելմանն ի գանձապետութենէ Յակոբ ամիրային կեսարացւոյ, որ ի վաղուց գանձապետ էր:

Ձեռ. № 2803, էջ 79—82

734. 1783 թ. [մարտ]—Թուղթ ի յարտաքին վիճակս Պօլսոյ առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Գալուստ վարդապետն, յիշումն վասն քան զայն յառաջ յղեալ ԲՌՊԼ (2830) ղուռուշի զապզին և հարկ, զի Պօլսոյ նուիրակին ԲՌ (2000) կամ աւելի դրամս հասուցէ ի հարկաւոր պէտս սրբոյ Աթոռոյս:

Ձեռ. № 2803, էջ 82—88

735. 1783 թ. մարտ—Թուղթ ի մեծն Պօլիս ի վերայ հասարակութեանն վասն Մուրատեան Յակոբ ամիրայի վէքիլութեանն՝ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս ի վերայ անդ եղեալ վախուփ տանցն և խանութիցն սորին, որ յանձն էր առեալ հանդերձ Յարութիւն որդւովն կատարել զայն գործ:

Ձեռ. № 2803, էջ 158—161

736. 1783 թ. 27 մարտի—Թուղթ առ Թարվիզու և Խոյու նուիրակ Եփրեմ վարդապետն, ի պատասխանի թղթոյն նորա, զոր գրեալ էր ընդ Խոյու բեաթխուտայիցն և քահանայիցն՝ մինչ եկեալ էին նոքա ընդ բայազետցւոցն խնդրել զառաջնորդ վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանիցն:

Ձեռ. № 2803, էջ 281—282

737. 1783 թ. 27 մարտի—Սկիզբն կոնդակին առաջնորդականի, որ տուաւ Թադէոսի Առաքելոյ վանից նորոգ առաջնորդ կարգեցեալ Սահակ վարդապետին Փառակեցւոյ, զոր ի վիճակաց նոյն վանիցն քահանայք և իշխանք եկեալ տարան:

Ձեռ. № 2803, էջ 84—85

738. 1783 թ. 27 մարտի—Թուղթ առ քահանայսն, իշխանսն և ժողովուրդսն Բայազատոյ, ի պատասխանի մահսարին իւրեանց, զոր գրեալ էին և ընդ խօյեցւոց մահսարին ի ձեռն իւրեանց և խօյեցւոց քահանայիցն և

իշխանացն ոմանց յղեալ, խնդրելով զառաջնորդ վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանիցն: Որ և սրբազանն զԻսահակ վարդապետն Փառակեցի յղեաց առաջնորդ՝ վերոյ գրեալ կոնդակաւդ:

Ձեռ. № 2803, էջ 85—86

739. 1783 թ. 27 մարտի—Թուղթ վասն արձակման բանադրանաց տէր Անանիա քահանային ի վերայ Կարնոյ քաղաքի ժողովրդեանն հասարակապէս: Եւ սաստ՝ վասն չհասութիւն առնելոյ:

Ձեռ. № 2803, էջ 175—177

740. 1783 թ. ապրիլ—Թուղթ առ Կարնոյ ժողովուրդսն, յաղագս օրինազանցութեան ոմանց սաստ, և պատուէր՝ չառնել:

Ձեռ. № 2803, էջ 87—88

282 741. 1783 թ. 1 ապրիլի—Կոնդակ ժողովարարութեան ի յերկիրն Ռուսաց և ի Շիրուան, Շամախի, Նուխի և յայն կողմունսն, վասն Գօրու սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն օգնութիւն առնելոյ, զի զգեստ նորին և ամենայն եկեղեցական սպասքն այրեցեալք էին:

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջոյնի և օրհնութեան և նամակ պահպանութեան. շնորհք առաքելական և աստուածային առատաձիր օրհնութիւնն ամենախնամիչ գթութիւնն ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս, հայկատոհմ, լուսաւորչակրօն և միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք կայք զետեղեալք ի յաստուածախնամ երկիրդ Ռուսաց՝ ի յօրհնեալ և ի
283 կայսերապերճ մայրաքաղաքդ Պետրբուրխ, ի Մոսկով//, ի Հաշտարխան, ի Նոր Նախիջևան, ի Ղզլար, ի Մօզտօք և ի շրջակայս դոցին: (Իսկ և յայսկոյս ի յօրհնեալ երկիրսդ և ի քաղաքսդ՝ ի Դարբանդ, ի Ղախ, ի Բաքու, ի Ղուպա և ի բոլոր երկիրդ Շրւանու՝ ի Նուխի, ի Շամախի և յայլ շրջակայս դոցին): Յորս կառուցեալ աստուածաբնակ սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց: Նախ, որոց հոգևոր այցելու և առաջնորդ Յովսէփ աստուածաբան վարդապետիդ և արհիեպիսկոպոսիդ, և ապա սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, պերճապատիւ իշխանաց, փառազարդ զօլվաթաւորաց, փարթամայոյզ մեծատանց, իրաւադատ մէլիքաց, բարեսէր տանուտեարց և ռէիսներաց, հարազատ և հաւատարիմ գանձապետաց, եկեղեցպանաց, և երիցփոխաց, իմաստնախոհ վաճառականաց, վայելչագործ արուեստաւորաց, արդարավաստակ հողագործաց, համեստաբարոյ տանտիկնաց և այլ առհասարակ միահամուռ ամենայն ժողովրդականաց խմբից, մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից՝ խնդալ ի Տէր յարաժամ ցնծութեամբ և ուրախութեամբ: Ամէն: (Շնորհք): (Այլև):

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և հարազատ զաւակացդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի: Քանզի ի հարկէ հասեալ է ի յունկս ամենեցունցդ, զի որովհետև ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի, հաւատացեալքս և ճշմարիտ երկրպագուքս Քրիստոսի Աստուծոյ, եմք մարմինք նորա և անդամք յանդամոց նորա, և եմք մի մարմին՝ հաստատեալք հաւատով ի միմիայն կենդանարար գլուխն մեր Քրիստոս, վասն որոյ ըստ նորին սրբոյ առաքելոյ, պարտիմք անդամքս հոգևոր զմիմեանց հոգալ հանապազ, զմիմեանց բեռն բառնալ, ընդ վշտանալն միոյն՝ վշտանալ, և ընդ փառաւորիլն՝ խնդալ և կարեկցել, և օժանդակել միմեանց: Զի

որպէս անդամք մարմնոյ մերոյ զմիմեանս խնամելով և զմիմեանց հոգալով մնան ի յողջութեան, նոյնպէս պարտիմք անդամքս հոգևոր, կարեկցելով և օժանդակելով միմեանց ի զանազան վշտաւորութիւնս և ի պակասաւորութիւնս, մնալ ի զուարճութեան և յանպակասաւորութեան,
284 որով և կատարել զաստուածային պատուիրանն//, թէ՝ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։

Արդ, սիրելիք մեր ի Տէր, եթէ խնամելն և մարդասիրելն զայնպիսիս, որոց իցէ վիշտ պակասաւորութիւն վասն անձանց իւրեանց միայն և մարմնաւոր գործոց, մեծ վարձք իցեն և ընդունելի գործք և կատարումն աստուածային պատուիրանացն, որ արդարև է իսկ, ապա որչա՞փ ևս առաւել, եթէ օգնիցեմք և օժանդակիցեմք այնպիսեաց, որոց իցէ պակասաւորութիւն և դժուարակիր ծանրութիւն և վիշտ վասն հասարակի օգտութեան, և հոգևոր և աստուածահաճոյ գործոց։

Արդարև, մեծագոյն և առաւելապատիկ վարձուց լինիմք յայնժամ արժանաւորք և պատուիրանապահ ծառայք Աստուծոյ, և հաղորդք և մասնակիցք այնմ բարեգործութեան։

Արդ, այժմ սիրելի և հոգևոր որդիք մեր, յայսպիսեաց հոգևոր և վարձատրելի բարեգործութեան աղագաւ պակասաւորաց և վասն հոգևական օգտից զդժուարակիր ծանրութիւնս և զվիշտս կամաւ յանձնառողացուցից ձեզ, որոց և դուք օժանդակելով և կարեկցելով, մասնակիցիք նոցին բարի և վարձատրելի գործոց։ Քանզի յօրհնեալ ազգէս մերմէ խղճալի ժողովուրդքն, որք բնակին ի գիւղաքաղաքն Գօրի, որ է յերկիրն Վրաց, ունին զերիս եկեղեցիս, որոց մինն է կառուցեալ յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և էր ճոխ և փարթամ եկեղեցական անօթովք և զգեստուք։ Բայց նորդենիս պատահմամբ իւիք հուր է անկեալ ի նոյն եկեղեցին և այրեալ է զամենայն զգեստն և զզարդս նորին և յաճին դարձուցեալ։ Որոյ սակս խղճուկ և սակաւաւոր ժողովուրդքն, որք նոյն սուրբ Ստեփաննոսի եկեղեցւոյն են վիճակեցեալք, զրկելով ի հոգևոր մխիթարութենէ, անկեալ են ի բազմավարան ցաւս և ի տրտմութիւնս։ Եւ այժմ թէպէտ հոգեբաղձ տենչմամբ կամին դարձեալ զարդարել զեկեղեցին իւրեանց, բայց գոլով սակաւաւորք և աղքատք, ոչ կարեն, և կարօտին օգնութեան օրհնեցելոյ ազգիս մերոյ։ Ուստի քահանայիւք և ժողովրդովք գրեալ էին առ մեզ զբազմակնիք թուղթ աղերսանաց և
285 ծանուցեալ զաղէտս իւրեանց, // զոր և յղեալ էին աստ ի ձեռն հոգևոր որդւոյդ մերոյ՝ տէր Ղազար խոհեմամիտ քահանայիդ և մեծաւ աղերսիւ խնդրեալ էին ի մէնջ շնորհել ի ձեռն դորա զկոնդակ շրջաբերական, զի առեալ եկեսցէ դա առ աստուածասիրութիւն ձեր՝ ի խնդրել ի ձէնջ զկամաւոր տուրս ողորմութեան՝ առ ի ստանալ այնու զզարդս վասն եկեղեցւոյ իւրեանց։

Յաղագս սոյնոյ բանի և յատկագոյն սիրելին և բարեկամն մեր՝ քրիստոսազօր Հերակլ արքայն Վրաց և թագազարմ որդի իւր ևս էին զթուղթ գրեալ առ մեզ և խնդրեալ առ ի կատարել զհայցուածն նոցա։ Ուստի և մեք պատշաճ տեսեալ և արժանի համարեալ, խոնարհեցաք յաղաչանս նոցին և զայս օրհնութեան և շրջաբերական նամակս մեր շնորհեցաք դոյն տէր .... քահանայիդ, զի եկեսցէ այսու կոնդակաւ առ սիրելի և հոգևոր որդիսդ մեր և ժողովեսցէ ի ձէնջ զկամաւոր ողորմութիւնս՝ ի զարդարումն եկեղեցւոյն իւրեանց։ Վասն որոյ պատուիրելով պատուիրեմք աստուածասիրացդ և բարեպաշտիցդ, զի ի գալն դորա առ ձեզ այսու օրհնութեան նամակաւս մերով և ի ծանուցանելն ձեզ զաղէտս իւրեանց,

յայնժամ պարտիք սիրով ընդունել զդա իբրև զծառայ Քրիստոսի և մանաւանդ ամենեքեանդ իսկ տեղականք և վաճառականք, արք և կանայք, մեծամեծք և փոքունք, հարուստք և աղքատք, յօժար կամօք և զուարթ սրտիւք շնորհել դմա զողորմութիւնս և զտուրս առատս, և զյիշատակիս վասն զարդամերկութեան եկեղեցւոյն իւրեանց։ Վասն զի յիրաւի թէպէտ զամենայն ողորմութեան տուրս, զորս տան մարդիկք յանուն Աստուծոյ, զայնս զամենայսն ընդունի Աստուած և վարձատրէ զտուօղսն, սակայն ևս առաւել զայնպիսի տուրս ընդունի, զորս տան մարդիկ յօժարութեամբ վասն սրբոյ Տան իւրոյ, այսինքն սրբոց եկեղեցեաց։ Ընդ որս յոյժ հաճի Աստուած և փոխարէն նոցին զվարձս բարիս և առատս հատուցանէ տուողացն առանց երկբայութեանց։

Ուրեմն կրկին պատուիրեմք աստուածասէր և հոգևոր որդւոցդ մերոց, զի շնորհեսջիք դմա զանօթս և զզգեստս ևս եկեղեցականս՝ թէ զար-
286 ծաթեղէնս, թէ շորեղէնս, և թէ զայլ նիւթեղէնս, որք// բղխին ի սրտից ձերոց, ի զարդ և ի վայելչութիւն սրբոյ եկեղեցւոյն դոցա, ի փառս ի նմա բնակողին Աստուծոյ, և ի յիշատակ հոգւոց ձերոց։ Որք և ըստ տրոց և ողորմութեանց ձերոց ընկալջիք զբազմապատիկ վարձս բարիս յԱստուծոյ աստ և ի հանդերձելումն, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ, և ի սրբոյն Ստեփաննոսէ Նախավկայէն և զօրհնութիւնս ի մէնջ։

Եւ որքան աղօթք, սաղմոսերգութիւնք, պաշտօնք, պատարագք, որք ի սուրբ եկեղեցւոջն յայնմիկ կատարիցին, յայնցանէ մեծ մասն և բաժին եղիցին ձեզ՝ կենդանեացդ և ննջեցելոց ձերոց։ Ամէն։

Գրեցաւ գիրս շրջաբերական ի ՌՄԼԲ (1783) թուոջս մերում, ի յապրիլի մուտն, և ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 282—286

742. [1783 թ. ապրիլ]—*Թուղթ ի մեծն Պոլիս առ Մուրատեան Յակոբ ամիրայն, շնորհակալութիւն վասն յանձն առնլոյն զվէքիլութիւն և զմութավէլլութիւնն վախուֆ խանացն սրբոյ Աթոռոյս, որք անդ։ Որոյ աղագաւ կոնդակ ևս գրեցաւ, որ աճա ի վերդ է։*

Ձեռ. № 2803, էջ 161—163

743. 1783 թ. 4 ապրիլի—*Կարնոյ առաջնորդական կոնդակի միջարկեալ բանն, որ գրեցաւ վասն Բերդումեան Պետրոս վարդապետին՝ ի գնալն անդ յառաջնորդութիւն։*

Ձեռ. № 2803, էջ 177—178

744. 1783 թ. 18 ապրիլի—*Թուղթ ի մեծն Պոլիս առ Մինաս վարդապետն մեր, ի պատասխանի նորին քանեաց թղթոցն, որ վասն զանազան բանից։*

Ձեռ. № 2803, էջ 164—169

745. [1783 թ. ապրիլ]—*Թուղթ ի մեծն Պոլիս առ սրբոյ Աթոռոյս գործակատար նուիրակ Մինաս վարդապետն*[162]*, ի պատասխանի նորին մարտի ԺԹ (19) և ի ԻԲ (22) գրեալ թղթոցն վասն զանազան իրաց և իրակութեանց։*

Ձեռ. № 2803, էջ 169—174

746. [1783 թ. ապրիլ]—*Թուղթ առ մեծին Պոլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, ի պատասխանի նորին երկուց թղթոցն, զորս ընդ կեսարացի Յարութիւն և ընդ սրբոյ Երուսաղէմի միաբան՝ միւս Յարու-*

թիւն վարդապետացն գրեալ էր. խնդրելով առ ի ձեռնադրել զնոսա եպիս-
կոպոս:

Ձեռ. № 2803, էջ 189—190

747. [1783 թ. ապրիլ]—Թուղթ ի Պօլիս և ի Ղումղափու առ նորոգ
գանձապետսն մեր՝ պարոն Յովաննէսն, պարոն Մարտիրոսն և մահ-
տեսի Աստուածատուրն վասն հաստատելոյն զնոսա գանձապետ, և զկոն-
դակ գրելոյն, յորում և յորդորանք:

Ձեռ. № 2803, էջ 191—192

748. 1783 թ. 18 ապրիլի—Թուղթ առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա
վարդապետն, շնորհակալութիւն վասն ջանացողութեանցն օգտից սրբոյ
Աթոռոյս, և վասն սատանելոյն բառացի և սաստ հանդուցեալ մահտեսի Սի-
մէօնի Միրախոռացն՝ ասելով, թէ յընչից նորին ձեզ ինչ ոչ հասանի և
վասն յարքունուստ ֆէրման հանելոյն ի խափանումն նոցին դիտմանցն:

Ձեռ. № 2803, էջ 193—194

286 749. 1783 թ. 18 ապրիլի—Թուղթ առ Հաշտարխանու և կողմանցն
նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի երից
թղթոցն:

Յորմէ բազմաւ սիրով և կարօտիւ բրխտասաւանդ սուրբ ողջունիւ և
հոգևոր օրհնութեամբ գիտասջիր սիրելի որդի մեր, հարազատ և բրտնա-
ջան ղաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածաբան վարդապետ:

Զի յառաջ քան զայս, յանցեալ թուոյ ի դեկտեմբերի Բ(2), ի Դվլար
և ի նոյնոյ ամսոյ ԺԶ (16) ի Մօզտօք գրեալ երկուքին թուղթքդ հասին առ
մեզ, զորս ընթերցեալ իմացաք զամենայն գրեալսդ: Իսկ այժմ եկն էհաս
ի սուրբ Աթոռս հոգևոր որդին մեր և պաշտօնեայն քո՝ շնորհաշատ տի-
րացու Աւետիքն, բերելով առ մեզ զի Նոր Նախիջևանու ի սոյն ամի
փետրվարի ամսեանն գրեալ թուղթդ և զայլ գրեանս ի գերյարգելի Պաւլ
Սարգէիչ Պօտէմկինէն[163] և յայլոց: Զորս ընթերցեալ հասու եղաք ամենից
դիտմանցդ, որք ի նոսա, և տիրացու Աւետիքին ևս զոր ինչ պատուիրեալ
էիր, ծանոյց և իմացաք:

Արդ, լուր դու այժմ զպատասխանիս հարկաւորացն քոյդ գրեցելոց:
ԶԳաբրիէլն, զոր յիշեալ ես ի յառաջին թղթոջդ, լուաք զնմանէ, թէ գնա-
ցեալ է ի յԱրցախ և դարձեալ, այլ ընաւ ոչ տեսաք մեք զնա: Բայց քան
զայն յառաջ պօլկովնիկ Նակօրն եկն հանդերձ ականակուռ պարգևով և
287 սիրոյ գրովն // գերապայծառ իշխանին, բերելով և ի յազնիւ Յովաննի-
սէն և ի Մանուչարենց պարոն Մարգարէն և Փիլիպպոսէն[164] և ի սիրելեացդ
և յայլոց ևս զթուղթս: Եւ մեք յայնժամ զտօքտօրն պատուով և յարգանօք
ընկալեալ, ի վերադառնալն գրեցաք ընդ նմա զպատասխանիս, թէ առ
քնէազ Պօտէմկին բարձրազգոյն իշխանն, և թէ առ յիշեալ մերայինսն, և
քեզ ևս գրեցաք զթուղթ՝ ծանուցանելով ի նմա և զառ նոսա գրեցելոցն
զդիտմունսն: Յուսամ թէ մինչև ցայժմ շուտով հասեալ իցէ քոյդ թուղթն
առ քեզ և զամենայն գրեալսն մեր իմացեալ իցես:

Իսկ ի Մօզտօքու գրեալ թղթոջդ ծանուցեալ էիր զդատարան կար-
գելդ[165] և զհոգացումն բանիցդ և զվերադառնալդ անվնաս ի Նոր Նախի-
ջևան: Ընդ որս ուրախացեալ միամտեցաք:

Եւ վասն Սագիմայ նուիրակին զամենայն գրեալսդ իմացաք: Զղապղն
ԴՃ (400) թումանին նոցա յառաջագոյն յղեալ էաք ի Պօլիս և գրեալ
Մինաս վարդապետին՝ հասուցանել նոցա (թէև առ նա ևս դրամ չէ մնա-

ցեալ), որպէս և նա գրեալ է քեզ: Բայց ըզՃԿԱ (161) թումանի ղապղն
և զգրեանսն տեսեալ և փակեալ, այժմ յղեցաք և զպարագայսն ռուպլիին
ևս գրեցաք: Լեր անհոգ:

Նուիրակն Երուսաղէմի, որովհետև ի պատրիարգէն իւրմէ զկոնդակ
ոչ ունի ի վերայ այսց կողմանցս, վասն որոյ եթէ ըստ քոյդ գրեցելոյ
ոճի առ զօրապետն զբանս ինչ գրիցէաք, այլ իմն երևիր, վասն այն թոյլ
ետուք, ընդ ո՞ր կամի երթիցէ ի տեղի իւր, չմնալով յայդր:

Իսկ որ վասն Սանահնոյ վանիցն զկոնդակ էիր խնդրեալ՝ գրելով, թէ
թերևս զառաջնորդ Աբրահամ վարդապետն եպիսկոպոս իցես ձեռնադրեալ:
Իմա առ այն, զի մեք զնա այնու դիտմամբ կարգեցաք առաջնորդ, զի
զսուրբ Տունն այն նորոգեսցէ և ի շինութեան և ի պայծառութեան պահե-
սցէ և ստասցի զբազմութիւնս միաբանից: Այլ նա զայսցանէ ոչինչ ունելով
288 զփոյթ, ընդ լկտի սպա//սաւորին և իբր կառավարչին իւրոյ զհակառակն
կամաց մերոց գործեցին՝ չհասից և անկարգութեանց ևս հրամանատուք և
պատճառք լինելով, որոց սակս և մեք յանցեալ ամին զսիրախառն մե-
ղադրանաց և յանդիմանութեան գիր գրեցաք առ նա: Յորմէ հետէ մինչև
ցայժմ դեռևս կար այնպէս: Բայց ի ներկայումս լսեմք, թէ գալոց է ի
սուրբ Աթոռս վասն եպիսկոպոսութեան: Մինչ գայցէ, տեսցուք թէ որպէս
լինիցի:

Զգերապատիւ Պաւլ Սարգէիչ Պօտէմկին զօրապետէն զբարութիւնս
էիր գրեալ, իմացաք և ահա զօրհնութեան թուղթ գրեցաք առ նա, ի պա-
տասխանի սիրաշար և որպխահարց թղթոյն, և յաղագս առ քեզ արա-
րեալ մարդասիրութեանցն ևս զյատուկ շնորհակալութիւնս գրեցաք, զոր-
մէ և զայլոց տիրացու Աւետիքն պատմելոց է: Եւ զհարկաւոր բանսն ի
թղթոյն մերմէ, որ առ նա, ահա ի վերայ կոտր թղթոյ առեալ, յղեցաք
քեզ ի տեսանել և ըստ այնմ շարժիլ, զի մի վնաս ինչ ծնցի մեզ յա-
պա[գ]այն:

Իսկ որ գրես, թէ զթուղթս գրեսցես առ քնէազ Պօտէմկինն և առ այլս,
ահա նոր իսկ եմք գրեալ զգրեանս ընդ տօքտօրին՝ առ նոյն գերաբարձր
իշխանն և առ ազնիւ աղայ Յովաննէսն Եղիազարեան և առ Մանուչարեան
Մարգարն և Փիլիպպոսն, ընդ որս և առ քեզ, որպէս ի վերոյ յիշեցաք:

Այժմ դեռևս զպատասխանի ոչ առեալ ի քէն, կրկնագրելն անպատ-
շաճ համարեցաք, կարծելով ևս թէ ծանր թուի նոցա: Իսկ և ի թուղթն քնէ-
ազ մեծ իշխանին զայս ինչ գրեցաք՝ յայնժամ թէ վասն օգտից և հար-
կաւորութեանց մերոց, զոր ինչ ծանուցեն ձեզ Յովսէփ արքեպիսկո-
պոսն և աղայ Յովաննէսն և տօքտօր Նակօրն, խնդրեմ լսել և հոգ տա-
նիլ, զոր և ի թղթոջ քոյին զեկուցաք:

Նաև գրեալ ես, թէ ես խնդրեալ եմ, ի զօրապետէն վասն իմ հրաման
խնդրել ի պայծառափայլէն, յառաջ քան զինքն գալ ի սուրբ գահդ: Դու
ևս խնդրեսցես, առ որ իմա, զի մեք յառաջ խնդրեցաք զսիրելիդ մեր
289 առաքել//ի մեծն Պօլիս, իսկ դու վասն թերակատարութեան առաջադրու-
թեանցդ յամելով և ոմանց ևս ի Պօլսոյ առ մեզ գրելով, թէ նորա մնալն
անդ առ ժամանակ մի լաւ է, զի մի ներհակքն կոտս լայնեսցեն, վասն
որոյ և մեք թոյլ ետուք և գրեցաք առ քեզ, թէ զմի գործն նուիրակութեան
տեղւոյդ ևս կատարեա և գրեա մեզ, զի զմեռոն և զկոնդակ յղեսցուք,
որոյ պատասխանւոյն նայիմք:

Արդ, զքոյդ ևս գրելն զայն ինչ առ զօրապետն անպատեհ վար-
կար, ուր մնաց թէ մեք ևս առ վեհ իշխանն գրեսցուք, քանզի յայտնի իսկ
վրդովման ժամանակի գալդ վնաս մեծ է սրբոյ Աթոռոյս և մնալդ՝ շահ,

զի ո՞ գիտէ, թէ զինչ պատահիցի աստ, և դու յայդր գոլով մերձ առ դոսա,
եթէ զբանս ինչ գրիցեմք, հոգասցես: Ուստի վասն քոյդ գալոյ ոչ ումեք
գրեցաք զբան:

Այլև՝ գրեալ էիր, թէ ընդ արցախեցւոյն խօսեցիս կամ զԱւետիքն
յղեսցես[165]: Նա ո՞ւր, մեք ո՞ւր, որպէ՞ս կարեմք խորհրդակցիլ ընդ նմա:
Աւետիքի գնալն ես տարակուսանք բերէր, զի ըստ որում ի ձեռս մերմէ
փոխեցեալ էր յայլ կերպարան, գուցէ վնաս ինչ պատահիցէր, որոյ աղա-
գաւ ինքն ես ոչ յօժարեցայ գնալ:

Յաղագս աղնիւ աղայ Յովաննիսին, որ գրես վասն փութանակի վե-
րադարձուցանելոյս մերոյ զԱւետիքն, ըստ գրելոյ քոյ և այլոց, ոչ կարա-
ցաք գրել ինչ ի կողմանէ նորին:

Եւ որ զգրեանս էիր խնդրեալ, ահա զտասն հատ Տօնացոյցս յղեցաք,
այլ զմիւսն ոչ, զի յորմէ հետէ գնաց Սահակ վարդապետն դէպ ի Պօլիս,
գրատան բանալին առ մեզ է և մեք պաշարեալ ամենակերպ ցաւովք ոչ
եղաք ձեռնհաս ի յորոնել, թէ գո՞ն և թէ ոչ:

Պարոն Եսային զՍաղիմայ չորս հարիւր թումանն հասոյց և մեք
զթամասուկն ետուք իւրեան, այլ զՃԿԱ (161) թումանն ես խնդրեցաք,
ասաց թէ դրամ ոչ ունիմ: Վասն այն գրեմ քեզ, որպէս և իցէ, գոնեա
զայն ՃԿԱ (161) թումանն յղեսցես, զի ի պակասաւորութեան կայ սուրբ
Աթոռս, որպէս և գիտես: Բայց պարոն Եսային վասն առ մեզ յղելոյ ճո-
թիցդ խարճից և քիրայից զհաշիւն ընդ քեզ է տեսանելոյ:

290 Այլև թէպէտ տիրացու Աւետիքն խնդրեաց զսրբա//լոյս մեռոնն և
զկոնդակն նուիրակութեան բերել ընդ ինքեան, բայց մեք ոչ յղեցաք վասն
երկուց պատճառաց. նախ՝ զի կոնդակն չէր ի պատրաստի, և դա փոքր
ընդ փոքր վերադառնայր, և երկրորդ՝ զի յառաջ գրեալ թղթոյն մերոյ առ
քեզ պատասխանւոյն սպասեմք, զի ի գալ թղթոյդ ըստ գրեցելոյդ արաս-
ցուք:

Նաև սոյն երկրացի Թալան Իսրաշու կինն և այլ ընտանիքն դերի
են անկեալ ի վաղուց և ի Ղզլար ազատեցեալք այժմ ի Մօզդօք գոլով, ի
գալն Աւետիքին ընդ նմա գիր էին գրեալ առ Թալանի որդի Շմաւոնն՝
թուղթ առնուլ ի մէնջ ի վերայ զօրապետին ի բերել տալ զինքեանս: Եւ
նա լալագին դիմօք եկեալ առ մեզ, յոյժ թախանձեաց գրել առ զօրա-
պետն[167] վասն ընտանեացն արձակման յայսկոյս: Վասն որոյ և մեք
հարցեալ Աւետիքին, ասաց, թէ դիւրին բան է, փոքր մի յիշումն տուր
ենարալին և նա արձակել տացէ: Ուստի և մեք ի թղթոջն նորա ի կարճոյ
յիշումն արարաք, զոր ի քեզ գրեմք, զի գիտասցես:

Այլև թէպէտ դու ոչ էիր գրեալ ի թուղթսդ, սակայն Աւետիքն ասաց
մեզ, թէ զերկուս քահանայս պարտիմ տանել, յղել ի տեղի Մովսիսին, զի
զնա մերժեցուք, որոց աղագաւ և զբաշբօրթ խնդրեաց: Զոր և մեք գրեալ
անուամբք տէր Աւետիքին և միւսոյն, ետուք իւրեան: Ահա և քեզ ծանուցի
իմանալ:

Իսկ և հարկաւորաբար զայս գիտասջիր, զի սիրելի որդին մեր և
շնորհաստուն զաւակն սրբոյ Աթոռոյս՝ Վարդան խոհեմամիտ վարդապետն,
թէպէտ գիտեմ, զի և քեզ պիտոյ է և ձեռնտու, սակայն մանաւանդապէս
մեզ է պիտանացու այժմ վասն գործոյ իրիք սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ
գրեմ սիրելւոյդ ահա, պարտիս շուտով առաքել զնա առ մեզ, և ի տեղի
նորին, եթէ զայլ ոք խնդրիցես, ուղարկեցից վնրատին հարկեմ, զի մի զանց
առնիցես: Հայրապետական կնիքն ես էհաս, զոր ընկալաք սխալ և

շնորհակալութեամբ: Զթուղթսն նօրօք չկնքելոյ պատճառն այս է, զի ոչ
գիտեն ի վերայ զմոին առնցուցման զկերպն:

Այլ որ գրես, թէ էջմիածնի կաթուղիկոսէն հասարակէ հայրապե-
տաց յատուկ նշան է պիտոյ: Ահա ի նախնեաց հետէ էջմիածնով եմք
պարծեցեալ և պարծիմք, այն մեզ կոտրութիւն չէ, սակայն և ես հար-
կելոց եմք տղայոցն հետևիլ, թերևս կարասցեն քոյդ յղեցելովքն կնքել:

Եւ զայլ ամենայն որպիսութիւնս մեր և սրբոյ Աթոռոյս հանդերձ եր-
կարօրն համառօտ գրեցելոցս, ի հոգևոր որդեկէդ մերմէ՝ Աւետիք սար-
կաւագէդ իմացեալ, լեր ողջ ի Տէր:

Գրեցաւ ի թուոջ կենարարին 1783 ի յապրիլի... և ի լուսաբուղխ
Աթոռս սուրբ էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 286—290

195 750. 1783 թ. 25 ապրիլի—Թուղթ օրհնութեան յերկիրն Ռուսաց
առ Նոր Նախիջևանու ժողովուրդն, ի պատասխանի որպիսածանոյց
թղթոյ իշխանացն և գաւառացն նոցին:

Յորմէ ժամանեցի թուղթ...

Եւ ընդ աստուածային առատապարգև օրհնութեան սիրանիշ թըղ-
թոյս, ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և լուսերամ
զաւակացդ և տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի: Զի որ-
պիսածանոյց և սիրայայտական թուղթ օրհնեալ և քրիստոսասէր պատա-
ւորացդ և իշխանացդ, գրեցեալ ի սոյն թուոյս մարտի 10, ժամանեաց
առ մեզ: Զոր ընկալեալ ընթերցաք զամենայն գրեալս ձեր և հասու եղեալ
196 որպիսութեանց ձերոց՝ // թէև ընդ մարմնականն վշտացաք սրտիւ, սա-
կայն և ընդ զուարճալին յոյժ ուրախացաք, քանզի զկնի զեկուցանելոյն
ձերոյ զհասարակական կոնդակին և զյատկական թղթոց մերոց հասա-
նիլն առ ձեզ, գրեալ էիք զշնորհակալութիւնս զսիրելի և զհոգևոր որդ-
ւոյն մերմէ՝ Յովսէփ յոգնահանճար վարդապետէն և արհիեպիսկոպոսէն
յաղագս բազմաքրուն աշխատութեանցն և ջանակիր հոգածութեանցն՝
ի մխիթարութիւն ձեզ հոգևորապէս: Զորմէ և մեք եղաք շնորհակալ և
օրհնեցաք զնա, որոյ զվաստակսն ընկալցի ի հաճոյս իւր, որ վար-
ձատրիչն է ճշմարիտ բարեգործաց և ինքն միայն հատուցէ զփոխարէնն
երկանց նորին:

Իսկ և ծանուցեալ էիք ի կողմանէ տեղւոյդ չքաւոր խղճալի աղքա-
տացն, թէ յառաջ, վասն զրկեցմանն յընչից իւրեանց, յոյժ ողորմելիք
էին, բայց ապա սակաւ առ սակաւ յառաջանան և յուսամք, թէ զտեղ-
ւոյս զխաղաղութիւնն ունել, այսուհետև լաւ ապրեսցին գիւղացիք և
քաղաքաբնակք: Առ որս կարի սրտագիր եղաք, վասն զի ոչինչ է մեծ
և առաւել ուրախութիւն հարց, քան զլսելն և գիտելն զբարեկարգութեանց
և զլաւութեանց որդւոցն: Ըստ այսմ և ի յիմանալս հոգևոր հայրութեան
մերոյ զբարեկեցութենէ և զշինութենէ հարազատ որդւոցդ հանդերձ
բարի ընթացիւք, լցաք ուրախութեամբ և ցնծացաք ի հոգի և ի մարմին,
գոհանալով զառատախնամէն Աստուծոյ, որ յաջողէ ձեզ զամենայն
յամենայնի: Յորմէ և մեծապաղատ հայցմամբ խնդրեցաք առաջի հրա-
շալի սրբոյ իջման տեղւոյս նորին՝ պարգևել ձեզ զանդորրութիւնս և
զբարեկեցութիւնս զուարճալիս և ապահովականս, որ և ըստ մարդասի-
րութեանն իւրում անճառելւոյ, շնորհեսցէ ձեզ զամենատենչալի խաղա-
ղութիւնն իւր սուրբ, ազատեսցէ զձեզ և զբնակութիւնդ ձեր ի յամենից

197 զիպուածոց չարաց, և պահպա[[նեսցէ միշտ ընդ հովանաւորութեամբ
յաւիտենականի նախախնամութեանն և գթութեանն իւրոյ, և բարեպէս
յաջողեսցէ ձեզ զամենայն շինարարութիւնս և զօգտաւոր կարգադրու-
թիւնս ձեր՝ ի մխիթարութիւն ձեզ փոխանակ տառապակրութեանցն նա-
խանձելոց և ի յուրախութիւն սրտից մերոց:

Այլև գրեալ էիք, թէ տունկք և աղքատքն մեր, և արտաւորքն բա-
զումք են, ուստի և միւսքն օգնելով նոցա, ոչ կարեն յառաջանալ և այլն: Ընդ
որս նախապէս ասեմք, թէ աստուածապետական բարերարութիւնն յայտ
ելցէ նոցա և ողորմեսցի ըստ մեծի ողորմութեանն իւրում: Եւ երկրոր-
դապէս պատուիրեմք կարողացդ և ողորմածացդ, զի ի խնամեյն ձեր
զանկեալսն և զտկարսն մի՛ երբէք ձանձրասջիք և զլուիցիք, այլ զուարթ
երեսօք և ուրախ սրտիւք հոգասջիք զկարիս նոցին, քանզի և պարտա-
կանութիւն իսկ է կարողաց՝ զտկարութիւն տկարացն բառնալ ըստ ա-
ռաքելականն բանի: Մանաւանդ զի և Իմաստունն հոգեհանճար, զողոր-
մութիւնսն առ աղքատս՝ փոխատուութիւն Աստուծոյ վճռէ: Ուրեմն հաս-
տատելով ի միտս ձեր, թէ ամենաբարին Աստուած հատուցանէ գերա-
պատիկօրէն զփոխարէնն ողորմութեանց ձերոց աստ և ի հանդերձելումն,
կացջիք և մնասջիք ի բարեկարգութեանդ ձերում հաստատուն:

Եւ արդ, քանզի հոգեհարփ բաղձանօք խնդրեալ էիք ըստ մեծա-
հաւատութեան ձերում, վասն որոյ և մեք առ ի պարգևել ձեզ զօրհնու-
թիւնս աստուածային և զշնորհս սրբոյ Աթոռոյս, զայս օրհնաձիր նամակս
մեր գրեցաք ի վերայ հասարակութեանդ՝ առ ի հոգևոր մխիթարութիւն
ձեզ, որով և զայս պատուիրեմ վերջապէս սիրելի և հոգևոր որդւոցդ
մերոց, զի որպէս ահա ձեզէն խոստանայք զբարւոք կառավարութիւնդ
և զկարգադրութիւնդ և զկանոնսդ, զորս ունիք ի ձեզ՝ հաստատուն
պահել, ըստ գրեցելոյ խոստման ձերոյ արասջիք:

Ողջ լերուք ի Տէր և յանձնեցեալք ի բարեգթութիւնս նորին, և հոգե-
զուարճ շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ամենեսեանսդ հանապազ:
Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783), և ի յապրիլի ԻԵ (25):

Ձեռ. № 2803, էջ 195—197

182 **751. 1783 թ. 25 ապրիլի**—*Թուղթ առ Ռուսաց երկրի մերազ-
նէիցն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի ի
ՌՄԼԲ (1783) թուոյն և ի մարտի ամսեանն գրեալ թղթոյ նորին:*

Յոմէ անխարդախ սիրով և փրկչանուէր սուրբ ողջունիւ ծանուցումն
լիցի հոգևորի որդւոյդ մերոյ, անխառն և սուրբ սիրով սիրեցելոյ և հա-
ւատարիմ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածաբան վարդապե-
տիդ: Զի թուղթդ ի սոյն թուոյս մարտի ամսեանն գրեալ, հանդերձ նա-
խիջևանցւոց թղթովն, էհաս, զոր ընթերցեալ վերծանեցաք զհամայն
բարեշար և հարազատական գրուածդ: Բայց նախապէս հոգևոր որդին
մեր՝ տիրացու Աւետիքն եկն և մեք, առ հարկին պահանջելոյ, ըստ որում
բաց ի քէն արքայն Հերակլ՝ հանդերձ որդւովն ևս էին ուրոյն ուրոյն
թղթով ստիպեալ փոյթ ընդ փոյթ վերադարձուցանել զնա, ճեպեցաք յոյժ
և միայն առ քեզ և առ զօրապետն զթուղթս գրեալ, շեշտակի յետս ուղևո-
րեցաք զտիրացու Աւետիսն ի յապրիլի ամսոյս Ը(8), յղելով ընդ նմին և
զօրինակն առ զօրապետն գրեալ թղթոյն մերոյ առ քեզ:

Ապա յետին թուղթքս յապրիլի Ժ(10) հասին առ մեզ ընդ ձեռնաս
Շաքարօյին, որոց պահարանի երեսն թէպէտ առ Աւետիքն էր գրեցեալ,

սակայն Շաքարօն ասաց, թէ «Տօրտօրն ասուզի ասաց՝ այս հոգևոր տիրի
գրեանց պատասխանիքն են»: Վասն որոյ և մեք խորհեալ, թէ մինչ զայս
պահարանս դարձուցանիցեմք ի Թիֆլիզ, կարի յամելոց է մինչև զիրկին
դառնալն առ մեզ և մեզ առիթ լինելոց ստորիկ մտատանջութեան, անտ-
րատ մտօք բացի զպահարանն ես՝ միայնակ, առաջի Գալուստ և Մկրտիչ
վարդապետացն և Շաքարօյին, զիմն հանի և որք առ Աւետիսն էին գրե-
ցեալք՝ երկոքեանն պահարանեալ և կնքեալ էին և մինն առանց պահա-
183 րանի: Որոց զերկուս պահարանեալսն կնքովքն իւրեանց անլոյծ և զմիւ[[
բացն, բնաւին ոչ ումեք ցուցեալ, վերստին պահարանեալ յղեցաք առ
տիրացու Աւետիսն: Լեր միամիտ:

Գոյր թուղթ մի ևս ի վերայ Պետրոս վարդապետին: Ուղարկեցաք առ
նա ի Կարին, զի մինչդեռ Աւետիքն ևս աստ էր, առաքեցաք զնա ի յա-
ռաջնորդութիւն Կարնոյ:

Եկեսցուք ի քաղցրաշար գրեալդ սրտագիրիդ:

Գրես, թէ լուր քաղցրութեամբ զպատասխանիս գրեցելոցդ և տուր ինձ
զիրաւունս և այլն: Լուայ, ընթերցայ և ի միտ առի լաւապէս, բայց իրա-
ւունք առնելոյ ժամանակ խնդրի: Եւ այն հէտ լինի ժամանակ զիրաւունս
առնելոյ, մինչ Աստուծով բարեաւ և խաղաղութեամբ եկեալ իցես ի սուրբ
գահս և առանձնօրէն ես և դու, երես առ երես և բերան առ բերան խօսեսցուք
ընդ միմեանս: Գիտես և զայս, զի որքան հարկաւոր թուղթք գրին ի սրբոյ
Աթոռոյս, նոցին օրինակքն մնան աստէն, բայց առ մեզ գրեցեալքն ևս
կան ամբողջ. յորս զինչ և գրեալ ես չեն լոկ ասութիւնք լեզուի ցնդեալք
ընդ օդս, այլ գրութիւնք պատկերացեալք: Առ այնս ևս նկատելով յայն-
ժամ տեսցուք, թէ յերկաքանչիւրցս յորո՞յ կողմն է իրաւունքն, և զկնի ի
բաց թողցուք զամենայն արժանիսն մոռացութեան և դարձեալ զհայրենի
հաստարմատ և զորդիական սիրոյն բուռն հարցուք գնալով ընդ շաւիղս
նորա:

Այժմ ի բացուստ զի՞նչ իրաւունս տացից և կամ զի՞նչ ևս գրեցից,
մինչ գրեցելոցս ընկալայ զանհեթեթ պատասխանիս, որք ըստ մեծի բաժ-
նին չեն իսկ պատասխանիք սիրամած և ուղղամիտ բանից մերոց: Ի յո-
գունցն զսակաւս յիշեցից ի կարճոյ, զի՞նչ յարցեաք առ քեզ՝ գրելով
զկրկին թէականս զայս բան, թէ եթէ վասն որբալոյս մեռոնի և կոնդակի
կարիցես յղել զՎարդան վարդապետն կամ զԱւետիսն, եթէ ընդ առա-
քեցելոյդ զյիշատակիս և զայլ ծանրութիւնդ յղիցես, բարւոք առնես, որ
առեալ դու զայս ի ծայր մատինդ գրեալ ես երկարապէս զկամեցեալդ
անխնայօրէն: Մինչ ճշմարտօրէն եղեր ընկալուչ բանից մերոց, զի՞արդ
184 և ո՛չ զհետևեալն // ի միտ առեր, թէ եթէ ոչ կարիցես յղել զմին ի դոցունց,
ապա գրեա մեզ, զի միով արեգակի յղեսցուք զմեռոնն և զկոնդակն և
այլն:

Ո՞վ յառեաց զաչս ի բոյդ յամենայնի կարօտաբար զմեզ դաղափարդ
ես, թէ յայնքան ամսն ընդէ՞ր ոչ յղէիր և այլն: Պարտ է քեզ զայնց խօսիլ,
որոց քաջագէտ իցես և ոչ աւելորդաբանել: Ուրեմն ի գիտողացն թէև
սակաւքն փոխեցեալք են, այլ բազումքն կան դեռևս ի նոցունց, լաւապէս
հասու լեր, թէ ջանացա՞յ բազմիցս յղել, կամ թէ ցանդ տենչայի դիմել
ի մայրս, թէ ոչ, և մինչ զկատարեալն ծանիցես, ապա տուր ի գիր: Ինձ
անպատկան է ինքնագովութիւն, այլ այնց ևեթ, որք են ի նմանութեան
Պօղոսի: [Այլ արդ, ոչ վայել էր քեզ յառաջ և յետոյ զայդքան աւելորդա-

* Փակագծերի մեջ վերցված նախադասությունը բնագրում ջնջված է:

թիւն ամենահամ բանից յաւելորդաց գրել առ մեզ՝ չպահելով զպատիւ սրբոյ Աթոռոյս և մեր]*։

Ի յոգնահոյլ պարկեշտ բանիցդ մին ես այս, որ գրես, թէ ձեզ վայելուչ էր առաւել նախ շնորհ ինչ երևեցուցանել առ մեզ և ապա ի մէնջ շնորհակալութիւն ընդունիլ։ Յորմէ ցուցանի, թէ մեք զընծայս պարտ էաք յղել քեզ և դու թղթով զշնորհակալութիւնս առնիցէիր, թէ շնորհակալ եմ, շէն կենաս։

Արդ, եթէ զընծայս յայդր յղէաք, ապա ի գալդ զի՞նչ մեծարանս պարտիմք առնել քեզ։ Օտարաց, պատրիարգաց և առաջնորդաց երբեմն յԱթոռոյս ընծայիկք յղեցեալք են ընդ նուիրակաց ի բարեպէս յառաջացումն գործոյն, բայց մտերիմ զաւակաց սրբոյ Աթոռոյս նուիրակաց և առաջնորդաց՝ ոչ։ Զոր օրինակ, լուսահոգի Աբրահամ վարդապետն ի Զմիւռին էր նուիրակ և առաջնորդ, և հոգելոյսն մեր ես ի Պօլիս էր նուիրակ, մինչ երանեալ Յակոբ կաթուղիկոսն կարգեցաւ ի հայրապետութիւն ի հեռուստ ոչ երբէք յղեաց նոցա զընծայս, այլ նոքա ի սուրբ Աթոռս եկեալ մեծարեցան խիլայիւք և պարգևօք։ Եւ մինչ յամս երկոտասան մնացաք մեք ի Զմիւռին, որպէս գրեսդ և երկիցս երջանիկ հայրապետն
185 մեր զկոնդակ վերանորոգութեան և զսրբալոյս // մեռոն առաքեաց, մի՞թէ զի՞ր ինչ ընծայ յղեաց և կամ թէ մեք անցուցա՞ք ընդ միտս մեր։ Բայց ի գալն մեր՝ ի վեր քան զարժանն իմ մեծարեաց թէ խիլաիւք և թէ բանիւք, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ։ Մեք ևս ոչ պարտիմք ի շաւղաց երանելի նախնեացն խոտորիլ։

Այլ եթէ դու զքեզ քան զառաջինսն գերազանց գնիցես, մեք անկար գտանիմք առ ի շահել զքեզ, [Սակայն եղև այս, զի Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետն աղաչանօք գրեալ էր մեզ, թէ զգաւազան և զփիլոն չունիմ, ասա ոչ գաւազան շինօղ գոյ և ոչ պատշաճաւոր կտոր վասն փիլոնի, մանաւանդ աղքատ եմ, զգաւազան և զփիլոն մի շնորհես։ Եւ մեք յաղքատութիւնն գթացեալ, զերեսս ոսկրախնձոր գաւազան մի և զկիսամաշ փիլոն ի վարդապետութեանս ժամանակէ յղեցի նմա՝ ոչ ի փառս, այլ ի ծածկոյթ չքաւորութեանն յաչս ժողովրդեանն։ Մի՞թէ և դու կարօտ ես այնպիսեաց չնչին իրաց]*։ Զի և ի քէն է վկայեալ ծառայիցդ իսկ սակս զօրիդոլ հարուստ, քան զնուիրակութիւնսն։ Նաև թուի, թէ ոչ պահես զօրինակս գրեցելոցդ, զի եթէ ունէիր, ոչ գրէիր զհակասութիւնս՝ զոմանս առ հիւսիս և զոմանս առ յարեմուտս։ Այլ որպէս և գրեսդ, թէ որ ինչ լեալ է ի սրտի իմում, գրեալ եմ յիրաւի, որ ինչ անցանի ընդ սիրտդ, զոր լեզուաւ ևս չէ արտաքերելի, արձանագրուցանես ի թղթի՝ թարց շրջահայեցութեան։

Ի կողմանէ Պօլսոյ, որ զգեղեցիկս բարբառիս, մեք ըստ մեծի մասին քոյդ գրեցելոցն և ըստ ի Պօլսոյ թղթոցն և յայլրուստ ոմանց թղթոցն, զորս դու առաքեցեր առ մեզ, պատշաճ վարկաք, որ յայդր զգործ միոյ նուիրակութեան ևս կատարեսցես, իբր զի իշխանքն տեղւոյդ ևս շահիցին։ Մանաւանդ զի առ ներկայիս համբաւն մնալդ օգտաւոր համարէաք, քան զգալդ, որպէս և ընդ Աւետիքին գրեալ եմք։ Իսկ զկնի աւարտման գործոյն
186 եկեսցես ի սուրբ Աթոռս և ապա // երթիցես ի Պօլիս։ Մի՞թէ Պօլիս ի տեղւոյն փախչի և կամ գնացօղքն, թէ անդ և թէ ի Զմիւռին, պոռնի՞կք են, որ ոչ կամիս գնալ ի տեղի նոցին, որպէս գրեսդ։ Մեք զամենեսեանդ համակարգ տեսանեմք, իսկ դու յորժամ և երթիցես, յայնժամ կարօղ ես առնել

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է։

անդ ես, զոր ինչ բարեկարգութիւնս ունիս ի մտի։ Այլև ընդէ՞ր վրդովիս և վիրաւորեալ գրես զայլ և այլս։

Եւ զո՞ր գրես, թէ ի զատափետչացն մերոց և այլն։ Գիտասջիր, զի այնք ոչ են քեզ թշնամիք, այլ սրտացաւ բարեկամք։ Մեք ևս շնորհիւ կոչողին զմեզ ի յայս, ոչ եմք այլովք և հետեօղ փառասիրութեան շողոքորթաց ով ոք և իցեն, այլ զոր ինչ առնեմք՝ ի վերնոյն տնօրէնութենէ և բարեմտութեամբ։

Այլ արդ, սիրելիդ իմ, ոչ վայել էր քեզ յառաջ և յետոյ զայդքան ամենահամ բանս յաւելորդաց գրել առ մեզ՝ չպահելով զպատիւ սրբոյ Աթոռոյս և մեր, բայց արարեր։ Իսկ մեք ևս, եթէ իւրաքանչիւրոցդ բանից պատասխանէաք, այլ իմն լինիւր և համանմանութիւն երևիւր (թէև կարծիցես, թէ ոչ գոն շաղաշարացդ զօրեղ անդրադարձք)։ Վասն որոյ զհամայն գրեալսդ ի վիրաւորեցելոյ սրտէ վարկաք և հայրական գթով զանց արարաք։ Միայն թէ սակաւուցն ի նոցունց զպատասխանիս առնելով, զայնս ևս ի սիրոյ, եթէ ողջամտութեամբ ընթերցցիս և ի միտ առնուցուս։

Իսկ արդ, վերջ տուեալ այնպիսեացն, զայս գրեմ ահա ճշմարտիւ սիրով առ սիրելիդ իմ։ Գրես, թէ աղաչեմ կալ զիս հրաժարեալ յամենայն գործոց սրբոյ Աթոռոյդ և այլն։ Ես ի հաստատ սիրոյ իմ բնականէ ոչ բնաւ թելադրիմ հրաժարեցուցանել զքեզ ի գործոց սրբոյ Աթոռոյս և ոչ կամիմ զզօրացուցիչ անուն սորա վերացուցանել ի քէն՝ գիտելով զքեզ ի բնէ հոգևոր և սիրելի որդի իմ, կաթնասուն զաւակ սրբոյ գահիս և սորին
187 շնորհօքն զարգացեալ և բարգաւաճեալ և ըստ կարեաց // քոց զաշխատանս կրեալ։

Ասես հանգոյն Աբրահամու վարդապետին լուսահոգւոյ հեռանալ, այնպիսի վեհաշնորհ անձն, որ ոչ հայեցեալ ի կամս երջանիկ հայրապետին մերոյ, ի բաց եկաց, ոչ սորջացա՞ւ, դու ևս գիտես։ Նոյնպէս և դու եթէ մերժիցիս, առաւել ես զղջանալոց ես։ Ապաքէն ընտրեսցես զօգուտն քո ըստ հոգւոյդ և ըստ մարմնոյդ։

Ահա, զգուշացուցեալ զսիրելի որդիդ իմ ի վնասակարացդ, ի վերջոյ զայս գրեմ, եթէ սիրով և ըղձի զսրբալոյս մեռոն և զկոնդակ խնդրիցես, յուղարկելոց եմ՝ առ ի կատարել շատով յայդր զմի գործ ևս նուիրակութեան և գալ ի սուրբ Աթոռս, զի մի լիցի իբրև զառաջինն։ Իսկ եթէ ոչ կամիցիս և ոչ խնդրիցես, որպէս գրեսդ, ոչ առ քեզ եմք յղելոց և ոչ զայլ ոք առաքելոց։ Յայսքան ժամանակ մնաց, թող և ևս մնասցէ։ Սուրբ Աթոռս, որպէս և լեալ է, կառավարեցեալ է, յայսմհետէ ևս Տեառն շնորհիւ կառավարելոց է, մինչև տեսցուք, թէ նոյն ինքն Տէր զի՞նչ իցէ տնօրինելոց։

Ահա ի պատասխանի նախիջևանցւոց թղթոյն զօրհնութեան և զմխիթարութեան կոնդակ մի գրեալ ի վերայ հասարակութեանն, ընդ սոյն թղթոյս առաքեցաք ի քեզ, զոր տացես նոցա։

Լեր ողջ ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուոջս մերում ի յապրիլի ԻԵ (25) և ի սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 182—187

198 752. 1783 թ. 30 ապրիլի—Թուղթ ի Թիֆլիզ առ պօլկովնիկ Եակուբն, ի պատասխանի յապրիլի ԺԹ (19) գրեալ թղթոյն, որով ծանուցեալ էր զԻսրայէլ կաթուղիկոսն հանել տալն ի Հախպատու և խնդրեալ էր զՊետրոս պետն առաքել անդ առաջնորդ, որում շնորհակալութիւն գրեցաւ և վասն Պետրոս պետին բացասութիւն, զի ասա չէր և թէ թեմացիքն մահ-

տարաւ խնդրեսցեն զով ոք և կամին, և մեք յղեսցուք և այլս բան։
Յորմէ ժամանեսցի թուղթ…
Եւ ընդ աստուածային օրհնութեան ողջունամատոյց նամակիս ծա-
նուցումն լիցի սառոյց սիրելւոյդ մերոյ և մտերիմ բարեկամիդ որբոյ Աթո-
ռոյս Էջմիածնի։ Չի ժամանեաց առ մեզ թուղթդ որդիաբարոյակն, հան-
դերձ թղթով մեծազօր արքային, և ընթերցեալ հասու եղաք ամենայն
գրեցելոցդ, որովք և ծանեաք զկատարեալ հարազատութիւնդ և զմե-
ծաջան օգտակարութիւնդ առ մեզ և առ սուրբ Աթոռս, զորս և ի թղթոյ
օրհնեալ արքային ևս իմացաք և յոլովագոյն շնորհակալութեամբ օրհնե-
ցաք զանկեղծ և զանխարդախ սիրելիդ մեր, զոր ամենաբ[ար]երարն Աս-
տուած օրհնեսցէ և զօրացուսցէ, կարողացուսցէ ի յամենայն իրս բարիս
և հատուսցէ քեզ զվարձս բազմապատիկս ընդ ճշմարիտ բարեգործաց և
սիրելեացն իւրոց։
Արդ, գրեալ էիր զպատշաճաւոր ումն վարդապետ առաջնորդ յուղար-
199 կել վասն Հախպատու, զոր բարեսէր արքայն ևս էր գրեալ։ // Եւ դարձեալ
խնդրեալ էիր, զի զՊետրոս վարդապետն առաքեսցուք, բայց նա ոչ է
աստ, զի յառաջ քան զբազում աւուրս յղեցաք զնա ի Կարին առաջնորդ։
Սակայն եթէ աստ ևս գտանիցիր և յղիցէաք, անօգուտ էր լինելոց, վասն
զի կարի անպատշաճ էր ըստ տեղւոյդ և ոչ կարէր վարել ընդ դոսա՝ շար-
ժիլով ըստ իւրաքանչիւրցն վայելման։
Այլև արդ, սիրելիդ իմ, որպէս և ի թղթոյ արքային գրեալ եմ, քումդ
խոհեմութեան ևս ծանուցանեմ ահա, քանզի առաջնորդն վանից և վիճա-
կի իւիք ոչ է պարտ լինիլ առանց ընտրութեան և հաւանութեան թեմաբնա-
կացն։ Վասն այսր պատճառի, եթէ մեք մեղէն զվարդապետ ոք յղէաք
առաջնորդ Հախպատու, կարելի էր թէ ի վիճակայինս նորա գժտութիւն
և տարաձայնութիւն երևիր։ Ուստի անպատկան համարիմք թարց նոցին
գիտութեանն առնել։ Ապաքէն նորա եթէ ի յայդր եղելոց վարդապետաց
և թէ ի միաբանից սրբոյ Աթոռոյս, զով ոք և պատշաճ վարկանիցին, ընտ-
րեսցեն համակամութեամբ և իմաց արասցեն մեծի արքային և բազմակնիք
մահսարաւ խնդրեսցեն ի մէնջ հաւանեցեալն յինքեանց կարգել առաջ-
նորդ, զի և մեք յայնժամ ըստ կամեցողութեան քրիստոսազօր արքային
և Ձեր և ըստ հաճութեան նոցին արասցուք։
Իսկ որ գրեալ էիր վնորանց իրակութեանդ որդիութիւն զեկուցանել
յերկիրն Ռուսաց Յովսէփ վարդապետին մերոյ՝ զգոյշ լինիլ առ ի չառնել
մուտս նորա և կամ նորայնոցն, բարւոք էիր գրեալ։ Բայց մեք ի մերձ
աւուրս թուղթ գրեցաք առ Յովսէփ վարդապետն, զոր և ընդ ձեռնատ
Շաքարոյին յղեցաք յայդր, զի թէ նորին սպասաւորն դեռ յայդր լինիցի,
նա տարցի, և թէ ոչ, այլովք յղեսցի։ Այժմ անձեռնհաս եմք նորապէս
գիր գրել առ նա, իսկ սպասաւորն նորին ի քաղաքդ գոլով և տեսանելով
զիրակութիւնն, ի հարկէ, ի գնալն ասելոց է նմա. մինչ մեք ևս ապա ի
ձեռնհաս ժամու գրեսցուք նմա որ ինչ ի դէպն է։ Նաև ըստ գրեցելոյ օրհ-
200 նեցելոյդ, ահա առ սիրելին մեր Բէկբաբէկեան // պարոն Սուլխան Դիւա-
նըն վասն ջատագովութեանցն և հարազատութեանցն զշնորհակալութեան
և զօրհնութեան թուղթ գրեցաք, զոր և ընդ թղթոյս առ քեզ յղեցաք՝ տալ
նմա։ Եւ զայլ ինչ ևս, զոր գրեալ էիր, մնասցէ յայլում ժամու տեսանել։
Իսկ ի վերջոյ զայս ունիմ խնդրել յաղնուութենէդ, զի զանխառն սէրդ
և զկատակական հաւատարմութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ անպա-
կաս ունիցիս, գրելով և զթուղթս սիրարծարծս և որդիածանոյցս՝ ի
մխիթարութիւն վշտակրութեանս մերոյ։

Ողջ լեր ի Տէր և յանձնեալ ի խնամս նորին յարաժամ, Ամէն։
ի ՌՄԼԲ (1783) և ի յապրիլի ել։

Ձեռ. № 2803, էջ 198—200

295 753. 1783 թ. ապրիլ—Թուղթ առ Հերակլ արքայն Վրաց, ի պատաս-
խանի նորին թղթոյն, զոր գրեալ էր, թէ աստի մի ուրուք խօսք և բան
քան զիմն յառաջասցի առ ձեզ և այլն, և ծանուցեալ էր զԳեանջայու
Իսրայէլ կաթուղիկոսն հանելն ի Հախպատու և յղելն ի Գեանջա։ Եւ վասն
Հախպատու և զառաջնորդ էր խնդրեալ։

Յորմէ ժամանեսցի…
Եւ ընդ աստուածապարգև օրհնութեան ողջունամատոյց նամակիս
ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում, զի գրեալն ի քէն թուղթ
ձեռամբ ծառային քոյ՝ մէլիք Շաքարոյին[168] էհաս առ մեզ, զոր և ընթեր-
ցեալ իմացաք զամենայն ի նմա գրեցեալսն, որք էին արդարև բանք խո-
կական սիրանշանք և ստուգաբար բարեկամացոյցք, և կատարեալ հաւա-
տարմայայտք, և ծանուցիչք վքոյոցդ առ մեզ լաւութեանց։ Ընդ որս յոյժ
յոյժ ուրախացեալ գոհացաք զմեծութենէդ ձերմէ՝ հանդերձ օրհնութեամբ։
Այլ որ գրես զբարեբարութեանց քոց առ մեզ և առ մերազնեայս՝ եկե-
ղեցականս և աշխարհականս, այլոց վկայութեամբ իմանալ և ստուգել և
296 այլն։ // Մեզ չէ ինչ պիտոյ այլոց վկայելն, զի մեք ի բնէ գիտեմք և առ
արդեանս անձամբ իսկ ընդունիմք զբարութիւնս, զքաղցրութիւնս և զմխի-
թարութիւնս ի քէն։ Իսկ որ գրես, թէ մի ուրուք աստի բանն քան զմերս
յառաջասցի առ ձեզ և այլն, յոյժ բարի է և ըստ օրինի հրաման։
Առ որ ծանիցէ տէրութիւն քո, զի յիրաւի վքոյդ բանսն և զհրամանսն
օգտաւոր վարկուցեալ, տասնապատիկ առաւել սիրով և պատուով ի վե-
րայ աչաց և գլխոց մերոց ընդունիմք և ընդունելոց եմք, քան զայլոցն
(ըստ որում անշահ և անհամեստ ևս է զաստուածակացոյցն նախապատիւ
թողուլ և զյետնոցն բուռն հարկանել), քանզի մեր եթէ բիւր բարեկամք
իցեն յայդր, ոչինչ կարեն օգնել մեզ, թարց քոյինդ քաղցր ակնարկու-
թեան։ Այլ որ ինչ օգտութիւնք լինին մեզ յայդրուստ ի քումմէ առ մեզ
ողորմաշատութենէդ յառաջանան։
Ուստի և զքեզ գիտեմք և ճանաչեմք գլխաւորագոյն հաւատարիմ օգ-
նական և խնամարկու սրբոյ Աթոռոյս և մեզ, մերայնոցն և երկրիս մերոյ,
որ ամենագիտին Աստուծոյ ևս յայտնի է։ Զոր և երախտագիտաբար ի
պատկանաւոր տեղիս գրեալ եմք և գրեմք։ Եւ զի ի վարդապետութեանս
ժամանակին քանիցս ներկայացեալ եմք առաջի օրհնեցելոյ արքայիդ և
խոստակցեալ, թէրևս և քոյդ զօրեղ խոհականութիւն նկատեալ իցէ զհա-
ւատարմութիւն մեր առ ձեզ և զսէր ճշմարիտ։
Նաև ի կողմանէ Իսրայէլ կաթուղիկոսին զինչ և գրեալ էիր, իմա-
ցաք։ Առ այնս ևս զայս իմասջիր, զի նա յիրաւի ի տաճկաց փախստական
եկն առ մեծութիւն ձեր և օրհնեալ արքայդ ընկալար զնա ըստ գթառատ
բարուցդ և Հախպատու առաջնորդ կացուցեր ի կենդանութեան հոգելոյս
հայրապետին մերոյ՝ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին՝ այնու
պայմանաւ, զի զպաշտօն արքեպիսկոպոսի կատարեսցէ և ոչ զգործ կա-
թուղիկոսի։
Եւ երջանիկ հայրապետին մերոյ զայս եղանակ նշմարելով բանին,
ոչինչ գրեաց առ մեծութիւն ձեր, մանաւանդ զի օրհասն մահու ևս կանուխ
ժամանեալ, ոչ եղև նորա երկար միջոց, այլ փոխեցաւ ի կենաց աստի։
297 Ապա ի կարգիլս մեր ի յայս աստիճան, մինչ զապօրէն բանս // ոչ լսէաք

24—815

ղնմանէ, քանիցս սիրով թուղթս գրեցաք նմա և նա՝ մեզ: Բայց յոր-
ժամ սկսաւ ի կաթուղիկոսական գործս ձեռնամխել ի յօրհնեցելումդ վի-
ճակի և հասարակաց զգայթակղութիւն տատարել, կարի վիրաւորէաք:
Սակայն դեռևս առ մեծութիւն ձեր գրան ոչ գրէաք, որպէս գրես, այլ
ապա մինչ առ յաստուածուստ շարժելով, օրհնեալ արքայդ արգելեր զնա
ի կաթուղիկոսական գործոցն յատուկ հրամանագրով: Յայնժամ և մեք,
ի լսելն մեր վստահացեալ ի ճշմարտասիրութիւն քո, գրեցաք զթուղթ
աղերսանաց առ քեզ առ ի բնաւին վերացուցանել ի միջոյ զգայթակղու-
թիւնն և զառիթն նորին: Որ և խոնարհեալ բարձրութեան քոյին ի հայ-
ցուածս մեր՝ տուեալ ես զկատարումն նմին: Ընդ որ յոյժ առաւելապէս
շնորհակալեցաք զաստուածասէր և իրաւախոհ արքայէդ մեծէ և առաջի
իջման տեղւոյս Քրիստոսի խնդրեցաք ի նմանէ՝ տալ քեզ զերկարութիւն
կենաց և զուրախութիւնս հոգեղուարճս, և զազատութիւն ի ձախորդու-
թեանց: Որ և օրհնեսցէ զքեզ անեզրական օրհնութեամբն իւրով և զօրա-
ցուսցէ միշտ՝ հանդերձ համայն արքայազուն որդովքդ և բոլոր ընտա-
նեօքդ, փրկեսցէ յարկածից չարաց, պահեսցէ ի գթութիւնս և յողորմու-
թիւնս իւր:

Այլև յաղագս Հախպատու վանիցն յեպիսկոպոս ումն առաջնորդ ա-
ռաքել հրամայես՝ գրելով, թէ գիտուն, խոնարհ և բարի քաղաքավոր լիցի
և այլն: Ընդ այդ ես լուիցէ պատուականութիւն ձեր, զի որպէս և յառա-
ջին թղթոջն մերում գրեալ եմք վասն իրիք պատճառի առաջնորդն վանից
և կամ վիճակի ինչ, պարտի վիճակայնոց ընտրութեամբն և հաւանու-
թեամբն լինիլ: Վասն որոյ եթէ թարց ընտրութեան և համահաճութեան
Հախպատու վանից թեմականաց, մեք մեզէն զոք յղիցեմք անդ առաջ-
նորդ, կարելի է թէ տարաձայնութիւն լինիցի: Ուրեմն ինքեանք թէ յայդր
եղեալ վարդապետաց, և թէ ի միաբանից սրբոյ Աթոռոյս, որում և հաւա-
նիցին, ծանուսցեն մեծի արքայիդ և բազմակնիք թղթով խնդրեսցեն ի
298 մէնջ զընտրեցեալն ինքեանց կարգել // առաջնորդ, զի և մեք յայնժամ
ըստ հրամանի քում և ըստ հաճութեան նոցին արասցուք:

Իսկ Աբրահամ վարդապետն, զոր սիրոյ թղթովդ յղեալ ես ի ձեռ-
նադրել եպիսկոպոս, զոր և ունիմք ի սէր մեր և պարտիմք ձեռնադրել ի
պատեհ ժամու: Եթէ կրկին զսա խնդրիցեն և տէրութիւն ձեր ևս կամիցի,
իմացս տացի մեզ, զի եթէ ինքն ևս հաճիցի ի վերայ Հախպատու, ձեռնա-
դրեսցուք զսա: Բայց թէ ոչ, զինչ վարդապետ և ընտրիցեն, զայն խնդրե-
ցեն միաբանութեամբ, զոր և մեք առաջնորդ կացուսցուք նոցա, որպէս ի
վերոյ յիշեցաք:

Ապա և զԱբրահամ վարդապետս ձեռնադրելոց եմք եպիսկոպոս՝ ի
յառաջնորդութիւն Սանահնոյ և յղելոց անդ ըստ գրեցելոյ օրհնեալ ար-
քայիդ:

Ողջ լեր ի Տէր, յանձնեցեալ ի շնորհս նորին և պահպանեցեալ խա-
չիւն սրբով ընդ քոյայնոցն ամենեցուն: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) և ի յապրիլի[169]...:

Ձեռ. № 2803, էջ 295—298

754. 1783 թ. մայիս—Թուղթ ի Խոյ առ արապկերցի, արզրումցի և
վանցի վաճառականսն, որք զբազմակնիք թուղթ էին գրեալ՝ խնդրելով
առ ի բանադրել և պատժել զանդրէն եղեալ զՌափայէլ և զՅակոբ անի-
ծեալ ախթարմայսն, որք կամէին յայլս ևս սերմանել զչար աղանդն իւ-
րեանց:

Ձեռ. № 2803, էջ 200—201

755. 1783 թ. 10 մայիսի—Թուղթ ի մեծն Պօլիս առ Մուրատեան Յա-
կոբ ամիրայն, ի պատասխանի նորին ի մարտի 22 գրեալ թղթոյն, որ և
զսրբոյ Աթոռոյս վախում տանց զաւթարն (որոց միթավէլի էր) և
արդեանց եկամտից հաշիւն գրեալ և ծանուցեալ էր:

Ձեռ. № 2803, էջ 201—203

756. 1783 թ. 18 մայիսի—Ի Թիֆլիզ առ պօլկովնիկ Եակուբն, ի պա-
տասխանի նորին Բ(2) թղթոցն, զորս գրեալ էր առ սրբազանն ի պա-
տասխանի սորին յապրիլի գրեալ թղթոյն, որ է ի ... (198—200) երեսն:
Եւ զի գրեալ էր սրբազանն, թէ Հախպատու առաջնորդն ի թեմականացն
պարտի ընտրիլ և մահսարաւ նոցին խնդրիլ, գրէ սա, թէ կարծելով թէ
զայդ յարքայի թուղթն ևս իցես գրեալ, չետու արքային, դեռևս առ իս է և
այլն: Եւ թէ զՄինաս վարդապետն Պօլսոյ նուիրակ ի գալն շուտով յղես-
ցես: Առ որս բանք և պատասխանիք:

Ձեռ. № 2803, էջ 300—304

304 757. 1783 թ. մայիս—Թուղթ Թիֆլիզ առ արքայն Վրաց Հերակլ, ի
պատասխանի տաճկերէն թղթոյն, զոր ընդ Ալիխան ծառային իւրոյ գրեալ
էր առ սրբազանն, զի գրեսցէ ի մեծն Պօլիս և ԳՃ (300) թումանի թուղթ
առնուլ տուեալ, բերել տացէ վասն տպելի գրոց ի նոր տպարանի նորին,
որ և զԳՃ (300) թումանի բարաթագիր էր գրեալ առ Ջաղատենց Ստե-
փանն՝ հասուցանել զնոյն դրամն սրբազանին:

Յորմէ ճշմարիտ սիրով և կարօտի, աստուածային առատաձիր օրհ-
նութեամբ և սուրբ ողջունիւ, պահպանողական զօրութեամբ փրկաւէթ
305 խաչին քրիստոսեան և նոյնափչի // սրբոյ տեղւոյս շնորհիւն, ծանուցումն
լիցի գերյարգոյի և ազնուազունի սիրելւոյդ և բաղձալւոյդ մերոյ և հաւա-
տարմագոյն բարեկամիդ սրբոյ Աթոռոյս, բարեպաշտի, քրիստոսասիրի
և նոյնապսակի մեծի արքայիդ Հերակլայ:

Զի թուղթ մեծութեան ձերոյ, տաճկերէն գրեցեալ, հանդերձ ԳՃ (300)
թումանի բարաթագրովն, որ առ Ջաղատենց Ստեփանն, էհաս առ մեզ
ձեռամբ ծառային քոյ Ալիխանին և իմացաք զգրեալսդ[170]: Հրամայեալ
էիր, թէ զԳՃ (300) թուման յայդր ի Ստեփանէն առցես և գրեսցես ի մեծն
Պօլիս, որ այնքան դրամի թուղթ առնուցուն վասն տպագրութեան և
յղեսցեն մինչ ի Կարին և այլն: Եւ զօրինակն թղթոց ևս, զոր յղեալ էիր,
տեսաք:

Առ որս գիտասցէ պատուականութիւն ձեր, զի մեք ի Պօլսոյ, որ
երբեմն զթուղթ և կամ զայլ ինչ վասն տպարանիս մերոյ բերել տամք,
ոչ թէ վարդապետքն մեր ինքեանք երթեալ ի շուկայէն առնուն, այլ ի ձեռն
այլոց մարդկանց հոգան, որպէս հոգևոր որդին մեր՝ վարպետ Պօղոսն,
որ յայդր է, լաւապէս գիտէ: Քանզի երբեմն ևս ի ձեռն զորա և հօրն առե-
ալ են զանթիմոնի և զայլ իրս:

Եւ մինչ քանիցս թուղթ եմք խնդրեալ ի մերայնոցն և նոքա առեալ են
և յղեալ, որովհետև վանքի բան է և ինքեանք անհմուտ են աշխարհային
իրաց և տուր և առութեանց, առեցելոց կէսն անպիտան լինի:

Ինչ և իցէ, մերն այսպէս անցանի, բայց խնդրեալն մեծութեան ձերոյ
յոյժ առաւել է, որ այնքան թուղթ ըստ յղեալ օրինակացդ միանգամայն
ոչ իսկ գտանի: Եւ եթէ գտանիցի ևս, եթէ ձեռամբ մերայնոցն առնանիցի,
գուցէ թէ, ըստ վերոյ գրեցելոյն մերոյ, ըստ մեծի մասին անձեռնտու
լիցի և մեք զամօթ կրիցեմք: Բարւոք վարկաք յառաջ ծանուցանել մեծի
արքայիդ, քան թէ յետոյ խաթրամնայութեան բան ինչ լինիցի:

308 Այլ արդ, || եթէ կամիցիս, ի հարազատ ծառայից քոց զոմն յղեսցես անդ ի գտանել և առնուլ, կամ թէ ի ձեռն վարպետ Պօղոսի հօրն և կամ այլ հաւատարիմ բարեկամաց նորին առնել տացես, զի վարպետ Պօղոսն լաւապէս գիտէ, թէ որո՞յ ձեռամբն առնուլն բարւոք լինի:

Դիտումն մեր այս է, որ ըստ բարի ըղձիցդ բանն լաւապէս յառաջասցի և վնաս ինչ մի հանդիպեսցի: Իսկ ի կողմանէ դրամին, այսպէս գիտասցէ մեծութիւն ձեր, զի Ստեփանն ի ներկայումս զդրամ ոչ ունէր, յետ քանեաց աւուր տալ խոստացաւ, երբ և իցէ, տալոց է: Բայց զճշմարիտն ասեմ և ոչ ստեմ, զի յանցեալսն Հաշտարխանու առաջնորդ Յովսէփ վարդապետն զբրոյն Սաղիմայ նուիրակի դրամն առեալ էր և տուեալ Եսայուն փօլիցայ, զորս և նա հասոյց մեզ: Մեք ևս գրեցաք Պօլիս առ մերայինսն՝ հատուցանել զնոյն դրամն սրբոյն Սաղիմայ վէքիլին, իսկ նոքա գրեալ էին մեզ, թէ ի պատրաստի դրամ չունիմք և զայս փօլիցայս ոչ կարեմք տալ: Այժմ բանի Եսային ևս տեղեակ է, վասն որոյ անկարելի եղև մեզ այժմ մտանել ի ներքոյ այնքան դրամոցն: Սակայն որովհետև ազնուութիւն քո անգամ մի գրան իմն էիր հրամայեալ և մեր ջանքն այն է, որ զհրաման քո ոչ թողումք անկատար, ուստի ահա զփօլիցագիր գրեցաք ի վերայ վարդապետացն մերոց, որք ի Պօլիս, զի մինչև յերեսուն և մէկ օրն ըզՃԾ (150) թուման, որ է օսմանցւոց դրամ ԲՌՄԾ (2250) ղուրուշի վաթսունանոց, զով ոք առաքեսցես անդ և կամ անտի զով ոք կարգեսցես հոգացող թղթառութեանն, նմա հասուսցեն:

Եւ զնոյն փօլիցայագիրն ընդ թղթոյս յղեցաք առ մեծութիւն ձեր: Արդ, մինչ այդքան դրամոյ թուղթ հոգացեալ հասցի յայդր, տպարանին երկար միջոցու բաւականանալոց է և օրհնեալ արքայդ թղթոց որպիսութեանն և ծախուցն հասու լինելոց ես: Ապա եթէ վերստին ևս կամիցիս զթուղթ բերել տալ, հրամայեսցես, որ զմնացեալ դրամն ևս ի Ստեփանէն առեալ փօլիցայ արասցուք անդ:

Այսպէս օգտաւոր համարեալ, ծանուցաք պատուականութեան քոյին: Ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորհս նորին հանդերձ քոյայնովքդ ամենեքումբք: Ամէն:

Ի ՌՄԼԲ (1783) թուիս և ի մայիսի...:

Ձեռ. № 2803, էջ 304—306

758. 1783 թ. հունիս—*Թուղթ ի Կարին առ տիրացու Յարութիւնն Արևելցի, որ յառաջ քան զայս եկն յուխտ ի սուրբ Աթոռս և այժմ շնորհակալութեան թուղթ էր գրեալ և յղեալ հանդերձ ընծայիւքն ընդ Կարապետին:*

Ձեռ. № 2803, էջ 187—188

759. 1783 թ. 26 հունիսի—*Թուղթ ի Թիֆլիզ առ Անտոնիոս աւագ սարկաւագն, որդին Հերակլայ արքայի, ի պատասխանի սիրոյ գրոյն նորա, զոր ընդ թէրզի Զաքային գրեալ էր, յանձնարարութիւն վասն նորին:*

Ձեռ. № 2803, էջ 309—310

208 **760. 1783 թ. հունիս**—*Թուղթ ի վերայ Կարսայ, Կարնոյ, Թոխաթու և այլ ոմանց տեղեաց վասն ուրումն Սիմոն անուն քահանայի Վրաց (որ իբր գնայր ի Սաղիմ), զի զողորմութիւնս տացեն նմա վասն ճանապարհական թօշակի:*

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան և շնորհաց՝ հանդերձ ամենառատ ողորմութեամբն և գթութեամբն աստուածային և

շնորհիվ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ հարազատ և լուսածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս, հայկազուն, լուսաւորչակրօն և միաբնադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս, որք կայք բնակեալք ի տիրախնամ քաղաքդ՝ ի Ղարս, ի Կարին, ի Թոխաթ, ի յԱմասիա, ի Մարզվան և ի շրջակայ գաւառս և ի գիւղօրայս գոյին. յորս կառուցեալ քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց, առաջնորդաց, քահ[նայից], ժողովրդականաց խմբից, մեծաց և փոքրեց խնդալ ի Տէր: (Շնորհք):

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան թղթոյս ծանուցումն լիցի սիրելեաց մերոց ի Քրիստոս և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի: [Զի ըստ աստուածային օրինացն, եթէ ուխտիցէ ոք զուխտ ինչ Տեառն Աստուծոյ, պարտի թարց յամեցուցանելոյ կատարել, ըստ որում և երջանիկ մարգարէն Դաւիթ ասէ, թէ՝ ուխտս դիք և կատարեցէք:

Արդ, սոյն գրաբեր Սիմոն անուամբ քահանայս, որ է յազգէն և յերկրէն Վրաց, ուխտ եդեալ զոլով յանձին իւրում առ ի գնալ ի սուրբ Երուսաղէմ՝ յերկրպագութիւն տնօրինական սրբոց տեղեաց Տեառն մերոյ,
209 բաղձացեալ էր վճարել զուխտ իւր || և ոչ գտանիլ ուխտազանց: Սակայն ոչ ունելով զօրս զթօշակ ճանապարհական, այնր աղագաւ սիրելին մեր և բարեկամն սրբոյ Աթոռոյս՝ Տերամբ զօրացեալ Գեօրկին խանն, որդին Հերակլայ օրհնեցելոյ արքային Վրաց, գրեալ էր մեզ և խնդիր արարեալ, զի տացուք զմա զթուղթ ժողովարարութեան: Վասն որոյ և մեր, հարկեցեալ ի խնդրոյ նորին, զայս օրհնութեան նամակս մեր գրեցաք առ աստուածասիրութիւն ձեր և շնորհեցաք զմա: Որք և պատուիրեմք օրհնեցելոյդ, զի ի հանդիպելն զորա ձեզ, ի փառս մարդասէր Փրկչին մերոյ Քրիստոսի և ի պատիւ սրբոց տնօրինականաց տեղեացն նորին, շնորհեսջիք զմա զկամաւոր ողորմութիւնս, զորս ճանապարհական ապրուստ ունելով ինքեան, գնասցէ և կատարեսցէ զուխտ իւր]*:

Ապա ուրեմն պարտիք կատարել զմեծավարձ և զհոգեօգուտ հրամանս մեր, որք և ըստ արոյ և ողորմութեանց ձերոց ընկալջիք զհազարապատիկ և զբիւրապատիկ վարձս ի Տեառնէ Աստուծոյ՝ աստ և ի հանդերձեալ կեանսն և եղիջիք ազատեալք ի յամենից հոգեկան և մարմնական վտանգից և ի փորձութեանց չարաց, և ժառանգեսջիք զհոգաղուարճ շնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր յարաժամ: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուիս մերում ի յունիսի ամսոյ..., ի լուսակառոյց և յերկնահանգէտ Աթոռս սուրբ էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 208—209

210 761. *Թուղթն փոխեցաւ յայս միտ, թէ յաղագս նորոգութեան փլչելի եկեղեցւոյն գեղջն իւրեանց պարտի ժողովս առնել:*

Զի ըստ բանի սրբազան առաքելոյն Պօղոսի, պարտ է կարողաց բառնալ զտկարութիւն տկարաց, օգնելով և կարեկցելով նոցա ի պակասութեան և ի նեղսակրութեան նոցին, և այնու գտանիլ սիրելի և հաճոյ մարդասիրին Աստուծոյ:

Արդ, ի նեղսակրաց և ի պակասաւորաց մի է սոյն գրաբեր Սիմոն անուամբ քահանայդ, որ է յազգէն և յերկրէն Վրաց և ի Մարդկօպ կոչեցեալ գիւղէն, որ է մերձ ի քաղաքն Թիֆլիզ: Քանզի եկեղեցին գոցա, որ ի գեղջն իւրեանց, կարի խախտեցեալ է և մերձեալ է ի փլանիլ: Զոր թէ կամեցեալ են նորոգել վերստին ի հոգա և թէ իւրաղնեայ գիւղականքն

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է:

գնորապէս մխիթարութիւն իւրեանց, սակայն ի կողմանէ ծախուցն յոյժ պակասաւոր գոլով, գնացեալ են ի դուռն սիրելւոյն մերոյ և հաւատարիմ բարեկամին սրբոյ Աթոռոյս՝ Տերամբ զօրացեալ Գէօրգին խանին, բարեգործ որդւոյն Հերակլայ օրհնեցելոյ արքային Վրաց, և թախանձեալ են զնա, զի զօգնութիւն արասցէ իւրեանց վասն նորոգման եկեղեցւոյն։

Իսկ նա գրեալ էր մեզ և խնդիր արարեալ, զի տացուք զոյն Սիմօն անուամբ քահանայիդ զկոնդակ շրջաբերական, վասն որոյ և մեր հարկեցեալ ի խնդրոյ ազնուականի սիրելւոյն մերոյ՝ Գէօրգին խանին, զայս օր[հ]նութեան նամակս գրեալ ի վերայ ձեր, շնորհեցաք դմա, զոր առեալ եկեսցէ առ աստուածասիրութիւն ողորմածացդ և խնդրեսցէ ի ձէնջ ողորմութիւն։

211 Ուստի պատուի//րեմք օրհնեցելոցդ, զի ի գալն դորա առ ձեզ, ի փառս Աստուծոյ, շնորհեսջիք դմա զկամաւոր ողորմութիւնս, զորս տարեալ նորոգեսցեն զեկեղեցին իւրեանց։

Ապա ուրեմն պարտիք կատարել...

(Ի ձախմէ զթուղթդ շրջեա և գտեալ զայս նշանս, գրեա անտի մինչև ցվերջն)*։

Ձեռ. № 2803, էջ 210—211

212 762. 1783 թ. հունիս—*Ի Թարվէզ առ բարհատաց պետ վարպետ Յօսէփն, որ անդ նուիրակ Եփրեմ վարդապետին խոստացեալ էր, թէ զմարմար քարինս հատանել տացից, որ յղեսցես ի սուրբ Աթոռն ըստ խնդրոյ սրբազանին։*

Յորմէ ժամանեցի...

213 Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, գիտասջիր սիրելիդ մեր և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս էջմիածնի, զի որովհետև չիք խափան վախճանի մարդոյ, զի կնքեցաւ ըստ իմաստնոյն Սողոմոնի, և ամենեցուն առաջադրեցեալ զոյ մեռանել ի յարգանդ երկրի և կարօտիլ նշանակութեան արձանի, վասն որոյ հարկաւոր է մեզ զպատրաստութիւն վախճանի մերոյ ի կենդանութեանս մերում տեսանել։ Արդ, յաղագս այսորիկ հոգալով մեր առ ի բերել տալ յայլուստ զգերեզմանաքար մարմարոնեայ, յառաջ քան զայս գրեցաք յայլք սիրելի որդւոյն մերոյ և նուիրակին ձերոյ՝ Եփրեմ խոհեմամիտ վարդապետին, որ հոգացեալ յղեսցէ վասն մեր։ Իսկ նա ի կողմանէ այսմ բանի խօսեցեալ է ընդ քեզ և դու, օրհնեցեալդ ի Տեառնէ և սիրելիդ մեր, վասն յատուկ սիրոյդ և հարազատութեանդ, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, խոստացեալ ես նմա ըստ ժամանակին հատանել տալ զխնդրեալ քարինսն և յանձնել ինքեան։ Որոյ աղագաւ զմեծ շնորհակալութիւնս էր գրեալ նա զքէն՝ ծանուցանելով զբարեպաշտութիւն և զմեծահաւատութիւն քո և զճշմարիտ սէրդ։

Վասն որոյ և մեք, արժանի համարեալ զքեզ օրհնութեան, զայս օրհնաբեր նամակս մեր գրեցաք ի վերայ քոյ՝ առ ի մատուցանել քեզ զօրհնութիւնս աստուածային և զշնորհս սրբոյ Աթոռոյս։ Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ միշտ, փրկեսցէ յամենայն չարէ և պահեսցէ ի խնամս իւր։

Արդ, գրեմք սիրելւոյդ, զի զորդիական սէրդ, և հաւատարմութիւնդ անպակաս և աճեցուն ունիցիս առ սուրբ Աթոռս և առ մեզ և սիրելի որդւոյն մերոյ՝ Եփրեմ հանճարունակ վարդապետէն, զմարդասիրութիւնս ցուցցես և վասն մարմառ քարանցն, որ չորս հատ պարտին լինիլ՝ երկուսն

* Այդ նշանը գրված է նախորդ վավերագրի (№ 760) փակագծերի մեջ առնված (բնագրում ջնջված) մասի սկզբում։

մեծ, վասն գերեզմանի, և երկուսն փոքր, ի պէտս տպագրութեան, քեարխանային մերոյ, որպիսի չափովք ասիցէ նա քեզ, այնպէս հատանել տացես։ Եւ քարինքն սպիտակ և պարզատեսիլ և անտամարք լինիցին, որոց սակս յոյժ շնորհակալ լինելոց եմք զսիրելւոյդ և վերստին ես զօրհնութեան և շնորհակալութեան թուղթ եմք գրելոց առ քեզ, որ և լիցիս օրհնեալ և զօրացեալ ի Տեառնէ Աստուծոյ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ հանապազ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուոջս ի յունիսի ...

Ձեռ. № 2803, էջ 212—213

763. 1783 թ. 26 հունիսի—*Թուղթ օրհնութեան ի Շապիօն Ղարահիսար առ ժողովուրդսն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա, որք գրէին իբր շնորհաւորութիւն հայրապետութեան սրբազանին և գանկատ զմոլի ժողովարարաց։ Առ որս շնորհակալութիւն և պատուէր, զի զօրինաւոր ժողովարարսն ընկալեալ և անգամ մի ժողովս տուեալ՝ չուտով ուղևորեսցեն, իսկ զխաբեբայսն բնաւ ընդունիցին, այլ վարեսցեն ի միջոյ իւրեանց։*

Ձեռ. № 2803, էջ 214—217

764. 1783 թ. 26 հունիսի—*Կոնդակ օրհնութեան և յորդորանաց ի վերայ գործեցոյն, որք զփայտեայ խախտեալ եկեղեցի մի իւրեանց կամէին նորոգել՝ զմբեթաւոր և պայծառ, քան զառաջինն։*

Ձեռ. № 2803, էջ 217—220

765. 1783 թ. 26 հունիսի—*Թուղթ ի Թիֆլիզ կամ ի սուրբ Կարապետ անապատն Վրաց, առ էփթիմէ վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոցն նորա։*

Ձեռ. № 2803, էջ 311—312

313 766. 1783 թ. 28 հունիսի—*Թուղթ ի Մօզդոք առ զօրապետն Ռուսաց, ի պատասխանի նորին թղթոյն ընդ Եփրեմ հարիւրապետին գրեցելոյ։*

Յորմէ ժամանեցի թուղթ...

Եւ ընդ աստուածային ամենառատ օրհնութեան և սիրոյ թղթոյս, ծանուցումն լիցի գերազնիւ սիրելւոյդ և ստոյգ բարեկամիդ մերում և սրբոյ Աթոռոյս էջմիածնի, զի ի սոյն թուոյս յունիսի ամսոյ 3 երկրորդապէս գրեալ այցելութեան աւետաւոր թուղթն ձեր էհաս առ մեզ՝ ի ձեռն հարազատին ձերոյ և սիրելւոյն մերոյ՝ Եփրեմ հարիւրապետին, զոր սիրով բազմաւ և շնորհակալութեամբ առ ընկալեալ ընթերցաք և ուրախացաք ի սիրտ և ի հոգի, և զփառս մատուցաք Տեառն Աստուծոյ՝ // ունողին

314 զսիրտս թագաւորաց ի ձեռին իւրում։ Որ և ըստ մեծի ողորմութեան և նախախնամութեանն իւրում քաղցրացուցեալ է զսիրտ ամենաբարեպաշտուհի և առատագութ կայսերուհւոյն մեծի՝ առ ի այց առնել ազգիս մերոյ ողորմելւոյ ի ձեռն հաւաստագոյն և սրտացաւ բարեկամին մերոյ՝ պայծառափայլ և գերյարգելի քնէազին և ձերդ պատուելութեան։ Որոցդ նոյն ինքն ամենազօրն Աստուած պարգևեսցէ զկարողութիւն և զզօրութիւն և զազատութիւն ի յամենից փորձութեանց և զայդ մտադրեալ դիտումն ձեր ի կատար հասուցէ յաջողութեամբ և խաղաղութեամբ, զի որպէս լսեմք և իմանամք, նոյնպէս և տեսանել արժանասցուք։

Արդ, որ գրեալ ես, թէ ընտրեցեալ եմ ի վերայ այսմ հարկաւոր գործոյս առ ի կատարումն տալ սմին և այլն։ Ահա և մեք աղօթող եմք վասն այդորիկ և ի մերս կողմանէ ջանկամք տեսանել զօրն զայն։

Բայց առ այն, որ գրէ յարգութիւն ձեր, թէ քարոզեսջիք յականջս ամենայն հայկազանց և այլն, այսպէս գիտասցես, զի թէպէտ մեք ամենայօժար սրտիւ կամիմք լինիլ այցելութիւն ազգին մերոյ, որպէս և գրեալ եմք յառաջ օրինակաւ կուրի և հիւանդի, սակայն գոլով ազգն մեր ցիր և ցան ի ներքոյ այլոց իշխանութեանց, զայսպիսի խորհրդական բանս ոչ կարեմք գրել նոցա, զի մի վնաս ինչ պատահիցի։ Իսկ յերկրոջս մերում գտանեցեալ մերազնեայքն, ի վաղուց հետէ գոլով ողորմելիք և մանաւանդ ի նոր անցեալ ժամանակսն կերպակերպ փորձութեանց հանդիպելով, կան ի մէջ աղքատութեան։ Գիտեմ, զի լուեալ իսկ էք։ Եւ եթէ ումեք ասիցեմք զպատրաստութիւն տեսանել, պատասխանեն, թէ երկնչիմք յիշխողէն երկրիս։ Բայց Աստուծով ի զալն ձեր, ըստ կարեաց իւրեանց ծառայելոց են։

Իսկ Արցախու մելիքքն և այլքն գոլով ազատք կերպիւ ինչ ի նեղու-
315 թեանց և կիրթք // ի պատերազմունս, յօժարութեամբ կամին և սպասեն գալստեան ձերում, որպէս և մեք։ Եւ ի կողմանէ, ուտելեաց եւ ունին զպատրաստութիւն, որպէս գրեալ ես են առ մեծութիւն ձեր։ Յորոց թղթոցն զկնալիրն իմացեալ էք։ Եւ ահա մեք այսու երկրորդ թղթովս բացայայտեմ տէրութեան ձերում, զի բոլորով սրտիւ ըղձակերտեմք և ցանկամք գալստեան ձերոյ՝ առ ի այց առնել խղճալի ազգիս և երկրիս մերոյ և սրբոց եկեղեցեաց և վանորէից մերոց ամայացելոց, որպէս զի գտցեն զառաջին խաղաղութիւնն և զբարեկարգութիւնն, զշքեղութիւնն և զպայծառութիւնն, և անուն Քրիստոսի Աստուծոյն մերոյ և փրկաւիթ խաչի նորին փայլեալ փառաւորեսցի։ Եւ օգոստափառ կայսերուհին մեծ, փոխանակ գթութեանն և ողորմութեանն իւրոյ, որ առ ազգս մեր, անբաւ գթութեան և ողորմութեանն Աստուծոյ ամենակալին արժանաւորեսցի հանդերձ թագազարմ ժառանգօքն իւրովք և ձեօք իսկ՝ աստ և ի հանդերձելումն։

Եւ զոմանս բանս ասացեալ եմք հարազատին ձերոյ՝ Եփրեմ հարխըրապետին, զորս եթէ կամիցիս իմանալ, ծանուցանելոց է պատուականութեան ձերում։

Որ և լիցիս ողջ ի Տէր և յանձնեալ ի շնորհս նորին։ Ամէն։

Գրեցաւ ի 1783 թուոջ փրկչին ի յունիսի 28 և ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան[171]։

Ձեռ. № 2803, էջ 313—315

767. 1783 թ. 4 նոյեմբերի—Կոնդակ յոյժ համառօտ ի յՈւռհա վասն զանձապետին մերոյ՝ խոջայ Կարապետին վերահաստատութեան և վասն այլ ինչ իրի։

Ձեռ. № 2803, էջ 324—325

768. 1783 թ. 12 նոյեմբերի—Սկիզբն և այլ հարկաւոր միջարկեալ բանք ժողովարարութեան թղթոյ, որ տրեցաւ նորնախիջեւանցի տէր Յարութիւնին ի վերայ Հնդկաց՝ վասն շինութեան Նոր Նախիջեւանու աւագ եկեղեցւոյն, զոր շինեին յանուն սրբոյ Լուսաւորչին։

Ձեռ. № 2803, էջ 316—320

769. 1783 թ. 17 նոյեմբերի—Թուղթ մխիթարութեան և օրհնութեան ի յԱրցախ, այսինքն Խամսա, առ հանգուցեալ մէլիք Ադամի որդիսն՝ յաղագս մահուան հօրն իւրեանց՝ նոյն մէլիք Ադամին։

Ձեռ. № 2803, էջ 325—327

770. 1783 թ. նոյեմբեր—Թուղթ ի յարտաքին վիճակսն Պօլսոյ՝ ի Տաշանլու առ Հայրապետն, մահտեսի Կիրակոսն և մեր զանձապետ մահտեսի Յարութիւնն. շնորհակալութիւն վասն լաւութեանցն առ սուրբ Աթոռս և առ նուիրակ Գալուստ վարդապետն։

Ձեռ. № 2803, էջ 229—231

771. 1783 թ. 18 նոյեմբերի—Թուղթ առ մէլիք Ադամի եղբայր Յովսէփ բէկն վասն մահուան մէլիք Ադամին մխիթարութիւն։

Ձեռ. № 2803, էջ 232—233

772. 1783 թ. 20 նոյեմբերի—Թուղթ օրհնութեան առ Պրուսայու համայն մերազնեայ էսնաֆսն, որք կերտեցուցեալ էին վասն սրբոյ Աթոռոյս սուրբ Լուսաւորչի սեղանոյն զարծաթեայ զոգնոց մի՝ յորդորմամբ նուիրակ ջուղայեցի Գալուստ վարդապետին։

Ձեռ. № 2803, էջ 227—229

330 773. 1783 թ. 26 նոյեմբերի—Թուղթ առ Հաշտարխանու և կողմանցն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն վասն երիցս անգամ գրեալ թղթոցն, իբր համառօտ պատասխանի։

Յորմէ քրիստոսական սուրբ ողջունիւ և ճշմարիտ սիրով գիտասջիր սիրելի և հոգևոր որդի մեր և շնորհածին զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածիմաստ վարդապետ, զի հասին առ մեզ յապրիլի 24 և ի մայիսի 26 գրեալ, այլև ի նոյն ամսեանն յառաջ, քան զայն առանց ամսաթուոյ
331 գրեալ թուղթքն քո երեքեան, // հանդերձ փոքրիկ փուսուլային և թղթովք աղնիւ Յովաննէս աղային և Նախիջեւանու դատաւորաց և իշխանաց և
այլովք թղթովքն, զորս ընդ նոսա յղեալ էիր։
Եւ ընթերցեալ զնոյնս, իմացաք զամենայն գրեցեալսն ի նոսա։ Բայց
արդ, քանզի յոյժ զբաղեալք եմք զանազան հոգօք, թղթագրութեանց և այլ բազմակերպ ցաւոց, և մանաւանդ հայելով պատասխանւոյն ի յայլ
ըիլի Իե (25) առ քեզ գրեալ թղթոյն մերոյ, այժմ ի գրեցելոցդ բանից,
որոց և ի դէպ է և հարկաւոր, այնց և եթ՝ արասցուք զպատասխանիս։
Գրեալ էիր դու և Նախիջեւանու դատաւորքն և իշխանքն ես, և խնդրեալ էիք յաղագս շինման նորակերտելի Աւագ եկեղեցւոյն Նախիջեւանու զժողովարարութեան կոնդակ տալ տէր Յարութիւն քահանային ի ձէնջ յուղարկեցելոյ ընդ ուխտաւորացն եկելոց յայցրոստ։ Ահա սիրով կատարեցաք զխնդիր ձեր և ետուք զկոնդակ ժողովարարութեան տէր Յարութիւնին ի վերայ Բաղդատու և Բասրայու և բոլոր Հնդկաց երկրի մերազնեայ ժողովրդեանն, զոր և ի յուլիսի ամսոյս Ժ (10) ուղևորեցաք ի սրբոյ Աթոռոյս։
Վասն օրհնեալ ուխտաւորացն ես, որ զյանձնարարութիւնս էիր գրեալ, Աստուծով ըստ ձեռնհասութեան մերոյ շահեցաք։ Որք և յետ օրհնութեան սրբալոյս մեռոնին և սուրբ Կարապետի վանսն ես գնացեալ, կատարեցին զուխտս իւրեանց և դարձեալ անտի յԱթոռս, ահա վերադարձան յօրհնեալ երկիրդ։
Սիրելւոյն մերոյ՝ Տերամբ զօրացեալ կապիտան պարոն Յովաննիսի նորահաստատ գործարանի դիպակն ես[172], զոր հասարակութիւնն Նախիջեւանու քաղաքին ընծայ էին յղեալ առ մեզ՝ ձեռամբ տէր Յարութիւնին, էհաս, զոր շնորհակալութեամբ ընկալաք և օրհնեցաք զպարոն Յովաննէսն և զգործարանն իւր, և զամենայն իսկ քաղաքն և զիշխանսն և զժողովուրդսն, զորս Աստուած չէն և հաստատ պահեսցէ, օր ըստ օրէ առաւել ես բարեզարդելով ամենայն շնորհօք և բարեկարգութեամբք ի յուրախութիւն տրտմաթախիծ սրտից մերոց։

Առ որս թէպէտ կամեցաք շնորհակալութեան և գոհութեան թուղթ գրել վասն ընծային իւրեանց և ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էին, սակայն զի ուխտաւորքն ճեպով ելանէին, այժմ ոչ կարացաք հասուցանել: Սոյնպէս և ազնիւ Յովաննէս աղային ես ոչ կարացաք զպատասխանի գրել: Յետ աւուրց անկարծիք գրելոց եմք և առաքելոց:

332 Զօրինակն թղթոց, զորս յղեալ էիր, ընթերցաք, բայց չև ես զմարդ կամ զգիր տեսաք ի յԱրցախու: Սակայն և ի ներկայումս լուաք ստուգիւ, թէ մելիք Ադամն վախճանեալ է, վասն որոյ զգրեանս մխիթարութեան գրեցաք առ եղբայրն նորա և առ որդիսն:

Նաև գրես, թէ գրեալ էք զօրապետին, թէ մեր վանական եմք, բան չեմք գիտել: Այլ մեր գրեալն այսպէս է, թէ մեր վանական և եկեղեցական գոլով, ոչ եմք քաջ գիտակ աշխարհային իրակութեանց և այլն: Արդ զայս բան, որոյ զօրինակն յղեալ եմք քեզ և առ մեզ ես գոյ, և դու այսպէս այլայլելով արհամարհանաց պատճառ առնես, ապա յայլ կերպ բանս զի՞նչ կարծիք անդր, քան զչարն լինելոյ:

Իսկ յառաջ քան զայս ի Տերամբ զօրացեալ Սարգէիչ Պալէն մեծէ դարձեալ գիր եկն առ մեզ յատուկ մարդով, և մեր վերստին զընդունողական գիր գրեցաք նմա ըստ հաճոյից:

Զողջոյնդ առ Մկրտիչ վարդապետն ազդեցաք, զոր և նա սիրով դարձոյց:

Ապա յետ քան զբազում զրուցինս, երկու ինչ գրես խնդրել ի մէնջ, որոց նախկինն այս, թէ զառ քեզ գրելի և կամ հասուցանելի բանսն մեր համաձայնեցուսցուք ընդ նորին կրից մտաց մերոց հանգոյն քոյ: Առ որ ծանիցես, զի ի բնէ իսկ չէ մեր սովորութիւն զայլ ինչ ունիլ ի մտի և զայլ ինչ գրել և կամ ասել, այլ որ ինչ իցէ ի սրտի մերում, զնոյնն արձանացուցանեմք, կամ խօսիմք: Ըստ այսմ բնիկ ունակութեան ես, զոր ինչ գրեալ եմք և կամ տուեալ առ ի քեզ հասանիլ, ստուգութեամբ եմք արարեալ: Ապաքէն ի բաց տար զայլ և այլ կարծիս և անվրդով լեր:

Իսկ երկրորդն ես այս, զի զԱբրահամ վարդապետն եպիսկոպոս ձեռնադրիցեմք, զոր յառաջ քան զայս ի յու[լիսին] ձեռնադրեցաք եպիսկոպոս և վերստին զառաջնորդական կոնդակ տուեալ ի վերայ բոլոր վիճակին, վերադարձուցաք փառաւորապէս ի վանսն՝ առ ի շինութիւն առնել և կառավարել:

Այլև ի կողմանէ առ քեզ եղեալ դրամոյն, որ գրեալ էիր, տեղս ոչ յումեքէ դրամ եմք առեալ և ոչ ես դրամ տուող գոյ: Իսկ ի կողմանէ ճոթի այժմ պիտոյ չէ ճոթն, մինչ տեսցուք, թէ խառնակութիւնքս զի՞նչ լինին: Բայց որ գրես, թէ զՎարդան վարդապետն և զԱւետիսն յղելոց եմ յԱթոռդ, եթէ ըստ ասիցդ զոսկի շինեսցես զդրամն և ընդ նոսա յղել կամիցիս, զայն ես դու գիտասցես: Իսկ սակս վանորէից դրամոցն անտարակոյս լիցիս, զի զԳայիանէինն ետուք և զմիւսոցն ես տալոց եմք: Եւ զոր գրեալ էիր վասն ոսկեայ բանալոյ և այլ բանից, զայնց պատասխանիսն ես թողումք յետոյ:

Ահա զայս թուղթս համառօտապէս գրեցաք այժմ առ սիրելիդ մեր և զկնի աւուրց ինչ առ ազնիւ աղայ Յովաննէսն և առ նորնախիջևանցիսն ես զպատասխանիս թղթոց իւրեանց գրելոց եմք, որպէս յիշեցաք հան-
333 գերձ թղթովք առ այլ ես օրհնեալ իշխանս մեր: // Սակայն մշտապէս ակ-
նադէտ նայիմք յապրիլի ԻԵ (25) առ քեզ գրեալ թղթոյ մերոյ պատասխանւոյն, զոր եթէ մինչև ցարդ չիցես գրեալ, փութով գրեսցես, զի տեսցուք:

Հոգելոյս հայրապետին մերոյ Պարտավճար[173] գիրքն եւ ի նմէն, յորմէ ահա զերկիս հատս ձեռամբ տիրացու Լուսեղէնին յղեցաք վասն քեզ տեսանելոյ և վայելելոյ: Ապա մինչ առ վերոյ յիշեալ սիրելիսն մեր ես զգրեանս գրիցեմք, որպէս խոստացաք ընդ թղթոցն և զքանի հատ Պարտավճար ես եմք յղելոց ի ձեռս քո՝ առ ի հասուցանել առ նոսա:

Այլև մինչ գրէաք զգիրս, թուղթ առաք ի Կարնոյ, որ գրեալ էին վասն Թօխաթու նուիրակ խղճալի Յակոբ վարդապետին, թէ մինչ զգործն զերծեալ և զամենայն հոգալիս իւր հոգացեալ կարաւանի է սպասեալ՝ առ ի դիմել ընդ նոսա ի սուրբ Աթոռս, յանկարծ սաստիկ ցաւ իմն է հանդիպեալ, որով մինչև ի յութ օրն փոխեցեալ է ի կենաց աստի: Զոր ի լսելն մեր, արդարև տրտմեցաք ոգւով չափ և ճմլեցան սիրտք մեր: Այս ես ի վատաբախտութենէ իմմէ է, որ զզուարթացուցիչ լուր իմն ոչ լսեմք յուստեքէ, այլ միշտ զմաշիչս սրտի: Բայց զի՞նչ ունիմք առնել, եթէ ոչ փառս տալ Աստուծոյ և ասել՝ եղիցին կամք նորա օրհնեալ, որ և լուսաւորեսցէ ողորմութեամբ իւրով զհոգի հանգուցեալ Յակոբ վարդապետին՝ դասելով ընդ սուրբ և երջանիկ վարդապետսն և զմեզ և զձեզ մխիթարեսցէ հոգւովն սրբով:

Բայց Մինաս վարդապետն ի ճանապարհի է, Աստուծով յետ սակաւ միջոցի հասանելոց է ի սուրբ Աթոռս և զառ նա գրեալ թուղթդ ի գալն տալոց եմք իւրեան: Իսկ և զԱտենի ժամանակագիրքն Աստուծով յամսոյս ԻԲ (22) սկսաք տպել և ահա տպեցուցանեմք: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուոջս ի յուլիսի ԻԶ (26) և ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմ[իածին]:

Ձեռ. № 2803, էջ 330—333

774. 1783 թ. օգոստոս—Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Յարութիւն ամիրայն, ի պատասխանի նորին սիրոյ գրոյն ընդ Իզնիմիդու դէտ Պետրոս վարդապետի աշակերտ Յովակիմ պետին գրեցելոյ, որով վասն նորա խնդրեալ էր ձեռնադրել եպիսկոպոս և փութով դարձուցանել: Զոր և կատարեաց սրբազանն յառաջագոյն, բայց յայնժամ անձեռնհաս գոլով, այժմ գրեաց զայս թուղթս:

Ձեռ. № 2803, էջ 337—340

343 775. 1783 թ. 21 օգոստոսի—Թուղթ առ Աղթամարու նորոգ կաթուղիկոսն տէր Կարապետ, ի պատասխանի նորին թղթոյն զկնի օծմանն գրեցելոյ:

Յորմէ սիրով բազմաւ և քրիստոսականաւ սուրբ ողջունիւ գիտասջիր սիրելիդ մեր և հարազատ որդի սրբոյ Աթոռոյս աստուածաէջի, խոհեմառատ և հանճարունակ տէր Կարապետ նորընծայ կաթուղիկոս, զի ժամանեաց առ մեզ թուղթ քո հարազատական, գրեցեալն ի սոյն թուոյս յօգոստոսի ամսեան Ժ (10): Զոր և ընթերցեալ մեր՝ իմացաք զօծանիլդ ըստ հրամանի մերոյ կաթուղիկոս ի Վարդավառի կիւրակէին ի սուրբ Աթոռդ Աղթամար ի հոգաբարձութիւն և ի հոգևոր փեսայութիւն դմին և ի վերատեսչութիւն օրհնեցելոյ վիճակիդ զորա: Որով ուրախացեալ զուարճացաք և ի ձեռն այսր սիրանիշ թղթոյ շնորհաւորեմք զնորաօծ հայրապետութիւնդ և խնդրեմք ի Տեառնէ լինիլ քեզ ձեռնտու և օգնական: Որ և որպէս ի բերանոյ բազմաց ընտրեալ կարգեաց զքեզ ի յայդ աստիճան հոգևոր իշխանութեան, նոյնպէս և ամենառատ շնորհիւ և ողորմութեամբ իւրով զօրացուսցէ և կարողացուսցէ և առաջնորդեսցէ քեզ միշտ ի բարիս, և

լցուցէ հանճարով և խոհականութեամբ առ ի բարեպէս և արիութեամբ
կառավարել զյանձնեցեալդ քեզ հօտ բանաւոր և զսուրբ Աթոռդ հոչակա-
ւոր որպէս զի գտանիլով մշակ, առանց ամօթոյ երևեսցիս փայլուն և
հաճելի յայսմ կենի, ստանալով զանուն և զհամբաւ բարութեան և ապա
ի հանդերձեալ կեանսն ընկալցիս զբազմապատիկ վարձս ըստ բարեջան
աշխատութեանցդ և նոյնոյ առատախնամ Տեառնէ միրմէ:
Այլև՝ գրեալ էիր, թէ զկնի օծմանս թէպէտ կամէի փութապէս անմի-
ջոցաբար գալ, սակայն յաղքատութենէ սրբոյ Տանս և ի պակասաւորու-
թենէ միաբանիցս հարկեցեալ, յամեցայ առ ի հոգածութիւն նոցին, իսկ
աներկար միջոցաւ գալոց եմ տեսանել և այլն:
Ահա զայդ օրհնեալ իշխանքն Վանայ ևս էին գրեալ վասն յամեց-
մանդ իբրու ներել խնդրելով: Վասն որոյ ոչ նեղացաք սակս յետանա-
լոյդ, այլ ներելով զայս սիրոյ և շնորհաւորութեան Թուղթս ևս գրեցաք ի
միամտութիւն սիրելւոյդ, բայց ոչ պարտիս զուխտ և զպայման քո ի
344 *մոռացօնս դնել, այլ մանաւանդ կատարել ջանալ // և ոչ գտանիլ պայ-*
մանազանց՝ գիտելով հաստատապէս, թէ գալն քո քեզ է օգուտ մեծ և
վնաս ոչինչ գոյ: Վասն զի մինչ երևեալ ստուգիցի հպատակութիւն և
հարազատութիւն քո սրբոյ Աթոռոյս մեծի, յայնժամ ևս առաւել լինելոց է
քեզ ճոխութիւն պատուոյ և օգուտ յամենայն կողմանէ:
Ողջ լեր ի Տէր:
Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) Թուոջս, ի յօգոստոսի ամսոյ ԻԱ (21):
Ձեռ. № 2803, էջ 343—344

246 *776.* **1783 թ. 5 սեպտեմբերի**—*Թուղթ ի Պետրպօլք առ աղնիւ Յո-*
վաննէս աղայն Եղիազարեան, ի պատասխանի նորին ի 1783 Թուոջ
Փրկչին և յապրիլի ԺԲ (12) գրեալ Թղթոյն ի կողմանէ առաջադրեալ իրա-
կութեանն Ռուսաց:

Յորմէ ժամանեցի Թուղթ...
Եւ ընդ աստուածային օրհնութեան և ողջունատրութեան սիրածիր
նամակիս ծանուցումն լիցի յատկեղ սիրելւոյդ իմոյ և յաւատարիմ որդ-
ւոյդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի: Զի ժամանեաց առ մեզ Թուղթ աղնուոյդ
գրեցեալն ի սոյն Թուոյս ապրիլի ԺԲ (12) և ընթերցեալ մեր զնոյն, վեր-
ծանեցաք զամենայն գրեալսդ: Եւ վասն յոլովութեան գթոյ և սիրոյ ողոր-
մածագոյն և քրիստոսասէր մեծի կայսերուհւոյն և իւրոցն հաւատարմաց,
զորս ունին առ խղճալի ազգս մեր և զօգուտն մեր կամեն, բերանալից
գոհաբանութեամբ և օրհնութեամբ շնորհակալեցաք զնոցունց, ըստ որում
և միշտ շնորհակալ եմք և աղօթօղ սակս նոցին, որոց ամենաբարերարն
Աստուած պարգևեսցէ հանապազ զբարիս և զյաջողութիւնս և զբարձրա-
247 *գոյն տէրութիւն // իւրեանց առաւել ևս մեծացուսցէ և ընդարձակեսցէ:*
Իսկ և օրհնեցաք զքեզ յոյժ վասն հաւատարմութեան, որ իբրու զբարեշը-
նորհիցն առաջնոց՝ Յովսեփայ և Մովսիսի և այլոց ոմանց ընտրելոց
զնմանութիւնսն ի քեզ բերելով, յօգտաջանութենէ ազգի մերոյ ոչ դադա-
րիս՝ բաղձալով ի լաւ անդր յառաջելոց նոցին և բարեկեցիկ լինելոյ, որով
և ըստ հրամանի սրբազան առաքելոյն Պօղոսի, գտանիս կատարիչ այնմ,
զոր ասէ՝ ունիցիք զգութ առ ընտանիս հաւատոց: Ուստի եղիցիս զօրա-
ցեալ և վարձատրեալ յԱստուծոյ, որոյ և անբաւ ողորմութեամբն լիցուք
արժանի կատարման այդմիկ տենչանաց: Եւ քաղցր խնամարկութիւն աս-
տուածապսակեալ ինքնակալուհի մեծի կայսերուհւոյն աննուաղ լիցի ի
մէնջ:

Արդ, եկեսցուք ի գրեալսդ. նախապէս գրեալ էիր զԹղթոց մերոց առ
պայծառափայլ բնէաղ մեծ իշխանն և առ քեզ հասանիլն, և քո զԹուղթն
նորին Թարգմանելն: Եւ ծանուցեալ էիր, թէ ոչինչ կարաց իմանալ և ինձ
ևս ոչինչ էիր գրեալ, զի կարօղ լինիցէի ասել նմա զբան ինչ, և թէ հարկ է,
զգիտաւորութիւնդ գրել սոցա և այլն:
Ազնիւ սիրելիդ իմ, յայսպիսի իրս պատահեցեալն պարտի շրջա-
հայեաց և զգոյշ լինիլ, որպէս և դու իսկ ի յառաջին Թղթոջդ այնպէս էիր
գրեալ: Ահա Թող զլինիլս մեր առանց կատարեալ խորհրդակցի և օժան-
դակի, և Թող զգոյն մերայնոցն բացակայ ի մէնջ, կամք ևս ի վտանգա-
ւոր վայրոջ ի մէջ անօրինաց: Զի՞ արդ է մեզ կարելի յայսմ կասկածալից
վայրի զամենայն ինչ ի Թուղթ արձանացուցանել: Զի և բնէաղ Պօտէմ-
կին վեհ իշխանն [յամենուստ կուսէ վստահ և աներկիւղ գոլով զոչինչ էր
գրեալ բացապէս և կամ երկարօրէն, մեք ըստ ամենայնի երկիւղալի,
որպէ՞ս կարեմք երկարապէս և բաց գրել առ նա զամենայն ինչ] ևս զեր-*
կարօրէն ինչ ոչ էր գրեալ, այլ զհամառօտ բանս սիրայայտական և
բարեկամացոյց: Վասն որոյ մեք ևս կարճառօտապէս գրեցաք զպատաս-
խանին և զլիալիրն ի Թղթաբեր պօլկովնիկ Նակուբէն իմանալ խնդրեցաք:
Որ և նա, թէպէտ ո՛չ վերադարձավ յայդր, զի բերանով ասասցէ, այլ ի
հարկէ մինչև ցարդ ծանուցեալ է նմա Թղթով:
248 *Ապա գրեալ էիր, թէ յայսմ զիպուածոջ գրեցի զԹուղթ առ Գանձասա-*
րու կաթուղիկոսն և մէլիքսն, զի երթեեկութեամբ գրեանց միաբանեալ
ընդ ձեզ, զամենայն ինչ խորհրդով առնիցեն և այլն:
Առ այդ ևս զայս ծանիր, զի թէպէտ առ միմեանս երթեեկութիւն Թըղ-
Թոց լինի, սակայն զայդպիսի բանս մինչև ցայժմ նոքա մեզ ոչ գրեցին:
Մեք ևս ոչ եմք գրեալ առ նոսա, զի ճանապարհքն սրիկայից և աւազա-
կաց բնակութիւնք են: Մանաւանդ և նեղիչքն որք զմեօք, ոչ սակաւք են
հանճարեղք ի չարիս և զգաստք առ ի հասու լինիլ այնպիսի իրաց, մի
գուցէ օգնականութիւնն, որ յայդրուստ յամեսցի և սոքա տեղեկասցին հե-
տեւմանց մերոց (որպէս և դուք մտածեալ էք) և սկսանին զիշատել զմեզ,
յորոց ի բերանոյ իսկ կամք: Նաև ծերունազարդ մէլիք Ադամն ևս վճա-
բեաց զկեանս իւր: Որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ և զգլուխ ձեր ո՛ղջ
պահեսցէ:
Դարձեալ որ գրեալ էիր զբժիշկ Նակուբէն խորհուրդ հարցանել, ահա
նա, յառաջ քան զերկուս ամիսս, ի Թիֆլիզու դարձաւ ի Մօզտօք առ զօ-
րապէտն ըստ հրամանի նորին: Եւ կարծիմք, թէ եկեալ լինիցի յայդր:
Բայց մինչ եկն աստ, յառաջագոյն զբազում բանս խօսեցաք ընդ նմա,
յայնժամ ի կողմանէ առաջիկայ լինելութեանն, որ թէ եկեալ իցէ յայդր,
գուցէ ասացեալ լինիցի ձեզ:
Այլ արդ, թէև համարձակօրէն հետևիլն մեզ ի ներկայս անկարելի
*լինի վասն սաստիկ երկիւղի վտանգից [հակառակորդացն]** վշտացուց-*
չաց մերոց, սակայն սրտի մտօք բաղձամք ըստ քեզ տեսանել ակամբ
զկատարումն գործառնութեան այդորիկ օգտախոհ բարեկամացդ մերոց
բարձրագունից: Ուրեմն մի ինչ ածցի զմտաւ ձերով, իբր թէ դժկամակ
իցեմք առաջադրութեան աստուածաշարժ կամաց հաւատարիմ բարեկա-
մացդ մերոց՝ խաչապսակ և գթառատ մեծի կայսերուհւոյն և իւրոցն հա-

* Փակագծերի մեջ վերցված նախադասությունը բնագրում ջնջված է: Շարունակու-
թյունը (4 և կես տող), որ նույնպես ջնջված է, չվերականգնեցինք, որովհետև նրա բո-
վանդակությունը կրկնված է հեղինակի կողմից:
** Փակագծերի մեջ վերցված բառը բնագրում ջնջված է:

բաղատից, որք զդարձութիւնն մեր կամին։ Վասն զի ո՞վ ոք իցէ, որ
մայրենի գթոյ և խնամոց հանդիպեցի և ննջիցէ, և կամ ո՞վ իցէ, որ
փրկութենէ հրաժարեսցի։ Այլ զի գիտեմք լաւապէս, որ մինչ գեռևս հեռի
249 են դոքա աստի, // եթէ իմանայցեն սորա զեղձս և զկամս մեր առ առա-
ջադրութիւն դոցին, անկարծիք վնասիմք ի [յանօրինացս, որք զմեօք]*
սոցանէ։
Վասն որոյ ոչ կարեմք զկամակցութիւն մեր յայտնի առնել և ի գիր
արձանացուցանել, բայց աղօթք և խնդրուածք մեր են միշտ առ ամենա-
կարօղն Աստուած՝ շնորհել զյաջողումն մտադրեալ իրակութեանց դոցին,
որք ի յօգուտ մեզ և խղճալի ազգիս մերոյ լինիցին։
Իսկ յառաջ քան զայս ես երկիցս անգամ գերապատիւ զօրապետ
Պաւլ Սարգէիչ Պօտէմկինն էր գրեալ մեզ զթուղթս, զառաջինն ձեռամբ
Աւետիք սարկաւագին էր յղեալ և զերկրորդն՝ ի ձեռն Եփրեմ հարիւրա-
պետի ուրումն։ Որոց ես թէպէտ զպատասխանիսն ոչ կարացաք ըստ մերս
ըղձալի կամակցութեան լիապէս գրել, սակայն զառաջինն առագատիք
և զերկրորդն պարզաբար գրելով, ծանուցաք զընդունողութիւն և զյօժա-
րութիւն մեր առ առաջիկայ գործն իւրեանց։ Յիշելով ես զյերկրոջս եղեալ
մերաղնէից խղճութիւնն և ողորմելութիւնն և զնոր անցեալ ամաց փոր-
ձանակրութիւնսն, զորս դուք ևս լաւապէս իմացեալ էք։ Թէրևս և նա զօրի-
նակսն գրեցելոց մերոց առաքեալ իցէ յայդր և տեսեալ իցէք։ Իսկ կարի
յոյժ բարւոք և շահաւէտ լինիւր, եթէ դու՝ ազնիւ սիրելիդ մեր, ընդ զօրացն
լինիցէիր, զոր և ի յառաջին թղթոջ զօրապետին ես եմք գրեալ, քանզի գոլով
քոյ ի ընէ ազնուատոհմ և մեծազգի և սիրեցեալ յաչս բազմագութ մօրն
ողորմութեան մեծի կայսերուհւոյն և իւրայնոցն, և ի բազում ամս ծառա-
յեալ նմա։ Ապա եթէ ընդ զօրապետին գայիր յայսկոյս, մեծ յոյս և բերկ-
րութիւն էր լինելոց ազգի մերում։ Եւ բազումք լսելով, ջերմանալոց էին ի
յառաջադրեալ մեծագործութիւնն և առ ձեզ դիմելոց։ Այսքան առ այս։
Այլև՝ որպէս յայտնի է սիրելեացդ, ահա հոգևոր որդին մեր՝ Յով-
սէփ աստուածաբան վարդապետն և արհիեպիսկոպոսն, ի վաղուց իսկ
աւարտեալ է զգործն նուիրակութեան և պարտ էր գալ ի սուրբ Աթոռս,
սակայն վասն հարկաւոր հոգալեաց, մնաց մինչև ցայժմ ի յօրհնեալ
երկրոջդ։ Իսկ ի ներկայումս, թէպէտ և բազում կերպիւ պիտանի էր մեզ
և սրբոյ Աթոռոյս, սակայն զի սրտաշահէք յիրիրաց օրհնեալ ժողովուրդք
և նա, և զի ձեռնարկեալ հոգալեացն ոմանք անկատարք են, վասն որոյ
և բարւոք համարեալ, ահա վերստին հաստատեցաք զնա ի նուիրակական և
250 յառաջնորդական // գործսն, զի մինչև ցկատարել նուիրակութեանն, ևս
վայելեսցէք զմխիթարս և նա զթերութիւն ձեռնարկեալ իրակութեանցն լրա-
ցուսցէ և ապա դարձցի ի սուրբ Աթոռ մայրս իւր։ Վասն որոյ ահա զսրբա-
լոյս մեռոն առաքեցաք նմա ի բաշխել ձեզ՝ հանդերձ հասարակ կոնդակաւ
ի վերայ ողոր օրհնեցելոյ երկրիդ։ Եւ զհամառօտ կոնդակ մի ևս յատ-
կապէս ի վերայ եռկուց մայրաքաղաքացդ գրեցաք, զոր տեսանելոց էք։
Ուրեմն, սիրելի և զհոգևոր որդին մեր՝ Յովսէփ աստուածիմաստ
վարդապետն և զարհիեպիսկոպոսն, պատուեալ սիրեսցես և մեծարեսցես
ըստ արժանւոյն. որպէս և մինչև ցարդ արարեալ ես, և զճշմարիտ սէրդ և
զհարազատութիւնդ հաստատուն և աճեցուն ունիցիս առ սուրբ Աթոռ
մայրս քո և առ մեզ։ Իսկ և հոգելոյս հայրապետին մերոյ շարադրեալ
Պարտավճար գիրքն, որոյ կէսն ի կենդանութեան իւրում էր տպագրեցեալ

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է։

և զմնացորդն ես մեք տպեցաք, ահա զ... հատ ի նմանէ իբր օրհնութիւն
ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ, յղեցաք ընդ սիրանիշ թղթոյս առ Յովսէփ
յոգնահանճար վարդապետն՝ ի հասուցանել առ սիրելիդ մեր, զոր ընկա-
լեալ բարեաւ վայելեսցես։
Ողջ լեր ի Տէր և ի նոյն զօրացեալ։ Ամէն։
Գրեցաւ ի 1783 թուոջ Փրկչին ի սեպ[տեմբերի] Ե (5) և ի սուրբ
Աթոռս Էջմիածին։
Բազմաւ սիրով և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիս-
տոսի, ողջոյն և օրհնութիւն տամ աստուածապարգև զաւակին քոյ և հո-
տոսի, ողջոյն և օրհնութիւն տամ աստուածապարգև զաւակին քոյ և հո-
գևոր որդւոյն մերոյ սիրեցելոյ՝ Քրիստոսի օրհնեցեալ ազնուազուն և
բարետոհմ Յարութիւն աղային և այլոց քոյայնոցն ամենեցուն։ Զորս և
յանձնեմ ի խնամս և յողորմութիւնս Տեառն հանապազ։
Ձեռ. № 2803, էջ 246—250

251 777. 1783 թ. 5 սեպտեմբերի—Թուղթ առ Հաշտարխանու և Ռուսաց
երկրի նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, իբրու ի պատասխանի
վեցից թղթոցն նորին (որք ի ներքոյ յիշին) վասն զանազան իրաց, մինչ
զկոնդակ և զսրբալոյս մեռոն ևս յղեալ սրբազանն՝ վերանորոգելով
զնուիրակութիւնն և զառաջնորդութիւնն։
Յորմէ ճշմարիտ սիրով և բազմաւ կարօտիւ, քրիստոսական սուրբ
ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ ծանիր, սիրելի և հոգևոր որդի մեր,
Հարազատ և քրտնաջան զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածաբան
վարդապետ։ Զի յառաջագոյն ի յունիսի ԻԲ (22) գրեալ թուղթդ և զկնի
այնր ի յուլիսի Ի (20) գրեալ Բ (2) թուղթք ի միում պահարանոջ ընդ հո-
գևոր որդւոյն մերոյ՝ Աւետիք սարկաւագին[174], հանդերձ Յովակիմ և Մով-
սէս պետաց թղթոց օրինակօքն, հասին առ մեզ։ Եւ ահա ի յօգոստոսի
Գ (3) ի Մօզտօքու և ի Զ (6) ի յԵագօրցկիու և ի ԺԳ (13) ի յամրոցէն սրբ-
բոյն Գէորգեայ գրեալ թուղթքդ ևս հասին։ Եւ ընթերցեալ մեր զիւրաքան-
չիւրսն ի ժամանակի իւրեանց, իմացաք զամենայն գրեալսդ մի ըստ միո-
ջէ։ Իսկ և որդիական սիրով զընծայս էիր յղեալ ձեռամբ տիրացու Աւե-
տիքին, որք էին՝
Ա (1) սև ջղլաւայ քիւրք՝ կապոյտ երեսօք, որ է հանգուցեալ Գրիգոր
աղային, Ա (1) արծաթեայ սահաթ, Ա (1) ոսկեայ քմաղարդի զութի՝
պարոն Յովհաննիսին Աղամալեան, Ա (1) ալմաս մատանի փոքրիկ, որ է
Բեկումինն Պետրպօլքու, Ա (1) մատանի կապոյթ եաղութ, որ է պարոն
Մկրտումի զոքանչինն, ԺԳ (13) գազ սև լուստրին, ԺԳ (13) գազ սև
կուղէթ, ԺԳ (13) գազ սև զամաս, ԺԳ (13) գազ կապոյտ զանէտուր, Բ (2)
գլուխ մեծ շաքար և Բ (2) զութի չայ[175]։
Զորս մեծաւ սիրով և օրհնութեամբ ընկալեալ, շնորհակալեցաք զսի-
րելի որդւոյդ, զոր Տէր օրհնեսցէ և վարձատրեսցէ, զօրացուսցէ և կա-
րողացուսցէ և միշտ փայլեցուսցէ ամենայն շնորհօք և հանճարեղու-
թեամբ։
Յուղարկեալ էիր ևս զշորս հարիւր ԺԱ (411) թուման ընդ Աւետիքին,
զորս մեզ հասոյց։ Որք էին պաճախլու և այլ կերպակերպ ոսկիք և Թիֆ-
252 լիզու ապասի, որոց զոր//պիսութիւնսն գրեալ ի սիահւոջ, եղաք ներ թըղ-
թոջս, որոց ԱԾԿԱ (161) թումանն սուրբ Երուսաղեմի փօլիցայն է, զոր
գրեալ եմք ի Պօլիս՝ տալ վէքիլի նորին, Ծ (50) թումանն ևս այժմ գրեցաք
տալ։ Երկուց ջամն լինի ԲԾԺԱ (211) թուման Սաղիմայ դրամ, իսկ մնա-
ցեալ ԲԾ (200) թումանն էր արդիւնք սրբոյ Աթոռոյս։

Դարձեալ ՄԾ (200) թուման ևս յառաջագոյն, ձեռամբ Թիֆլիզեցի
պարոն Եսայուն[176], էհաս առ մեզ, նաև զնոթեղէնս ևս հասոյց մեզ՝ պա-
րոն Եսային, որոց գինն է ըստ քոյդ սիահւոյն ութսուն և վեց թուման,
ԳՌՊԺ (3810) դիան, Վերոյ գրեալ Գ (3) դալամից չամն է ԴԾԶԶ (486)
թուման ԳՌՊԺ (3810) դիան: Բայց ի սոյն դրամոցս ԺԵ (15) թուման
եառաք երից վանորէիցն՝ ի կողմանէ հանգուցեալ Գրիգոր աղայի կտակին:
Զայս հանեալ ի վերոյ գրեալ դրամոցն, մնայ ԴՃՀԱ (471) թուման,
ԳՌՊԺ (3810) դիան՝ արդինք սրբոյ Աթոռոյս առ մեզ հասեալ: Որոց
աղագաւ ահա զյատուկ գապգագիր գրեալ, ընդ թղթոյս յղեցաք առ սիրե-
լիդ՝ ի միամտութիւն քեզ:
Այլ ի կողմանէ ճոթեղինաց խարճիցն պարոն Եսային ի մէնչ գրան
ինչ ոչ պահանջեց՝ ասելով, թէ ես ընդ Յովսէփ վարդապետին զհաշիւն
տեսանելոց եմ, որպէս յառաջ ևս եմք գրեալ քեզ:
Իսկ և նարդենիս Մինաս վարդապետն Աստուծով էհաս ի սուրբ
Աթոռս անվնաս և զՍաղիմայ առաջին ԴԾ (400) թուման փօլիցայի ձե-
ռագիրդ եբեր, զոր ահա ընդ թղթոյս դարձուցաք առ քեզ:
Նաև զԿարապետ վարդապետն, զոր խնդրեալ էիր, յուղարկեցաք,
պատուիրելով զի հարազատօրէն սպասաւորեսցէ քեզ: Դու ևս խնամա-
տար և շահօղ լիցիս ինքեան: Ընդ որում և ըստ խնդրոյդ զորբալոյս մե-
տար և զԳ (3) կոնդակ առաքեցաք առ քեզ. մինն՝ հասարակ, մինն՝ ի
առն և զԳ (3) կոնդակ առաքեցաք առ քեզ. մինն՝ հասարակ, մինն՝ ի
վերայ Պետրպօլքու և Մօսկովու յատկապէս, և միւսն՝ ի վերայ Ղրիմու:
Եւ վերահաստատեցաք յայգր զսիրելի որդիդ մեր նուիրակ և առաջնորդ,
զի յայս անգամ ևս կատարեսցես զգործդ և զայլ ամենայն հոգալիսդ
հոգասցես, և եթէ ողջ մնասցուք, ապա զոր ինչ գրիցեմք, այնպէս ա-
ր[ա]սցես:
Ահա. ըստ խոստման մերոյ առաջնոյ, առ ազնիւ Յովաննէս աղայն,
և առ Ներսէս աղայն, և առ նորնախիջևանցիսն զթուղթս գրեցաք, ի
պատասխանի թղթոց իւրեանց, զորս յառաջ ընկալեալ էաք, և ընդ թղթո-
ցըն յղեցաք ազնիւ Յովաննէս և Ներսէս աղայիցն զԱ Ա հատ Պարտա-
վճար գիրք՝ յիշելով և ի գրեանս իւրեանց, զորս յղեսցես առ նոսա: Պարտ
253 Մարգարին և Փիլիպպոսին և այլոց ձեռնհաս չեղաք գիր գրել // և յին-
քեանց ևս չունէաք զթուղթս: Բայց Գ (3) Պարտավճար գիրք յղեցաք,
որոց և պատշաճ իցէ տացես ի դիմաց մերոց:
Զօրհնութեան թուղթ մի ևս Աւետիքն խնդրեաց ի վերայ հանգուցեալ
Սարգիս աղայի կնոջն վասն սուզանոյ միոյ: Զայն ևս գրեալ յղեցաք,
զոր տացիք նմա, և եթէ չիցէք առեալ զեռևս զսուզանին, առնուցուք
Զթուղթ մի ևս օրհնութեան և շնորհակալութեան առ պարոն Միրզայբէկն
գրեցաք՝ յորդորելով, զի մինչ այլևս պատահիցի թարգմանել զթուղթ մեր
առ զօրապետն գրեալ, լաւապէս թարգմանեսցէ հաւատարմութեամբ:
Վարդան վարդապետն ևս, զոր յղեալ էիր, եկն ի սուրբ Աթոռս, և
մեք սիրով ընկալաք ըստ գրեցելոյդ. յայնմ կողմանէ անհոգ լեր, որպէս
և իցէ, սրբոյ Աթոռոյս զաւակ է: Եւ յաղագս նորա, զոր ինչ գրեալ էիր
առնել, զայնց որպիսութիւնն յԱւետիքէն իմանալոց ես, զոր և սա վէքիլ
արար ինքեանն: Վասն որոյ ես ևս գրեմ, պարտիք զկայսն սորա օր մի
յառաջ հասուցանել, զի մի յուսահատիցի:
Իսկ և սակս առաջիկայ կարգաւորութեանն, զամենայն գրեալսդ ի
յիւրաքանչիւր թուղթսդ, իմացեալ եմք: Այն որ գրես զգալստենէ Յովհան-
նէս կաթուղիկոսին, ահա Գ (3) ամ է, յորս միշտ գրէ, թէ գալոց եմ ի

տեսութիւն, այլ զեռևս ոչ եկն: Ի գալն, ի հարկէ. խորհրդակցելոց եմք
և քեզ գրելոց:
Եւ ի յօգոստոսի Զ (6) գրեալ թղթոջդ, որ խնդրես զթուղթս գրել առ
քնէազ գերապայծառ իշխանն և առ զօրապետն, բարւոք զիտումն է, սա-
կայն այժմ չունիմք զձեռնհասութիւն գրելոյ: Յետ սուղ միջոցի գրես-
ցուք:
Այլ որ գրես, թէ զայս ինչ ընծայ ... և այլն: Յիրաւի, զի ոչ գտանին
ի սուրբ Աթոռջս, և եթէ հետևիցուք, յայլ ուստեք բերել տալ, վնաս
լինի, քան թէ օգուտ, որոյ զպատճառն յԱւետիքէն իմանալոց ես: Բայց
զայս հարցանեմք սիրելւոյդ, թէ արդեօ՞ք պատկան է, զի զխաչ մի պատ-
րաստեսցուք վասն զօրապետին՝ իբրու շնորհ ինչ ի սրբոյ Աթոռոյս և
օրհնութիւն ի մէնջ: Կամ թէ դու յայդր զպատշաճաւոր ընծայ իմն պատ-
րաստեսցես ըստ պատուոյ զօրապետին և շուտով մեզ ծանուսցես, զի և
մեք նմա զթուղթ գրեալ առ քեզ առաքեսցուք, զոր ընդ ընծային մատուս-
ցես նմա ի դիմաց մերոց, իբրու թէ զընծայսն ես աստի իցեմք առաքեալ:
Ահա, թէ այսց երկուց զմինն պատշաճ տեսցես, և թէ զայլ ուրիշ իմն
կերպ գիւրին և վայելուչ վարկանիցիս, մեզ գրեսցես:
254 Իսկ վասն քնէազ գերափառ // մեծի իշխանին ևս, զոր ինչ պատեհ
համարեսցիս, նորապէս գրեսցես մեզ, որովհետև այն գրեցեալքդ ոչ
գտանին յԱթոռջս, որպէս ի վերոյ ևս յիշեցաք:
Ահա, թէպէտ առ նոսա զթուղթս եմք գրելոց, սակայն վասն այսոցիկ
թղթոյդ նայիմք: Ուրեմն, լաւապէս մտախոհ լեալ, շուտով ծանուսցես
մեզ: Բայց յաղագս դաշանց, զոր գրես, առ այդ ծանիր, զի պայծառա-
փայլ իշխանն մեծ Ա (1) թուղթ էր գրեալ առ մեզ հանդերձ ընծայիւ, որ-
պէս գիտես, և զօրապետն ևս երկու թուղթս է գրեալ մեզ, որոց տեղեակ
ես, և ի կողմանէ դաշանց, զորս դու խնդրես, նոքա զբան ինչ ոչ գրեն
առ մեզ: Ապա թարց նոցին խնդրելոյ և առանց գիտութեան ազգին մերոյ
որպէ՞ս կարեմք զդաշնագիրս գրել առ նոսա: Եթէ ասիցես (որպէս գրեսդ
իսկ), թէ հարց ցազգն, սիրելիդ իմ, որո՞ց հարցանեմ, ոչ ապաքէն բա-
զումքն և գլխաւորքն են ընդ իշխանութեամբ այլազգ թագաւորաց: Իսկ ի
յերկրոջս մերում եղեալ ողորմելիքն ապրուստի կարօտին, որք թէ զի՞նչ
կրեցին յանցեալսն, դու ևս լաւապէս գիտես: Ապա փոյթ չէ ցայսպիսի
խղճալիսն հարցանել, այլ զոր ինչ պատշաճն է, գրեալ եմք և ևս գրելոց
եմք: Զի յոժարութեամբ բաղձամք զալստեանն զոցին՝ առ ի յայց առնել
երկրիս և խղճալի ազգիս մերում: Եւ զայլն թողում խոհեմութեամբդ իմա-
նալ:
Իսկ վասն ազնիւ Յովաննէս աղայի եկեղեցւոյն, որ զկոնդակ էիր
խնդրեալ ի վերայ Հնդկաց երկրին, թէպէտ յառաջ խոստացաք յղել, սա-
կայն որովհետև վասն նորնախիջևանցւոցն տէր Յարութիւնին եառւք, մինչ
վասն նորա ևս գրէաք, գիտես զի տրտունջ լինիւր ի մէջ ժողովրդեանն,
վասն այնորիկ ոչ գրեցաք:
Եւ վասն ազնուութեանն սիրելւոյն մերոյ, լուսահոգին մեր թէ ի
թուղթս նորա և թէ այլոց միշտ գրէր, նոյնպէս և մեք գրեալ եմք և ևս
գրեմք, որպէս յանցելումն ի թղթոջ զօրապետին ևս գրեցաք, զոր և գի-
տես իսկ: Ուրեմն այլոց գրեցուցանելն չունի ինչ հարկաւորութիւն:
Եւ յաղագս կանոնացդ ի ներկայս ևս կարի զբաղեալ եմք և զժամա-
նակ ոչ գտաք առ ի հոգալ, համբերեա ժամանակ ինչ ևս, հոգացեալ գրե-
լոց եմք սիրելւոյդ իմոյ:

Եւ զայլ ամենայն որպէսն մեր ի սրբոյ Աթոռոյս, ի հոգևոր որդւոյն
255 մերոյ՝ տիրացու Աւետիքէն // իմանալոց ես: Այլև՝ ահա ի նշան սիրոյ և ի շնորհածին ծնողէս քումմէ ի սրբոյ Աթոռոյս քեզ պարգև հոգևոր և օրհնութիւն մայրական առ որդիդ իւր շնորհընկալ, առաքեցաք ընդ թղթոյս զմի չիչակլու խառայ փիլոն, Ա (1) խալիչայ և Բ (2) վեղար[177]: Զորս ընկալեալ բարեաւ վայելեսցես՝ ունելով յարաժամ ի մտի զմայրս քո շնորհատու սուրբ Աթոռս և զմեզ:

Ողջ լեր ի Տէր և ի շնորհս նորին զօրացեալ և փայլեալ միշտ:

Գրե[ցաք] ի ՌՄԼԲ (1783) և ի սեպտ[եմբերի] Ե (5):

Ձեռ. № 2803, էջ 251—255

778. (1783 թ. 5 սեպտեմբերի—Կոնդակ ի վերայ Ղրիմու մնացորդ ժողովրդեանն. մխիթարութիւն և պատուէր, զի զՌուսաց երկրի նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն գիտասցեն իւրեանց նուիրակ և առաջնորդ: Ըստ որում, զի այն կողմն ես անկեալ էր այժմ ընդ իշխանութեամբ կայսրուհւոյն Ռուսաց:

Ձեռ. № 2803, էջ 344—347

779. 1783 թ. 5 սեպտեմբերի—Թուղթ ի Մոսկով առ Ներսէս աղայն, ի պատասխանի նախկին և շնորհաւորական թղթոյն իւրոյ:

Շնորհակալություն է հայտնում նորնախիջևանցիներին օգնություն ցույց տալու համար, հանձնարարում է զարձյալ օժանդակել Հ. Արղությանին, որին վերստին նշանակել է ռուսահայոց թեմի առաջնորդ և էջմիածնի նվիրակ:

Ձեռ. № 2803, էջ 348—350

780. 1783 թ. 5 սեպտեմբերի—Թուղթ ի Նոր Նախիջևան առ քահանայսն և ժողովուրդսն, ի պատասխանի ի 1783 թուոջ Փրկչին և յապրիլի 24 գրեալ թղթոյն նոցա, որք վասն նորակերտելի եկեղեցւոյն խնդրեալ էին զկոնդակ շնորհել ժողովարարութեան ի վերայ Հնդկաց երկրին՝ ի յօգնութիւն իւրեանց, զոր և կատարեաց սրբազանն:

Ձեռ. № 2803, էջ 371—375

781. 1783 թ. 7 սեպտեմբերի—Թուղթ ի Կարին առ Թարգիզատէ խօջայ Յօհաննէսն:

Ցավակցություն է հայտնում նրա եղբոր՝ խոջա Փիլիպպոսի մահվան կապակցությամբ: Հանձնարարում է զտնել ս. Աթոռի նվիրակ, հանգուցյալ Հակոբ վարդապետի իրերի անհետացած մասը և ուղարկել էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 351—352

782. 1783 թ. սեպտեմբեր—Թուղթ ի Սչովայ առ աղաչայ Յովաննէսն և առ որդիսն իւր՝ Նիկողայոս, Գրիգոր և Վարդերես աղայսն վասն առաջնորդի, որք հանդերձ համայն ժողովրդովքն թախանձանօք զառաջնորդ խնդրէին, և սրբազան Վեհն զՈւռումէլու նուիրակ Ստեփաննոս վարդապետն իբր առաջնորդ կարգեաց նոցա, եթէ հաճիցին ընդ միմեանս:

Ձեռ. № 2803, էջ 255—257

783. 1783 թ. 22 սեպտեմբերի—Կոնդակ իբրու առաջնորդութեան վասն Ուռումէլու նուիրակ Ստեփաննոս վարդապետին ի վերայ Սչովայու, Պօթիշանու, Եաշու, Ֆօքշանու և այլևս նոցին մերձակայից տեղեաց մեր Թուղիկոսէն զառաջնորդ խնդրեցին, և նա խոստացաւ թէպէտ յղել, բայց մերձ ընդ մերձ փոխեցաւ յաշխարհէ, և մնացին նոքա ցարդ առանց

առաջնորդի, վասն որոյ տրտնջէին: Ուստի յարդեանս սրբազանն զնուիրակն առաջնորդ կարգեաց նոցա (որպէս և ի ներքոյ լիապէս յիշի):

Ձեռ. № 2803, էջ 258—261

352 784. 1783 թ. 22 սեպտեմբերի—Թուղթ ի մեծն Պօլիս առ տեղւոյ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի ի յուլիսի Զ (6) գրեալ թղթոյ նորին վասն զանազան բանից:

Յորմէ սիրով բազմաւ և կարօտիւ, քրիստոսականաւ սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ և սրբոյ միածնաիջի տեղւոյս զօրացուցիչ շնորհիւն, ծանի՛ր, սիրելի և հոգևոր որդի մեր, ծոցածին և բրտնաջան զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ ատոռածաբան վարդապետ: Զի ի յուլիսի ամսոյ ԻԶ (26) զթուղթ գրեցաք առ քեզ, ի պատասխանի յառաջ գրեալ թղթոցդ, և հանդերձ այլովք թղթովք յղեցաք և քանի մի աւուրբք զկնի
353 զԿ (60) հատ Պարտավճար գիրք ես ուղարկեցաք, որք ի հարկէ մինչև ցարդ հասեալ են առ//քեզ: Իսկ այժմ ի յօգոստոսի... էհաս առ մեզ ի յուլիսի Զ (6) գրեալ թուղթն քո, զոր ընթերցեալ իմացաք զամենայն գրեալսդ:

Նախ՝ գրեալ էիր վասն խղճալի սչովայից տրտնջանացն վասն առաջնորդ չունելոյ, հանդերձ սակաւուք ինչ որպիսութեամբք Ուռումէլու նուիրակ Ստեփաննոս վարդապետին, զորս իմացաք լաւապէս: Առ որ այսպէս ծանիր: Զի ահա ըստ ներկայիս ձեռնտուութեան, զնոյն Ուռումէլու նուիրակ Ստեփաննոս վարդապետն կարգեցաք նոցա առաջնորդ՝ յատկագրելով զկոնդակ մի ի վերայ հասարակութեանն և զթուղթ մի յատկապէս ի վերայ Սչովայու աղաչայ Յովհաննէսին և որդւոցն, և զթուղթ մի ես ի վերայ իշխողի նոցին, և զթուղթ մի ես առ ինքն Ստեփան վարդապետն, զորս և կնքեալ, բայց բաց յղեցաք ի ձեռս քո՝ տեսանել և փակեալ յուղարկել առ Ստեփաննոս վարդապետն կա՛մ ընդ պատահեալ հաւատարիմ զնացողի, և կամ յատուկ փայեկաւ: Եւ դիտումն մեր այս է, զի եթէ Ստեփան վարդապետն գնացէ տակաւին չիցէ արագեցեալ բանն յումեքէ, Ստեփան վարդապետն գնացէ ի միւս ի մէջ նոցա, զԳրիգոր վարդապետ սպասաւորն իւր առաքեսցէ ի տեղիսն՝ կատարել զնուիրակութիւնն և ինքն հովուեսցէ զնոսա: Եւ կալով նոցա ի միջոց ինչ առ միմեանս, եթէ հաճոյ լիցին իրերաց, գրեսցեն յերկուց կողմանց զյօժարութիւն, զի ես առաւել հաստատեսցուք զնա նոցա առաջնորդ: Բայց թէ ո՛չ հաճիցին ընդ միմեանս, զայն ես ծանուսցեն մեզ, զի զայլ ումն պատշաճաւոր վարդապետ յղեսցուք: Զայս թէպէտ ոչ ի հասարակական կոնդակոջն, այլ ի թղթոջ աղաչայ Յովաննէսին և որդւոցն գրեալ եմք, որպէս տեսանելոց ես: Եւ վասն իշխողի նոցին յատկութեանցըն, որ գրեալ էիր զտանել, որոնել ետուք զպատասն թղթոյ և ոչ երևեցաւ: Այժմ կերպիւ մի յարգանօք գրեցաք զանունն ի թղթոց նորին լինելոց քեզ, բայց յայնմ կողմանէ ես ի թղթոջ աղաչայ Յովաննէսին զբան գրեցաք, որք յընթեռնուլդ զնոյն թուղթսն, յայտնի են լինելոց քեզ:

Իսկ առ սիրելին մեր՝ Մինաս ատոռածաբան վարդապետն գրեալ թուղթն Ստեփաննոս վարդապետին, զոր յղեալ էիր, տեսաք և ետուք ի յիւրն: Մինչ յետ քան զհասանիլ թղթոյդ, ոչ բազում աւուրբ անցեալ, նա ես եկն էհաս խաղաղութեամբ ի սուրբ Աթոռս և հանգեաւ ի գիրկ սորին՝ շնորհածին մօրս իւրոյ, որ և կայ ի սէր մեր: Եւ ի նոյն Ստեփաննոս վարդապետէն եկեալ պահարանաւ թուղթքն, զորս յղեալ էիր առ պարոն Հայրապետն: Ի մէջ նոցա առ մեզ ես թուղթ էր եղեալ, զոր պարոն Հայրապետն յղեալ էր առ մեզ: Տեսաք և ընթերցաք, յորում բացի համառօտ

354 որպիսութեանց, այլ իմն նիւթաւոր բան ոչ գոյր։ // Իսկ ըստ ի յանխափ Ժ (10) գրեցեալ խոստմանց, որ զԺԲ (12) օգմայ բեռնիկ բեռնար թուղթ և զԺ (10) դաստայ Ստամպօլու օրթայ թաղղայ թուղթ էիր առեալ և մերայնոց իրօքն մէկ բեռն շինեալ և յղեալ ծովովն Պոնտոսի՝ ի հասանիլ Մինաս վարդապետին մերոյ ի Կարին։ Այն բեռն ևս հասեալ էր անդ։ Զոր և նա եբեր և հասոյց ընդ ինքեան ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Եւ մեք բացեալ զայն, զթուղթսն մեր առաք և հաւանեցաք, զի լաւք էին։ Եւ միւս ամանաթքն հասին ի տեարսն։ Սակայն [վասն Ստամպօլու միջակ թաղղայից Ժ (10) դաստային, որ մէկ օգմայ էիր գրեալ, մեք կէս օգմայ կարծեմք զԺ (10) դաստայն, զի մէկ սաղ օգմայն Ի (20) դաստայ լինի, որպէս գիտեմք։ Իսկ]* վասն գնոց և ծախուց նոցին, որ զգասպս էիր խնդրեալ, անհարկաւոր համարեցաք վասն սակաւ բանի զգասպզ գրել։ Դու գրեա ի դաւթարոջդ։ Ապա մինչ յաղագս մեծ բանի զգասպզ գրիցուք, զայդ ևս յիշելոց եմք ընդ նմին։ Եւ վասն գործոյդ բարեկերպութեանն, որ գրեալ էիր, ուրախացաք յոյժ։ Աստուած միշտ զյաջողումն բարի պարգևեսցէ և օրհնեսցէ և զօրացուսցէ զհամայն ժողովուրդս վիճակիդ և հանապազ սիրով և խաղաղութեամբ պահեսցէ։

Ի կողմանէ կանթեղից ևս, զոր ինչ գրեալ էիր, իմացաք, ի հարկէ, եթէ մինչև ցայժմ առեալ ես կամ առնուցուս, յուղարկելոց ես։ Ծանուցեալ էիր ևս զսիրոյ և բարեկամութենէն, որ ընդ քեզ և ընդ Եսայի վարդապետն. առ որ ցնծացաք ոգւով չափ։ Եւ զգիրն նորին ևս, զոր յղեալ էիր, ընկալաք և ընթերցաք։ Եւ սակս նորին փոլիցայ արարեալ և քեզ հասեալ ԲՃԿ (260) ղուռուշ դրամոցն, որ գրեալ էիր, զի զԱՃ (100) ղուռուշն յայնցանէ հասուցուք ի Թիֆլիզ՝ ի տունն տէր Առաքելին։ Գրեցաք տեղւոյ առաջնորդ և նուիրակ Կարապետ վարդապետին այնպէս առնել և զթուղթ առնուլ և յղել մեզ, զի և մեք յուղարկեսցուք առ քեզ՝ առ ի հասուցանել Եսայի վարդապետին ի Զմիւռին։ Իսկ սակս մնացեալ ԱՃԵ (105) և ԾԵ (55) ղուռուշիցն, որ գրեալ էիր, զի տացուք ի տունն տէր Մելքոն և նորընծայ տէր Մովսէս քահանայիցն, տալ ետուք։ Յորոց և ահա զթուղթս առեալ՝ եդաք ներ թղթոջս և յղեցաք առ քեզ, զորս և դու
355 յղեսցես առ Եսայի վարդապետն՝ ի միամ//տութիւն նմին։

Գրեալ էիր ևս զԳալուստ վարդապետի զի՛նչ պատասխանի գրելն քեզ ի կողմանէ փոլիցային և իմացաք։ Ի հարկէ, մինչ զբան ինչ բերցէ ի ձեռն, յայնժամ հասուցանելոց է քեզ։ Ապա որպէս մտածեալ ես վասն Սաղիմայ փոլիցային, այնպէս առնելդ բարւոք լինի։ Բայց թէ ի մահտեսի Զաքւոյն առ որ թուղթս ես գրեալ, զինչ պատասխանի գայցէ առ քեզ, ազդեսցես մեզ, զի գիտասցուք։

Պարտավճար գրքի ելանելն ի տպէն և մեր կազմել տալն և յղելն առ քեզ և զԱտենույ[178] սկսանիլն, յառաջ գրեցաք սիրելւոյդ, որպէս և յայսմ թղթոջ ի վերայ յիշեցաք վասն Պարտավճարին։ Այժմ ահա մինչ ի «Ծափս հարէք», փառքն եմք հասեալ «Մի նախանձիր» կանոնին։ Այսպէս իմա ի կողմանէ Ատենույն։

Ի վերայ պարոն Մելքոն առն միոջ ևս զօրհնութեան և զմխիթարութեան թուղթ էիր խնդրեալ վասն կատարելոյն զկտակ ուրումն Գէորգի հանգուցելոյ՝ տալով քեզ յանուն սրբոյ Աթոռոյս ձեռամբ տէր Սարգիս քահանային զերեսուն ղուռուշ։ Զոր ահա գրեալ ընդ թղթոյս յղեցաք առ քեզ՝ հասուցանել առ նա։ Իսկ և ի կողմանէ սիրելւոյն մերոյ՝ մահտեսի խըտըրին

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է։

վասն հոգալ կամիլոյն զծախսն միոյն ի սեանց քրիստոսաէջ սրբոյ տաճարիս, զոր ինչ գրեալ էիր երկարապէս, իմացաք։ Գիտեա առ այն, զի եթէ այլ ոք խօսի, ասեմք թէ անտեղեակ է։ Բայց ի նորոգիլ երկուց սեանցըն, թէ որպէս ետուն զծախսն տուօղքն, լաւապէս տեղեակ ես, ըստ որում դու իսկ էիր ի մէջ բանին։ Ապա ընդէ՞ր ոչ խելամուտ առնես զնա ստուգութեան բանին։ Ոչ ապաքէն տուօղքն ծախուց, յառաջ քան զնորոգել սեանցն Ծ Ծ (50—50) թուման ետուն և ապա մինչ նորոգեցան և դրուագեցան բոլոր և ծաղկեցան ևս, ծախքն յաւելան քան զտուեալսն։ Ահա յայս միւս Բ (2) սեանցս վերայ աւելի խարճ գնայ, քան զառաջինսն, որովհետև այսօրէկ յոյժ խախտեցեալք էին, քան զնոսա և վարպետն ևս զերկաթ և զկապար շատ ի կիր արկանէ ի սոսա, որպէս և ամենայն հանդիպօղք տեսանեն[179]։ Վասն որոյ ահա առ մահտեսի խըտըր սիրելին մեր, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր այժմ գրեալ էր մեզ, զօրհնութեան թուղթ գրեցաք (զոր և յղեցաք քեզ՝ տալ ցինքն)։ Յորում գրեալ եմք, թէ եթէ ըստ ըղձից և ունիս զկարողութիւն, զոնեայ ըստ առաջնոցն պարտիս
356 զ750 ղուռուշ տալ, // իսկ թէ ոչ կարողացիս, զայն ևս դու գիտես, առ այն չես մեղադրելի։ Այսպէս եմք գրեալ ի թղթոջ նորին, զոր թերևս և դու ընթերցցիս։ Ուրեմն դու ևս ըստ այսմ խօսեսցիս։ Ահա առաջին դասի սիւնն աւարտեցեալ է և ի յետին դասի սիւնէն ևս փոքր ինչ բան է մնացեալ՝ առ ի աւարտիլ Աստուծով։ Բայց յամր և կարի դժուարութեամբ շինէ վարպետն, մանաւանդ ի փոխելն զոմանս քարինս, իսկ զրանց կամարացն՝ զյոյժ դժուարութիւնս կրէ։ Զի զխախտեալ քարինսն զալամով սակաւ առ սակաւ մանր մանր բեկանէ, մինչև ի լինիլ տեղի նորոց քարանց, զի մի ույժ առցէ կամարն, և այնպէս զնոր քարինս դնէ։

Ինչևիցէ, յոյս ի Տէր, զի ի քանիս աւուրս աւարտեսցէ։ Եւ ի գալոց գարնանն ևս, եթէ լինիցի յաջողումն յԱստուծոյ, թէ զսիւնսն և թէ զբոլոր մէջ եկեղեցւոյն սպիտակցուցանելոց եմք և ծաղկել տալոց։ Այսպէս գիտացեալ, ընդ մահտեսի խըտըրին խօսեսցիս, եթէ տայցէ զ750 ղուռուշն, առցես և ծանուսցես մեզ, զի զնորին յիշատակն գրեսցուք ի վերայ միոյ սեանն։ Իսկ թէ չկարիցէ տալ, ինքն ողջ լիցի, զոր ինչ պատասխանեսցէ, զայն ևս շուտով գրեսցես մեզ, զի միւս թախանձողացն մի՛ բացասիցուք։

Նաև Թէկիրտաղցի տիրացու Յովհաննէս ոմն, ժամանակ ինչ ի Վանայ երկրի վանորայսն շրջեալ և կացեալ, ապա յայժմ ներկայի եկն ի սուրբ Աթոռս և միաբան եղև սմին ինքնայօժար կամօք։ Եւ զի ի կողմանէ խարճելոյ պակասութիւն ունի, վասն որոյ ի Թէքիրտաղ ի վերայ բարեկամաց իւրոց՝ Եօղուրտճի օղլու Կարապետին և նորին եղբայր Խաչիկին (որք ազգայինք ևս են իւրեան), ահա զթուղթ գրեաց, առ որս ըզԳՃ (300) ղուռուշ դրամս ունի, և զդրամսն իւր խնդրեաց։ Եւ մեք զայն թուղթն ահա բաց յղեցաք ի ձեռս քո, զոր տեսցես և փակեալ յղեսցես առ յիշեալ Եօղուրտճի օղլու Կարապետն և նորին եղբայր Խաչիկն։ Եւ դու ևս ընդ դմին զգիր գրեսցես առ նոսա և զայն դրամն պահանջեալ առնուցուս և իմաց արասցես մեզ, որ մեք անդս տացուք սոյն տիրացու Յովհաննէսիս։ Ուրեմն զթուղթն յղեսցես հանդերձ քոյդ գրով և թէ զդրամսն հասուսցեն կամ զպատասխանի գրեսցեն, որպէս և լինիցի, ծանուսցես մեզ։

Իսկ և առ սիրելի եղբայրն մեր՝ պատրիարգ վարդապետն ահա զգիր գրեցաք, ի պատասխանի քանեաց թղթոցն նորին, զորս ընդ Յովակիմ վարդապետին և քան զայն յառաջ և յետոյ գրեալ էր, յորում յիշեցաք զձեռնադրելն մեր զՅովակիմ վարդապետն եպիսկոպոս, ըստ խնդրոյ իւրեանց։

357 Եւ զի վասն քո զշնոր//հակալութիւնս էր գրեալ և խոստացեալ, թէ զամենայն բան ձեր ի բարի կողմն շրջել ջանամք ի հանդիպիլն, մեք ևս զշնորհակալութիւնս գրեցաք, թէ վասն առ քեզ սիրոյն և ասպնջականութեանն և թէ վասն խոստմանն բարեկամութեան։ Ապա և վասն Յակոբ վարդապետին զմխիթարութիւն գրեցաք՝ ծանուցանելով և զհասանելն Մինաս վարդապետին ի սուրբ Աթոռս։

Եւ քանզի աղնիւ սիրելին մեր՝ օրհնեալ Յարութիւն ամիրայն ևս էր գրեալ մեզ զթուղթ ընդ Յովակիմ վարդապետին, նմա ևս այժմ զգիր գրեցաք՝ յիշելով զձեռնտրութիւն նորին։ Ապա և վասն Սաղիմայ մահտեսի Զաքու յաղագս սրբոյ Աթոռոյս կտակեալ դրամոյ դժուարաւ առ ձեռն գալոյն, հետևմանն նորա զշնորհակալութիւնս արարաք և խնդրեցաք և ևս հետևիլ, զի ի ձեռն գայցէ, և վասն քոյ ևս զշնորհակալութիւն և զյանձնարարութիւն գրեցաք։ Այլև ընդ Մինաս վարդապետին ևս էր զթուղթ գրեալ, զայնր հասանելն ևս ծանուցաք՝ օրհնութեամբ և շնորհակալութեամբ։

Զայսոսիկ զերկոսին թուղթս ևս մատուցես նոցա՝ ողջոյն և օրհնութիւն տալով ի մէնջ։

Այլև ի գալ Մինաս վարդապետին, հարցաք ցնա վասն ԿԵ (65) ղուռուշին, որ ի կողմանէ ծախուց զանգակացն հասանելոց էր առ ինքն, որ ի Ղարսայ մինչև ցաստ և մինչև ցկախիլն ի տեղին խարճեցեալ եղև (որպէս գիտես իսկ)։ Ասաց, թէ ի գալստեան աւուրս ԻԶ (26) ղուռուշ միայն ետ ինձ պարոն Եսային և միւս ԼԹ (39) ղուռուշն՝ թէ առ պարոն Եսային է մնացեալ, և թէ առ Սուալաճեան պարոն Յովաննէսն, չգիտեմ։ Վասն որոյ զայն թուղթն, զոր առ Մինաս վարդապետն գրեալ էաք յայսմ կողմանէ, ահա յղեցաք առ քեզ, որովհետև քոյդ ձեռամբ է գրեցեալ և լաւապէս վերահասու ես։ Ընդ պարոն Եսայեան խօսեսցիս և զթուղթն առաջի նորա ընթերցցիս, զի մեք գիտէաք, թէ ԼԹ (39) ղուռուշն հասեալ է առ Մինաս վարդապետն և վասն ԻԶ (26) ղուռուշին գրեցաք զայդ թուղթ առ ի զայն ևս առնուլ ի պարոն Եսայիէն, որ լինի ԿԵ (65) ղուռուշ։ Բայց
358 ըստ ասից Մինաս վարդապետին՝ զյետին ԻԶ (26) ղուռուշն // տուեալ է և զառաջին ԼԹ (39) ղուռուշն չէ տուեալ։ Իսկ ըստ գրեցեալ հաշուին թուի, թէ այս յիշեալ ԼԹ (39) ղուռուշս առ պարոն Եսային է մնացեալ։ Որպէս և իցէ, ահա զթուղթն յղեցաք։ Ընդ պարոն Եսայի սիրելւոյն մերոյ յայդր զհաշիւն տեսեալ, գրեսցես մեզ, որում և ողջոյն և զաստուածային օրհնութիւն տամ յատուկ սիրով և յանձնեմք զնա ի խնամս Տեառն։

Այլև առ Եսայի վարդապետն ևս զթուղթ գրեցաք և յղեցաք առ քեզ, զոր հանդերձ ի վերոյ յիշեալ երկու թղթովքն, զորս աստ ի յերկուց քահանայից տանցն առաք, յուղարկեսցես առ նա ի Զմիւռին։ Եւ զորպիսածանոյց գիրդ մի պակասեցուցես ի մէնջ։

Ողջ լեր ի Տէր և ի շնորհս սրբոյ իջման տեղւոյս նորին զօրացեալ յարաժամ։

Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուոջս, ի սեպտեմբերի ԻԲ (22) և ի լուսածորան Աթոռս Սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 352—358

785. [1783 թ. հոկտեմբեր]—Թուղթ սիրոյ առ Գէորգին խանն՝ որդին արքային Վրաց Հերակլայ, ի շնորհաւորութիւն նորոգ կին ածելոյն՝ զկնի մահուան առաջին կնոջն։

Ձեռ. № 2803, էջ 381—383

786. 1783 թ. հոկտեմբեր—Թուղթ առ ղարահիսարցի մահտեսի Բաղտասարն և մահտեսի Դաւիթն, որք ի Ղարահիսար զմէկ տուն էին տուեալ վախմ սրբոյ Աթոռոյս և ինքեանք ի Թոխաթ են։

Ձեռ. № 2803, էջ 384—385

787. 1783 թ. հոկտեմբեր—Ի յԱտրանա առ մահտեսի Գէորգն, որ ի Թոխաթ զԻ (20) սինի էր շինեցուցեալ և յանձնեալ նուիրակ Յակոբ պետին, և յետ մեռանելոյ նորա անդ, ընդ այլ արդեանցն հասին ի սուրբ Աթոռս։

Ձեռ. № 2803, էջ 385—386

788. 1783 թ. 20 դեկտեմբերի—Դարձեալ թուղթ ի մեծն Պօլիս առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի սեպտեմբեր ամսոյ ի Գ (3) գրեալ թղթոյն՝ յաղագս բազում որպիսութեանց։

Յորմէ հայրականաւ օրհնութեամբ, որդիականաւ սուրբ ողջունիւ և հոգևկանաւ ճշմարիտ սիրով, նաև սփոփարար և զօրացուցիչ օգնականութեամբ և շնորհիւն սրբոյ տեղւոյս քրիստոսախիջի և մերովս բազմագոյն կարօտիւ գիտութիւն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում և հաւատարիմ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակայ աստուածաբան վարդապետիդ։ Զի ի սեպտեմբերի Գ (3) գրեալ թուղթն քո էհաս առ մեզ ի հոկտեմբերի … և զամենայն գրեալսդ ի նմին իմացաք։ Իսկ մեք ի սեպտեմբերի ԻԲ (22) զթուղթ եմք գրեալ առ քեզ և հանդերձ խնդրեալ թղթովքդ յղեալ եմք ի ձեռս քո և յուսամք, թէ մինչև ցայժմ վաղ ուրեմն ժամանեալք իցեն։ Եւ յայնմիկ թղթոջն, որ առ քեզ, զոր ինչ ի յետին գիրս քո գրեալ ես, բազմաց ի սոցունց յայնժամ արարեալ եմք զպատասխանիս, իսկ միւսոցն
359 բանից որոց և ի դէպ է, // այժմ պատասխանեսցուք։

Արդ, գրեալ էիր զաստկութենէ ժամտամահին տեղւոյդ և զքո ևս ի ցաւոյ նորին անկանիլն։ Ընդ որս արդար և մեծապէս տրտմեալ ցաւեցաք, սակայն և յաղագս վերստին ի յառողջութեան կողմն լինելոյդ ըստ ամենառատ ողորմութեանն Աստուծոյ սրտագին և զուարճացեալ եղաք՝ գոհանալով զբարերարութենէ Տեառն, որ և պարգևեսցէ սիրելւոյ որդեկիդ մերում զկատարեալ առողջութիւն և միշտ ի բարեկեցութեան պահեսցէ։

Եւ թէպէտ կամէաք զպատասխանի թղթոյդ շուտով գրել, այլ զի ոչ էաք աղատ յայլոց զբաղմանց, և զի դու ևս գրեալ էիր, թէ յետոյ գրեսցես զլիագոյն որպիսութիւնս, վասն որոյ յաւուրս ինչ սպասէաք և ևս ընդունիլ զգիր ի քէն, զի գիտացեալ զլիալիր որպէսն քո և տեղւոյդ, ապա գրեցեմք առ քեզ զթուղթ։

Բայց մինչ այսպէս մտադրեալ կայաք, իշխօղն երկրիս[180] այսորիկ սաստկապէս հիւանդացեալ, կենդանուրկ եղև ի նոյեմբերի Ժ (10)։ Զկնի որոյ մեծամեծքն Երևանու հրաւիրեալ տարան զմեզ ի խորհուրդ՝ սակս լինելոյ ուրուք իշխան երկրիս։ Եւ եկաց մեծ որդի մեռելոյն՝ Ղուլամ-Ալին ի տեղի հօրն իւրոյ, որոյ աղագաւ միաբանութեամբ զբազմակնիք մահսար գրեցաք առ արքայն Վրաց, զի նա ևս հաճեսցի։ Եւ մնացաք մեք անդ ի յԵրևան, նայելով պատասխանւոյ բազմակնքոյն մերոյ, մինչ յետ իբր ամսօրեայ ժամանակի եկն ի նմանէ նամակ և խիլայք ընդ Մուխրամ բէկին յանուն Ղուլամ-Ալւոյն՝ վասն խանութեան նորին։ Ապա թէ դարձաք ի սուրբ Աթոռս՝ ընկալեալ զխիլայս ի նորոգ խանէն։

Այլ յայնրան աւուրսն, յորս կացաք յԵրևան վասն բազմադիմի օգտից Տանս սրբոյ, որովհետև եղանակն կարի ցուրտ էր, ոչ սակաւ կրեցաք զվիշտս ի ցրտութենէ, որով և ստացաք զտկարութիւն և զաստկագոյն

հալ ես, և տակաւին ի նոյնս կամք։ Սակայն զամենայն զցաւս իմ իբրու
360 թո//ղեալ ի բացեայ, վասն ի քէն ոչ թուղթ գալոյ ընդ երկար միջոցս,
անկեալ կամ ի յանհնարին տարակուսանս և ի մտմտանս։ Քանզի և յայս
ուրբս գիր առաք ի Կարնոյ ի մեր վէքիլ Հայրապետէն, որ գրէ, թէ
յանցեալսն երեք թաթարք եկին ի Պոլսոյ և ի նուիրակ վարդապետէն գիր
չառի։ Այս ես բազմապատկեաց զմտատանջութիւնս մեր, ուստի զայլես
յամեցուցանելն անօգուտ վարկանելով, ահա զայս թուղթս գրեցաք առ
քեզ, զի իմասցիս փոքր ի շատէ զներկայական որպէսս մեր և երկրիս, և
դու ես, եթէ մինչև ցարդ չիցես գրեալ, փութասցիս ժամ մի յառաջ զոր-
պիսածանոյց թուղթ քո հասուցանել առ մեզ, զի միամիտ լիցուք։
Եւ վասն սրբոյ Երուսաղէմի և Հաշտարխանու նուիրակ Կարապետ
վարդապետի առ մեր Յովսէփ վարդապետն հասուցանել չխուն թուման
դրամոյ հատուցմանն, որ հարցեալ էիր, ահա գրեմք, զի զայն ես տացես,
քանզի ի Յովսէփ պետէն առ մեզ է հասեալ և թուի, թէ յառաջ ես իցեմք
գրեալ վասն այսորիկ։ Իսկ սակս ՃԾ (150) թումանի առ քեզ գրեալ փո-
լիցայագրին, զոր յղեալ էաք առ պետն Վրաց վասն առ քեզ առաքելոյ
այժմ պօլսեցի տպիչ Պօղոսն, որ ի Թիֆլիզու եկեալ յԱթոռոջս է, պատ-
մեաց մեզ, թէ պարոնն ասէր վասն այն թղթոյն, թէ կորուսեալ եմ և ոչ
կարեմ գտանել, վասն որոյ գրել պարտիմ հոգևոր տէրին ծանուցանել ի
Պօլիս նուիրակին իւրոյ ի զգուշութիւն։ Եւ թէպէտ դեռևս ըստ այսմ մտաց
թուղթ չունիմք ընկալեալ ի նմանէ, սակայն ահա զգուշացուցանեմք զքեզ,
զի աչքաբաց կացցես և մի դիւրութեամբ հաւատացեալ կողոպտիցիս շու-
տով ի խաբեբայից այնու թղթով մերով, այլ լաւապէս վերահասու լիցիս։
Իսկ յիշեալ տպագիր Պօղոսի աստ լինիլն վասն այնր է, զի օրհնեալ
արքայն Վրաց զմի լաւ վայելչակերտ տպագրութեան գալկեահ է առա-
քեալ մեզ ընծայ ի հաստատընտ փայտից՝ հանդերձ ճարտար հիւսամբ։
Եւ սա վերակացութիւն առնելով, զպակասորդ մանր գործիսն շինել տայ
և ի տեղւոջն յարմարեցուցանէ։
Այլև՝ վասն Եսայի վարդապետի առ քեզ հասուցեալ ՄԿ (260) զու-
ռուշին, որ յիշեալ էիր, զայն յառաջագոյն ըստ գրեցելոյդ երեք բաժին
արարաք, զերկու բաժինսն աստ հասուցաք որոց և հասանելի էր, և ի նո-
361 ցունց զղապղն առեալ // յղեցաք առ քեզ յառաջ քան զայս ի սեպ[տեմ-
բերի] ԻԲ (22), և զմի բաժինն ես ի Թիֆլիզ հասուցաք ի տունն տէր
Առաքելին, ձեռամբ առաջնորդ Կարապետ վարդապետին։ Ուստի և նա
այժմ զղապղն առեալ և յղեալ էր, զոր և մեք ահա ընդ թղթոյս առ քեզ
յուղարկեցաք՝ հասուցանել ընդ միւսոցն առ Եսայի վարդապետն հան-
դերձ նորոգ առ նա գրեալ թղթովն ի միամտութիւն նմին։
ԶՄինաս վարդապետին մերոյ ի սուրբ Աթոռս ժամանելն, հանդերձ
քո ի վերայ Պոնտոսի ծովուն յղեալ Ա (1) բեռն խոզն, յառաջ եմք գրեալ
քեզ[181]։ Վասն Աշովայու առաջնորդութեանն ես յայնժամ գրեցաք զթուղթս
առ նոսա և առ իշխօղն նոցին և առ Ուռումէլու նուիրակ Ստեփան վար-
դապետն, կարգելով զնա նոցա առաջնորդ և զնոյն գրեանսն բաց առ քեզ
յղեցաք։ Ի հարկէ, տեսեալ և իմացեալ ես և յղեալ առ նոսա։
Գրեցաք յայնժամ և առ կեսարացի մահտեսի խըտըրն զթուղթ ի
կողմանէ ծախուց միոյ սեանն սրբոյ տաճարիս, տալով և քեզ ի թղթոջ
քում զնիւթս հարկաւոր ասութեան, խօսիլ ընդ նմա։ Ընդ այսց առ
պատրիարգ վարդապետն և առ Յարութիւն ամիրայն ես եմք զթուղթս
գրեալ, այժմ կրկնելն չունէր զհարկաւորութիւն։

Սրբոյ Սաղիմայ պատրիարգի գիրն և ծրարեալ ընծայն, զորս յղեալ
էիր, զայնս ես ընկալաք[182], բայց զպատասխանի թղթոյն յետոյ գրես-
ցուք։
Իսկ և որ զերկուս թուղթս էիր խնդրեալ առ օրհնեալ Միքայէլ ամի-
րայն վասն մխիթարութեան ի կողմանէ հանգուցեալ 'որդւոյն և առ Յո-
վաննէս ումն վասն Ժ (10) զուռուշ քառասնիցի, զայնս ես ահա նորապէս
գրեալ, ընդ թղթոյս յղեցաք տալ նոցա։
Այլև զհնդկաց երկրի նուիրակ Գրիգոր վարդապետէն գրեալ էին մեզ
ոմանք ստուգիւ, թէ եկեալ է ի Բանդար-Բուշեռ, այժմ ես յեկողաց լսեմք,
թէ անտի ևս ժամանեալ է ի Բասրա, բայց յինքենէ զգիր չեմք առեալ
վասն անդ գալոյն։ Իսկ եթէ առ քեզ գիր իցէ յղեալ ի վերայ մեր, ի հար-
362 կէ, կամ յուղարկեալ ես կամ յուղար//կեսցես։ Բայց եթէ գիր չլինիցի ի
նմանէ, ի տեղեակ անձանց զորպիսութիւնս նորին և զուր լինիլն հար-
ցեալ և իմացեալ, գրեսցես մեզ։ Սաղաթէլ Յովաննէս պետն ես, թէ դեռ
յարժանի տեղւոջն իւրում կայ, կամ թէ հանա՞ւ անտի և զիա՞րդ է, ծա-
նուսցես։ Եւ զգիրդ որպիսածանոյց անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր։
Գրեցաւ ի ՌՄԼԲ (1783) թուոջս և ի դեկտեմբերի Ի (20)։
Ձեռ. № 2803, էջ 358—362

789. **1783 թ. 25 դեկտեմբերի**—*Թուղթ ի Թիֆլիզ առ մէլիք Աւետիքն, ի պատասխանի նորին թղթոյն, զոր գրեալ էր առ սրբազանն, զի վասն եղբօրն իւրոյ՝ Իւանէին, որ գնացեալ էր ի Բաղդատ և ի Շամ, գրեսցէ յայն կողմն առ մերայինսն զբանս, զի մուղայէթ լիցին նմա և ձեռնտուք։*
Ձեռ. № 2803, էջ 387—388

1784

790. 1784 թ. հունվար—*Թուղթ շնորհաւորութեան ի Հաշտարխան առ
պարոն Մկրտումն, գործակալն մեր, զոր այժմ ժողովուրդքն տեղւոյն
մերազնեայք կացուցեալ էին իւրեանց ժողովրդապետ:*

Ձեռ. № 2803, էջ 262—264

264 791. 1784 թ. 16 հունվարի—*Թուղթ օրհնութեան և յորդորանաց առ
երկրորդն տէրութեանն Ռուսաց՝ Գրիգոր բնէաղ Ալէքսանդրիչ Պօտէմկինն.
յորում և այլ դիտմունք*[183]*:*

Յորմէ ժամանեսցի թուղթ ...

*Եւ ընդ օրհնառաք ողջունատրութեան սիրալիր թղթոյս, ծանուցումն
լիցի բարեպաշտութեան ձերում: Զի ճանաչել զերախտաւորս և գոհանալ
զբարերարաց հարկեն զմեզ օրէնք բնութեան, նաև գիրն աստուածային,
265 որ պատուիրէ, թէ մի՛ մոռանար զբարեկամս քո ի//մտաց քոց: Արդ, ըստ
սոյնոյ բնութենական կանոնի և աստուածայնոյ պատուիրի, պարտա-
կան համարեմք զմեզ շնորհակալ լինելոյ վաղնուութենէ քումմէ, քանզի
ահա որչափ ժամանակ է, որ հաստատեալ ես ի բեզ զճշմարիտ և զան-
կեղծ սէր և զգութ առ քրիստոսաէջ սուրբ Աթոռս և առ տառապակիր ազ-
գըս մեր, և օգտաւիրաբար հոգաս վասն մեր, և այնքան չանս եդեր,
մինչև ահա զարդիւնս մարուք սիրոյդ և մեծի հոգունակութեանդ վեր
երևեցուցեր, զորս սիրելի և հոգևոր որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն
երկարօրէն և պարագայիւք ծանուցանէ մեզ ի յամենայն թուղթս իւր՝ լիա-
լիր շնորհակալութեամբք և բազում գովաբանութեամբ:
Ընդ որս և մեք, շնորհակալեալ զանչափ երախտեաց պատուականու-
թեան քոյին, գերազանցագոյն բղձմամբ ունիմք զքեզ ի սիրտս մեր,
անմոռանալի ի մտաց, իբրև զգանձ վերնապարգև, և յարապէս առ ի բա-
րին յիշեցմամբ օրհնաբանեմք միշտ զմեծավաստակ և զհաւատարմա-
գոյն բարեկամդ մեր: Իսկ զի ոչ է մեզ կար փոխարինել զհատուցումն իւ-
ձերդ անհամեմատ բարերարութեանց, ուստի բազկատարած մաղթանօք
հայցեմք ի Տեառնէ առաջի սրբոյ իջման տեղւոյս նորին՝ հատուցանել
ձեզ յամենաբաւական և անպրաւելի գանձուցն բարութեան զպարգևս
բազմապատիկս:
Ապաքէն նոյն ամենազօրն Աստուած, որ ըստ ասացելոյ երջանկին
Դաւթի, բարի առնէ բարեաց, հեղցէ առ ձեզ զառատաձիր շնորհս մարդա-
սիրութեան իւրոյ՝ օրհնելով միշտ և զօրացուցանելով և պահելով ի գե-
րագոյն փառս և ի ճոխութիւնս պայծառազարդ և շքեղաշուք: Եւս առաւել
շնորհեսցէ ի յերկարատև ամս զխաղաղութիւն կենաց զյամենայնի յաջո-*

*ղութիւնս իւրապսակեալ և հանրաիշխող, ողորմառատ և յոլովագութ մեծի
կայսրուհւոյն և կայսրազարմ չքնաղափառ որդւոյ նորին և թոռանցն,
և բոլոր ժառանգորդաց կայսրութեանն, որոց և զամենախրոխտ թա-
գաւորութիւնն անխոնարհելի և աճարկու պահեսցէ՝ առ ի ստորանկումն
հակառակորդաց սրբոյ խաչին և է պարծանս երկրպագուացս նորին: Եւ
զյոլովագոյն սէր և զխնամս նոցին աննուազելի արասցէ ի մէնջ և ի սըր-
բոյ Աթոռոյս և յազգէս մերմէ վշտացելոյ:
Իսկ առ աստուածաազդ և շահաւէտ առաջադրութիւնդ ձեր, որ ամե-
266 նաբարեպաշտ և ինքնակալուհի մայրն ողորմութեան՝ մեծ կայսրուհին//
ձերովդ ջերմեռանդ գթաշարժական միջնորդութեամբ կամի այց և ազա-
տութիւն առնել երկրիս և տառապեալ ազգիս մերում, թէ որքա՞ն է ջեր-
մեռանդ բաղձանք մեր և յօժարութիւն առ այդ, ոչ լինի երկարել:
Բայց այսու կերպիւ իմասցի առատ խոհականութիւն, յարգոյ և պա-
տւոյդ, զի որպէս ի չարաչար նեղիլ և ի ոգւով չափ վշտանալ ուրուք ի
ձեռս թշնամւոյ, լսիցէ զձայն հզօր օգնականի և յուսաւորեալ ցանկայ
հասանելոյ նորա, իբր թէ զերծանելոց իցէ օժանդակութեամբ նորին:
Այսպէս և մեք խոշտանգեալ և վշտագնեալ առ ի մերոց հակառակորդաց,
յարգեանս լսելով աւետաւոր համբաւ և զքաղցր լուր մեծազօր այցելուա-
ցըդ, որ ի յօգտակարութիւն խղճալեացս, յուսաւորիմք և բերկրասրտիմք
և կաթոգին տենչմամբ ըղձամք տեսանել զկատարումն զուարճական ձայ-
նիցն, զորս լսեմք:
Վասն զի յուսամք, թէ ի խնամոց և ի հովանաւորութենէ քրիստոսա-
սէր և բազդրագութ կայսրուհւոյն մեծի և ի յօգտաչան բարեկամութենէ
ազնուագունիցդ, որ առ մեզ, ստանայցեմք զազատութիւն կենաց և եր-
կիրս Հայկազեան գացէ կատարեալ խաղաղութիւն և երկնաման վանո-
րայք և եկեղեցիք մեր, որք զրկեալք են ի զարդուց և ի պայծառութեանց,
վերստին նորոգեսցին և պայծառասցին ի փառս Աստուծոյ և ի փայլումն
փրկագործ խաչին քրիստոսեան:
Այլև յառաջ քան զայս լուեալ էաք վասն մեծութեանդ, թէ ժամանակ
ինչ զհիւանդութիւն ես կրեալ (զոր ի յապաշխարանս համարեսցէ Աս-
տուած), ուստի ի խոր տրտմութիւնս անկաք և բոլոր միաբանիւք սրբոյ
դահիս աղաչեցաք զհեշտալուրն Տէր՝ շնորհել զառողջութիւն անձինդ
պատուականի: Իսկ այժմ իմացաք ի գրոյ հոգևոր որդւոյն մերոյ Յովսէ-
փայ արքեպիսկոպոսին, որ փարատեցեալ է ցաւ քո ի քէն: Վասն որոյ
ուրախացեալ կարի յոյժ, գոհացաք զԱստուծոյ ողորմածէն, յորմէ և
մաղթեցաք պահպանել զքեզ ամենակեցոյց աջովն իւրով և միշտ ի յա-
ողջութեան և ի պայծառութեան պահել՝ ի խնամատարութիւն և ի մխի-
թարութիւն մեզ, քանզի ահա զքեզ ունիմք անխարդախ բարեկամ և խը-
նամակալ մեզ և առաջի աստուածապսակ և գթասիրտ մեծի կայսրուհ-
ւոյն // միջնորդ և բարեխօս վասն մեր:
267 Արդ, խնդրեմք ի քումմէ պատուականութենէ, զի որովհետև չունիմք
զհամարձակութիւն գրել ինչ առ բարձրագոյն մեծութիւն տիեզերակալ մե-
ծի կայսրուհւոյն, վասն որոյ դու քոյովդ լիագոյն խոհեմութեամբ ի նու-
աստութենէ մերմէ ի պատեհ ժամու մատուցես գերափառութեան նորին
զբանս շնորհակալութեան՝ հանդերձ աստուածային առատաձիր օրհնու-
թեամբ վասն բազմակերպ ողորմութեանց և գթութեանց իւրոց, զորս ունի
առ մերայինս ամենայսն: Եւ ես յայտնի կացուսցես նմա զյոլովագոյն տենչ-
մունս և զյօժարութիւն մեր առ առաջադրեալ իրակութեանն իւր, որ ի
փրկութիւն մեզ և մերազնէից:*

Իսկ և զսէր քո և զխնամոց մի երբեք պակասեցուցես ի մէնջ և յազգէ մերմէ և ի սրբոյ Աթոռոյս և ի Յովսէփայ արքեպիսկոպոսէն, այլ ևս առաւելուցուս, զի և դու յորդւոց յորդիս և յազգաց յազգս և հանրախնամ Արարչէն ընկալցիս զողորմութիւնս ի յաւիտեան:

Ողջ լեր ի Տէր և շնորհք սրբոյ Աթոռոյս և օրհնութիւն անուանակցին քո սրբոյն Գրիգորի և մեր իսկ եղիցին ընդ քեզ և ընդ քոյայինսն յամենայն ժամ: Ամէն:

Գրեցաւ ի թուոջ Փրկչին 1784 ի յունվարի 16 և ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:

Ձեռ. № 2803, էջ 264—267

792. 1784 թ. 16 հունվարի—*Թուղթ ծանօթութեան, սիրոյ և օրհնութեան ի Թիֆլիզ առ նորեկ պօլկովնիկ Դանիէլիչ Ստեփանին[184] ի շնորհաւորութիւն գալստեանն, և վասն Մէլիքով Սարգիս[185] զինուորի գալստեան և վերադառնալոյն յիշումն:*

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ...

Եւ ընդ ամենառատ օրհնութեան սիրանիշ թղթոյս, ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում, զի լսելով մեր զգալուստդ քո ի յօրհնեալ քաղաքդ Թիֆլիզ և զմօտիլդ առ մեզ, նաև տեղեկանալով զազնուութենէ քաջուց քոց և իմանալով, թէ ունիս ստուգիւ զճշմարիտ սէր առ սուրբ Աթոռս և առ մերազնեայս, ուրախացաք յոյժ և կամէաք մինչև ցարդ ի ձեռն օրհ-
268 նութեան թղթոյ ծանօթանալ ընդ // սիրելւոյդ, բայց կերպակերպ զբաղմունքն մեր և այլ պատճառք կասեցուցին զմեզ ի մերոց կամաց, իսկ այժմ հարկաւոր և արժանի համարեցաք զայս օրհնաձիր թուղթս գրել առ սիրելիդ և ի ձեռն սորին շնորհաւորել զգալուստդ քո և օրհնել զարժանաւորդ օրհնութեան:

Ապա ուրեմն բարի և շնորհաւոր եղիցի գալուստ պատուելւոյդ և օրհնեալ լիցիս դու ի Տեառնէ Աստուծոյ հանդերձ ամենիւք քոյայնովքդ, զօրացուսցէ զքեզ Տէր և փրկեսցէ միշտ ի յառաջիկայից փորձութեանց, պահեսցէ ի խնամս և յողորմութիւնս իւր, և ևս առաւել փառօք և ճոխութեամբ զքեզ բարձրացուսցէ, և հանապազ քաղցր և սիրելի երևեցուսցէ յաչս ամենաբարեպաշտուհի և առատախնամ մօրն ողորմութեան ինքնակալ մեծի կայսերուհւոյն և յարապէս հովանի լիցի ի վերայ քոյ:

Արդ, այս է խնդիր մեր ի գերազնիւ սիրելութենէդ, զի ունիցիս յարաժամ առ մեզ զատոյգ սէր և զճշմարիտ բարեկամութիւն, անպակաս առնելով ի մէնջ զգիրդ սիրանիշ և ցուցանելով առ մերազնեայսն զբարեշնորհութիւնս և զընտանեբար խնամածութիւնս, քանզի որպէս քաղցրութիւն և առատութիւն խնամոց և գթութեանց աստուածապսակ և ինքնակալ մեծի կայսերուհւոյն, որ գոյ ի վերայ մեր և սրբոյ Աթոռոյս և խղճալի ազգիս մերոյ, ծանուցեալ է ամենայն ումեք, որ և ողորմութեան հրովարտակաւն իւրով սիրելի է կոչեալ զազգս մեր, յայտնի կացուցանելով զգերազանց խնամսն, որ առ մեզ (զոր երկարագոյն ամօք, խաղաղ կենօք, անխոնարհելի իշխանութեամբ և ամենախրոխտ տէրութեամբ պահեսցէ ամենաթագաւորն Աստուած՝ հանդերձ իւրապարգև կայսերածին և թագաժառանգ որդւովն նորին և թոռամբքն և ամենայն ժառանգորդօք կայսերութեանն՝ ի կորուստ թշնամեաց խաչին, ի պայծառազարդութիւն սրբոյ եկեղեցւոյ և ի պարծանս մեր):

Նոյնպէս և դու, ազնիւ սիրելիդ մեր, զսերտութիւն սիրոյ յայտնի արասցես առ մեզ՝ զմերայինսն խնամելով և զսիրահաստատ գիրդ ի
269 մէնջ ոչ պակասեցուցանելով ի // մխիթարութիւն մերոց առ ի պարտականս կացուցանել զմեզ շնորհակալիս միշտ զձէնջ և օրհնելոյ զձեզ, որպէս և բազմիցս զբարեշնորհութիւնս և զմարդասիրութիւնս ընդունելով ի յօրհնեցելոյ ազգէդ ձերմէ, մեծաւ գոհունակութեամբ օրհնաբանեմք զձեզ հանդերձ բազմախումբ միաբանիւք սրբոյ Աթոռոյս և աղօթեմք վասն կենաց և բարեյաջողութեան քրիստոսասէր մեծի կայսերուհւոյն և ձեր ամենեցուն հարազատիցդ նորին՝ ակն ունելով, զի որքան մինչև ցայժմ եմք տեսեալ զսէր ի յօրհնեալ տէրութենէդ ձերմէ, յայսմհետէ առաւել ևս քան զայնս տեսանիցեմք:

Իսկ ահա սիրելի որդին մեր՝ Մէլիքով Սարգիս զինուորն, ըստ հրամանի ձերոյ, վասն պատճառի իրիք, եկեալ էր ի յԵրևան և անտի եկն ի սուրբ Աթոռս, որ և զմարդ էր յղեալ ի Շուշի և նորին գալստեանն սպասէր: Բայց նա ոչ եկն մինչև ցարդ: Ապա կամեցաւ սա ինքն ևս գնալ, սակայն վասն ճանապարհաց փակ լինելոյն չկարաց գնալ: Այլ զպատճառն գալստեան զորա սաստ և ի Շուշի գնալ կամելոյն ոչ իմացաք: Իսկ ապա մինչ կամեցաւ վերադառնալ յայդր, ընդ հաւատարիմ մարդոյ եղեալ ուղևորեցաք ի վերայ Շիրակուանու: Եւ կարի պատեհաւոր վարկեալ մեր զայս սիրայայտ և բարեկամական թուղթս օրհնութեան գրեցաք ընդ դմա առ յարգութիւն քո:

Որ և լիցիս ողջ ի Տէր և պահպանեցեալ ի զօրութիւն կենսառիթ սըրբոյ խաչի նորին: Եւ շնորհք սրբոյ և աստուածախիջ Աթոռոյս եղիցի յարաժամ ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենեսեան: Ամէն:

Գրեցաւ յամի Փրկչին 1784 ի յունվարի ԺԶ (16) և ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 267—269

793. 1784 թ. հունվար—*Թուղթ ի մեծն Պոլիս առ դերձակ տիրացու Սարգիսն ի կողմանէ որդւոյ նորին՝ խեղճ Առաքելին:*

Ձեռ. № 2803, էջ 269—270

794. 1784 թ. հունվար—*Ի մեծն Պոլիս առ հացագործ Մարտիրոս ամիրայն, ի պատասխանի ի յանիսի Գ (3) գրեալ թղթոյն ընդ Մինաս պետին մերոյ, որ և զԳ (3) ոսկի էր յղեալ, առ որ օրհնութիւն և շնորհակալութիւն:*

Ձեռ. № 2803, էջ 271—272

795. 1784 թ. 16 հունվարի—*Թուղթ մխիթարութեան ի Պետրպօլք ի վերայ աղայ Գրիգոր Կանդպանովին, վասն մահուան կնոջն նորա՝ Յուստիանէին:*

Ձեռ. № 2803, էջ 362—364

796. 1784 թ. 16 հունվարի—*Թուղթ ի Մօզդոք առ Ասլանեան պարոն Ստեփաննոս Թարգմանին. օրհնութիւն և յորդորումն առ ի հարազատութիւն:*

Ձեռ. № 2803, էջ 364—366

797. 1784 թ. հունվար—*Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ի մեծն Պոլիս առ Թեապցի Թութունճի մահտեսի Մարտիրոսն և առ որդիսն, վասն հարազատութեանց առ նուիրակ Իսահակ վարդապետն և մանաւանդ վասն խոստանալոյն յղել ամ յամէ ի սուրբ Աթոռս զԵ Ե (5—5) ղուռուշ ժամուց, որ և յայժմ ամի տուեալ էր նուիրակին:*

Ձեռ. № 2803, էջ 366—367

798. 1784 թ. հունվար—*Կոնդակ շնորհակալութեան ի Պօլիս առ մե-
ծագնեայ սափրիչն Պալաթու, վասն նոր հաստատելոյն ի մէջ իւրեանց
զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս, և զհ (5) զուռուշ երախայրին ևս
տալոյն:*

Ձեռ. № 2803, էջ 368—369

799. [1784 թ. հունվա՞ր]—*Ի Կարնոյ քաղաքի կոնդակոջն, որ վասն
շնորհակալութեան երկուց ամաց գանձանակադրամից նոցին գրեցաւ,
այս ներքոյ գրեալ բանքս ևս, վասն հաստատութեան աւագ քահանա-
յութեան տէր Աբրահամին, խառն գրեալ եղև:*

Ձեռ. № 2803, էջ 370

800. 1784 թ. 16 հունվարի—*Թուղթ ի Պետրպօլք առ ջուղայեցի Մա-
նուչարեան պարոն Մարգարն և Փիլիպպոս, յիշումն ի յանցեալ ամին առ
սոսա գրեալ թղթոյն, և ևս նորոգման առաջնորդութեան և նուիրակութեան
Յովսէփ վարդապետին, և սէր, և օրհնութիւն, և յորդորմունք:*

Ձեռ. № 2803, էջ 388—390

391 801. 1784 թ. 16 հունվարի—*Թուղթ օրհնութեան և այլ գիտմանց առ
զօրապետն Ռուսաց, որ է ի կողմանս Մօզտօքու, առ Պաւլ Սարգէիչ Պօ-
տէմկինն:*

Յորմէ ժամանեսցի...

*Եւ ընդ շնորհաբեղուն օրհնութեան և սիրալիր ողջունատրութեան
թղթոյս, գիտութիւն լիցի բարեպաշտութեան ձերում, զի ի նախանցեալն
ամի մինչ ընդ Եփրեմ հարիւրապետին զթուղթ գրեցաք առ մեծութիւն ձեր,
յայնմհետէ ակնադէտ եմք և ևս ընդունիլ ի ձէնջ զգիր մխիթարիչ և զու-
արճարար ի պատասխանի այնորիկ, սակայն տակաւին ցայս կէտ ոչ
ընկալաք, բայց ունիմք յոյս մեծ, զի առաջիկայ աւուրբս ընկալցուք և
իմացեալ զբարեկեցութենէ ազնուոյդ, զուարճասցուք: Այլ Յովսէփ արքե-
պիսկոպոս հոգևոր որդին մեր, վայելելով ի հեռուստ և ի մօտոյ զքաղց-
րութիւն մարդասիրութեան և բարեբարոյութեան ձերոյ, ոչ դադարէ ի
գրելոյ մեզ զբանս գովութեան և գոհացողութեան զգերամեծար սիրել-
ւոյդ, թէ զորպիսի՞ շնորհս ցուցանես առ ինքն և որչա՞փ ունիս զսէր առ
խղճալի ազգս և երկիրս մեր և առ զահս աստուածեան և զորքա՞ն փոյթ
ունիս առ օգտակարագոյն կարգաւորութիւնդ ձեր առաջիկայ: Զորս իմա-
նալով մեր, կարի յոյժ շնորհակալեմք զյարգութենէ ձերմէ, վասն որոյ
թէև ոչ ունիմք նորապէս ի ձէնջ զգիր, սակայն ոչ ևս անպատեհ համա-
րեցաք մեք կրկին զայս օրհնատու նամակս գրել ի վերայ ազնիւ և օգ-
տաշան բարեկամիդ մերոյ: Զոր Աստուածն ամենայնի ընդ երկայն
աւուրս արասցէ և օրհնեսցէ այնու օրհնութեամբն, որ ոչ անցանէ,
392 փրկեսցէ յամենայն չարեաց// և ի փորձութեանց և պահպանեսցէ ընդ
հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ: Եւ մանաւանդ զամենաբարեպաշտա-
հի և զգթածասիրտ մայրն ողորմութեան, զխաչապսակ և զօգոստափառ
մեծ Կայսրուհին, հանդերձ թագաղարմ որդւովն և թոռամբքն և ամե-
նայն ժառանգորդօք կայսրութեանն պահեսցէ բազմամեայ ժամանակաւ
ի խաղաղական կեանս, օրհնելով և փառաւոր առնելով միշտ տիեզերա-
սաստ կայսրութիւն իւրեանց: Եւ յարապէս քաղցրացուսցէ զխնամս նո-
րին ի վերայ սիրելւոյդ: Եւ մայրենի զբաղմառատ գութ նորին անսպա-
ռելի արասցէ ի յազգէս մերմէ, ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ: Նաև զայ-
ցելութիւն նորին, զոր առաջադրեալ ունի ի ձեռն հարազատիցդ իւրոց
առնել տառապեալ ազգիս Հայոց և ամենավշտալից երկրիս մերում,*

*նոյն ինքն Տէր բարեաւ և ուրախութեամբ յաջողեսցէ և ի կատարումն
ժամանեցուսցէ: Քանզի և յեր մշտարադձ տենչմամբ ցանկամբ տեսա-
նել զփրկութիւն մեր, զոլով ամենայնիւ ձանձրացեալ և նուաղեալ ի
բազում նեղութեանց՝ զմեօք եղելոց [անօրինաց]*: Վասն որոյ և մշտապա-
զատ աղօթիւք խնդրեմք յամենակարող Արարչէն շնորհել ձեզ զզօրութիւն
և զկարողութիւն, և խրոխտ լինիլ ձեզ օժանդակ՝ առ ի յօգնութիւն ժա-
մանել մեզ: Զի զի՞նչ է մեզ առաւել բղձալի, քան զտեսանելն զփրկու-
թիւն մեր եկեալ հասեալ և զերկիրս [մեր ի յաւերչաց ազատացեալ]** և
զվանորայս և զեկեղեցիս մեր վերստին նորոգեալ և պայծառազարդեալ:
Որովք և Քրիստոս Տէրն մեր և փրկարար սուրբ խաչն նորին պատուեալ
և փառաւորեալ:*

*Արդ, յառաջ քան զայս ի գալն ի սուրբ Աթոռս գրաֆ մայօր Պետրէին,
յայսմ կողմանէ, զոր ինչ խօսեցեալ եմք ընդ միմեանս, ի հարկէ, պատ-
մեալ է սիրելւոյդ: Եւ յետ այնորիկ ի յանցեալ աւուրքս ի դեկտեմբերի...,
ևս մինչ թարգման պարոն Գաբրիէլն եկն աստ՝ առ ի գնալ ի յԵրեւան
քաղաք և ի Խոյ (որ և գնաց իսկ), ընդ նմա ևս զի՞նչ և խօսեցաք, ի գալն
եթէ հարցանիցես, ծանուցանելոց է ձեզ: Իսկ նոյն Գաբրիէլն ազդեաց
և մեզ զբարեսիրութենէ քումմէ, որ հոգևոր փափագմամբ ցանկաս տե-
սանել զաստուածաէջ սուրբ Աթոռս: Վասն որոյ ասեմք ահա՝ Տէր կատա-
393 րեսցէ զտենչումնդ քո բարի, վասն զի առաւել ցնծալից // է լինելոց մեզ
այն օր, յորում դու զքրիստոսաէջ սուրբ տեղիս և զաստուածակիր սրբու-
թիւնս համբուրելով, վայելեսցես զհոգեզուարճ շնորհս նոցին, և մեք
ևս զտեսութիւն ձեր վայելելով, ուրախանայցեմք սրտիւ և հոգւով և զա-
մենայն վշտակրութիւնսն մեր դնիցեմք ի մոռացման: Բայց կատարումն
իրակութեանցս մնայ ձերդ քաջազօր արիութեան, որպէս և կարես իմա-
նալ բազմահանճարդ խոհեմութեամբ:*

*Այլ արդ, խնդրի ի պատուելութենէ գերազնւոյդ, զի թէ մինչև ցարդ
ոչ կցես գրեալ առ մեզ զթուղթ ի ժամանել սոյնոյ օրհնաձիր գրոյ մերոյ
առ քեզ, փութասցիս զարձուցանել առ մեզ զպատասխանի՝ ի յարծար-
ծումն ճշմարիտ սիրոյ և ի սփոփանս նեղսակրութեան մերոյ, զի գրեթէ
սիրանիշ, թուղթդ ձեր, իբրև երկնաձիր պարգևք են համարեալ մեզ:
Ուրեմն մի՛ պակասեցուսցես ի մէնջ զորպիսայսյս և զուրախարար թուղթ
քոյ, և զանխարդախ սէր և զբարեկամութիւն ձեր աննուաղելի ունիջիք
առ մեզ, և առ սուրբ Աթոռս, և յայղ առ մերայինսն, և առ վերատեսուչն
գոյին և հոգևոր որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն: Զի որպէս մինչև
ցայժմ զբարեշնորհութիւնս տեսանելով ի ձէնջ, հնարանիչք եմք լեալ ձեզ,
նոյնպէս և յայսմհետէ միշտ շնորհակալք լիցուք և յԱստուծոյ զբարիս և
զյաջողութիւնս հայցեսցուք վասն ձեր:*

*Իսկ զորպիսութեանց կողմանցս, որովհետև ընդ գրաֆ մայօր Պետ-
րէին խիրաբանչիւրքն գրեցին յառաջ, մեզ այժմ երկրորդելն աւելորդ է:
Բայց ահա, ի նշան սիրոյ և իբր օրհնութիւն ի սրբոյ Աթոռոյս, առաքե-
ցաք ընդ թղթոյս զընծայ ինչ յարգութեան ձերում (զոր ի ամին եղեալ
փուսուլայէն իմանալոց ես), որ ձեռամբ Յովսէփ արքեպիսկոպոսին մա-
տուցի սիրոյդ: Խնդրեմ սիրով և քաղցրութեամբ ընդունիլ և զսուրբ
Աթոռս և մեզ անմոռաց ունիլ ի մտի:*

* *Բնագրում այս բառը ջնջված է:*
** *Բնագրում ջնջված է:*

Ողջ լեր ի Տէր և զօրացեալ կենսատու սուրբ խաչիւ նորին յարաժամ: Ամէն:

Գրեցաւ ի 1784 թուոջ Փրկչին և ի յունվարի ԺԶ (16):

Ձեռ. № 2803, էջ 391—393

394 **802. 1784 թ. 16 հունվարի**—*Թուղթ առ Ռուսաց երկրի մերազնեայցն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի երկից գրեալ Թղթոցն նորա՝ ի ՌՄԼԲ (1783) թուոջն ի նոյեմբերի 15 և ի 18, յաղագս զանազան իրաց և իրակութեանց:*

Յորմէ հայրական օրհնութեամբ, որդիական սուրբ ողջունիւ և հոգեկան սիրով, նաև բազմաւ կարօտիւ և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ քրիստոսաիջի տեղւոյս, գիտասջի՛ր սիրելի և հոգևոր որդիդ մեր, մտերիմ և քրտնաջան զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածիմաստ վարդապետ: Զի ի յանցեալ թուոջն ի նոյեմբերի 15 և 18 գրեալ Թուղթքդ հասին առ մեզ ի դեկտեմբերի 20, զորս և ընթերցեալ մեր, ծանեաք զամենայն գրեալսդ ի նոսին: Ի յառաջին Թղթիդ ծանուցեալ էիր զԿարապետ վարդապետի հանդիպելն քեզ ի ճանապարհին Նախիջևանու և զդառնալդ յետս անդ և զփոքրիկ կոնդակն միայն ընթեռնուլդ, վասն մեծ կոնդակին դեռևս ոչ հասեալ գոլոյն առ քեզ, և զԿարապետ վարդապետն կարգելդ ի վերայ նուիրակութեանն գործոյ և զայլն: Որովք և միամտեալ սրտադիր եղաք, և զգրաբեր Գաբրիէլն ևս սիրով և շահեցողութեամբ ընկալաք և ուղևորեցաք: Իսկ ի միւս Թղթոյդ ևս նախապէս զյիշեալ որպիսութեանց հարուստն և զերկարօրէնն իմացաք հանդերձ որդիական բանիւքդ հպատակութեան և շնորհակալ եղաք զքէն: Տէր զօրացուսցէ զքեզ և պահեսցէ յամենայն չարէ և սիրտ քո միշտ անտարակոյս մնասցէ ի շնորհածին մօրէս քումմէ ի սրբոյ Աթոռոյս, որպէս և մինչև ցարդ:

Եւ ապա զոր ինչ գրեալ էիր ի կողմանէ գերապատիւ զօրապետին, զայնս ևս լիովին ծանեաք, առ որ ահա զսիրոյ Թուղթ գրեցաք և բաց յղեցաք առ քեզ՝ տեսանել և հասու լինել զիմանցն մերոց և թարգմանեցուցանել և զընծայից փուտուլայն գնել ի մէջն և կրկին փակեալ՝ մատուցանել նմա: Իսկ ընծայն այնպէս լինիցի, որ ԺԵ (15) թումանի կամ այլ աւելի մինչև ցի (20) թումանի արժողութիւն ունիցի, որպէս և պատշաճ տեսանիցես, զոր լաւապէս հոգացեալ, հանդերձ թղթովն մատուցես և զպատասխանի առեալ դարձուցես առ մեզ՝ վասն սիրահաստատութեան:

Գրեցաք և առ պայծառափայլ քնէզացն զԹուղթ օրհնութեան և բղձալութեան և յորդորանաց ըստ գրեցելոյդ, որպէս և ի դէպն էր, և զայն ևս բաց յղեցաք ահա՝ տեսանել և իմանալ և թարգմանել տալ, և դարձեալ փակել և յղել առ նա: Ընդ նոյնի և առ Թարգման պարոն Ստեփաննոս զԹուղթ գրեցաք յորդորանօք վասն լաւ թարգմանութեան Թղթոց մերոց առ օմանս ի Ռուսաց գրեցելոց այժմ և յետոյ գրելեաց:

Այլև առ Կանդպանով աղայ Գրիգորն և առ պարոն Մարգարն եղբայրն իւր և առ նոր ժողովրդապետն կարգեցեալ պարոն Մկրտումն, որովք գիտամամբք և խնդրեալ էիր զգրեանս: Զայնս ևս գրեալ յղեցաք, զորս և հասուցես առ նոսա: //
395 Եւ ընդ պարոն Մարգարի և Փիլիպպոսի Թղթոյն յղեսցես և զՊարտաւճար գիրքն, որպէս և յառաջ գրեալ եմք քեզ և այժմ ի Թղթոջ իւրեանց ևս յիշեալ եմք: Իսկ վասն իրացդ, որ գրեալ էիր վերըստին ի գիր հանել տալ մեր Մկրտիչ վարդապետին և առ քեզ յղել

բարւոք է, բայց յայս ցուրտ եղանակիս ոչ սակաւ դժուարին է հոգացողին: Այլ արկեղն ասա ընդ ձեռօք մեր են: Եթէ կամիցի Տէր, հասցուք ի գարունն Մկրտիչ վարդապետին, այնպէս առնել տացուք: Նաև ընդ բարեգիտութիւնն առաջի ձեռաց և ընդ գիմեկն յայտ ի հովանի մեծի կայսերուհւոյն եղբօր որդւոյն քոյ և հոգևոր որդեկին մերոյ, Տերամբ զօրացեալ պարոն Սողոմոնին, կարի ուրախացաք. Աստուած միշտ ի բարեհամբաւութեան և ի ճոխութեան պահեսցէ զինքեանս, զի և մեզ լիցի զուարճութիւն:

Գրաֆ Պետրին, որ չես տուեալ զխնդրեալն նորին, հաւանեցաք, զի և մեք խղճահարելով ոչ եսուր ասա, լաւ է եղեալ, որ դու ևս չես տուեալ:

Վասն սչովացւոցն առաջնորդի, Իսահակ վարդապետն մեր զոր ինչ գրեալ է քեզ, մեզ ևս էր յառաջ գրեալ և զառաջնորդ խնդրեալ: Մեք ևս յայնժամ այնպէս լաւ համարելով (ըստ որում յայլոց ևս կարծիք գոյր), կամէր նուիրակ Ստեփան վարդապետն առաջնորդ կարգեցաք՝ թեթև կոնդակաւ և Թղթով առ էնծէնպէրք իշխանն՝ այնմիկ կողման, և գրեցաք ևս տեղւոյ երևելեացն մերայնոց, և ինքեանն Ստեփաննոս պետին ևս, զի առ ժամանակ մի մնալով առ միմեանս, եթէ հաճիցին և թէ ոչ, գրեսցեն մեզ, զի կամ հաստատեսցուք, կամ թէ զայլ ոք առաքեսցուք: Դեռևս պատասխանոյ նայիմք: Բայց դու յաղագս Սաղիմայ Մովսէս պետին, որ վերստին հարկ ևս գրեալ մոռացելոցդ՝ ի բաց առնել յինքեանց, եթէ զինչ պատասխանեսցեն և զինչ առնիցեն, յիմացս տացես մեզ: Իսկ և զՃԿԱ (161) թումանի ձեռագիրդ Իսահակ վարդապետն առեալ և հղեալ էր առ մեզ, զոր ահա ընդ գրոյս յուղարկեցաք: Վարդան վարդապետի կայից աղագաւ զամենայն գրեալդ ծանեաք: Ինչ և իցէ, իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ, այլ այժմ որովհետև ի խղճութիւնս և ի մոմտանս կայ և աչքն ի ճանապարհի է, գրեմ սիրելւոյդ, զի զսորին ինչսն օր մի յառաջ
396 հասուցանել // լինի, թէ ընդ պարոն Եսայուն յղեսցես և մի՛ զանց առնիցես:

Եւ վասն կարգաւորելոյդ իւրաքանչիւր տեղիս զգործ նուիրակութեան և սակս բարւոք ջանացողութեանդ առ ի յաւարտն, որ ծանուցեալ էիր, ուրախացաք. Տէր յաջողեսցէ: Գրեմ սիրելի որդւոյդ, զի հետևեսցիս փութով կատարել, որպէս և յառաջ իսկ եմ գրեալ: [Բայց ի կողմանէ Ընդհանրականին, որ յառաջագոյն գիր ինչ էիր հարցեալ, մեք ի յանցեալ ամին գրեցաք սիրելւոյդ զբանս: Այլ զպատասխանի ինչ ոչ ընկալաք ի քէն վասն այնր, յորմէ ցուցանի, թէ գրեալն մեր խոչ թուեցաւ քեզ, սակայն մինչ նորբ մտածութեամբ խորհեսցիս, ոչ է խոչ քեզ և կամ անօգուտ գրեալն մեր: Ինչ և իցէ: Իսկ այժմ, որովհետև ի Մինաս վարդապետէն մերմէ խնդրեալ էիր զԸնդհանրական գիրք մի (թէև ոչ ի մէնջ), ահա որոնեալ գտաք և պատրաստեցաք առ ի յուղարկել: Բայց զի ի ներկայումս հաւատալի եկօղ ոչ պատահեցաւ դէպ յայդկոյս, վասն որոյ անկարելի եղև գրքոյն ընդ Թղթոցս յղելն: Այլ հաշտարխանցի Սարգիսն կարելի է, մինչ նա գալոց լիցի, ընդ նմա յղելոց եմք, կամ թէ այլ ոք հաւատարիմ գնացօղ հանդիպիցի ի Թիֆլիզ, ընդ նմա յղեսցուք անդ և գրեսցուք առ մերայինսն՝ հասուցանել առ քեզ]*:

Այլև՝ եթէ զսրբոյ Աթոռոյս և զերկրիս և զմեզ կամիցիս գիտել, այսպէս գիտասջիր, զի սուրբ Աթոռս շնորհիւ Տեառն ի յիրաւակչելոյ պայծառութեանն կայ և երկիրս ևս իբրու ի խաղաղութեան, իսկ հնացեալ ծերունիս իշխօղն երկրիս ի նոյեմբ. Ժ (10) վերջացեալ եղև ի կենաց: Ուս-

* Փակագծերի մեջ վերցված պարբերությունը բնագրում ջնջված է:

26—815

տի մեծամեծքն երկրիս հրաւիրեցին զմեզ ի յՆրեւան՝ ի յընտրութիւն ամե-
մըն ի լինիլ իշխօղ: Եւ գնացեալ մեր անդ, կացուցեալ եղև մեծ որդին
կենագրաւեցեալոյն ի տեղի հօրն՝ հրամանաւ մեծի և բարեպաշտի արքային
397 Հերակլայ: Բայց մնալովն մեր յՆրեւան// ի բազում աւուրս, փոքր մի
տկարութիւն գտաք ի ցրտոյ, և գրեթէ գեռ այնու տկարութեամբն նեղիմք,
բայց ողորմութեամբն Աստուծոյ յարդեանս ի լաւութեան կամք կերպի
ինչ:
Ի յՄատենի ժամագրքէն, յոր ձեռնարկաք ի տպել, ահա յաջողմամբն
Տեառն զՍաղմոսն աւարտեցաք և զժամագիրքն եւս սկիզբնաւորեցաք:
Այժմիկս չունելով մեր զայլ երկար գրելիս, զայս քան ինչ իմացեալ
սիրելի որդւոյդ, ողջ լեր ի Տէր և զօրացեալ միշտ ի շնորհս նորին:
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս մերում և ի յունվարի ԺԶ (16):

Ձեռ. № 2803, էջ 394—397

803. 1784 թ. 31 հունվարի—Ի մեծն Պօլիս առ գանձապետն սրբոյ
Աթոռոյս՝ պարոն Յովաննէսն, որ զհանգուցեալ քեօստանջեցի մահտեսի
Պետրոսի կին մահտեսի Նաղլուի զտունն, ըստ կտակ առնելոյ նորին,
վաճառեալ էր, զկէս գինն առեալ Սամաթիոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյն, և
զկէս գինն, որ էր Գ (3) քէսայ, առեալ էր սրբոյ Աթոռոյս՝ յանձնելով
անդ նուիրակ Իսահակ վարդապետին:

Ձեռ. № 2803, էջ 397—399

804. 1784 թ. 31 հունվարի—Ի մեծն Պօլիս առ Ստեփաննոս ամի-
րայն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ընդ Մինաս վարդապետին, և
ի շնորհակալութիւն վասն յղեալ ՃՃ (100) ռուպի տրոցն՝ հանդերձ սի-
րով և օրհնութեամբ:

Ձեռ. № 2803, էջ 399—401

402 805. 1784 թ. հունվար—Թուղթ առ պատրիարքն Պօլսոյ Զաքարիա
վարդապետն, ի [պատասխանի] ի հոկտ. 18 գրեալ թղթոյն, և շնորհակա-
լութիւն վասն ընծային յղեցելոյ ընդ նմին:

Յորմէ միարար և սուրբ ողջունիւն քրիստոսեան և անկեղծ սիրովն
սրբոյ Հոգւոյն, և մերս եղբայրութեան սրտակէզ կարօտիւ ծանուցումն լի-
ցի սիրառատի եղբօրդ իմոյ ըստ հոգւոյ՝ տեառնդ Զաքարիայ աստուա-
ծաբան վարդապետիդ և մեծի մայրաքաղաքիդ Պօլսոյ արժանաւոյն
պատրիարքիդ: Զի ի հոկտեմբերի ԺԸ (18) գրեալ թուղթն ձեր էհաս առ
մեզ, զոր և ընթերցեալ, իմացաք զյաւելումն հարազատականի սիրոյդ,
որ առ մեզ, և զհաստատութիւն նորին ի յարատեւութեան, և այնու սրտա-
գիւր եղաք և զուարճացաք իսկ հոգեպէս: Եւ ընդ թղթոյդ ժամանեաց եւ
ընծայդ սիրանիշ, զոր ընկալաք և շնորհակալ եղաք զսիրաշատ եղբօրէդ,
գանձելով և զընծայօղդ ի սիրարան սրտի մերոյ: Բայց չէ մեր ակնկալու-
թիւն առ սիրոյդ ընծայատրութիւն, որ չունէր ինչ պէտս, զի այդքան հո-
գայիր, այլ զանխարդախ սէր և զճշմարիտ հաւատարմութիւն յարգելի
եղբօրդ խնդրեմք, զոր երկար ամօք և բարւոքագոյն կեցութեան պահեսցէ
Տէր ի հրճուանս մեր:
Իսկ ի կողմանէ հանգուցեալ լուսահոգի ծնողին քոյ տեղափոխեց-
մանն, որ զբանս շնորհակալութեան էիր գրեալ, իմա առ այն, զի որով-
հետև է յիս և ի քեզ հոգեւորապէս եղբայրութիւն և կցորդութիւն առ իրեա-
րըս, վասն որոյ և ըստ մարմնոյ ծնօղն քոյ ինձ եւս մայր համարելով, տե-

ղափոխել եառք ի հանգստարան սրբակրօն միաբանից սրբոյ զահիս, զի
մի մնասցէ ի յանվայելուչն վայրի: Եւ թէ է այլև ինչ մատուցեալ մեր,
սակայն ցրտութիւն ձմերային եղանակիս արգելումն առնէ կամաց մերոց:
Ըստ որում այժմ այնպիսի ինչ գործ ոչ կարէ յառաջանալ վասն խափան
զօլոյ գործավարացն: Բայց մինչ ողորմութեամբն Աստուծոյ լինիցի մեզ
403 ի գարունն // ժամանել, յայնմ ժամանակի զնորոգ քարինս բերել տացուք
և կանգնեցուսցուք ի վերայ գերեզմանի հանգուցելոյ մօր քոյ (որոյ զհո-
գին լուսաւորեսցէ Տէր և յարքայութեանն իւրում հանգուսցէ), և որ ինչ
պատշաճեալ հետևի առնել, զայն եւս հոգալ տացուք՝ ունելով ի յարգի
զպատիւ եղբայրասիրութեան: Զայս գիտելով անտարակոյս կացցէս, և
ի սատոյգ սիրոյդ, որ առ մեզ և ի սրտացաւ որդիութենէդ, որ առ սուրբ
Աթոռ շնորհաձիր մայրս քո, անպակաս մնասցես յամենայնի զօգուտն
սորին և զբարին մեր առնել խոկալով: Եւ զծայրագոյն նուիրակդ օրհնե-
սորին և զբարին մեր առնել խոկալով: Եւ զծայրագոյն նուիրակդ օրհնե-
ցելոյ մայրաքաղաքիդ, զմտերիմ որդիդ սրբոյ Աթոռոյս և մեր՝ զԻսահակ
շնորհունակ վարդապետդ, ի սէր ունիցիս, յարաժամ և սիրարծարծ գրովք
զուարճականօք զմեզ մխիթարեսցես, որովք և դու լիցիս մխիթարեցեալ
ի Տեառնէ և ի շնորհաց սրբոյ քրիստոսակերպի Աթոռոյս:
Նաև՝ սիրելի որդին մեր, տպագիր տիրացու Պօղոսն, որ յանցեալ
ամսն գնաց ի Թիֆլիզ՝ առ ի շինել անդ զտպարան Վրաց, զոր և շինեալ ի
կատար հասոյց, այժմ ահա դարձեալ է անտի ի սուրբ Աթոռս և զկնի
աւուրց ինչ գալոց է ի յօրհնեալ քաղաքդ ի յօթեանն իւր: Իսկ այժմ յԱ-
թոռոջս լինելով, ըստ չափու կարողութեան իւրոյ հարազատօրէն զօգտա-
ւոր գործառնութիւնս յառաջացուցանէ ի տպարանիս մերում: Յաղագս
որոյ գրեմ սիրաշատ եղբօրդ, զի ի գալն սորին յայդր, թէ զինքն, և թէ
զհայրն իւր ծերունի, միշտ ապէս ընդ խնամօքդ և ընդ քաղցր ակնարկու-
թեամբդ պահեսցես: [Եւ մինչ խնդրեսցեն զշահաւէտ և զպատեհաւոր
գրեանս տպագրել կամեսցիս և հրաման տացես]*: Կեցով ողջ և ցնծուն
կենօք ի յերկարագոյն ամանակս: (Գրեա ի վերուստ զվերջաւորութիւնն
և աւարտեա):
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս, ի յունվարի, և ի լուսա[կերտ]...
Ձեռ. № 2803, էջ 402—403

806. 1784 թ. հունվար—Թուղթ ի սրբազան Սաղիմ առ պատրիարգն
նորին՝ Յովակիմ վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոցն նորին
ի ՌՄԼԲ (1783) յօգոստոսի Ժ (10) գրեցելոյ, և միւսոյ եւս, որ անթիւ էր,
և շնորհակալութիւն վասն ընծայիկին յղեցելոյ, որք ահա ի ներքոյ
յիշին:

Ձեռ. № 2803, էջ 404—407

807. 1784 թ. 15 փետրվարի—Ի Թիֆլիզ առ հիւսն Աթապէկի կին
Լալիթարսն (և առ փոքր որդին) ի կողմանէ աւագ որդւոյն իւրեանց՝
հիւսն Պաղտասարին, շնորհակալութիւն և օրհնութիւն, զի եկեալ նա
յԱթոռս, զՀերակլ արքայի Վրաց ընծայեալ տպագրութեան գազկեահն
յարմարապէս կառոյց ի տպարանի մերում:

Ձեռ. № 2803, էջ 407—408

808. [1784 թ. փետրվար]—Թուղթ մխիթարութեան ի մեծն Պօլիս
առ Ստեփաննոս ամիրայն վասն եղբօր իւրոյ՝ Յովհաննէս ամիրայի
մահուանն, յորում և շնորհակալութիւն և յանձնարարութիւն վասն նուի-
րակին մերոյ:

Ձեռ. № 2803, էջ 409—410

* Փակագծերի մեջ վերցված նախադասությունը բնագրում ջնջված է:

809. 1784 թ. փետրվար—*Թուղթ մխիթարութեան ի մեծն Պօլիս առ Պալաթու եկեղեցւոյ գանձապետն մեր՝ Խաչիկ ամիրայն վասն մահուան եղբօրն իւրոյ՝ Ղազար ամիրային և սիրելեացն իւրոց՝ Մուրատենցն Յովաննէս և նոյն եկեղեցւոյ մութավէլի միւս Յովաննէս ամիրայիցն։*

Ձեռ. № 2803, էջ 411—413

810. 1784 թ. փետրվար—*Թուղթ շնորհակալութեան առ այնպիսի գրելի, որք առաւել հարազատ իցեն սրբոյ Աթոռոյս և նուիրակին բազմակերպ ձեռնտուութիւնս ցուցեալ, որ գրեցաւ ի Պօլիս մահտեսի Մարտիրոսին։*

Ձեռ. № 2803, էջ 413—415

811. 1784 թ. փետրվար—*Թուղթ մխիթարութեան առ Տագէս ամիրայի փեսայ Գրիգոր ամիրայն վասն մահուան ընտանւոյն իւրոյ՝ Յովհաննէս ամիրային։*

Ձեռ. № 2803, էջ 471—473

812. 1784 թ. փետրվար—*Թուղթ ի Պօլիսն մեծ, դարձեալ յաղագս մխիթարութեան առ Զօպանենց Պօղոս ամիրայն ի կողմանէ հօրեղբօրն իւրոյ՝ Յակոբ ամիրային և կնոջ նորին և զաւակացն, որք ժանտախտին մեռեալ էին։*

Ձեռ. № 2803, էջ 473—475

813. 1784 թ. փետրվար—*Թուղթ օրհնութեան ի Պօլիս առ Երեմիայն, որ ի հիւանդանալն ցաւով ժանտամահին, խոստումն արարեալ սրբոյ Աթոռոյս գԻԵ (25) ղուռուշ, ապա ի յառողջանալն կատարեալ էր՝ տալով անդ նուիրակին մերում Սահակ վար[դապետին]։*

Ձեռ. № 2803, էջ 476—477

814. 1784 թ. փետրվար—*Թուղթ մխիթարութեան և յորդորանաց առ Ս[ա]հաթչի Բարթուղիմէոս ամիրայն և եղբարսն։*

Ձեռ. № 2803, էջ 415—417

815. 1784 թ. փետրվար—*Թուղթ մխիթարութեան ի մեծն Պօլիս առ մահտեսի Համբարձումեան մահտեսի Յովաննէս ամիրայն վասն մահուան որդւոյ նորին՝ Մկրտչին և այլոց ևս բարեկամացն, որք ահա ի ներքոյ լիշեալ լինին։*

Ձեռ. № 2803, էջ 595—596

816. 1784 թ. փետրվար—*Դարձեալ թուղթ մխիթարութեան առ Մուրատեան Յովհաննիսի ամիրայի քոյր Յուլիանէն և կենակից Բրաբիոնն, յորում և շնորհակալութիւն վասն տալոյ նոցա գԾ (50) ղուռուշ հոգեբաժին ի կողմանէ Յովհաննիսին։*

Ձեռ. № 2803, էջ 597—598

817. 1784 թ. 15 մարտի—*Մխիթարութիւն ի Թիֆլիս առ մէլիք Աւետիքն վասն եղբօրն՝ միրիշքեար Իւանէին, որ ի Մսրու ճանապարհին վախճանեալ էր։*

Ձեռ. № 2803, էջ 418—419

818. 1784 թ. մարտ—*Թուղթ մխիթարութեան ի Թիֆլիզ առ սատհանգուցեալ մահտեսի Յակոբջանի դուստր Պատօնօն։ Եւ որ և ըստ կտակի նորին հրամայեցաւ Ժ (10) թուման հասանիլ ի յառաջնորդէն մերմէ։*

Ձեռ. № 2803, էջ 419—420

819. 1784 թ. մարտ—*Թուղթ գանձապետ հաստատելոյ, որ գրեցաւ արդ ի Դուխուրղան առ պարոն Սահակն, զոր նոր էր գանձապետ եղեալ սրբոյ Աթոռոյս տեղւոյ նուիրակ Եփրեմ վարդապետն։*

Ձեռ. № 2803, էջ 421—422

820. 1784 թ. մարտ—*Առ պարոն Թադէոսն՝ գործակալն մեր, որ ի Թարէզ։ Շնորհակալութիւն վասն նուիրակ Եփրեմ պետին և այլ բանի։*

Ձեռ. № 2803, էջ 422—423

821. 1784 թ. մարտ—*Թուղթ ի Թիֆլիզ առ բէրցի պարոն Մինասն, ի պատասխանի ի 1233 (1784) թուոյս յունվարի ԻԳ (23) գրեալ թղթոյն, որ ի պանդխտութեանն ըղձայր օրհնութեան գրով մխիթարիլ։*

Ձեռ. № 2803, էջ 479—480

822. 1784 թ. մարտ—*Թուղթ ի Գօրի առ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ վիճակեալ ժողովուրդսն, ի պատասխանի թղթոյն նոցա, որք գրեալ էին վասն ուրումն քահանայի, թէ զթուղթ ինչ ունելով յումանց, կամի տիրել եկեղեցւոյն։ Եւ որս գրեաց սրբազանն, թէ այն քահանայն զթուղթսն իւր բերցէ կամ յղեսցէ, զի տեսեալ՝ զիրաւունսն արարից, բայց թէ ոչ՝ չարաչար պատժելոց եմ։*

Ձեռ. № 2803, էջ 480—482

482 823. 1784 թ. մարտ—*Ի Դուխուրղան առ Աստուածատուրն, որ զայգի էր վաճառեալ սրբոյ Աթոռոյս և զգիր գրեալ։*

Յորմէ ժամանեցի թուղթ...

483 *Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, գիտասջիր սիրելիդ մեր ի Քրիստոս և հարազատ որդի սրբոյ Աթոռոյս էջմիածնի, զի ղապալայակերպ թուղթն քո հայերէն հանդերձ առաջին տաճկերէն ղապալային ի կողմանէ երեսուն և հինգ լարէն անդ այգւոյն յառաջնմէ Աթոռոյս վաճառեցելոյ, զորս յղեալ էիր, էհաս առ մեզ և իմացաք զգրեալսդ։ Արդ, ի վերայ ինն թուման և կէս առեցեալ գնոյդ վասն բաղին, որ յետոյ դարձեալ զկերպակերպ ասութիւնս խօսելով, այլև ևս զիր ինչ խնդրեալ և սիրելի որդին մեր՝ օրհնեցելոյ վիճակիդ նուիրակ Եփրեմ վարդապետն և հարազատ գործակալն մեր՝ պարոն Թադէոսն ի վերայ քոյ եղեալ զերկու թումանն ևս են բեզ շնորհեալ, որ առաջին տուածներին հետ ի միասին լինի ԺԱ (11) թուման և կէս, որոյ աղագաւ և դու մեզայ գրելով զներումն խնդրես։ Ահա և մեք ներեցաք, և զոր ինչ Եփրեմ խոհեմառատ վարդապետն և սիրելին մեր՝ գործակալ պարոն Թադէոսն պատշաճ տեսանելով արարեալ էին, մեք ևս հաճեցաք ընդ այն՝ խնայելով և ի ծերութիւն քո։*

Եւ ըստ հոգևոր տենչման, ահա զայս օրհնութեան թուղթս ևս գրեցաք ի վերայ սիրելւոյդ առ ի նորապէս ժառանգեցուցանել քեզ զշնորհս և զօրհնութիւնս Աստուծոյ և սրբոյ Աթոռոյս և մեր։ Որով և այժմ զայս պատուիրեմք օրհնեցելոյդ, զի յայսմհետէ մի այլևս զվիճական գրոյցս ինչ յառաջ արկցես և խօսեսցիս ի կողմանէ այգւոյն, որ քեզ ոչ վայել է այնպիսի բանքն, զի այն յառաջնմէ սրբոյ Աթոռոյս անուամբն ես առեալ և ապա վաճառեալ ևս ես և զայնքան ինչ գինս առեալ, որք ի թղթոցս քոց յայտնի իմացեալ լինին։

Ապա ուրեմն այսուհետև այլ խօսք և զրոյց մի՛ լիցի, այլ որպէս մինչև ցարդ առ սուրբ Աթոռ մայրս քո սէր և հարազատութիւն ես ցուցեալ, նոյնպէս և հանապազ առնիցես։ Որ և եղիցիս օրհնեալ ի Տէր և յանձնեալ ի յողորմութիւնս նորին յարաժամ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի մարտի ..., և ի սուրբ Էջմիածին:

Չեռ. № 2803, էջ 482—483

599 824. 1784 թ. 4 մարտի—Թուղթ ի մեծն Պօլիս առ սրբոյ Աթոռոյ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի ի ՌՄԼԲ (1784) թուոյ ի դեկտ. Գ (3) գրեալ թղթոյն:

Յորմէ սիրով և կարօտիւ բազմաւ, հոգևոր օրհնութեամբ և սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի նպաստաւորիչ շնորհիւն գիտասջիր սիրելի և հոգևոր որդի մեր և շնորհածին զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածիմաստ վարդապետ: Զի մինչ ի հոկտեմբերի ԻԹ (29) և ի նոյեմբերի ԺԶ (16) և ի սեպտեմբերի եւն գրեցեալ զթուղթսդ ընկալաք ի դեկտեմբերի ԻԶ (26) և ի ներկայ թուոյս ի Յունվարի ԻԲ (22), գրեցաք առ քեզ զպատասխանի նոցին ի չեւն նոյն յունվարի ամսոյն: Եւ զխնդրեալդ թղթոց յորդորանաց և մխիթարութեանց զկէսն իբրու յայնժամ ընդ նոյն թղթոյն գրեալ յղեցաք: Բայց յառաջ քան զայն ի դեկտ. Ի (20) ևս զթուղթ գրեալ առ քեզ, հանդերձ քանեօք թղթովք այլոց յուղարկեցաք, որք մինչև ցարդ ի հարկէ հասեալք են: Իսկ ապա ի դեկ. Թ (9) գրեալ թուղթդ ևս էհաս առ մեզ ի փետ. Է (7), զոր ընթերցեալ իմացաք զ՚ի սեպտեմ. ԻԲ (22) գրեալ թղթոցն մերոց յոյժ անազան հասանիլն առ քեզ՝ հանդերձ այլովք որպիսութեամբքն: Եւ զի զյառաջ խնդրեալ գրեանցդ վերստին յիշեալ էիր, զքանիս ևս նորապէս յաւելլով, ահա և մեք, որպէս խոստացեալ էաք, թէ մնացորդսն յառաջ խնդրեցելոցդ և թէ զնոր խնդրեալսդ գրեալ առաքեցաք ընդ սոյն թղթոյս: Որք են՝ թուղթ մի մխիթարական առ մեր զանձապետ Սահակ ամիրայն, թուղթ մի առ մահտեսի Համբարձումեան մահտեսի Յովաննէս ամիրայն, թուղթ մի առ Ստեփաննոս ամիրայն, թուղթ մի առ Զօպանենց Պօղոս ամիրայն, թուղթ մի առ Տագէո ամիրայի փեսայ Գրիգոր ամիրայն, թուղթ մի առ Մուրատեան Յովաննիսի քոյր Յուլիանէն և առ նորին կին Բրաքիոնն, թուղթ մի առ եկեղեցպան մահտեսի Մարտիրոսն, թուղթ մի առ Երեմիայն: Յորոց ի պատճառս գրեալ եմք զշնորհակալութիւնս և զյանձնարարութիւնս վասն քոյ: Ընդ որս և զթուղթ մի օրհնութեան առ մահտեսի Եղիազար և մահտեսի Վարդերես ամիրայսն՝ վասն զՄինաս վարդապետն և զքեզ շահելոյն իբրու և մանաւանդ զի յղեալ էին մեզ ընծայ զարկղ մի բռնօթւոյ: Բայց սահմաձի Բարդուղիմէոս ամիրայ ումն զոյ ի քաղաքդ՝ երկոքումբք եղբարբ՝
600 որք առ Մինաս վարդապետին յայտր երկիցս զժամացոյցս // են առեալ վասն սրբոյ Աթոռոյս, որոց յետինքն լաւ էին և առ հարկաւոր անձինս պիտոյացան: Եւ զի այժմ ևս ժամացոյց առնանիլ հարկաւորի, ուստի թէ այնր և թէ միւթավէլլի Յովաննէս ամիրայի մահուանն պատճառօք (ըստ որում բարեկամ է եղեալ նա սմա) զմխիթարութեան և զշնորհակալութեան գիր մի ևս առ սոյն Բարդուղիմէոս ամիրայն և առ եղբարսն գրեցաք՝ յորդորելով, թէ ահա առաջին ժամացոյցքն, զորս առեալ էիք, լաւ էին, բայց սպառեցան, վասն որոյ գրեցաք նոր նուիրակ վարդապետին, զի նա ևս ձեր ձեռօքն զքանի մի հատ առեալ յղեսցէ և այլն: Արդ և քեզ գրեմ ահա, զի զնոյին թուղթն տուեալ նոցա, ասասցես վայսքան և զայսպիսի ժամացոյցս առնուլ, որք ահա նշանակին հետևաբար՝ Բ (2) հատ մեծ և դեղին մատէն սահաթ, Զ (6) հատ միջակ և դեղին մատէն սահաթ, իսկ ի վեցիցս չորից երեսն ծաղկեայ մինայ լինիցի, Զ (6) հատ ևս արծաթեայ միջակ սահաթք, որք նոր և լաւ լինիցին և ի ներքոյ իւրաքանչիւրոց ըստ խասիցն զթուղթս զիցեն վարդապետքն, որպէս առ Մինաս վարդապետին

առեցելոցն եղեալք էին, զորս և լինի, թէ ընդ հաւատարմի շուտով հասուսցես աստ:

Զենայի վարդապետի գիրն ևս, զոր յղեալ էիր, ընկալաք: Եւ վասն փոլիցայագիր գրելոյ թէ՛ զնորին և թէ՛ զքո գրեալսն իմացաք: Բայց ահա զերեք հազար և ինն հարիւր ղուռուշի միայն զղապղ գրեալ ի վերայ նորա, յղեցաք ի ձեռս քո, որ զայնքան դրամսն փոլիցայիւ առնուցուս և զղապղն յղեսցես առ նա: Իսկ ի կողմանէ սխալանաց հաշուին, զոր գրեալ էիր, այնր աղագաւ այլ հոգ չէ, մինչ զապղն այնքանի գրեցաք:

ՅԱտենի ժամագրքին կողմանէ յառաջ քան զայս գրեցաք սիրելւոյդ, թէ զՍաղմոսն տպեալ աւարտեցաք և զժամագիրքն սկզբնաւորեցաք ի նորակերտ մեծ զաղկահոցն: Բայց զի խաղ շարի ի ձայնաւորսն, գրաշարն անվարժ է, փոքր մի յամր և աշխատութեամբ յառաջ ընթանայ բանն:

Այլև ջուղայեցի Պօղոսեան պարոն Խաչիկն թէ ե՞կն յայդր, կամ թէ բան ինչ գրէ՞ քեզ, ծանուսցես մեզ, քանզի լաւապէս գիտէս, որ նա ընդ Մինաս վարդապետին մերոյ զպայման է եղեալ յայդր վասն տպեցման Աստնուոյս և մինչև ցարդ զփարայ մի չեմք առեալ դեռևս: Ուրեմն, հարկ է քեզ զնորին գալն յայդր (թէ եկեսցէ) և կամ զի՞նչ գրելն, զեկուցանել
601 մեզ, զի զբանս եմք գրելոց առ նա և առ քեզ ևս, խօսիլ ընդ // նմա և զմիտսն ի վերայ բանի իրիք կայացուցանել, առ ի տալ սրբոյ Աթոռոյս, զի ինքեան գրեսցի յիշատակն:

Նաև յանցեալ ամին ընդ մեծ ուխտաւորացն պօլսեցի Սատաթեան մահտեսի Լութֆի անուն ումն, խարճւոյն հատեալ զոլով, զքառասուն ղուռուշ դրամ էառ ի մէնջ փոխ և զթէմէսուկ ետ, որ ի գալն յայդր հասուցէ քեզ: Բայց մինչև ցկէտս մոռացեալ մեր յղել զթէմէսուկն, այժմ յղեցաք առ քեզ, որոյ զվկայօղսն ի միջոյ իւրմէ իմանալոց ես: Զոր տացես ի տեարն և զքառասուն ղուռուշ դրամն առցես և մեզ գրեսցես:

Դարձեալ, որպէս յառաջ քան զայս, ի տպիչ տիրացու Պօղոսէն զղրամս ընկալեալ մեր աստ, զփօլիցայագիր գրեցաք ի վերայ քոյ ի յունվարի ելն, որ ի հասանիլն առ քեզ ԻԱ (21) օր վատային զդրամն հասուցես Պօղոսի հայր Յովհաննիսին, նոյնպէս և այժմ զմէկ հազար հինգ հարիւր ղուռուշ ևս հասուցեալ նորա առ մեզ, ահա նորապէս ևս զփօլիցայագիր գրեցաք առ քեզ, այլ ևս ԻԱ (21) օր վատայով, որոյ ի ժամանելն յայդր մինչ ԻԱ (21) օրն լրասցի, զԱՌԵՃ (1500) ղուռուշ դրամսն ևս տացես և զղապղն առեալ առ քեզ պահեսցես և մեզ գրեսցես:

Բայց Ակնայ Վանստան գիւղացի Անաստաս անուամբ ումն ի յունաց ազգէ և միւս ևս քահանայ Վասիլ անուն, յանցեալսն ի Թիֆլիզ գոլով, զառնիլս ունէին ի վերայ արքային, որոց աղագաւ հրամայեցեալ էր նոցա յարքայէն գալ յերկիրս և ի վէրկիէն, զոր իշխօղ տեղւոյս տայ նմա, անտի առնուլ զառնլիս իւրեանց: Իսկ նոքա ի հիւանդութեան մեռանօղ խանին եկին աստ, վասն որոյ ոչ հոգացաւ բանն նոցին: Ապա մինչ շտապեցան նոքա զառնալ յայդ կոյս զԲԾ (200) թուման Թիֆլիզու փողի զբարաթագիրն առ մեզ թողին, զի յետոյ տիրացու Պօղոսն ի գալն ի Թիֆլիզու ընդ իւր դրամոյն, զնոցինն ևս առցէ, զի ԲԾ (200) թումանի բարաթ ևս անդ ի Թիֆլիզ նմա էին տուեալ, որք ի միասին յունաց փողն՝ լինին ԴԾ (400) թուման Թիֆլիզու դրամ, զորս Պօղոսն, ահա, յայս միջոցս ջանայ սակաւ առ սակաւ առնուլ և մեզ հասուցանել, զի և մեք զփօլիցայագիր գրեսցուք ի վերայ քոյ, որ դու հասուսցես այն վերոյ

յիշեալ Անաստասին և կամ նորին եղբայր Նիկոլային, որ յայդր է։ Եւ զայս փոլիցայս ընդ ինքեան Պօղոսին եմք առնելոց, որ յետ աւուրց նլանելոց ի յԱթոռոյս, եթէ բանն հոգասցի։

Այժմ այսպէս գրելս վասն այնր է, զի որովհետև յառաջին թուղթն մեր գրեցաք քեզ երբեմն զփոլիցայս հաստցանել վէքիլ Հայրապետին, մի զուցէ ի դրամոց դատարկ գտանիցիս, այլ զքանի մի հազար զուռուշի չափ դրամ ի պատրաստի ունիցիս առ քեզ, իբր ԳՌ (3000)-ի կամ այլ
602 աւել և պակասի, որ թէ սատի փող հասա//նիցի մեզ և փոլիցայ առնիցեմք ի վերայ քոյ, կարիցես հատուցանել։

Ի մխիթարական գիրն Տաղէսի փեսայ Գրիգոր ամիրային, վասն հանգուցեալ Յովաննէս ամիրային, ընտանի գրեցաք, զի յառաջին թըղթոցդ գրեալ էիր, թէ Յովաննէսն հօրեղբօր որդի է նմա, և ի միւսումդ թղթոց գրես, թէ հօրաքեռ որդի է։ Ուստի երկբայելով և ոչ զմին հաստատեալ, ընտանի գրեցաք։

Այլև զայս ծանուցանեմ սիրելւոյդ, զի յանցեալսն յառաջ քան զԲարեկենդանն, Նախիջևանցի անիծեալ տաճիկ ոմն, երիտասարդ հասակաւ, յերեկոյին՝ յասել Ենկեացէին, մտեալ էր յեկեղեցին և [յաւելատեղւոյ անկեանն, ուր և ածուխի արկղն դնի անդ]* թագուցեալ, զոր լուսարարքն ի յելանելն չէին տեսեալ, և ի գիշերին յեկեղեցւոյն զքանի ինչ արծաթեղէնս էր գողացեալ և ի ներքոյ մեծ խաչվառիցն ի պատրաստի կացեալ՝ զի ընդ բանալ դրանն գողունեօքն յարտաքս արկցէ զինքն։ Բայց ի բանիլ դրանցն, մինչ աճապարեալ էր ելանել ընդ մեծ դուռնն, հացապան մահտեսին, որ յոյժ վաղ գնայ ի ժամ, հանդիպեալ էր նմա և որչափ հարցեալ էր թէ ո՞վ ես, չէր պատասխանեալ [թաղւոյն նորա զնա, լուսարարքն զպակասութիւն իրի ինչ տեսանելով, առ միմեանս հարցեալ էին, թէ ո՞ւր է։ Զօր լսելով յիշեալ մահտեսայն, ասացեալ էր նոցա, թէ ահա տեսի զոմն, զի ել յեկեղեցւոյս։ Ապա ելեալ նոցա ի ներքին պարիսպն և զդրունսն փակեցուցեալ, գտեալ էին զնեոնն և ըմբռնեալ։ Մեք ես յայնմ գիշերի ի պաշտօն գնացեալ, տեսաք, թէ իջման տեղւոյ միոյ կողման զաւազանն չգոյ։ Եւ մինչ հարցաք, ասացին, թէ գող է մտեալ յեկեղեցիս և ըմբռնեցեալ կայ։ Յայնժամ զմարդ եդեալ ի վերայ որոնել նոուք և գտաք զշափուատս շուրջառաց և զայլ մանր իրս։ Եւ մինչ ստուգեալ եղև ի յինքն զողութիւնն, ելեալ ի փռնատանէն, ուր և եդեալ էր զգողօնիսն, առեալ ետ մեզ]**, այլ ի բաց փախուցեալ էր ի դուրս, որոյ զհետամտեալ լուսարարացն կալեալ էին զնա և զգողօնիսն առեալ ի նմանէ։ Որք էին՝ մի զաւազանի գլուխ ոսկեզրեալ, քանի մի խաչք, մի տապանակ և յիջման տեղւոյ կամարսն՝ կախեցեալ արծաթեայ մանր կանթեղիցն Գ (3) հատ, զորսն զամենայսն անպակաս յետս էին առեալ ի չքոյն, և մեք յառաւօտուն բերաք առ մեզ զչիքն և լաւապէս իմն գանեալ, շղթայեցուցաք։ Յետոյ նոր խանս մեր, աղաչանօք Նախիջևանու խանին (որ առ ինքն է ահա յերկամ միջոցս), զմարդ էր յղեալ և գիր գրեալ իրիճայի, թէ իւր բալէն գտեալ է դա յօջախիցն, մեզ բաշխես։ Վասն որոյ և մեք մեծ մունաթով շնորհեցաք ինքեանց։

Գրեցի, զի գիտասցես, և ո՞ գիտէ, թէ աւելորդօք հուշակ եկեսցէ յայդր, ծանուցես զատոյդն, որ Աստուծով և սրբոյ իջման տեղւոյ նորին շնորհիւն, վնաս ինչ չեղև։ Իսկ և խանն մեր, որ ի խան լինելոյն մինչև ցայժմ չէր եկեալ աստ, յայս աւուրքս Բ (2) եղբարբքն և Նախիջևանու

* Բնագրում ջնջված է։

** Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է։

խանիւն, և այլ բազում խանիճաղանճիւ եկն՝ իբր զիարաթ ի սուրբ
603 Աթոռս, և էրէկ դարձաւ աստի։ Յորոց// ծանրութենէն նեղեալ և վաստակեալ, իբր հարսանեհար կամք և այսու որպիսութեամբ հազիւ կարացաք աւարտել զգրեանս և յղել։

Առ Մասեհեան պարոն Եսային ես զթուղթ գրեալ յղեցաք ահա, զոր տացես ինքեան յորում է մխիթարութիւն ի կողմանէ միւթավէլի Յովաննէս ամիրային, զոր տացես ինքեանն։

Եսայի վարդապետին ես պատասխանի թղթոյն գրեցաք ի կողմանէ փոլիցային, զոր յղեսցես առ նա։ Եւ առ Գալուստ վարդապետն, որ յառաջ ընդ զապզին անձեռնհաս եղաք ի գրել զյատուկ թուղթ, այժմ գրեցաք, զայն ես առ նա յղեսցես։

Անկիւրիոյ նուիրակ Յարութիւն վարդապետին յառաջ քան զայս զթուղթ գրեալ յղեցաք առ քեզ՝ յղել առ նա։ Այժմ զպատասխանի չընկալեալ նմին, և ես գրեցաք զթուղթ և առաքեցաք առ քեզ՝ հասուցանել նմա։ Յորում գրեալ եմք, զի թէ փոլիցայ առնելոյ լիցի, առ քեզ հասուսցէ յայդր։

Այսպէս և այսքան իմացեալ ի մէնջ առ ժամս, և դու զթուղթդ որպիսածանոյց առ մեզ գրել ոչ դանդաղելով, ողջ լեր ի Տէր և յանձնեալ ի շնորհս նորին սրբոյ իջման տեղւոյս։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի մարտի Դ (4) և ի սուրբ էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 599—603

1784 թ. 15 մարտի—*Թուղթք ի Թիֆլիզ*

825. *Կոնդակ ժողովարարութեան մամի ընդ Միքայէլ վարդապետին։*

826. *Թուղթ ես առ քահանայսն Թիֆլիզու. յանձնարարութիւն վասն մամի ժողովարարութեանն։*

Գրեցաւ ամսոյս ԺԵ (15)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 1

1784 թ. 19 մարտի—*Թուղթք ի Թիֆլիզ*

827. *Թուղթ սաճկերէն առ Հերակլ արքայն՝ հանդերձ մրգեղինաց սերմամբ։*

828. *Թուղթ ես առ պարոն Յովնաթանն, զի ի հրամայել արքային փութով եկեսցէ։*

Գրեցաւ ամսոյս ԺԹ (19)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 1

829. 1784 թ. 31 մարտի—*Թուղթ ի Գօրի առ սուրբ Ստեփաննոսի եկեղեցւոյ վիճակեալ ժողովուրդսն, ի պատասխանի թղթոյն նոցա, որք գրեալ էին վասն ուրումն քահանայի, թէ զթուղթ ինչ ունելով յումեք, կամի տիրել եկեղեցւոյն։ Առ որս գրեաց սրբազան Վեհապետն, թէ այն քահանայն զթուղթն իւր բերցէ կամ յղեսցէ, զի տեսեալ զիրաւունս արարից, բայց թէ ոչ, պատժելոց եմ զնա։*

Գրեցաւ ամսոյս ԼԱ։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 1

830. 1784 թ. ապրիլ—*Կոնդակ ի վերայ Թիֆլիզու. մեղադրութիւն Թուլամորթ քահանայից և բանադրանք չՅակոբ երեցու ուրումն, որ զԹիֆիլտար Յովաննէսն պսակեալ էր ընդ չհաս կնոջ ծածկաբար։ Եւ վասն նոյն Յովաննիսին ևս, թէ վասն արքայի և որդւոյ իւրեայ գրելոյն և իւր մեղայագրութեանն չարաբար ընդ բանիւ, այլ այսու պայմանաւ, որ եկեալ յԱթոռս յանձն առնուցու զմեղսաքաւիչ ապաշխարութիւն։ Եւ առ այս բանք։*

Չեռ. № 2803, էջ 484—488

1784 թ. 5 ապրիլի—*Թուղթք ի Խոյ, ի Թաւրէզ*

831. *Թուղթ ևս առ պարոն Թադէոս գործակալն մեր, շնորհակալութիւն վասն արարեալ լաւութեանցն, որ նուիրակ Եփրեմ վարդապետն, և այլ բանից*[188]*։*

832. *Թուղթ ևս օրհնութեան ի Դուխուրղան առ պարոն Սահակն, սակս վերահաստատութիւն գանձապետութեան, որ նուիրակ Եփրեմ վարդապետն, հաւանութեամբ ժողովրդոցն, կարգեալ էր գանձապետ սրբոյ Աթոռոյս նոր շինեցեալ եկեղեցւոյն։*

833. *Թուղթ ևս օրհնութեան և շնորհակալութեան առ հասարակ ժողովրդեանն և քահանայիցն Դուխուրղանու, սակս նոր հաստատելոյն գանձապետ ի միջոյ իւրեանց պարոն Սահակն ի վերայ նորաշէն եկեղեցւոյն։*

834. *Թուղթ ևս առ նուիրակ Եփրեմ վարդապետն վասն յղեալ ճոթերիցն շնորհակալութիւն, հանդերձ ղապղիւ, նաև ղապալայիւ տաճկերէն ի կողմանէ առեալ այգւոյն։*

Գրեցաւ ամսոյս Ե (5)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 2

Սոյն օր թուղթ ևս ի Վան

835. *Թուղթ ևս առ նուիրակ Յակոբ վարդապետն, ի պատասխանի թղթոյն, զոր գրէ սրբազան Վեհապետն ի կողմանէ գողացուցեալ ընչիցն իւրոց, թէ բան զչափն մի տրտմիցիս։*

836. *Թուղթ ևս շնորհակալութեան առ Մշու վանից առաջնորդ Աստուածատուր վարդապետն, վասն ձեռնտուութեան նուիրակին մերոյ Յակոբ վարդապետին և այլ բանից։*

837. *Թուղթ ևս տաճկերէն առ Դօվլաթլու Մաղսուտ փաշայն, սակս պատահեալ փորձութեանցն Յակոբ վարդապետին, զի փութով ջանասցէ առ ի գտանիլ, որպէս և ինքն խոստացեալ է նմա։*

Գրեցաւ ամսոյս Ե (5)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 2

1784 թ. 7 ապրիլի—*Թուղթ[ք] ի Թիֆլիզ*

838. *Կոնդակ ի վերայ Թիֆլիզու, մեղադրութիւն Թուլամորթ քահանայից և բանադրանք չՅակոբ երիցուն, որ զԹիֆիլտար Յովհաննէսն ծածկաբար պսակեալ էր ընդ չհաս կնոջ։*

839. *Թուղթ ևս տաճկերէն առ արքայի որդի Գէօրկի խանն, ի պատասխանի թղթոյն, որ գրեալ էր յաղագս Թիֆիլտար Յովհաննիսի անպատեհ արարմանցն իւրեայ, զի մի պատժեսցեն։*

840. *Թուղթ ևս առ առաջնորդ Կարապետ վարդապետն և առ տէր Ղազար քահանայն, ի պատասխանի թղթոյն իւրոյ սակս վախճանեալ Մանուէլ վարդապետի ընչիցն, թէ որպէս առնեմք։ Հանդերձ ղապղիւ։*

Գրեցաւ ամսոյս Է (7)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 2—3

Ի սոյն օր թուղթք ի Կարին

841. *Կոնդակ ժողովարարութեան ի վերայ Կարնոյ, Տրապզոնու, Կիւմիշախանայու և ի Բաբերթու, ըստ խնդրոյ կարնեցւոցն եւոր Այվազ անուամբ ուրումն։*

842. *Կոնդակ մի ևս ժողովարարութեան ի վերայ Կարնոյ, Ղարսայու, Բասէնու, Տրապզոնու, Կիւմիշխանայու, Բաբերթու, Ղարահիսարու, Թամզարայու և ի Կեղի և այլ շրջակայս նոցին, ըստ խնդրոյ կարնեցւոցն եւուր տէր Մկրտիչ անուամբ քահանայի, որ նա ինքն ևս էր կարնեցի։*

Գրեցաւ ամսոյս Է (7)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 3

603 843. 1784 թ. [7] ապրիլ—*Թուղթ առ արքայն Վրաց Հերակլ, ի պատասխանի թղթոցն նորին, որ յաղագս ումանց բանից։*

Յորմէ աստուածային ամենառատ օրհնութեամբ և քրիստոսաձիր սուրբ ողջունիւ, ճշմարիտ սիրով և սրտաբուխ կարօտիւ, նաև մշտածաւալ շնորհիւ սրբոյ տեղւոյս միածնաիջի, ծանուցումն լիցի յարգոյապատիւ շնորհիւ սրբոյ տեղւոյս միածնաիջի, ծանուցումն լիցի յարգոյապատուեալ և գերազանց սիրելւոյդ մերոյ և աստուածուսուցիդ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս, քրիստոսապսակ և նոյնազօր օրհնեալ մեծի արքայիդ Հերակլայ։

Զի սիրանիշ թուղթ բարեպաշտութեան ձերոյ էհաս առ մեզ ձեռամբք հաւատարմացն քոց և սիրելեացն մերոց՝ պարոն Սուլխան Դիւանին և Մէհրապ աղային, որով զողջ և բարւոք կելոյ ձերմէ իմացեալ, բերկրեցաք և զուարթացաք ի սիրտ և ի հոգի։ Եւ զկարճառօտ փութոյլայն ևս ընթերցեալ, որոյ և զկիալիրն ի յիշեալ հարազատացն լուեալ, հասու եղաք բազում հոգեւորականութեանդ և կրելոյդ զծանրութիւնս ի կայսերական բաղմութեանցն։ Զորս արդարև յառաջնմէ իսկ մտածելով մեր հոգայաք և հոգամք վասն պատուականութեանդ, սակայն զի առ առաջնովքն չեղեալ բարեգիպութիւնքն, նարդենիս առ մեօք ի յաստուածայինն ակնարկութենէ քոյինդ բարեբախտութեան յաջողեալ պատահին։ Ընդ այդմիկ յոյժ
604 *ուրախ եմք և հանապազ խնդրեմք ի Տեառնէ ու//նիլ ի վերայ օրհնեցելոյդ զծայրագոյն խնամս, շնորհաւոր առնել զգերափառ նորոգ ճոխութիւնդ և պահել զքեզ ի յերկարագոյն ամանակս խաղաղական կենօք և յաջողութեամբ, և միշտ բարձրացուցանել փառաց ի փառս՝ ի մխիթարութիւն և ի յապահովութիւն մեզ։*

Արդ, զբէրաթն ի մեծութենէդ յղեալ, ետուն մեզ պարոն Սուլխան Դիւանն և Մէհրապ աղայն[189]*։ Եւ մեք, թէպէտ ի վերայ գլխոց մերոց ընդունիմք զհրամայեալսն ի քէն և ցանկամք իսկ կարեկցիլ օրհնեցելոյ արքայիդ, այլ ի ներկայումս ի բազում դիմաց զսպակատութիւնս ունելով,*

ըստ կարեաց մերոց զԲՃ (200) թուման տեղւոյս դրամ յանձնեցաք պարոն Սուլխան Դիւանին և Մէհրապին, որք ի հարկէ, ծանուցանեն մեծութեանդ պարագայիւք և ամենայն որպիսութեամբք մերովք: Առ այս բաւ լիցի այսքանս:

Իսկ և յատուկ թղթով զիրիճայ էիր գրել յաղագս թաֆիլտար Յովաննէսին՝ առ զպատժել զնա հոգևորապէս, որպէս սակս չհաս առնելոյն: Ուստի վասն քաղցրագունի խաթեր աղնուութեանդ, զբանադրանսն մեր որ առ նա, արգելեցաք՝ շնորհելով նմա զպատիժն: Բայց մինչ այսպէս անփոյթ արասցուք զհոգևոր օրինաց եկեղեցւոյ և զկանոնաց սրբոց հայրապետաց նախնեացն մերոց, իւրաքանչիւր ոք յանդգնեալ՝ ըստ կամաց իւրոց է ընթանալոց, թողլով զհաճոյսն Աստուծոյ: Վասն որոյ հետեւեալ վերահասու եղաք, զի այս անօրէնութեան գրգռիչն և ի կատար յաւուցանողն չիք Յակոբ էրէցն է, որոյ աղագաւ այտի ի յոմանց նշանաւոր անձանց զվկայութեան գիր ևս ունիմք, որ նզովից արժանին այն, փոխանակ խրատելոյ զնոսա՝ դառնալ ի զիւաշարժ կամացն, ևս առաւել յորդորեալ է առ ի նոյնն, մինչև ի լրումն է բերեալ, և ըստ կերպի բանին իմանի, թէ ինքն է պսակեալ, որովհետև իւր ծուխ է: Վասն որոյ բանադրեցաք զնա, զի այլոցն ևս զգուշութիւն լիցի, իսկ զՅովաննէսն, վասն անոյշ խաթերդ, թողաք առանց բանադրանաց, որպէս և ի վերոյ յիշեցաք: Եւ միայն զայս գրեցաք, զի եկեսցէ ի սուրբ Աթոռս և ինքնին ծանուցեալ սուգիւ զյանցանս իւր, վերստին դարձցի ի քաղաքդ:

Այլև՝ յանցեալ աւուրսն խնդրեցաք ի յօրհնեալ արքայէդ հրամայել ծաղկարար վարպետ Յովնաթանին առ ի գալ և ծաղկել զմէջ քրիստոսաէջ սրբոյ տաճարիս և յուսամ, թէ հրամայեալ իցես: Իսկ եթէ մինչև ցայժմ ի զբաղմանցդ ձեռնհաս չիցես լեալ, այժմ անյապաղ հրամայեսցես նմա գալ, զի յոյժ հարկաւորաբար ծաղկել տալոց եմք զսուրբ տաճարս, յորմէ և քեզ մեծ վարձք է լինելոց:

Ողջ լեր ի Տէր և պահպանեցեալ զօրութեամբ կենսատուի սրբոյ խաչին յարաժամ: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թւոյս ի յապրիլի, և ի սուրբ Աթոռս էջ[միա-ծին]:

Ձեռ. № 2803, էջ 603—604

1784 թ. 11 ապրիլի—Թուղթ ի մեծն Պոլիս

844. Թուղթ մի ևս առ նորին նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի գրեալ թղթոյն ի փետրվարի Ի (20)-ին: Սակս խնդրեալ օրհնութեան և յիշատակաց թղթոցն և մեք գրեցաք նմա յայլում ժամանակի յղելոց եմք:

Գրեցաւ ամսոյս ԺԱ (11):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 3

1784 թ. ապրիլ—Թուղթք ի Կարին

845. Թուղթ մի ևս առ Թարգիզատէ Յովհաննէսն, որ զսրբոյ Աթոռոյս Յակոբ վարդապետին սանատով տալացու դրամն այլում տալ կամէր:

846. Թուղթ մի ևս առ պարոն Հայրապետն, ի պատասխանի երից թղթոցն յաղագս ոմանց բանից:

Գրեցաւ ամսոյս ԺԱ (11):

847. Թուղթ մի ևս առ մեծին Պօլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն վասն հոռոմ պապայ Վասիլին և խօճայ Անաստասին՝ ի կողմանէ յարքայէն Վրաց Հերակլայ անկեաց հէսապին և տպագիր տիրացու Պօղոսին ևս:

Գրեցաւ ամսոյս ԺԳ (13):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 4

489
848. 1784 թ. 13 ապրիլի—Թուղթ ի մեծ Պոլիս առ տեղւոյ նուիրակ Իսահակ վարդապետն, վասն հոռոմ պապայ Վասիլին և խոջայ Անաստասին ի յԵրեւան ի կողմանէ յարքայէն Վրաց անկեաց հէսապին, նաև տպագիր տիրացու Պօղոսի անկեաց և մեզ հասուցելոցն աղագաւ ես[190]:

Յորմէ սիրով բազմաւ և կարօտիւ, հոգևոր օրհնութեամբ և քրիստոսաւանդ սուրբ ողջունիւ, զիտասցիր սիրելի և հոգևոր որդիդ մեր, շնորհածին և մտերիմ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդապետ: Զի յառաջ քան զայս յամսոյս ԺԱ (11) զթուղթ գրեցաք առ քեզ վասն իրիք պատճառի՝ ծանուցանելով և զյետին թղթոցդ հասանելն առ մեզ և զձեռնարկելն մեր ի խնդրեալ թուղթսդ և զայլ իրս ինչ, որոյ ի հասանելն առ քեզ իմանալոց ես:

Իսկ յայնմիկ թղթոջ, որ խոստացաք ի կողմանէ յունացն և տպիչ Պօղոսի հաշուոցն յետոյ լիապէս գրել, ահա գրեմք, քանզի ի յԱկնայ Վանատան գեղջէն հայ հոռոմ պապայ Վասիլն և խօջայ Անաստասն (զորոց որպէսն յառաջ ևս եմք գրեալ քեզ) ի վերայ արքային Վրաց զառնլիս ունէին: Վասն որոյ գնացեալ էին ի Թիֆլիզ և ի նմանէ ԲՃ (200) թուման Թիֆլիզու դրամի բարաթ էին առեալ և տուեալ տպիչ տիրացու Պօղոսին, որ ի գալն յԵրևան, ընդ իւր առնլեացն, զայն ևս առնուցու ի խանի մախթուէն: Յետ այնորիկ ԲՃ (200) թուման Թիֆլիզու դրամի բարաթ և ԱՃ (100) զուռուշ սաղ դրամի բարաթ ևս էին առեալ, զորս ինքեանք բերին ի յԵրևան առ ի առնուլ զդրամս իւրեանց:

Բայց ի գալն նոցին հին խանն հիւանդացեալ էր, և զառման հնարս ոչ գտեալ, եկին ի սուրբ Աթոռս և զայն յետին ԲՃ (200) թուման Թիֆլիզու դրամի բարաթն և ԱՃ (100) զուռուշ սաղ դրամի բէրաթն ևս զերկուսն ի միասին եդուն մեզ իբրու ամանաթ՝ այնու դիտմամբ, զի թէ հնար լինիցի առնլոյ, զդրամսն առցուք և հասուսցուք ինքեանց, և թէ ոչ, գրով ծանուսցուք ինքեանց, զի որպէս և կամիցին, այնպէս առնիցեն: Որք և ըստ այսմ դիտման թուղթ ևս եդուն մեզ (զորոյ օրինակն ահա յղեցաք առ քեզ) և ինքեանք ելեալ գնացին: Ապա այնմ միջոցին խանն ցամաքեցաւ և զդրամն այլ ոչ կարացաք առնուլ:

Մինչև եկն տպագիր տիրացու Պօղոսն ի Թիֆլիզու, զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, որ յիրաւի յերկարապէս մինչև ցարդ դեգերեալ աստէն, կարի յոյժ աշխատեցաւ թէ վասն իւր առնլեացն, և թէ վասն վերոյ գրեալ
490 յունացն: Զի թէպէտ սուրբ Աթոռոջս լինիւր, սակայն // ի շաբաթն մի անգամ երթայր յԵրևան և գայր: Եւ թէ մեք ևս որչափ գիր գրեցաք, թողուք զայն: Ինչ և իցէ, թէ յաճախութեամբ երթևեկութեանն և թէ ոմանց ևս զդրամս տալով էհան ի կերչաց թէ զիւրն և թէ զնոցունցն:

Արդ, ԲՃ (200) թուման Թիֆլիզու դրամն, որ է սաղ փող ԲՌՆՃ (2500) ղուռուշ, այնր հաշիւն ընդ տիրացու Պօղոսին է, որովհետև բարաթն նմա էին տուեալ, իսկ միւս ԲՃ (200) թուման Թիֆլիզու դրամն և ԱՃ (100) ղուռուշ ևս սաղ փողն, որք ընդ իրեարս են ԲՌՉՃ (2600) ղուռուշ սաղ դրամ, այսոքիկ մեզ հասին։

Բայց թէ յայսց վերոյ գրեալ դրամոցս կողմանց և թէ ի տիրացու Պօղոսի իւր առնլեացն կողմանէ, խարճ գնաց մերովս գիտութեամբ Միրզայ Գեօրկինին՝ ՃԻ (120) ղուռուշ, Յովաննիսին՝ Կ (60) ղուռուշ, փողի վնասն՝ ԺԵ (15) ղուռուշ։ Վերոյ երից ղալամիցս ջամն է ՃՂԵ (195) ղուռուշ, զոր երեք բաժին արարեալ, զմի բաժինն արկաք ի վերայ Պօղոսին և զերկուս բաժինսն արկաք ի վերայ յունացն՝ ըստ հաշուոց իւրաքանչիւրոց առնլեացն։

Եւ արդ, որովհետև ԲՌՉՃ (2600) ղուռուշն մեզ էհաս ի կողմանէ վերոյ յիշեալ երկուց բէրաթիցն, զմէկ բաժին խարճն, որ է ԿԵ(65) ղուռուշ, մեք եառք ձեռամբ տիրացու Պօղոսին և մնաց առ մեզ ԲՌՆՃԼԵ (2535) ղուռուշ։ Իսկ միւս Բ (2) բաժինքն ընդ Պօղոսին են, որ թէ զայս խարճքս և թէ ի յՆրևան գնալն և գալն ևս զայլ մանր խարճս է արարեալ, ինքն է տեսանելոց ընդ նոսա։

Այլ դու, սիրելիդ մեր, երբ այս գիրս հասանիցի առ քեզ, եթէ վերոյ գրեալ խոջայ Անաստասն յայտր իցէ և կամ նորին եղբայր խոջայ Նիկօլն, որ յայտր է, մինչ ընդ տիրացու Պօղոսին գայցեն առ քեզ, դու ձեռամբ Պօղոսին և գիտութեամբ ոմանց նշանաւոր արանց վերոյ յիշեալ ԲՌՆՃԼԵ (2535) ղուռուշն տաչիր և ի վերայ սոյն թղթոյս զահիրայ առնել տացես նոցա՝ որպիսի ոճիւ և հարկաւորի, զի իմանիցի, թէ դոքա առ մեզ բէրաթ են թողեալ այնքան ինչ դրամոյ և մեք առեալ հասուցեալ եմք ինքեանց ի ձեռն քո, բացի ԿԵ (65) ղուռուշ խարճէն։ Նաև դոքա տեղս Գուրկէնին Ի (20) ղուռուշ խոստացան, բայց մեք ոչ ինչ եառք նմա, զի նա ոչ կարաց դրան ինչ հոգալ։

Դարձեալ յառաջ քան զայս երկու անգամ փոլիցայ եմք արարեալ ի վերայ քոյ ի կողմանէ սոյն դրաքեր ապիչ տիրացու Պօղոսին։ Այժմ ևս առաք ի նմանէ 920 ղուռուշ և մէկ ղապղ եառք իւրն, որ ահա ընդ ինքեան
491 բերելոց է առ քեզ։ Ուրեմն և դու զդրամն տուեալ, զղապղն առնու//ցուս հանդերձ զահիրայովն և զինքն՝ զտիրացու Պօղոս ևս ի սէր ունիցիս յամենայն կողմանէ ըստ խոհեմաբարոյութեանն իւրոյ, քանզի սիրելի և հոգևոր որդի մեր է և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս։

Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) ի յապրիլի ԺԳ (13), և ի սուրբ էջմիածին։

1784 թ. ապրիլ—Թուղթք ի Թիֆլիզ

Ձեռ. № 2803, էջ 489—491

849. Կոնդակ առաջնորդութեան առ Հաղբատու վանից միաբան Դաւիթ վարդապետն, ըստ խնդրոյ հաղբատեցւոցն արարաք առաջնորդ ի վերայ նոյն վանիցն իւրեանց։

850. Թուղթ մի ևս ի Հաղբատ առ նորին առաջնորդ նոր կարգեցեալ Դաւիթ վարդապետն։

851. Թուղթ մի ևս ի Թիֆլիզ առ նորին առաջնորդ Կարապետ վարդապետն։

852. Թուղթ մի ևս ի Բամպակաձոր առ պարոն Գաբրիէլն։

853. Թուղթ մի ևս տաճկերէն առ Վրաց արքայն Հերակլ, ի պատասխանի հայերէն գրեալ թղթոյն իւրոյ սակս Դաւիթ վարդապետին։

854. Թուղթ մի ևս տաճկերէն առ արքայի որդի Գեօրկի խանն վասն ընդունելոյն զիրիճայն և կարգելոյն առաջնորդ Դաւիթ վարդապետն ի վերայ Հաղբատու և այլ բանից։

Գրեցաւ ամսոյս ԺԹ (19)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 4

1784 թ. ապրիլ—Թուղթք ի մեծն Պօլիս

855. Թուղթ մի ևս օրհնութեան առ Յովհաննէսն ամիրայն, որ տուեալ էր զերկու հարիւր յիսուն ղուռուշ դրամ հոգեբաժնի։

Միաժամանակ օրհնության նամակներ են ուղարկվել նաև կոստանդնուպոլսեցի 9 և գմյուռնացի 13 նվիրատուների։ Տեղի նվիրակներ Իսահակ և Եսայի վարդապետներին հանձնարարվել է նամակները հանձնել ըստ պատկանելույն։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 4—6

1784 թ. 27 ապրիլի—Թուղթք ի Բասրայ

856. Թուղթ մի ևս օրհնութեան և շնորհակալութեան առ Ստեփաննոս աղայն և պարոն Յոհաննէսն, զոր գրէ սրբազան Վեհապետն ի կողմանէ Հնդկաց նուիրակ Գրիգոր վարդապետին որպիսութեանցն, թէ զոր լուաք կարի ուրախացաք, և այլ ոմանց բանից[190]ք։

857. Թուղթ մի ևս առ Հնդկաց նուիրակ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի երկուց գրեալ թղթոցն ի Սուրաթու. մխիթարութիւն սակս ոմանց բանից։

Գրեցաւ ամսոյս ԻԷ (27)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 6

492 858. 1784 թ. 27 ապրիլի—Թուղթ ի մեծն Պօլիս առ տեղւոյ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի ի փետրվարի Ի (20) գրեալ թղթոյ նորին վասն զանազան բանից։

Յարմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ, բրիստոսաւանդ սուրբ ողջունիւ և օրհնութեամբ բազմաւ գիտասջիր սիրելի և հոգևոր որդի մեր, մտերիմ և օգտաջան զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդա-
493 պետ։ Զի յանցեալսն // ի յունվարի ելն և ի մարտի Դ (4) զթուղթս գրեցաք առ քեզ և հանդերձ խնդրեալ օրհնութեան թղթովքդ յղեցաք, որք մինչև ցարդ հասեալք լինին առ քեզ։ Յետ յղելոյ զայնոսիկ, հասին առ մեզ ի փետր. Ի (20) գրեալ թուղթք քո՝ ի յապրիլի ... Բայց թողեալ մեր զպատասխանի նոցին մինչև ցարդ, յառաջ քան զայս, յաղագս այլոց բանից հարկաւորեալ, երկիցս զթուղթս գրեցաք առ քեզ ի յապր[իլի] ԺԱ (11) և ի ԺԳ (12)։ Որոց ի ժամանելն առ քեզ, իմանալոց ես զոր ինչ գրեալ եմք։ Իսկ այժմ ահա նախապէս ի խասգիւղ գրեալ թղթոյդ հարկաւորացն բանից առնեմք զպատասխանի։

Արդ, գրեալ էիր զհասանիլն ի դեկտ. Ի (20) գրեալ թղթոյն մերոյ առ քեզ և քո զՍաղիմայ Ծ (50) թուման փոլիցայն տալդ և զՅովսէփ պետի փոլիցագիրն, զոր առեալ էիր զահիրայովն և յղեալ, ընկալաք և միամտեցաք։ Ծանուցեալ էիր և զբաժանելդ զՊարտավճարսն[191]։ Իսկ զկատարեալ որպիսութիւնն, զոր թողեալ էիր, ի հարկէ մինչև ցայժմ

գրեալ ես։ ԶՍաղիմայ պատրիարքի զԲ (2)-ան ես, որ առ նա ես յղեալ
համդերձ թղթագրութեամբ, բարւոք է։ Եւ զի նմանէ առ մեզ գրեալ
թուղթն, զոր յղեալ էիր, ընկալար, բայց զի այս ես յառաջ գրեալ թղ-
թոց զհետամբն էր, որոց զպատասխանին ի յունվարի եւն գրեալ եմք։
Այժմ աւելորդ էր կրկին պատասխանագրութիւնն։ Իսկ զերկու Պարտա-
վճար ես առ Իզնիմիդու առաջնորդ Պետրոս վարդապետն և առ նորին
Յովակիմ վարդապետն յղել գրեցար։ Որպէ՞ս է, որ զայնցանէ զբան
ինչ ոչ յիշես։
Յաղագս հիւանդութեան մերոյ յառաջ ծանուցելոյ, որ ցաւեցեալ
էիր, շնորհակալ եղէ։ Բայց չեւ այնր հիւանդութեան զայլ ցաւ իմն ես
կրեցաք՝ մոռացուցիչ զամենայնսն, յորմէ ես ազատեցեալ եղաք ողոր-
մութեամբն Աստուծոյ և այժմ յառողջութեան կամք և ընդ մերայնոցդ
ես զլաւութիւն և զբարեկեցութիւն խնդրեմք։
Զատենիւոյն յապրիլի ԺԱ (11) գրեալ թղթոյն մերում զբանս ինչ եմք
զեկուցեալ քեզ ի միամտութիւն։ Եսայի վարդապետի զԲ (2) գիրն ես
ընկալայ և ահա զպատասխանին գրեալ, համդերձ այլ թղթովք օրհնու-
թեան, և պահարանեալ յղեցաք ընդ թղթոյս ի ձեռս քո՝ յղել առ նա։
Իսկ վասն խնդրոյն նորա՝ ի քէն փոլիցայ առնել ի վերայ իւր, որ
վերստին յիշեալ էիր, մեք ընդ առաջին գրելդ ԳՌԹՃ (3900) ղու-
ռուշի զապդ գրեցաք ի վերայ նորա և յղեցաք քեզ, զի փոլիցայ արա-
րեալ՝ զդրամն առնուցուս և զզապդն յուղարկեսցես։ Զնախապէս և
երկրորդապէս յղեալ Գ (3) բեռն իրաց և կանթեղաց սաղ ժամանելն
գրեալ ունիմք քեզ, և ազդեալ ես եմք, թէ մինչ զկանթեղաց գինսն և
զայլ ծախսն ես իմացուսցես, յայնժամ վասն ամենից յղեցելոցդ գնոցն
494 || և ծախուցն ի միասին զզապդ եմք գրելոց։
Ի կողմանէ մահտեսի Խաչրի խնդրոյն, զոր ինչ գրեալ էիր, իմա-
ցար։ Թէպէտ սուրբ եկեղեցւոյ սեանց ծախքն աւելիք են, որպէս յառաջ
գրեցաք, և դու իսկ քաջ գիտես, սակայն որովհետև մեր սիրելի է և
ջերմեռանդ տենչմամբ խնդրէ, հաճեցաք ընդ խնդիր նորին, առցես
զԵՃ (500) ղուռուշն և գրեսցես մեզ, զի զյիշատակն նորին գրեսցուք
ի վերայ սեանն և լրասցի հոգևոր բաղձանք սիրելւոյն մերոյ, որում և
զողջոյն և զաստուածային օրհնութիւն տամ։ Այժմ անձեռնհաս եղաք
զյատուկ թուղթ գրել առ ինքն, բայց մինչ զպատասխանի թղթոյս
յղեսցես, և մեք զյիշատակն նորին գրեսցուք լիցուք ի վերայ սեանն,
յայնժամ զօրհնութեան թուղթ եմք գրելոց առ նա ի կատարելապէս
միամտութիւն նմին[192]։
Մեք ես յանցեալ ամին ի սեանց նորոգմանէն զերծեալ գոլով, ըստ
վաղագունի փափագանաց մերոց, որ կամէաք զբոլոր մէջ աստուածա-
կերտ սրբոյ տաճարիս սպիտակեցուցանել և ծաղկել տալ, ահա Աստու-
ծով հիւսիսակողմն, ի յետին և ի միջին դասսն, առաջի սուրբ Ստե-
փաննոսի սեղանոյն և զրանն զգերանակապ խիկալայս տալ եսուք և
յետինն՝ եռապատիկ և միջինն՝ քառապատիկ, համդերձ տախտակօք,
ձեռնարկեցուցաք վարպետաց ի բաումն։ Յովնաթանն ես ըստ գրեցմանց
մերոց ի Թիֆլիզու եկեալ լսեմք և յայս աւուրքս երևելոց է, որոյ ի
գալն զծաղկելն ես սկսել տալոց եմք ի մի կողմանց։ Իսկ և յարտա-
քուստ եկեղեցւոյն թէ՛ յաշտիճանացն, և թէ՛ ի վեր քան զաստիճանսն ի
յորմոցն զշարժեցեալ և զհնացեալ քարինսն փոխել տամք և ի տեղիս
նոցին զնորս հաստատեմք։ Այլև զՂազարապատի արևելակողմն, որ
շարժեալ և իջեալ էր, քակեցուցաք և նոր ի նորոյ զհիմն ի խորուստ վեր

առեալ, Աստուծով հասուցար ի կատար վերին շինուածոյն, զորոյ ա-
ռաստաղն շինեն ներկայապէս։
Ընդ այսց և զերկրէս իմա[illegible] է ի մ[illegible]չակ խաղաղութեան, թէպէտ
պետ կարգեցեալն տհաս և անկատար, սակայն ի շնորհէ կարգողին իբր
խաղաղութիւն է։ Զայսցանէ գրելս ի միամտութիւն և յուրախութիւն
քեզ է։
Աշովայու թղթոցն աղագաւ, որ գրես, թէ դեռ առ իս են, ընդէ՞ր է,
և թէ որպէ՞ս լինի նոցա բանն. եթէ չիցես գրեալ, գրեսցես լիալիր, զի
իմասցուք։
Միքայէլ ամիրայի շնորհակալութեամբ ընդունիլն զթուղթն մխիթա-
րութեան, զոր գրեալ էիր, իմացաք։ Զայլոց մխիթարութիւնսն ես ի մար-
տի Դ (4) յղեցաք, որոց մի էր և Համբարձումեան մահտեսի Յովհաննէս
ամիրայն, առ որ յանցեալ ամին ես վասն հօրն գրեցաք զթուղթ մխի-
թարութեան, և ի կողմանէ նորին ընտանի Գրիգոր աղային զբան գրե-
ցաք նմա համառօտ և զերկարօրէնն ի քէն իմանալ ցուցաք։ Ըստ որում
495 և քեզ երկարապէս գրեալ, հարկեցաք խօսիլ ընդ նմին || և տալ ինքեան
զգիրն և զանուանն Գրիգորին։ Բայց դու յառաջ գրեալ էիր, թէ թուղթն
յղեցի և զինքն դեռ չտեսի, տեսանելոց և խօսելոց եմ։ Այնուհետև այլ
ոչինչ գրես յայնմ կողմանէ։ Վերջապէս խօսեցա՞ր և նա զի՞նչ արար և
ասաց, գրեսցես մեզ։
ԶՀնդկաց երկրի նուիրակ Գրիգոր վարդապետէն, զոր ինչ գրեալ էիր
ըստ գրեցելոյ Բասրայու Ստեփաննոս աղային և Յովհաննէսին, իմա-
ցաք։ Եւ զի գրես, թէ ի Բաղդատ է գալոց, ահա զգիր մի գրեալ նմա
զերեսն ի Բաղդատ գրեցաք և յղեցաք ի ձեռս քո՝ հասուցանել նմա։
Կարծեմք թէ ի ճանապարհ և իցէ ելեալ։ Յորում թղթոջ նախ զմխիթա-
րութիւն գրեցաք նմա վասն վշտաց և ցաւակրութեանցն։ Երկրորդ՝
վասն ԵՌ (5000) ղուռուշին (զոր գրես, թէ Ստեփաննոս աղայն և Յով-
հաննէսն փոլիցայիւ հասուցին ինձ. յորմէ լինիլն չյայտնելով)։ Յիշե-
ցաք նմա, թէ այսրան ինչ դրամ են հասուցեալ ի Պօլիս, բայց չեն
յայտնեալ, թէ ի քոց որդեանց է, թէ յայլմէ։ Եւ երրորդ՝ հարկ արա-
րաք առ ի փութացուցանել զգալն վասն հարկաւոր հոգալեացն առ ի
կողմունս Հնդկաց։ Եւ սակս ԵՌ (5000) ղուռուշին յիշեցելոյ, որպէս և
խնդրեալ էիր, ահա առ Ստեփաննոս աղայն և պարոն Յովհաննէսն
զգիր միամտութեան գրեցաք և յղեցաք քեզ, զայն ես հասուսցես ի
Բասրայ առ նոսա։ Գաղատիոյ նուիրակ Յարութիւն վարդապետի ԱՌԵՃ
(1500) ղուռուշ հասուցանելն քեզ փոլիցայիւ, զոր ծանուցեալ էիր իմա-
ցաք, և ի նմանէ, որ զԲ (2) թուղթս էիր յղեալ, ընկալաք. ահա զզապդ
գրեալ ՌԵՃ (1500) ղուռուշի յղեցաք ի ձեռս քո՝ հասուցանել նմա։
Բայց որովհետև յանցեալսն գիր էաք գրեալ նմա, այլ ոչ գրեցաք
այժմոյս։
Վասն վէքիլ Հայրապետին ի վերայ քոյ փոլիցայ առնելոյ, որ գրես
հարկել նմա, մեք ընդ առաջին խնդրելդ գրեցաք նմա փոլիցայ առնել
ի վերայ քոյ, բայց նախ ի ձեռն գրոյ տեղեկանալ, թէ ունի՞ս, և որքան
է պատրաստ և ապա առնել և ոչ անգիտաբար, զի մի զնեղութիւն կրի-
ցես։ Ուրեմն այժմ մինչ գրեալ ես նմա զԸՌ (8000) ղուռուշ փոլիցայ
առնել, թերևս արարեալ իցէ, այլ զի մեք յառաջ ի կողմանէ հայ հռոմ
խոջայ Անաստասին և տպագիր Պօղոսին քանիցս փոլիցայս եմք արա-
րեալ ի վերայ քոյ քանի մի հազար ղուռուշի, վասն որոյ այժմ գրեցաք
Հայրապետին, թէ թէպէտ յանցեալսն գրեցաք քեզ ի վերայ Իսահակ

վարդապետին փոլիցայ առնել, սակայն տեղս մեր փոլիցայ գտաք և արարաք ի վերայ նորա հաստցանել։ Ուրեմն այլ դու մի արասցես, մինչև գայնս հատուցէ։ Առաջին ուղարկած Գ.Ռ (3000) ղուռուշին ղապղն յղեալ եմք առ պարոն Հայրապետին՝ հասուցանել առ քեզ, զոր ի հարկէ մինչև ցարդ ընկալեալ ես։

Նորապէս խնդրեալ զօրհնութեան և շնորհակալութեան թուղթս ի վերայ ոմանց վասն յիշատակաց և վասն տրոց, ահա գրեալ յղեցաք։ Որք ահա նշանակին այսպէս՝ թուղթ մի առ Տագեսեան Յովաննէս ամիրայն,
496 ||Թուղթ մի առ || Կարապետն և Ծատուրն և Բրաբիոնն, թուղթ մի առ Հեղինէ այրի կինն, թուղթ մի առ մահտեսի Ալէքսանն և իւր որդի Աստուածատուրն, թուղթ մի առ դափամաճի տիրացու Սամուէլն, թուղթ մի առ մահտեսի Պօղոսն և առ կինն իւր՝ մահտեսի Հռիփսիմէն, թուղթ մի առ Մարգարիտ կինն և իւր դուստր Վարդենին, թուղթ մի առ գերձակ Աստուածատուրն, թուղթ մի առ պապուճջի հաճի Սարգիսն և Մարկոսն, թուղթ մի ես առ պապուճջի Գրիգորն. որոյ ԺԵ (15) ղուռուշի թէմէսուկն ես ընդ թղթոյն եդաք։ Զորս տացես յիւրաքանչիւր տեարսն, զի միամտեսցին։

Եւ յաղագս տեսակ տեսակ ոսկւոց, որ հարցեալ էիր, զի թէ կամիցիմք, յուղարկեսցես և զարժողութիւնսն ես, որ յայտր, ծանուցեալ էիր։ Իմա առ այն, զի այժմ պիտոյ չէ մեզ։ Նախ՝ զի աստ քան յայտր աժան է, և երկրորդ՝ ներկայապէս ի յոլով խարճարարութիւնս գոլով մեր սպիտակ դրամ է պիտոյ, զի խարճիցեմք։

Ի կողմանէ տիրացու Յովաննիսի ուրումն թէքիրտաղցւոյ, որ եկեալ յԱթոռս ի միաբանութեան, հանգեաւ ի Տէր ի սեպ. ԻԲ (22), զրան գրեցաք քեզ, և ի նմանէ գրեցեալ զթուղթ յղեցաք, զի յուղարկեսցես ի Թէքիրտաղ առ ընտանիս նորին։ Զայնմանէ ես թէ որպէ՞ս եղև, ծանուսցես։ Վիճակաց նուիրակ Գալուստ վարդապետն զԹրակիա ատարտեա՞ց և այժմ յԱդրանա՞յ է կամ ո՞ւր է, լաւապէս իմացեալ գրեսցես մեզ, թէև մեք նմա ոչ նայիմք, այլ ահա զկոնդակն գրեցուցանեմք և յայսմ միջոցի զպատշաճաւոր ումն պատրաստելոց եմք և առաքելոց։

Ընկալաք զթուղթն սիրելւոյն մերոյ՝ Մասեհեան պարոն Եսայուն և ահա սիրով մեծաւ զողջոյն և զօրհնութիւն տամ նմա, բայց զի յանցեալսն թուղթ գրեցաք առ նա, այժմ ձեռնհաս ես չլինելով, թողաք։ Այլ ի կողմանէ իւրեանց, որ ինչ ի դէպն էր, երկարօրէն գրեալ եմք Եսայի վարդապետին՝ հոգալ։ Եւ սակս յիշատակին, զոր կամին շինեցուցանել, թէպէտ ըստ ներկայ ծախուց մերոց դրամն էր հարկաւոր, սակայն որովհետև փափագին յիշատակ շինել տալ, ըստ իւրեանց ըղձիցն թող շինել տացեն, բայց այնպէս լինիցի, որ սրբոյ Աթոռոյս վայելուչ իցէ ըստ գրեցելոյն իւրոյ։ Եւ մինչ շինեցուսցեն, այնժամ զօրհնութեան թուղթս եմք գրելոց առ ինքն և առ եղբարսն։

Իսկ վասն թղթատանն, որ ցուցելով գրես, մի՞թէ մեք ոչ ցաւիմք, այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ խղճալի Նիկողայոսն և վախճանեցաւ և նոյն արհեստին այլ գիտօղ ոչ գոյ, վասն որոյ թէ հետևիլ ես ջանասցուք, անօգուտ լինի։ Ուրեմն և դու, սիրելիդ իմ, մի աշխատ լինիր ի հետևումն նիւթաժողովութեան, զի յարդեանս յոյժ դժուար է ձեռնարկելն, ապայն Աստուած հոգասցէ։

497 Այլև սիրելւոյն մերոյ և հարազատ որդւոյն սրբոյ Աթոռոյս, Քրիստոսի զօրացեալ մահտեսի Կարապետին ողջոյն և օրհնութիւն տամ։ Եւ զայս գրեմ քեզ առ ի ծանուցանել նմա։ Քանզի նորին եղբայր պարոն Մկրտիչն եկեալ է ի սուրբ Աթոռս, իսկ ի գալն ի Կարին, առեալ էր ի

վէքիլէն մերմէ՝ պարոն Հայրապետէն վաթսուն ղուռուշ դրամ, գրեցմամբ հին պատրիարք Յովհաննէս վարդապետին և անտի ի Կարնոյ մինչ եկեալ էր ի Բայազիտ, անդ ես ի տէր Վահանէն առեալ էր ԺԵ (15) ղուռուշ, որ ընդ առաջնոյն լեալ էր ՀԵ (75) ղուռուշ։ Ապա մինչ եկն յԱթոռս, աստ ես ԼԵ (35) ղուռուշ մեք ետուք, որ ընդ վերնոցն ի միասին եղեն ՃԺ (110) ղուռուշ, որոյ աղագաւ և նա զթուղթ ետ մեզ։ Եւ այսպէս իմանամք, թէ ի շաբաթն Գ (3) կամ Դ (4) ղուռուշ է խնդրելոց ի մէնջ։ Բայց ի կողմանէ սորին, թէ սիրելին մեր՝ մահտեսի Կարապետն և կամ թէ դու զրան ինչ ոչ գրէք մեզ, որպիսի՞ կերպիւ է մնալոց սա աստ, խօսեսցիս ընդ մահտեսի Կարապետին և գրեսջիք մեզ։ Յայս աւուրքս գրեցաք քեզ, զոր և պատրիարք վարդապետին մեզ։ Ստեփաննոսն՝ ի տեսութեան բարեկամացն, զորս ունի անդ։ Նացեալ էր նա ի Քանաքեռ՝ ի տեսութեան բարեկամացն, զորս ունի անդ։

Նաև որպէս յառաջ քեզ և պատրիարք վարդապետին գրեցաք վասն գերեզմանաքարին, ահա թէ զտապանն և թէ ձիաքարն բերել տուեալ, շինեցուցանեմք։ Եւ մինչ ի պատշաճաւոր աւուր արկանել տացուք ի վերայ, զայլ պարագայսն ես տեսանելոց եմք։ Եւ դու զթուղթդ որպիսարայ, զայլ պարագայսն ես տեսանելոց եմք։ Եւ դու զթուղթդ որպիսաւ ծանոյց պակաս մի առնիցես՝ ջանալով ի շաբաթն զմի գիր գրել։ Թէև համառօտ իցեն, բայց մեզ միամտութիւն լինի, և մեք զպատասխանին իւրաքանչիւրոց շուտով եմք դարձուցանելոց, որչափ և ձեռնհաս լինիցուք, զի և քեզ լիցի միամտութիւն։

Ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորհս սրբոյ իջման տեղւոյս նորին։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուիս, ի յապրիլի ԻԷ (27), և ի սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 492—497

859. 1784 թ. 28 ապրիլի—Կոնդակ փոքր ժողովարարութեան ի վերայ Խոյեայ, Սալմաստու և Մարաղայու ըստ խնդրոյ սալմաստեցւոյն Տէրտէր Սարգիս անուամբ ուրումն։

Գրեցաւ ամսոյս ԻԸ (28)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 7

860. 1784 թ. 1 մայիսի—Թուղթ սաստիւ ի Պօլիս առ Բատալն վասն տալեացն սրբոյ Աթոռոյս միաբան Յակոբ վարդապետին, զի շուտով հասուցէ անդ տեղւոյ նուիրակ Իսահակ վարդապետին։

Ձեռ. № 2803, էջ 531—532

426 861. 1784 թ. մայիս—Թեթև կոնդակ ի յՈւռումէլի վասն նուիրակին

մերոյ՝ Ստեփաննոս վարդապետին և հաստատութիւն նորին սպասաւոր Գրիգոր վարդապետին ի գործն նուիրակութեան, զաւարտել մնացեալն։

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան, և նամակ պահ[պանութեան], շնորհք առաքելական և աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական գթութիւնն ի վերայ սիրելի և հոգևոր որդւոց մերոց և լուսածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս... որք կայք բնակեալք ի տիրախնամ բոլոր երկիրդ Ուռումէլի և յօրհնեալ քաղաքդ ի Քիլի, ի յԻսմայիլ, ի Մուսայիպղշլայ, ի Սախճայ, ի Սիլիսրայ, ի Ռուսճուղ, ի Թռնովայ, ի Շումլայ, ի Փրավատի, ի Վառնայ, ի Քեօստանջայ, ի Բաղարճըղ, ի Բապադաղ, ի Այիտոսս, ի Ռազղրադ, ի Հիւլպայ, ի Թաթարբազարճըղ և ի համայն շրջակայ թեմս գոցին, ի ղասապայս և ի գիւղօրայս։ Յորս կառուցեալ քրիստոսահիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցական դասուց, սրբա[կրօն] քահ[անայից], համեստակեաց սար-

կու[ապայ] և բնաւից մանկանց եկեղ[եցականաց], աստուածասէր իշխանաց (ի յարմար օրինակէ) մեծաց և փոքունց, արանց և կա[նանց] խնդալ ի Տէր: (Շնորհք):

Եւ ընդ սիրաձիր ողջունի և օրհնութեանս աստուածայնոյ, գիտասջիք սիրելի և հոգևոր որդիք մեր և հարազատ զաւակունք սրբոյ Աթոռոյս էջ[միածնի]: Քանզի լուր զհամբաւ մահուան խղճալի նուիրակին ձերոյ սիրելւոյն մերոյ՝ Ստեփաննոս խղճալի յոգնաշխատ վարդապետին, և որոյ աղագաւ տրտմեցաք յոյժ: Քանզի թէպէտ ի հողեղինաց ոչ որ է մնալոց յաշխարհի, այլ ամենեքեան ըստ աստուածային նախասահմանութեանն ելանելոց եմք ի կենաց աստի: Ըստ այսմ և զլուսահոգին այն, զպարտսն իւր վճարելով, փոխեցեալ է ի յանցաւոր կենացս, բայց զի ի հեռաւոր վայրոջ և ի մէջ գործոյ սրբոյ Աթոռոյս վախճանեցաւ, այն վասն տարաբախտութեան իմոյ է, զի ես առաւելացին հոգք և տրտմութիւնք իմ: Վասն որոյ մեծագոյն
427 // ցաւ եղև մեզ ի վերայ ամենից բազմակուտակ հոգոց և զբաղմանց մերոց: Այլ սակայն մինչ գործ Աստուծոյ ամենաբստեղծին է, որ զով որ և յորում ժամու և կամի կոչէ առ ինքն. զի՞նչ կարող եմք առնել, եթէ ոչ օրհնել զբարի կամս նորին և զոհանալ զնմանէ: Եղիցին կամք Տեառն օրհնեալ, որ և լուսաւորեսցէ ողորմութեամբն իւրով զհոգի հանգուցեալ Ստեփաննոս վարդապետին և կարգեսցէ ի դասս սրբոց վարդապետացն յարքայութեանն իւրում, և զգլուխ սիրելեացդ մերոց ողջ պահեսցէ:

Արդ, որովհետև լուսահոգին զգործն չև ևս էր աւարտեալ, այլ կայ այնպէս կիսակատար, վասն որոյ, ահա, պատշաճ վարկեալ և օգտաւոր համարեալ, իբրու որդի ի տեղի հօրն կացուցանելով զհարազատ սպասաւորն և զօրհնածին որդին նորին և մեր իսկ և զկաթնասուն զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զտէր Գրիգոր խոհեմամիտ վարդապետն կարգեցաք փոխանակ նորա նուիրակ ի վերայ աստուածապահ երկրիդ այսու օրհնաձիր թղթովս մերով, որպէս զի նախապէս տիրեսցէ ամենայն ժողովեալ արդեանց և ընչից լուսահոգ[ւոյն] (ի հոգելոյս հայրապետի տեառն ի ՆՀԶ (476) երեսն գրեալ, ուղղակի գրեա անտի և վերջացո):

Ձեռ. № 2803, էջ 426—427

862. 1784 թ. 16 մայիսի—*Թուղթ ի մեծն Պօլիս առ դիւպէնդճոց գլխաւորսն, այսինքն առ պարոն Մէյրամօղլին, մահտեսի Կարապետն, Տրճանենց, պարոն տիրացու Գէորգն և պարոն Կարապետ Նուրե[ա]ն, խնդիր՝ զի Զմիւռնոյ դիւպէնդճոց գործն մի խափանեսցեն, այլ հրաման տացեն յարքունուստ դարձեալ ի գործ արկանել նոցա զարհեստսն իւրեանց և կենցաղավարիլ:*

Ձեռ. № 2803, էջ 428—431

863. 1784 թ. մայիս—*Թուղթ ի Զմիւռին առ գլխաւոր քահանայսն և իշխանսն, ի պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին վասն մահուան առաջնորդին և նուիրակին իւրեանց՝ Եսայի վարդապետին հանգուցելոյ:*

Ձեռ. № 2803, էջ 497—500

864. 1784 թ. 16 մայիսի—*Թուղթ մի [ի մեծն Պօլիս] առ նորին նուիրակ Իսահակ վարդապետն յաղագս ոմանց բանից: Ընդ սմա և ղապղ երեք՝ մինն առ Գալուստ վարդապետն և երկուսն իւրեան*[193]:

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 8

1784 թ. 16 մայիսի—*Թուղթք ի Ուռումէլի*

865. *Թուղթ մի ևս առ տէր Մելքոն և առ մահտեսի Գաբրիէլ և այլ իշխանացն տեղւոյն, սակս վախճանեալ նուիրակին իւրեանց՝ Ստեփաննոս վարդապետին և վասն կացուցանելոյ ի տեղի նորին զսպասաւորն իւր՝ Գրիգոր վարդապետն և վասն աղքիմանցուց բարերարութեանցն, զորս ցուցեալ էին Գրիգոր վարդապետին, շնորհակալութիւն:*

866. *Կոնդակ մի ևս ի վերայ բոլոր երկրին Ուռումէլու, սակս կարգելոյն Գրիգոր վարդապետն նուիրակ տեղի հօրն իւրոյ՝ Ստեփաննոս վարդապետին:*

867. *Թուղթ մի ևս մխիթարութեան առ սպասաւորի նորին՝ Գրիգոր վարդապետն:*

Գրեցաւ ամսոյս ԺԶ (16):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 7

Ի սոյն օր թուղթք ի Զմիւռին

868. *Կոնդակ մի ի վերայ բոլոր երկրին ի Զմիւռնու սակս կարգելոյն Միքայէլ վարդապետին ի տեղի Եսայեայ հանգուցեալ վարդապետին:*

869. *Թուղթ մի առ Ապրօրեան Աստուածատուր աղայն, ի պատասխանի յատուկ գրեալ թղթոյն իւրոյ ընդ իշխանաց թղթոյն, յաղագս լուսահոգի Եսայեայ վարդապետի քեռորդւոյն կացուցանելոյ ի տեղի նորին և այլևս բանք:*

870. *Թուղթ մի առ մահտեսի Կարապետն Չալիկեան, ի պատասխանի յունվարի Ժ (10) գրեալ թղթոյն. նաև սակս վախճանեալ Եսայեայ վարդապետի կողմանէ և ի տեղի նորին կացուցանելոյ քեռորդին՝ Միքայէլ վարդապետն:*

871. *Թուղթ մի առ հասարակ քահանայսն և իշխանսն և բոլոր ժողովուրդսն ի Զմիւռնու սակս կարգելոյն նուիրակ Միքայէլ վարդապետն ի տեղի հանգուցեալ Եսայեայ վարդապետին:*

872. *Թուղթ մի ևս մխիթարութեան առ Միքայէլ վարդապետն:*
Գրեցաւ ամսոյս ԺԶ (16):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 7—8

Ի սոյն օր թուղթք ի Թօխաթ:

873. *Թուղթ մի օրհնութեան և սիրոյ առ մահտեսի Աղամջանն:*

Ի սոյն օր թուղթք ի Թօխաթ

874. *Թուղթ մի առ Կեսարիոյ առաջնորդ Մատթէոս վարդապետն. յանձնարարութիւն սակս մեր նուիրակ Պետրոս վարդապետին:*

875. *Թուղթ մի առ Սեբաստիոյ առաջնորդ Յակոբ վարդապետն. յանձնարարութիւն սակս Պետրոս վարդապետին:*

876. Թուղթ մի ևս օրհնութեան և վերահաստատութեան ի Բէնկան առ նոր կարգեցեալ գանձապետ տէր Մկրտիչ ծերունազարդ քահանայն։

877. Թուղթ մի ևս օրհնութեան առ մահտեսի կին ոմն Մարիամ, որ յանուն ննջեցելոցն իւրոց տուեալ էր ի (20) ղուռուշ քառասնից։

878. Թուղթ մի ևս առ Թոխաթու նուիրակ Պետրոս վարդապետն, ի պատասխանի Թոխաթու գրեալ թղթոյն ի մարտի ԺԲ (12) յաղագս ոմանց բանից։

Գրեցաւ ամսոյս ԺԶ (16)։

Ի սոյն օր թուղթք ի Կարին

879. Թուղթ մի առ հասարակ քահանայիցն. մեղադրութիւն սակս անպատեհ շարժմանցն իւրեանց։

880. Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն յաղագս ոմանց բանից։

881. Թուղթ մի առ նորին առաջնորդ Պետրոս վարդապետն։

Գրեցաւ ամսոյս ԺԶ (16)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 8—9

882. 1784 թ. մայիս—Կոնդակ ի վերայ Յամթայ քաղաքին, շնոր-հակալութիւն վասն գանձանակագրամին երկուց եկեղեցեացն, զորս ընդ նուիրակ Գրիգոր պետին յղեալ էին, և ապա զի զնուիրակութիւն չէին տուեալ, առ այն մեղադրութեամբ բան։

Ձեռ. № 2803, էջ 610—613

883. 1784 թ. 19 մայիսի—Թուղթ ի մեծն Պոլիս առ նուիրակն ընդ Փիլիպպոս վարդապետին, բայց ի միւս մեծ թղթոյն, որ յառաջ քան զայս էր յղիլոց առ նա ի Կարնոյ։

Ձեռ. № 2803, էջ 620—621

884. 1784 թ. 21 մայիսի—Կոնդակ ժողովարարութեան ի վերայ երկրին Ռուսաց վասն Սուլխան Դիւանենց ի Գորի եղեալ աւեր եկեղեցւոյն, զոր կամէին նորոգել և պակասաւոր գոլով, զօգնութիւն խնդրէին։

Ձեռ. № 2803, էջ 431—433

1784 թ. 21 մայիսի—Թուղթք ի Թիֆլիզ

885. Կոնդակ ժողովարարութեան ի վերայ բոլոր երկրին Ռուսաց՝ ի Պետրբուխ, ի Մոսկով, ի Հաշտարխան, ի Նոր Նախիջևան, ի Ղզլար, ի Մոզտոք և այլ շրջակայսն նոցին, ըստ խնդրոյ Հերակլ արքային սակս Թումանեան Սուլխան Դիւանի և Մանուչար Դիւանի, եկեղեցւոյն, որ ի Գորի, զի ի վաղուց հետէ աւերեալ էր և այժմ կամէին վերստին շի-նել, որ և սրբազան Վեհապետն, ըստ խնդրոյ նորին, յղեաց ի ձեռս նոցա, զի և նոքա տայցեն տէր Ղազար անուամբ քահանայի միոյ, զի երթիցէ ժողովեսցէ։

886. Թուղթ մի առ Հախպատու վանից նոր կարգեցեալ առաջնորդ Դաւիթ վարդապետն, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր շնորհակալ էր լեալ սրբազան Վեհապետէն յաղագս նստելոյն։

887. Թուղթ մի ևս տաճկերէն առ Հերակլ արքայն ի կողմանէ շամ-քօռեցի Դահիրի թոռանցն, զի հանցէ ի տեղւոջէն իւրեանց, յայլ ուրեք տեղ յղեսցէ։

888. Թուղթ մի ևս առ գործակալ տէր Ղազար քահանայն սակս ի կողմանէ շամքօռեցի Դահիրի թոռանցն, զի տացէ զթուղթն պարոնին և արդ արասցէ։

Գրեցաւ ամսոյս ԻԱ (21)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 9

1784 թ. 22 մայիսի—Թուղթք ի մեծն Պոլիս

889. Թուղթ մի ևս սիրոյ առ պատրիարք Զաքարեայ վարդապետն. յանձնարարութիւն սակս թեմից նուիրակ Փիլիպպոս վարդապետին։

890. Թուղթ մի ևս առ Իզնիմիտու առաջնորդ ծերունազարդ Պետ-րոս վարդապետն, յանձնարարութիւն սակս նոր նուիրակ Փիլիպպոս վարդապետին։

891. Թուղթ մի առ մեծին Պոլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն, ընդ Փիլիպպոս վարդապետին հանդերձ փուսուլային։

892. Թուղթ մի սիրոյ և օրհնութեան առ մահտեսի Մինասն, շնոր-հաւորութիւն սակս լինելոյն իւրոյ գլխաւոր։ Այլև յանձնարարութիւն ի կողմանէ նորոգ վիճակաց նուիրակ Փիլիպպոս վարդապետին։

893. Թուղթ մի ևս առ արտաքին վիճակաց հին նուիրակ Գալուստ վարդապետն, ի պատասխանի ի փետրվարի Բ (2) ի Մաղարայու գրեալ թղթոյն, նաև ի տեղի իւր նորոգ կարգեցեալ նուիրակ Փիլիպպոս վար-դապետի կողմանէ ևս։

894. Կոնդակ մի մեծ մեռոնի ի վերայ բոլոր թեմիցն մեծին Պոլսոյ ընդ Փիլիպպոս վարդապետին։

Գրեցաւ ամսոյս ԻԹ (29)։

Կթղկ։ դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 9—10

Ի սոյն օր թուղթք ի Տիգրանակերտ

895. Կոնդակ մի մեծ մեռոնի ի վերայ բոլոր երկրին Տիգրանա-կերտու ընդ Ահարոն վարդապետին։

896. Կոնդակ մի փոքր հասարակութեան առ իշխանսն և այլ ժո-ղովուրդսն տեղւոյն սակս սուրբ Կիրակոսի եկեղեցւոյ վիճակեալ ժո-ղովրդեանն չտալոյն նուիրակութիւն։

897. Թուղթ մի ևս օրհնութեան առ սուրբ Սարգսի գանձապետ մահտեսի Յակոբն, ի պատասխանի գրեալ թղթոյն իւրոյ։ Այլև սակս նոր կարգեցեալ նուիրակին իւրեանց՝ Ահարոն վարդապետին, յանձ-նարարութիւն։

898. Թուղթ մի ևս օրհնութեան առ սուրբ Կիրակոսի գանձապետ մահտեսի Մովսէսն, ի պատասխանի գրեալ թղթոյն, նաև յանձնարարու-թիւն սակս նոր նուիրակին իւրեանց՝ Ահարոն վարդապետին։

899. Թուղթ մի առ նորին առաջնորդ Կարապետ վարդապետն, յանձնարարութիւն յաղագս Ահարոն վարդապետին, ես պատուէր հար-կաւորք:

900. Թուղթ մի առ Խարբերթու առաջնորդ Իսահակ վարդապետն, յանձնարարութիւն սակս նորոց նուիրակին իւրեանց՝ Ահարոն վարդա-պետին:

901. Թուղթ մի ես ի Խարբերթ առ նորին առաջնորդ Յարութիւն վարդապետն, յանձնարարութիւն սակս նորոց նուիրակ Ահարոն վար-դապետին:

902. Թուղթ մի ի Բալու առ նորին առաջնորդ Գէորգ վարդապետն, յանձնարարութիւն սակս Ահարոն վարդապետին:

903. Թուղթ մի առ Ուռհայու առաջնորդ Յովհաննէս վարդապետն, յանձնարարութիւն Ահարոն վարդապետին:

Գրեցաւ ամսոյս ԻԹ (29):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 10—11

1784 թ. 29 մայիսի

904. Կոնդակ մի ժողովարարութեան խղի, պանրի՝ ի վերայ Բայա-զիտու և այլ գիւղորայս նորին ընդ Բարաղամ վարդապետին:

905. Կոնդակ մի ես ժողովարարութեան խղի, պանրի՝ ի վերայ Ալաշկերտու և այլ շրջակայս նորին ընդ Յովհաննէս վարդապետին:

906. Թուղթ մի ես առ Մեծոփայ վանից առաջնորդ Սողոմոն վար-դապետն, յանձնարարութիւն սակս խղի, պանրի ժողովարար Յովհան-նէս վարդապետին:

907. Թուղթ մի ես առ Յիւշբիլիսու վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետն, յանձնարարութիւն սակս խղի, պանրի ժողովարար Յով-հաննէս վարդապետին:

Գրեցաւ ամսոյս ԻԹ (29):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 11

Ի սոյն օր թուղթք այլ և այլ տեղիս

908. Թուղթ մի ի Բայազիդ առ տէր Վահանն, յանձնարարութիւն սակս խղի, պանրի ժողովարար Բարաղամ վարդապետին:

909. Թուղթ մի ի Բայազիդ առ նորին առաջնորդ Կարապետ վար-դապետն:

910. Թուղթ մի առ Մշու վանից առաջնորդ Աստուածատուր վար-դապետն, պատուէր զի զԱհարոն վարդապետն փութով հաւատարմաւ յղեսցէ առ սուրբ Յովհաննիսի վանից առաջնորդ Յովհաննէս վարդա-պետն: Այլև սակս միաբանիցն իւրեանց Մարտիրոս վարդապետի կող-մանէ ես պատուէր:

911. Թուղթ մի առ սուրբ Յովհաննիսի առաջնորդ Յովհաննէս ծե-րունազարդ վարդապետն, պատուէր վասն նորոց նուիրակին Տիգրանա-

կերտու՝ Ահարոն վարդապետին, զի փութով հաւատարմաւ յղեսցէ ի Լիճկը գիւղն, որ և անտի երթայցէ ի գիւղորայսն Տիգրանակերտու:

912. Թուղթ մի առ Ջմիռնու նոր առաջնորդ Միքայէլ վարդապետն, ի կողմանէ ղազանչեցի լուսահոգի Մանուկի գոյից հէսապին:

913. Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն:

Գրեցաւ ամսոյս ԻԹ (29):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 11—12

433 914. 1784 թ. 29 մայիսի—Թուղթ ի Պոլիս առ ջուղայեցի Պօղոսեան պարոն Խաչիկն, շնորհաւորութիւն գալստեանն յերկրէն Ռուսաց անդ և մխիթարութիւն վասն մահուան քեռն իւրոյ[194] և այլևս բանք:

Յորմէ ժամանեսցի…

Եւ ընդ աստուածային օրհնութեան թղթոյս ծանուցումն լիցի սիրել-ւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի սիրանիշ թուղթն քո ի Ռուսաց երկրէն գրեալ, էհաս առ մեզ յառաջագոյն և զգրեալսդ իմացաք, որոյ և զպատասխանին թէպէտ կամէաք գրել յայն-ժամ, սակայն մտածելով, թէ մինչ ի հասանիլ թղթոյն մերոյ անդ, դու անտի գնացեալ լինիցիս՝ արգելաք զգրելն մեր: Բայց ոչ թէ մոռացեալ էաք զքեզ, այլ ի մտի ունէաք և ունիմք յիշատակելով առ ի բարին և

434 աղօթելով // սակս քոյ և բարեյաջողութեան գործոց:

Իսկ այժմ գրեալ և ծանուցեալ էր մեզ Իսահակ աստուածաբան վարդապետն զխաղաղութեամբ վերադառնալդ ի յերկրէն Ռուսաց և զան-վնաս ժամանելդ յայդր: Զոր իմացեալ, յոյժ ուրախացաք, և ի ձեռն այսմիկ օրհնաձիր թղթոյ շնորհաւորեմք զգալուստդ, զոր և Աստուած շնորհաւոր արասցէ և միշտ պահեսցէ ի վերայ քոյ զողորմութիւն և զգթութիւն իւր, օրհնելով զքեզ և զօրացուցանելով և փրկելով ի հոգե-կան և ի մարմնական վտանգից և ի փորձութեանց:

Բայց իմացաք ես զմահ բարեպաշտուհի քեռն քոյ և հոգևոր դըս-տերն մերոյ՝ հանգուցեալ Հաճի խաթունին և զտրտմութիւն քո առ այն, և յոյժ տրտմեցաք և ցաւեցաք: Այլ զի գործ Աստուծոյ է և յամենեցունս ի վերայ եղեալ է վճիռ գնալ ընդ նոյն ճանապարհ, ոչ այլ ինչ ունիմք առ-նել, եթէ ոչ գոհանալ Տեառնէ և յաղագս հանգուցելոյն խնդրել զողոր-մութիւն: Որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալ քեռն քո՝ Հաճի խաթու-նին, արժանացուցանելով զնա արքայութեան իւրում ընդ հաճոյս և ընդ կամարարս իւր և զգլուխ սիրելւոյդ ողջ պահեսցէ, փարատեսցէ ի սրտէ քումմէ զկսկիծ և զտրտմութիւնդ, և փոխանակ այդոցիկ, պարգևեսցէ քեզ զմեծագոյն ուրախութիւն:

Գրեմ ազնիւ սիրելւոյդ, մի՛ երկարել զտրտմութիւնդ և ցաւիլ անդր քան զչափն, այլ մխիթարիլ և ուրախ լինիլ և ուրախացուցանել ես զքոյայինսդ:

Իսկ և ի կողմանէ Ատենի ժամագրքի տպիլոյն մինչ կամիցիս գի-տել, ահա Աստուծով հասուցեալ եմք ի վերջին Գիշերաժամուն, և ընդ այլ բազմազան զբաղմանց և ցաւոց մերոց, ջանամք առ ի յաւարտ հասուցանել: Բայց դու, սիրելիդ մեր, որ վասն յիշատակ առնելոյ քեզ զայն գիրքս ընդ Մինաս վարդապետին մերոյ խօսեցեալ էիր և զպայմա-նագիր տուեալ, որ զԴՌ (4000) ղուռուշ տացես մեզ, որով հոգասցուք զտպագրութիւն գրքոյս և յետոյ զփողն դարձուսցուք առ քեզ:

Թէպէտ և մեք յայնժամ գրեցաք Մինաս վարդապետին, թէ բարուք
է (որոյ պատճառն ես թէ զի՞նչ էր, այլ ոչ գծագրեմ աստէն), սակայն
435 այդ մեզ և սրբոյ Աթոռոյս օգուտ // ինչ ոչ ունէր։ Վասն որոյ և մինչ ի
սոյն կէտս զգրամ ոչ խնդրեցաք ի քէն, զի մեք փող բանեցուցանող
չեմք, որ շահիմք և Աստուծոյ ողորմութեամբն սուրբ Աթոռս յայն
տեղն չէ, որ փոխառութեամբ դրամոց զբանն իւր հոգասցէ։ Աստուած
զօրհնեալ ազգդ չէն պահեսցէ, այդ կերպ բանդ այլոց անձեռնհաս ար-
պագրաց օգտութիւն ունի և մեզ՝ ոչ։

Այլ մինչև ցարդ, որ բարեսէրք ոմանք կամեցեալ են աստէն զգրեանս տպեցուցանել, զօգնութիւն իմն են արարեալ սրբոյ Աթոռոյս և աստ զնոցին խնդրեալ գիրսն տպեցուցեալ են։ Ապա և դու, օրհնեցեալդ ի Տեառնէ, լաւապէս խորհելով զմեծավարձութիւն այսր գրքոյս, թէ յորքան տեղիս և յեկեղեցիս է սփռելոց և զպատճառդ տպեցման իւրոյ օրհնութեամբ յիշատակեցուցանելոց, նաև մտածելով ես զերկար միջոցաւ աշխատութիւնս մեր և զբազմութիւն ծախուցն, պարտիս առատ արօք զօգնութիւն ինչ առնել սրբոյ Աթոռոյս՝ լուսատոյ ծնողիս քոյ, եթէ կամիս, և գրել մեզ, զի զյիշատակն սիրելւոյդ տպեցուսցուք ի յիշատակարանօջն։

Ահա ընդ թղթոյս յուղարկեցաք զյիշեալ պայմանագիրդ առ Իսահակ վարդապետն, զի տացէ քեզ, յորմէ և զերկարապէսն բանիս իմանալոց ես։ Խնդրեմ, զի որովհետև ի սուրբ Երուսաղէմ գնալոյ զիտումն ես ունիս, զոր Տէր յաջողեսցէ, սոյն բանիս յառաջ քան զգնալդ արասցես զպատասխանի, թէ Իսահակ վարդապետին և թէ մեզ գրելով, զի և մեք ըստ այնմ տեսցուք։ Եւ զխիրարձարծ գիրդ և զճշմարտ հարազատութիւնդ ի սրբոյ Աթոռոյս անպակաս արասցես։

Ողջ լեր ի Տէր և յանձնեալ ի խնամս նորին, և շնորհք սրբոյ աստուածախիջի Աթոռոյս ընդ քեզ և ընդ քոյսդ լիցի միշտ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս և ի մայիսի ԻԹ (29)։

Սիրով բազմաւ և շնորհիւ քրիստոսաւէջ սրբոյ տեղւոյս ողջոյն և աստուածային օրհնութիւն տամ սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ և հաբաղատ զաւակին սրբոյ Աթոռոյս և փեսային քոյ՝ Տերամբ զօրացեալ և նոմիմբ պահպանեցեալ պարոն Պօղոսին, զոր և ի կողմանէ քեռն քո և կենակցին իւրոյ հանգուցելոյ մխիթարեմ երկնածիր մխիթարութեամբ և յանձնեմ ի բարեգթութիւնս Տեառն յարաժամ։

Ձեռ. № 2803, էջ 433—435

915. [1784 թ. 29 մայիսի]—Թուղթ ի մեծն Պօլիս առ նուիրակ տեղւոյն Իսահակ վարդապետն, ի պատասխանի ի մարտի ԻԶ (26) գրեալ թղթոցն և վասն արտաքին վիճակացն Պօլսոյ նոր նուիրակ Փիլիպպոս վարդապետին յանձնարարութեան և այլ ես ոմանց բանից։

Ձեռ. № 2803, էջ 511—515

916. 1784 թ. 30 մայիսի—Թուղթ ի Ղազախ առ Հաչաջուր գիւղի քեօխվայսն վասն Աւետիս ծերունի վարդապետին, զոր յետ մահուան առաջնորդին իւրեանց՝ Մանուէլ վարդապետին, զնա էին առաջնորդ խնդրեալ։

Ձեռ. № 2803, էջ 436—437

917. 1784 թ. 30 մայիսի—Թուղթ մի ի Բալու, օրհնութիւն առ Եամ-

ղութ կին ոմն, որ տուեալ էր Ի (20) փարայ և Ա (1) Սաղմոս աջահամբուլր ձեռամբ Ղազար անուամբ ուրումն։

Գրեցաւ ամսոյս ելն։

կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 12

918. 1784 թ. հունիս—Թուղթ ի Շուշի առ նոր զանձապետն սրբոյ Աթոռոյս՝ պարոն Բարաքիայն, հաստատութիւն գործոյն և յիշումն վասն յառաջ անտի հասեալ զանձանակադրամին ընդ Յակոբ վարդապետին։

Ձեռ. № 2803, էջ 437—438

919. 1784 թ. հունիս—Առ Շամախու հին զանձապետ Յակոբն, ի պատասխանի թղթոյն։

Ձեռ. № 2803, էջ 439

920. 1784 թ. հունիս—Թուղթ ի Բաքու առ քահանայսն և իշխանսն, ի պատասխանի հասարակ թղթոյն, որք զզանգատ գրէին զնղիազարէն։

Ձեռ. № 2803, էջ 440—442

921. 1784 թ. 3 հունիսի—Թուղթ առ իշխանսն Բաղիշու յանուանէ, շնորհակալութիւն վասն նուիրակ Յակոբ վարդապետին և յորդորումն առ ի հաստատուն պահել զշորեքեան եկեղեցեաց զանձանակսն, որք յանուն սրբոյ Աթոռոյս սահմանեցեալ են անդ։

Ձեռ. № 2803, էջ 517—519

922. 1784 հունիս—Թուղթ ի Բաքու առ զանձապետն մեր Եղիազարն, ի պատասխանի թղթոցն, զորս ընդ զանձանակաց արդիւնաժողով Յակոբ վարդապետին գրեալ էր և զընծայս էր յղեալ։ Առ որ շնորհակալութիւն վասն զանձանակին և ընծայիցն, և վասն վիճոյն իւրեանց խրատ և պատուէր։

Ձեռ. № 2803, էջ 519—520

1784 թ. 4 հունիսի—Թուղթք ի Վան և այլ տեղիս

923. Թուղթ մի սիրոյ և օրհնութեան ի Բաղէշ առ չորից գլխաւոր իշխանսն յանուանէ. շնորհակալութիւն սակս արարեալ լաւութեանցն Յակոբ վարդապետին, նաև յորդորումն առ ի հաստատուն պահել զշորեսին եկեղեցեաց զանձանակսն։

924. Թուղթ մի առ նորին նուիրակ Յակոբ վարդապետն, ի պատասխանի թղթոյն։ Յղեցաւ ընդ Յովսէփ տղային։

925. Թուղթ մի տաճկերէն առ Մաղսութ փաշայն ի կողմանէ Յակոբ վարդապետին։

926. Թուղթ մի առ Մշու վանից առաջնորդ Աստուածատուր վարդապետն սակս Յակոբ վարդապետի ժողովեալ տաւարացն, որ արգելեալ էր փաշայն և ոչ թողուր գալ յայսկոյս, զոր գրէ սրբազան Վեհապետն առ սա հարկիւ, զի հրաման առցէ ի փաշայէն և յղեսցէ աստ։

Գրեցաւ ամսոյս Դ (4)։

927. Թուղթ մի օրհնութեան առ Նախիջևանու պարոն Մէլիք Քօլին։ Յղեցաւ ընդ իւր Աբրահամ տղային։

928. Թուղթ մի տաճկերէն առ Նախիջևանու խանն ի կողմանէ նորին առաջնորդ Յովակիմ վարդապետին, զի ապահով պահեսցէ:

Գրեցաւ ամսոյս Դ (4):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 12

1784 թ. հունիս—Թուղթք ի Թիֆլիզ

929. Թուղթ մի առ նորին առաջնորդ Կարապետ և տէր Ղազար քահանայսն սակս քաննահիցն խնդրելոյն, զի փութով յղեսցեն:

930. Թուղթ մի տաճկերէն առ Հերակլ արքայն, ի պատասխանի թղթոյն սակս Յովնաթանի կողմանէ:

Գրեցաւ ամսոյս Է (7):

931. Թուղթ մի ևս առ Հերակլ արքայն, ի պատասխանի գրեալ թղթոյն սակս խնդրեալ իրացն, որ էր մուրաբաւ, յանգիմանի և խարտոց:

Գրեցաւ ամսոյս Ժ (10):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 13

1784 թ. 15 հունիսի—Թուղթք ի Ռուսչուխ

932. Թուղթ մի առ տէր Ստեփաննոս, ի պատասխանի թղթոյն վասն յղեալ աջահամբոյր Բ (2) պաճախլու ոսկի:

933. Թուղթ մի օրհնութեան առ Հաճի Յովակիմն, ի պատասխանի գրոյն սակս յղեալ Ծ (50) գրամ ղուռուշ և Ա (1) արծաթեայ թաս և Ա (1) արծաթեայ զութի՝ ձեռամբ պարոն Աղամին:

934. Թուղթ օրհնութեան առ պարոն Յոհաննն:

Միաժամանակ օրհնության նամակներ են ուղարկվել նաև պրն. Ստեփանին, Հաճի Բաղդասարին, Հաճի Թումային և Գրիգոր աղային:

Ի սոյն օր թուղթք Իզնիմիտ

935. Թուղթ մի առ պարոն Յովհաննէսն:

Օրհնության նամակներ են ուղարկվել պրն. Կարապետին, տիրացու Ծուքիասին և մոմագին տված բոլոր անձանց:

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 13

1784 թ. 17 հունիսի—Թուղթք ի մեծն Պոլիս

936. Թուղթ մի օրհնութեան առ Յովհաննէս, Աստուածատուր և Մկրտիչ որդիքն հանգուցեալ Յարութիւնին, իբր հոգեբաժին ԺԲ (12) ղուռուշ յղեալ էին:

Օրհնության նամակներ են ուղարկվել նաև Սառա կնոջը, պրն. Հայրապետին, մահտեսի Խաչուկին, Հաճի Տուտի կնոջը, պրն. Դանիելին, Անթառամ կնոջը, պրն. Նիկողայոսին, տեր Սարգսի դստերը, գյուլբանդճի Սիմեոնին, Համբարձումին և էլմաս կնոջը (Կ. Պոլիս), մահտեսի Մարիամին, Վարդենին, Հերիքնազին, մահտեսի Գեորգին, մահտեսի Օղիտային (Քեոթահի), մահտեսի Աբրահամին, Անթառամ կնոջը, պրն. Կարապետին, պրն. Մկրտչին (Ազարպազար), մահտեսի Մարտիրոսին, մահտեսի Ավետիսին, տիրացու Մարտիրոսին, պրն. Հովհաննեսին (Պոլիս), պրն. Հակոբին, մահտեսի Սրապին (Պանդերմա), մահտեսիներ՝ Հովհաննեսին, Գասպարին ու Կարապետին, պրն. Պետրոսին (Էտրանա), Սրբուհին, պրն. Հովհաննեսին, Ալեքսանին, պրն. Աբրահամին, պրն. Խոճայի Աբրահամին (Թեքիրդաղ), մահտեսիներ՝ Կիրակոսին և Անտոնին, պրն. Մելքոնին, Եղիային, Կոստանդին, Իզնիմիտու առաջնորդ Պետրոս վարդապետին, պրն. Զաքարիային, Սարգսին, Փանոսին, Խաչատուրին, մահտեսի Մարտիրոսին, Թումայի կնոջը, Զմրուխ կնոջը, տիրացու Մերուժին (Չմշկածագ), Ռումելի նվիրակ Գրիգոր վարդապետին, էջմիածնի գանձապետներ Անուշին և Ավետին, մահտեսի Հովակիմ Այտինյանին և Գրիգոր աղայի հայր մահտեսի Հովհաննեսին:

Կթղկ. դիվան, թղթ. 5 վավ. 32, էջ 13—15

937. Թուղթ մի ևս առ Մշու վանից առաջնորդ Աստուածատուր վարդապետն. յանձնարարութիւն սակս սրբազան Վեհապետի սպասաւոր տիրացու Անանիային:

938. Թուղթ մի առ մեծին Պոլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն, հանդերձ փուսուլայիւ:

Սորա ընդ ուխտաւորացն յղեցաւ: Գրի ԺԷ (17):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 15

521 939. 1784 թ. 18 հունիսի—Կոնդակ վասն սրբոց վանօրէից ժողովարարութեան, ի վերայ ընդհանուր ազգի մերոյ, որ արդ գրեցաւ եղև վասն սրբոյն Յովհաննու Մկրտչի վանիցն Իւչքիլիսէ կոչեցելոյ, որ ի ներքոյ պարտուց անկեալ էր:

Յորմէ ժամանեսցի...

Եւ ընդ սիրոյ և աստուածայնոյ օրհնութեան նամակիս, ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, հարազատ և լուսերամ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի ամենողորմ Տէրն մեր և Փրկիչն բարերար Յիսուս Քրիստոս հրամայէ փրկագործ սուրբ Աւետարանի իւրում, թէ եղերուք գթածք, որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է, քանզի որպէս մարմնաւոր հարց որդիք զգործս Հօրն իւրեանց գործելով, յար և նման ասին Հօրն, այսպէս և որդիք Հօրն երկնաւորի, գթալով յաղքատս և ի տնանկս, և ողորմելով ի նեղեալս և ի կարօտեալս օգնութեան, և լցուցանելով զկարօտութիւն նոցին առատաձեռն տրօք, բերեն յինքեանս զնմանութիւն Հօրն երկնաւորի՝ գթածի և մարդասիրի, ըստ որում ասեն վարդապետք, եթէ հարազատ որդին զնմանութիւն Հօրն բերէ: Ուրեմն, որք ողորմած լինին առ աղքատս և կարօտեալս և նեղեալս, նոքա են խնկապէս որդիք Հօրն երկնաւորի, որոց ողորմութիւնն բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ, որպէս ասէ սրբազան առաքեալն Յակոբոս: Եւ թէպէտ ամենից կարօտելոց ողորմութիւն տալն հաճոյ է Աստուծոյ և ընդունելի, բայց որ յաղագս սրբոց եկեղեցեաց և աղքատացելոց վանորէից և անապատաց տան, այն առաւել հաճոյ է Աստուծոյ: Վասն զի
522 զինուորեալ մանկունքն սրբոյ եկեղեցւոյ, որք կամաւորապէս աղքատացեալք են յաղագս Քրիստոսի, ի կամաւոր տուրս և յողորմութիւնս օրհնեցելոցդ են ապաստան, զի այնու ապրեսցին և լցուսցեն զպակասութիւնս իւրեանց, և զսուրբ վանորայսն և զանապատսն պահեսցեն ի շինութեան և ի պայծառութեան, ի յորս անդադար մատուսցեն զփառս և զօրհնաբանութիւնս Աստուծոյ և աղօթեսցեն վասն խաղաղութեան աշխարհի և բարեյաջողութեան օրհնեալ ազգիս մերոյ:

Իսկ եթէ հասարակապէս ամենայն վանօրէից տալն հաճելի է Աստուծոյ և օգուտ հոգւոց, որչա՞փ ևս առաւել պարտ և արժան է տալն ոմանց վաղեմնագոյն և հռչակաւոր վանօրէիցն մերոց, որք յատկապէս

*տեղիք պարծանաց են և հոգևորապէս մխիթարութեան օրհնեցելոյ ազ-
գիս մերոյ:*

*Արդ, յայնսիկի անուանի վանորէիցն մի է հրաշազարդ և սքանչե-
լակերտ սուրբ վանքն Յոհաննու Մկրտչին Քրիստոսի, ի հասարակաց
Իւչքիլիսայ կոչեցեալ, որ շնորհին Աստուծոյ կառուցեալ կայ ի Բագրե-
վանդ գաւառի, ի Բագւան անուն գեղջն, որ ի ստորոտ լերինն Նպատայ՝
առ Եփրատ գետով, մերձ ի տեղին, ուր ծագեաց լոյս յերկնից ի մկրտելն
անդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ զՏրդատ արքայն և զբոլոր
Հայս: Որ աՀա ի ներկայումս վասն ազգաշահ և հոգեօգուտ իրակութեան
իւրք, ենթարկեալ է ի ներքոյ ծանրագունի պարտուց: Քանզի գիտէք
իսկ, զի վասն մեղաց մերոց, չար և հոգեկորոյս աղանդն երկաբնակու-
թեան մտեալ է յազգս մեր ի սադրելոյ ամենաչար ոգւոյն մոլորութեան
և ի նորին կամարարաց որդւոցն կորստեան, որք ընդ իւրեանց եղկելի
հոգւոցն, և զհոգիս ոմանց միաբնադաւան ուղղափառ ազգիս մերոյ
պատրեալ կորուսանեն:*

*Ըստ այսմ և ի վիճակս յիշեցելոյ սրբոյ վանիցն ի շատ ուրեք նե-
րամուծեցեալ էր նոյն չար աղանդն երկաբնակութեան ի բազում թուլա-
մորթ անձինս և իբրու հաստատեցեալ էր ի նոսա: Որք օր ըստ օրէ զօ-
րանալով ես քան զես լրբանային համարձակապէս վարել նորաստաց
մոլար աղանդովն և կրօնիւքն իւրեանց, և խրոխտալ ի վերայ ճշմարտա-
դաւան // մերազնէիցն և մաքառիլ ընդ նոսա այնքան, մինչև զեկեղեցիս
523 ես յափշտակել ի խղճալեացն: Իսկ առաջնորդն նոյնոյ վիճակին և յի-
շեալ սուրբ վանիցն, սիրելի և հոգևոր որդին մեր և շնորհընկալ հարա-
զատ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ Մկրտիչ խոհեմառատ վարդապետն, ոչ
տանելով յանդգնութեան նոցա և ցաւելով իսկ ընդ մոլորութիւնսն,
շարժեալ ի նախանձ բարի, եկն առ մեզ և ի մէնջ խնդրեաց առ ի օգնել
ինքեան, զի հետևեսցի, ջանս դիցէ ի նուաճել զլրբութիւն նոցին և
վերաուղղել զթիւրեալսն զայնոսիկ: Եւ մեք ես կամակար մտօք օժան-
դակեցաք նմա՝ թէ երկրին մովպետին գրելով, և թէ այլովք կերպիւք, և
զօրացուցաք ի հոգեշահ դիտումն իւր: Որ և գնացեալ մերովս գիտու-
թեամբ ի յերկար միջոցի բազում աշխատանօք և փոյթ յանձին ունելով,
հետևեցաւ և ի ձեռն մովպետին նուաճեաց զմոլորաշաւիղսն և այնքան
ջանս եդ, մինչև վերստին դարձոյց զնոսա ի հնազանդութիւն ճշմարիտ
դաւանութեան և մաքուր կրօնից ուղղափառ ի սրբոյ եկեղեցւոյս Հա-
յաստանեայց: Եւ այսպէս ըստ կարի իւրում մաքրեաց զթեմսն սրբոյ
վանիցն իւրոց ի յաղանդոյ հերձուածողութեան, որ աՀա նարդենիս ի
յուղղափառութեան և ի բարեպաշտութեան կան միահամուռ: Իսկ վասն
ապագային ես հայցեմք յԱստուծոյ, զի աղօթիւք սրբոյ Լուսաւորչին,
այլ մի՛ արծարծեսցի ախտն այն չարափառութեան:*

*Բայց յիրագործութեանս յայսմիկ ոչ սակաւ դրամս ծախեաց ի
դուռն մովպետին՝ յայսր և յայնր: Սորին աղագաւ անկեալ է սուրբ վանքն
Յովհաննու ի ներքոյ պարտուց բազմաց: Վասն որոյ նոյն հոգա-
բարձուն նորին՝ Մկրտիչ բարեջան վարդապետն, եկեալ խնդրեաց ի մէնջ
զընդհանրական շրջաբերական կոնդակ մի վասն ազատութեան սրբոյ
վանիցն և ինքեան ի պարտուց անտի: Ուստի և մեք, պատշաճ տեսեալ
և խոնարհեալ ի խնդիրն, զայս կոնդակ օրհնաձիր և հանրաշրջական
շնորհեցաք սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ և առաջնորդին սրբոյն
Յոհաննու վանիցն՝ Մկրտիչ հանճարափայլ վարդապետին և արհիեպիս-*

*կոպոսին, զի կամ ինքն եկեսցէ և կամ զմիոք ի միաբանից իւրոց
առաքեսցէ այսու կոնդակաւ մերով և իւր վկայական թղթովն առ
աստուածասիրութիւն ձեր՝ առ ի խնդրել ի ձէնջ զկամաւոր ողորմու-
թիւնս՝ ի հատուցանել զպարտսն սրբոյ վանիցն և ազատել ի նմանէ:
Յաղագս որոյ պատուիրելով պատուիրեմք աստուածասիրացդ և բարե-
պաշտիցդ, զի ի գալն նոցա առ ձեզ, հանդերձ այսու օրհնութեան նա-
մակաւս մերով, և ծանուցանել ձեզ զցաւս սրտից իւրեանց, յայնժամ
524 պարտիք սիրով բազմաւ ընդունիլ և պատուել զնոսա իբրև զծառայ
Քրիստոսի և մանաւանդ ամենքեանքդ իսկ՝ վաճառականք և տեղա-
կանք, արք և կանայք, մեծամեծք և փոքունք, հարուստք և աղքատք
յօժար կամօք և զուարթ սրտիւք շնորհել զմա (նոցա) զողորմութիւնս, և
զտուրս առատս և լիաձեռնութեամբ յօգնութիւն հասանիլ, ոչ հա-
մարելով զա (զնոսա) որպէս զայլս ժողովարարս: Վասն զի, յի-
րաւի, թէպէտ իբրու զյատուկ իմաստիւս առնելով, զոր ինչ ողոր-
մութեան տուրս տան մարդիկք յանուն Աստուծոյ, զայնս զամենայն ըն-
դունի Աստուած և վարձահատոյց տուողացն լինի: Սակայն ես առաւել
զայնպիսի տուրս և զողորմութիւնս սիրէ և ընդունի, զորս տան մար-
դիկք յօժարութեամբ վասն սրբոյ Տան իւրոյ, այսինքն սրբոց վանորէից
և եկեղեցեաց, և վասն հաստատութեան և ջատագովութեան և պահ-
պանութեան հաւատոյ ուղղափառի, որ լինիցի առ նոյն ինքն Աստուած:
Զայնպիսի տուրս և զողորմութիւնս արդարև առաւելապէս ընդունի Տէր
և հաճի, և փոխարէն նոցա զվարձս բարիս և բազմապատիկս հատուցանէ
տուողացն թարց կարծեաց և երկբայութեանց:*

*Ուրեմն կրկին պատուիրեմք հոգևոր որդւոցդ մերոց քրիստոսա-
սիրաց, զի առատութեամբ տայցէք զտուրս ձեր, զի զայնս տարեալ
տայցեն զպարտսն սրբոյ վանիցն և ազատեսցին ի նեղսակութենէ: Եւ
որպէս զուք ձեր առատ տրօքն պատճառ լինիք ազատութեան նոցին,
ազատարարն Քրիստոս ես զձեզ ի հոգեկան և ի մարմնական պարտուց
ազատեսցէ: Որք և ըստ տրոց և ողորմութեանց ձերոց, ընկալջիք զհազա-
րապատիկ և զբիւրապատիկ վարձս՝ ի Տեառնէ Աստուծոյ, զշնորհս՝ ի
սրբոյ Աթոռոյս միածնաիջէ և զօրհնութիւնս ի մէնջ յազգաց յազգս և
յորդւոց յորդիս, աստ և ի հանդերձելումն: Եւ որքան սաղմոսերգու-
թիւնք, պաշտօնք և սուրբ պատարագք կատարիցին ի յայն դերահրաշ
սուրբ վանսն սրբոյն Յովհաննու Մկրտչի, յայնցանէ մեծագոյն մասն և
բաժին եղիցին ձեզ՝ կենդանեացդ և հանգուցելոց ձերոց: Ամէն:*

*Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս մերում և ի յունիսի ԺԸ (18) ի լու-
սակառոյց և յերկնահանգէտ Աթոռս սուրբ էջմիածին:*

Չեռ. № 2803, էջ 521—524

940. 1784 թ. հունիս—*Թուղթ օրհնութեան ի յԱնդրիանուպօլիս առ
մահտեսի Յովաննէսն, մահտեսի Գասպարն ու մահտեսի Կարապետն
վասն ԺԱ (11) ղուռուշ լուսագնոյն, զոր յղեալ էին ընդ Կարապետին
(որպէս և յամենայն ամի յղէին):*

Չեռ. № 2803, էջ 525—526

941. 1784 թ. հունիս—*Թուղթ առ Իզնիմիդու առաջնորդ Պետրոս
վարդապետն և նորին աշակերտ Յովակիմ վարդապետն, ի պատաս-
խանի թղթոյ նոցին ընդ ուխտաւորացն գրեցելոյ: Առ որս շնորհակալու-
թիւն վասն աջահամբուրին առաքեցելոյ:*

Չեռ. № 2803, էջ 526—527

942. 1784 թ. հունիս—*Թուղթ օրհնութեան առ Շամախու եկեղեցւոյ միաբանելի տիրացու Յարութիւնն, որ ընդ մեր գանձանակաժողով Յակոբ վարդապետին զտուրս յղեալ էր ի սուրբ Աթոռս:*

Ձեռ. № 2803, էջ 621—622

943. 1784 թ. հունիս—*Կոնդակ գործակալութեան և վէքիլութեան սրբոյ Աթոռոյս ի Գեօրի և ի Վրացստան և ի շրջակայսն վասն փոքր տէր Սահակին, մինչ վախճանեալ էր մեծ տէր Սահակն, որ էր հօրեղբայր սորին, որ և յառաջ քան զայս ևս կարգեցեալ էր գործակից նմին վասն ծերութեանն և անկարութեանն նորա:*

Ձեռ. № 2803, էջ 622—624

624 944. 1784 թ. հունիս—*Թուղթ առ Յովաննէս կաթուղիկոսն Գանձա-*
սարու, ի պատասխանի թղթոյն ընդ մեր Յակոբ վարդապետին գրեցելոյ
և վասն յղեալ խալիչային իբր շնորհակալութիւն:

Յորմէ սիրով բազմաւ և կարօտիւ եղբայրականաւ, քրիստոսաւանդ սուրբ ողջունիւ և նոյնաիջի սրբոյ տեղւոյս Հոգեկուարճ շնորհին, ծանուցումն լիցի սիրելւոյ և ցանկալւոյ եղբօրդ մերոյ և վայելուչ վերատեսչի տանդ Աղուանից, տեառնդ Յովհաննիսի սրբազան կաթուղիկոսիդ: Զի յանցելումն ամի և ի հոկտեմբերի ամսեան ի ԺԸ (18) գրեալ սիրապատում և որպիսածանուցիչ թուղթ քոյ ժամանեաց առ մեզ վաղապէս, ընդ հոգևոր որդւոյն մերոյ` սրբոյ Աթոռոյս գանձանակաց արդիւնաժողով Յակոբ վարդապետին: Զոր և ընթերցեալ, ըստ որում և փութայ միշտ սիրտ մեր գիտել զզիարդութեանց ձերոց, իմացեալ զողջութիւն և առողջութիւն սիրոյդ, միամիտ և ուրախ եղաք:

Այլ յաղագս անխաղաղ և վրդովալից զօլոյն խղճալի երկրիդ, զորս զեկուցեալ էիր, և շատ ևս լսեմք և իմանամք, ոչ սակաւ տրտմեալ ցաւեցաք և ցաւիմք ընդ այդոսիկ: Իսկ մեք ևս ի զոյնպիսիս մաշիմք, որովհետև ի ցաւալի բերմանց ամանակիս աստի ևս բարձեալ տեառնի կատարեալ խաղաղութիւնն, որպէս և ի սոյն կէտ իշխօղն երկրիս` որդին
625 *ա//ռաջնոյ հին խանին միով եղբարբն սպանեցեալ ի յերկրականացս[195],*
բարձան ի միջոյ և զմիւս եղբայրն իբրու յաջորդեցուցին: Ի վրդովման կամք երկրաւս ներկայապէս և յապագայն ևս թէ զի՞նչ լինիցի, ոչ գիտեմք:

Այլ զի յայսպիսեաց ցաւոց ոչ յայլուստ լինի փարատումն տիրապէս, եթէ ոչ ի յաստուածապետական խնամողութենէն: Վասն որոյ մեծապաղատ հայցմամբ խնդրեմք ի նմանէ առաջի սրբոյ իջման տեղւոյս նորին, առնել զողորմութիւն խղճալի երկրացս և զտաճարքս սրբութեան փառաց իւրոց` ապահովացուցանել ի յաղարտմանէ սոցին աղարտչաց, և պահպանել զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ:

Իսկ առ հոգևոր որդին մեր` Յակոբ վարդապետն, որ զմարդասիրութիւնս էիր ցուցեալ, պատմեաց մեզ և շնորհակալեցաք զքէն: Եւ յառաւելութենէ սիրոյդ, որ առաքեալ էիր ընդ նմին իւր ընծայ մեզ` զխալիչայ մի, առ ընկալաք և այնր աղագաւ ևս ունիմք շնորհակալութիւն: Բայց չէ ինչ պիտոյ, զի այդքան տագնապս զաիցես յաղագս մեր և փութացիս ընծայիւ երևիլ մեզ, որում չունիմք կարօտութիւն, այլ զսէրդ և զհարազատութիւնդ հաստատուն ունիլ խնդրեմք: Որ և ի ճշմարիտ սիրոյ և ի սոյդ հաւատարմութենէ եղբայրութեան մի վերջացցիս և զորպիսածանոյց թուղթդ մի առնիցես պակաս, զի տեղեկանալով զողջութենէ և զորպիսութեանց քոց, միամիտ լիցուք:

Եւ ահաւասիկ, որովհետև Յակոբ վարդապետն ի վաղուց է եկեալ և հասուցեալ առ մեզ զգանձանակական արդիւնսն օրհնեալ քաղաքացն կողմանցդ և վասն բազում ցաւոց և անձնոնհասութեան մերոյ կարի յետացումն եղև թղթոցս մերոց, վասն որոյ մտածելով, թէ մի գուցէ յոյժ տարակուսութիւն լինիցի ժողովրդեանցն կողմանցդ, զայլս յետացուցանելն անպատկան համարեալ, ի մէջ յոգնից տաժանելի կրից և հոգոց, զօրհնութեան և զշնորհակալութեան գրեանս գրեալ առաքեցաք ի յօրհնեալ քաղաքդ, որք յայդկոյս, և միամիտ լինիլ քրիստոսասէր ժողովրդոցն մերոց ի կողմանէ հոգևոր արդեանցն իւրեանց ի սուրբ Աթոռս և առ մեզ հասելոց: Ընդ որս և զայս սիրանիշ թուղթ ևս առ սիրելի եղբայրդ գրեցաք, ի պատասխանի թղթոյդ, զի դու ևս միամիտ կացցես:

Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի յունիսի..., և ի լուսակառոյց Աթոռս սուրբ էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 624—625

625 945. 1784 թ. հունիս—*Առ Իսրայէլ կաթողիկոսն ի Գեանջայ, ի պա-*
տասխանի թղթոյն ընդ մեր Յակոբ վարդապետին գրեցելոյ:

Յորմէ սիրով մեծաւ և կարօտիւ, քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս շնորհին, ծանուցումն լիցի սիրելւոյ և հոգեվորի եղբօրդ մերոյ` տեառնդ Իսրայէլ սրբազան կաթուղիկոսիդ: Զի սիրածիր թուղթ քո ժամանեաց առ մեզ ի ձեռն հոգևոր որդւոյն մերոյ` Յակոբ վարդապետին, զոր ընկալեալ ընթերցաք և զողջութենէ քումէ գիտելով, ուրախացաք և միամիտ եղաք:

Եւ թէպէտ բազում անգամ կամէաք զպատասխանի գրել ի միամտութիւն սիրեցելոյդ, այլ ցաւ և հոգք վշտաբեր ժամանակիս ոչ տան մեզ թոյլ բանալ զաչս, և բաց ի մշտակայ ցաւոց մերոց անպակաս խառ-
626 *նակութիւնք և աղմուկք երկրիս, և մանաւանդ տառապակրութիւնք խղ-*
ճալի մերազնէիցս յոյժ վրդովեցուցանեն: Որպէս և այժմ ի ներկայումս այնպէս կամք վրդովեալ և անապահով, վասն զի առաջին հին խանի մեծ որդին, զոր նոր խան էին կացուցեալ ի տեղին նորին, յանկարծակի սրախողխող արարին` հանդերձ միով եղբարբն, և զմիւս եղբայրն նոցին իբրու ի տեղի մեծին յաջորդեցուցին, վասն որոյ երկիրս և մեք ի տատանման կամք[196]:

Զայսոսիկ և զայլս բազումս ևս քան զսոսա գիտելով քո, մի վհատիր և հոգար յոյժ վասն անյաջողութեան, որպէս և զեկուցեալ էիր զկերպ վհատութեան, զի այս այն ժամանակ է, յորում ըստ գրեցելոյն ամենայն գլուխք ի ցաւս են և ամենայն սիրտք ի տրտմութիւնս: Բայց թէ յուսահատիմք, զրկիմք ի վարձուց: Ուրեմն ոչ պարտիմք նեղասրտիլ յոյժ, այլ ակնկալեալ սպասել այցելութեան Տեառն, որ կարողն է ամենայնի:

Եւ զոր գրեալ էիր խնամատար լինիլ սիրելւոյդ և ոչ լսել վատաբանութեան զանազան բերանոց, այլ ողորմութիւն առնել: Գիտեա առ այդ, զի յիրաւի մեք ևս զբարուքապէս կենցաղավարելն քո կամիմք վասն սոյդ սիրոյ մերոյ և յաղագս անյաջողութեանդ ցաւիմք, այլ իւրաքանչիւրոց իրակութեանց յառաջման ժամանակն օգնէ, իսկ մեք ի ձախող ներկայիս կամք: Եթէ ձեռնտու ժամանակ լինիցի ստուգիւ ի բարեբարելոյ առ քեզ յաղագս ապրտեան, ոչ զանդաղիմք:

Իսկ որդեկին մերոյ՝ Յակոբ վարդապետի, որ զսէր և զմեծարանս էիր ցուցեալ, պատմեաց մեզ գոհունակութեամբ և յանուն մեր ևս, որ զմէկ հարիւր հատ նուռն էիր յղեալ, սիրով ընկալաք և շնորհակալեցաք՝ յիշելով առ ի բարին, որ և ի Տեառնէ յիշատակեսցիս ի յողորմութիւնս նորին։
Արդ, ահա, որովհետև իբրու զմէջ ամենայն զբաղմանց պատառեալ յայդ կողմունսդ և ի յօրհնեալ քաղաքդ Գանձակ զօրհնութեան և զշնորհա-կալութեան գրեանս գրէաք յաղագս հոգևոր արդեանց զոցին զանձակա-զրամից յղեցելոց, զայս սիրոյ գիր ևս առ քեզ գրեցաք ի միամտութիւն և յանհոգութիւն քեզ, ծանուցանելով ևս զգիարդութեանց մերոց։ Եւ դու սիրելի եղբարդ մեր, ևս երբեմն սիրածարծ գրով զքոյդ և զանդոյդ որպէսն գրել մի զանգաղիցիս, որով միամիտ լիցուք և այսու ամե-նայնիւ։ Ողջ լեր ի Տէր։
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս մերում ի յունիսի..., և ի սուրբ էջմիածին։
Ձեռ. № 2803, էջ 625—626

627 946. 1784 թ. հունիս—Թուղթ ի մեծն Պօլիս առ նուիրակ Իսահակ վարդապետին, յիշումն թղթոց սաստ հասանելոյն ընդ ուխտաւորացն։
Յօրմէ սիրով բազմաւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ, զիտաչիր սիրելի և հոգևոր որդիդ մեր և օգտաչան զա-ւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդապետ։ Զի ի մայիսի ԺԱ (11) գրեալ թուղթքն քո, հանդերձ պարոն Խաչիկ աղայի թղթովն, նաև յղեալ ժամացուցիքդ հասին առ մեզ ընդ ուխտաւորացն յայդրուստ և ի կողմանցդ եկելոց, և զոր ինչ գրեալ էիր ի նոսա, զամենայն ընթեր-ցեալ իմացաք։ Եւ ընդ ոմանս այտի եկելոց ուխտաւորացն, որ զյանձնա-րարութիւն էիր գրեալ, ի սէր ընկալաք զնոսա և շահեցաք։ Իսկ ընդ պարոն Առաքելին գրեալ թղթոջդ, որ վասն ուրումն տղայի խնդրեալ էիր ըն-դունել ի դպրատունն, ահա առեալ եսուք անդ, զի ընթերցցի, բայց գրեցելոցդ բանից այժմ ոչ կարացաք առնել զպատասխանի։
Եւ ի կողմանէ յառաջ խնդրեալ թղթոցդ, որ խոստացեալ եմք հո-գալ և յղել, տակաւին զայնս ևս չկարացաք հոգալ, քանզի թող զնորա-նոր զբաղմանց հանդիպելն, երկիրս այնպէս վրդովեցաւ, որ ոչ լինի ընդ գրով արկանել։ Վասն զի յաղագս անպատշաճ գնացից և ամենևին տղայաբարոյ զոլոյն իշխողին երկրիս, որդւոյն հին խանին, երևելի այանքն երկրականացս ի գաղտ համակամեալ, յանկարծակի արտաքոյ բերդին սրախողխող արարին՝ հանդերձ համամայր փոքու եղբարբն, և զմիւս եղբայրն, որ ի մեծ կնոջէն, կացուցին ի տեղի նորին և զմահուար գրեցին առ արքայն Վրաց՝ կամակցիլ ինքեանց և հաստատել զնա յիշխանութիւնն։ Որ և խնամաշատ և քրիստոսազօր արքայն կատարեալ էր զխնդիրս նոցին և ի ձեռն Գեօրկին Միրզային զհրամանագիր և զըն-ծայ և[ս] առաքեալ, և զնա խան հաստատեալ։ Բայց նոր կարգեցելոյս և կամ ումեք ի մեծամեծացն բնաւ ոչ գոյ անսացող, այլ ամենեքեան անկեալ են զմիմամբք, և մանաւանդ անիծեալ քանի մի ցեղ տաճիկքն երկրիս, որք զայսպիսի աւուրս որոնին, ահա ըստ ախորժակաց իւրե-անց, զմիջոց գտեալ աւարեն զգիւղորայս հայոց և տաճկաց, և զամե-նայն ճանապարհորդս, զորս և գտանեն, մերկացուցանեն և վնասեն ևս։
628 Վասն որոյ եթէ զգալն ուխտաւորաց իմանայաք փոքր մի յառաջ, ան-

կարծիք արգելելոց էաք։ Բայց յանկարծ հասին Աստուծով անվնաս ի սուրբ Աթոռս։
Ահա որպէս գրեցաք, երկիրս խղճալի ի տատանման կայ, ամե-նայն զործք խափանեցեալ են, զի ոչ ոք կարէ յանդ ելանել։ Եւ մեք զամենայն առ մեօր եղեալսն զինուորեցուցեալ, զգոյշ կամք։ Աստուծով դեռ բան ինչ չեմք յափշտակեցուցեալ։ Բայց ոչ գիտելոց, թէ կատա-ռածն որպէ՞ս է լինելոց, յամենավարան տարակուսանս եմք։
Յաղագս այսր ոչ կարելով զայլ ինչ երկարօրէն գրել, զայսքանս համառօտապէս գրեցաք ի դառնալն օրհնեալ ուխտաւորացդ ընդ դոսա, զի զհասանելն թղթոցդ առ մեզ, գիտելով միամտիցիս։
Սիրելւոյն մերոյ Տերամբ օրհնեցեալ պարոն Խաչիկ աղային ողջոյն և օրհնութիւն տամ, որոյ զգիրն ընկալաք, բայց զպատասխանի գրել չկարացաք՝ սակս պատճառին ծանուցանելոյ։ Այլ յառաջ քան զայս, գիր եմք գրեալ նմա ի կողմանէ Առենւոյ տպեցմանն և քեզ ևս գրանս եմք գրեալ խօսիլ ընդ նմա։ Այժմ որ գրես, թէ զայս ինչ խօսեցաք, համե-մատ է գրեցելոյն մերոյ՝ սակայն որ խոստացեալ է դա զՌ (1000) զուռուշ տալ վասն ինքեան յիշատակութեան գրքոյն, և զխ (40) հատն ևս խնդրէ։ Ահա ի Ռ (1000) զուռուշէն Ծճ (500)-ն զիցուք փոխանակ խ (40) գրեանցն, մնայ Ծճ (500) զուռուշ, որով բան ոչ լինի։ Ուրեմն վերստին խօսեսջիք և լաւապէս իմն նկատելով սիրելւոյն մերոյ՝ պարոն Խաչիկին ի ծանրութիւն և ի բազմածախութիւն գործոյս, և ի մեծա-վարձութիւնն իւր հոգևորապէս առատաձեռնութեամբ զօգնութիւն արասցէ սրբոյ Աթոռոյս, և մեզ գրեսջիս։ Բաւեսցի այսքանս առ այս։
Իսկ և զյատկեղ սիրելեացն իմոց՝ զպարոն տիրացու Գէորգի և զպարոն Աստուածապահի զնոր գրեալ թուղթն ևս ընկալայ... և ի սեպ-տեմբերին և փետրվարին գրեալ թուղթքն նոցա ևս հասին առ մեզ յոյժ անազան ի սոյն ամսոջս, յառաջ քան զայս, և թէ ո՞ւր էին յետացեալ, չիմիցաք։ Ինչ և իցէ, ի կողմանէ հասանելոյն առ մեզ, միամիտ լիցին, բայց որպէս քեզ, ոչ կարացաք զլխօրէն պատասխանի գրել, նոյնպէս և ոչ նոցա զպատասխանի գրեցաք, եթէ խաղաղասցուք, գրելոց եմք։
Այժմոյս յոյժ սիրով և կարօտիւ ողջոյն տամ նոցա, զորս և յանձ-նեմ ի բարեգթութիւնս Տեառն, որովք հանդերձ և դու ողջ լեր ի Տէր։ Ամէն։
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի յունիսի, և ի սուրբ էջմիածին։
(ի լուսանցն գրելի)

627 Հաւատարիմ սիրելւոյն մերոյ և օգտաչան որդւոյն սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ զօրացեալ բարեպաշտ Միքայէլ ամիրային և բարեժառանգ որդւոյն իւրոյ և մեր ևս հոգևոր զաւակի՝ օրհնեալ Համբարձում ամիրա-յին, նաև Վարդան ամիրային և տիրացու Գէորգին յոյժ սիրով և զատէին, ողջոյն և օրհնութիւն տամ։ Զի շնորհիւ սրբոյ քրիստոսաէջ տեղւոյս ողջոյն և օրհնութիւն տամ։ Զի Թուղթն, զոր գրեալ էր մեզ օրհնեալ Միքայէլ ամիրայն, էհաս ձեռամբ պարոն Կարապետին, զոր և ի սէր ընկալաք։ Բայց որպէս ոչ ումեք, նոյնպէս և ոչ նմա կարացաք զպատասխանի գրել, զպատճառն յայս-մանէ թղթոյ քոյ իմացեալ, անմեղադիր լիջի մեզ։ Որ և կեցցէ ողջ ի Տէր՝ մնալով ի խնամս նորին յարաժամ։ Ամէն։
Ձեռ. № 2803, էջ 627—628

629 947. 1784 թ. [Նոլիս] — *Թուղթ առ Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի բանեաց Թղթոց նորին յայլ և այլ միջոցս գրեցելոց:*

Յորմէ բազմաւ սիրով և կարօտիւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ և հոգեզուարճ շնորհիւ միածնաիջի սրբոյ տեղւոյս, ծանիր սիրելի և հոգևոր որդիդ մեր, հարազատ և բազմաշխատ ղուակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածարան վարդապետ: Զի յանցեալ թուոյ ի սեպտեմբերի ԺԶ (16) և ի դեկտեմբերի Բ (2) և ԼԱ (31) և ի ներկայ թուոյս ապրիլի Լ (30) գրեալ թուղթքն քո հասին առ մեզ ընդ միջոցս միջոցս, զորս և ընթերցեալ իմացար զամենայն գրեալսդ:

Արդ, ծանուցեալ էիր զօծանելդ զեկեղեցիս և զբարեջանութիւնդ ի շինութիւն նոցին, և այլոց ես օգտաւոր շինուածոց: Ընդ որս ուրախացաք, զորս և պահեսցէ Տէր հաստատս և արասցէ շահաւէտս: Եւ ընդ նոյն թղթոյն գրեալ էիր և զթուղթ մի առ տէր Յարութիւնն ժողովարարգոր պահեցաք միջոց ինչ, յայսց կողմանց հաւատարիմ գնացօղ պատահիցի դէպ ի Բասրայ, զի ընդ նոսա յղեսցուք, և ոչ պատահեցաւ:

Իսկ ապա մինչ առ Ստեփաննոս աղայն գրեալ գիրդ ես էհաս առ մեզ, ի միասին եդաք ի թղթոց Իսահակ վարդապետին մերոյ և յղեցաք ընդ ուխտաւորացն առ նա, զի և նա յղեսցէ ի Բասրայ՝ հասանիլ առ տեարսն: Լեր միամիտ: Բայց զորպիսութենէ նորին այսպէս իմա, զի ի ներկայումս ի Պաղտատու մարդ եկն, որ էր Աֆրասիօն գրագիրն արքայորդւոյն: Զորպիսութենէ նորին մինչ հարցաք, զբարւոք զոյն և զարգինաւոր լինելն պատմեաց, որ և առ քեզ ես զթուղթ ունէր ի նմանէ և առ մեզ՝ ոչ: Ի թղթոյդ, ի հարկէ, իմացեալ ես մինչև ցարդ զորպիսութիւն ինչ զնմանէ, եթէ ես լսիցեմք, գրելոց եմք սիրելւոյդ: Իսկ և գրեալ էիր զակարութենէդ հանդիպեցելոյ քեզ, առ որ յույժ ցաւեցեալ անկաք ի տրտմութիւնս, սակայն յետոյ իմացեալ և զվերստին առողջութիւնդ ուրախացաք մեծապէս: Բարեխնամն Աստուած բարեկեցութեամբ պահեսցէ զհամայն հարազատ և բազմաշխատ որդիսդ սրբոյ Աթոռոյս և մի՛ տացէ մեզ լսել զկսկծալի ինչ լուրս զձէնջ: Քանզի թող զլուսահոգի Յակոբ վարդապետին, յանցեալսն լուաք ես զմահսն Զմիռնոյ և Ուռումէլու Եսայի և Ստեփաննոս վարդապետացն, և ի տարաբախտութենէ իմմէ համարեալ, անկաք ի բազում տրտմութիւնս և ի յօգնավարան ցաւս գրեթէ անձնամաշ եղաք: Յորոց կողմանէ և բոյդ գլուխ ողջ կացցէ:

Արդ, զայսքանս բաւ համարելով, Տեառն հայցեսցուք՝ մի՛ այլևս անհանդիպեցուցանել զմեզ այսպիսեաց վշտաց, այլ յողջութեան և անփորձ
630 *պահել // զմտերիմսդ սրբոյ գահիս:*

Վասն Վարդան վարդապետի կայիցն յղել խոստանաս քանիցս և, եթէ մեք յուսաւորեմք զինքն, սակայն աչքն ի ճանապարհի է: Ուրեմն, եթէ ցարդ չես յուղարկեալ, ընդ Եսայուն շուտով յղեսցես թարց յամեցուցելոյ: Եւ ապա ծանուցեալ էիր ըստ գրեցելոյն մերոյ հոգ տանիլդ ընծայից զօրապետին և առնուլդ և ընծայելդ նմա ըստ արժանւոյն խօսակցութեամբ, որոյ աղագաւ միամտեցաք և շնորհակալեցաք զքէն, որում Տէր տացէ զօրութիւն և կարողութիւն: Բայց որ զթուղթն մեր յղեալ է նա առ պայծառափայլն ի ցոյց տիրուհւոյն, ի հարկէ, մինչև ցարդ եկեալ լինիցի պատասխանի նորին: Ուրեմն զպատասխանի առեալ ի զօրապետէն թղթոյն մերոյ, յղեսցես մեզ ի միամտութիւն:

Եւ զոր գրես, թէ վասն բազում հարկաւորութեանց ոչ կարեմ գիր

կալ որպիսութիւն գրել: Սիրելիդ իմ, զայլ հոգս ուշափ և ունիցիս, զառ մեզ հոգսդ և զորպիսութիւն ծանուցանելդ առաւել հարկաւոր պարտիս վարկանիլ և զլիալիր զորպէսս անցից ծանուցանել, զի գիտասցուք և անտարակոյս կացցուք: Այլև գրեալ էիր, թէ Ասպահանու դեսպանն այսօր վաղն գալոց է և այլ ոմն երևելի ընդ նմա և այլն: Այլ դեռ ոչ երևեցան այդորքիկ, կամ ոչ ելին, կամ թէ ընդ այլ ճանապարհ գնացին:

Սիրելւոյն մերոյ և ստոյգ բարեկամին սրբոյ Աթոռոյս՝ տօքտօր Եակոբին զհաւատարմութիւնն առ մեզ և առ սուրբ Աթոռս յառաջնմէ հաւաստի գիտէաք և դու, սիրելիդ մեր, ես որ այժմ ծանուցեալ էիր զառ մեզ ջատագովութեանց նորին և չունելոյն զշնորհս առաջի մեծի զօրապետին, արդարև բերկրեցաք և շնորհակալ եմք զինքենէ: Եւ ի ներկայս չունելով զանգորրութիւն և զպարապութիւն, ոչ կարացաք զյատուկ գիր գրել նմա, վասն որոյ աստէն ահա սիրով բազմաւ և շնորհիւ քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս ողջոյն և օրհնութիւն տամ նմա, զոր և յանձնեմ ի գթութիւնս Տեառն Աստուծոյ:

Իսկ զորպիսութեանց սրբոյ Աթոռոյս և մեր և խղճալի երկրիս այսպէս գիտեա: Զի մինչև ցներկայ ժամանակս իբր թէ ի միջակ խաղաղութեան կայաք, որում հաւատալով, ի գարնանն սկսաք զմէջ սրբոյ տաճարիս բոլ տալ նորապէս և ծաղկեցուցանել: Որում և ի բազմաթիւ
631 *փայտից զխսկալայս կանգնեցուցաք // եռապատիկ և քառապատիկ, և զվարպետսն ի գործ ձեռնամխեցուցաք: Այլ յայս աւուրքս այնպէս վրդովեցաւ երկիրս, որ ոչ լինի ընդ գրով արկանել, վասն զի յաղագս անպատշաճ գնա[ցից] (երբ ի վերուստ 627 երեսէն դոեալ գրեա, մինչև վոր ցուցանեմս ի ներքո)... մերկացուցանեն և վնասեն ես: Ուստի երկիրս ի տատանման կայ: Ամենայն գործք խափանեալք են և ոչ ոք կարէ յանդ ելանել:*

[Մեք զառ մեօք եղեալսն զինուորեցուցեալ, զգոյշ կալով, դեռ զոր ինչ ոչ եմք յափշտակեցուցեալ Աստուծով: Սակայն ոչ գիտելով, թէ կատարածն որպէ՞ս է լինելոց, ի բազմավրդով տարակուսանս եմք: Զի թէպէտ և զայս թուղթ ես հարկաւոր համարեալ գրեցաք վասն միամտութեան սիրելւոյդ, բայց ոչ գիտեմք, թէ ե՞րբ և որպէ՞ս եմք յղելոց: Ըստ որում երկիրս յալէկոծութեան կայ և ճանապարհքն ես ապականեցեալք են: Առ որս ոչինչ ունիմք ասել, եթէ ոչ զայս և եթ, թէ Աստուած հոգասցէ]:*
632 *Եւ ճանապարհքն ես վտանգաւորեցեալք են: // Նաև յաւուր շաբաթու, որ օր 22 էր յունիս ամսոյ, ի լուսանալ առաւօտուն, մինչ մեք ի փորոր կարար և սուրբ պատարագոցն էաք, նորանոր անլուր և չեղեալ դիպուած խմն պատահեցաւ սրբոյ Աթոռոյս ի յապստամբացն երկիրս մերոյ: Վասն զի մինչ Այրըմլու կոչեցեալքն ապստամբեալք էին ի բերդաբնակացն, սակս վերոյ յիշեալ պատճառացդ և զամենայն տունս և զկարասիս իւրեանց քօչեցուցեալ և տարեալ էին յայլ տեղիս, առ ի վերայ յինսն իւրեանց քօչեցուցեալ և տարեալ էին յայլ տեղիս, առ ի վերադառնալ և ապստակել զբոլոր երկիրս: Յորոց ահէն գիւղորայք ոմանք, թէ հայք և թէ տաճիկք, որ ի մերձ սրբոյ Աթոռոյս կային, ըստ սովորութեանց իւրեանց, հանդերձ աղխիւքն դիմեալք էին առ մեզ՝ առ ի ամրանալ և փրձանիլ: Իսկ վերոյ յիշեալ Այր[ը]մլու ապստամբքն, որոց գըլխաւորք էին՝ Զաման խանի տղայ Ղասումն, Ղօչէ խանի տղայ Զամանն և Աքընչի Մահմադ խանի տղայ Լալիկ Ալլահվէրտին, որք և ժողովեցան*

* Փակագծերի մեջ վերցրած մասը բնագրում ջնջված է:

մինչև ց300 ձիաւորք և այլ աւելիք, ի յեղակարծ ժամու ասպատակաւ յարեան ի վերայ անդէոյն մերոց և շրջապատեալ զանդաստանօքն մերովք և որ ինչ չորքոտանիք գոյին՝ թէ տաւար, թէ ոչխար, թէ իլխի և թէ այլ ինչ, թէ նախիրք, և թէ գոմթանի տաւարք, թէ մերն, թէ գիւղինն, և թէ առ մեզ բնակեալ հայոց և տաճկացն, զբոլորն ասպատակեալ և տարեալ հեռացուցին։ Եւ մեք կարծելով, թէ ի յօտար թշնամեաց լինիցին և սակաւք զձիաւոր և զհետեակ յղեցաք ընդ յառաջ առ ի ազատել զասպատակեալսն, և զնոսա ևս փախստական արարեալ՝ զոմանս վիրաւոր, և զոմանս մերկ յետս դարձուցին։ Եւ զկնի ժամու միոյ իբրև զտիրաւէր, փոշիմանեալ և յապագայէն երկուցեալ, զմարդ յղեցին առ մեզ ասելով, թէ մեք վասն ռահաթի ապրանացն եմք եկեալ, դուք զմարդ յղեցէք և զօճաղի տաւարսն որոշեալ տարէք։ Եւ մեք զաթոռակալն մեր, ընդ այլ մարդկանց, յղեցաք առ նոսա ասելով, թէ զոր ինչ ի յանդաստանաց մերոց տարեալ էք, թէ հայոց և թէ տաճկաց, բոլորն մեր է համարեցեալ ըստ արդար իրեանց, բոլորն պարտիք յետս դարձուցանել։ Եթէ ոչ, զամենայն տարէք կերէք, եթէ կարէք մարսել (զայս ասացաք վասն ազատելոյ զտաւարսն հայ և տաճիկ աղքատացն խեղճալեաց, որք աղաղակաւ զաղիողորմ արտասուս իջեցուցանէին)։

Իսկ կատաղիքն այնոքիկ, յորմէ երկուցեալ կարի փոշիման եղեն և միւս աւուրն սկսան անորոշակի զկէսն տաւարացն յետս յղել, և զայնս որոց և էին զաւթարաւ, հոււր տեարցն։ Եւ զկնի յղեցման մերայնոցն, լուաք զԱստծով զալուստ ի յԵղվարդ (մեծահաւատ սիրելոյն մերոյ և հարազատ զաւակին սրբոյ Աթոռոյս, հանճարառատ) պարոն Գէորգին Միրզային, որ ազամ և խալաթ էր բերեալ ի յօրհնեալ արքայէն վասն խանութեան նորանիստ Մահմադ խանին Երևանու, որպէս և գրեցաք ի վերոյ։ Որով յոյժ ուրախացեալ վասն որոյ ազդեցաք նմա զտանիլ տաւարացն, և զայլն։ Իսկ նա, օրհնեալ Միրզայ սիրելին մեր, ի լսելն իւրոյն զթուղթս էր գրեալ ի վերայ այն կատաղեացն և զՅովսէփ ամն ընդ այլ երկուց տաճկաց յղեալ, որք երկիցս և երիցս գնալով և գալով, սակաւ առ սակաւ բերին և բերել ջանան զմնացեալ տաւարացն։ Եւ տակաւին չէ յայտնի վասն մնացելոցն, թէ բոլորն առ մեզ է հասանելոց, եթէ որպէ՞ս է լինելոց։

633 Բայց մեք, չտանելով զանլուր արարս և զլրբութիւնս կատաղի շանցըն այնոցիկ, յառաջագոյն զՄարտիրոս վարդապետն և զշաթիր Մելիքսեթն զկնի միմեանց հանդերձ արզայիւք յղեցաք առ սիրելին մեր և առատախնամ բարերարն և մտերիմ բարեկամն սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ զօրացեալ և օրհնեալ արքայն Վրաց և արքայորդին՝ վասն զվրէժս խնդրելոյ ի նոցանէ։ Եւ զկնի եղելութեանցս այսոցիկ, ընկալաք ըզպատասխանիսն թղթոցն մերոց ի քրիստոսազօր արքայէն և արքայորդւոյն, որք և առ մեզ գյուսադրական թուղթս էին գրեալ։ Եւ առ օրհնեալ Գէորգին Միրզայն, սիրելին մեր, զգիր սաստիկ հրամանի առաքեալ, առ ի վրէժխնդիր լինիլ ապստամբացն այնոցիկ և զասպատակեցեալսն առնուլ առանց իմիք պակասութեան և մեզ հասուցանել։ Տեսցուք եթէ որպէս է լինելոց բանից վախճանն, գրելոց եմք սրտացաւ զաւակիդ սրբոյ Աթոռոյս։ Այժմ այսքան երկարօրէն գրեցաք, զի մի յայլոց զայլ և այլ լուեալ տրտմիցիս և ի հոգս անկանիցիս՝ ըստ ծնողասէր բարուցդ։

631 Նաև ի կողմանէ Ծ (50) թումանի փոլիցայագրիդ՝ տուեցելոյ Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին, Իսահակ վարդապետն մեր, ըստ հրամանի մերում, զԾ (50) թումանն հատուցեալ էր Սաղիմայ՝ յանձնե-

լով տիրացու Մարգսին և զնոյն փոլիցագիրն զահիրայիւ առեալ և առ մեզ յղեալ։ Զոր և մեք ահա ընդ թղթոյս եդեալ յղեցաք առ քեզ՝ ի միամտութիւն սիրելւոյդ։

Դարձեալ զայս ևս ծանիր։ Զի ի Ղզլար թիֆլիզեցի պարոն Գորկինն զմի տղայ է ազատեալ ի գերութենէ լէզկեաց, որոյ անունն Ներսէս է և ի գիւղէն Կողբայ, հօր անունն՝ Պետրոս՝ մօր անունն՝ Մարգարիտ, հօրեղբօր անունն՝ Յոհան և հօրեղբօրորդւոյ անունն՝ Մովսէս։ Բայց ազատօղ պարոն Գորկինն կարծէ զնմանէ, թէ քրիստոնեայ և որդի քրիստոնէի չէ և այնր պատճառաւ ոչ թողու ի բաց։ Իսկ ծնօղքն նորա և այլք ևս եկեալ աղաչեցին և վկայեցին ըստ այսմ։ Վասն որոյ և մեք քեզ գրեցաք ահա, զի գրեալ ծանուցես յիշեալ պարոն Գէորգինին, զի զկարծիսն ի բաց տարեալ յինքենէ, արձակեսցէ զտղայն առ ի գալ ծընողս իւր և ինքն զփոխանակն բարերութեան իւրոյ ընկալցի զբազում վարձս բարիս յԱստուծոյ։

Ձեռ. № 2803, էջ 629—633

633 948. 1784 թ. 10 հուլիսի—Դարձեալ առ Յովսէփ վարդապետ դէտն Հաշտարխանու, ի պատասխանի յետին երկու թղթոցն։

Յորմէ բազմաւ սիրով և կարօտիւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և հոգենոյնական առատաղեղ օրհնութեամբ, վերստին ծանիր սիրելի և հոգեվոր որդի մեր և շնորհազարդ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածիմաստ վարդապետ։ Զի մինչ գրեալ էաք զմիւս թուղթն և կամէաք առաքել, եկին նախիջևանցի օրհնեալ ուխտաւորքն ի սուրբ Աթոռս, և ունէին ի քէն զերկուս թուղթս, յորոց մինն գրեցեալ էր ի մայիսի ԺԳ (13), իսկ միւսն՝ ի յունիսի Բ (2)։ Զորս ընթերցեալ զգրեալսդ, իմացաք և ծանեաք զկամիլն զքեզ զօրապետին՝ առ ի ընդ իւրն գալ ի պայմանեալ տեղին և տեսանել զօրհնեալ արքայն։ Նաև ծանուցեալ էիր զվերադառնալդ կրկին ի Նախիջևան և զկարգաւորելդ զնոսա և զԿարապետ վարդապետի նուիրակութեան գործն աւարտելն և զնմանէ շնորհակալիդ և զայլս այսպիսիս։ Զորս գիտացեալ մեր և յուխտաւորաց ևս իմացեալ, միամիտ և բերկրասիրտք եղաք։

634 Իսկ ի // կողմանէ Մովսէսի պետին զգրեալդ ևս ծանեաք։ Բարեբարպէս էիր պատասխանի գրեալ նոցա, որում յոյժ հաւանեցաք, նոյնպէս և այլ գրեցելոցդ։ Իսկ զառ Տէր փոխելն լուսահոգի Սիմէօն վարդապետին և զայլ որպէսն կայից նորին ծանուցել էիր, իմացաք, ի հարկէ, ըստ գրեցելոցդ ևս առնելոց և մեզ ծանուցանելոց հարազատ որդիաբար։

Այլև ի յունիսի Բ (2) գրեալ թղթոջդ ծանուցեալ էիր զթուղթ գրելդ առ քրիստոսապսակ Յովսէփ կայսրն՝ վասն Սըրշովու և այլ ընդ իշխանութեամբ նորին եղելոցն։ Զայն ևս իմացեալ, կարի շնորհակալ եղաք զհարազատ և զսրտացաւ որդւոյդ սրբոյ Աթոռոյս, որոյ զսաւտն յղեցես, որպէս խոստանաս։ Իսկ զեղարքունցի Սարգսէն և զՎարդան վարդապետէն զբանս զանգատանաց էիր գրել, գիտացաք։ Լուր առ այն, սիրելիդ մեր, զի որպէս և գիտես, սովորութիւն է սրբոյ Աթոռոյս և մանաւանդ հարկ իսկ է, որ ի հեռաւոր տեղեաց եկօղքն՝ թէ ուխտաւորք իցեն և թէ այլ ոք, թէ ի մէջ եկեղեցւոջ և թէ ի մարմնաւոր սեղանս, ըստ արժանեաց իւրեանց իւրաքանչիւրքն պարտին շահիլ՝ ի պատիւ բարձրութեան անուանն սրբոյ Աթոռոյս, որք երթեալ պատմեսցեն զգերազանցութենէ սորին։ Վասն որոյ ի մէջ եկեղեցւոջ ի յետին դասս

զկարպետ և զխալիչա ինչ ձգեն լուսարարքն վասն նորանկիցն առ ի կանգնիլ և աղօթել, և զաւետարան համբուրել տալ: Նոյնպէս և ի մարմնաւոր սեղանս մի անգամ և երկիցս, ըստ հանդիպմանն, կոչել զնոսա՝ առ ի շահել մարմնաւորս և ըստ նոսա խօսակցիլ և զբանս հարցանել զլաւութենէ և զբարւոք կեցութենէ իշխանաց, ժողովրդոց, առաջնորդաց, նուիրակաց և զայլ այսպիսեաց հասարակ խօսակցութեամբ, զի շահեալք լինիցին և երթեալ պատմեսցեն ի տեղիս իւրեանց՝ առ ի յորդորել և զայլս ի սէր և ի գութ սրբոյ տեղւոյս:

Որպէս և դու, սիրելիդ մեր, վասն եկօղ ուխտաւորաց ոմանց գրես առ ի շահել, ոչ եթէ ներհակ սոցին զամբաստանութիւն ինչ ուսուցանել և տեղի տալ սնոտի և վայրաղօղանչ բանից և զհարազատ զաւակունսն սրբոյ Աթոռոյս վատաբանել և զամբաստանութեան թուղթս խնդրել և լսօղ լինիլ վայրապար խօսից: Ընդ այն յոյժ զարմանամ, թէ զի՞րդ հաւատաս այդպիսի սնոտիապատիր ասութեանց և զայլ կարծիս և միտ բերես: Քանիցս անգամ Կարապետն Սաղիմայ զբէն զամբաստանութիւնս է գրեալ մեզ և մեք չհաւատալով նմա, անպատասխան թողաք
635 զնա այնու դիտմամբ, իբրու թէ գրեանքն առ մեզ ոչ են || հասեալ և քեզ ես ոչ գրեցաք, զի մի սրտնեղութիւն լինիցի քեզ, և այլոց ես ոչ ասացաք: Մի՞թէ յայլոց զբանս ես լուեալ զմէնջ, որ յայդպիսի կարծիս ընթանաս: Ոչ երբէք, և Սարգիսն այն, թէպէտ ըստ հասարակաց շահեցաւ ի մէնջ (և այն ես ի սէր զօրապետին, որ ունէր զթուղթ ի ձեռին ի վերայ խամսաբնակացն), սակայն ոչ է խորհրդակից մեզ, որպէս կարծես, թեև խնքն ընդ վայր պանծացեալ իցէ:

Արդ, զայդպիսի կարծիս զմէնջ մի կարծիցես, սիրելիդ մեր: Մեք Աստուծով հեռի եմք յայդպիսի կարծեաց, զի սիրելի իմ ես յատկապէս և հարազատ և բազմաշխատ զաւակ սրբոյ Աթոռոյս, զոր Տէր զօրացուսցէ և շնորհք սրբոյ քրիստոսափեջի տեղւոյս լիցի քեզ պահապան:

Զայսքանս համառօտ հազիւ ձեռնահաս եղաք գրել վասն ի միում թղթոջդ գրեալ զիպուածոցն մերոց ձախորդականաց և կենամաշից, որովք ահա պաշարեցեալ կամք և ոչ գիտեմք թէ վերջն ո՞ւր եղիցելոց իցէ:

Զի թէպէտ գրես, թէ Քրիստոսի զօրացեալ զօրապետն գալոց է ի վերջին սահմանս Վրաց՝ հանդերձ քև, և օրհնեալ արքայն ես գայցէ անդ առ ի զմիմեանս տեսանել: Բայց ի գալն Մարտիրոս վարդապետին մերոյ, հաւաստի իմացաք, որ զկնի երկուց [աւուրց] մտանելոց էք ի Թիֆլիզ քաղաքդ: Որով երևի, թէ այժմ ի քաղաքոջդ էք: Եթէ զթուղթս որպիսածանոյցս գրեալ իցես, հասանելոց է առ մեզ: Արդ, հայրական սիրով և մեծաւ հարկիւ զայս գրեմ սիրելւոյդ, զի որովհետև մինչև ցայդ վայր եկիք, զխորհուրդ առնելոց էք ընդ օրհնեալ արքային և թէ բանն ո՞ւր եղերիլոց իցէ և կամ ստնաձայն անձրևի՞ է, թէ ոչ, և մանաւանդ օրհնեալ զօրապետն երկար մնալո՞ց է յայդր, թէ շուտով յետս դառնալոց, և զայլ ամենայն խորհրդական որպիսութիւնսն աւուրբ մի յառաջ գրով ծանուցես մեզ, զի գիտասցուք:

Եւ զողորմելի կացութեանց և զնորանոր անբարի դիպուածոց երկիրս ծանուցես օրհնեալ զօրապետին՝ առ ի գիտել զթշուառութիւն կողմանցս և շրջակայիցն առ մեզ մերձ եղելոց, որոց աղագաւ օրհնեալ ուխտաւորքն ոչ կարացին գնալ ի սուրբ Կարապետ: Զի ընդ սիրելւոյն մերոյ՝ Գեօրկին Միրզային խորհրդակցեալ, բարւոք վարկաք զզգնալն

զոցա, քան գնալն և մեծագոյն վնասուց հանդիպիլ: Եւ զայլ որպէսն ի յինքեանց իմանալոց ես:

Եւ դու, սիրելիդ մեր, զպատասխանին սոյն թղթոցս հանդերձ ամենայն պարագայիւք շուտով գրեսցես և զքոյդ յայդր գալոց պատճառն և զի՞նչ ունիլդ ի մտի և կամ զի՞նչ առնելդ ծանուցես մեզ, և մեք իմացեալ զմիտսդ ըստ այնմ գրեսցուք քեզ:

Ողջ լեր ի Տէր:

Ի ՌՄԼԳ (1784) և յուլիսի Ժ (10):

Ձեռ. № 2803, էջ 633—635

636 949. 1784 թ. 16 հուլիսի—Առ Պօլսոյ նուիրակ Իսահակ աստուածաբան վարդապետն:

Յարմէ հայրական սիրով, քրիստոսական սուրբ ողջունիւ, բազմաւ կարօտիւ և հոգևոր օրհնութեամբ և միածնաիջի սրբոյ տեղւոյս յորկարօտիւ և հոգևոր որդի մեր, հարազատ բազմաջնորհին ծանիր, սիրելի և հոգևոր որդի մեր, հարազատ բազմաշխատ և շնորհածին զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդապետ: Զի ի յունիսի ԺԷ (17) ընդ օրհնեալ ուխտաւորացն զթուղթ երկտառ էջցաք առ քեզ և ի նմա մասամբ իւիք զնորապատահ անցսն երկրիս՝ թէ զսպանումն խանին և եղբօրն, թէ զնստուցանելն Մահմատ խանի՝ թէ զսպանումն խանին և եղբօրն, թէ զվրդովմունսն պատանւոյն, թէ զխռովութիւնն երկրականացս, և թէ զվրդովմունսն տեղականացս, և զանաւեր վնասակրութիւնսն սոցին գրեցաք, զորոց մինչև ցարդ իմացեալ ես և կամ իմանալոց իսկ ես: Զի մինչև ցայն վայրն (որպէս և գրեալ եմք) զեռ սուրբ Աթոռս զգլխաւոր վնաս ինչ ոչ էր կրեալ: Իսկ զկնի 5 աւուրց, յաւուր շաբաթու (տե՛ս ի վերոյ ի 632 երեսն թղթոյս և սկսեալ զոր օրն գրեա մինչև ցաւարտն, որ եղերի այս բառ՝ ծնողաւէր բարուցդ):

Արդ, այժմ ըստ հարկին պահանջման հարկաւորապէս զայս գրեմ քեզ: Զի մեք թէ յորպիսի՞ հոգոց և տառապանաց միջի կամք ի ձեռս կեղերիչ և խորամանկ պարսից, որք ոչ տան թոյլ առ ի բանալ զաչս մեր (զոր ինքնին գիտես լաւապէս): Իսկ ի մերազնէից ոմանց քաղցեալ գայլոց ես զխոցոտիչ և զվիրաւորիչ թուղթս ընկալն[ե]լով, իսպառ կենամաշ լինիմք: Յարոց մի է զարսեցի Աբրահամն, որ այժմ ի Կարին բնակի: Սա բազմիցս գրէ և գրէ մեզ ասելով, թէ Քիւթուր կոչեցեալ լուսահոգի Պետրոս կաթուղիկոսին ապրանք էր տուեալ էՌ (7000) զուրուշի և սանտտ առեալ: Ի լուսահոգի Ղազար հոգևոր տէրէն խնդրեցի, ոչ ետ: Իսկ ի ժամանակի լուսահոգի Մինաս հոգևոր, տէրին եկեալ խնդրեցի ի նմանէ: Նա մէկ հարիւր թումանի բամբակ ետ և զսանատն էառ յինէն և խոստացաւ զմնացեալն ես յետոյ տալ:

Եւ զայլ ասութիւնսն սոյն Աբրահամիս ի յիւր թղթոյն իմանալոց ես, զոր ահա յղեցի առ քեզ: Իսկ լուսահոգի Մինաս սրբազանն յիւր ձեռագիր դաւթարոջն այսպէս գրէ յանուանէ, թէ Քիւթուրն փլանին փլանին պարտք ունէր տալոյ. պարտքն ետուք և զսանատն առաք, և ի շարս սոցին գրէ ես յատկապէս, թէ զփանցի Պապի որդի Աբրահամին տասոցին գրէ ես յատկապէս, թէ զփանցի Պապի որդի Աբրահամին տալիք ունէր, զպարտքն տուաք և զսանատն առաք: Զորպիսութենէն սոյն դաւթարիս դու, սիրելի որդիդ մեր, ես լաւապէս տեղեակ ես և գիտես: Արդ, մտածեա և տես, թէ որպիսի՞ խղճմտանաց տէր է այրս այս, որ զկնի անցման չորից կապարտսն իւր առեալ է և զսանատն տուեալ, և զկնի անցման չորից կաթուղիկոսաց և ԼԳ (33) ամաց, վերստին զնոյն առնելն ի սրբոյ Աթոռոյս պահանջէ, որ է յայտնապէս զրպարտութիւն և շառաթութիւն:

Այս այսպէս, իսկ երկրորդն է՝ զի ի ներկայումս ի Կարնոյ, ձեռամբ յատուկ փայեկի, Գասպար անուամբ այր ումն, առ մեզ զգիր էր առաքեալ, յորում գրեալ էր, թէ.

«Ես Մինաս կաթուղիկոսի եղբայր տէր Կարապետի որդին եմ։
637 Հայրս Ըստամբօլ ինձի գրեր էր, թէ // եղբարս մեռաւ, ապրանքն հոն սուրբ էջմիածին մնաց։ Գնացի չեխյիսլամէն ֆէթֆայ առի, որ ինչ ապրանք որ ունի, մեր է։ Ֆէթֆան տարի վէզիրին, ֆէրման արաւ խափուճիբաշի՝ թային արաւ մալն թախսիլ։ Յետոյ սառաֆներն իմացեր են, ծառայդ՝ Գասպարս կոչեցին լօնճան, իրիճայ արին, ֆէրմանն ֆէթվան առին, ամանաթ գրին, ինձ ուղարկեցին յէրզրում՝ թէ գնայ հալդ հոգևոր տիրին արզ արա, որ Մինաս կաթուղիկոսի մալն քեզ թէսլիմ չանէ, եկ Ստամբօլ՝ խափուճիբաշին ֆէրմանովն մալիդ թասխիլ։ Ես ալ ամիրաներուն խօսքովն եկայ»։

Եւ զայլ այսպիսիս գրեալ էր, որոյ զգիրն ես ահա յղեցի առ քեզ, զի զլիովինն գիտասցես։

Արդ, սիրելի որդեակդ մեր, տես դու և զարմացիր, թէ ի յորպիսի՞ ժամանակս և ի կացութիւնս եմք հասեալ, և սուրբ Աթոռս և երկիրս մեր ի յորպիսի՞ անգրելի նեղութեան և տառապելութեան միջի կան, և մեք ես թէ յի՞նչ ցաւս և ի կենամաշ հոգս և ի վիշտս մաշիմք առանց իմիք օգնականի յայս անմխիթար վայրոջս, ամենեցունց է յայտնի։ Եւ փոխանակ մխիթարութեամբ և սփոփանաց, ներհակաբար յանխիղճ մերաղնէից ոմանց զանլուր և զչեղեալ բանս լսեմք ի կրկին վիրաւորութիւն մեզ և այս վասն անբախտութեան մերոյ, որ ի ժամանակս մեր պատահին։

Եթէ թոյլատրիցի այսպիսեաց խաբեբայից և զաւ առողաց, և ոչ սաստիցեն և ըմբերանիցեն, ի հարկէ այսպիսիքդ օր ըստ օրէ բազմանալոց են և սուրբ Աթոռս ի վերջին թշուառութիւն է հասանելոց։ Վասն որոյ մեծաւ հարկիւ զայս պատուիրեմ քեզ, պարտիս զայս թուղթս յարգելի եղբօր մերոյ և շնորհածնի զաւակին սրբոյ գահիս՝ պատրիարք վարդապետին ցուցանել և առաջի ազատազարմ և բարեպաշտ, և սրբոյ Աթոռոյս հարազատ և հաւատարիմ, օգտաջան և սրտացաւ զաւակացն ի Քրիստոս զօրացեալ և ի նոյն պաշտպանեցեալ զլխաւոր օրհնեալ իշխանապետաց և իշխանաց ընթեռնուցուս, զի ծանիցեն և զիրաւունս արացեն և այսպիսեաց ծնօղատեաց արանց սաստեսցեն՝ վասն սիրոյ սրբոյ ծնողիս իւրեանց մեծի Աթոռոյս։ Եւ մեզ սրտազիւրիչ և մխիթարիչ լիցին յամենայնի կողմանց և դու, ի ծանուցանելդ զայսոսիկ պատրիարքին և օրհնեալ իշխանացն և զնոցին զի՞նչ ասելն և առնելն, և զորպիսաբար պատասխանելն ամենայն պարագայիւք, շուտով գրեսցես մեզ։

Այլև զխնդրեալ գրեանսդ ահա գրեալ յղեցաք, որք են այսոքիկ.

Բ (2) կոնդակ օրհնութեան, մինն՝ առ օրթայ գիւղի եկեղեցին և միւսն՝ ի վերայ համայն ասնաֆին սափրչաց։

Ե (5) թուղթք օրհնութեան, որոց Ա (1)-ն առ զիւլպէտչի պարոն Դանիէլն, Ա (1)-ն առ Աղամալի եղբայր պարոն Մկրտիչն, Ա (1)-ն առ նոր գանձապետ մահտեսի Իգնատիոսն, Ա (1)-ն առ Սամաթիոյ գանձապետ մահտեսի Սահակի որդիսն և մէկն առ Միքայէլ ամիրայն։ Որք են ընդամէնն է (7) հատ։

Իսկ Գալուստ վարդապետի խնդրեալ գրանսն ի ձեռի էր, զոմանս գրեալ էին և զմնացեալն ես գրեն ահա, ի յաւարտիլն, զկնի քանի մի աւուրց, յղելոց եմ։ Այժմ վասն վերոյ գրեալ վրդովմանցն անձեռնահաս եղաք յղել։ Այսպէս ծանո նմա, զի լիցի միամիտ, և լեր ողջ ի Տէր՝ անպակաս առնելով զորպիսածանոյց թուղթդ։

Գրեցաւ 1233 (1784) ի յուլիսի 16։

Ձեռ. № 2803, էջ 636—638

638 **950. 1784 թ. 17 հուլիսի—Առ տէր Վահանն և Սահակ աղայն, որք ի Բայազիտ, վասն զտիրացու Անանիայն ի սուրբ Աթոռս յղելոյ։**

Յորմէ յատուկ սիրով և կարօտիւ, քրիստոսական ողջունիւ և օրհնութեամբ և միածնաիջի սրբոյ տեղւոյս յորդաբուղխ շնորհիւն, ծաներուք սիրելիդ մեր և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս՝ տէր Վահան խոհեմ քահանայ և Քրիստոսիւ զօրացեալ բարեպաշտօն և մեծահաւատ օրհնեալ Սահակ աղայ։ Զի զվրդովմունսն և զանբարի գիպուածն խղճալի երկրիս մերոյ և մեր, ի հարկէ, լուեալ իսկ էք, զորոց ոչ երկարեմք, այժմ գեռես չիք խաղաղութիւն, Տէր այց արասցէ։ Իսկ զկսկծալի գիպուածն վանիցն սրբոյ Կարապետի, որ ի Մուշ, ներկայապէս լուեալ մեր, կարի տրտմեցաք և վասն մեղաց մերոց լեալ համարեցաք։ Զի որդեակն մեր՝ տիրացու Անանիայն, որ գնացեալ էր անդ յուխտ, անտի դարձեալ եկեալ է ի յՈւչքիլիսա առ Մկրտիչ վարդապետն, որք և փայեկաւ ծանուցեալ էին մեզ։ Եւ գրեցաք, զի գայցէ անտի ի Ջանկազօռ և անտի առ ձեզ, և դուք յղիցէք հաւատարմաւ ի սուրբ Աթոռս։ Վասն որոյ զայս գրեմ սիրելեացդ մերոց, որոյ ի գալն յայդր և առ ձեզ հանդերձ ընկերօքն (զյանկարծահաս և զտրտմալի գիպուածն սրբոյ Կարապետի վանիցն, որ ի կողմանէ շարժից, ի նմանէ իմանալոց էք, ի հարկէ, և տրտմելոց, որում Տէր ողորմեսցի ըստ մեծի ողորմութեամբ իւրում և կրկին զշինութիւն և պայծառութիւն տացէ)։ Մերս խաթերն պարտիք ընդ հաւատարիմ եկողի զտիրացու Անանիա հոգևոր որդեակն մեր ընդ ընկերացն ուղևորել ի սուրբ Աթոռս, զի մի վնաս ինչ պատահիցի ի ճանապարհին։

Բայց զայս սիրով պատուիրեմ սիրելեացդ և մանաւանդ յատկապէս քեզ՝ ի Քրիստոս զօրացեալ Սահակ ազնիւ աղայից, զի ըստ խոհեմութեան ձերում, որպէս և դուք կամիցիք և պատշաճ տեսանիցէք, թէ ընդ հայ մարդկանց լինիցի և թէ ընդ տաճկաց, որպէս և իցէ, պարտիք շուտով զորդեակ մեր յղել առ մեզ՝ առանց իմիք վնասակրութեան ճանապարհացն, զի մի ձախորդութիւն և վնաս ինչ հանդիպիցի ի սրիկայից, զորոց կարի շնորհակալ լինելոց եմք։ Եւ այսպէս գիտեցեալ, լերուք ողջք և զօրացեալք ի Տէր։

Ի ՌՄԼԳ (1784) ի յուլիսի 17։

Այսքանս ևս գրեցաւ ի թղթոջ Սահակ պետին և նուիր[ակին] Պօլ[սոյ]։

Այլև՝ գանձակեցի տիրացու Գասպարի որդի սափրիչ Գրիգորն, որ ի Ղումղափու, առ մեզ զթուղթ էր գրեալ ընդ ուխտաւորաց, որպէս թէ ինքն է լեալ գանձապետ և հաստատող գանձանակին սափրչացն Ղումղափուի։ Ի ժամանակս Մինաս վարդապետին՝ ի ՌՄԼ (1781) թուին Ժ (10) ղուռուշ գանձանակադրամ է տուեալ Մինաս վարդապետին և նա կոնդակ է խնդրեալ ի մէնջ, բայց սխալմամբ ի տեղի Գրիգոր գրելոյն, Եղիայ էր գրեալ։ Վասն որոյ զնմանէ զտրտունջ էր գրեալ։ Եւ մեք ահա զթուղթ մի սիրոյ գրեցաք առ գանձապետ Գրիգորն՝ առ ի շահել, զոր բաց յղեցաք ահա առ քեզ, դու ընթերցեալ, իւրեան տացես։ Եթէ հարկաւորիցի նորապէս զկոնդակ գրելն, իմաց մեզ արասցես, զի գրեսցուք։

639 Եւ զայս առանձին ծանիր, սիրելի որդի մեր՝ Իսահակ աստուածիմաստ վարդապետ։ Զի վասն փոլիցայիցդ, որ ի ներկայումս 3000 ղուռուշ Հասուցեալ էիր Գորոյեան մահտեսի Խաչատուրի մարդոյն, 2000 ղուռուշ անապատցի պարոն Մօսէսի մարդոյն և 1000 ղուռուշ Հաճի Բաբայի մարդոյն, որոց ջամն է 7000 ղուռուշ, զորս ամբողջապէս պարոն Հայրապետ վէքիլն մեր ի Կարին ի վերոյ յիշեալ սիրելեացն մերոց առեալ էր և մեզ ծանուցեալ և զղապզ խնդրեալ ի մէնջ։ Եւ մեք աՀա, վասն զբաղանաց մերոց, զղապզն յատուկ չգրեցաք, այլ ի միասին 7000 ղուռուշի ղապզ մի գրեալ յղեցաք առ պարոն Հայրապետն, որ Հասանելոց է առ քեզ և իմանալոց իսկ ես։

Դարձեալ սակս կարնաբնակ ղարսեցի Աբրահամի դաւոյն գրեցաք ի Հասարակ թղթոջդ, թէ լուսաՀոգի Մինաս կաթուղիկոսի ձեռագիր դաւթարոջն այսպէս է գրեցեալ։ Դու ևս գիտես, զի մեր լուսաՀոգին զնորին դաւթարն պատառեալ էր և մնացեալ էր այն մէկ թուղթն, զոր տեսեալ ես։ Զայն Ա (1) թուղթն աՀա եդեալ ի մէջ թղթոյս, յղեցաք առ քեզ՝ այսու մտօք, որպէս թէ ի բուն դաւթարոյ նորին այժմ նորապէս եմք Հանեալ և յղեալ առ ի ցուցանել յայլդ։ Բայց թուի թէ պատրիարքն այն Աբրահամի կողմն է և այս կարծեօք և ոչ Հաւաստեաւ։ Թէև իցէ ևս, բայց անՀնարին կարծեմք թողուլ նմա զկողմն շնորՀատու ծնողին իւրոյ սրբոյ Աթոռոյս և զվնասն կամիլ։ Որպէս Հոգւով և մարմնով կուրացեալ ծնօղատեաց Յովաննէս պետն պնդացի, ի գնալն աստի ի Կարին, անդ ի սախպմամբ նոյն Աբրահամին առ մերայինսն զթուղթս է գրեալ և տուեալ ի ձեռն նորին, որպէս թէ ինքն տեղեակ և վկայ է բանին, որ Մինաս կաթուղիկոսն ըստ մասին տուեալ է և խոստացեալ զմնացեալն ևս տալ, որոց զօրինակն աՀա եդեալ ի թղթոջդ յղեցաք առ քեզ, եթէ զի՞նչ է գրեալ, իմանալոց ես։ Թէպէտ զայն գրեանսն մերայինքն առին, բայց թուի, թէ զսաւատոն նոցին վերառեալ իցեն։ Ինչ և իցէ, զայս դէպ է ասել այդ Հոգւով և մարմնով կուրիդ, թէ ի ժամանակի լուսաՀոգի Քիթուրին դու զի՞նչ լիր և ո՞ւր և կամ քեզ զի՞ փոյթ էր խաբեբայից և վնասակամիցն սրբոյ Աթոռոյս վկայ լինիլ և այլն։ Եւ այն Աբրահամի աններձադ Բաղտեան Ստեփանն, որ յայգր է, նա ևս գրեալ էր մեզ զթուղթ ի կողմանէ Աբրահամին և ջատագով լեալ, որպէս թէ զբան ինչ տացուք, մեք զպատասխանի չգրեցաք նմա։ ԱՀա քեզ ծանուցի, զի գիտասցես, թէ նա ևս ի կողմն նորին է և ջատագով նմա։

Դարձեալ սակս այն Գասպար առնն, զոր ի Հասարակ թղթոջդ գրեալ եմք ծանուցանել պատրիարքին և իշխանապետացն և զթուղթն զայն ընթեռնուլ առաջի նոցա, բայց յատկապէս զայս պատուիրեմ. նախապէս պարտիս առանձին ծանուցանել զայսոսիկ ի Քրիստոս զօրացեալ և ի նոյն պաՀպանեցեալ յատկեղ սիրելեացն մերոց և սրտացաւ Հարազատ և օգտաջան զաւակացն սրբոյ Աթոռոյս՝ մաՀտեսի Յարութիւն օրՀնեալ ամիրային և տիրացու պարոն Գէորգին, և ընդ նոսին խորՀրդակցիլ ի միասին և Հարցանել զնոսա զկերպն բանիցս այսոցիկ և Հետազօտիլ առ ի գիտել, եթէ ի՛ յամիրայից ո՞վք են, որ այն Գասպարի անօրինակ և անլուր բանիցն և անօգուտ դաւոյն տեղեակ են։ Կամ թէ իզուր է, ոչ որ է տեղեակ և կամ թէ զդաւ առնողացդ լռեցուցանելոյ Հնարն զի՞նչ է։ Եւ կամին զբան ինչ տալ, եթէ ոչ զի՞նչ և ասասցեն և կամիցին և զոր ինչ օգուտ իմասցեն, գրեալ ծանուսցես մեզ առանձին։

Նաև սակս լուսաՀոգի մաՀտեսի Թումանին և Թէրզիզատէ Յովանիսին և զայլ Հարկաւոր բանս, զորս յառաջ գրեալ եմք քեզ, ի Հարկէ, մինչև ցարդ Հասեալ են առ քեզ և իմացեալ իսկ ես, որոց որպէ՞ս և զի՞նչ առնելդ և որպիսարա՞ր Հոգալդ պարագայքիք գրեցես մեզ։

Այլև, զվարպետ Յովնաթանն բերեալ եմք առ ի ծաղկել զաստուածակերտ տաճարս։ Թէպէտ ի Զմիւռնոյ զկեզորայս բերել ետուք (որպէս և գիտես), բայց այնք ոչ են բաւական։ Վասն որոյ զդաւթար մի գրեալ
640 եդաք ի մէջ թղթոյս, որոյ ի || Հասանիլն, զոր ինչ ի նմա գրեալ եմք, պարտիս ձեռամբ բաջահմուտ ճանաչող և Հաւատարիմ վարպետի առնուլ և շուտով ընդ մանզիլի Հասուցանել ի Կարին, զի մի Յովնաթանն պարապ մնասցէ վասն պակասութեան զեղորէից։ Ուրեմն ջանասցես շուտով Հոգալ և Հասուցանել առ պարոն Հայրապետն, որ նա Հասուսցէ առ մեզ։ Եւ թէ որպէս գեղեցկազարդ ծաղկումս ոսկեզօծս յօրինէ ի Աստուծով գալց և ի տեսանելդ, ուրախանալոց ես։

Կրկին ողջ լեր ի Տէր։

Ձեռ. № 2803, էջ 638—640

951. 1784 թ. հուլիս—Ցավակցական նամակ Թիֆլիսում էջմիածնի վանքի գործակալ Սահակ քահանային՝ նրա հորեղբայր և աթոռակից Սահակ քահանայի մահվան կապակցությամբ։ Հայտնվում է, որ նա նշանակված է ավագ քահանա և գործակալ։ Միաժամանակ հանձնարարվում է սիրով և խաղաղությամբ վարվել Սուլխան Դիվանու հոր, Սոմխեթի ճիլիչ գյուղացի՝ Խելթուբայում բնակվող տեր Մովսես քահանայի և կաթողիկոսությունից դարձի եկած պարոն Ստեփանի հետ։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 34ա, էջ 1—2
(սևագրություն առանձին թղթի վրա)

952. 1784 թ. հուլիս—Շնորհակալական նամակ Կ. Պոլիս Զարսու թաղամասի հայ սափրիչների ասնաֆին (համքարությանը), որի անդամները նվիրակ Իսահակ վարդապետի հորդորմամբ էջմիածնի անվամբ գանձարկղ էին հիմնել և հավաքված գումարի առաջին նվագը՝ 10 ղուռուշը հանձնել նվիրակին։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 34ա, էջ 3—4
(սևագրություն առանձին թղթի վրա)

953. [1784 թ. հուլիս]—Շնորհակալական նամակ էջմիածնի գանձապետ Գրիգորին՝ Կ. Պոլսի Ղումղափու թաղամասի հայ սափրիչների մեջ էջմիածնի անվան գանձարկղ հիմնելու և առաջին նվագ գումարը՝ 10 ղուռուշը նվիրակ Մինաս վարդապետի միջոցով էջմիածին ուղարկելու համար։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 34ա, էջ 4
(սևագրություն առանձին թղթի վրա)

1784 թ. 16 հուլիսի—Թուղթք ի մեծն Պոլիս

954. Կոնդակ մի օրհնութեան առ Օրթագիւղի եկեղեցին վասն միոյ տարւոյ ԱՃԼԳ (133) ղուռուշ ԻԱ (21) փարայ գանձանակին, որ գանձապետ Արսէնն մեռեալ է և նորին եղբայր մահտեսի Իգնատիոսն զվերոյ գրեալ դրամն տուեալ է նուիրակին, և զնուիրակն զնա գանձապետ է կարգեալ։

955. Թուղթ մի ևս օրհնութեան առ Սամաթիոյ գանձապետ մահտեսի Սահակի որդիքն՝ մահտեսի Խաչիկն և մահտեսի Յովհաննէսն. նախ մխիթարութիւն վասն հօրն իւրեանց մահտեսի Սահակին և հօրեղբօրն իւրեանց՝ մահտեսի Թումային նորոգ հանգուցելոյ, ապա՝ շնորհակալութիւն վասն ԻԱ (21) ղուռուշ ժամուցին և Ա (1) արծաթեայ գօտոյն և վասն գանձանակին սակաւ պտուղէր։

956. Կոնդակ մի ևս ի վերայ համայն օրհնեալ էսնաֆին սափրչաց, որք կան ի բոլոր Զարսուն աստուածախնամ մեծ մայրաքաղաքին

Կոստանդնուպօլսոյ։ Նախ՝ շնորհակալութիւն վասն առնելոյ Ժ (10) ղուռուշին, և ես՝ շնորհակալութիւն, որ զգանձանակն ի բոլոր Զարասն սահմանեալ են, և յարգարումն ևս ի հաստատուն պահելոյ։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 16—17

1784 թ. 22 հուլիսի—*Թուղթք ի Ղարս և այլ տեղիս*

957. Թուղթ մի տաճկերէն առ Սուլէյման փաշայն, յորում գրեցաւ սակս որպիսութեանց երկրիս։ Յղեցաւ ընդ թաթարի ուրումն։

958. Թուղթ մի ևս առ Ղարսայ փաշայն, յորում ևս գրեցաւ որպիսութիւն երկրիս, սա ևս յղեցաւ ընդ թաթարի ուրումն։

959. Թուղթ մի առ պարոն Գէորգն։

Գրեցան ամսոյս ԻԹ (29)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 18

1784 թ. 31 հուլիսի—*Թուղթք ի երկիրն Ռուսաց*

960. Թուղթ մի առ զօրապետն Ռուսաց Պաւլ Սարգէվիչ Պոտէմկինն, օրհնութիւն և շնորհակալութիւն սակս յղեալ ընծային իւրոյ՝ ձեռամբ Գաբրիէլին։

961. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Չէրքէզ, ի յԱպաղէք, ի Գէմտկոյի, ի Պղատէլ, ի Հայթօխօյի, ի Պէսնի, ի Շապսղն, և այլ շրջակայս նոցին սակս տուեալ նուիրակական արդեանցն իւրեանց։

962. Թուղթ մի օրհնութեան և շնորհակալութեան առ տօքտօր Եակոբն սակս մշտահարապատութեանն իւրոյ, որ առ սուրբ Աթոռս աստուածաէջ։

963. Թուղթ մի օրհնութեան առ պարոն Ալէքսանն և առ Սահակջանն սակս տուեալ յիշատակին իւրեանց՝ դիպայ շուրջառին։

964. Թուղթ մի օրհնութեան և սիրոյ առ Մանուչարեան չորեսին եղբարսն՝ պարոն Մարգարն, պարոն Փիլիպպոսն, պարոն Մկրտիչն, և պարոն Յովհաննէսն, ի հաստատութիւն նոցին աղնուական գոլոյն։

Գրեցան ամսոյս ելն։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 18

640 965. 1784 թ. 1 օգոստոսի—*Առ Յովսէփ վարդապետ առաջնորդն Հաշտարխանու, ի պատասխանի ի յունիսի 30 և ի յուլիսի 6 գրեալ թղթոյն իւրոյ։*

Յորմէ հայրական ստոյգ սիրով, բաղձալի կարօտիւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և նոյնական հոգևոր օրհնութեամբ հանդերձ աստուածաիջի սրբոյ տեղւոյս զօրացուցիչ շնորհիւն, ծանիր սիրելի որդի մեր, հարազատ, բազմաշխատ և շնորհածին զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածաբան վարդապետ։ Զի ի յունիսի Լ (30) և ի յուլիսի Զ (6) գրեալ երկոքին թուղթքն հասին առ մեզ ի նոյն յուլիսի 22, ձեռամբ սիրելւոյ որդւոյն մերոյ՝ պարոն Գաբրիէլին, զորս ընթերցեալ զամենայն գրեալսդ, որ ի նոսա, իմացաք։ Յորս ծանուցեալ էիր, թէ արքայի և զօրապետի զմիմեանս տեսանելն մնաց ի յուլիսի վերջն։ Նաև զանմխիթարութիւն տեղւոյդ և զմիտս ունելոյդ առ ի վերադառնալ ի Ղզլար մինչև

ցգալուստն արքայի և ձեր ընդ յառաջ ելանելն, և թէ յամեսցի արքայն անդ, նուիրակելոյ զկամս ունիլդ և զքահանայ առաքելդ ի Չարքէզ և անտի արդեամբք առ քեզ վերադառնալն նորին։ Եւ վասն Չէրքէզու և այլ գիւղօրէիցն զյատուկ կոնդակ խնդրելդ և արքայադնէից ուղևորիլն ի դուռն մեծի կայսեր, զորս իմացաք մի ըստ միոջէ։ Իսկ դու զկորուստն խենէշ իշխողին տեղւոյս և զյաջորդելն միւսոյն թէպէտ իմացեալ էիր, բայց մեք զայն ամենայն, հանդերձ այլ նորապատահ դիպուածովք մերով ի յուլիսի ամսոյն երկու թղթովք ծանուցաք քեզ պարագայիւք։ Կարծէաք յայնժամ զքէն, թէ ընդ զօրապետին եկեալ լինիցիս ի Թիֆլիզ։ Այլ այժմ ահա զնորապէս խնդրեալ գրեանսդ, այսինքն՝ զկոնդակն Չէրքէզու և շրջակայ գիւղօրէիցն, Ալէքսանի, Սահակջանի օրհնութեան և շնորհակալութեան թուղթն վասն շուրջառին, նաև զազնուականութեան վկայական թուղթն, որ առ Մանուչարեան պարոն Մարգարն և եղբարսն, գրեալ յղեցաք ընդ թղթոյս։ Այլև՝ ձեռամբ վերոյ յիշեալ նոյն Գաբրիէլին զթուղթն զօրապետի, որ էր պատասխանի թղթոյն մերոյ և զազնիւ ընծայն նորին, որպէս և գիտես, սիրով բազմաւ ընկալեալ և մեծապէս գոհունակ եղեալ, շնորհակալեցաք զնմանէ։ Եւ զթուղթ մի սիրոյ, օրհնութեան և շնորհակալութեան (ըստ գրեցելոյդ), համառօտ գրեցաք առ նա։ Յորում էին շնորհակալութիւն վասն ընծային, աղերս վասն զյառաջագրութիւնս փութացուցանելոյ և սակս քոյդ յանձնարարութիւն։ Որոյ օրինակն ահա առ քեզ յղեցաք, զի ծանիցես զգրեալսն մեր։ Իսկ և գրեալ էիր, թէ զօրապետն հարկեաց ինձ գրել սրբութեան ձերում, որպէս զի առ կայսերական մեծութիւնն թուղթ գրեցի, ըստ մտաց պայծառափայլ բնէագի գրոյն, և առ նա ևս գրել վերստին զյատուկ թուղթ
641 *ըստ առաջնոյ գիտմանցն և այլն։ Լաւ էր առ այդ սիրելիդ մեր։ // Զի վասն քանի մի պատճառաց զայն երկու թուղթսն չկարացաք այժմ գրել։ Նախ (ըստ գրեցելոյդ) զօրապետն որովհետև զմեր առ ինքն գրեալ թուղթն ընդ թղթոյ բարձրապատիւ բնէագին յղեալ է առ նա, վասն որոյ ակն ունիմք առ ի ընկալնուլ ի նմանէ զպատասխանին։ Վասն զի ի թղթոջն մերում, որ առ մեծութիւն նորին, զաղերս, զխնդիրս և զգթաշարժական բանս էաք գրեալ, որպէս և գիտես։ Եթէ զնոյնս վերստին գրիցէաք, գուցէ գլխացաւութիւն լինիցէր մեծութեան նորին։ Երկրորդ պատճառն է, զի ի կողմանէ Սրճովլու, որպէս և յառաջագոյն զկոնդակ և զթուղթս գրեցաք և զչուղայեցի լուսահոգի Ստեփաննոս վարդապետն առաջնորդ կարգեցաք յայնժամ, որպէս և դու ևս այսպէս ի թղթոջդ յիշումն էիր արարեալ մեզ։ Բայց ոչ յաջողեաց Տէր։ Իսկ ի կողմանէ նոյն Սրճովլու Սահակ վարդապետն քեզ նոյնպէս, և մեզ էր գրեալ։ Բայց զայս ևս էր լուեալ նորապէս և մեզ գրեալ, թէ վասն այն են արգելեալ անդ մտանելն կարգաւորի, որպէս զի որքան ծեր և բանագէտ մարդիք գոն, վերջացեալ են և որդիք նոցին զՀայոց կարգաւոր և վարդապետ չտեսեալ, խոտորեցին ի կրօնս իւրեանց և այլն։ Իսկ այժմ դու գրես, թէ մինչ լուայ զմահն Ստեփան վարդապետին, զիմ գիրն արգելի, որոյ զաւատն ես ոչ էիր յղեալ առ մեզ։ Վասն որոյ թէ զքոյդ գրեցելոյն և թէ Սահակ վարդապետի, յայս կողմանցս անկարելի երևի անդ մարդ գնալն ի ներկայումս։ Ուրեմն թէ՛ մարդ և թէ՛ թուղթ ի վերայ յայդ կողմանցդ պարտի գնալ։ Մանաւանդ քոյդ ձեռամբ լինիլն բարւոք երևի։ Վասն որոյ դայսոսիկ գրեալ ծանուցի քեզ, որ յիրաւի չէ զանցանելի։ Ուստի հարկաւորիմք զթուղթ գրել առ Յովսէփ կայսրն, ըստ յառաջագոյն գրեցելոյ սիրելւոյն*

մերոյ՝ պարոն Մարգարին Մանուչարեան, որպէս և գիտես։ Բայց զկնի
գրեցման թղթոյ մեծի կայսերն ո՞չ ես պատշաճի գրել զթուղթ և կամ
արդեօք ի թուղթս օգոստափառ և գերաբարձր մեծի կայսերուհւոյն և
փառաւորդ քնէազ մեծի իշխանին, պատշաճի՞ յայսմ կողմանէ զաղերս
ինչ գրելն, թէ՞ ոչ (որոց աղագաւ առ որս այժմ զթուղթս գրելն արգելաք)
և կամ զթուղթն, զոր առաքելոց եմք առ Յովսէփ կայսրն, ձեռամբ
կարգաւորի պատշաճի՞, թէ՞ աշխարհականի, և կամ թէ միայն ձեռամբ
դեսպանի նորին, որ ի Պետր[բ]ուրգ ի ձեռն հոգացողութեան մեր պա-
րոն Մարգարին զայսոսիկ և զայլ սոյնպիսիս պարտիս լաւապէս խորհիլ
և մտածել, և ընդ յայդ կողմունս զտանելեալ հարազատաց և օգտա-
կամիցն մերոց խորհրդակցիլ, և պարագայիւք զամենայն որպիսու-
թիւնսն մեզ ծանուցանել, որ զկնի մերս դիտմանց սեպհականաց և հար-
կաւորաց, և զքոյդ գրեցեալն գիտասցուք։ Այլև դու՝ սիրելիդ մեր, գրես,
թէ եթէ հաճեսցիս կայսերական թուղթն, զոր գրելոց ես, ես ինքնին
տարեալ մատուցից, զի միանգամայն որ ինչ լինելոց է, լինիցի և
այլն։ Զմիանգամայն լինելոցն, զոր գրես, չիմացաք թէ որո՞յ աղագաւ
է։ Եթէ զոգին մեծութեան ազգաօգուտ առաջադրութենէն ասես, այն
առանց քոյդ գնալոյն ևս լինի, եթէ առոյգ լինելոց է։ Վասն զի հան-
642 ճարեղ // զօրապետն յայդր է և թղթոց երթևեկութիւնն ևս անպակաս,
եթէ նուիրակական գործոյդ աղագաւ է, ըստ գրեցելոյդ, զոր գրես, թէ
պարոն Մարգարն այսրան նուիրակութիւն ետ, ի հարկէ զամենեցունց
նուիրակութիւնն ես առեալ։ Իսկ եթէ զայլ օգտաւէտ միտս ունիս, զայն
չէիր ծանուցեալ մեզ պարզապէս։ Վասն այնորիկ զխնդրեալ թուղթդ,
որ առ աղնիւ Յովաննէս աղայն և առ այլս, չգրեցաք այժմ։ Իսկ առ պա-
րոն Մարգարն, թէպէտ զվկայութիւն աղնուականութեան գրեցաք ըստ
խնդրոյդ, սակայն վասն պատուական արծուոյն վերստին զշնորհակա-
լութիւն ինչ ոչ գրեցաք, որովհետև յառաջագոյն գրեալ եմք։ Եւ սակս
նուիրակութիւն տալոյն ևս ոչ գրեցաք, զի ըստ գրեցելոյդ զթղթոյ թիւ
յառաջին ամին մերոյ եղաք։ Վասն որոյ անյարմար իմն լինէր գրելն։

Նաև ի կողմանէ աբեղայի, զոր խնդրես, այսպէս իմա։ Զի ի ներկա-
յումս տեղւոյդ պատշաճ այնպիսի որ ոչ գտանի, յետոյ եթէ լինիցի,
յայնժամ տեսցուք։ Իսկ վասն Վարդան վարդապետին, զոր ինչ գրեալ
էիր, իմացաք։ Զի դու յառաջագոյն գրեալ էիր, որպէսզի նա զթուղթ
գրեսցէ առ փոխառուսն և մեք կոչեալ առ մեզ պատուիրեսցաք զթուղթ
գրել, սակայն հարկիւ զգուշացուցաք զնա, որ ի թուղթս իւր զանյար-
մար և զանչահ բան ինչ մի՛ գրիցէ։ Եւ ինքն ես յանձն էառ երդմամբ։
Իսկ այժմ դու, որ այդպէս գրես, կարի զարմացաք։ Եւ ինքն ոչ էր աստ,
եթէ հարցեալ և տեղեկացեալ էաք, այլ յղեալ էաք ի յՕղվարդ գիւղն
մուլքանաչի. ի գալն տեղեկանալոց եմք զնմանէ և զգուշացուցանելոց
սաստիւ, եթէ իրաւի է։

Իսկ վասն գեղարքունցի Սարգսին յառաջագոյն եմք գրեալ քեզ
անտի իմանալոց ես և միամտելոց (ի ՌՄԼԳ (1784) և յուլիսի ել)։
Այլև՝ յանցելումն գրեալ էիր, թէ եթէ ճոթեղէն պիտոյացին, գրեա, զի
յղեցից։ Լուր առ այդ, սիրելիդ մեր։ Զի մինչ խաղաղ էր երկիրս մեր,
ձեռնամխեցաք ի ներքին և արտաքին շինումն աստուածեան սրբոյ տա-
ճարիս, բայց վասն վատաբախտութեանս մերոյ, երկիրս մեր վրդովեցաւ
և ճանապարհքն փակեցան, վասն որոյ ի կողմանէ դրամից զկարի
պակասութիւնս կրեմք ի ներկայումս։ Ուրեմն, որքան և կարես, զդրամս

հասուսցես մեզ ի յօգնութեան յայսպիսում ժամանակի։ Զի տի-
րացու Աւետիք որդեակն մեր ասէր, թէ պաճախլու ոսկի յղելն դիւրին է
մեզ։ Որպէս և իցէ ըստ կարեացդ, ընդ պարոն Եսայեան դրամ յղեսցես
մեզ։ Եւ զայլ որպիսութիւնսն և զնորագոյն դիպուածսն մեր և երկրիս
մերում ի սոյն գրաբեր պարոն Գաբրիէլէն իմանալոց ես, զոր ահա
շահեալ, յղեցաք սիրելի որդին մեր և եղբայրն Սահակ վարդապետի՝
պարոն Ստեփանոսն, ըստ գրեցելոյդ։ Ահա եկն առ քեզ ընդ պարոն
Գաբրիէլին, յորոյ կողմանէ դրան ինչ ոչ էիր գրեալ թէպէտ, բայց որով-
հետև խնդրեալ էիր, ահա դիմեաց առ քեզ և մեք ես վասն ճանապարհին
բանի մի թուման խարճի ետուք։ Որոյ ի գալն, ի հարկէ. . շահիլոց է ի
քէն, և զամենայն որպիսութիւնսն կողմանցս պատմելոց է քեզ լիովին,
որ է գիր կենդանի։

Այլև սիրելւոյն մերոյ՝ պարոն տօխտոր Յակոբին, զթուղթ սիրոյ,
օրհնութեան և շնորհակալութեան, նաև վասն քո զյանձնարարութիւնս
գրեցաք։ Եւ դու՝ սիրելիդ մեր, զորպիսածանոյց թուղթդ ի մէնջ անպա-
կաս արարեալ, լեր ողջ և զօրացեալ ի Տէր։

Գրեցաւ 1233 (1784) և յօգոստոսի Ա (1)։

Ձեռ. № 2803, էջ 640—642

1784 թ. 2 օգոստոսի—Թուղթք ի Շամախի

966. Կոնդակ մի առ հասարակ քահանայսն, իշխանսն և բոլոր ժո-ղովուրդսն սակս գանձանակին իւրեանց, զի հաստատուն պահեսցեն։

967. Թուղթ մի առ հին գանձապետ պարոն Յակոբն։

968. Թուղթ մի օրհնութեան առ նորոգ գանձապետ կարգեցեալ տի-րացու Ղազարն։

969. Թուղթ մի օրհնութեան առ գանձապետ պարոն տիրացու Յա-րութիւնն։

Գրեցաւ ամսոյս Բ (2)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 19

1784 թ. 2 օգոստոսի—Թուղթք ի Դարբանդ

970. Կոնդակ մի առ քահանայսն, իշխանսն և բոլոր ժողովուրդսն. շնորհակալութիւն սակս յղեալ գանձանակին իւրեանց, և պատուէր, զի հաստատուն պահեսցեն զնոյնն։

971. Թուղթ մի օրհնութեան առ նորոգ գանձապետ պարոն Պօղոսն։

Գրեցան ամսոյս Բ (2)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 19

Ի սոյն օր Թուղթք ի Բաքու

972. Կոնդակ մի [առ] քահանայսն, իշխանսն և բոլոր ժողովուրդսն. շնորհակալութիւն սակս յղեալ գանձանակին իւրեանց, ես յորդորումն, զի հաստատուն պահեսցեն զնոյնն։

973. Թուղթ մի օրհնութեան առ գանձապետ պարոն Եղիազարն։

974. Թուղթ մի օրհնութեան առ պարոն Դաւիթն սակս յղեալ աջահամբոյր զմէկ պաճախլու ոսկոյն։

975. Թուղթ մի օրհնութեան առ տէր Յովհաննէս և առ տէր Բարսեղ քահանային, և առ պարոն Դաւիթն, և այլ բոլոր համարակ իշխանսն և ժողովուրդսն սակս ի միջոյ իւրեանց կարգելոյն զկնաւոր և կառավարիչ ինքեանց պարոն Դաւիթն ի տեղի պարոն Եղիազարին։

Գրեցան ամսոյս Բ (2)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 19

Ի սոյն օր թուղթք ի Գանձակ

976. Կոնդակ մի առ քահանայսն, իշխանսն և այլ բոլոր ժողովուրդսն, շնորհակալութիւն վասն առաքեալ գ[ր]ամին իւրեանց և պատուէր, զի հաստատուն պահեսցեն զգանձանակն։

977. Թուղթ մի օրհնութեան առ գանձապետ տէր Միքայէլ քահանայն, ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Եւս յորդորումն, զի բարւոքապէս ծառայեսցէ։

978. Կոնդակ մի փոքր ի Զախ կոչեցեալ ղասաբայն առ տէր Մկրտիչ քահանայն և առ իշխանացն ամենից։ Այլև նորոգ հաստատեալ գանձապետ պարոն Յովհաննէսին, միւս պարոն Յովհաննէսին, պարոն Առաքելին, պարոն Սահակին և առ բոլոր ժողովրդոցն ամենից. պատուէր, զի հաստատուն պահեսցեն զգանձանակն։

Գրեցան ամսոյս Բ (2)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 19—20

Ի սոյն օր թուղթք ի Նուխի

979. Կոնդակ մի առ քահանայսն, իշխանսն և բոլոր ժողովուրդսն. շնորհակալութիւն սակս յղեալ գանձանակին իւրեանց և պատուէր, զի հաստատուն պահեսցեն զնոյնն։

980. Թուղթ մի օրհնութեան առ նորոգ գանձապետ պարոն Դաւիթն։

981. Թուղթ մի օրհնութեան առ հին գանձապետ պարոն Նիկողայոսն։

Գրեցան ամսոյս Բ (2)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 20

Ի սոյն օր թուղթք ի Շուշի

982. Կոնդակ մի առ քահանայսն, իշխանսն և այլ բոլոր ժողովուրդսն. շնորհակալութիւն սակս յղեալ գանձանակին իւրեանց, ևս պատուէր, զի աճեցուն պահեսցեն զնոյնն։

983. Թուղթ մի օրհնութեան առ ղաղանչեցւոց նոր գանձապետ վարպետ Աւագն։

984. Թուղթ մի օրհնութեան առ նորաշէն եկեղեցւոյն նախչուանցւոց նոր գանձապետ պարոն Բարաքիասն։

985. Թուղթ մի առ տէր Յովհաննէս աւագ քահանային, ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Այլև սակս նոր կացուցանելոյն գանձապետ պարոն Բարաքիասի կողմանէ ևս պատուէր։

986. Թուղթ մի Յովհաննէս կաթուղիկոսն, ի պատասխանի ընդ Յակոբ վարդապետին յղեալ թղթոյն։

987. Թուղթ մի առ Իսրայէլ կաթուղիկոսն, ի պատասխանի ընդ Յակոբ վարդապետին յղեալ թղթոյն։

988. Թուղթ մի օրհնութեան առ մէլիք Ապովն Գիւլիստանու, որդին լուսահոգի մէլիք Յովսէփին, ի պատասխանի թղթոյ նորին։

Գրեցան ամսոյս Բ (2)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 20

1784 թ. 7 օգոստոսի

989. Թուղթ մի առ Բայազիտու փաշայն յղեցաւ ընդ հարազատին իւրոյ՝ չօլախ Աղվանին։

990. Թուղթ մի առ Ապտալ աղային։

Գրեցան ամսոյս Է (7)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 20

1784 թ. 19 օգոստոսի—Թուղթք ի Բայազիտ

991. Թուղթ մի տաճկերէն առ Իսաղ փաշայն, հանդերձ ընծայիւք։

992. Թուղթ մի տաճկերէն առ Յինուզ բէկի աղային, ևս հանդերձ ընծայիւք։

993. Թուղթ մի տաճկերէն առ փաշայի հարազատ Ողվանն, ևս հանդերձ ընծայիւք։

994. Թուղթ մի առ տէր Վահանն և առ Սահակ աղայն սակս նուիրելոյ ընծային մերոյ առ փաշայն, զոր ընդ Մելքիսեդեկ շաթրին մերոյ յղեցաք առ նոսա։

995. Թուղթ մի առ նորին նուիրակ Կարապետ վարդապետն, ի պատասխանի թղթոյն իւրոյ։

Գրեցաւ յօգոստոսի ԺԹ (19)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 21

1784 թ. 20 օգոստոսի—Թուղթք ի մեծն Պոլիս

996. Թուղթ մի սիրոյ և օրհնութեան առ Յարութիւն ամիրային, զոր գրէ սրբազան Վեհապետն առ սա սակս նորոյ Տօնացուցի կողմանէ, զոր ոմանք իշխանացն կամէին արգելել զնա և հնով վարիլ։ Պատուէր, զի այնպիսեաց անբարի խորհրդոց խափանումն տացէ։ Եւս յանձնարարութիւն սակս տեղւոյն նուիրակ Իսահակ վարդապետին։

997. Թուղթ մի առ Մարգար ամիրային. սմա ևս պատուէր սակս արգելելոյն ոմանց նոր Տօնացուցին վարիլն, զի խափանումն տացէ։

998. Թուղթ մի առ Մարտիրոս ամիրային. նմանապէս սմա ևս պատուէր վասն անպատեհ խորհրդոց ոմանց, զի արգելումն տացէ:

999. Թուղթ մի առ Առաքել և Յովհաննէս ամիրային, ևս պատուէր սակս նորին:

1000. Թուղթ մի առ Յովհաննէս ամիրայն. ևս պատուէր, զի քակտումն տացէ ոմանց արանց վնասակար մտածութեանց:

1001. Թուղթ մի առ պարոն տիրացու Գէորգն և առ պարոն Աստուածապահն, ի պատասխանի ի մարտի ԻԱ (21) գրեալ թղթոյն իւրեանց: Որոց ևս պատուէր սակս նորոյ Տօնացուցի կողմանէ:

1002. Թուղթ մի առ պարոն Բատալ և առ պարոն Թումանն սակս տալացու գ[ր]ամին իւրեանց առ հանգուցեալ Յակոբ վարդապետին, զի զայնս տացեն իւրեանց նուիրակ Սահակ վարդապետին հաշւի և մի յամեցուսցեն:

1003. Թուղթ մի օրհնութեան առ պարոն Սերոբն վասն զմէկ ոսկի տուեալ աջահամբուրին՝ ձեռամբ տիրացու Յով[հաննեսին]:

1004. Թուղթ մի առ պատրիարք Զաքարիա վարդապետն, ի պատասխանի թղթոյն և սակս խափանելոյ ոմանց չար մտաց:

1005. Թուղթ մի առ նորին նուիրակ Իսահակ վարդապետն սակս նորոյ Տօնացուցի կողմանէ, ևս այլ հարկաւոր բանից:

1006. Թուղթ մի ևս առ սա սակս պարոն Բատալ և պարոն Թումանի տալացուին պատուէր, զի հարկիւ առնուցու ի նոցանէ և մի յամենցուցէ: Ընդ սմա ևս զապղ Բ (2), մինն՝ առ Գաղատիոյ նուիրակ Յարութիւն վարդապետն սակս հասուցելոյ ինքեան ի նուիրական յարդեանցէն երկու հազար հինգ հարիւր ղուռուշ օսմանցւոյ դրամ, և մինն՝ յատուկ իւրեան սակս հասուցելոյ ի մեծն Պօլիս ի նուիրական յարդեանցէն իւրոյ երկու հազար օսմանցւոյ ղուռուշ դրամ առ Գօրօյեան մահտեսի Խաչատուրն:

Գրեցան յօգոստոսի Ի (20):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 21—22

Ի սոյն օր Թուղթք ի յարտաքին վիճակսն Պօլսոյ

1007. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի զասապայն Բօղազհիսար առ քահանայսն, իշխանսն և բոլոր ժողովուրդսն սակս հասուցեալ երկուհարիւր իննսուն Բ (292) ղուռուշ Գալուստ վարդապետին ի կողմանէ գանձանակին իւրեանց:

1008. Թուղթ մի օրհնութեան առ մահտեսի Յարութիւնն սակս հանգուցեալ եղբօր կտակեալ զերիս ոսկոյն, որ տուեալ է նուիրակ Գալուստ վարդապետին:

1009. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Մուհալիճ կոչեցեալ զասապայն՝ առ քահանայսն և առ բոլոր ժողովուրդսն սակս հասուցեալ գանձանակադրամին իւրեանց՝ 215 մառչիլ, ձեռամբ մահտեսի Խաչերին և մահտեսի Աբրահամ իշխանին՝ առ Գալուստ վարդապետն:

1010. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Քիրմաստ կոչեցեալ զասապայն սակս հասուցեալ գանձանակադրամին իւրեանց՝ հարիւր քառասուն մառչիլ առ Գալուստ վարդապետն:

1011. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Պալիքեսար կոչեցեալ զասապայն սակս երկու հարիւր մառչիլ գանձանակին, որ հասուցեալ էին Գալուստ վարդապետին:

1012. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Էյարնճիկ կոչեցեալ զասապայն սակս հասուցեալ գանձանակին իւրեանց՝ հարիւր քառասուն և վեց մառչիլ, ձեռամբ գանձապետ մահտեսի Գրիգորին առ Գա[լուստ վարդապետն]:

1013. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Գէլիպօլ կոչեցեալ զասապայն սակս Բ հարիւր ԺԷ (217) ղուռուշ գանձանակին, որք հասուցեալ էին ձեռամբ գանձապետ խօճայ Կարապետին առ Գա[լուստ վարդապետն]:

1014. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի զասապայն Էինայ սակս երեսուն և վեց ղուռուշին հասուցելոցն ձեռամբ գանձապետ Գրիգորին առ Գա[լուստ վարդապետն]:

1015. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի զասապայն Բօզօվա սակս երեսուն և վեց ղուռուշին, հասուցելոցն ձեռամբ պարոն Մարգարին առ Գա[լուստ վարդապետն]:

1016. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Նորգեղ առ քահանայսն, իշխանսն և բոլոր ժողովուրդսն սակս տուեալ զեօթանասուն և երեք մառչիլ ի կողմանէ գանձանակին իւրեանց առ Գա[լուստ] վա[րդապետն]: Եւս պատուէր, զի հաստատուն պահեսցեն զնոյնն:

1017. Կոնդակ մի ևս օրհնութեան և շնորհակալութեան ի զասապայն Բօղազհիսար առ բոլոր ժողովուրդսն սակս տուեալ յիշատակին իւրեանց՝ զմէկ վարագոյր յանուն սրբոյ Լուսաւորչի խորանին առ Գա[լուստ] վա[րդապետն]:

1018. Կոնդակ մի օրհնութեան և շնորհակալութեան ի Պանտրմայ սակս հասուցեալ Գալուստ վարդապետին ի կողմանէ գանձանակին իւրեանց վեց հարիւր և եօթանասուն մառչիլ ձեռամբ գանձապետ պարոն Յովհաննիսին:

1019. Թուղթ մի առ տեղւոյն նուիրակ Գալուստ վարդապետն սակս խնդրեալ թղթոցն օրհնութեան, զորս ահա յղեաց սրբազան Վեհապետն, բաց ի միոյ թղթոյ:

Գրեցան յօգոստոսի ԻԶ (26):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 22—24

Ի սոյն օր Թուղթք ի Կարին

1020. Թուղթ մի առ նորին նուիրակ Դանիէլ վարդապետն, ի պատասխանի ի մայիսի Ա (1) գրեալ թղթոյն սակս ոմանց բանից, ընդ սմա ևս զապղ մի վասն հասուցելոյ զերկու հազար դանայ ղուռուշ առ պարոն Հայրապետն:

1021. Կոնդակ մի հասարակապէս առ բահանայսն, իշխանսն և առ բոլոր ժողովուրդսն, ի պատասխանի մահսարական թղթոյն իւրեանց, որք գրեալ էին յորում դանգատ յառաջնորդէն իւրեանց, զի բերցէ զնա ի սուրբ Աթոռս։

1022. Թուղթ մի առ նորին առաջնորդ Պետրոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն իւրոյ, յորում գրեալ էր սակս հրաժարելոյն իւրոյ անտի և գալ ի սուրբ Աթոռս։

1023. Կոնդակ մի ի Կիւմիշխան առ քահանայսն, իշխանսն և առ բոլոր ժողովուրդսն, շնորհակալութիւն սակս յղեալ ընծայիցն ընդ Յակոբ վարդապետին, այսինքն՝ գիւլապատն և պուխու[ր]տան. և ս շնորհակալութիւն սակս արարեալ լաւութեանցն Դանիէլ վարդապետին։

Գրեցաւ ամսոյս Ի Զ (26)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 24—25

Ի սոյն օր թուղթք ի Բասրայ

1024. Թուղթ մի առ նորին նուիրակ Յակոբ վարդապետն, ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր գրեալ էր ընդ էլչի պարոն Յակոբին։

1025. Թուղթ մի վերահաստատութիւն գանձապետութեան առ գանձապետ Յարութիւն բահանայն, զոր կարգեալ էր Յակոբ վարդապետն։

Գրեցաւ ամսոյս Ի Զ (26)։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 25

1784 թ. 26 օգոստոսի

1026. Թուղթ մի առ Գաղատիոյ նուիրակ Յարութիւն վարդապետն, ի պատասխանի ի մայիսի Ա (1) և ի յուլիսի ԺԵ (15) գրեալ թղթոցն։ Առ սա և ս ղապղ մի, որ ընդ թղթոյ Սահակ վարդապետին յղեցաք, զի հասուցէ առ սա։

1027. Ղապղ մի առ Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետն սակս հասուցելոյ մէկ հազար ղուռուշ ի նուիրակական յարդեանցէն առ մահտեսի Աղամջանն, որ և նա հասուցեալ է առ պարոն Հայրապետն։ Որ և մեք առ մեզ հասեալ համարելով, սոյն ղապղս գրեալ, եդաք ի թղթոց Հայրապետին, զի հասուցէ առ նա։

Գրեցան ամսոյս Ի Զ (26), որք և յղեցան ընդ Կարնոյ փայեկին։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 25

1028. 1784 թ. 26 օգոստոսի—*Թուղթ ի մեծն Պոլիս առ Յարութիւն ամիրայն վասն գժտութեանն ոմանց իշխանաց ի կողմանէ նոր Տօհացւոցին, որք ասացեալ էին պատրիարքին՝ բառնալ զայն և դարձեալ զհինն հաստատել։ Առ որ պատուէր և յորդորումն՝ արգելս տալ այնմ խորհրդեան։*

Ձեռ. № 2803, էջ 442—446

446 *1029.* 1784 թ. 26 օգոստոսի—*Կոնդակ ի Կիւմիշխանայ, շնորհակալութիւն վասն յղեալ ընծային նոցա՝ արծաթեայ գիւլապատանին և բուխուրտանին, և կանոնադրութիւն նոր անխախտկալ ընդ հերձուածող*

ախթարմայսն և մի՛ զբարեկամութիւնս և զընտանութիւնս առնել ընդ նոսա։

Յորմէ ժամանեցի թուղթ....

Եւ ընդ աստուածապարգև օրհնութեան սիրաձիր և ողջունառաք նա-
447 *մակիս, ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր // որդւոցդ մերոց և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի զբարերարաց շնորհակալել հարկաղրեն մեզ օրէնք բնութեան, մանաւանդ և իմաստունն Սիրաք սոփէ ի գեղեցիկ բանս իւր, թէ մի՛ մոռանար զբարեկամս քո ի մտաց քոց, վասն որոյ համարելով զմեզ պարտականս շնորհակալելոյ գլաւութեանց ձերոց և անմոռաց ունելոյ զձեզ ի միտս մեր, ահա շնորհակալիմք զձէնչ բերանալից օրհնաբանութեամբք։ Քանզի յաղագս բարեպաշտութեան և մեծահաւատութեան ձերոյ, որ առ Աստուած և վասն բարեպաշտութեան և հարազատ որդիութեան ձերոյ առ սուրբ Աթոռ լուսաւորչին, ջերմեռանդ սիրոյ և հարազատ որդիութեան ձերոյ առ սուրբ Աթոռ լուսաւորչին, ստացաւ ծնօղս ձեր և առ մեզ, ի յանցելումն ամի ընդ տեղւոյդ առաջնորդ Յակոբ հանճարունակ վարդապետին և ընդ տէր Յարութիւն խոհեմամիտ քահանային յղեալ էիք վասն մեր զընծայս սիրանիշ, այսինքն՝ զմի արծաթեայ կիւլապատն և զմի պուհուրտան, զորս ընկալաք սիրով բազմաւ։ Բայց յայնժամ ոչ տեղեկացաք, թէ ի հասարակութենէ օրհնեալ ժողովրդականացդ է, վասն որոյ յայնժամ ոչ գրեցաք առ ձեզ զթուղթ շնորհակալութեան։ Իսկ այժմ մինչ իմացաք, թէ ի յօրհնեցելոցդ են ընծայքն, մեծաւ գոհունակութեամբ օրհնեցաք զձեզ, և առաջի սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի հայցեցաք ի նմանէ վասն ձեր զգթութիւնս և զողորմութիւնս և բանից ձերոց և ս յաջողմունս։*

Եւ յայնմհետէ մինչև ցարդ թէպէտ բազմիցս կամէաք օրհնութեան գրով զձեզ միամիտ առնել, բայց անչափ հոգք և ցաւքն մեր ոչ թոյլատրէին մեզ ձեռնհաս լինել։ Իսկ այժմ միջոցի ընկալաք զթուղթ ի սիրելի և ի հոգևոր որդւոյն մերմէ և ի նուիրակէն օրհնեցելոյ վիճակիդ՝ Դանիէլ շնորհապերճ վարդապետէն, որ գրեալ էր գոհացմամբ զզալն իւր յայդր և զձեր որպէս մարդասիրութեամբ և մեծարանօք ընդունիլն և տատ արդիւնաւորութեամբ շահելն և ուրախութեամբ ուղևորելն այտի։
448 *Ընդ որ և մեք վերստին շնորհակալ եղաք զձէնչ և հարկ անձին կա//լեալ, զայս սիրանիշ և օրհնաձիր նամակս մեր գրեցաք ի վերայ օրհնեցելոցդ։ Զորս Աստուած օրհնեսցէ միշտ և զօրացուսցէ, աղատեսցէ ի վտանգից չարաց և պահեսցէ ի խնամս և ի գթութիւնս իւր։ Զփոխարէնն ընծայիցն յղեցելոց առ մեզ և առատանուէր արդեանց ձերոց, պարգևեսցէ ձեզ զվարձս բարեաց բազմապատիկս և ամենայն բանից և գործոց ձերոց և ս զյաջողմունս բարիս տացէ։*

Այլև արդ, սիրելի որդին մեր՝ Դանիէլ խոհեմամիտ վարդապետն, ըստ խնդրոյ ձերոյ, գրեալ էր մեզ, զի գրեսցուք և հաստատեսցուք ի ձեզ զկանոն իմն առ ի ամենայնիւ բաժան և անխառն մնալ ձեզ ի չարաձեզ զկանոն իմն առ ի ամենայնիւ բաժան և անխառն մնալ ձեզ ի չարափառ և ի մոլարաշաւիղ ախթարմայիցն։ Վասն որոյ; ահա հարկիւ մեծաւ կանոնադրեմ ձեզ և զգուշացուցանեմ՝ զգաստերս ձեր մի տաջիք ուստերաց ձերոց բաց հերձուածողացն և զդստերս նոցա մի առնուցուք ուստերաց ձերոց բաց հերձուածողացն և զդստերս նոցա մի առնուցուք ուստերաց ձերոց ի կնութիւն։ Նմանապէս և ոչ կնքահայրութեամբ և ոչ հոգևոր կամ մարմնաւոր բարեկամութեամբ ընդ նոսա հաղորդիցիք, քանզի ապամարմնաւոր բարեկամութեամբ ընդ նոսա հաղորդիցիք, քանզի ապականեալք են նոքա և ապականարարք։ Եւ որ ոք հաղորդի ընդ նոսա և զբարեկամութիւնս առնէ և ընկերակցի, նա է նման նոցա ապականի,

զի որ շօշափէ զձիւթ, պղծեսցի։ Ուրեմն հեռի մնասջիք ի հաւեցելոցն յայնցանէ և անշեղ կացջիք ի լուսաւորչական և ի միաբանական սուրբ և ուղղափառ հաւատս սրբոյ և անարատ և եկեղեցւոյս Հայաստանեայց՝ ի բաց փախչելով ըստ ամենայնի ի պիղծ և ի հոգեվնաս աղանդոյ և ի խմորոյ նզովելոցն այնոցիկ, հայելով միշտ ի գլուխս հաւատոյ ձերոյ ի լուսակերտ և ի քրիստոսահիմն Աթոռս սուրբ Էջմիածին և զերթևեկն ձեր աստի չպակասեցուցանելով։

Այսպէս իմացեալ, զայս հոգեշահ պատուէրս մեր ի սիրտս ձեր և
449 զաւակաց և թոռանց ձերոց տպաւորեսջիք.//պահելով թարց զանցառութեան, զի և ի նոցունց առ իւրեանց զաւակունս աւանդեալ, անշրջելի և կայուն մնասցէ և լիցի ձեզ պատճառ բարի, հեռի և անհաղորդ կալոյ ի չարափառացն և ի մոլար աղանդոյ նոցին։

Իսկ և զճշմարիտ սէր և զհարազատութիւնս ձեր, զորս ունիք առ սուրբ Աթոռ լուսատու ծնօղս ձեր և առ հոգևոր հայրութիւնս մեր, աննուազելի պահեսջիք, և կատարօղքդ հոգևոր հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ։ Եւ շնորհք աստուածաէջ սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ, ընդ զամենեսեանս։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի յօգոստոսի ԻԶ (26)։

Ձեռ. № 2803, էջ 446—449

1030. 1784 թ. 26 օգոստոսի—*Թուղթ ի մեծն Պօլիս առ Արևելցի տիրացու պարոն Գէորգն և Աստուածատուրն, ի պատասխանի թղթոյն իւրեանց ի մարտի ԻԱ (21) գրեցելոյ ի կողմանէ անցիցն, որ ոմանք զտարաձայնութիւն էին ցուցեալ, թէ մեր զնոր Տօնացոյցն ոչ կամիմք գործ ածել, և դարձեալ կամէին լսել ստուգացեալք։*

Ձեռ. № 2803, էջ 449—451

1031. 1784 թ. 26 օգոստոսի—*Թուղթ առ Կարնոյ առաջնորդ Պետրոս վարդապետն նախիջեանցի՝ առ ի գալ, զի զանկատէին զնմանէ տեղացիքն և խնդրէին հանել յառաջնորդութենէ իւրեանց։*

Ձեռ. № 2803, էջ 451—452

1032. 1784 թ. 26 օգոստոս—*Թուղթ առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, ի պատասխանի ի մարտի ԻԱ (21) գրեալ թղթոյն, զոր ընդ նուիրակին ի միասին էին գրեալ, յաղագս տարաձայնական զրուցաց ոմանց իշխանացն ի կողմանէ նոր Տօնացուցին, որք խնդրեալ էին ի պատրիարքէն բառնալ զնորն և անդրէն հաստատեալ զհինն։*

Ձեռ. № 2803, էջ 528—530

531 1033. 1784 թ. 26 օգոստոսի—*Դարձեալ թուղթ առ Իսահակ վարդապետ նուիրակն մեծին Պօլսոյ, ի պատասխանի բազմահատոր թղթոց նորին, յայսմ միջոցի ի միասին գրեցելոյ յոյժ երկարօրէն բանիւք հարկաւորութեանց։*

Յորմէ բազմաւ սիրով և քրիստոսականաւ սուրբ ողջունիւ և կարօտիւ մեծաւ գիտասջիր, սիրելի և հոգևոր որդիդ մեր, ցաւակից անձին իմոյ և մտերիմ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդապետ։ Զի ի յուլիսի ԺԶ (16) զթուղթ գրեցաք առ քեզ, ծանուցանելով զնորադէպ պատահմանց սրբոյ Աթոռոյս և հանդերձ քանեօք թղթովք յղեցաք։ Որոց ի հասանիլն առ քեզ, իմանալոց ես զգրեալսն մեր առ քեզ և, ի հարկէ, հոգալոց ես զհոգալիսն, որոց աղագաւ հարկ եմք արարեալ։ Իսկ ապա՝ ի յուլիսի ԺԷ (17) հասին առ մեզ բազմահատոր

թուղթք քո, գրեցեալքն ի մայիսի ԻԷ (27), հանդերձ ի մարտի ԻԱ (21) ընդ պատրիարքին ի միասին գրեալ թղթովն միով։ Զորս ընթերցեալ մի առ մի վերծանեցաք զամենայն աշխատասիրութեամբ գրեալդ և շնորհակալեցաք զսիրելւոյդ, զոր Տէր զօրացուսցէ և առաւել ես կարողացուսցէ։

Արդ, գրեալ էիր նախ զօրպխութեանց զանձանակացն, որոց ընդ ցաւելիսն՝ ցաւեցաք և ընդ նորոգեալսդ և նոր հաստատեալսդ՝ ուրախացաք։ Եւ զշատոց արդիւնսն, որ առեալ ես և զօրհնութեան թուղթս էիր խնդրեալ վասն այնց, հանդերձ թղթովք առ ոմանս յիշատակատուս, նաև նոր Տօնացուցին աղագաւ ես, որ զգրեանս էիր խնդրեալ առ քանիս ոմանս և առ բազում յատկացեալս ես, առ այն ծանիր։ Զի զզանձանակացն և զյիշատակատուացն թողաք յետոյ և վասն Տօնացուցի բանին առ բազումսն գրելն անօգուտ համարեցաք, որ և յիրաւի թեթևութիւն է մեզ։ Այլ առ հասարակութիւն իշխանացն և պատրիարքին և նմա և մահտեսի Յարութիւն ամիրային և Տաղէսեան Յովհաննէս և Սախայեան մահտեսի Մարտիրոս և Մարգար և Առաքել և Յովհաննէս ամիրայիցն, նաև պարոն Գէորգին և Աստուածատուրին գրեցաք զթուղթս յատուկ յատուկ ըստ կամեցելոյդ։ Այլ յօրինակագրութեանց զոյր ոճ մի, որ
535 զմեզ մասնակիցս ցուցանէր ջանից նոցին։ Այս է՝ միթէ՞//զմեզ կամիք խայտառակել և թէ ոչ զձեզ, այլ զմեզ են բամբասելոց և այլք ըստ այսց։ Զորս կարծելով, թէ ի յաղագմանէ խորամանկ խոհեմին իցեն, ըստ որում և զեկուցեալ էր քոյ, թէ զսոցին նիւթսն նա ետ, փոխեցաք զայն միտ և յիւրեանց կողմն արկանելով կամիլն և բամբասիլն և զմեզ անհաղորդս առնելով, այնպէս գրեցաք զթուղթսն և յորդորեցաք խափանել զմտածումն և արկաք ի ներքոյ խղճահարութեան։

ԶԱռաքել և զՅովհաննէս ամիրայիցն շնորհակալեցաք, թէ վասն այսմ խորհրդեան անմասն և խանգարիչ գոլոյն և թէ վասն քեզ ձեռնտուութեանցն և հարկեցաք՝ կալ հաստատ նոյնութեամբ։ Եւ վասն քոյ առ ամենայնսն զյանձնարարութիւն գրեցաք, բաց ի պատրիարքէն, զի առ նա շատ եմք գրեալ յառաջ։ Ահա զայսոսիկ այսպէս հոգացեալ, յղեցաք՝ տացես ի տեարսն։ Աստուած տայ բանն ի գլուխ գայ, բայց թէ ոչ լինի. յայնժամ ապա հարկաւորի առ ամենեսեանսն գրել և բաց երևեցել զամենայն ինչ։

Իսկ վասն միւս թղթոցն յամելոյ, մի ինչ բասրեսցես զմեզ, զի թէ դու ըստ քեզ առ ամենայն կողմն զգրեանս գրես, որպէս յիշեալ էիր. ապա մի՞թէ մեք ննջեմք. մեր ես առ ամենայն ուրեք գրութիւնքս անպակաս լինին և բաց յայնմանէ, խաղաղութեան և ապահովութեան ես կարօտ եմք։ Մինչ կամիմք յայդպիսի բազմութիւնս գրեանց ձեռնարկանել, այլև այլ գրութիւնք յառաջակայեալ, արգելու տան։ Որպէս Մինաս վարդապետի բերեցելոց ոմանց արդեանց և յիշատակաց սակս որքան և կամեցեալ եմք զգրեանս գրել յայդր, չէ յաջողեցեալ յաղագս այլոց հոգալեաց յառաջակայլելոյ։ Այլ այժմ զորքան թուղթ և խնդրեալ ես, լինի թէև զՄինաս վարդապետի խնդրեցեալսն ես ընդ այնս խառնեալ գրեսցուք և յղեսցուք։ Յանցեալ միջոցս ընդ այլ զբաղմանց, հազիւ թէ զԳալուստ վարդապետի խնդրեալ թուղթսն սակաւ առ սակաւ գրեցմամբ լրացուցաք։ Զորս և ահա յղեցաք հանդերձ առ ինքն թղթով ի ձեռս քո և դու հասուսցես առ նա։ Այլև ի մայիսի ԺԱ (11), որ զորքան փօլիցայս տալդ յայնմ միջոցի գրեալ էիր, իմացաք և ամենիցն այնոցիկ զմի զապղ գրեալ, յառաջ քան զայս, յղեցաք ի յուլիսի ԺԶ (16)։ Այժմ

ես որ զԲՈԿԷ (2067) ղուռուշ և կէս դրամ ես էիր հասուցեալ Գորօյենց
տղային և զԲՌ (2000)-ին ղապղ խնդրեալ, ահա գրեալ յղեցաք առ
536 պարոն Հայրապետն՝ հասուցանել քեզ։ // Այլ զԿԷ (67) ղուռուշ և կէսն
ընդ յառաջ քան զայս առեալ և յղեալ ժամացուցացդ գին ՊԻԷ (827)
ղուռուշին և մեր տիրացու Նահապետի քեզ տալացու Ե (5) ղուռուշ և
կիսոյն հաշուեցաք, որ եղև Թձ (900) ղուռուշ լրապէս, զայս ի յանձ-
նական արդեանց քոց առ մեզ հասեալ գիտելով, որպէս և գրեալ էիր,
ի տեղի պարտուցդ փոխարինեցաք։ Եւ ահա ի վերայ Թձ (900) ղու-
ռուշի Թէմէշուկիդ զախիրայ արարեալ յղեցաք առ քեզ, որքոյ Աթոռոյս
պարտավճար ես, միամիտ լեր. յամենայն հոգևոր և մարմնաւոր ծան-
րութեանց ես այդպէս ազատ լիցիս և պարզերես մնասցես։

ԶԳաղատիոյ նուիրակ Յարութիւն վարդապետի զառ մեզ գրեալ
թուղթն, զոր յղեալ էիր, ընկալաք և զոր ինչ որպիսութիւնս էիր գրեալ
զնմանէ և զնորին վիճակէն, իմացաք։ Եւ վասն հասուցեալ դրամոցն՝
ԱՌԵՃ (1500) ղուռուշի ղապղ յառաջ եմք գրեալ և յղեալ։ Եւ նորապէս
հասուցեալ ԲՌԵՃ (2500) ղուռուշին աղագաւ ես զղապղ յղեցաք առ
քեզ՝ հասուցանել առ նա ի միամտիլ։

Հանգուցեալ Եսայի վարդապետին գրեցեալ ղապղն մեր, որ յղեալ
ես ի Զմիւռին առ Միքայէլ պետն և Աստուածատուր աղայն և զգրամն
խնդրեալ ես, բարւոք ես արարեալ։ Յայդմ կողմանէ մեր գրեալքն են
առ քեզ և առ նոսա ըստ արարմանդ են, որոց ի հասանիլն առ քեզ, ի
հարկէ, իմացեալ և հաստատեցեալ ես։ Ուրեմն ջանա զդրամն յայդր
արկանել։

Հնդկաց նուիրակ Գրիգոր վարդապետի զպատահումն և զորպիսու-
թիւնն ես, զորս ռեկուցեալ էիր, մեք Բ (2) ամսով յառաջ քան զայս
յինքենէ իսկ գիր առաք՝ գրեցեալ յապրիլի ԻԸ (28) ի Բաղդատ, որ
զքոյդ ամենից գրեցելոց զլիալիրն էր գրեալ և ոչ ես այլ ինչ։ Մեք ես
վերստին զմխիթարութիւն գրեցաք և հարկ՝ վասն գալոյ։

Թարգիղատէի տալեայն աղագաւ զի՞նչ անցանիլն, որ գրեալ էիր,
իմացաք և զոր գրես, թէ յայդ կողմն անկաւ, առէք, մեք ես լաւ գի-
տեմք, որ Աստուծով մերն է և վատայն ես անցեալ է, սակայն չգիտեմք,
թէ զի՞նչ արարին. զայս աւուրքս ի Հայրապետէն մինչ գիր առնուցումք,
իմանալոց եմք։ Եթէ չիցէ առեալ Հայրապետն զնոսս, հարկելոց եմք
առնուլ։ Իսկ վասն Թումանեանց և Բատալի տալեայն, որ խորհրդակցու-
թեամբ գրեալ էիր զհարկաղրութեան թուղթս գրել նմա և քեզ, նմա՝
տալ զգրամն, և քեզ՝ պահանջեալ առնուլ, ահա գրեցաք և յղեցաք։
Բայց որ գրեալ էիր ի վերայ Բատալին վերայ միայն գրել զթուղթն և
537 ի նոյն թղթոյն Թումանին ես զայն ինչ ասել, մեք // զայն ոչ յոյժ օգ-
տաւոր համարեցաք։ Զի թէ բաժանեալ են, թէ ընկեր են, կամ թէ մինն
ունեոր է և միւսն՝ զատարկ, առ մեր պարտսն ընկեր են և երից անունն
ես զոյ ի թէմէսուկն, վասն որոյ պարտիմք զերիցն ես բուռն հարկանել։
Ուստի զթուղթն ի վերայ Բատալին, Թումանին և հանգուցեալ մահտեսի Ա
Թումանի եղբօր որդի Կիւլբասարին գրեցաք՝ զամսաթիւն ի մայիսի Ա
(1) դնելով։

Բայց որ գրեալ էիր յայսմ կողմանէ առ զէտն ես սրտադիւրական
բանս ինչ ծրել, բարւոք էր յիրաւի, սակայն զի յառաջ քան զայս վասն
ֆէրմանացն և այլ բանից ես զխնդիրս եմք գրեալ, այժմ դեռ զայն
չգրեցաք։ Եւ յաղագս ունեցերոցն յայդր առ ոմանս կորստականին ի

հոգանակութեամբ հարցեալ էիր մեզ և
յարևմուտս, որ խոհեմաբար հարցանողացն
զբան խնդրեալ վասն պատասխանի առնելոյ թերևս
քեզ, ահա այլևս քոյդ վերջին մտածելդ է յոյժ լաւ. այսինքն ասելդ,
թէ յայնմ ժամանակի յայս գործ եղեալն է գիտակ և տեղեակ, ինձ ոչ
գոյ տեղեկութիւն։ Առ նա պէսպէս իրակութիւնքն չեն դժուարին,
իսկ թէ լռեսցի ամենևին հեռևումն արևմտայնոյն առ այդ բան, յայն-
ժամ ապա տեսցուք, թէ ձեռնտո՞ւ լինի մեր ի խնդիր ելանելն, կամ թէ
ոչ, քեզ ազդելոց եմք։ Դու, զոր ինչ լինի, ծանո մեզ։

Ի կողմանէ կեղծաւորեալ կուրին մերոյ ես, զոր ինչ գրեալ էիր,
իմացաք։ Վերջապէս ի Հասանղալայու վանսն գնալն սուտ էր, թէ
այլ կերպ եղև, գրեսցես։ Զմահտեսի Յարութիւն ամիրայէն գրեալդ ես
վերծանեցաք, իսկ որպէս դու, նոյնպէս և մեք զմեր ցարդ վարեցման
ճանապարհն եմք շահաւէտ ընտրեալ, վասն որոյ և ես ընդ սոյն եմք
ընթանալոց։

Իսկ որ գրես, թէ Աշոտու բանն մնաց այնպէս և ինձ Յովսէփ պետն
մեր զայս ինչ էր գրեալ, իմա առ այդ, զի մեք ես իմացաք, որ այլ այդ
կողմամբդ ի մէնջ մարդ գնալ ոչ լինի, և մինչ վասն հիւսիսակողմամբն
յղելոյ հոգայաք, ի Յովսէփ պետէն գիր եկն, որ զառ քեզ գրեալսն մեզ
ես էր գրեալ, ի կողմանէ աշուղցուցն։ Եւ մեք կամաւորեցաք առ կայսրն
գերմանացւոց զգիր գրել, բայց զի անտեղեակ էաք զգրանէ նոյնոյ
կայսերութեանն և չգիտէաք, թէ այլ ո՞ւմ է հարկաւոր գիր գրելն անդ
կամ թէ գիրն կարգաւորա՞ւ է բարւոք յղելն, թէ աշխարհականաւ։ Վասն
որոյ այժմ արգելեալ, զթուղթ գրեցաք առ Յովսէփ վարդապետն, և զոր
538 դու գրեալ էիր, ծանուցաք նմա վասն էրն // արգելելոյն նոցա զմուտս
կարգաւորացն մերոց ի մէջոյ մերայնոցն, և հարկեցաք նմա՝ իմանալ
և գրել մեզ զանունս կայսերական դրան մարդկանցն և թէ կարգաւորի
յղելն պատկան զթուղթն մեր, թէ ընդ աշխարհականի, թէ միջնորդու-
թեամբ Մարգար աղային (որոյ ազնուութեան սակս նոր եմք վկայու-
թիւն գրեալ) առ նոցա գեսպանն հասուցանել, որ է Պետրպօլք, առ ի
յղել ի դուռն կայսերական։ Այժմ ահա սորին պատասխանւոյն նայիմք,
երբ եկեսցէ, այնուհետև զաղերս եմք գրելոց առ կայսրն Յովսէփ,
թերևս առ ոմանս նորայինս։ Զի Աստուծով հնար լիցի ի մէնջ անդ առ
մերայինսն կարգաւոր գնալոյ։

Այլև՝ ըստ առաջին խնդրելոյդ զԽ (40) հատ Պարտավճար յղեցաք
յանձնեալսն, այժմ ես, նորապէս որ խնդրեալ ես, զԾ (50) հատ ես կաղ-
մեցուցեալ յղելոց եմք։ Բայց Տաղարան և Զբօսարանն[198] իսպառ հա-
տեալ է։ Այն որ գրես, թէ ի փոքր զակեահումն տպել տացուք, մեք ես
շատ ցանկամք և մտածեմք զԲ (2) զակեահսն ես բանեցուցանել,
բայց յոյժ դժուարին է։ ԶԱւետին ահա հասուցեալ եմք յեկեսցէն, մինչ
ձեռնամխիցուք ի Տօնացոյցն մեր, կամիմք զմանր գրեանս տպել ի
փոքր զակեահոցն։

Սիրելիքն մեր՝ Մասեհեան պարոն Եսային և պարոն Նիկողայոսն,
որք խնդրեն զՂազար Փարպեցւոյ պատմութիւնն տպել, ահա յանձն առ-
նումք ի տպել։ Խօսեալ ընդ ինքեանս՝ ի մերս կողմանէ ես զողջոյն և
զորհնութիւն տալով և տես թէ զի՞նչ տան վասն ծախուցն և մեզ գրեա,
զի թէ Աստուած կամիցի, ձեռնարկեսցուք ի տպումն։

Ի ժամագիրքն, ի վերջոյ Քրիստոս Աստուած մերին, զանխորհուրդ
նորամոյծ անուանսն վեր եմք առեալ և ըստ խորհրդաւոր աւութեան

մերոյ եմք ապեցուցեալ ի վաղուց, միամիտ լեր։ Զխոստացեալդ վասն
Տօնացուցին, եթէ այժմ ևս կատարեսցես զոնէ, լաւ է։ Իմա, որ յայլոց
օժանդակութենէ առանձին եմք։ Արեմն, թէև մեք ոչ նայիմք ընդ, այլ
ապեցուցանեմք, ըստ կարեաց հետևելով, այլ պարտիս դու ևս զխոստա-
ցեալդ հոգալ և յղել, թարց զանց առնելոյ։

Թուղթն մեր բարեկամ Մանուկին, զոր յղեալ էիր, էհաս, այլ արդ
չունիմք ժամանակ զպատասխան գրելոյ. սիրով ողջոյն և օրհնութիւն
տամք նմա։ Նաև յաղագս սիրելւոյն մերոյ՝ մահտեսի Կարապետի եղբայր
Մկրտչին որպիսաբար պահելոյն աստէն և զորքան ինչ հասեալ զոլոյն ի
539 մէնջ նմա, որ գրեալ էիր իմացուցանել // քեզ, գի և դու ծանուցես
մահտեսի Կարապետին, իմա առ այն, զի անգամ մի ևս եմք գրեալ քեզ
զորպէսն նորին և զանատ առեալ ի նմանէ վասն առելոցն ի մէնջ,
յղեալ եմք առ քեզ։ Իսկ այժմ ևս հաշիւ արարաք ի մէնջ հասեալն նմա
ցարդ, որ բաց ի Կ (60) ղուռուշէն ի Հայրապետէն առեցելոյ, զոր դար-
ձեալ հասուցեալ էք նմա, ԱԾ (100) ղուռուշ է իբրու, բանի մի փարայ
պակաս։ Սա յառաջագոյն գնաց ի Քանաքեռ գիւղն, իբր առ ընտանիս և
անդ հիւանդացեալ սաստկապես և վիրավորեալ ևս, սայլիւ բերեալ
եսուք յԱթոռս, մինչև ցայժմ առողջացաւ և շրջի։ Զյատուկ փոքրաւոր
է կալեալ ի վարձու։ Ի սրբոյ Աթոռոյս ի միաբանից կերլեացն թային
եմք կարգեալ իւրն և փոքրաւորին հանդերձ գինւով և օղեաւ, և բաց
յայսցանէ, ի շաբաթն, ըստ մահտեսւոյ կամեցելոյն, Բ (2) ղուռուշ ևս
տամք։ Բայց այնու ոչ բաւականանայ և տրտունջ առնէ և զԴ (4) ղու-
ռուշ խնդրէ։ Վասն որոյ մինչ ձանձրանամք ի տրտնջելոյն, ի շաբաթն
Գ (3) ղուռուշ տալով, նայիմք պատասխանւոյ գրոյս, զի հարցեալ
զմահտեսի Կարապետն, գրեսցես մեզ զկամսն՝ թէ Գ (3) կամ Դ (4)
ղուռուշ տալ կամի, թէ ոչ։ Եւ թէ ոչ կամիցի, այնուհետև այլ ոչ ևս
զԳ (3) ղուռուշ տամք, եթէ տրտնջիցէ սա և եթէ գինչ և կամիցի, ա-
րասցէ։

Ահա կարճ ի կարճոյ ամենայն գրեցելոցդ բանից ի մայիսի ԻԷ
(27) արարաք զպատասխանի։ Յետ որոյ այլես թուղթ էհաս ի քէն, որոյ
զպատասխանին ևս որիշ գրեցաք, որ եղև երկրորդ թուղթ։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թ. և յօգոստոսի ԻԶ (26)։

Եւ մինչ զառաջին թուղթն գրեալ աւարտեցաք, ժամանեաց առ մեզ
ի յօգոս. ԺԵ (15) և երկահատոր թուղթ քո, գրեցեալ ի յունիսի ել
և զայն ևս ընթերցեալ իմացաք, յորում գրեալ բանիցդ կիսոյն իբր
պատասխանիք եղեն յառաջին թղթոցն, որովհետև յառաջ ևս էիր գրեալ։
Իսկ միւս նորոգ գրեցելոցդ յայսմիկ նեղ ժամու զհամառօտ պատաս-
խանիս ընկալ երկրորդ թղթովս ի միամտութիւն քեզ, զի յոյժ եմք
պաշարեալ զանազան հոգօք և կամէաք զայս գրեանքս շուտով ուղևորել։

Արդ, գրեալ էիր նախ զապիչ Պօղոսի և զընդ նմին գրեալ և յղեալ
թղթոց մերոց հասանիլն յայգր և առ քեզ և զքո առ նա և առ հայ հո-
ռոմսն հասանելի գրամսն, ըստ գրեցելոց մերոց, հասուցանելդ և զայլ
պարագայսն, զորս իմացեալ միամիտ եղաք և գոհունակ զսիրելւոյդ։
Ապա գրեալ էիր և զյապրիլի ԻԷ (27) և զի մայիսի ԺԶ (16) գրեալ
թղթոց մերոց ևս հասանիլն, հանդերձ Յովսէփ պետի Բ (2) փոլիցայից,
ի քէն հասուցելոցն սաղիմայւոց և բոյդ յղեալ իրաց գնոց զապրերովն։
540 Յայնց կողմանց ևս միամտութիւն եղև մեզ։ Այլև զփօլի // ցայատրու-
թիւնսդ յիշեալ էիր, թէ ԲՌ (2000) յառաջ եմ տուեալ Գօրօյենց տղայիս։

Յետոյ ԳՌ (3000) իբր առ Անապատցի Մովսէսն և ԱՌ (1000) ևս առ
Հաճի Բաղն ըստ գրոցելոյ Հայրապետին հասուցի և դարձեալ առ ևս
եսու Գօրօյենց տղային։

Արդ, այս ԷՌ (7000)-իս աղագաւ միանգամայն զմի զապղ եմք
գրեալ։ Իսկ զկնի սոցա, որ ԲՌԿԷ (2067) ղուռուշ և կէս ևս էիր տուեալ
Գօրօյենց տղային, ահա զԿԷ (67) ղուռուշ և կէսն յայնմանէ հաշուեալ
ի վերայ ժամացուցաց գնոցն, ԲՌ (2000)-ին աղագաւ ևս նոր ահա
ի վերայ ժամացուցաց գնոցն, ԲՌ (2000)-ին աղագաւ ևս նոր ահա
զապղ գրեալ յղեցաք, որպէս ի վերոյ ևս յիշեցաք։ Ահա ԵՌ (5000) Գօ-
րօյենց տղային միայն եղեր հասուցեալ։ Այժմ գրես, թէ դարձեալ
վերստին ԲՌ (2000) ևս եսու ըստ աղաչանացն։ Առ որ տարակուսեցաք,
թէ մի գուցէ յառաջնոց նմա տուեց[ե]լոցդ յիշես, ըստ որում և վէքիլ
Հայրապետն ևս գեռ բան չէր գրեալ, վասն որոյ այժմ զապղ ոչ գրե-
ցաք յերկրայս գոլով։ Բայց թէ այս ԲՌ (2000)-ս ևս որիշ է ի յառաջ-
նոցն, այսինքն ի ԵՌ (5000)-էն (որով իբր ԷՌ (7000) է լինելոց նմա
միայն տուեցեալդ), ի հարկէ յայս ուսրսս Հայրապետն գրեսցէ և մեք
միամտեալ յայնժամ զյատուկ զապղ յղեսցուք։

Ի մահտեսի Գալուստէն զՉԾԼ (630) ղուռուշ առնուլդ ևս, ըստ
գրեցելոյ Բասրայու Ստեփաննոս տղային և պարոն Յովաննէսին, ի
կողմանէ հատանելոյ նոցա զհաշիւն ընդ մեր նուիրակին, իմացաք և
զառ նոսա զմիամտութիւն գրելդ յայդմ կողմանէ լաւ համարեցաք։ Մեք
ևս ի դէպ ժամանակի գրեսցուք։ Իսկ և ի փետր. Ի (20) բոյդ խնդրեալ
և մեր յղեալ թղթոցն և ի Զմիւռին ևս գրեցեալ թղթոց մերոց գիպուա-
ծոց հանդիպելոյն աղագաւ, որ գրեալ էիր, զգուշացուցաք զողայսն և
այսուհետև մուշամպայով եմք յղելոց զկողմանցդ թուղթսն։

Ի ծանուցանելդ զորպէս յղելդ զգրեանսն Զմիւռնոյ, յիշեալ էիր և
զանգլուխ ժանտախտն և գեռ յԱստուածատուր աղայէն զպատասխանի
չառնուլդ, և յոյժ տարակուսեցաք։ Աստուած ողորմեսցի և բարձցէ ան-
տի զցաւն զայն։ Ի լսելիդ անդուստ զորպիսութիւն, ծանուցես մեզ։
ԶՈւսումէլու նոր նուիրակ Գրիգոր պետի կոնդակն ընդ միւս թղթոցն
յղելդ և զքո ևս յառաջ և յետոյ զորքան գիր գրելդ առ նա և առ այլսն և
զխարդ աշխատիլդ վասն արդեանցն սրբոյ Աթոռոյս առ ձեռն գալոյ,
գիտցեալ օրհնեցաք զհաւատարմութիւնդ, և ևս 'առաւել կարողացուսցէ
զքեզ Տէր ի յօգնութիւն մեզ։

541 Պօլիոյ չԿարապետն, որ Յարութիւն վարդապետն և զքեզ անպատիւ
է արարեալ, զոր և դուք գրեալ էք եղբօրն նորա, զվախճանն որպէս և
լինիցի, ցեկուսցես մեզ։ Մահտեսի Խըտըր, սիրելին մեր, որ զխոստա-
ցեալն տուեալ է, բարեաւ մինչ ծաղկումն սրբոյ տաճարիս իջցէ ի վե-
րին տեղեացն ի սիւնսն։ Յայնժամ զյիշատակն զորին գրեցուցանելոց
եմք ի վերայ սեանց միոյն և իւրեան օրհնութեան թղթով ազդելոց։
Այլև սիրելին մեր, մահտեսի Կարապետ աղայն, որ ի լրացուցանել
զծախսն սրբոյ Աթոռոյս ներքին պարսպի աղբերն և շուրջանակի առու-
ոյն, զԲԾ (200) ղուռուշ ևս է տուեալ։ Շնորհակալութեամբ ընկալաք և
ահա զաղբեր վերայի Բ (2) մեծամեծ քարինսն պատրաստեցուցեալ
մեծ և լաւ, քան զառաջինսն, դնել եսուք ի տեղիսն։ Յորոց միոյն վերայ
ևս զօրհնեալ մահտեսւոյ յիշատակն արձանագրելոց եմք և օրհնածիր
գրով զինքն միամտեցուցանելոց։ Եւ ի նմին թղթոջ յիշելոց եմք և զնոր
շնորհեալ յիշատակսն աստուածակերտ սրբոյ տաճարիս քեզ յանձնե-
ցեալ, զորս գրեալ էիր, այսինքն՝ զերիս վարագոյրսն և զերիս խալի-
չայսն սեղանոյ։ Շնորհակալ եմք զՔրիստոսի զօրացեալ մահտեսի

Կարապետէն և վասն սրբոյ Աթոռոյս վախուց արարեալ տանն: Բայց
որ կամի զսրբոյ եկեղեցւոյս մի սիւնն ևս յիշատակ առնել և զծախսն
ի կողմանէ նոյն վախուց տանն հանէ, այդ օտար իմն թուեցաւ մեզ:
Եթէ բաղձայ զհոգևոր յիշատակ ունիլ ի Տանն Աստուծոյ, թող ըստ
կարգի արդիւնաւորութեամբ բան տեսանէ, իսկ թէ չկամի, կամ թէ կա-
րողութիւն չունի, յումմէ՞ բռնադատի այդպէս նաշարու բան առնել:
Ահա զմիս երիս սիւնսն յիշատակ են առեալ այլք և զմիացեալ մի հատս
ևս բազումք խնդրեալ են, որպէս գիտես: Եթէ ի նոցունց հատանիցեմք
և ի խնդիր յատկեղ սիրելւոյդ մերոյ խոնարհիցիմք, դա ևս պարտի
զսուրբ Աթոռս յայնմ կողմանէ յատկապէս շահել, զի յաւիտենական
յիշատակ ստանայ ինքեան, որ ոչ է նման այլում բանի և առաջին
խնդրողացն ևս կարիցեմք իրաւամբ տալ պատասխանի: Ինքն գիտէ,
որպէս կամիցի, մեր սիրելի է:

Եւ դու զորպէսն գրեսցես մեզ թրակացի հանգուցեալ տիրացու
Յովաննիսի դրամոյն զհետ լինիլդ, նաև զախտաւոր մահտեսի Լութֆին
զտանելդ և զտալուցուն խնդրելդ և նորա զաղուհացն վասայ դնելն
ևս իմացաք:

542 Զմիւռնոյ բասմաճոց բանսն ևս, որ խօսեցեալ ես ընդ սիրելւոյն
մերոյ պարոն տիրացու Գէորգին, զորպէ՞ս լինիլն, ի հարկէ, գրեալ ես
ցայժմ կամ թէ ոչ, գրեսցես: Ահա ի յունիսի ելն գրեալ թղթոցդ հար-
կաւորացն բանից գրեցաք զպատասխանիս:

Դարձեալ յառաջ, քան զայս զխահի եմք յղեալ առ քեզ և զդե-
ղորայս և զվարաղ խնդրեալ: Այժմ ևս նոյն սրահւոյ օրինակն յղեցաք:
Հալպաթ շուտով հոգացեալ՝ յղեսցես զդեղորայսն և զվարաղն, որ եկե-
ղեցւոյ ծաղկմանն քեատար չլինիցի: Մինչև ցձմեռն բոլին իսպառ վեր-
ջանայ: Բայց ծաղիկն կարծեմ թէ թերի մնացէ, վասն զի ոչ ըստ
առաջնոյն, այլ բաց ի զկամարսն և զմիս տեղիսն ծաղկելոյն, յորս յա-
ռաջ ևս գոյր ծաղիկ, զայլ պատշաճաւոր տեղիս ևս ծաղկեցուցանեմք և
կամիմք բազմապատիկ առնել, քան զառաջինն: Ըստ որում տեղիքն իսկ
ցուցանեն և յոյժ վայելուչ և հարկաւոր իսկ է եկեղեցւոյս սրբոյ շքեղ
գոլն: Վարդապետ Յովնաթանն ևս օրհնեալ լիցի, որ մոռացուցանէ
զնախկին ծաղիկսն և յոյժ լաւ ծաղկէ կամաւ և ջանիւ՝ ասելով, թէ ծե-
րացեալ եմ և այսպիսի հոգեշահ տեղւոյ պատահեալ ինձ ևս յիշատակ
է պէտք: Իսկ արտաքոյ եկեղեցւոյն ևս ի բոլոր որմոց ներքին կող-
մանցն զչորս կարգ քարինսն, որք յոյժ հնացեալք և անշքացեալք էին,
փոխել ետուք և կարմիր քարամբք նորոգեցաք ի գաւթի աջ կողմանէն
սկսեալ շուրջանակի, մինչև ի ձախ կողմն և ի յետ կոյսն Աստուա-
ծածնի սեղանոյ բրբոյն ի վեր, քան զնորոգեալ կարգս քարանցն զծաղ-
կեալ արձան դնել ետուք և ի վերայ նորա զմարմարոնեայ քանդակեալ
խաչ՝ վասն յիշատակագրութեան: Այժմ զեկեղեցւոյ յետին մեծ փարշն
նորոգեցուցանեմք, զոր Տէր յաջողեսցէ: Գոն զկնի սոցա հարկաւորագոյն
շինելիք սեղանատան կէսն, որ քարով չէ, և խախտեալ խուցքն արևելա-
կողման, որոց շինելոյ զնիւթսն ևս հոգամք: Գրեցի, զի գիտասցես և
ուրախասցես: Բայց թէ զորքա՞ն նեղութիւնս կրեմք, կարես իմանալ,
զի թէ ի հասարակ մարդկանց սովեալ է երկիրս, ապա որքա՞ն ի պի-
տանեաց և ի վարպետաց, որք ընաւ չգոն: Մանաւանդ խառնակութիւնն
և աղմուկն ևս անպակաս: Այլ մեք բազմաւ ջանիւ և ողորմութեամբն
Աստուծոյ զայսոսիկ այսպէս հոգամք: Այլև թէպէտ հոգք և զրութիւնք

մեր անպակաս նեղին զմեզ, սակայն պատառելով զմէջ բանիցն, յա-
ռաջ քան զայս զհոգևոր որդեակն մեր և սիրելին քո՝ զՍնանիայն յու-
543 ղարկեցաք ի սուրբ Կարապետի շնորհա//տու վանսն՝ ի կատարումն
ուխտին: Որ և գնացեալ և զուխտն իւր կատարեալ և զզօրութիւն ընկա-
լեալ ի հրաշարար գերեզմանէն սրբոյ, դարձաւ ի սուրբ Աթոռս: Այժմ
ողորմեալ յԱստուծոյ ի պաշտօնս եկեղեցական ընթերցուածոց հսկի սա-
կաւ առ սակաւ: Ակն ունիմ յԱստուծոյ իսպառ հաստանել զցան:

Ողջ լեր ի Տէր և յանձնեալ ի գթութիւնս նորին: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուիս, ի յօգոստոսի ԻԶ (26) և ի սուրբ
Աթոռս Էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 534—543

1034. 1784 թ. 26 օգոստոսի—Թուղթ ի մեծն Պոլիս առ պատրի-
արքն և իշխանսն հասարակապէս վասն կամիլոյն ոմանց ոչ նոր Տօ-
նացուցին վարիլ, այլ հնովն: Պատուէր և յորդորումն՝ խափանել զայն
կամսն և բառնալ զտարաձայնութիւնն:

Ձեռ. № 2803, էջ 643—649

1035. 1784 թ. 26 օգոստոսի—Թուղթ ի մեծն Պոլիս առ Մարգար
ամիրայն, ևս վասն վերնոյ թղթոյդ բանիւ համառօտապէս, որ և առ
ոմանս ևս գրեցաւ:

Ձեռ. № 2803, էջ 649—651

1036. 1784 թ. 26 օգոստոսի—Թուղթ ի Կարին առ քահանայսն
և իշխանսն, ի պատասխանի մահսարականի թղթոյն նոցա, որք զա-
ռաջնորդէն զանկատեալ էին վասն զբազումս անարժանս ի քահանայս
ձեռնադրելոյն և այլոց անվայել իրաց, և զշարժէն մեծէ ևս ծանուցա-
նելով, զաղօթս և զաղաչանս առնել էին խնդրեալ: Առ որս գրեաց
զմխիթարութիւն և զօրհնութիւն վասն երկիւղալից լինելոյն նոցա ի շար-
ժէն և վասն առաջնորդ Պետրոս պետին ևս սրտադիւրութիւն, թէ գրե-
ցաք նմա գալ, ուղևորեսցիք սիրով:

Ձեռ. № 2803, էջ 651—654

1037. 1784 թ. 26 օգոստոսի—Թուղթ ի մեծն Պոլիս առ Արևելցի
տիրացու Գէորգն և Աստուածապահն, վասն թէմէսուկին իւրեանց յետս
դարձուցանելոյն և հաշուի նորին:

Ձեռ. № 2803, էջ 654—655

1784 թ. 28 օգոստոսի—Թուղթք ի Ղարս

1038. Թուղթ մի առ Գէորգ աղայն, զոր գրէ սրբազան Վեհապետն
ընդ վէքիլ Առաքելին առ նա սակս պիտանաւորութեան տախտակացն
եկեղեցւոյ և գերանացն ձիթհանքին, զի ընտրեալ լաւագոյնն, յղեսցէ
ընդ նմա:

1039. Թուղթ մի առ նորին առաջնորդ Յովհաննէս վարդապետն,
պատուէր, զի զերկու հարիւր տախտակսն մեր, որք են անդ ի գեղջ մի,
յանձնեսցէ ձեռամբ վէքիլ Առաքելին առ մուլքանաչի Մկրտիչ վարդա-
պետին, որ և նա տացէ մաստարացւոցն:

1040. Թուղթ մի առ նորին նուիրակ Աստուածատուր վարդապետն,
զոր գրէ սրբազան Վեհապետն առ նա սակս որպիսութեանն իւրոյ, թէ
զիա՞րդ կեաս, կամ ու՞ր թողեր զգործդ և կամ վասն է՞ր յամենաս առ

ի գալոյ ի սուրբ Աթոռս: Ուրեմն հարկիւ զորպէս զոյգ և ուր լինիցի ծանուցես մեզ, թարց զանգատութեան:

Գրեցաւ ամսոյս ԻԸ (28):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 25

1784 թ. 31 օգոստոսի—*Թուղթք ի Թիֆլիզ*

1041. Թուղթ մի առ պարոն Յովսէփն Նազարբէկեան, ի պատասխանի ի օգոստոսի Զ (6) գրեալ թղթոյն առ սրբազան Վեհապետն, խնդրէ սակս աղքատաց զանձանակին զանձապետ հաստատել կոնդակաւ, և սրբազան Վեհապետն գրեաց նմա՝ չգիտեմ թէ որպէ՞ս է, յամենայն յեկեղեցիս պարտի՞ հաստատիլ զզանձանակն աղքատաց, թէ՞ ոչ, վասն որոյ պարզապէս գրեսցես մեզ, և մեք, գիտացեալ ըստ խնդրոյդ, հաստատիցուք:

1042. Կոնդակ մի յորդորական ի վերայ երկրին Թիֆլիզու սակս Երուսաղէմայ նուիրակ Ֆարմանօղլի Սարգիս վարդապետին, զի բարւոքապէս ընդունիցեն զնա, որ ընդ նմա յղեցաւ:

1043. Թուղթ մի առ նորին առաջնորդ Կարապետ վարդապետն և առ տէր Ղազարն, յանձնարարութիւն սակս Ֆարմանօղլի Սարգիս վարդապետին. ընդ սմա եւ փուսուլայ մի առանձին յատուկ ինքեան սակս գալոյն իւրոյ աստ:

Գրեցան ամսոյս ԼԱ:

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 26

1784 թ. 7 սեպտեմբերի—*Թուղթք ի Ղարս*

1044. Թուղթ մի առ հասարակ քահանայսն, իշխանսն և բոլոր ժողովրդսն սակս արձակման ի կապանաց տէր Մկրտիչ քահանայի միոյ, զի այսուհետև կատարեսցէ զկարգ քահանայութեանն իւրոյ: Որ նա եւ էր անմեղ:

1045. Թուղթ մի օրհնութեան առ Գէորգ աղայն, ի պատասխանի ի յօգոստոսի ԺԹ (19) գրեալ թղթոյն, յորում ծանուցեալ էր զպէսպէս վշտակրութիւնս ինքեան և իւրայնոցն, և զկնի քանի մի աւուրց զազատելն: Եւս խնդիր սակս տէր Մկրտիչ քահանայի արձակմանն, որ և սրբազան Վեհապետն ըստ խնդրոյ սորին արձակեաց և յղեաց առ նոսա օրհնութեան կոնդակաւ:

Գրեցաւ ամսոյս Է (7):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 26

1784 թ. 14 օգոստոսի—*Թուղթք ի Խոյ*

1046. Թուղթ մի մեղադրական առ չորեսին մէլիքսն, այսինքն՝ Խուտավէրտին, Ստեփաննի, Ենկօյին, Յարութիւնն և Սաֆարն յաղագս առաջնորդին իւրեանց:

1047. Թուղթ մի առ տեղւոյն նուիրակ Եփրեմ վարդապետն, ի պատասխանի գրեալ թղթոյն առ Մկրտիչ վարդապետն ի կողմանէ տեղ-

ւոյն առաջնորդ Ստեփաննոս վարդապետին սակս ոմանց գլխաւոր իշխանաց չընդունելոյն զնա:

Գրեցաւ ամսոյս ԺԴ (14):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 26

1048. 1784 թ. 14 սեպտեմբերի—*Առ Իսկիտարու սուրբ Խաչ եկեղեցւոյ զանձապետ Ղազարոսն:*

Ձեռ. № 2803, էջ 463—464

1049. 1784 թ. 16 սեպտեմբերի—*Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան առ Բայազիտ նստող արապկիրցի Սահակ աղայն, վասն յղեալ ինչ ընծայիցն և վասն յղեալ ճոթիցն ի կողմանէ պարտուցն առեցելոյ ի դրամոց Աթոռոյս միաբանութիւն:*

Ձեռ. № 2803, էջ 459—460

1050. 1784 թ. 19 սեպտեմբերի—*Թուղթ ի սուրբ Երուսաղէմ առ սրբոց Յակոբեանց վանից միաբան Յարութիւն և Պետրոս վարդապետսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց անտուստ գրեցելոյ:*

Ձեռ. № 2803, էջ 460—462

376 *1051.* 1784 թ. 20 սեպտեմբերի—*Թուղթ օրհնութեան և յանձնարարութեան առ Սչովայու քաղաքի և կամ նոյն կողմանց եւ իշխող պարոն Էնծէնպէրք իշխանին (որ է նամսայ) վասն մերազնէիցն, որք ի Սչովայ, և վասն նոր կարգեցեալ առաջնորդ Ստեփաննոս վարդապետին (որ նուիրակ եւ էր Ռուսմէլու):*

Յարմէ ժամանեացի...

Եւ ընդ ամենառատ և շնորհաձիր օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում: Զի գրէ իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն, թէ համբաւ բարի պարարէ զոսկերս, որ արդարև ճշմարիտ իսկ է, վասն զի որպէս համբաւն չար և վատ տրտմեցուցանէ զմարդն և մաշէ զոսկերս՝ զրկելով ի յուրախութենէ, ընդդէմ այնմիկ և համբաւն բարի զուարթացուցանէ և գնծուն առնէ՝ բացամերժելով ի նմանէ զներհական բերկրութեան:

Արդ, ըստ այսմ, աստուածայոյն բանի իմաստնոյն, համբաւքն բարութեան, զորս ի յարգութենէ ձերմէ լսեմք, պարարեցուցանեն զոսկերս մեր, քանզի թէպէտ մաշիմք և տաժանիմք աստէն ի յանտերացելումս
377 *երկրիս ի չարա//շատ ժամանակիս ի դժնեայ վշտացուցչաց մերոց, սակայն այդպիսեօք քաղցր լրովք ոչ սակաւ մխիթարիմք և սրտադիւր լինիմք, վասն զի բազմիցս լսեմք զբազմագով որդիութիւնս պատուելոյդ, թէ որպէս իմացութեամբ և բարի հանճարով կառավարես ընդ ձեռամբ քով եղեալսն, և թէ որչափ սէր և գութ ունիս առ մերազնեայ ժողովուրդս, և ցուցանես նոցա զքաղցրութիւնս և զխնամս: Ուստի և մեք, գոհունակ լեալ զքէն, այսու զմեզ պարտականս սիրոյ վարկանելով կամիմք արկանել առ ցանկալիդ զսէր ճշմարիտ, որում թէպէտ ոչ տեսութեամբ և ոչ գրով մինչև ցայժմ չէաք ինչ ծանօթ, այլ այժմ քաղցրալուր համբաւ սիրելւոյդ յարաքարշեաց զմեզ ի սէր քո: Հայցեմ ուրեմն ի յազնուութենէ քումմէ, զի և դու առ մեզ զնոյն ճշմարիտ սիրոյ սերտութիւն երևեցուսցես սիրանիշ գրով և արդեամբ՝ ունելով զմերազնեայսն ի խնամս քո առաւել, քան զառաջինն, մանաւանդ առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ յարամնայ սիրով զբարեկամութիւնս առնել:*

Եւ որովհետև Սջովայու օրհնեցելոյ քաղաքի և կողմանց մերազնեայ ժողովուրդքն զառաջնորդ էին խնդրեալ, վասն որոյ և մեք, ահա,

զսիրելին մեր և զհարազատ որդին սրբոյ Աթոռոյս՝ զտէր Ստեփաննոս հանճարունակ վարդապետն և զարհիեպիսկոպոսն առաջնորդ կարգեցաք սրբոց վանորէից նոցին. զնա եւ ի սէր ունիլ մաղթեմ և զասպնջականութիւն առնել նմա և բարեպատշաճ բանից նորին օժանդակել, որ յիրաւի մեզ լինին համարեցեալք և յայժ առաւել շնորհակալ լինելոց եմք զսիրոյդ: Եւ ի վերայ այսր ամենայնի, մի՛ իբրև զօտարս զմեզ վարկանիցիս, այլ որպէս զօգտաւէտ բարեկամս, քանզի և մեք զայդս ունիմք առ ձեզ, մանաւանդ ազգովին և համայն միաբանիւք աստուածաէջ սրբոյ գահիս, աղօթող եմք մշտապէս վասն կենաց և բարեյաջողութեան քրիստոսազօր և խաչապսակ, ինքնակալ և օգոստափառ մեծի կայսերն Յովսեփայ և ամենայն զօրապետաց և զօրաց իւրոց և յաղագս տիրահաստատ տէրութեան իւրոյ և Աթոռոյ և համայն արքայական
378 ժառանգութեանն, զոր // ամենաթագաւորն Քրիստոս պերճ, յաղթող և երկնելի պահեսցէ միշտ և ընդ երկայն աւուրս արասցէ հանդերձ ամենայն իւրայնովքն և հանապազ աճարկու արասցէ ի վերայ թշնամեաց՝ ի փառս ամենասուրբ անուան իւրոյ, ի պատիւ խաչին կենսատուի, ի պարծանս հաւատացելոց և ի յուրախութիւն մեր:

Իսկ և վասն բարեպաշտութեան ձերոյ ես հայցեմք ի Տեառնէ շնորհել ձեզ զերկարութիւն կենաց, զզօրութիւն և զկարողութիւն, որ և օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ, պատեսցէ յամենայն վտանգից չարաց, և պահեսցէ ի յողորմութիւնս և ի գթութիւնս իւր՝ ի բարեյաջողութեան, ի յառաջադիմութեան և ի պայծառութեան:

Արդ, ահա զբարեհամբաւութիւնս ձեր լսելով և գոհունակ լինելով, զայս օրհնութեան թուղթս մեր գրեցաք առ յարգութիւն ձեր իբրու առ ի յայտնի կացուցանել ձեզ զշնորհակալութիւնս մեր, զոր ունիմք զձէնջ: Խնդրեմ ապա ի զերազնիւ սիրելւոյդ, զի զամենայն բարեշնորհութիւնսդ քս, որ առ մերազնեայ ժողովուրդսն յայդկոյս եղեալս, մի՛ նուազեցուցես, այլ մանաւանդ բազմապատկեսցես և վերոյ յիշեցելոյ Ստեփաննոս վարդապետին զքաղցրութիւն և զմարդասիրութիւն ցուցցես և առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ զճշմարիտ բարեկամութիւն հաստատեալ՝ սիրանիշ գրովք զվշտագնեալս մխիթարեսցես: Որովք առաւել ևս կացուցես զմեզ պարտականս միշտ աղօթելոյ և զբարիս խնդրելոյ վասն ձեր:

Ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորհս սրբոյ խաչին նորին: Ամէն:

Գրեցաւ ի 1783 թուոջ Փրկչին ի սեպ[տեմբերի] 20 և ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ:

Ձեռ. № 2803, էջ 376—378

1052. 1784 թ. սեպտեմբեր—*Թուղթ օրհնութեան և շնորհակալութեան ի Գիլար առ Անդրիասի որդի պարոն Բաղդասարն, վասն յիշատակատուութեանն սրբոյ Աթոռոյս ձեռամբ Յովսէփ վարդապետին:*

Ձեռ. № 2803, էջ 453—455

1053. 1784 թ. [սեպտեմբեր]—*Թուղթ ի մեծն Պոլիս առ Պալաթու կողման իփակչիսն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն նորապէս հաստատելոյն ի մէջ իւրեանց զգանձանակ յանուն սրբոյ Աթոռոյս՝ յորդորմամբ նուիրակ Իսահակ վարդապետին մերոյ և զժ (10) ղուռուշ ևս արդիւնս տալոյն ի նմանէ սրբոյ Աթոռոյս:*

Ձեռ. № 2803, էջ 456—458

1784 թ. 23 սեպտեմբերի—Թուղթք յայլ և այլ տեղիս գրեալ

1054. Թուղթ մի առ պատրիարք Յովակիմ վարդապետն, ի պատասխանի յապրիլի Զ (6) գրեալ թղթոյն, յորում գրեալ էր յանձնարարութիւն սակս Սարգիս վարդապետին, որ գնայր ի Թիֆլիզ նուիրակելոյ. ես խնդիր վասն Գէորք վարդապետին ձեռնադրութեան, որ և սրբազան Վեհապետն ըստ խնդրոյ նորին արար: Եւս շնորհակալութիւն սակս յղեալ ընծայիցն:

1055. Թուղթ մի ի Ղօշավանք առ նորին առաջնորդ Յովհաննէս վարդապետն, ի պատասխանի գրեալ թղթոյն ընդ Առաքելին մերոյ սակս գերանացն:

Գրեցաւ ամսոյս ԻԳ (23):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 27

1784 թ. 27 սեպտեմբերի—Թուղթք ի Թիֆլիզ

1056. Թուղթ մի առ Նանուեցի մահտեսի Սարգիսն և մահտեսի Յակոբջանն, զի ի վերայ նոցա գոյր աստ մէկ պահարանաւ թուղթ ի Հալապու եկեալ, զորս առ սոսա պարտ էր հասանել, որ և սրբազան Վեհապետն յղեաց՝ հանդերձ այս օրհնութեան թղթովս, յորում գրեաց ի կողմանէ եկեղեցւոյն, թէ զի՞նչ արարիք, աւարտ հասուցի՞ք, թէ ոչ:

1057. Թուղթ մի առ նորին առաջնորդ Կարապետ վարդապետն:

Գրեցաւ ամսոյս ԻԷ (27):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 27

1058. 1784 թ. 14 նոյեմբերի—*Թուղթ շնորհակալութեան ի Պոլիս առ Պալաթու գանձապետ Իսահակ ամիրայն վասն հասուցեալ գանձանակագրամիցն նուիրակացն մերոց՝ Մինաս և Սահակ վարդապետացն:*

Ձեռ. № 2803, էջ 462—463

1059. 1784 թ. 14 նոյեմբերի—*Թուղթ շնորհակալութեան ի Պոլիս ի վերայ խասգիւղի ժողովրդեանն վասն գանձանակական արդեանց նոցին հասուցելոց նուիրակ Մինաս և Իսահակ վարդապետացն, ձեռամբ Յովհաննէս ամիրային, որ ի զարմէ Հովուեանցն էր:*

Ձեռ. № 2803, էջ 543—544

1060. 1784 թ. 14 նոյեմբերի—*Թուղթ շնորհակալութեան ի Պոլիս առ Պալաթու դպիրսն վասն յիշատակ տալոյն նոցա զխաչ մի ձեռամբ նուիրակ Իսահակ վարդապետին:*

Ձեռ. № 2803, էջ 544—546

1061. 1784 թ. 14 նոյեմբերի—*Թուղթ շնորհակալութեան վասն գանձանակական արդեանց ի մեծն Պոլիս առ ժողովուրդսն սրբոյ Աստուածածնի եկեղեցւոյն, որ ի Ղումղափու:*

Ձեռ. № 2803, էջ 546—547

1062. 1784 թ. 14 նոյեմբերի—*Դարձեալ շնորհակալութիւն վասն գանձանակի արդեանց առ Ղալաթիոյ սրբոյ Լուսաւորչի եկեղեցւոյ ժողովրդեանն:*

Ձեռ. № 2803, էջ 547—548

1063. 1784 թ. 14 նոյեմբերի—*Դարձեալ շնորհակալութիւն վասն*
հասեալ գանձանակագրամից առ Իսկիտարու սուրբ խաչ եկեղեցւոյ
ժողովուրդն։

Չեռ. № 2803, էջ 548—549

1064. 1784 թ. 14 նոյեմբերի—*Առ Իսկիտարու սուրբ Կարա-*
պետ եկեղեցւոյ ժողովուրդն։

Չեռ. № 2803, էջ 549—550

1065. 1784 թ. 14 նոյեմբերի—*Շնորհակալութիւն առ Օրթա-*
գեղու ժողովուրդն վասն գանձանակագրամին իւրեանց և վասն Բ (2)
արծաթեայ շամատան յիշատակացն տալոյ սրբոյ Աթոռոյս, ձեռամբ
Մինաս վարդապետին։

Չեռ. № 2803, էջ 551—553

553 *1066*. 1784 թ. 14 նոյեմբերի—*Թուղթ ի մեծն Պոլիս առ սրբոյ*
Աթոռոյս նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի թղթոց նորին
ի օգոստոս ԺԲ (12) գրեցելոց։

Յորմէ ճշմարտիւ սիրով, քրիստոսականաւ սուրբ ողջունիւ և բազ-
մագունիւ օրհնութեամբ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ
մերոյ, հարազատ և յոգնաշխատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակայ
աստուածաբան վարդապետիդ։ Զի ի յօգոստոսի ԻԶ (26) զթուղթս գրեցաք
քեզ երկարօրէն, բազմօք որպիսութեամբ և հանդերձ խնդրեալ թղթովքդ
վասն Տօնացուցի բանին և այլևս թղթով յղեցաք առ քեզ։ Նաև քան
զայն յառաջ ես ի յունիսի ԺԷ (17) և ի յուլիսի ԺԶ (16) զգրեանս եմք
գրեալ առ քեզ՝ ծանուցանելով զորպիսութեանց երկրիս և զգիպուածոց
սրբոյ Աթոռոյս, որք ի հարկէ հասեալ են առ քեզ, յորոց և իմացեալ
ես զինչ անցանիլն ընդ մեզ։ Իսկ այժմոյս էհաս առ մեզ թուղթ քո
վեցահատոր, գրեցեալ ի յօգոստոսի ԺԲ (12), զորս ընթերցեալ իմացաք
զամենայն գրե[ա]լսդ։

Արդ գրեալ էիր վասն աշովացւոցն երկարապէս, թէ յառաջ գիր
էի գրեալ առ նոսա, ապա եկն անտի վանցի Կարապետ վարդապետ
ոմն և զայս ինչ ասաց, և ես կրկին թուղթ գրեցի նոցա և յանդերձ յա-
տուկ թղթով առ աղաչայ Յովաննէսն և առ որդիսն, յղեցի և այլն։ Զորս
լաւապէս իմացաք և յոյժ բարւոք ես արարեալ սանմբ։ Եւ զօրինակն
554 *առ նոսա գրեալ թղթոյդ, // որ յղեալ էիր, տեսաք և առաւել ես միա-*
մտեցաք։ Բայց թէ պատասխանի զայցէ առ քեզ, գրեսցես մեզ և թէ առ
մեզ ես գիր գրիցեն, շուտով յղեսցես։ Եւ թէ նոյն Կարապետ վարդա-
պետն գնաց կամ թէ յայդր է և զի՞նչ առնէ, ծանուսցես մեզ։ Իսկ որ
հարկես հոգս առնել, ահա ցարդ նայէաք ի նոցունց գիր առնուլ և
զորպիսութիւնսն իմանալ, տեսաք թէ չեղև, հիւսիսակողմամբն գիր
յղելոյ եղաք առ կայսրն գէրմանացւոց, բայց զի նորին դրան որպիսու-
թեանն ես բնաւ գիտակ չեմք, գրեալ եմք Յովսէփ պետին մերոյ՝ իմա-
նալ և գրել մեզ, զի յայնժամ գրեսցուք և յղեսցուք։ Տակաւին սպա-
սեմք Յովսէփ պետի գրոյն, որպէս և յառաջ ես եմք գրեալ քեզ։

Իմացաք ես զվարիս հնարելն տեղեկանացդ վասն հանգուցեալ Ղա-
զարի կայիցն և զգրելանս շինելն և առ Ինկլիզու թագաւորն յղելոց
գոլն։ Եւ դու ես, որ ըստ խորհրդակցութեան հարազատաց զգրոյ օրի-
նակ էիր շինեալ, գրել մեզ այնպէս առ Բոմբայու զատաստանատունն,
այնմ ես հաւանեցաք, այլ զի հետևումն զոցին չէ առեալ զկատարումն,

նայիմք բոյդ դարձեալ գրելոյ. զի թէ զթուղթն յղեալ գրեսցես, մեք ես
գրեսցուք զմեր գրելին։

Պատմեալ էիր լիապէս և զգործոյդ որպիսաբար յառաջ ընթանա-
լոյն Աստուծով և զխոշընդակն ընթացիցն ոմանց ոմանց՝ հանդերձ յա-
տուկ յատուկ նշանացուցութեամբն։ Զորոց տեղեկացաք։ Բայց ըստ
առաքելոյն խրատու, եթէ հնար ինչ իցէ, ընդ ամենայնսն զխաղաղու-
թիւն կալցիս, զի և Աստուած խաղաղութեան, որ ընդ խաղաղասէրս
իսկ է, անվրդով յառաջացուսցէ և ի կատար հասուսցէ զգործ քո։ Իսկ
որ յաղագս ոմանց իրաց զհարկաղրութեան գիր էիր խնդրեալ, ահա
գրեցաք, զի զՂումղափուն յառաջ նուիրակեսցես, քան զայլ մնացեալ
եկեղեցիսն, սակայն ի կամիլդ ըստ գրեցելոյ մերոյ առնել, տես թէ
կարելի լինի և վրդովումն ինչ չէ լինելոց, արա։ Այլ թէ յոյժ ընդդիմա-
ցին և զխռովութիւն իմն իցեն ծանուցանելոց, թոյլ տուր և իւրեանց
հետևեաց, զի լաւ է պատառ մի հեշտութեամբ և խաղաղութեամբ։ Բայց
յաղագս յամենայն ուրեք վիճակիդ քոյ ինքնին կատարելոյ զգործդ,
ոչ գրեցաք զպատուէր՝ կարծելով թէ բամբասանք ինչ յառաջացցի ի
յոմանց, որովհետև յառաջնոցն և ոչ ոք է յամենայն մանր տեղիս գը-
նացեալ, մանաւանդ թէ և գործոյդ կարի յամեցումն լինի։ Զորոյ ա-
ւարտն ջանալ պարտիս, որքան և կարես։ Թէև սակաւ մի նուազութիւն
լինիցի արդեանցն, հոգ չէ, թող անձայն վճարեսցի գործն։

Սակս ընդ հաշիկ աղայիսն խօսելոյ բանին, որ գրես թէ խօսեցայ և
555 *խոժոռեցաւ, մեք զայնպիսի բան չեմք գրեալ // քեզ խօսիլ ընդ նմա,*
որ նա խոժոռիցի, այլ ըստ կարգի բան եմք գրեալ, զոր յետոյ յատուկ
թղթով առ ինքն ես գրեցաք, զի հարկ չեմք արարեալ, թէ հարկիւ զայս-
քան բան պարտիս տալ, այլ գրեալ եմք, թէ եթէ կամիս, որ քեզ յիշա-
տակ սատնեա, նկատելով առ ծանրութիւն գործոյս, զօգնութիւն արաս-
ցես սրբոյ Աթոռոյս (որոյ և զչափն քեզ աղդեալ եմք, զայնչափ պա-
հանջել)։ Եւ այս զի՞նչ եմք մեղուցեալ, որ իբր թէ սրտամնեայ լինի,
բայց կամի, զի առանց իրի ինչ յիշատակի տէր լիցի, ինքն գիտասցէ
մեր գրելին, մեք յառաջ գրեցաք, զայլ ինչ ոչ ունիմք գրելոյ և ժամա-
նակ ես ոչ գոյ, բայց թէ նա զեռ յայդր իցէ և զբանս ինչ ասիցէ քեզ,
կամ թէ գնացեալ զոլով ի յԵրուսաղեմ, անտի գրիցէ, դու ես ծանու-
ցես մեզ։

Ի Զմիւռնոյ Միքայէլ պետէն և յԱստուածատուր աղայէն զթուղթս
ընկալնուլդ և որպէսն նոցա և զի՞նչ գրելն վասն Եսայի պետի դրամոցն,
որ գրեալ էիր, իմացաք. ի հարկէ, դարձեալ են նոքայ ի քաղաքն և
մինչև ցարդ թերևս զհոգս արարին առ այլս եղեալ կայիցն Եսայի պե-
տին և քեզ հասուցին կամ գրեցին ինչ։ Որպէս խոստանաս ծանուցանել,
գրեսցես մեզ, զի գիտասցուք։

Գալուստ վարդապետին մերոյ զորպիսութեանցն ես, որ գրեալ էիր,
թէ զԱդրանայու գործն ես զերծեալ գնացեալ է ի Թրակիայ և զԱդրանա-
յու արդիւնսն ինձ է հասուցեալ և զայլն, իմացաք։ Եւ ի նոյն արդեանցն,
որ ԱՌՇԾ (1500) ղուռուշ առեալ էիր կարնեցի Բուռնութուճենց մահ-
տեսի Յարութիւնի Ջիւրմիւշ Մկրտչին (որ և է բարեկամ Հաճի Պապա-
յին), զի մահտեսի Յարութիւնն ի Կարին հասուսցէ Հայրապետին, ահա
զմիւս ԱՌ (1000) ղուռուշն ես, զոր առեալ էիր Գօրօյենց աղային,
խառնեալ ընդ նմին, որք ի միասին եղեն ԲՌՇԾ (2500) ղուռուշ, եր-
կուցն մէկ զապզ գրեցաք և յղեցաք առ պարոն Հայրապետն՝ հասուցա-
նել առ քեզ։ Իսկ քան զայս յառաջ հասուցելոց փօլիցայիդ զզապզն

ես յառաջ եմք յղեալ, որք ցարդ հասեալք լինին առ քեզ: Զբանի մի օրհնութեան թուղթս ես, որ նորապէս խնդրեալ էիր, գրեցաք հանդերձ առաջին խնդրեալ գանձանակաց և յիշատակաց, և աղագաւ խնդրեալ թղթոցդ կարի հարկաւորօքն: Զի զամէնն գրել ոչ ձեռնհաս եղաք: Եւ զորս գրեցաք, են ա[յ]սոքիկ և այսքան:

556 Զ (6) մեծ կոնդակք ի վերայ Ղումղափուի, Ղալաթիայու, Պալաթու, Իւսկիւտարու: Բ (2) եկեղեցեացն և խասգիւղին՝ վասն Մինաս վարդապետի և քոյ առեալ գանձանակադրամիցն: Զ (6) թուղթ ես ի վերայ իւրաքանչիւր տեղեաց գանձապետացն: Բ (2) միջակ կոնդակ ես առ ֆիագճիսն Պալաթու կողման և առ տառապխանայի էսնաֆն: Ա (1) օրհնութեան թուղթ ես առ նոցին գանձապետ Ստեփաննոս ամիրայն: Ա (1) կոնդակ ես ի վերայ Օրթագիւղին՝ վասն Մինաս վարդապետին հասուցեալ գանձանակադրամին և Բ (2)՝ շամատանին: Ա (1) թուղթ ես առ Պետրոսեան Մկրտիչ ամիրայն, վասն ընդ Մինաս վարդապետին յղեալ շամատանին յաղագս հոգւոյ հօրն: Ա (1) թուղթ ես առ հանգուցեալ Արևելցի մահտեսի Առաքելի որդին, զորոյ անունն ոչ գիտելով Մինաս պետին, թողաք զտեղին, զի տեղեկացեալ գրեսցես դու և հասուսցես առ ինքն: Սա տուեալ էր յիշատակ վասն հօրն զարծաթեայ կանթեղ մի ձեռամբ Մինաս վարդապետին: Ա (1) թուղթ ես առ մահտեսի Աստուածատուրն և հաճի Մարիամն, վասն տրոց ինչ ես ձեռամբ Մինաս պետին: Զ (6) թուղթ օրհնութեան ես վասն յիշատակաց քեզ յանձնեցելոց, առ Պալաթու դպիրսն, առ մահտեսի Յարութիւն ամիրայն, առ կին Տիրուհին, առ Մէյտանկեօպակօղլի Յարութիւնն, առ կարսեցի մահտեսի Խաչատուրն, առ ղալանչի մահտեսի Յովակիմն և առ Սիմա կինն: Զորս զամենայնսն ահա յղեցաք ընդ թղթոյս առ քեզ՝ հասուցանել ի տեղիսն:

Ի պատասխանւոյ թղթոյն յայսցանէ գրեալ եմք վասն քոյ զշնորհակալութիւն և զյանձնառութիւն: Եւ Մէյտանկեօպակօղլի Յարութիւնի Բ (2) խաչից աղագաւ Ա (1) թուղթ եղև գրեալ, քանզի մինչ վասն առաջին տուեալ խաչին զթուղթն գրեալ էաք, յայնժամ իմացաք զերկրորդ խաչի տալն, զոր ես ի նոյն թղթոյ լուսանցն յիշեցաք շնորհակալութեամբ: Իսկ ի կոնդակսն եկեղեցեաց յիշեցաք ընդ քոյդ առեալ գանձանակական արդեանցն և զՄինաս վարդապետի առեալսն վերջին՝ հանդերձ ժամանակօքն և որքանութեամբքն ըստ նորին դէվթէրին: Բայց ի յիմանց տեղեաց առեալսն նորին, զորս ընդ քոյդ առեցելոցն, դու ես ի թղթոցդ յիշեալ էիր որքանութեամբք և ժամանակօքն, մինչ համեմատեցաք ընդ նորին դաւթարին, ոչ համեմատեցան սակաւք ոմանք: Որպէս ի Պալաթու սմա հասեալ գանձանակադրամից համար դու գրեալ ես ԴՃԺԸ
557 (418) ղուռուշ, այլ // նորին դէւթէրն 500 ղուռուշ լրապէս եցոյց: Եւ մեք զնորինն ճշմարտել անվտանգ համարելով, ԵՃ (500) դրեցաք: Եւ ոմանց ես ժամանակքն սխալ թուեցան մեզ գրեցեալք: Զի թէ ի նորին գրեցեալսն նայէաք, քոյ առեցելոց ժամանակօքն աւելի կամ պակասգայքն, և թէ ի քոյ գրեալսն նկատէաք, նորինն սխալ թուիւր: Իսկ մեք ի թուղթսն, յորս այսպիսիքս յիշատակէին, որոյնդ և յոյժ հարկաւոր էր, և ըստ տեղւոյն բացայայտ գրէաք՝ յատկացուցանելով զժամանակն, միւսոյնդ՝ առագաստեալ յիշէաք:

Ինչևիցէ, երկուցդ առեցելոց աղագաւ ես զշնորհակալութիւն և զմիամտութիւն գրեցաք: Այլ զմնացեալսն ի խնդրեալ թղթոցդ, որք առ էսնաֆս և առ նոցին գանձապետսն, Աստուած գիտէ՝ թէ ձեռնհաս լինիմք գրել, թէ ոչ: Եթէ չգրիցեմք ես, անմեղադիր լեր, զի յոյժ եմք զբաղեալ և զամենեսեանն ի մէնջ ողջունելով միամտեցո:

Այլև, որ գրես թէ վասն խմայիլցւոց պարտուցն քանիցս գրեալ եմ մահտեսի Գաբրիէլին և տէր Մելքոնին, որք անդ չեն և ըստ խնդրոյ Գրիգոր պետին կարծեմ զասատ գրել քաղաքացւոցն, զորպէ՞ս առնելդ մեզ ծանո: Բայց մեք, որ գրեալ էաք նոյն Գրիգոր պետին, զի զհանգուցեալ Ստեփաննոս վարդապետի զկայսն թէ ձեռնտու լիցի, յուղարկեսցէ: Արդեօք զի՞նչ արար; կատարե՞աց զպատուէրն մեր, կամ թէ զբան ինչ գրէ քեզ յայնմ կողմանէ, ցեկուսցես մեզ առ ի իմանալ:

Զփիլիպպոս վարդապետէն ես, որ գրեալ էիր, մեք իմացաք, որ ի յօգոստոսի ԺԲ (12) մտեալ է ի քաղաքդ: Եւ թէ զի՞նչ արար և որպէ՞ս եղև, գրեալ ես ցայժմ թերևս և թէ ոչ, գրեսցես:

[Ծանուցեալ էիր և զնոր հրկիզութիւն քաղաքիդ ի կողմանէ Պալաթու: Առ որ յոյժ տրտմեցաք: Աստուած փրկեսցէ զքաղաքդ յայսպիսի պատահմանց չարաց և վնասակրացն յայնմանէ զիպուածոյ, արասցէ այցելութիւն և ողորմութիւն: Իսկ ի յոլով տեղիս շարժ լինիլն և զբաղում աւերս գործելն, մանաւանդ ի Մշու սուրբ Կարապետ վանսն, մինչև ի Բա-
558 յազիտ ես երեկն ի վաղուց էաք իմացեալ: Յորմէ Քրիստոս Տէրն մեր փրկեալ է և փրկեսցէ զԱթոռս իւր սուրբ և զերկիրս մեր ամենավշտակիր, զի սատ ընաւ նշան ոչ երևեցաւ շարժի: Այսպէս իմացեալ միամիտ լիցիս]*:

Ի կողմանէ Գաղատիոյ նուիրակ Յարութիւն վարդապետին և Պօլիոյ Կարապետին և եղբօրն, զոր ինչ գրեալ էիր, իմացաք և հաւանեցաք խաղաղասիրութեանդ: Եւ զՅարութիւն վարդապետի գիրն, զոր յղեալ էիր, ընկալաք: Ոչ է ըստ կարծեացդ գիր զանկատանաց զԿարապետէն, այլ փոքր մի յիշէ և անցանէ զանցսն, որ ընդ նմա:

Սաղիմայ պատրիարքի գիրն ես ընկալեալ ընթերցաք. շնորհակալութիւն գրէ վասն Յարութիւն և Պետրոս վարդապետացն, զորս յանցեալ ամին եպիսկոպոս ձեռնադրեցաք և վերադարձուցաք, և ոչ զայլ ինչ, զոր կարծեալ էիր: Բայց յառաջ քան զայս Ֆարմանօղլի Սարգիս վարդապետն Թիֆլիզու նուիրակ կարգեցեալ եկն աստ, զոր մեծաւ սիրով ընկալաք, որ և ժամ արարեալ պաշտօնէիցն և հացկերութե և խիլայեցեալ ի մէնջ ըստ արժան[ւ]ոյն, ապա յորդորական կոնդակաւ գնաց ի վիճակն իւր ի Թիֆլիզ: Ընդ նմա եկն ի Սաղիմայ և հալապցի Գէորգ վարդապետն՝ Կարնոյ և Կարսայ նուիրակ կարգեցեալ, որ ունէր զվկայական ի պատրիարգէն վասն ձեռնադրելոյ եպիսկոպոս, հանդերձ ընծայիւ: Որ և պատրիարգին իւրեանց յոյժ սիրելի և յաջողակ ի բանս: Վասն որոյ զնա ես ձեռնադրեալ եպիսկոպոս, դարձուցաք ի Ղարս՝ ի գործն իւր նուիրակութեան:

Իմացաք և զմահ մահտեսի Զաքուն, որում Տէր ողորմեսցի: Եւ զոր գրեալ ես, թէ զհետեմք սիրելեօք՝ առ ի կորզել զբան ինչ յայստ գտանեցեալ կայից նորին, թէ կարացիք, ըստ գրեցելոյդ, առնել, ծանուսցես մեզ: Նաև վասն տիրացու Սարգսի 73 ղուռուշ պահանջելոյն, որ գրեալ էիր: Յիրաւի, վասն այդր յառաջ ընդ Մինաս վարդապետի գրելոյն պարտ էաք գրել, բայց մոռացմամբ թողեալ եմք: Ուրեմն այժմ հարկիւ գրեմք, զի ի կողմանէ հաշուոյ Մինաս վարդապետին, որ ի դիմաց վախուֆ տանցն մերոց, հասուսցես տիրացու Սարգսին զ73 ղուռուշ և գրեսցես մեզ, զի միամիտ լիցուք:

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է:

Իսկ վասն Տօնացուցի ոմանց սխալանացն, որ գրես, թէ ոչ կարեմ
559 *ձեռն հասուցանել և այլն, // մեք յառաջ հարկիւ խնդրեցաք ի քէն հո-գալ, բայց դու ի քէն ի բաց ձգես. մատծեա, թէ մինչ մեք չաշխատիմք, ո՞վ է որ հոգայ: Մեք ահա սկսաք տպել զՏօնացոյցն և զԲ (2) տետրն ես հանաք, բայց թէ այլես պչանս դիցես հոգալ և յղել, բարւոք լինի:*

Այլ և զայս գրեմ, զի Յովսէփ վարդապետն մեր յանցեալ ամին զտէր Յարութիւն քահանայ ոմն էր յղեալ վասն ժողովարարութեան, որում զկոնդակ տուեալ յղեցաք ի Բաղդատ, ի Բասրայ և ի Հնդիկս: Այժմ ի Բաղդատ զՌ (1000) ղուռուշ է ժողովեալ և տուեալ Ալէքսանին, և նա փոլիցայ է արարեալ յայղր ի վերայ Ասլան ամիրային: Ուստի Յովսէփ վարդապետն մեր գրեալ է մեզ և խնդրեալ, զի գրեսցուք քեզ, որ դու յայղր զայն Ռ (1000) ղուռուշն առնուս և մեզ հասուցանես, որ և մեք գրեմք նմա, զի յարդեանցն սրբոյ Աթոռոյս առցէ ի պէտս շինութեան եկեղեցւոյն ձեռնարկեցելոյ և որ և մեկ պահարանաւ թուղթ ես է յղեալ հասցեն ի ձեռս Ասլան ամիրային, զոր ահա առ քեզ յղեցաք տալ նմա, յորում է և քո թուղթն: Վասն որոյ գրեմք քեզ զի զայն Ռ (1000) ղու-ռուշն ի յԱսլան ամիրայէն առնուցուս և մեզ գրեսցես:

Այլև՝ մեր քարհատ ուստայ Գասպարն, որ ահա աշխատի ի շինու-թիւնս նորոգելի տեղեաց սրբոյ Աթոռոյս, խնդրեաց զայս ինչ գրել քեզ, զոր ա[հա]ւասիկ գրեմք: Քանզի է սորա եղբայր մի Ղազար անուն, որ ահա Գ (3) տարի է, որ եկեալ է յայղր ի վաստակ առնել և մինչև ցայժմ զոչինչ շահեալ և զհիւանդութիւն շատ կրեալ, գրեալ է սոցա, թէ եկից, և սորա ես կամելով զգալն նորա, ահա զգիր գրեցին առ նա (զոր յղեցաք քեզ տալ նմա), զի եկեսցէ: Ուստի, գրեմք քեզ, զի զթուղթն սո-ցա տուեալ ի նա, դու ես հարկ գրեսցես առ ի գալ, և թէ զճանապար-հական խարճի չունիցի և խնդրիցէ ի քէն, զԼ (30) ղուռուշ տացես նմա և զթէմէսուկ առեալ յղեսցես առ մեզ, որ ի Գասպարէն առնուցումք աստ: Նաև յայղրուստ եկեալ տիրացու Յակոբն ի մահտեսի Մկրտչեան Անդրէասի որդւոյն, այսինքն՝ ի Թագւոր և ի Մուրատ աղայիցն զԺԲ (12) ոսկի տուրս էր բերեալ: Առ որս ահա զօրհնութեան թուղթ գրեալ յղեցաք ընդ սոցին, զոր ես առ նոսա հասուցես: Այլև յաղագս տպա-րանիս մերոյ զԲ (2) հատ սպիտակ լաւ սրոցս առեալ յղեսցես, որբ մի մի թզաչափ լիցին և սաստէն եղեալ կարբէն, որ յոյժ լաւն է: Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս և ի հոկտեմ. ԺԴ (14):

560 *(Ի փուսուլայոջ գրեցաւ, բայց դեռ չյղեցաւ ընդ վերին թղթոյդ)*

Զայս ես իմա, զի Փաքիզայ կոչեցեալ Գրիգոր վարդապետն, որ երբեմն Յամթայ նուիրակ էր, անդ թէ զի՞նչ հոտս և համբաւս էհան, դու ես գիտես, և յետոյ մինչ եկն, թե զի՞նչ արդիւնս եցոյց, զայն ես թողում: Այլ մեք սիրով ընկալաք և զոչ ինչ տուեալ յերեսն, փիլոնաւ խիլայեցաք և փառաւորեցաք: Բայց զի վատն ոչ կարէ լաւանալ, այլեւ ըստ իւր բարուցն վարեցաւ, զի թէպէտ թարց գինւոյ լաւ է փոքր մի, սակայն մինչ ընդ գինիս մտանէ, ամենևին անպատկառ յումեքէ, զճիչ և զաղմուկ շփոթի յարուցանէ, և զանլուր բանս արձակէ ի բերանոյն և ոչ դադարի մինչև ցթողուլ գինւոյն: Այսոցիկ տարաք և համբերեցաք: Իսկ յայս աւուրքս ես լաւ մի արբեալ, իզուր տեղն աթոռակալին զինչ

հայհոյանս և զվայրի վերոյ բանս է ասացեալ, ոչ պատմի: Իսկ աթո-ռակալն խոյս է տուեալ ի յօտայն իւր և ի գիշերի, մինչ քանեօք կար-գաւորօք ի խօսիլ են լեալ, յանկարծ գնացեալ զմեծ քար մի է արձա-կեալ ընդ լուսամուտն առ նոսա, որ թէ ի նստելոցն ումեք պատահիւր, պարտ էր մահանալ: Վասն որոյ ի մէջ գիշերին ելեալ շղթայեալ են, որ մինչև ցառաւօտն թողցէ զգինին: Զայսոսիկ տեսանելով գիտացաք, որ ի նմանէ մեծամեծ վնասք ես են յառաջանալոց: Վասն որոյ մինչ յառաջ ես ինքն քանիցս զիրսն իւր ժողովեալ ի Ղազարապատն կամէր ելանել, և մեք արգելեցաք, այժմոյս մեք յօժարութեամբ սիրով արձակեցաք յԱթոռոյս, զի վերասցի վրդովմունս և գայթակղութիւնն ի միաբանից մերոց:

Զայս ահա փուսուլայիւ սիրելւոյն մերոյ Մկրտիչ ամիրային ես զեկուցաք և քեզ ես գրեցաք, զի իմացեալ՝ ի հարկաւորիլն խօսեսցիս:

Չեռ. № 2803, էջ 553—560

1067. **1784 թ. 14 նոյեմբերի**—*Թուղթ օրհնութեան ի մեծն Պոլիս ի խասգիւղ առ Յովաննէս աղայն՝ գանձապետն սրբոյ Աթոռոյս, որ զգանձանակական արդիւնս էր հասուցեալ Մինաս և Իսահակ վարդա-պետացն մերոց՝ նուիրակացն Պօլսոյ (զորս և նոքա հասուցեալ էին յԱթոռս), և զմիամտութեան թուղթս էր խնդրեալ առ ժողովուրդսն և առ ինքն:*

Չեռ. № 2803, էջ 656—658

1068. **1784 թ. 14 նոյեմբերի**—*Թուղթ շնորհակալութեան առ Պօլսոյ Ղումղափուի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ գանձապետսն՝ այսինքն առ պարոն Յովաննէսն, Մարտիրոսն և մահտեսի Աստուածատուրն, վասն հասուցեալ գանձանակական արդեանց՝ հասուցելոց ձեռամբք Մինաս և Իսահակ վարդապետացն նուիրակաց:*

Չեռ. № 2803, էջ 659—662

1069. **1784 թ. 14 նոյեմբերի**—*Կոնդակ շնորհակալութեան, վասն հասեալ արդեանց գանձանակի ի Պօլիս, առ Պալաթու սուրբ Հրեշտա-կապետ եկեղեցւոյ ժողովուրդսն:*

Չեռ. № 2803, էջ 662

1070. **1784 թ. 14 նոյեմբերի**—*Թուղթ շնորհակալութեան ի մեծն Պօլիս առ տառապխանայի էսնաֆն, վասն գանձանակական արդեանց նոցին հասելոյ առ սուրբ Աթոռս ձեռամբ Իսահակ պետին:*

Չեռ. № 2803, էջ 663

721 *1071.* **1784 թ. 14 նոյեմբերի**—*Թուղթ առ Կոստանդնուպօլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն, պատուէր զի նախ զՂումղափուի նուի-րակութիւնն վճարեսցէ. և ապա զմիւս եկեղեցեացն:*

Յորմէ հայրական սիրով և օրհնութեամբ բազմաւ, փրկչաւանդ սուրբ ողջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս գերազօր շնորհիւն, գիտասջիր սիրելի և հոգևոր որդիդ մեր, հաւատարիմ և բազմաշխատ զաւակ սըր-բոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածիմաստ վարդապետ: Զի ի սեպտեմբերի Ի (20) ընկալաք զթուղթ քո, գրեցեալ ի յօգոստոսի ԺԲ (12), զոր և ընթերցեալ ծանեաք զգրեալսդ ի նմին, այսինքն՝ զբարեյաջողութիւն գործոյդ, և զսիրով և քաղցրութեամբ վարիլդ ընդ ամենայնսն, և այժմ ի յՕրթագեղէն խաղաղութեամբ և առատ արդեամբք ելանելդ և ի յԽու-կիւտար գնալդ: Առ որս ուրախացեալ, բերանալիր օրհնութեամբ օրհնե-ցաք զբարեսէր և զբազմարդիւն ժողովուրդսն օրհնեցելոյ վիճակիդ,

զորս Աստուած օրհնեսցէ և զօրացուսցէ և միշտ ի յաջողութեան և ի բարեկարգութեան պահեսցէ։

Արդ, գրեմք սիրելի որդւոյդ, զի աստուածապարգև խոհեմութեամբդ, որպէս մինչև ցարդ, նոյնպէս և յայսմհետէ ընդ ամենայնսն՝ ընդ մեծս
722 և ընդ փոքունս սիրով և հանդարտութեամբ վարեսցիս և զա//մենեցուն զսէրն և զհարազատութիւնն առաւելուլ կամիցիս և ջանասցես առ սուրբ Աթոռ մայրս իւրեանց և առ մեզ։

Դարձեալ զայս պատուիրեմք հարկիւ, զի ի վճարելդ զԻսկիւտարու երկուց եկեղեցեաց նուիրակութիւնսն, ըստ բնիկ սովորութեան նախանցելոց հին նուիրակացն տեղւոյդ, նախապէս ի Ղումղափու գնացեալ զԱստուածամայր եկեղեցւոյ նուիրակութիւնն կատարեսցես և ապա զմիւս եկեղեցեացն մնացելոց և մի գնոր աւանդութիւն հաստատելով յառաջ ի Ղալաթիայ գնասցես և յետոյ ի Ղումղափուն, որ չէ ըստ նախնեացն արարեցելոց, և միանգամայն փութասցես զխաւորել զգործդ առ ի չյամենալ յոյժ։

Ջնոր հրկիզութիւնն օրհնեցելոյ մայրաքաղաքիդ, որ եղեալ է ի կողմանէն Պալաթու, իմացեալ կարի յոյժ տրտմեցաք։ Այս ես վասն մեղաց և անբախտութեան իմոյ է, որ յոչ ուստեք լսելի լինին առ արգեանս համբաւք [ու]րախարարք, այլ՝ տրտմեցուցիչք և կսկծեցուցիչք՝ յորոց մի ես այս։ Այլ զի՞նչ կարօղ եմք առնել, բաց ի փառատրութենէ Աստուծոյ, յորմէ և հայցեմք, զի վնասակրացն յայսմանէ զխպուածոյ մերայնոցն խղճալեաց արասցէ ողորմութիւն և այցելութիւն, և փրկեսցէ զքաղաքդ ի յայսպիսեաց փորձութեանց. ամենակեցոյց նախախնամութեամբն իւրով։

Իմացեալ եմք և զլինիլն ահագին գետնաշարժին ի բազում տեղիս և ի Մշու սուրբ Կարապետի վանսն զբազում աւերս գործելն և մինչ ի Բայազիտ ևս երեկլն։ Եւ առ այն ևս ցաւեցաք, բայց Քրիստոս Տէրն մեր զԱթոռս իւր սուրբ և զերկիրս ամենայնշտակիր փրկեալ է և փրկեսցէ յայնմանէ, քանզի զամենայն պատիժս միանգամայն, ոչ տայ միում վայրի ըստ արարչականի զթութեանն իւրոյ, վասն որոյ և զմերն մեզ բաւական վարկանի։ Քանզի յաւուրց սպանման իշխողին երկրիս մինչև ցարդ կարօտ մնամք խաղաղութեան, որ ոչ երեկի բնաւ, զի զրեթէ յամենայն բնակիչսն սորին խռովութիւն է կայացեալ, որ ոչ վերջանայ։ Զի ի ներկայս իսկ Երևանու մեծամեծ այանքն խանդատէյին ի բերդն մտեալ ի մի կողմն են, յորոց սուլթանն ես պատճառելով զբանս ինչ ունիլ, երեսս շրջեալ գնաց յիւր նահանգն՝ անմիաբան ընդ սոցա։ Սոքա ես զքուրտն իւր էլին կամին հանել յերկրէս կամակցութեամբ պետին
723 Տփխիսոյ։ // Իսկ նա անզր քան զԵրասխն յիւրումն տեղւոջ նստեալ կայ իւրայնովքն, ումեք զվնաս ոչ հասուցանելով, և մեք ես միջնորդեմք վասն հաշտութիւն արկանելոյ ի մէջ սոցա և նորա։

Եւ միւս ժողովքն լկտեաց այլասեռից, որք յայսմ միջոցի, ըստ ախորժակացն, ժամանակ գտեալ պարապեալ են ի յամենակերպ վնասատուութիւնս խղճալի գիւղօրէից և բնակչաց նոցին, որք և յայսմ ամի զեկեալ արդիւնս ոչ կարելով բոլորապէս ի վեր առնուլ, կան յամենայնի ի պակասաւորութեան և ի յողորմելութեան, և նկատելով առ եղանակ զփարդութեան երկրիս, իբր ի վերայ փշոց կան նստեալ։

Ահա այսպէս ի վրդովման և յալէկոծութեան կամք երկրաւս, և ոչ երևելով նշմարանաց խաղաղութեան, մտատանջ լեալ հաշիմք և մաշիմք, և զկատարածն Աստուծոյ ձգեմք փոխարկել ի բարի։ Իսկ և բաց

յայսցմանէ, առ դժնդակութեան օդոյն ի հիւանդութեանց ես ոչ մնամք ազատ, որպէս ահա խղճալի միաբանքն սրբոյ Աթոռոյս յայսմ ամի, քան յայլ տարիս, շատ հիւանդութիւն կրեցին։ Մեք ես ահա ԺԵ (15) օր կայ, յորս տագնապիմք զողացմամբ և մանաւանդ սաստիկ ջերմամբ և կարի ճնշեցեալ յոյժ անզօր և անկարացեալ եմք, իսկ ի բժշկաց և ի բանագիտաց զուրկ գոլով, միայնոյ բժշկապետի այցելութեանն միայն կամք ապաստան[199]։

Եւ ի կողմանէ սրբոյ եկեղեցւոյն յառաջ գրեցաք, այժմ ես զայս իմա, զի ծաղիկն և բուլն դեռևս լինի, և ի յետին մեծ ֆարշէն ես քանի մի կարգ քար է մնացեալ, որ զերծանիցի։

Այսպէս գիտացեալ զաստի և զմէնչ, առ ժամս զորդիական հարազատութիւնդ և զցաւակցութիւնդ անպակաս առնելով, գրեսցես զթուղթս որպիսայայտս, ծանուցանելով զքէն և զգործոյդ, և զայլոց մեղապատշաճ որպիսութեանց։

Ողջ լեր ի Տէր և ի շնորհս նորին յանձնեալ և զօրացեալ միշտ։

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս և ի հոկտեմբերի ԺԴ (14), ի սուրբ էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 721—723

664 1072. 1784 թ. 27 նոյեմբերի—Թուղթ ի սուրբ Կարապետի վանսն, որ ի Մուշ, առ նորին դէտ Աստուածատուր վարդապետն, ի պատասխանի թղթոյն գրեցելո[յ]. մխիթարութիւն վասն յայսմ ամի եղեալ շարժին անդէն, որ յոյժ զաւերս էր գործեալ և առ այլ իրս ևս բանք։

Յորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ, քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և օրհնութեամբ բազմաւ և հոգեպարար շնորհիւ սրբոյ միածնաիջի տեղւոյս, ծանուցումն լիցի սուրբ ազատապէս սիրելւոյդ մերոյ, շնորհընկալ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Աստուածատուր ծերունափայլ և խոհեմազարդ վարդապետիդ։ Զի թուղթ քո ընդ գեանչեցի Յովաննէս վարդապետին էհաս առ մեզ և զոր ինչ գրեալ էիր, իմացաք։ Եւ նոյն ինքն զրաբերն զշնորհակալութիւնս արար զլաւութեանցդ։ Յառաջ քան զայս ես մինչ հոգեծին որդին մեր՝ տիրացու Անանիայն եկն յայգրուստ, պատմեաց մեզ զամենայն որպէսն ձեր և զահագին գետնաշարժ լինելն և զբազում աւերս գործելն յայգր ի սուրբ վանսդ։ Առ որ զրեթէ մռաւեալ զայլ յոգնազան ցաւս մեր, ընդ այն ցաւեցաք և կսկծեցաք։ Բայց զի ի ձեռանէ Տեառն ամենակալին է զխպուածդ, առ ի խրատ արարածոց յանցաւորաց, որ և ոչ թէ միայն յայգր, այլև ի բազում տեղիս եղեալ է սաստկապէս, քան զյայգր, որպէս լսեմք, ոչ զայլ ինչ ունիմք առնել, եթէ ոչ գոհանալ զնմանէ և հայցել զողորմութիւն։ Յորմէ և հայցեմք մեծապաղատ հայցուածովք՝ շնորհել վերստին զնորոգութիւն և զպայծառութիւն իւրաքնակ սուրբ վանիցդ՝ ընդունական միջնորդութեամբ մեծի ամլորդւոյն, սրբոյ Կարապետին Յովհաննու և զքեզ ևս հանդերձ բարեկրօն միաբանիւք մխիթարեսցէ փոխանակ վշտակրութեանցն անցելոց և ուրախացուսցէ և զօրացուսցէ ի մեծավարձ աշխատութիւնս նորոգութեան սրբոյ վանիցդ։ Գրեալ էիր, թէ ջանամք ի շինումն։ Ընդ որ կարի ուրախացաք, բայց ի գլուխ բերեալ շէնսդ ես ծանուսցես, զի ես առաւել բերկրիցուք։

Իսկ և զԱնանիա որդիակն մեր, որ ի յատուկ սէր էիր ընկալեալ և ի պատիւ մեր զմեծարանս և զշահեցողութիւնս ցուցեալ և զխիլայ ագուցեալ, բերանալիր շնորհակալութեամբ պատմեաց մեզ զամենայն,

ճեստի և մեք շնորհակալեցաք և օրհնաբանեցաք յոյժ, որում Տէր տացէ
զզօրութիւն և զկարողութիւն և սուրբ Աթոռս մայրս քո եղիցի քեզ վար-
ձահատոյց:

665 Սիրելիդ մեր, ոչ թէ միայն սմա արարեալդ, // այլև միւսոց մե-
րայնոցն ևս զորքան լաւութիւնս և բարերարութիւնս ես արարեալ,
զայնս բովանդակապէս մեզ և սրբոյ Աթոռոյս համարիմք յիրաւի և մո-
ռանալոց չեմք: Ուրեմն, թէև նորա տմարդութեամբ չիմանայցեն, այս-
պէս գիտելով քոյ, մի՛ ընդ վայր համարիցիս և վհատիցիս, այլ միա-
միտ լեր և ի յանխարդախ սիրոյ և ի յօգտարար հաւատարմութեանց և
բարեջանութեանց, որ առ սուրբ Աթոռս մայրս քո և առ մեզ, մի՛
վերջանար:

Այլև Յակոբ վարդապետն եկեալ ի յԱրճէշ, գրեալ էր մեզ, թէ ի
յարդեանցս նուիրակութեան զԲճ (200) զուռուշ ես հասուցի սուրբ Կա-
րապետի միաբան Մկրտիչ վարդապետին՝ ըստ խնդրոյ առաջնորդին,
որ և նա հասուցէ ի սուրբ Աթոռդ: Ի հարկէ, զայն ևս հասուցանելոց
ես: Իսկ յաղագս նորին ժողովելի մատաղացուացն, որք յայգր ի Մուշ
են, որովհետև յառաջ գրեալ էիր, թէ ի գալ նուիրակին ատտ զուցէ թէ
[յիշխողէն]* վնաս ինչ հանդիպիցի նմա, յայնմանէ նորա և մեր
զկարծիս առեալ, թէ մի՛ լիցի փոխանակ օգտիցն վնաս յառաջասցի,
ահա գրեցաք նմա, զի ինքն մի՛ ևս դարձցի յայգր, այլ ժողովելոյ հո-
գացումն ի քեզ լիցի յանձին: Վասն որոյ, ահա սիրախառն հարկիւ գրեմ
հարաղատի սիրելւոյդ մերոյ և օգտակամի որդւոյդ սրբոյ Աթոռոյս, զի
սիրով յորդորեսցես զժողովուրդսն վիճակիդ և հետևեալ, որքան և առ
ձեռն գայցէ, ժողովեսցես զխոստացեալ մատաղսն սրբոյ Աթոռոյս և
յղեսցես: Գիտեմ, զի դու ևս կարի զբաղեալ ես, զի քոյդ նեղկայական
ցաւքն և հոգքն ևս շատ են, սակայն մեք ևս զմեծամեծ շինութիւնս
սկսեալ, ամենայն պիտոյից զկարօտութիւնս կրեմք. զի երկիրս ան-
շէն և յոյժ չքաւորեալ և խառնակութիւնքն անպակաս, մանաւանդ յայնմ
ամի, թէ զի՞նչ իրք անցին ընդ սուրբ Աթոռս, թերևս լուայք մինչև
ցարդ, որ անիծեալ սրիկայքն երկրիս ասպատակեցին զամենայն տա-
ւարսն սրբոյ Աթոռոյս՝ թէ կթան և թէ լծկան, յորոց թէպէտ մասամբ
ինչ յետս եղեն դարձուցեալք, սակայն շատքն փչացան և կորեան:
Ուստի բազմաց իրականութեանց մերոց խափանումն եղև: Վասն որոյ
Աթո-
յայսմիկ հարկաւոր ժամանակի մերում յոյժ օգտութիւն լինի սրբոյ Աթո-
ռոյս, որ զայդ խոստացեալ մատաղսն, որքան և ի ձեռն գալոյ լիցի,
ժողովեսցես և յղեսցես: Որոյ աղագաւ մեծապէս շնորհակալ լինելոց
եմք զքէն, զոր և Աստուած վարձատրեսցէ: Այլ թէ ոմանք չկամիցին և
դու ևս չյօժարիցիս ժողովել զխոստացեալ մատաղսն սրբոյ Աթոռոյս և
յղել, թէպէտ որպէս և իցէ սուրբ Աթոռս կառավարելոց է, սակայն հար-
կաւորի մեզ յայնժամ հատանել այտի այսուհետև զնուիրակն սրբոյ
Աթոռոյս և զորբալոյս մեռոնն ինքեանք գիտասցեն: Բայց յուսամ, թէ
այնպէս հոգ տարցիս գրեցելոյ մերում, որ զորս զխոստմունս իւրեանց
անտրտունջ կատարեսցեն և զմեզ շնորհակալս կացուսցես զքէն և
զդոցունց: [Այլ թէ չկամիցին վճարել զխոստմունս իւրեանց և տրտնջես-
ցեն, որպէս յառաջ, նոյնպէս և այսուհետև զայլ նուիրակ չեմ յղելոց,
666 թող զԱթոռոյս խոստմունսն հատանելով լիասցին, բայց ստրջանա//լոց
են, յինքեանց իմասցին և ոչ ի մէնջ, սակայն յուսամ թէ...]*: Եւ միշտ

---

* Այս բառը և նախադասությունը բնագրում ջնջված են:

զորպխութեանց քոց և սրբոյ վանիցդ գրելով և զծնողամեծար սէր և
զհարազատութիւն քո աննուազ պահելով, լեր ողջ ի Տէր:

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս և ի հոկ[տեմբերի] Իէ (27):

Ձեռ. № 2803, էջ 664—666

561 1073. 1784 թ. 29 նոյեմբերի—Թուղթ ի յերկիրն Ռուսաց առ
մերազնեայցն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատաս-
խանի յօգոստոսի 10 գրեալ թղթոյն:

Յորմէ ճշմարիտ սիրով…

Զի յօգոս[տոսի] 10 գրեալ թուղթ քո էհաս առ մեզ և զամենայն
գրեալդ իմացաք: Նախապէս գրեալ էիր զլսելդ զանբարի գիպուածոյն
գրեալոց իմացաք: Նախապէս գրեալ էիր զլսելդ զանբարի գիպուածոյն
երկրիս և տարակուսիլդ: Մեք յառաջագոյն ի յուլիսի Ժ (10) և ի յելն
զերկարօրէն թուղթս գրեալ առ քեզ, ծանուցեալ եմք քեզ զայն անցսն,
որ այն գրեանքն մինչև ցարդ, ի հարկէ, հասեալ են առ քեզ և իմա-
ցեալ ես լիովին, զորս ի նոսա զերկուցեալ եմք: Այժմ ևս այսպէս գոլ
իմա, որ ի մեծագոյն վրդովմանէն յայնմանէ, թէպէտ շնորհիւն Աստու-
ծոյ սրբոյ Աթոռոյս ոչ այնքան, սակայն երկրիս յոյժ բազում վնաս եղև,
զի գրեթէ ամենայն իսկ բնակիչքն նորապէս վերստին ի յետին թշուա-
ռութիւնն հասին: Բայց ներկայապէս լկտի սրիկայքն և կեղեքիչքն
իրերաց դադարեալ են կերպիւ մի և զմեծագոյն խռովութիւնն և թըշ-
նամութիւնն, որ կայր ի մէջ քրթաց ժողովոցն և բերդականացն ի կող-
մանէ սպանեցելոցն, որոց և զզօրս պատրաստեալ, մերձ ընդ մերձ
պատահիլոց էին միմեանց պատերազմաւ, ահա նոր իսկ զնոյնս վերա-
ցուցեալ ի միջոյ զերկոսին կողմունսն ևս ի հաշտութիւն համոզելով
զխաղաղութիւն հաստատեցաք ի մէջ՝ ի պատճառս հանդարտելոյ հա-
սարակ ժողովրդոցն խղճալեաց: Բայց և ևս վախճանն Աստուծոյ է գի-
տելի, որոյ ողորմութեանն եմք ապաստան[200]:
տելի, որոյ ողորմութեանն եմք ապաստան[200]:

Այլև՝ գրեալ էիր ի Ղլլար անդ ուրումն Կարապետի յիշատակ տալն
զայգին իւր սրբոյ Աթոռոյս և ի քէն զԻԵ (25) թուման առնուլն ի հա-
տուցումն պարտուցն: Ընդ որ և մեք հաճեցաք, ըստ որում դու բարւոք
ես վարկեալ:

Եւ առ Անդրէասի որդի պարոն Բաղդասարն ևս, որ զարծաթեայ
բուռնոցն յիշատակ է տուեալ սրբոյ Աթոռոյս, գրեցաք ահա զթուղթ
562 օրհնութեան և շնորհակալութեան, զոր և // յղեցաք ընդ թղթոյս ի ձեռս
քո՝ հասուցանել նմա, զի միամտիցի:

Ի կողմանէ ժողովարար տէր Յարութիւն քահանային ևս, զոր ինչ
գրեալ էիր, իմացաք: Զի Բաղդատ ժողովեալ ԱՌ (1000) մարչիլ ար-
դիւնսն, որ ձեռամբ Ալէքսանին փոխցայ է տուեալ ի Պոլիս նորին եղ-
բայր Ասլանին, և դու այնր աղագաւ խնդրեալ էիր ի մէնջ գրել Սահակ
վարդապետին մերոյ առնուլ, զի յայդրէն յարդեանցն քեզ հասցի: Հա-
ճեցաք ընդ խնդիրդ և զայն յղեալ պահարանաւ գրեանսդ, որ պարտ էր
հասանիլ ի ձեռն պարոն Ասլանին, միջոց ինչ առ մեզ պատահեալ,
վասն գնացող չհանդիպելոյ, յանցելումն ի հոկտեմբերի ԺԴ (14) մինչ
զթուղթս յղէաք ի Պոլիս, և զայն ընդ նոսա յղեցաք առ Սահակ վարդա-
պետն՝ տալ պարոն Ասլանին և զիւր թուղթն ևս առնուլ, որում և պատուէր
գրեցաք, զի զայն ԱՌ (1000) մարչիլն առնուցու ի պարոն Ասլանէն և

մեզ գրեսցէ, որ և մեք քեզ գրեսցուք՝ վերառնուլ յարդեանց սրբոյ
Աթոռոյս։
Զդառնալդ ի Հաշտարխան և գենարալի ի Վրաստան գալոց լինիլն,
որ յիշեալ էիր, իմացաք և սպասէաք գալստեան նորա, կարծելով. թէ
սիրելիդ մեր ևս ընդ նմա եկեսցես և թէ թերևս զգիր գրեսցուք առ նա՝
շնորհաւորելով զգալուստն։ Բայց յանկարծ իմն ևս լուաք, թե ենարալն
եկեալ է ի Թիֆլիզ և ութ օր կացեալ առ արքայն, ապա վերադարձեալ
է ի տեղին իւր։ Եւ մինչ զքէն հարցաք եկողաց, ասացին թէ ոչ էր եկեալ
ընդ նմա[201]։
Զայսքան ինչ պատմեցին զնմանէ և ոչ ևս կարացաք գիտել ինչ
զգալստենէ նորին։ Տօքտօր Յակոբն ևս ընդ նմա է եղեալ, որ և դարձեալ
է ընդ նմա։ Առ որ յառաջ քան ՚զայս զօրհնութեան թուղթ գրեալ և յղեալ
եմք առ քեզ՝ հասուցանել նմա։
Վարդան վարդապետի կայից առ պարոն Եսային հասանիլն ևս
իմացաք, և զոր ինչ խնդրէ սա ի մէնջ, տամք ահա, մինչև իւրն առ ինքն
հասցի։ Իսկ և ի Ղզլար զմրբադրամ և զտնօրհնէք հաստատելդ հաճու-
թեամբ նոցին և զայլ ևս բարեկարգութիւնս սահմանադրելդ ի յօգտա-
կարութիւն նոցին, բարւոք ևս արարեալ։ Ի Տեառնէ եղիցիս զօրացեալ և
վարձատրեցեալ ըստ հետևողաբար աշխատութեանցդ։
Այլև Սաղիմայ պատրիարքն զթուղթ մի էր գրեալ առ քեզ՝ շնորհա-
կալութիւն յաղագս արդեանցն նուիրակին իւրեանց և յղեալ էր առ մեզ,
որ թէպէտ միջոցաւ ինչ յառաջ էր եկեալ, բայց զոր ևս ահա ընդ սոյն
563 գրոյս յղեցաք։ Իսկ ի կողմանէ Մինաս վարդապետին, // որ լուեալ էիր,
թէ ի Զմիւռին իցէ գնացեալ, դատարկ զրոյց է, զի ահա ի սուրբ Աթո-
ռոջս և առ մեզ է սա։
Իսկ ի տեղի հանգուցեալ Եսայի վարդապետին կտակաւ նորին և
ըստ խնդրոյ զմիաբանացուցն, որք բազմակնիք մահսարաւ խնդրեալ էին
ոչ անտես առնել զքեռորդին նորա՝ զՄիքայէլ պետն, կարգեցաք ի
գործն, որ յանուն հանգուցելոյն մինչև ցլրումն երից ամացն զմնա-
ցորդն գործոյն հոգասցէ և եկեսցէ, որոյ ի յաւարտելն տեսցուք, թէ ո՞վ
իցէ յայնժամ պատկանաւոր անդրէն յղելոյ։
Եւ թէ զորպիսութեանց սրբոյ Աթոռոյս և զմէնջ գիտել կամիցիս,
թէպէտ ոչ եմք կատարեալ խաղաղութեան և բազմօք հոգօք և մանա-
ւանդ նորանոր վրդովմամբք երկրիս տառապիմք յոյժ, սակայն ի բարե-
ջան հետևմանց ևս ոչ վերջանամք, այլ ի յօգտաւոր շինապայծառութիւնս
սրբոյ Աթոռոյս աշխատիմք։ Որպէս ահա յաջողմամբն Աստուծոյ զաղ-
բիւրն և զփոքր առուն շուրջանակի ի պարսպոջս նորոգեցաք և զսրբոյ
եկեղեցւոյն լեալ շրջապատ ֆարշն ամենայն, որք մաշեալք էին և քա-
րինք շարժեցեալք և անհարթացեալք, միանգամայն բոլորապէս նորո-
գեցաք և ի տեղիս տեղիս ևս լայնացուցանելով։ Եւ ի բոլոր յորման սըր-
բոյ տաճարին յարտաքուստ ի ներքին կողմանցն զշորս կարգ քարինսն,
որք կարի մաշեցեալք և անշքացեալք էին, փոխել ետուք և կարմիր
քարամբք նորոգեցաք ի դաւթի աջ կողմանէն սկսեալ շուրջանակի
մինչև ի ձախ կողմն։ Իսկ և զմէջն բոլորապէս սպիտակացուցանել ետուք,
յորմէ քանի մի օրեայ բան մնաց, այն ևս վասն իսկեալայից անագան
շարժիլոյն ի պատճառս ծաղկիլոյն։ Եւ զպարոն Յովնաթանն ևս բերել
տուեալ ի ծաղկելն ևս ձեռնարկեցաք լաւ և շատ, քան զառաջինն և ահա
ի յառաստաղաց և ի կամարաց ծաղկանցն զերծաւ, և զի ձմեռն վերայ
ժամանէ, խափանումն ետուք։

Աստուծով եթէ ողջ մնասցուք, ի գարնանն զմնացեալն ևս լրացու-
ցուք՝ հանդերձ հարկաւոր պատկերանկարութեամբք։ Թողում զՂազարա-
պատի արևելակողմն, որ կարի յոյժ խախտեցեալ և իջեալ էր, և ի հի-
մանէ վերստին շինեցաք, ընդ որս և զբերդն Օշականու և զայլս հար-
կաւոր շինութիւնս։
364 Գրեցի, զի գիտասցես և ուրախասցիս, // բայց թէ զորքա՞ն նեղու-
թիւնս կրեմք, կարես իմանալ խոհեմութեամբդ, զի թէ ի հասարակ
մարդկանց սովեալ է երկիրս, որչափ ևս ի պիտանեզոյն մարդկանց և ի
վարպետաց, որք բնաւ չգոն։ Մանաւանդ խառնակութիւնքն և աղմուկքն
ևս անպակաս։ Այլ մեք ապաւինեալ ի Տէր և ի շնորհս սրբոյ իջման
տեղւոյ նորին, զայսոսիկ այսպէս հոգամք և մտադրեալ եմք զայլևս
հարկաւոր շինելիս ոչ թողուլ պակասորդս, եթէ Տեառն ևս կամք իցեն։
Ի ներկայումս այսպէս իմացեալ քոյ զմէնջ, դու ևս զորպիսածա-
նոյց գիրդ՝ հանդերձ որդիական ճշմարիտ հարազատութեամբդ և սի-
րովդ, անպակաս արասցես։
Ողջ լեր ի Տէր և յանձնեալ ի պահպանութիւն ամենազոր աջոյ նո-
րին։ Ամէն։
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի հոկտեմբերի ԻԹ (29) և ի լուսա-
կառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։
Ձեռ. № 2803, էջ 561—564

1074. 1784 թ. նոյեմբեր—Կոնդակ շնորհակալութեան ի մեծն
Պօլիս ի վերայ էիպու բրտաց էնաֆին վասն նոցին հասուցեալ զան-
ձանակական արդեանցն։
Ձեռ. № 2803, էջ 469

470 1075. [1784 թ. նոյեմբեր]—Հախպատու սուրբ Նշանի վանից ա-
ռաջնորդ Դաւիթ վարդապետի առաջնորդական կոնդակի միջարկեալ
բանքն են։
...Վիճակեցելոցդ Հախպատու սուրբ Նշանի հրաշակերտ վանիցն, որք
կայք զետեղեալք ի յաստուածախնամ քաղաքդ Թիֆլիզ ընդ հովանեաւ
եկեղեցեացդ, այսինքն՝ Մօղնու, Նորաշինու, Բեթղեհեմու, Կա-
ռօթնից եկեղեցեացդ, Հրեշտակապետի, Թէկենամու և սուրբ Սարգսի, և
Թուղիկէ եկեղեցւոյ, Հրեշտակապետի, Թէկենամու և սուրբ Սարգսի, և
արտաքոյ քաղաքիդ՝ ի Գօրի, ի Կախէթ, ի Թէլաւ, ի Քիսեղ, ի բոլոր
Վրացտուն, և ի Հախպատ և յայլս շէնս և ի գիւղօրայս ի շրջակայից
Վրացտուն, և ի Հախպատ և յայլս շէնս և ի գիւղօրայս ի շրջակայից
գոցին, որք նոյն սրբոյ վանիցն են թեմք։ Յորս կառուցեալ քրիստոսա-
հիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց։ Նախ՝ համայն
միաբանիցդ գոյնոյ սրբոյ վանից, խոհեմամիտ վարդապետաց, պար-
կեշտաբարոյ աստիճանաւորաց և ընտիր բարեկրօն վանականաց, և
ապա՝ սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկ[աւագաց] և համօրէն
եկեղեցական մանկանց, բարե[համբաւ] իշ[խանաւորաց], իրաւ[ար-
ար] մէլի[քաց], փառաղուարճ ազնէօրդեաց, հաւ.....
Զի ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի կենսաձիր սուրբ Աւետա-
րանի իւրում, թէ որ խնդրէ՝ առնու և որ հայցէ՝ գտանէ և որ բաղխէ՝
բացցի նմա։ Արդ և դուք՝ սիրելի և հոգևոր որդիքդ մեր, յառաջ քան
զայս համակամ խորհրդեամբ և բարւոք դիտմամբ գրեալ էիք առ մեզ
զթուղթ բազմակնիք և խնդրեալ ի մէնջ կացուցանել սրբոյ վանիցն ձե-
րում և ձեզ հոգևորապէս այցելու և տեսուչ զսիրելի և զշնորհածին որ-
դին մեր և զընիկ միաբանն սուրբ վանիցն ձեր՝ զԴաւիթ խոհեմազարդ
վարդապետն։ Եւ մեր տեսեալ զօգտաւորութիւն շահաւէտ խնդրոյ ձերոյ,

բաղդրացաք հայրական գթով առ հոգևոր որդիսդ մեր և կատարեցաք զհայցելին բարեխնդիր բաղձողացդ ի լրումն ուխտարանական ամենաճշմարիտ բանին տէրունոյ՝ գրելով զնամակ օրհնութեան և կարգելով զնա առաջնորդ:

471 Իսկ զի գրեալ էաք նմա յայնմիկ կոնդակոջն զպատուէր՝ առ ի գալ ի սուրբ Աթոռս և ընդունիլ զխրատս հայրականս ի բազմադիմի օգտակարութիւնն ինքեան և սուրբ վանիցն և ձեզ: Այժմ, ահա, որդիական հպատակութեամբ դիմեալ էր ի սուրբ Աթոռ շնորհածին ծնողս իւր և առ մերս հոգևոր հայրութիւն, երկրորդ մահսարական թղթով հասարակութեան ձերոյ, որք ես աղերսեալ էիք ի սէր և ի խնամս ընդունիլ և շահել, և երևեցուցանելով և զշնորհակալութիւն զշինարարութենէ և զլաւապէս կառավարութենէ նորին: Ուստի և մեք ի գալն նորա հայրական սիրով և գթով ընկալաք իբրև զորդի հնազանդ, արժանաւոր սիրոյ և օրհնութեան: Եւ որքան ի դէպն էր և հարկաւոր խօսել ընդ նմա զբանս խրատականս և զպատուէրս ամենաօգուտս ի շինութիւն սրբոյ Տանն այնմիկ ի բարեկեցութիւն ինքեան և ի բարւոք կառավարութիւն օրհնեալ վիճակայնոցդ իւրոց, ասացաք և պատուիրեցաք, զորս և ինքն յօժարութեամբ սրտի յանձն էառ ի պահել և ի կատարել, և դժուարակրելի ծանրութեանն իւրոյ և խղճալի վանիցն ես ըստ ձեռնտուութեան ներկայիս կերպիւ միով օգնութիւն արարաք:

Եւ ապա այսու օրհնաձիր կոնդակաւս վերահաստատեալ զսիրելի և զհոգևոր որդիդ մեր և զհարազատ զաւակդ սրբոյ Աթոռոյս՝ զտէր Դաւիթ հանճարափայլ վարդապետդ և զարհիեպիսկոպոսդ ի յառաջնորդական գործն իւր և հոգևոր խիլայիւք փառաւորեալ, ահա դարձուցաք ի սուրբ վանսն ձեր և առ ձեզ, զի եկեալ յայդր հովուեսցէ զձեզ հոգևոր իշխանութեամբ և աստուածային օրինօք և աւանդութեամբք սրբոյ եկեղեցւոյ և կանոնօք հարցն սրբոց և թարց ակնառութեանց:

Եւ արդ, որպէս լսելով մեր աղերսանաց ձերոց, վաղվաղակի կատարեցաք զխնդիր ձեր, պարտիք և... (գրեա յօրինակէն, որ է ի հին տետրն ի ԻԹ (19) երեսն):

Ձեռ. № 2803, էջ 470—470ա

1076. 1784 թ. 16 նոյեմբերի—*Կոնդակ ի վերայ Թիֆլիզու և բոլոր երկրին Վրաց վասն զօգնութիւն առնելոյ և զխմտատիպս տալոյ Հախպատու վանիցն՝ առ ի ազատիլ ի պարտուցն, զոր ունէր:*

Ձեռ. № 2803, էջ 567—568

1077. 1784 թ. 16 նոյեմբերի—*Թուղթ առ Հախպատու վանից թեմ ժողովուրդսն վասն հաստատելոյ զԱշխարհպէկն և զՍոլոմոն Դիւանն վէքիլ նոյն սուրբ վանիցն:*

Ձեռ. № 2803, էջ 667—669

1078. 1784 թ. 18 նոյեմբերի—*Թուղթ ի մեծն Պոլիս առ հացագործաց էսնաֆի գանձապետն սրբոյ Աթոռոյս՝ Միքայէլ ամիրայն. շնորհակալութիւն յաղագս գանձանակական արդեանց հասուցելոյ առ նուիրակն:*

Ձեռ. № 2803, էջ 564—565

1079. 1784 թ. 18 նոյեմբերի—*Կոնդակ ի Պոլիս առ սիւզանաճող էսնաֆն. շնորհակալութիւն վասն հասուցեալ գանձանակագրամի:*

Ձեռ. № 2803, էջ 566

1080. 1784 թ. 18 նոյեմբերի—*Թուղթ ի Թիֆլիզ առ տէր Աբրահամն՝ ի կողմանէ Հախպատու վանից և նորին առաջնորդի բանիցն:*

Ձեռ. № 2803, էջ 568—569

1081. 1784 թ. նոյեմբեր—*Թիֆլիզու առաջնորդական կոնդակի սկիզբն է և միջարկեալ բանքն, որք ըստ պատշաճի ներկայիս գրեցան, մինչ սրբազանն երեք անտի զԿարապետ վարդապետն և յղեաց ի տեղի նորա զՄարտիրոս վարդապետն առաջնորդ:*

Ձեռ. № 2803, էջ 570—572

1082. 1784 թ. 18 նոյեմբերի—*Թուղթ շնորհակալութեան առ ի Պոլիս եղեալ վանցիսն. շնորհակալութիւն վասն հասուցեալ գանձանակական արդեանց:*

Ձեռ. № 2803, էջ 666—667

671 1083. 1784 թ. 18 նոյեմբերի—*Թուղթ ի Պոլիս առ ջուղայեցի Պօղոսեան պարոն Խաչիկն՝ վասն Ատենի ժամագրքի տպելոյն եւ բացատրութիւն խնդրոյն, որ խնդրեալ էր զՅովսէպոս պատմագիրն տպագրել:*

Յորմէ ժամանեցի...

672 Եւ ընդ ամենառատ օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս և բարեխոհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Զի թուղթ քո ի մայիսի ժ (10) գրեալ էհաս առ մեզ յառաջ քան զայս, զոր և մեր սիրով ընկալեալ, ընթերցաք և իմացաք զամենայն գրեալսդ: Բայց մեք յառաջագոյն իմացեալ զդարձն սիրելւոյդ ի Հաշտարխանու և զանվնաս հասանելդ ի Պոլիս, գրեցաք առ քեզ ուրախութեամբ բազմաւ զգիր օրհնաձիր և շնորհաւորական: Իսկ մինչ ընկալաք զթուղթդ, էաք ի մեծի նեղութեան և ի տառապակրութեան վասն աւերազործ վրդովմանցն երկրիս և վնասակրութեանցն սրբոյ Աթոռոյս, որք զեռևս ոչ են առեալ զդադարումն: Վասն որոյ ոչ կարացաք ձեռն հասուցանել ի պատասխանագրութիւն թղթոյդ, կարծելով թէ օրհնեալդ զյաւս մեր լսելով, ցաւակցիլոց ես մեզ, քան թէ նեղասրտիլոց: Այլ այժմ լուաք, թէ սրտամնեալ ես լեալ ի մէնջ:

Այնիւ սիրելիդ իմ, մեք զքեզ ընտանեբար հոգացող բարեկամ գիտեմք մեզ, որ թէ այլք ի մէնջ նեղասրտիցին, դու պարտիս շահել, ապա ո՞ւր եղև մտերմութիւն սիրելւոյդ, որ դու ինքդ խաթրամնեալ լինիս ի մէնջ: Ահա մեք յիշատակող և օրհնաբանեմք քեզ յարաժամ և ոչ խընայեմք ի յաղնուոյդ զթուղթս օրհնութեան, սակայն մինչ վիշտք և հոգք կենցաղոյս զժնէի զմեօք պատեալ անհանգիստ և անձեռնհաս առնեն զմեզ, պարտիս և դու յայնժամ խնայել ի մեզ:

Իսկ յաղագս Ատենի ժամագրքի տպեցմանն, որ խոստացեալ էիր զԱՌ (1000) ղուռուշ տալ սրբոյ Աթոռոյս, սիրելիդ իմ, ճշմարտիւ գրեմ, եթէ դու ինքնին ականատես և վերահասու իցես տաժանմանց մերոց առ այս գործ, կարծեմ թէ ԲՌ (2000) ղուռուշ տալն ես սակաւ համարիս, քանզի մինչ սկսաք զայս գիրք տպել, զմեծ դազկեահ չունէաք, վասն որոյ ի փոքր դազկեահոջ մերում կրկնապատիկ աշխատութեամբ տառապեցաք մինչև ցՍաղմոսի վերջն: Զի զԱ (1) տետրն, որ է Ա (1) Թապաղայն, յերկուս հատանելով՝ զերկաքանչիւրն հատուած ուրոյն ուրոյն զնէաք ի դազկեահն, որով կերպիւ Ա (1) տետրն չորիցս ի դազկեահ մտանէր, որոյ սակս իսկ երկարեցաւ միջոցն: Ապա տեսանելով, թէ այսու ոճիւ մեզ գրքի աշխատանս եմք կրելոց, ի Վրաց արքայէն զդազ-

կեահ մի խնդրեցար և բերել ետուր ճարտար վարպետօք հանդերձ և
673 բազմօք ծախուք կառուցար ի || տպարանի մերում և յայտնիկ տպագրեցար զժամագիրքն և զբանի տետրն ի Տօնացուցէն, և զմնացեալն ևս տպեցուցանեմք։ Նաև զամենայն պիտոյսն յայլ երկրաց բերել տամք, մինչև մրի փայտն ևս։

Արդ, այսմ գործոյ այսպիսի տաժանմամբ և դժուարութեամբ յառաջանալով, տես թէ որչափ դրամք ծախին ի սրբոյ Աթոռոյս և մեր, բաց ի արտաքին և ի ներքին ցաւոց մերոց, զորքան աշխատութիւն կրեմք։ Յիրաւի, որպէս ասացաք, եթէ լաւապէս իմն վերահասու լինիցիս՝ զԲՌ (2000) ղուռուշ ևս տաս խնդրանօք կամօք։ Այլ մեք յառաջ գրեալ եմք հոգևոր որդւոյն մերում՝ Իսահակ աստուածաբան վարդապետին և այժմ ևս քեզ գրեմք, զի յօժարութեամբ և սիրով զՌԵՃ (1500) ղուռուշ տացես սրբոյ Աթոռոյս հոգևոր ծնողիս քոյ ի կողմանէ ծախուց Ատենւոյն, որոյ զտիպն ի յիշատակ քեզ առնեմք։ Եւ ըստ գրեցելոյդ զի (20) հատ ի Ջուղայ առ Տէր-Յօհաննեան տէր Մինասն յղեմք և զի (20) հատ ևս ի Բասրա՝ առ Ստեփաննոս աղայն և պարոն Յովհաննէսն։

Արդ, եթէ զՌԵՃ (1500) ղուռուշն բոլորապէս տացես՝ առնումք, և թէ պակաս կամիցիս տալ՝ ոչ վայել է մեզ առնուլ՝ ըստ այնմ, զի ոչինչ բերէ զօգուտ Տանս սրբոյ։ Սակայն այլես տպեցուցանեմք զյիշատակ քո և քոյայնոցն, յայնժամ թող ձրիապէս լինի, հոգ չէ։ Բայց յուսամ, թէ որպէս բարեպաշտութեանդ վայել է զօգտակամութիւնդ, որ առ սուրբ Աթոռս մայրս քո չթողլով ի ձեռաց, կամակար մտօք և յօժար սրտիւ տայցես զգրեալս, և իրաւամբ ստասցիս զյիշատակդ բարութեան և արժանաւորաբար վարձատրեսցիս յԱստուծոյ։

Եւ յաղագս Յովսէպոս պատմագրին, որ խնդրեալ ևս ի տպել, զոր Իսահակ շնորհառատ վարդապետն էր գրեալ մեզ, բարեմտութեամբ է խնդիրդ, սիրելի իմ, սակայն այն գիրքն յերկուց ոմանցէ թարգմանեցեալ առ մեր լեզուս, որ կէսն կիսոյն յարմար չէ և զյաճախ սխալանս ունի, յորմէ և չունիմք զբազումս, որ միմեանց համեմատելով, զլաւն կարիցեմք ընտրել, և եղելոյն ևս առ ի հետևիլ չունիմք զանդորր ժամանակ և զհանգիստ կեանս։ Վասն որոյ այն գրքոյ տպագրութիւնն ներկայիս բան չէ։ Այլ կայ մեզ առաջի յետ Ատենւոյն տպել զոմանս թեթև գրեանս, որք յոյժ հարկաւորք են, զկնի որոց ևս, եթէ կամիցի և յաջողեսցէ Աստուած, լինի թէ զՃաշոց կարիցեմք տպել, յարմար նորոյ Տօնացուցին, որ այն ևս հարկաւոր է և օրհնեալդ նորին վարձուցն ևս ես հաղորդիլոց ըստ բարւոք ջանիցդ, զոր ունիս։

674 Եւ զոր գրես, թէ եթէ ի Հնդիկս դրամ ունիցիմք, գրիցեմք քեզ, որ յայդր տաս և անդ առնուս։ Սիրելիդ իմ, զուցէ դու ևս լուեալ իցես, թէ մեր նուիրակն ե՞րբ է ելեալ անտի, որ և մեծի փորձութեան հանդիպեալ, ապա եկեալ էր ի Բասրայ և զհաշիւն հատեալ ընդ սիրելեացն մերոց՝ Ստեփաննոս աղային և պարոն Յովհաննէսին, և ահա եկեալ է ի սուրբ Աթոռս։ Այլևս անդ մեզ ի պատրաստի դրամ ոչ գոյ, եթէ լինիցի, գրելոց եմք։

Այսպէս իմա զստոյգն և զիսկապէս սէրդ և զհաւատարմութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ աննուազ պահեսցես, գրելով միշտ զորպիսութեանց քոց ի յիմացս մեր, մանաւանդ այսր թղթոյս զպատասխանին շուտով գրեսցես։

Ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ միշտ ի խնամս և ի գթութիւնս նորին։ Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս մերում, ի նոյեմբերի ԺԸ (18), և ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 671—674

1084. 1784 թ. 18 նոյեմբերի—Կոնդակ ի մեծն Պօլիս առ զօլբանտճոց էսնաֆն. շնորհակալութիւն վասն գանձանակական արդեանց իւրեանց՝ ձեռամբ Մինաս և Իսահակ վարդապետացն հասուցելոց։

Ձեռ. № 2803, էջ 724

1085. 1784 թ. 18 նոյեմբերի—Թուղթ շնորհակալութեան առ հացագործաց էսնաֆն ևս վասն գանձանակական արդեանց հասուցելոց նուիրակացն մերոց։

Ձեռ. № 2803, էջ 724—725

1086. 1784 թ. 18 նոյեմբերի—Առ Իւսկիւտարու ղահֆաճոց, սափրչաց և մէյխանաճոց էսնաֆսն. շնորհակալութիւն վասն հասուցեալ գանձանակադրամիցն։

Ձեռ. № 2803, էջ 725

728 1087. 1784 թ. 18 նոյեմբերի—Թուղթ առ Պօլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն վասն ծանուցանելոյ զոմանս իրս և իբր պատասխանի թղթոյ նորին ի սեպտեմբերի ԺԱ (11) գրեցելոյ։

Յորմէ սիրով բազմաւ և կարօտիւ, տիրապարգև սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ ծանիր սիրելի որդիդ մեր, ցաւակից և շնորհածին և օգտաշատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդապետ։

Զի յաղագս գանձանակաց խնդրեալ թղթոցդ զմեծամեծսն և զլոյժ հարկաւորսն, յառաջ քան զայս հոգացեալ, ի Հոկտ[եմբերի] ԺԴ (14) յղեցաք, իսկ զոմանս թուղթս առ էնաֆսն և առ ոմանս գանձապետս նոցին, որոց աղագաւ խոստացաք յայնժամ յետոյ գրել, այժմ գրեցաք ահա, որք են՝ Ա (1) կոնդակ և Ա (1) թուղթ առ հացագործսն և առ նոցին գանձապետ Միքայէլ ամիրայն, Ա (1) կոնդակ և Ա (1) թուղթ առ տօլպանտճիսն և առ նոցին գանձապետսն՝ տիրացու Գէորգն և պարոն Աստուածապահն, Ա (1) կոնդակ առ Իւսկիւտարու ղահվաճիսն, սափրիճսն և մէյխանաճիսն, Գ (3) կոնդակ ևս առ վանցիսն, առ սիւզանճիսն և առ էիպու բրուտսն, զորս և ահա ընդ թղթոյս յղեցաք առ քեզ՝ տալ ցտեարսն իւրեանց։ Իսկ ի գրեցուցանելս մեր զայսոսիկ գրեանս, ընկալաք զթուղթ քո ի սեպտեմբերի ԺԱ (11) գրեցեալ ի Հոկ[տեմբերի], հանդերձ դաւթարաւն որբանութեանց և զնոց յղեալ դեզորէիցդ ըստ գրեցելոյ մերում և հանդերձ միւս հատուածովն թղթոյ։ Զորս ընթերցեալ վերծանեցաք զամենայն գրեալսդ ի նոսին, այսինքն՝ զՓիլիպպոս վարդապետի ժամանելն յայդր, և զընդ քեզ առ պատրիարքն և առ իշխանսն հանդիպելն, և ապա՝ ի սեպ[տեմբերի] Բ (2) գնալն յԻզնիմիդ ի գործն, և ընդ նմին զԱդրանայու մահտեսի Ստեփաննոս ամիրայի ելանելն այտի, առաջնորդին իւրեանց՝ Միքայէլ վարդապետին գալ յուխտ ի սուրբ Աթոռս, և զԱկնայ առաջնորդ միւս Միքայէլ վարդապետի ևս գալ մտածելն ընդ նմա։

Ծանուցեալ էիր և զյունիսի ի ԺԶ (16) գրեալ թղթոյն մերոյ ժամանելն առ քեզ և իմանալդ զգիպուածոյն երկրիս և սրբոյ Աթոռոյս։ Բայց յետ այնորիկ ևս զհարկաւորսն եղելութեանց երկրիս և զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս ծանուցեալ եմք սիրելւոյդ։ Այժմոյս, ահա, քան զառա-

չինան խաղաղ է երկիրս կերպիւ մի, զի որպէս յառաջ գրեալ եմք, բա-
զում աշխատութեամբ զբրդան և զբերդականսն հաշտեցուցաք։ Քանզի
արքայն Վրաց գրեալ էր սոցա զմեծութիւնն բրաւց տալ Սիփիրի Աւատ
աղայի որդւոյն, և Շամախնն թէ հնազանդիցի, թողուլ և թէ ոչ՝ վարել
յերկրէս, որ և ըստ խնդրոյ սոցա զզօրս ես յղել խոստանայր։ Յորոց
համբաւոց նկատէաք, թէ նորապէս մեծամեծ աղմուկք են յառնելոց և
մնացորդքն շինութեանց երկրիս կրկին աւերելոց էին։ Վասն որոյ շօշա-
փեցաք զմիտս Շամախնին ի խաղաղութիւն համոզելով, և նա զթուղթ
գրեաց մեզ, թէ իմ վէքիլ ես, զինչ և առնիցես՝ ընդունելի է։ Մեք ես գիր
գրեցաք ի բերդն առ խանն և առ մայրն նորա (որ իբր նա է տիրօղն
վասն տհասութեան տղային) և առ աղայսն՝ հաշտիլ ընդ նմա։ Եւ նո-
քա ես ընկալան զխնդիր մեր և կամեցան հաշտիլ և զգիր ես գրեցին
առ Շամախնն՝ միամտիլ և գնալ առ ինքեանս։ Ապա թէպէտ ինքն՝ Շամ-
ախնն ոչ վստահեցաւ գնալ ի բերդն, սակայն զեղբայրն իւր՝ յԱհմատ
աղայն յղեաց յԱթոռս՝ գնալ աստի ի բերդն, բայց նա ես չկարէր միան-
գամայն գնալ։ Վասն որոյ կրկին գրեցաք ի բերդն և զԽամին խանն բե-
729 րաք աստ առ մեզ, որ հաւատացուցեալ զմեզ, տարաւ զնա ի բերդն // առ
խանն և առ մայրն նորա, որք զսէր և զխնամս էին ցուցեալ նմա և
զխիլայս շնորհելով ուղևորեալ էին։

Եւ զի յառաջ քան զայս հաշտութիւն, բերդականքն զզօրս էին բե-
րեալ յարքայէն Վրաց իբր ԲՃ (200), ապա մինչ ընդ բրթացն ես հաշ-
տեցան, զնոսա ես ընդ նորեկացն խառնեալ, հանդերձ Բ (2) մեծամեծ
հրացանօք յղեցին ի վերայ ապստամբելոցն՝ ի հնազանդեցուցանել կամ
առ ձեռն բերել պատերազմաւ։ Յորոց երկուցեալ Սէյտլլու անիծեալքն
կորեան յերկրէս յարտաքոյ սահմանս Կաղզուանս և մնաց Ռամազանն,
որ քանի Ճ (100) արամբք ի Փաշինիս ամրացեալ էր։ Վասն որոյ գնա-
ցին զօրքն ի վերայ նորա, և նա իջեալ յամրոցէն, սակաւ ինչ կռուեալ
էին, և մինչ յաղթահարեցեալ էր, եկեալ անկեալ էր Ահմատ աղայի և
ի ձեռն նորա զորդին յղեալ էր առ Շամախնն՝ առաքել ի բերդն պա-
տանդ։ Իսկ յայնկոյս քան զԵրասխն եղեալ զեօղորայքն, քան զՌամա-
զանն, յառաջ իսկ զԽաղ փաշայն միջնորդ արկեալ՝ զհնազանդութիւն
ցուցին, վասն որոյ զօրքն և հրացանքն դարձան ի բերդն և սեռն, թէ
Շամախնն Ռամազանի տղային և ընտանեօքն և այրմլուաց բեանդխու-
տայիւքն և ջրի այն կողմնականաց նշանաւորօքն, ընծայիւք հանդերձ,
գնալոց է առ նոր խանն, որ մինչ լինիցի, ողորմութեամբն Աստուծոյ
խաղաղութիւն է լինելոց, բայց յոյժ վերջինն այլևս Տէրն է գիտելի։
Այսպէս իմա զերկրէս։

Իսկ վասն դեղորէից առնլոյդ և յղելոյդ և որպիսութեանց նոցա, որ
գրեալ էիր, իմացաք և շնորհակալ եղաք յոյժ, բայց դեռ չհասին մեզ և
վէքիլ Հայրապետն ես ոչ գրէ, թէ առ ինքն իցէ հասեալ։ Սակայն թէ
հասցին ես, այժ Յովնաթանն աստ չէ, քանզի յանկանիլ ցրտոյն, մինչ
այլ ոչ լինիւր ծաղիկն, գնաց ի տուն իւր, լաւապէս շահեցեալ ի մէնջ՝
պայմանելով, թէ ի գալն գարնան՝ փոյթ ընդ փոյթ եկեսցէ։ Բարեաւ
մինչ հասցին աստ զեղօրայքն և Յովնաթանն և գայցէ, ցուցանելոց եմք
նմա, և թէ զայլ ես դեղ խնդրիցէ և կամ որիշ ինչ հարկաւորիցի գրել
քեզ, գրելոց եմք յայնժամ։

Այլև իմացեալ էաք զմահ խղճալի Եփրեմ կաթողիկոսին Սսայ,
որում Տէր ողորմեսցի։ Այժմ ես լուաք զգալն յայտր և զօծանիլն Թորոս
կաթողիկոսին։ Հաճեցաք և ընդ միաբանիլդ քո ընդ պատրիարքս վար-

դապետին և ընդ այլ օծանօղսն ըստ այնմ, զի ուխտեալ է կալ և մնալ
ի հնազանդութեան սրբոյ Աթոռոյս և հայրապետաց սորին։ Որ և բա-
րեաւ վայելեսցէ զսուրբ կարգն իւր ի խաղաղութեան։

730 Վանցի Կարապետ վարդապետի ի յՈւռումէլու կողմն իբրու ժողովք
գնալն ես իմացաք, իսկ զայլ մնացեալ հարկաւոր որպիսութիւնսն զո-
ցին ես գրեսցես՝ առ ի գիտել մեզ։ Այլև Հնդկաց երկրի նուիրակ խըղ-
ճալի Գրիգոր վարդապետն մեր ի հոկտեմբերի ԻԳ (23) եկն էհաս ի
սուրբ Աթոռս՝ մնացորդ սակաւ ինչ իւօքն։ Զի բաղումքն այնք էին, որք
ի ծովն սուզեցան և յաւազակացն յափշտակեցան, բայց մինչ ի գի-
պուածոցն զերծեալ, ինքն ամբողջ ժամանեաց աստ։ Ուրախ եմք առա-
ւելապէս ընդ այն և գոհացող զՏեառնէ։

Իսկ սա՝ Գրիգոր վարդապետս, ի Բաղդատ փոխեաց է տուեալ պա-
րոն Ալէքսանին 9754 ղուռուշ, և նա գրեալ է յայտր իւր եղբայր Ասլան
ամիրային և որդի Յովհաննէսին, որք ԻԱ (21) օր վատայով տացեն
քեզ՝ առ ի հասուցանել ի սուրբ Աթոռս։ Նաև Մարգար աղայն ես վասն
մեռոնի սան շինելոյ, աստէն փոխեաց է արարեալ յայտր ի վերայ Ջա-
լապի խօջայ Եանքին 3000 ղուռուշ, որ ի հասանիլ գրոյն առ քեզ՝
ԼԱ (31) օր վատայով տացէ քեզ։ Եւ թէ ի պարոն Ալէքսանէն և թէ ի
Մարգար աղայէն Գրիգոր վարդապետն, յաղագս վերոյ գրեցելոցս այ-
սոքիւք, զիտամամբք զձեռագիրս է առեալ և ինքն ես զթուղթ գրեալ
ամենայն որպիսութեամբքն, անդուստ ի Բաղդատու յղեալ է առ քեզ։
Արդ, թէ այն թուղթքն հասին յայտր և գրամատուքն եսուն զգրամսն
կամ թէ զի՞նչ ասացին, գրեսցես մեզ։

Այլև Բասրայու Ստեփաննոս և Յովհաննէս աղայքն զհաշիւն իւրե-
անց տեսեալ ընդ Գրիգոր վարդապետին, զհաշուագիրն տուեալ են նմա՝
առ ի բերել հանդերձ ընծայիւք յանուն մեր։ Բայց ի ճանապարհին ընդ
այլ իւրացն և այն թուղթն յափշտակեցեալ է ի յանօրինացն։ Զկնի որոյ
գրեալ է նոցա Գրիգոր վարդապետն զկորուստ այնր թղթոյ, վասն որոյ
և նոքա խոստացեալ են կրկին գրել զհաշուագին և յղել, զոր մինչև
ցայժմ ոչ ընկալաք։ Կարծեմք թէ այդ կողմամբդ առ քեզ իցեն յղեալ,
եթէ յիրաւի յղեալ իցեն կամ յղիցեն ի ձեռս քո, օր մի յառաջ առ մեզ
յատուցես։

Ծանիր և զայս, զի մինչ զայս վերին բանքս գրեալ էաք, էհաս և
թուղթդ ի նոյեմբերի..., որ գրեցեալ էր ի հոկտեմբերի Ժ (10), և զայն
ես ընթերցաք և իմացաք զյօգոստոսի ԻԶ (26) գրեալ թղթոցն մերոց ժա-
մանելն առ քեզ (զորս վասն Տօնացուցին էաք գրեալ), և զքո հասու-
731 ցանելդ առ իւրաքանչիւր տեարսն և զայլ // գրեալսդ։ Զպատասխանիս
գրեցելոց բանից մերոց և զՏօնացուցի բանի ո՞ւր կայանալն, որ խոս-
տացեալ էիր յետոյ ծանուցանել, ի հարկէ մինչև ցարդ գրեցեր կամ թէ
ոչ, գրեսցես։

Ի կողմանէ պարոն Խաչիկ աղային ես, զոր ինչ գրեալ էիր, իմա-
ցաք։ Առ որ ահա ըստ խնդրոյդ զթուղթ գրեցաք՝ շահելով զսիրտն և
ղԱՌԵՃ (1500) ղուռուշ խնդրելով վասն Ատենւոյ տպեցմանն և զՅով-
սեպոս պատմագրի տպեցումն, որ խնդրեալ է, բացասելով, զորոյ և
զպահարանի մի կողմն բաց յղեցաք ի ձեռս քո, զի տեսցես և հասու-
ցես առ նա, և դու ես ըստ մեր մտացն խօսեսցիս կամ գրեսցես ինչ
նմա։ Եւ զի յիշեցաք, թէ զՅովսեփոսն ոչ յանձն առնումք տպել, այս է
պատճառն, որ զփոքր դավկեահն վասն խուժանացն եղելոց դեռ չկարա-
ցաք ի բան ձգել և Յովսեփոսն յերկուց թարգմանեցեալ գոլով, անյար-

մար են միմեանց սկզբնակողմն և վերջն, և չունիմք զբազում ձեռագիր
օրինակս՝ յաղագս զուգիչն սրբելոյ։ Մինչ դոյ, որ զյաճախ սխալանս
ունի և հետևելոյ ժամանակ ես չունիմք անգորր և ինքն իսկ գիրքն ես
չէ ինչ հարկաւոր յաճախիլ ի մեզ, մանաւանդ Ղազար Փարպեցւոյ
պատմագիրն, որ վտանգաւոր չէ և խոստացեալ եմք, պարտիմք տպել։
Եւ ի Հնդկաց երկրէն ես ոմանք զնորհրդատետր են խնդրեալ առ ի
տպել, և յետ այնորիկ թէ կարիցեմք տպել՝ ճաշոցն է հարկաւոր, վասն
որոյ զտպագրութիւն Յովսեփոսին բացատացաք։
Իսկ ի կողմանէ փոլիցայիցն ես, որ գրեալ էիր, դայս իմա։ Զի բաց
ի յառաջին անձնականէն միրմէ էՌ (7000) ղուռուշի ղապլ յղեցաք
քեզ, որոց ԳՌ-ն (3000) Գորոյենց Զրաղ Յարութիւնին էիր տուեալ։ Յետ
այնորիկ այլևս նմա տուեալ ԲՌ (2000) ղուռուշի ղապլ ես յղեցաք ի
քեզ, որոյ աւելորդ կէս ղուռուշն ի հաշիւն ժամացուցից գնոցն արկաք։
Ահա եղև քո Յարութիւնին տուեալդ ԵՌ (5000) ղուռուշ։ Եւ զկնի ի հոկ-
տեմբերի ԺԴ (14) ես զԱ (1) ղապս յղեցաք քեզ ԲՌԵՃ (2500) ղուռուշի,
որոյ զԱՌԵՃ (1500)-ն Հաճիպապի Զրաղ Մկրտչին էիր տուեալ և
զԱՌ (1000)-ն՝ դարձեալ Յարութիւնին։ Եւ այսու եղև նոյն Յարութիւնին
տուեալդ ԶՌ (6000) ղուռուշ, որոց զղապպսն յղեալ եմք։ Իսկ յետ սոցա,
զոր ինչ ես տուեալ ես, գրեսցես մեզ և պարոն Հայրապետին զորքա-
նութիւնն, որ նորապէս ղապլ յղեսցուք։
Այսքան շփոթումն և գլխացաւութիւնն վասն այնր է, զի միոյ ու-
մեմն քանիցս փոլիցայ տաս և զիւրաքանչիւր տալդ գրես և բազմիցս ես
յիշես զկնի միմեանց։ Այլ այսպէս արա մինչ այդ Գորոյենց Զրաղ Յա-
րութիւնին (որում շատ փոլիցայ տալ հանդիպի) և կամ այլոյ ումեմն
զգրամ տաս, թուղթ առ և թէ մերձ ընդ մերձ միևնոյն անձինն այլևս ես
զգրամ տալոց, յայնժամ մի գրեր մեզ, այլ որքան կամիցիս և ես տուր։
Եւ ապա մինչ այլև չիցես տալոց, յայնժամ միանգամայն գրես մեզ,
թէ զայսքան ինչ ետու այսինչ մարդոյ և մեք զղապլ գրեալ յղեսցուք։
732 Եւ մինչ առնուցուս զղապլն և միամտիցիս, յայնժամ ապա այլևս
տուր դարձեալ ըստ օրինակի գրեցելոյս, իսկ և նարգեննիս ի Զմիւռնոյ
ես զթուղթս ընկալաք ի Միքայէլ վարդապետէն և յԱստուածատուր
աղայէն, որք գրեալ էին, թէ զխնդրեալ չուխայսդ և զշալսդ, հանդերձ
ոմամբք բւրոք Եսայի վարդապետին, յղեցաք և զԳՌԲՃ (3900) ղու-
ռուշն ես փոլիցայ արարաք ի վերայ Մասեհեան Եսայուն։ Արդ, այն
իրաց բեռն հասեալ է ի Կարին, իսկ վասն փոլիցային, թէ առե՞ր և թէ
ոչ, գրեսցես մեզ։ Իսկ որ ի թղթոջդ յիշեալ էիր, թէ ի սեպտեմբերի
ԻԵ (25) ես եմք զթուղթ գրեալ, այն թուղթն տակաւին մեզ ոչ է հասեալ՝
Զգիտեմք, թէ ուր է արգելեցեալ։
Ողջ լեր ի Տէր։
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի նոյեմբերի ԺԸ (18), և ի սուրբ
էջմիածին։

Զեռ. № 2803, էջ 728—732

734 1088. 1784 թ. նոյեմբեր—Թուղթ առ մելիք Աւետիքն, որ ի Թիֆ-
լիզ, շնորհակալութիւն վասն յղելոյն զկողոպուտս և զժամուցս եղբօրն
իւրոյ՝ հանգուցեալ Միրիշքեար Իւանիէին և վասն նորոգ առաջնորդին
ես յանձնարարութիւն։

Յորմէ ժամանեցի թուղթ...
Եւ ընդ օրհնաձիր ողջունի սիրառաք թղթոյս ծանուցումն լիցի սի-

րելւոյդ մերոյ ի Քրիստոս և բարեխոհ որդւոյդ սրբոյ աթոռոյս էջմիած-
նի։ Զի ըստ բարւոք և նախնաւանդ սովորութեան ձերոյ բնականի, որ
զաղնիւ սիրելւոյն մերոյ և եղբօրն քոյ՝ ի Քրիստոս հանգուցեալ միրիշ-
քեար պարոն Յովհաննէսի զկողոպուտսն, հանդերձ Ծ (50) ոսկի ժա-
մուցիւ[202], յղեալ էիր ձեռամբ օրհնեալ Յարութիւնին[203], էհաս առ մեզ։
Եւ զսիրանիշ թուղթդ ես, զոր գրեալ էիր, ես ընթերցեալ, ծանեաք զբանս
հարազատական և զյղեալ իրսդ, ըստ փուտոլայից, անպակաս ընկա-
լեալ մատուցաք Քրիստոսի Աստծոյ մերոյ վերաբերմելոյն ի լուսա-
կերտ սուրբ տեղւոջս, և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ և
զամենայն քոյային կենդանիսդ՝ առնլով զՊահպանեայն վասն մեր և
զՀոգւոյն՝ յաղագս հանգուցեալ պարոն Յովհաննէսին և ամենայն
ննջեցելոց ձերոց։ Եւ զի յայտնի են սրբոյ Աթոռոյս հաւատարիմ որդիք
իւր, յորոց էք և դուք, յատկեղ սիրելիքդ մեր՝ օրհնեալ տամբ ձերով,
վասն որոյ զբարի յիշատակս ձեր անմոռաց ունիմք ի յօրհնաբանու-
թիւնս մեր, որում և սիրտ մեր վկայէ։ Եւ ըստ այսմ առանց ձերդ
տախպման և իրաց յղեցման, յառաջնմէ ես եմք յիշեալ մեզէն ի յաղօթս
և ի պատարագս զհանգուցեալ պարոն Յովհաննէսն և զամենայն ըն-
տանիսդ նորա, ի լսելն մեր զհամբաւ մահուան նորին (մինչ առ սիրե-
լիդ ես զմխիթարութիւն գրեցաք):
Բայց այժմոյս ես, մինչ զնախնական աւանդութիւնն ձեր կատա-
րեալ էիր յառուկ սիրովդ և հարազատութեամբդ որ առ սուրբ Աթոռ
մայրս // քո և առ մեզ։ Վերստին յիշեցաք զանուն լուսահոգւոյն՝ հան-
735 դերձ ամենայն ննջեցելովք ձերովք և կենդանեօքդ իսկ, ի փրկարար
սուրբ պատարագոջ ի սարսափելի սուրբ տեղւոջս իջման միածնի բանին
Աստուծոյ, և հայցեցաք ի նմանէ վասն ամենեցուն ձեր զողորմութիւնս
և զգթութիւնս։
Արդ, ընկալցի մարդասէրն Աստուած զհոգևորական տուրս ձեր՝ ի
հաճոյս բարերար կամաց իւրոց սիրով և քաղցրութեամբ, և զփոխարէնն
բազմապատկապէս հատուցէ ի հոգիս հանգուցեալ լուսահոգի եղբօր
քոյ և սիրելւոյն մերոյ՝ պարոն Յովհաննէսին և ամենայն ննջեցելոցն
քոց, արասցէ նոցա այցելութիւն և ողորմութիւն, քաւեսցէ զյանցանս
զմեղս նոցին, և հանգուսցէ ի լուսեղէն խորանսն երկնից՝ ընդ սուրբս
և ընդ սիրելիս անուան իւրոյ։ Եւ զկենդանիսդ ամենայն, զհարազատ
եղբայրդ նորին և զբարեբողբոջ որդիսն ձեր և զբնաւ ընտանիսն օրհ-
նեսցէ, զօրացուսցէ և պահպանեսցէ ամենազօր աջովն իւրով՝ փրկելով
ի համայն հոգեկան և մարմնական թշնամեաց և ի փորձութեանց, և
պահելով ի խոր խաղաղութեան, ի բարեկարգութեան և ի շինութեան, և
մշտապէս ի յիշխանական ճոխութիւնս և ի զուարճալից կեանս մնա-
ցուսցէ՝ զարդարելով ես ամենիւք առաքինութեամբք։
Արդ, թէպէտ և զգրելս աւելորդ վարկանիմ, սակայն ի յես քան զես
հաստատել զօրհնեալդ ի բարեպաշտական գործս քո և ի հարազատա-
կան արարսդ գրեմ, զի զճշմարիտ սէր ձեր և զորդիական սրտացաւութիւն,
զորս ի բնէ անտի և մանաւանդ ի հոգելոյս մեծ միրիշքեար աղայէն
մինչև ցարդ ունիք առ սուրբ Աթոռս, յայսմհետէ ես ունիցիք, առաւել
ես աճեցուցանելով և աննուազ պահելով։ Եւ յարաժամ սրբոյ Աթոռոյս՝
մօրս ձերոյ լուսատուի, ջատագով լինիջիք և ամենայն յայգր պատա-
հեալ բանիցն մերոց, որք քեզ անկանիցին, հաւատարմօրէն և տիրաբար
հոգ տարցիս և երբեմնապէս սիրանիշ թղթովդ ես մխիթարեսցես զան-
մխիթարութիւնս մեր։ Իսկ և պարոն Յարութիւնն և Ստեփանի որդի

Աղալօն, որք զչնալ իւրդ առ մեզ հասուցին, որովհետև ի բույդ կողմանէ
էին եկեալ, վասն որոյ ի յատուկ սէր ընկալաք և իբր օրհնութիւն սրբոյ
Աթոռոյս, գնիլայս ևս շնորհեցաք ի պատիւ սիրոյ ազնուոյդ: Դարձեալ
զայս ևս գիտասջիր, եսկապէս սիրելիդ մեր, զի որովհետև զսիրելին
մեր՝ Կարապետ վարդապետն, յօրհնեցելոյ վիճակէդ վերադարձուցաք
ի սուրբ Աթոռս՝ ի պիտանաւորութիւն այլոյ իրիք բանի, վասն որոյ ահա
զհոգևոր որդին մեր և զշնորհածին զաւակն սրբոյ Աթոռոյս զ... ա-
736 *տուածիմաստ վարդապետն և զար//հիեպիսկոպոսն նորապէս առաջ-*
նորդ կարգեալ ի վերայ համայն աէրունի վիճակացն սրբոյ Աթոռոյս,
օրհնութեան կոնդակաւ առաքեցաք ի յօրհնեալ քաղաքդ: Վասն որոյ
գրեմ սիրելւոյդ, զի ի սէր ունիցիս զդա (և ըստ արժանոյ սրբոյ կարգին
պատուելով շահեցես), և յամենայն կողմանէ իւրեան և գործոյն
ձեռնտու և օժանդակ լիցիս՝ ի յօգուտ սրբոյ Աթոռոյս և ի սէր մեր:
Որովք յիրաւի մեծապէս եմք շնորհակալիլոց զքէն, և (օրհնութեամբ
բազմաւ) օրհնելոց զքեզ (յարապէս հանդերձ) ամենայն բոյլյնովքդ:
Ողջ լեր ի Տէր և ի բարեգթութիւն նորին յանձնեալ միշտ: Ամէն:
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս ի նոյեմ[բերի] և ի սուրբ էջմիա-
ծին:

Զայս ևս ծանիր, սիրելիդ մեր, զի ահա և քեզ յայտնի է, որ հար-
կաւոր հոգալիքն մեր, որք ի քաղաքոջդ պատահին, ի ձեռն սիրելի
որդւոյն մերոյ և սրբոյ Աթոռոյս հարազատ ճորտ Ենովքին հոգացեալ
լինին: Իսկ լսեմք, թէ տեղւոյդ գզիրքն և գրգիտքն կարի նեղացուցանեն
զնա ի կողմանէ տան և այլ կերպիւ ևս, և յոյժ անհանգիստ առնեն, վասն
որոյ և նա յուսահատեալ, կամի ի մի կողմն երթալ ի քաղաքէդ: Ուստի
գրեմ սիրելւոյդ, զի թէպէտ քաղաքիդ նեղութիւնն ևս շատ է ի ներկայս
(զոր Աստուած ի հանդստութիւն փոխարկեսցէ), սակայն ի սէր մեր և
սրբոյ Աթոռոյս, պատուիրեսցես գզրաց և գրգտաց, որ չնեղացուսցեն
զնա, զի մի գուցէ յուսահատեալ, զընտանիսն թողցէ և տարագրեսցի
յայլ տեղիս, այլ կացցէ յայդր և սրբոյ Աթոռոյս և մեր բանիցն ևս հոգ
տարցէ: Ահա զենովքն քեզ յանձին և դու՝ Աստուծոյ: Կրկին ողջ լեր:
Չեռ. № 2803, էջ 734—736

1784 թ. 22 նոյեմբերի—*Թուղթք ի Թիֆլիզ*

1089. Կոնդակ մի ժողովարարութեան ի վերայ բոլոր երկրին Վրաց՝
ի Գօրի, ի Կախէթ, ի Վրացտուն, ի Ղազախ, ի Լօռի, ի Բամբկաձոր և
ի համայն շրջակայս նոցին, որ ընդ Հախպատու առաջնորդ Դաւիթ
վարդապետին չղեցաւ սակս նոյնոյ վանիցն:

1090. Կոնդակ մի ևս հաստատութիւն գանձապետութեան ի վերայ
եկեղեցեացն Հախպատու՝ քահանայից, իշխանաց և ժողովրդոցն ամե-
նից, որք գոն ի վիճակս նորին, պատուէր, զի զամենայն արդիւնս վա-
նիցն տացեն յինքեանց նորոգ կարգեցեալ գանձապետ պարոն Սողոմո-
նին և պարոն Աշխարբէկին, որոց ի յայսմ կոնդակոջս պատուէր ևս
գրեցաւ, զի հաւատարմութեամբ ծառայեսցեն սրբոյ Տանն այնմիկ:

1091. Թուղթ մի առ պարոն Սողոմօն Դիւանն և պարոն Աշխար-
բէկն, ի պատասխանի թղթոյն, յորում գրեալ էին զշնորհակալութիւն
ի կողմանէ առաջնորդին իւրեանց՝ Դաւիթ վարդապետին:
Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 28

572 *1092. 1784 թ. դեկտեմբեր—Թուղթ առ արքայն Վրաց Հերակլ,*
յանձնարարութիւն վասն նորոգ առաջնորդին տեղւոյն՝ [Մարտիրոս]
վարդապետին:

Յորմէ ժամանեսցի...
Եւ ընդ առատաձիր օրհնութեանս աստուածայնոյ, ծանուցումն լիցի
573 *բարեպաշտութեան քում: Զի յառաջ քան զայս // սիրելին մեր՝ Կարա-*
պետ համճարանակ վարդապետն, որ յօրհնեցելումդ երկրի և ի քա-
ղաքոջդ եղեալ տէրունեացն մերոց առաջնորդ էր ի սրբոյ Աթոռոյս և ի
մէնջ առաքեցեալ, այժմ գրեցաք նմա վերադառնալ ի սուրբ Աթոռս, որ
և ըստ գրեցելոյ մերում, եկն ահաւասիկ և զամենայն բարեշնորհու-
թիւնս և զխնամս և զմարդասիրութիւնս մեծութեան քոյին, զորոց
յայյորւստ գրով ծանուցանէր, այժմօյս ասաէն բերան առ բերան պատ-
մաբանէ: Զորս թէպէտ ոչ նոր ինչ լսեմք, այլ յառաջագոյն իսկ տեղեակ
եմք զայդցանէ, սակայն այժմ ևս լսելով, նորապէս շնորհակալեցաք և
զոհունակ եմք զբարեսիրութենէ օրհնեալ արքայիդ, զոր թագաւորն
թագաւորաց և Տէրն Տերանց ամենազօրն Աստուած օրհնեսցէ անանցա-
նելի օրհնութեամբն և զօրացուսցէ, արասցէ ազատ ի յամենից հոգե-
կան և մարմնական վտանգից, և պահեսցէ հանապազ ի խնամս և յո-
զորմութիւնս իւր՝ հանդերձ արքայազուն որդւովքդ և ամենայն քոյայ-
նովքդ՝ տալով զերկիւղ ձեր ի սիրտս թշնամեաց սրբոյ խաչին և առնե-
լով զնոսին պարտեալս և յաղթահարեցեալս առաջի ձեր:
Արդ, չիք մեր առաւել ուրախութիւն, քան զլսելն մեր զբարւոք
համբաւս զքէն և զունելոյդ զառատ խնամածութիւնս առ սուրբ Աթոռս
մեր և առ մեզ և առ համայն իսկ մերայինս, որք ընդ հովանաւորու-
թեամբ օրհնեալ տէրութեան ձերոյ: Վասն որոյ բազմութեամբ միարա-
նից մեծապայծառ հայցուածովք խնդրեմք ի բաղցրալուր արարչէն՝
պարգևել մեծի արքայիդ զերկարագոյն կեանս և զբարերջանիկ կենցաղա-
վարութիւնս և զյամենայնի յաջողութիւնս, զի և դու, զօրացեալդ ի
Տեառնէ, ի հաստատութեան ունիցիս զճշմարիտ սէրդ, զսրտոյդ բարեկա-
մութիւնդ և զգերազանց խնամաշատութիւնդ, որք առ սուրբ Աթոռս և առ
աղօթողքս վասն քոյ և առ խղճալի մերայինեայս ընդ պահպանութեամբ
քով եղեալս, զորս և մեք լսելով ուրախ լիցուք մշտապէս:
Իսկ և որովհետև յետ գալստեան այսր Կարապետ աստուած-
իմաստ վարդապետին, մերավիճակ ժողովուրդքն, որք յայդր մնացին
574 *առանց հոգևոր այցելուի, վասն որոյ զսիրելի և զշնոր//հածին որդին*
մեր և զհարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զՄարտիրոս խոհեմազարդ
վարդապետն և զարհիեպիսկոպոսն, առաջնորդ կարգեալ տէրունի վի-
ճակացդ մերոց, որք ի յօրհնեալ քաղաքոջդ գոն և արտաքոյ ևս, ահա
օրհնութեան կոնդակաւ մերով առաքեցաք յայդր: Ընդ որում, վայելուչ
վարկեալ զայս սիրարծարծ թուղթ ևս առ յարգելի մեծութիւն ձեր գրե-
ցաք՝ իբր ի ներկայանալ ձեզ այսու և ի հարցանել զանույշ խաթր պա-
տուականութեանդ[204]: Յորմէ և խնդրեմ սիրոյ վստահութեամբ, զի ի
սէր ընդունելով զդա, ունիցիս ի վերայ դորին զյատուկ խնամս և ըստ
արժանոյ սրբոյ կարգին, շահեսցես ըստ վայելման լիալիր խոհեմու-
թեամբդ, որպէս և առաջնոց ի սրբոյ Աթոռոյս առաքեցելոցն արարեալ
ես: Եւ ամենից մեծութեան քում յայտ առնելի և ծանուցանելի բանիցն
հրամանատու և կատարօղ լինիս ի պատիւ սրբոյ Աթոռոյս՝ և ի սէր մեր,
որոց աղագաւ արդարև մեծապէս շնորհակալիլոց եմք զմեծարգոյ բա-

րեկամութենէդ և բազմադատիկ օրհնութեամբք օրհնելոց պատուածապարգև տէրութիւնդ, հանդերձ ամենայն քաղցնովքդ:

Ողջ լեր ի Տէր, և պահպանեցեալ կենադէն խաչին սրբով: Ամէն:

Գրեցաւ ի 1784 թուոջ Փրկչին, ի դեկտեմբերի... և ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց, ի սուրբ Էջմիածին:

Ջեռ. № 2803, էջ 572—574

1093. 1784 թ. 3 դեկտեմբերի—*Թուղթ ի Թիֆլիզ առ սրբոյ Աթոռոյս տէրունի և ծուխ ժողովուրդսն, զորս յառաջ քան զայս տէր Յոհաննու բահանայ ոմն հովուէր, բայց այժմ ի վախճանիլ նորին, գրեալ էին զբազմակնիք թուղթ առ սրբազանն՝ տալ զինքեանս տէր Ղազարին ծուխ: Վասն որոյ գրէ առ նոսա հրաման, զի ղտէր Ղազարն ինքեանց հովուող ծանիցեն և նա հովուեսցէ զնոսա ի կողմանէ սրբոյ Աթոռոյս:*

Ջեռ. № 2803, էջ 674—675

1094. 1784 թ. [դեկտեմբեր]—*Թուղթ օրհնութեան ի Ղարս առ Գաբրիէլն և Մարիամն, որք զտունն իւրեանց վախում էին արարեալ սրբոյ Աթոռոյս, յորում և սաստ՝ ի դէմս, որոց կամիցին ննդութեամբ հանել ի ժառանգութենէ Աթոռոյս զվախումն զայն:*

Ջեռ. № 2803, էջ 574—576

1095. 1784 թ. դեկտեմբեր—*Թուղթ առ Ախալցխայու մերայինսն վասն ումանց բանից ընդ նոյն տեղացի տէր Սահակ քահանային:*

Ջեռ. № 2803, էջ 576—577

1096. 1784 թ. 21 դեկտեմբերի—*Թուղթ առ Զմիւռնոյ Աստուածատուր աղային Ապրօյեան, ի պատասխանի երկուց համօրինակ թղթոց նորին վասն զանազան բանից հանգուցեալ Նահյի վարդապետին, գրեցելոց ի յօգոստոսի ամսոյ 7:*

Ջեռ. № 2803, էջ 578—579

1097. 1784 թ. դեկտեմբեր—*Թուղթ ի մեծն Պօլիս առ Արեւելցի Տրչաննեց մահտեսի Կարապետն, մխիթարութիւն վասն եղբօրն՝ ծերունի Մկրտչին ասաէն վախճանեցելոյ, և շնորհակալութիւն վասն ԲՃ (200) ղուռուշին, զոր ի վերայ առաջնոյ ԴՃ (400) ղուռուշին տուեալ էր վասն պարսպին ի ներքոյ շուրջանակի առուոյ և աղբեր նորոգմանն, և յորդորումն՝ ի սէր և ի հարազատութիւնն հաստատուն կալ:*

Ջեռ. № 2803, էջ 580—583

676 *1098*. 1784 թ. [դեկտեմբեր]—*Թուղթ ի Հնդիկս, ի Բոմբայու*
գատաստանատունն առ դատաւորսն տեղւոյն, վասն շօոթեցի հանգուցեալ Ղազարի վարիս չունելոյն ի վերայ աշխարհի, զի ի Պօլսոյ գամեցեալ Ղազարի վարիս չունելոյն ի վերայ աշխարհի, զի ի Պօլսոյ զանձ վարիս ձևացուցեալ, գրեալ էին ի յինկիլթէռու արքունական դատատանատունն՝ առ ի յափշտակել զինչս նորին յետամնացս, որոց սակս հանգուցեալն կտակ արարեալ, զէմնիազեան մահտեսի Յարութիւն աղայն էր բանակատար կարգեալ յետ իւր ի վերայ կայիցն՝ առ ի մատակարարել, և յետ նորին ևս վախճանիլոյ կտակագիրն, կայր մնացեալ առ նորա որդի Ստեփաննոս աղայն:

Յորմէ ժամանեսցի թուղթ...

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունաձիր թղթոյս, ծանուցումն լիցի աստուածասիրութեան ձերում: Զի թէպէտ չունիմք մինչև ցարդ զծանօթութիւնս ինչ ընդ յարգութիւն ձեր՝ եղով տեղեաւ հեռաւորք և ազգաւ որիշք, այլ որովհետև ամենեցուն հաւատացելոցս մի է Տէր և գլուխ

կենդանատու Փրկիչն մեր Քրիստոս, և զմի և զնոյնն ունիմք զճշմարիտ հաւատն, որ առ նա, ուստի ոչ իբրև զօտար ոք համարիմք առ միմեանս, վասն որոյ և զայս թուղթս գրեցաք առ սիրելութիւն ձեր, իբրև առ
677 ճշմարիտ բարեկամս // և ծանօթս մեր՝ առ ի ծանուցանել ձեզ զորպիսութիւն և զկերպ իրակութեան իրիք: Քանզի որովհետև ի հոգւոյն բնութենէ կացուցեալ էք յայդր դատաւորք և իրաւարարք, վասն այնորիկ պարտիք լաւագէս վերահասու լինիլ զիարդութեան իրին և անթագչելի ճշմարտութեանն հոգ տանիլ արդարապէս:

Վասն զի շօոթեցի հանգուցեալ Ղազարն բնտանի և յիշատակ կամ վարիս չունի այսօր ի վերայ աշխարհի, այլ կտակ ունի ի ձեռս հանգուցեալ մահտեսի Յարութիւն աղայի որդի Ստեփաննոս աղային, զոր յառաջագոյն տեսեալ և հաւու է լեալ ձերդ ամենապայծառ ճըշգրտութեանդ և նշդունելի կտակ: Ըստ որում և մարտասիրութիւն, որ և է ճշմարիտ և ընդունելի կտակ: Ըստ որում և ձերդ ճշմարտասիրութիւն հաւու է լեալ, զի նորին ձեռագիրն է և մահուանդ զկնի այնր կտակին որիշ կտակ չէ գրեալ վախճանողն: Եւ յետ շատակ չունիլն այսու գիտեմք, զի գաւառն նորին առընթեր Այրարատեան գաւառիս է, և ի գաւառականաց և ի գիւղականաց նորին շատք առ մեզ և ի բնիկ գիւղն և ի գաւառն իւրեանց կան, յորոց լաւապէս հարցեալ և տեղեկացեալ եմք, զի Ղազարն ոչ զոք ունի բնտանի կամ ազգական ի վերայ աշխարհի: Այլ սակայն ոմանք, ի գիւղականաց նորին ի մեծն Պօլիս գտանեցեալք, մինչ լուեալ են զմահն Ղազարին և զինչս ունիլն, վարիս են ձևացեալ նմա, որ ոչ են, և սուտ և անտեղի վկայս ժողովեալ և զթուղթս կնքեցուցեալ ի վկայութիւն ինքեանց՝ թէ մեք եմք վարիսն, և մատուցեալ անդ ի ձեռն ոմանց ոմանց թառ զերապայծառ գեսպանն աստուածազօր և ամենաբարեպաշտ թագաւորին ձերդ օրհնեցելոյ ազգի, և ի ձեռն նորա գրեալ յայդր առ պայծառութիւն ձեր մի անգամ և երկիցս:

Եւ ի չընդունիլն ի ձէնջ զպատասխանիս, այժմ վերստին զնոյնպիսի անհաստատ թուղթս յօրինեալ, ի ձեռն նոյն գեսպանին յղեալ են յինկիլթէռ ի յարքունական դատաստանն և առ նոյն ինքն իսկ՝ քրիստոսապսակեալ թագաւորն: Եւ բանակատարութիւն այսր իրակութեանս յանձն է առեալ Օնփրէզն, որ է ի ձերդ ազգէ և է ի Կոստանդնուպօլիս, որպէս զի
678 յղեսցէ անդ առ եղ//բայրն իւր՝ մատուցանել ի դատաստանն և առաջի թագաւորին և հոգալ ըստ գրեցելոցն:

Եւ մինչ հասին առ մեզ այս համբաւք ի Կոստանդնուպօլսէ, հարկաւորեցաւ գրել առ ճշմարտայոյզ դատողութիւն ձեր զճշմարտութիւն իրին՝ այսինքն Ղազարի վարիս չունիլն բնաւին և զճշմարտութիւն նորին կտակին, և զի զսուտ չանացողութիւն և զստութիւն վարիս ձևացելոցն, որք ոչ են վարիս: Եւ ձեզ գրելս վասն այն, ըստ որում դուք էք բարւոքապէս տեղեակք հանգուցելոյն որպիսութեան, որովհետև յայդկոյս է վախճանեալ և զկտակն ևս տեսեալ էք, և քանիցս տուեալ քննութեան, որպէս գիտեմք: Որք և կարող էք զսոյն բանս մեր ևս հաստացանել առ ամենապայծառ դատարանն արքունական, որ անդէն ի բուն երկրի ձերում, և նոքօք հանդերձ վերծանելով զճշմարտութիւն իրին ի սոյն անտի զճշմարտութիւնն բացորոշել և տալ զվճիռ ըստ հաճոյից Աստուծոյ, զի մի կտակն, որ յետ մահուն հաստատուն է (ըստ առաքելական բանին), այն արհամարհեսցի և նորամոյծ պատիր բանք առցեն զհաստատութիւն, որոյ սակս խնդիրս է մեր ի պայծառութենէ ձերմէ:

Այլև՝ ունիմք զմեծագոյն շնորհակալութիւնս զգերամեծար սիրելեացդ յաղագս սիրոյ և բարւոք ակնածութեան ձերոյ, զորս ցուցանէք առ յայդրէն եղեալ մերազնեայս և վերստին խնդրեմք, զի զնոյն մարդասիրութիւնս անպակաս և հաստատուն ունիցիք և առ մեզ, և առ աստուածաէջ սուրբ Աթոռս ևս զճշմարիտ սէր և զբարեկամութիւն հաստատեսջիք և ներկայականի խնդրոյս մերոյ լսօղ լինելով, ի ձեռնհասութեան ձերում գրեսջիք առ մեզ զպատասխանի թղթոյս՝ առ ի կատարելապէս ստանալ մեր զմխիթարութիւն: Որովք բարեշնորհութեամբք յիրաւի պարտականս կացուցանելոց էք զմեզ՝ առաւել ևս շնորհակալելոյ զձէնջ և օրհնելոյ զաստուածապահ տէրութիւն ձեր և զձեզ: Որք և աղօթող եմք յարապէս վասն կենաց և բարեյաջողութեան ինքնակալ և ամենափառաւոր մեծի թագաւորի օրհնեցելոյ ազգիդ ձերոյ և ձեր իսկ բարեսիրացդ:

Ողջ լերուք ի Տէր՝ զօրացեալք ի շնորհս նորին: Ամէն:

Գրեցաւ ի 1784 թուոջ Փրկչին ի..., և ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:

Ձեռ. № 2803, էջ 676—678

1099. 1784 թ. 21 դեկտեմբերի—*Թուղթ ի յՌուսճուղ առ պարոն Անոյշն և Աւէտն. շնորհակալութիւն վասն հանելոյն զհանգուցեալ նուիրակ Ստեփաննոս վարդապետի թէմէսուկով տուեալ դրամն առ ոմանս և հասուցանելոյն ի Պօլիս, և յորդորումն, զի զառ այլ ոմանս մնացեալսն ևս ջանասցեն հանել, և այլ հարազատական արարս իւրեանց՝ օրհնութիւն:*

Ձեռ. № 2803, էջ 682—683

1784 թ. 22 դեկտեմբերի—*Թուղթք ի մեծն Պօլիս*

1100. *Թուղթ մի առ մեծին Պօլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոցն, մինն ի սեպտեմ. ԻԵ (25) և մինն ի հոկտեմ. Դ (4) գրեցեալ: Ի սմա ևս զապգ երեք, մինն առ Գալուստ վարդապետն սակս Գ (3) հազար ղուռուշին, զորս հասուցեալ էր առ սա, և մինն առ Զմիւռնոյ նուիրակ Միքայէլ վարդապետն սակս հինգ հազար ղուռուշ դրամոյն, որ կամէր այժմ փոլիցայիւ հասուցանել առ Սահակ պետն, որ տակաւին չէր հասուցեալ: Վասն որոյ զայս զապգս գրեալ յղեցաք ի ձեռն սորին, զի զայնքան դրամն առցէ ի նմանէ և ապա տացէ իւրեան, և մինն առ յՌումէլու նուիրակ Գրիգոր վարդապետն սակս Բ (2) հազար ղուռուշին, որ մէկ հազարն հասուցեալ էր առ Սահակ պետն, և մէկ հազարն ևս կամէր հասուցանել փոլիցայիւ: Վասն որոյ զայս զապգս սակս Բ (2) հազար ղուռուշին գրեալ յղեցաք ի ձեռն սորին, զի զմէկ հազար ղուռուշն ևս առցէ և ապա տացէ ինքեան*[205]:

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 28

Ի սոյն օր Թուղթք ի յՌումէլի

1101. *Թուղթ մի առ գանձապետսն սրբոյ Աթոռոյս՝ պարոն Անուշն և պարոն Աւէտն, ընդ որս գրէ զշնորհակալութիւնս ի կողմանէ հանգուցեալ Ստեփաննոս վարդապետի տալացու դրամոցն, զորս ի պարտատեարցէն առեալ էին և հասուցեալ առ Սահակ վարդապետն, ես պատուիրէ, զի զնաշու Աւետիքի տալացու դրամն հետևեալ առցեն և հասուսցեն առ Սահակ պետն. վասն զի դժուարու ելանէր: Եւս յանձնարարութիւն սակս նուիրակ Գրիգոր վարդապետին:*

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 28

1102. *Թուղթ մի առ նորին նուիրակ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի ի յԽամայիլու գրեալ թղթոյն, յորում գրեալ էր զշնորհակալութիւնս սակս հասանելոյն ինքեան զկոնդակն սրբազան Վեհապետին, ես գրեալ էր սակս լուսահոգի Ստեփաննոս վարդապետի ընչիցն, թէ ահա յղելոց եմ: Եւս ծանուցանելով զձեռնարկելն ի գործ, և սըրբազան Վեհապետն գրէ, որու թէ ահա զերկու հազար ղուռուշի զապգ մի գրեալ յղեցաք ի ձեռն Սահակ պետին, զի թէ տակաւին չես հասուցեալ զմէկ հազարն, հարկիւ հասուսցես և զզապգդ պահանջեալ, առցես ի նմանէ, և թէ՝ քաջութեամբ կալ զգործդ և օր մի յառաջ ջանա դիմել ի սուրբ ծնօղս քո շնորհատու:*

Գրեցան ամսոյս ԻԲ (22):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 28—29

Ի սոյն օր Թուղթք ի Զմիւռին

1103. *Թուղթ մի առ Աստուածատուր աղայն, ի պատասխանի ի յօգոստոսի Է (7) գրեցեալ թղթոյն իւրոյ, որում գրէ սրբազան Վեհապետն զշնորհակալութիւնս յաղագս արարեալ լաւութեանցն նուիրակին իւրեանց՝ Միքայէլ պետին, և զի յորդորէ սմա, զի կրկին ես ունիցի զնա ի սէր սրբոյ Աթոռոյս: Եւ այլես մանրամասն բանք, զորս գրեցան:*

1104. *Թուղթ մի առ նորին նուիրակ Միքայէլ պետն, ի պատասխանի երկուց թղթոցն՝ մինն ի յօգոստոսի Է (7) գրեալ և մինն ԺԲ (12), որոց ի միոջ թղթոյն գրեալ էր և խնդրեալ վասն գործոյն իւրոյ երկարաձգել զմիջոցն և գրէ որում, թէ յամենալն քո ոչ օգուտ բերէ քեզ, այլ փութա օր մի յառաջ դիմել ի սուրբ Աթոռս: Եւ զի գրէ, թէ ահա առ Աստուածատուր աղայն զթուղթ մի գրեցաք և հարկադրեցաք նմա, զի օժանդակ ձեռնտու լիցի գործոյդ, որպէս մինչև ցայժմ լեալ է: Այլև գրէ, թէ ահա զհինգ հազար ղուռուշի զապգ մի գրեալ յղեցաք ի ձեռն Պօլսոյ նուիրակ Իսահակ պետին, հարկիւ հասուսցես փոլիցայիւ զայնքանիկ դրամն և զապգն պահանջեալ, առցես ի նմանէ. և այլես բանք:*

Գրեցան ամսոյս ԻԲ (22):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 29

Ի սոյն օր Թուղթք ի Կարին

1105. *Թուղթ մի առ մահտեսի Խաչատուրն և պարոն Սերոբն. շնորհակալութիւն սակս լուսահոգի Յովհաննէս վարդապետի Խ (40) հատ ոսկոյն, զորս յղեալ էին ընդ Գաղատիոյ նուիրակ Յարութիւն վարդապետին: Եւս գրէ, թէ ձեր Զըրաղ Յարութիւնի գրեալ սաւատն, զոր յղեալ էիք ընդ որպիսածանոյց թղթոյն ձերոյ, ընկալաք ի նոյեմբերի 16:*

1106. *Թուղթ մի առ նորին նուիրակ Դանիէլ վարդապետն: Ի սմա գրէ սրբազան Վեհապետն՝ ծանուցանելով զորպիսութիւն իրակութեան իրին, թէ աշնանս քանի մի անձինք եկին յուխտ վասն պակասութեան խարճի դրամոցն, ի մէնջ առին ութսուն ղուռուշ դրամ թամասուկով, որք եկեալ յայդր՝ քեզ յանձնեսցեն: Ահա զթամասուկն նոցին յղեցաք*

ի ձեռս քո, զի զդրամն տացես ի նոցանէ և ապա տացես զթամասուկն
ինքեանց։

1107. Թուղթ մի առ վէքիլ պարոն Հայրապետն, ի պատասխանի
երկուց թղթոցն՝ մինն ի հոկտեմ[բերի] ԺԵ (15) և մինն ի նոյ[եմբերի]
Է (7) գրեալք, ի սմա ևս զապզ մի առ մեծին Պոլսոյ նուիրակ Իսահակ
վարդապետն՝ սակս ԵՌ Բ հարիւր (5200) ղուռուշին հասուցելոյ։

Գրեցան ամսոյս ԻԲ (22)։

1108. Թուղթ մի օրհնութեան առ Ստեփաննոս աղայն և պարոն
Յովհաննէսն, որք ի Բաղդատ, սակս Հնդկաց նուիրակ Գրիգոր վարդա-
պետին՝ ծանուցանելով զպէսպէս վշտակրութիւնն նորին և զիմելն ի
սուրբ Աթոռս ամբողջապէս, հանդերձ սակաւ ինչ քսբեղինօք։ Եւս թէ
խոստացեալ էք յղել զդեւթէրն, փութով յղեցէք։ Նաև ի կողմանէ պօլ-
սեցւոց առաջարկեալ բանին, թէ բան իմն գրեցէք մեզ, զի միամիտ
լիցուք։

Գրեցաւ ամսոյս ԻԲ (22)։

ԿԹղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 29—30

679 1109. 1784 թ. 23 դեկտեմբերի—Թուղթ ի Բասրա առ մահտեսի
Յարութիւն աղայի որդի Ստեփաննոս աղայն և առ սրբոյ Աթոռոյս
գործակալ պարոն Յովհաննէսն վասն հասանելոյ առա Հնդկաց նուիրակ
Գրիգոր վարդապետին և իւրեանց հաշուագրի և յղեալ ընծայից յափշ-
տակեցմանն ի ճանապարհին։ Ապա հարկ, զի ըստ գրեցելոյ Գրիգոր
պետին, շուտ գրեալ յղեսցեն զնոյն հաշուագիրն և վասն Ղազարի կա-
յիցն, որ պօլսեցիք զվարիս էին ձևացուցեալ։ Հարցումն, թէ պիտո՞յ է
և մեզ գրել ի Բոմբայու դատարանն վասն ստութեան վարիսին, թէ՞ ոչ։

Յորմէ ժամանեսցի թուղթ...

Եւ ընդ օրհնաձիր ողջունատրութեան սիրոյ թղթոյս, ծանուցումն
լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս և բարեխոհ որդւոցդ սրբոյ Աթոռոյս
Էջմիածնի։ Զի սիրելի և հոգևոր որդին մեր և հարազատ զաւակն սրբոյ
Աթոռոյս, օրհնեալ երկրացդ վշտակիր նուիրակ Գրիգոր խոհեմատա
վարդապետն եկն էհաս ի սուրբ Աթոռս՝ մնացորդ վէճեղէն իրօքն, զորս
ունէր ընդ իւր։ Իսկ զայլ բազում իրսն, յետ ծովային վնասակրութեանն
և յայդրուստ ելանելոյն անդր քան զԲաղդատ, անօրէն աւազակքն են
յափշտակեալ ի գալն սորա ընդ ինկլիզի ուրումն, զոր ևս սպանեալ են
հանդերձ քանեօք ոմամբք, և զսա ևս վիրաւորեալ, զոր լուեալ եք և
դուք։ Եւ ընդ այնց իրացն և ձերդ յանուն մեր յղեալ յատուկ յատուկ
680 սիրանիշ ընծայքն ևս յափշտակեցեալ են՝ // հանդերձ հաշուագրեամբք
և թղթովք Գրիգոր վարդապետին, զորս բազմաւաղ մորմոքմամբ պատ-
մեաց մեզ։

Եւ թէպէտ վասն կորստեան այնքան իրացն և բազմակերպ փորձա-
նակրութեանն իւրոյ տրտմէաք, սակայն զի վերջապէս այլև ինքն ող-
ջութեամբ եկեալ էհաս ի ծոց սրբոյ ծնողիս իւրոյ՝ բաւականապէս
ուրախութիւն եղև մեզ, որ և զգերազանցութիւն սիրոյ և ճշմարիտ հա-
րազատութեանց ձերոց, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, և զյոզնակերպ
շահեցողութիւնսն և զմեծարանսն և զձեռնտուութիւնսն, զորս ցուցեալ
էիք յայդր ինքեան, ծանոյց մեզ յոյժ գոհունակութեամբ։ Ուստի թէպէտ
և ի ձախող դիպուածոց աշխարհիս ընծայք ձեր ոչ հասին առ մեզ, սա-
կայն մինչ ի յորդութենէ սիրոյ յղեալ էիք և զայսքան հաւատարմու-
թեան համբաւս լուաք զօրհնեցելոցդ զայնս ևս մեզ հասեալ համարեցաք

և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զյատկեղ սիրելիսդ մեր, զորս
Աստուած օրհնեսցէ և զօրացուսցէ և փրկեսցէ յամենայն չարէ, հա-
տուսցէ ձեզ զվարձս բարիս և առաւելապատիկս ըստ սիրոյ և հարա-
զատութեանց ձերոց և ամենայն բանից և գործոց ձերոց զյաջողմունս
բարիս պարգևեսցէ և յարաժամ զձեզ և զամենայն ձերայինսդ պահեսցէ
ի խնամս և ի յողորմութիւնս իւր։

Արդ, յառաջ քան զայս գրեալ էիք ի մեծն Պոլիս՝ նուիրակ Իսահակ
վարդապետին մերոյ, ՈԼ (630) ղուռուշ առնուլն ի մահտեսի Գալստա-
նէն, և ծանուցեալ էիք նմա, թէ զհէսապն մեր կտրեցաք ընդ Գրիգոր
վարդապետին, որ և նա զնոյն դրամն առեալ էր ի մահտեսի Գալստա-
նէն և մեզ գրեալ, որոյ սակս միամտեցաք։ Այժմ մինչ Գրիգոր վարդա-
պետն եկն, սա ևս ծանոյց զհաշիւն ձեր կտրելն ընդ ինքեան և զհաշուա-
գիր տալն։ Բայց զի՞նչ օգուտ, զի ի Բաղդատու ճանապարհին ընդ այլ
բաղում թղթոց և իրացն զձեր թուղթն և հաշուագիրն ևս յափշտակեալ
և փչացուցեալ են աւազակքն, որպէս Գրիգոր վարդապետն ի Բաղդատու
գրեալ է ձեզ և իմացեալ էք։ Որք և թէպէտ գրեալ էք նմա և խոստա-
681 ցեալ // զնոյն հաշուագիրն դարձեալ գրել և յղել, բայց մինչև ցայժմ
դեռ ոչ ընկալաք։ Վասն որոյ հաշուատեսութիւնն մեր ընդ սմա այժմ
թերի և տարակուսանօք է, ուստի ակնաղէտ եմք թղթոյ ձերոյ, իբր թէ
զայն դաւթարն ևս հոգացեալ և յղեալ իցէք։ Ուրեմն, եթէ մինչև ցայժմ
չիցէք յղեալ, ի հասանիլ թղթոյս առ ձեզ, օր մի յառաջ հոգասջիք և
յղեսջիք, զի ըստ այնմ զհաշիւն մեր տեսցուք և միամիտ լիցուք։

Այլև յաղագս հանգուցեալ Ղազարի կայիցն։ Պոլսեցիք, որք կա-
մէին զվարիս ձեռացուցանել նմա և զկայս նորին առ ինքեանս ձգել,
այժմ ահա իբրու յառաջացուցեալ են զկամս իւրեանց, զի զամն ընտանի
կոչեալ նմա, զբազմակնիք թուղթ են գրեալ ի յինկլիթէառ դատաս-
տանն, առեալ զկտակ հանգուցելոյն, և ի ձեռն ի Պոլիս նստեալ ինկլիզի
էլչուն յղեալ, զոր հարազատքն մեր գրեալ էին անտի։ Եւ որովհետև
այդմ բանի վերահասու են Բոմբայու դատաւորքն, վասն որոյ ըստ
պատշաճատեսութեան ոմանց սիրելեաց, կամէաք զթուղթ գրել ի Բոմ-
բայի առ նոսա և ծանուցանել զստութիւն վարիսին և զճշմարտութիւն
կտակին, որ առ ձեզ է։ Այլ զի ի ձէնջ զթուղթ չունիմք առեալ նորապէս,
զի գիտասցուք թէ դուք զի՞նչ պատշաճ տեսանէք։ Նաև ըստ որում այլ
ազգ են, ի կարծիս եմք, թէ արդեօք ընդունելի լինի՞ առ նոսա թուղթն
մեր, թէ ոչ։ Վասն այն այժմ արգելաք զգրելն մեր մինչ ի ձէնջ զգիր
առցուք յայնմ կողմանէ։ Իսկ սիրելեացդ իմոց հարցանեմ ահա, թէ
պատշա՞ճ է ի Բոմբայու դատաստանատունն գիր գրել մեզ, թէ ոչ։ Եթէ
գիտիցէք, թէ հարկաւոր է և գրեալն մեր ևս ընդունիցի ի դատաւորացն
և արդիւնաւորիլոց է, ծանուսջիք մեզ՝ գրելով և զանուանս դատաւո-
րացն, որ զթեթև իմն թուղթ գրեսցուք առ նոսա և յղեսցուք ի ձեռս ձեր,
զի դուք հասուսջիք առ նոսա։ Բայց թէ պատշաճ չվարկանիցիք, զայն
ևս ծանուսջիք մեզ, որ միամիտ կացցուք։ Սակայն դուք եթէ յառաջ իմա-
ցեալ էք, լաւ է և թէ ոչ, այսու գրեցմամբս մեր զգուշացեալ, յամենայն
զօրութենէ հետևիցիք և հոգ տարջիք, որ մի զուցէ ստութիւն նոցին առցէ
զհաստատութիւն և ճշմարտութիւնն արհամարհեսցի, և կայք հանգու-
ցելոյն յանօգուտ տեղիս վատնեսցին, այլ ճշմարիտ կտակն հաստա-
տեսցի, որ է ի ձեռս ձեր։ Եւ ջանացարուք դուք առ ձեռն բերել զամե-
նայն կայս հանգուցելոյն և առնել ի պէտս հոգւոյ նորին։

682 Ահա վասն երկուց իրացս զայս թուղթ գրեցաք առ սիրելիդ. նախ
զի թէ զայն խոստացեալ զէվթէրն չիցէք յղեալ, շուտով յղիցէք և երկ-
րորդ, զի ի կողմանէ պօլսեցւոց առաջարկեալ բանին զպատասխանւոր
բան իմն գրիցէք առ մեզ:
Որք և ի ճշմարիտ սիրոյ և ի հարազատութեանց, որ առ սուրբ
Աթոռ մայրս ձեր և առ մեզ անպակաս մնալով, ողջ լերուք ի Տէր՝ յա-
րամնալով ի խնամս նորին: Ամէն:
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս, ի դեկտ[եմբերի] ԻԳ (23):

Ձեռ. № 2803, էջ 679—682

685 1110. 1784 թ. 23 դեկտեմբերի—Թուղթ ի Թիֆլիզ առ Հախպատու
վէքիլ կարգեցեալ Սողոմոն Դիւանն և Աշխարբէկն, ի պատասխանի
թղթոյն նոցա ի դեկտ. ԺԲ (12) գրեցելոյ, վասն ոմանց իրաց:

Յորմէ ժամանեցի...
Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, ծանիք սիրելիք մեր ի Տէր և
հարազատ զաւակք սրբոյ Աթոռոյս էջմիածնի: Զի թուղթ ձեր ի յօգոս-
տոսի ԺԲ (12) գրեալ փուսուլային էհաս առ մեզ, և զոր ինչ գրեալ էիք՝
իմացաք: Եւ զՀախպատու վիճակ սուրբ Սարգիս եկեղեցին վաճառե-
ցեալ, որ ի գնողացն դարձուցեալ էիք. այլեւ ի վիճակ Հախպատու՝ ըստ
հրամանի մերում, գիտեցեալ միամտեցաք: Եւ զայնր աղագաւ տրեցեալ
թուղթն տէր Յակոբին ևս յղեալ էիք, զոր տեսաք: Տէր օրհնեսցէ զձեզ և
զամենայնսդ իսկ ըստ բարի ջանացողութեան ձերոյ: Իսկ որ գրեալ էիք,
թէ կամին ոմանք ի Հախպատ զայլ ոք կարգեցուցանել տեսուչ, և յա-
ղագս հոգևոր որդւոյն մերոյ՝ առաջնորդ Դաւիթ վարդապետին չօգնու-
թիւն էիք խնդրեալ, առ այդ գիտասջիք, զի Դաւիթ վարդապետն, զոր
առաջնորդ արարաք վանիցն ձերում և ձեզ, ոչ թէ մեք մեզէն արարաք,
այլ խնդրոյ ամենից Հախպատու վանից թեմականացդ (որք բազմա-
կնիք թղթով խնդրեալ էիք) և ըստ կամեցողութեան և թղթոյ բարեպաշտ
մեծի արքային կարգեցաք: Իսկ ի միջոյ ձերմէ ոմանք անբարեսէրք,
որք յայնժամ զԴաւիթ վարդապետն խնդրեցին կնքով՝ իւրեանց և այժմ
686 զայլ ոք ջա//նան կացուցանել արտաքոյ կարգի, յայտ առնեն, թէ ան-
հաստատ են ի միտս և ի բանս և ախտաւորք: Եւ զմին իրի, որ կամե-
ցեալ էիք գրել զթուղթս առ օրհնեալ արքայն և առ ոմանս, և անկարելի
առնել զայն իրակութիւն չարայուզիցն, այժմ դեռ զյայտնի բան ոչ առ-
նեն (թէպէտ և ի ծածուկ զչարութիւնս հնարեն), վասն որոյ ոչ վայել է
մեզ այժմէն շուտափոյթ լինել, քանզի զհաստատուն յոյս ունիմ ի
քրիստոսապսակ արքայէն մեծէ, որ չէ լսելոց աւելորդաբանութեանց
բանսարկուաց, ըստ որում արարեալն մեր իւր կամեցողութեամբն է և
յայնմ մասին չէ հեռանալոց նոցա: Այլ եթէ զրաչանքն զանբարի հետե-
վումն իւրեանց յայտնեսցեն և արգելաւորելոց իցեն, յայնժամ և մեք
գրելոց եմք առ օրհնեալ արքայն և առ որս և պատշաճ իցէ՝ զթուղթս և
առնելոց եմք, զոր ինչ և հարկն պահանջեսցէ: Բայց ևս խնդրեալ էիք
գրել հարազատ գործակալին մերոյ՝ տէր Ղազարին օգնել բանիք և
գործով առաջնորդ Դաւիթ վարդապետին, ընդ որ հաճեալ մեր, ահա
գրեցաք նմա, զի օգնական լիցի նմա [թէ ի տէրունիսն մեր, և թէ յան-
տէրունիսն]* բանիւք և հետեւմամբք՝ ընդ նմա լինելով ի հարկաւոր
ժամս:
Իսկ և գրեալ էիք, զի զկոնդակ գործակալութեան յղեցեմք վասն
տէր Աբրահամին ի կողմանէ Հախպատու՝ ի վերայ նորին թեմ եկեղե-

* Այս մասը բնագրում ջնջված է:

ցեացն: Առ որ զայս ծաներուք, զի յառաջ քան զայս զլխաւորքն ձեր՝
քահանայք և իշխանք, զձեզ ընտրեալ էին գործակալ և զուք ես յանձն
էիք առեալ, զոր և ծանուցեալ էիք մեզ, վասն որոյ և մեք զհաստատու-
թեան կոնդակ գրեցաք: Յայնժամ եթէ զտէր Աբրահամն ևս ի վերայ
եկեղեցեացն կամէին գործակալ կարգել, զիա՞րդ ոչ յանձն առնուլ
տային, զոր և մեք իմացեալ, հաստատէաք: Այժմ ըստ գրեցելոյ ձերոյ,
թէպէտ և յորդորեալ էք, բայց նորա յանձնառութիւնն դեռ չէ յայտնի:
Զի և ինքն մեզ զթուղթ էր գրեալ յառաջս, բնաւ զբան ինչ չէր յիշեալ
յայնմ կողմանէ, վասն որոյ ոչ գրեցաք զկոնդակ, զի մի զուցէ ընդ
վայր անցցէ: Բայց թէ հարկաւոր է, հետևեսջիք, որ նա ևս յօժարիցի
687 յանձն առնուլ, և մեզ ծանուսջիք, որ յայնժամ զկոնդակն // վերա-
հաստատութեան գրեսցուք: Ի ներկայումս կարի պաշարեալ գոլով մեր
պէսպէս զբաղմամբք, հազիւ ձեռնհաս եղաք զայս թուղթ առ ձեզ գրել:
Դուք ևս զհարազատութիւն ձեր ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս և ի սուրբ
Նշանի վանիցն ձերոց և ի հոգաբարձուէ նորին ի հոգևոր որդւոյն մերմէ՝
Դաւիթ խոհեմամիտ վարդապետէն անպակաս առնելով, ողջ լերուք ի
Տէր:
Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս, ի դեկտեմ. ԻԳ (23)[206] և ի սուրբ
էջմիածին:

Ձեռ. № 2803, էջ 685—687

1784 թ. 25 դեկտեմբերի—Թուղթք ի Բայազիտ

1111. Թուղթ մի առ Ուչքիլիսու վանից առաջնորդ Մկրտիչ վարդա-
պետն, ի պատասխանի ի դեկ[տեմբերի] Ի (20) գրեալ թղթոյն՝ ի կող-
մանէ անիծեալ ախթարմայից, որում գրէ, թէ իսպառ թոյլ մի տալ,
այլ ջանա ոչնչացուցանել զդոսա: Ահա զթուղթ մի օրհնութեան գրեցաք
ի Բայազիտ առ տէր Վահանն և առ Սահակ աղայն՝ ի կողմանէ դոյն
անիծելոցն, զի հող տարցին ընդ քեզ առ ի ծանուցանել փաշային:

1112. Թուղթ մի օրհնութեան առ տէր Վահանն և Սահակ աղայն ի
կողմանէ անիծեալ ախթարմայից, զի ծանուսցեն փաշային:
Գրեցան ամսոյս ԻԵ (25):

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 30

1784 դեկտեմբեր—Թուղթք ի Վան և ի Մուշ

1113. Թուղթ մի առ նորին նուիրակ Յակոբ վարդապետն, ի պա-
տասխանի ի դեկ[տեմբերի] ԺԴ (14) գրեալ թղթոյն ընդ ջուղայեցի տի-
րացու Ստեփաննոսին:

1114. Զորս կոնդակ ժողովարարութեան ըստ խնդրոյ սրբոյ Կա-
րապետի առաջնորդ Աստուածատուր վար[դապետի] սակս ամենացան-
կալի տաճարին իւրոյ, զի ժողովեսցէ զարդիւնս ինչ առ ի շինել զքան-
դակեալ տեղիսն, որք ի շարժմանէն էր լեալ: Որ և սրբազան վեհա-
պետն գրեաց զչորս կոնդակ, Բ (2) ընդհանրական և Բ (2) մասնաւոր
տեղեաց: Մինն՝ ի վերայ Բայազիտու, Դիատինու, Նահիջու, Ալաշ-
կերտու, Խամուրու, Բաունցու, Մանածկերտու և ի համայն շրջակայ
գիւղորայս նոցին, և մինն՝ ի վերայ Թիֆլիզու, Գորու, Կախէթու և ի
բոլոր երկրին Վրաց, այլև՝ ի Գեանջայ, ի Շուշի, ի Շամախի, ի Նուխի

և ի Բարու, իսկ և յայսկոյս՝ ի Նախիջևան, ի Ղափան և ի համայն շրջայս նոցին՝ ի գաւառս, ի գաստապայս և ի գիւղորայս։

1115. Թուղթ մի առ նորին առաջնորդ Աստուածատուր վարդապետն, ի պատասխանի թղթոյն. շնորհակալութիւն՝ սակս յղեալ ընծայիցն ընդ վերայ իւրայ։

Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 31

1116. 1784 թ. 26 դեկտեմբերի—Թուղթ շնորհակալութեան ի Վան առ Պարիկեան մահտեսի Սահակ աղայն և եղբարսն, շնորհակալութիւն վասն նուիրակ Յակոբ վարդապետին, և դարձեալ յանձնարարութիւն։

Ձեռ. № 2803, էջ 687—688

584 1117. 1784 թ. 31 դեկտեմբերի—Կոնդակ ընդհանրական ժողովարարութեան վասն Մշու սուրբ Կարապետի վանիցն, որ յայսմ ամի ի յահագին գետնաշարժէ բազում աւերութեամբք վնասեալ էր։ (Զսկիզբն կոնդակիս նաև ըմէջն ի 282 երեսն տես, իսկ միջարկեալ բանսն աստէն գրեմք ահաւասիկ)*։

Եւ ընդ աստուածապարգև օրհնութեան և սիրաձիր ողջունատրութեան նամակիս ծանուցումն... Քանզի ի հարկէ հասեալ է ի յունկս ամենեցունցդ մինչև ցայժմ դառն և տրտմաբեր համբաւ ահագին և բազմավնաս մեծի շարժին, որ եղև ի բազում տեղիս, և մանաւանդ ի յԵրզնկայ և ի Մուշ և յայն կողմունսն։ Եւ յայնմանէ շարժէ գերահռչակ և շնորհատու վանքն սրբոյ Կարապետին, որ է ի Մուշ, զբազմագոյն աւերութիւնս և վնասս է կրեալ, վասն զի ահաւոր և յոգնակործան շարժին այնորիկ զմաստկութիւն իւր յաղագս մեղաց մերոց իբրու անդէն ի սուրբ վանսն այն ներգործելով զբարձրաբերձ պարիսպն և զխուցսն և զայլ շինուածսն ըստ մեծի մասին քայքայեալ և աւերեալ է, և ի մնացելոցն ևս խախտեալ և աւաղելի քան զայսոսիկ։ Զմեծ և զհրաշակերտ կաթուղիկէն սուրբ Ստեփաննոս անուն տաճարին ևս փլուցեալ է։ Ուստի մեծագոյն ցաւ և կոծ է լեալ առաջնորդին նորին խղճալւոյ՝ Աստուածատուր ծերունազարդ վարդապետին և համայն միաբանիցն իսկ, որք զրկեցեալք գոլով ի կացարանէ և յերկիւղէ շարժին ևս ահարեկ լինե-
585 լով, // մնացեալ են ի բազում աւուրս արտաքոյ վանիցն բացօթեայք ի յանյարկ տեղիս՝ անհանգիստ և ողորմելի կենօք։

Իսկ ապա, յետ դադարման շարժին, առաջնորդն տեղւոյն՝ Աստուածատուր աշխատասէր վարդապետն, զյոլով նեղութիւնս և զտառապանս յանձն առնելով, զբազմութիւնս մշակաց և վարպետաց է ժողովեալ և զձեռն ի գործ շինութեան աւերելոցն արկեալ, և զպարիսպն և զոմանս ի նոցունց վերանորոգեալ, մինչև ցժամանել ձմերային ցրտոյն ի վերայ, որոյ պատճառաւն զխափանումն են առեալ ձեռնարկութեանն մինչ ի գարունն հասանիլ, զի յայնժամ ևս զմնացեալսն շինեսցեն, մանաւանդ զկաթուղիկէն սրբոյ տաճարին։

Բայց սակայն սրբոյ Տանն այնմիկ յառաջնմէ իսկ աղքատ և չքաւոր և ի ներքոյ պարտուց գոլով, ի պատճառս անկանօն հարկապահանջութեանց այլասեռից, և նարդենիս ևս այսմիկ կսկծելի դիպուածոյ պատահեալ, և ամենայն կողմանէ ի ներքոյ պակասութեանց ենթարկեալ, այժմ ոչ գոյ կարողութիւն խղճալի առաջնորդին ի կողմանէ ծախուց և խարճելեաց առ այնպիսի բազմածախս մեծագործութիւն, և մեծի օգնութեան և ձեռնտուութեան կարօտի։ Ուստի մեծաւ թախանձմամբ գրեալ և խնդրեալ էր ի մէնջ՝ շնորհել զկոնդակ շրջաբերական առ ի խնդրել ի յօրհնեցելոյ ազգէդ մերմէ զօգնութիւն և զձեռնտուութիւն ի արդեանց յաղագս մեծածախս շինարարութեան և նորոգութեանն ձեռնարկելոյ։ Վասն որոյ և մեք պատշաճ համարեալ խոնարհեցաք ի խնդիր նորին և զայս օրհնագիր և հասարակական կոնդակս մեր գրեալ ի վերայ համայն օրհնեալ ազգիդ մերոյ, շնորհեցաք նոյնոյ սիրելւոյն մերոյ և շնորհածնի որդւոյ սրբոյն Յոհաննու Կարապետին և Մկրտչին Քրիստոսի հրաշազարդ վանից առաջնորդ Աստուածատուր հանճարունակ վարդապետին և արհիեպիսկոպոսին, զի կամ ինքն եկեսցէ և կամ ղումն ի միաբանից իւրոց այսու օրհնութեան նամակաւս մերով և իւր վկայական և որպիսածանոյց թղթովն առաքեսցէ առ աստուածասիրութիւն ձեր՝ առ ի խնդրել ի ձէնջ զկամաւոր ողորմութիւնս յաղագս նորոգութեան փլուցեալ շինուածոցն սրբոյ վանիցն։

Յաղագս որոյ պատուիրելով պատ[ուիրեմ] (գիտ ի 523 երեսն և
586 գր.)* զողորմութիւնս և զտուրս առատ և յատուկ իմտատիայիւ յօգնութիւն հասանիլ, // ոչ համարելով զնոսա իբրև զայլս ժողովարարս (տե՛ս դարձեալ անդէն ի նոյն յիշեալ թուղթն ի 524 երեսն) սրբոց վանորէից և եկեղեցեաց և փոխարէն նոցին զվարձս բարիս և բազ... (երբ դարձեալ անդ), զի զայնս տարեալ նորոգեսցեն այնուքիւք զնորոգելի տեղիս սրբոյ վանիցն իւրեանց ի փառս Աստուծոյ և ի պատիւ հրաշալի գերեզմանին սրբոյ Ամլորդւոյն և ի բարեյիշատակութիւն ձեզ։ Եւ որպէս դուք ձեր առատ տրօքն պատճառ լինիք նորոգութեան աւերածոցն սրբոյ վանիցն այնմիկ և շինապայծառութեանն, բարերարն Աստուած ևս զձեզ նորոգեսցէ ի հանդրուանէ մեղաց և ճոխացուսցէ ամենիւք հոգևոր և մարմնաւոր պայծառութեամբք։ Որք և ըստ տրոց և ողորմութեանց (դարձեալ անտի գրեա) միաձնաիչէ և ի շնորհատու գերեզմանէ սրբոյ Կարապետին, և զօրհնու[թիւն] ի յայն գերահրաշ վանսն սրբոյն Յոհաննու Կարապետին, յայնցա...

Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուիս մերում, ի դեկտեմբերի ևլն, ի լուսակառոյց և ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 584—586

* Հիշատակված է 1783 թ. ապրիլի 1-ին Գորիի ս. Ստեփաննոս հայկական եկեղեցու այրվելու կապակցությամբ տրված ժողովարարական կոնդակը (ձեռ. № 2803, էջ 282—286), որն ամբողջովին հրատարակված է այս ժողովածուի մեջ (№ 741)։

* Հղված վավերագիրը ս. Հովհան Մկրտչի վանքի համար տրված ժողովարարական կոնդակն է (18 հունիսի 1784 թվակիր), որն ամբողջությամբ տպված է այս գրքում (№ 939)։

1785

1118. 1785 թ. հունվարի—*Թուղթ առ արքայն Վրաց Հերակլէս, ի պատասխանի թղթոյն նորա, զոր ի ՌՄԼԳ (1784) թուոյ դեկտեմբերին գրեալ էր վասն Գօչգօչանենց Աւթանտիլեան Բէժանի առտ ի պաշտօնի եղեալ կայիցն՝ առ ի յղել անդ իբրու առ ընտանիս նորա։*

Չեռ. № 2803, էջ 587—588

1119. 1785 թ. 16 հունվարի—*Թուղթ սիրոյ և օրհնութեան առ մահտեսի Ստեփան ամիրայն Իպօյենց, որ ի յԱդրանա, վասն նախածանօթութեանն և յաղագս Ե (5) զուռուշ տրոցն, զոր ընդ ձեռին առաջնորդ Միքայէլ պետին յղեալ էր։*

Չեռ. № 2803, էջ 589—590

1120. 1785 թ. 16 հունվարի—*Կոնդակ առաջնորդական, միանգամայն և վկայական եպիսկոպոսութեան վասն Միքայէլ վարդապետին ի վերայ Անդրիանուպօլսոյ։*

Չեռ. № 2803, էջ 590—592

1121. 1785 թ. հունվար—*Թուղթ ի Կարին առ մերայինսն վասն հաստատութեան առաջնորդութեանն անդ նախիջևանցի Պետրոս վարդապետին, ընդ որում յառաջ զտարաձայնութիւն ինչ էին անցուցեալ, իսկ այժմ զոմանս պայմանս դնելով ընդ նմա, և հաճիլով ընդ մնալն վերբատին, զբազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբազանն և զնա անդ թողուլ խնդրեալ։*

Չեռ. № 2803, էջ 689—692

1122. 1785 թ. հունվար—*Թուղթ օրհնութեան առ մահտեսի Աստուածատուրն, եղբայրն Ադրանայու դէտ Միքայէլ պետին*[207]*, որ ի Պօլիս, վասն յղեալ 5 զուռուշին և Ա (1) կտոր խաղնայ մուշամպային ընդ եղբօրն յիշեցելոյ, որ եկեալ եպիսկոպոս ձեռնադրեցաւ և վերադարձաւ։*

Չեռ. № 2803, էջ 693—694

1123. 1785 թ. 16 հունվարի—*ՅԱդրանայ առ մահտեսի Յովանէս և Յարութիւն ամիրայսն, ևս վասն Միքայէլ վարդապետին։*

(Յավակցություն է հայտնվում նրանց եղբոր՝ մահտեսի Գասպարի մահվան կապակցությամբ)։

Չեռ. № 2803, էջ 694—695

755 *1124*. 1785 թ. հունվար—*Թուղթ յորդորանաց ի Դաշտ գիւղն, որ է վիճակ սրբոյն Թօմայի Առաքելոյ վանիցն, զի զարդիւնս տացեն նոյնոյ վանիցն իւրեանց, վասն զի յերկար միջոցս ոչ տային զհասս և զիրաւունս և խղճալի առաջնորդն վասն պակասութեանցն բողոքէր։*

Յորմէ ժամանեցի թուղթ...

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան նամակիս, ծանուցումն լիցի սիրելի
756 *հոգևոր որդւոցդ մերոց և լուսածնունդ || զաւակացդ սրբոյ և մեծի Աթոռոյս էջմիածնի։ Զի հրամայէ սրբազան առաքեալն Պօղոս, թէ հատուցէք ամենեցուն զպարտս, զի մի ումեք պարտապան գտանիցիք։ Արդ, սիրելիք մեր, իւրաքանչիւր վանորայք, որք կառուցեալք են, ի բնէ անտի զքաղաքս և զգիւղս և զշէնս են կարգեալ նոցա թեմս և վիճակս, զի վանորէից առաջնորդքն հովուեսցեն զբնակիչսն նոցա հոգևորապէս, և նոքա ևս զմարմնաւոր պէտս առաջնորդաց և միաբանից վանորէիցն իւրեանց հոգասցեն՝ տալով նոցա զհասս և զիրաւունս առաջնորդական և վանքական, ըստ կանոնաց և սահմանաց բնականաց։ Եւ չէ մեծ ինչ, զի ժողովուրդքն, որք հովուին և տածին ի հոգևոր հովուէն իւրեանց, այսինքն՝ յառաջնորդէն վանից իւրեանց, տացեն նոցա զմարմնաւոր տուրս և զնուէրս, և հաղորդեն զնոսա ստացուածոց և կայից իւրեանց, զի ըստ սրբազան առաքելոյն, ո՞ որ արածիցէ զխաշն և ի կաթանէ խաշին ոչ կերիցէ։ Մանաւանդ զի և վանորայքն իւրեանց վիճակեցեալ ժողովրդոցն են մեծագոյն պարծանք, հոգւոց տունք և հոգևորապէս զբօսանաց տեղիք... լսիք։ Վասն որոյ և ժողովուրդքն պարտին առաւել զնոսա հոգալ, քան զինքեանս և շէն և պայծառ պահել, որով և կատարել յինքեանս զբանն սողոմոնեան, թէ աչք իմաստնոյ ի գլուխ իւր։ Բայց ներհակ այսմիկ լսեմք, զձէնչ, թէ սրբոյն Թօմայի Առաքելոյ հրաշազարդ վանիցն, որում վիճակեցեալ էք, ոչ տայք զհասս և զիրաւունս, պատճառելով զպատճառս անհաճոյս, որ հեռի է ի խղճմտանաց և պարտաւորիչ ձեզ։ Քանզի թէ և զայլ բիւր բարեգործութիւնս առնիցիք, զի՞նչ օգուտ է ձեզ, մինչ ի ներքոյ պարտուց լինիցիք։ Վասն զի այն խղճալի վանքն յառաջնմէ, թէ զորքան ժողովուրդս է ունեցեալ մերձ իւր, գիտեմք ամենեքեանս, որոց տօքն ևս առաւել հարուստ և ճոխ է եղեալ։ Բայց յապա ժամանակս վասն մեղաց մերոց ի բազում թշուառութեանց տարագիրք*
757 *եղեն բնակիչք կողմանցդ ըստ մեծի մասին և բա||զում գիւղորայք ի վիճակացդ ամայացան։ Վասն որոյ և արդիւնք սրբոյ Տանն այնմիկ պակասեցան և հարկաւորութիւնն և նեղութիւնն յաւելան։ Ուստի այժմոյս դուք ևս առաւել պարտիք զարդիւնս տալ նմա, ըստ որում քանի մի գիւղքդ էք մնացեալ նորին թեմ։ Զի առաջնորդն նորին և միաբանքն, որք են կառավարիչ ձեզ հոգևորապէս և աղօթօղք վասն ձեր, ի տուրս օրհնեցելոցդ են ապաստան։ Որովք զապրուստ իւրեանց հոգասցեն և սուրբ զվանքն ևս ի շինութեան և ի բարեկարգութեան պահեսցեն։ Ապա այդ որպէ՞ս խղճմտանաց տէր էք, որ փոխանակ յաւելլոյ զտուրս, զկանոնադրեալ արդիւնս ձեր ևս չտայք։ Զայս լսելով, յոյժ դժուարեցաք ի ձէնչ։ Նախ, զի այդպէս անարդիւն և անողորմ լինելով, աննման գտանիք բոլոր ազգիս մերոյ և երկրորդ, զի այդու յամառութեամբդ յԱստուծոյ աչացն ելանէք և այլոց ևս վատթար օրինակ լինիք։ Զոր ամենևին ոչ կամիմ և ոչ վայելէ բարեպաշտութեան ձերում։ Այլ պարտիք յօժարակամ և ոչ վայելէ բարեպաշտութեան ձերում։ Այլ պարտիք յօժարակամ սրտիւ և զուարթ երեսօք զամենայն հասս և զիրաւունս ձեր, ըստ կանոնաց նախնեաց, անթերի և անպակաս հասուցանել սրբոյ վանիցն*

ձերոց և առաջնորդի նորին, և անպարտական գտանիլ առ նոսա, որ Աստուծոյ ես հաճոյ լինիցիք։

Ահա այժմ հայրական սիրով գրեցի զթուղթս զայս և յորդորեցի առ ի բարին։ Պարտիք հնազանդութեամբ լսել օգտաւոր խրատուց մերոց և կամակար մտօք կատարել։ Իսկ թէ ոչ կամիցիք լսել հայրական պատուիրի մերում և դարձեալ յամառիցիք զրկել զսուրբ վանսն ձեր և զխղճալի բազմաշխատ առաջնորդն նորին ի հասից և իրաւանց, ամէն ասեմ ձեզ, կթելոց էք յայնժամ զպտուղ անխղճութեան և աննհազանդութեան ձերոյ և նշաւակ էք լինելոց բազմաց։ Բացջիք զլսելիս ձեր, և լաւ իմասջիք, և զօգուտն ձեր ընտրեսջիք։ Այլ Աստուած շնորհեսցէ ձեզ հեզութեամբ լսել զբանս մեր և կամիլ զօգուտն սրբոյ Տանն հոգւոց ձերոց և առնել, որովք և հաճոյ գտանիլ Աստուծոյ։ Զոր և մեք լսելով ուրախասցուք և օրհնեսցուք զձեզ։ Որք լիջիք օրհնալք յԱստուծոյ և ի մէնջ և ընկալջիք զշնորհս սրբոյ Աթոռոյս։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) և ի յունվարի...

Ձեռ. № 2803, էջ 755—757

1125. 1785 թ. 18 հունվարի—Թուղթ ի մեծն Պոլիս առ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի ի հոկ. ԺԸ (18) և ի նոյեմբերի ԺԳ (13) գրեալ երից թղթոցն յաղագս զանազան իրաց և իրակութեանց։

Ձեռ. № 2803, էջ 761—763

1126. 1785 թ. փետրվար—Թուղթ առ տօքտօր Յակոբն ի յերկիրն Ռուսաց, սէր և բարեկամութիւն, և վասն թղթոցն մերոց, որք առ Նամսայի կայսրն և նորին դեսպանն, խնդիր, զի թէ ինքեան հանդիպեցի թարգմանել, լաւագէս թարգմանեսցէ ըստ մտաց գրուածոցն։

Ձեռ. № 2803, էջ 696—697

698 1127. [1785 թ. փետրվար]—Փուսուլայ առանձին առ Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն ընդ այն թղթոյն, որ շարադրեցեալ է ի ներքոյ ի... երեսն։

Եւ զայս առանձին ծանիր, զոր անխարդախ սիրով, աննենգ մտօք և ճշմարտութեամբ գրեմ քեզ՝ յատկեղ սիրելիդ իմ, շնորհածին և բազմաշխատ որդի սրբոյ Աթոռոյս, Յովսէփ աստուածիմաստ և հանճարամիտ վարդապետ։ Զի ի կողմանէ նուիրակական գործոյդ գրեալ ես, թէ զՊետրպօլք և զՄոսկով զերծեալ են և վասն Նոր Նախիջևանու ես գրես, թէ Կարապետ վարդապետն է աւարտեալ և սակս Հաշտարխանու՝ թէ մինչև զՋրօրհնէքն զերծեալ, գնալոց եմ ի Ղզլար, զի և զայն ես մինչ ի Զատիկն զերծեալ, գնացից ի Նոր Նախիջևան և պարապեցայց շինութեանց և այլն։

Սիրելիդ իմ, յանցեալ ամին գրեցաք քեզ փուսուլայիւ զբանս երկարօրէն, զոր գիտես իսկ։ Եւ յետ այնորիկ առ կարի իմն սաստկելոյ ներկայականի հարկին զԻսահակ վարդապետն (իբրու յանճարակելեալ), ի հարկաւորագոյն գործառնութեանց մերոց հատաք և առաքեցաք ի Պոլիս։ Որոյ սակս ապա թէ որպիսի՞ պաղութիւն էանց ի մէջ մեր և եղև զի՞նչ վէրք յառաջացան և սիրասառոյց թղթոց երթևեկութիւն եղև ժամանակ զայնցանէ յիշելն չէ երկարելի։ Իսկ այժմ ես զնոյնապէս ժամանակ զայս առաջի ունելով, նախահոգակ լեալ անվրդով լինելոյ սիրեցելոյդ, զայսքան ինչ գրեմ առ ի իմանալ զմիտս քո, զի ապա ըստ նմին անօրինեսցից զհոգալիսն իմ և մի ըստ անցելոյն մթութիւն ինչ պատահիցի սիրոյն մերոյ։ Քանզի, ըստ գրելոց քոց, ահա մինչև ցԶատիկն նուիրակական գործ բոլորովին վերջանալոց է։ Եւ յարմմատկողմն ես ոմանց

կականդ գործ բոլորովին վերջանալոց է։ Եւ յարմմատկողմն ես ոմանց բեղավայելուչ վիճակաց գործքն և ժամանակքն ես մերձ են ի լրանալ, և հարկ է մեզ զպատշաճաւոր մարդիկ յղել ի վիճակսն յայնոսիկ։

Արդ, եթէ սիրելի որդւոյդ դիտումն դոյ գնալ յայն կողմունսն, ծանուցես մեզ, զի և մեք ըստ վայելման դոյնոյ վիճակի զեպիսկոպոս մի նուիրակ և առաջնորդ կարգեալ՝ առաքեսցուք յայդր կոնդակաւ և սրբալոյս մեռոնաւ և դու եկեսցես ի սուրբ Աթոռս՝ վայելել ի մօտոյ զշնորհս սորին, որ առ ժամանակ մի ես աստէն կացեալ տեսցուք զմիմեանս և խօսեսցուք զհարկաւորաց, մինչ ի վերադառնալ վիճակաւորացն // այնոցիկ և ապա երթիցես ի մի յերկուց վիճակացն, զո՞րն և 699 խնդրիցես։ Այլ եթէ չունիս զկամս գալոյ, այլ վերստին ես յայդր մնալ յօժարիս, զայն ես պարզապէս գրեսցես մեզ, զի մինչ ծանեայց, թէ յայդ միտս ես յօժարութեամբ, ես ըստ այնց վերոյ յիշեալ տեղեացն զպատշաճաւոր անձինս պատրաստեցից առ ի յուղարկել, միայն թէ դու, սիրելիդ իմ, ըստ անցելոյն վերստին ես չվիրաւորեսցիս։

Ահա ես բացապէս և հաւաստօրէն գրեցի զգիրս սրտիս առ սիրելի որդիդ իմ և գիտեմ պատասխանւոյ սորին, զոր դու ես յայտնապէս և ստուգութեամբ գրեսցես՝ յերկուցն զմին ընտրելով, որ և ինձ հաճելի և ընդունելի է լինելոց։ Որպէս զի գիտացեալ իմ զդիտումն քո, կամ ի քեզ ապաստան լինիցիմ, կամ թէ զայլս պատրաստիցեմ վասն առաքելոյ ի մեծամեծ վիճակսն յայնոսիկ։ Եւ այս շատ լիցի այսքանս։

Իսկ և յաղագս տիրացու Ստեփաննոսին, որ գրեալ էիր, թէ իբր զյանձնարարութիւն գրիցեմք ի վերն, մտածեցաք թէ դու, որ ի նոյեմբերի 12 գրես, թէ հասեալ է նա ի Պետրպօլք (որոյ և զանդուստ գրեալ թուղթն յղել էիր առ մեզ)։ Յայնմանէ ժամանակէ մինչև ցայսն կէտ երկարագոյն միջոց է և յայսքան ժամանակ ապա գործ պահելն նորա զնա անդանօր, հեռի բան իմն վարկեալ, այսպէս հաստատեցաք, թէ մինչև ցարդ և կամ մինչ ի հասանիլն թղթոց մերոց անդ, նա կամ վերադարձեալ իցէ առ քեզ, կամ թէ անցեալ գնացեալ իցէ առ եղբայրն։ Եւ մինչ այսպէս իցէր, գրութիւնն մեր, որ վասն նորայ յանպատեհ ժամու ի գերես էր ելանելոց և մեզ թեթևութիւն և անդէպ իմն իրակութիւն էր համարելոց, զի ըստ իմաստնոյն՝ ամենայնի ժամանակ է և ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից։ Վասն որոյ զժամանակն գրութեան անցուցեալ, ի ներկայս ոչինչ գրեցաք յաղագս նորա։ Իսկ դու, հոգևոր որդիդ մեր և հաւատարիմ զաւակդ սրբոյ Աթոռոյս, առ ժամուս զայսքան ինչ իմանալով, զհարազատ սիրելութիւնդ և զորդիութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս առնելով, հանդերձ բարեարդիւնութեամբքն, ողջ լեր ի Տէր և ի շնորհս սրբոյ իջման տեղւոյս նորին զօրացեալ և պահպանեցեալ միշտ։ Ամէն։

Ձեռ. № 2803, էջ 698—699

1128. 1785 թ. փետրվար—Թուղթ մեղադրութեան և թեթև բանադրանաց առ ոչ Յովհաննէսն Թարզիզատէ, որ ի Կարին, յաղագս զսրբոյ Աթոռոյս սանատով դրամն ոչ տալոյն՝ յետացուցանելով և այլ և այլ առնելով։

Ձեռ. № 2803, էջ 700—703

1129. 1785 թ. 12 փետրվարի—Թուղթ ի Կարին՝ առ առաջնորդ Պետրոս և նուիրակ Դանիէլ վարդապետսն և վէքիլ պարոն Հայրապետն վասն վերոյ գրեալ թղթոյդ։

Ձեռ. № 2803, էջ 703—704

764 *1130.* 1785 թ. 15 փետրվարի—*Թուղթ ի Պետրպօլք առ աղնիւ
Յովաննէս աղայն, վասն ոմանց բանից։ Նաև վասն ի Աչռվայ առաջ-
նորդ յղելոյ աղագաւ առ Նամսայի կայսրն և առ դեսպանն նորին գրեալ
թղթոցն աղագաւ Հարկ, զի տացէ դեսպանին, և խօսեսցի և Հոգ տարցէ։*

Յորմէ ժամանեսցի թուղթ...

*Եւ աստուածային ամենառատ օրՀնութեան սիրոյ նամակիս, ծա-
նուցումն լիցի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս և բարեխոՀ որդւոյդ սրբոյ և
մեծի Աթոռոյս էջմիածնի։ Զի ժամանակն երկարեալ եղև, յորում զգիր
ոչ գրեցաք առ քեզ, թէպէտ և ի սիրելւոյդ ես զգիր ոչ ընկալաք։ Իսկ
մեր թուղթ չգրելոյն զոն պատճառք յոգունք, յորոց զոմանս յիշեսցուք։
Նախ վրդովմունքն և անտիրական խառնակութիւնքն երկրիս և բազմա-
կերպ նեղութիւնքն և վնասակրութիւնքն մեր, որք յայսմ ամի առաւելան
և յաւելանին ևս, և պաշարեցուցանեն զմեզ։ Երկրորդ՝ ամենատեսակ
Հոգք և զբաղմունքն մեր, յորոց ոչ կարեմք բանալ զաչս, զանեա ի Հո-
գալ զՀարկաւորագոյն իրակութիւնս և զգրութիւնս մեր, որքան և Հարկն
պաՀանջէ։ Երրորդ՝ զի լուաք, թէ գնացեալ էիր ի Հեռաւոր գիւղորայսն
քո վասն պատճառաց ինչ, ուստի դժուարութեամբ և անտգան Հասանէր
քեզ իբրու թուղթն մեր, եթէ գրեցիւր ևս։ Յաղագս այսց և յանձեռնա-
Հասութենէ, չկարացաք գրել առ քեզ զթուղթ։ Եւ թէպէտ այսպէս, բայց
765 սրտիւ // ի սիրոյ ոչ պակաս գտեալ երբէք, այս է ժամ մի և բօպէ ոչ
փոփոխեալ և ոչ մոռացութեան ստուերաւ այլայլեալ ի սիրատենչ փու-
թոյ, զի ի Հոգւոյ իմում և մտաց առաջի ունիմ զլուսածին որդիսդ Աթո-
ռոյս և զխակական սիրելիդ մեր և օրՀնութեամբ զյիշատակն անուան
ձերոյ ի բերանի պաՀելով։ Ուրեմն, եթէ ժամանակ առ ժամանակ նը-
շանաւ երթևեկութեան թղթոց Հարցանելոյ զիրերաց պակաս գտանի-
ցիմք, այն ընկրկեսցի ի լիութենէ սիրոյ մերոյ, և Աստուած սիրոյ և
խաղաղութեան եղիցի ի միջի մերում։ Յորմէ և առատրեսցի յաւէժ
սիրելւոյդ մերոյ զօրութիւն և կարողութիւն, խնամք և գթութիւն և բա-
րեՀաճութիւն յաչս ամենաբարեպաշտ կայսերուՀւոյն մեծի և ամենայն
գործոց քոց յաջողմունք և բարեսցապարտ անձին քո և բնաւ քոյայնոցդ
ազատութիւն ի փորձութեանց և անզորրութիւն յամենայնի։

*Այժմ զայս գրեմ աղնիւ սիրելւոյդ իմոյ, զի այսօր մեք զքեզ ունիմք
իբր Հոգաբարձու և բարեխնդիր ի դրան աստուածապսակեալ ամենա-
բարեպաշտ կայսերուՀւոյն մեծի և բազմագութ խնամակալին մերոյ,
գերապատիւ և պայծառափայլ Պոտէմկինին՝ վասն ազգիս խղճալւոյ և
սրբոյ Աթոռոյս։ Վասն որոյ ցաւակցաբար յուշ արասցես մեծութեան
դորին զցաւս և զվշտակրութիւնս ազգիս քոյոյ տառապելոյ և լուսատու
ծնողիս քոյ սրբոյ Աթոռոյս և մեր՝ Հանդերձ նորանոր վրդովմամբք և
խառնակութեամբք կողմանցս, և ջանս դիցես փութացուցանել զյառա-
766 ջադրութիւնն իւրեանց, զի մի լիցուք նախատ Հակառակաց, որք ծաղրի-
ցեն զմեզ, թէ վրիպեցան ի յուսոյն իւրեանց։ // Եւ զի՞նչ եղև արդեօք
օգնութիւնն սոցա, որ լինելոցն էր և այլն։ Մեք ևս յառաջ քանիցս
զթուղթս յորդորանաց գրեցաք թէ՛ առ գերափայլ իշխանն և թե՛ առ
Պաւլ մեծ զօրապետն, բայց այժմ վերստին գրելն ծանր Համարեցաք,
թէ մի գուցէ աւելի զլխացաւութիւն լիցի պատուելութեան նոցին։ Առ
այսպիսիս դու պարտիս յիրաւի զփոյթ ունիլ և բազմաջան Հետևմամբ
Հոգալ առ կատարումն դոցին կարգադրութեանն։*

Այլև ի Աչռվայ բնակեալ մերայինքն, որք ի բնէ ի գոլն իւրեանց

*յիշխանութեան օսմանցւոց, միշտ զՀոգևոր Հովիւ և ըստ բաւականին
զկարգաւորս են ունեցեալ, այժմ ևս մինչ կան ընդ տէրութեամբ օրՀնե-
ցելոյ ազգին Նամսայի, այլևս ի սրբոյ Աթոռոյս զեպիսկոպոս առաջ-
նորդ խնդրեն, զոր և մեք Հարկաւորեալ յղելոց էաք, բայց լուաք, թէ ի
յինքնակալ կայսերէն մեծէ Հրաման է լեալ վասն չմտանելոյ այլոց ազ-
գաց կարգաւորաց ի կալուածս իւր, վասն որոյ այլ ոչ յղեցաք։ Եւ զի
խղճալի մերայինքն օր ըստ օրէ ևս քան զևս թախանձէին և մեզ ևս Հարկ
է ոչ զանց առնել, ուստի գրեցաք յայդ կողմանդ սիրելւոյդ մերում՝
Յովսէփ արքեպիսկոպոսին, զի թերևս ի ձեռն դեսպանին զՀնար իմն
գտանիցէ կարգաւոր յղելոյ մեզ ի Սիչով։ Իսկ նա ևս առ աղնիւ սիրելիդ
է գրեալ և զու խօսեցեալ ընդ պատուելի դեսպանին նոցա և զմիտս նո-
րին իմացեալ, որ առ կայսրն և առ ինքն թուղթս խնդրէ ի մէնջ և խօս-
տանայ Հոգալ։ Գրեալ էիր Յովսէփ արքեպիսկոպոսին, զոր նա ևս մեզ
էր ծանուցեալ։ Որոյ յաղագաւ յոյժ շնորՀակալ եղաք զգերազնիւ սիրե-
լւոյդ, զոր օրՀնեսցէ Տէր և զօրացուսցէ և վարձատրեսցէ պարգևօք իւ-
րովք։ Ուստի և աՀա զծաղկեալ թուղթ մի աղերսանաց առ մեծազօր
կայսրն Յովսէփ գրեցաք և զթուղթ մի ևս առ սիրելին մեր՝ յարգելի
դեսպանն նորին, որ յայդր, զորս և յղեցաք առ Հոգևոր որդին մեր՝ Յով-
սէփ աստուածաբան վարդապետն, որ թարգմանեցուցեալ յղեսցէ առ
աղնուութիւն քո, որ տուեալ դեսպանին՝ խօսեսցիս ընդ նմա, զոր ինչ
պատշաճ է խօսիլ։

*Ապա խնդրեմ ի սիրելւոյդ, զի ի փառս Աստուծոյ և լուսաւորչաւանդ
սրբոյ Հաւատոյս մերոյ, մի խնայեսցես ի քեզ՝ յաշխատիլ վասն խղճ-
ճալի մերայնէիցն, որք ի Աչով՝ առ ի կատարումն լինիլ խնդրոյ մերոյ
և բաղձանաց նոցա։ Զի թէ վասն այլոց և այլ կերպիւ իրաց աշխատիս,
որչափ ևս առաւել վասն այսմ, նախ զի Հոգևոր բան է և երկրորդ, զի
ազգ մեր են և իբր ոսկերակիցք մեր, ուրեմն պարտիս յամենայն զօրու-
թենէ ջանալ և Հետևիլ, զի որպէս ի գերախնամ ամենաբարեպաշտ կայ-
սերուՀւոյն մեծէ Հրովարտակ շնորՀեցաւ Հոգելոյս Հայրապետին մերում՝
767 վասն զոյն օրՀնեալ վիճակիդ, նոյնպէս և ի Նամսայի կայսե//րէն այն-
պէս Հրամանի նմանս եղցէ, որ մերովս վկայական թղթով և կոնդակաւ
անդ ի Սիչով զեպիսկոպոս մի յղեսցուք։ Եւ թէ այլևս կարգաւոր Հար-
կաւորիցի գնալ, մերովս վկայականաւ և բաշբօրթիւ մտցէ անդ առ
մերայինսն, զի մի գուցէ յետոյ վատաբարոյք կարգաւորք գնացեալ
անդ, սորարկցեն զանուն մեր և ազգիս մերոյ։ Այլ գնացօղ կարգա-
ւորն, եթէ շատաշրջիկ չիցէ և Համեստ անձն իցէ, ի մէնջ վկայական
ունելով երթայցէ։ Ըստ այսմ խնդրեմ ի սիրելւոյդ Հոգ տանիլ առ այս
բանս։ Եւ ես զճշմարիտ սէրդ (և զՀաւատարմութիւնդ) անպակաս ունի-
ցիս (և յաւելցես ևս յօրէ յօր) առ սուրբ Աթոռ մայրս քո, և առ մեզ, և
առ Հոգևոր որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն։ Եւ երբեմն սիրանիշ
գրովք մխիթարեսցես զմեզ զանմխիթարութիւնս մեր՝ ծանուցանելով
զբարեկացութենէ քումմէ և զիրացդ յաջողութեանց, որոց սակս և մեք
աղօթօղ եմք։ Ողջ լեր ի Տէր և ի շնորՀս նորին և սրբոյ իջման տեղւոյս
զօրացեալ միշտ։ Ամէն։
Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուոջս ի փետրվա[րի] ԺԵ (15) և ի լու-
սակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին։*

Ձեռ. № 2803, էջ 764—767

767 *1131.* 1785 թ. փետրվար—*Թուղթ ի յերկիրն Ռուսաց առ մե-
րազնեայցն նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատաս-*

խանի ի հոկտ[եմբերի] 6, ի նոյեմբ[երի] 10 և ի դեկտեմ[բերի] 14
գրեալ թղթոցն նորին վասն զանազան բանից։
Յորմէ բազում սիրով և կարօտիւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և
նոյնական օրհնութեամբ և սրբոյ իջման տեղւոյս նորին զօրացուցիչ
շնորհին ծանիր սիրելի և հոգևոր որդիդ մեր, հարազատ և շնորհածին
զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ աստուածաբան վարդապետ։ Զի ի հոկ-
տեմբերի ամսոյ ԻԹ (29) գրեցաք առ քեզ զթուղթ մի, ի պատասխանի
յօգոստոսի 10 գրեալ թղթոյդ, հանդերձ լիագոյն որպիսութեամբք սրբոյ
Աթոռոյս և մեր։ Յետ այնորիկ հասին առ մեզ թուղթքդ՝ գրեցեալք ի
հոկտեմբերի 6, ի նոյեմբերի 10 և ի դեկտեմբերի 14, յորս և զոր ինչ
գրեալ էիր, իմացաք։ Եւ ահա, որոց և հարկն է, առնեմք զպատասխանի։
Զառ կայսրն Յովսէփ և առ դեսպանն նորին գրելի թղթոցդ օրի-
նակսն, որ յղեալ էիր տեսանել մեզ զկերպն, տեսաք և որպէս ծանու-
ցեալ էիր, զվայելուչ և խղճահարական բանս գրել առ նոյն կայսրն
768 վասն Աշովայու խղճալի մերայնոցն, ահա գրեցաք // այնպէս ի վերայ
ծաղկեալ թղթոյ, և զթուղթ մի ևս առ ի Պետրպօլք նստեալ դեսպանն
գրեցաք և յղեցաք առ քեզ՝ թարգմանեցուցանել և յղել ի Պետրպօլք
հասանիլ դեսպանին։ Յաղագս որոց և առ այնիւ Յովհաննէս աղայն, և
առ աղայ Մարգարն, և Փիլիպպոսն, և առ տօքտօր Յակոբն և ըստ
խնդրոյդ զթուղթս գրեցաք, զորս առ նոսա հասուսցես։
Բայց որ գրեալ էիր սակս տօքտօրի առաջին թղթոյն, թէ առ ինքն
չէ հասեալ, տարակուսեցաք և յերկրորդ թղթոջս նորին յիշեալ եմք։ Եւ
վասն կայսեր և դեսպանի թղթոցն ևս, զոր գրեալ էիր, թէ նոյն Յա-
կոբին թարգմանել տաց, վասն այն թէպէտ և ի թղթոջ նորին խնդիր
արարաք լաւապէս թարգմանել, բայց ի կարծիս եմք վասն նորին կարե-
լութեանն, վասն զի թէև գնամայի լեզուն և զընթերցումն քաջ գիտիցէ,
մինչ զմերն ոչ գիտէ, զիա՞րդ կարէ թարգմանել։ Եւ զի առ այս զտարա-
կուսանս ունիմք ի թղթոջ աղայ Մարգարին և Փիլիպպոսին ևս թէական
գրեցաք, թէ եթէ զթուղթքն առ ի չգոյէ թարգմանի Յովսէփ աստուած-
իմաստ վարդապետն յայդր ի ձեզ ձգեսցէ, թարգմանեցուցանել հետևե-
ջիք և այլն։ Վասն որոյ և սիրելւոյդ գրեմ, զի թէ դու ևս ըստ մեզ զան-
կարութիւն կարծիցես ի տօքտօրէն և գիտիցես, թէ ի Պետրպօլք լաւ
թարգման գտանիցի, զհոգածութիւնն թարգմանութեանցն ի պարոն
Մարգարն և ի Փիլիպպոսն յանձնեսցես։
Ի թղթոջ աղնիւ Յովհաննէս աղային ևս, ըստ նոր խնդրոյդ առաւել
յորդեցաք զանունն։ Եւ զպատճառսն յամելոյ թղթոյն մերոյ ծանուցաք
և հարկադրեցաք յորդորել, զորս պարտէն առ ի փութացուցանել զյառա-
ջադրութիւնն իւրեանց։ Եւ սակս Աշովու աղագաւ գրեցեալ թղթոցն ևս
խնդիր արարաք՝ յոյժ հարկիւ տալ ի դեսպանն Նամսայի և խօսիլ զոր
ինչ ի դէպն է։ Եւ զայսոսիկ յիշեալ թուղթքս բաց իսկ յղեցաք ի ձեռս
քո տեսանել, և ապա փակել և յղել։
Ծանուցեալ էիր և զպարոն Եսայու ի Մոսկովու գալն յայդր և
ուղևորելն ի Թիֆլիզ զՎարդան վարդապետի կայսն՝ հանդերձ սպաս-
ւորաւն։ Եւ զգաւթարն կայիցն ընդ սանատացն դրամոց նորին, զոր
յղեալ էիր, հասին։ Եւ զառ նա գրեալ թուղթդ ևս, զոր բաց յղել էիր առ
մեզ տեսանել, տեսաք և իմացաք զգրեալսդ, և զորքանսն նորայիցն, և
ապա փակեալ ետուք զինքն։ Որովք և միամտեցուցաք զնա։ Զոր և ըստ
769 յանձնարարութեանդ ի սէր // և ի խնամս մեր ունիմք։
Իսկ և որ յարդեանց սրբոյ Աթոռոյս զերկու հարիւր թուման պարոն

Եսայուն ևս առեալ և զմէկ հարիւր թուման տէր Ղազարի եղբայր Աղա-
լօյին՝ հասուցանել մեզ և սրբոյ Աթոռոյս, և ի նոցունց զամատս էիր
առեալ և յղեալ առ մեզ, ընկալաք և իմացաք։ Շնորհակալութիւն ունիմք
զսիրելի որդւոյդ, զոր օրհնեսցէ Տէր և զօրացուսցէ, և շնորհք սրբոյ Աթո-
ռոյս եղիցի քեզ օգնական։ Բարեաւ երբ և հասցին դրամքն աստ առ
մեզ, գրելոց եմք առ քեզ զգապգ ի միամտութիւն։
Եւ վասն ժողովարար տէր Յարութիւնի ժողովեալ Ռ (1000) ղու-
ռուշին, որ յառաջ քան զայս գրեալ էաք Իսահակ վարդապետին մերոյ
ի մեծն Պօլիս՝ առնուլ ի յԱսլան աղայէն, ահա առեալ է և մեզ գրեալ։
Վասն որոյ և քեզ գրեմք ա[հ]աւասիկ, զի յարդեանցդ սրբոյ Աթոռոյս
վեր առնուցուս զՌ (1000) ղուռուշ։ Եւ մինչ զվերոյ յիշեալ ղապղն
գրիցեմք, զայս Ռ (1000)-ս ևս յայնմիկ յիշեսցուք։
Ի կողմանէ պօլսեցւոց յանդգնութեանն, որ գրեալ էիր և զմեզ ևս
առ այն համախոհ կարծեալ, քեզ մեզ չգոյ, այլ հասկացուցանօղն է
թիւր հասկացուցեալ, նա ևս յունայն կարծիս յեցեալ։ Բայց չատագո-
վութիւն մեր հոգելոյս ծնողին մերոյ անխարդախ ցուցաւ, և ևս ցուցա-
նիլոց է։ Քանզի գրեցաք յառաջ քան զայս յօգոստոսի ԻԶ (26) զկոնդակ
մի առ հասարակութիւնն և զհնգեսին թուղթս ևս առ դէտն և առ ոմանս
իշխանաց, անհնարին պնդելով զգիտումն իւրեանց և զզանազան պատ-
ճառս առաջադրելով և խղճահարական բանիւք յորդորելով և ստիպելով,
և ևս զնորն ի գործ արկանել, և ոչ զհինն։ Բայց նոքա դարձեալ բազմա-
կնիք թղթով զեկուցեալ էին իբրու զանհնարին և զանփոփոխելի կամա-
կորութիւնն իւրեանց զոլ։ Առ այս մեզ վայե՞լ է այլ իմնական կարծիք,
բաւ լիցի։ Զի մեր ահա զԱտենուոյ տօնացոյցն տպեմք ի նորոյն և ապր-
տելոց եմք առանց արգելման, որպէս և նոցա գրեալ եմք և ի ներկայս
ըստ պահանջման հարկին և յԱստուած ձգելով, լաւթեան եմք տուել,
մինչև տեսցուք, թէ նա ինքն ամենակարն զի՞նչ է հոգալոց և զի՞նչ է
տնօրինելոց մեզ՝ առ ի կրկնագրել առ հասարակութիւն նոցա։
Իսկ և վասն յայդր վիճակդ եկեալ ժողովարարաց ոմանց, որ գրեալ
էիր, յիշատակելով զտեղականացդ խղճութիւնն, առ այդ ծանիր։ Զի որ-
պէս և դու լաւապէս գիտես զԹիֆլիզու որպիսութիւնն, բազումք զան
անտի և կոնդակ խնդրեն, որոց բացասեմք, սա//կայն ոմանք զնան
770 Մեծին[208] անկանին և նա ևս մեծ խնդրանօք գրէ մեզ և ի վերայ այդ
վիճակիդ կոնդակ տալ հարկէ։ Վասն որոյ ի պատիւ նորայ այնպիսեացն
չկարեմք բացասել։ Որպէս ոմանց տուեալ եմք (որոց ևս որպէս և ար-
գիւնատրեցուսցես, ձեռնտու լինի), բայց այժմ մինչ այդպէս զողոր-
մելութիւն գրես զտեղականացդ, ումեք չեմք տալոց զկոնդակ ի վերայ
այդմ վիճակի, եթէ ոչ հարկն պահանջեսցէ։ Այլ արդ, եթէ վասն ոմանց
սակաւուց դու այդպէս գրես, ապա այլ կողմնացիք զի՞նչ առնեն, յորոց
անպակաս են յամենայն ժամանակս ժողովարարք շրջօղք։ Զորոց եթէ
տեղեկացիս, կարես իմանալ, թէ մեք որքա՞ն ջանամք ազատ պահել
զդոյն վիճակ։
ԶՊօլսոյ Յարութիւն ամիրայէն և զՄարգսէն, որ գրեալ էիր, թէ
վասն Սաղիմայ Մովսէս պետին զայս ինչ են գրեալ և ես ըստ առաջ-
նոյն եմ պատասխանելոց, բարւոք ես խորհեալ, զի անտի թէպէտ
զգրեանս ընդունիմք, բայց յայնմ կողմանէ բնաւ զոչինչ յիշեն առ մեզ։
Ուրեմն ըստ խորհեցմանդ պատասխանս գրեսցես, մինչև եթէ զբան ինչ
գրիցեն մեզ, ծանուսցուք սիրելւոյդ զպատկանաւորն առնել։
Այլև զերկուս օրհնութեան թուղթս էիր խնդրեալ առ Բէկում կինն՝

վասն զիազարդ՝ շուրջառին և զգոնոցի Տրդատայ մկրտութեան պատկերին և առ Գեթսեմանն և Հռիփսիմէն՝ վասն կոնքեռին։ Ահա զայնս եւս գրեալ յղեցաք առ քեզ՝ հասուցանել ի տեարսն։ Բայց վասն կոնքեռին, զոր գրեալ էիր, թէ ընդ Աղալօյին յղեցի, այն եւ գեռ չէհաս ընդ թղթոյն, թերևս յետոյ ընդ ինքեանն բերցէ և կամ յղեսցէ։

Եւս զքանի հատ Տօնացոյց և Պարտավճարս էիր խնդրեալ, վասն որոյ յերկքանչիւրոցն տեսակաց զն ե (5—5) հատ յղեցաք ընդ թղթոցս ի Թիֆլիզ առ գործակալն մեր տէր Ղազարն՝ հասուցանել առ քեզ։ Իսկ և ի նորատիպ Ժամագրքէդ, որ զքանի թուղթս և զպատկերս էիր յղեալ, տեսաք և հաւանեցաք, զի յոյժ գեղեցիկք էին։ Ուստի, եթէ եղեալ է բոլորովին ի տպէն, զժ (10) և կամ զի (20) հատ ժամագիրք յղեսցես, որոց սակս շնորհակալիլոց եմք զքէն։

Զալի Մուրատ խանի մարդոյն եւս, զոր ինչ գրեալ էիր, իմացաք։ Նա գեռ յայս կողմս ոչ եկն։ Իսկ ի ներկայումս լսեմք քանիցս զմեծէ նորին, թէ պակասեալ է, սակայն տակաւին չէ ստուգեցեալ։ Այլ որ զյիշեցելոյն գրես, ծանր զորօք յայն ինչ տեղի նստեալ զոլ և ի զմանէ
771 խնդիր արարեալ և զ//գմանէ եւ կարծիս ցուցանես՝ զմակագրութիւն անդրադարձի նորին յայլ կերպ գրելոյ, այդ օտար իմն թուեցաւ մեզ իբր ներհական զոցին առաջադրութեան, վասն որոյ զգուշանալի է։ Նաև յաղագս Շնորհալւոյ Ընդհանրականին, որ վերատին եւ Մինաս վարդապետին մերոյ գրեալ էիր։ Ի զրատանէն սրնեալ զերկուսն հանեալ և եառւք նմա, որ ընթերցեալ առ միմեանս համեմատեսցէ և ընտրեսցէ զուղղագիրն։ Որ և արար ըստ գրեցելոցս և զորպիսութիւնն ինքն գրեսցէ սիրելւոյդ։

Իսկ նորայպէս զհամբաւ իմն լուաք յայդրուստ, իբր թէ զՊաւլ Սարգէիշ մեծ զօրապետն տարեալ իցեն զէզ ի վերն՝ ի պատճառս վրդովման ինչ եղելոյ, և յոյժ տարակուսեցաք։ Վասն որոյ խնդրեմ, զի շուտով զորպիսութիւն ինչ գրեսցես մեզ յայնմ կողմանէն, զի զխնեցեալ միամիտ լիցուք։

Եւ եւ յայդրուստ զոր ինչ մշտապիտանի կարգս ունէաք ըստ հարկաւորութեանն խարճեալ, ի ներկայումս սպառեալք են։ Վասն որոյ ահա որ ինչ կերպ կարգ և պիտոյ են սրբոյ Տանս, սիահի արարաք նըշանակութեամբ գունոցն և որքանութեանցն և զնոյն սիահին եդեալ ի թղթոջս, յղեցաք ի ձեռս քո։ Առ որ հայեցեալ սիրելւոյդ, ըստ հարաչատութեանդ հոգասցես, և առեալ յղեսցես օր մի յառաջ։ Ընդ որս նաև զչորս հօխայ եւս կարմիր և զիւրահալելի լաւ զմուռ յղեսցես, որ միշտ պիտանի է մեզ և նաշարութիւն կրեմք։ Զի թէպէտ յայլ ուստեք եւս բերել տամք, սակայն խառնանիւթ և վատն լինի։ Ուրեմն զու, սիրելիդ, յղեսցես, ըստ չափուն վերոյ գրեցելոյ, բայց յայնմանէ լինիցի, զոր զու բանեցուցանես, զի այն յոյժ լաւ է։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուոջս ի փետրվարի ժե (15) և ի սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 767—771

1011 1132. 1785 թ. 15 փետրվարի—Թուղթ առ կայսրն Գերմանիոյ Յովսէփ, այս է Թագաւորն Նամսայի, խնդիր աղերսանօք, զի հրամայեսցէ մտանել ի կալուածս իւր ի Սիշով և ի յՈւլահ՝ մերային եպիսկոպոսաց և կարգաւորաց՝ ի վերատեսչութիւն մերազուն ժողովրդեանն, որք յայնս տեղիս, և կամ սակս այլոց հոգեորական իրակութեանց։ Քանզի խղճալի ժողովուրդքն զառաջնորդ խնդրէին ի սրբոյ Աթոռոյս, այլ Թագաւորն վերոյ յիշեալ սաստիկ հրամանաւ ընդդեալ էր, զի մի մտցեն ի կարգաւորաց այլոց ազգաց յիշխանութիւն իւր։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս, որոյ և շնորհին կաթուղիկոս Ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, յաջորդ սրբազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և նոցին փոխանորդի, արիւնընծայ կենդանի վկային Քրիստոսի և յոգներախտ հօրն մերոյ՝ Հայրապետին և ծայրագոյն պատրիարք քրիստոսաէջ և լուսակառոյց մեծի Աթոռոյս Հայրաքաղաքին հայոց Վաղարշապատ քաղաքիս։ Յորմէ կացնեայց՝ սրբոյ Էջմիածնի, որ ի Վաղարշապատ քաղաքիս։ Յորմէ կաղնեայց՝ սրբոյ Էջմիածնի, որ ի Վաղարշապատ քաղաքիս։

Շնորհք ընդ քեզ և խաղաղութիւն, քաղցրութիւն և մարդասիրութիւն ամենասրբոյ երրորդութեանն հօր արարչագործի, որդւոյ արարչակցի և հոգւոյն կենդանարարի իջցէ և հանգիցէ ի վերայ քոյ և քոյայչակցի և հոգւոյն կենդանարարի իջցէ և հանգիցէ ի վերայ քոյ և քոյայշակցի և հոգւոյն կենդանարարի իջցէ

թէ ի Տեառնէ տուաւ ձեզ իշխանութիւնդ և հարստութիւն ի բարձրելոյն:
Եւ արդ, զի պարգևս այս յԱստուծոյ է, վասն որոյ և ընդունակն այսո-
րիկ ես ի հանրագնին տեսութենէ նորին ընտրի և պատրաստի, ըստ
որում մանաւանդ յայտնապէս ընտրեալք եղեն ի հնումն երջանիկն
Դաւիթ և ի նորումս բարեպաշտն Թէոդոս (թող զայլսն, որոց ընտրու-
թիւնն առ յԱստուծոյ յաններևոյթս էր): Որոյ ի հաստատութիւն և սըր-
բազան առաքեալն բերէ ի վերայ առաջնոյ բանին և զայս, թէ որք են,
յԱստուծոյ կարգեալ են: Քանզի որպէս մարդս զիր ինչ ազնիւ ոչ դնէ
ի յանպատշաճ տեղիս, այսպէս և ամենիմաստն Աստուած զպա-
տուական պարգևսն իւր ոչ ի յանարժանս, այլ ի յարժանաւորսն ան-
ձինս հեղու և զետեղէ օծանելով և զտանելով ի բազմաց, ըստ Սաղմո-
սին, թէ՝ գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա: Վասն
զի, ոչ փոքր ինչ է, այլ զօրս կացուցանէ պետս և տէարս և թագաւորս,
իբր օրինակ և յարացոյց իւր կարգէ ի վերայ բազմութեանց ժողովըր-
դեանց, ի վրէժխնդրութիւն չարագործաց և ի գովութիւն բարեգործաց՝
առ ի ծանուցանել հասարակաց՝ ի ձեռն նոցա զկամս և զհաճոյս իւր,
նաև զահաւորութիւն և զխնամողութիւն իւր և զընդհանրական կառա-
վարութիւնն: Որպէս և ահաւասիկ զամենայն գովութեանց արժանաւոր
զվեհափառ և զբարձրապատիւ արքայդ արքայից ընտրեալ է աստուա-
ծային շնորհիւ իւրով և հրաշապէս պսակազարդեալ, լցուցեալ է երկ-
նածիր իմաստութեամբ և պերճացուցեալ գերիշխան տէրութեամբ,
փառաւորեալ է զարմանալի փառօք և բարձրացուցեալ է ի ծայրագոյն
կայսերական և թագաւորական մեծութիւն զոյնոյ տիրական և վերամ-
բարձ Աթոռոյդ հաստատեցելոյ յարդարութիւն և յիրաւունս: Զոր և
նոյն ինքն խնկական տէրն տերանց և թագաւորն թագաւորաց Աստուած
պահեսցէ ի յամայր ամս և ի խաղաղական կեանս հզօր բազկաւ և բար-
ձըր ձեռօք, բուռն զօրութեամբ և անխոնարհելի իշխանութեամբ: Օրհ-
1012 նեսցէ անանցանելի օրհնութեամբն // զքեզ և զամենայն բոյլսինդ,
զերկիրդ և զժառանգութիւնդ և զբարեսէր ազգդ ամենայն և զծնունդս և
զորդիս ձեր: Անթառամելի արասցէ զթագաւորութիւնդ ձեր և մշտապէս
հաստատուն, յաղթօղ և անվանելիս պահեսցէ, զթշնամիսն պարտեալս
կացուցէ և զհակառակորդսն զլխակորս արասցէ: Զեռն Տեառն ընկալցի
զձեզ և բազուկ նորա զօրացուսցէ զձեզ, ճշմարտութիւն և ողորմութիւն
նորա ընդ ձեզ և յանուն նորա բարձր եղիցի եղջիւր տէրութեան ձերոյ և
տարածեսցի ընդ ոլորտս տիեզերաց: Ի զօրութեան Տեառն ուրախ եղի-
ցիս և ի փրկութեան նորա ցնծասցես: Որ և զցանկութիւն սրտի քո
տացէ քեզ և զամենայն բարի խորհուրդս և զգործս քո նա կատարեսցէ՝
տալով քեզ զյաջողութիւն յամենայնի ի փառս իւր, ի բարձրութիւն
եկեղեցւոյ և ի յուրախութիւն մեզ՝ փափագողացս գթութեանց քոց:

Իսկ արդ, զի գիրք սուրբք զերկրաւոր և զզգալի թագաւորութիւնս,
օրինակ և յարացոյց կոչեն երկնաւոր և իմանալի թագաւորութեանն
Աստուծոյ, վասն որոյ և մեք ի ներգործութեանց նոյնոյ նախատիպին
զկարելին ի յարժանաւորելուշ պատկերդ նորին համարիմք լինիլ:
Իսկ անդրանիկ գործ Աստուծոյ է ողորմելն համայնից և բարերարելն
առ ամենայսն, որպէս և արքայազուն արքայն Սողոմոն գրէ, թէ՝ ըզ-
միօրինակ խնամ ունի ամենեցուն և թէ խնամով զարմանէ զամենեսին:
Եւ դարձեալ առ ինքն Տէր ասէ՝ տիրելդ քո ամենեցուն, խնայել տայ
քեզ յամենայն, վասն զի բարերարութեամբն իւրով վստահարար իշխէ ի

վերայ ծառայից իւրոց: Արդ, եթէ Աստուած ի յամենաստեղծ տէրութենէն
ստիպի խնայել յամենայն արարածս, ուրեմն և բարեփառ օրինակդ
նորին ի նոյնապարգև գերիշխանութենէդ, հարկիս բարերարել առ հօ-
վանաւորեալս ի ներքոյ պայծառափայլ Աթոռոյ և աստուածառաք գա-
ւազանի ձերոյ կայսերական և թագաւորական մեծութեանն և օժանդա-
կել ամենայն կարօտելոց ողորմութեան ձերում:

Արդէն ի յայս վստահացեալ նուաստութեան մերոյ, գրեմք զթուղթս
զայս ի սպաս ձեր և խնդրեմք ի յողորմածութենէ ձերմէ զխնդիր իմն
մեզ հարկաւոր խնդրելոյ և ձեզ՝ արժանի կատարելոյ: Մանաւանդ և զի
ընդ ծագս տիեզերաց ծաւալեալ է համբաւ մեծութեան ձերոյ և Արևելք
Հայաստան աշխարհաւս յայտնի առնեն, թէ որքա՞ն իմաստութեամբ
ունիք զաշխարհ, նա զի և յարդիս լսելի լինի մեզ յամենայնի բարե-
հռչակեալ անուն իրաւարարութեան և մարդասիրութեան քո, որով ար-
դար և ի քեզ ճշմարտես զբանն իմաստնավճիռ, թէ թագաւոր հանճարեղ
հաստատութիւն ժողովրդոց, այսորիկ առաւել ևս յուսաւորեն զմեզ առ
ներկայիս փոյթ: Եւ զոր առաջիկայ մեզ խնդրել ի բարեպաշտութենէ
ձերմէ, ծանուսցուք աստ: Քանզի խղճալի ազգս մեր յետ բառնելոյ
մարմնականի իշխանութեան մերոյ, մինչ գնացին ի զանազան իշ-
խանութիւնս, ամենեքեան զհոգևոր տեսուչս և զեպիսկոպոսս իւրեանց
ատի խնդրեալ տանին՝ ի պատրիարգարանէս սրբոյն Գրիգորի Լուսա-
ւորչին մերոյ, և ի փոխանորդացս նորին: Ուստի և յիւրաքանչիւր երկ-
րաց իշխողաց զնոմոսս ունիմք, զի զկարգաւորս մեր առաքեսցուք ի
յերկիրս նոցա առ մերայինս՝ ի յայցելութիւն հոգևորապէս: Որպէս և ի
նախանցեալ ժամանակին հանգուցեալ հայրապետն մեր՝ տէր Սիմէոն
կաթուղիկոսն, որ յառաջ քան զմեզ պատրիարքն էր սրբոյ գահիս էջ-
միածնի, գրեաց և խնդրեաց ի քրիստոսապսակեալ ամենաբարեպաշտու-
հի կայսրուհւոյն Ռուսաց՝ Եկատարինեայ զնոյնակերպ հրովարտակ,
զոր և նա սիրով կատարեալ զխնդիրն, գրեաց և առաքեաց և ունիմք
յԱթոռոջս ի պահեստի մեծաւ պատուով: Եւ ի մէնջ առաքեմք եպիսկո-
պոսս ի յօրհնեալ երկիրն Ռուսաց առ մերազնեայսն՝ ի յառաջնորդու-
թիւն նոցա: Ըստ սմին օրինակի և ի քաղաքն Աշովայ, ուր զոն վանո-
րայք ազգիս Հայոց և որոց ընդ հովանեաւ բնակեալ մերազնեայք
քրիստոնեայք, մինչ էին ընդ իշխանութեամբ հագարացւոց, ի բնէ անտի
ի մէնջ գնայր առ նոսա եպիսկոպոս և կարգաւոր անխտրաբար ի
հոգևորապէս մատակարարել զնոսա: Վասն որոյ և այժմ մինչ ըստ
վերնախնամ տեսչութեանն անկեալք են ի ներքոյ զովացուցիչ հովանա-
ւորութեան ձերոյ, գրելով մեզ զյոլովագոյն գոհացողութիւնս զխնամոց
ձերոց, որով խաղաղութեամբ և բարերջանկութեամբ կենցաղավարին
(ուստի և մեք զշնորհակալութիւնս բազումս ունիմք զաստուածատուր
տէրութենէ ձերմէ), հայցեն և ևս, զի եպիսկոպոս մի կարգեսցուք նոցա
առաջնորդ՝ վասն պահպանութեան հաւատոյ և օրինաց մերոց, զոր ի
Լուսաւորչէ անտի և ի նախնեաց մերոց ունեալ ունիմք: Զոր և մեք
առաքել հարկաւորիմք առ ի չմնալ հօտին Քրիստոսի առանց հովուի և
վնասիլ ի հոգեկորոյս գայլոյն սատանայէ: Բայց զի մի լիցին արգելք
հոգևոր առաջնորդութեան մերոյ, զայս աղերսական թուղթ գրեցաք
ամենաբարեպաշտ և քրիստոսազօր, խաչապսակ և ինքնակալ մեծի
կայսերդ Յովսեփայ, և հոգնաթախանձ ժտութեամբ խնդրեմք ի յաս-
տուածասիրութենէ ձերմէ ի փառս Քրիստոսի, ի պատիւ սրբազան առա-

քելոցն նորին Թադէոսի և Բարդուղիմէոսի և ի մէջ սրբոյն Գրիգորի, զոր ընդունիք և յարգէք, շնորհել մեզ զհրովարտակ հրամանի՝ ձերովդ կայսերական նշանաւ, զի անարգել առաքեսցուք ի Սչովայ առ մերազնեայս, որք առ վանորէիւքն մերովք և առ այլ մերձակայ վիճակայինս նոցին զեպիսկոպոս մի և կամ զայլ հոգևորական մերովս կոնդակաւ և վկայական թղթով ի վերատեսչութիւն նոցա և ի կառավարութիւն հոգևորապէս ըստ աստուածային օրինաց և ըստ աւանդութեանց քրիստոսականի եկեղեցւոյս մերոյ, որ նոյն ժողովուրդքն բարեկարգութեամբ անցուսցեն զկեանս իւրեանց և բարեբանեսցեն զԱստուած, նաև ըզփառաւորեալդ ի նմանէ։ Ահա հային աչք իմ ի յօգտաւէտ հրաման ձերոյ կայսերական և Թագաւորական մեծութեանն, զոր մինչ ամենողորմածաբար շնորհիցես, այնու գիս լրութեամբ ազգի իմոյ պարտականս կացուսցես յարաժամ շնորհակալիլոյ զբաղցրագոյն մարդասիրութենէ ձերմէ և զաղօթս մշտամատոյցս նուիրելոյ ամենատեառն, յաղագս գերապայծառ և հզօր տէրութեան ձերոյ յաւիտեան բարձր և յաղթող և ճոխ լինելոյ, որպէս և միշտ իսկ մաղթէ եկեղեցիս մեր առ Տէր վասն Թագաւորաց քրիստոնէից և իշխանաց բարեպաշտից։

Եւ մինչ հաճոյ թուեսցի խնդրոյս առաջի քոյ առնել զկատարումն, յայնժամ ի յառաքելս մեր ի յօրհնեալ երկիրդ քո եպիսկոպոս, գրեցից ընդ նմա զարժանաւոր բանս շնորհակալութեան և օրհնութեան և որպէս տենչամս պսակեցից և զաստուածապսակեալ արքայդ արքայից շնորհալոյս սրբովք նշանօք սիրայայտականօք։ Ողջ լեր ի Տէրն Տերանց բոլորեալ ընաւ բարեբաստութեամբ ի բերկրութիւն և ի պարծանս մեր։ Ամէն։

Գրեցաւ ի Թուոջ Փրկչին 1785, ի փետրվարի ժե (15) և ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

Նուաստ Ղուկաս կաթուղիկոս
Եւ պատրիարք ազգիս Հայոց,
Որ եմ հովիւ հօտիս փոքու՝
Քրիստոսականս եկեղեցւոյ,
Վասն բանիցս աղերսական,
Որք ի վերոյ գրեցեալ կան,
Կնքով իմով աստ կնքեցի

Եւ զայսքանս ձեռագրեցի,
Որովք կայսրդ իմաստալի.
Ամենևին միամտիցի.
Թէ որ ինչ գոն յայսմիկ թղթի,
Յայնքան յինէն են հաւաստի։
Որ և սպասեմ ողորմութեան,
Խնդրոյս իմոյ իսկ կատարման։

Ձեռագիր սրբազանին ի վերջ թղթոյն և ի ստորև կնքոյն գրեալ։
Ձեռ. № 4501, էջ 1011—1012

1013 **1133. 1785 թ. 15 փետրվարի**—Թուղթ առ ի Պետրպօլք նստեալ դեսպանն Նամսայի Թագաւորին՝ խնդիր, զի զվերոյ գրեալ թուղթդ մեր հասուցէ առ նոյն կայսրն և ինքն ևս միջնորդեսցէ իւրովն գրութեամբ, զի զխնդիրն մեր, որ առ նա, վասն Սչովու մերազնէիցն առաջնորդ յղելոյ աստի, ընդունիցի և կատարեսցէ։ Քանզի և սա խոստացեալ էր ի գնալ Թղթոցն մերոց առ ինքն, հոգալ ըստ այսմ։

Յորմէ ժամանեսցի թուղթ ճշմարիտ սիրոյ և կարօտոյ, հանդերձ անանցանելի օրհնութեամբն հօր Աստուծոյ, զուարճարար ողջունիւն միածնի որդւոյ և անսպառ մարդասիրութեամբն հոգւոյն սրբոյ, այլև՝ հրաշալի զօրութեամբ սրբոյ տեղւոյս քրիստոսաիջի և նորին կենդանի խաչին և կողմանցս սրբոյ գեղարդեանն և աստուածաշօշափ աջոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և համայնից բազմաստանչ սրբութեանցն, որք աստ կան, ի վերայ օրհնեցելոյդ ի Տեառնէ, գերազնիւ սիրելւոյդ մերոյ և օգտաւէր բարեկամիդ աստուածաէջ սրբոյ գահիս, հաւատարիմ գործակալիդ բաղձալւոյն մերոյ քրիստոսազօրի և ամենաբարեպաշտի ինքնակալ կայսերն մեծի Յովսեփայ, ազնուագոյն և բարձրապատւի, աստուածասէր և բարեպաշտ, իմաստնախոհ և շքեղափառ գրաֆ Դէկովէնցլ մեծարգո դեսպանիդ, որ ի Պետրպօլք, և աստուածապահ տան քում և բնակութեան բարեժառանգ որդւոցդ և դստերացդ, հարազատ ընտանեացդ և ազգայնոցդ, ցաւակից սիրելեացդ և բարեկամացդ և ամենայն ընդ ձեռամբ քով եղելոցն ի Տէր խնդալ մշտազ[ուարթ]... (Շնորհք)։

Եւ ընդ աստուածային առատաձիր օրհնութեան սիրալի թղթոյս, ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում։ Զի Թէպէտ չունիմք մինչև ցարդ զծանօթութիւնս ինչ ընդ աստուածասիրութեան ձերում, ելով տեղեաւ հեռաւորք և ազգաւ որիշք, այլ որովհետև երկաքանչիւրոցս մի է Տէր և գլուխ կենսատու Փրկիչն մեր Քրիստոս և զմի և զնոյնն ունիմք զճշմարիտ հաւատն, որ առ նա, ուստի ոչ համարիմք առ միմեանս իբրև զօտար ոք, վասն որոյ և զայս թուղթ աղերսանաց գրեցաք առ յարգութիւն ձեր, հարկաւորեցեալ գոլով ի պատճառէ իմեքէ։ Զի որովհետև նախ յԱստուծոյ և ապա ի նոյնազօր տեառնէ քումմէ ի գերաբարձր արքայէն արքայից վերոյ գրեցելոյ կացուցեալ ես յայդր դեսպան, կառավարիչ և վերահասու բազմաց իրաց և իրակութեանց ի քեզ անկելոց, վասն որոյ և զկատարումն մեծավարձ իրակութեանս մերոյ առաջադրեցելոյ ի քեզ արկանեմք, առ ի հոգալ կարեկցաբար, որով և կատարել զհրամանս սրբազան առաքելոյն Պօղոսի, թէ՝ լերուք առ միմեանս զթածք և թէ զմիմեանց բեռն բարձէք։ Եւ զի լուեալ ևս եմք զյոգնակի բարեհամբաւութիւնս զձէնջ, թէ որքան մարդիկք բարերարեալք լինին և սրտադիւրին ի քաղցրագոյն մարդասիրութենէ ձերմէ։ Որ և զովին քաղցրասրտութեամբդ իսկ խոստացեալ ես օգնական լինիլ մեզ առ ներկայականս իրակութիւն, որպէս գրեալ էին մեզ յօրհնեցելոյ երկրէդ յայդմանէ հոգևոր որդիքն մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն և ազնիւ Յովհաննէս և Մարգար աղայքն բերանալիր շնորհակալութեամբ զձէնջ այսօրիկ համբաւովք առաւել ևս յուսապնդիմք, թէ զխնդիրս մեր ոչ անտես առնիցես։

Ուրեմն գիտասցէ գերայարգութիւն ձեր, զի ի Սչովայ և Թերևս ի մերձակայս նորին ևս գոն ի ներքոյ դաւաղանի իշխանութեան քրիստոսազօրի և ամենաբարեպաշտի ինքնակալ կայսերն մեծի Յովսեփայ և յազգէս Հայոց լուսաւորչադաւան քրիստոնեայք, որք յառաջ քան զայս մինչ ընդ իշխանութեամբ հագարացւոց էին, [Թէպէտ և յամենայնի ի վիշտս և նեղութիւնս կային, սակայն]* եպիսկոպոս և կարգաւորք անպակաս երթային առ նոսա, որք հոգևորապէս կառավարէին և հովուէին զնոսին և մխիթարէին։ Իսկ այժմ մինչ ի շնորհաց Տեառն ընդ ձերովդ աստուածահաստատ տէրութեամբ են հովանաւորեալ, Թէպէտ և յոյժ ապահովութեամբ կան, իբր ի յանքոյթ խաղաղութեան, որոյ վասն և գրեն մեզ զբազմագոյն գոհունակութիւնս զխնամաշատութենէ քրիստոսազօրի և ամենաբարեպաշտի ինքնակալ կայսերն մեծի Յովսեփայ և զմեզ ևս շնորհակալուս և օրհնաբանս ձեզ կացուցանեն ընդ ինքեանց, սակայն զի ի հոգևոր հովուէ, այսինքն յեպիսկոպոսէ և ի բաւական

* Փակագծերի մեջ վերցված մասը բնագրում ջնջված է։

33—815

կարգաւորաց զուրկ են, առ այն յոյժ ցաւին և հեծեն և թախանձանօք ժաեն առ մեզ վասն զառաջնորդ առաքելոյ: Զոր և մեր կամիմք և ջանամք խիկ յղել, որ և յոյժ հարկ է մեզ, ըստ գրեցելոյն, թէ՝ զզոյշ լերուք անձանց և ամենայն հօտին, յորում եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս, հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբն իւրով: Բայց կասկածիլով, թէ մի գուցէ արգելումն լիցի առաքեցելոյն մերոյ, ի ներկայումս յամեցուցաք տակաւին, մինչև ընկալցուք զհրաման ի բագդրութենէ քրիստոսազօրի և ամենաբարեպաշտի ինքնակալ կայսերն մեծի Յովսեփայ: Ուստի ահա ամենախոնարհ զիմօք և յուսալիր սրտիւ զթուղթ աղաչանաց գրեցաք առ ամենագորմած գերիշխանութիւն նորին և հայցեցաք մեծաւ թախանձմամբ, զի ըստ մեծի գթութեանն իւրում ողորմեալ, շնորհեսցէ մեզ զհրովարտակ հրամանի՝ իւրով կայսերական նշանաւն, որով անարգելաբար յղիցեմք ի Աշովայ ի վանսն մեր զեպիսկոպոս և կամ զայլ կարգաւորս մերովս կնքակաւ և վկայական թղթով, որ թէ Աշովայու մերազնէիցն և թէ յայլ մօտակայ տեղիս եղելոցն, որք նոյն վանորէիցն են վիճակեալք, առաջնորդեսցեն և այցելութիւն արասցեն հոգևորապէս: Եւ զայս թուղթ օրհնաձիր ես առ պատուելութիւն ձեր գրեալ, խնդրեմք ի սառյգ բարեկամութենէդ, զի բղթուղթն մեր, որ առ կայսերական և թագաւորական մեծութիւն՝ քրիստոսազօր և ամենաբարեպաշտ ինքնակալ կայսերն մեծ Յովսեփ, ժամանեցուցէ ի սպառ աստուածահաստատ Աթոռոյ նորին գերագանց բարձրութեանն և դու ես իմաստնաւոր բանիցդ գրութեամբ բարեխօս լեալ առ նա, օգնական լիցիս մեզ, որպէս զի խնդրոյն մերոյ կատարումն լիցի և խղճալի ազգն մեր, որ յօրհնեալ տէրութեան ձերում ըստ հոգևորին ես բարեկարգեցեալք, աղօթաւորք և բարերանք լիցին յազագս քրիստոսազօրի և ամենաբարեպաշտի ինքնակալ կայսերն մեծի Յովսե-
1014 փայ և վասն միջնորդիդ աստուածահաճոյ հոգևոր // իրակութեանս այսմիկ: Որով և ես, հովիւս բանաւորաւ հօտիս, պարտականս կացուցանեմք զմեզ շնորհակալելոյ զձեզ օրհնաբանութեամբ հանդերձ, անմոռ ունելով ի միտս մեր զբազդր յիշատակ բարերարութեան ձերոյ, որ և ի յարգիճաւորիլ հոգածութեանց և ի կատարիլ խնդրոյն մերոյ, ըստ ոտիպման հզօր սիրոյս յարգեցից զճշմարիտ բարեկամդ սիրանիշ ընծայիւ: Եւ Տէր, որ արարիչն է ամենայնի և մարդասէր, կատարեսցէ զամենայն խնդիրս քո և յաջողեսցէ զամենայն զգործս քո, օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, փրկեսցէ ի չարէ և ընկալցի հանապազ ի խնամս իւր, օրըստօրէ բարձրացուսցէ ի գերագանց փառս և ի ճոխութիւնս՝ հաճելի առնելով յաչս քրիստոսազօրի և ամենաբարեպաշտի ինքնակալի կայսերն մեծի Յովսեփայ և զարդարեսցէ ամենայն հոգեկան և մարմնական առաքինութեամբք առ ի պայծառանալ և ի հանդերձեալ կեանսն: Ողջ լեր ի Տէր: Ամէն:

Գրեցաւ յամի կենարարին 1785 և ի փետրվարի ժԵ (15) ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ քաղաքի:

Ձեռ. № 4501, էջ 1013—1014

1134. 1785 թ. [փետրվար]—*Թուղթ ի Բաղդատ առ Խալդարենց Մարգար աղայն, յիշելով զ'ի մայիսի ԻԲ (22) գրեալ թուղթն մեր և ծանուցանելով զանցս մեր ձախորդակիս և վասն նոր նուիրակին յանձնա-*

րարութիւն: Եւ վասն տալոյն սորա զգրամս վասն մեռոնի սան շինելոյ, բան հարցական, և յորդորումն ի սէր և ի հարազատութիւն:

Ձեռ. № 4501, էջ 1044—1045

1135. 1785 թ. 15 փետրվարի—*Ի Պետրպօլր առ Ման[ու]չարեան Մարգար և Փիլիպպոս աղայսն, վասն իրաց ինչ և մանաւանդ վասն Նամսայի կայսեր և նորին գեսպանի թղթոցն, զորս գրեցաք: Պատուէր սոցա ես՝ հոգ տանիլ առ ի գլուխ գալ խնդրոյն մերոյ, որ վասն Սիչով առաջնորդ յղելոյ:*

Ձեռ. № 2803, էջ 593—594

1136. 1785 թ. ապրիլ—*Ի Թիֆլիզ առ Տէր—Ծմաւոնեան պարոն Ստեփաննն, որոյ քենէկալ Ստեփաննն վախճանեալ էր ի Հաշտարխան և տեղւոյ առաջնորդ և նուիրակն մեր՝ Յովսէփ վարդապետն զմի ծանրագին շուրջառ էր կարեցուցեալ ի կայից նորին ի կողմանէ գիպարգին և զԼ (30) թուման ես հոգերաժին էր առեալ բանիւ և հաճութեամբ սորա և այլ նորային մերձաւոր ընտանեացն:*

Ձեռ. № 4501, էջ 1053—1054

1137. 1785 թ. [ապրիլ]—*Թուղթ ի Թիֆլիզ առ Ֆիթօյենց պարոն Պետրոսն և իւր թոռն Եսային, զի նոյն Պետրոսի որդի և Եսայու հայր Ստեփաննն ի Հաշտարխան վախճանեալ էր և տեղւոյ առաջնորդ և նուիրակն մեր՝ Յովսէփ վարդապետն ի կայից նորա զմի շուրջառ էր կարեցուցեալ վասն սրբոյ Աթոռոյս իբր գիպարդ նորին, և սոցա գրեալ, և սոքա ընդ այն հաճեալ էին և զԼ (30) թուման ես էին տուեալ ի գոյից նորա հոգերաժին սրբոյ Աթոռոյս: Առ որս սրբազանն յայսմ զշնորհակալութիւն և զօրհնութիւն և մխիթարութիւն գրէ:*

Ձեռ. № 4501, էջ 1054—1055

775 1138. 1785 թ. 6 մայիսի—*Թուղթ ի մեծն Պօլիս առ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի բազմաց թղթոց նորին ընդ ժամանակս ժամանակս գրեցելոց վասն զանազան իրաց և իրակութեանց՝ ի յանցեալ թուոյ դեկտեմբերի ԺԶ (16)-էն մինչև ցնոր ՌՄԼԴ (1785) թուոյս փետրվարի Թ (9):*

Յորմէ առատագունիւ սիրով և խաղաղականաւ սուրբ ողջունիւ, բազմաւ օրհնութեամբ և լիալիր շնորհիւ և զօրեղ օգնականութեամբ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ, քրտնաջան և աշխատակիր զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակայ աստուածաբան յոգնահանճար վարդապետիդ: Զի կանխադոյն ընկալեալ էաք զթուղթս քո զերեսեան, զերկուսն ի հոկտեմբերի ԺԸ (18) գրեցեալ և զմին՝ ի նոյեմբերի ԺԳ (13): Որոց զպատասխանին համառօտակի ի նոր թուոյս յունվարի ԺԸ (18) գրեցաք և հանդերձ խնդրեալ զապգիւ յղեցաք: Եւ զխնդրեալ զոմանս օրհնութեան թուղթսդ մատգիրութեամբ խոստացաք յետոյ հոգալ և յղել: Եւ զկնի յղելոյն մերոյ զայնս ոչինչ բազում աւուրց անցեալ ի վերայ, մինչ յայլ կողմանց հարկաւորագոյն թղթագրութիւնս էաք պատաղեալ, հասին առ մեզ ի դեկտեմբերի ԺԶ (16) գրեալ եօթնահատոր թուղթք քո, յետ որոյ և ի նոյն ամսոյ ի ԼԱ (31) գրեալդ՝ պարոն Գէորգի փուսուլայիւն: Ապա ի յունվարի Ե (5) և ի ԺԷ (17) գրեցեալքն ես: Զկնի այնց և ի փետրվարի Է (7) կրկին թուղթքդ: Վերջապէս ի նոյն ամսոյ Թ (9) գրեալ թուղթդ ես: Զորս զամենայնսն ընթերցաք և իմացաք զընաւ գրեալսդ ի

նոսին, որոց և հարկաւոր էր Թէպէտ փութապէս զպատասխանիս գրել և
խնդրեցելոցդ Թղթոց զհարկաւորսն գրել և յղել, սակայն բանի հարկա-
ւորագոյն Թղթոց ի մէջ անկեալ և մանաւանդ Հնդկաց երկրի Թղթոցն
(զոր յառաջագոյն խօսի եմք յիշեալ ի Թուղթս քո), անդուլզ գրելիքն
մնացին։ Նաև զի ի վերայ այսքան զբաղմանց և հոգոց մերոց, զոր
ունիմք յայսմ միջոցի, ի սպասաւորաց և ի գործաւորաց ևս պակաս
էաք, քանզի ի Մեծի պահոց երկրորդ կիրակէին, շնորհին Աստուծոյ,
776 զԱնանիա, զՅակոբ և // զերկուս Յովհաննիսեանսն ձեռնադրեցաք ի
քահանայս (զոմանց զանուանսն ևս փոխելով ըստ կարի պատեհագոյնս,
որպէս յինքեանց կամ յայլոց կարես իմանալ), որք ի սուրբ Զատկիս
ելեալ ի քառասնից և ցարդ զպատարագս մատուցեալ, ի վեցերորդ
աւուրս հազիւ ձեռնամխեցին ի պաշտօնս իւրեանց։ Բայց և այժմ ոչ Թէ
յայլ գրութեանց ապահով եմք, ոչ, այլ զբանի ձեռք գրելիս ունիմք,
զոմանս ոչ բնաւ սկսեալ և զոմանս սկսեալ և ոչ կատարեալ, որք յոյժ
հարկաւորք ևս են։ Սակայն յարգիս զանց արարեալ զնոքօք, զի մի
տարակուսիցիս և վրդովիցիս դու (ըստ որում և ի խուժանաց ևս պա-
տեցեալ ես)։ Զայս Թուղթ գրեցաք առ բազմավիշտ սիրելի որդեակդ, ի
պատասխանի ցայժմ գրեցելոցդ Թղթոց, զի փոքր մի զմխիթարութիւնս
առասցիս ի կողմանէ մերմէ։ Գիտասցէ ուրեմն խոհեմութիւն սիրելւոյդ,
զի ի դեկ. ԺԶ (16) գրեալ բազմահատոր Թուղթքդ էին Տօնացուցի ան-
ցիցն աղագաւ ևեթ, զորս մի ըստ միոջէ ընթերցաք և վերծանեցաք զա-
մենայն որպիսութիւնսն՝ գիտելով և զի՞րդ և յի՞նչ միտս հեռեւումն
խարդախողին և զանհամբոյր ապարասանութիւն գայթակղեցելոցն։ Իսկ
ի կողմանէ բազմակնքոյն նոցա ժամանելոյ առ մեզ, և զմերս զինչ
խոկուցումն յառաջ քան զայն, կատարով Թղթոյ զեկուցաք քեզ, զոր ի
հարկէ ընկալեալ ես և իմացեալ։
Իսկ ի նոյն ամսոյ ԼԱ (31) գրեալքդ ևս էին յայնմ կողմանէ՝ համ-
դերձ ճառիւք նորանոր եղելութեանց ոմանց, զորս ևս իմացաք։ Իսկ
զանուանս ոմանց, զորս նշանակեալ էիր և զԹուղթս խնդրեալ առ նոսա,
առ այն տե՛ս ի փուսուլայն՝ զինչ աստւթիւնս մեր։
Եւ սակս Յարութիւնի և Կարապետի տրոցն, որ յիշատակս յառա-
կացուցանել և ինքեանց գրել էիր խնդրեալ, առնելոց եմք, բայց յետոյ,
զի յայսմ միջոցի չեմք գրեալ և դեռ չգրեմք առ որ զԹուղթս, Թեև ի նո-
ցունց ընկալեալ ևս եմք։ Եւ յաղագս Յարութիւնին, որ զմահրամայս և
զայլ իրս էիր խնդրեալ, զայնոսիկ ևս եմք յետոյ յուղարկելոց, մինչ
զԹուղթսն գրիցեմք։ Իսկ ի յունվարի Ե (5) գրեալ Թղթոջդ ընդ այլ բա-
նից, որոց արարեալ եմք յառաջ զպատասխանիս, գրեալ էիր ևս զպարոն
Խաչիկէն և վասն նորին խնդրոյն, որ սակս տպեցման Յովսեպոսին։
777 Առ // որ իմա, զի նորին առեալ և յղեալ Յովսեպոս պատմագիրն ևս
հասեալ է առ մեզ, մին ևս ի հանգուցեալ տեղապահէն մնացեալ կայր,
զորս ընդ մեր գրատան եղեալ Լէհացւոյ ձեռագրին համեմատեալ սի-
րելեաւն մերով՝ Մինաս վարդապետիւն, գտաք զայնոսիկ յոյժ սխալ,
մանաւանդ զպարոն Խաչիկի յղեալն, վասն որոյ հաստատեցաք զմիտս
մեր ի վերայ հոգելոյս Լէհացւոյ ձեռագրին, Թէպէտ և զմիւսսն ևս ոչ
գնեմք ի բաց, այլ ընդ նմա ի կիր ածեմք։ Եւ զի պարոն Խաչիկ սիրե-
լին մեր այդքան Թանխանձէ և դու ևս այդքան գրես, ոչ անտես արա-
րեալ զխնդիր ձեր, զփոքր դաղկեահն տպարանիս մերոյ պատրաստե-
ցուցեալ, սկսաք յայնմիկ տպել ի չափ Նարեկիս և մեծաւ հետեմամբ

և աշխատութեամբ զսկիզբն և զդուռն կերպաւորեալ, զառաջին տետրն
ևս հանաք։ Յորոյ կողմանէ միամիտ լեր և զպարոն Խաչիկն ևս ան-
հոգացո դու, զի Թէպէտ և զԹուղթն նորին ևս առեալ եմք, բայց չունիմք
այժմ զապահովութիւն պատասխանագրութեան, յապայ գրեսցուք։ Եւ
զԱՌ (1000) զուռուշն, զոր ամին իւր յանձնեալ է սիրելւոյն մերոյ՝
Քրիստոսի զօրացեալ պարոն Գէորգին, տացես և փոլիցայիւ հասու-
ցես ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Առ դոսա ևս չկարացաք զգիր գրել, զի
զառ քեզ գրեալսն և նոցա համարիմք։ Բայց մեծաւ սիրով զողջոյն և
զօրհնութիւն տամ։ Իսկ զառ քեզ եղեալ Թուղթն մեր, որ ի վերայ պարոն
Խաչիկին, եԹէ վասն օրհնութեանն յղիցես, լաւ է և Թէ ոչ՝ դարձուցի
յետս առ մեզ։
Հնդու նուիրակ Գրիգոր վարդապետին, որ զԹուղթ մի էիր գրեալ
յառաջ քան զայս, ետուք նմա, ի հարկէ, զպատասխանին ընդունելոց
ես։ Բայց և զհին փոլիցայսդ, որ յիշեալ էիր և զղապզ խնդրեալ, մեք
զնոցին զապզսն յառաջ ի դեկտեմբերի ԻԱ (21) եմք յղեալ։ Եւ զի այ-
զնոցին զապզսն ... նորիկ ԲՌԵԾ (2500) զուռուշի կրկնայիշումն եղև, վասն որոյ զայն
բանի զապզն, զոր յառաջ էաք յղեալ, գրեցաք յայնժամ քեզ՝ յետս
դարձուցանել առ մեզ։ Որ և յուսամ, Թէ մինչև ցարդ այն զապզերն
հասեալք իցեն առ քեզ և դու զառաջին աւելորդ զապզն վերադարձու-
ցեալ իցես։
Եւ յաղագս Ուռումէլու նուիրակի որպիսութեանցն և զքսուրսն
Ստեփան վարդապետին յղելոյն, զոր գրեալ էիր, ահա այն քսուրքն ի
Կարին են հասեալ առ պարոն Հայրապետն, մինչ յԱԹոռս հասցին և ես
778 ծանուցանելոց եմք ի միաբանութիւն քեզ։ // Իսկ ի յունվարի ԺԷ (17)
գրեցելումդ Թղթոջ ծանուցեալ էիր զԵՌ (5000) զուռուշ Մասեհեան պա-
րոն Եսայուն փոլիցայ տալդ, ըստ գրեցման պարոն Հայրապետին, որ
նա ի Կարին ի զափանցի Գէորգեան պարոն Պօղոսէն առնուցու և
զԲՌ (2000) ևս, Բուռնօթրճնոց պարոն Սարգսին տալդ, զի զայն ևս ի
Համի Պապայէն և կամ ի Բուռնօթրճնոց մահտեսի Յարութիւնէն առնու-
ցու՝ հասուցանել ի սուրբ Աթոռս, և ի մէնջ զղապզ ընկալեալ, առ քեզ
յղեսցէ։ Որ և պարոն Հայրապետն ևս գրեալ էր մեզ, բայց զԲՌ (2000) ի
զապզն խնդրեալ էր որիշ լինիլ։ Վասն որոյ և մեք զԲՌ (2000)-ի զապզն
ուրոյն գրեցաք, զոր տուեալ էիր Սարգսին և զԴՌ (4000)-ին և զԱՌ
(1000)-ին, զորս տուեալ էիր պարոն Եսայուն և այլևս սակաւ ինչ դրա-
մաց ի քէն վասն սրբոյ Տանս ծախելոց, որք են գինքն և ամենայն
ծախքն զեղորէից, ոսկեայ վարագից և այլ մանր իրացն, որք ամբող-
ջապէս հասեալ են առ մեզ, որք բոլորապէս են ՆՁԳ (483) զուռուշ,
Ե (5) փարայ, ուրոյն գրեցաք, զորս և ահա ընդ Թղթոյս յղեցաք առ
պարոն Հայրապետն՝ հասուցանել առ քեզ ի միաբանութիւն։
Եւ ի փետրվարի Է (7) գրեալ յառաջին և յերկրորդ Թուղթդ ծանու-
ցանել էիր զաւարտելդ զԻսկիւտարու եկեղեցւոյն, համդերձ որքանու-
Թեամբք արդեանցդ, և զորպիսաբար ի Ղալաթիա գնալդ և զամենեցուն ի
սէր ունիլն զքեզ, ընդ որս սրտադիւր եղաք։ Եւ առ ոմանս, որ հարկա-
ւէր ունիլն զքեզ... ւորապէս զԹուղթս էիր խնդրեալ վասն յիշատակաց և այլ պատճառաց,
յետ աւուրց եմք գրելոց, որպէս և զայլ ի վերոյ խոստացեալսն։ Ընդ
որս և առ պարոն Յարութիւնին զմխիթարութիւն վասն մահուան ծերու-
նի Մեսրոպին։ Աղդեալ էիր և զայլ ինչ որպիսութիւնս ի կողմանէ Տօնա-
ցուցի անցիցն և զՈւռումէլու նուիրակէն մերմէ և որ ի Մուխաթղաչւոյն
յառաջացեալ է անդ և նոքա զի՞նչ են գրեալ յայդր և դա զի՞նչ է արա-

րեալ։ Նաև զորպէսն վանցի Կարապետ պետին, զորս իմացաք և ի հի-
ւսիսակոյս առ Մարգարն, որ զբանս էիր գրեալ ըստ հարցմանց նորին
և // զօրինակն առ մեզ յղեալ, տեսաք և հաւանեցաք։ Բայց յանցելումն
779 Յովսէփ վարդապետն, ըստ մերս գրեցելոյ հետևեալ անդ և Յովաննէս
աղայիւն խօսեցեալ ընդ Գերմանիոյ մեծի դեսպանին և նմա իբրու
յանձն առնուլ տուեալ, թէ մինչ պատրիարգն ձեր առ վեհն իմ և առ իս
գրեսցէ զթուղթս՝ հող տարայց, ծանուցեալ էր մեզ զայնս, որովք և մեր
նկատեալ, թէ է ժամանակ ընդունելի։ Գրեցաք զծաղկեալ թուղթ մի առ
նոյն ինքն պետն և զթուղթ մի ես առ դեսպանն, պատկանաւոր շարա-
դրութեամբք աստուածային, և գովասանական, և աղերսական բանից, և
գրեթէ զբարեհամբաւութիւնն իւր և զմիւսոյ ուհւոյն պետի զբարե-
բարութիւնն ես առաջի արկեալ պարտական կացուցաք և կատարելոյ
զխնդիր մեր, եթէ չունիցին զսիրտս քարեղէնս։ Եւ ի վերջոն նշանակե-
ցաք ես, թէ մինչ կատարումն լիցի խնդրոյս մերոյ, յայնժամ ի զալն
եպիսկոպոսին մերոյ պսակելոց եմք զաստուածապսակեալդ շնորհա-
լոյս սրբովք նշանօք սիրայայտականօք՝ ի ծանուցումն շնորհա-
կալութեանս մերոյ և այլն։ Ընդ այնց և առ այնիւ Յովհաննէսն և առ
Մարգարն, և Փիլիպպոսն, և առ տօքտօր Յակոբն ես գրեանս գրեցաք՝
խօսիլ ընդ դեսպանին և հոգալ տալ զխնդիրն մեր։ Զորս ի միասին ի
փետրվարի ժԵ (15) յղեցաք առ Յովսէփ վարդապետն մեր՝ հասուցանել
ի տեղիսն։ Եւ ունիմ զյոյս մեծ, զի կատարումն լիցի աղերսանաց մե-
րոց, յորոյ կողմանէ մինչ զհամբաւ իմն լսիցեմք, գրելոց եմք քեզ, զի
գիտասցես։
Ապա ի փետրվարի Թ (9) գրեալ թղթուջդ ծանուցեալ էիր զԱստու-
ծուղու Պօղոս չելեպու բանագրիլն ի բազմահնարէդ, վասն անցիցն
տեղւոյն և զօրացուցող զխարդն և զայլ ինչ։ Բայց յայլում թղթոջ, որ
յիշեալ էիր զօրացոյց տպել, ըստ մեր Տօնացուցիս, դու լաւ կարես
իմանալ, որ մեք ի գործարանիս մերում աստ զերկուս մեծամեծ գրեան
ունիմք ի ձեռն և գործաւորաց որպէսն ես քեզ յայտնի է. եթէ զայսո-
սիկ առ ձեռն ունեցեալս կարասցուք ի յանկ հանել, բաւական է։ Եւ թէ
զայլ ինչ ես ի մէնջ արկցուք, թէև չիցէ ինչ, ամենայն ինչ պարտի խա-
փանիլ։ Մանաւանդ զի զյարմար գիր ես չունիմք ի պատրաստի։ Այլ
որպէս և դու մտածեալ ես, բարւոք է զօրինակ յղել ի հիւսիս առ Յով-
780 սէփ վարդապետն մեր, զի անդ տպեսցեն, մինչև մեք // զհանգամանսն
պատրաստեսցուք։ Եւ զԱտենւոյ Տօնացուցի առաջին հատորն հանդերձ
առաջաբանութեամբն և վերջաբանութեամբն և կիւրակէիւքն և ձայնա-
գիտիւն և յերկրորդ հատորէն ես զԲ (2) տետր տպեցաք յառաջ քան
զՋատիկն։ Եւ զմեծամեծ պատկերսն ես քանդակեալ տամք ի վերայ
պղնձոյ և ամենայն ձայնք հակառակորդաց ոչ թուին ականջաց մերոց,
սակայն թուղթն հատաւ, ի ձմռանս գրեցաք պարոն Հայրապետին և քեզ
և զօրինակն յղեցաք նմա, զի թէ անդ գտցէ, ինքն առցէ և յղեսցէ և թէ
ոչ՝ զօրինակն առ քեզ յղեսցէ, որ դու գտեալ առցես։
Յանցեալսն գրեալ էր նա, թէ աստ չգոյր, յղեցի զօրինակն ի Պօլիս
առ Նուիրակն, որ առեալ յղեսցէ։ Վասն որոյ յուսամք դիտելով, թէ
ցարդ առեալ և յղեալ իցես և ի մօտ աւուրքս առ մեզ հասցի։ Իսկ
զՂազար Փարբեցւոյ պատմագիրն մինչ կամեցաք սրբագրել, տեսաք թէ
սխալն շատ է, քան զուղիղն, և ոչ թէ գրասխալ և բառասխալ է, այլ
տողիւք պակաս ունի և փոփոխեալ, և սխալ զոլոյ հաւաստութիւնն ան-
տի քաջ գիտացաք, զի զՍահակայ տեսլեան տպեալն գոյր, Մինաս վար-

դապետն մեր համեմատեալ էր առ միմեանս և բնաւին անյարմար գը-
տեալ և զըշեայն սխալ, քան թէ ախպն։ Ուստի յանդգնութիւն մեծ հա-
մեալ և զըշեայն սխալ, քան թէ ախպն։
(see note)

իւրաքանչիւրքն զի ի (20—20) ղուռուշ փոխ առին և զթէմէսուկս նոռին, որ յայդր քեզ հասուսցեն։ Վասն որոյ ահա զայն թէմէսուկսն ի թղթոյս եդեալ յղեցաք առ քեզ, որ ցուցցես նոցա և զդրամն պահանջեալ առնուցուս։ Ուրեմն հնարեալ՝ առնուցուս և ծանուսցես մեզ, զի միամտիցուք։

Այլև ի Յովսեփայ երկրորդ տետրէն զմի հատն ընդ թղթոյս յղեցաք, զոր տեսցես և յղեսցես առ պարոն Խաչիկն ես, զի միամտեսցի։

Ողջ լեր ի Տէր յարամնալով ի շնորհս նորին և օգնականութիւն քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս եղիցի ի թիկունս քո հանապազ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուիս, ի մայիսի Զ (6) և ի սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 775—782

1139. 1785 թ. մայիս—*Թուղթ Կաուցու անապատի միաբանսն վասն առաջնորդութեան Գասպար վարդապետին։*

Ձեռ. № 4501, էջ 1056

1140. 1785 թ. մայիս—*Թուղթ առ Լմու անապատի միաբանսն վասն հրաժարեցման ծերունի Յակոբ վարդապետին ի հայրութենէն և նորոգ հայրութեան Մարկոս վարդապետին, որ էր երբեմն Կաուցու առաջնորդ։*

Ձեռ. № 4501, էջ 1057

1141. 1785 թ. 18 մայիսի—*Թուղթ ի յԱմասիա առ Քրիչչի օղլի մահտեսի Յարութիւնի աղայի եղբայր մահտեսի Ստեփաննն և որդի Գէորգն վասն մահուան մահտեսի Յարութիւն աղային մխիթարութիւն և վասն կտակի նորին, զոր սորա ըստ մասին տուեալ էին և զմիւսն խոստացեալ ի տալ, շնորհակալութիւն օրհնութեամբ և յորդորանօք։*

Ձեռ. № 4501, էջ 1059—1060

1142. 1785 թ. 22 մայիսի—*Թուղթ առաջին յերկիրն Հնդկաց ի Մադրաս քաղաքն առ սրբոյ Աթոռոյս գործակալ Յովսէփն Մարութեան, յորում յիշեցումն մահուան հոգելոյս հայրապետին և իւր յաջորդելոյն և պատճառն յամելոյ թղթագրութեան իւրոյ առ նոսա։ Շնորհակալութիւն վասն ընդ նուիրակ Գրիգոր վարդապետին յղեալ ընծայիցն յանուն լուսահոգւոյն և յորդորումն ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս և իւր*[209]*։*

Ձեռ. № 4501, էջ 1014—1015

1143. 1785 թ. [մայիս]—*Թուղթ ի Հնդիկս ի Սուրաթ քաղաքն առ Յովհաննէս աղայն ըստ վերնոյ թղթոյդ, և ի դմանէ իսկ հանեալ, բայց փոփոխմամբ և պակասեցուցմամբ ոմանց բանից և բառից ըստ պատշաճաւորութեանն։*

Ձեռ. № 4501, էջ 1016

Միաժամանակ համարյա նույն բովանդակությամբ նամակներ են ուղարկվել նաև Մկրտիչ աղային և իր մորը (Սուրաթ), Էմինիզյան Խաչիկ աղային (Սեյտապատ), Բոմբեյի նոր նվիրակ Զաքարիա աղային և իր կնոջը, մահտեսի Հովսեփ Ստեփանյանին, Սեթ աղայի որդի Ավետիքին, հանգուցյալ Ռափայելի փեսա Գրիգորին և նրա երկու դուստրերին՝ Անմարային և Աղիզին (Սուրաթ), Սարգիս Հակոբյանին, Հոհանի որդի Հովհաննեսին, Հովհաննես Տեր-Հակոբյանին, Սեթ Տեր-Ավետյանին, տեր Հովհաննես Տեր-Ներսեսյանին (Մադրաս), պոլսեցի Ստեփաննոս Միրզոյանին (Կալկաթա), տեր Հովհաննես Տեր-Հովհաննիսյանին (Չինրա), Հայրապետ Բարումյանին (Դաքա), Փանոս Հովհաննիսյանին և իր կին Մերջանին, Մուրատխան Մելքոնյանին և իր կին Թագուհուն (Սեյտապատ)։

(էջ 1017—1021, 1024—1032)։

790 1144. 1785 թ. 22 մայիսի—*Թուղթ ի մեծն Պոլիս առ Իսահակ վարդապետն, ի պատասխանի երից թղթոց նորին ի մարտի ԻԷ (27), և ի յապրիլի Գ (3) գրեցելոց վասն զանազան բանից։*

Յարմէ քրիստոսական սուրբ ողջունիւ, բաղում սիրով և կարօտիւ, հոգևոր օրհնութեամբ և սրբոյ միածնաիջի տեղւոյս մեծազօր շնորհիւն ծանիր, սիրելի որդիդ մեր ըստ հոգւոյ, հաւատարիմ և աշխատակիր զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Իսահակ աստուածաբան վարդապետ։ Զի յամսեանս մայիսի Զ (6) զթուղթ գրեցաք առ քեզ երկարապէս, բազում որպիսութեամբք, և յղեցաք առ քեզ՝ հանդերձ Բ (2) ղապզիւք, որոց մին էր վասն Եսայուն տուեալ ԵՌ (5000) ղուռուշիդ և առեալ գեզորէիցդ գնոցն և ծախուցն, և միւսն էր սակս Սարգսին տուեալ ԲՌ (2000) ղուռուշիդ, որք Աստուծով հասանելոց են առ քեզ։ Իսկ ապա յետ յղելոյ մեր զայնս, մինչդեռ օր մի էր անցեալ, ի սոյն ամսոյս Է (7) հասին ի մարտի ԻԷ (27) գրեալ Ա (1) թուղթդ և ի յապրիլի Գ (3) գրեալ Բ (2) համառօտ թուղթքդ։ Զորս ընթերցեալ իմացաք զամենայն գրեալսդ ի նոսին։

Արդ, գրեալ էիր զի դեկ. ԻԱ (21) և ի յունվարի ԺԸ (18) գրեալ
թղթոց մերոց առ քեզ հասանիլն և զոր ինչ առ այլս թուղթս եմք գրեալ
ընդ ի դեկ. ԻԱ (21) թղթոյն յղելդ և հասուցանելդ ի տեարսն, զոր իմա-
ցեալ միամտեցաք։ Ի Զմիւռնոյ, որ զպատասխանիս թղթոց մերոց ա-
ռեալ զմերն յղեալ էիր, ընկալաք և վասն փօլիցային, որ գրեալ էիր,
791 թէ երկիցս անգամ հասուցին, իմացաք։ Եւ զոր գրեալ // են քեզ, թէ
ԵՌ (5000)-ի փօլիցայագիր ես յղեսցուք մեք, զայն մեզ ես էին գրեալ։
Բայց մեզ այժմոյս ճաթք են պիտոյ, զորոց զփահին առնելոց եմք և
նկատմամբ տեսցուք, թէ մինչև ցլրումն ԵՌ (5000)-ին զինչ մնացէ,
զայնմ ես փօլիցագիրն գրեալ յղելոց եմք ի ձեռս քո, զի իբրև զա-
ռաջինն զդրամն առ քեզ հասուսցեն և զփօլիցագիրն տարցեն։

Գալուստ վարդապետին մերոյ յայդր գալն և զբեռանցն ընդ մաքսն յաջողարար անցանելն ձեռամբ Յովհաննէս և Գրիգոր օրհնեալ ամիրայիցն և զայլ որպէսն ես, հանդերձ յայսկոյս զիմեալովն գրեալ էիր։ Աստուած յաջողեսցէ խաղաղութեամբ ժամանել աստ։ Իսկ վասն յառաջ խնդրեալ թղթոցդ, որ ստիպեալ էիր յղել և նորապէս ես զթուղթս էիր խնդրեալ, առ այն իմա, զի դու լաւ գիտես, որ մեք, եթէ ձեռնհաս լինիմք, ի հարկէ, ոչ այսքան յամեցուցանեմք, այլ յոլովութիւն բանից և զրութեանց և պակասութիւն հոգացողի, այսպէս յետ ցուցանէ։ Սակայն յանցեալսն ձեռնարկելով ի թուղթսն քո, զժ (10) հատսն գրեցուցեալ եմք և այսուհետև ես ի ձեռաց չթողլով, հանելոց եմք մինչ խպառ և յղելոց եմք, եթէ Տէր յաջողեսցէ։

Ի կողմանէ Յովսեփայն ես, զոր գրեալ էիր, ահա տպեմք զայն, որպէս և ի վեցն ամսոյս ծանուցաք քեզ՝ յղելով և զմին յերկրորդ տետրացն, զոր տեսցես և առ նա ես յղեսցես, զի միամտիցի։

Ի հոկտեմբերի ԺԵ (15) յղեալ ԲՌԵՃ (2500) ղուռուշի ղապզն մեր ըստ գրեցելոյ մերում, որ դարձուցեալ էիր պատոմամբ, յաղագս այնր, զի նոյնքան դրամքն յայլ ղապզոջ յիշեցեալ էին, ընկալաք։ Լեր միամիտ։ Նաև որ զղապզս էիր խնդրեալ վասն նոր տուեալ փօլիցայիցդ, որոց զԲՌ (2000) ղուռուշն տուեալ էիր Մասեհեան պարոն Եսայուն, զի ի Կարին ղափանցի Պօղոսն տացէ ի Կարին պարոն Հայրապետին և զԲՌԵՃ (2500) տուեալ էիր Մկրտչեան Պօղոսին, զի մահտեսի Անանիկն

տացէ և ԴՌ (4000) ևս դարձեալ տուեալ էիր Դորոյենց Յարութիւնին։ Յայնց կողմանէ պարոնն ևս էր ծանուցեալ մեզ։ Ուստի, ահա զերկուս զապզս գրեալ յղեցաք առ պարոն Հայրապետն՝ հաստացանել քեզ։ Այլ որ գրես, թէ զԱՌ և զԱՃ (1100) ղուռուշ ևս եմ հատուցել պարոն Հայրապետին, զայնմանէ նա ոչինչ էր գրեալ մեզ, վասն որոյ մեք ևս այժմ չյիշեցաք զայն։

Զմահտեսի Կարապետի վեղբօր վերայ արարեալ ծախսն մեր լրացուցանելն քեզ հաստացանելով իմացաք, և զվասն եղբօրն յառաջագոյն յղեալ քանի մի իրսն, որ տուեալ է սրբոյ Աթոռոյս, շնորհակալ եմք։
792 Սեանն աղագաւ ևս միամտեցո, որ // իրն եմք յիշատակ առնելոց և զթերուըստ կարգին բան պահանջելոց յինքենէ, զոր պարտի տալ և ոչ զթերութիւն ցուցանել ի բարեպաշտական գործն իւր։ Սակայն զօրհնութեան գիր ի կատարմանն պարտիմք գրել, բայց կարծեմք, թէ յայսմ ամի ևս ոչ կարեմք ի յիշատակագրութեան տեղին հասանիլ։ Զի հայրս զատատաղսն զերծեալ Յովնաթանն, ապա ի յԱստուածածնի սեղանի ճակատն ի կողմունս լուսամուտին զմեծ իմն Աւետեաց պատկերս նկարեաց և այժմ ի վրանաձև տեղին այն յայսկոյս և յայնկոյս, յորս գոյին ԵԵ (5—5) խորանք ի բոյն յօրինեալք և այժմ մեք ԶԶ (6—6) շինել տուաք, զերկոտասան մարգարէից պատկերս նկարէ, զի զմիւս երկոտասանն ևս ի յետին զասուն նկարեսցէ՝ ի լրումն քսան և չորիցն։ Յետ այսց ևս ի յետին զասուն նկարեսցէ՝ ի լրումն քսան և չորիցն։ Յետ այսց ևս, և մեծ կաթուղիկէին, և այլ տեղեացն զոն։ Ուրեմն մի շտապիցիք, այլ վերոյ գրեալ յուսատրութեամբս մահտեսի Կարապետ սիրելին մեր միամտիցի, մինչև ի կատարման սեանն զյիշատակն ևս գրեսցուք ի վերայ։ Միայն զատալին ի պատշաճն յարդարեսցէ։

Աւենի ժամպրքի թղթոյն աղագաւ, որ գրեալ էիր, թէ առնլոց եմ և ծովով յղելոց, յոյժ բարւոք լինի, թէ օր մի յառաջ յղեալ իցես, քանզի այնքան յամեցաւ, որ ի լոյն մեք ևս տաղակեցաք։ Աստուած տայ թուղթն հասանի և ատարեալ զերծուցուք ի հողոց ս[ո]րին։

ԶՄասեհեան պարոն Եսայու թուղթն, զոր յղեալ էիր, ընկալաք և վասն շինեցուցեալ խաչին, որ գրեալ էիր, ինքն ևս էր գրեալ։ Ահա այն խաչն հասեալ էր ի Կարին, և պարոն Հայրապետն գրեալ էր, թէ յղելոց եմ։ Աստուծով յայս աւուրքս գալոց է, մինչ ժամանիցի, գրելոց եմք առ պարոն Եսայի սիրելին մեր և առ Ալէքսանն զթուղթս օրհնութեան և միամտութեան։

Փիլիպպոս վարդապետի թուղթն ևս էհաս։ Ընթերցաք և իմացաք զորպիսութիւնս նորին։ Եւ զի հաստցեալ է նա քեզ ձեռամբ յաղագս սիրելւոյն մերոյ՝ Տերամբ զօրացեալ պարոն Գէորգին զԳՌՇՃԼԹ (3839) ղուռուշ, որոյ աղագաւ և դու առ նա զպապզ գրել էիր խնդրեալ, ահա գրեալ յղեցաք քեզ վասն այնքան դրամոցն զպապզ, զոր տացես պարոն Գէորգին՝ հաստացանել Փիլիպպոս վարդապետին՝ ի միամտութիւն նմին։

Քարհատ Գասպարի եղբայր Ղազարի Կ (60) ղուռուշի թէմէսուկն ևս, զոր յղեալ ես ընդ Գալուստ վարդապետին, մինչ հասանիցի առ մեզ, զայն Կ (60) ղուռուշն ևս ի միում զապզոջ յիշելոց եմք։ Ի կողմանէ առաքելոյն ի Բալու զգրեալսդ ևս իմացայ։ Բալուեցիք տակաւին մեզ զքան ինչ չունին գրեալ, բայց մեք ուխտաւորաց զալստեանն նայիմք, զի ի նոսա և բալուեցիք գտանիցին, որք կամ զթուղթ իցեն բերեալ մեզ յայնմ կողմանէ, կամ թէ ոոոպիսութիւնսն ծանուցեն։ Յայնժամ տեսյուր, թէ որպէս, է, եթէ հարկաւորիցի, գրեսցուք անդ զթուղթ ըստ պատշաճին։

793 Դարձեալ զայս ծանիր։ Զի որչափ ժամանակ է, որ ձեռնարկեալ եմք ի գրել թուղթս ի Հնդիկս, և ոչ յաջողիր, զի որքան հարկն էր զթուղթս գրեաք անդ. վասն որոյ այսպէս լաւ համարեցաք, զի յառաջ քաննօք թղթովք ծանօթասցուք զոնեայ և ապա ընդ նուիրակին առ ամենայն ևս, որոց հարկաւոր է, տարեսցուք զգրեանս։ Ուստի, ահա, զկոնդակ մի հասարակապէս և զկոնդակ մի ևս յատկապէս ի վերայ Սուրաթու (ըստ որում նորա զթուղթս են գրեալ մեզ շնորհաւորութեան) և զԸ (8) մեծամեծ թուղթս ևս առ գլխաւոր իշխանսն և գործակալս մեր գրեցաք։ Այսինքն՝ առ Շահամիրն, առ Յովսէփ Մարութն, առ Բ (2) խաչիկսն, առ Պետրոսեանն Յարութիւն և առ Յովհաննէս և Մկրտիչ և Յօհանջան աղայսն։ Ի յորս ամենայն նախ արարաք զծանուցումն ընդնախկի[ն] որպիսութեանց մերոց և ապա զզանազան պատճառս յենտաձգելոյ թղթագրութեան մերոյ առ ինքեանս։ Եւ զկնի զգալուստ նուիրակին [գրեցաք], հանդերձ գիպուածովքն, և շնորհակալութիւն վասն օրհնութիւն, և յորդորումն ի սէր և ի հարատեւութիւն։ Եւ ի վերջոյ, թէ թուղթս Բ (2) գրեցաւ, զմինս այժմ յղեցաք և զմիւսն ևս յետ աւուրց եմք յղելոց ընդ նոր նուիրակին, զոր պատրաստեալ հանելոց եմք։ Եւ զայլ ինչ հարկաւորս յայնմ օրինակոջ թղթոյս գրեսցուք։

Զայսօրիկ այսպէս գրեցուցեալ մինչ պարտ էաք ի Բասրայ յղել, վասն այն գրեցաք զթուղթ մի ևս անդ առ Ստեփաննոսն և Յովհաննէսն, վերոյիշելով զնախագրեալ թղթոյն մերոյ զմիասն բոլորապէս, և կրկին հարկելով՝ հոգ տանիլ և պատուիրելով վասն ներկայական զըրեանցս առ ի փութով և հաւատարմաւ յղել ի Հնդիկս, զի հասցին առ տեարսն իւրեանց։ Եւ զի գիտեմ, զի այսօրիկ թուղթք ի ձեռն Ասլան աղային պարտին յուղարկիլ, ահա ըստ առաջնոյ խնդրոյդ զթուղթ մի ևս առ նա գրեցաք՝ շնորհակալելով վասն փոլիցայատրութեանն և վասն քոյ և զյեղբօրէն նորա՝ ի պարոն Ալէքսանէն եկեալ թէմէսուկի օրինակն ևս, փոքր մի պատռեալ ի միոյ կողմանէ, յղեցաք առ ինքն, եղեալ ի թղթոջն, յորում և շնորհաւորեցաք զհարսանիս եղբօր որդւոյն, որպէս գրեալ էիր յառաջ։

Զթուղթ մի շնորհակալութեան ևս առ պարոն Ալէքսանն գրեցաք՝ վասն նոյն փոլիցային և վասն նուիրակին շահեցմանցն, որոյ և զայլ
793 միասն կարես Ասլան ամիրայի թղթոյն իմանալ, թէ հարկաւորիցի։ Թուղթ մի շնորհակալութեան ևս ի Բաղդատ առ Մարգար աղայն գըրեցաք՝ միամտեցուցանելով վասն ԳՌ (3000)-ին, թէ հասեալ է ի Պօլիս առ նուիրակն մեր և նա հաստացանէ ի սուրբ Աթոռս և առ մեզ, որոյ թէմէսուկի զերկրորդ օրինակն ևս յիւրում թղթոջն եդաք, հասանիլ նմա։ Արդ, Հնդկաց թուղթքն և Բասրայունն ի միում պահարանոջ են, իսկ այլքն յատուկ յատուկ պահարանովք են։ Ուրեմն զԱսլան աղայի թուղթն տացես նմա և զմիւսն ևս ձեռամբ նորին յուղարկեսջիք ի Բաղդատ և ի Բասրայ։ Իսկ և մէկ հօխայ կարմիր լաւագոյն զմուռ առեալ յղեսցես ի պէտս թղթոց, որ յոյժ հարկաւոր է։ Այլև զի փուսուլայն գրեցեալսն իմացաք, զորմէ պարոն Եսային ևս ի թուղթն իւր յիշեալ էր։ Բարւոք է, թէ եկէ ի գլուխ։

Ողջ լեր ի Տէր և ի զօրութիւն շնորհաց նորին յանձնեալ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուաջս, ի մայիսի ԻԲ (22), և ի սուրբ էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 790—794

1145. 1785 թ. [մայիս]—Թուղթ առաջին ի Հնդիկս ի Կալկաթայ քաղաքն առ հանգուցեալ Պետրոս Աղայեան Յարութիւն աղայն և մայրն նորա՝ Դաստակիւլ խաթունն, յիշելով զվախճան հոգելոյս հայրապետին, և զիւր յաջորդելն, և զմինչև ցայժմ թուղթ ոչ գրելոյ պատճառսն, և շնորհակալութիւն սակս ընդ նուիրակ Գրիգոր վարդապետին յղեալ յատուկ տրոցն և իրացն ընծայելոց[210], օրհնութիւն և յորդորումն ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս և ինքեան։ Արտահանեցեալ ի Շահամիր աղայի թղթոյն, որ շարադրեալ գոյ ի վերայ ի 737 և յայլ քանի մի հետևեալ երեսսն (սկիզբն իսկ անտի է գրելի)։

Ձեռ. № 2803, էջ 783—785

782 Կցորդ ներքին թղթոյդ Յարութիւն աղային։

Եւ արդ, որովհետև յոլով ժամանակ էանց ի վերայ դարձմանն յաջողուստ Գրիգոր աստուածիմաստ վարդապետին, վասն որոյ նարդենիս ըստ պահանջման հարկին, ահա զսիրելի և զհոգևոր որդիդ մեր և ըղհարազատ զաւակդ սրբոյ Աթոռոյս, զտէր... շնորհապերճ վարդապետդ և զարհիեպիսկոպոսդ նորապէս նուիրակ արարեալ օրհնեցելոյ վիճակիդ սրբարար մեռոնաւ և օրհնամատոյց կոնդակաւ առաքեցաք առ հոգևոր որդիսդ մեր, որ եկեսցէ յայդր և զաստուածագործ սուրբ մեռոնն բաշխեալ ի ձեզ, ընկալցի ի յօրհնեցելոցդ զհոգեկան պտուղսն ձեր վասն սրբոյ Աթոռոյս լուսատու ծնողիս ձերոյ։ Որոյ աղագաւ ահա գրեմ սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ, զի ի գալն դորա ի բարեձոխ քաղաքդ ձեր, սիրով և պատուով ընկալցիս և մեծարեալ շահեսցես, և գործոյն ես ձեռնտու և արդիւնաւորիչ լիցիս։ Զի զոր ինչ մարդասիրութիւն և բարեշնորհութիւն ցուցցես դմա, ամենայնն սրբոյ Աթոռոյս և մեզ է համարեցեալ և շնորհակալութեամբ օրհնելոց եմք զհոգևոր որդիդ մեր սիրելի։

Այլև հոգելոյս հայրապետն մեր զգիրք մի էր շարադրեալ Պարտավճար անուամբ և տպեցուցանէր աստ, զոր չև ես հանեալ յաւարտ տպագրութեան, ինքն փոխեցաւ առ Տէր։ Իսկ զկնի վախճանման նորին, զայն գիրքն մեք աւարտեցաք։ Այժմ ընդ հարազատ նուիրակիդ մերոյ յանձնանէ ահա զմին առաքեցաք ի նշան սիրոյ և օրհնութեան ի վայելս բարետոհմիկ սիրելւոյդ ազնուոյ, զոր ընկալեալ բարեաւ վայելեսցես՝ անմոռանալի պահելով զսուրբ Աթոռ մայրս քո և զհոգևոր հայրութիւն մեր։ Ողջ լեր ի Տէր, յարամնալով ի շնորհս նորին։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուոջս ի յօգոստոսի ԻԵ (25) և ի շնորհածաւալ Աթոռս սուրբ էջմիածին։

Դարձեալ զայս ես ծանիր սիրելի և հոգևոր որդիդ մեր։ Զի մինչ զթուղթս մեր գրեալ և վերջացուցեալ և զնուիրակդ մեր հանդերձել էաք յուղևորել, յանկարծակի վրդովեցաւ երկիրս և սուրբ Աթոռս, քանզի բազմութիւնք լէզկեաց անօրինաց և արենարբուաց յառաջ շարժեալք ի վերայ Վրացստանու, զանչափ աւերս գործեցին և զանթիւ արիւնս քրիստոնէից հեղին և մերձեցան ի սահմանս երկրիս մերոյ, և այս ձայն ես ի վեր ել թէ գալոց են զերկիրս մեր և զսուրբ Աթոռս կողոպտել։ Ուստի երկրականքս մեր փախեան ի բերդն Երևանու։ Եւ մեք ևս, ըստ հարկեցման Վրաց արքային և երկրիս իշխողին, աղխիւք և ծանրութեամբ գնացաք յԵրևան՝ յանապատն մեր, և ի յերկս ամիսս արտաքոյ սրբոյ Աթոռոյս

երկիւղալից և փարանեալ մնալով, ամենայն բանք և հոգալիք մեր խափանեցան (որոյ զերկարն ի համառօտ կոնդակէն իմանալոց էք)[211], վասն որոյ և նուիրակդ մեր և թուղթքս ես յետացան։

Իսկ այժմ, ողորմութեամբն Աստուծոյ, վերադարձեալ ի սուրբ Աթոռն, հազիւ կարացաք զնուիրակդ մեր և զթուղթքս յղել։ Այժմ այսպէս կամք և յապագայն ոչ գիտեմք թէ որպէ՞ս է լինելոց։ Աստուծոյ ողորմութեանն եմք ապաստան։ Բայց յետ Պարտավճար գրքոյն, զԱտենի ժամագիրքն տպէաք, որ ի յերկարիլ միջոցիս, այն ևս ել ի տպագրութենէ։ Յոմէ ահա զմին յղեցաք վասն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, որոյ ի գործածելն յայդր յիշեցէք զսուրբ Աթոռ մայրս ձեր և զհոգևոր հայրութիւնս մեր։

Զայսքան ինչ ևս զնոր որպիսութեանց և զանցիցս մերոց գիտեցեալ, կրկին ողջ լեր։

Գրութիւն կցորդ բանիցս եղև ի ՌՄԼԵ (1786) թուոջս և ի հրաշանուն Աթոռս սուրբ էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 782

1146. 1785 թ. մայիս—Թուղթ ի Բաղդադ առ պարոն Ալէքսանն, ի պատասխանի թղթոյն նորա ընդ Գրիգոր վարդապետին ի ՌՄԼԳ (1784) թուոջն և յօգոս[տոսի] ԻԵ (25) գրեցելոյ։

Ձեռ. № 2803, էջ 785—787

1147. 1785 թ. մայիս—Թուղթ ի մեծն Պօլիս առ Ասլան ամիրայն, միամտութիւն վասն փոլիցային ի կողմանէ Ալէքսան եղբօրն հաստատելոյ Իսահակ վարդապետին մերոյ Պօլսոյ նուիրակին, և այլևս բանք։

Ձեռ. № 2803, էջ 788—790

1148. 1785 թ. մայիս—Կոնդակ առաջին ի վերայ Սուրաթու ժողովրդեանն, որ ի Հնդիկս, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն իւրեանց, զոր ինքեանք իմանալով զվախճան հոգելոյս հայրապետին և զսորին յաջորդելն, յառաջագոյն գրեալ էին։ Յորում նախ ծանուցումն վասն որպիսութեանց հանգուցելոյ վախճանմանն և իւր հայրապետանալոյն և ապա պատճառն իրոյ անդ թղթագրութեանն յամելոյն, սէր և շնորհակալութիւն և պատուէրք հարկաւորք։

Ձեռ. № 4501, էջ 915—918

1149. 1785 թ. մայիս—Կոնդակ ի վերայ Հնդկաց երկրին առհասարակ, ըստ վերոյ գրեալ կոնդակին, որ ի վերայ Սուրաթու, բաց ի յոմանց բանիցն, որք անդ միայն հարկաւորեցան գրել։

Ձեռ. № 4501, էջ 918—919

1150. 1785 թ. 22 մայիսի—Թուղթ ի Բաղդատ առ Մարգար աղայն, ի պատասխանի թղթոյն նորա ի ՌՄԼԳ (1784) թուոջն և յօգոստոսի Լ (30) գրեցելոյ վասն դրամոյն, զոր փոլիցայ էր արարեալ ի Պօլիս՝ հասանիլ սրբոյ Աթոռոյս, զի աստ վասն սրբալոյս մեռոնին սան շինեսցի ի յիշատակ իւր և իւրոցն։

Ձեռ. № 4501, էջ 920

1151. 1785 թ. 22 մայիսի—Թուղթ ի Բասրայ առ Ստեփաննոս աղայն և պարոն Յովհաննէսն, յորում վերայիշումն բանիցն յառաջ քան զայս առ նոսա գրեալ թղթոցն (որ ի դեկտեմբերի ԻԳ (23), և պատուէր, զի զառ ի Հնդկաստան գրեալ թուղթսն, զոր առաքեցաք ի ձեռս իւրեանց, շուտով յուղարկեսցեն և ծանուսցեն մեզ։

Ձեռ. № 4501, էջ 921—922

737 1152. 1785 թ. 22 մայիսի—Թուղթ առաջին ի Հնդիկս՝ ի Մատրասն առ Շահամիր աղայն, ի պատասխանի թղթոց նորին ընդ ժա-

մանակս ժամանակս գրեցելոց առ Հանդուցեալ Հայրապետն և առ նո-
րաց սրբազան վեհապետս մեր։ Օրհնութիւն և շնորհակալութիւն սակս
յառաջ և այժմ ընդ նուիրակ Գրիգոր վարդապետին յղեալ ընծայիցն
(յիշելով և զմինչև ցայժմ թուղթ չգրելոյ պատճառն), և յորդորումն ի
սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս և իւր։ Եւ վասն նոր նուիրա-
կին ևս յանձնարարութիւն։

Յորմէ ժամանեցի թուղթ...

Եւ ընդ օրհնառաք սիրոյ և ողջունատրութեան շնորհաձիր նամակիս,
ծանուցումն լիցի սաուգագունի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս և օգտասէր
որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի որովհետև սահման անփոփոխելի
եդեալ է յամենացունց Տեառնէն ի վերայ բնութեանս հողածնի վճարիլ
մահուամբ ի կենաց աստի, ըստ այնմ՝ հող էիր և ի հող դարձցիս։
738 Վասն որոյ և սրբազան հովուապետն մեր // և հայրն հասարակաց՝ տէր
Սիմէօն սրբազան կաթուղիկոսն, ըստ նոյնոյ արարչագիր անլուծանելի
վճռոյն, վճարեաց զկեանս իւր առօրեայս և փոխեցաւ առ բաղձալին
իւր Քրիստոս՝ զարմանալի մահուամբ, ի վայելումն անդրաւ կենացն,
որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ և հանգուսցէ ընդ յարքայութեանն իւ-
րում ընդ սուրբ հայրապետսն և զգլուխ սիրելւոյդ ողջ պահեսցէ և
հոգւովն սրբով մխիթարեսցէ զքեզ և հաստատեսցէ ամենայն բարյա-
նօքք։ Այլ ամենազօր և շնորհաբաշխ հոգին սուրբ Աստուած՝ տըն-
օրինօղն ամենից հոգևոր իրակութեանց, որ միշտ յարուցանէ ժառանգս
Աթոռոց ըստ ամենաբաւական ողորմութեան և շնորհաց իւրոց, ոչ հա-
յեցեալ ի յանբաւականութիւնս իմ, կոչեաց զիս ի յայս պաշտօն հոգևոր
հովուապետութեան օրհնեցելոյ ազգիս Հայոց և կառավարութեան մեծի
Աթոռոյս իւրոյ սրբոյ, զորս ի վաղուց իսկ լուեալ և իմացեալ էք։ Վասն
որոյ ժամանակին ևս անցեալ գոլով աստէն, այլ ոչ պարագայիւք և
հարստապէս գրեմ գայսցանէ. ի մեծ կոնդակուջն փոքր մի երկարապէս
եմք գրեալ, եթէ կամիցիք, անտի իմանալոց էք զամենայն։

Իսկ ի կոչիլս մեր ի յայս աստիճան, որովհետև երկիրս մեր կայր
ի մեծի խռովութեան և յամանց օտարացեալ և խորթ որդւոց սրբոյ
Աթոռոյս խոչընդակութիւն եղեանց առ մեզ, զորս գիտեմ զի լուեալ էք,
որովք և մեք կայաք անհանգիստ ի յերկար միջոցս, պաշարեցեալք
զանազան հզօր և վարանեալ ամենակերպ ցաւովք, վասն որոյ ոչ
լինէաք ձեռնհաս ի գրել գթուղթս, ուր և հարկն էր գրել մեզ։ Ուստի և
յայդ կողմունսդ ևս չկարացաք գրել գթուղթս նախընծայ օրհնութեան
և որպիսութեանց ծանուցման։ Եւ զկնի անցանելոյ մեծաց վրդովմանցն
այնոցիկ ի կողմանցդ յայդցանէ, հնչեցին համբաւք պատերազմաց
սաստիկ և խառնակութեան, և զորպիսութեանց օրհնեցելոյ ազգիդ մե-
րոյ չունեցաք զտեղեկութիւն։ Եւ ի վերայ այսց լուաք ևս, թէ նուիրակն
սրբոյ Աթոռոյս՝ Գրիգոր աստուածիմաստ վարդապետն, զգործն աւար-
տեալ, դիմեալ է յայսկոյս։ Խորհեցաք թէ ի սակաւ միջոցի հասանելոց
է առ մեզ և ծանուցանելոց է զամենայն որպէսն ձեր։ Վասն որոյ
և յայնժամ ևս արգելումն գտաք թղթագրութեան մերոյ յայդր իբր,
զի ի գալ Գրիգոր վարդապետին գրիցեմք։ Բայց նա՝ խղճալին ևս ի ծո-
739 վուն // թէ որպիսի՞ ալէկոծութեան էր պատահեալ առ տարաբախտու-
թեան մերոյ և զվէճ իւրն կորուսեալ և ի Սուրաթ ընդ երկար կացեալ
հիւանդութեամբ, և ի գալն ի Բասրայ անդէն ևս թէ զորքա՞ն ակարու-
թիւնս էր կրեալ, և յետ ելանելոյն անդուստ ի Բաղդատու ճանապարհին

ևս, թէ որպէ՞ս էր կողոպտեցեալ ի յանօրէն աւազակաց, և վիրաւորեալ
իսկ, և այնու վիրօք և վշտիւք անդր ևս ի հարուստ միջոցի մնացեալ,
զայս ամենայն գիտեմ, զի մինչև ցայժմ լուեալ և իմացեալ էք։ Վասն
որոյ ի նորանց ամի հոկտեմբերի ԻԳ (23) հազիւ թէ եհաս ի սուրբ
Աթոռս և առ մեզ Գրիգոր խոհեմազարդ վարդապետն[212]։

Բայց և մեր յայսքան ժամանակի գրեթէ ըստ սրբոյն Պօղոսի և ոչ
միով իւիք զհանգիստ գտաք, այլ յամենայնի նեղեալք, քանզի արտա-
միով իւիք զհանգիստ գտաք, այլ յամենայնի նեղեալք, քանզի արտա-
րոյ մարտք և ի ներքոյ արհաւիրք, զի յորէ մտանելոյս մերոյ ընդ այ-
սու ծանրագունիւ լծով մինչև ցարդ, բազմավշտակիր երկիրս մեր զեռևս
ոչ եգիտ զկատարեալ խաղաղութիւն, այլ օր ըստ օրէ վրդովումն և
խառնակութիւնն յաւելանի յանտիրութենէ և սուրբ Աթոռս իբրև զշուշան
ի մէջ փշոց գոլով, խոցոտի և նեղի ըստ մարմնականին, թէպէտ և կայ
ի հոգևոր պայծառութեանն իւրում շնորհիւն Աստուծոյ։

Ի ՌՄԼԲ (1783) թուին, մինչ անդւոյս իշխօղն կենագրաւեցաւ, զմեծ
որդին նստեցուցին ի տեղի նորին, իսկ յանցեալ ամին սրախողխող
արարեալ զնա միով եղբարբն, զմիւս եղբայրն կացուցին իշխօղ։ Եւ
յայսմանէ եղելութենէ զարձեալ կրկին աւերեցաւ երկիրս ի վերայ ա-
ռաջնոց աւերմանցն և սրբոյ Տանս ևս անդրելի դիպուածք և վնասք պա-
տահեցան, և մեզ ևս բազմազոյն նեղսակրութիւն և անձնամաշ ան-
հանգստութիւն։ Նաև հեռաւոր և մերձաւոր տեղեաց հարկաւորագոյն
հոգալիքն սրբոյ Աթոռոյս այնքան կուտին ի վերայ մեր, մինչև իբրու
ոչ թողուն ճանաչել զմեզ և տարակուսիմք, թէ արդեօք զո՞ր հոգալին
հոգասցուք և զո՞ր ցաւն լացցուք։

Արդ, այսպէս ամենատեսակ հզօր և զբաղմամբք պաշարեալ և
բազում նեղութեամբ նեղեալ և անհանգիստ լեալ մեր, և նուիրակին
մերոյ գալստեանն ևս սպասելով, ոչ կարացաք ցայժմ գրել առ սիրելի
և ցանկալի ժողովուրդդ մեր գթուղթս։ Բայց և թէպէտ այսպէս նա-
հանջեալ գտաք ի թղթագրութենէ ի պատճառս դառն բերմանց յետին
ժամանակիս, սակայն յաւուրց հոգեւոյս հայրապետին մերոյ, գիտելով
զճշմարիտ սէր և զհարազատութիւն և զառատ արդիւնաւորութիւն ձեր,
զորս ունիք առ սուրբ Աթոռ մայրս ձեր, ամենևին ոչ եմք մոռացեալ
զձեզ, և ոչ բնաւ սառուցեալ ի ջերմութենէ սիրոյ ձերոյ, այլ միշտ
զբաղցր յիշատակս ձեր ի բերանի ունելով, օրհնաբանեմք զձեզ առաւել
շնորհակալութեամբք։

Որք և այժմ ի ժամանել վշտակիր նուիրակին ձերոյ և սիրելի որդ-
ւոյն մերոյ՝ Գրիգոր աստուածիմաստ վարդապետին ի սուրբ Աթոռս և
առ մեզ, մինչ հարցեալ տեղեկացաք ի ամանէ ողջութեանց և զոր-
պիսութեանց ձերոց, գրեցաք առ օրհնեալ ժողովուրդդ գթուղթս հա-
սարակապէս և յատկապէս։ Ընդ որս և զայս օրհնաձիր և սիրանիշ
թուղթ ևս առ յատկեդ և ազնուագոյն սիրելիդ մեր գրեցաք, որով և զայս
գիտասջիր։

Զի Գ (3) թուղթք ազնուոյդ, որոց երկուքն առ հոգելոյս հայրա-
պետն և մին ի վերայ մեր գրեցեալ, հասին առ մեզ։ Առաջինն էր ի
1779 թուոջն Փրկչին գրեցեալ և հանդերձ Բ (2) նորատիպ Աշխարհա-
740 ցուցիւ յանձնեալ ումեմն Ասլանի // և ի նմանէ ևս յանձնեցեալ հարիւ-
րապետ Յովսէփին, որոյ ձեռամբ մեզ հասեալ եղև[213]։ Երկրորդն էր ի
1780 թուոջն գրեցեալ և Ա (1) կապոց ամանաթով հանդերձ տուեալ
նոյն յիշեալ Յովսէփին, զոր ընդ առաջին թղթոյդ և Աշխարհացուցացդ
ի միասին իսկ հասոյց առ մեզ։ Եւ ի մէջ կապոցին, որ ըստ կնքեալ

սիաՀւոյդ գոյին Բ (2) սպիտակ կտաւ, Բ (2) գունաւոր կտաւ, և Բ (2)
Թօփ մաՀրամայք, սիրով բազմաւ և առատ շնորՀակալութեամբ ընկա-
լաք ի վայելս, և օրՀնեմք զառատաձիր սիրելիդ բերանալիր օրՀնութեամբ
և զպարմանալի Աշխարհացոյցն ևս կախեալ զորմոյ Հանդէպ աչաց.
միշտ վայելեմք՝ յիշատակելով զսիրելիդ բարեօք յիշեցմամբք։
Իսկ երրորդ Թուղթդ, գրեցեալ ի 1782 Թուոջն ընդ նուիրակ Գրիգոր
Համեստափայլ վարդապետին, էՀաս ի ձեռս մեր, զոր առ մեզ խկ էիր
գրեալ։ Զոր և մեք առ ընկալեալ սիրով ընթերցաք և իմացաք զամե-
նայն գրեալսդ։ Որ արդարև բստ օրինի ճշմարիտ և Հաւատարիմ սիրե-
լեաց ուրախացեալ և գրեալ էիր զբանս շնորՀաւորականս վասն կոչ-
մանս մերոյ ի սոյն ատիճան պատուոյ Հայրապետութեան և ի կող-
մանէ Հոգելոյս Հայրապետին մերոյ ևս մխիթարեալ էիր սփոփական և
սրտագիւրական բանիւք։
Ո՜վ մեծի սիրոյ և անխարդախ Հարազատութեան ազնուոյդ, որ
փոխանակ մեր նախապէս գրելոյն, մեք պէսպէս տաժանմամբք պա-
շարեալ, դու՝ օրՀնեալդ յառաջեցեր ի ձեռն սիրանիշ Թղթոյ սրտագիր
առնել զմեզ։ Ուստի և մեք դարձեալ շնորՀակալիմք զճշմարիտ սիրել-
ւոյդ կարի յոյժ գոՀունակութեամբ։ Որ և զփոխարէնն այդպիսեաց բա-
րեշնորՀութեանց քոց, առ ընկալցիս յԱստուծոյ՝ յաղբերէն բարութեան,
զմարդասիրութիւնս և զբիւրաղան վարձս ամենայն քոյայնովքդ։
Իսկ և Գրիգոր շնորՀունակ վարդապետն, թէպէտ բազմաց փորձու-
թեանց էր պատաՀեալ և ի յոլով կայից ընդ ինքեան եղելոց մերկա-
ցեալ, թէ ի ծովուն և թէ արտաքոյ ի ճանապարՀին, սակայն զնազո
արդիւնսն նուիրակական իբր լրապէս Հանդերձ մնացորդօք վէճ իրաց
Հասոյց ի սուրբ Աթոռ մայրս ձեր և առ մեզ։ Ընդ որս և զքոյդ յատկա-
պէս տուեալ ՌԾ (200) ռուփի դրամսն և զվայելուչ զուրպինն և զկոնդ-
րուկն յանուն լուսաՀոգւոյն ընծայելով, ամբողջապէս Հասոյց մեզ։ Զոր
ընկալեալ սիրով մեծաւ, մատուցաք անկարօտին Աստուծոյ և սրբոյ
իջման տեղւոյս նորին և շնորՀակալեցաք յոյժ զատուգադոյն սիրելւոյդ։
Որք և բազմութեամբ միաբանից օրՀնեցաք զքեզ և զամենայն քո-
յայինսն՝ առնելով զՊաՀպանեացն վասն կենդանեացդ և զՀոգւոցն յա-
741 ղագս ննջեցելոց // ձերոց։ Զորս և յիշեցաք ի սուրբ պատարագս ի
սարսափելի սուրբ տեղւոջս՝ Հայցելով ի վերաբազմելոյն ի սմա, ի
Քրիստոսէ Փրկչէն մերմէ վասն ձեր ամենեցուն ողորմութիւնս և
զգթութիւնս։
Արդ, որեմն ընկալցի Տէր ի Հաճոյս իւր զառատանուէր տուրս քո,
և ընդ միոյն Հազարապատիկ Հատուսցէ քեզ զվարձս բարիս ըստ Հոգ-
ւոյդ և ըստ մարմնոյդ։ Եւ փոխանակ այդքան մեծագոյն սիրոյ և Հարա-
զատութեան քոյ, Հեղցէ առ քեզ առատապէս զշնորՀս ողորմութեանն
իւրոյ, ընկալցի զքեզ միշտ ի խնամս իւր, և պաՀեսցէ անփորձ ի չարէ,
և ազատ յամենից ձախորդաքեր դիպուածոց։ Լիցի ընդ քեզ յամենայն
ժամ, և յաջողեսցէ քեզ զամենայն բանս և զգործս քո։ Լցուսցէ զքեզ
բազմապատիկ բարութեամբք և զարդարեսցէ ամենիւք Հոգեկան առա-
քինութեամբք։ Լուսաւորեսցէ զՀոգիս Համօրէն ննջեցելոց քոց, և Հան-
գուսցէ այցելութեամբ ի լոյս երեսաց իւրոց։
Եւ արդ, գրեմ յատկականի սիրելւոյդ իմոյ զերազնուոյդ, զի ի ճըշ-
մարիտ սէր և ի Հարազատութիւնս քո Հաստատուն մնասցես, առնելով
զզոյնս և ի մեր աւուրս առ մեզ և առ սուրբ Աթոռս, որպէս և առ Հոգե-

լոյս Հայրապետին մեր և առ լուսատու մայրս ձեր առնէիր յայնժամ, և նա
շնորՀակալութեամբ զքեզ օրՀնէր, որպէս զի մեք ևս նոյնպէս շնորՀա-
կալութեամբ օրՀնեսցուք զմշտապէս զսիրելիդ մեր և որպխածանոյց
սիրանիշ գրովդ ևս մխիթարեսցես զմերս անմխիթարութիւն։
Ողջ լեր ի Տէր և ի բարեգթութիւնս նորին յանձնեալ քոյայնովքդ
ամենեքումբք։ Ամէն։
Գրեցաւ ի 1785 Թուոջ Փրկչին և ի մերս ՌՄԼԴ Թուոջ ի մայիսի
ԻԲ (22), և ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։
Զայս Թուղթս Բ (2) գրեցաք, զմինս այժմ յղեցաք և զմիւսն ևս յե-
տոյ եմք յղելոց ընդ նոր նուիրակին, քանզի զկնի սուղ ժամանակի
գնուիրակն ևս պատրաստեալ առաքելոց եմք և յայնմ օրինակօջ Թըղ-
Թոյս այլևս որ ինչ Հարկաւորիցի, յայնժամ գրելոց եմք։
Ձեռ. № 2803, էջ 737—741

741 Արդէն ի նոր գրութիւնս այլ բանից նախապէս ի կողմանէ նորոգ
նուիրակիդ մերոյ գրեմ առ ազնիւ սիրելիդ։ Զի որովՀետև ի վաղուց է
ավարտեցեալ նուիրակութիւնն օրՀնեցելոց վիճակիդ և զկնի ելանելոյ
այտի Գրիգոր խոՀեմառատ վարդապետին երկարագոյն միջոց է ան-
ցեալ, վասն որոյ Հարկաւոր վարկանելով, աՀա զսիրելի և զՀոգևոր
որդիդ մեր և զշնորՀածին զաւակդ սրբոյ Աթոռոյս՝ զտէր Եփրեմ աստուած-
իմաստ վարդապետդ և զարՀիեպիսկոպոսդ նուիրակ կարգեալ, Հանդերձ
սրբալոյս մեռոնաւ և օրՀնութեան կոնդակաւ, առաքեցաք ի յաստուա-
ծախնամ երկիրդ ձեր՝ առ ի մատուցանել ձեզ ի դիմաց մերոց զողջոյն
սիրալրական և ծանուցանել զՀամայն որպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և
մեր, և բաշխել զՀոգետիպ մեռոնն սուրբ և զայլ իրապատկան գործն
կատարել։ Ուստի խնդրեմ ի բարեպաշտութենէ քումմէ, զի ի գալն զորա
յայդր ի սէր ընկալցիս, և որպէս զԳրիգոր վարդապետն շաՀեալ էիր
յամենայնի (որ յոյժ գոՀանայ զքէն՝ պատմելով զամենայն լաւութիւնդ),
նոյնպէս և զդա շաՀեսցես և մխիթարեսցես, և զործոյն ձեռնտու և օգ-
նական լիցիս՝ միանգամայն զճշմարտութիւն սիրոյդ և Հարազատու-
թեանդ, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ ի դա երևեցուցանելով։ Որովք
առաւել ևս կացուցանես զմեզ պարտականս շնորՀակալիլոյ զսիրելւոյդ
և օրՀնելոյ զքեզ Հանդերձ ամենայն քոյայնովքդ։
742 Դարձեալ ի կող//մանէ առ Քրիստոս փոխեցեալ լուսաՀոգի Գրիգոր
աղայի խոստմանց մնացորդացն, զոր ինչ Հաւատարմօրէն յանձնեալ
էիք Գրիգոր խոՀեմամիտ վարդապետին, անպակաս ընկալաք շնորՀա-
կալութեամբ և օրՀնութեամբ։ Տէր լուսաւորեսցէ զՀոգի Հանգուցեալ
Գրիգոր աղային, դասակցելով սրբոց իւրոց յարքայութեան իւրում և
զձեզ ևս վարձատրեսցէ յամենաբաւ պարգևաց իւրոց։ Իսկ ապա զայս
ևս գրեմ յատկեղ սիրելւոյդ սիրոյ վստաՀութեամբ, զի Գրիգոր վարդա-
պետն պատմեաց մեզ վասն ազնուոյդ, թէ ի յԵւրօպիոյ զքանի ձեռք
գրեանս ես բերել տուեալ վասն տպագրութեան և ապա յատուկ սիրովդ
և Հոգևոր ըղձիւ խոստացեալ ես յղել ի սուրբ Աթոռս։ Ընդ որ ուրախա-
ցեալ շնորՀակալ եղաք զբարեպաշտութենէ քումմէ, վասն որոյ յիշեցու-
ցանեմ օրՀնեցելոյդ, զի թէ կամիցիս, յղեսցես զայն գրեանսն ի Հար-
կաւոր պէտս տպարանիս մերոյ՝ առ ի լինել քեզ յիշատակ բարի ի սուրբ
Աթոռոջս, որովք մինչ զգիրքս տպիցեմք, արձանացուցանելոց եմք ի
նոսա զյիշատակդ քո և քոյոցդ օրՀնութեամբ, զի Աստուծով տպարանս
մեր ի բանի է։

Եւ յառաջագոյն հոգևոյս հայրապետն գիրք մի շարադրեալ Պար-տավճար անուամբ տպեցուցանէր, զոր յետ վախճանի նորին մեք աւար-տեցաք։ Յորմէ աճա գիրկուռն իբր հօգևոր պարգև ի սրբոյ Աթոռոյս և նշան սիրոյ մերոյ, ընդ նոր նուիրակիդ առաքեցաք սիրելւոյդ, զորս ընթեռնելով վայելեսցես [Եւ յետ տպեցման նորա դարձեալ տպեցաք զՍտենի ժամագիրքն, նոր Տօնացուցին և ի նմանէ ևս աճա զմին յը-ղեցաք վասն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, զոր տեսանելով յիշեսջիք զսուրբ Աթոռ մայրս ձեր]*, և յաւելցես զսէր և զհարազատութիւն քո առ սուրբ Աթոռս և առ մերս յօգնավիշտ աշխատակրութիւն։

Յայսմանէ թղթոյ զայսրան ինչ ծանուցեալ, զայլ ինչ գիտելիս ի յերկրորդ թղթոյն իմա։

Եւ լեր ողջ ի Տէր զօրացեալ ի շնորհս նորին հանդերձ ամենայն բոյլյնովքդ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուոջս ի յօգոստոսի ԻԵ (25), և ի բարձ-րագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 740—742

1153. 1785 թ. մայիս—Թուղթ առ քահանայսն Թիֆլիզու վասն մոմին, որոյ աղագաւ ըստ ժամանակին ոչ եղև մարդ յղել վասն վրդով-մանց երկրիս և մեր, իսկ այժմ զկոնդակ գրեալ սրբազանն կարգելով զառաջնորդ Մարտիրոս վարդապետն և գործակալ տէր Ղազարն, զի նոքա ժողովեալ յղեսցեն շուտով, և սոցա ես հարկ է մուղայէթ լինիլ և օժանդակել։

Ձեռ. № 4501, էջ 1063—1064

1154. 1785 թ. հունիս—Թուղթ ի յԱնզալի, որ է ի Գիլան, առ թիֆլիզեցի Պօղոսն Տէր—Առաքելեան վասն նոր նուիրակին և առաջ-նորդին յանձնարարութիւն և վասն յանդուգեալ եղբօրն իւրոյ՝ Պետրոսի հոգեբաժնին յորդորումն, և առ այլ ինչ իրս բանք ընդ սոյին։

Ձեռ. № 4501, էջ 1064—1065

794 1155. 1785 թ. 3 հունիսի—Թուղթ ի Կարին առ Հաճի Ալի փա-շայի սառաֆ խօջայ Կարապետն, ի պատասխանի թղթոյն, որով խընդ-րեալ էր, զի զվանից տեղւոյն տէրունի թեմ բօշայսն տէր Ղազարին (զոր ինքն էր ձեռնադրեցուցեալ) յանձնեցուսցուք հովուել։ Առ որ զի՞նչ գրելն ի ներքոյ իմա ի գիրս։

Յորմէ ժամա[նեսցի]...

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան թղթոյս ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջ[միածնի]։ Զի թուղթ քո ի մայիսի ԻԱ (21) գրեցեալ, էհաս առ մեզ ընդ զփայեկին, զոր ընթերցեալ, հասու եղաք գրեցելոցն ի նմին։ Յորմէ նախապէս ծա-նուցաւ մեզ զալն սիրելւոյդ և յայգր լինիլն, որոյ աղագաւ յոյժ ուրա-խացաք, ըստ որում մերձեցեալ ես մեզ և սիրոյ թղթով և հարազա-տական գործովքդ, զորս ի յօգուտ սրբոյ Աթոռոյս պատահիցին քեզ
795 առնել, մխիթարիլոց եմք։ Տէր օրհ//նեսցէ զքեզ և զօրացուսցէ, փրկեսցէ ի փորձութեանց չարաց և պահեսցէ ի խնամս իւր խաղաղական կենցա-ղավարութեամբ և բարեյաջողութեամբք բանից և գործոցդ։

Ապա յայտնի եղև մեզ խնդիր քո վասն տեղւոյդ բօշայիցն, որ յա-ռաջ կամեցեալ ես ի յառաջնորդէն քաղաքիդ՝ Պետրոս աստուածա-իմաստ վարդապետէն զնել զնոսա և տալ ծուխ բոյդ ձեռնադրեցուցեալ տէր Ղազարին։ Այլ լսելով զայն քաղաքացիքն, չեն կամեցեալ վա-ճառել և տալ հետեւեալ ես, զի զոնեայ առանց սեփհականելոյ՝ այն-պէս հովուեսցէ տէր Ղազարն զբօշայսն։ Իսկ առ այդ ես չէ համարձա-կեալ առաջնորդն ինքնագլուխ հրաման տալ։ Վասն որոյ առ մեզ գրե-լով, ի մէնջ էիր խնդրեալ, զի մեք զնոյն խնդիրն քո կատարեսցուք։ Առ որ գիտես, սիրելիդ մեր, զի օրհնեալ իշխանքն, որ չեն կամեցեալ զբօշայսն վաճառել առ ի ծուխ լինիլ տէր Ղազարին, զոցա չկամիլն ոչ է ընդ վայր, քանզի այն բօշայիցն գոլով տէրունի ծուխ սրբոյ վանիցն մշտա-տեղւոյդ, անկարելի է նոցա վաճառիլն ի վերայ այլոյ ուրուք և մշտա-պէս ծուխ լինիլ ուրումն քահանայի։ Այլ ի քահանայից, որ երբեմն սա և երբեմն նա հրամանաւ առաջնորդին հովուեն, ի յարդեանցն զմասն ինչ ինքեանք առնուն և զայլն հասուցանեն ի վանսն առ առաջնորդն՝ յաղագս տէրունի ծուխ լինելոյ նոցա վանիցն։ Իսկ այժմ որովհետև դու, ատոյդ սիրելիդ մեր, խնդիր էիր արարեալ, աճա զիջեալ ի կամս քո, վասն քաղցրիկ խաթերդ, գրեցաք սիրելւոյն մերում՝ առաջնորդ Պետրոս աստուածաբան վարդապետին, զի հրաման տացէ տէր Ղազար քահա-նային, որ առ ժամանակ ինչ նա հովուեսցէ զվանից տէրունի ծուխ բօշայսն, ըստ ընիկ ծիսին և կարգին։ Եւ զայս սիրանիշ և օրհնաձիր թուղթ ես յատկապէս առ սիրելութիւն քո գրեցաք՝ իբր պատասխանի թղթոյ քոյ հարազատականի՝ առ ի պարգևել քեզ զօրհնութիւնս աստու-ծոյ և մեր և զշնորհս սրբոյ իջման տեղւոյս նորին և առ ի միամիտ լի-
796 նիլ սիրելւոյդ ի կողմանէ կատարման խնդրոյդ։ Իսկ և // զճշմարիտ սէր քո և զորդիական հաւատարմութիւն, որ առ լուսատու մայրս քո սուրբ Աթոռս յայտնէ և ես առ առաւելացուսցես և գործակալաց մե-րոց և երթեւեկաց բանից և հոգալեացն, որք բոյդ հոգացողութեան ան-կանիցին յայգր, ստուգապէս սրտացաւութեամբ հոգ տարցես, ջանալով յամենայնի զօգուտն և զբարին սրբոյ Աթոռոյս և մեր։ Որովք մեծապէս շնորհակալ ես կացուցանելոց զմեզ զսիրելւոյդ և օրհնաբանս՝ քեզ և աղօ-թօղս վասն բարութեանց և յաջողութեանց քոց։

Ողջ լէր ի Տէր և ի շնորհս նորին զօրացեալ միշտ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թ. ի յունիսի Գ (3) և ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Ձեռ. № 2803, էջ 794—796

922 1156. 1785 թ. հունիս—Թուղթ առ Մարսուանու առաջնորդ (որ և երբեմն Պօլսոյ դէտ) համատանցի Յովաննէս վարդապետն, ի պատաս-խանի սիրոյ թղթոյն նորա ի յապրիլի 21 գրեցելոյ. սէր և որպիսա-ծանուցութիւն և վասն նոյնոյ վիճակի նուիրակ Պետրոս վարդապետին մերոյ յանձնարարութիւն։

Յորմէ սիրով բազմաւ և յոյժ կարօտիւ, քրիստոսականաւ սուրբ ող-ջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս մշտաբուղխ շնորհիւն ծանուցում լիցի սիրելւոյդ մերոյ ի Քրիստոս, ստուգապէս բարեկամի և ցաւակցի իսկ, և հաւատարիմ և օգտասէր որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Յովհաննիսի աս-տուածաբան և սիրառատ վարդապետիդ։ Զի թուղթ քո յառաջագոյն գրեալ, վաղապէս հասեալ է առ մեզ, բայց ամենակերպ հոգօք զբաղե-ցեալ գոլով մեր, անձեռնհաս եղաք ի գրել զպատասխանի։ Իսկ այժմ ևս երկրորդ թուղթդ սիրանիշ, գրեցեալ ի յապրիլի 21, էհաս առ մեզ ընդ ուխտաւորացն։ Զոր ընկալեալ սիրով և ընթերցեալ զամենայն գրեալսդ ի նմա բանս սիրածանոյցս և հարազատականս, սրտադիւր

* Փակագծերի մեջ վերցված պարբերությունը բնագրում ջնջված է։

եղաք և մխիթարեցաք յոյժ։ Յորմէ մանաւանդ և զողջութենէ և զանդորրաբար կեցոյ սիրելւոյդ տեղեկացեալ, առաւել զուարճութիւն սրտի և զզուարթութիւն երեսաց։ Եւ զի լսելով բոյ զպէսպէս խառնակութեանց և վրդովմանց բազմավշտակիր երկրիս և զնեղութեանց մերոց, անկեալ էիր ի հոգս և ի մտատանջութիւնս, զոր և յայտնեալ էիր ի հարազատական թղթոջ բում։ Իմացաք այնու զսիրոյդ սերտութիւն և զբարեկամութեանդ հաւատութիւն, թեպէտ և յառաջմէ իսկ գիտեմք, քանզի հաւատութեան բարեկամութեան ուրուք ոչ այլ ինչ է այնքան բացայայտիչ և փայլեցուցիչ, որքան ուրախակցիլն և ցաւակցիլն յերկաքանչիւրոյն ժամանակի սիրեցելոյն, զորս դու, ազնիւ և յատկեղ սիրելիդ մեր, ցուցեալ և ցուցանես առ մեզ՝ կատարելով զբան սրբազան առաքելոյն Պօղոսի, որ հրամայէ՝ լալ ընդ լացօղս և խնդալ ընդ խնդացօղս։ Վասն որոյ զառաւել շնորհակալութիւնս ունիմք զճշմարիտ սիրելւոյդ՝ առ որ ի յաղքերէն սիրոյ յամենասրբոյ հոգւոյն Աստուծոյ ծաւալեցի մարդասիրութիւն անսպառ և բարերարութիւն բազմազոյն և շնորհ և ողորմութիւն, զօրութիւն և կարողութիւն՝ իբր յոգնապատիկ վարձք առատաւածային և երկնաձիր բումդ արժանաւոր վարձատրելի անձին, փոխանակ այդչափ սիրոյ և հարազատութեան բոյ առ շնորհապարգև մայրդ՝ սուրբ Աթոռս և առ մեզ։

Եւ արդ, քանզի խնդրեալ էիր զորպիսութիւն երկրիս և սրբոյ Աթոռոյս ստուգապէս գրել քեզ, զի միամտիցիս, ահա գրեմ համառօտ։

Այն զոր լուեալ էք, թէ ամենքն ի վերայ միմեանց յարուցեալ կոտորեն և այլն, աւելեոք է, բայց և եղեալքն չեն ինչ պակաս առ յարմարութիւն այդմիկ լրոյ։ Քանզի յանցելում ամին յայսմիկ միջոցի զմեծ որդի հին խանին, որ յութն ամիսս զխանութիւն արար, հանդերձ միով համամայր եղբարբն, յանկարծակի սրախողխող արարին և զմիւս եղբայրն ի տեղի նորա նստուցին ի բերդն։ Որում ոչ հնազանդեալ արտաքին եղելոցն, զունդ զունդ եղեալ, զմիմեանս աւարեցին՝ վերստին աւերելով զերկիրս յերկար միջոցի։ Ապա բրթաց բէկն և բերդականքն հակառակեալ, կամէին միմեանց պատահիլ պատերազմաւ, որ յոյժ չարագոյն էր լինելոց։ Իսկ մեր ի մէջ մտեալ, հաշտեցուցաք վասն օգտութեան երկրիս, և յայնմհետէ ցարդ խաղաղեցաւ երկիրս փոքր մի։ Իսկ ի նորանց ժամանակս դարձեալ զբանի զլխաւորս սպանին ի բերդն, վասն որոյ զոյ կասկած և ևս նոր խառնակութեան, բստ որում նշանք երևին, բայց Աստուած զայս ևս անցուսցէ։

923 Եւ թէպէտ այսոքիկ երկրակործան անցք անցին, սակայն շնորհն Աստուծոյ պահեաց զսուրբ Աթոռս և զմեզ ի գլխաւոր փորձութեանց (թէպէտ և զմանր փորձութիւնս կրեցաք և չեմք ևս խսպառ ազատ ի նեղսակրութեանց)։ Վասն որոյ բիւր գոհութիւն բարեխնամողին Աստուծոյ, որ թէպէտ խրատէ ոմամբք վշտիւք ի հեռուստ և ի մօտուստ, այլ ոչ թողութիւն ձեռանէ և յուսամք, թէև առ յապայն ևս խնամարկեսցէ։

Այսպէս իմացեալ ի կողմանէ երկրիս և սրբոյ Աթոռոյս, լեր միամիտ և աղօթեա առ Տէր, զի առաւել ևս խաղաղութեան հանդիպեսցուք։ Իսկ և հոգևոր որդին մեր՝ Թօխաթու և դոյն կողմանցդ նուիրակ Պետրոս խոհեմամիտ վարդապետն, զԿեսարիա և զայլ տեղիս աւարտեալ, գալոց է ի յօրհնեալ վիճակդ, վասն որոյ խնդրեմ ի սիրելւոյդ, զի զճշմարտութիւն սիրոյ և մտերմութեան, որ առ սուրբ Աթոռ ծնօղս քո և առ մեզ երևեցուցես՝ ի սէր ընդունելով և յամենայնի ձեռնտու և օժանդակ լինելով և զգործն արդիւնաւոր առնելով, զի ի բազում ուստեք մուար սիրոյ Տանս նուազիլով և ծախքն յօրէ յօր ևս բան չևս բազմանալով, զպակասութիւնս և զնեղութիւնս կրեմք։ Մանաւանդ վասն այսր, զի ձեռնարկեալ եմք ի բումն և ի ծաղկումն լուսակիրս սրբոյ տաճարիս և ի նորոգութիւն այլևս արտաքին վիմակերտ շինուածոց և զեկեղեցին Աստուծով բռնեալ եմք բոլորապէս բստ ներքնոյն և զկիսոյ ծաղիկն յանցեալ ամին առնել տուեալ, զկէսն ևս այժմ ծաղկեցուցանեմք, յորոց ամենից շինուածոց և նորոգութեանց վերայ բազմութիւնք վարպետաց և մշակաց բանին ծանր ծախուք և ռոճկօք։

Ապա զոլով մեր ի ներքոյ այս ծանրութեանց, պարտիս օգնել նուիրակիդ մերոյ և ի յօրհնեալ վիճակէդ լիալիր արդեամբք ուղևորել, որով զօգնութիւն գտցուք պակասութեանց մերոց։ Եւ սակս ամենայն առ դա ցուցեալ լաւութեանցդ և բարեշնորհութեանցդ շնորհակալիլոց եմք զսիրոյդ առաւելապէս։

Ահա ծանուցի սիրելւոյդ զխաղաղութեանց մերոց և զշինապայծառութեանց սրբոյ Աթոռոյս, զի ուրախասցիս դու՝ ևս զսիրանիշ զիրդ չպակասեցուցանելով ի մէնջ, ծանո մեզ զբարեկեցութենէ բումմէ և զխաղաղութենէ տեղւոյդ (որպէս և ծանուցեալ էիր), անվերջ մնալով ի սիրոյ և բարեյանութեանց առ սուրբ Աթոռս և առ մեզ։

Եւ զայլ որպէսն ի սոյն գրաբեր օրհնեալ ուխտաւորացն իմանալով, ողջ լեր ի Տէր և ի խնամս նորին յանձնեալ միշտ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուոջս ի յունիսի..., և ի սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 4501, էջ 922—923

1157. 1785 թ. հունիս—Թուղթ առ սալմաստցիս և հաղբակցիսն հաստարակապէս վասն Ստեփաննոս վարդապետին՝ առաջնորդին իւրեանց, որ եկեալ էր յԱթոռս թարց թղթոյ նոցա, որք ոչ հաճէին ընդ առաջնորդութիւն նորին, ուստի հարկաւոր, թէ եթէ կամիք և թէ ոչ, միաբանութեամբ ծանուցիք մեզ զբազմակնիք գրելով, զի և մեք բստ այնմ հոգ տարցուք։

Ձեռ. № 4501, էջ 923—924

1158. 1785 թ. հունիս—Թուղթ ի Գիլան ի յԱնզալի նաւահանգիստն՝ առ բնակիչսն անդէն և վաճառականսն ընդ նոր նուիրակ և առաջնորդ Կարապետ վարդապետին վասն նորին յանձնարարութիւն և զվիճոյն նոցա, որոյ սակս յառաջագոյն զթուղթ էին գրեալ և զթերի պատասխանի ինչ ընկալեալ։

Ձեռ. № 4501, էջ 1047—1048

1159. 1785 թ. հուլիս—Թուղթ ի յԱկն առ նորին առաջնորդ Միքայէլ վարդապետն, ի պատասխանի թղթոյն ի մայիսի 22 գրեցելոյ. շնորհակալութիւն վասն հարազատութեանցն և վասն յղելոյն զաջահամբոյրս ինչ։

Ձեռ. № 4501, էջ 927

1160. 1785 թ. հուլիս—Ի Հնդիկս ի քաղաքն Բոմբայի՝ առ պարոն Յովսէփն Աղազարեան՝ ընդ նոր նուիրակին, և յիշումն վասն յարուաջ գրեալ որպիսածանոյց թղթոցն առ այն կողմն և վասն ընդ գործոց նուիրակ Գրիգոր պետին յղեալ սորա վասն մօր հոգաբաժին ծաւարտ Ա (1) խաչին և Խ (40) ռուփիին. շնորհակալութիւն և վասն նորոյ նուիրակին յանձնարարութիւն և յորդորում՝ կալ ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս։

Ձեռ. № 4501, էջ 928—929

Միաժամանակ օրհնության և շնորհակալության նամակներ են ուղարկվել Մանճյարխան կոչված Սիմեոն Հարությունյանին (Արկարապատ), Մանուկ Եսայանին (Սուրաթ), Հովհաննես Փիրաղամյանին, Թորոս Տեր-Ավետյանին, մուբաշիրի պարոն Հովհաննեսին, Եղիազ աղային, հանգուցյալ Մկրտումի կին Աննա խանումին (Մադրաս), Աստվածատուր Գրիգորյանին (Կալկաթա)։

Ձեռ. № 4501, էջ 929—934

1161. [1785 թ. հուլիս]—Կոնդակ ի վերայ մայրաքաղաքաց և քաղաքաց և գաւառաց և գիւղից և շինից առհասարակ վասն ի սրբոյ Աթոռոյս ի սուրբ Երուսաղէմ գնացողի, որ այժմ գրեցաւ վասն սրբոյ գահիս բնիկ միաբան և վաղեմի աշխատակիր՝ նոտար Ղուկիանոս վարդապետին, որ ուր ուրեք և հանդիպիցի, սիրով ընդունիցին և պատուեսցեն, և հաւատարմօք ուղևորեսցեն[214]։

Ձեռ. № 4501, էջ 1021—1022

1162. 1785 թ. 8 հուլիսի—Թուղթ առ յՆդկիա նոր առաջնորդ եկեալ Յովակիմ վարդապետն, հոգեւորական ծեր Պետրոս պետին, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի մայիսի ԻԸ (28), մխիթարութիւն ի կողմանէ Պետրոս պետին յիշեցելոյ, զի վախճանեալ էր, և շնորհաւորութիւն առաջնորդութեանն և շնորհակալութիւն վասն Դ (4) զարմահպուլ ոսկւոյն, զոր ամ յամէ յղէր և Բ (2) եալաղ ոսկւոյն, զոր վասն հանգուցելոյն ժամուց էր յղեալ։

Ձեռ. № 4501, էջ 1023

1163. 1785 թ. օգոստոս—Թուղթ ի Բաղդատ առ պարոն Փանոսն վասն հաստատութեան նորին գանձապետութեանն, որոյ կոնդակն շարադրեալ գոյ նշանօք ի սոյն տետրս ի... երեսն։

Ձեռ. № 4501, էջ 933

1164. [1785 թ. օգոստոս]—Թուղթ ի Դաքայ առ գործակալն մեր՝ Սարգսեան Միքայէլ աղայն, ըստ վերագոյն թղթոյն, որք ի կողմանէն Հնդկաց, վասն տրոց շնորհակալութիւն և պատասխանագրութիւն բանից թղթոյ նորին, զոր գրեալ ի վերայ հոգելոյս հայրապետին։

Ձեռ. № 4501, էջ 937

946 *1165.* 1785 թ. 25 օգոստոսի—Թուղթ ի Սուրաթ քաղաքն առ խոջաջանեան Ջակիկենց Գրիգոր աղայի քոյր Զիպիտայն. շնորհակալութիւն վասն նուիրացն և արծաթոյն՝ տուեցելոյ վասն մեռոնի անօթի, այսինքն գիւկիմի, և այլ ընծայիցն յղեցելոյ յանուն սրբազան Վեհիս։ Եւ զի զկայսն իւր կտակեալ էր գրով Մատրասու Մարութեան Յովսէփ աղային, զի յետ վախճանին իւրոյ Ժ (10) բաժին արասցէ և զԸ (8) բաժինն սրբոյ Աթոռոյս հասուսցէ վասն եղբօր յիշատակացն հաստատուն պահելոյ, առ այս ես շնորհակալութիւն և պատուէր, զի անջրելի ունիլ զուխտ և զկտակ իւր։

Յորմէ ժամանեսցի...

Եւ ընդ տեառնապարգև օրհնութեան նամակիս, գիտասջիր հոգևոր դուստր մեր, հարազատ և օգտաշան զաւակ սրբոյ Աթոռոյս էջմիածնի, զի թէ միջոցաւ ինչ յառաջ քան զայս և թէ այժմ զամենայն անցս և զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և մեր, այսինքն զվախճան երջանիկ հայրապետին մերոյ՝ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին (որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ և զձեզ մխիթարեսցէ և խաղաղ կենօք պահեսցէ), և զմերս յաջորդելն զԱթոռս սուրբ և զայլևս դիպուածս և ըղ-նեղակրութիւնս մեր, գրեցաք ի յօրհնեալ վիճակդ և յայդր՝ հասարակ

կոնդակաւ և յատուկ թղթովք առ ոմանս։ Որոց կամ յառաջին գրեցելոցն իմացեալ էք և կամ ի նորապէս գրեցելոցս իմասջիք։ Վասն որոյ այժմ ոչ ես երկարեալ զայնս, զայլ ինչ հարկաւորս գրեմք աստէն։ Քանզի հոգևոր որդին մեր և նախկին նուիրակն ձեր՝ Գրիգոր խոհեմառատ վարդապետն, թէպէտ երկիցս փորձութեանց պատահեալ ի ծովուն և ի ցամաքին, զյոլով վէճ իւրս էր կորուսեալ, բայց զմնացեալսն յայնցանէ և զնաղտ արդիւնսն լրիւ հասոյց ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Ընդ որս և զքոյդ հոգևոր տուրսն և զընծայսն ես ամբողջապէս բերեալ մատոյց մեզ։ Որք էին 300 ռուփի նուէրք՝ 302 և կէս մսխալ արծաթ վասն սրբալոյս մեռոնին գիւկում շինելոյ (զոր ի ձեռնհասութեան մերում շինել տալոց եմք), մի ալմաս ակամբ մատանի՝ կնքեալ և մի կարմիր չարխանայ աղլուխ։ Ընդ որոց թէպէտ և զթուղթս ես էիր գրեալ, սակայն ի ճանապարհական փորձութիւնսն կորուսեալ էր։ Իսկ զամենայն յղեալսդ սիրով ընկալեալ զնուէրսդ և զյիշատակդ մատուցաք անկարօտին Աստուծոյ և սրբոյ իջման տեղւոյս նորին և զընծայսդ ի վայելս մեր առեալ, շնորհակալութեամբ օրհնեցաք զհոգևոր դուստրդ մեր՝ հայցելով վասն ննջեցելոց քոց զարքայութիւն։ Զորս և յիշեցաք ի փրկարար սուրբ պատարագս ի սարսափելի սուրբ տեղւոջս։ Ուրեմն ընկալցի Տէր զտուրս քո ի հաճոյս իւր և զփոխարէնն բազմապատկապէս հատուսցէ քեզ և ի հոգիս համօրէն ննջեցելոց քոց, օրհնեսցէ զքեզ և պահպանեսցէ, և փրկեսցէ ի չարէ, և որքան կաս կենդանի, ունիցի ի խնամս իւր, և խաղաղական կենօք պահեսցէ, և յետ աստեացս ելանելոյ՝ արժանացուսցէ երկնից հանգստեանն և բարեացն ընդ հաճոյսն և ընդ սուրբսն իւր։

Իսկ և վասն մեծի բարեպաշտութեանդ, որ կտակագիր ես գրեալ և զՄարութեան Յովսէփ աղայն վէքիլ ես արարեալ քեզ, զի զամենայն կայսն քո ժողովեսցէ և զկնիքոյ զայնս տասն բաժին արարեալ, զութ բաժինն սրբոյ Աթոռոյս հանցէ և հասուսցէ աստ վասն հաստատուն պահելոյ զյիշատակսն լուսահոգի եղբօրն քոյ՝ քրիստոսասէր և բարեպաշտ Գրիգոր աղային։ Ահա զայն կտակագիրդ և վէքիլլամայի օրինակսն յղեալ էր նոյն Յովսէփ աղայն, զորս տեսաք և ընթերցաք, և հաւանեալ շնորհակալեցաք զհոգևոր դստերդ մերմէ, զի յոյժ բարեմտութեամբ և հոգեօգուտ խոկացմամբ ես գրեալ։ Քանզի ահա զմեծավարձ յիշատակսն հոգելոյս եղբօրն քո ի հաստատութեան պահեմք ամենայն ջանիւ։ Եւ ի տպարանիս մերում զինչ գիրք և տպեմք, յիշեմք ի նոսա զանուանս լուսահոգւոյն և քո և ծնողաց ձերոց և այլ ձերայնոցն։ Որպէս յառաջ քան զայս, ի տպել Պարտավճար գրքոյ երջանիկ հայրապետին, արձանացուցաք ի նմա զյիշատակս ձեր։ Յորմէ և զմին յղեցաք ահա ընդ նոր նուիրակիդ մերում՝ Եփրեմ աստուածիմաստ վարդապետիդ առ քեզ, զի տեսեալ ուրախասցիս։ Եւ այսպէս, ի յԱտենի ժամագիրքն ես, զոր ի ներկայումս տպագրեմք և յայլ գրեանս, որք յիւրաքանչիւր ժամանակս տպիցին ի տպարանիս մերում, յիշատակելոց եմք յամենեսուն զօրհնեալ անուանս ձեր։ Ուստի արժան է և հարկաւոր է կտակագրութիւնդ վասն սրբոյ Աթոռոյս՝ ի հաստատութիւն հոգևոր յիշատակացս ձերոց, որք ի սմա։ Ուրեմն պատուիրեմք բարեպաշտուհի և հոգևոր դստերդ մերում, զի զդոյն աստուածահաճոյ և աթոռաօգուտ կտակագիրդ հաստատուն և անշրջելի ունիցիս, առ ի մեծապէս վարձատրիլ յԱստուծոյ, և ընդունիլ զհոգեպարար շնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր։

Ահա վէքիլն քոյ և մերոյ՝ Տերամբ զօրացեալ Յովսէփ աղային ևս հարկիւ գրեցաք՝ հոգ տանիլ կտակագրութեանդ և ամենայն գրեալ բանիցդ։ Այլև՝ զնոր նուիրակդ ձեր և զհոգեոր որդիդ մեր՝ զսէր [Եփրեմ] շնորհապերճ վարդապետդ և զարհի եպիսկոպոսդ մեծաւ սիրով և պատուով ընկալեալ, ասպնջական լիցիս զմա և շահեսցես և մխիթարեսցես յամենայնի։ Եւ զամենայն որպէսն սրբոյ Աթոռոյս և մեր, հանդերձ զանազան վշտակրութեամբք մերովք ի դմանէ լիապէս իմացեալ, լեր ի յողորմութիւնս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յանձին։ Եւ շնորհք նոյնաէջ սրբոց տեղւոյս ընդ քեզ եղիցի յարաժամ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուիս և ի յօգոստոսի ԻԵ (25), ի յաստուածեան զահս սուրբ էջմիածնի։

Ձեռ. № 4501, էջ 946

947 1166. [1785 թ. օգոստո՛ս]—Թուղթ ի Բասրայ առ գործակալն մեր՝ Բեթղէհէմեան պարոն Յովհաննէսն, յիշումն ի սեպտեմբերի ԻԲ (22) գրեալ թղթոյն մերոյ և ծանուցումն զկնի այնր դառնագոյն անցից մերոց և վասն նոր նուիրակին յանձնարարութիւն և վասն ի մայիսի ԻԲ (22) առ ինքն և ի Հնդիկս գրեալ թղթոցն մերոց հարցումն, թէ էհա՞ս առ ինքն, և վասն Ղազարի կայիցն՝ հարկ գրել զորպէսն։

Յորմէ ժամանեսցի թուղթ...

Եւ ընդ շնորհաձիր օրհնութեան սիրոյ նամակիս, ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ ի Տէր և օգտաշատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի յառաջագոյն մինչ լուաք զկսկծալի լուր մահուան հոգելոյս Ստեփաննոս աղային, գրեցաք առ քեզ ի սեպտեմբերի ԻԲ (22) զթուղթ մխիթարութեան, հանդերձ այլովք հարկաւոր բանիւք։ Եւ որպէս յայնժամ խոստացաք, թէ զնոր նուիրակ պատրաստեմք ի յղել, յիրաւի պատրաստէաք և զբաղում թուղթս նորին ի յօգոստոսի ԻԵ (25) իսկ գրեցաք։ Այլ դառնագոյն պատահմունք յառաջացեալ ի չարաչունչ ժամանակէս, այլև արգելին։ Քանզի բազում գունդք լէզկեաց կովկասականաց խաղացեալք ի վերայ Վրաստանու, զանչափ աւերս գործեցին՝ արիւնհեղութեամբ և գերութեամբ քրիստոնէից, և մերձեցան առ սահմանս երկրիս մերոյ։ Եւ այս համբաւ վերահնչեցաւ, թէ գալոց են ի յաւար հարկանել զերկիրս և զսուրբ Աթոռս։ Վասն որոյ և իշխողն երկրիս մերոյ զամենայն բնակիչսն վարեաց ի բերդն Երևանու։ Եւ զմեզ ևս, թէ սա և թէ արքայն Վրաց թղթովք հարկեցին դատարկել զսուրբ Աթոռս և գնալ։ Վասն որոյ և մեք, թէպէտ անկարելի գիտէաք զդատարկելն սրբոյ Տանս մեծի, բայց որչափ կարելի էր, զծանրութիւնս յղեցաք ի յԵրևան և մեք ևս ի գերութենէ հասարակութեանն կասկածելով, միաբանիւք մերովք և ժողովրդովք գեղջս մերոյ, գնացաք անդ ի յանապատն մեր, թողլով ի սուրբ Աթոռոջս զսակաւաւոր միաբանս և զքանի հարիւր զինուորս՝ ի պահպանութիւն։ Ապա թէպէտ գազանաբարոյքն այնոքիկ անցին ի յԱխլցխայ, սակայն այն համբաւն, թէ գալոց են յաւար առնուլ զերկիրս և զսուրբ Աթոռս, ոչ լռեցաւ։ Վասն որոյ ի յերիս ամիսս մնացաք արտաքոյ սրբոյ Աթոռոյս՝ մեծաւ նեղութեամբ և տառապակրութեամբ և անհուն ծախուք, տատանեալ անձամբ և մտօք։ Եւ ամենայն բանք և գործք մեր խափանեցան։ Իսկ ապա ի ցրտանալ եղանակին, լուաք թէ գազանքն ձմերելոց են ի յԱխալցխայ։ Վասն որոյ դարձաք ի սուրբ Աթոռս՝ զհետ լինիլ հոգալեաց մերոց։ Ահա ողորմութիւնն Աստուծոյ պահպանեաց մինչև ցարդ զսուրբ Տունս իւր և զմեզ, բայց որչափ նոքա անդ

կան, մեք ի կասկածանս եմք և իբրև ի վերայ փշոյ նստեալ, ոչ գիտելով, թէ ի գարնանն ևս զի՞նչ է լինելոց։ Բայց յուսամք ի խնամս Տեառն և ևս ազատիլ և պահպանիլ։

Արդ, վասն այսմ ձախորդութեան յամեցաւ նուիրակի առաքումն և Հնդկաց երկրի գրեանքն։ Իսկ այժմ ի դառնալս մեր հոգ տարեալ, ահա զսիրելի և զհոգեոր որդիդ մեր և զշնորհատուն զաւակդ սրբոյ Աթոռոյս՝ զսէր [Եփրեմ] աստուածիմաստ վարդապետդ և զարհիեպիսկոպոսդ նուիրակ կարգեալ ուղարկեցաք ի յօրհնեալ վիճակդ, որոյ ի ժամանելն յայդր ի սէր և ի հարազատութիւն յատկեղ սիրելւոյդ և գործակալիդ մերոյ է յանձին։ Զոր պարտիս սիրով և պատուով ընդունիլ և յամենայն կողմանէ շահեցող և ձեռնտու լինիլ և ի դէպ ժամանակին լաւ և հաւատարիմ նաւով և նաւորդօք ուղարկել և զորպէսն ժամու միով յառաջ գրել մեզ ի միամտութիւն։

Դարձեալ զայս ևս ծանիր, զի ի մայիսի ԻԲ (22) ևս զթուղթ գրեցաք ի վերայ քոյ և Ստեփաննոս աղային, մինչ չև էաք լուեալ զմահն նորա։ Եւ ընդ նմին զմի մեծ պահարանով զկոնդակ և զթուղթս ևս գրեալ ի Հնդիկս՝ յղեցաք ի վերայ Պօլսոյ ի ձեռս ձեր, զի հասուցանիցէք ի տեղիս իւրեանց առ տեարսն։ Բայց ոչ ևս իմացաք, թէ հասան առ քեզ, թէ որպէ՞ս եղեն։ Ուրեմն՝ այն թղթոց զորպէսն ևս շուտով ծանուսցես մեզ, զի գիտասցուք։

948 Այլև սակս հանգուցեալ Ղազարի կայիցն ևս յառաջ քան // զայս գրեցաք սիրելւոյդ՝ չթուլանալ. այժմ ևս գրեմ, զի թէ դու և թէ ընտանիքն հանգուցեալ Ստեփաննոս աղային պարտիք, որչափ կար ձեր է, հնարել վասն առ ձեռն բերելոյ զայն կայսն, զի մի լիցի օտարաց կերակուր և զրկեսցի հոգի հանգուցեալ Ղազարին։ Արդ, այն թագաւորական վճռաթուղթքն, զորոց յառաջագոյն ազդեցիք մեզ, թէ ի ճանապարհի են, հասի՞ն յայդր, թէ որպէ՞ս եղեն կամ թէ նոր ևս զի՞նչ լսես յայնմ կողմանէ, գրեալ ծանուսցես մեզ, զի գիտասցուք։

Նաև՝ Հոգելոյս Հայրապետն մեր զգիրք մի շարագրեալ տպեցուցանէր աստ, զոր կիսակատար թողեալ վախճանեցաւ։ Իսկ յետ վախճանմանն մեք աւարտեցաք։ Յորմէ ահա ի նշան սիրոյ մերոյ և իբր օրհնութիւն և շնորհք սրբոյ Աթոռոյս, զմինն յղեցաք ընդ հարազատ նուիրակիդ մերոյ առ քեզ, զոր սիրով ընկալեալ՝ վայելեսցես բարեաւ։ Իսկ յետ այնր գրքոյ, տպեցաք զԱտենի ժամագիրքն և յայնմանէ ևս զմին առաքեցաք վասն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, զոր ի գործ ածելով յիշեսջիք զսուրբ Աթոռ մայրս ձեր և զմեզ։

Ձեռ. № 4501, էջ 947—948

1167. 1785 թ. օգոստոս—Թուղթ ի Վան առ Ախիջանի եղբայր պարոն Գէորգն, ի պատասխանի թղթոյն նորա ընդ նուիրակ Յակոբ վարդապետին գրեցելոյ վասն գալստեան նորա և Կտուցու անապատի հայր Մարկոս վարդապետին, զորմէ գրէր, թէ հրաժարեալ եկն ի սուրբ Աթոռդ, բայց ոչ եկն։ Վասն որոյ սրբազանն գրէ զշնորհակալութիւն ի կողմանէ նուիրակին և զՄարկոս վարդապետի որպէս լինելոյն և զայլ անցից ևս հարցանէ՝ հարկելով ի ծանուցանել։

Ձեռ. № 4501, էջ 1030

1168. 1758 թ. 31 օգոստոսի—Թուղթ առ Կոստանդնուպօլսոյ նուիրակ Իսահակ վարդապետն, ի պատասխանի քանեաց թղթոցն նորա ի յու-

նիսի ԻԵ (25) և ի յուլիսի Է (7) և ի ԺԱ (11) և ի ԺԵ (15) գրեցելոց վասն զանազան իրաց և իրակութեանց:

Ձեռ. № 4501, էջ 935—936

1169. **1785 թ. սեպտեմբեր**—*Ի Խոյ առ Բաղիանոսն և առ որդին նորա Բալայն, շնորհակալութիւն վասն շահեցմանցն առ Եփրեմ վարդապետն և վասն Բ (2) ոսկի տրոցն՝ օրհնութիւն և պատուէր յապայ գնալոց նուիրակացն և ասպնջական լինիլ և ձեռնտու:*

Ձեռ. № 4501, էջ 938

1170. **1785 թ. սեպտեմբեր**—*Թուղթ ի Բասրայ առ Բեթխէհէմեան պարոն Յովհաննէսն, ի պատասխանի թղթոյ նորա ի մարտի 22 գրեցելոյ վասն զանազան իրաց և մխիթարութիւն վասն մահուան մահտեսի Յարութիւնեան Ստեփաննոս աղային:*

Ձեռ. № 4501, էջ 939—940

1171. **1785 թ. սեպտեմբեր**—*Ի Խոյ առ պարոն Փիլումն, ի պատասխանի թղթոյն, և վասն Եփրեմ վարդապետին, որ էր անդէն նուիրակ, շնորհակալութիւն:*

Ձեռ. № 4501, էջ 1032

1034 *1172.* **1785 թ. սեպտեմբեր**—*Ի Բասրայ կամ յայլուր առ ջուղայեցի Պօղոսեան մահտեսի Խաչիկն, որ զԲ (2) թուղթ էր գրեալ, պատասխանիք բանիցն և մխիթարութիւն վասն Ստեփաննոս աղայի մահուանն և շնորհաւորութիւն մահտեսութեանն:*

...զի յանցեալումն ամի ի մայիսի Ժ (10) գրեալ թուղթն քո մինչ էհաս առ մեզ, գրեցաք առ քեզ զպատասխանին, թէպէտ յետ երկար միջոցի, և յղեցաք ընդ այլ ոմանց թղթոց ի միում պահարանի: Բայց պատահեցաւ, որ վասն պատճառի ինչ այն թուղթքն դարձուցան յետս առ մեզ, ընդ որս և այն քո թուղթն ևս դարձեալ եղև: Եւ զի ժամանակն յոյժ երկարեցաւ, որ այն գիրն գրեցեալ էր, վասն որոյ կրկին ևս ոչ յղեցաք զայն: Զայս յիշելս ոչինչ աղագաւ է, զի մի կարծիցես, թէ զքեզ ի մոռացման եմք եղեալ, այլ ունիմք օրհնութեամբ ի միտս և ի բերանի զքաղցրայիշատակ անուն ազնիւ սիրելւոյդ: Բայց յայնմհետէ թէպէտ և շատ կամեցաք օրհնութեան թղթով շահել զսիրելիդ, քանզի թէ վասն վրդովմանց երկրիս, և թէ վասն յոգնակերպ ցաւոց և զբաղմանց մերոց պաշարեալ կամք: Իսկ ապա ի սոյն թուոյս յունիսի 3 գրեալ թուղթդ ի Հալէպու ի նորանց ժամանակս էհաս առ մեզ, և զամենայն գրեալսդ ծանեաք, և իմացաք զխաղաղութեամբ գնալդ ի սուրբ Երուսաղէմ և զդառնալդ, և յոյժ ուրախացաք: Վասն որոյ և ասեմք՝ շնորհաւոր եղիցի մահտեսիութիւնդ, մնասցես ընդ երկայն աւուրս խաղաղ և բարւոք կենօք, և շնորհք տնօրինական սուրբ տեղեացն Քրիստոսի լիցի ընդ քեզ յամենայն ժամ:

Այլ մինչ կամէաք զպատասխանիս թղթոյդ գրել, ընկալաք զթուղթ ի Սահակ աստուածաբան վարդապետէն, որ ի քէն իսկ իմացեալ զգոյժ մահու խղճալի Ստեփաննոս աղային, ծանուցեալ էր մեզ: Ընդ որ կարի յոյժ տրտմեցաք և կսկծեցաք հոգւով չափ, և գիտեմ, զի դու ևս ես տրտմեալ և ցաւեցեալ՝ վասն զրկիլոյ յայնպիսի ազնիւ սիրելւոյ և հաւատարիմ բարեկամէ: Բայց զի՞նչ ունիմք առնել, եթէ ոչ գոհանալ զԱստուծոյ և հայցել վասն հոգւոյ նորա զողորմութիւն, և վասն ընտանեաց և բարեկամացդ նորին զփոփոխանս սրտից: Արդ, լուսաւորեսցէ

Տէր զհոգի հանգուցեալ Ստեփաննոս աղային, և երանաւէտ կենացն և անանց փառացն իւրոց արժանացուսցէ, դասելով ընդ սուրբս իւր, և զքեզ հանդերձ ամենայն նորայնովքդ ողջ պահեսցէ և հոգւովն սրբով մխիթարեսցէ և յապագայ տրտմառիթ դիպուածոց ազատեսցէ:

Եւ արդ, եկեսցուք ի պատասխանի գրեցելոցդ: Նախ գրեալ էիր վասն ԲՌԵՃ (2500) ղուռուշին թղլոյդ առ պարոն Գէորգն, հասուցանել նուիրակ Իսահակ վարդապետին վասն տպեցման մերոյ Առենւոյն և Յովսեփոս պատմագրին և ի նոյն պատմագրէն զմին ևս յանձնելդ նմա առ ի յղել: Զորս Իսահակ վարդապետի յառաջագոյն էր ծանուցեալ մեզ, շնորհակալիլով զսիրելւոյդ և զքոյդ տուեալ Յովսեփոսի պատմագիրն ևս յղեալ էր առ մեզ, որ յոյժ սխալագիր էր, իսկ մեք յանձն առաք տպել ի մեր ունեցեալ սրբագիր օրինակէն, որ թարգմանչի և նորին աշակերտի ձեռագիրն է: Վասն որոյ և գրեցաք Իսահակայ վարդապետին՝ առնուլ զտուեալ դրամդ ի պարոն Գէորգէն և ի սուրբ Աթոռս հասուցանել, զոր և հասեալ իսկ համարելով, շնորհակալ եղաք զսիրելւոյդ և օրհնութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ: Զոր Աստուածն ամենայնի օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ ի փորձութեանց և պահեսցէ միշտ ի խնամս և յողորմութիւնս իւր հանդերձ ամենայն քոյայնովքդ, և ըստ բարւոք ջանից քոց հատուցէ քեզ զվարձս բարիս և բազմապատիկս յայսմ աշխարհի և ի հանդերձելումն:

Երկրորդ՝ փոքր ինչ թօհմաթ էիր արարեալ վասն Առենւոյ տպեցման յերկարելոյն: Առ որ գիտես, սիրելիդ իմ, զի յիրաւի յոյժ յամեցաւ, բայց դու մի առ այլ տեղիս նկատեր, այլ մտածեա զորպիսութիւն ամենաղորկ երկրիս, յորում ոչինչ գտանի ի պիտոյից այսր գործոյ, և մինչ զմին հոգամք, միւսն ոչ լինի, և թէ զայն գտանեմք ի հեռուստ, այլն պակասին: Զոր օրինակ, մինչ զՍաղմոսն և զժամագիրքն աւարտեցաք, մեծն թուղթն հատաւ, սաստ և ի մօտ տեղիս ոչ գտանիւր, զի առնուաք: Վասն որոյ գրեցաք կրկին ի Պօլիս նուիրակին, որ անտի յղեաց, և մինչ ի հասանիլ թղթոյն, զմեծ դազկեահն խափանեալ, զՅովսեփոսի պատմագիրն սկսաք տպել ի փոքր դեազկեահոցն, յորմէ և զԺԵ (15) տետր տպեցաք (որոյ յերկրորդ տետրէն զմին յղեալ եմք առ Իսահակ աստուածիմաստ վարդապետն և նա յուղարկեալ է առ քեզ): Եւ ապա ի գալ թղթոյն վերստին ևս ձեռնարկաք ի Տօնացոյցն: Ահա այսպէս բազմիցս արգելմունք պատահին գործառնութեանն, վասն որոյ յամեցաւ: Ուրեմն խնդրեմ անմեղադիր լինիլ և զսիրտդ չպակասեցուցանել:

1035 Իսկ ահա Գ (3) տետր է մնացեալ ի բոլոր Առենւոյն, // զոր յաջողմամբն Աստուծոյ տպեալ, աւարտելոց եմք զգիրքն և զյիշատակն քո և քոյոցն արձանագրելոց ի վերջն: Եւ զՀնդկաց երկրի նուիրակն ևս, զոր պատրաստեմք ահա ի յղել, թերևս ի յաւարտիլ գրքոյն հանցուք, և զխնդրեալդ ևս յուղարկեսցուք ընդ նմա ի Բասրայ:

Երրորդ՝ յիշեալ էիր զհաւատարմութենէ քումմէ, որ առ սուրբ Աթոռս: Զոր մեք յառաջնմէ գիտեմք և Իսահակ հանճարափայլ վարդապետն ևս միշտ գրէ մեզ, որոյ աղագաւ և զյոլով շնորհակալութիւնս ունիմք զքէն, և խնդրեմք, զի ի դոյն սիրոյ և ի հարազատութենէ անպակաս մնասցես՝ առ ի միշտ վարձատրիլ յԱստուծոյ և վայելել զշնորհս սրբոյ Աթոռոյս:

Դարձեալ զայս ևս ծանիր, զի ահա առ պարոն Յովհաննէս Բեթխէհէմեան ևս զթուղթ մխիթարութեան գրեցաք ի կողմանէ լուսահոգի

Ստեփաննոս աղային և ընդ սոյն թղթոյս յղեցաք առ Իսահակ վարդա-պետն, զի և նա յղեսցէ առ Հալէպու պարոն Մինասն և նա հասուսցէ առ ձեզ։ Եւ վասն հանգուցեալ Ղազարի կայիցն, որ պարոն Յովհաննէսն զբանս էր գրեալ քեզ և դու ևս Իսահակ վարդապետին էիր գրեալ, զոր և նա ծանուցեալ էր մեզ, ահա յայնմ կողմանէ գրեցաք պարոն Յով-հաննիսին, թէ Աստուած տացէ, զի այն վճռագիրն թագաւորական կա-նուխ իցէ հասեալ ի Բոմբայի առ ձեր վէքիլն, իսկ թէ մի գուցէ հասեալ չիցէ մինչև ցվախճան Ստեփաննոս աղային և օտարքն կամիցին ունել զայն կայսն, ահա Ստեփաննոս աղայի ընտանիքն և դու կայք, վերստին պարտիք ջանալ և առ ձեռն բերել, և զայլ ինչ ըստ այսմ։ Դու ևս այս-պէս գիտեցեալ, առ այս յորդորեա զնոսա բանիւ կամ գրով։

Այլև, յառաջագոյն ի Հնդիկս զհասարակ կոնդակ և յոմանս քա-ղաքս առ ոմանս իշխանս զգրեանս գրեալ յղեցաք պահպանաւ առ Իսահակ շնորհապերճ վարդապետն՝ յղել յայն կողմն, և նա գրեալ էր, թէ յուղարկեցի առ մահտեսի Խաչիկ աղայն՝ հասուցանել ի տեղին։ Իսկ մեք մինչև ցայժմ այլ տեղեկութիւն չունիմք զայնց թղթոցն, վասն որոյ զե՞րբ հասանիլն քեզ և զքո ե՞րբ առաքելն զեկուսցես մեզ, զի միամտի-ցուք։ Որ և զփրանկիշ գիրդ անպակաս առնելով, և ըզո՞ւր լինիլդ և զոր-պիսութիւնդ ծանուցանելով, լեր ողջ ի Տէր։ Եւ շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ քեզ լիցի յարաժամ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԼԴ (1785) թուիս, ի սեպտեմբեր..., և ի լուսակա-ռոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

Ձեռ. № 4501, էջ 1034—1035

1173. 1785 թ. նոյեմբեր—Թուղթ ի յԱմիթ առ Կարապետ վարդա-պետն, որ էր վաքիլ ի տեղի առաջնորդի, և առ գլխաւոր քահանայսն և իշ-խանսն վասն նուիրակ Ահարոն վարդապետին, որ երկիցս գնացեալ էր ի քաղաքն և երկիցս թուղթ էր գրեալ սրբազանն, իսկ սուրբ Կիրակոս եկեղեցւոյ ժողովուրդքն դեռ չէին տուեալ զնուիրակութիւնն ի պատճառս նեղութեանց և տուգանատուութեանց իւրեանց։ Առ որ այժմ յանդիմա-նախառն յորդորումն, զի զնուիրակն, ի դառնալն ի խոր Քրիստոսատա-նու, սիրով ընկալցին ի քաղաքն և զնուէրսն տուեալ, խաղաղութեամբ ուղևորեսցեն։

Ձեռ. № 4501, էջ 1086—1087

1174. 1785 թ. դեկտեմբեր—Թուղթ առ Իսահակ վարդապետ նուի-րակն Պօլսոյ, ի պատասխանի թղթոցն, որովք խնդրեալ էր վասն եկե-ղեցեաց և էնաֆից զանձանակագրամիցն հասուցելոց զկոնդակս շնոր-հակալութեան և միամտութեան[215]։

Ձեռ. № 4501, էջ 1038—1039

1175. 1785 թ. դեկտեմբեր—Ի Պօլիս առ Արևելցի մահտեսի Կա-րապետն, ի պատասխանի ի սեպտեմբերի ԺԸ (18) գրեալ թղթոյն վասն ոմանց իրաց[216]։

Ձեռ. № 4501, էջ 942—943

1176. 1785 թ. դեկտեմբեր—Թուղթ ի Զմիւռին առ Ապրոյեան Աս-տուածատուր աղայն, ի պատասխանի թղթոցն վասն ոմանց բանից և վասն անցից երկրիս և սրբոյ Աթոռոյս և այլ իրաց և իրակութեանց։

Ձեռ. № 4501, էջ 943—944

1177. 1785 թ. [դեկտեմբեր]—Առ Մեհրապի եղբայր Մկրտումն ի Խօյ վասն նուիրակին յանձնարարութիւն և վասն առ խանն ընծայ յղե-լոյն, վասն զերեզմանաքարին անտի բերեցելոյ և վասն նուիրակին պատուէր, զի մուղայէթ լիցի և մատուսցէ խանին։

Ձեռ. № 4501, էջ 944—945

941 1178. 1785 թ. դեկտեմբեր—Թուղթ ի յԱմստէրդամ առ պարոն Ալէքսանն վասն տուեցեալ յիշատակին նորա, որ է մի ոսկեայ և ակա-նակուռ խաչ պարանոցի (ակիզըն և այլն ըստ մեծի մասին յայլ թղթոյ է, իսկ միջարկութիւնքն այսք են, որք ի ստորեւ գրին)։

Յոր[մէ]...

Աստուածասէր և բարեպաշտօն, մեծահաւատ և պերճափառ պարոն Ալէքսանդրիդ ի Տէր զօրացելոյ, և աստուածախնամ տան քում և բնակու-թեան և ամենայն քոյայնոցն ընտա[նեացն]... Զի կայծակնամաքուր սուրբ մարգարէն Եսայիաս ասէ, թէ՝ երանի ունիցի զաւակ և ընտանի ի Սի[ոն]... և քրիստոսաէջ սրբոյ Աթոռոյս, այսինքն զմի ոսկեղէն և ականակուռ ազնիւ խաչ պարանոցի, հանդերձ իւր վայելչակերտ զան-ճիրովն, զոր եղբայրն քո և հարազատ սիրելին մեր՝ Տերամբ զօրեցեալ պարոն Եսային, գիտութեամբ և ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ՝ Պօլսոյ նուիրակ Իսահակ աստուածիմաստ վարդապետին շինեցուցեալ և յղեալ էր առաջ, քան զայս ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Զոր ընկալաք ամբողջա-պէս և մատուցաք Քրիստոսի Աստուծոյ մերոյ վերաբազմելոյն ի լուսա-կերտ սուրբ տեղւոջս և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ հանդերձ ամենայն քոյայնովքդ, որք և բազմութեամբ միաբանից ասա-ցաք զՊահպանեայն... գրեցաք ի վերայ քոյ, զի միամտեսցիս։

Եւ թէպէտ կանխագոյն էհաս հրաշակերտ խաչն առ մեզ և մեք յայնժամ ի ժամանելն իսկ կամէաք զօրհնութիւն և զմիամտութիւն գրել առ քեզ, սակայն յոյժ զբաղեալ գոլով մեր բազմազան հոգօք և ոչ կա-րացեալ ձեռնհաս լինել, խորհեցաք յետ աւուրց ինչ գրել՝ ոչ գիտելով, թէ յետոյ զի՞նչ իցէ ծնանելոց մեզ։ Իսկ ապա բազմութիւնք գազանա-սիրտ լէզկեաց կովկասականաց [իբրև քսան հազարաց յարուցեալ ի վերայ Վրացտանս և անդ ի շատ տեղիս զբազում աւերս գործեալ և գլլով յափշտակութիւնս արարեալ և զանթիւ անձինս քրիստոնէից գերեալ և ի սուր մաշեալ, յառաջ շարժեցան մերձ ի սահմանս երկրիս մերոյ տառապակրի և այս համբաւ ի վեր հնչեցաւ, թէ գալոց են ի յասպատակել զերկիրս և յաւարի առնուլ զսուրբ Աթոռս։

Վասն որոյ ամենայն բնակիչք տեղւոյս փախեան ի յամրոցն Երե-վանու։ Եւ զմեզ ևս իշխօղն երկրիս և արքայն Վրաց հարկեցին թղթով ելանել ի սրբոյ Աթոռոյս և դատարկել զսա, զի մի մեծագոյնս վնասի-ցիմք և զգերութիւնս կրիցեմք։ Ուստի և մեք նկատելով, թէ յուստեքէ ոչ գոյ օգնութիւն, թէպէտ և անկարելի է սրբոյ Տանս դատարկել, սա-կայն որչափ կարացաք զբեռինս յղեցաք ի յԵրեւան և մեք ևս միաբա-նիւք և ժողովրդովք գեղջս մերոյ ելեալ գնացաք անդ ի յանապատն մեր, որ մօտ առ բերդն, թողլով ի սուրբ Աթոռոջս զժ (10) վարդապետս և զայլ քանիս միաբանս և զքանի հարիւր զինուորս՝ ի պահպանութիւն։

Իսկ անօրէնքն այնոքիկ զիւազունդ լափլիզօղքն անցեալ գնացին ի յերկիրն Ախալցխայու։ Եւ մինչև ցայժմ դեռ ոչ լռեցաւ համբաւն այն, թէ գալոց են նոքա ի յԵրեւան և յէջմիածին աւարել և յափշտակել։ Վասն որոյ

ի Գ (3) ամսաչափ ժամանակս մնացաք արտաքոյ սրբոյ Աթոռոյս ի յԵրևան՝ երերեալ անձամբ և տատանեալ մտօք և ամենայն գործառնութիւնք և հոգալիք մեր խափանեցան: Յաղագս այսց գիպուածոց և գրութիւնս մեր, որ առ քեզ, մինչև ցարդ յետացաւ]*, յառաջ շարժեալ յայսկոյս, վրդովեցին զերկիրս և զսուրբ Աթոռս, վասն որոյ և մեք ելեալ գնացաք ի յԵրևան և անդ ընդ երկար մնացաք ամենավարան մրտօք և ամենայն բանք մեր խափանեցան և յոյժ վնասուց գիպեցաք, զորս իցէ թէ ի պարոն Եսայու գրութեանցն ցարդ իմացեալ իցես: Վասն որոյ ամենայն հարկաւոր հոգալիք մեր յետացան: Ընդ որս և զառ քեզ գրութիւնս չկարացաք գրել:

Իսկ այժմ ես, թէպէտ չունիմք զհանգստութիւն անձին և մտաց, սակայն զի յոյժ երկարեցաւ միջոցն, վասն որոյ ի վերայ ամենայն ցաւոց և վշտաց մերոց զայս հարկաւոր համարեալ ահա գրեցաք ի վերայ սիրելւոյդ զայս թուղթ օրհնութեան ի միամտութիւն քեզ ի կողմանէ բարի յիշատակիս քոյոյ և առ հարազատ եղբայրն քո՝ պարոն Եսային ևս զյատուկ գիր գրեալ զայս թուղթ ընդ նմին յղեցաք առ նա՝ հասուցանել քեզ:

Արդ, ուրեմն ընկալցի Տէր զհոգևոր յիշատակս քո ի հաճոյս իւր և փոխանակ սմին ընկալցիս դու ի Քրիստոսէ և ի սուրբ Աթոռոյս զշնորհս և զօրհնութիւնս, զխնամս և զգթութիւնս առա և ի հանդերձեալն՝ հանդերձ ամենայն կենդանեօքդ և ննջեցելովքդ: Պատուիրեմք ևս սիրելւոյդ, զի յօգտաւոր և ատուածահաճոյ բարե... (ի յօրինակէն գրեալ վերջացո):

Ի ՌՄԼԴ (1785) ի դեկ.

Ձեռ. № 4501, էջ 941

---

* Փակագծերի մեջ վերցված մասինը բնագրում ջնջված է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղուկաս Կարնեցու կաթողիկոս ընտրվելուց հետո նամակագրության գործը վարելու համար Խասհակ եպիսկոպոսին օգնական էր նշանակվել Անանիա սարկավագը, որը և այս տողերի հեղինակն է. էջ 88:

2. Այս նամակում հիշվող Հովհաննես վարդապետը 1781 թ. օգոստոսի 19-ին մահսարատար Դանիել վարդապետի միջոցով մի ձի էր ուղարկել Ղուկաս կաթողիկոսին, որի մասին համապատասխան գրանցում է կատարվել էջմիածնի վանքի նվերների մուտքի մատյանում (Մատենադարանի արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան (այսուհետև՝ Կթղկ. դիվան), թղթ. 5, վավ. 36, էջ 4): Մինչ այդ, 1780 թ. մայիսին, այս նույն Հովհաննեսը Սիմեոն Երևանցուն ուղարկել էր մի կարմիր գույնի ձի (նույն տեղում, էջ 3), № 24:

3. Պարոն Գեորգը Կարսի ազդեցիկ և ունևոր հայերից էր, որը նամակագրական սերտ կապերի մեջ էր Ղուկաս կաթողիկոսի հետ: Նրա փայեկները (նամակատարները) հաճախ էին գալիս էջմիածին: Տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ նա հաճախ նյութական օգնություն էր ցույց տալիս վանքին: 1780 թ. հոկտեմբերին Կարսում նա վճարել է էջմիածնի ներկայացուցիչներ՝ Բարսեղ և Դանիել վարդապետների, Վարդան և Մինաս «թվանքչիների» և հինգ այլ անձանց «խարաճն ու խալանճը» (գլխահարկը)՝ 73 ղուռուշ (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 270): 1784 թ. հոկտեմբերին պրն. Գեորգը գալիս է էջմիածին և վանքին նվիրում 15 ոսկի և 150 ղուռուշ (Նույն տեղում, թղթ. 5, վավ. 38, էջ 15, 17), № 25:

4. Կ. Պոլսում էջմիածնի նվիրակ Մինաս վարդապետին 1780 թ. օգոստոսի 5-ին հասցեագրած այս նամակի լրիվ տեքստը տե՛ս «Դիւան հայոց պատմութեան» (այսուհետև՝ ԴՀՊ), գիրք Դ, էջ 107—110, № 29:

5. Տե՛ս ԴՀՊ Դ գրքում հրապարակված «Թուղթ ի Կարին, նախքան չերթալն...» նամակը (էջ 5—7), № 29:

6. Այդ գրությունը՝ «Թուղթ մահսարականը» հրապարակված է ԴՀՊ Դ գրքում (էջ 19—21), № 29:

7. Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա Կաղզվանցին, լինելով կաթողիկոսական գահի հավակնորդ, երկու տարի շարունակ չէր ուզում ճանաչել Ղուկաս Կարնեցու ընտրության օրինական լինելը: Նա արգելել էր օգտագործել Սիմեոն Երևանցու նորոգած տոնացույցը և եկեղեցիներում հիշատակել Ղուկաս կաթողիկոսի անունը: Այդ մասին մանրամասն տե՛ս այս հատորի ներածական հոդվածը, № 29:

8. Զաքարիա պատրիարքին հասցեագրված էջմիածնի միաբանների այս նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 111, № 29:

9. Կարինում էջմիածնի նվիրակ Ներսես վարդապետի և վերիլ Հայրապետի ձեռքակալության լուրը բերող անձնավորության վերաբերյալ էջմիածնի վանքի դրամական ծախսերի մատյանում 1780 թ. օգոստոսի 13-ին կատարվել է հետևյալ գրանցումը.
«Ի հասանել զհամբաւ վախճանին լուսահոգւոյ ի Կարին, չար կոմրուկչին զմեր Ներսէս
նուիրակն և վէրիլ Հէրապետն ի բանդ էր եդեալ՝ թէ մեռանողի մալն ձեզ մօտ է, միրի է լի-
նելոց: Եւ նոքա զփայեկ էին տարեալ՝ ի ծանուցանել զմեզ զգիպուածն: Նոյն փայեկին ի
պահնալն ետու Ա (1) դուռուշ...» (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 267), էջ 92:

10. Կարինի «իշխաններին» ուղղված այս նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 111—114, № 34:

11. Երևանի խանության և վրացական թագավորության թշնամական հարաբերությունների մասին տե՛ս այս գրքի ներածականը, էջ 94։

12. Թիֆլիսում գանվող էջմիածնի միաբաններին ուղղված նամակը գետեղված է ԴՀՊ Դ գրքում (էջ 15—17), № 40։

13. Հերակլ թագավորին ուղղված այս նամակն ամբողջությամբ տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 7—10, № 42։

14. Ըստ դրամական ծախսերի մատյանում արված գրանցման, Դանիել վարդապետը Թիֆլիս էր մեկնել 1780 թ. օգոստոսի 21-ին և վերադարձել՝ սեպտեմբերի 23-ին։ Այդ ուղևորությունը էջմիածնի գանձարկղի վրա նստել էր 3 թուման 8000 դիան, 6 շահի և 1 փարա։ Բացի դրանից, 1 թուման և 6000 դիան վճարվել էր՝ օշականցի Իսրայելին, Սարոյին, Քուրոյին և Ճեկ Սահակին, որոնք ուղեկցել էին Դանիել վարդապետին մինչև Փամբակաձոր (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 38, էջ 269), № 42։

15. Արքայազն Գեորգի Միրզան (1746—1800 թթ.), որի հետ նամակագրության մեջ էր Ղուկաս կաթողիկոսը և որը հաճախ տարբեր խնդրանքներով դիմում էր նրան, Հերակլ II-ի ավագ որդին էր։ 1798 թ. իր հոր մահից հետո նա հաջորդեց նրան՝ Գեորգի XII անվամբ և եղավ Քարթլ-Կախեթի թագավորության վերջին գահակալը, № 43։

16. Լևան Միրզան վրաց Հերակլ թագավորի որդին էր։ Սպանվել է 1781 թ., № 44։

17. Ինչպես երևում է, Ղուկաս կաթողիկոսը նամակագրական կապ է ունեցել վրաց Անտոն I կաթողիկոսի (1720—1788 թթ.) հետ։ Անտոն I կաթողիկոս Բագրատիոն արքայազնը հեղինակը և թարգմանիչն է ավելի քան երկու տասնյակ կրոնական, պատմական, քերականական և փիլիսոփայական բնույթի երկերի, որոնց մի մասի մեջ տեղեկություններ են պահպանված Հայաստանի ու հայերի մասին (տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 95—96)։ 1946 թ. հրատարակվել էր Ղուկաս Կարնեցուն հասցեագրած նրա նամակը («Описание грузинских рукописей Государственного Музея Грузии», т. I, Тбилиси, 1946, стр. 174, 176—177)։ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը լույս է ընծայել այդ նամակի հայերեն թարգմանությունը («Նամակ Ղուկաս ամենայն կաթողիկոսին», տե՛ս նշված աշխ., էջ 102—103)։ Նա նկատել է, որ սխալ է նշված եղել նամակի թվականը՝ 1756 թ.։ Նրա կարծիքով, «գույգ կաթողիկոսների գրագրությունը կարող էր տեղի ունենալ միմիայն 1780—1788 թթ. միջոցին, գուցե 1780 կամ, որ ավելի հավանական է, 1786-ին, բայց ոչ մի դեպքում 1756-ին» (նույն տեղում, էջ 103)։ Ներկա հատորի մեջ հրապարակված նյութերից երևում է, որ Ղուկաս Կարնեցու և Անտոն I-ի միջև նամակագրությունն սկսվել է Ղուկասի ընտրվելուց անմիջապես հետո՝ 1780 թ. օգոստոսին, № 45։

18. Ինչպես երևում է նվերների մուտքի մատյանում արված գրանցումից, այդ օրերին քուրդ Շամոյին ազան Հասան աղայի միջոցով Ղուկաս կաթողիկոսին նվեր էր ուղարկել մի ձի (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 36), № 51։

19. Ավագ քահանա Ղազարին (Թիֆլիս) ուղղված նամակի լրիվ օրինակից, որը հրապարակված է ԴՀՊ Դ հատորում (էջ 129—131), երևում է, որ այն գրվել է (կամ առաքվել) 1780 թ. հոկտեմբերին, № 53։

20. Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա արքեպիսկոպոսին ուղղված նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 99—106, № 72։

21. Կ. Պոլիս ուղարկված նամակներից էր նաև մահտեսի Հարության ամիրային ուղղված գրությունը, որի լրիվ բնագիրը հրատարակված է ԴՀՊ Դ գրքում, էջ 24—30, № 74։

22. Արևելցի պարոն Գեորգին և պարոն Աստվածատուրին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 31, № 75։

23. Իզմիրի (Զմյուռնիայի) հայերին ուղղված կոնդակի մասին խիստ համառոտ տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 115, № 95։

24. Ամստերդամի հայերին հասցեագրված այս նամակի համառոտագրությունը զետեղված է ԴՀՊ Դ գրքում (էջ 31—37), № 97։

25. Այս դեպքերից շատ չանցած Կարինում էջմիածնի նվիրակն ազատ է արձակվում և 1781 թ. հոկտեմբերին գալիս էջմիածին՝ հետը բերելով մի շարք ապրանքներ (հագուստեղեն,

կոշիկներ, շաքար, օճառ և այլն), որոնք գրանցված են մուտքի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 4), № 132։

26. Կարինի հայ մեծատուններին գրված նամակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 31—33, № 135։

27. Մշո ս. Հովհաննես վանքի թեմին ուղղված այս նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 31, № 138։

28. Բեժան Արղությանը ռուսահայոց հոգևոր թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի եղբայրն էր, էջ 123։

29. Վանքի ծախսերի մատյանից երևում է, որ Բ. Արղությանը էջմիածին էր ժամանել «իր երեք տանիկ մարդկանց» հետ, որոնց 1780 թ. հոկտեմբերի 4-ին վճարվել է 3 թուման Բեժանին և 4000 դիան՝ ուղեկիցներին (Տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 269)։ Ղուկասի՝ 1791 թ. օգոստոսին Հ. Արղությանին ուղղած ցավակցական նամակից երևում է, որ Բեժանը մահացել է 1791 թ. (տե՛ս ԴՀՊ, Ե, էջ 222), էջ 123։

30. Հնձացի Կարապետ վարդապետի միջոցով 1780 թ. հոկտեմբերի 4-ին Հերակլ թագավորին և վրաց մեծամեծներին ուղարկված նվերների մասին կատարվել է գրանցում ելքի մատյանում։ Երևում է, որ այդ օրը նվերներ են ուղարկվել նաև Գեորգի և Լևան թագաժառանգներին, Անտոն կաթողիկոսին, Դավիթ Սարդարին, Ջազարեկին, Սուլխան Դիվանին, Գեորգի և Միսայել եղբայրներին։ Ուղարկված իրերի մեջ եղել են ժամացույցներ, զգեստներ, հնդկական ու եվրոպական գործվածքեղեն, բոնոթամաններ, կոշիկներ և այլն (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 252), էջ 123։

31. Հերակլ թագավորին ուղղված 1780 թ. հոկտեմբերի 5-ի նամակն ամբողջովին հրապարակել է Գ. Աղանյանցը (ԴՀՊ, Դ, էջ 33—36), № 200։

32. Վրաց Անտոն կաթողիկոսին ուղղված 1780 թ. հոկտեմբերի 5-ի այս նամակն ամբողջությամբ տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 37, № 151։

33. Վրաց Ամրակում եպիսկոպոսին 1780 թ. հոկտեմբերի 5-ին ուղարկված նամակը լրիվ տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 42—43, № 155։

34. Իսրայել կաթողիկոսին ուղղված նամակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 39—40, № 161։

35. Յ. Ռայնեգսին հասցեագրված անդրանիկ նամակն ուղարկվել է Վրաստան՝ Հնձացի Կարապետ վարդապետի հետ հոկտեմբերի 4-ին։ Նամակի հետ միաժամանակ Ռայնեգսին ուղարկվել են նվերներ, որոնք գրանցված են ելքի մատյանում՝ «Տօխտոր Յակոբին՝ Ա (1) բաղայ և զարլու իրր, լաւ բոնոթաման և Ա (1) հնտու մահրամայ» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 252)։ Ինչպես երևում է հրապարակված նյութերից, «Տօխտոր Յակոբ»-ի անունը հաճախ է հոլովվում Ղուկասի նամակներում, դա Յակոբ Ռայնեգսն էր, նույն ինքը Յակոբ Էհլիխը՝ արկածախնդիր մի գերմանացի, որը ծառայության էր անցել ռուսների մոտ։ Նա ծնվել է 1744 թ. Սաքսոնիայի էյսլեբեն ավանում։ Որոշ ժամանակ Լայպցիգում բժշկություն կամ, ավելի շուտ, ալքիմիա ուսումնասիրելուց հետո շրջել է Եվրոպայի մի շարք քաղաքներում, 1778 թ. էջմիածնում և ապա Բյուրահետո ուղևորվել Թուրքիա, այնտեղից էլ՝ Հայաստան։ կանում նրան հյուրընկալում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը։ Հետո նա գնում է Վրաստան և երեք տարի ծառայում Հերակլ II-ի մոտ, որտեղ հիմնադրում է մի քանի մետաղագործական ձեռնարկություններ, ինչպես և վառոդի գործարան։ Սակայն ինչ-որ բանից դժգոհ մնալով վրաց թագավորից, Յ. Ռայնեգսը որոշում է հեռանալ Վրաստանից։ 1781 թ. նամակով դիմում է Ղուկաս կաթողիկոսին ու հայտնում հայ-լուսավորչական դավանանք ընդունելու և բնակվելու համար էջմիածին տեղափոխվելու իր ցանկության մասին։ Չկամենալով փչացնել իր հարաբերությունները վրաց թագավորի հետ, Ղուկաս Կարնեցին թույլ չի տալիս Ռայնեգսին հաստատվելու էջմիածնում (տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, стр. 50—52)։ Ռայնեգսը մեկնում է Ռուսաստան և ներկայանում իշխան Գ. Պոտյոմկինին։ 1782 թ. որպես ռուսական իշխանությունների լիազոր նա Աստրախանի վրայով ուղևորվում է դեպի Կովկաս։ Դեկտեմբերի վերջերին գալիս է էջմիածին և Ղուկաս կաթողիկոսին հանձնում Գ. Պոտյոմկինի նամակը։ Յ. Ռայնեգսը համոզվում է, որ հայերն անհամբերությամբ սպասում են ռուսական զորքերի գալստյանը և պատրաստ են ամեն կերպ օգնել նրանց։ Իր տպավորությունների մասին նա գրում է Գ. Պոտյոմկինին, իսկ վերջինս այդ մասին գրավոր իրազեկ է պահում Եկատերինա II կայսրուհուն (նույն տեղում, էջ 54—55)։ Ռայնեգսը լինում է նաև Երևանի Հուսեյն-Ալի խանի մոտ՝ առևտրական կապեր

հաստատելու, բայց, փաստորեն, հետախուզական տեղեկություններ հավաքելու նպատակով: Հունվարի վերջերին նա մեկնում է Թիֆլիս: Ռայնեգսի միջոցով կաթողիկոսը նամակներ է ուղարկում Գ. Պոտյոմկինին, Հ. Արղությանին, Հ. Լազարյանին և ուրիշների: Ակադ. Ա. Ռ. Հովհաննիսյանը ենթադրում է, որ Ռայնեգսի միջոցով էր ուղարկվել Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսի և Ղարաբաղի մելիքների նամակը Եկատերինա II-ին, որով նրանք խնդրում էին Ղարաբաղի հայերին ընդունել ռուսական հովանավորության տակ (նույն տեղում, էջ 56—57): Ռայնեգսի հետագա գործունեությունը նպաստավոր չեղավ ռուսական հրամանատարության մտահղացումների իրականացման համար: Ավելորդ ջանասիրություն դրսևորելով, նա խառնվում է իրեն չվերաբերող խնդիրներին, այդ թվում և Հաղբատի թեմի առաջնորդ ընտրելու հարցին, որի կապակցությամբ նամակագրության մեջ է մտնում Ղուկաս կաթողիկոսի հետ (Ձեռ. № 2803, էջ 74—75, 198—199, 300—304), մտածում դղուշության մասին և վտանգի տակ դնում ռուսների հետ կապ ունեցողներին, ուստի Գ. Պոտյոմկինի հրամանով 1784 թ. հունիսին նա կանչվում է Հյուսիսային Կովկաս, նրա փոխարեն նշանակվում է Ս. Դ. Բուռնաշևը: Հետագայում Յ. Ռայնեգսը հաստատվում է Պետերբուրգում և աշխատում որպես բժշկական կոլեգիայի գիտնական քարտուղար: Մահացել է 1793 թ. (տե՛ս А. Р. Иоаннисян, նշված աշխ., էջ 75—77): 1797 թ. Յ. Գ. Գերբերը Պետերբուրգում հրատարակեց Ռայնեգսի «Կովկասի պատմա-տեղագրական ընդհանուր նկարագրություն» գիրքը, որի մեջ զետեղված են նաև նրա կենսագրությունը, ինչպես և նամակներն ու զանազան վավերագրեր (նույն տեղում, էջ 50): Նրան հասցեագրված նամակները տե՛ս Վ. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, էջ 38), № 163:

36. Այս նամակի հետ միաժամանակ Մելիք Ավետիքին և նրա եղբայր միրիշքյարբաշի Իվանեին ուղարկվել են նվերներ՝ մեկական չուխա (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 252), № 164:

37. Մելիք Մկրտում Բաղդյանին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 40: Նրան ևս ուղարկվել է նվեր («Բ (2) զազ հողագոյն ֆէլէմէնկ չուխայ»), որի մասին գրված է ելքի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 252), № 165:

38. Ղուկաս Կարնեցու նամակներում հաճախ հոլովվում է «արխադաց Սոլոմոն թագավոր» անունը, որի հետ կաթողիկոսը նամակագրական կապ ուներ: Սոլոմոնը Արխազիայի թագավորը չէր, այլ Իմերեթիայի: Նա գահ էր բարձրացել 1752 թ., տևական պայքար մղել Արևմտյան Վրաստանն ամբողջությամբ իր տիրապետության տակ գցելու և այնտեղից թուրքերին վռնդելու համար: Մահացել է 1784 թ., № 217:

39. Այստեղ հիշատակված արխազաց Մաքսիմե կաթողիկոսը Իմերեթիայի կաթողիկոս Մաքսիմ Կուտաթելին է, որին դեռևս 1768 թ. Սոլոմոն I-ը ուղարկել էր ռուսական թագավորի մոտ՝ հովանավորություն ստանալու խնդրանքով (տե՛ս Н. А. Бердзенишвили. В. Д. Дондуа, М. К. Думбадзе, Г. А. Меликишвили, Ш. А. Месхия, История Грузии, т. I, Тбилиси, 1962, стр. 368), № 167:

40. Իմերեթիայի հայ բնակչությանն ու Սոլոմոն թագավորին ուղարկված նամակների համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 43—44, № 173:

41. Կոնդակը տալուց մի քանի օր առաջ (1780 թ. սեպտեմբերի 23-ին) նվերների մուտքի մատյանում գրանցվել են Թիֆլիսում էջմիածնի գործակալ տեր Ղազար քահանայի տված նվերները՝ «Վեց կոթաւոր չայի թաս չինի՝ իւրեանց թարաղովն, Ա (1) արծաթեայ րանօթաման ոսկեջրեալ, Ա (1) սահաթի աման՝ սուրմայագործ, Ա (1) թուղամայ բէսայ, Բ (2) ջուխտ ջօրապ՝ թող զնացոն» (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36), № 175:

42. Գյանջայի հայերին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 129, № 190:

43. Մուտքի մատյանում գրանցված է ջուղայեցի տեր Հովհաննեսի որդի տիրացու Ստեփանի նվերը՝ սև գույնի կտոր՝ «սև թիրմաշալ»: Նվերը տրվել է հոկտեմբեր ամսին (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 41), № 196:

44. Հերակլ II-ի ուղարկած նվերի մասին 1780 թ. հոկտեմբերի 21-ին մուտքի մատյանում գրվել է հետևյալը. «Հերակլ արքայն Վրաց, ընդ Գեօրգին Սուլթանին իւրոյ, երկու կլապիտոնով ասղագործ բարձի երես էր յղեալ ընծայ առ սրբազանն» (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 57): Իսկ ելքի մատյանից տեղեկանում ենք, որ հոկտեմբերի 26-ին նվիրաբեր Գեորգիին կանխիկ դրամից բացի տվել են նաև մի վերարկու և փոքր վրան (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 253): Կանխիկ դրամը գրանցվել է ելքի մատյանում (Գեորգին Սուլթանին տվել են 9 թուման, իսկ նրա հետ ժամանած մարդկանց՝ մեկ թուման (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 270), № 202:

45. Ռուսահայերին ուղղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 131, էջ 144:

46. Հովհաննես աղան XVIII դարի հայ ազատագրական շարժման ակտիվ մասնակից Հովհաննես Աղազարի Լազարյանն է (1735—1801), № 226:

47. Ղուկաս Կարնեցու նամակներում կամ նրանց հիման վրա կազմված համառոտագրություններում հազվադեպ են հիշատակվում Երևանի խաների անունները: Տվյալ դեպքում «մեր երկրիս բռնաւոր» կամ «իշխող մեր» ասելով ի նկատի ուներ Երևանի Հուսեյն-Ալի խանին (1762—1783 թթ), № 226:

48. Մոսկվայում ապրող եղիազար աղան Աղազար Նազարեթի Լազարյանն էր (1700—1782 թթ.), Լազարյանների հայտնի ընտանիքի նահապետը: Հիշատակված են նաև նրա որդիները՝ Մինասը (1737—1809 թթ.) և Հովակիմը (1743—1826 թթ.): Աղազար Լազարյանին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 132, № 227:

49. Ներսես աղային հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 132, № 228:

50. Փիլիպոս և Մարգար Մանուչարյանները ջուղայեցի Աստվածատուրի որդիներն էին, ապրում էին Պետերբուրգում, մշտապես գրագրություն ունեին կաթողիկոսի հետ և երբեմն արժեքավոր նվերներ էին ուղարկում նրան (ԴՀՊ, Դ, էջ 244): Ղուկաս կաթողիկոսը, Հ. Արղությանի խնդրանքով, 1780 թ. նոյեմբերի 21-ին տեղեկանք էր տվել նրանց՝ ազնվական ծագում ունենալու մասին (ԴՀՊ, Դ, էջ 516—518): Մանուչարյաններին հասցեագրված այս նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 132, № 229:

51. Նոր Նախիջևանի հայերին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 56, № 230:

52. Նոր Նախիջևանում հաստատված ղրիմահայերի մեծամեծներին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 56, № 231:

53. Հ. Արղությանին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 132—133, № 232:

54. Մոզդոկ քաղաքում էջմիածնի գործակալներ Գեորգիին և Մանդասարին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 132, № 233:

55. Երևանի խանի խնդրանքով Ղուկաս Կարնեցու գրած այս նամակի և Գալուստ վարդապետի բանագնացության վերաբերյալ ուշագրավ հիշատակություն կա նվերների մուտքի մատյանում: Ստորև ամբողջությամբ բերում ենք այն.

«Վասն երկրիս ի Վրացտուն վարեցեալ ժողովրդոցն խանն հարկ եդ սրբազանին՝ մարդ յղել առ Հերակլ արքայն և աղերսականաց գիր գրել, զի յղեսցէ զնոսա աստ: Եվ սրբազանն զԳալուստ վարդապետն յղեաց թղթով: Եվ զի յառաջագոյն ընծայ էր յղեալ սրբազանն արքային և այլոցն, որպէս ի վերդ ի միւս երեսն ցուցանի, վասն այն այժմ ոչ ինչ յղեաց ընդ սմա: Միայն զրանի մի մանր իրս տալ եա սմա, զի ի հանդիպիլ արքային և այլոցն՝ որպէս թէ յինքէնէ տայցէ: Որք էին՝ Բ (2) հնտու զումաշ մահրամայք, Ա (1) բաղայ սանդր՝ խաս ամանով, ութ հատ քեաթան մահրամայք՝ շատ լաւն՝ տունքն ծաղկեալ, ԺԵ (15) հատ պղնձակոթ չախուք, Գ (3) Ե (5) հատ հասարակ մահրամայք եւ քեաթան, որ է ԺԸ (18) հատ մարթահատ սատաֆակոթ չախուք եւ, Ա (1) լիտր և կէս ճերմակ մոմ, պայի զալիպ: Ի նոյեմբերի ԺԴ (14), օրն շաբաթ» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 253), № 241:

56. Բայազետում տեղի ունեցած այս դեպքի մասին ահա թե ինչ է գրված դրամական ծախսերի մատյանում, «Իսկ չորս ջորիքն մեր ի տան միում կպեալք, տունն փլեալ էր ի վերայ նոցա և սատակեալ էին, որոց գինն տուեալ էր փաշային» (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 271), № 250:

57. Ինչպես Սիմեոն Երևանցին, այնպես էլ Ղուկաս Կարնեցին աշխատել են բարեկամական հարաբերություններ պահպանել շրջակա մահմեդական իշխողների հետ՝ նրանց տիրապետության տակ ապրող հայ բնակչության վիճակը փոքր-ինչ թեթևացնելու նպատակով: Ղուկաս

Կարնեցին մշտապես նամակագրական կապերի մեջ էր Բայազետի Խաղ փաշայի հետ և հաճախ նվերներ էր ուղարկում նրան, № 251։

58. Յոնուզ բեկի որդի Մահմուտին հանդչում էին էջմիածնի վանքում. նա էր, որ 1779 թ. փետրվարին էջմիածին բերեց Բայազետի Խաղ փաշայի ընծայած ձին (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 60), № 252։

59. Ճորտ Մանուչարի մասին ծախսերի մատյանում կարդում ենք. «Մեր ճորտ Մանուչարին եառ մէկ թուման՝ ի դառնայն Թիֆլից, որ անտի ամանաթ էր բերեալ վասն մեր» (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 271), էջ 155։

60. Կարապետ վարդապետին հասցեագրված նամակի մեջ հիշատակված ճորտ Մանուչարն այդ ժամանակ նվեր էր բերել նաև Թիֆլիսեցի տեր Ղազարից և այդ մասին մուտքի մատյանում արված է հետևյալ գրանցումը. «Թիֆլիզեցի տէր Ղազարն, ձեռամբ ճորտ Մանուչարին. լցեալ էր Ա (1) ազնիւ ոսկէ զութի» (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 42), № 254։

61. Էջմիածնի վանքին ճորտ նվիրաբերողներին ուղղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 56, № 258։

62. «Յատուկ ծառայ» անվամբ նկատի ունեին ճորտ։ Այդ նորընծա ճորտ պարոն Շաքարոն փաստորեն սուրհանդակի պարտականություն էր կատարում։ Նրա միջոցով Վրաստանից ուղարկվում էին ոչ միայն նամակներ, այլև զանազան իրեր (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 57), № 258։

63. Կովկասյան լեռնականները պարբերաբար հարձակումներ էին գործում Վրաստանի վրա՝ ավերում բնակավայրերը, թալանում, գերեվարում մարդկանց։ Վրաց թագավորը երբեմն հարկադրված էր լինում դրամական վճարումներով կանխել այդօրինակ արշավանքները։ Հայտնի է, որ Հերակլ II-ը ամեն տարի նշանակալից գումարներ էր տալիս Ավարայի Ումմա կամ Օմար խանին՝ Վրաստանի վրա չհարձակվելու պայմանով։ Այդ գումարն այստեղ անվանված է «լէզկու հարկ», № 262։

64. Նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 58, էջ 263։

65. Կ. Պոլսի «իշխաններին» 1780 թ. դեկտեմբերի 5-ին հասցեագրված նամակի լրիվ տեքստը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 58—60, № 326։

66. Ղուկասը գործնական քայլեր է արել Վրաստան տարված գյուղացիներին ետ բերելու համար։ Այդ հանձնարարությամբ նա Հերակլ թագավորի մոտ էր ուղարկել իր ներկայացուցիչ Գալուստ վարդապետին։ Բնականաբար այդ ժամանակ ծախսվել էին գումարներ, որոնց մասին ծախսերի մատյանում կատարվել է ներքոհիշյալ գրանցումը. «Աշտարակցի Գալուստ վարդապետին, ի գնալն առ Հերակլ արքայն թղթով սրբազանին վասն վարեցեալ ժողովրդոցն մեզ, գի գարձուցէ (որ ոչ եղև), խարճի եառ Գ (3) թուման։ Ի նոյ. ԺԴ (14) չորեքշաբթի րոց, (1780 թ.)» (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 273), № 263։

67. Խոսքը վերաբերում է Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի թալանին, որը կատարվել է 1780 թ. Ալի Մուրադ խանի կարգադրությամբ («Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան», աշխատասիրեալ ի պ. Յարութիւնէ Թ. Տէր Յովհաննեանց, հ. առաջին, Նոր Ջուղա, 1880, էջ 326—327), № 263։

68. Հ. Արղությանին հասցեագրված այս նամակի ամբողջական բնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 148—152, № 272։

69. Իբրահիմը (Փանահ խանի որդին), ծնվ. մոտ. 1722 թ., մահացել է 1806 թ., 1762 թ. մինչև 1806 թ. Ղարաբաղի խանն էր. նա հայ ազատագրական շարժման կատաղի թշնամի էր և նրա ջանքերով վերացվեցին Ղարաբաղի հայկական մելիքությունները, № 281։

70. Շուշիի հայ բնակչությունը շրջակա վայրերից, ինչպես և ոչ այնքան մոտ վայրերից տեղափոխված հայեր էին։ Նրանց մեջ հատկապես մեծ թիվ էին կազմում ղազանչի կոչված հայերը, որոնք Ղափանի վրայով գաղթել էին Գողթանի Շահկերտ ավանից։ 1750 թ. անհաջող ապստամբությունից հետո շահկերտցիները, որոնց գյուղը մեծ մասամբ կաթսայագործ բնակիչներ ունենալու պատճառով կոչվում էր Ղազանչի (կաթսայագործ), փախչում են Ղափան, որտեղից Փանահ խանը տեղափոխում է նրանց Շուշի։ Շուշի գաղթեցին նաև շատ ագուլիսցիներ

(1752 թ. Ազատ խանի հարձակումներից հետո) և սահմանափակ թվով մեղրեցիներ։ Տարբեր վայրերից գնացած գաղթականները Շուշիում ապրում էին առանձին թաղամասերում և ունեին իրենց բեղխուդաները։ XVIII դարի 80-ական թվականներին դեռևս չէին ջնջվել Շուշիի բնակչության այդ առանձին խավերի տարբերությունները, ուստի Ղուկաս Կարնեցու գրություններում հիշատակված են Շուշիի ղազանչիները, ագուլիսցիները և այլն, № 282։

71. Աղվանից Հովհաննես կաթողիկոսը (1763—1788 թթ.) XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկն էր։ Սպանվել է Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմից, № 285։

72. Վարանդայի Մելիք Շահնազարի մասին տե՛ս այս աշխատության ներածականը, № 286։

73. Մելիք Ջիմշիդ Մելիք-Շահնազարյանը Վարանդայի մելիքն էր, որը ձգտում էր օգնություն ստանալ ռուսներից՝ Իբրահիմ խանի ոտնձգություններից պաշտպանվելու համար։ Բազմիցս դիմումներ է կատարել ռուսական իշխանություններին։ 1799 թ. եղել է Պետերբուրգում, նրան ընդունել է Պավել I թագավորը։ Հետագայում հարկադրված է եղել իր հպատակների հետ գաղթել Լոռի։ 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին մասնակցելու համար պարգևատրվել է ոսկե թրով («Присоединение Восточной Армении к России», сборник документов, т. I (1801—1813). Ереван, 1972, стр. 39, 40, 648), № 286.

74. Մելիք Հովսեփի որդի Մելիք Բեգլարը Գյուլիստանի տիրակալն էր։ Ջրաբերդի Մելիք Ադամի հետ միասին երկար տարիներ նա պայքար մղեց Իբրահիմ խանի դեմ։ XVIII դ. 60-ական թթ. Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքները հարկադրված եղան իրենց մարդկանցով տեղափոխվել Գանձակի խանություն։ Հովատարիացումներ ստանալով Իբրահիմ խանից, որ չի խառնվի նրանց գործերին, մելիքները վերադարձան 1767 թ.։ Այն բանից հետո, երբ Իբրահիմ խանը 1780 թ. սպանեց Դիզակի Մելիք Եսային, Մելիք Բեգլարն ու Մելիք Ադամը ընդունեցին Հերակլ թագավորի հովանավորությունը։ 1781 թ. սեպտեմբերի 2-ին նրանք գրավոր դիմեցին ռուսական կառավարությանը՝ զինված օգնության խնդրանքով։ Մելիք Բեգլարը սպանվել է 1781 թ. լեզգիների հետ ունեցած զինված ընդհարման ժամանակ (տե՛ս А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 59), № 287։

75. Մելիք Ադամը Ջրաբերդի տիրակալն էր։ Մահացել է 1783 թ.։ Նրա մասին տե՛ս ծանոթ., էջ 74, № 288։

76. Ահարոն վարդապետի այդ անհաջող ուղևորությունը տեղի է ունեցել 1780 թ. օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 18-ը։ Ծախսերի մատյանում գրված է. «Ահարոն վարդապետն մինչ գնաց ի Խոյ և ի Նախիջևան վասն մահսար բերելոյ, ի գնալն և ի գալն խարճեալ էր Ա (1) թուման, ԲՌ (2000) դիան, Բ (2) ապասի։ Յօգոստոսի Է (7) օրն ուրբաթ գնաց և ի սեպտ. ԺԸ (18) օրն եկն» (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 269), էջ 178։

77. Նոր Նախիջևանի պարետ Սիմեոն Գրիգորևիչ Գուրովին 1781 թ. փետրվարի 3-ին ուղարկված նամակը հրատարակված է ԴՀՊ Դ գրքում, էջ 71—73, № 309։

78. Նորնախիջևանցի «գեֆուստա» Գրիգորի անունը հիշատակված է նաև էջմիածնի վանքի նվերների մատյանում, ուր գրված է, որ նա էջմիածին էր եկել Հ. Արղությանի եղբայր Բեջանի ներկայացուցիչ Ալիի հետ և մեկնել փետրվարի 4-ին, № 310։

79. Հ. Արղությանին ուղարկված այս նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 74, № 313։

80. Մոզդոկ պարետ, գնդապետ Ալեքսանդր Նյոգորովիչ Իվանովին 1781 թ. փետրվարին հասցեագրված նամակն ամբողջությամբ հրատարակված է ԴՀՊ Դ գրքում, էջ 68—71, № 315։

81. Մոզդոկում էջմիածնի գործակալներ՝ պրն. Գեորգիին և Մանգասարին ուղղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 68, № 316։

82. Թիֆլիսի Վանքի եկեղեցու քահանա տեր Պետրոսին 1781 թ. փետրվարի 4-ին ուղարկված նամակի լրիվ տեքստը հրատարակված է ԴՀՊ գրքում, էջ 67—68, № 317։

83. «Բաշբօրթի» օրինակը տե՛ս վավ. № 625։

84. Բայազետի հայերին 1781 թ. փետրվարի 7-ին հասցեագրված նամակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 74—77, № 323։

85. Վրաց արքայազն Լևանի սպանության վերաբերյալ տեղեկությունը կարևոր նշանակու-

թյուն ունի վրաց պետության այդ նշանավոր գործչի մահվան հանգամանքները պարզելու համար։ Լևանը Հերակլի հուսալի օգնականն էր քաղաքական ու ռազմական բոլոր հարցերում։ Նա էր, որ գլխավորեց վրացական մշտական զորքի՝ մորիգեի ստեղծման կարևոր գործը։ Առայժմ հրապարակված գործերում Լևանի մահվան պատճառների մասին համոզիչ տվյալներ չկան։ Վրաց պատմաբան Գերոնտի Կիկոձեի «Հերակլ Երկրորդ» գրքում նշված է, որ Լևանը մեռել է Կախեթում 1782 թ. գարնանը՝ շատ հանելուկային պայմաններում։ Իբր թե նա հրավիրված է եղել մի գյուղ հարսանիքի, որտեղ նրան գուր է եկել կայվածատիրոջ կինը, որը և իր պատիվը պաշտպանելիս դաշունահարելով սպանել է նրան (Геронти Кикодзе. Ираклий Второй. Тбилиси, 1947, стр. 102—103)։ Բերելով այս տեղեկությունը, Գ. Կիկոձեն գրում է. «Դժվար է ասել, թե որքան ճիշտ է այդ մի քիչ վիպական գունավորում ստացած պատմությունը, ինչպես երևում է, ժամանակակիցները չեն կարողացել պարզել սպանության հանելուկային հանգամանքները» (ն. տ.)։ Այն ինչ բացակայում է վրացական աղբյուրներում, պահպանվել է հայ կաթողիկոսի գրագրություններում, և Ղուկաս Կարնեցու նամակները կարող են պարզություն մտցնել այդ հարցի մեջ։ Լևան արքայազնը զոհվել է ոչ թե ինչ-որ կնոջ ձեռքով, այլ ընկել է մարտի դաշտում, հայրենի երկիրը պաշտպանելիս։ Ճշգրտումը շատ էական է և կարևոր Լևանի կյանքի պատմությունն ուսումնասիրելու համար։ Էջմիածնում քաջ տեղյակ էին այդ պատմությանը։ Կաթողիկոսը, ինչպես երևում է հրապարակված նյութերից, աշխույժ գրագրության մեջ է եղել նաև Լևանի հետ և լուր ստանալով նրա մահվան մասին, Հերակլ թագավորին ցավակցություն հայտնելու համար անմիջապես Թիֆլիս է ուղարկել Գալուստ վարդապետին, որի հետ նա ցավակցական նամակներ է ուղարկել Հերակլ II-ին, Դարեջան թագուհուն և արքայազն Գեորգիին (տե՛ս ԴՊՀ, Դ, էջ 77—84, 160—163)։ Հարկ է նշել, որ Գ. Կիկոձեի տեղեկությունը՝կասկածելի է նաև ժամանակի առումով։ Ինչպե՞ս կարող էր Լևանը սպանված լինել 1782 թ. գարնանը, ինչպես նշված է Կիկոձեի գրքում, երբ նրա սպանության մասին գրանցումը էջմիածնում կատարվել է դրանից գնեւս մեկ տարի առաջ՝ 1781 թ. փետրվարին։ Այդ նույն ժամանակ էլ գրվել են ցավակցական նամակները։ Լևան արքայազնի սպանության վերաբերյալ Ղուկաս Կարնեցու գրագրություններում պահպանված տեղեկությունների մասին տե՛ս В. Р. Григорян. Архив армянского католикоса Гукаса Карнеци как первоисточник по истории Закавказья последних десятилетий XVIII ст. էջ 200։

86. Գալուստ վարդապետի ուղևորության մասին հիշատակություն կա նաև Իլբի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 254), էջ 200։

87. Լևան արքայազնի մահվան կապակցությամբ վրաց արքային Ղուկաս կաթողիկոսի 1781 թ. փետրվարի 20-ին գրած ցավակցական նամակի լրիվ բնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 77—80, № 329։

88. Վրաց Դարեջան թագուհուն ուղղված նամակի լրիվ տեքստը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 81—84, № 330։

89. Վրաց արքայազն Գեորգիին հասցեագրված մխիթարական նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 160—163, № 331։

90. Բասրայի, Բուշեռի, Բաղդադի և շրջակայքի հայության ուղղված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 160, № 339։

91. Պարոն Բեթխեհեմյան Հովհաննեսին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 160, № 91։

92. Հիշատակվում է XVIII դ. հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկին՝ Մովսես Բաղրամյանին Շ. Շահամիրյանի խնդրանքով տրված «արձակման գիրը»։ Հայտնի է, որ «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գրքի հրապարակման կապակցությամբ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը բանադրանքի էր ենթարկել Մովսես Բաղրամյանին (ԴՀՊ, Ը, մասն Բ, էջ 576—578)։ Բայց հետագայում, Շ. Շահամիրյանի խնդրանքով, Սիմեոն Երևանցին Մ. Բաղրամյանին ազատում է բանադրանքից։ Այս դեպքում, ըստ երևույթին, եթե դեր չէ խաղացել նաև այն հանգամանքը, որ առևտրի ասպարեզ մտած Մ. Բաղրամյանը կարողացել էր բավականին հարստանալ և դառնալ հնդկահայ գաղութի ազդեցիկ դեմքերից մեկը (տե՛ս А. Р. Иоаннисян. Иосиф Эмин, стр. 306), № 344։

93. Ղափանցի մահտեսի Թումանին գրած նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 84, № 351։

94. Տիրացուներ՝ Հովհաննեսին և Սիմեոնին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 84, № 352։

95. Բուրսայի առաջնորդ Հովհաննես վարդապետին ուղղված գրության համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 84, № 353։

96. Վրաց թավադ Գեորգի բեկն առաջադրանք ուներ գնալու նաև Նախիջևան։ (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 256), № 365։

97. Նախիջևան մեկնելուց առաջ Գեորգի բեկը նոյեմբերի 17-ին եղել էր էջմիածնում և կաթողիկոսը նվեր էր տվել նրան՝ «Ա (1) տոնլուղ խառոյ» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 256), № 365։

98. Կ. Պոլսում էջմիածնի նվիրակ Մինաս վարդապետին և մահսարատար Պետրոս վարդապետին ուղարկված պատասխան նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 85, № 384։

99. Ջուղայեցի Պողոսյան խաչիկն ապրում էր Կ. Պոլսում և գրագրություն ուներ Ղուկաս կաթողիկոսի հետ (ԴՀՊ, Դ, էջ 85, 163)։ Հետագայում նա տեղափոխվում է Ռուսաստան և այդ կապակցությամբ կաթողիկոսը հանձնարարական նամակներ է հղում Հ. Արղությանին, Եղիազար և Հովհաննես Լազարյաններին (նույն տեղում, էջ 269—270)։ Հ. Արղությանին հասցեագրված նամակից տեղեկանում ենք, որ «Ատենի ժամագիրքը» տպագրվել է «ըստ խնդրոյ ջուղայեցի Պօղոսեան պարոն խաչիկին» (նույն տեղում, էջ 269)։ Պողոսյան խաչիկին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 85 , № 385։

100. Իմերեթիայի Սոլոմոն թագավորին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 85, № 413։

101. Առաջնորդական Կոնդակի կրճատված տեքստը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 85—87, № 442։

102. Ախալցխայի հայ բնակչությանը հասցեագրված 12 հուլիսի 1781 թվակիր նամակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 89—91, № 449։

103. Համառոտագրությունը թույլ է տալիս լրացնել նամակի հրատարակված օրինակը։ Նամակում թվարկված են նվերները՝ մոմ, մեղր, ձիթապտուղ և «Ա հակն զոր յաղագս թղթահնոտի չոր՝ վասն թղթաշինութեան»։ Համառոտագրության մեջ ավելի հասկանալի է՝ «Ա (1) հակն շինութեան» (ԴՀՊ, Դ, էջ 89)։ Համառոտագրության մեջ, № 449։

104. Դոկտոր Յ. Ռայնեգսի լուսավորչականության ընդունելու մասին տե՛ս ծանոթ. № 45, № 458։

105. Վրաց հոգևորական էֆրեմի ուղարկած նվերները մուտքի մատյանում սխալմամբ գրանցվել են 1780 թ. ստացված նվերների մեջ, բայց անմիջապես այդ մասին տրվել է համապատասխան ծանոթագրություն՝ «սխալմամբ գրեցաւ աստ»։ Ինչպես երևում է 1781 թ. հուլիսի 16-ին կատարված այդ գրանցումից, էֆրեմն իր մարդկանց միջոցով (թե՛ մուտքի մատյանում և թե՛ նամակների մեջ հիշվում է նրանցից ավագի՝ Հովհաննեսի անունը) կաթողիկոսին ուղարկել է երկու բեռ գինի, ծխախոտ և այլն (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 57), № 462։

106. Սանահնեցի Արղության Բեժանին հասցեագրված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 183, № 472։

107. Հովսեփ պետը ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանն է, № 482։

108. Հովսեփ Խատինի Դինիբեկյանը XVIII դ. երկրորդ կեսի թիֆլիզահայ դիվանագետ և ճանապարհորդ էր, որը հինգհարյուրապետի կոչումով ծառայել է վրաց թագավորներ՝ Հերակլ II-ի, ապա՝ Գեորգի XII-ի արքունիքներում և պաշտոնական առաքելությամբ ուղևորություններ կատարել դեպի Հնդկաստան։ Նրա միջոցով Հերակլ II-ը և Հայոց կաթողիկոսները նամակագրական կապ են պահպանել XVIII դ. վերջերի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Շ. Շահամիրյանի հետ։ Հովսեփ Դինիբեկյանի նախնիները պարսից շահերից ու վրաց թագավորներից արտոնություններ էին ստացել այդօրինակ ուղևորություններ կատարելու։ Նրա հայրը՝ Խատինը վրաց թագավոր Թեյմուրազից ստացել էր տասնապետի կոչում։ Անտարակույս, Դինիբեկյանները առևտրը համատեղում էին դիվանագիտական հանձնարարություններ կա-

տարելու հետ։ Հ. Դինիրեկյանի միջոցով Հերակլ II-ը Հնդկաստան էր ուղարկել Լոռին Շ. Շահամիրյանին նվիրաբերելու մասին հրովարտակը։ Իր հերթական ուղևորությունններից մեկի ժամանակ (1782-ին) Հ. Դինիրեկյանը Էջմիածին է բերել 1778-ին Վենետիկում լույս ընծայված «Աշխարհացոյց Հայաստանեայցը»։ Հաջորդ ուղևորության ժամանակ նա տարել էր Թուրքիային ուղղված Հերակլ II-ի նամակը և Բաղդադում հանձնել տեղի Թուրք փաշային։ Շ. Շահամիրյանին նա հասցրել է Հերակլ II-ի 1786 թ. մարտի 22-ի հրովարտակը, որով նրան իշխանական կոչում էր շնորհվում։ Գեորգի XII-ը Հ. Դինիրեկյանի պաշտոնը շնորհել է նրա ժառանգներին։ Նրա որդին՝ Ռաֆայել Դանիբեկովը մի քանի ուղևորություն է կատարել դեպի Հնդկաստան ու Բիրմա, որոնց մասին թողել է ուղեգրական արժեքավոր նոթեր։ Նրա ուղեգրությունները, որ Հ. Ալամդարյանը հայերենից թարգմանել է ռուսերեն, լույս են ընծայվել Մոսկվայում 1815-ին։ (Ավելի մանրամասն Հ. Դինիրեկյանի մասին տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, Նորահայտ նյութեր Հովսեփ Դինիրեկյանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1), № 507։

109. Բայազետի Իսաք փաշայի գրաբերի վերաբերյալ 1781 թ. դեկտեմբերի 4-ին մի համառոտ գրանցում է կատարվել ծախսերի մատյանում, որը հետևյալն է. «Բայազիտու Իսախ փաշայէն գրաբեր բրեին՝ Դարվաղ աղային ետու Ա (1) ոսկի, որ ի տէր Շմաւոնի թոռն աղայի հետն եկած էր ամսոյս 4» (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 285), № 515։

110. Ելքի մատյաններից մեկում կատարված գրանցումից կարելի է ենթադրել, որ Երևանի շրջակայքից Վրաստան տարված գյուղացիները սկսել են վերադառնալ 1781 թ. աշնանը։ Ստորև բերում ենք այդ գրանցումը. «Էվչիլարցի Աւիտն, զուրտուղուլեցի Մկրտչին, բլըցի Եաղուպենց Կիրակոսին պզուցար Ա Ս (1—1) մահուդ կապայք, իսկ զարբունեցի Յարութինին՝ Ա (1) շալ պայ։ Ի նոյ. 26, ի դառնալն ի գերութենէն ի Թիֆլիզու» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 257), № 515։

111. Տպագիր Պողոսը Պողոս Հովհաննեսի Արապյանն էր (1742—1835 թթ.)։ Իր ծննդավայրից՝ Ակնա գավառի Ապուչեխ գյուղից վաղ հասակում տեղափոխվելով Կ. Պոլիս, Պ. Արապյանը դարձել էր տպագրական գործի հայտնի մասնագետ։ Նա մեծ վաստակ ունի հայերեն տարբեր տպատաներ փորագրելու, ձուլելու և, ընդհանրապես, հայ տպագրական գործի զարգացման բնագավառում։ Վրաց թագավոր Հերակլ II-ի հետ կնքված պայմանագրի համաձայն Պ. Արապյանը եկել էր Թիֆլիս և զբաղվել վրացական տպարանի հիմնադրման աշխատանքով։ Պայմանագիրը պահպանվել է և այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի դիվանական վավերագրերի բաժնում (Նյութեր Արապյանի արխիվ, թղթ. 81ա, վավ. 6բ)։ Պայմանագիրը հրատարակող Ս. Ազամյանը կարծում է, որ տպագրիչ Պողոսը եկել էր վերակառուցելու Թիֆլիսի հին տպարանը (Ս. Ազամյան, Վրաց Հերակլ Բ թագավորի և տպագրիչ Պողոս Հովհաննիսյանի պայմանագիրը, «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 115—120)։ Սակայն Հերակլի խնդրով ու երկու վկաների ստորագրությամբ վավերացված այդ պայմանագրի համաձայն Պողոսը Թիֆլիս էր մեկնել ոչ թե տպարանը վերակառուցելու, այլ նորը հիմնելու. «անդ տպագրատուն իմն հաստատեալ գրոլոր տառս վրաց ի չէլիկ փորագրեալ, ապա ի պղինձ ֆօրմայ արարեալ, և անտի յարճիճ թափեալ, զոր ինչ գիրք խնդրեսցեն՝ զտառս շարեալ լաւագոյն մրով ի թէօզաեաղ կալեալ գիրք տպելոց եմ» (Ս. Ազամյան, նշված աշխ., էջ 118)։ Ինչպես հայտնի է, Թիֆլիսում տպարան հիմնադրվել էր 1709 թ., որը 1722 թ. մատնված էր անգործության։ Հերակլը հիմնադրել է նոր տպարան և այդ գործը կատարել է Պողոս Արապյանը, № 523։

112. Երուսաղեմի պատրիարք Հովակիմ վարդապետին հասցեագրված այս նամակն ամբողջությամբ տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 216—221, № 529։

113. Հիշյալ Հովհաննեսը ծառայել է Իվանե Մուխրանբեկի մոտ որպես թարգման։ Նվերների մատյանում արված գրանցումից երևում է, որ Մուխրանբեկը Թիֆլիս է մեկնել 1782 թ. հունվարի 13-ին։ «յԻւանէ պարոնի թարգման պարոն Օվանէսին պզուցար Ա (1) մահուտ կապայ՝ ի դառնալն ընդ Մուխրամպէկին ի Թիֆլիզ յունվարի 13» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 258), № 535։

114. Երևանի խանի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար ժամանած վրաց թագավորի ներկայացուցիչ Իվանե Մուխրանբեկը խանի որդու՝ Ղուլամ-Ալիի հետ միասին մի քանի օրով հյուրընկալվում են Էջմիածնում (1781 թ. դեկտեմբերի 13-ից 16-ը)։ Բոլոր կարգի ծախսերը հոգալուց բացի, կաթողիկոսը Իվանե Մուխրանբեկին տվել է արժեքավոր նվերներ, որոնց թվում «Ա (1) ճերմակ սահաթ» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 257), № 535։

115. Վրաց արքայազն Գեորգիի սուրհանդակ Նաքարոյին կաթողիկոսը վարձատրել էր մեկ ոսկով և նրա միջոցով մեկ լիտր մոմ ուղարկել արքայազնին (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 287), № 536։

116. Մինաս վարդապետին ուղղված նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 285, № 558։

117. Մատենադարանի արխիվի կաթողիկոսական դիվանում պահպանվել է այդ ժամանակ Հ. Արղությանի ուղարկած նամակներից մեկը, որը փաստորեն մի շարք նամակների համառոտ է՝ անհրաժեշտ մեկնություններով։ Այնտեղ գտնվում է 1781 թ. փետրվարի 2-ին Գ. Պոտյոմկինին ուղղված Հ. Արղության գրության պատճենը, որով խնդրվում էր առանց թույլտվության հայ հոգևորականներ չթողնել Ռուսաստան։ Կան նաև Գ. Պոտյոմկինի հրամանների հայերեն թարգմանությունները և այլ նյութեր։ Վերջում Հ. Արղությանը բերում է իր գրությունների պատճենները, տեղեկություններ տալիս Ռուսաստանի հայերի քանակական կազմի մասին, նշում տարբեր քաղաքներում ապրող այն նշանավոր ռուսահայերին, որոնց հարկավոր է նամակ գրել (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 58, էջ 31—32), էջ 288։

118. Այս նամակն ուղարկելու ժամանակ ռուս նշանավոր քաղաքական ու զինվորական գործիչ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինը (1739—1791 թթ.) Նովոռոսիյսկի, Ազովի ու Աստրախանի գեներալ-նահանգապետն էր։ 1783 թ. նա իրականացրել էր Ղրիմի թերակղզին Ռուսաստանին միացնելու իր նախագիծը։ 1784 թ. դարձել էր գեներալ-ֆելդմարշալ և գլխավորել ռուսական պետության ռազմական կոլեգիան, № 564։

119. Իշխան Գ. Ա. Պոտյոմկինին ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 263, № 564։

120. Կոմս Նիկիտա Իվանովիչ Պանինը (1718—1783 թթ.) Եկատերինա II-ի խորհրդականն էր արտաքին քաղաքականության հարցերում։ 1763—1781 թթ. նա գլխավորել է ռուսական պետության արտաքին գործերի կոլեգիան, № 565։

121. Գեներալ-ֆելդմարշալ Պյոտր Ալեքսանդրովիչ Ռումյանցևը (Ռումյանցև-Զադունայսկի) (1725—1796 թթ.) այն ժամանակ ռուսական բանակի ծանր հեծելազորի հրամանատարն էր, № 566։

122. 1782 թ. հունվարի 31-ին գրված այս նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 259—262, № 567։

123. Գրիգոր Կամպանյանը (աղա Կամպանովը), ռուսահայոց նշանավոր դեմքերից մեկն էր, որը եռանդուն մասնակցություն է ունեցել «Աստրախանի հայոց դատաստանագրքի» կազմելու աշխատանքին (տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967, էջ ԼԹ—Խ, Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Երևան, 1967, էջ 109)։ Նա Աստրախանի հայկական գաղութի ղեկավարներից էր, մի քանի անգամ ընտրվել է գաղութի դատական ինքնավարությունն իրականացնող մարմնի՝ ռատհաուզի դատավոր, իսկ 1763 թ.՝ առաջին դատավոր։ Հայ համայնքի կողմից նա ընտրվել է ներկայացուցիչ՝ Պետերբուրգ գնալու համար («Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ ԼԹ—Խ)։ Գ. Կամպանյանը հայտնի է նաև որպես բանաստեղծ ու թարգմանիչ։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է նրա ձեռագիր երգարանը (№ 9840)։ 1769 թ. հունիսի 8-ին ռուսական իշխանություններին ներկայացված Սարաֆյանի՝ Հայաստանի ազատագրման հայտնի ծրագրի վերջում, ի թիվս այլ հայերի, որոնք կարող էին հաստատել նրա ասածները, հիշատակված է նաև Գ. Կամպանյանի անունը (տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 352)։ Տեղեկություն է պահպանվել այն մասին, որ նա պարսկերենից հայերեն է թարգմանել արաբական ամիրապետ Ալի Բին Աբի Թալիբի (VII դ.) հայերին տրված անվավեր հրովարտակը։ Այդ թարգմանությունը, որը կատարվել է 1767 թ. հունվարի 15-ին Աստրախանում, պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դար, հ. Ա, Երևան, 1959, էջ 415), № 571։

124. Աստապատցի պարոն Մովսես Սարաֆյանը XVIII դարի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից էր։ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ հույսեր էին ծագել ռուսների օգնությամբ Հայաստանն ազատագրելու և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ, Մ. Սարաֆյանը կազմել էր Հայաստանի ազատագրության ծրագիր, որը 1769 թ. հունիսի 8-ին ներկայացվեց Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային։ Այդ ծրագրի մասին մանրամասն տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, էջ 262—274), № 572։

125. Ռուս զորավար, գեներալ-անշեֆ Վասիլի Միխայլովիչ Դոլգորուկին (1722—1782 թթ.) հայտնի էր Ղրիմի խանի դեմ տարած փայլուն հաղթանակներով։ 1780 թ. նա նշանակվել էր զորքերի գլխավոր հրամանատար Մոսկվայում։ Նրան հասցեագրված նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 311—313։ Պետք է կարծել, որ Վ. Մ. Դոլգորուկուն նամակ է գրվել Հ. Արղության խորհրդով և նա էլ ուղարկած պետք է լինի նրա հասցեն։ Կաթողիկոսական դիվանում պահվող ռուս և այլազգի նշանավոր գործիչների հասցեների մեջ առանձին թղթի վրա գրված է նաև հետևյալը. «Մոսկով, գեներալ, կնեազ Վասիլ Միխայլէվիչ Դօրգօլուկի» (թղթ. 5, վավ. 58), № 576։

126. Պլատոն եպիսկոպոսն այն ժամանակվա ռուսական եկեղեցու նշանավոր գործիչներից էր, դարի վերջում նա դարձել էր Մոսկվայի և Կալուգայի արքեպիսկոպոսը և ռուսաց սենատի կառավարիչը (տե՛ս նրա 1779 թ. ապրիլի 10-ի նամակը Հ. Արղությանին՝ տպագրված ԴՀՊ, Բ, մասն Ա, էջ 389—391)։ Ղուկաս Կարնեցու նամակի լրիվ օրինակը Պլատոն եպիսկոպոսին տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 314—317, № 577։

127. Հերակլ II-ին հասցեագրված 20 մայիսի 1782 թվակիր նամակի լրիվ տեքստը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 381—384։ Նամակին կից գրությունից իմանում ենք, որ կաթողիկոսը վրաց թագավորին ուղարկել է մի ժամացույց (նույն տեղում, էջ 385), № 582։

128. Այդ նվիրատվության մասին կազմված արձանագրությունից երևում է, որ ժամացույցը պատկանել է Ղուկաս կաթողիկոսին, որն այն իր հետ բերել էր Զմյուռնիայից։ Ստորև բերում ենք այդ արձանագրությունը. «Հերակլ պարոնին յղեցաք ձեռամբ Ջոնջոլենց պարոն Ստեփանին և Քէլ Յօհաննէսին Ա (1) բաղայ զառֆով լաւ սահաթ, որ էր սրբազան Վեհին ի յիզմիրու բերեալ, և Ա(1) լիտր գինի։ Իսկ իւր տղայ Գէօրգին պարոնին՝ ԺԵ (15) լիտր գինի և Ա (1) Թիֆլիզու լիտր սպիտակ մոմ՝ ի մայիս ամսոյ քսանն» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 258), № 582։

129. Մելիք Ավետիքին 1782 թ. մայիսի 20-ին գրած նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 376—378, № 585։

130. Հովսեփ Նազարբեկյանին գրված այս նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 378, № 586։

131. Թիֆլիսեցի տիկին Լալիթարին 1782 թ. մայիսի 20-ին գրած նամակի ամբողջական օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 385—387, № 587։

132. Հաղարծնի վանքի կապակցությամբ Հերակլ II-ին 1782 թ. մայիսի 24-ին հասցեագրված լրիվ նամակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 387—389, № 593։

133. Բայազետի Իսագ փաշայի նվիրած ձին էջմիածին էր բերել վանքի «դահրաշի»-ներից մեկը՝ Թովմասը 1782 թ. մայիսի 14-ին։ Նույն օրը համապատասխան գրանցում է կատարվել նվերների մուտքի մատյանում, բայց քարտուղարը սխալմամբ այդ մասին գրել է 1780 թ. գրանցումների բաժնում։ Երբ սխալը հայտնի է դառել, գրանցումը ջնջել են (վրան գծեր են քաշել) (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 60) և նոր գրանցում կատարել օսմանյան փաշաներից ստացվող նվերների արձանագրման բաժնում (նույն տեղում, էջ 36)։ Մինչ այդ (1782 թ. փետրվարի 10-ին) Բայազետի Իսագ փաշան Ռզվան աղայի միջոցով բազմաթիվ նվերներ էր ուղարկել կաթողիկոսին (գլխավորապես գործվածքեղեն), էջ 301։

134. Վրաց Գեորգի արքայազնին հասցեագրված 1782 թ. մայիսի 27-ի թվակիր նամակի լրիվ տեքստը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 389—391, № 599։

135. Կարսում էջմիածնի գանձապետ Մահտեսի Եղիային ուղարկված նամակի համառոտագրությունը տե՛ս ձեռ. № 4481, էջ 151ա, № 610։

136. Համառոտագրությունը տե՛ս ձեռ. № 4481, էջ 153ա, № 612։

137. Մինաս և Հովակիմ Լազարյաններին ուղղված ցավակցական նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 380, № 623։

138. Աստրախանում այն ժամանակ իրոք գոյություն է ունեցել հայկական հոգևոր դատարան։ 1781 թ. արքեպիսկոպոս Հ. Արղությանը ստեղծել էր աշխարհիկ դատարանի հետ զուգահեռ գործող այդ հոգևոր դատարանի իրավունքների ու պարտականությունների ցուցակը, որն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ.

36)։ Դրա համաձայն աշխարհիկ դատարանն իրավունք չուներ խառնվելու հոգևոր դատարանի գործերին և՝ ընդհակառակը։ Հարկ եղած ժամանակ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը կարող էին քննարկվել աշխարհիկ դատարանի դատավորների մասնակցությամբ։ Իր «Օրենսգրությունը» կազմելիս Հ. Արղությանը ղեկավարվել է հայոց կանոնագրքերով, բայց չի անտեսել նաև Աստրախանի հայոց դատաստանագիրքը («Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ ԼԶ—ԼԷ), № 627։

139. Գորինցի Ստեփաննոս Մանուչարյանին հասցեագրված նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 380, № 628։

140. Մշո ս. Հովհաննես վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետի՝ էջմիածնում գտնվելու և եպիսկոպոս օծվելու վերաբերյալ ուշագրավ գրանցում կա էջմիածնի վանքի ելքի մատյաններից մեկում. «Սուրբ Յօհաննիսի վանից առաջնորդ Յօհաննէս վարդապետին Ա (1) խառայ կապոյտ փիլոն ձգեցաք ի յունիսի 19, որ գնի եպիսկոպոս օծանելոյն երկրորդ կիրակէին ժամ արար, պաշտմանց ետ, և սեղանի բոլոր խարճն ինքն հոգաց։ Ի յունիսի Ի (20)-ին գնացին» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 101)։ Իսկ ձեռնադրությունների մատյանում գրված է հետևյալը. «...ձեռնադրեաց եպիսկոպոս զՅօհաննէս վարդապետն, որ ի գեօղէն Ահրօնայ՝ ի յառաջնորդութիւն Մշու սուրբ Յովհաննիսի վանիցն» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2882, էջ 5բ), № 631։

141. Մշո ս. Կարապետ վանքի նոր առաջնորդ նշանակելու հարցի շուրջ տե՛ս նաև Կ. Պոլսի պատրիարքին և մեծամեծներին ուղղված նամակի վերնագիրը (ԴՀՊ, Դ, էջ 286), ինչպես և Կ. Պոլսի նվիրակ Մինաս վարդապետին ուղղված նամակը (նույն տեղում, էջ 404—407), № 632։

142. Սորսրա ս. Գևորգ վանքի առաջնորդ Հարություն վարդապետի եպիսկոպոս օծվելու վերաբերյալ տե՛ս ելքի մատյանում 1782 թ. հունիսի վերջերին արված հետևյալ գրանցումը. «Սորսրու սուրբ Գէորգեա վանից առաջնորդ Յարութին վարդապետին ես Ա (1) կապոյտ խառայ փիլոն ձգեցաք, որ էր սրբազան Վեհապետին ի գալն Իզմիրու՝ Սիմէօն կաթողիկոսն էր տուեալ։ Սորա Բ (2)-ն (նաև Մշո ս. Հովհաննեսի առաջնորդ Հովհաննես վարդապետը, տե՛ս ծանոթ. № 137) ի միասին օծեցան եպիսկոպոս ի յունիսի ԺԲ (12)։ ԺԹ (19)-ին նուէր փիլոն» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 101)։ Ձեռնադրությունների գրանցման մատյանում նշված է՝ «...և զՅարութին վարդապետն կարգեցի ի յառաջնորդութիւն Սորսրու սուրբ Գէորգայ վանիցն (որ ի յերկիրն Խարբերթու)» (Մատենադարան, ձեռ. № 2882, էջ 5բ), № 634։

143. Իմերեթիայի հայերին ուղղված կոնդակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 398—401, № 640։

144. Գորիի և Վրաստանի հայությանն ուղղված գրության վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 401—402, № 640։

145. Գորիում բնակվող ոմն Հարությունին ուղղված այս նամակի սևագրությունը տե՛ս ձեռ. № 2803, էջ 91—98, № 641։

146. Գորեցի տեր Սահակի վերաբերյալ հակիրճ հիշատակություն կա ելքի մատյանում՝ 1782 թ. հունիսին. «Կօրեցի տէր Սահակին Ա (1) մօռ խառայ փիլոն ձգեցաք ի յունիսի 22 Դ (4) շաբաթ օրն, և գնաց» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 101), № 641։

147. Աստրախանում գտնվող Գանձասարի վանքի գանձապետ Միխայելին հասցեագրված նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 401, № 647։

148. Աբրահամ քահանային էջմիածնում նվերներ են տրվել և այդ մասին գրվել է հետևյալը. «Լօռեցի տէր Աբրահամին Ա (1) մօռ հագած պինիշ ագուցաք, որ էր տեղապահինն, Ա (1) հին պիկին փիլոն ես բիրականցի փրիցույն ետուք, որ ընդ սոցա եկեալ էր» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 101), № 648։

149. Լոռու բերդի և շրջակայքի բնակչությանն ուղղված 20 հունիսի 1782 թվակիր նամակի կոնդակի լրիվ տեքստը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 393—398, № 648։

150. Սահակ աղային ուղղված նամակի սևագրությունը տե՛ս ձեռ. № 2803, էջ 10—12, № 656։

151. Հերակլ թագավորին ուղարկված մխիթարության նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 398, № 660։

152. Նվիրատվությունների մատյանում 1782 թ. հուլիսի 1-ին այդ մասին արվել է հետևյալ գրանցումը. «Հերակլ արքային սգահանէք ընծայ յղեցաք ձեռամբ Մարտիրոս վարդապետին ի յուլիսի Ա (1) վասն Գէօրկի պարոն որդւոյ կնոջն՝ Զ (6) գազ դեղին բաղիլայ, Ա (1) տոնլուղ աթլազ, Ա (1) տոնլուղ խառայ, Ա (1) տոնլուղ ֆիլամանկ, Ա (1) ղալամքարի չիթ, Գ (3) սատափ չախուք և Գ (3) մահրամայք իշլամայ» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 259): «Սգահանէքի» կապակցությամբ նվերներ են ուղարկվել նաև Գեորգի արքայազնին և թագուհուն: Ստորև բերում ենք նաև այդ մասին արված գրանցումները.

«Գէօրկին Միրզային եւ սգահանէք վասն իւր կնոջն՝ Զ (6) գազ դեղին բաղիլայ, Զ (6) գազ սախկզու թէլլի աթլաս, Ա (1) տոնլուղ խառայ, Ա (1) տոնլուղ ֆիլամանկ, Ա (1) հնտու ղալամքեար չիթ, Ա (1) պալղամի ղութի, Գ (3) չախու և Գ (3) մահրամայ» (նույն տեղում, էջ 259): «Դէտօֆալին Զ (6) գազ սպիտակ ըշտոֆ կամ բաղիլայ, Զ (6) գազ սախկզու թէլլի աթլաս, Ա (1) տոնլուղ խառայ, Բ (2) չախու և Բ (2) մահրամայ» (նույն տեղում, էջ 259), № 660:

153. Վրաց թագուհի Դարեջանին 1782 թ. հունիսի 30-ին գրած նամակի լրիվ օրինակը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 402—404, № 661:

154. Գեորգի արքայորդուն ուղղված մխիթարության նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 409, № 662:

155. Ռմն Սարգսի շրջաբերական կոնդակ տալու կապակցությամբ Միրզա Գեորգիին ու Միրզա Միխայելին հասցեագրված նամակի սևագրությունը տե՛ս ձեռ. № 2803, էջ 91—98, № 665:

156. Զմյուռնիայի առաջնորդ և նվիրակ Փիլիպոս վարդապետին գրած նամակի վերնագիրը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 404, № 671:

157. Հոռոմցի ուխտավորներն իրենց առաջնորդ Հովհաննես «բազմահանճար» վարդապետի հետ ուղարկել էին «երկու գամէշ, մէկ եզն և մէկ կով» (ձեռ. № 2803, էջ 51), № 707:

158. Ղուկասը փաստորեն առաջնորդ էր ուղարկել Կարինի համար. «Կարգեցաք ձեզ առաջնորդ և վերատեսուչ զՂազար վարդապետն և զնորընծայ եպիսկոպոսն, զոր և օրհնութեան կոնդակաւ առաքեցաք ի յօրհնեալ քաղաքդ՝ առ ի կառավարել զձեզ հոգևորապէս ըստ աստուածային օրինացն» (ձեռ. № 2803, էջ 128—129): Սակայն նա ուզում էր, որ կարինցիք իրենք նրան ընտրեն առաջնորդ և հետո գրեն իրեն՝ «Վասն այն ահա ի ձեզ արկանեմ զընտրութիւնն» (նույն տեղում, էջ 130), № 713:

159. Գոտ. Յ. Ռայնեգսը էջմիածնում եղել էր 1783 թ. սկզբներին: Վանքի ծախսերի մատյանից երևում է, որ այդ ժամանակ նրան հյուրասիրելու համար գնվել է 6 հավ և նրան տրվել են նվերներ՝ «Հաւ առի Զ (6) հատ վասն գօխտօրին, գինն եղև ՑԸ (8000) դիան, ձեռ[ամբ] Առաքելին» (Կթղկ. դիվան, թղթ. 3, վավ. 8, էջ 272): Մեկ այլ մատյանում կարդում ենք. «Տօխտուր Յակօբ բօլկօվնիկին եառուք Ա (1) զէրբար կապայ, Ա (1) չիարքաղի գոտի, որ էր հանգուցեալ Բարսեղ վարդապետինն և Ա (1) թիրմայ շալ, որ էր... (բաց է թողնված, Վ. Գ.) (թող գնացան), ի յունվարի ԺԷ (17)», (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 261), № 727:

160. Հերակլ թագավորին ուղարկված այս նամակի սևագրությունը պահպանվել է № 2803 ձեռագրում: Համեմատությունը ցույց տվեց, որ բնագիրը համարյա միանգամայն հարազատ է սևագրությանը: Ի տարբերություն բնագրի, նամակի սկզբում (սևագրության մեջ) զետեղված է համառոտ բովանդակությունը, որը բերում ենք ամբողջությամբ. «Թուղթ առ արքայն Վրաց Հերակլէս. շնորհաւորութիւն վասն նորակերտ տպագրատանն և շնորհակալութիւն վասն բառնալոյն զկաթուղիկոս անունն ի յիսրայէլէ առաջնորդէն Հախպատու և խնդիր, զի զնոյն սահմանն իւր հաստատ պահեսցէ, այլև բան ի կողմանէ Հախպատու միաբան Դաւիթ պետին (զոր Գեօրկին խանն էր յղեալ առ ի ձեռնադրել եպիսկոպոս), թէ զի՞նչ վիճակի վերայ կամիք ձեռնադրել, ծանուցիք, զի այնու անուամբ արասցուք», № 730:

161. Դավիթ վարդապետի հետ էջմիածին էր եկել նաև Գեորգի արքայազնի սուրհանդակ կոնատ Շաքարոն (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 262), № 730:

162. Կ. Պոլսում էջմիածնի նվիրակ Մինաս վարդապետն այստեղ «գործաւարս» է համարվում, որովհետև նրա փոխարեն արդեն ուղարկված էր մեկ այլ նվիրակ՝ Սահակ վարդապետը: Նրա մասին 1783 թ. հունվարին կատարված մի գրանցումից երևում է, որ Սահակը էջմիածնից մեկնել է հունվարի 23-ին. «Սահակ վարդապետին Պօլսոյ նուիրակ՝ ի դը-

նայն ի Պոլիս նուիրակ, որոյ եառուք Ա (1) զօֆ փիլոն, որ էր սրբազան Վեհապետին, ի Պօլսոյ գիւլպանգչի տիրացու Գէորգի յղեալն: Ի յունվարի 23-ին եառուք ամա, որ ի սոյն օր գնաց» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 105), № 745:

163. Կոմս Պավել Սերգեևիչ Պոտյոմկինը (1743—1796 թթ.) իշխան Գ. Պոտյոմկինի ազգականն էր: Նա ավարտել է Մոսկվայի համալսարանը, հետո անցել զինվորական ծառայության: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրի կնքման գործում: Երկար տարիներ եղել է Կովկասի գեներալ-նահանգապետը: Մասնակցել է ռուս-թուրքական երկրորդ պատերազմին: Հեղինակ է մի շարք դրամաների, պոեմների ու թարգմանական գործերի (տե՛ս „Энциклопедический словарь", т. XXIV А. СПб., 1898, стр. 730): **Այս նամակը գրվելու ժամանակ Պ. Ս. Պոտյոմկինը Կովկասում ռուսական զորքերի հրամանատարն էր:** **№ 749:**

164. Ղուկաս Կարնեցու 13 հունվարի 1783 թվակիր նամակից, հասցեագրված Մանուչարյան եղբայրներին, իմանում ենք, որ վերջիններս 1782 թ. օգոստոսի 23-ին գրած նամակով առաջարկել էին կաթողիկոսին էջմիածնում ստեղծել դպրոց «ըստ եւրոպական լեզուաց»: Կաթողիկոսը պատասխանում է, թե դա անկարելի է. «Զի մեր լեզուաւ դպրատուն զոր ունիմք ի սուրբ Աթոռոջս՝ հազիւ պահեմք հաստատուն» (ԴՀՊ, Դ, էջ 482), № 749:

165. Ինչպես երևում է, Մոզդոկի հայկական գաղութի դատարանը հիմնադրել էր Հովսեփ Արղությանը (տե՛ս Ղուկաս Կարնեցուն 1782 թ. դեկտեմբերին գրած նրա նամակը): Այդ դատարանը գոյություն է ունեցել մինչև 1841 թ.: Աստրախանի և Ղզլարի դատարանների հետ միասին այն փակվել է Պետական խորհրդի 1840 թ. ապրիլի 19-ի որոշմամբ (տե՛ս Աստրախանի հայոց դատաստանագիրքը, էջ ԼՁ), № 749:

166. Նվերների մուտքի մատյանում նշված է, որ շատ չանցած՝ 1784 թ. էջմիածին է գալիս գեներալ Պ. Ս. Պոտյոմկինի ներկայացուցիչ Գաբրիելը և նվեր հանձնում կաթողիկոսին՝ մեկ մուշտակ: Անտարակույս, նա բերել էր նաև նամակ և ունեցել այլ հանձնարարություններ, սակայն պահպանվել է տեղեկություն միայն նվերի մասին (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 57), № 749:

167. Նամակում հիշատակվող «զօրապետը» կամ «ճեներալը» գեներալ Պավել Սերգեևիչ Պոտյոմկինն էր, № 749:

168. Նամակաբեր մելիք Շաքարոյին էջմիածնում նվիրել էին մեկ կարմիր կապա, որի մասին արված գրանցումից երևում է, որ նա բամբակաձորցի էր. «Բամպկաձորու մէլիք Շաքարոյին ագուցար Ա (1) կարմիր խառայ կապայ ի յապրիլի եւն, կիւրակի» (1783 թ.) (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 262), № 753:

169. Կարելի է կարծել, որ այս նամակը Հերակլ թագավորին է ուղարկվել նրա ներկայացուցչի միջոցով, որովհետև այդ ժամանակ նա եկել էր էջմիածին և այնտեղ նրան տրվել են նվերներ՝ ինչպես իր, այնպես էլ Գեորգի արքայազնի համար. «Հէրակլ պարոնի վէգիլին եառուք ի գալն ի սուրբ Աթոռս Ա (1) տոնլուղ աթլազ, Ա (1) տոնլուղ մահուտ, Ա (1) բաղայ սանդր, Ա (1) չախու և Ա (1) մահրամայ: Գէօրկին սուլթանին՝ Ա (1) տոնլուղ»: Գրանցումը կատարված է 1783 թ. ապրիլի 25-ին (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 262), № 753:

170. Դժվար է ասել, թե ե՞րբ էր Հերակլ թագավորի նամակը ստացվել էջմիածնում: Դատելով այն բանից, որ Հերակլի ծառա Ալիխանի անունը հիշատակվում է նվիրատվությունների մատյանում երկու անգամ (1783 թ. մարտի 6-ին և նույն թվականի մայիսի 24-ին), նամակը բերվել է մարտի 6-ին և պատասխանն ուղարկվել՝ մայիսի 24-ին: Առաջին անգամ Ալիխանին նվեր է տրվել նամակը բերելու, երկրորդ անգամ՝ պատասխանը տանելու համար: Ստորև բերում ենք այդ գրանցումները՝ «Ալի խան կոչեցեալ թիֆլիզեցւոյն, որ էր Յօսեփ վարդապետի ղաւումն, որոյ եառուք Ա (1) մահուտ ի մարտի Զ (6)» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 261): «Ալի խան թիֆլիզեցւոյն Ա (1) տոնլուղ նարնջի գոյն մահուտ: Ի սոյն օր (մայիսի 24-ին), (նույն տեղում, էջ 262), № 757:

171. Պ. Ս. Պոտյոմկինին ուղղված այս նամակի համառոտագրությունը տե՛ս ԴՀՊ, Դ, էջ 483: Լեոն հրատարակել է Պ. Ս. Պոտյոմկինի 1783 թ. հունիսի 3-ին Ղուկաս Կարնեցուն հասցեագրած նամակի հայերեն թարգմանությունը (Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, էջ 347—348), № 766:

172. Խաչը վերաբերում է 1758 թ. Լազարյանների գնած մետաքսագործական ֆաբրիկայի արտադրած կտորին, որից հասել էր նաև Էջմիածին։ Լազարյանների ֆաբրիկան այն ժամանակ համարվել է լավագույններից մեկը, եթե ոչ ամենալավը ողջ Ռուսաստանում, նրա արտադրած կտորեղենը բարձրորակ էր և թանկարժեք։ Այդ ֆաբրիկայի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Ա. Դիլոյան, Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Երևան, 1966, էջ 48—59, № 773։

173. Էջմիածնի Գրիգոր Լուսավորչի անունը կրող տպարանում 1779 թ. լույս ընծայված «Պարտավճարի» հեղինակը, ինչպես նշված է, հանգուցյալ կաթողիկոսն էր՝ Սիմեոն Երևանցին։ Այդ գրքի լրիվ վերնագիրն է «Գիրք որ կոչի պարտավճար», № 773։

174. Ավետիք սարկավագը Աստրախանից եկել էր բարվանդաշի Կարապետ վարդապետի և աստրախանցի տեր Զաքարիայի հետ։ Երկուսով էջմիածնից մեկնել են սեպտեմբերի 6-ին։ Այդ օրը նրանց նվերներ են տվել, որոնք գրանցվել են ելքի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 106), № 777։

175. Ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանի հղած նվերները գրանցված են նաև նվերների մուտքի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 8), № 777։

176. Թիֆլիսեցի պարոն Եսային էջմիածին էր հասել 1781 թ. ամռանը։ Նրա բերած ապրանքի վերաբերյալ մուտքի մատյանում գրանցումը կատարվել է հունիս ամսին, իսկ նոյեմբերի 19-ին նա նվերներ է ավել վանքին (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 42—43), № 777։

177. Հ. Արղությանին 1783 թ. սեպտեմբերի 6-ին ուղարկված այս նվերները (մեկական փիլոն և գորգ, 2 վեղար) գրանցված են ելքի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 106), № 777։

178. Էջմիածնի տպարանում 1785 թ. լույս ընծայված այդ գրքի լրիվ վերնագիրն է՝ «Գիրք ժամակարգութեանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց եւ կարգաւորութեան սաղմոսացն Դաւթի մարգարէին»։ Երկրորդ անվանաթերթի վրա գրված է՝ «Ժամագիրք ատենի յորում պարունակին երեք գիրք», № 784։

179. Կաթողիկոսական դիվանի ծախսերի մատյաններից մեկում մեզ հաջողվեց գտնել Էջմիածնի վանքի սյուների նորոգման վրա կատարված ծախսերի հաշիվը, որը թույլ է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել հինավուրց այդ վանքի մասնակի նորոգման մասին։ Քաղվածաբար բերում ենք այդ գրանցումը. «Ի ՌՄԼԲ (1783) թուոջս Վասն շինման երկուց սեանց սրբոյ եկեղեցւոյն, այսինքն՝ վերի դասի առաջին և յետին սեանց, որ առաջին սեան արևելեան և հիւսիսակողմի ճակատսն, մինչև ցսալ աթոռն։ Յետին սեան հիւսիսակողմի և յարևմտեան ճակատսն, մինչև ցկէսն կամարի, իսկ ի հարաւոյ և յարևմտից կողմն, ի վեր քան ցսալ աթոռն մինչ ի կամարսն, կրկին նորոգեցաւ, որոց վասն տրեցեալ բաղշիշն և խիլայն միայն աստ գրեցաւ, իսկ օրական վարձն մշակաց և այլ խարճսն ի յաթոռակալի դաւթարն գրեցաւ, որոյ սկիզբն շինման եղև ի յուլիսի ԻԸ (28), և յաւարտն՝ ի սեպտեմբերի ԻԷ (27)»։ Այնուհետև նշված է, թե ի՞նչ են վճարել նորոգություն կատարողներին՝ ուստա Գասպարին, Պողոս և Գրիգոր եղբայրներին, խառատներ՝ Պետրոսին, Ավետիսին և Գաբրիելին, քարհատներին, մշակներին, վերակացու Մարտիրոս վարդապետին, դարբնին, համալին և քար կտրողներին (Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 11), № 784։

180. «Իշխողն երկրիս» Երևանի Հուսեյն-Ալի խանն էր։ 1783 թ. դեկտեմբերի 20-ին Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին ուղարկված այս նամակի մեջ Հուսեյն-Ալիի մահվան օրը նշված է նոյեմբերի 10-ը, իսկ համարյա նույն ժամանակ (դեկտեմբերի 22-ին) տիրացու Ստեփան Տեր-Սահակյանը Երևանից հայտնել է, որ խանը մահացել է նոյեմբերի 9-ին։ Ս. Տեր-Սահակյանը հայտնում է նաև, որ խանին թաղել են Թավրիզում (տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освоб. движение..., стр, 268), № 788։

181. Կ. Պոլսում էջմիածնի նվիրակ Մինաս վարդապետը վերադարձել էր 1783 թ. սեպտեմբերի 2-ին և երկու օր անց նվերների մուտքի մատյանում կատարվել է ընդարձակ գրանցում նրա բերած նվերների վերաբերյալ (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 7), № 788։

182. Երուսաղեմի պատրիարք Հովակիմ վարդապետի ընծայած ապրանքները մուտքագրվել են 1783 թ. սեպտեմբերին։ Նա ուղարկել էր կտորեղեն և մի մեծ արկղ ձեռքի օճառ (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 7), № 788։

183. 1784 թ. հունվարի 16-ին իշխան Գ. Պոտյոմկինին հասցեագրված այս նամակը համարյա ամբողջությամբ հրատարակել է Լեոն (տե՛ս Լեո. Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, էջ 352—354), № 791։

184. «Մանաթութեան, սիրոյ և օրհնութեան» այս թղթի հասցեատեր «նորեկ պոլկովնիկ Դանիէլիչ Ստեփանն» գնդապետ Ստեփան Դանիլովիչ Բուռնաշևն էր, որը «կոմիսիոների» պաշտոնով նշանակում էր ստացել Վրաստանում։ Ակադ. Ա. Ռ. Հովհաննիսյանը, հենվելով Բուռնաշևի անձնական արխիվից հանված և նրա ծոռի հրատարակած նյութերի վրա, գրում է, թե այդ նշանակումը տեղի է ունեցել 1783 թ. ապրիլին (տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освоб. движ., стр. 77)։ Ղուկաս Կարնեցու 1783 թ. հունվարի 16-ի «թղթից» երևում է, որ Ս. Բուռնաշևը Թիֆլիս էր եկել ավելի վաղ, իսկ նշանակումը ձևակերպվել էր ավելի ուշ։ Ս. Դ. Բուռնաշևը կարգադրություն ուներ նախապատրաստել ռուսական արշավանքը։ 1783 թ. մայիսի 21-ին գեներալ Պ. Պոտյոմկինը Ս. Դ. Բուռնաշևին կարգադրել էր ռուսական զորքերի համար Անդրկովկասում մթերքների պահեստներ նախապատրաստել։ Նա պետք է տեղեկություններ հավաքեր «...Թիֆլիսից մինչև Շուշի ամրոցը... այլև Թիֆլիսի վրայով մինչև Երևան և հետո աջ՝ Սև ծովի կողմը մինչև Տրապիզոն եղած տարածության մասին...» (ЦГАДА, ф. Гос. архив, реестр XXIII, д. 13, ч. V, стр. 85—86)։ Ս. Դ. Բուռնաշևը վերը նշված պաշտոնը վարել է չորս տարի և այդ ընթացքում եռանդուն մասնակցություն ունեցել Անդրկովկասի քաղաքական կյանքին։ Հետագայում նա դառնում է Կուրսկի նահանգապետը, գրում երկու գիրք, որոնց մեջ ուշագրավ տեղեկություններ կան Անդրկովկասյան երկրների և, մասնավորապես, Արևելյան Հայաստանի վերաբերյալ (տե՛ս С. Бурнашев, Описание областей Адербиджанских в Персии и их политического состояния, Курск, 1793։ Նաև „Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского“, Тифлис, 1896), № 792։

185. Պորուչիկ Սարգիս Մելիքովը Ղարաբաղի մելիքներից մեկի որդին էր։ Նա զինվորական ծառայության էր մտել ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորովի հանձնարարությամբ և վայելելով Ա. Վ. Սուվորովի վստահությունը, Ս. Մելիքովը կատարել է նրա հատուկ առաջադրանքները (տե՛ս М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Ереван, 1956, стр. 81, 83, 99)։ Ս. Մելիքովը ռուսական հրամանատարության հանձնարարությամբ մի քանի անգամ եկել էր Երևան և էջմիածին։ 1780—1781 թթ. գտնվում էր նրա մոտ։ Նրա վրա էր դրված նաև Ղարաբաղի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու գործը, որի համար նա այնտեղ էր ուղարկում իր ներկայացուցիչներին (Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջին տասնամյակներին, էջ 101—102), № 792։

186. Գեներալ Պ. Պոտյոմկինին հղված այս նամակի մեջ հիշատակվող «գրաֆ մայոր Պետրէն» ռուսական զինվորական ծառայության մեջ գտնվող մայոր Պյոտր Ապրեսկինն էր, որը եղել էր Երևանում ու էջմիածնում, № 801։

187. Այս նամակի համառոտագրությունը գրանցված է «Դավթար թղթոց» մեջ (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 5), № 824։

188. Թավրիզում էջմիածնի գործակալ պրն. Թադեոսին հասցեագրված այս նամակի բնագիրը տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 49, № 831։

189. Նամակների բովանդակությունների մատյանում արված գրանցումից երևում է, որ Հերակլ թագավորին ուղղված 7 ապրիլի 1784 թվակիր այս նամակը հասցեատիրոջն ուղարկվել է թարգմանված ձևով՝ «Թուղթ եւ տաճկերէն առ Հերակլ արքայն...» (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 2—3)։ Ուրեմն սկզբում, ինչպես ընդունված էր, սևագրությունների մատյանում այն գրվել է հայերեն, հետո թարգմանվել և ուղարկվել։ Հետաքրքրական է, որ նույն օրը Հերակլին ուղարկվել է ևս մեկ նամակ, բայց այս անգամ հայերեն։ Այդ մասին գրանցված է՝ «Թուղթ եւ հայերէն առ Հերակլ արքայն, ի պատասխանի թղթոցն նորին, յաղագս ոմանց բանից» (Ն. տ.)։

Այս նամակի մեջ ոչինչ չի ասված Հերակլի ուղարկած նվերների վերաբերյալ, որոնք իր հետ էջմիածին էր բերել նամակում հիշատակված Սուլխան Դիվանին։ Մինչդեռ այդ մասին կատարվել էր համապատասխան գրանցում մուտքի մատյանում. «Հերակլ մեծ պարոնն ընծայ էր յղեալ ձեռամբ Սուլխան Դիւանին և պարոն Մէհրաբին՝ Խ (40) լիտր մոմ Թիֆլիզու, Բ (2) բեռն Կախեթու գինի, Ա (1) բեռն խնձոր։ Մարտի 25»։ (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 57)։

նվիրատվությունների մատյանի մեջ 1784 թ. արված գրանցումներից մեկից պարզվում է, որ վրաց թագավորը Ղուկաս կաթողիկոսին հրավիրել էր Վրաստան՝ իր օծմանը ներկա գտնվելու համար։ Ստորև բերում ենք այդ գրանցումը. «Մօհրդաստ Դէօրկինն, որ ի Հէրակլ պարոնէն թուղթ էր բերեալ հրաւիրական, թէ եւ հրամանաւ կայսերուհւոյն օծանիլ պիտիմ, հրամանրդ եւ աստ գտանիլդ մեզ յոյժ ուրախութիւն լինի։ Որոյ ի դառնալն ետուք գէրպապ կապայ, թող գնացուն, ի մայիսի 13» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 266)։ Այդ նույն օրը նվերներ են տրվել նաև վրաց թագավորի կողմից ուղարկված մյուս անձանց՝ Սուլխան Դիվանին և պարոն Մեհրաբին (նույն տեղում), № 843։

190ա. Համառոտագրությունը տե՛ս Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 4, № 848։

190բ. Սևագրությունը տե՛ս Ձեռ. № 2803, էջ 607—609, № 856։

191. Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ Իսահակ վարդապետին տրված «Պարտավճարների» վերաբերյալ պահպանված մի ուշագրավ փաստաթղթից երևում է, որ այդ գրքերը նրան ուղարկվել են 1783 թ. հուլիսի 26-ին։ Նվերների համար տրված է եղել 40 գիրք, բացի այդ «10 հատ աւելի եդաք, որ անդ ծախեսցէ և զդրամն սուրբ Աթոռս հասուսցէ» (Կթղկ. դիվան, թղթ. 7, վավ. 3, էջ 11)։ Գրքերը բաժանվելու էին հետևյալ ձևով՝ 2 հատ պատրիարքին, մեկական՝ Հարություն ամիրային, Հակոբ ամիրա Մուրադյանին, 5 հատ Իզմիրի նվիրակ և առաջնորդ Եսայի վարդապետին, 2 հատ Կ. Պոլսի արտաքին վիճակաց նվիրակ Գալուստ վարդապետին և այլն (նույն տեղում), № 858։

192. Էջմիածնի տաճարի սյուներից մեկի վրա («երկրորդ սիւնն արեւմտեան հիւսիսոյ»), որը նորոգվել էր վերոհիշյալ մահտեսի Խոջերի միջոցներով, իրոք թողնվել է արձանագրություն. «սևորակ դեղով»։ Դրա լրիվ տեքստը բերված է Հ. Շահխաթունյանցի գրքում. «Նորոգեցաւ սիւնն մինչ ի վերին կամարն հոգածութեամբ տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, արդեամբ Կեսարացի մահտեսի Խոջերին, ի յիշատակ ինքեան և ծնողացն՝ Աբրահամին և Աննային, և եղբօրն մահտեսի Պետրոսին, և որդւոցն՝ Պօղոսին, Սերօբէին, Յակոբին և Աբրահամին, և այլ կենդանեաց և ննջեցելոցն, ի ՌՄԼԵ թուին (Հայոց)» (Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն..., էջ 37—38), № 858։

193. Նամակի սևագրությունը տե՛ս Ձեռ. № 2803, էջ 501—506, № 863։

194. Համառոտագրության մեջ սխալմամբ նշված է «...և մխիթարութիւն վասն մահուան եղբօրն իւրոյ» (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 10)։ Մինչդեռ, ինչպես երևում է հրապարակված նամակից, մահացել էր ջուղայեցի պարոն Խաչիկի քույրը՝ Հաճի Խաթունը, № 914։

195. Սպանվել էր Երևանի Ղուլամ-Ալի խանը, հանգուցյալ Հուսեյն-Ալի խանի որդին, որը խան էր դարձել հոր մահից անմիջապես հետո (1783 թ. նոյեմբերին), № 944։

196. Խոսքը վերաբերում է Երևանի Ղուլամ-Ալի խանի սպանությանը, որի մասին տե՛ս ծանոթություն № 195, № 945։

197. Էջմիածնի վանքի դպրատան մասին տե՛ս այս գրքի ներածականը, № 946։

198. Սիմեոն Երևանցու հեղինակած այս գրքի վերնագիրն է՝ «Գիրք աղօթից որ կոչի զբօսարան հոգևոր»։ Հրատարակվել է Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանում 1772 թ., № 1033։

199. Ղուկաս կաթողիկոսի հիվանդության մասին այս տեղեկությունը կարելի է լրացնել նվիրատվությունների մատյանում եղած ուշագրավ մի վկայությամբ։ Պարզվում է, որ կաթողիկոսին բուժելու համար հրավիրված է եղել հեքիմ Հայրապետը, որը մոտ 25 օր մնացել է հիվանդի մոտ։ Նամակում հիշատակված բժշկապետը և այս հեքիմը միևնույն անձնավորությունն են։ Ստորև բերում ենք 1784 թ. նոյեմբերի 4-ին կատարված այդ գրանցումը. «Հէքիմ Հայրապետն, որ ի հիվանդութեան սրբազան Վեհին բերաք, ԻԵ (25) օր կամ աւելի պակաս մնաց աստ, դեղ արար, որոյ ի դառնալն ետուք այս ինչ վեճ, թող գնացուն՝ Բ (2) գազ և Ա (1) չրք՞ մօռ ֆիլամանկ չուխայ, Ա (1) շամու ալաճայ, Բ (2)...»։ Բացի այդ, նրան տրվել է մեկ սև սամր, մեկ ակնոց, մեկ ծխախոտաման, հինգ օճառ (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 267)։ Հեքիմ Հայրապետը մենակ չէր եկել, նրա հետ էին եղբայրը՝ Համբարձումը և ոմն Գևորգ, որոնց ևս նվերներ են տրվել (նույն տեղում), № 1071։

200. Քրդերի և «բերդականների» այս ընդհարման ժամանակ որպես հաշտարար միջնորդ հանդես է եկել Ղուկաս կաթողիկոսը։ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը..., էջ 90—94, № 1073։

201. Հերակլ թագավորի խնդրանքով Հ. Արղությանը պետք է ուղեկցեր գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին Թիֆլիս կատարած ուղևորության ժամանակ (Պ. Ս. Պոտյոմկինը մեկնում էր Հերակլի հետ հանդիպում ունենալու համար)։ Սակայն այդ ուղևորությունն անընդհատ ձգձգվում էր և Հ. Արղությանը 1784 թ. օգոստոսի 16-ին մեկնում է Աստրախան։ Նա պետք է շուտ վերադառնար և միանար Պ. Ս. Պոտյոմկինին, բայց վերջինս չի սպասում նրա վերադարձին ու սեպտեմբեր ամսի սկզբներին մեկնում է Թիֆլիս (А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение, стр. 120), № 1073։

202. Թիֆլիսեցի Մելիք Ավետիքի եղբայր հանգուցյալ միրիշքյար Իվանեի իրերի ցուցակից, գրանցված մուտքի մատյանում 1784 թ. նոյեմբերի 23-ին, երևում է, որ դրանք եղել են նրա արծաթեղենը, զգեստներն ու անկողինը (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 44), № 1088։

203. Հանգուցյալ միրիշքյար Իվանեի անձնական գործածության իրերը և 50 ոսկին Էջմիածին հասցրած Հարությունի վերաբերյալ հակիրճ գրանցում կա ելքի մատյանում՝ «Մինիշբեար Իւանէի կողոպուտն բերող գկիրի տղայ Յարութիւնին ագուցաք Ա (1) խառայ կապայ։ Ի նոյ. ԻԵ (25)»։ Նրա հետ միասին եկել էր նաև պարոն Ստեփանի տղա Աղալոն, որին տրվել է մահուդե կապա (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 268), № 1088։

204. Այս նամակի հետ միասին Հերակլ թագավորին ու նրա որդուն՝ Գեորգիին ուղարկվել են նվերներ՝ ժամացույցներ և սպիտակ մոմ, որոնք գրանցված են ելքի մատյանում (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 268), № 1092։

205. Իսահակ վարդապետին ուղղված այս նամակի սևագրությունը տե՛ս Ձեռ. № 2803, էջ 746—751։ Նամակի ամսաթիվը գրված է 21 դեկտեմբերի, իսկ համառոտագրությունը՝ 22 դեկտեմբերի։ Երևում է, որ համառոտագրությունը կազմվել է նամակի շարադրումից մեկ օր անց, № 1100։

206. Նամակի սևագրությունը կազմվել է ավելի շուտ՝ նոյեմբեր ամսին, իսկ դեկտեմբերի 23-ը մաքրագրման օրն է։ Տե՛ս համառոտագրությունը՝ Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 82, № 1110։

207. Միքայել վարդապետն այս ժամանակ գտնվում էր Էջմիածնում։ Օծման կապակցությամբ նրան նվերներ են տրվել, որոնք գրանցված են ելքի մատյանում. «Աղբրանէալու առաջնորդ Միքայէլ վարդապետին՝ Ա (1) կապոյտ եաղութ մատանի ի յօծանելն ետուք ի յունվարի ԺԲ (12), իսկ Ա (1) չիչարլու խառայ փիլոն ևս՝ ի ժամ առնելն, ի յունվարի ԺԴ (14)» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 113), № 1122։

208. Նկատի ունի վրաց թագավոր Հերակլ II-ին, որին հաճախ դիմում էին հանգանակություն կատարելու նպատակով մեծ մասամբ Ռուսաստան մեկնող անձինք, № 1131։

209. Հնդկաստանում Էջմիածնի նվիրակ Գրիգոր վարդապետի բերած իրերը, որոնց մեջ են եղել նաև Հ. Մարությանի ընծաները, գրանցված են մուտքի մատյանում 1784 թ. հոկտեմբերի 25-ին (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 9), № 1142։

210. Դատելով մուտքի մատյանում կատարված գրանցումից, Գրիգոր վարդապետը Հնդկաստանից վերադարձել էր 1784 թ. հոկտեմբերին։ Նա իր հետ բերել էր նաև Հարություն աղայի և նրա մոր՝ Դաստակյուլի նվիրած իրերը, որոնք ցուցակագրված են ընդհանուր ձևով (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 9), № 1145։

211. Նամակում հակիրճ կերպով պատմվում է Ավարայի Ումմա խանի 1785 թ. դեպի Վրաստան ու Հայաստան կատարած արշավանքի մասին, որի ժամանակ Ղուկաս կաթողիկոսը հարկադրված է եղել տեղափոխվել Երևանի բերդը։ Ավելի մանրամասն այդ արշավանքի մասին տե՛ս մեր գիրքը՝ «Երևանի խանությունը...», էջ 111—130, № 1145։

212. Այնուամենայնիվ, Գրիգոր վարդապետը կարողացել էր որոշ իրեր պահպանել և հասցնել Էջմիածին։ Դրանց թվում էին նաև Շ. Շահամիրյանի ուղարկած նվերները (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 9), № 1152։

213. Այս նորատիպ «Աշխարհացոյց»-ը, որ ուղարկել էր Շ. Շահամիրյանը, 1778 թ. Վենետիկում նրա պատվերով լույս ընծայված «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ն էր (քարտեզի ու նրա հրատարակման հանգամանքների մասին տե՛ս Վ. Գրիգորյան, Շահամիր Շահամիրյանի «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ը, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 353—360), № 1152։

214. Երուսաղեմ մեկնող Ղունկիանոս վարդապետի հետ նվերներ են ուղարկվել Երուսաղեմի պատրիարք Հովակիմ վարդապետին, որոնք գրանցված են ելքի մատյանում 1785 թ. հուլիսի 23-ին։ Ահա այդ գրանցումը. «Սուրբ Երուսաղեմայ պատրիարք Յովակիմ վարդապետին յղեցաք ձեռամբ Ղունկիանոս վարդապետին Ա (1) չիչաքլու խառայ փիլոն ծիրանի, Ա (1) լաւ մատանի կապոյտ եաղութ և Գ (3) հոխայ սրբալոյս մեռոն՝ ի յուլիսի 23» (Կթղկ. դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 115), № 1161։

215. Նվիրատվությունների գրանցման մատյանից երևում է, որ Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ Իսահակ վարդապետը 1786 թ. դեկտեմբերի 16-ին եկել էր Էջմիածին և երկու օր անց՝ դեկտեմբերի 18-ին իր բերած նվերները հանձնել կաթողիկոսին։ Իսահակն արդեն ավարտել էր նվիրակության գործը և այս նամակը հավանորեն գրվել է նրա վերադառնալուց առաջ՝ դեկտեմբերի սկզբներին։ Ինչ վերաբերում է նրա բերած իրերին, ապա հարկ է նշել, որ դրանք քիչ չէին և նրանց թվարկումը մուտքի մատյանում բավականին տեղ է գրավել (Կթղկ. դիվան, թղթ. 5, վավ. 36, էջ 13), № 1174։

216. Արևելցի մահտեսի Կարապետը միջոցներ էր տրամադրել Էջմիածնի վանքի սյուներից մեկը նորոգելու և իր անվամբ աղբյուր շինելու համար։ Նրան լուր էր հասել, որ աղբյուրի վրա համապատասխան արձանագրություն չի փորագրվել։ Ղուկասը հերքում է այդ լուրը և առանձին թղթի վրա արտագրված ուղարկում արձանագրության տեքստը։ Միաժամանակ խնդրում է նրանից ավելացնել սյան նորոգման համար տրված գումարը, № 1175։

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Աթլաղ (արաբ.)—կերպաս
Աթլաս տե՛ս Աթլաղ
Ախթարմայ (թրք.)—հերձվածող, կաթոլիկ
Ախիրայ անել (թեմեսուկը) (պրսկ.)—մարել
Ալթիճումխաթ (թրք.)—հասարակության, համայնքի անունից
Ամանաթ (արաբ.)—ավանդ
Ապասի (արաբ.)—դրամական միավոր
Ապրշ[ու]մ (պրսկ.)—մետաքս
Անէֆ (պրսկ.)—համբարություն, եղբայրություն
Արզ (արաբ.)—խնդիրք, աղաչանք, աղերս
Աֆանդի (թրք.)—պարոն, տեր
Աֆանտիզատայ (թրք.)—պարոնորդի

Բաթիլ (արաբ.)—անվավեր, չեղյալ, անպետք
Բաղայ (թրք.)—կրիայի պատյան, խեցի
Բաննահ (արաբ.)—վարպետ, որմնադիր
Բաշ (թրք.)—գլուխ, գագաթ, ծայր, գլխավոր, պետ
Բաշչուխ (թրք.)—արխաղ
Բաշբօրդ տե՛ս Փաշփօրթ
Բաշբօրթ տե՛ս Փաշփօրթ
Բաջաղմունք — մեծախոսություն, դատարկախոսություն
Բասմաճի (թրք.)—տպագրիչ, չիթ պատրաստող կամ վաճառող
Բարաթ (արաբ.)—վճարագիր, փոխադրագիր, հրովարտակ, արտոնագիր
Բերաթ տե՛ս Բարաթ
Բէրաթ տե՛ս Բարաթ
Բոյրութլու տե՛ս Բույրուլթու
Բուխուրտան (արաբ., պրսկ.)—խնկաման, բուրվառ
Բույրուլթու (թրք.)—հրամանագիր, կարգադրություն, բանաձև
Բունութաճի տե՛ս Բունութճի
Բունութճի (թրք.)—քթախոտավաճառ
Բօլկօվնիկ (ռուս.)—գնդապետ

Գազ—շզարշ, նաև երկարության չափ
Գեալուր (թրք.)—եկամուտ, շահ
Գիլյապ (պրսկ.)—վարդաջուր
Գիլյապտանի (պրսկ.)—ոսկեթել կամ արծաթաթել ասեղնագործություն
Գիլյապտոն (պրսկ.)—ոսկեթել կամ արծաթաթել գործվածք, հյուսվածք, ասեղնագործ
Գիւկում (թրք.)—պղնձե մեծ կում, ջրի սափոր, կաթնաման
Գիւմրուկ (թրք.)—մաքս, մաքսատուն
Գիւմրուկչի (թրք.)—մաքսատան աշխատող՝ մաքսավոր
Գոնէտուր (ֆրանս.)—կահույք
Գուլտի (հոլ.)—դրամական միավոր
Գումբեռնաթ (ռուս.)—նահանգապետ

Դաղբաշ (թրք.)—լեռան գագաթ
Դամաս[կ]—մետաքսե ծաղկավոր կտոր, որ գործվում էր Դամասկոսում
Դանայ (պրսկ.)—հատ
Դաւթար (արաբ.)—մատյան
Դաւի (արաբ.)—պահանջ, դատ, հավակնություն
Դեֆուդատ (լատ.)—լիազորյալ անձ
Դէւրէր (արաբ.)—ժամանակաշրջան, շրջան, ժամանակամիջոց, պարբերականություն
Դէֆթէր տե՛ս Դաւթար
Դիւիթ (արաբ.)—թանաքաման
Դիւլպէնդճի (նաև Դիւլպենտչի, Դօլպէնդճի, Դիւլբանդչի, Դօլբանտճի, Տօլպանտճի) (թրք.)—ասեղնագործող, երեսրբիչ գործող, չիթ վաճառող
Դիւրան տե՛ս Դուքեան
Դօլվաթլու (թրք.)—երանավետ, վսեմաշուք
Դօխտօր տե՛ս Տօքտօր
Դուքեան (արաբ.)—կրպակ, խանութ

Եալտուզ (թրք.)— ոսկեջրած, ոսկեզօծ, ոսկու տեսակ
Եաղութ (արաբ.)—հակինթ, ռուբին
Եափնճի (թրք.)—այծի մազից պատրաստված անթև հաստ վերարկու
Երեննա (հուն.)—թանկարժեք սև փայտ ունեցող ծառ, որից պատրաստում են զանազան իրեր

Զահիրայ (արաբ.)—մթերք, պաշար, գանձ
Զանտուխտագ (պրսկ.)—սնդուկ պատրաստող
Զաուֆ (արաբ.)—աման, պատյան
Զարլու (պրսկ., թրք.)—ոսկեզօծ
Զարմհապուպ ոսկի (պրսկ., արաբ.)—հավանաբար բարձր հարգ ունեցող ոսկի
Զարպապ (պրսկ.)—ոսկեհյուս, ոսկեթել գործվածք

Զաֆրան (արաբ.)—բրբում
Զէնճիրլի (թրք.)—շղթայավոր, շղթայով, շըղթայանման հյուսվածք
Զէրրար տե՛ս Զարպապ
Զօլաթայ—դրամական միավոր

Էլչի (թրք.)—դեսպան, միջնորդ
Էշիկաղասի (թրք.)—առնապետ
Էօզմայ (թրք.)—թղթի չափ

Թարաղ (թրք.)—ափսե, սկուտեղ
Թալղայ (արաբ.)—հրամանագիր, հրաման, հրովարտակ, հանձնարարագիր
Թախաս (արաբ.)—հատուցում, փոխհատուցում
Թախսիլ (արաբ.)—գանձում, հավաքում, ըռնագանձում, ստացում
Թային (արաբ.)—մթերաբաժին, բաժին, օրապահիկ
Թապղայ տե՛ս Թարաղ
Թասալու (արաբ.)—բողոք ճնշման դեմ, ճընշում, անարդարություն
Թասկիրայ (արաբ.)—նամակ, պաշտոնական գրություն, վկայական
Թասխիլ տե՛ս Թախսիլ
Թաւատ (վրաց.)—իշխան
Թաֆիլտար (պրսկ.)—գանձապահ
Թերգիզադէ (թրք.)—դերձակի որդի
Թէլլի (թրք.)—թելավոր
Թէմէսուկ (արաբ.)—մուրհակ
Թէսլիմ (արաբ.)—հանձնում, վճարում, խոստովանում, անձնատուր լինել
Թիլանի (թրք.)—քաշի միավոր
Թիրմա (պրսկ.)—այծի նուրբ մազից պատրաստված ընտիր կտոր
Թիֆիլտար տե՛ս Թաֆիլտար
Թոմալէհ (արաբ.)—պատվեր, կարգադրություն
Թովճի (արաբ., թրք.)—տուրքի նշանակում ըստ շնչաքանակի կամ ըստ տվյալների, տուրքագրում
Թովֆել (արաբ.)—նվեր, ընծա
Թուանքչի (թրք.)—զինվոր, ոստիկան, զինագործ, զինավաճառ
Թութնճի (թրք.)—ծխախոտ վաճառող
Թօփ (թրք.)—թնդանոթ, արկ, գունդ

Իլախայ (արաբ.)—կախում ունենալ, կապ ունենալ
Իմտատիայ (արաբ.)—օգնություն, օժանդակություն, օգնական ուժ
Իղլամայ (թրք.)—ասեղնագործ, ասեղնագործված
Իսկալայ (իտ.)—նավամատույց, տախտակամած, փայտամած
Իրիճայ (երիճայ) (արբ.)—դիմում, աղերս, խնդիր
Իրզար արարեալ (արաբ.)—հաստատել, վկայել

Լայաղ (արաբ.)—արժանի, վայել
Լիտր (ֆրանս.)—ծանրության չափի միավոր (1 լիտրը=10 ֆունտի, 10 լիտրը=10 սոմարի. 10 սոմարը=1 խալվարի (մոտ 400 կգ)
Լուստրին (ֆրանս.)—կտորի տեսակ
Լօնչայ (թրք.)—համքարություն (հատկապես վաճառականների), ժողովատեղի, ակումբ

Խազնայ (արաբ.)—գանձ, գանձատուն
Խաթր (արաբ.)—հարգանք, շնորհ, հիշողություն, միտք
Խաթրահարցական թուղթ—որպիսությունը հարցնող քաղաքավարական նամակ
Խաթրամնայութիւն—վշտահարություն, դըժգոհություն
Խաթրիջամ անել (արաբ.)—միամտացնել, հանգստացնել
Խալաթ (պրսկ.)—նվիրատրված պատվո պատմուճան
Խալասագիր (արաբ.)—արձակման (ազատման) գիր
Խալիչայ (պրսկ.)—գորգ
Խալիֆայ (արաբ.)—փոխանորդ, տեղապահ, այսպես էին սովորաբար կոչում հայ բարձրաստիճան հոգևորականներին ու կաթողիկոսներին
Խան (պրսկ.)—իջևան, պանդոկ
Խանզադէ (պրսկ.)—խանի որդի, իշխանորդի
Խապար (արաբ.)—լուր, տեղեկություն
Խարաճ (արաբ.)—հարկ, տուրք, գլխահարկ
Խարաճչի (արաբ.)—հարկահավաք, հարկահան
Խարճ (արաբ.)—ծախս
Խափաճի բաշի (թրք.)—դռնապանների պետ
Խիթան (արաբ.)—թլպատում
Խիլայ (արաբ.)—նվեր
Խորախ (թրք.)—զամբիկ, մատակ ձի
Խուրդայ (պրսկ.)—մանր դրամ, բեկոր
Խօճայ (պրսկ.)—վաճառական, տեր, տանուտեր, ուսուցիչ, վարդապետ

Կամէնդատ (ֆրանս.)—պարետ
Կապայ (արաբ., պրսկ.)—հոգևորականի ըզգեստ, պարեգոտ, կանացի երկար զգեստ
Կերլի (թրք.)—եկամուտ, հասույթ
Կիլապատնի տե՛ս Գիլապատնի
Կլապիտոն (պրսկ.)—արծաթաթել կամ ոսկեթել, ծաղկակար
Կոնփեռ (հուն.)—հայրապետական զգեստավորության զարդ, որ կաթողիկոսը կախում է ձախ ազդրի վրա
Կողէթ—կտորեղենի տեսակ
Կուշտ—կտորեղենի տեսակ

Հալպաթ (արաբ.)—անշուշտ, անպատճառ, անտարակույս
Հաճի (արաբ.)—ուխտավոր, մահտեսի
Հաւալայ անել (արաբ.)—փոխանցել
Հելաւ (թրք.)—հագուստ, շապիկ
Հէսապ (արաբ.)—հաշիվ, հաշվարկ
Հօխայ (թրք.)—ծանրության չափ

Ղազանչի (թրք.)—պղնձագործ, կաթսայագործ
Ղալամ (արաբ).—գրիչ, վրձին, մետաղե փորիչ, սեպ
Ղալամքար (պրսկ.)—արևելյան ճաշակով տըպածո ընտիր չիթ
Ղալիպ (արաբ.)—կաղապար
Ղալփախչի (թրք.)—խույր (պատվավոր գըլխարկ) պատրաստող
Ղահֆաճի (թրք.)—սուրճ եփող, սրճագործ, սրճարանատեր
Ղայրէթ (արաբ.)—ջանք, ջանասիրություն, եռանդ
Ղանթար (արաբ.)—շուկայի մեծ կշեռք, կշռի չափ
Ղապալայ (արաբ.)—կալվածագիր
Ղապզ (արաբ.)—ստացական, անդորրագիր
Ղապս տե՛ս Ղապզ
Ղասապայ (արաբ.)— ավան, գյուղաքաղաք
Ղատար (թրք.)—բամբակե ներկած կտոր, որից արխալուղ են կարում
Ղատարչի (թրք.)—կտավ ներկող
Ղարաւուլ (թրք.)—պահապան, պահնորդ զինվոր
Ղափամաճի (թրք.)—պարեգոտ (պատմուճան) վաճառող
Ղափուճի բաշի (թրք.)—ծառայապետ, աշխատավորների վերակացու
Ղութի (թրք.)—տուփ, արկղ
Ղուլլուղ անել (թրք.)—ծառայել
Ղուռուշ (թրք.)—թուրքական դրամ
Ղօսատայ (թրք.)—երկաթի խարտուր, անպետք իր, ջարդոն

Ճոթ (թաթար.)—ծայր, եզր, չիթ, մաս

Մազխարաթ (լատ.)—քաղաքային վարչություն
Մալ (արաբ.)—գույք, հարստություն
Մախթու (արաբ., թրք.)—որոշակի, որոշված մի քանակ
Մահսար (արաբ.)—հանրագիր, համախոսական
Մահսարատար (արաբ., հայ.)—հանրագիր տանող, համախոսական տանող
Մահրամայ (թրք.)—թաշկինակ, սրբիչ
Մաղթուն (արաբ.)—որոշակի, վճռական, վերջնական
Մաճառ ոսկի (հունգ.)—դրամական միավոր
Մապլաղա (արաբ.)—գումար
Մառչիլ (իսպ.)—դրամական միավոր
Մասլահաթ (արաբ.)—խորհուրդ, շահ, բարի մտադրություն, գործ
Մանզիլ տե՛ս Մենզիլ
Մենզիլ (արաբ.)—սուրհանդակ, իջևան, տուն, տարածություն, մեկ օրվա ճանապարհ
Մէյխանաճի (պրսկ., թրք.)—գինեպան, պանդոկապետ, միկիտան
Մինայ (պրսկ.)—ջնարակ
Միրի (արաբ.)—արքունի, պետական
Միրի շքեար (արաբ., պրսկ.)—որսապետ
Միրիմալի անել (արաբ.)—պետականացնել
Միրիշխեար տե՛ս Միրի շքեար
Միրասխոր (պրսկ.)—ժառանգություն տալ

Մլքանչի (արաբ., թրք.)—կալվածատեր, կալվածքի վաճառքով զբաղվող անձ
Մովրով (վրաց.)—գավառապետ
Մսխալ (արաբ.)—չափի միավոր (4,26 գր.)
Մութավէլի (արաբ.)—հոգաբարձու, խնամատար, կտակատար
Մութավէլութիւն (արաբ., հայ.)—հոգաբարձություն, խնամատարություն
Մուլքանաչի տե՛ս Մլքանչի
Մուլքանչի տե՛ս Մլքանչի
Մուղայէթ (արաբ.)—հոգատար, ուշադիր հոգատարություն
Մուննաթ (արաբ.)—բարիք, երախտիք (մեկին երախտամոռության մեջ շարունակ մեղադրել)
Մուշամպայ (արաբ.)—մոմազօծ, մոմապատ, մոմլաթ
Մուշալկեայ (մոնղ.)—խոստում
Մուսավատայ (արաբ.)—օրինակ, պատճեն
Մուտար թեմեսուկի (արաբ.)—թարմ, թարմացված
Մուրախաս արասցեն (արաբ.) — արձակեն, ճամփու դնեն
Մուրաքեար (արաբ.)—բաղադրություն, բաղադրյալ, թանաք
Մօհր (արաբ.)—կնիք, կնքադրոշմ, դրոշմ
Միրտար (պրսկ.)—պիղծ, անմաքուր

Յեալլայ (թրք.)—ամառանոց

Նաղտ (արաբ.)—կանխիկ
Նաշար (պրսկ.)—անօգնական, հարկադրված
Նարգենիս (թրք.)—այժմ
Նիզամ (արաբ.)—կարգ, կառուցվածք, սիստեմ
Նազիր (արաբ.)—վարիչ, տեսուչ
Նոմոս (հուն.)—օրենք, կարգ, կանոն, կանոնական թուղթ, նամակ
Նոխուտ (պրսկ.)—սիսեռ

Շաթր (արաբ.)—առաջընթաց ծառա
Շամդան (պրսկ.)—աշտանակ, մոմակալ
Շեյխիսլամ (արաբ.) — մահմեդական կրոնի հմուտ դենպետ, որ իրավունք ունի մեկնել ղուրանը և հսկել ծեսերի ճիշտ կատարմանը
Շիլթախ անել (թրք.)—կտրել, աղմկել, շորթել (դրամ)
Շիշման (թրք.)—գեր, հաստ, լիքը

Չալթուկ (թրք.)—կեղևը չհանած բրինձ
Չախու (թրք.)—գրպանի դանակ
Չատիր (պրսկ.)—վրան
Չիլինկիր (թրք.)—դարբին, երկաթագործ
Չիչակլու (թրք.)—ծաղկավոր, ծաղկազարդ
Չրաղ (պրսկ., թրք-ից)—ճրագ, կանթեղ
Չուլ (թրք.)—քուրձ, հնացած, պատառոտված զգեստ
Չուխայ (պրսկ.)—նուրբ մահուդից կարված վերարկու
Չօլախ (թրք.)—կաղ, հաշմանդամ

Պալասամ (արաբ.)—բալասան, բալզամ
Պալղամ (արաբ.)—մաղաս, մաղձ
Պապուճչի (պրսկ., թրք.)—մաշիկակար, կոշկակար
Պասմաճի տե՛ս Բասմաճի
Պօլիցայ (իտ.)—մուրհակ

Ջամ (պրսկ.)— ապակի
Ջղլաւա քիւրք (թրք.)—մուշտակի տեսակ
Ջուլ տե՛ս Չուլ
Ջուխտ (պրսկ.)—զույգ
Ջօրապ (պրսկ.)—գուլպա

Ռահաթ (արաբ.)—հեշտ, հանգիստ, հարմարություն
Ռաղամ (արաբ.)—թիվ, թվանշան, տեսակ, կերպ, եղանակ, գրություն, նամակ
Ռասիտ անել (պրսկ.)—ստանալ, ջնջել անունը պարտատերերի ցուցակից
Ռէնչպէր (պրսկ.)—հողագործ, հարկատու, հերկող
Ռուփի—հնդկական դրամական միավոր

Սախկզղու տե՛ս Սախկղլու
Սախկղլու (թրք.)—խնձապատված
Սահաթ (արաբ.)—ժամ, ժամացույց
Սաղ (թրք.)—ողջ, ամբողջ, անվնաս, կենդանի, առողջ
Սաղրի (պրսկ.)—դարաղած կաշի (ձիու կամ ավանակի)
Սամի (արաբ.)—լսող, ունկնդիր
Սանատ (արաբ.)—մուրհակ, փաստաթուղթ
Սառաֆ (արաբ.)—սեղանավոր (դրամափոխ)
Սառաֆլար (արաբ.)—սեղանավորներ
Սառաֆլար քեահիասի (թրք.)—սեղանավորների վերակացու
Սատափ (արաբ., պրսկ.)—խեցի, մարգարտամայր
Սիահի (պրսկ.)— սևություն, սևագրություն, պատճեն
Սիասի անել (արաբ.)—քաղաքականություն անել, դիվանագիտություն անել
Սիկէլ (հուն.)—պաշտոնական գրություն
Սիւղանաճի տե՛ս Սուղանաճի
Սիւրէթ տե՛ս Սուրաթ
Սուղանաճի (թրք.)—ասեղնագործ, ասեղնագործող
Սուչ (թրք.)—մեղք, զանցանք, հանցանք
Սուրաթ (արաբ.)—կերպ, ձև, եղանակ, տեսք, պատճեն

Վախմ (արաբ.)—կրոնական հաստատություններին նվիրաբերված կալվածք
Վախուպ (արաբ.)—կտակարար, կրոնական հաստատությանը նվիրաբերող
Վատայ (արաբ.)—խոստում, ուխտ, պայման, պայմանաժամ, ժամադրություն
Վարաղ (արաբ.)—թերթ, ոսկեթերթ
Վարիս (արաբ.)—ժառանգ, ժառանգորդ
Վաքիլ (արաբ.)—լիազոր, հավատարմատար
Վէզիր (արաբ.)—նախարար, մինիստր
Վէրկի (թրք.)—տուրք
Վէքիլլամայ (թրք.)—լիազորագիր
Վէքիլ տե՛ս Վաքիլ
Վէքիլխարճ (արաբ., պրսկ.) — ծախսարար, ծախսարարապետ

Տայի (թրք.)—քեռի, մորեղբայր
Տանլուղ տե՛ս Տոնլուղ
Տառապխանայ (պրսկ.)—փողերանոց, դրամահատարան
Տէվթալար լիցուք (պրսկ., արաբ.)—կամավոր, պահանջատեր
Տոնլուղ (թրք.)—զգեստացու
Տօքտօր (լատ.)—բժիշկ

Ուշուր (արաբ.)—տասանորդ, մեկ տասերորդ

Փաճ (պրսկ.)—բաջ՝ մաքս, տուրք, վարձ
Փայեկ (պրսկ.)—սուրհանդակ
Փաշափորթ տե՛ս Փաշփորթ
Փաշփորթ (ֆրանս.)—անձնագիր, անցագիր
Փաքրատիթին—բամբասել, շաղակրատել
Փարայ (պրսկ., թրք-ից)—փող, դրամ, ղուռուշի $^{1}/_{40}$ մասը
Փուսուլայ (թրք.)—գրություն, նամակ, հրամանագիր
Փօլիցայ—փոխանցում

Քեանար (պրսկ.)—եզր, կող
Քեասարայ (արաբ.)—կարճ, չավարտված, կիսատ
Քեասիկ (թրք.)—կտրած, կտրված, ուժաթափ
Քեատար (արաբ.)—վիշտ, ցավ, նեղություն, պղտոր
Քեարխանայ (պրսկ.)—գործարան, արհեստանոց, գործանոց
Քեարսաղի (պրսկ., թրք.)—հմտություն, ճարպկություն, մեքենայություն, վճարում, հատուցում
Քերեստեճի (թրք.)—ատաղձագործ, հյուսն
Քէսայ (պրսկ.)—սկահակ
Քիրաճի (թրք.)—վարձակալ
Քիրայ (արաբ.)—վարձ
Քիւրք (թրք.)—մուշտակ

Օզմայ (թրք.)—թղթի կապոց, բաղկացած 480 թերթից
Օրթախ (թրք.)—ընկեր, ընկերակից, բաժնետեր, փայատեր

Ֆարշ (արաբ.)—սալահատակ, փռվածք, գորգ
Ֆերման (պրսկ.)—հրաման, հրովարտակ
Ֆէթվայ (արաբ.)—օրինական վճիռ-դատավճիռ
Ֆէլէմէնկ (թրք.)—հոլանդական
Ֆիլամանկ տե՛ս Ֆէլէմէնկ
Ֆնտըխ (արաբ.)—պնդուկ, կաղին
Ֆռանկ պատրի (լատ.)—կաթոլիկ հոգևորական

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Անձնանունների և տեղանունների ցանկերում ընդգրկված անունները հանված են Ղուկաս Կարնեցու նամակներից, ինչպես և մեր կազմած ներածությունից ու ծանոթագրություններից։ Ուղղագրությունը, բնականաբար, տարբեր է և համապատասխանում է բնագրերին, բայց որոշ դեպքերում, երբ մեր կողմից բնութագրված է տվյալ անձը կամ նշվում է նրա ապրած վայրը, այն փոխված է։ Անձնանունների ցանկից դուրս են թողնված չափազանց հաճախ հանդիպող Ղուկաս և Քրիստոս, ինչպես և սրբերի ու մարգարեների անունները, իսկ տեղանունների ցանկից՝ Էջմիածինը։

Աբդուլլա, Կարսի փաշա 68
Աբել, արքեպիսկոպոս 16
Աբիգինենց Սահակ պապ, շինող Սահակաշէն եկեղեցւոյ 239
Աբրահամ, աւագ քահանայ, ախալքալակցի, գործակալ ի Լօռի 201, 202, 316, 324, 325, 555
Աբրահամ, աւագ քահանայ ի Կարին 398
Աբրահամ, Բեքիրդաղից 429
Աբրահամ, Թիֆլիզից, Մօղնու եկեղեցւոյ աւագ քահանայ 309, 310, 313—315, 323, 330
Աբրահամ, Հաղբատի վարդապետ 155
Աբրահամ, հայր կեսարացի Խըտըրի 560
Աբրահամ—հացեատեր Թիֆլիսում 151, 152, 190, 195, 481, 496, 497
Աբրահամ, ղարսեցի, կարինաբնակ 441, 444
Աբրահամ, մահտեսի, Ագարագարից 428
Աբրահամ, մահտեսի, իշխան Մուհալիճից 452
Աբրահամ, որդի կեսարացի Խըտըրի 560
Աբրահամ, որդի Յարութիւնի (Բուշեա) 206
Աբրահամ, որմնադիր 298
Աբրահամ, Պապի որդի, ղափանցի 441
Աբրահամ, վարդապետ, Զմիւռնոյ առաջնորդ 366, 367
Աբրահամ, վարդապետ, Խարբերդու առաջնորդ 113
Աբրահամ, վարդապետ, Սանահնի վանքի առաջնորդ (Նախկինում Երուսաղեմի նվիրակ) 125, 126, 201, 239, 240, 260, 261, 301, 370, 378
Աբրահամ, տիրացու, նվիրատու 181
Աբրահամ, Քիլիսաքեանդից 199
Աբրահամ Կրետացի, կաթողիկոս 6
Աբրահամ աղայ, նամակատար 427
Ադամ, մէլիք 174, 376—378, 381, 549
Ադամ, ուխտավոր 428
Ադամյան Ա. 552
Ադիլ շահ 11
Ազատ խան 549
Ազիզ, դուստր Գրիգորի 520
Աթանէս, Քիլիսաքեանդից 199
Աթապէկ, հիւսն 403
Աթոյի որդի Բերո, սամղերթցի, ճորտ 76
Ալամ, հացեատեր Վանից 306, 308
Ալամդարյան Հ. 552
Ալեքսան, նվիրատու Բեքիրդաղից 429
Ալեքսան Չելեպոնց Ավետիք աղա (Զմյուռնիա) 108
Ալեքսանդր Երիցյան 6
Ալեքսանդր Պավլովիչ, Ռուսաց թագաժառանգ 293
Ալեքսանդր Ջուղայեցի, կաթողիկոս 6
Ալէքսան, Ամստերդամից, նվիրատու, եղբայր պրն. Եսայու 343, 355, 541
Ալէքսան, Բաղդատից, եղբայր Ասլան աղայի 472, 477, 485, 523, 525
Ալէքսան, մահտեսի, հայր Աստուածատուրի, նվիրատու Կ. Պոլսից 418
Ալէքսան, նվիրատու Ռուսաստանից 446, 447
Ալէքսան, Ռէշտում (Գիլան) գործակալ 169, 170, 179, 180, 338—340
Ալթուն, մահտեսի, Նորշէնից 199
Ալի, ներկայացուցիչ Բ. Արզումյանի 549
Ալի Բին Աբի Թալիբի, արաբ ամիրապետ 553
Ալի Մուրադ խան 548
Ալիբէկ Մաղսաբերդու 67, 98, 120, 121, 153, 154, 226
Ալիբէկ, ցորենի վաճառական 276
Ալիխան, ծառայ Հերակլ թագաւորի 371, 557
Ալիղուլի խան 30, 32, 34
Ախիջան աղայ (Վան) 89, 537
Ահարոն, վարդապետ, մահսարաբեր և նվիրակ 90, 121, 122, 177, 424, 425, 540, 549
Ահմատ աղայ, եղբայր Շամտինի 97, 98, 484
Ահմատ, խան Խոյու 178, 331
Ահմատ, Մակուայ սուլթան 197
Ահմատ, Մարաղայի խան 30
Աղա Մուհամադ շահ 14, 17, 28, 30, 31, 33, 49, 51, 68
Աղալօ, Ստեփանի որդի 97, 132, 487, 488, 508, 561
Աղամալ, եղբայր Մկրտչի 442

Աղամջան, արապկերցի 236, 280
Աղամջան, մահտեսի, Թոխաթից 112, 137—139, 180, 215, 229, 230, 233, 234, 254, 334, 454
Աղայեկ, մահտեսի, հայր խոջայ Աւետիքի և տիրացու Յոհանի, նվիրատու Թոխաթից 181
Աղանյանց Գյուտ 8, 9, 13—16, 22, 23, 39, 44, 49—51, 53, 54, 80, 81, 545
Աղէքսանդր Բիւզանդացի, կաթողիկոս 222, 223
Աղէքսանդր Ջէլէպի, որդի Մկրտիչ ամիրայի (Վալիտա խան) 106
Աղէքսանդր Պօլսեցի, կաթողիկոս 221
Աղվան չօլախ, Բայազետու փաշայի հարազատ 451
Ամրակում, վրացի վարդապետ 125, 545
Այվազ, ժողովարար ի Կարին 411
Անանիա, երէց ի Կարին 348, 349
Անանիա, մահտեսի, բատացի Սիմէօնի բեւոյ որդի (Իմայիլ) 269
Անանիա, սարկաւագ, գրագիր 22, 53, 54, 87, 177, 282, 283, 443, 463, 475, 543, 561
Անանիա, վարդապետ, Թիֆլիսի առաջնորդ 130
Անանիա, տիրացու 429
Անանիա, քահանայ (Կարին) 357
Անանիեան Կարապետ, մահտեսի 336
Անանիկ, մահտեսի 521
Անապատցի Մովսէս 461
Անաստաս, խոճայ 407, 408, 413, 414, 417
Անդրէաս, որդի ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Անթառամ կին, Աղարապարից 429
Անթառամ կին, Կ. Պոլսից 429
Անմարա, դուստր Գրիգորի (Սուրաթ) 520
Աննա, դուստր ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Աննա խանում, հանգուցյալ Մկրտումի այրի (Մադրաս) 534
Աննա, մայր մահտեսի Խըտըրի 560
Անտոն, մահտեսի 429
Անտոն, Վրաց կաթողիկոս, Հերակլ թագաւորի որդի 66, 96, 124, 372, 544, 545
Անտօն բեօխվայ, Նորշէնից 199
Անտօն, Քիլիսաբեանդից 199
Անուշ (նաև Անոյշ), Ուռուսչուղու գանձապետ 249, 266, 340, 429, 492
Աշխարհբէկ, Թիֆլիզից 129
Աշխարհբէկ, վէքիլ Հախպատու վանից 480, 488, 496
Ապով, մէլիք 451
Ապտալ, աղայ (Բայազետ) 451
Ապտիլղատի, մասուլցի 267
Ապտլվահապ, սուրհանդակ Կ. Պոլսից 116
Ապտուլլայ (նաև Աւտուլլա), փաշայ Ղարսայ 137, 153, 180, 181, 219, 250
Ապրօղլի Աստուածատուր աղայ 217
Առաքել, աղայ, եղբայր, Մօսկօֆ կոչեցեալ պրն. Յովաննէսի (Զմիւռին) 108, 109, 217, 234, 343, 355, 356, 452

Առաքել, ամիրայ 457
Առաքել, ամիրայ, Ղումղափուի ս. Աստուածածին եկեղեցու մութավելի 107
Առաքել, ամիրայ, ս. Ստեփաննոս եկեղեցու հոգաբարձու 168
Առաքել, թղթաբեր 434, 467
Առաքել, խօջայ 106
Առաքել, Զախից 450
Առաքել, չաթիր, նամակատար 287, 288, 556
Առաքել, ոսկերիչ, գանձապետ Բալուայ ս. Պարթև եկեղեցւոյ 141
Առաքել, որդի տիրացու Սարգսի 342, 397
Առաքել, վէքիլ 463
Առաքել, տիրացու, Ղազարապատի սպասաւոր 309
Առաքել, քահանայ ի Թիֆլիզ 388, 392
Ասլան, ամիրայ, եղբայր Ալէքսանի 472, 477, 507, 523, 525
Ասլան, խօջայ, վանեցի 107
Ասլան, ումեմն 527
Ասլանեան պրն. Ստեփաննոս, թարգման ի Մօղտօր 397
Աստուածապահ, զանազան 105, 167, 209, 242, 262, 435, 452, 456, 457, 463, 483, 544
Աստուածատուր, ագուլեցի, եղբայր Շուշու գանձապետի 331
Աստուածատուր, աղայ Ապրօյեան (Զմիւռին) 108, 212, 421, 422, 458, 461, 469, 486, 490, 493, 518, 540
Աստուածատուր, աղայ (Թիֆլիզից) 349
Աստուածատուր, ամանաթատեր Ղարսից 154
Աստուածատուր, ամասիացի նվիրատու 94
Աստուածատուր, ամասիացի ուխտավոր 248
Աստուածատուր, այգեվաճառ ի Դուխուրդան 405
Աստուածատուր, գանձապետ ի Շուշի 334
Աստուածատուր Գրիգորեան (Մադրաս) 534
Աստուածատուր, գիրձակ, նվիրատու 418
Աստուածատուր Համադանցի, կաթողիկոս 37
Աստուածատուր, մահտեսի, աղայ (Նոր Նախիջևան) 187
Աստուածատուր, մահտեսի, գանձապետ ի Պոլիս և ի Ղումղափու 360, 473
Աստուածատուր, մահտեսի, եղբայր Աղրանայու տէր Միքայէլ պետին 500
Աստուածատուր, մահտեսի, նվիրատու 470
Աստուածատուր, մահտեսի, ուխտավոր Թոխաթից 180, 181
Աստուածատուր, որդի մահտեսի Ալէքսանի, նվիրատու 418
Աստուածատուր, որդի Յարութիւնի 429
Աստուածատուր, որդի Ներսէս աղայի 146
Աստուածատուր, ջուղայեցի Փիլիպպոս և Մարգար Մանուչարյանների հայր 547
Աստուածատուր, վարդապետ, Մշոյ ս. Կարապետ վանքի առաջնորդ 246, 248, 317, 318, 320, 349, 410, 425, 428, 429, 475, 497, 498
Աստուածատուր վարդապետ, նվիրակ Կարսում 463
Աստուածատուր, վէքիլ Արզրումում 287
Աստուածատուր, ուխտավոր Հօրոմ գյուղից 344
Ավան Յուզբաշի 11
Ավետ, գանձապետ ի Ռուշճուխ 429
Ավետիս, հացեատեր Կ. Պոլսում 107
Ավետիս, մահտեսի, Պոլիսից 429
Ավետիս մարապետ 270
Ավետիք, հայր Դելօ ճորտի 76
Ավետիք, սարկաւագ (Աստրախանից) 63, 558
Ավետիք, վարդապետ, Բամբկաձորու առաջնորդ 98
Արշենսկի, Աստրախանի նահանգապետ 36
Արշէն, թիֆլիզեցի, Յովաննէսի պապ 281
Արսէն, խօջայ, գանձապետ (Օրթագիւղ) 106, 445
Արևելցի եղիայ, գանձապետ Տէր Պօղոսի եկեղեցւոյ 285
Արևելցի Ղազար, գանձապետ Դիմիճի եկեղեցւոյ 285
Արևելցի, մահտեսի Առաքել 470
Արևելցի մահտեսի Յովաննէս 248
Արևելցի տիրացու Մեսրոպ 105, 107, 167
Արևելցի տիրացու պրն. Գէորգ 167, 235, 456, 457, 463, 544
Արևելցի Տրչանենց մահտեսի Կարապետ 106, 167, 262, 490, 540, 562
Աւագ, ղազանչեցւոց գանձապետ ի Շուշի 450
Աւագ, Քիլիսաբեանդից 199
Աւդուլլա բէկ Թօփրախղալայու 301
Աւետիս (նաև Աւետիք), խառատ 340, 341, 558
Աւետիս, ս. Էջմիածնի պարտապան Կարինում 231
Աւետիս, վարդապետ, զանազան 233, 300, 301, 427
Աւետիք, խօջայ, Թոխաթից 181
Աւետիք, համանմանուրցի 148
Աւետիք, ղօնաղսաղ Յարութիւնի որդի, ճորտ 239
Աւետիք, մէլիք 69, 97, 126, 127, 132, 196, 257, 296, 299, 314, 315, 335, 393, 404, 486, 546, 554, 561
Աւետիք, ումն նվիրատու 203
Աւետիք, որդի Բարսեղի, էջմիածնի ճորտ 354
Աւետիք պետ, Հասանղալայու վանից առաջնորդ 257
Աւետիք, սարկաւագ 382
Աւետիք, Սէթ աղայի որդի (Սուրաթ) 520
Աւետիք, վարդապետ, աթոռակալ, էջմիածնի միաբան 42
Աւետիք, վարդապետ, միաբան Լմու անապատի 274
Աւետիք (նաև Աւետիս), տիրացու, նամակաբեր Աստրախանից 170, 191, 310, 360—365, 378, 383—386, 449
Աւէտ, անյիշատակ հանգուցեալ (Ռէշտ) 338, 339
Աւէտ, Սէթ աղայի որդի 207
Աւէտ Տէր-Մարգարեան, վէքիլ ի Բուշեռ 205—207
Աւէտ, տիրացու, գանձապետ ի Ռուսճուղ 249, 266, 340, 492
Աւթանդիլ բէկ, վրացի 340
Աւթանտիլ, Ախալցխայից, հացեատեր 254
Աւթանտիլ ծառայ Գեօրգի Միրզայի 258, 259
Աւթանտիլ, նվիրատու 156, 157
Աւտուլլա բէկ Թօփրախղալայու 274
Աֆի, էվչիլարցի 552
Աֆրասիօն, գրագիր վրաց արքայորդւոյն 436

Բարա բէկ 96
Բարայեան Լևոն 50, 80
Բաղալ, հայր պրն. Յոհանի 337
Բալու, գանձապետ Ախալցխայում 251, 254
Բաղդասար, Անդրիասի որդի (Ղզլար) 466, 477
Բաղդասար, թիֆլիսեցի հացեատեր 129
Բաղդասար, վարդապետ, Վանից 307
Բաղդասար, աղայ, թղթաբեր 335, 336
Բաղդոնց Խաչատուր, էջմիածնի վանքի պարտապան 231
Բաղտասար, զարահիսարցի, նվիրատու 391
Բաղտասար, ումն ուխտավոր 236
Բաղտասար, որդի պրն. Գէորգի (Ղարս) 225
Բաղտասար, վարդապետ, էջմիածնի միաբան 90
Բաղտասար, Քիլիսաբեանդից 199
Բաղտեան Ստեփան 444
Բաշարաթ, Ղընըղից 333
Բապայ, որդի Թաղիանոսի (Խոյ) 538
Բաւենցի Հարութիւն, վարդապետ 15
Բասալ, գափանցի մահտեսի Թումանի ազգական (Կ. Պոլիս) 213, 419, 452, 458
Բարաղամ, վարդապետ, ժողովարար 424, 425
Բարաքիալ, գանձապետ ի Շուշի 427
Բարաքիաս, գանձապետ նախչուանցւոց ի Շուշի 450, 451
Բարդուղիմէոս, ամիրայ, սահաթճի 404, 406
Բարդամեան Մովսէս 205, 208, 550
Բարսեղ, ամիրայ, կեսարացի 349
Բարսեղ, ամիրայ, քերեստեճի 107
Բարսեղ, էջմիածնի ճորտ 75, 354
Բարսեղ, վարդապետ, էջմիածնի միաբան 543, 556
Բարսեղ, վարդապետ, ճորտ Բեժանի հորաքրոջ որդի 298
Բարսեղ, վարդապետ, Մօղնւոյ ս. Գէորգ վանքի առաջնորդ 100
Բարսեղ, քահանայ ի Բաքու 450
Բարսեղ, քահանայ, Հնդկաստանի նվիրակ Գրիգոր վարդապետի ծառայողներից 209
Բեգլար, մելիք Գյուլիստանի, Մելիք Հովսեփի որդի 174, 175, 549
Բեդրօրօգլո, իշխան, կանցլեր 36
Բեթխէհէմեան պրն. Յովաննէս, գործակալ ի

[illegible] 59, 204—209, 219, 229, 461, 482, 494, 523, 536, 538—540, 550
Բեկլեշե, Կամենեց-Պոդոլսկի նահանգապետ 36
Բեկում, Պետրպօլքու 383
Բեհնամ, խան, Նախիջևանի կառավարիչ 11
Բերդումեան Պետրոս, վարդապետ 263, 359
Բէժան Արղութեանց, եղբայր Հովսէփ Արղութեանի 123, 124, 133—135, 261, 545, 549, 551
Բէժան, էջմիածնի ճորտ 298
Բէժան, Մարանի վերակացու 259
Բէկբաբէկեան պրն. Սուլխան Դիւան 368
Բէկնազարեան Բ. Ասպետ Թադէոս 15
Բէկում կին, նվիրատու 507
Բէրօ, որդի Համշէրէթցի Աթոյի 256
Բինա, էջմիածնի ճորտ 322
Բրաբիոն, կենակից Մուրատեան Յովհաննիսի ամիրայի 404, 406, 418
Բունյաթ-Ալի, պարսիկ պաշտոնյա Երևանում 58
Բունաշեվ Ս. Դ., գնդապետ 58, 62, 396, 546, 559
Բունութունենց մահտեսի Յարութիւն, կարնեցի 469, 517
Բունոթընենց պրն. Սարգիս 517
Բուտկով Պ. Գ. 56

Գաբրիել, արքեպիսկոպոս 34
Գաբրիէլ, Բամպկաձորից 299, 414
Գաբրիէլ, թարգման 399, 400
Գաբրիել, խառատ 558
Գաբրիէլ, մահտեսի, բալաղեցի վաճառական 253
Գաբրիէլ, մահտեսի, խամսեցի 471
Գաբրիէլ, Յովաննէս բժշկի փեսայ 238, 240
Գաբրիէլ, նամակաբեր աղա Գանձասարից 304, 360
Գաբրիել, նվիրատու Կարսից 490
Գաբրիէլ, որդի Աստուածատուր աղայի 349
Գաբրիէլ, որդի մահտեսի Սահակի 107
Գաբրիէլ, Պ. Պոտյոմկինի ներկայացուցիչ 360, 446, 447, 449, 557
Գաբրիէլ, վաճառական Կարինում 230
Գաբրիէլ, վարդապետ, Երուսաղեմի միաբան 280
Գաբրիէլ, տէր Սիմէոնի եղբայր, էջմիածնի ճորտ 130
Գալստեն (նաև Գալստան), մահտեսի Կ. Պոլսից 461, 495
Գալուստ, Բէրօյի որդի 256
Գալուստ եպիսկոպոս Ներսիսյան 22
Գալուստ ի Զմիւռին, քահանայ 108, 519
Գալուստ, մահտեսի, ջուղայեցի 107
Գալուստ, սարկավագ 53
Գալուստ, վարդապետ, էջմիածնի միաբան, ապա պատվիրակ Թիֆլիսում 56, 149, 153, 156—158, 200—203, 224, 227, 229, 240, 330, 365, 547, 550, 558
Գալուստ, վարդապետ, Պօլսոյ արտաքին վիճակաց նուիրակ 105. 107—110, 112, 211, 212, 214, 242, 248, 261—265, 283—285, 308, 356, 377, 388, 409, 418, 420, 423, 442, 452, 453, 457, 469, 492, 521, 522, 560
Գասպար, մահտեսի, եղբայր Աղրանայի Յովհաննէս և Յարութիւն ամիրաների 429, 500
Գասպար, մահտեսի, նվիրատու Ադրիանուպոլսից 248, 336, 432
Գասպար, մէլիք Քիլիսաքենդից 199
Գասպար, Մինաս կաթողիկոսի եղբոր որդի 444
Գասպար, շինարար (ճարտարապետ), բարհատ Վանից 38, 442, 472, 522, 558
Գասպար, ոմն պարոն 106
Գասպար, վարդապետ, առաջնորդ Կտուցու անապատի 520
Գասպար, տիրացու, սափրիչ Գրիգորի որդի 443
Գարսէւան էշիկաղասի 125
Գեանճ Կարապետ, գանձապետ Տէր Սարգսի եկեղեցւոյ 285
Գեթսեման, նվիրատու 508
Գեորգ աղայ (նաև պարոն Գէորգ), մեծահարուստ Կարսից 90, 93, 94, 98, 99, 119—121, 136, 137, 144, 153, 154, 180—184, 200, 203, 212, 217—220, 225, 226, 229, 231, 232, 236, 238, 242, 244, 245, 250, 254, 255, 261, 262, 267, 276, 287, 304, 305, 320, 326, 446, 463, 464, 519, 539, 543
Գեորգ ամիրայ, մահտեսի, ակնցի 107
Գեորգ մահտեսի, հացեատեր Քեօթահից 428
Գեորգ Միրզա (նաև Միրզա Գեորգի, Գեօրկին Միրզայ, Գեորկին Սուլթան, Գեօրկին խան, Գէորգ արքայորդի), վրաց թագաժառանգ, հետագայում վրաց թագավոր Գեորգ XII 26, 34, 35, 58, 66, 67, 95, 97, 124, 127, 128, 138, 139, 155, 157, 201, 202, 258, 259, 271, 283, 296, 301, 302, 324, 328—331, 353, 373, 374, 390, 411, 414, 415, 434, 438, 440, 454, 545, 546, 550, 551, 553, 554, 556, 557, 561
Գեորգի (նաև Գեօրկին) գործակալ ի Մօզդօք 149, 151, 186, 194, 547, 549
Գեորգի, տիրացու Շահվերդիի որդի 108
Գեորկի բէկ, վրաց թաւադ 219, 220, 228, 551
Գերսթեներերգ Յ. Դ. 546
Գէլօ, շուլինթեցի Քօրօյեան Մամաջանի թոռ և Աւետիքի որդի 256
Գէորգ, գանձապետ Բալուայ ս. Կիրակոս եկեղեցւոյ 141
Գէորգ, եղբայր Աղիջանի (Վան) 537
Գէորգ, երէց Կարսում 275
Գէորգ, էջմիածնի ճորտ 322
Գէորգ, մահտեսի, որ է ի Թօխաթ 391
Գէորգ, նվիրատու 517, 522
Գէորգ, ոմն 388
Գէորգ, որդի Հաճի Յովաննէս Պոլսեցւոյ 244
Գէորգ, որդի մահտեսի Ստեփանի ի յԱմասիա 520

Գէորգ (նաև Գէորք) վարդապետ, Բալուայ առաջնորդ 113, 139, 140, 142, 424
Գէորգ, վարդապետ, հալապցի նուիրակ ի Կարս և ի Կարին 471
Գէորգ, վարդապետ, ս. Ստաթէի վանից միաբան 276
Գէորգ (նաև Գէորք) տիրացու, դիւպենդճի ի Կ. Պոլիս 209, 420, 435, 444, 452, 462, 483, 515, 519, 557
Գէորգ, տիրացու, նամակագիր Կ. Պոլսից 176
Գէորգ, ուխտաւոր Կարսից 180
Գէորգեան պրն. Պօղոս, ղափանցի նվիրատու 517
Գէորք, վարդապետ 467
Գիլնազար, որդի Մխիթար Քեալանթարի 300
Գիւլբասար, ղափանցի պրն. Թումանի ազգական 213
Գրիգոր, աղայ, հանգուցեալ ի Մադրաս, նվիրատու 208, 383, 384, 386, 529
Գրիգոր, ամիրայ, եղբայր Սախալօղլի Մարտիրոս ամիրայի 107, 168, 308
Գրիգոր ամիրայ, փեսայ Տագէս ամիրայի 406, 408, 521
Գրիգոր, Բէրօյի որդի 256
Գրիգոր, գանձապետ ի Շամախի 171
Գրիգոր, գանձապետ Ղումղափուի սափրիչների 445
Գրիգոր, եղբայր Պօղոսի, շինարար բանվոր 558
Գրիգոր եպիսկոպոս 34
Գրիգոր, մահտեսի, կտակակատար 112
Գրիգոր, մահտեսի, նվիրատու Ադրիանուպոլսից 248
Գրիգոր, Նոր-Նախիջևանի դեֆութաթ, սուրհանդակ 61, 186—197, 549
Գրիգոր, Նորշէնից 199
Գրիգոր, նվիրատու 157
Գրիգոր, ոմն պարոն Թոխաթից 234
Գրիգոր, որդի Յովաննէս բժշկի 239
Գրիգոր, պապուճչի 418
Գրիգոր, պետ (վարդապետ), մոմաժողով 297, 299
Գրիգոր, սարկաւագ, գրագիր 46, 53, 294
Գրիգոր, սափրիչ, գանձակեցի տիրացու Գասպարի որդի 443
Գրիգոր, սուրհանդակ 185
Գրիգոր, վարդապետ, Ագուլեաց վանքի առաջնորդ 88
Գրիգոր, վարդապետ, Բասրայի, Բաղդատի, Բուշեհրի և հետո Հնդկաց երկրի նվիրակ 204—206, 209, 393, 415, 417, 458, 485, 494, 495, 517, 520, 524—529, 533, 535, 561
Գրիգոր, վարդապետ, էջմիածնի միաբան 34
Գրիգոր, վարդապետ, էջմիածնի նվիրակ Տիգրանակերտում և Բալուում 41, 113, 116, 139—142, 252, 269, 318, 319, 422
Գրիգոր, վարդապետ, Կ. Պոլսի արտաքին վիճակաց նվիրակ 41
Գրիգոր, վարդապետ, մահսարատար 45
Գրիգոր, վարդապետ, մոմաժողով 330
Գրիգոր, վարդապետ, ս. Նախավկայի վանից առաջնորդ 88
Գրիգոր, վարդապետ, Ռումէլու նուիրակ 387, 419—421, 429, 461, 471, 492, 493
Գրիգոր, վտանգավոր համարված անձ 74, 241
Գրիգոր, տէր Սիմէոնի եղբայր, էջմիածնի ճորտ 130
Գրիգոր աղայ, Ադրիանուպոլսից 336
Գրիգոր աղայ, մահտեսի Յովհաննէս ամիրայի ազգական 417
Գրիգոր աղայ, Ռուսչուկից 428, 429
Գրիգոր, փեսայ Ռափայէլի (Սուրաթ) 520
Գրիգորյան Հովսեփ 18
Գրիգորյան Վ. Ռ. 18, 26, 28, 51, 84
Գուդովիչ, կոմս, Եգորևսկի նահանգապետ 36
Գուրիով (Գուրով) Սիմէոն Գրիգորիչ, Նոր Նախիջևանի կամէնդատ 61, 186, 188, 549
Գուրկէն, ոմն 414
Գօչգօչանենց Աւթանտիլեան Բէժան 500
Գօրկին, թիֆլիսեցի ոմն պարոն 439
Գօրօյեան մահտեսի խաչատուր 121, 144, 182, 183, 216, 236, 244, 245, 267, 268, 444, 452
Գօրօյենց Զրաղ Յարութիւն 486, 521
Գօրօյենց Զրաղ Ստեփան 286
Գօրօյենց Սերօբ 91
Գօրօյենց աղայ 458, 460, 461, 469
Գևորգ, հերիմ Հայրապետի հետ եկած անձանցից 560

Դահիր, շամբօսեցի 423
Դանիէլ, դիւպեճչի 442
Դանիէլ, հայր Գրիգորի, տիկորցի 77, 231, 232
Դանիէլ, հացեատեր Կ. Պոլսում 428
Դանիէլ, մահտեսի, Նոր Նախիջևանից 187, 196
Դանիէլ, պետ, սպասավոր Մկրտիչ վարդապետի 266
Դանիէլ, պետ, Ուչքիլիսէի միաբան 327, 328
Դանիէլ, վարդապետ, էջմիածնի միաբան 56, 65, 92, 94, 95, 99, 123—127, 129, 130, 133, 134, 138, 147, 543, 544
Դանիէլ, վարդապետ, նուիրակ ի Կարին 41, 453—455, 493, 503
Դանիէլ Սուրմառեցի, կաթողիկոս 7, 9, 52
Դանիէլիչ Ստեփան, պոլկովնիկ — տե՛ս Բուռնաշեվ Գ. Ս.
Դաստակիվ խաթուն, մայր Յարութիւն աղայի (Կալկաթայ) 524, 561
Դատա Սուլէյման 97
Դարրաս, Իսաղ փաշայի սուրհանդակ (նաև Դարվաղ աղայ) 275, 552
Դարէջան, թագուհի Վրաց 26, 329, 501, 550, 556
Դաւիթ, գանձապետ Շամախիում 335
Դաւիթ, էջմիածնի ճորտերի հայր 130
Դաւիթ, զօնտաղսաղ, Յարութիւնի որդի, ճորտ 239

Դավիթ, մաշտոց (Թիֆլիս) 97, 126
Դավիթ, նվիրատու Բարվից, գանձապետ 450
Դավիթ, նվիրատուի հայր 157
Դավիթ, Շամախու գանձապետ 171
Դավիթ, սարդար, եղբայր Նիկոլի (վրացի) 66, 96, 125, 138, 139, 545
Դավիթ, վարդապետ, Թիֆլիզեցի 35, 72, 232, 233, 259, 300, 302, 350, 351
Դավիթ, վարդապետ, Հախպատու վանից առաջնորդ 353, 414, 415, 422, 479, 480, 496, 516
Դավիթ, քահանայ (Ախալցխայ) 253
Դավիթ, քահանայ (Ախալցխայ) 253
Դավիթ, քահանայ, ժողովարար 328, 330, 331
Դավիթ Էնեգեթցի, էջմիածնի միաբան, հետո կաթողիկոս 7, 9, 31, 32, 34
Դավիթ Ստեփաննեան, եղբօրորդի Սահակայ եպիսկոպոսի 15
Դէկովլէնց, գրաֆ, Ավստրիայի դեսպան Պետերբուրգում 513
Դէմեարէ էշիկաղասի 125
Դիլոյան Վ. Ս. 558
Դինիբէկեանց խաթին, հայր Յովսէփի 272, 273, 551
Դինիբէկեանց Յովսէփ 48, 51, 272, 273, 527, 551, 552
Դոլգորուկի Վասիլի Միխայլովիչ (նաև Դօրգօլուկ Վասիլ Միխայէլիչ), գեներալ-անշեֆ 290, 554

Եաղուպ փաշայ 153
Եաղուպենց Կիրակոս, բէրցի 552
Եայղուբ, նվիրատու տիկին Բալուից 426, 427
Եավէրէկ—տե՛ս Իավրէկ
Եգանյան Օննիկ 84
Եկատերինա I, Ռուսաց կայսրուհի 35
Եկատերինա II, Ռուսաց կայսրուհի 25, 31, 33, 35, 60, 291—293, 511, 545, 546, 553
Եղիա, մահտեսի, գանձապետ ի Կարս 90, 218, 305, 554
Եղիա, նամակատար Ախալցխայից 100, 101
Եղիա, նվիրատու 429
Եղիա, ոմն Բայազետից 279
Եղիա, որդի խօջայ Յովհաննիսի 106
Եղիա—տե՛ս Գրիգոր, սափրիչ Ղումղափուից
Եղիա, քահանայ Օքրօպակերտից 245
Եղիազար, գանձապետ ի Բաքու 169, 170, 172, 191, 427, 449, 450
Եղիազար, մահտեսի, ամիրայ 406
Եղիազար, մահտեսի, Նոր Նախիջևանից 187
Եղիազար, մահտեսի, Կ. Պոլսից 107
Եղիազար, նվիրատու 304
Եղիազար աղա—տե՛ս Լազարեան Եղիազար
Եղիազար Այնթապցի, կաթողիկոս 6
Եղիազար Նազարեթեան 291
Եղիսաբէթ, դուստր ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Եղիսաբէթ, Յովհաննէսի կին 281
Եղիսաբէթ, նվիրատու Ուռուհուղից 249
Ենոք Մէլիք 464
Ենովք (նաև Ենօք), էջմիածնի ճորտ ի Թիֆլիզ 257, 278, 298, 488
Եսայի, Ալէքսանի եղբայր, նվիրատու (Զմիւռին) 518, 541, 542
Եսայի, գանձապետ Տէր Միքայէլի եկեղեցւոյ 285
Եսայի, Երուսաղէմի նվիրակ 372
Եսայի, Թիֆլիսեցի վաճառական 106, 190, 244, 253, 268, 310, 311, 362, 384, 390, 401, 409, 449, 478, 506, 517, 523, 558
Եսայի Իւզբաշի, գանձապետ ի Դարբանդ 171, 334, 442
Եսայի, մահտեսի Թովմասի որդի 109
Եսայի, մէլիք 549
Եսայի, նուիրակ ի Թարվէզ 323
Եսայի, պրն. Յօհանի որդի 337
Եսայի, վարդապետ, նուիրակ և առաջնորդ ի Զմիւռին 20, 89, 108, 110, 253, 303, 333, 443, 355, 356, 388, 390, 392, 407, 409, 415, 418, 420—422, 436, 458, 469, 478, 486, 490, 560
Եսայի, վարդապետ, ս. Թադէոսի Առաքելոյ վանից առաջնորդ 89, 197, 278
Եսայի, վրացի նամակաբեր 295
Եսայի, ուխտավոր 257
Եսայի, Ֆիթօյենց պրն. Պետրոսի թոռ 525
Երեմիա, մահտեսի, նվիրատու Ադրիանուպոլսից 248
Երեմիա, նվիրատու Կ. Պոլսից 404, 406
Երեմիա Վիրապօղլի 108
Երիցյան Ալ. 34, 35
Եփրեմ կաթողիկոս 52
Եփրեմ կաթողիկոս Սսայ 484
Եփրեմ հարիւրապետ 398
Եփրեմ Ձորագեղցի, կաթողիկոս 7
Եփրեմ վարդապետ, նուիրակ ի Թարվէզ և Խոյ 338, 341, 347, 356, 374, 375, 376, 382, 405, 410, 464, 529, 535—537
Եփրեմխանօս, նամակատար 206, 207
Եփրիկզատէ մահտեսի Յակոբ 114
Եօղուրտճի Օղլու Կարապետ 389

Զաքա, թերզի, նամակաբեր 372
Զաղարէկ, վրացի 66, 96, 125, 545
Զալ մովրով 125
Զալ Նագիր 125
Զալի Մուրատ խան 508
Զալոյ, հասցեատէր Բայազետում 143
Զաման խան, հայր Ղասումի 437
Զարգարյան Վ. Գ. 16
Զաքարիա, աստրախանցի 558
Զաքարիա, Բոմբեյի նվիրակ 520
Զաքարիա, Ղընըղից 333
Զաքարիա, Նորշէնից քահանայ 199
Զաքարիա, Շինախս գիւղի մովրով 277
Զաքարիա, Չմշքածակից 429
Զաքարիա, սարկավագ 53
Զաքարիա, վարդապետ, Կ. Պոլսի պատրիարք 20, 22, 24, 49, 91, 102, 104, 159, 163, 218, 242, 255, 261, 308, 311, 332, 359, 360, 402, 422, 452, 456, 543, 544
Զաքարիա, քահանայ, Բամբկաձորու պրն. Գաբրիէլի անէր 299
Զաքի, մահտեսի, Բասացի 350, 388, 390, 471
Զիպիտայ, քոյր խօջաջանեան Զաքիկենց Գրիգոր աղայի 534
Զմրոյր կին, Չմշքածակից 429
Զօրին, պարոն, Նոր Նախիջևանից 187

Էլմազ կին, նվիրատու Կ. Պոլսից 429
Էլչէ պրն. Յակոբ 454
Էղիազ աղայ (Մազրասից) 534
Էլօ, մահտեսի, Բայազետից 89, 332
Էլօյեան Ստեփան (նաև Ստեփաննոս), մահտեսի Շուշուց 270, 335
Էմնիզեան խաչիկ աղայ 206, 207, 520
Էմնիզեան մահտեսի Յարութիւն աղայ 204, 490
Էնծենպերգ, իշխան Աշոլայու 401, 465
Էփթվիմէ, վարդապետ վրաց (նաև Էֆթիմէ) 66, 96, 258, 375, 551

Թագւոր աղայ, որդի մահտեսի Մկրտչեան Անդրէասի 472
Թագուհի, դուստր նվիրատու Սառա կնոջ 242
Թագուհի, կին Մուրատխան Մելքոնյանի (Սեյտապատ) 520
Թադէոս, գանձապետ ի Մարզվան, մահտեսի 306
Թադէոս, գործակալ ի Թարվէզ 179, 346, 405, 410, 559
Թադէոս, հասցեատէր Կ. Պոլսում 106, 107
Թադէոս, մահտեսի, Ղընըղից 333
Թադէոս, ոմն հասցեատէր Կարմիր Կոնտում 143
Թադէոսեան Գրիգոր աղայ, մահտեսի 336
Թալան Իւզբաշի 362
Թախտուրուսում օղլի խօջայ Սարգիս, կեսարացի 277
Թաղիանոս, նվիրատու ի Խոյ 538
Թաղօեան Մկրտում 127
Թարգիզատէ խօջայ Յոհաննէս (նաև Թէրգիզատէ Յովաննէս) 386, 412, 444, 445, 458
Թեյմուրազ, Վրաց թագավոր 551
Թեքիրդաղցի Սարգիս, վարդապետ 14
Թէմուրազ Դիւան բէկ 228
Թոմա, Չմշքածակից 429
Թովմաս, էջմիածնի վանքի թուանքչի 119, 153, 219, 554
Թովմաս, մահտեսի, որդի պրն. Առաքելի 109
Թորոս, կաթողիկոս Սսայ 484
Թորոս, հայր Մակարի 77
Թորոս Տէր-Ավետիսյան (Մազրաս) 534
Թուման, պոլսեցի 131, 270
Թուման, ազգական ղափանցի մահտեսի Թումանի, Կ. Պոլսից 213, 458
Թուման, Բայազետից 89, 197, 458
Թուման, մահտեսի, Կիւլբասարի հօրեղբայր, հանգուցյալ 444, 458
Թուման, մահտեսի, ղափանցի 107, 213, 452, 458, 550
Թումանեան Սուլխան Դիւանի 422, 423
Թումանյան Հովհաննես, բանաստեղծ 50
Թումօ, ղատարճի, պարտապան Բայազետից 227
Թուրք Հասան աղայ, Կարսից 200
Թօմա, վարդապետ, ս. Թօմայի Առաքելոյ վանից առաջնորդ 88, 234, 235
Թօմայ, մահտեսի, եղբայր մահտեսի Սահակի 107
Թօմաս, էջմիածնի վանքի նամակատար 99, 100, 154
Թօմաս, քահանայ Նորշէն գյուղի 199
Թօմօ, ղատարճի, Բայազետից 220
Թօմօ, մահտեսի, եղբայր պրն. Միրզօյի 143
Թօրօս, նախչուանցի, հայր Մակարի 231, 232

Իբրահիմ աղայ, գանձապետ Կարսի փաշայի 68, 180
Իբրահիմ էֆէնտի (նաև աֆանդի) Կարսից 119, 153, 180, 218, 219, 226
Իբրահիմ, խան Ղարաբաղու 27, 56, 57, 68, 134, 172, 174, 178, 181, 250, 548, 549
Իբրահիմ Միրզա 11
Իբրահիմ, փաշայ Կարնոյ 67, 92, 93, 325
Իգնատիոս, մահտեսի, գանձապետ 442, 445
Իմամղուլի, խան Որմու 178
Իավրէկ (նաև Եավէրէկ), նամակաբեր Թիֆլիսից 340, 341
Իսահակ, ամիրայ, գանձապետ Պալաթու եկեղեցւոյ 404, 467
Իսահակ, վարդապետ, էջմիածնի միաբան, վէքիլ, ապա նվիրակ Թիֆլիսում, հետո եպիսկոպոս (նաև Հովհաննես Գեղամայ դպիր, Սահակ վարդապետ) 41, 42, 45, 59, 79, 87, 144, 177, 362, 387, 391, 397, 401—404, 406, 412, 413, 415, 417, 419, 420, 424—427, 429, 434, 436, 438, 441, 444, 445, 451, 452, 454, 456, 466—468, 473, 477, 482, 483, 492—495, 502, 507, 515, 520, 525, 537—541, 556, 557, 560—562
Իսահակ, վարդապետ, Շամախու առաջնորդ 171, 172
Իսահակ, վարդապետ, փառակեցի 246
Իսաղ, փաշայ Բայազիտու (նաև Իսախ փաշայ) 29, 67, 73, 101, 142, 154, 270, 273, 275, 279, 301, 326, 327, 451, 484, 548, 552, 554
Իսաջան, աղա, խոյեցի 29
Իսմին խան 484
Իսպիր, ոմն տաճիկ 244

Իսրայէլ, կաթողիկոս Գանձասարու 44, 62, 66, 96, 117, 125, 126, 132, 156, 164, 202, 227, 313, 315, 350, 353, 354, 369, 433, 451, 545
Իսրայէլ, օշականցի, ուղեկցող Դանիել վարդապետի 544
Իվանով Ալէքսանդր Ֆէտորովիչ, պոլկովնիկ, մօզդօքու կամէնդատ 61, 194, 549
Իւանէ, թէլէթցի, Սաֆարենց Պապի որդի 256
Իւանէ, միրիշքեարբաշի, եղբայր մէլիք Աւետիքի 97, 126, 196, 297, 393, 404, 546, 561
Իւանէ Մուխրանբէկ 57, 281, 552
Ինուզ բէկ—տե՛ս Յինուզ բէկ

Լազարյան Եղիազար (Նաև Եղիազար աղայ, Ալազար Նազարեթի) 146, 148, 310, 311, 547, 551
Լազարյան Հովակիմ (Նաև Յովակիմ աղայ) 310, 311, 547, 554
Լազարյան Հովհաննես (Նաև Յովհաննէս աղայ Եղիազարեան) 33, 51, 61—64, 145, 148, 289, 293, 310, 311, 360—362, 377—380, 384, 386, 448, 504, 506, 513, 518, 546, 547, 551
Լազարյան Մինաս (Նաև Մինաս աղայ) 146, 291, 310, 311, 547, 554
Լալիթարս, թիֆլիզեցի, հիւսն Աթապէկի կին 69, 297, 403, 554
Լալիկ Ալլահվերդի, Աքընչի Մահմադ խանի աղայ 437
Լեո 11, 17, 31, 43, 50, 51, 80, 557, 559
Լեհացի (Ստեփաննոս) 516
Լուսեղէն, տիրացու, նամակատար 379
Լևոն Միրզայ, վրաց արքայորդի (Նաև Լևան) 26, 66, 96, 124, 200, 201, 202, 219, 224, 544, 545, 549, 550

Խալդարենց Մարգար աղայ ի Բաղդատ 205, 514
Խալիր, փաշայ Կարնոյ 93, 135, 182, 183, 216, 226, 254, 267
Խանումօղլի կոչեցեալ Եփրեմ ամիրայ 107
Խաչատուր, աւագէրէց Սահակաշէն եկեղեցւոյ 240
Խաչատուր, եղբայր Եօզուրաճի օղլու Կարապետի 389
Խաչատուր, եղբայր տէր Սիմէօնի 130
Խաչատուր, խոջայ, բասմաճի 108
Խաչատուր, խոջայ, Ղալաթիոյ գանձապետ 106
Խաչատուր, մահտեսի, Կարինից 121, 137, 182, 281, 470, 493
Խաչատուր, մահտեսի, Կարսից 470
Խաչատուր, մահտեսի, նվիրատու Ադրիանուպոլսից 248
Խաչատուր, մահտեսի, նվիրատու Բայազետից 138, 253
Խաչատուր, որդի մահտեսի Սահակի 107
Խաչատուր, Զմշքածակից 429
Խաչատուր, քահանայ Սահակաշինու 272, 273, 298
Խաչեր, մահտեսի, գանձապետ ի Պաղչաչուկ 284
Խաչեր, մահտեսի, Մուհալիճից 452
Խաչիրար, մահտեսի, քանաքեռցի 108
Խաչիկ Էմինյան, ջուղայեցի 38
Խաչիկ, մահտեսի, որդի Սահակի 445
Խաչուկ, հասցեատեր Կ. Պոլսում 429
Խըտըր, մահտեսի, կեսարացի բարերար 388, 389, 392, 416, 461, 560
Խյօ, փայեկ 101
Խոճաս, Թեքիրդաղից 429
Խորով, մահտեսի, Իսկիտարու ս. Կարապետի եկեղեցու գանձապետ 106
Խուրով Գևորգ 14, 16, 32, 39
Խուտարաշեան Մակար, շամախեցի 61, 290
Խուտավէրտի, մէլիք (Խոյ) 464
Խօջամալեան Յովաննէս, երևանցի (Ջուղայ) 290
Խօջաջանեան Ջակիկենց Գրիգոր աղայ, բարերար Սուրաթից 41, 42, 534, 535

Ծատուկ, Նոր Նախիջևանից 187
Ծատուր, մահտեսի, գանձապետ 356
Ծատուր, նվիրատու 418

Կախովսկի, կոմս, Նովոռոսիյսկի նահանգապետ 36
Կամպանեան Գրիգոր աղայ (Նաև Կանպանով Գրիգոր աղայ) 61, 290, 397, 400, 553
Կատարինէ, դուստր ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Կատարինէ, կին ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Կարախանյան Գ. 58
Կարապետ, Աղթամարի կաթողիկոս 379
Կարապետ, եղբայր Մինաս կաթողիկոսի 442
Կարապետ, ընծայաբեր 372
Կարապետ, Թավրիզում գանձապետ 179
Կարապետ, խօջայ, գանձապետ ի յՈւռհա 142, 376
Կարապետ, խօջայ, Գէլիպօլի գանձապետ 453
Կարապետ, խօջայ, Կարինի փաշայի սառաֆ 530
Կարապետ, կարնեցի աղայ 278
Կարապետ, հասցեատեր Ազարբաջարում 429
Կարապետ, հասցեատեր Կ. Պոլսում 107
Կարապետ, մահտեսի, եղբայր պարոն Մկրտչի, էջմիածնի բարերար 418, 419, 460—462, 516, 522
Կարապետ, մահտեսի, էջմիածնի պարտապան 342
Կարապետ, մահտեսի, Էտրնայից 429
Կարապետ, մահտեսի, կարնեցի հասցեատեր 268
Կարապետ, մահտեսի, հասցեատեր Կարսում 121, 153, 305
Կարապետ, մահտեսի, պոռոճիկ (Նոր Նախիջևան) 187
Կարապետ, մահտեսի, տիրացու, որդի մահտեսի Սահակի 287
Կարապետ, նվիրատու Ադրիանուպոլսից 248, 432
Կարապետ, նվիրատու Թոխաթից 181
Կարապետ, նվիրատու Իզնիմիտից 428
Կարապետ, նվիրատու Կարսից 203
Կարապետ Նուրեան, Կ. Պոլսի դիւլպէնդճոց գլխաւորներից 420
Կարապետ, ոմն նվիրատու Ղլլարից 477
Կարապետ, ոմն նվիրատու Կ. Պոլսից 471
Կարապետ Զալիկեան, մահտեսի 108, 421
Կարապետ, Պօլիսայից ոմն 461
Կարապետ, Պօլսից (անհայտ) 184
Կարապետ, վարդապետ, առաջնորդ և նուիրակ ի յԱնգալի 533
Կարապետ, վարդապետ, Արապկերու առաջնորդ 112
Կարապետ, վարդապետ, արապկերցի, նուիրակ
Բայազիտու 270, 271, 288, 301, 348, 425, 451
Կարապետ, վարդապետ, Երինջակու ս. Կարապետ վանից առաջնորդ 88
Կարապետ, վարդապետ, Երուսաղեմի միաբան, նվիրակ 190, 438—440
Կարապետ, վարդապետ Ընձացի (Նաև Ընձացի), հետո ա-
էջմիածնի միաբան, ապա վէքիլ, 51, 66, 67,
առաջնորդ ու նվիրակ Թիֆլիսում 135, 136, 139,
76, 123—129, 131—133, 135, 136, 139,
143, 151, 152, 191, 195, 196, 202, 220,
227, 238—240, 255—258, 261, 271, 272,
277, 290, 294—299, 314—316, 320, 324,
325, 330, 350, 354, 366, 388, 392, 400,
411, 414, 428, 464, 467, 481, 488, 489,
545, 548
Կարապետ, վարդապետ, Հ. Արղության սպասավոր 384, 502
Կարապետ, վարդապետ, Համթայ առաջնորդ 113, 251, 254, 540
Կարապետ, վարդապետ, սասունցի, Տիգրանակերտու առաջնորդ 211—213, 216, 218, 221, 222, 224, 225, 251, 252, 266, 424
Կարապետ, վարդապետ, վանցի, ժողովարար ի յՈւռումէլ 468, 485, 518
Կարապետ, վարդապետ, քարավանբաշի 558
Կարապետ, վարժապետ 40
Կարապետ, ուխտաւոր 257
Կարապետ, փայեկ 184
Կարապետ Բագրատունի 6
Կարապետ Եփրիկեանց, կարնեցի 281, 320
Կարապետ Տրճանենց, մահտեսի 420
Կարմրուկ օղլի մահտեսի Սարգիս 281
Կիկոձե Գերոնտի 550
Կիրակոս, մահտեսի, Երուսաղէմի վէքիլ 108
Կիրակոս, մահտեսի (Իզնիմիտի՞ց) 429
Կիրակոս, մահտեսի, հասցեատեր Կարինից 268
Կիրակոս, մահտեսի, հասցեատեր Տաւշանլուից 376
Կիւլապեան Յակոբ, ամիրայ 350
Կիւլբասար, մահտեսի, Թումանի եղբօր որդի 458
Կիւնազար, մէլիք, որդի Մխիթար քեալանթարի 134
Կոստանդ, հասցեատեր Զմշքածակից 429
Կոստանդին Պաւլովիչ, Ռուսաց թագաժառանգ 293

Հազարմալեան Ստեփան 208
Հակոբ ամիրա Մուրադյան 560
Հակոբ, Թոխաթի նվիրակ 269
Հակոբ, խոջա, կտակակատար 112
Հակոբ, խոջա, ոմն հասցեատեր 270
Հակոբ, հանգուցյալ Ղազար աղայի որդի 107
Հակոբ, մահտեսի, գանձապետ Ամիդում 252
Հակոբ, Պանտրմայից ոմն 429
Հակոբ, սարկավագ 53
Հակոբ, վարդապետ, էջմիածնի միաբան, ապա նվիրակ Կարինում 26, 342, 386
Հակոբ Շահումյան, իգմիրցի 248
Հակոբ Շամախեցի, կաթողիկոս—տե՛ս Յակոբ Շամախեցի
Հակոբ Ջուղայեցի, կաթողիկոս 6
Հակոբջան, ոմն հասցեատեր 97
Հաճի Ալի փաշա (Կարին) 530
Հաճի Բաղդասար, նվիրակ Ռոռուշճուղում 428
Հաճի խաթուն, քոյր Պօղոսեան Խաչիկի 425, 560
Հաճի Յովակիմ, նվիրատու Ռոռուշճուղում 428
Հաճի Յովաննէս, ակնցի ոմն 286
Հաճի Յովաննէս, պօլսեցի 244
Հաճի Պապա Ջրաղ Մկրտիչ (Նաև Աճի Բաբա, Հաճի Բապ) 444, 461, 469, 486, 517
Հաճի Տուտի կին (Կ. Պոլսից) 429
Համբարձում ամիրայ, որդի Միքայէլ ամիրայի 435
Համբարձում, հասցեատեր Կ. Պոլսում 429
Համբարձում, հեքիմ, Հայրապետի եղբայր 560
Համբարձումեան, մահտեսի Յովհաննէս ամիրայ 404, 406, 417
Հայրապետ, էջմիածնի վէքիլ Կարինում (Նաև
Հէրպէտ վէքիլ) 31, 67, 73, 74, 91—93,
113—116, 120, 121, 135—139, 142, 144,
175, 180, 182—184, 211, 212, 216, 225,
226, 229—231, 234, 236—238, 241, 242,
244—247, 249, 250, 252—255, 261, 264,
267—271, 280, 286—288, 303—305, 309,
319, 320, 326, 328, 333, 334, 387, 392,
408, 413, 417—419, 425, 429, 444, 445,
453, 454, 458, 460, 461, 469, 484, 494,
503, 517—519, 521, 522, 543
Հայրապետ, հասցեատեր ոմն Տաւշանլուից 376
Հայրապետ, հեքիմ 560
Հաջի Իբրահիմ խան 31
Հասան աղա 544

Հասան խան, Մակվի սուլթանի որդի 34
Հասանայի բէկ 158
Հարություն, Գորիի բնակիչ, ճորտ 76, 555
Հարություն, ղոնտաղսազ, էջմիածնի ճորտ 75, 76
Հարություն, մահտեսի, ամիրա 38, 544, 560
Հարություն, մահտեսի, նվիրատու Ադրիանուպոլսից 248
Հարություն, մահտեսի, շամախեցի ոմն 267
Հարություն, որդի Շահվերդիի 108
Հարություն, վարդապետ, արաբկիրցի 320
Հարություն, վարդապետ, Սուրբ Կարապետ վանքի առաջնորդ 555
Հարություն, քահանա, ժողովարար Նոր Նախիջևանում 70
Հարություն Արարատյան 32
Հարությունյան Բ. Մ. 43, 74—76
Հեղինե, նվիրատու այրի կին 418
Հեյդարկուլի խան 11
Հերակլ II, Վրաց թագավոր 7, 10, 13, 15, 21—26, 28—30, 33, 35, 48, 50, 55—59, 62, 65—67, 78, 95, 123, 138, 139, 152, 196, 200—202, 219, 220, 224, 227, 228, 250, 258, 260, 271, 272, 275, 277, 281, 283, 290, 300, 301, 329, 358, 364, 369, 371, 373, 374, 390, 402, 403, 409, 411, 413, 423, 428, 434, 500, 544—552, 554—557, 559—561
Հերիքնազ, Քեոթահից 429
Հերպէտ վէքիլ—տե՛ս Հայրապետ վէքիլ
Հիսէյին խան Նուխուոյ 172
Հոհան, վարդապետ 90
Հոհոն Թոխաթեցի, նվիրատու 94
Հովակիմ Այտինյան, մահտեսի 429
Հովակիմ, Եղիազար Նազարեթյանի որդի—տե՛ս Յովակիմ աղայ
Հովակիմ, թղթի գործարանի աշխատող 42
Հովակիմ, վարդապետ, Երուսաղեմի պատրիարք—տե՛ս Յովակիմ վարդապետ
Հովհաննես, ամասիացի նվիրատու 94
Հովհաննես, ամիրա, կեսարացի բարերար 38
Հովհաննես, ամիրա, Ղումղափուի և. Աստվածածին եկեղեցու մութավելի 107
Հովհաննես, ամիրա Մուրադյանց, Պողոս ամիրայի որդի 107
Հովհաննիսյան Արգար Ռուբենի 17, 18, 25, 51, 64, 546, 559
Հովհաննես Գեղամայի, դպիր (հետագայում Իսահակ=վարդապետ)—տե՛ս Իսահակ վարդապետ
Հովհաննես, թարգման Իվանե Մուխրանբեկի 57, 552
Հովհաննես, Թեքիրդաղից, նվիրատու 429
Հովհաննես, խոջա, ակնցի 268
Հովհաննես, կաթողիկոս Գանձասարի—տե՛ս Յովհաննէս, կաթուղիկոս
Հովհաննես Կարբեցի, կաթողիկոս 7
Հովհաննես, կարնեցի, տիրացու, ճորտ 76
Հովհաննես Համադանցի, Բուրսայի առաջնորդ, հետո պատրիարք Կ. Պոլսի 24, 204, 212, 214, 261, 311, 419, 531, 551
Հովհաննես, հայր Գրիգոր աղայի 429
Հովհաննես, հասցեատեր Կ. Պոլսում 107
Հովհաննես, մահտեսի, էարանայից 429
Հովհաննես, մութավելի Մադրասից 534
Հովհաննես, մուշրայ 97
Հովհաննես, որդի հանգուցյալ Ղազար աղայի 107
Հովհաննես, որդի Հոհոնի (Մադրաս) 520
Հովհաննես, Զկրաշեն եկեղեցու երեցփոխան, էջմիածնի ճորտ 76
Հովհաննես, վարդապետ, էջմիածնի միաբան 26, 28, 29, 31, 32, 35, 543
Հովհաննես, վարդապետ, հոռոմցիների առաջնորդ 556
Հովհաննես, վարդապետ—տե՛ս Յովհաննէս վարդապետ
Հովհաննես, վրաց հոգևորական էփթիմեի մարդկանցից 551
Հովհաննես Տեր-Հակոբյան (Մադրաս) 520
Հովհաննես Տեր-Հովհաննիսյան (Չինրա) 520
Հովհաննես Տեր-Ներսիսյան (Մադրաս) 520
Հովհաննես Փիրադամյան (Մադրաս) 534
Հովնաթան Հովնաթանյան—տե՛ս Յովնաթան Յովնաթանեան
Հովսեփ, մելիք—տե՛ս Յովսէփ, մէլիք
Հովսեփ, մուշրուպ 128
Հովսեփ Արղության, ռուսահայոց առաջնորդ, հետագայում կաթողիկոս (նաև Յովսէփ վարդապետ) 7, 9, 18, 33, 36, 47, 48, 50, 57, 60—64, 69, 70, 126, 144—147, 149, 151, 170, 171, 185—190, 193—196, 202, 264, 288—293, 304, 309—313, 322, 323, 345, 350, 357, 360, 361, 363, 364, 368, 372, 377, 383, 384, 386, 392, 394, 395, 398—400, 415, 436, 439, 446, 459, 460, 466, 468, 472, 477, 502, 505, 506, 513, 515, 518, 545—549, 551, 553—555, 558, 561
Հովսեփ Դինիբեկյան—տե՛ս Դինիբէկեանց Յովսէփ
Հովսեփ II, Ավստրիայի կայսր 50, 70, 439, 447, 466, 506, 508, 511, 513, 514
Հովսեփ Նազարբեկյանց 97, 128, 196, 297, 299, 464, 554
Հովսեփ Ստեփանյան, մահտեսի 528
Հովսեփ, քահանա, ժողովարար 69
Հովսեփյան Գարեգին 6, 13, 19—21, 38, 56
Հովուեան Պօղոս, ամիրայ 169
Հոփփոմէ, դուստր նվիրատու Սառա կնոջ 242
Հոփփոմէ, մահտեսի, կին մահտեսի Պօղոսի, նվիրատու 181, 418
Հուսեյն Ալի խան 22, 26, 55—57, 545, 547, 558
Հուսեյն խան 28, 29
Հուսիկ, վարդապետ 16
Ղազար, ամիրայ, եղբայր Իսահակ ամիրայի 404
Ղազար, բոշաներու քահանայ ի Կարին 530
Ղազար, եղբայր Աղալօյի, քահանայ 506, 507
Ղազար, եղբայր քարհատ ուստա Գասպարի 472, 522
Ղազար, Թիֆլիզի վանքի եկեղեցւոյ աւագ քահանայ 127—129, 132, 133, 135
Ղազար, հանգուցյալ ոմն 468, 536, 537, 540
Ղազար, մահտեսի, դարբին, Բալուայ ս. Գրիգոր եկեղեցւոյ գանձապետ 140
Ղազար, շահկերտցի 11
Ղազար, շօուշեցի, հանգուցեալ ի Բոմբայ 207, 490, 491, 494, 495
Ղազար, ոմն նվիրատու 427
Ղազար, վարդապետ, Բալուայ նախկին առաջնորդ 113
Ղազար, վարդապետ, Կարինի առաջնորդ 72, 309, 325, 334, 556
Ղազար, տիրացու, գանձապետ ի Շամախի 449
Ղազար, տիրացու, սուզանաճի 107
Ղազար, փայեկ 267
Ղազար Փարպեցի 459, 486, 518, 519
Ղազար, քահանայ, Գօրու ս. Ստեփաննոս եկեղեցւոյ 358
Ղազար, քահանայ, վէքիլ ս. Աթոռոյ ի Թիֆլիզ 97, 123, 124, 152, 155, 157, 196, 202, 203, 238, 240, 255, 257, 258, 271—273, 277, 278, 297, 316, 325, 351, 354, 411, 423, 428, 464, 490, 496, 508, 530, 544, 546, 548
Ղազար Ջահկեցի, կաթողիկոս 6, 335, 441
Ղազարյան Մ. 39, 50
Ղառաշ, մահտեսի 107
Ղասում աղա, Ղազախից 98
Ղասում, որդի Ջաման խանի 437
Ղարախան օղլի Ահմատ Չէլէպի 98, 153
Ղուլամ-Ալի, Երևանի խան 57, 58, 281, 391, 552, 560
Ղուլոնց պրն. Աբրահամ, գանձապետ ի Գեանջայ 134, 135, 175
Ղուկաս աղա Մարկոսյան 108
Ղուկաս, վարդապետ, հանգուցյալ 288
Ղունկիանոս, վարդապետ, էջմիածնի միաբան, Նոտար, ապա եպիսկոպոս 34, 245, 257, 273, 275, 534, 562
Ղօչէ խան, հայր Ջամանի 437

Ճարտան բէկ էշիկաղասի 250
Ճարտան օղլի Յարութիւն, վարդապետ 138

Մաղսուտ փաշայ Վանի 410, 427
Մախսուտ փաշայ Մշու 318, 320
Մակար, որդի Թօրոսի 231, 232
Մակար, որդի Ներսէս աղայի 146
Մահմադ աղայ, որդի Նազուբ փաշայի 98, 153
Մահմատ բէկ Մաղզբերդու 67, 120, 121, 154, 200, 203, 226
Մահմատ բէկ, որդի Ինուզ բէկի 154, 548
Մահմեդ (նաև Մահմետ, Մահմատ), Երևանի խան 26, 27, 29, 30, 35, 58—60, 200, 438, 441
Մահմեդ Վելի բեկ 31
Մանգասար (նաև Մանկասար), գործակալ ի Մօզտօք 149, 151, 194, 547, 549
Մանիշարենց Աստուածատուրի որդի պրն. Մարգար ջուղայեցի—տե՛ս Մանուչարեան Մարգար
Մանվել, վարդապետ (Թիֆլիս) 98
Մանուէլ Կիմիւշխանեցի 9, 35
Մանուէլ, վարդապետ, Հաչաչուր գիւղի առաջնորդ (նաև Հաղարծնի առաջնորդ) 233, 300, 301, 426
Մանուէլ, քահանայ (Կարին) 237
Մանուկ Եսայան (Սուրաթ) 534
Մանուկ, զազանչեցի, հանգուցյալ 425
Մանուկ, նամակագիր 460
Մանուչար Դիւանի 423
Մանուչար, էջմիածնի ճորտ 155, 157, 158, 548
Մանուչար, մէլիք, Նորշէն գիւղի վերակացու 335
Մանուչարեան Մարգար (նաև ջուղայեցի Մարգար) 34, 61, 146, 148, 289, 360, 361, 384, 398, 400, 446—448, 459, 506, 515, 518, 547
Մանուչարեան պրն. Ստեփաննոս, գորիեցի 314
Մանուչարեան Փիլիպպոս, եղբայր Մանուչարեան Մարգարի 61, 146, 148, 289, 360, 361, 384, 398, 400, 446, 506, 515, 518, 547
Մասեհ, ոմն պարոն Կ. Պոլսի՞ց 343
Մասեհեան Ալէքսան 351
Մասեհեան Եսայի, նվիրատու Զմյուռնիայից 212, 216, 234, 306, 418, 459, 486, 517, 521, 522
Մասեհեան Յովհաննէս, ամիրայ 406, 409
Մասեհեան Նիկողայոս 234
Մատթէոս, Առաքել աղայի որդի 217
Մատթէոս, մահտեսի, գանձապետ ի Ղնճլար 284
Մատթէոս, ոմն աղազատէ ի Զմիւռին 108
Մատթէոս, վարդապետ, ժողովարար, հանգուցյալ 235
Մատթէոս, վարդապետ, Կեսարիոյ առաջնորդ 74, 111, 308, 422
Մարգար, աղայ, գանձապետ ի Բայազիտ 29, 89, 143, 197, 233, 270, 319, 344
Մարգար, աղայ, նվիրատու Բաղդադից 38, 485, 523, 525
Մարգար, ամիրայ, եղբայր Պալաթու գանձապետ խօջայ Սահակի 106
Մարգար, ամիրայ, սառաֆլար քեահիասի ի Կ. Պօլիս 107, 168, 451, 457, 463
Մարգար, եղբայր Յակոբ սարկաւագի ի Պրուսայ 214
Մարգար, էջմիածնի դպրատան վարժապետ 40
Մարգար, Նոր Նախիջևանի մագիստրատի դատավոր 187
Մարգար, ոմն պարոն Բողովա ավանից 453
Մարգար, որդի Առաքել աղայի ի Զմիւռին 108, 217

Մարգար, քահանա Խոյում 178
Մարգարիտ, մայր Ներսէս աղայի 439
Մարգարիտ կին, նվիրատու, մայր Վարդենիի 418
Մարիա Աննա մադամ, կողակից հանգուցեալ պրն. Մնացականի 345
Մարիա Ֆէդրովնա, կողակից Ռուսաց թագաժառանգի՝ ապագա կայսր Պավել Պետրովիչի 292, 293
Մարիամ, կենակից գանձապետ մահտեսի Թադէոսի 306
Մարիամ, հաճի, նվիրատու 470
Մարիամ, մահտեսի, Քեոթահիից 429
Մարիամ, մայր Թիֆլիզեցի Յովհաննիսի 281
Մարկոս, նվիրատու Կ. Պոլսից 418
Մարկոս, վարդապետ, առաջնորդ Կոցու անապատի 306, 307, 520, 537
Մարկոս, քահանա, Խեյթուլա գյուղի բնակիչ 130
Մարտիրոս, ամիրայ, հացագործ ի Կ. Պոլիս 106, 397, 452
Մարտիրոս, Արևելցի մահտեսի Կարապետի որդի Յակոբի ընկեր 106
Մարտիրոս, գանձապետ ի Կ. Պոլիս և Ղումղափու 356, 360, 473
Մարտիրոս, գրաբեր 184
Մարտիրոս, խօջայ, փեսայ մահտեսի Յարութիւն ամիրայի (Կ. Պոլիս) 105
Մարտիրոս, մահտեսի, գանձապետ Աստապադարու Տէր Շահենի եկեղեցւոյ 284, 285
Մարտիրոս, մահտեսի, եկեղեցապան 404, 406
Մարտիրոս, մահտեսի, Բեսպցի Թութունճի 397
Մարտիրոս, մահտեսի, Զմշքածակից 429
Մարտիրոս, նամակադիր Գանձասարից 184, 185
Մարտիրոս, Նոր Նախիջևանի մագիստրատի դատավորներից 187
Մարտիրոս, նվիրատու, Ամասիայից 246, 247
Մարտիրոս, վարդապետ, էջմիածնի միաբան, վրացահայոց առաջնորդ 29, 142, 143, 150, 154, 294, 295, 299, 300, 329, 330, 425, 438, 440, 481, 489, 530, 556, 558
Մարտիրոս, քահանայ Արդուինի 287
Մաքսիմէ կաթուղիկոս Ափխազաց (նաև Բաշաչուխի, իմա՝ Իմերեթիայի) 128, 132, 150, 201, 258, 259, 353, 546
Մելիք Մկրտում Թաղոյանց 196, 546
Մելիքսեթ, էջմիածնի վանքի ծառա 438, 451
Մելիքսեթ-Բեկ Լ. 544
Մելո, ոմն նվիրատու 270
Մելքոն, կտակակատար, Կ. Պոլսից 388
Մելքոն, մահտեսի, կեսարացի 308, 309
Մելքոն, նվիրատու Կարսի Նախիջևան գյուղից 203
Մելքոն, որդի գանձապետ մահտեսի Թադէոսի 306
Մելքոն, քահանայ (Կ. Պոլիս) 388
Մելքոն, քահանայ, խամսիլիցի 421, 471
Մեհրապ, ոմն հասցեատէր (Թիֆլիս) 97, 128
Մեյրամղուլի (նաև Մէյրամղուլի), գիւղպէնդճոց գլխաւորներից ի Կ. Պոլիս 107, 420, 421
Մեսրոպ, Բուռնօթըճոնց Յարութիւնի հարազատ 517
Մեսրոպ, վարդապետ, Ուռումէլու նվիրակ 110, 249, 261, 264, 265, 284, 286, 340
Մերկեան, մահտեսի (Նոր Նախիջևանից) 187
Մերջան, կին Փանոս Հովհաննիսյանի (Դաքա) 520
Մէլիք բէկ ի Ղազախ 259
Մէլիք Մինաս 131
Մէլիք Մկրտում 158
Մէլիքով Սարգիս 396, 397
Մէլիք Քօլ (Նախիջևանից) 428
Մէհրապ, աղայ 411, 412
Մէհրապ, Թիֆլիզեցի Յովհաննէսի հայր 281
Մէհրապ, Հերակլի ներկայացուցիչ 559, 560
Մէյտանկեսպակօղլի Յարութիւն 470
Միխայէլ, գանձապետ Գանձասարի վանքի Աստրախանում 304, 323, 555
Մինաս, բլըցի (Թիֆլիզ) 405
Մինաս, Թուանըշի 543
Մինաս, կաթուղիկոս 444
Մինաս, Հալեպից ոմն 540
Մինաս, մահտեսի, Կ. Պոլսից 423
Մինաս, ոմն Թոխաթցի պարոն 28
Մինաս Չերեզենց, մահտեսի (Սամաթիա) 107
Մինաս, վարդապետ, նուիրակ ի Կ. Պոլիս (նաև Մինաս պետ) 27, 47, 74, 91, 92, 101, 103, 105, 110, 116, 117, 138, 144, 148, 152, 159, 166—169, 182—184, 193, 204, 206, 208—211, 213, 216, 219, 221, 224, 225, 229, 230, 234, 236—238, 241, 242, 244, 245, 248, 259, 261—267, 270, 277, 279, 284—287, 332, 333, 341—343, 359, 360, 371, 379, 384, 387, 388, 390, 392, 397, 401, 402, 406, 426, 441—443, 445, 457, 467, 468, 470, 471, 473, 478, 483, 508, 516, 543, 551, 553, 555, 556, 558
Մինաս, փայեկ 281
Միրզայ Միսայէլ, վրաց արքայորդի 97, 128, 278, 328, 330, 331, 545, 556
Միրզա Շեֆի 28
Միրզայբէկ, թարգման ի Հաշտարխան 384
Միրզօ, մահտեսի Թօմօյի եղբայր 143
Միրիշբեար Իւանէ, եղբայր մէլիք Աւետիքի (նաև Միրիշբեարբաշի պրն. Իւանէ, միրիշբեար պրն. Յովհաննէս) 126, 486, 487
Միւլիմ Նօման աղայ (Կարս) 98
Միւտարիս Մուստաֆայ, Իբրահիմ աֆանտու որդի 93, 98, 119, 153, 181, 219
Միքայէլ ամիրայ, հացագործաց էսնաֆի գանձապետ ի Պոլիս 393, 417, 435, 442, 480
Միքայէլ, աստապատցի, գանձապետ ի Գեանջայ 199, 200
Միքայէլ, մահտեսի, գանձապետ Բալուայ ս. Աստուածածնի եկեղեցւոյ 141
Միքայէլ, որդի Ներսէս աղայի (Մոսկվա) 146
Միքայէլ, վարդապետ, առաջնորդ Ադրանայու 483, 561
Միքայէլ, վարդապետ, առաջնորդ Ակնայ 111, 269, 483, 533
Միքայէլ, վարդապետ, առաջնորդ Անդրիանուպօլսոյ 500
Միքայէլ, վարդապետ, առաջնորդ Աստապատու վանից 88
Միքայէլ, վարդապետ, մոմի ժողովարար 409
Միքայէլ, վարդապետ, նվիրակ ի Զմիւռին 421, 425, 458, 469, 478, 486, 492, 493
Միքայէլ, քահանայ (Գանձակից) 450
Մխիթար, Զմյուռնիայից 343
Մխիթար, Համնջրի մէլիք 259
Մխիթար, ս. Երուսաղէմի վէքիլ 279
Մխիթար, քալանթար, Շուլավերից 72, 97, 98, 134, 233, 300, 305
Մկրտիչ, Ադարազարից հասցեատեր 429
Մկրտիչ, աղայ (Սուրաթ) 520, 523
Մկրտիչ, ամիրայ, որդի Պետրոս ամիրայի 106, 107, 167, 168, 473
Մկրտիչ, գանձապետ Նոր Նախիջևանում 187, 189, 192, 196
Մկրտիչ, եղբայր Արևելցի Տրչանենց մահտեսի Կարապետի 418, 460, 490
Մկրտիչ, եղբայր տիրացու Յովաննիսի 214
Մկրտիչ, եպիսկոպոս 22
Մկրտիչ Խրիմյան, կաթողիկոս 6
Մկրտիչ, զուրտուղուլեցի 552
Մկրտիչ, մահտեսի, բայազետցի 267
Մկրտիչ, մահտեսի, գանձապետ ի Նուխի 172
Մկրտիչ Մանուչարեան, եղբայր Մարգար Մանուչարեանի 446
Մկրտիչ, նվիրատու Կ. Պոլսից 262
Մկրտիչ, նվիրատու ոմն 519
Մկրտիչ, որդի հանգուցեալ Յարութիւնի ի Կ. Պոլիս 428
Մկրտիչ, որդի մահտեսի Յովհաննէս ամիրայի 404
Մկրտիչ, սպասաւոր Մինաս վարդապետի 279
Մկրտիչ, վարդապետ, առաջնորդ Նոր Ջուղայու 169
Մկրտիչ, վարդապետ, առաջնորդ Ուչքիլիսէի ս. Յովհաննու Մկրտչի վանից 67, 73, 89, 101, 182, 230, 231, 233, 270, 273, 274, 302, 326, 327, 348, 424, 443, 497
Մկրտիչ վարդապետ, էջմիածնի միաբան 90, 92, 108, 110, 133, 136, 138, 142—144, 148, 154, 175, 184, 208, 211, 226, 227, 231, 232, 236, 237, 266, 365, 400, 401
Մկրտիչ, վարդապետ, Հ. Արղությանի մարդկանցից 378
Մկրտիչ, վարդապետ, Հաղբակի առաջնորդ 122
Մկրտիչ, վարդապետ, ղոմցի 247
Մկրտիչ, վարդապետ, մուլքանչի 463
Մկրտիչ, վարդապետ, շոռոթեցի 22
Մկրտիչ, վարդապետ, ս. Կարապետի միաբան 476
Մկրտիչ, վարդապետի տղա 106
Մկրտիչ տղայ, նամակատար 320
Մկրտիչ, ուխտավոր Հոքամ գյուղից 344
Մկրտիչ, քահանայ, գանձապետ Բենկալում 422
Մկրտիչ, քահանայ, եղբայր Նախիջևանու մէլիք պրն. Յովսէփի 339, 340
Մկրտիչ, քահանայ, կարնեցի ժողովարար 411
Մկրտիչ, քահանայ Կարսից 464
Մկրտիչ, քահանայ, Զախից 450
Մկրտչեան Անդրէաս, մահտեսի 472
Մկրտչեան Պօղոս 521
Մկրտում, եղբայր Մեհրապի ի Խօյ 541
Մկրտում, Թաղայանց, մելիք (Թիֆլիս) 97, 128, 196, 257, 546
Մկրտում, ժողովրդապետ ի Հաշտարխան 383, 394, 400
Մկրտում, նվիրատուի հայր 157
Մկրտում տղայ, ագուլեցի 235
Մնացական, գեանջեցի (Ամստէրդամ) 109, 234
Մնացական, Զմյուռնիայից (հանգուցյալ) 323, 355
Մովսէս, արեղայ 193
Մովսէս, եղբայր մահտեսի Յարութիւն աղայի (հանգուցեալ) 209
Մովսէս, երէց, Կարսի մոտի Նախիջևան գյուղից 203
Մովսէս, համամմանսուրցի 148
Մովսէս, հօրեղբօրորդի Ներսէս աղայի 439
Մովսէս, մահտեսի, գանձապետ ի յԱմիդ 252
Մովսէս, մահտեսի, գանձապետ Տիգրանակերտու ս. Կիրակոս եկեղեցւոյ 113, 424
Մովսէս, նորընծայ քահանայ 388
Մովսէս, պետ Սաղիմայ 311, 383, 401, 439, 507
Մովսէս, վարդապետ, վերադարձած Ռուսաստանից 148
Մովսէս Տաթևացի, կաթողիկոս 6
Մովսէս, քահանայ 362
Մովսէս, քահանայ, հօրտ Սուլխան Դիւանու 445
Մսեհյարեան կոչված Սիմեոն Հարությունյան (Ակրարարադ) 534
Մսեր Մսերյանց 6, 15, 16, 22, 32, 35, 39, 42
Մուլքիրեկի որդի Հաճի Հասան 26
Մուխրամ Իւանի բէկ, վրացի 290, 296, 299, 391
Մուհամմադկուլի խան 11
Մունիաթ, մահտեսի, բայազետցի 267
Մուստաֆայ բէկ 29
Մուստաֆա փաշայ սարասկեար 99
Մուրադ, աղայ, որդի մահտեսի Մկրտչեան Անդրէասի 472

Մուրադ, ամն բայազետցի ի Կարին 221
Մուրադ, պարտապան Բայազետում 227
Մուրադյան Հակոբ, ամիրայ, վէքիլ Կ. Պոլսում 168, 356, 359, 371
Մուրադյան Մ. 14—16
Մուրատեան Յովհաննէս, ամիրայ 404, 406
Մուրադխան Մելքոնյան (Սեյտապատ) 520
Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոս 106
Մուրտիկեանց խոջա Սիմեոն 268
Մօհրդատ Գէորկին, վրաց թղթաբեր 560
Մօսէս, անապատցի 444
Մօսէս, նամակաբեր Գանձասարից 304
Մօսէս, փայեկ Կարինից 246
Մօսկով (նաև Մօսկօֆ, Մոսկով) կոչեցեալ պրն. Յովհաննէս 109, 110, 234, 342, 355

Յակոբ, ախթարմայ 370
Յակոբ, աղաղակէ (Զմիւռին) 108
Յակոբ, ամիրայ, գանձապետ ի Կեսարիայ 356
Յակոբ, ամիրայ, հօրեղբայր Չօպանենց Պօղոս ամիրայի 404
Յակոբ, Բայազետից հացեատեր 197, 221, 227
Յակոբ, գանձապետ ի Թէլու 228
Յակոբ, գանձապետ ի Շամախի 449
Յակոբ, գետնջեցի քահանայ 233
Յակոբ, եղբայր Մկրտիչ ամիրայի 168
Յակոբ, եղբոր որդի պրն. Յօհանի 337
Յակոբ երէց, բանադրված (Թիֆլիզ) 410, 412
Յակոբ, խօջայ, գանձապետ ի Ղումղափու 106
Յակոբ, խօջայ, սառաֆ ի Կիմիշխանայ 252
Յակոբ, խօջայ, բեալանթար (Բայազետ) 143
Յակոբ, Հախպատից, քահանայ 496
Յակոբ, հացեատեր Վանում 306, 308
Յակոբ, ղալփաղճի, սուսճի Կարապետի որդի 519
Յակոբ, մահտեսի, գանձապետ Տէր Յակոբի եկեղեցւոյ 285
Յակոբ, մահտեսի, գանձապետ Տիգրանակերտի ս. Սարգիս եկեղեցու 113, 424
Յակոբ, մահտեսի, եղբայր հասանմանսուրցի Մովսէսի և Աւետիքի 148, 149
Յակոբ, մահտեսի, Կարինից 115
Յակոբ, մահտեսի, որդի Արևելցի մահտեսի Կարապետի 106
Յակոբ, Նոր Նախիջևանի իշխաններից 187
Յակոբ, Նոր Նախիջևանի մագիստրատի դատավորներից 187
Յակոբ, նորընծայ քահանայ 516
Յակոբ, Շամախիի նախկին գանձապետ 427
Յակոբ, որդի Առաքել աղայի 217
Յակոբ, որդի Աստուածատուր աղայի 349
Յակոբ, որդի մահտեսի Խըտըրի 560
Յակոբ, պատրիարք 518
Յակոբ, պետ, նուիրակ ի Թօխաթ 111, 112, 216, 229, 230, 234, 254, 333, 379
Յակոբ, պետ, նուիրակ (Հանդուցեալ) 391
Յակոբ, սարկաւագ, [illegible] Մարգարի 214
Յակոբ, վարդապետ, առաջնորդ Թրակիոյ 107, 111
Յակոբ, վարդապետ, առաջնորդ Լմու անապատի 274, 306, 520
Յակոբ, վարդապետ, առաջնորդ Կիմիշխանայու 243, 455
Յակոբ, վարդապետ, գանձանակաց արդիւնաժողով ի Շամախի և Շուշի 427, 432, 433, 434, 451
Յակոբ, վարդապետ, էջմիածնի միաբան 412, 419, 428, 436
Յակոբ, վարդապետ, Կ. Պոլսի 390
Յակոբ, վարդապետ, Կարմիր վանից առաջնորդ 114, 257
Յակոբ, վարդապետ, հանգուցեալ 452
Յակոբ, վարդապետ, նուիրակ ի յԱմասիա 247
Յակոբ, վարդապետ, նուիրակ ի յԱրճէշ 476
Յակոբ, վարդապետ, նուիրակ ի Բասրայ 454
Յակոբ, վարդապետ, նուիրակ ի Վան, Մուշ և Բաղեշ 306—308, 410, 427, 497, 498։
Յակոբ, վարդապետ, շամախեցի 233
Յակոբ, վարդապետ, Սեբաստիոյ առաջնորդ 111, 422
Յակոբ, վտանգավոր համարված ամն 241
Յակոբ, տիրացու, նվիրատու 472
Յակոբ Շամախեցի, կաթողիկոս 6, 221—223, 366
Յակոբջան, մահտեսի 467
Յակոբջան, մահտեսի, հայր Պատօնօյի 404
Յակոբջան, մահտեսի, Նորշէնից 199
Յակոբջան, մահտեսի, նունուեցի մահտեսի Սարգսեան, ուխտաւոր 257
Յակոբջան, մահտեսի, նվիրատու 128
Յակոբջան, մահտեսի, որդի հանգուցեալ մահտեսի Յովաննիսի 155, 156
Յարութին, աղայ, որդի հանգուցեալ Պետրոս Աղայեանի (Կալկաթա) 524
Յարութին, ամիրայ ի յԱդրանայ 500
Յարութին, ամիրայ, մահտեսի, եղբայր հանգուցեալ Պետրոս ամիրայի (Կ. Պօլիս) 91, 105, 166—168, 262—265, 379, 390, 392, 422, 423, 444, 451, 454, 457, 459, 470, 507
Յարութին, Բէրօյի որդի 256
Յարութին, գանձապետ Սախարի Քնարի եկեղեցւոյ 285
Յարութին, գրի տղայ 487, 561
Յարութին, եղբայր Ստեփան Տէր-Յովաննիսեանի 210
Յարութին, եղբորորդի պրն. Յօհանի 337
Յարութին, զաքըլեցի 552
Յարութին էմնիզեան (նաև Յարութին աղայ), մահտեսի, Բասրայից 137, 205—210, 229, 230, 264, 311, 312
Յարութին, էջմիածնի ճորտ Գորիում 321, 322
Յարութին, Թասալուի 148
Յարութին, Թիֆլիզեցի մէլիք Աւետիքի սուրհանդակ (՞) 487
Յարութին, ժողովարար, քահանայ 436, 507
Յարութին, խօյից 341
Յարութին, կարինարնակ մահտեսի խաչատուրի ներկայացուցիչ 236
Յարութին, զօնտաղսաղ, էջմիածնի ճորտ 239, 240
Յարութին, մահտեսի, Աջամ մահտեսի Անդրէասի որդի 252
Յարութին, մահտեսի, գանձապետ Տաւշանլուի 376, 377
Յարութին, մահտեսի, նվիրատու Կ. Պօլսի արտաքին վիճակից 452
Յարութին, մահտեսի, չիլինկեր, որդի Սարգսի 519
Յարութին, մահտեսի Սիմէօնի քեռոյ որդի 269
Յարութին, մահտեսի Տէր-Մկրտչեան, գանձապետ Ովաճուղու 284
Յարութին, մէլիք 464
Յարութին, Նոր Նախիջևանից ժողովարար (Հնդկաստանում) 187, 376, 385
Յարութին, Նորշէնից 199
Յարութին, ամն բարեբար 516
Յարութին, որդի Բարսեղի, էջմիածնի ճորտ 354
Յարութին, որդի Յովհաննէս [Լազարեանի] 310, 382
Յարութին, որդի նվիրատու պրն. Մկրտչի 262
Յարութին, որդի վէքիլ Մուրատեան Յակոբ ամիրայի 356
Յարութին, պետ, միաբան Խոր Վիրապու 233
Յարութին, պետ, ս. Կարապետի վանահայր 268
Յարութին, վարդապետ, Անկիւրիոյ նուիրակ 409
Յարութին, վարդապետ, Գաղատիոյ նուիրակ 417, 452, 454, 458, 461, 471, 493
Յարութին, վարդապետ, Խարբերդու առաջնորդ 424
Յարութին, վարդապետ, կեսարացի 350, 359
Յարութին, վարդապետ, միաբան ս. Յակոբեանց վանից ի Երուսաղէմ 350, 359, 360, 465, 471
Յարութին, վարդապետ, Սսանոյ առաջնորդ 113
Յարութին, վարդապետ, Սօրսու ս. Գէորգեայ վանից առաջնորդ 316—319
Յարութին, տիրացու, Ղաւշանու գանձապետ 266
Յարութին, տիրացու, Շամախու եկեղեցու միւթավէլլի 432, 449
Յարութին տղայ 237
Յարութին, ուխտաւոր, Գեոլայի Հօրամ գյուղից 344
Յարութին, քահանայ, գանձապետ ի Բասրա 454
Յարութին, քահանայ, ժողովարար (Նոր Նախիջևանից) 377, 472, 477
Յարութին, քահանայ (Կիմիշխանայ) 455
Յարութին, քահանայ (Քիլիսաքեանդ) 199
Յարութին Արևելցի, տիրացու 372
Յարութին Եաղուբօղլի, Ղարթալու գանձապետ 106
Յարութինեան Ստեփաննոս աղայ, մահտեսի 537—540
Յովաննէս, աղաչայ (Աչովայ) 386, 387, 468
Յովաննէս, աղայ (Բասրա) 485
Յովաննէս, աղայ, գանձապետ ի Խասգիւղ 473
Յովաննէս, աղայ (Հնդկաստան) 523
Յովաննէս, աղաչեայ (Աչովայ) 386, 387, 468
Յովաննէս, ակնցի, պարտապան 244
Յովաննէս, ամիրայ (Ադրանայ) 500
Յովաննէս, ամիրայ, եղբայր Ստեփաննոս ամիրայի, հանգուցյալ 403, 408, 409
Յովաննէս, ամիրայ ի զարմէ Հովուեանց 467
Յովաննէս, ամիրայ, միւթավէլի Գալաթու եկեղեցւոյ 404, 406
Յովհաննէս, ամիրայ, նվիրատու Կ. Պոլսից 415, 452, 457, 521
Յովհաննէս, աւագ քահանայ ի Շուշի 332, 451
Յովաննէս, բժիշկ (Թիֆլիս) 238—240, 257
Յովաննէս, գանձապետ Արղնի Մատենում 142
Յովաննէս, գանձապետ ի Պօլիս և ի Ղումղափու 356, 360, 402, 473
Յովհաննէս, եղբայր Մկրտիչ ամիրայի 168
Յովաննէս, եղբայր Սաւալանեան պրն. Առաքելի 352
Յովաննէս, երևանցի 299
Յովաննէս, էջմիածնի ճորտ, Ջկրաշէնու եկեղեցու երեցփոխան 156
Յովաննէս, զանազան 210, 281, 525
Յովաննէս, Թիֆլիսար 410—412
Յովաննէս, Իզնիմիտից 428
Յովաննէս, խօջայ, Բայաղիտից 253
Յովաննէս, խօջայ, գանձապետ Խասգիւղի 106
Յովաննէս, խօջայ, Կարինից 230
Յովհաննէս, կաթողիկոս Գանձասարի 18, 44, 171—173, 184, 185, 303, 304, 323, 384, 432, 451, 546, 548
Յովաննէս, կապիտան, Նոր Նախիջևանից 187, 189, 192
Յովաննէս, կարնեցի, էջմիածնի ճորտ 239
Յովաննէս, հայր տիրացու Ստեփանի, ջուղայեցի 136
Յովհաննէս, հայր տպագիր Պօղոսի 496
Յովաննէս. Ջախում գանձապետ 450
Յովաննէս, զօնտաղսաղ Յարութինի որդի, ճորտ 239
Յովաննէս, մահտեսի, Ադրիանուպոլսից 336
Յովաննէս, մահտեսի, ակնցի 267
Յովաննէս, մահտեսի (Կարին) 226
Յովաննէս, մահտեսի, հանգուցյալ, հայր մահտեսի Յակոբջանի 128
Յովաննէս, մահտեսի (միւս) մահտեսի Վարդազարեան, Ադրիանուպօլսէն 336
Յովաննէս, մահտեսի, նվիրատու Բասրայից 417

Յովաննէս, մահտեսի, որդի Յարութիւն ամիրայի 105, 429
Յովաննէս, մահտեսի, որդի Սահակի 107, 445
Յովաննէս, մահտեսի, ուխտաւոր Բաղդասարի ընկեր 237
Յովհաննէս Մանուչարեան, եղբայր Մարգար Մանուչարեանի 446
Յովհաննէս, նամակատար Շուշիից 173
Յովհաննէս, նվիրատու Աղրիանուպոլսից 432
Յովհաննէս, շամախեցի, հայր ճորտ Տարարոյի 157
Յովհաննէս, ոմն Կարսից 250
Յովհաննէս, ոմն նվիրատու Կ. Պոլսից 393
Յովաննէս, ոմն ուխտաւոր 342
Յովհաննէս, որդի ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Յովաննէս, որդի պրն. Ալէքսանի 485
Յովհաննէս, Պանտրմայի գանձապետ 453
Յովհաննէս, պետ, պոնդացի 444
Յովհաննէս, Ռէշտից 338
Յովաննէս, վարդապետ, առաջնորդ Թիֆլիզու, բանաբեռցի 94, 97, 131, 132, 136, 151, 155, 156, 196, 200—202, 227, 239—241, 258, 290
Յովաննէս, վարդապետ, գեանջեցի 475
Յովաննէս, վարդապետ, էջմիածնի միաբան, իմաստիս ժողովող 90, 93, 99, 182, 184, 200, 203, 218, 225, 226, 228, 231, 232, 244, 424
Յովաննէս, վարդապետ, Կախեթի ս. Յովաննու Մկրտչի վանից առաջնորդ 258
Յովաննէս, վարդապետ, Կարսի և Ղօշավանքի առաջնորդ 245, 275, 349, 463, 467
Յովաննէս, վարդապետ Համատանցի, տե՛ս Հովաննես Համադանցի
Յովհաննէս, վարդապետ, հարազատ Սաղիմի նուիրակ Գաբրիէլ վարդապետի 280
Յովաննէս, վարդապետ, Մարսուանու առաջնորդ 111
Յովհաննէս, վարդապետ, Մշու ս. Յովաննիսի վանից առաջնորդ 119, 120, 197, 316—319, 425, 555
Յովաննէս, վարդապետ, նուիրակ Անկիւրիոյ 131
Յովաննէս, վարդապետ, նուիրակ Գաղատիոյ 111, 113, 138, 180, 212, 214, 215, 262, 263
Յովհաննէս, վարդապետ, Ուռհայու առաջնորդ 424
Յովհաննէս, տիրացու, էջմիածնի ճորտ 75, 240
Յովաննէս, տիրացու, Թեքիրդաղցի, էջմիածնի միաբան 389, 418, 462
Յովհաննէս, տիրացու, լուսարար Զմիւռնոյ 303
Յովհաննէս, տիրացու, Կ. Պոլսից 452
Յովաննէս, տիրացու, պօլիսցի, որ ի Բուրսա 212—215, 551
Յովաննէս, փայեկ 94
Յովաննէս, քահանայ, աթոռակալ ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ (Պալաթ) 519
Յովհաննէս, քահանայ (Բարու) 450
Յովաննէս, քահանայ ի Շուշի 335
Յովաննէս, քահանայ ի Զարբաղ գիւղ 342
Յովհաննէս, քահանայ ի Պետրպօլբ, հայր երեսփոխան պրն. Պետրոսի 289, 290
Յովաննէս Աղամալեան 383
Յովաննէս Համատանցի (Թարվէզ) 179, 338
Յովակիմ, աղայ, որդի Եղիազարի [Լազարյան] 146, 291
Յովակիմ, բարեկամ ուռուշճուղցի գանձապետներ՝ Անոյշի և Ալէտի 249
Յովակիմ, մահտեսի, ղազանչի 470
Յովակիմ, որդի Ներսէս աղայի 146
Յովակիմ, պետ, նամակագիր Ռուսաստանից 383
Յովակիմ, վարդապետ, աշակերտ Պետրոս վարդապետի 379, 432
Յովակիմ, վարդապետ, առաջնորդ յՒւդոկիոյ 534
Յովակիմ, վարդապետ (Իգնիմիդ) 416
Յովակիմ, վարդապետ, ձեռնադրված եպիսկոպոս 389, 390
Յովակիմ, վարդապետ, Նախիջևանու առաջնորդ 428
Յովակիմ, վարդապետ, ս. Երուսաղէմի պատրիարք 204, 212, 215, 279, 350, 403, 467, 552, 558, 562
Յովակիմ, Տաթեւ ս. Ստաթէի վանից առաջնորդ 88, 276
Յովակիմ Լալովեան 290
Յովնաթան Յովնաթանեան, նկարիչ 39, 50, 51, 129, 329, 409, 412, 416, 428, 445, 462, 478, 484, 518, 522
Յովսեպոս պատմագիր (Յովսեպոս Երրայեցի) 41, 481, 482, 485, 486, 516, 518, 520, 521, 539
Յովսէփ Աղազարեան 533
Յովսէփ Արղութեան—տե՛ս Հովսեփ Արղության
Յովսէփ, ատդ քահանայ ի Թարվէզ 337, 346, 347
Յովսէփ բէկ, եղբայր մէլիք Աղամի 377
Յովսէփ, Գեորգի արքայորդու ներկայացուցիչ 438
Յովսէփ Դինիբէկեանց—տե՛ս Հովսեփ Դինիբեկյան
Յովսէփ, կայսր—տե՛ս Հովսեփ II
Յովսէփ, հասցեատեր Թիֆլիսում 129
Յովսէփ Մարութեան (նաև Յովսէփ Մարութ) ս. էջմիածնի գործակալ ի Մադրաս 288, 520, 523, 534—536, 561
Յովսէփ, մէլիք 175, 451, 549
Յովսէփ Նազարբէկեան—տե՛ս Հովսեփ Նազարբեկյանց
Յովսէփ, Նախիջևանու մէլիք 340
Յովսէփ, որդի Ներսէս աղայի 146
Յովսէփ, որդի Շիրման Բէջանի 290

Յովէփ աղայ, նամակատար 427
Յիւնուզ բէկ (նաև Իւնուզ բէկ, Յունուզ բէկ) 101, 154, 270, 451, 548
Յուլիանէ, քոյր Մուրատեան Յովհաննէս ամիրայի 404, 406
Յուստինէ, Գրիգոր Կանպանյանի կին 397
Յօհան, Թուանքչի 221, 227
Յօհան, Ներսէս աղայի հորեղբայր 439
Յօհան, որդի Բաղալի 337
Յօհան, վարդապետ, նուիրակ 339, 340
Յօհան, տիրացու (Թօխաթ) 181
Յօհան, քահանայ ի Թիֆլիզ 490
Յօհանջան, աղայ (Հնդկաստան) 523
Յօսէփ, վարդապետ, բարհատաց պետ ի Թարվէզ 374

Նադիր շահ 10, 11
Նազար, հասցեատեր ոմն 281
Նազար, ոմն շամբեցի նվիրատու 305
Նազլու, մահտեսի Պետրոսի կին 402
Նահապետ Եդեսացի, կաթողիկոս 6
Նահապետ տիրացու 458
Նաղաշ Հովնաթան 50
Նաճաֆղուլի խան 178
Նանայ, տիրուհի, գանձապետ ի Ֆըրըզլու 284
Նապոլեոն I 35
Նացուալ պրն. Աղալօ 128
Նաւասարդ (Ռեշտից) 338
Ներսէս աղայ (Մոսկվայից) 146, 148, 384, 386, 547
Ներսես Աշտարակեցի 6
Ներսես արքեպիսկոպոս 52
Ներսես եպիսկոպոս 34
Ներսես Շնորհալի 41, 508
Ներսէս, Պետրոսի որդի ի գիւղէն Կողբայ 439
Ներսէս, վարդապետ, նուիրակ ի Կարին 67, 92, 93, 114—117, 175, 176, 182, 183, 236, 237, 252, 543
Նիկոլ (նաև Նիկօլօս, Նիկոլայոս), եղբայր Դաւիթ սարդարի 66, 125, 138
Նիկոլայ (նաև խօջայ Նիկօլ), եղբայր խօջայ Անաստասի 408, 414
Նիկողայոս, աղայ, որդի աղաշայ Յովսէփի 386
Նիկողայոս, գանձապետ ի Նուխի 335
Նիկողայոս, Թղթաշէն 42, 418
Նիկողայոս, Կ. Պոլսից 429, 459
Նիկողայոս, նվիրատու 156, 157
Նիկողայոս վարդապետ, իմաստիայ ժողովող 89, 182
Նիկողայոս վարժապետ 46
Նուրենց Հարութիւն 107
Նօման աղայ (նաև Նուման աֆանդի) 93, 119, 153, 181, 219

Շահամիր Շահամիրյան (նաև Շահամիր աղայ) 31, 51, 205, 208, 209, 523—525, 550—552, 561, 562
Շահզատ, նվիրատու 181
Շահխաթունյանց Հովհաննես 14, 28, 38, 39, 41, 42, 49, 560
Շահնազար խան 207
Շահնազար, մէլիք 11, 174, 549
Շամտին աղայ, որդի Ալղալ աղայի 59, 154, 484, 544
Շարարօ (նաև ձեռնատ Շարարօ), ծառայ Գեօրգին Միրզայի, սուրհանդակ 47, 66, 283, 302, 364, 365, 368, 548, 553, 556, 557
Շարարօ, ճորտ, շամախեցի Յովհաննէսի որդի 156, 157
Շարարօ, մէլիք, Բամբկաձորու 98, 134, 233, 272, 273, 278, 369
Շեկ Սահակ, Դանիել վարդապետի ուղեկցող 544
Շերկիլէնց Բապա, թիֆլիսեցի, գանձապետ 134
Շիշման Բէջան 290, 298
Շիրմազանյան Գալուստ 15
Շմաւօն, Թալան Իւզբաշու որդի 362
Շմաւօն, թիֆլիսեցի վաճառական 275
Շմաւօն, տէր Աբրահամ քահանայի եղբօր որդի 315
Շմաւոն, քահանա 552

Ոսկան, մահտեսի, գանձապետ մահտեսի Մարտիրոսի եղբայր 285
Ոսկան վարդապետ, ժողովարար 235, 236

Չալապի խօջայ եանք 485
Չամչյան Մ. 11
Չամբեարթանեան Գրիգոր (նաև Չամբե տիրացու Գրիգոր) 180, 280
Չերտկով Վ. Ա. գեներալ-պարուչիկ, Նոր Նախիջևանի նահանգապետ 61, 186, 188
Չըրաղ Յարութիւն 493
Չիրմիւշ Մկրտիչ 469
Չոպանյան Արշակ 50
Չօպան, ամիրայ 169
Չօպանենց Պօղոս, ամիրայ 404, 406

Պաղտասար, որդի Աթաբէկի, հիւսն 430
Պալ, Ախալցխայու երեցփոխան 101
Պանին Նիկիտա Իվանովիչ, կոմս 61, 289, 553
Պապ, հայր Աբրահամի, ղափանցի 441
Պապիկ, ղումցի, նվիրատու 94
Պավել I, ռուսաց կայսր (նաև Պալ Պետրովիչ՝ թագաժառանգ) 16, 17, 31, 33, 35, 36, 292, 293, 549
Պատկանյան Գաբրիել 15
Պատօնօ, դուստր մահտեսի Յակոբջանի 404
Պարիկենց մահտեսի Սահակ, Վանից 306—308, 498
Պարսամյան Վ. 546
Պետրէ—տե՛ս Պյոտր Ապրակսին
Պետրոս, տղաղատէ (Զմիւռին) 108

Պետրոս Աղայեան, հայր Յարութիւն աղայի (Կալկաթա) 524
Պետրոս, ամիրայ, հայր Մկրտիչ ամիրայի 167
Պետրոս I, ռուսաց կայսր 25, 35
Պետրոս, Առաքել աղայի որդի 217
Պետրոս, եղբայր մահտեսի Խոտըրի 560
Պետրոս, եղբայր Պօղոս Տէր-Առաքելեանի (Անգալի) 530
Պետրոս, Էտրանայից ոմն 429
Պետրոս, խառատ 558
Պետրոս, խոջա, ոմն հասցեատեր 108
Պետրոս, կաթողիկոս (Քիթուր) 441
Պետրոս, մահտեսի, գանձապետ Նալախտարայու 284
Պետրոս, մահտեսի, Թոխաթից 254
Պետրոս, մահտեսի, Ղրըմից 333
Պետրոս, մահտեսի, քեօստանջեցի 402
Պետրոս, Նորշէն գիւղի քահանայ 199
Պետրոս, ոմն Բայազետից 132
Պետրոս, ոմն հասցեատեր 270
Պետրոս, որդի ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Պետրոս, որդի տէր Յովհաննէսի, երեսփոխան 290
Պետրոս պետ, նախկին առաջնորդ Եւդոկիոյ 534
Պետրոս Պետրոսեան, քահանայ (Թիֆլիզ) 191, 195, 196, 202
Պետրոս, ս. Աթոռոյ գանձապետ ի Կարին 268
Պետրոս, վարդապետ, Աղրանայու առաջնորդ 107, 111
Պետրոս, վարդապետ, Իզնիմիտու առաջնորդ 265, 379, 416, 423, 429
Պետրոս, վարդապետ, Թոխաթու նուիրակ 421, 422, 454
Պետրոս, վարդապետ, մահսարատար (նաև Սէթ Պետրոս եպ. Խոզարածյան) 23, 47, 103, 105, 107, 108, 110, 112, 114—116, 119—121, 135, 137, 144, 152, 159, 162, 163, 166—169, 210, 212, 214—216, 222, 224, 229, 241, 249, 261—264, 285—287, 551
Պետրոս, վարդապետ, միաբան ս. Յակոբեանց վանից, նուիրակ 280, 326, 350, 465, 471
Պետրոս, վարդապետ, Նախիջևանցի, Կարինի առաջնորդ 365, 367, 368, 422, 454, 456, 463, 500, 508, 530—531
Պետրոս, Քիլիսաքեանդից 199
Պետրոսեան Մկրտիչ, ամիրայ, նվիրատու 470
Պետրոսեան Յարութիւն (Հնդկաստան) 523
Պլատոն, արքեպիսկոպոս 34, 290, 554
Պյոտր Ապրակսին (նաև Պետրէ, գրաֆ, մայօր) 399, 401, 559
Պողոս Արապյան (նաև Պօղոս), տպագրիչ 66, 78, 277, 299, 371, 372, 392, 403, 407, 413, 414, 417, 460, 552
Պողոս, եղբայր Գրիգորի, շինարար բանվոր 558
Պողոս, ոմն, գանձապետ 342
Պօղոս, վարդապետ, Պանտրմայու առաջնորդ 107
Պօղոս, վարժապետ, տիրացու 107
Պօղոսյան Սերոբ 43
Պոտյոմկին Գրիգորի Ալեքսանդրովիչ, իշխան 51, 61—64, 80, 187, 188, 289, 291, 360, 361, 381, 394, 503, 546, 553, 557, 560
Պոտյոմկին Պավել Սերգեևիչ, գեներալ 25, 51, 58, 62—64, 360, 361, 378, 382, 398, 446, 503, 508, 557, 559, 561
Պօղոս, գանձապետ Դարբանդում 334, 449
Պօղոս, երէց ի Ռուսաստան 518
Պօղոս, ղափանցի ոմն 521
Պօղոս, մահտեսի, ամուսին մահտեսի Հռիփսիմէի, նվիրատու 418
Պօղոս Յօհանջանեան, Քիլիսաքեանդից 199
Պօղոս, ոմն պարոն Կ. Պոլսից 106
Պօղոս, որդի մահտեսի Խոտըրի 560
Պօղոս, որդի ջուղայեցի Մարգար Մանուչարեանի 146
Պօղոս, վարդապետ, Դօշավանից վէրիլ 90, 203, 231
Պօղոս, վարդապետ, Քիլիսաքեանդու և Յովաննէս եկեղեցու առաջնորդ 199
Պօղոս Սաղաթճէլեան, էջմիածնի ճորտ 277
Պօղոս Տէր-Առաքելեան (Անգալի) 530
Պօղոս, տիրացու 407, 408
Պօղոս, փեսայ Պօղոսեան Խաչիկի 426
Պօղոսեան Խաչիկ, ջուղայեցի (նաև պրն. Խաչիկ աղայ) 78, 137, 208—210, 229, 264, 265, 407, 423, 425, 434, 435, 469, 481, 485, 516, 517, 520, 523, 538, 540, 551, 560

Ջաղատենց Ստեփան 131, 132, 151, 152, 155, 371, 372
Ջավադ, Գանձակի խան 44
Ջաֆարղուլի խան 28—30, 32
Ջումշուդ, մէլիք, որդի Մէլիք Շահնազարի 174, 549
Ջուղայեցի Մարգար—տե՛ս Մարգար Մանուչարեան

Ռամազան, բուրդ ցեղապետ 59, 484
Ռայնեգս Յակոբ (նաև տօխտօր Յակոբ, պօլկովնիկ Եակուբ, տօքտօր Եակոբ) 25, 61, 62, 126, 256, 345, 350, 360, 361, 365, 367, 381, 437, 446, 449, 478, 502, 506, 518, 545, 546, 551, 556
Ռափայէլ, ախթարմայ 370
Ռաֆայել Դանիբեկով 552
Ռեթեոս Չելեպի, Ստեփան ամիրայի որդի 107
Ռէթէոս վարդապետ, Ջկրաշէն եկեղեցու առաջնորդ 130
Ռըզվան աղայ 143, 270, 274, 275, 451, 554
Ռումյանցեվ Պյոտր Ալեքսանդրովիչ (Ռումյանցեվ-Զադունայսկի), գեներալ-ֆելդմարշալ 61, 289, 553

Սալման բէկ, եղբայր Մահմատ բէկի 143, 274
Սախայեան (նաև Սախայօղլի), մահտեսի Մարտիրոս ամիրայ 107, 168, 398, 457
Սահակ աղայ, արարկիրցի նվիրատու, Բայազետից (նաև խոջայ Սահակ) 270, 274, 327, 334, 443, 451, 465, 497, 555
Սահակ, գանձապետ Դուխուրղանում 405, 410
Սահակ, գործակալ Դօրխում, քահանայ 76, 131, 256, 555
Սահակ, եպիսկոպոս 15, 22
Սահակ, խօջայ, Պալաթու գանձապետ 106, 406
Սահակ, Զախից 450
Սահակ, մահտեսի, Կարինից 255, 287
Սահակ, մահտեսի, Սամաթիոյ գանձապետ 106, 442, 445
Սահակ, նամակաբեր ոմն, Շուլավերից 305
Սահակ պետ, Հաւանդալու վանից առաջնորդ 244, 280
Սահակ պետ—տե՛ս Իսահակ վարդապետ
Սահակ պետ—Փառակեցի, Առաքելոյ ս. Թադէոսի վանից առաջնորդ 265, 356
Սահակ, պօլսեցի ոմն 184
Սահակ, պօլսեցի ուխտաւոր 144
Սահակ վարդապետ, եղբայր պրն. Ստեփաննոսի 449
Սահակ վարդապետ, ժամօրհնող, էջմիածնի միաբան 224, 237
Սահակ վարդապետ, Խարբերդու Ղասմայ ս. Աստուածածնի վանից առաջնորդ 113
Սահակ վարդապետ, հեղինակ Սուչավայի մասին գրության 447
Սահակ վարդապետ, Շամախու առաջնորդ 173
Սահակ վարդապետ, Սօրբու ս. Գէորգայ վանից միաբան 318
Սահակ աղայ, գող 279
Սահակ աղայ, գրաբեր 173—175
Սահակ քահանայ, Ախալցխայից 254, 490
Սահակ քահանայ, գործակալ ի Թիֆլիզ 298, 445
Սահակ քահանայ, գործակալ Իմերեթիոյ ի Գօրի, ապա քահանա (հօրեղբայր Սահակ քահանայի) 71, 315, 320—322, 324, 432, 445
Սահակ քահանայ, տէր Սահակի եղբօրորդի 321, 325, 330, 432
Սահակեան Վարդան, մահտեսի 334
Սահակջան, նվիրատու ռուսաց երկրից 446, 447
Սահրատ, գործակալ Գրիգոր աղայի 288
Սաղաթէլ, թղթի գործարանի աշխատող 42
Սաղաթէլ Յովաննէս, պետ 393
Սամուէլ, Ապտուլլայ փաշայի վէքիլխարճ 219, 220, 228
Սամուէլ, եպիսկոպոս, Ռոստովի վիճակի առաջնորդ և սինոդի գործակալ 291
Սամուէլ, տիրացու, ղափամաճի 418
Սառայ կին, նվիրատու Կ. Պոլսից 242, 263, 429
Սաստաթեան Աստուածատուր մահտեսի, ամասիացի 250
Սաստաթեան Լութվի, մահտեսի, պօլսեցի 407
Սարաֆյան Մովսես 61, 290, 453, 553
Սարգիս աղայ, Ռուսաստանից (հանգուցյալ) 384
Սարգիս աղայ, հասցեատեր, Թիֆլիսից 128
Սարգիս, Աղրմանու գանձապետ 266
Սարգիս, ամանաթատեր Ղարսում 154
Սարգիս, Բարօյի որդի Ղըլըախչախ գյուղից, նվիրատու 203
Սարգիս, Գանձասարի կաթողիկոս 44
Սարգիս, գեղարքունեցի 439, 440, 448
Սարգիս, դերձակ Կ. Պոլսից 342
Սարգիս, Երուսաղեմի վեքիլ 107, 167
Սարգիս, ղանազան 119, 439
Սարգիս, խօջայ, մարսապետի սառաֆ Կարինում 93, 114, 115, 244, 269
Սարգիս, հաճի, պապուճչի, նվիրատու 418
Սարգիս, հաշտարխանցի 401
Սարգիս, մահտեսի (Թիֆլիսից) 97
Սարգիս, մահտեսի, թոխաթեցի 180, 181
Սարգիս, մահտեսի, Նանուսեցի 467
Սարգիս, մահտեսի, փեսա Զամքե տիրացու Գրիգորի 180
Սարգիս, մէլիք, եղբայր Վանական վարդապետի 97, 134, 300, 305
Սարգիս, նվիրատու 521
Սարգիս, ոմն ժողովարար 328, 330, 419
Սարգիս, որդի Յակոբի 148
Սարգիս, Չմշրածակից 429
Սարգիս, վարդապետ, նուիրակ Երուսաղէմի 467
Սարգիս, տիրացու, դերձակ 397, 439, 471
Սարգիս, քահանայ 388
Սարգիս Հակոբեան, Մաղրասից 520
Սարգիս Մելիքով, պոդպորուչիկ 559
Սարգիս տղայ, վաճառական 99
Սարգսեան, մահտեսի Յակոբջան, Նանուսեցի 257
Սարօյ Մարտիրոս, գանձապետ ի Թամլուխ 284
Սաւալանեան պրն. Առաքել 352
Սաւալանեան պրն. Յովաննէս 390
Սարու, Դանիել վարդապետի ուղեկցողներից 544
Սաֆար, մէլիք 464
Սաֆարենց Պապի որդի Իվանէ, թելեթցի ճորտ 76
Սէթ աղայ, հայր Աւէտի 207
Սէթ, գործակալ Գրիգոր աղայի 288
Սէթ Պետրոս եպ. Խոզարածյան—տե՛ս Պետրոս վարդապետ, մահսարատար
Սէթ Տէր-Ավետեան (Մադրաս) 520
Սերոբ, մահտեսի, գանձապետ ի Ղուրուբէլանկ 284
Սերոբ, մահտեսի, գանձապետ ի Կեյվա 284
Սերոբ, նվիրատու 452
Սերոբ, նվիրատու Բայազետից 138

Սերոբ, նվիրատու Կարինից 137, 245, 268, 493
Սերոբ, որդի մահտեսի Խըտըրի 560
Սերոբ, տիրացու, Չմշքածակից 429
Սէյիդ բէկ Դիատինու 301
Սէխալըու, բրդական ցեղ 484
Սիմա կին, նվիրատու 470
Սիմեոն, դյուրանդճի, նվիրատու Կ. Պոլսից 428
Սիմէօն, Ախալցխայից 253
Սիմեոն (նաև Սիմէօն), Երևանցի, կաթողիկոս 9, 10, 13—15, 18—24, 33, 34, 37—42, 44—47, 49, 53, 57, 60, 61, 67, 72, 73, 75, 79, 87, 88, 94, 95, 102, 130, 131, 178, 184—186, 204, 243, 247, 254, 263, 292, 320, 321, 357, 369, 386, 511, 526, 534, 543, 545, 547, 550, 555, 558, 560
Սիմէօն, էջմիածնի վանքի ճորտ 130
Սիմէօն, զոնտաղսազ Յարութիւնի որդի, էջմիածնի ճորտ 239
Սիմէօն, մահտեսի Միրսախոռաց, բասացի 269, 270, 280, 360
Սիմէօն, մահտեսի, Քիլիսաքեանդից 199
Սիմէօն, մարսպետ, Բայազետից 143
Սիմէօն, նամակաբեր Ախալցխայից 251
Սիմէօն, Ջիրաշեն եկեղեցու քահանայ 76
Սիմէօն վարդապետ, գեանչեցի 271—273, 278
Սիմէօն վարդապետ, ոմն (հիշատակված է Հ. Արղությանի նամակում) 439
Սիմէօն, տիրացու, պրուսացի 213, 215, 551
Սիմօն, վրացի քահանայ 372—374
Սիփիրի Աւտալ աղայ 484
Սմպաթեան աղայ Յովաննէս 345
Սողոմոն, վարդապետ, էջմիածնի միաբան 77
Սողոմոն, եղբորորդի Հ. Արղութեանի 401
Սողոմոն, վարդապետ, Մեծոփայ վանից առաջնորդ 424
Սողոմոն Դիւան (նաև Սոլոմոն Դիւան), մէքիլ Հախպատու վանից 480, 488, 496
Ստեփան, ամիրա, սառաֆ, հայր Ռեթեոս Չելեպու 107
Ստեփան, գանձապետ Սապանչայու 284
Ստեփան, եղբայր Թէլաւի գանձապետ պրն. Յակոբի 228
Ստեփան, էջմիածնի ճորտ 322
Ստեփան, թարգման 48, 400
Ստեփան, թիֆլիզեցի 227, 295, 299
Ստեփան, ղօշավանցի 276, 287
Ստեփան, մահտեսի, Ադրիանուպօլսից 336
Ստեփան, մահտեսի, ամիրայ Խպօյենց ի յԱդրանայ 500
Ստեփան, մահտեսի, գանձապետ Տէր Յովաննիսի եկեղեցւոյ 285
Ստեփան, մահտեսի էլօյի որդի, բայազետցի 332
Ստեփան, մահտեսի, Հալեպից 234
Ստեփան, մահտեսի, հանգուցեալ Ղազար աղայի որդի 107, 168
Ստեփան, մահտեսի, Քրիշչի Օղլի մահտեսի Յարութիւնի եղբայր (Ամասիա) 520
Ստեփան, մահտեսի, օրթախ հաճի Յովաննիսի 286
Ստեփան, մարսպետ 75, 131
Ստեփան, մէլիք Աստապատու 107, 331, 332, 339
Ստեփան, մէլիք, Խօյից 464
Ստեփան, նախկին կաթոլիկ, քահանա 445
Ստեփան, նվիրատու Ռուսչուկից, քահանա 428
Ստեփան, ջուղայեցի տէր Յովաննէսի որդի 136, 303, 319, 328
Ստեփան, ոմն հասցեատեր 108
Ստեփան, որդի Յովաննէս բժշկի 239
Ստեփան, որդի Ֆիթօյենց պրն. Պետրոսի ի Թիֆլիզ 515
Ստեփան, որմնադիր 298
Ստեփան, վաճառական 137
Ստեփան, վարդապետ 302
Ստեփան, վարդապետ, առաջնորդ Բարդուղիմէոսի Առաքելոյ վանից (նաև Ստեփաննոս վարդապետ) 121, 347
Ստեփան, վարդապետ, առաջնորդ Ռումէլու (նաև Ստեփաննոս) 70, 386, 387, 392, 401, 419, 420, 436, 447, 465, 466, 492, 493, 517
Ստեփան, վարդապետ, Չարսանչաղու առաջնորդ 113
Ստեփան, վարդապետ, Սալմաստու և Հաղբակու առաջնորդ 347, 533
Ստեփան, տիրացու, Բայազետից 90, 219
Ստեփան, տիրացու, գանձապետ Տէր Աղարիայի եկեղեցւոյ 285
Ստեփան, տիրացու, որդի ջուղայեցի տէր Յովհաննիսի, նվիրատու 136
Ստեփան, տիրացու, որդի ջուղայեցի տէր Ստեփանի 546
Ստեփան Տէր-Յովհաննիսեան 219
Ստեփան Տեր-Սահակյան, երևանյան դեսպան (նաև տիրացու Ստեփաննոս) 25, 503
Ստեփաննոս աղայ, որդի մահտեսի էմնիզեան Յարութիւն աղայի (Բասրայ) 311, 312, 415, 417, 461, 482, 485, 490, 491, 494, 523, 525
Ստեփաննոս ամիրայ (Կ. Պօլսից) 402, 403, 406, 470
Ստեփաննոս, եղբայր Սահակ վարդապետի 449
Ստեփաննոս, մահտեսի, ամիրայ (Ադրանայից) 483
Ստեփաննոս, մահտեսի, նվիրատու Ադրիանուպոլսից 248
Ստեփաննոս, ոմն պարոն Բայազետից 197
Ստեփաննոս, տիրացու, ջուղայեցի նվիրատու (Վան) 115, 497
Ստեփաննոս, սարկավագ 53
Ստեփաննոս, սարկաւագ, Թիֆլիզեցի 241
Ստեփաննոս, վարդապետ 235, 236
Ստեփաննոս, վարդապետ, Դաղատիո առաջնորդ 111
Ստեփաննոս, վարդապետ, Խոյի առաջնորդ 465
Ստեփաննոս, վարդապետ, հանգուցյալ 471
Ստեփաննոս, վարդապետ, վարժապետ 40
Ստեփաննոս Մանուչարյան, գորիեցի 74, 555
Ստեփաննոս Միրզոյան, պոլսեցի (Կալկաթա) 520
Սրապ, մահտեսի, Պանտրամայից 429
Սրբուկ, Թեքիրդաղից 429
Սուլեյման սարդար 30
Սուլեյման, փաշա Ախալցխայի 55, 56, 136, 152
Սուլէյման, փաշա Կարսի 287, 446
Սուլխան Բեկթաբեկյան 129
Սուլխան Դիւան 97, 128, 138, 139, 411, 412, 445, 545, 559, 560
Սուվորով Ա. Վ. 25, 559
Սուքիաս, հասցեատեր Բայազետից 197
Սուքիաս, տիրացու, նվիրատու Իզնիմիտից 428
Սօղոմօն, վարդապետ, միաբան էջմիածնի 231, 232
Սօղոմօն, փեսա մէլիք Մկրտումի, Կ. Պօլսից 158
Սօլոմօն (նաև Սօղոմօն), արքայ Ափխազաց (նաև Բաշաչուխի—իմա՝ Իմերեթիայի)—29, 128, 132, 149, 201, 238, 256, 546, 551
Սօլոմօն, հասցեատեր Թիֆլիսում 129

Վահան, աւագ քահանայ ի Բայազիտ 66, 89, 101, 115, 120, 135, 136, 138, 143, 154, 176, 180, 182, 184, 197, 219—221, 227, 233, 235, 244, 267, 270, 274, 278, 288, 301, 303, 319, 327, 341, 419, 425, 443, 451, 497
Վանական, վարդապետ, Շուլաւէրի առաջնորդ 97, 134, 233, 300, 305
Վասիլ, ուղղափառ քահանա Ակնա Վանստան գյուղից 407, 413
Վարդան, ամիրայ 435
Վարդան, գանձապետ Ասլանբէկու 284
Վարդան, գրագիր էջմիածնի վանքում 280
Վարդան, Թվանքչի 543
Վարդան, կեսարացի, քերեզտեճի (Սամաթիա) 107
Վարդան, հասցեատեր Վանից 306, 308
Վարդան, հասցեատեր Քեոթահից 429
Վարդան, մահտեսի, հասցեատեր 342
Վարդան, մահտեսի, Նոր Նախիջևանից 187
Վարդան, Մարգար աղայի որդի (Բայազետ) 143
Վարդան, նվիրատու, Թօխաթից 333
Վարդան, նվիրատու Կ. Պոլսից 248
Վարդան, վարդապետ, Երուսաղեմի նվիրակ 193
Վարդան, վարդապետ, էջմիածնի միաբան 362, 365
Վարդան, քեօխվայ Քիլիսաքեանդից 199
Վարդան Օձնեցի 14, 49
Վարդանյան Յ. 14
Վարդենի, դուստր Մարգարիտ կնոջ 418
Վարդերես, աղայ, որդի աղաչայ Յովհաննէսի 386
Վարդերես, մահտեսի, ամիրայ Կ. Պօլսից 107, 406
Վարդիկ, գանձապետ Օրթագեղում 284
Վարդում, մահտեսի, Ղրնըղից 333, 334
Վելիբէկ, հայր Մահմադ Հասան բէկի 26

Տաղէսեան Յովաննէս ամիրայ (նաև Տագէս ամիրայ) 404, 406, 408, 418, 457
Տամարա, ռուսական դեսպան Կ. Պոլսում 36
Տայի Յովաննէս (Կարինից) 267, 268
Տատուր օղլի մահտեսի Յովաննէս 247
Տեր-Ավետիսյան Ս. Վ. 51, 53
Տէր-Յովաննիսեան Ստեփաննոս 210, 229
Տէր-Յօհանեան տէր Մինաս, Ջուղայից 482
Տէր-Շմաւոնեան պրն. Ստեփան, Թիֆլիսից 515
Տիտանյան Ռուզան 51
Տիրուհի, կին մահտեսի Յարութիւն ամիրայի 470
Տրդատ Թագավոր 508
Տօբտօր Եակօբ—տե՛ս Ռայնեգս Յակոբ

Ումմա (Օմար), Ավարայի խան 27, 59, 60, 548, 561

Փանահ, Ղարաբաղի խան 11, 12, 548
Փանոս, գանձապետ ի Բաղդատ 534
Փանոս, հասցեատեր Կ. Պոլսում 107
Փանոս Հովհաննիսյան (Դաքա) 520
Փանոս, Չմշքածակից 429
Փափազյան Հակոբ 84
Փարիզայ կոչեցեալ Գրիգոր վարդապետ 472
Փիլիպպոս, աւագ քահանայ Թարվիզու 179
Փիլիպպոս, խոջայ, ակնցի 269
Փիլիպպոս, խոջայ, բարեկամ Տայի Յովաննէսի (Կարին) 267, 386
Փիլիպպոս, վարդապետ, Զմիւռնոյ առաջնորդ և նուիրակ 108, 109, 212, 216, 217, 229, 230, 234, 235, 303, 333, 334, 422, 423, 427, 471, 483, 522, 556
Փիլիպպոս, վարդապետ, նուիրակ ի Հնդիկ 207, 208
Փիլիպպոս Ազրակեցի, կաթողիկոս 6
Փիլոմ, Խոյից 538

Քաֆանակենց Դաւիթ 157
Քաֆանակենց Մկրտում 157
Քերոբ, դրամ բերող 115
Քեօշարի, քիւրդ ցեղ 198
Քէլ Յօհաննէս 554
Քիտիսէ, վրացի նվիրատու 239

Քիտուր—տե՛ս Պետրոս կաթողիկոս 441, 444
Քյաղում, մելիք (Ղազախից) 98, 259
Քյալբալի, Նախիջևանի խան 32
Քոթոյան Մամաջան 76
Քրիշչի օղլի մահտեսի Յարութին 520
Քօչօրա Ճուհլակ, էջմիածնի ճորտ 257

Օհանջան աղայ, նվիրատու Սուրաթից 38
Օղիտա (Քեոթահից) 429
Օսման աղայ 154
Օրմանյան Մաղաքիա 17, 19, 21—24
Ֆաթհ-Ալի շահ 35
Ֆահրատ, մահտեսի Սահակի եղբայր 107
Ֆայատ օղլի Խալիլ, Կարինի փաշա 67, 68, 92, 93, 114, 115
Ֆարման օղլի Սարգիս վարդապետ, Երուսաղէմայ նուիրակ 464, 471
Ֆիթօյենց պրն. Պետրոս ի Թիֆլիզ 515
Ֆուկիկ, եղբայր Կարինի գործակալ Հայրապետի 281

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլեաց Թոմայի Առաքելոյ վանք (նաև Ագուլեաց վանք) 234, 235
Ագուլիս 235
Ադրանայ 107, 111, 418, 469, 483, 500, 561
Ադրբեջան 10
Ադրիանուպոլիս 228, 336
Ազով 553
Ալաշկերտ 71, 233, 302, 424, 497
Ախալցխա (նաև Ախլցխայ) 27, 55, 57, 60, 73, 77, 97, 100, 101, 136, 238, 245, 251, 253, 254, 349, 490, 536, 541, 551
Ախալքալակ 60
Ակն 111, 269, 407, 413, 533
Աղբակ 68
Աղթամար 44, 379
Աղվանք (նաև Տուն Աղուանից) 66, 162, 304, 341, 432
Աղքրման 261, 266
Ամասիա 70, 216, 246, 247, 373, 520
Ամիդ (նաև Յամիթ) 70, 102, 113, 114, 116, 142, 251, 252, 254, 266, 269, 422, 540
Ամստերդամ 79, 108—110, 234, 268, 343, 352, 541, 544
Այիտոստ 70, 419
Անդրիանուպոլիս 248, 432, 500
Անդրկովկաս 12, 18, 25, 28, 32, 33, 36, 48, 61, 68, 559
Անգալի 530, 533
Անթիլիաս 13
Անկիւրիայ 409
Աշնակ 246
Աշտարակ 69, 296, 300
Ապարան 60, 96
Ապաղէք 446
Ապուշեղ 552
Առաքելոց վանք ի Տիգրանակերտ 251
Ասլանբէկ 284
Ասպահան 287, 437
Աստապատ 11, 331, 339
Աստառչի խան (Հյուրանոց Կ. Պոլսում) 277
Աստրախան (նաև Հաշտարխան) 11, 145, 148, 149, 151, 158, 170—172, 187, 190, 191, 193, 195, 202, 264, 288, 304, 309—311, 316, 320, 322, 323, 357, 360, 372, 377, 383, 392, 394, 423, 436, 439, 446, 478, 481, 502, 515
Ավագ եկեղեցի (Թիֆլիզ) 70
Ավարիա (նաև Ավարա) 59, 548, 561
Ավստրիա 50, 70, 80, 502—504, 508, 512, 515, 518
Ավստրո-Հունգարական կայսրություն—տե՛ս Ավստրիա
Ատարպազար (նաև Ատապազար) 248, 283, 284
Ատրանա 332, 391
Արայի լեռ 27
Արապկեր 112
Արարատյան դաշտ 10, 21, 23, 41, 42, 66, 293, 376, 396, 512
Արարատյան երկիր 10, 12, 21, 27, 30, 32, 36, 55, 56, 57, 59, 60
Արարատեան Տուն 291
Արաքս 59, 77
Արդեբիլ 28
Արդուին 70, 73, 287
Արկուռ ս. Յակոբ եկեղեցի 295
Արղնի Մատէն 142
Արճէշ 476
Արտահան 99
Արցախ (նաև Արցախու երկիր) 11, 62, 172, 360, 376, 378
Արփաչայ 232
Արևելյան Հայաստան 7, 8, 10, 11, 16, 25, 28, 37, 59, 559
Արևմտյան Հայաստան 9, 12, 69
Արևմտյան Վրաստան 546
Ափխազաց երկիր (նաև Բաշաչուխ) 149—153, 156, 201, 238, 320, 321, 546

Բաբերդ 411
Բագրեւանդ գաւառ 430
Բագուան գիւղ 430
Բագնոց 302
Բաթում 238, 245
Բաղդադ (նաև Պաղտատ) 38, 47, 204—206, 209, 216, 218, 229, 377, 393, 436, 458, 472, 477, 485, 494, 495, 514, 523, 525, 526, 534, 550, 552
Բաղեշ (Բաղիշ) 34, 427
Բալու 70, 71, 113, 114, 138—141, 424, 427, 522
Բալուայ ս. Աստուածածին եկեղեցի 141
Բալուայ ս. Գրիգոր եկեղեցի 140
Բալուայ ս. Լուսաւորիչ եկեղեցի 139, 142
Բալուայ ս. Կիրակոս եկեղեցի 141
Բալուայ ս. Պարթև եկեղեցի 141
Բամբակաձոր տե՛ս Փամբակաձոր

Բայազետ (նաև Բայազիտ) 21, 26, 29, 47, 57, 66, 67, 69, 71—73, 77, 88—90, 101, 115, 119, 120, 131, 132, 135, 136, 138, 142, 143, 147, 154, 162, 176, 180, 183, 184, 197, 199, 210, 219—221, 227, 233—236, 253, 258, 270, 271, 273, 275, 278, 280, 286, 288, 301—303, 316, 319, 326, 327, 331, 334, 341, 344, 348, 356, 419, 424, 425, 443, 451, 465, 471, 474, 497, 547—549, 552, 554
Բանդար-Բուշեր (նաև Բուշեր) 47, 204—207, 209, 229, 393, 550
Բանկալ 205
Բաշաչուխ—տե՛ս Ափխազաց երկիր
Բաղդադ 70, 419
Բասարճէզ 70, 419
Բասրայ 47, 59, 137, 204, 205—209, 213, 216, 218, 219, 229, 264, 332, 377, 393, 415, 417, 436, 454, 461, 472, 482, 485, 494, 523, 525, 526, 536, 538, 550
Բաքու 48, 169—172, 179, 180, 185, 191, 193, 271, 272, 304, 357, 427, 449
Բեթխլէհէմու եկեղեցի (Թիֆլիզ) 479
Բէնկան 422
Բիրմա 552
Բյուրական 545
Բոլնիս 72
Բորչալու 23, 72
Բուլղարիա 8, 20
Բուկովինա 50, 70
Բոմբայ (Բոմպայ, Բոմբայի) 206, 207, 468, 490, 494, 495, 520, 533, 540
Բուշեր տե՛ս Բանդար-Բուշեր
Բուրսա (նաև Պրուսայ) 24, 204, 212—215, 261, 262, 377, 550, 551
Բօլնիս 299
Բօղազհիսար ղասաբայ 452, 453
Բօզօվա ղասաբայ 453
Բօշալու 299

Գա՛լու 318
Գաղատիա 102, 111, 113, 180, 212, 215, 262—264, 417, 452, 454, 458, 471, 493
Գանձակ (նաև Գեանջայ) 10, 30, 31, 44, 55, 96, 132, 134, 135, 145, 173—175, 178, 199, 200, 353, 369, 434, 450, 497, 546
Գանձակի խանություն 549
Գանձասար 18, 44, 62, 171—173, 184, 304, 381, 432, 546
Գանձասարի վանք 323, 555
Գեանջայ—տե՛ս Գանձակ
Գեորգիևսկ (նաև ս. Գէորգեայ ամրոց) 25, 383
Գետառ անդաստան 26
Գերմանիա—տե՛ս Ավստրիա
Գեօլա 99, 344
Գեօլասոր 348
Գէլիպօլ ղասաբայ 453
Գէմտկոյի 446
Գիլան (նաև Գիլանու երկիր) 48, 56, 68, 69, 161, 169—172, 179, 180, 192, 204, 530, 535
Գիւլիստան 451, 549
Գիւճան 253
Գորի (նաև Գեորի, Գօրի) 69, 76, 131, 132, 256, 315, 320, 321, 331, 357, 358, 405, 409, 422, 423, 432, 479, 488, 497, 498, 555
Գօղթնեաց տուն (նաև Գողթան) 235, 548

Դաշտ գյուղ 43, 73, 501
Դատմա ս. Աստուածածնի վանք Խարբերդու 115
Դարբանդ 171, 172, 181, 334, 357, 449
Դաւրիժ—տե՛ս Թաւրիզ
Դաքայ 534
Դիադին 233, 301, 302, 497
Դիզակ 549
Դիմիճի կոչեցեալ եկեղեցի 285
Դուգախու նահանգ 172
Դուխուրդան 178, 405, 410

Եագորցկի—տե՛ս Եգորեսկ
Եալախտարայ 284
Եաշ 110, 386
Եգորեսկ (նաև Եագորցկի) 36, 383
Եղվարդ 27, 58, 438, 448
Եվրոպա 15, 78, 529, 545
Երասղ (նաև Երասխ) 474, 484
Երզնկայ 498
Երնջակ 333
Երուսաղեմ (նաև Սաղիմ) 14, 60, 78, 107, 108, 148, 189, 190, 192, 193, 201, 204, 212, 215, 259, 264, 267, 270, 279, 311, 212, 350, 372, 373, 383, 384, 388, 390, 392, 393, 401, 403, 415, 416, 426, 438, 440, 464, 465, 469, 471, 478, 507, 534, 538, 552, 558, 562
Երևան 10, 12—14, 18, 21—23, 25—32, 35, 55—60, 68, 148, 155, 219, 225, 228, 281, 287, 290, 326, 359, 360—362, 391, 397, 399, 402, 413, 438, 469, 474, 524, 536, 541, 542, 545, 547, 552, 557, 560, 561
Երևանի բերդ 58, 59, 100, 152
Երևանի խանություն 34
Երևանյան երկիր 29, 32, 51, 58, 100, 281
Եւդոկիա 534
Եփրատ 430
Եօնչալու 348

Զանկազօռ 348, 443
Զմիւռնիա (նաև Զմիւռին) 20, 21, 71, 78, 79, 102, 103, 108, 109, 212, 216, 217, 229, 230, 234, 235, 248, 303, 333, 355, 366, 352, 388, 390, 420—422, 425, 436, 445, 458, 461, 462, 469, 478, 486, 490, 492, 493, 519, 521, 540, 544, 554—556, 560

Էինայ ղասաբայ 453
Էյուպ (Թաղամաս Կ. Պոլսոյ) 479
Էյլերեն ավան (Սաքսոնիա) 545
Էյորնճիկ ղասաբայ 453
Էրզրում—տե՛ս Կարին

Թաթարբազարճըղ 70, 419
Թամզարայ 411
Թամլուխ 284
Թավրիզ (նաև Դաւրիժ, Թավրէզ, Թարվէզ, Թարվիզ) 11, 28, 29, 32, 55, 56, 68, 69, 88, 89, 145, 161, 162, 169, 177—179, 181, 275, 323, 337, 346, 356, 374, 410, 558, 559
Թելավ 77, 228, 479
Թէկնեամու եկեղեցի ի Թիֆլիզ 479
Թէքիրտաղ 389, 418
Թիֆլիս (նաև Թիֆլիզ, Տփխիս) 15, 16, 18, 28—30, 34, 39, 49, 55, 62, 64, 69, 72, 75—79, 83, 88, 94, 96, 97, 103, 117, 121, 123, 127, 130—132, 134, 138, 145, 146, 149, 151, 153, 155, 156, 158, 185, 190, 191, 195, 196, 200, 201, 219, 220, 224, 227, 228, 238, 239, 244, 250, 251, 255, 256, 260, 261, 271, 272, 277, 278, 280, 281, 283, 290, 294, 296, 298, 299, 309, 313—316, 320, 321, 324, 325, 328—331, 335, 337, 340, 349—351, 356, 365, 367, 371—373, 375, 383, 388, 392, 393, 423, 428, 440, 445, 447, 464, 467, 471, 474, 478—481, 486, 488, 490, 496, 497, 506, 507, 508, 515, 530, 544, 546, 548—550, 552, 559, 561
Թովմա Առաքելո վանք 43, 73
Թռնովայ 70, 419
Թրակիա 70, 107, 111, 308, 418
Թուրքիա 8, 10, 12, 15, 59, 69, 75, 130, 241, 545
Թօխաթ 45, 47, 70, 102, 108, 111, 112, 137, 138, 144, 180, 181, 204, 215, 229—231, 233, 234, 246, 248, 251, 254, 263, 269, 280, 308, 332—334, 336, 372, 373, 379, 391, 422, 454, 532
Թօփրախղալայ 233, 274, 301, 302, 349

Իզնիմիտ (նաև Իզնիմիդ) 265, 379, 416, 423, 428, 429, 431, 483
Իկիրմիտօրտու նահանգ 172
Իմերեթիա (նաև Իմէրէթու երկիր) 29, 71, 320, 321, 546, 551, 555
Ինկիլթէռ (նաև Ինկլիզ) 468, 490, 491, 495
Իսմայիլ 70, 265, 269, 493
Իրան (նաև Տուն Պարսից) 8, 10, 11, 15, 27, 28, 31, 35, 60, 68, 69, 205
Իրաք 8, 69
Իսկիւտար 106, 424, 465, 468, 470, 473, 474, 483, 517

Լայպցիգ 545
Լիճկը գիւղ 425
Լմու անապատ 274, 306, 520
Լոռի (նաև Լօռի) 72, 232, 260, 299, 316, 320, 325, 488, 549, 552
Լոռու բերդ 66, 296, 298, 323—325, 555

Խամսայ 145, 172
Խամուր 302, 497
Խաչեն (նաև Խաչենու նահանգ) 12, 172
Խասգիւղ 106, 415, 467, 470, 473
Խարբերդ (նաև Խարբերթ) 113, 318, 424, 555
Խելթուրա (նաև Խէլթուրան գիւղ) 130, 445
Խէրխիկ 318
Խոյ (նաև Խօյ) 10, 26, 27, 29, 35, 56, 57, 68, 88, 161, 162, 177, 178, 244, 250, 251, 279, 328, 331, 341, 347, 356, 370, 399, 410, 419, 464, 538, 541, 549
Խոր Վիրապ 233, 295
Խորասան 11

Կ. Պոլիս (Ստամպօլ, Կոստանդնուպօլիս, Պօլիս) 12, 16, 23, 24, 27, 36, 38, 41, 45, 47—49, 60, 66—71, 73, 78, 79, 87, 91—93, 95, 101—104, 107, 108, 110—112, 114—117, 119, 121, 124, 135—140, 142, 144, 147, 148, 152, 159, 163—165, 175, 180, 182—184, 193, 194, 204—210, 212—218, 221, 222, 224—226, 229, 231, 234, 235—238, 241,—246, 248, 249, 255, 259—261, 263, 265—270, 274, 277, 279, 280, 283—287, 306, 308, 311, 312, 320, 326, 332, 341—343, 349, 356, 359—362, 366, 371, 372, 376, 379, 383, 387, 388, 391, 392, 397, 398, 402, 404, 406, 412, 413, 415, 419—423, 425, 429, 434, 441—443, 445, 446, 451, 452, 456, 463, 466—468, 471, 473, 477, 479—481, 483, 490, 491—495, 500, 502, 507, 515, 518, 521, 523, 525, 531, 537, 539—541, 543, 544, 548, 551, 552, 555, 556—558, 560, 562
Կաթուղիկէ եկեղեցի ի Թիֆլիզ 479
Կալկաթա 206—208, 524, 534
Կալուգա 554
Կախեթ 258, 331, 479, 497, 550, 559
Կաղզվան 59, 154, 484
Կամենեց Պոդոլսկ 36
Կասպից ծով 25
Կարին (նաև Էրզրում) 19, 31, 41, 45, 47, 48, 57, 67, 68, 71, 72, 77—79, 90, 91—93, 98, 102, 109, 113—117, 120, 121, 135—138, 144, 152, 159, 160, 162, 163—165, 167, 175, 180, 182—184, 204, 211, 212, 216—218, 221, 225, 226, 229, 230, 233, 234, 236, 237, 241, 244—254, 261, 263—265, 267, 269, 279, 280, 283, 286, 287, 303, 305, 308, 309, 319, 320, 325,

333, 334, 338, 341, 343, 348, 349, 357, 359, 365, 368, 371—373, 379, 386, 388, 392, 398, 411, 412, 418, 422, 441, 442, 444, 445, 453, 456, 463, 469, 471, 486, 493, 500, 503, 517, 519, 521, 522, 530, 543—545, 556
Կարմիր վանք 114, 257
Կարս (նաև Ղարս) 18, 23, 26, 28, 48, 55, 57, 59, 68, 71, 72, 77, 78, 88, 90, 92, 93, 97—99, 119, 120, 136—138, 144, 153, 154, 162, 167, 180—184, 200, 203, 204, 212, 216, 217, 219, 221, 225, 226, 228, 229, 231, 232, 236, 238, 241, 244—246, 248, 250, 251, 254, 255, 261, 267, 268, 271, 275, 276, 287, 303—305, 319, 320, 325, 326, 332, 343, 349, 372, 373, 390, 411, 446, 463, 464, 471, 490, 519, 543, 554
Կարսիկ 318
Կեղի (նաև Քղի) 19, 411
Կեսարիայ 70, 74, 111, 247, 308, 422, 532
Կէյվա 308
Կողբ 136, 439
Կովկաս 545, 546, 557
Կիմիշխանայ (նաև Կիմիշխան) 73, 241—243, 245, 251, 252, 411, 454
Կտուցու անապատ 306, 520, 537
Կուրսկ 559

Հալէպ (նաև Հալապ) 205, 206, 229, 234, 332, 467, 538, 540
Հալուարար 69, 335, 336
Հաղարծնի վանք 67, 233, 300, 554
Հաղբակ 122, 347, 348
Հաղբատ (նաև Հաղպատ) 62, 67, 96, 124—126, 130, 155, 227, 238, 239, 271, 299, 300, 324, 350, 351, 353, 354, 367—371, 414, 415, 423, 479—481, 488, 496, 546, 556
Հայաստան (նաև Հայկազեան երկիր, Հայք) 7—8, 12, 14, 16—18, 27, 31, 43, 59, 71, 95, 103, 395, 511, 545, 546, 553, 561
Հայթօխօյի 446
Հաչաչուր 427
Հաշտարխան—տե՛ս Աստրախան
Հասանղալայու վանք 244, 246, 257, 265, 280, 459
Հասանչուր 259, 299
Հղուայի յերկիր, յեգիպտխանայ 266
Հիլպայ (նաև Հուլպայ) 70, 229, 419
Հիւէյնիկ 318
Հյուսիսային Իրան 68
Հյուսիսային Կովկաս 25, 546
Հնդկաստան (նաև Հնդկաց երկիր, Հնդիկ) 8, 47, 48, 51, 69, 77, 78, 148, 204—207, 209, 210, 229, 272, 273, 306, 307, 376, 377, 385, 386, 393, 415, 417, 458, 472, 482, 485, 486, 490, 494, 516, 517, 520, 523—525, 533, 534, 536, 537, 539, 540, 551, 552, 561
Հոլանդիա 234
Հրեշտակապետի եկեղեցի ի Թիֆլիզ 479
Հօրում գիւղ ի Գեօյա 344

Ձախ կոչեցեալ զաստապայ 450
Ձորագիւղ 100

Ղազախ 28, 71, 72, 173, 174, 197, 232, 259, 299, 300, 427, 488, 498, 548
Ղազանչի—տե՛ս Շահկերտ
Ղազարապատ 309, 426, 473, 479
Ղալաթիա 47, 106, 309, 467, 470, 474, 517
Ղախ 357
Ղայդուլա 260
Ղայսարի 290
Ղարաբաղ 10—12, 25, 27, 33, 57, 60, 68, 546, 548, 549, 559
Ղարահիսար 391, 411
Ղարատաղ 178
Ղարթալա 106
Ղարխին 77, 320
Ղարս—տե՛ս Կարս
Ղուշան 261, 266
Ղզլար 148, 190, 288, 357, 360, 362, 423, 439, 446, 466, 477, 478, 502, 557
Ղզլչախչախ 203
Ղընըղ 333, 334
Ղնճլար 284
Ղոշավանք (նաև Ղօշավանք) 29, 68, 90, 120, 121, 184, 200, 203, 225, 226, 231, 276, 349, 467
Ղրիմ 20, 61, 69, 70, 144, 146, 147, 185, 192, 292, 384, 386, 553, 554
Ղրխպուլախ (նաև Ղրխբուլախ) 57, 175, 250
Ղուբա (նաև Ղուպա) 10, 12, 357
Ղումղափու 106, 107, 356, 360, 443, 445, 467, 469, 470, 473, 474
Ղուրտբէյանկ 284

Ճիլիշ գիւղ 445

Մադրաս (նաև Մատրաս) 205, 208, 256, 520, 525, 534
Մազանդարան 271
Մալղարայ 423
Մակու 10, 34, 197
Մահմադապատ 26
Մաղասբերդ (նաև Մզզբերդ, Մազզբերդ, Մազզաբերդ) 67, 98, 120, 153, 154, 200, 226
Մանազկերտ (նաև Մանածկերտ) 302, 497
Մատան 259
Մարաղա 30, 89, 178, 419
Մարդկօպ 373
Մարտուան 111, 306, 373, 531
Մեծոփայ վանք 424
Մշու վանք—տե՛ս ս. Կարապետ վանք ի Մուշ
Մոզդոկ (նաև Մօզտօք) 49, 69, 149, 151, 152, 156, 185—187, 190, 191, 194, 195, 288, 357, 360, 362, 375, 381, 383, 397, 398, 423, 547, 549, 557
Մոլադուրսուն 26
Մոլդավիա 20, 50, 70
Մոսկվա (նաև Մոսկով, Մօսկով) 18, 61, 145, 146, 185, 190, 191, 288—291, 310, 345, 357, 384, 386, 423, 502, 506, 547, 552, 554, 557
Մսր 404
Մուժամպար 178
Մուխաթղաշի 517
Մուհալիճ 452
Մուղանի դաշտ 30, 31
Մուշ 69, 73, 119, 246, 248, 316—320, 349, 410, 424, 428, 429, 443, 471, 474—476, 497, 498, 545, 555
Մուսայիաղշլայ 70, 419
Մօլարէ 127
Մօղնու եկեղեցի ի Թիֆլիզ (նաև ս. Գէորգայ վանք) 100, 295, 309, 323, 330, 479
Մօրենիկ 318

Յամիթ—տե՛ս Ամիդ
Յէրթմնիկ 318
Յօհանավանք 96
Յօհաննու Օձնեցւոյ վանք 271

Նախիջևան (նաև Նախիջևանու երկիր) 10, 11, 27, 32, 34, 88, 89, 120, 121, 331, 339, 340, 408, 428, 449, 498, 551
Նախիջևան գիւղ (Կարսի մոտ) 77, 203, 232
Նահիա 302, 497
Նամսայ տե՛ս Ավստրիա
Նաւիկ 348, 349
Նովոռոսիյսկ 36, 553
Նոր Նախիջևան 49, 61, 69, 70, 146, 185—187, 189—192, 195, 196, 288, 289, 292, 357, 360, 363, 376, 377, 386, 422, 439, 502, 547, 549
Նոր Ջուղայ 48, 68, 161, 169, 548
Նորաշէն գիւղ (նաև Նորշէն) 173, 199, 335
Նորաշինու եկեղեցի (Թիֆլիզ) 479
Նորգեղ 453
Նպատ լեռ 430
Նուխի 69, 172, 173, 334, 335, 357, 450, 497

Շահկերտ ավան (նաև Ղազանչի) 11, 548
Շահրիար 77, 232
Շամ 393
Շամախի 12, 69, 171, 172, 173, 304, 335, 357, 427, 432, 449, 497
Շամշադին 72, 299
Շապիօն Ղարահիսար 375
Շապուղ 446
Շինախս գիւղ 277
Շիրազ 31, 161, 169
Շիրակ 397
Շիրակավան 27
Շիրվան (նաև Շրուանու երկիր) 69, 357
Շուլավեր 47, 72, 232, 299, 300, 305
Շումլայ 419
Շուշի (նաև Շոշի, Շուշու դղեկ) 11, 27, 33, 55, 56, 161, 172, 173, 178, 181, 184, 250, 251, 331, 332, 334, 335, 397, 427, 450, 497, 548, 549, 559
Շօշի 222

Ովաճուղ 284
Որմի 89, 178, 342

Չարաբերդու նահանգ 172
Չարբախ (նաև Չարբաշխ) 30, 342
Չարսանչաղ 113
Չարսու 445, 446
Չէրքէզ (նաև Չարքէզ) 446, 447
Չինաստան 8

Պալաթ (նաև Պալատ), թաղամաս Կ. Պոլսում 106, 398, 404, 466, 467, 470, 471, 473, 474, 519
Պալիքեսար զաստապայ 453
Պաղչաչուկ 284
Պաղտատ—տե՛ս Բաղդատ
Պանտրմայ 107, 453
Պատչանճ 318
Պետերբուրգ (նաև Պետրպօլբ, Պետրբուխ, Պետրբեուրք, Պետրբուրխ, Պետրպօրք, Պետրբօրք) 17, 25, 33, 34, 145, 146, 190, 288, 289, 291, 310, 357, 380, 383, 384, 397, 398, 423, 448, 459, 502—504, 506, 512, 513, 515, 546, 547, 549, 553
Պէսնի 446
Պղատէլ 446
Պոնտոսի ծով—տե՛ս Սև ծով
Պրուսայ տե՛ս Բուրսա
Պօթիշան 386
Պօլիս 336, 428, 461

Ջկրաշէնու եկեղեցի 76, 129, 130, 156, 157
Ջուղայ 169, 179, 180, 204, 205, 482

Ռազզապ 70, 419
Ռէշտ 338, 340
Ռոստով 291
Ռումէլի 19, 20, 249
Ռումինիա 8, 20
Ռուշչուկ 70
Ռուսաստան (նաև Ռուսաց երկիր, Ռուստաց երկիր) 7, 8, 16—18, 25, 28, 33, 35—37, 48, 50, 51, 57, 59—61, 65, 69, 70, 78, 80, 144, 145, 148, 15[illegible]—153, 170, 185, 194—

196, 288, 289, 291, 309, 312, 313, 357, 362, 364, 368, 383, 386, 422, 423, 425, 446, 477, 502, 505, 511, 545, 551, 553, 558, 561
Ս. Ամենափրկիչ վանք ի Նոր Ջուղայ 68, 161, 548
Ս. Աստուածածնի (Ծիրանաւոր) եկեղեցի ի դաշտին Հալուարարու 69, 130, 336
Ս. Աստուածածնի եկեղեցի ի Գումգափու 107, 333, 473, 474
Ս. Աստուածածնի վանք Բարձրահայեաց կոչուած 251
Ս. Աստուածածնի վանք ի Սանահին 259, 260
Ս. Բարդուղիմէոսի Առաքելոյ վանք 122, 347
Ս. Գայանէ եկեղեցի 37, 378
Ս. Գէորգ եկեղեցի ի Սամաթիայ 402
Ս. Գէորգ զօրավարի անապատ Կտցու 306
Ս. Գէորգ վանք Սօրսրու 316—319, 555
Ս. Գէորգեայ ամրոց—տե՛ս Գեորգիևսկ
Ս. Թադէոս Առաքելոյ վանք 197, 278, 279, 303, 356, 357
Ս. Թովմայի Առաքելոյ վանք 501
Ս. Լուսաւորիչ եկեղեցի ի Նոր Նախիջևան 376
Ս. Խաչ եկեղեցի ի Իւսկիւտար 465, 468
Ս. Խաչ եկեղեցի ի Ղալաթիայ 467
Ս. Խաչ եկեղեցի ի Պետրպօրք 310
Ս. Կարապետ անապատ Վրաց 258, 259, 375
Ս. Կարապետ եկեղեցի ի Իւսկիւտար 106, 467
Ս. Կարապետ վանք ի Երնջակ 333
Ս. Կարապետ վանք ի Մուշ (նաև Մշո վանք) 69, 121, 189, 193, 246, 248, 268, 317, 349, 377, 410, 421, 424, 428, 440, 443, 463, 471, 474—476, 497—499, 555
Ս. Կիրակոս եկեղեցի ի յԱմիթ 540
Ս. Կիրակոս եկեղեցի ի Տիգրանակերտ 424
Ս. Հրեշտակապետ եկեղեցի Պալաթու 473, 519
Ս. Յակոբայ մահլայ ի Խարբերդ 318
Ս. Յակոբեանց վանք ի Երուսաղէմ 215, 279, 312, 313, 350, 465
Ս. Յովաննէս եկեղեցի ի Քիլիսաքենդ 199
Ս. Յովաննիսի վանք (Մուշ) 120, 316, 317, 319, 424, 545, 555
Ս. Յովաննու Մկրտչի վանք (Կախեթի մոտ) 258
Ս. Յովհաննու Մկրտչի վանք Ուչքիլիսէի (նաև ս. Յօհաննու Մկրտչի վանք, Իւչքիլիսէ, Ուչքիլիսէ) 45, 67, 71, 73, 182, 225, 233, 270, 273, 274, 302, 326, 424, 429—431, 443, 497
Ս. Յօհաննու Կարապետի անապատ Լմու 306
Ս. Նշան վանք ի Հախպատ 479, 497
Ս. Սարգիս եկեղեցի ի Թիֆլիզ 479
Ս. Սարգիս եկեղեցի ի Հախպատ 496
Ս. Սարգիս եկեղեցի ի Կ. Պօլիս 168
Ս. Սարգիս եկեղեցի ի Տիգրանակերտ 424
Ս. Ստեփաննոս եկեղեցի ի Գօրի 69, 357, 405, 409, 498
Ս. Ստեփաննոս Նախավկայի վանք 358, 359
Ս. Ստեփաննոս տաճար ի Մուշ 498
Սալմաստ 122, 178, 347, 348, 419
Սախարի Քնարի եկեղեցի 285
Սախճայ 70, 419
Սահակաշէն եկեղեցի ի Թիֆլիզ 238—240, 257, 272
Սաղիմ—տե՛ս Երուսաղէմ
Սամաթիա 107, 402, 442, 445
Սանահին 123, 126, 134, 155, 260, 271, 370
Սանահնու վանք 38, 201, 323, 361
Սապանչայ 284
Սասուն 113
Սաքսոնիա 545
Սեւ ծով (նաև Պոնտոսի ծով) 238, 388, 392, 519, 559
Սերաստիա 111, 215, 333, 422
Սէվազ 228
Սիլիսրայ 70, 419
Սիս 484
Սիրիա 8
Սլտուզ 178
Սշով (նաև Սչով, Սշովա, Սչովա, Սիշով, Սըրշով, Սրճով, Սիշօվ) 70, 386, 387, 392, 417, 439, 447, 459, 465, 503—506, 508, 511—514
Սպահան 161, 169, 207
Սուրաթ 38, 206, 207, 269, 415, 520, 523, 525, 526, 534
Սօմայի 178
Սօմխէթ 260, 445
Սօրսր 316—319, 555
Սևան 27, 60

Վագի գիւղ 184
Վաղարշապատ 27, 30, 34, 35, 58, 60, 466, 509, 514
Վալիտա խան (Հյուրանոց Կ. Պոլսում) 106, 107
Վան 38, 83, 88, 89, 115, 219, 306, 308, 380, 389, 410, 427, 497, 498, 537
Վանգու նահանգ 172
Վանստան գիւղ 407, 413
Վանքի եկեղեցի ի Թիֆլիզ 130, 132, 549
Վառնա 70, 419
Վարանդա 11, 12, 549
Վարդաշէն 334
Վարդատիլ 318
Վենետիկ 552, 553
Վէզիր խան (Հյուրանոց Կ. Պոլսում) 169
Վրաստան (նաև Վիրք, Վրաց երկիր, Վրացտուն) 8, 15, 21, 22, 23, 25, 29, 35, 43, 55—60, 62, 66, 74, 75, 77, 78, 94, 130, 161, 162, 200, 201, 285, 290, 294, 296, 300, 321, 329, 358, 373, 432, 478—480, 488, 489, 497, 500, 524, 536, 541, 544, 545, 547, 548, 552, 555, 559—561

Տաթև 276, 281, 339
Տաթևու ս. Ստաթէի վանք 276, 281
Տաճկահայաստան—տե՛ս Արևմտյան Հայաստան
Տաշիր 260
Տաւշանլու 376
Տէր Ազարիայի կոչմամբ յատկացեալ եկեղեցի 285
Տէր Միքայէլի կոչմամբ եկեղեցի 285
Տէր Յակոբի կոչմամբ եկեղեցի 285
Տէր Յովաննիսի անուամբ յատկացեալ եկեղեցի 285
Տէր Շահէնի կոչեցեալ եկեղեցի ի Ատապազար 284
Տէր Պօղոսի անուամբ յատկացեալ եկեղեցի 285
Տէր Սարգսի կոչեցեալ եկեղեցի 285
Տիգրանակերտ 41, 113, 216, 217, 221, 222, 251, 261, 266, 267, 318, 424, 425
Տրապիզոն (նաև Տրապզոն) 79, 234, 241, 244, 245, 253, 343, 411, 559
Տուն Աղուանից—տե՛ս Աղուանք
Տուն Հայոց—տե՛ս Հայաստան
Տուն Պարսից—տե՛ս Իրան
Տուն Վրաց—տե՛ս Վրաստան

Րանտուան գիւղ 266

Ուզումչի 178
Ուլաշ 70, 508
Ուշնի 178
Ուչքիլիսա—տե՛ս ս. Յովհաննու Մկրտչի վանք
Ուռհա (նաև Ուրհա) 142, 376, 424
Ուռումէլ (նաև Ուռումէլու երկիր) 41, 70, 102, 110, 264, 265, 269, 283, 284, 286, 386, 387, 392, 419, 421, 429, 436, 461, 465, 485, 492, 517
Ուռուճուղ 70, 248, 249, 266, 340, 419, 428, 492, 518
Ուրմիա 10

Փամբակաձոր (նաև Բամբկաձոր) 27, 60, 72, 96, 134, 201, 232, 260, 272, 273, 278, 299, 331, 414, 480, 557
Փարաքար 21
Փարչենիս (նաև Փառչենիս) 59, 484
Փէկու 208
Փրավատի 70, 419

Քանաքեռ 419, 460
Քարափի եկեղեցի 69
Քարթլ-Կախեթի թագավորություն—տե՛ս Վրաստան
Քեարվանսարայ 100
Քեօստանջայ 70, 419
Քիլի 70, 419
Քիլիսաքենդ 199
Քիսեղ 479
Քիրմաստ ղասապայ 453
Քիւրտիստան 540
Քղի—տե՛ս Կեղի

Օշական 26
Օշականու բերդ 479
Օսմանյան կայսրություն (նաև Օսմանցոց երկիր) տե՛ս Թուրքիա

Օրդուբադ 11
Օրթագիւղ (նաև Օրթագեղ) 106, 284, 445, 468, 473
Օքրօպակերտ 243—245

Ֆըրըղլու 284
Ֆօքշան 386

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատենադարանի կողմից 5
Երկու խոսք 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
I ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

Ա) Ժամանակը 10
Բ) Ղուկաս Կարնեցին ուսումնասիրողների գնահատմամբ 13
Գ) Կյանքն ու գործունեությունը 19
Դ) Շինարարական և մշակութային աշխատանքներ 37
Ե) Նամակագրությունը 44
Զ) Հրատարակություններ նամականուց 49
Է) Անտիպ նյութեր 51

II ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ 1780—1785 ԹԹ. ՆԱՄԱԿԱՆԻՆ

Ա) Նյութեր Արարատյան երկրի քաղաքական կացության վերաբերյալ . . . 55
Բ) Նամակագրություն ռուսական հրամանատարության հետ 60
Գ) Տվյալներ հարևան երկրների և հայարնակ վայրերի հետ ունեցած կապերի վերաբերյալ 65
Դ) Տեղեկություններ հարկապահանջության, ախթարմաների դեմ մղվող պայքարի և վանքապատկան ճորտերի մասին 71
Ե) Նյութեր տնտեսական կյանքի վերաբերյալ 77

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ
ՆԱՄԱԿՆԵՐ, ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(1780—1785)

1780 87
1781 177
1782 283
1783 345
1784 394
1785 500
Ծանոթագրություններ 548
Օտար բառերի բառարան 563
Անձնանունների ցանկ 567
Տեղանունների ցանկ 589

ԴԻՎԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐՔ I

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ

ՀԱՏՈՐ Ա. (1780—1785)

Աշխատասիրությամբ՝ ՎԱՐԴԱՆ ՌՈՒԲԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Հրատ. խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Է. Գ. ՎԱՍԻԼՅԱՆ

Հանձնված է շարվածքի 15.10.1983 թ.։ Ստորագրված է տպագրության 26.04.1984 թ.։ Չափը 70×108 1/16, թուղթ, № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Տպաքանակ 1000։ Պայմ. 52,15, տպագր. 37,25 մամուլ։ Հրատ. հաշվարկ. 47,0 մամուլ։
Պատվեր № 815։ Հրատ. № 6062։ Գինը 6 ռ. 15 կոպ.։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։